ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## I

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2008

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Պ 797

Հրատ. խմբագիր՝ Լ. Գ. Մանուկյան

Պողոսյան Ստեփան
Պ 797 Պատմագիտական ուսումնասիրություններ, Հայոց ցեղասպանության պատմություն. I:— Եր.: ԵՊՀ հրատ., 2008, 724 էջ:

Պատմագիտական ուսումնասիրության առաջին հատորը ներկայացնում է 19-րդ դարի երկրորդ կեսի ողբերգական դեպքերը, երբ Օսմանյան կայսրությունն սկսեց հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ցեղասպանությունը:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-5-8084-0953-8

© ԵՊՀ հրատարակչություն, 2008
© Ս. Կ. Պողոսյան, 2008

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*1. Բնաջնջման մեխանիզմ* ..... *5*
*2. Ինչո՞ւ հայ ժողովուրդը դարձավ ցեղասպանության առաջին զոհը, իսկ Հայաստանը՝ առաջին երկիրը, որտեղ այն իրականացվեց* ..... *22*

### *ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ*
### ԱՐԵՎՄՏԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ

*1. Սոցիալ-քաղաքական ճգնաժամը ուղի էր հարթում ցեղասպանության համար* ..... *86*
*2. Ցեղասպանության սոցիալ-հոգեբանական հիմքերը* ..... *89*
*3. Թանզիմաթ. հայ-թուրքական առճակատման ձևավորման գործընթաց* ..... *94*
*4. Հողատիրության և հողօգտագործման ձևերի ազգային դեմքը* ..... *98*
*5. Հարկերը՝ հայերի ուծացման և արտամղման միջոց* ..... *104*
*6. Հարստահարությունից մինչև բնաջնջումը մի քայլ էր միայն* ..... *111*
*7. Այլամերժությունն ու կոտորածները՝ կառավարման եղանակ* ..... *122*

### *ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ*
### ԹՈՒՐՔԵՐԻ ԱԶԳԱՑԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆ ԲՆՈՒՅԹԸ

*1. Օսմանիզմ-պանօսմանիզմ* ..... *129*
*2. Իսլամիզմ-պանիսլամիզմ* ..... *145*

### *ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ*
### ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

*1. Հայկական հարց* ..... *152*
*2. 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմը* ..... *164*
*3. Բեռլինի կոնգրես. Հայոց ցեղասպանության մեկնարկ* ..... *180*
*4. Բեռլինից հետո* ..... *204*

### *ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ*
### ՋՈՒԼՈՒՄԻ ՏԱՐԻՆԵՐ

*1. Ցեղասպանությունը խանձարուրում է* ..... *222*
*2. Հայերի սոցիալ-քաղաքական վիճակը ցեղասպանությանն անցման շրջանում* ..... *234*
*3. Արշավ հայ ազգային արժեքների վրա* ..... *248*
*4. Կրոնական առճակատում. հարձակում հայ հոգևոր հաստատությունների վրա* ..... *255*

### *ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ*
### ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳԵՆՈՑԻԴ

*1. Տեսակետներ, թվեր, փաստեր* ..... *268*
*2. Բացարձակ մեծամասնությունից մինչև հարաբերական մեծամասնություն* ..... *277*
*3. Ուծացում* ..... *286*
*4. Վարչական բաժանումներ* ..... *294*
*5. Մահմեդականների ներհոսք, հայերի արտահոսք* ..... *297*

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
## ՔՐԴԵՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ԲՆԱՋՆՋՄԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ


1. Քրդեր ..... 319
2. Հայ-քրդական համագործակցության համար ..... 325
3. Քրդերին հայերի դեմ ..... 330
4. Մուսա բեյի դատավարությունը. Հուսեյին աղա ..... 338
5. Համիդիե հեծելազորային գնդերը ցեղասպանության գործիք ..... 343


## ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
## ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 1860-1900-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ


1. Հիմնահարցի էությունն ի սկզբանե ..... 355
2. Արևմտահայությունը քաղաքական կյանքի ոլորտներում ..... 360
3. Հայ քաղաքական կուսակցություններն ու հայկական հարցը ..... 381
4. Ինքնապաշտպանությո՞ւն թե՞ ապստամբություն՝ հանուն անկախության ..... 396
5. Ինքնապաշտպանական կռիվները Արևմտյան Հայաստանում ..... 403
6. Արևմտահայ Ազգային Սահմանադրությունը ..... 409
7. Ազատագրական առաջին խմբակները. զարթոնք ..... 412
8. Գում Գափուի ցույցը ..... 422
9. Հայդուկային (ֆիդայական) չարժում ..... 426


## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
## ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ. 1880-1896ԹԹ.


1. Ինքնապաշտպանական կռիվները Սասունում ..... 451
2. Տալվորիկի հաղթանակը ..... 468
3. 1894 թվականի հերոսամարտը ..... 473
4. 1894 թվական. արյունոտ տարի ..... 483
5. Արձագանքներ ..... 495
6. Հետաքննություն ..... 518


## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ
## 1895-96 ԹԹ. ՋԱՆԳՎԱԾԱՑԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ


1. Բարենորոգումների մայիսյան ծրագիրը ..... 556
2. 1895-96 թթ. կոտորածների պատճառները ..... 574
3. Բաբը Ալիի ցույցը ..... 582
4. Կոտորածը Տրապիզոնի վիլայեթում ..... 590
5. Կոտորածը Կարինի վիլայեթում ..... 595
6. Կոտորածը Սեբաստիայում ..... 602
7. Կոտորածը Բաղեշում ..... 606
8. Կոտորածը Խարբերդում ..... 609
9. Կոտորածը Դիարբեքիրի վիլայեթում ..... 617
10. Կոտորածները Կիլիկիայում և Անատոլիայում. Զեյթունի ինքնապաշտպանությունը ..... 624
11. Ուրֆայի ինքնապաշտպանությունը և ջարդը ..... 631
12. Վանի ինքնապաշտպանությունն ու կոտորածը Վասպուրականում ..... 635
13. Ջարդ Կ. Պոլսում ..... 645
14. Կոտորածների դեմքը ..... 658
15. Թուրքական գործելակերպ ..... 662
16. Քարոզչական վայրիվերումներ ..... 668
17. Կոտորածներից հետո ..... 679
18. Հայերի կոտորածներն ու միջազգային դիվանագիտությունը ..... 692

Եվս մի քանի եզրահանգում ..... 717

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### *1. ԲՆԱՋՆՋՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ*

*Սպանությունները, այդ թվում նաև զանգվածային բնաջնջումները, նույնքան վաղեմի պատմություն ունեն, որքան ինքը՝ մարդը: Մարդու արարման եղանակը մեկն է, իսկ ոչնչացմանը՝ բազում: Քոչվորները ոչնչացնում էին ամբողջ ցեղեր՝ իրենց անասուններին արոտավայրերով ապահովելու համար: Օսմանյան սուլթաններից Մուհամմեդ 1-ինն իր 350 կանանց միմյանց կապած ծովը նետեց՝ կասկածելով, թե դավաճանում են: Թամերլանը մարդկանց գանգերից մզկիթներ ու աշտարակներ էր կառուցում: Կաթոլիկները խարույկների վրա այրում էին «հերձվածողներին», յակոբինները ոչնչացման համար ստեղծեցին գիլյոտինը, իսկ ամերիկացիները՝ Լինչի դատաստանը:*

*Վառոդի հայտնագործությանը հետևեցին ոչնչացման բազում նոր եղանակներ ու միջոցներ: 20-րդ դարը ծնեց միջուկային ու քիմիական զենքեր: Ներկայումս էլ, երբ մարդկության կեսը կիսաքաղց է, իսկ գոյություն ունեցող սպառազինություններն ի վիճակի են 5-7 անգամ ոչնչացնել Երկիր մոլորակի բնակչությանը, նյութական հնարավորությունների հիմնական մասը ծախսվում է զենքերի արտադրության, բնաջնջման էլ ավելի հզոր միջոցների ստեղծման վրա: Որպես կանոն, դրանով զբաղվել ու զբաղվում են մարդկության ամենահզոր ուղեղները, այդ բնագավառը մշտապես եղել է գիտատեխնիկական առաջընթացի գլխամասում:*

*Սակայն մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը չեն եղել (կամ գրեթե չեն եղել) բնաջնջման ծրագրավորված գործողություններ, և մարդկանց ոչնչացումները հանդիսացել են քաղաքական, տնտեսական և գաղափարախոսական ձեռնարկումների ուղեկիցներ, միջոցներ կամ հետևանքներ:*

*Ըստ այդմ էլ, բնաջնջման եղանակներից են*

*– **Պատերազմները**՝ բնաջնջման ու ոչնչացման ամենատարածված ու ամենահին ձևը: Բաղդադը գրավելու ժամանակ Թամերլանը սպանեց 100 հազար մարդ: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ոչնչացվեց 50 մլն մարդ:*

*– **Ահաբեկչական գործողությունները**, որոնք կոչված են լուծելու այլևայլ սոցիալ-քաղաքական խնդիրներ: 1876թ. թուրքական զորքերը ոչնչացրին 60 հազար բուլղարի: Պատմության ընթացքում բազմաթիվ կոլեկտիվ ու անհատական բնաջնջումներ են իրականացվել, որոնք խլել են միլիոնավոր մարդկային կյանքեր:*

*– **Ոչնչացումները գաղափարախոսական նկատառումներով.** օրինակ՝ հավատաքննությունները:*

*– **Ոչնչացումները քաղաքական նկատառումներով.** օրինակ՝ բարդուղիմեոսյան գիշեր, բնիկների բնաջնջումներ Ամերիկայում, ստալինյան ռեպրեսիաներ:*

*Այսինքն՝ դեռ հին ժամանակներից պատմությանը հայտնի են էթնիկական խմբերի բնաջնջման բազում ձեռնարկներ՝ քաղաքական, կրոնագաղափարախոսական, ռասայական, լեզվական և այլ պատճառներով: Սակայն 19-րդ դարի երկրորդ կեսից բնաջնջման առանձին գործողությունները ստացան միանգամայն այլ բնույթ ու նպատակադրում:*

*Ազգերի ձևավորումն ու ազգայնամոլության գերակայությունը պայմանավորեցին «գերազգայնական իշխող վերնախավերի աննախադեպ վայրագ կատաղության» դրսևորում, որը և հիմք հանդիսացավ նոր ժամանակներում ոչնչացումների բնույթի համար,*

մանավանդ որ ջարդարարների տրամադրության տակ էին ոչնչացման ավելի ու ավելի կատարելագործվող միջոցներ: Ընդ որում, ցեղասպանական բնույթի բնաջնջումներն ունեն նաև կազմակերպչական-տեխնիկական առանձնահատկություններ՝ պլանավորում, ժամկետների ընտրություն, համապարփակություն, տեխնոլոգիական մտահղացում, ջարդարարության հզորության մեծացման և դրա եղանակների կատարելագործման հանդեպ առանձնակի հոգատարություն, գաղափարախոսական հիմնավորվածություն և այլն[1]:

Ցեղասպանության հիմնադիրը Օսմանյան Թուրքիան էր, հանճինս սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի հայաջինջ քաղաքականության, որն իր չարունակությունն ունեցավ 20-րդ դարասկզբին երիտթուրքերի ու քեմալականների կողմից: Այդ քաղաքականության ուղենիշներ հանդիսացան օսմանյան մեծ վեզիրների՝ Ցուադի քաղաքական կտակը, Քյամիլի 1879թ. նամակը սուլթանին և Սայիդի հռչակած կարգախոսը՝ «Հայկական հարցը լուծելու համար հարկ է ոչնչացնել հայերին»:

Չնայած գիտության մեջ չարունակում է տիրապետող մնալ այն տեսակետը, թե ցեղասպանությունը 20-րդ դարի երևույթ է, ուսումնասիրությունները հանգում են այն իրողության հաստատմանը, որ վերջինիս բնութագրական բոլոր բաղադրիչներն առկա էին 19-րդ դարի վերջին տասնամյակներին, և հայերի 1880-90-ական թվականների հալածանքներն ու զանգվածային կոտորածներն այլ բան չէին, եթե ոչ ցեղասպանություն:

20-րդ դարում ցեղասպանության քաղաքականությունը, հենվելով հիմնականում ձեռք բերված փորձի և տեխնիկական առաջադիմության վրա, ստացավ վիթխարի ընդգրկումներ, ինչը առիթ հանդիսացավ պնդելու, թե գիտատեխնիկական առաջընթացն իր մեջ պարունակում է ցեղասպանության պատճառներ: Նման պնդումը մի խնդիր ունի՝ պատասխանատվությունից ազատել ցեղասպանության կազմակերպիչներին: Արդարացման նույն գերխնդրով են առաջնորդվում նաև նրանք, ովքեր գտնում են, թե նախախնամությունը ժամանակակից հասարակությանն օժտել է ցեղասպանության լիցքով, որ այն անբարոյական արարքների ավելի մեծ հակում ունի:

Ցեղասպանության պատճառ է համարվում նաև ուժերի ոչ հավասարաչափ բաշխումը, ռազմական գործողությունների ընթացքում առավել վայրագ բնազդների դրսևորումը, մարդկանց գիտակցության մեջ կրոնական ու էթնիկականատելության արմատավորումը և այլն: Նման տեսակետներ առաջ քաշողները, սակայն, չեն կարողանում պատասխանել մի շատ պարզ հարցի՝ ինչո՞ւ այդ իրողությունները առանձին տեղերում ծնում են գենոցիդ, իսկ մնացածներում՝ ոչ[2]:

Իհարկե, ցեղասպանության, մասնավորապես, դրա ծավալների ու գործադրման եղանակների վրա տեխնիկական առաջընթացի ազդեցությունը բացառելն անհնար է: Մի բան էր, երբ սպանում էին դանակով կամ սրով, և միանգամայն այլ բան, երբ դա արվում է զանգվածային ոչնչացման նորագույն միջոցներով:

Անհնար է լիովին ժխտել բնաջնջումը մտահղացողի ու կազմակերպիչի բնավորության, հոգևոր-մտավոր գործոնների դերը: Ցեղասպանության կազմակերպիչների հոգեբանության բնութագրական գործոնները հանգում են հետևյալներին ինքնության ճգնաժամ՝ զուգակցված սոցիալ-քաղաքական փոփոխությունների անհրաժեշտության գիտակցման հետ, իշխանության վերնախավի կողմից ծայրահեղական գաղափարախոսության որդեգրում, դրության տիրոջ խեղվածություն, որին նա ձգտում է տալ համընդհանուր հնչեղություն, նորամուծություն քաղաքական կյանքում, լայն զանգվածների պատրաստակամություն՝ վարակվելու այդ խեղվածությամբ, թե՛ վերնախավի ու

---

[1] **Dokmejian R.H.** *Determinants of Genocide: Armenians and Jews as Case Studies:* ed. by **R. Hovhannissian.** In: *The Armenian Genocide in Perspective.* New Jersey, 1986, pp. 26-27.

[2] **Горовиц И. Л.**, *Массовизация смерти. "Геноцид – преступление против Человечества"*, Москва, 1997, стр. 48.

*թե՛ զանգվածի ճգտում՝ այդ հիվանդությամբ տառապելու համար քավության նոխազ գտնելու և ոչնչացնելու:*

*Հայոց ցեղասպանությունն առաջինն է և խոշորագույններից մեկը ցեղասպանությունների պատմության մեջ: Այն նաև կարելի է անվանել «դասական»՝ նկատի ունենալով իրականացման եղանակների դաժանությունն ու նպատակաուղղվածությունը, պատմաքաղաքական պատճառների առկայությունը և աշխարհաքաղաքական չահերի հստակությունը:*

*Հայոց ցեղասպանության ուսումնասիրության հիմքի վրա է ձևավորվել ցեղասպանության գիտական, քաղաքական-իրավական հասկացությունը:*

*1930-ական թվականների կեսերից սկսած՝ միջազգային հասարակայնության կողմից ցեղասպանության հանդեպ առանձնակի հետաքրքրությունը գործնական դարձավ հրեաներին ոչնչացնելուց հետո: Լեհահրեա իրավաբան Ռաֆայել Լեմկինը, հենվելով Հայոց ցեղասպանության փորձի վրա, 1933թ. Մադրիդում, միջազգային մի համաժողովում տվեց ցեղասպանություն երևույթի բնութագրությունը, իսկ 1944թ. ձևակերպեց նաև այդ երևույթի անունը՝ գենոցիդ (հունարեն՝ գեն-ցեղ և լատիներեն՝ ցիդ-սպանել):*

*Ռ. Լեմկինը ցեղասպանությունը բնութագրեց որպես հանցագործության տեսակ, որի իրականացումը վեր է անհատների ու հասարակական խմբերի կարողություններից: Ցեղասպանություն ի զորու են իրականացնել պետական կառույցները: Նա գրում է. «Գենոցիդ բառի տակ հասկանում ենք «Մի ազգի կամ էթնիկական խմբի ոչնչացում... Գենոցիդի բնութագրության գործում առաջնային նշանակություն ունի գործողությունների համալիր պլանի մշակումը, որն ուղղված լիներ վերացնելու ազգային խմբերի կյանքի էական նշանակության հիմքերը, ինչի վերջնական նպատակն էր ոչնչացնելու այդ խմբերը: Այդպիսի պլանի նպատակ կարող են լինել ազգային խմբերի քաղաքական և սոցիալական հիմնարկների, մշակույթի, լեզվի, ազգային զգացմունքների, կրոնի և տնտեսական կյանքի ոչնչացումն ու մասնատումը, նշված խմբերին պատկանող անհատներին զրկելը՝ անձնական անվտանգությունից, ազատությունից, առողջությունից, պատվից և արժանապատվությունից, ինչպես նաև կյանքից: Գենոցիդն ուղղված է թե՛ ամբողջությամբ վերցրած ազգային փոքրամասնությունների և թե՛ առանձին անհատների դեմ՝ ելնելով ոչ թե վերջիններիս անձնական հատկություններից, այլ այս կամ այն ազգային խմբին նրանց պատկանելիությունից»: Գենոցիդը բռնազավթման նոր տեխնիկա է, ցեղասպանություն է, որի նպատակն է պատերազմից հետո, եթե անգամ տվյալ երկիրը տանուլ տա, իր համար ապահովել բարենպաստ վիճակ... Ցեղասպանությունը կարող է տեղի ունենալ նաև խաղաղ ժամանակ... Այն կարող է ամբողջությամբ բացառվել, եթե փոքրամասնությունների պաշտպանությունը երաշխավորվի միջազգային իրավունքով և յուրաքանչյուր երկրի սահմանադրությամբ և քրեական կոդեքսով»[3]:*

---

*[3] Ռ. Լեմկին (Լեմկե).– Ծնվել է 1900թ. լեհական Բեզեդոչենե քաղաքում: Սկսած մանկության տարիներից հրապուրվել է պատմությամբ, հատկապես, այն իրաղարձություններով, որոնք կապված էին մարդկանց զանգվածային սպանությունների հետ: «Շուտով հետևեցին ցեղասպանության ժամանակակից օրինակները,– գրում է նա,– ինչպես օրինակ՝ հայերի կոտորածը: Ինձ համար ակնհայտ էր, որ ազգերի կրոնական խմբերի և ռասաների բազմազանությունը կարևոր է քաղաքակրթության համար...»:*

*Լեմկինը դարձավ իրավաբան և աշխատում էր Վարշավայի իրավագիտական ծառայություններում: Դեռ ուսանողական տարիներին մեծ հետաքրքրությամբ էր հետևում Ս. Թեհլերյանի դատավարությանը: Նրա վրա մեծ ազդեցություն գործեց, մասնավորապես, Թալեաթի սպանությունը: «Թուրքիայում ավելի քան 1,2 միլիոն հայ ոչնչացվեց միայն այն բանի համար, որ քրիստոնյա էին»,-գտնում է նա: «Այդ նույն աշխարհը, որը 1,2 միլիոն հայերի ոչնչացման ժամանակ չահադիտորեն լռում էր, ցանկացավ նաև կոծկել իրողությունը»: Ս. Թեհլերյանի դատավարության կապակցությամբ գրում է. «Այն անձը, որը կրակոցով փորձել էր բարձրացնել մարդկության բարոյական պատիվը, դասակարգվեց որպես անկարող՝ գիտակցելու իր արարքի բարոյական բնույթը...»:*

*Լեմկինը հասկացավ, որ անգամ պետական սուվերենության համար պայքարը «չի կարող ընդունվել որպես միլիոնավոր անմեղ մարդկանց սպանելու իրավունք»:*

*Պատերազմի ավարտին, որպես խորհրդական, նա մասնակցեց Նյուրնբերգի դատավարությանը:*

*Այն պահին, երբ որոշում էր ընդունվում իրականացնել ցեղասպանություն, կառավարությունը կազմում ու կենտրոնացնում էր ցուցակներն այն մարդկանց և հիմնարկների, որոնք պետք է ենթարկվեին հարձակման, որպեսզի խնդիրը լուծվեր հանկարծակի, արագ, հետևողական, արդյունավետ և որպեսզի դրսի միջամտության դեպքում գործը ներկայացվեր որպես կատարված փաստ[1]:*

*Գենոցիդն ունի հասունացման չրջան. այդ ընթացքում կամակատար ինտելեկտուալները կառուցում են տոտալիտարիզմի գաղափարախոսական համակարգը, որն անհրաժեշտություն է ներքին կարգուկանոնը պահպանելու և միջազգային կարծիքին*

---

*«Առանցքի պետությունների իշխանությունը օկուպացված Եվրոպայում, օկուպացիայի օրենքներ՝ կառավարման վերլուծություն, փոխհատուցման առաջարկներ» գրքի «Ցեղասպանություն» գլխում քննարկվում են «ցեղասպանություն» տերմինի բովանդակությունը, որպես ազգերի ոչնչացման նոր հայեցակարգ, ցեղասպանության տեխնոլոգիան մարդկային գործունեության բոլոր ասպարեզներում, ցեղասպանության արգելման հիմնահարցերը: Նա ցեղասպանության հետ միասին օգտագործում է «էթնոցիդ՝ ազգերի բնաջնջում տերմինը:*

*1948թ. ՄԱԿ-ի կողմից ցեղասպանության կոնվենցիայի ընդունումով Լեմկինն իր կյանքի գլխավոր խնդիրը կատարված համարեց և սկսած 1959-ից եռանդուն ջանքեր էր ներդնում, որ ԱՄՆ ընդուներ այդ կոնվենցիան և գրեց մի շարք գրքեր, որոնք, սակայն, այդպես էլ մնացին չհրատարակված: Դրանցում ևս կան նյութեր, որոնք վերաբերում են հայկական ցեղասպանությանը: 139 էջանոց մի աշխատանքում ներկայացված են հայերի բնութագրությունը, 1890-ական թվականների և Ադանայի ջարդերը, 1915-16թթ. կոտորածները և տեղահանությունները, սպանելու դիտավորությունն ու մեղավորները, արձագանքները: Նաև ներկայացված են հայկական ջարդերի սահմռկեցուցիչ տեսարաններ: Նա գրում է. «Մահմեդական կրոնի սրտում որպես քրիստոնեական ամուր տարր հանդիսացող հայերի ոչնչացումն անխուսափելի էր...»: Լեմկինը գերագնահատում է մահմեդական կրոնի դերը հայերի բնաջնջման գործում: Ըստ նրա՝ հայերին ջարդեցին, որովհետև Կորանի հիմնական սկզբունքները հակադրության մեջ էին Քրիստոսի ուսմունքի հետ: «Մահմեդականության պատմությունը քրիստոնեական կրոնի դեմ մղվող անընդհատ պատերազմների պատմությունն է, և հայերը կոտորվել ու ոչնչացվել են քրիստոնեական կրոնն ընդունելուց ի վեր»:*

*Դրա հետ միասին, նա միանգամայն իրավացի է, երբ գրում է. «Վստահաբար կարելի է զուգահեռներ անցկացնել թուրքերի կողմից հայերի և գերմանացիների կողմից հրեաների ոչնչացման միջև: Հայերի դրությունը Օսմանյան կայսրությունում շատ նման էր հրեաների դրությանը Գերմանիայում» («Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», 10-11, Ե., 2005, էջ 186-194):*

*Ռ. Լեմկինը ցեղասպանությունը բնութագրում է որպես որոշակի ազգային, կրոնական կամ ռասայական խմբի դեմ «հալածանքի կամ ոչնչացման նպատակով իրականացվող տարաբնույթ գործողությունների ընդհանրություն» (R. Lemkin on Genocide,* In: *Genocide and Human Rights: A Global Anthology.* Lenham-New York-London, 1982, p. 330):

*Դեռ Լվովում ուսանելու տարիներին Լեմկինը գրում է. «Թուրքիայում ավելի քան 1,2 միլիոն հայ ոչնչացվեց, որովհետև քրիստոնյա էր: Հայերը դուրս էին բերվում իրենց տներից ու քշվում Եփրատ գետի երկայնքով: Հետո նրանց ուղեկցող ժանդարմները հանկարծ քարավանի երկու ծայրերից կրակ էին բացում... բոլորին կոտորում... Աչխարհամարտից հետո պատերազմի չուրջ 150 թուրք հանցագործի Բրիտանական կառավարությունը փակեց Մալթայում... բայց մի օր թերթերում կարդացի, որ պատերազմի բոլոր թուրք հանցագործներն ազատ էին արձակվել: Ես ցնցված էի: Մի ազգ էր ոչնչացվել, իսկ մեղավորներն ազատ էին արձակվել: Ինչո՞ւ են պատժում մարդուն, երբ նա մի ուրիշ մարդու է սպանել: Ինչո՞ւ է մեկ միլիոնի բնաջնջումն ավելի նվազ հանցագործություն, քան մի անհատի սպանությունը»:*

*Լեմկինը մասնակցեց Նյուրնբերգի դատավարությանը: Նա 1944-ին Վաշինգտոնում հրատարակեց "Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation, Analysis of Government, Proposals for Redress" կապիտալ աշխատությունը, որում անդրադարձ կա նաև ցեղասպանությանը՝ երեք ենթագլուխներով՝ 1. Ցեղասպանություն՝ ազգերը ոչնչացնելու նոր տերմին և նոր հայեցակարգ; 2. Ցեղասպանություն տեխնիկան տարբեր ոլորտներում՝ քաղաքական, սոցիալական, մշակութային, տնտեսական, կենսաբանական, ֆիզիկական, կրոնական և բարոյական; 3. Խորհուրդներ ապագայի համար: Լեմկինը նաև առանձին աշխատություններով ու հոդվածներով է հանդես եկել Հայոց ցեղասպանության հիմնահարցերի չուրջը (Տե՛ս «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», 2005, թիվ 10-11, էջ 192):*

*Լեմկինը նաև հազար անգամ ճշմարիտ է, երբ նկատում է. «Բրիտանական և եվրոպական կառավարություններին նպատակահարմար էր ձևանալ, թե հավատում են սուլթանի կողմից հայերին ներկայացվող ապստամբության մեղադրանքներին, քան ընդունել, որ հայերը ոչնչացվում էին այն բանի համար, որ քրիստոնյա էին» (նույն տեղում):*

[1] Оганян П., *Геноцид армянского народа и защита прав человека,* Ереван, 2004, стр. 35.

*համոզելու, թե կառավարության գործողությունները դուրս չեն գալիս օրինականության շրջանակներից: Ցեղասպանությանն առնչվող միջոցառումների քարոզչությանն է լծվում քարոզչական ողջ համակարգը, հզոր ուժ է դառնում գրաքննությունը, ազգային խտրականություն է մտցվում կյանքի բոլոր բնագավառներում: Ծավալվում է պետական ահաբեկչություն, որն իրականացնողները հովանավորվում են համապատասխան դեկրետներ և որոշումներ ընդունելու միջոցով, ազգաբնակչությունը նետվում է կատարյալ թյուրիմացությունների հորձանուտը: Իսկ երբ սարսափը պատում է ցեղասպանության ապագա զոհերին, սկսվում են խոշտանգումները, կոլեկտիվ ձերբակալությունները և զանգվածային ջարդերը: Դեռ ավելին, ցեղասպանը, որպես կանոն, ժխտում է զոհի էթնիկ գոյությունը: Օրինակ թուրք քաղաքագետները մերժում են Օսմանյան կայսրությունում «հայեր» և «հայ ժողովուրդ» արտահայտությունները: Նման կեցվածքը հեշտացնում է ցեղասպանության ժխտումը:*

*Ցեղասպանությունը հնարավոր է, եթե առկա են. 1) այն իրականացնելու հակում, այսինքն՝ ձևավորված հասարակական բնավորություն, 2) մեծ նշանակության պատճառ և 3) հարմար զոհ: Ցեղասպանությունն արտահայտվում է հետևյալ ձևակերպմամբ՝ ո՞վ է ոչնչացնողը, ինչո՞ւ է ոչնչացնում և ո՞ւմ է ոչնչացնում:*

*Պատմության ընթացքում եղել են երևույթներ, որոնք դեռ չատ հնուց գնահատվել են որպես ոճիր մարդկության դեմ և դատապարտվել են որպես այդպիսին: Օրինակ, ավազակությունը: Սակայն մարդկության դեմ ամենախոշոր հանցագործությունը ցեղասպանությունն է: Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածների առթիվ Անտանտի պետությունների 1915 թվի մայիսի 24-ի հայտարարության մեջ ասված է, թե այդ ջարդերի ծրագրման ու գործադրման համար պատասխանատու պաշտոնյաները պետք է դատվեն: Նյուրնբերգյան դատավարության դատավճռում ցեղասպանությունը բնութագրված է որպես ոճիր մարդկության դեմ և պատժելի միջազգային օրենքով: Դատավճիռը ելնում է դաշնակից պետությունների՝ 1945թ. օգոստոսի 8-ի հայտարարության այն դրույթից, որը մարդկության դեմ ոճիր է համարում «սպանությունը, բնաջնջումը, ստրկացումը, տեղահանությունը և այլն»: 1946թ. դեկտեմբերի 11-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան հռչակեց.*

*«Ցեղասպանությունն ըստ միջազգային օրենքի ոճիր է... և դատապարտվում է քաղաքակիրթ մարդկության կողմից...*

*...Ցեղասպանությունը նշանակում է մարդկային խմբերի գոյության իրավունքի մերժում, այնպես, ինչպես որ մարդասպանությունը նշանակում է առանձին մարդ էակի կյանքի իրավունքի մերժում»[5]:*

*1947-ին Գլխավոր ասամբլեան ավելի հստակեցրեց ձևակերպումը. «Ցեղասպանությունը միջազգային ոճրագործություն է, որը հանգեցնում է առանձին անհատների և պետությունների ազգային և միջազգային պատասխանատվությանը»[6]:*

*Կան ցեղասպանության նաև ուրիշ բնորոշումներ՝ տրված տարբեր մասնագետների կողմից: Օրինակ, Ֆ. Չոքն ու Ջ. Ջոնասոնը գրում են. «Ցեղասպանությունը միակողմանի զանգվածային սպանության ձև է, որով պետությունը կամ մի այլ իշխանություն դիտավորություն ունեն ոչնչացնելու որևիցե խումբ...»[7]:*

*Ցեղասպանությունը մարդկության պատմության նորագույն շրջանի երևույթ է. աշխարհի հանրության հիշողության մեջ դեռ թարմ են հայերի 1915-23թթ. ոչնչացումները, հրեաների և գնչուների բնաջնջումը ֆաշիստների կողմից, ջարդերը Սաբրեում և*

---

[5] **Kuper L.**, *Genocide: Its Political Uses in the Twentieth Century.* New Haven and London, 1981, p. 23.

[6] **Решетов Ю.**, *Борьба с международными преступлениями против мира и безопасности.* М., 1983, стр. 102.

[7] **Chalk F. and Jonassohn K.**, *The History and Sociology of Genocide.* New Haven and London, 1990, p. 23.

Շատիլում իսրայելական բանակի կողմից, հարավ-ամերիկացիների զանգվածային ոչնչացումները, ապարտեիդի քաղաքականությունը եվրոպացիների կողմից Աֆրիկայում, Աֆղանստանի քաղաքացիական բնակչության ջարդերը, ամերիկյան բնիկների ոչնչացումները, ջարդերը Կամբոջայում և այլն:

Ցեղասպանությունը կոլեկտիվ հանցագործություն է, և որովհետև այդ «հանցագործությունը կատարվում է կառավարությունների մասնակցությամբ, աջակցությամբ կամ թողտվությամբ, նշանակում է, որ գոյություն ունեն պետությունների սադրանք, շահեր և համաձայնություն, ինչն իր հերթին վկայում է, որ առկա էին նախապես համաձայնեցված պլաններ և տարվում էին նախապատրաստական աշխատանքներ»[8]:

Համաձայն ցեղասպանության կոնվենցիայի՝ գենոցիդ գործադրելու համար դատական պատասխանատվության ենթակա են այն իրականացրած ղեկավար գործիչները, պաշտոնյաները, մասնավոր անձինք: Ցեղասպանությանը մասնակցած կամ աջակցած պետությունները նույնպես կարող են համարվել, եթե ոչ մեղսակից, ապա ծայրահեղ դեպքում՝ պատասխանատու: Իվ Թերնոնը գրում է. «...գենոցիդի համար պատասխանատվությունը միշտ կրում է պետությունը»[9]:

Քանի որ ցեղասպանությունը հանցագործության յուրահատուկ տեսակ է և քանի որ դիտավորությունը սկսվում է մտահղացումից, դաղափարից, նպատակներից, այն պահից, երբ ցեղասպան հակում ունեցող պետությունը մշակում է քաղաքական ծրագիր ոչ միայն մարդկանց տվյալ խմբին ֆիզիկապես բնաջնջելու, այլև ոչնչացնելու նրա լեզուն, ինքնատիպությունը, ավանդույթները, մշակութային արժեքներն ու հիշողությունը, այդ պատճառով էլ ցեղասպանություն հանցագործության մեղադրանքը պետք է գործադրվի նաև դրա մտահղացման կամ ոչնչացման կոչերի համար:

2005թ. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը հրատարակեց Տ. Մաթոսյանի «Հայոց ցեղասպանություն և հրեական Հոլոքոստ» չահեկան աշխատությունը, որում տեղ են գտել ցեղասպանության մի շարք հիմնախնդիրների հետաքրքիր արժեքավորումներ:

Նախ նշենք, որ գենոցիդի հիմքը մարդկանց խմբերի խտրականությունն է՝ դիսկրիմինացիան, երբ որոշ խմբեր իրենց իրավունք են վերապահում որոշելու մյուսների կյանքի կարգավիճակը, նրանց գոյության իրավունքը: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1946թ. դեկտեմբերի 11-ի բանաձևում ասված է.

«Գենոցիդը մերժում է մարդկանց ամբողջ խմբերի գոյության իրավունքը ճիշտ այնպես, ինչպես մարդասպանությունը հանդիսանում է առանձին անհատների գոյության իրավունքի մերժում...

Գենոցիդ հանցագործության կանխումն ու ճնշումը համընկնում է աշխարհի շահերին... որովհետև գենոցիդը հանցագործություն է ժողովուրդների իրավունքների դեմ..., որի գլխավոր հեղինակներն ու մեղսակիցները, լինեն մասնավոր անձինք, պաշտոնատարներ կամ պետական գործիչներ, պետք է պատժվեն անկախ այն բանից՝ հանցագործությունը կատարված է կրոնական, ռասայական, քաղաքական թե այլ միտումներով»[10]:

Ցեղասպանությունը թողնում է ապագա սերունդների վրա քրեական, հոգեբանական, քաղաքական և տարածքային հետևանքներ, չնայած հանցագործները, որպես կանոն, հույս ունեն, որ այդ հետևանքները ժամանակի ընթացքում չնչվելու են՝ մատնվելով մոռացության: Միևնույն կյանքը հակառակն ապացուցեց. դրանք ոչ միայն մոռացության չմատնվեցին, այլև անհրաժեշտություն առաջացրեցին գործելու՝ վերականգնելու արդարությունը:

---

[8] Оганян П., նշվ. աշխ., էջ 20:

[9] **Ternon Yves.** *El Estodo Criminal*, Barcelona, 1995, 21.

[10] **Whitaker Ben**, *Revised and Updated Report on the Question of the Prevention and Punishment of the Crime of Genocide*, Crinebra, 1985, pp. 14-15.

*Ցեղասպանությունը կազմված է երեք բաղադրիչներից. ցեղասպանություն գործադրելու որոշման կայացում, անմիջական գործադրում և այդ գործադրման ժխտում: Այսինքն՝ ցեղասպանության իրողության մերժումը համարվում է ցեղասպանություն գործադրելուն հավասարազոր հանցագործություն, որովհետև մեկը ժողովրդին ոչնչացնում է ֆիզիկապես, իսկ մյուսը մերժում է նրա գոյությունն ընդհանրապես: Ըստ այդմ էլ՝ գենոցիդն ավարտված է համարվում միայն այն ժամանակ, երբ դրա հեղինակը բացեիբաց ընդունում է իր գործադրած եղեռնագործությունը:*

*Վ. Տատրյանը գրում է, թե հանցագործությունները, այդ թվում սպանությունները տեղի են ունենում «ժամանակի և տարածության մեջ առնվազն երեք բաղադրիչների համընկնման դեպքում. այդ բաղադրիչներն են՝ ա) նպատակադրված հանցագործը, բ) հարմար թիրախը և գ) պաշտպանների բացակայությունը»*[11]*:*

*Այս միտքը ամենայն որոշակիությամբ արտահայտել է Բ. Շաքիրը իթիհադի 1915թ. փետրվարի հանրահայտ նիստում. «Պատերազմի մեջ ենք, Եվրոպայի և մեծ տերությունների միջամտության վախը չկա, աշխարհի մամուլն էլ չի կարող բողոք բարձրացնել, եթե աղմկեն իսկ, որևէ արդյունք չի ունենա. խնդիրը կայացված մի իրողություն կը դառնա, ձայները կդադրեն, և ոչ ոք բողոքի ձայն բարձրացնելու համարձակություն չի ունենա: Այս բացառիկ կացության նրբություններեն առավելագույն չափով պետք է օգտվինք: Այս առիթն ամեն ժամանակ չի ներկայանա...»*[12]*: Նույն միտքը, ըստ Վանգենհայմի, արտահայտել է նաև Թալեաթը: Նա գրում է. «Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը վերջերս, առանց վերապահումների, հայտարարել է... որ Բ. Դուռը ուզում է օգտվել համաշխարհային պատերազմից իր ներքին թշնամիների (տեղացի քրիստոնյաների) հետ հաշիվները հիմնովին մաքրելու համար՝ առանց արտասահմանի խանգարիչ դիվանագիտական միջամտության»*[13]*:*

*Անվիճելի է, որ Անտանտը հնարավորություն ուներ կասեցնելու Մեծ եղեռնը, բայց այդ չարեց՝ բավարարվեց մայիսյան հանրահայտ հայտարարությամբ: Երբ Մեծ Բրիտանիայի ռազմական նախարար Քիթչեները առաջարկեց ծրագիր՝ (Անտանտը զորքեր էր ափ հանելու Իսկենդերունի ծովափին, որոնք Կիլիկիայի վրայով չարժվելու էին հյուսիսարևելք և Դիարբեքիրի կամ Վանի վիլայեթներում միանալու էին ռուսական զորքին), Լլոյդ Ջորջը մերժեց և գործողության մեջ դրեց մի ուրիշ ծրագիր՝ գլխավոր հարվածը հասցնել Նեղուցների չրջանում*[14]*:*

*Միանգամայն ակնհայտ էր, որ Հայոց ցեղասպանությունը լուրջ խոչընդոտի չհանդիպեց նաև այն պատճառով, որ հայերը զուրկ էին ինքնուրույն պետականությունից: Հ. Մորգենթաուն իրավացիորեն գրում է, որ հայերի բախտին կարժանանային նաև հույները, եթե գոյություն չունենար հունական պետությունը, որովհետև եռյակ զինակցության երկրները մտահոգ էին, որ հույների չարդի դեպքում Հունաստանը ստիպված պատերազմի մեջ կմտներ Անտանտի կողքին*[15]*:*

*Ցեղասպանության բնութագրությունը տրված է ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայում.* ***«Ցեղասպանությունը ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական հատկանիշներով բնակչության առանձին խմբերի կանխամտածված ոչնչացումն է, այդ խմբերին պատկանողներին մարմնական ծանր վնասվածքների կամ մտավոր խանգարումների պատճառումը, ծննդաբերությունը արգելելու միջոցառումների մշակումն***

---

[11] **Dadrian V.**, *The Historical and Legal Interconnections between the Armenian Genocide and the Jewish Holocaust...* In *"The Yale Journal of International Law"*, 1998, vol. 23, numb. 2.

[12] **Ռիֆաթ Մ.**, *Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իթթիհադի հայաջինջ քաղաքականությունը*, Եր., 1998, էջ 113:

[13] **Lepsius J.**, *Deutschland und Armenien. 1914-1918*, Potsdam, 1919, S. 84.

[14] **Գասպարյան Ե.**, *Ճրանսիան և Մեծ եղեռնը*, Երևան, 1997, էջ 17-20:

[15] **Մորգենթաու Հ.**, *Ամերիկյան դեսպանի հիշատակները և հայկական եղեռնի գաղտնիքները*, Կ.Պ., 1919:

*ու կիրառումը, այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք հանգեցնում են այդ խմբերի լրիվ կամ մասնակի ոչնչացմանը»:*

*Կոնվենցիան պատժելի է համարում ցեղասպանության ոչ միայն կազմակերպումը, այլև մտահաղացումն ու սադրանքը: Կոնվենցիան պարտադիր է թե՛ այն ստորագրող և թե՛ համակրող պետությունների համար: Ցեղասպանության հանցագործությունը վաղեմություն չունի: Կոնվենցիան ունի հետադարձ ուժ[16]:*

*Ցեղասպանության մասին գիտությունը երիտասարդ է՝ կայացման գործընթացում: Սակայն գնալով մեծանում է ցեղասպանության հիմնահարցերի ուսումնասիրության տեսակարար կշիռը հասարակական գիտությունների ընդհանուր համակարգում: Ցեղասպանության խնդիրը վերածվել է միջազգային հարաբերությունների առաջնակարգ հիմնահարցի, ստացել պատերազմի ու խաղաղության խնդրին հավասարազոր նշանակություն: Դրանով է բացատրվում նաև այն, որ միջազգային կազմակերպությունները գնալով ավելի ու ավելի հաճախակի են անդրադառնում դրան: Նաև ակնհայտ է, որ ժամանակակից հնարավորությունների, զանգվածային ոչնչացման զենքերի ու հրթիռային տեխնիկայի առկայության պայմաններում՝ նույնիսկ լոկալ պատերազմներն իրենց մեջ ունեն ցեղասպանության վիրխարի լիցք:*

*Նորօրյա իրողությունները, ցեղասպանությունների վերաբերյալ նյութերի համադրումը և ապագայում բնաջնջման քաղաքականության բոլոր և ամեն տեսակի դրսևորումների դեմ պայքարում միջազգային օրենքի կիրառման արդյունավետությունը բարձրացնելու չահերը պահանջում են փոփոխություններ մտցնել ցեղասպանության կոնվենցիայում, մասնավորապես գենոցիդի բնութագրության մեջ: Գոյություն ունեցող ձևակերպման համար հիմք է հանդիսացել Հրեական Ողջակիզումը և, առաջին հերթին, մտահոգությունը՝ այլևս թույլ չտալու բռնարարքներ այդ ժողովրդի հանդեպ: Դրա հետևանքով, նախ, կոնվենցիան հիմնականում գործում է հօգուտ Հրեական Ողջակիզման հետևանքների վերացման, իսկ մյուս ցեղասպանությունները չարունակում են ուշադրությունից դուրս մնալ և, երկրորդ, ցեղասպանություն համարելով կոլեկտիվ (խմբային) գրեթե բոլոր սպանություններն ու խեղումները, կոնվենցիան հնարավորություն չի ընձեռում առաջին պլանին դնել խոշոր ու դասական ցեղասպանությունները և համաշխարհային հանրության ուշադրությունը բևեռել մեծածավալ ցեղասպանությունների ու դրանք կանխելու միջոցառումների իրականացման անհրաժեշտության վրա:*

*Չնայած ցեղասպանության մասին գիտությունը ձևավորվեց Մեծ Եղեռնի փաստական հիմքի վրա, սակայն շատ չուտով առաջին պլան դուրս եկավ հոլոքոստագիտությունը, որը գործնականում վերածվեց չափանիշի այս կամ այն զանգվածային կոտորածի բնույթը որոշելու գործում: Դա որքան հասկանալի, նույնքան էլ որոշակիությունից զուրկ մոտեցում է: Փորձենք համեմատություններ անցկացնել Հայոց Ցեղասպանության և Հրեական Ողջակիզման միջև:*

*1. Երկուսն էլ ցեղասպանություն են. Հոլոքոստը եբրայական «օլահ» բառից է, որ Հին Կտակարանի հունական տարբերակում թարգմանված է «հոլոքաուստոն», ինչը նշանակում է զոհաբերում Աստծուն ողջակիզման միջոցով:*

*2. Ինչպես Ցեղասպանությունը, այնպես էլ Հոլոքոստը պատմական իրագործություն են՝ մարդկության դեմ ուղղված ամենամեծ հանցագործությունները:*

*3. Թե՛ մեկը և թե՛ մյուսը պահանջել են տևական նախապատրաստություն տեսական-գաղափարախոսական և կազմակերպական առումով:*

*4. Որոշ առումով, Հայոց Ցեղասպանությունը, մնալով առանց գնահատականի ու առանց արժեքավորման որպես հանցագործություն մարդկության դեմ և հանցագործին պատժելու, հանդիսացավ Հրեական Հոլոքոստի տատմերը:*

---

*[16] Сборник действующих договоров, соглашений и конвенций, заключенных СССР с иностранными государствами.*

*«Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր» հանդեսի 2002թ. թիվ 5-ում Լ. Բարսեղյանը ներկայացնում է հրեա աստվածաբան Ֆ. Լիթելի և հայ պատմաբան Ռ. Հովհաննիսյանի կարծիքները Հոլոքոստի և Հայոց ցեղասպանության միջև եղած ընդհանրությունների մասին:*

*Ըստ Ֆ. Լիթելի՝ երկու ցեղասպանությունների համար ընդհանուր են ա) արհամարհված և հետապնդվող փոքրամասնության բազմադարյան պատմությունը, բ) մեծամասնության չրջանում իշխող մշակութակրոնական ցածր մակարդակը, որի ազդեցությունը մարդկանց վրա, չնայած այնքան էլ գործուն չէր, սակայն ուժ էր ներարկում հանցագործներին, գ) կառավարությունն իբրև գործիք ուներ գաղափարական, քաղաքական ուժեղ չարժում՝ ահաբեկչության ձևով. չարժման անդամները խստացնում էին ներքին կարգապահությունը և արհամարհական վերաբերմունք դրսևորում բարոյական ամեն մի սահմանափակման հանդեպ, դ) բազմակարծության թույլ ավանդություններով մի հասարակության առկայությունը, որին հատուկ էր հիերարխիայի և ռազմական համակարգի միաճուլումը, և որն անհանգիստ փոքրամասնությունը, որակելով ներքին թշնամի, արտաքին թշնամուց վտանգավոր էր համարում, ե) պատերազմական իրավիճակը, ինչը կառավարողներին գործելու ոչնչով չսահմանափակվող ազատություն էր տալիս, իսկ ազգային փոքրամասնություններին դարձնում անօգնական, զ) ազգային փոքրամասնության անպաշտպան լինելը՝ դիմադրելու անկարողությունը, է) բռնությունն ու դաժանությունն արդարացնող փիլիսոփայությունը, երբ այն ծառայում էր քաղաքական «մեծ» նպատակի, թ) պատասխանատվությունից խուսյ տալու համար խաբեության, կեղծիքի օգտագործումը, ժ) արհեստավարժ ռազմական ուժերի քաղաքականացումը, ի) կառավարական մարմինները և ստորաբաժանումները մոլեռանդներով համալրելը, լ) ջարդերի ծրագրի իրագործումը պրոֆեսիոնալ հանցագործների միջոցով, խ) ավարառության և հափշտակության թողտվությունը՝ զոհերին կողոպտելու միջոցով, ծ) պատերազմական գործողությունների ժամանակ տարբեր ռազմաճակատներում կրած անհաջողությունները (պարտության վտանգը նոր թափ հաղորդեց ջարդերին):*

*Ըստ Ռ. Հովհաննիսյանի՝ այդ ընդհանրությունները հետևյալներն էին. ա) ցեղասպանության իրականացումը միջազգային խոշոր բախումների քողի տակ, ինչը նաև նվազագույնի էր հասցնում օտար միջամտության հնարավորությունը, բ) այլատյաց հանցախմբի կողմից ծրագրի մշակումը, գ) ռասիստական նպատակների արդարացմանն աջակցող գաղափարախոսությունը և անհանդուրժողականությունն այն տարրերի հանդեպ, որոնք խոչընդոտում էին ուծացմանը կամ չէին նպաստում դրա իրականացմանը, դ) կուսակցական խիստ կարգապահության և գաղտնապահության առկայությունը, ե) հատուկ զինված ուժերի ստեղծումը գործողությունների մանրակրկիտ իրականացումն ապահովելու համար, զ) հասարակության թշնամանքի հրահրումը զոհ համարվող խմբերի նկատմամբ, է) թիրախ դարձած խմբերի աներկբա խոցելիությունը, որը հայերին տարբերակում էր դեռևս նախորդ՝ 1894-1896 թթ. կոտորածներով, ժ) նոր տեխնիկայի և հաղորդակցման միջոցների օգտագործումը՝ նախադեպը չունեցող խիստ վերահսկողության և համակարգման հասնելու նպատակով, ի) թալանի խրախուսումը, այն կիրառելուց խուսափող պաշտոնատարներին աշխատանքից վտարումը և պատժումը, ինչպես նաև զոհերին ապաստան տվողներին ահաբեկումը:*

*Հեղինակը չի անտեսում նաև այդ երկու ցեղասպանությունների միջև եղած տարբերությունները, որոնք, ըստ նրա՝ հիմնականում պայմանավորված են օսմանյան Թուրքիայի և նացիստական Գերմանիայի միջև զարգացման մակարդակների տարբերությամբ»:*

*Այս խնդրին մանրամասն անդրադարձել է նաև Վ. Տատրյանը իր «Հայոց ցեղասպանության և հրեական հոլոքոստի պատմական և իրավական աղերսները»* **(Dadrian V. N.,**

*"The Historical and Legal Interconnections between the Armenian Genocide and the Jewish Holocaust": from "Impunity to Retributive Justice") ծավալուն հոդվածում[17]:*

*Սակայն ձգտելով այս երկու երևույթների միջև ամեն ինչում նույնություն տեսնել՝ հեղինակը նշում է. «...Դարերի ընթացքում, մի կողմից, հայերի և թուրքերի, մյուս կողմից, հրեաների և գերմանացիների միջև ստեղծվել էր ուժերի ծայրահեղ անհավասար հարաբերակցություն, ձևավորվել էր հայերի և հրեաների «պատմական խոցելիությունը»»:*

*Այս նույնացումը հազիվ թե ճիշտ է արտահայտում պատմական իրողությունը, որովհետև, կարծես ակնարկվում է, թե հայերի բնաջնջման թուրքական քաղաքականությունը ցրցամ էր տրվել դարեր առաջ, ինչը սխալ է: Մինչև 19-րդ դարը հայկական գործոնը թուրք-օսմանյան քաղաքականության մեջ նշանակալից դեր չի խաղացել: Հայ ռայան հլու հնազանդ ենթարկվել էր օսմանյան քաղաքականությանը, ավելի հլու, ավելի անմռունչ, քան կայսրության մյուս ոչ մահմեդական ժողովուրդները:*

*Ամերիկյան գիտնական Ռ. Մելսոնն իր «Հոլոքոստի ինքնատիպության և համեմատելիության վերաբերյալ. Համեմատություն Հայոց Ցեղասպանության հետ» (Ավստրալիա, 1996) գրքույկում գրում է. «**1915թ. սկսված հայերի ոչնչացումը 20-րդ դարի առաջին տոտալ ցեղասպանությունն էր և նախադեպ հանդիսացավ ոչ միայն Հոլոքոստի, այլև նման բնույթի ուրիշ հանցագործությունների իրագործման համար**»[18]:*

*Սակայն այսպես են մտածում բոլո՞ր գիտնականները: Ոչ միայն հրեա, այլև Արևմուտքի ուսումնասիրողները, չնչին բացառությամբ, Հոլոքոստն են համարում ցեղասպանության դասական օրինակ: Բանը հասնում է ծիծաղելիության. եթե այս կամ այն զանգվածային ջարդն իր պատճառներով ու գործադրման միջոցներով նման չէ Ողջակիզմանը, ապա պարզապես համարվում է ջարդ:*

*Ռ. Մելսոնը գրում է, թե 19-րդ դարում հայերը և հրեաները Օսմանյան կայսրությունում և Գերմանիայում այնպիսի առաջընթաց ապրեցին, ինչը «դժգոհության պատճառ դարձավ տիրապետող հասարակություններում և թշնամական մթնոլորտ ստեղծեց նրանց համար»[19]: Եվրոպայում և ողջ աշխարհում հրեաների բարեկեցիկ վիճակն իրողություն էր, իսկ իրողությո՞ւն էր Օսմանյան կայսրությունում հայերի բարեկեցությունը: Քաղաքներում այդ հարցին մեծ վերապահումներով հնարավոր է նաև դրական պատասխան տալ, իսկ գյուղերում, որտեղ բնակվում էր կայսրության բնակչության 80-85%-ը, պատկերը միանգամայն ուրիշ էր: Նստակյաց թուրք գյուղացին ավելի շատ եկամուտ ուներ, քան հայը, բայց հայի կենցաղի մակարդակն ավելի բարձր էր: Նույն զարգացման ցածր մակարդակի պատճառով, մասնավորապես, քոչվոր քրդերի կենսամակարդակը, բնականաբար, հայից ցածր էր, չնայած այդ նույն քրդերի ապրուստի հիմնական միջոցներից էր նաև հայերի ունեցվածքի թալանը:*

*Այն, որ թանզիմաթից հետո հուլների, հրեաների և հայերի ձեռքն անցավ կայսրության տնտեսական կյանքի նշանակալից մասը, չի նշանակում, թե հայ բնակչության կենսամակարդակը նախանձելի բարձր աստիճանի հասավ:*

*Ռ. Մելսոնը բացարձակապես սխալ է, երբ գրում է. «Ի տարբերություն հայերի, որոնք ձգտում էին ինքնուրույնություն ձեռք բերել, հրեաները, լինելով ցրված ողջ Եվրոպայում, աշխատում էին ձուլվել տիրապետող հասարակության մեջ»: Ո՛չ հայերն էին ձգտում ինքնուրույնության և ո՛չ էլ հրեաները եվրոպական հասարակություններում ձուլվելուն: Հայկական հարցը մինչև 1918թ. չի եղել տարածքային, այսինքն՝ Օսմանյան կայսրության կազմում հայերի համար այնպիսի պայմանների ստեղծում, որոնք ապահո-*

---

[17] *"The Yale Journal of International Law"*, summer, 1998, vol. 23.

[18] **Melson R.**, *"On the Uniqueness and Comparability of the Holocaust: a Comparison with the Armenian Genocide"*, էջ 15-16:

[19] **Մաթոսյան Տ.**, *Հայոց ցեղասպանություն և հրեական հոլոքոստ. Համեմատական փորձ*, Երևան, 2005, էջ 8:

վեին նրա անվտանգությունն ու հնարավորություն ստեղծեին սոցիալ-տնտեսական զարգացման համար: Տրամաբանական չէ նաև պնդումը, թե հրեաները ճգտում էին «ճուլվել եվրոպական հասարակություններում»: Աչխարհում կա՞ թեկուզ մեկ հրեա, որ դադարած լինի հրեա լինելուց: Նրա փաստաթղթերում կարելի է հանդիպել նշումներ ամենատարբեր ազգություններին պատկանելու վերաբերյալ՝ գերմանացի, ռուս, անգլիացի և այլն, բայց ամենուրեք հրեան հաստատապես մնացել ու մնում է հրեա:

Իր "The Historical Dimensions of the Armenian Question. 1878-1923" աչխատանքում Ռիչարդ Հովհաննիսյանը Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի նմանությունները համարում է՝ ոճիրների իրականացում միջազգային խոչոր կոնֆլիկտի քողի տակ, օտարատյաց քաղաքական խմբակցությունների կողմից հանցանքի մտահղացում, ազգայնական-ռասիստական գաղափարախոսության առկայություն, նախապատրաստական փուլում կուսակցական խիստ կարգապահություն և գաղտնիության պահպանում, հատուկ զինված ջոկատների ստեղծում, հասարակական թշնամության գրգռում, զոհերի խոցելի վիճակ, տեխնիկական առաջընթացի և հաղորդակցության ասպարեզում եղած նվաճումների օգտագործում սպանություններ իրախուսելու նպատակով, պաշտոնների չնորհում և թալանի թույլատրում[20]:

Լուրջ նշանակություն անհնար է տալ իսրայելցի աստվածաբան Ֆ. Լիթելի կարծիքին, թե Հոլոքոստի և Հայոց Ցեղասպանության հնարավորությունները պայմանավորված էին նաև այն բանով, որ թե՛ Գերմանիայում և թե՛ Թուրքիայում ժողովրդավարությունը թույլ էր: Դրա փոխարեն Լիթելը միանգամայն իրավացի է, երբ որպես պատճառ նշում է նաև քաղաքականացված ռազմական ուժերի առկայությունը: Միաժամանակ հավասար նշանակություն տալը, թե Գերմանիայում հրեաները, իսկ Թուրքիայում հայերը համարվում էին ներքին թշնամի, ճիշտ չէ, եթե դիտարկվում է ժամանակաշրջանային խոչոր կտրվածքով[21]: Հաճախ է մոռացվում, որ եթե Գերմանիան ազգային կազմով գրեթե միատարր էր (բացի հրեաներից գերմանացու դիմաց չկար մի ուրիշ ազգ, որն ի վիճակի լիներ ինչ-որ չափով առճակատվել), իսկ Օսմանյան կայսրությունում բնակվում էին տասնյակ ազգեր ու ցեղեր և բնակվում էին հիմնականում իրենց պատմական հայրենիքներում: Բավական է նշել, որ կայսրությունում երկու անգամ ավելի շատ արաբ էր բնակվում, քան թուրք: Հետևաբար այս բնագավառում Թուրքիայի և Գերմանիայի միջև ընդհանրության փորձերն ապարդյուն գործ են: Եվ ո՛վ ասաց, թե թուրքերը թշնամական կեցվածք չուներին արաբների, հույների, բուլղարների հանդեպ:

Ամերիկյան հետազոտող է. Սթաուբը ցեղասպանությունները ածանցում է թուրքական և գերմանական հասարակությունների հոգեբանական անառողջ վիճակից[22]:

Միանգամայն իրավացի է Հ. Հակոբյանը, որ իր «Տարագիր Հայության Հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը» աչխատությունում (Երևան, 2002, էջ 87-125) գրում է, թե հայերը ոչնչացվեցին իրենց Հայրենիքում ու կորցրեցին այն, իսկ հրեաները՝ Եվրոպայում՝ սեփական Հայրենիքից դուրս ոչ միայն Հայրենիք չկորցրեցին, այլև Հոլոքոստից հետո կարողացան ստեղծել իրենց ազգային պետությունը՝ Իսրայելը: Նաև հարկ է չմոռանալ, որ Հայոց ցեղասպանությունը իրականացվեց Առաջին, իսկ Հոլոքոստը Երկրորդ աչխարհամարտի տարիներին, ինչը չէր կարող ազդեցություն չունենալ այդ երկու ցեղասպանությունների բնույթի և իրականացման եղանակների վրա:

Վ. Տատրյանը պարտադիր է համարում երկարատև կոնֆլիկտը **Հնարավոր զոհի և Հնարավոր դահիճի միջև**: Ըստ նրա՝ այդ կոնֆլիկտը ենթակա չէ լուծվելու խաղաղ ճա-

---

[20] "The Armenian Genocide in Perspective". Edited by **R. Hovhannissian.** New Brunswick, 1986, p. 30.

[21] **Լիթել Ֆ.**, Ողջակիզում և ցեղասպանություն. հիմնական զարգացումը. «Հայ ժողովրդի պատմություն»-ից, Երևան, 1990:

[22] **Staub E.**, *The Roots of Evil*, New York, 1989.

նապարհով[23]: Տևականությունը ինքնին չի ծնում ցեղասպանություն. նաև սխալ է պնդումը, թե այն «ենթակա չէ լուծման խաղաղ ճանապարհով»: Եթե այդպես լիներ երկիր մոլորակը կդառնար անհամար ցեղասպանությունների հրապարակ:

Գիտնականները մերժելով հրեության «մեղքը» բոլոր երկրներում, որտեղ նրանք բնակվում են սեփական ոչ հաճելի իմիջի պայմաններում (նրանց կամ ատում են և կամ նրանցից զգուշանում), չեն բացատրում այն երևույթի պատճառը, որ հրեական էթնիկ համախմբվածությունը ամենուրեք ուղղված է տվյալ երկրի մյուս ազգերի չհերի դեմ, որ գրեթե բոլոր երկրներում հրեական համայնքները ոչ միայն և ոչ այնքան տարագիրների գաղութներ են, որքան կրոնա-գաղափարային, ազգային-տնտեսական, ամուր շաղկապված, ինքնուրույն, որոշ առումով նաև ինքնամփոփ համայնք են, որի կանոնները ևս ծնում են հրեաների հանդեպ խորթություն, ոչ քիչ դեպքերում՝ նաև թշնամություն: Ընդ որում, այդպես է ոչ թե արտակարգ իրավիճակներում, այլ մշտապես:

Արդյո՞ք Թուրքիայում ու նրա սահմաններից դուրս հայերն ունեցել են նման ազգային ներփակ համայնքներ և մշտական հակադրության մեջ եղել թուրքերի ու մյուս ազգությունների հետ: Ազգային խմբերի միջև հակասություններ եղել են ու կլինեն: Ինչո՞ւ են քաղաքներում ձևավորվում ազգային թաղեր: Կ. Պոլսում կար և այժմ էլ կան հունական, հրեական, հայկական, քրդական, եվրոպական և շատ այլ թաղեր: Մի պարզ պատճառով՝ ազգային սովորությունները, անվտանգության բնազդն իսկ էթնիկ խմբերին մղում են խմբավորման՝ ազգային պատկանելիության հողի վրա: Բայց դա չի նշանակում, թե նման իրադրությունը ծնում է ցեղասպանություն կամ նպաստում է դրան:

Սկսած 19-րդ դարասկզբից հրեաների վիճակը Գերմանիայում հետևողականորեն բարելավվում էր, իսկ 1870-ական թվականներից նրանք օրենքով պաշտպանված, լիիրավ քաղաքացիներ էին և սկսեցին շատ արագ ու տպավորիչ ձեռքբերումներ ունենալ տնտեսական կյանում, հասարակական ծառայություններում, դիտության և արվեստի բնագավառներում:

Այդպես էր ոչ միայն Գերմանիայում, այլև եվրոպական գրեթե բոլոր երկրներում: Անգամ Լեհաստանում, որտեղ հակասեմիտիզմը շատ ուժեղ էր, 1937-38թթ. գործում էր հրեական 267 դպրոց մոտ 43 հազ. աշակերտով, հրատարակվում էր ավելի քան 200 հրեական թերթ ու ամսագիր, հրեական մի շարք քաղաքական կուսակցություններ ներկայացված էին եվրոպական խորհրդարաններում[24]:

Սխալ է այն կարծիքը, թե 1839թ. (թանզիմաթ) և 1856թ. բարեփոխումների ծրագրերը «մնացին թղթի վրա»: Ճիշտ է, այդ բարեփոխումները էական ազդեցություն չունեցան թուրք հասարակության վրա, սակայն դրանք հնարավորություն տվեցին զարգացման բարձր մակարդակի վրա գտնվող ժողովուրդների՝ հայ, հույն, հրեա որոշակի խավերին, օգտվել այդ բարեփոխումներից և կարճ ժամանակում դառնալ օսմանյան տնտեսության և չուկայի տերը: Եվ երբ 1860-70-ական թվականներին թուրքական բուրժուազիան հրապարակ իջավ և թուրքական չուկայում ազատ տեղեր չգտավ, արշավ հայտարարեց «թալանչի գյավուրներից» կայսրությունը փրկելու համար: Օսմանյան կայսրությունում կատարվեց այն, ինչ տեղի է ունեցել շատ երկրներում, երբ ազգային բուրժուազիան արշավի էր ելնում երկրի չուկայի տիրակալ դառնալու համար: Նման դեպքերում պայքարը ընթանում էր ազգային դրոշի ներքո: Թուրքիայում նշանաբան դարձավ՝ երկիրը մաքրել գյավուրներից, ինչը հայերի պարագայում վերածվեց բնաջնջման քաղաքականության: Թերևս սեփական չուկայի համար պայքարն էլ կայսրությունում ծնեց բացարձակ միապետություն, որը մարմնավորվեց սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի անձի մեջ:

---

[23] **Dadrian V.**, *The Determinants of the Armenian Genocide*, 1998, p. 1.

[24] **Кохави Е.**, *Еврейский мир в середине XX века..., См. "Холокост - Сопротивление - Возрождение"*, М.-Иерусалим, 2000, стр. 23.

*1862թ. Զեյթունի ապստամբությունը, Հայ ազգային սահմանադրության համար պայքարը, հայկական շարժումների քաղաքականացումը (1872 և 1876թթ. տեղեկագրեր), բուլղարական հարցը և, մասնավորապես, 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմն ու հայկական հարցի միջազգայնացումը հայ-թուրքական հակասությունները վերածեցին առճակատման:*

*Այս գործում երկրորդական դեր չխաղաց այն, որ մեծ տերություններն օգտագործեցին Հայկական հարցը Օսմանյան կայսրության գործերին միջամտելու և նրանից տարածքային ու այլ զիջումներ ստանալու համար:*

*Աբդուլ Համիդ 2-րդը բարենորոգումների կատաղի հակառակորդ էր: Նա Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածից եզրակացրեց՝ դրանցից խուսյս տալու միայն մի ուղի կար՝ հայկական նահանգներում հայերի թիվը նվազեցնել այնքան, որ այլևս պարտադրանք չլիներ նրանց համար բարենորոգումներ մտցնել: Հայոց ցեղասպանության գլխավոր պատճառները, այսպիսով, երկուսն էին՝ ա. Փոքր Ասիայում թուրքերի թվական գերակայության ստեղծումը և բ. հայկական նահանգներում բարենորոգումների անցկացման տապալումը, որովհետև բարենորոգումները հանգեցնելու էին հայերի թվի ոչ թե կրճատման, այլ աճին:*

*Ջենք կարծում ճիշտ, երբ հրեաների օրինակով առաջ է քաշվում նաև հայերի «պատմական խոցելիության» հարցը: Վկայակոչվում է ամերիկյան գիտնական Հ. Ֆեյնի այն միտքը, թե Ցեղասպանությունից դեռ շատ առաջ հայերն ու հրեաները իրենց իշխող խմբերի կողմից դուրս էին մղվել այսպես կոչված «պարտավորությունների ոլորտից, այսինքն՝ մարդկանց այն խմբից, որի անդամները միմյանց պաշտպանելու փոխադարձ պարտավորություն ունեին»[25]: Խրթին միտք է, ինչ-որ չափով անհասկանալի, որովհետև եթե խոսքը հայերի իրավազրկության մասին է, ապա կայսրությունում իրավազուրկ էին ոչ միայն նրանք: Փաստարկը հետևյալն է. օսմանյան տիրապետության հաստատումից հետո՝ «թեև քրիստոնյաների հողերը թուրքերի կողմից հայտարարվեցին նվաճված, այնուամենայնիվ, որպես կանոն, դրանք մնացին նախկին տերերի ձեռքին հարկեր վճարելու պայմանով»[26]: Շփոթ է: Օսմանյան Թուրքիայում, ինչպես Առաջավոր Ասիայի երկրների ճնշող մեծամասնությունում հողի մասնավոր սեփականություն գոյություն չուներ. դրա գերագույն սեփականատերը պետությունն էր: Այդպես էր վիճակը ոչ միայն օսմանաբնակ հայերի, այլև կայսրության մյուս բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև թուրքերի առումով: Մահմեդական ավատատերը նույնպես հողի սեփականատեր չէր, այլ նրա տնօրինող և, եթե ինչ-որ բան այնպես չէր անում, սուլթանը նրան ոչ միայն պաշտոնազրկում էր, այլև հետ վերցնում տվյալ կալվածքը տնօրինելու իրավունքը:*

*Հետևաբար արևմտահայության «կյանքի ծանր պայմանները» բացատրել, որ նա հողի սեփականատեր չէր, հազիվ թե ճիշտ է: Մանավանդ որ ընդհանուր առմամբ՝ թուրք գյուղացու կենսամակարդակն ավելի բարձր չէր, քան հայինը: Ընդ որում, Գերմանիայում և այլևայլ երկրներում նույնպես հրեաների կենսամակարդակը ցածր չէր, քան տվյալ երկրի հիմնական ազգության պատկանողներինը: Ճիշտ հակառակն էր:*

*Թվում է, ճիշտ չէ նաև անվերապահ պնդումը, թե վաշխառուությունը Թուրքիայում հետևանք էր այն բանի, որ «Մուհամմեդ մարգարեն արգելել էր իր հավատքի հետևորդներին վաշխառությամբ զբաղվել», ինչի պատճառով վաշխառությունն անցավ հույների, հայերի և հրեաների ձեռքը: Թուրքերի պարագայում անհրաժեշտ է վերապահումով վերաբերվել այս մտքին, որովհետև մինչև 19-րդ դարի կեսերը Թուրքը խուսափում էր ոչ միայն վաշխառությամբ, այլև, ընդհանրապես, տնտեսական գործունեությամբ զբաղվել՝ այն համարելով իր համար «անպատվաբեր» զբաղմունք: Թուրքը ո՛չ հող էր մշակում,*

---

[25] **Fein H.**, *Accounting for Genocide*. N.-Y., London, 1979, p. 4.

[26] **Մաթոսյան S.**, նշվ. աշխ., էջ 26:

*ո՛չ առևտրով ու արհեստագործությամբ զբաղվում, նա կայսրության տերն էր և զբաղված էր միայն բանակում և պետական կառավարման մարմիններում: Հենց այդպես էլ պետք է հասկանալ Մուրադ 4-րդ սուլթանի ասածը. «Ո՞վ պետք է ապահովի մեր եկամուտները, եթե չլինեն ռայաները»[27]: Այո, սուլթանները, նկատի ունենալով, որ կայսրությունը գոյություն ունենալ չէր կարող առանց գյավուրների, որովհետև թուրքը աչխատել, նյութական և հոգևոր բարիքներ ստեղծելն իր արժանապատվությունից ցածր զբաղմունք էր համարում, հարկադրված էին ոչ քիչ դեպքերում նաև սիրաշահել գյավուրներին: Դրա արտահայտություններից էր նաև 1492թ. Իսպանիայից հրեաների արտաքսման կապակցությամբ սուլթան Բայազիդ 2-րդի ասածը. «Այդ Ֆերդինանդը հիմար մեկն է. նա աղքատացրեց իր երկիրը և միաժամանակ հարստացրեց իմը»[28]:*

*Համաձայնվել չի կարելի հետևյալ մտքի հետ «...հայերի և հրեաների տնտեսական զբաղմունքներն առաջին հերթին բխում էին տիրապետող ազգային և կրոնական համայնքների նպատակահարմարությունից»[29]: Իսկ ո՞ւմ «նպատակահարմարության» մղումով էին հայերը տնտեսական գործունեությամբ զբաղվում թուրքական տիրապետությանը նախորդած մի քանի հազար տարիներին: Տնտեսական գործունեությունը մարդկության զարգացման անգամ բարբարոսական շրջանում հանդիսացել է առաջատար բնագավառ, ուր մնաց թե միջնադարում ու նոր շրջանում: Ընդ որում, տնտեսական գործունեությունը թելադրված է ոչ թե հասարակական այս կամ այն խավի չահերով, այլ հասարակության զարգացմամբ: Նստակյաց կյանքի անցած ցեղերի ու ժողովուրդների համար տնտեսական գործունեությունն առանցք է, գոյատևման ու զարգացման առաջնային միջոց:*

*Անհաջող ձևակերպում է. «...19-րդ դարի ընթացքում հայերի ու հրեաների տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման արդյունք հանդիսացող հասարակական առաջընթացը «Հայկական հարցի» և «Հրեական խնդրի» ձևավորման պատճառներից մեկը հանդիսացավ»[30]: Ստացվում է, որ ցեղասպանությունը ոչ թե թուրքերի ու գերմանացիների նկրտումների, այլ հայերի ու հրեաների ձեռներեցության հետևանք էր:*

*«Հայերի և հրեաների իրավազրկության մի այլ դրսևորում էր,– գրում է Տ. Մաթոսյանը,– իշխանության տարբեր ինստիտուտներ մուտք գործելու անհնարինությունը, հանգամանք, որը քիչ դեր չխաղաց հետագայում նրանց ոչնչացման գործում»[31]: Արդյո՞ք նույն խոչընդոտը գոյություն չուներ ազգային փոքրամասնությունների համար Ռուսաստանում: Ամերիկյան գիտնական է. Գելները բացարձակ իրավացի է, երբ գրում է. «...ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին օգտագործելը... ընդունված էր հենց այն պատճառով, որ նրանք օտար էին և անուժ»: Այս միտքը հաստատելու համար Տ. Մաթոսյանը վկայակոչում է Հալեպի անգլիական հյուպատոս Թ. Սքինին, թե «Տեղական «մեջլիսի» կազմում երկու քրիստոնյաներ կան, որոնց մասնակցությունը խիստ ձևական բնույթ է կրում: Նրանք չեն մասնակցում քննարկումներին և արժանանում են ամենավերին արհամարհանքի, երբեք չեն համարձակվում արտահայտել իրենց կարծիքը կամ անհամաձայնությունը[32]:*

*«Տեղական» մեջլիսին օրինակ բերել կարելի է, բայց ինչո՞ւ է անտեսվում հայերի մարտական կեցվածքը օսմանյան խորհրդարանում որոշակի հարցերի քննարկման ժամանակ: Եվ, վերջապես, զարմանալու ի՛նչ կա, որ օրենսդիր մարմնում չնչին փոքրամասնություն կազմող խմբակցությունն ավելի հաճախ աննշմարելի վիճակում է լինում,*

---

[27] Նույն տեղում, էջ 28:

[28] Дубнов С., *Краткая история евреев*, Ростов-на-Дону, 2000, стр. 479.

[29] Մաթոսյան Տ., նշվ. աշխ., էջ 29:

[30] Melson R., *Revolution and Genocide*, Chicago, 1992, p. 247.

[31] Մաթոսյան Տ., նշվ. աշխ., էջ 29:

[32] Krikorian M., *Armenians in the Service of the Ottoman Empire 1860-1908*, London, 1977, p. 102.

*գործնական ազդեցություն չի ունենում քննարկումների և օրենքների ընդունման վրա: Ներկայիս Ռուսաստանի օրենսդիր մարմիններում հաճա՞խ է հնչում հայ պատգամավորների ձայնը: Ընդհանրապես չի հնչում, չնայած այդ երկրում բնակվում է 2,5 միլիոն հայ:*

*Օսմանյան կայսրությունում բանակ չէին զորակոչվում և զենք կրելու իրավունք չունեին ոչ միայն հայերը, այլև բոլոր ոչ մահմեդականները: Ինչ վերաբերում է կրոնական հալածանքներին, ապա դրանք տարբեր ձևով ու խստությամբ եղել են միշտ գրեթե բոլոր, այդ թվում նաև եվրոպական երկրներում:*

*Կասկածելի է նաև հետևյալ միտքը, թե ի տարբերություն հրեաների՝ հայերը «ժամանակ առ ժամանակ դիմել են զինված ինքնապաշտպանության կամ ապստամբությունների, որոնք պետք է դիտել թուրքական տիրապետության դեմ մղվող ազգային-ազատագրական պայքարի համատեքստում: Սակայն սեփական իրավունքների պաշտպանությանն ուղղված պայքարի քիչ թե շատ ակտիվ ձևերը հաճախ արյունոտ հետևանքներ էին ունենում հանգեցնելով զանգվածային կոտորածների»[33]: Կասկածելի է, որովհետև արևմտահայության համար բնութագրականը ոչ թե «ժամանակ առ ժամանակ» ապստամբելն էր, այլ թուրքական դաժան լուծը անմռունչ տանելը: Մինչև 19-րդ դարը մենք արևմտահայության ապստամբության մասին չգիտենք, որը հնարավոր լիներ դիտելու «ազատագրական պայքարի համատեքստում» և այդ պայքարը չէր, որ ծնում էր «զանգվածային ջարդեր»: Եզակի դեպքեր են հայտնի, երբ հայկական չարժումներն օգտագործվել էին որպես պատրվակ զանգվածային ջարդերի համար: Օրինակ, Սասունի 1894թ. ինքնապաշտպանական կռիվները:*

*Թվում է, թե գերագնահատված է նաև կաշառքի ցեղասպանածին դերը: Արևելքում կաշառքը եղել է կառավարման պարտադիր միջոցներից մեկը և օգտագործվել է ոչ միայն հայերի ու այլակրոնների, այլև մահմեդականների ու թուրքերի հանդեպ: Ու նաև, Բաղեշի դատավորի 1705թ. հրամանը, թե մահմեդականություն ընդունածների ե-րեխաները նույնպես մահմեդական պիտի դառնային, ոչ մի դեր խաղալ չէր կարող ցեղասպան մթնոլորտի ձևավորման գործում[34]:*

*Դրա կողքին որոշ վերապահումներով հանդերձ՝ հեղինակը իրավացի է, երբ հայերի ստրկամիտ վարքագծի օրինակներ է բերում անգամ այն օրերին, երբ ցեղասպանությունն արդեն գործողության մեջ էր: Օրինակ, մեջբերում է կատարվում Ա. Անտոնյանի «Մեծ ոճիր»-ից, թե 1915-ի սկզբին, երբ հայերին Հալեպի մերձակայքից քշում էին, տեղի վալին 10000 աղերսագիր ստացավ, որպեսզի իրենց չտեղահանեին[35]: Թոքաթի հայերը բռնագաղթի մասին հրամանը ստանալուց հետո մութեսարիֆին 1600 օսմանյան ոսկի կաշառք տվեցին չբռնագաղթելու համար[36]:*

*Նույն բանը կատարվում էր նաև զորահավաքի ժամանակ: Հեղինակը բերում է Մարզվանի օրինակը, որտեղ քահանաները տնից տուն էին անցնում ու հորդորում 15-70 տարեկան տղամարդկանց ներկայանալու զորակայաններ[37]: Դեռ ավելին, շատ վայրերում զորակոչն ու ռազմաճակատի մատակարարումը կատարվում էր հայ քաղաքական կուսակցությունների միջոցով: Վանում Զորակոչի հանձնաժողովի նախագահը Արամ Մանուկյանն էր, որը նվագախմբի առաջն ընկած թաղից թաղ էր անցնում ու հորդորում հայերին մասնակցելու զորակոչին: Տարոնում Զորակոչի և ռազմաճակատի մատակարարման հանձնաժողովի նախագահը ՀՅԴ մի ուրիշ ղեկավար Վ. Փափազյանն էր, որի անմիջական ղեկավարությամբ էին ձևավորվում չալակավորների խմբեր. դրանք զորքի*

---

[33] **Մաթեոսյան Տ.**, նշվ. աշխ., էջ 34:
[34] **Զուլալյան Մ.**, նշվ. աշխ., էջ 75:
[35] **Անտոնյան Ա.**, *Մեծ ոճիր: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշան*, Երևան, 1990, էջ 100:
[36] *«Հայկական ջարդերը: Տոքթ. Ց. Լեփսիուսի տեղեկագիրը»*, Բեյրութ, 1965, էջ 68:
[37] Նույն տեղում, էջ 77:

համար հայթայթված սննդամթերքը և հագուստեղենը չալակած՝ ճանապարհ էին հանվում դեպի ռուս-թուրքական ռազմաճակատ: Բարձր Հայքի սառնամանիքներին այդ չալակավորների մոտ կեսը զոհ գնաց բքին, քաղցին, հիվանդություններին: ՀՅԴ Տարոնի կենտկոմի ղեկավար Կոտոյան Հակոբը անձամբ էր ղեկավարում ռազմաճակատ զենք ու զինամթերք հասցնելու գործը: Նման օրինակները բազմաթիվ են:

Ռ. Մելսոնն իր "Revolutionary Genocide: On the Causes of the Armenian Genocide of 1915 and the Holocaust" ուսումնասիրությունում[38] գրում է, թե ցեղասպանության բնույթը հասկանալու համար պետք է պատասխանել նաև հետևյալ հարցերին. ա) որո՞նք են այն ներքին և արտաքին պայմանները, որ թույլատրեցին ցեղասպանության հակում ունեցող ուժերին հասնելու պետական իշխանության և բ) ի՞նչ պատճառներով, աչխարհայացքով և զգացմունքով էին առաջնորդվում այդ ուժերը, երբ ցեղասպանության որոշում էին կայացնում: Հեղինակը դա հիմնավորում է՝ թե՛ Գերմանիայում և թե՛ Օսմանյան կայսրությունում միապետության տապալմամբ և իթիհատի ու նացիստների իշխանության գլուխ գալով: Ճիշտ հարցադրում է, չնայած Աբդուլ Համիդ 2-րդին գահընկեց անելը նշանակեց ոչ թե միապետական վարչակարգի ոչնչացում, այլ անցում սահմանադրական միապետության: Թուրքիայում միապետությունն իսպառ վերացվեց միայն 1923թ: Այնուամենայնիվ, բացարձակ ճշմարտություն է, որ թե՛ Գերմանիայում և թե՛ Թուրքիայում իշխանության եկան ոչ թե ժողովրդավարական, այլ ծայրահեղ բռնատիրական մարդատյաց քաղաքական ուժեր, որոնք էլ իրականացրեցին հրեաների և հայերի բնաջնջումը:

Ընդհանրություններ կան ֆաշիստական և երիտթուրքական գաղափարախոսությունների միջև, որոնք նաև ծնունդ էին Թուրքիայի 1908-1913թթ. և Գերմանիայի 1913-1933թթ. սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր վիճակի, չնայած Թուրքիայում առաջին պլանում էին քաղաքական և ռազմական ձախողումները Տրիպոլիսի և Բալկանյան պատերազմներում:

Սակայն դժվար է համաձայնվել այն մտքին, թե այդ ժամանակահատվածում «վերջնականապես» ձևավորվեց պանթուրքիստական գաղափարախոսությունը: Բանն այն է, որ պանթուրքիզմը որպես գաղափարախոսություն ծնվեց ու ձևավորվեց ոչ թե Թուրքիայում, այլ Ռուսաստանում և կոչված էր ռուսական տիրապետության դեմ միավորել աչխարհի թուրքական ցեղերին և ժողովուրդներին: Նախատեսվում էր այդ միավորումն իրագործել Թուրքիայի գլխավորությամբ ու նրա չուրջը: Եվ պատահական չէ, որ երբ ստոլիպինյան ռեակցիայի պատճառով թուրքիստները հարկադրված եղան հեռանալ Ռուսաստանից, հավաքվեցին Թուրքիայում և պանթուրքիստական ակումբների միջոցով միավորվելով տեղի չովինիստների հետ՝ թափ հաղորդեցին թուրանական աչխարհակալ ծրագրերի մշակմանը: Սակայն հիմնովին սխալ է, երբ թուրքիզմը համարում են պանթուրքիզմի տարատեսակ կամ բաղադրիչ: Թուրքիզմը զուտ օսմանյան թուրքերի ծնունդ էր. դրա հեղինակը սուլթան Աբդուլ Համիդ 2-րդն էր և խնդիր ուներ ոչ թե նոր տարածքներ, երկրներ ու ժողովուրդներ նվաճելու, այլ ընդհակառակը՝ անգամ հրաժարվելու օսմանյան որոշ տարածքներից և Փոքր Ասիայում ձևավորել ազգային պետություն: Բայց քանի որ անգամ Փոքր Ասիայում թուրքերը փոքրամասնություն էին, ապա խնդիր առաջադրվեց «թուրքացնել Անատոլիան», այսինքն՝ այնպիսի քաղաքականություն վարել, որը կարճ ժամանակամիջոցում ապահովեր թուրքերի թվական գերակչռությունն այդ տարածքում: Ըստ այդմ էլ, Հայոց ցեղասպանության գաղափարախոսական հիմքը ոչ թե պանթուրքիզմը կամ թուրանիզմն էր, այլ թուրքիզմը:

Ճիշտ չէ նաև պնդումը, թե երիտթուրքական կուսակցության գաղափարախոսությունը պանթուրքիզմն էր: Այդ կուսակցությունն այդպես էլ չկարողացավ մշակել գա-

---

[38] "Holocaust and Genocide Studies", 1989, Volume 4, Number 2.

*դափարախոսական հստակ սկզբունքներ և մշտապես տարընթացություններ մեջ էր՝ մերթ ընկնում էր իսլամիզմի, մերթ օսմանիզմի, մերթ էլ թուրքիզմի ու պանթուրքիզմի գիրկը: Ընդ որում, չի եղել մի պահ, երբ ամբողջ կուսակցությունը կամ անգամ նրա ղեկավար կորիզը հարեր այդ գաղափարախոսություններից որևէ մեկին: Եթե Թալեաթը և երիտթուրքական կենտրոնի անդամների ստվար մասը հարում էին թուրքիզմին և դրա համար էլ դարձան հայերի բնաջնջման նախաձեռնողներ ու գլխավոր կազմակերպիչներ, ապա Էնվերն ու իր համախոհները ձգտում էին աշխարհակալության, այսինքն՝ պանթյուրքիստներ էին: Սովորաբար ասում են, թե Զիա Գյոքալփը կուսակցության տեսաբանն էր, նրա գաղափարախոսության մշակողը: Նա իսկապես տեսաբան էր, բայց Թալեաթը առիթը բաց չէր թողնում Զիային ու նրա հեղինակած պանթուրքիզմը ծաղրելու համար:*

*Նման իրողությունը հետևանք էր այն բանի, որ իթիհադը[39] ձևավորվեց ո՛չ թե որոշակի տեսական հիմքի վրա, ո՛չ թե սոցիալ-քաղաքական աշխարհայացքային որոշակի նպատակներ իրականացնելու, այլ Աբդուլ Համիդ 2-րդին գահընկեց անելու և իշխանությանը տիրանալու համար: Իսկ դա պահանջում էր ոչ թե ստեղծել սեփական գաղափարախոսություն, այլ սիրախաղեր այս կամ այն գաղափարախոսության հետ՝ հասարակական կարծիքն հօգուտ իրեն տրամադրելու համար: Եվ ոչ ավելին:*

*Նաև նշենք, որ երիտթուրքական ոչ մի որոշման մեջ (ինչին հնարավոր է եղել ծանոթանալ) չկա տրամադրություն օսմանյան նոր, աշխարհակալ կայսրություն ստեղծելու: Դրա փոխարեն բազմաթիվ փաստաթղթեր «Թուրքիան Թուրքացնելու» վերաբերյալ: Անգամ 1911-ին տեղի ունեցած երիտթուրքական 4-րդ համագումարի ընդունած որոշման մեջ կարդում ենք. «Վաղ թե ուշ պետք է տեղի ունենա կայսրության բոլոր ժողովուրդների օսմանացումը և եթե դա հնարավոր չլինի իրականացնել խաղաղ միջոցներով, չպետք է զերծ մնալ բռնի, ընդհուպ մինչև ռազմական միջոցների կիրառումից»[40]:*

*Ընդ որում, անգամ ծայրահեղ պանթուրքիստները թուրքերի գործունեության գլխավոր ասպարեզը համարում էին Թուրքիան: Զիա Գեոքալփը գրում է, թե Թուրքիան ուժեր պետք է քաղի Անատոլիայի «կոչտ» գյուղացիությունից: Նրա կենսագիր Ու. Հեյդի կարծիքով, այդ գործիչը երիտթուրքական կոմիտում զբաղվում էր ոչ այնքան արտաքին քաղաքական, որքան ներքին (ազգային՝ հատկապես հայկական) խնդիրներով և նրա առաջարկությունները հիմնականում ընդունվեցին կառավարության կողմից և ի կատար ածվեցին աշխարհամարտի տարիներին[41]:*

*Հայերի հանդեպ թշնամական վերաբերմունքը ձևավորվեց տասնամյակների ընթացքում և սկզբնավորվեց հայ սեղանավորներին վարկաբեկելու միջոցով, որոնք թուրք հասարակությանը ներկայացվում էին որպես «տզրուկ» ու «դավաճան»[42]: Հակահայ այդ բամբասանքի եռանդուն մասնակից էին նաև գերմանական որոշ շրջաններ: Ա. Վիրսը, որը հակահրեական պանգերմանական չարժման պարագլուխներից էր, գրում է, թե հայերը «ծծում են թուրք գյուղացիների արյունը»[43]:*

*Գերմանական ֆաշիզմի հիմնադիրներից մեկը գտնում էր. «...Այսօրվա սիրիացուն, հրեային և հային միայն դժվարությամբ կարելի է տարբերել իրարից, ինչը հեչտությամբ բացատրվում է այն հանգամանքով, որ այդ ժողովուրդների նախարմատ ցեղերից ժառանգված գծերը չարունակում են գերակշռել նրանց առանձնահատկություննե-*

---

[39] *Սովորաբար իթիհադը գրվում է երկու թ-ով: Մենք գրում ենք թ-ով, որովհետև հակառակ դեպքում հարկ կլիներ վերասրբագրել աշխատությունում օգտագործվող թուրքերեն չատ բառեր, մանավանդ որ մենք՝ հայերս ասում ենք ոչ թե իթթիհադ, այլ իթիհադ:*

[40] *«Հայոց ցեղասպանություն. պատճառներ և դասեր», մաս 3-րդ, Երևան, 1997, էջ 18:*

[41] **Heyd U.**, *The Foundations of Turkish Nationalism*, London, 1950, p. 36.

[42] **Զարևանդ**, *Միացեալ, անկախ Թուրանիա*, Երևան, 1993, էջ 82:

[43] *Տե՛ս* **Kaizer H.**, *Imperialism, Racism and Development Theories. The Construction of Dominant Paradigm on Ottoman Armenians*, 1997, p. 18.

*րին»[44]: Եվ ապա. «Հայերը խեթերից, որպես ժառանգություն, բացի հրեական քթից, ստացել են նաև հրեայի նույն ագահությունը, գործարարի խորամանկությունը, վաշխառության նկատմամբ ունեցած նույն կիրքը՝ միայն թե ավելի մեծ չափով: Արևելքում ընդունված է ասել՝ մեկ հայը երեք հրեա արժե»[45]:*

*Հարավային Ռուսաստանում հրեաների ոչնչացմամբ զբաղվող ջոկատներից մեկի հրամանատար Բիբերշտայնը հարցաքննության ժամանակ ասել է՝ իրեն տեղեկացրել են, թե այն վայրերում, որտեղ հայեր են բնակվում, շատ հրեա չկա[46]:*

*Առավելապես հայերին, հույներին և հրեաներին են վերաբերում Զիա Գեոքալփի հետևյալ խոսքերը, թե դարեր շարունակ ոչ մահմեդական ժողովուրդները եղել են թուրքերի համար տնտեսական մակաբույծներ[47]: Անհավանական չէ, որ նման մտահոգությունը կարող էր ծնել նաև այդ ժողովուրդներին ոչնչացնելու դիտավորություն: Մանավանդ որ երիտթուրքական քաղաքական համակարգում երկրորդ տեղում չէր զուտ թուրքական տնտեսություն ստեղծելու ծրագիրը: «Ազգային տնտեսություն» ասելով երիտթուրքերը հասկանում էին՝ ձերբազատվել ոչ թուրք տարրերից և ձևավորել թուրքական բուրժուազիա:*

*Թևքին Ալփը իր "The Turkish and Pan-Turkish Ideal" (Լոնդոն, 1917) գրքի էջ 37-39-ում հաստատում է, որ Առաջին ախարհամարտի նախօրեին ծայր առած ազգայնական շարժումն առաջացրեց ձգտում բոյկոտելու այլակրոնների տնտեսությունը, որի հետևանքով դադարեցին աշխատելուց հարյուրավոր հայ և հույն առևտրականներ, լայն տարածում ստացավ հայերի ունեցվածքի թալանը «Բռնի հավասարեցում» կարգախոսով[48]:*

*Այդ մասին վկայություն կա նաև Զիա Գեոքալփի «Թուրքիզմի հիմունքներ» (Անկարա, 1920) գրքում, որի 54-րդ էջում ամենայն որոշակիությամբ ասվում է, թե աչխարհամարտը ընդհատեց «ազգային տնտեսության» տեսաբանների տեսական գործունեությունը և հանգեցրեց այդ ծրագրի գործնական իրագործմանը:*

## *2. ԻՆՉՈՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԴԱՐՁԱՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԶՈՀԸ, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԱՌԱՋԻՆ ԵՐԿԻՐԸ, ՈՐՏԵՂ ԱՅՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵՑ*

*Պատճառները մի քանիսն են ու խմբավորվում են հետևյալ կերպ. աչխարհագրական-տարածքային գործոն, միջազգային հարաբերություններից բխող գործոն, պատմական գործոն, Օսմանյան կայսրության ձևավորման ու անկման առանձնահատկություններից բխող գործոն, Հայաստանի և հայ ժողովրդի ներքին կացությունից բխող գործոն:*

***Աչխարհագրական-տարածքային գործոն.—*** *Հայաստանն ընկած է Մեծ սարահարթի կենտրոնական մասում, որը ձգվում է Ատլանտյան օվկիանոսից մինչև Խաղաղ օվկիանոս: Այն երկրաշարժերի, քաղցկեղ հիվանդության, ցեղերի ու ժողովուրդների տեղաշարժերի, երկիր մոլորակի ֆուրտ ու չոգ գոտինները, սպիտակամորթ ու ոչ սպիտակամորթ ռասաները միմյանցից անջատող սահմանագիծն է: Այն «աչխարհի տանիքն» է:*

*Մեծ սարահարթը Արևելք-Արևմուտք առճակատման հարահոսն է ու նաև՝ Հյուսիս-Հարավ խորթության ջրբաժանը: Հայկական բարձրավանդակը սարահարթի չղթայում բացառիկ դիրք ունի՝ հանդիսանում է դրա երկրաբանական կենտրոնական հնոցը՝ գտնվելով հյուսիսային երկու ծայրօձախների՝ Ճապոնական կղզիների ու Իսլանդիայի գրեթե մեջտեղում: Այն նաև կենտրոնն է լեռնազանգվածի երկու բավիղների՝ Կարակո-*

---

[44] **Чемберлен Г.**, *Еврей, их происхождение и причины их влияния в Европе*, СПб., 1919, стр. 62.
[45] *Նույն տեղում*, էջ 117:
[46] *Նույն տեղում*, էջ 661:
[47] **Geokalp Z.**, *The Principles of Turkism*, Leiden, 1968, p. 65.
[48] **Զարևանդ**, *նշվ. աչխ*, էջ 83:

*յումի և Մոնբլանի, որոնցից առաջինը ձևավորել է Ասիայի, իսկ երկրորդը Եվրոպայի բնաշխարհները: Դրանք, հանդիպակաց չարժման ընթացքում իրար հանդիպելով Արարատի շրջանում, Հայաստան աշխարհի մեջ ներարկել են թե՛ եվրոպական և թե՛ ասիական բնաշխարհների որոշակի գծեր, ձևավորել եվրասիական բնութագիր ունեցող Հայկական բարձրավանդակի ռելիեֆն ու կլիման: Ստրաբոնը Եվրոպայի ու Ասիայի սահմանագիծը համարում էր ոչ թե Կովկասյան լեռնաշղթան, այլ՝ Տավրոսը:*

*Հայաստանը Ասիայի ու Եվրոպայի համար թե՛ կամուրջ է և թե՛ վիհ: Եվ այդ ոչ այն առումով, որ, ինչպես Լինչն է ասում, Հայաստանում խաչվում են «չրջակա երկրների բնական իրողութիւնները», ինչով պայմանավորված է բարձրավանդակի բնակլիմայական խայտաբղետությունը, այլ այն պատճառով, որ Արևելք-Արևմուտք ուղղությամբ իրար է կապում իրանական արիացիների և արմենոիդ-ալպյան ցեղերի հայրենիքները, իսկ հյուսիսից հարավ բաժանում է մոնղոլական և սեմական ժողովուրդների բնաշխարհները:*

*Հայկական սարահարթը բջջային կազմություն ունի, որի բաղկացուցիչ մասերն իրարից մեկուսացած են բարձրաբերձ լեռներով ու խորխորատներով, ինչը նույնպես ձևավորել է ոչ միայն բնակլիմայական պայմանների, այլև հասարակական երևույթների, մտածողության խայտաբղետություն: Այն իր հերթին ծնել է մեկուսացում, կենտրոնախույս տրամադրություն, այլևայլ կողմնորոշումներ:*

*Դրա հետ միասին Հայաստանում են սկիզբ առնում Աստվածաշնչում հիշատակված չորս գետերից երկուսը՝ Եփրատն ու Տիգրիսը: Հայկական բարձրավանդակն Առաջավոր Ասիայի գետերը սնող գլխավոր ջրային ավազանն է: Լինչի կարծիքով՝ «ամբողջ երկրագնդում ոչ մի այլ տեղ բնությունը ճարտարապետի իր դերում չի ստեղծագործել ավելի վիթխարի ծավալներով, և ոչ մի այլ տեղ նրա ստեղծագործության արդյունքներն այնքան խոր ազդեցություն չեն թողել մեծ ազգերի բախտի վրա, ինչպես Հայաստանում: Ասիան հասկանալու համար հարկ է մոտիկից իմանալ Հայաստանը: Նույնիսկ նրանք, ովքեր մերժում են այդ երկրի բուն գոյությունը», ընդունում են այն վիթխարի առանձնահատկությունները, որն ունի Հայկական բարձրավանդակը: Բարձրաբերձ «լեռների լայն կիսաշրջանը օղակում է Միջագետքի հարթավայրը: Նա մեծ գետերի ակունք է... ներքին ծովի ծավալներ ունեցող լճերի, Նոյյան տապանի լեռան» երկիր, «Մարդկության առասպելական բնօրրանը, նրա դրախտը»[49]:*

*«Բարձրությունների միայն մի քանի ֆուտ տարբերությունը ծնել է դրանց բնակիչների սովորությունների ու բնավորությունների ընդգծված տարբերություններ... Այսպես, Դիարբեքիրի և Փոքր Կովկասի միջև ընկած չրջաններում կարելի է հանդիպել իրարից բացարձակապես տարբեր մարդկանց երեք տիպերի»[50]:*

*«Էրզրումը,– չարունակում է Լինչը,– ամփոփում է Թուրքա-Հայաստանի ամբողջ նշանակությունը՝ որպես համաշխարհային տեղաշարժերի գործոն մերձավոր ապագայում: Տիրանալով դրան՝ Ռուսաստանը կդառնա ամբողջ լայնածավալ տարածքի տեր»[51]:*

*«Թուրքա-Հայաստանը Մերձավոր Ասիայի համար հանգուցային կետ է, որտեղ ճանապարհները բաժանվում են արևմուտք, հարավ, արևելք: Հայաստանի ճանապարհները մի կողմից դուրս են գալիս Միջերկրականի ծովափ, իսկ մյուս կողմից՝ Պարսից ծոց: Հայաստանի տարածքի փոքրությունը քիչ դեր չի խաղացել, որ մենք մինչև օրս մնացել ենք կույր դրա նշանակության հանդեպ»[52]:*

*Եվրոպացի մի ուրիշ մասնագետ՝ Մ. Ռոլեն Ժեկմենը, լրացնում է Լինչի միտքը. «Այդ ընդարձակ թերակղզուն (Փոքր Ասիային) հեչտությամբ տիրելու, ինչպես նաև Մի-*

---

[49] Линч Г., *Армения: Путевые очерки и этюды,* Тифлис, 1910, стр. VIII-XI.
[50] *Նույն տեղում,* հ. 2, էջ 543:
[51] Линч Г., *Армения: Путевые очерки и этюды,* Тифлис, 1910, стр. 563.
[52] *Նույն տեղում,* էջ 255:

*ջագետքի հարթավայրի, այնպես էլ Պարսկաստանի և Վերին Ասիայի հետ հարաբերությունների պահպանելու համար չպետք է թշնամիներ ունենալ լեռներում, որոնք Կովկասը միացնելով Տավրոսին, իրենց մեջ ամփոփում են Տիգրիսի, Եփրատի, Արաքսի, Կուրի, Ճորոխի ակունքները և առաջնակարգ ռազմավարական կետեր, որոնցով պաշտպանվում են աննման բերրի հարթավայրերը»[53]:*

*Հայաստանը նվաճողների համար ոչ միայն Արևելք-Արևմուտք տնտեսական կապերի մայրուղին (մետաքսի ճանապարհ) է, այլև քաղաքական երկու աշխարհների բախման թատերաբեմ, կայսրությունների ու զավթումների սահմանագիծ: Այն նաև քաղաքակրթությունների խաչաձևման օրրանն է: Հայ մշակույթը թե՛ արևելյան է և թե՛ արևմտյան, թե՛ ասիական է և թե՛ եվրոպական:*

***Հայաստանը միջազգային քաղաքականության համակարգում.*** *– Սկսած ցեղերի ու ժողովուրդների **Մեծ գաղթի** ժամանակներից՝ Հայաստանը եղել է միջազգային քաղաքականության ու նրա հզորագույն ուժերի շահերի բախման և ռազմաքաղաքական ծրագրերի հանգուցակետում: Նրա տարածքով են հարավից հյուսիս արշավել ասորիները և հյուսիսից հարավ՝ սկյութները, արևելքից արևմուտք՝ պարսիկները և արևմուտքից արևելք՝ հույներն ու հռոմեացիները: Հայաստանը եղել է Հռոմի, ապա նաև Բյուզանդիայի՝ մի կողմից, և Պարսկաստանի՝ մյուս կողմից, բախումների թատերաբեմ: Հայաստանի վրայով են անցել թուրք-սելջուկներն ու թաթար-մոնղոլները: Հայաստանի տարածքում են տեղի ունեցել թուրք-պարսկական տևական ավերիչ պատերազմները:*

*Նոր ժամանակները Հայաստանի համար սկսվեցին դեպի հարավ՝ «տաք ջրեր», Ռուսաստանի դիվանագիտական ու ռազմաքաղաքական ոտնձգություններով և «իրենց պատմական հայրենիքի» հետ միավորվելու՝ թուրքերի նկրտումների իրականացման մինչև օրս ընթացող պայքարով: Սկսած 18-րդ դարից Հայաստանում հանգուցվեցին ռուս-պարսկական, ռուս-անգլիական, ռուս-գերմանական, իսկ մեր օրերում մասամբ նաև ռուս-ամերիկյան հակասությունները:*

*Լինչի կարծիքով՝ «...հազիվ թե (պարսկական) շահերի կայսրությունը կարողանար երկար պահպանել իր անկախությունը, եթե Ռուսաստանը տիրանար Թուրքա-Հայաստանին, քանի որ Պարսկաստանի մայրաքաղաքն ու նրա գլխավոր քաղաքները գտնվում են Հայկական բարձրավանդակի չարունակությունը հանդիսացող սարահարթի վրա: Նույն ճակատագրին կարժանանար Եփրատից արևմուտք ընկած Փոքր Ասիան...»: Մյուս կողմից՝ եթե Ռուսաստանը տիրանա «այն լեռների չղթային, որոնք հանդիսանում են Հայկական ու Պարսկական սարահարթերի հարավային հենարանը..., լրիվ կփակի Անգլիայի առևտրի ճանապարհը: Այն տերությունը, որը կտիրանա Դիարբեքիրին, կարող է իրեն սեփական տանը զգալ նաև Պարսից ծոցում՝ թիկունքում ունենալով մի երկիր, որը տեր է դեռևս չօգտագործված հսկայական հարստությունների»[54]: Հանրահայտ է նաև հետևյալ ասացվածքը՝ ով տիրանա Կարսին, տերն է նաև Վլադիկավկազի:*

*Սակայն պատմական բախտը հանգեցրեց նրան, որ Հայ ժողովուրդը բացի մի քանի տասնամյակներից (Արտաշեսյանների թագավորության շրջան), երբեք չկարողացավ սեփական պետության մեջ առնել ամբողջ Հայկական բարձրավանդակը, այսինքն՝ ստեղծել Հայաստանի բնական ու քաղաքական սահմանների ներդաշնակություն: Ի վերջո, 350 հազ. քառ. կիլոմետրից հայերին մնաց 34-35 հազ. քառ. կիլոմետր, այսինքն՝ 10 %-ը. կասեցվեց հայության թվական աճը, թե՛ բնական աճի խթարման և թե՛ կոտորածների, ուծացման ու արտագաղթի պատճառով: Մինչև հայկական պետականության անկումը հայերն աշխարհատարածքի ամենամեծաթիվ ժողովուրդներից էին, իսկ ներկայումս՝ ամենափոքրաթիվներից: Եթե վերջին 200 տարում հայերի թիվն աճել է ընդամենը 1.5-2*

---

[53] *Положение армян в Турции до вмешательства держав в 1895г.*, Москва, 1896, стр. 3.

[54] Линч Г., նշվ. աշխ., հ. 2, էջ 569:

*անգամ, ապա թուրքերի թիվը՝ 30, քրդերինը՝ 50, պարսիկներինը՝ 8, ադրբեջանցիներինը (կովկասյան թաթարներ)՝ 22 անգամ:*

*Պետականությունը չատ վաղ կորցնելու, բնաջնջման մշտական վտանգի և աչխարհի հզորների չահերի ոլորտում գտնվելու հետևանքով՝ հայ ժողովուրդը չնայած պահպանեց ազատագրության իղձը, սակայն կորցրեց սեփական ուժերով դրան հասնելու հույսը, ինչը հանգեցրեց ներքին մասնատվածության, ինչպես նաև հանգեցրեց ազատագրական պայքարի եթե ոչ վերացմանը, ապա՝ ծայրաստիճան թուլացմանը:*

*Ռուսաստանը և Հայաստանը.— 19-րդ դարասկզբին Թուրքիան ներքաչվեց դրամատիրական հարաբերությունների մեջ, իր տնտեսական, էթնիկական, կրոնական ու մչակութային բազմազանության և ռազմա-ավատատիրական համակարգի պատճառով ի զորու չէր ընդառաջ գնալու նոր կացութաձևին և հասարակական-քաղաքական համակարգին: Ինչը, բնականաբար, կայսրությանը կանգնեցրեց փլուզման վտանգի առջև, խթանեց ազգային-ազատագրական չարժումները և թուրքական տարածքային ժառանգության համար տերությունների մրցակցությունը: Միանգամայն իրավացի է Ն. Սարգսյանը, երբ գրում է. «Կ. Պոլսի անկումից հետո, 1453թ. սկսած թուրքական ժառանգությանը տիրելը Ռուսաստանում ստացել էր «օրինական» և «կրոնական» նչանակություն: «Ցարգրադի և Բյուզանդիայի ազատագրումը վաղուց արդեն դարձել էր Ռուսաստանի արտաքին քաղաքականության, իսկ Ռուսաստանի այդ նկրտումներին խոչընդոտելը՝ արևմտյան տերությունների հիմնական չահագրգռություններից մեկը»[55]:*

*Է. Գրանվիլի միտքը, թե Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունը և ռուսական դիվանագիտության խարդավանքները, Եվրոպայի հետևողական միջամտությունը Օսմանյան կայսրության գործերին Թուրքիայի բոլոր աղետների պատճառն էր և կիզակետը՝ ամբողջ Արևելյան և դրա հոգեզավակ Հայկական հարցի, բացարձակապես ճիչտ է[56]: Ռուսաստանը համառորեն առաջանում էր դեպի Օսմանյան կայսրության խորքերը: Նա առաջին անգամ 1822թ. Սրբազան դաչինքի Վերոնայի կոնֆերանսում հղչակեց «Արևելյան հարց» արտահայտությունը ու իրեն հղչակեց Օսմանյան Թուրքիայի հպատակ քրիստոնյա ժողովուրդների պաչտպան: Ղրիմի պատերազմում Ռուսաստանի պարտությունը փոխեց կացությունը. Օսմանյան քրիստոնյա հպատակների պաչտպանության դերում հանդես եկան նաև «եվրոպական մեծ տերությունները»:*

*Ռուսաստանը չուրչ 300 տարի Հայաստանը համարել է իր ազդեցության ու կենսական չահերի գոտի: Հայաստանի վրայով են անցնում այն հիմնական ուղիները (Հայաստան-Պարսից ծոց և Հայաստան-Միջերկրական ծով), որոնցով Ռուսաստանը ձգտում էր դուրս գալ «տաք ջրեր»: Ռուսաստանի այս ծրագրերը համընկնում էին հայ ժողովրդի ձգտումներին՝ ռուսների օգնությամբ հասնել անկախության կամ օսմանյան և պարսկական լուծը ռուսականով փոխարինելուն, որը բոլոր առումներով գերադասելի էր:*

*Շահերի այս ընդհանրության հիմքի վրա ձևավորվեց հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը, սկզբում՝ որպես ազատագրական պայքարի հոսանք, իսկ ապա նաև՝ համազգային ծրագիր: Իհարկե, դա չի նչանակում, թե հայ կյանքում չկային մարդիկ ու խմբակցություններ, որոնք այլ կարծիքի էին և այլ ծրագրեր ունեին: Մինչև 19-րդ դարի վերջին տասնամյակները ռուս-հայկական հարաբերությունների երկնակամարն անամպ էր: Բանաձևումը հստակ էր՝ հայերը ձգտում էին միավորվել Ռուսաստանի հետ, իսկ Ռուսաստանը՝ նվաճել Արևմտյան Հայաստանը: Նաև այդ խնդրի լուծման համար 19-րդ դարում տեղի ունեցան ռուս-թուրքական չորս պատերազմներ:*

*Սակայն, սկսած Բեռլինի վեհաժողովից և Հայկական հարցի միջազգայնացումից, իրավիճակը փոխվեց: Հայկական հարցը հայ-ռուսական հարաբերությունների ոլորտից*

---

[55] «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», թիվ 10-11, էջ 50:
[56] Ադոնց Ն., Հայկական հարցի լուծման չուրջը, Ե., 1989, էջ 42:

տեղափոխվեց մեծ տերությունների հարաբերությունների ոլորտ: Արևմտյան Հայաստանի հարցն առաջ մղվեց և դարձավ Արևելյան հարցի ուղղություններից մեկը: Գնալով ավելի ու ավելի տարանջատվեց հայ հասարակությունը. ռուսական կողմնորոշման կողքին ձևավորվեցին արևմտյան այլևայլ կողմնորոշումների հոսանքներ: Ինչ վերաբերում է հայ ամիրայությանը, ապա այն հպատակությունը փոխելու հարցում երբեք որևէ եռանդ չի դրսևորել:

Գնալով խորացավ արևմտահայության կրոնական մասնատումը: Հայ Առաքելական Եկեղեցու կողքին նշանակալի ուժ դարձան հայ կաթոլիկները ու հայ բողոքականները, որոնք միանշանակ դիրքորոշում չունեին քաղաքական կողմնորոշման և, ընդհանուր առմամբ, Հայկական հարցի լուծման գործում:

Մնվեցին հայ քաղաքական կուսակցությունները, որոնք նույնպես Հայկական հարցում միասեռ մոտեցումներ չունեին: Եթե Հնչակյան կուսակցությունը խնդիր էր դնում համազգային ապստամբության միջոցով հասնել պետական անկախության, ապա արմենականները հպատակության փոփոխության պահանջից գործնականում հրաժարվեցին և ձգտում էին մեծ տերությունների օգնությամբ հայկական նահանգներում մտցնել բարենորոգումներ: Անկախության հարցն այդպես էլ չդարձավ ծրագրային դրույթ ՀՅ Դաշնակցության համար:

Դեռ ավելին, հայ երկու առաջատար կուսակցությունները սոցիալիստական կողմնորոշում ունեին, դրա հետ միասին դաշնակցությունը Կովկասում հակացարական պայքարի առաջատար ուժն էր, ինչը չէր կարող դեր չխաղալ ցարիզմի հայկական քաղաքականությունում:

Անհնար է Հայկական հարցում Ռուսաստանի քաղաքականությանը միանշանակ գնահատական տալ: Սկսած Պետրոս Մեծի օրերից, Թուրքիայի հետ յուրաքանչյուր պատերազմի ժամանակ ցարերը դիմում էին հայերին՝ ոտքի ելնել թուրքերի դեմ: Եկատերինա 2-րդը կոչ էր անում նրանց «օգտվել իրենց համար օգտակար... պատերազմից (թուրքական լուծը տապալելու և վերականգնելու նախկին անկախությունը)»[57]: Ալեքսանդր Առաջինը գեներալ Կնորրինգին հանձնարարեց. «Ձեր հատուկ ուշադրությանն ենք ներկայացնում՝ ամեն տեսակի սիրաշահումներով մեր կողմը գրավել հայ ազգին»[58]: Նման չհախնդրությունը բացատրվում էր այն բանով, որ «հայերը բոլորի հանդեպ ունեն որոշիչ առավելություն»[59]: Նիկոլայ Առաջինը, հայերին ընձեռելով քաղաքական ինքնավարության անորոշ հույս, ձգտում էր իրեն ենթարկել Հայաստանի հոգևոր իշխանությունը:

Ցարական վարչակազմը մի կողմից աշխատում էր տիրանալ Արևմտյան Հայաստանին, մյուս կողմից հայերին չէր վստահում և ծրագրում էր Եփրատի ավազանում ունենալ հավատարիմ տարրեր: Նման կողմնորոշման համար հիմք էին ծառայում ոչ այնքան Ռուսաստանի, որքան ցարական վարչակարգի չահերը: Այնուամենայնիվ, 1800-80-ական թվականներին ոչ թե Անգլիան, այլ Ռուսաստանն էր հայանպաստ գործունեության կրողը: Չնայած ճիշտ չէ, երբ միանշանակ է համարվում օսմանյան լուծը ռուսական զենքի օգնությամբ թոթափելու հայերի ձգտումը: Թուրքերը միտումնավոր հռչակում էին, թե հայերը «Ռուսաստանին տարածաշրջանի հրավիրող ռազմաքաղաքական գործոն են», որպեսզի դա պատրվակ դարձնեին իրենց հայկական քաղաքականության իրագործման համար: Հայ հասարակական որոշ խմբեր ձգտում էին, որ Ռուսաստանը նվաճեր Արևմտյան Հայաստանը և այն մտցներ ռուսական կայսրության կազմի մեջ, մյուսները հակված էին ռուսական զենքի օգնությամբ անկախություն ձեռք բերելուն, երրորդների համար Ռու-

---

[57] Эзов, *Сношения Петра Великого с армянским народом*, СПб., стр. XXXVII.

[58] *Акты, собранные Кавказской археографической комиссией*, т. I, Тифлис, 1866, стр. 436.

[59] *Обозрение российских владений за Кавказом*, ч. IV, Тифлис, 1836, стр. 273.

սաստանը լոկ երաշխիք էր Օսմանյան կայսրության կազմում հայերի վիճակը բարելավելու:

Իսկ Ռուսաստանն «այնքան էր համոզված, որ ի վերջո հայ ժողովուրդն ընկնելու է իր գիրկը, որ նույնիսկ իրեն նեղություն չէր տալիս ծառի ճյուղերը թափ տալ՝ մոռանալով, որ խնձորը ամուր է կպած ծառին և ճյուղի վրա ուտվելու է կամ նեխվելու»[60]: Երկրորդական դեր չխաղաց նաև Բուլղարիայի օրինակը: Վերջինս անկախություն ստացավ ռուս զինվորի արյան գնով, սակայն, անկախանալով, որդեգրեց կատաղի հակառուսական կողմնորոշում: Պետերբուրգում մտահոգ էին, որ նույն իրողությունն ավելի վատթար ձևով կարող էր կրկնվել հայերի հարցում: Տվյալ դեպքում ռուսական զենքի հաղթանակը կարող էր, ի վերջո, հանգեցնել Ռուսաստանի կազմից նաև Արևելյան Հայաստանի դուրս գալուն:

Արևմտահայերն ակնկալում էին Ռուսաստանին միանալուց հետո միավորվել Արևելյան Հայաստանի հետ և ստեղծել հայկական ինքնավարություն: Մինչդեռ ցարական կառավարությունը հայերի ինքնավարությանը դեմ էր ոչ միայն Ռուսաստանի, այլև Օսմանյան կայսրության կազմում: Առաջին դեպքում, որովհետև, նախ, Ռուսաստանը վարչական բաժանման ազգային սկզբունքից հրաժարվել էր և, երկրորդ, միավորված հայերը միշտ էլ ունենալու էին անկախանալու գայթակղություն: Իսկ Թուրքիայի կազմում հայերի ինքնավարությանը Պետերբուրգը դեմ էր, որովհետև, նախ, դա «վատ օրինակ» կծառայեր արևելահայերի համար և, երկրորդ, ինքնավար Արևմտյան Հայաստանը կարող էր լրացուցիչ խոչընդոտ դառնալ դեպի Միջերկրական ծով Ռուսաստանի առաջխաղացման համար:

Եվ, ցարական կառավարությունը, սկսած 1880-ական թվականներից, որդեգրեց հակահայ քաղաքականություն: Ցարական ներքին գործոց նախարարը հայերին առաջարկեց Արաքսի ափերից հեռանալ և բնակություն հաստատել Կիլիկիայում, փորձեր արվեցին կաթողիկոսարանը տեղափոխելու Պետերբուրգ, փակվեցին հայկական դպրոցները, բռնագրավվեց հայ եկեղեցու ունեցվածքը, դաժան հալածանքների ենթարկվեց հայ մտավորականությունը, ուժեղացվեց ռուսականացման քաղաքականությունը, հրահրվեցին հայ-կովկասաթաթարական բախումներ, ռուսական որոշ գործիչներ որդեգրեցին «Հայաստանն առանց հայերի» նշանաբանը: Ցարիզմը նպաստեց արևմտահայության 1894-96թթ. կոտորածներին: Ցարական այրերը բազմիցս հայտարարել են, թե հայերի թուլանալը, քայքայվելն ու կոտորվելը չեն հակասում ռուսական քաղաքականությանը: Նույնիսկ 1915-ին, երբ ռուսական զորքերը գրավեցին Արևմտյան Հայաստանի մեծ մասը, արգելվեց, որ յաթաղանից փրկված հայերը վերադառնան իրենց բնակավայրերը, փորձ արվեց գործադրելու, այսպես կոչված, «Ցուդենիչի ծրագիրը»՝ Հայաստանում ստեղծել Արաքսի ու Եփրատի կոզակություն:

Սակայն նույնիսկ այդ հակահայ կեցվածքի պայմաններում Ռուսաստանը պարտադրված էր հանդես գալ հայ ժողովրդի պաշտպանի դերում, հայ քաղաքական ուժերին հրահրել պայքարելու օսմանյան տիրապետության դեմ: Այնուամենայնիվ, նշում է Մ. Մաքքոլը, անգամ Ռուսաստանի ամենաոխերիմ «թշնամիները չեն ժխտի, որ Բ. Դռան քրիստոնյա հպատակների համար նա (Ռուսաստանը) միայնակ ավելի շատ է արել, քան մյուս բոլոր եվրոպական տերությունները միասին վերցրած»[61]:

**Անգլիան և Հայկական հարցը.**— Մինչև Եգիպտոսին տիրանալն ու Սուեզի ջրանցքի բացվելը Անգլիան հիմնականում Փոքր Ասիայի վրայով էր իրականացնում կապը Հնդկաստանի հետ: Կապի գլխավոր ուղիներից մեկն անցնում էր Կ. Պոլիս-Տրապիզոն-

---

[60] *Положение армян в Турции...*, стр. 224.

[61] *Положение армян в Турции...*, стр. 205.

*Էրզրում-Վան-Պարսկաստան գծով: Օսմանյան կայսրությունն այդ կապին չէր խոչընդոտում, որովհետև տնտեսական շահ ուներ:*

*Ռուսաստանի առաջխաղացումը դեպի Առաջավոր Ասիա ոչ միայն կփակեր Հնդկաստանի հետ կապի այդ ուղին, այլև նրա վերահսկողության տակ կդներ Առաջավոր Ասիան և Միջերկրական ծովի արևելյան ավազանը: Հետևաբար ռուսական առաջխաղացման կասեցումն Անգլիայի համար կարևոր խնդիր էր: Դրա լուծման նպատակով Լոնդոնը հեղինակեց Օսմանյան կայսրության տարածքային ամբողջության պահպանման՝ ստատուս քվոյի (status quo) քաղաքականությունը: Ասվածից երևում է, որ Փոքր Ասիայում Անգլիայի շահերը հակադրության մեջ էին նաև արևմտահայության ազատագրական շարժման հետ: Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ հայերը ձգտում էին օսմանյան լուծը թոթափել ռուսական զենքի օգնությամբ, այլև նրա համար, որ Հայկական հարցի լուծումն ինքնին նշանակում էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջության պահպանման սկզբունքի խախտում:*

*Անգլիայի «հայասիրությունը» մի գերխնդիր ուներ՝ հայկական նահանգներում որոշ բարենորոգումներ մտցնելու միջոցով զսպել արևմտահայ շարժումները և թույլ չտալ, որ Ռուսաստանը դրանք պատրվակ դարձներ Օսմանյան կայսրության գործերին միջամտելու համար:*

*Ֆ. Գրինի «Հայկական ճգնաժամը ու թուրքերի տիրապետությունը» գրքի առաջաբանում Լաուելը գրում է. «Քրիստոնյա Անգլիան պահապան է կանգնել Բ. Դռանը՝ հետ մղելով բոլոր նրանց, ովքեր մտադիր են խառնվել Թուքիայի ներքին գործերին: Պաշտպանելով պարկեշտությունից զուրկ թուրքական տան դուռը՝ Անգլիան աչխարհին հասկացնում է, թե... իրեն հալողվել է թուքիայից խոստումներ ու նույնիսկ երաշխիքներ ստանալ, որ այսուհետև գործերը կկարգավորվեն պահանջված ձևով: Միաժամանակ Եվրոպայում լսվում է այդ նույն տան դժբախտ էակների ողբալի և հուսահատ ճիչը... սկսած 1881 թվից արխիվներում խնամքով թաքցվում է հյուպատոսական հաշվետվությունների ճնշող մեծամասնությունը, որոնք լույս են սփռում հայերի իրական վիճակի վրա: Ընդ որում, «աննշան թուրքերի» հետ նման ընկերությունից ստացված չահույթների Անգլիայի բաժինն անվերջ հոսում է Լոնդոնի լեփ-լեցուն սնդուկները: Արդյո՞ք կիպրոսը ոչինչ չի նշանակում...»[62]:*

***Ֆրանսիան և Հայկական հարցը.—*** *Ֆրանսիան ձգտում էր տիրանալ Եփրատի միջին ու վերին հոսանքների միջև ընկած տարածքներին՝ Կիլիկիա, Սիրիա, Փոքր Հայք: Այսինքն՝ Ֆրանսիայի քաղաքականության հաղողությունը հանգեցնելու էր Արևմտյան Հայաստանի մասնատմանը: Այս ծրագրի իրականացումը նաև ենթադրում էր պայքար հայկական ազատագրական շարժումների դեմ: Տվյալ դեպքում Ֆրանսիայի համար հայերը գործիք էին, իսկ Հայկական հարցը՝ ծխածածկույթ տարածքային խնդիրներ լուծելու: Եվ երբ հայերը փորձեցին ինքնուրույն քայլ կատարել, Ֆրանսիան նրանց անմիջապես լքեց և քեմալականներին հնարավորություն տվեց ոչնչացնելու Կիլիկիայում կուտակված հայությանը:*

***Գերմանիան և Հայկական հարցը.—*** *Գերմանիան Օսմանյան կայսրության ամենամերձավոր դաշնակիցն ու հովանավորն էր: Բեռլինում գտնում էին, որ «Թուրքիան՝ Փոքր Ասիայում և Գերմանիան՝ Կենտրոնական Եվրոպայում իրար հետ ավստրո-հունգարական միապետության պես մի կորիզ պիտի կազմեն»[63]:*

*Թուրք-գերմանական համագործակցության հուչակագիր հանդիսացավ Վիլհելմ 2-րդի ճառը Դամասկոսում սուլթան Սալահեդդինի դամբարանի մոտ. «Թող սուլթանը և 300մլն մահմեդականները, որոնք ի դեմս սուլթանի հարգում են իրենց խալիֆին, հա-*

---

[62] *Նույն տեղում, էջ 222.*

[63] «Լրաբեր», 1990, թիվ 4, Манучарян А., *Проблемы Геноцида армян в историографии ФРГ.*

մոզված լինեն, որ գերմանական կայզերն ամենուրեք և ընդմիշտ դառնում է իրենց բարեկամը»[64]: Պոլսում գերմանա-թուրքական բարեկամությանը նվիրված ջրհոր կառուցվեց, որի վրա փորագրված են Աբդուլ Համիդ 2-րդի խոսքերը. «Թող այս ջրհորը դառնա հավերժական բարեկամության հուշարձան».[65] Նույն օրերին Փարիզի "Le Rire" հանդեսը Վիլհելմ 2-րդին և Աբդուլ Համիդ 2-րդին պատկերեց հայեր որսացողների կերպարով: Այդ ժամանակ էլ կայզերին կնքեցին Հաջի Մուհամմեդ Աբու Վիլհելմ մականունով:

Բեռլինում ծնվեց հայերի բռնագաղթի գաղափարը: Գերմանիան նպատակ էր հետապնդում ռուսական սահմանի մերձակա նահանգները դատարկել ռուսամետ հայերից ու բնակեցնել մահմեդական տարրերով՝ որպես պատնեշ ռուսների առաջխաղացման դեմ, իսկ հայերին տեղավորել Բեռլին-Բաղդադ երկաթուղու շրջան և օգտագործել նրանց ունակություններն այդ տարածքներում տնտեսական կյանքը զարգացնելու համար:

Գերմանական հանրահայտ պետական գործիչ Ա. Յիմմերմանը գրեց. «...Հայերը պետք չեն Գերմանիային: Հայերով բնակեցված Հայաստանը վնասակար է նրա չահերին»[66]:

Հայկական հարցում նման կամ գրեթե նման եսակենտրոն մոտեցումներ ունեին նաև Ավստրո-Հունգարիան, Իտալիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները:

Այսինքն՝ Արևմուտքի այն տերությունները, որոնցից հայերն ակնկալում էին իրենց հարցի լուծումը, դրանում ոչ միայն չահագրգռված չէին, այլև հօգուտ հայերի հայկական հարցի ցանկացած լուծում հակասում էր նրանց չահերին, մանավանդ որ Արևելյան հարցն ու ստատուս քվոյի քաղաքականությունը որոշակի դեր էր խաղում տերությունների հարաբերությունները հավասարակշռելու գործում:

**Օսմանյան կայսրության ձևավորման առանձնահատկությունները.**— Դեպի Փոքր Ասիա սելջուկների արշավանքին օղուզական ցեղախմբի կազմում մասնակցում էր նաև կայը փոքրիկ ցեղը: Սելջուկներին չհաջողվեց Սասունը գրավել և կայը ցեղին տեղակայեցին Աղձնիքի լեռնային շրջանում սասունցիների դեմ պատերազմելու համար: Մոնղոլական արշավանքի ժամանակ սելջուկները տեղափոխվեցին Եփրատից արևմուտք և հիմնադրեցին Իկոնիայի սուլթանությունը: Կայը ցեղին հանձնարարվեց սուլթանության հյուսիսային սահմանների պաշտպանությունը: Որոշ ժամանակ անց այդ ցեղի առաջնորդ Օսմանն իրեն անկախ հայտարարեց և սկսեց լայնածավալ արշավանքներ:

1453թ. թուրքերը գրավեցին Կ. Պոլիսը ու դարձրին իրենց մայրաքաղաքը: Նորաստեղծ կայսրությունը հիմնադրի անունով կոչվեց օսմանյան, իսկ օղուզ-թուրքերը՝ օսմանցիներ (օսմանլի): Օսմանի հաջորդներին հաջողվեց նվաճել նաև հոգեվարք ապրող արաբական խալիֆաթը և տիրանալ խալիֆի տիտղոսին: Ապա սկսվեցին տևական պատերազմները Պարսկաստանի հետ, որոնք 1639 թվականին ավարտվեցին Հայաստանի բաժանումով. հավերժացվեց Հայաստանի մասնատումը, առաջացան Արևելյան ու Արևմտյան Հայաստան հասկացությունները:

Թուրքերը սիրում են ասել, որ 4000 հեծյալով կարողացան նվաճել աշխարհի կեսը: Սակայն նվաճելն ավելի հեշտ էր, քան նվաճածը պահելը, մանավանդ մի այնպիսի փոքր էթնիկական-վաչկատուն հավաքականության համար, ինչպիսին կայը ցեղն էր:

Օսմանյան կայսրությունը ստեղծվեց որպես փաշայությունների համակարգ: Այդ համակարգում թուրքերը հիմնականում զբաղված էին բանակում և կայսրության կառավարման կենտրոնական կառույցներում, իսկ նահանգների կառավարումը հանձնարարվեց զինվորական հրամանատարներին, հիմնականում տվյալ տարածքը գրաված փաշա-

---

[64] *Die große Politik der Europäischen Kabinette 1871-1914. Sammlung der diplomatischen Akten des Auswärtigen Amtes Berlin, 1923, 12. Band, Zweiter Teil,* Berlin, 1927, S. 575.

[65] **Vierbücher H.**, *Was die Kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat. Armenien 1915.* Hamburg-Bergedorf, 1930, S. 9.

[66] *Архив внешней политики России (АВПР), Ф. Канцелярия,* д. 207, л. 32.

ներին, որոնք անսահմանափակ իրավունքներ ունեին և մարմնավորում էին ոչ միայն քաղաքացիական ու ռազմական իշխանությունները, այլև հանդիսանում էին տվյալ փաշայության հոգևոր առաջնորդը, դատական բարձրագույն ատյանը: Գործնականում կատարվում էր հետևյալը: Թուրքիայում զինված ուժերի ղեկավարությունը ոչ մեծ թվով փաշաների ձեռքին էր, իսկ քանի որ բոլոր թուրքերը զինվոր էին, ապա փաշաներին էր պատկանում նաև քաղաքացիական իշխանությունը: Զավթած հողերը սուլթանը ժառանգության իրավունքով հանձնում էր զինվորականությանը, պայմանով, որ վերջիններն իրեն ռազմական օգնություն ապահովեին: Այդ համակարգը, իհարկե, նպաստում էր սուլթանական վարչակարգի ուժեղացմանը. ձևավորվեց սուլթանից կախման մեջ գտնվող խոշոր հողատերերի խավ:

Ստրատեգիական բոլոր կարևոր կետերում ռազմական ուժեր էին պահվում՝ միշտ պատրաստ մասնակցելու պատերազմներին: Թուրք զինվորականները ամուսնանում էին այլազգի աղջիկների հետ, իրենց չարքերը ներգրավում տեղական բնակիչներից նրանց, ովքեր իսլամացել էին և, որպես պարգևատրություն նրանց էին հողնում նվաճված տարածքների մի մասը:

«Ում էլ որ հարցնես,– գրում է թուրք գրող Ռեշադ Նուրի Գյունտեկինը,– լինի բնիկ, թե եկվոր, իր հոր, եղբոր, որդու, ամուսնու մասին ձեզ կասի, որ նա զինվոր է կամ սպա, մի խոսքով, զինվորական: Նույնիսկ ուսուցիչներից չատերը գնդի իմամներ կամ մուֆթիներ են: Մի խոսքով, այստեղ ամբողջ ժողովուրդն այս կամ այն ձևով կապված է բանակի հետ»:[67]

Այն իրողությունը, որ հպատակ ժողովուրդները դադարեցին հողի սեփականատեր լինելուց, որովհետև սեփականատերը մեկն էր՝ սուլթանը, ամրապնդեց թուրքերի տնտեսական գերիշխանությունը և նրանց ապահովեց էժան աշխատուժով:

Կայսրությունը ցեղերի ու ժողովուրդների հավաքածու էր, որտեղ թուրքերը չնչին փոքրամասնություն էին, և այդ կոնգլոմերատը կարողանում էր գոյություն ունենալ, որովհետև հենված էր բիրտ ուժի վրա:

Այնուամենայնիվ, թուրքերի թիվը չէր բավականացնում իշխանության տեղական մարմինները կազմավորելու համար, և շատ տեղերում հարկադրված եղան դրանց կառավարումը հանձնել ոչ թուրք վերնախավին, որոնցից չատերը, ցեղապետ լինելուց բացի, ավազակապետ էին: Արևմտյան Հայաստանի կառավարումը հանձնվեց քուրդ ցեղապետերին: Միաժամանակ կյանքի կոչվեցին այդ աշխարհակալ տիրակալությունը կառավարելու ռազմական, քաղաքական, կրոնական, տնտեսական ինքնատիպ լծակներ: Նվաճված շրջանների բնակչությունը, եթե մահմեդական կրոնին էր պատկանում, անմիջապես ձեռք էր բերում նույն իրավունքները, ինչ ունեին նվաճողները, իսկ եթե մահմեդական չէր և այդպիսին դառնալ չէր ցանկանում, վերածվում էր ռայայի (հոտ)՝ իրավազուրկ զանգվածի: Այդ խնդրում ազգային պատկանելիությունը դեր չէր խաղում: Կրոնական և ազգային գաղափարները օսմանցիների գիտակցության մեջ միաձուլված էին: Կրոնն այլևս ներքին համոզմունք չէր և վերածվել էր մեկի համար արտոնությունների, իսկ մյուսի համար՝ իրավազրկության ակունքի:

«Օսմանյան կայսրությունը,– գրում է թուրք պատմաբան Է. Քարալը,– իր ծագումով թուրքական էր, կառուցվածքով՝ մահմեդական և, իհարկե, կոսմոպոլիտ, քանի որ կայսրության կազմում կային տարբեր համայնքներ»[68]: Բայց դա՝ միայն իրավական կարգավիճակով, իսկ իրականում օսմանյան հասարակությունը բաժանված էր երկու անիրավահավասար և միմյանց թշնամի հասարակական խմբերի՝ մահմեդականների և քրիստոնյաների: Օսմանյան կայսրությունը ռազմականացված հասարակություն էր: Դա թելադրված էր նաև թուրք ժողովրդի ցեղային առանձնահատկություններով: Թուր-

[67] Голобородько И., *Старая и новая Турция*, Москва, 1908, стр. 5.
[68] Karal E., *La Question Arménienne (1878-1923)*, Ankara, 1984, p. 6.

քը խաղաղ ստեղծագործ աշխատանքի հանդեպ վերաբերմունքով ծուլության խորհրդանիշ էր: Նրա կյանքի հիմնախնդիրն էր՝ գործ չանել, հանգստանալ: «Հանգստի ժամանակ, նկատում է Ի. Գոլոբորոդկոն,– նա նույնիսկ ուրախ, բարձրահունչ երգեր չի երգում, որպեսզի սեփական լսողությունը չգրգռի: Միայն թուրքն է կարողանում հանգիստը հասցնել մինչև այն աստիճանի, երբ ինքնաբերաբար գլխից դուրս են մղվում բոլոր մտքերը»[69]: Թուրքի համար կատարյալ էր միայն այն հանգիստը, երբ լրիվ բացակայում էր թե՛ ֆիզիկական և թե՛ մտավոր աշխատանքը, բացառությամբ ծխելուց և սուրճ խմելուց ու այն իրողության գիտակցումից, որ գտնվում է լիակատար անբան վիճակում: Թուրքը տգետ էր, կոպիտ, պարծենկոտ ու գերի նախապաշարումների: Նախախնամությունը թուրքին զրկել էր «արարելու կարողությունից ու ճաշակից»: Թուրքի համար բնութագրական են Օսմանի խոսքերը՝ ասված Ալեքսանդրիայի գրադարանը հրկիզելու ժամանակ. «Եթե դրանում գրվածները Կորանում չկան՝ վնասակար են, իսկ եթե կան՝ ավելորդ»:

Տնտեսական գործունեությամբ հիմնականում զբաղվում էին այլակրոն հպատակ ժողովուրդները: Իսկ թուրքերը ապրուստի միջոցների զգալի մասը ձեռք էին բերում պատերազմական ավարի և ուրիշ ժողովուրդներին թալանելու միջոցով:

Թուրք բնակչության մի մասը քոչվոր կյանք էր վարում և զբաղվում անասնապահությամբ, իսկ վաչկատուն անասնապահներին քաղաքակրթությունը ոչ միայն պետք չէր, այլև խանգարում էր, քանի որ անասունների հոտերին ոչ թե քաղաքներ ու ճարտարապետական կոթողներ, այլ ազատ տարածություններ էին անհրաժեշտ: Ահա թե ինչու թուրքերը հանդես եկան որպես քաղաքակրթության, մշակույթի թշնամիներ, որը և պատճառ դարձավ նրանց հետամնացության, ինչպես նաև ջարդարար-ոչնչացնող հակումների տևականացման: Թուրքերը միշտ էլ աչքի են ընկել իրենց արյունարբու հակումներով: Նրանք, իբրև մեծարանք, օգտագործում են նաև «Ջերդ արյունախմություն» դիմելաձևը, հպարտանում են, որ իրենց նախահորը սնել է գորշ գայլը, և ունեն գորշ գայլի պաշտամունք: Թուրքերը դաժան են, և այդ դաժանությունը բացատրվում է կայսրությունում նրանց փոքրամասնություն լինելով: Մի փոքր ցեղ կարողացավ ստեղծել աշխարհակալ տերություն և այն պահել հնարավոր էր բիրտ ուժի զորությամբ, ինչը թուրքերի մեջ դաժանությունը գործելակերպից վերածեց ազգային բնավորության:

Կայսրության կազմավորման սկզբնական շրջանից սկսած թուրքերի համար առաջնակարգ նշանակության խնդիր հանդիսացավ իրենց և հպատակ ժողովուրդների թվաքանակի փոխհարաբերությունը, իհարկե, հօգուտ Օսմանի ժառանգների փոխելը: Թուրքերի արական սեռի ամբողջ բնակչությունը բանակում էր, պատերազմների մեջ: Այդ էր պատճառը, որ թուրք ընտանիքը սակավանդամ էր, ցածր էին բնական աճի տեմպերը: Մասնավորապես, թուրք տղամարդու կարիքն արագորեն աճում էր: Նվաճված տարածքները պահելու և նոր նվաճումներ իրականացնելու համար պահանջվում էր մեծացնել բանակը, գնալով ծավալվում էին նաև կառավարչական կառույցները:

Կայսրության բնակչության հիմնական մասը հպատակ ժողովուրդներ էին՝ արաբներ, հայեր, քրդեր, հույներ, սերբեր, ալբանացիներ, հրեաներ, բուլղարացիներ, լազեր և այլն: Չնայած դրությունն արմատապես փոխելու թուրքերի դարավոր չանքերին, նույնիսկ 20-րդ դարի չեմին կայսրության 27 միլիոն բնակչությունից թուրք էր միայն 8 միլիոնը:

Ի՞նչ էր արվում ազգաբնակչության էթնիկ կազմը փոխելու ուղղությամբ:

Բազմակնություն.– Կորանը մահմեդականին թույլատրում էր ունենալ 3-4 կին: Թուրքերը դրանով չբավարարվեցին և հարեմներ ներմուծեցին հարճերի, որոնք օրինական կին չէին համարվում, սակայն, ըստ էության, այդպիսին էին: Նրանց քիվը չէր սահմանափակվում և կախված էր տվյալ թուրքի ցանկությունից ու նյութական հնարա-

---

[69] Голобородько И., *Старая и новая Турция*, Москва, 1908, стр. 17.

*վորությունից: Ահա թե ինչու կային թուրքեր, ովքեր տասնյակ ու հարյուրավոր հարճեր էին պահում:*

*Հարեմները հիմնականում համալրվում էին պատերազմական գերիների, նվիրատվությունների, հպատակ ժողովուրդների աղջիկների առևանգումների և առևտրի միջոցով: Օսմանյան քաղաքներում գործում էին կանանց չուկաներ, որտեղ հարեմների համար աղջիկներ էին վաճառվում:*

*Հարեմների, այդ թվում նաև սուլթանական հարեմների, կանանց թվում թրքուհիները հատուկենտ էին, բացարձակ մեծամասնությունը այլևայլ ժողովուրդների ներկայացուցիչներ էին: Այլ կերպ ասած, հարեմները նպաստում էին ուրիշ ժողովուրդների կանանցից երեխաներ ունենալու միջոցով արագացնելու թուրքերի թվական աճը:*

***Մանկահավաքություն.*** *— Սկզբում բանակը համալրելու համար թուրքական իշխանությունները զորակոչում էին նաև հպատակ մահմեդական ժողովուրդների պատանիներին: Սակայն թուլլատրելի չէր, որ բանակում այլազգիների մեծամասնություն կազմեին, մանավանդ հպատակ մահմեդական ժողովուրդներն ամենատարբեր պատճառներով պիտանի չէին Օսմանյան բանակի համար: Օրինակ, արաբներն ատում էին թուրքերին, ովքեր կործանեցին արաբական խալիֆաթը, տիրացան խալիֆի տիտղոսին և արաբ ժողովրդին զրկեցին անկախությունից: Քրդերին պատերազմներում միայն ավարն էր հետաքրքրում: Նրանք կարգապահության չէին ենթարկվում և պիտանի չէին կանոնավոր բանակի համար: Ինչ վերաբերում է հպատակ քրիստոնյա ժողովուրդներին, ապա նրանք չէին զորակոչվում երկու պատճառով՝ քրիստոնյան զենք կրելու իրավունք չուներ, նրան զենք տալը կնշանակեր մահմեդականի հետ քրիստոնյայի իրավահավասարություն: Կորանն այդ արգելում է: Երկրորդ, թուրքերը վստահ չէին, որ քրիստոնյային տրված զենքը չէր ուղղվելու իրենց դեմ: Օսմանյան կայսրության գոյությունը խարսխված էր մահմեդականի զինվածության և այլակրոնների անզենության իրողության վրա:*

*Բանակի համալրման խնդիրը լուծելու նպատակով թուրքերն իրականացնում էին մանկահավաքություն, այսինքն՝ քրիստոնյա 8-12 տարեկան ֆիզիկապես առողջ տղաներին բռնությամբ խլում էին ծնողներից, մահմեդականացնում, դաստիարակում մահմեդական անհանդուրժողականության ոգով և նրանց միջոցով ձևավորում ենիչերական զորքեր: Այդ տղաների մի մասը հետագայում զինվորական ծառայությունից անցնում էր պետական-քաղաքական գործունեության և զբաղեցնում բարձր պաշտոններ: Այսինքն՝ մանկահավաքության միջոցով թուրքերի թվի մեխանիկական աճ էր ապահովվում նաև հպատակ այլակրոն ժողովուրդների արական սեռի բնակչության հաշվին: Թուրք պատմաբան Հ. Ուզունչարշալին ենիչերական զորքերի ստեղծման նպատակը համարում է քրիստոնյա բնակչության թուրքացումը*[70]*:*

***Կրոնափոխություն և ուծացում.*** *— Օսմանյան կայսրությունում կրոնափոխությունը՝ բռնի մահմեդականացումը մշտական էր և հետապնդում էր քաղաքական նպատակ: Մահմեդականություն ընդունողը փոխում էր նաև ազգությունը, դառնում թուրք կամ քուրդ: Կրոնափոխում ու թուրքացնում էին հիմնականում կանանց ու աղջիկներին՝ նրանց կնության առնելու համար:*

*«Թուրքերը,— նշում է Մկրտիչ-բեյ Դադյանը,— պարտված ժողովուրդների քաղաքացիական և քաղաքական կարգերում չկատարեցին որևէ փոփոխություն և սահմանափակվեցին նրանց վրա տարածելով Կորանի այն կանոնը, որը հանձնարարում է. ուղղափառ անհավատներին, ովքեր կամավոր են հնազանդվում, թողնել ազատ, իրենց օրենքներով և ունեցվածքով, պարտավորեցնելով վճարել գլխահարկ՝ խարաջ»*[71]*:*

---

[70] «Նոր սերունդ», Հուլիս, 1987:

[71] Дадян Мкртыч-бей, *Современное армянское общество*, Тифлис, 1878, стр. 2.

*Այս դիտարկումը ճիշտ է միայն մասնակիորեն, որովհետև ի սկզբանե օսմանյան իշխանությունները խրախուսում էին կրոնափոխությունը: Կրոնափոխվելը նախկին այլակրոնի առաջ բացում էր հասարակական սանդուղքով վեր բարձրանալու դռները:*

*Թուրքացման միջոց էր նաև քրիստոնյա երեխաների որդեգրումը մահմեդականների կողմից: Բռնագաղթի տարիներին նույնիսկ կարգախոս հռչակվեց. «Ով իսլամ դառնա, չի բռնագաղթվի»: Գերմանացի հետազոտող Հուգո Հրոթեն, Փոքր Ասիայում ճամփորդելիս, տեսել է գլուխը մահմեդականի պես սափրած, մահմեդականի անուն կրող հայերի: Մեծ թիվ էին կազմում նաև մահմեդական ու քրիստոնեական, հայկական, թուրքական ու քրդական բարքերն ու սովորությունները համատեղող մարդիկ: Մ. Գամազովը Թոքատի մերձակայքում տեսել է թուրքի, որը մոմ է գնել ու դրել Ի. Զլատոուստի հուշարձանին, իսկ Յունինում թուրքերը վանք էին կառուցել: Ռուս դիվանագետ Ե. Ջիրիկովի վկայությամբ, մի հայուհի եփրատ էր նետել Խզզրուխ ճրագը, որպեսզի պաշտպաներ իր երեխայի կյանքը:*

*«Սրանք մանրուքներ են,– գրում է Վ. Գորդլևսկին,– որոնք, սակայն, գայթակղում էին մարդուն և նախապատրաստում ընդունելու հարևանի կրոնը և ի վերջո հանգեցնում ազգային դեմքի կորստի»[72]:*

*Ուծացման քաղաքականության ծնունդ էին այսպես կոչված կեսկեսները, ովքեր իրենց մահմեդական ու թուրք էին համարում, սակայն կատարում էին քրիստոնեական ծեսեր, խոսում հայերեն: Կյուտախյեի լեռներում բնակվող մահմեդականացված հայերը խոսում էին հայերեն, խմորի վրա խաչ անում, մոմ վառում: Փոքր Ասիայում հաճախ էին հանդիպում և այսօր էլ հանդիպում են մահմեդականներ, որոնց ծեսերում, սովորություններում և կենցաղում նկատելի են քրիստոնեական ամենատարբեր արարողությունների մնացուկներ: Գորգ գործող կանայք նախշերի մեջ խաչ էին ներմուծում, Զատկին ձու եփում, կրում հայկական անուններ, չէին ամուսնալուծվում, օգտագործում էին գինի:*

*Բռնի կամ զարտուղի ճանապարհներով թուրքացումը, որն ուղեկցվում էր կոտորածներով և մշակութային ամայացմամբ, շարունակվեց թուրքական «ստրկության ամբողջ 500 տարիների ընթացքում»[73]:*

*«Հազար տարի իրարու քով ապրելը,– գրում է Ս. Զավարյանը,– դարերու ընթացքին ուրիշ ազգերու կիներու հետ ամուսնանալը, բազմաթիվ հայերու, քուրդերու, հույներու, սլավներու մահմեդական՝ հետևապես թուրք դառնալը, գրավական են, որ այսօրվա թուրք տարրի արյունին 1/10-ը կպատկանի արյունին այն սելջուկներուն, տաճիկներուն և ուրիշ ցեղերուն, որոնք եկան Ասիո խորքերեն»:[74]*

*Այդ իրողությունը, բնականաբար, փոխել է թուրքերի մարդաբանական հատկանիշները: Բուսբեկը (16-րդ դար) պատմում է գաղտնի կնունքների մասին: «Երբեմն մահվանից առաջ, երբ երկրային կյանքի հետ հաշիվներն արդեն փակված էին «ակամա մահմեդականն» իրեն թույլ էր տալիս հիշելու, թե ով է ինքը: Սակայն դրա համար պետք էր ունենալ մեծ խիզախություն, քանի որ իսլամացածի առաջ հետադարձ ուղին դեպի քրիստոնեություն ընդմիշտ փակված էր, պատժվում էր մահվան և այն էլ՝ մեռցնելու դաժան եղանակներով»:[75]*

*Նույնիսկ 19-րդ դարի երկրորդ կեսին, երբ արդեն հրապարակի վրա էին դավանանքի հավասարություն հռչակող իրադեները (սուլթանական հրամանագրերը), դրությունն էականորեն չփոխվեց: Ռուս դիվանագետ Գորչակովի խոսքերով, այդ իրադեներն այլ բան չէին, եթե ոչ «չվճարված մուրհակ»: «Մահմեդականը,– գրում է Մ. Մաքքոլը,– չի*

---

[72] Гордлевский В. А., *Избранные сочинения*, т. III, Москва, 1962, стр. 40.
[73] «Նոր սերունդ», Հուլիս, 1987:
[74] «Դրոշակ», 1990, թիվ 11:
[75] Гордлевский В. А., նշվ. աշխ.:

*ճանաչում ռայայինը որպես մարդկության նույն ցեղին պատկանող, որից ինքն է սերում: Ռայայի ունեցվածքը, կյանքն ու կանանց համարում է իր օրինական ավարը, իսկ քրիստոնյայի կողմից ամեն մի դիմադրություն՝ հանդգնություն, որը պետք է անմիջապես պատժվի»*[76]:

*Մի բնութագրական երևույթ ևս. թուրքերին բաժին ընկավ նվաճողների, աչխարհակալ տիրակալների սովորական բախտը: Անընդհատ պատերազմներում օսմանցիները մաշվեցին, հալվեցին և կանգնելու էին ծանր կացության առջև, եթե չթարմանային բռնությամբ թուրքացված ազգությունների կենսատու ուժով և դա ոչ միայն արյան թարմացմամբ, այլև կայսրության հասարակական-քաղաքական կյանքի ոլորտներում հպատակ ժողովուրդների չնորհալի, ընդունակ ուժերին «ազգազտելու» միջոցով բյուրոկրատական-չինովնիկական ստվար հասարակական խավ ձևավորելու առումով:*

*Բայց սխալ է կարծել, թե թուրքերն ի սկզբանե ծրագրել էին քրիստոնյա հպատակների ամբողջական մահմեդականացում ու թուրքացում: Թուրքերը նույնիսկ «սեփական տանը» մնացին թալանչիներ: Քանի դեռ կայսրությունը վերելք էր ապրում, հաղթական պատերազմներ մղում և ռազմավարի տիրանում, նյութական պրոբլեմները առաջին պլան չէին դուրս գալիս: Բայց երբ նախախնամությունն այլևս դադարեց թուրքերին հաղթանակներ պարգևել, դրությունն արմատապես փոխվեց և թուրքերի կենսական պահանջմունքների բավարարման հիմնական աղբյուր դարձավ հպատակների և, առաջին հերթին, ոչ մահմեդականների աչխատանքը: Այդ աչխատանքով էին պահվում բանակը, ուռճացած պետական կառույցները, բավարարվում պալատի ու վերնախավի անհագ պահանջմունքները: Թուրքը կայսրությունում վերածվեց օտարակերի (պարազիտի): Նա կռվում ու կառավարում էր, իսկ քրիստոնյան՝ նրան կերակրում: Եթե այլակրոնը մահմեդականացվեր, ո՞վ էր թուրքի կարիքները հոգալու: Թո՞ւրքը. ոչ: Անկախ սոցիալական վիճակից ու հասարակության մեջ զբաղեցրած դիրքից, թուրքերը համարվում էին իրավահավասար, տիրապետող ազգությանը պատկանող և իրար հարստահարելու իրավունք չունեին: Իսկ այլակրոնին հարստահարելու, նրա աչխատանքով ապրելու ոչ միայն արտոնություն ունեին, այլև, որոշ առումով, նաև պարտադրված էին, քանի որ Կորանը երկիր մոլորակը համարում է մահմեդականի սեփականությունը, իսկ ուղղահավատին ծառայելը՝ այլակրոնների ապրելու փրկագինը:*

*Մահմեդականացումը ձեռնտու չէր նաև պետությանը: Քրիստոնյան պետությանը 8-10 անգամ ավելի եկամուտ էր բերում, քան Մուհամմեդի զավակը: Այս հարցում օսմանյան պետության տնտեսական և քաղաքական շահերի միջև հակասություն կար: Եվ, ինչպես սովորաբար լինում է, այդ հակասությունը լուծվում էր հօգուտ տնտեսական շահերի: «...Թուրքերը ձեռնպահ էին մնում զանգվածային մահմեդականացման քաղաքականությունից,— գրում է Վ. Գորդլևսկին,— քանի որ գանձարանը տուժում էր. կրոնափոխվածներն այլևս խարաջ և ջիզյե չէին մուծում, որոնք գանձվում էին միայն քրիստոնյաներից»*[77]:

*«Դեռ սելջուկների շրջանում Անիի մզկիթի վրա էքու Սաիդ Բահադուրը,— գրում է Ա. Ջոպանյանը,— մի հրովարտակ փորագրել տվեց, որով հայերին երաշխավորվում էին զանազան արտոնություններ, միայն թե չարտագաղթեին: Սակայն հայերը հեռացան, որի հետևանքով սելջուկներն այլևս «չապրեցին հայի արյունով ներկված երկրում»»:*

***Միլլեթների համակարգ.*** *— Մուհամմեդ 2-րդի իրադեով կայսրության այլակրոն բնակչությունը միավորվեց կրոնական համայնքներում, որոնք կոչվեցին միլլեթներ: Միլլեթների համակարգը այդ հպատակներին կառավարելու միանգամայն նոր ու ինքնատիպ եղանակ էր: Պատմագրության մեջ ուշադրությունը դարձվել է այդ համակարգի*

---

[76] Макколь М., *Султан и державы*, СПб., 1897.

[77] Гордлевский В. А., նշվ. աչխ., էջ 41:

*միայն բացասական կողմի՝ հպատակ ժողովուրդներին միմյանցից մեկուսացնելու վրա: Որ միլիեթների համակարգը դեր խաղաց «բաժանիր և տիրիր» քաղաքականության օսմանյան տարբերակի համալիր միջոցառումներում, կասկածից վեր է: Թուրքերը մեծ հմտությամբ էին օգտագործում հպատակ ժողովուրդների միջև եղած հակասությունները, նրանց զարգացման մակարդակների ու դավանանքների տարբերությունները, և հաջողվում էր թույլ չտալ, որ վերջիններս համագործակցեին, ընդհանուր ճակատ կազմեին թուրքական վարչակարգի դեմ:*

*Սակայն միլիեթների համակարգի խաղացած դերին նման միակողմանի մոտեցումը հակասում է պատմական ճշմարտությանը: Այդ համակարգի ձևավորման գործում երկրորդական դեր չխաղաց այն, որ կայսրության ստեղծման առաջին շրջանում հնարավոր չեղավ ձևավորել իշխանության տեղական՝ թուրքական և թուրքերից կազմված մարմիններ: Դրա հարկադրանքով ստեղծվեցին կրոնական համայնքներ: Գլխավորն այն է, որ փաշայական-ավատատիրական բարբարոս հասարակությունում հնարավոր եղավ իրականացնել հպատակ ժողովուրդների կրոնական-մշակութային որոշ ինքնավարություն: «Կայսրության տարածքում բնակվող ցեղերից ու ազգություններից չատերն ինքնամփոփ էին,– գրում է Մկրտիչ-բեյը,– և ունեին ներքին որոշ ինքնավարություն: Այդ առումով միլիեթների համակարգը որոշակի դեր խաղաց: Կ. Պոլսի Հայոց պատրիարքը ոչ միայն կայսրության հայ համայնքի հոգևոր, այլև, որոշ առումով, աշխարհիկ ղեկավարն էր, հայերի և սուլթանական կառավարության միջև կապող օղակ, միջնորդ: Պատրիարքը, փաստորեն, պետական ծառայողի վիճակում էր և հոգ էր տանում նաև հայերից խարաջի հավաքման մասին, որը գանձվում էր նրա երաշխավորությամբ ու գործավարների մասնակցությամբ: Նրա դատին էին հանձնվում վիճելի չատ գործեր՝ թե՛ քաղաքական և թե՛ քրեական»[78]:*

*Միլիեթների համակարգը սուլթանների ձեռքին նաև զենք էր՝ ստեղծելու սոցիալական անկրպետ ազգային փոքրամասնությունների և օսմանյան կառավարության միջև այն առումով, որ առաջին պլան մղելով կրոնականն ու էթնիկականը՝ հասարակության ուշադրությունը չեղում էր սոցիալականից: Ինչ վերաբերում է կրոնների «հավասար և ազատ զարգացման հնարավորությանը, ապա դա կեղծիք է, որովհետև համակարգը մահմեդականին երաշխավորում է ոչ միայն քաղաքական ու սոցիալական, այլև կրոնական ազատություններ ու մեծ արտոնություններ...»[79]:*

*Մի բան, սակայն, ակնհայտ է. միլիեթները հեչտացնում էին կայսրության կառավարումը:*

*Այսպիսով, թուրքերի ձեռքում էին քաղաքականությունն ու ռազմական գործը, իսկ հպատակ ժողովուրդներինը՝ ազգային գիտակցությունից մնացածն էր, որը կենտրոնացվեց կրոնական համայնքներում: Այդ համայնքների ստեղծումը հետապնդում էր նաև մի քանի այլ խնդիրներ: Հպատակներին տալով կրոնական ու մշակութային սահմանափակ ինքնավարություն, նախ, նրանց կտրում էին իրենց ընդհանուր կենտրոններից՝ Հռոմից, Էջմիածնից, խոչընդոտում վերջինների ազդեցությանը: Միլիեթները ընդգծված կրոնական բնույթ ունեին, ինչը նպատակ էր հետապնդում տարանջատում մտցնել նաև հպատակ ազգությունների ներսում: Այսպես, ուղղափառ հույներն ու սլավոնները նույն համայնքում էին միավորված, իսկ հայ լուսավորչականներն ու կաթոլիկները՝ տարբեր միլիեթներում:*

*Հարկ է նկատի ունենալ, որ այլադավանները ապրում ու գործում էին իսլամական անհանդուրժողականության պայմաններում: Իսկ իսլամը միայն կրոն չէ, այլև ապրելակերպ, փիլիսոփայություն, քաղաքական, իրավական, վարչական, հարկային համակարգ:*

---

[78] Далян Мкртыч-бей, նշվ. աշխ, էջ 11:

[79] Атомян С., *Армянская община*, Москва, 1956, стр. 38.

*Պետության և հասարակության վերաբերյալ մահմեդական կոնցեպցիան տարբերություն չէր դնում կրոնական և աշխարհիկ, կրոնական և գործարար պարտականությունների միջև:*

*Օսմանյան կայսրությունը թեոկրատական պետություն էր: Գլխավոր դեմքը, բարձրագույն հոգևոր առաջնորդը սուլթան տիրակալն էր, որը միաժամանակ կայսրության գերագույն հրամանատարն էր ու աշխարհի մահմեդականության առաջնորդը: Իշխանության և օրենքի միակ աղբյուրը համարվում էին Ալլահը և նրա ստվերը երկրի վրա՝ սուլթան խալիֆը:*

*Միաժամանակ հանդիսանալով աշխարհի մահմեդականության հոգևոր առաջնորդ՝ սուլթանները այդ իրողությունն օգտագործում էին ոչ միայն մահմեդական աշխարհում իրենց ազդեցության ուժեղացման, այլև կայսրությունում կայունության ապահովման համար: Նրանք այլակրոն հպատակների դեմ հանում էին ոչ միայն թուրքերին, այլև մահմեդական հպատակ էթնոսներին:*

*Իսլամն իր գոյության վաղ շրջանում ընդունում ու մարսում էր Հին Հունաստանի, Հռոմի, Հայաստանի, Բյուզանդիայի, որոշ առումով՝ նույնիսկ Հնդկաստանի և Ջինաստանի նվաճումները քաղաքակրթության զարգացման ճանապարհին: Սակայն արդեն մահմեդականության դասական շրջանում արաբների, պարսիկների և թուրքերի համար քրիստոնեական Եվրոպան համարվեց թաղված բարբարոսության խավարում, որից «մահմեդականները սովորելու ոչինչ չունեին»: «Թուրքիայում... արհամարհում են օտարերկրացիներին,– գրում է գերմանացի զորահրամանատար և ռազմական տեսաբան Մոլտկեն,– թուրքը ճևականորեն համաձայնում է, որ եվրոպացին իր ազգի հանդեպ առավելություն ունի գիտելիքների, վարպետության, ինքնազոհողության և ուժի առումով, սակայն նրա մտքով անգամ չի անցում, թե դրանք բավարար են, որ ֆրանկը հավասարվի մահմեդականին»*[80]*:*

*Միլիեթների համակարգը հայերի համար հանգում էր հետևյալին. հայոց պատրիարքներին (Առաքելական Եկեղեցուն և հայ կաթոլիկներին) իրավունք տրվեց ղեկավարելու արևմտահայ ազգային մշակութային կյանքը, ինչը նշանակում էր՝ Հայ Եկեղեցին իրավունք ուներ ղեկավարելու ամուսնությունների ու թաղման ծեսեր, ամուսնալուծել, կարգավորել ընտանեկան ու տնտեսական վեճերը, լուծել ժառանգության և ժառանգականության հարցերը, ղեկավարել կրթական գործը, օգնություն կազմակերպել աղքատներին, ունենալ հիվանդանոցներ, որբանոցներ, կալվածքներ, իրականացնել խնամակալություն, հարկեր հավաքել: Այս խնդիրների վերաբերյալ եկեղեցու վճիռները պարտադիր էին ու վերջնական: Դրանց կատարումն ապահովելու գործում եկեղեցուն իրավունք էր վերապահված ներգրավել ոստիկաններին: Պատրիարքի միջոցով էին հայերի գանգատ-բողոքները փոխանցվում իշխանության վերին օղակներին: Սակայն չի կարելի նաև անտեսել, որ այդ ինքնավարությունը գոյություն ուներ թուրքական հասարակության հոռի ու բարբարոս անիշխանության պայմաններում, երբ գերակայողը ոչ թե օրենքն էր, այլ աղայի կամ փաշայի քմահաճույքը:*

*Այնուամենայնիվ, անհնար է նսեմացնել միլիեթների համակարգի դերը: Այն նպաստեց, որ դարեր շարունակ այլազգի, այլակրոն թշնամական միջավայրում ապրող հայը հայ մնար, պետական աջակցության իսպառ բացակայության և խոչընդոտների պայմաններում անգամ ստեղծվեր կրթամշակութային, հոգևոր-կրոնական հաստատությունների ցանց, սեփական մամուլ, գրահրատարակչություն՝ անհամեմատ ավելի բարվոք, քան ունեին իրենք՝ թուրքերը, հայը ճանաչվեր ազգային-կրոնական ինքնուրույն միավոր:*

*Այդ ամենով հանդերձ, արևմտահայությունը գոյատևեց ոչ թե միլիեթների չնորհիվ, այլ որովհետև, ինչպես նշում է Բեռնշտայնը, թուրքերը «քաղաքակիրթ չէին և...*

---

[80] Васильев А., *Мост через Босфор*, Москва, 1989, стр. 13.

*անընդունակ ճուլելու» քաղաքակիրթ ժողովուրդներին: «Հայ ժողովուրդը,– գրում է Ռոլեն Ժեկմենը,– չէր կարող այդքան երկար դիմակայել Թուրքերի ավերիչ ընթացքին, եթե պաշտպանված չլիներ աներեր կապվածությամբ իր լեզվին, ավանդություններին, ազգային եկեղեցուն և ընտանեկան օջախի ամուր կառուցվածքին»[81]:*

***Կոտորածների օսմանյան քաղաքականությունը.**– Օսմանյան կայսրությունում կոտորածներ եղել են միշտ, սակայն դրանց գերակշիռ մասը ոչ այնքան քաղաքական նպատակադրում ուներ, որքան բխում էր Թուրքերի մոլեռանդ, բարբարոս բնույթից: Կոտորածները նաև միջոց էին տիրանալու ուրիշ ժողովուրդների ու համայնքների ունեցվածքին: Ինչ վերաբերում է հայերին, ապա միանգամայն իրավացի է Ռոլեն Ժեկմենը, երբ գրում է, թե Թուրքերն ինչո՞ւ պիտի բնաջնջեին հայերին: Ավելի լա՞վ չէր նրանց պահել իբրև քաշող ուժ, կթու կով և ապրել նրանց հաշվին: Հայերը հարկադրված էին ենթարկվել վերևից պարտադրված այդ վիճակին և ժամանակի ընթացքում ընտելացան դրան՝ այն համարելով ֆիզիկական գոյության հնարավորություն: Բայց այս միտքը չպետք է բառացի հասկանալ: Բուլղարների 1876թ. կոտորածի մասին Վիկտոր Հյուգոն գրում է. «Եվրոպական կառավարությունների ուշադրությունը պետք է հրավիրել մի աննշան իրողության վրա, որը, թերևս, նրանք չեն էլ նկատել. ոչնչացվում է մի ամբողջ ժողովուրդ: Որտե՞ղ: Եվրոպայում: Այդ կոտորածները վկաներ ունե՞ն: Միայն մի վկա կա՝ ամբողջ աշխարհը»[82]:*

*Հայտնի արևելագետ Խ. Բրեմոնը նկատում է. «Թուրքերը առևանգում էին բուլղար աղջիկներին իրենց հարեմների համար, իսկ երեխաներին ու ծերերին գլխատում կատարյալ սառնասրտությամբ: ...Կանայք ուրվականների նման թափառում էին իրենց հայրերի, զավակների ու ամուսինների դիակների մեջ՝ անզոր նույնիսկ նրանց համար գերեզման փորել»[83]:*

*Սակայն կյանքն առաջ էր գնում: Թուրքիայի կողքին հավերժորեն առաջադիմող Եվրոպան էր, և ոչ միայն կայսրության հպատակ ժողովուրդները, այլև իրենք՝ Թուրքերը, հին ձևով ապրել չէին կարող: Եվրոպական կրթություն ստացած Թուրք սպայությունը փոփոխության էր ձգտում: Այդ սպայության ջանքերով կայսրությունը թևակոխեց բարենորոգումների՝ Թանզիմաթի շրջանը: Չնայած բարեփոխումների կիսատպռատությանը, դրանք, այնուամենայնիվ, խթան հանդիսացան տնտեսական զարգացման համար:*

*Ինչպես արդեն նշվեց, Թանզիմաթից ամենաշատ օգտվեցին, ավելի ճիշտ, այն առավել արդյունավետ օգտագործեցին զարգացման համեմատաբար բարձր մակարդակ ունեցող ժողովուրդները՝ հայերը, հույները և հրեաները: Կայսրության տնտեսական կյանքը նշանակալից չափով անցավ այդ ժողովուրդների ներկայացուցիչների ձեռքը: Թուրքական բուրժուազիան ավատատիրական-փաշայական ծագում ուներ, և Թուրքիան ճգնաժամից հանելու ուղին տեսավ ոչ թե առաջընթացի, այլ Թուրք-մոնղոլական անցյալ փառքի՝ Չինգիզխանի տիրակալության վերականգնման մեջ: Դրան նպաստեց նաև այն, որ Արևմուտքն այլևս Թուրքերի առաջ փակ էր, իսկ Արևելքը բաց էր, և Թուրքերի համար գայթակղիչ էր իրենց էթնիկական բնօրրանը վերադառնալու հեռանկարը: Ծրագրվեց կայսրությունը ճգնաժամից հանել ոչ թե հպատակ ժողովուրդների վիճակի բարելավման, այլ այդ ժողովուրդների ազատագրական ձգտումները ճնշելու, արյան մեջ խեղդելու միջոցով: Այս ծրագրի հիմնավորման նպատակով ծնվեցին ազգայնական (շովինիստական) տեսություններ: 19-րդ դարի 50-60-ական թվականներին Թուրք բուրժուազիայի գաղափարախոսները միջոցներ էին մշակում հպատակ ժողովուրդներին ճու-*

---

[81] *Положение армян в Турции...*, стр. 6.
[82] «Արմենիա», 21.03.1987:
[83] Նույն տեղում:

լելու: Մրագիր հանդիսացավ նախկին մեծ վեզիր Ֆուադի քաղաքական կտակը, որի առաջ քաշած դրույթները դարձան 1876թ. սահմանադրության հոդվածներ:

Օսմանիզմի ճուլման գաղափարախոսությանը փոխարինելու եկավ պանիսլամիզմը, որը նույն խնդրի լուծման համար առաջարկում էր կրոնական գործոնը: Պանօսմանիզմի քաղաքականության ձևավորումը ժամանակի առումով համընկավ 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի և Արևելյան հարցի համակարգում Հայկական հարցի առաջին պլան դուրս գալու հետ: Պանիսլամիզմը գործնականում փորձ էր հակակշիռ ստեղծելու Արևելյան հարցի դեմ:

Նույն այդ ժամանակ ակնհայտ դարձավ, որ թուրքերը պարտադրված են իրենց փեշերը քաշել Եվրոպայից և հավաքվել Փոքր Ասիայում՝ Անատոլիայում:

Հայաստանը, մասնավորապես Տավրոսը, կայսրությունը բաժանում էր երկու մասի և թուրքերին մեկուսացնում արաբական աշխարհից ու Արևելքի թուրքական ժողովուրդներից: Դա նշանակում էր՝ Հայաստանը կորցնելը նաև կհանգեցներ ամբողջ Առաջավոր Ասիայից կտրվելուն: Թուրքերը այդ թույլ տալ չէին կարող: Իսկ Հայաստանում թուրքերը փոքրամասնություն էին, ազգաբնակչության մեծամասնությունը հայեր էին: Փոքր չէր նաև քրդերի թիվը: Ահա այդ երեք ժողովուրդները մահուկենաց առճակատման մեջ մտան միևնույն աշխարհատարածքի համար: Թուրքերն օգտագործեցին կառավարող ազգության իրենց հնարավորությունները և կարողացան քրդերին ևս հանել հայերի դեմ, նրանց բնաջնջելու միջոցով «մահմեդականացնել» Արևմտյան Հայաստանը:

* * *

Փոքր-ինչ հանգամանալից անդրադառնանք Հայոց ցեղասպանության պատճառներին, այն իրականացնելու հետ առնչվող և առանձնակի դեր խաղացած գործոններին, որոնք ոչ միայն մեկից ավելի են, այլև առանձին դեպքերում բազում պատճառների համակեցություն ու ամբողջություն: Հետաքրքրությունից զուրկ չէ նաև Մեծ Եղեռնի նախապատրաստության առանցքային միջոցառումների պարզաբանումը, դրանց կառուցվածքի քննությունը:

Վ. Տատրյանը *"Геноцид армян: содержание преступления"* (Երևան, 2005) աշխատությունում հանգամանալից քննարկում է Հայոց ցեղասպանության պատճառները՝ աշխարհում տեղի ունեցած ցեղասպանություններին բնութագրական համատեքստում:

Այդ պատճառների թվում նշվում են «անընդհատ զարգացող և ահարկու թափով խորացող առճակատումը հանցագործի և զոհի միջև», տվյալ դեպքում հանցագործ օսմանյան վարչակարգի և զոհի՝ արևմտահայության միջև: Նման մոտեցումը «բացառում է պնդումը, թե Հայոց ցեղասպանությունը հանդիսանում է ծայրահեղությունների և Առաջին աշխարհամարտի համընդհանուր ճգնաժամի կողմնակի փոքր կամ մեծ արդյունք»[84]: Միաժամանակ բացառվում է անցյալում տեղի ունեցած կոտորածների հրահրած առճակատումների տարրերի ազդեցությունն ու չարունակվելը Մեծ Եղեռնի տարիներին:

Որպես հարցադրում այս մտքի հետ համաձայնվել հնարավոր է, բայց անպայման պարտադիր է նկատի ունենալ, որ Մեծ Եղեռնը Առաջին աշխարհամարտի հետևանքը չէր, այն շատ ավելի վաղ էր մտահղացված. երիտթուրքերը պարզապես օգտագործեցին աշխարհամարտի ընձեռնած հնարավորությունը:

Վ. Տատրյանը չարունակում է, թե անպատժելիության գիտակցությունը ցեղասպանության տատմերներից է, միաժամանակ նկատում է, որ ուշադրության կենտրոնացումը «անպատժելիության» վրա՝ խանգարում է առավել խորքային պատճառների գիտակցմա-

---

[84] Дадрян В., նշվ., աշխ., էջ 3:

նը: Նա առաջ է քաշում բանաձև՝ «առճակատում-սանձազերծում և առճակատում-ավարտ»: Սակայն բացարձակապես ակնհայտ է, որ 1890-ական թվականների ջարդերի հեղինակների անպատիժ մնալը երիտթուրքերին ինքնավստահություն և համարձակություն հաղորդեց: Դրա համար էլ «մինչև Առաջին աշխարհամարտը տեղի ունեցած կոտորածների հանցագործներին անպատիժ թողնելը» հանդես եկավ որպես գործոն, որը ոչ միայն պայմանավորեց, այլև... ստեղծեց նախադրյալներ գենոցիդի համար[85]: Նաև չի կարելի անուշադրության մատնել, որ ոչ քիչ դեպքերում սերտ կապ գոյություն ուներ անպատժելիության և ցեղասպանության ժխտման միջև:

Կորանն ու չարիքը մարդ էին համարում միայն մահմեդականին՝ միլիեթի հակիմ, իսկ ոչ մահմեդականը՝ միլիեթի մակհումեն, լիարժեք մարդ չէր՝ կոչված էր ծառայելու մահմեդականին, ինչը, բնականաբար, վերջինների շրջանում առաջացնում էր ձգտում բարելավելու սեփական վիճակը կամ դուրս գալու կայսրության կազմից: Ծրանսիական հեղափոխությունը, Թանզիմաթը և այն, որ օսմանահպատակ մի շարք ժողովուրդներ հասան անկախության, հայերի մեջ նույնպես ծնեցին նման ձգտում կամ բարենորոգումների իրականացման սպասում: Այս հողի վրա սրվեցին հայ-թուրքական հարաբերությունները: Դրանք բացարձակ առճակատման վերածվեցին, երբ 1913թ. նորից բարձրացվեց հայկական բարենորոգումների հարցը՝ Բալկանյան պատերազմում թուրքիայի խայտառակ պարտությունից անմիջապես հետո:

Բալկանյան ժողովուրդները տերությունների, մասնավորապես, Ռուսաստանի օգնությամբ թուրքերին դուրս քշեցին Բալկաններից: Նույն ուղիով էր ընթանում նաև հայկական հարցի լուծման գործընթացը: Հայերին նույնպես թուրքերը ջարդեցին, երբ նրանք պահանջեցին բարենորոգումներ, ինչպես այդ եղել էր Բուլղարիայում և Մակեդոնիայում: Եվ երբ երիտթուրքերը 1914թ. փետրվարի 6-ին ստորագրեցին ռուս-թուրքական համաձայնագիրը հայկական բարենորոգումների վերաբերյալ, սարսափեցին այն մտքից, որ Թուրքիայի արևելքում հնարավոր էր, որ կատարվեր այն, ինչ տեղի ունեցավ Բալկաններում և որոշեցին, ինչ գնով ուզում է լիներ, այդ թույլ չտալ:

Երիտթուրքերի իշխանության գալը չնշանակեց Օսմանյան կայսրության սոցիալ-քաղաքական համակարգի փոփոխություն. դա պետական հեղաշրջում էր, որտեղ բացարձակ իշխանությունը սուլթանից անցավ իթիհադի ղեկավարներին, առավելապես Թալեաթին և Էնվերին, ովքեր և ինքնագլուխ լուծում էին կայսրության համար կենսական նշանակության հարցերը:

1913-ին իթիլաֆի հետ կապված ահաբեկիչները սպանեցին մեծ-վեզիր Մ. Շևքեթին, որին հաջորդեց ընդդիմադիր կուսակցությունների և պատգամավորական խմբերի ղեկավարների մաքրազտումը, գործի դրվեցին ռազմական դատարաններն ու կախաղանները, ինչը հանգեցրեց իշխանության դիկտատուրային համակարգի խորացմանը:

1911թ. իթիհադի կենտկոմի կազմն ընդլայնվեց, իսկ Բալկանյան առաջին պատերազմից հետո կուսակցությունում ստեղծվեց ազգային հարցով զբաղվող խումբ՝ Բ. Շաքիր, Մ. Նազըմ և Զ. Գեոքալփ: Այս խումբը առաջատար դեր խաղաց հայերի բնաջնջումը նախապատրաստելու և իրականացնելու գործում:

Հասկանալի է, որ վիճելի կայսրության տարածքով մեկ ցրված հայերի ոչնչացումը ավելի քան դժվար գործ էր և պահանջում էր իրավական, կազմակերպչական լուրջ նախապատրաստություն: Անհրաժեշտ էր գտնել բնաջնջման այնպիսի եղանակ, որը հնարավորություն տար առավել քիչ ուժ գործադրելով ավելի շատ մարդ սպանել: Նման եղանակ հանդիսացավ բռնագաղթի միջոցով մարդկանց լայն զանգվածների կենտրոնացումը մի վայրում, ինչը նաև հնարավորություն տվեց քողարկելու հիմնական նպատակը՝ իբր մարդկանց ոչ թե ոչնչացնում են, այլ տարագրում:

---

[85] Дадрян В., նշվ. աշխ., էջ 4:

Երիտթուրքերի համագումարը (1913թ.) ղեկավարվելով կուսակցության ծրագրի 12-րդ հոդվածով օսմանյան սահմանադրության 36-րդ հոդվածում որոշ փոփոխություն մտցրեց, ինչը մշակվել էր դեռ 1909թ.: Այդ փոփոխությունը իրավաբանական հիմք հանդիսացավ տարագրություն իրականացնելու համար: Նշված փոփոխությունը կառավարությանն իրավունք էր տալիս, առանց օրենսդրի հետ համաձայնեցնելու, ընդունել ժամանակավոր որոշումներ բռնագաղթ իրականացնելու համար: Եվ որպեսզի դա հնարավոր լիներ, հարկ էր խորհրդարանը ցրել կամ ուղարկել արձակուրդ: Ընդ որում, օրենքի խմբագրված տարբերակն ասում էր, որ նման ժամանակավոր օրենքների ընդունումը թույլատրելի է միայն այն ժամանակ, երբ առկա է հրատապ անհրաժեշտություն «պաշտպանելու պետությունը սպառնացող վտանգներից կամ ապահովելու հասարակության անվտանգությունը»: Նույն միտքն արտահայտվեց նաև կուսակցության ծրագրի վերանայված 12-րդ կետում՝ մի էական տարբերությամբ՝ բաց էին թողնված պետության և հասարակական անվտանգության պաշտպանությանը վերաբերող հղումը, և պարզապես ասվում էր, որ նշված միջոցառումն իրականացվում էր «այն դեպքերում, երբ առկա էր հրամայական անհրաժեշտություն, պահանջ արագ գործողությունների»:

Ինչպես կիհադը, այնպես էլ սահմանադրական և ծրագրային փոփոխությունները պատերազմի ժամանակ գործադրվեցին գրեթե միայն հայերի հանդեպ: Այդ փոփոխությունները հնարավորություն տվեցին ամբողջ իշխանությունը կենտրոնացնելու գործադիր մարմինների, ավելի ճիշտ, իթիհադի կենտկոմի մի խմբի ձեռքում (Էնվեր, Թալեաթ, Ջեմալ, Խալիլ), որոնք միաժամանակ զբաղեցնում էին կառավարական բարձր պաշտոններ: Հենց նրանք էլ որոշեցին Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու հարցը, իսկ այդ որոշման ընդունման գործում, ինչպես նշել է Էնվերը, հայկական հարցը, մասնավորապես, հայկական բարենորոգումների մտցնելը մեկընդմիշտ հրապարակից չնչելը, գերակշիռ դեր էր խաղացել: Ջեմալն ուղղակի էր ասում, որ հայկական բարենորոգումներ մտցնելու դեպքում անհրաժեշտ էր լայնածավալ ջարդ: Նա նաև գրում էր, թե այդ բարենորոգումները թույլ չտալու համար «իթիհադը որոշեց մտնել պատերազմի մեջ»:

Բնաջնջումն ավելի փոքր ջանքերով իրականացնելու նպատակով հարկ համարվեց հայերին հնարավորին չափ անպաշտպան դարձնելը: 1914թ. օգոստոսի 2-ին, Գերմանիայի հետ գաղտնի համաձայնագիր ստորագրելուց հետո հայտարարվեց ընդհանուր զորահավաք: Սկզբում զորակոչվեցին 20-45, ապա նաև 18-20 և 45-60 տարեկան տղամարդիկ: Զորակոչի մասին հիմնական օրենքը հաստատված էր դեռ 1909թ. օգոստոսի 7-ին, որում խոսվում էր միայն 20-45 տարեկանների մասին: 1914թ. մայիսի 12-ին հաստատվեց լրացուցիչ օրենք 18-60 տարեկաններին զորակոչելու վերաբերյալ:

Հայերի բռնագաղթի անհրաժեշտության վերաբերյալ (թե հայերը պատերազմի ժամանակ կարող են սպառնալ կայսրության գոյությանը) իթիհադի պնդումները հանդիպում էին Թուրքիայում գործող գերմանացի և ավստրո-հունգարացի մի քանի խորհրդականների առարկությանը: Հալեպում գերմանական հյուպատոս Վ. Ռոսլերը 1915-ի հուլիսի 27-ին տեղեկագրում է Բեռլին. «Երբ արական սեռի ամբողջ չափահաս բնակչությունը զորակոչված է բանակ, կանայք ու երեխաները ինչպե՞ս կարող են սպառնալիք հանդիսանալ»[86]: Գերմանական գլխավոր շտաբի պետ Շտանգեն, որը արևելյան նահանգներում հատուկ կազմակերպության մի զորախմբի հրամանատար էր, նկատում է՝ թուրքական իշխանությունները պնդում են, թե բռնագաղթը ռազմական անհրաժեշտություն էր, թե իբր իրենք զգուշանում էին ապստամբությունից, մինչդեռ. «Բացառությամբ աննշան թվով անձանցից, բոլոր առողջ հայ տղամարդիկ զորակոչված են: Դրա համար էլ որևէ առանձնակի պատճառ լինել չի կարող երկյուղելու իրական ապստամբությունից»[87]:

---

[86] AA Türkei 183/38, A 23991, R 14087- մինչ 81/B. 1645

[87] AA Botschaft Konstantinopel (այսուհետ՝ "BoKon) 170, j N 3841.

Ավստրիական ռազմական կցորդ Պոմյանկովսկին գրում է, որ թուրքերը «սկսեցին ջարդել հայ առողջ տղամարդկանց..., որպեսզի անպաշտպան դարձնեն բնակչության մնացած մասին»[88]:

Մորգենթաուն վկայում է, թե հայերի ջարդերն իրականացվում էին «անդադար, առանց պատճառի» և «գրեթե միշտ կատարվում էին նույն եղանակներով... Հայաստանին ջարդելուց առաջ,– նկատում է նա,– անհրաժեշտ էր նրան դարձնել անզոր»: Այդ խնդրի լուծմանն էր ուղղված հայ արական բնակչության զորակոչը: Նա 1915թ. հուլիսի 10-ին գրում է Վաշինգտոն. «20-45 տարեկան բոլոր (հայ) տղամարդիկ ծառայում են թուրքական բանակում»[89]:

Թուրք քաղաքական գործիչներն ու պատմաբանները տասնամյակներ շարունակ ու այսօր նույնպես հայ զինվորների ոչնչացման պատճառ են համարում նրանց դասալքությունը և ավազակային հարձակումները «մահմեդական գյուղերի վրա»: Կեղծիք է, որովհետև, նախ, դասալիք էր թուրքական բանակի մոտ մեկ երրորդը և այդ գործընթացում հայ զինվորներն առաջին տեղում չէին: Երկրորդ, մահմեդական բնակչության վրա հայ դասալիքների հարձակումների փաստեր չկան կամ այնքան հազվադեպ են ու հետևանք հանգամանքների հարկադրանքի, որ անհեթեթ է դրանց «ավազակային» համարելը և երրորդ՝ հայ զինվորների մեկուսացման նախապատրաստական աշխատանքները շատ ավելի վաղ էին սկսվել, քան մարտական գործողությունները ռազմաճակատում: Այդ մասին որոշումը կայացվել էր մինչև պատերազմի մեջ Թուրքիայի մտնելը: Թուրքական 3-րդ բանակի հրամանատար Հ. Իզեթի ծածկագրերից մեկում նշվում է, որ արդեն 1914թ. սեպտեմբերի 24-ին, այսինքն՝ մինչև պատերազմի մեջ Օսմանյան կայսրության մտնելը, սկսվել էր հայ զինվորների զինաթափումը: Զինաթափման հրամանի հեղինակն Էնվերն էր, այն տրվել էր ոչ թե Սարիղամիշի պարտությունից հետո, այլ դրանից երկու ամիս առաջ[90]:

Հատկանշական է, որ Էնվերը նաև հանձնարարում էր ստեղծել «միլիցիական» ջոկատներ այն մահմեդականներից, ովքեր բանակ չէին զորակոչվել: Թուրք քաղաքագետ Թ. Թունայան վկայում է, որ «միլիցիական զորամասերը» ձևավորվել էին «ավազակներից» ու «քրեական հանցագործներից» և հանդիսանում էին Հատուկ կազմակերպության «գլխավոր տարրը»:[91] Նման ջոկատներ թաքուն ստեղծվում էին նաև մինչև Էնվերի հրամանը՝ պատերազմի սկզբին: Որ հայ զինվորներին զինաթափել էին մինչև պատերազմի մեջ Թուրքիայի մտնելը, վկայություններ կան նաև թուրք պատմաբանների աշխատություններում[92]:

«Ճակատամարտ»-ի 01.02.1919-ին տպագրված մի հոդվածում կարդում ենք կոտրածների արհավիրքներով անցած մի հայ սպայի պատմածը, որ մինչև Սարիղամիշի ճակատամարտը՝ 1914թ. դեկտեմբերին «3-րդ բանակի զորամասերում հազիվ թե զենք մնացած ըլլար թեկուզ մեկ հայ զինվորականի քով»: Զինվորական գումարտակները կառուցում էին էրզրում-Երզնկա խճուղին: «Անառարկելի է, որ հայ զինվորականների ոչնչացումը իրականացվեց կառավարության և բանակի համատեղ ուժերով»:

Գերմանական մի փաստաթուղթ, որի հեղինակը գերմանացի սպա Հ. Հումանն է, նույնպես վկայում է, որ հայ զինվորների զինաթափումը կայսրության մի շարք մասերում սկսվեց 1914թ. հոկտեմբերին, այսինքն՝ զորահավաքից երկու ամիս անց՝ մինչև պատերազմի մեջ թուրքերի մտնելը[93]:

---

[88] **Pomiankowski J.,** *Der Zusammenbruch des Ottomanischen Reiches.* Verlag, 1969, S. 160.

[89] ԱՄՆ Ազգային արխիվ. *RG 59,867,4018/74.*

[90] *"Askeri Tarih Belgeleri Dergisi", թիվ 2, փաստաթուղթ թիվ 1894 և թիվ 3, փաստ.* թիվ 1999:

[91] **Tunaya,** *Türkiyede Siyasal Partiler, vol VIII,* İst., 1984, s. 282.

[92] **Parlar S.,** *Osmandan Günümüze Gizli Devlet,* İst., 1996, s. 92-93.

[93] *AA Türkei 142/41. A 27535.*

Իհարկե, կայսրության կառավարման համակարգում տիրող քաոսի պատճառով իթիհադի ձեռնարկումները կյանքի էին կոչվում անկանոն, ոչ ամենուրեք, ձգձգվում էին: Պատճառներից մեկը բանվորական ուժի պակասն էր: Օրինակ, Սեբաստիայում 2000-2500 հայ զինվորականի ոչնչացումը ձգձգվեց մինչև 1916-ի ամառը, երբ նրանց փոքր խմբերով միմյանց կապեցին և մորթեցին Կիզիր-դերե հարթավայրում: Հայտնի է նաև, որ այս ոճրագործության առավել արյունախում հեղինակներին Վեհիբի միջնորդությամբ ռազմական դատարանը մահվան դատապարտեց և նրանք կախաղան հանվեցին:

Շվեյցարացի դեղագործ Ց. Կունցլերը նկարագրում է հայ զինվորների բնաջնջումը[94]: Սիվերեկի «1300-1500 անզեն հայ զինվորների» ոչնչացման նկարագրությունը կա վենետուելացի սպա Ռ. Նոգալեսի հուշագրություններում[95]:

Իթիհադն իր հայամիջի քաղաքականությունն ամբողջացրեց Սարիղամիշի ճակատամարտից հետո, որին ռուսական բանակի կազմում մասնակցում էին հայեր և Վանի ապրիլյան ինքնապաշտպանությունից հետո, որը Վ. Տատրյանը սխալմամբ անվանում է «ապստամբություն»[96]:

Վանի նախկին վալի Ի. Արվազն իր հուշերում վկայում է. «Միություն և առաջադիմություն կոմիտեն թաքուն գրգռեց մահմեդական բնակչությանը սպառնալու հայերին»[97]:

Վանի մի ուրիշ նախկին վալի Հ. Թահսին 1914-ի սեպտեմբերին նշանակվում է Էրզրումի նահանգապետ: Դեռ Վանում նա հանդես էր գալիս հայերի հանդեպ իշխանությունների վայրագությունների դեմ: Նա Թալեաթին գրեց. «Ես երդվում եմ, որ Վանում ապստամբություն տեղի չէր ունենա և չէր կարող տեղի ունենալ: Մենք ենք պատասխանատու դրա համար, որովհետև պատեհ և ոչ պատեհ առիթով անարգանքի ենք ենթարկում հայերին, ստեղծելով ինչ-որ մղձավանջ, որից գլուխ հանել չենք կարող»: Թալեաթի հեռագրին Թե պետք է Էրզրումի վիլայեթի բոլոր հայերին տեղահանել, պատասխանեց, որ ինքը Էրզրումի հայությանը չի կասկածում «հեղափոխական դիտավորությունների ու լրտեսության մեջ... նրանք սարսափելի վիճակում են»: Գերմանիայի փոխհյուպատոս Շոյքները վկայում է, որ Թահսին բացահայտ դադարեցրել էր զանգվածային տեղահանությունը, այն անվանելով «զազրելի»[98]:

Բացարձակապես ակնհայտ է, որ թուրքերի համար ցեղասպանությունը ո՛չ չեղում էր պատերազմական նորմերից և ո՛չ էլ չարագործության ժամանակավոր արտահայտություն: Զանգվածային սպանությունները Օսմանյան կայսրության քաղաքական մշակույթի հետևանք էին. այդ մշակույթը թույլ էր տալիս առօրյա խնդիրների առնչությամբ դիմելու ջարդերի՝ դրանք համարելով պետական քաղաքականության գործիք հպատակ ժողովուրդների և փոքրամասնությունների դեմ, քանի որ ոչ մահմեդականի դժգոհությունն իսկ համարվում էր ընդվզում թեոկրատական վարչակարգի դեմ:

Պատերազմին նախորդող տարիներին արմատապես վերակառուցվեցին օսմանյան վարչակազմի բարձրագույն մարմինները: Այն զուգակցվում էր «իթիհադ վե թերաքքը» կուսակցության վերակառուցման հետ: Կուսակցության նոր կենտրոնը ղեկավարում էր որպես անսահմանափակ իրավունքներով օժտված մարմին՝ ընդունակ նորացնելու կայսրությունն այնպես, որ այն հիմնված լիներ ոչ այնքան օսմանիզմի, որքան թուրքիզմի վրա: Այս կողմնորոշումը ծնեց արմատականություն և հպատակ ժողովուրդների հանդեպ նորակերպ չարագույժ մոտեցում, առաջին պլան մղվեց հայերի բնաջնջումը:

---

[94] **Kunzler J.**, *Im Lande des Blutes und der Tronen.* Potsdam, 1921, SS. 16-20.
[95] **Nogales R.**, *Four Years beneath the Crescent.* N.-Y., London, 1926, p. 141.
[96] **Дадрян В.**, նշվ., աշխ., էջ 14:
[97] *"Tarihi Hakikatler T. Arvas in Hatirati"*, Ankara, 1964, s. 6.
[98] **Leverkuchn P.**, *Posten auf ewiger Wache*, Essen, 1938, S. 44.

Դա չի նշանակում, թե հայերի ոչնչացման գաղափարը նույնպես նախապատերազմական թոհուբոհի ծնունդ էր: Դեռ 1909թ. երիտթուրքերը մշակեցին «10 կետեր» կոչվող մի փաստաթուղթ, որն այլ բան չէր, եթե ոչ հայերի բնաջնջումն իրականացնելու պլան:

Բառացիորեն չի կարելի ընկալել Վ. Տատրյանի հետևյալ միտքը. «...հայերի ցեղասպանությունը որպես գաղափար ծնունդ առավ Առաջին աշխարհամարտի նախօրեին»[99]: Անհնար է խոսել ցեղասպանության հնարավորության մասին առանց նկատի ունենալու պետական կառավարումն իրենով փոխարինած կուսակցության առկայությունը:

Գենոցիդային երևույթները, որպես կանոն, քողարկվում էին խաբեության, հերքումների, այլևայլատ և կոդավորված բառարանների, խստագույն գաղտնապահության և հանցագործ խմբերի կազմակերպման, զոհին հնարավորին չափ անուժ դարձնելու համար զինաթափման միջոցով, բռնագաղթի և ինչ-որ վայրում զոհերին կենտրոնացնելու ձևերով. ընդ որում, թաքցվում էին բռնագաղթի թե՛ նպատակը և թե՛ վայրերը:

Որքան դաժան, ահավոր ու անխիղճ են ցեղասպան գործողությունները, այնքան ապահովված է դրանց հաջողությունը: Պարտադիր են նաև բնակչության դիտակցության մեջ սարսափի ներարկումը, գործողությունների հանկարծակիությունը զոհի դիմադրությունը հնարավորին չափ փոքրացնելու համար: Որպեսզի ազգաբնակչությունը մասնակցի գենոցիդի իրականացմանը, նրա մեջ պետք է ներարկել ագահություն, թալանելու մոլուցք: Ըստ այդմ էլ, ցեղասպանության մտահղացողների և իրականացնողների դիտավորությունները միմյանց չեն համընկնում, որովհետև վերջիններիս գործողությունների նպատակն ավելին չէ, եթե ոչ թալանն ու հափշտակությունը:

Առաջին պլանին դնելով քաղաքական, ոչ կառավարական ուժը, չպետք է չքմեղացնել պետական-կառավարական համակարգը: Համենայն դեպս, այդ կառույցների մասնակցությունը ցեղասպանության իրականացմանը ապահովեցին դրա անսահմանափակ ծավալները, բացառեցին զոհերի փրկվելու հնարավորությունը: Առաջնակարգ դեր խաղաց հանցագործության, այդ թվում սպանության համար ոչ միայն չպատժվելը, այլև խրախուսվելը, և ընդհանրապես՝ սեփական հանցագործությունների համար պատասխանատվությունից ազատ լինելը:

Ցեղասպանության իրողության մասին մեծ քանակությամբ վկայություններ կան նաև պատերազմի տարիներին Թուրքիայում աշխատող գերմանական, ավստրո-հունգարական և ամերիկյան դիվանագետների զեկուցագրերում, նամակներում, նկարագրություններում: Վերջինների օգնությամբ ենք մենք իմանում, որ ցեղասպանության մասին որոշումն ընդունել է եռատիճան վարչական ցանցը, որը տնօրինում էր ցեղասպան ծրագրի կազմակերպչական և վերահսկողական ասպեկտները, զինվորականների խաղացած դերը, քրեական հանցագործների օգտագործման գործընթացը, բարբարոսության և թալանի սանձազերծումը, աղջիկների, մասնավորապես դեռահասների, բռնաբարությունների լայն տարածումը, զանգվածային սպանության տարբեր եղանակները, այդ թվում գնդակահարելը, թունավորելն ու ծով կամ գետ նետելը:

Շատ կարևոր նյութ են պարունակում օսմանյան խորհրդարանի 1918թ. վերջի նիստերի արձանագրությունները: Համաձայն թուրքական աղբյուրների՝ Հայոց ցեղասպանությունը մտահղացվել և իրականացվել է հետևյալ կերպ: Տրապիզոնի դատարանի վճռում նշվում է, որ վիլայեթի բնակչության ոչնչացումը «նախապես մտահղացված» իրադարձություն էր: Այն պլանավորել և գործադրումը ղեկավարել էր իթիհադի կենտկոմը, մասնավորապես Թալեաթը՝ որպես վարչական և կուսակցական բարձրագույն պաշտոնների զբաղեցրած գործիչ, Բ. Շաքիրն ու Մ. Նազըմը, ովքեր ավելի շատ գործում էին վարագույրի հետևում: Գործողությունները տեղի էին ունենում տարագրության մասին

---

[99] Дадрян В., *"Геноцид армян: содержание преступления"*, Ереван, 2005, стр. 39.

ժամանակավոր օրենքով և ծածկագրերով, առավելապես՝ Թալեաթի և ավելի չատ՝ բանավոր: Հրեշավոր ծրագիրը քողարկելու նպատակով հանձնարարականներ էին ուղարկվում տեղերը՝ «քարավանների պաշտպանությունը կազմակերպել», «տեղահանվածներին հաց ու զեյթուն» տրամադրել, «բռնագաղթի նպատակը լոկ վերաբնակեցումն է» և այլն:

Մ. Վեհիբը ռազմական դատարանում ցուցմունք տվեց. «Հայերի բռնագաղթն ու ոչնչացումը կայացավ «Միություն և առաջադիմություն» կուսակցության որոշմամբ»[100]:

Թուրք հանրահայտ պետական գործիչ, ով զբաղեցրել էր նաև մեծ վեզիրի պաշտոնը, Ռ. Ակիֆը 1918թ. նոյեմբերի 21-ին օսմանյան խորհրդարանում հայտարարեց, որ ՆԳ նախարարությունը հրաման հրապարակեց դեպորտացիայի մասին, ինչը պարզ ձևականություն էր, որովհետև դրան զուգահեռ «կուսակցության կենտկոմը տեղերն ուղարկեց չարագույժ չրջաբերականներ», որոնց «հետևանքը եղան ջարդն ու զանգվածային սպանությունները, որոնք հանդիսացան ավազակների անիծյալ առաքելությունը»: Կենտկոմը անվանելով «խաբեբաների ոհմակ, զզվելի և բռնակալական կառույց»՝ Արիֆը նկատում է, որ դրա անդամները դարձան ավելի չատ իշխանություն ունեցող, քան կառավարության անդամ:

Հայերի ոչնչացումն իթիհադն իրականացրեց Հատուկ կազմակերպության ավազակների միջոցով: Ռազմական դատարանի մեղադրական փաստաթղթում այդ իրողությունը հաստատված է տասնյակ անդամների կողմից: Վեհիբը նրանց անվանեց իրապես «մարդասպաններ, մարդկանց վրա մասնագիտացված մսագործներ», ովքեր «արժանի են կախաղանի»:

Թուրք բարձրաստիճան սպա Ա. Ռեֆիկն իր հուշերում գրում է, որ Հատուկ կազմակերպությունը ստեղծվել էր իթիհադի կենտկոմի կողմից: Այդ կազմակերպության մեջ հավաքագրված տասնյակ հազարավոր քրեական տարրեր գործում էին կառավարության լիազորների հսկողության տակ: Նրանք գործեցին «ահավոր հանցագործություններ... մարդկության դեմ»: «Դրանք բանտերից հանված հանցագործներ էին, ովքեր... մեծագույն հանցագործություններ կատարեցին հայերի դեմ»[101]:

Ռազմական դատարանում թեչքիլաթի ղեկավարները խոստովանեցին, որ այն ուներ երկու գլխավոր վարչություն. մեկը զբաղվում էր արտաքին լրտեսությամբ, քայքայիչ գործունեությամբ և հեղափոխական քարոզչությամբ, իսկ մյուսը, որը ղեկավարվում էր կուսակցության կողմից, զբաղվում էր բռնագաղթի կազմակերպմամբ: Այդ մասին դատարանում վկայություններ տվեցին Ց. Ռիզան, Աթըֆը, Քյուչուկ Թալեաթը[102]:

Օրինակ, Ալի Ռիզան վկայեց, որ Բ. Շաքիրը Տրապիզոնում գաղտնի խորհրդակցություններ էր անցկացրել վալու, կուսակցության կենտկոմի ներկայացուցիչների, ուրիշ պատասխանատու աշխատողների հետ տեղի հայ բնակչությանը ոչնչացնելու խնդրի շուրջ: Նույն բանը հաստատեց Վեհիբը: Նա գրում է, թե Շաքիրը հատուկ ավտոմեքենայով նահանգից նահանգ էր անցնում և տեղական իշխանություններին նախապատրաստում բռնագաղթի իրականացման համար:

**Սպանության եղանակները.**— Վ. Տատրյանը իրավացիորեն գտնում է. «Եթե հաշվի առնենք Առաջին աշխարհամարտի ժամանակ Թուրքիայի հետամնացության և տեխնոլոգիական զարգացման ցածր մակարդակը, ապա հայերի նկատմամբ կիրառվող զանգվածային սպանության միջոցներն իրենց բնույթով ավելի սարսափազդու էին, քանի որ տե-

---

[100] **Dadrian V.**, *The Armenian Genocide in Official Turkish Records*, pp. 85-86.
[101] **Refik A.**, *Iki Komite, Iki Kitab*, ss. 27, 44-45.
[102] *"Tavkim-I Vekayi"*, 3549, 3559, 3553.

*ղահանվածների գերակշիռ մեծամասնությունը կազմող մեծահասակները, կանայք և երեխաները մեռնում էին երկար տանջանքներից հետո»*[103]:

*Չնայած Մեծ Եղեռնի ժամանակ օգտագործվել է նաև գնդակահարությունը, բայց ոչ լայնորեն՝ փամփուշտը խնայում էին: Գնդակահարում էին հիմնականում աշխատանքային գումարտակների և բանակ զորակոչված հայ տղամարդկանց:*

*Հայտնի են զանգվածային գնդակահարությունների չատ փաստեր: Օրինակ, Խարբերդի քոլեջների 1500 սանների գնդակահարությունը Քեյզին վայրում, Գյումուշխանեի աշխատանքային գումարտակի 170 հայերի գնդակահարությունը: Նման ոճրագործությունների մասին վկայություններ են պարունակում Թոյնբիի, Հիբոնսի և ուրիշ չատ հեղինակների ուսումնասիրությունները: Անհամեմատ ավելի չատ հայեր ոչնչացվել են առանց հրազեն օգտագործելու, ավելի հաճախ սպանում էին սառը զենքով, խեղդում էին, ծեծմահ անում. դա էր պատճառը, որ հայ տղամարդկանց սպանելուց առաջ մի քանի օր քաղցած էին պահում:*

*1915-ի հուլիսի 5-ին Խարբերդի չրջանում ձերբակալվում է 800 հայ տղամարդ, նրանց մի քանի օր բանտում ուտելիք չեն տալիս, իսկ ապա 14-ական հոգու իրար են կապում և հարկադրում քայլել 13-15 ժամ, նրանց մի մասին գնդակահարում են, իսկ մնացածին սվինահարում*[104]:

*Դեր Զորում գործող չեչեն ավազակապետ Մահմուդը պատմել է, որ իր խումբը 2000 հոգանոց քարավանից առանձնացրել էր 500 տղամարդու և որոշ հեռավորության վրա գնդակահարել, իսկ երբ ավազակները հոգնել էին «նչան բռնելուց», մյուսներին սվինահար էին արել*[105]:

*Անկարայից բռնագաղթված 15-70 տարեկան տղամարդկանց չորսական հոգու միմյանց էին կապում ու քչում կեսարիայի ուղղությամբ. ամայի դաշտում քարավանի վրա հարձակվում էին մահակով, մուրճով, կացնով, մանգաղով, բահով, սղոցով զինված թուրք գյուղացիներն ու բոլորին ոչնչացնում* [106]:

*Ֆայեզ էլ Ղոսեյնը վկայում է, որ Բիթլիսի վիլայեթում հայերին հաճախ լցնում էին մարագներն ու հրդեհում* [107]:

*1916-ի սկզբներին, երբ սկսվում է տարագրված հայերի ոչնչացումը, Դեր Զորի կառավարիչ Զեքին 1500 հայ որբի հանձնում է գաղթականների առաքումներով զբաղվող Աբդուլահին: Վերջինս երեխաներին տանում է Մարաթի անապատ, որտեղ մի մասին ոչնչացնում է դինամիտով, իսկ մյուսներին լցնում քարանձավ, մուտքը փակում չոր խոտով ու հրդեհում*[108]:

*Նույն Դեր Զորում չեչեն Մահմուդը 230 հայ տարագրի նետում է ցամաքած ջրհորը, այն ծածկում խոտով ու հրդեհում* [109]: *Նա հարկադրում է 1200 հայի դաշտում փոսեր փորել, ապա նրանց լցնում է այդ փոսերն ու հողով ծածկում:*[110] *Երզնկայի կառավարիչ Մեհմուտը մի մեծ փոս է փորել տալիս և 500 հայ որբի կենդանի թաղում* [111]:

---

[103] **Dadrian V.**, *The Comparative Aspects of the Armenian and Jewish Cases of Genocide...*, p. 105. *Տե՛ս* **S. Մաթոսյան**, *նշվ. աչխ.*, էջ 121:

[104] **Dadrian V.**, *The Slaughterhouse Province*, New York, 1989, p. 63.

[105] *«Ցուչամատեան Մեծ Եղեռնի»*, Բեյրութ, 1965, էջ 549-550:

[106] **Morgenthau H.**, *նշվ. աչխ.*, էջ 312:

[107] **Ղոսեյն Ֆ.**, *Հերոսական հայուհիեան անցեալէն*, Կահիրե, 1960, էջ 23:

[108] **Անտոնյան Ա.**, *նշվ. աչխ.*, էջ 199:

[109] *«Ցուչամատեան...»*, էջ 549:

[110] *Նույն տեղում*, էջ 549:

[111] **Թեոդիկ**, *Դողգոթայ հայ հոգևորականութեան և իր հոտին աղետալի 1915 տարիին*, Նիւ Յորք, 1985, էջ 177:

Տրապիզոնում հայ որբերի մի մասին բաժանում են մահմեդականներին, իսկ մյուս մասին խումբ-խումբ տանում հայկական դպրոցներից մեկում ստեղծված «չոգեքաղնիք» անունը կրող սենյակը, գազախեղդ անում ու ապա պարկերով նետում ծովը[112]:

Եթե Տրապիզոնի վիլայեթի չափահաս հայերին նույնպես նետում էին ծով, ապա Ակնում նրանց վզներին քար կապելով, չպրտում էին Եփրատ: Տիգրանակերտում 674 հայ երեւելիների թափեցին Տիգրիս, փրկվել փորձողներին գնդակահարում էին[113]: Քեմախում միանգամից ջրասույզ արվեց և կոտորվեց չուրջ 20000 հայ, Դեյրմենդերե գետում հայերին խեղդելու մասին վկայություններ ունեն Տրապիզոնում իտալացի հյուպատոս Գորինին, Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Կվյատկովսկին, Գերմանիայի հյուպատոս Բերգֆելդը[114]:

Տուտանի անդունդը (Եփրատ) նետվեց 5000 կին և երեխա, մեծ թվով հայեր խեղդվեցին Գյոլջուկ (Ծավք) լճում[115]:

Բիթլիսի վիլայեթում վալի Մ. Աբդուլհալըգի հրամանով 1000 հայ որբի այրեցին խարույկների վրա Թաչխոտ վայրում: Խարբերդի որբանոցների 300 երեխայի նույնպես կրակի ճարակ դարձրեցին[116]:

Ջարդի հիմնական միջոցներից էր քաղցի ու ծարավի մատնելը, որի հետևանքով տարագրության ճանապարհին մեռնում էր մեծ թվով բռնագաղթված հայ, մանավանդ որ քարավանների ուղերթները դիտավորյալ ընտրված էին անմարդաբնակ և անջուր վայրերով, ուղեկցող զինվորներն արգելում էին ճանապարհին հանդիպած աղբյուրներից ջուր խմել կամ ջուրը վաճառում էին:

Բռնագաղթվածների համար ստեղծված ճամբարները երկու խնդիր ունեին՝ ա. հավաքել հայ տարագիրներին և ապա քշել անապատ ու այնտեղ ավարտել ոչնչացումը, բ. սովի ու ծարավի միջոցով առաջացնել համաճարակներ և զանգվածային մահացություններ:

Մեսքենեի հարթավայրը վերածվել էր վիթխարի համակենտրոնացման ճամբարի, որտեղ մահացավ 60 հազար մարդ[117]: Այդպես էր ոչ միայն Մեսքենեում, այլ դեպի Դեր Զոր տանող ճանապարհի բոլոր հավաքատեղիներում[118]: Համա ավանում հավաքված 20000 տարագրից երկու ամսում քաղցից ու համաճարակից մահացավ 5000ը[119]: Ամանոսի լեռների Քանլը-Կեչիտ ձորի ճամբարում 1915թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին օրական մեռնում էր 600-700 մարդ[120]:

Ցեղասպանության նախապատրաստության ու իրականացման ընթացքում լայն թափ ստացան հակահայ քարոզչությունը, զանգվածային սպանությունների քողարկումը և, անգամ, ցեղասպանությունը «չահութաբեր դարձնելը»: Մեծ ջանքեր էին գործադրվում հայերին արտաքսելն ու սպանելը «հիմնավորելու» համար: «Այդ նպատակով... ակտիվորեն օգտագործվում էին զոհերին մեղադրելու, «քավության նոխազ» դարձնելու, նրանց «արժեքը» նսեմացնելու, հետևաբար՝ սեփական հասարակական արժեքների համակարգից դուրս թողնելու քարոզչական մեխանիզմները», որը նպատակ ուներ էլ ավելի ուժեղացնելու հակահայ տրամադրվածությունն հարևան ժողովուրդների

---

[112] **Dadrian V.**, *The Role of the Turkish Physicians in the World War I: Genocide of Ottoman Armenians. Տե՛ս "Holocaust and Genocide Studies"*, 1986, vol I, N 2, p. 177.

[113] **Թեոդիկ**, նշվ. աշխ., էջ *240: Բինոն Ռ., Հայերու բնաջնջումը*, Կ. Պոլիս, 1919, էջ 40:

[114] *«Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր»*, N 7, 2003, էջ 7:

[115] Նույն տեղում, էջ *314:* **Ղազարյան Հ.**, նշվ. աշխ., էջ *203:* Davis L., նշվ. աշխ., էջ 81:

[116] **Անտոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ *177:* **Թեոդիկ**, նշվ. աշխ., էջ 219:

[117] **Boyajian D.**, *Armenia. The Case for a Forgotten Genocide*, Westwood, № 1, 1972, p. 120.

[118] Նույն տեղում, էջ 120-124:

[119] *Армянский вопрос и Геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива МИД Германии.* Ереван, 1995, стр. 283.

[120] **Գալաքյան Գ.**, *Հայ գողգոթան. Բեռլինեն դեպի Տեր Զոր*, Երևան, 1991, էջ 338:

*չրջանում, որպեսզի նրանք ոչ միայն չհովանավորեին հայերին, այլև մասնակցեին նրանց բնաջնջմանը: Հակահայ քարոզչությունը առաջադրանք ուներ՝ հայերի չուրջ բացասական մթնոլորտի և նրանց դեմ գործողություններ իրականացնելու պատրաստակամության ձևավորում*[121]:

*Իթիհադը օգտագործեց հայերի ռուսական կողմնորոշումը, այն, որ, ինչպես նկատում է Ս. Լոուրին, «ռուսների կողմից երկու դարերի ընթացքում թուրքերի նկատմամբ տարած անընդհատ հաղթանակների պատճառով վերջինների գիտակցության մեջ ստեղծվել էր Ռուսաստանի՝ որպես դարավոր և հավերժ թշնամու կերպարը...»*[122]:

*Իթիհադը հայերին հռչակեց անհավատարիմ, թշնամի ազգ: Լուրեր էին տարածում, թե հայերը միանալու էին ռուսներին, ապստամբելու էին թուրքերի դեմ, սպանելու էին իթիհադի առաջնորդներին, Անտանտի առաջ բացելու էին Բոսֆորը: «...Այս նողկալի խաբեությունները կարողացան համոզել միայն հասարակ ժողովրդի այն մասին, որը չէր գիտակցում իր քաղցած լինելու» պատճառը*[123]:

*Օսմանյան քարոզչությունը իշխանությունների և մահմեդական բնակչության բռնարարքների դեմ հայերի ինքնապաշտպանության ամեն մի փորձ հայտարարում էր ապստամբություն կամ դավաճանություն, իսկ եթե պատրվակները բացակայում էին, հնարում էին: Օրինակ, Սեբաստիայի վիլայեթում լուր տարածեցին, թե հայերը թունավորել էին թուրք զինվորներին,*[124] *Դիարբեքիրում՝ թե հայերը 40 ռումբ էին ուղարկել Վանի պաշտպաններին*[125]: *Կարինի հայ բժիշկները մեղադրվում էին թուրքական բանակը կազմալուծելու դիտավորությամբ թուրք զինվորներին արձակուրդ մեկնելու վկայագրեր տալու մեջ:*

*Նման մեղադրանքները նաև խնդիր ունեին հնարավոր դարձնելու հոգեբանական արդարացումն ու ինքնաարդարացումը: Նաև դա է պատճառը, որ հայերի բնաջնջումը իթիհադը հռչակեց որպես «Սուրբ գործ», «Սրբազան մտադրություն»: Նազըմն անգամ հայտարարեց, թե հայերի բնաջնջումը արմատապես կլուծի Արևելյան հարցը*[126]:

*Այդ ամենի հետ միասին հաջողությամբ և հետևողականորեն օգտագործվում էին հպատակ ժողովուրդների միջև տարածքային և այլ խնդիրների առնչությամբ գոյություն ունեցող հակասությունները, ոչ-բարեկամական հարաբերությունները: Դրա համոզիչ արտահայտություններից էր հայ-քրդական հակասությունների առճակատման վերածելու թուրքական քաղաքականությունը:*

*Ցեղասպանությունն ուղեկցվում էր նաև «գիտափորձերով»: Այդպես էր Տրապիզոնում: Երզնկայում 1915-1916ԹԹ. ճմռանը ոմն բժիշկ Համդին աշխատանքային գումարտակների հայերին ներարկում էր իր սինթեզած չվարակազերծված պատվաստանյութը, որը մեծ թվով երիտասարդների մեռցրեց*[127]:

*Ընդ որում, երիտթուրքական իշխանությունները նախապես երաշխավորում ու հավաստիացնում էին, որ հայերին սպանողները, նրանց հանդեպ բռնարարքներ գործադրողները չեն ենթարկվելու որևէ պատժի, այլ ընդհակառակը, արժանանալու էին իրախուսանքների: Մոլեռանդ, ավազակ, արյունախում ամբոխի ձեռքերին ազատություն տալը ոչնչացման մեծ ազդակ հանդիսացավ: 1915Թ. հոկտեմբերի 3-ին Թալեաթը ծածկագրեց Հալեպի վալուն. «Ճանապարհի (բռնագաղթի) ընթացքում հայերի հանդեպ գոր-*

---

[121] **Մաթեոսյան Տ.**, *նշվ. աշխ.*, էջ 138:

[122] **Лурье С.**, *Официальная идеология и сознание народных масс в Турции*, СПб., 1994, стр. 105.

[123] **Ռեֆիկ Ա.**, *Երկու կոմիտե՝ երկու ոճիր:*

[124] **Ղազարյան Հ.**, *նշվ. աշխ.*, էջ 42:

[125] *Նույն տեղում*, էջ 199:

[126] **Ջորջ Ղ.**, *նշվ. աշխ.*, *էջ 468:* **Անտոնեան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 41, 36; **նաև Akram T.**, *Dialogue across on International Divide.* Cambridge, Toronto, 2001, p. 54.

[127] *Геноцид армян в Османской империи.* Ереван, 1982, стр. 437-441.

*ծադրված ոճիրների համար ժողովուրդը չպետք է հետապնդվի, քանի որ այդ հանցանքները ծառայում են կառավարության նպատակներին»[128]: Իսկ Հալեպի գաղթականական վարչության պետ Ա. Նուրին հրահանգում էր իր ստորադասներին. «Պապի կազան հայերից դատարկելու ընթացքում գործադրվելիք խստություններու համար ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվելու»[129]:*

*Դրա հետ միասին ամենաբազմաքնույթ միջոցներ էին կիրառվում եղեռնագործությունը գաղտնի պահելու ուղղությամբ: Նախ, հայերին ասում էին, թե նրանց բռնագաղթեցնում էին ոչ թե ոչնչացնելու, այլ մերձռազմաճակատային վտանգված շրջաններից անվտանգ տեղեր փոխադրելու համար: Նման հավաստիացումը նաև խնդիր ուներ հեշտացնելու բռնագաղթի իրականացումը և խուսափելու հայերի ընդվզումներից:*

*Տեղահանության մասին հրահանգում ասվում էր. «... Ձեռնարկված են միջոցներ ճանապարհին հայերի հանգիստն ապահովելու և նրանց անվտանգ հասցնելու իրենց ժամանակավոր կացարանները: Հայ համայնքի որևէ անդամի սեփականության, կյանքի և պատվի վրա հարձակվողների դեմ զենք է օգտագործվելու ուղեկցող զորախմբերի կողմից... Հայերի ուղերթների նահիեների, կազանների, լիվաների և վիլայեթների պաշտոնատարները տարագիրներին պետք է օգնություն ցույց տան»[130]: Նույն ոգով էր կազմված տարագրության մասին օրենքը:*

*Տարագրվածներին թյուրիմացության մեջ գցելու համար օգտագործվում էին նաև ուրիշ միջոցներ: Պաշտոնյաները նրանց «բարի ճանապարհ» էին մաղթում,[131] նրանց ուղեկցում որոշ ճանապարհահատված: Խարբերդի ամենահարուստ հայ ընտանիքներին վալին անգամ պաշտոնագրեր էր տալիս, որոնք «երաշխավորում էին» տարագրի անվտանգությունը, խոստանում կյանքի դյուրին պայմաններ տարագրության վերջնակետ հասնելու համար[132]:*

*Սեբաստիայի վալի Մուամերը, մի կողմից, հայերին բռնագաղթի էր ենթարկում, իսկ մյուս կողմից, լուրեր տարածում, թե նրանց ներում է շնորհված, թե այս կամ այն թաղը չի տեղահանվելու նպատակ ունենալով հայերի շրջանում առաջացնել շփոթ և թույլ չտալ նրանց համատեղ գործողություն[133]:*

*Թալեաթը վճռականապես դեմ էր հայերի կրոնափոխությանը, մասնավորապես, տեղահանության ընթացքում: Նա Հալեպի վալուն խորհուրդ էր տալիս. «Ընդհանուր տարագրությունից փրկվելու նպատակով իսլամանալ ցանկացող հայերին հայտնեք, որ միայն տարագրության վայրերում կարող են մահմեդականություն ընդունել»[134]: Այսինքն՝ արհամարհվում էին մահմեդական դառնալու դարավոր ավանդություններն ու կրոնական օրենքները, որպեսզի թույլ չտրվեր, որ որևէ հայ փրկվեր բռնագաղթից: Նա, միաժամանակ, հետևողական պահանջկոտություն էր հանդես բերում ոճրագործության հետքերը օտարերկրացիներից թաքցնելու համար, մասնավորապես, պահանջում, որ սպանվածների դիակներն անպայման թաղվեին կամ նետվեին այնպիսի վայրեր (ձոր, քարայր, գետ, լիճ, անտառ), որ օտարերկրացիների աչքից հեռու լինեին[135]: Օրինակ, Բիթլիսում սպանվածներին նետում էին հացահատիկի հորերը: Ջեմալի հեռագրին, թե Եփրատի հարավային հոսանքում դիակներ են երևացել, Դիարբեքիրի վալին պատասխա-*

---

[128] Անտոնյան Ա., նշվ. աշխ., էջ 203:
[129] Նույն տեղում, էջ 97:
[130] Ղազարյան Հ., նշվ. աշխ., էջ 312:
[131] Morgenthau H., նշվ. աշխ., էջ 312:
[132] Փիրանյան Ն., նշվ. աշխ., էջ 225:
[133] Նույն տեղում:
[134] Անտոնյան Ա., նշվ. աշխ., էջ 212:
[135] *Геноцид армян в Османской империи*, стр. 462.

նում է. «...հավանական է, որ այդ դիակները գալիս են Էրզրումի և Խարբերդի կողմերից: Այստեղ ապստամբության ընթացքում սպանվածների դիակները նետվում են ամայի վայրերի քարայրները կամ էլ այրվում են: Թաղելը բացառված է»[136]:

Թալեաթը կրկին ու կրկին հեռագրեր էր ուղարկում. «...օտար սպանները տեսնելով ճանապարհների երկայնքով դիզված ծանոթ անձանց (հայերի) դիակները, լուսանկարում են դրանք: Հանձնարարում եմ անմիջապես թաղել դիակները և այլևս նման ձևով դիակ չձգել»[137]:

Անթաղ դիակները սպառնալիք էին նաև հանրային առողջությանը: Ուստի ստեղծվեց կառավարական հանձնաժողով Ն Գ փոխնախարար Ա. Մյունիֆի ղեկավարությամբ, որն այցելում էր զանգվածային ջարդերի վայրերը և կազմակերպում անթաղ դիակների վնասազերծումը[138]:

Բռնագաղթի ու ոչնչացման հրահանգները Կ. Պոլիսը տեղերն էր ուղարկում հիմնականում բանավոր: Ոչ քիչ դեպքերում՝ նաև ծածկագրով, խստագույնս պահանջվում էր դրանք անմիջապես հետ ուղարկել Բ. Դուռ: Բացի դա, ծածկագրերում օգտագործվում էին գործին անտեղյակի համար անհասկանալի արտահայտություններ: Օրինակ, «տեղահանություն» և «վերաբնակեցում» բառերը նշանակում էին հայերի ոչնչացում, «ծանոթ անձնավորություն» նշանակում էր հայ: Նույն իմաստն ուներ «ծանոթ տարրեր» բառակապակցությունը[139]: Իսկ «նախապես հաղորդված ծանոթ եղանակով հարկ եղածն անել», «նույն արդյունքին հասնել տակավին ողջ եղողների հանդեպ», «հարկ եղած գործողությունները կատարել» արտահայտությունները ուղղակիորեն նշանակում էին բոլոր հայերին ոչնչացնել: Նույն իմաստն ուներ «հայերից մաքրել» արտահայտությունը[140]:

Հայերի տեղահանության ժամանակ ստեղծվել էին կառավարական չորս հանձնաժողովներ. դրանք կոչված էին պետականացնելու հայերի ունեցվածքը, որը Բ. Դուռը կնքել էր «լքյալ գույք» անունով. 1915-ի հունիսի 10-ի և սեպտեմբերի 13-ի օրենքներով հայերի ունեցվածքը կալանքի տակ էր առնվում ու թալանվում[141]:

Հայերը թալանվում էին ոչ միայն իրենց բնակավայրերում (տուն, հողատարածք, անասուն, կահ-կարասի), այլև բռնագաղթի ճանապարհներին՝ անընդհատ հարձակումներ քարավանների վրա, սպանդից առաջ խուզարկություններ և կողոպուտ, տարագիրներին անգամ մերկացնում էին՝ տիրանում նաև նրանց հագուստներին:

Զանգվածային կոտորածների վայրերում ներկա էր լինում կառավարության լիազորը, որի խնդիրն էր հավաքել «կառավարության բաժին» ավարը: Իշխանություններին դա քիչ էր թվում: Թալեաթը Մորգենթաուին խնդրում էր, որ օսմանյան կառավարությանը հանձնեին ԱՄՆ բանկերում հայերի ավանդները, քանի որ, «հիմնավորում» էր այդ հրեչը, դրանց տերերն այլևս կենդանի չեն և թուրքական կառավարությունն է մահացածների «օրինական ժառանգորդը»[142]:

Սովորական երևույթ էր ողջ կամ սպանված զոհերի բերանից ոսկյա ատամների հանելը, նրանց կուլ տված թանկարժեք մետաղների կորզելը: Խարբերդում ԱՄՆ հյուպատոս Լ. Դևիսը պատմում է, որ Գյոլջուկ լճի մոտ հայերի մեծաթիվ դիակներ է տեսել: Դրանք այրվել էին խարույկների վրա թանկարժեք մետաղներ գտնելու դիտավորությամբ[143]:

---

[136] «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի...», էջ 32:
[137] Անտոնյան Ա., նշվ. աշխ., էջ 154:
[138] Dadrian V., *The Role of the Turkish Physicians...*, p. 190.
[139] Անտոնյան Ա., նշվ. աշխ., էջ 23, 102, 103, 135, 160, 162, 165, 171, 180, 186, 189, 203, 204, 215:
[140] Գալաքյան Գ., նշվ. աշխ., էջ 202:
[141] Барсегов Ю., *Геноцид армян – преступление против человечества*, Ереван, 1990, стр. 191.
[142] Morgenthau H., նշվ. աշխ., էջ 339:
[143] Davis L., նշվ. աշխ., էջ 80:

Ոչնչացումից փրկվում էին միայն հայ այն արհեստավորները, որոնց կարիքը թուրքերն ունեին: Սեբաստիայի Դավրա գյուղի բնակչությունը չտարագրվեց, այլ մահմեդականացվեց, որովհետև ջրաղացպաններ էին[144]: Ոչ քիչ դեպքերում հայերի կյանքը խնայում էին, որպեսզի այս կամ այն գործն ավարտին հասցնեին: Բաղդադի երկաթուղու շինարարության Իթիլի հատվածը կառուցող հայերին սպանեցին երկաթուղային թունելի շինարարությունն ավարտելուց անմիջապես հետո: Սեբաստիայի Բրգընիք, Ուլաշ և Դմաճ գյուղերի հայ բնակչությունը տեղահանվեց ոչ թե 1915-ի ամռանը, ինչպես մնացած գյուղերի հայերը, այլ աշնանը՝ այդ տարվա հարուստ բերքը հավաքելուց հետո[145]: Ռաս-ուլ-Այնում սպանված հայ կանանց ու աղջիկների մազերից 25 մ երկարությամբ և 8 սմ տրամագծով պարան հյուսեցին ու նվիրեցին Դիարբեքիրի պատգամավորի՝ հայերի արյունախում Ջեյդիին[146]:

Տրապիզոնում Գերմանիայի հյուպատոս Բերգֆելդը, որ մոլի թուրքասեր էր, 1915թ. հունիսի 29-ին հաղորդեց Բեռլին. «Իմ բոլոր գործընկերները և ես այն կարծիքին ենք, որ այնպես ինչպես վերաբերվեցին կանանց ու երեխաներին, զանգվածային սպանություն է... Երիտթուրքերի կոմիտեն այդ եղանակով է ուզում լուծել Հայկական հարցը»[147]:

Իսկ Հալեպում ԱՄՆ հյուպատոս Ջ. Ջեքսոնը նկատում է, որ հակահայ միջոցառումները «մտահղացված էին որպես վիթխարի ավազակություն ու նաև վերջնական հարված հայ ռասան ոչնչացնելու համար»: Սամսունում ամերիկյան հյուպատոսության աշխատակից Վ. Փիթերը գտնում էր, որ օսմանյան իշխանության նպատակն էր «ընդմիշտ վերջ դնել հայերին»[148]:

Բնաջնջման գլխավոր եղանակը, իհարկե, բռնագաղթն էր և կազմակերպվում էր այնպես, որ մինչև նշանակման վայր հասնելը քարավաններում որքան հնարավոր էր քիչ հայ մնար: Այդ արվում էր մի քանի միջոցներով: Նախ, բռնագաղթի մեկնարկին, քարավաններից հանվում էին զենք կրելու ընդունակ արու սեռին պատկանողները և առանձին վայրերում ոչնչացվում: Ապա քարավանների վրա հարձակման էին մղում մահմեդական ազգաբնակչությանը, որը թալանում ու ջարդում էր տարագիրներին: Բռնագաղթի ուղերթում նշանակված էին կետեր, որտեղ քարավանները հարձակման էին ենթարկվում Հատուկ կազմակերպության ավազակախմբերի և քրդերի կողմից: Հայտնի են փաստեր, որ քարավաններին ուղեկցող ոստիկանները կամ ժանդարմները դրանք պարզապես վաճառում էին քրդերին, ովքեր հայերից խլում էին ամեն ինչ, սկսած ներքնահագուստից մինչև մետաղյա ատամները, ապա բոլորին կոտորում: Բոլոր քարավաններում տարածված էին համաճարակներ, քաղցն ու հիվանդությունները հնձում էին հայերին: Ջարդերի վերջին փուլը ճամբարներն էին Սիրիայում և Հյուսիսային Միջագետքում, որոնք իրավամբ ստացել էին «Մահվան ճամբարներ» անունը, ի վերջո համատարած ոչնչացումը Դեր էլ Զորում, Բաբում, Մեսքենեում, Ռաս-ուլ-Այնում և անապատի ուրիշ վայրերում:

Բայց միայն բռնագաղթի միջոցով չէ, որ ոչնչացվեց արևմտահայությունը: Նրանք կոտորվում էին նաև տեղում: Այդ արվում էր նախապես որոշված վայրերում, որտեղ հողափոսեր էին փորվում և դրանք լցնում դիակներով, իսկ ոչ քիչ դեպքերում՝ նաև կենդանի մարդկանցով (Բաղեշ): Տարոնի գյուղերում հայերին լցնում էին մեծ մարագներն ու թոնրատները և հրդեհում:

---

[144] Գաբիկյան Կ., նշվ. աշխ., էջ 106:

[145] Նույն տեղում:

[146] Մկրտիչյան Թ., Տիգրանակերտի նահանգի ջարդերը և քյուրտերու գազանությունները, Կահիրե, 1919, էջ 77-78:

[147] AA BoKon 169. № 7 և № 384:

[148] RG 59.867.4016/259. 04.12.1915.

*Այս ամենը կատարվում էր իշխանությունների միջոցով՝ և ի կատարում Կ. Պոլսից ստացված հրամանների: 1918թ. վերջերին հանդես գալով օսմանյան խորհրդարանում Զ. Մահմուդը հայտարարեց, թե Տրապիզոնի վալի Ջ. Ազմին անմիջական պատասխանատվություն է կրում վիլայեթի հայ բնակչությանը գազանային եղանակով ոչնչացնելու համար և որ վալին գործել է իթիհադի կենտկոմի հրամանով: Տրապիզոնում ԱՄՆ հյուպատոս Օ. Հեյզարը ուղ զեկուցագիր էր ուղարկել պետական դեպարտամենտ, որոնցում մանրամասն ներկայացված են Տրապիզոնի հայության ջարդերը:*

*1918թ. դեկտեմբերին օսմանյան խորհրդարանում պատգամավոր Մ. Հաֆըզը հայտարարեց. «Աստված մեզ կպատժի նրա համար, ինչ արեցինք... խնդիրն ավելի քան ակնհայտ է, մերժելն անհնար: Ես անձամբ ականատես եմ եղել հայկական այդ իրադարձություններին Օրդու նավահանգստային քաղաքում... Սամսուն ուղարկելու պատրվակով... վալին հայերին բարժեց բեռնատար նավ և հրամայեց նրանց նավից ծով նետել: Ստամբուլ վերադառնալիս ես անմիջապես այդ մասին տեղյակ պահեցի Ն.Գ նախարարությանը..., սակայն չկարողացա հասնել որևէ միջոցի վալու դեմ. գրեթե երեք տարի ես անհաջող ջանքեր թափեցի այդ միջոցի գործադրման համար»[149]:*

*Օրդուի կայմակամ Ֆալիկն անձամբ էր կազմակերպում մարդկանց ծովը նետելու գործը: Ռազմական դատարանի 05.05.1919-ի նիստում Օրդուից առևտրական Հուսեինը վկայություն տվեց. «Ես տեսա, թե ինչպես կայմակամ Ֆալիկը մի անգամ կանանց ու երեխաներին բարժեց նավը իբր Սամսուն ուղարկելու համար: Սամսուն հասնելու համար պահանջվում էր երկու օր, բայց նավերը վերադարձան երկու ժամից. քիչ անց խեղդվածների մարմինները սկսեցին երևալ ափին»[150]:*

*Խորհրդարանական Հաֆըզը, որի ցուցմունքը մտցվեց մեղադրական եզրակացության մեջ, մեղադրում էր նախարարներին, իթիհադի ղեկավարներին այնպիսի քրեական հանցագործություններ կատարելու մեջ, որոնք դատապարտվում էին մահապատժով[151]:*

*Դատարանը վճռեց Տրապիզոնի վալուն և իթիհադի ներկայացուցիչ Նաիլին դատապարտել մահվան: Դատավճռում ասվում էր. «Հայերին ծովով ուրիշ տեղ տեղափոխելու պատրվակով արական և իգական սեռին պատկանող երեխաներին խմբերով բարժել են նավերը և դուրս են բերել բաց ծով և ափից հեռու ջուրն են նետել՝ նրանց խեղդելու, ոչնչացնելու համար»[152]:*

*Մարդկանց ծովը նետելու չատ փաստեր են արձանագրել Տրապիզոնում գործող օտարերկրացիները: Է. Կվյատկովսկին երկու զեկուցագրերում նկարագրում է նման ոչնչացման ընթացքը: Պատերազմի ավարտին նա հայտնեց «հայերի գրեթե լրիվ ոչնչացման մասին»: Փոխգնդապետ Շտանգեն գրում է Լ. Սանդերսին այն մասին, թե ինչպես առողջ աչխատունակ հայերին «քշում էին լեռներն ու սպանում»[153]:*

*Համատարած բնաջնջումն ուղեկցվում էր զանգվածային բռնաբարություններով: Բերգֆելդը իր տեղեկագրերից մեկում գրում է «Բռնաբարված բազմաթիվ կանանց ու երեխաների» մասին՝ այն համարելով բաղկացուցիչ մաս «հայերի լրիվ բնաջնջման» պլանի: Նա գրում է, որ այդ զանգվածային բռնաբարությունները «չեն կարող չդատապարտվել ամենայն խստությամբ... դրանք չատ դժվար է բացատրել կամ արդարացնել»[154]:*

*Տրապիզոնի ոստիկանապետ Նուրին ռազմական դատարանում խոստովանեց, որ ինքը հայ աղջիկներ է տարել Ստամբուլ որպես նվեր երիտթուրքերի կենտկոմի անդամնե-*

---

[149] **Meclisi Mebusan,** *Zabit Ceridesi,* 3-րդ նստաշրջան, էջ 299, 01.12.1919:
[150] *"Hadisat"* 07.05.1919. *"Renaissance"* 06.05.1919.
[151] *"Takvim-i Vekayi"*, N 3540.
[152] Նույն տեղում, N 3616.
[153] *AA BoKon 169.* N 7.
[154] *Türkei 183/54, A 389 986 (01.09.1915թ. զեկուցագիր):*

*բին: Առևտրական Մ. Ալին ցուցմունք տվեց, թե երեխաներին ոչ միայն սպանում էին թույնի միջոցով ու խեղդում էին ծովում, բռնաբարում էին աղջիկներին, այլև վալին 15 աղջիկ էր պահում իր սեքսուալ զվարճությունների համար: Մաքսատան հրահանգիչ Բեսիմը հաղորդեց, որ կարմիր խաչի հիվանդանոցը վերածվել էր բավականություն տրամադրելու տան, որտեղ վալին զբաղվում էր սեքսուալ հրճվանքներով: Լեյտենանտ Կ. Մաբուքը բրիտանական ներկայացուցիչներին հայտարարեց, թե «... Տրապիզոնում կառավարական պաշտոնատարները իրենց համար վերցրեցին մի քանի գեղեցիկ հայ կանանց... Նրանց հանդեպ ամենաստոր գործողությունից հետո հրամայեցին սպանել»[155]: Արդեն նշվեց, որ ոչնչացման միջոց էին նաև թալանն ու բռնագրավումները: Տրապիզոնի ռազմական դատարանում դրանք հաճախ էին դառնում քննության գլխավոր թեմա: Վալի Ջ. Ազմին, բժիշկ Սաիբը, ոստիկանապետ Նուրին, թեչքիլաթի ղեկավար Ա. Մուստաֆան, իթիհադի կենտկոմի ներկայացուցիչ Ե. Նայիլը թալանում ու կոտորում էին հայերին: Բերգֆելդը երկու անգամ տեղեկագրով դատապարտել էր «չարունակվող թալանն ու գողությունը»[156]: Նա նշում է «ոստիկանական սպաների և քաղաքացիական ծառայողների անամոթ հարստանալը... այդ մարդիկ մասնակցում էին հայերի տների թալանին», նույնը նաև «իթիհադի մարդիկ»[157]:*

*Վերը նշված Մ. Ալին դատարանում հայտարարեց, որ մեղադրյալ Ա. Մուստաֆան վալի Ջ. Ազմիի հետ հայերից թալանել էին 300-400 հազ. թուրքական ոսկե ֆունտ (1500000 դոլար): «Ես անձամբ տեսա, ինչպես մի տարի անց Մուստաֆան այդ արժեքները վաճառեց Շվեյցարիայում»:*

*Նաև նշենք, որ Հայոց ցեղասպանության մասին փաստաթղթերը ավելի քան հավաստի են: Գիտական շրջանառության մեջ գտնվող նյութերի ճնշող մասը պաշտոնական գրագրություններ են: Դրանք բխում են երեք աղբյուրներից. ա) ռազմական ատյանի նյութերը, մասնավորապես Տրապիզոնի դատավարության (26.03-17.05.1919թ.), որովհետև դրանք ոչ միայն օսմանյան պաշտոնական փաստաթղթեր են, այլև նախապես ստուգված էին Մազհարի հանձնաժողովի կողմից և, եթե համապատասխանում էին բնօրինակին, դրանց վերևի աջ անկյունին նշվում էր «Համապատասխանում է բնօրինակին»: Երկրորդ խումբ աղբյուրները Թուրքիայի դաշնակից երկրների վավերագրերն են, երրորդ խումբը «չեզոք» երկրների արխիվային նյութերն են, առաջին հերթին ամերիկյանը՝ մինչև 1917թ. և իտալականը՝ մինչև 1915թ. օգոստոսը:*

*Օրինակ, Տրապիզոնում Իտալիայի հյուպատոս Ջ. Գորինը փաստորեն ականատեսն էր վիլայեթի 60000 հայության ողբերգության: Նա գրում է. «(1915թ.) հունիսի 24-ից, այսինքն՝ (հայերի տեղահանության մասին) խայտառակ հրամանագրի հրապարակումից մինչև հուլիսի 24-ը՝ իմ մեկնելու օրը... ես ո՛չ քնել եմ, ո՛չ էլ կերել. ջղագրգռությունն ու հեղձուկը տանջում էին ինձ, այնքան ծանր էին իմ տանջանքները այդ անպաշտպան, անմեղ էակների համատարած ոչնչացումից... նրանց հեկեկանքներից, արցունքներից, նրանց հանդեպ լրիվ անտարբերությունից, անեծքից, ինքնապաշտպանություններից, սրտապատառության պատճառով մահերից, անսպասելի խելագարություններից... Ամեն օր հարյուրավոր դիակ էր հայտնվում ճանապարհների երկայնքով, որոնցով անցել էին աքսորյալները... երեխաներին բռնությամբ խլում էին ծնողներից... հարյուրներով... բարձում էին նավերը և ընկղմում էին Սև ծովում և Դեղերմենդեր գետում...»[158]:*

***Քրդեր.*** *– Քրդերի հայրենիքը Զագրոսի լեռնային համակարգն է, որը ձգվում է Իրանից արևմուտք և կտրում անցնում է Տիգրիսը:*

---

[155] *FO 371/2781/264888.*
[156] *Նույն տեղում, A 38986, R 14087.*
[157] *AA Türkei 183/38, A 28189 R 14087.*
[158] *BG 59.867. 4018/259.*

*Պատմագիտական ոչ քիչ թվով աշխատություններում կարելի է հանդիպել Քրդստանի մի ուրիշ տեղադրման, որն իր մեջ ներառնում է ամբողջ Արևմտյան Հայաստանը և անվանվում է Հյուսիսային Քրդստան: Օրինակ, Ա. Կոլյուբակինի կարծիքով. «Անդրկովկասի և Տավրոսի միջև ընկած տարածքը կարելի է անվանել Հյուսիսային Քրդստան»[159]:*

*Քրդստանի սահմանների այս կամայական մեծացումը կատարվեց 1880թ., երբ Օսմանյան կայսրությունում Հայաստան անունն արգելվեց և Արևմտյան Հայաստանն անվանվեց Քրդստան՝ էրզրում կենտրոնով: Այդ Քրդստանի ծնունդն առաջին հերթին ուղղված էր Ռուսաստանի դեմ և խնդիր ուներ Հայկական հարցին հակադրել Քրդական հարցը: Այս գործում մեծ եռանդ հանդես բերեց Անգլիան, որը ցանկանում էր քրդերին սիրաշահել և ուղղել ռուսների դեմ:*

*Դժբախտաբար նման տեսակետի կողմնակիցների թվում են նաև ժամանակակից որոշ ռուս քրդագետներ: Այսպես, օրինակ, Մ. Լազարևը գտնում է, որ Քրդստանը զբաղեցնում է Սև-Միջերկրական-Կասպից ծովերի և Պարսկական ծոցի կազմած քառանկյան ամբողջ կենտրոնական մասը, որը արևմուտքից արևելք ձգվում է 1000 կիլոմետր, իսկ հյուսիսից հարավ՝ 300-500 կիլոմետր՝ 400 հազար քառ. կիլոմետր ընդհանուր տարածքով: Ըստ նրա՝ Քրդստանի տարածքի մեծ մասը՝ 225 հազ. քառ. կիլոմետրը, Թուրքիայի կազմում է: Նա չի էլ թաքցնում, որ Հայկական բարձրավանդակը մտնում է Քրդստանի մեջ[160]: Ակնհայտ կեղծ տեսակետի կրկնություն է, որը բազմիցս մերժվել է ռուս խոշոր քրդագետների կողմից (Վ. Գորդլևսկի, Վ. Նիկիտին):*

*Քրդերը Մերձավոր Արևելքում շատ ավելի վաղ են հայտնվել, քան թուրքերը: Նրանք հնդեվրոպական հնագույն ժողովուրդներից են: Մինչև օսմանյան նվաճումները Հայկական բարձրավանդակում զանգվածային քուրդ բնակչություն չի եղել: Պարսկաստանի դեմ պատերազմներում թուրքական բանակի կազմում մասնակցում էր նաև քրդական մի ջոկատ՝ էդրիսի հրամանատրությամբ, որը միակ գրագետ քուրդն էր: Եվ քանի որ սուլթան Սելիմը հնարավորություն չուներ Արևմտյան Հայաստանի գրավված շրջանների իշխանությունները կազմավորել թուրքերից, այդ գործը հանձնարարեց էդրիսին, որը և կազմավորեց ոչ թե թուրքական, այլ քրդական իշխանություններ:*

*Ինչպես նշում է Էմիլ Դիլոնը, Հայաստանում օսմանյան տիրապետությունը բաժանվում է երկու շրջանի՝ քրդական և թուրքական: Նման բաժանումը ելնում է այն պատմական իրողությունից, որ մինչև 19-րդ դարի 40-ական թվականները Հայաստանում թուրքական տիրապետությունը նոմինալ էր, իրական իշխանությունը քուրդ ցեղապետերի ձեռքում էր:*

*Օսմանյան կառավարությունը Հայաստանը քրդերի վայրագ կառավարմանը հանձնելով չբավարարվեց: Նա խրախուսեց ու կազմակերպեց քրդերի ու մահմեդական ուրիշ տարրերի, մասնավորապես կովկասյան լեռնականների, ներհոսք Հայաստան: Դրա հետևանքով նախկինում գրեթե միատարր հայկական ազգային կազմ ունեցող երկրամասի բնակչության մեծամասնությունը 20-րդ դարի սկզբին արդեն մահմեդականներ էին, որից 20-25%-ը՝ քրդեր:*

*Տարբեր երկրներում ցրվածությունը և աշխարհագրական-ցեղային կացութաձևը քրդական շարժման թուլության գլխավոր պատճառն է: Դա, ինչպես նաև ազգային գիտակցության ցածր մակարդակը քրդերին հնարավորություն չէին տալիս միավորվելու և համազգային շարժում ծավալելու՝ հանուն քրդական պետականության ստեղծման:*

*Խայտաբղետ է քրդերի կրոնական պատկանելիությունը: Քրդերի մեծամասնությունը մահմեդական սախտեր են, մյուսները՝ չիլթներ-կզլբաշներ, իսկ եզդիները հեթանոս-*

---

[159] Колюбакин А. М., *Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции*, т. I, Тифлис, 1888, стр. 62.

[160] *Национальный вопрос в освободившихся странах Востока. Сборник*, Москва, 1986, стр. 43-46.

ներ են: Սակայն, ինչպես նկատել է Վ. Նիկիտինը, քրդերը «ըստ էության մնացել են հին ավանդույթների ու հավատի գրկում»[161]: Թուրքական առածը ասում է. «Անհավատի կողքին քուրդն էլ է մուսուլման»: Քրդերի շրջանում լայն տարածում ունեն դերվիշությունը և օրդենները:

Քրդերի մեծամասնությունը քոչվոր անասնապահներ էին: Նրանց միայն փոքրամասնությունն էր նստակյաց երկրագործ, որոնց անվանում էին ռայաթ:

Քրդերի ներհոսքը Հայաստան ուղեկցվեց հայերի արտահոսքով: Ունենալով ոչնչով չսահմանափակված իրավասություններ՝ քուրդ վերնախավը դաժան շահագործման էր ենթարկում հայերին և կարճ ժամանակում այնքան հարստացավ ու հզորացավ, որ փորձեր էր անում չճանաչելու Կ. Պոլսի իշխանությունը ու նաև պատերազմներ էր մղում նրա դեմ: Սակայն քուրդ-թուրքական բախումները ակնթարթներ էին, իսկ համագործակցությունը՝ տևական և հիմնարար: Սուլթանները սիրաշահում էին քուրդ ցեղապետերին ու նրանց լարում հայերի դեմ: Քոչվոր քրդերը հայկական նահանգներում դարձան սուլթանական կառավարության հենարանն ու զենքը հայերի դեմ: Բայց ասել, թե հայերի ու քրդերի հարաբերությունները մշտապես թշնամական են եղել, սխալ կլինի: Տվյալ պարագայում դրանք զարգացման բարբարոսական աստիճանի վրա գտնվող իշխողի և ենթակայի հարաբերություններ էին, ըստ որում, քուրդը զինված էր, ապրում էր ռազմական-ճամբարային կյանքով, իսկ հայը զենք կրելու իրավունք չուներ և զբաղված էր խաղաղ տնտեսական գործունեությամբ:

Քոչվոր քրդերն ունեին «իրենց» հայաբնակ գյուղերը, որոնցից հարկեր ու տուրքեր էին հավաքում: Հայերին հատկապես հյուծում էր ղշլաղը: Տավրոսի հյուսիսային լանջերին քրդերն իրենց անասունների հետ հայկական գյուղերում էին անցկացնում ձմռան, իսկ հարավային լանջերին՝ ամռան ամիսները: Հայերը պարտավոր էին ոչ միայն քրդերին, այլև նրանց հոտերը օթևանել ու կերակրել, անվերապահ կատարել քրդերի քմահաճույքները:

Այնուամենայնիվ, մինչև 19-րդ դարը քուրդ-հայկական հարաբերությունները միանշանակ չէին: Շատ հայեր բարեկամական հարաբերությունների մեջ էին քուրդ քիրվոների հետ, որոնց տուրք էին տալիս, նրանց համար աշխատում, բայց նաև քրդի կողմից պաշտպանվում: Հայերը գերադասում էին քրդերի իշխանությունը, Վ. Գորդլևսկու խոսքերով՝ տեղական գիշատչին, քան սուլթանական տեղապահ փաշային, որը Կ. Պոլսում գնելով նահանգական պաշտոն, մորեխի նման անցնում էր գյուղերով՝ պաշտոն ստանալու համար ծախսած փողերը վերականգնելու:

Մինչդեռ դերբեյը, ճիշտ է, պետական պաշտոն զբաղեցնելիս նույնպես թալանում էր, սակայն «չափը չէր անցնում»:

Իրողություն էր նաև այն, որ զարգացման մակարդակով գրեթե նույն աստիճանին գտնվելն ու հավատակից լինելը քրդերին շատ ավելի էր մերձեցնում թուրքերին, քան հայերին: Ճիշտ է, ի տարբերություն թուրքի, քուրդը մոլեռանդ չէր և դարեր շարունակ հայերի հետ կողք-կողքի ապրելով ընտելացել էր նրան ու նաև քաջ գիտեր, որ առանց երկրագործ, արհեստավոր, առևտրական հայի ինքը յոլա գնալ չի կարող: Այնուամենայնիվ, քուրդը հայից պահանջում էր անվերապահ հնազանդություն:

Հայ-քրդական առճակատման սկիզբը պայմանականորեն կարելի է համարել 1828 թիվը, երբ ռուսների դեմ կռիվներին մասնակցած քրդական ուժերը նահանջելիս թալանեցին իրենց ճանապարհին ընկած հայկական գյուղերը: Հենց այդ ժամանակ էլ քրդերն ամենայն որոշակիությամբ ընկալեցին, որ Ռուսաստանի կողմից հայկական նահանգների գրավումն ավելի քան հավանական է: Հետևաբար, այդ նահանգներն ավերելը, հայ բնակչությանը թալանելը և հաշվեհարդարի ենթարկելը բխում էր ոչ միայն թուրքերի,

---

[161] Никитин В., *Курды*, Москва, 1964, стр. 324-345.

*այլև իրենց՝ քրդերի չահերից: Նման կողմնորոշումը հայերի վիճակն անտանելի դարձրեց: Մանավանդ ակնհայտ էր դառնում, որ թուրքական իշխանությունները ձգտում էին քրդերի միջոցով լուծել արևմտահայության հարցը:*

*Սակայն եղբայրական չէին նաև թուրք-քրդական հարաբերությունները: Հայկական նահանգներում քրդական կառավարումը վերացնելու ուղղությամբ Բ. Դուան ձեռնարկումները 1840-50-ական թվականներին ծնեցին մի քանի խոշոր ապստամբություններ, որոնցից ամենահզորը Բեդըրխանի գլխավորածն էր: Թուրքական բանակը Օսման փաշայի հրամանատարությամբ արյան հեղեղում խեղդեց այդ ապստամբությունները: Դրա հետ միասին օսմանյան գործիչները քրդերին համոզում էին, թե ռայա հայը ձգտում է տիրանալ Քրդստանին (այսինքն՝ Արևմտյան Հայաստանին) ու քրդերին ռայա դարձնել: Եվ քանի դեռ արևելյան նահանգներում հայ բնակչություն կա, Քրդստանը քրդերինը չէ:*

*Հայ գործիչներից շատերը լավ էին հասկանում արևմտահայության համար քուրդ-թուրքական դաշինքի կործանարար լինելը: Նրանք քայլեր կատարեցին այդ դաշինքը խափանելու և հայ-քրդական հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ: Դարասկզբին Տարոնում քրդերի չրջանում աչխատանք էր տանում Հակոբ Սարկավագը: Նա հայերին կոչ էր անում քրդերեն սովորել, նույնիսկ քուրդ աղջիկների հետ ամուսնանալ, այսինքն՝ բոլոր հնարավորություններն օգտագործել «քրդերի քաղաքական ուղղությունը» փոխելու համար: Հակոբ Սարկավագի գործն առաջ տարան Խրիմյան Հայրիկը, Գ. Նորատունկյանը, Գ. Սրվանձտյանը, Վարդան Վարդապետը, Գևորգ Չաուչը, Անդրանիկը և այլք:*

*Հայ գործիչները քրդերի հետ հարաբերությունների բարելավման նախապայման էին համարում նրանց հետամնացության ու խավարամտության հաղթահարումը, քրդերի չրջանում գիր ու գրականության տարածումը: Աչխատանքներ ձեռնարկվեցին քրդական դպրոցներ բացելու, ինչպես նաև քուրդ երեխաներին հայկական դպրոցներ ընդգրկելու ուղղությամբ: Չի կարելի ասել, թե այդ չանքերը լրիվ ապարդյուն անցան: Քուրդ որոշ գործիչներ այն կարծիքին էին, որ հայերի հետ համագործակցելը գրավական է իրենց հարատևման: Սակայն իրադարձությունները զարգացան այլ ուղղությամբ՝ քրդերը թուրքերի ձեռքին գործիք դարձան հայաչինչ քաղաքականության համար:*

*Քրդերի վերջնական կողմնորոշման գործում գլխավոր դեր խաղաց ոչ թե կրոնը, այլ այն, որ սուլթանին հաջողվեց նրանց խաբել Աննախ Քրդստանի հեռանկարով: Նա խոստացավ քրդական պետություն կամ ինքնավարություն ստեղծել Վանի, Դիարբեքիրի, Բիթլիսի վիլայեթների և Ատրպատականի մի մասի վրա՝ իր հովանու ներքո: Այսինքն՝ քրդերին պետականության խոստումներ տրվեցին հայկական տարածքներում: Ահա սա է Քրդական հարցը Հայկականին հակադրելու համիդյան հրեչավոր ծրագիրը, որի գործադրումը բախտորոշ դեր խաղաց ոչ միայն հայ, այլև քուրդ ժողովրդի պատմական ճակատագրում:*

*Հայկական չարժումները.— Դառն իրողություն է, որ մինչև 19-րդ դարի երկրորդ կեսերը օսմանյան բռնատիրության դեմ հայերի լուրջ ընդվզումներ չեն եղել: Մասնագետները դա բացատրում են օսմանյան տիրապետության ավերիչ, ապականող ու քայքայող բնույթով: Լինչը գրում է, որ հայերը մոտ 1000 տարի գտնվել են օտարների տիրակալության տակ և անմտություն կլիներ սպասել, որ նրանց բնավորությունը չխեղվեր նման ապրելակերպի տևական լինելուց: «Հայերը եղել են ռայա, նրանց ամեն տեսակի չահագործման ենթարկել են ժողովուրդներ, ովքեր հաճախ իրենց ունակություններով հայերից ցածր էին... Զարմանալ կարելի է, որ հայերի թերություններն ավելի սուր բնույթի չեն»[162]: Այնուամենայնիվ, հայերն ավելի ուշ ոտք դրեցին ազատագրական պայքարի ու-*

[162] Լինչ Գ., նչվ. աչխ., էջ 591:

*դու վրա, քան անգամ քրդերը, ովքեր դեռևս որպես ամբողջական ժողովուրդ չէին ձևավորվել:*

*Ֆ.Գրինի կարծիքով՝ հայերի «մեծ ու հիմնական թերությունը... հանդիսանում է միասնության բացակայությունը՝ արտահայտված անհատապաշտության տեսքով»: Սակայն հայն ունակ ու արարող ժողովուրդ է և, նրա «հարատևումն էլ ապացույց է զարմանալի կենսունակության և հիանալի հատկությունների»[163]:*

*19-րդ դարը հայ ժողովրդի առջև դրեց միանգամայն այլ խնդիրներ: Եթե նախորդ դարերում նրան անհետացում, բնաջնջում չէր սպառնում, և ինքն էլ հաշտվել էր ռայայի վիճակին, ապա նոր ժամանակներում բնաջնջման վտանգն առաջին պլան դուրս եկավ:*

*Ազատագրական պայքարին ուշ ձեռնամուխ լինելը արևմտահայության ողբերգության գլխավոր պատճառներից է: Հայերի ազգային զարթոնքը, ազատագրական պայքարը համընկան Անատոլիայում ազգային պետություն ստեղծելու թուրքերի կողմնորոշման հետ, որը և կանխորոշեց արևմտահայության բնաջնջումը:*

*Թուրք-քրդական ահագնացող վտանգի հանդեպ հայերն, իհարկե, անտարբեր մնալ չէին կարող: Նրանք ելք էին որոնում, խմբակներ ու կազմակերպություններ ստեղծում: 19-րդ դարի 60-80-ական թվականները հայկական շարժման առաջին շրջանն էին, երբ շարժման ղեկավարությունը հայ կղերի ձեռքում էր, հանձինս Կ. Պոլսի հայկական պատրիարքարանի: Այդ շրջանում հայերի պայքարը քաղաքականացվեց: Եթե մինչ այդ հայերը բողոքում կամ ընդդիմանում էին այս կամ այն հարստահարիչին, ապա գավառներում կատարված հարստահարությունների վերաբերյալ 1876 թվի տեղեկագրից հետո այդ բողոքներն ու ընդդիմությունը ձեռք բերեցին քաղաքական երանգ մի պարզ պատճառով՝ կատարված վայրագությունների համադրությունն ակնհայտ դարձրեց, որ դժբախտությունների իսկական պատճառը ոչ թե այս կամ այն աղայի, փաշայի քմահաճույքն էր, այլ սուլթանական վարչակարգը, սուլթանական կառավարության հակահայ քաղաքականությունը:*

*Այս շրջանի ամենաաչքի ընկնող իրադարձություններն էին Զեյթունի 1862թ. ապստամբությունը և սահմանադրական շարժումը: 1863-ին հաստատվեց Հայ ազգային սահմանադրությունը, որն ամրագրելով նախկինում հայ համայնքին տրված իրավունքները՝ միաժամանակ վերջ դրեց այդ համայնքը միանձնյա ղեկավարելու պատրիարքի իրավասություններին և, հանձինս Ազգային ժողովի, նշված իրավասությունների մի մասը հանձնեց հայ բուրժուազիային:*

*Աստիճանաբար շարժման մեջ էր ներքաշվում պոլսահայ մտավորականությունը: Ծնվեց «դեպի գավառ» կրթական-լուսավորչական շարժումը, որն ինքնին առաջադիմական լինելուց բացի, բացեց գավառահայի աչքերը և նրան հարկադրեց նորովի նայելու սեփական վիճակին: Դարավոր ճնշումների տակ կորացած հայը մեջքն ուղղեց և պայքարի մեջ մտավ հանուն իր կյանքի, ունեցվածքի և պատվի անվտանգության: Ազատագրական խմբակներ ու գաղտնի կազմակերպություններ ծնվեցին Վանում, Կարինում, Սեբաստիայում և այլուր:*

***Հարստահարությունների քաղաքականությունից անցում ցեղասպանության.*** *— Հայաստանում օսմանյան տիրապետության հարյուրամյակները ծուրի Բարսեղովը բաժանում է երկու հիմնական շրջանների.*

*— մինչցեղասպանության՝ 15-րդ դարից մինչև 19-րդ դարի 80-ական թվականները,*

*— ցեղասպանության՝ 19-րդ դարի 80-ական թվականներից մինչև 1923 թվականը[164]:*

---

[163] *Положение армян в Турции...*, стр. 257.

[164] «*Լրաբեր հասարակական գիտությունների*», 1990, թիվ 4: *Տե՛ս* Барсегов Ю., *О временных рамках и периодизации геноцида армян. Предгеноцид.*

Առաջին ժամանակաշրջանից երկրորդին անցումը կատարվեց աստիճանաբար և ավարտվեց Բեռլինի վեհաժողովին հաջորդող առաջին տարիներին: Երբ վերացվեցին միլեթների համակարգը և պատրիարքարանին տրված իրավունքներն ու արտոնությունները, օսմանյան կառավարությունը դադարեցրեց հայերին դիտել որպես ինքնուրույն ազգային-կրոնական համայնք, արևմտահայությունը գործնականում լրիվ անպաշտպան մնաց: 1840-ական թվականներին Կ. Պոլսում հրատարակվում էր չուրջ 50 հայկական պարբերական, իսկ 1890-ական թվականներին՝ միայն երեքը: Բռնի կրոնափոխությունը և ուծացումը դարձան պետական քաղաքականություն և Արևմտյան Հայաստանը հայաթափելու սուլթանական ծրագրի կարևոր բաղկացուցիչ մասերը: Նույն խնդրի լուծմանն էր ծառայում նաև կոտորածների քաղաքականությունը, խմբակային ջարդերը անընդմեջ բնույթ ստացան: Հայերի չհագործման, ճնշումների և հարստահարությունների սաստկացումը, նրանց քայքայելն ու արտամղելը վերածվեցին հայաթափման նպատակներին ծառայող քաղաքականության: Իշխանություններն արդեն ոչ միայն չտեսնելու էին տալիս, այլև խրախուսում էին հայերի հանդեպ ոտնձգությունները:

Պատմությանը թերևս հայտնի չէ հպատակ ժողովրդին կողոպտելու, վայրագ բռնությունների ենթարկելու, ֆիզիկապես ու բարոյապես քայքայելու, ուժի գործադրմամբ ուծացնելու ու հավատափոխելու, ամենատարբեր եղանակներով մեռցնելու ավելի դաժան համակարգ, քան համիդյան վիժվածքն էր՝ Զուլումը (աղետ, դժբախտություն):

Զուլումի տարիների (1880-1890թթ.) բովանդակությունը համիդականություն անունը կրող քաղաքականությունն էր, որն ընդհանուր շատ գծեր ունենալով քաղաքական ռեակցիայի հետ, այնուամենայնիվ, չէր նույնանում դրան, այլ կրում էր ճնշման ու հարստահարության բոլորովին նոր, իր այլանդակություններով նմանը չունեցող առանձնահատկություններ, որոնք ազգային ճնշումներին բնաջնջման բնույթ էին հաղորդում:

Դա բացատրվում էր հպատակ ժողովուրդներին ճնշելու, հարստահարելու և խեղելու թուրքերի դարավոր փորձով, նրանց այլամերժ մոլեռանդությամբ, քրիստոնյաների հալածանքների պետական քաղաքականության գործադրմանը ոչ միայն թուրքերի, այլև մահմեդական մյուս տարրերի չհագրգիռ մասնակցությամբ, թուրքական բուրժուազիայի փաշայական-ավատատիրական դաստիարակությամբ, Օսմանյան կայսրությունում մեծ տերությունների չհերի խաչաձևմամբ, «հիվանդ մարդուն» հոչոտելու և միաժամանակ նրա հոգեվարքն արհեստականորեն երկարացնելու ձգտումով, հայկական նահանգներում մուհաջիրների ներմուծման ծավալների հարաճունությունով, որը զանգվածային դարձրեց հայերի արտագաղթը, ոչ մահմեդականների իրավունքների սահմանափակման դարերով մշակված համակարգի գոյությամբ: Այդ համակարգը սահմանում էր, որ քրիստոնյաները իրավունք չունեին վերականգնել իրենց ավերված չինությունները, պարտավոր էին առնվազն երեք օր օթևան տալ, կերակրել ու սպասարկել մահմեդականին՝ լիներ փաշա, թե աղքատ թափառական: Քրիստոնյան իրավունք չուներ խոչընդոտելու իր մերձավորին մահմեդական դառնալու, նա պարտավոր էր իր տեղը զիջել մահմեդականին: Արգելվում էր հագնվել ու հարդարվել մահմեդականի նման, իսլամական անուն կրել, թամբած ու սանձած ձի նստել, զենք, ինչպես նաև մատանի կրել, գինի վաճառել կամ մահմեդականի ներկայությամբ խմել, հանգուցյալին մահմեդական գերեզմանատունը կամ դրա մերձակայքում թաղել, հանգուցյալի վրա բարձրաձայն լաց լինել, մահմեդական ծառա ունենալ: Այլակրոնը պարտավոր էր գլխահարկ վճարել՝ որպես ապրելու իրավունքի վարձ:

Կ. Մարքսը իսլամական մոլեռանդության պատվարը համարում է քաղաքների թուրքական խուժանին:

**Հպատակ ժողովուրդների մասնատման քաղաքականություն.**— Օսմանյան կայսրության երկարակեցությունը, արտաքին պատճառներից բացի, հետևանք էր (և առաջին հերթին) ներքին պայմանների՝ հպատակների ազգային կազմի խայտաբղետության և

մասնատվածության, այդ ժողովուրդների միջև եղած հակասությունների, նրանց համերաշխվելու ձգտման ծայրաստիճանի թուլության: Սյուննիթ քրդերն ատում էին կզլբաշներին, աշիրեթական քրդերը արհամարհում էին ռայաթ քրդերին, մուհաջիրները թշնամի էին կայսրության ոչ միայն քրիստոնյա, այլև մահմեդական ազգություններին, ամբողջությամբ վերցրած՝ խզում կար մահմեդական ու քրիստոնյա հպատակների միջև, ինչը թուրքական իշխանությունների չանքերով վերածվեց թշնամության: Պառակտված էին նաև հպատակ քրիստոնյա ժողովուրդները:

Բ. Դուրը հպատակ ժողովուրդներին վերահսկողության տակ պահելու համար երրորդ բանակն այնպես էր տեղակայել, որպեսզի ռուս-թուրքական սահմանի անվտանգությունն ապահովելու հետ մեկտեղ, զսպեր արևելյան նահանգների բնակչությանը: Դա բխում էր թուրքական բանակի առանձնահատկություններից: Այն ուներ երկու ֆունկցիա՝ պատերազմներ ու ներքին անվտանգության ապահովում: Բանակի այսպիսի ներքին կողմնորոշումն ավելի ակնհայտ դարձավ ցեղասպանությանն անցման շրջանում:

Այդ անցման հանգրվանը հանդիսացավ հայ ժողովրդի բնաջնջումը: Սուլթանական կառավարությունն այլևս չէր հանդուրժում հայերի գոյությունը, և օսմանյան հասարակությանը նպատակամղեց Հայկական հարցը լուծելու հայերի բնաջնջման միջոցով: Այսինքն՝ որոշվեց հայերի «դանդաղ մահացման» քաղաքականությունից անցում կատարել արմատական լուծմանը՝ հայերի ֆիզիկական բնաջնջմանը:

**Սրբազան պատերազմ (ջիհադ).**— Միջնադարյան մոլոգարության ամենավայրագ արտահայտություններից է: Այն ծնվեց որպես կռիվ հանուն հավատի, սակայն ժամանակի ընթացքում ձևավորվեց նաև որպես ամբողջական ուսմունք, որին գրեթե նույն նշանակությունն է տրվում, ինչ «Ալլահը միակ Աստվածն է, իսկ Մուհամմեդը՝ նրա ներկայացուցիչը» կարգախոսին:

Ըստ այդ ուսմունքի, աշխարհը բաժանվում է երկու մասի՝ Դար-ուլ-իսլամ, այսինքն՝ իսլամի երկրներ և Դար-ուլ-հարբ, այսինքն՝ պատերազմի կամ այլակրոնների երկրներ: Այլակրոններին հավատի բերելու համար էր Սրբազան պատերազմը, որը, իհարկե, մահմեդականացման միակ միջոցը չէր: Այստեղ կար միջոցների ավելի քան առատություն՝ տնտեսական, քաղաքական, քարոզչական:

Ջիհադ կիրառվում էր ոչ միայն «անհավատների», այլև՝ մահմեդականների դեմ: Առաջին դեպքում պատերազմին պարտավոր էին մասնակցել բոլոր մահմեդականները, այդ թվում՝ նաև կանայք, իսկ երկրորդ դեպքում մասնակցությունը կամավոր էր: Ժամանակի ընթացքում ջիհադը դուրս եկավ ռազմական ու տարածքային խնդիրներ լուծելու շրջանակներից և ընդգրկեց ոչ միայն իսլամի տարածման, այլև իսլամական օրենքների պաշտպանության ամբողջ համակարգը: Երևան եկան «սրտի ջիհադ», այսինքն՝ պայքար հակաիսլամական հայացքների ու բարքերի դեմ, «գրչի ջիհադ»՝ իսլամի պաշտպանություն գրավոր խոսքի միջոցով, «ձեռքի ջիհադ»՝ իսլամի հակառակորդներին պատժել, «լեզվի ջիհադ»՝ իսլամի պաշտպանություն խոսքով: Գոյություն ունի նաև «մեծ ջիհադ»՝ յուրաքանչյուր հավատացյալ պետք է պայքարի ինքն իր դեմ՝ հանուն ինքնամաքրման, ճգտի բարոյական կատարելագործման, ինչը նրա առաջ կբացի Աստծուն մերձենալու դռները:

Նորագույն ժամանակներում առաջին պլան մղվեցին ջիհադի ռազմական տարբերակները, որոնք հիմնականում հետապնդում են զավթողական նպատակներ: Համաձայն Կորանի, քանի որ Ալլահը բացառապես իսլամի կամքին է թողել պարտված անհավատների բախտի տնօրինությունը, մահմեդականն իրավունք ունի խլել նրանց չարժական ու անշարժ ունեցվածքը, օգտագործել նրանց մատաղ սերնդին իր մարմնական հաճույքների համար: Մահմեդականի համար քրիստոնյան իսլամի սեփականությունն է, որին խաբելը, թալանելը, բռնաբարելը և սպանելը հանցագործություն չեն, այլ մահմեդականի կենսագործունեություն և ապրելակերպ, իսլամի հանդեպ հավատարմության դրսևորման միջոց:

Մահմեդականության համար ամենաբարենպաստ միջավայրը խավարամտությունն ու տգիտությունն են, որտեղ կրոնը հոգեկան զեղումից վերածվում է մոլեռանդության, ինչը նաև հիմք է դառնում կրոնի քաղաքական շահարկումների համար:

Կ. Պոլսի սուլթանական պալատում պահվում են մահմեդական ամենամեծ սրբությունները: Դրանցից մեկը բրդից գործված «սանջակի չերիֆն» է, որով Մուհամմեդը ամբոխին առաջնորդել էր Մեքքա: Երբ այն դուրս է հանվում, նշանակում է, թե աշխարհի մահմեդականները պետք է ջիհադի բարձրանան: Պահվում են նաև Օսմանի հաղթական դրոշը, Մուհամմեդի վերարկուն, մորուքի մազերը: Դրանք թուրք վերնախավի կողմից օգտագործվել և օգտագործվում են ռազմա-քաղաքական նպատակներով:

Թուրքական վարչակարգերը Հայոց ցեղասպանության իրականացման գործում, իհարկե, օգտագործեցին նաև մահմեդական կրոնը, կրոնական մոլեռանդությունը և մահմեդական կրոնական հաստատությունները: 1913թ. կրոնական բարձրագույն պաշտոնում՝ շեյխուլիսլամ, նշանակվեց իթիհադական կուսակցության գործիչ Մ. Հայրին, ինչը, ըստ Ֆերոզ Ահմադի, մահմեդական կանոններով արգելվում էր[165]: Ահա այդ շեյխուլիսլամն ու սուլթան Մուհամմեդ 5-րդը իթիհադի թելադրանքով պատերազմի մեջ թուրքիայի մտնելու պահին հայտարարեցին ջիհադ, որը սակայն իրականացվեց միայն հայերի դեմ: Այդ 5000 բառ պարունակող հայտարարության մեջ կային հետևյալ տողերը. «...Մաքրել երկիրը անբաղձալիներից. սա միակ ուղին է: Անհավատների արյունը արժեք չունի: Երդվեք սպանել առնվազն 3-4 անհավատի: Դրանից բարի գործ չկա»[166]: Պաշտոնատարներն ու մահմեդական կրոնավորները բնակավայրից բնակավայր անցնելով կոչ էին անում մուսուլմաններին կատարել իրենց կրոնական պարտականությունը: Յոզղաթի հայության դահիճներից չաուշ Շյուքրին այն հարցին, թե արդյո՞ք չի զղջում իր կատարած ջարդերի համար, պատասխանել է. «Ամենևին... ես նվիրական և սրբազան պարտականությունս կատարեցի Աստծո, Մարգարեիս և Խալիֆիս առջև... ջիհադ է հայտարարված»[167]: Երզնկայի մերձակայքում մի թուրք 250 հայ սպանելուց հետո չարունակում էր մնալ տարագրության ճանապարհին ու սպասում էր նոր քարավանների, զոհերին անվանելով «անիչխանականներ, ազատականներ և ընկերավարականներ»[168]:

Կրոնական մոլեռանդությունը Աբդուլ Համիդ 2-րդ սուլթանն ու երիտթուրքերը ձգտում էին դարձնել ջարդարար գործողությունների մղող գլխավոր միջոց, ջարդերը ներկայացնել նաև որպես «կրոնական պատերազմ»: Եվ դա հաջողվում էր: Խարբերդի վիլայեթում քրդերը հայերի վրա հարձակվում էին բղավելով «Կեցցե Մուհամմեդը», իսկ երբ հայերի «հարցը լուծեցին», գտան, որ «Մուհամմեդը հաղթեց Քրիստոսին, մահիկը՝ խաչին»[169]:

Աբդուլ Համիդ 2-րդը ստեղծեց բացարձակ միապետություն: Նա վերածնեց մահմեդական կրոնի իրավասությունները, այսինքն՝ օսմանյան պետական կառույցի հիմքում դրեց իսլամիզմը: Արտաքուստ դա չրջադարձ էր դեպի վաղ մահմեդականություն, քանի որ Մուհամմեդի իշխանությունը միավորում էր «աստվածայինն ու քաղաքականը»: Սակայն դա վերադարձ էր միայն արտաքուստ, իրականում ձևավորվեց իսլամ-թուրքական միանգամայն նոր կրոնա-քաղաքական համակարգ:

Պանիսլամիզմի գաղափարախոսությունը հենվում է համաշխարհային մահմեդական պետության՝ խալիֆաթի գաղափարի վրա: Դա վերազգային միավորման գաղափար է՝ հիմնված կրոնական միապետության սկզբունքի վրա: Գործնական քաղաքականության առումով այն կոչված էր պաշտպանելու թուրքերի շահերը և հաստատելու նրանց գերիշխանությունը մահմեդական աշխարհում: Պանիսլամիզմը օրգանական կապի մեջ է

---

[165] Feroz A., *The Young Turks*, Oxford, 1969, p. 148.
[166] Ղազարյան Հ., նշվ. աշխ., էջ 27:
[167] Գալաքյան Գ., նշվ. աշխ., էջ 217:
[168] Բինոն Ռ., նշվ. աշխ., էջ 37:
[169] Փիրանյան Ն., *Խարբերդի եղեռնը*, Բոստոն, 1937, էջ 302, 227:

*ջիհադի հետ, այսինքն՝ բխում է Մարգարեի միևնույն պատվիրանից՝ պատերազմ մղել անհավատների դեմ այնքան ժամանակ, քանի դեռ աշխարհում թեկուզ մեկ անհավատ՝ ոչ մահմեդական կա: Ջիհադը Մուհամմեդն առաջ քաշեց արաբական ցեղերին միավորելու և համախումբ պետություն ստեղծելու համար: Ընդ որում, ջիհադի գաղափարը դեպի իսլամություն ձգեց ավարի ու ստրուկների տիրանալու ցանկություն ունեցող չատ հավակնորդների, քանի որ նվաճված բոլոր տարածքները դառնում էին հաղթողների սեփականություն, իսկ դրանց բնիկները՝ ստրուկներ կամ վարձակալ-հարկատուներ:*

*Որպես քաղաքական ուսմունք պանիսլամիզմը ձևավորվեց Արևելքի տնտեսական, քաղաքական և մշակութային հարստահարումների ու ճնշումների, ինչպես նաև մահմեդական չատ երկրներում տեղական բուրժուազիայի ձևավորման պայմաններում և հանդիսացավ Արևմուտքի դեմ կրոնական հակազդեցության դրսևորում, նրա ներխուժմանն ընդդիմանալու եղանակ: Նաև դրանով է բացատրվում, որ պանիսլամիզմը քարոզում է մահմեդական աշխարհի մեկուսացում: Ամբողջությամբ վերցրած, պանիսլամիզմը եղել և այսօր էլ մնում է հետադիմական զավթողական աշխարհընկալում, որի հիմքի վրա ձևավորվեց մահմեդական արմատականությունը՝ իր մեջ միավորելով իսլամիզմի հոռի կողմերը, դրանք ֆետիշացնելով ու հակադրելով ժամանակակից քաղաքակրթությանը:*

*Պանիսլամիզմի սկզբունքները մշակելիս՝ Աբդուլ Համիդ 2-րդը ելնում էր ոչ այնքան զավթողական նկատառումներից, որքան մահմեդականների համաշխարհային միավորման միջոցով աջակցություն ստանալ Օսմանյան կայսրության անկման գործընթացների առաջն առնելու համար: Նա պանիսլամիզմը ձևավորեց որպես հակակշիռ Արևելյան հարցին: Պանիսլամիզմի դրոշի ներքո օսմանյան քաղաքականությունը ճամփա բեց լավ հպատակ ժողովուրդների արյան գետերի միջով համաշխարհային մահմեդական միավորում ստեղծելու համար, որի առաջին արտահայտությունը հանդիսացավ հայ ժողովրդի բնաջնջման համիդյան մոլագարությունը: Իսլամիզմն իր մեջ միավորեց նաև օսմանիզմի ճուլման զառանցանքները, դրանցից փոխառնելով՝ «իսկական օսմանցին նա է, ով թուրք է» կարգախոսը:*

*Սակայն սխալ է այն տեսակետը, թե հայ-թուրքական հակամարտությունը իսլամի ու քրիստոնեության կռիվ էր: Հիմնահարցը միանշանակ պատասխան չունի: Բացարձակապես ակնհայտ է, որ հայերի կոտորածներն օսմանյան պետական քաղաքականություն էին և իրականացվեցին պետական կառույցների ղեկավարությամբ ու մասնակցությամբ: Սակայն նաև չի կարելի իսպառ ժխտել մահմեդական մոլեռանդության դերն այդ գործում, չնայած մոլեռանդությունը պետական տևական ու արմատական նշանակության քաղաքականության պատճառ չի կարող լինել: Տվյալ դեպքում համիդականության հիմնական նպատակն էր կայսրությունը դուրս բերել ճգնաժամից: Եվ, ինչպես սովորաբար լինում է, ճգնաժամն առաջին պլան մղեց կրոնական մոլեռանդությունն ու քաղաքական արկածախնդրությունը:*

***Հայերի բնաջնջման ծրագրի հեղինակն ու իրականացնողը.*** *— Թվում է, թե հայերի կոտորածների և, ընդհանուր առմամբ, Զուլումի ու վայրագությունների միակ հեղինակը Աբդուլ Համիդ 2-րդ սուլթանն էր՝ իր դաժան բնավորությամբ ու արյունատենչությամբ: Այդպես չէ: Ճգնաժամից դուրս գալու համար կայսրությունը ճգտում էր դեպի բարբարոսական միջոցների կիրառումը և հարմար թեկնածուի կարիք ուներ խնդիրը լուծելու համար: Պատահական չէ, որ գահընկեց արվեցին չափավոր քաղաքականություն որդեգրած Աբդուլ Ազիզ և Մուրադ 5-րդ սուլթանները և գահը հանձնվեց Աբդուլ Համիդին, որը նույնիսկ դրա իրավունքը չուներ:*

*Աբդուլ Համիդը ոչ այլ ոք էր, եթե ոչ գործիք չարդարար քաղաքականությունն առաջ տանելու: «Հոգեվարքի ճիչեր» հոդվածում լրագրող Ա. Մուրադյանը (Mars) գրում է. «Ով որ սուլթան Համիդ ասելով, հասկանում է նրա անձնավորությունը, անցյալ և ներկա չարիքները վերագրում է նրա անձնական քմահաճույքներին ու ճգտումներին, չատ սխալվում է... Որ սուլթան Համիդի կրծքի տակ մարդկային սրտի տեղ մի հրեշ էր*

նստած, այդ մենք գիտենք: Բայց համոզված ենք, որ այդ հրեշը կարողանում էր այդքան հրեշավոր ոճիրներ հղանալ և կատարել տալ հենց նրա համար, որ թուրք տարրը ոչնչով չէր զանազանվում իր միապետից... Ուրեմն սուլթան Համիդը չէ մենակն պատասխանատու Թուրքիայում կատարված սարսափելի ոճիրների ու չարիքների, այլ ամբողջ մահմեդական ժողովուրդը...»[170]:

Հայերի բնաջնջման ծրագրերը խմորվեցին նրա գահ բարձրանալուց առաջ և իրենց ակունքներով ձգվում են մինչև օսմանիզմի և սահմանադրական շարժման գործիչները:

1880թ. խոշոր պետությունների կառավարությունները Բ. Դուռը հղած նոտայում գրում են. «Անիշխանությունը, որ տիրում էր այդ (հայկական) նահանգներում և դրա տևականացումը, ամենայն հավանականությամբ, հանգեցնելու է քրիստոնյա բնակչության ոչնչացման...»[171]:

Պատմությունը Արևմտյան Հայաստանի «էթնիկական մաքրազարդման» գործը հանձնարարեց Աբդուլ Համիդին, որի բնավորության գծերը միանգամայն համապատասխանում էին այդ խնդրի լուծմանը: Չնայած մերօրյա Թուրքիայում ձգտում են այդ սուլթանին ոչ միայն արդարացնել, այլև բարերարի ու իմաստունի թիկնոց հագցնել, Աբդուլ Համիդը պատմությանը հայտնի ամենադաժան ու արյունարբու պետական գործիչներից է: Դա խոստովանել են նաև ժամանակի թուրքական մամուլն ու գործիչները: Թուրքական "Osmanli" թերթը նրան անվանում է «հանցագործ», «անաստված», «խալիֆաթի գահի զավթիչ», «ստոր», «իսլամական աշխարհի մեծագույն թշնամի»[172]:

***Այլամերժության թուրքական քաղաքականության սոցիալ-հոգեբանական և գաղափարախոսական կռվանները.*** — Անցումը ցեղասպանության քաղաքականության չի կարելի քննարկել մեկուսացած թուրքերի ազգային գիտակցության արթնացման գործընթացից: 19-րդ դարի վերջին տասնամյակներին թուրքական ազգային գիտակցությունը գլուխը դուրս հանեց կրոնական հիպնոսի հաստ թաղանթի տակից: Մինչ այդ թուրքն ազգային խնդիրներում տհաս էր: Թուրք ազգը դեռևս չէր ձևավորվել, ձևավորված չէր նաև ազգային գիտակցությունը: Քաղաքային էֆենդու համար թուրքը հոմանիշ էր կոպիտ, տգետ մարդ հասկացության հետ: Անատոլիայի բնակիչները զարմանում էին, թե եվրոպացիք ինչու էին իրենց թուրք անվանում, չէ՞ որ իրենք ոչ թե թուրք են, այլ օսմանցի[173]: Թուրքերը «հայրենիք», «ազգ» բառերը վերցրել էին արաբներից: Ընդ որում, արաբերենում «միլլեթ» բառը նշանակում է ոչ թե ազգ, այլ համայնք:

Սակայն կապիտալիզմի զարգացմանը զուգընթաց՝ հարաբերություններն ու հասկացությունները փոփոխություն կրեցին, այլամերժ գիտակցության տեղը գրավեց ռասիստական գաղափարախոսության մի տարբերակ, որն ի վերջո հանգեցրեց մեծապետական այլամերժության:

Հայերի բնաջնջման օսմանյան քաղաքականությունը կիրառվել է երեք ուղղություններով՝ տնտեսական քայքայում, արտամղում և կոտորածներ:

Տնտեսական քայքայումն իրականացվում էր, մասնավորապես, հարկային քաղաքականության ու հարկերի հավաքման համակարգի և հայ գյուղացիության հողազրկումը խրախուսելու միջոցով: Արդեն դարավերջին հայ գյուղացիության հոծ զանգվածները հող չունեին, նրանց մեծ մասը մարաբա՝ գյուղական պրոլետար էր կամ բռնել էր պանդխտության ուղին:

Ոչ մահմեդականների հանդեպ վայրագությունները հաստատում են նաև թուրք հեղինակները: Թեքին Ալփը վկայում է, որ աշխարհամարտից առաջ թուրքական ազգայ-

---

[170] ՀՀ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), ֆ. Գ. քՀն. Աղայանի, գործ 143, թերթ 2-3:

[171] *Положение армян в Турции...*, стр. 95.

[172] "Osmanli", Կ. Պ., 08.02.1986.

[173] Օսմանյան բառարաններում **վաթան** բառի դիմաց գրված է. «Ոչխարներ արածացնելու և վրան խփելու վայր, յուրդ»:

նականները բոյկոտում էին հայերի, հույների և ուրիշ ազգությունների ապրանքները, ինչը խրախուսվում էր կառավարության ու մամուլի կողմից: Գործի դրվեցին հարձակումներն ու թալանը[174]: Սակայն ճիշտ չէ պնդումը, թե դա արվում էր «բռնի հավատարում» կարգախոսով[175]: Զարևանդը այս կապակցությունը օգտագործում է պայմանականորեն, որովհետև այն, ինչ կատարվեց հայերի ունեցվածքի հետ, պարզապես, թալանի միջոցով նրանց սեփականազրկում էր: Եվ այդ աշխարհին ներկայացնում էին, թե թալանում են, որովհետև, ինչպես Մորգենթաուին ասել էր Թալեաթը, հայերը հարստացել էին թուրքերի հաշվին:

Թուրքիայում կային երկու տեսակի դատարաններ՝ նիզամի (քաղաքացիական) և շարիաթի (կրոնական): Վերջիններում քրիստոնյան ցուցմունք տալու, վկա լինելու իրավունք չուներ: Հազվադեպ էր պատահում, որ դատարանները չարդարացնեին քրիստոնյայի հանդեպ հանցագործություն կատարած մահմեդականին:

Նոր բնույթ ու նշանակություն ստացավ մահմեդական տարրերի ներգաղթի կազմակերպումը: Խնդիր դրվեց ներգաղթին այնպիսի ծավալներ հաղորդել, որ հնարավոր լիներ մեկ-երկու տասնամյակում հայկական նահանգներում մահմեդականների թվական գերակշռություն ստեղծել: Մուհաջիրներին զենք էին բաժանում, սակայն նյութական օգնություն ցույց չէին տալիս և հարկադրում էին գոյության միջոցներ հայթայթել հայերին կողոպտելու ու թալանելու, նրանց հողազրկելու, տները բռնագրավելու միջոցով՝ այդպիսով նրանց ստիպել հեռանալ հայրենի վայրերից:

Արդեն նշվել է, որ թվական փոքրությունը ի սկզբանե եղել է թուրքերի աքիլեսյան գարշապարը: Նրանք բազմաբնույթ միջոցառումներ ձեռնարկեցին (զանգվածային սպանություններ, ուծացում, արտաքսում) կայսրությունում իրենց թվական տեսակարար կշիռը արագ մեծացնելու և դառնալու օսմանյան ամենամեծաթիվ ցեղը: Սա պայքար էր ոչ այնքան հայերի և մյուս ոչ մահմեդականների դեմ, որքան՝ հպատակ բոլոր ժողովուրդների: Այդ պայքարը թուրքին ներարկեց հպատակների (անկախ նրանց կրոնական պատկանելիությունից) հանդեպ արտակարգ դաժանություն: Ի դեպ, այդ դաժանությունից ոչ մահմեդականները համեմատաբար քիչ էին տուժում: Պատճառը մեկն էր. թուրքերը ոչ մահմեդականներից խլել էին բոլոր իրավունքները բացի աշխատելու իրավունքից. նա պետք է սեփական քրտինքով ապահովեր նյութական և հոգևոր արժեքներ ստեղծելու անընդունակ (ավելի ճիշտ՝ այն արհամարհող) թուրքի կենսապահանջները: Թուրքը, կայսրության էթնիկ կազմը հօգուտ իրեն փոխելու նպատակով, բնաջնջման քաղաքականություն չէր վարում՝ չէր կտրում ճյուղը, որի վրա էր ինքը:

Նաև նշենք, որ թուրքացման օսմանյան քաղաքականության համակարգում հայերին առանձնահատուկ ուշադրություն չէր դարձվում, նրանց հանդեպ առանձնակի քաղաքականություն չէր տարվում: Եվ այն, որ հայերը ենթարկվում էին ամենադաժան ճնշումների ու հարստահարության, բացատրվում է նաև նրանց կեցվածքով: Արդեն ասվել է, որ մինչև օսմանյան տիրապետության տակ ընկնելը հայերի մեծ մասը արդեն շուրջ ինը դար գտնվել էր օտարի լծի տակ ու ընտելացել օտարին անմռունչ ծառայելու կյանքին: Հայը ոչ թե թուրքական տիրապետության ժամանակ, այլ դրանից շատ առաջ էր դարձել «պատմականորեն խոցելի», ընտելացել օտարին անմռունչ ծառայելուն: Որ հայերի վիճակը ավելի ծանր էր, քան մյուս ոչ մահմեդական ժողովուրդներինը, հետևանք էր նաև այն բանի, որ միայն նրանք էին բնակվում կայսրության արևելքում, մահմեդական հետամնաց բարբարոս զանգվածների միջավայրում՝ ենթակա նաև հետամնացության ծնած վայրագություններին: Կայսրության արևմտյան շրջանների ոչ թուրքերի վիճակը համեմատաբար բարվոք էր Եվրոպային հարևան լինելու պատճառով: Դրանով է բացատրվում Կ. Պոլսի և միջերկրածովյան ափամերձ տարածքներում բնակ-

---

[174] **Takin Alp**, *The Turkish and Pan-Turkish Ideal*. London, 1917, p. 37-39.
[175] **Զարևանդ**, նշվ. աշխ., էջ 83:

վող հայերի տանելի վիճակը, որն ավելի վատ չէր, քան նրանց հարևան այլազգիներինը, նաև այն, որ քաղաքաբնակ հայերը, անգամ Արևմտյան Հայաստանում, ավելի մեղմ էին ճնշվում, քան գյուղաբնակները: Ուստի կարծիքը, թե հայերի բնաջնջման օսմանյան քաղաքականությունը ցրցամ էր տրվել դարերի ընթացքում, լուրջ չէ: Մինչև 19-րդ դարի կեսերը թուրքերը հայերին բնաջնջելու ոչ ծրագիր են ունեցել և ոչ մտահղացում:

Եթե ընդունենք, որ Պատմական Հայաստանի տարածքը կազմել է 340 հազ. կմ$^2$, որի 2/3-ը Արևմտյան Հայաստանն էր, իսկ 1/3-ը՝ Արևելյան Հայաստանը, ապա հետաքրքրությունից զուրկ չէ այն փաստը, որ 19-րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանում բնակվում էր ավելի քան երեք միլիոն, իսկ Արևելյան Հայաստանում՝ ընդամենը 50-60 հազ.: Ինչո՞ւ: Պատճառը նույնն է՝ որքան արևելք՝ հայերի այնքան ավելի ծանր վիճակ:

Թուրքիզմը, որպես գաղափարախոսություն և քաղաքականություն, ծնունդ առնելով 19-րդ դարի վերջին տասնամյակներին՝ համաթրքական մտածելակերպ դարձավ 20-րդ դարի առաջին տասնամյակներին: Թուրքիզմը ռասիզմի տարատեսակ էր, սակայն տեսականորեն վատ մշակված և զուրկ կուռ ամբողջականությունից: Թերևս նաև դա էր պատճառը, որ թուրքիզմը թուրք հասարակությունում համապարփակ տարածում և խոր արմատներ չուներ: Թուրքական ռասիզմի առանձնահատկությունն այն է, որ ի տարբերություն, օրինակ, ֆաշիզմի, թուրքական ռասան չէր որոշվում մարդաբանական հատկանիշներով, որովհետև այդ հատկանիշներով թուրքերը շատ էին հեռացել այն ցեղերից, որոնք եկել էին արևելքից: Նրանք նաև կորցրել էին նմանությունը միջինասիական, ինչպես նաև Ուրալից արևելք ընկած թուրքախոս ժողովուրդների մշակույթին: Գեոքալփը գտնում էր, որ արյունակցությունը, գանգի ձևը, մազերի և աչքերի գույնը քիչ դեր են խաղում մարդկային ցեղը բնորոշելու համար, դրա փոխարեն մշակույթի միջոցով է ժողովուրդը ապահովում ներքին կապ[176]: Զարևանդը գտնում է, որ պանթուրքիստները «թուրանական մարդու» իդեալը ստեղծեցին թուրքի մեջ վերակենդանացնելով ժուժկալության, առողջության և ֆիզիկական հզորության գաղափարները, որ նրանք կորցրել էին պատերազմների, ինչպես նաև մեղմ կլիմայի և հանգիստ կյանքի պայմաններում[177]: Առաջին աշխարհամարտին նախորդող տարիներին ստեղծվեցին «Թուրք գյուրջու» (Թուրքական ուժ) և պատանեկան «Իզջի» (Արահետ գտնող) կազմակերպությունները, որոնք նմանակություն էին գերմանական "Pfadfinder" (Արահետ գտնող) նույնանուն կազմակերպության[178]: Սակայն ի տարբերություն ֆաշիստ ռասիստների, թուրքիստները բծախնդիր չէին թուրքերի ռասայական մաքրության հանդեպ: Ընդհակառակը, ինչպես վերևում ներկայացվեց, նրանք ձգտում էին ուրիշ ռասաների ներկայացուցիչներին թուրքացնելու միջոցով արագացնել թուրքերի թվական աճը՝ որդեգրում էին ոչ թուրք, մասնավորապես, հայ երեխաների, կնության էին վերցնում հայ կանանց ու աղջիկների: Սակայն ժամանակի ընթացքում «թուրքական արյունը» առաջին պլան մղվեց:

1910թ. օսմանյան խորհրդարանում առաջարկություն մտցվեց օրենք ընդունել, որով արգելվեր թուրքերի ամուսնությունը ուրիշ ազգությունների ներկայացուցիչների հետ: Լայն ծավալներ ընդունեց թուրք ռասայի փառաբանումը, որին Գեոքալփն անվանում է «ուրալ-ալթայան» կամ «թուրք-թուրանյան»: Թուրքիստներն այդ ռասան համարում էին էներգիայի աղբյուր ամբողջ մարդկության համար:

«Թուրք յուրդու» հանդեսը գրում էր, թե աշխարհի բոլոր առաջնորդները սերում են թուրքերից և գերմանացիներից, ընդ որում՝ Թունիսից մինչև Հնդկաչին, Ղրիմ և Աֆղանստան բնակվող ժողովուրդների առաջնորդներն ունեին թուրքական ծագում: Ահմեդ Աղաևը գրեց, որ բացի ճապոնացիներից թուրքերն Ասիայի ամենաառաջավոր ու զար-

---

[176] Զարևանդ, նշվ. աշխ., էջ 56:
[177] Նույն տեղում, էջ 80:
[178] Նույն տեղում:

գացած ժողովուրդն են, թե «ո՛չ Կովկասի հայերը, ո՛չ էլ Կազանի ռուսները չեն կարող հավասարվել թուրք առևտրականներին և վարպետներին»[179]:

Ինչպես ֆաշիստները, այնպես էլ թուրքիստները «սոցիալ-դարվինիզմը» վերածեցին ժողովուրդներ նվաճելու և ոչնչացնելու տեսության: Երիտթուրքական «Հիլալը Ահմեդ» օրաթերթը բացեիբաց գրում էր. «Ըստ բնության օրենքներու, ստորադաս ցեղերը պետք է գերադաս ցեղերուն կերն ըլլան: Պատերազմը ուժի վարչաձևն է, և կը գտնվի իշխող ցեղերուն անկաչկանդ տրամադրության տակ անձնապաշտպանության համար հանդեպ տկարներու, որոնք պարտավոր են կրելու անոր հետևանքները, որչափ ալ աղետալի ըլլան անոնք իրենց համար»[180]: Իթիհադականներն իրենց համարում էին Օգյուստ Կոնտի հետևորդներ և հավանաբար նրանից էին փոխ առել նաև բնության մեջ ընթացող «գոյության պայքարի» սկզբունքները մարդկային հասարակության վրա տարածելու հավակնությունը: Դրա հաստատումն է նաև Մ. Ռիֆաթի կողմից երիտթուրքական կենտկոմի նիստի նկարագրությունը, մասնավորապես Նազըմի ելույթը, թե բոլոր կենդանիները ու բույսերը ուտում են իրար և սեփական կյանքը երկարացնում մյուսներին բնաջնջելու միջոցով[181]:

Սրանից բխում էր դաժանության քարոզը: Թուրքական դպրոցներում աշակերտներին սովորեցնում էին երգեր հետևյալ բովանդակությամբ՝ «Վրե՛ժ, վրե՛ժ, վրե՛ժ: Եկեք սպանենք, եկեք պատառ-պատառ անենք: Եկեք արյան ծով ու լողանանք: Վրե՛ժ, վրե՛ժ, վրե՛ժ»[182]: Այս հողի վրա փառաբանվում էին Ջինգիզխանը, Աթիլան, Լենկթեմուրը և ուրիշ դահիճներ ու նրանց կյանքի օրինակով դաստիարակում էին թուրքերին: Ահա այդ դաժանությունը գործադրվեց հայերի հանդեպ՝ նրանց ոչնչացնելով նախադեպը չունեցող վայրագ միջոցներով:

**Արևելյան հարց.**— *18-րդ դարի երկրորդ կեսին ակնհայտ դարձավ, որ Օսմանյան կայսրությունը թեքվում էր դեպի մայրամուտ, սկսվել էին գործընթացներ, որոնք կայսրությունը տանում էին դեպի անկում: Տնտեսական կյանքը փակուղի էր մտել, գնալով խորանում էր Թուրքիայի և չրջապատող աշխարհի զարգացման մակարդակների տարբերությունը: Թուրքիան ավելի ու ավելի էր խրվում միջնադարյան հետամնացության ճահիճը: Նեխված էր կայսրության ավատատիրական-ռազմական համակարգը, որը ծնել էր բազմատեսակ այլանդակություններ՝ կաշառակերություն, ինքնագլխություն, անիշխանություն, ներքին կռիվներ ու կոտորածներ: Տիրող կարգերն իրենց վարկաբեկել էին: Դրանց դեմ էին ելնում Թուրք հասարակության առաջադիմական տարրերը: Մեծ տերությունները եվրոպական, մասամբ նաև ասիական տարածքներն իրար մեջ բաժանելով, թակում էին Օսմանյան կայսրության դռները:*

*Ահա այս իրավիճակը ստացավ Արևելյան հարց անունը, որն այլ բան չէր, եթե ոչ Օսմանյան կայսրության տարածքներից պատառներ կորզելու հարց: Ու սկսվեցին մեծ ու փոքր կռիվներ, դիվանագիտական խարդավանքներ, սպառնալիքներ ու սիրաշահումներ: Թուրքիան դուրս քշվեց աֆրիկյան տիրույթների մեծ մասից, Սև ծովի ափամերձ շատ չրջաններից: Սակայն նման ամեն մի զավթում տերություններին ընդհուպ մոտեցնում էր եվրոպական պատերազմի: Արևելյան հարցի առաջացման համար խթան էր նաև օսմանյան լծի տակ եղած ժողովուրդների ազատագրական պայքարը, որը հատկապես լայն թափ ստացավ 19-րդ դարի սկզբին և տերությունների կողմից անմիջապես օգտագործվեց Կ. Պոլսի դեմ: Երբ կայսրության որևէ մասում ազգային չարժում էր ծագում,*

---

[179] **Гасанов Э.**, *Идеология буржуазного национализма в Турции*, Баку, 1966, стр. 137.

[180] *«Տրապիզոնի թեմին վիճակավոր Հովհաննես Արք. Նազլյանի հուշերը Մերձավոր Արևելքի 1914-1928 չրջանի քաղաքական-կրոնական դեպքերուն մասին»*, Ա. Հատոր, Բեյրութ, 1960, էջ 11:

[181] **Ռիֆաթ Մ.**, *Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը և իթիհատի հայաջինջ ծրագրերը*, Երևան, 1990, էջ 98:

[182] *United States Official Documents on the Armenian Genocide*, vol. II, Watertown, 1994, p. 105.

պետությունները կամ նրանցից որևէ մեկը իսկույն ներկայանում էր որպես մարտնչող ժողովրդի հովանավոր:

1815թ. Նապոլեոնի դեմ հաղթանակ տարած միապետների՝ Վիեննայի հանդիպման ժամանակ ձևավորվեց, այսպես կոչված, «եվրոպական կոնցերտը», այսինքն՝ տերությունները պայմանավորվեցին այլևս տարածքային և այլ խոշոր հարցերը լուծել միայն փոխհամաձայնության միջոցով: Արևելյան հարց տերմինն առաջին անգամ օգտագործվեց Սրբազան դաշինքի Վերոնի (1822թ.) համաժողովում, երբ քննարկվում էր Հունական չարժումների կապակցությամբ Բալկաններում ստեղծված վիճակը: Սակայն «եվրոպական կոնցերտն» արդյունավետ գործել չկարողացավ՝ տերությունների միջև եղած անհաշտ հակասությունների հետևանքով:

Ռուսաստանն առաջ էր շարժվում, և նրան կասեցնելու համար Եվրոպան միավորվեց: Դրա հետևանքով 1828-29թթ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսական բանակի հաղթանակները որևէ էական արդյունքի չհանգեցրին: Ղրիմի պատերազմում միավորված Եվրոպան ռազմական պարտության մատնեց Ռուսաստանին: Փարիզի 1856թ. պայմանագիրը Ռուսաստանին զրկեց Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու իրավունքից: Մնվեց ստատուս քվոյի քաղաքականությունը՝ ուղղված Ռուսաստանի դեմ: Պայմանագրի 30-րդ հոդվածը, հռչակելով Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության անձեռնմխելիություն, դրանով իսկ բարենորոգումների իրականացումն ու տարածքային խնդիրները կապակցեց ու դրեց հակադրության մեջ:

Դա սկիզբ էր, որը պարտադիր դարձավ հետագայում Թուրքիայի հետ կնքված բոլոր պայմանագրերի համար: Եվ երբ 1877թ. Ռուսական բանակը օսմանցիներին ջախջախեց, եվրոպական պետությունները Ռուսաստանի դեմ քաղաքական ճակատ կազմեցին և դիվանագիտական պարտության մատնեցին:

Արևելյան հարցն ունեցել է զարգացման երեք շրջան:

Առաջին շրջանն սկսվում էր 18-րդ դարավերջից և ձգվում մինչև 19-րդ դարի կեսերը: Այդ շրջանում գլխավորը Հունական հարցն էր և ավարտվեց Հունաստանի անկախությամբ: Երկրորդ շրջանն ընդգրկում էր մինչև Բեռլինի կոնգրեսն ընկած ժամանակաշրջանը: Այդ շրջանում առաջնայինը Լիբանանի և Բուլղարիայի հարցերն էին, որոնք ավարտվեցին Լիբանանի ինքնավարությամբ ու Բուլղարիայի անկախությամբ: Երրորդ շրջանը ձգվեց մինչև Լոզանի կոնֆերանսը (1923թ.): Այս շրջանում առաջնայինը Հայկական հարցն էր և հանգեցրեց արևմտահայության բնաջնջմանը:

Ջ. Բրայսը հեգնում էր, թե՝ «Արևելյան Եվրոպայում և Արևմտյան Ասիայում կա ռազմական մարդկանց մի խումբ, որ մենք անվանում ենք թուրքական կառավարություն, և որն այն օրից, ինչ դուրս էր պրծել դեղին Ասիայի խորքերից, այլ զբաղմունք չի ունեցել, քան իր տիրապետության տակ գտնվող ժողովուրդներին կողոպտելն ու կոտորելն էր... Թուրքիան վաղուց անհետացած կլիներ, եթե տերություններն այնքան եռանդով նրան չպաշտպանեին»[183]:

Արևելյան հարցի հանգույցը Նեղուցների (Բոսֆոր, Դարդանել) և Կ. Պոլսի խնդիրներն էին: Հունաստանը Կ. Պոլիսը համարում էր իրենը, Ավստրո-Հունգարիան՝ իր արևելյան ֆորպոստը, իսկ Բուլղարիան՝ իր բնական սահմանների անքակտելի մասը: Անգլիայի համար Նեղուցները տնտեսական ու ռազմա-քաղաքական առաջնային նշանակություն ունեին՝ առևտրական ուղի և Առաջավոր Ասիայում գերիշխանության հնարավորություն: Ռուսաստանի համար Նեղուցներն աշխարհի հետ ծովային կապի ամենակարճ և ամենահարմար ուղին էին ու նաև Բալկաններում և Միջերկրական ծովի ավազանում գերակշռություն ստանալու հնարավորություն: Ռուսաստանը Կ. Պոլիսը համարում էր իր հարավային մայրաքաղաքը՝ Ցարգրադ: Նեղուցներին և Կ. Պոլսին տիրանալու ցարա-

[183] «Մուրճ», 1905, թիվ 6:

կան քաղաքականությունը մեծ թափ հաղորդեց պանսլավոնիզմին: Այս ամենի հետևանքով, նկատում է Գոլոբորոդկոն, օսմանյան պետությունը վերածվեց խաղալիքի, իսկ Արևելյան հարցը՝ Օսմանյան կայսրության գոյության կամ մասնատման ճակատագրական հրամայականի՝ ով կարող էր, աշխատում էր նրանից հնարավորին չափ մեծ պատառ կորզել: Միաժամանակ կայսրության ներքին կյանքում յուրաքանչյուր քիչ թե շատ նշանակալից իրադարձություն կամ նույնիսկ կենցաղային դեպք պատրվակ էր դառնում Թուրքիայի ներքին գործերին միջամտելու համար:

Բեռնշտայնը գրում է. «...այն հալածանքներն ու անագորույն, գազանային բռնությունները, որոնց ամենօրյա զոհերը եղել և մնում են հայերը, այնքան բազմաբնույթ են, որ հարկավոր է քաղաքակիրթ ազգերի միահամուռ բողոքը... Հայ ժողովուրդը կազմում է Արևելյան կոչված մեծ հարցի միջուկը»[184]:

Մինչդեռ տերությունները խուլ և համր էին: Այս իրողությունում երկրորդական նշանակություն չուներ նաև այն, որ ինչպես նշում են Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը, Ասիական Թուրքիան, չնայած բնակչության փոքրամասնությանը, ունի թուրքական ազգության պատկանող մոլեռանդ մուսուլմանների չափազանց համախմբված մի զանգված, և ներկա պահին այն գրավելու որևէ փորձ հնարավոր չէ ձեռնարկել: Եվ իրոք, Արևելյան հարցի ամեն մի քննարկման դեպքում ասիական մարզերից միայն հաշվի էին առնվում Պաղեստինի և Լիբանանի քրիստոնեաբնակ շրջանները:

***Հայկական հարց.***— Հայկական հարցը ազատության, անկախության, Հայրենիքի տարածքային ամբողջականության հարց է: Որպես այդպիսին՝ հայկական հարցը տարբեր ուժգնությամբ ու երանգավորմամբ միշտ գոյություն ունեցել է:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո հայկական հարցը որոշակի առումով երկփեղկվեց: Եթե Հարավային Կովկասում այն նշանակում էր պայքար առավելապես ներքին ինքնավարության, տարածքային միավորման և ժողովրդավարության հաստատման համար, ապա Արևմտյան Հայաստանում շարունակեց մնալ պայքար ազգային անվտանգության, սեփական հայրենիքում հարատևման հնարավորության համար: 19-րդ դարի սկզբներից հայկական հարցը դարձավ Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը՝ աստիճանաբար վերածվելով հայկական նահանգներում բարենորոգումներ մտցնելու հարցի, ինչը տերությունները վերածեցին տգեղ չահարկումների անվերջ շղթայի: Իր հերթին սուլթանական կառավարությունն օգտագործում էր տերությունների միջև եղած հակասությունները ոչ միայն բարենորոգումները տապալելու, այլև Արևմտյան Հայաստանը հայաթափելու միջոցով հայկական հարցը լուծելու համար:

Այսպիսով, մենք գործ ունենք հայկական հարցի երկու հասկացության հետ: Հայկական հարց, որպես հայրենիքի միավորման ու անկախության հարց և Հայկական հարց՝ վերածված միջազգային դիվանագիտության օբյեկտի, որը հետապնդում էր միայն Արևմտյան Հայաստանի խնդրի լուծում: Գիտական ու քաղաքական առումով հայկական հարցը երկրորդն է, որի ծագումն ու միջազգայնացումը կատարվեցին գլխապտույտ արագությամբ:

Իրադարձությունները ծավալվեցին հետևյալ կերպ. 1877թ. սկսված Ռուս-թուրքական պատերազմն ավարտվեց ռուսական զենքի փայլուն հաղթանակով ու Սան Ստեֆանոյի պայմանագրի կնքմամբ, որում կետ մտցվեց նաև արևմտահայերի վերաբերյալ: Այն հայտնի է 16-րդ հոդված անունով: «Նկատի ունենալով, որ ռուսական զորքերի կողմից Հայաստանի՝ գրաված տարածքների մաքրումը, որոնք պետք է վերադարձվեին Թուրքիային, կարող է վերջիններում ընդհարումների ու բարդություններ առիթ դառնալ, ինչը բացասաբար կանդրադառնա երկու պետությունների հարաբերությունների վրա,

---

[184] **Բեռնշտայն Էդ.**, *Հայերի տառապանքն ու Եվրոպան (դասախոսություն՝ կարդացված Բեռլինում 1902թ., հունիսի 26-ին): Տե՛ս Օտարերկրացիները Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին*, Թիվ 1, Երևան, 1997, էջ 11:

Բ. Դուռը պարտավորվում է Հայաստանում անհապաղ իրականացնել տեղական պահանջներից բխող բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»[185]: Այսինքն՝ գրված տարածքներից ռուսական զորքերի դուրսբերումը պայմանավորվում էր բարենորոգումների իրականացմամբ: Բայց քանի որ սուլթանը բարենորոգումներ մտցնելու ոչ ցանկություն ուներ և ոչ էլ հնարավորություն, ապա, փաստորեն, ռուսական զորքերը գրված տարածքներում կարող էին մնալ որքան ցանկանային, գուցե նաև՝ ընդմիշտ:

Ահա թե ինչու Սան Ստեֆանոյի պայմանագիրը Եվրոպայում, մասնավորապես Անգլիայում, իրարանցում առաջացրեց. Եվրոպան նոր պատերազմով էր սպառնում Ռուսաստանին, իսկ վերջինս անկարող էր կռվել միացյալ Եվրոպայի դեմ, մանավանդ որ Ղրիմի պատերազմի մղձավանջը չարունակում էր ահաբեկել ցարական պալատին:

Լոնդոնում բանակցություններ վարեցին Անգլիայի արտաքին գործերի նախարար Սոլսբերին և Ռուսաստանի դեսպան Շուվալովը: Մայիսի 30-ին ստորագրվեց Սոլսբերի-Շուվալով համաձայնագիրը, որով՝ Հոդվ. 17-րդ-ով «Թագուհու կառավարությունը ի գիտություն է ընդունում Նորին Կայսերական Մեծության հավաստիացումն այն մասին, որ ապագայում Ռուսաստանի սահմանները չեն ընդարձակվի Ասիական Թուրքիայի ուղղությամբ»[186]:

Ակնհայտ է, որ Ռուսաստանը Սան Ստեֆանոյի պայմանագրի մի քանի առանցքային կետերից հրաժարվում էր: Անգլիան դրանով չբավականացավ և օսմանյան կառավարության հետ նույնպես պայմանագիր կնքեց, որով Թուրքիան Անգլիային զիջում էր Կիպրոս կղզին, իսկ Անգլիան երաշխավորում էր առաջինի տարածքային ամբողջականությունը: Անգլիական նավերը մտան Դարդանել, Ռուսաստանը համաձայնվեց վերանայել Սան Ստեֆանոյի պայմանագիրը: Եվ 1878թ. հուլիսին գումարվեց Բեռլինի գագաթաժողովը: Հուլիսի 13-ին ստորագրված դաշնագիրը սահմանում էր.

«Հոդվ. 58-րդ. Բ. Դուռը Ասիայում Ռուսական կայսրությանն է զիջում Արդահանի, Կարսի և Բաթումի տարածքները, վերջինիս նավահանգստի հետ միասին:

Հոդվ. 60-րդ. Ալաշկերտի հարթավայրն ու Բայազետ քաղաքը, որոնք Սան Ստեֆանոյի պայմանագրի 19-րդ հոդվածով զիջվել են Ռուսաստանին, վերադարձվում են Թուրքիային...

Հոդվ. 61-րդ. Բ. Դուռը, առանց հետագա ձգձգումների, պարտավոր է հայերով բնակեցված շրջաններում իրականացնել տեղական կարիքներից բխող բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից: Այդ նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին նա պարբերաբար տեղյակ կպահի տերություններին, որոնք կհետևեն դրանց իրականացմանը:

Հոդվ. 62-րդ. Քանի որ Բ. Դուռը հաստատ մտադրություն ունի ամենալայն առումով պահպանել կրոնական ազատության սկզբունքը, ապա պայմանավորվող կողմերն ի գիտություն են ընդունում այդ կամավոր հայտարարությունը...»[187]:

61-րդ հոդվածով նախատեսվում էր բարենորոգումներ մտցնել ոչ թե Հայաստանում, այլ հայաբնակ շրջաններում, այսինքն՝ փաստորեն մերժվում էր կայսրության կազմում Հայաստանի գոյությունը: Նաև այդ պատճառով Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը Օսմանյան կայսրությունում ու նրա առնչություններում ձևավորեց սկզբունքային նշանակության մի քանի նոր մոտեցումներ: Նախ. սուլթանը եզրահանգեց՝ հայկական հարցը գոյություն կունենա այնքան, քանի դեռ կայսրության տարածքում հայ ազգաբնակչություն կա: Երկրորդ. Հայկական հարցը չեզոքացնելու և ժամանակ չահելու համար հարկ է դրան հակադրել Քրդական հարցը: Երրորդ. 61-րդ հոդվածը կատարելուց

---

[185] *Сборник договоров России с другими государствами, 1856-1917,* Москва,1952, стр. 168-169.

[186] Նույն տեղում, էջ173-174.

[187] Նույն տեղում:

խոչ տալու համար առաջ քաշել կայսրության բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև թուրք ժողովրդի, համար բարենորոգումներ մտցնելու պահանջ:

Եվ բռնությունները գնալով ծավալվեցին: Անգլիական դիվանագետ Ք. Լլոյդը գրում է, թե անգլիական հյուպատոսների զեկուցագրերից պարզորոշ երևում է սուլթանի և նրա նախարարների կողմից հղացած ու վատ թաքցրած դիտավորությունը՝ հայերին գրգռել՝ կատարելու որևէ թշնամական գործողություն, որը կարող է դառնալ ընդհանուր կոտորածի արդարացում: Քրդերին գործելու ազատություն տրվեց, իսկ հայերն օրենքից դուրս դրվեցին[188]:

Հայկական հարցին տրված մեկնաբանությունները տարբեր և ոչ քիչ դեպքերում իրարամերժ են: Թուրք պատմաբան Քարալը իր «Հայկական հարցը (1878-1913)» գրքում գրում է. «Հայկական հարցը փաստորեն հայերի զինված ապստամբությունն էր Օսմանյան կայսրության դեմ: Ապստամբական այդ չարժումը սկիզբ առավ դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին և, անցնելով մի քանի ժամանակաշրջաններ, Օսմանյան կայսրության անկման հետ միասին անհետացավ պատմությունից»[189]:

Նման ձևակերպումը խնդիր ուներ՝

ա) Հայկական հարցը դիվանագիտականից քաղաքական-ապստամբական պայքարի տապարեզ տեղափոխելու միջոցով արդարացնել հայերի բնաջնջման օսմանյան քաղաքականությունը,

բ) եթե հայկական հարցը զինված ապստամբություն էր և Օսմանյան կայսրության անկումով իր նշանակությունը կորցրեց, ապա այդ հարցն այլևս գոյություն չունի:

Մինչդեռ հայկական հարցը ո՛չ ապստամբություն էր, ո՛չ Օսմանյան կայսրության գոյության ու ո՛չ էլ տարածքային հարց: Այն սեփական հայրենիքում հայի անվտանգ ու արժանապատիվ գոյատևման հարց է: Հայկական հարցը որպես տարածքային խնդիր դիտարկելու հետևանքով էր, որ տերություններն այն օգտագործեցին որպես սադրանք: Օսմանյան կայսրությունն անդամահատելու հարցում նրանք հիմնականում համամիտ էին: Սակայն երբ խնդիր էր առաջանում ազատագրված տարածքների տնօրինման շուրջ, ընդհանուր շահագրգռությունը վերածվում էր համընդհանուր մրցակցության, և ազգային հարցը դառնում էր շահարկումների առարկա: Դա առավել ակնհայտությամբ դրսևորվեց, երբ արևմտահայությունը հայտնվեց օսմանյան ժառանգության համար մեծ տերությունների մրցապայքարի կիզակետում: Այս պայմաններում փրկությունը մեկն էր՝ հայկական հարցը դուրս բերել միջազգային շահարկումների ոլորտից: Խնդրի ամբողջ ողբերգականությունն այն է, որ դա ոչ միայն չէր արվում, այլև հայերը պարզապես անզոր էին կասեցնել տերությունների միջամտությունները, եթե նույնիսկ հրաժարվեին ազատագրական պայքարից: Սակայն հայն այլևս անկարող էր հետ կանգնել պայքարից, քանի որ, ինչպես Րաֆֆին է գրում, զենքը ձեռքին մեռնելը գերադասելի էր թուրքական բռնակալության պայմաններում գոյատևելուց:

Հայկական հարցի միջազգայնացման շրջանում հակահայ (հակառուս) քաղաքականության կրողն Անգլիան էր: Մ. Մաքքոլը նկատում է, որ Անգլիան եռակի պարտավորություն ուներ: Առաջին պարտավորությունը նա ստանձնեց Ղրիմի պատերազմից հետո: Փարիզի տրակտատը առաջ քաշեց «եվրոպական տերությունների կոլեկտիվ հովանավորությունը»: Հենց դա էր պետք սուլթանին: Եթե նա մնար Ռուսաստանի հետ դեմ-դիմաց, հարկադրված կլիներ իրեն զուսպ պահել, քանի որ պատերազմները, որպես կանոն, ավարտվում էին ի վնաս Թուրքիայի, իսկ տերությունների համաստեղ պարտավորությունը իրականում նշանակում էր որևէ պարտավորության բացակայություն: Բ. Դուրը Ղրիմի պատերազմից հետո նաև հասկացավ, որ Օսմանյան կայսրության ամբող-

---

[188] *Положение армян в Турции...*, стр. 172.

[189] **Karal E. Z.**, նշվ. աշխ., էջ 5:

*չականությունն ու անկախությունը ուներ էական նշանակություն Եվրոպայում քաղաքական հավասարակշռության համար*[190]:

*1856թ. սուլթանը պատվո երդումով խնդրեց տերություններին հավատալ իր կայսերական խոսքին, որ կկատարի ստանձնած բոլոր պարտավորությունները: Մեծ տերությունները «հավատացին», իսկ երբ սուլթանը մոռացավ իր պարտավորությունների մասին, լռեցին:*

*1878թ. անգլո-թուրքական կոնվենցիայով սուլթանը պարտավորվեց հայկական նահանգներում վարչական բարենորոգումներ անցկացնել: Բայց Անգլիան ոչինչ չարեց իր ստորագրած պայմանագիրը կյանքի կոչելու համար:*

*Մեռած տառ մնաց նաև Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածը: «Եվ տերությունները հանգիստ հաշտվեցին Բ. Դռան այդքան ցինիկ ու լկտի...» վերաբերմունքի հետ: Անգլիան, որի ջանքերով չեղյալ հայտարարվեց Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, մատը մատին չխփեց, որպեսզի օգնի հայերին, եթե չհաշվենք այն պատահական և ողորմելի նոտաները, որոնց սուլթանի կառավարությունը վերաբերվում էր քմծիծաղով*[191]:

*Բանը միայն կոտորածները չէին: Կոտորածներ եղել էին նաև ուրիշ երկրներում, բայց դրանք չէին բխում համակարգից: Իսկ Թուրքիայում սերտորեն կապված են համակարգի հետ, գրում է Մաքքոլը, դրանք ծրագրավորված քաղաքականության դրսևորումներ են և «նման են հրաբխի ժայթքումների՝ բոլորի հայացքի առաջ բացահայտելով այն ներքին կրակը, որը կատաղի ուժով հավերժ կայծկլտում է երկրագնդի մակերևույթի վրա: Ամենաասրասփելին... քրիստոնյաների ամենօրյա վիճակն է... Ամուսիններն ու եղբայրները առավոտյան գնում են դաշտերը մշակելու կամ անասուններն արածացնելու... վախով, թե վերադառնալիս իրենց կանանց ու դուստրերին կգտնեն պատվազրկված, իսկ կանայք ու դուստրերը իրենց ամուսիններից բաժանվում են մտավախությամբ, որ այլևս նրանց ողջ չեն տեսնի»*[192]:

*Դա մի գործընթաց էր, որը խորանալով, համապարփակ բնույթ էր ձեռք բերում: Բախումը հասունանում, անխուսափելի էր դառնում: Սուլթանը որոշել էր կոտորել հայերին և հետևողականորեն նախապատրաստում էր արյան այդ բաղնիքը: Կոտորածի վճիռ կայացնելուց մինչև դրա կիրառումն ընկած ժամանակաշրջանը նշանավորվեց մինչ այդ անհնարին թվացող մի քանի իրադարձություններով, որոնք հասունացրին կոտորածները և, ինչպես Լեոն է ասում, «դանակը դրեցին հայ ժողովրդի կոկորդին»:*

*Սուլթանական իշխանությունները, հայերի բնաջնջման հարվածային ուժի դերը հանձնարարելով քրդերին և նրանց բացարձակ արտոնություններ ու գործողություններ ազատություն տալով, միաժամանակ ձևավորեցին ազդեցության մեխանիզմ՝ քրդերին ոչ միայն չհագեցնելու, այլև ուղղակիորեն դրդելու գազանություններ:*

*Այդ քաղաքականության արտահայտություններից մեկը Մուսա բեյի ավազակությունների հանդեպ սուլթանի վերաբերմունքն էր: Մուսային արդարացնելով՝ նա գործողությունների ազատություն տվեց քուրդ ավազակապետերին՝ հայերի հետ վարվել սեփական քմահաճույքով:*

*«Աբդուլ Համիդը,– գրում է Լեոն,– պարզ ու բացարձակ կերպով բաց էր անում իր հղացած հայաջնջումը: Նա պատրաստվում էր իսլամության գլուխն անցած պատերազմել հայերի դեմ:*

*Եվ ոչ ոք չեղավ, որ ուշադրություն դարձներ այդ ահռելի հայտարարության վրա:*

*...Եվ կռիվը սկսվում է, ահավոր ու տագնապալից...»*[193]:

---

[190] *Положение армян в Турции...*, стр. 191-193.
[191] *Նույն տեղում*, էջ 194-196:
[192] *Положение армян в Турции...*, стр. 192-197.
[193] **Լեո**, *Անցյալից*, Թիֆլիս, 1925, էջ 59:

*Կոտորածների քաղաքականության գործադրման մյուս սադրանքը Կարինում 1890թ. հունիսին թուրքական հարձակումն էր հայերի վրա: Այդ իրադարձությունների հետևանքով 1890թ. հուլիս-սեպտեմբերին կոտորածների փորձեր եղան Մուշում ու Բաղեշում, Վանում ու Բաբերդում: Հայերի վրա հարձակումներ կատարվեցին Քեսիբեկում, Ալաշկերտում, Ջարսանջակում և այլուր: Ամենուրեք արյան հոտ էր գալիս:*

*Կարինում կատարվածը տերությունների կառավարությունները «ի գիտություն» ընդունեցին: Դա առիթ հանդիսացավ Պոլսի ցույցի համար: Հնչակյան կուսակցությունը 1890թ. հուլիսի 15-ին ցույց կազմակերպեց՝ բողոքելու եվրոպական տերությունների անտարբերության դեմ: Սուլթանը խաղաղ ցույցը պատրվակ դարձրեց զանգվածային ահաբեկչության համար: Այդ առիթով Լեոն նկատում է. «Գրվում էր թուրքահայ ժողովրդի մահվան դատավճիռը»[194]:*

*Կ. Պոլսում հեղված արյան չիթերը հասան հայաբնակ շրջաններ: «Անհատ սպանությունները փոխարինել են զանգվածային կոտորածները: Կառավարությունը կատաղած ամեն կողմ հրամաններ է արձակում՝ հայերի ամեն մի շարժում դիակներով ծածկելու: Երզնկայի ամբողջ բանակը շարժման մեջ է, մեր երկրի բոլոր կողմերը զինվորներ են լցվել..., պահեստի զորքերը զենքի տակ են կանչվում հայերին կոտորելու համար... կառավարության հրամանով տաճիկ մոլլաները մուսուլմաններին մոլեռանդության են մղում քրիստոնյաների դեմ և նրանց վրժխնդրության կոչում...»[195]:*

*Այդ ընթացքում հայերի կոտորածներ տեղի ունեցան մի քանի բնակավայրերում. «Բասենից բազմաթիվ սպանությունների լուրեր են հասել», Արճեշի մոտակայքում գազանաբար կտոր-կտոր են արվել ճամփորդներ: «Ամենուրեք՝ դաշտերում, ճանապարհներին հանդիպած հային գնդակահար գետին են փռում: Սեբաստիայի Ալա-Քիլա գյուղում հարկահավաքները չորս գյուղացու ողջ-ողջ այրեցին»[196]: Տրապիզոնում թուրքերը բացեիբաց խոսում էին հայերին կոտորելու մասին: Հուլիսի 26-ին նրանք հավաքվեցին մեյդանում, սակայն կոտորածը կանխվեց, չնորհիվ ազդեցիկ թուրքերի մեկի՝ Փեթևի ջանքերի: Հաջորդ օրը Սեբաստիայում 200 քուրդ հարձակվեց հայոց թաղերի վրա, բայց հետ չպրտվեց: Մալաթիայում փողոց դուրս եկած հային գազանաբար ծեծում էին: Խարբերդի վիլայեթում հարձակումներ տեղի ունեցան հայկական գյուղերի վրա: Կարինում 57 թուրք բռնաբարելով մեռցրին ինը տարեկան մի երեխայի:*

*Քրդական չատ աշիրեթներ, սկսած 1891 թվականից, վերածվեցին համիդիե գնդերի, իսկ ցեղային ավագանին՝ դրանց հրամակազմի: Այդ գնդերը զինվում էին պետության կողմից. կառավարության հատկացրած միջոցներով էր վարձատրվում դրանց հրամանատարությունը: Մնացածը՝ սնունդ, ձիեր և այլն, հոգում էին իրենք՝ քրդերը, հայերին թալանելու միջոցով:*

*Սուլթանը, ցեղապետերին չնորհելով փաշայի, միրալայի և նման այլ զինվորական կոչումներ, նրանց օժտեց ռազմա-քաղաքական և վարչական իրավասություններով: Հանձինս համիդիե գնդերի, ձևավորվեց հայերի բնաջնջման հարվածային ուժ:*

*Եվ սկսվեց...*

*«Քրդերն ու թուրքերը,— «Դրոշակ»-ին գրում են Ալաշկերտից,— կառավարության տված արտոնություններից համարձակություն ստացած, գազանություններ են կատարում: Քրդական անկանոն զորքերը գյուղից գյուղ անցնելով, բարբարոսություններ են գործադրում, հափշտակում տներում եղածը, ծեծում ու անարգում բնակիչներին:*

*Բռնի կրոնափոխությունը օրեցօր չատանում է...*

*Մի չարք գյուղերի արտերը հրդեհեցին»[197]:*

---

[194] Նույն տեղում, էջ 75:
[195] Լեո, Անցյալից, էջ 82:
[196] «Հնչակ», 1890, թիվ 4:
[197] «Դրոշակ», 1892, թիվ 3:

*Սկսվել էր արևմտահայության բնաջնջման գործընթացը: Սուլթանական կառավարությունը գործողության մեջ էր դրել Հայաստանը հայերից մաքրազարդելու մի հրեշավոր ծրագիր:*

***Հայերը բնաջնջման իրողության առջև.—*** *Արդեն 1880թ. կեսերին ակնհայտ դարձավ, որ տերությունների և, ընդհանրապես, դիվանագիտական միջոցներով հայությանը սպառնացող վտանգի առաջն առնելն այլևս անհնար էր: Ռուսաստանը մերձեցել էր Օսմանյան կայսրության հետ, Ֆրանսիան հետևեց նրա օրինակին, կայզերը գրկախառնվում էր սուլթանի հետ: Ինչ վերաբերում է Գլադսթոնի Անգլիային, ապա արտաքուստ անհատ հրաժարվում էր օսմանյան կառավարության հանդեպ որդեգրած թշնամական քաղաքականությունից:*

*Հայերը միայնակ մնացին Աբդուլ Համիդի վարչակարգի հայաջինջ քաղաքականության դեմ: Նրանց այլևս բարենորոգումների ձախողումը չէ, որ անհանգստացնում էր, այլ բնաջնջման ահագնացող վտանգը: Բոլորից լքված հայությունը սկսեց ստեղծված կացությունից ելք փնտրել և հանգեց ինքնապաշտպանության գաղափարին:*

*Սեփական ուժերին ապավինելու կողմնորոշումը ձևավորեց նոր կեցվածք ու մոտեցումներ: 1885թ. Սասունի Ահրոնք գյուղում տեղի ունեցած մի ժողովում լեռնաչխարհի ավագանին որոշեց այլևս հակահարված տալ քրդերի հարձակումներին, գործել «Ատամ ընդ ատաման» սկզբունքով: Նույն տարում տեղի ունեցավ առաջին լուրջ բախումը քրդերի հետ: Այդ ժամանակ էլ ձևավորվեց Արաբոյի հայդուկային խումբը, որ անդրանիկն էր հայ իրականության մեջ, և որի մարտական գործողությունները նիրհից հանեցին ոչ միայն Տարոնի հայերին, այլև ողջ արևմտահայությանը:*

*Դա հայկական չարժման երկրորդ շրջանն էր, երբ ղեկավարությունն իրենց ձեռքը վերցրին նոր միայն կազմավորված քաղաքական կուսակցությունները, վերելք ապրեցին հայրենասիրական տրամադրությունները:*

*Սակայն հայերն անկախության քաղաքական ծրագիր չունեին, ավելի ճիշտ՝ անկախության համար պայքարը չդարձավ արևմտահայ չարժման նպատակադրում: «Հայերի պահանջը,— գրում է Ֆ. Մակլերը,— իրենց երկրի և իրենց ազգի համար վերին աստիճանի համեստ էր... ի՞նչ էին նրանք պահանջում: Հասարակ բան՝ իրենց կյանքի, պատվի և ունեցվածքի անվտանգություն»[198]: Շատ ավելի որոշակի է գրում Հ. Թումանյանը. «Հայերը երբեք քաղաքական նպատակներ չեն սնուցած: Կյանքի ապահովություն, պատվի, ինչքի ապահովություն, աշխատելու և իրենց աշխատանքի պտուղը վայելելու կարողություն, իրենց ազգային մշակույթը պահելու իրավունք. այս ամենը կազմել են և այսօր էլ կազմում են իրենց միակ փառամոլությունը»[199]:*

*Չնայած դրան, համազգային ապստամբության մասին հայերի ծրագրերի մասին չահարկումները մեծ տեղ էին գտնում ոչ միայն թուրքական, այլև արևմտյան մամուլում: Օրինակ, Ժ. Հուսլիփը պնդում է. «Ինչպես Աբդուլ Համիդը, այնպես էլ նրա անմիջական նախորդները հայերին վերաբերվում էին հանդուրժողաբար և արդարամիտ... այդ հավատարիմ ազգը, հրահրվելով ռուսական գործակալների և ամերիկյան միսիոներների կողմից, պահանջում էր անկախություն՝ Բեռլինում իրեն ներկայացնելով որպես հալածվող ժողովուրդ»: Հայկական ամբողջ չարժումը «հեղափոխական քարոզչության արդյունք էր»: Իսկ Աբդուլ Համիդը «Հայկական հարցին մոտենում էր ոչ թե որպես բանական մարդ, այլ վախի ազդեցության տակ խելագարվել էր»[200]:*

*Նշենք, որ համազգային ապստամբության մասին հայտարարություններն ու ծրագրային դրույթները խնդիր ունեին պետությունների ուշադրությունը բևեռելու արևմտահայության դժոխային կացության վրա, որպեսզի դրսի հարկադրանքով սուլ-*

---

[198] Macler F., *La Nation Arménienne: Son passé: Ses malheurs.* Paris, 1923, p. 44.

[199] Թումանյան Հովհ., *Երկերի ժողովածու (եժ)*, հ. IV, Երևան, 1951, էջ 226:

[200] Huslip J., *The Sultan, The Life of Abdul Hamid II*, London, p. 147.

թանը բարենորոգումներ մտցներ: Բացի դա, հայկական ապստամբությունը անիրականալի երազ էր. մահմեդականների ծովում թվնամական տարրերով չրջապատված հայերի ապստամբական ամեն մի փորձ դատապարտված էր և հղի կործանարար հետևանքներով: Այդ էր պատճառը, որ արևմտահայության չրջանում համազգային ապստամբության գաղափարը լայն տարածում չունեցավ: Հայը գերադասեց պայքարի պարտիզանական-ինքնապաշտպանական եղանակը: Գուցե Հայկական չարժման երրորդ չրջանում անկախության հարցը առաջին պլան մղվեր, սակայն դա տեղի չունեցավ, քանի որ 1894-96թթ. սուլթանական վարչակարգը հայերին այնպիսի ծանր հարված հասցրեց, որ նրանք երկար ժամանակ ուշքի չեկան և չկարողացան վերանայել իրենց մոտեցումները:

Այնուամենայնիվ, հայերի երևակայական-անկախական-ապստամբական դիտավորությունները սուլթանը պատրվակ դարձրեց թուրք հասարակությանն ահաբեկելու, հակահայ հիստերիա բորբոքելու և այդ օգտագործելու հայերի զանգվածային կոտորածների իրականացման համար: Նման կողմնորոշումը պայմանավորված էր նաև այն բանով, որ թե՛ Բեռլինի կոնգրեսում և թե՛ դրանից հետո Բ. Դուրը հայկական նահանգներում բարենորոգումների խնդիրը կապում էր այդ նահանգներում հայ ազգաբնակչության թվի հետ՝ ձգտելով ապացուցել, որ հայերն ազգաբնակչության չնչին տոկոսն էին կազմում: Եվ տեսնելով, որ նման հարցադրումը եվրոպական տերությունների հակահարվածին չի արժանանում, Բ. Դուրը, մի կողմից՝ վիճակագրական տեղեկագրերում հետևողականորեն կեղծում, նվազեցնում էր հայերի թիվը, իբր նրանք կազմում էին Արևմտյան Հայաստանի բնակչության 17%-ը, մյուս կողմից՝ ամեն ինչ անում էր իրականում էլ այդ թիվը հասցնելու 17%-ի, ինչը գործնականում կհանգեցներ ոչ միայն հայերի համար հատուկ բարենորոգումների ավելորդությանը, այլև Հայկական հարցի անհետացմանը:

*Եվ գործի դրվեցին բնաջնջման միջոցները:*

***Հայոց ցեղասպանության պարբերականացման խնդրի շուրջ.*** — Հայոց ցեղասպանությունն իրագործվել է շուրջ 50 տարի և կոտորածների բնույթով ու իրականացման եղանակներով բաժանվում է երեք չրջանի.

*Առաջին չրջան. 1880-1909թթ., երբ հարստահարություններից ու ազգային վայրագ հալածանքներից անցում կատարվեց ցեղասպանության: Կոտորածներն իրականացվեցին տեղերում, առանց բռնագաղթի, որը հայերի համար դիմադրության հնարավորություն ստեղծեց և թույլ չտվեց ջարդարարությունը վերածելու համընդհանուր բնաջնջման: Կոտորածների գլխավոր գործիքը քրդերն էին, մասնավորապես համիդիե գնդերը: Ջորքն ու ոստիկանությունը օժանդակող, քաջալերող դեր էին խաղում:*

*Երկրորդ չրջան. 1909-1917թթ., երբ անցում կատարվեց լրիվ բնաջնջման քաղաքականության՝ օգտվելով Առաջին աշխարհամարտի ընձեռած հնարավորությունից: Այս չրջանում բնաջնջումը նախապատրաստվեց ու իրականացվեց բազմակողմանի ու հիմնավորապես: Նախ, բանակ զորակոչեցին 17-55 տարեկան տղամարդկանց՝ մոտ 300 հազ. մարդ, և ոչնչացրին: Ապա, բանակի կարիքները հոգալու պատրվակով, խլեցին հայ բնակչության մոտ եղած զենքերը և հիմնավորապես թալանեցին հայերին, ժամանակավորապես ռազմաճակատից հեռու ընկած վայրերը տեղափոխելու անվան տակ հավաքեցին ու թաքուն ոչնչացրին հայ մտավորականությանը, քաղաքական և հոգևոր գործիչներին: Իրականացրին բռնագաղթ, որի սկզբում տեղահանվածներից զատեցին տղամարդկանց ու սպանեցին: Բռնագաղթողների քարավաններին, որոնք հիմնականում կազմված էին երեխաներից, կանանցից, հիվանդներից ու ծերերից, կա՛մ ճանապարհին ոչնչացրին, կա՛մ էլ բնական ու նաև արհեստականորեն ստեղծված ծանր պայմաններում զոհ դարձրին համաճարակներին, քաղցին ու բռնություններին: Տեղահանվածների մի մասը հասավ արաբական անապատներ ու ոչնչացվեց այնտեղ: Ցեղասպանության գլխավոր գործիքը մահմեդական խուժանն էր՝ միավորված Ներքին գործերի նախարարությանը կից ստեղծված և Թիհհադի պարագլուխների կողմից ղեկավարվող Հատուկ*

*կազմակերպության մեջ: Ջեթեները, քրդերը, թուրք բնակչությունը, զորքն ու ոստիկանությունը իրականացրին բնաջնջումը:*

*Երրորդ շրջան. 1918-23թթ., երբ անցում կատարվեց թուրքիզմից պանթուրքիզմի նպատակադրումների իրականացմանը: Կոտորածները դուրս եկան կայսրության տարածքից ու իրենց մեջ առան Անդրկովկասը: Այսինքն՝ եթե առաջին երկու ժամանակաշրջանները խնդիր էին հետապնդում բնաջնջել արևմտահայությանը և սեփականացնել նրա հայրենիքը, ապա երրորդ շրջանը ոչնչացնել կովկասահայությունը, վերացնել «հայկական սեպը» և տարածքային միջանցք ստեղծել Արևելքի թուրքական ժողովուրդների հետ կապի համար: Եթե կայսրության ներսում տեղի էր ունենում հայերի որս, այսինքն՝ հայտնաբերվում ու ոչնչացվում էին հանգամանքների բերումով եղեռնից փրկվածները, ապա Անդրկովկասում իրականացվում էր զանգվածային կոտորած, հիմնականում պատերազմական գործողությունների շրջաններում: Ոչնչացնող հիմնական ուժը թուրքական բանակն էր, որին օգնում էին թուրք սպաների ղեկավարությամբ կազմավորված ու վարժեցված ադրբեջանական հրոսակախմբերը: Հայերի բնաջնջման միջոց դարձան նաև հայ-ադրբեջանական ընդհարումները, որոնք հրահրվում էին թուրքերի կողմից: Վերջիններս բոլոր միջոցներով օգնում էին ադրբեջանցիներին: Բնաջնջման միջոց էր նաև հայ երիտասարդությանը տաժանակիր աշխատանքի ուղարկելը Թուրքիայի խորքերը, որտեղ նրանց մեծ մասը ոչնչացվեց:*

*Այս շրջանում իրականացվեց նաև Կիլիկիայի հայության բնաջնջումը:*

*Առաջին շրջանի գործողություններն արտաքուստ ցեղասպանության տպավորություն չէին թողնում և մասամբ չարունակություններն էին նախորդ տասնամյակներում տեղ գտած բռնությունների: Դրանք են՝ թուրք, քուրդ և մահմեդական մյուս տարրերի ասպատակություն, հարձակում հայկական բնակավայրերի վրա, թալան, ավերմունք, հրդեհ, սպանություն, առևանգում, մահմեդական ազգաբնակչության հարձակումներ հայ բնակչության վրա ու կոտորածներ, հայդուկներին, ինքնապաշտպանական խմբերին, հայերի խաղաղ ցույցերը ցրելու պատրվակով կոտորածներ ոչ միայն քուրդ և թուրք ազգաբնակչության, այլև զորքի ու ոստիկանության միջոցով, բռնություններ, կոտորածներ, որոնք իրականացնում էին իշխանության ներկայացուցիչները հարկերի հավաքման, ինչպես նաև հայ-քրդական, հայ-չերքեզական բախումների ընթացքում:*

*Ճշգրտման կարիք ունի այն անվերապահ պնդումը, թե «Ցեղասպանությունների իրականացման գլխավոր հեղինակները միատարր քաղաքական կուսակցություններն են»[201]: Եթե անգամ Հայոց ցեղասպանությունը հանգեցվի Մեծ Եղեռնին, ապա այս հարցադրումը անվերապահ ընդունել չի կարելի: Ժամանակակից չատ հայ և այլազգի պատմաբանների, նկատի ունենալով 1915-16թթ. բնաջնջման ծավալներն ու համապարփակ բնույթը, գտնում են, որ Հայոց ցեղասպանությունը միայն Մեծ Եղեռն է, իսկ այն, ինչ կատարվեց 1894 և, մասնավորապես՝ 1895-96թթ., պարզապես զանգվածային ջարդեր էին:*

*Բնականաբար հարց է ծնվում՝ որո՞նք են զանգվածային ջարդերի ու ցեղասպանության տարբերությունները: Եթե խոսքը վերաբերում է 1894-96-ի և 1914-1923-ի ջարդերին, ապա տարբերությունները երկրորդական էին:*

*Նախ՝ երկու դեպքում էլ ջարդերի տեսական հիմքը թուրքիզմն էր, երկրորդ՝ սխալ է պնդումը, թե թուրքիզմը պանթուրքիզմի տարատեսակն է: Ընդհակառակը, թուրքիզմը հիմքն է՝ տեսության հիմնահարցերի կրողը, որ նշանակում էր Թուրքիայի թուրքացում: Դա նշանակում էր, որ ձևավորվող թուրք ազգը ձգտում էր ունենալ ոչ թե կայսերական կոնգլոմերատ, այլ ազգային պետություն և այդ պետությունը պետք է լիներ Փոքր Ասիայում: Սակայն, կրկնում ենք, բանն այն էր, որ անգամ Անատոլիայում թուրքերը ազգաբնակչության մեծամասնություն չէին կազմում: Եվ ոչ թե երիտթուրքերը, այլ Աբ-*

[201] **Մաթոսյան Տ.**, նշվ. աշխ., էջ 7:

դուլ Համիդ 2-րդը հեղինակեց Թուրքիզմի տեսությունն ու քաղաքականությունը: Այդ քաղաքականությունը ձևակերպում ստացավ Բեռլինի կոնգրեսից հետո:

Ժամանակն այնպիսին էր, որ Օսմանյան կայսրության կազմում ոչ մահմեդական ժողովուրդներից մնացել էին հայերը, հրեաները, հույներն ու դրուզները՝ որպես ամբողջական ազգեր: Եվ իրականացվեցին դրանց հալածանքներն ու ջարդերը: Մասնավորապես տուժեցին դրուզներն ու հայերը: Սկզբում գործողության մեջ դրվեց Զուլումի քաղաքականությունը, որ խնդիր ուներ տնտեսական, քաղաքական, ազգային-մշակութային հալածանքների, հարստահարությունների ու նաև սպանությունների միջոցով հարկադրել ոչ մահմեդականներին ուծանալ կամ հեռանալ կայսրությունից: Այս քաղաքականությունն արդյունքներ տվեց՝ հայերը զանգվածաբար հեռանում էին արտասահմանյան երկրներ, որի հետևանքով սկսեց ձևավորվել հայկական սփյուռքը, զանգվածային բնույթ ստացան ջարդերը, միմյանց չհանդուրժող առճակատման վերածվեցին հայ-քրդական հարաբերությունները:

Սակայն Զուլումի քաղաքականությունը հայերի դանդաղ մահացման միջոց էր, իսկ սուլթանն անհամբեր էր: Եվ նա որոշեց հայերին դանդաղ մեռցնելուց անցնել նրանց զանգվածային բնաջնջման քաղաքականության:

Սուլթանը ծրագրել էր կայսրության 2,7 միլիոն հայերի չուրջ 1/3-ը ոչնչացնել, նույնքանի էլ արտաքսել: Ջարդերը սկսվեցին մայրաքաղաքից՝ Կ. Պոլսից, երբ նախապես հավաքագրված թուրք ամբոխները սոֆթաների ղեկավարությամբ Բաբը Ալիի հրապարակում և հարակից թաղերում ջարդեցին հայ խաղաղ ցուցարարներին, ապա անցան Տրապիզոն ու արյան մեջ խեղդեցին տեղի հայերին: Դրանից հետո ջարդերի ալիքը տարածվեց կայսրությունով մեկ: Սակայն ոչնչացվեց սուլթանի պլանավորածից երեք անգամ պակաս հայ, որովհետև —

ա) 90-ական թվականներին արևմտահայության մարտական ոգին դեռևս փչրված չէր և նրանք ջարդարարներին հակահարված տվեցին գրեթե ամենուրեք:

բ) Ջարդերը տեղի ունեցան առանց տեղահանման, բնակավայրերում, ինչը հայերին հնարավորություն տվեց իրենց քարաշեն տները վերածել պաշտպանական ամրությունների ջարդարարների ճանապարհին:

գ) Ջարդերը հիմնականում հանձնարարված էին քրդերին, ովքեր գերդասում էին հայերին ոչ թե սպանել, այլ թալանել:

Ասվածից հետևում է՝ 1894-96թթ. զանգվածային ջարդերը ցեղասպանություն էին՝ պլանավորված սուլթանական պալատի և իրականացված վերջինիս ձևավորած ռազմական ուժի կողմից: *Դա ցեղասպանություն էր, Մեծ եղեռնի նախերգանքը և որոշ առումներով նաև նրա սկիզբը:* Բայց ի տարբերություն Մեծ եղեռնի՝ այն խնդիր ուներ իրականացնել հայերի ոչ թե ամբողջական, այլ մասնակի բնաջնջում և հայերի թիվը նվազեցնել ոչ միայն զանգվածային կոտորածների, այլև կայսրությունից նրանց արտամղման և ուծացման միջոցով:

Որ սկսած 1880 թվականից արևմտահայության հանդեպ կիրառվում էր ցեղասպան քաղաքականություն, վկայում է նաև այն, որ հայկական կոտորածներն իրենց բնույթով ամբողջովին տարբերվում էին մյուս ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող գործողություններից: Եթե վերջինները ճնշման, ահաբեկման գործողություններ էին, ապա առաջինները՝ բնաջնջման: Եթե մյուս փոքրամասնությունների պարագայում կիրառվում էին միջոցներ անջատողական շարժումները ճնշելու համար կամ տեղի էին ունենում ազգամիջյան բախումներ, որոնք ուղեկցվում էին զանգվածային սպանություններով, հայկականի դեպքում առաջին պլանին դրվեց կայսրության լինել-չլինելու գործում հայերի վտանգավոր դերի խնդիրը, նաև իսլամական գործոնն ու պանիսլամական ծրագրերի իրականացման ճանապարհին հայերի խոչընդոտ լինելու պատրվակը: Մահմեդական հասարակության աչքում հայը պետական խողովակներով

վարկաբեկվում էր, ներկայացվում որպես մահաբեր բացիլ, որից փրկվելու ելքը մեկն էր՝ ոչնչացնելը:

Աբդուլ Համիդը հայերին անվանում էր «ապուշացող համայնք», «հավերժական ստրուկներ», ովքեր չնայած մեծ հարստություններ էին կուտակել իսլամ ժողովրդի հաշվին, զբաղեցնում էին պետական պաշտոնների 1/3-ը, խուսափում էին հարկ վճարելուց, բանակում չէին ծառայում, երբ մահմեդական երիտասարդները զոհվում էին հանուն օսմանյան հայրենիքի:

Նա հայերի հալածանքներին տալիս էր «քրիստոնեական աշխարհի ոտնձգությունների դեմ» պայքարի բնույթ, սադրելով, թե «կայսրությունը մշտապես բախվում է քրիստոնեական աշխարհի թշնամական գործողություններին»:

Հայկական հարցում զիջելը նա համարում էր քայլ, որը կայսրությանը զրկելու էր ոչ միայն «վերջավորություններից, այլև աղիներից» ու նրան մահվան էր դատապարտելու: Եվ նա հայերի դեմ հարձակման անցավ ամբողջ ճակատով: «Հավատարիմ ազգը» կնքվեց նոր պիտակով՝ «դավաճան ազգ»: Պետական հիմնարկները «մաքրվում էին» հայ պաշտոնատարներից: Մահմեդական բնակչությանը զենք բաժանեցին և գործողության մղեցին՝ վստահեցնելով, թե «պետությունը կանգնած է նրանց թիկունքին»: Հայերին սպանողները ոչ թե պատժի, այլ խրախուսանքի էին արժանանում: «Այսպիսով,– գրում է թուրք պատմաբան Թ. Ակչամը,– ի տարբերություն քրիստոնյա մյուս ժողովուրդների, հայերի կոտորածները կրում էին իշխանությունների կողմից ղեկավարվող և կազմակերպվող բնույթ... Հայերի վրա հարձակումներն ու նրանց կոտորածները օգտագործվում էին մահմեդական բնակչության վրա պետության ազդեցությունն ուժեղացնելու համար»:

Ա. Ջոպանյանը ևս հայերի կոտորածները համարում էր պետական քաղաքականություն՝ նշելով, որ այդ երևույթը նորություն ու զուտ թուրքական չէր: «Ասորի թագավորները,– նկատում է նա,– հպարտությամբ են սեպագրերում արձանագրում, թե ընդվզած այսինչ ցեղին լրիվ կոտորել են»: Թուրքերը Ղարդերի քաղաքականություն իրականացրել էին կայսրության ձևավորման առաջին տարիներից սկսած: Դրա պատճառը նրանց փոքրաթիվությունն ու բարբարոսությունն էր: Ապա կոտորածներն օգտագործվեցին «հպատակ ժողովուրդներին ահաբեկելու», ինչպես նաև ուժ ցուցադրելու համար: Եթե այս կամ այն հպատակ ժողովրդի թիվը թուրքերին անհանգստացնում էր, «սպանում կամ մահմեդականացնում էին, որն այլ բան չէր, եթե ոչ կոտորածի տարատեսակ»[202]: Աբդուլ Համիդը հայերի կոտորածներով նաև մի քանի խնդիրների լուծում էր հետապնդում՝ Արևմտյան Հայաստանում նվազեցնել հայերի թիվը, վերջիններին ահաբեկել, խեղդել ծայր առնող ազգային շարժումները:

Իթիհադը, բացի նշվածներից, ծրագրեց ու իրականացրեց Ղարդերի քաղաքականության գերագույն եղանակը՝ ամբողջական բնաջնջումը: Որոշվեց Հայկական հարցը վերջնականապես թաղելու համար լրիվ ոչնչացնել արևմտահայությանը: «Եկել էր ժամանակը,– գրում է Թ. Ակչամը,– երբ երիտթուրքերը հանգեցին եզրակացության, որ իրենց չի հաջողվի Հայկական հարցը լուծել աստիճանաբար և անհրաժեշտ էր «արմատական լուծում»: Իսկ դա ուղղակի կամ անուղղակի կապված էր «մեծ կայսրություն վերստեղծելու երազանքի կրախի հետ»[203]:

Հայերի ամբողջական բնաջնջման մեղքը միայն երիտթուրքերի վրա բարդելը նորություն չէ: Այդ կարծիքը ծնունդ առավ դեռ մինչև Մուդրոսը: Սակայն այն անզոր է պատասխանելու մի շատ պարզ հարցի՝ հայերի ցեղասպանության քաղաքականության հիմնադիրը սուլթան Աբդուլ Համիդ 2-րդն է, երիտթուրքերն այդ քաղաքականությունն հասցրին հանգուցալուծման, իսկ Մ. Քեմալի վարչակարգը կիրառեց երիտթուրքերի

---

[202] ԳԱԹ., Ֆ. Ջոպանյան Ա., բ. VIII, մաս II, գ. 3062:

[203] Акчам Т., *Турецкое национальное "Я" и Армянский вопрос*, Москва, 1995, стр. 47.

«գործն» ավարտելու քաղաքականությունն: Արդ, ինչո՞վ բացատրել, որ իրարու հակոտնյա երեք վարչակարգերը Հայկական հարցի լուծման բնաջնջման ուղին ընտրեցին: Բացատրությունը մեկն է՝ հայերի ցեղասպանությունը ոչ թե այս կամ այն քաղաքական ուժի, վարչակարգի, այլ թուրքերի ազգային պետական քաղաքականությունն էր: Դրանով է նաև բացատրվում այդ քաղաքականության «երկարակեցությունը»:

Ինչ վերաբերում է աշխարհակալ կայսրության վերստեղծման երազանքի ձախողմանը, ապա այն չէր կարող հայկական ցեղասպանության պատճառ դառնալ: Իսկ պատերազմական անհաջողությունները գուցեև արագացրին հայերի բնաջնջումը, բայց ոչ երբեք հանդիսացան գլխավոր պատճառը թուրքերի զանգվածային վանդալիզմի համար: Կոտորածները սկսվել էին մինչև Սարիղամիշի ճակատամարտում նրանց պարտությունը և տեղի ունեցան ոչ թե Կ. Պոլսում, այլ Ալաշկերտում, Բաշկալեում, Վասպուրականում, Բասենում: Սարիղամիշի ճակատամարտի նշանակությունը բոլորովին այլ էր. այն ժամանակավորապես թաղեց պանթուրքիզմի ծրագրերը: Բանն այն է, որ որքան խորանում էին կայսրության կործանման պրոցեսները, այնքան աճում էր հետաքրքրությունն այդ ծրագրերի նկատմամբ: Օսմանյան և իսլամական հասարակություն ստեղծելու միջոցով կայսրության ամբողջականությունն ապահովելու քաղաքականության ձախողումից հետո թուրքերի հայացքը սևեռվեց Արևելք, Արևելքի օգուզական ցեղերը՝ նրանց մոտ ու նրանց հետ միասին վերածնելու թուրքական մեծ կայսրությունը[204]:

* * *

Պարսիկ գիտնական Ռայիի տվյալներով՝ 1876-1919 թվերին Թուրքիայում կազմակերպվել է հայերի 24 զանգվածային ջարդ, որին զոհ է գնացել 2237027 մարդ: Մի եվրոպացի ծաղրում է. «...Նեղիբ փաշան 1840 թվին, Բեդըր խանը՝ 1850-ին, Խուրշուդ փաշան՝ 1860-ին, Շևքեթ փաշան՝ 1876-ին և Զեքի փաշան՝ 1894-ին հետևողականորեն աշխատեցին թուրքական կայսրությունը քրիստոնյա բնակչության ավելցուկից ազատելու պարկեշտ ու մարդասիրական խնդիրը լուծելու համար»[205]: Ընդ որում, յաթաղանը գործում էր ոչ միայն ապստամբ, այլև ոչ մահմեդական խաղաղ բնակչության՝ կանանց, երեխաների, ծերերի վրա, և Բ. Դռան կողմից կնքված էին «խռովարարներ» պիտակով:

Կոտորածների ձեռագրերը նույնն էին: «Իր գոյության բոլոր ժամանակներում,– նկատում է Ե. Ա. Ֆրիմանը,– թուրքական տիրապետությունը... եղել է դաժանության, ուխտադրժության և կոպիտ ուրքերի տիրապետություն: Դա կառավարում չէր, այլ կազմակերպված թալան»[206]:

«Ավազակախումբը,– գրում է Նորմանը,– հարձակվեց կարճուտ գյուղի վրա: Կանանց բռնաբարեցին, իսկ աղջիկներին տարան սարերը: Մտնելով եկեղեցին՝ այրեցին Աստվածաշունչն ու սրբազան նկարները և խորանին դնելով մեռոնի ամանը, հերթով այն պղծեցին... Վանի չրջանում թալանեցին Շահբաբջի և Ադնագանձ գյուղերը, ապա իրենց հետ տարան բոլոր տղաներին ու աղջիկներին... Եկեղեցիները թալանեցին ու պղծեցին, գերեզմանները բացեցին... Հացը, որ չկարողացան հետները տանել ոչնչացրին, իսկ բնակիչներին մերկացնելուց հետո դաշտ տարան, որտեղից նրանք սարսափով տեսան իրենց տները բոցերի գրկում»[207]:

---

[204] *The Independent*, January, 1984.

[205] *Положение армян в Турции...*, стр. 3.

[206] Նույն տեղում, էջ 300:

[207] Նույն տեղում, էջ 291-292.

*Ջ. Բրայսը Հայաստանում թուրքերի տիրապետությունն անվանեց «կազմակերպված ավազակություն, օրինականացված սպանություն և վարձատրվող անբարոյականություն»*[208]:

*Պատմական գրականության մեջ կարելի է հանդիպել Հայոց ցեղասպանության բնույթի, պատճառների, հետևանքների տարբեր գնահատականների: Նույնիսկ այն անվանվում է հերոսական ինքնապաշտպանություն: Մեր ժողովրդի 1990-ական թվականների ծանր կացությունը, իհարկե, թելադրում էր դիմել անցյալի ոգևորիչ իրադարձությունների օգնությանը: Սակայն հասցեն հարկ էր ճիշտ ընտրել: Հայոց ցեղասպանությունը դրա համար ճիշտ հասցե չէ: Ոգեշնչվենք Վարդանանց պատերազմով, Սարդարապատով, բայց ոչ երբեք Մեծ Եղեռնով: Ով ցեղասպանությունն անվանում է ինքնապաշտպանություն, նրա համար գլխավորը ոչ թե մեզնից դուրս ու մեր կամքից անկախ գոյություն ունեցող երևույթի էության ըմբռնումն է, այլ անցողիկ, թեթևամիտ չհաշվումն ու ինքնատիպ երևալու մարմաջը: Ցեղասպանությունը բազմադարյա պատմության ընթացքում հայ ժողովրդի կրած ամենածանր ու ամենանվաստացուցիչ պարտությունն է: Այո, այն պարտություն է՝ ռազմական, քաղաքական և բարոյական զարհուրելի պարտություն: Իհարկե, օգտակարությունից զուրկ չեն (նույնիսկ ավելի կարևոր են) նաև պարտության դասերը: Մենք մինչև օրս ցեղասպանությունից մի դաս ենք քաղել՝ թուրքերը հայասպան, հայակեր ցեղ են, և դրա համար էլ հայ ժողովրդի հարցերի հարցը թուրքական վտանգից պաշտպանվելն է: Նման եզրահանգումը պատահական չէ, քանի որ մինչև օրս էլ եղեռնը բացատրվում է միմիայն թուրքական գաղափարախոսություններով և թուրքերի բարբարոս հակումներով: Ուշադրությունից դուրս են թողնվում հայերի, նրանց քաղաքական կազմակերպությունների գործունեությունն ու վարքագիծը: Տպավորությունն հետևյալն է՝ թուրքերը որոշել էին հայերին կոտորել ու կոտորեցին, և հայերն էլ, անմռունչ, գլուխները մեկնեցին յաթաղանին:*

*Ինչո՞վ բացատրել, որ առաջին խոշոր ցեղասպանության զոհը դարձավ հայ ժողովուրդը: Լոկ թուրքերի այլամերժությա՞մբ, մոլեռանդությա՞մբ, բարբարոսությա՞մբ և կամ խոշոր պետությունների չհամոզությա՞մբ ու դավաճանությա՞մբ:*

*Այդ ամենը, իհարկե, եղել է: Սակայն նախախնամությունն իր արարածներին աշխարհ է նետում ոչ թե հույսով, որ նրանց ինչ-որ ուժեր կպաշտպանեն, այլ որ ամեն էակ, որքան էլ թույլ լինի ու ծանր վիճակում, իր մեջ ուժ գտնի գոյատևելու, ապրելու իր իրավունքը հաստատելու: «Ամեն մի ժողովուրդ,– գրում է Հ. Թումանյանը,– ինչքան էլ ռայա լինի (որ հոտ կնշանակի) բաղկացած է կենդանի մարդկանցից, հորից, մորից, քրոջից, եղբորից, ամուսնուց, որդուց... դրանք հավիտյան չեն կարող տանել թե՛ իրենց և թե՛ իրենց հարազատների տանջանքն ու անպատվությունը: Մարդկային... համբերությունը, ինչքան էլ մեծ լինի, մի սահման ունի»*[209]:

*Ճիշտ է, բնաջնջման վտանգի գնահատման գործում հայ հասարակությունը միակարծիք չէր, սակայն թե՛ 1894-96 թվերի կոտորածների դասերը, թե՛ Ադանան և թե՛ մանավանդ Բալկանյան պատերազմից հետո ստեղծված կացությունը ոչ միայն հուշում, այլև աղաղակում էին, որ թուրքական կառավարությունը նախապատրաստական լուրջ աշխատանքներ է տանում հայերին բնաջնջելու համար: Այդ մասին ուղղակի վկայություններ կային ժամանակի հայ, օտար, անգամ թուրքական մամուլում: Եվ տարակուսանք է հարուցում այդ ահազանգի նկատմամբ պոլսահայ ջոջերի վերաբերմունքը: Երիտթուրքական հեղաշրջումից հետո նրանց նախաձեռնությամբ ու ջանքերով ցրվեցին ու կազմալուծվեցին հայդուկային ու ինքնապաշտպանական խմբերը: Ազգաչունչ աղմուկ, Գրերի գյուտի, Վարդանանց պատերազմի և ուրիշ տարելիցների չդնդալից տոնակատարություններ, հայ անկախ պետականության ուրվականի առաջ ցուցադրական*

---

[208] *Братская помощь пострадавшим в Турции армянам,* Москва, 1897, отд. 2, стр. 14.

[209] **Թումանյան Հովհ.**, *Եր.*, հ. IV, էջ 221:

ծնրադրումներ: Այն պահին, երբ յաթաղանն արդեն ճոճվում էր օդում՝ հայի գլխավերևում, ժողովրդից պահանջեցին զինաթափվել, զենքերը հանձնել իշխանություններին: Ինչո՞ւ: Չէ՛ որ կոտորածներից փրկվեցին միայն նրանք (Վան, Զեյթուն, Ուրհա, Մուսալեռ, Սասուն), ովքեր զենքով հաստատեցին իրենց ապրելու իրավունքը:

Ի՞նչ ցույց տվեց Սասունի օրինակը: 1915-ին, քանի դեռ Ռ. Տեր-Մինասյանի գլխավորած հայդուկային խումբը չէր ծլկել, սասունցիները, կառչած Անդոկի ժայռերին, դիմադրում էին ու զոհվում, բայց զոհվում մարտնչելով, զոհվում թշնամուն հակահարված տալով: Իհարկե, կոտորածների ընթացքում հայերի խիզախության, հնարամտության, անձնազոհության բազում փաստեր են արձանագրվել: Բայց դա սպանդանոց տարվողի ընդդիմություն էր, խեղդվողի ճիչ և ոչ թե գիտակցված ու կազմակերպված դիմադրություն: Սա պատմության հազվադեպ դեպքերից է, երբ միանգամայն մարտունակ և ապրելու իրավունքի համար պայքարին պատրաստակամ մի ժողովուրդ զոհ գնաց ոչ միայն ցեղասպանի յաթաղանին, այլև սեփական ազգային պարագլուխների, քաղաքական առաջնորդների անլրջությանը, նրանց անպատասխանատվությանը և անընդունակությանը՝ ժողովրդի անհատական ու խմբակային մաքառումները միավորելու յաթաղանի դեմ համազգային ինքնապաշտպանական պատերազմի: Եզրակացությունը մեկն է, եղեռնն ու դրա նահատակների հիշատակը պահանջում են ոչ թե լացուկոծ, ոչ թե անզորության, հուսալքության հաստատում, այլ քննադատական, ավելի ճիշտ՝ ինքնաքննադատական մոտեցում: Եվ դա ոչ միայն հանուն պատմական ճշմարտության, այլև, առաջին հերթին, հանուն մեր ժողովրդի այսօրվա և ապագայի անվտանգության: Հայն աշխարհի այն ժողովուրդներից է, որի գլխին մշտապես կախված է «լինել-չլինելու» հարցականը: Այսինքն՝ հարատևման ռազմավարության գերխնդիրն է ոչ միայն տվյալ ժամանակի իրադարձությունների, այլև պատմական փորձի ըստ ամենայնի արժեքավորումը: Հարկ է մեկընդմիշտ հրաժարվել դեռևս չրջանառության մեջ գտնվող հարցադրումից՝ ցեղասպանությունը ճակատագրական ողբերգությո՞ւն էր, թե՞ հայկական ընդվզումների հետևանք: Նույնիսկ այնպիսի հրեշավոր երևույթ, ինչպիսին ցեղասպանությունն է, հայ ժողովրդին մարդկության զարգացման օրինաչափությունների մայրուղուց դուրս նետել չէր կարող. հարատևում է այն ժողովուրդը, որն ի զորու է հաստատելու ապրելու իր ոչ միայն անկապտելի իրավունքը, այլև գլխավոր պարտականությունը: Նշանաբանի հրամայական ունեն Հ. Սվաճյանի խոսքերը. «Դարս ազգաց վերակենդանացման դար է, այս դարուս, այս տարիներուս մեջ ինքզինք չհոգացող ազգը կերթա ի կորուստ անդառնալի և ի կործանումն անկանգնելի...»[210]:

Սա է ելակետը, հարցերի հարցը:

Նահատակների հոգիների համբառնման ցոլքը մի պատվիրան ունի՝ դեն նետել ժողովրդի միտքը չղթայող կապանքները, հնարավորություն ստեղծել նրա անկաշկանդ մտածողության և հարատևելու վճռականության ծավալման համար, ոչ թե հետ նայել, այլ բոլոր միջոցներով, սկսած քաղաքական թվաբանության տարրական վարժություններից մինչև քվանտային մեխանիկայի բարդագույն խնդիրների լուծումը, ապահովել ազգի ֆիզիկական ու քաղաքական գոյության հավերժությունը: Ըստ այդմ էլ, անհրաժեշտ է հրաժարվել Հայկական հարց – ցեղասպանության ճանաչում – նյութական վնասների հատուցում – տարածքային պահանջատիրություն պարտադրված կապակցությունից, որի հանգուցակետը վերջին հաշվով, պահանջատիրությունն է: Թերևս հենց այս պատճառով են,– գիտակցաբար թե անգիտակցաբար,– խեղաթյուրվել ու այսօր էլ խեղաթյուրվում են այդ հասկացությունների իմաստն ու փոխառնչությունները:

Արևմտյան Հայաստանի անկախության, Հայկական թագավորության վերածնման գաղափարների հեղինակները արևմտահայերը չէին: Դրանք դրսից ներմուծվեցին և

---

[210] «Մեղու», 1860, թիվ 102:

*զենք դարձան ոչ թե հայերի ձեռքին ազգային-ազատագրական պայքարում, այլ թուրքերի ձեռքին՝ բնաջնջումն իրականացնելու համար:*

*Պահանջատիրությունը առաջ տանելու համար ցեղասպանության օգտագործումը ոչ միայն չի ապահովում խնդրի լուծումը, այլև խոչընդոտ է դարձել հենց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում: Ամենևին էլ պարտադիր չէ, որ պահանջատեր լինելու համար ժողովուրդն անպայման կոտորված լինի: Դրա համար քիչ չեն նաև բռնագաղթն ու հայերի զոհվելը (ու նաև՝ ոչնչացվելը), ինչը չեն ժխտում նույնիսկ երիտթուրքերը, անգամ գլխավոր հայասպանը՝ Թալեաթը:*

*Պահանջատիրությունը այսօր չի կարող պետական քաղաքականություն դառնալ: Ինչո՞ւ: Նախ, Հայաստանի Հանրապետությունն այն գործնական հողի վրա դնելու համար ո՛չ բավարար ուժ ունի և ո՛չ էլ հնարավորություն: Երկրորդ, Արևմտյան Հայաստանում հայ չկա, և պահանջատիրությունից առաջ հարկ է գոնե մասնակիորեն լուծել այդ խնդիրը, ինչի համար կպահանջվեն բազում տարիներ:*

*Քաղաքականությունը հնարավորությունների չհեկեկան օգտագործումն է, չահադիտություն, մաթեմատիկա, հաշվենկատություն և ոչ մի դեպքում՝ զգացմունք, հուզմունք, աղաչանք-պաղատանք: Ցեղասպանությունն այն երևույթներից է, որոնց որակավորումն իսկ քաղաքականություն է, այսինքն՝ դուրս է զգացմունքների ոլորտից: Ուստի գլխավորը ոչ թե եղեռնի նկարագրությունն է, թուրքական վայրագությունները ներկայացնելը, այլ ցեղասպանության պատճառների և հետևանքների գիտական խորը և անաչառ ուսումնասիրության հիմքի վրա գործնական քաղաքականության համար եզրակացությունների մշակումը:*

***Թուրքերի ազգային պետության ձևավորման գործընթացն ու Հայոց ցեղասպանությունը.*** *– Արդուլ Համիդը կտակել է. «Նզովք կդնեմ ինձ հաջորդող սուլթանների վրա... և նրանց կուխտեմ, որ մինչև բովանդակ աշխարհի երեսից իսլամության չնչումը պատերազմեն հայոց անկախության դեմ»[211]: «Մենք ուզում ենք բնակվել Անատոլիայում,– ասում էր նա,– և միայն այնտեղ պիտի լինենք: Փառք Աստծո, որ բոլոր կողմերից հալածված մեր ազգակիցներին ու հավատակիցներին գոնե այս վերջին ապաստարանը մնացել է»[212]:*

*Հենց այդ ժամանակ էլ թուրքական մամուլում սկսեց տեղ գտնել «Թուրքական Անատոլիայի» գաղափարը, որպես թուրքերի ազգային պետության օրրան՝ ընդգծելով, որ այն թուրքերից բացի ոչ մի այլ ժողովրդի չի պատկանում[213]: Դրանով են բացատրվում թուրքերի ճիգերը՝ իրենց ներկայացնելու Անատոլիայի բնիկներ: Ընդ որում, նրանք մեծ դժվարությամբ որոշ պահերի նույնիսկ հաշտվեցին Կ. Պոլիսն ու Ծովափնյա մյուս շրջանները կորցնելու մտքի հետ, սակայն Արևմտյան Հայաստանի հարցում մնացին անզիջում: Հայաստանը շատ համեղ պատառ էր: Թուրքն ասում է. «Աչխարհում՝ Վանը, անդրաշխարհում՝ դրախտը»: Այգեստանը համարում էին էլիսիոնի դաշտերի՝ հունական դիցաբանության ստորգետնյա դրախտի մանրակերտ: Անատոլիան համարում էին «պետության և ազգի ապագայի հույս», «թուրքերի սուրբ հայրենիք, թուրքական պետականության օջախ»[214]:*

*Իսկ իրականում ի՞նչ կատարվեց: Մինչև XIX դարի 60-70-ական թվականները Անատոլիան թուրքերի համար արհամարհված տարածք էր: Բոսֆորի ափերի պալատներում Անատոլիան համարում էին լոկ որպես հարկերի հավաքման ու բանակը սննդամթերքով ապահովելու աղբյուր: Հետո այդ տարածքը թուրքերի աչքում միանգամայն այլ նշանակություն ստացավ: Թուրքական մամուլն սկսեց գրել, թե Անատոլիայի հանդեպ ար-*

---

[211] **Սերոբյան Մ.**, *Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով*, Կահիրե, 1948, էջ 187:

[212] **Karal E. Z.**, *Osmanlı Tarihi. Cilt VIII*, Ankara, 1961, s. 62.

[213] **Kushner D.**, *The Rise of Turkish Nationalizm, 1878-1908*, London, 1977, pp. 37-43.

[214] **Karal E. Z.**, նշվ. աշխ., էջ 531:

*համարհական վերաբերմունքը կործանարար է ազգի համար: «Հասկանալի է,– գրում է Թ. Ակչամը,– որ Օսմանյան կայսրության սահմանների անկասելի կրճատվելը Փոքր Ասիան վերածեց... թուրք ժողովրդի վերջին օթևանի: Պատմական փորձը ցույց է տվել, որ ինքնորոշման համար մյուս ժողովուրդների պայքարն ուղղված էր թուրք ժողովրդի բուն գոյության դեմ: Անատոլիայի ոչ թուրք ժողովուրդները, արևելքում հայերն ու քրդերը, արևմուտքում հույները, պատրաստ էին ցանկացած պահի պայթեցնելու այդ հպարտ ժողովրդի վերջին ամրոցը»[215]: Բացարձակապես անհիմն պնդում է: Հայերն Անատոլիայի հանդեպ հավակնություն չունեին, նրանք ուզում էին մնալ իրենց հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, որն Անատոլիա չէ: Նույնքան անհիմն է նաև այն պնդումը, թե թուրքերը հայերին կոտորեցին, որովհետև պատերազմից հետո նորից բարձրանալու էր բարենորոգումների հարցը, որը «թուրքերի համար նշանակում էր վերջ իրենց բազմադարյան տիրապետության...», կամ «բարենորոգումների անխուսափելի հետևանքը լինելու էր Հայաստանի անջատվելը, ինչը հավասարազոր էր կայսրության կործանմանը» (Նաուման):*

*Ցեղասպանների դատապաշտպանների պնդումը, թե Անատոլիայի վրա կախված էր հայկական սպառնալիքը, հազիվ թե հավատացողներ ունենար, ուստի մեջտեղ բերեցին մի այլ փաստարկ, թե Անատոլիայում լայնածավալ ազգային դիմադրություն հնարավոր էր միայն այն դեպքում, եթե երկրամասի բնակչությունը միացեղ լիներ: Պատահական չէ, որ երիտթուրքերի գաղափարախոսները պատեհ առիթով պնդում էին, որ ժամանակակից պետություն հնարավոր է ստեղծել էթնիկական ընդհանրության առկայության պայմաններում: Միայն հայերի թիվը մինիմումի հասցնելը կվերացներ թուրքերի գոյությանը սպառնացող վտանգը: «Եթե մենք ցանկանում ենք հարատևել նշված տարածքներում,– ասում է Թալեաթը,– ապա պետք է ազատվենք օտարածին տարրերից»:*

*Թուրքական այս մտածողությունն ու քաղաքականությունը նկատի ունենալով՝ ամերիկացի գիտնական-լրագրող Հ. Գիբոնսը գրում է. «Հայերի կոտորածների ու բռնագաղթի բոլոր իրողությունները, որոնք տեղի ունեցան ամբողջ Թուրքիայում, կարելի է հետևանքը համարել Կ. Պոլսում մշակված հանձնարարականների պլանաչափ կենսագործման: Մենք կատարվածի ամբողջ պատասխանատվությունը պետք է դնենք Ստամբուլի թուրքական կառավարության անդամների վրա»[216]:*

*Թուրքիայի նախագահներից Ջելալ Բայարը վկայում է, որ մինչև Առաջին աշխարհամարտը կազմվել էր քրիստոնյաներին բռնագաղթեցնելու մանրամասն պլան: Նա հայերի գոյությունն այդ տարածքներում համարում է «մահացու վտանգ», դրա համար էլ «ինչպես կառավարությունը, այնպես էլ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն և ռազմական նախարարությունը մշակեցին պլան վտանգը վերացնելու համար»: Այդ հարցին նվիրված գաղտնի խորհրդակցություններ տեղի ունեցան, որոնց մասին անգամ կառավարության անդամները չգիտեին[217]:*

*Թուրք քաղաքական գործիչները միշտ էլ վախեցել են, որ քրիստոնյա ժողովուրդներն ինչ-որ ժամանակ տիրանալու էին Անատոլիայի այս կամ այն մասին: Ահա թե ինչու Անատոլիայի թուրքացումը դարձավ պետական քաղաքականության հարցերի հարցը: Իսկ Անատոլիան թուրքացնելու համար պահանջվում էր՝ նախ, Հայաստանը մաքրել քրիստոնյա, ռուսամետ տարրերից: Այդ նպատակով սկզբում «չտկումներ» մտցվեցին Կ. Պոլսի հայկական քաղաքականության մեջ, առաջին պլան մղվեցին հալածանքի, տնտեսական քայքայման և մահմեդական տարրերի ներմուծման միջոցով հայերին դուրս մղելու միջոցառումները, գործադրվեց հայերի զանգվածային թուրքացման ու մահմեդականացման քաղաքականությունը՝ չբացառելով նաև անհատական ու խմբակային կոտո-*

---

[215] Акчам Т., *նշվ. աշխ.*, էջ 111-112:

[216] Гиббонс Г. А., *Последние избиения Армении*, Петроград, 1916, стр. 25-26.

[217] *«Միլիեթ»*, 15.05.1984:

*րածները: Ջեռնարկված միջոցառումների հետևանքով հայերի թիվն ու մանավանդ տեսակարար կշիռը չեչտակի նվազեցին: Անելանելի կացության մեջ դրված հայը լքեց իր հայրենիքն ու հեռացավ: Գաղթօջախներ առաջացան ոչ միայն կայսրության արևմտյան ծովափնյա քաղաքներում, Թուրքիայի հարևան տարածքներում, այլև՝ հեռավոր երկրներում: Սակայն այդ քաղաքականությունը հաջողություն ունեցավ, բայց ոչ այնպիսի, ինչպիսին ակնկալում էր սուլթանը: Եվ նա, որոշելով «արագացնել» գործընթացը, կազմակերպեց զանգվածային կոտորածներ, միաժամանակ հետևողականորեն ուժեղացրեց հայամերժ տնտեսական, քաղաքական, բարոյահոգեբանական քաղաքականությունը: Սուլթանը նաև քաջ գիտեր, որ հայերի գոյությունն Անատոլիայում ռուսների համար բաց դուռ էր կայսրության արևելյան վիլայեթներին տիրանալու: Սակայն Աբդուլ Համիդ 2-րդը չհասցրեց հայերին լրիվ բնաջնջել: Այդ խնդիրը լուծեցին նրա հոգևոր զավակները՝ երիտթուրքերն ու քեմալականները:*

*Քեմալականներն անգամ դրանով չբավարարվեցին: Ներանց կարծիքով Թուրքիայի արևելյան սահմաններն աշխարհագրորեն պաշտպանունակ չէին, և պահանջվում էր «ճշգրտումներ մտցնել», ինչը հաջողվեց անել 1921թ. Մոսկվայի և ավելի ուշ Պարսկաստանի հետ կնքված պայմանագրերով: Թուրքիան, տիրանալով ամբողջ Հայկական Պարին, ձեռք բերեց հարձակողական ռազմավարության հնարավորություն: Եվ պատահական չէ, որ այդ «չտկումներից» հետո Արևմուտքի կողմից Մերձավոր Արևելքի և ԽՍՀՄ-ի (ներկայումս նաև Ռուսաստանի) դեմ մշակված ռազմավարական ծրագրերում մշտապես Թուրքիային հատկացվել է հարձակողական դեր. ԽՍՀՄ-ը (Ռուսաստանը) միշտ էլ հարկադրված էր Կովկասում ռազմական մեծ ուժեր պահել:*

*Այսպիսով, հայերի ցեղասպանությունը թուրքերի համար ռազմաքաղաքական խոշորագույն հաղթանակ էր, Օսմանյան կայսրության վերջին ու մեծ հաղթանակը:*

*Սակայն ցեղասպանությունը միայն հաղթանակ չէր: Հայերի բնաջնջումը դարձավ թուրքերի աքիլեսյան գարշապարը, որից նրանք ոչ մի կերպ ազատվել չեն կարողանում: Ժամանակին թուրք քաղաքագետներն «իմաստուն» քայլ էին համարում ի հակակշիռ հայերի՝ մահմեդական տարրերի, մասնավորապես քրդերի, ներմուծումը: Իրենց հաշվարկներում նրանք սխալվեցին: Հայի գոյությունը պարտադիր չէր դարձնում Արևմտյան Հայաստանի անջատումը Թուրքիայից, գործը կարող էր սահմանափակվել հայերին ինքնավարություն տալով: Դեռ Մ. Մաքքոլն էր գրում. «Ջնայած վերջ չունեցող անարդարություններին, հայերը սուլթանի ամենահավատարիմ հպատակները կլինեին, եթե նրանց տրվեր քիչ թե շատ տանելի կյանք: Հնարավոր է, որ նրանք հեռավոր ապագայում ազատագրվելու երազներ ունենան, բայց ներկայումս գերադասում են մնալ սուլթանի գերիշխանության տակ և միայն պահանջում են, որ ապահովվի իրենց կյանքի, պատվի, կրոնի և սեփականության անվտանգությունը»[218]:*

*Մինչդեռ քրդերի գոյությունը Արևմտյան Հայաստանում նշանակում էր անընդմեջ ու հարատև պայքար: 2-3 միլիոն հայերի հնարավոր էր հաշվեհարդարի ենթարկել, սակայն անհնար է նույնն անել Թուրքիայի ազգաբնակչության 30%-ը կազմող քրդերի հետ:*

*Ջնայած քրդերի տարբեր հատվածները միմյանցից բաժանված են պետական սահմաններով, աշիրեթական համակարգով ու մասնատվածության դարերով ձևավորված հոգեբանությամբ, սակայն այդ ամենն անցողիկ երևույթներ են՝ աշիրեթական համակարգն իր գոյության մնացորդներն է քարշ տալիս, ավարտվում է քուրդ ազգի ձևավորումը և համաքրդական ազգային գիտակցության ու շահերի բյուրեղացումը: Աչխարհում անհնար է գտնել մի ուժ, որն ի զորու լինի հավերժացնելու 35 միլիոնանոց ժողովրդի քաղաքական մասնատվածությունն ու անազատ վիճակը:*

---

[218] *Положение армян в Турции...*, стр. 177.

*Հայերի բնաջնջումը Թուրքիայի համար ունեցավ նաև աղետալի տնտեսական հետևանքներ: Մինչև կոտորածները հայկական նահանգները Օսմանյան կայսրության ամենաբարեչեն և զարգացած շրջաններից էին, իսկ հայերի բնաջնջումից հետո վերածվել են ամենաաղքատ ու ամենահետամնաց տարածքների, որոնք արտադրության մակարդակով ու ազգաբնակչության կենսամակարդակով 2-3 անգամ հետ են մնում արևմտյան նահանգներից: Պատճա՞ռը: Ահա թե ինչ է գրում Աբդուլ Համիդ 2-րդը. «Բոլոր չարիքների արմատն այն է, որ ոչ մի օսմանցի չի աշխատում և բարիքներ չի ստեղծում: Օսմանցին սովոր է պարոն լինել և աշխատանքն ուրիշներին թողնել... Նա ապրում է զվարճանալու համար... Մեր երիտասարդները կարծում են, թե իրենք այլ բանի ընդունակ չեն, բացի պաշտոնյա կամ, հարկ եղած դեպքում, ուլեմա դառնալուց: Ինչո՞ւ թուրքը չի կարող դառնալ նաև առևտրական, տեխնիկ և ունակ բանվոր»[219]: Ջէր կարող, քանի որ պատերազմներին ու պաշտոնավարությանը դարերով ընտելացած, հաշիշի ու հարեմների հեչտանքների մեջ կյանքը մսխած այդ ցեղն այլ բանի ընդունակ չէ:*

*Թուրքիան մինչև օրս չի կարողանում ազատվել նաև ցեղասպանության բարոյա-հոգեբանական հետևանքներից: Թուրք հայտնի հրապարակախոս Սուլեյման Նազըմի խոսքերով հայերի բնաջնջումը դարձավ «Թուրքիայի պատմության ամենասև էջը»: Դա հասկանում էին նույնիսկ երիտթուրք պարագլուխները: Տեղերն ուղարկված նրանց հեռագիր-ծածկագրերից մեկում կարդում ենք. «Ճեմիեթը (կուսակցության կենտկոմը) հայրենիքն այս անիծյալ ցեղի (հայերի) ճանկերից փրկելուն նպատակաուղղված գործողություններով օսմանյան պատմությանը քսվելիք արատի պատասխանատվությունն իր հայրենասիրական ուսերին վերցնելու որոշում է ընդունել»[220]:*

*Ցեղասպանությունը ոչ միայն թուրքական պետությանը, այլև թուրք ժողովրդին իջեցրեց մահմեդական խուժանի և բաշիբոզուկի, բարբարոսի ու ավազակի մակարդակի և այդ մակարդակից բարձրանալու թուրքերի ջանքերն էական արդյունք չեն տալիս: Ռուս հեղինակ Օ. Տիրկովան գրում է, թե օտարերկրացիների հետ հադիպելիս՝ Թալեաթն առիթը բաց չէր թողնում հանցագործի մեղայականությամբ կրկնելու՝ «Մենք բարբարոսներ չենք»: Թալեաթն ու նրա հաջորդները մշտապես ուրացել են, կոկորդիլոսի արցունքներ թափել, հասարակական կարծիքը չփոթեցնելու նպատակով կեղծել են ինչպես թուրք և հայ, այնպես էլ հարևան ժողովուրդների պատմությունը:*

*Երիտթուրքերն ամեն ինչ արեցին, որ ցեղասպանությանը մասնակից դառնար ամբողջ թուրք ժողովուրդը: Հանցագործն իրեն ավելի հանգիստ է զգում, երբ չուրջբոլորը հանցագործներ են: Երիտթուրքերի պարագլուխների դատավարության մեղադրական եզրակացությունում գրված է. «Քննությունով հաստատված է՝ ով չէր ցանկանում մասնակցել նշված ոճիրներին (կոտորածներին), համարվում էր հայրենիքի դավաճան»[221]: Ազգ-հանցագործի, ազգ-ջարդարարի հավաքականություն ձևավորելու ձգտումը թելադրված էր նաև հանցագործության ահռելի բնույթով ու ծավալներով, գործադրման սահմռկեցուցիչ եղանակներով ու պատմության դատաստանի առաջ պատասխանատվության սարսափով: Դժբախտաբար, թուրք ժողովուրդը հեշտությամբ զինվորագրվեց վայրագություններին: Իրավացի է Ա. Անտոնյանը, երբ գրում է. «Թուրք անունով ժողովուրդը տեսակ մը ջարդի մեքենա է, որն անողոք ու կամավոր հեզությամբ մը իր բարբարոս պաշտոնը կկատարե, ով որ ալ ըլլա զինքը վարող մեքենավարը: Այս անգամ իթթիհադականներն էին, անոնցմե առաջ Համիտն էր...»[222]:*

---

[219] **Նազճեան Գ.**, *Ապտիւլ Համիտ Բ.*, *կարմիր սուլթանը*, Բեյրութ, 1980, էջ 822:

[220] *«Հայացք Երևանից». Հայոց Մեծ Եղեռնի տարելիցին նվիրված հատուկ թողարկում*, Երևան, 1995, թիվ 3, **Հովհաննիսյան Ռ.**, *«80 տարիներ՝ հիշողություն ընդդեմ մոռացության»*, էջ 2-3:

[221] *Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի*, Երևան, 1989, էջ 112:

[222] **Անտոնյան Ա.**, *Մեծ ոճիրը*, Բոստոն, 1921, էջ 242; Երևան, 1990:

*Բ. Դուռը բացեիբաց կատարվածի մեղքը բարդեց մահմեդական ազգաբնակչության և հայերի վրա, անգամ հայտարարեց, թե հանձնաժողով է ուղարկվել դավառները հանցագործներին պատժելու համար[223]: Երիտթուրքերի դատավարության ժամանակ Գեոքալփն ասաց, թե կոտորածները հետևանք էին հայերի և թուրքերի միջև պատերազմի[224]: Երիտթուրքական այս հնարքը վերածվել է թուրքական պատմագրության համար «անժխտելի սկզբունքի»: Թյուրքայա Աթաոֆը իր «Համառոտ հայացք հայկական հարցին» գրքում գրում է. «1909թ. ապրիլի 14-ի դեպքերը հարավային Ադանա քաղաքում իսկապես «փորձ» էին մահմեդականների և հայերի միջև քաղաքացիական փոքր պատերազմի, որ տևեց երեք օր և հրահրվելով հետագայում հանգեցրեց փոխադարձ արյունահեղության»:*

*Ուրեմն Ադանայում ոչ թե հայերին ջարդում էին, այլ «քաղաքացիական փոքր պատերազմ էր», որը հետագայում վերածվեց «փոխադարձ արյունահեղության»:*

*Սա նոր մոտեցում չէր: Աբդուլ Համիդ 2-րդը առաջինն այն հրապարակ նետեց 1895թ., երբ Սասունի ջարդերը Եվրոպային ներկայացրեց որպես ազգամիջյան՝ հայ-քրդական, կռիվ: Օսմանյան քաղաքականության մեջ ընդհանրապես կարևորագույն սկզբունք էր՝ թշնամություն հրահրել հպատակ մահմեդական և ոչ մահմեդական ժողովուրդների միջև՝ դա համարելով կայսրության գոյության նախապայմաններից մեկը: Երիտթուրքերը ոչ միայն չարունակեցին ու խորացրեցին այդ քաղաքականությունը, այլև հիմք դարձրեցին հայերին մյուս հպատակ ժողովուրդներից մեկուսացնելու և անհնարին դարձնելու ցեղասպանության դեմ համատեղ պայքարը: Իթիհադին հաջողվեց հասնել այն բանին, որ հայկական ջարդերի ժամանակ ոչ մի հարևան ժողովուրդ հայերին օգնության ձեռք չմեկնեց: Մանավանդ, որ առկա էր վախը, ինչպես նաև հայերի ունեցվածքին տիրանալու գայթակղությունը:*

*Իհարկե թե՛ քրդերի ու արաբների և թե՛ անգամ թուրքերի մեջ եղել են անձինք ու խմբեր, ովքեր օգնել են հայերին, իսկ Դերսիմում այդ օգնությունը նշանակալից էր, հայերն օգնություն ստացան նաև արաբական որոշ գյուղերում, սակայն արյան օվկիանոսում նման օգնությունը լոկ կաթիլ էր ու ավելի շատ անհատական կամ խմբակային նախաձեռնություն էր, քան ազգային ու քաղաքական կողմնորոշում: Դա մեծ դյուրություններ էր ընձեռնում ցեղասպանության հեղինակներին, ովքեր անմիջապես չեզոքացնում էին «այլախոհներին»: Աչխատանքից հեռացվեցին հայերի հանդեպ լոյալ տրամադրված գործիչները՝ Անկարայի, Կաստամոնուի, Հալեպի վալիներ Մազհարը, Ռեշիդը, Ջելալը» Քյոթահիայի մութեսարիֆ Ալի Ֆայիքը և այլք:*

*Մեծ եղեռնի պատմության թուրքական կեղծարարությունները ի սկզբանե դարձան թուրքական պատմագրության թիվ 1 մտահոգությունը, որ չարունակվում է մինչև օրս: Կեղծարարությունները հասնում են զառանցանքների:*

*Թուրքական պատմական ընկերության նախագահը 2001թ. հոկտեմբերին ամեն կերպ ապացուցում էր, որ «տեղահանությունը» հայերի համար ձեռնտու էր: Նա գրում է. «Օսմանյան կառավարությունը վերաբնակեցումն իրականացրեց արդյունավետ և կարգուկանոնով... հայերի վերաբնակեցումը ներկա հարյուրամյակում ազգաբնակչության առաջին պլանավորված տեղափոխությունն էր, որն իրականացվեց բարձր կարգապահության պայմաններում»: Ըստ նրա՝ «ընդամենը 20000 հայ էր սպանվել ավազակների կողմից... որոշ թվով մարդիկ ճանապարհին մեռել էին քաղցից, նույն ժամանակ 30000 հոգի մահացել էին այնպիսի հիվանդություններից, ինչպիսիք էին տիֆն ու դիզենտերիան»: Այսպիսով, «56610 հայ դժբախտաբար մահացել է Առաջին աշխարհամարտում»[225]: Մինչդեռ իրադարձությունների ժամանակակից ու ականատես Ալի Ֆուադ էր-*

---

[223] **Ջաւէն** *Արքեպս. Պատրիարքական Ցուշերես*, Գահիրէ, 1947, էջ 167:

[224] **Heyal U.**, *The Foundations of Turkish Nationalism*, London, 1950, p. 37.

[225] **Haleçoglu Y.**, *Ermeni Tehciri ve Çerçekler. 1914-1918.* Ankara, 2001.

դենը իր հուշերում ողբում է տարագիրներին վիճակված բախտը, որոնց «քշեցին՝ արևից չիկացած անապատներում մատնելով քաղցի, տանջանքի ու մահվան»[226]: Նաև նշենք, որ հայտնի թուրքագետ Բ. Լյուքսը Ֆուադի մասին գրում է, որ սա թուրք «ամենանշանավոր հեղինակն է»[227]:

Թուրք ժողովրդին անմեղսունակ դարձնելու փորձերն այլ բան չեն, եթե ոչ քարոզչական կեղծիք: Թուրքն, իհարկե, չարդարար չի ծնվել: Նրան այդպիսին դարձրել են, և պատմական արդարությունը պահանջում է թուրքին ոչ թե չքմեղացնել, այլ բացատրել այն պատճառները, որոնք այդ ժողովրդին գործիք դարձրեցին «հին ու նոր» չարդարարների ձեռքին, նրա ճակատին խարանեցին «ցեղասպան թուրք» բառերը:

Թուրքական քարոզչությունը համառ չանքեր է գործադրել ու այժմ էլ գործադրում է մերժելու Հայոց ցեղասպանության իրողությունը և կամ ապացուցելու, թե թուրքական կառավարությունը կոտորածների կազմակերպմանը մասնակցություն չի ունեցել: Կառավարությունը հայերին տեղահանել, բայց չի կոտորել, նույնիսկ տևական ժամանակ տեղյակ չի եղել, որ քրդերն ու քրեական տարրերը հարձակումներ են գործել քարավանների վրա:

Ցեղասպանության թուրքական ժխտումը վավերացվեց Լոզանի (1923թ.) կոնֆերանսում, որին հաջորդեցին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման չհարկումների տասնամյակները: Դա նույնպես տերությունների ձեռքին գործիք դարձավ թուրքիայի վրա ճնշում գործադրելու համար:

Ուրացման թուրքական չանքերի հետևանքով միջազգային հանրությունը, եթե ամենատարբեր եղանակներով ոգեկոչում է հրեական ողջակիզումը, եթե հրեական ջարդերը դարձել են համաշխարհային պատմագրության, միջազգային քաղաքականության կարևորագույն խնդիրներից, ապա Հայոց ցեղասպանությունը տասնամյակներ շարունակ մնում էր «մոռացված»: Բնականաբար, լռության այդ դավադրությունն ամենից առաջ հետևանք էր պետությունների աշխարհաքաղաքական շահերի:

Մինչդեռ Հայոց ցեղասպանությանը բնութագրական են բոլոր այն հատկանիշները, որոնք սահմանված են ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիայով՝ ցեղային, կրոնական ու մշակութային հատուկ բնորոշում ունեցող բազմազգ հավաքականություն, իշխող և ցեղասպանություն իրականացնող տարրի կողմից վտանգի զգացում, զոհի սոցիալական և տնտեսական համեմատական բարձր մակարդակ, մեղսագործ տարրի մեջ այն մտայնության տիրապետություն, թե ինքը հպատակ տարրերից բարձր և իրավացի է, ինչն արտահայտվում է համապատասխան գաղափարախոսության ընդունման և տարածման մեջ, աշխարհատարածքային կամ համաշխարհային նոր կառավարում ստեղծելու ճանապարհին եղած իրական և երևակայական խոչընդոտները ոչնչացնելու մարմաջ, այդ նպատակին պետական և ռազմական մեքենայի ծառայեցում, զոհի ունեցվածքի յուրացում[228]:

Է. Ռային գրում է. «Օսմանյան կայսրության հայերը Գերմանիայի ապագա ծրագրերի համար փորձաճագարների ու ապիտակ մկների դեր կատարեցին», և հայերի ցեղասպանության հեղինակների անպատիժ մնալը ֆաշիստների կողմից հրեաների ջարդերի կազմակերպման նպաստավոր նախապայմանն էր:

Դրա հետ միասին ցեղասպանությունը գնալով ավելի ահարկու բնույթ է ստանում ամբողջ մարդկության համար, քանի որ միջուկային զենքի առկայության պայմաններում ցեղասպանության զոհ կարող են դառնալ ոչ միայն առանձին ժողովուրդներ, այլև ամբողջ աշխարհամասեր: Ցեղասպանությունը միջուկային պատերազմի ոչ միայն բաղադրիչն է, այլև նպատակը:

---

[226] **Fuad A. E.**, *Birici Dünya Harbinde Suriye Hatıraları*, İst, 1954, s. 34.

[227] *"Middle Eastern Affairs"*, 1953, № 4.

[228] **«Հայացք երևանից». Հայոց Մեծ Եղեռնի տարելիցին նվիրված հատուկ թողարկում, էջ 2-3:**

*Թուրքերի ուրացման ջանքերը գնալով կորցնում են արդյունավետությունը: Տասնյակ երկրների խորհրդարաններ, միջազգային կազմակերպություններ (Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ, Ժողովուրդների մշտական ատյան, Եվրախորհրդարան) ճանաչել են Հայոց ցեղասպանությունը: Գնալով այս տեսակետի կողմնակից են դառնում առանձին թուրք պատմաբաններ ու քաղաքական գործիչներ: Թուրք գրող Սուրեյա Այդեմիրը երիտթուրք պարագլուխ Նազըմի ու նրա կուսակիցների մասին գրում է, թե նրանք «մարմնավորում են մեր կայսրության ամենամութ ժամանակների ամենաարյունահեղ իրողությունները»[229]:*

*Ինչ վերաբերում է հայ ժողովրդին, ապա ցեղասպանությունն անհնար չդարձրեց նրա վերածնունդը, ինչպես կարծում էին դահիճները: Մեծ եղեռնից հետո թուրքերն աղմուկ բարձրացրին, թե «Հայաստանը կովկասում է: Այնտեղ հավաքվեք, թուրքիայում հայ չկա»[230]: Արևմտյան Հայաստանում իրոք հայ գրեթե չի մնացել, սակայն վերապրել են շատ արևմտահայեր, նրանք հարյուր հազարներով ապաստանել են աշխարհի տարբեր երկրներում և ապաստում են տունդարձի:*

---

[229] *"Cumhuriyet", 13.04.1978.*

[230] ԳԱԹ. Ֆ. Զոպանյան Ա., բ. VIII, մաս II, գ. 3062, թթ. 5-6:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ԱՐԵՎՄՏԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ

## 1. ՍՈՑԻԱԼ-ԴԱՂԱՓԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՈՒՂԻ ԷՐ ՀԱՐԹՈՒՄ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

*Օսմանյան կայսրությունը պատմությանը հայտնի ամենաբռնապետական և զարհուրելի վարչակարգերից էր, որը Կ. Մարքսի խոսքերով, լուրջ արգելք էր «Եվրոպական առաջադիմության համար»[1]: Մոտ 600 տարի գոյատևած այդ կայսրությունը ճախողեց իր հպատակության տակ եղած ժողովուրդների զարգացումը: Բիրտ ուժով ստեղծված աչխարհակալությունը երբեք ներքնապես չամրապնդվեց և ապրեց ճգնաժամի ու անկման տևական գործընթաց:*

*Կայսրության քաքաղաքական համակարգն ու սեփականատիրության ձևերը կազմավորվեցին պատերազմների ու զավթումների միջոցով: Տիրապետող փաչայական-ռազմական ավատատիրական համակարգում հողատիրության և հողօգտագործման ձևերը նույնպես ծնվում էին նվաճումների միջոցով: Սկսած 18-րդ դարավերջից այդ հողատիրությունն ապրեց ճգնաժամի տևական ժամանակաշրջան. թուրքերն այլևս անզոր էին կատարելու նոր նվաճումներ:*

*Օսմանյան հասարակության վրա քայքայիչ ազդեցություն էին գործում վաչկատուն ցեղերի տեղաչարժերը, սոցիալ-տնտեսական հարաբերությունների պարզունակությունն ու ծայրաստիճան հետամնացությունը: Դրան գումարվում էին հողի պետական սեփականությունը, հարկերի բաչխման գործում կամայականությունները, դրանց հավաքման կապալային եղանակը, թուրքերի մենաչնորհ կարգավիճակը կառավարման ապարեզում և ռազմական գործում:*

*Ֆ. Էնգելսի խոսքով՝ «Թուրքական, ինչպես և արևելյան ամեն մի բռնատիրություն անհամատեղելի է կապիտալիստական հասարակության հետ: Քամած հավելյալ արժեքը ոչնչով երաչխավորված չէ գիչատիչ սատրապներից և փաչաներից: Բացակայում է բուրժուական ձեռներեցության համար առաջին և գլխավոր պայմանը՝ առևտրականի անձի ու նրա սեփականության անվտանգությունը...»[2]:*

*«Հազիվ թե կարելի է պնդել,– չարունակում է Էնգելսը,– որ նրանք (թուրքերը) որևէ տեղում նստակյաց են դարձել, բացի Կոստանդնուպոլսից և երկու-երեք գյուղական փոքր օչրուգներից... եթե նրանք քաղաքացիական և ռազմական պաչտոնների մենաչնորհ չունենային, միանգամից կանհետանային: Սակայն այդ մենաչնորհն այլևս դառնում էր անհնար, և թուրքերի զորությունը անզորության էր վերածվում, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք խոչընդոտում են առաջադիմությունը... Փաստը մնում է փաստ, որ թուրքերից այս կամ այն կերպ պիտի ազատվել»[3]:*

---

[1] Маркс К. и Энгельс Ф., *Сочинения*, т. IX , Москва, 1957, стр. 239.

[2] Նչվ. աչխ., т. XXII , Москва, 1961, стр. 33.

[3] Նչվ. աչխ., т. IX , стр. 25-26.

*Թուրքական հասարակությունում «երբեք չի եղել փակ կաստայի վերածված արտոնյալ ազնվականություն... Թուրքերի փաշաներն ու մուշիրներն ավելին չեն, քան պետական ծառայողներ, որոնք բարձրացել էին սուլթանի բարեհաճությամբ և նրա կամակորությամբ էլ կարող էին վերադառնալ իրենց նախկին վիճակին»[4]:*

*Թուրքերն ավատատիրական տներ չունեին, նրանք նույնիսկ ազգանուն չէին կրում և իրար դիմում էին անունով՝ երբեմն դրան ավելացնելով ծննդավայրի անունը:*

*Կ. Մարքսը թուրքական հասարակայնությունում տեսավ յուրատիպ հասարակական խավ, որը չնայած իր սոցիալական վիճակով լյումպեն էր, բայց մահմեդական կրոնին պատկանելու իր առավելություններով մեծ դեր էր խաղում: Այդ խավը կոչվում էր մահմեդական խուժան: «Թուրքական «խուժանը», տոգորված մահմեդական մոլեռանդությամբ, խոչընդոտում էր Թուրքիայի առաջընթացին, նա «խանդոտությամբ» պաշտպանում էր իր «երևակայական առավելությունը» և ավանդական արտոնությունը՝ քրիստոնյաների հանդեպ անպատիժ գործել խժդժություններ»[5]: Մահմեդական խուժանի ձեռքերը քոր էին գալիս՝ դյավուրի վրա հարձակվելու, նրան թալանելու, ծաղրուծանակի ենթարկելու, նրա օջախը պղծելու: Այդ խուժանին կոտորածների, ցեղասպանության մղելը դժվար չէր:*

*Թուրքական ավատատիրությունը եվրոպականից տարբերվում էր առաջին հերթին նրանով, որ Օսմանյան կայսրությունում հասարակության շերտավորում տեղի չէր ունենում, ոչ միայն սեփականատիրության, այլև ազգային առումով: Թերևս նաև դրանով է բացատրվում, որ թուրք զանգվածը չէր կարող սեփական նախաձեռնությամբ հարձակվել այլակրոն և այլազգի բնակչության վրա: Նման հարձակումները միշտ թելադրված են եղել «վերևից» և կամ հետևանք էին ազգային կրոնական կրքերի բորբոքման:*

*Վ. Գորդլևսկին նշում է, որ դերբեյները, սկսած 17-րդ դարի վերջից, դարձան «կիսանկախ կալվածատերեր»՝ կազմված հիմնականում թուրքական, քրդական և արաբական ցեղապետերից: Նրանք ունեին լայնարձակ հողատարածքներ, վարչական-դատական իրավունքներ, բանտեր, ինչպես նաև զորք: Դերբեյն ուներ իր պալատը և սուլթանին վայել պալատական ծեսերը: «Դերբեյը որքան հեռու էր կենտրոնից, այնքան ինքնագլուխ ու վայրագ էր»[6]: Զոպանօղլու դերբեյական ընտանիքի կենտրոնը Ցոզղաթն էր, իսկ հողատարածքները ձգվում էին Սև ծովից մինչև Թարսուն և Մալաթիա: Այդ ընտանիքի տրամադրության տակ էր 100 հազարանոց բանակ:*

*Դերբեյները պալար էին հասարակության մարմնի վրա: Չնայած 19-րդ դարի առաջին կեսին նրանց մահացու հարված հասցվեց, ծայրամասերում պահպանվեցին մինչև 20-րդ դարը: Միայն անունները փոխվեցին, սկսեցին կոչվել աղալարներ, ովքեր փաստորեն ճորտատերեր էին: Դիարբեքիրի վիլայեթում, անգամ Առաջին աշխարհամարտից հետո, առանց աղալարի թույլտվության, ոչ ոք չէր համարձակվում տեղից տեղ փոխադրվել:*

*Հպատակ ժողովուրդների վիճակն ավելի ծանրացավ, երբ կայսրության հզորացման ժամանակաշրջանին փոխարինելու եկան թուլացման ու անկման ժամանակները: Կայսրությունը պարտություններ էր կրում և տարածքներ կորցնում կենտրոնական Եվրոպայում և Բալկաններում: Հետևանքն այն եղավ, որ ավարին ու անաչխատունակ եկամուտներին ընտելացած թուրքը, եկամտի արտաքին աղբյուրներից զրկվելով, հայացքը հառեց կայսրության ներսը, որի հետևանքով ծաղկում ապրեց կաշառքն ու կոռուպցիան՝ մի կողմից և հպատակների ունեցվածքի թալանը, նաև դրա տերերի ոչնչացման միջոցով, մյուս կողմից:*

---

[4] Голобородько И., *նշվ. աշխ.*, էջ 23:

[5] Маркс К. и Энгельс Ф., *Сочинения*, т. IX, стр. 374.

[6] Гордлевский В.А., *նշվ. աշխ.*, т. III , стр. 22.

*Ենիչերական զորամասերը (ենիչերիները բաժանված էին 229 օդայի՝ սենյակի, որից 77-ը մայրաքաղաքում էր) պահելու համար հատկացվում էր 1500 քսակ (մեկ քսակը 500 ղրչ), սակայն ենիչերիներին հասնում էր այդ գումարի կեսը, մնացածը հոսում էր նախարարների, պալատականների, նույնիսկ մահմեդական հոգևորականների գրպանները: 1800թ. զինվորական աշխատավարձ ստացողների ցուցակում գրանցված էր 400 հազ. անուն, մինչդեռ իրականում աշխատավարձ էր ստանում ոչ ավելի, քան 20 հազ. մարդ:*

*Գնալով ուժեղանում էին հպատակ ժողովուրդների ըմբոստությունները, իսկ եգիպտոսի կառավարիչ Մեհմեդ Ալիի ապստամբությունը կայսրությանը կանգնեցրեց կործանման սպառնալիքի առջև: 1842թ. Նիկոլայ I-ը Լոնդոնում Օսմանյան կայսրությունն անվանեց «հիվանդ մարդ», ինչը մտավ միջազգային հարաբերությունների բառապաշար, որպես Արևելյան հարցի գոյության վկայական և օսմանյան տարածքների նկատմամբ տերությունների հավակնությունների հաստատում:*

*Օսմանյան կայսրության համար 19-րդ դարը, իրապես, տնտեսական լճացման ժամանակաշրջան էր: Առանձնապես մեծ ավերածություններ էր գործում ֆինանսական ճգնաժամը: Պետական ծառայողներն ամիսներով աշխատավարձ չէին ստանում: Դրությունն ավելի բարդացրեց ղուրուշի արժեզրկվելը: Ահռելի չափերի հասան արտաքին պարտքերը: 1854-74թթ. օսմանյան կառավարությունը կնքել էր փոխառության 13 պայմանագիր՝ 4.3 միլիարդ ֆրանկ ընդհանուր գումարով, տարեկան 7-13% տոկոսադրույքով: Դրա հետևանքով պետական եկամուտների 80%-ը հատկացվում էր պարտքերի մարմանը, այսինքն՝ 18.5 միլիոն ֆրանկ կազմող բյուջեից 14 միլիոնը տրվում էր օտարներին: 1874թ. կնքվեց ևս մեկ միլիարդ ֆրանկի փոխառության պայմանագիր: 1879թ. կայսրությունը սնանկ հայտարարվեց: Այլևս վարկ ստանալու համար պահանջվեց օտար հողատերերին մենաշնորհներ տալ՝ ծխախոտի առևտրի, հանքերի, երկաթուղիների շահագործման, չոգենավերի կառուցման, քաղաքների ջրամատակարարման: Ստեղծվեց Օսմանյան պարտքերի վարչություն, որը կոչված էր վերահսկելու պետական պարտքերի մարման ընթացքը: Այն իր տրամադրության տակ առավ կայսրության ամբողջ տնտեսական կյանքը: Վարչությունը կազմված էր եվրոպական հինգ պետությունների ներկայացուցիչներից և ուներ 5000 աշխատակից, իր գործակալություններն էր հիմնել բոլոր վիլայեթներում: Դա պետություն էր պետության մեջ: Թողարկված փոխառություններն օսմանյան պարտքերը հասցրեցին աստղաբաշխական չափերի:*

***Թուրքիան վերածվում էր կիսագաղութային երկրի:***

*«Թուրքիան,– ծաղրում է Մ. Նալբանդյանը,– յուր պարտքերի հանդեպ ոչինչ չունի ցույց տալու: Երեքուկես նավ, բացի ծովագնացությունից ամեն բանի պիտանի, մի քանի հազար քաղցած և մերկ զինվոր, որ տարիներով չեն տեսնում ռոճիկի երես, ներս մտնող ապրանքների մաքսը՝ աննշան, յուր մեջ պատրաստված ապրանքի վրա ավելի ծանր հարկ, ո՛չ երկրագործություն, ո՛չ ճանապարհ, ո՛չ հաղորդակցություն, ո՛չ գիտություն և ո՛չ արվեստ»[7]:*

*Տնտեսական կախվածությունը ծնեց իրավական անհավասարություն: Ձևավորվեց կապիտուլյացիաների համակարգը, օտար քաղաքացիները ստացան էքստերիտորիալ իրավունք, նրանք ենթակա չէին թուրքական օրենքներին ու դատարաններին: Վերջիններս իրավունք չունեին նրանց հետ առնչվող գործեր լսել: Եվրոպական ներկայացուցչություններն ունեին իրենց անկախ կապի ծառայություններն ու դպրոցները:*

*Ընդհանուր ճգնաժամն ավելի արագացրեց պաշտոնական-բարոյական անկումը: Գերուռճացած պետական կառույցների պաշտոնյաները ցոփ կյանք էին վարում: Այս գործում օրինակ էր ծառայում ինքը՝ սուլթանը: Նրա պալատում ամեն օր ձրի անվում էր 6000 մարդ, հարեմում կար 900 կին: Պալատի տարեկան ծախսը կազմում էր 100 միլիոն ֆրանկ: Պետական կառույցների գլխավոր իրավասությունների վերածվեցին կաշառակե-*

[7] **Նալբանդյան Մ.**, *Երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ)*, հ. III, ե., 1940, էջ 66-67:

*րությունը և պաշտոնների վաճառքը: Այստեղ ևս «ամենաօրինակելին» սուլթանն էր: Նա առանց կաշառքի նախարար կամ այլ պաշտոնատար չէր նշանակում, չնորհների ու պարգևատրությունների չէր արժանացնում, մենաշնորհներ չէր տալիս, գործարքներ ու պայմանագրեր չէր կնքում: Նրա քարտուղարներից Իզեթը, 650 հազար ֆրանկ կաշառք ստանալով, միջնորդեց չեղյալ հայտարարելու գերմանական մի ընկերության հետ կնքված պայմանագիրը, որի հետևանքով պետությանը հասցվեց 2,2 միլիոն ֆրանկի վնաս: Ռազմական և ծովային նախարարը գրպանեց նավերի նորոգմանը հատկացված գումարի 90%-ը և այլն: Որպես կանոն, նման արարքների հեղինակները չէին պատժվում, այլ, ընդհակառակը, զանազան եղանակներով խրախուսվում էին: Տվյալ պաշտոնը գնածի առաջին հոգսը լինում էր վճարած գումարի վերականգնումը:*

*Այս ու բազմաթիվ այլ խայտառակություններ թուրքերը հանդուրժում էին: Իշխանավորի՝ իրենից թեկուզ կես աստիճանով բարձր պաշտոն ունեցողին անվերապահ ենթարկվելու դարերով ձևավորված բնավորությունը՝ թուրք պաշտոնյաներին բացարձակապես դուրս էր դրել հասարակական վերահսկողությունից: Այդ գործում վիթխարի էր մահմեդական կրոնի և հաստատությունների ներդրումը: Սկսած չեյխ-ուլ-իսլամից մինչև ամենավերջին խոջան, ուլեմաները, սոֆթաները, մոլլաները, ովքեր ուներն ազդեցության ահարկու ուժ, նույն ախտով էին տառապում, ինչ աչխարհիկ պաշտոնատարները: Ուստի նրանք իրար լավ էին հասկանում և գործում էին համերաչխ: Ակնհայտ էր նաև վարչա-կառավարչական ճգնաժամը:*

*Թուրքիայում ռազմա-ավատատիրական հարաբերությունները խճճված էին ներքին և արտաքին հակասություններում, որոնք ևս նպաստեցին վարչակարգի ճգնաժամին: Հասարակության մի բևեռում օսմանյան պորտաբույծ ու կաշառակեր վերնախավն էր, իսկ մյուս բևեռում՝ միջնադարյան բարբարոս եղանակներով շահագործվող, խավարի ու տգիտության մեջ ընկղմված զանգվածները, մասնավորապես, գյուղացիությունը, պրոլետարական և լյումպեն-պրոլետարական տարրերը:*

*Սոցիալ-քաղաքական և վարչա-կառավարչական ճգնաժամը գործնականում հանդիսացան ցեղասպան քաղաքականության գլխավոր մղիչ ուժերից մեկը:*

## 2. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

*Թուրքական պատմական գրականության մեջ շատ հաճախ է հանդիպում պնդումը, թե մինչև մեծ պետությունների միջամտությունը հայերի ու թուրքերի միջև որևէ լուրջ հակասության չի եղել: Ջեմալ փաշան գրում է, թե մինչև 1870-ական թվականները հայերի ու թուրքերի միջև «կրոնական հողի վրա որևէ ընդհարում տեղի չի ունեցել... այնպիսի համերաչխություն է տիրել, որ այն ժամանակվա պատմագրությունը հայկական հարցի մասին հիշատակություն անգամ չունի: ...Հայերը շատ լավ գիտեին, որ սուլթանների չնորհած արտոնությունների չնորհիվ են պահպանել իրենց կրոնն ու ազգությունը... օսմանյան կառավարությունը հայերին տվեց սահմանադրություն... ինչը նրանց համար մի նոր բախտավոր դարաշրջանի սկիզբ էր դառնալու... Սակայն Զեյթունում բռնկվեց հայկական առաջին ապստամբությունը... Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես էֆենդին Սան-Ստեֆանո գնաց, որպեսզի ռուսաց ցարի օգնությամբ հայերն անկախություն ստանային և իր այդ քայլով պատճառ դարձավ, որ վերջիններս «հավատարիմ ազգի» հինավուրց կոչումից ընդմիշտ զրկվեին... Ահա դրանից հետո էր, որ հայերի, քրդերի և թուրքերի հարաբերությունները ծայրաստիճան լարվեցին...»*[8]:

*«Ինը հարց, ինը պատասխան» գրքույկում, որը հրատարակել է Թուրքիայի Արտաքին գործերի նախարարությունը, կարդում ենք. «Թուրքական սովորություններն ու Կորանը պահանջում են, որ ոչ մահմեդականներին թուրքական ու մուսուլմանական*

[8] **Ջեմալ փաշա**, *Հայկական հարցը*, Երևան, 1927, էջ 5-12:

պետություններում լավ վերաբերվեն: Օսմանյան կայսրությունում ամենատարբեր հպատակներ արժանացան մինչև այդ չտեսնված մեղմ ու համբերատար վերաբերմունքի: Օսմանյան կայսրության ստեղծվելն ու զարգանալը նոր դարաշրջան էր հայերի և մյուս ազգերի հոգևոր, քաղաքական ու սոցիալական կյանքում... Օսմանյան կայսրության տարածման և բարգավաճման չնորհիվ է, որ հայ համայնքն ու եկեղեցին կարողացան ծաղկել... Հայերը ոչ միայն օգտվում էին նույն իրավունքներից, ինչ մուսուլմանները, այլև ունեին որոշակի արտոնություններ»[9]:

Նորագույն շրջանի թուրքական պատմագրության նահապետ է. Քարալը գտնում էր, որ Օսմանյան կայսրության կազմում եղած համայնքների շարքում «հայերը գրավում էին այնպիսի դիրք, որը կարելի է համարել բացառիկ... նրանք ամենաբարեկեցիկ համայնքն էին... նրանց ձեռքում էր կայսրության արտաքին առևտրի մենաշնորհը... Հայերի խելամտությունը, աշխատասիրությունը և այն, որ ի տարբերություն մյուս հպատակների, անկախության չէին ձգտում, հնարավորություն էին ստեղծում, որպեսզի նրանք զբաղեցնեին բարձր պաշտոններ... այն կարծիքը, թե հայերը դարեր շարունակ ճնշված են եղել... պատմական իրականության հետ որևէ կապ չունի»:

Անժխտելի է, որ հայերի հանդեպ կիրառված հալածանքները և բնաջնջման գործողությունները հետևանք էին մեծ տերությունների քաղաքականության: Այդ քաղաքականության հետևանքն էր, ամբողջությամբ վերցրած, Հայկական հարցը[10]: Թուրքերը զարմանում էին և այսօր էլ իրենց զարմացած են ցույց տալիս, երբ որևէ մեկը փորձում է Հայկական հարցը ներկայացնել որպես կայսրության ներքին հարց:

Տարածված կարծիք է, թե Հայկական հարցը «սկսվեց 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմով ու Բալկանների անկախացմամբ, և օսմանցի հայերը, որոնք թուրքերի հետ ամբողջ ութ դար խաղաղ գոյակցել էին... աստիճանաբար փոխեցին իրենց կեցվածքը, օտար ուժերի ձեռքին գործիք դարձան» դեպի «տաք ջրեր» ռուսական առաջխաղացման և դրան հակազդելու բրիտանական քաղաքականության համար[11]:

Իր «Թուրք-հայկական հարցի էությունը» (Belgelerin İşiğinda Turk-Ermeni Meselesinin İç Yüzü, Ստամբուլ, 1975թ.) գրքում Ա. Ցալչընը գրում է. «...Հայերն Օսմանյան կայսրությունում... իրենց տրված իրավունքների չնորհիվ ոչ մահմեդական մյուս տարրերի նկատմամբ նյութական ու քաղաքական առավելություններ էին ձեռք բերել: Երբ նրանց ապագան արդեն ապահովված էր, խախտեցին խաղաղությունն ու անդորը և անկախ Հայաստան ստեղծելու համար կամենում էին մասնատել Թուրքիան»[12]:

Ցալչընին նման հայտարարության համար դժբախտաբար հիմքեր տվել էին ոչ միայն թուրք, այլև ռուս գործիչներն ու առանձին հայ պատմաբաններ: Թուրքիայում, գրում է ռուս դիվանագետ Վ. Մաևսկին, մինչև 1895թ. «Հայերի ազետալի վիճակի մասին պնդումները չատ չափազանցված և ուռճացված են»: 1876թ. «Փորձ»-ը գրեց. «...Կ. Պոլսի սուլթանները XVI դարից մինչև մեր օրերն ընդհանուր առմամբ հայերին սիրել են և հնարավորին չափ պաշտպանել»[13]:

Այդ կապակցությամբ Մարկվարտը նկատում է. «Ոչինչ այնքան սխալ չէ, այնքան անհարիր ճշմարտությանը, որքան հաճախ կրկնվող այն պնդումը, թե հայերը թուրքական գերիշխանության ներքո մինչև 1878թ. իրենց չատ լավ էին զգում և թուրքերի հետ հաչտ էին ապրում»[14]:

---

[9] *Institut de Politique Etrangère. Le Problème Areménien. Neuf Questions, Neuf réponses.* Ankara, 1982, pp. 6-10.

[10] **Karal E. Z.,** *La Question Arménienne*, p. 8.

[11] *Neuf Questions...*, p. 10

[12] ՀՀԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1977, թիվ 3, էջ 17-18:

[13] «Փորձ», 1876, հ. 1, էջ 369-370:

[14] **Marquart J.,** *L'origine et la reconstitution de la nation Arménienne*, Paris, 1919, p. 9-10:

*«Թուրքիայի հայերը,– նման հարցադրումներին պատասխանում է Ն. Ադոնցը,– սովորաբար կրթություն էին ստանում արտասահմանի հայկական դպրոցներում և տուն էին վերադառնում հարուստ գիտելիքներով, պատրաստ ցանկացած հասարակական և քաղաքական գործունեության համար: Ահա թե ինչու բժիշկները, փաստաբանները, գրողները, հրապարակախոսները միայն հայերն ու հույներն էին: Զարմանալի չէ, որ կառավարությունը ստիպված ղեկավար պաշտոնների էր հրավիրում կրթված ու գործունյա հայերի»[15]:*

*Ահա այս իրողությունն է, որ թուրքական քարոզչությունը ներկայացնում է ոչ թե որպես վաստակ, այլ չնորհ: Իրականում Օսմանյան տիրապետության հարյուրամյակները օսմանահպատակ այլակրոնների և, առաջին հերթին, հայ ժողովրդի համար եղել են անլուր թշվառությունների, հարստահարությունների, կրոնական ու ազգային վայրագ ճնշումների, ուծացման ու կոտորածների ժամանակաշրջան:*

*Որ թուրք պատմաբանները կեղծում են, վկայություններ շատ կան: 1895թ. գործողության մեջ դրվեց և մինչև 1918թ. գործեց մի իրադե (սուլթանական հրամանագիր), որ վերաբերում էր Զեյթունի հայերին: Այդ իրադեում ասվում էր. «...Սատանայի գլխարկ կրող, Աստուծո ապարանքի դռնեն զրկվող վատ սկզբունքի տեր, պառավյալ երեց: Կը ծանուցվի, որ Ձեր հայհոյիչ գարշելի ժողովրդեն, այս ինչ հայհոյիչի տղա, այն ինչ հայհոյիչը սատկած ըլլալով՝ թեև գարշելի պիղծ դիակը հողը անգամ չընդունիր, ինչ օգուտ, որ այս զզվելի գարշահոտությունը մեջտեղեն վերցվելու համար քաղաքեն դուրս հանեք, խորունկ փոս մը փորել տվեք, մեջը ձգեք, վրան հողով ծածկեք, լավ մը տրորեք, կոխկոտեք ու գաք, պառավյալ երեց»[16]:*

*Այս անարգ հրամանի վերացումից հետո էլ. «...թուրքերը կը չարունակեն ծաղրել, անարգել, հայհոյել և քարկոծել մեր ննջեցյալներին,– վկայում է ականատեսը,– ու մեռելատյաց քահանաները, ըսելով. «Կյավիր կեպերիկի կիտիյոր, հա» (անհավատը սատկած կերթա)»[17]:*

*1821թ. Կ.Պոլիսը հրաման է արձակում. «...Չի նստեցնել, սամույր մուշտակ, սամույր գլխանոց... սնդուսե և մետաքսե ծաղկենկար կերպասե չինված զգեստներ... հագցնել չտաս, որպեսզի իսլամներու հատուկ զգեստներու տարազով չպտտին»[18]: 18-րդ դարի սկզբին մեծ վեզիր Ա. Ջելաիրլիի օրոք քրիստոնյաներին պարտադրում էին հագնել միայն սև հագուստ և փողոց դուրս գալիս թևերին կրել զանգակներ[19]:*

*Նման վայրագ սահմանափակումները ոչ թե բացառություններ էին, այլ քրիստոնյաներին պարտադրված կյանքի ու վարկի լայն տարածում գտած նորմեր: Հազար անգամ իրավացի էին Ռոլեն Ժեկմենը, Է. Դիլոնը, Մ. Մաքքոլը և այլք, երբ գրում էին՝ եթե բռնության, ավերումների ու ոչնչացման այն երևույթների, որոնց մշտապես ենթակա էր հայ ժողովուրդը, թեկուզ չնչին մասը բաժին ընկներ եվրոպական ժողովուրդներին, ապա ամբողջ մարդկությունը ոտքի կկանգներ հասարակական կյանքից դրանք մեկընդմիշտ արմատախիլ անելու համար:*

*Է. Բեռնշտայնը նկատում է, որ հայ ժողովրդի մեծ մասը ապրում է նախնադարյան պայմաններում: Ժողովրդի 80%-ը գյուղացիներ ու մանր արհեստավորներ էին, այլ ոչ թե հարուստ խավին պատկանողներ: Հայը վաճառական էր դառնում իր կյանքի պայմանների հետևանքով[20]: Վկայում է Ջ. Բրայսը. «Դեռ 1855թ. Սըր Ֆ. Վիլսոնը գրում էր, որ հայկական նահանգներն ըստ ամենայնի տառապում են անարգ հարստահարություններից, և թուրք կառավարությանը բնորոշում էր իբրև բռնակալության մի այնպիսի մե-*

---

[15] **Ադոնց Ն.**, *Հայկական հարցի լուծման չուրջը*, Երևան, 1989, էջ 70:
[16] **Զեյթունցի**, *Զեյթունի անցեալէն և ներկայէն*, *Մ.բ.* Փարիզ, 1903թ., էջ 208:
[17] Նույն տեղում, էջ 209:
[18] **Հնաաեր**, *Կորսվելու եղեռնակա վավերաթուղթեր*: «Բազմավեպ», 1934, թիվ 1, էջ 32:
[19] **Զուլալյան Մ.**, *Արևմտյան Հայաստանը XVI-XVII դդ.*, Երևան, 1980, էջ 74:
[20] «*Օտար հեղինակները...*», էջ 18:

*քենա, որը նմանը չուներ ամբողջ աշխարհում»[21]: Իսկ Է.Դիլոնը կոտորածները «երկնքի ողորմություն» էր անվանում՝ համեմատած հայերի «ամենօրյա դժոխային դրության հետ»:*

*Երբ 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո թուրքերը հայերին անվանեցին «դավաճան ազգ», վերջիններս պատասխանեցին. «Ինչպե՞ս կարելի է միլիոնավոր հայերից պահանջել, որ իրենց կրած տանջանքների, բռնության ու հալածանքների մասին չգանգատվեն, չտրտնջան, թե ինչ է իրենց միջից մի քանի հակոբներ, նուբարներ, արթիններ և այլ մեծամեծներ պաշտոն են վարում, չնորհներ, պատիվներ են վայելում»[22]: Մ. Նալբանդյանի կարծիքով՝ Ղրիմի պատերազմից հետո հայերի վրա վաղուց ի վեր ծանրացած աղաղակող անարդարությունները պարզապես ծայրահեղության հասան:*

*Ընդհանուր առմամբ, օսմանյան պետությունը որևէ պարտականություն չէր ստանձնել սեփական ազգաբնակչության հանդեպ, այսինքն՝ պետության ու նրա քաղաքացիների հարաբերությունները միակողմանի բնույթի էին: Պետությունն ուներ միայն իրավունքներ, իսկ հպատակները՝ միայն պարտականություններ: Ինչ վերաբերում է հպատակ ժողովուրդներին, ապա նրանք պետությունից պարտականություն ակնկալել իսկ չէին կարող, քանի որ իրենցը, համենայն դեպս, միայն իրենցը չէր:*

*Օսմանյան կայսրությունում հայերի վիճակը ստահոդ ներկայացողներն առաջին հերթին վկայակոչում են միլիեթների համակարգը: Մինչդեռ այդ համակարգը սուլթանական չնորհ չէր, այլ հարկադրական քայլ: Առանց դրա օսմանլիները պարզապես անկարող էին կայսրությունը կառավարել: Դա, նախ, այն պատճառով, որ թուրքերի թիվը շատ փոքր էր և նույնիսկ բանակի պահանջները բավարարել չէր կարողանում: Դրա համար էլ նրանք հրաժարվեցին թուրք-թաթարական դարավոր ավանդությունից և բանակ զորակոչեցին նաև ոչ թուրք մահմեդականների: Նույն պատճառով կյանքի կոչվեց նաև ենիչերությունը, որը մինչև 18-րդ դարավերջը կազմում էր օսմանյան ռազմական հզորության հիմքը: Բացի այդ, օսմանլին իր կյանքը չէր պատկերացնում պատերազմից, ավարից ու թալանից դուրս, նա ծնվում էր ձիու թամբին ու մեռնում այդ թամբին: Նա պատերազմող, ռազմատենչ ցեղ էր: Նա կռվող ու կառավարող էր: Ըստ այդմ էլ, նրա համար ռայայի գոյությունը մի արդարացում ուներ՝ անմռունչ ծառայել թուրքին, լայն առումով՝ նաև մահմեդականին:*

*Միլիեթների համակարգի ելակետն ու հիմքը հենց այն աշխարհընկալումն էր, որ ռայան, գյավուրը քաղաքականությամբ ու ռազմական գործով զբաղվելու իրավունք չուներ: Հասարակության այդ ստորին խավի գործունեությունը կենցաղային ու լուսավորչական չրջանակներից չպետք է դուրս գար: Այլ էր մահմեդականը՝ որ ազգին էլ նա պատկաներ, ինչ-որ առումով նաև թուրք էր և միլիեթների համակարգում տեղավորվել չէր կարող:*

*Դրան գումարած այն, որ մահմեդական աշխարհում տիրապետողը շարիաթի, այսինքն՝ իսլամական սովորությունների, բարքերի և դրանց հիմքի վրա ձևավորված և իրավական ուժ ստացած նորմերն էին, համաձայն որոնց, նշում է Կ. Մարքսը, մարդկությունն ու աշխարհը բաժանված են երկու մասի՝ մահմեդականների և ոչ մահմեդականների: Առաջինները մարդկության լիիրավ մասն են և, անկախ իր սոցիալական վիճակից, քրիստոնյան պարտավոր է իսլամին, թեկուզ մահմեդական սինքլորի հանդիպելիս, անվերապահորեն հնազանդվել ու կատարել նրա բոլոր քմահաճույքները: Ռայային սպանելու համար մուսուլմանը չէր պատժվում, որովհետև շարիաթի սահմանումներով ոչ մահմեդականը մարդ չէ, այլ չնչավոր առարկա, իսլամի սեփականություն:*

*Քրիստոնյան ոչ միայն զենք կրելու իրավունք չուներ, այլև բանակ չէր զորակոչվում, որպեսզի ռայան հնարավորություն չունենար ընտելանալու զենքին, վարժվելու*

---

[21] **Միքայելյան Գր.**, *Հեղափոխական մտքերը*, Երևան, 1992, էջ 42:
[22] *«Նոր կյանք»*, 1986, թիվ 86:

այն օգտագործելուն, ինչը կարող էր հանգեցնել, որ քրիստոնյան զենքի դիմեր նաև իր չահերի ու արժանապատվության պաշտպանության համար: Իսկ դա նրան կքարձրացներ մահմեդականի հետ իրավահավասար մակարդակի, կնշանակեր իսլամական համակեցության համակարգի խորտակում և մահմեդականների գերիչխանության վերջ:

Նույնն էր նաև կրոնական գործոնին կյանքի բոլոր բնագավառներում վճռական նշանակություն տալու իմաստը: Սկսած մանկահավաքությունից մինչև հարկային քաղաքականությունը, սեփականատիրական իրավունքից մինչև տնտեսական և լուսավորչամշակութային գործունեության ամենախոչոր, անգամ ամենամանր կենցաղային խնդիրների լուծումը՝ առաջնայինը կրոնական պատկանելիության սկզբունքն էր:

Քրիստոնյան իր յուրաքանչյուր քայլի համար պետք է հայցեր իշխանությունների թույլտվությունը՝ եկեղեցու կամ դպրոցի կառուցում, ազգային և կրոնական արարողություն (թաղում, հարսանիք և այլն), այնպես աղոթեր, որ մահմեդականը չլսեր: Այլակրոնների հանդեպ գործած հանցագործության անպատժելիության հետևանքով մահմեդականը սպանում էր ոչ մահմեդականին ու տիրանում նրա ունեցվածքին: Դրա համար էլ քրիստոնյան ձգտում էր խեղճ հագնվել, որպեսզի չարթնացներ մահմեդականի ագահ բնազդները: Հայը պարտավոր էր 3-4 ամիս կերակրել ու խնամել Մեքքա մեկնած մահմեդականի ընտանիքին, նա քաղաքից կարող էր դուրս գալ միմիայն հետիոտն, իր տան պատուհաններին ապակու փոխարեն յուղած թուղթ կպցնել, որպեսզի տան լույսը փողոց չընկներ...

Այնուամենայնիվ, կայսրությունում հայը հարատևեց, և այդ փաստը նույնպես պատմության կեղծարարների կողմից վկայակոչվում է իբրև հայերի «բարեկեցիկ վիճակի» ապացույց: Մինչդեռ այդ հարատևումն ուներ միանգամայն այլ պատճառներ: Նախ. հայը ապրում էր իր բնօրրանում, հոծ զանգվածներով, իսկ շատ տեղերում բնակչությունը գրեթե միատարր հայկական էր: Երկրորդ. հայը քաղաքակրթությամբ շատ ավելի բարձր էր, քան թուրքը, այսինքն՝ հանձինս իր դարավոր ու զարգացած ազգային մշակույթի ու հոգևոր արժեքների, հայը բնաջնջման դեմ ավելի հզոր հակաթույն ուներ, քան թուրքերի այլամերժության բացիլները, որոնք որքան բարբարոս ու դաժան էին, նույնքան էլ՝ պարզունակ ու անցողիկ: Երրորդ. ուծացման խնդրում կայսրությունում զուգահեռ գործում էին երկու իրարամերժ միտումներ՝ ուծացնել՝ բնակչության ազգային կազմը հօգուտ թուրքերի փոխելու համար և ուծացումից ձեռնպահ մնալ՝ եկամուտի աղբյուրները չցամաքեցնելու համար: Այս երկչեղը քաղաքականության հետևանքով արևմտահայության աճը կասեցվեց, նրա դեմոգրաֆիկ տեսակարար կշիռը նվազեց, բայց հայը չարունակեց գոյատևել, ապրել: Իհարկե, երկրորդական նշանակություն չունեին նաև հայ ժողովրդի էթնիկական մի քանի գծերը՝ կենսունակություն, կյանքի ամենադժոխային պայմաններին անգամ հարմարվելու և դրանք իր գոյատևմանը ենթարկելու կարողություն, անհաղթահարելի լավատեսություն: Չորրորդ. Օսմանյան կայսրությունը վերազգային էր, և թուրքը ոչ միայն ազգ չէր, այլև զուրկ էր համազգային գիտակցությունից: Դարեր չարունակ նրա համար գերխնդիր են եղել զավթումները, թալանը, ժողովուրդներին նվաճելն ու նրանց հարկադրելը՝ ապահովել Օսմանի թոռների պորտաբույծ կյանքը: Թուրքը պահանջում էր անմռունչ հպատակություն և իր պահանջները բավարարելու անվերապահ պատրաստակամություն: Այս առումով հայն անփոխարինելի՝ հպատակ էր: Հինգերորդ. հայի մեջ հզոր էր ազգային գիտակցությունը, նա պատրաստ էր տանելու ամեն տեսակի հալածանք՝ պայմանով, որ մնար հայ: Հայի հայ մնալուն օբյեկտիվորեն նպաստում էր իսլամի ու քրիստոնեության անհաշտ առճակատումը, ինչը նրան մղում էր հավատարիմ լինել իր կրոնին՝ իբրև հայ մնալու գրավականի: Հարկ է նկատի ունենալ նաև այն, որ օսմանահպատակ հայերի վիճակը միատեսակ չէր: Արևմտյան Հայաստանում հայերը ավելի դաժան ճնշումների էին ենթարկվում, քան Փոքր Ասիայի քաղաքներում, մասնավորապես, կայսրության արևմտյան շրջաններում:

Արևմտյան Հայաստանը ծայրամաս էր, հետևաբար օրենքներն այնտեղ շատ թույլ էին գործում կամ, ընդհանրապես, չէին գործում: Բայց գլխավորն այդ չէր, այլ այն, որ Հայաստանից դուրս բնակվող հային սուլթանական կառավարությունը ոչ միայն վտանգավոր չէր համարում, այլև գտնում էր, որ նա տերության համար օգտակար, կառուցողական ուժ էր: Հայը սուլթանական վարչակարգի համար վտանգավոր էր իր բնօրրանում և հենց այդ հային էլ ենթարկվում էր վայրագ հալածանքների ու կոտորածների, որպեսզի լքեր Հայաստանը, հեռանար, ինչը հնարավորություն կտար այն վերածել իրոք Արևելյան Անատոլիայի՝ դարձնել թուրքերի հայրենիք: Սակայն Հայաստանից արտագաղթած հայերի զգալի մասը մնաց կայսրությունում, համեմատաբար բարվոք պայմաններում և ժամանակի ընթացքում վերածվեց ազգային-քաղաքական նոր գործոնի, որն առաջատար ու ղեկավար դեր ստանձնեց հայ կյանքում ու ազգային շարժման մեջ:

Ակնհայտ է, որ Օսմանյան կայսրության ռազմական, քաղաքական, վարչական, տնտեսական և սոցիալական կառույցների բնույթի, դրանց գործունեության նպատակաուղղվածության մեջ դարերի ընթացքում սկզբունքային նշանակության փոփոխություններ տեղի չեն ունեցել, հետևաբար այն պնդումը, թե նախկիններում պետական կառույցներին հաջողվում էր ապահովել հպատակների, նկատի ունենք հայերի, անվտանգ, բարեկեցիկ կյանքը, իսկ 19-րդ դարի երկրորդ կեսերին դա անհնար դարձավ ներքին և արտաքին պատճառներով, կեղծիք է:

Ճշմարտությունն այն է, որ այդ նոր ժամանակներում թուրքական ազգայնամոլները համոզվեցին, որ սոցիալ-տնտեսական ճնշումների, հարստահարությունների, ազգային-կրոնական-մշակութային հալածանքների միջոցով կայսրությունում հայ ժողովրդի գոյությունն անհնար դարձնելը դատապարտված էր ձախողման: Ելքը համարվեց հայության բնաջնջումը:

## 3. ԹԱՆԶԻՄԱԹ. ՀԱՑ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՌՃԱԿԱՏՄԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

19-րդ դարի 30-50-ական թվականներին Օսմանյան կայսրությունում իրականացվեցին մի շարք միջոցառումներ՝ խորացող անիշխանությունը, փաշաների ու աղաների ինքնագլխությունը հաղթահարելու, կենտրոնական իշխանությունն ուժեղացնելու ուղղությամբ: Այդ գործում Կ. Պոլիսը հենվում էր ապրանքային հարաբերությունների ծնած հասարակական խավերի և այն հողատերերի ու մեծահարուստների վրա, ովքեր հարստացել էին ավատատիրական-ռազմական համակարգի ճգնաժամի հետևանքով: Սուլթանական պալատում ու Բ. Դռան կառույցներում սկսել էին երևալ պաշտոնատարներ, ովքեր ոչ միայն եվրոպական կրթություն էին ստացել, այլև ձգտում էին եվրոպականացնել Թուրքիան: Այդ հոսանքի առաջին խոշոր ներկայացուցիչ, մեծ վեզիր Մեհմեդ Ռեշիդը, անցնելով թուրքական բանակի գլուխը, կայսրության ամբողջ տարածքով մեկ պատերազմեց քրդական բեկերի, ինչպես նաև ավազակախմբերի դեմ: Բնականաբար հայերի համակրանքը Ռեշիդի կողմն էր[23]:

Այդ փաշան նաև գործադրեց էթնիկական նոր քաղաքականություն: Նա Արևմտյան Հայաստանի կենտրոնական շրջաններից մեծ թվով հայերի տեղափոխեց քրդաբնակ շրջաններ՝ նպատակ ունենալով կենտրոնական նահանգներում թուլացնել հայերին, իսկ ծայրամասային նահանգներում՝ քրդերին: Այսպես, օրինակ, նա փորձեց Խարբերդի հայությանը տեղափոխել Դիարբեքիր, իսկ քրդական խիտ բնակչություն ունեցող այդ վիլայեթի քրդերին վերաբնակեցնել Դերսիմում և Ջարսանջակում: Հատկանշական մի փաստ ևս. բնակության նոր վայրերում քրդերը մեծ քանակությամբ հողեր ստացան ի

[23] Անդրանիկ Տեր-Սիմ, Ճանապարհորդություն և տեղեկագրություն, Թիֆլիս, 1901, էջ 53:

*հաշիվ հայերի, քրդական զինված ջոկատներ ստեղծվեցին օսմանյան բանակին օգնելու համար: Բանակի վերակառուցման գործում թուրքերին մեծ օգնություն ցույց տվեցին գերմանական մասնագետները՝ Հելմուտ ֆոն Մոլտկեի գլխավորությամբ: Սակայն Կ. Պոլսին չհաջողվեց ամբողջությամբ կյանքի կոչել իր ծրագրերը: Անհաջողության մատնվեցին զենքի ուժով Բաղեշի, Վասպուրականի և Տարոնի քուրդ ցեղապետներին հպատակեցնելու ջանքերը: Սուլթանը հարկադրված եղավ ճանաչել նրանց իշխանությունը, նույնիսկ ինքնավարության ֆերմաններ (սուլթանական հրովարտակներ) բաժանեց, փոխարենը ցեղապետերը պարտավորվեցին ճանաչել Բ. Դռան գերիշխանությունը*[24]*: Նման զիջումը բացատրվում է երեք պատճառով: Նախ՝ Օսմանյան բանակը վերակառուցման գործընթացի մեջ էր՝ անկարող իրականացնելու խոշոր մարտական գործողություններ: Երկրորդ՝ եգիպտացիները գրավել էին կայսրության հարավի լայնարձակ տարածքներն ու կանգնել Անատոլիայի դռների առջև: Եվ երրորդ՝ Բ. Դուռը հավատարիմ էր իրեն, նա չէր ուզում քուրդ ցեղապետների հետ թշնամանալ: Ահա այս պայմաններում հրապարակվեցին մի շարք օրենքներ, որոնք կոչված էին բարեփոխումներ մտցնելու կայսրության կյանքում: Բարենորոգումների ծրագիրը հրապարակվեց 1839թ. և կոչվեց Գյուլխանեի Հաթթը-շերիֆ (Վարդաստանի հրովարտակ)*[25]*: Այն կայսրության բնակչությանը, անկախ ազգային և կրոնական պատկանելիությունից, համարում էր իրավահավասար, խոստանում էր ունեցվածքի, պատվի և կյանքի անվտանգություն:*

*Թանզիմաթը հային ևս հնարավորություն տվեց հողեր գնելու, և վերջիններս չհապաղեցին դրանից օգտվել: Թանզիմաթը օրինականացրեց հողատիրոջ սեփականատիրական իրավունքները, մտցվեց թաբուի ինստիտուտը, այսինքն՝ անձը փաստաթուղթ էր ստանում, որ տվալ հողատարածքի սեփականատերն էր, թույլատրվեց պետական ու համայնքային հողերի առքուվաճառքը: Սակայն թաբուն դուռ բացեց նաև չարաշահումների համար, ապօրինի փաստաթղթերի միջոցով ոչ մեծ թվով անձինք տիրացան լայնածավալ հողատարածքների: Դրանից, առաջին հերթին, տուժեց հայ գյուղացին, ինչը ոչ միայն նպաստեց հայկական նահանգներ մահմեդականների ներհոսքին, այլև ձևավորեց ագրարային հարցը, որն այլ բան չէր, եթե ոչ մասնավորապես՝ հայ գյուղացու հողազրկման հարց:*

*Դրան հակառակ՝ Թանզիմաթից մեծ օգուտներ քաղեց խոշոր քաղաքներում բնակվող հայերի մի մասը՝ շատերը ներգրավվեցին պետական պատվերներ կատարողների, մյուսները՝ բանակի մատակարարների շարքերը: Որոշ հայեր հասան տնտեսական բացառիկ դիրքի՝ դրամանոցների տնօրեն (սեղանավոր), մաքսերի գանձման առանձնաշնորհ ունեցող, գործարանատեր, պետական չինարարական կազմակերպության ղեկավար և այլն:*

*Իհարկե, Թանզիմաթը ինչ-որ բան փոխեց, ինչ-որ բան բարելավեց, սակայն, ինչպես նշում է Թուրք պատմիչ Լութֆին, շատ ու շատ բաներ էլ չփոխվեցին, օրինակ, «տասանորդի հավաքման գործում շարունակում էին տեղ գտնել բազում ապօրինություններ ու չարաշահումներ... պետության գովասանքին արժանանալու ցանկությամբ հարկահավաքները... խաբում էին միամիտ մարդկանց, սահմանվածից ավելի տասանորդ հավաքում... բռնությունների գործադրմամբ հավաքված հարկերը մի քանի անգամ շատ էին Թանզիմաթից առաջ հավաքվածից... Մի հատիկ ավանակ ունեցող գյուղացին տարեկան 400-500 ղուրուշ հարկ էր վճարում... Եղել են դեպքեր, երբ առաջվա նման տասանորդի գանձումն իլթիզանի կարգով կամ աճուրդով տրվում էր տեղական երևելիներին ու ազդեցիկ անձանց, ովքեր 1840-44 թվականների հարկերը միանվագ էին հավաքել»*[26]*:*

---

[24] Շահպազեան Հ., *Քուրդ-հայ պատմութիւն*, Կ.Պ., 1911, էջ 64:

[25] Новичев А. Д., *Очерки экономики Турции до Мировой войны*, М.-Л., 1937, стр. 34-35.

[26] *Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և հարևան երկրների ժողովուրդների մասին*, հ. 4, Երևան, 1970, էջ 55-56:

Ա. Վանդալի կարծիքով՝ Թանզիմաթի կողմից ժողովրդական սկզբունքների հռչակումից հետո «որևէ փոփոխություն տեղի չունեցավ... Ժողովրդի ճակատագիրն ու կացությունը ավելի վատացավ»[27]: Պատճառները մի քանիսն են: Բարեփոխումների, այդ թվում՝ կրոնական հանդուրժողականության մասին, հրովարտակներն ու խոստումները Կ. Պոլսի համար ծառայում էին միայն միջոց Եվրոպայի աչքին թոզ փչելու բոլոր այն դեպքերում, երբ սուլթանը օգնության կամ ներողամտության կարիք էր ունենում: Բ.Դռան խոստումները արդյունք էին դրսի ճնշման, որի թուլանալուն պես, դրանցից հրաժարվում էր:

Էնգելսը գտնում էր, որ Թանզիմաթը վերացրեց բարենորոգումների ճանապարհին եղած առաջին և ամենամեծ խոչընդոտը՝ ծայրամասային նահանգները կառավարող փաշաների անկախությունը: Սակայն «նրանց տգիտությունը, հանդգնությունը և տեղում դուխելու հակումները մնացին այնպես, ինչպիսին էին ասիական սատրապների տիրապետության ծաղկման շրջանում, և եթե վերջին տարիներին մենք հազվադեպ ենք լսել փաշաների ապստամբությունների մասին, ապա դրա փոխարեն հաճախ ենք լսել նահանգների ապստամբությունների մասին իրենց ագահ կառավարիչների դեմ, որոնք նախկինում լինելով տնային աննշան ստրուկներ և ամեն ինչի ընդունակ մարդիկ, օգտվում են իրենց նոր դիրքից, որպեսզի հարստություն դիզեն հարստահարությունների, կաշառքի և հասարակության միջոցների անխիղճ չռայլման ճանապարհով»[28]:

1856թ. փետրվարի 18-ին հրապարակվեց նոր հրովարտակ, որը կոչվեց Հաթթը-Հումայուն: Մղումը նույնն էր՝ ոչ թե իրական բարենորոգումը, այլ խոսանավումը, քանի որ առջևում Փարիզի վեհաժողովն էր: Նոր հրովարտակում առաջնայինը այլակրոնների խնդիրն էր: Սահմանվում էր օրենքի առաջ բոլոր օսմանահպատակների հավասարություն, վերացվում էր խարաջը, քրիստոնյան կարող էր զբաղեցնել ամենատարբեր պաշտոններ, նա ենթակա էր զինակոչի՝ ծառայությունից դրամական փոխհատուցմամբ ազատվելու պայմանով, ստեղծվում էին խառը դատարաններ մահմեդականների ու քրիստոնյաների միջև ծագած վեճերը լուծելու համար, քրիստոնյաները ներկայացուցիչներ էին ունենալու վարչական խորհուրդներում: Վերահաստատվում էին այլակրոնների ներհամայնքային որոշ իրավունքներ, նրանց թույլատրվում էր ընտրելու հոգևոր խորհուրդներ: Ակնհայտ էր, որ նոր հրովարտակն առաջին հերթին նպատակ ուներ ապացուցելու, թե օսմանահպատակ քրիստոնյաների իրավունքներն ու անվտանգությունն ապահովված էին, ինչը ավելորդ էր դարձնում այդ հպատակների հովանավորությունը Ռուսաստանի կողմից:

Նորից խնդիր դրվեց «վերանվաճել կայսրությունը» քրդերից, այսինքն՝ նոր հարվածներ հասցնել քրդերի ավատատիրական ինքնագլխությանը: Պլանավորվում էր հարցը լուծել քրդերին հայերի դեմ հանելու, միջցեղային կռիվներով քրդերին զբաղեցնելու, նրանց թուլացնելու միջոցով:

Սակայն այդ տարիներին չհաջողվեց քրդերի լայն շրջաններին ոտքի հանել հայերի դեմ: Օրինակ, Բեդրըխանը «Մոկաց բերդերի վրա քայլելու ժամանակ կկռվե քուրդ և հայ արշավողներով: Աբդուլ բեյն իր բերդերեն կպատասխաներ քուրդ և հայ պաշտպանյալներով»: Սակայն նաև իրողություն էր, որ նույն Բեդրըխանը դեպի Վան չարժվելու ընթացքում ավերեց ճանապարհին ընկած հայկական գյուղերը[29]:

Ամբողջությամբ վերցրած Թանզիմաթը ձախողվեց: Նախ, որովհետև այն կոչված էր սահմանափակելու ավատատիրական վերնախավի ինքնագլխությունը: Ուլեմաները քրիստոնյաների և մահմեդականների իրավահավասարության մեջ տեսան միջոց՝ կայս-

---

[27] Շահլազեան Հ., նշվ. աշխ., էջ 81:

[28] Маркс К. и Энгельс Ф., *Сочинения*, т. X , стр. 656.

[29] Ձերազյան Լ., *Ժամանակակից ընդարձակ քննական պատմություն Հայոց*, Հ. Ա., Մարսել, 1933, էջ 153:

*րությունում հաստատելու աշխարհիկ կառավարում: Ուստի դերբեյների հետ ձեռք-ձեռքի տված՝ վարկաբեկեցին Թանզիմաթը և դրա դեմ դժգոհություններ հրահրեցին:*

*Մահմեդականը սովոր էր ռայայի վրա նայել որպես իրավազուրկ անորոշության և հրաժարվեց քրիստոնյա սպային կամ պաշտոնատարին ենթարկվել. չէր ներկայանում խառը դատարաններ, բոյկոտեց նահանգային և մյուս խորհուրդները, ընդդիմացավ քրիստոնյաների զինակոչին: Մահմեդական առևտրականն ու արհեստավորը սարսափում էին քրիստոնյա արհեստավորի ու առևտրականի հետ հավասար իրավունքներ ունենալուց: Բարենորոգումները ձախողելու համար տեղ-տեղ նույնիսկ քրիստոնյաների ջարդեր կազմակերպվեցին:*

*Այս ամենը վախեցրին սուլթան Աբդուլ Մեջիդին: Նա Ռեշիդին և բարեփոխումների մյուս հայրերին պաշտոնանկ արեց ու ֆերման հրապարակեց՝ «... մեր ցանկությունները սխալ ընկալած անձինք երևակայում են, թե պետության ներքին կարգն ու քաղաքական վիճակը փոխվել է»[30]:*

*Կ. Պոլսի "Courrier d'Orient"-ը 1867թ. հունվարին կասկած էր արտահայտում Թանզիմաթից ակնկալվող հույսերի վերաբերյալ ու նշում, որ տարբերություն չի նշմարվում մինչ և հետթանզիմաթյան չրջանների միջև: Կայսրությունում չարունակվում էին անկման գործընթացները, չորքաջինները գնալով սաստկացնում էին զանգվածների չահագործումը, կոռուպցիան համընդհանուր բնույթ էր ստացել:*

*Ի. Գոլոբորոդկոյի բնորոշմամբ՝ Մուհամմեդ 2-րդը դերբեյների ինքնագլխությունը փոխարինեց դեսպոտիզմի ինքնագլխությամբ, և այլևս օսմանցիներից ոչ ոք, սկսած ողորմելի գյուղացուց մինչև հզորագույն մեծ վեզիրը, վստահ չէին կարող լինել իրենց անձի ու ունեցվածքի անվտանգության համար[31]:*

*Դրա հետ միասին, Թանզիմաթն ամբողջ մերկությամբ ցուցադրեց թուրքական վարչակարգի արատները: Արդյունքում դժգոհությունները հաճախակի դարձան հասարակության բոլոր չերտերում ու ազգերի չրջանում: Բ. Դուրը ահաբեկված ահագնացող դժգոհություններից, մանավանդ քրդական ապստամբություններից, նորից սկսեց հրահրել ազգամիջյան բախումներ: Նման առաջին լուրջ քայլն արվեց Բեդըրխանի ապստամբության ժամանակ: Կ. Պոլսի սադրանքով քրդերը ոչնչացրին 10 հազար ասորի:*

*Այդ ապստամբությունն ընթացքի մեջ էր, երբ ըմբոստության դրոշ պարզեց նաև Վան-Կուլերը, նրան ձեռք մեկնեց քրդական մի այլ առաջնորդ՝ Խան Մահմուդը: Շուտով քրդական բոլոր ուժերը միավորվեցին Բեդըրխանի հրամանատարության ներքո: Շարժման նպատակն էր ստեղծել անկախ Քրդստան: Հայերին սիրաչահելու համար Բեդըրխանը խոստանում էր թույլատրել ստեղծելու նաև անկախ Հայաստան:*

*1847թ. Բ. Դուրը վճռական քայլերի դիմեց քրդական չարժումները ճնշելու համար: Այդ գործում ներգրավվեցին նաև հայերը, որոնք քրդական հարստահարություններից ու բռնություններից ազատվելու հույսով նյութապես օժանդակում էին թուրքական բանակին, կռվում քրդերի դեմ: Հայ աչխարհազորը ոչ միայն հերոսաբար պաչտպանեց Վան քաղաքը, այլև Խան Մահմուդին գերի վերցրեց ու հանձնեց թուրքական բանակի հրամանատար Օսմանին: Ջախջախվեցին նաև ապստամբների գլխավոր ուժերը: Քրդական ցեղապետերի իչխանությունը վերացվեց, և ձևավորվեցին պետական իչխանության թուրքական մարմիններ: Հայաստանում ավարտվեց օսմանյան նոմինալ տիրապետության մի քանի դար տևած ժամանակաշրջանը: Սակայն դրանով հայերի վիճակը չբարելավվեց, քանի որ նրանց հանդեպ քրդերի իրավունքներն ու բռնությունները միայն մասնակիորեն վերացան, մինչդեռ դրանց գումարվեցին թուրքական իչխանությունների հարստահարությունները, պետական հարկերն ու տուրքերը:*

---

[30] *"Hürriyet"*, 11.03.1982.

[31] **Голобородько И.**, *նչվ. աչխ.*, էջ 193.

Արևմտահայերի ծանր վիճակը հիմնականում պայմանավորված էր կառավարման ու դատական, հարկերի բաշխման ու հավաքման բնագավառներում պաշտոնատարների չարաշահումներով, կրոնական ու քաղաքական հալածանքներով: «Պաշտոնատարների մեծամասնությունը օրենքներից գաղափար չուներ, զուրկ էր կառավարելու ունակությունից և զբաղեցրած պաշտոնին նայում էր որպես անձնապես հարստանալու միջոցի: Նահանգային և մյուս մակարդակների պաշտոնատարները պարբերաբար չրջագայում էին իրենց իրավասության տակ գտնվող բնակավայրերը՝ «սեփականահավաքումների» համար: Նման մեկ չրջագայությունն, օրինակ, վալուն բերում էր 30-40 ձի և 20-30 հազար ռուբլու այլևայլ միջոցներ, իսկ սուլթանն ու Բ. Դուռը պաշտոնատարներին ամիսներով աշխատավարձ չվճարելով, փաստորեն, օրինականացրել էին նման «հավաքումները»[32]:

Երբ ծանոթանում ես օսմանյան օրենքներին, տպավորություն ես ստանում, որ կայսրությունում ազգային խտրականությունն իսպառ բացակայել է: Բայց դա միայն օրենքի առումով: Ճիշտ է, Թուրքը ևս ենթակա էր Փադիշահի իշխանությունների ճնշումներին, սակայն նրա անձը, սեփականությունը և կրոնն անձեռնմխելի էին կողմնակի ոտնձգություններից՝ դատարանը պաշտպանում էր նրա իրավունքները: Իսկ հայերին «կարող էր ճնշել ու թալանել ամեն ոք, ով դրա համար բավարար ուժ ուներ: Մահմեդականի դեմ նրա ցուցմունքները չէին ընդունվում, այսինքն՝ նա պաշտպանված չէր: Դրա համար էլ նրա կյանքն ու սեփականությունը ոտնձգությունների օբյեկտ էին բոլոր մահմեդականների համար՝ սկսած պաշտոնավորներից, վերջացրած վերջին սինլքորով: Իշխանությունների աչքի առջև, հաճախ՝ նաև նրանց համաձայնությամբ, բեյերը բաշիբոզուկներից ստեղծել էին 500-600 հոգուց կազմված ավազակախմբեր, որոնց «գործողությունների» հիմնական օբյեկտները հայն ու նրա ունեցվածքն էին: 1861թ. մայիսին Պեշիկթաշի վարժարանի տնօրեն Մ. Տատյանը Փարիզում Օսմանյան դեսպանատան խորհրդական Հ. Կրճիկյանին գրում է, թե «ինչ աստիճանի նեղություն, աղքատություն և թշվառություն է տիրում... օրեցօր յուրաքանչյուրի վրա ծանրանում են դժբախտություններ ու նեղություններ և գրեթե բոլորը հուսահատվել են»[33]: Զեյթունից ահազանգում էին, որ հայերը չրջափակված են, գաղթական ռեճերցիների «սվինները հեղում են հայերի անմեղ արյունը, չհաշված այն սպառնալիքները, որ մենք լսում ենք: Սպանում են նաև չերքեզները»[34]:

Այսպիսով, օսմանյան հասարակության ընդհանուր ճգնաժամն այնքան էր խորացել, որ բարեփոխմանն ուղղված ցանկացած քայլ ձախողվում էր կամ ավելի սրում ազգային և կրոնական հակասությունները, դրանք վերածում առճակատման:

## 4. ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՋԵՎԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԴԵՄՔԸ

Դերբեյությունների վերացումը էական փոփոխություններ չմտցրեց սեփականատիրության համակարգում: Կայսրությունում հողերի գերագույն սեփականատերը չարունակում էր մնալ պետությունը: Սուլթանը ոչնչացնելով փաշայական-դերբեյական համակարգը, իր համար ձևավորում էր սոցիալական հենարան, հանձինս նոր հողատերերի: Բայց դա փոփոխություն էր միայն հասարակության վերին չրջանակներում, իսկ գյուղացիները չարունակում էին մնալ նախկին հողային հարաբերությունների կապանքներում: Պարզապես փոխվեց չահագործողների կազմը, այլ ոչ թե վերացավ չահագործումը:

---

[32] Голобородько И., նշվ. աշխ., էջ 233.
[33] ԳԱԹ, ֆ. Ազատյան Թ., գ 10870:
[34] Նույն տեղում, թ. II, գ 2786:

*Փոխվեցին հարկերի անունները, պարհակների ձևերը, բայց անփոփոխ մնացին դրանց բովանդակությունը, ֆեոդալական ռենտան:*

*Շարունակեցին գոյություն ունենալ հողատիրության հետևյալ ձևերը՝ պետական, մասնավոր, կրոնական հաստատությունների (վակֆային), համայնական, չօգտագործվող: Պետական և վակֆային հողերը կալվածագրերով հանձնվեցին թուրք, քուրդ, մասամբ նաև՝ հայ վերնախավին:*

*Հողատիրությունը վերածվեց քուրդ, թուրք և հայ ազգաբնակչության հարաբերությունները սրելու միջոցի: Ոչ շատ ժամանակ անց հայ հողատերերը սեփականազրկվեցին, նրանց հողերը բռնագրավեցին ու հանձնեցին մահմեդական կալվածատերերին: Բեռլինի կոնգրեսի նախօրյակին Ջարսանջակի հողերի 5/6-ը պատկանում էր 24 թուրք և քուրդ հողատերերին, Խարբերդում թուրքերին էր պատկանում հողերի 3/4-ը: Այդպես էր նաև մյուս գավառներում:*

*Բնութագրական մի փաստ ևս: Թե՛ Բեղըրխանի և թե՛ Եզդանչիրի քրդական տները ապստամբությունների ճնշումից հետո ոչ միայն իրենց կալվածքները չկորցրին, այլև էականորեն ընդլայնեցին: Եվ դա արվեց սուլթանի ֆերմաններով: Դեռ ավելին, աքսորված քուրդ ցեղապետերին թույլատրվեց վերադառնալ նախկին բնակավայրերը և տիրանալ իրենց երբեմնի կալվածքներին:*

*Ռուս զինվորական Ա. Կոլյուբակինը նկատում է. «Այնտեղ, որտեղ հայերը մեծաթիվ էին կամ ավելի կենտրոնացած, որտեղ հողագործը հող ուներ, նրանց վիճակը միանգամայն բավարար էր: ...Կային նաև այնպիսի վայրեր, որտեղ հայերը փոքրաթիվ էին, ցրված և գտնվում էին քրդերից (հազվադեպ նաև թուրքերից) ուժեղ կախվածության մեջ, պարզապես բանվորական ուժ էին կիսանկախ աշիրեթությունների համար, նման տեղերում նրանք ենթակա էին մեծ ճնշումների ու ստորացումների: Որոշ գյուղերում հայերը իրավազուրկ ստրուկի վիճակում էին»[35]:*

*Հողային հարաբերություններում չփոթ էր տիրում: Կորանը մերժում էր հողի մասնավոր սեփականությունը, և այդ պատճառով էլ հողատիրության վերաբերյալ փաստաթղթեր գրեթե գոյություն չունեին, ինչը նույնպես նպաստավոր հանգամանք էր հայերի հողերը զավթելու համար: «Բեյերն ու աղաները յուրացնում էին քրիստոնյաներին պատկանող դաշտերն ու այգիները՝ դրանք համարելով իրենց ավատատիրական կալվածքներ»[36]:*

*Վանքերը, եկեղեցիներն ու դպրոցները հողատեր չէին ճանաչվում պատճառաբանությամբ, թե կալվածատեր կարող են լինել միայն անհատները: Մինչդեռ մահմեդական դպրոցն ու մզկիթը սեփականատեր էին:*

*Հայերին հարստահարում էին թե՛ պաշտոնատարները, թե՛ մահմեդական բեյերն ու աղաները և թե՛ իսլամ հասարակ ժողովուրդը: Պաշտոնատարների կողմից հարստահարությունը հիմնականում կատարվում էր հարկահավաքության ասպարեզում: Նույն հողի համար հայ գյուղացին հարկադրված էր երկու անգամ հարկ վճարել, մեկը՝ հողային հարկ, մյուսը՝ տասանորդ: Իսկ հողազուրկ հայը, երբ վարձակալում էր հողը, վճարում էր չորս հարկ, երկուսը՝ պետությանը, երկուսը՝ կալվածատիրոջը:*

*Օրենքը հայի դեմ էր, և այդ հանգամանքը հատկապես աղետալի էր անդրադառնում տնտեսական գործունեության վրա: Վասպուրականում մահմեդականը կեղծ վկաներով մի հայի բանտ էր նստեցնել տվել, թե իբր պարտք ուներ: «Այսպես,– գրում է Րաֆֆին,– ամեն մահմեդական կարող է ցանկացած հայի կողոպտել, վկաները նրա համար պակաս չեն լինի, և ինքը՝ դատավորը, կնպաստի նրա չարագործությանը, որով-*

---

[35] Колюбакин А. М., նշվ. աշխ., էջ 119-120.

[36] Голобородько И., նշվ. աշխ., էջ 226.

հետև ստացած արծաթի մի մասն իրեն է պատկանում...»[37]: Բողոքելն ավելորդ էր, քանի որ հաշվի չէր առնվում ու միաժամանակ վրեժխնդիր էր դարձնում հարստահարիչներին:

Հետաքրքիր մի փաստ. պատրիարքարանի տեղեկագրերում մինչև 1982թ. հողային խնդիրների մասին նյութեր չկան: Իսկ 1872-76թթ. ընթացքում արձանագրված են գյուղերի ու հողերի հափշտակության 263 դեպք: 1874թ. Վանի վիլայեթում հողերի հափշտակություն է կատարվել 160, իսկ Դիարբեքիրի վիլայեթում՝ 110 հայաբնակ գյուղերում: Բիթլիսի վիլայեթում բռնագրավվել էր 252 հազար հա[38]: Այսինքն՝ հողերի զավթումները մեծիմասամբ նոր երևույթ էին և հավանաբար կապված էին քրդերին և ուրիշ մահմեդականների՝ հայերի հողերի վրա նստակյաց դարձնելու իշխանությունների քաղաքականության հետ[39]:

Հաճախ նույն հողատարածքը ընդհանուր օգտագործման էր տրվում հայերին ու քրդերին՝ նրանց միջև թշնամություն բորբոքելու համար: Նաև օրենք ընդունվեց, որ եթե մեկը 10 և ավելի տարի, թեկուզ բռնի ուժով, օգտագործել է ուրիշին պատկանող հողը, ապա այդ հողը մնում է նրան: Դրա հետևանքով հայերի հողերի, մասնավորապես արոտավայրերի, զգալի մասն անցավ մահմեդականներին:

Զավթումները շատ հաճախ տեղի էին ունենում առանց որևէ պատճառի կամ պատրվակի: «Ազգակցական ամուր կապերով կապված լինելով մայրաքաղաքի կամ գավառների երևելիների հետ՝ հողերի զավթիչներն իրենց կատարելապես անպատիժ էին զգում»[40]: Նման դեպքերում սկսվում էր տևական դատական գործընթաց՝ 10-20 տարի և այդ ամբողջ ընթացքում հողը մշակում էր բեյը, որը և ի վերջո դառնում էր «օրինավոր» տեր: Հայերի հողերի զավթումները զանգվածային դարձան զուլումի տարիներին: «Բեյերն ու աղաները զգացին ազդեցիկ աջակցություն և իրենց հավակնություններում կտրուկ չրջադարձ» կատարեցին ի վնաս հայերի[41]:

Հայերի ունեցվածքի հափշտակության գործում իշխանությունները և տեղական աղաներն ու բեյերը համատեղ էին գործում՝ խլում էին մշակելի հողերը, անասունները, նույնիսկ եկեղեցիները: Հայերին այլ բան չէր մնում, եթե ոչ հնազանդվել: Սեփական հողի վրա մնալ կիսաճորտ՝ մարաբա, և կամ գաղթել: Դեռ ավելին, ոայա հայը ամրացվում էր հողին և վերածվում կատարյալ ճորտի:

Կառավարչական կառույցների ղեկավարները ամենամեծ հողատերերն էին:

Ոչ միայն հողատիրության համակարգը, այլև հողերի օգտագործումը ռազմա-ավատատիրական բնույթ ունեին, քանի որ երաչխավորված էին պետական հովանավորչությամբ ու ոստիկանական-ռազմական ուժով: Հողատիրող տրամադրության տակ էին իշխանության բոլոր օղակների աջակցությունը, ինչպես նաև սեփական կամ պետական ռազմական ուժը: Ոչ քիչ դեպքերում հողատերերն այնքան էին հզորանում, որ վտանգավոր էին դառնում անգամ իշխանությունների համար: Վերջիններս նրանց պատժելու կամ սանձահարելու ուղղությամբ շատ բան անել չէին կարողանում, քանի որ ունեին զինված ուժ:

Թուրք կալվածատերերը հիմնականում քաղաքաբնակ էին և հողերը մշակել էին տալիս կապալով: Եթե կապալառուն մահմեդական էր, վճարում էր կապալավարձ, այսինքն՝ բերքի 1/3-1/2-ի չափով, իսկ եթե քրիստոնյա էր, բացի կապալավարձից պարտավոր էր կատարել անվարձահատույց բազում աշխատանքներ:

«Մշտապես կապալառուների վիճակը ծանր էր, նրանց ճնշում էին կալվածատերը կամ կառավարիչը, կաշառքներով ու տուրքերով՝ պաշտոնեությունը, և վերջնականա-

---

[37] Ռաֆֆի, *Երկերի ժողովածու (եժ)*, հ. IX, Երևան, 1958, էջ 253:
[38] «*Մասիս*», 30.05.1879:
[39] Ռաֆֆի, նշվ. աշխ., էջ 253:
[40] Голобородько И., նշվ. աշխ., էջ 226:
[41] Նույն տեղում, էջ 228:

պես սնանկացնում էին վաչխառուն, մուլթեզիմը, որոնք 1/10-ի փոխարեն վերցնում էին բերքի 1/8 ու 1/7 մասը»[42]:

Եթե նկատի առնվեն նաև տուրքերի ու հարկերի քանակն ու ծավալը, ապա հասկանալի կդառնա, թե ինչու գյուղատնտեսությունը նախնադարյան մակարդակին էր. գյուղացին չահագրգռված չէր երկրագործության մեջ ներդրում կատարել, կատարելագործել մշակման եղանակներն ու միջոցները, քանի որ բերքատվության աճից չահ չուներ, այն անցնում էր հողատիրոջը:

Ի տարբերություն քաղաքի, գյուղում տնտեսական կյանքն աստիճանաբար անցավ մահմեդականներին: Քանի որ մեջիդներին ու բարեգործական հաստատություններին պատկանող հողերից հարկ չէր գանձվում, 19-րդ դարում այդ հաստատությունների սեփականությունը դարձավ հողերի 2/3-ը:

Անմշակ հողերը, որոնք հիմնականում պատկանում էին արտագաղթած հայերին ու չքավոր՝ քաշող ուժ ու սերմեր հայթայթելու հնարավորություն չունեցող գյուղացիներին, թաքու էին արվում, այսինքն՝ քսան տարի ժամանակով հանձնվում էին ուրիշներին, և վերջիններս իրավունք ունեին դրանք ժառանգելու, վաճառելու: Սակայն քանի որ թաքու արված հողերի պատկանելիությունն անորոշ կարգավիճակում էր (դրանք ոչ պետական էին և ոչ էլ լրիվ մասնավոր), պաշտոնատարներն ու մահմեդական վերնախավը հնարավորություն ունեին ամենատարբեր միջոցներով դրանց տիրանալու: Սովորաբար թաքու արված հողը հասնում էր նրան, ով ավելի շատ կաշառք էր վճարում: Կաշառքի ուժով ոչ միայն անհատները, այլև ամբողջ գյուղերն էին հողազրկվում: Կաշառքը՝ բակշիշը, ամենազոր էր և տրվում էր՝ սկսած զափթիեից (հարկահավաք ոստիկան) մինչև սուլթանը: Իսկ որտեղ կաշառք, այնտեղ չարաշահումներ, որոնց կարելի էր հանդիպել «ամեն քայլափոխի, սակայն բարդություններից խուսափելու համար դրանք գլխավորապես չորթում էին ի հաշիվ իրավազուրկ քրիստոնյա բնակչության»[43]:

Ռուս գործակալ Տերմենը հետևյալ կերպ է նկարագրում հայ գյուղացու հողազրկվելն ու դրա հետևանքները: «Երբ քրիստոնյա գյուղացին գնալով աղքատանում է, ավելի ու ավելի սովյալ, հացի կարոտ դառնում, զրկվում հողն իր համար մշակելու հնարավորությունից, դառնում մարաբա, ապա նաև վերջնականապես կորցնում իր ամբողջ ունեցվածքը և ապրում միայն օրավարձու աշխատանքով, հետևանքն այն է լինում, որ վերածվում է մուրացկանի, թափառում երկրով մեկ ու կործանվում: Միայն դեռևս դիմակայելու ընդունակ երիտասարդությունն է թաքուն վաստակի մեկնում ուրիշ երկրներ՝ անիծելով այն կառավարությանը, որն իր հպատակներին հասցրել է լրիվ ընչաքաղցության ու կործանման»[44]:

Հայերի հողազրկման գործընթացը ավելի ու ավելի էր դառնում համընդհանուր չարիք: Կոլյուբակինի վկայությամբ «Քարաչորում, որտեղ առաջ հայերը երեք անգամ շատ էին և գրեթե բոլորն էլ սեփական հողեր ունեին, դարավերջին հողերի ճնշող մեծամասնությունը պատկանում էր արտոնյալ քրդերին: Հայկական գյուղերից միայն Ուզանովան էր մշակում իր սեփական հողերը, իսկ մնացած բոլորը վարձակալում էին քրդերից...»[45]: Բուլանըխում հայերը չէին կարողանում մշակել հողը, և մեծ քանակությամբ հողեր խոպան էին դարձել: Բալուի կազայում գյուղացիների միայն քառորդ մասն էր մշակում սեփական հողը, մնացած 3/4-ը վարձակալում էր տարբեր ազգությունների պատկանող հողատերերից:

---

[42] Голобородько И., նշվ. աշխ., էջ 137:

[43] Термен Р., *Отчет о полевой поездке 1907 года в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах*, Тифлис, 1909, ч.II, стр.70.

[44] Նույն տեղում, էջ 71:

[45] Колобакин А. *М.*, նշվ. աշխ., էջ 132.

Ամենատարածվածը հողի վարձակալության կիսրար եղանակն էր: Այսինքն՝ գյուղացին հողը վարում, ցանում, մշակում, բերքը հավաքում էր և կեսը տալիս հողատիրոջը՝ բնամթերքով կամ դրամով: Բացի տասանորդից գյուղացին իր բաժին կեսից էր վճարում պետական մյուս հարկերը: Անչարժ գույքի էմլակը (հարկը) չատ վարձակալներ վճարում էին կալվածատիրոջ ամբողջ սեփականության համար: Նույնությամբ՝ նաև աղնամը (ոչխարի հարկը) և այլն:

Հայ գյուղացուն գազանաբար չահագործելը, նրան հողազրկելը ևս միջոց էին մահմեդական հողատիրության ծավալման համար: Դրա հետևանքով առաջացան հսկայական հողատարածքներ ունեցող տներ: Անատոլիայի հայտնի հարուստներից Հաջի Իզեթը մի կազայի տարածքի չափ հող ուներ: Հողատերերի միջուկը, սակայն չարունակում էին կազմել «թուրքական ծագմամբ առաջին նվաճողների՝ սելջուկների ու օսմանցիների ժառանգները, որոնք կազմում էին արտոնյալ դասակարգի մեծ մասը»[46]: Նրանց թիվը մեծացրել էին նաև ուծացված հայերն ու քրդերը:

Եթե հողատերերի ճնշող մեծամասնությունը մահմեդական էր, ապա հողազուրկները՝ հայեր էին: Խարբերդի կազայում հողազուրկ էր հայ գյուղացիների 74 %-ը, իսկ Պերճենչ նահիեում հող ուներ միայն 3,4%-ը: Նահանգի հյուսիս-արևմուտքում հողատեր էր հայերի 14,4%-ը: Հողազրկման գլխավոր եղանակը «վարելահողերի ու այգիների զավթումներն» էին, դրա համար էլ նշված կազայում հողազուրկ էր մահմեդականների միայն 23,2%-ը[47]: Խարբերդի կազայում մահմեդականներին պատկանում էր 39490 դեսյատին հող, իսկ հայերին՝ ընդամենը 6124 դեսյատին, այսինքն՝ մահմեդականները 6,5 անգամ ավելի չատ հող ունեին: Լեռնային շրջաններում տարբերությունը հասնում էր 10-12 անգամի: Բացի այդ, արոտավայրերը գրեթե ամբողջությամբ պատկանում էին մահմեդականներին: Վիլայեթում խոշոր հողատերեր էին թուրք աղալարները, քուրդ սուննիթները, կզլբաշները, հայ քաղաքաբնակները, վանքերը, պետական հիմնարկներն ու մզկիթները: Սակայն եթե թուրք աղալարներից չատերի հողատարածքները հասնում էին մի քանի, նույնիսկ 10 հազ. դեսյատինի, ապա հայերինը 100 դեսյատինից չէին անցնում, ընդ որում, Խարբերդի հարթավայրի 9 նահիեներում կար 166 հողատեր, որոնցից 110-ը թուրք աղալարներ էին: Նրանք ունեին 13200, իսկ հայերը՝ 1520 դեսյատին հող: Կազայի հարավ-արևմտյան մասում հայ հողատեր ընդհանրապես չկար: Մահմեդականների ձեռքին էին բերրի հողերը: Կազայի 205 գյուղերից 106-ի հողերը պատկանում էին մի քանի հողատերերի, իսկ 100-ի հողերը՝ մի թուրք հողատիրոջ: Դրա կողքին կազայում կար 40 հազ. հողազուրկ, որոնք հիմնականում մարաբա էին, «ճորտային կախվածության մեջ, իսկ ըստ էության, անհամեմատ ավելի ծանր պայմաններում»[48]: Մարաբա էր հարթավայրում՝ 26774 մարդ, այսինքն՝ բնակչության ճնշող մեծամասնությունը: Դրա համար էլ հողի վարձակալական գինը բարձր էր, իսկ աշխատող ուժինը՝ չատ ցածր: Այդ նկատի ունենալով՝ հողը վարձակալության տրվում էր մեկ տարով և ամեն տարի աճուրդների միջոցով թանկացվում էր: Գյուղացին պարտավոր էր հենց սկզբից վճարել ամբողջ գումարը կամ կեսը: «Ջունենալով դրամ՝ մարաբան հարկադրված էր այն բաժր տոկոսներով վերցնել նույն կալվածատիրոջից կամ վաշխառուից... Այսինքն՝ առաջին իսկ քայլից գյուղացին պարտապան էր»: Բոլոր վճարումները կատարելուց հետո ստացված բերքը չէր բավականացնում գյուղացու նույնիսկ սննդի կարիքները, և նա հարկադրված էր լինում պարտք վերցնել թե՛ սննդամթերք և թե՛ սերմ գնելու համար: Հողազուրկ գյուղացիների մեծ մասը քաչող ուժ չուներ, որը նույնպես վարձակալում էր: Գյուղացին խրվում էր պարտքերի մեջ, և հենց բերքը հասնում էր, երևում էր աշարի մուլթեզիմը, նրա ետևից՝ պարտքատերերը, և սկսվում էր բերքի բաժանումը, նաև վա-

[46] Նույն տեղում, էջ 355:
[47] Նույն տեղում, էջ 379:
[48] Колюбакин А. М., նշվ. աշխ., էջ 385:

ճառքը: Գյուղացին բերքի 11,75%-ը տալիս էր աշար: Վարձակալման գինը, հողահարկը և պարտքերի տոկոսները կազմում էին միջին հաշվով բերքի 55-65%-ը, իսկ սերմերի գինը՝ 9-10%-ը: Այսինքն՝ հենց կալատեղում բերքի 76-86%-ը վերցվում էր: Գյուղացուն մնում էր 14-24%-ը, որից վճարում էր նաև քաշող ուժի վարձը. պետք է մուծվեր նաև եկամտահարկ, գինվորական հարկ, ճանապարհային տուրք և այլն, և այլն: Հաճախ հարկադրված էին լինում կալատեղում վաճառել ամբողջ բերքը: Մնում էր 2-3 ամսվա սննդամթերքի պաշար կամ երբեմն՝ ոչինչ: Ու գյուղացին դիմում էր վաշխառուին՝ հույս չունենալով , որ այլևս նրա ձեռքից կազատվի: Նման գյուղացիները նույնիսկ արհեստով զբաղվել չէին կարողանում, որովհետև դրա համար ևս դրամ էր անհրաժեշտ չրջանառու միջոցներ, արտադրության գործիքներ ձեռք բերելու համար: Այլ ելք չէր մնում, բացի օրավարձու բանվոր դառնալուց: Եվ նա ընտանիքով ամենաչնչին վարձով գործի էր անցնում հողատերերի մոտ՝ գյուղատնտեսական կամ տնային տնտեսության մեջ:

Վիճակն այդպիսին էր ոչ միայն Խարբերդում: Տերմենը բերում է Դիարբեքիրի անգլիական փոխհյուպատոսի ուսումնասիրության արդյունքները, որը նա կատարել էր Բիթլիսի վիլայեթում: Ախլաթի կազայի վեց գյուղերի 725 ընտանիքից միայն 35-ը սեփական տնտեսություն ուներ: 226 ընտանիք մարաբա էր, մնացած 312-ը ապրում էր օրավարձու աշխատանքով՝ ծառա էր կամ մուրացիկ: Բուլանըխի 26 գյուղերում 3890 ընտանիքից մնացել էր 958-ը, արտագաղթել էր 2832 ընտանիք (73%)[49]:

«Հողը,– գրում է Րաֆֆին,– որի վրա նա (հայ գյուղացին) ապրում է, թեև մի ժամանակ իր նախնիներին էր պատկանում, բայց այժմ դարձել է օտար աղանների սեփականությունը: Նա մշակում է օտարի հողը: Իսկ աղայի պայմանները մշակի հետ այնքան ծանր են և անշահավետ, որ նրա երկրագործության բերքը և վաստակը մեծ մասամբ վայելում է կալվածատերը, մշակի համար մնում է այնքան, որով չի կարողանում յուր կենսական ամենանհրաժեշտ պիտույքներին անգամ բավարարություն տալ:

Նրա խրճիթը դրված է աղայի հողի վրա: Դրա համար հարկ է վճարում: Նրա անասունները արածում են աղայի արոտներում, դրա համար հարկ է վճարում... Մի խոսքով, գյուղացին, բացի իր աշխատող ձեռքերից, ուրիշ ոչինչ չունի, նրան չրջապատող ամբողջ բնությունը պատկանում է աղային և դրա մեջ գործելու համար նաև պետք է զոհե իր աշխատության ամենամեծ մասը»[50]:

Արևմտյան Հայաստանի իրավիճակին քաջածանոթ ռուս գինվորական Պուտյատան գրում է. «Ամենուրեք նկատվում է կեղտ, տարրական հարմարություննների բացակայություն, գյուղական տները քարերի կույտ են, իսկ գյուղերը հիշեցնում են հնագիտական բլուրների խմբեր, բնակչությունը ցնցոտիների մեջ է և քնում է անասունների հետ միասին: Այստեղ նույնիսկ երկրագործական գործիքները, բեռ տեղափոխելու սայլերը, կալսելու եղանակը պահպանվել են այնպես, ինչպես դրանք նկարագրված են Աստվածաշնչում»[51]:

Մարաբայությունը վերածվեց հայ գյուղացիության լայն զանգվածների սոցիալական կացության: Այն մարաբաների վիճակը, որոնք աշխատում էին աղային պատկանող հողի վրա իրենց գյուղատնտեսական գործիքներով ու քաշող ուժով, համեմատաբար բարվոք էր: Առավել ծանր էր նրանց վիճակը, որոնք բացի իրենց ձեռքերից ոչինչ չունեին: Այդպիսիների սոցիալական կացությունը Բ. Բորյանն անվանում է «ճորտային վիճակի իսկական արտահայտություն»: Ամբողջ բերքը բաժանվում էր երեք մասի՝ երկու մասը աղային, մեկը՝ գյուղացուն: Ոչ բերրի տարիներին աղան կեռակրում էր մարաբա-

---

[49] **Термен Р.,** *Отчет,* ч. II , стр. 71.
[50] **Րաֆֆի,** նշվ. աշխ., էջ 336:
[51] *АВПР, Политархив,* д. 3439, л. 30-37.

յին, որպեսզի հետագայում նրանից վերցներ տվածի կրկնապատիկը: Աղայի հանդեպ մարաքայի բազում պարտականություններից ոչ մեկը պետականորեն կարգավորված չէր:

Մարաքայությունը Թուրքիայում գոյություն է ունեցել շատ վաղուց, սակայն առանձնակի ստրկա-ճորտատիրական բնույթ ստացավ 1894-96թթ. կոտորածներից հետո: Վ. Փափազյանը Վանի վիլայեթում հողատիրության մասին գրում է. «...Քիչ չէր պատահում, որ քուրդ աղաներից մեկը կաշառում էր «թափու գայիրեսի» կոչվող հողային վարչության անդամներին ու սեփականացնում մի քանի գյուղի հողերն, ու հանկարծ բոլոր գյուղացիները, որոնք տերեր էին, մարաբա էին դառնում»[52]: Վասպուրականի հողերի 3/4-ը պատկանում էր քաղաքացիներին՝ թուրք և քուրդ աղաներին:

«Ռայային տեր լինելու և հարկեր պահանջելու արտոնություն վայելողները կոչվում էին խաֆիր կամ դարաբեյիներ: Դրանք ցեղի մեջ որևիցե նշանակություն ունեցող ազնվական մարդիկ էին»: Օրինակ, ցեղապետն իր ազգակիցներին ու զինակիցներին տալիս էր մեկ կամ մի քանի գյուղ, այսինքն՝ խաֆիրության իրավունք: Սրանք էլ իրենց ծառաներին կամ սպասավորներին ռոճիկի դիմաց նվիրում էին ընտանիքներ[53]:

«Մուրճ»-ը 1905թ. հունիսի (թիվ 6) համարում գրում է, որ Աղբակի Առնակ գյուղի եկեղեցու հարավային կողմում տարածվում են գերեզմանների հողակույտեր հիշեցնող, թալանված Առնակի հայ տների կիսակործան փլատակները: Երբեմնի շեն գյուղի հայ բնակիչներից մնացել է միայն 8 տուն՝ զուրկ սեփականությունից, մերկ ու աղքատ: Նրանց նախկին հարստությունից... ոչինչ չի մնացել: Նրանք վերածվել են հայրենի հողի վրա բռնությամբ հաստատված քուրդ կալվածատերերի ճորտերի:

Այսպիսով, գյուղում դասակարգային պատկանելությունը ևս աստիճանաբար ազգային տեսք էր ստանում՝ հողատերը, շահագործողը մահմեդականն էր, առավելապես թուրքը, իսկ այդ հողի մշակողը, շահագործողը՝ ոչ մահմեդականը, առավելապես հայը: Հանգամանք, որ անպայման ավելի էր խորացնում հայ-թուրքական առճակատումը:

## 5. ՀԱՐԿԵՐԸ՝ ՀԱՑԵՐԻ ՈՒԾԱՑՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՄՂՄԱՆ ՄԻՋՈՑ

Պետական գանձարանի մուտքի 80%-ը ստացվում էր հարկերից, որոնց չափերը որոշվում էին ելնելով ծախսերի չափից: Ընդհանուր գումարը բաժանվում էր վիլայեթների վրա, սրանք էլ՝ սանջակների, կազաների. այդպես՝ մինչև ամեն մի գյուղ, ամեն մի անձ՝ անցնելով վալիների, մութեսարիֆների, կայմակամների, մյուդիրների, մուխտարների «ճչգրտումների» միջով: Հարկերը շատ էին բազմազան, բաժանված երկու հիմնական խմբի՝ ուղղակի և անուղղակի: Սակայն հարկերի հստակ կառուցվածք գոյություն չուներ, տարբեր վարչական տարածքներում տարբեր հարկեր էին հավաքվում, նույնիսկ միևնույն կազայի տարբեր գյուղերում, տարբեր վիճակներում նույն հարկն այլ անվանում էր ունենում, գանձվում էր այլ կերպ, տարբեր չափերով, տարվա տարբեր ամիսներին[54]: «Ռայա հպատակը,– գրում է Րաֆֆին,– վճարում է այլևայլ հարկեր հողի մշակության համար, իր անասունների համար, իր արհեստների համար, իր բնակության տեղի համար, իր գլխի համար... Հարկերի չափը և դրանց քանակությունը ոչ կշիռ ունեին և ոչ սահման, դա կախված էր առնողի խղճմտանքից»[55]:

Հարկերի մի մասը հավաքվում էր բերքահավաքի նախօրյակին, երբ գյուղացին վճարելու ոչինչ չուներ, և չնչին գներով վաճառքի էր հանվում նրա ունեցվածքը: Բացառություն էր կազմում տասանորդը՝ աշարը, որը համարվում էր գլխավոր հարկը, պարտադիր բոլորի համար և հավաքվում էր բերքահավաքի ժամանակ: Իսկ քանի որ

---

[52] Փափազյան Վրթ., Երկեր, հ. V, Երևան, 1959, էջ 422:
[53] Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 238:
[54] АВПР, СПб., Главный архив, 1879, д. 1083, л. 16.
[55] Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 238:

կայսրության նահանգներում բերքահավաքի ժամանակները համընկնում էին և դժվարություն էր առաջանում համապատասխան թվով հարկահավաքների հավաքագրման գործում, մտցվեց այդ հարկերի հավաքումը կապալով տալու եղանակը: Հետագայում կապալային համակարգը դադարեց լոկ հարկահավաքության եղանակ լինելուց և վերածվեց հասարակական որոշակի խմբի համար եկամտի առատ աղբյուրի: Աչար հավաքում էին թե՛ հարկահավաքները և թե՛ այն կապալով վերցրած կամ սարաֆների կողմից նշանակված անձինք:

Կապալային համակարգը ոչ միայն ավելացնում էր աշարի չափերը, այլև դուռ բացում գյուղացիության հարստահարության, այլևայլ չարաշահումների ու բռնարարքների համար: Հավաքված հարկերի միայն մի մասն էր հանձնվում պետական գանձարան, մյուս մասը լցվում էր վալու, մութեսարիֆի և շատ ու շատ այլ պաշտոնատարների՝ ընդհուպ մինչև նախարարների ու պալատականների գրպանը: Բնականաբար, թահսիլդարները (աշար հավաքողները), ովքեր նաև կոչվում էին չահնա կամ մուլթեզիմ, իրենց չէին մոռանում: Հավաքված հարկի մի մասն էլ անցնում էր նրանց, որպես «միանգամայն օրինական» եկամուտ: Հետևաբար նրանք ձգտում էին բնակչությունից համեմատաբար ավելի շատ կորզել՝ չխորշելով ամեն տեսակի խարդախությունից՝ բերքի 1/10-ի փոխարեն վերցնում էին 1/8-ը, մինչև անգամ 1/5-ը, բանջարաբուծությունից աշարը վերցնում էին դրամով կամ կամայական հարաբերակցությամբ հավաքում հացահատիկով: Իսկ Էրզրումի վիլայեթում աշարը հավաքվում էր բերքի 12-15%-ի չափով, դրան գումարվում էին հարկահավաքների չորթումները, և աշարը ոչ քիչ դեպքերում խլում էր բերքի 20%-ը: 1867-72թթ. աշարի չափը պաշտոնապես բարձրացվեց՝ 12,5%, որից պետությանը՝ 10%, գյուղատնտեսական բանկին՝ 1%, կրթությանը՝ 0,5%:

Անդրադառնալով հարկերին՝ Վրթ. Փափազյանը գրում է. «... հողային հարկ եղած բերքի 1/10-ն են առնում, իսկ հայերից՝ հաճախ 15%-ը, բայց եթե հաշվենք հարկահավաքների ու բեկերի առած նվերները, այն ժամանակ 30%-ի է հասնում տուրքի քանակությունը, և հայ գյուղացի հողատերերին, հայ գյուղացի մարաբային այդ տուրքը թողնում է ոչ միայն անոթի, այլև զրկում հողից և ունեցած տավարից...»:[56]

Ամեն տարի բերքահավաքի նախօրյակին կազմակերպվում էին աշարի հավաքման աճուրդներ: Դրանք շատ հաճախ ձևական բնույթ ունեին, քանի որ թուրք հարուստները նախապես իրար մեջ բաժանում էին հարկահավաքման ենթակա գյուղերն ու չրջանները: Հարկերի հավաքման գործում թահսիլդարներին օգնում էր այդ նպատակով ստեղծված ոստիկանությունը՝ զափթիեները, որոնց նույնպես կապալառուն բաժին էր հանում և մղում, որ պաշտպանեին իր շահերը: Այն տարիներին տարածված ասացվածք էր. «Ամենածանր օրինական հարկը շատ ավելի թեթև է, քան զափթիեների դրամաչորթումները»:

Եթե տարին բերրի էր, հարկերը գանձվում էին դրամով (գյուղացուն հարկադրում էին բերքը էժան վաճառել), իսկ եթե բերրի չէր, գանձվում էին բնամթերքով՝ այն թանկ վաճառելու համար: Րաֆֆին գրում է. «Գյուղացի հայերի գլխավոր հարստահարիչները լինում են կապալառուները... Երբ որ բերքը ծախվում է, լավ գին ունի, կապալառուն տասանորդը ստանում է առավելություններով, իսկ երբ բերքը գին չունի, նա թանկ գնահատելով, փող է առնում... Բայց գյուղացին ստիպված է ենթարկվել կապալառուի բռնությանը, որովհետև, եթե հակառակվի, կապալառուն նրա մշակության կալը երեսի վրա կթողնի, ձյունի և անձրևի տակ կփտեցնի, այն ժամանակ ավելի իրավունք կստանա տասանորդի կրկնակի արժեքը արծաթով առնելու, որովհետև բերքը փչացած է: Եվ տեղական կառավարությունը համբերում է կապալառուի բռնակալությունը, որովհետև ինքն էլ նրա չահերի ընկերն է»:

Հաճախ հարկերի հավաքումը հանձնարարվում էր զինվորականներին: Դա արվում էր երկու նկատառումով՝ ազգաբնակչությանը ահաբեկելու միջոցով ապահովել հարկերի

[56] Փափազյան Վրթ., նշվ. աշխ., էջ 422:

*հավաքման հաջողությունը և լուծել ամիսներ չարունակ աչխատավարձ չստացած զինվորականներին վարձատրելու հարցը: Զինվորականներին ասվում էր, թե՝ գնացեք հավաքեք հարկերը և դրանցից վերցրեք ձեր աչխատավարձի պարտքը: Հասկանալի է, որ սա նոր դուռ էր բացում բնակչության թալանի համար:*

*Գրեթե բոլոր թահսիլդարները մահմեդականներ էին և պատկանում էին քաղաքային ունևոր ու ազդեցիկ դասակարգին կամ քուրդ աղալարներ էին: Հարկահավաքության իրավունքը ձեռք էր բերվում կանխավճարով: Կառավարությունը մահմեդականներին զիջում էր՝ փողի դիմաց ընդունելով էժանագին գրավներ:*

*«Հայերը հազվադեպ էին գնում հարկահավաքության իրավունք, քանի որ, նախ՝ նրանց համար դժվար էր մահմեդականներից հարկ գանձել, երկրորդ՝ իշխանությունները նրանց զափթիեներ չէին տրամադրում, երրորդ՝ կառավարությունը գերադասում էր հարկեր հավաքելու իրավունքը տալ մահմեդականներին, չորրորդ՝ հայ հեղափոխականները (ֆիդայիները) հայերին արգելում էին գնել աչարը, որպեսզի հայ հարուստները չաղքատացնեին գյուղացիներին»:*[57] *Թահսիլդարների չարաչահումները մնում էին անպատիժ, որովհետև պաշտոնատարների հետ լավ հարաբերությունների մեջ էին և ունեին հովանավորներ, որոնց նվերներ էին տալիս: Նրանք, լինելով մահմեդական, չարաչահումները կատարում էին ի վնաս քրիստոնյաների (աչիրեթներում աչարը հավաքում էին աչիրեթապետները), կառավարությունը փողի կարիք ուներ և հարուստներից վերցնում էր գրավ՝ նրանց հանձնարարելով աչարի գանձումը: Եվ, վերջապես, կառավարությանը չահեկան էր ունենալ աչարի մեծահարուստ հավաքողներ, որոնք արտակարգ իրավիճակներում (օրինակ՝ պատերազմ) կարող էին դառնալ հացի մատակարարներ:*

*Գանձում էին նաև եկամտահարկ (վերժի), որի մեջ մտնում էր հողահարկը և հարկ չինությունների համար, ինչը կազմում էր եկամուտի 4%-ը: Տեղերում, սակայն, եկամտահարկի բաչխումը հավասարաչափ չէր, գումարը նախապես էր որոչվում գյուղապետի ներկայացրած տվյալների հիման վրա, թե ով ինչ ունեցվածքի տեր էր: Հարկի չափը մնում էր անփոփոխ, անկախ այն բանից՝ տվյալ ծուխը հարստացել, թե աղքատացել էր: Հողահարկի չափը հաճախ ավելի մեծ էր, քան տվյալ հողակտորից ստացված եկամուտն էր: Սկզբում այդ հարկը կոչվում էր սալյան: Հետագայում հողերը բաժանվեցին երեք խմբի՝ ալա, ավսադ և աչնա, հարկը վերանվանվեց արազե և հավաքվում էր բերքի 1/8 չափով: Չվճարելու դեպքում գյուղացու ունեցվածքն անցնում էր պետությանը և նույնիսկ սեփականազրկվելուց հետո էլ գյուղացին պետք է պետական գանձարան մուծեր տարեկան 100 դուրուչ: Բանչարեղենից գանձվում էր թաչիր՝ 42 ռ. 50 կոպ: Կար նաև խոտի թաչիր՝ 4 ռուբլի: Անասնահարկը՝ աղնամը 1850-70ԹԹ. աճեց երկու անգամ: Անասունների հաչվառումը կատարվում էր ամեն տարվա փետրվարին, և, եթե դրանից հետո անասունները սատկեին կամ թալանվեին, գյուղացին հարկ վճարելուց չէր ազատվում: 20-60 տարեկան բոլոր տղամարդիկ պարտավոր էին տարվա ընթացքում չորս օր աչխատել ճանապարհաչինության վրա կամ վճարել 1ռ. 28 կոպեկ: Գործնականում գյուղացուն հարկադրում էին թե՛ աչխատել և թե՛ դրամը մուծել: ԵՒուտրի հարկը տարեկան 5-35 ռուբլի էր, իսկ արհեստներինը՝ եկամտի 3-4%-ի չափով: Կար նաև համքարության հարկ՝ տարեկան 6-11 ռուբլի: Հարկ էր գանձվում թաքու արված հողերի դիմաց՝ դրանց արժեքի 5%-ի չափով: Օղուց ու գինուց գանձվում էր հարկ արժեքի 65%-ի չափով: Հարկ էր նչանակված նաև մետաքսի, ծխախոտի, աղի և այլնի արտադրության վրա:*

*Քրիստոնյա ռայաները, ի տարբերություն մահմեդականների, վճարում էին խարաջ՝ գլխահարկ կամ բեդելի ասկերիե (զինվորական հարկ): Խարաջն ամենածանր հարկերից էր: Պաչտոնապես հավաքվում էր որպես փոխհատուցում զինվորական ծառայության չմեկնելու դիմաց: Ըստ օսմանյան օրենքի՝ 21 տարին լրացած 135 հոգուց մեկը զինվո-*

[57] Термен Р., *Отчет*, ч. II , стр. 63-64.

րագրվում էր: Հինգ տարի ծառայելուց հետո զորակոչվածը դառնում էր պահեստային, իսկ ապա՝ պահապան զինվոր՝ մուստահաֆըզի և միայն 35-40 տարեկան հասակում էր լրիվ ազատվում զինապարտությունից: Իսկ բանակ չզորակոչված 134 հոգին պետք է 50-ական ոսկի վճարեին՝ տարեկան 24 ղուրուշ: Սակայն հայերի տարիքը հաշվի չէր առնվում, գլխահարկ վճարում էին արական սեռին պատկանող բոլոր հայերը՝ սկսած նորածնից մինչև զառամյալ ծերունին: 1840 թվից գլխահարկի գանձումը կատարվում էր գյուղական համայնքի միջոցով, 6000 ղուրուշի չափով: Այս կարգի հաստատման պատճառն այն էր, որ, որպես կանոն, արտագաղթող, մասնավորապես արտագնա աշխատանքի (պանդխտության) մեկնող հայերը, չնչին բացառությամբ, տղամարդիկ էին, որոնց համար ևս համայնքը պարտավոր էր խարաջ վճարել: Դրա հետևանքով մեկ հարկատուի հաշվով վճարվում էր ոչ թե 21-24 ղուրուշ (ինչպես սահմանված էր), այլ 35-40 ղուրուշ: Իսկ այն կազաներում, որտեղ խարաջի հավաքումը կապալով էր տրվում, այս թվերը զգալիորեն ավելի մեծ էին:

Ահա թե ինչու բոլոր հարկերից խարաջն ամենամեծ դերը խաղաց հայ գյուղի քայքայման, բնական աճի կասեցման, պանդխտության ծավալների մեծացման և կրոնափոխության արագացման գործում: Խարաջը տիպիկ թուրքական ազգային-կրոնական խտրականության վայրագ արտահայտություն էր: Եվ պատահական չէ, որ օսմանիզմի ձուլման քաղաքականության ծավալման հետ մեծանում էր խարաջի չափն ու թալանչիական էին դառնում դրա հավաքման եղանակները[58]:

Գոյություն ունեին նաև անուղղակի հարկեր՝ տեղափոխության, ոստիկանության, փոստի: Բնակչությունը սեփական քաշող ուժով ձրի տեղափոխում էր բանակի, ոստիկանության բեռները, փոստը, իսկ տեղական իշխանությունների պահանջով՝ ամեն ինչ: Տուրքերից կարելի է թվել թամադոն, որը վճարում էր ամուսնացող տղան, իթխալուն՝ մահացածի համար և այլն:

Թվարկված հարկերից ու տուրքերից քրդերը վճարում էին միայն ոչխարի հարկը (համշար կամ աղնամ), այն էլ ունեցած անասունի 1/3-ի համար:

Այդպես էր, օսմանյան հարկային քաղաքականությունը հիմնված էր կրոնական և ազգային խտրականության սկզբունքի վրա: Էրզրումի 2000 հայ տներից գանձվում էր 430 հազար, իսկ 8000 մահմեդական տներից՝ ընդամենը 395 հազար պիաստրա հարկ: Իշխանությունները պարբերաբար վերաբաշխում էին հարկերի չափերը և «ծանրությունն աստիճանաբար տեղափոխում հայերի վրա»: Շատ կազաներում ու գյուղերում հայերի հարկերի չափերի որոշման գործում վճռական դեր էին խաղում քուրդ թոռունները (ցեղային ազնվականությունը): Առանց թոռունի համաձայնության ոչ ոք իրավունք չուներ մտնել նրան պատկանող հայ գյուղը և, օրինակ, ոչխարների հաշվառում կատարել: «Պաշտոնյաները գյուղացիներե կաշառք վերցնելով գյուղի ոչխարը սապախի հաշվով կարճանագրեին և աղան կառավարությանը կներկայանար, հանճն կառներ աղնամը վճարել պետական սնդուկին գյուղացիներե գանձելու պայմանով կամ կհաշվեր իր ստանալիք ռոճիկի դիմաց, իսկ գյուղացիներե կպահանջեր իր ուզածի չափով»[59]:

Գյուղացիները պարտավոր էին իրենց բնամթերքով վճարած հարկը տեղափոխել պետական պահեստները, որոնք գտնվում էին 20-50 կմ հեռավորության վրա:

Հայը գրեթե ամենուր հարկատու էր նաև քոչվոր քրդերին: Նրանք ևս հողատուրք էին հավաքում, գյավուրները փեշքեշի (նվերների) տեսքով տուրքեր էին վճարում ամենատարբեր առիթներով՝ ամուսնություն, ծնունդ: Ջարսանջակում որդուն կամ դստերը ամուսնացնելու թույլտվության համար պահանջվում էր 500-1500 ղուրուշ: Կար նաև «ատամի տուրք»՝ քրիստոնյան ոչ միայն պարտավոր էր քրդին հյուրասիրել, այլև տուրք վճարել ուտելիս «ատամները մաշելու» համար:

---

[58] Համբարձումյան Վ., Գյուղաշխարհ, Փարիզ, 1927, էջ 42:
[59] «Տարոնի արծիվ», 1945, թիվ 25:

«Որոշ տեղերում,– գրում է Գոլոբորոդկոն,– հայերը գրեթե դարերով մշակել են քուրդ աղաների հողերը, հնձել, կալսել հացահատիկը, ջրել ցանքսերը, քաղել ու տեղափոխել անասնակերը քրդերի հոտերը ձմռանը կերակրելու համար և անհատույց կատարել են նման այլ աշխատանքներ», որոնք կոչվում էին օլամ կամ զուբարա[60]:

Տավրոսի փեշերին ցրված գյուղերի հայերի վրա աշիրեթները նայում էին «որպես ճորտերի, ովքեր պարտավոր էին իրենց համար անխոնջ աշխատել և անվերապահ հնազանդվել, որի դիմաց իրավունք էին ստանում օգտվել հողից և ստանալ որոշ պաշտպանություն... Բատրակի վիճակում հայերը մշակում էին աշիրեթի ավագների հողերը, արածացնում նրանց անասունները, կատարում տնային աշխատանքներ և բացի այդ վճարում զանազան տուրքեր ու կատարում պարհակներ»: Կարգավորող որևէ օրենքի բացակայության պայմաններում հայերը ենթակա էին ամեն տեսակի կամայականությունների: Նրանց վիճակը պայմանավորված էր քուրդ ավագանու քմահաճույքով ու բնավորությամբ[61]: Որոշ տեղերում կալվածատիրոջը տուրք վճարվում էր նաև տան հիմքը գցելու, չինափայտի, գինի քաշելու, ջրաղացի համար: Հայ աղջիկը պարտավոր էր իր օժիտի մի մասը տալ քուրդ աղային: Մ. Նեդիմը վկայում է, թե աղաները հայ գյուղացիներից վերցնում էին ամեն ինչ, անգամ կարպետ, թաղիք, չերեփ, գդալ, կողով, պարան[62]:

Գյուղացին ամրացված էր հողին՝ հեռանալ չէր կարող կամ հեռանալու համար պարտավոր էր վճարել:

Նյու Յորքի "Independent"-ի 1895թ. հունվարի 17-ի համարում տրված է Զեզիրի կազայի Մանսարե գյուղից հարկերի ու տուրքերի գանձման պատկերը: Կառավարությունն այդ գյուղից ավելի էր հավաքում 3000 պիաստրա հարկ, կրկնակի հարկերը կազմում էին 4000 պիաստրա, ժանդարմների վերցրած մթերքը՝ 2000 պիաստրա: Ընդամենը՝ 9000 պիաստրա: Բացի դա: Քուրդ ցեղապետ Մուստաֆան դեսյատինից գանձում էր 1500 պիաստրա, քրդերի կողմից ցանքերին հասցված վնասն ամեն տարի կազմում էր չուրջ 2000 պիաստրա: 1893թ. այս գյուղից չորթած հավելյալ հարկերն ու տուրքերը կազմեցին 12.5 հազար պիաստրա, երբ հարկերի ընդհանուր գումարը կազմում էր 14 հազար պիաստրա, այսինքն՝ հավելյալ գանձումների ու հարկերի ընդհանուր գումարների միջև տարբերություն գրեթե չկար: Երբ գյուղացիները բողոքեցին Մուստաֆայի չորթումների դեմ, նա նախ անպատիժ մնաց, և ապա ոչխարները լցրեց հայերի արտերն ու նրանց պատճառեց 2000 պիաստրայի վնաս: Նույն կազայի Հասան գյուղը (60 տուն) Մուհամմեդ աղային տալիս էր 8700 պիաստրա տուրք, Թաչիր աղային՝ 1750. և նման երեք աղա:

Հայերը պարտավոր էին բամբակի հումքը ձրի մշակել ու թելը տալ աղային՝ պարտադրված վճարելու մշակման ընթացքում առաջացած կորուստների համար:

1880-91թթ. հարկերի չափերն աճեցին երկու անգամ: «Հայերից գանձված հարկերը,– գրում է Դիլոնը,– անչափ մեծ էին: Կաշառքները, որոնք միշտ ուղեկցում էին դրանց գանձմանը, վերցնում էին զափթիեները և հաճախ գերազանցում էին հարկերի սահմանված չափը: Կաշառք տալուց հրաժարվողին զանազան խարդախ միջոցներով դնում են անելանելի կացության մեջ: Զափթիեները պահանջում էին իրենց ներկայացնել ընտանիքի երիտասարդ կանանց ու աղջիկներին: Մերժումը դժբախտներին բերում էր այնպիսի տանջանքներ, որոնց նկարագրությունից պետք է հրաժարվել հանուն պարկեշտության և մարդասիրական զգացմունքի»[63]: Ամենուրեք թագավորում է կամայականությունը, «չկա ոչ մի երաշխիք, որն ապահովի անձի կյանքի և ունեցվածքի անվտան-

---

[60] Голобородько И., նշվ. աշխ., էջ 226:

[61] Колюбакин А. М., նշվ. աշխ., էջ 131-132:

[62] Նեդիմ Մ., Հայ եղեռնը, իմ վկայություններս; Նագըշյան Ա., Այաշի բանտը, Բեյրութ, 1978, էջ 45:

[63] Положение армян в Турции ..., стр. 258.

գությունը: Զինովնիկներն ու պետական հաստատությունները սարսափելի տգետ են և անհուսալի այլասերված»[64]:

«Վիճակը մինչև այն աստիճանի ծանր է ու անբնական,– գրում է Կոլյուբակինը,– որ հողագործությամբ զբաղվող գյուղացիության զանգվածը, չնայած խիստ սահմանափակ սպառմանը, հազիվ է ծայրը ծայրին հասցնում, այդ էլ չնորհիվ օժանդակ ճյուղերի՝ գինեգործության, այգեգործության, մեղվաբուծության և արհեստների... Գյուղական դասակարգն այնքան աղքատ է, որ նրա քառորդ մասը գտնվում է պրոլետարականին մոտ վիճակում: Հարկերի ու տուրքերի միջոցով գյուղացիության թալանի հետևանքն են անբերրիությունը, սովը»[65]: Չեզիրեի Շաք գյուղի բնակիչները հարկահավաքների խաբեությունից խուսյս տալու համար գյուղից փախել թաքնվել էին այլ վայրերում: Շատերը ձմեռն անցկացնում էին քարայրներում:

«Արծիվ Տարոնո» թերթն իր 1863թ. թիվ 2 և 3-ում տպագրեց մշեցիների նամակը պատրիարքին: «Տարոնի ժողովուրդը ցամաքած արյունով, չորացած ոսկորներով հազիվ է շնչում... մեզ բաժին է ընկել տառապանք, զրկանք, վիշտ, լկանք բոլոր կողմերից... Հենց գարունը բացվի, հայը թողնելու է Տարոնը... Այսուհետև մեզ փնտրեք էրզրումի ճանապարհներին, Տրապիզոնի լեռներում, Պոլսի նավահանգիստներում... մեզնից խլում են դարմանն ու գարին իբր դրամով՝ տասից մեկը հազիվ հաշվելով, ճանապարհը ձյունից մենք ենք մաքրում, բեռները մեր քամակով ենք կրում... Ամենամեծ և անտանելի զրկանք մեզ համար եղավ այս տարվա թաչիրը... եթե պարտքերի դիմաց մեր անձն էլ տանք, չենք ազատվի... Հարկերն իրենց ուզածի նման են բաչխում և իրենց ուզածի չափ են պահանջում ու վերցնում»:

«Հնչակ»-ի 1890թ. թիվ 2-ում տրված է հարկահավաքության նկարագրությունը:

...«Ցուրաքանչյուր գավառապետ որոշյալ օրերին ժողով էր գումարում իր ենթակայության տակ գտնվող գյուղերը քաղաքաբնակ հարուստներին վաճառելու խնդրով: Հարկավ, թուրքերին էր վերապահվում գյուղերը գնալու արտոնությունը, թեև հայերը ևս գնելու իրավունք ունեին:

Թուրք աղանները ոչ մի գնի առաջ կանգ չէին առնում՝ քաջ գիտենալով, որ մեկի փոխարեն կարող են տասն անգամ ավելի գանձել՝ իրենց թիկունքում ունենալով հարստահարիչ կառավարություն:

Ինքնագոհ մուլթեզիմը, փառավորապես ճիուն նստած ու հետևից գցած մի քանի փոքրավորների, դիմում էր իր անմեղ զոհերի բնակավայրերը, մտքում վաղօրոք որոշելով, թե քանի հայ գեղջկուհի էր իր գազանային կրքերին զոհ դառնալու, քանի խեղճի տուն էր հիմնահատակ անելու և ինչքան հարստություն էր դիզելու:

Գյուղացիները գալիս էին նրան դիմավորում ու անմիջապես սեղան գցում և վայ տանտիրոջը, եթե ճաշը մուլթեզիմին դուրը չգար: Նա կգանակոծվեր, նրա կինը նույնպես: Ո՛ւմ բողոքեր»:

Մուլթեզիմը գյուղ էր գալիս կալսելու ժամանակ, և գյուղացին նախ բավարարում էր նրա, ապա չարչիների, եկեղեցու, աղայի պահանջը և, եթե տակը բան մնար, իրենն էր: Օրինակ, Մշո Մկրագոմ գյուղում մի ընտանիք կար՝ բաղկացած 15 շնչից: Այն իր արտերից տարեկան հավաքում էր 50 քիլա գըլգլ, իսկ հարկերը, տուրքերն ու մյուս վճարումները կատարելուց հետո մնում էր 15 քիլա, որը մի կերպ հասցնում էր մինչև նոր բերքը: Մուլթեզիմը դիտմամբ ձգձգում էր հարկի գանձումը և որպես կանոն 4-5 անգամ թաքուն քանդում հացահատիկի չեղջի վրա դրած նշանը և տիրոջը մեղադրում գողության մեջ ու նրանից տուգանք գանձում: Մուլթեզիմը փոխանակ տասից մեկ, հաջողացնում էր յոթից մեկ, իսկ շատ տեղերում՝ հինգից մեկ տասանորդ հավաքել: Դրա դեմ բողոքելն անարդյունք էր, քանի որ հայը մարդ չէր, նա անասուն էր և պետք է աշ-

---

[64] *Братская помощь* ..., ч. II, стр. 19.

[65] Լինչ Գ., նշվ. աշխ., էջ 116:

խատեր թուրքերին ու քրդերին և այլոց կերակրելու համար, իսկ ինքը բավարարվեր գըլգլով:

Գյուղացին, ասենք, 100 դահեկանի բերք էր հավաքում բոստանից: Մուլթեզիմը այդ բոստանի բերքի գինը նշանակում էր 1000 դահեկան: Գյուղացին նրա դեմ ոչինչ անել չէր կարող, քանի որ հոգով ու մարմնով պատկանում էր մուլթեզիմին և եթե վերջինի պահանջածը ժամանակին չտար, վաճառքի կհաներ իր եզներն ու կովը, առանց որոնց ապրելն անհնար էր: Առաքելոց վանքի 300 դահեկանի բերքից մուլթեզիմը պահանջում էր 8000 դահեկանի հաշվով տուրք, իսկ երբ վանքը հրաժարվեց այդքան տուրք վճարելուց, նրա եկամուտների գումարը հասցվեց 18 հազար դահեկանի:

Զափթիեները «գյուղերը հարկահավաքության ուղարկվում էին խմբերով: Այդ ժամին գյուղը, որտեղ գտնվում էին զափթիեները, մի ողբալի պատկեր էր ներկայացնում: Հավ, ոչխար, տավար, ձու, զանազան մթերքներ և դրանց հետ գյուղացու աղջիկը, կինը՝ բոլորն այդ ժամին զափթիեների քմահաճույքի ու տրամադրության տակ էին... և լաց, կոծ, ողբ, դժգոհություն, սպառնալիք, ծեծ, հիշոց՝ ամեն ինչ խառնվում և ներկայացնում էր մի տարօրինակ չուկա, որն իր աղմուկով ու տեսքով դառը, շատ դառը ազդեցություն էր գործում»[66]:

Մոկսի կայմակամը հարկ չվճարած երկու հայի փակում է խցում և, փթիր վառելով, սպանում է ծխով: Մի գյուղացի չի կարողանում հարկ վճարել: Նրան ու կնոջը մերկացնում են, կապում սյունին ու գանակոծում: Չիարեթ գյուղում մի կնոջ, որի ամուսինը Պոլսում պանդխտության մեջ էր, հարկ տալ չկարողանալու համար, երեխաների աչքի առաջ լրիվ մերկացնում են, կապում սյանը և գլխին սառը ջուր լցնում՝ ասելով, որ կազատվի, եթե դստերը հանձնի հարկահավաքներին: Խարբերդի Բազմաշեն գյուղում մի հայի մարմինը ձեթով օծում են, ուսի քսում և կանգնեցնում արևի տակ: Հայի մաշկը այրվում, կծկվում է, ճանճերը հավաքվում են սոսկալի տանջում: Երկրորդ օրը նա մեռնում է:

«Տասանորդաց աճուրդին ատեն, երբ գյուղերու մուխթարներ կդիմեին բարդել իրենց գյուղին արժեքին վրա, իտարեի անդամք և կամայական տեսակ-տեսակ սպառնալիքներով կհեռացնեին զանոնք և խոսք չհասկացողներեն մի քանին կբանտեին», այնպես որ տասանորդի բաշխման անարդարության դեմ բողոքողը հանցագործ էր համարվում: Որոշ տեղերում տասանորդի բաշխման մեջ սխալները չտկելու պատրվակով տեղական բեյերի կողմից նախապես կազմած ցուցանակներում գյուղացիների պարտքը կրկնապատկվում էր, և նոր տետրակներ էին կազմել տալիս: Ընդ որում, առևտրականներին թույլատրեցին գյուղացուց գնած մթերքների իրացման համար վճարելիք տասանորդի գումարը ևս գանձել գյուղացիներից: Վերջիններից տասանորդ էին պահանջում նաև չուկայում վաճառած մթերքների համար:

Հայերի գանգատներն անուշադրության էին մատնվում մի պարզ պատճառով՝ մուլթեզիմների գործելու կերպը նպաստում էր հայ բնակչության քայքայմանն ու արտագաղթին:

Անգլիացի զինվորական Վ. Ուիլյամսը, որը Ղրիմի պատերազմից հետո բնակություն էր հաստատել Կարինում, 1855-ին մի զեկուցագիր է ուղարկում Լոնդոն, որում հարկահավաքների մասին գրում է, թե այդ խավազների ամբողջ դասակարգը, սկսած մայրաքաղաքից, քաղաքներից ու գյուղաքաղաքներից մինչև գավառների խորքերը, որտեղ օգտագործվում էին որպես ոստիկան, զինվոր կամ հարկահավաք, աշխարհում նմանը չունեցող բռնակալության դժոխային մեքենա է: Այդ մարդիկ՝ նախկին սպասավորներ, զինվորականներ, հացկատակներն էին այն փաշաների, որոնք Պոլսի հայ սեղանավորների կամ թուրք միջնորդների չնորհիվ գավառային որևէ պաշտոն գնելուց հետո, մայրաքաղաքից մեկնում էին՝ իրենց հետ ունենալով այս աղքատ և վերին աստիճանի

[66] «Հնչակ», 1892, թիվ 6:

*դաժան խավազների խումբը, որը քաջ գիտեր, թե նախորդ փաշաների կողմից հարստահարված ամեն մի գյուղացու մոտ կողոպտման արժանի ինչ գույք էր մնացել:*

*Իսկ փաշան, գալով գավառ, անմիջապես գործի էր անցնում՝ «նախ իր պաշտոնի համար վճարված գումարը ձեռք գցել և ապա իր սնդուկները ոսկով լցնել... այս մարդկանց կյանքի և նկարագրի զազրելի ու զարհուրելի կողմերը լեզվով ներկայացնելը կարելիությյան սահմաններից դուրս է: Իրենց չահատակությունները կենտրոնացնում են մասնավորապես քրիստոնյա գյուղերում... Այս ոստիկանները միայն իրենց փաշային էին պատասխանատու, եթե «պատասխանատու» բառը երբևիցե կարելի է նրանց առնչությամբ օգտագործել: Փաշան աչխատանքի է կանչում և պաշտոնանկ անում նրանց «արժանիքին» համապատասխան... (իսկ) «արժանիքը» չափվում է բռնակալության և ավազակության մեջ նրանց դրսևորած ընդունակությունով: Այս կայսրության լայնածավալ տարածքով ճամփորդելիս՝ ցավով համոզվեցի, որ արդեն քայքայված գյուղերն ավերելու վերջին հարվածը հարկահավաքն է հասցնում: Մահմեդական գյուղացիները կարող են դիմադրել և թերևս, դիմադրում են, բայց վա՛յ այն քրիստոնյա ստրուկին, ով կհամարձակվի բերան բացել հարկահավաք բռնակալ խավազի առաջ»*[67]*:*

## *6. ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԲՆԱՋՆՋՈՒՄԸ ՄԻ ՔԱՅԼ ԷՐ ՄԻԱՅՆ*

*Որ Տարոնի, Շատախի, Սասունի, Բռնաչենի քուրդ բեկերը հայ բնակչությանը ճորտական կախման մեջ էին գցել, վկայում է Մշո առաջնորդի տեղապահ Գ. վրդ. Աղվանյանցը 1872թ. պատրիարքին գրած նամակում. «Դաս-դաս նոցա բաժին եղած յուրաքանչյուրին իբրև հպատակ և սեփականություն համարված և ոչ տերության՝ տարեկան տուրքը կուտան խաֆիրներուն: Այդ մարդակերպ վայրենի գազան խաֆիրները՝ ինքնագլուխ և ապստամբ վիճակի մեջ լինելով՝ իրենց ճորտ հայերը՝ կանամբ և որդվոք, չարժական և անչարժ կալվածներով իրարու ծախելու սովորություն ունեին, և երբ իրարու դեմ կատաղին և թշնամանան, յուրաքանչյուրն իրենց ստրուկ հայերն բռնի առջևնին ձգելով, իրարու սահման կասպատակեն, մանավանդ հայոց բնակած գյուղերու վրա, կը կողոպտեն, կը քանդեն, կավրեն, կը վիրավորեն, կը սպանեն և կը վերադառնան տեղերնին: Հաղթահարյալ թշնամին՝ մյուսին վրեժը լուծելուն համար զորաժողովի կելնի, կասպատակե թշնամույն հպատակ հայերու գյուղերը, արջային զայրույթով կը կողոպտե, կը քանդե, կավրե, կը սպաննե և կը դառնա»:*[68]

*Խութում և Բռնաչենում խաֆիրները հայ գյուղերը բնակիչների հետ միասին վաճառում ու գնում էին: Բռնաչենը պատկանում էր երեք քուրդ խաֆիրի: Խաֆիրների բախումները, միմյանց ունեցվածքի թալանը, հայ բնակչության սպանությունն ու գերեվարումը դարձել էին սովորական երևույթներ:*

*Քրիստոնյաները ձեռքից ձեռք էին անցնում համայնքներով: Շատ տեղերում նրանք առանձին-առանձին վաճառվել չէին կարող:*

*Գյուղացիության ճորտացման պրոցեսն արագացավ բացարձակ միապետության ձևավորման շրջանում: Դրան մեծ չափով նպաստեց Աբդուլ Համիդ 2-րդի հակահայ քաղաքականությունը: Հայերին արգելեցին գյուղից քաղաք կամ քաղաքից գյուղ տեղափոխվել:*[69] *Ի. Գոլոբորոդկոն վկայում է, որ նույնիսկ 20-րդ դարասկզբին հայ գյուղացու և աղայի միջև հաստատված էին ճորտատիրական հարաբերություններ: Լեռնային չատ գյուղերում տեղ էին գտնում նաև գյուղացիների առուծախի փաստեր*[70]*: Լեոն գրում է, որ հայ «գյուղացիությունը բացառապես քուրդ ազնվականության ճորտն էր»*[71]*:*

---

[67] *Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության*, Բեյրութ, 1962, էջ 14-16:

[68] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 219, վավր. 152 կամ «Մասիս»*, 1877, թիվ 1239:

[69] **Արվանձտյանց Գ.**, *Թորոս Աղբար*, մաս Բ, Կ.Պ., 1884, էջ Իէ:

[70] **Голобородько И.**, *նշվ. աշխ.*, էջ 225-226.

[71] **Լեո**, *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը*, Հ. Ա., Փարիզ, 1934, էջ 38:

Թուրքիայում գյուղացու փաստացի ամրացվածությունը հողին բխում էր նաև թուրքական ավատատիրության ռազմական բնույթից ու Շարիաթի սկզբունքներից: Դ. Թեյլորի վկայությամբ՝ 1860-ական թվականներին Դիարբեքիրի վիլայեթում քրդերը հայերին և ասորացիներին անվանում էին «զարղուլի», այսինքն՝ ոսկով գնված, ինչը ճիշտ էր արտահայտում իրավիճակը, քանի որ «քրդերն այդ մարդկանց վաճառում կամ գնում են ինչպես ոչխար կամ որևէ անասուն»[72]: Հազոյում հայի գինը 45 ոսկի էր[73]: Վանում Ռուսաստանի փոխհյուպատոսը գրում է, որ Վասպուրականում ցեղապետերն իրենց ենթակա հայ գյուղացիներին վաճառում էին «հենց որ փողի կարիք էին զգում»[74]: Լեռնային շրջաններում «գյուղացիները գնվում և վաճառվում են որպես ապրանք»[75]:

Բ. Դուռնը Հայոց պատրիարքի հասցեագրած թաղրիրներից մեկում ասված է. «Թե որ մահմետականաց և ոչ մահմետականաց մեջ խտրություն պահող, ատելություն արծարծող և մահմետականաց ստորին կարգի ժողովրդյան ձեռքը զենք տվող դրություն մը կար, ան ալ ոչ մահմետականաց վկայության չընդունվիլն է: Գյուղի մեջ, չուկայի մեջ, տան մեջ, ուր որ ըլլա, ոչ մահմետական մը կը ծեծվի, կը նախատվի... դատարան պիտի երթան, ո՞վ պիտի վկայե»[76]:

Այդ էր պատճառը, որ «...եթե անիրավված կողմը հայ գյուղացին էր, ան մտքեն իսկ չէր կրնար անցնել դատարան դիմելով իր իրավունքները պաշտպանել աղային կամ անոր խոլամներուն դեմ, որովհետև լավ գիտեր, որ յուր իրավունքը չստանալեն զատ պիտի ենթարկվեր ավելի մեծ աղետներու, ուստի կը լռեր ու դատարան չէր երթար»[77]:

Ա. Կրիմսկին շատ ավելի հանգամանալից է ներկայացնում իրավիճակը. «...Հայտնի է բոլորին, որ գազանությունների մեղսագործները ոչ միայն չեն պատժվում, այլ ընդհակառակը, կառավարությունից պարգևներ են ստանում... մահմեդականը սպանելով քրիստոնյային անպատիժ է մնում»[78]: Դրան Գ. Սրվանձտյանցն ավելացնում է. «Թուրքաց մոլեռանդությունը և աններողություն անչափ է, որ կրնան հայ մը ձիեն վայր առնել... անտեղի պատճառով մը, կամ ի՞նչ պետք է պատճառ, մի՞թե հայ լինելը բավական պատճառ չէ, կը քաշեն, կը գանակոծեն: Եթե թուրք մը բան գնած է հայե մը, իրավունք չունի հայն ստակ պահանջելու...»[79]:

Քուրդ աղաները նաև հայերի անձնական ու բարոյական կյանքի տիրակալներն էին. «ամուսնության, թաղման թույլտվության իրավունքը նրանց էր պատկանում»[80]: Մի մոտականցի, որն իր դստերն, առանց աղային տեղյակ պահելու, կնության էր տվել, պատմել է. երբ աղան այդ մասին լսեց, «բարկացած գյուղ եկավ և ինձ նեղություններ տալուց բացի, ի պատիժ իմ հանդգնության, 10 ոսկի, մի քանի ոչխար, 3-4 զույգ կոշիկ և այլ տուգանքներ վերցրեց, աղջկա նշանն էլ քակեց և նրան ուրիշին կնության տվեց»[81]:

Թուրքիայում կին և աղջիկ փախցնելը տարածված էր և հարեմների համալրման հիմնական միջոցներից էր, իսկ հայուհիներին փախցնելը սովորական երևույթ էր: Քրդերն ու թուրքերը բռնաբարում էին կանանց ու աղջիկներին և հաչվեհարդար տեսնում բռնաբարվածի բողոքող հարազատների հետ: «Իսկապես,– գրում է Կոլյուբակինը,– այս վայրերում թուրք չինովնիկների, զինվորների և տեղական ժանդարմների կող-

---

[72] Тейлор Д., *Путешествие по Курдистану*, Тифлис, 1873, стр. 76.
[73] «Արձագանք», 1888, թիվ 41:
[74] *АВПР, Посольство в Костантинополе*, 1901, д 1587, л. 15.
[75] Ленский Н. А., *О Правовом положении землевладения в Турецкой Армении*, Петроград, 1916, стр. 17.
[76] «Ատենագրութիւն Ազգային ընդհանուր ժողովոյ», հ. Բ, էջ 473:
[77] «Պատմութիւն Զարսանճագի հայոցս», էջ 148:
[78] Կրիմսկի Ա., *Մահմեդական աշխարհն ու նրա ապագան*, Վաղարշապատ, 1906, էջ 105-106:
[79] Սրվանձտյանց Գ., *Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ*, մաս Ա, Կ.Պ., 1884, էջ 162:
[80] «Արձագանք», 1882, թիվ 3:
[81] «Մասիս», 05.11.1881:

մից հայուհիներին անպատիվ անելը հաճախակի էր տեղի ունենում...»[82]: Բայբուրդի Ռումելի գյուղում 1872թ. մայիսի 13-ին մի մահմեդական փախցնում է 14-ամյա Մարթային: Աղջկա ծնողները բողոքում են: Սկսվում է քննությունը՝ պարզելու, թե աղջիկն ինքնակա՞մ է մահմեդականացել, թե՞ հարկադրաբար: Քննությունը տարվում էր մահմեդական ամբոխի ներկայությամբ, որը սպառնում էր՝ եթե աղջիկը ցանկանում է վերադառնալ քրիստոնեության, համաձայն Շերրի օրենքի՝ նրան պետք է գլխատել»: Դատավորը ևս միանում է այս պահանջին ու որոշվում է գործը քաղաքացիական դատարանից տեղափոխել կրոնական՝ շարիաթական դատարան: Այդ ահարկու տեսարանից ահաբեկված՝ աղջնակը հայտարարում է, թե իսլամ ընդունել է ինքնակամ: Սակայն թուրք ամուսնու հետ երկար ապրել չի կարողանում ու փախչում է, որին հալորդում է սրերով, դավազաններով զինված մահմեդականների հարձակումը նրա ծնողների տան վրա[83]:

Ժամանակի մամուլում հայերի ճորտա-ստրկական վիճակին առնչվող բազում հրապարակումներ կան: Բուլանըխի Յոնջալու գյուղում քուրդ աղայի որդին «նորապսակ հարսերի առագաստն է... մտնում և ամենաչքնաղ կույսերի անմեղությունն է խլում»: Մանազկերտում ևս քուրդ ցեղապետն ուներ առաջին գիշերվա իրավունք[84]: Գյուղացու ամենաանշան ընդդիմության դեպքում աղան նրան սպանում է, իսկ «կառավարությունը դրա դեմ ոչինչ չի ձեռնարկում»[85]: Բեյերը ռայաներին «իբրև ստրուկների աշխատեցնում են որքան ուզենան և երբեմն էլ նրանց սպանում են»[86]: Դատարանը ցեղապետի ձեռքում էր: Նա «ինչպես ուզի՝ կանի, և ոչ ոք կարող է նրա դեմ խոսել»[87]: Ջեզիրեի Նարվան գյուղում կատարված սպանության հետաքննությունն այնպես էր տարվում, որ հայերը հարկադրված հայտարարեցին, թե ոչ մի սպանություն էլ չի կատարվել, որպեսզի խուսա տան նոր դժբախտություններից:

Քրդերն սպանում էին նաև առանց որևէ պատճառի, լոկ «հաճույքի համար»: Միսիոներներից մեկը գրում է. «Բռնությունների թիվն աճում է, և եթե միջոցներ չձեռնարկվեն, չուտով կազայի քրիստոնյաների բոլոր գյուղերը կընկնեն քրդերի ձեռքը, ինչպես դա տեղի ունեցավ Զաբուրում»:[88]

Քրիստոնյաների դժբախտությունը ոչ այնքան թալանն ու սպանությունն էր, որքան ամենօրյա ու անընդհատ կրկնվող չորթումները և բռնությունները: Բիչոփը նկատում է, որ հայերի շրջանում տիրում էր մի ավելի դաժան բան, քան տագնապն էր, դա ավելի չուտ սարսափ էր: Գրեթե բոլոր գյուղերը հասցված էին ծայր աղքատության:

Կյանքի ծանր պայմանների պատճառով մեծ էր մահացությունների տոկոսը, որոշ գյուղերում այն կազմում էր 25-40%, ինչն ավելի բարձր էր, քան ցանկացած համաճարակի ժամանակ:

Արդարության հասնելու անհուսությունն այնքան ակնհայտ էր, որ հայերը հրաժարվում էին հանցագործությունների դեմ վարչական մարմիններին դիմելուց:

Օսմանյան խորհրդարանում 1877թ. հանդես եկավ հույն երեսփոխան Սուլիոգեսը, որը անդրադարձավ գավառների ծանր կացությանը, քրդերի երեսից հայերի կրած անթիվ չարչարանքներին ու աղետներին: Հայ երեսփոխանները բերեցին Վանի 1876թ. հրդեհի ու թալանի օրինակը, որ «կատարվել էր իշխանության քաջալերությամբ»[89]:

Նույնիսկ թուրք երեսփոխանները դատապարտեցին նահանգներում տիրող բռնությունները: Այդնի երեսփոխան Ահմեդն ասաց. «Թուրքիայում դատական պաշտոնյանե-

---

[82] Колюбакин А. М., նշվ. աշխ., էջ 137.
[83] *Положение армян в Турции ...*, стр. 28-29.
[84] «Մշակ», 1898, թիվ 80:
[85] «Դիվան հայոց պատմության», գ. ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 106:
[86] Термен Р., *Отчет*, стр. 58.
[87] Տեր-Կարապետյան Գ., Հողային հարցը հայաբնակ նահանգներու մեջ, Կ.Գ., 1911, էջ 68:
[88] *Положение армян в Турции...*, стр. 261.
[89] «Մասիս», 1877, թիվ 1985:

*րը մեծ մասամբ անբարոյական և կաշառակեր մարդիկ են»[90]: Նիշի երեսփոխան Սուլեյմանը դժգոհեց, որ չնայած «հանցավոր պաշտոնատարներ խիստ շատ կան, բայց պատիժ ստացած ոչ մի պաշտոնատար երբեք չենք տեսել»: Մի այլ երեսփոխան հայտարարեց. «...իմ գավառիս մեջ կառավարության պաշտոնատարները խոշտանգանք կգործադրեն... ավանդները պաշտոնյաք կգողանան, ոստիկանության զինվորք ժողովուրդը կկողոպտեն»[91]:*

*Նահանգների իշխանության բարձրագույն պաշտոնատարը վալին էր, որ նշանակվում էր սուլթանի կողմից. որպես տվյալ նահանգի փոխարքա՝ նա պատասխանատու էր միայն Փադիշահի առաջ: Ընդ որում, պաշտոնյաները զբաղեցրած պաշտոնում երկար չէին մնում, իսկ հաճախակի փոփոխությունների հետևանքով գործերը մշտապես բարձթողի վիճակում էին:*

*Որպեսզի թյուրըմբռնում չլինի, նշենք, որ պետական ծառայությունում հայեր ունենալու խնդրում Համիդը միանշանակ քաղաքականություն չէր վարում: Նա մի կողմից պահանջում էր գյավուրներին քշել պաշտոնատներից, իսկ մյուս կողմից պետական բարձր պաշտոնների էր առաջ քաշում մեծահարուստ հայերի: Նման առաջքաշումների պատճառը երկուսն էին. նախ՝ կային պաշտոններ, որոնք թուրքերը զբաղեցնել չէին կարող համապատասխան կադրեր չունենալու պատճառով և երկրորդ՝ սուլթանը սերտ կապերի մեջ էր հայ վերնախավի որոշ շրջանների հետ, հյուրընկալում էր նրանց, խորհրդի հրավիրում, փոխառություններ վերցնում, հանձնարարում լուծել այլևայլ կնճռոտ հարցեր:*

*Այդ հայերի և, ամբողջությամբ վերցրած, հայ բնակչության հանդեպ սուլթանի մոտեցումներում ընդհանուր ոչինչ չկար: Տեղերում հայը պարտադրված էր տանելու ոչ միայն օսմանյան հոռի կառավարման «բարեմասնությունները», այլև ենթարկվում էր լրացուցիչ ճնշումների ու հալածանքների: Տեղական իշխանությունների անբարոյականությունն այն աստիճանի էր հասել, որ թալանչիները, մարդասպանները, բռնաբարները գործում էին բացահայտ, նրանց աչքի առաջ և մնում անպատիժ: Ով այդ ավազակներին ընդդիմանալու փորձ էր անում, պաշտոնից զրկվում էր:*

*Բեյերը բազում թելերով կապված էին Կ. Պոլսի պաշտոնական շրջանների հետ, ունեին իրենց հովանավորները: Նրանք արհամարհում էին տեղական իշխանություններին, դատարան չէին ներկայանում, վռնդում էին ոստիկաններին:*

*Բախշիշները մետաստազների նման տարածվել էին, իրենց ենթարկելով բոլորին, սկսած սուլթանից մինչև գյուղական մուխտարը, ստեղծել ընդհանուր անիշխանություն և անպատժելիության մթնոլորտ: Վանի Կեպան կազայի Սնոպ գյուղի քահանան ու շեյխը վիճում են: Շեյխը քահանայի մարմնի մեջ չամփուր է մտցնում ու խորովում, ապա գլխի կաշին քերթում ու մարմինն այրում: Ռչտունիքում Յուսուֆ անունով մի չարագործ ժամերգության ժամանակ մտնում է Նարեկա վանք, փախցնում է ութ տարեկան մի տղայի ու ամբողջ գիշեր լկում: Խորխոր գյուղում բեյերի ավազակության դեմ հայերը բողոքում են, գրում է Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Հ. Լեյարդը, հանձնաժողով է գալիս, որի «քննությունն ավարտվում է նրանով», որ բանտ են ընկնում բողոքող հայերը[92]: Զեյթունի կայմակամը խեղդում է մի հայի: Հարցը հասնում է մինչև Բ.Դուռ: Դատարանը հանցագործին մահապատժի է դատապարտում: Սակայն Մարաշի վերահսկիչ դատարանը չեղյալ է հայտարարում այդ վճիռը՝ պատճառաբանելով, թե «քանի որ հակառակ կողմի վկաները քրիստոնյաներ են և ոչ թե մահմեդեականներ... դատարանի վճիռը սխալ է»:*

---

[90] *Նույն տեղում*, թիվ 2080-2082:
[91] **Նուրիխան Մ.**, *Պատմություն ժամանակակից*, մ. Գ, Վենետիկ, 1907, էջ 548-549:
[92] *Blue Book*, Turkey, N6 (1880), p. 193.

*Կառավարման այս վայրագ համակարգը «բնութագրական է ոչ թե ինչ-որ առանձին վարչական միավորի կամ գյուղի, այլ, որպես անխուսափելի հետևանք կառավարման բոլոր օղակների թուլության ու փտածության, տարածված է ամբողջ Հայաստանում...»[93]:*

*«...Քուրդ բեյերն ու մահմեդական աղաները... յուրացնում էին քրիստոնյաների պտղատու այգիները... Նրանք գյուղական բնակչությանը վերաբերվում էին այնպես, ինչպես ստրուկների և հաճախ ուժի գործադրմամբ խլում էին նրանց վերջին վաստակը»[94]: Մանճուկի գյուղերից միայն մեկ տարվա ընթացքում գողացան 799 ոչխար, 55.5 հազար պիաստրա ընդհանուր արժեքով կտորեղեն, 121 հագուստ և 1972 բաթման (այսինքն՝ 15766 կգ) սննդամթերք:*

*Հայ գյուղի քայքայման գործում մեծ «վաստակ» ուներ նաև վաշխառուությունը: Մի հայ դրամ չունենալու պատճառով վաշխառուից ապառիկով 8 օխա աղ է գնում: Ութ տարի անց վաշխառուն նրանից խլում է 200 ոսկի արժողությամբ ջրաղացը[95]:*

*Գյուղացու նկատմամբ բռնությունները, հարստահարությունները, աշիրեթական վայրիվերումները ավերիչ ազդեցություն էին ունենում սոցիալ-տնտեսական կյանքի վրա: Տերմենը գրում է, որ Վանի վիլայեթը գյուղատնտեսության զարգացման համար բացառիկ բարենպաստ պայմաններ ունի, սակայն «Ամբողջ հողատարածքները բարձրթողի վիճակում են, հողագործ քրիստոնյա բնակչությունն աղքատ է, հող քիչ ունի, անասուն՝ նույնպես, ենթակա է քրդերին: Դրա հետևանքով հացը թանկանում է, ազգաբնակչության պահանջմունքը չի բավարարվում: Զգացվում է սով, վիլայեթն աղքատանում է: Քրդերը հողագործությամբ գրեթե չեն զբաղվում և, բնական է, որ կառավարությունը, աջակցելով նրանց և համդուրժելով բռնությունները հողագործ քրիստոնյա բնակչության հանդեպ, քայքայում է ամբողջ վիլայեթի բարեկեցությունը»[96]:*

*Մ. Նալբանդյանը գրում է. «Մենք սարսափում ենք, երբ աչք ենք ձգում այն անչնչացած, անզգայացած աշխահի վրա..., ուր այժմ մեր խեղճ, անտեր ու անօգնական ժողովուրդը միլիոնավոր բազմությամբ, թշվառության և հուսահատության մինչև հնարավոր ծայրը հասած, փոխանակ արտասուքի, արյուն է քամում աչքերից, երբ լաց է լինում»[97]:*

*Մ. Խրիմյանը 1862թ. Արևմտյան Հայաստանի մի քանի գավառներում չրջագայելուց հետո գրեց. «Կիսամերկ ու ոտաբոբիկ մայրեր ու զավակներ... տանջված դեմքերով ծերունիներ ու երիտասարդներ, որոնք սիրով ընդունում են... անկոչ հյուրերին և պատմում իրենց ահավոր կյանքի սև ու արյունոտ պատմությունները... ժողովուրդը ստրուկ և գերի էր, որքան ցանկանային կճնշեին ու կկեղեքեին, չկար մի փրկիչ, որ նրան ազատեր... ճնշված ու անճար ժողովրդի վերջին ճիգն ու հույսը մնացել էր փախչելը...», իսկ չգաղթածները «գնացած գաղթականների ծանր բեռի տակ են ճնշվում, նրանք այնքան չքավոր են, որ իրենց բաժին ընկած հարկը վճարել չեն կարող, ինչպե՞ս կարելի է և ի՞նչ իրավունքով ուրիշի բաժին տուրքն էլ պիտի վճարեն»[98]:*

*«Հայը,— գրում է Ռաֆֆին,— այսօր հերկում է յուր հողն այնպես, որպես հերկել են յուր պապ Արամի օրերում: Արհեստն ու ճարտարապետությունը նորա մոտ կրում են յուրյանց վերա հազարավոր տարիների հնության կնիքը, կարծես այդ ազգը մի քայլ անգամ առաջ չի դրել: ...Հովիվ ժողովուրդը դեռ ապրում է յուր նախնական կյանքով, նորա հագուստը ոտքից գլուխ կազմված է բուրդից... Նորա ոտնամանները (տրեխները), մինչև անգամ հագուստը, հյուսված են այծի մազից... Ես առիթ եմ ունեցել մտնել նոցա*

---

[93] *Положение армян в Турции...*, стр. 224.
[94] Նույն տեղում, էջ 33-34:
[95] «Հնչակ», 1890, թիվ 2:
[96] Термен Р., *Отчет*, стр. 68.
[97] Նալբանդյան Մ., *ԵԼԺ*, հ. III, Երևան, 1941, էջ 103:
[98] Պողոսյան Հ., *Սասունի պատմություն*, Երևան, 1985, էջ 57-60:

գետնափոր խրճիթների մեջ, որոնք ավելի գազանների որջերի են նման, որոնց մեջ տերը և յուր չորքոտանին միասին մի հարկի տակ են ապրում»: Եթե Քսենեֆոնը «նորից անցնելու լիներ Հայաստանի միջով, նորից նկարագրելու լիներ նորա ընտանեկան կյանքը, դարձյալ նույնը պիտի գտներ, ինչ որ տեսել էր քսանչորսևկես դար առաջ...»[99]:

Հարությունն Սվաճյանը բազմիցս անդրադարձել է գավառահայության վիճակին. «Սեբաստիո և Մարզվանի հայ ժողովրդյան վիճակները խիստ ցավալի են... (Վասպուրականում)... բազմաթիվ զրկանք, գողություններ, մարդասպանություններ, կանանց հափշտակություններ»: Դիշերը թուրքերը հարձակվում են հայերի տների վրա: «Քանի մը սրիկաներ փողոցեն կին մը կբռնեն իր միամյա որդվույն հետ, կբերեն հայու մը տուն պահ կուտան, որպեսզի ուզած ատենին գան անոր վրա իրենց չար կամքը կատարեն... վարժատան տնօրենին տուն քանի մը զինյալ տաճիկ կմտնեն գիշերով և... նորահարս կինը իր աչանց առջև մինչև լույս կլլկեն...»[100]:

Դիարբեքիրի անգլիական փոխհյուպատոս Հարթը ուսումնասիրելով Բիթլիսի հայ բնակչության վիճակը, հանգել է հետևյալ եզրակացության. 1. Բիթլիսի վիլայեթում հայերի վիճակը կարող է համարվել հայ համայնքի լրիվ բնաջնջման սկիզբ, 2. հայերի անտանելի վիճակը հետևանք է տարիներ շարունակ նրանց հանդեպ իրականացված հալածանքի, 3. այլևս գրեթե անհնար է հայերին վերադարձնել նախկին բարեկեցությունը, քանի որ նրանց մեծ մասը հող չունի, խրված է պարտքերի մեջ և նրանց վերջնական թշվառանալը լոկ ժամանակի խնդիր է, 4. բարենորոգումները, որոնք սրանից 3-5 տարի առաջ դեռևս ի զորու էին հայերին փրկել, ներկայումս անիմաստ են: Միայն խիստ վերհսկողությունը կամ հայերի հանդեպ քաղաքականության ամբողջական չրջադարձը կարող է կանգնեցնել նրանց անկումը: Ամբողջ ազգաբնակչությունը ցանկանում է թեկուզ հենց վաղը արտագաղթել, թե իմանա՝ ո՞ւր: Զնայած հայերը կապված են հողին, սակայն հասկացել են, որ իրենց սպառնում է ոչնչացումը, եթե չհեռանան[101]:

Նույն միտքն է հաստատում Մաևսկին. «Նման անտանելի կացությունում հայ բնակչությունն անխուսափելիորեն ավելի ու ավելի աղքատանալու է, և հնարավոր է, որ ի վերջո անհետանա»:

Այս և բազմաթիվ նման վկայություններ հաստատում են այն կարծիքը, թե Արևմտյան Հայաստանի հայաթափման քաղաքականությունը գործադրվել սկսեց մինչև Զուլումի տարիները, այն Հայկական հարցի ոչ թե հետևանքն էր, այլ պատճառը:

Արևմտահայությունը, իհարկե, հասկանում էր, որ օսմանյան վարչակարգը իրեն մղում է բնաջնջման և տեղ-տեղ ընդվզում էր դրա դեմ:

1862թ. փետրվարի 28-ին «Փարիզ» պարբերականը տպագրեց Մարսելից ստացված մի հեռագիր, որում ասվում էր, որ Վանում «տաճիկ զինվորները քրիստոնեից խաչը թշնամացնելուն համար կռիվ եղավ ու մինչնաբերդն առնվեցավ: Երկու կողմեն մեռելոց և վիրավորելոց թիվը հազարի կը հասնի»: "Irving Post" թերթի կարծիքով՝ այդ բախումը «լի է քաղաքական նշանակությամբ»[102]: «Համբավաբեր Ռուսիո»-ն Վանի դեպքերն անվանում է «փոքրիկ պատերազմ»[103]:

Իրադարձությունները զարգացել էին հետևյալ կերպ. Վանի մահմեդականները հայերից պահանջում են հուղարկավորությունների ժամանակ դագաղի առջևից խաչ չտանել, հակառակ պարագայում կկոտորվեն: Մահմեդականները չէին կատակում: Մի հայի թաղման ժամանակ նրանք խլում են խաչն ու ջարդում: Մայր է առնում զինված ընդհարում: Բերդում «սկսվեց սոսկալի կռիվ ու կոտորած: Բերդը մնաց հայերի ձեռքը, որովհետև թվով շատ էին տաճիկներից»[104]:

---

[99] Ռաֆֆի, նշվ. աշխ., էջ 195-196:
[100] «Մեղու», 1863, թիվ 203: Սվաճյան Հ., Հրապարակախոսություն, Երևան, 1960, էջ 321-324:
[101] Термен Р., *Отчет*, стр. 75.
[102] «Փարիզ», 28.03.1862:
[103] «Համբավաբեր Ռուսիո», 1862, թիվ 21:
[104] "Радуга", 15.04.1862.

1863թ. քուրդ հարստահարիչների դեմ զինված պայքարի ելավ Մուշի հայությունը. Ֆ. Միլինգեն այն անվանում է «բացահայտ ապստամբություն»[105]: Մշեցիների պատվիրակությանը մեծ վեզիր Ֆուադը կոպիտ արտահայտություններով է ընդունում, թե «ռուսական սահմանը բաց է նրանց առաջ»: Բայցևայնպես առճակատման մյուս կողմի ղեկավարներն աքսորվեցին: Հետագայում Մ. Իզմիրլյանն այդ մասին գրում է. «Բարեխնամ կառավարությունը անգամ մը Մշո սահմանակից քրդաց գլխավորները ձերբակալելով նույն երկրեն հեռացուց..., սակայն այդ աքսորյալ գլխավորներեն ոմանք սկսան վերադառնալ նույն երկիրը, որով ավելի ևս կենդանացավ և գրգռեցավ ասոնց բարբարոսությունը»[106]:

Նույն տարիներին քուրդ հարստահարիչների դեմ ընդվզումներ տեղի ունեցան նաև Քղիում, Ջարսանջակում, մասնավորապես՝ տևական էր վերջինիս հայ բնակչության պայքարը քրդական ավազակությունների և դրանք հովանավորող թուրք բարձրաստիճան պաշտոնատարների դեմ: Պատմական որոշ աշխատություններում այս ըմբոստությունների նշանակությունը չափազանցված է, թե դրանք «հայ ժողովրդի մեջ արթնացրին պայքարի ոգի, ներշնչեցին հաղթանակի ու ազատության հույս»[107]: Իրականում դրանք ավելին չէին, քան տեղական նշանակության առանձին ընդվզումներ և ընդհանուր իրավիճակի վրա ազդեցություն գործել չէին կարող:

Ազգային խտրականությունն ու հարստահարությունները առկա էին ոչ միայն գյուղերում գյուղացիների, այլև քաղաքներում ու գյուղերում հայ արհեստավորների ու առևտրականների հանդեպ, չնայած վերջիններս առաջատար դեր էին խաղում կայսրության տնտեսական կյանքում: Օրինակ, Վանի վիլայեթում գործում էր 900 արհեստանոց, որոնցում աշխատում էր 2300 մարդ»[108]:

Հայերի ձեռքին էր կայսրության արտաքին առևտրի կեսը՝ ներմուծման 60%-ը, արտահանման 40%-ը[109]:

Սակայն այս խնդրում ևս պատմագիտական որոշ աշխատություններում չափազանցություններն ու չփոթը ակնհայտ են, հաճախ Արևմտյան Հայաստանի տնտեսական կյանքում հայերի խաղացած դերը, նրանց տնտեսական գործունեության տեսակարար կշիռը մեխանիկորեն տարածվում է ամբողջ կայսրության վրա: Արևմտյան Հայաստանի տնտեսական կյանքում հայերի գերակշիռ դերն իրողություն էր և հասկանալի: Դա նաև չնորհիվ այն բանի, որ նրանք վեց վիլայեթներում ամենամեծաթիվ ազգությունն էին: Օրինակ, Էրզրումում բնակվում էր մոտ երկու անգամ ավելի շատ հայ, քան թուրք, և հայերի առևտրի ծավալը երեք անգամ գերազանցում էր թուրքերի առևտրի ծավալին: Հայերի ձեռքին էր քաղաքի առևտրի 90%-ը: Իսկ, օրինակ, Խարբերդում ու Մեզրեում հայ էին գրեթե բոլոր առևտրականները: Տարոնի առևտրական 800 տներից 500-ը հայ էր: Պատկերը նույնն էր հայկական բոլոր նահանգներում: Պատճառները երեքն էին՝ ա. թուրքերի ավանդական պասիվությունը տնտեսական գործունեության ասպարեզում, բ. քրդերն, ընդհանրապես, առևտրով ու արհեստերով չէին զբաղվում և գ. քաղաքաբնակ հայ բնակչության տեսակարար մեծ կշիռն ու ավելի տանելի վիճակը, քան գյուղերում, ինչը հայ գեղջուկին կտրում էր հողից, տանում քաղաք և ներառնում արհեստագործության և առևտրի ոլորտը: Համաձայն Վիտալ Գյունտերի վիճակագրության, եթե հայ էր կայսրության յուրաքանչյուր 10-րդ բնակիչը, ապա հայ էր յուրաքանչյուր 4-րդ քաղաքաբնակը: Արևմտահայերի 40%-ը բնակվում էր քաղաքներում:

Այդպես էր կայսրությունում, ամբողջությամբ վերցրած, բայց այդպես չէր Արևմտյան Հայաստանում: Էրզրումի վիլայեթում քաղաքաբնակ էր հայերի 15, Սեբաս-

---

[105] Ղազարյան Հ., նշվ. աշխ., էջ 452:
[106] Մատենադարան, Իզմիրլյանի ֆ., վավ. 616:
[107] Ղազարյան Հ., նշվ. աշխ., էջ 455-456:
[108] Cuinet V., *La Turquie d' Asie*. Paris, 1892, p. 677.
[109] Guttman J., *The Beginings of Genocide*, New York, 1948, p. 13.

տիայում՝ 31, Խարբերդում՝ 54, Վանում՝ 17, Բիթլիսում՝ 27, Դիարբեքիրում՝ 40%-ը: Դա հասկանալի է, որովհետև գյուղական բնակչության հիմնական մասը արտագնա աշխատանքի էր մեկնում կայսրության արևմտյան ծովափնյա քաղաքները, որոնցում հաց վաստակելու հնարավորություն այնուամենայնիվ կար, ինչը չի կարելի ասել Հայաստանի քաղաքների մասին: Ընդ որում, դա վերաբերում էր ոչ միայն Հայաստանի, այլև թուրքական քաղաքներին, այդ թվում նաև Կ. Պոլսին, որի 86 թաղերից 20-ում հայերը մեծամասնություն էին կազմում՝ մոտ 280 հազար հայ: Քաղաքի առևտուրը հայերի և հույների ձեռքում էր: Սակայն Կ. Պոլսում նույնպես հայերի ճնշող մեծամասնությունը հասարակության ընչաքաղց խավերին պատկանողներ էին, մասնավորապես՝ համալներ: Նաև հարկ է նշել, որ ազգային ճնշումներին ենթակա էին ոչ միայն հայ աշխատավորական, այլև հարուստ խավերը: Ազգային խտրականության թուրքական քաղաքականությունը դամոկլեսյան սրի նման կախված էր նաև հայ մեծահարուստների՝ սարաֆների գլխին. «Երբ փաշան պաշտոնե ինար կամ պատժվեր, անոր սարաֆը խստության մեծագույն բաժինը կը կրեր, ան երբեմն կաքսորվեր, երբեմն ստացվածքեն կը զրկվեր և երբեմն ստացվածքեն ու կյանքեն»[110]: Հայը որքան հարուստ, այնքան ավելի վտանգված էր: Կան ոչ փոքր թվով փաստեր, երբ սուլթանը կամ նրա մերձավորները հային սպանում էին նրա հարստությանը տիրանալու համար:

Կայսրության տնտեսական ու քաղաքական ճգնաժամը խորացրեց ու ավելի վայրագ բնույթ հաղորդեց հարստահարությունների ու թալանի պետական քաղաքականությանը:

Դրա հետ միասին կայսրության քրիստոնյա ժողովուրդները և առաջին հերթին, հայերը, գնալով ավելի սաստիկ էին ենթարկվում ազգային, քաղաքական հալածանքների: Թանզիմաթն ի վիճակի չեղավ մեղմացնելու ազգային ու կրոնական ճնշումները, քանի որ դրանք պետական չհագրգիռ քաղաքականության հետևանք էին և հետապնդում էին որոշակի նպատակներ: Հայերի հանդեպ հալածանքներն ավելի խստացան Ղրիմի պատերազմից հետո, երբ վերականգնվեցին քուրդ ցեղապետերի, բեկերի ու աղաների երբեմնի իրավունքները: Նշանավոր արևելագետ Ա. Կրիմսկին գրում է. «Թե ինչ է կատարվում դժբախտ հայերի հետ, բոլորին հայտնի է: Նաև հանրահայտ է, որ զազանությունների մեղսագործները ոչ միայն չեն պատժվում, այլ, ընդհակառակը, կառավարությունից պարգևներ են ստանում: Մինչև անգամ Ասորիքում, որը մյուս գավառների համեմատությամբ քրիստոնյաների համար ավելի անվտանգ է համարվում, քրիստոնյային սպանող մահմեդականն անպատիժ է մնում: Սկզբում որևէ հյուպատոսի պահանջով մարդասպանը բանտ է նետվում, իսկ երեք օր անց թուրքական կառավարության չնորհիվ ազատ է արձակվում, մանավանդ, եթե կաշառք ստանան, բոլորին ծանոթ մահմեդականը հպարտորեն կշրջի, օրինակ, բազմամարդ փողոցում, ինչպես Բեյրութի Բյուրժն է»[111]:

Ռուս գեներալ Լիխուտինը իրավիճակը հետևյալ կերպ է ներկայացնում. «Ես տեսա մի քանի հայ՝ կտրված ականջներով ու քթով, ինչն արված էր ոչ թե դատարանի վճռով, այլ կամայականորեն ու բռնությամբ, այս կամ այն ազդեցիկ ու հարուստ գյուղապետի կամ տեղական դատարանի անդամի կողմից: Նրանք (հայերը) մշտապես տագնապի մեջ էին և ունեին ահաբեկված տեսք»[112]:

1874թ. պատրիարքարանը Բ.Դռանը գրում է, որ բեյերը չարչարում և հարստահարում են հայ ժողովրդին, նրանցից հարկ են գանձում, քանդում են եկեղեցիները, հրկիզում են անասնակերը, հայերին գյուղերից քշում և տիրանում են նրանց հողերին[113]:

---

[110] Զագմագճյան Հ., *Ընդհանուր պատմություն հայոց*, Բոստոն, 1917, էջ 556:
[111] Կրիմսկի Ա., *Մահմեդական աշխարհն ու նրա ապագան*, Վաղարշապատ, 1906, էջ 105-106:
[112] Лихутин М., *Русские в Азиатской Турции в 1854 и 1855гг.*, СПб., 1863, стр. 168.
[113] Տեր-Կարապետյան Գ., նշվ. աշխ., էջ 44:

*Կարինի անգլիական հյուպատոս Լլոյդը նկատում է. «Սուլթանի հայ հպատակները տառացիորեն անպաշտպան են, ինչպես գայլերով չրջապատված ոչխարի հոտը»[114]: Օսմանյան կայսրության պատմության մասնագետ Ռայթը 1877թ. գրել է. «Թուրքերն ավերում են ոչ միայն վայրենի կատաղության պահին, այլև լրիվ սառնասիրտ և իրենց իրավունքներին, օրենքին ու հավատին լրիվ համապատասխան: Թուրքական տիրապետության միտումն է՝ իրականացնել բարոյական փչացում, տանջանք ու ավերածություն... Թուրքական կայսրությունում հազիվ թե գտնվի մի քրիստոնյա ընտանիք, որ չունենա սարսափելի հուշեր, այնքան սարսափելի, որ անհնար է դրանց մասին մտածել կամ խոսել»[115]:*

*Հայերի ունեցվածքի ոչ միայն հափշտակությունները, այլև ավիրելն ու ոչնչացնելը դարձել էին սովորական երևույթ, 1876թ. դեկտեմբերի 13-ը դարձավ Վան քաղաքի տարեգրության սև էջը, քաղաքը մի գիշերվա ընթացքում հրդեհվեց, թալանի և հարստահարության ենթարկվեց: Գիշերը հայերը զարմանքով նկատեցին, որ պահակային ծառայության զորքերը, ոստիկանությունն ու խուժանը միավորելով, ձեռքերին չահեր ու կացիններ, չարդում ու ավերում են հայերի խանութներն ու տները, թալանում ու այրում դրանք: Տեղում գտնվող պաշտոնատարներից ոմանք ձևացրին, թե անզոր են զսպել թալանչիներին, իսկ մյուսները նույնիսկ ոգևորում էին ավազակներին: Այդ գիշեր այրվեց հայերին պատկանող 1000 խանութ ու կրպակ, չատ հայեր զոհվեցին ու վիրավորվեցին[116]: Խորհրդանշական վկայություններ. հրդեհի նախօրեին Վանի զորահրամանատարը հայերին սպառնացել էր՝ մասնակցեք բանակի օգտին հանգանակությանը, «ապա թե ոչ զղջալու եք: Զնվիրաբերված կերպասներդ, դրամներդ և անձամբ ինքներդ այրվելու եք...»[117]: Թուրք պաշտոնյաներից ձեմիլը ուղղակի վկայեց, որ այդ հրդեհը, «դիտավորյալ պատրաստված ծրագրի գործադրություն էր»[118]:*

*Արևմտյան Հայաստանում ամենուրեք վխտում էին ավազակախմբեր, որոնք թալանում էին, սպանում, ոչնչացնում: Բալուում 1877թ. հարստահարություններից ու ավազակություններից տուժեց ավելի քան 4000 մարդ:*

*Է. Բիչոփը, Հայաստանում ճանապարհորդելուց հետո, գրում է. «Ավազակները կանգնեցնում են քարավանները և կողոպտում: Հայերի համար երկրում ճանապարհորդելն անպայման վտանգավոր է, ոչխարները քշում են, մշտապես կատարվում են բռնություններ, որոնց մասին պատմելը պատշաճ չէ: Գրեթե բոլոր գյուղերը հասցված են ծայրահեղ չքավորության: Հայերից հարկ են քամում այն ժամանակ, երբ վճարելու համար քրդերը նրանց մոտ ոչինչ չեն թողել... զենքեր խլելը, քրդերի կողոպուտները, քուրդ բեյերի ճնշումները, որոնք իրենց բռնարարքները պատճառաբանում են կառավարության սանկցիայով, կանանց համար անվտանգության բացակայությունը և, առավել ևս, վատ ապագայի սարսափը՝ այս ամենը բնակչությանը հասցրել են խղճալի վիճակի»[119]:*

*«Թուրք հաղթողները,– գրում է Ռոլեն Ժեկմենը,– չհապաղեցին հասկանալ, որ պարտվածներին փոխանակ սպանելու, ավելի լավ է նրանց թույլ տան ապրել (անասունների) նման, որը որոշակի եկամուտ է բերում... արհամարհելով այն ամենը, ինչով զբաղվում էին այդ անհավատ չները, հայերը և հրեաները, օսմանցիները բավարարվեցին նրանով, որ ռայայից ծծեցին ողջ հյութը, գանձելով գլխահարկ, որ կոչվում էր «խարաջ», իրենց հարեմների համար փախցնելով նրանց մատաղ սերնդի ծաղիկը...»[120]:*

---

[114] *Положение армян в Турции ...*, стр. 224.
[115] *Նույն տեղում*, էջ 142:
[116] «*Մշակ*», 24.02.1877:
[117] «*Северный вестник*», СПб., 1896, N10.
[118] *Նույն տեղում:*
[119] *Положение армян в Турции ...*, стр. 257-260.
[120] *Նույն տեղում:*

*Այդպես էր կայսրության այլակրոն բոլոր հպատակ ժողովուրդների դրությունը, սակայն, կրկնում ենք, այդ համատարած թշվառության մեջ ամենածանրը հայերի վիճակն էր: Սուլիադիսը նկատել է. «Ինչ գեղծումներ, որ կատարվեցին Ռումելիում և Բուլղարիայում, նույնը երկար ժամանակից ի վեր կատարվում է Հայաստանում... Սակայն հույներն ու բուլղարացիները Եվրոպայում տեղրակներ հրապարակելով և բողոքի ձայն բարձրացնելով Եվրոպայի հայացքն իրենց տառապանքների վրա հրավիրեցին, մինչդեռ հայերն այդ միջոցից զուրկ լինելով, լուռությամբ տարան ու հանդուրժեցին կրած տառապանքները: Բայց մի՞թե արդարություն է, որ հայը... այսպես չարչարվի ու կողոպտվի»*[121]*: Զրկված զենք կրելու իրավունքից՝ հայը չէր կարող իրեն պաշտպանել և հարկադրված էր հովանավոր փնտրել քրդերի շրջանում՝ իր անվտանգության համար վճարելով շատ թանկ: Լլոյդը գրում է. «Կան երեք կողմեր թուրքահայերի դրության մեջ, որ բոլորն էլ ընդունում են, և պետք է անհապաղ դրանց դարման արվի՝ 1. անապահովություն կյանքի և սեփականության՝ քրդերի մշտական հարձակումների հետևանքով, 2. անձնական անապահովություն և լիակատար բացակայություն խոսքի և գործի ազատության, 3. կառավարության աչքում մահմեդականների համեմատությամբ քրիստոնյաների անիրավահավասար դրություն»*[122]*:*

*«Բանտերն են նոցա դպրոցները,– գրում է Մ. Նալբանդյանը,– պոլիցակունք և ժանդարմը՝ դաստիարակները, չղթան՝ հրահանգիչ գիրքը, աքսորը՝ բարոյականությունը վերին աստիճանի կազդուրելու մարզարան, կախաղանը և գլխապարտության խայտառակ սյունը՝ «դուռն ճչմարիտ, որ տանի ի կյանս հավիտենական»*[123]*:*

*«Խաղտիք ու Բարձր Հայք թրքացած, մորթված, գաղթած և աքսորված կը հեծեն,– պատմում է Գ. Սրվանձտյանցը,– Քեղկիթ գավառն այսօր ունի... 98 գերեզմանոց ավերակ, այդ ընդարձակ գավառին մեջ միայն 15 տուն հայ մնացեր է»*[124]*:*

*Հայության վրա օսմանյան իշխանությունների համընդհանուր հարձակումը 1860-ական թվականներին իրողություն էր դառնում: Հայը ոչ միայն հարստահարվում, բռնի մահմեդականացվում, ուծացվում էր, այլև ենթարկվում ազգային աննախադեպ հալածանքների: «Գրեթե 80 տարիե ի վեր օսմանյան պետության վառոդաչինությունը հայոց հանձնված էր,– 1863թ. գրում է «Համբավաբեր Ռուսիո» պարբերականը,– այժմ Բ. Դուռն արժանի է համարել վառոդարանի գերտեսչությունը նույն գերդաստանեն (Տատյան) առնուլ և հայ աշխատավորաց քով թուրք զինվորներ դնել և նույն աշխատավորներին ստիպել, որ անոնց հետ գործեն և վառոդաչինության արհեստն ուսուցանեն անոնց, որպեսզի հետո հայերը բոլորովին արտաքսեն վառոդարանեն»*[125]*:*

*Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Իգնատևը 1869թ. գրում է իր կառավարությանը, թե Բ. Դուռը գաղտնի հրահանգ է տվել տեղական իշխանություններին ոչնչացնելու հայկական պատմական հուշարձանները, որպեսզի այդ կոթողները չհիշեցնեն Հայաստանի անցյալը և հայերի մեջ չարթնացնեն անկախության երազ*[126]*:*

*Նույն 60-ական թվականներին Բ. Դուռն սկսեց լայնորեն իրականացնել կովկասյան լեռնականների ներգաղթն ու նրանց բնակեցումը Արևմտյան Հայաստանում և Լեռնային Կիլիկիայում:*

*Իշխանություններին հայերի ներկայացրած բողոքները հանգում էին հետևյալին, չարաչահումներ հարկերի բաշխման և գանձման գործում, պաշտոնատարների չարաչահումներ, կանանց ու երեխաների իսլամացում, թալան, առևանգումներ, սպանություններ: Հայերը խնդրում էին՝ զինվորական հարկի փոխարեն գործադրել պահեստային զի-*

---

[121] «Մասիս», 1897, էջ 1885:
[122] «Դրոշակ», 1890, թիվ 2 (Բերթոն):
[123] Նալբանդյան Մ., նշվ. աշխ., էջ 67:
[124] ԳԱԹ, ֆ. Ազատյան Թ., բ, III, վավ. 42:
[125] «Համբավաբեր Ռուսիո» (Մոսկվա), 1863, թիվ 48, էջ 3:
[126] *Биржевые ведомости*, 1869, N109.

նուժի մասին օրենքը, անցկացնել նոր մարդահամար հողային հարկի և եկամտահարկի չափերը որոշելու համար, վերացնել հարկերի հավաքման կապալային եղանակը:

Ոմն Աբդի, դառնալով մյուդիր, բռնագրավում է Դիարբեքիրի Շահբերդի կազայի հայերի հողերը, քշում նրանց անասունները, ավերում եկեղեցին, այն վերածում անասնակացարանի: 1873թ. Ռեչիդը Վան է ուղարկվում հայերին վերադարձնելու նրանցից խլված հողերը: Սակայն հակառակն է կատարում՝ քրդերի վրա է գրում լավագույն հողերը: Խաբեության 200 զոհերը բողոքում են: Վանի իշխանություններն այդ բողոքը իրավացի են համարում: Ջայրացած քրդերը հարձակվում են հայկական տասը գյուղերի վրա[127]: Ջարսանջակում աղաները հայերից պահանջեցին վճարել իրենց անչարժ ունեցվածքի վարձագինը: Տեղական իշխանությունները պաշտպանեցին նրանց: Պատրիարքի ջանքերը՝ Բ. Դռան միջոցով ապօրինությունը վերացնելու, ապարդյուն անցան: Բ. Դռանը ներկայացված մի գանգատում կարդում ենք. «Քրդերն ու մյուս լեռնային ռասաները, որոնց վերջերս միացել են չերքեզները, իրենցից ներկայացնում են իսկական աղետ ազգաբնակչության համար... միշտ զինված, ոչ մի հարկ չվճարող, զինվորական ծառայությունից ազատ այս բարբարոսները գրեթե միշտ գտնվում են ապստամբ վիճակում: Հայերը ծանր հարկեր պետք է վճարեն ոչ միայն թուրքական կառավարությանը, այլև պարտավոր են քայքայիչ ծանրության տուրքեր վճարել հօգուտ այս վայրենիների»[128]: «Մեղու Հայաստանի» թերթը 1876թ. նոյեմբերի 6-ին «Հայրենիք»-ից արտատպեց մի հոդված Տրապիզոնի հայերի նկատմամբ իշխանությունների բռնությունների մասին՝ «այնպիսի մի բարբարոսություն, որ միայն փարավոնների ժամանակներում է գոյություն ունեցել: Վիլայեթի գյուղերում հարյուրապետը գյուղացիներին մահակով ու սրի պատյանով դաժանորեն ծեծում էր, կապում գետնին խրված գերաններին ու ցցերին և նորից ծեծում, նրանց վրա ջուր էր լցնում, ամբողջ օրը քաղցած պահում, անընդհատ ծեծում, մինչև որ նրանց դիմաց որևէ մեկը հարկը վճարեր»:

«Խեղճ աղքատին,– գրում է Րաֆֆին,– մերկացնելու աստիճանի կողոպտելը, ծեծելը, ցցի հանելը, արյունազուրկ անելը, ծայրաստիճանի չնչասպառ հյուծելը կարծես թե ի սկզբանե Թուրքիայի գավառների նկատմամբ գործադրվող արդարությունն ու քաղաքականությունը լինեն:

Անատոլիայի բռնություններն ու հարստահարությունները հնում եղածների վրա հարյուրին հարյուր բազմացել են... գյուղեր թալանել, մարդասպանություններ, ընտանիքներին վիրավորել, ձիերը, ջորիներն ու ավանակները հոտերով հափշտակել: Սրանց կատարողներն անունով քրդեր են: Սուտ է, միայն քրդեր չեն, այլ տեղացի բազմաթիվ մահմեդականներ: Քրդերն ինչ որ կողոպտում են, մահմեդականների (թուրքերի) հետ բաժանում են: Գող-մարդասպանները ազատ, համարձակ չրջում են: Սրանցից ոմանց բանտարկում են ու ապա կրկին ազատ արձակում:

Գիտե՞ք հարստահարիչներն ինչ են ասում. «Մենք Անատոլիայում բնակվող բոլոր հայերին լրիվ կողոպտելով՝ մերկացնում ու բնաջինջ ենք անում»[129]:

Ուստի պատահական չէր, որ հարստահարությունները գնալով սաստկանում էին, բազմաբնույթ ու սարսափելի դառնում: Միայն «երկու բան էր մնում անփոփոխ, մինը կառավարության գործ դրած թուլլ միջոցներն իրենց անբավարար հետևանքներով, մյուսը՝ հարստահարությանց կատարված տեղերը... Վանա ծովակի չորեք կողմում ցրված գավառները, այսինքն, Էրզրումի և Տիգրանակերտի նահանգները, Մուշ, Բաղեշ, Վան, Դերջան, Քղի, Ղուլուջան, Ջարսանջակ, Սղերդ, Սասուն և այլ գավառներ»[130]:

---

[127] *Положение армян в Турции* ..., стр. 32.
[128] Նույն տեղում, էջ 26-27:
[129] Րաֆֆի, ԵԺ, հ V, էջ 198:
[130] Նույն տեղում, էջ 142:

Ց. Վեսելովսկին բացարձակապես իրավացի էր, երբ գրում էր. «...Հայերի ու մահմեդականների վերաբերյալ միանգամայն տարբեր էթնիկական նորմերի գոյությունն ու քրդերին անուղղակի խրախուսելը, պետք է անբարոյականացնող ազդեցություն գործեին նրանց վրա, ում ձեռքին էր հայ ազգաբնակչության բախտը»:[131]

Հ. Սվաճյանը գրում է, որ հայը լքում, հեռանում էր իր հայրենիքից, որովհետև հայրենիքն այլևս անկարող էր սատար լինել որդիներին, որոնց ոտքերի տակ այրվում է հայրենի հողը և դարձել է այն դաշտը, որտեղ կոտորվում ու ոչնչացվում են հայերը: «Այն ատենին, երբ մայրը յուր աղջկան արյունն կը տեսներ օճապատույտ գալարմամբ գետնին երեսը տան մեջ, սենյակներու, անկողիններու, օրորոցներու մեջ վազելը, ան ատենին, որ բարեպաշտը սրբազան անոթներուն անարգվիլը, տաճարներուն պղծվիլը և տաճարներուն չափ սրբազան կույս աղջկանց առակվիլը արտասվաթոր աչքերով կը դիտեր... ան ատեն կըսենք, որ մեռնելու կամք և հոժարություն ունեցողը կարող չէր իր մահվամբ իր ընկերուն գեթ կյանքը ազատելու...»[132]:

Այսպիսով, ռայա հայը պարտավոր էր մշակել մահմեդականի հողը, խնամել անասունները, զբաղվել արհեստներով ու առևտրով, իր ուսերին տանել սև աշխատանքը, ժամանակին մուծել հարկերն ու տուրքերը, հեզությամբ ենթարկվել մուսուլմանի քմահաճույքներին: Քրիստոնյային ապրելու իրավունքից չզրկելը Թուրքն արդեն համարում էր գերագույն զիջում: Ջէ՞ որ Կորանը պահանջում էր. «Կռվեք նրանց դեմ, ովքեր չեն հավատում Ալլահին... մինչև այն ժամանակ, երբ նրանք թուլացած ու ոչնչացած փրկագին կտան իրենց կյանքի համար»: Մահմեդականին ստրկական հնազանդությամբ ծառայելը քրիստոնյայի փրկագինն էր: Իսկ եթե նա փորձի խույս տալ, ապա «բռնեք նրան և սպանեք»[133]:

Օսմանյան թեոկրատական վարչակարգում կրոնականն ու աշխարհիկը համատեղված էին, բոլոր աշխարհիկ ինստիտուտները միաժամանակ կրոնական հաստատություններ էին: Թուրքական բանակը բացառապես մահմեդական էր, տոները՝ մահմեդական, պաշտոնական օրացույցը՝ նույնպես, օրենքների հիմքում դրված էին Կորանի ու Շարիաթի դոգմաները, օրենքների մեկնիչները մահմեդական դատավորներն էին, և նույնիսկ վկայությունը դատարանում հանդիսանում էր կրոնական ակտ:

Պատմական գրականության մեջ կարելի է հանդիպել կարծիքի, թե թուրքերն աչքի էին ընկնում այլ կրոնների նկատմամբ հանդուրժողականությամբ: Սա այնքանով է ճիշտ, որքանով ստամոքսը «հանդուրժողական է» սննդի հեշտ մարսվող տեսակների համեմատ: Այսինքն՝ մահմեդականը քրիստոնյային հանդուրժում էր, քանի դեռ վերջինս իրավունքներ չէր պահանջում:

## 7. ԱՁԼԱՄԵՐԺՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ՝ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՂԱՆԱԿ

Թուրք պատմաբանները սիրում են կրկնել՝ «Օսմանյան պետության մեջ երբևէ ոչնչացում կամ եղեռն չի եղել»: Իսկ նրանք, ովքեր, համենայն դեպս, սեփական պատմության մեջ նման արյունոտ էջերի գոյությունը չեն ժխտում, բացառում են վարչակարգի մասնակցությունը կոտորածների կազմակերպմանը: Հայերն, ասում են նրանք, կոտորվել են հայ-քրդական բախումների ընթացքում և կոտորվել են, որովհետև քրդերն ավելի մեծաթիվ ու ավելի մարտունակ էին: Հայերը չատ զոհեր են տվել նաև կովկասյան լեռնականների հետ բախումների ընթացքում: Դեպի հարավ Ռուսաստանի առաջխաղացումը ծնեց Կովկասի լեռնական մահմեդականների զանգվածային արտագաղթ: Նրանք

---

[131] Веселовский Ю., *Трагедия Турецкой Армении*, Москва, 1911, стр. 25-26.
[132] «Մեղու», 1859, թիվ 26:
[133] Массэ А., *Ислам*, Москва, 1961, стр. 30.

եկան Թուրքիա և տեղավորվեցին հայերի «լքած» հողերի վրա: Լեռնականները վրեժխնդրությամբ էին լցված քրիստոնյաների դեմ և նրանց ու հայերի միջև «էթնիկական հողի վրա» ծագում էին զանազան միջադեպեր, որոնք, չնայած իշխանությունների խաղաղարար միջամտության չնորհիվ ծավալում չէին ստանում, սակայն երկու կողմից էլ լինում էին զոհեր[134]:

Բացարձակ կեղծիք է: Օսմանյան կայսրությունը ծնվեց քաղաքակիրթ ժողովուրդների կոտորելով և ջարդարար մնաց իր ամբողջ գոյության ընթացքում: Ցաթաղանի զոհ են գնացել տասնյակ ժողովուրդների միլիոնավոր որդիներ ու դուստրեր: Միայն մի քանի օրինակ, երբ սուլթան Մուրադ 4-րդը գրավեց Բաղդադը (XIIդ.), 30 հազար մարդու սպանել տվեց՝ հայտարարելով. «Վրեժխնդրությունը մեծանում է, բայց երբեք չի ծերանում»: Հունգարիան նվաճելու ժամանակ (XIVդ.) սուլթան Բայազետը չհագեցավ 150 հազարանոց հունգարական բանակը գլխովին ոչնչացնելով և իր աչքի առաջ սպանել տվեց 10 հազար խաղաղ բնակչի:

Սակայն, որքան էլ տարօրինակ է, թուրքերի ջարդարար բնազդները գործադրվելու առավել հնարավորություններ ստացան 19-րդ դարում: 1822թ. կոտորվեց 50 հազար հույն, 1850թ.՝ 10 հազար նեստորական ասորի, 1860թ.՝ 11 հազար սիրիացի, 1876թ.՝ 60 հազար բուլղարացի, 1892թ.՝ 10 հազար եզդի, 1894-96թթ.՝ 300 հազար հայ: Իսկ մինչև 10 հազար զոհերով կոտորածները, ինչպես նշում է Ֆ. Գրինը, ավելի քան բազմաթիվ էին, ընդ որում՝ այդ բոլոր «մեծ ու փոքր» կոտորածների ակունքներում կանգնած է եղել սուլթանական կառավարությունը[135]:

Պնդումը, թե հայերի կոտորածները հայ-քրդական բախումներում քրդերի հաղթանակներն էին, իրականության հետ ընդհանուր քիչ բան ունի: Նախ, չնայած քրդերը զինված էին, իսկ հայերը՝ հիմնականում անզեն, միշտ էլ, երբ թուրքական բանակն ու ոստիկանությունը քրդերին չէին օգնում, հայ-քրդական բախումներից հայերը հաղթանակած էին դուրս գալիս: Օրինակները բազմաթիվ են: Տալվորիկի 1892թ. կռիվներում հայերը հաջողությամբ հետ էին մղում քրդերի հարձակումները, մինչև այն պահը, երբ թուրքական բանակը մարտական գործողությունների մեջ մտավ: Նույն իրողությունը տեսնում ենք Զեյթունում, Վանում, Երզնկայում և այլուր: Իսկ կովկասյան լեռնականները ոչ մի տեղ, ոչ մի ժամանակ հայերի կոտորածներում առաջատար դեր չեն խաղացել, չնայած թուրքական իշխանությունները մուհաջիրներին դրել էին մի վիճակում, որ նրանք գոյության այլ միջոց չունեին, բացի հայերին թալանելը:

Կոտորածների կնքահայրը սուլթանական վարչակարգն էր, քանի որ դրանք Թուրքիայում կառավարման եղանակ էին և խնդիր ունեին ահաբեկել հպատակ ժողովուրդներին, նրանց միմյանց դեմ լարել, արյան վրեժի ուժով փոխել կայսրության ժողովրդագրական պատկերը հօգուտ թուրքերի: Այդ խնդիրների բնույթով է պայմանավորված նաև այն, որ թուրքերը կոտորածներն իրականացնում էին ամենավայրագ եղանակներով, որպեսզի ամեն մի կոտորածին հետևեին նոր արտագաղթողներ, հավատափոխներ և ուծացողներ:

Հետևաբար, «կոտորածները՝ որպես կառավարման եղանակ» հասկացությունն ընդգրկում էր ոչ միայն ֆիզիկական ոչնչացումը, այլև բոլոր այն միջոցները, որոնք կոչված էին Փոքր Ասիայում փոքրացնելու կամ «անհետացնելու» այս կամ այն էթնիկ խումբը:

Լեյարդը ասորիների կոտորածի մասին պատմում է.

«Շուտով տեսանք կոտորածների հետքերը: Սկզբում կրի հետ խառը կուտակված գանգեր, ապա ոսկորների սպիտակին տվող չեղջեր, լաթերի կտորներ... գրեթե լրիվ պահպանված ողնաշարները դեռ կախված էին մացառներից:

---

[134] *Neuf Questions* ..., p. 7.

[135] *Положение армян в Турции* ..., стр. 285.

Ես հրաժարվեցի այլևս դրանք հաշվելուց: Երբ մոտեցանք ժայռի բացվածքին, այն լրիվ լցված էր ոսկորներով, կանանց փաթաթված-հյուսված երկար մազերով, նախնական գույնը կորցրած ներքնաշորերով, մաշված կոշիկներով: Այնտեղ կային տարբեր տարիքի գանգեր՝ սկսած դեռ չծնված երեխայից մինչև ծերը»:

Շարունակելով այդ սահմռկեցուցիչ տեսարանի նկարագրությունը՝ Հ. Լեյարդը նշում է, որ ջարդերից մեկի ժամանակ լեռնային բացվածքում թաքնվել էր փախստականների մի ստվար խումբ՝ տղամարդ, կին, երեխա: Բեդըրխանը հայտնաբերում է թաքստոցը և չրջափակում: Եղանակը չոգ էր ու հեղձուցիչ, պաշարվածները քաղցած էին ու ծարավ: Զկարողանալով ուժի գործադրմամբ բացվածքը գրավել՝ Բեդըրխանը կորանի վրա երդվեց, որ եթե պաշարվածները դուրս գան և հանձնեն զենքերը, կխնայի նրանց կյանքը: Բայց, երբ ասորիները համաձայնեցին, սկսեցին նրանց սպանել, իսկ «երբ հոգնեցին զենքով սպանելուց, չատերին ցած գլորեցին Ձաբ գետը»: Հազարից փրկվեց միայն մեկը[136]:

Սիրիայի 1860թ. կոտորածներն ուսումնասիրած Կ. Գրագամը նշում է, որ թուրքերը չէին խնայում անգամ հինգ տարեկան տղաներին, նրանց խլում էին մայրերից, մարմինները մասերի բաժանում, իսկ երբ մայրը թույլ չէր տալիս երեխային վերցնել, սպանում էին մոր գրկի մեջ: Երբեմն երեխայի հետ միասին սպանում էին և մորը:

Լիբանանում նահանգապետը քրիստոնյաներին զինաթափում էր ու հանձնում զորքին՝ հոչոտելու: Արական սեռի բնակչության մարմինները մանր մասերի էին բաժանում և կտորները նետում իգական սեռին պատկանող հարազատներին: Դեիր ուլ Կամար քաղաքում մի գիշերվա ընթացքում 1100-1200 տղամարդ սպանվեց: Շատ դիակներ թալանված էին, մերկ, այլանդակված: «Ես տեսա,– գրում է Կ. Գրագամը,– անգլուխ մարմիններ և մարմնից պոկված գլուխներ: Եվ այս ամենն անթաղ: Թողել էին, որ գազանները հոչոտեին»[137]:

Կ. Պոլսում ԱՄՆ ներկայացուցիչը բուլղարական կոտորածներն ուսումնասիրելուց հետո գրեց, որ միայն մեկ մարզում ոչնչացվել էր 15 հազար մարդ: Նա հերքում է օսմանյան պաշտոնական շրջանների այն պնդումը, որ ոչնչացվածներն ապստամբներ էին ու նկարագրում է, թե Ադրիանապոլիսի կուսակալն ինչպես նախապես էր զինել բոլոր մահմեդականներին, կազմակերպել մարդասպանների ու թալանչիների խմբեր, որոնք «ապստամբությունը ճնշելու պատրվակով... իրականացրին ստորագույն հանցագործություն, որը կեղտոտեց ներկա (19-րդ) հարյուրամյակի պատմությունը»[138]:

Օսմանյան կառավարության ցեղասպան նկրտումներն ու դրանց իրականացմանը մահմեդական բնակչության մասնակցության ապահովումը ցրցամ տրվեցին 1850-ական թվականներին: Այդ ժամանակ փորձ արվեց հենց Բուլղարիայում կիրառել «միաձուլման» քաղաքականություն, որը նպատակ ուներ «օսմանյան ժողովրդի» ձևավորման քողի տակ իրականացնել քրիստոնյա ժողովուրդների ուծացում: 1875-ի բուլղարական ապստամբությունը ճնշելու համար օգտագործվեց ոչ միայն զորքը, այլև մահմեդական բնակչությունը, որին իշխանությունները զինեցին, ինչը նշանակում էր, որ Բ. Դուանը հետաքրքրում էր ոչ այնքան ապստամբության ճնշումը, որքան ջարդերը, քանի որ ապստամբությունը ճնշելուց հետո էլ շարունակվում էր «զինյալների հավաքագրումը»:

Այս վաղ փուլում օսմանյան իշխանությունները չնայած դեռևս չունեին ցեղասպան դիտավորություն, սակայն կատարվածն ազդարարում էր, որ ջարդերի ավանդական քաղաքականությունը հավակնում էր վերածվելու ցեղասպանության: Այդ գործընթացը տվյալ ժամանակահատվածում կասեցվեց Կ. Պոլսում Անգլիայի և Ռուսաստանի դեսպաններ Հ. Էլիոթի և Ն. Իգնատևի ջանքերի չնորհիվ: Բայց կասեցվեց մի կարճ ժամա-

---

[136] Положение армян в Турции ..., стр. 180-181, 184.
[137] Նույն տեղում:
[138] Նույն տեղում, էջ 186:

նակ, և հաջորդ տարի թուրքական իշխանությունը նախապատրաստական լուրջ աշխատանքներ տարավ բուլղարներին բնաջնջելու ուղղությամբ:

Ադրիանապոլսի անգլիական հյուպատոսի տվյալներով Բ. Դուրը հանձնարարել էր տեղական իշխանություններին «ոչնչացնել բուլղարներին» և սպանել վեց տարեկանից բարձր մանուկներին, «բնաջնջել ցեղը և ստիպել մնացածին արտագաղթել»[139]:

Փիլիպոլսում ռուսական փոխհյուպատոս Ն. Գերովը տեղեկագրում է. «Թուրքական նախարարությունը... որոշում է կայացրել ապստամբությունը ճնշելու պատրվակով լրիվ ոչնչացնել բուլղարական մեծ բնակավայրերը և գյուղերը...»[140]: Նախարարության այս որոշումը հաստատվել էր կառավարության կողմից և վերաբերում էր ոչ միայն բուլղարացիներին, այլև թերակղզու ողջ սլավոնական ազգաբնակչությանը «սիստեմատիկ կոտորելուն»[141]:

Նշենք, որ այս ջարդարար քաղաքականության ակունքներում կանգնած էին Միդհատ, Հ. Ակնի, Ա. Վեֆիք փաշաները և «նոր օսմանների» առաջնորդներից Ալի Սուավին[142]:

Ռուսե քաղաքում Ռուսաստանի հյուպատոս Վ. Կոժևնիկովի վկայությամբ Կ. Պոլսում Միդհատի ղեկավարությամբ գործում էր գաղտնի կոմիտե «Ավել» անունով, որի թիրախը միայն բուլղարացիները չէին, այլև կայսրության ողջ քրիստոնյա բնակչությունը[143]: Ըստ այդմ էլ, գնալով սաստկանում էր հակաքրիստոնեական քարոզչությունը, ավելի ու ավելի հաճախ էին հնչում քրիստոնյաներին բնաջնջելու կոչերը: Իգնատևը ցարին գրում է, թե խոջաները բացեիբաց կոչ էին անում ոչնչացնել «գյավուրներին»[144]: Նա չեշտում է, որ հակաքրիստոնեական այդ բռնկման նախաձեռնող ոչ թե մահմեդական մոլեռանդներն էին, այլ կառավարությունը: «Առաջներում քրիստոնյաներին ճնշում ու ջարդում էին մահմեդականները, այժմ նրանց ճնշում և ջարդում է կառավարությունը»[145]: Ռուս դիվանագետը 1876թ. հոկտեմբերին գրում է Ա. Գորչակովին, թե «լիովին հիմնավորված է ներքին կոտորածների վախը»[146]:

Ուժեղացան մահմեդական մոլեռանդների հարձակումները նաև հայության վրա. թուրքական պաշտոնական մամուլը հայերին մեղադրում էր, թե նրանք պատրիարքի ղեկավարությամբ նախապատրաստում էին ապստամբություն[147]: Միդհատը հայտարարում էր, թե հայերը մեծ քանակությամբ զենք էին գնել արտասահմանում և ապստամբություն են նախապատրաստում Ռուսաստանին սահմանակից շրջաններում[148]: Հասկանալի է, որ նման հայտարարությունները հենց այնպես չէին արվում և անհետևանք չէին անցնում: 1876թ. դեկտեմբերին իշխանությունների կողմից Վանում կազմակերպված հրդեհից անմիջապես հետո կանոնավոր բանակն իրականցրեց «գազանություններ ծոզղաթի հայկական գյուղերում»[149]:

Հայերի բնաջնջման գործում խոշոր քայլ էր հայկական շրջանների քրդերի, չերքեզների, չեչենների, լազերի, աջարների բնակեցումը[150], որոնց գլխավոր զբաղմունքը հայերին թալանելն ու սպանելն էր. նպատակը մեկն էր՝ Հայաստանում ստեղծել մահմեդա-

---

[139] *The Near and Middle East, 1856-1914, Part I, D. Elliot H.*, 19.05.0876.
[140] *АВПР, ф. Канцелярия МИД*, 1876, д. 25.
[141] *Տե՛ս "По следите на насилието"*, София, 1987, с. 184.
[142] *Տե՛ս "Вестник Европы"*, 1878, кн. I, с. 311.
[143] *Освобождение Болгарии от турецкого ига*, том I.
[144] *АВПР, ф. Канцелярия МИД*, 1876, д. 25.
[145] *Госархив РФ, ф. 730, оп. 1, ед. хр. 706.*
[146] *АВПР, ф. Канцелярия МИД*, 1876, д. 32.
[147] «Մեղու Հայաստանի», 23.10.1876:
[148] *АВПР, ф. Канцелярия МИД*, 1876, д. 32.
[149] *Госархив РФ, ф. 730, оп. 1, ед. хр. 917.*
[150] «Ազատամարտ», 1909, թիվ 67:

*կանների թվական գերակշռություն: «Թուրքիան,– գրում է Րաֆֆին,– ձգտում էր հայկական խնդիրը խեղդելու նպատակով ոչնչացնել հայ տարրը, Հայաստանը լցնել քրդերով, չերքեզներով, լազերով և աջարացիներով, և այդ բոլոր վայրենի ցեղերի բարբարոսությունը գրգռել հայերի դեմ»[151]:*

*Հանրաճանաչ ճանապարհորդ-արևելագետներ Դուկը, Ֆրանդուինը, Խալխոկոնդիլը, Կրիտովուլը, հենվելով փաստական նյութի վրա, ցույց են տվել բնիկ ժողովուրդներին դաժան միջոցներով թրքացնելու, նրանց մշակույթը ոչնչացնելու և օսմանյան բարբարոս բարքերը բռնի եղանակներով արմատավորելու ուղղությամբ դեռևս XV դարում իրականացված քաղաքականության հեռահար նպատակադրումները: «Քրիստոնեական գյուղերում,– գրում է Մ. Մաքքոլը,– գեղեցիկ տղա երեխային կամ պատանուն շատ ավելի վտանգավոր էր Թուրքի աչքին երևալ, քան սիրունատես աղջկան... Թուրքերը չէին ամաչում այդ մասին միանգամայն բացահայտ խոսել...*

*Հարուստ և ազդեցիկ մեկը (օրինակ նահանգապետ, դատավոր կամ մուշիր) բարեհաս որդի ունեցող քրիստոնյայի մոտ մարդ է ուղարկում և հրամայում, որ այդ որդին իր մոտ գա: Եվ քրիստոնյան, որ դարեր տևած կեղտոտ ու դաժան ճնշումների միջոցով հասել էր արհամարհելի վախկոտ ու նվաստալի վիճակի, չի համարձակվում մերժել, որովհետև ամենատարբեր պատրվակներով կարող էր նրա ամբողջ ընտանիքը քայքայվել կամ ոչնչացվել»[152]:*

*Ղ. Ինճիճյանը բազում փաստեր է ներկայացնում, թե թուրքերն ինչպես էին կովկասյան ժողովուրդների պատանիներին ու աղջիկներին վաճառքի հանում օսմանյան չուկաներում[153]: «Շատ հաճախ էին Կ. Պոլսից հրահանգներ ստացվում ասպատակել Աբաքսից արևելք և վաճառելու համար աղջիկ ու տղա փախցնել»[154]: Կ. Պոլսի մեծ չուկայի մերձակայքում Էսիր բազար (Գերիների չուկա) կոչված վայրում իբրև ապրանք գնվում ու վաճառվում էին ստրուկներ ու ստրկուհիներ: Առևտուրը տեղի էր ունենում աճուրդի միջոցով ամեն օր: Այստեղ բնակվող գերեվաճառ էնաֆներն իրենց օգանեբում պահում էին մեծ ու փոքր, սպիտակ և սև ստրուկներ: Անգլիական սպա Քիթչեները 1879թ. օգոստոսին գրում է, որ Ադիբազարում «... ստրուկներ ձեռքբերելն ու գնելը, հատկապես այնպիսիներին, ովքեր գվարճանալու միջոց էին... հաճախակի հանդիպող երևույթ են: Բացահայտորեն աղջիկներ ու տղաներ են հափշտակվում ստրկացնելու համար»[155]:*

*Լայն տարածում ուներ տնային ստրկությունը՝ աղախիններ, այգեպաններ, ծառաներ: Աբդուլ Համիդ 2-րդը ոչ միայն ընդունում էր տնային ստրկության տարածված լինելը, այլև այն արդարացնում էր:*

*Օտարացեղ աղջիկները հարեմ էին տարվում, կնության վերցվում, վերածվում էին հարճերի, ստրուկների: Ստրկավաճառությունը շատ ավելի բացահայտ էր ու տարածված հարավային շրջաններում: Գնորդները վաճառվող ստրուկների հետ վարվում էին ինչպես անասունների հետ՝ մերկացնում էին, շոշափում, սակարկում: Գները բարձր չէին. տղաները վաճառվում էին 50-100 ռուբլով, իսկ կանայք՝ 200: Պոլսում ստրուկների գներն անհամեմատ բարձր էին:*

*Ջլահ (ստրուկ) էին մեծաթիվ հայեր: Նրանք «պատկանում էին այս կամ այն քուրդ աղային, որը նրանց հարստահարում էր ուզածին պես, վաճառում ուրիշին 10-20-30 լիրայով»[156]: Նշանակալից մի փաստ ևս. կայսրությունում ստրկությունը պաշտոնապես արգելվեց միայն 1909թ. հոկտեմբերի 17-ի իրադեով՝ «Իսլամի երկրում ազատությունը*

---

[151] **Րաֆֆի**, *Տաճկահայք*, Թիֆլիս, 1895, էջ 71:
[152] *Положение армян в Турции* ..., стр. 177-178.
[153] **Ինճիճեան Ղ.**, *Դարապատում*, Վենետիկ, հ. II, 1825, էջ 254-255:
[154] **Մանդելչտամ Ա.**, *Օսմանյան կայսրության ճակատագիրը*, Կ. Պ., 1919, էջ 18:
[155] *Blue Book, Turkey*, N10, 1879, p. 71.
[156] **«Դրոշակ»**, 1893, թիվ 5:

բնական բան է և թող չլինի որևէ դիտավորություն որևէ մեկին, ով էլ որ նա լինի, համարելու ստրուկ»[157]:

Հայ աղջիկը, մահմեդականի հետ ամուսնանալով, դադարում էր հայ լինելուց և խզում էր բոլոր հարաբերությունները ծնողների ու ազգակիցների հետ: Բաղեչի փողոցներում «թե պառավ և թե մանկահասակ հայուհիներն իրենց գեղեցիկ ու նուրբ կերպասներից կարված զգեստների վրա հագած ունեին տգեղ, մինչև ոտներն իջած չիլա չապիկ: Այդ արտաքին ծածկոցը նրա համար էր, որ նրանց նազելիությունը չգրավեր մուսուլմանի վավաշոտ հայացքը»[158]:

Վուդրո Վիլսոնը Թուրքերին կոչում է «կենտրոնական Ասիայից եկած ավազակախումբ», իսկ Գլադսթոնն ասել է, թե ամենուրեք Թուրքերի երևալուն հետևել է արյան մեծ հեղք ու քաղաքակրթության անհետացում. «Կարող ենք թերթել համաշխարհային տարեգրությունը, սակայն ես չգիտեմ, թե ինչպիսի որոշումը կարող է օգնել՝ գտնելու իշխանության հանցագործ չահագործման ավելի սարսափելի օրինակ»[159]: Ռուս հայտնի իրավաբան, միջազգայնագետ Լ. Կոմարովսկին օսմանյան վարչակարգն անվանել է «ամեն տեսակի ստի և բռնության խորհրդանիշ»[160]:

«Կ. Պոլսի գրավումից,– գրել է "Le Nord" թերթը 1892թ. հունիսին,– անցել է 4.5 հարյուրամյակ՝ քաղաքակրթության հետք իսկ չթողնելով ասիական ժողովուրդների ժառանգների վրա... Նրանք մինչև օրս մնացել են թալանչի, կոտորում ու խեղդամահ են անում հազարավոր քրիստոնյաների նրանց ունեցվածքին տիրանալու համար... Թուրքիան չի փոխվել, հարազատ է մնացել իր բարբարոս ավանդներին...»[161]:

Անգամ 19-րդ հարյուրամյակի վերջին, Թուրքիան մնացել էր նույն սոցիալական, բարոյական, մտավոր խեղված վիճակում, ինչ հինգ դար առաջ էր:

Թուրքերը, զավթելով ու ժառանգելով հին ու ծաղկուն մշակույթներ, այդպես էլ չկարողացան յուրացնել դրանք, ոչ միայն անկարող եղան ճուլել հպատակ ժողովուրդներին, այլև՝ մարսել նրանց քաղաքակրթությունները, որի հետևանքով նվաճողն ու նվաճվածները դարձան անհաշտ, նրանց միջև եղած անդունդը գնալով խորացավ: Անզոր լինելով ստեղծել սեփական քաղաքակրթություն՝ Թուրքերը նաև հին քաղաքակրթությունից ոչինչ չսովորեցին: Նոր հուշարձաններ կառուցելու փոխարեն, գերադասեցին քրիստոնեական հուշարձանները, լավագույն դեպքում, դարձնել մզկիթներ, ծեփի տակ առնելով դրանց հմայքը կազմող զարդաքանդակները: Օրինակ, այդպես վարվեցին Ս. Փրկիչ եկեղեցու հետ, իսկ երբ կայսրություն այցելեց Վիհելմ 2-րդը, եկեղեցին ծեփեցին ազատեցին կայսրին ցույց տալու համար: Միապետի մեկնումից հետո նորից եկեղեցին ծեփածածկեցին:

Թուրքերի ջանքերով անհետացան հազարավոր հուշարձաններ, այդ թվում՝ բյուզանդական հիանալի մայրուղիները, կամուրջները, հռչակավոր մղոնանիշները, որոնց զարդաքանդակ քարերն օգտագործեցին որպես գերեզմանաքար, իսկ մարմարյա ջրավազանները՝ մսուր կամ անասուններին ջրելու աման, ժայռափոր չիրիմները՝ լվացարան: Օսմանյան կայսրությունը, նկատում է Ա. Մանդելշտամը, իսկապես «կողոպուտի ու թալանի ընդարձակ կազմակերպություն էր»:

Հայերի ցեղասպանության նախապատրաստական մարաթոնի բաղկացուցիչներից էին հայ մշակույթի հուշարձանների ոչնչացումն ու զավթումը, մի ամբողջ ժողովրդի պատմության թալանը և նրա կենսագրության ու աշխարհագրության ոչնչացումը: Այս չարքում փոքր չէր հայկական տեղանունների վրա զանգվածային արշավանքը, որը ևս հարյուրամյակների պատմություն ունի: Թուրքերը այդ արշավանքում գրանցել են բա-

---

[157] Тыркова А., *Старая Турция и младотурки. Год в Константинополе,* Петроград, 1916, стр. 138.
[158] Րաֆֆի, *Եժ*, հ. IX, էջ 246:
[159] *Положение армян в Турции ...*, стр., 303.
[160] Նույն տեղում, էջ 8:
[161] *Братская помощь ...*, отд. 2, стр. 126-127.

*ցառիկ հաղթանակ՝ հայկական տեղանունների 90%-ը փոխված է: Հաղթանակների առաջացրած գլխապտույտն այնքան ուժեղ էր, որ վետո դրվեց նույնիսկ երկրի անվան՝ Հայաստանի վրա:*

*Տեղանունների փոփոխման թուրքական եղանակի մասին պարսիկ գիտնական Քաբավինը գրում է, եթե «գյուղի անունը հասկանալի իմաստ էր ունենում, նույնությամբ թարգմանում են թուրքերեն: Աղթամարը նրանք անվանում են «Ակդամար», որը թուրքերեն նշանակում է «սպիտակ երակ»: Իսկ չատ տեղերում նույնիսկ անվանափոխությունն է կրում թուրքական դաժանության կնիքը: Այսպես, Հաճընը վերանվանված է Սալիբեյի՝ ի պատիվ Հաճընի 1920թ. կոտորածի կազմակերպչի, Զեյթունը կնքել են «Սուլեյմանիե»՝ հայերի գնդակից զոհված սպայի անունով».[162]*

*Ոչ միայն անուններն էին փոխվում, այլև մերժվում էր հայերի՝ Արևմտյան Հայաստանում երբևէ բնակված լինելը, իրականացվել ու իրականացվում են միջոցառումներ՝ վերացնելու այն ամենը, ինչը վկայում է հայերի և հայկական քաղաքակրթության գոյության մասին:*

*Արաբ պատմաբան Ջ. Սալեհը գտնում է, որ Օսմանյան կայսրության տնտեսական, քաղաքական և գաղափարախոսական աչխարհըմբռնումն է ծնել նախադեպը չունեցող ողբերգությունների համակարգ: Այդ աչխարհըմբռնումը ինքնահաստատման միայն մեկ ուղի գիտեր՝ բռնություններ ու կոտորածներ[163]: Ջ. Սալեհը նաև նչում է, որ զարգացման մակարդակների միջև եղած տարբերությունները թուրքերին զրկում էին հայ ազգաբնակչությանը ամբողջությամբ ճուլելու հնարավորությունից, «քանի որ հայ ժողովրդին բնութագրական, բնատուր ազգային դիմագիծն ու նկարագիրը, կրոնն ու դարավոր մչակույթը սրբորեն պահպանելու արտակարգ կարողությունը թուրքացնելու քաղաքականությանը զրկում էին չոչափելի արդյունքից»[164]:*

*Թուրքերը գիտեին, որ քաղաքակիրթ ժողովրդին հեչտ չէր ճուլել: Հետևաբար հայկական հարցի լուծման համար մնում էր թուրքական մեկ ուղի՝ ոչնչացում:*

*«Գրաված ամբողջ տարածության վրա,– գրում է Ա. Միլլերը,– բացի Անատոլիայից ու Ստամբուլին հարող Ռումելիայից, թուրքերն ըստ էության չարունակում էին մնալ որպես զավթիչներ»[165]: Իսկ զավթիչը նվաճված ժողովուրդների հարստությունները թալանում է թե՛ բացարճակ կողոպուտի և թե՛ ուղղակի ու անուղղակի հարկերի միջոցով: Օսմանյան կայսրությունում այս ամենը բազմապատկված ծավալներով կիրառվում էր հայերի նկատմամբ: Անգլիական "Times"-ը 1877թ. օգոստոսի 24-ի իր համարում, նկատի ունենալով թուրքական տիրապետության բնաջնջող բնույթը, գրեց. «Ալաչկերտի հայության 122 գյուղերը, բացի 9-ից, լրիվ ոչնչացվել են: Տեղում մնացած բոլոր քրիստոնյաները սպանված են: Մի չարք գյուղեր լրիվ այրված են: Մուչի օկրուգում որոչ գյուղեր կործանվել են, չատ բնակիչներ սրախողխող են արվել: Բայազետ քաղաքն ու չրջանը նույն բախտին արժանացան: Այդ վայրերի տղամարդկանց, կանանց և երեխաների մեծ մասը սպանվեց ամենադաժան ձևով»:*

*Այդ տասնամյակներին սկսեցին ձևավորվել նաև թուրքական կեղծարարությունները պատմագիտության բնագավառում: Թուրքական պատմությունն ամբողջությամբ վերախմբագրում է հայ և թուրք ժողովուրդների պատմությունը՝ հայերին համարում եկվոր, իսկ թուրքերին՝ բնիկ, երկու ժողովուրդների հարաբերությունների սկզբնավորումը ճգում մինչև արաբական արչավանքներն ու սելջուկները: Վերջիններս հայերին ազատագրեցին բյուզանդական լծից: Համարում է, որ թե՛ Կ. Պոլսի գրավումը 1453թ., թե՛ պոլսահայ գաղութի ձևավորումը 1461-ին հանդիսացան երկու ժողովուրդների հարաբերությունների գագաթնակետը, որ հետագա դարերում «թուրք-հայկական հարաբերու-*

---

[162] «Դրոշակ», 1891, թիվ 5:
[163] «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, թիվ 4:
[164] Նույն տեղում:
[165] Миллер А., *Турция: актуальные проблемы новой и новейшей истории,* Москва, 1983, стр. 21.

*թյունները կառուցված էին փոխադարձ վստահության, հարգանքի և համակրանքի վրա»[166]: Օսմանյան կայսրությունը հայերի համար դրախտ էր, և հայ համայնքն էլ պատշաճն էր հատուցում թուրք ժողովրդին ու ստացավ հավատարիմ համայնք (millet i-saddika) կոչումը: Նման պատվի արժանանալու համար հիմք էր ծառայում նաև այն, որ երկու ժողովուրդների մշակույթների հիմքն ընդհանուր է՝ թուրքական: Այս կեղծաբարությունը հրապարակ նետվեց մի նպատակով՝ ժխտել ինչպես հայ ժողովրդի մինչթուրքական ժամանակաշրջանի մշակույթը, այնպես էլ հայության գոյությունը, հերքել թուրքականի վրա հայ մշակույթի ազդեցությունը:*

*Այս կապակցությամբ «Քողազրկված Թուրքիան» աշխատության մեջ ասված է. «Այսօր Հայկական հարցը թուրքերը ներկայացնում են ամբողջությամբ խեղաթյուրված, արդի դասագրքերը չեն էլ հիշատակում, որ հայերը չորջ երկու հազար տարի ունեցել էին ազգային ամուր ինքնագիտակցություն... տասնհինգ դար շարունակ գործածում են իրենց ուրույն գիրը և ստեղծել են միջնադարյան կրոնամշակութային հիանալի կոթողներ»[167]: Դեռ ավելին, թուրք հեղինակներից ոչ քչերը մերժում են նաև Հայաստանի գոյությունը: Այդ միտքը գերիչխող տեղ է զբաղեցնում, օրինակ, Ս. Քոջաբաշի «Ի՞նչ է և ի՞նչ չէ Հայկական հարցը» գրքույկում[168]:*

*«Կայսրությունում ստեղծված վիճակը,– 1895թ. փետրվարի 8-ին գրել է Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Իզմիրլյանը արդարադատության նախարարին,– հանգեցրել է կառավարական մի չարք բռնությունների, այնպես որ հայերով բնակեցված նահանգներում կյանքը, պատիվն ու բարեկեցությունը չարունակում են մնալ բացարձակապես անապահով... Երբեմն թալանն ավարտվում է դատական անարդար վճիռով... Գյուղացիները մնում են առանց ունեցվածքի՝ անպաշտպան օրենքի անունից իրականացվող բռնության առաջ: Օրինական պաշտպանության յուրաքանչյուր փորձ դիտվում է որպես հանցագործություն և առաջ է բերում բռնություններ: Այսպիսով, գյուղացին դառնում է բեյերի ու աղաների ստրուկ, նրանց առևտրական գործարքների առարկա»[169]:*

*Օսմանյան կայսրությունում կոտորածները պետական քաղաքականության հիմնարար բաղադրիչներից էին, կառավարման միանգամայն «օրինական» և գործադրելի միջոց:*

*«Հնչակ»-ը իր 1897թ. թիվ 5-ում գրում է. «...Կոտորածները երևան են գալիս որպես կառավարական ամբողջական համակարգ և օրենք, որ մարդասպանի ձեռքում վերածվում են որոշակի գիտակցության, բնավորության և զարմանալի ղազաիդ գործող քաղաքական ուժի»:*

*Հայերի բնաջնջման աբդուլհամիդյան քաղաքականությունը զերծ չէր նաև սուբյեկտիվ կռվանից. դա Աբդուլ Համիդի հայատյացությունն էր: Իրադարձությունների մասնակից և քաղաքագետ կայսրության գաղտնի ոստիկանության պետ Մ. Հալեթլաչեն իր «Մարդասպանը գահի վրա» հուշագրություններում Աբդուլ Համիդ 2-րդի հայատյացությունը բացատրում է այն բանով, որ նրա մայրը հայուհի էր: «Իր թագավորության առաջին իսկ օրից,– գրում է Մ. Հալեթլաչեն,– Աբդուլ Համիդն ամեն կերպ աշխատում էր ապացուցել, թե չի սիրում քրիստոնյաներին և անխնա հետապնդում էր նրանց: Դա միանգամայն հասկանալի էր, եթե նկատի առնվի, որ նրա ծագումը հայտնի է շատերին: Ժամանակի ընթացքում զորեղ կերպով կատարելով իսլամի բոլոր ծեսերը, նա ստիպեց, որ մոռանան իր ծագման մասին»:*

---

[166] **Sonyel S.,** *Minorities and the Destruction of the Ottoman Empire,* Ankara, 1999, p. 38.
[167] **Pope N. and H.,** *Turkey Unveiled,* NY, p. 40.
[168] **Kocabaş S.,** *Ermeni Meselesi: nedir, ne değildir?* İst., 1984.
[169] *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում,* Երևան, 1991, էջ 72-73:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ԹՈՒՐՔԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆ ԲՆՈՒՅԹԸ

## 1. ՕՍՄԱՆԻԶՄ-ՊԱՆՕՍՄԱՆԻԶՄ

*«Իսլամի գրկում ազգություններ չկան» – հռչակում է մահմեդական կրոնը:*

*Հարցին, թե տվյալ անձը ով է, անգամ 20-րդ դարասկզբի թուրքը սովորաբար պատասխանում էր՝ մահմեդական, քանի որ «կրոնը նրա համար արժեքներից ամենաբարձրն էր և կրոնն էր կարգավորում մարդու վարվեցողությունը»: Մահմեդական և թուրք հասկացությունները նրա համար հոմանիշ էին: Հոմանիշ էին նաև մահմեդականությունն ու թրքությունը, թուրքականությունը, թուրքերենը: Թուրքիայում աշխարհիկ կրթությունը ծնունդ առավ միայն 19-րդ դարի կեսերին, այսինքն, դարեր շարունակ կրթությունը եղել է մահմեդական հոգևորականության մենաշնորհը: Նաև դրանով է բացատրվում թուրքերի արհամարհանքն ու ատելությունը ոչ մահմեդականների հանդեպ: Չնայած կայսրության տարածքները մեկը մյուսի հետևից անցնում էին գյավուրներին, թուրքը չէր հուսահատվում, քանի որ աշխարհում նա մեծաթիվ եղբայրներ՝ մահմեդականներ ուներ: Երկիր մոլորակի մահմեդականների հետ միավորվելու թուրքերի ձգտումը ենթագիտակցության մեջ այնքան ուժեղ էր, որ նույնիսկ երիտթուրքերը, որոնք կրոնի հետ առանձնապես հաշտ չէին, առաջ քաշեցին աշխարհի մահմեդական երկրների դաշինք ձևավորելու հարցը: «Թուրքը չի կարող ապրել առանց արաբի, թուրքը արաբի աչ աչքն է, աչ ձեռքը»,– ասում է պանիսլամիստ Մահմեդ Ակիֆը[1]:*

*«Թուրք» բառը օսմանցու համար շատ ավելի սոցիալական, քան ազգային իմաստ ուներ: Իսկ հայրենասիրությունը ավելին չէր, քան կապվածությունը ծննդավայրին: Դարեր շարունակ «թուրք» բառը օգտագործվել է որպես պիտակ՝ «կարճատես թուրք», «այլանդակ մռութով թուրք», «թուրք խարդախ», «չան մռութով թուրք» և այլն: Թուրք էին անվանում ցածր խավերի ներկայացուցիչներին, մասնավորապես՝ գյուղացիներին: Այստեղ դեր են խաղացել նաև հետևյալ գործոնները: Օսմանյան պաշտոնեության վերնախավը հիմնականում ձևավորված էր ոչ թուրքերից: Թեմուրի հետ կռվում պարտությունը հետևանք էր այն բանի, որ թուրք ավազանին դավաճանեց «օսմաններին»: Հակաթուրք բնույթ ուներ արաբա-իսլամական ոչ միայն քաղաքականությունը, այլև գիտությունը: Կորանում թուրքերն անվանվում են «մարդկության թշնամիներ ու գազաններ», «ռասա, որ մարդկությանը թշվառություն բերեց»: Հակաթուրքական մտքերով է ողողված վաղ շրջանի իսլամական ամբողջ գրականությունը: Այլ կերպ ասած, դեռ վաղ շրջանից թուրքերը վատ համարում ունեին, ինչը նրանց մեջ առաջացրեց հակազդեցություն և սեփական առավելություններն ապացուցելու ձգտում: Դրա արտահայտությունն է նաև թուրքի ինքնագովությունը՝ թուրքը վեր է բոլոր ազգերից ու ցեղերից և կոչված է կառավարելու նրանց:*

*19-րդ դարի կեսերին այդ զգացմունքները ոչ միայն բուռն աճ ունեցան, այլև նենգափոխվեցին ռասիստական գաղափարներով: Սեփական ժողովրդի, նրա լեզվի ու պատ-*

---

[1] **Акчам** Т., *Турецкое национальное "Я" и Армянский вопрос*, стр. 37.

մության հանդեպ դարավոր անտարբերությունը, ցեղային թմբիրի տակից գլուխ դուրս հանող թուրքական ազգայնամոլությունը հայացքն ուղղեց ոչ թե սեփական, այլ ուրիշ տերություններին, նվաճողներին, այս անգամ, ուշադրության կենտրոնում դնելով թուրքերի շահերը:

Թաներ Ակչամը իր «Թուրքական ազգային «ես»-ը և Հայկական հարցը» գրքում բերում է մի երկխոսություն, որը տեղի էր ունեցել Փարիզում 19-րդ դարավերջին:

– Դուք ո՞ր ազգին եք պատկանում:
– Մենք մահմեդականներ ենք:
– Բայց չէ՞ որ դա կրոնական պատկանելիություն է:
– Այդ դեպքում մենք օսմանցիներ ենք:
– Բայց դա ազգություն չէ:

Երիտթուրքերն իրենց թուրք չէին անվանում: Հունգարացի արևելագետ Վամբերին 1898թ. գրել է, որ ինքը Ստամբուլում չհանդիպեց մի թուրքի, որը լրջորեն հետաքրքրվեր թուրքերով ու թուրքերենով: Նույնիսկ թուրքիզմի հիմնադիր Զիա Գեոքալփը թուրքերի պատմությամբ սկսեց հետաքրքրվել միայն այն բանից հետո, երբ 1896-ին ընթերցեց Լեոն Կաժի գիրքը թուրքերի մասին: Անգամ 20-րդ դարասկզբին օսմանյան դպրոցներում թուրքերի պատմություն չէր դասավանդվում, դրանց 2/3-ում անցնում էին Ֆրանսիայի, իսկ 1/3-ում՝ եվրոպական մյուս ժողովուրդների պատմությունները: Մինչև 1908թ. թուրքերենը մեդրեսներ մուտք չուներ:

Հետ մնալը չուտափույթ հաղթահարելու ձգտումը նույնպես թուրքերի մեջ ծնեց ատելություն մյուս էթնիկական խմբերի նկատմամբ: Իսկ հետ մնալու գլխավոր պատճառն իսլամն էր: Օսմանցիների շրջանում, ի տարբերություն մահմեդական մյուս ժողովուրդների, մուսուլմանական գիտակցությունը զարգանում էր ի հաշիվ թուրքականության: Դրա հետևանքով թուրքական ոչ մի պետությունում թուրքերենը չդարձավ պետական լեզու: Եվ ինչպես նկատել է Վամբերին «ազգայնականացման միտումներում իսլամը ոչ մի տեղ չհասավ այնպիսի խոշոր հաջողության, ինչպես օսմանյան թուրքերի շրջանում»: Հավանաբար այս իրողության գլխավոր պատճառը ոչ թե իսլամն էր, այլ թուրքականի համեմատությամբ պարսկա-արաբական քաղաքակրթությունների բարձր մակարդակը:

Թուրքերի համար ինքնաճանաչման ու ինքնաներկայացման միջոց մնաց Օսմանի ժառանգ լինելը, այլ ոչ թե ինքնուրույն ազգություն ու հայրենիք ունեցող թուրք անվանումը: «Հայրենիքը,– ասել է Աբդուլ Համիդը,– տեղ է, որտեղ մարդ ոտ է դնում: Ինձ հասկանալի չէ, թե ինչպես կարելի է հանուն դրա մեռնել»: Թուրքերն այս միտքը հաճախ են շեշտում և այն բացատրում իրենց ռասայի «ի ծնե» ինտերնացիոնալիզմով: Իրականում նման երևույթ եղել է բոլոր ժողովուրդների մոտ զարգացման որոշակի շրջանում, և քանի որ թուրքերի զարգացումը հետ էր ընկել, ապա նրանց «այդ ինտերնացիոնալիզմը» ձգվեց մինչև 20-րդ դարը: Օրինակ, ռուս գյուղացին մինչև 19-րդ դարի կեսերն իրեն անվանում էր ոչ թե ռուս, այլ մուժիկ: Հայրենասիրական գեներն այստեղ ոչ մի դեր չուներին: Պարզապես բացակայում էր ձևավորված ազգային գիտակցությունը: Իսկ ազգային (համազգային) գիտակցության ծնունդը կապված է ազգի ձևավորման հետ: «Թուրք ազգի ձևավորումը,– գրում է Թ. Ակչամը,– մի առանձնահատկություն ուներ՝ այն տեղի ունեցավ, երբ դեռ գոյություն ուներ վերազգային Օսմանյան կայսրությունը և թուրք գործիչները մտահոգ էին, որ «նացիոնալիզմի գաղափարների տարածումը կարող է հանգեցնել կայսրության անկման»»[2]:

[2] Акчам Т., նշվ. աշխ., էջ 23:

Այդ գործիչները չէին հանդուրժում հպատակ ժողովուրդների ազգայնականությունը, նրանք ինքնաբուխ ազգային-ազատագրական շարժում ասածն աբսուրդ էին համարում՝ ինչ-որ ուժերի (ներսի թե դրսի) խարդավանքների հետևանք: Իսկ քանի որ գլխավոր նպատակը բազմազգ պետության կառույցի պահպանումն էր, պաշտոնապես պետական հռչակվեց «այն գաղափարախոսությունը, որը հնարավորություն էր տալիս միավորելու կայսրության բոլոր ժողովուրդներին մի ընդհանրության մեջ»: Թերևս դրանով է բացատրվում, որ երիտթուրքերը խուսափում էին իրենց քաղաքականության բնույթը ազգային համարելուց, որովհետև այն այլազգիներին դուրս կդներ թուրքական կայսրական հավակնությունների շրջանակից, և մինչև 1913թ. իրենց թուրքիստական էությունը թաքցնում էին պանիսլամական և պանօսմանական դոկտրինների ետևում: Բալկանյան պատերազմից հետո միայն իթիհադականների թուրքիստական էությունն «ազատվեց պարտադրված թմբիրից և ոչ միայն նրանք, այլև Օսմանի բոլոր ժառանգորդները սկսեցին բարձրաձայն աղաղակել իրենց թուրք լինելու մասին: Սակայն դա լոկ ինքնաճանաչում ու ինքնահռչակում չէր, այլև սկիզբը «թուրքացման թուրքական քաղաքականության»:

«Երբ թուրքերն ունեին մնացած աշխարհի համեմատությամբ առավելության զգացում (մինչև 19-րդ դարի կեսերը), – շարունակում է Թ. Ակչամը,– չգիտեին, որ իրենք թուրք են... Այդ գիտակցությանը հանգեցին միայն այն ժամանակ, երբ ոչ լիարժեքության հոգեբանությունը լրիվ տիրապետեց նրանց: Փաստորեն պանթուրքիզմը թուրքերի համար հանդիսացավ անելանելիության, անհուսության և ոչ լիարժեքության հոգեբանությունից անխուսափելի փախուստի արտահայտություն»[3]:

Կրոնական գործոնը ցեղասպաններն օգտագործեցին մահմեդական բնակչությանը մեղսակից դարձնելու հանցագործությանը: Ի դեպ, երիտթուրքերը չունեին կառավարման փիլիսոփայություն, ինչպես Ահմեդ Ֆերոզն է ասում, նրանք «առանձնապես չէին հետաքրքրվում քաղաքական գաղափարներով»: Դրա համար էլ երիտթուրքերի կուսակցության շարքերում կային թե՛ պանթուրքիստներ ու պանօսմանիստներ և թե՛ պարզապես թուրք ազգայնականներ: Թուրքական քաղաքական մտածողությունը մերկապարանոց օգտակարության մտածողության հակումն է որդեգրած փիլիսոփայությանը: Ինչպես նշում է Գ. Աքչուրան պանթուրքիզմի հռչակագրի համարում ունեցող «Երեք քաղաքական գործիչներ» գրքում, դա բացատրվում է «պետության համար օգտակարության ձգտմամբ»: Թալեաթը Գեոքչփին ծաղրում էր նաև այն բանի համար, որ նա մեծ տեղ էր տալիս գաղափարախոսությանը:

Թուրք պատմաբան Ահմեդ Ռասիմը գրում է, որ արդեն 1860-ական թվականներից «օսմանյան ազգություն» արտահայտության տակ հասկացվում էին թուրքերը: Հենց նույն ժամանակ էլ Ալի Սուավին հռչակեց. «Թուրքերը պետք է լինեն կառավարող ազգ, քանի որ թե՛ ռազմական և թե՛ մշակութային ու քաղաքական առումով նրանք գերազանցում են բոլոր ժողովուրդներին և հանդիսանում են հնագույն ռասա»:[4]

Ամբողջ 19-րդ դարում Օսմանյան կայսրության գլխին կախված էր կործանման, անհետացման վտանգը՝ Արևելյան հարցը: Նաև ակնհայտ դարձավ, որ կայսրության հետագա գոյության խնդիրը լուծում էին ոչ թե իրենք՝ թուրքերը, այլ եվրոպական պետությունները, որ կայսրությունը չարունակում էր ապրել եվրոպական տերությունների, և առաջին հերթին, Ռուսաստանի ու Անգլիայի միջև եղած հակասությունների շնորհիվ: Իսկ քանի որ տերությունների միջամտությունը կայսրության գործերին հիմնականում արտահայտվում էր հպատակ ժողովուրդներին, մասնավորապես քրիստոնյաներին հովանավորելու տեսքով, ու նաև այն, որ այդ ժողովուրդները Եվրոպայի օգնությամբ մեկը մյուսի հետևից թոթափում էին օսմանյան լուծը, թուրքերի մեջ ձևավորվեց այն

[3] Նույն տեղում, էջ 27:

[4] Акчам Т., նշվ. աշխ., էջ 37:

մտայնությունը, թե կայսրության դժբախտությունների պատճառը քրիստոնյա հպատակներն էին:

Դրան գումարվեց Թանզիմաթի հռչակած սկզբունքը՝ մահմեդականն ու քրիստոնյան իրավահավասար են, ինչը չնայած իրավահավասարություն չստեղծեց, սակայն «խորապես վիրավորեց մահմեդականների կրոնական զգացմունքները»:

Նոր ժամանակաշրջանում թուրքի արտոնությունները չուռ եկան նրա դեմ: Եթե դարեր շարունակ թուրքերը զբաղված են եղել միայն բանակում և պետական ծառայությունում, արհամարհել են աշխատանքը, տնտեսական գործունեությունը, ապա նոր ժամանակներում տնտեսական կյանքը դուրս եկավ առաջին պլան և սկսեց որոշիչ դեր խաղալ: Բայց քանի որ տնտեսական գործունեության կրողները հիմնականում հայերը, հույներն ու հրեաներն էին, որոնց ձեռքում կուտակվել էին վիթխարի միջոցներ, իսկ թուրքերը դրանցից զուրկ էին, օսմանլին դա վերագրեց ոչ միայն նշված ժողովուրդների «արտոնյալ վիճակին», այլև խարդախությանն ու աճպարարությանը: Դրա հետևանքով «կաթ վաճառող բուլղարացու», «հովիվ սերբի» և «կրպակատեր հայի» հանդեպ հպարտության ու «արժանապատիվ կեցվածքի» վերականգնումը թուրքի համար վերածվեց նպատակի:

Ահա այս հակաքրիստոնեական տրամադրությունները սնեցին օսմանիզմի հիմնադիրներին, ովքեր օգտագործեցին դրանք ռասիստական կրքեր բորբոքելու և քրիստոնյա հպատակների հանդեպ թշնամություն հրահրելու համար: Վերջինների նկատմամբ թուրքերի մեջ կար նաև վրեժխնդրության զգացում: Երբեմնի աշխարհակալ տերությունը, որից Եվրոպան դողում էր, վերածվել էր կիսագաղութի, դարձել խաղալիք նույն այդ Եվրոպայի ձեռքում: Սակայն քրիստոնյա Եվրոպայից թուրքը վրեժ լուծելու զորություն չուներ, ուստի վրեժխնդիր էր լինում իր քրիստոնյա հպատակներից: Այս վիրավորվածությունը, արհամարհանքն ու նվաստացումը նաև նպաստեցին, որ թուրքերը հետ նայեին, երազեին նախկին հզորության վերստեղծման մասին:

«Ռազմական պարտությունները, – գրում է թուրքագետ Բ. Լևիսը, – ու քաղաքական անհաջողությունները սասանեցին թուրքերի ինքնավստահությունը, թե իրենք անհաղթ են և անվիճելի առավելություններ ունեն: Սակայն նախկին արհամարհանքը «վայրենի գյավուրի» հանդեպ ծնեց ոչ թե նախանձ, այլ ատելություն»[5]:

Թուրքերի հոգեբանական դեգերումների հիմքում, սակայն, ընկած էին նրանց տգիտությունը, մոլեռանդությունը, բարբարոսական հակումները և հետամնացության ծնած ինքնասիրահարվածությունն ու թուրքականի բացարձականացումը: Դրա հետ մեկտեղ 70-ական թվականներին օսմանյան հասարակությունում նկատելի էր ազատական մտածողության աճ: «Պալատի ցոփությունը, ֆինանսների խրոնիկական չգոյությունը, ֆավորիտների ոչնչով չսահմանափակվող կամայականությունները դժգոհություններ առաջացրին նույնիսկ պաշտոնատարների և հոգևորականության շրջանում: Գրականությունն ու արվեստը համակվեցին արևմտյան ազատամտությամբ և գեղարվեստական կերպարների միջոցով մերկացնում էին գոյություն ունեցող կարգերի արատները»[6]:

Որոշակի խավերում տիրապետող մտայնություն դարձավ այն, որ չնայած Օսմանյան կայսրությունը թուրքական պետություն էր, իրականում գյավուրների ձեռքում էր: Դա թուրքերին թվում էր «տարօրինակ անհավասարություն», և նրանք ավելի ու ավելի էին հակվում վերացնելու այդ «անհավասարությունը»: Այս ուղղությամբ առանձնակի եռանդ էին հանդես բերում բուրժուական տարրերը: Նրանք անհանդուրժելի էին համարում ոչ միայն այն, որ իրենք օսմանյան չուկայում ըստ պահանջի տեղեր չունեին, այլև այն, որ հպատակ ժողովուրդների բուրժուազիան իրենց չէր ենթարկվում և դրանում մեղավոր հռչակեցին սուլթանական վարչակարգը, որն ավանդաբար թուլու-

[5] Նույն տեղում, էջ 57:

[6] Головородько Й., նշվ. աշխ., էջ 242:

*թյուն էր դրսևորում հպատակ ժողովուրդների նկատմամբ, հանդուրժողական քաղաքականություն վարում և անտարբերություն հանդես բերում թուրքերի ազգային շահերի հանդեպ: Հետևաբար, պետք էր սկսել վարչակարգի ամրապնդումից, դրան իր նախկին փառքն ու հզորությունը վերադարձնելուց: Այդ բուրժուազիային օդի պես անհրաժեշտ էր սուլթանական ուժեղ իշխանությունը՝ նաև որպես պաշտպանական վահան Եվրոպայի տնտեսական ու քաղաքական ներխուժման դեմ: Հետևաբար, նա չէր կարող անհոգ նայել, թե ահագնացող ճգնաժամն ինչպես է դեպի անկում մղում կայսրությանը: Դրա առաջն առնելու գլխավոր պայման համարվեց իշխանության հիմնական լծակների հանձնումը նորաթուխ ունևոր խավերին: Այդ նպատակով առաջ քաշվեց ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական բարենորոգումների պահանջ: Եվ, ինչպես նման դեպքերում սովորաբար լինում է, բուրժուազիայի տնտեսական ու քաղաքական շահերը ներկայացվեցին գաղափարախոսական-տեսական սկզբունքների տեսքով: Թուրքական գաղափարաբանության առնչությամբ Հր. Տասնապետյանը գրում է. «Ինչ անունով որ մենք կոչենք Թուրքիո քաղաքականությունը, պիտի չկարողանանք ուրանալ, որ ցեղային ու կրոնական ենթակայական տվյալներով այն մի կողմից ձգտում է դեպի Արևմուտք, մյուս կողմից՝ դեպի Արևելք, որովհետև իր ցեղակիցների և կրոնակիցների տնտեսական չուկան նրա համար սքանչելի տեղ է հարստացման և ուռճացման: Այդ ձգտումն ինքնաբերաբար արտահայտվում է քաղաքական իմաստով, և դրա հետևանքով... Թուրքիան երբեք չընդունեց Հայ դատի իրավացիությունը, ինքզինքը ներկայացրեց որպես քաղաքակիրթ, հզոր, Եվրոպային արժանի հավաքականություն»:*[7]

*Սակայն թուրքական բուրժուազիան թույլ էր: Ջունեննալով հստակ դիրքորոշում՝ նա զուրկ էր ինքնուրույն քաղաքական ուժ դառնալու կարողությունից և ապավինեց թուրքական ավատատիրական չրջաններից սերած ուժերին, ովքեր նույնպես վերափոխումների էին ձգտում: Ըստ այդմ էլ, թուրքական բուրժուազիայի գաղափարաբանության ձևավորողներ դարձան ավատատիրության ներկայացուցիչները:*

*Օսմանիզմը թուրքական քաղաքական դոկտրինա էր, որը խնդիր ուներ կայսրության ժողովուրդներին քաղաքական-հպատակային հիմքի վրա միավորելու միջոցով ապահովել օսմանյան տերության ամբողջականությունը: Այդ դոկտրինան քարոզչությունից բացի հանդիսանում էր քաղաքական միջոցառումների համակարգ, որն օսմանյան քաղաքացիների իրավահավասարության քողի տակ ձգտում էր թուրքացնել հպատակ ժողովուրդներին:*

*Օսմանիզմը ծնվեց 19-րդ դարի առաջին կեսին և մինչև կայսրության անկումը նշանակալից ազդեցություն գործեց նրա քաղաքականության վրա: Որոշ ժամանակահատվածում այն եղել է նաև պաշտոնական գաղափարախոսություն, օսմանիզմի շատ դրույթներ վերածվել են օրենսդրական ակտերի և պետական այլ փաստաթղթերի: Օսմանիզմի հենքի վրա Թուրքիայում ձևավորվեցին «ազգ», «հայրենիք» և նման մի քանի այլ հասկացություններ, որոնք թուրքական ազգայնամոլության ու մեծապետականության համար դարձան չարժիչ ուժ: Օսմանիզմը պարունակում է թուրքիզմի և իսլամիզմի մեծ չափաբաժին, մերժում հպատակ ժողովուրդների սուվերեն գոյության իրավունքը:*

*Օսմանյան կայսրության կազմում կար 60 ժողովուրդ և էթնիկական խումբ, որոնք խայտաբղետ էին ոչ միայն կրոնական, ռասայական, այլև զարգացման մակարդակի առումով*[8]*: Դա, իհարկե, սուլթանական վարչակազմի առջև միշտ էլ բարդ, ամենից առաջ՝ Թուրքիայի ամբողջականության պահպանության, խնդիրներ է դրել, ինչն առանձնահատուկ նշանակություն ստացավ կայսրության անկման ժամանակաշրջանում*[9]*:*

---

[7] «Դրոշակ», դեկտեմբեր, 1990:

[8] Сафрастян Р., *Доктрина османизма в политической жизни Османской империи*, Ереван, 1985, стр. 19.

[9] Новичев А., *История Турции*, т. I, Ленинград, 1963, стр. 72.

Օսմանիզմը ձևավորվեց ազգային-ազատագրական շարժումների ծավալման շրջանում. ակնհայտ էր դառնում, որ այլևս հին ձևով կառավարելով՝ կայսրությունը փրկելն անհնար էր: Թուրքական իշխող խավերն սկսեցին միջոցներ փնտրել անկումը կասեցնելու համար: Մասնավորապես, հունական ապստամբությունը սուլթանական կառավարությանը հարկադրեց մտահոգվել, որ կարող էին ոտքի կանգնել նաև մյուս ռայաները: Ելքը մեկն էր՝ «բարելավել նրանց վիճակը»[10]: Եվ քանի որ հիմնականում ընդվզում էին բալկանահպատակները, իրադեներ հրապարակվեցին նրանց վիճակն ինչ-որ չափով բարվոքելու համար: 1828թ. Բելիջի-զադե Իզզեթ Մուլոյը Մուհամմեդ 2-րդին գրեց. «Արդյո՞ք մեզ չահեկան չէ պահել ունեցածի թեկուզ մի մասը», քան կորցնել բոլորը[11]: Մեկ տարի անց սուլթանը հույներին հավաստիացրեց. «Այլևս մահմեդականների ու ռայայի միջև ոչ մի տարբերություն չի դրվելու և ապահովվելու է բոլորի ունեցվածքի, կյանքի և պատվի անվտանգությունը»: Քրիստոնյաներին թույլատրվեց հագուստ կարել նույն կտորից, ինչ մահմեդականներն էին հագնում:

Օսմանիզմի հիմնադիրները միաժամանակ դարձան Թանզիմաթի գաղափարախոսներն ու նախաձեռնողները: Նրանցից Մուստաֆա Ռեշիդը Թանզիմաթի առաջին շրջանում (30-50-ական թվականներ) խնդիր դրեց ապահովելու բոլոր օսմանցիների կյանքի, ունեցվածքի և պատվի անձեռնմխելիությունը: Եվ այդ սկզբունքը տեղ գտավ Գյուլխանեի Հաթթ-ի չերիֆում[12]: Սակայն նույն Ռեշիդը խոստովանել է, որ ինքը ձգտում էր ոչ թե քրիստոնյաների և մահմեդականների իրավահավասարության, այլ նրանց իրավունքների միջև եղած տարբերությունների մեղմացման: Դրա համար էլ, երբ Հաթթ-ի հումայունը հռչակեց օրենքի առաջ մահմեդականի ու ոչ մահմեդականի հավասարություն, Ռեշիդն այդ իրադեի հեղինակներ Ալիին և Ֆուադին մեղադրեց «իսլամին դավաճանելու մեջ»[13]: Նա չահարկում էր ընդհանուր հայրենիքի գաղափարը՝ արտաքին ուժերի դեմ ներքին համախմբման նպատակով: Ղրիմի պատերազմի նախօրյակին հրապարակված կոչում ասված էր. «Բոլորը պետք է ձգտեն ապրել լիակատար համերաշխ և ծառայել ընդհանուր հայրենիքին»[14]:

Ռեշիդի հռչակած հավասարության կիսատպռատությունն արտահայտվում էր նաև վարչական բարեփոխումների ծրագրում: Նա առաջարկում էր վալիներին կից գործող մեջլիսներում տեղ տալ նաև քրիստոնյաներին, սակայն դրանցում մեծամասնություն անպայման պետք է լիներն մահմեդականները: Իսկ երբ բուլղարացիները 1850թ. ապստամբեցին՝ պահանջելով կյանքի կոչել Թանզիմաթը, Ռեշիդը տեղական իշխանություններին հանձնարարեց գործադրել բիրտ ուժ:

Սակայն քանի դեռ Ռեշիդը մեծ վեզիր էր, Թանզիմաթը, չնայած նվազագույն չափով, այնուամենայնիվ կիրառվում էր, իսկ նրա հրաժարականից հետո, փաստորեն, բարեռնորոգումներն ի չիք դարձան: Ղրիմի պատերազմի նախօրյակին, Կ. Մարքսի խոսքերով, «Սուլթանը հարկադրված էր հին մոլեռանդությունը ոգեկոչել, Ասիայի կատաղի բիրտ ցեղերին արթնացնել և նորից տանել Եվրոպայի վրա»[15]:

Դրա հետ միասին Թանզիմաթը կայսրության դռները բացեց եվրոպական կապիտալի առջև: Այդ գործում ևս օսմանիզմի պարագլուխների, մասնավորապես՝ Ալիի և Ֆուադի, դերը մեծ էր, նրանք ձգտում էին մերձենալ Եվրոպային: Սակայն նրանց բացած դռներից Թուրքիա ներխուժեց ոչ միայն կապիտալը, այլև գաղութատիրական քաղաքականությունը, որն օսմանյան հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումներին

---

[10] Пангало К., *Турция и просвещение*, С-П., 1862, стр. 5.

[11] Tarih Vesikaları, cilt, N3, s. 173.

[12] Розен Д. Г., *История Турции...*, ч. I.

[13] Cevdet A., *Tezâkir*, Ankara, 1953, s. 8.

[14] Voillant A., *Solution de la Question d' Orient*, Paris, 1853, p. 130.

[15] Маркс К. и Энгельс Ф., *Сочинения*, т. IX , стр. 339.

աջակցելու պատրվակով՝ սկսեց միջամտել կայսրության ներքին գործերին: Այդ վտանգը չեզոքացնելու նպատակով՝ Ալին առաջ քաշեց Թուրքահպատակ քրիստոնյաներին զինումներ կատարելու անհրաժեշտությունը: Սակայն թե՛ Ալին և թե՛ Ֆուադը կայսրության փրկությունը տեսնում էին հպատակ ժողովուրդների ձուլման մեջ: 1867թ. Ֆուադը հռչակեց. «Կայսրության փրկության միջոցը մահմեդականների և քրիստոնյաների ձուլումն է, այլ ոչ թե նրանց զուգահեռ գոյակցությունը»[16]: Ալին գրեց. «Բոլոր հպատակների ձուլումը... հանդիսանում է միակ միջոցը, որն ի վիճակի է մեզ փրկել սպառնացող վտանգից»[17]:

Ինչ վերաբերում է կրոնական խնդրին, ապա Ֆուադի կարծիքով՝ կայսրության քրիստոնյա ժողովուրդներն ունեն «երկու կրոն. մեկը՝ բարոյական, մյուսը՝ քաղաքական... բարոյական կրոնը կառավարությունը կարող է արհամարհել, նկատի չունենալ: Իսկ քաղաքական կրոնին պետք է մեծ զգուշությամբ վերաբերվի, քանի որ այն հաճախ է ծնում մեր գոյության հետ անհամատեղելի տեսություններ»:[18]

Լեզվի հարցում Ալին գտնում էր. «Ցուրաքանչյուր ոք, ով ուզում է ծառայության մտնել, պետք է կարողանա թուրքերեն գրել և կարդալ»: Որևէ վերակառուցում, ըստ Ֆուադի, չպետք է վերաբերեր կայսրության գոյության չորս հիմքերին՝ «մահմեդական միլլեթ, թուրքական պետություն, օսմանյան սուլթան և Ստամբուլը՝ որպես մայրաքաղաք»: Պետությունն անպայման պետք է թուրքական լիներ, որովհետև Ալիի կարծիքով, կայսրությունում միայն մի ժողովուրդ կար, որը կարող էր մյուսներին կառավարել և համայնքների համար... ծառայել կապող օղակ»:[19]

Կայսրությունը չատ ավելի ամուր կլիներ, եթե թուրքացվեր և ուժեղացվեր իսլամը: Փաստորեն ոչ միայն մերժվում էին մյուս կրոնները՝ դրանք լինեին բարոյական, թե քաղաքական, այլև խնդիր էր դրվում վերակառուցել մահմեդականությունը, այն ուղղակիորեն ծառայեցնել օսմանյան պետության շահերին: Տեսական վերլուծումներն անմիջապես վերածվում էին գործնական քաղաքականության: «Մենք չենք կարող թույլ տալ,– գրում է Ֆուադը,– որ քրիստոնյաները լայնորեն ներգրավվեն Բ. Դռանը ծառայելու մեջ, քանի որ նման պարագայում քրիստոնյա տարրը չի հապաղի թուրքերին մղելու երկրորդական պաշտոնների»[20]:

Օսմանները ձուլման նախնական և գլխավոր միջոցը համարում էին դպրոցը և առաջարկում էին ստեղծել երեխաներին օսմանականության ոգով դաստիարակելուն միտված խառը դպրոցներ: «... Մեր բոլոր հպատակ քրիստոնյաների դաստիարակությունը,– գայրանում է Ալին,– իրականացվում է Օսմանյան կայսրության նկատմամբ թշնամության հիմքի վրա»[21]: Ուծացման եղանակ էր համարվում նաև քրիստոնյաներին բանակ զորակոչելը, ինչը կապահովեր «բարոյական որոշակի ճնշում» և «կստեղծեր ընդհանուր ոգի»[22]:

Օսմանները գտնում էին, որ ժամանակի ընթացքում միլլեթները մեծ իրավասությունների էին տիրացել և պահանջում էին դրանք վերածել լոկ կրոնական համայնքների, առանց աշխարհիկ լիազորությունների[23]: Նրանք կատաղի պայքար էին մղում հպատակ ժողովուրդներին որևէ ինքնավարություն տալու դեմ:

---

[16] *АВПР, ф. Канцелярия,* 1867, д. 31, л. 489.

[17] **Ali Pasha,** *Memorandum,* s. 88.

[18] **Fuad Pasha,** *Political Testament,* p. 242.

[19] **Thouvenel L.**, *Trois années de la Question d' Orient,* Paris, 1897, p. 317.

[20] *АВПР, ф. Главный архив, 11-18, 1855-1867,* д. 1, л. 193.

[21] **Ali Pasha**, *նշվ. աշխ.*, էջ 87-88.

[22] *АВПР, ф. Главный архив, 11-18, 1855-1867,* д. 1, л. 23-24.

[23] **Ali Pacha,** *Testament politique, "La Revue de Paris",* 1910, N 9.

Ն. Իգնատևը գրում է, որ Հայ Ազգային սահմանադրությունը Բ. Դռան հովանավորությանը չարժանացավ: Սահմանադրության նախագիծը կազմող հանձնաժողովի անդամները «եղան Ֆուադի մոտ և խուսափողական պատասխան ստացան»[24]: Նա նկատում է, որ Ալին, «չնայած իր եվրոպական արտաքին ձևերին, հոգու խորքում իսկական թուրք էր և դեմ էր Եվրոպային»[25]:

Կայսրության եվրոպական մասում ազգային չարժումները գնալով լայն թափ էին ստանում: Տեղի քրիստոնյաները, գրում է Պլովդիվում Ռուսաստանի հյուպատոս Ն. Գեորովը, «հանգել են այն մտքին, որ իրենք փրկություն չունեն, եթե թուրքական տիրապետությունը չոչնչացվի»[26]: Օսմանիզմի առաջնորդները դրան հակադրեցին քաղաքական ռեակցիան՝ քայլեր կատարվեցին քայքայելու միլիեթների համակարգը, պատրիարքներին զրկելու աշխարհիկ իրավասություններից, վերակառուցելու կրթության համակարգը, ուժեղացնելու վերահսկողությունը քրիստոնյա հպատակների դպրոցների վրա, ստեղծելու կրթական հաստատությունների նոր ցանց, որին կարևոր դեր էր հատկացվում՝ «երկրի բոլոր բնակիչների գաղափարական ձուլման գործում»[27]: Բանակ զորակոչված քրիստոնյաները դժոխային վիճակում էին: Մամուլի մասին 1865թ. հրապարակված օրենքով խստացվեց վերահսկողությունը թերթերի վրա, իսկ քաղաքացիության մասին օրենքով (1869թ.) բոլոր ազգություններին կոչեցին «օսմանյան պետության հպատակ»: Սակայն այս և մյուս ձեռնարկումները դժվարությամբ էին կյանք մտնում: Ալին խոստովանեց. «Մենք անզոր գտնվեցինք»:

Այս մտահանգմամբ էլ օսմաններն իրենց տեղը զիջեցին «նոր օսմաններին»[28]: «Նոր օսմանների» կազմակերպական ձևավորումը տեղի ունեցավ 1865 թվին, երբ հիմնադրվեց նրանց ընկերությունը: Այդ ընկերության անդամներին անվանում էին նաև երիտասարդ թուրքեր: Դրանք էին գրողներ Նամըկ Քեմալը, Իբրահիմ Շինասին, Աբդուլ Զիան, հրապարակախոս Ալի Սուավին: Որոշ ժամանակ անց ընկերության գլուխ կանգնեց Ահմեդ Միդհատը: «Նոր օսմանները» ստեղծեցին լրագրության լայն ցանց: Նրանց թերթերը հրատարակվում էին հիմնականում Փարիզում ու Լոնդոնում և գաղտնի տարվում թուրքիա:

«Նոր օսմանները» գտնում էին, որ թանզիմաթը նվեր էր քրիստոնյաներին, որի հետևանքով մահմեդականները հայտնվեցին «ճնշված համայնքի վիճակում»[29]: Այդ կապակցությամբ Ն. Իգնատևը տեղեկագրեց, որ «նոր օսմանները» կառավարությանը մեղադրում էին «մահմեդական տարրերի շահերի նկատմամբ արհամարհական վերաբերմունքի մեջ»[30]: Նրանք կատաղի պայքար էին մղում ազգային չարժումների դեմ: Նամըկ Քեմալը հռչակեց. «Մեր Մարգարեն աշխարհին ծառայել է իր սիրով: Մենք ևս պիտի ընթանանք այդ ուղիով... Աշխատենք ապացուցել, որ պատկանում ենք օսմանյան ժողովրդին, որն ամբողջ աշխարհին հարկադրում է դողալ իր առաջ... Գյավուրներին ցույց տանք մեր ուժը, Մարգարեին այդ հաճույքը կպատճառի»[31]:

Նրանք առանձնակի թշնամություն էին տածում Ռուսաստանի հանդեպ: «Արևելյան հարցի այսօրվա վիճակը,– գրում է Ալի Սուավին,– հետևյալն է. Մոսկվան թունավորել է Օսմանյան կայսրությունում բնակվող քրիստոնյաներին՝ օսմանյան կառավա-

---

[24] *АВПР, ф. Канцелярия, 1867,* д. 31, л. 632.

[25] *Записки графа Н. П. Игнатьева, 1864-1874, "Русская старина",* 1915, т. 162, кн. 4, стр. 19.

[26] *Документы за българската история, т. 1, Архив на* Х. Геров, София, 1931, стр. 292.

[27] Сафрастян Р., նշվ. աշխ., էջ 55.

[28] Ali Pasha, նշվ. աշխ., էջ 87-88:

[29] «Հուրիեթ», 1868, թիվ 12,14:

[30] *АВПР, ф. Турецкий стол (старый), 1867,* д. 2661, л. 1.

[31] Kaplan M., *Namık Kemal. Hayatı ve Eserleri.* İstanbul, 1948, s. 42.

*րությունը ոչնչացնելու դիտավորությամբ»: Իբրահիմ Շինասին գտնում է, որ «Օսմանյան սուրը մագնիսական սլաքի նման միշտ դեպի հյուսիս է ցույց տալիս»[32]:*

*«Նոր օսմանները» կայսրության փրկությունը տեսնում էին Սահմանադրության հռչակման մեջ, որն «անմիջապես կվերականգներ մահմեդական պետության հեղինակությունը...»[33]:*

*Նրանք մշակեցին «օսմանյան ազգի» և «օսմանյան հայրենասիրության» կոնցեպցիաները, բնականաբար, օսմանյան ազգի մեջ ներառնելով կայսրության բոլոր ժողովուրդներին: Զիան գրեց. «Օսմանյան ազգ հասկացությունը նկատի ունի օսմանահպատակ բոլոր ժողովուրդներին...»:[34] Ալի Սուավին կայսրության բոլոր բնակիչներին համարում էր մեկ ժողովուրդ՝ կազմված 21 միլիոն մահմեդականից ու 14 միլիոն քրիստոնյայից[35]: Միաժամանակ նրանք կայսրության բնակչությունը բաժանում էին երկու մասի՝ իսկական օսմանցիներ, այսինքն՝ թուրքեր, երկրորդական օսմանցիներ՝ մնացած ժողովուրդները: Իսկական օսմանցի լինելու համար պարտադիր էր թուրքերեն իմանալը:*

*«Նոր օսմանների» կարծիքով Եվրոպան պարտական էր սուլթանին այն բանի համար, որ նրա «վերկուսակցական կառավարման» շնորհիվ կայսրության տարբեր ազգային ու կրոնական համայնքներ խաղաղ գոյակցում էին: «Մեր երկրում ապրող բոլոր տարրերը,– գրում է Ն. Քեմալը,– աչխարհագրական առումով հանդիսանում են նույն մարմնի տարբեր մասերը... Դրա համար էլ լրիվ կորցրել են առանձին գոյություն ունենալու ընդունակությունը, նաև անկախության հասնելու համար անհրաժեշտ ուժերը»[36]:*

*Կայսրության հարատևման նպատակով նաև առաջարկվում էր վերադառնալ Շարիաթին և իսլամի նախնական սկզբունքներին: Ն. Քեմալը գտնում էր, որ լեզուն է ապահովում ազգային համախմբվածություն, իսկ Ալի Սուավին ավելացնում էր, որ թուրքերենը բոլոր լեզուներից վեր է: Նրանք երկուսն էլ դավաճանություն էին համարում կայսրության տարածքից թեկուզ մեկ թիզ կորցնելը:*

*Փոքր-ինչ այլ մոտեցում էր հանդես բերում Միդհատը: Նա ճանաչում էր հպատակ մի քանի մահմեդական ժողովուրդների արդեն ձեռք բերած անկախությունը, հպատակների ներքին ինքնավարությունը համարում էր կայսրության ամբողջականությունը պահպանելու միջոց: Միդհատը ևս ձուլման կողմնակից էր և այդ գործում մեծ տեղ էր հատկացնում մահմեդա-քրիստոնեական կազմով խառը գնդերի ստեղծմանը: Նա համաձայնեց սահմանադրության մեջ կետ մտցնել, որ կայսրության կազմում եղած ժողովուրդներն իրավունք ունեն օգտագործելու մայրենի լեզուն, ինչին դեմ դուրս եկավ սուլթան Աբդուլ Համիդը, և պետական լեզու հռչակեց թուրքերենը, իսկ պետական կրոն՝ իսլամը:*

*«Նոր օսմանների» նպատակները չարադրված են չարժման հիմնադիրների՝ հռչակագրի նշանակություն ստացած հետևյալ գրություններում. 1867թ. Ֆազըլը Փարիզում հրապարակեց իր նամակը սուլթանին, որում կարդում ենք. «Ձեր տերության հպատակ քրիստոնյաների ապստամբությունները ամբողջովին արդյունք են մեր արտաքին թշնամիների բանսարկությունների: Դրանում զգալի դեր է խաղում նաև ներկա կառավարումը: Առանց բացառության, բոլոր հպատակները ենթակա են հալածանքների ու ճնշումների, իսկ Եվրոպան գտնում է, որ հալածվում ու ճնշվում են միայն քրիստոնյաները: Մինչդեռ, որևէ արտաքին հովանավորության չդիմող մահմեդականներն ավելի են ճնշվում, քան ոչ մահմեդականները»[37]: Մահմեդականներն «այլևս ո՛չ ուժ, ո՛չ համբե-*

---

[32] **Kaplan M.**, նշվ. աշխ., էջ 45:

[33] **Петросян Ю. А.**, *Новые османы и борьба за конституцию 1876 в Турции*, Москва, 1958, стр. 43.

[34] **Kurgu S.**, *Ziya Paşa, Hayatı. Sanatı, Eserleri*, İstanbul, (թիվ չկա), s. 121.

[35] **Voillant A.**, *Solution de la Question d' Orient.* Paris, 1853, p. 50.

[36] **Karal E. Z.**, *Prof. Namık Kemal ve Şark Meselesi.* İstanbul, 1942, s. 289.

[37] **Stern B.**, *Jungtürken und Verschwörer.* Leipzig, 1901, SS. 120-121.

*րությունն և ո՛չ էլ անձնազոհությունն ունեն ցավն ու դժբախտությունը տանելու», դրա համար էլ ամենուրեք դժգոհություն է: Ժողովուրդը ամենաշատը կեղեքվում է չինովնիկների կողմից, որոնք գործում են առանց որևէ վերահսկողության, և նրանց կամայականությունների դեմ որևէ արգելք չկա: «Դրա համար էլ Ձեր հպատակները բաժանվում են երկու խմբի: Մի խումբն անսանձ բռնապետներ են, մյուսը՝ ճնշվածներ, որոնք տանջվում են առաջինների կամայականություններից»[38]:*

*Նա կայսրության ֆինանսական ծանր վիճակի պատճառը համարում էր հարկերի գանձման գործում կամայականությունները, որոնք քայքայում են բնակչությանը: «Արհեստը, առևտուրն ու գյուղատնտեսությունը օրավուր կրճատվում են», ինչը հետևանք է «մեր համակարգի քաղաքացիական կառավարման անիրավության»[39]: Նա սուլթանին կոչ էր անում ստեղծել այնպիսի «ազատ կարգեր», որպեսզի թե՛ մահմեդականների և թե՛ ոչ մահմեդականների համար ապահովվեն անձի ազատություն և ունեցվածքի անվտանգություն:*

*1867թ. փետրվարի 12-ին դիվանագետ Խալիլ Շերիֆը Պոլսում թուրքիկ տարածեց սահմանադրական կարգեր հաստատելու անհրաժեշտության մասին: Սահմանադրությունը, ասվում է թուրքիկում, կջնջի «մահմեդականների և ոչ մահմեդականների միջև եղած քաղաքական ու սոցիալական տարբերությունը: Ոչ մահմեդականի համար կվերանա անհրաժեշտությունը լսելու դրսի կեղծ խոստումները...»:*

*«Նոր օսմանների» գաղափարախոսության հռչակագիր հանդիսացավ նշանավոր պետական գործիչ, բազմիցս մեծ վեզիրի և արտաքին գործերի նախարարի պաշտոններ վարած Ֆուադի քաղաքական կտակը: Այդ նշանավոր փաստաթղթի ծնունդը պայմանավորված էր Ֆուադի եզրահամգմամբ՝ «Օսմանյան կայսրությունը վտանգի մեջ է»: Իսկ ինչո՞ւ էր վտանգի մեջ: «Մեր հարևանների ձեռք բերած սրընթաց առաջադիմությունը և մեր նախահայրերի գործած սխալներն այսօր մեզ դնում են չափազանց տագնապալի կացության մեջ»[40]: Այդ կացությունից դուրս գալու ելքը մեկն է՝ հաղթահարել հետամնացությունը, այսինքն՝ վերացնել այն տարբերությունը, որն առաջացել է Եվրոպայի և Թուրքիայի զարգացման մակարդակների միջև: Ուրեմն, Ֆուադը չատագովում էր ոչ միայն առաջադիմությունը, զարգացման արագացումը, այլև եվրոպական, այսինքն՝ կապիտալիստական ուղին: Դրա համար էլ նա, նախ՝ առաջարկում էր փոխել «բոլոր քաղաքական և քաղաքացիական հաստատությունները», քանի որ անցյալի նույնիսկ չատ լավ օրենքները նոր պայմաններում վերածվել են զարգացման խոչընդոտների: Երկրորդ, մարդկության զարգացման օրինաչափություններն ընդհանուր են թե՛ Եվրոպայում և թե՛ Օսմանյան կայսրությունում, հետևաբար համարձակորեն պետք է օգտագործել եվրոպական արժեքները՝ թուրքական հասարակության զարգացումն արագացնելու համար, մանավանդ որ եվրոպական առաջադիմության մեջ մահմեդական «կրոնի ոգուն հակառակ ոչինչ, բացարձակապես ոչինչ չկա»[41]:*

*«Նոր օսմանների» առաջ քաշած բոլոր ծրագրերի հիմքում ընկած էր օսմանիզմը: Թուրքիզմի նախակարապետ հանդիսացող այդ գաղափարախոսությունը խնդիր էր առաջադրում ապահովելու կայսրության տարածքային ամբողջականությունը և ծնվեց որպես օսմանյան քաղաքական համակարգը մարմնավորող ուսմունք: Օսմանիզմի գաղափարական ակունքները ձգվում են մինչև կայսրության ձևավորման առաջին տասնամյակները: Դրանց հիմքում դրված են այն գաղափարները, որ Օսմանյան կայսրությունը նրա կազմի մեջ մտնող բոլոր ժողովուրդների հայրենիքն է, և բոլոր ժողովուրդները, անկախ իրենց լեզվից ու դավանանքից, օսմանցիներ են՝ օսմանլի:*

---

[38] Նույն տեղում, էջ 120-121:
[39] **Stern B.**, նշվ. աշխ., էջ 120-121:
[40] «Արօր» հանդես, 1910, թիվ 6, էջ 178:
[41] Նույն տեղում, էջ 180:

*Օսմանիզմը վերազգային կայսրության պայմաններում առաջին հայացքից ընկալվում է որպես կայսրության մեջ մտնող ժողովուրդների իրավահավասարությունը հաստատող ուսմունք: Սակայն միայն առաջին հայացքից: Իրականում այն թուրքական ուսմունք է՝ կոչված ապահովելու թուրքերի գերիշխանությունը հպատակ ժողովուրդների վրա: Կայսրության ժողովուրդների թե՛ իրավունքները և թե՛ պարտականությունները խստորեն համակարգված էին ըստ քաղաքական վիճակի, ազգային և կրոնական պատկանելության: Օսմանիզմը կայսրության միասնական օրգանիզմի գլուխ համարում էր թուրքերին, մարմին՝ արաբներին, քրդերին, ալբանացիներին, մահմեդական մյուս հպատակ ժողովուրդներին, իսկ ոտքերն ու ձեռքերը՝ այլադավաններին՝ հիմնականում քրիստոնյաներին: Թուրքերն էին կայսրության միջուկը՝ տիրելու անվերապահ իրավունքներով: Մահմեդական հպատակները համարվում էին թուրքերի հենարաններ: Մնացածները ոչա էին՝ զրկված բոլոր իրավունքներից:*

*«Օսմանցիներից,– գրում է Նամըկ Քեմալը,– թե՛ թվով և թե՛ ընդունակություններով առաջին տեղը գրավում են թուրքերը, որոնք ունեն այնպիսի առավելություններ, արժանիքներ ու որակներ, ինչպիսիք են ճանաչողական ընդունակությունները ու լայնախոհությունը, բնածին զսպվածությունը, դիմացկունությունն ու խոհեմությունը»[42]:*

*«Նոր օսմանների» ազգային այս սնապարծություններն անտեղի էին համարում նաև շատ թուրք մասնագետներ, իսկ Շերիֆ Մարդինի կարծիքով թուրքերի՝ նման փառաբանությամբ դժվար էր կայսրության մյուս ժողովուրդներին համոզել, որ «նոր օսմաններին» քարոզած ապագա պետությունում իրենք կունենան նույն իրավունքները, ինչ թուրքերը: Ահա մեծապետական մտածողության հետևանքով էր, որ օսմանիզմի շատ պարագլուխներ, այդ թվում նաև Ն. Քեմալը, աստիճանաբար մերժեցան պանիսլամիզմին[43]: Ըստ այդ տեսաբանների, կայսրությունում կար միայն մեկ ազգ՝ օսմանյան (թուրք), իսկ օսմանահպատակ ժողովուրդները լոկ «տարրեր» էին, «բաղկացուցիչ մասեր», որոնք ոչ՛ սուվերեն գոյության և ոչ՛ էլ ազգային պետություն ունենալու իրավունք չունեին: Հետևաբար այդ ժողովուրդների ազատագրական պայքարն այլ բան չէր, եթե ոչ դավաճանություն: Ահա թե ինչու «նոր օսմաններին» ուղղակի ժառանգը դարձան երիտթուրքերը:*

*«Նոր օսմանները» հարկադրված էին առաջին պլան մղել նաև տնտեսական կյանքի բարեփոխումն ու հետամնացության հաղթահարումը: Դա նշանակում էր հրաժարվել ավատատիրական կարգերից և բռնել զարգացման եվրոպական ուղին՝ դեն նետելով գոյություն ունեցող վարչակարգի ծնած այլանդակությունները՝ հարկային համակարգը, ուշադրությունը բևեռել անգրագիտության և տգիտության հաղթահարմանը, լուսավորության եվրոպական փորձի ներդրմանը, հաղորդակից դառնալ արևմտյան քաղաքակրթությանը: Նրանք առանձնակի նշանակություն էին տալիս թուրք բնակչության լուսավորության գործին նաև այն պատճառով, որ կայսրության ոչ մահմեդական ժողովուրդները կրթական-մշակութային զարգացման մակարդակով շատ առաջ էին թուրքերից և մյուս մահմեդական ժողովուրդներից: Ընդ որում, «նոր օսմանները» դա բացատրում էին կայսրությունում քրիստոնյա ժողովուրդներին տրված արտոնություններով՝ նկատի ունեին միլլեթների համակարգը: Սակայն դա նշանակում էր միայն կրթական-լուսավորչական աշխատանքի թույլտվություն, այլ ոչ թե հնարավորություն: Օսմանյան կայսրությունում նյութական աջակցություն և պետական հովանավորություն ստանում էին միայն մահմեդական դպրոցները, քանի որ քրիստոնյա ժողովուրդների պետական դպրոցներ գոյություն չունեին: Հայկական դպրոցներն իրենց գոյությունը պահում էին հանգանակված միջոցներով: Դեռ ավելին, քրիստոնյաներից գանձվում էր դպրոցների տուրք, որը, սակայն, ծախսվում էր միմիայն մահմեդական դպրոցների վրա:*

---

[42] **Kuntay M. C.**, *Namık Kemal Devrinin İnsanlari ve Olaylari Arasında*, İstanbul, 1956, s. 186.

[43] **Mardin S. A.**, *The Genesis of Young Ottoman Thought*, Princeton, 1962, s. 331.

Իհարկե, «նոր օսմաններին» իրողությունը քաջ հայտնի էր, բայց թուրքական չովինիզմի այդ ներկայացուցիչների քաղաքական ծրագրերի իրականացման հնարավորությունները խարսխված էին քրիստոնյա հպատակների հանդեպ թուրքերի մեջ ատելության հրահրման վրա: Ընդ որում, օսմանիզմի ձևավորումն ընթանում էր թուրք ազգի ձևավորմանը զուգընթաց և ներկայացնում էր այդ գործընթացի ազգայնամոլական արտահայտությունը: Օսմանլին արդեն իրեն ոչ միայն թուրք էր զգում, այլև առաջին պլան էր մղում, բացարձականացնում թուրք ազգի հատկությունները, նրա ազգային դեմքը ձևավորող գործոնները: Մասնավորապես, մեծ ուշադրություն էր հատկացվում թուրք լեզվի դիրքերի ամրապնդմանը. մահմեդական ծիսակատարությունները, որոնք մինչև այդ արաբերեն էին, սկսեցին կատարվել թուրքերեն[44]:

Նամըկ Քեմալը 1872թ. գրեց. «Օսմանյան պետությունը հիմնված է կրոնական սկզբունքի վրա և, եթե այդ սկզբունքը խախտվի, կվտանգվի պետության քաղաքական գոյությունը»[45]: Նրա կարծիքով սահմանադրության յուրաքանչյուր հոդված պետք է հաստատվեր շեյխ ուլ-իսլամի կողմից, որ մահմեդական կրոնը անհաղթահարելի պատնեշ է Եվրոպայի ոտնձգությունների դեմ: Օսմանիզմի հիմքում դնելով իսլամը՝ «նոր օսմանները» ձգտում էին հավերժացնել սուլթան-խալիֆի կայսրական տիրակալությունը, միավորել լազերին, ալբանցիներին, արաբներին ու քրդերին[46]: Այսինքն, օսմանիզմը իսլամիզմի ծնողն էր: Բայց ոչ միայն իսլամիզմի, այլև պանթուրքիզմի: Ալի Սուավին գրում է, որ իրենց քաղաքական, ռազմական, պատմական ու մշակութային դերով թուրքերն ամենահին և ամենաբարձրագույն ռասան են, իսկ թուրքերենն ամենահարուստ ու ամենակատարյալ լեզուն է[47]: Նա մեծ հետաքրքրություն էր դրսևորում Միջին Ասիայի թուրքալեզու ժողովուրդների հանդեպ, ասելով, թե իրեն հուզում է այդ թուրք մահմեդականների բախտը, որոնք «հարում են մեր կրոնին, պատկանում են մեր ցեղին ու մեր ընտանիքին»[48]:

«Նոր օսմաններն» անգլիական կողմնորոշում ունեին: Ն. Քեմալը «Հուրիեթի»-ի 1868թ. նոյեմբերի 23-ի համարում գրում է. «Եվրոպական պետություններից Անգլիան է ամենաչատը աջակցում մեր իրավունքների պաշտպանությանը և սուլթանի իշխանության պահպանմանը»: Իսկ Զիան նկատում է. «Եվրոպացիները Օսմանյան կայսրության վրա նայում են ինչպես հանգուցյալի վրա... Այնուամենայնիվ, նրանք ձգտում են պահպանել այդ դիակը՝ ահաբեկված Ռուսաստանի կողմից Ստամբուլը գրավելու սարսափից, նաև նրա համար, որ չեն գտնում մի այլ բան հանգուցյալի տեղը դնելու համար»[49]:

«Նոր օսմանները» միաժամանակ ձգտում էին մահմեդական կրոնի սկզբունքները համատեղել գիտության նվաճումների հետ, գտնելով, որ իսլամի ակունքներում ժողովրդի պատմական փորձն է, որը չի հակասում գիտության նվաճումներին: Արևմտականության այդ ջատագովները չէին նկատում, որ կրոնի նկատմամբ վերաբերմունքի հարցում իրենք հակադրվում էին եվրոպական մոտեցումներին: Եթե Եվրոպայում ֆեոդալիզմի դեմ բուրժուազիայի պայքարի սուր ծայրն ուղղված էր կղերի դեմ, ապա «նոր օսմանները» հանձինս կրոնակցի տեսնում էին դաշնակցի:

Կայսրությունում ծավալված ազգային-ազատագրական շարժումների համայնապատկերի վրա «նոր օսմանները» որդեգրեցին բացարձակ ազգայնամոլական այլամերժ գաղափարներ, որոնք առաջին անգամ ամենայն որոշակիությամբ ձևակերպվեցին Ֆուադի կտակում: Նա սուլթան Աբդուլ Ազիզին խորհուրդ էր տալիս դաժանորեն ճնշել

---

[44] Սապահ Գյուլյան Ս., *Պատասխանատուները*, Փրավիտենս, 1916, էջ 142:

[45] Davidson R. H., *Reform in the Ottaman Empire, 1859-1876*, Princeton, 1963, p. 226.

[46] Kuntay M. C., *Namık Kemal, cilt I*, s. 106.

[47] Karal E. Z., *Tarihi, cilt VII*, s. 293.

[48] Mardin S. A., *The Genesis of Young Ottoman Thought*, s. 371.

[49] Петросян Ю. А., *նշվ. աշխ.* էջ 133:

ազգային-ազատագրական չարժումները: Սխալ էր համարում Հունաստանի անկախության ճանաչումը՝ գտնելով, որ Հունաստանն «ինքնին ամենակարևոր երկիրն է, բայց ճանձրացուցիչ գործիք թշնամի պետությունների ձեռքում: Եվրոպացի բանաստեղծները, կազմելով այս ուրվական թագավորությունը, կարծեցին, թե կարողանալու էին վերակենդանացնել մի ազգի, որը մեռել է ավելի քան երկու հազար հինգ հարյուր տարի առաջ»[50]: Նա հույների հասցեին չպրտում էր վիրավորանքներ «նենգավոր և չարասիրտ, սնափառ, ատելի»: Նրա կտակում նման «բնութագրություններ» են չռայլված օսմանյան բոլոր ոչ մահմեդական ժողովուրդների հասցեին:

Ֆուադը հայերին անդրադառնում է մի քանի անգամ: «Բ. Դուռը երբեք չպետք է ների որևէ մեքենայություն, որը նպատակ է հետապնդում ստեղծելու հայ և օրթոդոքս եկեղեցիների միություն»[51]: Ապա «մասնավորապես հայերը հակված են ոտնձգության և խելացի կլինի նրանց եռանդը չափավորել... Մի Մոնթենեգրո, մի սերբական իշխանություն, մի հայկական թագավորություն ամենափոքր օգուտ չտալով ո՛չ իրենց և ո՛չ մարդկությանը, կարող են առավել կամ նվազ ցնորական պետություններ լինել, մարդկային հասարակության հին բաժանումների դժբախտ մնացորդներ, ամեն նոր աշխարհակալի անխուսափելի որս՝ դրանով իսկ վտանգելով աշխարհի խաղաղությունը»[52]:

Ազգային հարցում Ֆուադի կտակի դրույթները փաստորեն դարձան սահմանադրական չարժման ծրագրային սկզբունքներ: Դրանք բացառում էին կայսրությունում ազգային և կրոնական չարժումները, մերժում հպատակ ժողովուրդներից որևէ մեկին անկախություն տալու գաղափարն իսկ և պահանջում արյան մեջ խեղդել նման ամեն մի փորձ: Ընդ որում, ազգային չարժումները պիտակավորվում էին, մասնավորապես համարվում մեծ տերությունների բանսարկությունների հետևանք, գոյության իրավունքից զուրկ «ավազակություններ»: «Նոր օսմանները» սուլթանական կառավարությանը քննադատում էին ոչ թե հպատակ ժողովուրդներին ճնշելու, հարստահարելու, բռնությունների ենթարկելու, այլ նրանց ազատագրական չարժումները չխեղդելու և մի քանիսին անկախություն տալու համար: Իր «Թուրքիան, նրա անցյալն ու ապագան» (Փարիզ 1878թ.) գրքում Միդհատն այն միտքն է արտահայտում, թե Օսմանյան տիրապետությունը ոչ թուրք ժողովուրդների համար իսկական բարիք է եղել ու այդպիսին մնում է, քանի որ մշտապես գտնվել են սուլթանների ողորմածության, նրանց արդար ու անկողմնակալ վերաբերմունքի ներքո, զերծ ճնշումներից ու խտրականությունից: Եվ ապստամբում էին ոչ թե հալածվելու պատճառով, այլ որովհետև կույր գործիք էին Ռուսաստանի ձեռքին: Նա գտնում էր, որ Մոլդովային, Վալախիային և Սերբիային անկախություն տալը սուլթանների անթույլատրելի սխալն էր, որ ժողովրդավարությունը չի կարող հավասարապես տարածվել մահմեդականների ու քրիստոնյաների վրա: Թուրքական ժողովրդավարությունը կոչված է ծառայելու թուրքերին: Նա վիրավորական արտահայտություններ է օգտագործում իր այն գործընկերների հասցեին, ովքեր «քրիստոնյաների հանդեպ զիջողականություն էին հանդես բերում» և «ոտնահարում էին Շարիաթի դոգմանները»: Բուլղարիայում Միդհատին կոչում էին «բուլղարացիների դահիճ»:

Սա թուրքական նոր ձևավորվող հասարակական վերնախավի երկրորդ սկզբունքային տարբերությունն էր եվրոպական բուրժուազիայից: Եթե վերջինս հասարակությունը վերափոխելու պայքարի չրջանում ընդունում էր ազգերի ազատագրության և անկախության սկզբունքը, ապա թուրք սահմանադրականները դրա կատաղի թշնամիներն էին, չատագովը օսմանյան միասնական հայրենիքի: Միդհատի հեղինակած «Միասնական երկիր՝ միասնական ժողովրդով» կարգախոսը դարձավ սահմանադրական չարժման հիմնական նշանաբաններից: Աստիճանաբար «օսմանյան համայնք» հասկացությունն իր տեղը

---

[50] «Արօր», 1910, թիվ 6, էջ 181-182:
[51] Նույն տեղում:
[52] Նույն տեղում:

զիջեց «օսմանյան ժողովուրդ» հասկացությանը և դա ոչ թե բառի փոփոխություն էր, այլ թուրք ազգի, թուրքական ազգայնամոլության ձևավորման արտահայտություն: Պատահական չէ, որ Ալի Սուավին օգտագործում էր նաև «օսմանյան ազգ» հասկացությունը:

Սահմանադրականների չովինիստական գաղափարներն ու քաղաքականությունը էլ ավելի խորացրեցին խորթությունը թուրք և հպատակ ժողովուրդների միջև, խափանեցին նրանց համատեղ պայքարը սուլթանական վարչակարգի դեմ: «Նոր օսմանների» գաղափարախոսության արատավոր կողմերն էլ պատճառ հանդիսացան այդ չարժման արագ վերասերման: Պատահական չէ, որ չուտով օսմանիստները փարվեցին իսլամիզմին: Նրանք կայսրության ամբողջականությունը տեսնում էին առանց ոչ մահմեդական ժողովուրդների և նպատակադրվել էին մահմեդականներին միավորել հանուն կայսրության մահմեդականացման: Սակայն այս հանգրվանում ևս նրանք կանգ չառան և առաջին պլան մղեցին թուրք ռասային, որի փառաբանումը, նրան որպես ամենահնագույն, ռազմա-քաղաքական և մշակութային առումով ամենաբարձր, մարդկային քաղաքակրթության գանձարանում ամենամեծ ներդրում կատարած ռասայի հռչակումը՝ վերածվեց մահմեդական հիմնարար կարգախոսներին համարժեք սկզբունքի: Դրանով է բացատրվում սահմանադրականների կողմից Լամարթինի փառաբանումը, որը թուրքերին կոչ էր անում չթուլացնել կրոնական մոլեռանդությունը, քանի որ դրա շնորհիվ էր պահպանվում Օսմանյան կայսրությունը, «այլապես հույները ու հայերը գլուխ են բարձրացնելու»: «Թուրքերը,– գրել է այդ «վերամբարձ սրիկան»,– արևելյան ժողովուրդների շարքում առաջին տեղն են գրավում: Թե՛ իբրև մարդ և թե՛ իբրև ազգ նրանք ազնվագույնն են... այդպիսի ցեղը մարդկությանը միայն պատիվ է բերում»[53]:

Դարեր շարունակ թուրքի համար գլխավորը եղել է ոչ թե բնակչությունը, մարդը, այլ տարածքը: Նա տարածքներ է նվաճել, այլ ոչ թե ժողովուրդներ, որոնց զգալի մասին ոչնչացրեց, որովհետև խանգարում էին վարչկատուն ապրելակերպին: Նախկինում «նվաճված տարածքներից զրկվել» արտահայտությունը թուրքի համար բառացի նշանակություն ուներ: Տարածքի կորուստ նշանակում էր այդ տարածքի վրա բնակվող մահմեդականների ոչնչացում կամ արտաքսում, ինչպես դա կատարվեց Բալկաններում:

Քրիստոնյա հպատակների հանդեպ թուրքերի վրեժխնդիր ատելությունը սնող աղբյուր էին մուհաջիրները, ովքեր իրենց նախկին բնակավայրերից հեռացել էին հիմնականում քրիստոնյաների (իշխանության, թե բնակչության) հետ բարդ հարաբերությունների հետևանքով: Կովկասյան լեռնականներն իրենց օջախները լքում էին քաղաքական ճնշումների, իսկ բալկանյան երկրների մահմեդականները՝ հալածանքների պատճառով: Մուհաջիրների չրջանում իրենց նկատմամբ ոտնձգություններ կատարած քրիստոնյաների հանդեպ ատելությունը վերածվում էր Օսմանյան կայսրության կազմում եղած քրիստոնյաների հանդեպ վրեժխնդրության: Սուլթանն ու Բ. Դուրը դա քաջ գիտեին և, ինչպես Թ. Ակչամն է գրում, մուհաջիրներին «գիտակցաբար բնակեցնում էին քրիստոնյա բնակչություն ունեցող տարածքներում: Ստեղծվում էին ընկերություններ, թերթեր ու հանդեսներ, որոնց միջոցով այդ փախստականներին մշտապես հիշեցնում էին իրենց կրածի մասին ու վրեժխնդրության կոչում... Այս ողորմելի մարդիկ չուտով դառնալու էին Անատոլիայի ազգային փոքրամասնությունների և, առաջին հերթին, հայերի դահիճները»[54]:

1878-1904թթ. համախումբ հայ բնակչություն ունեցող վիլայեթներում միաժամանակ բնակեցվեց 850 հազար փախստական[55]: Դժվար է հավատալ Թ. Ակչամի բերած

---

[53] Հովհաննես արք. Նազլյան, *Հուշեր Մերձավոր Արևելքի 1914-28թթ. չրջանի կրոնական-քաղաքական դեպքերի մասին*, հ. Ա, Բեյրութ, 1960, էջ 3:

[54] Акчам Т., նշվ. աշխ., էջ 59:

[55] Ohandjanian A., *Armenien, Das Verschwiegene Völkermord. Böhlau Verlag Wien*, Köln, 1989, S. 36.

թվին ու պնդմանը, թե նրանք հանդիսացան հայերի դահիճները: Նախ, Բալկաններից եկած մուհաջիրների չնչին մասն էր բնակեցվում Արևմտյան Հայաստանում: Այստեղ հիմնականում վերաբնակեցվում էին Կովկասից ու Անդրկովկասից եկած գաղթականները: Այս մուհաջիրները թշնամաբար էին տրամադրված հայերին և մասնակցել էին նրանց թալանին ու կոտորածներին, սակայն նրանք չէին կոտորածների գլխավոր ուժը: Կեղծիք են նաև Ք. Աթաթուրքի խոսքերը. «Գաղթականները կորցրած հողերի մասին մեր ազգային հիշողությունն են»[56]:

Իրադարձությունների մասնակից, Թուրքիայի գաղտնի ոստիկանության պետ Մ. Հալեթլաչեն իր «Մարդասպանը գահի վրա» հուշագրություններում, որը 1918թ. լույս է տեսել Պետրոգրադում, պատմում է նման չերքեզներից մեկի՝ Ահմեդի մասին, որը Թուրքիա էր գնացել ոտոբոբիկ, սակայն կարճ ժամանակում դարձել էր Աբդուլ Համիդի ամենամերձավոր մարդը: Նրանից երկնչում էին անգամ նախարարները: Ահմեդը քչերից մեկն էր, որ ծանր պահին չլքեց սուլթանին:

Մի ուրիշ լեռնականի՝ լազի մասին, որը Վանի վալին էր՝ Բահրին, նա պատմում է, որ մի անգամ պալատում նա իր երեսին չպրտել է. «Լրտե՛ս, լսի՛ր, քո անասուններին կարգադրի՛ր, որ ավելի զգույշ լինեն, թե չէ ես ոչ միայն նրանց, այլ նաև քեզ՝ ստահակիդ, այն աչխարհ կուղարկեմ... Լավ հիշիր, որ լազն իր սպառնալիքը չի կրկնում»: Հետևում է պատասխան. «...Եթե դուք հեչտությամբ մորթում եք անմեղ հայերին, ապա դա չի նշանակում, որ կարելի է ծաղրանքի ենթարկել փադիշահի ծառաներին...»: Բահրիի իրականացրած խոշտանգումներից մեկի մասին նա գրում է սուլթանին.: «Բանտախցիկներից մեկում պահվում էին 15 հոգի, դռան առաջ մի տակառ էր դրված լեփ-լեցուն երկար մեխերով: Դռան մոտ կանգնած էին հրացանավոր զինվորներ, ովքեր բանտարկյալներին մեկառմեկ դուրս էին բերում», մերկացնում ու «նետում տակառի մեջ: Ջնդանն անմիջապես լցվում էր սարսափելի վայնասունով»: Սակայն աչխատողները սառնասրտությամբ «տակառը թեքում էին ալ ու ձախ, մեխերը մտնում էին դժբախտների մարմնի մեջ, և արյունը հոսում էր գետին: Երբ ճիչերը լռում էին, տակառից հանում էին լաթի վերածված բանտարկյալին՝ տասը րոպեում նրա ամբողջ արյունը դուրս էր հոսում»: Ապա Բահրին հրամայեց բերել «բանտարկյալների քույրերին, և մյուս բանտարկյալների աչքի առաջ լազերը սկսեցին ծաղրել մերկացրած աղջիկներին... Ջորս աղջիկ բռնաբարվեցին նահանգապետի ներկայությամբ... չատ եմ խնդրում... նամակս ոչնչացնել, թե չէ ինձ կկասկածեն հայերին համակրելու մեջ, թեպետ ես ամենահավատարիմ մահմեդականն եմ»:

Երբ բանտ այցելեցին հյուպատոսները, Բահրին սպանվածների մասին ասաց, թե ազատ են արձակված, իսկ մյուսները չուտով կկանգնեն դատարանի առաջ:

«Նոր օսմանները» կորցրած հողերի համար վրեժխնդրության գաղափարը չարունակեցին պահել «ռազմական ուսումնարանների ուսումնական ծրագրերի հիմքում...»: «Հարկ է խոստովանել, – գրում է Թ. Ակչամը,– որ ռազմատենչության և ագրեսիվության ոգին ներառել էր ոչ միայն ուսումնարանները, այլև ամբողջ հասարակությունը»[57]: Սակայն Թուրք պատմաբանը լռությամբ է անցնում այն իրողության կողքից, որ Թուրքիզմը «դեն նետած» Աթաթուրքի համար «կորցրած հողերի մրմուռը» ի վերջո վերածվեց Թուրքիայի Հանրապետության քաղաքականության հիմնարար ուղղության: Իրականությունը հետևյալն էր: Կործանվող կայսրության համար ազգային-ազատագրական չարժումները, համարվելով մահացու, ճնշվում էին արտակարգ դաժանությամբ: Դրանց վտանգի արհեստական ու միտումնավոր չափազանցումը լայն զանգվածներին մղեց վայրենի գործողությունների: Ահա այդ բոլորի հաչիվը ներկայացվեց հայերին, և երբ ձևավորվեցին հայկական չարժումները, անկախ դրանց նպատակադրումից, Թուրքա-

---

[56] **Şimşir B.,** *Rumeliden Türk Göçleri. cilt I,* Ankara, 1970, s. 18.

[57] **Ակչամ Т.,** նչվ. աչխ., էջ 60:

կան իշխանությունները ոչ թե մի կողմ կանգնեցին, այլ «երեխային խեղդեցին օրորոցում»[58]:

Այսպիսով, «Նոր օսմանների» քարոզած գաղափարները հիմք հանդիսացան ոչ միայն իսլամիզմի, պանիսլամիզմի, այլև թուրքիզմի և պանթուրքիզմի ձևավորման համար:

«Նոր օսմանների» կողմնորոշումները հետևանք էին օսմանիզմի կենսունակության հանդեպ վստահության խաթարման: Նրանք հավատացած չէին, որ Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման խնդրում հպատակ ոչ թուրք մահմեդականները չահագրգռվածություն ունեին, և նաև այդ պատճառով միակ վստահելի տարրը համարում էին թուրքերին:

«Նոր օսմանների» գործունեության բարձրակետը հանդիսացավ Միդհատի գլխավորությամբ 1876թ. մայիսի 30-ին կատարված պետական հեղաշրջումը, երբ գահընկեց արվեց Աբդուլ Ազիզն ու գահ բարձրացան սկզբում Մուրադ 5-րդը, ապա՝ Աբդուլ Համիդ 2-րդը: Վերջինս հարկադրված եղավ ընդունել Միդհատի և Նամըկ Քեմալի մշակած սահմանադրության նախագիծը: Այդ սահմանադրությամբ՝ Օսմանյան կայսրությունը վերածվում էր միապետական-խորհրդարանական պետության, կայսրության բոլոր քաղաքացիները, անկախ կրոնական պատկանելիությունից, համարվում էին իրավահավասար: Հռչակվում էր «Ազատություն, եղբայրություն, հավասարություն» սկզբունքը՝ որպես Ֆրանսիական մեծ հեղափոխության գաղափարներին նվիրվածության արտահայտություն:

1877թ. ամռանը բացվեց օսմանյան առաջին խորհրդարանը, որի 119 անդամներից 48-ը քրիստոնյա, այդ թվում՝ հայեր էին: Խորհրդարանում խիստ քննադատություն ծավալվեց սուլթանական վարչակարգի հասցեին, ընդունվեցին մի քանի առաջադիմական օրենքներ:

Այդ վիճակն Աբդուլ Համիդը երկար չհանդուրժեց: Շուտով մեծ վեզիրը պաշտոնից հեռացվեց, Միդհատն աքսորվեց, սահմանադրական շարժման ղեկավարները բանտ նետվեցին: 1878թ. փետրվարին ցրվեց խորհրդարանը, արգելվեց սահմանադրությունը: Կայսրությունը բռնեց բացարձակ միապետության վերածվելու ուղին: «Նոր օսմաններըը», որպես քաղաքական հոսանք, դադարեցին գոյություն ունենալուց:

## 2. ԻՍԼԱՄԻԶՄ-ՊԱՆԻՍԼԱՄԻԶՄ

Սուլթան Աբդուլ Համիդը օսմանիզմը ոչ միայն չէր ընդունում, այլև գտնում էր, որ դրա հիմքում դրված հավասարության գաղափարը վիրավորում է մահմեդականների արժանապատվությունը: Այդ սուլթանն իսկական թուրք էր, թուրքի ջատագով, թուրքիստական գաղափարների նվիրյալ: Միաժամանակ նա լավ հասկանում էր, որ տնտեսապես քայքայված, ազգային ամենախայտաբղետ կազմ ունեցող, ներքին և արտաքին հակասություններից ծվատվող բազմազգ կայսրությունը չի կարող գոյություն ունենալ առանց միավորող գաղափարի: Այդ միավորող գաղափարը համարվեց իսլամը, որի հիմնական կարգախոսներից մեկը՝ «Բոլոր մահմեդականները եղբայրներ են և պիտի միավորվեն», դարձավ պանիսլամիզմի նշանաբանը և առաջին հերթին ուղղվեց կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների դեմ: Սակայն իսլամը հայրենիք հասկացություն չէր պարունակում, իսկ առանց հայրենիքի գաղափարի միավորումն անհնար էր: Ուստի Համիդը «Նոր օսմաններից» փոխ առավ նրանց սկզբունքներն օսմանյան հայրենիքի վերաբերյալ: Իսլամի և օսմանյան հայրենիքի գաղափարի միավորումը հող նախապատրաստեց մահմեդական բնակչություն ունեցող պետության ստեղծման համար, որում

[58] Նույն տեղում, էջ 60:

նույնպես գերիշխողը հանդիսանալու էին թուրքերը: Այսինքն, Համիդը ձգտում էր տարածքային կորուստներ տալու միջոցով. ստեղծել թուրքական պետություն: Նրա քաղաքականությունը խնդիր էր հետապնդում. մահմեդականներին արտոնություններ տալով՝ նրանց առաջատար դարձնել տնտեսական կյանքում, ձևավորել թուրք պաշտոնատարների ու մտավորականության նոր խավեր, որոնք ունենային եվրոպական կրթություն և մահմեդական մոլեռանդություն:

Խնդրի լուծումն ապահովելու համար լայն թափ հաղորդվեց մահմեդականության արմատավորմանն ու տարածմանը: Մեծ գործ կատարվեց կրոնական գրականությունը թուրքերեն թարգմանելու ուղղությամբ:

Իսլամի հանդեպ ուշադրությունը բացատրվում էր մահմեդականության առանձնահատուկ նշանակությամբ իսլամական աշխարհում. այն մեծ դեր էր խաղում կայսրության ամբողջականության պահպանման գործում: Քաղաքականության և կրոնի միասնությունը ի սկզբանե հատուկ էր իսլամին: Կրոնական առաջնորդը միաժամանակ պետության գլուխն էր, օսմանյան պետական կառուցվածքը՝ աշխարհիկի և հոգևորի ճուլվածք: Կատարվեց իշխանության «իսլամացում», հետևողականորեն չեչտվում էր մահմեդական կրոնական հաստատությունների դերը, ստեղծվեց հոգևոր-վարչական ամբողջական հիերարխիա՝ շեյխ-ուլ-իսլամի ղեկավարությամբ[59]:

Դրա հետ միասին խախտվում էին մահմեդականության բազում սկզբունքներ: Օրինակ. համաձայն Մուհամմեդի պատգամների, խալիֆն ընտրվում էր կամ նշանակվում նախորդ խալիֆի կողմից: Իրականում խալիֆի պաշտոնը ժառանգական էր: Իսլամական օրենքներով մահմեդական համայնքն իրավունք ուներ անվայել վարքի, մտավոր ոչ լիարժեքության և նման այլ պատճառներով խալիֆին գահընկեց անել: Իրականում խալիֆի իշխանությունը բացարձակ էր: Նույն այդ օրենքը ոչ մահմեդականին իրավունք չէր վերապահում մասնակցելու երկրի կառավարմանը, իսկ իրականում խալիֆն իր հայեցողությամբ ոչ մահմեդականներին նշանակում էր ամենաբարձր պաշտոնների[60]:

Իսլամը սահմանել էր նաև մահմեդականի և ոչ մահմեդականի փոխհարաբերությունների բնույթը, որն ամփոփվում էր հետևյալ բանաձևման մեջ. Ալլահը բացարձակապես իսլամի կամքին է թողել հաղթված էհլի ուլ քիթաբըին: Նրան իրավունք էր վերապահված սեփականացնել ոչ մահմեդականի ամբողջ ունեցվածքը, նրա մատաղահաս զավակներին օգտագործել իր մարմնական վայելքների համար: Մահմեդականը սուրբ գործ էր համարում անհավատներին սպանելը, նրանց գյուղերն ու քաղաքները ոչնչացնելը:

«Թուրքիայում,– գրում է Գրինը,– եկեղեցին ու պետությունը մի անբաժանելի միասնություն են: Կայսրության սուլթանը, միաժամանակ լինելով մահմեդական կրոնական աշխարհի խալիֆ, չի կարող վար դնել այդ պարտականություններից մեկը, առանց մյուսից հրաժարվելու: Այս իրողության մեջ է ներկա սուլթանի քաղաքականության գաղտնիքը, ինչը կառավարման ընդհանուր սկզբունքների առումով ինքնասպանություն է: Մի կողմից՝ նա չդայլ է մեջլիդների չինարարության ու վերանորոգման և իր տիրույթներում մահմեդական դպրոցներ կառուցելու գործում, մյուս կողմից՝ նա արհամարհեց ու վերացրեց քրիստոնյա պատրիարքներին հնուց տրված իրավունքներն ու արտոնությունները»:[61] Նա դեմ կանգնեց քրիստոնեական նոր դպրոցների ստեղծմանը, եկեղեցիների կառուցմանը և նույնիսկ այն եկեղեցիների վերանորոգմանը, որոնք քանդվելու վտանգի տակ էին: Ինչո՞ւ էր նա այդպես վարվում: Որովհետև ամեն ինչից առաջ սուլթանը մահմեդական էր: Եթե նա նույնիսկ մոլեռանդ մահմեդական էլ չլիներ, նույնն

---

[59] *Ислам в современной политике стран Востока*, Москва, 1986. стр. 48.

[60] Мюннш Берг, *Европейцы ли турки?*, Мюнхен, 5 д, стр. 22.

[61] *Положение армян в Турции...*, стр. 279.

էր անելու, քանի որ մահմեդական բնակչությունը նրա անձին նայում էր որպես հավատի պաշտպանի:

Պանիսլամիզմը ձևավորվեց 19-րդ դարի վերջին: Այն հիմնվում էր համաշխարհային մահմեդական քաղաքական կառույցի՝ խալիֆաթի գաղափարի վրա, որը պետք է կառավարվեր Շարիաթի օրենքներով: Վերազգային միասնության գաղափարն իր էությամբ հակասում էր ազգային հիմքի վրա պետության ստեղծմանը, սակայն տվյալ դեպքում կոչված էր պաշտպանելու թուրք աչխարհի և հոգևոր ավատատիրական շահերը՝ հաստատելով դրանց գերիշխանությունը մահմեդական աշխարհում:

Իսլամի հիմքի վրա միասնության մասին տեսությունը արտահայտում էր Արևմուտքի ներխուժման դեմ ուլեմաների պաշտպանական հակազդեցությունը, մի ներխուժում, որը սպառնում էր ավատատերերի արտոնություններին: Իսլամական միասնության վրա հիմնված պանիսլամիզմը նաև հանդիսանում էր Արևմուտքի գերիշխանությունը մահմեդական զանգվածների կողմից՝ մերժելու ձև: Հենց սկզբից պանիսլամիզմին հատուկ գաղափարները, որոնք քարոզում էին մահմեդական աչխարհի առանձնացում ու ինքնամփոփություն, մի կողմից՝ ուղղված էին ոչ իսլամական երկրների ֆեոդալական և բուրժուական ազգայնամոլական խմբավորումներից պաշտպանվելուն, իսկ մյուս կողմից՝ խնդիր ունեին ուժեղացնելու հակագաղութային համախմբումը:

Սենջերը "Los Angeles Times"-ի 1980թ. հունիսի 8-ի համարում գրում է. «Օսմանյան կայսրության հասարակական կարգն ուսումնասիրող պատմաբանները ոչ միայն փորձ չէին անում այն համադրել պատմական ընդհանուր օրենքների և օրինաչափությունների հետ, այլ, ընդհակառակը, ձգտում էին չեչտել, թե ինչով են Թուրքիան և թուրքական պատմությունը տարբերվում այլ երկրներից և նրանց պատմություններից»: Ահա այս ամենամահմեդական ուսմունքը՝ իսլամիզմը, դարձավ կայսրության պաշտոնական գաղափարախոսությունը: Հանձին իսլամիզմի, Համիդը տեսնում էր ազգային հարցում միջին տրամադրությունների ուսմունք՝ ազատ օսմանիզմի մեղմությունից և պանթուրքիզմի անիրագործելի լինելուց: Եվ հրապարակ նետվեց «Բոլոր մահմեդականների հետ՝ ընդդեմ անհավատների» կարգախոսը: Սակայն սխալ է այն տարածված կարծիքը, թե սուլթան Համիդը հանդիսացավ իսլամիզմի և համախալամիզմի հիմնադիրը: Իսլամիզմը շատ ավելի վաղ էր ծնվել, քան Օսմանյան կայսրությունն անցում կկատարեր բացարձակ միապետության: Այն ծնվել էր մահմեդական ցեղերի ու ժողովուրդների կողմից նորանոր աչխարհներ զավթելու ալիքներից: Մուհամմեդի կանաչ դրոշը պարզել էին թուրքական հորդաները նվաճած երկրների վրա:

Օսմանյան վարչակարգի հիմքում իր սկզբանե դրված են եղել կրոնական դոգմանները, որոնք բացառում էին մահմեդականի ու ոչ մահմեդականի իրավահավասարությունը և հանդիսանում էին այն առանցքը, որին խարսխված էին իսլամական ոչ միայն կրոնական, այլև վարչապետական կառույցները:

«Հայերը և թուրքերը,– գրում է Արշակ Ալպոյաճյանը,– իբրև բնակակից ժողովուրդներ կապրեին միասին իբրև տիրապետյալ և տիրապետող: Հայը համակերպված էր իր վիճակին, վասնզի ոչ մեկ հույս կամ նեցուկ ուներ իր համար, իսկ թուրքը սանձարձակ կգործեր, վասնզի ոչ ոք իր ձեռքը կբռներ արգիլելու համար, որ իր ուզածը ընե»[62]:

Գնալով ոչ մահմեդական ժողովուրդների վրա ճնշումն ուժեղանում էր, և այդ ժողովուրդներին այլ ելք չէր մնում բացի պայքարից: Դրան իսլամիզի պարագլուխները պատասխանեցին բռնի մահմեդականացման քաղաքականության աստիճացմամբ: Այդ դժնդակ իրավիճակում ծայր առավ զանգվածային դավանափոխությունը: Որոշ հայեր, «հուսալով ապահովության ելակետ մը գտնել», փորձեցին միանալ Ռուսական Օրթոդոքս Եկեղեցուն՝ ստանալու ռուսների գեթ բարոյական աջակցությունը: Այլ կերպ ասած՝ հենց սկզբից հայերի հակազդեցությունը կրեց ոչ թե քաղաքական և ապստամբա-

[62] Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Բեյրութ, 1961, էջ 825:

կան պայքարի, այլ պասիվ, կրավորական բնույթ: Ճիշտ է ասված՝ «Թուրքիայում հայ ծնվելը դժբախտություն է, հայ ապրելը՝ հերոսություն»: Եվ հայերի կողմից զենք ունենալու ճգտումը «ոչ թե ապստամբության նպատակ ունե..., այլ՝ անձնական պաշտպանության»[63]:

Կրոնական անհանդուրժողականությունը, սակայն, անզոր էր լուծելու մահմեդականների սոցիալական հիմնահարցերը: Չնայած մահմեդական զանգվածը հաճույքով էր արձագանքում քրիստոնյաներին կոտորելու կամ թալանելու կոչերին, բայց ամեն անգամ այդ բարբարոսական գործողություններից հետո ակնհայտ էր դառնում, որ իսլամն անուժ է մահմեդական ազգաբնակչությանը զերծ պահելու բռնադատումից:

Օսմանյան սուլթանները կայսրության նույնիսկ ամենածանր ժամանակներում չեն հրաժարվել նորանոր տարածքներ գրավելու, հարստությունների տիրանալու ծրագրերից: Այդպես էր նաև Աբդուլ Համիդ 2-րդի չրջանում, որը և հիմքեր ստեղծեց իսլամիզմի կերպարանափոխման, պանիսլամիզմի տարածման համար: Պանիսլամիզմի ոգին սուլթան-խալիֆ ֆենոմենն էր:

Պանիսլամիզմը եղել է ու մնաց իսլամի համաշխարհային տարածման գաղափարախոսություն՝ ոչ միայն կրանական այլև քաղաքական առումով: Ի տարբերություն քրիստոնեության, իսլամը ծնվեց որպես տարածքների տիրանալու գաղափարախոսություն: Բայց այն ոչ թե մարեց, այլ կանթեղվեց ու Օսմանյան կայսրության ճգնաժամի չրջանում գլուխ բարցրացրեց որպես ոչ այնքան աշխարհակալ մահմեդական պետություն ստեղծելու ճգտում, որքան միջոց՝ Օսմանյան կայսրության կործանման առաջն առնելու, հակակշիռ հանդիսանալու Արևելյան հարցին:

Սուլթան Համիդը մեծ հարգանք ուներ պանիսլամիզմի գաղափարախոս Ջեմալ-էդ-դին ալ-Աֆղանու հանդեպ, որը Ելդըզի մշտական հյուրերից էր և օգտվում էր սուլթանի առատաձեռնությունից: Պանիսլամիզի այս տեսաբանը գտնում էր, թե ամենակատարյալ պետությունը մահմեդական կրոնապետությունն է, իսկ դրա լավագույն օրինակը՝ Օսմանյան կայսրությունը, որն ուներ պատմական մեծ առաքելություն՝ սուլթան-խալիֆի հովանու ներքո միասնական պետական կազմավորման մեջ միավորել աշխարհի բոլոր մահմեդականներին և ստեղծել համաշխարհային մուսուլմանական կառույց, որ Օսմանյան կայսրությունից բացի պետք է ներառներ Իրանը, Աֆղանստանը, Հնդկաստանի մահմեդական մասը (Պակիստանը), Միջին Ասիան, Ինդոնեզիան, Աֆրիկայի զգալի մասը: Այն լինելու էր դաշնակցային պետություն, որի մեջ մտնող երկրները պահպանելու էին ինքնավարություն և սուլթանին ենթարկվելու էին կրոնա-գաղափարախոսական առումով:

Համիդյան պանիսլամիզմը արյունարբու բնույթ ուներ, ձգտում էր իր նպատակներին հասնել ոչ մահմեդական ժողովուրդների արյան գետերի միջով: Դա պանիսլամիզմի բացարձակ միապետական տարբերակն էր:

Պանիսլամիզմը, առաջին հերթին, ուղղված էր Ռուսաստանի դեմ: Ահա թե ինչու այն արժանանում էր Անգլիայի հովանավորությանն ու աջակցությանը: Սակայն ո՛չ Աբդուլ Համիդին և ո՛չ էլ Անգլիային այդպես էլ չհաջողվեց պանիսլամության հիմքի վրա աշխարհաքաղաքական նոր հասկացություն, պետական կազմավորում ստեղծել, քանի որ իսլամական ժողովուրդները ոչ միայն գտնվում էին մեծ պետությունների միջև եղած առճակատումների խաչմերուկում, այլև իրենց ներսում ու միմյանց միջև այնպիսի հակասություններ էին պարունակում, որոնք անհնար էին դարձնում միավորման գաղափարի առարկայացումը: Մահմեդական ժողովուրդներին հուզում ու հետաքրքրում էր ոչ թե Օսմանյան կայսրության մեջ միավորվելը, այսինքն՝ եվրոպական պետությունների տիրապետությունը թուրքականով փոխարինելը, այլ միավորվելը հանուն պետական և ազգային անկախության: Սոցիալ-դասակարգային առումով էլ մահմեդական ժողո-

[63] Ռաֆֆի, եժ, հ. IV, էջ 401:

վուրդները միանման պայմաններում չէին, հիմնարար խնդիրներին միասնական մոտեցումներ չունեին: Յուրաքանչյուր հասարակական խավ յուրովի էր մոտենում նույնիսկ գաղութային լուծը թոթափելու խնդիրներին: Թուրք բուրժուազիան, մի կողմից, պանիսլամիզմն օգտագործում էր օսմանյան շուկային տիրանալու, մահմեդական աշխարհը Օսմանյան կայսրության շուրջ միավորելու համար, իսկ մյուս կողմից, քննադատում էր պանիսլամիզմի դոգմաները: Նա ձգտում էր իսլամի արտաքին քաղաքական գործոնի դերի բարձրացմանը, միաժամանակ հրահրելով կրոնական անհանդուրժողականություն, իր շուրջն էր համախմբում մահմեդական խավերին: Մուսուլմանական մոլեռանդությունն այդ բուրժուազիայի ձեռքին հզոր զենք հանդիսացավ գյավուրների տնտեսական դիրքերին ու հարստություններին տիրանալու գործում: Այսպիսով, պանիսլամիզմի հարցում ևս թուրք ավատատիրության ու բուրժուազիայի մոտեցումները ոչ միայն իրար չէին հակասում, այլև, ըստ էության, լրացնում էին միմյանց, դրանք այնքան էին համընկնում, որ թուրք բուրժուազիան աստիճանաբար վերածվեց մահմեդական դոգմաների անաղարտության ամենաջերմեռանդ պաշտպանի:

Ճիշտ է, 19-րդ դարում թե՛ Օսմանյան կայսրությունում և թե՛ մահմեդական մյուս երկրներում ծայր առավ իսլամը բարեփոխելու շարժում, սակայն այդ շարժումը արմատական փոփոխություններ չէր առաջադրում և լոկ խնդիր ուներ նոր ժամանակների ճաշակին համապատասխան դիմահարդարել իսլամը: Ջեմալ Աֆղանին գտնում էր, որ հասարակությունը վերակառուցելու համար ծայր առած շարժումը աչխարհիկ կյանքից պետք է տեղափոխել կրոնական բարենորոգումների բնագավառ՝ այն հաշվով, որ դարձ կատարվի դեպի վաղ մահմեդականություն: Խնդրին հակառակ ծայրից էին մոտենում բարենորոգչական շարժման արմատական թևի ներկայացուցիչները: Նրանք ոչ միայն չեղվում էին պանիսլամիզմի մի քանի ավանդական սկզբունքներից, այլև մերժում էին ծավալապաշտությունը:

Մահմեդականության նշանավոր կենտրոններից է Կովկասը: Ռուսական լուծը թուրքականով փոխարինելու նպատակ էին հետապնդում Հարավային Կովկասում և Հյուսիսային Կովկասի լեռնականների շրջանում 19-րդ դարում ծավալված շարժումների մի մասը: Դրա արտահայտություններից էր նաև մյուրիդիզմը, որի գաղափարախոսության հիմքում ընկած էր սրբազան պատերազմի գլխավոր սկզբունքը՝ անհավատների դեմ պատերազմը Ալլահին մերձենալու միակ ուղին էր: Այս շարժումները ղեկավարվում էին Կ. Պոլսից:

Մահմեդական ընդվզումների դեմ տևական, ծանր, մեծամեծ զոհեր խլող պատերազմները ցարական կառավարությանը հանգեցրին այն մտքին, թե մուսուլմաններին հպատակության մեջ պահելու համար միայն զենքը բավարար չէր, անհրաժեշտ էր նաև կաշառել մահմեդական վերնախավին: Եվ ցարիզմը չսխալվեց: Մահմեդական փաշաներն ու բեկերը հաճույքով գնացին գործարքի, տիրացան մեծ հարստությունների և կատարեցին «խաղաղարարի» դեր: Դեռ ավելին, ցարական իշխանություններն ու մահմեդական վերնախավը փաստորեն «սրբազան դաշինքի» մեջ մտան սոցիալական և ազգային շարժումների դեմ:

Ռուսաստանի մահմեդականության շրջանում պանիսլամիզմի տարածման գործում մեծ դեր խաղացին ջահիդները: Նրանք առաջարկում էին մահմեդական լուսավորչական ծրագիր՝ կրթության գործի բարենորոգում, համակարգի որոշ եվրոպականացում: Այս շարժման պարագլուխն էր Ղրիմի թաթար Ի. Գասպրինսկին, որը քարոզչական մեծ աշխատանք կատարեց լուսավորչական շարժման ծավալման, մահմեդականների եվրոպականացման ուղղությամբ: Գասպրինսկու կարծիքով թուրքերենն ու իսլամը հզոր միջոցներ էին Ռուսաստանի թուրքալեզու ժողովուրդների ազգային ինքնուրույնությունն ու գիտակցությունը զարգացնելու համար: Նա հռչակեց թրքականության (թուրքուլուկ) սկզբունքը: Նա փաստորեն նոր որակ հաղորդեց պանթուրքիզմին՝ Պոլսի թուրքերենը պարտադիր համարելով աչխարհի բոլոր թուրքալեզու ժողովուրդների համար:

Գասպրինսկին պահանջում էր Ռուսաստանի բոլոր մահմեդականների գաղափարական ու քաղաքական միավորում: Բնականաբար, այս և նման քարոզները թշնամաբար էին ընդունվում Ռուսաստանում:

Գերմանացի գիտնական Ա. Ռենցը գրում է, որ 1894-96ԹԹ. կոտորածներից հետո «Ազգային պետական գիտակցությունը... հակադրվեց պանիսլամիզմի կայսրական գաղափարախոսությանը, որը... նպատակ էր հետապնդում ոչ միայն ոչ թուրք մահմեդական հպատակների շրջանում կասեցնելու ինքնավար շարժումները, այլև նրանց համախմբելու քրիստոնյա հպատակների դեմ՝ արյան մեջ խեղդելու քրիստոնյա հայերի հուզումները»[64]:

Քանի որ պանիսլամիզմը պարունակում էր պանթուրքիզմի շատ տարրեր, պատահական չէ, որ թուրանիզմի հռչակագիրը ծնվեց պանիսլամիզմի ընդերքում՝ 1890Թ. Հուսեին զադե Ալի բեյի «Թուրան» պոեմով: Նշանաբանը դարձավ Մ. Էմինի խոսքը՝ «Ես թուրք եմ: Իմ կրոնն ու ազգն ազնվացեղ են»[65]:

«Դրոշակ» թերթը 1906 թ. փետրվարին պանիսլամիզմի մասին գրեց.

«Բազմատեսակ և հանդուգն ելույթ Քեոշքի գաղտնարաններում մշակված համիդյան ծրագրերը. համիսլամական չաղկապը բոլոր երկրների մահմեդականների՝ մի թագավորով, որը սուլթանն էր լինելու, մի կենտրոնով, որը Ստամբուլն է, Հյուսիսային Աֆրիկայի, Եգիպտոսի, Կովկասի, նույնիսկ Հնդկական մահմեդականության վերադարձ սուլթանականության գիրկը, ստամբուլյան խալիֆայական գայիսոնի ներքո բոլոր մահմեդական աղանդների՝ սյունիթների ու չիաների միացում՝ առանց քաղաքական որևէ խտրականության շահի, գահակալ խաների և այլ սուլթանների խոնարհումը պոլիսյան վեհապետության աչքի առջև և այլն, և այլն: Մի վեհապետ, մի խալիֆ, մի կենտրոն...

Քաղաքական այդ ցնորքը, որը երկար տարիներ թաքնվում էր վեհապետական դիվանում, հանդես է գալիս ոչ միայն իբրև տեսլական, այլև իբրև «մշակված ծրագիր», դեպի իրականացումը ձգտող, մահմեդական «ազգասերների» գլխի մեջ տեղավորվելուն փափագող, իբրև քաղաքական ծրագիր, նորագույն մուսուլման սերունդների ոգևորության առատ աղբյուր... Էրզրումի շրջանից զորք մտցնել Անդրկովկաս՝ առաջանալով դեպի Կարսի, Երևանի, Գանձակի և Բաքվի նահանգները, ուր կանգնեցնել տեղական մուսուլման ազգաբնակչությանը և այդ երկիրը միացնել օսմանյան պետությանը, ահա սուլթանական նորագույն երազ-ծրագիրը, որի մասին թեև ոչ մանրամասն, բայց որոշ տեղեկություններ ունեն թե՛ Կովկասյան չտաբում, թե՛ Պետրոգրադում, թե՛ Լոնդոնի արտաքին գործերի նախարարությունում, թե՛ Բեռլինում, ինչպես վկայում են ոչ պաշտոնական ակնարկները և որի չուրջը վաղուց չշուկներ են լսվում կովկասյան թուրք պոլիտիկոսների շրջանում՝ Կ. Պոլսի անթիվ ու անսպառ էմիսարների միջոցով...»:

Ցարիզմի բթամիտ քաղաքականությունը՝ Կովկասում թուրքերի չարժումով հակահեղափոխական մի զսպանակ պատրաստել հայկական վերանորոգիչ պահանջների դեմ, որի հետևանքը եղավ Արյան տարին Կազբեկի ու Արարատի ստորոտներում, ավելի համարձակությունն և ուժ տվեց սուլթանական ծրագրին: Արյունը քաղաքական ծրագրերի ավազան դարձավ: Թուրքերի հակահայկական վայրագ քաղաքականությունը ցարի համար հակահեղափոխական չարժում էր, իսկ սուլթանի համար՝ համաիսլամական տիրապետության նախադուռը: Եվ այն թուրք «պոլիտիկոսները», որոնք անասնացած բյուրոկրատիային հավատացնում են, որ «հայկական կոտորած» ասելով, նրանք մի նպատակ միայն ունեն՝ ծառայել ցարի գահին, այլ շրջաններին և այլ անձանց հավատացնում են, որ հակահայկականությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ բարեկարգումն այն ճանապարհի, որով անցնում է սուլթանական զորքը՝ Կովկասը Մեծ խալիֆին վերադարձնելու համար:

---

[64] **Renz A.**, *Land um den Ararat Osttürkei-Armenien.* München, 1988, S. 102.
[65] **Մկրտչյան Լ.**, *Զեյթուն*, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1989, թիվ 3:

*երիտթուրքերի մի մասը որոշակի ժամանակահատվածում հարեց պանիսլամիզմին, ապա հեռացավ դեպի օսմանիզմ, սակայն դրանով պանիսլամիզմը չդադարեց գոյություն ունենալուց:*

*Կ. Մարքսը իր «Ազգությունները Թուրքիայում» հոդվածում նշում է, որ մահմեդական մոլեռանդությամբ վարակված թուրքական «խաժամուժը» արգելակում էր Թուրքիային կանգնելու առաջադիմության ուղու վրա, որ նա «խանդավառությամբ» պաշտպանում էր իր երևակայական գերազանցությունը և իր ավանդական արտոնությունը՝ անպատիժ կերպով էքսցեսներ իրականացնել քրիստոնյաների նկատմամբ*[66]*:*

*Նաև նշենք, որ սուլթան Համիդը իսլամիզմն ու համաիսլամիզմը չէր բացարձակացնում: Նա հասկանում էր, որ ազգերի, ազգային պետությունների ձևավորման ավատատիրական փուլում ոչ ազգային՝ կրոնական թե վերազգային քաղաքական սկզբունքների վրա կառուցված, ուսմունքները չեն կարող ձևավորել գործնական քաղաքականություն: Շուտով իսլամիզմից անցում կատարեց թուրքիզմին, առաջ քաշեց պահանջ՝ «փեչերը քչտել», հեռանալ Եվրոպայից և Անատոլիայում ստեղծել թուրքական ազգային պետություն:*

*Այս հարցում պատմագիտության մեջ խառնաշփոթ տեսակետների առկայությունն ակնհայտ է: Դրանցից մեկը պնդում է. «Կովկասի թուրքալեզու ժողովուրդներին համիդի շուրջը համախմբելու, Ասիայում թուրանական ընդարձակ պետություն ստեղծելու ճանապարհին Օսմանյան կայսրության, պանթյուրքիստների առաջ, իբրև զորեղ խոչընդոտ, հասակով մեկ կանգնած էր Հայաստանը, հայ ժողովուրդը, որին Բեռլինի կոնգրեսը ճանաչեց իբրև իրավատեր իր պատմական հայրենիքի...»*[67]*: Արդյոք հեղինակը կարո՞ղ է ցույց տալ մի մեջբերում Աբդուլ Համիդ 2-րդից, որը հաստատի այս միտքը: Ճիշտ է, Բալկաններում իրավիճակի բարդանալը սուլթանին բերեցին այն համոզման, թե պետք է հեռանալ Եվրոպայից, բայց հեռանալ ոչ թե Արևելք չարժվելու, այլ «Անատոլիայում կենտրոնանալու համար»: Նա փառք է տալիս Աստծուն, որ թուրքերին թողել է Անատոլիան, որտեղ են վերջինները «իրենց փեչերը հավաքելու», այսինքն՝ ազգային պետություն ձևավորելու:*

*Ապա, ի՞նչ է նշանակում, թե Բեռլինի կոնգրեսը հայերին ճանաչեց «իբրև իրավատեր իր պատմական հայրենիքի», երբ այդ կոնգրեսը «չտկեց» Սան Ստեֆանոյի «սխալ ձևակերպումը». Հայաստանի փոխարեն ճիշտ համարեց դաշնագրում օգտագործել «հայաբնակ շրջաններ» արտահայտությունը:*

---

[66] Маркс К. и Энгельс Ф., *Сочинения*, т. IX , стр. 374.
[67] Ղազարյան Հ., նշվ. աշխ., հ. I, էջ 524:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՑՆԱՑՈՒՄԸ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՑԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

### 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

*Հայկական հարցի ծնունդը կապված է հայոց պետականության հիմնահարցի հետ: Հայերն այն շատ վաղ կորցրին և, հետևաբար, շատ վաղ էլ սկսեցին պայքարն իրենց քաղաքական-պետական վիճակի կարգավորման համար: Այդ պայքարում մշտապես հակադրվել են հասարակական-քաղաքական երկու հոսանքներ: Դրանցից մեկի դիրքորոշումը հետևյալն էր. հայերն ուժ ու հնարավորություն չունեն պետական անկախության հասնելու, հետևաբար անկախանալու խնդիրը պետք է հետաձգել մինչև բարենպաստ ժամանակներ ու օգտագործել ամենաչնչին հնարավորությունը՝ ուժեղացնելու ազգը, զարգացնելու ազգային ավանդույթները, մշակույթը, ոգին և դրսի օգնության առկայության դեպքում թոթափել օտար լուծը: Այս թևը հիմնականում և ավանդաբար ներկայացրել է հայ վերնախավը, իսկ ոգեշնչողը եղել է հոգևորականությունը: Առաջնային էր համարվում ոչ թե ժողովրդի վիճակի կարգավորումը, այլ ազգապահպանությունը:*

*Նշված ուղղության դեմ տարբեր ժամանակներում հանդես են եկել տարբեր հասարակական խավեր և քաղաքական ուժեր, որոնց կարծիքով անհնար է հայ ժողովրդի հարատևումը՝ առանց ինքնուրույն պետականության: Հետևաբար, քաղաքական անկախության համար պայքարը հարցերի հարցն է: Բայց քանի որ սեփական ուժերով անկախության հասնելու ուղղությամբ չանքերը անհաջողության էին մատնվում, աստիճանաբար կորավ սեփական ուժերով անկախության տիրանալու հավատը: Դրանով է բացատրվում այն դառն իրողությունը, որ չնայած դարեր շարունակ հայությունը գտնվել է քաղաքական, ազգային և տնտեսական ծանր ճնշման տակ, նշանակալից ազատագրական պայքար չծավալեց և, ինչպես ասում են՝ «Հաշտվեց իր անազատ, ճնշված վիճակի հետ»: Հայերն աստիճանաբար կորցրին ազգային հավաքական ազատության հույսը՝ այն փոխարինելով թեթև և խաբուսիկ ազատության ձգտումով: Ըստ այդմ էլ, հայի մեջ զարգացավ եսապաշտությունը, հայրենիքի վրա հույս չդնելու հոգեբանությունը: Նա իր չանքերը հիմնականում տրամադրեց անհատական ազատության և բարեկեցության ապահովմանը: Դա, իր հերթին, նրան հեռացրեց քաղաքական գործունեությունից և մղեց տնտեսական կյանքի ոլորտը: Տնտեսական գործունեությանը նվիրաբերված անձինք, որպես կանոն, քաղաքական անկայունություն, ըմբոստություն ոչ միայն չէին առաջացնում, այլև դրանցից խուսափում էին՝ վտանգավոր համարելով իրենց ունեցվածքի ու աշխատանքի համար: Բնավորության գիծ դարձավ կյանքի ցանկացած պայմաններին հարմարվելը՝ ոչ միայն հնազանդության, այլև այդ պայմաններում տնտեսական եռանդուն գործունեություն ծավալելու տաղանդ դրսևորելու միջոցով: Բայց հայի տաղանդի ներդրման արդյունքը լինում էր ոչ թե նրա հայրենիքի բարգավաճումը, այլ օտար վարչակարգերի պահանջմունքների բավարարումը: Հին ճշմարտություն է, ովքեր տնտեսական կյանքում ճեռքբերումներ են ունենում, անտարբեր են դառնում ժողովրդի չահերի հանդեպ: Գնալով հիշողության և հիշատակի*

կերպարանք էին ստանում ազգային ոգին, ազգային արժեքները, ազգի ապագան: «Հայ մարդը հեռանում էր, խուսյս էր տալիս հայկականությունից՝ այնտեղ այլևս չգտնելով հետաքրքիր ու օգտակար երևույթ»[1]:

Արտերկրի հայությունը հիմնականում զարճավ առևտրական ու արհեստավոր, քանի որ նրա առջև չատ երկրներում փակ էին մյուս ասպարեզները, հատկապես քաղաքական՝ պետական գործունեության դռները: Հայը ավելի երկար գոյատևեց տնտեսապես հետամնաց և ոչ ժողովրդավար երկրներում, քանի որ, նախ, այդ երկրները Հայաստանի մերձակայքում էին և երկրորդ, նա զարգացման մակարդակով ավելի բարձր էր, քան դրանց բնակիչները:

Առանձնահատուկ դրության մեջ էին Օսմանյան կայսրությունում բնակվող հայերը: Այն, որ Արևմտյան Հայաստանի գյուղերում նրանք ամենադաժան հալածանքների էին ենթարկվում, իսկ քաղաքներում, մասնավորապես՝ արևմուտքի ծովափնյա քաղաքներում, որոշ առանձնաշնորհներ ունեին, խզում էին առաջացրել երկու հատվածների միջև: Արևմտահայության այս առանձնահատկությունը լուրջ խոչընդոտ էր ազգային ուժերի միավորման համար:

Իհարկե, Հայկական հարցի առաջացման պատճառների վերաբերյալ ավելի քան բնութագրական է բազմակարծիքությունը, որը, դժբախտաբար, արդյունք է ոչ թե գիտական եզրահանգումների, այլ ազգային և դասակարգային կուսակցական մոտեցումների, որոնց դիապազոնը ձգվում է Թուրքիզմի նախահայրերից մեկի՝ Ա. Վամբերիի հայտարարությունից մինչև բոլշևիկյան սոցիոլոգիզմն ու դասակարգայնությունը: Եթե Վամբերին գտնում էր, որ Հայկական հարցը ծնունդ էր Օսմանյան կայսրության հանդեպ Ռուսաստանի հավակնությունների, ապա Բ. Բորյանի կարծիքով. «Հայկական հարցը... առևտրական կապիտալի և մելիքների ձգտումների արտահայտությունն է», ովքեր երազում էին ամբողջությամբ տիրանալ հայ ազգի եկամուտներին, որի հիմնական մասը տնօրինում էին Թուրքերը[2]:

«Հայկական հարցը,– գրում է Մառը 1906թ.,– իհարկե ավելի հանրահայտ էր, հայ կյանքը նորից գործի գցած մակույկը մեծ տերությունների... քաղաքականության կամակոր ալիքների ազդեցության ներքո մերթ չպրտվում էր համընդհանուրի անտարբերության անդունդը, և այնժամ մակույկավորները, հանճինս հայ եկեղեցու... և հանճինս մտավորականության, համառորեն և բարձրաձայն դիմում էին մարդկությանն արդարության խնդրանքով: Բայց մեղքը ոչ թե մակույկավարների, այլ անվերանալի պատմական իրողության, ստեղծագործական հզորությունից դեռևս չզրկված հայ ժողովրդի զարթոնքի և նրա ազգային ինքնագիտակցության աճի և ընդլայնման մեջ էր»[3]:

Հայկական հարցը արագ ձևավորվեց, որովհետև հայ գյուղացին այլևս անզոր էր հին ձևով ապրել և «լսելի ուզեց դարձնել իր ձայնը, երբ հայությունը ներկայացնող և նրա անունից խոսող ու գործող անձինք զգացին հայ գյուղացու գոյությունը և ըմբռնեցին նրա՝ իբրև ազգի գլխավոր տարրի կարևորությունը »[4]:

Դա 1860-ական թվականների վերջն էր և համընկավ Խրիմյան Հայրիկի պատրիարքության հետ: Պատրիարք ընտրվելուց հետո Մ. Խրիմյանն այցելում է վարչապետ Ալիին և ներկայացնում հայկական նահանգների հայության հարստահարված վիճակը: Փաչան կեցվածք է ընդունում, թե առաջին անգամ է այդ մասին լսում և խնդրում է պատրիարքին գրավոր տեղեկագիր ներկայացնել: Ազգային ժողովը 1870թ. ստեղծում է «Հարստահարությանց քննիչ հանձնաժողով»՝ Ներսես Վարժապետյանի ղեկավարությամբ: Հանձնաժողովի աշխատանքի արդյունքը լինում է 1871թ. Տեղեկագիրը: Դրա-

---

[1] Զորմիսյան Լ., նշվ. աշխ., հ. Ա, *1850-1878*, Բեյրութ, 1974, էջ 251:

[2] Борян Б., նշվ. աշխ., էջ 209:

[3] Марр Н., *История Грузии*, СПб., 1906, стр. 47.

[4] Զորմիսյան Լ., նշվ. աշխ., էջ 254:

նում նշվում էր, որ Ղրիմի պատերազմից հետո մինչև 1870թ. հայերի հարստահարությունների վերաբերյալ 527 թագրիր (գանգատ) է ներկայացվել Բ. Դռան, սակայն բոլորն էլ մնացել են անհետևանք: Ընդ որում, Տեղեկագիրը պարունակում է ոչ միայն հարստահարությունների նկարագրություններ, այլև վարչական փոփոխություններ մտցնելու առաջարկություններ, ինչը Բ. Դռանը կանգնեցրեց խնդրի հանդեպ սկզբունքային վերաբերմունք հանդես բերելու հրամայականի առաջ: Տվյալ դեպքում խոսքը ոչ թե մասնակի, առանձին բեյերի և աղաների հանցագործությունների, այլև հարստահարությունների համապարփակ համակարգի մասին է, որի դեմ պայքարն անհնար էր առանց կենտրոնական կառավարության համապատասխան ձեռնարկումների: Բ. Դուռն այդպես էլ ընկալեց Տեղեկագիրը: Դրա համար էլ խոսքով հավանություն տվեց, իսկ իրականում դեմ էր փաստաթղթում բարձրացված հարցերի լուծմանը:

Փաստորեն Տեղեկագիրը բարենորոգումների խնդիր դնող առաջին փաստաթուղթն էր: Եվ դա այն ժամանակ, երբ կայսրությունը խորը ճգնաժամի մեջ էր, երբ գոյություն ունեցող հարստահարությունների վերացումը կամ կառավարման մարմինների գործունեության վերակառուցումը մահացու էր ոչ միայն քաղաքական համակարգի, այլև կայսրության բուն գոյության համար, քանի որ վարչակարգի հիմքը բանակն էր, կղերը, հողատերերն ու ցեղապետերը, որոնց շահերին հակառակ ամեն մի քայլ խարխլում էր համակարգը: Ահա թե ինչու Տեղեկագիրն առաջացրեց թուրք վերնախավի անհանգստությունը: Փաշաներից մեկը սուլթանին գրեց. «Քրիստոնյաները գանգատվում են, բողոքում իրենց վիճակից, և Եվրոպան գոնե հետաքրքրվում է նրանցով: Իսլամ գյուղացիների նույնքան թշվառ վիճակով զբաղվող չկա»: Իսկապես, թուրք աշխատավորական խավերը ևս բարվոք վիճակում չէին, սակայն, նախ, նրանք ավելի քիչ էին շահագործվում, հարստահարվում, քան հայերը, երկրորդ, թուրքն իրեն կայսրության տերն էր համարում և թշնամի էր ոչ թե թուրք շահագործողին, այլ կայսրության հպատակ ժողովուրդներին, որոնք բարենորոգում կամ անկախություն էին պահանջում, ինչպես նաև զանազան պատրվակներով դիմում էին Թուրքիայի ներքին գործերին միջամտող եվրոպական տերություններին, ինչը փոքր դեր չխաղաց, որ թուրքերը կայսրության դռները փակ պահեցին եվրոպական արժեքների առջև և իրենց դատապարտեցին հետամնացության: Անգամ սեփականազուրկ և ընչաքաղց մահմեդական ամբոխը իսլամական տիրապետող կրոնին իր պատկանելությամբ իսկ հանդես էր գալիս տիրապետողին աջակցողի, հպատակներին արհամարհողի և չհանդուրժողի դերում:

Իշխող ազգության նման հոգեբանությունը, բնականաբար, անհնար դարձրեց նրա և հպատակ ժողովուրդների ոչ միայն համագործակցությունը, այլև փոխհանդուրժողականությունը, նրանց անջրպետեց միմյանցից և պահեց բարիկադի երկու կողմերում: Սակայն նաև իրողություն է, որ թուրքերին հաջողվեց հարյուրամյակներ շարունակ հպատակ ազգություններին դնել անմռունչ հնազանդի վիճակում: Բայց որովհետև այդ խոնարհությունը պայմանավորված էր ուժի հանդեպ վախով, հետևաբար, կայսրության տկարանալուն զուգընթաց, հպատակների «աչքերն ու լեզուն բացվում էին»: Այդ զարթոնքը նախ դրսևորվեց Արևելյան հարցի ձևով, իսկ 19-րդ դարի երկրորդ կեսին համալրվեց հայկական հարցով:

Հայկական հարցը, որպես սեփական հայրենիքում անվտանգ հարատևելու պահանջ, փաստորեն առաջին անգամ դրվեց 1871թ. Տեղեկագրում, որտեղ ո՛չ ազգային խնդիրներ էին առաջ քաշված և ո՛չ էլ վարչակազմի դեմ ուղղված պահանջներ, այլ, ընդհակառակը, Տեղեկագիրը կենտրոնական կառավարության միջնորդությունն ու օգնությունն էր հայցում չարաշահումներն ու անարդարությունները վերացնելու համար: Դա էր պատճառը, որ Բ. Դուռը նույնիսկ հանձնաժողով կազմեց արծարծված հարցերն «ուսումնասիրելու» համար: Այսինքն՝ հայերը դիմել էին «իրենց» կառավարության աջակցությանը, և կառավարությունն էլ ընդառաջ էր գնում «իր» հայերի խնդրանքին:

*Եվ իսկապես, Կ. Պոլսի հայ վերնախավի (և ոչ միայն վերնախավի) շրջանում օսմանյան վարչակարգի դեմ տրամադրությունները դեռևս խանձարուրում էին և որոշակի արտահայտություն չունեին: Մ. Խրիմյանը պատրիարքի պաշտոնը ստանձնելու ծիսակատարության ժամանակ երդման նման ասաց. «Հավատարմություն օսմանյան բարեխնամ պետության, որուն մեր ազգը դարերով հավատարիմ գտնված է և որուն շահը նույնն է մեր ազգին շահուն հետ»: Սա լոկ դիվանագիտական մղումով հայտարարություն չէր, այլ նաև քաղաքական կեցվածք:*

*Սակայն անհնար է համաձայնել այն կարծիքին, թե «Օսմանյան պետության և ազգային շահերուն նույնությունը վիճելի դարձնող անձ գոյություն չուներ մինչև այդ օրը»[5]: Դեռ 18-րդ դարավերջին արևմտահայության մեջ կային գործիչներ, ովքեր ոչ միայն ծրագրում, այլև գործնական քայլերի էին դիմում օսմանյան լծից հայության ազատագրության ուղղությամբ: Այս խնդրում հավանաբար ոչ թե հայացքների, մոտեցումների բացակայությունն էր վճռական դեր խաղում, այլ արևմտահայության հաշտվողականությունն ու համակերպվելու դարավոր սովորությունը, մանավանդ որ կյանքը նրան ավելի ու ավելի էր մղում «հույսի» բացակայության գիրկը: Արևմտահայը նաև գիտակցում էր, որ ոչ անկախ ազգային կյանքը ինքնին ծանր է: Այն ավելի թեթև չէր պարսիկների, ռուսների ու մյուս տիրապետողների իշխանության տակ: Իսկ ոչ քչերի կարծիքով օսմանյան տիրապետությունը չարիքներից փոքրագույնն էր:*

*Այսինքն՝ այդ շրջանում հայկական հարցը ազգային-քաղաքական բովանդակություն չուներ, այլ պարզապես միտված էր հայության կյանքի պայմանները բարելավելուն և քաղաքացիական տարրական իրավունքներ ձեռք բերելուն:*

*Հարկ է նաև նկատի ունենալ, որ տվյալ ժամանակահատվածում հայ ազգային կյանքի ղեկավար շարունակում էր մնալ կղերականությունը, որը երբեք կարիք չի զգացել քաղաքական լուծումներ փնտրելու հայ ժողովրդի առջև դրված խնդիրների համար: Նա իր գործունեությունը սահմանափակել էր հիմնականում «եկեղեցական և բարեգործական ձեռնարկումների» շրջանակում: Նա քաղաքական խնդիրներ առաջադրելու մղում էլ չուներ. որպես հասարակական խավ՝ պետական և այլ բնույթի բռնություններ, զրկանքներ անհամեմատ քիչ էր կրում:*

*Սակայն հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ՝ հայ հասարակությունում ձևավորվեցին ուժեր, որոնք փոփոխության էին ձգտում: Հարցն ավելի սրվեց, երբ օսմանյան գահին նոր միայն բազմած Աբդուլ Համիդ 2-րդը սկսեց չռայլ խոստումներ տեղալ, ինչը հնարավորություն էր արտահայտվելու և գործելու համար: 1876թ. սեպտեմբերի 10-17-ին Ազգային ժողովում սուր քննադատություն ծավալվեց կառավարական կառույցների հասցեին: Ստ. Փափազյանն ասաց. «Ի՞նչ պատճառով հայը տուրք վճարե պետությանը, իսկ զինյալ քուրդը տուրք չվճարե և, ընդհակառակն, կեղեքի հային ու անգամ նրանից տուրք գանձի: Ինչո՞ւ քուրդ, ավշար, չերքեզ և ուրիշներ համարձակ կողոպտեն հային և վերջինս չկարողանա ընդդիմանալ նրանց: Եթե կառավարությունը հայերին նույնպես հրաման տա, ի՞նչ է, նրանք չե՞ն կարող զինվել և իրենց պաշտպանել»[6]:*

*Ստեղծվեց հանձնաժողով նոր Տեղեկագիր կազմելու համար: Այս նոր Տեղեկագիրը (1876թ.) արձանագրում էր, որ օրենքի ու արդարության իրականացմանը կոչված պաշտոնատարների թերացումները քաջալերվում են Բ. Դռան կողմից, վերջինս հանցագործությունների հեղինակներին պատժելու փոխարեն գործերի քննումը հանձնարարում է տեղական իշխանություններին, իսկ դատարանների կազմի ընտրությունը որոշակի մարդկանց մենաշնորհն է, գավառներում հայերին դարձրել են մահմեդականների նախատինքի ու թշնամության օբյեկտ, ճանապարհները, կառավարչական հաստատությունների չենքերը կառուցվում են հայերի անվճար աշխատանքով, չնայած դրանց հա-*

---

[5] **Զորմիսյան Լ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 259:
[6] Նույն տեղում, էջ 267:

մար տուրք էին հավաքում, տասանորդը գանձում են դրամով, գյուղացուն հարկադրում հարկ հավաքված մթերքներն անվճար տեղափոխել մուլթեզիմի չտեմարանները: Բերքը հաճախ փչանում է հարկահավաքի ժամանակին չներկայանալու պատճառով, և նույնիսկ այդ փչացած բերքից տասանորդ են պահանջում: Գյուղացուն հարկադրում են ձրի կերակրել մուլթեզիմին, զափթիեին, գանձում են ապօրինի տուրքեր, զինվորական տուրք պահանջում անգամ մահացածներից, արտագաղթածներից ու փախստականներից, էմլաքի (կալվածքների) և թեմեթիվի (առևտրի իրավունքի) մահմեդականների բաժին տուրքերն էլ գանձվում են հայերից: Հարկերի հավաքումն ուղեկցվում է դաժանություններով, վաճառքի են հանվում գյուղացու կահկարասին և աշխատանքի գործիքները, նա հաճախ ծեծի է ենթարկվում, այդ թվում նաև՝ ոստիկանների կողմից և բանտարկվում է: Կանանց և երեխաներին հարկադրում են իսլամություն ընդունել, տարածված են առևանգումներն ու բռնությունները: Որպես կանոն, առևանգողները, բռնաբարողները, գողերն ու մարդասպանները չեն հայտնաբերվում ու անպատիժ են մնում, քանի որ դատարանները չեն ընդունում քրիստոնյաների վկայությունները, հայերը մշտապես ենթակա են քրդերի, չերքեզների, մյուս լեռնականների ու թուրք դերբեյների բռնություններին: Թուրքերը չեն ընդունում ազգային իրավահավասարության սկզբունքը:

Վիճակը չտկելու համար Տեղեկագիրն առաջարկում էր՝ գործադրել պատրիարքի այն թագրիրները, որոնք կայսրական դիվանի կողմից օրինական էին ճանաչվել, վանքերի կալվածքներն ազատել տուրքերից, խստորեն պատժել խախտումներ թույլ տված ու բռնություններ գործադրած պաշտոնատարներին, պատրիարքարանի ներկայացուցիչների մասնակցությամբ հանձնաժողով ուղարկել գավառները հարստահարության փաստերը ստուգելու և տուժածների վնասները վերականգնելու համար, կազմել կրոնական խառը մարմին՝ պատրիարքարանի դիմումներին ընթացք տալու համար, քրիստոնյաներին այլևս չզրկել դատարաններում վկայություն տալու իրավունքից:

Ի տարբերություն նախորդի, 1876թ. Տեղեկագիրը Բ. Դուռն ընդունեց անթաքույց զայրույթով: Աղմուկ բարձրացրին նաև թուրքական թերթերը, հայերին նույնիսկ ապստամբներ պիտակավորեցին: Չնայած Բ. Դուռն այս անգամ ևս խոստացավ Տեղեկագրի նյութերի հետքերով հանձնաժողով ուղարկել վիլայեթները, սակայն ակնհայտ էր թուրքական կառավարության չփոթվածությունը: Ուշագրավ է, որ Տեղեկագրի կապակցությամբ նյութեր տպագրեցին նաև եվրոպական թերթերը և այն անվանեցին հայերի քաղաքական ընդվզում:

Ո՞րն է նման բուռն արձագանքի պատճառը: Տեղեկագրի պարունակած փաստերի ամբողջությունից բխում էր մի եզրակացություն՝ հայերի հարստահարությունները սուլթանական վարչակարգի հայահալած քաղաքականության արտահայտություն էին:

Իսկ ռուս-թուրքական նոր պատերազմի չունչն արդեն զգացվում էր. Բալկաններում թուրքական լծի դեմ ընդվզումները վերածվել էին ապստամբության: Հայերը խանդով էին վերաբերվում այն իրողությանը, որ տերությունները մտահոգված էին միայն բալկանյան ժողովուրդներով և իրենց բացարձակապես անտեսում էին: Քաղաքական ժողովը 1876թ. նոյեմբերի 27-ին բուռն բանավեճերից հետո որոշեց Բ. Դռանը ներկայացնել հետևյալ խնդրագիրը. «Համառ լուրեր են պտտվում, որ բարեխնամ տերությունը մտադիր է ընդհանուր բարենորոգումներ չնորհել ամբողջ երկրին: Դրա համար ուրախ ենք, սակայն միաժամանակ լուրեր են չրջում, թե բարենորոգումները խտրական են. միայն մի քանի գավառներում են գործադրվելու: Այս լուրը մեծապես վիրավորում է հայ ազգին, որ օսմանյան պետության բազմադարյան հավատարիմ հպատակն է և երբեք, ոչ մի օր չի վշտացրել իր վեհապետ տերությանը և հետևաբար իր հավատարմության համար առավել ևս իրավունք ունի մասնակից լինելու տերության չնորհներին, առանց խտրականության»[7]:

[7] Զորմխյան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 272:

Այդ ընթացքում հրապարակվեց Օսմանյան սահմանադրությունը: Սահմանադրական չարժման ղեկավարները, սթափ գնահատելով ստեղծված վիճակը և հպատակ ժողովուրդների, հատկապես՝ կայսրությանը հավատարիմ մնացած միակ ժողովրդի ծլարձակող ըմբոստության արտակարգ վտանգավորությունը, որոշեցին այն թաղել բոլոր և, առաջին հերթին, քաղաքական միջոցներով, քանի որ Բալկաններում ընթացող կռիվների պայմաններում ռազմական միջոցներով առճակատման նոր օջախի ստեղծումը հղի էր անկանխատեսելի հետևանքներով:

Եվ ահա պատրիարքարան է այցելում մեծ վեզիր Միդհատը: Նա հայ վերնախավին չնորհավորում է Օսմանյան սահմանադրության հռչակման կապակցությամբ, միաժամանակ անդրադառնում անցած հինգ դարերի ընթացքում հայ կյանքում օսմանցիների խաղացած դրական մեծ դերին: «Հայ ազգը,– նշեց նա,– Օսմանյան կայսրությունը ճևավորած բնական տարրերի թվում է և օսմանյան դրոշակի հարգն ու պատիվը պաշտպանելու գործը պետք է գերադաս համարի իր ազգային ու քաղաքական բոլոր իրավունքներից»[8]:

Ն. Վարժապետյանը պատասխանեց. «Օսմանյան մեծ ազգը ի բնե ասիական է, և մենք իրավունք ունենք ասելու, որ նրա ամենամերճավոր հարևան եղբայրը հայ ազգն է»: Նար Պեյը բացականչեց. «Կեցցե սուլթան Համիդն ու Միդհատ փաշան»[9]:

Հայ արթնացող չարժումը դիվանագիտական լաբիրինթոսում խճճելու նպատակով՝ սուլթանը Ն. Վարժապետյանին առաջարկեց Բուլղարիայի հարցով Կ. Պոլսում ընթացող դեսպանաժողովից հայերի համար պահանջել նույն իրավունքները, ինչը նախատեսվում էր բալկանյան ժողովուրդների համար: Այդ անսպասելի առաջարկից պատրիարքը սկզբում չփոթվեց, ապա ուրախացած գործի անցավ: Նա հայ համայնքի անունից Անգլիայի դեսպան Էլիոթին հասցեագրված մի ուղերձ կազմեց: Ի դեպ, սա նման առաջին փաստաթուղթը չէր՝ ուղղված անգլիական դեսպանին:

«Կապույտ գրքում» կա Էլիոթի զեկուցագիրն արտաքին գործերի նախարարին, որում ներկայացված է պատրիարքի հետ դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանդիպումը: Նա մասնավորապես չեշտում է պատրիարքի հետևյալ միտքը. «Եթե եվրոպական պետությունների համակրանքը գրավելու համար հարկավոր է ապստամբել կառավարության դեմ, բոլորովին դժվար չէ ստեղծել նման չարժում: Պատրիարքը բողոքեց նաև չերքեզներին եվրոպական մայրցամաքից ասիական նահանգները փոխադրելու ծրագրի դեմ: Անչուշտ նրանք չեն կարող բնակեցնել արաբական չոգ երկրներում: Իսկ մյուս վայրերում ամենուրեք հայեր կան, որոնց չպետք է նետել չերքեզների ճեռքը...»[10]:

Որ հայերը առանճնակի եռանդ էին հանդես բերում Անգլիայի աջակցությունը ստանալու համար, հասկանալի է, քանի որ օսմանյան կառավարության վրա ամենամեծ ազդեցություն ունեցող տերությունն էր: Սակայն պատրիարքի խոսքերից նաև հետևում է, որ հայերը մինչ այդ օսմանյան տիրապետության դեմ գլուխ չէին բարձրացրել, որ եվրոպական տերությունները «համակրանքով էին վերաբերվում» օսմանահպատակ ժողովուրդների ընդվզումներին, որ մահմեդականներին Անատոլիայում կենտրոնացնելու, այսինքն՝ այն մահմեդականացնելու միջոցով թուրքական ազգային պետության կազմավորման համար հիմքեր ստեղծելու գործընթացը սկսվել էր մինչև 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմը:

Սուլթանի ու նրա կառավարության «սիրալիրության» պատճառներից մեկն այն էր, որ դեսպանաժողովը խնդիր ուներ. 1. Օսմանյան Թուրքիայի քրիստոնեական մարզերին տալ վարչական կարգավիճակ, 2. այդ մարզերի կառավարումը հանձնել քրիստոնյա նա-

---

[8] Զորմխյան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 273:
[9] Նույն տեղում, էջ 273:
[10] *Blue Book, Turkey*, N1, 1877, p. 61.

*հանգապետի, 3. ապահովել այդ մարզերի բնակչության անվտանգությունը, 4. իրական դարձնել Եվրոպայի աջակցությունը բարենորոգումներ անցկացնելու համար...*[11] *Խոսքը նաև կայսրությունում մահմեդականների և քրիստոնյաների իրավահավասարության մասին էր: Ն. Իգնատևը նման հավասարությանը չէր հավատում, սակայն հարցադրմանը դեմ չէր:*

*Երբ հայկական պատվիրակությունը հանդիպեց դեսպանաժողովում անգլիական պատվիրակության ղեկավար, Հնդկաստանի գծով նախարար Սոլսբերիի հետ և խնդրեց նրա աջակցությունը պաշտպանելու արևմտահայերի իրավունքները, ստացավ անտարբեր պատասխան՝ խնդրանքով դիմեք «Ձեր պետությանը»*[12]*:*

*Պատրիարքին դեսպանաժողով, մասնավորապես Անգլիայի դեսպանի մոտ, ուղարկելու սուլթանի քայլի նպատակը մեկն էր՝ հայերին գժտեցնել ռուսների հետ և ռուս-թուրքական նախապատերազմով պատերազմում անհնար դարձնել հայերի օգնությունը Ռուսական բանակին: Պետերբուրգում պատրիարքի վարքագիծը զայրույթի պոռթկում առաջացրեց, հայերի հասցեին հնչեցին ամենազազրելի խոսքեր ու սպառնալիքներ: Նույն բնույթի հրապարակումներով հադես եկան ռուսական մի քանի թերթեր: Բանն այն է, որ ցարը ոչ միայն գործնական հողի վրա էր դրել Արևմտյան Հայաստանին տիրանալու իր մտադրությունը, այլև պլանավորել էր այդ անել ամենամոտ ժամանակներում: «Տաք ջրեր» դուրս գալու ռուսական քաղաքականությունը նախատեսում էր երկու թռիչք: Առաջինը՝ Արևմտյան Հայաստանին (մինչև Եփրատ) տիրանալն էր, իսկ երկրորդը՝ Միջերկրականի ափերը դուրս գալը: Մրագրի առաջին մասի մշակումը հանձնարարված էր Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան կոմս Ն. Իգնատևին: Վերջինս 1876թ. օգոստոսին ավարտեց օսմանյան կառավարությանը ներկայացվելիք պահանջների մշակումը: Վեց կետից կազմված պահանջ-ծրագիրը դարձավ Ադրիանապոլսի և Սան Ստեֆանոյի բանակցությունների հիմք: Մրագրի 5-րդ կետը հռչակում էր, որ չնայած մահմեդականների ու քրիստոնյաների հավասարության մասին հավաստիացումներին, այն կայսրությունում բացակայում է, «տերությունները պարտավոր են դա կյանքի կոչել», վերահսկողություն սահմանել, որպեսզի բարելավվի օսմանահպատակների վիճակը»*[13]*:*

*Մրագիր-մինիմումի իրականացման ռազմավարական պլանը մշակեց ռազմական նախարար Դ. Միլյուտինը: Ներածականում նշվում էր՝ Ռուսաստանը վաղ թե ուշ տիրանալու է Փոքր Ասիային, քանի որ «ով տիրանա մարդկության այդ հնագույն օրրանին, որի ափերը լվացվում են հինգ ծովերի ջրերով, դառնալու է աշխարհի տերը»*[14]*:*

*Պլանը նախատեսում էր՝ անմիջապես գրավել Կարսը, Էրզրումը և Բայազետը, ապա հարձակողական գործողությունները զարգացնելով, տիրանալ Վանին, Սեբաստիային, Միջագետքին: Նաև խնդիր էր առաջադրված Բալկաններում ու Կովկասում հարձակողական գործողությունները ծավալել համաչափ, որպեսզի թուրքերը հարկադրված լինեին պատերազմի ամբողջ ընթացքում կռվել երկու ռազմաճակատով: Պլանի հիմքում դրված էին Կովկասում ռուս-թուրքական սահմանը «ճչգրտելու վերաբերյալ» Լորիս-Մելիքովի ներկայացրած առաջարկությունները, համաձայն որոնց՝ Ռուսաստանին պետք է անցներին Բաթումը, Կարսը, Արդահանը, Կարինը, Բայազետն ու Ալաշկերտի հովիտը:*

*Ցարական կառավարությունը, ելնելով նախորդ ռուս-թուրքական պատերազմների փորձից, այս ծրագրի իրականացման գործում առանձնակի դեր էր հատկացնում հայ բնակչության օգնությանն ու աջակցությանը:*

---

[11] *Записки графа Н. П. Игнатьева, см. "Исторический вестник"*, 1914, т. 135, стр. 68.
[12] «Մշակ», 10.01.1877:
[13] *Записки графа Н. П. Игнатьева...*, с. 63.
[14] *ЦГВИА, Ф, 1300, оп, 18,* д.10, л. 4.

Ջնայած սուլթանը դեսպանաժողովը չուտով ցրեց, և Հայկական հարցն այդպես էլ չքննարկվեց, այնուամենայնիվ, պատրիարքի դիմումը այդ հարցի միջազգայնացման ուղղությամբ կատարված առաջին հրապարակային քայլն էր:

Ո՞ր գործոնները Հայկական հարցը միջազգայնացրին: Նախ, Հայկական հարցում չահագրգռված էին ոչ միայն հայերը, Թուրքիան ու Ռուսաստանը, այլև մի քանի ուրիշ պետություններ, քանի որ Հայաստանի կարգավիճակի մեջ փոփոխություններն ազդելու էին տերությունների փոխհարաբերությունների վրա: Անգլիան նույնպես, չնայած Օսմանյան կայսրության Status quo-ի ջատագովն էր, շահադիտություն ուներ Հայկական հարցում: Օսմանյան կայսրության ամբողջականությանը սպառնում էին թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոններ, որոնցից գլխավորը օսմանահպատակ ժողովուրդների ազատագրական պայքարն էր: Անգլիայի քաղաքականության գլխավոր խնդիրն էր՝ թույլ չտալ, որ թուրքական տիրապետության դեմ ազատագրական պայքարն իր մեջ առներ նաև կայսրության ասիական մասի ժողովուրդներին: Այստեղից՝ անգլիական քաղաքականության մաքիավելականությունը, այդ ժողովուրդներին մասնակի զիջումներ կատարելու միջոցով խափանել նրանց ընդվզումներն օսմանյան տիրապետության դեմ: Նույն այդ նկատառումով էր Անգլիան հանդես գալիս հօգուտ հայկական բարենորոգումների:

Եվրոպական տերություններից Անգլիան առաջինը սկսեց զբաղվել արևմտահայության հարցերով: Ընդ որում, Ալբիոնի քաղաքականությունը կրում էր իրարամերժ երկու ուղղություններ՝ հայերին ընդառաջել մինչև այն պահը, քանի դեռ դա չէր սպառնում անգլո-թուրքական հարաբերություններին ու միաժամանակ չխաթարել Անգլիայի հանդեպ հայերի համակրանքը: Նման մոտեցումը Լոնդոնին հնարավորություն էր տալիս հայկական հարցն օգտագործել նաև որպես դիվանագիտական ճնշման միջոց: Այն, որ անգլիական մամուլը, եկեղեցին, քաղաքական շատ գործիչներ հանդես էին գալիս հօգուտ հայերի, չէր նշանակում, թե վերջիններիս վայելում էին Լոնդոնի քաղաքական պաշտպանությունը, այլ օգտագործվում էին սուլթանից զիջումներ ստանալու համար: Անգլիայի օգնությամբ քաղաքական լուծումների հասնելու հայերի ակնկալությունը իր սկզբանե դատապարտված էր, քանի որ ո՛չ Անգլիան և ո՛չ էլ մյուս տերությունները որևէ մտադրություն չունեին հանուն փոքրիկ Հայաստանի զոհելու իրենց հարաբերությունները Օսմանյան մեծ կայսրության տերերի՝ թուրքերի հետ:

Սակայն հայերն այլ ելք չունեին:

Ինչ վերաբերում է Ռուսաստանի հետ հարաբերություններին, ապա այս խնդրում արևմտահայությունը միակարծիք չէր: Եթե բուն Հայաստանի հայությունը ոչ միայն խոսքով, այլև գործով ցուցադրում էր իր ռուսական կողմնորոշումը, ապա նույնը չի կարելի ասել պոլսահայ գործիչների մասին: Նույնիսկ Ն. Վարժապետյանն այն կարծիքին էր, թե «հոգու հարստահարությունն ավելի մահացու ու ծանր է, քան մարմնի հարստահարությունը», այսինքն՝ թուրքական լուծը գերադասելի էր ռուսականից: 1877-ի ապրիլի 14-ին Լեյարդը գրում է, թե Ն. Վարժապետյանը ասել է իրեն. «Հայ ազգը շատ ավելի կը գերադասե օսմանյան վարչության տակ մնալը, քան թե ռուսական իշխանության ենթարկվելը: Հայերը Թուրքիայում բոլորովին ազատ են իրանց կրոնը դավանելու և գործադրելու, մինչդեռ Ռուսաստանում այդպես չէ, և նրանք ապացույցներ ունեն, որ Ռուսաստանը մտադիր է ճնշել ու հարկադրել, որ հայերն իրանց հայրերի հավատը թողնեն և հունադավանություն ընդունեն: Բայց հայերը որոշել են երբեք այդպիսի բան չանել: Հայերի շահերը նույնն են թուրքերու շահերու հետ, և նրանք հույս ունին ավելի զարգանալ և ավելի մեծ ազատություն վայելել մնալով օսմանյան հպատակ, քան թե ռուսահպատակություն ընդունելով: Կ. Պոլսի և հարակից նահանգներում բնակվող հայերը երբեք գանգատի տեղի չունին, սրանք պատվավոր և կարևոր պաշտոններ գրաված մեծ ազդեցություն ունին երկրի կառավարման և վարչության մեջ... Թյուրք կառավա-

*րությունը պարտավոր է հայ ժողովրդի մեջ տիրող այս ոգին քաջալերել...»*[15]*: Պատրիարքը նաև համոզված էր. «Ռուսները յուրյանց մտադրությանց իրականացման խնդրո մեջ հաջողություն ունենալ չեն կրնա, եթե թուրքերը պաշտպանեն հայերու կյանքը և գույքը և, եթե զենքեր բաժնելով, անոնցմե քաղաքապահ խմբեր կազմեն մահմեդականներու հետ միասին հայրենիքը պաշտպանելու թշնամիներեն»*[16]*:*

*Հայ կաթոլիկների մասին Լեյարդը գրում է. «Նրանք խիստ լեզվով խոսեցին ռուսական վարչության և ազդեցության ենթարկվելու դեմ և բաղձանք հայտնեցին թուրքահպատակ մնալ»:*

*Օսմանյան խորհրդարանի անդամ Ս. Մաքսուդյանը Լեյարդին ասել է, թե քրիստոնյաներն «ավելի մեծ կրոնական ազատության և զարգացման ավելի մեծ հույս ունեն թուրքական իշխանության տակ, քան թե ռուսական»: 1877թ. ապրիլի 30-ին Լեյարդին հանձնած չնորհակալական ուղերձում օսմանյան խորհրդարանը ընդգծում էր. «Ոչ մահմեդական ժողովուրդները, որոնք «օսմանցի» տիտղոսն առին և, զանազան քրիստոնյա հասարակություններն, որոնք կատարեալ ազատություն են վայելում Օսմանյան կայսրության հովանու տակ, սոսկումով և քամահրանքով լսեցին մեր թշնամու պնդումը, թե նա ուզում է եղել պաշտպան հանդիսանալ քաղաքավարության և հառաջադիմության, որն իրանք արդեն վայելում են...»: Խորհրդարանում Մ. Խարաճյանը հայտարարեց. «Հայ ժողովուրդը, մանավանդ Հալեպի իմ ընտրողները պատրաստ են ամեն կերպ զոհողություն հանձն առնիլ իրանց հայրենիքն և իրանց սիրելի թագավորն օտար (ռուսական) հարձակման դեմ պաշտպանելու համար»:*

*1977-ի օգոստոսի 12-ին Ն. Վարժապետյանը Ազգային ժողովում հայտարարեց. «...Մեր ազգն անբաժանելի կերպով կապված է օսմանյան տերության հետ, ... մենք առնոր հառաջադիմությամբն և բարեկարգությամբը բարեբախտ պիտի լինիմք, ... անկե զատ նեցուկ և ապավեն մը չունինք և չենք ուզում ունենալ և... Աստված չընե, որ ուրիշ տերության մը հարինք: Ես ալ պատրիարք եղած օրս օսմանյան տերության հավատարիմ մնալ ուխտ ըրած եմ, և գիտեմ, որ մեր ազգը օսմանյան տերությունը չատեր, երբեք չուզեր անոր դեմ ուղղակի կամ անուղղակի թշնամության մը մեջ գտնվի, միայն եթե գանգատ կամ դժգոհություն մը ունի, այն ալ գավառական հայ ժողովրդյան վրա գործված զեղծմանց համար, որոնց դեմ կը մրցի նույն կառավարությունն և կը չանա բոլորովին բնաջինջ ընել...»:*

*Նման ելույթները մասամբ քարոզչական խնդիր ունեին և հասցեագրված էին չատ ավելի սուլթանին, քան հայերին: Դրանք նաև «հավուր պատշաճի» արժագանք էին Աբդուլ Համիդի հորդորների:*

*Երբ մայրաքաղաքում լուրեր հասան, մինչև Ռուս-թուրքական պատերազմը, գավառական հայերի հանդեպ թուրքերի հրեշագործությունների մասին, Լեյարդը 1876թ. սեպտեմբերին տեղեկագրեց. «Հայերի մեջ արտահայտված է դժգոհության չարժում, որ կարող է լուրջ կերպարանք ստանալ: ...Մի բարձրաստիճան հայ անձնավորություն, որ ամենևին կապ չունի կառավարության հետ, ինձ հայտնեց այսօր, որ թեպետ Բ. Դուռն է սկզբնական պատճառն իր ազգակիցների այժմյան հուզման, բայց տարակույս չկա, որ ներկա հուզումը ռուսական գրգռումների արդյունք է..., որ հայոց ուսյալ դասակարգի մեծամասնությունը խիստ կերպով հակառակ է Ռուսաստանին, բայց ժողովուրդը, բազմությունն, որոնք իսկապես տանջվում են այդ հարստահարություններից, այդպես չեն և հավատացած են, որ եթե փոփոխություն լինի (այսինքն՝ գան ռուսները) ավելի լավ կը լինի»:*

*Արևմտահայության այդ երկատվածությունը ոչ միայն իրողություն էր, այլև վերածվեց հայ կյանքի առանցքային հիմնախնդրի, որին անտարբեր չէր հասարակության որևէ խավ:*

---

[15] Վ. Գետրոսյան, *Կոմս Լորիս-Մելիքով*, ե., 2005, էջ 138:
[16] «*Կապույտ գիրք*» *(1877թ.)*, թիվ 25:

*1877-ի օգոստոսի 10-ին Աբդուլ Համիդ 2-րդը Ն. Վարժապետյանին ասում է. «Գիտեմ, որ սիրելի հայ ժողովուրդս գավառանց մեջ տեղտեղ նեղություն կկրե, բայց վստահ թող ըլլա, որ այդ նեղությունները Աստծո չնորհիվ ի մոտո վախճան պիտի գտնեն և երջանիկ ու անդորը վիճակ մը պիտի ստանա, կը խնդրեմ իմ հայ ժողովրդյանս բարօրությունն, որուն իրավամբ արժանի եղած է մանավանդ ներկա դժվարին պարագայից մեջ մատուցած մեծամեծ ծառայությամբք, իմ ջերմ բաղձանաց և հոգածությանս առարկա եղած է: Վկա է երկինք, թե ես մրջյունի մը վրա կոխել չեմ ուզեր, և երբեք չէի կամեր, որ այսչափ անմեղ արյուն հոսեր և այսչափ ավերմունք և աղետք հառաջ գային, բայց դժբախտաբար իմ բաղձանայս հակառակ տեղի ունեցան... Բարև ըրեք իմ սիրելի հայ ժողովրդյանս և վստահ ըրեք, որ յուր հավատարիմ և անձնվեր ծառայությանց և խոհական ընթացից պտուղը պիտի վայելե»:*

*Սակայն պոլսահայությունը չէր կարող երկար մնալ տարընթացությունների մեջ: "Голос" թերթի թղթակից Գ. Գրադովսկին վկայում է, որ օսմանահպատակ հայությունը ջերմորեն էր ընդունում ռուսական զորքերին, խնդրում, որ իրենց չթողնեն թուրքական լծի տակ: Մի ծերունի հայ ասաց. «Ռուսներն ամեն ինչի համար վճարում են, ոչինչ ձրի չեն վերցնում, սպաներն ու զինվորները լավն են ու բարի: Իսկ թուրքերը միշտ թալանում են, ամեն ինչ վերցնում են և ոչինչ չեն վճարում»: Եվրոպական թերթերից մեկի թղթակցի հարցին, թե արդյոք հայերի ռուսասիրությունը չի վնասում նրանց, Լորիս-Մելիքովը պատասխանում է. «...Հայերի ռուսասիրությունը շատ բնական է, քանի որ Թուրքիան ոչ մի կերպ չի ապահովել հայերի անվտանգությունը»: Իսկ Կ. Պոլսի հայ գործիչների թուրքասիրության մասին ասում է. «Դա ամբողջ թուրքահայության կարծիքը չէ: Անցեք հայկական գավառներով... և դուք կտեսնեք այն մեծ տարբերությունը, որ կա օսմանյան մայրաքաղաքում բնակվող և գավառներում ապրող հայության պայմանների միջև»: Ինքնատիպ է նրա նաև հետևյալ պատասխանը. «...Թուրքերը հայերին հալածում են ոչ թե եվրոպային, այլ Ռուսաստանին համակրելու համար»: Սակայն ավելացնում է. «Օսմանյան Թուրքիան հայերին հալածում էր, երկրից բռնությամբ տեղահանում ու գերության էր քշում այն ժամանակներից, երբ Ռուսաստանը շատ հեռու էր Հայաստանից, երբ հայերը բախում էին եվրոպական արքունիքների ու Հռոմի պապի դռները»:*

*Կ. Պոլսի հայոց վերնախավի հակառուսական դիրքորոշումը պատահական չէր: Այդ վերնախավը ծնվել ու մեծացել էր Արևմտյան Անատոլիայում կամ Կ. Պոլսում, կրթություն ստացել օսմանյան մայրաքաղաքում կամ Եվրոպայում, մշտական տնտեսական (նաև մշակութային) կապերի մեջ էր եվրոպայի հետ և, լինելով օսմանյան պաշտոնատար կամ գործարար, ուրիշ պետությունների հանդեպ իր վարքագիծը որոշելիս՝ ելակետ էր ունենում Բ. Դռան մոտեցումները, իսկ «Ռուսաստանը Թուրքիայի ամենաոխերիմ թշնամին էր», և թուրքական իշխանությունները հաշտ աչքով չէին նայում ռուսների հետ բարիդրացիական հարաբերություններին:*

*Այսպիսով, Ռուս-Թուրքական պատերազմի նախօրյակին հայկական հարցն ընդհուպ կանգնել էր միջազգայնացման ուղու վրա: Ճիշտ է, այդ հարցի միջուկը ազգային պետականության վերականգնման հայերի նպատակադրումն էր՝ թուրքական լծի թոթափումը, իսկ հարցի լուծման հիմքը՝ օսմանյան դարավոր, դաժան հալածանքների պայմաններում իսկ մայրենի լեզվի, կրոնի, մշակույթի և ազգային հիմնական հատկանիշների պահպանումը, սակայն Հայկական հարցի այդ միջուկը միշտ չէ, որ մակերես էր դուրս գալիս և շատ հաճախ արտահայտվում էր հարստահարությունների, կեղեքումների դեմ պայքարի ձևով, որն ի վերջո պայքարին հաղորդեց ազգային-քաղաքական տեսք:*

*Հայկական հարցի բնույթի փոխման, այսինքն՝ սոցիալ-տնտեսականից ազգային-քաղաքականի անցման, ուշանալն ուներ մի շարք պատճառներ: Օսմանյան կայսրու-*

թյան հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարի ժամանակագրությունը ներկայացնում է հետևյալ օրինաչափությունը: Սկզբում ազատագրական պայքարի են ելել այն ժողովուրդները, որոնց վրա թուրքական ճնշումը համեմատաբար թույլ էր, և ամենաուշը՝ նրանք, որոնց վրա այդ ճնշումն ուժեղ էր: Առաջինը պայքարի ելան հույները, բալկանյան մյուս ժողովուրդները, արաբները: Հույներն առաջինն անկախություն ստացան, Եգիպտոսը՝ կիսանկախություն, Լիբանանը՝ ինքնավարություն և այլն: Նույնիսկ զարգացման անհամեմատ ցածր աստիճանին գտնվող քրդերը չատ ավելի վաղ պայքարի ելան, քան հայերը: Համենայն դեպս, Բեդըրխանի ապստամբությունը (1840-ական թվականներ) ընթանում էր «Անկախ Քրդստան» կարգախոսով: Հայերն ազատագրական պայքարի ամենաուշը բարձրացան, քանի որ կայսրությունում ամենածանրը նրանց վիճակն էր: Թուրքը հային իջեցրել էր մինչև բանող անասունի վիճակի՝ նրանից խլելով բոլոր իրավունքները, բացի աշխատանքի իրավունքից ու հարկադրանքից՝ հոգալու նույն այդ թուրքի ապրուստը: Թուրքը հային կանգնեցրել էր դաժանագույն երկընտրանքի առաջ՝ անմռունչ հպատակություն կամ բնաջնջում: Հայը հարկադրված եղավ ենթարկվել իրեն պարտադրված այդ երկընտրանքին ու վերածվել բացարձակապես իրավազուրկ ռայայի, որպեսզի հնարավորություն ունենար գոյատևելու: Ժամանակի ընթացքում գյավուր հայն ընտելացավ իր վիճակին, ներշնչվեց, թե այդ կացությունը միակ հնարավորն է ու դարձավ կրավորական, ընկավ թմբիրի մեջ և ննջեց դարեր շարունակ, ինչից նրան հանելը պահանջում էր մեծ ջանքեր ու տևական ժամանակ, հզոր ցնցումներ ու բնաջնջվելու իրական վտանգ:

Հաճախ կարելի է լսել կամ կարդալ կարծիքներ, թե Օսմանյան կայսրությունում հայերի նյութական վիճակը ավելի բարվոք էր, քան անգամ թուրքերինը: Քաղաքներում՝ վերապահումներով — այո, և դա, ինչպես արդեն նշվել է, բացատրվում է նրանով, որ թուրքերը խուսափում էին տնտեսական գործունեությունից. մինչդեռ այն դարձել էր հայերի ուժերի ներդրման գլխավոր ասպարեզը: Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանի գյուղերին, ապա դրանցում թուրք գրեթե չկար և հայերի ու թուրքերի կենսամակարդակները բաղդատելը լուրջ չէ: Իսկ քրդերի կենսամակարդակն իսկապես հայերից ցածր էր: Բայց դրա պատճառը ոչ թե եկամուտների, այլ զարգացման մակարդակների տարբերությունն էր: Քրդերի հիմնական մասը քոչվոր ու կիսաքոչվոր էր: Նրանք անշարժ սեփականություն ունենալ չէին կարող, իսկ շարժական ունեցվածքն էլ խանգարում էր տեղաշարժերին: Քրդի ունեցվածքը պետք է տեղավորվեր ձիու թամբին: Թե չէ քրդի եկամուտները հայերի եկամուտներից քիչ չէին, դրան գումարած այն, որ քուրդը փաստորեն հարկեր չէր վճարում և զբաղվում էր թալանով ու ավազակությամբ:

Հայերը ցրված էին ամբողջ կայսրությունում՝ մեծամասնություն կազմելով միայն Արևմտյան Հայաստանում: Այս համակարգը անորոշ էր դարձնում հայերի պահանջած բարենորոգումների տարածքային ընդգրկումը: Հայաստանաբնակները բարենորոգումներ էին պահանջում հայկական նահանգների, իսկ ոչ հայաստանաբնակները՝ ամբողջ կայսրության համար, ինչը նաև հեռահար նպատակ ուներ՝ փոխել հպատակի վիճակը և դառնալ թուրքերին համազոր ու հավասար տարր: Հայերը պարզապես չէին ուզում նկատել, որ մեկը մյուսին հաջորդող պարտությունները խորացրել էին թուրքերի ատելությունը հպատակների, մանավանդ՝ քրիստոնյաների հանդեպ, որ հենց այդ ատելությունը հայկական հարցին քաղաքական բովանդակություն ներարկեց:

Հարցի քաղաքականացման գործում դեր են խաղացել նաև մի շարք ուրիշ գործոններ՝ հայ կյանքում ամիրաների միահեծան իշխանության վերացումը, Թանզիմաթը, միդհատյան և հայ ազգային սահմանադրությունները, բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը, կովկասահայ գործիչների ջանքերը և այլն:

Պատմագիտության մեջ կարելի է հանդիպել կարծիքի, թե արևմտահայության ծանր վիճակի պատճառներից մեկն էլ հայերի գտնվելն էր երկու հզոր, ոխերիմ թշնամիների՝ Ռուսաստանի և Թուրքիայի տիրապետության տակ, նրանք իրավունք չունեին դրանցից

որևէ մեկի նկատմամբ «բացահայտ նպաստավոր կամ աննպաստ վերաբերմունք հանդես բերել, որպեսզի մյուս կողմի բռնությանն ու հալածանքին չարժանանային»: Ռուս-թուրքական պատերազմները հիմնականում տեղի էին ունենում Հայաստանի տարածքում, և հայերի կյանքի ու կայքի անվտանգությունը կախված էր ռուս կամ թուրք զինվորի վերաբերմունքից: Բնականաբար, հայը համակրանք էր տածում այն կողմի հանդեպ, որի զինվորներն իրեն չէին թալանում կամ բռնությունների ենթարկում: Այդպիսի կողմը ռուսներն էին: «Այն, որ հայերի մեծամասնության համակրանքը ռուսների կողմն էր, բխում էր ոչ թե քաղաքական նկատառումներից, այլ պատերազմական առօրյայից»: Թուրքական բանակը կազմված էր ոչ միայն կանոնավոր զորքից, այլև բաշիբոզուկից, քուրդ աննկանոն զորաջոկատներից, որոնց համար առաջնայինը կողոպուտն ու բռնարարքներն էին, իսկ հրամանատարությունն անտարբեր էր վերաբերվում այդ երևույթներին՝ լրացուցիչ կռվող ուժից չզրկվելու համար: Հայերի հանդեպ առանձնապես կասկածամիտ էին կանոնավոր զորքերը՝ նրանց համարելով Թրքատյաց ռուսասերներ: Դրա համար էլ՝ չնայած քրդերն ավելի անհնազանդ էին, մեծ վնաս էին պատճառում նաև թուրքերին, այնուամենայնիվ, վերջիններս քրդերին գերադասում էին հայերից: Թուրքական վարչակարգը քրդին հակակշռում էր հային, ինչը նրան ազատում էր արևելյան նահանգներում ռազմական խոշոր ուժեր պահելու հարկադրանքից: Աբդուլ Համիդն իրեն հռչակեց պանիսլամիզմի հիմնադիր ու գործադրող, որպեսզի այն հակադրի թուրքիայի դեմ ուղղված համասլավոնիզմին ու Արևելյան հարցին: Սակայն այդ քայլը Կ. Պոլսի արտաքին քաղաքականության հաջողություն չբերեց, մինչդեռ կայսրության ներսում սրեց իսլամների ու քրիստոնյաների հարաբերությունները և իսլամական մոլեռանդ զանգվածներին մղեց հայերի դեմ, ինչը 1877-78թթ. պատերազմի ժամանակ աղետալի բնույթ ու ծավալներ ստացավ:

Կարինում Անգլիայի հյուպատոս Թեյլորը արևմտահայության ռուսական կողմնորոշման առնչությամբ գրում է. «Այս գավառներում ամենուրեք հայերը դառնորեն գանգատվում են թուրք կառավարությունից և միաժամանակ անչափ գովում են Ռուսաստանին, բացեիբաց տեղյակ պահում, թե որոշել են գաղթել այնտեղ... Հարկ է խոստովանել, որ դժգոհության համար հայերն ավելի քան հիմքեր ունեն: Դրանք են՝ թուրքական իրոք հոռի վարչական համակարգը, հարկերի անհավասար բաշխումը, դրանց, ինչպես նաև տասանորդի չափազանց անկարգ հավաքումը, արտադրության կատարյալ բացակայությունը, անվերջ զեղծարարությունները և մահմեդականների հետ քրիստոնյաներին իրավահավասար դարձնելու պահանջների բացարձակ անտեսումը»[17]:

Հայերի հանդեպ թուրքերի անվստահությունն ու թշնամությունը առավել սուր տեսք էր ստանում պատերազմների, մասնավորապես ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, քանի որ այդ պայմաններում մահմեդական կալվածատերերին, ցեղապետերին, կղերականությանը, աղաներին, պաշտոնեությանն, անգամ ստորին խավերին ավելի հեշտ էր ցանկացած հային թշնամի հռչակել և անպատիժ թալանել ու բռնությունների ենթարկել: Դրա հետևանքով պատերազմական պայմաններում հայերի անվտանգությունն խպառ վերանում էր: Ահա թե ինչու ինքնապաշտպանության բնազդն իսկ հայերին մղում էր ռուսների գիրկը: Մանավանդ որ յուրաքանչյուր պատերազմի նախօրյակին իշխանությունները քրդերին զինում էին և այլևս այդ զենքերը չէին հավաքում, իսկ քրդերը դրանք օգտագործում էին հիմնականում հայերի դեմ: Ալաշկերտում և Բայազետում քրդերը ռուսների դեմ չկռվեցին, այլ ոչնչացրին 30 հազար հայ խաղաղ բնակչություն, ինչը պատճառ դարձավ զանգվածային արտագաղթի: Հայը, լքելով ամեն ինչ, փախչում էր փրկվելու համար, չնայած ռուսները խոչընդոտում էին այդ պրոցեսին, քանի որ Արևմտյան Հայաստանի հայաթափումը նրանց ձեռնտու չէր. զրկում էր

[17] Սարուխան, Հայկական խնդիրն ու Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 145-146:

Օսմանյան կայսրության գործերին միջամտելու և ծավալապաշտական ծրագրեր իրականացնելու պատրվակից: Բնականաբար, արտագաղթին դեմ էին նաև հայ քաղաքական հոսանքները, քանի որ այն ի վերջո անհնար էր դարձնելու Հայկական հարցի լուծումը:

Որ Հայկական հարցը զարգացավ միջազգայնացման ուղիով, հետևանք էր նաև այն բանի, որ ծնվելով որպես Օսմանյան կայսրության ներքին հարց, արհամարհվեց թուրքերի կողմից: Պարզից էլ պարզ է, որ եթե թուրքական վարչակարգը գոնե փորձեր ինչ-որ քայլերի դիմել հարցը լուծելու ուղղությամբ, այն միջազգային հրապարակ դուրս չէր գա:

Բացի դա, հայությունն ի վիճակի չեղավ Հայկական հարցը սեփական ուժերով լուծել և դիմեց օտարներին: Իսկ օտարներն այն ուղղակիորեն ենթարկեցին իրենց շահերի տեղատվությանն ու մակընթացությանը: Եվ քանի որ այդ շահերը շատ ավելի հօգուտ թուրքերի էին, քան նրանց դեմ, ապա, դրսի օգնությամբ Հայկական հարցի լուծումը դատապարտված էր ձախողման: Իսկ որովհետև եվրոպական հասարակական կարծիքը հիմնականում օսմանյան հպատակների կողմն էր, տերությունները պարտադրված էին արտաքուստ գործել հօգուտ հարցի հայանպաստ լուծման: Բացի այդ, Թուրքիայում տիրող անիշխանությունը հակասում էր եվրոպական կապիտալի շահերին և հարկադրում տերությունների կառավարություններին զբաղվելու Օսմանյան կայսրության բարենորոգմամբ: Մինչդեռ թուրքերը մշտապես դեմ են եղել բարենորոգումներին: Նախ, դրանք նշանակում էին թուրքերի և հպատակ տարրերի իրավահավասարություն, ինչը նրանց համար ո՛չ հասկանալի էր և ո՛չ էլ ընդունելի: Թուրքը դրա համար չէր արյուն թափել, աշխարհակալ կայսրություն ստեղծել, որ նվաճված ժողովուրդների հետ հավասար իրավունքներ ունենար: Թուրքը կամովին դրան գնացող չէր: Իսկ բռնությամբ հարցը լուծելու համար ուժ էր պետք, որ հպատակ ժողովուրդների մասնատվածության հետևանքով բացակայում էր:

Սակայն դեպի «տաք ջրեր» Ռուսաստանի առաջխաղացման ամենակարճ ուղին անցնում էր Հայաստանով: Հետևաբար, ցարի համար երկրորդական նշանակություն չուներ հայերի վերաբերմունքը Ռուսաստանի հանդեպ, ինչը նրան հարկադրեց պաշտպանել բարենորոգումների պահանջը:

## 2. 1877-78ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ղրիմի պատերազմում պարտությունը և Փարիզի պայմանագիրը Ռուսաստանին հանգիստ չէին տալիս: Նա ելք էր փնտրում դրանց հետևանքները թոթափելու համար: 1876թ. հունիսին Սերբիան պատերազմ հայտարարեց Թուրքիային: Նրան միացավ Չեռնոգորիան: Թուրքերի դեմ կռվին մասնակցում էին նաև մեծ թվով ռուս կամավորներ, մարտական գործողությունները ղեկավարում էր գեներալ Մ. Չերնյաևը: Ռուսաստանում գլուխ բարձրացրած պանսլավոնականությունը վերածվել էր պետական քաղաքականության: Ալեքսանդր 2-րդը օսմանյան հպատակության տակ գտնվող սլավոնական ժողովուրդների իրավունքների պաշտպանությունն ու նրանց ազատագրումը հռչակեց իր արտաքին քաղաքականության առաջատար ուղղություններից: Մյուս կողմից, սկսած 1840-ական թվականներից ձևավորվել էր եվրոպական պետությունների միություն՝ Ռուսաստանի դեմ: Status quo-ի քաղաքականությունը խնդիր ուներ, ոչ թուրք հպատակ ժողովուրդներին հովանավորելով հանդերձ, երկարաձգել օսմանյան կործանվող կայսրության գոյությունը, որպեսզի «Ռուսաստանից խլեն այն բարոյական ուժը, ինչն արդարացնում էր վերջինիս քաղաքականությունն Արևելյան հարցում»[18]:

---

[18] Трачевский А. С., *Пруссия в Крымскую войну, см. "Исторический вестник"*, 1882, т. 32, стр. 340.

Եվրոպա-Ռուսաստան առճակատումը սուլթանական կառավարությունն ընկալեց որպես իր գործողությունների ազատության հնարավորություն: Դրանով են բացատրվում ոչ մահմեդական հպատակների հանդեպ օսմանյան քաղաքականության խստացման հակումները՝ սկսած 60-ական թվականներից: «Հայաստան» անունը թուրքերը սկսեցին օգտագործել միայն Բայազետի փաշայության վերաբերյալ, իսկ Արևմտյան Հայաստանի մյուս նահանգներն անվանում էին «Անատոլիայի բաղկացուցիչ մասեր»[19]:

Այդպես էր Եվրոպան, մասնավորապես Անգլիան: Օսմանյան կայսրությունը հասցնելով մահամերձության՝ նրան թույլ չէին տալիս հոգին փչել և ուզում էին, որ այդ «հնամաշ դիվանագիտական լաթը... այդ հին, փիլիստերական տխմարությունը» չարունակեր գոյություն ունենալ: Դրանով իսկ օսմանյան լծի տակ գտնվող ժողովուրդների «քաղաքակիրթ հոգաբարձուն» հավերժացնում էր նրանց ստրկությունը, պահում բնաջնջման վտանգի տակ: Ֆրանսիական քաղաքական գործիչներից մեկը նկատում է. Օսմանյան կայսրությունը «նման է գյուղական լուսնյան մեջ չարժվող սայլի, որը ճռճռում է, անընդհատ թվում է, թե փուլ է գալիս, բայց ոչ՝ չարունակում է առաջ գնալ»[20]:

Իհարկե, արևմտյան տերությունները ձգտում էին Թուրքիային դուրս քշել եվրոպական մայրցամաքից, սակայն այնպես, որ դրանից Ռուսաստանը չօգտվեր:

Բնականաբար ցարը գործում էր հակառակ ուղղությամբ: Նրա հանձնարարությամբ Իգնատևը կազմակերպեց արևմտահայ գործիչների դիմում Պետերբուրգին՝ հովանավորելու խնդրանքով: Ալեքսանդր 2-րդը թուրքերի դեմ պատերազմում օսմանահպատակ սլավոններին օգնելուն զուգընթաց, սկսեց ավելի հաճախ օգտագործել «թուրքահպատակ քրիստոնյաներին փրկելու» կոչը: Բալկաններում Ռուսաստանը տարածքային լուրջ ակնկալիքներ չուներ, իսկ Կովկասում ուներ: Հետևաբար, անհրաժեշտ էր գործն այնպես ներկայացնել, իբրև Արևմտյան Հայաստանը գրավելով, ինքն ընդառաջ է գնում հայերի խնդրանքին: Դա ոգևորում էր հատկապես արևելահայ շատ քաղաքական, պետական և ռազմական գործիչների, մտավորականների: Գր. Արծրունին հայտարարեց, թե արևմտահայության խնդիրը միայն Ռուսաստանն է ի վիճակի լուծելու: Նա գրեց. «Մենք միշտ հույսը դրել ենք Ռուսաստանի վրա»[21]: Արփ. Արփիարյանը Թուրքիայից արձագանքեց. «Մենք ավելի հույս ունենք Ռուսիայի, քան այլ տերության պաշտպանության վրա»[22]: «Մշակ»-ը արևմտահայությանը կոչ էր անում բալկանյան ժողովուրդների օրինակով, զենքի ուժով հասնել ինքնորոշման: Արևելահայերը, Բաքվի, Ն. Նախիջևանի, Ռիշինևի ու մի քանի ուրիշ հայ համայնքներ դիմեցին ցարին արևմտահայությանն ազատագրելու խնդրանքով:

Սակայն հայկական հարցում արևելահայությունը միասնական կարծիքի չէր: Գևորգ 4-րդ կաթողիկոսը դեմ էր Արևմտյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուն և հօգուտ դրա քարոզչության ծավալմանը: Նա դա վտանգավոր էր համարում արևմտահայության համար: Երբ Լորիս-Մելիքովը նրան խնդրեց կոնդակով հայերին հորդորել պատերազմում կանգնել ռուսների կողքին և կռվել Արևմտյան Հայաստանն ազատագրելու համար, կաթողիկոսը պատասխանեց. հայերն առանց կոնդակի էլ օգնելու են Ռուսաստանին և «այդ քաղաքական խաղերի մեջ կաթողիկոսի մտնելու հարկը չկա»[23]: Մի քանի ամիս անց, երբ Մ. Իզմիրլյանը նրան հանձնեց Ն. Վարժապետյանի նամակը ցարին՝ Հայաստանը Ռուսաստանին միացնելու խնդրանքով, կաթողիկոսը հանձնարարեց ասել այդ «զևզակին», որ այլևս նման «հիմար» նամակներ չգրի, որ «Հայերի հա-

---

[19] Турунов Я., *Армения, см. "Библиотека для чтения"*, 1855, N12, стр. 340.
[20] *"Мир Божий"*, январь, 1896.
[21] «Մշակ», 1878, թիվ 23:
[22] Նույն տեղում, թիվ 42:
[23] Գեղամյան Ե., *Հիշողություններ: Տե՛ս «Լումա»*, 1906, էջ 17-27:

մար սուլթանը ցարից լավ է»[24]: Տվյալ դեպքում կաթողիկոսը ելնում էր նաև Ռուսաստանում Հայ Եկեղեցու իրավազուրկ վիճակից: Կ. Պոլսի պատրիարքը կաթողիկոսի ստորադաս կրոնական պաշտոնատար էր, սակայն Թուրքիայում անհամեմատ ավելի մեծ իրավունքներ ուներ, քան կաթողիկոսը՝ Ռուսաստանում:

Նման դիրքորոշման համար երկրորդական դեր չխաղաց նաև այն, որ ցարական կառավարության օսմանյան քաղաքականությունում Արևմտյան Հայաստանի հարցը ստորադասված էր Բալկանյան սլավոնների և Նեղուցների հարցերին: Որոշ առումով 1877-78թթ. Ռուս-թուրքական պատերազմը նպատակ ուներ փոխհատուցելու ռուսական անհաջողությունները Բալկաններում:

Պատահական չեն ռազմական գերատեսչությանղեկավար Դ. Միլյուտինի խոսքերը. «Անկասկած, պատերազմի միջոցով ցանկացած հարցի լուծում մեզ համար կախված կլինի մեր հաջողություններից կամ անհաջողություններից կայսրության արևելքում, որից էլ բխում է Ասիական Թուրքիայի համառ ու անխոնջ գործունեության անհրաժեշտությունը, որպեսզի հաշտություն կնքման դեպքում Արևմուտքի մեծ անհաջողությունները լրացվեն Արևելքի ձեռքբերումներով»[25]: Սակայն երբ ռուսական զորքերը գրավեցին Կարսի ամրոցը, կաթողիկոսը ողջույնի նամակ հղեց Կովկասյան բանակի հրամանատար մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչին, որով նաև խնդրում էր հաշտության բանակցություններում ստանձնել օսմանյան Թուրքիայի հայերի չհերի «խնամատարությունը»:

1877թ. ապրիլի 24-ին Ալեքսանդր 2-րդը Քիշնևում ստորագրեց Թուրքիային պատերազմ հայտարարելու հռչակագիր: Մարտական գործողությունները սկսվեցին երկու ռազմաճակատով՝ Բալկանյան և Կովկասյան: Հունիսի 27-ին ռուսական զորքերը ներխուժեցին Բուլղարիա:

1877-ի ապրիլի 12-ին Միխայիլ Նիկոլաևիչը հայոց ու թուրք լեզուներով կոչ արեց Էրզրումի վիլայեթի բնակիչներին՝ հաշտ վերաբերվել ռուսական զորքերին, քանի որ խստագույն հրաման է տրված նրանց՝ չդիպչել խաղաղ բնակչությանը: Կովկասյան ռազմաճակատի հրամանատար Լորիս-Մելիքովի նշանակումը, ինչպես նաև ռուսական հրամկազմում մի քանի հայ սպաների ներգրավումը ևս հոգեբանական նույն խնդիրն էին հետապնդում[26]:

Օսմանյան կառավարությունը պատասխանեց ջիհադ հայտարարելով[27]:

Անգլիան պահանջեց Ռուսաստանից՝ անփոփոխ թողնել Կ. Պոլսի և Նեղուցների կարգավիճակը, չրջափակել Սուեզի ջրանցքը, չբռնազավթել Եգիպտոսը: Պետերբուրգը համաձայնվեց, միաժամանակ առաջարկելով Կ. Պոլսի և Նեղուցների կարգավիճակի հարցը քննարկել եվրոպական «կոնցերտում»[28]:

Թուրքիան միայնակ մնաց ռուսական հարձակման դեմ: Բայց անհնար է համաձայնվել Վ. Թունյանի հետ, թե՝ «Ոչ քիչ չափով դա պայմանավորված էր բարենորոգումները վերևից անցկացնելու ձախողմամբ»[29]:

1877թ. մայիսիս 12-ին «Մշակ»-ում Գր. Արծրունին առաջ քաշեց Արևմտյան Հայաստանի հարցի լուծման երկու տարբերակ՝ այն մտցնել Ռուսական կայսրության մեջ կամ ինքնավարություն տալ Օսմանյան կայսրության կազմում: Իհարկե, գերադասելին առաջին տարբերակն էր, քանի որ հայերը ռուսական տիրապետությունը համարում էին գերադասելի: Համաձայն "La jeune République" թերթի՝ 1830թ. Ռուսաստանում հաշվվում էր 350 հազար հայ, մինչդեռ 1877-ին այդ թիվը հասել էր մեկ միլիոնի, որն

---

[24] "Исторический вестник", 1915, т. 139, стр. 43.
[25] РГВИА, ф. 1330, оп. 18, д. 10.
[26] «Մշակ», 28.04.1877:
[27] "Тифлисский Вестник", 29.04.1877.
[28] История дипломатии, Т. 2., М.-Л. 1945, стр. 40.
[29] «Հայոց ցեղասպանություն...», թիվ 9, էջ 29:

արդյունք էր Ռուսաստանի տնտեսական համեմատաբար բարվոք վիճակի, անձի անվտանգության, հասարակական կյանքում առաջանալու հնարավորության: Չնայած Օսմանյան կայսրությունում նույնպես հայերը տնտեսական ու քաղաքական կյանքում նշանակալից տեղ էին գրավում, բայց լինելով ոչ-մահմեդական՝ զրկված էին ամենատարրական իրավունքներից, արևմտահայաստանաբնակ հայերը նաև ենթակա էին դաժան հարստահարությունների, զուրկ էին կյանքի, պատվի և ունեցվածքի անվտանգությունից:

Կովկասյան ճակատում Ռուսական բանակն հարձակման է անցնում Ալեքսանդրապոլ–Կարս և Երևան–Ալաշկերտ ուղղություններով: Տեր-Ղուկասովի զորքերը Մասխնեբի արանքով ներխուժում են Բայազետ, որը հանձնվում է առանց դիմադրության: Ռուսներն առաջ են շարժվում և գրավում Դիադինը, Ղարաքիլիսեն, Ալաշկերտը: Այդ ընթացքում նրանց է հանձնվում նաև Արդահանը:

Մուխտարն իր ուժերը վերադասավորում է և կենտրոնացնում Կարսի շրջանում: Նրան հաջողվում է ռուսներին հետ մղել: Տեր-Ղուկասովը շրջապատման վտանգից խույս տալու համար Ալաշկերտից նահանջում է: Բանակի հետ հեռանում են հազարավոր հայ գաղթականներ: Թուրքերը շրջապատում են Բայազետի բերդը, որտեղ Ֆ. Շտոկովիչի հրամանատարությամբ գործող ռուսական մի փոքրիկ ջոկատ հայ բնակչության հետ միասին հերոսական դիմադրություն է ցույց տալիս թուրքական 10 հազարանոց բանակին: Տեր-Ղուկասովը 2500 հայ ընտանիքի հասցնում է ռուսական սահման և հունիսի 26-ին նորից արշավում Բայազետի վրա: Թուրքերը 23 օր դիմադրում են, սակայն ավելին անել չեն կարողանում և պաշարումը վերացնում են: Այդ ընթացքում Մուխտարը շարժվում է դեպի Երևան: Տեր-Ղուկասովին հաջողվում է պարտության մատնել Վանի զինվորական հրամանատար Ֆայիդին: Հոկտեմբերի 3-ին ռուսական զորքերը Ալաջադաղում գլխովին ջախջախում են թուրքերի գլխավոր ուժերին. թշնամին, 20 հազար մարդ կորցնելով, խուճապահար փախչում է: Հոկտեմբերի 23-ին թուրքերը նոր պարտություն են կրում Դևե Բոյունի մոտ՝ կորցնելով ևս 7000 մարդ: Ռուսական զորքերի մի մասը շարժվում է դեպի Կարին, իսկ գլխավոր ուժերը գրոհում են Կարսի վրա, որտեղ թուրքերն ունեին 30 հազար զորք, 300 թնդանոթ և 12 հզոր ամրություն: Լազարևին հաջողվում է ծանր մարտերով նոյեմբերի 18-ին գրավել Կարսի բերդը, ինչը և այս ռազմաճակատում վճռում է պատերազմի բախտը: Էրզրումը ռուսներին հանձնվեց 1878թ. փետրվարի 8-ին կնքված զինադադարի համաձայնագրով:

Ինչպես նախորդ, այնպես էլ Ռուս-թուրքական այս պատերազմը հայերը դիմավորեցին ոգևորությամբ: «Մեծ հույսով,– գրում է Յ. Վեսելովսկին,– և ռուսական զենքի հաջողության ցանկություններով 1877-78թթ. պատերազմը սկսվեց հայոց աշխարհի համար: Թուրքական բանակի յուրաքանչյուր պարտության հետ հայ հայրենասերների գիտակցության մեջ ավելի ամուր ու որոշակի էր արմատավորվում չուտով ազատագրվելու հույսը»[30]:

Պատերազմին մասնակցեց 42 հազար հայ կամավոր, հիմնականում՝ արևելահայեր: Ռուսական բանակին մեծ խանդավառությամբ դիմավորեցին, բազմաբնույթ օգնություն ցույց տվեցին արևմտահայերը: Նրանք մասնակցում էին մարտական գործողություններին, սննդամթերք մատակարարում, խնամում վիրավորներին, օգնում փոխադրումներին: Հայերը կապավոր էին, հետախույզ, Ռուսական զորքին Կարսի բերդի ծերպերով առաջնորդող: Ռուսական բանակին տրամադրվում էր ամեն ինչ՝ սայլ, ձի, ուղտ, ցորեն, գարի, անասնակեր, տներ՝ զորանոցի համար, հայերը կերակրում, օթևանում, խնամում էին զինվորներին: Պատերազմի մասնակիցներից մեկը՝ Ս. Քիչմիշևը, գրում է. «... Հայ բնակչության բարեկամական վերաբերմունքն այնքան մեծ է լինում, որ (ռուս) զինվորները կարծում են, թե իրենք ոչ թե թշնամու հողում են գտնվում, այլ սեփական տանը...

[30] Веселовский Ю., *Очерки армянской литературы, истории и культуры*, Ереван, 1972, стр. 417.

*եվ իրոք, ներկա պատերազմի ընթացքում հայերն այնպիսի օգնություն ցույց տվին մեզ, որ վտանգելով իրենց կայքն ու գույքը, մինչև իսկ իրենց կյանքը՝ անթիվ անգամներ մեզ պաշտպանեցին, և մենք լրիվ համոզվեցինք՝ Փոքր Ասիայում մեր միակ դաշնակիցը հայերն են»*[31]:

*Սակայն այս խնդրում Կ. Պոլսի գործիչները պատերազմի սկսվելուց հետո էլ համակարծիք չէին: Պատերազմի առթիվ պատրիարքի շրջաբերականում ասված էր.*

*«Հինգ դարե ի վեր օսմանյան հզոր պետությունը մեծամեծ չնորհներ է պարգևել հայությանը: Եթե այսօր հայ ազգը կը պահե իր կրոնքը, եկեղեցին, լեզուն, պատմությունը և ավանդույթները և, վերջապես, եթե կը զգա յուր էությունը, բարեխնամ տերության չնորհին արդյունքն է: Այս չնորհներուն փոխարեն հայ ազգն ալ հավատարիմ հպատակություն ցույց տված է և հարատև երախտագիտություն սնուցած սրտին մեջ որդվոց որդիս...*

*Ստույգ է թեև, որ հայ ազգը մերթընդմերթ գավառներու մեջ, բարեխնամ տերության կամքին հակառակ, հարստահարությանց ենթակա եղած է... Հույսով ենք սակայն..., որ անոնց առաջ պիտի առնվի և մեր գավառացի ազգայինք լիովին պիտի վայելեն բարեխնամ տերության մեր ազգի հանդեպ ունեցած սիրո և համակրանքի արդյունքը:*

*Հայ ազգը չի կրնար անտարբեր մնալ տերության արդի ծանրակչիռ պարագաներուն մեջ և պարտավոր է անկեղծ օժանդակություն մատուցանել: Վասնզի օսմանյան երկիրը պաշտպանել, Հայաստան պաշտպանել ըսել է, նույնիսկ հայուն կրոնը, դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը, պատիվը և կյանքը պաշտպանել ըսել է»*[32]:

*Պատերազմի առթիվ թուրքամետ հայտարարությամբ հանդես գալու պատրիարքի քայլը հասկանալ կարելի է, սակայն չափի զգացողության կորուստը՝ ոչ: Բնականաբար, թուրքական շրջաններում այս հայտարարությունը հիացմունքով ընդունվեց, իսկ հայ գործիչներն իրենց վերաբերմունքն արտահայտեցին «լուռ չեզոքությամբ», չնայած ակնհայտ էր, որ այդ փաստաթուղթը պարիարքարանին դուրս էր դնելու բարենորոգումների համար ծայր առնող պայքարից:*

*Պոլսահայերը պարտաճանաչությամբ կատարում էին Թուրքիայի քաղաքացու իրենց պարտականությունները: Հայ երեսփոխանները օսմանյան խորհրդարանում դատապարտում էին ռուսական հարձակումը, գտնում, որ ռուսները ստում են, որ իրենք պաշտպանում են քրիստոնյա բնակչությանը, որ հայերը «պետք չունեն ռուսների պաշտպանությանը և պատրաստ են կռվելու հայրենիքի և սուլթանի համար»:*

*Այդ նույն ժամանակ Կ.Պոլիս լուրեր էին հասնում, որ մահմեդական բաշիբոզուկը կողոպտում է, քանդում, հրդեհում, ավերում հայկական գյուղերը, կոտորում բնակիչներին: Իսկ սուլթանը խուսանավում էր: «Ընդառաջ գնալով» հայերին՝ թույլատրեց նրանց զորակոչը և մասնակցությունը ռուսների դեմ պատերազմին: Հայերն իսկույն հասկացան Ելդըզի մենավորի սատանայական դիտավորությունը: Արփ. Արփիարյանը գրեց. «Թուրքիայի հայերը զինվորագրության սկզբունքին դեմ չեն, միայն թե ներկա պատերազմին մասնակցելուն դեմ են»*[33]:

*Կ. Պոլիսը տեղական իշխանություններին հրահանգեց ուժեղացնել բռնությունները հայերի հանդեպ: «Կարծես,— նկատում է Արփ. Արփիարյանը,— թուրք կառավարությունն իր վերջին ճիգն է թափում, քանի դեռ ժամանակ ու միջոց ունի սաստիկ հարված հասցնելու հայ ազգին»*[34]:

*Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հայ բնակչության կորուստների թիվը հասավ 60 հազար հոգու*[35]:

---

[31] **Кишмишев** С.О., *Война в Турецкой Армении 1877-1878гг.*, СПб., 1884, стр. 12, 127-128.
[32] **Զորմիսյան Լ.**, *Նշվ. աշխ.*, հ. Ա, էջ 264-265:
[33] *«Մշակ», 1878*, էջ 41:
[34] *Նույն տեղում*, թիվ 86:
[35] *Նույն տեղում*, 1880, թիվ 116:

Իհարկե, հայկական նահանգներում տեղի ունեցած վայրագությունների մասին լուրերն ու ռուսական զենքի հաղթանակները չէին կարող չփոխել պոլսահայերի տրամադրությունները, հայկական բոլոր շրջաններում խոր զայրույթ առաջացավ, այն աստիճան, որ կառավարությանը մինչ այդ պաշտպանող և գովաբանող հայ երեսփոխաններն իսկ օսմանյան խորհրդարանի բեմից իրենց բողոքն ու զայրույթն արտահայտեցին: Կարինի երեսփոխան Պալաքյանն ասաց. «Պատերազմից առաջ քրդերին երբեմն բանտարկում էին, սակայն քիչ անց գլխավորներին ազատ էին արձակում, և նրանք վայրագությունները սկսում էին ավելի կատաղի: Այս քրդերին համախոհ ու գործակից էին շատ վալիներ ու մութեսարիֆներ... Երբ կուսակալներին հարցնում էին, թե ինչու քրդերը չէին պատժվում, քանի որ նրանց զսպելու համար երկու վաշտը միանգամայն բավական էր, պատասխանում էին, որ այդ գործում պետական գաղտնիք կա... Պարզվեց հետևյալը: Երբ հայերը Հայաստանում ապստամբեին, քրդերը նրանց զսպելու էին և ռուսներին պատերազմ հայտարարելու դեպքում քրդերն օգնելու էին պետությանը կամավոր զինվորներ տալով»[36]:

Կ.Պոլսի պատրիարքարանն անգամ 1877-78ԹԹ. պատերազմի առաջին ամիսներին անորոշության մեջ էր: Մի խումբ եպիսկոպոսներ ժողովի հավաքվեցին, որտեղ Խրիմյան Հայրիկը խիստ քննադատությամբ հանդես եկավ պատրիարք Ն. Վարժապետյանի հասցեին: Նա առաջարկեց ընտրել նոր պատրիարք, որպեսզի հնարավոր դառնար առաջ քաշելու ազգային քաղաքականության «նոր ուղղություն»: Միջնորդ-հաշտարարի դերը ստանձնեց Մ. Իզմիրլյանը: Ն Վարժապետյանը հասկացավ, որ ռուսական առաջխաղացումը առաջադրում էր նոր մոտեցումներ և հայտարարեց. «Ուր որ ազգի ճշմարիտ շահերն են, ես միշտ այնտեղ եմ»:[37] Այսինքն՝ նա ճակատով չուռ էր գալիս դեպի Ռուսաստան:

Սրանով արևմտահայ գործիչների շրջանում համերաշխություն առաջացավ նաև գործողությունների համակարգման հարցում: Ն. Վարժապետյանը, որ մինչ այդ ռուսական հովանավորությունն անպատեհ և նույնիսկ վտանգավոր էր համարում, հասարակական կարծիքի ճնշման ներքո հրաժարվեց միայն թուրքական կառավարության միջոցով բարենորոգումների հասնելու գաղափարից և «միացավ անմիջապես ռուսների պաշտպանությանը դիմելու կողմնակից հոգևոր և աշխարհիկ գործիչներին»: «Պատրիարքի այս վճիռը, իբրև պաշտոնական և օրինական որոշում,– գրում է Լ. Զորմիսյանը,– գործնականում մեկնարկ հանդիսացավ Հայկական հարցի միջազգայնացման համար»[38]: Այս կարծիքը վերապահումներով է ընդունելի, քանի որ Հայկական հարցի միջազգայնացման մեկնարկը Էլիոթի հետ Ն. Վարժապետյանի հանդիպումն էր և նրա ելույթը Կ. Պոլսի դեսպանաժողովում հայկական նահանգներին ինքնավարություն տալու վերաբերյալ:

1877Թ. հոկտեմբերի 21-ին հայ հոգևոր առաջնորդների՝ Ղալաթիայում տեղի ունեցած գաղտնի ժողովը որոշում ընդունեց՝ Հայկական հարցի լուծումը վստահել Ռուսաստանին:

Ժողովում ձևավորվեցին հայերի հետևյալ պահանջները. 1. Ռուսները չպետք է Մեծ Հայքը հետ տան Թուրքիային և մինչև Եփրատի ափը պահեն իրենց՝ այն կցելով Արարատյան մարզին: 2. Իսկ եթե Ռուսաստանը դիտավորություն չունի նոր տարածքների տիրանալու, ապա Արևմտյան Հայաստանին ու հայ ժողովրդին նույնպես պետք է չնորհվեն այն բոլոր արտոնությունները, ինչը չնորհվելու է Բուլղարիային: 3. Եթե հայկական տարածքները հետ են տրվելու Թուրքերին, պետք են գործնական երաշխիքներ, որ օս-

---

[36] Զորմիսյան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 296:

[37] Սարուխան, Հայկական խնդիրն ու Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 265-266:

[38] Նույն տեղում, էջ 328:

*մանյան կառավարությունը կապահովի երկրի բարենորոգումն ու օսմանահպատակների իրավահավասարությունը: Այսինքն՝ առաջադրվում էր բարենորոգումների պահանջ հետևյալ բովանդակությամբ. հայկական նահանգներում՝ 1. ոստիկանության մեծ մասը պետք է հայեր լինեն, 2. հայերին կանոնավոր ռազմական կրթություն տրվի, 3. քրդերն ու չերքեզները հեռացվեն Հայաստանից կամ ապահովվի նրանց անցումը նստակյաց կյանքի, առաջին շրջանում այդ ժողովուրդներից ոստիկաններ չհավաքագրվի, 4. քաղաքացիական պաշտոնները հանձնվեն հայերին, հայերից նշանակվեն կուսակալներ ու մութեսարիֆներ, 5. այս ամենի գործադրումից հետո միայն՝ ռուսական զորքը հանվի գրավված տարածքներից:*

*Հստակ երևում է, որ ժողովի որոշումները հանդիսացան հետագայում բազմիցս կազմված հայկական բարենորոգումների ծրագրերի առանցքը: Դրանք նաև վերածվեցին կարգախոսի. «Անկախություն կամ Ռուսա-Հայաստան»:*

*Պատրիարքի և ութ եպիսկոպոսի ստորագրությամբ նամակ ուղարկվեց Ալեքսանդր 2-րդին:*

*Պոլսահայ գործիչները պարզապես անտեղյակ էին, որ ցարական կառավարությունը վճռականապես դեմ էր հայկական ինքնավարությանը՝ լիներ դա Ռուսաստանի թե Օսմանյան կայսրության կազմում: Պատճառները հետևյալներն էին. ա) Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալն ուղղակիորեն էր հակադրվում ցարական ծրագրին՝ տիրանալ Արևմտյան Հայաստանին, այն մտցնել Ռուսական կայսրության կազմի մեջ և ապա առաջանալով՝ դուրս գալ Միջերկրական ծով, բ) Արևելյան և Արևմտյան Հայաստանների միավորումը Ռուսաստանի կազմում համարվում էր անթույլատրելի, որովհետև դա, նախ, «վտանգավոր էր համարվում՝ ենթադրվում էր, թե միացյալ Հայաստանը մշտապես հավակնելու էր անկախության» և ապա՝ Ռուսաստանը վաղուց հրաժարվել էր ազգային սկզբունքով վարչական բաժանումից:*

*Ուստի, չնայած նամակի հեղինակների ակնարկին, թե իրենք մեծ զիջումներ են անում Ռուսաստանին, Պետերբուրգը ոչ միայն ոգևորություն չդրսևորեց, այլև նամակն անպատասխան թողեց: Դրա փոխարեն անհանգստացավ Լոնդոնը: Հ. Լեյարդը պատրիարքին առաջարկեց՝ Անգլիան պատրաստ է իր հովանավորության տակ ստեղծելու Հայաստանի ինքնավարություն: Ազգային ժողովը 1877թ. դեկտեմբերին քննարկեց այդ առաջարկությունն ու մերժեց, պատճառաբանելով, թե որևէ երաշխիք չկա, որ Անգլիան միջազգային համաժողովում կպաշտպանի ինքնավարության գաղափարը ու նաև այն, որ միակողմանի կողմնորոշումը բացասական հետևանք կունենար հայության համար, և Լեյարդի առաջարկությունն ավելին չէր, եթե ոչ Լոնդոնի հերթական բանսարկություն[39]:*

*Ազգային ժողովի որոշմանը Պետերբուրգի արձագանքը, իսկապես, տարօրինակ էր: Հայերը մեղադրվեցին Ռուսաստանին դավաճանելու և Անգլիայի վրա հույս դնելու մեջ, նվաստացվում էր հայերի ներդրումը պատերազմում Ռուսաստանի հաղթանակի ապահովման գործում:*

*Պոլսահայերի շրջանում իրար էին բախվում երեք կողմնորոշումներ՝ ռուսական, անգլիական, թուրքական, և հասարակական կարծիքն այդպես էլ չէր հստակվում: 1878թ. փետրվարին Ն. Վարժապետյանը երկու նամակ գրեց: Առաջինը հասցեագրված էր ցարին «հայ ժողովրդին պաշտոնապես հովանավորելու» խնդրանքով, իսկ մյուսը՝ սուլթանին՝ «միջոցներ ձեռք առնելու հայության կյանքի, պատվի և ունեցվածքի անվտանգությունն» ապահովելու, հայկական նահանգներում «ժամանակի ոգուն համապատասխան» կառավարում ձևավորելու խնդրանքով:*

---

[39] Бороздин К., *Воспоминания о графе М. Т. Лорисе Меликове, см, "Исторический вестник"*, 1899, N12, стр. 459:

Այս պայմաններում ազգային ժողովն ընդունեց հետաքրքիր որոշում՝ բանակցություններ վարել թե՛ Անգլիայի, թե՛ Ռուսաստանի հետ և դրանց բովանդակության մասին տեղյակ պահել Բ. Դռանը[40]:

Երբ պատերազմն ավարտվեց և պարզ դարձավ, որ գրավված տարածքներից Ռուսական բանակի հեռանալն ամենևին էլ անհնար չէր, արևմտահայերը խուճապի մատնվեցին: Թե՛ Թուրքիայում և թե՛ Ռուսաստանում հայ գործիչները քայլերի դիմեցին աղետի առաջն առնելու համար: Հատկապես խրոխտ էր հնչում արևելահայ գործիչների ձայնը, ովքեր քաջածանոթ չէին արևմտահայ իրականությանը և առանձնապես էլ վտանգված չէին: Գր. Արծրունին «Մշակ»-ում գրեց. «Ամոթ կլինի հայերին, թե իրենց իրավունքները պաշտպանելու և նոր իրավունքներ ձեռք ձգելու համար ձայն չբարձրացնեն, երբ Թուրքիայի հպատակ մյուս ազգություններն իրենց անձն են զոհում, արյուն են թափում ազատություն ստանալու համար»[41]:

Հայաստանաբնակ հայությունն անկախության պահանջ չէր դնում, նա ձգտում էր հպատակության փոփոխության՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնել: Դեռ 1876թ. հուլիսի 1-ին «Մշակ»-ի թղթակիցը Կ. Պոլսից գրեց. «Փոքր Ասիայի հայերի ցանկությունն է միանալ ռուսաց պետությանը հանգիստ ապրելու և հաստատ օրենքների առավելությունը վայելելու համար»: Այս խնդրում հայաստանաբնակ արևմտահայերի և արևելահայերի կարծիքները համընկնում էին: Գր. Արծրունին ու նրա համախոհները համոզված էին, որ Հայաստանի անկախության ցանկացած ծրագիր Ռուսաստանի կողմից մերժվելու է, եթե «նույնիսկ այդ անկախության շրջագծից դուրս նետվեին Ռուսական կայսրությանը միացած հայկական տարածքները»:

Պոլսահայերի կարծիքները հստակություն չունեին: «Հայերը զարգանալով մտավորապես, նյութապես և բարոյապես,– գրում է «Մեղու»-ն,– դառնում են անհրաժեշտ ու կարևոր քաղաքացիներ իրենց բնակած երկրներում: Այդպիսով նրանք մեծ կշիռ են ստանում, և կգա մի ժամանակ, երբ տաճիկը, քուրդը, կիսավայրենի թուրքմենը հայերին կդիմեն ուսում և գիտություն ստանալու համար: Տաճկա-Հայաստանում մտավոր և տնտեսական գերազանցություն ապահովելով՝ հայերը դառնում են երկրի հզոր տարրերից մեկը, լրացնելով մյուսի՝ թուրքի թերությունները: Այդ երկու տարրերի ներդաշնակությամբ կազմվելու է տաճկա-հայկական քաղաքական մարմին...»[42]:

Տարակարծություններ կային նաև Հայկական հարցի լուծման համար պայքարի եղանակների խնդրում: Արևմտահայության հիմնական մասը համաձայն էր «Փորձ»-ի այն կարծիքին, որ լավագույնը պայքարի խաղաղ միջոցներն էին՝ բողոքներ, դիմումներ և այլն, բայց ոչ ապստամբություն, իսկ Գր. Արծրունին ու չատ արևելահայ գործիչներ արևմտահայերին զենքի էին կոչում:

Թե՛ պատերազմի նախօրեին և թե՛ ընթացքում հայ ժողովրդի երկու հատվածներում էլ տիրապետողն այն մտածողությունն էր, որ Հայկական հարցը ոչ թե հատվածային, այլ համահայկական հարց է, որ այն ոչ թե տնտեսական ու սոցիալական, այլ ազգային քաղաքական բովանդակություն ունի, որ այդ հարցի լուծումը չի կարող այլևս մնալ Թուրքիայի մենաշնորհը, ներքին խնդիրը, այլ պետք է դասվի միջազգային հանրության ուժերով լուծվելու հրամայական ունեցող հարցերի շարքին:

Երբ Ռուս-թուրքական պատերազմն արդեն ընթացքի մեջ էր և արձանագրում էր ռուսական զենքի հաղթանակներ, հայության շրջանում թափ առավ չհապգրգիռ հետաքրքրությունը Արևմտյան Հայաստանի վաղվա օրվա հանդեպ. հպատակությունը փոխե՞լ (անցում Ռուսաստանին), թե՞ մնալ Օսմանյան կայսրության կազմում ինքնավար կարգավիճակով:

---

[40] *РГВИА, ф. 1300, оп. 17,* д. 26.
[41] Սարուխան, նշվ. աշխ., էջ 138:
[42] Նույն տեղում, էջ 141:

Այս խնդրի առթիվ «Մշակ»-ի 1877թ. մայիսի 12-ի համարում Գր. Արծրունու հոդվածը լայն արձագանք ունեցավ ոչ միայն հայկական, այլև ռուսական ու եվրոպական մամուլում, իսկ բելգիական "Indépedance Belge"-ն իր թիվ 175-ում հանդես եկավ ապագա Հայաստանի կարգավիճակի մասին առաջարկներով: Թերթը գտնում էր, որ Արևմտյան Հայաստանի միացումը Ռուսաստանին նպատակահարմար չէր: Մերժվում էր նաև նրա անցումը Անգլիայի հովանավորության տակ. առաջարկվում էր Հայաստանը թողնել Օսմանյան կայսրության կազմում «քրիստոնյա իշխանի» գլխավորությամբ և սահմանադրական հիմքի վրա: Այդ իշխանին հաստատում էր սուլթանը. դրանով ավարտվում էր նրա միջամտությունն ինքնավար Հայաստանի ներքին կյանքին: Հայկական հարցի լուծման այս «բելգիական պլանը» նույնպես պարունակում էր գրեթե բոլոր այն դրույթները, որոնք հետագայում տեղ գտան հայկական նահանգներում բարենորոգումներ մտցնելու ծրագրերում:

Առաջարկվող ծրագրում նաև ասվում էր, որ Արևմտյան Հայաստանի առաջարկվող նոր կարգավիճակը ոչ միայն նշանավորելու էր հայ ժողովրդի ազատագրումը, այլև օգտակար էր նաև Թուրքիային, որը հնարավորություն էր ունենալու հայերից ստանալու հարկերը: Ազատ Հայաստանը դառնալու էր բուֆեր Ռուսաստանի, Թուրքիայի ու Իրանի միջև և հաստատելու էր խաղաղություն ու հանդարտություն այդ երեք պետություննեբի սահմանների վրա, բարելավելու էր ռուս-անգլիական հարաբերությունները, նաև հնարավորություն էր ստեղծելու չորս միլիոն հայության համար «ներդրում կատարելու մարդկության առաջադիմության գործում»:

Եթե Թուրքիան չհամաձայնվեր, ապա հարկ էր պահանջել ինքնակառավարում, ինչպես դա կատարվեց Հայաստանում, Զեռնոգորիայում, Սերբիայում, Ռումինիայում[43]:

Իհարկե, այս ծրագիրը հաշվի չէր առնում աշխարհաքաղաքական մի քանի կարևոր խնդիրներ: Դրա իրականացումը տարբեր պատճառներով հանդիպելու էր ոչ միայն Թուրքիայի, այլև Անգլիայի և Ռուսաստանի դիմադրությանը. վտանգվում էր դեպի Հնդկաստան առևտրական ճանապարհը, իսկ Ռուսաստանի առջև լրացուցիչ խոչընդոտ էր «տաք ջրեր» դուրս գալու:

Սակայն նաև ակնհայտ էր, որ Արևմտյան Հայաստանում գոյություն ունեցող կացությունը նույնպես հղի էր աշխարհաքաղաքական վտանգներով: Հ. Լեյարդը 1877թ. մայիսի 30-ին գրում է Լոնդոն, թե Ռուս-Թուրքական տևական պատերազմի դեպքում Ռուսաստանի վերահսկողության տակ էր անցնելու Օսմանյան տարածքի մեծ մասը, ինչը Անգլիայի չահերի համար «մեծ վտանգ» էր: Ռուսաստանի կողմից «Հայաստանի գրավումը մյուս տերությունների համար էական հետևանքներ չէր ունենալու», իսկ Անգլիայի «Հնդկական տիրապետության համար» լինելու էր ավելի քան աղետալի: «Այդ պարագայում Ռուսաստանը գերիչխելու էր ամբողջ Փոքր Ասիայում, ինչպես նաև Եփրատ և Տիգրիս գետերին կից հարթավայրերում, որոնք վերջնականապես անցնելու էին Ռուսաստանին»: Բացի այդ, չարունակում է Լեյարդը, «Հայաստանում և Հյուսիսային Պարսկաստանում Ռուսաստանը ձեռք կբերի ուժեղ և մեծաթիվ ազգաբնակչություն, որը կարող է հանդիսանալ հզոր բանակի հիանալի կորիզ, պատրաստ ցանկացած պահի ներխուժելու Հնդկաստան... Հայաստանին տիրանալը, Գիլանի և Մազանդարայի միացումը Ռուսաստանին ունենալու է բարոյական այնպիսի ազդեցություն մեր մահմեդական հպատակների և Միջին Ասիայի բնակչության վրա, որ այդ ճգտումը չի կարող վրիպել այն գործիչների աչքից, ովքեր հասկանում են Հնդկաստանի նշանակությունը Անգլիայի համար»[44]:

Եթե Անգլիան Միջին Ասիայում չկարողացավ կանգնեցնել Ռուսաստանի առաջխաղացումը, ապա ամեն ինչ անում էր Արևմտյան Հայաստանում դա թույլ չտալու համար, մանավանդ որ այն մտնում էր հզոր կայսրության կազմի մեջ: Նկատի էր առնվում նաև

[43] «Մշակ», 04.07. 1877:
[44] Նույն տեղում, 25.08.1877:

այն, որ բրիտանական ռազմանավերը Միջերկրական ծովում էին, սուլթանական պալատն էլ թշնամական կեցվածք ուներ Ռուսաստանի հանդեպ: Ահա Լոնդոնի այս թուրքոֆիլ կեցվածքն հանդիսացավ Հայկական հարցի լուծման ճանապարհի ամենամեծ խոչընդոտը:

Սկսելով պատերազմ Թուրքիայի դեմ՝ Ալեքսանդր 2-րդը ձգտում էր լուծել վեց խնդիր, որից մեկը ուղղակի առնչվում էր Արևմտյան Հայաստանի հետ. միջոցառումներ ձեռնարկել կովկասյան լեռնականների և բալկանյան գաղթականների՝ Հայաստանում բնակեցնելու դեմ, սահմանափակել մահմեդական բաշիբոզուկի գործողությունները: Ի դեպ, ցարը ձևականորեն ելնում էր նաև այն իրողությունից, որ 1876թ. դեկտեմբերի 11-23-ին Կ. Պոլսում կայացած դեսպանաժողովը քննարկեց կայսրության քրիստոնյա մարզերի վարչական կարգավիճակը և որոշեց այդ մարզերի նահանգապետ նշանակել քրիստոնյաների՝ մեծ տերությունների համաձայնությամբ, ապահովելու քրիստոնյա բնակչության անվտանգությունը[45]:

Ցարական դիվանագետները, այդ թվում նաև Իգնատևը, թերահավատ էին քրիստոնյաների համար բարենորոգումներ անցկացնելու Աբդուլ-Համիդի խոստումների հանդեպ և գտնում էին, որ տերությունները պետք է հսկիչներ նշանակեն: Ռուս դեսպանը նաև գտնում էր. «... անկարգությունների և քրիստոնյաների կոտորածների դեպքում տերությունների անմիջական միջամտությունը չպետք է բացառվեր»[46]:

Իսկ Ռուս-թուրքական պատերազմը, որն ընթացքի մեջ էր, կոչված էր նաև հարկադրելու բոլորովին ուրիշ մոտեցումներ աշխարհատարածքի մի շարք հիմնահարցերին:

Պատերազմում Ռուսաստանի հաղթանակները տագնապ առաջացրեցին Եվրոպայում: Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Անգլիան և Իտալիան մշակեցին Ռուս-թուրքական պայմանագրի սկզբունքները՝ ճանաչել Սերբիայի և Ռումինիայի անկախությունը, Բոսնիայի, Հերցեգովինայի և Բուլղարիայի ինքնավարությունը, իսկ Փոքր Ասիայում ուժի մեջ էր թողնվում Status quo-ն, ինչը դժգոհություններ առաջացրեց ռուսական շրջանակներում. *"Голос" (29.12.1877)* թերթը պահանջեց բարեփոխումներ մտցնել Արևմտյան Հայաստանում:

Թուրքերն առիթը բաց չեն թողնում հայերի վարքագիծը Ռուս-թուրքական պատերազմում համարելու դավաճանություն: Իրականությունն այդպես չէր: Երբ ռուսները գրավելով Կարսը շարժվեցին դեպի Էրզրում, Ելդըզում իրարանցում առաջացավ: Նոյեմբերի 16-ին տեղի ունեցավ կայսրության մեծ խորհրդի նիստը. նախագահում էր անձամբ սուլթանը: Խորհուրդն արտահայտվեց հօգուտ խաղաղության՝ պայմանով, որ պահպանվեր կայսրության տարածքային ամբողջականությունը:

Բ. Դռանն առաջին հերթին անհանգստացնում էր Արևմտյան Հայաստանի ճակատագիրը: Մեծ վեզիրը Ն. Վարժապետյանին առաջարկեց պարգևատրել Վանի, Մուշի, Էրզրումի հոգևոր առաջնորդներին, միայն թե նրանք աջակցեցին պահպանելու «Հայերի հավատարմությունը» թուրքական հայրենիքին: Շատ տեղերում այս առաջարկն արձագանք ունեցավ, մասնավորապես՝ Կարինում: Չնայած դրան՝ թուրքերը ոչնչացրեցին հայկական 100 եկեղեցի[47]:

Այդ ընթացքում քննարկվում էին հայկական հարցի լուծման մի քանի տարբերակներ՝ Ռուսաստանի հետ միավորում, հայկական պետականության վերականգնում կամ ինքնավարություն որևէ մեծ իշխանի իշխանության ներքո: Հայ Ազգային ժողովը նույն օրերին գտավ. «Մեծ դժբախտություն և հումանիզմի հանդեպ հանցագործություն կլինի, եթե եվրոպան պատերազմի ավարտին մեզ նորից թողնի թուրքական լծի տակ»:

---

[45] *Записки графа Н. Игнатьева. "Исторический вестник"*, 1914, Т. 136, стр. 68.

[46] *Национальная библиотека Российской Федерации*, ф. 330, п. 38, д. 41.

[47] *"Голос"*, 19.12.1877:

1877թ. նոյեմբերին Կովկասի փոխարքա մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչը ցարին ներկայացրեց Թիֆլիսի հայ համայնքի նամակ-խնդրանքը՝ ազատագրելու Օսմանյան Թուրքիայի հայությանը: Ցարն արձագանքեց անմիջապես՝ հասկացնելով, որ «հավանություն է տալիս հայերի խնդրանքին»[48]: Չնայած ցարն անգամ չնորհակալություն հայտնեց Թիֆլիսի հայ համայնքին, Պետերբուրգում կարծիքներն Արևմտյան Հայաստանին տիրանալու հարցում ոչ միայն միասեռ չէին, այլև իրարամերժ էին: "Северный вестник" թերթը գրեց. «Մեր ինչի՞ն են պետք Կարսն ու Էրզրումը»[49]:

Քնած չէին նաև արևմտյան դիվանագետները: Լեյարդի խորհրդով՝ Ելդըզը պատվիրակություններ ուղարկեց Եվրոպայի առաջատար երկրներ առաջարկությամբ՝ դառնալ կայսրությունում բարենորոգումների անցկացման երաշխավորներ, ինչը քայլ էր՝ պահպանելու Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Սուլթանը խնդրեց Լոնդոնի միջնորդությունը Ռուսաստանի հետ պայմանագիր կնքելու[50]: Անգլիական կառավարությունը համաձայնվեց:

Երբ Ազգային ժողովում քննարկվում էր քրիստոնյաներին զորակոչելու հարցը (04.12.1877), Խ. Նար-պեյն ասաց, թե չվարժված ու ռազմական գործին անտեղյակ քրիստոնյաներին զորակոչելը նշանակում է նրանց «ուղարկել սպանդանոց», իսկ Մ. Իզմիրլյանն անդրադարձավ քրիստոնյաների ու մահմեդականների անիրահավասարությանը կյանքի ամենատարբեր բնագավառներում: Դեկտեմբերի 17-ին քրիստոնյաներին զորակոչելու դեմ հանդես եկավ նաև Ն. Վարժապետյանը: Նա ասաց. «Հայ կրոնն արգելում է սուր մերկացնել պաշտպանելու մի կրոն, որը հակադիր է մեր կրոնին, մինչդեռ պատերազմը, որին մասնակցելու են մեզ հրավիրում, տարվում է մահմեդական կրոնի անունով և հայտարարված է սրբազան պատերազմ»[51]: «Թուրքիան քրիստոնյաների համար հայրենիք չէ, քանի որ համաձայն գոյություն ունեցող օրենքների, մեզ համարում են լոկ վարձակալներ»: Ազգային ժողովը զորակոչի հարցում բացասական պատասխան ուղարկեց կառավարությանը:

Գնալով հայերի հակաթուրք տրամադրությունները համընդհանուր էին դառնում: Ահա դրանից օգտվեց Լեյարդը, երբ Ազգային ժողովին առաջարկեց Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը Անգլիայի հովանու տակ:

Արևելահայ մտավորականությունը մեծ աշխատանք ծավալեց ռուս հասարակությանը հայկական հարցին ծանոթացնելու ուղղությամբ: Մի խումբ հայ գործիչներ ուղերձ հղեցին ցարին, որում արևմտահայության ողբալի վիճակի նկարագրությունից զատ ասվում էր. «Մեր արյունակից և կրոնակից եղբայրների վիճակի բարելավման ամբողջ հույսը դրել ենք Ռուսաստանի հզոր հեղինակության ուժի վրա և միմիայն ինքնակալ կայսրին ենք ապավինում: Մեր ամենախոնարհ խնդրանքն է մահմեդականներից ճնշված հայ ազգին իր հզոր ձեռքով պաշտպանել Թուրքիայի մյուս քրիստոնյաներին հավասար և այդ անել այն միջոցներով, ինչը հարմար կհամարվի»[52]:

Մինչդեռ ցարական դիվանագիտությունը հայկական հարցին առաջնային նշանակություն չտվեց, այլ օգտագործեց իբրև մանր դրամ ամենատարբեր շահեր ապահովելու համար: Նաև այդ պատճառով պոլսահայ գործիչները շարունակում էին տարակուսել, հարցի լուծման ամենատարբեր, ոչ քիչ դեպքերում իրարամերժ ծրագրեր առաջարկել: Այդ տարընթացության արտահայտություն էր նաև այն ծրագիրը, որով Փոքր Հայքը մնալու էր Օսմանյան կայսրության կազմում, իսկ Մեծ Հայքն անցնելու էր Ռուսաստանին:

---

[48] «Մշակ», 08.12. 1877:
[49] Նույն տեղում, 15.12. 1877:
[50] Նույն տեղում, 29.12.1877:
[51] "Тифлисскне ведомости", 03.01.1878.
[52] Զորմիսյան Լ., Նշվ. աշխ., հ. Ա, էջ 326:

Ջի կարելի Հայկական հարցում ցարական կառավարության կեցվածքը հիմնավորել հայկական չրջանների տարակարծություններով: Վերջինները միայն պատրվակ էին: Ռուսական քաղաքականությունը սեփական մամուլի միջոցով հայերի հասցեին չէր խնայում ամենազազրելի արտահայտություններ, անգամ մեղադրում, թե հայերը ձգտում էին «Թուրքա-Հայաստանի մի մասը միացնել Ռուսաստանին»: Ճիշտ է, հրապարակվում էին նաև տրամագծորեն հակառակ բնույթի նյութեր, սակայն պաշտոնական քաղաքականությանը չատ ավելի հոգեհարազատ էին հակահայ հրապարակումները: Ռուսական այդ ոչ-բարոյական կեցվածքը հայերին մղեց սահմանազատվելու թուրքռուսական հարաբերություններից: Ադրիանապոլսի բանակցությունների ընթացքում ռուսական պատվիրակության նստավայրը վերածվել էր մեղվանոցի, օսմանահպատակ ժողովուրդների ներկայացուցիչները լցվել էին այնտեղ իրենց հարցերը լուծելու առաջարկություններով ու խնդրանքներով: Չկային միայն հայերը: Դրա հետևանքը եղավ այն, որ զինադադարի համաձայնագրում հայաստանի ու հայերի վերաբերյալ բառ անգամ չկար, ինչը խառնաչփոթ առաջացրեց: «Գրեթե հուսահատվելու իրավիճակ էր,– հիշում է Ն. Վարժապետյանը,– և չգիտեմ, թե ինչպես չհուսահատվեցինք: Անկարելի է նկարագրել ազգի մորմոքը...»[53]:

Պատրիարքը գործի է անցնում: Մինչ այդ տեղի հոգևոր առաջնորդ Գևորգ վրդ. Ռուսճուկլյանը հարաբերություններ արդեն հաստատել էր: «Քաղաքական պարտականություն էր ներկայանալ մեծ իշխան Նիկոլային և կոմս Իգնատևին,– գրում է Գ. Ռուսճուկլյանը,– բարի գալուստ մաղթելու համար: Պատեհ առիթի էի սպասում, երբ հանդիպեցի Ֆիլիպեի ռուսական նախկին հյուպատոս հայասեր բարեկամիս՝ Կիրովին: Նրան խնդրեցի ինձ ներկայացնել կոմս Իգնատևին՝ հայաստանի ապագա վիճակի մասին հստակ տեղեկություններ քաղելու համար: Հաջորդ օրն իսկ նրա ընկերակցությամբ ներկայացա կոմսին և ջերմ բարեմաղթություններ արտահայտեցի Ռուսաստանի կայսրին, որն ի սեր քրիստոնեության, արևելյան քրիստոնյաների ազատագրության համար պատերազմ հայտարարեց, ազատեց բուլղար քրիստոնյաներին և ասիաբնակ հայերին, որոնք նվազ հարստահարված ու թշվառ չեն, քան բուլղարները: Հետո ասացի, թե լսածիս համաձայն՝ Ռուսական բանակը գրավել է Հայաստանի մեծ մասը: Մեզ հաճելի է հուսալ, որ հայերը ևս ազատություն են վայելելու...»[54]: Շուտով ստացվում է նաև Ն. Վարժապետյանի նամակը ռուսական դեսպանին: Վերջինս Գ. Ռուսճուկլյանի միջոցով պատրիարքին տեղյակ պահեց, թե զինադադարի պայմանները հաստատված էին ցարի կողմից և դրանք փոխելն իր իրավասություններից վեր էր: Դեսպանը միաժամանակ չեշտեց հայերի կատարյալ պասիվությունը, մատնանշեց լուսավորչական, կազմակերպչական և քաղաքական որոշակի քայլերի անհրաժեշտությունը ինքնավարության հասնելու համար ու նաև ռուսական կողմնորոշման պարտադիր լինելը: «Թող ձեր պատրիարքն առանց ժամանակ կորցնելու գործի անցնի»,– իր խոսքն ավարտեց ռուս դիվանագետը[55]:

Մեծ հայքի էրզրումի, Բիթլիսի, Վանի և Սըվազի նահանգների ինքնավարության հարցը Իգնատևի հետ քննարկեցին նաև Ազգային ժողովի փոխնախագահներ Ս. Ասլանյանը և Հ. Նուբյանը: Խնդիրը լուծելու համար պատվիրակներն անհրաժեշտ էին համարում, որ ռուսական զորքերը գրավեին այդ նահանգները: Իգնատևը չհապաղեց «հիշեցնել», թե պատրիարքարանը մինչ այդ մասնակցել է Լեյարդի «բանակցություններին»: Նաև ասվեց, որ հայերի խնդրանքի մասին տեղյակ է պահվել ցարին:[56]

Սակայն ցարական գործիչները նենգում էին: Իգնատևը գրեց, թե հայերը «ճանճրացնում են» իրենց խնդրանքներով, իսկ Գորչակովը զգուշացրեց Իգնատևին.

---

[53] **Զորմիսյան Լ.**, Նշվ. աշխ., հ. Ա, էջ 327:
[54] Նույն տեղում, էջ 331:
[55] *"Русский вестник"*, 1878, т. 133, стр. 994.
[56] *"Исторический вестник"*, 1915, т. 140, стр. 58.

«Ձեզ, անշուշտ, հայտնի է մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչի՝ միապետի կողմից հաստատված առաջարկությունը՝ Հայաստանում նոր, «սահմանափակ սահմանի անցկացման վերաբերյալ»: Այս առաջարկությունը չէր համապատասխանում պատրիարքի հույսերին և սպասելիքներին... Երբ ապագա պայմանագրի հետ կապված որևէ հարց դժվարության առաջ է կանգնեցնում ձեզ, սահմանափակվեք հայտարարությամբ, թե այն Ձեզ տված հրահանգներով նախատեսված չէ...»:

Եվ իսկապես նախատեսված չէր: Ալեքսանդր 2-րդը մերժել էր Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու առաջարկը[57]:

Հայերի բարձրացրած հարցին ըստ էության պատասխանելու փոխարեն՝ Իգնատևը քարոզ է կարդում. «... Հայ ժողովուրդն ազգովի կամ Հայաստանի մի մասը չի կարողանալու գտնել այն ազատությունը, որ տրված է բուլղարացիներին, քանի որ հայերն անպատրաստ գտնվեցին և Հայաստանում վերածվել են մեռյալ տարրի... Թողնենք գավառահայության աղքատությունն ու անտարբերությունը, ցիրուցան վիճակը, անգամ պոլսահայերի ողջախոհ և գործունյա մասը, սկսած Նուբար փաշայից, արգելք դարձան բարենպաստ գործերի: Բայց մի վհատվեք... ապագայի հույսով այս պահից սկսած պատրաստ եղեք, պատրաստ՝ դաստիարակությամբ, ուսմամբ, քաղաքագիտությամբ, պատրաստ՝ նյութապես և բարոյապես, ներքին կազմակերպվածությամբ, պատրաստ՝ այն օրվա համար, երբ քաղաքականությունն առաջնորդի ձեզ դեպի ազատություն...»[58]:

Հայերի հետ հանդիպումներն անհետ չանցան: Իգնատևը գրեց Գորչակովին. «Կ. Պոլսի պատրիարքը ոչ միայն չնորհակալական նամակ... ուղարկեց գլխավոր հրամանատարին... այլև հայկական ծագումով ունեցող օսմանյան բարձրաստիճան պաշտոնատարներ Կ. Պոլսից եկան, որպեսզի ամենայն բացորոշությամբ խնդրեն Ռուսաստանի հովանավորությունը... Հայաստանի ինքնավարության հարցում»[59]:

Հայ-ռուսական բանակցությունները գնալով աշխուժացան: Պետերբուրգը հայերի նախաձեռնությանը շատ ավելի մեծ նշանակություն տվեց, քան Իգնատևը: Նկատի ունենալով, որ ռուսական զորքերի գրաված տարածքների պատկանելիության հարցը լուծվելու էր դիվանագիտական ուղիներով, որոնցում հայերի վերաբերմունքը, կողմնորոշումը կարող էր կարևոր դեր խաղալ, ցարը Իգնատևից պահանջեց հնարավորին չափ ընդառաջել հայերին:

Ասլանյանի և Նուբյանի հետ զրույցներից մեկի ժամանակ Իգնատևն ասաց, թե Ռուսաստանը մտադիր չէ սեփականացնել գրաված տարածքները, սակայն համաձայն է Հայաստանին տալ այնպիսի ինքնավարություն, ինչպիսին ունի Լիբանանը:

Ի պատիվ Ռուսական բանակի հաղթանակի, Ադրիանապոլսի հայոց եկեղեցում պատարագ տրվեց, որին ներկա էր նաև գլխավոր հրամանատար Նիկոլայն իր սպայակույտով:

Հայ ինը եպիսկոպոսների վերը նշված նամակում, Սան Ստեֆանոյի պայմանագիրը ստորագրելուց մի քանի օր առաջ (1878թ. փետրվարի 1), հասցեագրված ցարին, արդեն ակնհայտ էր նաև պոլսահայության ռուսական կողմնորոշումը: Արևմտահայերը, ասված է նամակում, այսօր «երեսի վրա իջված կկարծվի, միայն իրենք կը զգան, թե պիտի պաշտպանվին, սա բարեբախտություն ունենալով, թե Ռուսիո համար օտար չեն, զի իրենց ազգութենեն մի նշանավոր հատված արդեն այս երկրին մեջ բնակին և իրենց Մայր եկեղեցին նորին կայսերական մեծության բարձր պաշտպանությունը կը վայելե»: Պոլսահայ մտավորականության դեպի Ռուսաստան այդ չրջադարձի պատճառը ամենայն հստակությամբ չարադրված է եպիսկոպոս Վ. Մանկուեանն Մ. Իզմիրլյանի նամակում.

«Ժամանակը շատ բան կը փոխե, պարագաներուն և դեպքերուն պետք է հնազանդինք, մեր հին ընթացքը փոխելու ենք, մեր խորագիտությունը և չրջահայեցությունը պահելով դիմում ենք կայսեր:

---

[57] Նույն տեղում, էջ 52:

[58] Գեղամյան Ե., նշվ. աշխ., էջ 341:

[59] *Записки графа Н. П. Игнатьева, см. "Исторический вестник"*, 1915, т. 140, стр. 52.

*Այսօր Թուրքիա անոր ոտից ներքև է. մեծ մեծ ու նշանավոր մասը կորուսյս, Ասիական մասին ալ մենք տեր ըլլալու չանալու ենք, Թուրքիա այդ մասին մնացյալ, այսուհետև Ռուսիո խոնարհ ծառան է: Ամեն պատարագի մեջ Ռուսիո պաշտպանությունը կը կարոտինք, փութամք միշտ նորա համակրությունն ու սերը գրավել. փութամք այս անգամ բան մը ըլլալ. կամ գեթ ապագայի նախապատրաստություն ընել, հայկական խնդիրն այժմեն հանելով և օր մը, որ չատ չպիտի ուշանա, երբ Ասիական Թուրքիո խնդիրն իրմե (եթե այս անգամ չելլե) մեր երկրին վրա մեր բաժնին տերն ըլլանք»:*

*Երբ Գևորգ IV մերժում է Մ. Իզմիրլյանին, դա կ. Պոլսի հայկական առաջադեմ շրջաններում անհանգստություն առաջացրեց: 1878թ. ապրիլի 12-ին նամակով կաթողիկոսին դիմում է Սերվիչեն: Նա գրում է. «...Երբ կը տեսնեինք պուլղարը, հույնը, պոշնակը, նմանապես արաբացին ազգայնության խնդիր մեջ կը բերեն, մենք, հայք, ի՞նչ պետք է, որ ընեինք: Տաճկաց հետ միանա՞լ. անցյալը արդեն ապացուցած է, որ ադոնց միանալու համար ուրիշ ճար չկա, այլ մահմեդական ըլլալը, այսինքն՝ ազգը ուրանալ: Ահա հայ խնդիրը այսպես երևան ելավ. մենք երևան չհանեցինք, պարագաները հանեցին»:*

*Ինը եպիսկոպոսների նամակում Հայաստանի կարգավիճակի վերաբերյալ խնդրանքը ուներ հետևյալ տեսքը. «...Ուրիշ բան չեմք խնդրել, եթե ոչ Ռումելիի մեր կրոնակից եղբարց նմանել. Թուրքիո մեջ կա մաս մը, որ յուր նախնյաց անունը կը կրե և ուր հայոց մեծամասնությունը ժողված է, ուստի վարչություն մը հաստատելն չատ դյուրին պիտի լինի, կուզենք որ այնտեղ ազգային կենոք ապրենք ընդ օրինոք տանուտերական վարչության առանց քաղաքական որևէ ամբարտավանություն և արգելիչ կառավարության մը ազդեցություն ունենալոց, և այդտեղ պաշտպանել մեր հայրենիքն ու տաճարներն...»:*

*Նույն խնդրանքն է պարունակում ցարին պատրիարքի 1878թ. փետրվարի 13-ի նամակը. «Հայերն այս նշանավոր պարագային մեջ, որում իրենց կրոնակից եղբարց վիճակն կորոշվի, կը համարձակին ձեր կայսերական մեծության զորավոր պաշտպանությունն հայցել: Նոքա ալ վչտացած են, նոքա ալ կը հուսան: Խառնիճաղանճ վայրենիներե չրջապատյալ և Եվրոպային հեռի էն անկյուն նետված, քան թե մյուս քրիստոնեից, առանց իրենց աղաղակներն լսելի լինելո: Ինչ բան, որ այսօր կը խնդրեմք և ինչ բան, որ համարձակություն առած կը հարցնեմք ձեր կայսերական մեծությենեն հանուն նորա, ուրիշ բան չէ, եթե ոչ եվրոպական Թուրքիո քրիստոնեից վիճակին նմանությունն»:*

*Ստանալով Պետերբուրգի հավանությունը՝ Իգնատևը կազմեց հայերին վերաբերող մի կետ ապագա հաշտության պայմանագրի համար. «Նկատի ունենալով, որ ասիական գավառներում ևս տեղի են ունենում Թուրքիայի եվրոպական նահանգներում կատարվածի նման անկարգություններ և հարստահարություններ, դրանք այլևս թույլ չտալու համար սուլթանը երաշխավոր է հանդիսանում ռուսական կայսրի առջև, որպեսզի կովկասին սահմանակից հայաբնակ գավառներին (Էրզրում, Մուշ, Վան, Դիարբեքիր, Սեբաստիա և այլն) վարչական ինքնավարություն տրվի՝ հարկ եղած փոփոխություններ մտցնելով վիլայեթների մասին օրենքի մեջ և այն ապահովելով սուլթանի իրական երաշխիքներով»[60]:*

*Սա դարձավ Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի առաջին տարբերակ և մեծ գոհունակությամբ ընդունվեց հայկական շրջաններում: Ինչ վերաբերում է թուրքերին, ապա նրանք զայրացած և «զարմացած էին իսկապես բոլորովին անսպասելի այս առաջարկից, որովհետև մինչև այդ հայերի կողմից օտարների միջամտությունը հայցող որևէ դիմում չէր եղել»: Բ. Դուռն անորոշության մեջ էր և ամեն կերպ ձգձգում էր Սան Ստեֆանոյի բանակցությունները: Այդ բանակցություններում հայերը դե ֆակտո ներկայացուցիչ ունեին հանձինս Խորեն Նար պեյի: Սան Ստեֆանոյում ռուսական հրամա-*

[60] **Գեղամյան Ե.**, նշվ. աշխ., էջ 353-354:

նատարությանն ու պատվիրակությանն այցելած պատրիարքը Մեծ իշխանին հանձնեց «ինքնուրույնության ծրագիրը»: Արփ. Արփիարյանը ոգևորված գրեց. «Մենք այլևս որոշել ենք, որ Անգլիայի պաշտպանությամբ և թուրքերի ձեռներով բարենորոգումներ հուսալը պատրանք է»[61]:

Տպավորություն է ստեղծվում, թե այս ամենը կատարվում էր թուրքական կառավարությունից թաքուն, սակայն իրականում սուլթանն ու Բ. Դուռը ոչ միայն կատարվածի մասին գիտեին, այլև հայերին խրախուսում, հուշում էին ինչ անել: Սուլթանը Սան Ստեֆանոյի բանակցություններում իր պատվիրակությանը ցուցում էր տվել չհակառակվել Հայաստանի ինքնավարության պահանջին: Նա ելնում էր այն պարզ տրամաբանությունից, որ Օսմանյան կայսրության կազմում Հայաստանի ինքնավարությանը հետևելու էր գրավված տարածքներից ռուսական զորքերի դուրս գալը, ինչն ամենաչատն էր հետաքրքրում փաղիշահին:

Հայերի ոգևորությունը սահմաններ չէր ճանաչում: Սակայն հենց այդ պահին միջամտեց Անգլիան: Հ. Լեյարդը սուլթանին հավաստիացրեց, որ Անգլիան երաշխավորում է Օսմանյան կայսրության տարածքային անվտանգությունը և հարկ եղած դեպքում նաև կպատերազմի Ռուսաստանի դեմ: Սա, իհարկե, ազդեցություն գործեց: Սակայն Բ. Դուռը միանգամից չտրվեց Անգլիայի հորդորներին: Դեռ ավելին, խնդրեց Լեյարդին համոզել պատրիարքին Արևմտյան Հայաստանի համար ինքնավարություն պահանջելու՝ պայմանով՝ ռուսների առջև դնել զորքերը գրավված տարածքներից հանելու հարցը:

Հ. Լեյարդը Ն. Վարժապետյանին համոզում էր, որ եթե իզի հարաբերությունները Ռուսաստանի հետ, Անգլիան անպայման ինքնավարության հարցը կլուծի: Գայթակղիչ առաջարկություն էր, մանավանդ որ Ն. Վարժապետյանը հայ քաղաքական ուժերի հրաճուն ճնշման տակ էր: Նրանք պատրիարքից պահանջում էին առավելագույն զիջումներ կորզել թուրքերից: Մ. Խրիմյանի գլխավորությամբ բարձրաստիճան հոգևորականության մի ստվար խումբ պատրիարքին երկընտրանք առաջարկեց՝ ինքնավարության հարցի լուծում կամ հրաժարական: Նաև պահանջեցին գործել եվրոպական տերությունների միջոցով:[62] Պատրիարքը մի ինչ-որ ժամանակ ընկրկեց, սակայն չարունակեց գործել ոչ թե Եվրոպայի, այլ Ռուսաստանի միջոցով:

Պոլսահայությունը խանդավառված էր: Արփիարյանի վկայությամբ, Սան Ստեֆանո ռուսների մտնելուց հետո հայկական թերթերը սկսեցին շատ ազատ գրել, նույնիսկ համարձակվում էին Թուրքա-Հայաստանի համար ինքնուրույնություն պահանջել[63]: Տեղի էին ունենում բազմամարդ հանրահավաքներ, թատրոններում և այլուր հնչում էին Մ. Նալբանդյանի «Ազատությունը» և Ռ. Պատկանյանի բանաստեղծությունները, պայքարի էր կոչում Պետրոս Ադամյանը, խնդրագրեր էին հղվում ցարին ու Ռուսական բանակի հրամանատարությանը: Եվ այս ամենը բացահայտ, թուրքերի աչքի առաջ, ինչը գազազեցրեց սուլթանին և տհաճության զգացում առաջացրեց Լոնդոնում: Ֆ. Էնգելսը գրում է. «...1878թ. հունվարին ռուսական զորքերը մոտեցան թուրքական մայրաքաղաքի դարպասներին, և հանկարծ Բոսֆորում հայտնվեցին անգլիական չորս ռազմանավեր ու հարկադրեցին արդեն Սոֆիայի տաճարի գմբեթները տեսնող ռուսներին կանգ առնել և Սան Ստեֆանոյի պայմանագրի իրենց նախագիծը ներկայացնել Եվրոպական կոնգրեսի քննարկմանը»[64]:

Դեռ ռազմական գործողությունները չէին դադարել, երբ Անգլիայի թագուհին պաշտպանեց Աբդուլ Համիդի խնդրանքը Ռուսաստանի հետ պայմանագիր կնքելու մասին: Եվ որպեսզի Ռուսաստանին հարկադրեն բանակցությունների նստել, պլանավորվեց

---

[61] «Մշակ», 1878, թիվ 176:

[62] Сан-Стефано, Записки графа Н. П. Игнатьева, стр. 12.

[63] «Մշակ», 1878, թիվ 64:

[64] Маркс К. и Энгельс Ф., Сочинения, т. XVI, ч. II, Москва, 1960, стр. 32.

ռազմական նավեր ուղարկել Սև ծով, զորքեր մտցնել Բաթում, վերահսկողության տակ առնել Դարդանելը, մինչև որ ռուս զինվորը «հետ չանցներ Դանուբն ու դուրս չգար Հայաստանից»[65]:

Պատմում է ժամանակակիցը:– Սուլթանի պալատի պատուհաններից երևում էին ռուսական նավերն ու զինվորների չքահանդեսները, ինչը ահաբեկել էր Աբդուլ Համիդին, որը ելք չէր տեսնում, բացի մայրաքաղաքը լքելուց և պատրաստվում էր իր հարեմի հետ տեղափոխվել Անկարա: Բանը ոչ միայն այն էր, որ Օսմանյան բանակները երկու ռազմաճակատներում էլ գլխովին չախջախվել էին, այլև Կ. Պոլսում սկսվել էին հակասուլթանական խմորումներ: Ինչ վերաբերում է Արևմուտքի տերություններին, ապա նրանք չարունակում էին մնալ դիտորդի դերում:

Իսկ ռուսներն էլ, օգտվելով իրենց համար ստեղծված բարենպաստ իրավիճակից, ձգձգում էին հաշտության բանակցությունները՝ դրանով սուլթանին նվաստացնում ու հարկադրում գնալու առավել մեծ զիջումների:

Սուլթանին ու նրա կայսրությանը փրկեց Դիզրայելին, որը Ա. Շուվալովին մի քանի անգամ զգուշացրեց, թե եթե ռուսները փորձեն գրավել Կ. Պոլիսը, ապա Բրիտանական բանակը կխուժի Նեղուցներ: Դրան հետևեց անգլիական երեք ռազմանավերի հայտնվելը Իշխանաց կղզիների ափերին: Լոնդոնի հետ համերաշխ էին Իտալիան և Ավստրո-Հունգարիան, ինչը Ղրիմի պատերազմի սարսափը տարածեց ցարի ու նրա վարչակազմի վրա և վերջիններն անմիջապես ընկրկեցին ու Սան Ստեֆանոյում նստեցին բանակցությունների սեղանի չուրջը[66]:

Սուլթանը պահանջեց օսմանյան պատվիրակության ղեկավար, արտաքին գործերի նախարար Սևֆեթ փաշայից ոչ մի կերպ չհամաձայնվել ինքնավարություն տալուն: Եվ քանի որ ռուսները ևս, ըստ էության, դեմ էին Արևմտյան Հայաստանին ինքնավարությանը, հեշտությամբ գնացին զիջման: 16-րդ հոդվածում «ինքնավարություն» բառը փոխարինվեց «բարենորոգում» բառով[67]:

Առաջին հայացքից տարօրինակ մի փաստի մասին. Գորչակովի հանճնարարությամբ Սան Ստեֆանոյի պայմանագիրը համարվեց ոչ թե վերջնական, այլ նախնական: Պատճառը մեկն էր՝ գրավված տարածքներից ռուսական զորքերը դուրս բերելու հրամայականը[68]:

1878թ. մարտի 3-ին Սան Ստեֆանոյում Ռուս-թուրքական պայմանագիրը ստորագրեցին Ռուսաստանի կողմից Իգնատևը և Նելիդովը, իսկ Թուրքիայի կողմից՝ Սևֆեթը և Բեռլինում օսմանյան դեսպան Աբդուլլահը: Պայմանագիրը բաղկացած էր 29 կետից և իրապես հանդիսացավ բալկանյան ժողովուրդների ազատագրության հռչակագիր: Անկախություն ստացան Սերբիան, Չեռնոգորիան, Ռումինիան: Բուլղարիային տրվեց ինքնավարություն: Ինքնավար էին դառնում նաև Բոսնիան և Հերցեգովինան: Նեղուցները բաց էին հայտարարվում չեզոք երկրների առևտրական նավերի համար: Ռուսաստանին էին անցնում Բեսարաբիան, Կարսը, Արդահանը, Բաթումը, Բայազետն ու Ալաշկերտի հովիտը: Արևմտյան Հայաստանի տարածքից 36 հազ. քառ. կիլոմետր միացվում էր Ռուսաստանին:

Դաշնագրի 25-րդ հոդվածով Ռուսական բանակը վեց ամսվա ընթացքում պետք է հեռանար գրավված տարածքներից: Իսկ 16-րդ հոդվածն արձանագրում էր, որ ռուսական զորքերի մեկնումը «կարող է առաջ բերել ընհարումներ ու խառնակություններ»,

---

[65] Мегрелидзе Ш. В., *Вопросы Закавказья в истории Русско-турецкой войны 1877-1878гг.*, Тбилиси, 1969, стр. 89.

[66] Шувалов А., *О Берлинском конгрессе 1876. См. "Красный архив"*, 1933, N4, стр. 87-88.

[67] Ключников Ю. В. и Сабанин А., *Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях*, т.1, Москва, 1926, стр. 222.

[68] *"Исторический вестник"*, 1915, т. 142, стр. 79.

*հետևաբար Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ պետք է մտցվեին մինչև ռուսների հեռանալը:*

*27-րդ հոդվածով Բ. Դուռը հանձն էր առնում չպատժել և թույլ չտալ, որ ուրիշները պատժեին նրանց, ովքեր ռուսական զորքերի հետ հարաբերություններ են ունեցել: Եթե այդպիսիների մեջ կլինեին մարդիկ, ովքեր կցանկանային Ռուսական բանակի հետ հեռանալ Թուրքիայից, օսմանյան իշխանությունները չպետք է ընդդիմանային:*

*16-րդ հոդվածը և ամբողջությամբ վերցրած Սան Ստեֆանոյի պայմանագիրը խանդավառությամբ ընդունվեցին հայկական շրջաններում[69]: Այդ հոդվածը բավարարում էր թե՛ ռուսական կողմնորոշում ունեցողներին (բարենորոգումներն իրականացվելու էին Ռուսական բանակի վերահսկողությամբ) և թե՛ այդ կողմնորոշման հակառակորդներին (Արևմտյան Հայաստանի կարգավիճակը չէր փոխվելու): Կաթողիկոսին գրած նամակում Նար պեյը այդ բավարարվածությունը բացատրում է այսպես. օսմանյան կառավարությունը պաշտոնապես ճանաչում է «Հայաստան» անունը, հայկական նահանգներում մտցվելու էին բարենորոգումներ, հայերը հնարավորություն էին ստանում դիմելու ռուսական կառավարության օգնությանը դաշնագրի կատարումն ապահովելու համար:*

*Ն. Վարժապետյանը Ազգային ժողովում հայտարարեց. «Այլևս մոռացված չենք: Անհանդուրժելի, սոսկալի մոռացվածությանը վերջ է տրված... Հայերն արդեն ապահովված են քրդերի և չերքեզների հարստահարությունների դեմ... Մեր ազգային խնդիրը Արևելյան ընդհանուր խնդրի հետ նոր կերպարանք ու նշանակություն է ստանում»: «Մասիս»-ը 1878թ. մարտի 7-ին գրում է, որ 16-րդ հոդվածն «արժանի է բոլոր հայ հայրենասերների աջակցությանը»[70]: Պողոս Նուբարն ասաց. «Սան Ստեֆանոյի դաշնագրին մեջ 16-րդ հոդվածը դնել տալու հաջողիլը այնպիսի գործ մըն է, որուն համար հայ ժողովուրդը ոսկի արձան մը պետք է կանգնեցնե Ներսեսի հիշատակին»:*

*Իգնատևը Գորչակովին գրեց. «Այս հոդվածը (16-րդ) լրիվ գոհունակություն է պատճառել համայն հայ ժողովրդին: Առաջին անգամ Հայաստան անունը հնչեց միջազգային պայմանագրում, և Բ. Դռան կողմից վերցրած պարտավորությունը կարող է հիմք հանդիսանալ մեր հովանավորության համար Փոքր Ասիայի քրիստոնյա բնակչության մեծամասնության հանդեպ: Այդ հոդվածը Եվրոպային կապացուցի, որ Ռուսաստանը հոգ է տանում ոչ միայն սլավոնների, ոչ միայն իր հավատակիցների մասին, այլև, գործելով մարդասիրական մղումով, նկատի է ունեցել ապահովել Թուրքիայի ամբողջ քրիստոնյա բնակչության բարեկեցությունը: Քանի որ թուրքերն ընդվզեցին էջմիածնի կաթողիկոսին հիշատակելու և նրան ամբողջ հայության գերագույն գլխավոր կոչելու դեմ, ապա ռուսական ներկայացուցիչները նպատակահարմար համարեցին այդ մասին չհիշատակել»[71]:*

*Սան Ստեֆանոն հայության կյանքում այն հազվադեպ ակնթարթներից է, երբ համազգային համախմբում էր տեղի ունենում ճեռքբերումների առիթով: Սակայն այդ համախմբումն ու ուրախությունն իսկույն հօդս ցնդեցին, երբ ստացվեց Բեռլինում գագաթաժողով հրավիրելու լուրը:*

## *3. ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՑԱՆ ՄԵԿՆԱՐԿ*

*Սան Ստեֆանոյի պայմանագիրը կնքելուց մեկ ամիս անց՝ ապրիլի 1-ին, նոր միայն արտաքին գործերի նախարարի պաշտոնը ստանձնած Սոլսբերին այդ պայմանագրի կապակցությամբ շրջաբերական տարածեց, որում Հայաստանի մասին ասված է. «Ինչպես*

---

[69] Ключников Ю. В. и Сабанин А., стр. 222.

[70] *Մերժավոր և Միջին Արևելքի երկրներ, պրակ X, Թուրքիա:* Երևան, 1979, էջ 63:

[71] *Записки графа Н. П. Игнатьева,* стр. 8.

որ Հայաստանի բերդերի գրավումը պատճառ է դառնալու, որ այդ նահանգի ժողովուրդը ենթարկվի հիշյալ բերդերի տերը դարձած պետությանը, այնպես էլ Տրապիզոնի և Իրանի միջև ընկած եվրոպական առևտրական ճանապարհը կարող է կտրվել Քուրդիստանում (Հայաստանում) Ռուսաստանին թողնված հողերի... պատճառով»: Շրջաբերականն ավարտվում է հետևյալ խոսքերով՝ «Անգլիական կառավարությունը մեծ գոհունակությամբ կմասնակցի այնպիսի մի վեհաժողովի, որն ի վիճակի է քննելու խնդրո առարկա հոդվածներն ամբողջությամբ վերցրած...»[72]:

Շրջաբերականին հաջորդեցին ռազմական նախապատրաստությունները: Որոշվեց Բրիտանական 99 հազարանոց բանակի կազմը հասցնել 222 հազարի: Հնդկաստանից մի զորաջոկատ չարժվեց դեպի Կիլիկիա:

1878թ. ապրիլի 16-ին Իգնատևը Գորչակովին ներկայացրեց «Ժամանակավոր զիջումներ Անգլիային» փաստաթուղթը: Լոնդոնի հետ «լեզու գտնելու» համար առաջարկվում էր Թուրքիային թողնել Բայազետն ու Ալաշկերտի հովիտը, որով Անգլիայի առևտրական ուղին «մնում էր բաց»: Իգնատևի այս զիջողական փաստաթուղթը Պետերբուրգը դրեց տերությունների հետ բանակցությունների հիմքում: Փաստաթղթում Հայաստանի մասին նշված էր՝ պահանջել Բ. Դռնից իրականացնելու այնպիսի բարենորոգումներ, որոնք հայ բնակչությանն ապահովեին քրդերի, չերքեզների և այլոց հարձակումներից[73]:

«Արևելյան մամուլ»-ը ռուսական կառավարության կեցվածքը բացատրում է հետևյալ կերպ. «Անգլո-ռուսական պատերազմ մը կրնար ներքին ընկերական հեղափոխություն մը բերել և ընդհանուր քաղաքական փոթորիկ մը հարուցանել հյուսիսային պետության մեջ, կայսրական գահը վտանգի մեջ դնելով»[74]:

Ահա այս պայմաններում Շուվալովն ու Սոլսբերին մայիսի 30-ին ստորագրեցին Լոնդոնի համաձայնագիրը, որի 7-րդ կետում ասված էր. «Հայաստանի մասին Սան Ստեֆանոյի պայմանագրում նշված խոստումները տրվելու են ոչ միայն Ռուսաստանի, այլև Անգլիայի կողմից»: 10-րդ կետը սահմանում էր. «Հաշվի առնելով, որ Ալաշկերտի հովիտը հանդիսանում է խիստ կարևոր նշանակություն ունեցող ճանապարհ Իրանի և օսմանյան պետության համար՝ նորին մեծություն Ռուսաստանի կայսրը համաձայն է այդ հովիտն ու Բայազետ քաղաքը վերադարձնել օսմանյան պետությանը»[75]: 11-րդ հոդվածում նշվում էր՝ Անգլիայի կառավարությունը չի թաքցնում, որ Ռուսաստանն իր «սահմանները ընդարձակելով՝ առաջիկայում կարող է ծանրակշիռ և ասիական Թուրքիայի ժողովրդի հանգիստը խանգարող վտանգներ առաջացնել: Սակայն անգլիական կառավարությունն այն կարծիքին է, որ օսմանյան պետությունն այդ վտանգից պաշտպանելու պարտականությունը վերաբերելու է հատկապես Անգլիային...»[76]:

Պետերբուրգի նախաբեռլինյան քաղաքականության առնչությամբ գեներալ Անուչինը (Բեռլինի կոնգրեսում ռուսական պատվիրակության անդամ) գրեց. «Ինքներս սեփական ձեռքերով ոչնչացնում ենք մեր հաղթանակների պտուղները և անճնատուր ենք լինում Եվրոպայի կամքին»[77]:

Ռուսաստանի հետ բանակցություններին զուգահեռ Անգլիան բանակցություններ էր վարում նաև Թուրքիայի հետ և հունիսի 4-ին Կ. Պոլսում Սևֆեթը և Հ. Լեյարդը ստորագրեցին Կիպրոսի կոնվենցիա անունը կրող համաձայնագիրը: Այն սահմանում էր. «Եթե Ռուսաստանը Բաթումից, Կարսից, Արդահանից կամ գրավված այլ վայրերից բացի

---

[72] Թուրքական աղբյուրները..., հ. Դ, էջ 127 կամ **Жигарев С.**, *Русская политика в Восточном вопросе*, т. II , Москва, 1898, стр. 183.

[73] *После Сан-Стефано. "Исторический вестник"*, 1916, т. 144, стр. 45.

[74] «Արևելյան մամուլ», 23.05.1878:

[75] Նույն տեղում, էջ 132:

[76] Թուրքական աղբյուրները..., հ. Դ, էջ 133:

[77] *"Русская старина"*, 1912, т. 149, кн. 2, стр. 245.

*հետագայում փորձ կատարեր գրավելու օսմանյան պետության Ասիայում գտնվող և Հաշտության վերջնական պայմանագրում չնշված մարզերից որևէ մեկը, անգլիական պետությունը պարտավորվում է համաձայնություն կնքել օսմանյան պետության հետ՝ վերջինիս զենքի ուժով պաշտպանելու համար:*

*Դրա փոխարեն նորին մեծություն Փադիշահը խոստանում է անգլիական պետությանը, որ առաջիկայում կիրականացվեն երկու պետությունների կողմից որոշվելիք բարվոք վարչության ստեղծումը և օսմանյան պետության հիշյալ երկրամասում գտնվող քրիստոնյա հպատակների և այլոց պաշտպանության համար անհրաժեշտ բարեկարգումները... Նորին մեծություն Փադիշահը տալիս է իր համաձայնությունը, որ Անգլիան զորք մտցնի Կիպրոս կղզին և կառավարի այն»*[78]:

*Համաձայնագիրը Կիպրոսում Անգլիայի ներկայության ժամկետը պայմանավորում էր կարսը Թուրքիային վերադարձնելով:*

*Սան Ստեֆանոյի պայմանագիրը Ռուսաստանի ակնհայտ հաջողությունն էր, և ոչ թե միայն Անգլիան, այլև Եվրոպան դրա հետ հաշտվել չէին կարող: Պայմանագրի կնքումից մեկ ամիս անց Ավստրո-Հունգարիայի կառավարությունը պահանջեց միջազգային վեհաժողով հրավիրել այդ պայմանագրի որոշ կետեր վերանայելու համար: Անգլիան առաջարկեց վեհաժողովում քննարկել ոչ թե միայն եվրոպական նշանակություն ունեցող հոդվածները, այլ ամբողջ պայմանագիրը:*

*Ռուսաստանը շարունակեց գնալ զիջումների, քանի որ, ինչպես նշում է Դ. Միլյուտինը, ստեղծված իրավիճակում պատերազմը Ռուսաստանի համար մահացու էր*[79]*: Նա Բեռլինի վեհաժողովում ռուսական պատվիրակության անդամ Շուվալովին պատվիրեց. «Դուք վիճակը գիտեք: Մենք այլևս կռվել չենք կարող: Ձենք կարող ո՛չ ֆինանսական, ո՛չ ռազմական տեսակետից: Դուք հայրենասիրական պարտք եք վերցրել ձեզ վրա, ուստի պաշտպանեք մեզ որքան հնարավոր է լավագույն ձևով: Պաշտպանեք այն կետերը, որոնք դուք հնարավոր կհամարեք պաշտպանել, և զիջեք, ավելի լավ է զիջեք բոլորը, միայն թե չխափանեք կոնգրեսը»*[80]*: Այդպես էր մտածում ոչ միայն ռազմական նախարարը: Շուվալովին կոնգրես ճանապարհելիս ցարը հորդորեց. «Կոմս Շուվալով, հիշե՛ք, խաղաղության համար գլխով պատասխան եք տալու ինձ»*[81]*:*

*Դրա փոխարեն Դիզրայելին հայտարարեց, թե հարկ է հայկական նահանգները դարձնել ռազմական ամրություններ, դրանցում կենտրոնացնել թուրքական զորքեր Ռուսաստանի դեմ: Թուրք-անգլիական այս առևտրի մասին Կ. Պոլսի քոլեջի տնօրեն Վըշբռնը գրում է, որ անգլո-թուրքական համաձայնագիրը «ապահովում էր Թուրքիայի ամբողջականությունը», չնայած ո՛չ Թուրքիայում և ո՛չ էլ Անգլիայում այդ պայմանագրին որևէ նշանակություն չէին տալիս. վերջինիս հետաքրքրում էր միայն Կիպրոսը: «Անգլիան ի զորու չէ Թուրքիային ստիպել բարենորոգումներ իրականացնել: Նաև չի կարող վախեցնել Թուրքիային, թե այլևս նրան չի հովանավորի, քանի որ թուրքերը գիտեն, որ Անգլիան հովանավորում է սեփական շահերից ելնելով... Եթե Անգլիան, հակառակ իր ավանդական քաղաքականության, Թուրքիային հարկադրի բարեփոխումներ կատարել, ապա թուրքերն անպայման ընդդիմանալու են ու միաժամանակ մերժեն Ռուսաստանին»*[82]*:*

*Պահանջելով բարենորոգումներ՝ Անգլիան չէր ելնում օսմանյան տիրապետության տակ գտնվող ժողովուրդների շահերից, այլ բարենորոգումների վրա վերահսկողությունը նրա համար զենք էր ցանկացած պահին իր կամքը թելադրելու Թուրքիային:*

---

[78] Նույն տեղում, էջ135.

[79] *Дневник Д. А. Милютина*, т. III, Москва, стр. 61.

[80] Шувалов П. А., *О Берлинском конгрессе, 1878г., см. «Красный архив»*, 1933, N 4, стр. 101.

[81] *"Русская старина", январь 1906.*

[82] Роштейн Ф. А., *Международные отношения в конце XIX века.* М. Л., 1960, стр. 707.

Գագաթաժողովի քննարկած հարցերի շրջանակները շատ լայն էին: Խնդիր էր դրված Արևելյան հարցն ամբողջությամբ վերաքննել նոր իրողություններին համապատասխան, նաև վերանայել Սան Ստեֆանոյի պայմանագիրը և այդ անել՝ ելնելով ոչ թե պատերազմում այս կամ այն կողմի խաղացած դերից ու վիճակից, այլ հիմք ընդունելով վեհաժողովին մասնակցող բոլոր երկրների տնտեսական, քաղաքական և ռազմական շահերը:

Նկատի ունենալով այս ու նաև Անգլիայի վճռականությունը՝ ամեն ինչ անելու Ռուսաստանի շահերի դեմ և հօգուտ Թուրքիայի, Բեռլինի վեհաժողովի, մասնավորապես Անգլիայի վրա հույս դնելը՝ բացարձակապես ավելորդ էր: Սակայն հայերի առջև դիվանագիտական խոհանոցի դռները փակ էին, և նրանք անտեղյակ էին, թե ինչ ճաշատեսակ է իրենց համար պատրաստվում:

Իրավիճակի կտրուկ ու գլխապտույտ շրջադարձը հայերին հնարավորություն չտվեց այն արժեքավորելու և գործողությունները վերանայելու համար: Պոլսահայ համայնքը Բեռլինի կոնգրեսը դիմավորեց առանց հստակ ծրագրի և կողմնորոշման: Այդ առնչությամբ «Արևելյան մամուլ»-ը գրեց. «Երբ առաջին անգամ Հայկական հարցը կը հուզեր, ամեն մարդ ծրագիր և հիշատակագիր պատրաստելու հեղինակ էր դարձել Հայաստանի և հայոց ազգի համար, առանց Հայաստանը և հայոց ազգի վիճակը ճանաչելու...»[83]:

Բեռլինում օսմանյան հայության չահերի պաշտպանության հնարավոր տարբերակներն ի հայտ հանելու նպատակով Ն. Վարժապետյանը կազմակերպեց Ռուսաստանի, Անգլիայի և Ծրանսիայի կառավարությունների կարծիքների նախնական պարզաբանում: Միաժամանակ էջմիածնի կարծիքն իմանալու համար գործուղվեց Մ. Իզմիրլյանը: Կաթողիկոսը հավանություն տվեց Ն. Վարժապետյանի որդեգրած քաղաքականությանը:

Նար պեյին հանձնարարվեց Պետերբուրգում համաձայնեցնել Հայաստանի ինքնավարության նախագիծը, իսկ Խրիմյանին՝ պարզելու, թե հայերի ցանկությունները որքանով էին համապատասխանում Արևմուտքի տերությունների, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայի դիրքորոշմանը: Խոսքն այն մասին էր, թե ինչ չափով էր հնարավոր հայկական նահանգների ինքնավարությունը թուրքական սուվերենության պայմաններում և Անգլիայի հովանավորության ներքո:

Ի. Նար պեյը Պետերբուրգում ունեցավ բազում հանդիպումներ, 1878թ. մարտի 18-ին նրան ընդունեց Ալեքսանդր 2-րդը: Նար Պեյը աշխատում էր համոզել ցարին, որ Հայկական հարցի լուծման ուղին մեկն էր՝ ռուսական զինվորական վարչության վերահսկողության տակ Հայաստանի գլխավոր նահանգապետության ստեղծումը: Պահանջվում էր վերացնել քրդերի արտոնությունները, իրականացնել արդար հարկահավաքություն, զինաթափել մահմեդականների մարտական խմբերը, ընտրել ազգությամբ հայ նահանգապետներ ու գավառապետներ, որոնք պետք է առաջադրվեին Հայ ազգային խորհրդի և հաստատվեին սուլթանի կողմից: Առաջարկվում էր Հայաստանի տարածքում մահմեդականների զինաթափում և այլն:

Ալեքսանդր 2-րդը հավանություն տվեց Ն. Վարժապետյանի հուշագրին ու ասաց. «Լավ, դուք գործեք: Աղոթեք, որ ինձ օգնի Աստված»[84]: Գլխավոր նահանգապետի պաշտոնի համար Նար պեյն առաջարկում էր Լորիս-Մելիքովի կամ Նուբարի թեկնածությունը: Առաջին թեկնածուի առաջարկումը նշանակում էր, որ Արևմտյան Հայաստանում վարվելու էր ռուսամետ քաղաքականություն, իսկ Նուբարի թեկնածությունը փոխզիջումային նշանակություն ուներ:

---

[83] Սպիրով Դ., *Հայերի սարսափելի կոտորածները (1894-1896)*, Երևան, 1997, էջ 29:

[84] Мегрелидзе Ш. В., *Вопросы Закавказья в истории Русско-турецкой войны, 1877-1878гг.*, Тбилиси, 1969, стр. 134.

*Նար պեյը հայ ժողովրդի հանդեպ Ալեքսանդր 2-րդի դիրքորոշումը անվանեց «նրբանկատ և զգուշավոր»: Նույն գնահատականը կարելի է տալ նաև Նար պեյի պետերբուրգյան առաքելության արդյունքներին:*

*Շատ ավելի համեստ էին Խրիմյան Հայրիկի եվրոպական առաքելության արդյունքները: Հայկական պատվիրակության խնդրանքների արձագանքը բարի ցանկություններ սահմաններից այն կողմ չէին անցնում: Ֆրանսիայի ԱԳ նախարար Վադինգտոնը պահանջեց ճշտել Կիլիկիայի և հայկական նահանգների ազգային կազմի վերաբերյալ տվյալները, Սոլսբերին առաջարկեց հույսը ճակատագրի վրա դնել, քանի որ անգլիական նավերը չեն կարող հասնել հայկական լեռները: Այս անորոշ «առաջարկություններն» էլ միայն մի խնդիր ուներ թույլ չտալ, որ հայերն ամբողջությամբ ընկներին ռուսական ազդեցության տակ:*

*Ն. Վարժապետյանի հանձնարարությամբ Գր. Օտյանը կազմեց «Ծրագիր կանոնագիր կազմակերպման Օսմանյան Հայաստանի» փաստաթուղթը՝ կոնգրեսին ներկայացնելու համար, որով Հայաստանի համար պահանջվում էր այնպիսի ինքնավարություն, ինչպիսին 1864թ. տրվել էր Լիբանանին:*

*Կոնգրեսի հրավիրման լուրը պոլսահայերն ընկալեցին որպես Ռուսաստանի դիվանագիտական խոշոր պարտություն և հույսը կտրեցին, թե նրա օգնությամբ հնարավոր կլինի անցկացնել Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու որոշում: Պոլսահայ վերնախավը լիովին կողմնորոշվեց դեպի Արևմուտք և հույս ուներ հայկական հարցը լուծել նրա միջոցով: Իհարկե, կ. Պոլսում կային նաև գործիչներ, ովքեր դեմ էին նման կողմնորոշմանը և այն վտանգավոր էին համարում: Օրինակ, Կ. Փանոսյանն Ազգային ժողովում հայտարարեց. «Ի՞նչ եք անում, ո՞ւր եք տանում ազգը, սևագլուխ և ինքնակոչ դիվանագետներ... ո՞վ կտա մեզ ինքնավարություն, ո՞րի վրա եք դնում ձեր հույսը: Այն չահամոլ և նենգ Եվրոպայի՞ վրա, որ ուզում է պահպանել Թուրքիայի գոյությունը իր չահադիտական նպատակների համար»[85]:*

*Ռուսական կողմնորոշում ունեցող հայ գործիչները գտնում էին, որ «Լեյարդի թելադրություններուն անսալով, երբ խաբվինք և Ռուսիայի դեմ բողոքելու ելնինք, Անգլիայի ինտրիգան կառավարությունը հետո զմեզ անպաշտպան կը թողու, միմիայն սեփական չահերու վրա մտածելով և համաձայնելով Ռուսիայի հետ, և մենք իզուր տեղ Թուրքիայի ատելությունը հրավիրած կլինեինք մեր խեղճ ազգի վրա...»[86]:*

*Միանգամայն հակառակ կարծիքին էր «Մեսեռոբ» (Զմյուռնիա) հանդեսի խմբագիր Մ. Նուպարյանը: Նա գրում է. «Հայ ազգը քաղաքական մեծ վրեպ մը գործած պիտի ըլլար, եթե յուր երկարաժամանակյա տառապանքներուն դարման չըլլալը մոռնալով անգութ և մեկուսացած մնար, երբ եվրոպական համազգային Արիոպագեսի մը մեջ Թուրքիո բաղդը և ապագա վիճակը պիտի որոշվեր ու վճռվեր, որու մեջ հարկավ հայն ալ... իր մասն ու բաժինն ունի»[87]:*

*Ժամանակի հայ չատ գործիչները բարձր են գնահատում Ն. Վարժապետյանի քաղաքական խիզախությունը: Նա իր ընդդիմախոսների հարձակումները հետ էր մղում հստակ դիրքորոշմամբ՝ «Ես եմ ժողովրդի համար պատասխանատու ու նաև պատրաստ կրելու «Ձեր դատապարտությունը»»[88]: Ու նաև հետևելով «բոլոր միջոցները ներելի են նպատակին հասնելու» սկզբունքին՝ ոչ մի կերպ հետ չկանգնեց Հայաստանի ինքնավարության ծրագիր-առաջարկությունը Բեռլինի գագաթաժողովին ներկայացնելու: «Իսկ եթե, մի կողմից, պիտի վչտանան և խռովին տաճիկները, մյուս կողմե, զայրանան ու կատաղին ռուսները», նրան այնքան էլ չէր անհանգստացնում. նա խնդրի լուծման համար գլխավորը համարում էր «Եվրոպական արիոպագեսի» աջակցությունը:*

---

[85] «Մուրճ», 1907, թիվ 2, էջ 61-62:
[86] «Մշակ», 1878, թիվ 15:
[87] «Մեսեռոբ», 1881, հ. բ., էջ 56:
[88] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», 21.07. և 12.08.1878թ. նիստեր:

«Մասիս»-ն ուղղակի գրեց, թե հայոց պատվիրակները Բեռլին են գնացել Բ. Դռան թույլտվությամբ[89] («Մասիս» 1878, թիվ 2145), իսկ Մ. Օրմանյանի կարծիքով՝ հայերի այդ քայլը «օսմանյան տերությենե ալ հովանավորված էր»[90]:

Սարուխանը վկայում է, որ Ն. Վարժապետյանը «որոշել էր անձամբ գալ Բեռլին և անձամբ պաշտպանել հայկական ինքնօրինության նախագիծը», սակայն Բ. Դուռը թույլ չտվեց[91]:

Մեծ վեզիրը գերադասեց պատրիարքին ծածկագրի իրավունք տալ Կ. Պոլսից ղեկավարելու պատվիրակության գործունեությունը, քան նրան թույլ տալ մեկնելու Բեռլին: Նրա համար ծածկագիր պատրաստեց կայսրության ԱԳ նախարարության աշխատակից մի հայ[92]:

Պատրիարքարանը որոշեց Բեռլինի կոնգրես պատվիրակություն ուղարկել և համաձայնեցրեց Աբդուլ Համիդի հետ: Սուլթանը ծանոթացավ հայերի կողմից կոնգրեսին ներկայացվելիք առաջարկներին: Նա պատրաստ էր նույնիսկ խոշոր զիջումների, միայն թե ռուսները հեռանային կայսրության սահմաններից: Հարկ է նշել, որ Ռուս-թուրքական պատերազմից մինչև Բեռլինի կոնգրեսն ընկած ժամանակահատվածում սուլթանն ու սուլթանական վարչակարգը սիրաշահում էին հայերին՝ սկզբում, որպեսզի նրանք հետ կանգնեին Ռուսական բանակին օգնելուց, իսկ Բեռլինում՝ օգնեին թուրքական ծրագիրն իրականացնելուն: Այդ կարճ ժամանակահատվածը, արևմտահայության համար երանելի հույսերի ամիսներ էին. նրանք սկսեցին զարկ տալ մշակութային կյանքին՝ հիմնադրում էին ակումբներ, թատրոններ, զենք էին ձեռք բերում, ընդդիմանում էին մահմեդականներին, զորավարժություններ էին անցկացնում: Թուրքերը չտեսնելու էին տալիս. նրանց հասկանալ կարելի է: Իրավիճակը պատկերավոր է ներկայացնում Ն. Ադոնցը. «Հրացանների փողերը վաղուց արդեն ուղղված էին մահվան դատապարտված «հիվանդի» հարուստ ժառանգությանը: Թուրքիան Պենելոպեի նման գրեթե մի ամբողջ հազարամյակ չրջապատված էր նրա հմայքներին ձգտող երկրպագուների ամբոխով: Այն չունենալով որևէ բարերար, սիրով էր իրեն առաջարկում բոլոր նրանց, ովքեր կարող էին ապահովել իր գոյությունն ու անվտանգությունը»[93]:

Ահա թե ինչպես է այդ իրողությունը ներկայացնում Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանը: Նրա կարծիքով՝ Բեռլինի վեհաժողով պատվիրակության ուղարկումը «հայ դիվանագիտության աչքառու հաջողությունը չէր, այլ մեկ դժոխային խաղը սուլթան Համիդի», իսկ վերը նշված ծրագիրն «արդյունք էր այն օրերուն Ճեյմս Պրայսի տան մեջ գումարած ժողովին որոշումներուն (մարտ 7. հ. տ): Սուլթան Համիդ կը թելադրե Ներսես պատրիարք, սույն առաջարկը ներկայացնել վեհաժողովին հայ պատգամավորներու միջոցով: Այս դավաճան թելադրության պատճառները երկու կրնային ըլլալ: Սուլթան Համիդ իր նախարարներու հետ առանձին չէր կրնար այդ ծրագիրն իրականացնել, առանց հիմնովին ինքզինքը ապավարկելու (վարկաբեկելու) իսլամ մտածողության առջև: Պետք էր, ուրեմն, զայն ղրկել Թրքիո բախտը վճռելու կոչված վեհաժողովին: Այդ առաքումի պահուն սուլթան չատ լավ գիտեր, թե ռուսական դիվանագիտությունն առավել քան երբեք պիտի մերժեր այդ ծրագիրը, որ գլխովին կհակառակեր իր քաղաքական շահերուն: Այս պարագային ծրագրին մերժումը քրիստոնյա տերություններե պիտի գար, որ հայերը ծրագրի մերժումեն վիրավորված, պիտի խզվեին այլևս պաշտպան կանգնած քրիստոնյա տերություններու հետ: Ուրեմն, հայեր պարզապես իրենց դեմ լարված թակարտի

---

[89] «Մասիս», 1878, թիվ 2145:
[90] Օրմանյան Մ., Ինչ ու ինչք, էջ 422:
[91] «Մասիս», 1878, թիվ 2132:
[92] Սարուխան, Հայկական խնդիրն ու Ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում, 1880-1910, Թիֆլիս, 1912, էջ 449-450:
[93] ՀՀ ԳԱԱ Ինֆորմացիոն բյուլետեն, 1984, թիվ 7, էջ 26:

մեջ ինկան պատգամավորության առաքումովը և այսպիսով ազգային ամեն նվիրական շահերը վտանգեցին»[94]:

Ինստ է, բայց իրավացի: Պրոֆ. Հայկ Ղազարյանը այս կապակցությամբ սուլթանի դիվային խաղերի հետևանքներից առանձնացնում է երկուսը՝ խաթարել «Հայ-թուրք, հայ-քուրդ ժողովուրդների առանց այդ էլ խաթարված հարաբերությունները» և Ռուսաստանին երկմտության մեջ դնել, «սառեցնելու (նրա) վերաբերմունքը իր զենքի ուժով ազատագրվող արևմտահայության նկատմամբ»[95]: Ասվածին ավելացնենք Մուշեղ եպիսկոպոսի միտքը, որ Բեռլինում ռուսական ծրագրի մերժումը վատթարացնելու էր հայերի հարաբերությունները նաև Արևմուտքի մեծ տերությունների հետ: Այս իրողությունն էր պատճառը, որ հայկական շրջաններում կարծիքներ էին հնչում, թե Բեռլին Մկրտիչ Խրիմյանի պատվիրակության առաքումը ոչ միայն Աբդուլ Համիդ 2-րդի, այլև Պոլսում Անգլիայի դեսպան Հ. Լեյարդի խաղերն էին նորից ուղղված հայ-ռուսական հարաբերությունների դեմ:

Մ. Օրմանյանը այս խնդրում ավելի մեծ դեր է հատկացնում Ներսես Վարժապետյան–Աբդուլ Համիդ փոխհարաբերություններին: Նա գրում է. «Ներսեսի նախաձեռնությունը կատարելապես օրինավորության գետնին վրա էր, օսմանյան քաղաքականության դեմ բնավ կետ մը չուներ, մանավանդ թե օսմանյան տերութենե ալ հովանավորված էր»[96]:

Այսպիսով, սուլթանի համար հայկական պատվիրակության ներկայությունը Բեռլինում գերխնդիր ուներ՝ եթե Ռուսաստանը պնդեր 16-րդ հոդվածի վրա, հայերը պետք է պահանջեին Արևմտյան Հայաստանի ինքնավարություն Օսմանյան կայսրության կազմում, ինչին հետևելու էր ռուսական զորքերի հեռանալը կայսրության տարածքներից:

Բեռլինում գլխավոր հակամարտությունը Անգլիայի և Ռուսաստանի միջև էր: Դիզրայելին հռետորաց. «Մենք Անգլիայից եկել ենք այստեղ կարգավորելու սուլթանի գործերը և նրան լիակատար հնարավորություն տալու իր իշխանությունը գործադրել Թուրքիայում»[97]:

Պոլսահայ գաղութը Բեռլինի կոնգրեսը դիմավորեց բուռն քննարկումներով ու բանավեճերով և չէր կարողանում ընդհանուր կարծիք մշակել, որն ազդեցություն ունեցյալ նաև կոնգրեսին մասնակցելու համար ձևավորված պատվիրակության կազմի վրա: Պատվիրակության երեք անդամներից Մ. Զերազը մոլի անգլոֆիլ էր, Նար պեյը (Խորեն Գալֆայան)՝ ռուսոֆիլ, իսկ Մկրտիչ Խրիմյանը հայտարարում էր, թե ինքն այն կողմն է, ով կլուծի «մեր հարցը», սակայն իրականում չէր հարում նրանց, ովքեր դնում էին Արևմտյան Հայաստանը Թուրքիայի կազմից դուրս բերելու հարցը:

Հայացքների այս խայտաբղետությունը բացասական լուրջ ազդեցություն ունեցավ պատվիրակության գործունեության վրա, վեճերն ու աղմուկը շատ ժամանակ էին խլում: Պատվիրակության անդամներին միմյանց հետ հաշտեցնելու համար պատրիարքը Բեռլին ուղարկեց չորրորդ գործչին՝ Ստ. Փափազյանին: Բեռլինում օսմանյան դեսպանատունը ծաղրեցին. Խրիմյանը թուրքոֆիլ է, Մ. Զերազը՝ անգլոֆիլ, Նար պեյը՝ ռուսոֆիլ, իսկ Փափազյանն էլ՝ հաշտարար,– ահա հայոց պատվիրակությունը:

Սակայն կրկնում ենք, հայկական շրջաններում տիրապետողը Անգլիայի օգնությամբ հայկական հարցը լուծելու կարծիքն էր: Կոնգրեսի նախօրյակին Ն. Վարժապետյանը գրեց. «Դեսպանաժողովին մեջ մեզի ի նպաստ ձայներ պիտի բարձրանան, բայց առաջարկությունը պետք է Անգլիայեն գա: Անգլիան, որ ուզե՝ Հայաստանը փրկված է»: Տարօրինակն այն է, որ Վարժապետյանը գտնում էր, թե Անգլիան Հայաստանը կա՛մ

---

[94] Մուշեղ եպ., *Մանչեստրի հայ գաղութը*, Բոստոն, 1911, էջ 78-79:
[95] Ղազարյան Հայկ, նշվ. աշխ., հ. I, էջ 466:
[96] Օրմանյան Մ., *Ինչ և խոսք*, Երուսաղեմ, 1929, էջ 422:
[97] Анучин Д. Г., *Берлинский конгресс 1878г. "Русская старина"*, 1912, т. 149.

մտցնելու էր Ռուսաստանի կազմի մեջ և կա՛մ դարձնելու էր «ինքնուրույն կառավարվող չեզոք երկիր»: «Մեր քաղաքականությունն է. Ռուսիո երախտագետը ըլլալով, հուսալ Անգլիայի և անգլիացիների չնորհիվ ապահովել մեր բարոյական և նյութական բարեկեցությունը: Այս բարեկեցությունն ուրիշ ձևով չենք կրնար ձեռք բերել, այլ միայն ազգային ինքնուրույնությամբ Հայաստանի մեջ: Ալ որպեսզի այս բառը չխրտնեցնի ոմանց, ահավասիկ մեր ֆորմուլը. Administration de l' Arménie par les Arméniens»[98]:

Պոլսում չարունակում էին բուռն քննարկել վեհաժողովին ներկայացվելիք «Մրագիրը»: 1878թ. ապրիլին Սերվիչեն կաթողիկոսին գրեց, թե Թուրքիայի տիրապետության տակ մնալը կործանարար է: «Միանգամայն... անհետանալու խնդիր կա մեջտեղը... Դուք պարտազանց կըլլաք, եթե մեզ աջակից չըլլաք»[99]:

Եվրոպական կառավարություններում պատվիրակության վարած բանակցությունները ոչ միայն չմեղմացրին, այլև ավելի ուժեղացրին տարընթացությունները:

Անգլիական քաղաքական շրջանակներում գիտակցում էին, որ Հայկական հարցը նման չէ օսմանահպատակ մյուս ժողովուրդների հարցերին: Հայերի ցրվածության հանգամանքը պահանջում էր այնպիսի բարենորոգումներ, որոնցից օգտվելին ոչ միայն հայերը, այլև նրանց հետ խառը բնակվող ազգությունները, մասնավորապես՝ քրդերն ու թուրքերը: Այս դատողություններով Սոլսբերին նպատակաուղղվում էր ոչ թե դեպի համաօսմանյան բարենորոգումների իրականացում, այլ հայերի համար բարենորոգումների հնարավորության մերժում: Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի դեսպանը Սոլսբերիին գրում է. «Թուրքիան պատնեշ է Ռուսաստանի փառասիրական ձգտումների դեմ, հետևաբար պետք է նրան պաշտպանել, մանավանդ որ խալիֆն օգտակար դաշնակից է միլիոնավոր մահմեդական հպատակ ունեցող Անգլիայի համար»[100]:

Ասել, որ Անգլիայի այս դիրքորոշումը հայերին հայտնի չէր, ճիշտ չի լինի: Հայտնի էր, սակայն նրանք քաջ գիտակցում էին, որ առանց Անգլիայի անհնար էր լուծել այդ հարցը: Անգլիան չարունակում էր մնալ միջազգային դիվանագիտության տիրակալ: Այդ իրողությունն էլ հանդիսացավ հայկական պատվիրակության գործունեության ճախողման գլխավոր պատճառը: Պատվիրակության առաջին խոչոր հիասթափությունը վրա հասավ մինչև վեհաժողովի սկսվելը, երբ հայտնի դարձավ, որ Սոլսբերի-Շուվալով համաձայնագրում «Հայաստան» բառն իսկ բացակայում է: Այդ համաձայնագիրը երկար ժամանակ թաքուն էր պահվում և հայկական պատվիրակությունը եվրոպական կառավարությունների հետ բանակցություններ էր վարում առանց գիտենալու դրա գոյության մասին: Բրիտանիայի խորհրդարանի ազդեցիկ անդամ Ֆորսթերը Մ. Խրիմյանին մտերմաբար խորհուրդ տվեց. «Մի վչտացրեք Ռուսաստանին, որ ձեր հարևանն է... Անգլիային դժվար է Հայաստանում վերահսկողություն իրականացնել... Սև ծովի հարավային ափերին հայությունը մեծաթիվ չէ, իսկ Անգլիան օգնության կարող է հասնել միայն ափամերձ բնակչությանը... Ձեր ազգն ի վիճակի՞ է իր ինքնավարությունը սեփական ուժերով պաշտպանել, եթե այդ տրվի նրան: Հայերը բավականաչափ ուժ ունե՞ն, թե չէ անհնար է հույսը դնել Անգլիայի վրա»[101]: Երկրորդ խոչոր հիասթափությունը վրա հասավ Բեռլինի վեհաժողովի բացման օրը (13-ը հունիսի 1878թ.), երբ հայ պատվիրակությանը թույլ չտվեցին դրա աշխատանքներին ներկա գտնվել:

Վեհաժողովին հայերը ներկայացրել էին երկու փաստաթուղթ՝ մեկը վերը նշվածն էր, մյուսը՝ Նուբարի ծրագիրը: Առաջինում տրված էին սահմաններն այն նահանգների, որոնցում բարենորոգումներ էին նախատեսվում: Դրանք էին Էրզրումի ու Վանի վիլայեթները, Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսային մասը, այսինքն՝ Խարբերդի սանջակի

---

[98] Լազյան Գ., Հայաստանը և հայ դատը, Երևան, 1991, էջ 49:
[99] ՀՀ ՊՊԿԱ, ֆ 56, ց. 4, գ. 24, թթ. 25-26:
[100] Զորմիսյան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 342:
[101] Սարուխան, նշվ. աշխ., էջ 391:

արևելյան հատվածը, Ռիզե նավահանգիստը: Ներկայացված էին այդ տարածքների ազգաբնակչության թիվն ու ազգային կազմը: Դրանց 2,062 միլիոն բնակչից հայ էին 1,3 միլիոնը, չհաշված այն գավառների բնակչությունը, որոնք Սան Ստեֆանոյի պայմանագրով անցել էին Ռուսաստանին, այսինքն, հայ էր նշված տարածքների բնակչության 65%-ը: Առաջարկվում էր դրանք միավորել մեկ վարչական միավորի մեջ, որի կառավարիչը հայ պետք է լիներ և նշանակվելու էր Բ. Դռան կողմից, տերությունների կառավարությունների համաձայնությամբ, վեց տարի ժամանակով: Կառավարիչը ղեկավարելու էր Վարչական ժողովի հետ համատեղ: Տարածքի բնակչությունից գանձված հարկերի 20%-ը թողնվելու էր տեղական կարիքների համար: Դատարանները ծառայելու էին տարածքի բոլոր ժողովուրդներին, քննելու էին նրանց առնչվող բոլոր գործերը, բացառությամբ մահմեդականների միջև ծագած խնդիրներից, որոնք կարող էին քննվել նաև Շեբրիի (շարիաթական) դատարանների կողմից: Իշխանության տեղական մարմինները լինելու էին ընտրովի:

Նուբարի ծրագրով նույնպես նախատեսվում էր ստեղծել վարչական նոր միավոր, այն պետք է ապահովեր անձի, ունեցվածքի և պատվի անվտանգությունը, կյանքի կոչեր Թանզիմաթի սկզբունքները, որպես հասարակության բնականոն զարգացման գրավական: Նշվում էր Երևանի նահանգի օրինակը, որի հայ բնակչությունը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո 30 տարում կրկնապատկվել էր: Վերացվելու էին քրդերի ավարառությունները ու բռնությունները. այդ նպատակով կառավարությունը պահելու էր պահակազորք: Կառավարչին էին ենթարկվելու տարածքի ոստիկանությունն ու զորքը: Բոլորն օրենքի առաջ հավասար պետք է լիներին՝ անկախ ազգային ու կրոնական պատկանելությունից: Կոնգրեսի նախօրյակին Նուբարը առաջարկեց իր թեկնածությունը ինքնավար Հայաստանի կառավարչի պաշտոնում: "L'Arménie" թերթը գրեց, թե հայկական բարենորոգումների չուրջ Նուբարի հետ զրույցից հետո Դիզրայելին Լորդերի պալատում հայտարարեց. «Փոքր Ասիայի քրիստոնյաներին երջանկացնելու համար բավական է բարենորոգել թուրքական դատարանը»: Նուբարի այս ծայրահեղ չափավոր կեցվածքը հայկական հարցում հիմք տվեց հետևյալ ասացվածքին. «Նուբարը հայ ծնվեց, օտար մեռավ. մեծ կարող էր լինել, փոքր մնաց»[102]:

«Երբ տերությունների նեկայացուցիչները,– գրում է Լինչը,– ովքեր դպրոցում... ինչ-որ բաներ լսել էին Հայաստանի մասին, հարցրեցին... թե հայերը մինչև այժմ Օսմանյան կայսրության որ մասն են համարում Հայաստանի պատմական տարածքը, (հայ) պատվիրակները վերցրեցին հանգուցյալ պրոֆ. Կիպերտի հիանալի քարտեզն ու նրա վրա նշեցին իրենց հայրենիքի մոտավոր սահմանները... Պատվիրակները պահանջում էին, որ այդ նահանգը կառավարվեր հայ չինովնիկների կողմից... Պրուսական մայրաքաղաքում վեհաժողովի նստած եվրոպական տերությունների կոլեկտիվ իմաստությունը, հավանաբար, այս հարցում ինչ-որ ցուցում ստացել էր: Շատ ավելի դժվար էր Կիպերտի քարտեզի վրա սահմանները քննարկելը... Սակայն ակնհայտ էր՝ ինչ-որ տեղ պետք է գոյություն ունենային հայերով բնակեցված նահանգներ, դրա համար էլ տրակտատի մեջ հոդված մտցվեց, թե Բ. Դռնից պահանջվում էր հայերով բնակեցված նահանգներում բարենորոգումներ մտցնել»[103]: Լինչը Կիպերտի քարտեզի այդ օրինակն անձամբ տեսել էր Գերմանիայի արտաքին գործերի նախարարության արխիվում, որի վրա գունավոր մատիտով գծվածը համընկնում էր «Հայկական նահանգների կազմակերպչական կառուցվածքի նախագծում» առաջարկված սահմանների հետ: Այսինքն՝ ըստ Լինչի՝ 61-րդ հոդվածի ձևակերպման խնդրում հայ բնակչության հոծ զանգվածների տեղաբաշխումը որևէ դեր չի խաղացել: Նա պատրվակներ է գտնում արդարացնելու նաև բարենորոգումների ձախողումը՝ պատճառաբանելով, թե «հայերը ցրված են ամբողջ Փոքր

---

[102] «Դրոշակ», 1899, թիվ 2:

[103] Линч Г., նշվ. աշխ., հ II, էջ 526-527:

*Ասիայում... Պահանջել Բ. Դռնից բարենորոգումներ անցկացնել հայերով բնակեցված նահանգներում և հետևել այդ միջոցառումների կատարմանը, Եվրոպայի համար կնշանակեր ոչ ավել, ոչ պակաս, հովանավորության տակ առնել ամբողջ Թուրքիան... Հայկական նախագծում... ենթադրվող հայկական նահանգի մեջ մտցված էին նաև նրա բնական սահմաններից դուրս գտնվող մարզեր, որոնք ներկայացնում են միանգամայն առանձնահատուկ տնտեսական և քաղաքական խնդիրներ», և դրանց մի նահանգի մեջ միավորելը «կլիներ քաղաքական բացարձակ անմիտ քայլ»: Օրինակ է բերվում Հաքյարիի սանջակը, որտեղ հայ բնակչությունը «սակավաթիվ էր ու ցրված», և վերահսկողության տակ առնելն անհնար էր: «Թուրքիայում,– գրում է Լինչը,– Հայկական հարցի ոչ մի լուծում իր մեջ կայունության տարր պարունակել չի կարող», եթե հաշվի չի առնվում գոյություն ունեցող վարչական տարածքի ճիշտ բաժանման, այսինքն՝ Հայաստանի ու Քրդստանի սահմանների ճիշտ որոշման պահանջը: Նա անհիմն է համարում Բ. Դռան մեղադրանքը, թե հայերն անկախության են ձգտում: Անկախության համար հայերը «չունեն ոչ առաջնորդներ, ոչ էլ ազգի օրինական ղեկավարների դասակարգ»: Ի տարբերություն Բուլղարիայի, Հայաստանում հայերը գերակշիռ մեծամասնություն չեն և սերտորեն են մերված կայսրության գրեթե բոլոր մասերի հետ*[104]:

Նույն միտքը հետագայում կրկնեց Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան Կամբոնը. «Հայաստանն իրենից չի ներկայացնում բնական առանձնացված սահմաններով կամ ազգաբնակչության միատարր կազմով երկիր, ինչպիսին Բուլղարիան է: Հայերը ցրված են ամբողջ Թուրքիայում, նույնիսկ իրենց Հայաստանում ամենուրեք խառն են մահմեդականների հետ... Որտե՞ղ է սկսվում և որտե՞ղ վերջանում Հայաստանը»: Այլ կերպ ասած, Հայաստան ինքնուրույն միավորի ստեղծումն անհնար է: Ինչ վերաբերում է բարենորոգումներին, ապա դրանք իրականացնելու համար «պետք է վերափոխել բացարձակապես ամեն ինչ»[105]:

«Հայկական հարցը,– գրում է ֆրանսիական «Դեղին գիրքը», ("Livre jaune. Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897"),– հնարավոր լուծում չունի: Այն բաց է մնում, և Թուրքերն իրենց հիմար կառավարմամբ և անբանությամբ գնալով այն սրելու են... ամեն օր կարելի է սպասել պայթյունի և դա ամենևին էլ զարմանալի չէ»[106]:

"L'Abdul Hamid. Le sultan Rouge" գրքում ևս նույն միտքն է հաստատվում. «Որոշակի է, որ ազգային չարժման ղեկավարները հույսը դրել էին Եվրոպայի օգնության վրա, բայց Եվրոպան տեղից չարժվելու տրամադիր չէր, նա այն տպավորությունն ունի, թե հայ ժողովուրդը Օսմանյան կայսրության տարածքում ցրված է և ամենուրեք կորել է այլազան զանգվածների մեջ՝ ցեղով, լեզվով ու կրոնով... Ամենուրեք քրդերը, Թուրքերը, լազերը, չերքեզները թվով շատ են և քրիստոնյա տարրը պարտության է մատնվելու»[107]:

Երբ Բիսմարկը Դիզրայելիին հարցրեց, թե արդյո՞ք Անգլիական պատվիրակության առաջարկները վերջնագիր են, ստացավ պատասխան՝ «Պատերազմ»[108]: Եվրոպական հեղինակներից մեկը Բեռլինի կոնգրեսն անվանեց «օձաձկների ժողով»[109]: Դիզրայելին գնաց իրականության բացարձակ խեղաթյուրման: Ըստ նրա՝ ոչ թե «խաղաղասեր ու բարի Թուրքերը», այլ «բաչիբոզուկն է գործադրել ծայրահեղություններ» հայ և բուլղար ժողովուրդների հանդեպ, իսկ վերջիններն էլ «Թուրքերից հետ չեն մնացել»[110]:

---

[104] Նույն տեղում, էջ 560:
[105] *Братская помощь...*, ч. II, стр. 96.
[106] Նույն տեղում, էջ 97:
[107] Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 157:
[108] Եազըճեան Գ., Ապտիւլ Համիտ Բ. Կարմիր սուլթանը, էջ 214:
[109] Նույն տեղում, էջ 209:
[110] Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ, պրակ X, էջ 106:

Գերմանացի դիվանագետ Հոհենլոեյի վկայությամբ՝ կոնգրեսում Դիզրայելիի ամենակատաղի ճառը ուղղված էր Հայկական հարցի լուծման դեմ: Այդ նկատի ունենալով՝ Ն. Վարժապետյանը Հ. Լեյարդին ասաց. «Համենայն դեպս, դուք մեզ մի արգելեք հոգով լինելու ռուսների հետ, որովհետև միայն Ռուսաստանին ու Սան Ստեֆանոյի պայմանագրին ենք մենք պարտական այն բանի համար, ինչ սպասում ենք կոնգրեսից: Դուք՝ անգլիացիներդ, համակրում եք թուրքերին ու Արևելքի քրիստոնյաների վիճակը ձեզ համար ոչ մի նշանակություն չունի»[111]:

Պատահական չէ, որ երբ գագաթաժողովի մասնակիցներն իրենց չհագեցող հարցերը լուծելուց հետո անցան փոքր ժողովուրդներին հուզող խնդիրներին, նրանց հետաքրքրությունը բեկվեց անտարբերության: Լազերի հարցի քննարկման ժամանակ Բիսմարկը բացականչեց. «Պարոնա՛յք, այս չոգին արժե՞, որ լազերի խնդիրը երկար քննարկենք»[112]:

Բեռլինում կատարվեց պատմության մեջ հազվադեպ պատահող բան, երբ պատերազմող ազգերի աթոռները զբաղեցրին պատերազմին որևէ մասնակցություն չունեցողները, որոնց բաժին հասան «կարկանդակի» ամենամեծ կտորները:

Հայկական պատվիրակությանը խորհուրդներով օգնում էին միջազգային ճանաչում ունեցող մի քանի քաղաքական գործիչներ: Նրանցից Լորիս-Մելիքովը խորհուրդ էր տալիս համագործակցված աշխատել ռուսական պատվիրակության հետ: Մելքոն խանն ընդգծված անգլիասեր էր և շատ գոհ մնաց, որ հայկական բարենորոգումների վրա վերահսկողությունը գործնականում իրականացնելու էր Անգլիան: Նա ասաց. «...Քե 61-րդ հոդվածը շատ լավ է, ազգը շատ երջանիկ է լինելու և Անգլիայի պաշտպանությունից մեծ օգուտ է քաղելու»: Նուբար փաշան Թուրքական կողմնորոշում ուներ և Հայաստանի վաղվա օրը տեսնում էր Թուրքիայի կազմում[113]: Այսպիսով, քաղաքական կողմնորոշումների առումով խայտաբղետ էր ոչ միայն պատվիրակության, այլև խորհրդատուների կազմը:

Հայկական պատվիրակությունը Բեռլինում առաջին հանդիպումն ունեցավ Թուրքական դեսպանի հետ, որն առաջարկեց հրաժարվել եվրոպական տերություններին դիմելուց: Դրա փոխարեն Բ. Դուռը պարտավորվում էր հայաբնակ նահանգներում հայ նահանգապետ նշանակել: Օսմանյան պատվիրակության ղեկավար Կարաթեոդորին հայերին խորհուրդ տվեց որևէ լուրջ ակնկալություն չունենալ տերություններից: Ընդորում, նա հեռագրեց Կ. Պոլիս, առաջարկելով հայկական նահանգներում մի քանի բարեփոխումներ մտցնել, որպեսզի կանխվի որոշ կառավարությունների դիտավորությունը՝ Օսմանյան կայսրությունից զիջումներ ստանալ հայկական խաղաքարտի օգտագործման միջոցով: Շուտով լուր ստացվեց, թե Բ. Դուռը հանձնաժողով է ուղարկել հայերի վիճակն ուսումնասիրելու, նրանց գանգատները լսելու և քրդերի բռնություններն արգելելու:

Սակայն հայերը Բեռլինից շատ ավելին էին ակնկալում:

Մ. Խրիմյանը հասկանում էր տերությունների ներկայացուցիչների վարքագծի երկիմաստությունը և գնալով ավելի էր հակվում հարցերը թուրքերի հետ, առանց եվրոպական միջամտության, լուծելուն: Ստ. Փափազյանը հանդես եկավ այդ դիրքորոշման դեմ: Նա նամակով գանգատվեց պատրիարքին: Վերջինս Մ. Խրիմյանից պահանջեց ճշտորեն կատարել պատվիրակությանը տրված հանձնարարությունը, այսինքն՝ գործել եվրոպական տերությունների, մասնավորապես, Անգլիայի պատվիրակության հետ համագործակցած: Պատրիարքը նաև Բ. Դռան միջոցով արգելք դրեց Նուբարի ծրագրի վրա և նրան արգելեց Փարիզից մեկնել Բեռլին:

---

[111] «Մշակ», 1878, թիվ 127:
[112] Ցագճյան Գ., նշվ. աշխ., էջ 217:
[113] «Անահիտ», 1907, թիվ 6-9:

Գագաթաժողովի ամբողջ ընթացքում պատվիրակությունը տենդագին աշխատանքի մեջ էր՝ այցելություններ, խնդրագրեր և հարցի լուծման առաջարկներ էր տարածում: Սակայն առաջին 8-10 օրերին ոչ մի անգամ ռուսական պատվիրակության հետ չհանդիպեց: Երկու պատվիրակություններն աշխատում էին իրար չտեսնելու տալ և կիսախռով էին:

Մինաս Ջերազն անգլիական պատրիարքության անդամներից մեկին ասաց. «Եթե ձեր լիազորները կոնգրեսում մեր հարցը չպաշտպանեն, դրանով հայերին կնետեն ռուսների գիրկը»:

Իսկ հայերի ակնկալիքներն ավելի քան համեստ էին: Նուբարի բարենորոգումների ծրագրի նախագծում ասվում էր. «Հայոց քաղաքական գոյության մը, քաղաքական անկախության մը աչք չունին, քաղաքական ազատություններ կուզեն, հաստատություններ, որոնք երաշխավորեն իրենց ապահովությունը, իրենց ինչքը, իրենց կիներուն ու աղջիկներուն պատիվը, իրենց կյանքի իրավունքը՝ վերջապես», Անգլիան սա էլ չէր ուզում տալ հայերին, իսկ հայկական պատվիրակությունը չարունակում էր կառչած մնալ Լոնդոնից:

Գորչակովը Լորիս-Մելիքովին դժգոհեց. «...Այս ի՞նչ դիրք են բռնել ձեր հայրենակիցները... (նրանք) անգլիացիների մոտից չեն հեռանում, իսկ ռուսական պատվիրակության հետ, ընդհանրապես, չեն հանդիպել»:

Դրանից հետո է, որ Մ. Խրիմյանն ու Նար-պեյը դիմում են Գորչակովին. «Արևելքի մարդկանց ու իրերի մեջ անձնական ճանաչողությունն ու փորձը մղում են հայտարարելու, որ թուրքական որևէ կառավարություն և մահմեդական վարչություն չեն կարող մեր երկրի համար անհրաժեշտ բարենորոգումներ իրականացնել»:

Հայոց պատվիրակությունը, որին Գորչակովը հիվանդության պատրվակով այդպես էլ չընդունեց, չարունակում էր վարանոտ վերաբերվել Պետերբուրգի օգնության հնարավորությանը: Հունիսի 29-ին պատվիրակությունը գրում է Շուվալովին. «Մենք քաղաքական ազատություն չենք պահանջում և չենք դնում թուրքական կառավարությունից անջատվելու պահանջ: Մենք ցանկանում ենք, որ բաժանվի Թուրքա-Հայաստանը, առանձնանան Էրզրումի, Վանի վիլայեթներն ու Դիրաբեքիրի վիլայեթի հյուսիսային մասը, որտեղ մենք մեծամասնություն ենք կազմում թուրքերի նկատմամբ»: Մ. Խրիմյանը չարունակում էր Հայկական հարցի լուծման գործում առաջնությունը տալ Անգլիային: Նա անգամ փորձ արեց պատվիրակությունից հեռացնել Նար-պեյին, ասելով. «Վնասակար է. մեր խորհուրդները ռուսաց կիմացնե...»:

Իսկ եվրոպական տերությունների պատվիրակները չարունակում էին խոստումներ տալ՝ առանց գործնական որևէ քայլ կատարելու: Հայերը հասկացան, որ իրենց խաբում են: Այլ ելք չունենալով՝ դիմեցին ռուսական պատվիրակության օգնությանը: Գորչակովը մերժեց օգնել՝ ասելով, թե հայերի ինքնավարության վերաբերյալ հանձնարարություն չունի: Շուվալովն առաջարկեց ներկայացնել ավելի համեստ պահանջներ: Խրիմյանը չհամաձայնվեց: Հունիսի 22-ի նիստում կոնգրեսը քննարկեց Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը: Առաջինը հանդես եկավ Սոլսբերին, որը հավանություն տալով բարենորոգումներ մտցնելու պահանջին, միաժամանակ առաջարկեց ջնջել այդ հոդվածի առաջին տողերը, որոնք տպավորություն են ստեղծում, թե ռուսական զորքերի ներկայությամբ է երաշխավորվում բարենորոգումների անցկացումը: Շուվալովը պատճառաբանեց՝ ռուսական զորքերի դուրսբերումը հղի է վտանգավոր իրադարձություններով: Սոլսբերին իր վրա վերցրեց Հայաստանի մասին հոդվածի ձևակերպումը: Շուվալովը համաձայնվեց: Պատվիրակության վիճակն անհուսալի էր և հարկադրված եղավ գնալու ամենանվաստացուցիչ քայլի՝ դիմելու Ա. Կարադաթորիի օգնությանը: Վերջինս հենց նոր էր Սոլսբերիի հետ միասին ավարտել աշխատանքը 61-րդ հոդվածի վրա, այսինքն՝ գիտեր, որ Հայկական պատվիրակության առաքելությունը ձախողված էր,

ուստի ոչ միայն մերժեց նրա խնդրանքները, այլև հեռագրեց Կ. Պոլիս՝ պատվիրակությունը հետ կանչելու: Հայաստանի ինքնավարության հարցը կոնգրեսում նույնիսկ չէր դրվում, ինչն այլևս ավելորդ էր դարձնում Հայոց պատվիրակության Բեռլինում գտնվելը:

Սուլթան Համիդը պատրիարքից պահանջեց պատվիրակությանը հետ կանչել: Պատրիարքը պատասխանեց, թե պատվիրակությունը կազմել է Ազգային ժողովը, և ինքն իրավունք չունի տնօրինելու նրա գործունեությունը: Սուլթանը պնդեց, պատրիարքը մնաց իր խոսքին, ասելով՝ եթե պատվիրակությունը հետ կանչվի, ինքը կկախվի պատրիարքարանի պատից:

Հուլիսի 5-ի նիստին Սոլսբերին ներկայացրեց 61-րդ հոդվածի ձևակերպումը, որը փաստորեն մերժում էր նաև բարենորոգումների պարտադիր լինելը: Ահա այդ ձևակերպումը, «Նա (Բ. Դուռը) բացի դրանից (բարենորոգումներից) համաձայնություն կկայացնի պայմանագիրը ստորագրած մյուս վեց պետությունների հետ նշված պարտավորությունների նշանակության և դրանց գործադրման անհրաժեշտ միջոցների մասին»:

Ա. Կարաթեոդորին առաջարկեց հանել 61-րդ հոդվածի վերջին տողը՝ պատճառաբանելով, թե իբր հայերի հանդեպ բռնություններ գործադրած քրդերի ու չերքեզների դեմ Բ. Դուռն արդեն միջոցներ ձեռնարկել է և կոնգրեսին մնում է միայն պարտավորեցնել նրան վեց տերությունների կառավարություններին տեղեկացնել իր ձեռնարկած միջոցառումների արդյունքների մասին: Շուվալովը մերժեց Կարաթեոդորիի առաջարկությունը, պատճառաբանելով, թե Բ. Դռան ձեռնարկումները դրական որևէ արդյունք չեն տվել:

Հուլիսի 8-ի նույն նիստում Սոլսբերին ներկայացրեց 61-րդ հոդվածի նոր տարբերակը: Առաջարկությունը մանակի փոփոխություններով ընդունվեց: Դա հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակության պարտություն էր:

Կոնգրեսի վերջին նիստին Մ. Խրիմյանը ներկայացրեց հետևյալ հուշագիրը.

«Հայկական պատվիրակությունը ստիպված է իր ափսոսանքն արտահայտել այն բանի համար, որ կոնգրեսը չընդունեց իր, որքան օրինական, նույնքան էլ չափավոր պահանջները: Մենք կարծում էինք, թե մի քանի միլիոն մարդուց կազմված մի ժողովրդի, որը մինչև օրս թույլ չի տվել, որ իրեն օգտագործեն որպես արտաստահմանյան քաղաքականության գործիք, չնայած շատ ավելի է շահագործվել, քան Թուրքիայի մնացած քրիստոնյա ժողովուրդները, մի ժողովրդի, որը ոչ մի դժվարություն չի պատճառել թուրքական կառավարությանը... մի ժողովրդի , որը հակված չէ քաղաքական որևէ հավակնության, կընձեռվի իր սեփական կյանքով ապրելու և հայկական հողում հայ պաշտոնյաների կողմից ղեկավարվելու իրավունքը: Հայերը հասկացան, որ խաբվել են, որ իրենց իրավունքների ճանաչման չեն արժանացել, որովհետև եղել են խաղաղասեր, և որ, անկախ պահելով իրենց հին եկեղեցական կազմակերպությունը և ազգային ոգին, ըստ էության ոչնչի չեն հասել:

Հայկական պատվիրակությունը տունդարձի ճանապարհին դեպի Արևելք իր հետ կտանի այդ դասը: Բայց սրանով նա արտահայտում է այն կարծիքը, որ հայ ժողովուրդը երբեք չի դադարի ձայն բարձրացնել, քանի դեռ Եվրոպան չի բավարարել նրա պահանջները»[114]:

Մ. Ջերազը այս հուշագրի հեղինակ համարում է Ն. Վարժապետյանին և բերում է դրա վերջին պարբերությունը, որը, ըստ նրա, ուներ հետևյալ տեսքը. «Հայերն այժմ հասկացան, որ չեզոքության, իրենց նպատակների իրականացման համար բռնի միջոցների չդիմելու պատճառով ոչինչ չստացան պաշտպանելու համար իրենց հին եկեղեցին և հին ազգային անկախությունը... Հայկական պատվիրակությունը մեկնում է Արևելք՝

---

[114] **Barikian A.**, *Die Entstehung der armenischen Frage im 19. Jahrhundert. "Dissertation"*. Wien, 1948, S. 155.

իր հետ տանելով այդ դասը»[115]: Այս տարբերակը ժամանակակից թուրքական պատմագրության ու քարոզչության կողմից հաճախ է չահարկվում՝ ապացուցելու, թե Բեռլինը չըշադարձ հանդիսացավ ոչ թե հայերի հանդեպ թուրքական քաղաքականության, այլ հայերի անկախական ձգտումներն իրականացնելու եղանակների մեջ, նրանք ընտրեցին ապստամբական ուղին, ինչը և հանգեցրեց հայկական կոտորածներին: Մինչդեռ հուշագիրը նման եզրակացության համար հիմք չի տալիս: Այն գտնում է, որ մինչ այդ հայերը չէին անհանգստացրել Եվրոպային, իսկ այսուհետև այդ անելու են հետևողականորեն, մինչև Եվրոպան չբավարարի իրենց պահանջը և ուրիշ ոչինչ:

Հայկական բարեփոխումների հարցի քննարկման ժամանակ Բիսմարկն ասաց, որ 61-րդ հոդվածը իրականացնելու վերաբերյալ համաձայնությունը կարող է կայացվել միայն Կ. Պոլսում, տերությունները չպետք է բարեփոխումները ներդնեն հակառակ սուլթանի կամքի և զենքի օգնությամբ, իսկ մի քանի ամիս անց, հոկտեմբերի 2-ին հայտարարեց. «Մեր պետական քաղաքականության հաղթանակը կլիներ, եթե հաջողվեր բաց պահել արևելյան ուռուցքը և դրանով ձախողել մյուս մեծ տերությունների միասնությունը...»[116]:

Ի դեպ, թե՛ Բիսմարկը, թե՛ Սոլսբերին չէին հավատում Թուրքիայում ո՛չ բարենորոգումների և ո՛չ էլ քրիստոնյաների պաշտպանության հնարավորությանը: Նրանց միակ նպատակն էր՝ թույլ չտալ, որ Ռուսաստանը տիրանար Հայաստանին[117]: Հավանաբար հենց այդ նկատի ունենալով էր, որ Արգայլի դուքսը հայտարարեց. «Ոչ մի տեղ քաղաքականությունը չի բխել այնքան անբարոյական և անխոհեմ նկատառումներից», որքան Հայաստանում[118]: Ա. Ամֆիտեատրովը Բեռլինի դաշնագիրն անվանեց «Ռուսական զենքի նկատմամբ եվրոպական դիվանագիտության հաղթանակի խորհրդանիշ»[119]: «Բեռլինի կոնգրեսն իմ կարիերայի ամենասև էջն է»,– գրեց Գորչակովը ցարին: «Նմանապես և իմ»,– մակագրեց Ալեքսանդր 2-րդը:[120] Սլավոնոֆիլները կոնգրեսը համարեցին դավադրություն ռուս ժողովրդի դեմ Ռուսաստանի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կոնգրեսի արդյունքները միանշանակ չընդունվեցին հայկական շրջաններում: Մ. Խրիմյանն այն գնահատեց որպես Հայկական հարցի լուծման ճանապարհին խոշոր պարտություն: Բիսմարկի խոսքերով՝ դա հետևանք էր այն բանի, որ հայերը Բեռլին գնացին ոչ թե չեռնոգորցիների նման՝ թիկունքում ունենալով մարտնչող ժողովուրդ, այլ ողորմություն խնդրելու, իսկ դիվանագիտությունը մուրացողին բաժին չի հանում և հետ է մղում նրա պարզած ձեռքը: Այլ կարծիքի էր Մինաս Չերազը. «Բեռլինի ժողովն մի ոսկեհանք չահեցանք, մենք պետք է խիզախենք անկե հանելու ոսկին»[121]: 61-րդ հոդվածը Ն. Վարժապետյանի համար դարձավ նաև անձնական ողբերգություն: Նա սկզբում լավատեսական ճառեր արտասանեց՝ ճիշտ համարելով այդ պահին Հայկական հարցի բարձրացումը: Միլոցների դիմեց բարենորոգումների գործընթացը սկսելու համար: 1878թ. օգոստոսի 2-ին Ազգային ժողովում ոգևորված հայտարարեց. «Սրանից հետո Հայաստանը կունենա իր ճանապարհները, իր ջրանցքները, գործարանները կշատանան և անգլիական կապիտալը դրանցում գործադրություն կգտնի: Թող ուրեմն մեր դրամատերերն էլ այստեղ գան և այժմվանից միանան ու ընկերություններ կազմակերպեն: Միանանք և մենք ու միասնական ուժերով դպրոցներ բացենք բոլոր քաղաքնե-

---

[115] «Հնչակ», 1889, թիվ 4:

[116] **Schillgen G.**, *Imperialismus und Gleichgewicht, Deutschland,* München, 1984, S. 18.

[117] **Janne P.**, *Armenien. Der erste Völkermord des 20. Jahrhunderts,* München, S. 89.

[118] **Ternon Y.**, *Tabou Arménien,* Frankfurt, 1981, S. 89 կամ **Նանսեն Ֆ.**, նշվ. աշխ., էջ 239:

[119] **Амфитеатров А. В.**, *Армянский вопрос,* СПб., 1906, стр. 23; *"Кавказский вестник"*, 1905, N4.

[120] **Скальковский К.**, *Внешняя политика России и положение иностранных держав,* СПб., 1897, стр. 230.

[121] **Մինաս Չերազ**, *Թե ինչ չահեցանք Պեռլինի վեհաժողովեն*, Կ. Պ., 1879, էջ 29-30:

*րում, միանանք, որ ընդլայնենք մեր առևտուրը, զարգացնենք մեր արդյունաբերությունը»*[122]*: Սեպտեմբերին նա սուլթանին խնդրեց ստեղծել հանձնաժողով բարենորոգումների վրա հսկողություն սահմանելու համար: Սուլթանը մերժեց, ինչը սրեց պատրիարքի և թուրքական իշխանությունների հարաբերությունները: 1879թ հունվարի 4-ին Ն. Վարժապետյանը հայտարարեց, թե հրաժարական է տալիս: Սուլթանը չընդունեց պատրիարքի հրաժարականը՝ գիտակցելով, որ այն ընկալվելու է որպես Բեռլինի վեհաժողովի որոշումների կատարումը ձախողելուն ուղղված քայլ: Մանավանդ, որ հանձինս Ն. Վարժապետյանի սուլթանը տեսնում էր Հայկական հարցը ոչ թե բռնի, այլ դիվանագիտական միջոցներով լուծելու կողմնակցի:*

*Աստիճանաբար Ն. Վարժապետյանը համոզվում էր, որ սուլթանը բարենորոգումներ չի մտցնելու, և եվրոպական կառավարություններն էլ հաշտվելու են դրա հետ: Սակայն շարունակում էր տենդագին միջոցների դիմել: Նա նորից հայացքը հառեց Ռուսաստանին, պատարագների ժամանակ գոչում էր. «Կեցցե՛ Ռուսաստանը»*[123]*: Սերտացրեց հարաբերությունները Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկու հետ: Վերջինիս չանքերով Բ. Դուրը հայտարարեց, թե համաձայն է կոմիսարներ ուղարկել նահանգներում իրավիճակն ուսումնասիրելու համար:*

*1879թ. մայիսին Ն. Վարժապետյանը հրապարակավ դատապարտեց Բ. Դուանը, որը տված խոստումները չէր կատարում և բարենորոգումների ձախողումը պատճառաբանում էր ֆինանսական միջոցների բացակայությամբ*[124]*: Իրեն անձնապես պատասխանատու համարելով ձախողումների, արևմտյան դիվանագիտությանը հավատալու հարցում, նաև համոզվելով, որ Ռուսաստանը ևս լուրջ քայլերի չի դիմում 61-րդ հոդվածի կատարման ուղղությամբ, նա հուսալը կտրեց դրսի ուժերից: Այդ շրջադարձի մասին հստակ վկայություններ չկան, սակայն վաղամեռիկ պատրիարքի գործունեությունը 80-ական թվականների սկզբներին հանգեցնում է նման հետևության:*

*Ա. Ասլանյանի 1887թ. հունվարի 26-ի նամակում, հասցեագրված Ստ. Փափազյանին, կարդում ենք, որ սուլթանը Ն. Վարժապետյանի հասցեին ասել է, թե Բեռլինից հետո «աշխատեց Մեծ Հայաստանը վերականգնել, դրա համար գնաց Բեյրութ, Եգիպտոս, մասնակցեց Անգլիայի մեքենայություններին»: Եթե սուլթանը չէր ստում, ապա ասվածից հետում է, որ Ն. Վարժապետյանի մոտեցումներում, իսկապես, արմատական շրջադարձ էր տեղի ունեցել: Չնայած Ա. Ասլանյանը նկատում է, թե պատրիարքը «անգամ մտքով չի անցկացրել Մեծ Հայաստանը որպես անկախ պետություն վերականգնելը, այլ պարզապես ազգային՝ հայրենական գավառներում վիճակն անվտանգ դարձնելու և բարեկարգելու մտադրությամբ է առանձնահատուկ հոգածություն խնդրել բարեխնամ կառավարությունից, հոգածություն, որը նաև զուրկ չէ ռազմավարական օգտակարությունից», քանի որ «հայաբնակ գավառներուն առանձին կարգադրությամբ բարենորոգումն ու բարգավաճումը օսմանյան գահի մեծաշուք հովանու ներքո, պետության արևելյան սահմանի վրա և Եփրատի հովտի սրտում մի հզոր խոչընդոտ են մեր դարավոր թշնամու, նրա ոտնձգությունների դեմ և սահմանի մյուս կողմում նրա լուծը կրող և քմահաճ բռնակալության ենթակա հայազգ ժողովրդի առջև ապագայի մի հրապուրիչ խայծ: Այսպես մենք հասկացանք Հայկական խնդիրները, անշուշտ այսպես հասկացան նաև մեր Վեհափառ տերն ու Եվրոպան...»:*

*«Սակայն նաև ստույգ է, որ հազիվ մի տարի անց նույն ինքը՝ Վեհ Կայսրը՝ անշուշտ նեղացած օտարաբնակ և օտարահպատակ հայերից ոմանց անտեղի ու անխոհեմ դիմումներից..., դժգոհություն ու զայրույթ էր հայտնել հոգելույս պատրիարքին...*

---

[122] *«Դրոշակ»*, 1901, թիվ 1:
[123] *Ատենագիտութիւն Ազգային ժողովոյ*, 1878, էջ 66-67:
[124] *Тифлисский вестник*, 29.05.1879.

*Բայց սրանք թուլրիմացության և գրգռության արդյունք են և չեն կարող Հայկական հարցի էությունը կազմել: Այդ հարցի լուծման մեջ մեր վեհափառ տերն ամենամեծ շահն ունի, ուստի ինչ հարկ կա մեր կողմից անհամբերությունը և նախաձեռնությունը խոստացած բարենորոգումները չտապեցնելու համար...»*[125]:

*Դժվար է պնդել՝ սա համոզմունք էր թե օսմանյան պաշտոնատարի խարդավանք: Սակայն նման կարծիքների գոյությունը ևս հաստատում է այն իրողությունը, որ Հայկական հարցում պոլսահայությունը միասնական մոտեցում չուներ: Մի բան ակնհայտ է՝ Բեռլինից հետո պոլսահայ կղերականությունը մասնատվեց: Մ. Խրիմյանը հեռացավ Հայկական հարցը դիվանագիտական խողովակներով առաջ տանելու կողմնակիցներից ու հանգեց սեփական ուժերով, զենքի օգնությամբ այն լուծելու եզրահանգմանը: Նա հասկացավ, որ արցունքի լեզուն դիվանագիտության մեջ անպետք լեզու է, որ դիվանագիտության տրամաբանությունը կառուցված է շահի և ուժի վրա: Իսկ ուժ ասելով, հասկացվում էր ապստամբությունը, որը միջոց էր համարվում «դիվանագիտական շրջանակներում ուշադրություն հրավիրելու Հայկական հարցի վրա»:*

*Սակայն ընդհանուր առմամբ Հայկական հարցի լուծման միջոց չարունակեց համարվել տերությունների միջամտությունը: Որոշ առումով Բեռլինը նույնիսկ հզորացրեց այդ հույսերը, քանի որ տերություններն իրենց վրա պարտականություններ վերցրին: Մասնավորապես մեծացավ հույսը՝ կապված Ռուսաստանի հետ: Իսկ իրականում, ինչպես նշում է Կաուցկին, «Կ.Պոլսին տիրանալու Ռուսաստանի ձգտման շնորհիվ Թուրքիան ձեռք բերեց նոր դաշնակից Հանձինս... Ֆրանսիայի, Իտալիայի և Անգլիայի: Նրանք բոլորը միավորվեցին, որպեսզի պաշտպանեն Թուրքիային Ռուսաստանից»*[126]: *Այս պայմաններում ավելի քան ակնհայտ է, որ «Հայկական հարցը պանարմենիզմ չէր, այլ Թրքահայ խնդիր», այսինքն՝ ոչ այլ ինչ, եթե ոչ «Թրքահայության, նրա կյանքի ու ունեցվածքի անվտանգության, նրա մարդավայել կենցաղի հարց էր»*[127]:

*Տերությունների կառավարությունների անպարկեշտությունները վերջնականապես փչրեցին ոչ փոքր թվով հայ գործիչների պատկերացումները եվրոպական քաղաքական և բարոյական արժեքների հանդեպ, բայց չկարողացան ձևավորել դրանք մերժող հասարակական կարծիք:*

*«Մեղու Հայաստանի»-ն (1879, թիվ 45 և 50) 61-րդ հոդվածն անվանեց «Մեծ ժառանգություն»: «Լրագիր»-ը իր 1878 թվի թիվ 5-ում գրեց. «... Պեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածն ազատեց հայերուն... և հուսալի ապագայի մեջ մը դրավ»: Գր. Օտյանն իսկույն նկատեց վտանգը: Նա գրեց. «Հայողեցանք 61-րդ հոդված մը դնել տալ Պեռլինի դաշնագրի մեջ, իցիվ թե հայողինք չնչել զայն»: Բեռլինի դաշնագրի դեմ ընդվզեց Ստ. Փափազյանը: Նա հանդես եկավ զինված պայքարի կոչով, որպեսզի հայերին այլևս չզլացվի «ամեն հավասարության իրավունք»*[128]: *Իսկ Գ. Սրվանձտյանցը գրեց. «Հայաստանի մեջ է բուն հայկական խնդիրները, մենք Պեռլինի մեջ կորոնենք զայն»*[129]: *Նրան ձայնակցեց «Մշակ»-ը. «Մեզ վրա պետք է հույս դնենք և ոչ թե Բեռլինի: Այն ազգը, որն ինքն իր վրա հույս չունի, նա ապագա չունի»*[130]: *Երիտասարդ Գր. Զոհրապը մերժում էր «նորահաս տիպլոմաթի» (Ջերազի) գլխավոր թեզը, թե «ազգը ոչ միայն վնաս չկրեց, այլև մեծապես շահեցավ Պեռլինի վեհաժողովեն», թե այդ ժողովից «մի ոսկեհանք շահեցանք...»: Գր. Զոհրապը գրեց. «Արդեն այս գրքին անունն անգամ («Թե ինչ շահեցանք Պեռլինի վեհաժողովեն») սխալ է, թե ինչ շահեցանք, չիտակ խոսելով, ինչպե՞ս,*

---

[125] ԳԱԹ, ֆ. Ազատյան Թ., գ. 556:

[126] **Каутский К.**, *Национальное государство, имперналистическое государство в союзе государств*, Москва, 1917, стр. 171.

[127] **Գանգրունի Հ.**, նշվ. աշխ., էջ 274:

[128] **Ալպոյաճեան Ա.**, *Պատմութիւն Մալաթիոյ հայոց*, էջ 836:

[129] *Ատենագիտութիւն Ազգային ժողովոյ*, 1878, էջ 351-352:

[130] «*Մշակ*», 1879, թիվ 125:

մի՞թե Վանա ավազակությունը չչահեցանք, մի՞թե Մշո, Տիգրանակերտի, Կարնո հարստահարություններն ու աղետքը չչահեցա՞նք... Բան մը չենք չահած Պեռլինի դաշնագրեն»[131]:

Բեռլինի դաշնագրի հայերին վերաբերող տրամադրությունները չնայած դաժան էին հայ ժողովրդի համար, բայց այնպիսին չէին, ինչպիսին ներկայացված են «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր» հանդեսի 2003թ. թիվ 7-ի, 167 էջում, թե եվրոպական պետությունները «վախենալով ռուսական էքսպանսիայից, պահանջում են անցկացնել Բեռլինում կոնգրես... Բեռլինի դաշնագիրը ներառում էր թիվ 61 հոդվածը, որտեղ ոչ մի ակնարկ չէր արվում հայերի մասին...»: Դաշնագրում հայերի մասին մտքեր կան մի քանի հոդվածներում, բայց հիմնականում ուղղված արևմտահայության կենսական չահերի դեմ:

Հայ, առանձնապես արևելահայ մտավորականությունը, ընդհանրապես, շատ հիվանդոտ էր ընդունում ցարական կառավարության հակահայ քաղաքականությունը, մասնավորապես ռուս մտավորականության որոշ շրջանների հայատյացությունը՝ արմենոֆոբիան: Օրինակ, մեծ զայրույթ առաջացրեց Ն. Կուկոլնիկի «Հայկական խնդրի մասին» գրության մեջ առաջ քաշված այն միտքը, թե կաթողիկոսարանը պետք է էջմիածնից տեղափոխել Թեոդոսիա, քանի որ, չնայած «դեռևս հայերի շրջանում անջատողական ձգտումներ չկան, բայց կաթողիկոսական գահը էջմիածնում թողնելու դեպքում», անկախության միտքը «կարող է ծագել ինքնըստինքյան կամ թելադրվել դրսից»[132]:

Ա. Մուրադյանը (Mars) «Ցարական Ռուսաստանի և Թուրքիայի վարած քաղաքականությունը հայերի նկատմամբ» հոդվածում գրում է. «երբ Թուրքաց Հայաստանը դարձել էր սպանդանոց և Եվրոպայում հուզել մտքերը, քրիստոնյաների պաշտպան Ռուսաստանը ոչ միայն չբողոքեց, այլ բողոքողներին հասկացրեց, որ հայերին կոտորելը, նրանց հոգեպես և տնտեսապես ոչնչացնելն իրեն շատ հաճելի է, որ դրանք մտնում են իր քաղաքական ծրագրերի մեջ Մերձավոր Արևելքի նկատմամբ, որ Հայաստանն իրեն պետք է առանց հայերի»[133]:

Նման շատ մեջբերումներ կարելի է կատարել, սակայն դրանք արտահայտություններ էին ոչ այնքան օբյեկտիվ իրականության, որքան քաղաքական միամտության ու տղայական զգացմունքայնության: Հայկական հարցի չուրջ ծավալվածը դիվանագիտական ու քաղաքական բացառիկ բարդ խաղ էր և, իհարկե, պահանջում էր շատ ավելի հասուն մոտեցումներ:

Եթե Մինաս Զերազը 61-րդ հոդվածի առավելությունը համարում էր Հայկական հարցի միջազգայնացումը, ապա Մ. Խրիմյանը հենց միջազգայնացումն էր համարում վտանգավոր: Նա գտնում էր, որ 61-րդ հոդվածն ազատություն էր տալիս սուլթանի ձեռքերին, քանի որ տերությունների միջև եղած հակասությունները բացառելու են ոչ միայն բարենորոգումների իրականացումը, այլև հայերի հանդեպ սուլթանական կառավարության այլևայլ կամայականությունները կանխելու նկատմամբ վերահսկողությունը: Եվ իսկապես, հենց որ ռուսական զորքերը հեռացան գրաված տարածքներից, հայերի նկատմամբ թուրքական քաղաքականությունն արմատական փոփոխություն կրեց:

«Մշակ»-ը գրեց. «Հայերը մտան նոր շրջան, ոչ սգի, լացի, բռնության ու ստրկության, այլ նահատակության, կորստյան ու բռնակալության, վանդի արդեն սրվում են բարբարոսների յաթաղանները Տաճկաստանում մնացող հայերի համար...»[134]:

---

[131] ԳԱԹ, ֆ. Զոհրապ Գր., գ 9ա:
[132] Նույն տեղում, Շահազիզ Ե., գ 155, թ. 9:
[133] ԳԱԹ, ֆ. Տաղավարյան, գ. 272, 273, թթ. 12-14:
[134] Տե՛ս Հ. Ղազարյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 411:

*Դրան գումարվեց Դիզրայելիի Անգլիայի հայատյաց քաղաքականությունը՝ Հայաստանի փոխարեն Քրդստան... Մ. Շվոտը Հայաստանը Քրդստանի վերածելու փորձերի մասին գրում է. «Ջնայած որ մի քանի նորագույն աշխարհացույց Փոքր Ասիայում ցույց կուտան և Քրդստան անունով մի երկիր, բայց դա ոչ այլ ինչ է, եթե ոչ նոր Հայաստանի մի հարազատ մասը. միայն անիծված մետաղի և նույնպես անիծված պոլիտիկայի չնորհիվ է տեղի ունեցել այդ բառախաղությունը... Այնպես որ, խոսքս այսօրվա մասին լինելով՝ «ստան» վերջավորությամբ Քյուրդիստանը գոյություն չունի և չի էլ կարող գոյություն ունենալ, որովհետև մենք քրդեր ասելով կը հասկնանք բազմազան ցեղերի բաժանված և բազմապիսի հանգամանքներով իրարմե խորթացած, օտարացած և ընդհանուր ոչ մի ուշագրավ ներքին կապ չունեցող ուրույն-ուրույն ցեղեր և ոչ մի անբաժան ազգ, որ այսպես թե այնպես, իրավատեր լինել կարողանար այս կամ այն երկիրը իր հայրենիքը անվանելու կամ դարձնելու»*[135]:

*Այս կապակցությամբ Գրինը գրում է. «Քրդստան անվանումը, որով թուրքական կառավարությունը փորձում է ծածկել Հայաստանի պատմական անունը, չի համապատասխանում ոչ քաղաքական, ոչ աշխարհագրական իրավիճակին, որովհետև վերաբերում է ավելի ընդարձակ, մեծ տարածքի, որտեղ ցրված են քրդերը»*[136]:

*Այս առթիվ տեղին է մեջբերել ամերիկյան գործիչ Է. Լիթլի կողմից 1918թ. փետրվարի 7-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում Հայկական հարցի մասին կարդացած զեկույցի հետևյալ միտքը. «Եվրոպան ոչինչ չի արել Հայաստանի համար: Քրիստոնյա պետություններն իրականում ավելի շատ վնաս են բերել, քան բարիք, որովհետև պաշտպանել են Բեռլինի դաշնագիրը, մի սնամեջ ծաղր, որով ոգևորեցին այդ (օսմանահպատակ) ժողովուրդներին ու ապա հեռացան, հնարավորություն տալով թուրքերին սպանելու, պատվազրկելու նրանց, հազարներով ոչնչացնելու»*[137]:

*Այդ իրողությունը նկատի ունենալով՝ Արփ. Արփիարյանը պատասխանեց Մ. Չերազին. «Ահավասիկ, առայժմ ինչ չահեցինք վեհաժողովեն՝ Զեյթունի գերությունը և ավերումը, Հայաստանի հարստահարությունների բազմապատկվելը»*[138]:

*Հայ դիվանագիտության համար Բեռլինը հանդիսացավ ռոմանտիկական անորոշություններից անցում հաչվենկատ իրապաշտության: Երբ Մ. Խրիմյանը մեկնում էր վեհաժողով, նրան հարցրին. «Հայրիկ, դու այնտեղ ո՞ր լեզվով ես խոսելու: Ձէ՞ որ բացի հայերենից այլ լեզու չգիտես»: Խրիմյանը պատասխանեց. «Ես խոսելու եմ արցունքի լեզվով»: Երբ վերադարձավ Բեռլինից, անհաջողությունը մեկնաբանեց այսպես. «Վեհաժողովի սեղանի չուրջ նստած խավիծ էին ուտում: Բոլորն ունեին երկաթյա գդալներ, միայն մեր գդալներն էին թղթից: Դրա համար էլ մեզ ոչինչ չհասավ»:*

*Սակայն անցումը իրապաշտության չէր նշանակում կարծիքների և շահերի միասնություն: Բեռլինի կոնգրեսի ավարտից մի քանի օր անց Ն. Վարժապետյանը Գ. Փափազյանին գրած նամակում հայերի ձախողվելը բացատրում է մի քանի հանգամանքներով. ա) թրքասեր Լեյարդի կազմած սխալ տեղեկագրեր, բ) Անգլիան մեծ հարցերում թուրքիային նեղացրել էր և երկրորդական հարցերում, ինչպիսին էր հայկականը, ձգտում էր նրան սիրաշահել, գ) չնայած Պոլսից համապատասխան հրամաններ չունենալուն, Կարադաթորի փաշան անգլիում կեցվածք որդեգրեց հայկական հարցում, դ) գոյություն ուներ թուրք-անգլիական գաղտնի պայմանագիր*[139]:

---

[135] **Շվոտ Մ.**, *Քրդերը Տաճկաց Հայաստանում*, Ս. Պետերբուրգ, 1905, էջ 20-21:

[136] **Грин Ф.**, *Армянский кризис и владычество турок (Сасунская резня)*. См. *"Положение армян в Турции..."*, стр. 254.

[137] **Լիթլ Է.**, *Հայկական հարց*, Երևան, 2003, էջ 34:

[138] «*Մշակ*», 1978, թիվ 206:

[139] *"Армянский сборник"*, Москва, стр. 129.

Ի վերջո, Բեռլինը փչրեց Ն. Վարժապետյանի Հայկական հարցի լուծման խնդրում ունեցած մոտեցումների ու երազանքների համակարգը և նրան մատնեց խոր հիասթափության: Սուլթանը երկար ժամանակ նրա հրաժարականները ոչ միայն չէր ընդունում, այլև 1882թ. դեկտեմբերի 16-ին նրա պատվին նույնիսկ ընդունելություն կազմակերպեց: Մեծ վեզիր Սայիդը պատրիարքին երեք ժամ չարունակ համոզում էր հետ կանգնել հրաժարականից: Սուլթանը Ն. Վարժապետյանին չքանչանով պարգևատրեց, թանկարժեք իրեր, ինչպես նաև Օրթա գյուղում մեծ առանձնատուն նվիրեց: Սուլթանի կողմից նման վերաբերմունքը, որը հայության շրջանում այլևայլ մեկնաբանություններ ծնեց, Մ. Օրմանյանը բացատրում է. Աբդուլ Համիդը մեծ «վարպետ էր մարդկանց ու զգացմունքներ ճանաչելու գործում, և չնայած արտաքնապես Վարժապետյանը համարվում էր հակապետական անձանցից մեկը, սուլթանը ճանաչեց նրա անկեղծ զգացումները և ազգային օգուտը պետական շահերին համապատասխանեցնելու անխարդախ դիրքորոշումը»: Համոզված ենք, որ Մ. Օրմանյանը չափազանցնում էր սուլթանի «սկզբունքային դիրքորոշումը»: Ոչ թե և ոչ այնքան Ն. Վարժապետյանի «պետական մտածողությունը», այլ պատերազմից հետո կրոնա-քաղաքական կյանքում տեղի ունեցող խմորումները, կարծիքների, մոտեցումների ու կողմնորոշումների վերաքննություններն էին սուլթանին հարկադրում արտաքուստ անորոշ, չընդգծված կողմնորոշմամբ գործել:

1882թ. իր մահկանացուն կնքեց Գևորգ 4-րդ (Քերեսթեճյան) կաթողիկոսը, մի խոշոր երևույթ հայ քաղաքական-մշակութային կյանքում, որն օգտվում էր բացառիկ հեղինակությունից ոչ միայն հայերի, այլև օտար քաղաքական շրջանակներում: Կաթողիկոս ընտրվեց Ն. Վարժապետյանը: Սակայն սուլթանի խնդրանքով ցարը մի տարի չհաստատեց այդ ընտրության արդյունքները, ապա առողջական վիճակի պատճառով կաթողիկոսության գահիսոնն ընդունելուց հրաժարվեց ինքը՝ Ն. Վարժապետյանը: Նա մահացավ 1884թ. հոկտեմբերի 25-ին 47 տարեկան հասակում: Վարժապետյանի մահը հայ հասարակական և քաղաքական կյանքում անհետևանք չանցավ, մանավանդ որ ժամանակը թելադրում էր վերանայել հին դիրքորոշումները: Սուլթանական կառավարությունը տնտեսական, քաղաքական, ազգային և մշակութային համապարփակ ու դաժան հարձակման էր անցել արևմտահայության դեմ: Նոր պայմաններում խելամիտ համարվեց պատրիարք ընտրել զգույշ և չափավոր քաղաքականության կողմնակից Վեհապետյանին: Կտրուկ շրջադարձ տեղի ունեցավ նաև արևելահայության կյանքում: Պատճառաբանելով, թե հայերը չեն կատարում ոչ-ռուսական դպրոցների վրա պետական վերահսկողությունը խստացնելու վերաբերյալ ցարի 1874թ. հուլիսի 19-ի հրամանագիրը, 1885թ. փակվեց 200 հայկական դպրոց: Մակար կաթողիկոսի ջանքերը խստություններն մեղմացնելու ուղղությամբ արդյունք չտվեցին: Այս հանգամանքը ևս որոշակի ազդեցություն ունեցավ Վեհապետյանի դիրքորոշման վրա: Նա մերժեց բարենորոգումների հանդեպ Ն. Վարժապետյանի մոտեցումները, դեմ էր օտար տերությունների օգնությամբ ու միջամտությամբ բարենորոգումներ մտցնելուն և գտնում էր, որ հայերի վիճակի բարելավման պետք է հասնել ամբողջ կայսրության բարեկարգման և իշխանությունների հետ «հաշտարար քաղաքականություն» վարելու միջոցով: Երբ Բ. Դուրը որոշեց քանդել Պեչիկթաշի հայկական գերեզմանատունը, Վեհապետյանը դիմեց սուլթանին: Համիդն ընդառաջեց պատրիարքի խնդրանքին՝ նկատի ունենալով, որ գերեզմանատունը քանդելու «կարգադրությունը հակառակ է կրոնական զգացմունքներին... չեմ կարող անճիս համար մեծ զոհողություն ընդունել (գերեզմանատան քանդելը պատճառաբանվում էր նրանով, որ այն ելդըզի հենց դիմացն էր և մշտապես Փադիշահի աչքի առաջ) և չեմ ցանկանում, որ պատրիարքն այդ պատճառով դժվարություններ կրի»: Վեհապետյանի միջնորդությամբ իր պաշտոնին վերականգնվեց Մշո առաջնորդ Ալեքթջյանը, ազատ արձակվեցին մի քանի քաղաքական բանտարկյալներ: Վեհապետյանի քաղաքականությունը չարունակեց 1888թ. պատրիարք ընտրված Խորեն Աշգյանը: Սակայն երկար ժա-

մանակ չպահանջվեց հասկանալու, որ հարմարվողական քաղաքականության արդյունքները հօգուտ հայերի չէին: Կ.Պոլսի կառավարությունը մեկը մյուսի հետևից խուզում էր Հայ Եկեղեցու և համայնքի իրավունքները: Բանը հասավ այնտեղ, որ Բ. Դուռը սկսեց անուշադրության մատնել պատրիարքի ոչ միայն միջնորդությունները, այլև անգամ հրաժարականի խնդրանքները[140]:

1890թ. հոկտեմբերի 13-ին սուլթանը հաստատեց պատրիարքարանի նոր կանոնադրություն, որը ի չիք էր դարձնում այդ հաստատության մասնակցությունն ազգային-քաղաքական կյանքին: Պոլսից վտարվեց Մ. Խրիմյանը: Վեհապետյան-Աչգյան հարմարվողական, անատամ քաղաքականության հետևանքով Հայոց պատրիարքարանն ու, ամբողջությամբ վերցրած, պոլսահայ գործիչները 1894-96թթ. իրադարձությունների ժամանակ անիմաստ, անտրամաբանական, վախվորած քայլերից զատ, ոչինչ անել չկարողացան:

1894թ. պատրիարք ընտրված Մաթեոս Իզմիրլյանը փորձեց վիճակը չտկել: Արդեն իսկ գահակալական ճառում նա ասաց. «Հավատարմությունն ալ երկկողմանի պայմանադրյալ պարտք է և կառավարությանն ու ժողովրդին, հպատակին ու վեհապետին պարտավորեցնում է հավասարապես»[141]: Նա ցուցադրաբար առաջին այցելությունը տվեց սուլթանին՝ ուղեկից ունենալով Ալեթթճյանին: Սերտ կապերի մեջ էր Հնչակյան կուսակցության հետ: Համոզված էր, որ սուլթանը Հայաստանում երբեք բարենորոգում չի մտցնի: Ջնայած դեմ էր Բաբը Ալիի ցույցին, սակայն բողոքագիր ներկայացրեց Բ. Դռանը՝ պահանջելով, որ «Հատուցում տրվի թալանվածներին, պատժվեն մարդասպանները և առևանգիչները, բռնաբարողները, սրբությունները պղծողները և պաշտոնազրկվեն չարդերին բացահայտ մասնակցություն ունեցած զինվորական և քաղաքացիական պաշտոնատարները»[142]:

Մ. Իզմիրլյանին անվանում էին «երկաթե պատրիարք»: Նրա և սուլթանի հարաբերությունները սկզբում սառն էին, ապա նաև՝ թշնամական: Սուլթանը պահանջեց, որ նա հրաժարական տա: Մ. Իզմիրլյանը չհամաձայնեց: Սակայն, երբ նրա նամակը՝ հասցեագրված Մայիսյան ծրագիրը պատրաստող երեք դեսպաններին, անպատասխան մնաց, 1895թ. հրաժարվեց պատրիարքությունից:

Կ. Պոլսում հայ գործիչները տեսակետներ էին հրապարակ նետում, իսկ Արևմտյան Հայաստանի հայը վայելում էր ապագա բարենորոգումների հեչտանքը: Նա վստահ էր, որ հասել է հայաբնակ շրջաններում կառավարման կարգը փոխելու ժամանակը, որ միջազգային իրավունքի ուժով և համաձայն 61-րդ հոդվածի՝ ինքն իրավունք ունի Հայաստանում գտնվող օսմանյան կոմիսարներին ներկայացնել բարենորոգումների նախագիծ: Եվ նման մի քանի նախագծեր ներկայացվեցին: Դրանցից ամենաբնութագրականը Էրզրումի հայերի ներկայացրած նախագիծն էր[143]: Առաջարկվում էր տեղական իշխանության ղեկավարներ, մասնավորապես վալիներ ու մութեսարիֆներ, նշանակելիս՝ հաշվի առնվեր նաև պատրիարքի կարծիքը, որ նշված ղեկավարները կամ նրանց տեղակալներից մեկը լիներ հայ: Վիլայեթների մեջլիսներում ունենալ հավասար թվով հայ ու մահմեդական, նույնը և նահանգային վարչություններում: Վիլայեթներում ստեղծել բազմազգ կազմով վճռաբեկ դատարաններ: Ոստիկանության բարձրագույն ղեկավարությունը պետք է կազմված լիներ եվրոպացիներից, իսկ չարքային կազմը՝ օսմանաբնակ մահմեդականներից ու քրիստոնյաներից: Հարկերը բաշխվեին ըստ ունեցվածքի չափի ու եկամտի: Վերացնել աշարը, փոխել հարկերի հավաքման կարգը: Զինաթափել քրդերին ու չերքեզներին կամ զինել նաև հայերին, աքսորել հանցագործ աղաներին ու բեյերին, ցրել աշիրեթները և նրանց հողերը տրամադրել նստակյաց բնակչությանը: Հայկական

---

[140] Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Բ, Բեյրութ, 1960, սյունակ 2865:
[141] Օրմանյան Մ., նշվ. աշխ., հ. Բ, սյունակ 2979:
[142] Նույն տեղում, սյունակ 2986:
[143] «Փորձ», 1879, թիվ 9:

*չրջաններում քրդեր ու չերքեզներ չբնակեցնել, արգելել զինվորների տեղավորումը հայերի տներում:*

*Այս նախագծից հետևում էր, որ չնայած Ռուս-թուրքական պատերազմին ուղեկցել էր հայ բնակչության վիճակի չեչտակի վատթարացում, հայերը դեռևս հավատում էին սուլթանական վարչակարգի բարեմտությանը և հույս ունեին վիճակը շտկել պետական կառույցների միջոցով՝ գտնելով, որ 61-րդ հոդվածը հնարավորություն է ընձեռում բարենորոգումների, այլ ոչ թե Օսմանյան կայսրության կազմից դուրս գալու համար: Այսինքն՝ անգամ Բեռլինի վեհաժողովից հետո էլ հայերը դնում էին ոչ թե քաղաքական ու տնտեսական ինքնուրույնության, այլ կայսրության կազմում բարենորոգումներ իրականացնելու հարցը: Չնայած դրան, սուլթանական վարչակարգը հայերի առաջարկությունները համարեց «ազգային դավաճանություն»: Հայը հռչակվեց կայսրության «դժբախտությունների մեղավոր», «մեծ տերությունների գործակալ», «կործանարար վտանգ», «պատճառ կայսրության ներքին գործերին մեծ տերությունների միջամտության»: Իշխանությունները ծավալեցին հարձակումներ հայերի վրա, կազմակերպեցին մեծ ու փոքր ջարդեր՝ իբր դրսի միջամտություններից խույս տալու համար:*

*Հայկական հարցի միջազգայնացման եղանակի արատավորությունը և դրա վերածվելը հայերի բնաջնջման գործիքի՝ առաջին հերթին հետևանք էր սուլթան Աբդուլ Համիդի ձեռնարկած քայլերի, թուրքական դիվանագիտության ճկունության: Բեռլինի դաշնագիրը Համիդի անվերապահ հաղթանակն էր: Ս. Ամֆիտեատրովն իր «Հայկական հարց» երկասիրության մեջ գրում է. «Բուլղարիայի անդամահատումն... առատորեն վճարվեց փրկությամբ այն մարզերի, որոնց փրկելու հույսն ամենից ավելի քիչ էր, և որոնք Համիդն ինքն էր բացահայտորեն համարում «կայսրության իրան»: Փրկվեց ռուսների կողմից սոսկ մի փոքր փետրահանված Փոքր Ասիան, և նրա հետ փրկվեց նաև սուլթանությունը...»[144]:*

*Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, որն ակնկալվում էր որպես հայ ժողովրդի փրկության գործիք, իրականում դարձավ նրա կործանման միջոց:*

*Բիսմարկից հետո Եվրոպայի ամենահանճարեղ դիվանագետը թերևս Համիդն էր իր մահաբեր աշխատանքի նրբագեղությամբ, երկաթից ու արյունից հիրավի անզուգական ժանյակ հյուսելու արվեստով: Նա ժամանակի քաղաքական աշխարհի ամենաճկուն և ամենադյուրաթեք բնավորությունն էր, չարունակում է Ամֆիտեատրովը, շատ հմուտ ու ոգեշնչող կեղծարար, թշնամանքի, խառնակչությունների ու կասկածանքների անզուգական սերմնացան, մահմեդական Մաքիավելի, որն «իր ամբողջ կյանքում բոլորին ամեն ինչ զիջել է և երբեք ոչ մեկին ոչինչ չի զիջել»: Նա իր վիթխարի փառամոլությունը թաքցնում էր նվաստացման ենթարկվելու պատրաստակամության տակ, մոլեռանդ, սառը դաժանությանը հագցնում էր մանկական գերզգայունություն՝ նա ամբողջովին քայլող դիմակ էր և, ըստ պահանջմունքի, իր հսկայական, չար խելքը կարող էր թաքցնել սակավ փորձառու հակառակորդից, ինչպես սրած ու թունավոր սրադաչույնը՝ հասարակ և կոպիտ ձեռնափայտի մեջ: «Ա. Համիդը երբեք այնքան վտանգավոր չէր, քան երբ հագնում էր սակավակիրթի, անզարգացածի, ամաչկոտի, պարզամիտի դիմակ... Անճնական վարվեցողությամբ Ա. Համիդը սիրալիրության և նույնիսկ սրտակցության գագաթնակետ էր: Իր բացակայության ժամանակ նա «մեծ մարդասպան» էր, իսկ իր ներկայությամբ՝ «մեծ հմայիչ»: Աբդուլ Համիդը միջնադարյան բարոյականության բռնակալ էր, Իտալական Վերածննդի առաջին օրերի քաղաքագետ: Նա արժանի է մտնելու պատմական կերպարների չեքսպիրյան պատկերասրահը որպես «բարի, ազնիվ Յագո»՝ գահի վրա: Այդ մարդուն ամենայն արդարամտությամբ կարելի է համարել Մերձավոր Արևելքում եվրոպական քաղաքականության չար հանճար...»[145]: Նա կարողացավ իրեն պար-*

---

[144] Амфитеатров А. В., նշվ. աշխ., էջ 46-48:
[145] Նույն տեղում:

տադրված հայկական բարեներոգումների նկատմամբ վերահսկողությունը սպառնալիքից վերածել իր համար բարեկեցության միջոցի:

Դահիճների բացառիկ հավաքածու էր սուլթանի ամբողջ շրջապատը: Հաջեթլաչեն սուլթանի քարտուղար Իզզեթի մասին գրում է. «...եթե նա նաև անձամբ էլ չէր մարդկանց մորթում և խեղդում, ապա... հարյուրավոր կյանքեր իրենց անհետացման համար պարտական էին նրան... նրա հրամանով... տեղի էին ունենում այնպիսի բաներ, որոնցից անգամ Բահրին գլուխը կբռներ»: Երբ հայերի հանդեպ վայրագությունները եվրոպական մամուլում արձագանք ստացան, «Իզեթը միջոցներ ձեռնարկեց: Այդ միջոցներն արժեցան մի քանի հազար լիր, և զարմանալի է, թե որքան արագ մամուլի մի մասը... միանգամից իր կարծիքը փոխեց Վանի վիլայեթի դեպքերի վերաբերյալ: Ես հաճույք ունեցա իմ ղեկավարի հանձնարարությամբ 3000 լիրա տալ Կ. Պոլիս ժամանած գերմանական մի թերթի թղթակցին... նույնչափ գումար փոխանցվեց նաև խմբագրին: Մամուլը հանդարտվեց... իսկ պալատն ու Բահրի փաշան անարգել անում էին այն, ինչ ցանկանում էին»:

Թե ինչ ծավալներ էին ստացել և ինչ մակարդակով էր կատարվում հայերի թալանը, վկայում է Հաջեթլաչեի ներկայացրած հետևյալ փաստը. «... Մի քանի լրտեսներ... փողի կարիք ունեին... և խորը գիշերին ժանդարմների հագուստ հագած թակեցին մի հարուստ հայի դուռը... և վախեցած տանտիրոջը կարգադրեցին հետևել իրենց... Սրիկաները...» նրան տարան մեծ վեզիրի պալատ ու լարվածության մեջ պահեցին մեկ ժամ, ապա նորից կառք նստեցրեցին՝ թե տանում են բանտ: Հայը փրկվեց 15000 ռուբլի տալով[146]:

Օսմանյան պաշտոնատարների չորթումների ու դրամապաշտության կիրքը չատ կողմերով աբդուլհամիդյան էր: Սուլթանը համոզված էր, որ ոսկով հնարավոր է գնել յուրաքանչյուրին և երբ հանդիպում էր մեկին, որին չէր կարողանում գնել, սաստիկ վրդովվում էր, բայց նաև չէր հավատում: Նա ասում էր, թե «թուրքական լիրաներով կարող է սվաղել նաև այդ դյավուրի (Բիսմարկի) բերանը»: Մ. Հաջեթլաչեն գրում է, որ սուլթանն իր ողջ կյանքն «օգտագործեց ոչ թե պետության բարօրության, այլ իր անձի անվտանգության համար... իր տունը դարձրեց մի ամրոց, որտեղ սովորական ճանապարհով թափանցելն անհնար էր»: Ուտելուց առաջ ուրիշներին հարկադրում էր համտեսելու իր ճաշը, սուրճը հարկադրում էր եփել իր ներկայությամբ: Վախենում էր բժիշկներից, դեղորայք պատրաստողին ստիպում էր, որ նախ նա խմի այն: Գիշերները ննջասենյակները փոխում էր մի քանի անգամ: Ցուրաքանչյուր գիշերային պահպանության գանձարանին նստում էր 10000 ռ.: Պահում էր մի քանի նմանակներ, արտաքինով սուլթանին նման հայերը ոչնչացվում էին:

Հայկական հարցի լուծումը պատմությունը հանձնարարել էր Համիդյան տիպի քաղաքական աճպարարների՝ Դիզրայելի, Բիսմարկ, Գորչակով, Սոլսբերի: «Փոքր Ասիան ընկած է եվրոպական կոնցերտի, բոլոր մեծ տերությունների չահերի ոլորտում: Այդ չահերը ոչ միայն բազմատեսակ են, այլև մեծի մասամբ հակադիր և նույնիսկ միմյանց նկատմամբ թշնամական: Խարդավանք, նախանձ, փոխադարձ կասկածամտություն և հանուն գերակշռության պայքար... Փոխադարձ անվստահության այսպիսի պայմաններում հայկական բարեներոգումների նկատմամբ միջազգային վերահսկողությունն ուղղվեց ոչ թե սուլթանի դեմ, որը պարտավոր էր դրանք իրագործել, այլ յուրաքանչյուր պետության համար դարձավ միջոց մյուսներին հսկելու, որպեսզի փոքրասիական քաղաքականության մեջ նրանց մասնակցությունը վնաս չհասցնի իրենց հիմնական չահերին... ցավալի կանոն՝ յոթ դայակ ունեցող երեխան մնում է առանց հսկողության»: Շահերի մրցակցությունը եվրոպական կոնցերտին՝ զրկել էր միաբանությունից, և 61-րդ պարագրաֆը քարացավ մեռյալ կետի վրա: Ա. Համիդը ոչ միայն չէր ցանկա-

---

[146] **Халжетлаше М.**, *Убийца на троне. Записки начальника Тайной полиции в Турции.* Петроград, 1918.

նում, այլև չէր կարող գթալ հայերին, այլապես պետականորեն սնանկ կդառնար, որովհետև նրանք իսլամի բնական թշնամիներն էին և ասիական դաշնակիցները քրիստոնյա Եվրոպայի և ամենից առաջ՝ Ռուսաստանի:

Դիվանագետները չափազանց հաճախ են աչքաթող անում, որ «ի դեմս Արդուլ Համիդի նրանք գործ ունեն պարտված և ոխակալ թշնամու հետ, որը չի մոռացել ոչ իրենից անջատված Կարսը, ոչ էլ ազատագրված Բուլղարիան...»[147]:

Հայերը մնացին առանց ոչնչի: Բեռլինի ազդեցությունը հայ ժողովրդի պատմական ճակատագրի վրա եղավ ողբերգական: Այն ավելի սրեց հայ-թուրքական հարաբերությունները: Հայերը սխալ թույլ տվեցին որդեգրելով ու կրկնելով բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի ձևերն ու եղանակները: Ի տարբերություն բալկանյան ժողովուրդների՝ հայերը ոչ միայն ցրված էին կայսրությունում, այլև կտրված էին Եվրոպայից, եվրոպացուն նույնիսկ հայ անունը հայտնի չէր: Հայերը մեկուսացված էին նաև կրոնով: Առաքելականի նկատմամբ անգամ Ուղղափառ Քրիստոնեական Եկեղեցին ներողամիտ չէր: Հայ ազգային չարժման ուշանալը, դարավոր անմռունչ հպատակությունը տպավորություն էին ստեղծել, թե հայերն իրենց վիճակից գոհ էին: Այն, որ հայերն ապավինեցին տերությունների աջակցությանը, թուրքերի համար անսպասելի էր, և նրանք հայերի հանդեպ որդեգրեցին անզիջում կեցվածք:

Բեռլինից հետո կայսրությունում հայերը միակ քրիստոնյաներն էին, ովքեր ունեին ազատագրվելու նպատակ, որի խափանումը թուրքերի համար դարձավ «ամբողջ քրիստոնեության դեմ ընդվզելու հեռանկար»: 61-րդ հոդվածը հայերին «հպատակ ժողովրդի» կեցվածքից հանեց, և նրանք որդեգրեցին դրսի ուժերի միջոցով թուրքական իշխանությունների վրա ճնշում գործադրելու քաղաքականություն: Այսինքն՝ այդ հոդվածը հայերն ընդունեցին որպես պաշտպանական վահան և սխալվեցին, քանի որ, եթե անգամ դրսի ուժերի ճնշման ներքո Բ. Դուռը համակվեր հայության վիճակի բարելավման գաղափարով, միևնույն է, շատ բան անել չէր կարող, քանի որ գավառներում բացարձակ անիշխանություն էր: Ո՛չ եվրոպական տերությունների հավաքական միջամտությունն էր հնարավոր հայկական գործերում և ո՛չ էլ առանձին տերությունների միջամտությունը, քանի որ այն բախվում էր մյուս տերությունների հակազդեցությանը:

Պատերազմը և դրան հաջորդած իրադարձությունները հայերին ներշնչեցին, որ իրենք ոչ թե կրոնական համայնք էին, այլ ազգ, այսինքն՝ կրոնական-սոցիալական միավորից վերածնվել էին քաղաքական միավորի, որ նշանակում էր «ունենալ ազգային սեփական տարածք՝ հայրենիք, և այդ հայրենիքում հարատևելու կարողություն»: Հայրենիքի գաղափարը տիրապետող դարձավ, ինչը նույնպես նպաստեց թուրք-հայկական հարաբերությունների սրմանը: 19-րդ դարասկզբին ազգության գաղափարը նույնանում էր Հայաստանյան Եկեղեցու հետ: Այդ գաղափարում բացակայում էր հայրենիքը, ազգը պահելու հասկացությունն ավելին չէր, քան Եկեղեցին պահելը, այսինքն՝ վերջինս համարժեք էր ազգային գոյության պահպանմանը, իսկ Հայաստան անունը վերածվել էր լոկ պատմական խորհրդանիշի: 1860-80-ական թվականները բնականաբար նաև գրականության և արվեստի մեջ գերակշիռ դարձրեցին հայրենիքի գաղափարը: Ստեղծվեցին գրական գործեր, երգեր, գեղանկարներ և այլն, որոնք ամբողջությամբ ներծծված էին հայրենիքի, ազգասիրության գաղափարով, և հող նախապատրաստվեց ազգային զարթոնքի ու համազգային չարժման համար: Այս ընդհանուր հեղաբեկումը փոխեց հայ մարդու կենսական դիրքորոշումը՝ ստրկական հնազանդությանը փոխարինելու եկավ ազգային արժանապատվության գիտակցությունը: Հայը այլևս չէր տանում օտարի վիրավորանքները, ազգային արժեքների հանդեպ բռնարարքները, նա թոթափեց ստրկամտությունը, կանգնեց առողջ բանականության, բոլոր ազգերին հավասար գետնի վրա:

---

[147] Амфитеатров А. В., նշվ. աշխ., էջ 46-56:

Հայի ինքնաճանաչման և ինքնահաստատման գործում փոքր դեր չխաղաց Ռուսական բանակի ներկայությունը, որը նրան հնարավորություն տվեց իրեն մարդ զգալու: Նա այդ զգացողությունը չկորցրեց նաև ռուսների հեռանալուց հետո: Քաղաքաբնակ հայերը նոր հոգեբանությանը տիրացան նաև արտաքին չփումների՝ «աշխարհ տեսնելու» միջոցով, մանավանդ որ պատերազմն ուժեղացրեց արտագաղթը Ռուսաստան, Մերձավոր Արևելքի երկրներ, Ամերիկա, Փոքր Ասիայի ծովափնյա քաղաքներ:

Հայերի քաղաքական վարքագծի ձևավորման վրա նկատելի ազդեցություն գործեց նաև այն, որ Աբդուլ Համիդ 2-րդը Բեռլինից հետո ոչ միայն մոռացության մատնեց 61-րդ հոդվածը, այլև կայսրությունում ձևավորեց քաղաքական ռեակցիա, ինչն ավելի սրեց թուրքերի և հպատակ ժողովուրդների հարաբերությունները. հեղձուցիչ մթնոլորտ ստեղծվեց բոլոր համայնքների համար: Կրոնական և ազգային տարբերությունները նոր պայմաններում ևս առաջնային չդարձան ու վճռական դեր չխաղացին, որովհետև առճակատումը ոչ թե հայերի ու թուրքերի, մահմեդական ու քրիստոնեական կրոնների, այլ իրարամերժ շահերի միջև էր:

Սակայն նաև չի կարելի անտեսել հետևյալ հանգամանքը: Աբդուլ Համիդը խալիֆության համակարգն օգտագործում էր ոչ միայն մահմեդական աշխարհի միավորման, այլև կայսրությունում ներքին կայունության ապահովման համար: Հպատակ ժողովուրդների մի մասի ընդվզումներն ուղղված էին թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր իշխանությունների դեմ: Դա սուլթանին հնարավորություն էր տալիս ոչ մահմեդական ազգությունների դեմ հանել թուրքերից բացի կայսրության մյուս մահմեդականներին: Իսկ տգետ, մոլեռանդ զանգվածին հակաքրիստոնեական գործողության մղելը դժվար չէր: «Բավական էր, որ մզկիթներում հոլաներն ասեին, թե մահմեդականությունը վտանգի մեջ է» կամ Բ. Դուռը գաղտնի հրահանգներ ուղարկեր, և «իսլամ ամբոխը ոտքի կկանգներ ու խուժանային հարձակումներով քրիստոնյաներին ոչնչացնելու գործին կմասնակցեր՝ սրբազան պարտականություն կատարելու համար»[148]:

Իսկ արտաքին քաղաքականության մեջ սուլթանը նորություններ չմտցրեց, նա չարունակեց օգտվել տերությունների միջև եղած հակասություններից, չարունակեց տնտեսական առանձնաշնորհումներ տալու միջոցով կանխել վտանգներն ու բարդությունները:

Կրկնում ենք՝ Բեռլինի դաշնագիրը հանդիսացավ Հայոց ցեղասպանության մեկնարկն ու նաև գլխավոր պատճառներից մեկը: Բանը ոչ այնքան այն էր, որ դաշնագիրը չէր լուծում բարենորոգումների հարցը, այլև բարենորոգումների անցկացումը պայմանավորվում էր հայերի թվական տեսակարար կշռով: Բարենորոգումներ նախատեսվում էր անցկացնել ոչ թե Հայաստանում, այլ «հայաբնակ շրջաններում»: Սա նշանակում էր, նախ, մերժել, որ Օսմանյան կայսրության կազմում կար Հայաստան և, երկրորդ, եթե բարենորոգումների իրականացման հիմքում դրվում էր հայերի թվական գերակշռությունը, ապա ինչո՞ւ մտնել «գլխացավի մեջ», ավելի ճիշտ չէ՞ր հայերի թիվն այնքան նվազեցնել, որ հատուկ նրանց համար բարենորոգումներ մտցնելու անհրաժեշտությունը վերանար: Սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը, որը հայերի համար, բարենորոգումների ոխերիմ թշնամի էր, հաճույքով ընտրեց երկրորդ տարբերակը, որի իրականացման միջոցներն էին ուծացումը, արտամղումն ու բնաջնջումը:

Սկսվեցին հայերի բնաջնջման տասնամյակները:

Այո, 61-րդ հոդվածը Լոնդոնի կամքն էր: Լլոյդ Ջորջը խոստովանում է. «Այդ որոշումը մեծարվում էր մեր կողմից որպես Անգլիայի մեծագույն հաղթանակ, նրա թեկուզ պատվավոր խաղաղություն: Հայաստանը ողջակիզվեց մեր կառուցած հաղթանակի զոհասեղանին... Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրա-

[148] Ջորմիսյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 9:

*կան անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897, 1909 թվականների սոսկալի ջարդերին և 1915 թվականի ամենասարսափելի կոտորածին»*[149]:

*Մ. Սերոբյանի կարծիքով՝ «Անգլիան իսկապես կը սպաներ հայկական բարենորոգությանց հարցը և լորտ Պիկոնսֆիլդը Պերլին կերթար անձամբ անոր թաղումը կատարելու»*[150]:

## 4. ԲԵՌԼԻՆԻ ՀԵՏՈ

*Բեռլինի վեհաժողովն ակնհայտ դարձրեց, որ քրիստոնյա ժողովուրդների փրկչի դերում հանդես գալը տերությունների կողմից անազնիվ խաղ էր, որ բացի սեփական մերկ շահերից նրանք անընդունակ էին որևէ այլ բանի, առավել ևս՝ օգնելու փոքր, ճնշված ու հարստահարված ազգերին:*

*Կար երկու Եվրոպա՝ առաջադեմ, որի ներկայացուցիչներն անկեղծորեն համերաշխ էին հայ ժողովրդի հետ, բայց զուրկ էին իրական (ռազմա-տնտեսական ու քաղաքական) աջակցության հնարավորություններից և Եվրոպա, որն այդ հնարավորություններն ուներ, բայց զուրկ էր քաղաքական ցանկությունից: Այս միտքը հաստատող լավագույն օրինակն Անգլիան էր: Բերենք անգլիական դիվանագիտության ցինիզմի միայն մեկ օրինակ. Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու «նախաձեռնողներից» մեկը՝ Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Հ. Լեյարդը, որը Թուրքական արքունիքում մեծ ազդեցություն ուներ, կրում էր «վիցեսուլթան» մականունը և Համիդին համարում էր «երբևիցե իր տեսած ամենահաճելի մարդկանցից մեկը», Բեռլինի կոնգրեսի նախօրյակին Սոլսբերիին գրում է, թե հայերը պատրաստ չեն ինքնավարության, թե ինքնավար Հայաստանը մեկ ամիս էլ չի դիմանա և ձեռք կմեկնի Ռուսաստանին*[151]: *Մեկ տարի անց այդ նույն անձնավորությունը դժգոհում էր, որ հայերը նպատակ ունեն վերականգնել հայկական պետականությունը*[152]: *Նա Ռուսաստանի կազմում Հայաստանի ինքնավարությունն անվանում էր «աբսուրդ, ռուսական բանսարկություն», որը նպատակ ուներ Անգլիային հարկադրել Հնդկաստանի հետ կապ ունենալ միայն Հյուսիսային Սիրիայի վրայով: Արևմտյան Հայաստանի հարցում անգլո-ռուսական հարաբերությունների բովանդակության վերջնական ձևավորման գործում նշանակալից դեր խաղաց նրա 1877թ. մայիսի 30-ի զեկուցագիրը Անգլիայի ԱԳ նախարարությանը: Դեսպանը մասնավորապես գրում է, որ եթե Ռուսաստանը տիրանա Եվրոպական Թուրքիայի ինչ-որ նահանգի կամ նահանգների, դա կդառնա ամբողջ Եվրոպայի մտահոգությունը, իսկ եթե Ռուսաստանը ցանկանա ինչ-որ առիթով իրեն միացնել Փոքր Ասիայի մի մասը..., այդ դեպքում վտանգվելու են միայն Անգլիայի շահերը... Հայաստանում և Հյուսիսային Իրանում Ռուսաստանը կգտնի մեծաթիվ և ուժեղ բնակչություն, որը կարող է դառնալ հիանալի հիմք հզոր բանակի համար՝ պատրաստ ցանկացած պահին ներխուժել «մեր Հնդկաստանի սահմանը», այս առումով Թուրքա-Հայաստանի անցումը Ռուսաստանին Անգլիայի համար կունենա «ողբալի հետևանքներ»:*

*Ջպետք է անտեսել նաև այն, որ Արևմտյան Հայաստանը մտնում է մի հզոր կայսրության կազմի մեջ, որի հետագա գոյությունը կենսական նշանակություն ունի համաշխարհային «հավասարակշռության պահպանման» համար*[153]:

*Հ. Լեյարդն անում էր հնարավորն ու անհնարը Օսմանյան կայսրությունը ծանր կացությունից դուրս բերելու համար: Նրա խորհրդով սուլթանը որոշեց ներկայացուցիչներ ուղարկել Եվրոպա մեծ տերություններին առաջարկելու դառնալ կայսրությունում*

---

[149] Ллойд Джордж, *Правда о мирных договорах*. т. 2, М. 1957, стр. 390.
[150] **Սերոբյան Մ.**, *Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով*, Կահիրե, 1948, էջ 263:
[151] **Գաբրիկյան Ե.**, *Հայկական հարցը*, Բեյրութ, 1962, էջ 323:
[152] *Положение армян в Турции...*, стр. 57.
[153] *«Կապույտ գիրք»*, 25.08.1976:

*բարեփոխումներ անցկացնելու երաշխավորներ: Նպատակը պարզ էր՝ թույլ չտալ, որ Ռուսաստանը տիրանա կայսրության տարածքներին»*[154]*: Նրա հավաստիացմանը, թե Անգլիան ձգտում է ստեղծել բուֆերային հայկական պետություն, Ն. Վարժապետյանը պատասխանեց. «Ոչ, ոչ, անգլիացիներն ու թուրքերը այժմ մեզ համար նույնն են, իսկ թուրքերից հայերը լավ բան սպասել չեն կարող»*[155]*: Պատրիարքը նման կարծիքի համար ավելի քան հիմքեր ուներ: Նույն այդ Լեյարդը քիչ անց գրեց. «Անգլիան երբեք չի համաձայնի Հայաստանին ինքնավարություն տալ...»*[156]*:*

*Լորդ Շերբրուքի կարծիքով անգլիական քաղաքականությունը Թուրքիայի քրիստոնյաների առաջ «փակեց դժոխքից դուրս գալու ելքը»*[157]*: Եվ իսկապես, Անգլիան խափանեց հայերի անցումը Ռուսաստանի հովանու տակ, որից հետո հայտարարեց, թե ինքը միայնակ հայկական հարցում որևէ պարտականություն չի ստանձնել, Թուրքիայի հովանավորն էլ չէ և հովանավորի իրավունքով սուլթանին դիմել չի կարող:*

*Անգլիան չէր էլ թաքցնում, որ հայկական կոտորածներն արդյունք էին նաև իր քաղաքականության: Լոնդոնի կարծիքով՝ Ղրիմի պատերազմի հետևանքը եղան բուլղարական սարսափները, իսկ Բեռլինի դաշնագիրն առաջացրեց հայերի կոտորած: Ռուսական «Новое время»-ն նկատում է՝ հայկական հարցն «անգլիական խարդավանքների հետևանքով այնպիսի վիճակի էր հասել, որ ինչ ձևով էլ այն լուծվեր, Անգլիային միայն օգուտ էր բերելու»*[158]*:*

*Հ. Լեյարդին փոխարինած դեսպան Գոշեն 1880թ. հուլիսի 15-ին գրում է. «Պատրիարքի թվերն էլ (հայ բնակչության) չափազանցված են, ինչպես Բ. Դուանն են, բայց հակառակ ուղղությամբ: Բացի այդ, ինչպե՞ս վարվել քոչվոր քրդերի հետ: Ամեն ինչ պայմանավորված է երկու տարբեր ազգությունների և կրոնների ֆիզիկական ուժով: Եթե հայերը փոքրամասնություն են, վտանգավոր է նրանց տրամադրել այն հիմնարկնեը, որոնք տալու էինք, եթե մեծամասնություն լիներին, դա վտանգավոր կլիներ հենց իրենց՝ հայերի համար»*[159]*:*

*Է. Դիլոնը գրում է, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը հրաժարվեց ճանաչել Սան Ստեֆանոյի պայմանագիրը և սուլթանի քրիստոնյա հպատակներին թույլ չտվեց օգտվել ռուսական քաղաքականության բարյացակամությունից: Անգլիան փաստորեն պնդում էր, որ հայ ժողովուրդը հետ հանձնվեր իր «կատաղի թշնամիներին»: Դիլոնը անգլիական կառավարության քաղաքականությունը համեմատում էր վիրաբույժի հետ, որը վտանգավոր վիրահատությունից առաջ հիվանդի վրա բարդ փորձ է դնում «տառապյալի կյանքի փրկության նպատակով, իսկ ինքը չուռ գալով, հեռանում է՝ նրան թողնելով արյունաքամ, մահվան ճիրաններում»: Դիլոնը գտնում է. «Մեր կողմից Լոնդոնում սեղմած կոճակը Փոքր Ասիայում բացեց դժոխքի դարպասները՝ մարդկային կերպարանքով լեգիոնների համար հնարավորություն ստեղծելով ճեռնարկելու քրիստոնյաների խոշտանգումներն ու ոչնչացումը», իսկ այդ կոճակը, ըստ Լինչի, սեղմվեց, որովհետև, եթե Ռուսաստանը տիրանար Արևմտյան Հայաստանին, դրանով տեր կդառնար «... ստրատեգիական լուրջ դիրքի և կսկսեր սպառնալ ինչպես միջերկրածովյան երկրներին, այնպես էլ Մեծ Բրիտանիայի հնդկական տիրույթներին»*[160]*:*

---

[154] *Тифлисский вестник*, 03.01.1878.

[155] «*Մշակ*», 1878, թիվ 127:

[156] *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ, պրակ X, Թուրքիա*, էջ 107:

[157] **Ներսիսյան Մ.**, *Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ, 1850-1870թթ.*, Երևան, 1955, էջ 313:

[158] «*Արձագանք*», 1895, թիվ 50:

[159] *Blue Book, Turkey*, N6, 1881, p. 16.

[160] *ՀՍՍՀ ԳԱ Ինֆորմացիոն բյուլետեն*, Երևան, 1980, էջ 18-20 *կամ Братская помощь...*, стр. 10-13.

Անգլիայի ներկայացուցիչների առաջին շարքում էր Ջ. Բրայսը, ով 1876թ. սեպտեմբերի 11-ին Արարատի գագաթին էր: Այդ ուղևորությունը մեծ տպավորություն գործեց նրա վրա: Անգլիա վերադառնալուց հետո որդեգրեց քննադատական դիրք Դիզրայելիի կառավարության օսմանյան քաղաքականության հանդեպ և մտավ Արևելյան ընկերության շարքերը: Բրայսի «Անդրկովկաս և Արարատ» ճամփորդական նոթերում, որ լույս տեսավ Լոնդոնում 1877թ., զգալի տեղ է հատկացված հայ ժողովրդի պատմությանը, արևմտահայության ծանր վիճակին: Նրա կարծիքով հայերը չէին ապստամբում, որովհետև անզեն էին, փոքրաթիվ, ցրված թաթարական ցեղերի ու քրդերի ծովում: Բայց միաժամանակ գտնում էր, որ գլխավոր պատճառն այն էր, որ ստրկության դարավոր լուծը կոտրել էր ազգի կամքը: Նա դեմ է ցար-սուլթան երկընտրանքին և նպատակահարմար էր համարում ինքնակառավարման որևէ ձև[161]: Արդեն այդ տարիներին Բրայսը հավանական էր համարում օսմանահպատակ քրիստոնյաների ջարդերը: Դրանց պատճառ համարում էր թուրքերի տագնապը, որ Օսմանյան կայսրությունը գնում էր դեպի կործանում և քրիստոնյա բնակչությունը «թաքուն սպասում է իր ազատագրվելուն»: Բրայսը չթաքցրած հակակրանք ուներ Ռուսաստանի հանդեպ, բայց նաև գտնում էր, որ Օսմանյան կայսրությանը սպառնացող գլխավոր վտանգը Ռուսաստանը չէր: Նա գրում էր, թե թուրքերն այդ կայսրության տարածքում բնակվող ազգություններից մեկն են և կայսրությունը նրանցը չէ: Նա թուրքերի վտարումը անվանում էր «տարածքի ազատագրում»: Թուրքերն անգամ նոր ժամանակներում մնացել էին զավթիչների կաստա. նրանք քաղաքակրթության թշնամի բանակ էին, որ ճամբար էր դրել անզեն հպատակների հողի վրա ու պատահական չէր, որ վերջինները ձգտում էին մեծ տերությունների աջակցությանը: Նա թուրքական կառավարությանն անվանում է անբուժելի հիվանդ, որը վաղուց կործանված կլիներ, եթե չլիներ տերությունների հաշվենկատությունը:

Բրայսը Արևմտյան Հայաստանի ապագան կապում էր բարեփոխումների՝ անճի և սեփականության անվտանգության երաշխիքների ստեղծման հետ: 1878թ. մարտին նրա տանը տեղի ունեցավ անգլիացի հայասերների և Անգլիայի հայ գաղութի ներկայացուցիչների հանդիպում, որը հիմնադրեց Անգլո-հայկական ընկերակցությունը (նախագահ՝ լորդ Քարնարվո, քարտուղար Բրայս)[162]: "Fortnightly Review" պարբերականի 1878թ. հունիսի համարում տպագրած հոդվածում Բրայսը գրում է. «Հայկական գավառները կարելի է մի մեծ նահանգի վերածել, որը Տրապիզոնով և Կերասունով ելք ունենար Սև ծով, կառավարվեր եվրոպական պետությունների հավանությամբ ընտրված կառավարիչի կողմից: Եթե ցանկանում ենք Ռուսաստանի առաջխաղացման առաջն առնել, հայ ազգի զարգացմանն աջակցելը՝ ամենալավ և, թերևս միակ կայուն, միջոցն է: Հայկական պահանջներին գոհացում տալը կվերացնի միջամտության պատրվակները»[163]: 1880թ. ընտրվելով համայնքների պալատի անդամ՝ Բրայսը նույն թվականի հուլիսի 23-ին խորհրդարանում հանդես եկավ Հայկական հարցի, հայ ժողովրդի ու նրա ծանր կացության մասին սկզբունքային հարցադրումներ պարունակող ելույթով[164]: 1896թ. հոկտեմբերի 2-ին "Times" թերթում Բրայսը գրում է, թե Օսմանյան կայսրությունում կառավարության կանխամտածված ծրագրի համապատասխան, սպանվել է 100000 քրիստոնյա: Նա առաջարկում է խնդրի լուծման երեք տարբերակ՝ մասնատել Օսմանյան կայսրությունը, ներկայացնել բարենորոգումների ծրագիր, որը մասնավորապես կիրառվեր հայաբնակ նահանգներում և գահընկեց անել Աբդուլ Համիդին: Բրայսը «Անդրկովկաս և Արարատ» գրքի չորրորդ հրատարակությունում (1896թ.) ավելացրեց «Հայկական հարցի քսան տարիները» գլուխը: Նա իրավիճակը քննարկում է դիվանագիտական (վերաբե-

---

[161] Bryce J., *Transcaucasia and Ararat*, London, 1877, p. 299-314.
[162] Տէր Գեորգեան Ցովհ., *Ձեյմս Բրայս և հայերը*, Կահիրե, 1975, էջ 73-77:
[163] Տէր Գեորգեան Ցովհ., *Ձեյմս Բրայս և հայերը*, Կահիրե, 1975, էջ 79-80:
[164] Fisher H., *James Bryce*, vol., I, p. 182-185:

*րում է մեծ տերություններին), վարչական (վերաբերում է սուլթանի ու նրա վարչակազմի գործողություններին) և ազգային (հայերի զգացմունքներն ու վարքագիծը) նկատառումներով: Բրայան Անգլիային մեղադրում է Status quo-ի քաղաքականության՝ Օսմանյան կայսրության կյանքը երկարացնելու համար: Քննադատում է նաև Ռուսաստանին, որը «մինչև 1883թ. աջակցում էր Բեռլինի դաշնագրով սահմանված բարեներոգումները կյանքի կոչելուն, իսկ դրանից հետո որդեգրեց հայերի հանդեպ ոչ բարեկամական քաղաքականություն:*

*Բեռլինի դաշնագրով նախատեսնված բարենորոգումների ձախողվելու հետևանքով՝ հայերի շրջանում առաջացած հուսախաբությունը պատճառ դարձավ, որ Օսմանյան կայսրությունից դուրս ստեղծվեին հայկական հեղափոխական կոմիտեներ, չնայած երկրում բնակվող հայերը դեմ էին ապստամբությանը, քանի որ հաջողության հույս չկար, իսկ կոտորածի վտանգը մշտապես առկա էր: Բրայսը մանրամասն վերլուծում է արևմտահայերի կյանքում կատարված իրադարձությունները, հայկական առաջին զանգվածային ջարդերը, Մայիսյան ծրագրի ձախողումը:*

*Նշելով, որ 100-200 հազ. քրիստոնյա է կոտորվել 1894-1896թթ. ջարդերի ընթացքում, Բրայսը դրա գլխավոր պատճառները համարում է դաժան բռնապետության և մոլեռանդ ժողովրդի հետևում կանգնած տերությունների անգործությունը կամ հայերի համար դժբախտ ու ճակատագրական հետևանքներ ծնած դիվանագիտական քայլերը: Նա գտնում է, որ մինչև Բեռլինի դաշնագիրը սուլթանը չուներ հստակ արտահայտված թշնամություն հայերի նկատմամբ և ոչ էլ հայ ազգն ուներ որոշակի քաղաքական ձգտումներ: Հայերի պաշտպանությանն ուղղված դիվանագիտական քայլերն էին, որ նրանց դարձրին կասկածի և ատելության օբյեկտ, բազում դռներ բացեցին հայոց դժբախտությունների առաջ: Բրայսի և անգլիական մի քանի ուրիշ խոշոր գործիչների հայանպաստ գործունեությունն, իհարկե, անպտուղ չմնաց. մեկը մյուսի հետևից ծնունդ էին առնում հայասիրական կազմակերպություններ՝ Շոտլանդա-հայկական ընկերություն (1895թ., նախագահ Արգայլի դուքս), Հայաստանի բարեկամների միջազգային ընկերություն (1896թ., նախագահ Ռոչեստրի եպիսկոպոս), Հայաստանի բարեկամներ (1897թ., նախագահ Լ. Գավնդիչ), "Grovenor House" ընկերություն (նախագահ Վեսթմինիսթրի դուքս)[165]:*

*Բեռլինի վեհաժողովից հետո հայկական հարցի չուրջ միջազգային դիվանագիտության չուրջպարը հետևյալ տեսքն ուներ: 1878թ. օգոստոսին Լեյարդը ներկայացրեց Փոքր Ասիայի քրիստոնյաների համար բարենորոգումներ մտցնելու ծրագիր, որը ռուսական մամուլը հեգնեց՝ նշելով, թե այդ ծրագրի իմաստն էր «Ասիական Թուրքիայում ներդնել հնարավորին չափ շատ բրիտանական գործակալներ՝ դատավորների, հարկահավաքների, ժանդարմերիայի պետերի, հարկ եղած դեպքում՝ նաև նահանգապետերի պաշտոններում»[166]:*

*Բարենորոգումները ձախողելու համար Բ. Դուրը զանազան պատճառաբանություններ էր հնարում, որոնք «ըմբռնողությամբ» էին ընդունվում տերությունների կողմից: Մանավորապես ասվում էր, թե բարենորոգումների իրականացման համար պահանջվում էր մեծ թվով գրագետ ու անկաշառ պաշտոնյա, իսկ այդպիսիք ունենալու համար՝ բարձր աշխատավարձ, մինչդեռ երկրում դրամ չկար:*

*Երբ Սոլսբերին հայկական բարենորոգումների ծրագիրը առաջարկեց սուլթանին, Համիդը համաձայնեց՝ պայմանով, որ Եվրոպան տրամադրի վեց միլիոն լիրա փոխառություն, քաջ գիտենալով, որ այդ պայմանը մերժվելու էր, քանի որ Բ. Դուրը եվրոպացիներին առասպելական չափերի պարտքեր ուներ: Այդպես էլ եղավ, և բարենորոգումների խնդիրը փակվեց տերությունների լուռ համաձայնությամբ: 1879թ. մայիսի 21-ին Սոլս-*

---

[165] *"Армянский вопрос", Энциклопедия,* Ереван, 1991, стр. 97.

[166] Зиссерман А., *Политическое обозрение. "Русский вестник",* т. 137, стр. 501.

բերին Լեյարդին գրում է. «Բեռլինի դաշնագրի ստորագրումից արդեն 10 ամիս անցել է, մինչդեռ Ասիական Թուրքիայի դժբախտ ժողովուրդը... լավ կառավարումից չարունակում է այնքան հեռու մնալ, որքան այն օրը, երբ տերությունները խոստացան լավ կառավարում»[167]: Մի այլ անգամ՝ «Պետք է խոստովանել, որ 1878-ին սխալ թուլլ տվեցինք՝ մեր փողը մի ոչ պիտանի ձիու վրա խաղացինք, այսինքն՝ կապվեցինք մի կառավարության հետ, որը ոչ ուժ, ոչ էլ ցանկություն ուներ սեփական երկիրը բարեկարգելու...»[168]:

1879թ. Հունիսի 12-ին Լեյարդը գրեց, թե Օսմանյան կայսրության ամբողջականության համար ամենավտանգավորը Հայաստանի վերածնունդն է, և եթե Բ. Դուռը այս խնդրին լուրջ ուշադրություն չդարձնի և «չգործի իմաստուն ու զգույշ, ապա մոտ ապագայում Ասիայում կունենա Հայկական հարց»[169]:

Բեռլինի վեհաժողովից հետո էլ Հայկական հարցի շուրջ դիվանագիտական պայքարի առանցքը մնաց անգլո-ռուսական առճակատումը: Տերությունները թե՛ սուլթանի վրա ճնշում գործադրելու և թե՛ հայերին սիրաշահելու գործում իրարից հետ չէին մնում՝ ուսումնասիրում էին հայերի վիճակը, հանդես գալիս զեյթունահայերի իրավունքների պաշտպանությամբ, նրանց նյութական օգնություն ցույց տալիս, հարկադրեցին, որպեսզի Զեյթունի կառավարիչ նշանակվի հայ, մոտ 25 անգամ թեթևացվեցին լեռնաշխարհից գանձվող հարկերը, բանտից ազատել տվեցին 200 զեյթունցու: Այդ մթնոլորտում Վանի ռուսական փոխհյուպատոս նշանակվեց Հ. Կամսարականը, որին թուրքերը կոչում էին «Հայ փաշա»:

1880թ. Գորչակովը ցարին ներկայացրեց «Բեռլինի կոնգրեսը հասարակական կարծիքի գնահատմամբ» տեղեկագիրը, որում կարդում ենք. «Ոչ մի ողջամիտ ռուս Թուրքիան նվաճելու և Կ. Պոլիսը Ռուսաստանին միացնելու մասին չի մտածում... Եթե Ռուսաստանը պետք է մնա Ռուսաստան, այն չի կարող իր տեղից իջնել և հայտնվել Միջերկրական ծովափին»: Ցարը մակագրեց. «Միանգամայն արդար է»: Այսինքն՝ Ալեքսանդր 2-րդն այլևս հրաժարվում էր Օսմանյան կայսրությունից տարածքներ պոկելուց և որդեգրում էր սպասողական քաղաքականություն՝ համբերել մինչև այդ կայսրությունն ինքն իրեն փլուզվի[170]:

Իսկ Միլյուտինը Օսմանյան կայսրության գոյությունը համարելով «պայման Եվրոպայում հավասարակշռության պահպանման և ընդհանուր խաղաղության ապահովման» համար, միաժամանակ առաջարկում էր գնալ այն քանին, որ թուրքերին Եվրոպայում մնա միայն Ադրիանապոլսի վիլայեթը Կ. Պոլսի հետ, և նրանք կենտրոնանան ասիական տարածքներում: Ռուսական քաղաքականության նման կողմնորոշումը, իհարկե, անհանգստացրեց հայերին, և Ն. Վարժապետյանը 1880թ. հոկտեմբերի 18-ին Ֆիլիպովին ասաց, թե սուլթանը հազիվ թե հանդուրժի հայերի գոյությունը կայսրությունում: Դրա արտահայտություններից մեկը Աբիդին փաշայի մշակած վարչական բարեկարգումների նախագիծն էր, որով Հայաստանի տարածքը բաժանվում էր թուրքաբնակ ու քրդաբնակ նահանգների միջև: Դրան գումարվեց Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Դյուֆերինի 1881թ. սկզբների հայտարարությունը, թե Անգլիան հանուն Հայկական հարցի չի կարող ռազմական ճնշում գործադրել սուլթանի վրա[171]: Մի քանի ամիս անց Դյուֆերինը տեղեկացրեց, թե ինքը Թուրքիայի արտաքին գործերի նախարար Սայիդին առաջարկել է «ազգաբնակչության իրավահավասարությունների չարաշահման համար» աշխատանքից ազատել Սըվասի վալի Իսմայիլ Հակին, Դիարբեքիրի վալի Իյայեթին, Բայազետի մութեսարիֆ Մուսթաֆային, Սըվասի առաջին դատախազ Մեհմեդին: Նա նշում

---

[167] Bryce J. Viscount, *The Treatment of Armenians in the Ottoman Empire: 1915-1916*, London, 1916, p. 765 *(Կապույտ գիրք)*:

[168] Նույն տեղում, էջ 77:

[169] *Тифлисский вестник*, 17.11.1879.

[170] Նույն տեղում:

[171] Капланян Х. С., *Внешняя политика России во второй половине XIX в.*, Москва, 1974, стр. 269-270.

է, թե «երկու Հայաստաններում» էլ թուրքական իշխանությունները անկարող են «քաղաքակիրթ կառավարում» իրականացնել[172]:

Թուրքիայի իշխանությունները ոչ միայն ամեն կերպ ձգձգում էին բարենորոգումների իրականացումը, այլև ահաբեկում էին հայերին: «Ամենաբարձրաստիճան պաշտոնատարները բացահայտ ասում են,– գրում է կամսարականը 1882թ.,– որ այստեղ... պատրաստվում է մի նոր Բուլղարիա, և որ իրենք արդեն դաս քաղել են և ի զորու են կառավարության թշնամի տարրերին հաշվեհարդարի ենթարկել և այդպիսով մեկընդմիշտ վերջ դնել Հայկական հարցին»[173]:

Բեռլինին հաջորդող տարիներին տերությունների դեսպանները մի քանի անգամ Բ. Դռանը հիշեցրեցին բարենորոգումներ անցկացնելու նրա պարտականությունների մասին: Սակայն ապարդյուն: Դրան հետևեց դեսպանների 1880թ. հունիսի 11-ի համատեղ հուշագիրը[174]: Պատասխան նոտայով Աբդուլհամիդը հավաստիացրեց, թե բարենորոգումները նախապատրաստվում են, և այդ ուղղությամբ մի քանի միջոցառումներ արդեն ձեռնարկված են՝ ստեղծված է բարենորոգումների հանձնաժողով, դատարաններին ինքնավարություն է տրված, բարեփոխված է տասանորդի բաշխումը, կազմակերպված է տեղական ոստիկանություն, Բեքիրը բարենորոգումներ իրականացնելու հանձնարարականով գործուղվել է արևելյան նահանգներ: Ստանալով այս պատասխանը՝ տերությունների կառավարություններն իրենց հյուպատոսներին հանձնարարեցին ստուգել Աբդուլհամիդի գրածների ճշտությունը: Պարզվեց, որ օսմանյան արտաքին գործերի նախարարը պարզապես ստել էր: Ստեղծված հանձնաժողովը միայն թղթի վրա գոյություն ուներ, դատարանները տեղական իշխանություններից անջատվել էին մինչև Բեռլինի վեհաժողովը, և այդ քայլից քրիստոնյա բնակչությունը ոչ միայն չէր շահել, այլև տուժել էր: Կեղծիք էին նաև ոստիկանության և հարկերի՝ մասնավորապես տասանորդի, բաշխման վերաբերյալ գրվածները: Խեղկատակություն էր մյուդիրների ընտրությունը: Օրինակ. Բասենում ընտրված բոլոր 17 մյուդիրներն ազգությամբ քուրդ էին ու անգրագետ[175]:

1880թ. սեպտեմբերի 17-ին դեսպանները ներկայացնում են երկրորդ հուշագիրը: Դրան հետևում է Բ. Դռան հավաստիացումը, թե Էրզրումի, Վանի, Բիթլիսի և Դիարբեքիրի վիլայեթներում «կարգուկանոնը և բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով դատարան պիտի կազմակերպվի և բարենորոգումներ իրականացվեն» կայսրական մուշիրի վերահսկողության ներքո: Եթե տերությունները նյութական օգնություն ցույց տան, երեք ամսվա ընթացքում կվերակառուցվի նշված վիլայեթների ոստիկանությունն ու ժանդարմերիան, որի ալայ-բեյերին (հրամանատարներին) նշանակելու է ռազմական նախարարը, մյուս սպաների թեկնածուները ևս հաստատվելու են այդ գերատեսչության կողմից գնդերի խորհուրդների ներկայացմամբ: Նշված վիլայեթներում հարկերի 10%-ը թողնվելու էր տեղական կարիքները հոգալու համար: Եթե դատական պաշտոնյաներն ընտրվելու էին, ապա վարչական պաշտոնատարները նշանակվելու էին Կ.Պոլսի կողմից, ըստ որում, վալուն վճռական դեր էր հատկացվում այդ պաշտոնատարների թե՛ նշանակման և թե՛ հեռացման գործում: Քաղաքացիական (նիզամական) դատարանները ղեկավարվելու էին օսմանյան գործող օրենքներով, այսինքն՝ պահպանվում էր նախկին կարգը[176]:

Թուրքական կառավարության դիվանագիտական այս դեմարշերը զայրացրին անգամ անգլիական պաշտոնական շրջաններին: Գոչեն դրանք անվանեց «վրդովեցուցիչ»: «Ինոք չեմ գտնում,– գրում է նա,– իմ խոր հուզմունքն արտահայտելու այդ քաղաքա-

---

[172] ՀՀՊՊԿԱ, ֆ. 58, ց. 1, գ. 264:
[173] АВПР, Главный архив, д. 119, л.л. 48-49.
[174] Положение армян в Турции..., стр. 96.
[175] Նույն տեղում, էջ 95:
[176] Նույն տեղում, էջ 107-109:

*կանությունից բխող վտանգի մասին»: Նա գտնում էր, որ Բ. Դուան վրա նոր ճնշում պետք է գործադրել, բայց ոչ թե հարցն ըստ էության լուծելու, այլ, եթե թուրքերն անտարբեր վերաբերվեն նոր առաջարկություններին, ապա «պատասխանատվությունը չի ընկնի» Անգլիայի վրա*[177]*: Դրան հետևեց Անգլիայի արտաքին գործերի նախարար Գրանվիլի չրջաբերականը՝ «Բ. Դուան կողմից ձեռնարկված բարենորոգումների եղանակն այնպիսին է, որը կարող է միայն դիվանագիտական ներկայացուցիչների բողոքն առաջացնել...»*[178]*:*

*«Եվրոպական դիվանագիտության համար այդ կատակերգությունը, իսկ հայերի համար ողբերգությունը հետևանք էր այն ճշմարտության, որ տերություններից յուրաքանչյուրին զբաղեցնողը Թուրքիայի... կենսական հյութերը ծծելն էր և ոչ թե որևէ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման հարցը...»*[179]*: Այդ ամբողջ քաչքչուկից թուրքերը եզրակացրին, քանի դեռ կայսրությունում հայ կա, կլինի նաև Հայկական հարցը: Ստեղծված խառնաչփոթում ձևավորվեց «Լրիվ կամ մաս առ մաս բնաջնջել հայերին՝ թույլ չտալով, որ վտանգը սպառնա Օսմանյան կայսրության գոյությանը» կարգախոսը: «Մշակ»-ը, անդրադառնալով ռուս-թուրքական պատերազմին, գրում է, թե Անգլիան գոհ կլիներ եթե բոլոր հայերը կոտորվեին և երկիրն անապատ դառնար «միայն թե Անգլիան ճանապարհ ուններ դեպի Հնդկաստան, միայն թե այդ ճանապարհը ուրիշ տերության ձեռքը չընկներ»*[180]*:*

*Լոնդոնը հայտարարեց. «Սուլթանի թշնամիները մեր թշնամիներն են, նրա բարեկամները՝ մեր բարեկամները»*[181]*: Մաքքոլն Անգլիային է համարում գլխավոր մեղավորը, որ Բեռլինի կոնգրեսից հետո տերությունները մոռացան իրենց ստանձնած պարտականությունների մասին և հայ ժողովրդին լքելով՝ հնարավոր դարձրին կոտորածները: Այդ բանը խոստովանում էին նաև անգլիական դիվանագետները. «Անգլիական պատվիրակությունը Հայկական հարցը օգտագործեց սոսկ Ռուսաստանի դեմ պայքարելու և Թուրքիայում իր դիրքերը ամրապնդելու համար»*[182]*:*

*Հայկական հարցն իր գաղութատիրական նպատակների համար էր օգտագործում նաև Գերմանիան: Կոնգրեսի ավարտին Բիսմարկը օսմանյան պատվիրակությանն ասաց. «Հիմա գոհ պիտի լինեք, ձեզ 20 տարվա խաղաղություն ապահովեցինք: Այդ ժամանակշրջանը պետք է օգտագործել ստանձնած բարենորոգումները իրականացնելու համար»: Ապա քմծիծաղով ավելացրեց. «Ոչ թե հավատացած, այլ վստահ եմ, որ ոչ մի բան չեք անելու»*[183]*: Բիսմարկի ցինիկության մեկ օրինակ ևս. «Ես չեմ կարողանում ըմբռնել, թե ինչ հետաքրքրություն կարող է ունենալ Անգլիան սուլթանին անհանգստացնելով: Այսպես կոչված «Հայկական բարեփոխությունները» միայն իդեալական և տեսական չանքեր էին՝ կոնգրեսի բանակցություններին ճոխ տեսք տալու զարդարանքներից: Դրանց գործնական իմաստը, ինչպիսին էլ այն լինի, շատ կասկածելի է և հայերի համար երկասյր»*[184]*:*

*Կոնգրեսում օսմանյան պատվիրակությունը հայերի դեմ բռնությունների մեղքը աշխատում էր բարդել քրդերի վրա, ինչը, բնականաբար, ավելի սրեց հայ-քրդական հարաբերությունները: Դրա հետ միասին, քիչ անց Բ. Դուռը դադարեցրեց հալածանքը*

---

[177] *Положение армян в Турции...*, стр. 100.
[178] Նույն տեղում, էջ 108:
[179] **Մարկոսյան Ս.**, *Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին*, Երևան, 1968:
[180] «Մշակ», 1877, թիվ 50; 1878, թիվ 48, 126:
[181] **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 313:
[182] **Ллойд Джордж**, *Правда о мирных договорах*, т. II, Москва, 1957, стр. 313.
[183] **Ռապճյան Գ.**, նշվ. աշխ., էջ 232-233:
[184] *Die große Politik der Europäischen Kabinette 1871-1914, herausgegeben von J. Lepsius*, Berlin, 1927, S. 200.

*քրդերի հանդեպ, նրանց թույլ տվեց ստեղծել չեխությունները, Միջագետքից Հայաստան բերվեցին քրդական նորանոր ցեղեր:*

*Իհարկե, Հայկական հարցի լուծումը հեշտ ու պարզունակ պատկերացնելը սխալ ու վնասակար է: Դիլոնը գտնում է. «Արևելյան հարցի բոլոր բաղկացուցիչներից ամենանուրբն ու ամենախճճվածը հայկականն է: Այնքան մեծ են դրա ոչ միայն բավարար լուծում գտնելու, այլև անգամ իրական փաստերը ստուգելու դժվարությունները, որ թուրքերն իրոք կարող են անհաղթահարելի համարել և հուսալ, թե Եվրոպայի անճար դարձած դիվանագիտությունն ի վերջո զզվելով՝ ձեռք կքաշի...»[185]:*

*Նման դժվարությունը նաև պայմանավորված էր՝ ա) հայերի ներքին հիմնախնդիրներով՝ հայ հասարակությունը բզկտված էր և միասնական մոտեցում ու գործողությունների համակարգում ձևավորելու անկարողությամբ, բ) Օսմանյան կայսրության անկման պրոցեսի հետևանքով՝ Անատոլիայում թուրքերի կենտրոնացման հրամայականով, գ) Արևմտյան Հայաստանում մահմեդական բնակչության չրջանում հայերի ցրվածությամբ և հայկական ու քրդական հարցերի առճակատմամբ, դ) Փոքր Ասիայում տերությունների չահերի բախմամբ:*

*«Հայկական հարցը,– գտնում է Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Նելիդովը,– մեր առջև կանգնած էր իր երկակի բնույթով. առաջին, որպես Ասիական Թուրքիայի ողբալի վիճակում ապրող ճնշված և ունեզրկված գյուղական և քաղաքային բնակչության դժգոհություն՝ ուղղված օսմանյան լծի ու հարևանների ճնշման դեմ, և երկրորդ՝ որպես հիմքից զուրկ, ագիտատորիների հակակառավարական դավադրություն, որը ելնում է ամենածայրահեղ գաղափարներից և խնդիր է դնում քաղաքականապես միավորել բոլոր հայերին և ստեղծել անկախ հանրապետություն»: Առաջին դեպքում հայկական չարժմանը պետք է աջակցել, «մանավանդ որ դրա մասնակիցներն իրենց հույսը գլխավորապես կապում են Ռուսաստանի հետ»[186]: «Որպեսզի Հայկական հարցը լուծվի,– չարունակում է Ս. Բ. Նորմանը,– պետք է այն խլել թուրքերի ձեռքից»[187]:*

*Լինչը գտնում է, որ Թուրքիայում Հայկական հարցի ոչ մի լուծում չի կարող պարունակել կայունության թեկուզ տարր, եթե այն չհիմնվի ոչ միայն սահմանների ճիշտ որոշման, այլև եղած վարչական տարածքների վերաբաժանման վրա, ինչը միաժամանակ էականորեն կօգնի նաև Քրդական հարցի լուծմանը: Այդ վերաբաժանման արդյունքում կստեղծվեն հետևյալ երեք խոշոր մարզերը, մեկը կազմված կլինի լեռնային տարածքներից, որոնք ընկած են Հայկական բարձրավանդակի և Սև ծովի արանքում՝ Սևծովյան մարզ: Այն ընդգրկելու է Տրապիզոնի վիլայեթն ու Էրզրումի վիլայեթի մի մասը (Թորթում, Օլթիի մերձակայք): Երկրորդ մարզը պետք է կազմակերպվի բուն բարձրավանդակում և դրա սահմանները հնարավորին չափ պետք է համընկնեն բնական սահմաններին... Երրորդ մարզն ընդգրկելու է Քրդստանը, այսինքն՝ մի նշանակալից տարածք Քիրքուկից և Սուլեյմանիեից հարավ-արևելք, մինչև Դիարբեքիրի և Խարբերդի սահմանները հյուսիս-արևմուտքում[188]: Մինչդեռ, չարունակում է Լինչը, «Եվրոպան և, մասնավորապես Անգլիան, դժբախտ ազգի (հայերի) հանդեպ խաղում էին ստոր խաբեբայի դեր: Նրանք իրենց գայթակղիչ հավաստիացումներով հայերի մեջ ծնում էին սին հույսեր, որոնք միայն գրգռեցին սուլթանի երկյուղը և նրան մղեցին հայերի վրա բաց թողնելու քրդերի հորդաները: Հայերը սպասելիք չունեին նաև Ռուսաստանից՝ իրենց անընդհատ վիրավորանքներ հասցնողից, որը խոովություն է բորբոքում իր եսապաշտ նպատակների համար»[189]:*

---

[185] «Դեյլի Թելեգրաֆ», 14.03.1895:
[186] Աղայան Մ., *Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից*, Երևան, 1976, էջ 103:
[187] Norman C. B., *Armenia and the Campaign of 1877-1878*, London, 1878, p. 18.
[188] Լինչ Գ., նշվ. աշխ., հ. II, էջ 557-559:
[189] Նույն տեղում, էջ 11:

Եվրոպացիները չատ լավ գիտեին, որ սուլթանը բարենորոգումներ չէր մտցնելու, նա անգամ մերժում էր Հայաստանի գոյությունը: Ի վերջո իրենք ևս հրաժարվեցին Հայաստան բառից: 1883թ. հոկտեմբերին Մուխտարը, պատասխանելով Վիեննայի "Standard" թերթի թղթակցի հարցին, ասաց.

«Բեռլինի դաշնագիրը մեր վրա պարտականություն է դրել հայկական մարզերում բարենորոգումներ գործադրել: Սակայն ի՞նչ է Հայաստանը: Այդ անունով օսմանյան գավառ չկա և վարչական անվանումն էլ մի կողմ թողնելով, Հայաստանի սահմանները, ինչպես նշվել է Բեռլինի դաշնագրով, չատ դժվար է ճշտել... Ինչը դուք Արմենիա եք անվանում, չատ ավելի Ռուսաստանի և Պարսկաստանի կազմում է... Արմենիան ոչ այնքան Արարատի այս կողմն է, որքան մյուս կողմը...»[190]:

Մեկ դար անց է. Քարալը գրեց. «Բարենորոգումների առաջարկությունները... զուրկ էին ներդրման և իրականացման համար անհրաժեշտ պայմաններից: Արևելյան Անատոլիայում (Արևմտյան Հայաստանում)... բնակչության մեծամասնությունը ոչ թե հայեր, այլ մահմեդականներ էին և, եթե անգամ բարենորոգում կիրառվեր..., որը ճանաչեր հայերի առավելությունը մահմեդականների նկատմամբ, ապա երկար կյանք չէր ունենալու... Ու նաև, քանի դեռ Աբդուլ Համիդը կրում էր համայն աշխարհի մահմեդականների խալիֆի տիտղոսը, անհնար էր հայերին այնպիսի զիջումներ կատարել, որոնք քայքայելու էին Անատոլիայի թուրքերի և մահմեդականների միասնությունը»[191]:

Սակայն թուրքերի դիվանագիտական-քաղաքական բոլոր ջանքերն ու վայրագությունները անկարող եղան վերջ դնելու Հայկական հարցին: Այն մերթ հետին պլան էր մղվում, մերթ չոկումներ մտցնում պահանջների մեջ, բայց մշտապես մնում էր քաղաքական պայքարի հրապարակում՝ միտված արդար լուծման: Հազար անգամ իրավացի էր Ա. Մանդելշտամը, երբ ասում էր. «Հայկական հարցը չի ավարտվել»: Եվ այն, որ մինչև օրս չի լուծվել, Գ. Մոտտանի խոսքով՝ «Մարդկային քաղաքակրթության խայտառակությունն է, ամոթը»:

Լեոն նշում է, որ գնալով անհնար էր դառնում «մեծ կոչված պետությունների միջև համաձայնությունը Թուրքիային վերաբերող հարցում միաբան գործելու համար: Այդ մրցությունների մեջ հայ ժողովուրդն իր դառը տանջանքներով դառնում էր առուծախի առարկա: Եթե մեկը հայերի պաշտպան էր հանդիսանում սուլթանին վախեցնելու և նրանից չահավետ ձեռնարկումներ կորզելու համար, մյուսը գնում էր սուլթանին պաշտպանելու ընդդեմ հայասեր դիմակավորված ախոյանի՝ այդ պաշտպանությունը հնչեղ դրամի վերածելու համար»: Եվ հայի «հեծեծանքները, արյուն-արտասուքները կանոնավոր չափով և կշռով, հաշվապահական բոլոր կանոններով ծախվում էին եվրոպական արտաքին գործերի փառազարդ առանձնասենյակների լռիկ անկյուններում... Այսպես մնաց Եվրոպան ուղիղ 45 տարի չարունակ և անընդհատ, մինչև որ հայի մեջ այլևս ոչ արյուն մնաց և ոչ արտասուք, որոնց կարելի լիներ ծախու հանել... Հայոց հարցը խրվել էր դիվանագիտական փակուղի, և նրան այնտեղից դուրս բերելն արդեն չափազանց դժվարացել էր»[192]: «Գավառներում կառավարությունը սանձից արձակել էր քրդերին, իսկ հայերին դրել էր օրենքից դուրս, անտանելի դրության մեջ»[193]:

«Եվրոպայի ժողովուրդներն ընդվզում էին՝ հայերի դեմ կատարված ոճիրների մասին լսելով,– գրում է Ֆ. Նանսենը,– մինչդեռ պետական-քաղաքական գործիչներն այդ ընդվզումներն օգտագործում էին հօգուտ իրենց երկրների Թուրքիայից համեղ պատառներ, ցանկալի չահեր կորզելու համար, առանց երբևիցե իսկապես խորհելու մարտիրոսված հայ ժողովրդի մասին... և Աբդուլ Համիդը կարող էր անպատիժ չարունակել իր չարագործությունները հայերի նկատմամբ:

---

[190] «Արևելյան մամուլ», 1883, Հոկտեմբեր:
[191] Karal E. Z., *La Question Arménienne*, p. 15.
[192] Լեո, Անցյալից, էջ 21:
[193] Նույն տեղում, էջ 55:

*Երբ Մեծ Բրիտանիան... գրավեց Եգիպտոսը, Հայկական հարցը երկրորդական նշանակություն ստացավ: Թուրքական անգործությունների մասին Անգլիա լուրեր էին հասնում, բայց դրանք այլևս չէին հրապարակվում: Եվրոպայի կողմից մատնված այս ժողովրդի մասին այլևս խոսող չեղավ»*[194]:

*Այսպիսով, Հայկական հարցը, որպես միջազգային դիվանագիտության օբյեկտ, ծնեցին ոչ թե հայերը, այլ սուլթանն ու տերությունների կառավարությունները: Պատահական չէ, որ Կամբոնը գրեց, թե թուրքական մի բարձրաստիճան պաշտոնատար իրեն ասել է. «Հայկական հարց գոյություն չունի, բայց մենք այն կստեղծենք»: «Այս խոսքերը, այժմ (1894թ.) իրականացան»*[195]:

*61-րդ հոդվածի ամբողջ վնասակարությունը հենց այն էր, որ հայն իր ազգային խնդիրների լուծումը սկսեց ավելի սերտորեն կապել տերությունների քաղաքականության հետ՝ մերթ բոլոր տերությունների և մերթ էլ դրանցից որևէ մեկի: Կաթողիկոս Մ. Խրիմյանին հասցեագրված մի հանրագրում կան հետևյալ տողերը. «Քաղաքակիրթ քրիստոնյա Եվրոպան ավելի ուշադիր կլիներ Հայաստանի խղճալի դրության հանդեպ, օգնության ձեռք կմեկներ բազմաչարչար քրիստոնյա ժողովրդին, իր գլխավոր խոստումներն իրագործելու համար եռանդուն միջոցներ ձեռք կառներ, եթե մի ազդու ձայն նրան լսելի դարձներ այդ թշվառ աշխարհի լացի ու ողբի ձայները, պատկերացներ անլուր անիրավությունների և կոտորածների ստրկատար տեսարանը, բախեր Ռուսիո մեծազոր կայսեր և եվրոպական պետությունների դռները և արդարություն ու կարեկցություն հայցեր Հայաստանի ընդունակ, աշխատասեր, բայց թշվառ ժողովրդի համար»*[196]:

*Այս խնդրի արժեքավորման հարցում ևս Բ. Բորյանը ինքնատիպ է. «Բեռլինի վեհաժողովից հետո Հայկական հարցը թևակոխեց իր զարգացման նոր փուլը: Եթե մինչև Բեռլինի վեհաժողովը Հայաստանն ու հայերը որպես երկիր ու ազգ գոյություն ունեին միայն «ձևական», կարելի է ասել՝ վերացական, ապա մեծ տերությունների հետ դիվանագիտական հարաբերություններում արդեն նրանք ունեին միանգամայն գործնական նշանակություն... Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդները, այդ թվում նաև հայերը, հանդիսանում էին տերությունների ու Բ. Դուռն միջև իրավահարաբերությունների օբյեկտներ»*[197]: *Այդ ժողովուրդներն ազատ կյանքի իրավունք ունեին այնքանով, որքանով դա համընկնում էր եվրոպական այս կամ այն հզոր տերության շահերին: Այս ճշմարտությունն այն տարիներին ուներ հետևյալ հնչեղությունը, եթե Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով միայն Ռուսաստանն էր հայ ազգի պաշտպանը, ապա Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով նրա պաշտպանների դերում հանդես եկան վեց մեծ տերություններ, որոնք «բոլորն էլ քաջալերում էին Հայաստանին և հովանի կանգնում բարենորոգումներ մտցնելու նրա հույսերին»*[198]: *Իսկ իրականությունը դաժան էր և չհապաղեց իր իսկական դեմքը ցույց տալ: Անգլիան Բ. Դուռը խորհուրդ տվեց «գործել խելացի ու հաշվենկատ, չնայած այն տարիներին Լոնդոնը, հանուն Եգիպտոսը ձեռք գցելու, օգտագործում էր 61-րդ հոդվածը Կ. Պոլսի վրա ճնշումն ուժեղացնելու համար»:*

*Եթե Անգլիան, թեկուզ եսասիրական նկատառումներով Բ. Դուռն վրա ճնշում գործադրում էր բարենորոգումներ իրականացնելու համար, ապա Ալեքսանդր 3-րդը բացահայտ թշնամական դիրք որդեգրեց Հայկական հարցում: Դա բացատրվում է, գրում է Բ. Բորյանը, «ցարական դիվանագիտության քաղաքական խաղով՝ ուղղված Անգլիայի դեմ, ինչպես նաև թուրքահայ հայրենասերների քաղաքական գործունեության և ռուսահայերի «Թաքուն» վերականգնողական հակումների դեմ»: 1895թ. նոյեմբերի 7-ին*

---

[194] Նանսեն Ֆ., *Հայաստան և Մերձավոր Արևելք*, էջ 240:
[195] Նույն տեղում, էջ 240:
[196] ԳԱԹ, ֆ. 14, գ., 1944, թ. 2:
[197] Борян Б. А., *Армения, международная дипломатия и СССР*, т. I, М. Л., стр. 246.
[198] Սարուխան, *Առաջին ժողովրդական շարժումները Տաճկական Հայաստանում*, «Փորձ», 1917, թիվ 3:

*"Новое время" թերթը տպագրեց «Մեծ Հայաստան» հոդվածը, որում խոսվում էր այն մասին, թե արևելահայերը ձգտում են «վերականգնել Մեծ Հայաստանը, որը տարածվելու է մինչև Դոնի Ռոստով»: Նույն թերթում շատ այլ հոդվածներ հրապարակվեցին, որոնք ինդիր ունեին ապացուցելու, թե «հայերը վտանգ են ներկայացնում ռուսական գահի ու Ռուսաստանի տարածքային ամբողջականության համար»: Ցարական կառավարությունը հնարավոր պատրվակներով պատրաստվում էր օգնել սուլթանին՝ հայկական հարցը լուծելու թուրքավարի:*

* * *

*Ռուսաստանն ինչու կանգնեց Status quo-ի քաղաքականության դիրքերում: Մի պատճառով՝ Արևելյան հարցում Ռուսաստանի դեմ եվրոպական տերությունների ընդհանուր ճակատը Պետերբուրգին ստիպեց եզրակացնել, թե տվյալ ժամանակահատվածում Արևելյան հարցի՝ իր օգտին լուծումն անհնար էր, հետևաբար նպատակահարմար էր չթողնել, որ «հիվանդ մարդը» մեռնի:*

*Հայաստանի հարցում ձևավորվեցին տարօրինակ կարծիքներ: Եթե Սոլսբերին ու Լեյարդը բազմիցս նշել են, որ Հայաստանն անկախ երկար մնալ չէր կարող և ենթարկվելու էր Ռուսաստանին, ապա Գորչակովը գտնում էր, որ անկախ Հայաստանը կուժեղացներ Անգլիայի ազդեցությունը տարածաշրջանում:*

*1883 թիվը շրջադարձային եղավ Հայաստանի հանդեպ ռուսական քաղաքականության համար: Րաֆֆին գրում է. «Կառավարության տրամադրությունը հայկական հարցի վերաբերմամբ այժմ, ինչպես երևում է, փոխվել է», իսկ Գր. Արծրունին նկատում է, թե նախկինում գրաքննիչն ինքն էր առաջարկում մերկացնող նյութեր տպագրել արևմտահայերի վիճակի վերաբերյալ, իսկ այժմ նման հոդվածներն ինքն է մերժում: «Մշակ»-ի խմբագրությունը նույնիսկ խուզարկվեց, և Թուրքիային վերաբերող քննադատական նյութերը բռնագրավվեցին: Դատական պատասխանատվության ենթարկելու սպառնալիքով կովկասահայերին արգելվեց արևմտահայության հարցով զբաղվել: «Արձագանք»-ի համարը, որտեղ մահախոսական էր տպագրված Ն. Վարժապետյանի մասին, բռնագրավվեց: 1885թ. գործնականում արգելվեց ազգանվան «-յան»-ը, և փոխարենը նորածիններին գրանցում էին «-ով»-ով:*

*Երբ համադրում ենք Բեռլինի կոնգրեսի որոշումները, դրանց հետևանքով ստեղծված քաղաքական ու դիվանագիտական իրողությունները և արևմտահայ գործիչների կողմից այդ ամենի ընկալումն ու քաղաքական կողմնորոշումները, ակնհայտ է դառնում հայ ժողովրդի համար ծայր առնող ողբերգության հնարավորության մի գործոն ևս: Առաջին հայացքից տպավորություն էր ստեղծվում, որ 61-րդ հոդվածն ինքնին նշանակում էր ամեն մի վտանգավոր կամ ծանր կացության դեպքում տերությունների միջամտությանն ու օգնությանը դիմելու առանձնորհում՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ մահմեդական բնակչության հետ իրավահավասարության ճանաչում: Մինչդեռ իրական կյանքում բոլորովին այլ պրոցեսներ էին: Պատերազմի ավարտին քրդերին թողնվեցին նրանց բաժանված զենքերը: Ռուսական զորքերի հեռանալուց հետո հայերի հանդեպ մահմեդական բնակչության կեցվածքն ավելի սպառնալից դարձավ, հայ մարդը հայրենադավ էր անվանվում՝ անկախ նրա անձնական վարքագծից: Հատկապես ծանր կացության մեջ ընկան այն հայերը, որոնց չէր հաջողվել Ռուսական բանակի հետ սահմանն անցնել ու վերադարձել էին իրենց նախկին բնակավայրերը: Հայկական գյուղերը թալանվում էին: Հուսալքությունը համընդհանուր էր, ամենուրեք հայի կյանքը վտանգված էր: 1878թ. գարնան գյուղատնտեսական աշխատանքներ գրեթե չկատարվեցին: Կյանքը չեչոտակիորեն թանկացավ, լայն զանգվածների համար ցորեն գնելն անմատչելի դարձավ: Մասնավորապես, Կարինի, Վանի ու Բաղեշի նահանգներում սով էր, ժողովուր-*

դը խոտով ու հատապտուղներով էր անվում: Քաղցից ու համաճարակներից մեռնում էին հազարներով: Միայն Վանի նահանգում հայերից խլվել էր մեկ միլիոն ռուբլու աննդամթերք, կահկարասի, հագուստ, անասուն, զարդեր և այլն: Թալանվել էր 19 վանք, սպանվել 15000 հայ[199]: Թալանվել էր նաև հայկական մյուս նահանգների հայությունը: Այդ, ինչպես նաև 1878-1879թթ. երաշտները ծննեցին 1879-ի սովը: Անգամ մայրաքաղաքում տարածում գտավ մարդավաճառությունը: Մահմեդականներն իրենց երեխաներին վաճառում էին 5-10 ֆունտ հացով կամ 200 դուրուշով: Սկիզբ առավ սովամահությունը, լայն ծավալներ ստացավ արտագաղթը: Ն. Վարժապետյանի կոնդակով ստեղծվեց հանձնախումբ՝ սովյալներին օգնություն կազմակերպելու համար: Ու 1880թ. հունվարին հանձնախմբի նախագահ դարձավ ինքը՝ Ն. Վարժապետյանը: Հաջողվեց կ. Պոլսում հանգանակել շուրջ 40000 օսմանյան ոսկի, որը բաժանվում էր սովյալներին և ծախսվում դպրոցների ու մշակութային այլևայլ օջախների վրա: Սովյալներին օգնելու համար դրամ ստացվեց նաև ցարից: Դա նշանակալից էր ոչ միայն ինքնին, այլև հնարավորություն էր տալիս սովյալներին օգնելու գործում ներգրավել նաև արևելահայերին: Օգնության ձեռք մեկնեցին նաև Հունաստանի, Ավստրո-Հունգարիայի կառավարությունները, Հռոմի Լևոն XIII պապը: Հանգանակություններ կազմակերպվեցին Եվրոպայի մի շարք երկրներում:

Մ. Խրիմյանը, Ա. Արփիարյանը և Մ. Փորթուգալյանը կոչով դիմում են արևելահայությանը օգնելու արևմտահայերին, որում մասնավորապես ասվում էր. «Երբ Վանի առաջնորդարանի տանիքներն արդեն լեցված կըլլային սովելոց բազմությամբ. հաց, դրամ, դեղ, դարման կաղաղակեին, այլ ամենեն աղեկտուր վիճակը Աղբակի, Նորտուզի, Շատախի, Մոկաց, Խնուշապա, Կեավառի և Կառկառի գաղթականները ունեին: Ամենին գույնը կապար և մարմիննին՝ գրեթե կմախք դարձած, ուժաթափ և համր, հազիվ գիրենք ժողովո սենյակ կը ձգեին... Աղբակցի մանկամարդ կին մը յուր էրիկ և ամբողջ զավակներ կորուսանել են վերջը ինքն ալ կմեռներ, ամենեն փոքրիկը, որ հազիվ յոթն ամսական էր, կախված էր մոր ցամաքած ծիծերեն և մեռած էր: Աղբակու մեջ բազմաթիվ ծնողք փոքրիկ երեխաներ թողնելով խուլա տվին, հույսով անմեղ երեխաներու վրա գութ կունենան մնացողները»[200]:

Վան քաղաքը ոչ միայն ինքն էր սովի ճիրաններում, այլև դեպի իրեն էր ձգում նահանգի հայ, քուրդ և թուրք սովյալներին, որոնց շրջանում չուտով տարածվեց բծավոր տիֆը: Օգնության հասան արևելահայ բժիշկները:

Հ. Երամյանի և Ե. Տեր-Մկրտչյանի վկայությամբ (ի դեպ՝ ոչ միայն նրանց). «Սովելոց տեղական հանձնախումբի նախագահ Խրիմյանը հայերուն հետ մեկտեղ կը նպաստավորե ամենեն անտեսված և սովի մատնված քյուրդերն ու ասորիները և հավասարապես, առանց խտրության անոնց ալ ձրի կը բաշխե սերմանելի ցորեն, հաց, դրամ, հագուստ և այլն, ազատելով հազարավորներ սովի ճանկերեն... Իր խորհրդով Վանի մեջ քյուրդ և եզդի մանուկներ Մ. Փորթուգալյանի դպրոցը կընդունվին, հայ աշակերտներուն համահավասար իրավունքներ վայելելով»[201]:

«... Ձեռք կարկառող կամ դռները բախող թուրք սովահար մուրացկաններն անգամ ձեռնունայն չէին ճանըեր և եկեղեցիներու թաղ. խորհուրդները հայերու կը կարգեին իրենց դիմող թուրք ընտանիքներուն ալ, հավասարապես օրական ռոճիկ սահմանած էին»[202]:

Սովյալ հայերը օգնության ձեռք էին մեկնում բախտակից քրդին ու թուրքին, իսկ օսմանյան կառավարությունը որդեգրեց դիտողի դեր:

---

[199] Թոխմախյան Ա., Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, Թիֆլիս, 1881, էջ 62-64:
[200] Գ.Ա.Թ., Հ. Աուգերյանի ֆ., վավ. 182:
[201] Տեր-Մկրտչյան Ե., Գանձեր Վասպուրականի, հ. 1, էջ 186:
[202] Երամեան Հ., Ծուշարձան Վան-Վասպուրականի, էջ 123:

Վերադառնանք 61-րդ հոդվածին, որն անդառնալիորեն վերածվել էր հայերի ազգային քաղաքական պահանջների արտահայտության միջոցի: Հայ կյանքն ավելի ու ավելի էր լիցքավորվում ազգային ոգով, անցյալի հերոսականության հանդեպ հրապուրանքն ու դրա փառաբանումը վերացական զգացմունքային զեղումից վերածվում էին ինքնապաշտպանության և ապագայի համար պայքարի կողմնորոշիչների: Ազգային գործունեությունը Կ. Պոլսից սկսեց տեղափոխվել գավառ: Մ. Փորթուգալյանը, Մ. Սարըյանը, Մ. Տամատյանը՝ և այլք մեկնեցին գավառներ լուսավորչական աշխատանքներ ծավալելու, ազգն «արթնացնելու» համար: Գ. Սրվանձտյանցն ընտրվեց Վանի, իսկ Մ. Օրմանյանը՝ կարինի թեմի առաջնորդ: Քաղաքական գործունեության ասպարեզում պոլսահայ գործիչները «մեկընդմիշտ» որդեգրեցին մի սկզբունք. քանի որ Բ. Դուռը միայն տերությունների հարկադրանքով է բարենորոգիչ քայլերի դիմում, հետևաբար անհրաժեշտ է ըստ ամենայնի ընդլայնել ու հաճախակի դարձնել նման հարկադրանք ծնող պատճառները: Գրեթե երբեք պատրիարքարանը հայ կյանքում, թուրքական և եվրոպական դիվանագիտական շրջաններում այնպիսի հեղինակություն չէր ունեցել, որքան 1878-82ԹԹ.: Պատրիարքարանում օտար լեզվով, մասնավորապես՝ ֆրանսերեն, հրապարակվում էին հայերի ու նրանց վիճակի մասին տեղեկագրեր, օտարներին ներկայացվում էին արևմտահայության գոյությանը սպառնացող վտանգն ու այն կանխելու հնարավոր միջոցները:

Պատրիարքարանն ամբողջությամբ կողմնորոշվել էր դեպի Անգլիան: Այդ գործում փոքր չէր Անգլո-հայկական կոմիտեի ու մասնավորապես անգլիաբնակ Գարեգին Փաշազյանի եռանդուն գործունեության և Ջ. Բրայսի հետ նրա սերտ համագործակցության դերը[203]: Երբ վարչապետ դարձավ Գլադսթոնը, անգլիական նավերը, ի պաշտպանություն Հունաստանի, Ադրիատիկայում ցույց կազմակերպեցին, ինչը սառեցրեց սուլթանի «զգացմունքները» Եվրոպայի հանդեպ և ավելի գրգռեց նրա հակաքրիստոնեական զգայարանները: Այդ, ինչպես նաև Օսմանյան կայսրությանը պատերազմի հասցրած ծանր վնասների հետևանքով ստեղծված ճգնաժամից դուրս գալու ելքը սուլթանը տեսավ քրիստոնեական աշխարհի դեմ ողջ մահմեդականության միավորման և իսլամի զավակների չրջանում հակաքրիստոնեական մոլեռանդության բորբոքման մեջ:

Այս պայմաններում հայ գործիչների կողնորոշումը՝ բարենորոգումներն իրականացնել տերությունների միջամտությամբ, վտանգավոր հետևանքներից զերծ չէր: Նախ՝ հարցի լուծումն ի վերջո պայմանավորված էր թուրքական իշխանությունների կամքով՝ բարենորոգումների ծրագրի ոչ միայն մշակումը, այլև իրականացումը նրանց միջոցով էր տեղի ունենալու, և հազիվթե միայն վերահսկողության պարտականությունը հանձն առած Եվրոպան հնարավորություն ու ցանկություն ունենար իր վրա վերցնելու ծրագրի նաև գործադրումը:

Պատերազմին հաջորդած որոշ ժամանակահատվածում թուրքական կառավարությունը փորձեց մի քանի մասնակի բարեփոխումներ իրականացնել, ինչը բնականաբար հայերին բավարարել չէր կարող: Եվրոպաբնակ հայերը, «ազատ լինելով քաղաքական ճնշումներից ու հետապնդումներից, լրիվ անպատասխանատու և հաճախ նաև անփութ էին գործում»՝ աշխատանքի առանցք դարձնելով անպայման բարենորոգումներ մտցնելու խնդիրը, առանց հաշվի առնելու մի քանի միլիոն օսմանաբնակ հայերի վտանգված լինելը: Հայ գործիչների չրջանում տիրապետողն այն կարծիքն էր, թե բոլոր հնարավոր միջոցներով պետք է արթնացնել, ոտի հանել արևմտահայությանը: Եթե Րաֆֆին անողոք քննադատում, ծաղրում էր հայի կրավորականությունը, ինչպես ասում են, հային «չփխում» (մտրակում) էր դարավոր նիրհից արթնացնելու համար, ապա եվրոպահայ շատ գործիչներ հայության արթնացման միակ միջոցը համարում էին թուրքական բռնությունները՝ գտնելով, որ դրանք որքան ասստիկ լինեին, հայն այնքան չուտ

[203] Ջուրմեյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 32:

կարճնանար: Հետևաբար, պետք էր այնպիսի միջոցների դիմել, որոնք ավելի վայրագ դարձնեին այդ բռնությունները: Դրանք միաժամանակ կարագացնեին Եվրոպայի միջամտությունը: Այս հոգեբանության հետևանքով էր, որ նրանք ոչ քիչ դեպքերում կորցնում էին իրականության օբյեկտիվ ընկալման կարողությունը, սեփական երազներն ու ծրագրերն ընդունում որպես իրականություն կամ այդպիսին դառնալու համար չնչին ջանքեր պահանջող: Ահա թե ինչու, որպես կանոն, հարցեր էին բարձրացնում ո՛չ թե դրանց լուծումն ապահովելու, ո՛չ թե այդ լուծմանը նպաստող տվյալները երևան հանելու մտադրությամբ, այլ լոկ գաղափարական, տեսական, սկզբունքային մղումներով:

Այս վիճակն էական փոփոխություն չկրեց նաև քաղաքական կուսակցությունների հանդես գալուց հետո, որոնք իրենց վրա վերցնելով հայ ժողովրդի քաղաքական ղեկավարների դերը, եկեղեցուն հատկացրին միայն բարոյական նշանակության խնդիրներ, ազգային շարժման նախկին ղեկավարներին մղեցին երկրորդ պլան, որը սակայն ներքին հակամարտություն չառաջացրեց, քանի որ օրեցօր սաստկացող սուլթանական բռնությունները սպառնալիք դարձան նաև վերջինների ունեցվածքին, և ամիրանները ոչ միայն հեշտությամբ հրաժարվեցին «ազգի ազատագրման» ղեկավարի պատվանդանից, այլև իրենց իսկ կողմից հրապարակ հանված կարգախոսներից: Նրանք բարենորոգումն այլևս քաղաքական պայքարի նպատակ չէին համարում, այն համարելով մի խնդիր, որը կարող էր լուծվել միմիայն սուլթանի բարեհամբույրության շնորհիվ:

Հայ հասարակական կյանքում խմորումներն ու ուժերի վերախմբավորման գործընթացները «Հայաստան», «Մասիս», «Մանզամե» ու պահպանողական-ամիրայական կողմնորոշում ունեցող պարբերականների կողքին առաջին պլան մղեցին միանգամայն նոր մտածողությամբ թերթերի՝ «Արևելք», «Հայրենիք», «Արևելյան մամուլ»: Սուլթանն ամբողջ ճակատով հարձակման էր անցել հայերի դեմ: Հետևաբար, բարենորոգումներ հնարավոր էին միմիայն հակառակ սուլթանի կամքի ու նրա դեմ, 61-րդ հոդվածը ճակատագրական անխուսափելիություն էր դարձրել բախումը հայերի ու թուրքերի միջև:

Բնութագրական մի երևույթ ևս: Արդեն նշվել է, որ 61-րդ հոդվածին հայ քաղաքական հոսանքների մոտեցումները ոչ միայն տարբեր էին, այլև իրարամերժ: Ոմանք հայերի դժբախտության պատճառ էին համարում այդ հոդվածը, մյուսներն, ընդհակառակը, դժբախտությունը հետևանք էին համարում հոդվածի տրամադրությանը հակառակ գործելը: Ընդ որում, այդ իրարամերժ կարծիքներն արտահայտվում են մինչև օրս: Օրինակ, Լ. Զորմիսյանի կարծիքով 61-րդ հոդվածը վերականգնեց հայ ժողովրդի ձգտումը դեպի Եվրոպա, ինչը նա կորցրել էր արաբ-թաթարական տիրապետության հետևանքով: Եվրոպական այդ «ձգտումը չուտով հակադրվելու էր թուրքերի ասիականությանը՝ խորտակելով երկու ցեղերի դարավոր համակեցության հիմքերը: Օսմանյան կայսրության ասիական մթնոլորտը սկսեց աննկճելի դառնալ հայերի համար: Ասիայում արհամարհված մարդկային կյանքը սկսեց արժեք ստանալ հայերի աչքում: Ասիայում բնական համարված թշվառությունը, տգիտությունը, ստրկությունը այլևս անընդունելի և ընդվզեցուցիչ էր: Ասիական ճակատագրապաշտությունը, մեղկությունը, դանդաղաշարժությունը, ծուլությունը համարվեց դատապարտելի... Դեպի եվրոպականացում տեղի ունեցած այս փոփոխությունները անխուսափելիորեն ազդելու էին մարդկանց քաղաքական գործունեության վրա: Իրականում հայերի ազգային ազատագրության ձգտումը բնական հետևանք էր անձի ազատության պահանջի»[204]:

Եվրոպավարի ապրելու և մտածելու հայերի ձգտումը բախվում էր թուրքական իրականության հետ՝ «կայսրության մահմեդական ժողովուրդները, մասնավորապես՝ թուրքերը, անհաղորդ մնացին եվրոպականացման շարժմանը»: Հայ բուրժուազիայի եվրոպականացումը նաև խզում առաջացրեց նրա և հայ հասարակության մյուս խավերի միջև:

[204] Զորմիսյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 74:

*Լ. Զորմիսյանը հարցը քննում ու եզրակացությունների հանգում է համաչխարհային օրինաչափությունների հիմքի վրա, այն էլ ոչ այնքան 19-րդ դարի, որքան 20-րդ դարի իրողությունները նկատի ունենալով: Արևմտահայության ողբերգական վախճանը որևէ առնչություն չուներ հայերի քաղաքական աչխարհընկալման հետ:*

*1980-ական թվականների վերջերի և 90-ական թվականների սկզբների իրադարձությունները, Հայաստանի պետական անկախության վերահաստատումը, ազգային կրքերի պոռթկումը, Սփյուռք–Հայրենիք կապերի լրիվ ազատականացումը, սոցիալականի հանդեպ ազգայինի (ոչ քիչ դեպքերում՝ նաև ազգայնականի) գերակայությունը մասնագետներին, և ոչ միայն նրանց, նպատակաուղղեցին, վերաիմաստավորելու Հայկական հարցը: Հրապարակվում են ուսումնասիրություններ, մենագրություններ, հոդվածներ, որոնցում հաճախ կարելի է հանդիպել «պետք է նոր աչքերով նայել կատարվածին» արտահայտությանը: Օրինաչափ պահանջ է: Իհարկե, Հայկական հարցի չատ հիմնավոր խնդիրներ դեռևս կարոտ են լուրջ ուսումնասիրության և արժեքավորման: Սակայն չատ հաճախ այդ նոր մոտեցումներն ունքը չինելու փոխարեն աչքն են հանում: Նախ վերանայվում է Հայկական հարցի միջազգայնացման ժամանակաշրջանը, դրա սկիզբը համարվում է ոչ թե 1878թ., այլ 1828-29թթ.՝ պատճառաբանությամբ, թե 19-րդ դարի սկզբին Հայաստանն առնչվեց միջազգային դիվանագիտությանը: Եթե միջազգային դիվանագիտության հետ առնչվելն է որոշիչը Հայկական հարցի միջազգայնացման համար, ապա առնչությունները ձգվում են մինչև 18-րդ դարի սկզբները: 1878թ. ընդունվում է Հայկական հարցի միջազգայնացման սկիզբ, քանի որ Սան Ստեֆանոյի պայմանագիրն այդ հարցը մղեց դեպի միջազգային դիվանագիտության օբյեկտի կարգավիճակ, որն ամբողջականացավ Բեռլինի կոնգրեսում՝ միջազգային կոլեկտիվ պայմանագրով:*

*Կան հեղինակներ, որոնք մերժում են արևմտահայության ազատագրական պայքարի անհարժեշտությունը, գտնելով, որ այն դատապարտված էր, որ «Արևմտահայաստանի ազատագրության համար պայքարի մեթոդաբանությունն ի սկզբանե մեռելածին էր»: Բնականաբար, նման դաժան եզրահանգմանը պետք է հաջորդեր առաջարկություն, թե ո՞ր ուղղությամբ պետք է գնար այդ պայքարը, որպեսզի արևմտահայությանը դուրս բերեր հաղթանակի մայրուղի: Մինչդեռ ժխտումը կա, բայց երկընտրանքն իսպառ բացակայում է, ինչն այլ բան չէ, եթե ոչ ազատագրական պայքարի անհրաժեշտության մերժում ընդհանրապես: Սակայն տարօրինակն այդ չէ, այլ այն, որ նման տեսակետի կողմնակիցները մերժում են նաև դիվանագիտության դերը Հայկական հարցի լուծման գործում, քանի որ, ըստ նրանց, պետականության բացակայության պայմաններում դիվանագիտությունը դառնում է ինքնաբավության վրա աչխատող, «խոցելի և դրանով իսկ տվյալ երկրի և ժողովրդի համար խիստ վտանգավոր գործառույթ»: Նման հեղինակները պարզապես չեն տեսնում կամ չեն ուզում տեսնել, որ դիվանագիտությունը վճռական դեր է խաղացել օտար տիրապետության տակ գտնված չատ ժողովուրդների խնդիրների լուծման գործում: Նույն այդ հեղինակները կրակի տակ են առնում 17-18-րդ դարերի հայ անհատական դիվանագիտության «արատավոր պրակտիկան», որը հետո փոխարինվեց «կուսակցական դիվանագիտությամբ»: Անհեթեթություն է: Իսրայել Օրին ու Հովսեփ Էմինը լոկ անհատներ չէին, այլ հասարակության որոշակի խավերի (գուցե նաև ամբողջ հասարակության) ձգտումների ու իղձերի արտահայտիչներ: Այն, որ դիվանագիտության մեջ հայերն ուժեղ չեն, փորձ ու հմտություն չունեն և չատ հաճախ էլ գործել ու գործում են ոչ թե քաղաքական տրամաբանությամբ, այլ «աչխարհի ու իրականության սեփական ընկալման» բացարձակացմամբ, ակնհայտ է: Դա հայկական դիվանագիտության ոչ թե մեղքը, այլ դժբախտությունն է: Աչխարհում չատ չեն այն ժողովուրդները, որոնք իրենց պատմական-քաղաքական գոյության ժամանակաշրջանի մոտ կեսը անցկացրած լինեն օտար լծի տակ, և այն էլ ոչ թե մեկի, այլ մի քանիսի տիրապետության տակ միաժամանակ: Զարմանալի՞ է, որ նման ժողովուրդը դուրս է նետվել բնականոն զարգացման մայրուղուց:*

Կան նաև հեղինակներ, ովքեր Հայկական հարցն ամբողջությամբ խցկում են եվրոպական կոնցերտի համակարգի մեջ: Առավել տարօրինակ է, երբ մեծ տերությունների միջև եղած հակասությունները, դրանց աշխարհաքաղաքական նպատակադրումները ենթարկվում են «միջազգային հակասությունները բացառապես մեծ տերությունների ակումբի շրջանակներում հարթելու գիտակցված համագործակցությանը», որը եվրոպային 40-ամյա խաղաղություն պարգևեց: Սա արևմտյան պատմագրությունից թռցրած միտք է: Եվրոպայում այդ խաղաղությունը պայմանավորված էր ոչ այնքան կոնցերտի գոյությամբ, որքան 1830 և 1848 թվերի հեղափոխական հրդեհներով, Գերմանիայի միավորման և Ռուսաստան–Եվրոպա հակասությունների՝ հակադրության վերածվելու գործընթացներով: Որ Ռուսաստանը ձեռնպահ էր մնում նոր տարածքներ գրավելուց, արդյունք էր ոչ թե կոնցերտին նրա հավատարմության, այլ ախոյանների ախորժակը չգրգռելու մտահոգության:

Պատմագիտության մեջ առկա է նաև հետևյալ կարծիքը. միապետական վարչակարգ ունեցող տերությունները թշնամաբար էին վերաբերվում հայկական շարժումներին, իսկ ժողովրդավարական երկրները՝ ընդհակառակը: Այս կարծիքը շատ ավելի մեթոդոլոգիական, քան իրական պատմական ակունքներ ունի: Իհարկե, ցարի համար ազատագրական ժողովրդական շարժումները տհաճ ու վտանգավոր էին, սակայն դա չէր գլխավորը նման շարժումների հանդեպ վերաբերմունքի ձևավորման խնդրում: Գլխավորը շահն էր՝ նոր չուկաների ու տարածքների տիրանալու մղումը: Բոլոր մեծ տերությունները, անկախ կառուցվածքից, զարգացման կապիտալիստական փուլում էին, և նրանց համար հումքի նոր աղբյուրների ու վաճառահանման չուկաների տիրանալը գլխավորն էր:

Որոշ աշխատություններից այն տպավորությունն ես ստանում, թե եվրոպական տերությունները ձգտում էին Օսմանյան կայսրության մասնատմանը, իսկ Ռուսաստանն, ընդհակառակը, պաշտպանում էր Status quo-ի քաղաքականությունը: 19-րդ դարում Ռուսաստանը Թուրքիայի դեմ չորս պատերազմ է մղել, իսկ Եվրոպա՞ն: Չլինի՞ թե Ռուսաստանը Օսմանյան կայսրության դեմ պատերազմում էր վերջինիս ամբողջականության պաշտպանության համար: Ռուսաստանի օսմանյան քաղաքականության էվոլուցիան հետևանք էր ոչ թե վարչակարգերի նույնատիպության, այլ այդ երկրի դեմ Եվրոպայի միավորվելու: Նեղուցներից Ռուսաստանի երբեմն-երբեմն հրաժարվելը ոչ թե եվրոպական հավասարակշռությունը չխախտելու նրա մտահոգությամբ էր պայմանավորված, այլ այն բանով, որ Ռուսաստանին առաջարկում էին Նեղուցներն առանց Կ. Պոլսի, իսկ ռուսի վարդագույն երազը Ցարգրադին տիրանալն էր: Կամ հակառակը՝ առաջարկում էին, Կ. Պոլիսն առանց Նեղուցների, իսկ առանց վերջինների Ռուսաստանը զրկված էր մնալու «չսառչող ջրերով դրսի աշխարհի» հետ կապվելու հնարավորությունից: Որոշակի դեր խաղաց նաև այն, որ 19-րդ դարավերջին Ռուսաստանը հայացքը չրջեց դեպի Միջին և Հեռավոր Արևելք, որտեղ գործողություններ ծավալելու համար անհրաժեշտ էր Օսմանյան կայսրության հետ ունենալ հաշտ հարաբերություններ: Սխալ է նաև այն պնդումը, թե Ռուսաստանը գտավ «տաք ծովեր տանող ավելի մատչելի» ճանապարհներ: Խոսքը Պարսկաստանի և Աֆղանստանի վրայով «չսառչող ծովեր» դուրս գալու մասին է: Պարսկական տարբերակը Թուրքականից շատ բանով չէր տարբերվում, իսկ աֆղանականը ոչ միայն ավելի մատչելի չէր, այլև գործնականում անիրականանալի էր: Եվ պատահական չէ, որ կարճ ընդմիջումից հետո «անատոլիական տարբերակը» նորից առաջին պլան մղվեց, և Առաջին աշխարհամարտում ռուսական զորքերը էրզրումն ու Երզնկան գրավելուց հետո Անատոլիայի խորքերը չմտան, այլ չարժվեցին Դիարբեքիրի ուղղությամբ:

Չի կարելի համաձայնել նաև Սան Ստեֆանոյի պայմանագրի վրա հարձակումների հետ, թե այդ պայմանագրում «Հայերի անվտանգությունը երաշխավորելուն կոչված հոդվածը սոսկ հերթական բնույթ էր կրում»: Իհարկե, հայերի անվտանգությունը ցարական կառավարությանը չէր մտահոգում (Ռուսական բանակը գրաված տարածքնե-

*րում մնալու էր այնքան ժամանակ, քանի դեռ բարենորոգումներ չէին իրականացվել, իսկ բարենորոգումների բնույթը պայմանագրով որոշված չէր, այլ սահմանափակված էր հայերի անվտանգության ապահովման ընդհանուր բառակապմությամբ), և հասկանալի է, որ Ռուսական բանակն Արևմտյան Հայաստանում մնալու էր ոչ թե հանուն բարենորոգումների իրականացման, այլ դա լոկ պատրվակ էր գրաված տարածքներում հաստատվելու:*

*Հաճախ է կարծիք արտահայտվում, թե հայերի դժբախտության գլխավոր պատճառը Ռուսաստանին ապավինելն էր: Միանգամայն սխալ կարծիք է: Հայերի դժբախտության աղբյուրը ոչ թե ռուսական կողմնորոշումն էր, այլ այդ կողնորոշման խնդրում հայ քաղաքական ուժերի անհետևողականությունը, հայ-ռուսական համագործակցության ձևավորման գործում երկչոտությունը: Մասնավորապես, խիստ գնահատականներ են տրվում պատրիարք Ն. Վարժապետյանի գործունեությանը: Հետաքրքիր է տեսնել, թե մարդիկ, ովքեր ավելի քան մեկ դար անց ցեխ են շպրտում Ն. Վարժապետյանի դիրքորոշմանը, ի՞նչ դիրք կգրավեն, եթե Ռուսական բանակն այսօր հայտնվեր Կ. Պոլսի պատերի տակ և գրաված լիներ Արևմտյան Հայաստանի մեծ մասը: Կանտեսեի՞ն, չտեսնելու կտայի՞ն: Ի՞նչ իմանար Վարժապետյանը, որ Սան Ստեֆանոյին հաջորդելու էր Բեռլինը: Ռուսական բանակի հաղթանակները հայ ժողովրդի համար ոչ միայն գայթակղություն էին, այլև ազատագրվելու միակ իրական հնարավորություն:*

*Նաև կարծիք է հայտնվում, որ հայ քաղաքական միտքը մոլորության մեջ էր, նրա հասունության մակարդակը չէր համապատասխանում «ուղիների որոնման պահանջներին»: Բանը ոչ այնքան հասունությունն էր, որքան իրոք անելանելի կացությունը: Նույնիսկ այսօր մենք չենք կարողանում պատասխանել ճակատագրական նշանակություն ունեցող հարցին՝ ո՞րն էր ելքը: Հայ քաղաքական միտքն իրոք չկարողացավ հստակ ըմբռնել կոտորածների չարժառիթները, սակայն իրականությանն այնքան էլ չի համապատասխանում այն կարծիքը, թե «մեծ տերությունների հավաստիացումները դրվեցին արևմտահայերի անվտանգության հիմքում», քանի որ հայերի կոտորածները ոչ թե «Բ. Դուռն զայրույթը» գրգռելու հետևանք էին, այլ ծրագրված քաղաքականություն: Ոչ թե չարդերն էին հայերի գործողություններին հակազդելու միջոց, այլ հայկական չարժումները ինքնապաշտպանություն էին սուլթանական չարդարար քաղաքականության դեմ: Հնարավոր է, որ ինքնապաշտպանության միջոցները ոչ միշտ էին ճիշտ ընտրվում, ծայրահեղ ու վտանգավոր քայլեր էին կատարվում, սակայն բոլորն էլ մեկ գերխնդիր ունեին՝ պաշտպանել հայի կյանքը, պատիվը և ունեցվածքը: Ինքնապաշտպանական կռիվների այդ նպատակաուղղվածությունը նկատի ուներ Սիրանույշը, երբ գրում էր. «... Հայը կռվում է իր և իր եղբոր կյանքը, իր մոր ու քրոջ պատիվը պաշտպանելու և անմեղ զոհերին մարդակեր ամբոխի սրից ու կրակից ազատելու համար: Հայը իր զենքով ցանկանում է միմիայն իր թշնամուց պաշտպանվել»[205]: «Հայ տարրը չքացնելու գաղափարը,— գրում է Մ. Օրմանյանը,— ժամանակին կառավարության դիտակետը եղած էր դեռ այն օրեն, որ հայկական խնդիր մը երևան եկավ... բարձրագույն հրամանը իբրև թե հայերը զսպելու համար էր, նպատակ ուներ հայերը ջնջել...»[206]:*

*Օսմանյան կայսրության հանդեպ եվրոպայի քաղաքականությունը նույնպես օբյեկտիվորեն անհնար էր դարձնում հպատակ ժողովուրդների վիճակի բարելավման ուղղությամբ սուլթանի կողմից ինքնակամ այս կամ այն չափով էական քննույթի միջոցառման իրականացումը: «Բորենին ապրում է լեշով, Թուրքիան ևս, որպես բորենի, իր նեխած կյանքը պահպանում էր՝ քրիստոնյա հպատակներին սև ահաբեկչության ենթարկելով»:*

---

[205] «Արշալույս», 1905, թիվ 69:
[206] Օրմանյան Մ., Հիշատակագիրք, պրակ I, կ. Պ., 1910, էջ 40:

*«Թուրքիայի նման պետությունից,– գրում է բուլղար քաղաքական գործիչ Դ. Սպիրովը,– որտեղ ամբողջ բնակչության ճակատագիրը կախված է զինվորականից կամ ցանկացած ասիացու դեղին-կանաչ չալմայից... և որտեղ «արդարադատության» կամ «սոֆթայական» կառավարության որևէ անդամի կես կամ քառորդ գլխի հիվանդությունը բռնատիրական այս պետության մեջ դարեր շարունակ համարվում է կարևոր իրադարձություն, որտեղ բաղնիք գնալ կամ չգնալը, պալատական հարեմները, սքանչելի հարճերը դառնում են քաղաքական տագնապ և դիվանագիտական խնդիր, ի՞նչ կարող են սպասել խեղճ հայերն ու Բալկանյան թերակղզու քրիստոնյաները:*

*Սոցիալ-քաղաքական հալածանքները խնդիր ունեին հայերին հարկադրել՝ ընդունել մահմեդականություն կամ հեռանալ կայսրությունից, այսինքն՝ դրանք զանգվածային կոտորածների հետ միասին հիմնական միջոցներ էին Հայաստանը հայաթափելու համար:*

*Թուրքը մինչև ուղնուծուծը մոլեռանդ է: Ոչ մի քաղաքականություն կամ մշակույթ չի կարող ազդել նրա վրա... Կան թուրքեր, ովքեր կրթություն ստացել են Եվրոպայում, խոզի ճարպ են ուտում և թասով օղի են խմում, սակայն մոլեռանդությունից չեն ազատվել: Ընդհակառակը, ապացուցված ճշմարտություն է, որ կրթված թուրքն ավելի դաժան է, ավելի արյունարբու է... Թուրքն օրը յոթ անգամ աղոթում է Ալլահին և այս յոթնապատիկ աղոթքներում անընդհատ նույն բանն է խնդրում Մարգարեից՝ երկրի երեսից բնաջնջել գյավուրների ողջ աշխարհը յաթաղանի միջոցով»*[207]:

*Սակայն հազար անգամ իրավացի է ֆրանսիացի գիտնական ճանապարհորդ Լ. Քոստանսոնը, երբ գրում է.*

*«Փորձել ջնջել հայկական հարցը հայ ազգը ոչնչացնելու միջոցով՝ դա վեր է որևէ կառավարության ուժերից. Հայկական հարցը կհարատևի այնքան, քանի դեռ կապրեն հայ անհատներ, և դեռ ավելի սուր կերպարանք կընդունի...»:*

*Պարտադիր չէ, որ հայերը անպայման բնակվեն հայկական հողի վրա, միևնույն է, նրանք կպայքարեն ապագայում իրենց հարցի լուծման համար: Անատոլ Ֆրանսը "Pro Armenia"-ի 1901թ. №13-ում տպագրված «Հայերի միությունն» հոդվածում նկատում է.*

*«Բոլոր հայերը, ինչ կենցաղ որ ունենան (հարուստ թե աղքատ), օտարության մեջ անձկությամբ են նայում մահվան սպառնալիքի տակ գտնվող իրենց եղբայրների վիճակին: Նրանք գիտեն, որ սուլթանը պարբերաբար ի կատար է ածում քաղաքական մի ծրագիր, որի նպատակն է ոչնչացնել ամբողջ հայ ցեղը, և նրանք ընդունակ են մեծ զանքերի և զոհողությունների, որպեսզի կարողանան փրկել այն, ինչ դեռ հնարավոր է փրկել:*

*Հայ դատը համամարդկային դատ է...»:*

---

[207] Սպիրով Դ., Նշվ. աշխ., էջ 27-29:

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

# ՋՈՒԼՈՒՄԻ ՏԱՐԻՆԵՐ

### 1. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՆՉԱՐՈՒՐՈՒՄ Է

*Միջազգային իրավունքի հանրաճանաչ մասնագետ Ց. Բարսեղովը ձևակերպել է Հայկական ցեղասպանության առանձնահատկությունները: Դրանցից առաջինը նա համարում է այն, որ հայերի բնաջնջման գործընթացը տևական բնույթ է ունեցել, նախացեղասպանության շրջան՝ 500 և ցեղասպանության շրջան՝ 50 տարի: Թուրքերը միտումնաբար հայերի ցեղասպանությունը հանգեցնում են 1915-1916 թվականներին, այսինքն՝ այն համարում են Առաջին աշխարհամարտի «ռազմական իրադարձություններից» ծնված: Իբր օգտագործելով պատերազմական իրավիճակը՝ հայերը ձգտում էին Ռուսաստանի օգնությամբ խլել Օսմանյան կայսրության տարածքների մի մասը և ստեղծել հայկական պետություն[1]: Նման մոտեցումը խնդիր ունի արդարացնելու օսմանյան կառավարության չարդարար գործողությունները, որոնք իբր «թելադրված էին պատերազմական ժամանակի արտակարգ իրավիճակով»: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ նախացեղասպանությունից ցեղասպանությանն անցման սահմանները որոշակի չեն, քանի որ «հայերի նախագենոցիդը տեղի էր ունենում հստակ արտահայտված գենոցիդային հասարակությունում»: Դա հասկանալի է, քանի որ ընդհանրապես ցեղասպանության նպատակներն ու նախադրյալները ձևավորվում են նախացեղասպանության ընդերքում: Այդ իրողությունը հաստատում է նաև Է. Ֆինը: Նա գրում է, որ Հայկական գենոցիդը ձևավորվել է նախագենոցիդային շրջանում, 500 տարի շարունակ հայերը օսմանյան տիրապետության զոհերն են եղել[2]: Ցեղասպանության մի ուրիշ մասնագետ՝ Լեո Քուպերը, գրում է. «... կան հասարակություններ, որոնցում գենոցիդային կոտորածների գործողությունները նշանակալից ժամանակաշրջանում նախորդում են վերջնական ոչնչացմանը, որի վառ օրինակը հայերի ցեղասպանությունն է...»[3]:*

*Նախագենոցիդային շրջանում ոչ միայն ձևավորվեցին հայերի բնաջնջման պայմաններն ու նախադրյալները, այլև այդ ընթացքում երևան եկան ցեղասպանական բնույթի բազում իրողություններ: Թուրքական հասարակության ցեղասպան բնույթն արտահայտվում էր քաղաքական, կրոնական, ազգային և այլ ճնշումներով: 17-րդ դարի վերջերից հատակ գծագրվեցին նախացեղասպանության քաղաքականության երեք հիմնական միջոցները՝ ուծացում, արտաքսում, ոչնչացում:*

*Անցումը Ջուլումին նշանակեց նախացեղասպանության քաղաքականությունից անցում ցեղասպանությանը: Այդ անցումը տեղի ունեցավ աստիճանաբար և ամբողջացվեց սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի կառավարման առաջին տասը տարիներին և նշանավորվեց երեք հիմնական հարցերի նկատմամբ նոր մոտեցումներով. Առաջին. փաստորեն վերացվեցին միլլեթների համակարգը և ազգային կյանքը վարելու ուղղությամբ պատրիարքարանին նախկինում տված իրավունքներն ու արտոնությունները: Այս խնդիրը*

---

[1] *"Herald Tribune"*, 20.07.1987.

[2] **Helen F.**, *Accounting for Genocide*, New York, 1979, p. 17.

[3] **Kuper L.**, *Genocide*, Yale University Press, 1981, p. 102.

լուծելու համար նախ օգտագործվեց հայ ամիրաների ճգտումը՝ տիրանալու պատրիարքի իրավասությունների մի մասին, ինչն իր տրամաբանական ավարտին հասցվեց 1863թ. Ազգային սահմանադրությամբ: Դրա հետևանքով թուրքահպատակ հայությունը դադարեց ամբողջական միավոր լինելուց և զրկվեց օսմանյան իշխանությունների առջև հարցեր բարձրացնելու և ազգային հիմնարկների միջամտությամբ թեկուզ աննշան պաշտպանություն ստանալու հնարավորությունից: Հայությունը դադարեց ներքին, թեկուզ ողորմելի, ինքնավարություն ունեցող ազգային-կրոնական համայնք լինելուց, ինչը լրիվ ազատություն տվեց մահմեդական բարբարոսների ձեռքերին, հայն ավելի անպաշտպան դարձավ բռնությունների ու ապօրինությունների առջև: Երկրորդ. բռնի կրոնափոխությունը և ուծացումը դարձան պետական քաղաքականություն: Այս հարցում սուլթանական կառավարության և «ժողովրդավար ընդդիմության», նույնիսկ սահմանադրական չարժման գործիչների կարծիքները հիմնականում համընկնում էին, մի տարբերությամբ, քրիստոնյա հպատակներին թուրքացնելու ճանապարհը առաջինները համարում էին կրոնափոխությունն ու հարստահարությունը, իսկ երկրորդները՝ օսմանացումը: Երրորդ. կայսրությունում զանգվածային կոտորածների քաղաքականությունը վերածվեց «ազգային հարցը» լուծելու և օսմանյան տիրապետությունն Անատոլիայում հավերժացնելու միջոցի: Եթե նախկինում թուրքերը զանգվածային կոտորածներից ու բնաջնջումից ձեռնպահ էին մնում, ապա 19-րդ դարում չի եղել տասնամյակ, որ նման միջոցների դիմած չլիներին:

Ֆ. Գրինն իրավացի է, երբ նշում է, որ գլխավոր դերը խաղում էին ոչ թե բացահայտ ու զանգվածային կոտորածները, այլ կողմնակի աչքի համար դժվար նկատելի սպանությունները: «Կառավարությունը,– գրում է նա,– գիտի սպանության ավելի հարմար միջոցներ՝ թաքուն, անաղմուկ, անտեսանելի...»:

Կայսրության ստեղծումից ի վեր՝ թուրքերը հրաժարվեցին համագործակցել հպատակ ժողովուրդների, մասնավորապես քրիստոնյաների հետ և որդեգրեցին ծայրահեղ խտրականության քաղաքականություն, ինչը նրանց զերծ պահեց զարգացած քաղաքակրթություն ունեցող ժողովուրդների մեջ ձուլվելուց: Կյանքի կոչվեցին դաժան, մարդատյաց օրենքներ ու ճնշման եղանակներ և դրանց գործադրման նույնքան դաժան ձևեր ու միջոցներ: Ջէին հալածվում միայն այն հպատակները, ժողովուրդներն ու էթնիկական խմբերը, ովքեր հրաժարվում էին ազգային արժեքներից, իրենց կրոնից, լեզվից, վարքուբարքից, իսկ ինքնուրույն կեցվածք ունեցող ժողովուրդների և անձանց համար հնարվում էին կյանքի առանձնակի ծանր պայմաններ, տարվում էր դժոխային հարկային քաղաքականություն, նրանց մղում արտագաղթի կամ պարզապես ոչնչացնում էին:

Օսմանյան տիրակալները նաև խրախուսում էին կրոնական առճակատումը և այդ կերպ ահաբեկում նրանց, ում դիմադրությունը վտանգավոր էր իսլամի աստվածակենտրոն համակարգին: Կրոնական երկու աշխարհների հակամարտության մեջ նրանք ստանձնեցին հրահրիչի դերը:

«Այդ ավերիչները,– գրում է Ն. Ադոնցը,– Մոնղոլիայի տափաստաններից հասան մինչև Ադրիատիկի ծովափ փոթորկահողմի նման՝ ճանապարհին ոչնչացնելով դարավոր համառ աշխատանքով ստեղծված եվրոպական քաղաքակրթության պտուղները... Նրանք դարերի միջով անցան անպտուղ տիրոջ նման, այդպես էլ սերունդներին չթողնելով ոչինչ նշանակալից»[4]: Թուրք զորահրամանատար Խուրշիդը 1863թ. լուսյա տեսած իր «Սիահեղ Նամե-ի-խուդուդ» գրքում գրում է. «Բոլոր արհեստավորներն ու հողագործների մեծ մասը հայեր են... Մահմեդականներից չկա ոչ միայն արհեստավոր վարպետ, այլև նույնիսկ օժանդակ բանվոր: Հայերն աշխատասեր ժողովուրդ են, իսկ մահմեդականները՝ ընդհակառակը»[5]:

---

[4] Ադոնց Ն., *Հայկական հարց*, Երևան, 1996, էջ 77:

[5] Арцруни Г., *Экономическое положение турецких армян*, Москва, 1880, стр. 20.

Թուրք նվաճողները լավ հասկանում էին, որ հպատակ քրիստոնյաների ճարտարությունն արտադրության, առևտրի մեջ, նրանց զարգացման բարձր մակարդակը անհաղթահարելի վիհ են: «Թուրքը,– գրում է Ա. Կոլյուբակինը,– ծույլ էր, այլասերված ու ծախու: Հարեմային կյանք, հարբեցողություն, թղթախաղ, բամբասանք ու բանսարկություն՝ ահա այն ամենը, ինչը խժռում էր նրա ամբողջ ժամանակը և ունակություններ»[6]: Ոչ թե թուրքերի քաղաքական լայնախոհությամբ, այլ նրանց անբանությամբ է բացատրվում հպատակ ժողովուրդների առաջատար դերը տնտեսական կյանքում: Տնտեսական գործունեության խթանում՝ մի կողմից, և բացարձակ իրավազրկություն՝ մյուս կողմից. ահա հպատակ քրիստոնյայի դրությունը Թուրքիայում: Հպատակներին մշտապես հնազանդության մեջ պահել և անարգել տիրանալ նրանց արյուն-քրտինքով ստեղծված բարիքներին: Իսկ դրա համար անհրաժեշտ էր ոչնչացնել այդ դասի մարտական ոգին, նրան ոչ թե ոչնչացնել, այլ թողնել «աշխատելու եզան նման, որպեսզի կերակրեր տիրապետող տարրին»: Դրա համար էլ կոտորածներ կազմակերպելուց և հպատակների աշխատանքի արդյունքներին տիրանալուց առաջ նրանց ձեռքից խլեցին սուրը, հրացանը, պաշտպանության բոլոր միջոցները և թողեցին միայն գութանը: Հային արտաքսեցին զինվորական ծառայությունից՝ դրա փոխարեն նրան հարկադրեցին ծանր հարկեր վճարել և կերակրել մահմեդական զինվորներին ու պաշտոնեությանը:

Այսպիսով, նախացեղասպանության ժամանակաշրջանին բնութագրականը ազգային-կրոնական անհանդուրժողականությունը և տիրապետող ազգի քաղաքական նպատակադրումների ու տնտեսական շահերի միջև եղած հակասություններն էին: Տվյալ դեպքում խոսքը կարող է լինել հպատակ ժողովուրդների ոչ թե բնաջնջման, այլ ստրկացման, նրանց հանդեպ թուրքի՝ ոչնչով չսահմանափակված իրավունքների ապահովման մասին: Գյավուրը՝ ռայան մարդ չէր, այլ չնչավոր անորոշություն, որի գոյությունը լոկ մի արդարացում ուներ՝ ծառայել թուրքին և ենթարկվել նրա բոլոր կամայականություններին:

Սխալ է կարծել, թե ռայան գոհ էր իր վիճակից: Եղան պահեր, երբ նա իր դժգոհությունն արտահայտեց բացահայտ, նա նաև վարդագույն երազներ էր փայփայում, սակայն իրավիճակը փոխելու, ճնշումների ու հարստահարությունների, բռնությունների ու սպանությունների համակարգը վերացնելու ուղղությամբ նա այդպես էլ էական ոչինչ չարեց և հավանաբար անել չէր կարող:

Ստեղծված հավասարակշռության քայքայվելն ամենից առաջ հետևանք էր այն բանի, որ թուրքը նախկին ձևով այլևս ապրել չէր ցանկանում: Տնտեսական ու քաղաքական կյանքի լճացումը, կիսագաղութի վերածվելու ահագնացող վտանգը, արտաքին մեծ պարտքերը, տարածքային կորուստների չարունակական գործընթացը, կայսրության ներքին գործերին տերությունների մշտական բնույթ ստացած միջամտությունը, եվրոպայից դուրս քշվելու վտանգը Թրքությանը հարկադրեցին վերանայել իր գործելաձևն ու աշխարհընկալումը:

«Դրոշակ»-ի 1903թ. թիվ 2-ում տպագրված մի հոդվածում հետևյալ կերպ է ներկայացված թուրքերի «արթնացման» գործընթացը: Թուրք «կառավարությունը հպարտ էր սուլթանատով, իսկ ժողովուրդը, տիրող տարր լինելով, թաղված էր կենցաղային հաճույքների մեջ... Մինչ նա այդպիսի վավաշոտ ու չվայտ ապրելակերպով թուլացել էր... մինչ ավելի քաղցր կյանքի անցնելու կամուրջը նամազների տարափով ամրացնելու հետևից էր ընկած, «գյավուր իթողլիքը» առիթից օգտվելով գրավել էր ասպարեզը, տեր դարձել... արհեստին, առևտրին, պաշտոններին ու հարստությանը, մինչդեռ ինքը խոհանոցից ու կնանոցից բացի ոչինչ չուներ: Մուհամմեդի «ճտերը» վերջապես սթափվեցին: Ընդհանուր կոտորածներով նրանք պահպանեցին ազգաբնակչության թվաքանակի հա-

[6] Колюбакин А. М., նշվ. աշխ., էջ 158:

վասարակչռությունը և այլ տարրերի՝ կոտորվածների, մեռածների, փախածների, գաղթածների մեծաթվության չնորհիվ գերակչիռ դարձան: Թալանի միջոցով տիրացան տնական ինչքին, խանութների ապրանքներին ու դրամին: ...Քուրդ և թուրք հրոսակներն ավերեցին գյուղացու օջախը, քայքայեցին նրա գոյության հիմքը՝ խլեցին վերջին եզը և ստիպեցին արտագաղթել, իսկ նրանց բնակավայրերը լցրեցին քրդերով, չերքեզներով, թուրքերով ու թուրքմեններով: Քաղաքաբնակ հարուստների անչարժ ունեցվածքը, ընդարձակ կալվածքներն ավերվեցին ու, անմշակ մնալով, անցան թուրքերի ձեռքը, որոնք դրանք վերցրին գնի 1/20-ով. երկու հազար լիրի կալվածք գնվեց 300-400 լիրով: Հայերին աղքատացնելով՝ անգործության մատնեցին և ապա աշխատանքի հրավիրելով, առաջարկեցին գործ՝ փողը թուրքից, գործը հայից: Խեղճ հայն իր հողի տիրոջ հետ «ընկերացավ»: Թուրքն աստիճանաբար աշխատանքում հմտացավ ու ոչ միայն փողի, այլև գործի տերը դարձավ: Նա այլևս հայի կարիքը չուներ»:

Տիրապետողի վիճակում մնալու համար այդ հետամնաց ժողովուրդը պետք է տևականորեն վարեր քաղաքական ճնշման և պարբերական կոտորածների քաղաքականություն: Նման քաղաքականության առաջին զոհերը դարձան քրիստոնյա ժողովուրդները, քանի որ նրանք անհավատ էին և այդ պատճառով էլ՝ թշնամի:

Թրի ուժով, կրոնական մոլեռանդության բորբոքման, «դանդաղ կտտանքի» համակարգի, հպատակների թաքուն կամ բացահայտ կոտորածների միջոցով է թուրքերին հաջողվել հարյուրամյակներ շարունակ մնալ որպես տիրապետող ժողովուրդ: Այդ նույն խնդրին էր ծառայում «Հայերը չատանում են, հարկ է նրանց թիվը կրճատել» կարգախոսը: Գործնականում հենց դա էլ հանդիսացել է թուրքական պետական քաղաքականության իմաստն ու բովանդակությունը. հպատակ ժողովուրդների թիվը նախ «նվազեցնել», ռայայի վիճակում հյուծել և ապա իրականացնել նաև ամբողջական ոչնչացում կամ ձուլում:

Հայերի նկատմամբ թուրքական քաղաքականության ողնաշարը ոչ թե կրոնական, այլ քաղաքական ըմբռնումներն էին: Սկսած 18-րդ դարի վերջերից, աստիճանաբար առաջին պլան դուրս եկավ ռուսական գործոնը: Թուրքական բռնության բիրտ կրունկի տակ ճզմված հայը հանձինս Ռուսաստանի տեսավ իր բնական, հետևաբար, ոչ թե ժամանակավոր, անցողիկ, այլ՝ մշտական դաշնակցին: Իհարկե, թուրքերը դա կուլ տալ չէին կարող: Ինչպես վերևում նշվեց, դեպի կործանում ընթացող կայսրության տերերն իրենց հանգրվանը համարում էին Անատոլիան: Այդ մասին Աբդուլ Համիդ 2-րդն ասում է, թե «չեմ զղջում, որ կորցրեցինք մեր արյունը ծծող բալկանյան երկրները: Որքան արագորեն հետ կենտրոնանանք (այսինքն՝ Անատոլիայում հավաքվենք), այնքան ավելի չուտ կկարողանանք հաղթահարել մեր տկարությունը և «հիվանդությունը»: Եվրոպան պիտի տեսնի, որ անարգված «հիվանդ մարդը» (Թուրքիան) նորից իրեն գտել է և դարձել «ուժեղ մարդ»:

Սակայն խնդիրը միայն դա չէր: Կայսրությունը փրկել էր պետք, իսկ գլխավոր վտանգը ոչ թե դրսից, այլ ներսից էր՝ հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումները: Անպայման կասեցնել Անատոլիայի մասնատման գործընթացը, թույլ չտալ տարածքային կորուստներ, ահա հարցերի հարցը: «Թուրքացած Թուրքիա թուրքերի համար» կարգախոսը դարձավ քաղաքական կողմնորոշման նշանաբան: Նախ հարկ համարվեց կայսրությունը «մաքրել խռովարար, անհնազանդ տարրերից»: Եվ հարվածի գլխավոր օբյեկտ դարձան այն ժողովուրդները, որոնց անկախանալու հնարավորությունները մեծ էին: Այդպիսի ժողովուրդներ համարվեցին արաբները, հույները ու հայերը, որոնք ունեին զարգացած ազգային-մշակութային կյանք: Սուլթանական վարչակարգը, ունենալով ժանդարմական բնույթ, կիրառեց այդ ժողովուրդներին ահաբեկչության ենթարկելու բազմաբնույթ և դժոխային միջոցառումներ, արաբներին ու հայերենը արգելվեցին, արաբն ու հայը պետական ծառայության կարող էին անցնել սեփական ազգային

դեմքը զոհաբերելու գնով: Այդ ժողովուրդների հասարակական-քաղաքական կազմակերպությունները փակվեցին, մասնավորապես՝ արաբական ավագանին օրենքից դուրս դրվեց: Ի դեպ, դա արաբների դեմ կիրառվող տևական բնույթի քաղաքականություն էր, և պատահական չէր, որ Ջեմալը արաբների քաղաքական ակտիվությունն աքդուլհամիդյան դաժանությամբ ճնշեց:

Ջնայած հայ աշխատասեր գյուղացու, հմուտ արհեստավորի և չինարարի չահագործումը տիրապետող ազգին եկամուտներ էր ապահովում, չնայած հայ առևտրականն էր կայսրության տնտեսական կապերի նշանակալից մասի իրականացնողը, այնուամենայնիվ, թուրք պետությունը հայ ժողովրդի գոյության բուն փաստն իր համար վտանգավոր էր համարում: Բարեփոխումներ անցկացնելու սուլթանի խոստումների կապակցությամբ Րաֆֆին մարգարեաբար գրում է, որ սուլթանը ժամանակ է շահում. նա Հայաստան կուղարկի հանձնաժողովներ, կցուցադրի բարեփոխումներ անցկացնելու իր «ցանկությունը», բայց միաժամանակ՝ «քրդերին, թուրքերին և ամբողջ մահմեդական ամբոխին գաղտնի կերպով կգրգռի հայերի դեմ և, փոխանակ բարեկարգությունների, արյուն, կոտորած, ավերմունք կտարածե Հայաստանում»[7]: Րաֆֆու մարգարեությունը ոչ միայն այն էր, որ նա 1894-1896ԹԹ. կոտորածներից չատ առաջ կանխատեսեց դրանց վտանգը, այլև ամենայն որոշակիությամբ մատնանշեց հրեշագործությունը հղացողին ու դրա կազմակերպչին՝ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդին: Մ. Մաքքոլը գրում է. «Մի քանի ա-ռումներով ներկայիս սուլթանը (Աբդուլ Համիդ) օսմանյան ամենաընդունակ թագավորներից է: Նա խորամանկ է, ճկուն, համարձակ, աչխատասեր և կարողացավ միապետի անձնական իշխանությունը դնել այնպիսի բարձրության վրա, որը ներկա հարյուրամյակում երբեք չէր եղել: Նրա նախարարները զրո են, սովորական մարիոնետներ, որոնք այս կամ այն կողմը չրջվում են՝ նայած, թե որ պարանը կճգի իրենց տիրակալը: Սուլթանի կամքին են ենթակա կառավարման բոլոր ճյուղերը և վայ այն պաչտոնատար անձին, որը կհամարձակվի կոտորած կազմակերպել առանց սուլթանի համաձայնության: Ոչ մի նահանգապետ առանց նրա հատուկ թույլտվության չի համարձակվի զորքերը չարժել: Ք. Լյոյդը նկատում է, որ այս կարգը խստորեն իրականացվում էր Հայաստանում: Հետևաբար, կասկած չկա, որ կոտորածի համար այնտեղ ուղարկված զորքերը ստացել են սուլթանի համապատասխան հրամանը: ...Թե՛ մահմեդականները և թե՛ քրիստոնյաները պնդում էին, որ կոտորածներին մասնակցած զորքերը գործել են համաձայն Կ. Պոլսից ստացված գրավոր հրամանի»[8]: Բայց մինչև զորքերը չարժելը հարկ էր քայքայել, հյուծել զոհին: Աբդուլ Համիդի քարտուղարներից մեկը՝ Մուսթաֆա Նեդիմը, գրում է. «Ոչ ոք չմնաց, որ լսած չլինի և չիմանա քարերին իսկ սարսռացնող դառն աղետների ու զարհուրելիության մասին, այն հարստահարությունների, որոնք թուրքերը գործադրեցին հայերի նկատմամբ»[9]: Լաուերը թուրքիայի ծանր կացության պատճառը համարում էր ոչ թե ցեղերի, ազգությունների ու կրոնների բախումը, այլ «վատ կառավարումը, ինչն առաջին հերթին մահ ու այլասերվածություն ծնող կազմակերպություն էր: Դրանք ախտեր էին, որ թափանցել էին քաղաքական կառույցի ողջ համակարգը, ժառանգական էին, խրոնիկ և քայքայում էին համակարգի զոհերի գոյության հիմքը: Դրանցից ազատ չէր ոչ մի դավանանք, դրանք ախտահարում էին բոլոր ազգություններին: Բայց առաջին հերթին՝ այլակրոն հպատակներին»[10]:

Բեռլինի կոնգրեսից հետո, առաջին մեկ-երկու տարիներին, երբ ցեղասպանության քաղաքականությունը դեռևս հստակ չէր գծագրվել, քաղաքագետներն այն առանձին չէին դիտարկում, այլ համարում էին Հայկական հարցի ոչ բարեհաջող զարգացման,

---

[7] Րաֆֆի, ԵԺ, հ. X, Երևան, 1957, էջ 37:
[8] *Положение армян в Турции ...*, стр. 157-158.
[9] Նեդիմ Մ., նշվ. աշխ., էջ 27:
[10] *Положение армян в Турции ...*, стр. 222-225.

մասնավորապես, 61-րդ հոդվածը մեռած տառի վերածվելու հետևանք: Ուստի նրանք բնաջնջման քաղաքականության գործում գրեթե նույն հարթության վրա էին դնում սուլթանի հայակերությունն ու տերությունների ագահությունը:

Իսկ սուլթանը հետևողականորեն գործողության մեջ էր դնում հայերի բնաջնջման ծրագիրը: Տարօրինակ ոչինչ չկա, որ այդ ծրագրի մտահղացողներն ու գործողության մեջ դնողները նույնպես անգլիական կողմնորոշում ունեցող պետական գործիչներն էին: «Փորձ»-ի 1879թ. հունիս 21-ի համարում զետեղված է Մերենցի մեկնաբանությունը. «Ազգային տեսություն» խորագրի տակ: Մեկնաբանությունը նվիրված է մեծ վեզիր Քյամիլի նամակին՝ հասցեագրված Աբդուլ Համիդ 2-րդին: Մեզ, դժբախտաբար, հայտնի չէ, թե Մերենցը որտեղից է քաղել այդ նամակը, սակայն որ այն գոյություն ունեցել է, կասկածից վեր է: Պատահական չէ, որ թուրք պատմաբանների մեծ մասը լռությամբ է անցնում այս իրողության կողքից, չնայած նամակի հիմնական գաղափարները տարբեր ձևակերպումներով տեղ են գտել շատ քաղաքական գործիչների գրություններում:

Քյամիլի նամակի սկիզբը նվիրված է Բալկաններում օսմանյան քաղաքականության քննադատությանը և այն տեսակետի հիմնավորմանը, որ բալկանյան ժողովուրդներին անկախություն տալը կոպիտ սխալ էր: Այնուհետև փաշան գրում է.

«Եթե եվրոպական մասում մեր ծոցի մեջ օձ սնեցինք, ապա չի կարելի նույն հիմարությունն անել մեր ասիական Տաճկաստանում: Խելոքը չնչել, վերացնելն է այն բոլոր տարրերին, որոնք մի օր կարող են մեզ համար նույն վտանգը ծնել և ստոր ձեռնարկների առիթ ու գործիք դառնալ:

Գոնե ներկայումս Անգլիայի շահերը պահանջում են, որ Փոքր Ասիայում (մենք և Անգլիան «Հայաստան» բառը ոչ միայն չենք ճանաչում, այլև այդ անունը հնչեցնողների կզակները կջախջախենք) մեր երկրներն ազատ մնան օտարի միջամտությունից և միջամտության բոլոր առիթներից: Ուստի այդ սուրբ նպատակի համար անհրաժեշտ է, և պետական իրավունքը պահանջում է, որ կասկածելի տարրն անհետացնենք, որպեսզի ապագան ապահովենք: Ուրեմն հայ ազգին անհետ վերացնելու ճիգ ենք անելու: Եվ այդ հաջողացնելու համար որևէ բանի պակաս չունենք: Բոլոր գործիքները պատրաստ ունենք՝ քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես՝ ամեն ինչ: Կրոնական պատերազմ կհայտարարենք և դյուրին պատերազմ մի այնպիսի ազգի դեմ, որը ոչ զենք ունի, ոչ զինվորություն: Իսկ մեզ զինակից է աշխարհի ամենամեծ ու ամենահարուստ տերություններից մեկը, որը նաև մեր ասիական աշխարհի երաշխավորն է: Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնյա եվրոպան Տաճկական Ասիայում կրոնակից փնտրի ու չգտնի, մեզ հանգիստ կթողնի, և այն ժամանակ մենք կզբաղվենք ներքին գործերով ու բարենորոգումներով»:

Այս նամակն իրոք բնաջնջման ծրագիր է: Այն միանգամայն ճիշտ է ներկայացնում իրավիճակը, ուժերի փոխհարաբերությունը, գործադրման եղանակները՝ ռազմական ուժի և հայերին տնտեսապես հյուծելու գործողությունների համատեղումը:

Քյամիլի ծրագիրը գործողության մեջ դրվեց անմիջապես, ամենայն հավանականությամբ այն կազմվել էր սուլթանի հանձնարարությամբ: Արդեն 1880թ. սկզբներին ակնհայտ դարձավ, որ հայության հարցում օսմանյան իշխանությունների քաղաքականության մեջ ներմուծվում էին նախադեպը չունեցող երանգներ ու գործելակերպեր, որոնք ծավալվեցին և արդեն 1883թ. ամբողջացրին Զուլումի համակարգը:

Սակայն 80-ական թվականներին կայսրության վիճակն անյպիսին էր, որ հնարավոր չհամարվեց այդ ծրագիրն իրականացնել ամբողջությամբ: Դրա համար էլ Աբդուլ Համիդը որոշեց ոչնչացումն առաջ տանել հետևողականորեն, բայց մաս առ մաս՝ օգտագործելով ամենատարբեր պատրվակներ ու պատեհություններ: Իհարկե, հայերը ևս նման պատրվակ ստեղծեցին, սակայն գլխավոր դերը խաղացին տերությունները, մասնավորապես Ռուսաստանը՝ «սուլթանական վարչակարգը բոլոր միջոցներով ամրապնդելու» իր քաղաքականությամբ:

Ռուսաստանի՝ օսմանյան քաղաքականության արմատական փոփոխության գործում, իհարկե, դեր խաղացին դիվանագիտական խայտառակ պարտությունը Բեռլինում և համապատասխան դոկտրինայի ձախողումը: Բնականաբար, հարց է ծագում՝ թուրքական լծից Արևմտյան Հայաստանի ազատագրումը Ռուսաստանի օգտի՞ն էր, թե՞ ոչ, մանավանդ, եթե նկատի առնվի նաև Արևելյան Հայաստանը կորցնելու վտանգը[11]: Պետերբուրգում նաև վստահ չէին, որ հայերի ռուսական կողմնորոշումը ռազմավարական բնույթ ուներ: Օսմանյան կայսրության հանդեպ ռուսական քաղաքականության վերանայումը հետևանք էր նաև միջազգային կյանքում կատարված տեղաշարժերի: Մասնավորապես, Գերմանիան օր օրի ավելի ու ավելի մեծ հավակնություններ էր դրսևորում օսմանյան տարածքների հանդեպ: Բեռլինը Թուրքիայում առանձնաշնորհումներ ստանալու դիմաց հովանավորում էր սուլթանի ձեռնարկումները: Փոքր դեր չխաղացին նաև Ալեքսանդր 2-րդի ահաբեկումն ու Ալեքսանդր 3-րդի գահ բարձրանալը, որը պետական վճռորոշ պաշտոնների առաջ քաշեց հայատյաց գործիչների (Գոլիցին, Լոբանով) և քաղաքական գործունեությունից հեռացրեց բարձր պաշտոններ զբաղեցնող հայերին: Նշանակություն ունեցավ նաև այն, որ շատ արևելահայեր Ռուսաստանում տնտեսական լուրջ հաջողությունների հասան, ինչպես նաև այն, որ հակացարական պայքարին կովկասահայությունն ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում, Հ8 դաշնակցությունն Անդրկովկասում դարձավ հակամիապետական ուժերի առաջատար, իսկ կովկասյան թաթարներն ու վրաց ազնվականությունը՝ ցարիզմի հենարան, հակառակ այն իրողության, որ նույն այդ արևելահայերը անկախանալու կամ հպատակությունը փոխելու որևէ դիտավորություն չունեին, մինչդեռ վրացական ազնվականության համար անկախությունը քաղաքական ծրագիր էր, իսկ թաթարները բացահայտ թուրքական կողմնորոշում ունեին: "Пролетар" թերթի 1905թ. №19-ում Վ. Լենինը գրում է. «...կառավարության աչքում հայերը կովկասում դառնում են հեղափոխության նույնպիսի խորհրդանիշ, ինչպիսին հրեաներն էին արևմտյան, հարավարևմտյան Ռուսաստանում: Հեղափոխական այս ուժի դեմ պայքարելու նպատակով զորակոչվում է կովկասյան բնակչության այն հատվածը՝ թաթարները, որոնք և՛ սոցիալական դիրքով, և՛ կրոնական համոզմունքով ամենից ավելի են տարբերվում հայերից»: Եվ ցարիզմը որդեգրեց հակահայ կեցվածք:

Ընդ որում, Հայկական հարցի հետագա զարգացման բնույթն անհնար է ուսումնասիրել ոչ միայն առանց նշված իրողությունների, այլև առանց այդ հարցի բնույթի երկակիությունը հաշվի առնելու: Այն լինելով, մի կողմից, հայ ժողովրդի ազատագրական ձգտումների արտահայտություն, իսկ մյուս կողմից, վերածվելով միջազգային դիվանագիտության օբյեկտի, կարող էր լուծվել, եթե ազատագրական շարժման և մեծ պետությունների շահերը համընկնեին:

Հարկ է նկատի ունենալ երկու հանգամանք ևս. առաջին — հայ ժողովրդի ծանր դրությունը՝ որպես հետևանք օսմանյան տիրակալության ռազմաավատատիրական բնույթի, որն անդրադառնում էր կայսրության կազմում եղած բոլոր ժողովուրդների լայն զանգվածների վրա, երկրորդ — հայ ժողովրդին հյուծելու, նրան ֆիզիկապես ոչնչացնելու թուրքական իշխող շրջանների չովինիստական քաղաքականությունը: Օսմանյան դիվանագիտության խոշոր հաջողությունը Բեռլինում ոչ միայն այն էր, որ Բ. Դուբը, օգտագործելով տերությունների միջև եղած հակասությունները, վերացրեց Սան Ստեֆանոյի պայմանագրի հայանպաստ կետերը, այլև խաղալով հայ գործիչների քաղաքական միամտության, անփորձության և անհեռատեսության վրա, տպավորություն ստեղծեց, թե հայերն ապստամբական տրամադրություններ, կայսրության կազմից դուրս գալու «ապերախտ» դիտավորություններ ունեին: Սուլթանը որոշել էր կոտորել հայերին, և Երիմյան Հայրիկի գլխավորած պատվիրակության ինքնավարության

[11] Զորմիոյան Լ., նշվ. աշխ., հ, Բ, էջ 20:

առաջարկը կոտորածների քաղաքականությունը՝ որպես հայերի անկախական ապստամբական տրամադրությունները սանձահարող միջոցառում ներկայացնելու առիթ էր դրսի աշխարհին: Նույն այդ նպատակով Բ. Դուդը կայսրության բնակչության կազմի վերաբերյալ ներկայացրեց կեղծ թվեր, թե իբր «հայերը վեց նահանգներից ոչ մեկում մեծամասնություն չեն և ինքնավար իշխանության կորիզ լինել չեն կարող»: Մինչդեռ Աբդուլ Համիդը Կ. Պոլսի գերմանական դեսպանին խոստովանեց. «Գերադասում եմ մեռնել, քան թե նման (բարենորոգումների) պահանջներին ընթացք տալ»: Տասը տարի անց, 1889թ հոկտեմբերի 22-ին նա Ա. Վամբերիին ասաց. «Պատմիր քո անգլիացի բարեկամներին, մասնավորապես լորդ Սոլսբերիին... որ ես ավելի չուտ թույլ կտամ գլուխս մարմնիցս պոկեն (այստեղ նա ավելի դրգռված դարձավ), քան ստեղծել անկախ Հայաստան»[12]: Է. Բեռնչտայնը նշում է. «Հայերի վրա չատ թանկ նստեց 1878թ. դիվանագիտական գլուխգործոցը, որի չնորհիվ այսօր նրանք կանգնած են բնաջնջման չեմին»[13]: Ֆ. Նանսենը գրում է. «Վայ հայ ժողովրդին, որ մտավ եվրոպական քաղաքականության մեջ: Հայ ազգի համար չահեկան կլիներ, եթե իր անունը եվրոպական ոչ մի դիվանագետի չուրթերին չլիներ»[14]:

Ջնայած սուլթանը հենց սկզբից կողմնորոշվել էր ճախողել բարենորոգումները, սակայն վստահություն ձեռք բերեց այն բանից հետո, երբ 61-րդ հոդվածի կատարումն աչքաթող արեց, երբ այն անուշադրության մատնեց, իսկ տերությունները լռեցին: Դրանից հետո էր, որ նա գործնական հողի վրա դրեց հայերի բնաջնջման ծրագիրը: Աբդուլ Համիդը հասկացավ, որ տերությունների միջև հակասություններն այնքան խորն էին, ինչն անհնար էր դարձնում նրանց համատեղ ձեռնարկումները: Հետևաբար ինքն ազատ էր իր գործողություններում: Արդեն 1879-81թթ. հայկական նահանգներում բռնի միջոցներով հայերից խլվեց 750548 պիաստրա՝ այն ժամանակվա համար պատկառելի գումար: Երբ հայերը բողոքեցին իրենց բնակավայրերում մուհաջիրներ բնակեցնելու դեմ, Հ. Լեյարդը պատասխանեց՝ Թուրքիան ապաստան է տալիս իր հավատակիցներին: Անգլիան մեծ ներդրում ունի նաև հայ-քրդական առճակատման գործում: Հայաստանը Քուրդիստան վերանվանելու գաղափարն առաջ քաշեց Լոնդոնը: Անգլիան էր կանգնած «Համիդեականություն» անունը կրող արյունարբու ռեակցիայի ակունքներում:

Ա. Մանդելշտամն այն կարծիքին էր, որ Աբդուլ Համիդը ձգտում էր թուրքական կայսրությունը բարձրացնելու և հզորացնելու իր ծրագիրն իրականացնել ոչ թե բարեփոխումների, այլ օտար ռասաների թուլացման, որ նույնն է՝ բնաջնջման միջոցով: Սուլթանը որոշեց այդ եղանակով հայաստանի օգտին մարդկության միջամտությունը անհետևանք թողնել: Նա խնդիրը լուծում էր սանձարձակ ցինիկությամբ: Բեռլինից հետո տեղերն ուղարկեց բարձրաստիճան պաշտոնատարների՝ «բարենորոգումներ իրականացնելու համար»: Իրականում այդ ստվարաթիվ պաշտոնատարներն ու նրանց ուղեկցող ոստիկանական ուժերը ձևավորեցին հայերին արտամղելու և ոչնչացնելու քաղաքականությունը: Օրինակ, Վան ուղարկվեց բարձրաստիճան մի զինվորական՝ Սամին, որին, ինչպես գրում է «Մշակ»-ը, գաղտնի հանձնարարված էր. «Հայոց ազգությունը ճնշելու, Հայաստանի կարևորությունը և ողջ հայության ապագա ակնկալությունները ոչնչացնելու մի նոր հնարագետ, արտաքուստ չերևացող և արագ գործադրելի նախագիծ մշակել և իսկույն գործադրել: Բնաջնջման գործիք պետք է դառնային քրդերը»: Որոշակի դարձավ վերաբերմունքը նրանց նկատմամբ: «Սամի փաշան, Վան մտած-չմտած, սկսեց բոլոր կողմերից քրդերին հավաքել ու քաղաքը լցնել՝ հակակշռելու համար քուրդ տարրը հայկական տարրին: Մտադիր էր նույնիսկ քուրդ պաշտոնյաներ նշանակել... Կարինի ճանապարհի վրա, մինչև Վան հանդիպած բոլոր ավազակապետ քրդերին, փոխանակ

---

[12] ՀՀ ԳԱԱ Ինֆորմացիոն բյուլետեն, 1982, էջ 11:
[13] Օտար հեղինակները ..., էջ 17:
[14] Nansen F., *Armenia and the Near East*, London, 1928, pp. 288-289.

ձերբակալելու, մեծ պատվով քաջալերեց և խրախուսեց իրենց գործունեության մեջ»[15]: 1880-ական թվականների սկզբին արդեն իրողություն էր թուրք հրապարակախոսության միաբան թշնամական կեցվածքը բոլոր հայերի հանդեպ, ովքեր մեղադրվում էին պետությանն ու հայրենիքին դավաճանելու մեջ, քանի որ «հենված օտար պետությունների վրա, արագացնում էին վերջինների միջամտությունը Թուրքիայի ներքին գործերին», պատրաստվում ապստամբության: «Օրվա հերոսներն այդ լրագրերի համար դառնում էին քրդերը, որոնք և պետք է լինեին Հայոց հարցի կործանողները: Գրվում և փառաբանվում էին քրդերի բարեմասնությունները, ժխտում էին, որ նրանք առհասարակ որևէ վնաս էին հասցնում հայերին, և պնդում էին, թե, ընդհակառակը, հայերն են նրանց նեղում և վնասում...»[16]: Հայերի հասցեին ամենազազրելի լուտանքներ էր թափում սուլթանի անձնական պաշտոնաթերթ "Tercüman-ı Hakikat"-ը:

Ելդըզի հակահայ քաղաքականության հետևանքով աքցանի մեջ առաջինն ընկավ Հայկական հարցի կրողն ու ոգին՝ հայ գյուղացին: Քուրդ կալվածատերն իրենն էր համարում հայի հողը և պահանջում, որ նա կատարի ավատատիրոջ հանդեպ միջնադարյան պարտականությունները, կառավարությունն էլ, իր հերթին, աչք փակելով քրդական հավակնությունների հանդեպ, պահանջում էր հողերի վարձը: «Այսինքն՝ երկու կեղեքիչներ դաշտում կանգնած էին գյուղական մի հատ արորի վրա»[17]: Դրությունը ծանրացավ նաև քաղաքական առումով: «Այլևս կասկած չկա,– 1880թ. գրեց Մ. Խրիմյանը,– քրդական մի միություն է կազմակերպվում կենտրոնական կառավարության դրդմամբ, որը ուզում է անդամալուծել Հայոց հարցը, նրան հակադրելով մի նոր հարց՝ քրդականը... Որքան էլ աննշան լինի այս միության քաղաքական կարևորությունը, այն կարող է, սակայն, չարագուշակ հետևանքներ ունենալ, հանկարծակիի բերել հայ ազգաբնակչությանը, որի ոչ միայն գույքը, այլև կյանքն այսօր վտանգի մեջ են»[18]: «Դրոշակ»-ը 1897թ. իր թիվ 10-ում գրեց. «1877թ. ռուս-թուրքական պատերազմից հետո սուլթանը նպատակ է դրել ամենուրեք հայերին փոքրամասնություն դարձնել: Դրա համար նա ձգտում է. դատարկ գանձարանը հայերին թալանելով լցնել, հարկերը դրամով գանձել (իսկ հայը ճանապարհների ու անվտանգության բացակայության պատճառով գյուղատնտեսական մթերքները վաճառել չէր կարողանում): Միաժամանակ զինել քրդերին և ուղղել հայերի դեմ: Դրանով ազատվել քրդերին հնազանդության մեջ պահելու վրա միջոցներ ծախսելուց և հայերին անելանելի վիճակի մեջ դնելով, մղել արտագաղթի: Բայց դա սուլթանին չէր բավարարում: Հրեչի մտքում սկսել էր խմորվել աներևակայելի մի ծրագիր՝ Հայկական հարցը լուծել հայերին բնաջնջելու միջոցով: Նա եզրահանգեց. Եվրոպայի «հօգուտ Բուլղարիայի միջամտության հետևանքով կորցրի Բուլղարիան: Այժմ գալիս է հայերի հերթը և ուզում են ձեռքիցս առնել Արևելյան Անատոլիան, որպեսզի մաս առ մաս ամբողջ Թուրքիան անդամահատեն»[19]:

Վամբերին նշում է, որ սուլթանը նաև խղճի խայթի պահեր է ունեցել, սակայն միշտ համոզված էր, որ հայերի նկատմամբ դաժանություններն անհրաժեշտ են, քանի որ «Հայկական հարցի վերացման ուղին հայերի վերացումն է»: «Աբդուլ Համիդը որոշեց,– գրում է Հ. Մորգենթաուն,– որ Թուրքիան Հայկական հարցից փրկելու միայն մեկ միջոց կա՝ երկիրը հայերից մաքրել: Պետության կողմից կազմակերպվող ու ղեկավարվող ջարդով երկու միլիոն հոգու... բնաջնջումը միակ միջոցը համարվեց թուրքական կայսրության քայքայումը կասեցնելու համար»[20]: Ինչպես Րաֆֆին է նշում. «Ռ. Դուռը պար-

---

[15] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Հ. Ա., Փարիզ, 1934, էջ 117-118:
[16] Նույն տեղում, էջ 118-119:
[17] Նույն տեղում, էջ 40:
[18] Նույն տեղում, էջ 120:
[19] Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, Երևան, 1990, էջ 105:
[20] Ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Երևան, 1990, էջ 222:

տավորվում է լուծել... Հայոց հարցը չորս ամսվա մեջ: Այս դարձյալ նույն մթին, երկդիմի ու նենգավոր պատասխաններից մեկն է, որով Բ. Դուրը սովորություն ունի խույս տալ Եվրոպայի պահանջներն ուղղակի կատարելուց, փախուստի ճանապարհ գտնել և նոր դաժանություններ, նոր արգելքներ սարքելու համար ժամանակ վաստակել: Եվ երբ Հայաստանը կծիկի արյան և կրակի մեջ, նա կպատասխանե Եվրոպային... Հայաստանում վերանորոգություններ մտցնելն առայժմ անհնար է, որովհետև մահմեդական ամբոխի կրոնական զգացմունքը, թուրքերի ազգային հպարտությունը վիրավորվում են հայերին առանձնաշնորհումներ տալու պատճառով»[21]: «Այժմ,– 1880թ. գրում է վիպասանը,– նույն Թուրքիան աշխատում է հայկական խնդիրը խեղդելու նպատակով ոչնչացնել հայ տարրը: Աշխատում է լցնել Հայաստանը քրդերով, չերքեզներով, լազերով, հագարացիներով և այդ բոլոր ցեղերի բարբարոսությունները գրգռել հայերի դեմ: Ռուսաց նոր նվաճած երկրներից գաղթող բազմաթիվ մահմեդականներին նա զետեղեց Հայաստանի մեջ»: Հայաստան է բերում մուհաջիրներ նաև եվրոպական Թուրքիայից: «Նշանները արդեն երևում են Վասպուրականի մեջ... նկատվում է քրդերի կատաղի հուզմունքը, այրվում են գյուղեր, սպանվում են մարդիկ... Տարոնի նահանգում նույնպես արյուն է հոսում:... Շեյխ Օբայդուլան, յուր գլխին հավաքած ավելի քան 10 հազար ավազակ, վտանգ է սպառնում Ատրպատականի հայերին»: Բահրի բեկն իր ցեղի գլուխն անցած՝ ավերածություններ է կատարում: Բայազետում հայերին կոտորում են հեյդարանլի քրդերը: «Ամեն տեղ նկատվում են միևնույն չարագործությունները, որոնց կեղևի տակ թաքնված է թուրք կառավարության պաշտոնատարների նենգավոր ձեռքը»: Մինչդեռ Կ. Պոլսի թուրքական մամուլը այդ բոլոր բարբարոսությունները բացատրում է քրդերի գործունեությամբ[22]:

Այնուամենայնիվ, ինչպես նկատել է Պոլ Կամբոնը, թուրքերը հարկադրված էին ընդունել, որ «Արևելյան հարցը նորից բացվել է, բայց այս անգամ Ասիայի կողմից»[23]: Երբ 61-րդ հոդվածով հայ ժողովրդի բախտը հանձնվեց Եվրոպայի հոգածողությանը, «...դեռևս չկային նշաններ հայ ազգի արթնացման, և հայկական անկախության գաղափարը գոյություն ուներ միայն մի քանի առաջադեմ հայերի մտքերում, ովքեր բնակվում էին Եվրոպայում: Ազգաբնակչության զանգվածները միայն բարենորոգումներ էին ուզում և կառավարման գործում կարգ ու կանոն՝ օսմանյան տիրապետության տակ, ավելի հեռու նրանց երազները չէին հասնում: Բ. Դուրն անհոգաբար խախտեց հայերի խաղաղ տրամադրությունը: Խոստացված բարենորոգումները չիրագործվեցին... Թուրքական ամբողջ կայսրությունում հույները, ալբանացիները, արաբները բողոքում էին, որ արդարություն չկա, որ վարչակազմը ծախված է, անձի անվտանգություն գոյություն չունի, սակայն Հայաստանի քաղաքական կարևորությունը հիմնականում նրա վրա բևեռեցին տերությունների ուշադրությունը... Բ. Դուրն իր դաժանություններով լույս աշխարհ հանեց հայկական չարժումները: Համառորեն ձգտելով Հայաստանում հավերժացնել սարսափների՝ բանտարկությունների, սպանությունների, բռնությունների և այլնի համակարգը՝ Բ. Դուրը կարծես միտումնավոր արագացնում էր գործընթացները»[24]:

Նաումանը հարց է տալիս. ի՞նչն էր Եվրոպային խանգարում հարձակվել Թուրքիայի վրա և ասել. «Կործանվիր չարագործ»: Մի բան՝ թուրքը մեզ պատասխանում է. «Ես էլ եմ պայքարում իմ գոյության համար», և մենք հավատում ենք: Հավատում ենք հակառակ բոլոր ոխակալության, որը մեզ զգալ տվեց մահմեդական արյունալի բարբարոսությունը, որովհետև հանձին հայկական հարցի և հայկական կոտորածների տեսնում

---

[21] Բաֆֆի, Եժ, հ. X, Երևան, 1857, էջ 37-38:

[22] Նույն տեղում, էջ 39:

[23] *Восточный вопрос во внешней политике России, конец XVII - начало XXвв.*, Москва, 1978, стр. 261.

[24] *Братская помощь ...*, стр. 95-110.

*ենք թուրքերի ներքին քաղաքականության երևույթներ, հին ու մեծ պետության հոգեվարքի մի դրվագ, որը չի կամենում սպանվել առանց արյունահեղության մի վերջին փորձի: «Հայկական հարցում Թուրքիայի համար անհետանալու վտանգ կար»,– շարունակում է Նաումանը, որպեսզի արդարացնի կոտորածների թուրքական քաղաքականությունը: Թուրքիան «տասնորդեց հայերին այն աստիճան, որ նրանք քաղաքականապես ոտքի կանգնել չկարողանային... դժնդակ մի գործ, հուսահատ քաղաքականության փորձ, անգութ, իսկ մանրամասներում՝ խայտառակություն, բայց քաղաքական պատմության մի կտոր՝ ասիական ձևով»[25]: Գերմանիայի հյուպատոսը Կ. Պոլսից հաղորդում է. «Էրզրումի՝ Անգլիայի հյուպատոսի զեկույցում ներկայացվում է հստակ կազմակերպված ընդհանուր հետապնդում մի ամբողջ ազգի (հայերի) հանդեպ»[26]: Սուլթանը գործը տանում էր դեպի հայերի բնաջնջում: Գերմանացի զորավար Գոլցը, նկատի ունենալով այդ իրողությունը, գրում է, թե սուլթանը կհաղթահարի առաջացած ճգնաժամը, «իրար դեմ հանելով իր հպատակներին», այսինքն՝ մահմեդականների դժգոհությունը կուղղի քրիստոնյաների դեմ: Ֆայիզ էլ Ղոսեյնի «Թուրքական տիրապետությունն ու Հայաստանի ցավի ճիչը» գրքում կարդում ենք. «Սուլթանի ընտրած գործիքը քրդերն էին... նախկին սուլթանները փորձում էին նրանց կարգ ու կանոնի սովորեցնել, իսկ Աբդուլ Համիդը զինեց ժամանակակից հրացաններով և, որպես համիդյան ժանդարմերիա, ուղղեց հայերի դեմ... այստեղ, ինչպես և Մակեդոնիայում, այդ քաղաքականության հետևանքը անիշխանությունն էր ու արյունահեղությունը, և դա Աբդուլ Համիդի սրտով էր»[27]:*

*Է. Դիլոնը գրում է. «Մեր միջամտությամբ 1878 թվականից ի վեր ձեռք բերված արդյունքների բովանդակությունը մարդասիրական տեսանկյունից այն էր, որ հայկական հինգ նահանգներում հաստատվել է կառավարման գազանային համակարգ... Մենք հանդիսավորաբար ոչնչացրինք քավարանը և ակնհայտորեն նպաստեցինք դժոխքի կառուցմանը... Մենք ոչ միայն չկատարեցինք կամովին ստանձնած պարտականությունը՝ հրաժարվելով այն վստահել Ռուսաստանին, այլև թույլ տվեցինք, որ վատ կառավարման անկանոն համակարգը չարունակեր զարգանալ՝ վերածվելով անխնա բնաջնջման դիվային քաղաքականության...»[28]: Ամերիկյան մասնագետ Հեմլինը, որը Թուրքիային քաջատեղյակ էր, գրում է, թե թուրքական կառավարությունը երբեք չի վախեցել հեղափոխական որևէ չարժումից: Նա լավ գիտեր, որ կայսրությունում չի գտնվի մի տեղ, որտեղ հնարավոր լինի հավաքել հազար կամ նույնիսկ հարյուր, թուրքերին թշնամաբար տրամադրված, հայ: Բացի դա, հայերը զենք չունեն և բացարձակապես սովոր չեն զենք օգտագործել[29]: Դրան Ց. Գրինն ավելացնում է, թե Հայաստանում հեղափոխական չարժումը զուրկ է գործունեության միջոցներից: Հեղափոխությունն անմտություն է և խորթ՝ Թուրքիայի հողի վրա ապրող հայերի ոգուն, նպատակներին ու ձգտումներին:[30] Ա. Մանդելշտամը, համաձայնվելով այս մտքի հետ, ընկնում է չափազանցության մեջ, թե ամեն ինչ տակնուվրա արեց 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմը: Նա հայկական պատրիարքարանը ներկայացնում է «պետություն պետության մեջ», չնայած այն «թույլ պատվար էր» թուրք բռնապետության դեմ, երբ վերջինս գերադասում էր հայերին ջարդել: Նա բռնությունների պատճառը համարում է ոչ թե կայսրության տկարությունը, այլ «ամենամեծ արհամարհանքը քրիստոնյաների հանդեպ»: «Դարավոր լծի տակ բթացած ու տրորված հայերը փորձ անգամ չարեցին ըմբոստանալու», իսկ մյուս*

---

[25] **Naumann F.,** *Mémoires.* Berlin, 1950, ss. 68-94.
[26] **Lepsius J.,** *L' Arménie et l' Europe,* Lausanne, 1896, p. 21.
[27] **Scheik F.E.C.,** *Die Türkenherrschaft und Armeniens Schmerzensschrei,* Zürich, 1918, S. 15.
[28] *Братская помощь ...,* стр. 11-12.
[29] *"New York Herald"*, 2012, 1894.
[30] *Положение армян в Турции ...,* стр. 227.

կողմից՝ Թուրքերն էլ «դեռևս չէին հետապնդում ամբողջ ցեղերի բնաջնջման» նպատակ: Կար ինչ-որ «համեմատական փոխըմբռնում»՝ մի հովվերգություն, որի վերջը տվեց Ղրիմի պատերազմը, երբ չնայած արևմտահայության չեչտված վերաբերմունքին՝ ամեն ինչով օգնել Թուրքերին, «ռուս բանակի տարած յուրաքանչյուր հաղթանակ Հայաստանում անդրադառնում էր անլուր խժդժությունների ձևով»[31]:

Հայկական հարցն, ըստ Թալեաթի, «գարշանքի ու չահերի հարց է: Դրա վրա են հենված եղել Թուրքական պետության ներքին գործերին բոլոր միջամտությունները»: Թալեաթը «համարձակություն է» անվանում այն պնդումը, թե «Թուրքական պետությունը կարողացել է ստեղծել իր բոլոր հպատակների նկատմամբ լավ վերաբերմունք ապահովող կանոնավոր վարչություն»: Սակայն դրանում մեղավոր են ոչ միայն Թուրքերը, այլ նաև Ռուսաստանը, որը բոլոր միջոցներով արգելքներ հարուցեց Օսմանյան կայսրությունում բարենորոգումներ մտցնելու առաջ: Ընդ որում, եվրոպական տերությունների կողմից «բարենորոգումներ կատարելու մասին ոչ մի անգամ լուրջ ցանկություն չհայտնվեց: Դաշնագրում նշված բարենորոգումը, ըստ էության, ոչ այլ ինչ էր, եթե ոչ միջամտություն Թուրքիայի ներքին գործերին»: Մի կողմից՝ Թուրքիային ստիպում էին բարենորոգում կատարել, շարունակում է նա, իսկ մյուս կողմից՝ միջամտություններով ու հովանավորություններով՝ Թուրքիայի քաղաքական, իսկ կապիտուլյացիաների միջոցով՝ «տնտեսական անկախությունը բոլորովին վերացնելու համար, հպատակ ազգերին ապստամբելու էին դրդում»: Թուրքիան նման էր ձեռներն ու ոտները կապված մարդու, որին հարկադրում են վազել: Այս պայմաններում Բ. Դուռն իր գոյությունն ապահովելու համար աշխատում էր օգտվել տերությունների միջև եղած հակասություններից:[32]

Ա. Գոլոչյանը Զուլումի քաղաքականության բովանդակությունը տեսնում է հետևյալ ձեռնարկումների մեջ՝ հայաբնակ տարածքներում քրդերի և չերքեզների բնակեցում, հարկերի ծանրացում, հայերի հանդեպ բռնությունների խրախուսում, վայրենի հսկողություն հայկական դպրոցների վրա, կրոնական հալածանքներ, ուծացում:[33]

Զուլումի տարիները կարելի է անվանել համիդեականության շրջան. օսմանյան ոչ միայն իշխանությունները, այլև հասարակությունը նպատակաուղղվեցին ոչնչացնելու «վտանգավոր դյավուրներին» և դա անել մի քանի տարիների ընթացքում: Բնականաբար, Զուլումի քաղաքականության վրա խոր կնիք դրեց նաև Աբդուլ Համիդ 2-րդի բնավորությունը: Ժորժ Դորիսի «Աբդուլ Համիդ 2-րդ» գրքում կա սուլթանի հետևյալ բնութագրությունը. «Մշտական երկյուղը, որի մեջ ապրում էր սուլթան Համիդը, նրա ողջ ունակությունները ենթարկում էր սեփական անձի պաշտպանությանը և միմիայն այդ խնդրին ծառայող կարողություններն էին զարգացած: Ինչպես, օրինակ, կասկածամտություն, խորամանկություն, ինքնապաշտպանություն, որոնք հրեշային ձևով ընդգծված էին և նյարդայնությունից հոգնած նրա ուղեղում վերածվել էին բռնակալի մոլությունների: Համիդի մենամոլությունը այնպիսին էր, որ բժիշկները նրան անվանում էին «հալածված հալածող»:[34] Կատարելապես գիտեր դիվանագիտական ուսմունքները: Գիտեր խեղդել պետությունների պահանջները, նրանց միջև հրահրելով դժգոհություններ, ինչպես արեց 1896-ի հայկական ջարդերի ժամանակ: Բայց այդ բոլոր ունակությունները աղետաբեր էին: Մահվան հավիտենական սարսափի, խղճի խայթի ու ձանձրույթի որս էր. իր անձի պաշտպանության մտահոգությունը, կասկածամտությունը, զգուշավորությունը նրան մղեցին անգթության: Իր անձի մասին հոգացող այս միապետը, երկրին ծառայելու փոխարեն, կործանում էր այն»:

---

[31] Зареванд, *Турция и пантуранизм*, Париж, 1930, стр. 8-13. *Предисловие* А. Мандельштама.
[32] Թալեաթ, *Հուշեր*, ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարան, էջ 10-13:
[33] *Հայաստանի ԳԱ «Լրաբեր»*, 1989, թիվ 5:
[34] Dorys G., *Abdul Hamid intime*, Paris, 1898, pp. 19-24.

Հիվանդ ջղերը հանգստանում էին, երբ արյուն էր թափում:

«Երեկոյան անկողին մտնելուց առաջ,– պատմել է սուլթանի սենեկապետը,– սպանության ու գլխատումների մասին գրքեր էր կարդալ տալիս, իսկ այդ ոճիրների պատմությունը ջղագրգռում էր նրան և չէր կարողանում քնել, բայց հենց արյունահեղության պահն էր ընթերցվում, հանդարտվում և քունը տանում էր»[35]: Բնականից անգութ էր: Մի անգամ նրան պատմում են փադիշահների բարբարոս սովորությունների մասին, որոնք իրենց վեզիրների գլուխները կոճղի վրա դնում ու գլխատել էին տալիս: Համիդը երազուն ձայնով արձագանքեց. «Ափսոս, որ ես այդպես չեմ կարող»: Աբդուլ Համիդը «կեղծիքն ու արյունահեղությունը դարձրեց ներքին քաղաքականության սկզբունքներ»: Նա սկզբում զոհին չոյում էր, իսկ ապա ընտրելով հարմար պահ՝ նետվում նրա վրա ինչպես գիշատիչ գազան: Զոհը մեկն էր կամ հազարներ, մեծ մարդասպանի համար նշանակություն չուներ: Թագավորող մոլագարի կասկածամտությունը տարիների հետ աճում էր: Աբդուլ Համիդը հարեմում մեծացած արևելյան բռնապետ էր:

Թուրք պատմաբան Օսման Նուրին Զուլումի տարիների սկիզբը համարում է ոչ թե 1880թ., այլ 1876թ., երբ գահ բարձրացավ Աբդուլ Համիդը: Նա գրում է. «Մուրադ 5-րդի գահակալությունից հետո սկսել էին անարդարություններ գործել հայերի հանդեպ: Այդ պատճառով էլ, չնայած հայ պատրիարքը բազմաթիվ բողոքներ է ներկայացրել Բ. Դուռ և չարունակաբար համեստ բարենորոգումների խոստումներ ստացել, սակայն այդ խոստումներից ոչ մեկը չի կատարվել»[36]:

## 2. ՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Զ. Բրայսը Բեռլինի կոնգրեսին հաջորդած տասնամյակը բնութագրել է որպես «թշվառության, ջարդի, հոգեվարքի, մարտիրոսության տարիներ»: Նա հետևյալ կերպ է նկարագրում Զուլումի քաղաքականության ծնունդն ու բնույթը: Բեռլինից հետո հայերը մեծ հույսեր ունեին: Նրանք կարծում էին, որ Հայկական հարցը կունենա նույն լուծումը, ինչ ունեցավ Բուլղարական հարցը: Իսկ դա սարսափեցնում էր սուլթանին և նրան մղում «բուլղարական սարսափներն ավելի մեծ չափերով կրկնելու Հայաստանում»: Սկսվում են թուրք ոստիկանության, քրդական հրոսակների, համիդիե հեծելազորի միջոցով հալածանքները: Հալածվում էին հայ միտքը, մամուլը, դպրոցներն ու սահմանադրությունը, ավելի վտանգվում հայի կյանքը և ունեցվածքը: Խմբակային բանտարկություններ էին, դժոխային տանջանքներ բանտերում և այլն: Դրանք մի նպատակ ունեին՝ նվազեցնել հայ տարրն իր հայրենիքում: Բարբարոսությունն աճում էր ամեհամիս, օրեցօր, բարենորոգումների հարցը մարեց:

Ահա այդ ժամանակ խուլ, կրավորական դժգոհությունը հայերի մեջ վերածվում է զայրույթի: Սկսվում է հեղափոխական քարոզչություն[37]:

Ժամանակակցի վկայությամբ Բեռլինի դաշնագիրն արևմտահայությանը նաև խուճապի մատնեց: «Մշակ»-ի թղթակիցն այդ օրերին Կարինից գրում է, թե քաղաքը թուրքերին վերադարձնելու լուրն «ի՛նչ աղմուկ, չփոթմունք և հուսահատություն առաջացրեց, սուր ու մահ աչքի առաջ, բոլոր գյուղացիք պատրաստվում են, այլևս ոչնչի մասին չմտածելով, «փախեփախ» ասելով, ճանապարհ ընկնել՝ քաղցած, մերկ ու տկլոր... Հուսահատության ու տագնապի մեջ է տարաբախտ ժողովուրդը, որի ականջը միայն սպասնալիք է լսում..., որին անզեն գտնելով, ամեն կողմից կրկնում են, թե մոտ է այն օրը,

---

[35] Նույն տեղում:
[36] Թուրքական աղբյուրները ..., էջ 164:
[37] «Դրոշակ», 1899, թիվ 4:

*երբ հայի արյունով պիտի ցեխ չաղախեն, իսկ մարմիններից սարեր կառուցեն»*[38]*: Դուխովսկին ներկայացնում է մի հայի խնդրանքը. «Ավելի լավ է մեր գլուխները կտրեք, քան մեզ նորից հանձնեք թուրքերին»*[39]*: Միանգամայն ճիշտ է նկատել Զ. Գրիգորյանը. «Արևմտահայերը ձգտում էին գաղթել Ռուսաստան ոչ միայն թուրքական փաշաների արյունալի լծից ազատվելու, այլ որովհետև թուրքական փաշաներն իրենց նկատմամբ վրեժխնդիր կլինեին այդ պատերազմի ժամանակ ռուսներին ցույց տված օգնության համար»*[40]*:*

*Սա միայն խուճապ չէր, այլ ժողովրդի գիտակցության ու ենթագիտակցության ուժով հուսահատ համոզմունք՝ սկսվում են դժբախտությունների տարիներ, ինչպես ընդունված է ասել, Զուլումի տարիներ: Բեռլինից հետո թուրքական կառավարությունը գերխնդիր դարձրեց՝ բոլոր միջոցներով, գաղտնի թե բացահայտ, կոտորել, արտամղել հայերին, Հայաստանը հայաթափել և այդ կերպ լուծել Հայկական հարցը: «Քրիստոնյա փոքրամասնության նկատմամբ,– գրում է ռուս պատմաբան Դ. Երեմեևը,– Աբդուլ Համիդը իրականացնում էր սանձարձակ մեծապետական քաղաքականություն... որոշելով Հայկական հարցին վերջ դնել հայերի ոչնչացման միջոցով»*[41]*:*

*1879-80թթ. ձմռանը սովին հաջորդեց համաճարակը: Մահացությունները հասան սարսափելի չափերի: «Սկզբում հյուծվածությունից մեռածներին հաշվում էին հարյուրներով, իսկ ապա՝ հազարներով»: Շատերը մեռնում էին ճանապարհներին, և ուղևորները հաճախ էին տեսնում չթաղված դիակներ՝ «չների կողմից կիսով չափ կերված»: 1880թ. հոկտեմբերի 2-ին թվագրված հյուպատոսական մի զեկուցագրում նշվում է, որ Բաչկալայի կազայում սովից մեռել էր 10 հազար, Բայազետի ու Ալաշկերտի շրջաններում՝ 2-3 հազար մարդ: 1880թ. մարտի 13-ին «Մասիս»-ը գրում է, որ հայկական գավառներում սովն առաջացել է «մասամբ հունձքի նվազության, մասամբ հոռի վարչության, մասամբ երկրի անապահով վիճակի և ավազակաբարո ցեղերի ասպատակության պատճառով»: Այս պայմաններում Կ. Պոլիսը որոշում է ընդունում երեք տարվա հարկերը գանձել միանգամից:*

*Դաժան կացության հետևանքով Բիթլիսի ու Վանի նահանգներից 17 հազար հայ արտագաղթեց Անդրկովկաս և 18 հազար՝ Պարսկաստան: Արճեշում և Ալշկաղում դատարկվեց 16 գյուղ: Հայերը գրեթե ամբողջությամբ արտամղվեցին Խութի ու Չխուրի կազաներից, Մոտկանից: Իշխանությունները բացահայտ աջակցում ու նպաստում էին այդ գործընթացին՝ նպատակ ունենալով հարկադրել քրիստոնյաներին լքելու իրենց հայրենիքը, Հայաստանում ամրացնել քուրդ... տարրերին, մեռցնել Հայկական հարցը և ի չիք դարձնել մեծ տերությունների առաջ վերցրած պարտավորությունները*[42]*:*

*Կրոնական խտրականությունը հայերին դարձնում էր նախապաշարմունքների զոհ, իսկ նախապաշարմունքը օրենքից հզոր էր*[43]*:*

*Երբ սուլթանը պատրիարք Վարժապետյանին հավաստիացնում էր. «Վկա է երկինքը, որ ես նույնիսկ մրջյունի կոխել չեմ ուզում և երբեք չէի ցանկանա, որ այսքան անմեղ արյուն հոսեր ու աղետներ առաջ գային: Դժբախտաբար, հակառակ իմ ցանկության, դրանք տեղի ունեցան, որի հետևանքով հաթթըների մեջ իմ նախատեսած բարեկարգությունները գործադրելու ժամանակ դեռևս չեմ ունեցել: Սակայն մեծ հույս ունեմ, որ այս պատերազմն ավարտվելուն պես բոլորը լրիվ գործադրելու եմ»*[44]*, հասկանում էր, որ*

---

[38] «*Մշակ*», 1878, թիվ 137, 151:

[39] *Сборник материалов по Русско-турецкой войне 1877-1878гг.*, вып. I, СПб., 1896, стр. 161.

[40] **Գրիգորյան Զ.**, *Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը*, Երևան, 1960, էջ 401:

[41] **Еремеев Д. Е.**, *Этногенез турков*, Москва, 1971, стр. 198-199.

[42] **Лазарев Я. Д.**, *Причины бедствий армян в Турции и ответственность за разорения Сасуна.* Тифлис, 1895, стр. 24.

[43] **Լինչ Գ.**, *նշվ. աշխ.*, հ. II, էջ 551:

[44] «*Մասիս*», 23.08.1877:

պատրիարքը գիտի՝ սուլթանն ազնիվ չէ: Ինչպես չիմանար, երբ 19-րդ դարն անցնում էր սուլթանական խոստումներով ու դրանք չկատարելով: 1829թ. Ադրիանապոլսի տրակտատով Թուրքիան պարտավորվեց փոխել վերաբերմունքը քրիստոնյա հպատակների հանդեպ, այսինքն, նրանց լավ վերաբերվել: Խոստումը մնաց թղթի վրա: 1839թ. սուլթանական հաթթը չերիֆը խոստանում էր պաշտպանել կայսրության, անկախ ազգությունից ու կրոնից, բոլոր հպատակների կյանքը, պատիվն ու սեփականությունը: Խոստումը մնաց թղթի վրա: 1844թ. սուլթանական ֆերմանով հռչակվեց, որ այլևս մահմեդականությունից հրաժարվելու համար՝ նախկին քրիստոնյան չի սպանվի: Խոստումը մնաց թղթի վրա: 1856թ. սուլթանի ֆերմանը բողոքական հպատակներին խոստանում էր ինքնավար համայնք ունենալու իրավունք: Խոստումը մնաց թղթի վրա: Բողոքականներին այդպես էլ թույլ չտվեցին ո՛չ եկեղեցի կառուցել և ո՛չ էլ օգտագործել եղած եկեղեցիները: 1856թ. հրապարակված Հաթթը հումայումը ոչ միայն հռչակեց բոլոր հպատակների հավասարություն, այլև հավատի բացարձակ ազատություն: Խոստումը նորից մնաց թղթի վրա և առաջացրեց լորդ Էբերդինի ցասումը. «Ջնայած չատերի բարենպաստ կարծիքին, դժվար է հավատալ թուրքերի բարենորոգմանը: Ճիշտ է, հանգամանքների ճնշման տակ նրանք կարող են հրապարակել բարեխոստում հրամանագրեր, սակայն եթե դրանք արտասահմանյան որևէ ներկայացուցչի վերահսկողության տակ չեն, բացարձակապես չեն իրականացվի: Թուրքիայի կառավարման ամբողջ համակարգը իր էությամբ անընդունակ է ու անմարդկային»:

Պատրիարքը չհավատաց սուլթանի խոսքերին նաև այն պատճառով, որ չարագուժ մտքեր էր կարդում Համիդի բարեհամբույր խոսքերի տակ: Ինչ անց Հ. Լեյարդը գրեց Սոլսբերիին. «Դուռը «Հայաստան» անունով նահանգ կամ վիլայեթ չի ճանաչում...»[45]:

Հայկական շարժումները սուլթանը պատրվակ դարձրեց մահմեդական հասարակությանը ահաբեկելու միջոցով նրան հայերի դեմ հանելու համար: Լինչը գրեց. «Վանում բոլորի դեմքին կկարդաք սարսափ ու կասկածամտություն, և թուրքերի այդ զգացողությունը փոխանցվում է նրանց կրոնակից հպատակներին: Մթնոլորտն հագեցած է հայկական դավադրության մասին լուրերով... Առանց չափազանցության կարելի է ասել, որ Վանա դրախտի բնակիչների համար կյանքը կատարելապես անտանելի է դարձել: Լրտեսները վխտում են, ամենուրեք դավադրության հոտ են առնում և հաղորդում նահանգապետերին, իսկ քանի որ հայկական դավադրության բացահայտողն արժանանում էր պարգևների, Բիթլիսի վալին ինքն իր դեմ դավադրություն կազմակերպեց, ապա այդ «ապստամբությունը» ճնշեց և պարգևատրվեց չքանչանով»[46]:

Հայերին լրտեսելուն ու նրանց դավադրությունները բացահայտելուն այնքան կարևոր նշանակություն էր տրվում, որ շատ մահմեդականների համար դրանով զբաղվելը «դարձավ եկամտի առատ աղբյուր: Երբ մահմեդականը ատելություն էր տածում որևէ հայի հանդեպ, օգտագործում էր լրտեսներին ու խուզարկել տալիս նրա տունը: Եթե գտնեին հայրենասիրական բնույթի որևէ տող, տանտիրոջն անմիջապես պատժում էին: Իսկ եթե զենք պահելու կասկած կար, նրան ուղիղ բանտ էին տանում»: Մուշում լինելուց հետո Լինչը գրեց, որ այդ քաղաքում իրենք ոչ միայն լրտեսվում էին, այլև զրկված էին զբոսնելու հնարավորությունից. «Ի՞նչ ապօրինություններ էին գործել, որ ուզում էին թաքցնել: Մթնոլորտում տիրապետողը սարսափներից ամենասարսափելին էր: Այն մենք չնչեցինք օդի հետ: Դա նախանձի նման հյուծող կիրք է, հետապնդող, մաշեցնող ուրվական, որը ժանգի նման նստել է կյանքի վրա: Սարսափի այս մշտական զգացողությունը հասարակական երևույթներից ամենաահավորն է: Օդում ուրվականներ կան, գավարթությունը մեռած է, արևը սև է, բերանները՝ չորացած, մտորումները՝ ողորմելի»[47]:

---

[45] «Մասիս», 05.11.1879:

[46] Լինչ Գ., նշվ. աշխ., հ. II, էջ 551:

[47] Նույն տեղում, էջ 518:

*Ռ. Տերմենը վկայում է. «Կառավարական բոլոր պաշտոնատարները հայերին դեմ են և նրանց ատում են, նախ՝ կրոնական մոլեռանդության մղումով, երկրորդ՝ նրանց համարում են անհուսալի տարր և երրորդ՝ եվրոպացիները հաճախակի միջամտում են թուրքիայի գործերին քրիստոնյաներին պաշտպանելու համար»*[48]:

*Թե՛ իշխանության մարմիններում և թե՛ դատարաններում քրիստոնյաների համար արդարություն լինել չէր կարող: Չնայած վալիներին ու կայմակամներին կից կային քրիստոնյա մուավինների (ներկայացուցիչ) ու արդարադատության հրահանգիչների հաստիքներ, սակայն այդ հաստիքները զբաղեցնողները իրական որևէ իշխանություն չունեին և «բնավորության դրսևորման դեպքում» անմիջապես պաշտոնանկ էին արվում, մանավանդ որ այդ պաշտոններում աշխատանքի էին վերցնում «ամենաստոր բարոյականության տեր» անձնավորությունների:*

*Իշխանությունները հայերի հանդեպ իսկապես դաժան էին, ամենաաննշան զանցանքի համար բանտ էին նետում, իսկ մահմեդականները նույնիսկ մարդասպանություն կատարելիս հաճախ մնում էին անպատիժ: Ընդ որում, եթե դատարանում քրիստոնյայի ու մահմեդականի հարց էր լսվում, ճշմարիտ վկայության մասին խոսք լինել չէր կարող, քանի որ 1. մահմեդականը մեղք էր համարում ի վնաս իսլամի վկայություն տալ քրիստոնյայի օգտին, 2. հայը մահմեդականի դեմ ցուցմունք տալ չէր կարող, քանի որ դրան կհետևեին հալածանքները, նրա դեմ կբարձրանար մահմեդական կեղծ վկաների ոհմակը, ի վերջո, հարցը վճռվելու էր հօգուտ մահմեդականի: «Դատական գործերի բոլոր քննությունները, բոլոր վկաների ցուցմունքները կեղծ էին: Ստում էին թե՛ ոստիկանները, թե՛ կոմիսարները, թե՛ ժանդարմները, թե՛ քննիչները, ստում էին մութեսարիֆներն ու վալիները, ...ստում էին նույնիսկ նախարարները»*[49]:

*Կաշառակերության, երեսպաշտության, խնամիության, դատավորների նաև տգիտության, դատարանական քաշքշուկի պայմաններում մահմեդական չարագործները «հանցակազմի բացակայության պատճառով» ազատ էին արձակվում: Իշխանություններին վերաբերմունքը հայերին մղում էր դեպի հյուպատոսարաններ և դեսպանատներ, ինչն իր հերթին նրանց մի մասին նետում էր լրտեսական ծառայությունների ճանկը*[50]:

*«Աղքատը դժգոհ էր, որ ոչինչ չունի,– գրում է Րաֆֆին,– հարուստը դժգոհ էր, թե ինչպես պահե ունեցվածքը: Ճանապարհները դատարկվել էին, քարավանների երթևեկություն չկար...*

*Շունը, կատուն արժեք ունեին, բայց մարդկանց որդիները արժեք չունեին: Փողոցները ծածկված էին նվաղած, դունատված սովալլուկներով:*

*...Բանտերը լցված էին կալանավորներով..., սպանությունները թիվ ու չափ չունեին: Ամեն մարդ գիշերը սարսափով էր յուր գլուխը դնում բարձի վրա, առանց հույս ունենալու, թե առավոտյան կենդանի կվերկենա...»*[51]:

*«Մենք տեսնում ենք մի ժողովուրդ, որին կյանքի պայմանները, քաղաքական և սոցիալական վայրենի կազմակերպությունը, հասարակական անապահովությունը արագորեն դեպի անկում են տանում, ինչպես լեռից անդունդը գլորվող քար: Մենք տեսնում ենք մի երկիր, որտեղ տնտեսական մշտական ճնշումները, հարստահարությունների կեղեքիչ ու սնանկացնող կերպերը ժողովրդին ճնշում, աղքատացնում, պատառ-պատառ են անում ու մեռցնում»*[52]:

*1889թ. դեկտեմբերի 16-ին պատրիարքարանին հասցեագրված մի հանրագրում նշվում է, որ «հալածանքը, կեղեքումը, բռնությունն իրենց բոլոր ձևերով ահավոր ծա-*

---

[48] Термен Р., *Отчет*, ч. II, стр. 61-62.
[49] Термен Р., *Отчет*, ч. II, стр. 61-62.
[50] Веселовский Ю., նշվ. աշխ., էջ 25-26:
[51] Րաֆֆի, *Երկ*, հ. V, Երևան, 1956, էջ 476:
[52] «Հնչակ», 1888, թիվ 6:

վալներ են ստացել... Եկեղեցու նույնիսկ սրբազան գրքերը... պաշտոնյաների քմահաճույքով գրավվում են, ջնջվում է ազգի 4000 տարվա պատմությունը... հասարակության ձայնը լսելի դարձնելու կամ իրավունքը պաշտպանելու համար մի բառ իսկ գրել չի կարելի... մտքերն ու հոգիները հավասար ուժով բռնության տակ են, և ով համարձակվի այդ վիճակի մասին խոսել, նրա բաժինը բանտն ու աքսորն են... Այլևս ազգն այնպիսի վիճակում է, որի հանդուրժումն ու տևականությունը կարող է նրան լրիվ կորստի մատնել»[53]:

Սաստկացան բռնություններն ու հափշտակությունները հարկերի գանձման ժամանակ՝ «մուլթեզիմը փոխանակ տասից մեկ, հալոդեցնում է յոթից մեկ, շատ տեղերում՝ ավելի հաճախ հինգից մեկ գանձել»: Ոչ քիչ դեպքերում մուլթեզիմը բերքի իրական չափերը կամայականորեն բարձրացնում է նույնիսկ 10 անգամ: Գյուղացին «կատարելապես անպաշտպան է և իրավազուրկ, նա ու իր ստացած եկամուտը պատկանում են մուլթեզիմին»:

«Մեր քաղաքական իմաստուններին,– նշում է Թուրք հասարակական գործիչ Ահմեդ Ռիզան,– Ալլահը չի պարգևել ոչ խելք, ոչ փորձ: ...Նրանք համոզված են, որ մուսուլմանների հիմնական և սրբազան պարտականությունն է ոչնչացնել բոլոր անհավատներին ամբողջ աշխարհում»[54]: Սկսել էին ավելի ու ավելի հաճախ լուրեր չրջել այս կամ այն վայրում տեղի ունեցած չարդերի վերաբերյալ: «Մուշում կոտորածները վանից պակաս չեն: Դերջանից էլ կոտորածի, իսկ Բասենից բազմաթիվ սպանությունների լուրեր են հասել... Արճեշի մոտերքում գազանաբար կոտոր-կոտոր արվեցին մշեցի երեք ճանապարհորդներ... Ամենուրեք դաշտերում, ճանապարհներին հանդիպած հայերին գնդակահար գետին են փռում: Սեբաստիայի Ալաքիլա գյուղում հարկահավաքները չորս գյուղացու ողջ-ողջ այրեցին»[55]... Մշո Քոլոսիկ գյուղում, երբ հայերը հետ էին բերում ոչխարները, որ փախցրել էին քրդերը, նրանցից 60 հոգի ձերբակալվեց «առանց իշխանությունների գիտության» ոչխարները հետ բերելու մեղադրանքով:

Ազգանվեր հայրհաց ընկերությունը 1880թ. հունիսի 2-ին Գ. Սրվանձտյանցին գրում է, թե «...մեր հայրենիքը հեծում է... բռնավորաց լուծին տակ, հյուծված է, թշնամյաց գնդակներու և դաշույններու հարվածներեն ավեր դարձած, և այսօր ալ ահարկու անլուր չարիքներ գործելով, այդ բյուրավոր աղետից թերին լրացնել կը տքնի: Թշվառ Հայաստան»[56]:

Արիստակես վարդապետը Բաղեշում տիրող դրության մասին տեղեկագրում էր, որ Ածկոր գյուղում քրդերը մի հայ են սպանել, ճանապարհներին ավազակություն է, Ինուլթկա գյուղում հարկահան զինվորը մի կնոջ դաժանորեն ծեծել է, որից հետո կնոջ հայրը մեռել է, Հորմուզ գյուղի անասունները փախցրել են, հարձակվել են Թեղուտի հայերի վրա, քոչվոր քրդերը, հակառակ գոյություն ունեցող արգելքի, ազատ չրջում են Բաղեշ քաղաքում: Կուսակալը քրդերից կաշառք է վերցնում և աչք է փակում նրանց հանցագործությունների առաջ: Տարոնի Խարս գյուղից երկու հոգու քրդերը սպանել են, ամեն օր ցորենի դեզեր են հրդեհվում, Մոտկանի քրդերը սկսել են հայ գյուղերից խաֆիրճա անունով անձնական տուրք հավաքել և այլն[57]: 1884թ. ապրիլին Տիվերիկից գրում են. «...Եկեղեցիներ կը քանդվին, մթերանոցներ կը բացվին, տներ և ճանապարհորդք կը կողոպտվին, ի վերա այս ամենայնի արյան արցունքով չինված մի փառավոր վարժարան ևս այրեցավ, մոխիր դարձավ...»:[58] «...Օրդուի գյուղականներեն 60 տնվորի

---

[53] Նույն տեղում, 1889, թիվ 4:
[54] ՀՍՍՀ ԳԱ, Ինֆորմացիոն բյուլետեն, 1984, թիվ 7, էջ 38:
[55] «Հնչակ», 1890, թիվ 3:
[56] Դիվան հայոց պատմության, գիրք ԺԳ, Հարստահարությունները Տաճկահայաստանում, վավերագրեր, 1801-1888, Թիֆլիս, 1915, էջ 343:
[57] Նույն տեղում, էջ 353-354:
[58] Նույն տեղում, էջ 361:

*չափ հայեր գաղթած են և Պարտիզակի մոտակա լեռները բնակութիւն հաստատած են, փախչելով Օրդուի կողմը նոր հաստատված բազում գաղթականաց անհնարին բռնութիւններեն...»*[59]:

*1886թ. մայիս, նամակ Զարսանջակից. «Քանի մը տարիե ի վեր թեպետ և կուրջի գաղթականներուն երեսեն մեծամեծ վնասներ կրած էինք, բայց այս տարի կրած թշվառութիւննիս վերջին ծայրը հասավ: Ուստի ալ չի կրնալով հանդուրժել անոնց բռնութիւնք, ստիպվեցանք ի Զարշամպա և այլուր ցրվիլ հանդերձ ընտանյոք և մուրալով ապրիլ գեթ հոգինիս փրկելու հուսով»: Մուհաջիրներն ամենադաժան միջոցներով դրամ են չորթում, մտնում են տները և բացեիբաց հափշտակութիւններ կատարում: Ահա այդպես «ընտանյոք և զավակոք աստ, ոչ գյուղերնիս երթալ կարող ենք, և ոչ ալ այլուր գաղթելու ձեռնհաս: Եկեղեցիներնիս գոցված են չատունց ի վեր... 150-ի չափ տունե բաղկացյալ գյուղերնիս անտանելի վիճակի մը ենթարկված են, թշվառության վերջին ծայրը հասնելով, անտեր և անպաշտպան»*[60]:

*1887թ. 4-ը նոյեմբերի, նամակ Մուշից. «...Պաշտոնատներն կիմանամ, որ 200000-ի արդյունք կամ (խարճ) պարտք է գոյացած... Թե ժողովուրդ ուստե՞ տի տա, պատասխաննեցին, թե մինչև 99 թասվիյե կամ խայիմե փարա կրնար տալ: Այժմ կը տեսնվի, որ ցրոնքցի գեղացիք վասն այսր եկած են Մուշ՝ թե 5 և 6 տարի առաջ մեռած մարդերնիս երկու կամ երեք տարի մեռած է կգրեն: Որով ողջ դրամն ուզեն առնեն»*[61]: *Մուշի քաղաքային ժողովի 1887թ. 18-ը նոյեմբերի դիմումը. «...Ժողովուրդը բոլորովին հուսահատված է և հարստահարութիւնք ու զեղծումը օրավուր ավելի կբազմանան, այս 5-10 օրվան մեջ մինակ 2-3 հայ կիներ տաճկացուցին...»*[62]: *«Վանեն ստացած նորագույն տեղեկութեանց նայելով, բազում ձերբակալութիւնք եղած են»*[63]: *Օրդուի Զավուշլար գյուղ գիշերը լցվում են մի խումբ ավազակներ և բռնելով մի հայի տանում են լեռն ու փրկագին պահանջում: Բռնվածը վճարում է պահանջված գումարն ու ազատվում՝ այդ մասին տեղյակ պահելով կայմակամին, որը, սակայն, բանտ է նետում ոչ թե ավազակներին, այլ տուժած հային: Ղարաչոբանում, գրում է Լինչը, «ավելի քան վանող տեսարան՝ զափթիեները խմբով ապրում են հայկական գյուղերում»*[64]: *Լինելով այնպիսի գյուղերում, ինչպիսին Հոփալն էր (Սիփանի մերձակայքում), Լինչը պատմում է. «Զարմանում ես, թե բնակիչներն ինչպես են կարողանում տանել գոյություն ունենալու ծանրությունը: Նրանց ունեցվածքին, կյանքին և պարկեշտ կանանց ամեն օր վտանգ է սպառնում: Նրանք ապրում են վախի ու հալածանքի հավերժական ճնշման տակ... Հասնանցի քրդերը պարագիտային կյանք են վարում ի հաշիվ աշխատասեր հայերի... Այդ քրդերի, ստորադաս չինովնիկների ու քաղցած զափթիեների միջավայրում հայ հողագործները մշտապես կյանքի ու մահվան սրանքում մազից են կախված: Ժամանակ առ ժամանակ մի ինչ-որ ինքնասեր չինովնիկ «հեղափոխություն» է մոգոնում, և գյուղը դառնում է սարսափների թատերաբեմ, որից մարդու արյունը սառչում է»*[65]: *Հասնանցի քրդերը Ախլաթի հայկական մի գյուղում քշեցին անասունների հոտը: Կայմակամը զենքի ուժով թալանվածըետ բերեց, սակայն նույնիսկ չնորհակալության չարժանացավ: «Անկասկած է,– գրում է Լինչը,– Բ. Դուռը ողբում էր, որ (այդ բախման ընթացքում) զոհ էր գնացել կայսրության համար կարևոր մի խիզախ համիդիե»: Դատվանում իշխանությանը հանձնեցին չորս «հայ ավազակների» (հայդուկների), իսկ «քուրդ ավազակների մասին երբեք ոչ մի բառ, չնայած ես չեմ հանդիպել որևէ քրդի, որն այս կամ այն չափով ավազակ*

---

[59] Նույն տեղում, էջ 371:
[60] Նույն տեղում, էջ 377-378:
[61] Նույն տեղում, էջ 401:
[62] Նույն տեղում, էջ 402-403:
[63] Նույն տեղում, էջ 404:
[64] Լինչ Գ., նշվ. աշխ., հ. II, էջ 330:
[65] Լինչ Գ., նշվ. աշխ., հ. II, էջ 331:

չլիներ: Տարոնի Շեյխ-Ցակուբ գյուղում ամբողջ բնակչությունը ցնցոտիների մեջ էր, տղաները մինչև դեռահաս, իսկ աղջիկները մինչև 5-6 տարեկան դառնալը լրիվ մերկ էին: Գյուղը լցված էր զինվորականներով, որոնք իբր եկել էին «հայերին պաշտպանելու»[66]: «Ալաշկերտից ստացված տեղեկությունները խիստ տխուր են նկարագրում հայերի վիճակը, գրեթե ամեն օր տեղի են ունենում հափշտակություն և ունեցվածքի կողոպուտ: Նախկին կառավարիչը, որ նույնիսկ Եվրոպային ծանոթ վաղեմի եղեռնագործ Ահմեդ բեյն է, խեղճ ժողովրդին անգթաբար կեղեքում է... Վերջերս նա բռնությամբ, մինչև անգամ ծեծելով և բանտարկելով Թոփրախկալեի հայոց քահանային ստորագրել է տվել չնորհակալական մի գիր: Կառավարական տուրքերն այստեղ խստությամբ հավաքվում են: Պատկերացրեք, թե որքան ծանր կացություն է Խաստուր գյուղում, որ տները քանդում են՝ տանիքի փայտերը վաճառելու և դրամը տուրքերի փոխարեն կառավարությանը տալու համար»[67]: Ոստիկանները սահմանված ժամկետից չուտ էին հարկերը հավաքում՝ անասունները կես գնով վաճառում, իսկ ով այդ էլ չուներ, փակում էին տան մեջ ու ծուխ տալիս: «Հնչակ»-ը 1888թ. գրում է. «...Թուրքաց Հայաստանում հայ ժողովրդի դրությունը քաղաքականապես և տնտեսապես հանդիսանում է իբրև ստրկական կացության կերպերի մի չղթայակապ զանգված:

Տնտեսապես ժողովուրդը ծանրաբեռնված է ուղղակի և անուղղակի բազմաթիվ ու ահագին հարկերի տակ, որոնք կրկնապատկվում, եռապատկվում են քայքայվող ու սնանկացած կառավարության հաճախակի դարձած ֆինանսական ճգնաժամերի ժամանակ, ժողովրդի հողը չարունակաբար բռնի հափշտակվում է կառավարության ձեռքով... Քաղաքականապես նա լիովին իրավազուրկ է, դատապարտված ստրկական լռության, հլու հնազանդության, անիրավ՝ իբրև վկա դատարանում, մեղավոր՝ երբ իրեն սպանելիս պաշտպանվում է, հանցավոր՝ երբ հառաչում ու լալիս է իր թշվառ դրության վրա, կյանքով հալածված, կայքն ու կյանքն՝ անապահով, վայրենի ցեղերի ավերիչ ու անարգել հարձակումների ենթակա, և այդ բոլորի հետևանքով՝ քաղաքական և ֆիզիկական քայքայում ու նյութական աղքատություն»[68]: Եվ ապա՝ «Այսօր Մշո դաշտը ոռոգվում է հայի արյունով: Այսօր մշեցի հայի կտրված արյունաշաղախ գլուխը բարձրացած է օդ՝ քրդի նիզակի ծերին ցցված: Այսօր մշեցի հայ կինը, մշեցի հայ աղջիկը թավալվում են իրենց արյան մեջ՝ թշվառ զոհեր՝ քրդի գազանային կրքերի, վայրենի անասնականության: Այսօր Մշո գավառի հայ գյուղերը կոտորվում, թալանվում... ավերվում են... Այսօր ընդհանուր տագնապ ու սարսափ է տիրում ամբողջ Մշո գավառին, ամբողջ Հայաստանին՝ ամենուր հալածանք, հուսահատություն, կոտորած: Հայ գյուղացիներն աղքատանում, ավերվում են տնով-տեղով, անպաշտպան, անօգնական, անուժ, անզեն, նրանք ակամա փախուստ են տալիս և պանդխտում օտար երկրներ անիծելով այն հողը, որ իրենց սիրելի ու հարազատ է, որ դարերից ի վեր իրենց կերակրել է, բայց և որն իրենց գլխին դարձել է անվերջ թշվառությունների աղբյուր... Մինչ Մշո գավառի մի քանի գյուղերի հայ բնակիչները բահով ու սրով են ելնում ընդդեմ քուրդ ավազակների՝ թափելով իրենց արյունը, նրանց պանդուխտ եղբայրները, հարյուրավոր անձերից բաղկացած խառն ու երերուն ամբոխով, խուլ տրտնջում ու մռնչում են հարեմական կյանքի երանությունները խորշոմած, բարոյապես ու մտավորապես բթացած մեծ թուրքի գաղտնապահ պալատի պատի տակ, Բոսֆորի ափերին:

Մշտապես թշվառությունները ու աղետները Հայաստանում հասել են ծայրահեղության, դրանք դարձել են անտանելի: Հայ ժողովուրդը կորցրել է համբերությունը՝ միակ զենքը, որով նա մինչև այսօր կարողանում էր դիմադրել կառավարության ու նրան

---

[66] Նույն տեղում, էջ 445:
[67] «Դրոշակ», 1898, թիվ 2:
[68] «Հնչակ», 1889, թիվ 1:

պաշտպանող վայրենի ավազակների հարձակումներին: Բայց ավաղ, մի զենք, որ երկ-
սայրի սրի պաշտոն կատարելով, միշտ խոցում է նույն իրեն՝ հայ ժողովրդին...»[69]:

1879թ. հունիսի 12-ին Հ. Լեյարդը գրում է Սոլսբերիին. «Ասիական Թուրքիայի արևելյան նահանգներում իշխում են անիշխանությունը, ունեցվածքի ու կյանքի անվտանգության բացակայությունը, քրիստոնյաների նկատմամբ կամայականությունները, արդար ու գործունյա վարչության լրիվ բացակայությունը...»[70]:

«Տիրում էր ընդհանուր վհատություն,— գրում է Րաֆֆին,— ընդհանուր թախծության հետ, ոչինչ մխիթարական չկար, ոչինչ չէր զորացնում բեկված սրտերը... Կարծես օդի մեջ չարժվում էր մի դիվական չունչ, որ բոլորի վրա սարսափ էր ազդում...

Գիշերները մարդիկ տնից դուրս չէին գալիս: Ցերեկը չինականները խմբերով էին գնում իրենց դաշտային մշակություններն անելու: Անասունները գյուղերից շատ հեռու չէին քշում արածացնելու համար»:[71]

Մեջբերումների այս ցանկը կարելի է անվերջ շարունակել: Սակայն բնութագրականը ոչ միայն փաստերի առատությունն է, այլև բովանդակության աստիճանական փոփոխությունը, երբ թալանին ու հարստահարություններին վերաբերող վավերագրերին փոխարինելու են գալիս կոտորածներ ազդարարող նյութերը:

1890թ. հուլիս 7-ին Արևմտյան Հայաստանից գրում են. «Կոտորած, սոսկալի կոտորած է ամենուրեք, ամեն օր նորանոր վայրերից կոտորածների լուրեր են հասնում: Անհատ սպանություններն արդեն ամենուրեք են: Կառավարությունը... կատաղած՝ բոլոր կողմերը հրամաններ ուղարկեց՝ հայերի յուրաքանչյուր շարժում տեղնուտեղը դիակներով ծածկել: Երզնկայի ողջ բանակը չարժման մեջ է. մեր երկիրը ամենուրեք զինվորներով է լցված: Փոքր Ասիայից՝ Խարբերդից, Սեբաստիայից զինվորներ են գալիս Կարինի ու Վանի չրջանները: Պահեստի զորքերը զենքի տակ են կանչված հայերին կոտորելու համար... տաճիկ մոլլաները կառավարության հրամանով մոլեռանդություն ու վրեժխնդրություն են քարոզում մուսուլման ժողովրդի չրջանում՝ ընդդեմ քրիստոնյաների, գրգռում են մոլեռանդ ժողովրդին, և բարբարոս կառավարությունը նրանց հետ է, ովքեր ուզում են մեր արյան վերջին կաթիլը խմել: Ահռելի կոտորած տեղի ունեցավ Վանի մոտերքում»[72]:

«Մինչ այդ հայերը ռայա էին,— գրում է Ա. Մանդելշտամը,— ենթակա քուրդ աղաներին, բայց քանի որ նրանց աշխատեցնում էին թե՛ իրենց դաշտերը մշակելու և թե՛ ուրիշ աշխատանքներում, քուրդ բեյերն ու աղաները ինչ-որ չափով բայրացակամ էին վարվում հայերի հետ և նրանց պաշտպանում այլ ավազակապետ քրդերի կեղեքումներից... Մի խոսքով... հայերն աշխատում էին, իսկ քրդերը նրանց պաշտպանում: Դարեր չարունակ այս վիճակին սովորած հայերը չէին երևակայում, թե կարող է այլ կերպ լինել և չէին բողոքում ճակատագրից:

Աբդուլ Համիդին այդ իրավիճակը վտանգավոր թվաց, նա կամեցավ խեղդել հայկական հարցը՝ չնչելով հայերին և այդ անելու համար օգտագործել քրդերին: Իսկ քրդերը, դժգոհ հայերի ազգային զարթոնքից և ինքնուրույն գործելու նրանց ձգտումից, «ուրախությամբ ընդունեցին հրամանը», որ Ելդզից գաղտնաբար տրվում էր նրանց՝ ճնշել հայերի չարժումը ահաբեկելու միջոցով»:

Գրում են Ալաշկերտից. «Ժողովուրդը բռնել է գաղթի ճամփան, որը հետևանք է երկրում տիրող պարբերական հարստահարությունների, կառավարական ճնշումների, տուրքերի, անգութ և անողորմ պաշտոնյաների կեղեքումների, քրդերի անընդհատ հարձակումների, ինչպես նաև քաղաքական կասկածների հետևանքով վայրենի ծեծի, բանտարկությունների և, առհասարակ, ինչքի և կյանքի անվտանգության բացակայու-

---

[69] «Հնչակ», 1889, թիվ 2:
[70] Blue Book, Turkey, N10, 1879:
[71] Րաֆֆի, Ե.Ժ, հ. V, Երևան, 1958, էջ 476:
[72] «Հնչակ», 10.07.1890:

թյան»: Իշխանությունները «սովալլուկ գազանի նման... հարձակում են գործում, աջ ու ձախ սարսափ տարածում...»: Ալաշկերտցիներն այլևս չկարողանալով դիմանալ, դիմում են Բ. Դռանը, տեղյակ պահելով, որ եթե բարենորոգումներ չներմուծվեն երկրում, եթե ճնշումները չվերացվեն և իրենց ցավերին դարման չարվի՝ հարկադրված պիտի գաղթեն: «Այդ լուրն առնելով, Կարինի վալին 200 հոգանոց հեծյալ ջոկատ է ուղարկում Ալաշկերտ ու խուզարկություններ կատարում, չատերը ձերբակալվում են, վեց հոգի ծեծից մեռնում»: Իսկ երբ ջոկատը մեկնեց, ոտի կանգնեցին տեղաբնակ թուրքերը, որոնք ամենուրեք հայտարարում էին՝ «Հայերին բութ դանակով պիտի մորթենք»: Անտանելի վիճակի մեջ ընկած ժողովուրդը դիմեց Պարսկաստանի շահին և թույլտվություն ստացավ տեղափոխվելու այդ երկիրը: Կարինից նորից ոստիկանական ջոկատ եկավ և նորից խժդժություններ ու ձերբակալություններ կատարեց: Նույն օրվա գիշերը հրդեհեցին եկեղեցին, բախում սկսվեց հայերի ու թուրքերի միջև: Երկու կողմից զոհվեց չուրջ 50 մարդ[73]:

Ահաբեկիչ իրավիճակ էր Բաղեշում, «տեղի չեյխերը պայմանավորվել էին հայերին սրի քաշել... կառավարությունը թեպետ այդ մասին գիտեր», սակայն այն կանխելու ուղղությամբ ոչինչ չէր անում: Դրա փոխարեն քրդերին «գաղտնի զենք էր բաժանվում»[74]: Հորմուզ գյուղը (որտեղ ոստիկանական կետ կար) գալիս են մոտկանցի քրդերն ու հայտարարում, թե «հրովարտակ է եղել հայերին կոտորելուց»: Նրանք սնվում են գյուղացիների հաշվին, ատամի վարձ վերցնում ու հեռանում: Մի քանի օր անց նույն բանը կրկնվում է և այդպես շարունակ: Բաղեշի գյուղերում նման «այցելություններն» այնքան հաճախակի դարձան, որ, օրինակ, Հաբ գյուղի բնակիչները հարկադրված տեղափոխվեցին քաղաք: «Ամբողջ քուրդ ժողովուրդը միաբանված ոտի է ելել հային այս երկրից բռնագաղթեցնելու համար, իսկ իշխանությունները լուռ են: Կուսակալը հրապարակավ պաշտպանում է քրդերին ու գրգռում հայերի դեմ»[75]: Տիվերիկում ստեղծված լարված վիճակը քննող հանձնաժողովի նախագահ Խիվսերը մեկնելուց առաջ քրդերին պատվիրեց. «Եթե երբևէ հայերի կողմից թեկուզ ամենափոքր չարժում նկատվի, իսկույն հարձակվեք նրանց վրա ու կոտորեք, առանց լրացուցիչ հրամանի սպասելու»[76]: Քիչ անց քրդերը հայերին կոտորելու դիտավորությամբ խուժում են Փինկյան գյուղ, իսկ Դերսիմում կոտորում են Շորտա գյուղի հայ բնակիչներին[77]:

Գրում են Բայազետից. «Մեր դրությունն անտանելի է: Ամեն օր զանազան ոճիրներ են տեղի ունենում: Ամեն օր հայերին տարբեր ձևերով ահաբեկում են... Կառավարությունը բոլոր պաշտոնյաներին մեկական հրացան տվեց: Իսկ ոստիկանական հարյուրապետ Իսմայիլ Էֆենդին այստեղի թուրքական բոլոր տներին երկուական հրացան և 100-ական փամփուշտ բաժանեց: Հայերի ու թուրքերի միջև փոխադարձ թշնամությունն աճում է, և քանի որ իշխանությունները քաջալերում են մուսուլմաններին, տարակույս չկա, որ կոտորածների երկյուղը բոլորովին անտեղի չէ»[78]: «Ծոզղաթում ունևոր հայերից ձերբակալված է 150 մարդ,– հաղորդում է Սամսոնի ռուսական փոխհյուպատոսը,– իսկ Կեսարիայում մինչև 160, Անկարայում 173 հոգի դատապարտված է, որոնցից 5-ը՝ կախաղանի, 12-ը՝ ցմահ տաժանակիր աշխատանքի: Բանտերում խոշտանգումներն աներևակայելի չափերի են հասել»: Բ. Դուռը կարգադրել է վալիներին ձեռք առնելու համապատասխան միջոցներ, որպեսզի «արտասահմանցիները չկարողանան ծանոթանալ իրողության հետ»[79]:

---

[73] «Հնչակ», 1890, թիվ 3:
[74] Նույն տեղում, թիվ 9:
[75] Նույն տեղում, 1891, թիվ 4:
[76] Նույն տեղում, 1890, թիվ 9:
[77] Նույն տեղում, թիվ 12:
[78] Նույն տեղում, թիվ 4:
[79] АВПР, Политархив, д, 3447.

Բռնությունները սաստկացան ոչ միայն գյուղերում, այլև քաղաքներում: Վանի հայության անտանելի վիճակի մասին տեղեկագրում էր Վանում ռուսական հյուպատոսը: 1890թ. հունվարին էրզրումում ձերբակալվեց «մի քանի հարյուր հայ»[80]: 1890թ. հոկտեմբերի 7-ին Կ. Պոլսից գրում են. «Այժմ մայրաքաղաքում թուրքական կառավարության սոսկալի ահաբեկչությունն է տիրում: Մոլեգնած գազանն ամեն օր ձերբակալություններ է կատարում, ամեն հանդիպածին բանտ ու ոստիկանատուն տանում»: Ահաբեկիչ մթնոլորտը, խուզարկությունները թուրք պաշտոնյաների համար կաշառակերության ընդարձակ ասպարեզ էին: Հոկտեմբերի 20-ին Սեբաստիայի զինվորական հրամանատարությունը որոշում է ձերբակալել 300 հայ երիտասարդի: Քաղաքի խափան խան չուկայում թուրքերը հարձակվում են հայերի վրա: Բանտ են նետում տուժածներին: Անպատիժ մնացին նաև Գազի գյուղի ջրաղացի սրունահեղության հեղինակները, չնայած նրանց ով լինելը իշխանություններին քաջ հայտնի էր:[81] Մուշ քաղաքում թուրքերը թալանեցին Ս. Հարություն եկեղեցին: Ընդհարման ժամանակ 18 հայ զոհվեց: Հաջորդ օրը հայերի խանութները չբացվեցին[82]: Ձմշկածագում քուրդ աղաները կոչ էին անում «Կոտորել հայերին»[83]:

«Վերջին ժամանակները,– գրում է «Հնչակ»-ը,– կառավարությունը հայերի վրա հսկողությունն ու խստությունները կրկնապատկել է: Բոլոր գյուղերում լրտեսներ ու ոստիկաններ է պահում: Պաշարման վիճակն ավելի իրական ու խիստ է դարձել. արգելված է ելքն ու մուտքը, ինչպես նաև արտագնա աշխատանքը: Ամենափոքր իսկ կասկածի դեպքում մարդիկ բանտ են նետվում»[84]:

Մշո դաշտի, Ախլաթի, Բուլանըխի և Մանազկերտի շրջաններում ճանապարհները փակ էին, հաղորդակցությունը խզված, հնձի ժամանակ էր, իսկ գյուղացին դաշտ գնալ չէր կարողանում:

Զանգվածային ձերբակալություններ էին տեղի ունենում Կիլիկիայում[85]:

Դիարբեքիրը հայերի համար թշվառության ու ողբերգության վայր էր դարձել: Վրա հասավ հուլիսի 30-ի հրդեհը: Այն բռնկվեց նորակառույց չուկայում, ապա անցավ մյուս չուկաները: Հայերը չտապեցին փրկելու իրենց ապրանքները, որոնք ոչ միայն այրվում էին, այլև թալանվում թուրքերի կողմից: Հայերի վրա հասնելու պահին՝ զինվորական փողը հնչեց: Երբ զինվորները եկան, հայերն այլևս իրենց ապրանքների տերը չէին: Ակկյարները փոխանակ հրդեհը հանգցնելու, սվիններով հարվածում էին այն հայերին, ովքեր չտապում էին իրենց ապրանքը հրդեհից փախցնել: Նույնիսկ չատ հեռու գտնվող խանութներն էին ավերում ու դրանցում եղածը հափշտակում: 72 խանութ ոչնչացվեց[86]:

Սև ծովի ափամերձ Դավշան-դաղի շրջանում քաղաքների ճանապարհները զափթիե-ավազակները փակել էին, ջորեպան, կառապան, ճամփորդ առանց կողոպտվելու չէր անցնում: 7-8 ամիս կառավարությունից աշխատավարձ չստանալով՝ զափթիեները զբաղվում էին թալանով, «չկար մի ճանապարհ, գյուղ, որ կողոպտված չլիներ»: Ոստիկանների հարձակումների հետևանքով հազարավոր գյուղացիներ լքելով տուն-տեղ, ցիրուցան էին եղել: «Հայրը չգիտեր՝ թե զավակը որտեղ էր, զավակը չգիտեր՝ հայրը որտեղ էր»[87]:

Մուշ քաղաքում արտակարգ խստություններ մտցվեցին: «Խստագույն հսկողություններ ճանապարհին, չուկաներում եղողների գրպանները ստուգում էին, տները խու-

---

[80] Նույն տեղում:
[81] «Հնչակ», 1890, թիվ 9:
[82] Նույն տեղում, թիվ 12:
[83] Նույն տեղում:
[84] «Հնչակ», 1891, թիվ 2:
[85] Նույն տեղում:
[86] Նույն տեղում, թիվ 14:
[87] Նույն տեղում, 1892, թիվ 1:

զարկում, փողոցներում գիշերային երթևեկությունը արգելված էր, հայկական թաղերում գիշերապահների բազմաթիվ խմբեր, աչ ու ձախ ձերբակալություններ... հետախույզ ոստիկաններ և... ծպտված լիտեսներ... հիմնականում ձերբակալվում էին սասունցիներն ու մտավորականները»: Խուզարկվեց Առաքելոց վանքը, կայմակամը կրակեց Վարդան վարդապետի վրա, բայց վրիպեց[88]:

1891-ին Արաբկիրից պատրիարքարանին գրում են «կամ միջոց ցույց տալ, որով կարողանանք ապօրինությունների առաջն առնել և կամ մի տեղ՝ ամբողջ քաղաքով գաղթելու համար»: Արաբկիրցիները 2000 հոգու ստորագրությամբ հանրագիր ուղարկեցին պալատ, երբ անպատասխան մնացին, ուղարկեցին նաև դեսպաններին: Որպես բողոքի արտահայտություն՝ հրաժարական ներկայացրին հայ պաշտոնատարները[89]:

«Տաճիկ կառավարության գավառական պաշտոնյաները և ոստիկանները,– գրում է «Հնչակ»-ը,– համաճարակի ախտի մանրէների նման սփռված՝ քաղաքական կատաղի հալածանքներ և ձերբակալությունների զոհ են դարձրել ողջ Կիլիկիան, ամբողջ Քարաբերդի և Սեբաստիայի նահանգները, ամբողջ Մշո գավառը, Վանը և տաճկաց Հայաստանի նահանգները»[90]:

Բոլոր միջոցներով առաջ էր տարվում հայերի մահմեդականացման գործընթացը: 1893թ. հուլիսին Մուշից գրում են. «Բուլանըխի Համզաչեխ գյուղի բոլոր տները (30 տուն) իսլամություն են ընդունում՝ հույս ունենալով հարստահարություններից զերծ մնալ: Կառավարությունը զանազան պարգևներով քաջալերում է նրանց»[91]: Տարոնի Ղեյպիան գյուղում Իսրո անունով քուրդը փախցնում է մի հայ աղջկա: Հայերը բողոքում են: Ջնայած աղջիկը պնդում է, որ ինքը հայ քրիստոնյա է, նրան բռնի մահմեդականացնում են[92]: «...Այլևս չի կարելի ասել, թե կառավարությունը հալածում է միայն հեղափոխական ընկերությունների անդամներին: Կասկածվում է երկրի ողջ բնակչությունը», և ձերբակալվում են բոլոր նրանք, ովքեր «դիրքի, խելքի կամ զբաղմունքի տեր են»[93]: Գրում են Ամասիայից. «Մի տարուց ավելի է, որ թուրքական կառավարությունն իմամի և խոջաների միջոցով մզկիթներում թուրք հասարակությանը գրգռում է հայ ժողովրդի դեմ՝ նրանց վրա ուղղակի կամ անուղղակի ամբաստանություններ անելով»[94]:

Իշխանություններն անընդատ հարստացնում են հայ ժողովրդին ճնշելու միջոցների զինանոցը: Սուլթանը «հասել էր այն կետին, որ պատերազմական դրություն էր առաջացել ամբողջ Հայաստանում»: Մեծ խոստումներ տալով քուրդ ցեղապետերին՝ նրանց հանձնարարվեց հայերի դեմ «իրենց անելիքը» կատարել: Այդ նպատակով քրդերին բաժանվեց զենք ու ռազմամթերք: Տեղական իշխանություններն ամենուրեք պատրաստություններ էին տեսնում, «կարծես պատերազմ է սպասվում»: 1891-ի աշնանը Մշո դաշտում անասունների համաճարակ սկսվեց, գյուղացին մնաց առանց անասնապահական մթերքի ու առանց քաշող ուժի: Փոխանակ այս ծանր վիճակում գյուղացուն օգնելու, իշխանություններն, ընդհակառակն, «առաջվանից ավելի անողոք սկսեցին հարկերը հավաքել... ոստիկանները ոչ միայն տվյալ, այլև անցած տարիներից պարտք մնացած հարկերն էին հավաքում»: Ընդդիմացողին պատասխանում էին. «Գյավուր, դու և՞ս «ընկերության» անդամ ես, դո՞ւ էլ «չանֆիդայի ես գրված»»[95]:

---

[88] Նույն տեղում, թիվ 2:
[89] Նույն տեղում, 1892, թիվ 3:
[90] Նույն տեղում, թիվ 4:
[91] Նույն տեղում, 1893, թիվ 7:
[92] «Դրոշակ», 1894, թիվ 10:
[93] «Հնչակ», 1892, թիվ 4:
[94] «Հնչակ», 1892, թիվ 5:
[95] Նույն տեղում, թիվ 6:

Այսպիսով, սուլթանի հայաջինջ քաղաքականության նպատակը Հայաստանի հայաթափումն էր, և այդ խնդիրը լուծելու համար օգտագործվում էին բոլոր միջոցները՝ քաղաքական հալածանքների և ազգային ու կրոնական ճնշումների հարաճուն սաստկացում, հարստահարությունների աննախադեպ ծավալում, հայերի տնտեսական քայքայմանն ուղղված բազում ու բազմատեսակ աղետաբեր միջոցների գործադրում:

Սեբաստիայի նահանգում նախկինում կազմները, նահիեներն ու գյուղերը այս կամ այն թուրք սպայի սեփականությունն էին: Այս մակաբույծներից բացի կային թելունեբրի, հայթաների, ենիչերիների հրոսակախմբեր, որոնք անպատիժ բռնություններ էին գործադրում, կողոպուտով զբաղվում: Թուրքերից շատ շատերը վակըֆային հողատարածքներ ունեին և ապրում էին անաչխատ, պորտաբույծ կյանքով, հաստատելով այն ասացվածքը, թե «թուրքի մեռածը վաստակում է, իսկ ողջը՝ ուտում»[96]: Սակայն վակուֆային հողատիրությունն աստիճանաբար հետին պլան մղվեց, և հողից ստացվող եկամուտների տերը դարձավ պետությունը: Բայց եթե մահմեդականները վերածվեցին միայն պետական հարկատուների, ապա հայերը դրա հետ միասին չազատվեցին տնտեսական կեղեքումների հին միջոցներից: Կուսակալը, պաշտոն ստանձնելով, «իր առաջ տեսնում էր հափշտակությունների առատ հունձքի դաշտ»: Նրա «առաջին հոգսը լինում էր ստոր և լիրբ միջոցներ ձեռնարկել՝ իր ընչաքաղց, անհագ, գայլային որովայնը լցնելու»: Բոլոր պաշտոնները, «բարձրից մինչև վերջին զափթիեությունը, կուսակալի կողմից հրապարակավ աճուրդի են դրված»: Առանց կաշառք տալու անհնար էր որևէ հարց լուծել, իսկ «երբ կաշառքը դռնից է մտնում, արդարությունը փախչում է երդիկից»: «Որ կողմը ոսկին ծանր է կշռում, այն կողմն է հակվում թուրքի արդարության կշեռքի նժարը, այնտեղ է հակվում իրավունքը»: Թուրքական ասացվածք կար. «Կառավարությանը դիմողի աչ գրպանը ոսկով, ձախը մեջիդիեով պետք է լցված լինի»:

Ջուլումի տարիները հայերի բնաջնջման «խաղաղ» տարիներ էին, որոնց բովանդակությունը կազմում էին հայերի բազմաբնույթ հալածանքներն ու նաև սպանությունները: Բանտերում այլևս տեղ չկար, կալանատեղերի էին վերածում ամենատարբեր շինություններ: Ձերբակալվածների մեծ մասին բանտ էին նետել հարկ չմուծելու մեղադրանքով: «Երբ գյուղացին ի վիճակի չէր լինում հարկ վճարել, հարկահավաքները չէին վարանում նրա վրա գործադրել այն բոլոր պատիժները, խժդժությունները, տանջանքները, որոնք հավատաքննությունը մոռացել էր կամ նրա մտքով իսկ չէր անցել»: Անասնագոմերը, նկուղները, ածխանոցները, թոնիրները բանտերի էին վերածվել, որոնցում գյուղացուն մերկ, ոտքն ու ձեռքը կապած, խարազանի և գավազանի հարվածների տակ էին առնում կամ մերկացրած գլխիվայր կապում ու գանահարում էին, ձմռան ցրտին սառը ջուր լցնում: Օրերով ցրտի ու սառույցի մեջ մերկ ու քաղցած պահում: Պատիժները հաճախ գործադրվում էին պարզապես վայրենի զվարճության և հաճույքի համար: Ծափուլքն գյուղում երեք հայի, գիշերը սառույցի մեջ պահելով, իսկ երկուսին էլ մերկացրած, սվինների վրա կապած դանակահարելով՝ մեռցրեցին: Ալաքիլիսեում մի հայի ողջողջ այրեցին, չատերի դեմքն ու ձեռները կրակի տվին:

Եվրոպական թերթերը գրեցին. «Քուրդ ավազակները Սեբաստիայի վիլայեթից հափշտակել են բազմաթիվ հայ պատանիների»,[97] իսկ թուրքերը առևանգել են բազմաթիվ հայ կույսերի ու կանանց: Իշխանություններն առևանգողներին ազատում էին պատժից և այդ կերպ խրախուսում բռնի մահմեդականացումն ու ձուլումը[98]:

1887թ. Դերջանի Խարխն գյուղի հայերը հրաժարվում են միաժամանակ հարկ վճարել թե՛ կառավարությանը, թե՛ քրդերին և դաժան հալածանքներին չդիմանալով՝ որոշում են արտագաղթել, սակայն իշխանությունները թույլ չեն տալիս ու համաձայնվում են, որ նրանք քրդերին այլևս հարկ չվճարեն: Կատաղած քրդերը հայերից պահանջում

---

[96] Նույն տեղում, 1891, թիվ 4:
[97] «Կոչնակ Սեբաստիո», 27.07.1891:
[98] «Հնչակ», 1891, թիվ 16:

են հեռանալ զբաղեցրած տարածքներից, որոնք իբր թե իրենցն էին: Իշխանությունները քրդերին լարում էին հայերի դեմ, իսկ ապա անհաղորդ մնում հայերի գանգատներին[99]:

«Ազատ Հայաստան»-ը 1893թ. դեկտեմբերի 13-ին վկայեց, որ Կարինում սով էր, և կառավարությունը մահմեդականներին հանձնարարել էր չթողնել, որ քրիստոնյաները չուկայում հաց գնեին: Հայերի մի մասը հարկադրված գաղթեց Ռուսաստան: Նույն թերթը 1894թ. իր թիվ 6-7-ում գրում է. «Բարբարոսություն, գազանություն, բացահայտ լրբություն, սպանություն... Գազանի դերը կատարում են քրդերը», որոնց դրդում է «լրբացած զազիր կառավարությունը»: Թերթը պատմում է, թե ինչպես Տարոնի Ղարաչոբան գյուղում քուրդը մի հայի տեղնուտեղը սպանում է, որովհետև թույլ չէր տվել իր արտը քանդել: Նույն գյուղից քրդերը հափշտակեցին 1500, Գոմսից՝ 900 ոչխար: Արճեշի գյուղերը բերքահավաքի ժամանակ դառնում էին հեյդարանցի աշիրեթի հարճակման ասպարեզ, ամեն տնից խլվում էր 30-50 փութ ցորեն, կատարվում սպանություններ: Վանի վալի Բահրին չրջում էր գյուղերը և քրդերին գրգռում հայերի դեմ: «Կատարյալ անապահովություն կյանքի և գույքի, քուրդ և չերքեզ հրոսակների անվերջանալի ավարառություններ, ավազակային, անխղճության հասնող հարստահարություն պաշտոնյաների կողմից՝ սկսած վալիից մինչև վերջին մյուդիրը, կաշառակերություն, անարդարություն դատարանում, անասելի հարկեր և զեղծումներ հարկահանների և վաչխառուների, զեղծումներ բարձրագույն իշխանության կողմից, հալածանք կրոնի, ազգության, վերջապես՝ սանձարձակ բռնություն դպրոցների, եկեղեցիների, խոսելու, գրելու դեմ, մի բռնություն, որ հազարավոր անմեղների փտեցնում է բանտերում, տանջում Արաբիայի ու Աֆրիկայի խորքերում, գցում պանդխտության գիրկը, տանում դեպի կրոնափոխություն, ահա այդ դժոխքն է, որ կոչվում է Թուրքա-Հայաստան»[100]: «Կոռուբան գյուղից,– գրում են Վանից,– 13-14 աղջիկ չորս պատանիների հետ գնում են ծաղիկ հավաքելու: Քրդերը հարճակվում են, պատանիներին սպանում, իսկ աղջիկներին բռնաբարում, որոնցից երկուսը տեղում մեռնում է: Հաջորդ օրը գյուղացիները, սպանվածների դիակները սայլերին դրած, գնացին Վան: Քայլարշավը ցրելու ոստիկանների ջանքերը հաջողություն չունեցան»[101]:

Սուլթանը նաև միջոցներ ձեռնարկեց հայաջինջ գործողությունները համակարգելու և անընդմեջ դարձնելու համար: Նա մի հանձնաժողով ստեղծեց, որը պետք է զբաղվեր «հայերին ամենատարբեր միջոցներով քայքայելու և փոքրամասնություն դարձնելու խնդրով»[102]: Շատ չուտով այդ հանձնաժողովի աշխատանքը «պտուղներ տվեց»: Վանա բերդի բանտը լեփ-լեցուն էր հայերով: Ամեն օր գիշերը բանտախուց էին մտնում դատավորը, միլիցիայի ղեկավարը և երեք զափթիե՝ հայ հեղափոխականներից «խոստովանություններ» կորզելու համար: Կեղտոտ հայհոյանքներին հաջորդում էին խոշտանգումները: Բանտարկյալի ձեռքերն ու ոտքերը դնում էին փայտյա կաղապարի մեջ և աստիճանաբար կքում, որից «դժբախտը ծկլտում էր, աղիողորմ ճայներ հանում», ապա ուշաթափ էր լինում ու սկսում էր զառանցել: Ուշքի գալուց հետո չարունակում էին խոշտանգել, հալածում էին փայտով, օգտագործում չիկացած երկաթ, գլխիվայր կախում էին ու այդպես թողնում գնում[103]: Որպեսզի ձերբակալված հայը խոստովաններ իր չկատարած մեղքերը, պոկում էին նրա բեղերն ու գլխի մազերը, մեծ ասեղով ծակծկում պարանոցը, չէին թույլ տալիս քնել 40-45 ժամ, չիկացած երկաթով «դամղա» էին խփում կողերին, ճմռանը թրջում էին բանտախցի հատակը: Բանտարկյալի վզին փաթաթում էին 4-9 փութ կշռող չղթա, որից նրա կողերն ու վիզը ուռչում էին, խոր վերքեր էին բացվում և եթե չէր «խոստովանում», չղթայից ազատվում էր միայն մեռած վիճակում: Մի հարբեցող հայի

---

[99] Նույն տեղում, թիվ 9:
[100] «Դրոշակ», 1891, թիվ 1:
[101] Նույն տեղում, 1893, թիվ 5:
[102] Նույն տեղում:
[103] Նույն տեղում:

գրպանից հանում են առանց փամփուշտի ատրճանակ: Նրան մեղադրում են վալիին սպանելու դիտավորության մեջ: Բահրիի այս հիմքից զուրկ պնդումը դառնում է դատավճիռ, և մի քանի տասնյակ հայ դատապարտվում է 1-101 տարվա բանտարկության:

1890թ. հունիսին քրդերն իրենց անասուններով խուժում են Ալիջակրեք գյուղի արոտավայրերը: Մի քանի հայեր գնում են նրանց հետ բանակցելու, սակայն քրդերը կրակ են բացում: Վրա հասած ժանդարմները հայերից պահանջում են ասել սպանության կատարած քրդերի տեղը: Հայերը պատասխանում են, թե նրանք թաքնվել են: «Դուք, չներ, հավանաբար նրանց սպանել ու հորել եք»: Մի քանի հայի ձերբակալում են: Նրանք մի տարի մնում են բանտում: Ի վերջո, հայերը գտնում են հանցագործներին: Դատարանում քրդերն իրենց մեղքը խոստովանում են: Դատավճռում ասվում էր, որ «մի քանի քրդերի սպանության մեջ մեղադրվող հայերն ապացուցեցին իրենց անմեղությունը, քանի որ նշված քրդերը ողջ են»: Քրդերը մնացին անպատիժ: 1891թ. ձմռանը Շատախի թաղ ավանում մի մուլթեզիմ սպանվեց, այդ գործով մահապատժի ենթարկվեց յոթ հայ, ովքեր կատարված հանցագործության հետ որևէ առնչություն չունեին: Ալաշկերտի Մազրե գյուղի անասունները գողանում են, հայերը բողոքում են՝ ասելով, թե այդ արել են Այիբ փաշայի մարդիկ: Կայմակամը պահանջում է վկա բերել: Բերում են մի հայի: «Հայի վկայությունը չի անցնի»,– հայտարարում է Թուրք պաշտոնյան: Այդ ընթացքում Այիբը Քուբզրան, Խըտր, Զերո գյուղերի հայերին արտաքսում է և սեփականացնում նրանց հողերն ու տները: 1892թ. սեպտեմբերին Շատախի Կարկառի ձորում մի խումբ հայ երիտասարդներ չրջապատում են տխրահռչակ ավազակապետ Շաքիրի խմբին: Շաքիրը մազապուրծ է լինում: Սակայն հետո կարողանում է այդ հայերին սպանել: Նրանց գլուխները տանում են Վան և ձողերին հագցրած պտտեցնում քաղաքի փողոցներում: Չնայած հավաստի փաստերին, Բահրիի չանքերով մարդասպաններ ճանաչվեցին ոչ թե քրդերը, այլ Վարագա վանքի միաբանները: Աղբակի կառավարիչ չեյխ Համիդն ինքն էր կազմակերպիչն ավարի ու թալանի: Նրա փեսա Շարաֆը հարձակվում է Քռել, Ղարս, Ջեյնիս գյուղերի վրա, մարդ սպանում ու հազարավոր ոչխար փախցնում[104]:

Իշխանություններն իրենց բռնարարքներով, դաժան, անարդար գործողություններով սադրում էին հանցագործությունները: Տերմենը նկատում է. «Հայերը չատ աղետյալ վիճակում են, կառավարության ձեռնարկումները քայլ առ քայլ տանում են դեպի նրանց բարեկեցության ոչնչացում՝ սպառնալով գործը հասցնել մինչև քրիստոնյա ազգաբնակչության լրիվ անհետացմանը...»[105]:

Բաղեշից Կ. Պոլիս գրում են, որ Մանազկերտի, Բուլանըխի, Տարոնի, Տատիկի, Գյոզելդերեի և Խիզանի 600 հայկական գյուղերի բնակիչներն «արյան ծովի մեջ են»:

«Մենք պաշարման մեջ ենք... նույնիսկ թաղից թաղ ոչ ոք նամակ գրել չի կարող, որովհետև գաղտնի ոստիկանության անխիղճ պաշտոնատար անձինք, ժանդարմներն ու ոստիկանները աչքերը չորս արած... հետևում են մեր ամեն քայլին, շարժմանը, խոսակցությանը և զենք փնտրելու պատրվակով հայերին խուզարկում են: Գյուղերում... մարդկանց արյունն է... հոսում, եկամուտն ու ունեցվածքն ավարի են ենթարկվում... Վեհափառ կուսակալը մի ամիս առաջ չրջագայության ելավ Մուշի և Գենջի կողմերը, թե գնալիս և թե գալիս հյուրընկալվեց հանրածանոթ ավազակապետ Մուսա բեյի տանը: Բարբարոսի հանդեպ կուսակալի հարգանքը չատ ուժ է տվել քրդերի գործունեությանը»: Այդ տանը կուսակալի գտնվելու պահին Վարդենիսի հանդում սպանվեց երկու հայ: Բողոքը կուսակալին մնաց անհետևանք[106]: Խնուսի Խալիլ-չաուշ գյուղից փախցնում են մի նորահարսի: Առևանգումը կազմակերպել էր Գյոյնակի մյուդիր Օզեյը:

---

[104] «Դրոշակ», 1894, թիվ 8:

[105] Термен Р., *Отчет*, ч. II, стр. 85, 88-89.

[106] «Հնչակ», 1891, թիվ 3:

*«Օգեյ ասածը Մուսաբեյի նման ավազակ է և հրեշային անցյալ ունի: Ջպետք է զարմանալ, որովհետև այսօր մեր երկրում ավազակները մյուդիր են և մյուդիրները՝ ավազակ»: Դատարանը վճիռ է կայացնում հօգուտ ավազակի[107]: Մուշից գրում են.*

*«Ճիշտ է, Վանի և Էրզրումի վիլայեթներում հյուքմեթը շատ հայեր է ձերբակալում, սակայն այնտեղ քրդերի վայրենությունների ու ավազակությունների այնքան էլ շատ չեն: Մեր Բիթլիսի վիլայեթն իսկական դժոխք է: Թե՛ անիրավ կառավարությունն է մեզ չարչարում, թե՛ վայրենի քրդերը... եթե այսպես շարունակվի, մեր Մշո դաշտը կավերվի, ավերակ կդառնա... Այս ձմռանը... հյուքմեթը... դաշտի գյուղերը ժանդարմներ ուղարկեց, որոնք հայերի զենքերը հավաքեցին տարան՝ հրացան, խանչալ, նաչախ, պչախ՝ բոլորը տարան, մինչդեռ քրդերը զինված, ազատ շրջում են, այն էլ սուրմելի, խափխալի հրացաններով...*

*...Խարաջը, որ առաջ 20 ղուրուշ էր, դարձել է 40 ղուրուշ, իսկ այս տարի 60 ղուրուշ են ուզում: Խարաջ են գանձում նորածնից մինչև 80 տարեկանը... Շատ տներ խարաջ են վճարում 20-30 հոգու համար: Շատերը 20-30 տարի պանդուխտ են, բայց նրանց համար էլ են հարկ գանձում»[108]:*

*«Վերջին ժամանակներս,— գրում են Տարոնից,— հայերի վրա կառավարության հսկողությունն ու խստությունները կրկնապատկվել են: Բոլոր գյուղերում լրտեսներ ու ոստիկաններ են պահում: Պաշարման վիճակն ավելի իրական ու խիստ է դարձել, արգելված է քաղաք ելք ու մուտք ունենալ, արգելված է նաև արտագնա աշխատանքը: Ամենափոքր կասկածի դեպքում հայերին բանտ են նետում[109]: Պոլսից տեղական իշխանություններին հրահանգ ուղարկվեց՝ «լրտեսների աշխատավարձի գումարներն ավելացնել գանձվող հարկերի վրա... քանի որ լրտեսները հայերի համար են և հարկ է, որ նրանց աշխատավարձը հայերը վճարեն»:*

## 3. ԱՐՇԱՎ ՀԱՅ ԱԶԳԱՑԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՎՐԱ

*Եթե կայսրության քրիստոնյա ժողովուրդների համար Ջուլումի տարիները նշանավորվեցին սոցիալական, ազգային-քաղաքական և կրոնական հալածանքների ու ճնշումների ուժեղացմամբ, ապա հայ ժողովրդի համար, բառի ամենալայն իմաստով, ստեղծվեց մի վիճակ, որի նմանը ժողովուրդների պատմության մեջ հազվադեպ է լինում, քանի որ ճնշումների սաստկացումը զուգակցվում էր կայսրությունը հայերից մաքրազարդելու քաղաքականության հետ: Հայ ժողովուրդը փաստորեն օրենքից դուրս դրվեց, և լայն ճակատով իրականացվեց ծավալներով նախադեպը չունեցող, ընդգրկումներով՝ համապարփակ, իրականացման եղանակներով՝ հրեշավոր արշավանք նրա դեմ: Իշխանությունները մահմեդականներին քաջալերում էին՝ հանճնարարելով ու կազմակերպելով հայերին բռնությունների ենթարկելու, ոչնչացնելու, նրանց ունեցվածքին տիրանալու գործողություններ:*

*Անգլիացի Ֆիցմորիսը ճիշտ է նկատել. «Բեռլինի պայմանագրից հետո Թուրքական կառավարությունը, գիտենալով, որ ազգային գիտակցությունը չի կարող անկաշկանդ զարգանալ առանց գյուղացիության և գտնելով, որ եթե հաջողվի արմատախիլ անել գյուղացուն, նրան հեռացնել քաղաքներ ու արտասահման, ապա հնարավոր կլինի ազատվել հայերից ու Հայկական հարցից, քաջալերեց քրդական հարձակումները հայկական գյուղերի վրա»[110]:*

---

[107] Նույն տեղում, թիվ 2:
[108] «Հնչակ», 1891, թիվ 6:
[109] Նույն տեղում, թիվ 2:
[110] **Նաթիքյան Ա.**, *Բրիտանիան և Հայկական հարցը. 1915-1923*, Բեյրութ, 1994, էջ 26:

Պաշտոնների վաճառքը, պաշտոնատարներին աշխատավարձ չվճարելու, հարկերի սադայելական ու դրանց հավաքման բարբարոս եղանակները և այլն Զուլումի տարիներին լրիվ օգտագործվեցին քայքայելու հայ ազգաբնակչությանը: Կարինի անգլիական հյուպատոս Էվրեսթը գրում է. «Միայն համբերությամբ, վախով ու բնակչության տարբեր խավերի միջև սերտ կապերի բացակայությամբ կարելի է բացատրել, որ արևելյան սանջակներն անցյալ տարի հարկեր գանձելիս՝ մի մարդու պես չապստամբեցին կառավարության դեմ...»[111]:

Զուլումի տարիներին հարճակման սուր ծայրերից մեկն էլ ուղղված էր հայ մշակույթի ու ազգային գիտակցության դեմ:

«Հայաստան» բառը խիստ անախորժ տպավորություն է գործում Թուրքիայի ղեղերի վրա: Բ. Դուռը բացարձակ ձևով հայտարարեց հայոց պատրիարքին, թե յուր պետության մեջ «Հայաստան անունով երկիր չի ճանաչում»[112]: Արդեն ասվել է, որ 1880թ. Բ. Դռան հրամանով արգելվեց «Հայաստան» բառի օգտագործումը: Ոչնչացվեցին Հայաստանը խորհրդանշող Վարդան Մամիկոնյանի և Սուրբ Հայաստան նկարները: Բանտ նետվեցին հայ թագավորների գերեզմանների նկարներ վաճառողները: Բռնագրավվեցին ու այրվեցին այն գրքերը, որոնցում «Հայաստան» բառ կար, արգելվեցին հայկական օրացույցը, ներկայացումները, հայերեն դասախոսությունները: Մերժեցին հայկական չատ տեղանուններ, նոր դպրոցների, եկեղեցիների և նման այլ հաստատությունների բացման համար պահանջվում էր սուլթանի իրադե, որին սովորաբար հարկ էր լինում սպասել 5-10 տարի: Վկայում է Լինչը.

«Ես տեսել եմ ուսուցչի արկղից վերցրած Քսենոֆոնի «Անաբասիսը», որի միջի քարտեզի վրայից «Հայաստան» բառը դանակով քերված էր...

Գրքերի ընտրության վրա դրված է սահմանափակում: Թե՛ Միլթոնը և թե՛ Շեքսպիրը կասկածի տակ են...

Հայերը գանգատվում էին, թե պետությունը մեզնից փող է գանձում... բայց մեզ քրիստոնեական դպրոց չի տալիս...

Բոլոր ուսումնական հաստատություններում մարմնամարզությունը խստագույնս արգելված է այն հիմնավորմամբ, թե տղաները յուրացնելով մարտունակ կեցվածք, կարող էին ապստամբել»[113]:

Ստեղծվեցին խուզարկու-լրտեսական ոստիկանների չոկատներ, որոնք եթե որոշել էին որևէ անձի ձերբակալել, խուզարկության ժամանակ նրա տան անկյուններից մեկում աննկատ հայկական երգարան էին նետում: Թուրքական ֆեսերի փոխարեն Մշո գլխարկների օգտագործումն իսկ համարվեց ընդդիմության նշան: «Թատրոն»-ի 1875թ. նոյեմբերի 22-ի համարում Հ. Պարոնյանը ծաղրում է. «Հայաստանից հասած լուրերը վերջապես հայտնում են, որ հարստահարությունը Մշո կուսակալ է կարգված... Այնտեղ չկա ո՛չ եկամտի ապահովություն, ո՛չ կյանքի և ո՛չ էլ պատվի երաշխավորություն, այլ այնտեղ կա հափշտակություն, մարդասպանություն, պատվի բռնաբարում...»:

1876 թվականի վերջերին ընդունվեց մամուլի մասին օրենք, որը նախատեսում էր թերթ ստեղծելու թույլտվության համար ֆինանսական մեծ մուծումներ, արգելվում էին երգիծաթերթերը, սահմանվում խիստ պատժամիջոցներ, մեծ տուգանքներ, երեք ամսից մինչև երեք տարի բանտարկություն, ինչպես նաև պարբերականների փակում: Օրենքի 40 հոդվածներից 20-ը պատիժներ էր սահմանում, իսկ մնացած կեսը սահմանափակում մամուլի ինքնուրույնությունը: Տպագրության տեսչության տնօրեն Մուշիդը երգիծական թերթերն ու մանավանդ ծաղրանկարներն անբարոյական էր համարում[114]:

---

[111] *Положение армян в Турции ...*, стр. 72.

[112] Բաֆֆի, ԵԺ, հ. X, Երևան, 1957, էջ 39:

[113] Լինչ Գ., նշվ. աշխ., հ. II, էջ 121-125:

[114] Topuz H., *100 soruda türk basi tarihi*, İstanbul, 1973, ss. 55-56.

Առանց համիդյան սահմանափակումների էլ Թուրքիայում մամուլը ողորմելի վիճակում էր: Ինչպես Պոլ Ֆինչերն է գրում. «... Թուրքերի մեջ գոյություն չունի մամուլ... այս ողորմելի ազգը չի կարող իր մտքերն արտահայտել բարձրաձայն և ոչ էլ գրավոր...»:[115] 1851թ. Կ. Պոլսում հրատարակվում էր 13 պարբերական, որոնցից թուրքերեն՝ երկուսը: 1876թ. հրատարակվում էր 47 թերթ, որոնցից 13-ը՝ թուրքերեն, 9-ը՝ հայերեն: Զուլումի տարիներին հայերեն թերթերի թիվը կրճատվեց, և եղավ տարի, երբ հրատարակվում էր ընդամենը երկու թերթ:

Թուրք պատմաբան Քոչազն իր «Պատմության» 4-րդ հատորի (լույս է տեսել 1931թ.) 136-րդ էջում գրում է. որ Համիդի սուլթանության շրջանում «խոսքի ու գրելու ազատություն չմնաց: Երբեմն պարզ բառերին դրանց չունեցած իմաստ էր տրվում, և մարդկանց գլուխներն էին վտանգվում: Գիտության այս դարում սիրային, հեքիաթային բանաստեղծություններից բացի, ուրիշ բանի մասին չէր թույլատրվում գրել»: «Աբդուլ Համիդը,– նկատում է թուրք մի ուրիշ պատմաբան՝ Ա. Քուրանը,– ժամանակի մամուլին օգնել է, չատերին կաշառել, իսկ դուր չեկածներին՝ առանց պատճառի փակել տվել: Այս ամենը սովորական երևույթ էին»[116]: Մամուլի մասին չարաբաստիկ օրենքն արտահայտում էր Զուլումի տարիներին Թուրքիայում ծավալված քաղաքական ռեակցիայի ամբողջ գարշելիությունը: Օրենքի 7-րդ կետը սահմանում էր. Արգելվում է «Հայաստան» և պատմական ու աշխարհագրական նմանատիպ այլ անունների հիշատակումը[117]: Օ. Նուրին գրում է. «7-րդ հոդվածը հնարավոր է այն աստիճան ընդարձակել և մեկնաբանել, որ այդ հոդվածի հիման վրա գրաքննիչների կողմից արգելված և խոսակցական լեզվից չնչված բառերով ու տերմիններով կազմվի մի մեծ բառարան: Պատմության և աշխարհագրության վերաբերյալ արգելված բառերի թվում կային նաև, օրինակ, այնպիսի բառեր, ինչպես՝ հիմնական օրենք, հեղափոխություն, ազատություն, անիշխանություն, բռնություն, ազգային իրավունք, հավասարություն, հանրապետություն, խորհրդարան, ծերակույտ, ռումբ, Միդհատ փաշա, Քեմալ բեյ (Նամըկ), սուլթան Մուրադ, Կրետե, Մակեդոնիա, բարեկործություն և այլն»[118]:

Գրաքննությունը մոլեգնում էր: Սուլթանը հայ մամուլի դեմ արշավանք սկսեց գավառական վալիների անմիջական մասնակցությամբ, որոնց հախուռն հերքումները «հակադրեց գավառներից ստացվող թղթակցություններին... մամուլին մեղադրելով զրպարտության մեջ»: Բանտ նետվեցին խմբագիրներ ու հրատարակիչներ, իսկ մամուլին հարկադրեցին գավառների մասին տպագրել միայն պաշտոնական լուրեր և սուլթանամետ նյութեր: 1883թ. հայ մամուլի համար մտցվեց նախնական գրաքննություն:

«Ոչինչ սուլթաններին այնքան չէր սարսափեցնում,– գրում է Մ. Մաքքոլը,– որքան նրանց քրիստոնյա հպատակների շրջանում կրթության տարածումը, որովհետև գիտեին, որ գիտելիքը ուժ է և այդ դժոխային պայմաններում անխուսափելիորեն տանելու է դեպի դժգոհություն ու թշնամություն և ծնելու է ազատության անհաղթահարելի ձգտում»[119]: Աբդուլ Համիդն ակտիվորեն ներխուժեց հայկական դպրոցներ, վերանայեց նրանց ուսումնական ծրագրերն ու դասագրքերը: Բոլոր դպրոցները դրվեցին լուսավորության նախարարության խիստ վերահսկողության տակ: 1880թ. դասավանդումից հանվեց հայ ժողովրդի պատմություն առարկան և մտցվեց Օսմանյան կայսրության պատմություն: Նաև արգելվեց հայ ժողովրդի պատմության վերաբերյալ բոլոր և ամեն տեսակի գրականության հրատարակությունը: Ամենափոքր իսկ կասկածի դեպքում ուսուցիչները բանտ էին ընկնում, դպրոցները փակվում էին, գույքը բռնագրավվում էր:

---

[115] Թուրքական աղբյուրները ..., էջ 159:

[116] **Kuran A. B.**, *Osmanlı imperatorlugünda ve Türkiye Cumhuriyetinde İnkilâp Hareketleri.* İstanbul, 1959, s. 145.

[117] Թուրքական աղբյուրները ..., էջ 162:

[118] Նույն տեղում, էջ 163:

[119] *Положение армян в Турции ...*, стр. 148.

1883թ. մտցվեց դպրոցական հարկ, որի գումարները բացառապես ծախսվում էին մահմեդական դպրոցների վրա, քրիստոնյա երեխաներին արգելվեց սովորել պետական դպրոցներում:

1884թ. ձերբակալվեց միացյալ ընկերության վարժարանների տեսուչ Մկրտիչ Սարըյանը, միայն այդ վարժարանից բանտ նետվեց 60 մարդ: 1885թ. փակվեց Վանի կեդրոնական վարժարանը, 1886թ. Այգեստանի դպրոցի ուսուցիչները ձերբակալվեցին, որովհետև դպրոցում ուսուցանվում էր ռազմական գործ: Վայրագ հալածանքների պայմաններում էր գործում Կարինի Սանասարյան վարժարանը: Հայկական դպրոցներում որպես կանոն թուրքերենի դասատու նշանակվում էին լրտեսները: Խարբերդի «Արմենիա» դպրոցը վերանվանվեց «Եփրատ»: 1891թ. ուսումնական տարվա ավարտին կրթության նախարարությունը շրջաբերական ուղարկեց հայկական դպրոցներ՝ պահանջելով, որ «պարգևաբաչխումների առիթով արտասանվելիք բոլոր ճառերը, բոլոր երգերը կամ արտասանությունները նախապես ներկայացվեն նախարարության գրաքննությանը»[120]:

Հայ կանանց արգելեցին կարմիր հագուստ հագնել, որովհետև կարմիրը հեղափոխություն խորհրդանշող գույն էր:

Սուլթանը հայկական ապստամբության սպառնալիքով ահաբեկում էր մահմեդական բնակչությանը: Ռոլեն Ժեկմենը հայկական ապստամբության հնարավորության մասին խոսակցությունը կեղծիք է համարում, քանի որ «ճնշող տեռորի ու ոչնչացման համակարգը կասեցրել էր հայերի բոլոր ուժերը»: «Հայաստանում,– գրում է նա,– ինչպես սուլթանի բոլոր տիրույթներում, երբ քրիստոնյաները դառնում են այնքան մեծաթիվ, հարուստ և կրթված, որ սկսում են ներկայացնել վտանգ և գրգռել իրենց ճնշողների ագահությունը, անմիջապես տրվում է հրահանգ՝ «փոքրացնել» ազգաբնակչության թիվը: Տեղական իշխանություններն ամեն ինչ անում են, որպեսզի քրիստոնյաներին հասցնեն խելահեղ հուսահատության և, ի վերջո, մի քանի տաքարյուն մարդկանց մղում են զենքի... Դա անմիջապես հռչակվում է վտանգավոր ապստամբություն և խաբված Եվրոպային ներկայացվում որպես բավարար արդարացում համատարած կոտորածների համար»[121]:

Օսման Նուրին Զուլումը ներկայացնում է իր ամբողջության մեջ և գնահատում որպես հայկական հարցի տնտեսական, քաղաքական, ռազմական ու մշակութային առումով համակարգված լուծումն ապահովող քաղաքականություն: «Խիստ հսկողության տակ առնվեցին հայ պաշտոնյաները և հայկական հրատարակությունները, սովորական դարձավ աքսորը: Փակվեցին այն հայկական դպրոցները, որոնք բացվել էին ոչ թե հրովարտակով, այլ միայն կառավարության թույլտվությամբ»[122]:

Հաճընում լուսավորչական գործունեությամբ զբաղվող Ուսումնասիրությունների ընկերության 10 անդամներ բանտ նետվեցին: Դատվեցին բարեգործությամբ զբաղվող Սիրո ընկերության ղեկավարները[123]:

«Ամենադժբախտ գրքերը,– շարունակում է Օ. Նուրին,– մեր երկրում թուրքերեն և այլ լեզուներով տպագրված գրքերն էին: Բառիս բուն իմաստով մաղով էին անցկացվում գլխավորապես դասական գործերը: Քիմիայում արգելված էին մի շարք բանաձևեր ու մաթեմատիկական ֆորմուլներ, օրինակ, չէր կարելի գրել $H_2O=O$, որովհետև այն կարելի էր բացատրել՝ Աբդուլ Համիդը հավասար է զրոյի: Քերականության գրքերում հանդիպող «դժգոհ ենք», «ազատ չենք» և նման այլ բառերը վտանգավոր էին համարվում ու ջնջվում էին, որպես թե դրանք կարող են արտահայտել օսմանյան ազգի տրտունջը:

---

[120] «Հնչակ», 1891, թիվ 11:
[121] Положение армян в Турции ..., стр. 104-107.
[122] Թուրքական աղբյուրները ..., էջ 170:
[123] «Հնչակ», 1891, թիվ 12:

«Եղբայր» բառն արգելված էր, քանի որ հիշեցնելու էին տարաբախտ սուլթան Մուրադին, «հիվանդ» բառն էլ արգելված էր, որովհետև հիշեցնում էր «հիվանդ մարդ» խոսքը»[124]:

Համիդը դժվարությամբ էր թուրքերին թույլ տալիս Եվրոպայում կրթություն ստանալ: Նա չէր սիրում, երբ հպատակները արտասահման էին մեկնում:

Նա առանձնահատուկ դժկամություն էր հանդես բերում, երբ քննադատվում էր իր ներքին քաղաքականությունը: Թուրքական և հայկական մի քանի թերթեր հարվածի տակ ընկան Տրապիզոնի Շանա գյուղի վիճակի մասին նյութեր տպագրելու պատճառով: Այդ գյուղի չքավոր գյուղացիներին, որոնք չէին կարողացել լրիվ վճարել պետական հարկերը, տեղական իշխանությունները խոշտանգումների էին ենթարկել: «Մեջմուաի հավադիս» թերթը նշում է, որ պատժիչ ջոկատ ուղարկվեց, «բազմաթիվ գյուղացիների փայտով ու սրի պատյանով անխղճաբար ծեծեցին, Փարավոնի գերիների նման նրանց կապում էին գետնին խրված գերաններից ու ցցերից և երկուական, երեքական հոգով սաստիկ խարազանում: Նրանցից ոմանց վրա էլ դույլերով ջուր լցնելով, մինչև երեկո քաղցած պահեցին ու ծեծեցին»[125]: Խոշտանգվեցին ոչ միայն հարկ չվճարողները, այլև անբողջ գյուղը, անարգեցին գյուղի քահանային, որին պատանդ էին վերցրել: Ոմանց բանտ նետեցին, ոմանց ամբողջ ունեցվածքը, ամանեղենը, կովը, եզը «կես գնով ծախել տալով, պահանջված տուրքերը վերցրեցին»: Այս դեպքերի վերաբերյալ նյութեր տպագրած երեք հայկական թերթերի («Արարատ», «Մեջմուաի հավադիս» և «Հայրենիք») խմբագիրները կանչվեցին մեծ վեզիր Ռյուշտուի մոտ, որը նրանց դիմավորեց լուտանքների տարափով, և հենց նրա ընդունարանում խմբագիրները դաժան ծեծի ենթարկվեցին, որոնցից մեկը որոշ ժամանակ անց մեռավ: Երեք թերթերն էլ փակվեցին[126]:

Ծաղրելով մամուլի նկատմամբ անլուր գրաքննությունը՝ Հ. Պարոնյանը կառավարության մտադրությունները ներկայացնում է հետևյալ կերպ.

«Հոդված Ա. Բոլոր լրագիրները դադարեցնել:

Հոդված Բ. Խմբագիրներն ալ անոթության վարժեցնել:

Հոդված Գ. Աչքերու համար տեսչության մը դնել, որպեսզի անիրավություն մը տեսնելուն պես՝ զանոնք տեսնելե դադրցնե:

Հոդված Դ. Լրագիր մը իր ուզածը ամենայն ազատությամբ կրնայ խորհիլ, բայց չկրնար խոսիլ:

Հոդված Ե. Լրագիր մը իր խմբագրին վրա կրնայ հարձակիլ, մնացած հոդվածները լրագրական վարչության դեմ ըլլալուն համար ավրած ենք»[127]:

«Թերջումանի հեքյարի» լրագիրը բանավեճի մեջ մտնելով «Ստամբուլ»-ի հետ, մատնանշում էր հայերի կեղեքված վիճակը և մասնավորապես քրդերի հարստահարությունները Վանում, Բաղեշում, Խնուսում, Դերսիմում և այլուր: Դրա դեմ հանդես եկավ թուրքական «Վակիտ»-ը՝ մեղադրելով հայկական հարց հարուցելու և «խռովարարության» մեջ: «Թերջումանի հեքյարի»-ն դատ բացեց, սակայն դատը չուռ տվին նրա դեմ»[128]:

1883թ. արգելվեցին արտասահմանի մամուլից: Տպագրական տեսչությունը ընդգծում էր, որ թերթերը պետք է «այսուհետև պատշաճ լեզու գործածեն՝ զգուշանալով խիստ խոսքեր օգտագործելուց այն խորհրդածություններում, որոնք վերաբերում են օրվա խնդիրներին, և եվրոպական լրագրերից չթարգմանեն այնպիսի հոդվածներ, որոնք կարող են վնասակար լինել երկրի շահերի համար»[129]: Խարբերդում հայ բնակչության գլխին պատիժ դարձած քրդերի հետ թուրքական պաշտոնյաների հա-

---

[124] Թուրքական աղբյուրները ..., էջ 163-164:
[125] «Մեղու Հայաստանի», 06.11.1876:
[126] «Մասիս», 02.11.1876:
[127] Պարոնյան Հ., Երկ, հ. VIII, էջ 184:
[128] «Լրագիր», 10.01.1880:
[129] Նույն տեղում:

մագործակցության մասին հոդված տպելու համար «Թերջումանի հեքյարի»-ն նորից պատժվեց[130]:

Մի հայ բանտ է նետվում՝ մոտը արտասահմանում հրատարակվող թերթ ունենալու համար: Նրան անմիջապես տանում են Ելղըզ, որտեղ սուլթանը վարագույրի հետևից լսում է հարցաքննությունը: Էրզրումում չատ հայեր բանտարկվեցին հայրենասիրական ոտանավորներ արտասանելու, ազգային տոներին մասնակցելու համար[131]:

Այդ ամենի հետ միասին Բ. Դուռը լայն գործունեություն ծավալեց իրերի վիճակը գլխիվայր շուռ տալու և «ապացուցելու արևմտահայության բարվոք վիճակը»: Գավառներում սովի և հարստահարությունների վերաբերյալ պատրիարքի 1880թ. հունիսի 29-ի ծանուցումից և մամուլում այդ մասին հրապարակումներից հետո, Բ. Դուռը հանձնարարեց տեղական իշխանություններին «վիճակը պարզել»: Վալիները նախապես ցուցում էին ստացել՝ ինչ պատասխանել և ըստ այդմ էլ պատասխանեցին, թե իրենց իշխանության ներքո հայերն ապրում են բարվոք, չկա որևէ հարստահարություն, և եթե ավազակության դեպքեր լինում են, դրանից տուժում են ոչ միայն հայերը, այլև մահմեդականները[132]:

Հայկական հարցում Բ. Դռան հանձնարարությամբ «Թերջուման հակիկատ» և «Օսմանլի» թերթերը հարձակում սկսեցին արևմտահայերի ու պատրիարքի վրա՝ կանգ չառնելով կեղծիքի, վարկաբեկման ու ահաբեկման առջև: Թուրքական մամուլը հերքում էր արևմտահայության վիճակի մասին հայկական թերթերի նյութերը՝ դրանք որակավորելով խռովարարության դրսևորումներ, գրգռում էր մահմեդականների մոլեռանդությունը հայերի դեմ: «Թերջուման հակիկատ»-ը փորձում էր հիմնավորել «Հայաստան» բառը գործածությունից հանելը: 1881թ. օգոստոսի 29-ի համարում այդ թերթը գրեց, թե Անատոլիան չի պատկանում որևէ ազգության, քանի որ այնտեղ բնակվում են մի քանի ժողովուրդներ, իսկ այն, որ այդ տարածքը ինչ-որ ժամանակ հայկական է եղել, վաղուց արդեն մոռացվել է և, «ինչու պիտի այն կոչվի «Հայաստան»:[133] Բացի այդ: Քանի որ Արևմտյան Հայաստանում հայերից բացի մի քանի ուրիշ ժողովուրդներ են բնակվում, ուրեմն այն ոչ մեկինը չէ: Որոշ ժամանակ անց այդ ուղղությամբ կատարվեց նոր քայլ՝ չհամաձայնելով Հայաստանի չեզոք պատկանելիությանը, գտան, որ այն ոչ թե հայկական (հայերը հայրենիք չեն ունեցել), այլ թուրքական տարածք է: Հայաստանը համարելով իրենցը՝ հայերը կեղծում են պատմությունը: Պատրիարքը բողոքեց այդ կեղծարարությունների դեմ՝ նշելով, որ տպագրական տեսչության թողտվությամբ թուրք մամուլը հայ ժողովրդին ներկայացնում է որպես տերության և թուրք ժողովրդի թշնամի, բորբոքում վերջինի մոլեռանդությունն ու ատելությունը: «Եվ հաստատ է,— գրում է նա,— թուրք մամուլի այս ընթացքը այլ բան չէ, եթե ոչ օսմանյան տերության հպատակներին իրար դեմ հանելու, գրգռելու, նրանց մեջ ատելության և հակակրանքի սերմեր ցանելու միտում»[134]:

«Օսմանլի» թերթը ևս դեմ էր «Հայաստան» բառի օգտագործմանը՝ գտնելով, որ պատմական անունների օգտագործումը պարտադիր չէ, «մանավանդ, երբ այդ անուններն իրենց պատմական նշանակությամբ կարող են մտքերում խռովություն և գոյություն ունեցող վիճակի դեմ հեղափոխական գաղափարների պատրանք առաջացնել... Ոչ մեկի մտքով չէր անցնի առաջ քաշել այդ հարցը, եթե մի քանի բանսարկուներ ինչ-որ հայկական հարց չհնարեին, որի վերջը, ըստ նրանց, պետք է հանդիսանա նշված նահանգների անջատումը և, թերևս, մի նոր իշխանության կազմավորումը...»[135]: Թերթը

---

[130] «Մշակ», 15.031880:
[131] «Հնչակ», 1889, թիվ 3:
[132] «Մասիս», 06.07.1880:
[133] Garapoğlu S., *Basın Tarihine Dair Bilgiler ve Hatıralar*. İstanbul, 1960, ss. 96-99.
[134] «Մասիս», 15.09.1880:
[135] Նույն տեղում, 29.09.1880:

*հայերի անկախանալը կործանարար էր համարում քուրդ ժողովրդի համար, այսինքն՝ ձգտում էր ավելի սրել հայ-քրդական հարաբերությունները:*

*Թուրքական մամուլը Ռուս-թուրքական պատերազմից հետո թուրք ժողովրդին հետևողականորեն թունավորում էր մեծապետական հակահայ թույնով, ինչը հեշտ էր նաև այն պատճառով, որ հայ հրատարակություններին արգելված էր թուրքական մամուլի ելույթներին հակահարված տալ: «Տպագրական վարչությունը,– գրում է Հ. Պարոնյանը,– թուրք լրագրերին թույլատրում է, որ ամեն տեսակի թշնամական զրպարտանքներ կատարեն հույն և հայ պատրիարքների դեմ, իսկ երբեք թույլ չի տալիս, որ քրիստոնյա մամուլը քաղաքավարի լեզվով թուրք մամուլին պատասխանի... Ահա մամուլի հավասարությունը, որ վայելում ենք Թուրքիայում»[136]:*

*Էրզրումի «Պաշտպան հայրենյաց»-ի գործը թուրքական մամուլը բացարձակ լուության մատնեց, բայց ոչ թե ուշադրության արժանի չլինելու, այլ նրա չուրջը կրքեր չբորբոքելու համար: Կարինում հաստատվեց Գրաքննության կոմիտե, որի հրամանով այրվում էին նույնիսկ V դարի հայ պատմիչների երկերը: Պ. Նաթանյանի «Արտուտ Հայաստանի»-ն համարվեց հեղափոխական գործ, քանի որ պատկերում էր Արևմտյան Հայաստանի ծանր վիճակը:*

*1883թ. ամռանը փաստորեն արգելվեց կապը Պոլսի և Արևմտյան Հայաստանի միջև: Երբ «Մասիս»-ը ընթերցողին ներկայացրեց Վանում և Բաղեշում տեղի ունեցած հարստահարությունները, իշխանությունները թերթին հարկադրեցին տպագրել հերքում, ինչպես նաև Բաղեշի վալու հեռագիրը, որը հրապարակված տեղեկությունները համարում էր մասնավոր աղբյուրներից վերցրած չափազանցություն[137]: Իսկ երբ Վանի հարստահարությունների մասին լուրերը կ. Պոլիս հասան, սուլթանը նորից դիմեց հին քայլին՝ այդ լուրերը հենց հարստահարվածների միջոցով հերքելուն: 12 երևելիներ քաղաքի հայ ազգաբնակչության անունից գովաբանական նամակ ուղարկեցին կ.Պոլիս, թե հարստահարություն չկա, և իշխանություններն ու բանակը ժողովրդի պաշտպանության դիրքերում են: Սուլթանը «Օսմանիե» չքանչան տվեց վալուն և զանազան պարգևներ՝ ուղերձը ստորագրողներին[138]: Վանի հայությունը ըմբոստացավ դրա դեմ և Բ. Դուռը, պատրիարքին, Անգլիայի ու Ռուսաստանի դեսպաններին հանրագիր ուղարկեց, ստորագրող երևելիները ծեծի ենթարկվեցին, իսկ եկեղեցական ժողովը Պոլիս տեղեկանք ուղարկեց կեղեքումների, բռնությունների, թալանի ու սպանությունների մասին: Իզուր չէ Տերմենը գրում, որ հայերի «հեղափոխական շարժումը լոկ հանդիսանում է վատ կառավարման հետևանք»[139]:*

*«Օսմանլին», գրեց, «Առաջ Եվրոպայից ստացված լրագրերը չէին գրաքննվում, մինչդեռ դրանք վնասակար բովանդակություն էին ունենում... Օրինակ, անգլիական լրագրի մի համարը պարունակում էր անգլիական խորհրդարանի նիստերից մեկի ատենագրությունը, մի նիստի, որում Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի վերաբերյալ բանավեճ էր տեղի ունեցել: Այդ բանավեճը կարող էր հայերի միտքը գրգռել: ...Մայրաքաղաքի ֆրանսերեն լրագրերն էլ արտատպեցին հիշյալ ատենագրությունը, որը հայ լրագրերը թարգմանեցին: Սրանից հետևում է, թե օտար մամուլը նույնքան և ավելի չարիք կարող է պատճառել, որքան հեղափոխական գաղափարներ տարածող մարդկանց խումբը»[140]:*

*Արտասահմանյան մամուլի վերահսկողության դիվանը աներևակայելի միջոցներով պայքար ծավալեց պաշտոնական տեսակետներին հակասող տեղեկատվության դեմ:*

---

[136] Պարոնյան Հ., *Եժ*, հ, IV, էջ 436:
[137] «*Մասիս*», 17.05.1880:
[138] «*Մշակ*», 28.07, 07.09.1883:
[139] Термен Р., *Отчет*, стр. 89.
[140] «*Արևելք*», 01.05.1884:

«Թուրքերու մտքերը,– գրում է Արփ. Արփիարյանը,– սկսել էին անհանգստանալ հայկական հարցի նորանոր դրսևորումներեն: Հայաստանում չատանում էին քաղաքական ձերբակալություններն ու հայ երիտասարդները Պոլսից բերվելով, Ղարպ, Թարապուլուս էին աքսորվում: Եվրոպայում հեղափոխական հայ թերթեր էին երևան գալիս, և անգլիական մամուլը մեզանով է զբաղվում»[141]:

Սակայն դրսի մամուլի և այլ հրապարակումների ներթափանցման դեմ ոստիկանությունն անզոր էր, որովհետև դրանք ներմուծվում էին դիվանագիտական փոստով ու տարածվում: Բացի դա, գրաքննիչների մեջ մեծ թիվ էին կազմում նրանք, ովքեր ստացած կաշառքի չափով էին որոշում նյութերի «վտանգավորությունը», նույնը և չինովնիկները: Համիդը դա գիտեր, և ելդզում ևս ստեղծեց գրաքննական ծառայություն, որը թուրքերեն էր թարգմանում բոլոր այն հրապարակումները, որոնք վերաբերում էին Հայկական հարցին: Նաև նշենք, որ 1888թ. մտցված գրաքննության նոր կանոնները գրված էին անհեթեթության աստիճանի բծախնդրորեն: Խմբագրվում էր անգամ Աստվածաշունչը: Օրինակ, 1889թ. Պոլսում հրատարակված բողոքականների Աստվածաշնչից հանվեց «Ձայն տանք Արարատյան թագավորությանն ու Ասքանազյան գնդին» դարձվածքը[142]:

Փաստորեն լրագրերի խմբագիրների իրավասությանը թողնվեցին միայն մամուլի ընդհանուր ուղղությունները, իսկ նյութերի բովանդակությունն ու բնույթը թելադրվում էին «վերևից» ստացվող բազում հրահանգներով ու ցուցումներով: Իսկ երբ թերթի համարն արդեն պատրաստ էր, ավերածություններն սկսում էին գրաքննիչները:

## 4. ԿՐՈՆԱԿԱՆ ԱՌՃԱԿԱՏՈՒՄ. ՀԱՐՁԱԿՈՒՄ ՀԱՑ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Օսմանյան կայսրությունը թեոկրատական պետություն էր, այսինքն՝ պետական քաղաքականությունը ոչ միայն հենված էր կրոնական դոգմանների ու կրոնական իշխանությունների վրա, այլև իր գործունեությամբ հետապնդում էր նաև կրոնական-քաղաքական խնդիրներ, որոնք վերջին հաշվով հանդիսանում էին պետական խնդիրների լուծման կարևորագույն միջոցներ: Սուլթանը, միաժամանակ լինելով ամբողջ աշխարհի մահմեդականների հոգևոր առաջնորդ, առավելապես արտաքին այլևայլ նպատակներ էր հետապնդում, իսկ կայսրության ներսում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների միավորված համակարգը նախ և առաջ նշանակում էր ներքին քաղաքական խնդիրների լուծումը քողարկել կրոնական շղարշով: Ըստ այդմ էլ, պետական կառավարման կառույցներն ունեին նաև կրոնական տեսք: Գլխավոր հյուպատոս Վիլսոնը գրում է. «Այն բանի հետևանքով, որ առանձնակի նշանակություն էր տրվում մահմեդականի վկայություններին, բոլոր կեղծ վկաները մահմեդականներ են»[143]:

Մեղմ է ասված. իրականում ոչ մահմեդականների վկայությունները դատարաններում, մասնավորապես կրոնական՝ շարիաթական դատարաններում, չէին ընդունվում, իսկ այնտեղ, որտեղ ընդունվում էին (խոսքը Նիզամի՝ քաղաքացիական դատարանների մասին է), ուժ չունեին, և դրանց վճիռները շատ հաճախ հաշվի չէին առնվում: Երբ մահմեդականի ու քրիստոնյայի ցուցմունքներն իրար հակասում էին, վերջինների վկայություններին ընդհանրապես նշանակություն չէր տրվում: Դեռ ավելին, բավական էր մահմեդական երկու վկա, որպեսզի ցանկացած ոչ մահմեդական մեղավոր ճանաչվեր: Դրա հետևանքով, քիչ չէին դեպքերը, երբ մահմեդականը վրեժխնդրության, սադրանքի

---

[141] «Նոր կեանք», 1900, թիվ 15:
[142] «Արմենիա», 29.03.1890:
[143] Положение армян в Турции ..., стр. 298.

*կամ չորթումների նպատակով դիմում էր կեղծ վկաներ օգտագործելու սպառնալիքին: Անգլիական դիվանագետ Հ. Ջերմսայդը գրում է, որ Տրապիզոնի վիլայեթում «ոչ մի մահմեդական երբեք քրիստոնյայի վկայության հիման վրա չի դատապարտվել»[144]: Այսինքն՝ իրավական առումով կայսրության քրիստոնյա բնակչությունը պետության քաղաքացի չէր համարվում ու չէր կարող համարվել, և պատճառը միայն այն էր, որ չէր պատկանում իշխող ազգի կրոնին: «Օրենքի առաջ քրիստոնյաները սեփական չահերի առումով՝ օտարականի, իսկ մահմեդականների չահերի առումով՝ թշնամու վիճակում էին»[145]:*

*Մահմեդականության վաղ շրջանում գոյություն ուներ քրիստոնյայի իսլամանալու որոշակի ծես: Մահմեդականություն ընդունող քրիստոնյան պետք է հրապարակավ մատը վեր պարզեր ու ասեր. «Աստվածը մեծ է, Մուհամմեդը՝ նրա համբավաբերը»: Ապա նրան տանում էին մոլլայի մոտ, որի ներկայությամբ կրկնում էր այդ բառերն ու խզվում քրիստոնեությունից, որից հետո նոր հագուստ էին հագցնում, մոլլան նրա գլխին կապում էր կանաչ գույնի թաշկինակ, որպեսզի բոլորը տեսնեին, որ նա մահմեդական է (քրիստոնյան իրավունք ուներ կապելու միայն կապույտ, իսկ հրեան՝ դեղին գույնի թաշկինակ): Բնակավայրի բոլոր մահմեդականները հավաքվում էին, հավատափոխին ձի նստեցնում, և ամբոխն ու մահմեդական հոգևորականները վազում էին նրա հետևից փողի, սրնգի և այլ երաժշտական գործիքների նվագակցությամբ ու աղմուկի ուղեկցությամբ: Այդ ամբողջ ընթացքում կրոնափոխն անընդհատ կրկնում էր վերը նշված կարգախոսը: Եթե նա աղքատ էր, դրամ էին հանգանակում: Հավատափոխը նաև առանձնահատուկ հարգանքի էր արժանանում, քանզի հրաժարվել էր քրիստոնեական կրոնից և ընդունել մահմեդականություն: Եթե մահմեդականացածը կին էր, արշավի փոխարեն վերցնում էին նրա գոտին, բաժանում երկու մասի, խաչաձև փռում էին գետնին, որի վրա նա երեք անգամ ոտը դնում ու կրկնում էր կարգախոսը[146]: Հետագայում հավատափոխության ծեսը պարզեցվեց և որոշ առումով նույնիսկ վերացվեց: Բավարարվում էին նրանով, որ քրիստոնյան, մատը վեր պարզած կամ վզի խաչը գետին նետելով ու ոտներով այն կոխկրտելով, երեք անգամ կրկներ կարգախոսը:*

*Իրենց գոյության առաջին իսկ օրերից օսմանյան իշխանությունները կայսրության ժողովուրդներին ոչ թե միավորել են, այլ մշտապես խրախուսելով կրոնական առճակատումը՝ այն դարձրին ոչ մահմեդականներին ահաբեկելու միջոց և սադրիչի դեր կատարեցին կրոնական համայնքների միջև ծագած հակասություններում: Դրա հետևանքով այդ համայնքները «դարեր շարունակ մնացին թշնամիներ՝ ուղղահավատներ ու գյավուրներ, կառավարողներ և կառավարվողներ, զինվածներ և անզեններ, տերեր և ստրուկներ, շահագործողներ և շահագործվողներ, ավերիչներ և արարողներ, մարդիկ, ովքեր վայելում էին առանց աշխատելու և մարդիկ, ովքեր աշխատում էին առանց վայելելու: Առաջիններն համարվում էին հայրենիքի իսկական զավակներ, իսկ երկրորդները՝ խորթ որդիներ»[147]: Տրամաբանությունը մեկն էր՝ մարդը ծնվում է մահմեդական և, եթե նա այդպիսին չէ, ապա կա՛մ խաբված է և կա՛մ չարամիտ: Առաջինին պետք է հավատի բերել, իսկ երկրորդին՝ ոչնչացնել: Շարիաթի օրենքով մահմեդականությունն ընդունածն այլևս իր նախկին կրոնին վերադառնալու իրավունք չուներ: Իսկ եթե վերադառնար, տղամարդկանց սպանում էին, իսկ կանանց այնքան էին խոշտանգում, մինչև հրաժարվեր այդ մտադրությունից:*

*Սկզբում Մուհամմեդը հեզություն ու համերաշխություն էր քարոզում, իսկ երբ հզորացավ, սկսեց հակառակը պնդել՝ նոր կրոնը դարձրեց սրի ու բռնության կրոն:*

---

[144] Նույն տեղում, էջ 296:
[145] Նույն տեղում:
[146] *Путешествия Ивана Шильбергера*, стр. 99-100.
[147] **Ագոնց Ն.**, Հայկական հարցի լուծման չուրջը, Երևան, 1989, էջ 57-58:

*«Կռվեք անհավատների դեմ, կոչ է անում Կորանը, մինչև որ վերջանա մոլորությունը, և ամեն տեղ հաստատվի ձեր կրոնը...»*[148]*: «Անհավատներին պատահելիս՝ սպանեք, գլխատեք, մինչև որ բոլորովին ոչնչանան: Գերիներին պինդ չղթայված պահեք»*[149]*: «Մարգարե՛, նախանձախնդրությամբ կռվիր անհավատների, կեղծավորների դեմ, եղիր դաժան ու անգութ նրանց վերաբերմամբ: Գեհենն է նրանց բնակարանը»*[150]*: Մուհամմեդի մի հրովարտակում ասված է. «Աստված զանազան մարգարեներ ուղարկեց իր հատկությունները քարոզելու համար. Մովսեսը նրա գոյությունն ու իմացությունը փառաբանեց, Սողոմոնը՝ նրա իմաստունությունը, մեծությունը և փառքը, Հիսուսը՝ արդարությունը, ամենագիտությունը և զորությունը. արդարությունը՝ իր սուրբ վարքով, ամենագիտությունը՝ մարդկային սրտի գաղտնիքներն իմանալով և զորությունը՝ իր գործած հրաշքներով: Սակայն այդ հատկություններից ոչ մեկը բավարար չեղավ մարդկանց համոզելու համար: Նույնիսկ Մովսեսի և Հիսուսի հրաշքները անհավատ մեկնություն ստացան: Այդ պատճառով ես ուղարկված եմ սուսերով: Իմ վարդապետության քարոզիչները ո՛չ փաստերի թող դիմեն և ո՛չ համոզման, այլ սրով կոտորեն այն մարդկանց, ովքեր չեն հնազանդվի իսլամի օրենքին: Ճշմարիտ հավատի համար մարտնչողը թե՛ հաղթելու և թե՛ սպանվելու դեպքում փառավոր վարձատրություն կստանա... Սուրը երկնքի բանալին է: Ով որ մերկացնի այն հանուն հավատի, մեծագույն բարիքներով կվարձատրվի, նրա արյան ամեն մի կաթիլը, ամեն մի չարչարանքն ու վտանգը երկնքում ավելի ընդունելի կհամարվեն, քան թե պահքն ու աղոթքը: Եթե մեռնի պատերազմի դաշտում, իսկույն կջնջվեն նրա մեղքերը, և արքայությունն կտարվի՝ սևաչյա հուրիների գրկում երանելի երջանկություն վայելելու համար»*[151]*: Ի. Շիլբերգերը գրում է, որ Մուհամմեդը, երբ խալիֆ դարձավ, զորքեր ուղարկեց Արաբիա, «որպեսզի համոզելու կամ զենքի միջոցով իր ուսմունքին համախոհ դարձներ այդ երկրում այն ժամանակ բնակվող քրիստոնյաներին: Հեթանոսական (մահմեդական) Ալկորան գրքում իսկապես ասված է, որ Մուհամմեդի ուսմունքի հաղթանակի համար միայն մեկ օրում սպանվեց 90 հազար մարդ... Մուհամմեդը, քանի դեռ ողջ էր, չարունակում է Շիլբերգերը, ուներ 40 աշակերտ, որոնք կազմում էին հատուկ ընկերություն՝ ընդդեմ քրիստոնյաների, հետևյալ սկզբունքով. յուրաքանչյուր ոք, ով ցանկանում էր ընդունվել այդ ընկերությունը, պետք է երդում տար, որ եթե մարտում հանդիպի քրիստոնյայի, ոչ մի դեպքում ողջ կամ գերության մեջ չի թողնի: Իսկ եթե դա նրան չհաջողվի, կգտնի մի ուրիշ քրիստոնյայի և կսպանի: Մուհամմեդի ընկերության անդամներին անվանում են «zey»: Նրանք չատ են Թուրքիայում և համաձայն իրենց օրենքի՝ հետապնդում են քրիստոնյաներին»*[152]*:*

*Մահմեդականները խստորեն հետևում էին Մարգարեի պատգամ-կանոններին: Ահա դրանցից մեկը. «Ալլահ, քեզ մոտ եմ փախչում սատանայից, անիծյալից... Օհ, Ալլահ, կործանիր անհավատներին և բազմաստվածայիններին՝ քո թշնամիներին, կրոնի թշնամիներին: Օհ, Ալլահ, նրանց երեխաներին որբացրու և պղծիր նրանց բնակավայրերը, այնպես արա, որ նրանք սխալ քայլ կատարեն և նրանք ու իրենց ընտանիքները, նրանց տներն ու կանայք, նրանց երեխաներն ու ազգականները, նրանց տիրույթներն ու ցեղերը, նրանց հարստությունն ու հողերը մահմեդականի ավար դառնան»: Մահմեդականները ևս ճնշվում են, նրանք «ևս դառը թասը խմում են մինչև վերջ՝ թողնելով միայն դառնագույն մնացորդը կրոնական հետապնդման ձևով, որը նախատեսված է բացառապես քրիստոնյաների համար»:*

*Ինչ վերաբերում է հայերին, 80-ական թվականներին քարոզում էին ուլեմանները, կարող են և կոտորվել: Անցել է ժամանակը, երբ նրանք վերածվում էին ստրուկի: Ներ-*

---

[148] Կորան, 8-րդ սուրահի 40-րդ այեթ:
[149] Նույն տեղում, 47-րդ սուրահի 4-րդ այեթ:
[150] Նույն տեղում, 9-րդ սուրահի 74-րդ այեթ, 66-րդ սուրահի 9-րդ այեթ:
[151] Թոփչյան Ե., Իսլամ, Թիֆլիս, 1899, էջ 43-44:
[152] *Путешествия Ивана Шильбергера*, стр. 99.

կայումս կարող են ոչխարի նման մորթվել կամ դառնալ մահմեդական: Մահմեդական դառնալով՝ հանցագործություն կատարած քրիստոնյան ազատվում էր պատժից, այլևս տերն էր իր ազգականների ունեցվածքի: Մահմեդականների զվարճության ամենասիրած եղանակը քրիստոնյաների ծեսերը ծաղրելն էր: Միսակատարություններից մեկի ժամանակ մահմեդական իշխանավորը հրամայեց քահանային իր գլխարկը դնել չան գլխին, չուրջառը գցել չան վրա և խնկարկել, իսկ երբ տերտերը հրաժարվեց, նրան ու չանը գցեցին տոպրակի մեջ ու սկսեցին հարվածներ տեղալ: Քահանայի հառաչանքներն ու չան կաղկանձը զվարճություն էին պատճառում մահմեդական ամբոխին:

Մահմեդական կրոնավորները քարոզում էին, թե ոչ մահեդականի ունեցվածքը մահմեդականին հալալ է: Անհավատի հետ «կռիվ տուր, եթե սպանես, դրախտ կգնաս, սպանվես՝ նույնպես»: Հիմնականում կրոնափոխում էին իգական սեռի ներկայացուցիչներին: Սակայն մանկահասակ պատանիների կրոնափոխության դեպքում էլ այդ «թշվառներին նույնն էր վիճակվում, ինչ մանկահասակ օրիորդներին, որովհետև երկուսն էլ միևնույն նշանակությունն ունեին մահմեդական աշխարհում»:

Մահմեդականության հիմքը դրվել էր սրով և այն պահպանվում էր մոլեռանդության միջոցով: Ոչ մահմեդականին համարում էին պիղծ: Դրա համար էլ մահմեդականը խուսափում էր ոչ մահմեդականի հետ հարաբերություններ ունենալուց, որպես կանոն չէր ուտում այլակրոնի պատրաստած կերակուրը, չէր հագնում այլակրոնի կարած հագուստը: Ծայրահեղությունների հասցված խտրականություններից էին նաև ոչ մահմեդականի ինտիմ կապի կամ ամուսնության արգելումը մահմեդական կնոջ հետ, իսլամի ուղուց մահմեդականին շեղելը: Ոչ մահմեդականի տունը չպետք է բարձր լիներ մահմեդականի կացարանից, ոչ մահմեդականն իրավունք չուներ մահմեդականների բնակավայրում չինարարություն կատարել, բարձր երգել կամ նվագել, բարձրաձայն ընթերցել և այլն[153]: Մահմեդականության այդ դոգմաներն ու բարքերը, իհարկե, դեր խաղում էին Օսմանյան կայսրության տարակրոն ժողովուրդների փոխհարաբերություններում, սակայն դրանք չէին թուրքերի ու հայերի առճակատման գլխավոր պատճառը: Այնուամենայնիվ, դարեր շարունակ կայսրությունում գոյություն է ունեցել միլլեթների համակարգը, որը կրոնական անհանդուրժողականության հասկացության չրջանակներում չէր տեղավորվում: Տվյալ դեպքում գերակայությունը տրվում էր քաղաքական չահերին ու նպատակահարմարությանը:

Գոյություն ուներ մի տարօրինակ իրողություն: Չնայած Օսմանյան կայսրությունն ունիտար պետություն էր, սակայն ուներ ապակենտրոնացված կառուցվածք: Նախ՝ տեղական իշխանությունները կիսանկախ էին. փաչան բացի հարկ վճարելուց ու պատերազմներին մասնակցելուց, մյուս բոլոր խնդիրներում ինքնավար էր, կառավարում էր իր ցանկությանն ու նպատակահարմարությանը համաձայն և իր հնարած օրենքներով: Ժամանակակից հասկացողությամբ դա ոչ այնքան ինքնավարություն էր, որքան չհամակարգված անիշխանություն: Վերջինիս բաղադրիչներից էին նաև միլլեթները:

Բ. Բորյանի հետ դժվար է համաձայնել, երբ գրում է. «Օսմանյան կառավարությունը լիիրավ իրավունքներով էր օժտել նաև ազգային եկեղեցիների ղեկավարներին «սեփական ազգին» անբաժան իշխելու համար»[154]: Ավելի ճիշտ է Ի. Գոլոբորոդկոյի բնութագրությունը. «Օսմանյան տիրապետությունում Հայ Եկեղեցին խաղաց քաղաքական սուռոգաթի դեր: Սուլթանը ճանաչեց նրա առանձին քաղաքական իրավունքները, այդ թվում՝ ընտանեկան կյանքին և տնտեսական հարաբերություններին առնչվող խնդիրներում դատավորին, ինչպես նաև ազգային չահերը բարձրագույն իշխանությանը ներկայացնելու իրավունքները: Չնայած այդ իրավունքները շատ հաճախ ձևական էին, սա-

---

[153] Миллер А., *История ислама с основания до новейших времен*, т. I, СПб., 1895, стр. 303-308.

[154] Борян Б. А., նշվ. աշխ., էջ 184:

կայն հայերի գիտակցության մեջ պահպանում էին ցեղային ինքնավարության պատրանքը: Օսմանյան պետության թեոկրատական բնույթը, իր հերթին, հայ ժողովրդի ազգային գիտակցությունը սնեց՝ մահմեդական թուրքը մշտական հակասության մեջ է հայ քրիստոնյայի հետ՝ հանձինս քաղաքացիական իրավունքների ակնհայտ անհավասարության»[155]: Սակայն Բ. Բորյանը միանգամայն իրավացի է, երբ գրում է, թե միլիեթների համակարգը «ավելի էր ընդգծում քրիստոնյաների քաղաքական-տնտեսական կյանքի իրավական կարգավորման համընդհանուր բացակայությունը», թե մինչև 19-րդ դարի կեսերը քրիստոնյաների կյանքը կարգավորվում էր կրոնական իրավական նորմերով[156]: Քրիստոնյա համայնքներից մի բան էր պահանջվում՝ չանհանգստացնել իշխանություններին: Հպատակներին «հնարավորություն էր տրված կառավարվելու՝ համաձայն կառավարողների ճաշակի ու ցանկությունների»[157]: «Հայոց պատրիարքին,– գրում է Բ. Բորյանը,– տրված էր հայ ազգի կառավարչի իրավունք՝ պարտադիր երաշխիքով, որ ամբողջ հայ ժողովուրդը հպատակ մնա սուլթանին, ժամանակին հավաքվեն հարկերը և մուծվեն թուրքական դրամատուն»: Այնուհետև թվարկվում էին պատրիարքին ընձեռնված վարչական իրավասությունները. նա իր տրամադրության տակ ուներ բանտեր, որոշակի թվով զինվորներ: Նշվում էր, որ այդ բանտերում «ամիսներ շարունակ նստել են ոչ միայն հասարակ մահկանացուներ, այլև հոգևոր ու աշխարհիկ նշանավոր գործիչներ, որոնք մեկ անգամ չէ, որ պատրիարքի ներկայությամբ ենթարկվել են ծեծի ու մարմնական այլ պատիժների»: Բ. Բորյանը դա հետևանք է համարում այն իրողության, որ «Օսմանյան կայսրությունում մինչև 1878թ. հայերի ճնշումները, բացի հատուկ նպատակադրումներից, ունեին ոչ թե կրոնական, այլ դասակարգային բնույթ և դրա հետևանքով հայ ազգաբնակչության իշխող դասակարգերը կապերի մեջ էին Թուրքիայի պալատական ու կառավարական շրջանների հետ և վերջիններիի օգնությամբ դասակարգային պայքար էին մղում իրենց հայրենակիցների դեմ»: Նա գտնում է, որ «...հայ ազգի շահագործողները, բռնապետերը և հարստահարիչները հանդիսանում էին նաև հայերի տիրապետող դասակարգերը»[158]: Դրան նա ավելացնում է՝ հայ տիրապետող դասակարգերի բռնությունները հայ աշխատավորական զանգվածների հանդեպ չատ էին[159]:

Իհարկե, հասարակական տարբեր խավեր նաև հակադիր շահեր ունեին, սակայն Արևմտյան Հայաստանում, Կ. Պոլսում, ծովափնյա մյուս քաղաքներում ու հայահոծ շրջաններում սոցիալական հակասությունների միջուկը համարել ներհայկական առճակատումները, առնվազն սխալ է: Սխալ է մի քանի պատճառներով: Նախ, Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի 50-ական թվականներին ազգային առումով միատարր հայկական նահանգ այլևս գոյություն չուներ, բնակչության մոտ կեսը մահմեդական ազգաբնակչությունն էր: Վերջինների՝ դարերի պատմություն ունեցող արտոնությունների հետևանքով, Թուրքիայում դասակարգային հակասություններն այլ չէին, եթե ոչ ազգամիջյան, քանի որ հայերը շահագործվողներ էին, իսկ մահմեդական վերնախավերը՝ շահագործողներ: Իհարկե, դա չի նշանակում, թե հայերի մեջ չկային շահագործողներ և մահմեդականների մեջ՝ շահագործվողներ: Ջկա և չի կարող լինել զտարյուն շերտավորում ունեցող հասարակություն: Սակայն տվյալ դեպքում բնորոշը ներհայկական հակասություններն ու պայքարը չէին, այլ ճնշված, վտանգված ազգի առճակատումը՝ ճնշող և իր գոյության համար սպառնալիք հանդիսացող ազգի հետ: Այն, որ Սահմանադրության համար պայքարի շրջանում հայությունը, մասնավորապես պոլսահայությունը, բաժանվեց երկու հակադիր խմբերի,– մի կողմում՝ Սահմանադրության կողմնակիցների,

---

[155] Головородько И., նշվ. աշխ., էջ 223:
[156] Борян Б. А., նշվ. աշխ., էջ 184:
[157] Նույն տեղում, էջ 185:
[158] Борян Б. А., նշվ. աշխ., էջ 185:
[159] «Փորձ», 1876, թիվ 2:

«լիբերալների և մանր բուրժուազիայի ու մտավորականության մեծ մասը, արհեստավորները և այլն, իսկ մյուս կողմում՝ հակասահմանադրականները՝ հոգևորականությունը, ամիրաները, պետական ծառայողները, մտավորականության փոքրամասնությունը»[160],— չի նշանակում, թե այդ հոսանքների միջև եղած պայքարն էր կենտրոնականը, գլխավորն ու որոշիչը:

Գր. Օտյանը նկատում է, որ 1860թ. Սահմանադրության խմբագրման ժամանակ «Բ. Դուռը դժկամություն էր հանդես բերում պատրիարքից զատ մի այլ գործադիր իշխանություն ճանաչելու գործում»:[161] Ցուադը դեմ էր Ազգային ժողովի իրավունքների մեծացմանը: Սակայն նման վերաբերմունքը հետևանք էր ոչ թե հայ ժողովրդական ուժերի դեմ կրոնական դեկավարների հետ դաշնակցելու Բ. Դռան դիտավորության, այլ ընդհանրապես ժողովրդավարության հանդեպ սուլթանական վարչակարգի թշնամական դիրքորոշման: Ալին ուղղակի հայտարարեց, թե Թուրքիայի ժողովուրդները դեռևս չեն հասունացել սահմանադրական կարգերի համար, որ այդ կարգերը «հնարովի են, անիրականանալի»:

Բ. Դուռը, սկզբում դեմ լինելով սահմանադրական շարժման հետապնդած նպատակին, հետագայում հիմնովին փոխեց իր մոտեցումը՝ գիտակցելով, որ պատրիարքի իրավունքները խուզելը, հայ համայնքը պառակտելը համընկնում էին Թուրքահայության հանդեպ Կ. Պոլսում ձևավորվող նոր մոտեցումներին: Պատահական չէ, որ կողմնորոշվելով դեպի բնաջնջման քաղաքականությունը՝ Բ. Դուռը առաջին հերթին խլեց նախկին սուլթանների կողմից պատրիարքին տրված իրավասությունները և լայնաճակատ հարձակում կազմակերպեց հայ հոգևորականության ու կրոնական հաստատությունների վրա: 1868թ. սեպտեմբերի 19-ին կողոպտվեց Տարոնի Ս. Հովհաննես (Հովհաննու) վանքը: Ավազակները, մտնելով վանքի բակը, «սուր ու հրացան ի ձեռքին կհարձակին, դեմ ելնողին կը զարնեն», նրանք վարդապետին և մի քանի վանականների վիրավորեցին, մյուս բոլորին ծեծեցին ու փակեցին խցերում, ապա «ինչ որ կը գտնեն, բոլորը կը վերցնեն»: Ջարդում են եկեղեցու դուռը, «բոլոր մասունքները, անոթները և զգեստները կհափշտակեն»: 1568 տարվա պատմություն ունեցող վանքը, որ նույնիսկ Լենկթեմուրի հորդաների կողմից վտանգի չէր ենթարկվել, թալանվեց հիմնովին: «...Մեր աչոք տեսանք ողբալի տեսարանը,— գրում է Գ. Սրվանձտյանցը,— երեք տաճար ունի այս վանքը, Սուրբ Հովհաննես, Սուրբ Աստվածածին և Սուրբ Ստեփանոս, երեքն ալ մերկ և կողոպուտ ձգված... Սուրբ Ավետարաններ, ձաշոցներ և Հայսմավուրք կտրտեր էին»[162]: Թեև Մշո մութեսարիֆը ձերբակալություններ կատարեց, «բայց ազգին բնավ ապահովություն չկա: Իրավունք ունինք այս խոսքն ըսելու, վասնզի երկու տարի առաջ Մատնավանքը կողոպտեցին», վանահորն էլ սպանեցին, սակայն «ոչ քննություն մը ու հատուցումը..., քանի՛ հայեր սպանվեցան, և բողոքող մը չեղավ: Ձիարեթ գյուղի եկեղեցին կողոպտեցին», նորից ոչինչ չարվեց: Իսկ «այս տարու չրջանի մեջ յոթն եկեղեցի իրարու ետևք կողոպտեցին, որոնց մեջն ալ բուն Մշո միջի Սուրբ Սարգիս եկեղեցին է... ասոնք ամենը տեղական կառավարությունը գիտե ու միշտ բողոքներ եղած է, բայց և ոչ մեկին դատաստան ու հատուցում եղած չէ: Դարձյալ այս մեկ տարվան չրջանի մեջ 5-6 կնիկ հայերեն փախցուցին, բռնությամբ տաճիկցուցին... Բուն իսկ Մշո մեջ հայերը ի տարապարտաց կը ծեծվին, հավատք և խաչ հայհոյել տաճկաց հասարակ խոսք մը եղած է, մինչև անգամ առևտուր ունեցողներ չեն համարձակիր իրենց պահանջը տաճիկներից: Ազգն արդեն իր հուսահատութենեն երես է դարձուցեր փախչելու Ռուսաստան, վասնզի անտանելի է խղճալյաց վիճակը, արդեն բավական տներ գնացին երկրեն և գրեթե առհասարակ ամենու գաղափարն երթա՛լն է, կառավարության բնավ փույթ չէ... չնորհ

---

[160] «Երևակ», 1861, թիվ 109-114, «Մաղիկ», 1862, թիվ 40:
[161] Օտյան Գր., Սահմանադրական խոսքեր ու ճառեր, Կ. Պ., 1910, էջ 102:
[162] Դիվան հայոց պատմության, գ. ԺԳ, էջ 121-125:

ըրեք ճար մը գտնել, ապա թե ոչ ժողովուրդ կպարպվի, բոլոր եկեղեցիք և վանորայք կամայականն...»[163]:

Մանաշքուտ գավառի Բոգլան գյուղում քրդերը վառեցին եկեղեցին: Տեղի մյուդիրը առանց թաքու անելու «այնքան հողի տեր է, որ ուրիշ գյուղացիներ կբերե իր հողի մեջ իրենց լուծքով վարել կուտա, իրենց սերմով ցանել կուտա, իրենք կը քաղեն, իրենք կը կալսեն: Երբ ցորենը պատրաստ կը լինի, ավդալը (մյուդիրը) կուգա եղած արդյանց (արդյունքի) կեսն ինքը կառնե իբրև իրեն հողի վարձք: Եվ իրեն առած բաժնի տասանորդն ալ գեղացիին վճարել կուտա և ինչը որ տեսնե հայոց քով, որ իրեն հաճո ու պիտանի լինի, կուզե կտանի: Գնացող եկողներեն ալ ինչ որ տեսնեն ու սիրտերն ալ ուզե, կառնեն: Անցյալ տարի Ս. Կարապետի վանից նվիրակը պաշարեր էր գեղի մեջ: Այս տարի ալ երկու բեռ բրինձ խլեց վանքի պտղիեն...»[164]:

Տարոնցիները 1868թ. գրեցին պատրիարքին. «Մշո գավառին մեջ քանի՛-քանի՛ եկեղեցիներ կողոպտեցին ու բացմաթիվ գանձեր տարին, հարյուրավոր աղջիկներ և ամուսնացյալ կնիկներ բռնի մեր սուրբ կրոնքեն դուրս հանին անցյալ տարի, մեր պատվին դիպչեցան և անարգեցին... Թե՛ Մշո մեջ և թե իր գյուղերում ամեն գիշեր զխանութ և զտուներնիս կը պատուեն և զունեցածնիս կը տանին... մենք չենք համարձակիր որևիցե այլազգիներեն զմեր իրավացի պահանջը պահանջել և ուզել: Կամ կանարգեն և կամ կուրանան, թե հայ վկաներ բերենք, չեն ընդունիր, մեր աչխատանաց բերքը երբ մեկին կը ծախե, առնող մուլթազիմչիներ մենակ ցորեն ու գարին կը վերցունեն... քսան դուրուչի բերքեն հարյուր դուրուչեն ավելի կը բռնեն ու մեզմեն կառնուն...»[165]: Մատեն Առաքյալ «վանքեն բարբարոս քրդերը չափազանց արդյունք կը տանեն, այսինքն՝ խաֆիրութիյուն, վերջապես վարդապետներ խղճալի ժողովուրդներեն կառնեն ինչ որ է, քրդերու կոկորդը կլլան, թե կտրվածք և թե դրամ հինգ հարյուրներով, տասը լիտրերով յուղ, կորեկ և այլն»:

1871թ. գրված մի նամակից. «Հայոց գեղերու եկեղեցիք կապականվին, կը պղծվին քրդերեն կամ տաճիկներեն, մենք քաղաքիս (Կարին) փողոցներու մեջ կը հայհոյվինք, միշտ բողոքեր ենք... բայց պատիժ չէ տրված»:[166] «Պղծեցին Մոկաց եկեղեցին: Օրըստօրե մեր եկեղեցին, ազգային իրավունքներ, ինչք և պատիվ առաթուր կը փոխվին անօրինաց և, որ ցավալին է, օրը հարյուր անգամ ուրացութիյան բաղիվին մեջ կինկնինք ակամայից»: Մուշից 1871թ. հուլիսին ստացված մի նամակում կարդում ենք. «Մշո գավառի մեջ չեյխերեն և քրդերեն երեք եկեղեցի պղծվեր է աղբով, տեղվույս և գյուղացի քահանայք փողոցներեն անցած ժամանակը տաճկաց լամուկներ միշտ կրոնք, խաչ և մորուք կը հայհոյեն, իսկ աչխարհականաց և խանութապաններուն այս կերպ հայհոյանք անթիվ է, ինչպես որ չատ անգամ ալ կը ծեծեն, իշխանութիյունը դրա դեմ ոչինչ չի անում, նաև այն բանից հետո, երբ քահանաները բոլոր եկեղեցիները փակեցին և բանալիները տվեցին մութեսարիֆին»[167]:

Առաքելոց վանքի վանահայրը բողոքում է ոմն Իսմայիլ բեկի, թե քրդերից մեկը վանքի միաբաններին հանգիստ չի տալիս: Բեկը ծեծում է այդ քրդին ու բանտարկում: Որոշ ժամանակ անց նա ինչ-որ հիվանդութիյունից մահանում է: Քրդերը, «վանք գալով, մեռածին արյան գին կը պահանջեն, ու 20 ոչխար առնելեն հետո, նորեն արյան գին կը պահանջեն, և քանիցս ալ միաբանին ծեծելով վանքեն դուրս կը հանեն: Ասկե ի զատ... քուրդերը սովորական ըրեր են վանքերեն խաֆիրութիյուն առնել, որ տեսակ մը տուրք է, իբր թե վանքը իրենց սեփականը լինի, ամեն ժամանակ ցորեն, ոչխար, յուղ, ձեթ և ամեն ինչ կը տանեն», համարյա թե «բաժին մը ունին վանքի մեջ»: Նույն վանքի հովվին

---

[163] Դիվան հայոց պատմութիյան, գ. ԺԳ, էջ 121-125:
[164] Նույն տեղում, էջ 132-133:
[165] Նույն տեղում, էջ 143-144:
[166] Նույն տեղում, էջ 206:
[167] Նույն տեղում, էջ 434:

սպանում են և այծերը փախցնում[168]: Քուրդ Ծուսուֆ աղան սպանում է Վարդենիսի տիրացուին, Արտոնքում խեղդում են վարդապետի որդուն[169]: Բիթլիսի գյուղերից մեկում հայտնաբերվեց եկեղեցական մեծ թվով սպասք, որ քուրդը վաճառում էր: Քղիում կայմակամը հրապարակավ խոշտանգեց քահանային: Ջղիմանալով հալածանքներին՝ Առեկ գյուղի չուրջ 60 հայեր դիմում են կաթոլիկություն ընդունելու: «Հիմա,– 1869թ. հուլիսին գրում է Մ. Ճանթեմիրյանը,– 45 հայազգի լուսավորչական գյուղերի ժողովուրդ ձեռքե երթալու վրա են, վասնզի իրենց որ կողմե որ փրկության ձեռք մը պարզվի, այն կողմը պիտի դիմեն...»[170]:

Շատախի հայերի հանրագրերից մեկում կարդում ենք, որ քրդերի համար «մարդասպանությունը, տուն վառելը... սովորական բան է և մեր հավատքը հայհոյելը, մեր եկեղեցիներն աղբանոց դարձնելը»՝ նույնպես[171]: Նույն Շատախի Մարցեղ գյուղում եկեղեցին վերածել էին զուգարանի: Քրդի սեփականություն էր դարձել Կառավանքի եկեղեցին: Ավլավան գյուղի բնակիչները պատրիարքին գանգատվում էին, որ «... համարձակ եկեղեցի չենք կրնար երթալ, խաչերնուս, պաքերնուս կանարգեն, քահանա գա գյուղերնիս՝ կը քարկոծեն, գյուղերնուս միջի բնակիչները բոլորը ցրված են, պատճառը նեղություններն ու հարստահարություններն են»[172]:

Մեծ թվով եկեղեցականներ, մասնավորապես վանականներ, սպանվեցին: Կարճկանի տերտերին սպանեցին կացնով, սպանվեցին նաև Կանգըվար, Միրավա, Նորգեղ, Աստվածաշեն, Կեմ, Տարմանի, Արճեշ, Ճանիկ և մի քանի այլ գյուղերի ու միաբանությունների հոգևորականները:

Գրում է Մ. Խրիմյանը. «Նույնիսկ Մշո մեջ եկեղեցի մը կը կողոպտվի, որն որ հազիվ թիզ մը հեռու է տեղական իշխանութենեն. չեմ հիշեր հոս գյուղերու մեջ պատահած քանի-քանի եկեղեցիներուն կողոպտվելը, չեմ հիշեր Սլիկան գյուղի սրբապղծության դեպքը... չեմ հիշեր քրիստոնյա ընտանյաց հափշտակությունը... չեմ հիշեր դեռ երկու ամսե ի վեր Մուշեն երկու ժամ Սուրբ Հովհաննես վանից իսպառ կողոպտվելուն դեպքը, որուն անչափ հարստությանց հետ... տարած են մեր պաշտելի խաչեր հանդերձ հագվածյուտ մասունքներով»[173]:

Տարոնի Գոմեր գյուղի եկեղեցին թուրքերը վերածեցին ավանակներ պահելու տեղի: Եկեղեցու փայտյա տաճարը քանդեցին և որպես վառելիք օգտագործեցին: Վարժարանն էլ վերածեցին հարկահավաքների նստելավայրի, իսկ ուսուցիչներին բանտ նետեցին:

Քաղվածք մի ուրիշ նամակից. «88-ին գիշերը (քրդերը) կողոպտեցին Ս. Խաչ վանքը: 94-ին մեկ ամսվա ընթացքում ավազակները գիշեր ժամանակ չորս անգամ դարձյալ եկան կողոպտեցին, վանահորը սպանեցին: Եթե ուխտավոր գա, վանքում անկողին չկա, որ գիշերի»:[174] 1890թ. քրդերը կողոպտեցին Թոխե գյուղի եկեղեցին: Նույն եկեղեցին 94-ին ևս երկու անգամ կողոպտեցին: Ներկայումս «եկեղեցին բան մը չունի՝ ոչ գիրք, ոչ ուրկա և ոչ զգեստ»:

Խիզանի հոչակավոր Ս. Խաչ վանքում հաստատվել էր մի քուրդ ցեղապետ ավազակ և թույլ չէր տալիս, որ հայերը վանք մուտք ունենային: Թալանեցին Տարոնի Ջրիկ գյուղի եկեղեցին, ապա նաև Առնջվանի, Մեղտվա եկեղեցիները, հարճակում գործեցին Մշո Զորի թաղի եկեղեցու վրա: Բողոքում էին վանեցիները. «... Ջմնաց եկեղեցվո սրբություն, որ չպղծվեցավ, չմնաց անհատական կյանք և ընտանեական սրբազան պատիվ, որ առաթուր չկոխվեցավ, չմնաց ազգային պատիվ, որ չայպանվեցավ ու զգացումն, որ

---

[168] Դիվան հայոց պատմության, գ. ԺԳ, էջ 60:
[169] Նույն տեղում:
[170] Նույն տեղում, էջ 170:
[171] Նույն տեղում, էջ 254:
[172] Նույն տեղում, էջ 333:
[173] Նույն տեղում, էջ 463:
[174] Նույն տեղում, էջ 481:

*չվիրավորվեցավ...»*[175]*: Մի քուրդ Զատկի տոնին գնում է եկեղեցի և «քահանայի ձեռքեն սուրբ սկիհը կառնե, կը նայե, իր ձեռքով սրբությունը կոտրելով ուրիշներու բերանը կը դնե, հեգնելով պատարագչի ըրածը, և անոր հետ եղած քրդերն ալ կնիկներու երեսները բանալով, իրարու ցույց կուտան, ըսելով. «Սա ինչպե՞ս է, գեղեցի՞կ է»: Ապա քուրդը սրբությունը տանում է գյուղ ու կապում չան պոչից: Քրդերը թմբուկ են խփել տալիս ու «իրենք նստած հրապարակի մեջ կը հրամայեն գեղի ամեն աղջիկ, հարս ու կնիկ գան պար խաղան, որին որ հավնեն, գիշերը իրենց քով պետք է երթան և, եթե մեկն իր աղջիկ կամ հարս կամ կնիկ չղրկե պարելու, անմիջապես պետք է մեկ լավ ոչխար տա աղային պատիվ, ապա թե ոչ...»*[176]*: Քանդեցին նաև Թիլ գյուղի եկեղեցին, որի քարերով քուրդ աղան իր համար տուն կառուցեց: Ապականեցին գործող եկեղեցին, մի քանի եկեղեցիներում հրացան պարպեցին, գողերն ու թալանչիները հայտնի էին, բայց ազատ ման էին գալիս: Մշո փաշայի տան առջև գնդակահարեցին մի հոգևորականի:*

*Ս. Կարապետի մասին Լինչը գրում է. «Քրդերի հոգացողության և թուրքական կառավարության կասկածամտության հետևանքով այդ երբեմնի ծաղկուն վանքը զրկվել էր իր նախկին նշանակությունից: Վանականների բախտն ավելի լավ չէր, քան պետական հանցագործներինն էր... դեռ 1874թ. տպագրական հաստոցի վրա կառավարական արգելք դրվեց: Ներկա հարյուրամյակի կեսերին քրդերը թալանեցին գրադարանը, գրքերն այրեցին ու չաղ տվեցին բակում»*[177]*: Խոսելով Մանազկերտի ճարտարապետական կոթողների մասին՝ Լինչը գրում է. «Հայ հանճարը ստեղծել է այս կառույցները, իսկ թուրքական հանճարը կործանել է դրանք... Չկա մի տուն, որը կառուցված չլինի հին քաղաքի մնացորդներից: Դրանց տերերը՝ հայերը, քշված են իրենց օջախներից»*[178]*:*

*Մի ճանապարհորդ, լինելով Բարդուղիմեոսի վանքում, գրում է. «Երբեմնի հոյակապ, չեն ու հռչակավոր այս եպիսկոպոսանիստ վանքը վերջին մի քանի... տարիներին ենթարկվել է թուրք և քուրդ տարրերի պարբերական բարբարոս ավերածություններին ու կողոպուտին: Աներևակայելի հսկա քարերով կառուցված այս անզուգական վանքի սենյակներն ու խուցերը, որ չինված էին բազմաթիվ ուխտավորների համար, այժմ ծառայում են որպես պահականոց մի վաշտ տաճկական սահմանապահ զինվորներին»*[179]*:*

*Հիշատակելով, որ թուրքերի կողմից արգելվել էր Մ. վարդ. Մուրատեանի «Պատմութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ» (1872, Երուսաղեմ) գիրքը, Արփ. Արփիարյանը մատնանշում է, որ այդ քայլը թուրքական մոլեգնող համընդհանուր ռեակցիայի արտահայտություններից էր, որի ձգտումն էր վերացնել Հայ Եկեղեցու և հավանաբար նաև ազգի գոյությունը: «Բավական չէր, որ դատապարտեցին հայ պատմությունը, բավանակ չէր, որ լռեցրին հայ երգերը, բավական չէր, որ Հայաստան բառը իբրև ժանդախտ հալածեցին, այժմ իրենց ձեռները երկարացնում են մինչև եկեղեցին... Այսօր թուրքերը ուզում են բռնաբարել մինչև իսկ այն դարերը, երբ իրենք նույնիսկ գոյություն չունեին... Ջնջիր այդ պատմությունը և հայ եկեղեցին այլևս անհասկանալի կմնա մեզ համար: Եվ երբ հալածանքը սկսելով Հայկի պատկերից, հասնում են մինչև եկեղեցական պատմությունը, մի՞թե վաղը հերթը չի գալու մեր եկեղեցուն, որ նա էլ թուրքերի ձեռքով մաքրագործվի նրանց հասկացած միջոցներով»*[180]*:*

*Արևմտահայության կյանքում 19-րդ դարը նշանավորվեց նաև նրանով, որ Հայ Առաքելական Եկեղեցու կողքին Օսմանյան կայսրության հայաբնակ շատ շրջաններում ստեղծվեցին հայ կաթոլիկների և հայ բողոքականների համայնքներ: Այդ գործում մասնավորապես մեծ շահագրգռություն հանդես բերեցին Վատիկանը, Ֆրանսիան և Միա-*

---

[175] Նույն տեղում, էջ 493:
[176] Նույն տեղում, էջ 106:
[177] Линч Г., նշվ. աշխ., հ. II, էջ 230:
[178] Նույն տեղում, էջ 351:
[179] «Մուրճ», 1905, թիվ 6:
[180] «Մշակ», 1883, թիվ 80:

ցյալ Նահանգները: Կաթոլիկության (և բողոքականության) ներթափանցումը հայկական միջավայր սկսվել էր չատ վաղուց, բայց միսիոներական և կաթոլիկ քարոզիչների գործունեությունը ծավալուն չարժման վերածվեց 19-րդ դարում: Աստիճանաբար կաթոլիկներն ու բողոքականները ավելի մեծ թվով հայերի էին ներքաշում իրենց գործունեության ոլորտները, բացում միսիոներական դպրոցներ, վարժարաններ, տարածում գրականություն, հիմնում միաբանություններ, նյութական օգնություն կազմակերպում, որբանոցներ ստեղծում, միաժամանակ ծավալում քարոզչություն, որը ոչ քիչ դեպքերում հակասության մեջ էր Հայ Եկեղեցու ավանդությունների, ավանդույթների հետ, հայ հասարակությանը ներքաշում էր դավանաբանական վեճերի մեջ:

Սուլթանական կառավարությունը երկակի մոտեցում ուներ այդ գործունեությանը: Խրախուսում էր, որովհետև այն պառակտում էր հայերին, նրանց զբաղեցնում կրոնական վեճերով ու խոչընդոտում հանուն ազգային ազատագրության միավորվելուն: Ահա թե ինչու՝ Բ. Դուռը 1830թ. ճանաչեց հայ կաթոլիկների, իսկ 1850թ.՝ հայ բողոքականների համայնքները: Միաժամանակ պատժում էր միսիոներական գործունեության մասնակից տեղաբնակներին, որովհետև նրանք հող էին պատրաստում արևմտյան պետությունների քաղաքական ու տնտեսական ներխուժման համար: Մասնավորապես, արագ էր աճում հայ կաթոլիկների թիվը, որ 70-ական թվականներին հասավ 100 հազարի: Նրանք Կ. Պոլսում ստեղծեցին նաև քաղաքական ուժ՝ «Հասունյան կուսակցություն», որն ուներ արական և իգական վարժարաններ, աղքատ ընտանիքների երեխաներին անվճար հագուստ և սնունդ էր բաժանում, նրանցից կաթոլիկ քարոզիչներ պատրաստում և ուղարկում տարբեր գավառներ կաթոլիկական քարոզչություն ծավալելու համար: Հասունյանների դեմ պայքարը վերածվեց հայ առաջադիմական հասարակական հոսանքների գործունեության կարևորագույն ուղղություններից մեկի: Րաֆֆին կաթոլիկների գործունեությունը համարեց հայակործան:

Լայն աշխատանք էին ծավալել նաև ամերիկյան բողոքականները: Նրանք Կ. Պոլսում բացեցին հանրահայտ «Ռոբերտ քոլեջ» բարձրագույն դպրոցը, տպարան, որը վեց լեզուներով գրքեր էր տպում ու ձրի տարածում: Դարի կեսերին բողոքականները Թուրքիայում ունեին 15 գլխավոր և 254 երկրորդական քարոզչարաններ: 1869թ. բողոքական դպրոցների թիվը հասավ 185-ի, իսկ դարավերջին՝ մոտ 400-ի: Բոլոր այդ դպրոցների տնօրեններն ամերիկյան միսիոներներ էին: Բողոքականների դեմ ծառացավ պոլսահայ մտավորականությունը: Ընդհանուր առմամբ՝ դավանաբանական վեճերը բացասական դեր խաղացին արևմտահայության կյանքում:

Չնայած Ղրիմի պատերազմից հետո օսմանիզմի գործիչները գնացին կրոնական համայնքների ազդեցության թուլացման ուղղությամբ՝ կրոնը համարելով այլազգիների ձուլման գլխավոր խոչընդոտը, սակայն ազատագրական չարժումների ծավալման չրջանում Բ. Դուռը փորձեց նորից կրոնական համայնքներին առաջին պլան մղել և հոգևորականությանն օգտագործել քաղաքական այլևայլ խնդիրների լուծման համար: Բ. Դուռը մեծ չանքեր գործադրեց Հայ Առաքելական Եկեղեցու պառակտումը խորացնելու ուղղությամբ: Նախկինում Սիսի և Աղթամարի կաթողիկոսներն ու Երուսաղեմի պատրիարքը ենթարկվում էին Պոլսի պատրիարքին: Վերջինիս իրավունքները «խուզելու» դիտավորությամբ սուլթանը փորձեց դրանք հանել Պոլսի պատրիարքի իրավասությունից և ուղղակի ենթարկել իրեն[181]: Մեծ վեզիր Սայիդը աշխատանք էր տանում իրար դեմ հանելու պատրիարքին և Կիլիկիո կաթողիկոսին: Նա Էրզրումի Մուստաֆա փաչային հղած գաղտնի հրահանգում հանձնարարում է հայ կրոնական համայնքների առաջնորդներին «հույս տալ առանձին-առանձին սուլթանի ողորմածությունով և բոլորին սպասեցնել... իսկ եթե զանազան դավանանքների միմյանց հետ մրցող առաջնորդների միջև

[181] «Դրոշակ», 1891, թիվ 2:

համերաշխություն լինի, պետք է դրանց անմիաբանության համար ամենահարմար առիթ տալ»[182]:

1881թ. նոյեմբերի 15-ին Ն. Վարժապետյանը Սայիդին գրեց, որ Բ. Դուռը հետևողականորեն ձգտում է վերացնել պատրիարքարանի դարավոր իրավունքները, առանց հիմքի Կ. Պոլիս է կանչել գավառի գրեթե բոլոր թեմական առաջնորդներին և տեղերում գործերն անտերության մատնել: Մասնավորապես, հայ հրատարակությունների վրա խիստ գրաքննություն է հաստատվել, բարեկարգումներին համակիր ամեն հայի համարում են ապստամբ ու պատիժների ենթարկում, միջամտում են հայ դպրոցների գործերին, խոչընդոտում նրանց զարգացմանը, հրաժարվում են Հայ Ազգային հիվանդանոցին հատկացնել օրենքով սահմանված վճարը, բարենորոգումների ուղղությամբ ոչ միայն ոչինչ չի արվում, այլև վիճակը գնալով վատթարանում է[183]: Այս նամակին անդրադարձավ նաև օտարերկրյա մամուլը, իսկ Բ. Դուռը պատրիարքին արգելեց այլևս նման գանգատներ գրել, ինչպես նաև կրոնական պարտականությունների չրջանակից դուրս բանակցություններ վարել, դեսպանների հետ տեսակցություններ ունենալ և գրագրությունների մեջ գործածել «Հայաստան» բառը[184]:

Սուլթանը հաճախակի էր դիմում նաև պատրիարքի հրաժարականի սադրանքին: Եվ երբ պատրիարքը հրաժարականը ներկայացնում էր, հարցի լուծումը երկար ժամանակ անորոշության մեջ էր պահում: 1891թ. նույնիսկ Կ. Պոլիս բերեց Բրուսայի թեմի առաջնորդ Բարդուղիմեոսին՝ լուրեր տարածելով, թե մտադիր է նրան կարգել պատրիարք: Նման սադրանքները հայ համայնքում խմորումներ էին առաջացնում, կրոնական խնդիրները երկրորդ պլան էին մղում գավառներում կատարվող բռնություններն ու սպանությունները[185]:

«Գրելու, խոսելու և մինչև անգամ լաց լինելու ազատություն չունենք,— գրում էին Վանից,— Ոչ միայն դպրոցները սահմանափակվեցին, այլև իսպառ զրկվել ենք մայրենի լեզվով գրվածքներ ուսումնասիրելուց, ոչ միայն անթույլատրելի է մեր նախահայրերի մատենագիտության ընթերցանությունը, այլև ում մոտ այդպիսի գիրք գտնվի, բանտարկության կենթարկվի: Եթե այսպես չարունակվի, քիչ օրից եկեղեցու դռները ևս պիտի փակենք, որովհետև արդեն եկեղեցական գրքեր ևս վնասակար համարելով, հետզհետե նոր եկած գրքերը մաքսատանը կձերբակալվեն: Շարականները ձերբակալում են, պատճառաբանելով, թե դրանցում վնասակար օրհներգեր են գրված հայոց թագավորների անունով, մանավանդ «Հայաստան աշխարհ, զորավարք Հայոց» և այլ վնասակար խոսքեր են գործածված... իսկ Հայոց պատմության և Հայաստանի աշխարհագրության մասին գրքեր վաճառողն ու կարդացողը քաղաքական հանցագործներից ամենամեծ մեղավորներն են ճանաչվում»:

Սուլթանը ոչնչի առջև կանգ չէր առնում հայերին վարկաբեկելու, նրանց «դավաճան, ապերախտ, անիշխանական» ներկայացնելու, մահմեդական զանգվածներին հայերի դեմ գրգռելու համար: Նա գրում է. «Պետք է մարդ զարմանա համբերող թուրքերուն վրա: Նա, որ մինչև օրս չփացրել է հայերին, որպես չնորհակալություն նրանց կողմից իր սեփական տան մեջ հարձակման ենթարկվեց: Լեզին խուժեց արյան մեջ: Հայերը, այդ իսկական անիշխանականները, դաշույնով ու ռումբերով մեզ չսպանեցի՞ն»[186]: «Այն, ինչ որ անվանում են բարենորոգումներ..., մեր կործանումն է: Ինչո՞ւ են ցանկանում մեզ հետ ժառանգական թշնամության մեջ գտնվող պետությունները բարենորոգումները մեր գլխին կապել. որովհետև նրանք լավ գիտեն, որ այդ բարենորոգումները պարունակում են մեր պետության կործանման բացիլներ...»[187]:

---

[182] «Մշակ», 03.10.1880:
[183] Նույն տեղում, 06.02.1882:
[184] Նույն տեղում, 20.09.1880:
[185] «Հնչակ», 1891, թիվ 5:
[186] Ցագիկյան Գ., նշվ. աշխ., էջ 814:
[187] Նույն տեղում, էջ 819:

Այսպես էր Աբդուլ Համիդը ներկայացնում հայերի և թուրքերի վիճակն ու հայ-թուրքական հարաբերությունները 19-րդ դարի վերջին տասնամյակներին, մասնավորապես, 1880-ական թվականներին: Բայց այդպես էր ներկայացնում ոչ միայն սուլթանը, այլև առանձին հայ պատմաբաններ: Ինչ-որ սիրահարվածություն է նկատվում 1880-ականների հանդեպ: Համաձայն այդ հեղինակների՝ նշված տասնամյակում էր, որ «Նոր ու գերադրական աստիճանի բարձրացավ հայ ազատագրական, համազգային շարժման գաղափարախոսությունը, սերտացան կապերը Հայաստանի զուտ հատվածների միջև, իրար մերձենալով, գիրկընդխառն պայքարի մարտադաշտ իջան հայաշխարհն ու գաղթաշխարհը, ամենուրեք սկսեցին թևածել Հայոց ազատ, անկախ, միասնական պետության վերընձյուղման կոչերը, որոնք քայլ առ քայլ բյուրեղանալով ապագա գործողությունների ծրագրերի կերպարանք ստացան»: Բաֆֆուն նմանական այս նկարագրություններից հետո կատարվում է գիտական հայտնագործություն՝ այդ տասնամյակը պատմաբանների կողմից վատ է արժեքավորված, որովհետև դա թույլ չեն տվել «Անկարան ու Բաքուն»[188]: Ապա ասվում է, թե «չդիմդով հրապարակ իջան ազգային քաղաքական երեք կուսակցությունները»: Եվ ահա «ազգայինը սոցիալ-դասակարգայինին զոհող այդ կուսակցությունները» «գլխավորեցին հայ ժողովրդի ազատագրական, հեղափոխական պայքարը»[189]: Նշված արժանագրումները կոմիկական տեսք են ստանում, երբ նույն թեզերի հեղինակներից մեկը սկսում է նկարագրել 80-ական թվականների իրադարձությունները: Նա գրում է՝ դա քաղաքական ռեակցիայի վայրագ դրսևորումների տասնամյակ էր: 1880թ. օգոստոսին արգելվեց «Հայաստան» բառի օգտագործումը, 1881թ. մարտին հրապարակավ այրեցին Վարդան Մամիկոնյանի և «Մայր Հայաստան» նկարները, Լևոն VI-ի նկարը վաճառելու մեղադրանքով բանտ նետվեց գրավաճառը, փակվեց Երզնկայի լուցկու ֆաբրիկան, որովհետև դրա արտադրած լուցկու տուփերի վրա գրված էր «Լուցկիք Հայաստանի» և այլն, և այլն: Ջարունակենք, որովհետև համիդյան «հանճարեղ մտահղացումները», ազգային արժեքների դռները հայերի առջև փակելու դասական օրինակները հանրահայտ են: Նաև հանրահայտ է, որ սուլթանական հայացքը երկար կանգ չառավ մտավոր բնագավառի վրա և հայերի դեմ արշավ կազմակերպվեց ընդհանուր ճակատով: Բ. Դռան գաղտնի հրահանգով 1887թ. հուլիսին Զեյթունում հրդեհվեց 1000, օգոստոսին Սկյուտարում՝ 1200, Պրթուշան քաղաքում՝ 1000 տուն, կրակին զոհ գնաց 1200 մարդ: Անհամեմատ ավելի մեծ թիվ էին կազմում հայերի աշխատանոցների, մասնավորապես կրպակների հրդեհումները: 1888-ին հրդեհվեց Բաղեշը, երեք մահափորձ կազմակերպվեց Մ. Խրիմյանի վրա, սուլթանի հրամանով խեղդամահ արվեց բժիշկ ազատամարտիկ Հ. Քյաթիպյանը, բանտ նետվեց «Թերզիման էքքյար» թերթի խմբագիր Ճևելեկյանը, Վանից արտաքսվեցին Մ. Խրիմյանն ու Մ. Փորթուգալյանը, իսկ Տարոնից՝ Մ. Սարեյանը և Մ. Նաթանյանը: Հայ գործիչների ձերբակալություններն ու աքսորը գնալով զանգվածային բնույթ էին ստանում:

Միանգամայն իրավացի է պրոֆ. Հ. Ղազարյանը, երբ գրում է, թե հայերի հանդեպ սուլթանական հարձակման կարևոր բաղկացուցիչներից էր առաջինների ունեցվածքի ոչնչացումը, նրանց թշվառության մատնելը: Խնդրի լուծման միջոցները բազմազան էին, որոնց շարքում երկրորդական տեղում չէին հրդեհի միջոցով այդ ունեցվածքի ոչնչացումը: Բեռլինի կոնգրեսին հաջորդած տարիներին հրո ճարակ դարձրեցին տասը քաղաքների հայ բնակիչների ունեցվածքը: Հրդեհները շարունակվեցին 1888-ին: Մարաշում կրակի տրվեց 580 կրպակ, 14 սրճարան, մոտ 30 տուն, Արմաշում՝ 134 տուն, վանքը, դրան կից վարժարանի շենքը: 1891թ. հրդեհը կուլ տվեց Պեչիկթաշի հայերի տները, հաջորդ տարի՝ Ենի գավառի հայերի 286 տնտեսություններ:

---

[188] Ղազարյան Հայկ, նշվ. աշխ., հ. 1, էջ 509:
[189] Նույն տեղում, էջ 510:

*Այս ամենը նույնիսկ անտեղյակ մարդու մեջ տպավորվում է որպես մահասփյուռ համակարգ. այդ համակարգը սկսել էր գործել և կոչված էր Հայկական հարցը լուծել Թուրքավարի, այսինքն՝ հայաթափել Արևմտյան Հայաստանը:*

*Էրզրումում Անգլիայի հյուպատոսը ահազանգում էր «մի ամբողջ ազգի (Հայության) նկատմամբ» «հատուկ կազմակերպված ընդհանուր հետապնդման» մասին*[190]*:*

*Ակնհայտ էր, որ պատրաստվում էր հայերի կոտորած և ինչպես գրում է Ֆ. Ղոսեյնը. «Սուլթանի ընտրած գործիքը քրդերն էին... Աբդուլ Համիդը նրանց զինեց ժամանակակից հրացաններով և որպես համիդյան ժանդարմերիա ուղղեց հայերի դեմ: Սպանությունն ու կողոպուտը ծառայություններ էին, ինչը պահանջվում էր քրդերից... այս քաղաքականության արդյունքն անարխիան էր ու արյունահեղությունը, ինչն Աբդուլ Համիդի սրտով էր: Հայերը դիմեցին պատասխան միջոցների: Որոշ լեռնականներ ըմբոստացան: Քրդերին անմիջապես ուժեղացրին օսմանյան կանոնավոր բանակային զորամասերով և բորբոքեցին Փոքր Ասիայի մահմեդական թուրքերի մոլեռանդությունը»*[191]*:*

*1860-1896թթ. Կ. Պոլսում ավելի շատ հայ է ջարդվել, քան 1915-ին:*

*1894-1896թթ. ջարդերը նախապես պլանավորված էին, դա է վկայում նաև համիդիե գնդերի ստեղծումը, որոնք կազմակերպվեցին հենց այդ նպատակով, ինչպես նաև հայերի ջարդերի դաժան և սահմռկեցուցիչ եղանակները, հարյուր հազարավոր քրիստոնյաների կրոնափոխությունը (ուծացումը), հայ որբերին աճուրդի հանելը, տնային ստրուկներ կամ հարճեր դարձնելը, ստրկավաճառությունը: Օսմանյան ամենանշանավոր գործիչներից մեկը՝ Սայիդը խոստովանում է, որ Աբդուլ Համիդ 2-րդի գահակալության չորսանում «Ամենածանրը այլահավատների՝ գյավուրների, վիճակն էր»*[192]*:*

*Աբդուլ Համիդը Ա. Վամբերիին հավաստիացնում է. «Ի՞նչ է Հայկական հարցը, բավական է մի հարված, որպեսզի չախչախվի ողջ չարժումը»:*[193] *Նա օսմանյան իշխանություններին հանձնարարեց՝ հայկական նահանգներում «խեղդամահ անել ազգային չարժումները, ազգային լեզուն, գիրն ու դպրությունը», որ «Հայաստան անունն» իսկ դադարի գոյություն ունենալ*[194]*:*

*Ջեմ կարծում՝ ճիշտ է նաև կարծիքը, թե Զուլումի տարիները հիմնականում ընդգրկում էին 1890-ական թվականները. եթե 1880-ական թվականները հայերի «խաղաղ» բնաջնջման, ապա 1890-ական թվականները զանգվածային ջարդերի, հայկական հարցը զենքի ուժով լուծելու տարիներ էին: Զուլում, հալածանք, արտաքսում ու նաև՝ ջարդ՝ ահա 80-ական թվականներին սուլթանական քաղաքականությունը: Սեբաստիայի վալին 1890թ. հայտնում է, թե նահանգի բանտերում այլևս տեղ չկա, իսկ ռուսական ներկայացուցիչը տեղեկագրում է. «Հյուպատոսները դեսպանատներ են ներկայացնում թուրքերի և քրդերի կողմից կատարվող սպանությունների, կողոպուտների և բռնությունների ընդարձակ ցուցակներ»*[195]*:*

---

[190] **Lepsius J.**, *Die große Politik der Europäischen Kabinette 1871-1914.* Berlin, 1922, S. 190.

[191] **Chessein F.**, *Die Türkenherrschaft und Armeniens Schmerzensschrei* ... Zürich, 1918, S. 15.

[192] *ԱՎՊՐԻ, Ֆ. 151, оп. 482, д. 3145.*

[193] *Տե՛ս* **Բարբուրդյան Վ.**, *Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում*, Երևան, 1989, էջ 220:

[194] *ՀՀԳՎԻԱՐ, Ֆ. ՎՍԱ, оп. 138/139, д. 478.*

[195] *ԱՎՊՐԻ, Полтархив, д. 3447.*

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

# ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳԵՆՈՑԻԴ

## 1. ՏԵՍԱԿԵՏՆԵՐ, ԹՎԵՐ, ՓԱՍՏԵՐ

*Թուրքական պատմագրությունն ու քարոզչությունը, ձգտելով մերժել Հայոց ցեղասպանության իրողությունը, ամենից առաջ չահարկում են ժողովրդագրական տվյալները: Խնդիրը մեկն է. ապացուցել, որ Օսմանյան կայսրությունում 1.5 միլիոն հայ ոչնչացվել չէր կարող, քանի որ այդքան հայ Թուրքիայում չէր բնակվում: Թուրքական հեռուստահաղորդումներից մեկում (1986թ. ապրիլի 14-ին) ասվեց. «Հայերի ցանկությունն է, որ թուրքերն ընդունեն, թե 1915թ. սպանվել է 1.5 միլիոն հայ... եթե օսմանցիները նույնիսկ ցանկանային սպանել 1.5 միլիոն հայ, չէին կարող, քանի որ կայսրությունում այդքան հայ չկար»:*

*Է. Քարալը, մերժելով Օսմանյան տարածքում Հայաստանի գոյությունը, նշում է, որ «կայսրությունում ձևավորված էին հայերի մի քանի կուտակումներ Ստամբուլում և Անատոլիայի արևելյան ու հարավային մասերում, որոնցում նրանք մեծամասնություն չէին: Ըստ բրիտանական վիճակագրության՝ Առաջին աշխարհամարտի նախօրյակին հայերն Արևելյան Անատոլիայում բնակչության միայն 1/5-ն էին կազմում, իսկ, օրինակ, Ադանայի վիլայեթում 420 հազար բնակչից հայ էր ընդամենը 40.7 հազարը, այսինքն՝ 10%-ը: Ծրվածության, միասնության բացակայության և նման այլ գործոնների թելադրանքով հայերի հիմնական մասը խոսում էր թուրքերեն: Հայերենը մոռացածներին կոչում էին «թուրք քրիստոնյաներ»»[1]: Քարալի «թեթև ձեռքով» հարցը պարուրվում է կեղծարար, նենգ մոտեցումների մի սարդոստայնով: Նա նույն հարթության վրա է դնում Կ. Պոլիսն ու Արևմտյան Հայաստանը՝ չեչտելով, թե երկուսում էլ հայերը ոչ թե բնիկներ, այլ էկվորներ էին: Զարգացնելով Է. Քարալի մտքերը՝ թուրք մի այլ պատմաբան՝ Ա. Բուրանը, գրում է, որ վեց վիլայեթների հայերը կազմել են բնակչության ընդհանուր թվի միայն 10%-ը: «Ինը հարց, ինը պատասխան» գրքույկում նշվում է, թե 1.5 միլիոն հայ ոչնչացնելու պնդումներն անհիմն են: «Անհնար է պարզել զոհվածների թիվը, քանի որ այդ ժամանակ մահերի գրանցման մատյաններն ամենուրեք չէ, որ լրացվում էին»: Առաջին աշխարհամարտի նախօրյակին կայսրությունում հայերի թիվը տարբեր հեղինակների մոտ տարբեր է նշված: Օրինակ. Մարսել Լեարը (Գր. Զոհրապ), հիմնվելով պատրիարքարանի տվյալների վրա, նշում է 2560000, Բաստրմաջյանը (Արմեն Գարո)՝ 2038000, Փարիզի խաղաղության կոնֆերանսին (1919թ.) Հայկական պատվիրակության ներկայացրած տեղեկագիրը՝ 2250000, պատմաբան Գ. Արսլանը՝ 1800000, Ֆրանսիական Դեղին գիրքը՝ 1555000, Բրիտանական Հանրագիտարանը՝ 1500000, Լինչը՝ 1345000, 1914թ. օսմանյան պաշտոնական մարդահամարը՝ 1295000, Լոնդոնի տարեկան տեղեկատուն՝ 1055000 թվերը: Ըստ այդմ էլ՝ «Հայերը,– կարդում ենք այդ գրքույկում,– կազմում էին իրենց պահանջած տարածքի ազգաբնակչության չնչին մասը»: Այնուհետև բերվում են հայկական վեց վիլայեթների ու Կիլիկիայի հայ բնակչության թիվն ու տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր կազմում ըստ վիլայեթների. Էրզ-*

[1] Karal E. Z., *La Question Arménienne*, Ankara, 1975, p. 8.

*րում՝ 645702 բնակչից հայ էր 134967-ը (20.9%), Բիթլիսի 430000-ից՝ 80798-ը (18.79%), Խարբերդի 574814-ից՝ 69718-ը (12.04%), Դիարբեքիրի 471462-ից՝ 79129-ը, (16.78%), Սըվազի 1086015-ից՝ 170433-ը (15.68%), Ադանայի 403539-ից՝ 97450-ը(24.14%), Հալեպի 995758-ից՝ 37999-ը (3.87%), Տրապիզոնի 10477000-ից՝ 47200-ը (4.5%): Այսինքն՝ հայերը կազմում էին նշված վիլայեթների բնակչության 1/4-ը: Հայերի թվի վերաբերյալ Արևմուտքի ու թուրք պատմաբանների տվյալները տատանվում են 1056000-ից 1555000-ի միջև: «Ուրեմն ինչպե՞ս կարող էր 1.5 միլիոն հայ կոտորվել, եթե նույնիսկ ընդունենք, որ կոտորվել են կայսրությունում ապրող բոլոր հայերը...»[2]:*

*Իրականում որքա՞ն հայ է զոհվել, հարցնում են գրքույկի հեղինակները ու պատասխանում. «Միությունն և առաջադիմություն կուսակցության համագումարին տված զեկուցման մեջ Թալեաթը նշում է 300 հազար զոհ»[3]: Ֆրանսիացի հոգևորական, մոնսենյոր Տուչեն զոհերի թիվը նշում է 500000, անգլիացի պատմաբան Թոյնբին՝ 600000, Պողոս Նուբարը՝ 300000: Ժամանակակից ամերիկյան պատմաբան Լոուրին գրում է. «Կայսրության հայ ազգաբնակչության խնդրում թուրքական կառավարության հավաքած տվյալները դեմոգրաֆիկ առումով ճիշտ ու տրամաբանական են: Այդ տվյալների երևան գալը պատճառաբանված չէ քաղաքական ու քարոզչական նկատառումներով: 1912թ. վեց վիլայեթներում բնակվում էր 870000 հայ», այսինքն՝ բնակչության միայն 20%-ը[4]: Ամերիկյան մի այլ գիտնական՝ Մ. Գյունտերը, գտնում է, որ հայերը թուրքական տարածքների հանդեպ որևէ իրավունք չունեն, քանի որ «նույնիսկ 1915 թվից առաջ նրանք ազգային փոքրամասնություն էին կազմում այն երկրում, որ նրանք կոչում են Հայաստան»: Նույն կարծիքին է Ջ. Մաքարթին: Նա գրում է, որ Փոքր Ասիան հարյուրամյակների ընթացքում «լրիվ մահմեդական էր դարձել»[5]:*

*Հայերի փոքրամասնություն լինելու պնդումը սանդրանքի է նման, քանի որ անտեսում է այն իրողությունը, որ Արևմտյան Հայաստանում փոքրամասնություն էին կազմում նաև թուրքերն ու քրդերը՝ յուրաքանչյուրն առանձին վերցրած: Այո, թե՛ Ջեյմս Բրայսը և թե՛ Ռիչարդ Հովհաննիսյանը գրել են, որ հայերն իրենց պատմական հայրենիքում փոքրամասնության էին վերածվել, սակայն նաև իրողություն էր, որ հայերն այդ տարածքում ամենաբազմամարդ էթնիկական խումբն էին:*

*Հայերի թվական կազմի կեղծարարությունները հին պատմություն ունեն, բայց ձևավորված տեսակետի վերածվեցին սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի պալատում: Հայ հեղինակներից մեկն իրավացիորեն նկատում է. «Երկյուղը, կասկածամտությունը սպառնացող ուրվականների նման կարծես միշտ կանգնած են Ելդըզի գլխին ու չարունակ ստիպում են... ամենապարզ, ամենահասարակ փաստերն աղավաղել: Եվ հենց դրանից էլ առաջ են եկել այն հակասական տեղեկությունները, որ գոյություն ունեն թուրքահպատակ հայերի թվի մասին»[6]:*

*Իրականությունն այն է, որ 19-րդ դարում հայկական վիլայեթների ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալների հիմքում, որպես կանոն, դրվում էին Աբիդինի կողմից 1880թ. հնարված թվերը: Տերությունների կառավարություններին թուրքական նոտայում նշված էր, որ «Վանի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Էրզրումի, Սըվազի հայ բնակչության պաշտոնական ցուցակագրությունը հետևյալ արդյունքն է տվել: Հայերի թիվն ամբողջ բնակչության համեմատությամբ հասնում է 17%-ի, մյուս ոչ մահմեդական համայնքներինը՝ 4%-ի, իսկ մահմեդականներինը՝ 79%-ի»[7]: Սրան հետևում է Անգլիայի կառավարության հանձնարարությունն իր հյուպատոսական ծառայություններին՝*

---

[2] *Neuf questions...*, pp. 13-19.
[3] *Նույն տեղում:*
[4] *"Armenian Reporter"*, 7-14-ը *Հունիսի*, 1984:
[5] *Նույն տեղում:*
[6] «*Լույս*» *հանդես-օրացույց*, *Թիֆլիս*, 1904, *էջ* 198:
[7] *Положенне армян в Турции...*, стр. 94.

ստուգել թուրքական նոտայում բերված փաստերի ճշտությունը, և Բ. Դռանը ներկայացված նոր նոտայում ասվում էր. «Բ. Դուռը չանում է նսեմացնել այդ (61-րդ) հոդվածի նշանակությունը՝ վկայակոչելով ամբողջ ազգաբնակչության թվի համեմատությամբ ինչպես հայ, այնպես էլ քրիստոնյա մյուս բնակչության թիվը: Նոտայում ներկայացված աղյուսակն այն աստիճանի է տարբերվում բոլոր մյուսներից, որ տերությունները չեն կարող այն ընդունել որպես բացարձակ ճշմարտություն»[8]:

Ռուսական արքունական խորհրդական, հայատյաց Գրյազնովը խոստովանել է, որ հայկական վիլայեթներում ազգաբնակչության հաշվառումն ու թվերի հրապարակումը «Անկարելիության չափ դժվար է... Ավելի կանոնավոր աղբյուրը» հայերն են: Նույն միտքն է արտահայտել նաև անգլիական դիվանագետ Լեյքոն: Նա գրում է. «Բիթլիսի վիլայեթի բնակչության, որը դեռ 19-րդ դարի կեսերից անվանվում էր թուրք, անփույթ ցուցակագրությունների, դրանցից բնակչության խուսափելու և քրդական շատ ցեղերին ցուցակագրելու անհնարինության պատճառով, ճիշտ թիվը որոշելն անհնար է»[9]:

Համաձայն պատրիարքարանի տվյալների, 1878թ. հայկական նահանգներում բնակվում էր 1831200 մարդ, որոնցից մահմեդական՝ 776500, քրիստոնյա՝ 807650 մարդ[10]: Իսկ Աբիդինի ներկայացրած տվյալներով այդ նահանգներում բնակվում էր 4424700 մարդ, որից մահմեդական՝ 3252750, քրիստոնյա՝ 992250 մարդ[11]: Այս երկու փաստաթղթերում հայերի թվի հարցում էական տարբերություն չկա, իսկ մահմեդականների թիվը Աբիդինի նոտայում ավելի է երեք անգամ:

Դեռ հնուց օսմանյան կառավարողները ձգտել են կայսրությունում մահմեդականություն դավանող և թրքալեզու բոլոր ազգերին ներկայացնել իբրև թուրք, միտումնավոր կերպով «օսմանցիություն» և «մահմեդականություն» տարբեր հասկացությունները համարել հոմանիշ և համազոր թուրք ազգության հասկացությանը, մինչդեռ այդ անուններից առաջինը ծագել է Օսմանից և լոկ պետականության անվանում է, իսկ երկրորդը սերում է Մուհամմեդից և զուտ կրոնական է[12]:

Իրոք, Օսմանյան կայսրությունում ստեղծվել էր վիճակագրական մի այնպիսի չփոթ, որն անհնարին էր դարձնում երկրի ազգային կազմի վերաբերյալ նույնիսկ մոտավոր թվեր իմանալը: Մինչև օրս էլ Թուրքիայում գործածության մեջ են քրիստոնյաներ և մահմեդականներ հասկացությունները: Որպես կանոն, քրիստոնյա բառի տակ նկատի ունեն հիմնականում հայերին, իսկ մահմեդական բառի տակ՝ երկրի բոլոր մահմեդականներին՝ անկախ նրանց ազգությունից: Ըստ այդմ էլ, քրիստոնյա և մահմեդական ազգաբնակչության թվական հարաբերակցություն ասելով, հասկանում են մի կողմում՝ հայերի, իսկ մյուս կողմում՝ ամբողջ մահմեդական ազգաբնակչության թվական փոխհարաբերությունը, ինչը համեմատաբար դյուրին է, քանի որ երկրի արևելքում քրիստոնյա բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր էին և մնացած քրիստոնյաների թվի ավելացումը պատկերը էականորեն չէր փոխում: Վիճակագրության հիմքում դնելով ոչ թե ազգային, այլ կրոնական պատկանելությունը՝ թուրքական քաղաքագետների համար նկատելիորեն հեշտացավ թե՛ երկրի ներսում և թե՛, մասնավորապես, արտասահմանում իրողությանն անտեղյակ անձանց, այդ թվում նաև պատմաբաններին, «համոզել», որ հայկական պահանջատիրությունն այլ բան չէ, եթե ոչ զավթողական մոլուցք: Նման մոտեցումը թուրքերի համար ոչ թե անցողիկ, այլ մշտական ու հիմնարար քաղաքականություն էր: Այն նաև նպատակ ուներ անտեսելու կայսրությունում բնակվող մահմեդական մյուս ժողովուրդներին՝ ձևավորելու համար մի մթնոլորտ, որը հեշտացներ այդ

---

[8] Նույն տեղում, էջ102:

[9] *Известия Министерства иностранных дел*, 1913, кн. II. стр. 117.

[10] Մարկոսյան Ս., նշվ. աշխ., էջ 319.

[11] Նույն տեղում:

[12] Հայկական հարցը խաղաղության համաժողովին առջև, Հ. Բաբսեղ, Վ. Սաֆրաստյան, Բեյրութ, 1987:

տարրերի թուրքացումը և նաև աչխարհի աչքից թաքցներ կոտորածների, ձուլման ու թալանի օսմանյան բարքերը:

Մինչդեռ բազմաթիվ վկայություններով ապացուցված է, որ Արևմտյան Հայաստանում թուրքերի թիվն աննչան էր՝ հիմնականում պաշտոնատարներ, ոստիկանություն ու բանակայիններ: Էրզրումի ռուսական հյուպատոսը վկայում է, որ Բայազետի ամբողջ սանջակում, բացի քաղաքից, թուրք բնակչություն գրեթե չկար: Անգլիայի հյուպատոս Լեյքոն Բիթլիսի վիլայեթի մասին գրում է. «Երկրի տերերը՝ թուրքերը, չատ փոքրաթիվ են, ամբողջ բնակչության հազիվ 3-4%-ը կազմեն»[13]: 19-րդ դարի կեսերին Արևմտյան Հայաստանի բնակչության ընդամենը 15%-ն էր թուրք:

Ինչ վերաբերում է քրդերին, ապա Բրոկհաուզի և Էֆրոնի տվյալներով, նրանց ընդհանուր թիվը 2.5 միլիոն էր: Քրդերի «կեսից ավելին բնակվում էր Թուրքիայում»: Նրանց 60-70%-ը Քրդստանի, այսինքն՝ Տավրոսի հարավային փեչերի բնակիչներ էին, իսկ մոտ 500 հազարը բնակվում էր Արևմտյան Հայաստանում: Ֆ. Գրինը գրում է. «Թուրքիայի քրդերի թիվը հասնում է 1.5 միլիոնի, որից 600 հազարը բնակվում էր Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում»[14]:

Որ Արևմտյան Հայաստանի բնիկներն ու ազգաբնակչության գերակչիռ մասը հայ էր, կան բազմաթիվ, այդ թվում՝ նաև թուրքական հեղինակների վկայություններ: Յակուտը՝ արաբ պատմիչ, Երզնկայի մասին գրում է. «Ժողովուրդն անվանում է Արզանքան: Շատ հաճելի, անվանի, ճոխ ու բազմամարդ քաղաքներից մեկն է... բնակչությունը մեծիմասամբ հայեր են»: Արճեշի մասին. «...Բնակիչները մեծիմասամբ հայ քրիստոնյաներ են»[15]: Ճապաղջրի մասին. «Մի ընդարձակ գավառի անուն է Արմենիայում՝ Դիարբեքիրին սահմանակից: Բնակիչները քրիստոնյա հայեր են»: Մարաչի մասին. «Ներբողագիր բանաստեղծը հիչատակություն է արել այս քաղաքի մասին, ասելով. «Վրնջում են հայկական նժույգները Մարաչում»»[16]: Մանազկերտի մասին. «Բնակչությունը բաղկացած է հայերից ու հույներից»:

Վ. Ռուբրուկը (Ֆրանսիա) 1253թ. Փոքր Ասիայում լինելուց հետո գրել է, որ հայերը «Թուրքերի երկրում», այսինքն՝ Իկոնիայի սուլթանությունում կազմում են բնակչության ճնշող մեծամասնությունը: «Դուք պետք է գիտենաք թուրքերի մասին, որ նրանց երկրում տասը մարդուց մեկը սարակինոս է, գրեթե ամբողջությամբ հայեր են ու հույներ»[17]: Մարկո Պոլո. «Մեծ Հայքը մեծ երկիր է, որի բնակիչները հայեր են, որոնք հյուսում են աչխարհի ամենանուրբ և ամենագեղեցիկ գորգերը»[18]: Լ. Խանդոկոնդիլ (15-րդ դար). «Սուրմալուն Փոքր Ասիայի ամենախոչոր քաղաքներից էր, ուներ մինչև 120 հազար բնակչություն, գերազանցապես՝ հայեր»[19]: Ք. Զելեբի (XVIIդ.). «Դիարբեքիրի Հիթեմի նահիեի բնակչության մեծ մասը և ռայաները հայեր են... Շախի նահիեի բնակիչները նույնպես հայերն են... Փազարջըքում (Մարաչի մերձակայքում) բոլոր բնակիչները ջուլհակներ ու հայ քյաֆիրներ են»»[20]: Շապին Կարահիսարում կար 1600 տուն հայ բնակչություն: Քաղաքի առաջին տերը եղել է Հայկունի մյուլուք (Հայկազյան իչխան) Կիամերլյանը: Հետո այն անցել է Տրապիզոնի հայերին: Մինչև 17-րդ դարը Աբաղայի դաչտում կար 300 հայկական գյուղ: Մի այլ թուրք պատմիչ՝ Սելանիկը (16-17-րդ դդ.)

---

[13] *Известия Министерства иностранных дел*, 1913, кн. II. стр. 117.

[14] *Положение армян в Турции...*, стр.254.

[15] Նույն տեղում, էջ 195:

[16] Նույն տեղում, էջ 206:

[17] Հակոբյան Հովհ., *Ուղեգրություններ*, հ. Ա, էջ 20:

[18] *Положение армян в Турции...*, стр.46.

[19] *(Chalcocondyle) Histoire générale des Turcs. Contenant l'histoire de Chalcocondyle.* Paris, tt. 1-2, 1662.

[20] Զելեբի Ք., *Ջիհրան Նյումա*, Կ. Պոլիս, 1732, էջ 440, 599 *(արաբատառ թուրքերեն)*:

գրում է, որ Էրզրումի 10 հազար արչին երկարութիւն ունեցող պարիսպը կառուցվել է հայերի ուժերով ու միջոցներով[21]: Արաբ պատմիչ Բատատու. Երզնկայի «բնակիչների մեծագույն մասը հայ է...»[22]: Տավերնիե (17-րդ դար). «Թոկատից մինչև Թավրիզ երկիրը բնակեցված է գրեթե միայն քրիստոնյաներով: Այդ լայնածավալ տարածքը հնուց կոչվում էր Հայաստան և զարմանալի չէ, որ գյուղերում ու քաղաքներում մի մահմեդականին ընկնում էր 50 հայ»[23]: Թուրք պատմիչ Ջևդեթ (16-րդ դար). «Օսմանյան պետության ռայաներից ամենաբազմամարդը հայ ժողովուրդն է»[24]:

1772թ. Մադրասում լույս տեսավ Մորերի «Տետրը», որտեղ նշվում է, թե Մեծ ու Փոքր Հայքերում բնակվում էր 4644000 հայ ընտանիք (պետք է հասկանալ չունչ): Քառասուն տարում հայերի թիվը կրճատվեց 1/3-ով և կազմեց 3.1 միլիոն: Այնուհետև, ըստ տարիների, մինչև 1878թ. տարբեր հեղինակներ նշում են կայսրությունում բնակվող հայերի, ինչպես նաև թուրքերի և քրդերի հետևյալ թվերը: Գ. Հասել՝ գերմանացի գիտնական, 1822թ.՝ 1690000 հայ[25]: 1844թ. Թուրքական վիճակագրության «Սալնամեներ» (տեղեկագրեր). 3400000 հայ, 1000000 քուրդ[26]:

Եթե Ուբիչինին համաձայն է պատրիարքարանի հրապարակած տվյալներին, ապա շատ գիտնականներ դրանք խիստ նվազեցրած են համարում և գտնում են, որ 1844թ. արևմտահայերի թիվը կազմել է 3.5 միլիոն: "Revue francaise" պարբերականի 1886թ. մայիս-հունիսի համարում տպագրած հոդվածում Բրուսալին նշում է, որ 1850-60-ական թվականներին Օսմանյան կայսրությունում բնակվում էր 3.8 միլիոն հայ, որը կազմում էր կայսրության բնակչության 1/5-ը և նրա ասիական տարածքների բնակչության 1/3-ը[27]:

Ուբիչինի. «1845 թվին՝ 2400000 հայ, որից 2000000-ը նահանգներում»[28]: Կ. Մարքս. «1850-ական թվականներին՝ 2400000 հայ»[29]: Դ. Ուրքվարդը նշում է 2,9 միլիոն թիվը: Ֆրահեր Ֆոն Ռեդեն՝ ավստրիացի գիտնական. «1856 թվին՝ Եվրոպական Թուրքիայում և Կ. Պոլսում՝ 1100000 թուրք, 720000 սլավոն, 400000 հայ: Ասիական Թուրքիայում՝ 2500000 թուրք, 2000000 հայ, 1000000 քուրդ»[30]: Է. Ռևենսթեյն՝ անգլիացի գիտնական. «1877 թվին նահանգներում՝ 859000 հայ, 514000 քուրդ»[31]: Հայոց ազգային ժողով. «1862 թվին՝ 2500000 հայ»[32]: «Մասիս», 1867թ.՝ 3000000 հայ: «Մշակ», 1872թ. թիվ 32.՝ 3000000 հայ: 1868թ. հայկական նահանգներում բնակվում էր 1914200 մարդ, որից թուրք՝ 442500, քուրդ՝ 1049500, քրիստոնյա՝ 649000[33]: Կ.Ղազարոսյանի «Տիեզերական տարեցույց»՝ 1873 թվին՝ 2500000 հայ:

1913թ. «Հորիզոն»-ը գրեց, որ «Սալնամեների» տվյալներով 70-ական թվականներին կայսրությունում բնակվում էր 3600000 հայ, որից վիլայեթներում. Սեբաստիայի՝

---

[21] Թուրքական աղբյուրները..., Հ. Բ, Երևան, 1964, էջ 119:
[22] Իբն-ի Բատատու, Երևան, 1949, էջ 31:
[23] Tavernier J., *Les six voyages.* Paris, 1678-1681, I partie, p.32.
[24] Թուրքական աղբյուրները..., Հ. Ա, Երևան, 1961, էջ 239:
[25] Ալթանասյան Եր., Հայ ժողովրդի թիվը Թուրքիայում մինչև 1915թ., Բոստոն, 1965, էջ 7:
[26] Նույն տեղում, էջ 8:
[27] *Les revendications de l'Arménie, par* **J. Broussali**. *"Revue française" de l'étranger et des colonies*, Paris, 1886, p.517:
[28] **Убичини А.**, *Изображение современного состояния Турции в географическом, статистическом, религиозном и военном отношениях.* СПб., 1854, стр. 16.
[29] **Маркс К. и Энгельс Ф.**, *Сочинения*, т. X, стр. 171.
[30] Ալթանասյան Եր., նշվ. աշխ., էջ 8:
[31] Նույն տեղում, էջ 10:
[32] **Evi M.**, *Türk Cumhuriyet Tarihi*, Ankara, 1946, s. 69.
[33] *F.O. 424/106, pp. 306-307, №151/1.*

900000, Կարինի՝ 650000, Վանի՝ 650000, Բաղեշի՝ 400000, Խարբերդի՝ 500000, Տիգրանակերտի՝ 500000[34]:

Ֆ. Գրինը և Է. Ռեկլյուն դարավերջին հայերի թիվը նչում են 2500000[35]: Նույնը և Լ.Քոնստանսոնը[36]:

Սան Ստեֆանոյի բանակցություններին ներկայացված տվյալներ. 1.150 միլիոն հայ, 0.4 միլիոն թուրք, չուրջ 100000 քուրդ: Երկու վիլայեթների բնակչության ընդհանուր թիվը՝1.7 միլիոն. այսինքն՝ հայերը կազմում էին բնակչության 2/3-ից ավելին, Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսային չրջաններում՝ 180 հազար հայ, 130 հազար թուրք, 40 հազար քուրդ:

Մկրտիչ բեյ Դադյանը հայերի թիվը 1860-ական թվականներին նչում է 3.4 միլիոն[37], Րաֆֆին ու Գր. Արծրունին՝ 3 միլիոն[38]:

1878թ. պատրիարքարանը մարդիկ ուղարկեց տեղերը պարզելու հայերի ճիչտ թիվը: Ուսումնասիրության արդյունքներով կայսրությունում բնակվում էր 2660000 հայ, որից 1631200-ը՝ Արևմտյան Հայաստանում[39]: Բեռլինի կոնգրեսին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ներկայացրած տվյալներով, որոնք հիմնված էին 1877թ. պաչտոնական վիճակագրության «Սալնամեների» վրա՝ 2066000 բնակիչ, որից հայ էր՝ 1330000:[40] Կոնգրեսին պատրիարքարանը ներկայացրեց հայերի նաև հետևյալ թվերը՝ երեք միլիոն, որից 400 հազարը Եվրոպական Թուրքիայում, 600 հազարը՝ Անատոլիայում և Կիլիկիայում, 670 հազարը՝ Փոքր Հայքում, 1.3 միլիոնը՝ Մեծ Հայքի Թուրքահպատակ նահանգներում[41]: Բեռլինում, երբ հայկական պատվիրակությանը հարցրին, թե հայ ու մահմեդական բնակչության թվերի ինչպիսի հարաբերակցություն գոյություն ունի, պատասխանը եղավ հետևյալը. Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթների համար (բացառությամբ Սղերդի) մահմեդականների թիվն է 528000, իսկ ոչ մահմեդականներինը՝ 1172000 մարդ[42] (Բ. Դուրը Բեռլինի կոնգրեսին ներկայացրել էր վեց վիլայեթներում՝ 586000 հայ)[43]:

"Правительственный вестник"-ը 1878թ., N 112՝ կայսրությունում 3000000 հայ, որից 400000-ը՝ Կ.Պոլսում և Բալկաններում[44]: "Telver salnamesi"՝ օսմանյան պետական տարեգիրք. 1880թ. ինը նահանգներում (Վան, Բիթլիս, Էրզրում, Խարբերդ, Սեբաստիա, Դիարբեքիր, Տրապիզոն, Ադանա, Հալեպ)՝ 3902625 մահմեդական, 726000 հայ[45]: Գր. Զոհրապ. 1880 թվականներին՝ 3000000 հայ[46]: Վահան Վարդապետը 1886թ. դեկտեմբերի 15-ին Կ. Պոլսում հայտարարեց՝ կայսրությունում բնակվում է 1263900 հայ:

Թրոթեր՝ 1880թ. ինը նահանգներում բնակվում էր 4500000 մահմեդական, 908000 հայ, 350000 այլ ազգությունների պատկանող քրիստոնյա[47]: Զելենով՝ 4450000 մահմեդական, 913000 հայ, 600000 այլազգի քրիստոնյա[48]: Կ. Պոլսում ԱՄՆ-ի հավատարմա-

---

[34] Համբարյան Ա., Արևմտահայերի թվաքանակի հարցի չուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1962, թիվ 2:

[35] Грин Ф.Д., *Армянский кризис и владычество турок, см. "Положение армян в Турции"*, стр.255, Ռեկլյու Էլիզե, Լազիստան, Հայաստան, Քուրդիստան: Վաղարշապատ, 1893, էջ 70:

[36] «Նոր կյանք» (Լոնդոն), 15.05.1901:

[37] Дадян Мкртыч-бей, *Армяне Оттоманской империи*, Тифлис, 1878, стр.8.

[38] «Մշակ», 1872, թիվ 30:

[39] Մարկոսյան Ս., նչվ. աչխ., էջ 319:

[40] «Ծրագիր կազմակերպական կանոնագրի օսմանյան Հայաստանի», Կ.Պ., 1878, էջ 9, 22:

[41] Համբարյան Ա., նչվ. աչխ.:

[42] *Blue Book*, Turkey, №6, p. 127.

[43] «Բանբեր Երևանի համալսարանի», 1962, թիվ 2:

[44] Խաթանասյան Եր., նչվ. աչխ., էջ 12:

[45] Նույն տեղում:

[46] Զոհրապ Գր., Հայկական հարցը փաստաթուղթերուն լույսին տակ, Բեյրութ, 1976, էջ 14:

[47] Խաթանասյան Եր., նչվ. աչխ., էջ 12:

[48] Նույն տեղում:

տար Ս. Քոքս և Ռոլեն Ժեկմեն՝ 2400000 հայ[49]: Վ. Քինե՝ ֆրանսիացի հեղինակ, 1882թ. ինը նահանգներում՝ 4450000 մահմեդական, 840000 հայ, 630000 այլ ազգի քրիստոնյա: Ասիական Թուրքիայում՝ 1181066 հայ: Մահմեդականներից՝ 3203423-ը թուրք և 785000-ը քուրդ: Նույն հեղինակի տվյալներով՝ 1892-95 թվերին կայսրությունում բնակվում էր 1369644 հայ, որից Ասիական Թուրքիայում՝ 1169644-ը[50]: Ֆիլիպովը ներկայացնում է 2,55 միլիոն թիվը[51]: Թուրքական "Sabah" թերթ. «Ամբողջ Թուրքիայում հայերի թիվը, ներառյալ մայրաքաղաքում բնակվողները, 1893թ. կազմում էր 997369 մարդ»[52]: 1896թ. Արևմտյան Հայաստանում բնակվում էր, ըստ Լինչի՝ 1058000 և ըստ Ա. Վամբերիի՝ 1130000 հայ[53]: Զ. Վիլսոն՝ Թուրքիայում Անգլիական հետախուզության ղեկավար, 1897թ. 2500000 հայ[54]: Ա. Վանդալ՝ 1908 թվին 2000000, "Moyeoc" (Լեյպցիգ, 1908թ., էջ 147)՝ 2350000 հայ: Երիտթուրքերի կառավարությունը. 1912 թվին՝ 600000 հայ[55]:

Պատրիարքարան. 1912 թվին վեց վիլայեթներում՝ 1178000 մահմեդական, 1183000 քրիստոնյա (1018000 հայ): Այս թվերի մեջ չէր մտնում Հաքյարիի և Սղերդի, Դիարբեքիրի ու Մալաթիայի հարավային և Սըվազի արևմտյան ու հյուսիս-արևմտյան տարածքների բնակչությունը[56]:

1913թ. հայ բնակչության թիվը ըստ Ց. Լեփսիուսի՝ 1880000, Ժակ Մորգանի՝ 2330000, "Raycpost" պարբերականի՝ 1880000, ԱՄՆ-ի սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի՝ 2006000[57]: 1914թ. հայ բնակչության թիվը Թեոդիկը նշում է 2027700[58]: Ռ. Գևորգյանի ու Պ. Թորոսյանի տվյալներով՝ 1913-1914թթ. կայսրությունում բնակվում էր 1914620 հայ, որոնք տեղաբաշխված էին հետևյալ կերպ՝ Կ. Պոլիս՝ 163670, Թրակիա՝ 30316, Իզմիթի սանջակ՝ 61675, վիլայեթներում. Բրուսայի՝ 118992, Զմյուռնիայի՝ 21145, Կոնիայի՝ 20738, Կաստեմունիի՝ 13461, Տրապիզոնի՝ 73395, Անգորայի՝ 135869, Սեբաստիայի՝ 204472, Ադանայի՝ 119414, Հալեպի՝ 189565, Խարբերդի՝ 124289, Դիարբեքիրի՝ 106867, Էրզրումի՝ 202391, Բիթլիսի՝ 218404, Վանի՝ 110897[59]: Վիճակագրական տվյալներով վեց վիլայեթներում և Կիլիկիայում 1914թ. բնակվում էր 1850000 քրիստոնյա (որից 1403000 հայ) և 1635000 մահմեդական: Ընդհանուր հաշվով կայսրությունում բնակվում էր 2.5-2.6 միլիոն հայ:

Բրուսալին գրում է. «Սուլթանի հպատակները միշտ վախենում են, որ մարդահամարը պատրվակ կդառնա նոր հարկեր նշանակելու համար և որպեսզի վստահելիորեն դրանից խուսափեն, թաքցնում են իրենց իսկական թիվը: Այդ վախի ազդեցության տակ հայերը չեն համարձակվում բացահայտել իրենց իսկական թիվը նույնիսկ սեփական նոտարին: Սխալի մյուս պատճառն այն է, որ թուրքերի հանդեպ սարսափի հետևանքով շատ հայեր իրենց դնում են տարբեր հյուպատոսությունների հովանավորության տակ, որպեսզի օգտվեն կապիտուլյացիաներից, այսինքն՝ դուրս լինեն թուրքական օրենքների գործողության շրջանակից, ինչը Թուրքիայում շատ հեշտ էր ձեռք բերվում դրամական մուծումների օգնությամբ»: Մյուս կողմից՝ վիճակագրությունը նկատի չէր առնում մեծ թվով հայկական գյուղերը, որոնք լեռներում էին, որտեղ այն ժամանակ քրդերը կառա-

---

[49] Նույն տեղում:

[50] *Сборник географических, топографических и статистических материалов по Азии.* СПб., 1895, стр.25.

[51] Саркисян Е., *Аграрная политика османского правительства в Западной Армении,* Е., 1967, с. 117.

[52] Գանգրունի Հ., նշվ. աշխ., էջ 147:

[53] Խաչանասյան Ը., նշվ. աշխ., էջ 13:

[54] Նույն տեղում և Вандаль А., *Армяне и турецкие реформы.* СПб.,1908, стр.6.

[55] Նույն տեղում:

[56] Խաչանասյան Ը., նշվ. աշխ., էջ 15:

[57] Խաչանասյան Ը., նշվ. աշխ., էջ 15:

[58] Թեոդիկ, «Ամենուն տարեցույց», ԺԶ տարի, 1922, էջ 261-263:

[59] Bilâl N.S., *British Documents on Ottoman Armenians,* Ankara, 1982 կամ *F.O. 424/118, pp. 109-110.*

վարական գործակալներին ներս չէին թողնում: Հետաքրքիր է Բրուսալիի հետևյալ միտքը. «Եվրոպացի ճանապարհորդները, որոնք սովորաբար այցելում էին Բալկաններ ու Փոքր Ասիայի արևմտյան շրջաններ, հակված են մտածելու և ամենուրեք տարածելու այն միտքը, որ հայերը, որոնց նրանք ամենուրեք տեսել են ոչ մեծ թվով, ճիշտ նույն ձևով ցրված են Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում: Բայց դա սխալ է, նրանց մեծ մասը դեռևս զբաղեցնում է նախկին հայրենիքի հողը»[60]:

«Վերջին հարյուրամյակին,– գրում է Լինչը,– հայ բնակչությունը մշտապես աճել է, և գրեթե համոզված կարելի է ասել, որ տոկոսային առումով մահմեդականներից արագ է աճել: Հյուպատոս Բրանտը հայտնում է, որ 1858թ. Վանում կար ոչ պակաս, քան 7000 տուն, որից հայերինը՝ միայն 2000-ը: Այս գնահատմամբ՝ քաղաքի բնակչությունը կազմել էր մոտավորապես 35000, որից 25000 մահմեդական և 10000 հայ... իմ այցելության ժամանակ քաղաքում Այգեստանի հետ միասին հաշվվում էր մոտ 30000 մարդ, որից մահմեդականները միայն 10000-ն էին, իսկ հայերը՝ 20000-ը»[61]: Սիվերսի տվյալներով՝ 1893թ. կայսրությունում հայերի թիվը հասնում էր 3 միլիոնի: Անատոլիայում բնակվում էր 11 միլիոն մարդ, որից մահմեդական՝ 6.5 միլիոն: Թուրք էր չուրջ 5, իսկ քրիստոնյա՝ 6 միլիոնը: Այլ կերպ ասած, թուրքերը մեծամասնություն չէին ոչ միայն հայկական նահանգներում, այլև իրենց երազների հայրենիքում՝ Անատոլիայում, ընդ որում, եթե հունական էին ծովափնյա տարածքները, հայկական՝ Հայաստանը՝ բերրի դրախտային երկիրը, ապա թուրքերը ցրված էին կենտրոնական Անատոլիայում՝ «դժնդակ կլիմա, աղքատ բնություն, ցանցառ ազգաբնակչություն՝ հիմնականում վաչկատուն ցեղեր»[62]:

Բերված թվերը մեկ անգամ ևս ապացուցում են, որ բարենորոգումների հիմքում հայերի թիվն ու բնակչության ընդհանուր կազմում նրանց տոկոսը դնելը՝ լրիվ աղճատեց կայսրության հայկական վիլայեթների դեմոգրաֆիկ պատկերը: Եղած տվյալներով՝ 1870-80թթ. հայ բնակչության թիվը կրճատվել էր 1-1.5 միլիոնով, որը գործնականում անհնար էր:

Ռուսական աղբյուրները նշում են, որ 1890թ. հայկական նահանգների բնակչության 38.5%-ը թուրք էր, 35 %-ը՝ հայ, 15.2%-ը՝ քուրդ[63]: Ըստ Դեյվերի՝ 90-ական թվականներին Արևմտյան Հայաստանում բնակվում էր 500000 հայ, 500000 թուրք, 450000 քուրդ: Գերմանացի գիտնական Կ. Շտայնհաուզի կարծիքով՝ կայսրության 2-2.5 միլիոն հայերի 2/3-ը բնակվում էր հինգ նահանգներում, մյուսները՝ ծովափնյա քաղաքներում[64]:

Ըստ Ա.Տևկանցի՝ 1878թ. Սալնո Ջորի (Բիթլիսի կազայի) բնակիչների թիվը 31113 էր, որից հայ՝ 20473, քուրդ՝ 10640: Սասունում ու հարակից շրջաններում բնակվում էր 124153 մարդ, այդ թվում հայ՝ 66808, քուրդ, 57345: Մուշ քաղաքի մերձակա 98 գյուղերում կար 56,5 հայ, 36415 քուրդ: Բիթլիսի նահանգում՝ 67 հայաբնակ գյուղ, որտեղ ապրում էր 20473 հայ, 10640 քուրդ[65]:

Մկրտիչ բեյը գրում է, որ Կ. Պոլսում հայ ընտանիքների թիվը հասնում էր 30 հազարի, և եթե նկատի առնվի, որ ընտանիքը միջին հաշվով ուներ հինգ անդամ, ապա քաղաքում բնակվում էր 150000 հայ[66]:

---

[60] *Положенне армян в Турции...*, стр.8 կամ *Les revendications de l'Arménie, par* **J. Broussali.** *"Revue française"de l'étranger et des colonies*, p. 517.

[61] **Լինչ Գ.**, նշվ. աշխ., հ. *II*, էջ 101:

[62] ԳԱԹ, ֆ. **Առաքելյան Հ.**, գ. 79, թթ. 6, 7, 11:

[63] Նույն տեղում, թ.15:

[64] **Steinhaus K.**, *Soziologie der türkischen Revolution.* Frankfurt, 1969, S. 40.

[65] **Տևկանց Ա.**, *Այցելություն ի Հայաստան*, 1878, Երևան, 1985, էջ 47-127:

[66] **Дадян Мкртыч-бей**, նշվ. աշխ., էջ 8:

Կոլյուբակինի կարծիքով հայերը գերակշիռ տարր էին Մուշ–Բուլանըխ հարթավայրում՝ Մուշի, Բուլանըխի և Ախլաթի կազաներում, որտեղ նրանք կազմում էին բնակչության 50-60%-ը, Վանի կազայում ու Վան քաղաքում հայ էր բնակչության 4/5-ը, Խարբերդի հարթավայրում հայերը բնակչության նշանակալից ու հարուստ մասն էին: Նրանք բնակչության 1/3-1/4 մասն էին կազմում Էրզրումի դաշտում ու Էրզրում քաղաքում, Վանա լճի արևելյան ափին՝ Ադլջևազի կազայում, լճի հարավային ափին՝ Գյավաշի, Կարճկանի և Բիթլիսի (գլխավորապես քաղաքում) կազաներում,Վարդոյի կազայում, Ռշիի կազայի՝ հյուսիսային մասում, Բալուի կազայում: «Մնացած տարածքներում,– գրում է նա,– հայերը փոքրաթիվ են, գերազանցապես քաղաքաբնակ: Հայերի թիվն ամենափոքրն էր Բայազետի, Դիադինի, Ղարաքիլիսեի, Այնթապի և Բերկրիի կազաներում»[67]:

Հարկ է զգուշ վերաբերվել ոչ միայն թուրքական, այլև եվրոպական հեղինակների տվյալներին, որովհետև չատ հաճախ վերջիններիս համար աղբյուր հանդիսացել են թուրքերն ու օսմանյան վիճակագրության նյութերը: Թեյլորի նշած թվերով, օրինակ, Բիթլիսի վիլայեթում մոտ երկու անգամ ավելի չատ մահմեդական էր բնակվում, քան հայ: Օլթիի, Արդահանի, Արդանուչի կազաներում մահմեդականների թիվը հայերի թվին գերազանցում է 6.5, Բայազետի մութեսարիֆությունում՝ 4, Վասպուրականում, Էրզրումի, Դիարբեքիրի վիլայեթներում՝ 2, Խարբերդի վիլայեթում՝ մոտ 3 անգամ[68]: Իսկ, օրինակ, Տրապիզոնի նահանգում ՝ 20 անգամ[69]:

Մինչդեռ Թրոթերը նույն թվականին Սոլսբերիին գրում է, որ Էրզրումի վիլայեթում մահմեդականների թիվը հայերի թվից ավելի է միայն 1/2-ով[70]: Ջափազանցությունից զերծ չի մնացել նաև Է. Ռեկլյուն: Ըստ նրա, հայկական նահանգներում երկու անգամ ավելի չատ մահմեդական էր բնակվում, քան հայ:

Հայ ազգաբնակչության, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի ազգային կազմի վերաբերյալ թվերի վայրիվերումները հետևանք էին ա)քաղաքական չահադիտության, բ) օսմանյան վիճակագրության կեղծարարության և գ) մարդահամարներ անցկացնելու գործում եղած դժվարությունների և խոչոր թերությունների: Ընդ որում՝ ներկայացվող տվյալներում ազգաբնակչության թվաքանակի տատանումները հասնում են երկու անգամի: Կեղծարարության եղանակները տարբեր են, բայց արդյունքները՝ նույնը: Օրինակ, ըստ օսմանյան «Սալնամենների» Խարբերդի նահանգի հայերի թիվը 46.790 էր: Մինչդեռ զինվորական հարկ վճարում էր 44.286 արական սեռի հայ: Եթե դրան ավելացվի իգական սեռին պատկանողների թիվը, ապա կստացվի, որ նահանգում բնակվում էր 88.6 հազար հայ:

1877-1912թթ. թուրքերը կոտորել են 341 հազար, արտաքսել 437760 հայ: Ընդհանուր առմամբ, բնաջնջվել ու արտաքսվել է մոտ մեկ միլիոն հայ: Իհարկե, դա ծանր անդրադարձավ արևմտահայության թվի վրա: Ա. Ալպոյաճյանը գրում է, որ 1896-1900թթ. Կեսարիայում ծնվել էր 1995 և մեռել 1208 հայ: Առաջնորդարանի տվյալներով՝ տարեկան ծնունդը միջին հաշվով կազմել է 400, իսկ մահացությունը՝ 240 հոգի: Այսինքն, բնական աճի ցուցանիշները բարձր էին՝ 12-13%: Նույն պատկերն էր նաև Նիկոմեդիայում: Սակայն թե՛ Կեսարիայում և թե՛ Նիկոմեդիայում հայ ազգաբնակչության թիվը ոչ միայն չէր աճում, այլև պակասում էր:

Ջուլումի քաղաքականության գլխավոր խնդիրը հենց այդ էր՝ բռնի միջոցներով ու տնտեսական հարկադրանքով հայ բնակչության թիվն այնքան պակասեցնել, որ առավելագույնս գերազանցեր բնական աճի տեմպերին, ինչը որոշակի ժամանակահատվածում հանգեցնելու էր հայերի անհետացմանը՝ որպես ազգային ինքնուրույն միավորի:

---

[67] Колюбакин А. М., նշվ. աշխ., էջ 112-113.

[68] *F.O. 424/86, p. 232, №310/2 igt Blue Book,* Turkey, №16 (1877), p. 16.

[69] Նույն տեղում, *№10 (1879)*, pp. 79-80.

[70] *F.O. 424/86, p. 232, №31012.*

*Սակայն սուլթանը նաև հասկանում էր, որ այդ ուղին չատ աշխատատար էր ու տևական ժամանակ էր պահանջում: Անհրաժեշտ էր այն «արագացնել» մարդագրական զեղծումների օգնությամբ, մանավանդ որ դա անելու համար Թուրքիայում ավելի քան բարենպաստ պայմաններ կային:*

## *2. ԲԱՅԱՐՁԱԿ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ*

*Տարօրինակից բացի, սխալ ու վտանգավոր հարցադրում է. «Հայոց թիվը... ճշգրտորեն որոշել հնարավոր չէր, քանզի բացակայում էին ստույգ մարդահամարների, վիճակագրական անկողմնակալ տվյալները: Բարդություններն իրենց առավել զգացնել էին տալիս նախաբեռլինյան արևմտահայության համրանքը որոշելիս...»: Եվ ապա. «...Մինչև Բեռլինի կոնգրեսը (1878թ.)... Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության թվաքանակին վերաբերող նյութերին պետք է վերաբերվել քննադատաբար»: Թվարկվում են այդ նյութերին վերապահումներով վերաբերվելու պատճառները՝ «հավաքված նյութերը միշտ չէ, որ հասել են կենտրոնական վիճակագրական գրասենյակ», չատ գավառներում մարդահամար կա՛մ չէր անցկացվում և կա՛մ դրա նյութերը տեղ չէին հասնում, «ներկայացված վիճակագրություններն էլ քմահաճորեն փոխվել են թուրք կխատգրագետ պաշտոնյաների գրչով», «երկրում գոյություն չեն ունեցել մահվան և ծննդյան առանձին մատյաններ», «Հայերը ամեն կերպ խուսափում էին ճիշտ կամ ճշգրիտ տեղեկանք հայթայթելուց, երկյուղ կրելով, որ իսկական տվյալները կը ծառայեն պատրվակ տուրքերի հավելումի»: Ինչ վերաբերում է Հայոց պատրիարքարանին, ապա նա «անգամ Ազգային սահմանադրության հաստատումից հետո, բնավ փորձ կամ ջանք չէ դրել գեթ հնարավոր չափով մարդահամար կատարելու[71]: Այս ամենը, անխոս, ճիշտ է: Բայց պնդել, թե ետբեռլինյան մարդահաշվառումն ավելի մոտ է ճշմարտությանը, քան մինչբեռլինյանը՝ պարզապես երևակայությունից դուրս է, որովհետև իրականում հակառակն էր: Գլխավորը ոչ թե վիճակագրության սխալները, դժվարություններն ու թերությունները էին, այլ կեղծարարությունը, ինչին թուրքական կառավարությանը մղեց Բեռլինի կոնգրեսը նույն այն պատճառով, որ բարենորոգումների հիմքում դրեց հայերի թվական տեսակարար կշիռը «Հայաբնակ նահանգներում», որով սուլթանին հուշեց նվազեցնելու հայերի թիվը՝ դա լինի արտամղման, ուծացման, ջարդի, թե «վիճակագրական գենոցիդի» միջոցով: Այլապես ինչո՞վ բացատրել, որ այդ «ոչ հավաստի» նախաբեռլինյան շրջանում կայսրության հայերի թիվը նշվում էր 3,5 միլիոն, իսկ 1880-ին (Աբդիդինի նոտա)՝ միայն 700 հազար: Վերջապես ինչպե՞ս պատահեց, որ 17-րդ դարում Արևմտյան Հայաստանի բնակչության 98%-ը հայեր էին (Վ. Տերյանի օգտագործած թիվն է), իսկ 20-րդ դարասկզբին՝ միայն՝ 40%: Նման չեչտակի նվազման գլխավոր պատճառ համարել միայն սուլթանական հայահալած քաղաքականությունը՝ հազիվ թե ճիշտ է: Եթե նկատի առնվի երկու դարերի ընթացքում նաև հայության բնական աճը, ապա խոսքը 4-5 միլիոն հայ մարդու մասին է:*

*Ճիշտ չէ նաև պնդումը, թե արդեն 19-րդ դարի երկրորդ կեսին հայերն Արևմտյան Հայաստանում կազմում էին «ազգաբնակչության համեմատական մեծամասնությունը: Տևականցի կազմակերպած հաշվառման տվյալներով՝ վեց վիլայեթներում բնակվում էր 1.6 միլիոն հայ, 600000 թուրք, 150000 քուրդ և 100000 ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչներ: Ընդամենը՝ 850000 հոգի: Այսինքն՝ խոսքը ոչ թե հայերի հարաբերական, այլ պարզ մեծամասնության մասին է[72]:*

---

[71] Ղազարյան Հ., հ. I, էջ 52, 23: Ներսիսյան Ե., Հայոց թիվը, Բոստոն, 1965, էջ 5-6:

[72] Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2005, թիվ 10-11, էջ 174:

*Բեռլինի կոնգրեսին պատրիարքարանի ներկայացրած տեղեկանքում Օսմանյան կայսրությունում հայերի թիվը նշված է երեք միլիոն: Վեց վիլայեթներում, ըստ այդ տեղեկագրի, բնակվում էր 2062000 մարդ, որից հայ՝ 1330000, թուրք՝ 530000, քուրդ՝ 150000*[73]*: Պատրիարքարանի 1882թ. տեղեկագրում նահանգներում բնակվող հայերի թիվը նշվում է 1630000*[74]*: Ռոլեն Ժեկմենը նույնպես գրում է, թե 1870-ական թվականներին կայսրությունում բնակվում էր 3000000 հայ*[75]*: Ֆ. Գրինի տվյալներով նույն այդ ժամանակաշրջանում «թուրքիայի քրդերի թիվը հասնում էր 1,5 միլիոնի, որից 600000-ը բնակվում էր էրզրումի, Վանի և Բիթլիսի, իսկ մնացածը՝ Խարբերդի, Դիարբեքիրի, Մոսուլի, Բաղդատի վիլայեթներում»*[76]*:*

*1880-ական թվականներից սկսած՝ արևմտահայության թիվը չեչտակի անկում ապրեց: Հայկական գավառներում, գրում է «Արաքս»-ը 1894-95թթ, «կհանդիպենք բազմաթիվ գյուղերի՝ կանգուն եկեղեցիներով, նույնիսկ կանգուն տներով՝ անմարդաբնակ և ամայի ձգված իրենց բնակիչներից»: Գրում է Մ. Խրիմյանը. «Այսպես հայու հողեն քանդել կուզե հայոց արմատը, որպեսզի հետո ասե. «Ո՛չ հայ կա, ո՛չ Հայաստան» և այս կերպ փակե Արևելյան խնդիրը և պատասխան տա քրիստոնյա տերությանց»*[77]*: Պատրիարքարանի տվյալներով, օրինակ, եթե 1882թ. Բիթլիսի վիլայեթում կար 250000, ապա 1912-ին՝ միայն 172 հազար հայ բնակչություն*[78]*:*

*Այսպես էր, 1850-60-ական թվականներին Արևմտյան Հայաստանում հայերը կազմում էին ոչ թե հարաբերական, այլ իրական մեծամասնություն: «Թուրքիայում ազգային փոքրամասնությունների ամենաբնութագրական գիծն այն էր,– գրում է Գ. Կրյաժինը,– որ իշխող ազգությունն Անատոլիայից բացի ոչ մի տեղ մեծամասնություն չէր: Հայաստանում թուրքերը ներկայացված էին միայն պաշտոնատարներով ու զինվորականներով: Մշակույթի բնագավառում նույնպես օսմանցիները նշանակալից չափով զիջում էին հայերին և հույներին»*[79]*:*

*Սակայն Զուլումի տարիներին և առանձնապես 1894-96թթ. կոտորածներից հետո՝ վիճակը սկսեց գլխապտույտ արագությամբ փոխվել և, ինչպես նշում է Յ. Լեփսիուսը, 1913թ. հայկական վիլայեթներում հայերն արդեն կազմում էին բնակչության միայն 38.9%-ը, չնայած չարունակում էին մնալ ամենաբազմամարդ ազգությունը*[80]*: Լինչը գրում է. «...1895 թվի կոտորածների հետևանքով հայերի թիվը փոքրացել էր... ամբողջ գյուղեր ջնջվել էին երկրի երեսից: Այնուամենայնիվ, Վան քաղաքի 30000 բնակչից հայ էր 20000-ը: Բիթլիսի սանջակում հայ էր 77000-ից 30400-ը, Մուշ քաղաքում և նրա կազայում՝ 56500-ից 35300-ը, Մշո սանջակի 125000-ից 61200-ը և այլն»*[81]*: «Թուրքական նահանգների համար,– չարունակում է նա,– ես միայն մեծագույն չարչարանքով կարողացա ձեռք բերել այս կամ այն չափով հավաստի վիճակագրական տեղեկություններ ազգաբնակչության մասին... Մարդահամար չլինելու պատճառով... բոլոր թվերը կարող են միայն մոտավոր լինել»*[82]*:*

*Թուրքիայում հայ ազգաբնակչության թվի մասին կարելի է տվյալներ վերցնել երկու աղբյուրներից՝ մարդահամարի հաշվետվություններից և պատրիարքարանից: Համաճայն Ազգային սահմանադրության (1863թ.) թիվ 14 և 96 հոդվածների, եկեղեցիները*

---

[73] *«Մշակ»*, 1878, թիվ 10:
[74] *«Արարատ» (Էջմիածին)*, 1914, թիվ 9:
[75] Ролен-Жекмен М., *Армения, армяне и трактаты.* М., 1896, с. 62-63.
[76] *Положение армян в Турции до вмешательсва держав в 1895г.*, М., 1896, с. 254.
[77] *Տե՛ս*, Լապչան Գ., *Հայաստան և Հայ դատը*, Փարիզ, 1946, էջ 119:
[78] *«Արարատ»*, 1914, թիվ 1 և 2:
[79] Гурко-Кряжин В.А., *История революции в Турции.* Москва, 1923, стр. 43.
[80] *"Der christliche Orient"*, May, June, 1913.
[81] Линч Г., *նշվ. աշխ.*, էջ 531-533:
[82] *Նույն տեղում*, էջ 533.

պարտավոր էին իրականացնել ծնունդների և մահացությունների ճշգրիտ գրանցում և դրանց մի օրինակը ուղարկել պատրիարքարան: Սակայն եկեղեցիները «դժվարությամբ էին ցույց տալիս իրենց գրանցումները»: Դրանցում հայերի թիվը չէր համընկնում կառավարական ցուցակների թվերին, որոնք կազմվում էին հարկերի համար՝ ծխական գրանցումները միտում ունեին նվազեցնելու ազգաբնակչության թիվը: «Ինչ վերաբերում է տղամարդկանց, պաշտոնական վիճակագրության թվերը վերցված են զինվորական մարդահամարից, որը չատ անկատար աղբյուր էր, քանի որ յուրաքանչյուր ոք ձգտում էր հաչվառումից խուսափել: Նստակյաց բնակչությունից հավանաբար քրիստոնյաներն ավելի, քան իրենց հարևան մահմեդականները, ձգտում էին խույս տալ մարդահամարից, քանի որ քրիստոնյա ընտանիքի բյուջեին վտանգ էր սպառնում արական սեռի երեխան ծննդյան իսկ օրից: Մյուս կողմից, լեռնաշղթայի հարավային մասում կային լայնածավալ մարզեր, որտեղ բնակվող քուրդ ցեղերը ապրում էին գրեթե լրիվ անկախ և երբեք ոչ մի մարդահամարի չէին ենթարկվում: Դրա համար պաշտոնական ցուցակներից պետք է օգտվել մեծ զգուշությամբ՝ դրանք ենթարկելով մանրազնին քննարկման... Տեղեկությունների այս աղբյուրներին հարկ է ավելացնել այն տվյալները, որոնք ստացվել են իրավիճակին քաջատեղյակ անձանցից»[83]:

Լինչի վկայություններին անդրադառնալիս, պարտադիր է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքներին. հայկական նահանգների բնակչության թիվն իրականում ավելի մեծ էր, քան նշում է Լինչը: Նրա տվյալներով՝ մեկ քառ. մղոնին ընկնում էր 30 բնակչից պակաս. մինչդեռ Արևելյան Հայաստանում այն կազմում էր 49 մարդ, չնայած իրականում ավելի խիտ բնակեցված չէր, քան Արևմտյան Հայաստանը: Լինչը նաև սխալ է ներկայացրել հայերի ու քրդերի թվաքանակի հարաբերակցությունը՝ հայերի թիվը նվազեցված է: Արևմտյան Հայաստանի մահմեդական բնակչություն հասկացության տակ միայն թուրքերին ու քրդերին նկատի ունենալը նույնպես սխալ է, քանի որ մահմեդական բնակչության ազգային կազմը չատ ավելի խայտաբղետ էր: Թուրքերը հոծ զանգվածով բնակվում էին Էրզրումի վիլայեթի հյուսիսային շրջաններում, բացառությամբ Բայազետի սանջակից և Խնուսի, Քղիի և Դերջանի կազաներից: Թուրք էր Բասենի կազայի մահմեդական բնակչության կեսը, նույն վիճակն էր Վան, Բիթլիս և Մուշ քաղաքներում:

Ի՞նչ է նշանակում «թուրք ազգություն» ասածը: «Մենք, իհարկե,— գտնում է Լինչը,— չպետք է այդ քաղաքական հասկացությանը վերագրենք ազգային էթնիկական իմաստ... Մենք կսխալվենք, եթե ասենք, թե Էրզրումի վիլայեթի հյուսիսային շրջանների թուրքերը պատկանում են թուրք ազգությանը: Թե նրանց երակներում հոսող արյունը ինչպիսի խառնուրդ ունի, անհնար է պարզել: Լեռնաչխարհի վիճակագրական տարածքում մահմեդականների չարքերում կարելի է գտնել զգալի թվով մարդկանց, որոնք ուղեղով հայկական ծագում, կատարում են տիրապետող կրոնի ծեսերը... Էրզրումի և Օլթի քաղաքի միջև Թորթումի շրջանի... մահմեդական բնակչությունը... հայ հին ընտանիքների ժառանգներն են»[84]:

Անկախ ներկայացրած թվերի տարբերության, բոլոր մասնագետները համակարծիք են, որ ա) հարյուրամյակներ շարունակ օսմանյան կառավարությունը վարել է հայերի արտամղման և ճուլման քաղաքականություն, բ) այդ քաղաքականության հետևանքով հայերը հեռանում էին իրենց հայրենիքից կամ ուծանում էին՝ գործընթացներ, որ 19-րդ դարի կեսին սպառնալի բնույթ ստացան:

Լինչը Արևմտյան Հայաստանի մարդագրական պատկերն արժեքավորելու համար բնակչության ազգային կազմի թվական վերլուծությունը բավարար չի համարում, մանավանդ երբ խոսքը գնում է այս կամ այն էթնիկական խմբի դերի գնահատման մասին:

---

[83] Նույն տեղում, էջ 534:

[84] Линч Г., նշվ. աշխ., էջ 536:

Նա հայերի դերը որոշելու համար, բացի թվական կազմից, պարտադիր է համարում նկատի ունենալ հետևյալ գործոնները. հայերի ձեռքին էին երկրի ամենաբերրի հողատարածքները («Վանա լճի հիանալի շրջակայքը, Բուլանըխի, Մուշի և Խարբերդի լայնածավալ շրջանները»), հայերի աշխատասիրությունն ու արարելու, ստեղծելու բացառիկ ընդունակությունը, հայ բնակչության ստվար հատվածների առկայությունը (որոնք «ծավալվում են լեռնաշխարհով՝ արևելքից արևմուտք... սեպի նման մտնում մահմեդական բնակչության երկու վտակների արանքը»), հայ տարրի քաղաքական ու սոցիալական համերաշխությունը («Գրիգորյան եկեղեցին ոչ մի տեղ Հռոմի ոտնձգություններին այնպիսի դիմադրություն ցույց չի տվել, ինչպես այս լեռնաշխարհում»), հայերի բարձր դիրքը կայսրության տնտեսական կառուցվածքում և ընդունակությունը բարենպաստ պայմաններում արագ ծավալվելու («Հայերի առաջադիմությունը որոշիչ է ամբողջ կայսրության առաջադիմության համար», նրանց անհետանալը կնշանակեր տնտեսության և մշակույթի անկում):

Այնուամենայնիվ, հայերի արտագաղթը գնալով ավելի ու ավելի լայն ծավալներ էր ընդունում: 1878թ. զանգվածային արտագաղթից հետո սկսվեց «աստիճանական արտագաղթի գործընթաց, որի ինտենսիվությունն ակնհայտորեն փոփոխվում էր՝ կախված բերքի չատ կամ քիչ լինելուց և քրդերին սանձելու կառավարության ակտիվությունից»[85]: «Այս երկրամասում իմ գտնված ժամանակ... հայ գյուղացիները ամեն ինչ անում էին իրենց ունեցած պարտքերը վճարելու և արտագաղթելու իրավունք ստանալու համար: Շատերը փախչում էին ռուսական սահման՝ հույս ունենալով այնտեղ գտնել ապաստան... Երկիրն արագորեն վերածվում է «անապատի», իսկ եթե հարկերը պակասեցվեն ու բռնությունները դադարեն, Ռուսաստան տեղափոխված չատ հայեր կվերադառնան»: Այն ժամանակ կփոքրանա կամ ընդհանրապես կցամաքի արտահոսքը նաև Ամերիկա:

Լինչը նշում է, որ հայկական երեք վիլայեթներում՝ Վան, Բիթլիս, Էրզրում, բնակվում էր կես միլիոն, Կ.Պոլսում՝ 180 հազար հայ և այլն: Ըստ նրա, երեք միլիոն թիվն առաջացել է հայկական բարձրավանդակում (906984), Կովկասի տարբեր մասերում (450000), Աստրախանում ու Բեսարաբիայում (75600), Ասիական Թուրքիայի մնացած մասերում (751500), Եվրոպական Թուրքիայում (186000), Ատրպատականի պարսկական նահանգներում (28890), Պարսկաստանում (14110), Բալկաններում (59010) բնակված հայերի գումարից: Թուրքիային բաժին էր ընկնում դրա կեսը, այսինքն՝ 1.5 միլիոնը[86]:

Միանգամայն այլ թվեր է ներկայացնում Մ. Մաքքոլը: Նա գրում է. «...Ներկայումս (1890-ական թվականների առաջին կեսին) հաշվվում է չորս միլիոն հայ (ամբողջ աշխարհում), որից 2.5 միլիոնը բնակվում է Թուրքիայում, 1.25 միլիոնը՝ Ռուսաստանում, 0.15 միլիոնը՝ Պարսկաստանում և Ասիայի մյուս մասերում, 0.1 միլիոնը ցրված է Եվրոպայում, իսկ 5 հազարը Միացյալ Նահանգներում են»[87]:

Իհարկե, թուրքական կառավարության, պատրիարքարանի դեմոգրաֆիկ հաշվարկներում եղած խոշոր թերությունները ոչ միայն միտումնավոր մոտեցման, այլև իրական դժվարությունների հետևանք էին: Պատրիարքարանը զուրկ էր հնարավորություններից, որոնք անհրաժեշտ էին մարդահամարի կազմակերպման համար՝ հաշվառող կադրերի բացակայություն, մասնավորապես՝ լեռնային շրջաններում այդ գործը խոչընդոտող բազում արգելքներ, քրդերի և թուրքական իշխանությունների հարուցած խոչընդոտներ:

Իսկ օսմանյան պետական մարդահամարների սկզբունքներն էին. 1) առանց բնակչության ընդհանուր թիվը մեծ փոփոխության ենթարկելու, հնարավորին չափ պակասեցնել քրիստոնյաների թիվը և տարբերությունն ավելացնել մահմեդականների թվին,

---

[85] Նույն տեղում, էջ 346, 547:
[86] Նույն տեղում, էջ 548, 550:
[87] Мак-Коль М., *Султан и державы.* СПб., 1897, стр. 291.

2) խուսափել թվերն ըստ ազգության ցույց տալուց: Այսպես, անջատ-անջատ էին հաշվառում լուսավորչական, բողոքական և կաթոլիկ հայերին, միաժամանակ մեկտեղում էին բոլոր մահմեդականներին՝ անկախ ազգային պատկանելիությունից:

Երբ 1895թ. կրկին բարձրացվեց բարենորոգումների հարցը, Բ. Դուռը հայտարարեց, որ միավորված հայկական նահանգում նահանգապետ նշանակվելու է թուրք, քանի որ այնտեղ մահմեդականները մեծամասնություն են կազմում (Էրզրումի նահանգում՝ 501 հազար մահմեդական, 151 հազար քրիստոնյա, Բիթլիսի նահանգում (առանց Տարոնի), համապատասխանաբար, 254 հազար և 135 հազար, Տարոնում՝ 505 հազար և 69 հազար, Վանի նահանգում՝ 241 հազար և 80 հազար, Սեբաստիայի նահանգում՝ 840 հազար և 47 հազար)[88]:

Ի. Գոլոբորոդկոն, նկատի ունենալով հայերի թվի վերաբերյալ Ռուսաստանի աշխարհագրական ընկերության ուսումնասիրությունների արդյունքներն ու անգլիական հյուպատոսների տեղեկագրերի տվյալները, ամենահավանականը համարում է 2.3 միլիոն թիվը, որից 1.5 միլիոնը Էրզրումի և Վանի վիլայեթներում, Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսում, Արղանի սանջակում, Սղերդի սանջակի հյուսիսային շրջաններում և Փոքր Հայքում: 400 հազար հայ ցրված էր Ասիական Թուրքիայի՝ եփրատից արևմուտք ընկած շրջաններում, գրեթե այդքան էլ Եվրոպական Թուրքիայում, 250 հազար հայ բնակվում էր Կ. Պոլսում: Վանի սանջակում հայ էր բնակչության 50%-ը, Խիզանում՝ 47%-ը, Մշո սանջակում՝ 54%-ը, Բիթլիսի սանջակում՝ 33%-ը, Սղերդում՝ 30%-ը, Ադանայում՝ 29%-ը, Էրզրումի վիլայեթում՝ 23%-ը: Գոլոբորոդկոն նույնպես չեչտում է, անկախ թվական կազմից, հայերի առանձնահատուկ դերը Թուրքիայի տնտեսական կյանքում: «Լավագույն բժիշկը հայ էր, փաստաբանը, ուսուցիչը, ինժեները, դերասանները, ֆինանսիստները, բանկիրները, առևտրականները, ձեռնարկատերերը հայեր էին»: Նա գրում է. «Ունենալով բազմակողմանի բնածին ունակություններ՝ մեծ հետաքրքրասիրություն, իրավիճակին ընտելանալու հազվադեպ կարողություն, իրարու ամուր բռնած՝ հայերը հաջողությամբ մակերես էին դուրս գալիս նույնիսկ անբարենպաստ պայմաններում: ...Հայերը Ասիական Թուրքիայի ամենակուլտուրական ժողովուրդն են»[89]:

Թուրքիայի իշխանության մարմինների և քարոզչության կողմից կայսրությունում հայերի թվի խեղաթյուրումներն աստիճանաբար դարձան պետական քաղաքականություն: «Սաբահ» պաշտոնաթերթը 1893թ. վկայում է, թե Օսմանյան Թուրքիայում հայերը չնչին փոքրամասնություն են՝ 997369 մարդ[90]: Թալեաթն իր հուշերում գրում է. «Անատոլիայի արևելյան վիլայեթներում հայերը միշտ փոքրամասնություն են կազմել: Օսմանցիները հայերից այդ վիլայեթները չեն նվաճել, այլ հայերն են խնդրել, որ մնան Թուրքերի հովանավորության տակ... Օսմանցիները միշտ հայերին ցույց են տվել լավ վերաբերմունք»: Ժամանակակից թուրք պատմաբան Թ. Գոկբիլգին գրում է. «Ամբողջ պատմության ընթացքում արևելյան վիլայեթներում, որոնք հանդիսացել են Թուրքերի հայրենիքը, հայերը ի սկզբանե կազմել են աննշան փոքրամասնություն»[91]: Ակնհայտ կեղծիք է: Պաշտոնական վիճակագրությունը դարասկզբին Վանի վիլայեթի հայերի թիվը ներկայացնում էր 8000 մարդ, մինչդեռ «ստույգորեն հաստատված է, որ այս նահանգի հայության թիվը... ավելի քան 120 հազար էր»: Մարաշի սանջակում թուրքական վիճակագրությունը նշում էր մոտավորապես 4200 հայ, մինչդեռ «ըստ էլ. Ռեկլյուի, միայն Մարաշ քաղաքում կար 20 հազար հայ»: Զեյթունում իր ութ գյուղերով (համաձայն 1880թ. վիճակագրության) բնակվում էր 27460 հայ և 8344 մահմեդական: «Թուրքիայի կառավարությունը Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Էրզրումի, Տրապի-

---

[88] «Արձագանք», 1895, էջ 49

[89] Голобородько И., նշվ. աշխ., էջ 119:

[90] «Մշակ», 1893, էջ 15:

[91] Gökbilgin T., *Milli Mücadale Baslarken.* Kitab II, Ankara, 1952, s. 73.

զոնի, Սըվազի, Ադանայի և Հալեպի ինը նահանգների հայերի ընդհանուր թիվը նշում է 848 հազար, մինչդեռ ամերիկահայերի և սիրիահայերի նպաստամատույց ընկերությունների կողմից հրատարակված զեկուցագրով անգամ 1916թ. Հայաստանում հայերի թիվը 600-800 հազար էր, Դեր Զոր, Հալեպ և Դամասկոս տարագրվածներինը՝ 486 հազար, Անատոլիայի խորքերը տարագրվածներինը՝ 300 հազար, Կովկաս փախածներինը՝ 200 հազար: Եթե այս թվերին ավելացնենք համաճարակներից զոհվածներին, բռնի իսլամացածներին, թուրքերի մոտ եղած կանանց ու երեխաներին, տեղերում ու բռնագաղթի ընթացքում ոչնչացվածներին, ապա «կարող ենք ասել, որ թուրքերի նշած թիվը փաստացիի կեսից էլ պակաս է»[92]:

Հայ ժողովրդի համար Բեռլինի կոնգրեսի ողբերգական հետևանքների պատճառն այն էր, որ, ինչպես արդեն ասվեց, տերությունների ղեկավարներն անտեսեցին թուրքական կյանքի առանձնահատկությունը՝ հայկական հարցի լուծման հիմքում դրեցին ազգային թվի սկզբունքը, տվյալ դեպքում՝ հայերի թիվը: Դրան անմիջապես հետևեց թուրքական ռեակցիան՝ բռնությունների ու ջարդերի միջոցով որակական փոփոխության ենթարկել ազգաբնակչության կազմը՝ հայերի թիվը նվազեցնելու միջոցով: Անվտանգություն և արժանապատիվ կյանք ապահովելուն կոչված Բեռլինյան 61-րդ հոդվածը հայ ժողովրդին արժեցավ չուրջ 3 միլիոն մարդկային կյանք:

Ազգային սկզբունքի նենգափոխումը կրոնականով թուրքերին հնարավորություն տվեց դառնալու եզակի օրինակ, երբ ոչ թե զարգացման ավելի բարձր մակարդակ ունեցող ժողովուրդն իր մեջ տարրալուծեց ավելի ցածր աստիճանին գտնվող ժողովրդին, այլ՝ հակառակը:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին վեց վիլայեթներում հայերը կազմում էին բնակչության՝ 38.9%: Թուրք էր այդ նահանգների բնակչության 25.4%-ը, քուրդ՝ 26%-ը, մյուս ազգությունները միասին՝ 9.7%-ը: 1913թ. բարենորոգումներին ենթակա տարածքների մեջ մտցվեց նաև Տրապիզոնի վիլայեթը, որտեղ մահմեդական, ինչպես նաև ոչ հայ քրիստոնյա ժողովուրդները մեծամասնություն էին կազմում, թուրքական պաշտոնական տվյալներով դրանից հետո էլ հայերը դարձյալ կազմում էին տարածքի ամենամեծաթիվ ազգությունը: Ռուս գիտնականների վկայությամբ՝ 1910թ. Օսմանյան կայսրությունում բնակվում էր 2.7 միլիոն հայ[93]:

Պրոֆ. Ա. Համբարյանի հաշվարկներով (ելակետ ունենալով 1846թ. մարդահամարի տվյալները) 1914թ. արևմտահայերի թիվը պետք է կազմեր 3883692 մարդ: Սակայն մինչև 1914թ. թուրքերը կոտորեցին, արտաքսեցին և ուծացրին մոտ մեկ միլիոն, իսկ բնական աճի հետ միասին՝ 1.3 միլիոն հայ: Գիտնականը գտնում է, որ 1914թ. արևմտահայերի թիվը եղել է 2583692:

Արևմտահայերի թվի խնդիրը Բեռլինի կոնգրեսից հետո իսկապես ձեռք բերեց քաղաքական սուր բնույթ, դարձավ Հայկական հարցի առանցքը: Իրավացի է Կ. Թումայանը, երբ գրում է. «Որքան ատեն, որ Հայոց հարցը սեղանի վրա դրված չէր, թուրքերն ասոնց թիվը չէին նվազեցներ: Սալահեդդին բեյի «Թուրքիան և միջազգային ցուցահանդեսը» (Փարիզ, 1867թ.) գրքում օսմանյան հայերի թիվը նշվում է 2.4 միլիոն: Իսկ 13 տարի անց Աբիդին փաշան այդ թիվն իջեցրեց մինչև 727 հազար»[94]: Նաև դրանով է բացատրվում Արևմտյան Հայաստանի բնակչության ազգային կազմի վերաբերյալ այնքան խայտաբղետ ու իրարամերժ կարծիքները, որոնցով լի է այդ խնդիրներին նվիրված գրականությունը: Օրինակ, Բրանտը գրում է, որ 1837թ. Կարինում բնակվում էր 130 հազար,

---

[92] Բարսեղ Հ., նշվ. աշխ., էջ 41-42:

[93] ЦГВИАР, ф. 2000, оп 1, д. 3870.

[94] Թումայան Կ., Պատմություն Արևելյան խնդրո և առաջնորդ Հայկական հարցի, հ. Բ, Լոնդոն, 1905, էջ 119:

մի այլ աղբյուրի վկայությամբ՝ 100 հազար մարդ, որից հայ՝ 24 հազար: 50 տարի անց Լինչը գրեց, որ Կարինում բնակվում էր 40 հազար մարդ, որից հայ՝ 10500:

Եվս մի հայացք Հայկական բարձրավանդակի ազգային դեմքին: «Հայերով բնակեցված նահանգներ են,– գրում է Օ. Նուրին,– Վանա լճի հյուսիսային և հարավային կողմերն ու Սասունի շրջակայքը, Էրզրումի, Մուշի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Ալեքսանդրեթի, Զեյթունի, Մարաշի և Ադանայի շրջանները»[95]: Մահմեդականները գերակշռում են Խարբերդի սանջակում, Բալուի կազայում: Էրզրումի վիլայեթում չկար մի գավառ, որտեղ հայերը մահմեդականներից փոքրաթիվ լինեին: Մաևսկին այլ կարծիքի է: Նրա տվյալներով՝ 1899թ. Վանի վիլայեթում հայերը կազմում էին 26%, իսկ Բիթլիսում ռուսական հյուպատոս Շիրկովի կարծիքով՝ 32%: Ռ. Տերմենը ներկայացնում է Արևմտյան Հայաստանի հետևյալ ազգային պատկերը. «Բնակչությունը կազմված է հինգ ազգությունից՝ քուրդ, հայ, ասորի, թուրք և չերքեզ: Ամենաբազմամարդը քրդերն են՝ երկրի տերերը: Նրանց մեջ ցրված են հայերը՝ հողագործ դասակարգը: Հարավային մասերում հանդիպում են ասորական բնակավայրեր, նույնպես հողագործներ և, վերջապես, գլխավոր քաղաքներում՝ Դիարբեքիր, Բիթլիս, Մուշ, Ալջևազ, Սղերդ, հանդիպում են թուրքեր՝ քաղաքաբնակներ ու կալվածատերեր: Չերքեզները բնակվում են առանձին գյուղերով և նույնպես հանդիսանում են հողագործների հարուստ դասակարգ»[96]: «Ասիական Թուրքիայի այս մասերում (Արևմտյան Հայաստան),– գրում է. Կոլյուբակինը,– տիրապետող ազգության ներկայացուցիչները մեծամասնություն չէին: Նրանք բնակչության նկատելի մասն էին կազմում միայն ռուս-թուրքական սահմանի երկայնքով դեպի հյուսիս և Մամախաթուն քաղաքի (Հյուսիսային Եփրատի վրա) գծի միջև Դերջան գետի հոսանքով Պարմաքսիս և Ջադ գյուղերը, այստեղից Պալանթեքենով մինչև Հասան Կալա-Խնուս գծի վրա գտնվող վայրէջքը, այնտեղից դեպի Արաքսի ափին գտնվող Քյուլըի գյուղը և ապա դեպի հարավ՝ մինչև ռուսական սահմանը: Վարչական առումով այդ չերտը կազմում է Էրզրումի սանջակի երեք կազաները՝ Դերջան, Էրզրում, Բասեն և Խնուսի կազայի հյուսիսային մասը»[97]: Այս սահմանից հարավ թուրքեր չատ հազվադեպ էին հանդիպում, հիմնականում կազմելով քաղաքային և արվարձանային բնակչությունը: Բայազետի ամբողջ սանջակում, բացի Այնթապի կազայից, թուրքեր հանդիպում են միայն Բայազետ, Դիադին, Ալաշկերտ (Թոփրախկալե) և Ղարաքիլիսե քաղաքներում: Այնթապի կազայում, որի բնակչությունը համալրվել էր Կարսի մարզի մահմեդականներով, այնուամենայնիվ, թուրքերը կազմում էին բնակչության միայն 20%-ը: Վարդո և Ճապաղջուր կազաներում թուրքեր բոլորովին չկային, իսկ Քղիի կազայում կազմում էին Քղի քաղաքի բնակչության կեսը: Թուրքերը որոշ ազդեցություն ունեին Բիթլիսի սանջակի Ախլաթի, Վանի վիլայեթի Ադիլևազի ու Արճեշի կազաներում՝ կազմելով դրանց քաղաքային բնակչության նշանակալի մասը: Ավելի հարավ թուրքեր հազվադեպ էին հանդիպում: Վանի և Բիթլիսի վիլայեթների հարավային մասերում, Հաքյարիում և ամբողջ Մոսուլի վիլայեթում թուրքեր ամենևին չկային, այդ ցեղի միակ ներկայացուցիչները զորքերն ու պաշտոնատարներն էին: Թուրք գյուղաբնակները զգալի թիվ էին կազմում Խարբերդի որոշ կազաներում, իսկ մյուս մասերում նրանք հանդիպում էին միայն քաղաքներում, օրինակ, Բալուում՝ 1600 տուն կամ 74%, Արաբկիրում, Մալաթիայում, Արղանամադենում և այլն: Դիարբեքիրի վիլայեթում թուրք բնակիչ չկար[98]: Մուհաջիրները բնակվում էին Վարդոյի կազայում (6 գյուղ, 288 տուն), Վանա լճի արևմտյան ափին՝ Ախլաթում, Ադիլևազում՝ չեչեններ, օսեր, արևմտյան լեռնականներ՝

---

[95] Նուրի Օսման, *Սուլթան Համիդ 2-րդն ու նրա իշխանության շրջանը*, հ. Բ, Կ.Պ., 1909, էջ 820 *(արաբատառ թուրքերեն)*:

[96] Термен П., *Отчет*, стр. 42.

[97] Колюбакин А. М., նշվ. աշխ., էջ 150:

[98] Նույն տեղում, էջ 151:

170 տուն, Մանազկերտում և Բուլանըխում՝ տարբեր ցեղերի լեռնականներ՝130 տուն: Օսեթական և չեչենական մի քանի գյուղեր կային Խնուսի հարթավայրում և Գենջի սանջակում: Բոլորը միասին 700-800 տուն[99]:

Մի փոքր ավելի մանրամասն Վանի նահանգի հայ բնակչության թվի մասին:

1878-1880թթ. տերությունների ներկայացրած տեղեկանքում նահանգի հայ բնակչության թիվը նշված է 39113[100]: 1881/82-1893թթ. մարդահամարի տվյալներով՝ 60448[101]: Իսկ 1896-ից այդ թիվը նվազեց մինչև 55051 մարդ: Սա թուրքական տվյալներն են: Իսկ պատրիարքարանի կողմից տերություններին հանձնված՝ 1878-1880թթ. մարդահամարի արդյունքներով, Վանի նահանգում (առանց Հաքյարիի) բնակվում էր 133859 հայ: Մ. Օրմանյանի տվյալներով այդ թիվը կազմում էր 191000[102]: Ըստ Բաֆֆու՝ մինչև 1877թ. ռուս-թուրքական պատերազմը Վանի վիլայեթում բնակվում էր 43750 հայ ընտանիք, այսինքն՝ մոտ 350000 մարդ[103]: Համաձայն Վ. Պարտիզակցու հրատարակած վիճակագրության՝ 1879թ. Վանի նահանգի հայ բնակչության թիվն էր՝ 184000[104]: Մ. Ավետիսյանը նշում է, որ 1890-ին Վանի վիլայեթում բնակվում էր 194000 հայ[105]: Մերուկը 1880թ. համար նշում է 200000, իսկ 1904-ի համար՝ 145000[106], Ա-Դոն՝ 102910 թվերը[107]:

Անգլիական հյուպատոս Դելիելը, հենվելով թուրքական աղբյուրների վրա, գրում է, որ 1865-ին նահանգում բնակվում էր 110000 հայ,[108] իսկ անգլիական մի ուրիշ հյուպատոս՝ Թեյլորը, նորից հենվելով թուրքական աղբյուրների վրա, նշում է 84800 թիվը: Տրապիզոնի իտալական հյուպատոս Սուլանելլին 1881թ. համար տալիս է 40000 ընտանիք թիվը՝ այսինքն՝ չուրջ 280000 հայ[109]: Վիթալ Քինեյի «Ասիական Թուրքիա» աշխատության մեջ բերված է թուրքական վիճակագրության տվյալը՝ 79.998: Նա գրում է. «Բառի բուն նշանակությամբ պաշտոնական վիճակագրություն բացարձակապես գոյություն չունի Թուրքիո մեջ»[110]: Մանավանկին, չհամաձայնվելով Քինեյի հետ, Վան քաղաքի և կազայի բնակչության թիվը համարում է ոչ թե 13500, այլ 26000: Նա գրում է, որ նահանգում կար 13735 հայ ընտանիք, այսինքն՝ 109880 հայ բնակիչ[111]: Օլֆերովը նշում է, որ 1912թ. Վանի նահանգը ուներ 120000 հայ բնակիչ[112]: Ըստ օսմանյան մարդահամարների՝ Վանի նահանգի հայ բնակչության թիվը 1880-ական թվականներին եղել է 60000, իսկ 1882թ. «Ապահովաց» հանձնաժողովի հավաքած տվյալներով՝ 400000:

Հարկ է նկատի ունենալ, որ մինչև Բեռլինի կոնգրեսը թուրքական վիճակագրությունը համեմատաբար օբյեկտիվ տվյալներ էր ներկայացնում, դա բնականաբար վերաբերում էր նաև Վանին: Օրինակ, 1860-70-ական թվականներին սալնամեներները նահանգի հայ բնակչության թիվը նշում են 100-110 հազար. հետագա տարիներին այդ թիվն ակնհայտորեն նվազեցված էր:

---

[99] Նույն տեղում, էջ 159:

[100] *British Documents on Ottoman Armenians, ed. by* **B. Simsir,** Vol. 2.

[101] **Karal,** *Ottoman Population 1830-1913,* Madison, 1985, p. 146-147.

[102] **Steen Van den.** *De la situation légale des Sujets Ottomans non musulmans,* Bruxelles, 1906, p. 61.

[103] **Բաֆֆի,** Եժ. հ. IV, Ե. 1956, էջ 488:

[104] **Պարտիզակցի Վ.,** *Խոսք հայրենյաց,* Կ.Պոլիս, 1911, էջ 47:

[105] **Մ. Ա.,** *Թուրքիայի հայերը ու իրենց դրացիները,* Մարսել, 1890, էջ 44:

[106] «*Մուրճ*», 1904, թիվ 3, էջ 46:

[107] **Ա-Դո,** *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները,* Ե., 1912, էջ 7:

[108] *Турецкая империя (из Военно-статистического сборника за 1868г.)* СПБ., 1868, с. 209-210.

[109] **Սուլանելլի Կ.,** *Տեսութիւն ի վերայ գաւառաց Հայաստանի,* «*Բազմավեպ*», 1882, հ.40, էջ 290:

[110] *Տե՛ս* **Մեսրոպ Գ.,** *Հայաստան՝ աշխարհագրական, պատմական, ցեղագրական, վիճակագրական և մշակութային տեսակետներով,* Կ.Պոլիս, 1919, էջ 52:

[111] **Маевский В.,** *Ванский вилайет.* Тифлис, 1901, стр. 244-290.

[112] *"Сборник дипломатических документов". Реформы в Армении в 1912-1914гг.,* Петроград. 1915, стр. 288.

Իսկ ամբողջությամբ վերցրած՝ խառնաչփոթն ակնհայտ էր: Օրինակ, «Սովելոց հանձնախումբի» հաշվարկով, 1880թ. նահանգում բնակվում էր 239480 հայ, իսկ տասը տարի անց՝ 1890թ., Քինեն նշում է 80068, ևս տասը տարի անց Մաևսկին՝ 13612 թվերը:

Վասպուրականում բնակվում էր 249391 հայ, 86368 նեստորական: Նահանգի բնակիչներից 335759-ը քրիստոնյա էր, 7760-ը՝ եզդի, 51828-ը՝ քուրդ: Բուլանըխում և Մանազկերտում ապրում էր 34864, իսկ Խնուսում՝ 19837 հայ: Այսինքն, Վանի նահանգում ու մերձակա երեք կազաներում բնակվում էր 389499 հայ: Մահմեդականները բնակչության նույնիսկ 30%-ը չէին կազմում: Նրանց թիվը մեծանում էր ամռան ամիսներին, երբ Մոսուլից, Դիարբեքիրից, Պարսկաստանից գալիս էր 36680 քուրդ (33 քեոչք):

Վանի վիլայեթի բնակչության ազգային կազմի առնչությամբ Վ. Մաևսկին գրում է. «Ներկայումս դեռևս չկան հավաստի տվյալներ Վանի վիլայեթի բնակչության թիվը որոշելու համար: Ընդհանուր առմամբ, թուրքական պաշտոնական վիճակագրությունը մեծ վստահության արժանի չէ, քանի որ այդ աղբյուրի տվյալներով 3-5 տարում բնակչության թիվը ենթարկվում է բացարձակապես անբացատրելի փոփոխության... այս կամ այն չափով ճշգրիտ եզրակացության համար այդ տվյալներից օգտվելը շատ դժվար է»[113]:

Ըստ Վ. Գուինետի «Թուրքերն Ասիայում» գրքի՝ 1890թ. Վանի վիլայեթում բնակվում էր քուրդ՝ 1965000 (45%), թուրք՝ 45500 (10.5%), հայ՝ 93500 (21.5%), նեստորական՝ 92000 (21.1%), չերքեզ՝ 500, գնչու՝ 600, եզդի՝ 4000, հրեա՝ 3400:

Ընդամենը՝ 436000 մարդ 23.5 հազ. քառ. վերստի վրա (մեկ քառ. վերստին 18 մարդ)[114]:

Վան քաղաքում քուրդ չկար, իսկ հայերը թուրքերից մեծաթիվ էին: Այդ է վկայում «հայկական թաղերի և նրանց զբաղեցրած տարածքների համեմատաբար մեծ լինելը, նշված թաղամասերի բնակչության խտությունը» ու նաև «իշխանությունների միաձայն վկայությունը, թե Վանի բնակչության 2/3-ը հայեր են»: «Վանի չրջակայքի 30-35 վերստ շառավղով ընկած թուրքաբնակ և քրդաբնակ ամեն մի գյուղին ընկնում է երկու հայկական գյուղ, որոնք ավելի բազմամարդ են, քան քրդական գյուղերի մեծամասնությունը: Ըստ թուրքական պաշտոնական սալնամեների (1897թ.)՝ Վան քաղաքում ու նրա կազայում բնակվում էր 27950 մահմեդական և 35748 հայ»[115]: Այդ այն ժամանակ, երբ 1895-96թթ. զանգվածային ջարդերի հետևանքով Վանի կազայում հայերի թվի նվազելն ակնհայտ էր: Երկու տարվա ընթացքում Շատախի Նորդուզի կազայի 19 հայաբնակ գյուղերի ծխերի թիվը 380-ից իջավ 277: Արճեչի կազայում կային մի քանի գյուղեր, որոնք նախկինում հայաբնակ էին, հետո վերածվել էին քրդաբնակների: Կարճկանում և Շատախում նույնպես կային հայկական գյուղեր, որոնց ծխերի թիվը կրճատվել էր երկու անգամ: Վարչական կենտրոնները՝ Օկանց՝ Արճեչի կազա, Թուխ՝ Շատախի կազա, Արճեկ՝ Արճեկի նահիե, զրկվեցին հայ բնակչության ավելի քան կեսից: Հայերի մի մասը տեղափոխվեց Պարսկաստան, մյուս մասը՝ Ռուսաստան, իսկ չատերն էլ զոհվեցին քրդերի դեմ կռիվներում: Ընդհանրապես, եթե նկատի առնվի հայ բնակչության թվի նվազումը, որն առաջ էր եկել՝ 1) 1896թ. հունիսի դեպքերի, 2) 1896-97թթ. տիֆի համաճարակի (որից միայն Վանում մեռավ 1500 մարդ) և վերջապես 3) Պարսկաստան ու գլխավորապես, Ռուսաստան զանգվածային գաղթի հետևանքով, ապա պետք է ընդունել, որ Վանի վիլայեթում հայերի ընդհանուր թիվը կրճատվել էր 15-20%-ով: Եթե 1890թ. վիլայեթում բնակվում էր 90 հազար, ապա 1899-ին՝ 75 հազար հայ[116]: Նույնիսկ դրանից հետո էլ, ինչպես գրում է Մաևսկին, «...Մոկսի, Կարճկանի, Ադըլջևազի կազաներում հայերն ընդհանուր առմամբ ավելի շատ էին, քան մահմեդականները: Իսկ Բերկրի կազայի 120

---

[113] Маевский В.Т., *Ванский вилайет. Военно- статистическое описание.* Тифлис, 1901, стр. 86, 91, 101-102, 104-106.

[114] Նույն տեղում, էջ 91:

[115] Նույն տեղում, էջ 107:

[116] Маевский В.Т., նշվ. աշխ., էջ 115:

գյուղերից հայաբնակ էր միայն 20-ը: Վանի կազայում թուրքերի թիվը հազիվ 9500 էր, մյուս կազաններում թուրքերի կարելի էր հանդիպել միայն վարչական կենտրոններում և այն էլ ամենաաննշան թվով... Վիլայեթի տարբեր կազաներ իմ ուղևորությունների ժամանակ գրեթե երբեք թուրքերի չեմ հանդիպել... և համոզված եմ, որ թուրքերի թիվը շատ ավելի փոքր է, քան հայերինը»[117]:

Կարո Սասունին Բիթլիսի վիլայեթի բնակչության ընդհանուր թիվը նշում է 380 հազար մարդ, որից հայ՝ 180 հազար, քուրդ՝ 120 հազար և թուրք՝ 40 հազար[118]:

Ա. Գրիպպիուսի կազմած աղյուսակով՝ 1886թ. Արևմտյան Հայաստանի նահանգները, ըստ զբաղեցրած տարածքի և բնակչության թվի, ներկայացնում էին հետևյալ պատկերը: Էրզրումի վիլայեթ՝ 50325 քառ. վերստ, Վանի վիլայեթ՝ 16852 քառ. վերստ, Դիարբեքիրի վիլայեթ՝ 43000 քառ. վերստ, Սեբաստիայի վիլայեթ՝ 53118 քառ. վերստ, Բիթլիսի վիլայեթ՝ 25831 քառ. վերստ, Խարբերդի վիլայեթ՝ 8643.5 քառ. վերստ: Ընդամենը՝ 197769 քառ. վերստ: Մամուրեթ Ուլ Ազիզի սանջակում 110625 բնակչից ոչ մահմեդական էր 34754-ը, Մալաթիայի սանջակում՝ 93873-ից 6898-ը, Դիարբեքիրի Խոզատի և Մազգերտի սանջակներում՝ 23029-ից 3291-ը, Էրզրումի սանջակում՝ 79228-ից 18330-ը, Երզնկայի սանջակում՝ 105848-ից 19194-ը: Էրզրումի վիլայեթում՝ 582345-ից 116884-ը, Տրապիզոնի վիլայեթում՝ 430041-ից 67626-ը, Բիթլիսի վիլայեթում՝ 205108-ից 75261-ը, Վանի վիլայեթում՝ 98240-ից 45070-ը հայ էր[119]:

Գրիպպիուսի աղյուսակը, սակայն, ոչ միայն խիստ թերի է, այլև պարունակում է մի չարք սխալներ: Պատճառը նույնն է՝ տվյալները վերցված են թուրքական իշխանության մարմիններից և ենթակա վերջիններիս հետապնդած նպատակներին:

Ֆրանսիական Դեղին գիրքը ներկայացնում է հետևյալ պատկերը. 1897թ. բնակչության ընդհանուր թիվը Էրզրումի վիլայեթում՝ 595.5 հազար, որից քրիստոնյա՝ 125.7 հազար, Սեբաստիայի վիլայեթում՝ 1.087 հազարից քրիստոնյա 173 հազարը, Խարբերդի վիլայեթում՝ 524 հազարից 81 հազարը, Դիարբեքիրի վիլայեթում՝ 472 հազարից 133.6 հազարը, Բիթլիսի վիլայեթում՝ 400 հազարից 139 հազարը, Վանի վիլայեթում՝ 431.5 հազարից 175 հազարը: Այսպիսով, ըստ Դեղին գրքի, բարենորոգումների ենթակա վիլայեթների բնակչության ընդհանուր թիվն էր՝ 3.5 միլիոն, որից քրիստոնյա՝ 827.6 հազար: Բացի դա, 46.6 հազար հայ էր բնակվում Հալեպի (11%), 97.5 հազար՝ Ադանայի (20%), 48.5 հազար՝ Սղերդի (19%), 19 հազար՝ Տրապիզոնի (18%) վիլայեթներում: Նշված 10 վիլայեթներում ապրում էր 4.6 միլիոն մարդ, որից հայ՝ 1.034 միլիոն[120]:

Կարելի է բերել նաև ուրիշ հեղինակների կազմած աղյուսակներն ու տվյալները Արևմտյան Հայաստանի բնակչության ազգային կազմի ու դեմոգրաֆիկ տեղաշարժերի վերաբերյալ: Սակայն դրա կարիքը չկա, որովհետև բոլոր աղբյուրները ազգաբնակչության կազմում կատարված տեղաշարժերի հարցում համակարծիք են: Մի իրողություն ակնհայտ է. 1913թ. Օսմանյան Թուրքիայում բնակվում էր առնվազն 2.6 միլիոն հայ, և Արևմտյան Հայաստանում հայերը կազմում էին ամենամեծաթիվ էթնիկական տարրը:

## 3. ՈՒԾԱՑՈՒՄ

Հայերի ուծացումը տեղի է ունեցել Օսմանյան կայսրության գոյության ամբողջ ընթացքում: Ճիշտ է, զարգացման մակարդակի տարբերությունը կասեցնում էր այդ գործընթացի արագությունը, սակայն թուրքերի հետ սերտ շփումները, խառնամուսնությունները՝ մասնավորապես թուրք տղամարդկանց կողմից հայ աղջիկներին կնության

---

[117] Նույն տեղում, էջ116:

[118] Սասունի Կ., Պատմություն Տարոնի աշխարհի, Բեյրութ, 1957, էջ 331-332:

[119] Гришинус А., *Статистическая таблица вилайетов Турецкой Армении.* Тифлис, 1899.

[120] *Documents Diplomatiques. Affaires Arméniennes (Supplément). 1895-1896,* Paris, 1897, pp. 71-76.

վերցնելը, բռնի կրոնափոխությունը, կրոնափոխվելու միջոցով պատիժներից կամ այլևայլ դժվարություններից ազատվելն ու արտոնություններ ստանալը և այլն նպաստում էին հայերի ուծացմանը: Եվ քանի որ հպատակ ժողովուրդների թուրքացումը հարյուրամյակների պատմություն ունեցող պետական քաղաքականություն էր՝ ապա, ինչպես նկատում է Կոլյուբակինը, «թուրքերի զգալի մասը, գուցե կեսից ավելին, ունեն այլ... ծագում»: Օսմանյան նվաճումներին զուգընթաց՝ էրզրումի, Վանի, Մուշի, Խարբերդի և հայկական այլ չրջաններում առաջացան թուրքական գաղութներ: Օրինակ, Վանում հաստատվեց կոնիացի Թեմիր Օղլուն, ով այստեղ էր եկել պատերազմներին, ինչպես նաև քրդական ապստամբական չարժումները ճնշելուն մասնակցելու համար: Հետագայում նա իր 300 զինվորներին թողնում է Վանում, որոնք հող են ստանում, տնտեսություն ձևավորում և դառնում Վանի թուրքական գաղութի հիմնադիրներ: Թուրքական այդ համայնքը անընդհատ դրսից համալրումներ էր ստանում, մասնավորապես՝ Անդրկովկասից: Ռուսաստանի կողմից Ղարաբաղի, Շամախիի, Նախիջևանի և այլ խանությունները նվաճվելուց հետո՝ մահմեդականները հեռացան Պարսկաստան ու Թուրքիա, մասնավորապես՝ Կարսի սանջակ, որտեղից 1877-78ԹԹ. պատերազմի ժամանակ անցան էրզրումի, Բասենի ու Դերջանի կազաները և ստեղծեցին Այնթապի կազան, իսկ մի մասն էլ գնաց հարավ՝ Վասպուրական: Բնակության նոր վայրերում թուրքերը հաստատվեցին բռնությունների ու դաժանությունների գործադրմամբ[121]:

Ուծացման ամենատարածված միջոցը բռնի մահմեդականացումն էր, քանի որ իսլամի ընդունումը գրեթե ինքնաբերաբար հանգեցնում էր թուրքացման կամ քրդացման: Օսմանյան պատմությունը նաև հպատակ քրիստոնյա ժողովուրդների բռնի կրոնափոխության ու թուրքացման պատմություն է: Սուրմանիայի ձորի 13 գյուղերում նախկինում բնակվում էր 5-6 հազար հայ: Սակայն Զուրուֆ-օղլի Մեհմեդ անունով մեկը «մահմեդականություն սերմանեց տեսակ-տեսակ մարդախողխող ավերումներ ընելով: Ցոթը քահանայի գլուխ միայն Ցոչու գյուղում կտրեց... իր հետ ընտիր երիտասարդներ առնելով, եկավ Միլմա, որպեսզի Թլպատության հարսանիք կատարե, այնժամ Միլմայի բոլոր ջրերը արյուն դարձան և անագորույն Մեհմեդն ասում էր. «Մի վախեցեք, հայերի մեղքերն եմ լվանում»»: Սակայն այդ բռնարարքը հարցի վերջնական լուծում չէր: Հարյուրամյակներ անց էլ ծիլմացիները «չէին կորցրել իրենց մայրենի լեզուն, մանավանդ կանայք գրեթե մշտապես հայերեն էին խոսում»: Պահպանվել էին նաև տեղանունները՝ Վերիփոս, Խաչին Արտ, Կոճկնոց, Կարմիր Քար, Սեհլիք լեռ: Գզիրնոց ու Ցոչա գյուղերի սահմանները նշված էին քարերով, որոնց վրա գրություններ հայերեն էին:

«Կեսարիայի չրջանին նախկին չատ մը հայ գյուղեր ամբողջովին իսլամացած են,— գրում է Ա. Ալպոյաճյանը,— ինչպես Սպիլիա, Սպտան, Զիվալի, Կասի, Ստրնաս, Ցուրկյուպ, Գրիգորիս գյուղերը, որտեղ գործել են եկեղեցիներ և որոնց հայկական ըլլալուն ապացույցներ կան ձեռագիր ավետարաններու մեջ»[122]:

«Ակնա չրջանին մեջ գյուղերու անուններեն, ինչպես նաև թուրք չատ մը ընտանիքներու մականուններեն և անոնց հայերեն լեզվի ծանոթություններեն կարելի է հետևցնել, որ նախապես հայկական գյուղեր եղած են այժմ բոլորովին թուրքացած հետևյալ գյուղերը՝ Էդրեկ (Ագարակ), Փակիր, Ապրունք, Պչմշեն (Բազմաշեն), Փչատի, Վանգեղ, Դարգլուխ, Սերկևիլ, Պարտիզակ, Սղորիք, Աղվորիկ, Վարդինիք, Խնձորիկ, Տանձիկ, Հացայիսի և այլն...»[123]: Գր. Սրվանձտյանցը գտնում է, որ Եփրատի մյուս ափին՝ Ջմշկածագի և Թորոս նահիեի չրջակայքի բոլոր գյուղաբնակները Թրքացած հայեր էին[124]:

---

[121] Колюбакин А.М., նշվ. աշխ., էջ 152-153:
[122] Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ կեսարիոյ, հ. Ա, Կահիրե, 1937, էջ 639-640:
[123] Ակն և ակնեցիք, Փարիզ, 1952, էջ 155:
[124] Սրվանձտյանց Գ., նշվ. աշխ., մաս Ա, կ. Պ., 1879, էջ 254:

*Անգլիացի հետազոտող Դեյվիդ Հոգարթն իր "A Wandering Scholar..." գրքում գրում է. «Թուրքերը վաղ ժամանակներից ի վեր նստակյաց, խաղաղաբարո և բարգավաճ ժողովուրդ են: Այս ամբողջ չրջանում հետք անգամ չկա վաչկատուն կեցության: Երկրագործ են և ամռանը յայլա չեն ելնում: Նրանց դիմագիծն անզանազանելի է հայերի դիմագծից: Անկասկած նրանք արյունակից են հայերին: Կրոնափոխ դարձած բնակչություն, որ ապրում է Հայաստանի բոլոր անկյուններում, իրենց հավատը պահող մարդկանց կողքին: Նման «Թուրքեր» կան Արևելյան Եփրատի արմունկի չուրջը, ամեն տեղ: Տիվերիկի մոտերքում Թուրք գյուղին հաջորդում է քրիստոնյա գյուղ, սակայն Բինկյանից վեր, գետի աջ ափին բնակչությունը խառն է: Նման «Թուրքերն» են կազմում Քեմախի գրեթե ամբողջ բնակչությունը և Երզնկայի բնակչության կեսը: Նույն նրբագիծ արտաքինով, սպիտակամորթ տիպերն ամենուրեք են՝ դեպի հյուսիս, մինչև որ կորչում են լազերի վրացական դիմագծերի մեջ: Համարձակվում եմ ասել, որ Վանի, Բիթլիսի, Մանազկերտի, Էրզրումի չրջաններում, այնտեղ, որտեղ քրիստոնյաների և այլազան քուրդ ցեղախմբերի կողքին նստակյաց մահմեդական բնակչություն կա, ովքեր իրենց անվանում են «Թուրք», հիմնականում հայկական ծագում ունեն»[125]: Հաճընի Թափան գյուղի 267 հայ ընտանիքներից 1915թ. մնացել էին միայն մի քանիսը: Մյուսները իսլամացել կամ գաղթել էին: Բանըգ գյուղի հայերը 1896թ. կոտորածներից հետո մեծ մասամբ իսլամացան: Նույնը կատարվեց Քեոթյուն գյուղում[126]: Կոտորածի օրերին Ուրֆայում իսլամացավ 400-500 հայ: Ճիպին և էհննէ գյուղերը ևս իսլամացան, սակայն երբ սուլթանը «հայերին ներում չնորհեց», վերադարձան քրիստոնեության: Նման փաստերը բացառություն էին, քանի որ, ով առերես էր մահմեդականացել, սպանում էին: Կային նաև կամավոր մահմեդականացածներ, ովքեր այդ քայլին դիմում էին մահմեդականի առանձնաչնորհումներից օգտվելու համար:*

*Ջուլումի տարիներին ուծացումն ու մահմեդականացումն իրականացվում էին ամենավայրագ եղանակներով: Վկայություններ կան, որ «հայ բառ արտասանողների լեզուները կտրում էին», դրա հետևանքով Կիլիկիայի մի շարք գյուղերում «հայերը կորցրել էին իրենց մայրենին»[127]: «Թուրքերուն հարստահարությունն ու հալածանքն այնքան խիստ եղավ, որ հայախոս Անթեպ եղավ թուրքախոս՝ Փոքր Ասիո ուրիչ քաղաքներուն պես»[128]:*

*«...Հայաստանում բնակվող մահմեդականների մի մասը,– գրում է Ռոլեն Ժեկմենը,– հայկական ծագում ուներ: Նրանք չատ վայրերում պահպանել են իրենց ռասայի բարքերը, լեզուն ու սովորությունները և ոչ քիչ դեպքերում նրանց չրջանում կարելի է հանդիպել այնպիսիներին, որոնք դեռևս կրում են իրենց հոր կամ հայ նախնիի անունը, ինչպես, օրինակ, Մարկոս-օղլի Մուստաֆա, Տեր-Գրիգոր-օղլի-Մեհմեդ: Նույն բանը կարելի է ասել Հայաստանում մշտապես բնակվող քրդական չատ ցեղերի մասին: Հեչտ է նկատել, որ Մեմոենզի, Մենտեկլի, Սլիվանտզի, Ռոշղուտի անունները սերվել են հայ հին տների՝ Մամիկոնյան, Մանդակունի, Սլկունի, Ռշտունի անուններից: Շատերը պահպանում են քրիստոնեական սովորությունները և դժվար է նրանց մահմեդական համարել»[129]:*

*Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր գավառների ու չատ բնակավայրերի մասին տեղեկությունները վկայում են, թե ինչպես ժամանակի ընթացքում փոխվել է դրանց ազգային կազմը ոչ միայն դրսի այլազգիների ներհոսքի, այլև տեղացի հայ բնակչության ուծացման միջոցով: Հասնանցի քրդերը, պատմում է Ա. Տևկանցը, «գյուղերի հար-*

---

[125] *Ակն և ակնեցիք*, էջ155-156:

[126] Գողոսյան Հ.Գ., *Հաճընի ընդհանուր պատմությունը և չրջակա Գոզան-Տաղի հայ գյուղերը*, Լոս Անջելես, 1942, էջ 52,80:

[127] Գալուստյան Գր., *Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն*, Նյու Յորք, 1934, էջ 698:

[128] Սարաֆյան Գ., *Պատմություն Անթեպի հայոց*, հ. Ա, Լոս Անջելես, 1953, էջ 5:

[129] *Положение армян в Турции...*, стр. 19.

յուրավոր հայերի հալածելու միջոցով տիրացել են նրանց հողերին: Այդ գյուղերում դեռևս հարյուրավոր չեն ու ավերակ եկեղեցիներ կան, ոչ ժամանակի ժանիքը և ոչ էլ քրդերի ավերիչ ձեռը ի զորու չեն դրանք անհետացնել»[130]: Ղ. Ինճիճյանը գրում է, որ Հռոմկլեի գավառի Էնհեչն գյուղի բնակիչները «ամբողջությամբ հայ ազգից են... իսկ Աբահ, Կաչնի, Քեչիշլիք իրար մոտ գտնվող երեք գյուղերի... բնակիչները խառն են: Նրանց մի մասը 12-րդ դ. բռնությամբ թուրքացվել է, սակայն պահել է քրիստոնեական ծեսերը: Ուծացածները թուրքերի նման են հագնվում, բայց նրանց խոսակցական լեզուն հայերենն է... Տղամարդիկ, զանազան վայրերում լինելով, կարողանում են տաճկերեն խոսել, իսկ կանայք, քանի որ միշտ տանն են, հայերենից բացի այլ լեզու գրեթե չգիտեն:

Երեխաներին մկրտել են տալիս և նրանց վրա դնում նշանակությունից զուրկ կամ նահապետների ու մարգարեների անուններ: Թուրքական անուն չեն դնում, սակայն 8-9-ամյա մանուկին թլպատել են տալիս: Ամուսնանալիս՝ գիշերը գնում են եկեղեցի, ...սակայն հետո գնում են Ուրֆա և ամուսնանում թուրքական օրենքներով: Բծախնդիր պահում են հայերի բոլոր պասերը՝ չաբաթական և, մանավանդ, 40 օրվան և առաջավորացը...

Կիրակի օրերը այցելում են մերձակա հայկական գյուղերի եկեղեցիները, պատարագ լսում, խաչակնքում դեմքերը, ծունկի իջնում...»[131]:

Դիարբեքիրի լեռնային Իսյան գավառում «կան գյուղեր, որոնց բնակիչներն ամբողջությամբ հայ են, բայց քչերն են հայերեն խոսում: Նրանց խոսակցական լեզուն քրդերենն է: ...Տարին մի անգամ Ս. Խաչի տոնին բազմությամբ ուխտի են գնում Հազրոյի եկեղեցին..., ապա նաև Ս. Առաքելոց վանք»[132]:

Հատկանշական է Բաղեշի բնակչության թվի չարժը: Ղ. Ինճիճյանը գրում է. «Բնակիչների մեծ մասը տարբեր ցեղերի քրդեր են: Նրանց մի ցեղին անվանում են Աշոտունի... Նախկինում այս գավառում հայկական հոծ զանգվածներ կային, ցրվեցին և այժմ քիչ են մնացել... Բաղեշի բնակչությունը նախկինում 25000 տուն էր, այժմ մնացել է 5000 տուն, որից հայերինն է 1500-ը»[133]: Մաքդոնալդ Քինները 1818 թվին գրել է, որ Բաղեշում բնակվում էր 12 հազար մարդ, կեսը հայ էր: Ընդամենը քսան տարի անց՝ 1837թ., Բրենդը գրեց, որ Բաղեշում բնակվում էր 3000 ընտանիք (15-18 հազար մարդ), որի 1/3-ը՝ հայ: Եվս 40 տարի անց՝ 1878թ., Ա. Տևկանցը փաստեց, որ Բաղեշ քաղաքում բնակվում էր 5964 հայ և 2932 քուրդ ընտանիք: Այդ նույն տարիներին Բիթլիսի նահանգում (Սալնո Զորում) բնակվում էր 20473 հայ և 10640 քուրդ:

Մ. Միրախորյանն իր «Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի» նոթագրություններում (1884թ.) նշում է, որ 18-րդ դարի կեսերին Սղերդ քաղաքում կար 500-600, իսկ 19-րդ դարի կեսերին՝ միայն 230 տուն հայ: Ա. Տևկանցի ուսումնասիրություններով Սղերդ քաղաքում բնակվում էր 2400, իսկ նահանգում՝ 20038 հայ: Մ. Միրախորյանը նաև վկայում է, որ Տատիկ գավառի գյուղերի հայերը «հայերենը մոռացել են, քրդերեն են խոսում...»: Ա. Տևկանցը դրա պատճառը համարում է քրդերի բռնությունները, որոնք «նեղում են տեղացիներին, և հայ մնացողները մուրացիկի պես աղքատ են ու թշվառ»[134]:

Հ. Պողոս Վ. Մհերյանը 1776թ. չրջագայել է Համշենում ու մանրամասն նկարագրում է Խվակի և հարևան գյուղերի թրքացած հայերին: «Տեղացիները,— պատմում է նա,— երբ իմացան, որ օտարականը հայ քահանա է, խռնվեցին նրա չուրջը և համբուրում էին ձյը, ծնրադիր ունկնդրում պատարագը»: Մշտապես փակի տակ գտնվող եկեղեցին բացում են, մաքրում ու պատարագ մատուցում: «Խորհուրդ խորինի» կատարման ժամանակ ալեկոծված գյուղացիները ինքնամոռաց ջերմեռանդությամբ էին կատարում

[130] Տևկանց Ա., նշվ. աշխ., էջ 81:
[131] Բարսեղ Հ., նշվ. աշխ., էջ 94-95:
[132] Նույն տեղում, էջ 96-97:
[133] Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 120-123:
[134] Տևկանց Ա., նշվ.աշխ., էջ 103:

քրիստոնեական այդ ծեսը[135]: Վ. Մհերյանը վկայում է, որ թուրքացած հայերի թիվը Համշենում հասնում էր չորս հազարի:

Ռուբեն Տեր-Մինասյանը «Հայ-թրքական կնճիռը» հոդվածում գրում է, որ Արևմտյան Հայաստանի տարածքում «այսօր եթե անհնար է տեսնել դարերի ընթացքում սրատված հարյուր հազարավոր հայ մարդկանց դիակները, ապա բացարձակապես անհնար է չնկատել հարյուրավոր հայ վանքերի, մատուռների ու եկեղեցիների ավերակները, որ ցցված են երկրի ամեն մի անկյունում, յուրաքանչյուր քայլափոխի, հաճախ թուրք ու քուրդ գյուղերի մեջ: Անցեք Լազիստանով, խոսեք Համշենի «թուրքերի» հետ, որոնք հայեր են, բայց իսլամացած ու թուրքացած: Իսպիրի, Թորթումի, Կիսկիմի բնակիչները փաթթոցներ են կրում, մոլեռանդ թուրքեր են, բայց դրանք Կարապետ-օղլու Հասան են կամ Արթին-օղլու Մահմեդ և այդպես ամենուրեք»[136]:

Խնուսի Ջաուշեղ գյուղը, գրում է Ա. Տևկանցը, ունի «հինգ հայկական եկեղեցի, որոնց բռնությամբ տիրացել են քրդերը... Սարտաղի բոլոր գյուղերում էլ եկեղեցիներ ու հայկական գերեզմաններ կան, դրանցից չատերը դեռ չեն են և վերածվել են գոմի ու փարախի... փոքր խաչքարերը օգտագործվել են քրդերի տների շինարարության վրա, իսկ մեծերը դեռ կանգուն են, ավելորդ է ասել, որ այդ գյուղերն առաջներում հայկական են եղել»[137]: Շրջագայելով Հարավային Հայաստանով՝ նա արձանագրեց. «Բոլոր քրդաբնակ գյուղերում հայկական եկեղեցիներ կան՝ չեն թե ավեր, ու նաև հայկական գերեզմանատներ և այլ հիշատակներ...»[138]: «Կոստ, Արիկոնք, Մահապուպան, Զերո, Գիրոնդ և Մեզրե գյուղերի ժողովուրդը սասունցի և բըլքցի քրդերի կողմից ծայրաստիճանի նեղվելու պատճառով ցիրուցան է եղել՝ թողած իր ամբողջ անշարժ ունեցվածքն ու եկեղեցիները, որոնք դեռևս չեն են: Միայն Կոստ գյուղի չրջակայքում վեց եկեղեցի կա...»[139]: Իսկ Մոտկանում քրդերից չատերը ո՛չ չեյխ են ճանաչում և ո՛չ էլ մոլլա: Նրանք հայերի նման եկեղեցիներ խունկ ու մոմ են տանում, դրանք վառում ու ծխում են, միայն թե խաչակնքել չգիտեն... Այդ քրդերը տարին մեկ գնում են Լուսավորչի մատուռ և հայկական եկեղեցիներ «մատաղներ անում... Մ'վ կարող է տարակուսել, որ նրանք հայ են»[140]:

Ա. Մելքոնյանի տվյալներով, Էրզրումի վիլայեթի 13 գավառներում եթե 1809թ. կար 129 բնակավայր՝ 67960 բնակիչով, ապա հարյուր տարի անց՝ 1909թ. կար ընդամենը 52 բնակավայր՝ 34376 հայ բնակիչով, այսինքն՝ բնակչության թիվը կրճատվել էր երկու անգամ: Դրան նպաստում էին թե՛ հայերի արտագաղթը և թե՛ մահմեդական տարրերի ներգաղթը, որոնք առանձնակի մեծ ծավալներ ընդունեցին 19-րդ դարում, մանավանդ ռուս-թուրքական պատերազմների ժամանակ[141]:

Բասենի գավառը, գրում է Ղ. Ինճիճյանը, «լի է հայ և քուրդ գյուղերով ու չինուԹյուններով: Քրդերի մի մասը նախկինում հայ են եղել»: Հայերը փոքրամասնություն են կազմում նաև գավառի կենտրոն Հասան Կալեում: Սակայն անվիճելի է, որ 16-րդ դարում և մինչև 17-րդ դարի կեսերը այս գավառի ու քաղաքի բնակչությունը առավելապես եղել է հայ: Ընդ որում, հիշյալ դարի պատմիչների և աշխարհագրագետների օգնությամբ կարելի է տեղեկանալ, թե թուրքերն ու քրդերը ինչպես են բռնությամբ տիրացել հայերի բազում գյուղերի ու մարդաշատ ավանների՝ հարկ եղած դեպքում նրանց տարագրելով, կոտորելով կամ իրենց հավատին դարձնելով: Մեծ Հայքի բնակիչները զանազան ազգություններն ներկայացուցիչներ են, բայց ամենաբազմաթիվը հայերն ու քրդերն են: Եվ ահա սկսեցին Մեծ Հայքը Քրդստան կոչել, որն իր մեջ առնում է ամբողջ

---

[135] Բարսեղ Հ., նշվ. աշխ., էջ 80:
[136] Ռուբեն, Հայ-թրքական կնճիռը, «Դրոշակ», 1991, թիվ 18-20:
[137] Տևկանց Ա., նշվ. աշխ., էջ 72:
[138] Նույն տեղում, էջ 55:
[139] Նույն տեղում, էջ 68:
[140] Նույն տեղում, էջ 107:
[141] Հայոց ցեղասպանության պատճառներն ու դասերը, Երևան, 1995, էջ 37-60:

*Բաղեշը, Մուշը, Բայազետի, Դիարբեքիրի փաշայությունները և Էրզրումի փաշայության մի մասը, Մանազկերտը և Տուժիկը: Օհան արքեպիսկոպոսի «Հայոց պատմության» մեջ ասվում է, որ քուրդ ցեղերից ոչկոտիք (Ռշտունի), մանըգցիք (Մամիկոնյան), սիլվանցիք (Սյունի), բագրանցիք (Բագրատունի), փեջացիք (Փնջիկ իշխանի սերունդ), խորոմանցիք (Խոռխոռունի) պճնազարդ ուղեկցում էին Հայոց մեծ թագավորին... Նրանք դեռևս պահպանում են հայկական սովորությունները: Մինչև 19-րդ դարի վերջերն էլ քրդերը բագրանցիներին միր (իշխան), մանըգցիներին՝ կտրիճ, քաջ, ոչկոտնցիներին՝ ազնվական տուն էին անվանում:*

*Խորոմանցիք՝ թվով 250 հազար մարդ, թուրքերին ու հայերին բազմիցս հայտարարել էին, որ իրենք հայ են: Նրանց լեզվում հայերեն չատ բառեր կային, պաշտում էին Գ. Լուսավորչին, Տրդատին, Ներսես կաթողիկոսին: Դրա փոխարեն լուտանքներ էին թափում Մուհամմեդի և Կորանի հասցեին: Խորոմանցիք 1670-72ԹԹ. մի քանի անգամ ցանկացան հայանալ, բայց կառավարությունն արգելեց: Քրդերն ու թուրքերը նրանց սահմանների մոտով (Տավրոս-Երզնկա-Կեսարիա-Զեյթուն) սարսափով էին անցնում, իսկ հայերն՝ ընդհակառակը, համարվում էին բարեկամներ. «Երբ հյուր գնա մի որևէ հայ, դեռ գյուղ չմտած՝ նրան դիմավորում են հյուրընկալ ծերերը: Մեկը վերցնում է նրա գավազանը, առաջնորդում տուն... Գավազանը դնում է մի պատվավոր տեղ և հյուրին հրավիրում բազմել օջախի գլուխը»[142]:*

*Մինչև 1540-1560ԹԹ. Բուլանըխում (Հարքում), Բաղեշում, Սասունում իշխում էին հայ նախարարներ, բեյեր: «Հարս ուզելու կապակցությամբ նրանցից մի քանիսի միջև թշնամություն է առաջանում, բանը հասնում է բացահայտ պատերազմի և Ռուհաայի դաշտում... Մշո Մամիկոնյան իշխանը հաղթանակ է տանում Փնջիկ իշխանի դեմ: Վերջինս իր կրոնն ուրանում է և օգնություն խնդրում Աղձնիքի իշխան Մահե ամիրայից: Մի ուրիշ հայ իշխան՝ Մուշեղ Նաճաչը, գործարքի մեջ է մտնում Շուլեք ամրոցի հետ... Փնջիկը մահմեդականություն ընդունելով սկսում է ասպատակել հայ գյուղերը»: Նաճաչի հարազատ ժառանգներից Ալի էֆենդի Նաճաչ-օղլին Մշո սերիայում ծառայող էր և պատմել է, որ իր պապն ասում էր. «Հայ պապերիցս՝ Մամիկոնյան Մուշեղ, Նաճաչ, Մեծն Մուշեղ, Վարդան, Պատրիկ, Մուշեղ սպարապետ, իմ նախնիների մեջ նշանավոր են եղել: Մենք արժանացել ենք երկնային թագին, մեր սուրճն օրհնել է ձեր Լուսավորիչը... Մուշեղ-Նաճաչը, թեև ուրանում է իր կրոնը և ընդունում մահմեդականություն, բայց Մուշի իր տանը թաքուն մի փոքր մատուռ ունի... Մատուռում մի խաչքար կա, սեղան, որի մոտ՝ երկաթե դռնակով պահարան: Պահարանում պահված է արծաթյա գլան... Նրա մեջ ամփոփված է անգին գանձ՝ ջիրհիզ-փեզեմբերին և ձեր թագավորի կնքած ֆերմանը, որի բովանդակությունը հայտնի չէ, փակված է երկու կողմից: Վրան միայն երեք տառ կա: «Այդ ֆերմանով իմ մեծ պապին են տվել Սըլիվանը, Սասունն ու Մուշը»»[143]:*

*Ա. Տեր-Հակոբյանը գրում է հատկապես Օլթի և Ճորոխ գետերի ավազաններում ապրող մոտ 600 հազար մահմեդականացած հայերի մասին: 1915Թ. կոտորածների հետևանքով այս շրջանում մահմեդականություն ընդունեց ևս 200 հազար հայ: Այսպես էր նաև Փոքր Հայքում ու Կենտրոնական Անատոլիայում, որտեղ հայերի մի մասը դեռ մինչև աշխարհամարտը դարձել էր թրքախոս, չնայած իրեն հայ էր համարում:*

*Փոքրիկ անդրադարձ Տարոնի հայ բնակչության չարժին: Մ. Միրախորյանը պատմում է. «Մշո դաշտում սփռված կա 100-110 հայ գյուղ... Ունեն հազարավոր պանդուխտներ Թե՛ Պոլսում և Թե՛ Ռուսաստանում, ուր մեկնելու սովորությունը դժբախտաբար գնալով ավելի է տարածվում: Գավառում հազիվ 8-10 քրդաբնակ գյուղ լինի...»: Այս իրողությունը հաստատվում է նաև Լինչի հետևյալ վկայությամբ. «Մշո դաշտում*

---

[142] Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 53:
[143] Նույն տեղում, նշվ., աշխ., էջ 37-38:

*հայերը ստվար մեծամասնություն էին կազմում: Համաձայն պաշտոնական վիճակագրության, հայերի թիվը 36 հազար էր, իսկ մահմեդականներինը՝ 21 հազար»*[144]*: «Դաշտի գյուղերը,- մի այլ տեղում գրում է նա,– հիմնականում հայաբնակ են: Նրանցից միայն մի քանիսում են քրդեր բնակվում: Վստահաբար կարող ենք ասել, որ բուն դաշտում հայ տարրն է թվապես գերակշռում, իսկ քրդերը իշխող են դաշտի եզերքի գյուղերում, հարավի լեռնաշարերի երկայնքով»:*

*Լինչից 50 տարի առաջ անգլիական հյուպատոս Բրենդը գրել է. «Մշո ամբողջ դաշտում չկա հայերի հետ խառը բնակվող որևէ մահմեդական: Այս իրողությունը շատ որոշակիորեն ցույց է տալիս, որ երկրամասն ավելի շատ Հայաստանին է պատկանում, քան Քրդստանին»:*

*Ահա թե Տարոնի Խասգյուղի մասին ինչ են գրել Լինչն ու Ղ. Ինճիճյանը: Լինչ. «Սա հայկական գյուղի տիպար է, տները նմանվում են միջնաբերդի: Խասգյուղում կա 300 տնից ոչ պակաս, երկու կանգուն եկեղեցի: Բայց դպրոցը կառավարության հրամանով փակված է և 100 գյուղացուց մեկը միայն կարդալ գիտե»: Ղ. Ինճիճյան. «Հայ գյուղերի բնակչությունը խիստ նվազել է: Օրինակ, Խասգյուղում առաջ 400 տուն էր և Հացիկը, որին քրդերը Խասիկ են կոչում, որտեղ է Ս. Մեսրոպի եկեղեցին ու գերեզմանոցը: ...այսօր այս եկեղեցում աղոթում և երդվում են չրջակայքում բնակվող քրդերն ու եզդիները...»*[145]*: Մի թուրք սպա, որը 1915թ. եղել է Տարոնում, գրում է. «Մշո դաշտում սկզբում եղել է 600 գյուղ, յուրաքանչյուրը՝ 200-300 տնով և բոլորն էլ՝ լի հայ բնակչությունով»: Ղ. Ինճիճյանի վկայությամբ՝ 19-րդ դարի սկզբին Մուշ քաղաքում կար 8000 բնակիչ: Թեյլորը, 1868թ. այցելելով Մուշ, նշում է՝ քաղաքում կար 13000 բնակիչ, որից 6000-ը հայ: Մ. Միրախորյանի վկայությամբ՝ նույն այդ թվերին Մուշն ուներ 2500 տուն, որից հայապատկան էր 1000-ը: Հայերն ունեին 5 եկեղեցի և նույնքան էլ վարժարան: Ս. Տևկանցի ուսումնասիրություններով՝ 1878թ. Մուշ քաղաքում բնակվում էր 4987 հայ և 6620 մահմեդական: Քաղաքը բաժանված էր «ութ թաղի, որոնցից հինգը՝ հայկական, երեքը՝ թուրքական»: Իսկ ամբողջությամբ վերցրած՝ Տարոն աշխարհն ուներ 184 հայաբնակ և 60 խառնաբնակ գյուղ, որոնցում բնակվում էր 66800 հայ և 57345 քուրդ*[146]*: Տասը տարի անց Լինչը գրեց. «Մուշի խալամ մեծամասնությունը գրեթե ամբողջությամբ քրդական ծագում ունի...»*[147]*: Անդրադառնալով Խնուսին՝ Լինչը նշում է. «Այնտեղ կար 387 տուն, որից հայ՝ 137-ը» և անմիջապես ավելացնում է, թե այդ թիվն իրեն ասել է կայմակամն ու զգուշացրել, որ հայերի թիվը շատ ավելին է՝ «նրանք խուսափում են մարդահամարից, որպեսզի զինվորական հարկ չվճարեն»»*[148]*: «Զևերմե գյուղը,– շարունակում է նա,– որտեղ գետն անցանք, ունի 150 տուն՝ չրջապատված ուռենիների հաճելիորեն «կենդանի պատերով», որոնք Դեղթափ Սուի միացման կետում փունջ են կազմում: Հաճույքով դիտեցինք վայրի կարմիր վարդերի չարանները: Բազմաթիվ աղջիկներ (հայ), գրեթե մերկ, ջրի ափին մի զով տեղ խաղում էին: Տեսնելով նրանց մազերի գեղեցկությունը՝ ապշեցինք»*[149]*: Եղած տվյալների համադրությունից հետևում է, որ հայերը եթե 1886 թվին կազմում էին Մուշ քաղաքի բնակչության 45%-ը, ապա 1893 թվին՝ միայն 20%-ը:*

*Ռ. Տեր-Մինասյանը Տարոնի էթնիկական կազմի փոփոխության վերաբերյալ գրում է. «Բաթման Սուի չրջանում Տավրոսի փեչերին են բալաքցի, ռաչկոթանցի աչիրեթները, որոնք չարունակում են խոսել իրենց հին մայրենի հայերենով: Քուրդ մեծամեծներից ոմանք (օրինակ, Քյուչուկ Սայիդ) հայկական ծագում ունեն: Հայը քրդացել էր: Ինչո՞ւ:*

---

[144] Լինչ Գ., նշվ. աշխ., հ. I, էջ 221-222:
[145] Բարսեղ Հ., նշվ. աշխ., էջ 100:
[146] Տևկանց Ա., նշվ. աշխ., էջ 46, 47, 91:
[147] Նույն տեղում, հ. I, էջ 221:
[148] Նույն տեղում, էջ 240:
[149] Լինչ Գ., նշվ. աշխ., էջ 327:

*Քանի որ Պոլսի և մի քանի ուրիշ քաղաքների հայ ազգաբնակչությունից բացի, մնացած բոլոր վայրերի հայերը իսլամների համար եղել են գյավուր, թուրքի համար՝ ստոր արաբած, պաշտոնյայի համար՝ կթան կով, կառավարության համար՝ չահագործման աղբյուր, դերբեյի համար՝ իրավազուրկ խաֆիր... Եթե թուրքը հեծում էր երկրի մեջ իշխող սնանկության պատճառով, հայը հեծում էր այդ և, առավելապես, նաև այն պատճառով, որ դժբախտություն էր ունեցել հայ ծնվելու: Անշուշտ, այդ ստրկական դրության հետևանք պիտի համարել հայի իսլամանալը, աղքատանալը, թվով նվազելը, ջարդը, գաղթը և, վերջապես, առողջ ու տոկուն մասի ըմբոստացումը, որ հայկական չարժումներ անունն է կրում»*[150]:

*«Ասրավը,– գրում է Լինչը,– եղել է ծաղկուն հայկական գյուղ (Ադլևազ): 1895-ին այն վերջնականապես թալանվել ու ոչնչացվել է հայդարանլիների ցեղապետներից մեկի՝ Էմին փաշայի կողմից և այդ ժամանակից ի վեր իրենից ներկայացնում է ավերակների կույտ: Եկեղեցին և ամենամեծ տները վերածվել են անասնանոցների Էմին փաշայի ոչխարների համար... Ներկայումս այդ գյուղում ապրում է 14 աղքատ հայ ընտանիք: Ասրաֆի երբեմնի լայնարձակ այգիները լրիվ բարձիթողի են արված, և միայն ինչ-որ տեղ պահպանվել են վայրի դարձած խաղողի տունկերը»*[151]:

*Ջնայած Մշո դաշտի գյուղերի մեծ մասը բնակեցված է հայերով, չարունակում է Լինչը, սակայն ամեն մի գյուղում հանդիպում են քրդեր ու չերքեզներ, քանի որ կառավարությունը ձգտում է հայերին դուրս մղել Մշո հարթավայրից՝ նրանց փոխարինելով մահմեդականներով: Դրա հետևանքով գյուղերը շատ աղքատ են և հասցված թշվառության: Հայերը զանգվածաբար գաղթում են հարևան վիլայեթները: Կար 70 ծուխ չերքեզ, որոնք ոչ վաղ անցյալում բնակեցվել էին Վարդենիս և Արդոնք գյուղերի միջև: Կառավարության հոգացողությամբ չերքեզներն ապրում են հարևան երկու գյուղերի հաշվին՝ նրանցից մաս-մաս խլելով հողեր ու ամենայն հավանականությամբ մոտ ապագայում հայերից կծծեն բոլոր հյութերը*[152]: *«Երբեմնի ծաղկուն Ռաջվան գյուղը նախկինում ուներ մինչև 300 տուն հայ, իսկ այժմ՝ միայն 50 տուն...»*[153]:

*Խաթլան գետի ափերի մի ժամանակվա ծաղկուն և խիտ բնակեցված երկիրը ներկայումս ամայացած է քրդերի թալանի հետևանքով: Ցանքսերը բարձիթողի են արված, մոլախոտերը ծածկել են ամեն ինչ*[154]: *Խարբերդի Բաղնիք գյուղը նախկինում հայաբնակ էր, իսկ 1880-ական թվականներին գյուղում այլևս հայ չկար: Հայերի մի մասը ուծացվել էր, իսկ մյուսները վտարվել էին*[155]: *Հատկանշական մի երևույթ. կայսրության ամենանշանավոր պետական գործիչները իսլամացած ռայաներն ու նրանց ժառանգներն էին: Դրանց թվին էին պատկանում մեծ վեզիր, ծովակալ Հալիլը, ճարտարապետ Սինանը և շատ ուրիշներ, որոնք իսլամացած հայեր էին: Ընդ որում, Սինանը մանկահավաքության զոհերից էր, սակայն ենիչէրի չէր դարձել, ճարտարապետական կրթություն էր ստացել ու հանդիսանում էր Թուրքիայի կառուցողական արվեստի պարծանքը: Աբդուլ Համիդի իշխանության շրջանում բարձրագույն պետական, ռազմական ու դիվանագիտական աշխատանք է տարել չուրջ 70 հայ: Այդ թվում Գր. Օտյանը՝ Օսմանյան սահմանադրության հայրերից, պետական խորհրդի անդամ, «Միդհատի խելքի ուսուցիչ», Մ. Պերպերյանը՝ կապի նախարար, Ա. Տատյանը՝ կայսրության տնտեսական կյանքի ղեկավար, Հ. Գյումրյանը՝ Լիբանանի կառավարիչ, Գ. Նորատունկյանը՝ արտաքին գործերի նախարար, Հ. Գազազյանը և Հ. Սագըզը՝ ֆինանսական կյանքի ղեկավար: Ջանազան ժամանակներում Պետական խորհրդի անդամ է եղել 19 հայ: Թվարկվածներից մի քանիսը ոչ*

---

[150] «Դրոշակ», 1991, թիվ 18-20:
[151] Линч Г., նշվ. աշխ., էջ 113:
[152] Նույն տեղում, էջ 131:
[153] Նույն տեղում, էջ 163:
[154] Նույն տեղում, էջ 165:
[155] Նույն տեղում, էջ 353:

միայն չէին թուրքացել, չէին ուրացել իրենց հայ լինելը, այլև հայոց ազգային-քաղաքական կյանքի նշանավոր դեմքերից էին:

Թուրքերն ուծացնում էին նաև քրդերին: Դա նրանց ավելի հեշտ էր հաջողվում, քան հայերի ուծացումը: Պատճառները մի քանիսն էին՝ քրդերի հետամնացությունը, թուրքերի հետ կրոնակից լինելը, իշխանությունների կողմից սիրաշահվելը և այլն: Փոքր դեր չէր խաղում նաև այն, որ սուլթանի բարձրագույն իշխանությունը, իր բոլոր բաղադրիչներով և պետական հզոր մեխանիզմով, ամբողջությամբ ու կատարելապես փոխարինել էր իսլամի խաղացած դերին: Քուրդը տոգորված էր իսլամական ոգով, ինչը նրան կառավարամետ դարձնելու գլխավոր միջոցն էր:

Այսպիսով, հպատակ ժողովուրդների թուրքացումը ոչ թե օսմանցի այս կամ այն միապետի «ճաշակի» դրսևորում էր, այլ թուրքական պետական քաղաքականություն, թուրք ազգ «կերտելու» հիմնական միջոցներից մեկը: Այդ էր պատճառը, որ ուծացման գործընթացը հանդիսացել է Օսմանյան կայսրության պատմության մշտական ուղեկիցը, ինչն ավելի սուր ու համապարփակ բնույթ ստացավ թուրք ազգի ձևավորման և թուրքական ազգայնամոլության լայնածավալ հարձակման շրջանում:

Իհարկե, ուծացման գլխավոր նպատակը հպատակ ժողովուրդների թուրքացման միջոցով կայսրությունում հօգուտ թուրքերի թվական աճի ազգագրական նոր իրավիճակի ձևավորումն էր, նրանց բացարձակ մեծամասնության ապահովումը: Բայց այդպես էր, երբ խնդիրն առնչվում էր մահմեդական հպատակներին, միանգամայն այլ իրավիճակ էր, երբ գործը վերաբերում էր գյավուրներին, մասնավորապես՝ հայերին, որոնց ձուլումը խնդիր ուներ հավերժացնելու թուրքական տիրապետությունը Արևմտյան Հայաստանում: Դրանով է բացատրվում , որ չնայած հայերը ավելի դժվար էին ենթարկվում ուծացման, նրանց ձուլումը՝ թուրքացումն ու քրդացումը, անհամեմատ արագ էր առաջ տարվում, իսկ սկսած 19-րդ դարի երկրորդ կեսից վերածվեց աղետի: Նաև ուծացման հետևանքով, համաձայն թուրքական վիճակագրության տվյալների, եթե 1845-1850թթ. կայսրությունում բնակվում էր 3,4-3,5 միլիոն հայ, ապա 1880 թվին՝ միայն 2,7 միլիոն: Եթե նկատի առնվի նաև բնական աճը, ապա կստացվի, որ երեսուն տարում հայերի թիվը կրճատվել էր մոտ 1.800.000-1.900.000 հոգով, ինչը հետևանք էր, նախ՝ արտագաղթի, ապա՝ ուծացման ու նաև ջարդերի:

Վերևում բերված թվերն ու վկայությունները, չնայած իրենց առատության, այնուամենայնիվ, արևմտահայության ամբողջական դեմոգրաֆիկ պատկերը ներկայացնելու հավակնություն չունեն: Խնդիրը ոչ միայն գիտական, այլև արդիական քաղաքական լուրջ նշանակություն ունի և ակնկալում է մասնագետների ըստ ամենայնի ուսումնասիրություն:

## 4. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Օսմանյան կայսրության ճգնաժամը նաև արտահայտվում էր մեկը մյուսի հետևից իրականացվող վարչական-տարածքային վերաբաժանումներում: Դրանք մեկ գերխնդիր էին հետապնդում՝ ունենալ այնպիսի վարչական միավորներ, որոնց ազգային կազմը նպաստեր ճախողելու հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարը: 1834թ. փաշայությունները վերանվանվեցին վիլայեթներ, և դրանց կազմում ստեղծվեցին սանջակներ ու կազաներ, իսկ ապա նաև՝ նահիեներ (գյուղախմբեր): Վալիներին Բ. Դռան ներկայացմամբ նշանակում էր սուլթանը, մութեսարիֆներին՝ Բ. Դուռը, կայմակամներին՝ Ն Գ նախարարությունը և այլն: Որպես կանոն, վարչական միավորների ղեկավարներն ուղարկվում էին Կ. Պոլսից կամ կայսրության այլ շրջաններից: Նպատակը մեկն էր՝ իշխանության մարմինները կտրել տեղական ավագանուց և նրանցից վեր դնել, այսինքն՝ ամբողջացնել տեղական իշխանությունների ձևավորման ու ղեկավարման կենտրոնացումը, սահմանափակել կամ վերացնել ավագանու՝ փաշաների, բեկերի, ցեղապետերի

վարչական իրավունքները: Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա այստեղ, որպես կանոն, վալիներ և մութեսարիֆներ նշանակվում էին բալկանյան կամ կովկասյան մահմեդականներ, ովքեր իրենց ճակատագրի բերումով առանձնակի ատելությամբ էին լցված քրիստոնյաների հանդեպ:

Արևմտյան Հայաստանը բաժանվեց Էրզրումի, Սըվազի (Սեբաստիայի), Դիարբեքիրի, Խարբերդի վիլայեթների, մի քանի գավառներ կցվեցին Տրապիզոնի վիլայեթին: Մոկսը, Դերսիմը, Հաքյարին մտցվեցին Դիարբեքիրի վիլայեթի մեջ: 1848թ. միավորվեցին Մարաշի և Ադանայի վիլայեթները: 1864-67թթ. վարչական նոր բաժանում կատարվեց: Արևմտյան Հայաստանի մեծ մասը միավորվեց Էրզրումի վիլայեթի մեջ՝ էրմենիստան անունով: 1867թ. այդ վիլայեթի մեջ մտցվեցին նաև Կարսը, Բայազետը և Երզնկան: Շապին Կարահիսարը և Գյումուշխանեն անջատվեցին հայկական նահանգներից ու միացվեցին Տրապիզոնի վիլայեթին: Սասունը բաժանվեց չորս գավառների: Խութն ու Մոտկանը մտցվեցին Բիթլիսի, Շատախն ու Բռնաշենը՝ Մուշի, Խուլբը, Տալվորիկը և Խիանքը՝ Գենճի, Փսանքը և Ռնդվանը՝ Սղերդի սանջակների և կազաների մեջ: Խուլբից անջատվեց Լճենը, իսկ Խուլբի և Խիանքի ավանդական կենտրոն հանդիսացող Ճարղինը կցվեց Դիարբեքիրի վիլայեթին[156]: Կիլիկիան մնաց բաժանված Հալեպի ու Ադանայի նահանգների միջև: Խարբերդի սանջակից Բալուի կազան, որը հայկական խիտ բնակչություն ուներ, անջատվեց, ինչը զգալիորեն նվազեցրեց հայերի թիվն այդ նահանգում և միացվեց Դիարբեքիրին, որը չխախտեց տեղի մահմեդականների թվական գերակշռությունը:

«Քյուրդիստան» անունը տրվեց Դիարբեքիրի վիլայեթին, որի մեջ մտնում էին նաև Տարոնը, Վանը, Բիթլիսը: Օսմանյան կայսրության քարտեզից «Հայաստան» բառը վերացնելը՝ բնականաբար, զայրացրեց հայերին: Բ. Դուռը հարկադրված եղավ Վանը (Վասպուրական) ու Տարոնը անջատել Դիարբեքիրից և միացնել էրմինիստան էյալեթին:

Վալիների ինքնուրույնությունը և ինքնագլխությունը հաղթահարելու նպատակով նրանց զրկեցին զինվորական հրամանատարի իրավասություններից, այսինքն՝ նահանգների քաղաքացիական և զինվորական իշխանությունները բաժանվեցին:

1878թ. վիլայեթների սահմաններն այնպես վերագծվեցին, որ դրանք ամենևին չէին համընկնում բնական սահմաններին: Նպատակը մեկն էր՝ ոչ մի նահանգում հայերը մեծամասնություն չպետք է լինեին: Դրա հետևանքով առաջացան վարչական խոշոր միավորներ, ինչպես, օրինակ, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներն էին և դրանցից 3-4 անգամ փոքր Վանի ու Հաքիարիի վիլայեթները: Սակայն այս դրությունն էլ երկար չտևեց: Կատարվեցին վարչական նոր փոփոխություններ: Բ. Դուռը հարկադրված էր հաշվի առնել համընդհանուր դժգոհությունը: Դրանով է բացատրվում վարչական միավորներից մի քանիսի սահմանները տվյալ տարածքի ժողովրդի ազգային-ավանդական սահմաններին մերձեցնելը, վիլայեթներում ընտրովի կառավարման օղակների՝ վարչական ժողովների ձևավորումը, որոնց հորջորջել էին «Բարձրագույն օրենսդիր մարմին»: Փաստորեն, այդ ժողովները տնտեսական կառավարման մարմիններ էին: Վիլայեթներում, սանջակներում և կազաներում ստեղծված վարչական խորհուրդները կազմված էին տարբեր հիմնարկների, ինչպես նաև տվյալ վարչական տարածքում բնակվող ազգությունների ներկայացուցիչներից: Խորհրդի անդամներին նշանակում էր Բ. Դուռը՝ վալիների ներկայացմամբ: Խորհրդի մեջ մտցվում էին նաև տվյալ վարչական տարածքի կրոնական ղեկավարները:

Դատական իշխանությունը անջատվեց գործադիր իշխանությունից: Կազաներում դատական իշխանությունը ներկայացնում էին ղադիները, ովքեր ունեին նաև ոստիկանական իրավասություններ. կայմակամների բացակայության ժամանակ փոխարինում էին նրանց: Այս, ինչպես նաև նման այլ մարմինների իրավասությունները միայն թղթի

---

[156] Սասունի Կ., Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 24-25:

վրա էին լայն: Իշխանության իսկական տերերը վալիները, մութեսարիֆները, կայմակամներն ու մյուդիրներն էին:

1888թ. վարչական վերաբաժանման կապակցությամբ "Новое время" թերթը գրեց. «Սկսած սթափ բանականությունից և վերջացրած երկրի տնտեսությամբ, ամեն ինչ զոհաբերվեց մի գաղափարի՝ հայերը պետք է ցրված լինեն և ներծծվեն տարբեր նահանգներում... Սուլթանների մարտավարությունն էր՝ հայ ազգաբնակչությանը լրիվ ոչնչացնել կամ, համենայն դեպս, այնքան թուլացնել տնտեսապես ու քաղաքականապես, որ հայերը դադարեն խոչընդոտ լինել պանթուրքիզմի (պանօսմանիզմի) համար»[157]:

1880թ. Հայաստանն ու Քրդստանը պայմանականորեն միավորվեցին և անվանվեցին Քրդստան: Քրդստանը կոչեցին Հարավային, իսկ Հայաստանը՝ Հյուսիսային Քրդստան: Այս երկու Քրդստանների միջև պայմանականորեն բաժանվեցին նաև վիլայեթները: Օրինակ, Բիթլիսի վիլայեթի չորս սանջակների՝ Բիթլիս, Մուշ, Գենջ և Սղերդ, Հյուսիսային կազաները մտցվեցին Հյուսիսային, իսկ մնացած մասերը՝ Հարավային Քրդստանների մեջ: Հյուսիսայինին միացրեցին Մուշի սանջակի Մուշի, Բուլանըխի, Վարդոյի և Մանազկերտի կազաները, Գենջի կազայի մի մասը՝ Ճապաղջուրը և Խուլբը: Վանի վիլայեթը սանջակներ չուներ և կազմված էր ութ կազաներից, որոնցից երեքը (Նորդուզ, Շատախ և Մոկս) մտցվեցին Հարավային Քրդստանի մեջ: Դիարբեքիրի ամբողջ վիլայեթը, բացառությամբ Խարբերդի Հյուսիսային սանջակներից, Բալուի կազայից ու Դերսիմից, նույնպես մտցվեցին Հարավային Քրդստանի մեջ: Կրկնում ենք, առաջին հայացքից Հյուսիսային Քրդստանի անվանակոչումը ոչ թե վարչական, օրինական, այլ պայմանական բաժանում էր, որի հիմքում իբր դրված էր բնակչության ազգային կազմի սկզբունքը, սակայն այն իրականում քայլ էր «Արևմտյան Հայաստան» անունը քարտեզից ջնջելու:

Տեղական կառավարման մի առանձնահատկություն ևս: Վալիների ձեռքից վերցնելով զինվորական ուժերը՝ ստեղծվեց ռազմական օկրուգների համակարգ: Հայաստանը 4-րդ ռազմական օկրուգի կամ բանակի տեղակայման շրջանն էր: «Ռազմավարական չահեկան կացությունը և զորքերի մոբիլիզացման ու կենտրոնացման առավել բարենպաստ պայմանները Թուրքիային հնարավորություն էին տալիս անատոլիական բանակի զորքերի տեղաբաշխումը ենթարկել նաև ներքին քաղաքականության պահանջներին... Չորրորդ բանակը, զբաղեցնելով Ռուսաստանին սահմանակից շրջանները, միաժամանակ սպառնալիք էր Էրզրումի, Վանի, Խարբերդի և մյուս շրջանների հայերի և Հյուսիսային Քրդստանի, Դերսիմի ու Հաքիարի քրդերի համար»[158]: Պատահական չէ, որ ամբողջ Անատոլիայում, որտեղ ազգաբնակչության հիմնական մասը թուրքերն էին, զորամասեր ընդհանրապես չէին տեղակայված: Այսպիսով, Արևմտյան Հայաստանում հնարավորություն էր ստեղծված համեմատաբար ոչ մեծ ռազմական ուժով լուծելու թե՛ արտաքին և թե՛ ներքին խնդիրներ:

Սակայն իրականությունն այն էր, որ վարչական ոչ մի փոփոխություն ի զորու չեղավ կայսրությունը դուրս բերել ներքին մասնատվածության ու անիշխանության քաոսից: «Գենջի և Ճապաղջրի կազաները և հատկապես լեռնային ու դժվար անցանելի Դերսիմը,– գրում է Կոլյուբակինը,– լրիվ զուրկ են թուրք բնակչությունից և մի կերպ են ընդունում օսմանյան կառավարության իշխանությունը, որն այստեղ զուտ ձևական է: Այս տարածքների հիմնական բնակիչները՝ քուրդ կղզեաչները, պահպանել են իրենց տոհմային կառուցվածքը, կառավարվում են ժառանգական առաջնորդների (էլաղասի) կողմից, բանակում չեն ծառայում և միայն մի քանի տուրքեր են վճարում, այն էլ մեծ դժվարությամբ»[159]: Հայերի դեմ իշխանությունների պայքարում օգտագործվում է գոր-

---

[157] "Новое время", 24.05.1913.

[158] **Колюбакин А. М.**, նշվ. աշխ., էջ 69:

[159] Նույն տեղում, էջ 54:

ծողությունների այնպիսի համակարգ, որն ապագայում հանգեցնելու է մեծ բարդությունների ոչ միայն հայրենասերների և առաջավոր անձանց, այլև ամբողջ հայ ազգաբնակչության համար[160]:

Քղիի մերձակայքում «քրդերի կողմից թալանն ու բռնություններն այնքան նշանակալից են... որ նախկինում կարևոր նշանակություն ունեցող ու սանջակով անցնող առևտրական ուղին ներկայումս լրիվ բարձիթողի է արված: Վախենալով քրդերի հարձակումից՝ քարավաններն ու ճանապարհորդներն ընտրում են այլ, չրջանցիկ ու վատ ճանապարհներ»[161]: Բալուի կազայի հարավը կառավարվում էր ոչ թե իշխանություններ, այլ ազդեցիկ շեյխերի ու քուրդ ցեղապետերի կողմից: Ջնայած արտոնյալ դասերին պատկանողները մեծաթիվ չէին, բայց հզոր էին իրենց հարստությամբ, ծագմամբ ու զանգվածների վրա ազդեցությամբ: Նրանք տիրանում էին եկամուտների մեծ մասին, սաստկացնում ոչ մահմեդական բնակչության հարստահարությունը և դրանով խոչընդոտում երկրի զարգացմանը[162]:

## 5. ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐՀՈՍՔ, ՀԱՅԵՐԻ ԱՐՏԱՀՈՍՔ

Պատմական իրողությունն այն է, որ ունենալով հանդերձ մի այնպիսի հզոր զենք, ինչպիսին է պետական իշխանությունը, թուրքերին հարյուրամյակներ շարունակ չհաջողվեց «հայերի հարցը լուծել»: Սկզբում նրանք փոքրաթիվ էին՝ ցրված Փոքր Ասիայի ընդարձակ տարածքներում, և անզոր էին կայսրությունից դուրս քշել իրենցից թվապես գերազանցող հայերին:

Հայերի արտագաղթը նոր երևույթ չէր, սակայն զանգվածային բնույթ ստացավ 19-րդ դարի վերջին տասնամյակներին: Հրայր Դժոխքը այդ աղետի գլխավոր պատճառը համարում էր «թե՛ թուրք կառավարության և թե՛ քուրդ տարրի հարստահարությունները... Առաջներում ևս երաշտ լինում էր, բայց ժողովուրդը չէր գաղթում և ինչ-որ բան վաճառելով իր գոյությունը պահում էր: Այժմ այլ է... երկար տարիներ ի վեր թալանվելով, հարստահարվելով, այլևս ոչինչ չի մնացել, որպեսզի ծախե և ուտե...»[163]:

Ճիշտ է, տնտեսական, քաղաքական և ազգային ճնշումները խթանեցին հայերի արտագաղթը, բայց անզոր էին լուծելու Հայաստանը հայաթափելու խնդիրը: Պահանջվում էր գտնել հարցի արմատական լուծման միջոցներ: Եվ գտան: Դրանցից մեկը մահմեդական տարրերի ներարկումն էր Հայաստան: Այդ քաղաքականությունը նույնպես նոր չէր, բայց դրա ջատագովը հանդիսացավ Աբդուլ Համիդը: Նա գրում է. «...Մեր պետության մարդաթափուր գավառները լցնելու համար պետք է մի խելամիտ ներգաղթ կազմակերպենք... Անցել են այն ժամանակները, երբ մենք օտար կրոնների մարդուկները ցցեցինք մեր սեփական մսի մեջ: Միայն սեփական ժողովուրդներին ու հավատակիցներին կարող ենք հանդուրժել մեր պետությունում: Պետք է ձգտենք մեծացնել թուրքական տարրի ուժը: Պետք է հատուկ ծրագրով Բոսնիայից, Հերցեգովինայից, ինչպես նաև Բուլղարիայից մահմեդականության դեպի արևելք ծավալվելու հոսքի խոչընդոտները վերացնենք»[164]:

Հարկ է նաև նկատի ունենալ, որ առանց մուհաջիրների ներհոսքի էլ Հայաստանն արդեն բազմազգ էր դարձել: Քրդերից ու թուրքերից բացի Վանի և Հաքիարիի վիլայեթներում բնակվում էին նաև խալդական հավատքի (քրիստոնեության տարատեսակ) ասորիներ: Սրանք ևս քոչվոր էին: Քղիի կազայում կար հունական գյուղ, Բաշկալեյում՝

---

[160] Նույն տեղում, էջ 56:

[161] Колюбакин А. М., նշվ. աշխ., էջ 57:

[162] Նույն տեղում, նշվ. աշխ., т. III, ч. I, Тифлис, 1891, стр. 54, 56, 57, 67, 110, 128.

[163] «Դրոշակ», 1894, թիվ 10:

[164] Ցազճյան Գ., նշվ. աշխ., էջ 827-828:

հրեաներ, Վանում, Խարբերդում, Դիարբեքիրում և մի քանի այլ վայրերում՝ գնչուներ: Այդ վիլայեթներում, ինչպես նաև Էրզրումում, բնակվում էին նաև պարսիկներ:

Թուրքական կառավարությունը, ներմուծելով մահմեդականներին, «նրանց հետ մեծ հույսեր էր կապում, մտադիր լինելով հզոր հիմք ստեղծել Ռուսաստանի, ինչպես նաև անհանգիստ քրդերի ու արաբների, վստահություն չներշնչող քրիստոնյաների դեմ: Իսկ լեռնականները (Կովկասում), թողնելով իրենց լեռները և փոխելով բնակավայրը նոր հայրենիքով, որը նրանց թվում էր իսկական իսլամի երկիր, չափից ավելի վարդագույն հույսեր ունեին, ակնկալում էին գրկաբաց ընդունելություն և ուղղափառների (այսինքն մահմեդականների ) տիրոջ՝ սուլթանի կողմից առատ պարգևներ: Այս հույսերը չարդարացան: Դրամական միջոցների բացակայության և թուրքական իշխանությունների ոչ ճկուն քաղաքականության հետևանքով վերաբնակեցված լեռնականները հայտնվեցին տարօրինակ կացության մեջ: Նրանք իրենց զգում էին խաբված և առաջին իսկ պահից դրսևորեցին անհնազանդություն: Լեռնականները լեզու չգտան նաև տեղաբնակների հետ: Դիարբեքիրի վիլայեթում նրանց և արաբների ընդհարումը ստացավ այնպիսի բնույթ, որ պահանջվեց զորքի միջամտությունը:

Լեռնականները հայերին չեն սիրում..., իսկ քրդերին արհամարհում են»[165]:

Եթե օսերն ու չեչենները, մասամբ նաև լեզգիներն ու կաբարդիները, չճուլվեցին և պահեցին իրենց ազգային դեմքը, ապա չապսուղները, աբխազները և մյուս լեռնականները արագ ճուլվեցին:

Անժխտելի իրականություն է, որ կովկասյան լեռնականներին Հայաստան բերեց օսմանյան կառավարությունը: Այդ լեռնականները պատկանում էին տարբեր ժողովուրդների, բայց Թուրքիայում հայտնի էին «չերքեզ» ընդհանուր անունով: Չերքեզ բառը նշանակում է «ռազմիկ» կամ «մարդասպան»: Հյուսիսային Կովկասի լեռնականներին «չերքեզ» ընդհանուր անվան տակ ճանաչելու պատճառը երեքն են. չերքեզները լեռնականներից ամենամեծաթիվն էին, զբաղեցնում էին Սև ծովի արևելյան ափերը և 19-րդ դարի կեսերին Օսմանյան կայսրությունում տեղափոխված մուհաջիրների մեծ մասը չերքեզներ էին[166]:

Մինչև վերջին տարիները պատմագիտական գրականության մեջ պատշաճ ուշադրություն չէր դարձվում Հայոց ցեղասպանության իրականացման գործում Կովկասյան լեռնականների խաղացած դերին: Իհարկե, այդ դերը, համեմատած քրդերի և թուրքերի կատարածի հետ, այլ բնույթ ու նշանակություն ուներ, սակայն ամենևին էլ չէր նվազեցնում լեռնականների «ներդրումը» Հայասպանության գործում: Այս առումով հարկ է նշել Ա. Ավագյանի "Черкесский фактор в Османской империи и Турции" աշխատությունը, որ լույս է տեսել Երևանում 2001թ.: Աշխատությունն առաջին լուրջ փորձն է՝ գիտական շրջանառության մեջ դնելու Հայկական հարցում և Հայոց ցեղասպանության իրականացման գործընթացում մի ոչ երկրորդական նշանակության գործոնի վերաբերող նյութեր: Հեղինակը միանգամայն իրավացի է, երբ գրում է, եթե ցարական վարչակարգի համար կովկասյան լեռնականները մշտական զինված ընդդիմություն էին, ապա օսմանյան բռնատիրության համար՝ հպատակ ժողովուրդներին հնազանդության մեջ պահելու ու նաև բնաջնջելու միջոց:

Քրդական և չերքեզական ոչ կանոնավոր զորամասերի ստեղծումը նպատակ ուներ դրանց ուժերով ճնշել հպատակ ժողովուրդների չարժումներն ու նաև իրականացնել զանգվածային ջարդեր՝ խույս տալով եվրոպական միջամտությունից: Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածում քրդերի կողքին նշված են նաև չերքեզները՝ սուլթանը պարտավոր էր հայերին պաշտպանել քրդերից և չերքեզներից: Կովկասյան լեռնականների ներ-

---

[165] Колюбакин А. М., նշվ. աշխ., էջ 160:

[166] "Национально-освободительная война Северного Кавказа и проблемы мухаджирства", Нальчик. 1994, стр. 234.

*Հոսքն Օսմանյան կայսրություն սկսվեց 19-րդ դարի առաջին կեսին: Ռուսները նրանց արտամղում էին Կովկասից, այլակրոնների թիվը փոքրացնելու, իսկ Թուրքիան խթանում էր նրանց ներմուծումը՝ կայսրությունում մահմեդական ազգաբնակչության տեսակարար կշռի մեծացման, կայսրության «թուրքացման» նպատակով: Երիտթուրքերը չարունակեցին Աբդուլ Համիդի «ինքնատիպ» մոտեցումը դեմոգրաֆիկ խնդիրների լուծմանը: Երիտթուրքական խորհրդարանը 1912թ. օրենք ընդունեց, համաձայն որի՝ քրիստոնյաների մարդահամարն անկացվելու էր ըստ կրոնի և ազգության, իսկ մահմեդականներինը՝ միայն ըստ կրոնի:*

*1864թ. ապրիլին Տրապիզոն հասավ 34 նավ 18000 չերքեզներով, չնայած նավահանգստում արդեն կուտակված էր 20000 մուջահեդ: Մեկ ամիս անց, մայիսին բերվեց ևս 27000 մարդ[167]:*

*Այդ տարի Տրապիզոնի վիլայեթ բերված 247000 չերքեզից 19000 մեռավ զանազան համաճարակներից, օրեկան մեռնում էր 180-250 մարդ[168]: Ոչ քիչ դեպքերում, նավերի թուրք տերերը համաճարակ հիվանդությունների տարածվելը թույլ չտալու համար, նավերը ջրասույզ էին անում մուհաջիրների հետ միասին: Տրապիզոնում Ռուսաստանի հյուպատոսը տեղեկագրում է. «Չերքեզներին տեղավորում են քրքրված վրանների տակ. նրանք բառի բուն իմաստով սուզվում են աղբի մեջ: Դրանից էլ սարսափելի թվերի հասավ մահացությունը՝ 40-60 մարդ մի օրում[169]:*

*Սակայն ներգաղթածները ստանում էին պետական աջակցություն: Նրանց տրամադրում էին տարածքներ, պետությունն օգնում էր տուն կառուցելու, չերքեզները տասը տարի ազատվում էին բանակում ծառայելուց և հարկ վճարելուց, նրանց տրվում էր լծկան[170]: Լեռնականների մի մասին բնակեցնում էին քրիստոնյաներին պատկանող հողերի վրա և դրանց տերերին պարտադրում մուհաջիրների համար ձրի տուն կառուցեն, հոգան նրանց կարիքներն ու սնունդը, անվճար կազմակերպեն մուհաջիրների տեղափոխությունները[171]: Մուհաջիրներին տեղավորելու և նրանց կարիքները հոգալու համար ստեղծվեցին նահանգային հանձնաժողովներ: Ռուսական կառավարության պահանջով չերքեզները չպետք է բնակեցվեին ռուս-թուրքական սահմանի մերձակա տարածքներում, սակայն ինչպես գրում է թուրք հեղինակ Ա. Սայդամը, չկար մի վիլայեթ, որտեղ մուջահեդներ չբնակեցվեին[172]: Չերքեզների բնակեցումը Հայաստանում կրում էր հետևյալ պատկերը: Նախ ասենք, որ նրանք բնակեցվեցին այնպիսի շրջաններում, որտեղով հետագայում անցան հայերի բռնագաղթի ուղերթները: Օրինակ. 1866-ին 1200 չեչեն ընտանիք բնակեցվեցին Ռաս-ուլ-Այնում: Նույն թվին հարյուրական ընտանիքներ բերվեցին Ադանայի, Մուշի, Խնուսի, Կարսի կողմերը: 1870-ական թվականների վերջերից սկսած, Բալկաններից 300000 չերքեզ անցավ Ասիական Թուրքիա, որից 25000 տեղավորվեց Ադանայի վիլայեթում: 1879թ. Դիարբեքիրի վիլայեթում բնակեցվեց 5000 չերքեզ ընտանիք: Նույն թվին Ադիբազարում բնակեցվեց 40000 չերքեզ: 4000 չերքեզ հաստատվեց Տարոնում: Հայերի բողոքները այդ բնակեցումների դեմ սուլթանն ու Բ. Դուռը հաշվի չէին առնում: Սուլթանը ձգտում էր մահմեդական տարրերի ներմուծման միջոցով թուլացնել հայերին: Բալկաններից բերված մուհաջիրներ բնակեցրին նաև Բայազետի սանջակում (կարափափախներ), Վարդոյի կազայում (օսեր և չեչեններ), Մա-*

---

[167] *"Московские ведомости"*, 05.05.1864.

[168] *"Русская старина,* 1882, №1.

[169] **Grigoriantz A.,** *Kafkasya Hal Olan.* Ist., 1999, s. 96.

[170] **Аверьянов П.,** *Этнографический и военно-политический обзор азиатских владений Оттоманской империи,* СПб., 1912, стр.22.

[171] *АВПРИ, ф. 149, оп. 502, д. 4467.*

[172] *Տե՛ս* **Աբգյան Ա.,** *նշվ. աշխ.,* էջ 126-127:

նազկերտում, Բուլանըխում, Ախլաթում, Ալջևազում, Գենջում (Չերքեզներ)[173]: Հետագա տարիներին Հյուսիսային Կովկասից եկածները գրեթե ամբողջությամբ բնակեցվում էին Արևմտյան Հայաստանում, այդ թվում Սըվասում՝ 49000, Կարսում և Բիթլիսում 5000-ական հոգի և այլն:

Լեռնականների զանգվածային ներգաղթը Օսմանյան կայսրություն սկսվեց 1858թ.[174]: Նրանց հոսքը Թուրքիա՝ գնալով թափ առավ: Բ. Դուան որոշմամբ ստեղծվեց գաղթականական հանձնաժողով՝ Տրապիզոնի վալի, ծագումով չերքեզ Հաֆըզի գլխավորությամբ:

Օսմանյան կառավարությունը ձգտում էր մուհաջիրներին տեղավորել առավելապես կայսրության այն մասերում, որտեղ Բ. Դուան դիրքերը թույլ էին: Նման տարածք համարվում էր նաև Արևմտյան Հայաստանը՝ նախ, վերջինիս էթնիկական կազմը հօգուտ մահմեդականների փոխելու, երկրորդ, պատերազմի դեպքում օգտագործելու՝ ռուսներին թշնամաբար տրամադրված այդ տարրերին:

Մասնագետները գտնում են, որ 1858-1864թթ. Թուրքիա էր անցել մոտ 0,5 միլիոն մուհաջիր[175]: Ըստ Դ. Երեմեևի՝ 19-րդ դարում Թուրքիա էր տեղափոխվել 1,8 միլ. լեռնական[176]: Իսկ Ռ. Լանդայի կարծիքով՝ այդ թիվը մոտենում էր երեք միլիոնի[177]:

1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո նոր թափ ստացավ նաև կայսրության տարբեր մասերում եղած մուհաջիրների տեղափոխությունը Արևմտյան Հայաստան: 1879թ. Թուրքիայի արևելյան նահանգներում հաշվվում էր ավելի քան 1,1 միլ. մուհաջիր:

Աբդուլ Համիդը չերքեզներին լայն արտոնություններ չնորհեց: Չերքեզները վերածվեցին «արտոնյալ տարրի» և ճանաչվեցին որպես «խիզախ ավազակներ»: Սուլթանական պալատում չերքեզներն ուշադրության կենտրոնում էին: Նրանք չատ արագ էին առաջանում քաղաքացիական և բանակային պաշտոններում, ամենաստրատեգիական կապերի մեջ էին արքունիքի ամենաբարձր շրջանների, այդ թվում նաև սուլթանի հետ, որի հարեմում չերքեզուհիները մեծամասնություն էին: Սուլթանի տատը նույնպես չեչեզուհի էր, չերքեզուհի էր նաև սիրած աղջիկը՝ Ելդըզը (Աստղ), որի անունն էր կրում սուլթանական պալատը[178]:

Խորհրդանշական էր նաև այն, որ Աբդուլ Համիդի դեմ առաջին դավադրության (1878թ.) ղեկավարը նույնպես չերքեզ էր՝ Ալի Սուավին:

Ռուս գնդապետ Վ. Ֆիլիպովը նկատում է՝ լեռնականների «գլխավոր զբաղմունքը գողությունն էր» և դա այնպիսի բարձր մակարդակով էր կատարվում, որ «օրինակ Սըվասում գողացված ձին մեկ չաբաթ անց արդեն Անկարայում էր, այսինքն՝ գրեթե 400 վերստ հեռավորության վրա»[179]: Ռուս մի ուրիշ սպա՝ Տոմիլովը նկատում է, թե Ադանայի նահանգում «լեռնականներին տեղի բնակչությունը չէր սիրում թալանի և գողության հանդեպ նրանց հակումների համար»[180]:

«Եթե նկատի ունենանք, որ 1878-1904թթ. միայն այդ շրջաններում, որտեղ հայերը բնակվում էին համախումբ,– գրում է Թ. Աքչամը,– բնակեցված մուհաջիրների թիվը

---

[173] Аверьянов П., նշվ. աշխ., էջ 22:

[174] Karpat K., *Ottoman Population 1830-1914.* Madison, 1985, p. 67.

[175] *Русская старина.* 1882, стр. 1.

[176] Еремеев Д., *Этногенез турок.* М., 1971, стр. 171.

[177] *"Россия и Восток: геополитика и цивилизационные отношения"*, М. 1996, стр. 212.

[178] *"Moussoulmanine"*, 1910, №6.

[179] *РГВИА, ф. 450, оп. 1, д. 533.*

[180] *Отчёт о поездке по Азиатской Турции Генерального штаба подполковника Томилова в 1904г.*, СПб., 1907, стр. 36.

*հասնում էր 850000, կարող ենք պատկերացում կազմել գաղթականության հիմնահարցի ու դրա հետևանքների մասին»*[181]:

*Ջերքեզները օսմանյան քաղաքականության գործոն դարձան Աբդուլ Համիդի սուլթանության շրջանում, ինչը պայմանավորված էր պետական կառույցներում լեռնականների ընդգրկման և հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումները ճնշելու գործում նրանց ուժերի օգտագործման անհրաժեշտությամբ: «Այնպես որ,– գրում է "Moussoulmanine" թերթը 1910թ. իր թիվ 6-ում,– մտեք ժամանակակից Թուրքիայի ցանկացած հիմնարկ և անպայման կտեսնեք լեռնականի՝ սկսած օսից մինչև կումիկը: Այդ սուլթանի օրոք չերքեզները դարձան կայսրության ամենաազդեցիկ տարրը և մեծ դեր էին խաղում կայսրության քաղաքական կյանքում, դա Թուրքիայում «հյուսիսային կովկասցիների ոսկեդարն էր»: Աբդուլ Համիդը գերադասում էր բարձր պաշտոնները վստահել չերքեզներին, ալբանացիներին և քրդերին: Օսմանյան բանակի հրամկազմի 40-50%-ը լեռնականներից էին: Դա ևս նպաստեց, որ իրավասությունները, ինքնուրույն գործելու հնարավորություններն ամբողջությամբ կենտրոնացվեին Ելդըզ Քեոշքում:*

*Ռիզեում Ռուսաստանի փոխհյուպատոսը 1900թ. տեղեկագրում է. «Վերջին տարիներին... Թուրքիայի ներքին քաղաքականությունը... խնդիր ունի ամրապնդել թուրքական ազգայնամոլությունը մահմեդականության հիմքի վրա»: Դա է վկայում սուլթանի քրդական և հայկական քաղաքականությունը, ինչպես նաև հարևան երկրներից գաղթական-մահմեդականներին բերելը: «Մեր Անդրկովկասից հայերին արտամղում են, իսկ մահմեդականներին՝ հրապուրում»*[182]: *Դեռ Մ. Կալմանն էր գրում. «Հայերի հանդեպ իրականացվող դաժանությունների պատասխանատվությունը բարդելով քրդերի ու չերքեզների վրա՝ օսմանցիները իրենց ներկայացնում էին անմեղ: Սակայն օսմանական պետությունը հովանավորում էր քուրդ բեկերին, ովքեր նեղում ու սպանում էին հայերին: Բացի դա, օսմանյան կառավարության ներկայացուցիչների պաշտոնին նշանակվում էին աղաները»*[183]: *Թերևս նաև այդ պատճառով Արևմտյան Հայաստանում վերակառուցվեցին ժանդարմական զորքերը, դրանցում ներառնվեցին մեծ թվով չերքեզներ, որոնք վճռական դեր խաղացին Օբայլդուլայի ապստամբությունը ճնշելու գործում:*

*Ն. Սկրյաբինը գրում է. «Վիլայեթում հավաքագրվելու է 300 ժանդարմ և գրեթե բոլորը կովկասցիներ...»*[184]: *Նրանք օգտագործվում էին հայկական բնակավայրերի ու ֆիդայիների վրա հարձակումների համար: Դա էլ սուլթանին քիչ էր թվում: 1903թ. 4-րդ բանակային կորպուսում չերքեզ մուջահեդներից ձևավորվեցին հատուկ ջոկատներ ֆիդայիների վրա հարձակվելու, ինչպես նաև հարկեր հավաքելու համար*[185]: *Սուլթանը հայերին հաշվեհարդարի ենթարկելու գործում մեծ հույսեր էր կապում համիդիե գնդերի հետ, բայց այդ հույսերը արդարացան մասամբ: Ահա թե ինչու չերքեզները լայնորեն էին ներգրավվում ջանբեզարների չարքերը:*

*1900թ. Աբդուլ Համիդը գաղտնի պայմանագիր կնքեց Ռուսաստանի հետ, որով պարտավորվում էր արգելել երկաթուղագծերի կառուցումը ռուսական սահմանի մերձակա գավառներում՝ պայմանով, որ ցարը թույլ չտար հայ գաղթականների վերադարձն Արևմտյան Հայաստան: Տրապիզոնում ռուսական հյուպատոսը տեղեկագրեց՝ «Թուրքերի գործելակերպը հույների և հայերի էմիգրացիայի հարցում առիթ է տալիս ենթադրելու, որ օսմանյան կառավարությունը ձգտում է անատոլիական մերձծովափնյա շրջաններում ազատվել քրիստոնյա բնակչությունից»*[186]: *Մի երևույթ ևս. Աբդուլ Համիդը չէր*

---

[181] **Akçam T.,** *İnsan Hakları ve Ermeni Sorunu.* İst., 1999, s.149.

[182] *АВПРИ, ф. 180, оп 517/2, д. 4805.*

[183] **Kalman M.,** *Bati Ermenistan ve Jenosid.* İst., 1994, s 35.

[184] *АВПРИ, ф. 151, оп. 482, д. 1639.*

[185] *Նույն տեղում:*

[186] *Նույն տեղում, д. 3445.*

թաքցնում, որ ինքը մշտապես հետապնդել է նպատակ «բորբոքելու հակասություններ հայ կաթոլիկների և ուղղափառների միջև, որպեսզի նրանց թույլ չտա միավորվելու որևէ գաղափարի շուրջ»[187]: Այս խնդիրը լուծելու գործում ևս օգտագործվում էին մուհաջիրները:

Թուրքերը ձգտում էին մուհաջիրներին առաջին հերթին տեղավորել Արևմտյան Հայաստանի լեռնային շրջաններում, որտեղ հայերը բնակվում էին հոծ զանգվածներով: 1858-60ԹԹ. լեռնականների բազմություն բնակեցվեց նաև Մարաշի շրջանում Զեյթունի հայերի հետ առճակատման համար: Նույն քաղաքականությունն էր տարվում նաև Սասունում, Մուշում, Վանում, որտեղ հայերը կազմում էին ազգաբնակչության մեծամասնությունը:

Առանձնապես զգալի էին 4-րդ բանակի հրամանատար, ծագումով չերքեզ Զեքիի ծառայությունները Աբդուլ Համիդի հայահալած քաղաքականությունն առաջ տանելու գործում: Զինովևը 1901Թ. օգոստոսին գրում է. «...Զեքի փաշան հայերի վերջին ժամանակների հալածանքների գլխավոր ղեկավարն է, որին ներկայումս ենթակա է Մուշի և Սասունի հայ բնակչությունը... Սուլթանը շատ բարձր է գնահատում Զեքի փաշայի ծառայությունները և չեմ կասկածում, որ Մուշի և Սասունի ծագում ունեցողներին թուրքական սահմանի մերձակայքում հավաքելը հնարված է մեզ ցուցադրելու դաժան միջոցները, որ իրականացնում է 4-րդ կորպուսի զորքերի հրամանատարությունը հայերի հանդեպ»[188]: Մուշում ռուսական հյուպատոս Տումանսկին 1901Թ. տեղեկագրեց. «Տեղի քաղաքացիական և ռազմական վարչությունների կազմը շատ վատ է: Վիլայեթի գործերի վրա հատկապես վնասակար ազդեցություն է գործում Մշո շրջակայքում տեղակայված 4-րդ կորպուսի հրամանատար Զեքի փաշան, որը բացեիբաց խրախուսում է հայերի հանդեպ բռնությունները...»[189]:

Սկրյաբինը 1902Թ. գրում է, թե նահանգի «գլխավոր պետը մուշիր Զեքի փաշան է... երկրորդ տեղում է դիվիզիայի հրամանատար գեներալ Մունիր փաշան... Առանց այս երկուսից մեկի համաձայնության (էրզրումի) վալին ոչ մի հարց չի լուծում»[190]: Օգտվելով սուլթանի հովանավորությունից՝ Զեքին ամենաբարձր պաշտոնատարների էր աչքատանքից հեռացնում: 1892-ին նա պաշտոնազրկել տվեց էրզրումի վալի Հ. Հայրիին պատճառաբանությամբ, թե վերջինս չի աջակցել համիդիեի գնդերի ստեղծմանը[191]: Մինչդեռ իրական պատճառն այն էր, որ Հայրին դեմ էր հայերի հանդեպ դաժան քաղաքականությանը: Լուր ստանալով, որ Տրապիզոնի վալին լավ է վերաբերվում հայերին, Զեքին նրան ևս աչքատանքից ազատել տվեց: Վալի նշանակվեց Բահրին, որը և նախապատրաստեց Տրապիզոնի հայության 1895-ի ջարդը: Զեքիի հրամանով 1890-ին խուզարկվեցին Սանասարյան վարժարանն ու էրզրումի մայր եկեղեցին, ինչն առաջացրեց հայ-թուրքական հանրահայտ բախումը:

4-րդ բանակային կորպուսը 1895-ին գլխավոր դերը խաղաց հայերի ջարդերի իրականացման գործում: Զեքիի հրամանատարության տակ եղած համիդիե գնդերը զբաղված էին խաղաղ, անպաշտպան հայ բնակչության ջարդով: Նա ամեն ինչ անում էր, որ արևմտահայը լքեր իր բնակավայրն ու հեռանար: Բնականաբար հալածանքները ծնում էին նաև ընդվզումներ: 1903Թ. իսկական պատերազմ տեղի ունեցավ թուրքական զորքերի, համիդիե գնդերի ու հայերի միջև: Էրզրումի նահանգում հայերի հետ բախման ժամանակ զոհվեց 200 համիդեական և 100 զինվոր ու սպա[192]: Սասունի 1904Թ. կռիվների

---

[187] **Bozdağ J.**, *Sultan Abdulhamid' in Hatıra Defteri.* İst., 1996, s. 57.
[188] *АВПРИ, ф. 151, оп. 482, д. 3454.*
[189] Նույն տեղում:
[190] Նույն տեղում, *д. 1638.*
[191] Նույն տեղում, *д. 1630.*
[192] Նույն տեղում, *д. 1639.*

ճնշման գործում Ջեքիից բացի մեծ դեր խաղաց մի ուրիշ չերքեզ՝ Սալիհը, որի հրամանով հետևակային 14 գումարտակ ուղարկվեց Սասուն[193]:

Սուլթանի ու նրա քաղաքականության վրա մեծ ազդեցություն ուներ նաև Մահմեդ Ջեմալեդդինը, որի մայրը Աբդուլ Համիդի ստնտուն էր: Պատանի Մահմեդին վերցրեցին պալատ թագաժառանգի հետ խաղալու համար: Սուլթանն իր կաթնեղբորը չմոռացավ հանճնարարել ղեկավարելու գաղտնի ոստիկանությունը[194]: Նրա օրոք մայրաքաղաքում լրտեսների թիվը հասավ 2000-ի:

Մ. Ջեմալեդդինը սուլթանին խորհուրդ էր տալիս մակեդոնական և հայկական հարցերը լուծել այդ երկու ժողովուրդներին չարդելու միջոցով, ինչը հնարավորություն կտար մահմեդականացնել Մակեդոնիան, իսկ Արևմտյան Հայաստանում կրճատել հայերի թիվը:

Ռիզեում Ռուսաստանի փոխհյուպատոսը 1900թ. գրում է. «Վերջին տարիներին ավելի ակնհայտ գծագրվում է թուրքական կառավարության ներքին քաղաքականությունը, որը կարելի է բնութագրել հետևյալ խոսքերով՝ թուրք ազգության ամրապնդում մահմեդականության հիմքի վրա: Հայկական և քրդական հարցերը հանդիսանում են այդ քաղաքականության արտահայտություն, ինչպես նաև դեպի Թուրքիա հրապուրելը հարևան երկրների մահմեդական գաղթականներին, այդ թվում նաև մեր Անդրկովկասին»[195]: Մ. Ջելալեդդինի որդին՝ Սաբահեդդինը դարձավ Թիլաֆի հիմնադիրը: Մ. Ջելեդդինի հայրենակից Ահմեդը, որից ավելի շատ էին երկնչում, քան սուլթանից, գտնում էր, որ ազգային-ազատագրական շարժումները պետք է ճնշել: Ահմեդի մասին նրա տեղակալը՝ Զիյան գրում է. «Մագումով չերքեզ չափսուղների ցեղից, Ահմեդ փաշան համեմատաբար կարճ ժամանակում դարձավ սուլթանի ամենամերձավոր մարդը և ոչ ոք չգիտեր, թե այդ ծեր չերքեզն ամեն օր ինչ էր փսփսում սուլթանի ականջին: Վերջինիս այդ սիրելիից վախենում էին անգամ նախարարները և ընդհանրապես պալատականները. սուլթանի ներկայությամբ ոչ ոք չէր համարձակվում ծերուկի հասցեին բացասական բան անգամ ակնարկել»[196]:

Ահմեդը մեծ թվով չերքեզների հավաքագրեց ոստիկանության և ժանդարմերիայի շարքերը, նա քրդերից, թուրքերից և չերքեզներից կազմակերպեց «գավազանակիրների» ջոկատներ անպաշտպան քրիստոնյա բնակչության դեմ: Նրա տեղակալ, ազգությամբ նույնպես չերքեզ Զիյան, հայերի ջարդերի կազմակերպիչներից էր: Չերքեզ էր նաև ՆԳ նախարար Մեհմեդը[197]: Սուլթանի անվտանգությունը պաշտպանում էր «դաղստանյան գունդը», որի հրամանատարը Շամիլի որդի Մուհամմեդն էր: Նա 1880-ին նոր դավադրություն կազմակերպեց սուլթանի դեմ: Կայսրության մեծ վեզիրն էր ազգությամբ աբխազ Հայրեդդինը: 1909թ. մարտի 31-ին հետադիմական հեղաշրջման փորձի ղեկավար Մահմեդ Կաբասակալը նույնպես չերքեզ էր: Համիդիե գնդերի ստեղծման գաղափարի հեղինակները նույնպես չերքեզներն էին՝ մարշալներ Ջեքին և Շաքիրը: Սկզբնական շրջանում նախատեսվում էր համիդիե գնդեր ստեղծել քրդերից և չերքեզներից, սակայն մուհաջիրները չհամաձայնվեցին: Այնուամենայնիվ այդ գնդերը ստեղծվեցին, սակայն «Հրամանատար չերքեզ՝ քրդական գունդ» սկզբունքով: 1891-ին Ջեքին երեք անգամ այցելեց 4-րդ բանակային կորպուսի շրջանները և դրոշակներ բաժանեց ձևավորված գնդերին: Նրա ջանքերով 1892-ին ձի հայթայթվեց 35 գնդի համար[198]:

---

[193] Նույն տեղում, ֆ. 180, оп. 517/2, д. 3919.

[194] Павленко П., *Стамбул и Турция*. М., 1930, стр. 31-32.

[195] АВПРИ, Посол в Константинополе, оп. 517/2, д. 4805.

[196] Հաջիքյանե Մ., նշվ., աշխ., էջ 7:

[197] АВПРИ, Политархив, оп. 482, д. 1029.

[198] РГВИА, ф. 2000, оп.1, д. 1006.

1899-ին համիդիե գնդերի թիվը հասցվեց 63 (հարյուրյակ), որից 50-ը կազմված էր քրդերից, 9-ը՝ արաբներից, 3-ը՝ չերքեզներից, մեկը՝ թուրքմեններից[199]: Խաղաղ ժամանակ մարտական վիճակում պահվում էր միայն 10 գունդ՝ Այնթափում, Բայազետում, Ղարաքիլիսեում, Ալաշկերտում, Հասան Կալեում, Էրզրումում[200]: Համիդիե համակարգի հրամանատար նշանակվեց սկզբում չերքեզ Սուլեյմանը, ապա մի ուրիշ լեռնական՝ Հաջի Ահմեդը[201], որոնք ենթարկվում էին Զեքիին[202]:

Վերակառուցվեցին Արևմտյան Հայաստանում եղած ժանդարմական զորքերը, չերքեզներն օգտագործվում էին ազգաբնակչության դեմ, մանավանդ որ, ի տարբերություն քրդերի, սրանք չէին համաձայնվում գործել իրենց բնակած չրջաններից դուրս, չերքեզներն, ընդհակառակը, դա հաճույքով էին անում. նրանք անգամ օգտագործվում էին քրդերի դեմ: Օբայդուլայի ապստամբությունը ճնշելու գործում վճռական դեր խաղացին Մ. Կանդուխովի հրամանատարությամբ գործող չերքեզները: 1881-ին չերքեզներն ու քրդերը բախվեցին Բիթլիսի վիլայեթի Գյոզալդարայում, որից հետո 150 հոգանոց չերքեզական ջոկատը Սարոնի Ռահվա վայրում հարձակվեց քրդական ուժերի վրա, կտրեց կապը Բիթլիսի հետ և խուճապ առաջացրեց[203]:

Ժանդարմեական զորքերի 1906թ. վերակառուցման ժամանակ մի քանի զորամասեր կազմավորվեցին միայն չերքեզներից: Ն. Սկրյաբինը հայտնում է. «Վիլայեթում հավաքագրվելու է 300 ժանդարմ և բոլորը կովկասյան ծագմամբ օտարներ՝ մահմեդականներ, ովքեր կամ փախել են Ռուսաստանից, կամ վերաբնակվել են Թուրքիայում և ընդունել թուրքական հպատակությունը»: Չերքեզներից կազմված ժանդարմեական ուժերը հարձակումներ էին գործում հայկական գյուղերի վրա, հետապնդում հայդուկներին: 1903թ. ձևավորվեցին մուջահեդական ջոկատներ հայդուկներին հետապնդելու, քրդական խռովությունները ճնշելու և հարկեր հավաքելու համար: Դրանք չանբեզարների խմբեր էին, որոնց իրավունք էր տրված թալանելու «խռովարար գյավուրներին»: Չանբեզարները նաև զբաղվում էին քրդերից հարկեր հավաքելու գործով[204]:

Այն չերքեզները, ովքեր Կովկասյան պատերազմին մասնակցել էին ռուսների դեմ, Թուրքիայում անմիջապես ստանում էին փաշայի կոչում: Չերքեզ սպաներն անհամեմատ շատ էին Հայաստանում և Քրդստանում տեղակայված IV և III բանակային կորպուսներում:

"Moussoulmanine" թերթը 1910թ. իր 6-րդ համարում գրում է. «Մի՞վ չգիտի, որ (օսմանյան) լավագույն և ընդունակ զորահրամանատարները բացառապես չերքեզներ են: Մոտեք ժամանակակից Թուրքիայի ցանկացած հիմնարկ և անպայման կգտնեք լեռնական...»: Համիդը չերքեզներին վերածեց կայսրության ամենաազդեցիկ տարրերից մեկի, ովքեր կարևոր դեր էին խաղում կայսրության կյանքում[205]:

---

[199] Նույն տեղում:

[200] АВПРИ, Посол в Константинополе, оп. 517/2, д. 3944.

[201] Նույն տեղում:

[202] Նույն տեղում, д. 3176.:

[203] АВПРИ, Политархив, оп. 482, д. 1625.

[204] АВПРИ, Политархив, оп. 482, д. 1640.

[205] Կայսրությունում չերքեզական ծագում ունեցող գործիչների ցուցակը մոտավորապես ունի հետևյալ պատկերը:

Մուհամմեդ Զեքիի քույրը Արդուլ Համիդի կինն էր. նաև դրա շնորհիվ 1886թ. ստացավ մուշիր զինվորական կոչումը: Պաշտոնանկ արվեց 1908թ. օգոստոսին Դերսիմի ղզլբաշների հետ բանակցությունների ընթացքում կաշառք վերցնելու համար: Ահմեդ Աբուկ – Էրզրումի բերդի 7-րդ դիվիզիայի հրամանատար, բերդի պարետ, չերքեզ, Զեքիի մերձավորներից: Ցավեր – 16-րդ բրիգադի հրամանատար Բիթլիսում և պարսկական սահմանի վրա: Մեհմեդ – 31-րդ պահեստային բրիգադի հրամանատար: Ռեշիդ – 2-րդ հեծյալ բրիգադի հրամանատար: Սաիդ – 14-րդ բրիգադի հրամանատար: Սալիխ – Մշո կազայի հրամանատար: Մահմեդ – 17-րդ բրիգադի հրամանատար, որի հրամանով բրիգադը մասնակցեց Էրզրումի հայերի ջարդին: Ահմեդ – 4-րդ համիդիե հեծելազորային դիվիզիայի հրամանատար, Զեքիի քրոջ ամուսինը: Ռուսական գործակալը գրում է, թե

Ջնայած Արևմտյան Հայաստանում մեծ քանակությամբ ազատ հողեր կային, լեռնական գաղթականներին տրվում էր հիմնականում հայերի հողերը[206]: Սուլթանական կառավարությունն ամեն ինչ անում էր գաղթականների հոսքը Թուրքիա մեծացնելու համար, Կ. Պոլսի գործակալները վխտում էին կովկասյան բնակավայրերում: 1906թ. սուլթանի իրադեով հայերին թույլատրվեց ընդունել ցանկացած պետության հպատակություն՝ պայմանով, որ արտագաղթեին: Սկրյաբինը այս իրադեի մասին տեղեկագրում է, թե սուլթանը նպատակ ուներ աջակցելու «հայերի արտագաղթին ուրիշ երկրներ՝ այն հաշվով, որ նրանք փոխարինվեն Անդրկովկասի մահմեդականներով»[207]: Վերջիններիս ներհոսքը Թուրքիա գնալով ավելի ու ավելի լայն ծավալներ էր ընդունում:

Իշխանությունները գաղթականներին մղում էին թալանելու հայ բնակչությանը: Մշո դաշտում դա հանգեցրեց հայ բնակչության ջարդի ու զանգվածային արտագաղթի[208]: Սակայն չերքեզները թալանում և սպանում էին ոչ միայն հայերին, այլև քրդերին, ինչը վերջիններիս մղեց ընդդիմանալու սուլթանական այդ քաղաքականությանը: 1903թ., երբ իշխանությունները փորձեցին չերքեզների միջոցով, ուժի գործադրմամբ, սասունցիներին տեղափոխել Տարոնի Դաշտ, քրդերը հասկանալով, որ դրանով զրկվում էին «իրենց կերակրողներից», հանդես եկան այդ տեղափոխության դեմ[209]: Չերքեզների հետ զինված բախումն ավարտվեց քրդերի պարտությամբ:

Մուհաջիրների ներհոսքի հետևանքով Արևմտյան Հայաստանում վիճակը որակական փոփոխություն կրեց: Թուրքիա գաղթած 418 հազար չերքեզ, աբխազ, օս, կաբարդին, բալկար, ինգուշ, չեչեն, լեզգի և այլ մուհաջիրների կեսին բնակեցրին Սեբաստիայի, Կարինի, Բաղեշի, Վանի վիլայեթներում: Կառավարման ամբողջ համակարգը լծվեց ներգաղթի կազմակերպման գործին և ոչ առանց հաջողությունների: Անգլիացի զինվորական Քիթչենները գրում է, որ Ադիաբազարի գավառ (որի քաղաքային բնակչությունը 11.8 հազար է, այդ թվում հայեր՝ 8 հազար, գյուղական բնակչությունը 17 հազար) միանգամից լցվեց 25-30 հազար չերքեզ, որոնց մի մասը եկել էր եվրոպական Թուրքիայից, իսկ մյուսները՝ Ասիայից՝ Սուխում-Կալեից[210]: Նույն պատկերն էր Դյուդյեի կազա-

---

«այնքան ճակատագրապաշտ էր, որ երբ տանից դուրս գալիս առաջինը հանդիպում էր քրիստոնյայի, օրը համարում էր փչացած, մնում էր տանը և որևէ գործ չէր անում»: Սեիդ – Վանի համիդիեական 5-րդ բրիգադի հրամանատար: Քուաղ – 13-րդ պահեստային դիվիզիայի հրամանատար: Մեհմեդ – էրզրումի պարետ: Քյոսա Բինբաշի – 4-րդ կորպուսի զորամասի հրամանատար, Սասունի 1904թ. կռիվներում թուրքական ուժերի ղեկավար: Մ. Կունդուկով – գեներալ, 8-րդ դիվիզիայի հրամանատար, 1886թ. ղեկավարեց չեչենների վերաբնակեցումը Արևմտյան Հայաստանում, Քրդական ապստամբության ճնշող ու Օբայդուլային գերեվարող, թուրքական բանակում մեծ հեղինակություն ուներ. կապերի մեջ էր սուլթանի մերձավորների, ինչպես նաև ռուսական հետախուզության հետ, ռուս-թուրքական մերձեցման եռանդուն կողմնակից էր: (АВПРИ, ф. 151, Политархив, оп. 482, д. 1887): Մ. Քազըլ – Գազա Մուհամմեդի կնոջ եղբայրն էր: 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմում կռվում էր կովկասյան ռազմաճակատում: Ստացավ մուշիրի կոչում: Մ. Մուզաքեր – աբխազ, ծովակալ, սենատոր. նրա որդիներից մեկը՝ Ռաուֆ Օրբայը քեմալական շարժման նշանավոր դեմքերից էր, իսկ մյուսը Հ. Մուրադը երիտթուրք էր և զոհվեց տրիպոլիտանյան պատերազմում: Մ. Լյութֆի – արաբների դահիճներից էր: Մ. Ուասաքի – ադիգեյ, չերքեզական հեծելազորային դիվիզիայի հրամանատար, կռվել էր անգլիացիների և ֆրանսիացիների դեմ, արաբների հետ բախումների կազմակերպիչներից էր: Մինչև 1926թ. Մ. Քեմալի գեներալների մեծ մասը (Ալի Ֆուադ Չեբեսոյ, Քևի Չակմակ, Կըլըչ Ալի, Թոփալ Օսման), ինչպես նաև քաղաքական գործիչները հյուսիսկովկասյան ծագում ունեին (Հուսեյին Ռաուֆ Օրբայ, Բեկիր Սամի և ուրիշներ): Քեմալական շարժմանը մեծ ծառայություն մատուցեցին Չերքեզ Էդհեմի, չերքեզ Կըլըչ Ալիի մարտական ջոկատները, հայերի և հույների դեմ Պոնտոսում կռվում էր Թոփալ Օսմանի պարտիզանական բանակը:

[206] АВПРИ, ф. 151, оп. 482, д. 1628.

[207] Նույն տեղում, д. 1643.

[208] Նույն տեղում:

[209] АВПРИ, ф. 151, оп. 482, д. 1643.

[210] Blue Book, Turkey, №4, 1880, pp. 28-39.

յում, որի տեղական բնակչության ընդհանուր թիվը 30 հազար էր, իսկ մուհաջիրներինը՝ 25 հազար[211]:

Մերկ ու սոված, բայց նաև զինված լեռնականներն աղետ դարձան արևմտահայության համար: Նրանք իշխանությունների քաջալերանքով զավթեցին հայերի բնակավայրերը, հողերը, չարժական և անչարժ ունեցվածքը: Ջերքեզների անբաժան ուղեկիցն էին բռնությունները, թալանն ու սպանությունները: Երբ քրդական ներհոսքին ավելացավ մուհաջիրների ներգաղթը, հայ ժողովրդի գոյությունն իրոք դրվեց հարցականի տակ: Մուհաջիրները հայկական նահանգներում քրդերի հետ միասին վերածվեցին օսմանյան իշխանությունների բարբարոսությունների հենարանի: Սուլթանը, հանձինս լեռնականների, փաստորեն ճևավորում էր հայերի բնաջնջման մի նոր ուժ: Անգլիական դիվանագետներից մեկը գրում է. «Ոչ մի բան չի կարող արդարացնել այն, ինչ... ձեռնարկեց թուրքական կառավարությունը՝ զինված մարդկանց ամբոխը լցնելով այն երկիրը, որի անմեղ բնակչությունը սովոր չէր զենք կրելու»[212]: Մի դիվանագետ հանդիպում է հայկական նահանգները գաղթող մուհաջիրների, որոնք ցնցոտիների մեջ էին, տառապում էին ջերմախտով, մեռնում քաղցից: Նրանք բնակվում էին բաց երկնքի տակ, սնվում հատապտուղներով: Ի պատասխան այն հարցին, թե ինչու են հեռացել Կովկասից, մոլլան ցույց տվեց մի գրություն՝ Բ. Դուռը խոստանում էր պետության հաշվին գաղթականներին մի տարի հացով ապահովել, նրանց տրամադրել լավագույն հողեր, գյուղատնտեսական գործիքներ, անասուն, ինչպես նաև ֆինանսական միջոցներ՝ տներ, մզկիթներ, դպրոցներ կառուցելու, ուսուցիչներին վճարելու համար[213]:

1879թ. հոկտեմբերին Էրզրումի վալին Թրոթերին հայտնեց, որ ներգաղթել է 50-60 հազար չերքեզ: Այդ նույն օրերին "Кавказ" թերթը գրեց, որ ռուսական զորքի կողմից կարսը գրավելուց հետո այնտեղից հեռացել էր 41691 մահմեդական[214]: Տրապիզոնում անգլիական փոխհյուպատոս Մարենգոյի վկայությամբ 1879 թվի ապրիլ-հունիս ամիսներին թուրքական նավերը սևծովյան նավահանգիստներ, հատկապես Տրապիզոն, Սամսոն, Ուգնա բերել էին 5933 լազի: Գաղթականների հոսքն ավելի ուժեղացավ 1880 թվին: Տրանսպորտի տարբեր տեսակներով բերվեց 1500-3000-ական մարդ[215]: 1880թ. սեպտեմբերին Թրոթերը Վանի ճանապարհին հանդիպում է հարյուրավոր գաղթականների, իսկ անգլիական մի այլ զինվորական՝ Ջերմսայդը, Էրզրում—Սըվազ ճանապարհին՝ գաղթականներով լի 600 սայլ[216]: Գաղթն իրականացնող թուրք ծառայողները զբաղվում էին դրամաչորթությամբ՝ ներգաղթողներից փող էին կորզում՝ լավ հողեր տալու, իսկ տեղական ազգաբնակչությունից՝ նրանց հարեվանությամբ գաղթական չբնակեցնելու համար:

Ռոլեն Ժեկմենը գրում է, որ եթե «...նույնիսկ նկատի ունենանք, որ այդ դժբախտ ժողովուրդների գաղթը հետևանք է քրիստոնյաների գերիշխանության հանդեպ մահմեդականների անհանդուրժողականության, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ թուրքական կառավարության անհոգությունն, անբարեխղճությունն ու մաքիավելիությունը նպաստեց իրավիճակի էլ ավելի բարդացմանը, գաղթականների հոսքի ուժեղացմանը: Կառավարությունը չէր կարող չկանխազգալ, որ այս տգետ և վայրենի հորդանները լցվելով մի երկիր, որտեղ նրանց ընդունելու համար ոչինչ նախապատրաստված չէր, կենթարկվեին զուտ ինքնապաշտպանության բնազդին... և կսկսեին թալանել, սպանել...: Ժողովուրդների կողմից միմյանց ոչնչացնելը համապատասխանում է կառավարության մտադրու-

---

[211] Նույն տեղում, №6, 1880, էջ 55:
[212] Положение армян в Турции..., стр. 60.
[213] Նույն տեղում, էջ 69:
[214] Blue Book, Turkey, №23, 1880, pp.66.
[215] Նույն տեղում, №4, 1880, էջ 26:
[216] Նույն տեղում, էջ 169:

*թյուններին... հանձինս դրա նա տեսնում է իր դժբախտ կայսրությունը փրկելու լավագույն միջոց»*[217]:

*Ադրբազարի և Դյուդչեի կազաներում տիրող իրավիճակի վերաբերյալ բրիտանական դեսպանի 1880թ. օգոստոսի 16-ի նոտայում կարդում ենք. «Գաղթականների վիճակն այնքան ծանր է, որ նրանք աղաչում են թուլյատրել վերադառնալ...»*[218]: *«Քուրդ բեյերը չերքեզ աղջիկներին վաճառում էին Կ. Պոլսի փաշաներին: Այդ առևտուրն այնպիսի ծավալներ ընդունեց, որ, ինչպես վկայում է թուրք պատմիչ Լութֆին, սուլթանը, նկատի ունենալով Տրապիզոնում բնակվող չերքեզներին, հրամայեց. «Չի թուլյատրվում... իսլամական կրոն ընդունածներին գերի դարձնել, նրանց գնել ու վաճառել...»»*[219]: *Մուհաջիրների մոտ 40%-ը մահացավ տեղափոխությունների ընթացքում: Իսկ հայերի վիճակը պարզապես անտանելի դարձավ, որովհետև լեռնականները ցեղային ու կրոնական անհանդուրժողականության մղումով ու կառավարության հանձնարարությամբ հայ ազգաբնակչությանը ահաբեկ վիճակում էին պահում: Չերքեզը՝ զինված, հայը՝ զուրկ զենք կրելու իրավունքից, չերքեզին տրվեցին ոստիկանական-վարչական իրավունքներ, իսկ հայը օրենքից դուրս էր:*

*Վանի ճանապարհին տեսնելով մուհաջիրների, որոնք «ոտքից գլուխ զինված էին»՝ անգլիական դիվանագետը գրեց. «Կարելի է կարծել, թե վերադարձել ենք ժողովուրդների մեծ գաղթի դարաշրջանը»*[220]: *Չերքեզներն «անպատիժ կողոպտում են... տերերին քշում են իրենց սեփական հողից, հափշտակում բերքը... Մի շարք գյուղերի բնակիչներ հայտարարում են, թե իրենց հետագա գոյությունը պարզապես անհնար է...»*[221]: *Լայն տարածում ստացան հայ պատանիների ու աղջիկների առևանգումները. «Ես չգիտեմ,— գրում է Ռոլեն Ժեկմենը,— կարելի՞ է արդյոք մի այլ երկիր տեսնել, որի կառավարությունն այդպես ձգտեր իր սեփական նահանգները լցնել վայրենի հորդաներով և նրանց կանգնեցներ երկընտրանքի առջև՝ կամ ապրել թալանով ու կողոպուտով, կամ աղքատությունից մեռնել: Թուրքական իշխանությունների վարքը ստիպում է մտածել, որ նրանք միտք են հղացել քայքայել ու ոչնչացնել քրիստոնյա բնակչությանը՝ չտալով նորեկներին գոյության այլ միջոց, բացի թալանից»*[222]:

*Հյուպատոսական զեկուցագրերից մեկում ասվում է. «Եթե մի տարի առաջ չկար ոչ կյանքի, ոչ գույքի անվտանգություն, ապա այժմ դրանք ավելի քիչ են... ոճիրները, կառավարությունը և բռնություններն ավելի բազմացել են, ամբողջ բնակչությունը հուսահատության մեջ է... Կառավարությունը, ամենևին հոգ չտանելով այդ դժբախտությունների առաջն առնելու մասին, մտահոգված է միայն մի բանով՝ հայերին սանձահարելու համար նրանց դեմ գրգռել (ներգաղթող ու քոչվոր) քրդերին: Նրանց բաժանում է մարտինի հրացաններ՝ չարունակելով հայերին արգելել զենք կրել նույնիսկ սեփական անձի պաշտպանության համար»*[223]:

*Օրդուի հայերը «մեծ զրկանք, մահ, հափշտակություն և նեղություն կրկրեն գաղթականներե»*[224]: *Շապին Կարահիսարում «գողություններ և հափշտակություններ հաճախ տեղի կունենան, նույնիսկ քաղաքում ու չուրջը ապրանք կառնեն, գինը չեն վճարեր, հայը կծեծեն, կըհայհոյեն հավատք և պատիվ, կըպատռեն... Գեղացի հայք կընեղվին մոտակայ թուրք գեղացիներեն, դաշտեն և ախոռներեն համարձակ անասունները կըտանեն, կուտեն, կըծեծեն: Այդպես են նաև զափթիեները, մյուդիրները, կայմակամնե-*

---

[217] *Положение армян в Турции...*, стр. 70.
[218] *Blue Book, Turkey*, №6, 1881, p.118.
[219] *Թուրքական աղբյուրները...*, հ. Դ, էջ 12:
[220] *Положение армян в Турции...*, стр. 68.
[221] Նույն տեղում, էջ 62:
[222] Նույն տեղում, էջ 68-69:
[223] Նույն տեղում, էջ 107-108:
[224] **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 510:

*րը և դատիները: Շուչան գավառի հայոց գեղերեն վեր կըբնակին Զետենզադե եղբայրները, որոնք գյուղացիները ձրի կըծառայեցնեն, եզի և այլ անասնոց պետք ունենան՝ կըհրամայեն ու կըտանին, վայ չտվողին... Կառավարությունից անհույս լինելով, ժողովուրդն ուզածնին կըվճարե ասոնց...»[225]: Արմտանի (Քարուչայի գավառ) հայերը կընեղվեն «անիրավութենեն և անհոգութենեն... սրիկաները գողություն կընեն՝ կըկողոպտեն, կըգողանան և կըզարնեն»[226]: Զերքեզներն անպատիժ կողոպտում են: Նրանք տերերին քշում են սեփական հողերից, հարկադրում են հողային հարկ վճարել պետությանը՝ հափշտակած հողերի համար[227]: Միայն Ազիզեի կազայում չերքեզներն ունեին 2000 քրիստոնյա ստրուկ, որոնց վաճառում էին: Պատանու գինը 20-30 լիր էր, աղջիկներինը՝ 20-120 լիր:*

*Է. Դիլոնը գրում է. «Հայերի ոչնչացման ծրագիրն ակնհայտորեն հաջող ու անխափան է գործում, քրիստոնյա բնակչությունը ոչնչացվում է, գյուղերն ուրիշների ձեռքն են անցնում այնքան արագ, որքան արագ փոխվում են զավեշտական օպերայի դեկորները»[228]:*

*Թուրք կառավարողները հայերի կոտորածները պատճառաբանում են նաև հետևյալ կերպ: Դեպի «տաք ջրեր» Ռուսաստանի առաջխաղացումը լեռնականների շրջանում սկզբնավորեց արտագաղթի տրամադրություն: Նրանք գաղթեցին Թուրքիա և բնակություն հաստատեցին հայերի կողմից «լքված» տարածքներում: Էթնիկական հողի վրա նրանց և հայերի միջև ծագած զանազան բախումները ճնշվում էին կենտրոնական կառավարության կողմից: Հենց այդ գործողություններն էլ Արևմուտքը հայտարարեց հայերի բնաջնջում և միջամտեց Թուրքիայի ներքին գործերին:*

*Մուհաջիրների ներհոսքը, ճիշտ է, զգալիորեն փոխեց մի շարք շրջանների էթնիկական կազմը, սակայն ի զորու չեղավ հայերին փոքրամասնություն և, առավել ևս, թուրքերին մեծամասնություն դարձնել: Իսկ հայկական տարածքները քրդերով բնակեցնելու գործում թուրքերն այնքան չանադիր ու հետևողական եղան, որ արդյունքում քրդերն իրենց հռչակեցին այդ տարածքների միակ տերը: Եթե նախկինում Հայաստանի տարածքին հավակնում էին երկու ժողովուրդներ՝ հայերն ու թուրքերը, ապա այդուհետև նրանց ավելացավ նաև երրորդը՝ քուրդը:*

*Նոր պայմաններում օսմանյան կառավարությունը վերանայեց իր քաղաքականությունը: Որոշվեց թուրքացումից և արտամղումից անցնել արմատական լուծման՝ հայերի ֆիզիկական բնաջնջման քաղաքականությանը: Եվ հայը կոտորվեց: Կոտորվեց ամեն օր ու ամենուրեք, կոտորվեց կողմնակի աչքին աննկատ ու բացահայտ: Բնութագրական մեկ օրինակ: 1878թ. Բիթլիսի վիլայեթում բնակվում էր 400 հազար մարդ, որից հայ՝ 250 հազարը: Դարի վերջին այդ թիվը ավելանալու փոխարեն պակասեց և կազմեց 382 հազար մարդ, այսինքն՝ 18 հազարով պակաս: Նույն ժամանակամիջոցում հայերի թիվը կրճատվեց 70 հազարով և կազմեց 180 հազար, իսկ թուրքերի թիվն ավելացավ և հասավ 40 հազարի: Ավելացավ նաև քրդերի (72 հազար) և չերքեզների (40 հազար ) թիվը:*

*19-րդ դարի վերջին քառորդում լեռնաբնակների արտագաղթի հանդեպ ցարական կառավարության քաղաքականությունը չրջադարձ կատարեց: Հյուսիսային Կովկասից այնքան մարդ էր հեռացել, որ երկրամասի դատարկվելու վտանգ էր առաջացել: Այսինքն, տեղում մնացած լեռնականների թիվն այնքան էր նվազել, որ նրանք այլևս լուրջ վտանգ ներկայացնել չէին կարող: Այնուամենայնիվ, լեռնականների արտագաղթը չարունակվեց մինչև Առաջին աշխարհամարտը, քանի որ Թուրքիան մուհաջիրների համար «հեշտ ապրելու» երկիր էր. մասնավորապես՝ քրիստոնյա բնակչության չրջաններում, որտեղ լեռնականների հիմնական զբաղմունքը թալանն էր:*

---

[225] Նույն տեղում, էջ 534-536:
[226] Նույն տեղում, էջ 538:
[227] *Положение армян в Турции...*, стр. 62.
[228] *Братская помощь ...*, ч. II, стр.13-14.

*Համիդիե գնդերը այդպես էլ պատերազմական լուրջ ուժ չդարձան, մնացին ավազակախմբերի մակարդակին և չարունակում էին օգտագործվել հայերի դեմ: Երբ 1908թ. հեղաշրջումից հետո Ջեքին պաշտոնանկ արվեց, սկսվեց այդ գնդերի ավազակային գործերի հետաքննությունը: Սակայն համիդիե հրամանատարները դատի չտրվեցին[229]: 1909թ. երիտթուրքերը հետ կանգնեցին համիդիեն լուծարելու մտքից և սկսած 1911 թվից՝ նորից սկսեցին այն օգտագործել հայերի դեմ: Ճիշտ նույն ձևով երիտթուրքերը ժառանգեցին Աբդուլ Համիդ 2-րդի քաղաքականությունը նաև չերքեզների հանդեպ: Չերքեզները մինչև հեղաշրջումն էլ Իթիհադի չարքերում նշանակալից դեր էին խաղում: Չերքեզ էր Դիարբեքիրի տխրահռչակ վալին՝ Մ. Ռեշիդը, որն ամենազազրելի եղանակներով հեղեց Աղձնիքի հայության արյունը:*

*"Albania" թերթը դեռ 1897-ին էր գրում. «Երիտթուրք կուսակցությունն ազգային առումով կազմված է Կ. Պոլսի թուրքերից, ինչպես նաև չերքեզներից (սիրիացիներից...)»:*

*Չերքեզների և երիտթուրքերի մերձեցումը կատարվեց Օսմանյան բանակում, որը Իթիհադի գլխավոր բազան էր և որում, ինչպես վերևում նշեցինք, չերքեզները կազմում էին հրամանատարական կազմի զգալի մասը: Անգամ երիտթուրքական «Թանին» պաշտոնաթերթն էր զարմանում, որ 1909թ. «Արաբ իզեթները, չերքեզ Մեհմեդներն ու Թահսինները չարունակում են մնալ վեհափառի պալատում, Ջեքի և Ռահմի Փաշաները դեռևս աշխատանքից հանված չեն»[230]: Աշխատանքից չհանվեցին նաև այն բանի համար, որ պատրաստի ուժ էին հայերի սպանդն իրականացնելու համար: Մանավանդ, որ հայերի հանդեպ չերքեզների թշնամությունը երիտթուրքական հեղաշրջումից հետո ավելի էր ուժեղացել, որովհետև Իթիհադը հայերին խոստացավ վերադարձնել նրանցից խլված հողերն ու հափշտակված ունեցվածքը: 1909թ. դեկտեմբերի 11-ին ՆԳ նախարարությունը տեղերն ուղարկեց հետևյալ հեռագիրը. «Ռուսաստան արտագաղթած հայերի հողերն ու տները, որ բռնատիրության օրոք տրվել են մեր մահմեդական-գաղթականներին, պետք է վերադարձվեն դրանց նախկին տերերին...»[231]: Գրեթե նույն օրերին ձերբակալվեց մուհաջիրների առաջնորդներից Հուսեյինը, որ հայերից խլած հողատարածքներով վիթխարի կալվածքների տեր էր: Նրա զավթած հողերը վերադարձվեցին նախկին տերերին[232]: Չերքեզները դուրս քշվեցին Վարդոյից: Այդ գործընթացը խաղաղ բնույթ չուներ: Հողերի պատճառով տեղի ունեցան արյունահեղ բախումներ (օրինակ, Մշո սանջակի Յոնջալու գյուղում): Նման բախումներին իշխանությունները որպես կանոն չէին միջամտում[233]:*

*Էրզրումում Ռուսաստանի հյուպատոս Շտրիտտերը 1910-ին գրում է. «...Հայերի հողային հարաբերությունները քրդերի և թուրքերի հետ չարունակում է առաջացնել առաջինների մշտական գանգատները և երիտթուրքական կառավարությունը, որը սահմանադրության սկզբնական ամիսներին վերադարձնում էր հողերը հայերին, ներկայումս ամեն կերպ աշխատում է գործը չուռ տալ հետ՝ հին վարչակարգի ժամանակները, ինչպես գյուղացիներից հացահատիկի բռնազավթումը, նրանց ամեն տեսակի նեղություններ պատճառելը»:*

*ՀՑԴ-ն և Հնչակը պահանջում էին զինաթափել ոչ միայն քրդերին, այլև չերքեզներին, հակառակ պարագայում՝ հայերին իրավունք տալ զենք կրելու[234]: Իթիհադը հարկադրված համաձայնվեց և 1911-ին ՀՑԴ և Իթիհադի միջև ստորագրվեց նոր համաձայնագիր՝ ՀՑԴ-ն 1912թ. խորհրդարանական ընտրություններում հանդես եկավ երիտթուրքերի հետ ընդհանուր ցուցակով:*

---

[229] *РГВИА, ф. 2000, оп.1, д. 1002.*

[230] Atichan C., *Ihm Işığında ve Tarih Önüde.* İst., 1956, s.121.

[231] *РГВИА, ф. 2000, Гугуш, оп.1, д. 1002.*

[232] *Նույն տեղում:*

[233] *Նույն տեղում:*

[234] Голобородько Н., *Турция,* М., 1912, стр. 239.

Շուտով, սակայն, ինչպես քրդերը, այնպես էլ չերքեզները հասկացան, որ իրենք եւրոտրուքերից զգուշանալու կարիքը չունեն և ամբողջությամբ անցան իթիհադի կողմը: Նրանց դերը կայսրության կառավարման համակարգում գնալով աճեց, իսկ Ադանայից հետո այդ հարաբերությունները վերածվեցին համագործակցության: «Այդ շրջանում չերքեզները ստեղծեցին մի շարք սոցիալական և քաղաքական կազմակերպություններ, որոնցից կարևորագույնը հանդիսանում էր Միավորման և փոխօգնության չերքեզական ընկերությունը»[235]: Շատ չերքեզներ ստանձնեցին կուսակցական և պետական բարձր պաշտոններ. Մ. Ռեշիդ՝ իթիհադի հիմնադիրներից, Ի. Ջանփոլադ ԱԳ նախարար, պետական պաշտոններ ստացան իթիհադի հանրահայտ չատ ուրիշ գործիչներ՝ Հ. Թոսուն, Հ. Կադրի, Զ. Զիհնի, Է. Քուղչուբայի, Ս. Սամի, Հ. Վասքի, Օ. Նաջի, Ա. Միսրի, Ի. Սուրեյ, Մ. Շյուքրա և այլք[236]:

Շուտով չերքեզները առաջատար դեր ստանձնեցին նաև «Թեչքիլաթի մահսուսիե»ում, նրանք եռանդուն մասնակցություն ունեցան բալկանյան պատերազմներում, առանձնապես աճեց լեռնեցիների ազդեցությունը բանակում: Կայսրության բոլոր ռազմական նախարարները եղել են չերքեզներ: 1909-1911թթ. երկրում փաստորեն հաստատված էր չերքեզ Մ. Շևքեթի բռնապետությունը: Կ. Պոլսում ստեղծվեց չերքեզական այբբենարանը, հրատարակվեց չերքեզական առաջին թերթը, բացվեց առաջին դպրոցը, ստեղծվեց առաջին քաղաքական կազմակերպությունը՝ Հյուսիսային Կովկասի քաղաքական ընկերությունը: Չերքեզները հեչտությամբ ձերբազատվեցին Աբդուլ Համիդի պանիսլամիզմից և փարվեցին երիտթուրքական թուրքիստական քարոզչությանը: Չերքեզ գործիչներից չատերը դարձան համաթրքական քարոզչության տարածողներ: Օրինակ, Իրանում այդ գործով զբաղվում էին Նաջին, Սադրը, Նեքիդը[237]:

Հյուսիսկովկասյան ծագում ունեին թուրք գրողներ Օմեր Սեյքեդդինը և Ահմեդ Միդհադը, ովքեր համաթուրքական քարոզչության առաջատար գործիչներից էին: Ա. Միդհատը 1908թ. հիմնադրեց Türk Derneği-ն, իսկ Զիա Գեոքալփի հետ՝ 1911թ՝ Türk Yurdu Cemiyetleri-te-ն[238]:

Իթիհադի կենտկոմի և Բ. Դռան որոշմամբ 1914թ. ստեղծվեց "Simali" Kafkasya Cemiyet-i Siyasesi" կազմակերպությունը , որի անդամներից Մ. Բութքայը վկայել է, որ կազմակերպությունը "նյութական օգնություն ստանում էր իթիհադական կառավարությունից և, հատկապես, Էնվեր փաշայից... Կազմակերպությունը Էնվերի և Թալեաթի անմիջական ղեկավարության ներքո էր»: Այս կազմակերպության շարքերում էին այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք էին Իզզեթը, Ի. Ջանփոլադը, Հ. Թոսուն, Ցուադը[239]: Կազմակերպությունը 1914թ. ապստամբություն կազմակերպեց Ալջերիայում, նախապատրաստում էր ապստամբություններ ամբողջ Կովկասում[240]:

Մուստաֆա Բուտքայը գրում է, թե թուրքական կառավարությունը ապագայի համար նպատակահարմար էր գտնում իսլամական կառավարության ստեղծումը Հյուսիսային Կովկասում՝ որպես պատնեշ Ռուսաստանի և Թուրքիայի միջև[241]:

Հատուկ կազմակերպությունը սկզբում հիմնականում կազմված էր չերքեզներից: Այդ կազմակերպությունը ծնվեց 1906թ. իթիհադի կենտկոմին կից ստեղծված «Ֆիդայինների կազմակերպություն» անունը կրող ահաբեկչական կառույցի հիմքի վրա, որն իրականացնում էր իթիհադի կենտրոնի կայացրած մահապատժի վճիռները: Օրինակ, կենտ-

---

[235] **Bezanis J.,** *Soviet Muslim Emigres in the Republic of Turkey.*

[236] *Տե՛ս "Central Asian Survey",* vol. 13, №1, 1994, p. 141.

[237] *АВПРИ, Посол в К. поле, оп. 517/2, д. 4226.*

[238] **Aydemir J.,** *Muhaceretleri Herkes Aydınlan,* Ankara, 1991, s. 68.

[239] **Butbay M.,** *Kafkasya Hatıralar,* İst., 1990, s. 2.

[240] *АВПРИ, Политархив, оп. 482, д. 4383.*

[241] **Butbay M.,** *Kafkasya Hatıralar,* İst., 1990, s. 2.

կոմի դատավճռով 1909-1911թթ. ֆիդայիները ահաբեկչության ենթարկեցին ընդդիմադիր երեք թերթերի խմբագիրների: Ահաբեկիչների թվում էին իթիհադի ամենաառաջատար մարդասպանները՝ չերքեզներ Նազըմն ու Ահմեդը[242]: Կուսակցությունում «ֆիդայիների կազմակերպության» ազդեցությունը շատ մեծ էր, դրա միջոցով Թուրքիայում ձևավորվեց «գաղտնի պետություն»: Պատճառները հետևյալն էին. «Իթիհադ վե Թերաքը» հենվում էր կրոնական միստիցիզմի և մասոնական ձևերի յակոբինյան ազգայնամոլ ծայրահեղականության վրա: Կուսակցությունը «ֆիդայիների կազմակերպությանը» օժտել էր լայն իրավասություններով: Իթիհադին, արյուն հեղելու միջոցով, պաշտպանողների չոկատներն ունեին բանակային կառուցվածք, սակայն կտրված էին բանակից և կազմում էին հրացանակիրների ուժեղ խումբ: Այդ խմբի մեջ մտնում էին Ց. Ջեմիլը, Թ. Իհսանը, Աբդուլկադիրը, Ս. Հակին, Էնվերի քեռի Խալիլը, Սթրքը, Հիլմին, Օ. Նաջին և ուրիշներ: «Նրանք բոլորը քաջ սպաներ էին, գրեթե բոլորը մասնակցություն ունեցել էին քաղաքացիական պատերազմին Բալկաններում և աճել էին «պարտիզանական կռիվներում»»[243]: Նրանք բոլորը մտան Թեշքիլաթի մեջ, իսկ Ս. Ասքերին դարձավ այդ կազմակերպության առաջին ղեկավարը:

Խումբը հատուկ կազմակերպության մեջ մտնելուց հետո էլ չարունակեց կատարել իր պարտականությունները «ֆիդայիների կազմակերպության գծով»[244]:

Ջերքեզները կարևոր դեր էին խաղում նաև իթիհադի ընդդիմադիր չարժումներում: Սաբահեդդինը ստեղծեց «Ապակենտրոնացման և մասնավոր նախաձեռնության համար», Ֆուադը՝ իթիլաֆը, ընդիմադիրների բանակում էին նաև Սադըխը, Մ. Շևքեթը և ուրիշներ:

Թեշքիլաթը ստեղծվել էր Բալկանյան 2-րդ պատերազմի ընթացքում՝ 1913թ.: Նրա ղեկավարների մեծամասնությունը լեռնականներ էին՝ Ս. Ասքերի, Հ. Էրթուրք, Է. Կոչհուբաշի, Աթըք, Ազիզ, Օ. Նաջի, Է. Սաբրի և ուրիշներ:

Բալկանյան պատերազմի ավարտից հետո իթիհադը Թեշքիլաթին օգտագործեց ծովափնյա չրջաններից ռայաներին դուրս մղելու համար: Զմյուռնիայում ռուսական հյուպատոսը գրում է. «Հույներին աքսորելն իրականացվում է իշխանությունների մշակած պլանով: Տեղական թուրքերն ու մուհաջիրները պարզապես զենքեր են»[245]: Ժամանակակիցների կարծիքով Թեշքիլաթի չոկատներն իրենց գործելակերպն ընդօրինակել էին բալկանյան հեղափոխական կազմակերպություններից ու չեթեներից: Ադրիանապոլսի Ռուսական հյուպատոսը նկատում է «Բացասական ամեն ինչ ընդօրինակելով բուլղարներից, թուրքերն արագ յուրացրեցին կոմիտեներ կազմակերպելու, թալանի եղանակները և իրենց հարևանների նման ահաբեկչության էին ենթարկում բնակչությանը»[246]: Կ. Էշրաքը 1914թ. Զմյուռնիայի չրջանում եռանդուն գործունեություն ծավալեց մահմեդական ավազակախմբեր ստեղծելու համար: Իթիհադի կենտկոմը Արևելյան նահանգների հայ բնակչության բռնագաղթի և ոչնչացման կազմակերպման ղեկավար նշանակեց Ք. Շաքիրին[247]: 1914-ի օգոստոսի 2-ին որոշեց ստեղծել Թեշքիլաթի հատուկ նշանակության մի քանի ստորաբաժանումներ, որոնց «խնդիրն էր ծառայելու «Թյուրքիզմին՝ միավորելու արտասահմանում բնակվող թուրքերին», սակայն այդ ստորաբաժանումները հիմնականում գործեցին Արևմտյան Հայաստանում[248]: Թուրք հեղինակ Ս. Պարլարի "Osmanlı' dan Günümüze Gizli Devlet (s. 75)" աշխատությունում կան հետևյալ տողերը. «Դեռ

---

[242] **Turan M.,** *Taşkışla' da 31 Mart Faciasi,* İst., 1964, s. 51.

[243] **Parlar S.,** *Osmanlı' dan Günümüze Gizli Devlet.* İst., 1997, s. 49-50.

[244] **Аваган А.,** *Черкесский фактор в Османской империи и Турции,* Е., 2001, стр. 214.

[245] *АВПРИ, Посол в Константинополе, оп. 517/2, д. 4009.*

[246] *Նույն տեղում:*

[247] **Avcioğlu D.,** *Milli Kurtuluş Tarihi, Üçüncü kitap,* İst., 1976, s. 1135.

[248] **Akçam T.,** *İnsan Hakları ve Ermeni Sorunu Ittihat ve Terakki'den Kurtuluş Savaşına.* İst., 1999, s. 221.

*մինչև բռնագաղթի վերաբերյալ օրենքի հրապարակումը Թեչքիլաթ-ի մահմուսան սկսեց աշխատանքը Բալկաններում:*

*Կովկասի էմիգրանտներից և ծանր հանցագործությունների համար դատապարտվածներից սկսեցին ձևավորել զորաջոկատներ: Պատերազմի առաջին ամիսներին այս զորաջոկատների կողմից գյուղերի վրա հարձակումները, թալանը և սպանությունները պատճառ դարձան, որ Ստամբուլում ստացվեին գանգատներ»:*

*Պատերազմի առաջին օրերից արագացվեց նման ջոկատների ստեղծումը Հատուկ կազմակերպությանը կից: Դրանց ձևավորումը ղեկավարում էր իթիհադի կենտկոմի անդամ և Թեչքիլաթի ղեկավարներից դոկտոր Նազըմը:*

*Թեչքիլաթի առջև դրված էին չորս հիմնական խնդիրներ՝ հայ բնակչության զինաթափում, բռնագաղթի կազմակերպում և նախապես նշանակված վայրերում ոչնչացում «ուղեկցող ջոկատների» միջոցով, Սիրիայի անապատներում բռնագաղթվածներին կոտորելու համար ջոկատների ստեղծում, տեղական իշխանությունների հայասպան գործողությունների համակարգում:*

*Ջերքեզները, մասնավորապես՝ Դեր Զորում և Ռաս-ուլ-Այնում, հայերի ոչնչացմանը եռանդուն մասնակցություն ունեցան: Բալկաններից եկած մուհաջիրնըլը նույնպես առանձնակի թշնամություն էին տածում քրիստոնյաների հանդեպ: Թ. Ակչամը գրում է, թե Արևմտյան Հայաստանում Թեչքիլաթի ջոկատների կազմակերպումը սկսվեց օգոստոսի երկրորդ կեսին: Այդ գործում օգտագործվում էին երեք կարևոր հնարավորություններ՝ քրդական աշիրեթները, բանտարկության դատապարտվածները և Կովկասից ու Ռումելիայից վերաբնակները: Էրզրումի շրջանում կուսակցության ներկայացուցիչ Հիլմին էր պատասխանատու չեթեների կազմակերպման համար: Աշիրեթապետերից մեկին նրա նամակում ասվում է. «Քանի որ եկել է ժամանակը հիմնահարցը լուծելու, ինչի մասին մենք խոսել ենք Երզնկայում... ես ուզում եմ 50 տղա... նրանք պետք է լինեն երիտասարդ կամ միջին տարիքի, ամուր և վճռական սեփական կյանքը նվիրաբերելու երկրին և ժողովրդին: Առաջին իսկ պահանջի դեպքում նրանց ուղարկեք...»[249]:*

*Թեչքիլաթի համար հիմք հանդիսացան նաև կովկասյան մահմեդականները: Ջերքեզները մասնակցեցին աշխատանքային գումարտակների հայ զինվորների ոչնչացմանը: Ջերքեզ Ահմեդի ջոկատը սպանեց Գր. Զոհրապին և Վարդգես Սերենգուլյանին, որի համար Ջեմալը Ահմեդին գնդակահարեց: Ալի Ծուլադը Ահմեդին և մի որիշ արյունախում չերքեզի՝ Հալիլին, անվանում է «արյունարբու կոմիտեականներ»: Նրա գլխավորած Թեչքիլաթի խումբն իրականացրեց հայերի ջարդն Արդվինում, իսկ Ահմեդը՝ Վանում, որը հպարտանում էր. «Ես անցա Վանով և շրջակա տարածքներով: Այսօր դուք այնտեղ չեք հանդիպի ոչ մի հայի»[250]: Թեչքիլաթի չերքեզական մի ջոկատ Թուրքերի հետ միասին իրականացրեց Ուրֆայի և շրջակայքի հայ երիտասարդների ջարդը[251]: Էրզրումի վիլայեթի հայաթափման գործում մեծ դեր խաղաց չերքեզների իթիհադական ջոկատը, որը կրում էր «Թուրանի քաղաքականություն» անունը:*

*Չերքեզական ջոկատ էր ուղեկցում հայերի բռնագաղթի մի քարավանի, որը կանգ առավ Սուվար քաղաքի ճամբարում: Տեղի մյուդիրը նույնպես չերքեզ էր: Մի քանի օր անց ճամբարի տարագիր հայերին տանում են դեպի Դեր Զոր: Ճանապարհին քարավանը շրջապատվում է չերքեզների ու արաբների կողմից և լրիվ թալանվում, չերքեզները տիրանում են ամենագեղեցիկ աղջիկներին, իսկ մյուսներին՝ կոտորում: Դեր Զորում ազգությամբ չերքեզ մութեսարիֆ Զեքին ու նրա չերքեզական ջոկատը ոչնչացրեցին 15000 հոգուց կազմված մի քարավան: Ու՝ նման շատ քարավաններ:*

---

[249] Նույն տեղում, էջ 227:

[250] **Ռեֆիկ Ա.**, *Երկու Կոմիտե.....*

[251] **Գահունճյան Ե.**, *Հուշեր Ուրֆայի 1915թ. հերոսամարտի ու հետագա իրադարձությունների մասին*, Ե., 1995, էջ 22-23:

Արևմտյան Անատոլիայում Թեչքիլաթի չեթեական խմբերի ղեկավարներից էին չերքեզներ Է. Սարին, Մ. Դային, Կարա Արսլանը, Ռ. Խալիլը և ուրիշներ, որոնց մի մասը հետագայում կազմեց Էգեյանի հարակից տարածքներում ձևավորված քեմալական ուժերի միջուկը[252]:

Տրապիզոնի հայությանը ծովը նետելու կազմակերպիչներից էին չերքեզներ Ց. Կախիանը և Ա. Բարուտչուն: Իսկ նրանց հայրենակից Բեքիր Սամին, որը տեղի վալին էր, ղեկավարեց վիլայեթի հայ բնակչության բռնագաղթն ու ոչնչացումը: Հայերի արյան մեջ էին թաթախված նաև քեմալական շարժման նշանավոր գործիչներ, լեռնականներ՝ Դ. Հալիտի, Նայիլի, Թոփալ Օսմանի և այլոց ձեռքերը[253]: Մահվան ճամբարներում քիչ ծախսով հայերի առավել հոծ զանգվածները ոչնչացնելու համար որոշվեց ստեղծել ժամանակավոր ջոկատներ տեղաբնակ չեչեններից: Այս գործոնը նույնպես դեր խաղաց, որ հայերի զանգվածային ջարդերի կետեր ընտրվեցին Դեր Զորն ու Ռաս-ուլ-Այնը: Վերջինում ջարդարարների հրամանատարը Արսլանն էր: Մի ուրիշ չեչենի՝ Ա. Սելիմի հրամանով հայ երեխաները այրվեցին ջրհորներում:

Մահմեդական տարրերի ներգաղթի հետևանքով ստեղծված դժոխային կացությունը զանգվածային բնույթ հաղորդեց հայերի պանդխտությանը և արտագաղթին:

Հայերը պանդխտության էին մեկնում խոշոր քաղաքներ, որտեղ աշխատանք գտնելն ավելի դյուրին էր, վարձատրությունը՝ տանելի: Մեծ քաղաքները բազմազգ էին, ազգային խտրականությունն՝ ավելի մեղմ: Գյուղեր կային, որտեղ տղամարդ գրեթե չէր մնացել: Տարոնի Վարդենիս գյուղից պանդուխտ էր չուրջ 900, Խասգյուղից՝ 400, Նորաչենից՝ 300, Բերդակից՝ 200 մարդ: Է. Ռեկլյուն, լինելով Խասգյուղում, գրեց, որ այն ողբի ու դժբախտության վայր էր, կանանց թագավորություն: «Ամբողջ գյուղեր... բնակեցված են միայն կանանցով, որոնց հայրերն ու եղբայրները պանդխտության մեջ են, իսկ կանայք մնացել են տունուտեղին հսկելու»:

Պանդխտությունն ու գաղթականությունը օսմանյան քաղաքականության ամենահայակործան արտահայտություններից էին: Հայաստանից հեռանում էր բնակչության ակտիվ տարրը, իսկ ամբողջությամբ վերցրած երկիրը հայաթափվում էր, վերածվում անմարդաբնակ տարածքի կամ մահմեդական ցեղերի բնակավայրի: Պանդխտությունը նաև պատճառ էր հայ ընտանիքների քայքայման, տնտեսական անկման, աղքատության խորացման: Պանդխտության էին դիմում հասարակության բոլոր խավերը. «...վաճառականը կգաղթե, երկրագործը կգաղթե, բանվորը կգաղթե, մեկ խոսքով՝ ամենքը կգաղթեն և Հայաստան կմնան շատ տեղեր միայն ծերեր, կիներ, մանկունք»[254]: «Տաճկաստանից դեպի Կովկասյան սահմանները,– գրում է Արկոմեդը,– հայ գաղթականների հոսանք էր ստեղծվել, հայ բազմաթիվ ընտանիքներ խմբերով փախչում էին սովից, կոտորածից, թուրքական վարչակարգի սարսափներից»[255]: 1884թ. Վանից գրում են. «Ժողովուրդը կճնշվի հարստահարության ծանրության տակ, պանդխտությունը և գաղթականությունը կամայացնեն մեր երկիրը: Թուրքը կուզե հազարավոր տարիներ ապրող հայ ազգը բնաջինջ անել աչխարհիս վրայեն: Անձնապաշտությունը բացարձակապես կարգելվի»[256]:

Պանդխտությունը խթանվում էր նաև արտագաղթով, իր հերթին ինքն էլ խթանելով արտագաղթը, մանավանդ որ, սկսած 80-ական թվականների սկզբներից, սուլթանական կառավարությունը բոլոր միջոցներով քաջալերում և օժանդակում էր հայերի արտագաղթը: Մ. Օրմանյանը գրում է. «... գաղտնի նպատակը Թուրքիա ըսված երկիրը ամբողջապես թրքացնելն է... որպեսզի Թուրքիա միատարր ու միապաղաղ երկիր մը ու տե-

---

[252] Ахчам Т., *Турецкое национальное "Я"*... стр. 137-138.

[253] Ахчам Т., *Турецкое национальное "Я"*... стр. 235.

[254] Մամուրյան Մ., Անգլիական նամականի կամ հայի մը ճակատագիրը, Զմյուռնիա, 1881, էջ 200:

[255] Ղազարյան Գ. (Ստ. Արկոմեդ), *Անցյալի հիշողություններից*, Թիֆլիս, 1918, էջ 10:

[256] «*Արձագանք*», 1884, թիվ 40:

*րութիւն մը դառնա...»*[257]: *Խրիմյան Հայրիկն արձանագրեց. «Իշխանութիւնները և անոնց ներկայացուցիչները բացարձակ կհայտարարեն, որ իրենք սրտանց կուրախանան, երբ հայերը կմեկնին օսմանյան երկրեն»:* [258] *«...այսօր հարյուր հազարավոր պանդուխտ հայեր եկած են այստեղ (Կ. Պոլիս) Վանա, Բաղեշի, Մուշի, Էրզրումի, Տիգրանակերտի, Ակնա, Երզնկայի և Փոքր Ասիո ամեն կողմերեն, որպեսզի քիչ մը դրամ չահելով, կարողանան հատուցանել իրենց պարտքը կամ տուրքը, զոր տերության գործակալներն անդթորեն կպահանջեն»*[259]: *«Հողերը,– գրում է «Արձագանք»-ը,– ընդհանրապես թրքաց և քրդաց թաբու են... ուստի պանդխտությամբ կճարեն ապրուստնին»»*[260]:

*Միայն Կ. Պոլսում հաշվվում էր մոտ 100 հազար հայ պանդուխտ: Հայ պանդուխտների հոծ զանգվածներ կային նաև Իզմիրում, Տրապիզոնում, Եգիպտոսում, բայց ամենից շատ՝ Կովկասում և Ռուսաստանում, ընդհուպ մինչև Սիբիր և Հեռավոր Արևելք: Պանդուխտները ներգրավված էին ամենածանր և ոչ մաքուր աշխատանքներում: Պոլսի համալները հիմնականում Տարոնից ու Վասպուրականից եկած հայ երիտասարդներն էին: «Պոլսի պանդուխտները,– գրում է Րաֆֆին,– լցված էին քարվանսարաները, նավահանգիստները, մաքսատները և համալի ստոր պաշտոն էին կատարում... Այդ ժողովուրդն է, որին հանդիպում ես Տաճկաստանի և Եգիպտոսի (որտե՞ղ չկան նրանք) բոլոր ծովեզրյա քաղաքներում, ուր նոցա գործն է չոփչիությունը (քաղաքից աղբ են առնում՝ կողովները տանում նետում ծովը), թուլումբաչիությունը (ջրկիր, հրշեջ) և այլ այսպիսի ստոր պարապմունքներ: Նոցա կերակուրն է՝ զինվորներից ավելացած սոմունը և Մեջիդների միաբանության (սոֆթաների) սեղանից ավելացած փչրանքը: Նոցա օթևանն է քաղնիքների վառարանի (թուլումբարի) մոխիրները»*[261]: *«Անտուն, անօթևան պանդուխտները ամառները գիշերում էին բաց երկնքի տակ, իսկ ձմեռները լցվում բաղնիքների նկուղահարկերը, որտեղ ծուխը, մոխիրը և քոցը խեղդում էին նրանց, մրոտում, սևացնում դեմքերը, քայքայում առողջությունը»*[262]: *1868-69թթ. Պոլսի նկուղներում մեռավ 1700 պանդուխտ: Համալների վիճակն ավելի ծանրացավ, երբ քաղաքում կառուցվեց երկաթուղի և գործածության մեջ դրվեց տրամվայը:*

*Այս ամենով հանդերձ պանդուխտներն էին գավառների հայ ոգու, ազգային ձգտումների արտահայտիչները: Նրանք ստիպեցին պատրիարքարանին դիմումներ հղել սուլթանին զբաղվելու գավառահայերի հարցով, նրանց ջանքերով կազմվեց գավառական հարստահարություններն ուսումնասիրող հանձնախումբ, Բ. Դռանն ուղարկվեցին բազմաթիվ բողոքագրեր հայերի հանդեպ գործադրված բռնությունների ու հարստահարությունների վերաբերյալ: «Կ. Պոլսի գաղթականությունն է, որ ամեն պարագային մեջ ցույց տված է, թե կա հայ ազգություն մը, որ գիտե գործել յուր անդամաց համար»*[263]:

*Պոլսի հայ պանդխտության ազգային հստակ կողմնորոշումը պայմանավորված էր նաև նրանով, որ այդ քաղաքում էր կենտրոնացած հայ մտավորականության մի ստվար ջոկատ, որի զգալի մասը դաստիարակված էր Ֆրանսիական հեղափոխության գաղափարներով, քաղաքում գործում էին հայկական կրթական-լուսավորչական հաստատություններ, արվեստի օջախներ և լրատվության միջոցներ, ազգային ընկերություններ ու կազմակերպություններ:*

*Արտագաղթը արագացնում էր կայսրության անկման գործընթացը, «մինչդեռ արտագաղթը չարունակվում է և տարեցտարի ավելի մեծ ծավալներ ընդունում...»*[264]:

---

[257] **Օրմանյան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 476:
[258] **Խրիմյան Հայրիկ**, *Ժողովածու*, էջ 115-116:
[259] *«Արձագանք»*, 1886, թիվ 24:
[260] *ԳԱԹ, ֆ. Ազատյան Թ., բ. III, փաստ. 59, էջ 7:*
[261] **Րաֆֆի**, *Երկ, հ. IX*, Երևան, 1958, էջ 196-197:
[262] *Հայ ժողովրդի պատմություն, հ. III*, էջ 324:
[263] *«Արձագանք»*, 1886, թիվ 20:
[264] **Լինչ Գ.**, *նշվ. աշխ.*, էջ 548:

Արտագաղթն ուժեղացավ նաև քաղաքական պատճառներով: Բազմաթիվ հայ գյուղացիներ զոհվեցին կնոջ, քրոջ, դստեր, որդու պատիվը պաշտպանելու համար, քանի որ հային արգելվում էր պաշտպանել իր անձն ու պատիվը: «Հայերը,– գրում է Ն. Ադոնցը,– տառապում էին թուրքական իշխանությունների բռնություններից, որոնք նրանց տեղահան էին անում սահմանամերձ մարզերից և քշում երկրի խորքերը, որտեղ նրանք թողնվում էին բախտի քմահաճույքին... Մարզերը, որոնք լցված էին հայերով, լցվում էին քրդերով ու մահմեդականներով»[265]: Հայերի պանդխտության ու գաղթականության ծավալներն ու ընդգրկումներն առանձնակի մեծ չափերի հասան նաև իշխանություններ կողմից իրականացվող բռնագաղթի պատճառով:

70-ական թվականներին Բ. Դուրը միջոցառումներ ձեռնարկեց հայերի պանդխտությանը նոր թափ հաղորդելու համար: Հրապարակվեց օրենք, համաձայն որի՝ մի քանի տարի անմշակ մնացած հողատարածքները համարվում էին մահլու (անտեր) և չնչին գներով վաճառվում մահմեդականներին: Նույն կերպ էին վարվում նաև վանքապատկան կալվածքների հետ: Այս օրենքի գործադրությունը վերածվեց հայերի հողատարածքների զանգվածային զավթման: Ըստ այդմ էլ, արագ թափով աճում էին մարաբաններ թիվն ու տեսակարար կշիռը, ստրկացվում էին տնային ծառայության մեջ ներգրավված աղջիկները, նրանք թուրքացվում կամ քրդացվում էին:

Բնականաբար, այս ամենի հետևանքով արտագնա աշխատանքի մեկնողների նորանոր քարավաններ էին ձևավորվում: Լեռնային գոտիներում բնակչության մեջ գերակշիռ էին դառնում քրդերը, իսկ քաղաքներում՝ թուրքերը: Ժամանակակիցը գրում է. «Մշո դաշտում 25 տարեկանից բարձր տղամարդ չմնաց, ղարիբությունն ավերում է մեր աշխարհը, և եթե այդպես շարունակվի, այդ բարեբեր դաշտը բուերի վայր դարձած տեսնելու դժբախտությունն ենք ունենալու»[266]:

«Ամբողջ Վանի մեջ չկա մի ընտանիք, որի մի քանի անդամներ պանդխտության մեջ չլինեին: Առաջ գնում էին միայն տղամարդիկ, իսկ այժմ կանայք նույնպես սկսել են օտար երկրներում բախտ որոնել... Պանդխտությունից շատ քչերին է հաջողվում վերադառնալ յուր հայրենիք, մեծ մասը կորչում է մայրաքաղաքի մեջ՝ թողնելով հազարավոր անբախտ ու անխնամ ընտանիքներ...»[267]:

Րաֆֆին պատմում է մի հայի հետ կատարվածի մասին, երբ նա պանդխտության էր մեկնում Կ. Պոլիս: Կարինի փողոցներից մեկում մի թուրք հարձակվում է նրա վրա և դաշույնի հարվածով կտրելով պարանոցը, ուրախացած բղավում է. «Ես տարա՛... ես տարա՛... ընկերիս հետ վիճում էինք... նա ասում էր, թե իմ դաշույնն ավելի սուր է, իսկ ես ասում էի, թե իմն է ավելի սուր: Վճռեցինք փորձել գյավուրի պարանոցի վրա, գրազ գալով, թե մեզանից ով որ մի հարվածով կտրե պարանոցը, մյուսը պետք է պարտավորվի իր հաշվին հյուրասիրել նրան մի ֆինջան քաղցր ղահվեով և մի նարգիլեով: Այժմ ես տարա»: Բազմությունը գովաբանում էր սրիկայի «քաջագործությունը», ասելով՝ «Մաշալլա... մաշալլա»[268]:

Սեփական տունը, ընտանիքը թողնել ու պանդխտության ցուպը վերցնե՛լ ինքնին հեշտ չէր: Թուրքիայում պանդուխտի վաղվա օրվա անորոշությանն ու մտահոգությանը գումարվում էր անվտանգության իսպառ բացակայությունը: Պանդուխտների մոտ կեսը ճանապարհին հարձակման էր ենթարկվում, ձերբակալվում, սպանվում, վիրավորվում: Մանավանդ վտանգավոր էր ռուս-թուրքական սահմանն անցնելը, ինչը շատ չատերին չէր հաջողվում, և ամիսներ շարունակ նրանք մուրացկանի վիճակում թափառում էին սահմանամերձ շրջաններում: Շատ ավելի վտանգված էին պանդխտությունից վերադարձողները: Մահմեդական խուժանը նրանց վաստակած փողերին տիրանալու համար գոր-

---

[265] **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 105:
[266] «Հնչակ», 1897, թիվ 10:
[267] **Րաֆֆի**, եժ, հ. IX, էջ 218:
[268] Նույն տեղում:

ծադրում էր ամենազազրելի միջոցներ: Պանդխտության մեկնողի առաջ իշխանությունները խոչընդոտներ չէին հարուցում, իսկ վերադառնալ պարզապես թույլ չէին տալիս և պահանջվում էր մեծ հնարամտություն ու ծախսեր այդ պատնեշը հաղթահարելու համար: Շատ պանդուխտներ այդպես էլ վերադառնալ չկարողացան և մնացին Կովկասի ու Ռուսաստանի տարբեր մասերում: Ընդ որում, սուլթանին հաջողվեց հայ պանդուխտների վերադարձը խափանելու համար ստանալ ցարի աջակցությունը:

Իհարկե, փոքր չէր նաև այն պանդուխտների թիվը, ովքեր ինքնակամ չէին վերադառնում՝ հաշվի առնելով կյանքի ծանր պայմանները: Բիթլիսի Կուբլիկ գյուղի պանդուխտների մասին Գ. Սրվանձտյանցը գրում է. «Չկա մի կուբլիկցի, որ Պոլսում չլիներ, որտեղ նրանք ծառայության մեջ էին առևտրական գրասենյակներում: Վերջին ժամանակներս նրանցից չատերն այնտեղ են տեղափոխվել ընտանիքներով»:

Եվս մի քանի վկայություններ: Բայազետի սանջակի Կետեր գյուղի բնակիչ Ս. Հարոյանը, որի 10 չնչից բաղկացած ընտանիքը հեռանում էր Ռուսաստան, պատմում է. «Մենք մնալ չէինք կարող, քանի որ... մեզ հետ վարվում էին ինչպես արհամարհելի անասունների հետ: Բողոքել անգամ չէինք կարող, որովհետև հալածողները համիդիե էին: Նրանք հայերին սեփական տներից դուրս քշեցին: Հայերը հարկադրված լցվեցին եկեղեցին և ամիսներ շարունակ այնտեղ էին ապրում: Մեզ և վեց այլ ընտանիքների չվռնդեցին, բայց հարկադրեցին իրենց ծառայել անասունի նման, նրանք տերն էին մեր ամբողջ ունեցվածքի: Այլևս չկարողանալով տանել այդ վիճակը՝ բողոքեցինք իշխանություններին: Հետևանքը այն եղավ, որ մեզ էլ վռնդեցին, նաև պահանջեցին ստորագրել չնորհակալական գրություն: Ով այդ թուղթը չստորագրեց, սպանվեց»[269]:

Վանի սանջակի Արող գյուղից գաղթած Պ. Ղոզդյանը պատմել է, թե իր ընտանիքը բռնեց գաղթի ճամփան, որովհետև իշխանությունների թելադրանքով քրդերն իրենց վռնդեցին հայրենի գյուղից: Նրանք նախ բռնաբարեցին երեք աղլկա և երեք կնոջ, որոնց նաև փախցրին: Օգնության հասածներից երեք կին սպանվեց: Քրդերը թալանեցին գյուղի ամբողջ ունեցվածքը, իսկ ինչ տանել չկարողացան, հրդեհեցին, քանդեցին եկեղեցու բեմը: Երբ գյուղացիները դիմեցին իշխանություններին, նրանց պատասխանեցին. «Ձեզ ոչխարի նման կկարդենք, եթե մեկ էլ բարի մուսուլմանների վրա գանգատվեք»: Այլ ելք չունենալով՝ հեռացան գյուղից: Գաղթի ճանապարհին հարձակման ենթարկվեցին, քրդերը նրանց լրիվ թալանեցին[270]:

Խնուսի սանջակի Գիավուրմի գյուղից Խ. Կարապետյանը գաղթել էր, որովհետև հարկերը մուծել չէր կարողացել և պարտքի դիմաց պահանջել էին կնոջը: Նրա գլխին սառը ջուր էին լցրել, դեմքին թրիք ու կղկղանք քսել, վզին թոկ էին կապել ու քարշ տվել գյուղով մեկ[271]:

«Սկսվեց հայերի զանգվածային արտագաղթ ու փախուստ,– գրում է Ֆ. Նանսենը,– նրանք այլևս չկարողացան վերադառնալ և տեր դառնալ իրենց ունեցվածքին: «Թուրքիայից դուրս գալու թույլտվություն չեք ստացել», ասվեց... Նրանց ունեցվածքը գրավվեց տեղական իշխանությունների կողմից և բաժանվեց մահմեդականներին»[272]: Նանսենը վճռականորեն մերժում է հայերի «անհնազանդության» մասին մեղադրանքը և նախատինքի արդար ցասումով գրում է. «Թուրքաց Հայաստանում ստեղծված տնտեսական ու քաղաքական անտանելի պայմանների և քրդական հրոսակների վայրագությունների արդյունք է այն գաղթականությունը, որ տարիներից ի վեր սկսած է այդ երկրում, մի գաղթականություն, որի ծայրերը հասնում են ոչ միայն Կովկաս, այլ օվկիանոսի այն կողմերը՝ մինչև Ամերիկա»[273]: 1899-1907թթ. ԱՄՆ էր գաղթել 14.6 հազար, 1908-

---

[269] *Братская помощь* ..., стр. 38-39.
[270] Նույն տեղում, էջ 39:
[271] Նույն տեղում, էջ 40:
[272] **Նանսեն Ֆ.**, *Հայաստան և Մերձավոր Արևելք*, էջ 352-353:
[273] Նույն տեղում:

*1911թթ.՝ 12 հազար, 1912-17թթ.՝ 29.1 հազար հայ: «Ամերիկան,– գրում է «Մշակ»-ը,– ցավ ու պատուհաս եղավ թուրքահայերի համար, իր տված «բարիքների» հետ նա միաժամանակ անբուժելի վերքեր բացավ թուրքահայ արդեն վատառողջ օրգանիզմի վրա, հայ գյուղացիությունը, որ իր պատմական դժոխք հայրենիքում փարված էր իր ծնող հողին, ներկայիս խորթ աչքով է նայում նրան: Արտագաղթը մի տեսակ անհարազատություն առաջ բերեց նրա մեջ՝ դեպի իր ծննդավայրը, «պապերի գերեզմանները»: «Հայրենի օջախը» և այլ ավանդական սրբություններ կորցրել են նրա համար նախկին հմայքը: Եվ դատարկվում է Թուրքա-Հայաստանը»*[274]*: Հիմնականում ԱՄՆ էին մեկնում 14-44 տարեկան տղամարդիկ (25.2 հազար), որոնք ի վիճակի էին ապրուստ վաստակել, օրական «10-12 ժամ չարաչար քրտնաջան աշխատել գործարաններու մեջ»*[275]*: 1899-1910թթ. ԱՄՆ մեկնած հայերի 39.3 տոկոսը որակյալ արհեստավորներ էին՝ դարբին, կոշկակար, դերձակ, ատաղձագործ, 23.5 տոկոսը՝ հողի մշակ, 17.8 տոկոսը՝ բանվոր, 17.1 տոկոսը՝ խառը զբաղմունքի տեր՝ առևտրական, գործակալ, ծառայող, 2.3 տոկոսը՝ մտավորական՝ ուսուցիչ, փաստաբան, խմբագիր, երաժիշտ, արվեստագետ: Արևմտյան կիսագունդ հայերի գաղթը հաստատում է նաև Է. Քարալը: Նա գրում է. «1914թ. արձանագրված է եղել չուրջ 80 հազար հայ, որ Անատոլիայից մեկնել է ԱՄՆ»*[276]*:*

*Սահմանադրության հռչակումից հետո հայ պանդուխտների մի մասը, «փայփայելով դրա հետ կապված հույսեր», վերադարձավ հայրենիք: Սակայն Ադանայի կոտորածն առաջին սոսկալի հիասթափությունն էր, որ «ետ մղեց պանդուխտների սրտերը օսմանյան բարերարներից, իսկ հետո ոչինչ ուրախարիթ լուրեր չեկան մայր երկրից»:*[277]

*Մինչև զանգվածային ջարդերը պանդխտությունն ու արտագաղթը եղել են Հայաստանը հայաթափելու օսմանյան զենքերից, և սխալ է այն կարծիքը, թե հայկական սփյուռքը ձևավորվեց միայն Մեծ եղեռնից հետո (այն սկսել էր ձևավորվել դրանից տասնամյակներ առաջ): Սակայն հայաթափման այդ եղանակը վճռական հաջողություն արձանագրել չկարողացավ և չէր կարող: Ն. Ադոնցը գրում է.*

*«Ինչի՞ են հասել թուրք քաղաքագետները: Որո՞նք են այն ազգագրական փոփոխությունները, որ տեղի են ունեցել Հայաստանում: Հայաստանի արևմտյան նահանգները, ոչ միայն Սըվազի ու Մալաթիայի շրջանները, այլև Եփրատի հովիտը՝ Էրզրումից մինչև Խարբերդ և այնուհետև Դիարբեքիր, ավելի շա՞տ են ապազգայնացվել, քան մյուս շրջաններն ու նահանգները...*

*Այս ապազգայնացումը տեղի է ունեցել ավելի չուտ կրոնական, քան ազգագրական հողի վրա...*

*Ինչ են այդ բոլոր ազգագրական և կրոնական խմբերը, որոնք կրում են զազա, կզլբաշ ալի-իլլահի, չրազ-սունդրան (լույս մարողներ), թախթաջի և այլ անունները, ինչո՞ւ է քուրդ բնակչության ամենահետին չերտը կոչվում զազա...*

*Թուրքական իշխանությունները նրանց համարում են մուսուլմաններ: Իրականում բոլոր այս խորհրդավոր հավատները մուսուլմանական և քրիստոնեական հավատների մի զարմանալի բաղադրություն են... Հարավում նրանք կրում են «կեսկես» բնորոշ անունը, որը հայերեն է, քանի որ կեսկեսները... գաղտնի պաշտում են քրիստոնեական հավատը...*

*Ազգային մակընթացությունները ի՞նչ են փոխել երկրի կյանքում: Յուրաքանչյուր երկիր, բացի իր ֆիզիկական մակերևույթից, ունի նաև սեփական հոգեկան գծերը, որոնք նրան տարբերում են մյուս երկրներից: Եվ որոշիչը ոչ թե կույր բնության մեռած նստվածքներն են, այլ երկրով մեկ սփռված մարդկային հանճարի հարատև ստեղծագոր-*

---

[274] «Մշակ», 1914, թիվ 50:

[275] Ճիզմեճյան Մ. Գ., Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանց, Փրեզնո, 1930, էջ 2:

[276] Karal E. Z., *La Question Arménienne*, p. 31.

[277] «Մշակ», 1911, թիվ 66:

*ծությունները: Բանական ջանքերի այդ ստեղծագործություններն են, որ կազմում են նրա մշակութային ոգին: Ո՞ւմ է պատկանում այդ ոգին... Հայաստանը որպես մարդկային աշխատանքի լաբորատորիա միշտ եղել է և կմնա հայկական... բոլոր նրանց համար, ովքեր եկել են ու գնացել, այն եղել է լոկ հյուրատուն: Նրանք բոլորը փնտրել են նրա տանիքը, վայելել նրա մշակութային գանձերը՝ ոմանք որպես անցորդ հյուր, ոմանք էլ որպես բախտի քմահաճույքով քշված ճամփորդ, մինչդեռ ուրիշները, առանց քաշվելու, տեղավորվել են այնտեղ, կողոպտել ու ավերել: Ոչ մեկը նրանցից չի թողել որևէ հոգևոր ժառանգություն, մշակույթի որևէ հիշողություն: Թուրքմենի կամ քրդի ձեռքը մի աղյուս իսկ չի դրել երկրի չինարարական արվեստում: Ճարտարապետության զարմանահրաշ կոթողները, պալատները, ամրոցները, եկեղեցիներն ու վանքերը... այսօր հողին են հավասարեցված: Բայց նրանց մեջ դեռ ապրում է ոգին, ավերակների մեջ դեռ դեգերում են անցյալի ստվերները... Ոգու աշխատանքի նույնիսկ ավերակները երկրի համար ավելին չարժե՞ն, քան քուրդ հովիվների հոտերը: Եվ եթե լավագույն հայկական եկեղեցիները... վերածվել են մզկիթների, մի՞թե դրանով դադարել են հայկական լինելուց: Ինչպես ամեն մի պատմական մշակութային երկիր, Հայաստանը ևս օրգանիզմ է: Ամենաուժեղ զարկերակը, ամենախոր չնչառությունը հայկական են: Որպես ապրող օրգանիզմ՝ Հայաստանը չի կարող հրաժարվել իր ոչ անցյալից և ոչ էլ ապագայից: Գուցե նա վիրավոր է ու արյունաքամ, բայց սպանված չէ»*[278]:

[278] **Ագոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 109-111:

*ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ*

# ՔՐԴԵՐԸ ԵՎ ՀԱՑԵՐԻ ԲՆԱՋՆՋՄԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՑՈՒՆԸ

## *1. ՔՐԴԵՐ*

*Համաշխարհային զարգացման հիմնահարցերի շարքում երկրորդական չէ Քրդական հարցը, որը բաղորել է իր հարյուր տարին: Ճիշտ է, այն միջազգային հարաբերություններում երևաց 19-րդ դարի կեսերին, բայց միայն Առաջին աշխարհամարտից հետո ինքնուրույն նշանակություն ձեռք բերեց: Լայն առումով, սակայն, Քրդական հարցը շատ հին է և ամենաերկարակյաց ու քաշքշված ազգային հարցերից մեկն է:*

*Քրդստանի աշխարհագրական դիրքը վճռորոշ դեր է խաղացել քուրդ ժողովրդի պատմական ճակատագրում՝ Քրդական հարցը դարձրել միջազգային կյանքի ամենակնճռոտ երևույթներից մեկը: Քրդաբնակ տարածքներն առանձնահատուկ նշանակություն ունեն առաջին հերթին իրենց բացառիկ ստրատեգիական դիրքի շնորհիվ: Դրանք նմանվում են վիթխարի բնական ամրոցների, որոնք անմատչելի են նույնիսկ ժամանակակից տեխնիկական միջոցների համար: Այդ տարածքները հնարավորություն են ընձեռում հատկապես պարտիզանական կռիվներ մղելիս՝ անտառներ, նեղ ու խոր կիրճեր, ցամաքային կլիմա՝ խիստ ու ձյունառատ ձմեռ: Քրդստանի ընդերքը հարուստ է նավթով, Քիրքուկում է Իրաքի նավթի պաշարների կեսը, նավթ կա նաև Հարզանում, Գերմիկում (Թուրքիա), Քերմանշահում (Իրան), Քրդստանի նավթի ինքնարժեքն ու դրա փոխադրման ծախսերն ամենաէժանն են աշխարհում[1]:*

*Սակայն քրդերը չարունակում են մնալ ինքնորոշման իրավունքից զուրկ ժողովուրդներից մեկը: Քրդերի մեծաթիվ լինելը չի նպաստում, որ նրանք վերածվեն համազգային հավաքական ուժի: Քուրդ ժողովրդի միավորմանը խանգարել և այսօր էլ խանգարում է նրա ցրված լինելը տարբեր պետությունների կազմում, ինչը խորացրել է մասնատվածության հոգեբանությունը և խոչընդոտել ժողովրդի ձևավորմանը: Քուրդ հասարակության հիմնական բջիջ չարունակում են մնալ ցեղը, տոհմը, աշիրեթությունը: Նրա զանազան խմբերի խոսակցական լեզվի տարբեր լինելը՝ Թուրքիայում գործածվում է կուրմանջի բարբառը, Իրանում՝ Ուրմիա լճի ավազանում և Խորասանի շրջանում նույնպես խոսում են կուրմանջի լեզվով, իսկ Մեհաբադի, Սանենդեժի, Քերմանշահի շրջաններում, ինչպես նաև Իրաքում՝ քուրմի (սորանի) բարբառով: Քրդերենի մասին Ղ. Ինճիճյանը գրում է, որ այն կազմված է երկու լեզվից՝ մեկը բուն քրդերենն է, իսկ մյուսը կոչվում է զազա, որն առաջինից շատ տարբեր է, մինչև այն աստիճանի, որ իրար չեն հասկանում: Այս լեզուն տարածված է Տուժիկում, Խնուսում, Բալուում, Ճապաղջրում, Վարդոյում, ինչպես նաև Տարոնի արևմտյան մասի գյուղերում:*

*Թուրքիայի 18-20 միլիոն քրդերից Արևմտյան Հայաստանում բնակվում է 3-4 միլիոնը՝ չուրջ 20 տոկոսը: Դա նշանակում է, որ Օսմանյան կայսրությունում և առավել ևս Թուրքիայի Հանրապետությունում Քրդական հարցի ծնողը ոչ թե հայ-քրդական, այլ*

---

[1] **Заваров Ф.**, *Социально-экономическое преобразование в Иракской Республике*, Москва, 1979, стр. 671.

թուրք-քրդական հակամարտությունն էր, ըստ այդմ էլ Քրդական հարցի սուր ծայրն ուղղված եղել է, իսկ մեր օրերում՝ առավել ևս, ուղղված է թուրքերի դեմ:

Հարց է ծագում՝ այդ դեպքում ինչո՞վ բացատրել, որ տասնամյակներ շարունակ քրդերը, կատարելով Օսմանյան իշխանությունների հանձնարարությունը, ճնշել, հարստահարել, ոչնչացրել են հայերին, որ նրանք եռանդուն մասնակցություն են ունեցել Հայկական ցեղասպանությանը: Դժբախտաբար, պատմագրությունը, գլխավոր ուշադրությունը դարձնելով իրողության այս կողմին, գրեթե անտեսել է, որ Օսմանյան կայսրության ձևավորման առաջին իսկ տարիներից մինչև նրա անկումը, Թուրքական Հանրապետության ծննդից մինչև մեր օրերը, ճիշտ է, քրդերն ունեցել են մոլորություններ, խաբվել են, սին հույսեր փայփայել, սակայն ոչ մի օր չեն հաշտվել թուրքական լծի տակ ապրելու իրողության հետ: Այդ առումով Թուրքիայի պատմությունը նաև օսման-թուրքական տիրապետության դեմ քրդերի ընդվզումների պատմություն է:

Բացի դա, թուրք պատմիչները դարեր շարունակ քրդական շարժումները ներկայացրել են «ավազակային գործողություններ» պիտակով, ինչպես նաև օգտագործելով քրդերի ցեղային կացութաձևը և դրանից բխող գործելամիջոցները՝ իշխանությունների դեմ պայքարի եղանակները, նենգափոխել են և այսօր էլ նենգափոխում են այդ պայքարի էթնիկական-ազատագրական բովանդակությունը: Մի շարք պատճառներով նենգափոխման համար մեծ չանքեր չէին պահանջվում: Սակայն Առաջին աշխարհամարտից հետո, այսինքն՝ կայսրության մասնատումից՝ արաբների անջատվելուց և հայերի ու հույների կոտորածից ու բռնագաղթից հետո, երբ թուրքերի համար քրդերը կորցրին «ջարդարարի» իրենց դերը, երբ քրդերն ու թուրքական իշխանությունները դեմ դիմաց մնացին, և վերջինների քաղաքականության մեջ առաջին պլան մղվեց քրդերին հաշվեհարդարի ենթարկելը, նման նենգափոխումը գրեթե անհնար դարձավ:

Քրդական հարցի մասին խոսելիս, հարկ է նկատի ունենալ չեչխ Օբայդուլայի հետևյալ նկատառումը. «Քուրդ ազգը առանձին ժողովուրդ է: Նրա կրոնն այլ է, և օրենքներն ու սովորությունները լրիվ տարբեր են... Քրդստանի ցեղապետերը, լինեն թուրքական թե պարսկական հպատակներ, և Քրդստանի բնակիչները՝ իսլամ թե քրիստոնյա, բոլորը մի բանում միասնական ու համերաշխ են, որ հարցը (քրդերի) այդ երկու կառավարությունների կողմից հենց այնպես կարգավորվել չի կարող: Մի ինչ-որ բան պիտի անել, որպեսզի եվրոպական պետությունները հարցին ծանոթանալով, միջամտեն... Մենք ուզում ենք, որ մեր հարցերը ինքներս լուծենք»: Շեյխերն, իհարկե, Քրդական հարցը լուծել չկարողացան: Բայց նրանց առաջավոր մասը զգալի դեր խաղաց քուրդ ժողովրդի նպատակադրումների ձևավորման գործում: Սակայն նույնիսկ 20-րդ դարի առաջին տասնամյակներին Քրդական շարժումը չկարողացավ ձերբազատվել իր աքիլեսյան գարշապարից, որը Ա. Թոյնբին բնութագրում է հետևյալ կերպ. «Քրդերի ազգային շարժումն իրեն կարող էր դրսևորել թուրքերին, արաբներին, անգլիացիներին կամ որևէ այլ օտարին հակադրվելու ձևով: Մինչդեռ բացառելով քրդական ծագում ունեցող այն փոքրաթիվ անձանց, որոնք բնակություն էին հաստատել Պոլսում կամ Արևմուտքում... քրդական համազգային դաշնակցության գործնական գիտակցությունը շատ թույլ էր: Քրդերի մեծամասնության քաղաքական հորիզոնը դեռևս սահմանափակվում էր ցեղերի և նրանց հակամարտության շրջանակներում և բավական կենսունակ լինելով հանդերձ՝ ամբողջությամբ մնաց ոչ թե համապետական, այլ անհատական հոգեբանությամբ»[2]: Իսկ Քոթմանը գրում է. «Ցեղի տգետ անդամի համար... ազգային չարժմանը որևէ մասնակցություն... հնարավոր էր միայն նրա խանի հրամանով... Ցեղի անդամները ոչ պետք է համակրեն և ոչ էլ հակադրվեն»:

Աբդուլ Համիդի քրդական քաղաքականությունը երկու խնդիր էր հետապնդում՝ ա) ուժեղացնել ազդեցությունը քրդերի վրա՝ նրանց ղեկավարներին նվերներ, պաշտոն-

---

[2] **Toynbee A. J.,** *Survey of International Affairs.* London, 1927, pp. 479-480.

ներ, հողեր, տիտղոսներ չնորհելով, որպեսզի բ) հնարավոր լիներ նրանց օգտագործել կայսրության ներքին և արտաքին թշնամիների դեմ: Այս վարքագիծը պտուղներ տվեց հայերի ջարդերի ժամանակ:

Բահրին, որը Բեդըրխանի որդին էր, նշանակվեց սուլթանի օգնական: Քուրդ մի այլ ըմբոստ ցեղապետի որդի՝ Աբդուլ Ռահմանը, ևս բարձր պաշտոն ստացավ, Օբայդուլայի որդին 1908թ. դարձավ օսմանյան խորհրդարանի նախագահ: Պալատի դռները լայնորեն բացվեցին քուրդ աքսորված ցեղապետերի առաջ[3]: Սակայն առանց հայերի դեմ թուրք-քրդական համերաշխության, այդ երկու ժողովուրդների հարաբերությունների բնույթը ոչ թե համագործակցություն էր, այլ առճակատումը:

Սուլթանական իշխանությունների դեմ պայքարում քուրդ ավատատերերը, բնականաբար, դաշնակիցների կարիք ունեին: Իսկ այդ աշխարհատարածքում նրանց դաշնակից կարող էին լինել միայն հայերը: Այս հիմքի վրա 18-րդ դարում ձևավորվեց հայ-քրդական համագործակցություն: Դրա արտահայտություններից մեկը Տարոնի քուրդ տիրակալ Ալադինի և Հովնան եպիսկոպոսի համագործակցությունն էր, որը խնդիր ուներ Ռուսաստանի օգնությամբ տապալել օսմանյան լուծը:

Սասունի խուլը գավառի հարավը քրդաբնակ էր և պատկանում էր Ներճրգնի Թելո աղային, իսկ թուրք կառավարիչը նստում էր Փասուր գյուղաքաղաքում: Քուրդ աղան ու թուրք կառավարիչը բախումների մեջ էին՝ որոշելու, թե իրենցից ով է գավառի իրական ղեկավարը: 1880թ. Ահրոնքի կռվից հետո Թելո աղան դաշինքի մեջ մտավ հայերի հետ և այլևս չմասնակցեց սասունցիների դեմ իշխանությունների ձեռնարկումներին: Սակայն հակառակ վարքագծի փաստերն անհամեմատ ավելի շատ էին: Կոլյուբակինը, ելնելով ցարիզմի օսմանյան քաղաքականության պարտադրանքից, քրդերին համարում է ոչ միայն Տավրոսից հարավ ընկած չրջանների, այլև Արևմտյան Հայաստանի բնիկներ, որոնք «կազմում են ազգաբնակչության ամենանշանակալից տարրը»[4]:

Հայերի հետ քրդերի հարաբերությունները միանշանակ չէին: Քրդերի և հայերի բնավորությունում, ընտանեկան և հասարակական կյանքում ընդհանուր քիչ բան կար: Այդ է պատճառը, որ քուրդը հային չէր սիրում, նույնիսկ արհամարհում էր ռազմաչունչ չլինելու պատճառով: Սակայն այդ ամենը շատ հեռու էին խորը ատելությունից, թուրքական ազդեցությունից ազատ քուրդը վատ մահմեդական էր, ի տարբերություն թուրքի՝ նաև ոչ-մոլեռանդ: «...Քրդերը սովորել էին հային, ընտելացել նրա բնավորությանն ու սովորություններին և քաջ գիտեին, որ հայ հողագործն ու առևտրականը ոչ միայն իրենց օգտակար, այլև անհրաժեշտ էին»: Քրդին խորթ չէր պարկեշտությունն ու արդարամտությունը: Սակայն իրեն համարելով երկրի տերը և ո՛չ իշխանություններից ու ո՛չ էլ, մասնավորապես, հայերից չստանալով հակահարված՝ քուրդը չահագործում էր վերջիններին: Այդ չահագործման չափն ու բնույթը տարբեր էին: «Ջիբրանլի քրդերը հայերին ավելի թշնամաբար էին վերաբերվում, քան նրանց հարևանները՝ հասանլիները և սիպանլիները...»[5]: Ամբողջությամբ վերցրած քուրդը հայերից պահանջում էր անվերապահ հնազանդություն: Հայերի ամենափոքր անհնազանդության դեպքում՝ աչիրեթը նրանց դաժան հաշվեհարդարի էր ենթարկում: Դրա հետևանքով հայերը հեռանում էին համիդիե գնդերի զբաղեցրած տարածքներից: Օրինակ, համիդիեի 20-րդ գնդի տարածքում ոչ մի հայ չմնաց[6]:

Քուրդ բեյերը, երբ իրար հետ թշնամանում էին, նրանցից յուրաքանչյուրը, հպատակ քրիստոնյաներին բռնությամբ առաջները գցած, ասպատակում էր հակառակորդ բեյին պատկանող հայկական գյուղերը: Իսկ վերջիններն էլ վրեժ լուծելու համար հար-

---

[3] Neran K., *The Kurds in the Ottoman Empire.* London, 1980, p. 22.

[4] Колюбакин А. М., նշվ. աշխ., էջ 71:

[5] Колюбакин А. М., նշվ. աշխ., էջ 83:

[6] Термен Р., *Отчёт,* стр. 57.

ձակվում էին առաջիններին պատկանող հայկական գյուղերի վրա: «Վանի բերդապահ Մուհամմեդ Դերվիշ փաշան,– գրում է Ջևդեթը,– Մուշի սանջակի մութեսարիֆ միրմիրան Սելիմ փաշայի դեմ ունեցած թշնամության պատճառով վրեժ լուծելու նպատակով... սերբքի աշիրեթին նրա դեմ էր գրգռել, Վանի էլայեթից որոշ մարդկանց և հպատակ մի քանի աշիրեթներ չուրջը հավաքել և Սեքքի-Աբդուլլահ օղլու Սուլեյմանին բազմաթիվ քրդերով Մշո սանջակի Բուլանխ կոչված վայրն է տարել և այն կողոպտել տվել: Սելիմ փաշան էլ փոխադարձաբար Զըփլաք-Շեյխ անունով անձի ղեկավարությամբ բազմաթիվ քուրդ զինվորներով կողոպտել է Վանի էյալեթին ենթարկվող Ադլջևազի գավառը»[7]:

Քուրդ ցեղապետերի միջև անվերջ պատերազմներից, անկախ հաղթողից, տուժում էր հայ բնակչությունը: «Օրինակ,– գրում է Րաֆֆին,– մի ցեղ կամենում էր խլել մյուս ցեղի ձեռքից երկրի այս կամ այն մասը, նա կամ հաղթելով տիրապետում է, կամ ավար առնելով, թալանելով ամեն հանդիպածը, ետ է դառնում: Այսպիսի դեպքերում ժողովուրդը թողնում է իր տուն ու տեղը, մշակության դաշտերը և, իր գլուխը միայն ազատելու համար, պատսպարվում է լեռների անմատչելի տեղերում»: Հայերի անասուններն ու մյուս ունեցվածքը կողոպտվում է, նրանք սովի են մատնվում: Ոչ քիչ դեպքերում տարածքի կամ գյուղերի նախկին տերերը, դրանք հակառակորդին հանձնելուց առաջ, հրդեհում էին: «Այսպիսի հանգամանքներում քուրդը կորցնելու ոչինչ չուներ, որովհետև նա մի ժամանակավոր հյուր էր, իսկ այն բոլոր կրակի նյութ դարձած չինությունները պատկանում են հայ կամ օտարազգի բնակիչներին... նույն բարբարոսությամբ վարվում էր և հարձակվողը, երբ տեսնում էր, թե տիրել անկարող է»:

Քրդերն «իրենց» հայերին գազանաբար չահագործում էին, բայց թույլ չէին տալիս, որ նրանք վտանգվեն ուրիշ քրդերի կողմից:

«Փրկվելու համար,– գրում է Րաֆֆին,– քրիստոնյա ամեն մի ընտանիք ընտրել էր մի ենիչարի, որի պաշտպանության տակ էր մտած, որը պահպանում էր իրան ապավինած ընտանիքը մյուս ենիչարիների գազանություններից...

Բայց այդ պաշտպանությունը շատ թանկ էր նստում ողորմելի ընտանիքին: Նա դառնում էր իր պաշտպանի գերին, ստրուկը, նրա բոլոր հաճույքների կատարողը: Նրա կյանքը, անգամ ընտանիքի պատիվը զոհվում էր իր պաշտպանի անբարոյական կրքերին... Դա մի այնպիսի հովանավորություն էր, որպես մի գայլ պաշտպանում է իր որսը մյուս գազանների հափշտակությունից, որպեսզի ինքը միայնակ վայելի»[8]:

Քրդերի գործունեությունում, ապրելակերպում որոշիչ դեր էին խաղում քոչվոր քրդերը և, ինչպես ռուս հետազոտող Ա. Կարցովն է նկատել, «Քրդստանի ճակատագրում ռայաները (նստակյացները) դժվար թե կարողանան որևէ դեր խաղալ, վճռական ձայնը միշտ պատկանելու է քոչվոր և կիսաքոչվոր աշիրեթների ավագանուն»[9]: Նույն միտքն է շեշտում Մ. Մաքքոլը. «Քրդերը պարկեշտ ու հյուրասեր են... ունեն պատվի կոպիտ, բայց խիստ զգացում: Սակայն այն պահից, երբ թուրքերը խորտակեցին նրանց իշխանությունը, ավերեցին նրանց բերդերը և աքսորեցին առաջնորդներին, քրդերի բնավորության առավել պարկեշտ գծերն ու ասպետական զգացմունքները *nobles oblige* այլասերված սկզբունքի ազդեցության տակ անհետացան: Նրանց մեծամասնությունը այլասերվեց և վերածվեց վայրենի ու անզուսպ ավազակախմբի՝ սադրիչ, դավաճան և դաժան: Երբեմնի հզորության ավանդույթները նրանց սոսկ ներարկում են ատելություն հանդեպ թուրքերը, որպես իրենց անկման մեղավորների և կենդանի են պահում նախանձն ու արհամարհանքը քրիստոնյաների հանդեպ..., որոնց հաջողությունների ու զարգացման հետ նրանք հաշտվել չեն կարողանում»[10]:

---

[7] «Թարիխի Ջևդեթ», հ. IX, Ստամբուլ, 1871, էջ 64 *(արաբատառ թուրքերեն)*:
[8] Րաֆֆի, *նշ.*, հ. IX, էջ 234-252:
[9] Карцов А., *Заметки о курдах*, Тифлис, 1896, стр. 22-23.
[10] *Положение армян в Турции ...*, стр. 225.

Կոլյուբակինը ներկայացնում է քոչվոր քրդերի վարքագիծը Գավաշի կազայի Գյարգար նահիեում, որտեղ 11 գյուղ կար: Ամեն գարուն արոտներն էին գալիս դուդերլի աշիրեթը Սղերդից և աղլուն աշիրեթը Մոսուլից, որոնք «իրենց տեր էին համարում ոչ միայն արոտավայրերի, այլև տեղի քրիստոնյա բնակչության»: Նրանք գյուղերն իրար մեջ էին բաժանել և հարկ էին հավաքում: Օրինակ, 25 տուն ունեցող Հրորտենց գյուղից դուդերլիները ամեն տարի վերցնում էին 50 ոչխար, 625 փութ թխած հաց, 5 փութ յուղ, 120 զույգ բրդյա գուլպա, իսկ 12 տուն ունեցող Մճկանց գյուղից՝ 26 ոչխար, 126 փութ հաց, 3 փութ յուղ և 80 զույգ գուլպա: Գյուղերը պարտավոր էին ամռանը քրդերին մատակարարել հաց և ձու: Քրդերը գյուղացիներին նաև հարկադրում էին գնել իրենց բերած մրգերը, ձմռանը պահել իրենց անասունները: Նրանք ամիսներ շարունակ մնում էին հայերի տներում, ձրի սնվում, զվարճանում, խլում այն ամենը, ինչ դուր էր գալիս: «Նվերներ» էին ստանում հարսանիքի, ծնունդի և ընտանեկան մյուս իրադարձությունների կապակցությամբ: Այդպես շարունակվում էր մինչև հոկտեմբեր: Մեկնելուց առաջ հայերից վերցնում էին ձմռան պաշարը, ապա նաև թալանում նրանց՝ քչում անասունները, հրդեհում խոտի դեզերը: 1884թ. ալղունլիները թշնամացան դուդերլիների հետ ու, չկարողանալով պատժել, հարձակվեցին նրանց պատկանող նույն Հրորտենց և Մճկանց գյուղերի վրա, թալանեցին, մի քանի գյուղացիների էլ սպանեցին[11]: Հետաքրքիր է, որ ղշլա կոչվող այս պարհակի իրականացմանն իշխանությունները ոչ միայն չէին խոչընդոտում, այլև աջակցում էին: Օրինակ, Մշո մութեսարիֆը ինքն էր քրդերին տեղավորում հայկական գյուղերում, որպեսզի «հայերը հացով, խոտով, վառելիքով և ամեն ինչով ապահովեին այդ քրդերին ու նրանց մեծաթիվ անասուններին ձմռան ընթացքում»[12]: Եվ քանի որ կար նաև իշխանությունների աջակցությունը, կարճ ժամանակում Տարոնը լցվեց նման քրդերով, ինչը պատճառ դարձավ երկրի ավերման:

Գ. Սրվանձտյանցը Վանի վիլայեթի քրդերին բաժանում է երկու խմբի: Առաջին խումբը, «սկսած գարնանից մինչև ուշ աշուն, գալով Մոսուլի և Դիարբեքիրի շրջաններից, ցրվում է Մոկսում, Շատախում, Նորդուզում և մերձակա շրջաններում»: Նրանք իրենց աննդամթերքն ու անասնակերը վերցնում էին հայերից: Նրանցից էին հավաքում նաև ձմռան պաշարը: Ամեն տարի գալիս էր 24-25 ցեղ՝ 5100 վրան 30600 բնակչով: Քրդերի երկրորդ խումբը գալիս էր Պարսկաստանից և տեղավորվում Աղբակում, Խոշաբում և Աբաղայում: Նրանք յոթ ցեղեր էին՝ 2300 վրան՝ 16 հազար անձով: Դրան գումարած եզդիները՝ 350 վրան՝ 2500 անձով: Ստացվում է, որ ամեն տարի միայն Վանի վիլայեթ գալիս էին քրդական 32 ցեղ՝ մոտ 50 հազար հոգի[13]:

Օսմանյան կայսրության անկման գործընթացներն ավելի ուժեղացրեցին քրդերի անիշխանական տրամադրությունները: «Քրդական ավազանին,– գրում է Մոլտկեն,– մեծ իշխանություն ունի իր հպատակների վրա, նրանք գժտվում են միմյանց հետ, վիճարկում Բ. Դռան իշխանությունը, հրաժարվում հարկեր վճարելուց, չեն հանդուրժում որևէ զինակոչ և ի վերջո ապստամբում բարձր լեռների ամրոցներում»[14]: Աստիճանաբար այդ տրամադրությունները վերածվեցին նպատակադրված գործողությունների: Սկիզբ առավ քրդական ապստամբությունների մի ամբողջ շարք: Թանզիմաթից հետո քրդական շարժումները շարունակեցին մնալ ցեղապետական-աշիրեթական կաղապարում, սակայն նաև սկսեցին առաջ քաշել անկախանալու խնդիրներ, ինչը Ռեկլյուն բացատրում է քուրդ ավազանու հզորանալու իրողությամբ: Անկախության նշանաբանով քրդական առաջին հզոր շարժումը Բեդըրխանի ապստամբությունն էր: Այն սկսվեց 1845թ. Վանի

---

[11] Колобакин А. М., նշվ. աշխ., էջ 133-135:

[12] «Լումա», 1897, գիրք Բ, էջ 182-183:

[13] Срвандзтянц Г., *Очерки Васпураканской области и смеженных с нею местностей*, Тифлис, 1890, стр. 20-21.

[14] Moltke H., *Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei aus den Jahren*, Berlin, 1876, S. 112.

չրջանում և ծավալվեց մինչև Դիարբեքիր: Հայերը մասնակցեցին այդ ապստամբությանը, բայց նաև կոտորվեցին Բեդըրխանի կողմից: Նույն ժամանակ Վանում ապստամբության դրոշ պարզեց նաև Ավդալը, իսկ Խարզանում՝ Սայիդը: Քրդական չարժումները վտանգավոր բնույթ ստացան և հարկադրեցին սուլթանին վճռական գործողություններ դիմել: Օսման փաշայի զորքերը 1847թ. ճնշեցին Բեդըրխանի ապստամբությունը, ինչը հնարավորություն տվեց հաշվեհարդարի ենթարկել քրդական բոլոր ընդվզումները: Քրդերից խլվեցին վարչական-կառավարչական իրավունքները, և Արևմտյան Հայաստանում փաստորեն վերահաստատվեց կառավարման օսմանյան համակարգ: Չնայած դրան «Հայ գաղթականությունը,– գրում է Լեոն,– բացառապես քուրդ ազնվականության ճորտն էր»[15]: Եվ այդ «ճորտական վիճակը չարունակվեց մինչև 1890-ական թվականներն ու ավելի ուշ՝ 20-րդ դարի սկիզբը»[16]:

Սուլթան Սուլեյմանի իրադեներից մեկում գրված է. «Թիմարից փախած ռայաններին հավաքելն օրենք է»[17]: Ընդ որում, գյուղացին ամրացված էր ոչ թե կալվածատիրոջը, այլ հողին, ինչը բխում էր թուրքական ավատատիրության ռազմական բնույթից և չարիաթի սկզբունքներից, որոնք արգելում էին անձնական կախվածությունը: Ճորտ հայերին գնում ու վաճառում էին միայն հողի հետ: «Աչիրեթը կրնար ծախու հանել ռայաթները՝ 20, 50 կամ 100 և 200 ոսկի իբրև գերի: Կրնար նաև զանոնք աքսորել, անոնց ստացվածքը թալանել և նույնիսկ սպանել անպատիժ»[18]:

Քրդերը հայերին և ասորիներին կոչում էին «զար-ղուլի», և դա ճիշտ էր արտահայտում այն իրողությունը, որ նրանց գնում ու վաճառում էին[19]: Ընդ որում, հայի գինը կախված էր նրա աշխատունակ արու զավակների թվից:

Լինչը բերում է հետևյալ փաստը. «Մի ճորտ սպանվում է հարևան քուրդ աղայի ծառայի կողմից: Ճորտի սեփականատերը հարկ չի համարում սպանության վրեժն առնել ո՛չ սպանողից և ո՛չ էլ առավել ևս նրա տիրոջից՝ աղայից: Նա գնում է այդ հարևան կալվածքը և գնդակահարում առաջին իսկ հանդիպած երկու ճորտերի»[20]: «Առհասարակ քրդերը հայերին իրենց ստրուկները և անոնց հողերն իրենց սեփականությունը համարելով՝ հայերեն պէչ անունով տուրք կըհավաքեին տարին երեք անգամ: Ամեն հայ տուն իր աղային կըվճարե գարնան ծնած ոչխար մը, կաթի համար ամռան ոչխար մը՝ պըչովի անվամբ, իսկ աշնանը՝ հաց և գեր ոչխար մը մսացուի համար»[21]: Հայը «ֆլահ» էր, ստրուկ և պատկանում էր այս կամ այն քրդին, որը նրա հետ վարվում էր ինչպես ցանկանար[22]: Տարածված երևույթ էր՝ քուրդը հայի ունեցվածքը կողոպտում էր և նրան հարկադրում կողոպտվածը ետ գնել: Քրդերը սկզբում ելուզակ եղանակներով հայերին ընչազուրկ էին դարձնում, ապա բնակություն հաստատում նրանց գյուղերում, իսկ թեկուզ մի քրդի բնակվելը հանգեցնում էր նրան, որ կարճ ժամանակում գյուղը լրիվ քրդաբնակ էր դառնում:

19-րդ դարի երկրորդ կեսից ծայր առավ քրդերի նստակյաց դառնալու գործընթացը, որի հետևանքով հայերի հողերի զավթումները մեծ ծավալներ ընդունեցին: Բացի դա, քանի դեռ ապրանքադրամական հարաբերությունները թույլ էին, քրդերը տուրքեր հավաքելու գործում չափավոր էին, սակայն երբ դրամը մուտք գործեց օսմանյան գավառներ, նաև քրդերի մեջ ձգտում առաջացավ փողատեր դառնալու, նրանք ավելացրին տուրքերի չափերը և ուղղակի թալանը:

---

[15] Լեո, *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանություն*, հ. Ա, էջ 38:
[16] Ներսիսյան Մ., *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ*, էջ 51:
[17] *Аграрный строй Османской империи XV-XVII вв.*, Москва, 1963, стр. 35.
[18] Զորմիսյան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 125:
[19] Тейлор Д., *Путешествие по Курдистану*, Тифлис, 1873, стр. 76.
[20] Линч Г., նշվ. աշխ., էջ 554:
[21] «Դրոշակ», 1894, թիվ 13:
[22] Նույն տեղում, 1893, թիվ 5:

## 2. ՀԱՑ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

*Հայ-քրդական հարաբերությունների կարգավորումը առանձնակի նշանակության հիմնախնդիր էր հայերի ոչ միայն ազատագրական պայքարի, այլև բուն գոյության համար: Հայերի ու քրդերի մերձեցման հարցում կարող էր հիմք հանդիսանալ թե՛ օսմանյան լծից ազատագրվելու համար համատեղ պայքարի արդյունավետությունը ըմբռնումը և թե՛ պատմական՝ որոշ առումներով՝ նաև կենցաղային ու մշակութային աղերսներն ու դարավոր հարևանության ծնած ընդհանրական նշանակության խնդիրները: «Այո, շատ արդյունավետ և չահաբեր կլինեն նոքա (քրդերը),– գրում է Մ. Խրիմյանը,– եթե տեղական կառավարություն ամեն հոգ ու ջանք տանին նոցա ներկա դրությունը փոխել և իսկապես երկրագործ ժողովուրդ մը կազմել զիրենք, և դժվարին չէ այս»[23]: Ա. Զոպանյանը նկատում է՝ քրդերը թուրքերի ձեռքին գործիք են և ոչ թե հայերի թշնամի:*

*Հայ-քրդական մերձեցման ուղղությամբ աշխատանքներն ընդգրկում էին կյանքի բազում բնագավառներին և իրողություններին առնչվող ամենատարբեր խնդիրներ: Հայ գործիչների առաջին քայլերից էր քրդերի շրջանում լուսավորչական աշխատանքներ տանելը և այդ միջոցով «անոնց բարքերը» մեղմելու ուղղությամբ 1862 թվից սկսած աշխատանքների ծավալումը Բարեկարգության արևելյան կազմակերպության և Վանի վարժապետանոցի կողմից: 70-80-ական թվականներին հայ-քրդական համագործակցություն ձևավորելու ուղղությամբ չանում էին Մ. Խրիմյանը, Գ. Սրվանձտյանցը, Ա. Թոխմախյանը, Ս. Տևկանցը: Գ. Նորատունկյանը Գ. Սրվանձտյանցին գրած նամակում հիմնավորում է հայ-քրդական դաշնակցության կենսական նշանակությունը: «Քրդերը,– գրում է նա,– միասնություն են կազմում ցեղով ու զենքով, հայերն էլ՝ ազգով ու լուսով: Իրար հետ բախվելուց առաջ պետք է արժեքավորենք այն օգուտները, որ կարելի է քաղել նրանց հաղորդակցությունից ու միաբանությունից... Ինձ թվում է, որ սրանք (քրդերը) ավելի թուրքերին են վնասում, քան հայերին, քանի որ այս կողմերի թուրքերից չտեսա մեկին, որը քրդերի դեմ չարտահայտվի և նրանց դեմ չգանգատվի...»[24]: Քուրդ-հայկական համերաշխության ջերմեռանդ կողմնակից էր Րաֆֆին, որի «Խենթը» վեպը հայ-քրդական բարեկամության փառաբանություն է: Վեպի հերոսներից մեկն ասում է. «Եթե ցանկանում ենք ազատ մնալ գազանների կատաղությունից, պետք է աշխատենք նրանց ընտելացնել: Պետք է աշխատենք նրանց վարժեցնել ավելի խաղաղ ու ավելի քաղաքակրթված կյանքի: Թուրքիան հոգ չի տանում քրդերի կրթության մասին, և շատ հասկանալի է, որովհետև քրդերի վայրենությունն ավելի նպաստավոր է նրան: ...Մենք չենք դիպչի նրանց կրոնին, մենք միայն կկրթենք նրանց»[25]: Քրդական շրջանների հետ բանակցելու նպատակով 1880թ. Դերսիմ և Միջագետք ուղարկվեց Փիլիպոս Քեչեյանը: Բացվեցին դպրոցներ քրդերի համար, քուրդ երեխաներին ընդգրկեցին հայկական դպրոցներ:*

*Քաղաքական կուսակցությունների հանդես գալուց հետո հայ-քրդական դաշինքի հարցը լուսավորության ասպարեզից փոխադրվեց քաղաքական համագործակցության, քաղաքական հարաբերությունների բնագավառ: Հայ գործիչներից շատերի կարծիքով թուրքական վարչակարգի դեմ հայերի առաջին իսկ հաջողության դեպքում քրդերը նրանց կողմն էին անցնելու[26]:*

*Քրդերի առաջադեմ գործիչները, ինչպես օրինակ, բանաստեղծ Ահմեդ Հանին, կոչ էին անում միավորվել օսմանյան բռնատիրության դեմ: 1864թ., երբ թուրքական մի կոկատ ներխուժեց Սասուն, հայերն ու քրդերը միացյալ ուժերով Սասունի կամրջի մոտ թուրքերին պարտության մատնեցին ու դուրս քշեցին լեռնաշխարհից:*

---

[23] Խրիմյան Մ, Ամբողջական երկեր, Նյու Յորք, 1929, էջ 857:
[24] Դիվան հայոց պատմության, գիրք ԺԳ, էջ 346:
[25] Րաֆֆի, ԾԺ, հ. IV, էջ 278:
[26] Երեմյան Հ., Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 352:

Սուլթանին անհանգստացնում էին հայերի ու քրդերի միացյալ դիրքորոշումն ու գործունեությունը: «Նման դաշնագրության տարածումը,– գրում է Կարինում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Մաքսիմովը,– թուրքական կառավարությանը հիրավի խիստ երկյուղ էր պատճառում»[27]: Այդ նպատակով էլ հետևողականորեն կիրառվեց քուրդ-հայկական հակամարտություն ձևավորելու քաղաքականություն: 40-ական թվականներին, երբ Բ. Դուռը հայերին հարկադրեց հարկերը վճարել պետությանը, նրանց չազատեց քուրդ աղաների կողմից հավաքվող հարկերից ու տուրքերից: Քուրդ աշիրեթապետն ու աղան առաջվա նման ունեին իրենց գյուղերը, որտեղ նրանք անառարկելի տեր էին: «Ամենաաղքատ դերբեյը տեր է 3-4 գյուղի: Կան դերբեյներ, որոնք ունեն 30-40 գյուղ և հավաքում են այդ գյուղերի գրեթե ամբողջ եկամուտը»[28]:

Սակայն քրդերը դժգոհ էին օսմանյան քաղաքականությունից, նրանք ձգտում էին վերականգնել իրենց երբեմնի իրավունքները: Այս հողի վրա տեղի էին ունենում մանր ու մեծ բախումներ: Իշխանությունները տասնամյակներ չարունակ չէին կարողանում հնազանդեցնել Մոտկանի քրդերին, որոնց զսպելու համար տեղում նույնիսկ զորանոց կառուցեցին: Սակայն քրդերն այն ավերեցին և զորքերին վռնդեցին[29]:

70-ական թվականներին չեյխ Օբայդուլան «Ազատ Քրդստան» կարգախոսով ապստամբության դրոշ պարզեց: Սուլթանը փորձեց այդ շարժումն ուղղել հայերի ու պարսիկների դեմ: Ելդըզի թելադրանքով 1876թ. Օբայդուլան Աղբակում հրավիրեց քուրդ ցեղապետերի ժողով և քննեց Հայաստանի տարածքում ինքնավար Քրդստան ստեղծելու հարցը, որի առաջին քայլը լինելու էր այդ տարածքները հայերից ազատելը: Ցեղապետերը, չլացած սուլթանի չռայլ նվերից, առաջարկեցին անմիջապես սկսել «մաքրագործումը»: Օբայդուլան դեմ արտահայտվեց, պատճառաբանելով, թե այդ քայլին դիմելը վաղ էր, քանի որ քրդերը դեռ պատրաստ չէին ոչ միայն պետականություն կառուցելու, այլև Բ. Դռան խարդավանքներից պաշտպանվելու: Նա առաջարկեց ժամանակավորապես բավարարվել հայերին բնաջնջման վախի մեջ պահելով, թույլ չտալով, որ նրանք կազմակերպվեն: Շեյխը, չնայած չէր հասել հայ-քրդական դաշինքի ձևավորման անհրաժեշտության գիտակցմանը, սակայն հասկանում էր, որ սուլթանը քրդերի հետ անազնիվ խաղ էր սկսել, և նրա խոստումներին պետք էր մեծ վերապահումներով վերաբերվել: Նա նաև գտնում էր, որ հայերի բնաջնջումից հետո քրդերը սուլթանի աչքում կկորցնեին իրենց նշանակությունը: 1880թ. հուլիսին նա քուրդ ավագանու ժողովում ասաց. «Աստծո կամքին հակառակ է այդպես հայերը ջարդել, և այս իրադեն ընող Փադիշահը (ուրեմն 1880թ. եղել է հայերի ջարդերի իրադե) բռնավոր և անիրավ ըլլալով, ոչ միայն այս հրամանին հնազանդելու չէ, այլև անգամ արժանի է գահընկեցության: Անոր նպատակը նախ քրդերուն ձեռքով հայերը սպանել և հետո բանակին ձեռքով քրդերին ջարդել տալն է»[30]:

Բ. Դռանը հաջողվեց խաբեությամբ Օբայդուլային կ. Պոլիս տանել, չնորհների արժանացնել և հրահանգավորել հայերի ջարդեր կազմակերպելու: Բ. Դուռը նաև իրականացրեց չեյխի «փախուստը»: Օբայդուլայի չարժումը լայն արձագանք ունեցավ նաև հարևան երկրներում: Թրոթերի խոսքերով՝ չարժման ազդեցությունն այնքան մեծ էր, որ լայնածավալ տարածքների բնակիչները ոչ թե կառավարությանը, այլ Օբայդուլային էին հարկ վճարում[31]: Ռուս դիվանագետ Ա. Զելենոյի կարծիքով Օբայդուլան, օգտվելով Թուրքիայի թուլությունից, մտադրվել էր «անջատվել... և ձեռք ձգել լրիվ անկախություն»[32]: Իրականում այս չարժումը ևս չուներ հստակ կողմնորոշում. ոչ միայն ընթա-

---

[27] Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազգային պայքարի պատմությունից, էջ 124:
[28] Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984, էջ 102-103:
[29] Сравдзтянц Г., Նշվ. աշխ., էջ 26:
[30] «Դրոշակ», 1901, թիվ 4:
[31] Blue Book, Turkey, 1881, N6, p.193.
[32] ЦГВИА, ф. 450, д. 98, л. 160 б.

նում էր մեկուսացած մյուս ժողովուրդների պայքարից, այլև ուղղված էր նաև նրանց դեմ: Քուրդ աղա Հուսեյինի կարծիքով Օբայդուլայի չարժումը նախապատրաստված էր «հայերի դեմ՝ հայկական հարցը չնչելու համար»[33]: Այդ մասին վկայում է նաև Հ. Լեյարդը, որը 1879թ. նոյեմբերին գրեց. «Սայիդ փաշան, որին հանձնարարված է պատժել չեյխին ու նրա կողմնակիցներին, թվում է թե, միանգամայն այլ առաջադրանք ուներ... Նա չեյխին ուղարկեց չքաղնչան, պատվո սուր և դրամ: Մի չարք քուրդ ցեղապետերի, ովքեր ավելի չուտ արժանի էին կախաղանի պարանի, պատվոնշաններով զարդարեց»[34]:

Բնութագրական է «Օսմանլի» թերթի խոստովանությունը՝ քրդերը «չափազանց չփոթված են հայկական հարցից... նրանք հենց տեսնեն, որ ցանկանում են իրենց Արևելյան Ռումելիայի բնակիչների օրը գցել, իսկույն կմիավորվեն և մի մարդու նման ոտի կկանգնեն: Քրդերի մի մասը քոչվոր կյանք է վարում, նրանց բնակարանն ու գույքը ձիերի վրա է: Ուստի նրանց բարձրացնելու համար բավական է հրամայել ձի նստել»[35]:

Օբայդուլայի չարժումը ճնշվեց: 1882թ. նա Հաքիարիի ու Ալաչկերտի չեյխերին գրեց. «Այնուամենայնիվ, ես ավելի հայերին եմ հավատում, քան պարսիկներին ու թուրքերին: Ավելի լավ է միավորվել հայերի... հետ, քանի որ պարսիկները մեզ ատում են, իսկ թուրքերն ուզում են վերածել իրենց քաղաքականության գործիքի... մենք թուրքերի ձեռքին խաղալիք ենք և ոչ ավելին»[36]: Նույն միտքն է հաստատում վերը նշված Հուսեյին աղան. «Քրդերը լոկ գործիք են չարագործ ձեռքերում: Կտրեցեք այդ ձեռքերը, և քրդերը կմնան հայերի մշտական բարեկամներ»[37]:

Օբայդուլայի չարժմանը զուգահեռ՝ ապստամբություն բարձրացրին Բեդըրխանի որդիներ Օսմանն ու Հուսեյինը, որը տարածվեց Տարոնից մինչև Հաքիարի: Սուլթանական վարչակարգը ատելի էր ոչ միայն քուրդ ռայային, այլև բեկերին ու աղաներին, թեկուզ նաև այն պատճառով, որ խլում էր ռայայի վաստակի նախկինում իրենց պատկանող մասը: Ռուսաստանի ներքին գործերի նախարար Դ. Տոլստոյը 1883թ. ցարին գրում է. «Վերջին երկու խուզարկությամբ հաստատված է, որ հայերի ու քրդերի միջև համաձայնություն գոյություն ունի՝ հարկ եղած դեպքում զինված օգնություն ցույց տալ հայկական չարժմանը»[38]: Սակայն հայ-քրդական համագործակցությունն այդպես էլ մնաց չիրականացված ցանկություն: Այդ գործում երկրորդական դեր չխաղաց մահմեդական կրոնը: Թուրքական թեոկրատական կառավարման համակարգում գլխավորը մահմեդականի համոզմունքն էր, որ օսմանյան վարչակարգը Ալլահի կամքի արտահայտությունն էր և այդ պատճառով էլ ենթակա չէր փոփոխության, մանավանդ՝ մահմեդականների ու այլակրոնների փոխհարաբերությունների առումով: «Սուլթանի առաքելությունն է ամբողջ մարդկությունը կանգնեցնել երկընտրանքի առաջ՝ դառնալ մահմեդական կամ ստրուկ և դատապարտվել մահվան»:[39] Սուլթանական վարչակարգը վերցրել էր մահմեդական կրոնի ֆունկցիաները և այն օգտագործում էր լայն զանգվածների վրա իր ազդեցությունը հաստատելու համար: Ահա թե ինչու Ելդըզում շատ էին անհանգստանում, որ առանց այդ էլ «վատ մահմեդական» քրդերի վրա մահմեդականության ազդեցության թուլանալը կհանգեցներ վարչակազմի և կիսավայրենի ու գրեթե անկախ քուրդ ցեղերի միջև կապերի թուլացման: «Փոքր Ասիայում Սըվազի մերձակայքից մինչև Մալաթիայից հարավ ընկած սահմանագիծը, եփրատի երկու վտակների արանքում, մինչև Մշո շրջակայքը, չնայած պաշտոնական ցուցակներում քրդերը նշված են մահմեդական, սակայն նրանք չեն հետևում ուղղափառ կրոնին... Նրանց կզլբաշ խայտառակ անունով

---

[33] **Թոխմախյան Ա.**, *Մասիս լեռան հարավային ստորոտները*, հ. Բ, Թիֆլիս, 1882, էջ 50-51:
[34] *Blue Book, Turkey*, 1881, N6, p.193.
[35] *«Մշակ»*, 1880, թիվ 166:
[36] *"Кавказ" (Тифлис)*, 1880, стр. 343.
[37] **Թոխմախյան Ա.**, նշվ. աշխ., էջ 52:
[38] **Ներսիսյան Մ.**, *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը...*, էջ 290:
[39] *Положение армян в Турции ...*, стр. 131-132:

կնքելու, տիրապետող կրոնի հավատացյալ դարձնելու՝ թուրքական կառավարության կատաղի փորձերի հանդեպ քրդերը թաքուն ատելություն են տածում: Դեպի քրիստոնյաները նրանց ճգտումը պայմանավորված է գոյություն ունեցող կարգերի նկատմամբ ընդհանուր ատելությամբ և քրիստոնեական կրոնի հանդեպ հարգանքով»[40]:

Լինչը նստակյաց քրդերի մասին գրում է. «Մի օտար ժողովուրդ, որ կոչվում է քուրդ, բայց խոսում է զազա բարբառով, նրա մեծամասնությունը դավանում է մի աղատ կրոն, որը քրիստոնեության և իսլամության մեջտեղում է: Զազա քրդերի թիվը հայկական գավառներում հասնում է 200 հազարի, առանց «կզլբաշ քրդերին հաշվի առնելու, որոնք նույնպես քրիստոնեությունից ինչ-որ բան ընդունել են, հարգում և բարեկամ են հայերին»»: Սակայն վրանաբնակ քրդերը հայերի հանդեպ թշնամական կեցվածք որդեգրեցին ոչ թե կրոնի, այլ օսմանյան նենգ քաղաքական գրգռումների, ինչպես նաև նյութական շահադիտության պատճառով:

Քրդերի հանդեպ օսմանյան քաղաքականության մեջ առանձնակի նշանակություն ուներ ուծացումը: Թուրքերը քրդերին ազգային առումով պարզապես կլանում էին: Ուծացման առաջին քայլը իսլամացումն էր և, քանի որ քրդերը զարգացման մակարդակով ցածր էին, հեշտությամբ էին ենթարկվում թե՛ իսլամացմանը, թե՛ թուրքացմանը: Վերջին հաշվով կրոնը դարձավ գլխավոր միջոցը քրդերին օսմանյան քաղաքականության կառքին կապելու համար: Ֆ. Գրինը նկարագրում է. «Մինչև վերջերս Արևելքում անհնար էր տեսնել ավելի գեղեցիկ պատկեր, քան քուրդ խոշոր ցեղապետին դատելը, որը... կառավարում էր իր նահապետական պետությունը, շրջապատված ազգակից երևելիներով, սիրված ու հարգված իր ցեղակիցների կողմից: Նա քուրդ զինված երիտասարդներից անձնական գվարդիա է պահում մետաքսյա գեղեցիկ չալմայով, զինված սրերով ու թրերով...»[41]: Այն, ինչ Գրինին այդքան հիացրել էր, իրականում դժբախտություն էր քրդերի համար: Այդ ցեղապետերն ի սկզբանե քուրդ ժողովրդի չահերը զոհաբերեցին իրենց անձնական չահերին: Օսմանյան իշխանությունները նրանց սիրաշահելու միջոցով էին քրդերին մղում հայերի դեմ:

Քրդերի ապրելակերպը որոշվում էր երկրի աշխարհագրական դիրքով և վայելկատուն զբաղմունքով: Գարնանից ամռանն անցմանը զուգընթաց՝ խանձված արոտավայրի «դեղին դիմագիծը լեռների լանջերով դեպի վեր է բարձրանում... Ձմռան մոտենալու հետ սկսվում է հակառակ շարժում դեպի հարավ: Ոչխարների, այծերի և ձիերի հոտերը, երկու սեռին և բոլոր տարիքին պատկանող արևայրուքից սևացած դեմքերով մարդկանց ամբոխը չընդհատվող գետի նման դանդաղ իջնում է խանձված լանջերով... Լեռնաշխարհի ստորոտում, լայնատարածք հարթավայրի ծայրին, որտեղով անցնում է Տիգրիսը, նրանց ձմեռային կացարաններն են»[42]: Այս գյուղական հովվերգությունը, սակայն, նստակյաց բնակչությանը թանկ էր արժենում: Խաչնարածների այդ բանակը դատարկում էր նրանց ամբարները, ձմեռային արոտների վերածում մշակելի հողատարածքները:

Կ. Գոլիսը, որպես կանոն, տեղական իշխանություններից պահանջում էր քրդերի դեմ գործել ոչ թե զենքով, այլ խաղաղ միջոցներով, նրանց չդրգռել: Սիպիկ ցեղի առաջնորդ Մուհամմեդը ինքնուրույն քաղաքականություն էր վարում, քրդերին ու հայերին արգելում էր պետությանը հարկ վճարել: Երբ ուժի օգնությամբ այդ փաշային հնազանդության բերել չհաջողվեց, նրան պետական պաշտոն տվեցին՝ Ալաշկերտի մյուդիր, և հանձնարարեցին եզդիներից հարկ հավաքելու գործը: Որոշ ժամանակ անց նա դարձավ Բայազետի կառավարիչ և քրդերի ձեռքով սպանվեց «կառավարության չահերին ծառայելու համար»: 19-րդ դարի վերջին տասնամյակներին դրությունը փոխվեց: Ժամանակակիցը նկատում է. «Միայն այս վերջին 10-12 տարվա ընթացքում քրդերի չրջանում

---

[40] Լինչ Գ., նշվ. աշխ., էջ 538:

[41] *Положение армян в Турции ...*, стр. 254-255.

[42] Լինչ Գ., նշվ. աշխ., հ. II, էջ 539-540:

սկսեցին երևալ քարոզիչներ, որոնք նրանց մեջ վառում էին կրոնամոլություն, ջերմեռանդություն և սերմանում ատելություն դեպի այլակրոնները»[43]:

Մասնատվեցին խոշոր ավատատները և քուրդ վերնախավի շրջանում ձևավորվեցին կառավարությանը կամակատար շեյխեր, աղաներ և բեկեր: Այդ արվում էր քրդական խոշոր ավատատիրական տներին իրար դեմ հանելու միջոցով: Սուլթանական կառավարությունը ձգտում էր դրանք ոչնչացնել և փոխարենը առաջ մղել նորերին, որոնք թեկուզ հենց այդ հանգամանքով հավատարիմ կլինեին: Ցեղապետերին փոխարինելու եկան շեյխերն ու սեյիդները, այսինքն՝ քաղաքացիական և զինվորական իշխանությանը փոխարինեց կրոնական տարրը, որը չէր սահմանափակվում մեկ ցեղապետության սահմաններում: Որոշ շեյխերի ենթարկվում էր ամբողջ քրդությունը: Նախկինում շեյխերը դերվիշական միաբանության ղեկավարներ էին և օժտված էին միայն կրոնական իշխանությամբ, սակայն ժամանակի ընթացքում նրանք հողատարածքներ ձեռք ձգեցին, հարստացան ու ներքաշվեցին աշխարհիկ գործերի շրջապտույտը, տիրացան նաև աշխարհիկ իշխանության՝ «իրենց տրամադրության տակ ունենալով խոշոր միջոցներ ու բազմաթիվ զինված ծառաներ»[44]:

Եթե ցեղերի ու ցեղախմբերի համախմբման և նրանց մարտունակության բարձրացման գործում շեյխերի ինստիտուտը դրական դեր խաղաց, ապա միանգամայն բացասական էր դրա ազդեցությունը քուրդ ժողովրդի հասարակական-քաղաքական առաջադիմության, էթնիկապես ամբողջականանալու վրա, այն էապես խոչընդոտեց քրդական ազգային մտածողության ձևավորմանը, թույլ չտվեց, որ քուրդը թոթափեր ցեղային կացութաձևի կապանքները և բարձրանար համազգային շահերի ըմբռնման բնագիծը: «Քրդի հայրենասիրությունը դուրս չէր գալիս աշիրեթի սահմաններից և եթե պատահում էր, որ մի քանի ցեղեր միավորվում էին ընդհանուր գործողության համար, ապա առաջին իսկ անհաջողությունը ոչնչացնում էր նման դաշինքը»[45]: Բացի դա, սուլթանը հովանավորում էր շեյխերին և նրանց օգտագործում քրդերի ընդվզումները զսպելու և քրիստոնյաներին ճնշելու գործում: Քուրդը «թնդանոթի միս» էր ոչ միայն օսմանյան կառավարության, այլև սեփական ցեղապետերի, շեյխերի, սեյիդների, կադիրների և նույնիսկ աղաների համար: Իսկ քուրդ ժողովրդի շահերը մնում էին ընկած վերջիններիս վրանների ետևին՝ որպես իշխողների ընչաքաղցությունն ու դավաճանությունը սրբագործող ու «բարոյականացնող» վարագույր:

Ա. Կարցովի կարծիքով՝ աշիրեթական այդ նեղմտությունը որոշիչ դեր խաղաց, որ կայսրության արևելյան տարածքներում բնակվող հպատակ ժողովուրդներին չհաջողվեց ստեղծել հակասուլթանական ճակատ: Այս կարծիքին համաձայնել կարելի է վերապահումով: Հարկ է նկատի ունենալ, որ քրդերը ռազմական մեծ ուժ էին, և նրանց հետ մյուս հպատակ ժողովուրդների միավորվելու ձգտումը բացատրվում էր այդ ուժով: Մասնատված էին իրենք՝ այդ մյուս ժողովուրդները և, եթե նրանց որոշ խավեր ձգտում էին քրդերի հետ միավորվել, ապա մյուսները թշնամական, լավագույն դեպքում, անորոշ կեցվածք էին ընդունում: Օսմանյան իշխանություններին հաջողվում էր հպատակ ժողովուրդների միջև անվստահություն սերմանել և այդ ժողովուրդների պայքարը սուլթանական իշխանությունների դեմ ընթանում էր իրարից մեկուսացված և իրարու զուգահեռ: Սակայն նաև անվիճելի է, որ քրդերը լոկ գործիք էին Ելդըզ Քեոշքի ձեռքին: Պատահական չէ, որ երբ հարց բարձրացվեց քրդերին զինաթափելու, մեծ վեզիր Ալին թույլ չտվեց՝ ասելով. «Պետք չէ, քրդերը միշտ պատրաստի զորք են մեզ համար»: Ահա այդ զորքը պետք է զուրկ լիներ ազգային գիտակցությունից, հանդիսանար ոչ թե ազգ, այլ կրոնական-ռազմական համայնք, ավազակային մտածելակերպով ու հակումներով

---

[43] Գաղոյան Հ., *Սասունի պատմությունը*, Երևան, 1985, էջ 130:

[44] Сон Э., *О курдах и их стране*. Урмия, 1917, стр. 81.

[45] Карцов, նշվ. աշխ., էջ 13:

*ոհմակ, որպեսզի ճնշեր քրիստոնյաներին, ոչնչացներ, իսկ կառավարությունից անպայման երկնչեր ու անվերապահորեն հնազանդվեր նրան:*

*Սուլթանին հաջողվեց, քրդերին իր կողմը գրավելով, նրանց ներարկել բարբարոս հայատյացություն և մասնակից դարձնել 1894-96ԹԹ. հայկական ջարդերին, ինչն այլևս անհնար դարձրեց հայ-քրդական դաշինքը: Հարկ եղավ այդ դաշինքի ձևավորման փոխարեն պայքարել քրդական վտանգը չեզոքացնելու համար, որպեսզի քրդերն այլևս օսմանյան իշխանությունների կողմից չօգտագործվեին հայերի դեմ: Սակայն այս գործում ևս հաջողություն չարձանագրվեց: Պատճառները մեկից ավելի էին: Ք. Միքայելյանը հիմնականը համարում էր այն, որ հայերն ու քրդերը գտնվում էին զարգացման տարբեր մակարդակների վրա, ինչը նրանց խորթացրել էր միմյանցից: Մեծ դեր խաղացին նաև քրդերին հայերի դեմ լարելու թուրքական քաղաքականությունն ու կրոնական տարբերությունները*[46]*: Ս. Սապահ-Գյուլյանը գտնում էր, որ «ցեղայնությունը, դարավոր ոխակալությունները, թշնամությունները, թուրքական խարդավանքների ցանցերը, որ այդ ցեղերից չատերի սիրտն արդեն մագիլների մեջ էին առել, մեզ անկարող դարձրին որոշյալ և դրական արդյունք ձեռք բերելու»*[47]*:*

## 3. ՔՐԴԵՐԻՆ ՀԱՅԵՐԻ ԴԵՄ

*1877-78ԹԹ. ռուս-թուրքական պատերազմից հետո քրդերին հայերի դեմ լարելու գործընթացն ամբողջացավ և վերածվեց պետական քաղաքականության: Դա պատահական չէ, քանի որ հայերի բնաջնջման ծրագրում քրդերին առանձնակի դեր էր հատկացվում: Ցեղասպանության ծրագրային փաստաթղթերից մեկում՝ Քյամիլի նամակում, հայերի բնաջնջման համար առաջարկված ուժերի չարքում առաջին տեղը հատկացված է քրդերին: Նախ՝ ուժեղացվեց քրդերի ներհոսքը Արևմտյան Հայաստան: Վեց վիլայեթներ ներմուծվեց 100 հազար քուրդ, որոնք հիմնականում բերվեցին Դիարբեքիրի հարավային շրջաններից:*

*Ճշմարիտն այն է, որ Հայկական հարցում, ավելի ճիշտ, Արևմտյան Հայաստանի հայաթափման խնդրում թուրքերի և քրդերի շահերը համընկնում էին: Օսմանյան կայսրության այդ շրջանների (հայկական նահանգների) անջատվելը պետք է որ շատ լուրջ հարված հասցներ քրդերին և դժվար կացության մեջ դներ թուրք բնակչությանը: Հիմքեր կան կարծելու, որ նրանց նշանակալից մասը դրա մեջ տեսնում էր իրենց զբաղեցրած տարածքները կորցնելու վտանգ, ինչից էլ կշտապեր օգտվել հայ ազգաբնակչության առավել ունևոր մասը*[48]*: Եվ Կ. Պոլիսը որոշեց ոչ մի կերպ դա թույլ չտալ՝ օգտվելով այն հանգամանքից, որ 1877-78 թվականների ռուս-թուրքական պատերազմն ավելի էր բորբոքել քրդերի հակահայ ախորժակը: Ռոլեն Ժեկմենը գրում է. «Մոսուլի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Վանի շրջաններից Ռուսական բանակի դեմ կռվելու գնացող քրդական անկանոն հրոսակախմբերը հրի ու սրի, կողոպուտի մատնեցին հայկական գյուղերը... Միայն Բայազետի և Ալաշկերտի դավառներում ոչնչացրեցին 30 հազար մարդ»*[49]*:*

*1877թ. մարտին Ջալալեդդինը հարձակվեց Աղբակի հայկական գյուղերի վրա: 24 գյուղ վերածվեց մոխրակույտի: Շեյխի գազանություններ դեմ բողոքի ձայն բարձրացրեց Ն. Վարժապետյանը: Սուլթանը պատասխանեց՝ պատրիարքին չքանչանով պարգևատրելով: Այդ առթիվ Մ. Խրիմյանը գրեց. «Ոչխարներու ոսկորներեն մանյակ չինեցին և հովվի վզեն կախեցին»*[50]*:*

---

[46] Միքայելյան Ք., *Հեղափոխականի մտքերը*, Ժնև., 1906, էջ 113-114:
[47] Սապահ Գյուլյան Ս., *նշվ. աշխ.*, էջ 252:
[48] Колобакин А. М., *նշվ. աշխ.*, էջ 182:
[49] *Положение армян в Турции ...*, стр. 58.
[50] Գուշակյան Թ., *Խրիմյան Հայրիկ*, Փարիզ, 1925, էջ 84:

Պատերազմի նախօրյակին Վան լցված թուրքերի ու քրդերի վայրենությունների վերաբերյալ մի փաստաթղթում կարդում ենք. քրդական ջոկատները չրջում էին հայերին կողոպտելու նպատակով, յուրաքանչյուր ջոկատ թուրք ուղեկցող ուներ, որը «քրդաց մատամբ ցույց տալով», ասում էր՝ «Այս մարդը հայ է...»[51] : Պատերազմի ժամանակ Վասպուրականում հայերից հափշտակվեց 73 հազար ոչխար, 8.7 հազար եզ: Բանակի համար սեփական սայլով սննդամթերք ու ռազմամթերք տեղափոխող հայ գյուղացիներից չատերին սպանեցին: Հայերից խլվեց 141 հազար փութ ցորեն, 4900 կով, հայերին հասցված վնասը կազմեց 2.16 միլիոն ռուբլի[52]: Այս թալանի հետևանքն էր Վանի 1879թ. սովը: Շատախում քուրդ ավազակ Գորեն մի հայ է սպանում, որից հետո վալին ավազակին հրավիրում է քաղաք, նրա պատվին հյուրասիրություն կազմակերպում:

80-ական թվականների սկզբներին ծայր էր առել «չափազանց վտանգավոր քրդական չարժում, միավորվել էին առանձին, նույնիսկ իրարու թշնամի ցեղեր՝ միացյալ ուժերով» գործելու: Շարժումը դեռևս ընդգծված հակահայ կերպարանք չուներ, սակայն իշխանություններն ամեն ինչ անում էին դրան այդպիսի բնույթ հաղորդելու համար[53]: Քրդերը, նկատում է Օսման Նուրին, «այս չրջանը (Հայաստանը) համարում էին իրենց սեփականությունը[54]...»: Կարինում Անգլիայի գլխավոր հյուպատոս Ք. Լլոյդը արևմտահայերի վիճակի առանձնահատկություններից առաջինը նչում է քրդերի մչտական հարձակումների հետևանքով կյանքի ու սեփականության վտանգվածությունը[55]: Երկու ժողովուրդների անիրավահավասարության հիմքն այն է, որ «հայն ակամա ընկնում էր այս կամ այն քրդի կամ բեկի հովանավորության տակ... իր անվտանգությունը գնում էր այս կամ այն վարձատրությամբ»[56]: Սակայն այդ գործարքը միչտ չէ, որ հային փրկում էր: Քրդին սուլթանն ազատություն էր տվել հայերի հանդեպ վարվելու իր քմահաճույքով, և նա ամենևին էլ չէր պլանում օգտվել այդ իրավունքից: Հետևա՞նքը: Ահա վկայություններ:

«Այսօր Մչո գավառին սպառնում է կատարելապես ամայանալու վտանգը, չնորհիվ քուրդ ավազակների բուռն հարձակումների: ...Այսօր Հայաստանը... կատարելապես հանձնված է ավազակների անզուսպ կամայականության, դարձած է դրանց բույնը, դրանց կերուխումի չտեմարանը, դրանց ավերիչ արշավանքների ու մոլեգին օրգիայի ասպարեզը[57]...»:

«Քրդերը, կառավարության անարդար վարմունքից ու պաչտպանությունից օգտվելով, 700-800-ի չափ խութեցի, աղբեցի, նոքեցի և զանազան այլ ցեղեր հավաքվել են՝ Մչո դաշտի գյուղերի վրա հարձակվելու դիտավորությամբ... Մչո դաշտի, Ախլաթի, Բուլանըխի և Մանազկերտի վիճակներում տիրապետում է վախ և սարսափ. ճանապարհները փակ են, հաղորդակցությունը խզված... Մոտկանի քրդերը, ուրմանցի, դիմըլցի և մյուս աչիրեթությունները, օգտվելով կառավարության վերաբերմունքից, քաջալերվեցին, դուրս եկան իրենց խոռոչներից և ասպատակության դաշտ ելան... ռամազան ամսին մեր կուսակալը Մոտկանի զանազան ցեղապետերին իր մոտ հրավիրեց իֆթարի և ընծաներով ուղարկեց[58]...»:

Քաղաքներում իշխանությունները քրդերից ավազակախմբեր էին կազմակերպում, որոնց խնդիրն էր «հայերին վնասներ հասցնել, գողանալ, սպանել»: Շատ քրդեր իշխանությունների կողմից օգտագործվում էին որպես հայերին հետևող լրտեսներ: «Թափա-

---

[51] Մատենադարան, ձեռ. թիվ 4442, թ. 741:
[52] Թոխմախյան Ա., Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, Թիֆլիս, 1881, էջ 63-64:
[53] Լեո, Անցյալից, էջ 35:
[54] Նուրի Օսման, Նչվ. աչխ., էջ 826:
[55] *Положение армян в Турции ...*, стр. 321.
[56] «Դրոչակ», 1892, թիվ 2:
[57] «Հնչակ», 1889, թիվ 2:
[58] Նույն տեղում, 1891, թիվ 3:

ռական քրդերը,— գրում էին Վանից,— օրը ցերեկով օսմանյան զորանոցեն մարտինի հրացան կստանան և չուկայեն գոռոզությամբ անցնելով, առանց քաշվելու, կըսեն՝ «Այս բոլորը ֆլահներու (հայերի) համար է[59]»»: Իշխանությունների հանձնարարությամբ՝ քրդերն ահաբեկում, սպանում էին ազդեցիկ հայերին, մտավորականության ներկայացուցիչներին: «Հնչակ»-ը գրեց, թե Բաղեշում «տեղի չեյխերը պայմանավորվել են հայերին սրի քաշել... կառավարությունը թեպետ այդ մասին գիտե, սակայն առաջն առնելու ուղղությամբ քայլ չի անում: Դրա փոխարեն քուրդ և թուրք հպատակներին գաղտնի զենք ու ռազմամթերք տվեց...»: Ամռանը իշխանությունները Տարոն տեղափոխեցին քրդական մի քանի քոչվոր ցեղեր, որոնք հափշտակեցին հայկական գյուղերի անասունները, հրդեհեցին ցանքերն ու անասնակերի դեզերը, կատարեցին սպանություններ: Այդ գործում նրանց օգնում է զորքը: Ավերվեց մի քանի գյուղ: Այսինքն՝ տվյալ դեպքում խոսքը ոչ թե սովորական ավազակության, այլ քոչվոր քրդերի միջոցով հայերին ոչնչացնելու քաղաքականության մասին է: «...Հայ ժողովրդի թշնամին,— գրում է «Հնչակ»-ը,— միայն (սուլթանական) կառավարությունն է և ոչ քուրդը, որի համար ավազակությունը արհեստ է, որ նա գործադրում է անպաշտպան ժողովրդի վրա. կառավարությունն է հայի թշնամին, որ արգելք չի ուզում դնել այդ ավերիչ հարձակումներին, այլև գազանաբար քաջալերում և աջակցում է դրանց[60]...»: Այդ իրողությունը հաստատող վկայություններից մեկն էլ այն էր, որ ջարդարար-ավազակային խմբերի մի մասը կազմակերպվում, զինվում էր Կ. Պոլսում և հայկական նահանգներ ուղարկվում պետության ծախսերով: Մոտկանի քրդերը բացեիբաց ասում էին, որ «Հրովարտակ է եղել, որ հայերին կոտորենք»: Ջավեշտ է, բայց փաստ, որ հայերին կոտորելու եկած այդ քրդերը սնվում էին հայ գյուղացիների հաշվին, նույնիսկ ատամի տուրք վերցնում:

Օգտվելով մահմեդականների առաջնորդի իր վիճակից՝ սուլթանը հնարավորություն ուներ հայաջինջ քաղաքականությունն իրականացնել մահմեդական ցեղերի պարագլուխների, մասնավորապես՝ աշիրեթապետերի և չեյխերի միջոցով: Եվ նա այդ հնարավորությունն օգտագործեց ամբողջությամբ: Հալեպից Կ. Պոլիս հրավիրվեց Սուլեյմանիեի չեյխ Սայիդը, որին անվանում էին նոր Ջալալեդդին: Այդ մոլի հայատյացի տրամադրության տակ կար 1000 հոգուց կազմված մարտական ջոկատ: Շեյխի ուղևորությունը մեծ շուքով էր կազմակերպված: Նա Պոլիս մեկնեց հատուկ գնացքով: «Դժվար չէ նկատել Համիդի նպատակը... սասունցի կտրիճների վրա մի նոր Ջալալեդդին է հարկավոր»[61]:

Օսմանյան իշխանությունների ու քուրդ վերնախավի հակահայ դաշինքը վերածվեց ընդհանուր ճակատի: Կանգնելով հայերի կոտորածների ուղու վրա, օսմանյան իշխանությունները, ինչպես և պետք էր սպասել, համագործակցության մեջ մտան հանցագործ տարրերի հետ: Օրինակ, Վանի կազայում Համիդիե մի խումբ ստեղծվեց՝ կազմված բացառապես քուրդ հանցագործներից: Նման գնդերի հրամանատարներ նշանակվեցին ամբողջ կայսրությունում հայտնի ավազակապետներ՝ Մոստիգո, Շավել, Քոռ Սլո, Քոռ Հուսեյին, Թմո Մհե, Գենջո:

1885թ. Սասունի իշխանների ժողովը որոշեց. «Կառչած մնալ զենքին և չթողնել, որ քրդերն ընդարձակեն իրենց տիրապետությունը Սասնո ազատ շրջաններուն վրա, եթե քուրդերը չարժվեն, պատերազմել անոնց դեմ բոլոր հնարավոր միջոցներով, քաջալերել զենքի գնումը, չինել վառոդ, հավաքել կապար...»[62]:

Հայ-քրդական հարաբերություններն այլևս ունեին երկու առանձնահատկություն. 1. Երկու ժողովուրդների բախումները նախկինում նշանակում էին, որ կողոպտում ու

---

[59] «Դրոշակ», 1892, թիվ 3:
[60] «Հնչակ», 1889, թիվ 2:
[61] Նույն տեղում, 1894, թիվ 6:
[62] Սասունի Կ., Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 531:

*կոտորում էին միայն քրդերը, իսկ 1880-ի կեսերից հայերն արդեն անզեն չէին, և քրդերի ոտնձգությունները հակահարված էին ստանում: Դա փոխեց քրդերի հոգեբանությունը, քանի որ «աչիրեթները կը սիրեին արշավանքները, բայց դիակները չալակած, սուգով տուն դառնալը խոտոր կը համեմատվեր իրենց նկարագրին»: 2. Օսմանյան կառավարությունը ոչ միայն դադարեցրել էր քրդերի հալածանքները, այլև զինում ու քաջալերում էր նրանց: Եվ քրդերը չատ չուտ մոռացան 40 տարիների (1820-60) հալածանքները, «պատեհապաշտ այս զինյալ ամբոխը քաղաքական հասունություն չունեցավ և, առօրյա կողոպուտի սիրույն, ընկավ թուրքերու կողմե լարված թակարդին մեջ: Քրդերը իրենց իսլամական մոլեռանդությունը ուղղեցին հայերու դեմ: 1890-են սկսած քուրդերը պատրաստի գործիք մը դարձան Օսմանյան կայսրության ձեռքին՝ կոտորածներով լուծելու համար Հայկական հարցը»*[63]:

*Մի հատկանշական փաստ. 1891թ. ապրիլի 5-ին Մալաթիայի Արջա ավանում քրդերը հարձակվեցին բանտի վրա: Լուրն առնելով՝ վալին ասաց. «Հայերն են, որ քրդերին գրգռում են: Այլևս բավական է հանդուրժենք այս գյավուրների արածները, եթե մենք նրանց չկոտորենք, նրանք են մեզ կոտորելու»: Առաջին հայացքից տարօրինակ թվացող այս տրամաբանության պատճառն այն էր, որ «գրեթե ամեն շաբաթ կ. Պոլսից նորանոր հրահանգներ էր գալիս կուսակալին՝ ամեն միջոց գործադրել հայերին ոչնչացնելու»*[64]:

*Քրդերին վայրագությունների, սպանությունների և թալանի մղող օսմանյան իշխանություններն ամեն ինչ անում էին նրանց միջից դուրս մղելու մարդկայինը, բարոյականը: «Մենք երկրագործությամբ չենք զբաղվում,— ասել է մի քուրդ,— որովհետև մեզ ավելի հեշտ է ու ձեռնտու հայի վաստակը խլելը... Եթե հայի արյունը չծծենք, մեր վարկը կառավարության աչքում կկորցնենք, որովհետև նրա պաշտոնյաները իրենք են մեզ ստիպում այդ ճանապարհով լրացնել մեր շահը և մեզ ասում են, որ հայը մեր (քրդերի) պատառն է... «Դուք հայի տերն եք,— ասում են մեզ,— և նրա անձն ու ինչքը ձերն է, ճշտությամբ կատարեք ձեր դերը, որպեսզի չզրկվեք արտոնություններից»*[65]:

*Քրդերին հայերի դեմ հրահրելու գործում չպետք է գերագնահատել ո՛չ քրդերի քոչվոր կացութաձևի, ո՛չ մահմեդական կրոնի և ո՛չ էլ թալանի միջոցով ապրելու նրանց հակումների դերը: Գլխավոր նշանակության գործոն հանդիսացավ այն, որ սուլթանական քարոզչությանը հաջողվեց քրդերին ներարկել, թե նրանց բնօրրանը Հայաստանն է, թե հայերը եկվորներ են և ուզում են Քուրդիստանը Հայաստան դարձնել, թե ռայա հայը ձգտում է երկրի տեր դառնալ և քրդին ռայա դարձնել, թե քուրդ ժողովրդի գոյատևումը հնարավոր է միայն Հայկական բարձրավանդակում: Դրանով թուրքերը հետապնդում էին նաև նպատակ՝ ժխտում էին իսկական Քրդիստանի գոյությունը: Ահա թե ինչու իշխանությունները համառորեն ձգտում էին իսկական Քրդիստանը դատարկել քրդերից, նրանց ցրել կայսրությունով մեկ և, առաջին հերթին, բնակեցնել Արևմտյան Հայաստանում:*

*Շատերը հայտարարում են, գրում է Ն. Ադոնցը, որ Քրդական հարցը կարող է լուծվել միայն Հայկական լեռնաշխարհում, «ոմանք նույնիսկ հակված են կարծելու, որ այդ հարցը կարող է գերազանցապես լուծվել հայկական հողում: Հայաստանը Քուրդիստան դարձնելու իրենց ձգտմամբ Հայաստանի բարեկամներն ու թշնամիները միավորվել են: Այն, որ թուրք քաղաքագետները հարյուրամյակների ընթացքում փորձում էին Հայաստանը բնակեցնել քրդերով և այն դարձնել Քրդիստան, ինչ-որ չափով հասկանալի է: Սակայն, որ նման գործողությունները թաքուն կամ բացահայտ համակրանքով և հավանությամբ էին ընդունում այն եվրոպական պետությունները, որոնք կոչված էին հայերին պաշտպանելու թուրքերի ճնշումից, դա մի երևույթ է, որը պետք է առաջացնի բոլոր*

---

[63] Նույն տեղում, էջ 532-533:
[64] «Հնչակ», 1891, թիվ 6:
[65] Նույն տեղում, 1890, թիվ 3:

նրանց ատելությունը, ովքեր թեկուզ փոքր-ինչ պատկերացում ունեն բարոյականության մասին»[66]: Քուրդ պատմաբան Փ. Մազհարին հայ-քրդական հակասությունների գլխավոր պատճառներից մեկը համարում է այն, որ հայ քաղաքական ուժերն «այդ ամբողջ տարածքը հայկական էին համարում»: Նա վկայակոչում է հայկական առաջին կոտորածներից մի քանի տարի առաջ քուրդ բանաստեղծ Հաջի Կադրը Քոխի գրածը. «...Ավաղ, քրդերի երկիր Ջեզիրեն և Բոհթանը հայկական երկիր են դարձնում...»:

Դժվար է չհամաձայնել Ք. Մազհարի հետևյալ մտքի հետ. «Երկու ժողովուրդների քաղաքական գործիչների անհեռատեսությունը, ինչպես նաև կառավարության և օտար տարրերի հրամանները դարձան հայերի և նրանց հարևան քրդերի ազգային անհամաձայնության պատճառ, որից օգուտ քաղեց թշնամին[67]»: Նույն միտքն է հաստատում նաև Վ. Գորդլևսկին. «1877-78ԹԹ. պատերազմից հետո թուրքական իշխանությունները սկսեցին քրդերին ավելի ուժգին գրգռել հայերի դեմ, և ահա, ժամանակ առ ժամանակ, տեղի էին ունենում վայրենի ջարդեր: Բ. Դուռը խրախուսում էր կոտորածներն ու ջարդերը՝ դրանք համարելով անվրեպ միջոց իր համար ատելի քրիստոնյա տարրի թուլացման համար»[68]:

Բեռլինում օսմանյան պատվիրակությունը, մի կողմից, օգտագործեց քրդերի բռնությունների մասին հայերի գանգատների նյութերը՝ չարագործություններն ամբողջությամբ քրդերի վրա բարդելով, մյուս կողմից՝ կողմնորոշվեց հայերի բնաջնջումն իրականացնելու քրդերի միջոցով: Թուրքական պաշտոնական քարոզչությունը, Հայկական հարցը մեկնաբանելով որպես ազգային թագավորություն ստեղծելու և քրդերին ստրկացնելու նպատակադրում, գտնում էր, որ վերջինները այդ վտանգից փրկվելու մի միջոց ունեին՝ կոտորել հայերին: "Le Osmanlie"-ն ակնարկելով քուրդ երեխաներին հայկական դպրոցներ ներգրավելը, գրեց, թե «հայերն ուզում են քրդերին քրիստոնյա դարձնել», որ հայերը բուլղարներից վտանգավոր են, որովհետև «ձգտում են քրդերին կլանել քաղաքակիրթ ճանապարհով»:

Քուրդը վերածվեց կույր գործիքի սուլթանի ձեռքին: Կույր, որովհետև օսմանյան իշխանությունները դարեր շարունակ ձգտել են նրան դարձնել լոկ մահմեդական համայնք, որն անվերապահ պատրաստակամություն հանդես բերեր կրկնօրինակելու թուրքերի վարքն ու բարքը, գործունեությունն ու քաղաքականությունը: Այդ անվերապահությանը հասնելու համար թուրքական իշխանությունները հանդուրժում էին, որ քրդերը հարկ չվճարեին (կամ շատ քիչ վճարեին), զինվոր չտային, նաև մշտապես հրահրում էին միջցեղային բախումներ, կաշառում քուրդ վերնախավին: Օրինակ, շեյխերը լայն արտոնություններ ունեին՝ «մեծ խալիֆներից շատ բարձր առանձնաշնորհումներով և ընդարձակ իրավունքներով՝ ազատված քաղաքացիական և հպատակության ամեն տեսակի տուրքերից, մինչև անգամ պատժից[69]»: Սուլթանն ամեն տարի շեյխերին մեծ գումար էր տալիս, որ կոչվում էր խմուս: Արտոնյալ էին նաև քուրդ ազնվականները՝ թոռունները, որոնք կատարած հանցագործությունների համար չէին պատժվում և «կրնային պատժել, սպանել, նույնիսկ կրնային գյուղ մը վառել առանց հաշիվ տալու: Արգելված էր անոր սպանությունը նույնիսկ կռիվներու ընթացքին: Ան կրնար սպանվիլ միայն թշնամի թոռունե մը...»[70]: Մի քուրդ ցեղապետ ասել է. «...մենք՝ քրդերս, շատ բաժան-բաժան ենք, և իհարկին իրարու արյուն կխմենք, և այս դրությունը ստեղծված է մեզ կառավարող պետության կողմե, որմե մենք ալ գոհ չենք...»[71]: «Շատ տեղ և շատ

---

[66] Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 92-93:

[67] Ք. Մազհար, *Քուրդիստանն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (արաբերեն)*, էջ 262, 265:

[68] Гордлевский В. А., նշվ. աշխ., էջ 127:

[69] Чихачев П. А., *Великие державы и Восточный вопрос*, Москва, 1970, стр. 106.

[70] «Երիտասարդ Հայաստան», 1904, թիվ 50:

[71] Ծուլեր Արմէնակ Եկարեանի, Կահիրէ, 1947, էջ 31:

վաղուց քուրդ աչիրեթները թշնամական, անկախ դիրք են բռնել տաճիկ կառավարության դեմ,– գրում է Գր. Մինգայելյանը,– բայց այն օրից, երբ վերջինս համոզվեց, որ քրդական ցեղերն իրենց ներկա վիճակում և սեփական ուժերով անկարող են Քուրդիստանը վերականգնել, ոչ միայն այլևս չի հալածում քրդերին, այլև... նրանց վրա է հիմնում հարյուրավոր դեպքերում իր ուժը»[72]:

Կ. Պոլսի Ռուսական դեսպանատան խորհրդական Սեմյոնովը գրում է. «Այս վայրենի և անառիկ երկրում (Սասունում) հենց բնության պայմանների չնորհիվ հայերը մինչև վերջին ժամանակները չատ քիչ բանով էին կախված թուրքական իշխանություններից: Առաջներում նրանք քրդերի հետ ապրում էին չատ ավելի համերաշխ, նրանց ոչ միայն չէին նեղացնում, ընդհակառակը, պաշտպանում էին թուրքերի ոտնձգություններից: Վերջին տարիներին հարաբերությունները կտրուկ փոխվեցին: Քրդերի նկատմամբ սուլթանի ողորմածությունները և նրանց ոչ կանոնավոր հեծելազոր դարձնելը ակամա նրանց մերձեցրեց թուրքերի հետ[73]: Ա. Մանդելշտամը հայ-քրդական հարաբերությունների էվոլյուցիայի մասին գրում է, թե թուրքական իշխանությունները մինչև 19-րդ դարի կեսերը չնայած հայերին ատում էին, բայց նաև ատում էին «անկարգապահ քրդերին և աչխատում էին պահել հավասարակշռությունը երկու տարրերի միջև»: Հայերը չէին ձգտում Օսմանյան կայսրության տապալմանը, ընդհակառակը՝ «թուրք տարրի հետ համաձայնությունը հայերի համար կենսական կարևորություն ուներ»: Մինչդեռ թուրքական իշխանությունները, փոխանակ ընդառաջ գնալու հայերին, որդեգրեցին «քրիստոնյաներին հալածելու և ոչնչացնելու» քաղաքականություն: Աբդուլ Համիդը օսմանյան տիրապետության տակ գտնվող ժողովուրդներին թուլացնելու նպատակով «լարում էր մեկը մյուսի դեմ: Սրանից է քրդերի գրգռումը հայերի դեմ և այս վերջիններիի ջարդը»: Եվ իսկապես, մինչ այդ հայերը ռայա էին, ենթակա քուրդ աղաներին, բայց քանի որ վերջիններս «նրանց (հայերին) ծառայեցնում էին թե՛ իրենց դաչտերը մշակելու և թե՛ ուրիչ աչխատանքների համար... մի որոչ չափով բարյացակամ էին վարվում հայերի հետ և նրանց պաչտպանում ուրիչ քուրդ ցեղերի կեղեքումներից»:

Քրդերը, դժգոհ հայերի զարթոնքից և ինքնուրույն գործելու ձգտումից, ուրախությամբ ընդունեցին հայերի բնաջնջմանը մասնակցելու սուլթանի հրամանը՝ ճնշելու հայերի նորածին չարժումը նրանց ահաբեկելու միջոցով: Եվ երբ Աբդուլ Համիդը «համիդիե գնդեր կազմելով, միաժամանակ քուրդ աչիրեթություններին արտոնեց հայերի հետ վարվելու այնպես, ինչպես ցանկանում էին, քրդերի ավարառության և կողոպուտի բնազդին ազատություն տրվեց»: Շեյխերն ու մոլլաները աչխատում էին քրդերին համոզել, թե հայերը ցանկանում էին երկրի տերը դառնալ: Դա թունավորեց քրդերի ու հայերի հարաբերությունները: Սպանություններն ու համընդհանուր հափչտակությունները վերածվեցին ընդհանուր կոտորածի ու կազմակերպված ավարառության: Աբդուլ Համիդը հասավ իր նպատակին՝ հայ և քուրդ ժողովուրդների միջև ստեղծեց խոր ատելություն և հակամարտություն: Վիճակն ավելի բարդացավ, երբ միջամտեցին մեծ տերությունները: Ահա այս պայմաններում կարմիր սուլթանը 1894թ. օգոստոսին փորձեց մի փոքրիկ նախաբան-կոտորած Սասունում[74]:

Ինչ վերաբերում է հայերի ապստամբական տրամադրություններին և մահմեդականներին ռայա դարձնելու դիտավորությանը, ապա, ինչպես գրում է Գր. Արծրունին. «Թուրքիայի հայերը ճնշված, ստորացած են, մինչև այն աստիճան կրավորական են դարձել, որ նրանցից անկարելի է սպասել բռնավորության, հալածանքի, ճնշման դեմ բողոքի որևէ դրսևորում...»[75]:

---

[72] Մելքայելյան Գր., նշվ. աչխ., էջ 32:
[73] Մարկոսյան Ս., նշվ. աչխ., էջ 194-195:
[74] Mandelstam A. N., *Le Sort de l'Empire Ottoman*, Paris, 1917, pp. 187-195.
[75] «Մչակ», 1876, թիվ 24:

«Թուրքիայում Հայկական հարցի միջուկը,– գրում է Լինչը,– մենք կարող ենք համարել Հայկական բարձրավանդակում քուրդ ազգաբնակչության ներկայությունը»: Այդ հետամնաց, նախնադարյան բարքերով ապրող ժողովրդին (քրդերին) օգտագործելը Թուրքերի համար դժվարություն չէր:

Հասկանալի է, որ քրդերի հակահայ կողմնորոշումը հայկական չրջաններին ոչ միայն անելանելի կացության առջև կանգնեցրեց, այլև հուսալքության մատնեց: Կոմս Շուլենբուրգը 1892թ. գրում է. «Երբ հայկական գյուղերում, որտեղ թագավորում էր ամենասև թշվառությունը, մենք հայերին հարցնում էինք, թե նրանք ինչ են մտածում անել այդ վիճակից դուրս գալու համար, նրանք փոխանակ մտածելու, որ մի օր ի վիճակի կլինեն միասին ոտքի ելնելու քրդերի դեմ... և, եթե հարկ լինի, արյան գնով կհասնեն իրենց ցավերի բուժմանը, ինչպես նաև որոշ ազատության, նրանք սարսափած և երկչոտ պատասխանում էին, որ Աստված հայերին լքել է, և այլևս որևէ հույս չունեն, չնայած, եթե չարունակեն իրենց հետ վատ վարվել, մի օր կգաղթեն Ռուսաստան...»[76]:

Պատրիարքին հասցեագրված մի նամակում կարդում ենք. «Ամբողջ քուրդ ժողովուրդը միաբանված ուժ է ելել հային այս երկրից բնաջինջ անելու: Կառավարությունը միշտ այս դեպքերի մասին լռում է... Կուսակալը հրապարակավ պաշտպանում և օգնում է քրդերին, անդադար քաջալերելով, հայերի դեմ գրգռելով նրանց...»: Մաևսկին նկատում է, որ համիդիեների վայրագությունները քաջալերվում էին իշխանությունների կողմից, իսկ մյուս քրդերը նրանցից օրինակ էին վերցնում, «ձեռքից եկած չարիքն ու վնասը հասցնում ժողովրդին: Մեկի թերի թողածը մյուսն էր լրացնում»: Մի քանի անգամ կառավարությանը գանգատներ ուղարկվեցին այդ հարստահարությունների դեմ, բայց գանգատվողները «տուժեցին... չատերը պատժվեցին, բանտարկվեցին որպես զորքին զրպարտողներ» ու խռովարարներ: Իսկ համիդիե սպաներն անգամ «օրը ցերեկով էին մարդ սպանում», մեկի կնոջը, մյուսի հարսին, երրորդի քրոջը պահանջում:

Սուլթանը, գրում է Լեոն, «երկու ձեռքով բռնում էր 1880-ին ծայր տված քրդական չարժումը: Կ. Պոլսի թուրք մամուլը հրճվանքի մեջ էր, Եվրոպային սպառնում էր քրդական չարժումը և, բոլորովին հարկավոր չհամարելով որևէ գաղտնապահություն, հայտարարում էր, թե Թուրքիան կոչնչացնե 61 հոդվածը քրդերի նիզակներով...»[77]: 1894թ. Բուլանըխի և Մուշի կազաներում քրդերը քշել են ավելի քան 10 հազար գլուխ անասուն: Ինչպես Դիլոնն է նշում, թուրքական իշխանությունները նման կողոպուտների վրա նայում էին «քաջալերող ժպիտով»: Այս իրավիճակը տիրապետող էր ամբողջ Արևմտյան Հայաստանում: Սուլթանը բնաջնջման առաջին քայլը համարելով հայերին տնտեսապես քայքայելը, այն իրականացնում էր միջոցներով, որոնք համընդհանուր ընդգրկում ունեին: Դրա հետևանքով աղքատությունը տիրապետող դարձավ, ինչի «ծավալներն այնպիսին էին, բարոյական ու ֆիզիկական ազդեցությամբ այնքան անհույս ու ահավոր, որ զոհերը մոտ էին խեղթանալուն՝ առաջացած հիասթափություններից»[78]: «Մի՞թե մահմեդականները պիտի պատժվեն հայերին սպանելու համար»,–Դիլոնին զարմացած հարցրել է համիդիե սպան: Եվ իրոք: «Մահմեդականը միանգամայն բնական ու հասկանալի է համարում..., որ սպանվածների հարազատները խստորեն պատժվում են, երբ բողոքում են իրենց այրիացնողների ու որբացնողների դեմ»[79]: Մահմեդականից տուժած քրիստոնյան արդարության հասնել չէր կարող և այդ ոչ միայն դատավորների կաշառվածության կամ անհոգության պատճառով, այլ որովհետև «գիտակցաբար ձգտում էին դրան»: Միայն այն փաստը, որ հայը համարձակվել էր դատարան հայց ներկայացնել քրդի դեմ, բավարար հիմք էր, որ նա հայցվորից վերածվեր պատասխանո-

---

[76] *Положение армян в Турции ...*, стр. 241-253.
[77] Լեո, *Անցյալից*, էջ 35:
[78] *Братская помощь ...*, ч. II, стр. 17.
[79] Նույն տեղում:

ղի և բանտ ընկներ: Քուրդը հայի հանդեպ վայրագություն կատարելուց հետո տուն էր վերադառնում այն գիտակցությամբ, թե «այդ օրը բարի գործ է կատարել»:

Քուրդ ավազակապետ Մոստիգոյի հետ Դիլոնի զրույցից մի քաղվածք.

...«Հարց.— Ինձ պատմել են, որ դուք հսկայական թվով հայեր եք սպանել, փախցրել նրանց կանանց, հրդեհել եք նրանց գյուղերը...

Պատասխան.— (Արհամարհանքով) Դա ոչ մի ընդհանուր բան չունի իմ բանտարկության հետ: Ես հայերին թալանելու համար չէի պատժվի: Մենք բոլորս ենք այդ անում: Ես հազվադեպ եմ նրանց սպանել, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք դիմադրել են... Եթե ինձ կախեն, ապա այդ կանեն թուրքական պահակախտի վրա հարձակման ու թալանի, ինչպես նաև թուրք գնդապետի կնոջ բռնաբարության համար... Բայց ոչ երբեք հայերի համար: Նրանք ո՞վ են, որ ես տուժեմ: ...Մենք մեծ գործեր կատարեցինք, որոնք կզարմացնեին տերություններին: Մենք հարձակվեցինք գյուղերի վրա, սպանեցինք նրանց, ովքեր ի զորու էին մեզ սպանել, տներ թալանեցինք, դրամ զավթեցինք, ոչխարներ ու կանանց փախցրինք և ճանապարհորդների վրա հարձակվեցինք: Մեր գործերը մեծ ու խիզախ էին, և մարդիկ դրանց մասին շատ էին խոսում:

Լսելով այդ «մեծ գործերից» չատերի մասին, որոնցից մի քանիսն արժեցել են 50 մարդու կյանք՝ ես հարցրի.

— Որևէ հայ երբևիցե ձեզ դիմադրություն ցույց տվե՞լ է, երբ փախցնում էիք նրա անասունները, կնոջը...

— Ոչ հաճախ: Նրանք չեն կարող, քանի որ զենք չունեն և նրանց քաջ հայտնի է, որ եթե մեզանից մի քանիսին սպանեն, մյուս քրդերը մեր վրեժը կհանեն, այսինքն՝ հայերը ոչինչ չեն շահի: Երբ մենք նրանց սպանում ենք, ոչ ոք չի վրդովվում: Թուրքերը հայերին տանել չեն կարողանում, իսկ մենք նրանց հանդեպ թշնամություն չենք տածում: Մեզ լոկ փող և ավար է պետք, իսկ որոշ քրդեր ուզում են նաև զավթել նրանց հողերը, մինչդեռ թուրքերը տենչում են հայերի արյունը»[80]:

Վանից գրում են, որ պաշտոնատարների հրահրմամբ մի քուրդ հրդեհում է հայի դեզը: Վերջինս հետապնդում և վիրավորում է քրդին: Ոստիկանները այդ հային ձերբակալում են և հինգ օր հետո վերադարձնում դիակը: Իշխանությունների թելադրանքով սպանվում էին բոլոր այն տանուտերերը, որոնք «ինչ-որ կերպ պաշտպանում էին ժողովրդի շահերը»: Ավազակապետ Շաքիրը սպանեց չատախցի քաջ տանուտերերից մեկին՝ Մուխսի Սաքոյին: Կաճկանի ռեսը օրը ցերեկով սպանվեց գյուղացիների աչքի առաջ, դավադրությամբ սպանվեց Մելիք Աբրահամը, որը մարտնչում էր Մոկսի վանքերի ունեցվածքը թալանող քուրդ ավազակների դեմ:

80-90-ական թվականներին լայն տարածում ստացավ նաև հայերի հանդեպ վայրագություններով աչքի ընկած քուրդ աղաներին ու բեյերին պետական պաշտոններ տալը կամ պաշտոնում առաջ քաշելը: Մստո անունով մի քուրդ սպանում է Սասունի Շենիկ գյուղի տանուտեր Միքայելին: Գյուղից 15 կին գնում են Մուշ և պահանջում պատժել հանցագործին: Սակայն իշխանությունները հրաժարվում են այդ պահանջը կատարել, որովհետև սպանությունը կատարվել էր իրենց հանձնարարությամբ: Եվ պատահական չէ, որ երբ մի քանի օր անց նույն Մստոն նորից հարձակվեց չենիկցիների վրա և բախման ժամանակ սպանվեց, իշխանություններն անմիջապես գործի անցան: Ոստիկաններն ու բաշտկանցի քրդերը հարձակվեցին Գելիեգերման գյուղի վրա: Եզակի չէին փաստերը, երբ հայը պատժվում էր այս կամ այն քրդի անձնական վրեժխնդրության հետևանքով: 1892թ. փետրվարին Խնուսից «Հնչակ»-ին գրեցին. «Կառավարության կողմից խրախուսված քրդերն ամեն օր... անգթություններ են կատարում՝ աներևակայելի տանջանքների

[80] Նույն տեղում, էջ 24-29:

զոհ դարձնելով հայերին: Քրդերը հաճախ են հայերին հիշեցնում, թե «ձեր կյանքը կարճ է, առաջիկա տարին ձեր վերջին օրերն են»»: 1890թ. մարտի 2-ին պատրիարքարանում ստացված մի նամակում կարդում ենք. «Տառապալի վիճակ է...ամենօրյա երկրային պատուհաս... կոտոր-դուման ամենուրեք, սով ու սրածում»[81]:

«Սկսած 1876 թվից դժբախտությունների նոր ու նոր դռներ բացվեցին[82]...»:

Քուրդ աղա Սալիհ բեյն իր անունով թաքուն թաքու է անում Խիզանի Դարոնց գյուղի հայերի բոլոր հողերը: Բաղեչի դատարանը, հակառակ ակնհայտ փաստերի, վճիռ է կայացնում հօգուտ աղայի: «Դա դեռ բավական չէր, գործադրիչ պաշտոնյան... վաճառում է հայերի ամբողջ անասունը դատարանի ծախսերը փակելու համար»: Գյուղացիները հարկադրված լքում են գյուղերը: Խիզանի գավառի մի քանի հայկական գյուղեր չրջափակվում են քրդերի կողմից: «Աղաներն ու բեյերը, ովքեր վաղուց դիտավորություն ունեին այդ վայրերի հայերին բնաջնջելու և նրանց կալվածքներին տիրանալու, սկսեցին թալանի և այլ միջոցներով հյուծել հայերին: Նրանք կողոպտեցին Խոպունց գյուղի հարուստներին, թալանեցին Դարոնցի եկեղեցին, խոտի դեզեր հրդեհեցին, տներ կողոպտեցին, մի հղի կնոջ սաստիկ գանակոծեցին, մի ուրիշին առևանգեցին, տներ հրդեհեցին»[83]:

## 4. ՄՈՒՍԱ ԲԵՑԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՑՈՒՆԸ. ՀՈՒՍԵՑԻՆ ԱՂԱ

Հայ-քրդական հակամարտություն ստեղծելու սուլթանական քաղաքականության համար բնորոշ է քուրդ ավազակապետեր Մուսա բեյի և Հուսեյին աղայի հանդեպ Աբդուլ Համիդ 2-րդի վերաբերմունքը: «Վերջին ամիսներին հարավային Հայաստանում,– գրեցին եվրոպական թերթերը,– Մուսա բեկ ավազակապետն իր խմբով գործեց ամենակատաղի հարստահարություններ, որոնց զոհ դարձան բազմաթիվ հայեր իրենց ունեցվածքով»[84]: Մուսան սիրում էր հռետորել. «Ես աշիրեթի ցեղապետն եմ և մշտապես իմ տրամադրության տակ ունեմ 3000-4000 քուրդ: Հրաման եմ տալիս, և այդ քրդերը քանդում ու ավերում են»[85]:

Մուսան իրեն Տարոնի, մասնավորապես, Չխուրի չրջանի տերն ու տիրակալն էր համարում: Նա 35 հայկական գյուղ հրդեհեց, բազմաթիվ այլ վայրագություններ գործեց, սակայն սուլթանը, պատժելու փոխարեն, նրան բարձր աշխատավարձ նշանակեց: Արգավանք և Խարս գյուղերի տանուտերերը Մուսայի դեմ մի քանի գանգատներ գրեցին: Մուսան նրանցից մեկին՝ Օհանին, նետեց բուխարիկը, այրված դիակը դրեց Բաղեչի խճուղու վրա՝ հետևյալ մակագրությունով. «Ով Մուսա բեկի դեմ բողոքի, այս վիճակին կհասնի»:

Վկայում է մի քուրդ. «Հայտնի է, թե Մուսա բեկն ինչ է արել և ինչ սիրալիր ընդունելության է գտել կառավարության կողմից: Նրա հայրը՝ Միրզա բեյը, ևս մի գյուղ ամբողջությամբ այրեց... չարիքներ հասցրեց հայերին, և այդ ամենից հետո նրան տարան Պոլիս, որտեղ պատժի փոխարեն սիրալիր ընդունելության արժանացավ և փառքով հետ ուղարկվեց Մուշ: Այսպես չատերը կան: Մենք չատ բան ենք անում, բայց հյուրմեթը պատժելու փոխարեն մեզ ավելի է խրախուսում[86]»: Մուսան չարունակեց հոր «գործը»: Որտեղ երևում էր, այնտեղ անպակաս էին սպանությունը, կողոպուտն ու բռնաբարությունը: Մուսայի չարագործությունները սոսկալի ու արյունահեղ էին, կառավարու-

---

[81] ԳԱԹ, ֆ. Ազատյան Թ., Բ VII, գ. 52:
[82] Նույն տեղում, գ. 105:
[83] Նույն տեղում, գ. 2591:
[84] «Հնչակ», սեպտեմբեր, 1885:
[85] Նույն տեղում, 1890, թիվ 2:
[86] «Հնչակ», 1890, թիվ 3:

*թյունը ձևացնում էր, թե դրանք ոչ տեսել է և ոչ էլ դրանց մասին լսել, մինչդեռ «ինքը անոր օգնական է և կպաշտպանե»[87]: Պատմում է Մուստաֆա Նեդիմը. «Մուսա բեյը հայերին աչխատեցնում էր ինչպես գերիների: Հայերը համբերությամբ տանում էին բռնությունը, տառապանքն ու քաղցը: Սակայն մի անգամ առաջ եկավ պատվի խնդիր, որը եթե նույնիսկ հյուլեի չափ լիներ, հայերը չէին կարող հանդուրժել:*

*Նրանք անպատիվ ապրելուց պատվով մեռնելը նախամեծար էին համարում»[88]:*

*Մուսա բեյը սկսեց ձեռք գցել հայերի կանանց ու աղջիկներին: Նրա վայրագությունները լցրեցին տարոնահայության համբերության բաժակը, և երբ առևանգեց իր դեմ բողոքող գյուղապետի եղբոր աղջկան՝ Գյուլիզարին, սկսեց գանգատների անձրև տեղալ: Գործին անդրադարձան նաև եվրոպական մամուլն ու կառավարությունները: «Օգնության կոչեր ուղարկվեցին ամենուրեք,– շարունակում է Մ. Նեդիմը,– եվրոպական լրագրերին ու դեսպանատներին: Դեսպանատներն ու եվրոպական մամուլը ստիպեցին սուլթան Համիդին պարզելու իրողությունը: Մուսա բեյին հսկողության տակ Պոլիս բերեցին: Սակայն Պոլսում չէին ցանկանում նրան ճզմել հայերի համար. մինչև դատավարության սկսվելը նա հյուրընկալվեց Սկյուտարի կառավարիչ Բահրի փաշայի քեռի-քում»[89]:*

*Նա Պոլսում ամենուրեք, այդ թվում նաև սուլթանական պալատում, չքեղ ընդունելության էր արժանանում, մեծարվում որպես հերոս:*

*Նրա դատավարությանը մասնակցելու համար չուրջ 60 տարոնցիներ, «անասելի նեղություն կրելով ամբողջ 60 օր ոտով ճանապարհ անցնելուց հետո, մի-մի սև հաց իրենց միակ կերակուր ունենալով», Կ. Պոլիս հասան ամենաողորմելի վիճակում, «բոբիկ, մերկ, պատառոտված չորերով, խեղճ զինվորի նման մախաղը ուսներին»[90]: Պոլսում մչեցիները ոչ միայն մնացին բախտի քմահաճույքին, այլև հալածվում էին: «Ներանցից մի քահանա լալով հայտնեց իր որդու՝ Գասպարի, չարաչար հոշոտվելը Մուսայի կողմից: Հայտնեց նաև 20 երիտասարդ հայերի անունները, որոնք նույնպես սպանվել էին Մուսայի չարագործ ձեռքով»[91]:*

*Սուլթանը, սակայն, դեմ էր Մուսային դատելուն և հանձնարարեց դատավարությունը վերածել ֆարսի ու նրան ազատ արձակել: Դատարանն, իհարկե, կատարեց Փադիշահի կամքը: Եվրոպական թերթերը գրեցին. «Մուսան այժմ դատվում է: Նրա փաստաբանը, խոսք չկա, կառավարությունն է, քանի որ ավազակի գործակիցն էլ նա է: Ուզո՞ւմ եք դրա ապացույցը: Ահա, Մուսա բեյը սպառնացել է Բ. Դուռնը, թե եթե ինքը դատապարտվի, կհրապարակի այն բոլոր նամակները, որոնցով նահանգապետները նրան դրդում էին, մղում այդ արշավանքներին հայերի դեմ հօգուտ իրենց ու Մուսայի չահերի»[92]:*

*Մի ուրիշ ապացույց: Բ. Դուռը անգլիական լրագրերից մեկին հեռագրեց, թե Մուսան անմեղ է, բայց նրա վրա այնքան մեղադրանքներ են բարդված, որ «հարկադրված կլինի փախչել»: Այդ նույն ժամանակ նրա եղբայրը՝ Ջազոն, Մուսայի վրեժն էր լուծում՝ կոտորում էր հայերին, ավերում նրանց գյուղերը: Վանի վալի Խալիլը ստիպում էր հայերին հեռագիր ստորագրել Բ. Դռանը, թե հայերը գոհ են իրենց վիճակից: Ով հրաժարվում էր ստորագրելուց, պատժվում էր և նրա փոխարեն ինքը՝ Խալիլն էր «մատ կպցնում»: Ջստորագրողներից վեց հոգի այդ կեղծիքի դեմ բողոք ուղարկեցին Բ. Դուռ, բայց պատասխան ստանալու փոխարեն, բանտ նետվեցին:*

---

[87] Նույն տեղում, 1889, թիվ 3:
[88] Նեդիմ Մ., Հայ եղեռնն ու իմ վկայությունները ..., էջ 40:
[89] Նույն տեղում, էջ 41:
[90] «Հնչակ», 1889 թիվ 3:
[91] Նույն տեղում:
[92] Նույն տեղում:

Մուսայի դատավարությանը ներկա էին մեծ տերությունների դեսպաններ, մամուլի ներկայացուցիչներ: Ադկոնք գյուղի բնակիչ Մ. Հովհաննիսյանը դատարանում ցուցմունք տվեց, որ Մուսան հրդեհել էր իր կալն ու ամբարը, հորն ու եղբորը կապել է սյունին ու ծեծել, պահանջել 20 ոսկի: Ջրաղացպանի կինը պատմեց, թե Մուսան ինչպես է սպանել իր ամուսնուն. եղան բազում նման ցուցմունքներ ու վկայություններ: Բայց ապարդյուն: 1889թ. նոյեմբերի 21-ին արձակված դատավճռով Մուսան արդարացվեց, իսկ հայերին անվանեցին զրպարտիչներ: Մուսային թույլ չտվեցին վերադառնալ Տարոն, այլ պահեցին Կ. Պոլսում, որ բարդություններ չառաջանային: "Tribune" թերթը 1894թ. մարտի 1-ին գրեց. «Զարագործ Մուսա բեյին թուրքական կառավարությունը թույլ տվեց չարունակելու վայրագությունները հայկական գյուղերում... և դա չարունակվեց այնքան ժամանակ, քանի դեռ այդ արարքները ծայրաստիճանի սարսափելի չէին դարձել: Եվրոպայի ճնշման տակ նրան Կ. Պոլիս կանչեցին, որտեղ ապրեց որպես սուլթանի հյուր»:

Դատից առաջ սուլթանը անգլիական դեսպանին ասաց, թե Մուսա բեյն անմեղ է: «Այս արդեն նշանակում է, թե հրամայված է դատարանին արդարացնել Մշո դաշտի ժանտախտ քուրդ բեյին... դատարանը մերժեց քննության առնել (Մուսայի դեմ հարուցված ամբաստանություններից) յոթը, մնացին երեքը: Դատախազը փոխեց իր դերը և դարձավ ոճրագործի պաշտպանը: Եվ զարմացած աչխարհի առջև համիդյան արդարադատությունը միանգամայն անմեղ հռչակեց մարդասպանին, սրտեր կրակողին, կույսեր բռնաբարողին...»[93]: «Մի առավոտ,– գրում է Մ. Նեդիմը,– պալատ հասավ Մուսա բեյի փախուստի լուրը: Վախենալով Եվրոպայից՝ Աբդուլ Համիդը հուզվեց: Անմիջապես բոլոր կողմերը հրաման ուղարկվեց նրան ձերբակալելու համար... Վերջապես Մուսային ձեռք գցեցին Էնկյուրիի կուսակալությունում: Պոլիս բերվեց: Քննությունով ապացուցվեց, որ նրա փախուստը կազմակերպվել էր մեծ կաշառքով: Մուսա բեյը՝ Թաիֆե, իսկ Բահրի փաշան՝ Ալբանայի Փրիշթինա գավառ աքսորվեցին: Տարօրինակ է, որ քիչ անց Բահրի փաշան իր աքսորավայր Փրիշթինայի մութեսարիֆ և ապա Ալբանիայի կուսակալ նշանակվեց»[94]: Մուսան 1896թ. Վասպուրականում «500-ից ավելի հայերի իր ձեռքով չաղգամի պես բրդեց և նրանց արյունը խմեց: Նա քրդերին կոչ էր անում. «Սպանեցեք այդ գյավուրներին: Ով չսպանի, նա իսլամ չէ»»[95]: Մուսայի հանցագործությունների մանրամասն չարադրանքին կարելի է հանդիպել ժամանակի մամուլի էջերում: "С. Петербургские ведомости"-ն գրեց. «Այս բռնաբարողն ու ավազակը... հրդեհեց մի քանի հայկական գյուղ, ողջ-ողջ կրակի մեջ խորովեց բազմաթիվ խաղաղ հայ, բռնաբարեց կանանց և կտրեց բողոքական միսիոներների քթերն ու ականջները»[96]:

1894թ. Կ. Պոլսում ԱՄՆ դեսպանը հուշագիր ներկայացրեց Բ. Դռանը այն մասին, որ ամերիկացի ճանապարհորդներ Քնափին ու Ռեյնոլդը «գիշերելու համար կանգ են առել մի տանը, որտեղ այդ ժամանակ գտնվում էր նաև Մուսա բեյը: Ամերիկացիք նրան սուրճ չեն առաջարկել, և դա պատճառ է հանդիսացել, որ վերջինս իր խմբով հարձակվի ճանապարհորդների վրա: Քնափին գավազաններով այնքան են հարվածել, մինչև հոգվել են, որ մեռած է: Ինքը Մուսան սրի հարվածով Ռեյնոլդին մարմնական վնաս է հասցրել, ամերիկացիներին թոկերով կապել են ու նետել մացառների մեջ»[97]:

Քանի որ Գյուլիզարի առևանգումը բնութագրական է քրդերի վարքագծի համար, ներկայացնում ենք մի քանի հատվածներ նրա հուշագրությունից, որ լույս է տեսել Փարիզում:

---

[93] Լեո, Անցյալից, էջ 57-58:
[94] Նեդիմ Մ., նշվ. աշխ., էջ 43:
[95] «Դրոշակ», 1902, թիվ 9:
[96] «Մուրճ», 1894, թիվ 11-12:
[97] Положение армян в Турции ..., стр. 315-317.

...«Մաղկազարդի երեքշաբթին էր, երբ անօրեն Մուսա բեյը եկավ մեր տան վրա: Մենք քնած էինք, երբ հրացանների ձայնն աչխարհ բռնեց... Մուսա բեյը, Ըմբըր բեկը և Ջազոն պատուհանից տեսնում են պապիս, որը պառկած էր և կարծում են, թե իմ հորեղբայր Միրոն է: Երեք թվանք իրար հետևից արձակում են, մեկը կպնում է սրտին... և տեղն ու տեղը մեռնում է: ...Մեր մարդիկ երբ իմացան, որ ջոջ պապը խփված է, դուրս ելան ու տեսան, որ 30 մարդ դուռն են բռնել ու թվանքով զարկում են մերոնց: 15 հոգի էլ երդիկից են ներս խփում, 40-50 հոգի էլ տանիքից զարկում են գյուղի մեջ, որ մարդ չգա հավարի:

...Մուսա բեկը, Ըմբըր բեկը և Ջազոն մեր տան դուռը կոտրեցին, երեխաներն այս ու այն կողմ փախան: Ավազակները ներս մտան և տեսան, որ տանը մարդ չկա: Ես փախել էի մեր քեռչքը և մերկ էի: ...Ինձ բռնեցին: Քույրս կողքիս բղավում էր... Ձեռք գցեցին նրա մազերին, սակայն նա պոկվեց ու ընկավ թոնիրը: Ես բղավեցի ու բռնեցի Միրոյի կնոջ փեչից: Նրան էլ ինձ հետ բռնեցին, մեր բերանները փակեցին, դուրս հանեցին ու տարան: Միրոյի կինը շատ էր լալիս ու նրան խփեցին Ս. Սարգիս եկեղեցու մոտ, քաչկռտեցին այնպես, որ մի ձեռքը կոտրվեց, նրան այլևս իրենց հետ տանել չէին կարող և թողեցին այնտեղ:

Գնացինք, հասանք Տախտակներ՝ Մուսա բեյի քեռչքը... Համայիլը դրեց գետնին և պահանջեց յուրայիններին երդվել. «Էս Ղուրանը ձեր պատիժը տա, թե որ ճիշտ չասեք, ինչ եք բերել»: Երդվեցին... և ինչ բերել էին, դրեցին նրա առաջ... ավարը բաժանեց: Ամեն մեկն իր բաժինը վերցրեց, դրեց գլխի տակ... Մուսան մոտս եկավ, դոշակը գցեց կողքիս, արծաթե թուրն ու ֆրչակները՝ գլխի տակ... «Գլուխս քորի»: Ես լացեցի ու ձեռք չտվեցի..., նա ջղայնացավ... Ձեռքը գցեց վզովս, աչքս կծեց: Ես բղավեցի... Ասաց. «Կողքիցս չգնաս, կսպանեմ»: ...Երեկոյան տարավ Արսակներ մի քրդի տուն և հարևաններին ասաց. «Սրան լողացրեք: Կամ ինձ հետ եմ ամուսնացնելու կամ եղբորս»... Հաջորդ օրը եկավ Ջազոն: Ինձ տարան նրա հետ ամուսնացնելու... Մի օր ինձ տեսան աղոթելիս և Մեյրին (Մուսայի քույրը) այնպես ծեծեց, որ աչքս սպիտակեց:...

Քրդերին լուր հասավ, որ Միրոն իմ հարցով գնացել է Մուշ: Նրանք ձեռներս ու ոտներս կապեցին ու տարան սար...Մի օր լուսամուտից տեսա, որ անցավ Հաջի Դայիրը: Ինձ նկատեց... եկան կանչեցին... Տարան, որ թաքցնեն մաղազեն... Հասա աստիճանների գլուխը և Հաջի Դայիրն ասաց. «Սա՞ է հայի աղջիկը»: Քրդերը պատասխանեցին. «Ոչ»: Իսկ ես ասացի. «Ես եմ»: ...Ասաց. «Ես քեզ համար եմ եկել: Դու հա՞յ ես, թե քուրդ»: Պատասխանեցի. «Ես քուրդ եմ», «Քեզ տանելու եմ հյուքմեթ...»: Լուսադեմին... Հաջի Դայիրի հետ ճամփա ընկանք... Երբ քաղաք հասանք, ինձ տարան չեյխ Ամինի տունը... եկավ մայրս երկու սպայի հետ... Ինձ որ տեսավ, իրեն գցեց վզովս: Նրա ականջին ասացի. «Նանե, չվախենաս, ես քրիստոնյա եմ, հայ եմ»: Մայրս՝ «Լաո, ինձ հայհոյիր, որ գլխի չընկնեն»: «Վալլահ, չեմ կարող»: Բայց ասացի. «Ինչո՞ւ ես ընկել իմ հետևից, հարյուր տարի էլ անցնի, ես քո աղջիկը չեմ»: Մայրս գնաց, իսկ ինձ ասացին. «Ապրես, շատ լավ արեցիր...»: (Հյուքմեթում) Վալին ինձ՝ թե «խոստովանիր»: Պատասխանեցի՝ «Ի՞նչ խոսեմ, այստեղ հայ չկա... հայերն ինչո՞ւ են իմ ետևից ման գալիս»... «Քեզ զո-ռո՞վ են տարել»: «Ջոռով են տարել, բայց իմ սիրտը դարձել է»: Այդ պահին մորս ձայնը լսվեց: Դուռը փակեցին, որ ներս չմտնի: Ես թե՝ «Ինքն իր տնից, ես իմ տնից: Թողեք ներս գա»: Դուռը բացեցին, մայրս մտավ: Ինձ էլ փաթաթել ու դրել էին քուրսու վրա... Մորս որ տեսա, թռա, կանգնեցի ու ասացի. «Վալլա, բիլլա, թալլա, ես հայ եմ և հայ էլ մեռնելու եմ... երկիրն էլ գիտի, աշխարհն էլ գիտի, որ մարդ է սպանվել, տուն է թալանվել, ինձ մերկ տարել են: Այժմ ես հայ եմ, ինձ քերթեք, սպանեք էլ, ես հայ եմ և իմ կրոնքից չեմ հեռանա»»:

* * *

*Թուրք մի այլ ավազակապետ, պետական պաշտոնատար Հուսեյին աղան նույնպես թալանում էր հայերին և թալանածը կիսում նահանգապետի և մյուս պաշտոնատարների հետ: Կարինում անգլիական հյուպատոս Հեմփսընը, նկարագրելով այդ ավազակի բազում վայրագությունները, գրում է, թե իր բերած փաստերը «ոչ թե ինչ-որ արտաքո կարգի երևույթ են, այլ հայկական վիլայեթների հայության դժնդակ պայմանների առօրյա պատկերը»[98]:*

*Հուսեյին աղան ահաբեկված վիճակի մեջ էր պահում Ալաշկերտի բնակչությանը: Նրա սարսափից Բաթնոսի հայերը 1890-ին գաղթեցին Ղարաքիլիսե: Անգամ մահմեդականներն այնքան էին զայրացել նրա արարքներից, որ չեյխ Նուրին գանգատվեց Էրզրումի վալուն: Դրանից հետո Հուսեյինի ավազակները սպանեցին այդ չեյխին և այնպես վախեցրին նրա կնոջը, որ մեռավ: 1890թ. նա Բաթնոսից փախցրեց հինգ հայ աղջիկ, բնակչությունից հավաքեց 300 ֆունտ տուգանք, կազմակերպեց Այնթապի 21 գյուղերի թալանը: Կայմակամի կամ փաշայի պարտականություն կատարող այդ սրիկան առանց դատ ու դատաստանի սպառնում էր բոլոր նրանց, ովքեր ի վիճակի չէին հարկ վճարել: «Պաշտոնական» մի գործողության ընթացքում նա հափշտակեց 1000 ոչխար, 14 գոմեշ, հայից փախցրած ձին նվեր ուղարկեց Էրզրումի դատավորին: Տասնյակ հայեր զոհ գնացին նրա հարձակումներին:*

*Հուսեյինի հիմնական նստավայրը Բուլանըխն էր, հայդարանլի քրդերի ցեղապետերից մեկն էր: Նա փաստորեն հայերից դատարկեց Արծկե գավառը: Հուսեյինը բանտում էր, երբ սկսվեցին 1894թ. իրադարձությունները: Նրան բանտից հանեցին ու ուղարկեցին Սասունի կոտորածներին մասնակցելու, ինչը կատարեց առանձնակի «բարեխղճությամբ», որի համար սուլթանից չնորհակալական նամակ ստացավ: Կոտորածից վերադառնալիս, նա Վանում արժանացավ վալու չքեղ ընդունելությանը: Դրա փոխարեն Բահրին բաժին հանեց Սասունում թալանված հարստություններից և գերեվարված ութ հայ աղջիկների: Ջարագործին վերջապես Վանում ձերբակալեցին: Նա մեղադրվում էր 9 գյուղ հրդեհելու, 10 մարդ սպանելու, 11 մարդու ձեռք, քիթ, ականջ կտրելու, 2600 ոչխար հափշտակելու և բազում այլ հանցագործություններ համար: Սակայն մի քանի ամիս անց կարինի վալու չանքերով ոչ միայն բանտից ազատվում է, այլև վերականգնվում Բաթնոսի մյուդիրի պաշտոնում: Նա հրավիրվում է մայրաքաղաք, չքեղ ընդունելության արժանանում, սուլթանից չքանչան և փաշայի տիտղոս ստանում և նշանակվում գեներալ-բրիգադիրի պաշտոնում: Անգլիայի կառավարությունը հանճարարում է իր դիվանագետներից մեկին «համոզելու մեծ վեզիրին... պաշտոնից հեռացնելու այդ սրիկային»:*

*Ամբողջ Արևմտյան Հայաստանն էր Հուսեյինի և Մուսայի նման ավազակապետերի կրնկի տակ: «Թվում է, թե որոշ օկրուգներում,— ասված է անգլիական դեսպանի հուշագրում,— միակ ու իրականում գոյություն ունեցող իշխանությունը աղաների ու քուրդ բեյերի իշխանությունն է: Նրանք այդ իշխանությունից օգտվում են իրենց տրամադրության տակ գտնվող դժբախտ քրիստոնյաներին թալանելու, բռնաբարելու և ճնշելու համար...»[99]:*

*Անգլիական մի այլ ներկայացուցիչ Ֆլեյֆոնը, Մուշում լինելուց հետո, գրեց, որ ինքն անձամբ ականատես եղավ այն սարսափին, որ քրիստոնյա բնակչությունը տածում էր քրդերի հանդեպ: Նա բերում է հետևյալ օրինակը. «Միրզա բեկը հրամայեց հայկական գյուղերից մեկի գյուղապետին ծեծել, որովհետև նա այդ պաշտոնին կարգվել էր ա-*

---

[98] *Положение армян в Турции ...*, стр. 167.

[99] *Положение армян в Турции ...*, стр. 59.

*ռանց իր համաձայնության»[100]: Ահա այս վիճակը նկատի ունենալով էր, որ «Մշակ»-ը գրում է. «Պետք է միայն մտածել, թե ինչպես անել, որ մինչև եկող տարի Հայաստանի հողի վրա գոնե մի տկլոր, բայց կենդանի հայ մնա»[101]:*

*Մուսայի և Հուսեյինի հանդեպ սուլթանի սիրալիրության նպատակն էր՝ քրդերին հասկացնել. «Հայերի հետ վարվեք ինչպես ցանկանաք: Դրա համար չեք պատժվի»:*

## 5. ՀԱՄԻԴԻԵ ՀԵԾԵԼԱԶՈՐԱՑԻՆ ԳՆԴԵՐԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ

*Աբդուլ Համիդի հայաջինջ քաղաքականության իրականացման գործում վիթխարի դեր խաղացին Համիդիե հեծելագնդերը: Սուլթանը Շաքիրի գլխավորությամբ մի հանճնաժողով ստեղծեց 20 ոչ կանոնավոր հեծելագնդեր կազմակերպելու ծրագիր մշակելու համար: Շաքիրն անզուսպ հայատյաց էր, եղել էր Օսմանյան կայսրության դեսպանը Պետերբուրգում, քաջատեղյակ կոզակային ուժերի կառուցվածքին: Հանճնաժողովը 1891թ. կեսերին ծրագիրը ներկայացրեց: Սակայն արդեն 1890թ. երկրորդ կեսին 4-րդ բանակի հրամանատար Մեհմեդ Զեքին չրջում էր քրդաբնակ գավառներում, այցելում աշիրեթություններ և կարողացավ ստանալ ցեղապետերի համաձայնությունը՝ ռուսական սահմանի երկայնքով հեծելազորային ոչ կանոնավոր գնդեր ստեղծելու վերաբերյալ: Նույն տարվա սեպտեմբերին անցկացվեց համիդիե գնդերի զինվորագրությունը: «Քրդական աշիրեթությունները,– գրում է «Հնչակ»-ը,– բոլոր կողմերից եկան և լցվեցին հայկական գյուղերը: Զինվորագրությունը տևեց մեկ ամիս, այդ ընացքում նրանք բոլորը ձրի ապրեցին գյուղացիների հաշվին, որի ծախսը կազմեց 15 հազար դահեկան»[102]:*

*Համիդիեն ստեղծվում էր քրդական ցեղերի և աշիրեթների հիմքի վրա, ավելի ճիշտ, այդ ցեղերն ու աշիրեթներն ուղղակի վերածվում էին հեծյալ գնդերի, իսկ նրանց առաջնորդները՝ գնդի հրամկազմի: Գնդի բանակատեղին տվյալ աշիրեթության բնակավայրը կամ կացարանն էր: Դրանք ձևավորվեցին Արևմտյան Հայաստանի ամենատարբեր մասերում այն հաշվով, որ կարողանային վերահսկողության տակ առնել հայ բնակչությանը: Ցուրաքանչյուր քուրդ ընտանիք պարտավոր էր համիդիե գնդերին տրամադրել 17 տարին լրացած առնվազն մեկ հոգու՝ ձիով ու հանդերձանքով: Ի պատիվ սուլթանի, այդ գնդերը կոչվեցին համիդիե, որի զինյալներն իրենց գլխարկներին կրում էին թիթեղյա նշան՝ «Սուլթան Համիդ» մակագրությամբ: «Զորքում գրանցված քրդերը թողնվել են իրենց հայրենի վայրերում, ազատված են ծառայություններից, մատակարարվում են զենքով, օժտված են դիվանագիտական անձեռնմխելիությամբ և ապահովված են ռոճիկով»[103]:*

*Համիդիե գնդերի ստեղծման գործընթացը մեծ հաջողություն ունեցավ: 20-ի փոխարեն դրանց թիվը հասավ 73-ի, որոնցից յուրաքանչյուրում՝ 400-600 մարդ: Համիդիենների ընդհանուր թիվը հասավ 100 հազարի: Նման հաջողությունն ամենից առաջ բացատրվում էր նրանով, որ համիդիեականներին թուլլատրվում էր ոչ միայն իրենց առօրյա կարիքները հոգալ հայերի հաշվին, այլև տիրանալ նրանց հողերին: Համիդիեականներն ազատված էին հարկերից:*

*Այն պայմաններում, երբ համիդիե յուրաքանչյուր գունդ ձրի ստանում էր 150 մարտինի հրացան իբր զինավարժություններին, բայց իրականում զինվելու համար, ապա հանձինս այդ գնդերի՝ սուլթանը ձևավորեց լավ զինված ավազակախմբեր հայ ազգաբնակչությանը հաշվեհարդարի ենթարկելու համար: 1891թ. գարնանը գնդերի հրամանատարները, այսինքն՝ ցեղապետերը հրավիրվեցին Կ. Պոլիս: Երբ նրանք Տրապիզոն հասան, «սուլթանը կրկին ու կրկին իրադեով հանճնարարում էր, որ հատուկ չոգենավով...*

---

[100] Նույն տեղում, էջ 61:
[101] «Մշակ», 1880, թիվ 66:
[102] «Հնչակ», 1895, թիվ 7:
[103] *Братская помощь ...*, стр.13.

*նրանց առուք-փառուք Պոլիս բերեն, նրանց Հանգստի, սննդի և բոլոր կարիքներն իր անձնական միջոցներով հոգան և ոչինչ չխնայեն: Կայսերական թիկնապահները «Դիանա» շոգենավով ընդառաջ են ուղարկվում այդ երախտավոր ցեղապետերին, նրանց արժանավայել մեծարելու երկրաչեն ծառայությունների համար, ովքեր մինչ այդ կիսապաշտոնական միջոցով հայ ժողովրդի արյունն էին քամել և պատրաստ են հետագայում նույնն անել ի պաշտոնե և ավելի եռանդուն: Մեկ շաբաթից ավելի է, որ եկել են մայրաքաղաք և չրջում են ամենայն գոռոզությամբ: Քրդական զգեստներ հագած, մեկական սրով ու խենչալով զինված այդ հեծելազորայինները, հետները մի-մի փոլիս ընկերացած, կառքերով չրջում են քաղաքի զանազան մասերում, հյուրասիրվում են այնպես, ինչպես Ճապոնիայի հյուրերը»*[104]:

*Սուլթանը նրանց անձամբ ընդունեց, չքանշաններ ու զինվորական կոչումներ չնորհեց: Իրականում, գրում է ժամանակակիցը, «այդ նշանները բաց ֆերման են թագավորից՝ հայերին իրենց ուզած ձևով թալանելու ու մորթելու»*[105]:

*Պոլսից վերադառնալիս՝ նրանք Բայբուրդի չրջանում լրիվ թալանում են արտագնա աչխատանքից վերադարձող հայերին: Վերջիններս բողոքում են վալուն: Սակայն՝ անարդյունք՝ համիդիե հրամանատարներին պատժելը վեր էր քաղաքացիական իշխանությունների իրավասություններից: Մ. Մաքքոլը գրում է. « Քրդերը խստորեն պահպանում են ցեղային կազմակերպությունը, իրենց չեխերի հանդեպ մնալով հպատակի կարգավիճակում: Վերջիններից մի քանիսը մինչև օրս էլ հզոր են ու հարուստ և միմյանց դեմ եղբայրասպան դաժան կռիվներ են մղում: Եթե օսմանյան կառավարությունը որոչի նրանց խորտակել ու զինաթափել, ոչ մի րոպե ընդդիմանալ չեն կարող: Սակայն... նորին մեծությունը քուրդ ցեղապետերին հրավիրեց մայրաքաղաք, նրանց պարգևանշաններ, դրոշներ, զինվորական արտահագուստներ և կոչումներ տվեց ու հետ ուղարկեց, որպեսզի իրենց ցեղերին միավորեն հեծյալ գնդերում: Նրան հաճելի էր դրանց անվանել սեփական անունով՝ համիդիե: Այս միջոցով արհեստականորեն խրախուսելով քրդերի ցեղային հպարտությունը՝ սուլթանը կազմակերպեց մի ուժ, որը կոչված էր խաղաղ պայմաններում խորտակել հայերի ոգին ու առաջընթացը և դրա հետ միասին... պատնեչ դառնալ ռուսական արշավանքների առաջին ալիքների դեմ»*[106]: *Էրզրումում անգլիական հյուպատոսը 1891թ. փետրվարի 28-ին գրում է. «...քրդերին զինելն ընդունվել է մեծ տագնապով: Նրանցից չատերը բացահայտ հայտարարում են, որ... իրենք կոչված են հայերին սանձելու և հավաստիացում են ստացել, որ քրիստոնյաներին ճնշելու համար դատական պատասխանատվության չեն ենթարկվի»*[107]: *Վ. Գլադսթոնի խոսքով՝ «Սուլթանը, կ. Պոլսի կառավարությունը ճևականորեն հավաքագրեցին ռազմական կարգապահությունից անիրազեկ մարդկանց, կազմեցին ոչ կանոնավոր հեծելազորային գնդեր և նրանց ազատություն տվեցին՝ լիազորելով սուլթանական զինվորների դերում քայքայել ու ոչնչացնել հայ բնակչությանը»*[108]:

*Այդ գնդերի ստեղծումը, աչիրեթապետերին տրված արտոնությունները, դավանանքի տարբերության բացարճակացումը ստեղծեցին առճակատում, որը չատ էր հեչտացնում քրդերի միջոցով հայերին բնաչնչելու սուլթանական ծրագրի կենսագործումը: Համիդիեի կազմակերպումից հետո քրդերը ավելի ագրեսիվ դարճան: Հայերը քաչ գիտակցում էին, որ համիդիե գնդերը «իրենց չարդելու նպատակով էին ստեղծվել»: Չեքին, գնդերի ճևավորումն ավարտելուց հետո, Կուչտյան գյուղում զորահանդես կազմակերպեց: «Բոլորը հերթով երդվեցին Կորանի վրա, և նրանց գաղտնի հրահանգներ տրվեցին*

---

[104] «Հնչակ», 1891, թիվ 6:
[105] Նույն տեղում, թիվ 10:
[106] *Положение армян в Турции ...*, стр. 256-257.
[107] Նույն տեղում, էջ 164:
[108] «Երկրի ձայն», 1906, թիվ 6:

հայերի վերաբերմամբ»[109]: Վերջիններիի կյանքը վերածվեց կատարյալ դժոխքի, նրանց հետագա գոյատևումը դարձավ անհնար: Լինչի խոսքերով, Համիդիե գնդերը կայսրության բարձրագույն չինովնիկների առանձնահատուկ հոգատարության առարկան ու մշտական տանջանքն էին, չոյում էին Աբդուլ Համիդի փառամոլությունը, միաժամանակ քանդում էին վարչակարգի հիմքերը: Պաշտոնական շրջաններում Համիդիեին վերաբերվում էին արհամարհանքով, սակայն նաև որոշակի անհանգստությամբ: Համիդիեն ստեղծվեց անգլիացիների խորհրդով, անգլիական յոմենռիի և ռուսական կոզակների օրինակով: Թուրքական բանակի ենթասպաները՝ յուզբաշիները, Համիդիե գրված ցեղերին տեղերում սովորեցնում էին ռազմական գործ: Այդ գնդերին մատակարարելու համար մի շարք վայրերում ստեղծվեցին զենքի պահեստներ: Դեպի նահանգային կենտրոններ ձգվեցին սայլերի չարասյուները՝ բեռնված զինվորական համազգեստներով:

Գնդերի ճնշող մեծամասնությունը կազմված էր քրդերից, սակայն այդպիսիները ստեղծվեցին նաև քոչվոր և կիսաքոչվոր այլ ցեղերից: Օրինակ, Ղարաքիլիսեի կազայում ստեղծված Համիդիե երեք գնդերից երկուսը քրդական զիլանլի ցեղից էին, իսկ երրորդը՝ կարապափախներից, որոնք այդտեղ էին տարվել Անդրկովկասից և ազգակից էին կովկասաթաթարներին: Կազայում կարապափախների ութ գյուղերից հավաքագրվեց 800 հոգանոց գունդ և «նրանցից ոչ պակաս, քան 650-ի ձիերի վրա զինվորական նշան կար»: Հետագայում Համիդիե գնդեր կազմակերպվեցին նաև չերքեզներից[110]: Թե ովքեր էին Համիդիե գնդերի ղեկավարները, կարելի է ցույց տալ այս գնդերից մեկի հրամանատար, «դեմքի խայտառակ գծերով» Ալի բեյի օրինակով. ամենասովորական ավազակ: Գործում էր Ղարաքիլիսե-Վան գծի վրա, որն «Ասիական Թուրքիայի ամենավայրենի մասն էր»[111]: Ղարաքիլիսեի Համիդիեներին սպասարկելու համար հատուկ թեյարան էր կառուցվել, որի անունը «խեղճ հայերն արտասանում էին սարսափով»: Վանում Համիդիեների գործունեության մասին Լինչը գրում է. «Բնության կողմից չռայլություն պարգևած այս տարածքում քրդերն ամուր բույն էին հյուսել և դարձել էին ահավոր քաղցկեղ, որն արմատախիլ էր անում հողագործությունը և կազմալուծում առևտուրը...»: Տարոնի Ավդի փոքրիկ գյուղում Լինչը հանդիպում է թուրք յուզբաշու, որը եկել էր Համիդիե կազմակերպելու և «դառնորեն անիծում էր իր բախտը»:

Քյոշք քրդաբնակ գյուղում Համիդիե ջոկատը «ամեն րոպե պատրաստ էր մարտի: Բացի դանակներից, յուրաքանչյուրն ուներ հրացան և փամփշտակալ՝ ամրացված կրծքին: Գյուղի 40 տնից 6-ը հայ էր. «Պատկերացրեք այս խեղճերի վիճակը թշնամու որջում»: Վանա լճի ափին գտնվող Հակունց գյուղում Համիդիե մի քանի գունդ կար: «Համիդիեների հավաքագրումը ուղեկցվում էր սովորական երևույթով՝ օրինականության ամբողջական անկմամբ: Թալանը կատարվում էր կայմակամի աչքի առաջ, իսկ գողությունը հանցագործություն չէր համարվում»[112]:

Մշո սանջակում գործում էին Համիդիե 36, իսկ Մանազկերտի կազայում՝ 4 գունդ: Հասնանցի քրդերը ստեղծել էին հինգ Համիդիե գունդ: Ամեն տարի ապրիլին կազմակերպվում էր այդ գնդերի ուսումնական հավաք: «Բասենից մինչև Վանա լիճ ընկած մեծ հարթավայրը ավերվում էր քրդական ավազակախմբերի կողմից... Էրզրումում բազում պատմություններ էին շրջում (հայ) գյուղացիների վրա բացահայտ հարձակումների մասին: Կառավարությանը դիմեցին օգնության խնդրանքով, չնայած չհամարձակվեցին իրենց թալանողներն անվանելու քրդեր, այլ պարզապես կոչեցին ավազակներ: Բոլորին հայտնի էր, որ այդ ավազակախմբերի ղեկավարները Համիդիե սպաներն էին՝ Թեն-քելիս (Թիթեղյա) մարդիկ, ինչպես նրանց անվանում էին պղնձյա նշանների համար»[113]:

---

[109] Նույն տեղում:
[110] ЦГВИАР, ф. ВУА. д. 478.
[111] Линч Г., նշվ. աշխ., էջ 9-10:
[112] Նույն տեղում, էջ 33:
[113] Նույն տեղում, էջ 279:

Այս բոլորի հետևանքով հայերն արտագաղթում էին «աներևակայելի չտապղակա-նությամբ: Ինուսից 10 հազար հայ փախավ Ռուսաստան»: «Ցանկացած երկրում նման վայրագությունները ժողովրդին ոտի կհանեին,– գտնում է Լինչը,– սակայն Ասիական Թուրքիայի բնակչությունը, չնայած կրոնական խժդժություններին, աշխարհում ամե-նախոնարհներից էր: Պատմությունները, թե հայերն ու մահմեդականները իրարու կո-կորդ են բռնում, զազրախոսություն են»[114]:

Հայկական գյուղերի վրա հարձակումները քրդերն արդարացնում էին օթևանելու իրենց երբեմնի իրավունքով: Նրանք իրենց հարևաններից հայերին համարում էին «ա-մենավտանգավորները»: Իրականությունն այն էր, որ «խիզախ քրդերը» հարձակվում էին՝ ուսերին գցած ռուսական հրացան և կրծքներին փամփշտաշարեր (պատրոնդաշ), իսկ նրանց զոհերը կառավարության դաժան և լկտի որոշմամբ զրկված էին որևէ զենք կրելու իրավունքից: Երբ քրդին բռնում էին հանցագործության վայրում, նա արհամար-հանքով մերժում էր ներկայանալ քաղաքացիական դատարան և պահանջում, որ իրեն, որպես համիդիեի չարքային, դատեին սեփական հրամանատարները»[115]:

Իհարկե, կառավարությունն ի զորու էր ոստիկանական միջոցներով այս վայրագու-թյունների առաջն առնել, սակայն ձեռնտու չէր: «1891-ին,– գրում է Է. Դիլոնը,– Բ. Դուբը, երկյուղելով Հայաստանում խոստացված բարենորոգումների իրականացման հետևանքով իր համար առաջացող խոշոր դժվարություններից և հնարավոր պատերազ-մի դեպքում Ռուսաստանի սահմանամերձ քրիստոնյաների թշնամությունից, որոշեց մի կրակոցով երկու նապաստակ խփել և կազմակերպեց այսպես կոչված համիդիե հեծելա-զոր... Մրագրի նպատակն էր՝ հայերին դուրս մղել սահմանամերձ հողերից... և նրանց փոխարինել մահմեդականներով, որպեսզի բոլոր հինգ նահանգներում հայերի թիվն այն-քան կրճատվեր, որ վերանար հայ բնակչության համար հատուկ բարենորոգումների ան-հրաժեշտությունը և, որպեսզի պատերազմի ժամանակ քրդերը հակակշռեին կոզակնե-րին[116]»: Ոչնչացման այդ բացահայտ քաղաքականությունը տարեցտարի ավելի լայն ծավալներ ընդունեց: «Եթե դրա վերջը չուտափույթ չտրվի, շարունակում է Դիլոնը, ապա անկասկած կհանգեցնի Հայկական հարցի վերջնական լուծմանը: Եվ համիդիե քրդերն «իրենց առաքելությունն իրականացրին բծախնդրությամբ», թալանում էին հա-յերին, ավերում տները, այրում հացահատիկն ու անասնակերը, ոչնչացնում գյուղերը, կոտորում անասունները, փախցնում կանանց ու աղջիկներին, անարգում իգական սե-ռին, ավերում բնակավայրերը և սպանում նույնիսկ աննշան դիմադրություն ցույց տվո-ղին: Հայերն այժմ երկրագնդի ամենաաղքատ և ամենադժբախտ ժողովուրդներից են»[117]:

**Համիդիե զորամիավորումների միջոցով քրդական աչիրեթությունները կույր գոր-ծիք դարձան սուլթանի հայաջինջ քաղաքականությունը գործադրելու համար**[118]:

«Հնչակ»-ը գրեց, թե սուլթանը համիդիեն ստեղծեց «հայ տարրը ոչնչացնելու հա-մար: Քրդերը, երբ համիդիե անունը ստացան, իրենց վայրագություններն անարգել սկսեցին առաջ տանել»: Երբ նրանց բռնությունների դեմ գանգատվում էին իշխանու-թյուններին, պատասխանը լինում էր. «Մեր թագավորը մեկ համիդիե հեծյալին ձեր ամ-բողջ ազգով չի փոխի: Ուրեմն ինչո՞ւ եք բողոքում»[119]: «Դրոշակ»-ը 1892թ. փետրվարին տպագրեց Ալաշկերտից ստացված մի նամակ, որտեղ ասվում էր՝ «Քրդերն ու թուրքերը, կառավարության տված արտոնություններից համարձակություն ստացած, անասելի գա-զանություններ են կատարում: Քրդական անկանոն զորքերը, գյուղից գյուղ անցնելով,

---

[114] Նույն տեղում, էջ 280:
[115] Նույն տեղում, էջ 545:
[116] *Братская помощь ...*, стр. 13.
[117] Նույն տեղում ..., стр. 14.
[118] **Mandelstam A. N.**, նշվ. աշխ., էջ 195:
[119] «Հնչակ», 1894, թիվ 1-2:

*բարբարոսություններ են գործադրում, հափշտակում տներում եղածը, ծեծում և անարգում բնակիչներին:*

*Բռնի կրոնափոխությունը օրեցօր չատանում է...*

*Մի չարք գյուղերի արտերը հրդեհվեցին»*[120]:

*«Համիդիե հեծելազորը,— գրում են Կարինից,— անպատմելի, չլսված գազանություն և չարիք է գործում Մուշի, Վանի գավառներում... Հայն այլևս իր անձի, գույքի ու պատվի տերը չէ... Կարին-Ալաշկերտ ճամփան փակ է, հաղորդակցությունը դադարած է մինչև իսկ հայ գյուղերի միջև: Երկու-երեք ժամ հեռավորություն ունեցող գյուղերի մեջ անվնաս, առանց կողոպտվելու, առանց սրյունվելու, առանց սպանվելու ճամփորդությունը հրաշքների կարգն է անցել: Ժողովրդի տնտեսական վիճակը հիշյալ զորքերի պատճառով կատարելապես քայքայված և հույժ թշվառ է: Հեծելազորի կամայականություններին նույնիսկ թեթև դիմադրել հանդգնողը չարաչար գանակոծվում ու մահվան է ենթարկվում: Օրը ցերեկով արձակ-համարձակ տավար, ոչխար և ձի քշել տանելը սովորական երևույթ են դարձել: Համիդիե հեծելազորը իր ստեղծումից ի վեր երկրի համար կատարյալ պատիժ ու պատուհաս է դարձել: Կառավարությունն այս ամենը քաջ գիտե, բայց աչքերը փակում է... Սակայն արևի լույսի պես ճշմարտություն է՝ թելադրողը կառավարությունն է, նա է զորքերին քաջալերողը: Համիդիե զորքերը ճանապարհներին, լեռներում, դաշտերում ասպատակություն, թալան անելուց բացի, անգամ գիշերներն են մտնում տները և ինչ գտնում, հափշտակում են: Ամենաստոր գազանություններ կատարողները համիդիե հեծելազորի սպաներն են: Նրանց պահանջը չկատարողները չարաչար պատժվում են: Ոմանց խոտի դեզերն ու մարագները են վառում, ուրիշների տավարը կամ ոչխարն են քշում, արտերն են ավերում, իսկ ոմանց էլ հրացան են բռնում՝ հաճախ նույնիսկ նրանց տներում»*[121]:

*Փրկվելու համար հայերը փախչում են Ռուսաստան: «Շատերը փախել են առանց արտերը հնձելու, առանց ցորենը հավաքելու: Փախել է 400-500 ընտանիք: Սահմանագլխի հայաբնակ շատ գյուղեր այսօր անմարդաբնակ են, իսկ շատերում էլ բնակիչների հազիվ կեսը մնացած լինի»*[122]:

*Բուլանըխի գյուղերից մեկում համիդիեականները հարձակվում են դաշտում աշխատող հայերի վրա: Գյուղացիները բողոքում են: Ոստիկանությունը 65 ոսկի է պահանջում գործը հետաքննելու համար, իսկ երբ գյուղացիները մերժում են, ծեծի են ենթարկվում և նրանցից 25 հոգի բանտ է նետվում, որտեղ նրանց երեսին չպրտեցին՝ «Դուք չգիտե՞ք, որ համիդիե զորքերի դեմ բողոքողը հայտնվում է ծովի հատակին»: Համիդիեականները բացեիբաց ասում էին, թե իրենք կատարում են վալու հրամանը և դեռ այդ հրամանը լրիվ չեն կատարել. «Եթե տրված հրամանը կատարեինք, բոլորիդ պիտի կոտորեինք»*[123]: *Տասը համիդիե զինվոր մտնում են Շեյխ Ցաղուբ գյուղը ու փախցնում ոչխարի հոտը: Գյուղացիների ահազանգով զորք է գալիս: Համիդիեականները կրակ են բացում զորքի վրա: Վերջիններս չեն պատասխանում: Երբ հարցրին պատճառը, զորքի հրամանատարը պատասխանեց. «Տերությունից հրաման չկա նրանց վրա կրակելու: Եթե նրանցից թեկուզ մեկը սպանվի, մեզ փրկություն չկա»*[124]: *Ա. Պրժևալսկին վկայում է, որ համիդիեների դեմ բողոքը իշխանությունները դիտում էին որպես «վիրավորանք Փադիշահի անձին կամ բանսարկություն չորրորդ բանակի մուշիր Զեքի փաշայի դեմ»*[125]:

*Համիդիե գնդերի ռազմական պատրաստությունը բարելավելու, դրանք որակյալ հրամանատարական կազմով ապահովելու համար՝ 1892թ. կ. Պոլսում և Բաղդադում*

---

[120] «Դրոշակ», 1892, թիվ 3:
[121] Նույն տեղում:
[122] Նույն տեղում, թիվ 3:
[123] «Հնչակ», 1895, թիվ 7:
[124] Նույն տեղում, թիվ 8:
[125] Пржевальский А. М., *Вилайет Эрзрум*, ч. I, Тифлис, 1904, стр. 52.

ստեղծվեցին «ցեղերի համար դպրոցներ»: Սուլթանն իր անձնական միջոցներից այդ դպրոցներին հատկացրեց ութ միլիոն թուրքական լիրա:

Սակայն համիդիե գնդերը, գործելով հանդերձ հօգուտ սուլթանի քաղաքականության, միաժամանակ իրենց գոյության բուն փաստով նշանավորեցին քրդերի տեղական ինքնավարության ուժեղացումը: Ունենալով համիդիե զորամասեր՝ քուրդ շատ աշիրեթներ իրենց ավելի ինքնուրույն, պետությունից անկախ էին պահում, հրաժարվում էին հարկ վճարելուց: Բացի դա, ոչ բոլոր ցեղերը համաձայնեցին մտնել համիդիեի շարքերը: Ժամանակակիցներից մեկը գրում է. «Համիդյան չքեղ ու լայնածավալ դրոշակին անգամ չի հաջողվել քրդին ամբողջությամբ իր տակն առնել: Շատ աշիրեթներ այն բնավ չեն ճանաչել, մի քանիսը լոկ անվանական հպատակություն են ցույց տվել, իսկ նրանք, ովքեր կարծում են, թե երդվյալ հպատակներ են դարձել, մշտապես հալածված են իրենց հարևան աշիրեթների կողմից... Արածանիի հովտի բնակիչները մինչև օրս էլ հրացանով են խոսում իրենց գերդաստանի այն անդամների հետ, որոնք Պոլիս գնալով և համիդիե դառնալով, դավաճանեցին քրդերի ազատությանը»[126]:

Խրախուսելու, արտոնություններ տալու թուրքական քաղաքականությունը վերաբերում էր ոչ բոլոր քրդերին: Բնորոշ մի փաստ: Երբ անգլիական կառավարությունն առաջարկեց համիդիեի սպայակազմը համալրել թուրքերով, Բ. Դուռը չհամաձայնեց, պատճառաբանելով, թե «հայերին կողոպտելու հարցը բացառելու դեպքում քուրդ-թուրքական հակամարտությունը շատ ավելի ուժեղ է, քան նրանց մերձակցությունը»[127]: «Թուրքիայի կողմից քուրդ ժողովրդի կլանումը,– գրում է Ա. Կոլյուբակինը,– առայժմ տեղի է ունենում բավականին դանդաղ, սակայն այն անկասկած ընթանում է և վերջին ժամանակներս ձեռք է բերում խոշոր հաջողություններ»[128]: Քրդական խոշոր միավորումները թուլացնելու ու մասնատելու համար գործադրվում էին զանազան միջոցներ, քանի որ առաջին հերթին խոշոր ցեղերն ու ցեղախմբերն էին մարմնավորում քրդերի ուժն ու ինքնուրույն պետականություն ունենալու ձգտումը: Այդ նպատակին էր ծառայում նաև համիդիե գնդերի հրամանատարների նշանակումը ոչ թե խոշոր, այլ փոքր աշիրեթների ներկայացուցիչներից:

Սակայն քուրդ-թուրքական հակասությունները որևէ դրական ազդեցություն չունեցան հայերի հանդեպ քրդերի վերաբերմունքի վրա: Դեռ ավելին, այդ վերաբերմունքը գնալով ավելի դաժան ու վայրագ էր դառնում, մանավանդ, երբ համիդիեին տրվեց հարկերը հավաքելու իրավունք: Համիդիե ավազակների գազանային ընչաքաղցության առջև լրացուցիչ դռներ բացվեցին, ու նրանք թևերը քշտած գործի անցան: Դատարաններին հանձնարարված էր քննության չառնել հայերի գանգատները համիդիեների դեմ: Իսկ էրզրումի վալին քուրդ ցեղապետներին չքանչաններ բաժանեց՝ «վնասակար տարրերը ջնջելու» գործում մատուցած ծառայությունների համար: Ն Գ նախարարությունը հատուկ շրջաբերականով քրդերին հրահանգավորեց կողոպտել ու սպանել հարուստ ու կրթված հայերին, իրականացնել տոտալ ճնշում հայերի վրա, չնչին և մինչև անգամ հնարովի մեղադրանքներով նրանց դատի տալ, իսկ դատարաններն էլ հրահանգավորված էին վճիռներ կայացնել հօգուտ քրդերի:

Ալաշկերտի հինգ գյուղերում, որոնցում նախկինում բնակվում էր 3000 հայ ընտանիք, համիդիեականների տիրանալուց մի քանի տարի անց ոչ մի հայ չմնաց: Շատ քուրդ բեկեր ու աղաներ, գյուղերից հայերին պարզապես դուրս էին քշում ու նրանց տեղում բնակեցնում քրդերի: Համիդիեականների չարագործություններն այնպիսի ծավալներ ընդունեցին, որ ներառան նաև թուրքական բնակավայրերն ու թուրքերին, սրվեցին հարաբերությունները նրանց և կանոնավոր բանակի ստորաբաժանումների

---

[126] «Անահիտ», 1901, թիվ 3:
[127] Մարկոսյան Ս., նշվ. աշխ., էջ 182:
[128] Колюбакин А. *М.*, նշվ. աշխ., т. I, ч. I, СПб., 1888, стр. 180-181.

մինչև: Թուրք փաշաներից մեկը, որին Բայազետի կառավարիչ էին նշանակել, հայտարարեց. «Գնում եմ Բայազետ վերջնականապես պաշտոնանկ լինելու համար՝ չպիտի կարողանամ տանել համիդիե կոչված գազանների արարքները, (իսկ) թագավորի անունը կրող զինվորին դիմադրելը նույնն է, թե թագավորին դիմադրել»[129]: Թուրք սպայությունը չէր կարողանում հանգիստ վերաբերվել այն իրողությանը, որ սուլթանը համիդիե հրամանատարներին ավելի էր վստահում, քան իրենց, որ քոչվոր քրդերը՝ այդ անդրագետ հովիվները, ազդեցություն ունեին պալատում:

Համիդիե գնդերի ու նրանց բռնարարքների վերաբերյալ նյութերը լայն տեղ էին գտնում եվրոպական մամուլի էջերում, հրապարակվում էին փաստեր, մեկնաբանություններ: Այս առումով բնորոշ է անգլիական "Spectator" շաբաթաթերթը: 1890-ի վերջերին թերթը գրեց, թե էրզրումում անգլիական հյուպատոս Ք.Լյոյդի և նոր միայն Արևմտյան Հայաստան շրջագայությունից վերադարձած Է. Բիչոփի վկայությամբ՝ օսմանյան հայերի վիճակն «ուղղակի անտանելի է»: Այն բանի հետևանքով, որ Բ. Դուբը «քրդերին զինում է նորագույն զենքերով և նրանց ղեկավար դնում թուրք սպաների», հայերի համար այլևս իսպառ վերացել է «կյանքի, պատվի և ունեցվածքի անվտանգությունը»: Ըստ թերթի, համիդիեն խնդիր ուներ՝ ջախջախել հայերի ազգային շարժումը, հայերին քշել և նրանց փոխարեն մահմեդականներով բնակեցնել այն տարածքները, որտեղ պետք է բարենորոգումներ մտցվեին, հնարավոր պատերազմի դեպքում ռուսների դեմ մահմեդականների պատնեշ ստեղծել: Նույն թերթում կարդում ենք, որ 1891թ. Շեֆքեթ փաշան մեծ վեզիրից հրահանգ ստացավ հայ ազգաբնակչության կոտորած կազմակերպելու մասին: ...Թուրքական պաշտոնատարները ցուցում ունեին «փոքրացնել հայ բնակչության թիվը»: Վանի կուսակալը, 10-12 քուրդ աղաների պատվոնչան հանձնելուց հետո, մեծ քանակությամբ զենք ու փամփուշտ տվեց իրենց հարևան հայերին «նվաճելու համար»: Քաղաքում չորս ավազակախմբեր կազմակերպվեցին, որոնց խնդիրն էր «հայերին վնասներ հասցնել, գողանալ, սպանել...»:

Եվս մի քանի կարծիք համիդիե գնդերի ստեղծման նպատակների մասին:

Ժակ Դ. Մորգան. «1890թ. սուլթանը, որ արդեն պատրաստվում էր բնաջնջելու հայերին, մի հանճարեղ գաղափար էր հղացել, այն է՝ Հայաստանի հարևան քուրդ հրոսակներին զինել «Համիդիե հեծյալներ» անվան տակ»[130]:

Ֆ. Նանսեն. «Երբ մարդ մտածում է, որ քրդերն ու իրենց առաջնորդներն ապրում էին միայն ավազակությամբ... հասկանում է, թե սուլթանն ինչպիսի զենք է իր ձեռքն առել: Նա ամեն ինչ պատրաստել էր վերջին հարվածի համար»[131]:

Ն. Դենետի. «Այդ գնդերը կոչված էին ճնշելու քրիստոնյա ազգաբնակչության ազատագրական ձգտումները»[132]:

Վ. Մինորսկի. Համիդիե գնդերը բիրտ գործիք էին «հայ ազգային շարժմանը հակազդելու համար»[133]:

Զելենոյը տեղեկագրում է. «Ռուսաստանին չի կարող ժպտալ եվրոպական սպաների և փողի միջոցով բազմաթիվ ագահ, բայց դրամ չլինելու պատճառով՝ չկազմակերպված քրդերի հեծյալ հրոսակախմբերի կազմակերպումը: Դրանք Անդրկովկասի համար դեռևս քիչ են վտանգավոր, բայց եթե կազմակերպվեն, անգամ եթե որպես ոչ կանոնավոր, բայց ռազմական նշանակություն ունեցող հեծելազորի մաս, իրական վտանգ կներկայացնեն Անդրկովկասին»[134]:

---

[129] Պողոսյան Հ., նշվ. աշխ., էջ 167:
[130] Մորգան Ժ., Հայ ժողովրդի պատմություն, Բոստոն, 1947, էջ 340:
[131] Նանսեն Ֆ., նշվ. աշխ., էջ 242-243:
[132] АВПР, Ф. 30, оп. 517, д. 1671, л.5.
[133] Минорский В., նշվ. աշխ., էջ 2:
[134] АВПР, Политархив, д. 3440.

Լ. Քոնթենսոնը գրում է, որ համիդիե գնդերը հանդիսանում էին հայերին թալանելու, ունեզրկելու և ոչնչացնելու միջոց[135]: Ոչ միայն նա, այլև Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան Ֆ. Կամբոնն այն կարծիքին էր, թե «սահմանների պաշտպանության պատրվակով քրդական համիդիե գնդերի ձևավորումը իրականում հանդիսանում էր հայ քրիստոնյաներին կողոպտելու պաշտոնական կազմակերպություն»[136]: Գիբոնսը գրում էր, որ «...կազմակերպման հենց սկզբից համիդիենները սաստկացնում են հայերի հալածանքները... Այստեղ նկատելի է կառավարության ոչ միայն թողտվությունը, այլև քաջալերանքը քուրդ ցեղապետերին՝ թալանելու, ոչնչացնելու, անարգելու հայ բնակչությանը, խլելու նրա ոչ միայն չարժական ու անշարժ ունեցվածքը, այլև կանանց ու աղջիկներին: Համիդեականները... պատուհաս էին հայ ժողովրդի գլխին»[137]:

Ինչպես և պետք էր սպասել, համիդիենների շրջանում ծնունդ առան հակասություններ: Խնուսում նրանց միջև արյունահեղ կռիվներ տեղի ունեցան ղեկավար դիրքի համար: Ալաշկերտի, Մանազկերտի, Բուլանըխի, Վարդոյի հասանանցի, Չիրբրանցի, զոքցի, բլքցի քրդերն իրար հետ կռվում էին համիդիեի համակարգում ղեկավար դեր ունենալու համար: «Անցյալ աշնանից սկսած,– գրում է «Հնչակ»-ը,– համիդիե զորքերն իրար էին կոտորում»: Իշխանությունները ժամանակավորապես նրանց զենքերը հավաքեցին, բայց շատ չանցած քրդերի ղեկավարներին նորից «գործի կանչեցին», հրահանգավորեցին, աշխատավարձ նշանակեցին և զենքերը հետ տվեցին: Դա աչխուժացրեց համիդիենների գործունեությունը, նոր գնդեր կազմակերպվեցին: Խնուսում երեք գունդ ձևավորվեց յուրաքանչյուրը՝ 300 հեծյալով[138]:

Սուլթանին ոչ թե հուզում էին ներքրդական հակասությունները, այլ տագնապը, որ համիդիենները կարող էին իր վերահսկողության տակից դուրս գալ:

* * *

1894-96 թվականների հայկական ջարդերում քրդերի խաղացած դերը երկրորդական չէր: Ռ. Մահզարին այդ վայրագ դերի պատճառը համարում է մոլեռանդությունն ու հետամնացությունը: Սակայն կոտորածներին նախորդող տասնամյակներին ու հարյուրամյակներին քրդերը պակաս հետամնաց ու պակաս մոլեռանդ չէին, բայց հայերին նման սպանդի չէին ենթարկել: Հավանաբար պատճառը միայն կրոնական գործոնը չէր: 90-ական թվականներին սուլթանը քրդերին զինեց հայերին կոտորելու համար, իսկ երբ կոտորածներն ավարտվեցին, նա վախեցավ, որ այդ զենքը կարող էր գործել նաև իր դեմ, սկսեց նոր միջոցներ փնտրել քրդերին ձեռքում պահելու: Ցեղապետների զավակներին ծառայության կամ կրթության տալու պատրվակով հավաքեց մայրաքաղաքում, որտեղ նրանք փաստորեն պատանդ էին: Կառավարական գործակալները չրջում էին քրդերի կացավայրերով ու բորբոքում միջցեղային երկպառակտություն: Նախ, այդ կռիվներով քրդերն այնպես էին տարվում, որ քաղաքական խնդիրների մասին մտածել չէին կարողանում: Երկրորդ, նկատի ունենալով, որ միջցեղային կռիվները քրդական առօրյայի անբաժան բաղկացուցիչներն էին, ցեղապետերը ստիպված էին հպատակվել կառավարությանը, իշխանություններից աջակցություն ստանալու համար: Սակայն քրդերին հնազանդության մեջ պահելու սուլթանի չանքերը տվյալ ժամանակահատվածում հաջողություն չունեցան: «Պոլիս պատանդ տարված քուրդ պատանիները, ստանալով կանոնավոր կրթություն և չփվելով Պոլսի ազատամիտ տարրերի հետ, վարակվեցին մի բանով,

---

[135] Contenson L., *Chrétiens et musulmans.* Paris, 1901, p. 49-50.

[136] Контансон Л., *Реформы в Азиатской Турции. Армянский вопрос.* М., 1914, с. 26.

[137] *ՀԳՎԻԱՐ, ֆ. ՎՈՒԱ. դ. 478.*

[138] «Հնչակ», 1894, թիվ 3:

որի դեմ այնքան կատաղի կռվում էր թուրքական կառավարությունը: Դա ազգային ճգտումներն էին: Այդ երիտասարդները մի կողմից՝ մոտիկից ծանոթանալով համիդյան կառավարության մթին նպատակներին, որոնք իրագործելու համար այնքան տխուր ու անպատվաբեր դեր պիտի խաղային իրենց ցեղակիցները, մյուս կողմից՝ մշտապես հարաբերություններ ունենալով Կ. Պոլսի հեղափոխական կազմակերպությունների հետ, միտք հղացան, ինչն առաջներում անիրագործելի երազ էր թվում...»: «Ազատ Քուրդիստանի» գաղափարը նրանցից ոմանց քաղաքական դավանանքը դարձավ[139]:

Բեդըրխանի որդիներից Աբդուլրահմանը արտասահմանում սկսեց հրատարակել «Քուրդիստան» թերթը: «Գիտեմ, որ հայերի ու քրդերի չահերը նույնն են,– գրում է նա,– և դրա համար է, որ ես միշտ ճգտել եմ ծրագրիս միջոցով վերացնել այն տեղեությունը, որ առաջացել է երկու ժողովուրդների միջև...»[140]: «Քուրդիստանը» քրդերի ապագայի հույսը համարում էր քուրդ ժողովրդի և «դրացի հայ ժողովրդի զինակցությունը»:

Մի քուրդ 1900թ. հունվարին «Դրոշակ»-ին գրում է. «Հայերին ջարդելու կառավարական մտադրությունը սկիզբ առավ ռուս-թուրքական պատերազմից: Այն ժամանակ Աբդուլ Համիդը Քուրդիստան մի իրադե ուղարկեց, որով հրամայում էր թալանել հայերի ունեցվածքը, կողոպտել նրանց և հարկադրել հեռանալ հայրենիքից: Հետո սուլթանն իր կամքն առավ տանելու համար համիդիե հեծելագունդ կազմակերպեց, հովիվներին ու ծառաներին հարյուրապետի ու հազարապետի աստիճաններ տվեց... երեկվա հովիվն ու ծառան, հարյուրապետի աստիճանին բարձրանալով, ոչ միայն հային, այլև իր հորը կսպանի: Աբդուլ Համիդը քրդերի չրջանում տարածեց, թե հայերը, ռուսների հետ համագործակցած, մտադիր են ջարդել քրդերին: Երբ քրդերն արդեն տրամադրված էին կոտորելու, սուլթանը Զեքի փաշային հրամայեց սկսել հարձակումը Սասունի վրա: Մինչդեռ Խիզանի, Բոհթանի, Զեզիրեի, Սենջարի քրդերը ոչ մի հայ չսպանեցին, որովհետև թուրքական կառավարությունից դժգոհ էին և գիտեին կառավարության խորամանկությունները»[141]:

"Der christliche Orient" հանդեսի 1900թ. հունիս-հուլիս ամիսների համարում Լեփսիուսը պատմում է քուրդ ցեղապետ Մեհմեդի հետ իր հանդիպման մասին: Այս քուրդը հրաժարվել էր համիդիե կազմակերպել, որոնք, ըստ նրա, «հայ գյուղերի կողոպուտով հարստանալով և ամբողջ երկիրն ամայացնելով, իրենց տերեր կարծեցին»: Նա մի քանի հայկական գյուղեր փրկեց համիդիեների ջարդարար գործողություններից: 1880-ական թվականներին Կ. Պոլսում Բեդըրի հրատարակած թերթը, ըստ էության, «Հնչակ»-ի թարգմանությունն էր և մեծ տեղ էր հատկացնում հայ-քրդական համերաշխությանը, գտնելով, որ «լեզուն, կրոնը, ցեղը ու ուրիշ տարբերությունները բնավ պատճառ չեն, որ նույն ճակատագրին զոհ հավաքականությունները չմիանան և չպայքարեն ընդհանուր բարօրության համար»[142]:

Բեդըրխանի մյուս որդին՝ Օսմանը, ճգտում էր հայերին ու քրդերին միավորել թուրքերի դեմ և հաստատել հայ-քրդական անկախություն: Քուրդ մոլլա Սալեհը «Քուրդիստան» թերթում գրեց, որ սուլթանին այլևս չի հաջողվի քրդերին հայերի դեմ հանել: «Մենք երդվել ենք մեր պատվով, այսուհետև բարեկամություն անել հայերի հետ»[143]:

Քրդական չրջաններում նման տրամադրություններ նկատել էին նաև ռուս զինվորականները: Նրանք վկայել են, որ «բազմաթիվ քուրդ բեկեր ճգտում են մերճենալ հա-

---

[139] Նույն տեղում, 1903, թիվ 10-11:
[140] «Անահիտ», 1900, թիվ 1-5, էջ 138-139:
[141] «Դրոշակ», 1900, թիվ 1:
[142] «Արարատ», 28.09.1989:
[143] «Մշակ», 1898, թիվ 117:

յերի հետ, նրանց ուժից օգտվելու համար»[144]: Օբայդուլայի որդի չեյխ Մ. Սադղը հայերին ասում էր. «Ձկա մի վատ բան, որի հեղինակը թուրքը չլինի, և չկա մի զուլում, որի ենթական հայը չլինի... Գիտենք, որ այս հողի վրա դուք նույնքան հին եք, որքան մենք: Նորեկը թուրքն է, որի հանդեպ մեզնից ոչ մեկը սիրալիր լինելու պատճառ չունի: Մեր տարածքն ընդարձակ է ու կբավականացնի երկուսիս էլ: Սկսած Բաչկալեից ու Նորադուզից մինչև Մոսուլ մերն է, իսկ վերը՝ ձերը: Ահա սրա մասին է, որ պիտի մտածենք»[145]: «Քուրդիստան»-ը 1901թ. կոչով դիմեց քրդերին. «Փադիշահի հեռավոր նպատակը ձեզ տգիտության մեջ պահելն է: Նա ձեզ չքանչաններ է տալիս: Դուք չէք հասկանում, որ այդ նշաններն ու պատվոնշանները ձեր ազգային արժանապատվության և ձեր ապագայի կորստի գինն են... Մի՞թե ձեր վեհանձնությունն ու քաջությունը թույլ են տալիս, որ սպանեք հայերի կանանց ու երեխաներին... Անպաշտպան հայերին սպանելով՝ չէ՞ որ դուք քանդում եք ձեր հայրենիքը, ձեր օջախը: Ձեզ ավարի, ավերի մղող վալիները, մութեսարիֆները, կայմակամները ձեզ որևէ բան, արդյո՞ք, չպարտեցին ձեզնից ամեն ինչ խլելուց հետո: Ձէ՞ որ ձեր պատիվն էլ խլեցին: Դուք... պարտավոր եք հայերի հետ բարեկամաբար ապրել և դա՝ բնական անհրաժեշտության չնորհիվ...»[146]:

Քուրդ-հայկական համագործակցության ձգտումն ունեցավ նաև գործնական արտահայտություններ: Քրդերից կազմված՝ Շամիլի հայդուկային խումբը սարսափի մեջ էր պահում Էրզրումի շրջանի թուրքերին, անգամ՝ նաև ոստիկանությանը, սակայն հայերին ձեռք չէր տալիս, ասելով. «Մենք ձեզ վնասելու միտք չունենք, մեր որսը հարստահարիչ կառավարության բարբարոս պաշտոնյաներն են...»[147]: Դավչան Դաղի շրջանում գործում էր հայերից, քրդերից ու նաև թուրքերից կազմված հայդուկախումբ, որը գյուղացիներին ասում էր. «Մենք էլ, դուք էլ աղքատ ենք, ժողովուրդ ենք, ուրեմն մեր եղբայրներն եք: Մենք ժողովրդի բարեկամն ենք, իսկ կառավարության՝ թշնամին»[148]: Քղիի Խուփուս գյուղի հայերն ու հայդարի քրդական ցեղը միասնական ուժերով էին կռվում ավազակությամբ զբաղվող քոչվոր քրդերի դեմ: Ցեղապետը հայտարարեց. «Մենք՝ զազա ցեղերս, թուրք կառավարությանը ոչ տուրք, ոչ զորք ենք տալու և ոչ էլ ուզում ենք կառավարության ձեռքին գործիք դառնալ և ճնշել մեր դրացի հայերին»[149]:

Սակայն հայ-քրդական հարաբերությունները միանշանակ և, առավել ևս, կայուն չէին, լի՝ հակասություններով ու իրարամերժ իրադարձություններով: Թե՛ իշխանությունները և թե՛ շեյխերի ու աշիրեթապետերի հիմնական մասը գործում էին հայ-քրդական հարաբերությունների կարգավորման դեմ, քրդերը հաճախ էին ուխտադրժում, հայերի դեմ բռնություններ գործադրում:

1901թ. բռնկվեց քրդական միլի ցեղի ապստամբությունը, որը տարածվեց Դիարբեքիրից մինչև Ջեզիրե ու Մարդին: Ապստամբության ղեկավար Իբրահիմին, ինչպես վկայում է գերմանացի ճանապարհորդ Վիդեմանը, «իրավամբ անվանում էին Քրդստանի չթագադրված թագավոր»: Սուլթանից մեծ ջանքեր պահանջվեց այդ ապստամբությունը ճնշելու համար, թուրքական բանակը զգալի զոհեր տվեց: Հատկանշական մի փաստ: Ապստամբությունը ճնշելուց հետո սուլթանը հրավիրում է քուրդ երևելիներին ու հանդիմանում. «Մենք ձեզ զենք տվեցինք ոչ թե մեր զինվորներին, այլ հայերին կոտորելու համար: Ի՞նչ է, հայերը վերջացե՞լ են»[150]: Դժբախտաբար տիրապետողը դառն իրողությունն էր՝ քրդերի համար առաջնայինը ոչ թե թուրք զինվորին, այլ հային սպանելն

---

[144] ЦГВИА, ф. 2000, оп. I, д.7716, л. 558.
[145] Մալխաս, Ապրումներ, Բեյրութ, 1956, էջ 210:
[146] «Դրոշակ», 1901, Հունիս:
[147] Նույն տեղում, 1893, թիվ 2:
[148] «Հնչակ», 1890, թիվ 2:
[149] ՀՀԿՀԿ ՊԱ կուսակցություն, ֆ. 131, ց. 1, գ. 59:
[150] «Հնչակ», 1908, թիվ 8-12:

էր: «Բուլանըխի և Խլաթի հայ գյուղերը,– գրում են Բիթլիսից,– քուրդ և այլ ավազակների չահատակությունների ասպարեզ են դարձել... Հարստահարություններն այն աստիճանի են հասել, որ հյուպատոսները, հակառակ իրենց համբավավոր անտարբերության, ստիպված եղան քննություն կատարել և ահռելի կացությունը պարզել:

Հայապատկան հողերի և արտերի օտարումը, իսլամ գաղթականների տեղավորումը հայ գյուղերում և հայ գյուղացիների բռնի տարագրումը ցնցեցին եվրոպական ներկայացուցիչներին»[151]:

Հայ քաղաքական ուժերը նույնիսկ Սպաղանքի 1901թ. արյունահեղությունից հետո էլ չարունակեցին քրդերի հետ հարաբերությունները կարգավորելու եզրեր փնտրել, նրանց հակահայ գործունեությունը գոնե չեզոքացնելու համար: Թե՛ Հրայրը, թե՛ Գևորգը քրդական շրջաններում վայելում էին հեղինակություն, իսկ Վարդան Վարդապետը քուրդ աշիրեթապետերից «ոմանց նամակով, ոմանց անձնական տեսակցություններով կամ ուրիշների միջոցով, ոմանց կաշառքով, ոմանց ներշնչումով, ոմանց ալ էնթրիկներով իր ձեռքը կառներ»[152]: Վարդան Վարդապետը նաև հանդես էր գալիս իրար հետ թշնամացած քուրդ ցեղերին հաշտեցնելու միջնորդի դերում և «վերջնական դատավորը կդառնար ոչ թե կառավարությունը, այլ միջնորդ ատյան մը, կազմված Վարդան Վարդապետե և ազդեցիկ ցեղապետե մը կամ անվանի քուրտե մը»[153]: Քրդական մի քանի ցեղապետեր՝ Զեյնալ և այլք, մտան ՀՅԴ շարքերը՝ կազմելով առանձին կոմիտե: Նրանց վկայականները տալիս էր Հրայրը: Վասպուրականում հայդարանցի քրդերի որոշ ցեղապետեր նույնպես կապերի մեջ էին հայ գործիչների հետ: Ատրպատականի քրդերից շատերն օգնում էին հայերին զենք տեղափոխելու գործում: Տարոնում հայերի հետ համագործակցում էին չեկո ցեղը, ջիբրանցիների Դավրիշ, ալմանցիների Ջաթի, խոշկանցիների Ռըզկո, խոժմընկցիների Զեյնալ, ինչպես նաև բալակցի և բատկանցի մի քանի ցեղապետեր: Սակայն այդ համագործակցությունները անցողիկ բնույթ ունեին և հետապնդում էին շահադիտական նպատակներ (օրինակ, Հաքյարիում չեյխ Մեհմեդը դադրեց հայերի հետ համագործակցել, որովհետև վերջիններս չհամաձայնեցին նրա համար զինապահեստ ստեղծել):

«Արեցինք այն, ինչ կարող էինք և ինչ մեր միջոցները թույլ էին տալիս,– գրում է Ս. Սապահ-Գյուլյանը,– քրդերին թուրքերից բաժանելը չատ մեծ հեռանկարներ էր բացում մեր առջև, բայց ցեղայնությունը, դարավոր ոխակալությունները, թշնամությունները, թուրքական խարդավանքների ցանցերը, որ այդ ցեղերից չատերի սիրտն արդեն մագիլների մեջ էին առել, մեզ անկարող դարձրին որոշյալ և դրական արդյունքներ ձեռք բերելու»[154]: Սասունի 1904թ. գոյամարտի նախօրյակին թուրքական չորրորդ բանակի հրամանատար Զեքին սուլթանի անունից սպառնաց, թե քրդերի նկատմամբ խիստ միջոցներ կգործադրվեն, եթե չմասնակցեն Սասունի վրա հարձակմանը: Ճիշտ է, քրդերի մի մասը հրաժարվեց այդ արշավանքին մասնակցելուց, այնուամենայնիվ, հաջողվեց հարձակման տանել 40 հազար քրդի: Քուրդ ցեղապետերից մեկը սուլթանին գրում է. «...ինքը մենակ կարող է բոլորովին ոչնչացնել հայ տարրը..., միայն թե իրեն պետք եղած դրամական և զենքի օգնություններ ըլլան: Այդ ցեղապետին անմիջապես կղրկվի մեծաքանակ դրամ, զենք և ռազմամթերք»[155]:

Քրդերը նույն երկակի դիրքորոշումն ունեցան նաև Սասունի վրա հարձակման ընթացքում: Եթե Խուլբի և Խիանքի քրդերը թալանեցին իրենց հարևան հայերին, ապա քրդական մյուս ցեղերը, չնայած պարտադրված էին հարձակմանը մասնակցելու, Տարկոչից հետ դարձան ու հեռացան: Իշխանությունները քրդերին հայերի դեմ հանելու հա-

---

[151] «Դրոշակ», 1907, թիվ 10:
[152] Ավո, Հրայր Դժոխք, Բեյրութ, 1985, էջ 98:
[153] Նույն տեղում, էջ 100:
[154] Սապահ Գյուլյան Ս., նշվ. աշխ., էջ 252:
[155] «Դրոշակ», 1904, թիվ 4-5:

*մար տարածում էին ամենաստոր լուրեր, դիմում սադրանքների: Նրանք քրդերին համոզում էին, թե ֆիդայիները որոշել են բնաջնջել Սասունի քրդերին: Հարձակմանը քրդերի մասնակցությունը, նախ, հնարավորություն էր իշխանություններին ու թուրքական բանակին չքմեղացնելու և ապա «սև գործը» կատարելու քրդերի ձեռքերով[156]:*

*Քուրդ աղաների ավազակային բնազդներն իսկույն արձագանքում էին հայ-թուրքական առճակատումներին, դրանցից օգուտ քաղելու ակնկալիքով: 1903թ. Բաղեշից գրում են. «...Այժմ թերևս առաջվանից տաս անգամ վատ է... բաղեշցին ողբալի վիճակում է և փրկություն է հայցում»: Սաստկացան ու հաճախակի դարձան հարձակումները հայերի վրա: Հուլիսի 8-ին 30 քուրդ հարձակվում են Խնդիրկատորի վանքի վրա: Հայերը դիմադրում են: Երկու կողմերն էլ ունենում են սպանվածներ ու վիրավորներ: Վանքը կողոպտվում է: Ջորս օր անց քրդերը հայ են սպանում քաղաքի Հորոնցոց թաղում: Վեց օր անց հայ է սպանում քաղաքի առևտրական ժողովի քուրդ նախագահը: Սոֆթաները հարձակումներ են գործում հայերի տների վրա, չինություններ են հրդեհվում Գոմաց թաղում, հարձակվում են Շամիրամ գյուղի վրա: «Գիշեր չի անցնում, որ որևէ հայի տուն չմտնեն ու չթալանեն, իսկ տեղի կառավարությունը... հանդիսատեսի դերում է»: Դրությունն անհամեմատ ծանր էր լեռնային գյուղերում, որտեղ քրդերը ավելի անսանձ ու արյունարբու էին, ոչ օրենք էին ճանաչում և ոչ էլ Նիզամին էին խոնարհվում: Ամեն գիշեր հայերի «մարագներն են մտնում, ոչխարներն ու անասունները գողանում, վիրավորում ու սպանում, ցորենի և խոտի բարդոցները հրկիզում, աղջիկներ առևանգում»: Մորո անունով քուրդ ավազակը ահաբեկման մեջ էր պահում Ապահունյանց և Բզնունյանց գավառների հայերին[157]: Գրում են Բայազետից. «...Մշո, Սասունի շրջանում ֆիդայիների կռիվ կա, հայկական շրջաններում շարժում կա... զորքն առաջ է շարժվում, նա միաժամանակ դրդում է բարբարոս քրդերին ու համիդիեներին, ոտքի է կանգնեցնում իսլամ տարրին՝ ձեռք բարձրացնելու, կոտորելու հայերին...»: «Փադիշահի հրամանն է այդ» կանչում է ամեն մի զինվոր ու պաշտոնյա: Նրանք բացեիբաց դիմում են այս ու այն քուրդ աղային՝ «Քեզ մեծ պատվոնշաններ կտրվեն, եթե հարգես վեհափառ փադիշահի հրամանը»:*

---

[156] «Դրոշակ», 1903, թիվ 7:
[157] ԳԱԹ, ֆ. Ալաթյան Թ., XII, գ. 566:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

# ՀԱՑ ԱԶԳԱՑԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 1860-1900-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

## 1. ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ Ի ՍԿԶԲԱՆԵ

*Արևմտահայ չարժումների սկզբնավորման բնույթի, նպատակադրումների, չարժիչ ուժերի արժեքավորումը պատմագրության ամենաչատ զբաղեցրած հիմնահարցերից է: Պատճառը, գիտական նշանակությունից զատ, դրանցում առկա քաղաքական հզոր լիցքն է:*

*Պատմագրությունը չարունակում է սևեռված մնալ ողբերգական մի հարցի՝ ինչո՞ւ թուրքերը բնաջնջեցին հայերին: Որ այս հարցին հայերն ու թուրքերը տարբեր պատասխաններ ունեն, զարմանալի չէ: Սակայն զարմանալի ու տարօրինակ է, որ եթե թուրքերի պատասխանը միանշանակ է և անփոփոխ՝ հայերն ապստամբության էին ելել Օսմանյան կայսրության տարածքների մի մասի վրա անկախ Հայաստան ստեղծելու համար, և թուրքերը ստիպված էին պաշտպանել իրենց պետության տարածքային ամբողջականությունը, մի կեղծիք, որ չրջանառության մեջ է դրվել սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի, վերահաստատվել Թալեաթի ու Մ. Քեմալի կողմից, գործածության մեջ է մինչև օրս, որպես ոչ միայն թուրք պատմաբանների, այլև պետական պաշտոնական կարծիք: Մինչդեռ հայկական տեսակետը երբեք որոշակի, հանրաճանաչ ու երկարակյաց չի եղել և այսօր էլ այդպիսին չէ: Կարծիքների տատանումների ուղեծիրը չատ մեծ է՝ սկսած պանթուրքիզմի ծրագրերին խոչընդոտող «հայկական սեպից» մինչև թուրքական տեսակետի բառացի կրկնությունը:*

*Հիմնական տեսակետները հետևյալն են՝*

***Էնվեր Քարալ**. թուրք առաջատար պատմաբան. «Հայ կուսակցությունների ընդհանուր ձգտումը և նպատակն էր օգնել Արևելյան Անատոլիայի հայերին ձեռք բերելու անկախություն... Նրանց գործունեության նպատակադրումների չրջանակների մեջ մտնում էին, նախ, ազգային գիտակցության սերմանումը, զինումը պարտիզանական (ֆիդայական) պայքարի համար, դրանով կայսրությունում ճգնաժամ առաջացնելը, վերջապես, մեծ տերությունների ներխուժման ապահովումը» և Արևելյան Անատոլիայում հայկական անկախ պետության ստեղծումը[1]:*

***Կ. Փափազյան**՝ քաղաքական գործիչ. «Հայ հեղափոխական դաշնակցության նպատակն է ապստամբության միջոցով հասնել Թուրքա-Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատության»:*

***Ն. Սարգսյան**՝ ժամանակակից պատմաբան. «Ցեղասպանության գլխավոր պատճառը՝ XIXդ. երկրորդ կեսին Արևելյան հարցի սրման և հայ ժողովրդի ազգային-ազատագրական չարժման ծավալմանը զուգընթաց Թուրքիայում հայերի ճնշումների ուժեղացումը և կոտորածներն էին»[2]:*

*Ընդ որում, հայտնված կարծիքները համադրելիս աչքի է զարնում մի օրինաչափություն. իրադարձությունների մասնակիցների և յաթաղանի հարվածներից ճակատագրով*

---

[1] **Karal E. Z.**, *La Question Arménienne*, p. 14.

[2] *Геноцид – преступление против человечества. Материалы первого Московского международного симпозиума*, Москва, 1997, стр. 198.

*խեղվածների կարծիքները հիմնականում համընկնում և, միաժամանակ, սկզբունքորեն տարբերվում են արևելահայ ուսումնասիրողների և խորհրդահայ չատ պատմաբանների առաջ քաշած թեզերից: Եթե առաջինների եզրահանգումները հիմնված են փաստերի ու եղելությունների, ազգային նպատակադրումների էլակետային նշանակության վրա, ապա երկրորդների գնահատականներում ուժեղ է կոնցեպցիաների, հասարակության զարգացման համընդգրկուն օրինաչափությունների ազդեցությունը: Վերջինների հարցադրումներում էլակետային է հետևյալ տրամաբանությունը. ինչպե՞ս կարող էր պատահել, որ օսմանյան տիրապետության տակ գտնվող բոլոր ժողովուրդները պայքարեին հանուն ազգային ազատագրության, ավելի ճիշտ, քաղաքական անկախության, ինչը միանգամայն օրինաչափ է ճնշված ու հարստահարված ժողովուրդների վարքագծի համար, իսկ հայերը բացառություն կազմեին և չփարվեին անկախության գաղափարին: Չէ՞ որ ազատության և ինքնիշխան կյանքի համար պայքարը ժողովուրդների ոչ միայն իրավունքն է, այլև պարտքը, որովհետև անկախությունն է ազգերի բնականոն կացությունը, առանց որի ազգը խեղված է, դուրս ընկած բնապատմական օրինաչափ զարգացման չավիղից:*

*Հայը, այդ թվում նաև արևմտահայը, իհարկե, զուրկ չէր ազատության քաղցը երազից և ձգտում էր անկախ գոյության: Սակայն երազելը մի բան է, իսկ այն գործողության, գործնական քաղաքականության վերածելը՝ մի այլ բան: Արևմտահայության ողբերգության գլխավոր պատճառներից մեկն այն է, որ նա ուշացած ոտք դրեց ազգային ազատագրական պայքարի ուղի: Մինչև 1870-ական թվականները կայսրության բոլոր հպատակ ժողովուրդները ներքաշվել էին ազգային ազատագրական պայքարի ոլորտ: Բացառություն էին կազմում հայերը: Դա, իհարկե, չի նշանակում, թե չկային քաղաքական ուժեր և անհատներ, ովքեր նպատակադրված էին թոթափելու թուրքական լուծը: Այդպիսիք անպայման կային: Սակայն այդ նպատակադրումները չվերածվեցին զանգվածների կազմակերպմանը նպատակաուղղված գործնական քաղաքականության:*

*Մինչև 19-րդ դարի 70-ական թվականները Հայկական չարժում հասկացությունը խիստ պայմանական էր, քանի որ Օսմանյան տիրապետության դեմ կազմակերպված զանգվածային պայքար հայերի շրջանում գոյություն չուներ: Ինչո՞ւ: Սովորաբար ասում են, թե ճնշումը առաջացնում է հակազդեցություն և որքան ուժեղ է ճնշումը, այնքան հզոր է հակազդեցությունը: Դժբախտաբար, Օսմանյան կայսրությունում այս տրամաբանությունն այլ բնույթ ուներ: Թուրքական տիրապետության դեմ առաջինը պայքարի ելան այն ժողովուրդները, որոնց վիճակը համեմատաբար բարվոք էր (հույներ, բալկանյան ժողովուրդներ, եգիպտացիներ, քրդեր և այլն): Հայերի վիճակն ամենածանրն էր, և նրանք ամենավերջինը մտան պայքարի մեջ: Բանն այն է, որ հայի կյանքը Օսմանյան կայսրությունում ոչ թե սովորական հասկացությամբ ճնշված ժողովրդի կյանք էր, այլ դժոխային գոյություն: Ինչպես արդեն ասվել է, նրանից խլել էին բոլոր իրավունքները բացի մեկից՝ աշխատելու իրավունքից: Նրան իջեցրել էին ռայայի (հոտի) աստիճանին, այս բառի իսկական իմաստով, ու հարկադրում էին անմռունչ աշխատել ի բարօրություն ոչ միայն պետության, այլ նաև մահմեդական բնակչության:*

*Արևմտահայը հայտնվել էր դաժանագույն երկընտրանքի առջև. բացարձակ իրավազրկություն կամ ոչնչացում: Դա նույնիսկ երկընտրանք էլ չէր, այլ հարկադրանք՝ գոյատևելու այնպես, ինչպես թելադրում էր տիրապետող բարբարոս, օտարակեր և մոլեռանդ ազգությունը: Հայը հանուն գոյատևման հարկադրված էր հաշտվել ռայայի վիճակին, իսկ ժամանակի ընթացքում նաև ընտելանալ դրան: Օսմանյան խորհրդարանի հույն անդամ Սուլիոեսը հայտարարեց. «Բոլոր գազանությունները, որ գործում են չերքեզներն ու բաշիբոզուկները Ռումելիայում և Բուլղարիայում, ոչինչ են համեմատած նրա հետ, ինչ կատարվել ու կատարվում է Հայաստանում»[3]:*

---

[3] «Մեղու Հայաստանի», 1878, թիվ 31:

Արևմտյան մամուլի էջերում և ուսումնասիրություններում հաճախակի կարելի է հանդիպել զարմանքի, թե ինչո՞ւ, օրինակ, չնայած իրենց անհամեմատ բարվոք վիճակին, բուլղարացիներն ընդվզում էին, զենքի դիմում, իսկ հայերն անգամ բողոքի ձայն չէին բարձրացնում: Գրանվիլի խոսքերով պատճառն այն էր, որ «Ճնշող տեռորի ու ոչնչացման համակարգը կասեցրել էր նրա (հայ ժողովրդի) բոլոր ուժերը և զրկել հնարավորությունից պայքարելու իր իրավունքների համար»[4]: Անգլիացի դիվանագետ Հեմփսընի խոսքերով՝ «Ընդհանուր ապստամբության մասին միտքը ժպիտ է առաջացնում բոլոր նրանց մեջ, ովքեր ծանոթ են երկրի (նկատի ունի Արևմտյան Հայաստանի) իսկական դրությանը»[5]: Հինգ դարերի ընթացքում, գրում է Լ. Զորմիսյանը, հայերն անհույս, որ սեփական ուժերով կկարողանան ազատագրվել, հաշտվել էին իրենց վիճակին և լոկ ձգտում էին «ինքնապաշտպանության որոշ դյուրություններ ստանալ... Այդ պայմաններում հայերի մեջ գիտակցություն իսկ չէր կազմված այն ճշմարտության, թե հայկական հարցի արմատական լուծումը քաղաքական միայն կրնար ըլլալ»[6]:

19-րդ դարի երկրորդ կեսին արևմտահայը սկսեց տրտնջալ, բողոքել, բայց այդ տրտունջն ու բողոքը քաղաքական բնույթի չէին: Պարզապես հայերը ձգտում էին, որ պատրիարքարանի օգնությամբ վերացվեին անարդարություններն ու բռնությունները և պատժվեին դրանց հեղինակները: Այսինքն, բողոքներն ուղղված էին ոչ թե թուրքական լծի, այլ առանձին պաշտոնավորների, փաշաների, բեյերի ու աղաների դեմ:

Սակայն նույն այդ ժամանակահատվածում տեղի ունեցան քաղաքական բնույթի երկու նշանակալից իրադարձություններ՝ Զեյթունի 1862թ. ապստամբությունը և Սահմանադրական շարժումը: Հարկ է նկատի ունենալ, որ Զեյթունի աչխարհաքաղաքական վիճակը, զեյթունցիների վարքագիծը ձևավորող մյուս գործոնները միանգամայն այլ էին, քան Արևմտյան Հայաստանի կենտրոնում: Եթե համեմատելու լինենք Զեյթունի 1862 և 1895 թվերի կռիվները Սասունի 1894 և 1904 թվերի կռիվների հետ, ապա ակնհայտ կդառնա, որ Զեյթունը պատերազմ էր մղում թուրքական կանոնավոր բանակի և այն էլ՝ բանակային խոշոր ուժերի դեմ, իսկ Սասունը՝ ինքնապաշտպանական կռիվներ հիմնականում քրդերի, իսկ որոշ դեպքերում նաև քրդերին օգնության հասած թուրքական բանակային ու ոստիկանական ուժերի դեմ: Զեյթունի ապստամբություններին չէին հաջորդում խաղաղ բնակչության զանգվածային ջարդեր, մինչդեռ Սասունում 1894թ. ոչնչացվեց 10 հազար, իսկ 1904թ.՝ 8 հազար մարդ: Սասունի ինքնապաշտպանական կռիվները որևէ աջակցություն չէին ստանում եվրոպական տերություններից, իսկ, օրինակ, Զեյթունի 1862թ. ապստամբությանը քաղաքական աջակցություն էր ցույց տալիս Նապոլեոն 3-րդը, նաև Փարիզի միջամտությունը կանխեց կիլիկիահայերի կոտորածները: Հավանաբար պայմանների ու հանգամանքների տարբերությունն էր պատճառը, որ Զեյթունի այդ նշանակալից իրադարձությունը պատշաճ արձագանք ու ազդեցություն չունեցավ Հայաստանում: Ինչ վերաբերում է Սահմանադրական շարժմանը, ապա այն նպատակաուղղված էր ոչ թե քաղաքական ազատություններ ստանալուն, այլ ներհամայնքային, առավելապես՝ Կ. Պոլսի հայկական համայնքի ներսում ծավալված, պայքար էր պատրիարքի միանձնյա ղեկավարությանը վերջ դնելու և միլիեթների համակարգով սուլթանների կողմից այլևայլ հանգամանքներում տրված իրավասությունները նոր բարձրացող բուրժուական տարրերի հետ կիսելու համար:

Բ. Դուռը սկզբում դեմ էր այդ շարժմանը, քանի որ դարերի ընթացքում պատրիարքարանի հետ ձևավորված հարաբերությունները բավարարում էին նրան. պատրիարքները օսմանյան կառավարության համար դժվարություններ հազվադեպ էին ստեղծում: Սակայն, երբ օսմանիզմը վերածվեց պաշտոնական գաղափարաբանության, այսինքն՝ հպա-

---

[4] *Положение армян в Турции...*, стр. 18.
[5] Նույն տեղում, էջ 56:
[6] **Զորմիսյան Լ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 286:

տակ ժողովուրդների ճուլման քաղաքականությունը պետական նշանակություն ձեռք բերեց, միլիեթների համակարգն ու պատրիարքների իրավասությունները վերածվեցին այդ քաղաքականության խոչընդոտի, իսկ սահմանադրության համար պայքարը՝ խնդիրն աննկատ լուծելու հնարավորության: Եվ արևմտահայերը Ազգային սահմանադրություն ստացան, ավելի ճիշտ, այն ստացան պոլսահայերը: Համաճայն այդ սահմանադրության՝ Ազգային ժողովի 140 պատգամավորից 100-ը ընտրվում էին Կ. Պոլսից: Ամբողջությամբ վերցրած սահմանադրական չարժումը նույնպես գավառահայության արթնացման գործում նկատելի ազդեցություն չունեցավ: Արևմտյան Հայաստանի հայությունը շարունակեց մնալ ազգային ազատագրական չարժումից դուրս:

*Իսկ ինչո՞ւ արևմտահայ ազատագրական չարժման ուշանալը ողբերգական դեր խաղաց:*

60-ական թվականներին սուլթանական պալատում սկսեց ձևավորվել մի մտայնություն, թե կայսրության անկման առաջն առնելն այլևս անհնար էր, այն կործանվելու էր, և հարկ էր թուրք ժողովրդին նախապատրաստել դրա համար, այսինքն, որոշել նրա կացությունը կայսրության անկումից հետո: Թուրքերը ցրված էին ամբողջ կայսրությունում, և եթե վերջինս դադարեր գոյություն ունենալուց, ո՞րն էր լինելու թուրքի հայրենիքը: Աբդուլ Համիդն այդ հայրենիքը համարում էր Փոքր Ասիան և ձեռնամուխ եղավ թուրքական հայրենիքի հիմնախնդիրների լուծմանը: Սուլթանի հետ համակարծիք էր նաև հրապարակ իջնող թուրքական բուրժուազիան, որը գտնում էր՝ վերազգային օսմանյան կոնգլոմերատն անզոր է տարածվելու դեպի Արևելք՝ դեպի թուրքերի մայր հայրենիքը: Իսկ որպես աշխարհատարածք ի՞նչ էր իրենից ներկայացնում Փոքր Ասիան: Արևմտյան ծովափնյա չրջաններում՝ սկսած Տրապիզոնից մինչև Պաղեստին, հիմնականում բնակվում էին հույները, ովքեր այդ տարածքները համարում էին իրենց հայրենիքը: Թերակղզու արևելյան մասը Հայկական բարձրավանդակն է, որի բնակչության հիմնական մասը հայեր էին՝ երկրամասի բնիկներն ու իսկական տերերը: Առանց հունաբնակ և հայաբնակ տարածքների Փոքր Ասիան անապատ և կիսաանապատ է, զուրկ տնտեսական ու ստրատեգիական հնարավորություններից: Անգլիական հետազոտող Սթիվենսը բացատրում է. «Հունաբնակ ծովափը և հայաբնակ Հայաստանը բերրի դրախտային տարածքներ են, իսկ Կենտրոնական Անատոլիան՝ դժնդակ կլիմա, աղքատ բնություն, ցանցառ ազգաբնակչություն...»[7]: Թուրքերին նման հայրենիքը ձեռնտու չէր: Նրանց պետք էր ամբողջ Փոքր Ասիան: Սուլթանի կարծիքով՝ կառուցել թուրքերի հայրենիք՝ առաջին հերթին նշանակում էր արևմտյան ծովափը հունաթափել, իսկ Հայաստանը հայաթափել, որովհետև հույների ու հայերի գոյությունն այդ տարածքներում մշտապես վտանգելու էր «թուրքական հայրենիքի» տարածքային ամբողջությունը: Եվ թուրքերը խնդիրը լուծեցին՝ հույներին հիմնականում արտամղեցին, իսկ հայերին հիմնականում բնաջնջեցին:

*Ե՞րբ և ինչպե՞ս տեղի ունեցավ հայկական չարժումների քաղաքականացումը:*

Արդեն ասվեց, որ մինչև 70-ական թվականները արևմտահայության ազգային-քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակին առնչվող խնդիրներն արտահայտվել են հայի, որպես օսմանյան հպատակի, տնտեսական-իրավական վիճակին առնչվող կապակցություններում, այսինքն, ոչ թե իբրև ազգային հարցի բաղադրիչներ, այլ օսմանցու վիճակից բխող, ազգային գունավորում գրեթե չունեցող և միանգամայն առօրեական երևույթներ:

Սկսած 60-ական թվականների վերջերից՝ իրավիճակն սկսեց փոխվել: Բանն այն է, որ արևմտահայության կեցվածքի խնդիրները շատ հաճախ լուծվում էին Կ. Պոլսում, իսկ մինչև 80-ական թվականները պոլսահայ գաղութը հասարակական-մշակութային առումով մեկուսացված էր Արևմտյան Հայաստանից: Պոլսահայ վերնախավի հայացքը հա-

[7] ԳԱՔ, ֆ. 14, գ. 79, թ. 11:

ռած էր Արևմուտքին, որտեղ թե՛ տնտեսական և թե՛ հոգևոր-մշակութային չահագրգռվածություններ ուներ: Պոլսահայերն Արևմտյան Հայաստանին ծանոթ չէին և նրա վիճակով առանձնապես չէին հետաքրքրվում: Դրությունը փոխվեց, երբ Կ. Պոլիս լցվեցին էրգրից եկած հայ պանդուխտները՝ համալներն ու արհեստավորները, որոնք հայրենիքում թողել էին իրենց կին-երեխաներին, ծնողներին ու ազգականներին և բազմաթիվ ուրիշ թելերով կապված էին իրենց հայրենիքի հետ:

Ահա այդ պանդուխտները «վերափոխեցին պոլսահայի ճաշակը», նրա հայացքը չրջեցին դեպի «դժբախտ Հայրենիք»: Այդ գործում չրջադարձ տեղի ունեցավ, երբ պատրիարք ընտրվեց Մ. Խրիմյանը: Նա նույնպես եկել էր էրգրից և պատրիարք դառնալով, իր գլխավոր խնդիրը համարեց. «Ազգին թշվառությունը պիտի ներկայացնեմ բարեխնամ տերության և դարման խնդրեմ»: Այդ գործում նշանակալից դեր խաղաց հարստահարությունների վերաբերյալ 1871թ. Բ. Դռանը ներկայացրած Տեղեկագիրը, որը պոլսահայությանը հարկադրեց լրջորեն խորհել հայկական նահանգներում տիրող վիճակի չուրջ: Առաջին անգամ դրվեց այդ նահանգներում որոշ բարենորոգումներ մտցնելու խնդիրը: Տեղեկագիրն ինքնին երևույթ էր, առաջին ամփոփ փաստաթուղթը գավառահայության վիճակի վերաբերյալ: Այն դեռ չէր նշանակում հայկական հարցի բարձրացում, սակայն դարձավ այդ բարձրացման փաստավավերագրական հիմքը: Դրան հետևեցին Սահմանադրությունը գավառներում արմատավորելու քայլերը: Հաստատվեց «Սահմանադրական հրահանգ գավառաց համար», հաջողվեց գավառներում ևս ձևավորել ազգային մարմիններ:

Գավառահայության հիմնախնդիրն ուշադրության առանցք դարձնելու Մ. Խրիմյանի ջանքերը հանդիպեցին Քաղաքական ժողովի հակազդեցությանը և նրան հարկադրեցին հրաժարական տալ (1873թ.): Սակայն Տեղեկագիրը լոկ խթանող խայծ էր, հասարակական միտքը հասունացել էր քաղաքական հարցադրումների համար: Մ. Խրիմյանի գլխավորությամբ նոր հանձնաժողով ստեղծվեց հայերի հարստահարությունների վերաբերյալ նոր տեղեկագիր կազմելու համար: Տեղեկագիրը (1876թ.), որը կազմված էր 10 էջից, քաղաքական էր, նրանում այն միտքն էր անցկացվում, թե հայերի վիճակի մասին նախկին գանգատների մեծ մասի անհետևանք մնալը վկայում է, որ բանն այս կամ այն անձի կամ ցեղի ապօրինություններն ու բռնարարքները չէին, այլ գոյություն ունեցող վարչակարգն էր դրանք ծնում:

Քաղաքական ժողովը որոշում ընդունեց հայաբնակ չրջաններում բարենորոգումներ մտցնելու հարց բարձրացնել Բ. Դռան առաջ: Սուլթանը որոշեց բոլոր միջոցներով բնում խեղդել հայերի նորածին չարժումը և խափանել ռուսների կողմից այդ չարժման օգտագործումը: Նախ նա փորձեց, և ոչ առանց հաջողության, Հայկական չարժումը հենց սկզբից մղել տերությունների բարդ հարաբերություններն ու չրջանառական լաբիրինթոսում: Այն հանգամանքը, որ սուլթանը Սահմանադրությունը հռչակելու միջոցով հարկադրեց դեսպանաժողովին ցրվել առանց Հայկական հարցը քննարկելու, պոլսահայ գործիչներին մղեց որդեգրելու չեզոք կեցվածք Ռուս-թուրքական պատերազմում, որի սկսվելուց միայն վեց ամիս անց, երբ ռուսական զորքերը Կ. Պոլսի և էրզրումի պատերի տակ էին, իսկ մայրաքաղաքում համառ լուրեր էին պտտվում, թե ռազմաճակատ մեկնած թուրքական զորքերը հայկական նահանգներում զբաղվում էին թալանով ու սպանություններով, հասարակայնության ճնշման տակ պատրիարքն ու մյուս հայ գործիչները «անչարժությունից» դուրս եկան: Հայերը Բ. Դռան առաջ բողոքի հանրահավաք կազմակերպեցին: Սադրաղամը խոստացավ մեղավորներին պատժել և հայկական նահանգներում բարենորոգումներ մտցնել՝ պայմանով, որ թուրքական բանակի չարագործությունները հրապարակայնության չտրվեին: Սադրաղամը խոստումը չկատարեց, ինչը հայերին մղեց դիմելու ցարին:

Ն. Վարժապետյանը քանիցս հայտարարեց, թե Հայաստանի ինքնուրույնություն ասելով, հասկանում է ոչ թե անկախություն, այլ ինքնավարություն: Բեռլինի կոնգրեսին

նրա ներկայացրած Տեղեկագիրը նույնպես ինքնավարության տարբերակ էր առաջ քաշում[8]: Մ. Օրմանյանը նման կողմնորոշումը տրամաբանական էր համարում, քանի որ նկատի ուներ «իրենց դիրքը, զանազան պետությանց միջև իրենց բաշխված ըլլալը և իրենց դրացիներուն ուժն ու թիվը»[9]:

Բեռլինի կոնգրեսը նշանավորեց հայերի ազգային չարժման ճևավորման շրջանի ավարտը, հանգամանք, որը նույնպես արտահայտություններ էր ոչ միայն չարժման թուլության, այլև պայմանավորում էր դրա հետագա անհույս վայրիվերումները: Այդ իրողությունը և ոչ թե հայերի ազգային բնավորությունն էր պատճառը, որ Հայկական չարժումը հիմնականում մնաց դիվանագիտական խաղերից կախվածության վիճակում ու չվերածվեց համազգային զանգվածային ընդվզման:

Որքան էլ տարօրինակ է, բայց փաստ, որ ազգային չարժման թուլությունը հայերի բնավորությամբ բացատրելը առանճնապես մոդային էր ռուսական պաշտոնական շրջաններում: Ցարիզմի մեծապետական քաղաքականությանը ծառայողները, դրանք լինեին մաճառկիներ թե կոլյուբակիններ, պարկեշտություն չունեին այլանդակ պիտակներ չկպցնելու մի ամբողջ ժողովրդի: Ռուսներն ընդամենը 250 տարի են գտնվել օտար լծի տակ, բայց մինչև օրս էլ իրենց արյան ու բնավորության, ճարտարապետության ու լեզվի մեջ պահպանում են մոնղոլականի ավելի քան նկատելի ազդեցությունները: Հայերն օտար լծի տակ գտնվել են 1000 տարի և արտառոց ոչինչ չկա, որ նրանց բնավորության ու վարքագծի մեջ տեղ գտնեին նաև խեղված գծեր: Է. Բեռնշտայնը նկատում է, որ զենք կրելու արգելքը ժամանակի ընթացքում հայերին հարկադրեց մոռանալ «պատերազմական առաքինությունները», և նրանք ձեռք բերեցին «ստրկական սովորություններ»: Լինչը հայերի ոչ պատերազմիկ, երկչոտ լինելու մասին կարծիքները համարում է մակերեսային դիտարկման հետևանք: Հայերը ոչ թե վախկոտ էին, այլ նրանց արգելված էր զենք ունենալ, իսկ եթե հայերին տրվեին նույն իրավունքները, ինչ ունեին քրդերն ու թուրքերը, նրանց մասին միանգամայն այլ կարծիք կլիներ: «Համենայն դեպս, ամեն անգամ, երբ հայերին այդ հնարավորությունը տրվել է, չեն հապաղել դրսևորելու իրենց ընդունակությունները, ինչպես բարձրագույն ռազմավարության, այնպես էլ անճնական խիզախության առումով»[10]: «Եթե ինձ հարցնեին, թե բնավորության որ գծերն են հայերին տարբերում արևելյան ժողովուրդներից, ես հատկապես կնշեի նրանց համառությունը, կայունությունը, որոնց են հայերը պարտական, որ որպես ժողովուրդ գոյատևել են և այդ առումով նրանց գերազանցել չի կարող եվրոպական որևէ ժողովուրդ»[11]: «Օսմանյան կայսրության քայքայման գործընթացները հայերի համար չատ գայթակղիչ էին և զարմանալու ոչինչ չկա, որ այս առումով նրանք իրենց արևելյան երևակայությանն ավելի մեծ ազատություն տվեցին, քան այդ թույլ էր տալիս խոհեմությունը»[12]:

## 2. ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Ջնայած օսմանյան հասարակությունը բաժանված էր երկու հիմնական ու հակոտնյա խմբերի՝ մահմեդականների ու ոչ մահմեդականների, այնուամենայնիվ, միասնական չէին նաև այդ խմբերից յուրաքանչյուրն առանձին վերցրած: Արևմտահայության մեջ 19-րդ դարասկզբից ձևավորվեցին երկու հասարակական շերտեր՝ աշխատավորական և ամիրայական՝ խոշոր առևտրականներ, սեղանավորներ (բանկիրներ), արդյունաբերողներ, պաշտոնատարներ: Հայաբնակ գավառներում ամիրայության դաս գոյու-

[8] Սարուխան, Հայկական խնդիրը..., էջ 414:
[9] Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Բ, սյունակ 2866:
[10] Լինչ Գ., նշվ. աշխ., հ.1:
[11] Նույն տեղում, էջ 592:
[12] Նույն տեղում, էջ 595:

թյուն չուներ, դրա փոխարեն, հատկապես լեռնային շրջաններում (Սասուն, Մոկս), կային իշխանական տներ, քաղաքներում խոշոր, միջին առևտրականներ, կալվածատերեր:

Սակայն շատ տեղերում ներազգային սոցիալական ընդգծված չերտավորում, առավել ևս՝ անտագոնիզմ, գոյություն չուներ և հասարակության ներքին փոխհարաբերություններին բնորոշը ոչ թե հայերի, այլ նրանց ու քրդերի, նրանց ու թուրքերի հակասություններն էին: Օսմանյան հասարակությունն իմունիտետ ուներ առաջադիմության ազդեցությունների հանդեպ, չնայած դրա ընդերքում խանձարուրված բուրժուական տարրերը համակ ուշադրությամբ հետևում էին Արևմուտքում տեղի ունեցող գործընթացներին: Հայ համայնքում այդ հետաքրքրության ծնունդ հանդիսացավ էնաֆների պայքարը ամիրաների դեմ: Այն ավարտվեց առաջինների հաղթանակով, ամիրաները զրկվեցին ազգային կյանքը ղեկավարելու մենաշնորհից: Զարգացումը գնաց այն ուղղությամբ, որ հայ համայնքում հոգևորականության դիրքերը նույնպես աստիճանաբար խարխլվեցին և կղերականությունը հարկադրաբար հրաժարվեց իր մենիշխանությունից: Քիչ անց քաղաքական ասպարեզ մտավ եվրոպական կրթություն ստացած մտավորականությունը, որը, հավատարիմ իր բնույթին, բավարարվեց միայն գաղափարներ հրապարակ հանելով, իսկ գործնական պայքարի համար առաջ մղեց համալներին, ջրկիրներին, արհեստավորներին: Երկար ժամանակ չպահանջվեց, որ պատրիարքարանի երեկվա հակառակորդները՝ մտավորականությունն ու աշխատավորությունը, միավորվեին նրա շուրջը ամիրաների դեմ:

«Արծվիկ Տարոնո» թերթն իր թիվ 4-ում գրում է. «Որտեղ առաջնորդը գոհ է չահամոլ իշխանություններից... վայ այդ համայնքի հասարակությանը: Այդ հասարակությունը տակավին կույր է ու համր, մորթվում, խեղդվում է անձայն, առանց աղմուկ բարձրացնելու»:

1873թ. Մ. Փորթուգալյանը Կ. Պոլսում հիմնադրեց Վարագդատյան ընկերությունը, որը երիտասարդության ուժերով քարոզչություն ծավալեց գավառահայության շրջանում: Նույն թվականին նա Եվդոկիայում ձերբակալվեց, փակվեց նրա ղեկավարած վարժարանը: Սակայն Փորթուգալյանը բանտում երկար չմնաց և նույն 1873-ին ստանձնեց «Ասիա» թերթի խմբագրապետի պաշտոնը՝ այն դարձնելով արմատական տրամադրությունների արտահայտիչ:

1869-70թթ. Կ. Պոլսում ստեղծվեցին «Կիլիկիա» և Դպրոցասիրաց արևելյան ընկերությունները: 1876-ին Փորթուգալյանի ջանքերով հիմնադրվեց «Արարատյան» ընկերությունը: Նույն տարի նա մեկնում է Վան ու հիմնադրում «Հայրենասեր» ընկերությունը: Իշխանությունները նման նախաձեռնություններին պատասխանում էին գավառները քաղաքացիական ակտիվ տարրերից և մտավորական խավից դատարկող ձերբակալություններով: «Ելդըզի ձերբակալվածներն աքսորվում են, գավառական առաջնորդարանները քանի կերթան, դատարկվում են՝ զրկվելով առաջնորդներից, որոնք կասկածվելով քաղաքական զանազան հանցավոր պատրվակներով, կառավարության կողմից Պոլիս են կանչվում»[13]:

Չնայած դրան, դարավոր նիրհից արթնացած հայը չէր երկնչում, ազգային շարժման մեջ էր նետում նորանոր ուժեր, ընդլայնում էր պայքարի ճակատը: 1860թ. Փարիզում լույս տեսած «Դասարան հայկազյանց մանկանց» դասագրքում զետեղված էին «Ազգի վիճակը Հայաստանում» և «Հայաստանի ոգին» նկարները՝ հերարճակ, ոտաբոբիկ ու ողբացող կինը քայլում է Հայաստանի ավերակներում: Երկու նկարների միջև տեղադրված էր Պատմական Հայաստանի քարտեզը: Հետագայում վերջին նկարին տրվեց «Անիի ավերակներ» անունը: Այդ նկարին կարելի էր հանդիպել ոչ միայն ամեն հայի բնակարանում, այլև հասարակական վայրերում: Այն ձեռքից ձեռք էր անցնում, վերարտադրվում կտավի, ձեռագործի ու գորգի վրա, նկարի մասին երգեր էին հյուսվում:

[13] «Հնչակ», 1888, թիվ 4-5:

*Մայր Հայաստանի գաղափարը վերածվել էր գործի մղող, հայահավաք ու հայրենիքը միավորող ուժի: Իշխանություններին մեծ անհանգստություն էին պատճառում Մուշի, Վանի, Կարինի վարժարանները, որոնց աշակերտներն ու ուսուցիչները մշտապես հետապնդումների էին ենթարկվում: Վարդենիսի վարժարանի ուսուցիչ Մարգար Ամրոյանը Տարոնում ազատագրական գաղափարների առաջին տարածողներից էր, մարտական առաջին խմբի ղեկավարը: Նրան 1893թ. կախաղան հանեցին Բաղեշում: Կանգնած կախաղանի հարթակին՝ նա դիմեց հավաքվածներին. «Հայե՛ր, մի վհատվեք, քաջ գիտցեք, որ հասնելու ենք մեր նպատակին... Միայն թե այդ երջանիկ պահին ինձ չմոռանաք»:*

*«Սկսած XVIII դարից,– գրում է Բ. Բորյանը,– հայ ազատագրական պայքարում ձևավորվեց երկու ուղղություն: Առաջինը բուրժուականն էր, որը խնդիր էր դնում հայերի ազատագրությունն ու հայ պետականության կազմակերպումն իրականացնել Արևմուտքի քրիստոնյա տերությունների օգնությամբ: Երկրորդը ինտերնացիոնալիստականն էր, որ հայերի ազատագրության գործը կապում էր տվյալ պետության (որում հայերն ապրում էին ճնշված վիճակում) աշխատավորական զանգվածների ազատագրության հետ»: Առաջին հոսանքի ժառանգորդը մինչև 1890թ. եղել է հայ առևտրական բուրժուազիան, իսկ ապա՝ առևտրա-արդյունաբերական միջին խավերը՝ հանձինս Դաշնակցություն կուսակցության: Երկրորդ հոսանքի ժառանգորդը կոմկուսն էր[13]: Սա տեսակետ է, որը մի ժամանակ ընդունվում էր նույնքան անվերապահ, որքան անվերապահ մերժվում է մեր օրերում:*

*Արևմտահայության վիճակի ու հայկական շարժումների վերաբերյալ առանձնակի կարծիք ուներ Լենոն: Նա գտնում էր, որ հայերը Թուրքիայում հասել էին բարձր ու հաստատուն դիրքերի, անգամ օգտագործում էր «հայերի արտոնյալ վիճակ» արտահայտությունը: Նա Կ. Պոլսի հայության որոշ խավերի դրությունն ընդհանրացնում էր: Բայց Կ. Պոլիսը Հայաստանը չէ: Բարգավաճ վիճակում էին նաև Պետերբուրգի, Մոսկվայի, Թիֆլիսի, Բաքվի հայության որոշ խավեր, ինչը, սակայն, ոչ մի կերպ չէր անդրադառնում Արևելյան Հայաստանի հայության վիճակի վրա, իսկ եթե անդրադառնում էլ էր, ապա ավելի շատ բացասական՝ նպաստում էր աշխատունակ տարրի արտահոսքին:*

*Ամիրաները, իհարկե, միշտ էլ ձգտել են հայ կյանքում ղեկավար դերի: «Ավելի տրամաբանական կլիներ,– գրում է Տ. Հայրապետյանը,– եթե մեծ կարողությունների տիրացած հայ ամիրայությունը ոչ թե կուսակցություններ ստեղծեր պատրիարքական աթոռը ներազգային կռվախնճորի վերածելու համար, այլ իր միջոցները ուղղեր նախապատրաստելու իրական ազատագրական պայքար...»[15]: Անվիճելի, բայց նաև միամիտ հարցադրում է: Միամիտ, որովհետև հայ ամիրայության վարքագիծը բխում էր ոչ թե անձերի բնավորությունից, այլ հասարակական այդ խավի բնույթից, շահերից: Հայ ամիրայությունը օսմանյան բուրժուազիայի մի հատվածն էր՝ այդ բուրժուազիային հատուկ հետադիմական-ավատատիրական հայացքներով: Ամիրայությունը ձգտում էր նորից հայ կյանքի ղեկավար դառնալ՝ ոչ թե ի հաշիվ օսմանյան վարչակարգի, այլ հայոց պատրիարքի իրավասությունների: Մ. Նալբանդյանի խոսքերով՝ ամիրայության ճնշող մեծամասնությունը միայն ծագումով էր հայ, նրա համար հայության լայն զանգվածների ձգտումները խորթ էին: Ամիրան օսմանյան միջավայրի ծնունդ էր, առանց որի խեղդամահ կլիներ, ինչպես ջրից դուրս նետված ձուկը: Հետևաբար, սխալ է ամիրաների թուրքամետ քաղաքականությունը վերագրել արևմտահայությանը: Կ. Պոլսում, գրում է «Նոր դար»-ի թղթակիցը, ծանր էր միայն «հասարակ դասակարգի» վիճակը, քանի որ «կառավարությունը քաջ գիտեր, թե հայ աղաները, բեյերն ու փաշաները, հայ վարդապետերն ու եպիսկոպոսները վաղուց մոռացել են, որ իրենք հայ են և սրբազան պարտա-*

---

[14] Борян Б. А., նշվ. աշխ., էջ 32-33:
[15] Տե՛ս «Հայացք Երևանից», թիվ 3:

կանությունն ունեն: ...Նրանցից ոմանք թուրքից ավելի հայատյաց են և հլու գործիք, ոմանք էլ միայն իրենց անձի, իրենց փառքի ու քսակի մասին են մտածում»[16]:

Պատմագրության մեջ հաճախ է անտեսվում այն իրողությունը, որ թուրք-հայկական հարաբերությունները համահայկական ընդգրկում չունեին: Դրա հետևանքով հայ այս կամ այն քաղաքական ուժի դիրքորոշումը շատ հաճախ ներկայացվում է որպես համազգային կարծիք: «Հայերը,– կարդում ենք «Հայացք Երևանից» չարքի № 3 թողարկման էջ 55-ում,– իրենց վիճակի բարելավումը կապում էին երիտթուրքերի իշխանության հետ...»: Մինչդեռ երիտթուրքերի հետ համագործակցում էր միայն ՀՅ Դաշնակցությունը: Սկզբնական շրջանում հայ մյուս կուսակցությունները ևս համաձայն էին գործակցել իթիհադի հետ: Եվ դա հասկանալի է, քանի որ թուրք հասարակության մեջ ձևավորվել էր քաղաքական մի ուժ, որը նպատակ ուներ կործանելու Աբդուլ Համիդի վարչակարգը: Սակայն այդ հրապուրանքը երկար չտևեց:

19-րդ դարում Օսմանյան կայսրությունը՝ ընհանրապես, իսկ արևմտահայությունը՝ մասնավորապես, ներքաշվեցին կապիտալիստական հարաբերությունների ոլորտը: Եվրոպական ժողովրդավարական գաղափարների ու հոսանքների ազդեցությունը գնալով ավելի ու ավելի ընդգրկուն էր դառնում: Հայությունը, ավելի քան կայսրության որևէ այլ ժողովուրդ, չհագեցված էր բարենորոգումներով: Նախ. դա հնարավորություն կտար դուրս գալու բնաջնջվելու վտանգի գոտուց, ձեռք բերելու կյանքի, պատվի ու ունեցվածքի անվտանգություն և տնտեսական, քաղաքական ու ազգային-մշակութային զարգացման հնարավորություն: Երկրորդ. հայ արդյունաբերողների ու առևտրականների նշանակալից մասը կապված էր Եվրոպայի հետ, և գնալով տնտեսական հարաբերությունները ավելի սերտ ու բազմազան էին դառնում. բարենորոգումները կարագացնեին այդ գործընթացը: Երրորդ. օսմանյան միջավայրի հետամնացությունը, կրոնական մոլեռանդությունն ու խավարամտությունը, մշակութային զարգացման հեռանկարի բացակայությունը հայ գրագետ խավերին ուղղակիորեն մղում էին դեպի Եվրոպա, եվրոպական ապրելակերպ ու մշակույթ: Այդ պրոցեսներն աստիճանաբար խորանում էին, քանի որ տնտեսական կյանքի նոր որակների կրողներ դառնում էին ոչ միայն Կ. Պոլսի և ծովափնյա քաղաքների, այլև բուն Հայաստանի քաղաքների բուրժուական տարրերն ու մտավորականությունը: Չնայած այս ամենին, սոցիալ-դասակարգային սկզբունքը արևմտահայության հասարակական հոսանքների ձևավորման գործում վճռական դեր չէր խաղում, քանի որ, անկախ սոցիալական վիճակից, հայը ենթակա էր կյանքի ու մահվան նույն երկընտրանքին: «Չի կարելի մտածել,– գրում է Րաֆֆին,– թե հայերը գոհ էին իրենց վիճակից, որովհետև անկարելի է գոհ լինել մի այնպիսի վիճակից, որտեղ կյանքի, կայքի և ընտանիքի ապահովություն չկա, որտեղ մարդու աշխատության արդյունքը հափշտակվում է, որտեղ նրա պատիվը շների հետ է հավասարեցված, որտեղ ամեն ինչ, որ նրա համար սուրբ է և նվիրական, հալածվում է, պղծվում է և կույր մոլեռանդության զոհ դառնում»[17]:

Նման պայմաններում ջրի երես ելան փրկության ուղիների ընտրության գործում մոտեցումների տարբերությունները: Ճիշտ է, այդ մոտեցումները ևս ինչ-որ չափով պայմանավորված էին հասարակական խմբերի սոցիալ-տնտեսական վիճակով, սակայն լինել-չլինելու հրամայականի պայմաններում վերջինս որոշիչ նշանակություն ունենալ չէր կարող: Իսկ որ սոցիալ-դասակարգային գործոնն արևմտահայ հասարակական հոսանքների ձևավորման գործում որոշակի դեր խաղում էր շատ ավելի արևելահայության միջոցով, ռուսական իրականության ազդեցության դրսևորում էր: Եթե արևելահայերի շրջանում գործում էին կղերա-ամիրայական, ազգային-պահպանողական, լիբերալ-դեմոկրատական հոսանքներ, ապա արևմտահայերի միջավայրում՝ կղերա-ամիրայական,

---

[16] «Նոր դար», 1894, թիվ 214:
[17] Րաֆֆի, եժ, հ. X, էջ 302-303:

ազգային պահպանողական, լիբերալ-բուրժուական, ազգային-դեմոկրատական հոսանքներ: Միայն անունները չէին նման, այլև գաղափարախոսությունները, որոշ առումով՝ գործելակերպերը՝ նույնպես: Այդ հոսանքներն արտահայտում էին հասարակական որոշակի շերտերի շահերը: Օրինակ, կղերա-ամիրայական հոսանքը միավորում էր սոցիալական ուժերի, որոնք «իրենց շահերը պահպանելու համար» «կցանկանային միշտ կանգուն տեսնել Թուրքիան իր կառավարման անկարգ այլանդակության մեջ» և նմաններից «չէր կարելի սպասել, որ նրանք բողոք բարձրացնեին և հայ ժողովրդի հառաչանքների թարգման լինեին»: Իսկ, օրինակ, պանդուխտ մշակները, «ամեն բան կորցրած լինելով՝ տուն, տեղ, հայրենիք, այլևս ոչինչ կորցնելու չունեն և առանց երկյուղի բողոք են բարձրացնում ու իրենց թշվառ, անտեր ընտանիքների համար ազատություն են խնդրում...»: Եվ դա հասկանալի է, քանի որ «հավատարիմ հպատակությունը մի այնպիսի պետության վերաբերությամբ, որպես Թուրքիան է, նշանակում է կույր հնազանդություն, այսինքն՝ անտրտունջ տանել բռնակալի բոլոր բարբարոսությունները»: «Եվ հայերը,— եզրահանգում է Րաֆֆին,— մինչև այսօր իրենց հավատարիմ հպատակությամբ ոչինչ չշահեցին, միայն ծանրացրին իրենց ստրկության շղթաները»:

Ով ծանոթ է Թուրքիային, գիտի, որ «այդ երկրում անկարելի է ապրել և գոյություն պահպանել առանց զենքի»[18]: Ռազմական ուժի վրա հիմնված հասարակությունը, մի ազգ, որ ամբողջապես «բաղկացած է զինվորականներից, մի վիթխարի վիշապ է, որ կլանում է, ուտում, է, ոչնչացնում է, ինչ որ արդյունաբերում է ողորմելի հպատակի աշխատասեր ձեռքը: Այդ վիշապը կուլ է տալիս ամբողջ ազգեր ու ժողովուրդներ, իր մարմինը պարարտացնելու համար... Մենք ունենք պատմություն, 850 տարվա պատմություն, թե ինչպես է վարվել մեզ հետ Թուրքը, նրա ամեն մի տողը արյունով և արտասուքով է գրված»[19]: Նույն իրողությունը Մ. Նալբանդյանը ներկայացնում է հետևյալ ձևով. «Հայերի վրա վաղուց ի վեր Թուրքիայում ծանրացած աղաղակող անկարգություններն Արևելյան պատերազմից հետո ծայրահեղության հասան»:

Սակայն համազգային անբավարարվածությունն ու վտանգվածությունը հասարակական տարբեր խավերին միանման չէր շոշափում. «մշեցի, բաղեշցի կամ վանեցի հայը մի վաչխառու քրդից կամ տաճկից հարյուր ղուրուշ փոխ առնելը և չուտով մի քանի հարյուր պարտական մնալը, այնուհետև յուր կինը, ընտանիքը գրավ թողնելը, Պոլսի սոխախներում տարիներով փտելը և մաշվելը...» սովորական երևույթ էր: Հասկանալի է, որ հասարակության մյուս խավերը նման խնդիր չունեին: Հայության աշխատավորական լայն զանգվածներն այնպես էին ճզմվել բեյերի ու իշխանությունների բռնություններից, որ երկար ժամանակ ուշքի չէին գալիս և ազգային շարժմանը միացան ուշացած: Սկզբնական շրջանում ժողովրդի անունից բացառապես հանդես էին գալիս ամիրաները, որոնցից հայ ազգաբնակչությունը տնտեսական կախյալ վիճակում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև Կ. Պոլսում: Հոգևորական պաշտոնատարները, ազգային համայնքի ղեկավարները, որպես կանոն, ամիրաների դրածոներն էին[20]: «Այս մարդիկ (ամիրաները),— գրում է Մ. Նալբանդյանը,— հասնելով պետական պաշտոնների և, հետևաբար, մոտիկ հարաբերություններ ունենալով Թուրք կառավարության ազդեցիկ դեմքերի հետ, յուրացրել են իրավունք՝ խառնվելու հայկական բոլոր գործերին... Դուռն առաջ իսկ խաղալու հայ ժողովրդի ներկայացուցիչների դերը»:

Միշտ էլ Կ. Պոլսում խուլ պայքար է գնացել ամիրաների և հոգևոր գործիչների միջև: Բուրժուական խավերի հանդես գալն ավելի սրեց ու բացահայտ դարձրեց այդ պայքարը: Ամիրաները պահանջեցին պատրիարքին կից ունենալ բարձր դասին պատկանող հայերից կազմված խորհուրդ: 1841թ. այդ խորհուրդը ստեղծվեց, սակայն դրան

---

[18] Րաֆֆի, եժ, հ. X, էջ 311:
[19] Նույն տեղում, էջ 277:
[20] Նույն տեղում, էջ 307:

հետևեց պայքարի էլ ավելի սրվելը: Շարժման մեջ ներքաշվեցին պոլսահայ աշխատավորական խավերը՝ արհեստավորները, համալները, ջրկիրները, տնային ծառայողները: Բ. Դուռը 1847թ. պատրիարքին կից գործող խորհուրդը վերակառուցեց: Ստեղծվեցին երկու ժողովներ՝ քաղաքական և կրոնական, որոնց իրավասության տակ անցան դպրոցական, եկեղեցական-վարչական, ֆինանսական և դատական համակարգերը: Պատրիարքը փաստորեն կախման մեջ դրվեց այդ ժողովներից, նրան նաև զրկեցին համայնքի և Բ. Դռան միջև միջնորդի իրավունքներից, ձևավորվեց կառավարության հետ կապի և քաղաքական ժողովի որոշումների կատարումն ապահովող հատուկ օղակ:

Դա ամիրաների հաղթանակն էր: Երկու ժողովում էլ՝ մեծամասնություն էին կազմում նրանց ներկայացուցիչները, ինչի դեմ հանդես եկան մտավորականությունն ու աշխատավորական խավերը, իսկ ամիրաները, օգտվելով քրիստոնյաների և մահմեդականների իրավահավասարության վերաբերյալ Փարիզի դաշնագրի պահանջից, քայլերի դիմեցին իրենց իրավունքներն էլ ավելի մեծացնելու, պատրիարքի իշխանությունն աշխարհիկով փոխարինելու համար:

Հայ հասարակական-քաղաքական հոսանքները միատեսակ մոտեցում չունեին հայկական հարցին: Ոչ քիչ դեպքերում կղերա-ամիրայական հոսանքում վճռական դեր էին խաղում այն ուժերը, ովքեր քարոզում էին հնազանդություն սուլթանական վարչակարգին, դեմ էին ազգային-քաղաքական բնույթի իրադարձություններին, այդ թվում նաև Զեյթունի հերոսամարտին, նրանք Ազգային սահմանադրությունը պիտակավորեցին «պետության մեջ պետություն ստեղծելու» փորձ: Այս հոսանքի կարգախոսն էր. «Դուք մի չտապեք, գայթակղության առիթ մի տվեք: Ժամանակն ինքն իրեն, կամաց-կամաց կանի, ինչ որ հարկավոր է»: «Արևելք»-ը գրեց. «Հայք միշտ մեծավ պարծանոք կը հռչակեն, թե իրենց վայելած բարիքները կը պարտին օսմանյան գահուն բարերար հովանավորին, և ասելե ետքն ալ իրենց կացության ամեն բարվոքում և ամեն նորանոր բարիք Վեհ. սուլթանին հայրական իշխանության ներքո միայն կրնան վայելել...»[21]:

Սուլթանական իշխանությունները բնականաբար քայլերում էին այս դիրքորոշումը, մասնավորապես ձգտում պատրիարք դարձնել իրենց հնազանդ մեկին և չէին թաքցնում վերաբերմունքը նման գործիչների նկատմամբ: Օրինակ, իշխանություններին հլու հնազանդ պատրիարք Խ. Աչըգյանի դիրքերն ուժեղացնելու համար՝ սուլթանը նրա առաջարկով մի քանի տասնյակ հայ բանտարկյալների ներում չնորհեց, պատրիարքին 400 ոսկի նվիրեց, պարգևատրեց չքանչաններով: Դրանից հետո պատրիարքն Ազգլիայի դեսպանին ասաց. «Մենք մեր բարեգութ սուլթանից չատ գոհ ենք և հանգիստ կյանք ենք վայելում նրա հովանու տակ: Հայերի հարստահարությունների մասին ինչ որ գրվում է, մի քանի սրիկաների սուտ լուրեր են»[22]:

Ի հակադրություն այս հոսանքի, լիբերալները ձգտում էին հասարակական կյանքի վերակառուցմանն ու նորացմանը, նրանց առաջնորդներն էին Սահմանադրական շարժման ռահվիրաները, ովքեր նշանակալից դեր խաղացին արևմտահայության ազգային զարթոնքի, ազգային-մշակութային առաջադիմության գործում, առաջ քաշեցին ազգային ինքնավարության գաղափարն ու մշակեցին դրա սկզբունքները: Սակայն այս հոսանքի չատ գործիչներ հետագայում մերձեցան ամիրայական-կղերական վերնախավին և հետ կանգնեցին քաղաքական պայքարից: Բանը հասավ նրան, որ նույնիսկ Սահմանադրական շարժման հայրերը (օրինակ, Գր. Օտյանը) բացեիբաց հանդես եկան ազգային շարժման դեմ[23]:

Շատ ավելի հետևողական էր Մ. Խրիմյանի ղեկավարած ազգային պահպանողական հոսանքը, որի հիմնական ուժերը գավառահայության առաջադիմական տարրերն էին: Խրիմյան Հայրիկն ու իր զինակիցներն առաջին պլան էին դնում արևմտահայության

---

[21] «Հնչակ», 1889, թիվ 1:
[22] Նույն տեղում, 1893, թիվ 4:
[23] Փափազյան Վ., Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910, էջ 647:

տնտեսական և լուսավորչական գործունեությունը, նրանք գտնում էին, որ ազգային խնդիրների լուծման ուղին անցնում է տնտեսական և հոգևոր զարգացման վրայով, որ դրսի ոչ մի օգնություն հայերին չի փրկի, եթե Հայաստանը մնա թույլ ու հետամնաց: «Արծվիկ Տարոնո» թերթը, 1864թ. դեկտեմբերի 1-ին դիմելով հայերին, գրում է, որ փրկությունն աշխատանքն է, տնտեսական գործունեությունը, արդյունաբերական արտադրության զարգացումը: «Ազգայիններ,– կոչ է անում թերթը,– սկսենք ընկերանալ ու աշխատել, բանել ու տքնել, այդպես կարող ենք գտնել քաղցր հաց, հանգիստ կյանք», առանց որի լուսավորության և առաջադիմության մասին աղմուկը կեղծ է: «Ինչո՞ւ այսօր գավառներում՝ ընդհանրապես և Տարոնում՝ մասնավորապես, բամբակի, քաթանի, բրնձի, այգիների... նույնիսկ հացեղենի մշակությունը քիչ է: Ինչո՞ւ քաղցից թողնենք փախչենք, և ամայի դաշտերը մեր վրա ողբան... Քրդե՞րն են տանում: Այո, ողբալի է ձեր քաշած տառապանքը..., սակայն ներիր ինձ, Տարոն, եթե ասենք՝ քուրդը քեզնով է քոնը տանում... Ձեր միության առաջին արդյունքը պետք է լինի քրդերին՝ ձեզ նեղողներին, ձեր միջից հանել տալ...»: Այսինքն, գծագրվում էր մի ուղի՝ միավորվել, տնտեսական կյանքի զարգացմանը թափ հաղորդել, քրդերին արտամղել: Որովհետև «որտեղ որ լինենք, ուր որ փախչենք, տերության հարկը պիտի տանք, եթե քրդերից ազատվենք, նորից անոթի ենք մնալու, եթե չմիավորվենք և չստեղծենք... Մենք՝ հայերս, ի՞նչ կյանք ենք վարում, ամուսնացածն ամուսնուց զուրկ, որդին՝ ծնողից, եղբայրը՝ քրոջից տարագիր, իբր այստեղ եկամուտ չունենք և դիմում ենք Պոլիս և այլ քաղաքներ, որտեղ չարաչար ծառայում ենք և... զանազան հիվանդության ենք մատնվում, վաստակածներս կորցնում ենք, մեր կյանքը ոչնչացնում... Ետ դառնանք, ազգայիններ, ետ դառնանք այս խոտոր և խավար կորուստի և անարդյունք չավիղից... Մենք Ստամբուլի փողերով երբեք չենք կարող հարստանալ, պետք է այստեղ ունենանք գործարաններ, այստեղ պիտի ստեղծենք ու վաճառքի հանենք, իսկ այդ անելու համար պայման է լուսավորությունը: Ուստի պետք է ուսումնարաններ ունենանք: Հայի փրկության ուղին է՝ վաստակելով՝ չհվել, չհվելով՝ լավ ապրել, ապրելով՝ ուսանել, ուսանելով՝ առաջադիմել: Մեր հույսը մենք ենք, մեր աշխատանքը»:

Սա ինքնուրույն աշխատելու ու առաջադիմելու մտածողության վերջին առկայծումներն էին, երբ հայը հայրենի հողի վրա դեռևս իրեն ուժեղ էր զգում: Շուտով վրա հասան 61-րդ հոդվածն ու Զուլումի տարիները, որոնք հայերի մտածողությունից ու հոգեբանությունից պոկեցին տարան այդ դիրքորոշումը:

Մ. Խրիմյանն ու նրա աշակերտները հանդիսացան հայրենասիրական գաղափարների տարածման մարտնչող նվիրյալներ, ինչը և գլխավոր դերը խաղաց այն համազգային հեղինակության, որն ունեին նրանք: Պատահական չէ, որ 1869թ. սեպտեմբերին, հակառակ սուլթանի ու նրա կառավարության չանքերի, Մ. Խրիմյանն ընտրվեց պատրիարք: Նա այդ պաշտոնին կարգվեց որպես գավառահայության ձայնափող: Ու երբ համոզվեց, որ արևմտահայության հարցը կարող է լուծվել ոչ թե Կ. Պոլսում, այլ Հայկական բարձրավանդակում, թողեց մայրաքաղաքն ու վանեցի պանդուխտների հետ վերադարձավ Վան՝ պաշտպանելու հայի պատիվը, կյանքը և ունեցվածքը: Վարագավանքն ու դպրոցը դարձան արևմտահայության ազատագրական-ինքնապաշտպանական պայքարը սնող օջախներ: Այդ դպրոցից դուրս եկան հայ ազգային չարժման, մշակույթի անվանի ներկայացուցիչներ:

Ազգային-պահպանողական հոսանքը նույնպես հավատաց եվրոպական տերությունների օգնությամբ Հայկական հարցի լուծման հնարավորությանը, հույսեր կապեց Բեռլինի կոնգրեսի հետ, Մ. Խրիմյանը ղեկավարեց կոնգրես ուղարկված հայկական պատվիրակությունը: Բեռլինից հետո ազգային-պահպանողական հոսանքը պառակտվեց: Նրա մի մասը որդեգրեց արմատական լուծումների դիրքորոշումը, որը նշանակում էր Հայկական հարցի լուծում բռնի միջոցներով, իսկ մյուս մասը մնաց չափավոր հա-

յացքների չրջանակում: «Դեռ պիտի կոտորվիք, դեռ պիտի մորթվիք... քանի որ անզեն, անեղջյուր, անասպար կապրիք»[24]:

Ազգային ժողովրդավարական հոսանքը խնդիր էր առաջադրում ոտքի հանել արևմտահայությանը, բայց քանի որ տգետ, կղերականությանն անվերապահ ենթարկվող հայն ի վիճակի չէր քաղաքական արթնության, հետևաբար պետք էր սկսել լուսավորչական աշխատանքից, ժողովրդին կրթելու հետ միասին նրան մղել քաղաքական պայքարի. «Ժամանակը կը գա,– գրում է «Արևմուտք»-ը,– որ ոամիկն ալ զգա, որ իր ոամկերհնով մեծ բաներ կրնա ընել և ուրիշ ժողովրդներե վար չմնար թե ազգային և թե օտարազգի բռնակալներու դեմ զինվելու աւեն»[25]: Նրանք դեմ էին գաղթականությանն ու պանդխտությանը և դրա առաջն առնելու միջոց համարում էին տնտեսական զարգացումը: Մ. Մամուրյանը քաղաքաբնակ հայերին կոչ էր անում վերադառնալ հայրենի բնաշխարհ, ծաղկեցնել երկիրը: Նա գտնում էր. «Սպասել, որ արտաքին փրկիչներ գան և հայ ժողովրդյան սև պատանքը քակեն՝ հիմարություն է: Հեգ և ստրուկ ժողովրդյան առաջին և միակ ազատարարն ինքն է, իր աշխատությունն է, իր ներքին ուժն է, իր լույսը, իր միությունն ու հաստատ կամքն է»[26]: Ա. Արփիարյանը, նկատի ունենալով Դիզրայելիի խոսքերն այն մասին, թե անհրաժեշտ է հայկական նահանգները վերածել ռազմական ամրոցների Ռուսաստանի դեմ, գրում է, եթե հայկական հարցում այդ է լինելու Անգլիայի քաղաքականությունը և Հայաստանը վերածվելու է բանակատեղի, «ո՞ւր կմնան այն ժամանակ մեր ապագա ինքնուրույնության հույսերը»[27]: «Հարկ է ժողովուրդը ցնցել, անոր իմացնել, թե թուրքեն բարենորոգության պահանջված պահուն, մենք ալ մեր ձեռքով գործադրեինք չատ մը բարեկարգություններ... Պետք է հանրային սիրտը թունդ հանել, հոգիները խռովել և մեր ներքին վիճակը մեր ձեռքով բարելավելու մտածողությունը զարգացնել»[28]: «Ազգային քաղաքացիական առաքինություններու հիշատակը միշտ կենդանի պահենք ու սիրենք... Բայց պիտի չէ մոռնանք նաև, թե ժողովրդին էն վատ թշնամիներում մեջ է անոր նկարագրին հոռությունները չոյել սիրողը, կամ չտեսնելու զարնել հակամիտողը, ցեղ մը կջլապնդի կզորանա իր կյանքին ամենախիստ քննադատությամբ»[29]: Հ. Սվաճյանը «Մեղու» թերթում հրապարակեց հայ ժողովրդի ազատագրության մի քանի ծրագրեր: Նա մերժում էր բարեփոխումների տարբերակները և առաջ քաշում զինված պայքարի ուղին»[30]:

Եվ այսպես խաչաձևվում էին տարբեր կարծիքներ, իրար դեմ կանգնում երեք կողմնորոշումներ (ռուսական, թուրքական և եվրոպական), առաջին պլան էին դուրս գալիս արմատական լուծումների կողմնակիցները: Մ. Մամուրյանն ազատությունը պայմանավորում էր զինված պայքարով, Գր. Զոհրապյանը հայրենիքի համար արյուն թափելն առաքինություն էր համարում, Մ. Պեշիկթաշլյանը վառոդ ու գնդակ էր պահանջում, Հ. Պարոնյանը ծաղրում էր՝ «Արտասուքը մանուկներու ու կիներու բաժինն է»: Րաֆֆին զինված պայքարի, ինքնազոհության էր կանչում[31]: Ռ. Պատկանյանը պահանջում էր խոփից սրեր կռել, որպեսզի կարողանանք «մեր փառքը մահով հետ խլել»[32]: «Փորձ»-ը ազատության հասնելու ընդունելի ուղի համարում էր խաղաղ միջոցների գործադրումը: Մինաս Զերազը մերժում էր Ռոբեսպիերի «տապարն» ու օրհնում էր խաղաղության զինվորին[33]: Իսկ Ն. Ռուսինյանը կոչ էր անում հնարավորության սահմանե-

---

[24] Խրիմյան Մ., նշվ աշխ., էջ 275:
[25] «Արևմուտք», 1859, թիվ 7:
[26] «Արևելյան մամուլ», 1859, թիվ 7:
[27] «Մշակ», 1878, թիվ 202:
[28] Արփիարյան Ա., Երկեր, Երևան, 1987, էջ 495-496:
[29] «Նոր կյանք», 1898, թիվ 1:
[30] «Մեղու», 1861, թիվ 128:
[31] Րաֆֆի, Եժ, հ. II, Երևան, 1962, էջ 192:
[32] Պատկանյան Ռ., Եժ, հ. II, Երևան, 1964, էջ 28:
[33] «Ատենագիտություն ազգային ընդհանուր ժողովո», 1874, էջ 51-52:

ներում չզրկվել «բարեխնամ տերության վստահությունից»[34]: «Արևելյան մամուլ»-ը նման դիրքորոշմանը հակադրեց կարգախոս՝ ոչ թե ապավինել պատրիարքի գործունեությանն, այլ ազատության համար մաքառել վառոդով[35]: Ստ. Ոսկանը գրեց. «Ողորմելի հայեր, շաքալներու բերանն ինկել եք և ձեր հայրենակիցք Այվազներու խնկաման չնորհելու ետևն եք տակավին: Վառոդի ման պետք է, խնկաման կպատրաստեն: Վա՛յ, Հայկի թոռներ, վա՛յ»:

Բեռլինի կոնգրեսն ու դրան հաջորդած տարինները նոր երանգ ու ուղղություն տվեցին հայ ժողովրդի ազատագրական գործելակերպին: Շատ արագ սպառվեց հայ հասարակական-քաղաքական մտքի ռոմանտիզմի պաշարը: «Եկավ պատրանքապատ մտայնության և անհող ակնկալությունների վերջը, որոնց սնուցող երակն այն թյուր տեսակետն էր, թե բացառված չէ խնդրանքներով ու պաղատանքներով Թուրքիայի կազմում հայության օգտին բարեփոխումների հասնելը»[36]: Այս իրավիճակում աղաչանքի կողքին երևաց նաև զենքը: Սակայն գիտակցելով, որ մենակ անկարող են պայքարել թուրքական բռնությունների դեմ, արևմտահայերը դիմեցին արևելահայերի օգնությանը: Այդ օգնությունը չուշացավ: Ձևավորվեցին հայության երկու հատվածների համագործակցության տարբեր եղանակներ, որոնք խարսխվում էին մեկ ազգ և մեկ հայրենիք գաղափարի վրա: Փորձեր արվեցին ձևավորելու նաև այդ նոր իրողության գաղափարաբանությունը, որի հիմքում դրվեց հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը, Ռուսաստանի օգնությամբ թուրքական լուծը թոթափելու գիտակցությունը: Սակայն չուտով վրա հասավ համընդհանուր հիասթափությունը, որը խորացավ Ն. Վարժապետյանի մահից հետո, երբ պոլսահայ գործիչները որդեգրեցին նահանջի քաղաքականությունը «չարիքներն ավելի չխորացնելու համար»: Դրան հակառակ, սուլթանը հարձակման անցավ, հաշվեհարդարի ենթարկեց բարենորոգման կնքահայրերին: Իրավիճակն այդպես մնաց մինչև 1891 թիվը, երբ հայկական նահանգներում ծայր առած չարժումները պոլսահայ գործիչներին հարկադրեցին նորից ձախանալ: Մ. Իզմիրլյանը եղավ վերջին ներկայացուցիչն այն ժամանակաշրջանի, երբ Ազգային չարժումը ղեկավարում էին Կ. Պոլսի հայ գործիչները, մասնավորապես՝ պատրիարքները:

Բեռլինի կոնգրեսից մի քանի տարի անց մեծ տերությունների աջակցությամբ հայկական հարցը լուծելու տրամադրությունները նվազ եռանդով էին արտահայտվում, իսկ ռուսական կողմնորոշումը գնալով թափ էր առնում, չնայած, ինչպես Ա. Թոխմախյանն է գրում. «Չկա մի դասակարգ, որ 61-րդ հոդվածի իրականացումը չցանկանա, բայց ամեն մի դասակարգ յուր ցանկության բոլորովին տարբեր տեսակետով է նայում դրա վերա»:

Եթե համառոտակի բնութագրենք արևմտահայ ազատագրական չարժման առաջին տասնամյակը, ապա պատկերը հետևյալն է: Այն ծնվեց գաղգատներից, որոնք պատրիարքարանի միջոցով ներկայացվում էին Բ. Դռանը և իշխանության մյուս մարմիններին: Դրանք հայցում էին ոչ թե առանձնաշնորհումներ, այլ կյանքի և ունեցվածքի անվտանգություն: Դա պայքարի սկզբնավորման չրջանն էր: Երկրորդ չրջանն այն էր, երբ այլևս չհավատալով, թե օսմանյան իշխանություններն իրենց վիճակի մեջ որևէ բարեփոխություն կմտցնեն, հայերը դիմեցին տերությունների միջամտությանը: Երրորդ չրջանը բարենորոգումների իրականացման համար պայքարն էր: Չորրորդ չրջանն ինքնապաշտպանական կռիվներն էին: Հաջորդը դառնալու էր թուրքական լուծը թոթափելու համար պայքարի չրջանը, սակայն, ինչպես արդեն ասվել է, 1894-96թթ. թուրքերը հայերին այնպիսի ծանր հարված հասցրեցին, որ Մ. Իզմիրլյանի խոսքերով՝ կոտորածներից հետո հայությունը դարձավ «հուսահատների ժողովուրդ»: Հետևաբար, չի կարելի

---

[34] «Արևելյան մամուլ», Հոկտեմբեր, 1881:

[35] «Արևմուտք», 1859, թիվ 7, էջ 25:

[36] Սիմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 73:

ոչ գերագնահատել հայկական չարժումների ծրագրերը և ոչ էլ չտեսնել դրանց ազատագրական բովանդակությունը, որը ազատության երկարաձիգ ճանապարհի ուղենիշն էր: Շարժման անկախական-ազատագրական բնույթը դանդաղ էր առաջին պլան դուրս գալիս, քանի որ օսմանյան իշխանությունները սրով ու հրով էին ոչնչացնում ոչ միայն անկախության, այլ նաև բարենորոգումների համար պայքարի ամեն մի դրսևորում. սուլթանի կարծիքով բարենորոգումներն ուղիղ գծով տանում էին դեպի Հայաստանի անկախություն:

Ըստ այդմ էլ, հայկական չարժումների հիմնահարցերը քննարկելիս, անհնար է աչքաթող անել, որ թուրքերն իրենց զարգացման մակարդակով զիջում էին հպատակ չատ ժողովուրդներին: Նաև դրա հետևանքով՝ սուլթանական կառավարության ջանքերը հպատակ ժողովուրդներին միավորելու «օսմանյան ազգության» մեջ, ավելի էին խթանում այդ ժողովուրդների ազատագրական ձգտումները, և կայսրությունն ավելի վաղ վերածվեց ազգային չարժումների հրապարակի, քան կձևավորվեր թուրք ազգը: Ազգային չարժումները դեպի անկում էին մղում կայսրությունը և, եթե զարգացումը բնականոն ընթացք ունենար, վերազգային Օսմանյան կայսրության հիմքի վրա ձևավորվելու էին ազգային մի քանի պետություններ և, իհարկե, առաջին հերթին, թուրքական ազգային պետությունը: Սակայն տերությունները կասեցրեցին կայսրության անկումը: Մեծ հաշվով տերությունները դեմ չէին Օսմանյան կայսրության մասնատմանը: Դեռ ավելին, նրանք ձգտում էին դա անել ազգային չարժումներին աջակցելու միջոցով: «Սակայն, երբ օրակարգ էր մտնում թուրքերի դուրս մղումը ոչ թուրք ժողովուրդների տարածքներից, ապա ընդհանուր շահագրգռվածությունը փոխարինվում էր համընդհանուր մրցակցության և ազգային հարցն ինքնաբերաբար դառնում էր միջազգային չահարկումների առարկա»[37]:

Հպատակ ժողովուրդներից, ինչպես արդեն նշվել է, ամենաբարդն ու ամենաչհարկվողը դարձավ հայերի հարցը և դա այն պատճառով, որ օսմանյան լուծը ռուսական զենքի օգնությամբ նույնիսկ թեթևացնելու մղումն արևմտահայերին «ինքնաբերաբար դարձնում էր Ռուսաստանի օգնությունը հայցողներ», չնայած իրականում ռուսական գործոնը Հայկական հարցի լուծումը բարդացնում էր ոչ միայն ռազմաքաղաքական հարաբերությունների, այլև ամենից առաջ սահմանակից լինելու իրողության ուժով: Համեմատության դեպս, մինչև Հայկական հարցի միջազգայնացումը թուրք-ռուսական հարաբերությունների հայկական գործոնի դերը գերագնահատելու հիմքեր չենք տեսնում: Ա. Կոլյուբակինն Արևմտյան Հայաստանում ճանապարհորդությունից հետո գրեց. «Բարձրագույն Դռան կառավարությունը ներկայումս... Ասիական Թուրքիայի հյուսիս-արևելյան մասում համառ պայքար է տանում հայերի քաղաքական չարժումների դեմ և ձգտում է դրանք ճնշել՝ օգտագործելով այնպիսի գործելակերպ, որն ապագայում հանգեցնելու է մեծ բարդությունների ոչ միայն հայրենասեր և առաջադեմ հայերի, այլև ամբողջ հայ ազգաբնակչության համար»[38]: Ասված է չատ որոշակի՝ թուրքերը խնդիր էին դրել ոչնչացնել ոչ միայն ազատագրական չարժման մասնակիցներին, այլև ամբողջ արևմտահայությանը:

Սուլթանը քարոզչական նպատակներով էր հայկական չարժումների վտանգավորությունը չեշտում: Սակայն իրողություն էր նաև այն, որ Զուլումի տարիներին՝ մինչև 1894թ., կայսրությունում հայերի զանգվածային կոտորածներ տեղի չունեցան: Պատճառները երկուսն էին. նախ՝ Բեռլինի դաշնագիրը դեռևս թարմ էր, երկրորդ՝ Ելդըզում նպատակահարմար գտան ժամանակավորապես փոխել Հայաստանի հայաթափման եղանակները, քանի որ հավաքական «ջարդը քաղաքական գործողություն էր», և չնայած Բեռլինից հետո հայերի հանդեպ սուլթանի թշնամանքը չեշտակիորեն աճեց, այնուամե-

[37] Զաքյան Հ., Ազգային հարցի ակունքները Թուրքիայում, Երևան, 1994, էջ 1:

[38] Колюбакин А. М., նշվ. աշխ., հ. III, մաս I, Թիֆլիս, 1891, էջ 56:

նայնիվ, գյավուրներին «ջարդով պատժելու տրամադրությունը» դեռևս չէր գործադրվում, գուցե նաև այն պատճառով, որ պատերազմում պարտությունը սուլթանին «անզոր էր դարձրել»: Բայց միանգամայն սխալ է այն կարծիքը, թե հայերը չօգտագործեցին այդ կացությունը, կառչած մնացին տերությունների աջակցությունը հայցելու մարտավարությանը, ինչը բարենորոգումների հարցը վերածեց ազգային խնդրի: Սկզբում թուրքերը փորձեցին այն չտեսնելու տալ: «Ժամանակ չունենք հայերի խնդրով զբաղվելու»,– ասաց սադրազամն Ազգային ժողովի պատվիրակությանը, այսինքն, հայերն ազդու գործոն չէին, որպեսզի հարկադրեին իրենց հարցով զբաղվելու: Հայը կարող է մեծահարուստ լինել, շռայլ կյանքով ապրել, բարձր պաշտոններ զբաղեցնել, մեծ արվեստագետ լինել, միևնույն է, նա արհամարհվելու էր, քանի դեռ չէր կազմակերպվել, հավաքական ուժ չէր դարձել:

Այդ արհամարհանքը հիմք դարձավ, որ հայ ազգային չարժման նպատակադրումներում, քաղաքական ազատություններից բացի, կարևոր տեղ հատկացվեր նվաստացումներից ձերբազատվելու համար պայքարին: Հայը ձգտում էր իրեն մարդ զգալ, ինչը չարժման մեջ մտցրեց ռոմանտիզմի մեծ չափաբաժին: Հայը հոգնել էր իր աչխատանքը, տաղանդը, ունակություններն անհատույց թուրքերին տրամադրելուց: Իսկ սուլթանը հայերի թիկունքում այնպիսի հզոր ուժ չէր տեսնում, որի հարկադրանքով կատարեր 61-րդ հոդվածի պահանջները: Բացի այդ, Ռուս-թուրքական պատերազմում պարտությունը Աբդուլ Համիդի վարկը չատ էր գցել, և նա աչխատում էր իր նախկին ազդեցությունը վերականգնել: Դրա ամենաարդյունավետ միջոցը հասարակությանը համոզելն էր, որ ինքը տերությունների կամակատարը չէ: Իսկ վերջիններին ընդդիմանալու ամենահարմար միջոցներից մեկը հայկական բարենորոգումներն էին: Հարմար միջոց էր նաև հակաքրիստոնեական մարտնչող կեցվածքը: Սակայն արտաքին հարաբերություններում այն ուժեղ հակահարված ստացավ, և սուլթանը հակաքրիստոնեական ամբողջ մաղձը ծախսեց ներքին կյանքում, առավելապես հայերի վրա: Նա քրիստոնյաների անիրավահավասարությունը հիմնավորեց նրանց «թերի, անկատար, արհամարհելի արարած» լինելով: Դրանով ձգտում էր հայերին զրկել ինքնապաչտպանության ոչ միայն գործնական, այլև բարոյական իրավունքից: Նույնիսկ կենցաղային հողի վրա հայի ընդվզումը գնահատվում էր որպես քաղաքական անհնազանդություն:

Իրենց իրավունքները հարգելու՝ հայերի պահանջները սուլթանը գնահատեց, թե նրանք ևս գնում են բալկանյան ժողովուրդների ճանապարհով: Սակայն անհանգստացնողը ոչ թե հայերի զինված պայքարն էր, քանի որ նրանց ուժերը նվազ էին, այլ համաչխարհային հասարակական կարծիքն իր դեմ ուղղելու հայերի ծավալած աչխատանքը: Դրա առաջն առնելու միջոցը նա համարեց հայերի միջից ազատության ձգտումն արմատախիլ անելը: Այդ նպատակով կյանքի կոչվեցին Զուլումի քաղաքականությունը, հայերին ահաբեկելու գործողությունները: Բանը հասավ նրան, որ հանցագործ հռչակվեց ոչ թե այս կամ այն անձը, քաղաքական ուժը, այլ ամբողջ հայ ժողովուրդը: Սուլթանին այդ ամենում ոգևորում էր տերությունների անորոշ կեցվածքը: Հիմքից զուրկ չէ Ֆրանսիայի հյուպատոս Բեռ դը Ֆրանսի հետևյալ միտքը. «Ձեր պատրիարքի կամ առաջնորդների բողոքներով չէ, որ Եվրոպան իրականացնում է իր քաղաքականությունը հայերի հանդեպ: Եվրոպան հյուպատոսների միջոցով տեղյակ է բոլոր իրադարձություններին, բայց միայն իր համար հարմար պահերին է դրանք հրապարակ հանում և թուրքերին թույլ տալիս ուզածը կատարելու»: Այս ամենը, բնականաբար, ազդում էր հայ ազատագրական չարժման վրա: Եթե սկզբնական չրջանում այն հույս ու հեռանկար ուներ, ապա աստիճանաբար դրանք կորցրեց:

Սուլթանը ճանաչում էր միայն ուժի հեղինակությունը, իսկ հայերն իրենց վիճակով, կազմակերպվածությամբ ի վիճակի էին միայն խնդրելու: Հայ գործիչները հասկանում էին, որ երկաթե չերեփ էր պետք, ռազմական ուժի դեմ՝ ռազմական ուժ, ազատության

համար զոհվելու պատրաստակամություն: Հասկանում էին, բայց ի զորու չէին դրանք վերածել «գործող հզորության»:

Արևմտահայության զարթոնքի հարցում, ճիշտ է, էական դեր խաղացել են չատ գործոններ՝ տնտեսական առաջընթաց, մշակութային չարժման ծավալում, տերությունների ազդեցության ուժեղացում, բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքար, սակայն գլխավոր ազդակը օսմանյան հայահալած քաղաքականությունն էր: Բայց ճնշումների, հարստահարությունների դեմ զինված պայքարն ինքնին չի նշանակում, թե այն անպայման հետապնդում է անկախական նպատակներ: Մարդիկ զենք են վերցնում նաև սեփական վտանգված կյանքը պաշտպանելու կամ դժոխային պայմանները փոփոխելու համար: «Թող ամեն ոք հարցնե ինքն իրան,– գրում է Ղ. Աղայանը,– թե հնարավո՞ր է արդյոք դժոխքի մեջ եդեմական տունկեր բուսեցնել, հնարավո՞ր է արդյոք ստրկական վիճակի մեջ գտնել քաղաքակրթության և լուսավորության հետքն ու արդյունքը»[39]: Պայքարը կյանքի պայմանների բարվոքման համար էր, և ոչ թե Մաևսկու հնարածի՝ «Աստիճանաբար առաջին պլան էր գալիս Անկախ Հայաստանի գաղափարը»[40]:

Օսմանյան բարբարոս լուծն ուներ ազատագրական տրամադրությունների ծիլերն իսկ հպատակ ժողովուրդների արյան հեղեղներում խեղդելու դարավոր փորձ և մարդկային տարրական տրամաբանության հետ ոչինչ ընդհանուր չունեցող վայրագ հոգեբանություն: Թուրք պատմաբան Հ. Բայուրը ջարդերը համարում է «հայերի ապստամբության» ձևերից մեկը[41]:

«Վանի հայ գործիչները,– գրում Ռ. Տերմենը,– բոլորն էլ գիտակցում էին, որ Թուրքիայի դեմ պայքարելն անմտություն է, որ նման փորձն իսկ կհանգեցնի հայկական գյուղերի ոչնչացմանը»[42]: Սակայն դա չէր նշանակում, որ հայերը, ինչպես գտնում են արևմտյան որոշ մասնագետներ, պետք է հաշտվեին իրենց դժոխային վիճակի հետ և հրաժարվեին պայքարից: «Հաճախ ասում են,– գրում է Էդվին Բլիսը,– որ գազանությունների համար պատասխանատվությունը զգալի չափով ընկնում է հայկական չարժման վրա... Հնչակյանների պլանները աբսուրդ էին, նրանց սպառնալիքները ուղղված էին ոչ միայն թուրքերի, այլև իրենց այն հայրենակիցների ու բարեկամների դեմ, ովքեր հրաժարվում էին իրենց հետ համագործակցելուց... Մինչդեռ ժողովրդական լայն զանգվածները լրիվ անհաղորդ էին նրանց պլաններին ու սպառնալիքներին»[43]:

Բ. Բորյանը, քննարկելով հայ ազատագրական չարժման ծագման հարցերը, գրում է. «Տնտեսական գործոնների և քաղաքական ճնշումների ուժով ազգային ազատագրության չահերը վերածվում են համազգային պահանջմունքի... Իսկ ազգային գործելակերպը միավորում է բոլորին ընդհանուր թշնամու դեմ»: Նման պայմաններում ազգի «չահերը» վերածվում են «գաղափարախոսական գործոնի, իսկ բուրժուազիան դառնում է ազգային ազատագրության գաղափարաբան», քանի որ նրա չահերը պահանջում էին, որ «ազգը լիներ միասնական և ուժեղ» ազգային պետությունում:

Հայկական ազատագրական չարժումը, սակայն, բացի ներքին գործոններից «հասունացավ» չնորհիվ «արտաքին գործոնների», ինչպես օրինակ՝ Արևմուտքի «քրիստոնյա թագավորների բարենպաստ վերաբերմունքը հայ վաճառականների ու Հայաստանն ազատագրելու նրանց գաղափարի հանդեպ...»: 1890 թվից «Հայ առևտրա-բուրժուական» հասարակայնությունը ուղ է դնում «թուրքահայերի «ազգային» ազատագրության ուղու վրա», որի գաղափարախոսը դարձավ «Անդրկովկասի հայության առևտրական բուրժուազիան»: Ինչ վերաբերում է Ղրիմի պատերազմի ժամանակ Ստ. Ոսկանի կողմից

---

[39] Աղայան Ղ., *Մի երես մեր նորագույն պատմությունից*, Մոսկվա, 1891, էջ 2-4:
[40] Маевский В. Т., *Նշվ. աշխ.*, էջ 142:
[41] Bayur Y. H., *Türk Inkilâbı Tarihi*, Ankara, 1957.
[42] Термен Р., *Отчет*, ч. II, стр. 84.
[43] Bliss E. M., *Turkey and the Armenian Artocities*, Philadelphia, 1896, pp. 557-558.

Ֆրանսիայի կառավարությանը ներկայացրած փաստաթղթերին՝ Հայաստանի ազատագրության գործում եվրոպական պետությունների դերի մասին, Հ. Սվաճյանի կողմից «Հեղափոխությունը նախապատրաստելու համար» գաղտնի «մարմնի» ստեղծմանը, Զեյթունի 1862թ. ապստամբությանը և արևմտահայ շարժման մեջ Նապոլեոն 3-րդի դերին, «դրանք հայերի հասարակական կյանքում վճռորոշ նշանակություն չեն ունեցել»: Մինչև 1878թ. պոլսահայ բուրժուազիան «իր շահերը պաշտպանում էր օսմանյան պետության» միջոցով, որը չէր կասեցնում այդ բուրժուազիայի նախաձեռնությունները: Նման պայմաններում նա «Հայաստանի ազատագրության և հայկական պետականության ստեղծման խնդիր չէր դնում»:

Հայկական շարժումն օբյեկտիվորեն Հայաստանի ինքնավարության խնդիր ուներ, որի լուծումը հայ գործիչները տեսնում էին արևմտյան տերությունների միջամտության միջոցով: «Հայազգի ներկայացուցիչների ղեկավարությամբ հայ ժողովրդական զանգվածների գործողությունները միշտ թելադրվել են մեծ տերությունների դիվանագետների կողմից»:

Բ. Բորյանն արևմտահայ ազատագրական շարժումը դիտարկում է դասակարգային վարքագծի դիրքերից, մոռանալով, որ ազգային շարժումներում բուրժուական տարրերը հիմնականում դրական և առաջադիմական դեր են խաղացել: Մանավանդ այնպիսի երկրում, ինչպիսին Թուրքիան էր՝ իր ռազմա-ավատատիրական կացութաձևով ու հակումներով, որտեղ դասակարգային չերտավորումը բյուրեղացած չէր, և աշխատավորական զանգվածները ցրված ու ճզմված էին, բուրժուազիան պարտավոր էր իր վրա վերցնել ազգի ղեկավարի դերն ու պատասխանատվությունը: Դժբախտաբար, հայ բուրժուազիան ի վիճակի չգտնվեց լուծելու այդ խնդիրը[44]:

Տերմենը միանգամայն այլ մոտեցում ունի: Նա գրում է. «Հայ ազգաբնակչության ծանր կացությունը, մշտական ճնշումները, որոնց նա ենթարկվում էր, իրավազրկությունը և հայերի հանդեպ թուրքական կառավարության անարդարությունները հայ հասարակությանը նախապատրաստեցին ընկալելու հեղափոխական գաղափարներ... Դեռ սահմանադրական նստարանից հայ երեխաները համակվում էին թշնամությամբ թուրքիայի հանդեպ: Երիտասարդությունը... ցավագին էր ընդունում իրավազրկության և անարդարության բոլոր թեկուզ փոքրիկ դեպքերը, որոնց մասին լսում էր ընտանիքում և տեսնում ամեն քայլափոխին: 1895-96թթ. կոտորածներից հետո մնացին շատ որբևայրի կանայք ու երեխաներ՝ զրկված ծնողներից ու հարազատներից: Նրանք չէին կարող թշնամություն չտածել մարդասպանների հանդեպ»:

Առանց դատի և լոկ աննշան կասկածով հայերին բանտ նետելը և նմանատիպ շատ վայրագություններ ցավագին էին ընդունվում: Հայ երիտասարդությունն ամբողջ հոգով ատում էր թուրքական կառավարությանը: Հայկական դպրոցները նպաստում էին այդ ատելության ուժեղացմանը: Արդյունքում երիտասարդությունը վերածվում էր հեղափոխական ցանկացած գաղափար ընկալելու միանգամայն պատրաստ տարրի, «մանավանդ որ կրթություն ստացած այդ երիտասարդությունն իր գիտելիքների ներդրման հնարավորություն չուներ, կառավարական համակարգում ծառայելու իրավունքից զրկված էր», արդյունաբերությունն ու առևտուրը թույլ էին զարգացած, ինչը նույնպես իր ազդեցությունն էր ունենում: Իշխանությունները հային չէին պաշտպանում քրդերի թալանից: Պաշտպանվելու այլ ելք չկար, եթե ոչ աշիրեթների օրինակով միավորվելը: Հայդուկները համախմբեցին գյուղերը, պաշտպանվելու համար զենքեր բաժանեցին, և այնտեղ, որտեղ ֆեոդալներն ուժեղ էին, քրդերը չէին համարձակվում թալանել հայերին, նրանց բունությունների ենթարկել:

---

[44] Борян Б. А., նշվ. աշխ., հ. I, էջ 19-38:

*Կառավարությունը հօգուտ մահմեդականների մշտական առճակատում ստեղծեց, իսկ կոտորածների քաղաքականությունն այլ ելք չէր թողնում, եթե ոչ փրկվելու միջոցների դիմելը: Եվ ծնվեցին մարտական խմբեր, ստեղծվեցին զինամթերքների պահեստներ, հայթայթվում էր զենք, կազմակերպվում էր երիտասարդության ռազմական ուսուցում: Այդ խմբերն ինչ-որ չափով իրենց ձեռքը վերցրին նաև տվյալ գյուղի համայնքի կառավարման գործը՝ տուրքերի հավաքում՝ զենք ձեռք բերելու և «հեղափոխական կազմակերպության համար», վարչական և դատական միջոցների կիրառում: Նրանք չեզոքացնում էին քրդերի ոտնձգությունները, զսպում թուրք պաշտոնատարներին: Շատերը գերադասում էին «դիմել հեղափոխական դատարանին, քան կառավարականին»: Սակայն այս իրավիճակը կառավարությանը նաև թույլ էր տալիս հեղափոխականների դեմ պայքարի պատրվակով, ուժեղացնել հայերի հալածանքները*[45]*:*

*Առաջին հայացքից ոչինչ չէր փոխվել, մինչհեղափոխական շրջանում հայերի հանդեպ թուրքական քաղաքականությունն այնպիսին էր, ինչպես հետհեղափոխական շրջանում. փոփոխությունները չեչտադրումներից այն կողմ չէին անցնում: «Հարյուր հազարավոր գաղթականների,– գրում է Գր. Միքայելյանը,– սկսած 18-րդ դարից ռուսաց սահմանակից նահանգներից գաղթեցնում էին դեպի թուրքիայի խորքերը (Ս. Գլինկա, «Հայերի գաղթականությունները»), հարյուրավոր գյուղերի ու վանքերի հողերի հափշտակում (1871 և 1876 թվերի պատրիարքական տեղեկագրեր), հարյուրավոր գյուղերի կատարյալ ավերում (Կապույտ գիրք, 1880թ.), մասնակի կոտորածներ և հայերի բնաջնջման բացահայտ ծրագիր (Բայազետ, 1877թ., Զեյթուն ու Քյամիլ փաշա, 1879թ. և այլն), բազմաթիվ գավառների բռնի իսլամացում (մանավանդ Կարինի և Տրապիզոնի նահանգներում), կամավոր կաթոլիկ կամ բողոքական դառնալ՝ նյութական նպաստներ կամ օտար պետությունների հովանավորությունը ստանալու ակնկալիքով, պարբերական սով տասնյակ հազարավոր զոհերով (1880թ.), հարյուր հազարավոր չերքեզների, թուրքերի, լազերի, քրդերի և թարաքամների Հայաստան և Փոքր Ասիա տեղափոխում,– ահա նախահեղափոխական «երջանիկ» դրության մեծաթիվ բարիքները»*[46]*: Այս կարծիքին ամբողջությամբ համաձայնել չի կարելի, քանի որ զանգվածային ջարդերը տեղի ունեցան հետհեղափոխական շրջանում, չնայած դա չի նշանակում, թե այդ ջարդերը հետևանք էին ազատագրական պայքարի, այլ հայերի հանդեպ թուրքական քաղաքականությունը խստանալով, վերածվեց բնաջնջման գործողությունների:*

*Հավանաբար բավարար հիմնավորվածություն չունի նաև այն պնդումը, թե երբ ակնհայտ դարձավ, որ հակառակ սուլթանի կամքի, հայկական հարցն անհնար էր լուծել տերությունների օգնությամբ, հայ գործիչները «չմղվեցան թուրքերուն հետ հասկացողության լեզու մը գտնելու... Հայ եկեղեցականներու քաղաքական կարճատեսությունը չատ սուղ նստավ հայության: Անոնք դրին հիմքը թուրք պետության դեմ պայքարի, անզիջող դիրք մը գրավեցին, խուսափեցան թուրք վարիչներուն հետ ուղղակի հարաբերություն մշակելե, կռվախնձորի մը վերածեցին 61-րդ հոդվածը*[47]*: Եթե ասվածն իրավացի է, ապա անհասկանալի է նույն հեղինակի հետևյալ միտքը. «Թուրք պետական գործիչները կը հասկնային, որ հայերը չէին կրնար անջատողական ձգտումներ ունենալ... կայսրության մեջ իրենց ունեցած վիճակի բերումով իսկ: Հայերը կրնային բավարարություն զգալ բարենորոգչական կարգ մը ձեռնարկներու կիրառումով: Չէին ուզեր և չէին կրնար տալ այդ գոհացումը հայերուն... վախենալով, որ բարենորոգումները կրնային ապահովել հայերու ավելի արագ զարգացումը և թվով աճումը՝ պատճառ դառնալով ապագա անջատողական ցնծություններու»*[48]*:*

*Ուրեմն, ըստ Լ. Զորմիսյանի, ի՞նչ է ստացվում.*

---

[45] Термен Р., *Отчет*, стр. 75-83.
[46] **Միքայելյան Գր.**, նշվ. աշխ., էջ 43:
[47] **Զորմիսյան Լ.**, նշվ. աշխ, հ. Ա, էջ 415:
[48] Նույն տեղում, էջ 412:

*ա) համիդյան հայաջինջ քաղաքականությունը հետևանք էր նաև հայերի հակաթուրք՝ անկախական ձգտումների, բ) սուլթանը հայերին բարենորոգումներ չէր տա և տալ չէր կարող, գ) այդ բոլորով հանդերձ հայերը պարտավոր էին թուրքական կառավարության հետ «լեզու գտնել»: Հասկանալի չէ, թե հանուն ինչի՞, եթե հայահալած քաղաքականությունը չարունակվելու էր:*

*Այո, եվրոպական միջամտության անհավանականությունը հայության չրջանում «քաղաքական խնդիրների վերաբերմամբ մտավորական քաոս» էր առաջացրել, բայց այդ բացատրել, թե «հայ եկեղեցականները որևէ քաղաքական դաստիարակություն չեն ունեցած», անընդունակ էին «քաղաքական հստակ ուղեգիծ մը ճշտելու», թե «հայ եկեղեցականությունն ազգային քաղաքականություն ունեցած» չէ, և կաթողիկոսները, պատրիարքները չարժվել են «անձնական համոզմունքներով, հաճախ հետևելով իրենց նախորդների հակոտնյա վարքագծին», տրամաբանական չէ: Զորմիսյանը բարեխիղճ հեղինակ է: Իր շատ արժեքավոր աշխատությունում ընթերցողին է ներկայացնում խնդրի բոլոր կողմերն ու փաստարկները: Նա ինքն է գրում, որ իշխանությունների հետ «հաչտ հարաբերություններ կառուցելն» այլևս անհնար էր: «Նախ, հայն արդեն անկարող էր հին ձևերով ապրել, երկրորդ, բարենորոգումների խնդիրը դարձել էր համազգային, որին ամեն հայ տալիս էր ազգային ազատության իմաստ»:*

*«Հայկական կյանքը,– գրում է Գր. Միքայելյանը,– վաղուց եկել կանգ էր առել մի խոչոր դիլեմայի առաջ՝ կամ անպայման բնաջնջում իբրև մի ամբողջություն, իբրև մի հայրենիքի տեր ժողովուրդ, կամ դիմադրություն՝ կյանք, պատիվ, ստացվածք, տուն, հայրենիք, ամեն ինչ բռնաբարող ուժի դեմ»[49]:*

*«Եվ երբ դրությունը ստանում է այդպիսի սուր կերպարանք, երբ պարզվում է, որ իրերի ընթացքն ինքնըստինքյան դեպի կործանում է տանում, բնական չէ՞, արդյոք, որ մի ժողովուրդ այդպիսի հանգամանքներում ընտրի այն, թեև վտանգավոր, բայց հուսատու ուղին, որ զոհերի հետ միասին խոստանում է նաև որևէ ապագա: Առաջին դեպքում անխուսափելի է անպատիվ, տմարդի, ժողովրդի անհուն ստորությունն ապացուցող անպայման կորուստ. երկրորդը միայն մի վեհ, մի փայլուն, մի սրբազան ռիսկ է՝ պայմանական հաջողությամբ: Ապահով և պատվավոր կյանքի հզոր բնազդը՝ այն հավիտենական, հրաշագործ բնազդը, որով ապրում ու գործում են ժողովուրդները, թեև շատ թուլացած, բայց, բարեբախտաբար, դեռ իսպառ չէր բթացած հայ ժողովրդի որոշ տարրերի մեջ, և միմիայն այդ բնազդը բավական էր արդեն մահաբեր դիլեմայի դիմաց՝ ինքնապաշտպանության բոլոր զգացմունքները նրանց մեջ լարելու համար»:[50] «Ոչ ոք, որքան էլ ի բնե խաղաղասեր լինի, չի կարող չդիմել բռնի միջոցների, երբ վտանգվում է նրա կյանքն ու պատիվը»[51]:*

*«...Հայերը,– նկատում է Մ. Մաքքոլը,– եթե որևէ չնչին հույս ունենային հաջողության վրա, ոչ միայն իրավունք պիտի ունենային, այլև իրենց սրբազան պարտականությունը պիտի համարեին ապստամբել և տապալել այդ դժոխային կառավարությունը, որ դատապարտում էր նրանց՝ մարդկային տարեգրությունների մեջ երբևիցե պատահած ամենաստորացուցիչ, ամենադաժան և հուսազուրկ ստրկության... Բ. Դեան նման ավազակային կառավարության զոհերն ամենևին պարտավոր չեն հավատարիմ լինել նրան և իրավունք ունեն խորտակել այդ կառավարությունն առաջին իսկ հարմար դեպքում... Ազգերի ամենամեծ չահը խաղաղությունը չէ, որովհետև կարելի է խաղաղություն վայելել և անարգ վտանգության մեջ՝ ուրանալով ամեն սրբություն»[52]:*

*1890թ. անգլիական գնդապետ Ջարմայդը գրեց. «Վերջին տարիներս Կարինի և այլ գավառներում կազմակերպվող գաղտնի ընկերությունների ու կոմիտեների՝ զենք ձեռք*

---

[49] Միքայելյան Գր., նշվ. աշխ., էջ 45:
[50] Նույն տեղում, էջ 47:
[51] Նույն տեղում, էջ 48:
[52] Նույն տեղում, էջ 49:

բերելու դիտավորություններն ու փորձերը, Վանում և շրջակայքում տեղի ունեցած դեպքերը ցույց են տալիս, որ իսկապես գոյություն ունի խորին դժգոհություն: Եվ իրավ, տարօրինակ կլիներ սպասել այլ բանի, քան դժգոհությունն է»[53]:

Ռոլեն Ժեկմենը սրտնեղում է, որ «Հայերը փոխանակ ապստամբելու, բավականացան միայն գանգատներով... եթե տաճկական հալածանքները ճնշված հայերի մեջ խոր տեղչանք են արթնացնում՝ ստանալ ոչ թե միայն անձնական անվտանգություն, այլև ընդհանուր ինքնավարություն այն հողի վրա, որտեղ իշխել են նրանց նախնիները, և դաշնագրերի գծած սահմաններում, դա ամենևին արդյունք չէ սովորական բանսարկության, այլ մի պատվաբեր երևույթ մարդկային բնավորության համար, որ արիանում է աղետների մեջ»: Կամբոնը 1894թ. փետրվարի 20-ին գրեց. «Իր անգթությամբ Բ. Դուռը սրբագործեց Հայկական չարժումը, որ այժմ արդեն ունի իր նահատակները»[54]:

Հայ քաղաքական ուժերը գիտակցում էին, որ ստրուկից կարելի է քաղաքացի դաստիարակել միայն նրա բանականության և կամքի վրա ազդելով: Ռայային հարկավոր էր միաժամանակ ցույց տալ ազատ քաղաքացիների պատկերները և նրա մեջ հզոր տեղչանք ներարկել և ոչ պակաս հզոր կամք՝ պայքարել հանուն այդ կյանքի: Այս հիմքի վրա ձևավորվեց արևմտահայության ազատագրական չարժման ծավալման քարոզչությունը: «Ի՞նչ է ուրեմն մեր չարժման նպատակը,– գրում է Քր. Միքայելյանը,– ուրիշ ոչինչ, եթե ոչ կազմակերպված և բռնի ուժով կռվել, բողոքել Տաճկաստանում տիրող սպանիչ կարգերի դեմ, մինչև որ վեց պետությունների երաշխավորված միջնորդությամբ այդ կարգերը դեպի լավը կփոխվեն»[55]:

Հ. Լեյարդը 1879թ. հունիսի 12-ին գրում է Սոլսբերիին. «Եթե Բ. Դուռը զգուշանա, եթե չգործի հեռատես և խոհեմ, մի գեղեցիկ օր Ասիայում կծագի հայկական խնդիր, ինչպես որ Եվրոպայում ծագեց բուլղարական խնդիր...»:

Լինչը նկատում է. «Այս պայմաններում քրդերի հզորությունն անընդհատ աճում է: Պալատը նրանց նկատմամբ բարյացակամ է... Մյուս կողմից, հայերի նախկին ստրկամտությունն իր տեղը զիջել է ուրիշ տրամադրության...»: Որպես օրինակ նա բերում է Վանի հասարակությանը՝ բաժանված «երկու կուսակցությունների», որոնցից մեկը «ոգեշնչված էր» Խրիմյան Հայրիկի գաղափարներով՝ «Գիտակցել մարդկային արժանապատվությունը և պարտականությունը սեփական անձի և սեփական ժողովրդի հանդեպ»: Նրա «անձի հզոր ազդեցության տակ ամենուրեք բացվեցին դպրոցներ», որոնց ուսուցիչները «տոգորված էին նույն եռանդով իրենց վեհ առաքելության հանդեպ»: Երբ թեփն ընկավ ոտնահարված ժողովրդի աչքերից, «նրա բնածին եռանդը դրամական հարստություններ կուտակելուց փոխադրվեց սոցիալական բարվոքման և քաղաքական ազատագրության բնագավառը: Զարմանալու ի՞նչ կա, եթե նրա քաղաքականությունը երբեմն այնպիսի բնույթ էր ստանում, որ հարկադրում էր եվրոպացիներին հաճախակի խոժոռվել և շատ ավելի հաճախ ժպտալ: Հայերը հպատակ ազգ են եղել ավելի քան ինը հարյուրամյակ և դրա համար էլ լի են փոքրիկ արատներով, որոնք հետևանք են այդ վիճակի: Նրանք բացարձակապես ընտելացած են օտար լծին ու դեռևս ընդունակ չեն ինքնակառավարվելու: Հայկական հին բնավորությունը ենթարկվել և դեռևս չարունակում է ենթարկվել խմորումների ու վերափոխումների: Հայը դեն է նետում մի քանի, նրա մեջ մինչև այժմ առավել չեշտված, հատկություններ»[56]:

Հայկական չարժման ուղին դժվար էր, լի խորխորատներով: Թուրքիայում, մանավանդ նրա ասիական մասում, թույլ էր ոչ միայն հայկական, այլև մյուս ժողովուրդների ազատագրական պայքարը: Դրա պատճառներից մեկն այն էր, որ կայսրությունը կազմ-

---

[53] Նույն տեղում, էջ 49-50:
[54] Միքայելյան Քր., նշվ. աշխ., էջ 51:
[55] Նույն տեղում, էջ 51-53:
[56] Լինչ Գ., նշվ. աշխ., հ. II, էջ 110-111:

*ված էր բազմաթիվ ցեղերից ու ժողովուրդներից, որոնցից «յուրաքանչյուրը մեկ առանձին և ամբողջական հասարակություն էր և ուներ իր առանձնահատուկ ծագումը, լեզուն, կրոնը ու այս կամ այն չափի ինքնավարությունը»*[57]:

*Ինչ վերաբերում էր Հայկական չարժմանը, ապա այն հարկադրված էր գործել երկու ճակատով՝ ներքին ճակատ՝ ուղղված լրտեսների, չարժմանը հակառակորդ հայերի՝ ամիրաների և այլոց դեմ, ովքեր ճգնում էին ապացուցել այդ շարժումների ավելորդությունն ու վնասակարությունը, արտաքին ճակատ՝ միջազգային հանրային կարծիքին ապացուցելու Հայ դատի արդարացի լինելը: Շատերը թերահավատ էին, թե հայկական շարժումն ի վիճակի էր լուծելու նման բարդ խնդիրներ և ընդհանրապես վերածվելու քաղաքական նշանակալից ուժի: Օտյանը գրում է. «Ազգ մը արյուն թափելու համար նախ արյուն պիտի ունենա և ապա այն թափելու քաջություն և անվեհերություն: Մեր ժողովրդի քով ոչ այդ արյունը մնացած է և ոչ էլ այդ քաջությունը»: Դժբախտաբար այս կարծիքն ավելի քան տարածված էր: Ն. Ադոնցը, հակադրվելով նման մտածողությանը, գրեց, թե հային ո՛չ արյունն է պակասում և ո՛չ էլ խիզախությունը, այլ՝ «սեփականն ու տեղականն ընդհանուրի մեջ ճուլելու հնարամտությունը», միասնականությունը, իբրև ազգ և ժողովուրդ զգալու, գործելու պահանջի գիտակցումը:*

*Սուլթանական վարչակարգին հեշտությամբ էր հաջողվում «հայերին պատժելու» գործում ապահովել ոչ միայն թուրք, այլև մահմեդական մյուս ժողովուրդների մասնակցությունը:*

*Փոքր դեր չէին խաղում նաև տերությունների թշնամական, հաճախ նաև սադրիչ մոտեցումները, Ռուսաստանի ժամանակ առ ժամանակ դրսևորած անհասկանալի դիրքորոշումը: Ոչ քիչ դեպքերում ցարիզմն արևմտահայության հանդեպ վերաբերմունքում առաջնորդվում էր արևելահայերի հանդեպ իր մոտեցումներով: Միայն մեկ օրինակ. հասկանալի է, որ օսմանյան տարածքների հանդեպ ռուսական հավակնությունների իրականացման գործում արևմտահայության մասնակցությունը պայմանավորված էր ոչ այնքան էջմիածնի, որքան Ազգային ժողովի քաղաքականությամբ: Դրա փոխարեն կաթողիկոսությունը նպաստում էր արևելահայերի շրջանում ևս ազգային երազներ ու իղձեր արթնացնելուն: Նաև այդ պատճառով՝ էջմիածնի դերը ռուսական քաղաքականության մեջ գնահատվում էր բացասական: Եվ նպատակահարմար գտնվեց հայկական եկեղեցական-ծխական դպրոցներն ամբողջությամբ ենթարկել դերատեսչություններին, «մշտական հսկողություն սահմանել» եկեղեցական ներքին օղակների հոգևորականների վրա: Գտնելով, որ հոգևորականության այդ մասի հանդեպ «պատժիչ միջոցների կիրառումը... առանձնապես ցանկալի է այն պահին, երբ հայ ազգաբնակչության շրջանում նկատելի են Թուրքիայում սկիզբ առած քաղաքական չարժումները...»: Նաև որոշվեց երկրամասից արտաքսել այն հոգևորականներին, ովքեր Թուրքիայում մասնակցել են «ապստամբական» գործողություններին*[58]: *Այդ մոտեցումը հանգեցրեց արևմտահայ ազատագրական չարժումների նկատմամբ ցարիզմի թշնամական կեցվածքին: Նշված իրողությունը հստակ արտահայտվեց 1891թ. փետրվարի 21-ին Պետերբուրգում կայացած միջգերատեսչական մի խորհրդակցությունում՝ նվիրված «Հայկական գործերին»: Այն խնդիրը ուներ հստակեցնելու կառավարության վերաբերմունքն արևմտահայ չարժումներին: Խորհրդակցությունում պիտակներ կպցվեցին դրանց: Ցարական քաղաքականության մեջ դրսևորվող վայրիվերումները, իհարկե, անդրադառնում էին հայ, մանավանդ՝ արևելահայ գործիչների տրամադրությունների վրա, առանձին դեպքերում հրապարակ նետում հայության երկու հատվածների միջև առկա, հիմնականում հնարովի, հակասությունները: Դարեր պահանջվեցին, որ արևմտահայը համոզվեր, որ անմռունչ հնազան-*

---

[57] **Дадян Мкртыч-бей**, *Современное армянское общество*, Тифлис, 1878, стр. 2.

[58] *"Тифлисский листок"*, 24.12.1894.

*դուբյունն իրեն չի փրկի, որ «գազանը չի բավարարվում միայն խժռելով, այլ մնացածն էլ տրորում է ոտների տակ»:*

*Արդեն նշվեց, որ փոքր չէր նաև Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքի դերը, որն ընկալվում էր որպես թուրքական ճևավորող հայրենիքի «անկապտելի մաս» և Արևելք չարժվելու դարպաս: «Անհնար է գերագնահատել,– գրում է Պ. Կամբոնը,– Հայաստանի տնտեսական ու քաղաքական նշանակությունը: Անմատչելի լեռները, որ վեր են խոյանում Հայաստանի տարածքում, ճգվում և բոլորովին մեկուսացնում են Օսմանյան կայսրության երկու մուսուլմանական մասերը՝ Միջագետքն ու Անատոլիան»[59]: Ըստ այդմ էլ, թուրքերը բալկանյան և արաբական ժողովուրդների չարժումներն այլ կերպ էին ընդունում, իսկ հայկական չարժումները՝ բոլորովին այլ կերպ, մանավանդ որ այս դեպքում կրած կորուստն անկասկած լինելու էր հօգուտ թուրքերի դարավոր թշնամու՝ Ռուսաստանի: Դրանով է բացատրվում, որ նրանք առանձնապես չընդդիմացան բալկանյան ժողովուրդներին կրոնական, վարչական և քաղաքական առանձնաշնորհումներ տալուն և բավարարվեցին «անվանական վեհապետություն մը պահելով անոնց վրա», այսինքն, զինվորական կայազորներ ունենալով և որոշ չափով հարկ գանձելով, որն էլ դարձավ այդ ժողովուրդների անկախանալու առաջին փուլը: Իսկ ի՞նչ կատարվեց Հայաստանում: Ոչ միայն կիսատպռատ բարենորոգումների մերժում, այլև վերահսկողության խստացում, Զուլում, հայերի հյուծում: Եթե Բալկաններում առաջին պլանին դրված էր ազատագրական-անկախական չարժման հանդեպ օսմանյան իշխանությունների վերաբերմունքը, ապա Արևմտյան Հայաստանում օսմանյան հայաջինջ քաղաքականության հանդեպ հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշումը: Այն հարցին, թե նման դիրքորոշումը որքանով էր համապատասխանում արևմտահայության գոյապայքարի պահանջներին, հազիվ թե հավակնի միանշանակ պատասխանի: 1890թ. Արմենական կուսակցության ներկայացուցիչ Զագրյանը գրում է. «Հնչակյաններու և դաշնակցականներու ծրագրերու մեջ կան այնպիսի հարցեր, որոնք առնչություն չունին մեր այսօրվա ազգային չարժման հետ... Անոնք ժնևեն կծրագրեն մեր այսօրվա և վաղվա ընթացքը: Մենք պետք է առաջնորդվինք մեզ չրջապատող պայմաններով: «Հնչակ» և «Դրոշակ» թերթերը չեն կրնար տեսնել մեր կացությունը»[60]: Արևմտահայերը դեռևս անկախության մասին չէին կարող մտածել, որովհետև «փառավոր կյանք մը ճեռք անցնելու փափագեն ավելի մահվան ճեռքեն ազատվելու համար հարկ եղած միջոցները ճեռք առնուն»: Խրատել կարող էին խելացի մարդիկ, իսկ երազել՝ «թշվառության և հուսահատության վերջին ծայրը հասած զանգվածները»[61]: Դժբախտաբար, արևելահայ գործիչները չատ ուշ հասկացան այս իրողությունը, ինչը լուրջ տարաձայնություններ առաջացրեց, որից տուժեց ազատագրական պայքարը: Սփռված լինելով կայսրության ամբողջ տարածքում՝ այլևայլ ազգությունների հետ խառը, արևմտահայերը հարկադրված էին ծայրաստիճանի չրջահայաց լինել, խստորեն ենթարկվել կոնսպիրացիայի պահանջներին: Գր. Արծրունին կոչ էր անում՝ եթե արևմտահայը չզինվի, կկործանվի, Ռ. Պատկանյանը երազում էր հայերին անձամբ Ավարայր առաջնորդել: Մինչդեռ արևմտահայ գործիչները պնդում էին, որ արևելահայերը թող նյութական միջոցներով ու զենքով օգնեն իրենց, սակայն թուրք-հայկական հարաբերություններին չմիջամտեն, մանավանդ «նարոդնիկյան ընկերական գաղափարախոսություններով...»: Դրան Ք. Միքայելյանը պատասխանեց. «...Ճակատագրական մի տնօրինություն է, որ Տաճկահայաստանի ազատագրությունը պիտի կատարվի ռուսահայության ճեռքով, և մենք ոչ մի գնով այդ փառքը չենք զիջի ուրիշին»[62]: Նույն կողմնորոշումն ուներ Հնչակյան կուսակցությունը: Երբ «Արև-*

---

[59] *«Ազատամարտ»*, 1991, թիվ 23:
[60] **Դարբինեան Ա.**, *Հայ ազատագրական չարժման օրերէն*, Փարիզ, 1947, էջ 33:
[61] *«Մաղիկ»*, 1862, թիվ 40:
[62] **Սերոբյան Մ.**, *Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով*, Կահիրե, 1948, էջ Զ:

*ելք»-ը գրեց, թե թող օտարահպատակներն արևմտահայերի «գործերին չխառնվեն», «Հնչակ»-ը հոխորտաց. «Վախկոտներ, դուք դողում եք կառավարության առաջ, և ձեր քաջությունը նրանով է արտահայտվում, որ սուլթանի ապտակը ձեր դեմքին՝ դուք նորին Վեհափառության ուշադրության արժանի լինելու նշան եք համարում, երբ սուլթանը թքում է ձեր պատրիարքի երեսին, դուք ասում եք. «Վեհափառն ամպոտել է և նրա բերանից անձրև է գալիս»*[63]:

*Հայկական հարցում արևելահայ և արևմտահայ գործիչների ու հոսանքների միջև եղած այս իրարամերժ դիրքորոշումները բացասական լուրջ ազդեցություն ունեցան հայերի ազգային համախմբման վրա: Թվում է՝ իրավացի է Բ. Իշխանյանը, երբ գրում էր. «Կա մի ծանրակչիռ հանգամանք, որ դամոկլյան սրի նման կախվել է յուրաքանչյուր շրջահայաց հեղափոխականի գլխին: Դա այն պարզ իրողությունն է, որ հայ հեղափոխության մեծագույն ուժերի մեծագույն մասի, մանավանդ մտավորականության հեղափոխական իդեոլոգիան անմիջապես չէր ծագում այն միջավայրից, որտեղ կյանքի սոցիալ-քաղաքական պայմանները հեղաշրջելու կենսական անհրաժեշտություն կար»*[64]*: Ի տարբերություն, օրինակ, Մակեդոնիայի, որտեղ ազգային շարժումն առաջ էր մղում մակեդոնաբնակը, «տաճկահայը՝ բարբարոսության անմիջական ենթակա օբյեկտը, տեղից չի շարժվում, չի հուզվում ու կրակվում հեղափոխական կայծով... Հայ հեղափոխական շարժումը Թրքահայ հողի վրա էապես գալիս է օտար միջավայրից»*[65]*: Թերևս նման իրավիճակի հետևանքով էր, որ արևմտահայ շարժումները մինչև վերջ մնացին տարերային ու ազգային առումով՝ ինքնամփոփ, ինչպես նաև եսակենտրոն: Իսկ առանձին անհատների ճիգերը մնում էին անարձագանք, ինչն իր հերթին ծնում էր հուսալքություն և երկպառակություն, նույնիսկ փորձեր եղան փանջունիական եղանակների գործադրմամբ հարկադրել ազգային ուժերին միանալու իրենց: Նաև անհնար է չնշել, որ արևելահայերը շատ էին գերագնահատում իրենց դերն արևմտահայ շորժումներում: Ինդիրը շատ ավելի պարզ է, քան այն ներկայացվում էր: Շնորհիվ ռուսական իրականության, արևելահայն ավելի արագ առաջադիմեց, քան արևմտահայը: Դրան գումարած՝ Ռուսաստանի քաղաքական կյանքի բարերար ազդեցությունն արևելահայերի վրա: Վաղ թե ուշ արթնանալու էր նաև արևմտահայը և արթնացավ: «50-ական թվականների կեսերից հայերի, առավելապես Թուրքահայերի շրջանում,– գրում է Գիրսը,– սկսում է զարգանալ նոր ուղղություն, սկզբում որոշակի ձևավորում չունեցող, սակայն ազգային վառ երանգով, ապա կողմնորոշված մի ձգտում՝ ստեղծել քաղաքական ինքնավարություն Թուրքիայի գերիշխանության տակ, իսկ շատ հեռավոր ապագայում հասնել լրիվ անկախության»*[66]*:*

*Ի դեպ, արևմտահայ գործիչներից շատերը նույնպես տրտնջում էին գավառահայության անմռունչ անտարբերությունից: «Աստված էշերը ստեղծել է անարգելու համար, հայերը՝ ջարդելու,– գրում է Ռուբեն Սևակը:– Թուրքիա ուժիմը պիտի փոխվի՞ – հայերու ջարդ, շարիա՞թ պիտի հաստատվի – հայերու ջարդ: Բայց այս բոլորն այնքան տարօրինակ չեն մեզ համար, որքան այն հուսահատեցուցիչ «խելոքությունը», որով հայերը կողջունեն այդ ջարդերը: Ե՞րբ այս ժողովուրդը պիտի սովորի մարդկայնորեն կատաղելու»: «Ամեն հավատարիմ կենդանի,– նույն կապակցությամբ գրեց Թորոս Մատուկյանը,– երբ կտեսնե, որ իր տերը կնեղե, կչարչարե զինք, կսպառնա իր կյանքին, կդիմե ինքնապաշտպանության, փորձ կընե խածնելու: Մի՞թե դուք այդ կենդանիներուն չափ հասկացողություն չունիք»*[67]*:*

---

[63] «Հնչակ», 1889, Թիվ 1:
[64] Իշխանյան Բ., Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1907, էջ 103:
[65] Նույն տեղում, էջ 104:
[66] "Кавказ", 25.12.1894.
[67] Սիրվարդ Ե., Թորոս Մատուկյան, Փարվիտենս, 1960, էջ 65:

*Իհարկե, կային նաև տրամագծորեն հակառակ կարծիքներ: Ինչպես նշում է Գյուտ Աղանյանը, արևելյան գործիչներն այն «համոզումն ունեին, որ տաճկահայերի կրած տառապանքներն այնպես զարհուրելի չէին, որ հարկ լիներ հեղափոխական գործողությունների դիմել նրանց ազատագրելու համար, և թե կարելի էր հայ ժողովուրդը երջանկացնել և Տաճկաստանի ձեռքով»: Մերժելով այդ կարծիքը՝ նա գրում է. «Սիստեմատիկ սպանություն ու թալան, խմբական բռնի կրոնափոխություն, իրավազրկություն, լլկանք, առևանգում ու բռնաբարություն հրեչային չափերով և անարդար հարկահանություն, սրբապղծության ամենազազրելի տեսակներ, հարստահարություն, գազանություններ ու ամեն տեսակի անլուր բարբարոսություն՝ ոչ թե անհատական բացառիկ երևույթներ են եղել Տաճկաստանում հայերի վերաբերմամբ, այլ ամենօրյա համաճարակներ, որոնցից ազատվելու համար գերմարդկային ճիգեր են թափել ամբողջ նահանգները, բայց ոչ մի փրկություն չգտնելով ո՛չ Բ. Դռնից, ո՛չ պետական բարձր պաշտոնյաների կողմից և ո՛չ, ցավ է ասել, մի շարք ապիկար առաջնորդների կողմից, ժողովուրդն ամբողջ գյուղերով փախել է ուր միայն կարողացել է փախչել, իսկ անկարողն անճնատուր է եղել, ստրկացել ու անասնացել»*[68]:

*Հովհ. Թումանյանը, անդրադառնալով «Դիվան հայոց պատմության» Գ-ժ գրքին, գրում է, որ այդ գիրքը «արցունքոտ աղերսագրերով և արյունոտ հաշվեցուցակներով ցույց է տալիս, որ Տաճկաստանում սիստեմատիկ բռնություն, թալան, առևանգում, սպանություն, կրոնափոխություն չեն դադարած, և հայի համար Տաճկաստանը եղել է ոչ թե մի պետություն, այլ սպանդանոց... սխալ են բոլոր էն մարդիկ, որոնք կարծում են, թե էս ամենը կարող էին անցնել առանց ծայրահեղ դժգոհության բռնկումի, առանց հեղափոխության: Այլև սխալ են նրանք, ովքեր կարծում են, թե հեղափոխությունը դրսեցիները՝ ռուսահայերն են սկսել Տաճկաստանում»*[69]:

*19-րդ դարավերջին Օսմանյան կայսրությունում խմորվում էր ազգային ու սոցիալ-քաղաքական նոր ճգնաժամ: Դարավոր քնից արթնացել էին ազգային ու սոցիալական ճնշման տակ կքված զանգվածները, հասարակությունն ընդհուպ մոտեցել էր կայսրության մասնատմանը: Բարձրանում էր ներքաղաքական պայքարի բարիկադը, որի մի կողմում սուլթանական վարչակազմն էր, ավատատիրական խավերն ու վաչխառությունը, զինվորական վերնախավն ու կաշառակեր պաշտոնեությունը, մահմեդական հոգևորականությունն ու կոմպրադորական բուրժուազիան, իսկ մյուս կողմում գյուղացիությունն էր, լյումպեն և կիսապրոլետարական տարրերը, հպատակ ժողովուրդների հասարակական խավերի ճնշող մեծամասնությունը: Օսմանյան հասարակությունը, սակայն, խճճված էր սոցիալական, ազգային ու կրոնական գորդյան հանգույցներում, ինչը չահագործվող տարրերին հնարավորություն չէր տալիս պայքարելու իրենց չահերի համար: Այդ է պատճառը, որ Թուրքիայում հասարակության արմատական վերակառուցման նպատակ հետապնդող ձևավորված չարժում գոյություն չուներ: Դրան մեծապես խոչընդոտում էր մահմեդական ազգաբնակչության հետամնացությունը, կրոնական մոլեռանդությունը՝ կույր հնազանդությունը պաշտոնական քարոզչությանը, նաև այն, որ դարեր չարունակ Թուրք աչխատավորական խավերի գիտակցությունը թունավորվել էր այլամերժության մեծապետական թույնով: Այս պայմաններում սոցիալական ծավալուն չարժում գոյություն ունենալ չէր կարող: Իսկ հպատակ չատ ժողովուրդների ազատագրական չարժումները միաբանություն և միասնություն չունեին: Բացառություն չէր նաև արևմտահայ ազատագրական չարժումը: Իհարկե, արևմտահայությունն իր ամբողջությամբ հանդերձ երազում էր ազատագրվել օսմանյան բարբարոս լծից, սակայն, նախ, այդ երազանքը չէր ձևավորվում որպես համազգային գործունեության ծրագիր և, երկրորդ, հայ հասարակության ոչ բոլոր խավերն էին մասնակցում ազատագրական պայ-*

---

[68] «Դիվան հայոց պատմության», գիրք Ժ-Գ, էջ 1-2:
[69] Թումանյան Հովհ., երկեր, հ. IV, Երևան, 1951, էջ 317-318:

քարին և ազգային չարժմանը: Ահա մի քանի կարծիքներ՝ վերցված ժամանակի պոլսահայ մամուլից: «Այս անգամ ևս ազգային բարձրաստիճան ավագանին և բարձրագույն եկեղեցականությունը, ձեռք ձեռքի տված, վաճառում են ազգի շահերը և ամենախայտառակ ստորագույն պայմաններով հաշտվում են Բ. Դռան հետ»:[70] «Հայերից քչերն են բարձր դիրքի հասել, նրանք էլ մեծ մասամբ թուրքի վարքն ու բարքը ճշգրտորեն ընդօրինակելով, գողություն, կաշառակերություն, չողոքորթություն, անիրավություն անելով են առաջ գնացել»:[71] «Զգում է մարդ, ինչպես, ծնունդ առած, աճում է և հայ բուրժուազիան, որ օգուտ քաղելով ժողովրդի անպաշտպան վիճակից, ոտնակոխ անելով նրա իրավունքները, անտեսելով նրա աղքատությունն ու տկարությունը, պահելով նրան թշվառ և ստրկական դրության մեջ և այդ տեսակետից օգնելով հարստահարիչ ու բռնավոր կառավարություններին, ձգտում է ժողովրդի ոսկորների ու արյան վրա իր անիրավ զորությունը հաստատել»[72]: Այսինքն, արևմտահայ վերնախավի մի մասը ոչ միայն սոցիալ-դասակարգային, այլև ազգային խնդիրներում վերապահ կեցվածք էր ընդունել: Այո, նաև կայսրությունով մեկ ցրված, մահմեդական ազգաբնակչության հոծ զանգվածների միջավայրում գտնվելն ավելի քան դժվարացնում, կարելի է ասել՝ անհնար էր դարձնում համազգային հզոր չարժումը: Ահա թե ինչու էին ժամանակի քաղաքական ուժերը գտնում, որ օսմանյան բռնակալության դեմ հայ ժողովրդի պայքարի գլխավոր եղանակը պետք է լիներին ինքնապաշտպանական պարտիզանական կռիվները, իսկ այդ պայքարի գլխավոր ուժը հայդուկությունը: Հայդուկները, թշնամի լինելով «ամեն տեսակի բռնության, սկսած սատրապ աստիճանավորներից մինչև քուրդ ավազակը՝ մի կողմից և արյունարբու հարկահանն ու վաշխառուն՝ մյուս կողմից... ապագա պատմության կենդանի դրոշակակիրներն էին լինելու»:

Հայ ազգային չարժման ձևավորման վրա մեծ էր Արևելյան հարցի ազդեցությունը, այսինքն, Օսմանյան կայսրության հանդեպ տերությունների հավակնությունները: Ճիշտ է, Արևելյան հարցն ամբողջական լուծում չունեցավ, այլ սահմանափակվեց բալկանյան մի քանի ժողովուրդների անկախացմամբ, Եգիպտոսի և Լիբանանի ինքնավարությամբ, սակայն եվրոպական տերությունների ձգտումը դեպի օսմանյան տարածքները գնալով հզորանում էր: Օսմանյան վերնախավում ձևավորվեցին ուժեր, որոնք հենվելով Անգլիայի աջակցության վրա, աշխատում էին հպատակ ժողովուրդներին մասնակի զիջումներ կատարելու միջոցով փրկել կայսրության ամբողջականությունը: Հայ ազգային չարժման վրա հատկապես մեծ էր անգլո-ռուսական հակամարտության ազդեցությունը: Այդ պետություններն իրենց քաղաքականության իրականացման համար օգտագործում էին հայ գործիչներին ու Հայկական հարցը: Բայց նաև չպետք է ժխտել եվրոպական ժողովրդավարական առաջադիմական գաղափարների ազդեցության դերը, որոնք հայ կյանք ներմուծվեցին առաջին հերթին Արևմուտքում կրթություն ստացած առաջադեմ գործիչների (Պեշիկթաշլյան, Մամուրյան, Ռուսինյան, Պալյան, Օտյան, Արփիարյան, Սիամանթո) միջոցով: Փոքր չէր նաև Մոսկվայում և Պետերբուրգում կրթություն ստացած արևելահայ մտավորականության ազդեցությունը:

Այնուամենայնիվ, գլխավոր դերը խաղաց հայերի բնաջնջման թուրքական քաղաքականությունը, որի բովանդակությունը ձևավորում էին հետևյալ սկզբունքները. մոռացության մատնել և չկատարել Բեռլինում ստանձնած պարտավորությունները, խաբել տերություններին՝ հանձնաժողովներ ստեղծել ոչ թե բարենորոգումների, այլ հայ ազգաբնակչության հալածանքներն ավելի սաստկացնելու համար, մահմեդական բնակչության մոլեռանդ տեղությունը բորբոքել հայերի հանդեպ, ովքեր ոչ միայն իբրև անհատներ, այլև սուլթանի հանդեպ խայիններ, ապերախտներ, ձգտում էին ստեղծել իրենց

[70] «Հնչակ», 1891, թիվ 1:
[71] Նույն տեղում, թիվ 6:
[72] «Հնչակ», 1988, թիվ 11-12:

պետությունը և ոայա դարձնել մահմեդականներին, այսինքն, աշխատանք տանել հայերին կոտորելու համար մահմեդական բնակչությանը նախապատրաստելու ուղղությամբ, հայ և քուրդ ժողովուրդների միջև զարգացնել ազգային ու կրոնականատելություն, քաջալերելով աշիրեթների կողմից հայերի թալանը, սպանությունները, հայկական նահանգներում հայերի թիվն այնքան նվազեցնել, որ այլևս վերանար նրանց համար բարենորոգումներ մտցնելու անհրաժեշտությունը: Այդ խնդրի լուծմանն էին ուղղված հայաբնակ չրջաններ մահմեդականների ներհոսքի կազմակերպումն ու հայերի արտագաղթի խրախուսումը: Նույն խնդրի լուծմանը ծառայեցին հարկերի բաչխումը և դրանք հավաքելու եղանակները, հարճակումները հայ հոգևոր կյանքի՝ մամուլի, դպրոցի, հոգևոր հաստատությունների վրա, դատարանների աշխատանքների այնպիսի վերակառուցումը, որպեսզի հայերին արդարացնող վճիռ չկայացնեին, ծանր հարված հասցնել հայերի տնտեսական վիճակին, այն հաչվով, որ նրանց տարեկան եկամտի առնվազն 2/3-ն անցներ պետությանն ու քրդերին, իսկ մնացածն էլ չորթեր վաչխառուն:

Այսպիսով, հայ ազգային չարժման ծնունդը պայմանավորված էր տնտեսական, քաղաքական, միջազգային, մչակութա-գաղափարախոսական ազդակներով, որոնք բոլորը և դրանցից յուրաքանչյուրը տեղաչարժեր առաջացրին մարդկանց և հասարակության կյանքում: Դրանք հայ մարդուն արթնացրին, նրա մեջ առաջացրին փոփոխության պահանջ: Հայը հասկացավ, որ ծանր կացության պատճառը սուլթանական վարչակարգն էր, որ իր ողբերգական վիճակը հետևանք էր «վարչական գործունեության ընդհանուր համակարգի, մանավանդ այն իրողության, որ պետությունը հենված էր զինվորականների, իսլամական կղերի, կալվածատերերի, ցեղապետերի, վաչխառուների վրա, իսկ նրանցից ոչ մեկի չահերին չէր համապատասխանում կարգապահ, օրենքը հարգող, արդար իչխանությունը... նրանք միայն ապօրինությունների և անկարգությունների պայմաններում էին ի զորու պահպանել իրենց չահերն ու հեղինակությունը: Նման դիրքորոշում ուներ նաև պաչտոնեությունը: Ձնչին աչխատավարձով աչխատող և ամիսները չարունակ այն չստացող մարդիկ ստիպված էին զարտուղի և ապօրինի միջոցներով ապահովել իրենց ապրուստը»: Դրությունը ծայրաստիճան սրվեց Ռուս-թուրքական պատերազմի ու դրան հաջորդած սովի հետևանքով: «Սարսափելի խուճապ էր տիրում Պոլսում,— 1883թ. գրեց Ֆրանսիայի ԱԳ նախարարության բարձրաստիճան պաչտոնատար Գաբրիել Շարմը,— ամեն օր քաղաք էին խուժում վայրենի և կատաղած բաչիբոզուկներ, ավազակներ, որոնց անգամ տեսքը սարսափ էր տարածում և քրիստոնյաների ընդհանուր չարդի վախ առաջացնում... Նրանք մասնակցել էին Անատոլիայի արյունալի կռիվներին և բանակից ազատ էին արձակվել առանց նյութական որևէ հատուցման, պետությունը նրանց տուն-դարձի մասին չէր հոգացել: Նրանք զինաթափվել էին առանց որևէ դիմադրության և իրենց թչվառության համար պատասխանատուների դեմ վրեժխնդրության որևէ փորձ չէին կատարել, զինվորական ամենահամեստ թոչակ չէին պահանջել: Նրանք հրապարակից անհետացան աննկատ... դիակներ թողած Պոլսի փողոցներում և մերձակա դաչտերում»[73]:

## 3. ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

80-ական թվականներին ազատագրական պայքարի գաղափարը գործնական բովանդակություն ձեռք բերեց չնորհիվ քաղաքական կուսակցությունների հրապարակ իջնելու:

Հայ կյանքում քաղաքական կուսակցությունների խաղացած դերի խնդիրը լուրջ ուսումնասիրության կարիք ունի: Արևմուտքի հասկացությունների ազդեցության տակ այդ կուսակցությունների գոյության արդարացումը կարծես կասկածից վեր է և ընդուն-

[73] Charme G., *L'avenir de la Turquie*, Paris, 1883, p. 27.

վում է որպես օբյեկտիվ իրողություն: Մինչդեռ պատմական փորձը կուսակցություննե-րի իրական վաստակը, եթե ոչ մերժում, ապա մտորումների տեղիք է տալիս: Մինչև օրս էլ թարմ են հնչում Հրայր Դժոխքի դատողությունները: Նա, հենվելով 1890-ական թվա-կանների իրադարձությունների վերլուծության վրա, գրում է, որ մենք «կատարելապես համոզվեցանք և հարյուրավոր ապացույցներով տեսանք, որ կուսակցությունները եղան ժողովրդի հիմքը քանդողը... այդ կուսակցություններն այնպիսի վերք մը բացած են մեր սրտին, որ ցմահ անմոռանալի է մեզ: Ներկա հանգամանքներում, ինչպիսին մենք՝ հա-յերս, ենք գտնվում, անխղճություն և մինչև անգամ դավաճանություն չէ՞ արդյոք, որ դեռ այդ կուսակցությունները բաժան կը գործեն: Այդ ընթացքն անշուշտ մեզ դիտել կուտար, որ եսական փառքի հետևից ընկած, անձնական կրքերից կուրացած ջլատում են ուժերը... մոռացած են ժողովրդի տառապանքը և իրենց փառաբանության համար են ծառայեցնում գործը... Մեր իսկական ուժը ներկայացնողը ժողովուրդն է... ժողովուրդն է տանջվողը և ինքը ժողովուրդը պիտի լինի իրեն ղեկավարը»[74]:

**Արմենականներ.** Պատերազմի օրերին Կ. Պոլսում տեղի ունեցավ Ալի Սուավիի ապստամբությունը, մայրաքաղաքում կուտակվել էին Բալկաններից փախած 150 հազար մուսուլմաններ: «Ապստամբությանը ճնշումից հետո, Համիդը ցրում է այդ գազան ամ-բոխը գավառներում և գրգռում նրանց հայերի դեմ»: Չնայած դրան առաջին քաղաքա-կան կուսակցությունը՝ արմենականները, հանդես եկավ ոչ թե անկախության, այլ բարենո-րոգումների ծրագրով: Մ. Փորթուգալյանն իր գործունեությունը համարում էր «յուր ազգի և օսմանյան տերության զույգ շահերին նվիրված գործ»: 1885թ. Մարսելում սկսեց հրատարակել «Արմենիա» թերթը: Դրա անհրաժեշտությունն ընդգծելով՝ գրում է, որ այն «հայերեն լրագիր մըն է՝ մեր հարստահարված Հայաստանի եղբայրներու դրու-թյունն աչխարհահռչակ դարձնելու, արտասահմանի հայերու ուշադրությունը նրանց վրա հրավիրելով՝ աջակցություն խնդրելու, մեր գաղափարները հայ ժողովրդի շրջա-նում տարածելու...»[75]:

Մ. Փորթուգալյանը դեմ էր պայքարի հեղափոխական եղանակներին: Ուստի պա-տահական չէ, որ նա ստեղծեց ոչ թե կուսակցություն, այլ ընկերություն: Չնայած դրան, նրա «Արմենիա»-ն օսմանյան բռնատիրության դեմ «հրապարակային առաջին ձայնը» հնչեցրեց: Օրվա հրամայական էր դարձել արևմտահայության նախապատրաստելը դժվար պայքարի համար, իսկ, ինչպես նշում է Զեռգյուրյանը, «հայն իբրև ազգ կազմա-կերպելու և վերածնելու համար հարկ է շատ դժվար ու նուրբ աշխատանք կատարել: Նա ստիպված է կռվել բազմաթիվ թշնամիներու դեմ: Ներքին կյանքում տգետ կղերի, աղա-յական կամայականություններու, ազգային կյանքն աղարտող երկդիմի տիրացուն-րուն, աղքատ գյուղացիներուն և քաղքենուն հյուծող վաչխառուներու դեմ: Մյուս կող-մե, պետք է պայքարել քաղաքական դժնդակ պայմանների, բռնության, կողոպուտի, թալանի դեմ... Փորձը ցույց է տալիս, որ Եվրոպան չի կարող լուծել Հայկական հարցը կամ իր շահերուն համապատասխան է համարել չլուծելու մեր հարցը: Հայը պարտավոր է տեր կանգնել իր բախտին՝ օգնելով Հայաստանին: Մենք հայրենասեր ենք մեր օդային հայրենիքի, մեզ պակասում է հայրենիքի ճշմարիտ և բազմակողմանի ճանաչումը: Ամեն մի հայ Հայաստան է բղավում, սակայն նրա մասին գաղափար չունի, նույնիսկ չգիտի, թե որտեղ է այդ Հայաստանը... Հայկական դատը չվտանգելու միջոցներից մեկն է հայ-րենի հողին կապված հայը: Մեր դատը կարող է մեր հողի վրա լուծվել: Մայրենի հողի յուրաքանչյուր դատարկում մահ է մեր դատի համար»: Ազատ լինելով թուրքական գրաքննությունից՝ Փորթուգալյանը՝ այդ «նիհար, կարճահասակ, ուռած հոնքերով, խարտյաշ գառնուկի» (Ա. Արփիարյան) նմանվող հրապարակախոսը չանթեր էր արձա-կում: «Հնչակ»-ը «Արմենիա»-ի մասին գրում է, որ նա մերթ «իջնում է շատ ցածր՝

---

[74] «Դրոշակ», 1895, թիվ 4:
[75] Հոբելյան Մկտրիչ Փորթուգալյանի, Կ. Պ., 1912, տե՛ս Տ. Զեռգյուրյանի հոդվածը:

61-րդ հոդվածի բարքերը քարոզելով, նրա տոնը տոնելով... երբեմն գովում է սուլթանին, երբեմն հարձակվում է նրա վրա, երբեմն հեղափոխություն, արյուն, կրակ է գոչում, երբեմն դրան հակառակ, սուլթանից սպասում է հայ ժողովրդի դրության բարեկարգություն»[76]:

1885թ. Մարսելում հրավիրված ժողովը որոշում է՝ Եվրոպայի հայ գաղութների կենտրոն համարել Լոնդոնը, դրամ հանգանակել քաղաքական գործունեության համար և հայկական հարցի ուղղությամբ դիմումներ հղել տերությունների կառավարություններին, այդ հարցը հետևողականորեն բարձրացնել եվրոպական մամուլում, օգնել եվրոպացիներին ճանաչելու հայերին: Սակայն, երբ փորձ արվեց անգլիահայերի հետ համատեղ գործել, վերջիններս գերադասեցին աշխատել անջատ: Նրանք նույն տարվա դեկտեմբերին ստեղծեցին Եվրոպայի հայերի հայրենասիրական ընկերություն՝ Կ. Հակոբյանի ղեկավարությամբ[77]: Եվ սկսվեց Եվրոպայի հայության բողոք-խնդրանքների հոսքը տերությունների կառավարություններ:

Եվրոպայում հայերի գործունեությունը սուլթանին անհանգստացրեց: Նրա պահանջով 1888թ. դեկտեմբերին Խորեն պատրիարքը չրջաբերականով դիմեց Լոնդոնի, Մարսելի հայ գաղութների հոգևոր հովիվներին՝ պահանջելով՝ հեռու մնալ «գայթակղիչ» հրապարակումներից, դադարեցնել նման հրատարակությունները, հաջողության չհասնելու դեպքում դրանք փակել տվյալ երկրի իշխանությունների միջոցով: Նույն նպատակով Եվրոպա ուղարկվեց Եղիշե վրդ. Դուրյանը: Բայց բոլոր այդ ձեռնարկումները հաջողություն չունեցան:

Հայրենասիրաց ընկերությունը 1891թ. Մինաս Զերազի գլխավորությամբ վերակառուցվեց անգլո-հայկական կոմիտեի: Այն ուներ իր պաշտոնաթերթը՝ «Հայաստան», ֆրանսերեն և անգլերեն: Այս կոմիտեն գրեթե նույն գծի վրա էր, ինչ Մ. Փորթուգալյանը՝ տերությունների օգնությամբ իրականացնել 61-րդ հոդվածը: Այս թևին հարում էր նաև Մ. Ավետիսյանը: Նրա մասին Հ. Երամյանը գրում է. «Ուղղամիտ, անկեղծ, անբասիր, բայց ուտոպիստ մտավորական մը, որը հայ կյանքին ծանոթ չէր»: Սակայն երբ արտասահմանից վերադարձավ, ծանոթացավ արևմտահայության վիճակին, թուրքական զազրելիություններին, այն իրողությանը, որ բանտերը լիքն էին հայ երիտասարդներով, Գր. Օտյանը, հայ ուրիշ նշանավոր գործիչներ աքսորված էին, իսկ Գոլոշյանն ու Ագրիպասյանը՝ սպանված, ու նաև նկատեց, որ չնայած ծանր կացության, հայ երիտասարդության հիմնական մասը ձգտում էր զենք ձեռք բերել, անմիջապես հեղաշրջվեց: Դպրոցական տեսուչի պաշտոնով գնաց Ուրմիա և կազմակերպեց Արևմտյան Հայաստան զենքի, գրականության ու մամուլի ներկրման գործը: Այդ ընթացքում նա հաստատապես կանգնեց զինված պայքարի ուղու վրա: Ձևավորեց ու Երկիր ուղարկեց զինված ջոկատներ, որոնք հայտնի էին արմենական խմբեր անունով: Նոր կողմնորոշումը, բնականաբար, թելադրեց նաև կազմակերպական աշխատանքի նոր սկզբունքներ և Փորթուգալյանական ընկերության փոխարեն ձևավորվեց Արմենական կուսակցությունը, որն սկսեց գործել սանձարձակ բռնությունների պայմաններում՝ ընդհատակում, խստագույն կոնսպիրացիայի պայմաններում: Արմենականների կուսակցությունը հայ իրականության մեջ առաջինն էր, որ նետվեց ինքնապաշտպանական կռիվների ալիքների մեջ: Նա Դերեկի վանքը վերածեց Երկրի հետ կապի ու փոխադրումների կայանի: Հիմնականում գործում էր Վան քաղաքում: Քրդերին համառորեն հասկացնում էր, թե «իրենք ֆլա հայերից չեն և ամենևին տրամադիր չեն ենթարկվելու նրանց կամայականություններին»: Եվ դա ոչ միայն խոսքով, այլև աներեր կեցվածքով: Քրդերի գլխին պատիժ էին դարձել Ջաթոն ու Շերոն, ովքեր հայդուկային կռիվ էին մղում այլևայլ ցեղերի ոտն-

---

[76] «Հնչակ», 1889, թիվ:
[77] Սերոբյան Մ., Ամերիկահայ տարեցույց, Բոստոն, 1915, էջ 125-129:

ձգուբյունների դեմ: Ճիշտ է, Զաթոն զոհվեց այդ կռիվներից մեկում, սակայն պայքարը գնալով ծավալվեց:

Արմենականները Հայկական հարցի լուծումը տեսնում էին ամբողջ կայսրության բարեկորոգման մեջ: Նրանք պայքարում էին հանուն սահմանադրական կարգերի հաստատման, միապետական լծից բոլոր հպատակների ազատագրության և դրան հասնելու համար ձգտում էին միավորել կայսրության բոլոր ժողովուրդներին, այդ թվում նաև՝ թուրքերին: Արմենականները, գրում է Ա. Դարբինյանը, նպատակ ունեին «Հայ ժողովրդի համար իրավունք ձեռք բերել ինքզինք ազատորեն կառավարելու»[78]: Նրանք «հեղափոխական կուսակցություն չէին,– նկատում է Գ. Ղարաջյանը,– ...տիրացուական «ազատասիրական» և բուրժուա-առևտրական ազգայնամոլական սահմաններից դուրս ոչինչ չէին ճանաչում»[79]: «Արմենականները,– գրում է Ֆ. Սիբիրսկին,– մաքուր լիբերալներ էին բառիս լավագույն նշանակությամբ... Սակայն Թուրքա-Հայաստանում կյանքի պայմաններն այնպիսին էին, որ անգամ այդ խաղաղ մարդիկ ստիպված էին լուսավորչական գործունեությանը զուգընթաց... զբաղվել զենքի հայթայթումով և խմբերի ստեղծումով»[80]:

*Ս.-Դ. Հնչակյան կուսակցություն.– 1887թ. ժնևում ստեղծվեց Հայ սոցիալիստ հեղափոխականների կուսակցություն, որն իր պաշտոնաթերթի «Հնչակ»-ի անունով ճանաչվեց որպես Հնչակյան կուսակցություն: Հնչակը հայ իրականության մեջ առաջին սոցիալիստական կուսակցությունն է:*

Հայ ազգային շարժումը և քաղաքական ուժերի գործունեությունը ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել ոչ միայն հայ կյանքի առանձնահատկությունները, այլև անհամեմատ լայն ծավալների ու ընդգրկումների գործոնները: 80-ական թվականների կեսերին դրանք հիմնականում հանգում էին հետևյալին՝ Բեռլինի դաշնագրի կապակցությամբ ծնված հույսերի լրիվ խորտակում, թուրքական բռնությունների սաստկացում, զուլում, դրա դեմ ընդվզումների ակտիվացում, անհատական ինքնապաշտպանական պայքարի տարածում, ազգային շարժման մեջ արտերկրի հայության ներգրավում, հայերի վրա Եվրոպայի և Ռուսաստանի քաղաքական կյանքի ազդեցության ուժեղացում, օսմանյան տեղեկատվության միջոցների խստագույն գրաքննության վերացում և այլն: Եվրոպայում ձևավորվում են հայ հասարակական կյանքի նոր օջախներ, որոնց վրա ուժեղ էր ժամանակի քաղաքական հոսանքների, առանձնապես սոցիալիստական ուսմունքների ազդեցությունը: Դա էլ պայմանավորեց Հնչակյան կուսակցության բնույթը, որի հեռավոր նպատակ հռչակվեց սոցիալիստական հասարակության կառուցումը, իսկ մերձավոր նպատակ՝ «Թուրքաց Հայաստանում ընդարձակ ռամկապետական, քաղաքական ուղղության և ազգային անկախության» ձեռքբերումը: Կուսակցությունը խնդիր էր դնում «բռնի կերպով կերպարանափոխել, հեղաշրջել» տիրող «հասարակական կազմակերպությունը Թուրքաց Հայաստանում գործադրելով ժողովրդական ապստամբությունը»: Ըստ այդմ էլ, կազմակերպության գործունեությունը ծավալվում էր երեք ուղղությամբ՝ քարոզչություն, ահաբեկչություն, կազմակերպչական աշխատանք: Հնչակյան քարոզչության առանձնահատկությունները երկուսն էին. առաջին՝ դաշինք՝ հայերին բախտակից ժողովուրդների հետ և երկրորդ՝ հայերի ծանր վիճակը ոչ միայն նրանց ազգային պատկանելության, այլև սոցիալական կյանքին հատուկ վերազգային օրինաչափությունների հետևանք էր: Ըստ այդմ էլ, նրանք գտնում էին, որ հայ ժողովրդի կացության բարելավման հիմնական և արմատական միջոցը քաղաքական ազատագրությունն էր, թուրքական լծի թոթափումը և ազգային անկախության տիրանալը:

---

[78] Դաբբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերեն, էջ 125-126:
[79] Ղարաջյան Գ., Հեղափոխականի հիշատակարան, տե՛ս ՀՀԴԿԱ, ֆ. 51, գ. 90, թ. 37:
[80] «Նորք», 1989, թիվ 12, էջ 114:

Կայսրության տարածքում հնչակյան առաջին մասնաճյուղը ստեղծվեց 1889թ., որի մեջ մտան Զակրյանը, Պոյաճյանը, Ճանկյուլյանը, Տամատյանը և ուրիշներ: Կուսակցության ստորին օղակը տասնապետական խմբերն էին: Հնչակյանները կազմակերպչական կառուցվածքով շատ ավելի հստակ ու մարտունակ էին, քան մյուս քաղաքական կազմակերպությունները: Պատահական չէ, որ կարճ ժամանակում երկրում գործող հայդուկային ու չելոյական խմբերը անցան այդ կուսակցության ղեկավարության տակ:

Գործնական քաղաքականության մեջ հնչակյանների գործունեությունը հանգում էր ահաբեկչությունների, հանրահավաքների, խռովությունների ու ընդհարումների կազմակերպմանը:

Հնչակյան կուսակցության դաստիարակած գործիչների փայլուն համաստեղության մեջ առաջին մեծության աստղերից մեկը Փարամազն էր: Նա Վան գնաց 40 հոգանոց զինված խմբով, սակայն չուտով (1895թ.) ձերբակալվեց և դատարանում արտասանեց իր հռչակավոր ճառը, որը մեծ դեր խաղաց հայ քաղաքական կյանքում: «Վերջին չորս տարվա ընթացքում,– ասաց նա,– կոտորված է 175 հազար հայ, կողոպտված է ավելի քան 80 հազար ընտանիք, կրակի է տրված 250 հայկական գյուղ: Ղալիպ փաշան 200 հարուստ հայերի հրավիրում է իր տունը և նրանց կողոպտելուց հետո՝ բոլորին սպանում է: Արճեշի եկեղեցու մեջ ոչխարի նման մորթվում է 450 հայ: Ադլջևազում մյուդիրների կողմից 600 հայ ողջ-ողջ թաղվում է... Մեր ցանկությունը հայկական թագավորության վերահաստատումը չէ, այլ ինքնավար Հայաստանի ստեղծումը՝ սոցիալիստական իրավակարգով, որտեղ բոլոր ազգությունների մարդիկ ապրեն եղբայրաբար, զերծ տնտեսական ու քաղաքական ճնշումներից, ապրեն ազատության մեջ...»[81]:

Հնչակյանների գործունեությունը հիմնականում ծավալվեց արևմտահայության շրջանում: Կուսակցության աստեղային ժամը 1890-95 թվերն էին, երբ նրա ղեկավարությամբ էր ընթանում հայերի պայքարը օսմանյան տիրապետության դեմ:

Հնչակյաններն անկախության գաղափարին հավատարիմ մնացին, իսկ ընդհանուր ապստամբության գաղափարին՝ ոչ: Նրանց գործունեությունը կենտրոնացավ հայդուկային շարժման ծավալման վրա: Սակայն 1894-96թթ., կոտորածների հետևանքով, կուսակցության (1896թ.) համագումարը որոշում ընդունեց հրաժարվել հայդուկային շարժումից և ձեռնամուխ լինել համազգային ապստամբության նախապատրաստմանը:

Սոցիալիստական կողմնորոշման հարցում արևելահայ և արևմտահայ պատվիրակները պառակտվեցին: Համագումարի բանաձևում ասված է. «Նկատի ունենալով, որ մասնակի ցույցերը չեն կարող օգտակար լինել ապստամբության գործին, հաշվի առնելով, որ պարտիզանական կռիվը, հրոսակային խմբերի գործունեությունը և մասնակի ապստամբությունները լոկ միջոցներ են քաղաքական ազատությունից զրկված ժողովուրդներին մարտական ոգի ներշնչելու..., տեսնելով, որ Հնչակյան կուսակցության ինը տարվա ընթացքում այդ ուղղությամբ գործադրած աշխատանքներն արդեն նպատակին հասել են և այսուհետև այդ միջոցների գործադրումը դառնալու է վնասակար, ջլատելու և վատնելու է ուժերը, նկատի ունենալով, որ սոցիալիզմն ավելորդ ու վնասակար է Հայ դատի համար, ժողովը որոշում է դադարեցնել այդ գործունեությունն ու պատրաստվել ընդհանուր ապստամբության»[82]:

Հայտնի չէ, թե համազգային ապստամբության նախապատրաստությամբ հնչակյանները գործնականում ինչպե՞ս զբաղվեցին և իրապես զբաղվեցի՞ն, թե՞ ոչ, սակայն միանգամայն որոշակի է, որ համագումարի որոշումը ճակատագրական եղավ և կուսակցությանը մղեց տևական լճացման ու ներկուսակցական հյուծիչ պայքարի հորձանուտը: Եվ չնայած հնչակյան հաջորդ համագումարը (1897թ., Լոնդոն) փորձեց մեղմել վերը

---

[81] Կիտուր Ա., Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության (1887-1963), Բեյրութ, 1962, էջ 199:

[82] Կիտուր Ա., նշվ. աշխ., էջ 199:

բերված ձևակերպումը և հռչակեց, թե կուսակցության «մոտակա նպատակն է՝ հեղափոխել և ոչնչացնել միապետական կարգերը, փրկել հայ ժողովրդին իր ստրկական դրությունից, տալ նրան կարելիություն միջամտելու քաղաքական գործերին», անկման առաջն առնել չհաջողվեց: 1898թ. տեղի ունեցած համագումարում այն պառակտվեց, արևմտահայ թևը (Մ. Տամատյան և Ա. Արփիարյան) ստեղծեց Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունը: Կ. Պոլսի հնչակյաններն այս որոշմանը չենթարկվեցին և շարունակեցին պահպանել միասնությունը:

«Հնչակ»-ի անդրանիկ համարի (1887թ.) «Քաղաքական անկախություն» առաջնորդողում կարդում ենք, թե քաղաքական անկախությունը «հայ ժողովրդի համար պետք է համարվի լոկ անհրաժեշտ պայմաններից մեկը, որի իրագործումից հետո միայն բացվում է ասպարեզը հայ ժողովրդի քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի մեջ մտցնելու մի երկայն շարք հիմնավոր արմատական վերակառուցումներ»: «Մենք պետք է բարձրացնենք Թրքահայ մասսայի ընկճված ոգին, բացենք նրա աչքերը, ցույց տանք նրա ճամփան և լիննենք նրա ուղեկիցը հեղափոխական ապստամբական շարժումներում, հանուն ժողովրդի կյանքի ապագա ապահովության և ինքնուրույնության... Ով չի կարող պատերազմով ձեռք բերել ազատություն, նա անարժան է դրան»:

Հնչակյաններն արևմտահայ շարժումներին ու Հայկական հարցի լուծմանը մոտենում էին ժամանակի սոցիալիստական ուսմունքների հարցադրումներով: Հնչակյան գործիչ Ռ. Բերբերյանի հետ զրույցի ժամանակ Պոլ Լաֆարգն ասաց. «Թուրքիան միշտ եղել է և պիտի լինի կռվածաղիկ... ինչ էլ որ անեք, չմոռանաք մի բան, որ մեծ պետությունները գործ ունեն վայրի խոզի (Թուրքիայի) հետ: Նրանք գիտեն, որ պետք է սպանեն այդ կատաղած վայրի խոզը, բայց քանի որ համաձայնության չեն գալիս, թե խոզի որ մասն ումն է հասնելու, ուստի ազատ են թողնում այդ որսը, թեկուզ վայրի խոզն ահագին ավերածություններ է պատճառել... բանջարանոցում»[83]:

Հայերի ազատագրական պայքարը մեկուսացած լինել չէր կարող: «Թուրքիայում ևս,— գրում է Պլեխանովը,— հայ ժողովուրդը պետք է ծավալի հեղափոխական շարժումներ՝ սերտորեն համագործակցելով մյուս ժողովուրդների աշխատավոր զանգվածների ազատագրական պայքարին»: Ա. Բեբելն առաջին պլան էր դնում այն իրողությունը, թե «միապետական վարչակարգի պայմանները միանգամայն սոսկալի են ողջ Թուրքիայի համար, ուստի և հայերի դրությունը կբարելավվի, եթե բարելավվի ողջ Թուրքիայի ժողովուրդների բախտը: Իսկ բոլորիդ հարցը կլուծվի, եթե տապալվի սուլթանական վարչությունը»: Իր հերթին այն կտապալվի, եթե «Թուրքիայում նույնանման պայմաններում ապրող ազգությունները և, մանավանդ, ամենից շատ տանջված տարրերը միանան՝ փչրելու գոյություն ունեցող կարգերը...»[84]: Սոցիալիստական աշխարհըմբռնման այս ակունքները սնեցին Հնչակյան կուսակցության քաղաքական դոկտրինան: «Մեր միսիան,— գրում է Ս. Սապահ-Գյուլյանը,— ստրկական լուծը թոթափելն է..., ազատել բռնի ուժով հայրենիքը օսմանյան քաղաքական իշխանությունից և ստեղծել մի նոր երիտասարդ Հայաստան՝ ազատ տնտեսական ու քաղաքական կապանքներից... Այս պարագային... պիտի դիմել միակ և վերջին վեհագույն միջոցին, Ապստամբության, Հեղափոխության...»[85]: Համաձայն կուսակցության 1887թ. ընդունված ծրագրի՝ «...հայ ժողովրդի և Հայաստանի ճակատագիրը միանգամայն ընդմիշտ պետք է զատվի Թուրքական կայսրության ճակատագրից... Հայ ազգային Անկախությունը... կազմում է մոտակա նպատակի մը հիմնական մասն ու առաջին պայմանը: ...Կռիվ մղել միապետական կարգերը տապալելու համար և այն փոխարինել հանրային ռամկավար սահմանադրական կարգերով»[86]:

---

[83] «Հայրենիք» (Բոստոն), 04.11.1959:
[84] Բաքսեղյան Ե., Մարքսիզմի տարածումը Հայաստանում, հ. I, Երևան, 1967, էջ 240-244:
[85] «Երիտասարդ Հայաստան», 1903, թիվ 3:
[86] Ս. Դ. Հնչակյան ծրագիր, ժնև, 1887, Բ և Գ մասեր:

1908-1913 թվերին հնչակյաններն անկախության հարց ընդհանրապես առաջ չքաշեցին, իսկ այնուհետև այդ պահանջը կարգախոսից այն կողմ չանցավ:

Յոզղաթի դատարանում Ժիրայր Պոյաճյանը 1894թ. ասաց. «Քանիցս ըսի ձեզ՝ մեր ուզածը ուրիշ բան չէ, եթե ոչ կյանքի, գույքի և պատվի ապահովություն»: Սա շահարկային նպատակներ հետապնդող հայտարարություն չէր, այլ Օսմանյան կայսրության տարածքում գործող հնչակյանների համոզմունքը: Նրանք, ի տարբերություն Եվրոպայում ապրող իրենց գործընկերների, լավ հասկանում էին, որ արևմտահայության անկախությունը մշուշապատ երազ էր, իսկ փրկությունը՝ սրբազան պարտք:

Սոցիալիստական կողմնորոշումն ու ազատագրական պայքարը հնչակյան ծրագրերում ստացան դուալիզմի բնույթ, ինչը և կանխորոշեց կուսակցության ճգնաժամը[87]:

1880-90-ական թվականների իրավիճակի առնչությամբ «Հնչակ»-ը գրում է, որ տերություններից ողորմություն խնդրելու փոխարեն պետք է ստեղծել մարտական կազմակերպություն, «զրգռել ժողովրդին և սկսել հեղափոխական ապստամբական շարժումներ: Այդ ժամանակ հայկական աքաղաղը կկանչեր, և Եվրոպան վեր կթռչեր իր քնից»: Թերթը հայերին կոչ է անում. «Հայաստանի կենդանի ուժերը պետք է ոտքի ելնեն մեծ ապստամբության և այդպիսով ստիպեն Եվրոպային վերջապես մի բավարար լուծում տալ մեր խնդրին... Եվրոպայից է կախված մեր խնդրի վերջնական լուծումը»[88]: «Եթե ուզում եք,– գրում է «Հնչակ»-ը 1892թ. դեկտեմբերին,– Եվրոպան միջամտի և մեր դատին լուծում տա, ամենից առաջ պետք է ինքներս մեր մեզ կենտրոնացնենք մեր բոլոր ուժերը՝ դնելով դրանք հեղափոխական ուղու վրա: Եվ միայն այդ ընթացքում մենք կարող կլինենք ցնցել եվրոպական տերություններին՝ արյունահեղ կռիվներ մղելով թուրքերի դեմ, դրանով չոշափելով նրանց արևելյան շահերը և այդպիսով միայն նրանց կամացկամաց հարկադրել միջամտելու մեր և թուրք կառավարության միջադեպին»:

Հնչակյան կուսակցության դիրքորոշումն ամենայն հստակությամբ շարադրված է «Հնչակ»-ի 1888թ. 4-րդ և 5-րդ համարներում. «... Առաջանում է հայ ժողովրդի քաղաքական ազատության խնդիրը և պահանջ է առաջադրված զատելու նրա ճակատագիրը թուրքիայի ճակատագրից, քանի որ այս վերջինը մեր ժողովրդի ճակատագրի նկատմամբ խաղում է այն դերը, ինչ դեր խաղում է ջուրը կրակի նկատմամբ»: Մտածել, թե «խաղաղ ճանապարհով ժողովուրդը կհասնի բարելավության, միանգամայն անօգուտ և անբարոյական է, ամոթ ու վախկոտություն է»: Փրկության մեկ ճանապարհ կա՝ «բացարձակ պատերազմ մղել այդ կործանիչ կազմակերպության դեմ... Բացարձակ պատերազմ մղել թուրք կառավարության դեմ...»: Փրկությունը հեղափոխությունն է: Այն պետք է սկսի «գաղտնի հեղափոխական կազմակերպությունը», որը ներկայացնում է մարդկանց ոչ ստվար մի խումբ, իսկ ժողովուրդը չարժմանը միանալու է այդ խմբի «պատերազմի հաջողությունից» հետո: Բայց «Հնչակ»-ն իր հարցադրումներում հետևողական չէր: Նույն հոդվածում թերահավատություն է արտահայտվում հեղափոխական ուժերի կարողությունների նկատմամբ: «Հայոց անմխիթար կյանքում,– գրում է թերթը,– մենք տակավին չենք պատահել այնպիսի անկեղծ ու գիտակցական մարտնչողների, որոնք այդ նույն գաղափարի հաղթության գործը դարձրած լինեն իրենց կյանքի հիմնական նպատակը: Ցույց տվեք հայ երիտասարդության պարտեզում մի անկյուն, ուր բացի սակավ լալկան ուռիներից և անպետք խոտից, ծաղկեն արյունագույն վարդեր»[89]: Նույն տարվա մարտին Հայ հայրենասիրական ընկերության Լոնդոնի մասնաճյուղը հուշագիր է ներկայացնում Անգլիայի արտաքին գործերի նախարար Սոլսբերիին և խնդրում ազդել Թուրքիայի վրա Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը կատարելու համար: Ծաղրելով այդ քայլը՝ «Հնչակ»-ը գրում է, որ հուշագրեր պետք էր ներկայացնել այնպիսի ժամանակ,

---

[87] Կիտուր Ա., Հայ ազատագրության ճանապարհին, Բեյրութ, 1949:
[88] «Հնչակ», 1895, թիվ 19:
[89] «Հնչակ», 1888, թիվ 6:

*երբ Հայաստանում հեղափոխական, ապստամբական հոսանքը քաղաքներ ոտի կանգնեցրած լիներ,– այդ ժամանակ տեղական սարսափահար անցքերի նկարագիրն արդարև ակամա կգրավեր ամեն մի տերության ուշադրությունը...»*[90]:

*Ուրեմն ո՞րն է ելքը: «Հնչակ»-ը պատասխանում է. «Մի պատերազմ Թուրքիայի և Ռուսաստանի միջև հայերիս համար պիտի լինի ամենահարմար րոպեն դրդելու ու բարձրացնելու հայ ժողովուրդին թշնամիների դեմ՝ ձգտելով այդ րոպեից ճեռք բերել հայրենիքի ու ժողովրդի ազատությունը... Այդ գործողությունները միաժամանակ պետք է լինեն ընդդեմ թե՛ Ռուսաստանի և թե՛ Թուրքիայի: Մենք հո չե՞նք ձգտում մի բռնապետությունից ազատվելու՝ այնուհետև մի ուրիշ բռնապետության ճիրանները նետվելու...»: Ուրեմն Ռուսաստանին ապավինելը ևս փրկություն չէր: Հնարավորությունների այս հետևողական մերժումը հնչակյաններին հասցրեց քաղաքական պայքարի ժխտմանը, և առաջ մղվեց ահաբեկչության անցնելու գաղափարը: «Թուրք բռնապետական և կեղեքիչ կառավարության դեմ պատերազմ մղելու համար,– նույն համարում գրեց «Հնչակ»-ը,– հայ հեղափոխականների գործադրելի միջոցների մեջ նշանավոր տեղ պիտի բռնե տեռորիզմը»: Եվ ապա... «երբ դեռ գործողը միմիայն հեղափոխական փոքրամասնությունը կլինի, տեռորիզմն ամենաուժեղ և ամենաանհրաժեշտ զենքն է կառավարության դեմ»: Մի քանի ամիս անց «Հնչակ»-ը ճշտեց. «Կուսակցության գործունեության եղանակները երեքն են՝ պրոպագանդա, ագիտացիա և տեռորիզմ կամ տեռոր»*[91]:

***ՀՅԴ Դաշնակցություն.**– Ռուսահայ մտավորականության ճնշող մեծամասնությունը նարոդնիկական և սոցիալիստական ուսմունքների ու կազմակերպությունների ազդեցության տակ էր: Մոսկվայում լույս տեսնող «Ազատության ավետաբեր»-ը 1883թ. գրում է. «Ժողովրդի ազատության հիմնաքարն է տնտեսական անկախությունը: Ուստի աշխատելու է (Մոսկվայի Հայրենասերների միությունը), որ երկիրը, հողն իր բնական հարստություններով և աշխատանքի գործիքները դառնան աշխատավորների, բանվորների սեփականությունը»*[92]:

*1890թ. Թիֆլիսում ժողովի հավաքվեցին «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության, նարոդնիկական կուսակցության (Զավարյան, Դաստակյան, Միքայելյան, Մալումյան) անդամները, ազգայնականության մի շարք ներկայացուցիչներ: Ժողովին մասնակցում էին նաև Զեյթունից Զաքրյանն ու Մուշից Հակոբ Սարկավագը, ինչպես նաև Հնչակյան կուսակցության պատվիրակությունը: Այսպես հիմնադրվեց Հայ Հեղափոխական Դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցությունը, որը 1890-ական թվականների երկրորդ կեսից իր ճեռքը վերցրեց ազգային շարժման ղեկավարությունը: Հենց սկզբից ՀՅ Դաշնակցությունն արևմտահայության հարցում հստակ մոտեցում դրսևորել չկարողացավ: Սկզբում կուսակցության ծրագրային նպատակ հռչակվեց Տաճկա-Հայաստանում քաղաքական և տնտեսական ազատության ճեռքբերումը, հետագայում Թուրքիայի կազմում ինքնավարություն ունենալու պահանջը և միայն 1919թ.՝ Անկախ ու Միացյալ Հայաստանը: Հայտնի է, որ Դաշնակցություն կուսակցությունը մտահղացված էր որպես հայ քաղաքական ուժերի միավորում: Հիմնադիր ժողովում հնչակյան պատվիրակությունը միավորման պայման համարեց անկախության հարցը, և դրանով է բացատրվում ընդունված հռչակագրի վերևում նշված միտքը: Տարածված կարծիքը, թե ՀՅԴ պլանավորել էր միավորել բոլոր հայդուկային ու մարտական խմբերը և ընդհանուր ապստամբություն բարձրացնել, փաստական հիմնավորում չունի: Մանավանդ, որ դա գործնականում անհնար էր: Ի՞նչ ուժեր էր միավորելու Դաշնակցությունը 90-ական թվականների կոտորածներից հետո:*

*Կարինի 1890թ. հունիսյան դեպքերը փաստորեն վերջնակետն էին Բարձր Հայքում հայկական նշանակալից շարժման: Թուրքական բանակը ոստիկանական հսկողության*

---

[90] «Հնչակ», 1888, թիվ 7:
[91] Նույն տեղում, 1891, թիվ 1:
[92] Վարանդյան Մ., ՀՅԴ պատմություն, հ. Ա, Փարիզ, 1932, էջ 47:

տակ էր առել Արևմտյան Հայաստանի գավառները միմյանց կապող կետերը: Փոքր Հայքի հայդուկությունը հաշվեհարդարի ենթարկվեց և 90-ական թվականների երկրորդ կեսին այլևս գոյություն չուներ: Դիարբեքիրը քրդերի վերահսկողության տակ էր: Գրեթե նույն վիճակն էր տիրում Բիթլիսի վիլայեթում, բացառությամբ Տարոնից: Սասունում հայդուկային շարժումն իրոք վերելքի մեջ էր, սակայն ՀՅԴ կողմից միավորվելու կարիք չուներ, քանի որ արդեն միավորված էր սկզբում՝ Աղբյուր Սերոբի, իսկ ապա՝ Անդրանիկի ու Գևորգի գլխավորությամբ:

Հիմնադիր ժողովը նորաստեղծ կուսակցության պայքարի միակ եղանակ հռչակեց ապստամբությունը, քանի որ «մինչ այդ գործածված միջոցները՝ խնդրանքը, բողոքը, դիվանագիտություն, դրական արդյունքի չէին հանգեցրել...»: Պայքարի բալկանյան եղանակը մեխանիկորեն տեղափոխվում էր Արևմտյան Հայաստան: Եվ պատահական չէ, որ գործնական կյանքում ապստամբություն ասածը հասկացվեց ոչ այլ բան, քան կռիվ «թուրք զինվորների, ոստիկանների դեմ, մասնակի հարձակումներ և ինքնապաշտպանական մարտեր»: Իրականում Դաշնակցության գործիչներն ապստամբություն ասելով, հասկանում էին ահաբեկչությունը: «Դրոշակ»-ը գրեց.

«Հեղափոխական հարուստ տեխնիկայով զինված գաղտնի կազմակերպության տարածումն ու զարգացումը բնականաբար առաջ կբերի ավելի հաճախ կրկնվող խմբային ցույցեր տաճկական բռնակալության դեմ:

Եվ երբ հեղափոխության պարտիզանական կռվի ալիքները ողողեն ամբողջ Տաճկական Հայաստանը, երբ նրանք անվերանորոգելի էլեկտրականացնեն ժողովրդի միտքն ու զգացմունքը, կենդանի օրինակներ կտան ժողովրդին...: ... Երբ վերջապես Եվրոպան տեսնի, որ Տաճկաստանի խաղաղությունն անդառնալի կերպով խախտված է երկու անհաչտ՝ մինչև արյան վերջին կաթիլը մաքառել վճռած թշնամիների կռվով, երբ նա տեսնի, որ Տաճկաստանում իր ներդրած դրամագլուխները վնասվում են և կորչելու վտանգի են ենթարկվում և, որ կայծը, բոցավառվելով, կարող է եվրոպական զարհուրելի հրդեհի պատճառ դառնալ, այն ժամանակ ժողովուրդը ձեռք կբերի իր մարդկային իրավունքները»[93]:

Իսկ ո՞վ է լինելու հայդուկային շարժման ղեկավար ուժը: «Դրոշակ»-ը պատասխանում է՝ մտավորականությունը, որը պետք է զբաղվի «հեղափոխական ուժերի կազմակերպմամբ»:

Դաշնակցությունը Սասունում ծավալված շարժումները դիտում էր որպես համահայկական ազատագրական շարժման բաղկացուցիչ մաս: Նպատակ ունենալով Արևմտյան Հայաստանի ամբողջ տարածքում բարձրացնել պայքարի դրոշը ու դրանով հարկադրել տերություններին իրենց հովանու տակ առնել Հայ դատը՝ ՀՅԴ ձգտում էր Արևմտյան Հայաստանում ազգային շարժման մակընթացություններն ու տեղատվությունները որոշել Թուրքիայի նկատմամբ մեծ տերությունների դիվանագիտական ակտիվության աստիճանով:

Վերջին տարիներին մեծ եռանդով վերաարժեքավորվում են մեր պատմության, այդ թվում նաև՝ արևմտահայության ազատագրության, շատ հիմնահարցեր: Ու ինչպես նման դեպքերում հաճախ է պատահում, վերաարժեքավորման, վերաիմաստավորման մոլուցքն ափերից դուրս է հորդում և գահավիժում չափազանցությունների, ոչ քիչ դեպքերում նաև անպատասխանատու և վտանգավոր հարցադրումների գիրկը: Հին ճշմարտություն է՝ պատմությունն արդիականության տատմերն է և ծառայել ու ծառայում է ժամանակակից խնդիրների լուծմանը: Սակայն այդ դերը պատմությունը կարող է խաղալ, եթե նրանից դասեր են քաղում, այլ ոչ թե ենթարկում չհարկումների: ՀՅԴ գործիչները, հավատարիմ տեր-մինասյաններին, վարանդյաններին և վրացյաններին ավանդույթներին, իրենց կուսակցության պատմությունը, առանց պատմական իրողությունները հաշվի առնելու, անընդհատ վերախմբագրում են՝ ելնելով կուսակցության տվյալ

[93] «Դրոշակ», 1891, թիվ 2:

պահի նույնիսկ մարտավարական նշանակություն ունեցող անցողիկ չահերից: Իզուր չանքեր են: ՀՅԴ գործունեության միակ եղանակն Արևմտյան Հայաստանում եղել է ահաբեկչությունը: Դաշնակցությունն ազգային խնդիրների լուծման գործում միշտ էլ գործել է ահաբեկչական եղանակներով, և պատահական չէ, որ նույնիսկ ներկուսակցական աշխատելաոճը հարմարեցված է ահաբեկչական գործողությունները հաջողությամբ իրականացնելու չահերին: Ս. Զավարյանը, «Ապակենտրոնացում» հոդվածում անդրադառնալով երիտթուրքերի ազգային քաղաքականությանը, գրում է.

«Թուրքիո ամբողջ ազգաբնակչության 1/3 մասը միայն կտիրապետե թուրքերենին, մնացած 2/3-ը կխոսի արաբերեն, հունարեն, քրդերեն, ալբաներեն, բուլղարերեն և այլն: Ատոր հետ միասին կուլտուրական տարբերությունները, ճոխությունը չեն խոսիր հօգուտ թուրքերենի նվաճման... Կայսրության պայմաններում... մանր պետությունների անկախությունը լայն մտքով պրոբլեմատիկ է:

Քաղաքական հարցերու մեջ անոնք ազատ չեն կարող ըլլալ, այլ քաշվելու են այս կամ այն դրացի մեծ պետության հետ և, հետևաբար, էապես կը վայելեն միայն ներքին ինքնավարություն: Բացի ատկե... ինչքա՛ն արյուն կարժե... այդպիսի անկախությունը: Սակայն չատերը չեն խորհած՝ ինչպիսի՞ նյութական ծանրության տակ կհեծեն այդ կարգի պզտիկ երկիրները հզոր զինվորական բանակի պահպանության չնորհիվ, մյուս կողմե կչեչտվե ամեն մեկ ուրույն չրջանի զարգացման կարևորությունն այդ չրջանի մեջ: Երկու ուղղություններու հաշտությունը կապահովվի միայն ապակեդրոնացման-դաշնակցական կարգերու հաստատումով...

Ահա թե ինչու ես այդքան նախանձելի չեմ գտներ Էրզրումի և ուրիշ քանի մը վիլայեթներե կազմված անկախ Հայաստան մը: Շրջապատված երեք խոշոր պետություններով՝ Ռուսաստան, Թուրքիա և Պարսկաստան, կասկած հարուցանելու ներսերը թուրքերու և քրդերու մեջ, ան միշտ գտնվելու է երերուն վիճակի մեջ, ուժասպառ ըլլալու է զենքի ու զինվորական ծախսերու տակ, զրկվելով միևնույն ատեն այն հարմարութենեն, որ կներկայացնե ամեն մեկուն Թուրքիո նման մեծ երկրի մը քաղաքացի ըլլալը»[94]:

«...Դաշնակցության առաջին քաղաքագետները... հրաժարեցան անկախության սկզբունքեն»,– արձանագրում է Մ. Վարանդյանը[95]: Մեր չարժման նպատակը, գրում է Քր. Միքայելյանը, «եվրոպական միջամտություն առաջ բերելն էր». դրա համար «հարկավոր էր, որ մեր բողոքները տեղի ունենային մեծ պետությունների աչքի առջև... որ դրանք կրեին սիստեմատիկ բնույթ, որ հայությունը երևար իբրև մի ուժ, որին արհամարհել չի կարելի»[96]: «Դրոշակ»-ի 1908թ. թիվ 7-ում ներկայացված էին Դաշնակցության պահանջները Սահմանադրության հռչակումից հետո. նահանգների վարչական ապակենտրոնացում, մշակութային ինքնավարություն, վարչական նոր բաժանում՝ հիմք ունենալով ազգային միատարրությունը: «Թուրքա-Հայաստանը Թուրքիայի մյուս չրջանների նման, իբրև օսմանյան պետության մեկ մասը, ազատություն պիտի վայելի իր ներքին գործերում»[97]:

Այսպիսով, ՀՅԴ հիմնականում պահանջում էր «ազգային իշխանություններուն նման քաղաքացիական իրավունքներ հայ մարդու համար, արդարության, ազատության, հավասարության կիրառում հայերի համար ևս կայսրության ներս: Իրենց գործադրած միջոցներով միայն (հայ) կուսակցությունները կը տարբերվին ազգային իշխանություններեն: Մինչդեռ այս վերջինները թագրիրներով, բանավոր և գրավոր խնդրանքներով կը դիմեին պետական վարիչներուն՝ ներկայացնելով հայերի դժնդակ կացությունը և դարման մը խնդրելով: Կուսակցություններն ընդունել էին բռնության

---

[94] «Դրոշակ», 1990, թիվ 11:
[95] Վարանդյան Մ., նշվ. աշխ., էջ 119:
[96] Միքայելյան Քր., նշվ. աշխ., էջ 56-57:
[97] «Ծրագիր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան», Թիֆլիս, 1917, էջ 22:

դեմ բռնություն գործադրելու, բռնությանը բռնությունով պատասխանելու եղանակը, հաստատած լինելով, որ աղաչանքը, ապավինումը բռնատերերի գթությանը երբևիցե դրական արդյունք չեն տված...»[98]:

Իթիհադի և Դաշնակցության միջև 1909թ. ստորագրված համաձայնագրում նույնպես նշված էր, որ «օսմանյան հայրենիքի ամբողջականությունը և անկախությունը հաստատելու համար» անհրաժեշտ է. 1) անշեղ գործադրություն սահմանադրական օրենքներու, 2) միացյալ ուժերով պայքարել հակասահմանադրական հետադեմ ուժերու դեմ, 3) ապակենտրոնացման հիմքի վրա վերակազմել վարչական հիմնարկները և 4) փոքրամասնության իրավունքների հավասարություն և անխտրականություն:

Դեռ 1894թ. Ռ. Միքայելյանը «Դրոշակ»-ի թիվ 1-ում տպում է «Ներսես պատրիարքի նախագիծը Տաճկա-Հայաստանի ինքնավարության» խմբագրականը, որում կարդում ենք. «Ներսես Պատրիարքի խոշոր և հեռատես քաղաքական քայլը,... որուն գլխավոր կետերը մոտավորապես նույնն են մեր այժմյան պահանջներին»:

Դաշնակցությունը հրապարակ իջավ «Մահ կամ Ազատություն» կարգախոսով: Եվ չնայած նշվում էր, որ «Դիվանագիտությունը ղեկավարվում է սեփական չահերով ու ավելի ուժեղի իրավունքներով», միաժամանակ ասվում էր, թե «Հայկական հարցը չի կարող որոշակի ելք ստանալ» առանց եվրոպական դիվանագիտության[99]:

Հայերի ծանր վիճակից ելք՝ դաշնակցական որոշ պարագլուխներ համարում էին ապստամբությունը, այն էլ Կ. Պոլսում, քանի որ «Մի ատրճանակի պայթյունն այստեղ ավելի է լսելի աշխարհին, քան տասնյակ հրացանների որոտը խորքում»[100]: Միայն այն ժամանակ, երբ տերությունները կհամոզվեն, որ հայկական վերքի բուժման համար պետք է դիմել գործնական քայլերի, «մեր դատն ապահովված կլինի»: Այդ նպատակով ՀՅԴ քայլեր կատարեց եվրոպային համոզելու, որ հայ և մակեդոնական հարցերը միասնական լուծում են պահանջում[101]:

Սակայն այդ կոչերը եվրոպական մայրաքաղաքներում արձագանք չունեցան, և Դաշնակցությունը որոշեց դիմել անմիջապես եվրոպական ժողովրդավարական ուժերին, Եվրոպայում ծավալել քարոզչական լայն աշխատանք, ձևավորել հայասիրական շարժում և այդ միջոցով ազդել քաղաքական շրջանների վրա: Փարիզում հիմնադրվեց "Pro Armenia" թերթը Պ. Քիյարի խմբագրությամբ և Անատոլ Ֆրանսի, Կլեմանսոնի, Ֆ. դը Պրեսանսեի, Ժ. Ժորեսի, Ռոլեն Ժեկմենի, Էմիլ Դիլոնի, Յ. Լեփսիուսի, Ֆ. Գրինի, Ջ. Բրայսի, Մ. Մաքքոլի և այլ մեծերի ու նշանավորների աշխատակցությամբ:

Աբդուլ Համիդ 2-րդի նախաձեռնությամբ բանակցություններ սկսվեցին Դաշնակցության և Բ. Դուան միջև: Նպատակն արտաքին քաղաքական քարոզչության դադարեցումն էր: Բանակցությունները գլուխ բերելու համար 1896թ. վերջին սուլթանը ներում շնորհեց 1200 քաղաքական բանտարկյալների, 100-ի մահապատիժը փոխեց բանտարկության: Դաշնակցությունը պայման առաջարկեց ապահովել երկրից փախած հայերի վերադարձը, օգնել նրանց վերականգնելու իրենց տնտեսությունը, վերադարձնել հայերից բռնագրավված հողերը, տներն ու հոգևոր հարստությունները, խստորեն պատժել հայերի հանդեպ բռնություններ գործադրողներին, հատուցել հայերին հասցրած վնասը[102]: Այսքանով սուլթանի ներկայացուցիչների հետ բանակցություններն ավարտվեցին: Դրանք վերսկսվեցին, բայց արդեն երիտթուրքերի հետ, վերջինների նախաձեռնությամբ, սակայն նորից հաջողություն չունեցան, քանի որ երիտթուրքերը «անմիջական կռվի ասպարեզ անցնելու տրամադրություն չեն արտահայտում»:

---

[98] Զորմխեյան Լ., նշվ. աշխ., հ. Ա., էջ 38-39:
[99] «Դրոշակ», 1890, թիվ 1, 1891, թիվ 1, Դիվան ՀՅ Դաշնակցության, հ. I, Բոստոն, 1934, էջ 258:
[100] «Դրոշակ», 1900, թիվ 2:
[101] «Լուսաբեր», 1905, թիվ 155:
[102] «Դրոշակ», 1899, թիվ 5:

ՀՅԴ 4-րդ համագումարը (1907թ. մայիս) խնդիր դրեց՝ «համերաշխություն հակակառավարական ցույցերի ժամանակ, չաղկապումն ըմբոստացող ուժերի՝ առանց կրոնի և ազգի խտրության»: Դաշնակցությունը հայությանը կոչ էր անում՝ պոկել սրտից և մտքից անվստահության նախապաշարումները, ձեռք մեկնել արթնացող հարևանին՝ թուրքերին, ու «պինդ գրկելով համերաշխության ավետարանը... հայ-մահմեդական գործակցությունը դարձնել չարժման անհրաժեշտ նշանաբանը»[103]: «Դաշնակցությունը,– գրում է Անդրանիկը,– զուրկ է հեռատեսութենեն, զոր անպայման պետք է ունենա ժողովրդի մը ճակատագրին հետ խաղացող որևէ անհատ կամ կազմակերպություն»[104]:

Դաշնակցությունը երկակի խաղի մեջ էր: Նա ձգտում էր առաջնորդի դիրքերի թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ չարժումներում: Ընդ որում, վերջինս նրան ավելի հոգեհարազատ էր, քանի որ ինքը ռուսական միջավայրի ու ռուսական մտայնության արդյունք էր: Ըստ էության և փաստորեն,– գրում է Բ. Բորյանը,– պատմական իրադարձությունների բերումով, Դաշնակցության աշխատանքը հանգում էր Ռուսաստանի կողմից Թուրքա-Հայաստանի նվաճման համար հասարակական կարծիքի ճևավորմանը, քանի որ միջազգային կյանքի օբյեկտիվ կացությունը և ցարական դիվանագիտության տրամադրությունը երբեք չէին համընկնում Հայաստանի ինքնավարության գաղափարի հետ»: Դաշնակցություն «կուսակցության առաջնորդները օբյեկտիվորեն միշտ գործել են հօգուտ Ռուսաստանի կողմից Թուրքա-Հայաստանի նվաճման, այլ ոչ թե նրա ինքնավարության»[105]: Դեռ 1902թ. կայսրության ընդդիմադիր կուսակցությունների համաժողովում ՀՅԴ պատվիրակությունը համաձայնեց բանաձևի առաջին կետի ընդունմանը, որը նպատակ էր հռչակում Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանումը[106]: Նույն սկզբունքին հավատարմությունը ՀՅԴ վերահաստատեց 1907թ. համաժողովում: 1909թ. «Դրոշակ»-ը (թիվ 4) գրեց. «Օսմանյան հեղափոխության չնորհիվ Պեռլինի 61-րդ և 23-րդ հոդվածները կկորցնեն իրենց ուժը, Հայկական, Մակեդոնական խնդիրները վերցված են միջազգային դիվանագիտական սեղանից և դառնում են օսմանյան պետության խնդիրները»:

Կուսակցության Վիեննայի ընդհանուր ժողովը հավաստեց. «Դաշնակցությունը Թուրքիո մեջ ունեցած չէ և չունի անջատական ոչ մեկ ձգտում...»: 5-րդ ընդհանուր ժողովը հայտարարեց. «Դաշնակցությունը վճռականապես ետ մղելով անջատողական ձգտումները, պիտի տքնի վերակազմել երկրի քաղաքականն ու տնտեսականը օսմանյան պետության ամբողջության մեջ...»[107]: Այս հարցում Դաշնակցության մոտեցումը չփոխվեց ո՛չ Ադանայի ջարդերից հետո և ո՛չ էլ Բալկանյան պատերազմի տարիներին: Հ. Տասնապետյանը նկատում է, որ Դաշնակցությունն «իր ազգային-քաղաքական պահանջները համակարգած է Հայկական հարցի զարգացման փուլերուն և ժամանակաշրջանի միջազգային իրադարձություններուն հետ: Փոխադարձաբար, սակայն, այն իր գործունեությամբ պարբերաբար փոփոխության ենթարկած է Հայկական հարցի կառույցն ու տարողությունը, անոր տալով նոր դիմագիծ ազատագրական կուվով ստեղծված նոր կացություններու չնորհիվ»[108]:

Հր. Մարուխյանը գրում է, որ Արևմտյան Հայաստանի հարցում ՀՅԴ ծրագիրը միտում էր Արևմտյան Հայաստանում «ձեռք բերելու մարդկային տարրական իրավունքները՝ քաղաքական ու տնտեսական ազատություն»:

Դաշնակցության քաղաքական վարքագծի մասին շատ ավելի որոշակի էր արտահայտվում մեր օրերի դաշնակցական պարագլուխներից մեկը՝ Էդ. Հովհաննիսյանը: Նա

---

[103] Նույն տեղում, 1907, թիվ 6-7:
[104] Անդրանիկ Օզանյան, *Մատենագիտություն*, Երևան, 1989, էջ 8:
[105] Борян Б. А., *Նշվ. աշխ.*, հ. I, էջ 34:
[106] Ramseor R., *Union Turkey*, London, 1957, p. 10.
[107] Վարանդյան Մ., *ՀՅԴ պատմություն*, հ. I, էջ 5, 21:
[108] «Դրոշակ», դեկտեմբեր, 1990:

գրում է. «Դաշնակցությունը ելնում էր այն գաղափարից, թե կապիտալիստական Եվրոպայի հասարակական կարծիքը կը լուծի Հայկական հարցն այնքան արագ, որքան արագ հայերն իրենց ելույթներով մեջտեղ կհանեն այդ հարցը»: Սուլթանի համար Դաշնակցության արկածախնդրությունը հարմար էր հայերին ոչնչացնելու քաղաքականություն վարելու, սակայն ինքը՝ այդ քաղաքականությունը, անշուշտ բխում էր թուրքական բռնատիրության էությունից: Հայերը հալածվելու էին նաև առանց դաշնակցական ահաբեկչական չարժումների[109]:

ՀՅԴ պատմության հիմնահարցերին անդրադառնալիս անհնար է նկատի չառնել, որ հայ ժողովրդի 1890-1920 թվերի պատմությունը նույնացվում է ՀՅԴ պատմության հետ: Դաշնակցությունը սեփականաշնորհել է այդ 30 տարիների պատմությունը և այն փակել կողպեքով և լուտանքներ չի խնայում նրանց հասցեին, ովքեր փորձ են անում բացել մեր պատմության ամենաաղետալի շրջանի ծալքերը, ովքեր փորձում են համաչխարհային պատմության մեջ հազվադեպ պատահող համազգային ողբերգության մեջ տեսնել նաև հայության և նրա քաղաքական ուժերի մեղքը, նրանց թույլ տված սխալները: Դրա հետևանքով այդ շրջանով զբաղվող կամ զբաղվելու փորձ կատարողներն անմիջապես հայտնվում են ՀՅԴ պատմաբան և ոչ պատմաբան գործիչների կողմից ահաբեկված վիճակում: Ընդ որում, հնարվում են ամեն տեսակի հերյուրանքներ, կատարվում «հայտնագործություններ» հրապարակ բերելու դաշնակ գործիչների հանճարեղ, հասարակ մահկանացուների գիտակցությանն անհասանելի մտքերն ու վարքագիծը: Լսենք նման հանճարեղ մտքեր հորդացող մերօրյա իմաստուններին: «Թեև ՀՅԴ առաջին (1892) և երկրորդ (1907) ծրագրերում բացակայել է Հայաստանի անկախության հստակորեն ձևակերպված պահանջը, սակայն... «Թյուրքիո Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատությունը» (1892) կամ ինքնավարությունը (1907) այն հանգրվաններն էին, որոնք տանում էին դեպի անկախություն»: Նման «խոհական չափավորությունը» հիմնազուրկ է դարձնում մի կողմից՝ ՀՅԴ ծայրահեղական և արկածախնդրական համախոհների նախորդ պնդումները, մյուս կողմից նրան հակաանկախականի պիտակ կպցնելու փորձեր անող հեղինակների հարցադրումները»: Մեջբերման չարունակությունը բացարձակ դեմագոգիա է: Իբր, եթե ՀՅԴ վերը նշված ծրագրերում «լինեին Արևմտյան Հայաստանի անկախության բացահայտ պահանջներ, ապա այս անգամ էլ նույն հեղինակները ՀՅԴ կմեղադրեին ծայրահեղության ու արկածախնդրության մեջ»: Մինչդեռ եղածը «հնարավորություն է տվել ՀՅԴ անել հնարավորը, բայց չհրաժարվել ցանկալիից, քանզի կուսակցության հենց առաջին՝ 1892թ. ծրագիրն իր խորքում արդեն իսկ պարունակում էր Հայաստանի անկախության գաղափարը»[110]: Նման դեպքերում են ասել. «Ստիր, բայց չափն իմացիր»: Որովհետև Դաշնակցության ծրագրերում արևմտահայության կարգավիճակը դրված է ոչ թե ինքնավարությունից անկախության, այլ ազգային-մշակութային ինքնավարությունից քաղաքական-վարչական ինքնավարության անցնելու հարթության վրա: Մի կողմից՝ ՀՅԴ Արևմտյան բյուրոն երիտթուրք կուսակցության հետ բանակցություններ էր վարում ինքնավարության, այսինքն՝ ապակենտրոնացման հարցերի շուրջը, մյուս կողմից՝ Ս. Զավարյանը նույն 1908թ. հանդես եկավ վերևում հիշատակված «Ապակենտրոնացում» քաղաքական և տնտեսական լուրջ հարցադրումներ պարունակող հոդվածով, որով մերժում է անկախությունն ընդհանրապես[111]: Նման անորոշությունն ու խառնաշփոթն ազդեցություն ունեցա՞ն կուսակցության գործունեության և արևմտահայության ճակատագրի վրա: Անպայման ունեցան. ուղղու և նպատակի անորոշությունը չէր կարող ազդեցություն չունենալ գործնական քաղաքականության վրա: Դրա ամենահամոզիչ արտահայտությունը հանդիսացավ այն, որ մինչև Հայաստանի

---

[109] «Դրոշակ», 1990, թիվ 12:

[110] Խուդինյան Գ., Հակոբյան Ա., ՀՅ Դաշնակցության պատմության խեղաթյուրման վերջին փորձերը, Եր., 2005, էջ 14:

[111] «Դրոշակ», 1990, թիվ 11:

*անկախանալը ՀՅԴ չհաշտվեց անկախության մտքի հետ և չնախապատրաստվեց դրան և, երբ Վրաստանն ու Ադրբեջանն անկախ հայտարարվեցին Հայ Ազգային Խորհուրդը չփոթվեց և չէր կարողանում որոշել իր անելիքը, ինչի հետևանքներից հիմնականն այն է, որ չօգտագործվեց Սարդարապատի հաղթանակը ռազմական գործողությունները զարգացնելու և կարսը ետ գրավելու համար, որ կնքվեց Բաթումի խայտառակ պայմանագիրը և այլն:*

*Սևին սպիտակ ասողների համար ճշմարտությունը բովանդակությունից զուրկ փաս է, որին մոտ թողնել չի կարելի: Նույն հեղինակները սևով սպիտակի վրա գրում են, թե հայ քաղաքական ուժերի չարքում Դաշնակցությունը «միշտ էլ եղել է ամենապարկեշտը, արդարամիտը», որ ՀՅԴ երբեք իր քաղաքական գծի ընդդիմադիրներին չի ահաբեկել, նրանց «նկատմամբ բռնարարքներ, մատնություններ և հրոսակային հարձակումներ» չի իրականացրել:*

*ՀՅԴ առանձին գրչակների պնակալիզությունը սահմաններ չի ճանաչում: Ահա մի մարգարիտ նմանների մտավոր բոցավառումից: «ՀՅ Դաշնակցությունը ստեղծվեց հենց հայաստանյան իրականության մեջ մեծացած և Հայաստանի ներքին կացությանը խորապես տեղյակ անհատների կողմից»[112]: Այս մի նախադասության մեջ մի քանի կեղծարարություն կա: Այո, Քր. Միքայելյանը, Ս. Զավարյանն ու Ռոստոմը ծնվել են Հայաստանում, բայց ոչ միայն նրանք, այլև դաշնակ մյուս գործիչները դաստիարակվել, քաղաքական հասունություն են ձեռք բերել Հայաստանից դուրս: Ու նաև այն, որ պատմական ճակատագրով ՀՅԴ այդ երեք հիմնադիրները չկարողացան մասնակցել հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող իրադարձություններին: Քր. Միքայելյանը զոհվեց 1905-ին, Ս. Զավարյանը մեռավ 1913-ին, իսկ Ռոստոմը գործնականում չմասնակցեց ո՛չ Ազգային Խորհրդի աշխատանքներին և ո՛չ էլ ՀՀ ստեղծմանը: Նա մնաց ու գործեց Բաքվում, դժվար է ասել սեփական կամքով, թե Ազգային խորհրդի «նախաձեռնությամբ»: Պատահակա՞ն էր, որ նորաստեղծ կառավարության ղեկավար նշանակվեց ոչ թե կուսակցության առաջնորդը, այլ Հովհ. Քաջազնունին: Պատահակա՞ն էր, որ Ռոստոմն Ազգային Խորհրդի աշխատանքներին չմասնակցեց, գոնե մի անգամ ոտք չդրեց իր երազած Անկախ Հայաստան: Ոչ, պատահական չէր: Կուսակցության ղեկավարությունն իր ձեռքն էր վերցրել Հայաստանի կյանքին անծանոթ գործիչների մի խումբ և դարձել հայ ժողովրդի բախտի տնօրինողը: Ինչո՞ւ Արամ Մանուկյանը հեռացավ Թիֆլիսից, ինչո՞ւ հենց նա չղեկավարեց Հայաստանի Հանրապետության կառավարությունը:*

*ՀՅ Դաշնակցության մերօրյա որոշ «տեսաբաններ», ստորաքարշության ուղիով գնալով, հանգում են անմտության: Աչքատեզով արդարացնել, որ դաշնակցական պարագլուխները գործում էին ոչ թե իրենց հայրենիքում՝ Հայաստանում, այլ Թիֆլիսում, գրում են, որ այդ քաղաքը «XIX դարում ոչ միայն Անդրկովկասի խոշորագույն կենտրոնն էր, այլև գերազանցապես հայկական նկարագիր ունեցող մի քաղաք», ավելի հայկական, քան Երևանը: «Ուրեմն, որտե՞ղ պետք է հավաքվեին ՀՅԴ հիմնադիրները՝ գավառական քաղաքներ Երևանո՞ւմ կամ Ալեքսանդրապոլո՞ւմ, թե՞ Թիֆլիսում, որը «ողջ արևելահայության մշակութային ու քաղաքական կյանքի կենտրոնն էր»[113]:*

*Հարցը սկզբունքային է: ՀՅԴ Արևմտյան բյուրոն և արևմտահայ մտավորականությունը հավաքված էին Կ. Պոլսում ու կտրված հայաստանյան կյանքից, անտեղյակ արևմտահայերի իրական վիճակին, իսկ Արևելյան բյուրոն ու արևելահայ մտավորականությունը կենտրոնացած էին Թիֆլիսում և քիչ բան գիտեին արևելահայերի իրական վիճակի մասին, համենայն դեպս, իրենց մաշկի վրա չէին զգում նրանց սոցիալ-տնտեսական կացությունը: Իսկ Հայաստանի հարավարևելյան շրջանների մտավորականությունն*

---

[112] Տուդինյան Գ., Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 11:
[113] Նույն տեղում, էջ 12:

էլ կենտրոնացած էր Բաքվում իր Ազգային Խորհրդով: Հայ մտավորականության և գործարարների կուտակումներ կային նաև Մոսկվայում և Պետերբուրգում, միայն ոչ բուն Հայաստանում: Նման իրավիճակը հատուկ է հրեաներին, սակայն նրանք ընդհանրապես հայրենիք չունեին և պարտադրված էին գործելու արտասահմանում: Կարո՞ղ է անձը, որի կենցաղը, չահերը, դաստիարակությունը օտար են (օտար են՝ չի նշանակում, թե հայկական չեն), հասկանալ հայ գյուղացուն: Պատմությանը հայտնի են նաև ուրիշ ժողովուրդներ, որոնց քաղաքական առաջատար ուժերը ձևավորվել են արտասահմանում: Նույն երիտթուրքերը ձևավորվեցին Փարիզում, Կահիրեում, բայց հենց որ չարժումը սկսեց խմորվել, նրանք անմիջապես վերադարձան հայրենիք: Իսկ ի՞նչ տեղի ունեցավ հայ գործիչների հետ: Նրանք համառորեն չէին ցանկանում տեղափոխվել անգամ արդեն անկախ հռչակված Հայաստան, որովհետև այն հետամնաց էր, սովի ու համաճարակների ճանկերում: Թիֆլիսի կյանքին ընտելացած այդ ինտելիգենտները չէին կարողանում երևակայել, թե ինչպես էին ապրելու կավաչեն ու փոչեպատ Երևանում: Նույնիսկ միտք հղացան ստեղծելու հայկական երկու կառավարություն. գլխավոր կառավարությունը կազմված էր լինելու դաշնակ ջոջերից, գործելու էր Թիֆլիսում, իսկ երկրորդ կառավարությունը՝ Երևանում: Հնարավո՞ր է մարդկության պատմության մեջ գտնել նման «ազգասիրության» մի ուրիշ օրինակ: Պարոննե՛ր, գուցե կասե՞ք, թե այս ծաղրուծանակը նույնպե՞ս բխում էր հայ ժողովրդի, այլ ոչ թե քաղքենի գործիչների չահերից: Թիֆլիսի և Երևանի կյանքի մակարդակների տարբերությունն այն կշեռքն էր, որով որոշվում էր, թե Թիֆլիսում կուտակված հայ գործիչների մտածողության համակարգը, լինելով հանդերձ ազգային, որքանով էր համընկնում հայաստանաբնակ հայի ոչ միայն մտածողությանը, այլև նրա կյանքի պայմանները փոխելու հրամայականին:

ՀՅԴ պատմությամբ զբաղված և ներկայումս էլ զբաղվող գործիչները մի խնդիր են հետապնդում. համոզել, որ Հայկական հարցում կուսակցությունն ունեցել է արմատական և որոշակի դիծ: Դժբախտաբար, դա անելը հեշտ չէ, որովհետև, որքան էլ տարօրինակ է, բայց փաստ. հայ քաղաքական կուսակցություններից Հայ դատի խնդրում ամենամեծ խառնաչփոթն ու անորոշությունները առկա են ՀՅԴ պատմության մեջ: Ոչ մի կուսակցության գործունեության և դրա արժեքավորման միջև այնպիսի ահռելի հակադրություններ չկան, ինչպիսիք կան Դաշնակցությունում: Արդյունքում՝ ազգի ղեկավար և Հայկական հարցի լուծման առաջամարտիկ կուսակցությունն այդպես էլ չունեցավ տրամաբանական ու գործնական նշանակության ծրագիր, որի հետևանքով ՀՅԴ վայրիվերո, անտրամաբանական գործողությունները մեկ անգամ չէ, որ հայ ժողովրդին արյի ծառայություն են մատուցել: Նույնիսկ Առաջին աշխարհամարտի տարիներին, երբ տերությունները, մի կողմ դնելով բարենորոգումների ծրագրերը, համաձայնության եկան Օսմանյան կայսրության բաժանման և Արևմտյան Հայաստանի մեծ մասը Ռուսաստանին հանձնելու վերաբերյալ, ՀՅԴ մոտեցումներում էական փոփոխություններ տեղի չունեցան: Հայ ժողովուրդն անպաշտպան մնաց յաթաղանի հայայինջ քաղաքականության հանդիման: ՀՅԴ գործիչները հետագայում, անդրադառնալով այս խնդրին, ղղջման խոսքեր են ասել, նշել կուսակցության մարտավարության լուրջ թերությունները, սակայն շարունակել են հավատարիմ մնալ նրա անորոշ ռազմավարությանը: Խոսքը չարունակում էր գնալ ոչ թե Հայաստանի անկախության, այլ արևմտահայության ինքնապաշտպանության, նրա անվտանգության ապահովման մասին: Բնութագրական է ու խոսուն ՀՅԴ հանրահայտ գործիչ Կարո Սասունու հետևյալ խոստովանությունը. «Այս պայմաններու մեջ հնազանդությունն անխելք ինքնաուրացում մըն էր, ճեռնտու թշնամուն՝ դյուրությամբ չարդն իրականացնելու: Իսկ կրավորական ինքնապաշտպանությունն ինքնախաբեություն մըն էր, վերջին չունչը փչելու չանք մը, որ իր նպատակին չէր կրնար ծառայել: Ինքնապաշտպանությունը Թուրքիո մեջ այն ժամանակաշրջանին կարելի էր միայն ապստամբությամբ, վճռական ու խիզախ Վանեն մինչև Կիլիկիա... Ապստամբության հոգեբանությունը գոյություն չուներ, այդպիսի ծրագիր մը նախա-

պես գծված չէր: Հայությունն ու ՀՅ Դաշնակցությունն այնպիսի ձեռնարկ մը գլուխ հանելու համար պատրաստված չէին»[114]:

Դժվար է չհամաձայնել այս գնահատականին:

Եթե «Ադանայի կոտորածները տխուր չղթա էին կազմում իթիհադականների կողմից Աբդուլ Համիդի մահագործության շարունակման» (Ա. Մանդելշտամ), ապա Մեծ Եղեռնի շրջանում հայ հասարակության, նրա քաղաքական կուսակցությունների կեցվածքը օղակն էր մոտեցումների այն չղթայի, որը, ձևավորվելով 19-րդ դարի 90-ական թվականներին, ձգվեց մինչև արևմտահայության բնաջնջումը: Ինչպե՞ս գնահատել ՀՅԴ նման կողմնորոշումը: Թվում է, թե մենք դեռևս պատրաստ չենք հարցին միանշանակ պատասխան տալու: Այն հարցադրումը, թե եթե Բալկանյան ժողովուրդները կարողացան ազատագրական պայքարի ելնել և թոթափել թուրքական լուծը, ապա նույնը կարող էին անել նաև հայերը, քննադատության չի դիմանում: Նախ՝ Բալկանները Եվրոպայում էին, և Եվրոպան չահագրգռված էր, Կ. Մարքսի խոսքերով ասած, որքան հնարավոր էր չուտ մայրցամաքից դուրս նետել «թուրքական աղտեղությունը»: Հայաստանն Ասիայում է՝ մեկուսացած քաղաքակիրթ աշխարհից: Բալկանները չրջապատված էին քրիստոնյա և զարգացած ժողովուրդներով ու վայելում էին նրանց նյութական և բարոյական աջակցությունը, իսկ Հայաստանը չրջապատված էր հայ ժողովրդի չգոյությամբ չահագրգռված մահմեդական ժողովուրդներով: Բալկանների ազատագրությունն իրողություն դարձավ տերությունների ջանքերով, նաև պանսլավոնիզմի մղումներով, ռուսական զենքի օգնությամբ: Հայաստանի ազատագրմամբ տերություններից ոչ մեկը չահագրգռված չէր, իսկ Ռուսաստանն այն կապում էր Օսմանյան կայսրության, մասնավորապես՝ Նեղուցների հիմնախնդրի լուծման հետ: Վերջին հաշվով, Ռուսաստանը որքան ձգտում էր տիրանալ Հայկական բարձրավանդակին, նույնքան էլ զգուշանում էր այնտեղ հայ հավաքականության գոյությունից: Բալկաններում մահմեդական ազգաբնակչությունը մեծամասնություն չէր կազմում, նույնիսկ թուրքիզմի բուծարանում՝ Սալոնիկում, մահմեդականները բնակչության 25%-ից ավելին չէին, 55%-ը հրեաներ և 20%-ը քրիստոնյաներ էին, մինչդեռ Արևմտյան Հայաստանում հայերը մեծամասնություն էին մինչև 1880-ական թվականները:

Կոմկուս. Հայ ժողովրդի ազատագրության հարցում կոմունիստների տեսակետը մեկն էր՝ Ռուսաստանում, իսկ ապա նաև աշխարհում սոցիալիստական հեղափոխության հաղթանակը: Նրանք գտնում էին, որ արևմտահայությանն ազատագրել ի զորու է միայն ռուսական պրոլետարիատը: «Տաճկաստանի ազատագրումը պետք է ձեռք բերվի ոչ այնքան Սասունի բանաստեղծական և գեղեցիկ լեռների վրա, որքան Պետերբուրգի և Թիֆլիսի պրոզայիկ փողոցներում»[115]:

Դժբախտաբար, այսպես էր մտածում ոչ միայն Ա. Մռավյանը: Դա անքան մտածողություն էր, որն ուղղակի զարգացումն էր ՀՅԴ հոգեբանության և տրամաբանության:

## 4. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԹԵ՞ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՆՈՒՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ

Հայկական չարժման միջոցներն ու եղանակները տարբեր էին, և դրանցից յուրաքանչյուրը կամ մի քանիսը միասին այս կամ այն չրջանում առաջատար դեր են խաղացել:

Այդ եղանակներն էին՝ ցույցեր, հանրահավաքներ, ահաբեկչություն, պարտիզանական կռիվներ, ժողովրդի զինում, միջազգային հանրության ուշադրության բևեռում հայերի ծանր վիճակին և այլն: Մի կողմից՝ իրականացվում էր յաթաղանի ոտնձգություն-

---

[114] Սասունի Կ., Ապրիլյան եղեռնը քննական ակնոցով, Փարիզ, 1931, էջ 47:
[115] Մռավեան, Դաշնակցութեան կրիզիսը, Վիեննա, 1907, էջ 39:

ների դեմ զինված պայքար, զենքի տեղափոխություն և հայդուկային խմբերի, մասամբ նաև ազգաբնակչության, զինում, իսկ մյուս կողմից՝ Եվրոպայում ու Ռուսաստանում ծավալվում էր հայամետ քարոզչություն: Նաև աշխատանք էր տարվում օսմանյան հպատակ ժողովուրդների դաշինքի և համագործակցության ձևավորման ուղղությամբ: Ազատագրական չարժման բնույթի, ձևերի ու եղանակների արժեքավորումը լոկ պատչաճի հատուցում չէ, այլ ունի արդիական լիցք ու քաղաքական արժագանք, օգտագործվում է թուրք և այլևայլ պատմաբանների կողմից Հայոց ցեղասպանության պատմությունը կեղծելու համար:

Մինչև օրս էլ տարածված է այն կարծիքը, թե Սասունի 1894 և 1904 թվերի կռիվները եղել են ապստամբություններ, մեկը՝ հնչակյանների, իսկ մյուսը՝ դաշնակցության կողմից կազմակերպված:

Սասունի առաջին կռիվներում իրոք ղեկավար դեր են ունեցել հնչակյան գործիչները, հավանաբար նրանք նաև ծրագրել էին Սասունը դարձնել համազգային ազատագրական կռիվների խարիսխ, սակայն իրողությունն այն է, որ սասունցիները կռվում էին ոչ թե անկախության, այլ իրենց իրավունքների ոտնահարումների և բնաջնջման օսմանյան քաղաքականության դեմ: Այդ են հուշում ժամանակակիցներն ու ականատեսները, այդ հաստատեց հետաքննիչ հանձնաժողովը, որը վեց ամիս չարունակ տեղում ուսումնասիրություններ կատարեց:

Դեռ մինչև Սասունի իրադարձությունները սուլթանը Ա. Վամբերիին ասել էր. «Հայերի խելքը չուտով գլուխներն եմ բերելու... Հարկադրված եմ նման արմատական միջոցներ ձեռնարկել այն անլուր հալածանքների և թշնամության պայմաններում, որ դրսևորում է քրիստոնյա աշխարհը»[116]: «...Այդ ամեն ձեռնարկումներու (կոտորածներու) հիմ կազմած է հայերու կարծեցյալ ապստամբությունը, որ երբեք իրականություն եղած չէ, և տեղ-տեղ ցույց տրված ընդդիմությունը քրդական հոսանքին դեմ անձնապաշտութենե տարբեր բան մը չէ եղած»[117]: «Թուրք անկարգ կառավարությունը վաղուց ի վեր էր մտածում ոչնչացնել Սասունի չրջանի ազգաբնակչությանը»,– կարդում ենք Թուրքիայում աշխատած անգլիական գործակալներից մեկի տեղեկագիրը «Կապույտ գրքում»: «Համիդի կողմից հայերին կատաղորեն ջարդելը բացատրվում է երեք պատճառներով. ա) նախկինում հավատարիմ հպատակների չրջանում հուզումներ, բ) եվրոպական ուժերի միջամտություն, գ) վերջինների փոխադարձ կասկածներ ու մրցակցություն»»[118]:

Գ. Նորատունկյանը 1863թ. ներկայացրեց ապստամբության քաղաքական ծրագրերից մեկը՝ կապված լեհ վտարանդի Զորտորիյսկու կողմից հայերին արված առաջարկի հետ՝ ապստամբել Ռուսաստանի դեմ: Առաջարկը մերժվեց: «Հայերը չցանկացան իրենց վրա վերցնել ուրիշ ժողովրդի համար «դերակատարի» դեր»[119]: Նորատունկյանը գրեց. «...Որոշեցինք բնավ երբեք դերասանական պաշտոն մը չընդունիլ ներկայացվելիք ողբերգության մեջ: Այս կարծիքիս վրա էր նաև Պեչիկթաշլյանը»[120]:

Սակայն եղան պոլսահայեր, ովքեր հրապուրվեցին լեհ գործչի առաջարկով: Հակադրվելով նմաններին՝ Նորատունկյանը գրում է. «Պոլսո մեջ խումբ մը մարդիկ (մտածում էին) զինվելով Բարձր Հայաստան երթալ, հոն այս պզտիկ խումբը հայ և քուրդ քաջամարտիկներով զորացնել և անմիջապես Ռուսիո Հայաստան ու Վրաստան արշավել, հետո այդ գավառներուն բնակչաց սիրտն իրենց գրավել, որով ընդհանուր հեղափոխության մը տեղի տալով՝ Ռուսիո Լեհաստանի վրա թափած սոսկալի հուրը տկարացնել,

---

[116] Գաբրիելյան Մ., Հայկական ճգնաժամն ու վերածնությունը, Բոստոն, 1905, էջ 64:
[117] Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Գ, Բեյրութ, 1961, սյունակ 5031:
[118] Merier J. A., *The Eastern Question*, Oxford, 1963, p. 397.
[119] Անանունի Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. II, Էջմիածին, 1922, էջ 203:
[120] Դիվան հայոց պատմության, հ. ԺԳ, էջ 55:

*ստիպելով զենքն իր զորացը մեծ մասը հետ վերադարձնել»: Նորատունկյանն այս ծրագիրը անվանում է դավադրություն և նշում, որ դրա հետևում կանգնած էր Նապոլեոն 3-րդը, որի ներկայացուցիչը հայերի հետ բանակցությունների համար եկել էր Կ. Պոլիս: Նորատունկյանն առաջարկում է արևմտահայության խնդրի լուծման հետևյալ ձեռնարկումները.*

*«Ա. Մասնաժողով մը երեք կամ հինգ անդամներե բաղկացյալ,*

*Բ. Պաշտոնն. Ազգիս արտաքին գործերը վարել,*

*Գ. Նպատակը. Հայաստանի չղթաները խորտակել»*[121]*:*

*Ստ. Նազարյանցը գտնում էր, որ հայ ժողովրդի ազատագրության գրավականն ազգի քաղաքական ինքնակազմակերպման և սուվերեն պետության ստեղծման մեջ է. «Միայն պետությունն է համակարգում ու կարգավորում ազգի ամբողջ կյանքը և միավորում չլատված ուժերը, դրանք ամբողջություն դարձնում և նպատակաուղղում իրագործելու միասնական հասարակական նպատակներ»*[122]*: Սպ. Սպանդարյանը գրում է. «Թող հայերն իմանան, որ ազգն ամենից առաջ պետք է ոտքերի տակ հող ունենա»*[123]*: «Եթե հայերը բնակվեին նույն տարածքի վրա նույնիսկ թեկուզ ստրկության մեջ, նրանք էլի ապագա ունենալու են... Եթե հայերը հայրենիք չունեն, ապա ոչինչ չունեն»*[124]*:*

*Սկզբում ապստամբության կոչով արևմտահայությանը դիմեց Գր. Արծրունին: Սակայն արևմտահայերը ոչ միայն չապստամբեցին, այլև այդ մասին չէին էլ մտածում, ինչը Գր. Արծրունուն մղեց պայքարելու, որպեսզի հայերը ազատագրության հասնեն դրսի օգնությամբ: Իսկ քիչ անց նա հարձակվեց «Մեղու Հայաստանի»-ի վրա, որը «կրակի հետ էր խաղում» հայերին հանելով թուրքերի դեմ, գտնելով, թե թուրքիայի վիճակի բարելավումը նրա բնակիչների խնդիրն է, այլ ոչ թե դրսի ուժերի: Նա գրեց. «Մենք ինչ իրավունք ունենք պահանջել թուրքահայերի արյունը, խաղաքարտի վրա դնել նրանց ներկան ու ապագան, մեր տանը նստած նրանց ցուցումներ տալ»: «Փորձ»-ը արևմտահայության փրկությունը տեսնում էր Օսմանյան կայսրությունում սահմանադրություն մտցնելու, այլ ոչ թե ապստամբության մեջ, չնայած չէր բացառում «իրավունքների պաշտպանության համար զենքի օգտագործումը»*[125]*: "Северная пчела" պարբերականի 1860թ. N33-ում տպագրված «Իսլամիզմը Եվրոպայում և ընդհանրապես ժամանակակից Թուրքիայի վիճակը» հոդվածում ելք էր համարվում Օսմանյան կայսրությունը համադաշնության վերածելը: «Այդ կոչը,– գրում է Դ. Անանունին,– չէր կարող գտնել բարենպաստ հող... ազգի գլուխն ու մարմինը հաշտ չէին»: Նման բազում առաջարկներ կային, սակայն պայքարի ծրագիր, գործողության հստակ պլան այդպես էլ չծնվեց: Հայությունը տարընթացությունների մեջ էր: Ո՞ր ուղիով ընթանալ: Մի բան ակնհայտ է՝ անկախությանը կողմնորոշված ու ազատագրական պայքարի ելած ժողովուրդն անհնար է, որ բնաջնջվեր առանց գոնե հուսահատ դիմադրության: Արևմտահայությունը պատրաստ չէր մարտնչելու, նա այդպես էլ չկարողացավ հստակ որոշել իր գլխավոր խնդիրը՝ թե ինչի համար էր պայքարում՝ անձի պատվի և ունեցվածքի անվտանգությա՞ն, Ռուսաստանի տիրապետությա՞ն տակ մտնելու, թե՞ քաղաքական անկախության համար: Այսպես մտամոլոր, անորոշ դիրքորոշմամբ նա ոտք դրեց 1914 թիվը և հոչոտվեց հստակ նպատակադրում ունեցող երիտթուրքական գեհենում:*

*Կարծիքների ցուցակը շատ երկար է, բազմաբնույթ, հակասական և իրարամերժ: Նույն պատկերն է արևմտահայ շարժման նշանակության մասին մոտեցումներում: Օրինակ, Աշոտ Հովհաննիսյանն այդ շարժումներն անվանում է «անիմաստ», որոնք թուրքերը պատրվակ էին դարձնում հայերին ջարդելու: Դրանք գյուղացիական շարժումներ*

---

[121] Դիվան հայոց պատմության, հ. ԺԳ, էջ 57:
[122] «Հյուսիսափայլ», 1859, հ. I, էջ 5-6:
[123] Անանուն Դ., նշվ. աշխ., էջ 179:
[124] «Մշակ», 1877, թիվ 57:
[125] «Փորձ», 1876, տիրք թիվ 2, էջ 408-411:

էին, «ճախողակ, սխալ» և ծնեցին 1894-1896թթ. կոտորածները: Եվ ապա, «սեփական ուժերի ու բախտակից ժողովուրդների գործակցությանը չհենված արևմտահայ չարժումը դատապարտված էր մեկուսացման ու ջախջախման... ամբողջովին կողմնորոշվելով դեպի Բեռլինի դաշնագրության 61-րդ հոդվածի հետ կապված ակնկալությունները, բախտը կապելով մեծ տերությունների դիվանագիտական և ռազմական միջամտության հեռանկարի հետ՝ արևմտահայ ժողովուրդը ոչ միայն իր ակնկալությունների պարտությունը տեսավ, այլև ճաշակեց 1915թ. հայկական եղեռնի ամբողջ ողբերգությունը»[126]:

**Եվս մի քանի կարծիք հայ հեղինակներից.**

Վ. Մելիքսեթյան. «Թուրքական տիրապետության բնույթն իսկ ժխտում էր հայերի կողմից կանխամտածված ապստամբության որևէ հնարավորություն»:[127] Բ. Կնունյանց. «Հայերի ազատագրական չարժումները ժողովրդական-հեղափոխական էին՝ ուղղված միապետական կարգերի դեմ»: Լեո. «Հայկական չարժումները ծնեցին կոտորածները»: Բ. Բորյան. «Հաստատված է, որ օսմանյան սուլթանները, սկսած XVI դարից մինչև մեր օրերը, ընդհանրապես սիրում էին և հնարավորին չափ պաշտպանում հայերին»: Ա. Կարինյան. «Հայերն, ավելի ունևոր լինելով, չահագործում էին թուրքերին»: Մ. Սերոբյան. «...կուլրերն անգամ գիտեն, թե հայ հեղափոխությունը, երբ հազիվ 35 տարվա կյանք ունի, մարտիրոսի իր ճակատին վրա կկրե հայ տառապանքը՝ դարերու արհավիրքին աղյուսադրոշմը: Հայ հեղափոխությունն արդյունք է և ոչ թե պատճառ հայ տառապանքին: Վերցուցեք տառապանքը և հեղափոխությունը կդադարի գոյության իրավունք ունենալե...»[128]: «Հայկական սիստեմատիկ ջարդերը կսկսին հայկական ինքնագիտակցության զարթնումին հետ, այսինքն, այն օրեն, երբ հայը զգաց, թե ինքը խուզվելիք ոչխար մը, կամ կթվելիք կով մը չէ թուրքին ձեռքին տակ...»[129]: Ե. Օտյան. «...Հայ կուսակցությունները միայն խեղճուկրակ ժողովուրդը օվկիան թշվառության, կրած անտանելի զուլումներեն ազատելու, ապահովելու, ինքնապաշտպանության և անկախության առաջնորդելու միակ և միակ գործին պետք է փարին՝ եղբայրացած ու գործակցած»[130]: Հ. Արշարունի. «Տաճկա-Հայաստանի հայոց ապստամբական չարժումների լուրերը, որ հրատարակվել են թե՛ հայ և թե՛ օտար լրագրերուն, ստուգվեցին այստեղի մասնաժողովին հասած հավաստի տվյալներով: Նրանց ապստամբությունը երկու որոշակի բնավորություն ունի. ա) համառ ընդդիմություն քրդերի անօրեն հարստահարություններին, բ) ուխտ անքակտելի՝ ցմահ մարտնչել ընդդեմ օսմանյան վատթար կառավարության»[131]: Ա. Գոլոչյան. «Թուրքիան ճգնում էր մեր ազգային կյանքը ապականել և մեր ինքնուրույն գոյության վիհը փորել, մենք ևս պետք է աշխատենք բոլոր ուժը ի գործ դնել այդ ճիգերն ի դերև հանելու համար»[132]: Հր. Քոչար. «Ուրեմն թուրքական բռնությունները և ազգասպանության այդ վայրենի ծրագիրն ու դրա գործադրությունը հայ ժողովրդի մեջ պիտի դիմադրություն հարուցեին, և կազմակերպություններ ստեղծվեին այդ դիմադրությունը դեկավարելու համար, և ոչ թե այդ կազմակերպությունները եղան պատճառ թուրքական բռնակալության...»[133]: Ար. Մնացականյան. «Ոչ թե հայկական ազատագրական չարժումները կամ ազգային կուսակցությունների գործունեությունն առաջ բերին թուրքական բռնություններ և հայաջինջ ծրագրեր, այլ ընդհակառակը, ավելի վաղ ժամանակ սուլթանական իշխանության մշակած հայաջինջ ծրագրերը և հայերի կոտորածներն առաջ բերեցին իրավազուրկ հայ ժողովրդի պայքարի նոր բռնկում-

---

126 «Սովետական Հայաստան», նոյեմբեր, 1967:
127 ԳԱ «Տեղեկագիր», 1948, թիվ 4:
128 Սերոբյան Մ., Հայկական մղձավանջ, Բոստոն, 1916, էջ 5-6:
129 Նույն տեղում, էջ 54:
130 «Տաճար», 02.02.1913:
131 ԳԱԹ, ֆ. 14, գ. 1749, թ. 1:
132 ԳԱ «Լրաբեր», 1989, թիվ 5:
133 Նույն տեղում:

*ներ...»*[134]*: Ե. Սարգսյան. «19-րդ դարի 90-ական թվականներին ամբողջ Թուրքա-Հայաստանով մեկ ծավալված հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը ճնշելու և այդպիսով թուրքական գործերին մեծ տերությունների միջամտության պատրվակները վերացնելու համար սուլթանական կառավարությունը մշակեց հայ ազգաբնակչության ոչնչացման հրեշավոր ծրագիր»*[135]*: Կ. Քարամյան. «Եթե հայերի վիճակը բարվոք էր, էլ ինչո՞ւ էր Հայաստանը դատարկվում հայերից»*[136]*: Զ. Կիրակոսյան. «Մի շարժում, որն ուղղված էր թուրքական բռնակալության դեմ, պայքար էր Հայաստանում հայկական պետության համար»*[137]*: Հր. Թամրազյան. «Հայկական շարժումներն ուղղված էին ազգային ճնշումների ու բնաջնջման քաղաքականության դեմ»*[138]*: Հ. Գանգրունի. «Մեր շարժումները, եթե 1878-ին դեռ կճգտեին բարեկարգությանց, ապա 90-ական թվականներին՝ Հայաստանի ազատագրման»*[139]*: Ս. Մարկոսյան. «Երբ Թուրքիայում հայտնաբերվում էր որևէ թուրքական հակակառավարական կազմակերպություն, ապա դրա անդամներին ենթարկում էին համապատասխան պատասխանատվության... Իսկ երբ հայտնաբերվում էր հայկական հակակառավարական թեկուզ ամենաանշնան կազմակերպություն՝ օրենքից դուրս էին հայտարարվում տեղական բոլոր հայերը և այդ հանգամանքը բավական էր հայկական կոտորածներ առաջացնելու համար»*[140]*: Րաֆֆի. «Կ. Պոլսի լրագրերը խիստ սխալ տեղեկություններ են տալիս, իբր ռուսաց կառավարությունը հայերի մեջ նիհիլիստների հետքեր է որոնում... Հայերի մեջ (նմանները) չկան: Միայն վերջին ժամանակներում (օսմանյան) կառավարությունը սկսեց կասկածանքով վերաբերվել հայ գործիչների ամենահամեստ ցանկություններին, որոնք բովանդակում էին միայն այն, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածն իրագործվի և տաճկահայերի թշվառ դրությունը փոքր ի շատե բարվոքվի: Կառավարությանը մոլորության մեջ ձգողները եղել են մի քանի բախտախնդիր պաշտոնատարներ, որոնք... սկսել են երևակայական ցնորքներ ստեղծել, իբր թե Անդրկովկասում գոյություն ունի մի «մանուկ Հայաստան», որը կապեր ունի Տաճկաստանի հայոց գաղտնի ընկերությունների հետ, որոնք բոլորը միասին ձգտում են ընդհանուր ապստամբություն բարձրացնել Հայաստանում: Այդ ամենը ավելի քան ծիծաղելի է»*[141]*:*

***Օտար հեղինակներ.***

*Ն. Պիչկով. «Պարբերական զանգվածային ջարդերի միջոցով Աբդուլ Համիդը հույս ուներ վերացնել հայ ազգի ազդեցությունը երկրում»*[142]*: Ս. Դիկչտայն. «Կյանքը (հայերին) առաջադրել է այնպիսի հասարակական հարցեր, որոնք իրենց լուծումը գտնելու են գոյություն ունեցող հասարակական կարգը բռնությամբ փոխելու միջոցով»*[143]*: Թուրքական պաշտոնական կարծիք. «Հայկական շարժումները կոչված էին առաջացնելու եվրոպական միջամտություն և տերությունների միջոցով օսմանյան տարածքների վրա ստեղծելու Անկախ Հայաստան»: Զ. Մերիեր. «Հայերը հարկադրված դիմադրում էին նրանց (քրդերի) պահանջներին, որոշ դեպքերում՝ նաև բացահայտ: Ունենալով թուրքական իշխանությունների աջակցությունը, քրդերը քայլեր են ձեռնարկում՝ ըմբոստու-*

---

134 Մնացականյան Ա., *Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային մտքի գնահատմամբ*, Երևան, 1965,էջ 8:

135 *Արևելագիտական ժողովածու*, Երևան, 1960, էջ 398:

136 *Քարամյան Կ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի օրինաչափության հարցի շուրջը*, Երևան, 1969, էջ 104:

137 Կիրակոսյան Զ., *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը*, Երևան, 1967, էջ 20:

138 Թամրազյան Հր., *Գրական ուղիներով*, Երևան, 1962, էջ 207-209:

139 Գանգրունի Հ., *նշվ. աշխ.*, էջ 71:

140 Մարկոսյան Ս., *Արևմտահայության վիճակը XIXդ. վերջերին*, էջ 211:

141 *ԳԱԹ, ֆ. Առաքելյան Հ., գ. 1530:*

142 *Արևելագիտական ժողովածու*, էջ 398:

143 *Մարքսիստական տնտեսական մտքի տարածումը Հայ իրականության մեջ (1890-1920)*, Երևան, 1961, էջ 80:

թյունը խեղդելու արյան մեջ»[144]: Պ. Դելկասե. «Բ. Դուռն իր գործակալներով հայերի առջև մի ճանապարհ է բաց թողնում և դա հեղափոխության ճանապարհն է...»[145]: Է. Դյումերկ. «Հեղափոխական կոմիտեները 1887-ի կողմերում են ձևավորվել: Իրականությունը սա է: Մինչդեռ թուրքական կառավարության կողմից կազմակերպված փոքր կամ մեծ ջարդերը, թույլ կամ ուժեղ սիստեմատիկ հալածանքները գոյություն ունեն ավելի քան 500 տարի»[146]: Ա. Զիպրիանի. «Հայերը, ինչպես և մյուս ժողովուրդները, որոնք այսօր կրում են Թուրքիայի բռնության լուծը, եթե ուզում են ազատ լինել, պետք է արդարության և մարդկայնության զենքը ունենան ձեռներում»[147]: «Թելեգրամ» թերթ. «Եթե հայերը սուլթանի բռնապետական լուծը խաղաղորեն և լուռ տանեին, այդ լոկ ցույց էր տալու, որ նրանց նման ստոր ազգ աշխարհում չկա»[148]: Ժ. Ժորես. «Եվ ի՞նչ կարող է լինել մի քանի մարդկանց կամ մի քանի կոմիտեների պատասխանատվությունն ամբողջ ժողովրդի նահատակության և կոտորածի դիմաց... այդ մարդկանց պատասխանատվությունից չատ առաջ և դրանից ավելի վեր կա սուլթանի և Եվրոպայի պատասխանատվությունը»[149]: Դամադ Մահմուդ. (Կոչ հայերին) «Աչխատենք միասին չնչել մեր հայրենիքը կեղեքող բռնակալությունը»[150]: Ա. Թոյնբի. «Հայերը սահմանադրությանը հավատարիմ մնացին այնքան ժամանակ, քանի դեռ երիտթուրքերը քիչ թե շատ ազատական և ժողովրդավարական քաղաքականություն էին վարում: Աղանայի կոտորածը սառը «ցնցուղ էր» հայ-թուրքական փոխհարաբերությունների վրա»[151]: Ֆարաջալլա Սալեհ Դիբ. «Վերջին երկու դարերի ընթացքում Թուրքիայում տեղի ունեցած փոփոխությունները՝ Արևմուտքից կախման ուժեղացումը, թիմարների և ենիչերական համակարգերի քայքայվելը, արտաքին պարտքերի կուտակվելը, ռազմական անվերջ հարձակումները, պարտությունները արևմտյան զարգացող արդյունաբերական բուրժուազիայից, այս ամենը սկիզբ դրեցին քայքայմանն ու անկմանը, ինչը արևելյան քրիստոնյա համայնքներին ստիպեց հայացքը հառել Արևմուտքին»[152]: «Ալ Մուստակբալ». «Հայերի մեջ ուժեղանում է ձգտումը դեպի ազգային անկախ կյանք... Բալկանյան ժողովուրդների պայքարն այնպիսի ազդեցություն թողեց հայերի վրա, որ շարժումներ սկսվեցին, և հայերը որոշ չափի անկախության պահանջներ ներկայացրեցին... Դրան սուլթան Աբդուլ Համիդը պատասխանեց 1895թ. հայերի սպանություններով, որոնք իրականացրին թուրքերը քրդերի հետ միասին օսմանյան պետության համարյա բոլոր մեծ քաղաքներում՝ Տրապիզոնից մինչև Ստամբուլ»: Ֆ. Նանսեն. «Ջեյթունցիների ապստամբությունը Թուրքիայից բաժանվելու նպատակ չէր հետապնդում... Այն ձգտում էր ձեռք բերել մարդավայել կյանքի ապահովություն և ներքին գործերում՝ որոշ ինքնավարություն»[153]: Ֆ. Գրին. «Եթե ճիշտ եմ բացատրում այս երկրում տեղի ունեցող շարժումը, ապա նրա էությունը ոչ թե հեղափոխությունն է, այլ հուսահատ ձգտումը՝ Եվրոպայի ուշադրությունը գրավելու այն թշվառությունների վրա, որին ենթարկվում է հայ բնակչությունը և միշտ ենթարկվելու է գոյություն ունեցող կառավարման պայմաններում»[154]: Փ. Քըրրի. «Հայ հեղափոխականները, օգտվելով անկարգությունից, ձգտում են արագացնել Թուրքիայի պատասխան ռեակցիան և դրանով իսկ հասնել տերությունների

---

[144] Merier J. A., նշվ. աշխ., էջ 339:
[145] Գանգրունի Հ., նշվ. աշխ., էջ 158:
[146] Dumerk E., *L' Arménie. Le massacre et la Question d' Orient*, pp. 153-154.
[147] Գանգրունի Հ., նշվ. աշխ., էջ 226:
[148] Նույն տեղում:
[149] Նույն տեղում, էջ 227:
[150] «Դրոշակ», 1900, թիվ 5:
[151] *Le massacre d'Arménie*, Paris, 1969, p. 7.
[152] «Բեյրութ ալ Մասա», 1985, թիվ 146:
[153] Նանսեն Ֆ., նշվ. աշխ., էջ 242:
[154] *Положение армян в Турции...*, стр. 230-231.

*միջամտությանը»*[155]*: Աբդուլ Համիդ 2-րդ. «Հայերի նպատակը Թուրքերին սադրանքի ենթարկելն է իրենց դեմ ուժ գործադրելով և դրանով գրավել Եվրոպայի և մասնավորապես Անգլիայի ուշադրությունը»*[156]*: Ռ. Աթաթուրք. «Մեր երկրի քրիստոնյա տարրերի կրած բոլոր դժբախտությունների պատասխանատվությունը պետք է ընկնի հենց նրանց ուսերին... Այդ ամենը հետևանք էր նրանց կողմից սեփական իրավունքների չարաշահման և այն անջատողական քաղաքականության, որ նրանք իրականացնում էին ամենազազանային եղանակներով»*[157]*: Մ. Մաքքոլ. «Սուլթանն իր սխրագործությունը սկսեց Սասունից և, եթե բարենորոգումների ծրագիրը չլիներ, գուցե այդ կոտորածը ժամանակավորապես հագեցներ նրա արյունռուչտ սիրտը: Սակայն բարենորոգումների հիմքում դրված էր հայերի և մուսուլմանների թվերի հարաբերակցությունը: Ուստի նա որոշեց այդ հարաբերակցության փոփոխման (այսինքն, հայերի թվի նվազեցման) միջոցով խանգարել բարենորոգումների ծրագրի իրականացմանը... Իսկ տերությունները ոչինչ չարեցին մարդասպանի ձեռքը բռնելու համար: Հայերին կոտորելու հրամանը տվեց Ելդըզ Քեոշքը»*[158]*: Ֆեյզի բեյ (Թուրք). «Հայկական չարժումներն իրենց պարճառներն ու արդարացումներն ունեն, դրանց դրդողն ու հիմք տվողը նույն ինքը Թուրք կառավարությունն էր իր կաշառակեր, անբարոյական, խարդախ, տխմար պաշտոնատարներով և արատավոր կառավարման համակարգով»: "Spectator" շաբաթաթերթ. «Բ. Դուրը հայերից վախենում է, վախենում է նրանց խելքից, խիզախությունից, չսանձահարվող ազգային ձգտումներից, ինչպես նաև ռուսական սահմանին մոտ լինելուց, որի մյուս կողմում ռուսական հովանավորության տակ ապրում է մեկ միլիոն հայ»*[159]*: Պ. Ռորբախ. «Հայաստանը Թուրքիայում անկախության օջախ է, որի հրդեհը կանխելու համար պետք է օգտագործել քրդերին: Գերմանիան երբեք չի առարկի քրդերին հայերի դեմ հանելուն»*[160]*: Ց. Լեփսիուս. «Ողբերգության արմատները պետք է փնտրել ոչ թե հայերի դավաճանության, այլ երիտթուրքական ծայրահեղականների որդեգրած այլամերժ ազգայնականության մեջ»*[161]*: Ջ. Բրայս. «Հայերը մեծ չահ ունեին ոչ թե Թուրք պետության կործանման, այլ նրա պահպանման մեջ: Ամենուրեք կայսրությունում ցրված և բացի Վանի նահանգից ոչ մի տեղ մեծամասնություն չկազմելով, նրանք անկախության հույս չունեին, ինչպես հույներն ու սլավոնները: Ընդհակառակը, չնորհիվ իրենց մտավոր ունակությունների, նրանք կարող էին փափագել բաժանել իշխանությունը Թուրքերի հետ ամբողջ կայսրությունում... Ահա թե ինչու Թուրք տարրի հետ համաձայնությունը հայերի համար կենսական կարևորություն ուներ»*[162]*: Է. Բեռնշտայն. «Չեմ կարող ասել, թե հայ հեղափոխականները պաշտոնատարների կամ նրանց արբանյակների դեմ բռնություն չեն գործադրել, բայց (այդ ծանր) պայմաններում նրանց արարքն ավելի քան մարդկային է և ոչ պախարակելի... Բանը բուրդ է այն ժողովրդի, որն այդ ծայրահեղ դժբախտություններից ազատվելու համար ցանկացած միջոցի էդիմի»*[163]*: Օսման Նուրի. «Այդ ժամանակ Օսմանյան կայսրությունում հայերը վայելում էին լիակատար ազատություն: Եկեղեցիներում ազատորեն կատարվում էին ամեն տեսակի ծեսեր և արարողություններ, պալատում, կայսրական գանձարանում ծառայում էին բազմաթիվ բարձրաստիճան հայ պաշտոնյաններ... Գրեթե բոլոր նահանգներում կուսակալներին կից քաղաքական գոր-*

---

[155] **Акчам** Т., նշվ. աշխ., էջ 66:
[156] Նույն տեղում, էջ 67:
[157] Նույն տեղում, էջ 67-68:
[158] *Положение армян в Турции...*, стр. 204-207.
[159] Հայկական հարցում Անգլիայի քաղաքականությունը ըստ «Սպեկտատոր» շաբաթաթերթի, Երևան, 1982, էջ 5:
[160] ՀԽՍՀ ԳԱ Ինֆորմացիոն բյուլետեն, 1984, էջ 27:
[161] «Ալիք», 18.05.1986:
[162] **Զաքեվանդ**, *Միացյալ անկախ Թուրանիա, կամ ի՞նչ կը ծրագրեն Թուրքերը, Միացյալ անկախ Թուրանիա*, Աթենք, 1987, էջ 101:
[163] *Օտար հեղինակները ...*, էջ 12-14:

ծերը հայերի ձեռքում էին: Հայերի ու մահմեդականների միջև կային անհամաձայնություն առաջացնող մի քանի խնդիրներ՝ քրդերի հարձակումները, տեղական պաշտոնատարների պարտազանցությունները... Հայերը թեև բողոքում էին օսմանյան վարչության հոռի վերաբերմունքից, բայց չէին դադարում իրենց համար մեծ վտանգ համարել նաև ռուսներին...»: Սակայն Բեռլինի վեհաժողովից հետո վիճակը փոխվեց, և պատճառն այն էր, որ 1887թ. սուլթանի կողմից չնորհազրկված Սայիդ փաշան ձգտում էր «գործի գլուխ անցնել և առանց որևէ պատճառի պահանջեց կենսագործել հայերի վերաբերյալ Բեռլինի դաշնագրի հոդվածները»: Համիդը մտածեց, թե նա հայերի կողմից կաշառվել է: Հայերի գաղտնի սադրանքների մասին պաշտոնատարների բողոքները վախեցնում էին Աբդուլ Համիդին, նա ստիպված եղավ մոտենալ քրդերին: Խիստ հսկողություն սահմանվեց հայ պաշտոնատարների և հրատարակությունների վրա:

«Դրոշակ» կուսակցության նպատակն էր հայերին մղել հեղափոխության և ապահովել Ռուսաստանի աջակցությունը: Հայ հայրենասիրական ընկերությունները կոչ էին անում. «Հաջողության հասնելու համար... նախ պետք է ժամանակ և շատ փող, նաև շատ արյուն թափել»:

Գնալով վիճակը սրվում էր, և «իսլամների ու քրիստոնյաների միջև ամեն մի վեճ ստանում էր ապստամբական, պատերազմական բնույթ... Վերջապես որոշվեց առաջացնել մեծ խռովություններ և դրանցից առաջինն իրականացնել Սասունում... Հենց չարժումն սկսվեց, միջամտեցին դեսպանները...»[164]:

## 5. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒԻՎՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սույն աշխատության երկրորդ գլխում թուրքիկ անդրադարձ կա հայերի ընդվզումներին: Փորձենք խնդրին վերադառնալ փոքր-ինչ հանգամանալից:

Օսմանյան իշխանությունների հայահալած քաղաքականության դեմ 1862թ. զինված ելույթ տեղի ունեցավ Վանում: «Փարիզ» պարբերականը նույն թվի փետրվարի 26-ին գրում է. «Հայաստանի Վան քաղաքի մեջ տաճիկ զինվորները քրիստոնեից խաչը թշնամացնելու պատճառով կռիվ եղավ և միջնաբերդն առնվեցավ»: Բախման առիթը հետևյալն էր. թուրքահպատակ քրիստոնյաները հուղարկավորությունների ժամանակ իրավունք չունեին դագաղի առջևից խաչ ու խաչվառ տանելու: Վանեցիներն այդ արգելքին չէին ենթարկվում: Քաղաքի թուրքերը Վանի փաշայից պահանջեցին հայերին թույլ չտալ խանգարել սահմանված կարգը, այլապես նրանց կկոտորեն: Լսելով այդ մասին՝ հայերը փաշային սպառնացին, որ եթե նա թուրքերին չզսպի, իրենք օգնության կկանչեն «...բարեկամ քրիստոնյա քրդերին»: Չնայած փաշան խոստացավ կատարել հայերի պահանջը, բայց հենց առաջին թաղման ժամանակ մոլլաների հրահրմամբ թուրք ամբոխը հարձակվեց հուղարկավորության թափորի վրա: Քաղաքի և շրջակա գյուղերի հայերը ոտքի կանգնեցին ի պաշտպանություն հարձակման ենթարկվածների: «Բուն բերդի մեջ սկսվեց ձեռնակռիվ և կոտորած: Բերդը մնաց հայերին, որովհետև նրանք թուրքերից շատ էին»[165]:

1863թ. քուրդ բեկերի բռնությունների դեմ ծառացավ Տարոնի հայությունը: Տեղի ունեցավ զինված ընդհարում: Այդ մասին մահմեդականացած եվրոպացիներից Ֆ. Միլենգենը գրում է. «Մշո գավառի բազմամարդ հայ բնակչությունը 1863թ. բացահայտ ապստամբություն բարձրացրեց իր հարստահարիչների դեմ»[166]: Ելույթի սուր ծայրն ուղղված էր քրդերի դեմ: Մշեցիները պատվիրակություն ուղարկեցին Կ. Պոլիս, սակայն

---

[164] Թուրքական աղբյուրները ..., էջ 168-170:

[165] "Радуга", 15.04.1862.

[166] Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, էջ 124:

Ֆուադն անհետևանք թողեց հայերի բողոքը: Պատվիրակությունը սպառնաց, թե հայերը կհեռանան Վրաստան կամ Ռուսաստան: Մեծ վեզիրը բղավեց. «Սահմանը բաց է»: 300 հայ ընտանիք որոշեց արտագաղթել: Տարիներ անց Մ. Իզմիրլյանը գրեց, որ իշխանությունը Տարոնի մերձակայքի ցեղապետերին «ձերբակալելով՝ երկրեն հեռացուց, և ասով ժողովրդյան աշխատությանը մեծ դյուրություն ընծայեց, սակայն այդ աքսորյալ գլխավորներեն ոմանք սկսան վերադառնալ նույն երկիրը, որով ավելի ևս կենդանացավ և գրգռեցավ ասոնց բարբարոսությունը»[167]:

«Փարիզ» թերթը տպագրում է Մարսելից ստացված մի հեռագիր, որում ասվում էր. «Հայաստանի Վան քաղաքի մեջ տաճիկ զինվորները քրիստոնեից խաչը թշնամացնելու համար կռիվ եղավ և միջնաբերդ առնվեցավ»[168]: Վանի այս իրադարձության մասին,– իսկ այն իրոք իրադարձություն էր,– տեղեկատվությունը շատ նվազ է ու հակասական: Նախ որոշակի չէ դրա ճշգրիտ ամսաթիվը: Եթե «Փարիզ»-ը 1962 փետրվարի 28-ին տպագրում է տեղեկատվություն կատարվածի մասին, ապա տրամաբանական է կարծել, որ խոսքը նույն թվի ու, հավանաբար, նույն ամսվա մասին է, որովհետև հազիվ թե Փարիզից ստացված հեռագիրն արտացոլած լիներ ամիսներ առաջ տեղի ունեցած իրադարձությունը: Իսկ Լոնդոնից ստացված մի տեղեկատվություն կատարվածն անվանում է «մանր անցք»: Ի՞նչ «մանր անցքի» մասին կարող է խոսք լինել, եթե սպանվել էր չուրջ 1000 մարդ ու գրավվել էր քաղաքի անառիկ բերդը: Եթե Կ. Պոլսի «Journal de Constantinople»-ն «այս լուրը բոլորովին սուտ համարեց, ապա օտար մամուլի հարաճուն ուշադրությունը կատարվածին միանգամայն այլ բան էր ասում: «Փարիզ»-ի հրապարակումից մեկ ամիս անց՝ մարտի 28-ին Նյու Յորքի «Evening Post»-ը հաստատեց. «Վանի հայերը ոտքի են ելել թուրքերի դեմ», և այն ուներ «քաղաքական նշանակություն»: Ապրիլի 5-ին նույն իրադարձության մասին հանդես եկավ նաև հնդկահայ «Եղբայրասեր»-ը, որը ծաղրում է նրանց, ովքեր «սուտ էին համարում հրապարակված լուրերը»: Վանի բախումներին մամուլի արձագանքները չարունակվում են ամիսներ: «Համբավաբեր Ռուսիո»-ն հունիսի 10-ին կատարվածը անվանում է «փոքրիկ պատերազմ»:

Վանի ընդվզման արձագանքները գնալով ավելի ծավալուն ու ահաբեկիչ էին դառնում, այնքան որ Բաղեշի առաջնորդ Երեմիա վարդապետը հետաձգում է այցելությունը Վան, որովհետև «կաթնեցի և բաղեշցի բարեկամք... աղաղակեցին և հորդորեցին բնավ չհանդիպել ի Վան, որ քան զԲաբելոն ծփայր ի սաստիկ խռովութենե»[169]:

Հարցին ավելի հանգամանալից է անդրադառնում Թեոդոսիայի «Радуга»-ն 1862թ. ապրիլի 15-ին, թե քաղաքի քրիստոնյաները հուղարկավորությունների ժամանակ իրավունք չունեին դագաղի առջևից խաչ տանել: Թանզիմաթից հետո Վանի հայերը հրաժարվեցին ենթարկվել այդ կարգին: Թուրքերը տեղի վալուց պահանջեցին «զսպել հայերին», այլապես կոտորելու են նրանց: Հայերը պատասխանեցին, թե այդ դեպքում իրենք օգնության կկանչեն «բարեկամ քրիստոնյա քրդերին»: Սակայն թուրքերն իրենց դիտավորությունից հետ չեն կանգնում և հարձակվում են հայերի թաղման թափորի վրա: Սկսվում է ընդհարում: «Բուն բերդի մեջ սկսվեց սոսկալի կռիվ և կոտորած: Բերդը մնաց հայերի ձեռքը, որովհետև նրանք թվապես թուրքերից շատ էին»:

1862-63 թվերին քուրդ ցեղապետերի դեմ ոտքի ելավ Բղիի հայ բնակչությունը: Տեղի քուրդ աղաները զավթել էին հայերի հողերը, հափշտակել անասունները: Դատարանը մի քանի քրդերի աքսորի դատապարտեց: Սակայն երկու տարի անց աքսորվածները վերադարձան ու սկսեցին ասպատակություններ, այս անգամ արդեն իշխանությունների բացահայտ աջակցությամբ:

Բ. Դուրը նրանց է հանձնարարում Կարին-Դիարբեքիր ճանապարհի շինարարության համար բանվորական ուժի հավաքագրման գործը: Դրանից օգտվելով քրդերը հա-

---

[167] Մատենադարան, Մ. Իզմիրլյանի արխիվ, թղթ. 14, վավ. 616:
[168] «Փարիզ», 28.02.1862:
[169] Մատենադարան, ձեռ. 4177:

յերի հանդեպ ոչ միայն խտրականութիւններ էին գործադրում, այլև պարզապես կողոպտում էին: Ծանր պայմանների պատճառով Քղիի հայերը հրաժարվեցին մասնակցելուց ճանապարհի շինարարութիւնը և բողոքագիր ուղարկեցին պատրիարքին: Քաղաքային ժողովը հարցին լուծում տալու նպատակով դիմում է Բ. Դուռը: Սակայն մնում է անպատասխան: Դրա փոխարէն մեծ վեզիրը սպառնալիքներ տեղաց հայերի ու պատրիարքարանի հասցեին: Դրան հետևեցին բռնութիւններ գործադրելու միջոցով շինարարներ հավաքագրելու գործողութիւնները, նաև սադրանքը «ըմբոստութիւնների» մեղքը բարդելու Ազգային ժողովի վրա: Այդպես չարունակվեց մինչև 1872թ.: Պայքարն ավարտվեց քրդերի հաղթանակով՝ նույն պարզ պատճառով— նրանց թիկունքին կանգնած էր կառավարման օսմանյան համակարգը: Ազգային ժողովի ղեկավարութիւնը մեղայական նամակ գրեց Բ. Դուռը[170]:

Զարսանջակում քուրդ վերնախավը խլում էր հայերի հողերը և նրանց դարձնում մարաբա: Ի վերջո հայերի համբերութիւնը հատնում է: Պայքարն սկսվեց 1860 թվին և տևեց մի քանի տարի: Պատրիարքարանի բողոքագրում, հասցեագրված Բ. Դուռը, կարդում ենք. «Զարսանջակի գավառում բնակվող հայազգի մարդկանց պապենական սեփականութիւն եղող տունը, պարտեզն ու արտերը մուսուլման հպատակների՝ գյուղական աղաների կողմից գրավված լինելու և հայազգի մարդկանց իբրև վարձակալ համարելով, նրանցից հարկեր և այլն պահանջելով, նեղութիւն և ճնշում է գործադրվել, գործը հանձնվել է դատարան, վճռը գնալով ուժեղացել է հայերի ու բեյերի միջև: Այն 10-12 տարուց ի վեր չարունակում է հայ մարդկանց և նրանց ճնշող-քայքայողների միջև»[171]: Հալածանքների խստանալու հետևանքով 1865թ. Դիարբեքիրի հայութիւնը բողոքագիր է ուղարկում սուլթան Աբդուլ Ազիզին: Բայց Ծուռը Պոլիս մեկնած հայկական պատվիրակութեան 15 անդամներին բանտ է նետում: Դա ևս չարսանջակցիներին չհուսահատեցրեց: Նրանք դիմեցին Ազգային ժողովին, որը նոր բողոքագիր ներկայացրեց: Բայց սա նույնպես անուշադրութեան մատնվեց: Արդյունք չտվեց նաև կաթողիկոսի միջամտութիւնը: Զարսանջակի հարցի շուրջ գանգատներն ու հակամարտութիւնները չարունակեցին մինչև 1874 թիվը: Սակայն հայերը ոչնչի չհասան, որովհետև սուլթանն ու նրա կառավարութիւնը հայահալածութիւնն արդեն բարձրացնում էին պետական քաղաքականութեան մակարդակի: Համոզվելով, որ սուլթանն իրենց արդարացի պահանջները չի բավարարելու, չարսանջակցիներն արտագաղթեցին:

* * *

Զեյթունը 19-րդ դարում չարունակում էր պահպանել իր կիսանկախ դրութիւնը: Բ. Դուռը միջոցների դիմեց այդ կիսանկախ վիճակը վերացնելու համար: 1829թ. թուրքական բանակը չարժվեց Զեյթունի վրա, սակայն հակահարված ստացավ ու դիմեց փախուստի: 1832թ. զեյթունցիները հարձակում են գործում Ջերմուկի դաշտում բանակ դրած թուրքական զորքերի վրա ու խուճապի մատնում: Սուլեյմանը մարտադաշտում 309 դիակ թողնելով, «չունչը Մարաշ կառնե և քովը եկողներուն կըսե, թե... այդ կյանվուրներուն հետ թշնամութիւնն անօգուտ է, պետք է բարեկամութեամբ վարվիլ»:[172] Զեյթունցիները պատվիրակութիւն են ուղարկում Կ. Պոլիս և վերահաստատել տալիս Մուրադ 4-րդի չնորհած հրովարտակն իրենց ինքնավար վիճակի վերաբերյալ: Զեյթունը հպատակեցնելու փորձեր կատարեց նաև եգիպտական Իբրահիմ փաշան, սակայն այդ փորձերն էլ անհաջողութեան մատնվեցին և 1840 թվին եգիպտացիները վերջնականա-

[170] Ատենագիտութիւնք Ազգային ժողովո, հ. Բ («Տեղեկագիր քաղաքական ժողովո»), Կ. Պոլիս, 1872, էջ 16-23:
[171] Ատենագիտութիւնք երեսփոխանական ընդհանուր ժողովո, հ. Բ, էջ 14-16:
[172] Գալուստյան Գր., Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, էջ 130:

պես հեռացան Կիլիկիայից: Հաջորդ տարին Զեյթունում հարկեր հավաքելու նպատակով երևաց թուրքական մի զորաջոկատ: Զեյթունցիները ջոկատը ձերբակալեցին: 1842թ. զեյթունցիների ու թուրքական բանակի միջև ճակատամարտ տեղի ունեցավ Ղանտրի տակ և կրկին ավարտվեց հայերի հաղթանակով: 1847թ. Զեյթուն մտած թուրքական բանակը ջախջախվեց: Սուլթանը, տեսնելով, որ զենքի ուժով զեյթունցիներին ընկճել չի հաջողվում, սկսեց սիրաշահել նրանց: Պոլիս բանակցությունների հրավիրվեց զեյթունահայերի պատվիրակությունը: Պայմանագիր կնքվեց, որով վերահաստատվեց Զեյթունի ինքնավարությունը: Սակայն 1852թ. սուլթանը խախտեց այդ պայմանագիրն ու ավելացրեց հարկերը: Զեյթունցիները հրաժարվեցին հնազանդվել:

Ղրիմի պատերազմից հետո Մարաշի շրջանում լեռնականներ բնակեցվեցին, որոնց տրվեցին հողատարածքներ, նշանակալից արտոնություններ և գրգռեցին զեյթունցիների դեմ: 1858թ. չերքեզները ներխուժեցին Զեյթուն և ավերածություններ կատարեցին, բայց Քոչ Դաղ լեռան մոտ պարտվեցին ու փախուստի դիմեցին:

1860թ. օսմանյան զորքերը՝ Խուրշիդի հրամանատարությամբ ու չերքեզական ամբոխը բանակ դրեցին Ջահան գետի հովտում և զեյթունցիներից պահանջեցին վճարել 12 տարիների հարկերը: Հայերը մերժեցին: Թուրքական բանակը չարժվեց Զեյթունի վրա: Սակայն Ջերմուկի դաշտում պարտվեց ու «խուճապահար կփախչեին, և չատերը կամուրջեն անցնիլ չկարողանալով, գետը կնետվեին կյավուրներին գերի չիյնալու համար»[173]:

Զեյթունի 1862թ. ապստամբության խթանիչների վերաբերյալ կարծիքները միանշանակ չեն: Եթե թուրքերն ապստամբությունը համարում էին նախապես ծրագրված և անկախության միտված, ապա Մ. Նալբանդյանը գտնում էր, որ Զեյթունի «հեղափոխական կազմակերպության» համար մղիչ ուժ էին ո՛չ ռուս նարոդնիկները և ո՛չ էլ Նապոլեոն Յ-րդը: «Այդ մղիչ ուժը միայն ու միայն թուրքական կառավարության հայաջինջ քաղաքականությունն էր»: Վ. Մելիքսեթյանի կարծիքով՝ «բոլոր փաստերը գալիս են ապելու, որ 1862 թվի Զեյթունի անցքերը թուրք կառավարության կողմից նախապես մշակված սադրիչ դեպքերի ամբողջ շարան են, ստիպելու հայերին զենքի դիմելու, որը պատրվակ էր ծառայելու Արծվաբույնը հիմնահատակ կործանելուն»: Դա են վկայում պատերազմից ամեն կերպ խուսա տալու զեյթունցիների ջանքերը և կուսակալի տրամադրվածությունն անպայման հարճակման անցնելու. զեյթունցիները հարկադրված եղան ինքնապաշտպանության կանգնել: 1862թ. օգոստոսի 9-ին Մարաշի կուսակալ Ազիզը լայն լիազորություններով, խոշոր բանակով, թնդանոթներով, զորքի ու մահմեդական ամբոխի հետ շարժվեց Զեյթունի վրա: Նա մահմեդականներին խոստացել էր, որ հայերին ոչնչացնելուց հետո տեր են դառնալու նրանց ունեցվածքին: Զեյթունի վրա հարճակվող բանակը կազմված էր 30 հազար հոգուց, որին միացել էին 40-50 հազար հոգանոց մահմեդական հրոսակախումբ, 150 չեխ, մոլլա և դերվիշ: Այս հսկա զանգվածն առաջ էր շարժվում՝ իր հետևից թողնելով ավերված բնակավայրեր: Արեգին գյուղում, «Արք և կանայք և տղայք բոլոր սուրի բերան գնացին, տուները կողոպտեցան, և ամբողջ գյուղը հրո ճարակ եղավ: Արյունը փողոցներու մեջ կվազեր, և հրդեհին մուխը սոսկում ու սարսափ կծավալեր մերձակա գյուղերը: Փաշան հրամայեց գյուղի մոտակա վանքին դռները խորտակել, այս արյան ծարավի մարդիկը կուսակալին աչաց առջև և նրա հրամանով վանահայրը և միաբանք փողոտեցին... Եվ նվիրական սպասք, անոթ և զարդեր բաժանելեն վերջ յուր զորաց հրամայեց փաշան վանքն էլ հրդեհել»[174]: Նույն ձևով վարվեցին 10 ուրիշ գյուղերի հետ: Զեյթունցիների զգոնությունը բթացնելու համար փաշան պատվիրակություն է ուղարկում և հայերի համար ծանր պայմաններով հաշտություն առաջարկում՝ վճարել 500 հազար դահեկան հարկ և հանձնել չարժման

[173] Նույն տեղում, էջ 135:
[174] «Արձագանք», 1895, թիվ 141:

ղեկավարներին: Զեյթունցիները համաձայնեցին վճարել 128 հազար դահեկան հարկ, սակայն հրաժարվեցին թուրքերին տալ իրենց ընկերներին: Նրանք Ավագ Կետիկի կիրճում չախչախեցին Ահմեդի զորքին:

Թուրքերի գլխավոր հարձակումը սկսվեց 1862թ. օգոստոսի 14-ի առավոտյան: Թնդանոթները ռմբակոծում էին քաղաքի կենտրոնը, Զեյթունը ադցանի մեջ էր: Ս. Աստվածածնի վանքի փոքրաթիվ պաշտպանները, Գր. Մարտիրոսյանի գլխավորությամբ, աներևակայելի դիմադրություն ցույց տվեցին, իսկ երբ հնչեցին եկեղեցու զանգերը, թաքստոցներից դուրս թափվեցին և փախուստի մատնեցին թշնամուն: Թուրքական բանակը, մի կողմից ասպատակում էր հայկական բնակավայրերը, մյուս կողմից, չրջափակել էր լեռնաչխարհը: Ազիզը զեյթունցիներին նոր պահանջներ ներկայացրեց: Զեյթունցիները հետագա կորուստներից խուսափելու համար ռազմավարի մի մասն ու 30 հազար ղուրուշ հարկ ուղարկեցին Մարաշ: Չնայած դրան ուխտադրուժ թուրքերը պատանդ վերցրեցին հայ իշխանների զավակներին:

Սուլթանը որոշում է Աչիրի հրամանատարությամբ 150 հազարանոց բանակ ուղարկել Զեյթունը հիմնահատակ կործանելու և հայերին բնաջնջելու համար: Սակայն միջամտում է Նապոլեոն 3-րդը, և այդ արշավանքը տեղի չի ունենում: Մարաշի կառավարիչ Աչիրին հանձնարարվում է փոխադարձ զիջումներով համաձայնության հասնել: Սուլթանը վախենում էր, որ տերությունները Զեյթունը պատրվակ կդարձնեն և կմիջամտեն կայսրության գործերին: Սուլթանական կառավարությունը միաժամանակ Մարաշի իշխանություններին հանձնարարեց Զեյթունի պաշարումը խստացնել և հայերին ծունկի բերել սովի միջոցով: Փարիզը նորից միջամտեց: Զեյթունի պաշարումը վերացվեց: Մեծ վեզիր Ալին հանձնաժողով ուղարկեց Զեյթուն իրավիճակը պարզելու համար: Մարաշ է մեկնում նաև Կ. Պոլսի Ցրանսիական դեսպանատան աշխատակիցը: Նրան միացան մյուս տերությունների ներկայացուցիչները: Զեյթունցիները վերադարձրեցին գրավված ռազմավարը, համաձայնեցին վճարել հարկերը և թույլ տալ ս. Աստվածածնի բարձունքին զորանոց կառուցել:

Զեյթունի իրադարձությունները լայն արձագանք գտան Կ.Պոլսի հայության չրջանում: Ամիրաները, չնայած զեյթունցիների գործելակերպի հետ համաձայն չէին, բայց միջնորդի դեր խաղացին: Հայ սահմանադրականները (Սերվիչե, Գր. Օտյան, Պալյան, Աղաթոնյան եղբայրներ) չեզոք դիրք գրավեցին: Այլ էր արհեստավորների, պանդուխտների դիրքորոշումը: Նրանք 1862թ. օգոստոսի 1-ին, այսինքն, Զեյթունի վրա Ազիզի հարձակման օրը, ցույց կազմակերպեցին՝ պահանջելով գործադրել խոստացած սահմանադրությունը, վերջ դնել հայերի հալածանքներին և դադարեցնել արյունահեղությունը: Ցույցը ճնշվեց զենքի ուժով: «Այն տարին,— վկայում է Սրբուհի Երիցյանը,— Զեյթունի անցքերը մեծ ազդեցություն ունեցան Պոլսո և այլ տեղերի հայոց վրա. ամենայն ոք կիլիկիան ուներ ի բերան, ամենայն ոք մասնակից էր դրամական հանգանակությանց... նույնիսկ հռոմեադավան հայ երիտասարդները մոռացել էին դեպի իրանց լուսավորչական եղբայրներն ունեցած ատելությունը և ամենայն սիրով թե՛ նյութապես, թե՛ բարոյապես օգնում էին ձեռնարկություններին»[175]: Զեյթունին օգնություն կազմակերպելու նպատակով ստեղծվեց հանձնաժողով, որը մասնաճյուղ ուներ Թիֆլիսում:

Զեյթունի իրադարձություններին անդրադարձավ հայ մամուլը, հրապարակվեցին մեծ քանակությամբ նյութեր: Զեյթունին նվիրված բանաստեղծությունների չարք գրեցին Մ. Պեչիկթաշլյանը, Ռ.Պատկանյանը, Ե. Շահազիզը: Զեյթունցի գործիչների հետ սերտ հարաբերություններ հաստատեց 1860թ. ստեղծված բարեգործական ընկերությունը: Զեյթունցիների ազատենչությունն անմար կրակ էր: 19-րդ դարի երկրորդ կեսին դրեթե չէր լինում տարի, որ նրանց ու թուրքական իշխանությունների միջև ընդհարումներ տեղի չունենային:

---

[175] «Փորձ», 1877, թիվ 4, էջ 193:

Զեյթունի 1862 թվի ինքնապաշտպանական կռիվները մինչև հայկական ազատագրական շարժման զարթոնքը տեղի ունեցած ամենախոշոր իրադարձությունն էին, չնայած դրանք դեռևս հեռու էին ազգային-ազատագրական պայքար լինելուց: Նախ, ապստամբությունը հետևանք էր թուրքական բանակի հարձակման, այսինքն, ինքնապաշտպանական կռիվ էր, զեյթունցիներն անկախանալու խնդիր չէին դնում, մերժեցին Նապոլեոն 3-րդի՝ կաթոլիկություն ընդունելու առաջարկը, որի դիմաց ֆրանսիական կայսրը խոստանում էր Զեյթունին տալ Լիբանանին հավասար ինքնավարություն:

Կիլիկիան չուտով վերածվեց հայ հայդուկության երկրորդ խոշոր կենտրոնի: Դրան նպաստեց նրա դիրքը՝ Եվրոպային մոտ գտնվելը: Շարժման անդրանիկ գործիչները դարձան ուսուցիչները, նրանց հարեցին նաև հարուստ խավերի ու հոգևորականության ներկայացուցիչները: Պայքարի ղեկավարներից ամենանշանավորը Աղասի Թուրսարգիսյանն էր: Նա հաճնցի էր, զինվորական կրթություն ստացած գործիչ: 1892թ. Այնթապում տեղի ունեցավ Կիլիկիայի գործիչների ժողով: Հնչակյան կենտրոնին այդ ժողովի հղած նամակում ասվում էր. «Կարող ենք ապստամբել և երեք ամիս դիմանալ, եթե ուղարկվի՝ ա) 5000 հրացան՝ փամփուշտներով... բ) 2000 ոսկի, որպեսզի կարողանանք տասանորդի աճուրդին մասնակցելով, ցորեն ամբարել, գ) օգնություն ուղարկվի 500 հոգանոց երկու վաշտ՝ կազմված կամավորականներից, դ) կարողանանք ապահովել եվրոպական տերությունների միջամտությունն ի նպաստ մեզ»[176]: Հնչակյան կենտրոնն այս դիմումին չի արձագանքում, իսկ Անուշ անունով մի հայ անմիջապես նշանակալից մուծում է կատարում և Աղասին որոշում է նորից ըմբոստության դրոշ պարզել[177]: Նա Խըտր-Բեկ գյուղում հայդուկային խումբ է ստեղծում: Այդ շրջանում բնակվող 200 հազար ալևիների չեյխ Իբրահիմը խոստանում է Աղասու տրամադրության տակ դնել 10 հազար կռվող՝ հայ-ալևիական պետություն ստեղծելու նպատակով: Աղասու խմբին միանում են նաև ամերիկահայեր՝ Ս. Պալայանի և Շ. Շիշմանյանի գլխավորությամբ: Կիլիկիայի դեմ ուղարկվում է Սալիհի 10 հազարանոց բանակը: Գործին միջամտում է Անտիոքի թեմի առաջնորդը: Աղասին համաձայնում է հանձնել զենքերը: Սակայն Թուրքերը խմբի անդամներին բանտ են նետում, ինչն ավելի է բորբոքում հայության զայրույթը: Աղասուն օգնության են հասնում կռվողներ, ստացվում է զենք, դրամ:

1862թ. ապստամբությունից հետո սուլթանը ձեռնամուխ եղավ Զեյթունի հարցի մի այլ լուծման: Երբ սկսվեց Ռուս-թուրքական պատերազմը, Զեյթունի թուրքերը չզորակոչվեցին և տեղում թողնվեցին հայերին վերահսկելու համար: Վերջինները թալանվեցին, սկսվեց սով: Պապիկ իչխանը հարկադրված հարձակվեց մահմեդական գյուղերի վրա աննդամթերք հայթայթելու համար: Զեյթունցիները պատվիրակություն ուղարկեցին կարին՝ ռուսական զորքերի հրամանատարությունից զենք ու ռազմամթերք խնդրելու: Թուրքական բանակը դիմեց պատժիչ գործողությունների, սակայն հաջողության հասնել չկարողացավ:

Անգլիական հյուպատոսի գլխավորությամբ 1878թ. աշնանը մի պատվիրակություն է գալիս Զեյթուն և հպատակություն պահանջում՝ դրանով պայմանավորելով հայկական նահանգներում բարենորոգումներ սկսելը: Զեյթունցիները համաձայնում են և հանձնում զենքերը: Զեյթունի նորակառույց զորանոցում մշտապես տեղակայվում է 3000 հոգանոց մի զորամաս: Դրա դիմաց Պապիկը նշանակվում է քաղաքապետ, ղիջում են անցած տարիներին չվճարված հարկերը:

1884թ., օգտվելով քաղաքում բռնկված հրդեհից, իշխանությունները փորձում են զեյթունահայերին վերաբնակեցնել դաշտային շրջաններում: Թունավորում են Պապիկ իշխանին: 1890թ. Թուրք բժիշկների կատարած պատվաստումների պատճառով ծաղիկ հիվանդության համաճարակ է սկսվում, որը խլում է 200 երեխայի կյանք: Հարաբերու-

---

[176] Աղասի, Զեյթունը և իր շրջակաները, Բեյրութ, 1968, էջ 219:
[177] Սարոֆյան Գ., Պատմություն Այնթեպի հայոց, հ. Ա, Լոս Անջելես, 1953, էջ 61:

թյունները սրվում են, հայերը գրավում են կառավարչատունը: Զորք է բերվում: Հայերը համաձայնում են հպատակվել:

1891թ. մարտին 500 զեյթունցի ապստամբության դրոշ է պարզում ու բարձրանում լեռ: Նրանք հալողությամբ հետ էին մղում թուրքական գերակչիռ ուժերի գրոհները: Լեռը բարձրացածներին ծունկի բերելու նպատակով իշխանությունները ձերբակալում են նրանց ազգականներին, մտավորականներին, հեղինակություն վայելող անձանց: Նրանցից պահանջեցին համոզել երիտասարդությանը հանձնվել իշխանություններին: Ձերբակալվածները միահամուռ հրաժարվեցին: Սկսվեցին զանգվածային ձերբակալություններ ամբողջ Կիլիկիայում:

## 6. ԱՐԵՎՄՏԱՀԱՑ ԱԶԳԱՑԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայ միջին և աղքատ խավերի չրջանում նույնպես ըմբոստություն էր հասունանում արևմտահայ ազգային կյանքում պատրիարքարանի անբաժան իշխանության դեմ: Իրավասությունների այդ փչրանքներից բաժին ունեին նաև պատրիարքի հետ համագործակցող ամիրաները, ինչպես նաև գավառական հայ ավագանին և հոգևոր հաստատությունները: Բայց քանի որ այդ իրավասություններում գերակչռողը պատժողական բնույթ ուներ և գործադրելի էր միմիայն հայերի նկատմամբ, լայն խավերն ընդվզում էին: Նման տրամադրությունների առաջին դրսևորումներ հանդիսացան հայ արհեստավորների ելույթները 1820-ական թվականներին:

Ղրիմի պատերազմից հետո ստեղծված իրավիճակը, երբ օտար պետությունների տնտեսական և քաղաքական ներխուժումը կայսրություն իրողություն դարձավ, սուլթան Աբդուլ Մեջիդը հարկադրված եղավ ժամանակավորապես հաշվի նստել հպատակ ժողովուրդների տրամադրությունների ու պահանջների հետ: Փարիզի հաշտության դաշնագրի 9-րդ հոդվածը, որով ճանաչվում էր քրիստոնյա հպատակների իրավահավասարությունը, վերը նշված տրամադրություններին նոր լիցք հաղորդեց: Պատրիարքարանի ու ամիրայության դեմ պայքարը թևակոխեց նոր փուլ՝ չարժման ղեկավարությունը ստանձնեց 1848թ. հեղափոխության ազդեցության տակ գտնվող մտավորականությունը: «Սահմանադրական» անուն ստացած այդ չարժման համար մեկնարկային եղավ 1854 թվականը, երբ Գր. Օտյանը, Սերվիչեն, Գ. Պալյանը, Ն. Ռուսինյանը և մի քանի հոգևորականներ իրենց կազմած կանոնադրության նախագիծը ներկայացրին պատրիարքի հաստատմանը: Նախագիծը մերժվեց, և հանձնաժողով կազմվեց նոր տարբերակ ստեղծելու համար: Այդ տարբերակը հրապարակվեց 1857թ. մարտին: Սակայն սա ևս մերժվեց: «Հանդես ամսօրյա»-ն 1902թ. հուլիսին գրում է. «Բայց հազիվ քանի մը ամիս կանցնի, և ահա ամիրաներու խումբ մը, իրենց հետ ունենալով մաս մը կղերական դասեն, այն կանոնադրությունն անհարմար կտեսնեն, ազգային կրոնքին և ազգային ավանդությանց հակառակ բաներ անոր մեջ տեսնել կկարծեն...»: Գործին միջամտում է Բ. Դուռը: Նոր, չափավոր տրամադրված հանձնաժողով է ստեղծվում: Մ. Օրմանյանը նկատում է, որ հակասահմանադրականները չանք չէին խնայում տապալելու կանոնադրությունը, քանի որ «...շատ ազատամիտ կնկատվեր Տատյանց, Պալյանց, Երամյանց և ասոնց համախոհ ամիրայական խմբակը»[178]: Ժողովրդավարական ուժերի ճնշման տակ Գևորգ պատրիարքը հրաժարական է տալիս և նորընտիր պատրիարք Ս. Գույումճյանը 1860թ. մայիսի 24-ին կանոնադրությունը ներկայացնում է Ազգային ժողովի հաստատմանը: Այստեղ ևս այն ընդունվում է և անվանվում Ազգային Սահմանադրություն[179]: Սահմանադրության դիպուկ գնահատականը տվել է Ռոլեն Ժեկմենը. «Այստեղ ամեն

[178] Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Գ. սյունակ 4016:
[179] «Մեղու», 1860, թիվ 86, էջ 11:

*ինչ կար, բացի մի հոդվածից, որի վրա հայը կարողանար հենվել, որպեսզի քուրդը չխլեր նրա ոչխարները, բեյը չբռնաբարեր նրա աղջիկներին և չվարեր նրա հողը, մի խոսքով, ամեն ինչ կար, բացի մի այնպիսի սահմանումից, որն իսկապես երաշխիք լիներ թուրքական կառավարության կամայականության դեմ»*[180]*: Համաձայնվելով Ազգային Սահմանադրության ընդունման հետ՝ Բ. Դուռը նպատակ էր հետապնդում թույլ չտալ, որ տերություններ «կրոնական մոտիվներով» միջամտեին և կարողանար հայերին պահել «կայսերական կառավարությանը նվիրված հպատակի» վիճակում*[181]*:*

*Մ. Նալբանդյանը սահմանադրությունն անվանեց «անիմաստ», իսկ մեծ վեզիր Ալին՝ «տեղից չշարժվող քառակուսի անիվ»: Սահմանադրությունն օսմանյան վարչակարգի համար՝ պատրիարքին նախկինում տրված արտոնությունները վերացնելուն միտված քայլ էր, ինչն, իր հերթին, նախերգանք էր Զուլումի քաղաքականության ձևավորման համար:*

*Սակայն չպետք է թերագնահատել Սահմանադրական շարժման նշանակությունը: Մի ամբողջ տասնամյակ սահմանադրության համար պայքարի նշանաբանով պոլսահայության լայն խավերը շարժման մեջ դրվեցին, նրանք առաջին անգամ ներքաշվեցին քաղաքական պայքարի ոլորտները, ինչը խթան հանդիսացավ ազգային գիտակցության ձևավորման համար: Սահմանադրությունը, նկատում է Լինչը, «գլխավորապես ուղղված էր այն բանին, որ հայերի մեջ հետևողականորեն հակում ձևավորվեր՝ տնօրինելու սեփական համայնքի գործերը... հայերին տրամադրվեր ժողովրդավարական ամբողջական մեխանիզմ՝ «ազգային կյանքն» ավելի լավ կազմակերպելու համար»*[182]*: Բ. Բորյանի կարծիքով, այն «հայերին ավելին տվեց, քան ազգային մշակութային ինքնավարությունն էր և ավելի քիչ, քան պետական ինքնավարությունը»*[183]*: «Կռունկ հայոց աշխարհի»-ն 1860թ. իր թիվ 2-ում գրեց. «Մինչ այդ ո՛չ պատմությունը, ո՛չ պետական իրավունքը և իրավագիտությունը նման բացառիկ փաստաթղթերի ծանոթ չեն եղել»: Նաև այդպիսի ամպագոռգոռ գնահատականներն էին պատճառը, որ Բ. Դուռը տարիներ շարունակ Ազգային Սահմանադրությունը չէր հաստատում: Պայքարը բարձրակետին հասավ երուսաղեմի պատրիարքի ընտրության առիթով: «Մեղու» թերթի կարծիքով՝ այդ ընտրության շուրջ ծավալված «կռիվներուն ներքին նպատակը Սահմանադրության կործանումն» էր*[184]*:*

*Պայքարը, որի ամենաարմատական տարրերը էնաֆականներն ու սովորող երիտասարդությունն էին, ունեցավ հետևյալ շարունակությունը: 1861թ. օգոստոսի 21-ին պատրիարքը հանրահավաքների ճնշման տակ հռչակեց, որ Սահմանադրությունը գործադրության մեջ է դրվում: Ալին պահանջեց դադարեցնել Սահմանադրության գործադրությունը մինչև Բ. Դռան կողմից դրա վավերացումը: Հետևեց ժողովրդավարական ուղղության «Մեղու», «Մաղիկ» թերթերի փակումը: Սակայն հայ պահպանողականների ու թուրքական իշխանությունների ահաբեկումները սահմանադրականների կամքը խորտակել չկարողացան: 1862թ. օգոստոսի 1-ին՝ Զեյթունի ապստամբության օրը, ամբոխը հարձակվում է պատրիարքարանի վրա: Մեծ վեզիր Ալին գալիս է պատրիարքարան և ուժի գործադրման սպառնալիքով ցրում է ցուցարարներին: 1863թ. մարտի 17-ին Սահմանադրությունը «Քլպատվելուց» հետո (Մ. Նալբանդյան) Բ. Դռան կողմից հաստատվեց: 150 հոդվածից թողնվեց 99-ը: Տեքստից հանվեցին այս կամ այն չափով արմատական փոփոխություն նախատեսող հոդվածները: Ազգային ժողովի անդամների թիվը 220-ից իջեցվեց 140-ի: Երեսփոխաններն ընտրվելու էին եկեղեցական ժողովների կողմից:*

---

[180] **Ролен-Жекмен М. Г.**, *Армения, армяне и трактаты*, Москва, 1896, стр, 197.
[181] **Атомян С.**, *նշվ. աշխ.*, էջ 21:
[182] **Линч Г.**, *նշվ. աշխ.*, հ. II, էջ 563:
[183] **Борян В. А.**, *նշվ. աշխ.*, հ. I, էջ 535:
[184] *«Մեղու»*, 26.07.1860:

Ազգային ժողովը գումարվել կարող էր երկու տարին մեկ: Մեծացվում էր Բ. Դուան դերը հայ կյանքի կազմակերպման գործում:

Երեսփոխանների ընտրության համակարգը հնարավորություն ստեղծեց, որ Ազգային ժողովը հիմնականում ձևավորվեր կրոնական ու ամիրայական վերնախավի ներկայացուցիչներից: Սակայն թուրքական իշխանությունները, մասնավորապես՝ արտաքին գործերի նախարարությունը, որի տնօրինության տակ էին պատրիարքարանները, տեսնելով, որ Սահմանադրությամբ ստեղծված ազգային մարմիններն ինքնուրույն կեցվածք էին որդեգրել, կազմակերպեց ստուգումներ և Սահմանադրությունը խախտելու պատրվակով դադարեցրեց այդ նույն Սահմանադրության գործունեությունը, արգելեց Ազգային ժողովի գումարումը, լուծարեց կրոնական և քաղաքական ժողովները: Սերվիչեն ու Գր. Օտյանը մեծ ջանքեր թափեցին այդ որոշումը մեղմելու համար:

Սահմանադրությունն ընդհատումներով գործեց մինչև 1896 թիվը: Թուրքական իշխանությունները սկզբում Սահմանադրական շարժումը հանդուրժեցին Թանզիմաթի հետապնդած հիմնական խնդիրներից մեկը՝ միլիեթների համակարգով հպատակ ժողովուրդներին տրված որոշ իրավունքները վերացնելու համար: Սահմանադրության հռչակումով, որն այլ բան չէր, եթե ոչ «հայ համայնքի կյանքը կարգավորող կանոնադրություն», Բ. Դուռը նաև ձգտում էր կառավարումը նորացնելու միջոցով խեղդել ազգային շարժման զարթոնքը: «Ես համոզված եմ,– գրում է Ռոլեն Ժեկմենը,– որ այդ բարձրագոչ ու խաբուսիկ անունը պարզ սխալի հետևանք չէր... Թուրքական կառավարությունը հավատարիմ էր ինքն իրեն՝ դատարկ տուփերի վրա գեղեցիկ պիտակներ փակցնել՝ սահմանադրություն, բարենորոգումներ և այլն: Իսկ Կ. Պոլսի հայերն էլ, ովքեր կազմել էին «Ազգային Սահմանադրությունը», հավանաբար դեմ չէին դրա իսկական նշանակության պատրանքին»[185]:

Մանավանդ տեղերում՝ նահանգներում, Սահմանադրության գործադրումը բացարձակ ձևականության վերածվեց: Պատահական չէ, որ 1876թ. Տեղեկագրում ասված էր. «Մեզ հարցնում են՝ նահանգային և ընդհանուր խորհուրդներն ի՞նչ են անում Հայաստանում: Մենք պատասխանում ենք, որ դրանց միայն ստվերը գոյություն ունի: Նույնիսկ եպիսկոպոսներն են անզոր իշխանությունների առաջ հանդես գալ իրենց հոտի անունից»[186]: Վալիներն ու մյուս վարչական աշխատողները բացարձակապես արհամարհում էին ազգային խորհուրդները: Դրանք վերածվել էին անվերջ վիճաբանությունների հավաքատեղիների և պառակտում էին ազգային կյանքը:

Իրականում գավառահայությունը շատ տարիներ անտարբեր էր ազգային սահմանադրությանը և չահագրգռություն չէր դրսևորում ներդնելու դրա հռչակած սկզբունքները: Հայը չէր զգում, որ այն շոշափում է իր առօրյա կյանքի պայմաններն ու չահերը:

Պատրիարքի իրավասությունների խուզումից առաջինը օգտվեցին բեյերն ու աղաները: Սահմանադրությունը հաստատող ստորագրության թանաքը դեռ չէր չորացել, երբ հայաբնակ շրջաններից սկսեցին բողոքներ տեղալ մահմեդական վերնախավի սանձարձակությունների վերաբերյալ: Ինչպես նախկինում էր, բողոքները Բ. Դռանն էին հասնում պատրիարքարանի միջոցով ու նորից մնում անհետևանք: Այդ բողոքների ընթացքն ուսումնասիրող պատրիարքական հանձնաժողովն արձանագրեց, որ 20 տարում Բ. Դռանը ներկայացվել է 479 բողոք, որոնց առնչությամբ կառավարությունը ցուցումներ է ուղարկել տեղական իշխանություններին: Դրանք, սակայն, գործնականում որևէ արդյունքի չեն հանգեցրել: Իսկ բողոքները վերաբերում էին հայ ազգաբնակչության հիմնահարցերին: Դրանցից 76-ը առնչվում էին հարկերի նշանակման ու հավաքման գործում տեղ գտած չարաշահումներին, 154-ը՝ բռնի մահմեդականացմանն ու տեղական

---

[185] *Положение армян в Турции...*, стр. 18.
[186] Ռաֆֆի, նշ. հ. X, էջ 262-267:

իշխանությունների կամայականություններին, 249-ը՝ զանազան բռնություններին ու սպանություններին (թալան, առևանգում, կրոնական հալածանքներ և այլն)[187]:

Այնուամենայնիվ, Ազգային սահմանադրությունը նաև վերածվեց ազգային ինքնագիտակցության նշանաբանի: Մասնավորապես, ազգային մեծ լիցք ուներ Սահմանադրության տարելիցների նշումը: 1882թ. մայիսի 24-ին Վարագա վանքում տոնախմբություն կազմակերպվեց՝ նվիրված այդ տարելիցին, որի ավարտին զինված հայ երիտասարդների չարասյուններն իջան Վան և «կեցցե՛ Խրիմյան Հայրիկը» բացականչություններով շարժվեցին դեպի նրա տունը: Իշխանություններն անհանգստացան, տեղի ունեցան խուզարկություններ: Վալի Հասանը բանակցություններ սկսեց Մկրտիչ Խրիմյանի հետ, ձեռք բերվեց համաձայնություն:

Այս և հետագա իրողություններն ապացուցում են, որ մեր օրերում թուրքական պատմագրության կողմից հաճախակի չահարկվող այն թեզը, թե Բ. Դուռն կողմից չնորհված Սահմանադրությունը հայերի ինքնավար իրավունքների օրենադրական ճանաչում էր, նրանց հանդեպ սուլթանի հոգատարության դրսևորում, մեղմ ասած, իրականությանը չի համապատասխանում: Դեռ ավելին, թուրքական իշխանությունների համար Ազգային Սահմանադրությունը հայ կրոնական համայնքի ինքնավար գոյությանը վերջ դնելու, հայկական միջավայրում ներքին պայքարը խթանելու, որպես ինքնուրույն միավոր հայերին այլևս չճանաչելու և դրանով ազգային հալածանքներին ու Հայաստանը հայաթափելու քաղաքականությանը նոր թափ հաղորդելու միջոցներից մեկն էր: Իսկ այն, որ հայերը, մանավանդ 80-ական թվականներից սկսած, փորձում էին չուքով նշել Սահմանադրության տարելիցները, այլ բան չէր, եթե ոչ ազգային-քաղաքական համախմբման ձգտում:

## 7. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԱԿՆԵՐ. ԶԱՐԹՈՆՔ

Հին ճշմարտություն է՝ եթե կա բռնություն, ապա անխուսափելի է պայքարը դրա դեմ: Իսկ արևմտահայության հարցում խոսքը գնում է ոչ միայն բռնության, այլև բնաջնջման մասին: Հետևաբար, անբնական ոչինչ չկար, որ արևմտահայը ուժքի ելավ պայքարելու իր գոյության իրավունքի համար: «Քանի որ գործն այս դրության մեջ էր,– գրում է Րաֆֆին,– քանի որ թուրքաց հայերին սպառնում է մի օրհասական հարված, որ հավիտյան վերջ պիտի դնե նրանց գոյությանը...թուրքաց հայերին ոչինչ չի մնում, բացի նրանից, որ իրենք հոգ տանեն իրենց անձնապաշտության համար, եթե չեն ցանկանում իսպառ ոչնչանալ և ջնջվել աշխարհի երեսից»[188]:

Հետևաբար, հայ ազգային չարժումը նախ և առաջ ծնունդն էր բնաջնջման վտանգի, այլ ոչ թե անկախ պետականության կամ հպատակության փոփոխության ձգտման: Ոմանք առաջարկում են հայ ազգային չարժման գենեզիսի ֆորմուլա՝ բանաձև. հույսը կտրած տերությունների միջոցով խնդիրը լուծելուց՝ հայությունը որոշեց այդ անել սեփական ուժերով: Ժամանակակից թուրք պատմագրությունը ձգտում է չնկատել հայ ազգային չարժման այս առանձնահատկությունը: Այն բնութագրում է գոյության համար արևմտահայության պայքարը, նախ՝ որպես ահաբեկչություն և ապա՝ պայքար անկախ Հայաստանի համար: Մինչդեռ չզինված աչքով էլ տեսանելի է, որ հայ ժողովրդի ազգային զարթոնքի ու պայքարի բոլոր ուղղությունների վրա իր կնիքն էր դրել բնաջնջման վտանգն ու դրա դեմ մաքառումը՝ ինքնապաշտպանությունը: Այլ բան է, որ հասարակական ամեն մի խմբավորում ինքնապաշտպանությունը հասկանում էր յուրովի և այն իրականացնում իր պատկերացումներին ու հնարավորություններին համապա-

---

[187] Նույն տեղում:
[188] «Մշակ», 1879, թիվ 191:

տասխան ձևերով ու եղանակներով, սակայն էականն այն էր, որ պայքարի այդ բոլոր եղանակներն այլ բան չէին, եթե ոչ խեղդվողի ճիչ, անհեռանկար խաբկանք, գիշատիչի ճիրաններում ընդվզում: Պատահական չէր, որ ազատագրական կողմնորոշում ունեցող առաջին խմբակը, որ ստեղծվեց Վանում 1872թ., կրում էր «Միություն ի փրկություն» անունը: Խմբակի անդրանիկ կոչում ասվում էր. «Պետք է փրկության միջոցներ գտնել, թե չէ ոչնչացումը չատ մոտ է... Մեռավ մեր պատիվը, պղծվեցին մեր եկեղեցիները, առևանգվեցին մեր հարսներն ու երիտասարդները, մեր ձեռքից բացահայտ խլում են մեր իրավունքները և բոլոր հնարքներով ձգտում են ոչնչացնել մեր ազգի սերուցքը: Կամ պետք է մեռնել և չտեսնել այդ սարսափելի վիճակը և կամ վերակենդանություն ստանալ հայրենական գրկում»[189]: Եվ ապա. «Էլ ի՞նչ ենք սպասում՝ կյանք չունինք՝ մահից ենք վախենում, եկամուտներս ու վաստակներս մերը չեն, եկեղեցիներն ամեն օր հալածանքի մեջ են... դրանք բավական համարելով՝ մի պահ արթնանանք, միախորհուրդ խաչի, ավետարանի առաջ երդվենք... Եվ ո՞վ է այն հայը, և ո՞րն է այն սիրտը, որ այս արցունքաբեր տեսարաններին ականատես լինի ու անտարբեր մնա...»[190]:

Կազմակերպության գործունեությունը արձագանք գտավ թե՛ Վանում և թե՛ Վասպուրականում: Այլևայլ խմբակներ ու կազմակերպություններ դիմում էին նրա հետ միավորվելու: Անգղ գյուղի բնակիչները գրեցին. «...այլևս չկարողանալով տոկալ սուլթանական անկրելի լծին՝ դիմում ենք ձեզ հետ միանալու, թերևս դարման մը գտնենք, թե ինչ միջոցով է հնարավոր այս չարիքներեն փրկվել: ...Պատրաստ ենք արյան ու մահվան չափ ձեզ հետ ընթանալու, ուր էլ մեր փրկության հույսը մեզ տանի, թե ռուսանալ հարկ է՝ ռուսանանք, թե գաղթել՝ գաղթենք, թե վերջապես մեռնել՝ մեռնենք, բայց փրկվենք...»[191]:

«Միություն ի փրկություն» անունն ասում է, որ այն ծնվել է Կարինի համանուն կազմակերպության ազդեցության տակ: Սակայն, ի տարբերություն վերջինի, գործադրում էր պայքարի արմատական միջոցներ: Պատվիրակություն ուղարկվեց Թիֆլիս՝ փոխարքային ներկայացնելու հայությանն օգնելու խնդրագիր: Սակայն, ինչպես ամբողջությամբ վերցրած Արևմտահայ շարժման, այնպես էլ այս կազմակերպության գործունեությունը կրում էր իրավիճակի թելադրանքը՝ անկազմակերպվածություն, հետևողականության բացակայություն, ինքնանպատակ քայլեր: Հայկական շարժման ուշանալը նրան զրկեց ինքնավստահությունից. հույսը դնում էր ոչ թե սեփական, այլ դրսի ուժերի օգնության վրա: Դա նկատի ունենալով՝ Սրվանձտյանցը գրեց, թե օտարներից պետք չէ բան հուսալ, աշխատենք ինքներս մեզ հոգալ, նախապատրաստվել և ժողովուրդներին ցույց տալ, որ մենք էլ ազգ ենք[192]: Իսկ Գր. Արծրունին մարգարեացավ. «Թուրքիայի նման բարբարոս, վայրենի տերությունից մարդկային իրավունքներ պահանջելու համար ուրիշ ճանապարհ չկա, բացի զենքը ձեռքին արյուն թափելը»[193]:

1878թ. Վանում կազմակերպվեց «Սև խաչ» խմբակը, որն առանձնապես դաժան էր այն հայերի հանդեպ, ովքեր զենք էին վաճառում թուրքերին ու քրդերին: Խմբակում չուտով ձևավորվեց երկու թև: Մեկը՝ Մ. Խրիմյանի գլխավորությամբ, որը չափավոր քայլերի կողմնակից էր: Այս թևին հարողները գտնում էին, որ նախ պետք է զբաղվել ժողովրդին լուսավորելու-կրթելու գործով, զարգացնել տնտեսությունը, մասնավորապես արդյունաբերությունը, ուժեղացնել արտաքին տնտեսական ու քաղաքական կապերը, թուրքերի հետ ժամանակից չուտ առճակատման չգնալ, բռնությունների պատրվակներ չստեղծել: Մյուս թևը, Ս. Փորթուգալյանի գլխավորությամբ, արմատական պահանջների կողմնակից էր, զբաղվում էր ահաբեկչությամբ և, ինչպես վկայում է Փ. Թերլեմեզյանը,

---

189 Դիվան հայոց պատմության, գիրք ԺԳ, էջ 270:
190 Նույն տեղում:
191 Քարամյան Կ., նշվ. աշխ., էջ 272:
192 «Մասիս», 1879, թիվ 2224:
193 «Մշակ», 1878, թիվ 28:

«քննութիւնների ժամանակ կուսակալի ներկայութեամբ աշակերտները Գամառ-Քաթիպայի թուրքատյաց ոտանավորներ կարտասանեին»: Կազմակերպության գաղափարախոսական կենտրոնը կոչվում էր Քաղաքական ակումբ: «Սև խաչ»-ը փակ կազմակերպություն էր, որի գործունեության հիմնարար սկզբունքն էր՝ «կազմակերպության դավաճան ու անգաղտնապահ ընկերոջ անվան վրա սև խաչ քաշելով մահվան դատապարտել»: «Սև խաչ»-ի նպատակն էր «ժողովրդի մեջ ինքնապաշտպանության ոգի տարածել», նրան օգնել դառնալու սեփական իրավունքների տեր և «ապրել իբրև մարդ»: Մարտավարական առաջնային խնդիր համարվեց. «Պարսիկներուն և քուրդերուն» զենքեր վաճառողները ենթակա էին ահաբեկչության: Այս խմբակի առնչությամբ պրոֆ. Հ. Ղազարյանը գրում է. «Պատերազմից հետո ազատագրական ոգորումներն ուժեղացան փաշայանիստ Վան քաղաքում, մանավանդ որ այդտեղ էին հիմնվել անգլիական ու ռուսական փոխհյուպատոսությունները՝ խնդիր ունենալով իրողության վերածելու Բեռլինի կոնգրեսով նախաձեռնված բարենորոգումներն այդ վիլայեթում»: Նախ, Վանը փաշայանիստ չէր, այլ վալու նստավայր, որովհետև վիլայեթի կենտրոն էր: Ռուսական և, մասնավորապես, անգլիական հյուպատոսարաններ ստեղծվել էին ոչ միայն Վանում, այլև հայկական մյուս վիլայեթներում: Այդ հյուպատոսական ծառայությունների խնդիրը ոչ թե Բեռլինի կոնգրեսով որոշված բարենորոգումները «իրողության վերածելն էր», այլ երկու պետությունների միջև ընթացող պայքարը՝ Օսմանյան կայսրությունում գերիշխող ազդեցություն ունենալու համար[194]: Կամ արդյո՞ք ճիշտ միտք է, թե Բեռլինից հետո «Լուրջ քայլեր կատարվեցին երկրի տնտեսական զարգացման ուղղությամբ»: Ինչո՞ւ է մոռացվում, որ դրանք Զուլումի տարիներն էին և Բեռլինի կոնգրեսին հաջորդեց նախադեպը չունեցող սովը Արևմտյան Հայաստանում:

Մեզ հայտնի չէ, որ «Վասպուրականի առաջադեմ մտավորականները, եկեղեցական և քաղաքական գործիչները, բարոյական աջակցություն և նյութական օգնություն ստանալով հանուր հայաշխարհից, արտահայտելով ժողովրդի կամքը, որոշեցին հիմնել հեղափոխական գաղտնի կազմակերպություններ, որոնցից առաջինը «Սև խաչ»-ն էր: Այն հիմնադրեցին Մ. Փորթուգալյանը, Հ. Ճանկյուլյանը և այլք: Կազմակերպությանը աջակցում էին Մ. Խրիմյանը, Ա. Թոխմախյանը, Ս. Տևկանցը, Մ. Սարըյանը, Վանում Ռուսաստանի փոխհյուպատոս Կ. Կամսարականը:

1883թ. սկսված համիդյան ահաբեկչության ընթացքում Մ. Խրիմյանն ու Մ. Փորթուգալյանը Վանից աքսորվեցին: Մեծ թվով մարդիկ բանտ նետվեցին: Բ. Դուռը հաղորդագրություն տարածեց, թե «ազգային վրեժխնդրության դիտավորությամբ հայերի զինված խմբերը հարձակվել են Վասպուրականի քրդական գյուղերի վրա և հրդեհել են յոթ գյուղ...»: Կ. Պոլսի այս աղմուկին միացան գերմանացիները: Գերմանական լրագրերից մեկը գրեց հայերի «խոշոր ապստամբության մասին», որի «կենտրոնը հին Բայազետի հարավային մասում է: Սկզբում 1200 հոգուց կազմված խումբը, դուրս գալով Մշո գավառից, մինչև հին Բայազետ հասնելն այնքան մեծացավ, որ անդամների թիվը հասավ 2800-ի»: 1882թ. օգոստոսին «Սև խաչ»-ի և «Պաշտպան հայրենյաց»-ի ներկայացուցիչները փորձեցին բանակցություններ վարել Պարսկաստանի կառավարության հետ: Ստեղծվեց Թոփրախկալեի կազմակերպությունը, որը մասնաճյուղեր ուներ մի քանի գյուղերում ու կապեր հաստատեց արևելահայերի հետ: 1884-90թթ. Հակոբ Սարկավագը (Ղևոնդյան), ծպտված չեչխի տարազով, բնակավայրից բնակավայր էր անցնում և քարոզում հայ-քրդական դաշինք, կազմակերպում զենքի ներմուծում: Նա հայերի ու քրդերի անունից հանրագիր կազմեց՝ հասցեագրված սուլթանին՝ գավառներում պետական պաշտոնների նշանակել նաև հայերի ու քրդերի, տասանորդը գանձել միայն դրամով և թույլ տալ, որ յուրաքանչյուր գյուղական համայնք ինքը զբաղվի հարկերի հավաքմամբ,

---

[194] Ղազարյան Հ., Հայ ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, հ. I, Ե., 2004, էջ 537-538:

առանց հարկահավաքների միջամտության, գյուղերում ստեղծել իշևանատներ, արգելել պաշտոնատարներին օթևանել գյուղացիների տներում և անվել նրանց հաշվին:

* * *

Ազգային զարթոնքի գործընթացը դանդաղ, բայց անկանխելի ծավալվում էր: Կարինում առաջին ընդվզումները տեղի ունեցան պատերազմի օրերին, երբ թուրքական իշխանությունները խոչընդոտներ հարուցեցին հայերի արտագաղթի առջև: Երկրորդ բռնկումը եղավ, երբ սուլթանական կառավարությունը փորձեց աչքաթող անել բարենորոգումները: Այս խնդրով Կարին ժամանած Բեքիր Սամիին հայերը ներկայացրեցին բարենորոգումների ծրագիրը, որը մերժվեց: Այդ նախաձեռնության հետևում կանգնած էր Բեռլինի կոնգրեսից հետո Կարինի երիտասարդության ջանքերով ստեղծված «Բարձր Հայոց ընկերություն»-ը: Իշխանությունը, պատրվակ դարձնելով «բարձր» բառը, ընկերությունը փակեց: 3-րդ զորաբանակի հրամանատար նշանակված Ֆազոլը փակեց նաև հայկական ակումբներն ու արգելեց հավաքները: Դրա ուղղակի հակազդեցությունը հանդիսացավ 1881թ. Խաչատուր Կերեկեյանի նախաձեռնությամբ ստեղծված «Պաշտպան Հայրենյաց» անունը կրող գաղտնի կազմակերպությունը, որն իր առաջնահերթ խնդիրը համարում էր հայ բնակչության ինքնապաշտպանության կազմակերպումը: Կազմակերպության անդամների թիվը արագ աճեց և շուտով հասավ 400 հոգու: Այն ուներ խստագույն կոնսպիրացիայի պահանջներին համապատասխան կառուցվածք, միաժամանակ, կապեր հաստատեց Արևմտյան Հայաստանի մի քանի շրջանների և Անդրկովկասի հայ գործիչների հետ: Քայլեր կատարվեցին զենք հայթայթելու և պատրաստելու ուղղությամբ: Տարածվում էին թռուցիկներ: Սակայն 1882թ. վերջերին կազմակերպությունը հայտնաբերվեց, 72 մարդ ձերբակալվեց: Այս առիթով Բ. Դուռը մեծ աղմուկ բարձրացրեց՝ իբր հայերը Ռուսաստանի դրդմամբ նախապատրաստում էին լայնածավալ ապստամբություն: 4-րդ բանակի զորքերը շարժվեցին Կարինի վրա, իսկ Բերդի թնդանոթների փողերն ուղղվեցին հայկական թաղերի վրա:

Այդ տարիներին Կարինի թեմի առաջնորդը Մ. Օրմանյանն էր, որի նամակներում (հասցեագրված պատրիարքին) բացահայտված են ոչ միայն կազմակերպության աշխատանքի բնույթը, այլև իշխանությունների հետապնդած նպատակները: 1883թ. հունվարի 14-ին նա գրում է, թե ձերբակալված են անգամ 15-16 տարեկան պատանիներ: Բոլորին փակել են ցորենի չտեմարանում: Ձերբակալության պատճառն «ինչ-որ թղթերի տարածումն է, որոնք կոչ են անում աշխատել ազգի օգտին... Նաև մի վիմագրական քար են գտել, որի վրա այդ թղթերն են գծված»: Կուսակալը «կարծել է, թե Հայաստանը ծայրից ծայր պատրաստ է ապստամբելու և ելել է ռազմական ուժով խփելու»: Հրամայել է «զինվորները չատացնել և ամենուրեք նրանց ցրել, զինվորներին փամփուշտ բաժանել, բոլոր տեղերը, նույնիսկ առաջնորդարանի շուրջը լրտեսներ լցնել, կեսգիշերին մարդ ձերբակալել և տները խուզարկել, իբր թե զենք, զինանոց ու վառոդ են պատրաստել և ստեղծել են օսմանյան գահին սպառնացող մի ահեղ բանակ»: Ձերբակալվեցին անգամ հայկական մշակութային ընկերությունների ղեկավարները: Խուզարկություններ մղվեցին ոչ միայն քաղաքում ու վիլայեթի մյուս մասերում, այլև Հարևան վիլայեթներում:

Կ. Պոլիս հեռագրեր ուղարկվեցին, թե հայտնաբերվել է հզոր կազմակերպություն, որում ընդգրկված են «բոլոր հայերը», ինչպես նաև «հայերին լավ վերաբերվող թուրքերը»: Կասկածում են, թե «ռուսական դրդում կա այդ գործերի մեջ, ոմանք էլ անգլիական հյուպատոսության ազդեցությանն են վերագրում»: «Թղթի երկու կտոր ցուցադրեցին: Սակայն... զենք ու դրամ չհայտնաբերելը ցույց է տալիս, որ ընկերությունը գրեթե անգույն բան է և լուրջ ու ծանրակշիռ լինել չի կարող... Առհասարակ նկատելի է գործն

ուռճացնելու ցանկություն»: Քննությանը հայ ծառայողներին մոտ չեն թողնում[195]: Ու չնայած հետաքննությունը ոչինչ չապացուցեց, մարդիկ մնում են բանտարկված: Վալին դեպքն անվանեց «տղայական և անլուրջ», սակայն «ամածը չի համապատասխանում նրա գործողություններին... սկսել է հայ ժողովրդին մեծ սառնությամբ վերաբերվել... հայերի դեմ ամբաստանություններ ու գանգատներ են Կ. Պոլիս ուղարկվում»[196]: Հինգ օր առաջ դատախազի օգնական նշանակված մի հայ անմիջապես տեղափոխվեց Տրապիզոն, և նրա տեղը նշանակվեց մի մոլի թուրք: Կուսակալը գտնում է, որ «քաղաքում հային պաշտոնի դնել չի կարելի»: Հասարակական կրթության ժողովի կազմից ևս հայերին հանեցին, փակվեցին զենքի արհեստանոցը, խանութները, և մեծ թվով հայ արհեստավորների անգործ թողեցին: Հայերը բանտ են նետվում զրպարտություններով[197]:

Բանտարկվածներին պահում են անմարդկային պայմաններում, նրանց չրջանում սկսվել է համաճարակ: Մի քուրդ հաճախորդի և հայ խանութպանի միջև վեճ է ծագում: Խանութպանին ու նրա 13-14 տարեկան աշակերտին բանտարկում են, դատարանը նրանց արդարացնում է, սակայն վալին դատարանին պարտադրում է գործը նորից քննել[198]: Ձերբակալվածների ոչ մի աղերսագիր ուշադրության չի արժանանում, չուկայի «բոլոր խնդիրները և առևտրական կռիվները սկսել են քաղաքական տեսք ստանալ, գյուղերի միջև երթևեկությունը վախահարույց է դարձել», կուսակալը ճգտում է խորացնել անվստահությունը հայերի նկատմամբ: Նույնիսկ թուրք պաշտոնատարներն են խոսում վալու քաղաքականության վտանգավորության մասին[199]:

«Ձերբակալվածների խոշտանգումների վայրերից գլխավորը բոլիսն է, որ տանջավայր է: Բոլիս ասած տեղերն անճուկ ծակեր են, դուռը 10 թզաչափ բարձրությամբ և 5 թզաչափ լայնությամբ, գետնափոր հատակը՝ թաց հող, ամեն կողմը՝ խոնավ, սաստիկ ցուրտ, առանց ոչ մի կտոր փսխաթի»: Կարինում սառնամանիքները սկսել են, բայց շարունակում են բանտարկվածներին այդ ծակերում պահել, արգելում են ծխել ու խմել և մեկ անգամ են դուրս հանում: Օրը տալիս են մի հաց: Բանտապահները վայրագությամբ են վերաբերվում նրանց: Խաչատուր Կերեկեյանին այդ ծակում չորս օր պահեցին գրեթե մերկ և 48 ժամ քաղցած թողեցին: Նրան խցից հանեցին կիսամեռ: Ոմանց վրա այդ ծակերում նույնիսկ սառը չուր են լցրել:

Ոստիկանները գյուղերում խուզարկություններ են կատարում բռնությունների ու բռնաբարություններով[200]: «Այժմ հայ լինելը մեր կուսակալի աչքում հանցանք է»:

«Ապրիլի 6-ին հրապարակվեց մեղադրական եզրակացությունը, որն անլուր և անասելի պատժի է դատապարտում մեծ մասին, տերության մի գավառն ապստամբեցնելու դիտավորությամբ գաղտնի ընկերություն ստեղծելու մեղադրանքով»[201]: Ընդհանուր առմամբ, հեղափոխական կազմակերպությանն անդամակցելու մեղադրանքով դատապարտվեց 51 մարդ: Մ. Օրմանյանին հաջողվեց հասնել այն բանին, որ նրանցից միայն չորսը մնացին բանտում՝ մյուսներին ներում չնորհվեց: Ընդ որում, խմբակի անդամներին սկզբում դատեցին Կարինում, ապա՝ Կ. Պոլսում: Դատավարությունը տևեց չորս տարի և լայն արձագանք ունեցավ: Կերեկեյանն ու նրա համախոհները դարձան ազգային հերոսներ: Դատավարությունից հետո Կարինում շարժումը ծավալվեց նոր ուժով, ընտանեկան խնջույքներում հեղափոխական ճառեր էին հնչում, հայրենասիրական երգեր երգվում: Եռանդուն քարոզչություն ծավալվեց Սանասարյան վարժարանում: Աչա-

---

[195] ԳԱԹ, ֆ. Ազատյան Թ., բ. VII, գ. 11507:
[196] Նույն տեղում, գ. 11508:
[197] Նույն տեղում, գ. 11509:
[198] Նույն տեղում, գ. 11512:
[199] Նույն տեղում, գ. 11513:
[200] Նույն տեղում, գ. 11515:
[201] Նույն տեղում, գ. 11519:

*կերտները երգում էին՝ «Զայնը հնչեց Էրզրումի լեռներեն...»: Քաղաքում մթնոլորտը գնալով թանձրանում էր: Իրավազրկության, ազգային հալածանքների, բնաջնջման վտանգի դեմ պայքարը շարունակվում էր:*

* * *

*1890թ. հունիսի սկզբներին Կարինի քաղաքապահ զորքերի հրամանատար Ռահմին անստորագիր նամակ է ստանում, թե իբր քաղաքի հայոց Մայր եկեղեցում և Սանասարյան վարժարանում թաքցված են մի քանի հազար հրացան և մեծ քանակությամբ ռազմամթերք: Վալի Սամիհը փորձեց գտնել նամակի հեղինակին, սակայն 4-րդ բանակի հրամանատար Զեքին արդեն Կ. Պոլսից թույլտվություն էր ստացել խուզարկություններ կատարելու: Հունիսի 6-ին խուզարկվեց Սանասարյան վարժարանը, նույնիսկ հատակի տախտակները քանդեցին, բայց ոչինչ գտնել չհաջողվեց: Երեկոյան ժամերգության ժամանակ սկսում են խուզարկել առաջնորդարանը: Սպանվում է թուրք չաուշը: Զինվորները կրակ են բացում, ապա տգեղ միջոցներ գործադրելով՝ խուզարկում են նաև եկեղեցին: Այստեղ ևս ոչինչ չեն գտնում: Հաջորդ օրը հայերը խանութներն ու դպրոցները չբացեցին և հավաքվեցին սուլթանին հասցեագրված նամակի տեքստը քննարկելու: Իշխանությունները լրացուցիչ ուժեր բերեցին քաղաք: Զորքը շրջապատեց եկեղեցին և կրակ բացեց գավիթում հավաքված հայերի վրա, իսկ «չուկայի կողմից թուրք ամբոխը ևս, զինված բիրով, թրով, խանչալով, դանակով, հարձակվեց հայերի վրա: Իսկական պատերազմադաշտի վերածվեցին եկեղեցու գավիթը, կից փողոցները և չուկան»[202]:*

*Հայերը հեռացան իրենց թաղերը, իսկ գավիթում գտնվողները չցրվեցին: Զինվորները փորձեցին նրանց ցրել: Հայերը համառում էին, պաշտպանվում: «Գոռում-գոչյունով բակ լցվեցին փողոցում եղած զինվորները, ինչպես գազաններ բացականչեցին՝ «խփե՛ք ու ծակե՛ք»... Ներս խուժեց նաև թուրք խուժանի մի ստվար ու կատաղի բազմություն, որը խառնվելով զինվորներին, կարողացավ շատ հայեր սպանել և վիրավորել»[203]:*

*Թալանում ու քանդում էին հայերի խանութներն ու տները, հյուպատոսական փողոցում ոստիկանությունը ցուցարարների ճանապարհը փակում է, իսկ փողոցի մյուս ծայրից հարձակվում է խուժանը: «Ամբոխի առջևից գնում էր մի մոլեռանդ թուրք՝ նստած սպիտակ ձի՝ թուրը ձեռքին, և խրախուսում ու առաջնորդում էր խուժանին՝ հարձակվելու հայերի տների վրա»:*

*«Արաքս» հանդեսը նշում է, որ սպանվեց 15 և վիրավորվեց շուրջ 200 մարդ[204]: «Այժմ ձերբակալություններ են կատարվում հայերի շրջանում,– գրեց «Հնչակ»-ը,– կառավարությունը ջանում է հայկական հեղափոխության կերպարանք տալ գործին և պատասխանատվությունը բարդել հայերի վրա: Մինչդեռ ամեն ինչ ցույց է տալիս, որ խուզարկությունները կանխամտածված կոտորած առաջ բերելու նպատակով էին գործադրվել»[205]:*

*«Հնչակի»-ի տվյալներով՝ սպանվեց 70 հայ, 35 թուրք, վիրավորների թիվը հասավ 400-ի: Կարինը լրիվ շրջափակվեց:*

*Պետերբուրգը հուլիսի 10-ին տարածեց հետևյալ լրատվությունը: «Սպանվածների ու զոհվածների թիվը հասնում է 300-ի... Բազմաթիվ հայեր ձերբակալված են: Հայոց պատրիարքը հրաժարական է ներկայացրել՝ այն պատճառաբանելով վերոհիշյալ ձերբակալություններով և թշնամական դիրքով, որ թուրքական իշխանությունները որդեգրել են հայ ազգի հանդեպ: ...Սուլթանը հրամայել է շրջաբերական ուղարկել բոլոր նահանգ-*

---

[202] «Արաքս», 1890, էջ 170:
[203] Նույն տեղում, էջ 172:
[204] «Արաքս», 1890, էջ 173:
[205] «Հնչակ», 1890, թիվ 2:

ները՝ չարժման առաջն առնելու, ավելի ճիշտ՝ ամենայն խստությամբ ճնշելու և խեղդելու հայերի չրջանում երևան եկող ամեն մի չարժում»: Անգլիայի հյուպատոսը գրեց. «Ս/թ հունիսի 20-ին մահմեդական ամբոխը Կարինի փողոցներում հարձակվեց անպաշտպան հայերի վրա և նրանցից չատերին սպանեց ու վիրավորեց, միաժամանակ կողոպտելով նրանց տներն ու խանութները... Հանցագործները ձերբակալվեցին, բայց հաջորդ օրն ազատ արձակվեցին... իսկ քրիստոնյաներից ձերբակալվածներին չարունակում են բանտարկված պահել՝ առանց մեղադրանք ներկայացնելու»[206]: «...(Թուրքերի) կորուստները նվազ են եղել, որովհետև հատուկ պատրաստությամբ և զորքի ու խուժանի գործակցությամբ է հարձակումը տեղի ունեցել: Այդ հարձակման կանխամտածված լինելը տարակույս չի հարուցում: Քաղաքում ռազմական դրություն է հայտարարված»[207]:

Կարինի դեպքերը սուլթանին չատ անհանգստացրեցին: Նա հեռագիր հեռագրի հետևից էր ուղարկում, իրավիճակի մասին տեղեկատվություններ պահանջում: Բ. Դուռն անընդմեջ նիստեր էր անցկացնում: Պատրիարքի հարցին, թե Կարինում ինչ է կատարվում, մեծ վեզիրը չարությամբ պատասխանեց. «Հայերը թող հանգիստ մնան»:

Ռ. Խանազատը հիշում է. «...մենք՝ Տրապիզոնում եղածներս, այն համոզմունքն ունեինք, թե Էրզրումի եվրոպական հյուպատոսներն իսկույն ահազանգ պիտի հնչեցնեին այդ դեպքերի առթիվ, և Հայկական հարցը հրապարակ պիտի գար և չուտով էլ լուծում ստանար: Իսկ երբ այդ տեղի չունեցավ, ամենուրեք մեծ հիասթափություն առաջացավ»[208]:

Ռ. Պատկանյանը գրեց.

Փչրվեցին դուռներն սուրբ տաճարներին,
Նորից խոխոջաց արյուն հորդառատ,
Լիճ քստմնելի դարձավ խեղճ Կարին,
Հայ արտասուքի, արյան անարատ:

Կարինի 1890թ. հունիսի իրադարձությունները փաստորեն հանդիսացան հայերի 90-ական թվականների զանգվածային կոտորածների նախերգանքը: Բ. Դուռը իր դեսպանություններին չրջաբերական ուղարկեց, որում այդ դեպքերն անվանվում են «հեղափոխություն» և ասվում է, որ «տուժած հայերին վիրավորել ու սպանել են իրենց զինակիցները»[209]:

Մուշից գրում են, որ Կարինից ստացված լուրերի ազդեցության տակ «հունիսի 9-ին քաղաքի ողջ բնակչությունն ահ ու սարսափի մեջ մինչև առավոտ հսկում էր չրջապատը: Կրոնական ֆեթվայով որոշված է եղել հայերին կոտորել, և մոլեռանդ մոլլաներն ու փաղիրները Հաջի Դայիբի ղեկավարությամբ պատրաստ էին զենքը ձեռներին հարձակում գործելու»: Դրությունը փրկում են մի քանի խելամիտ թուրքեր, որոնք հայերին զգուշացնում են սպառնացող վտանգի մասին: Սակայն կոտորածի վտանգը դեռ երկար ժամանակ պահպանվում էր, քանի որ ֆեթվան հանողը Բաղեշի հանրածանոթ շեյխ Էմինն էր, որն այդ կողմերում «Մարգարեին վայել հարգանքից էր օգտվում»: «Ջարդերի վախ կա նաև Բաղեշում, որի չուրջը... հավաքվել են բարբարոս ու կատաղի քուրդ աշիրեթները: ...Հուզմունք ու վախ կա նաև Բաբերդում ու Վանում: ...Նելիդովը (Ռուսաստանի դեսպանը Կ. Պոլսում), որ պետք է արձակուրդ գնար, ցարի հրամանով այն հետաձգում է և Բ. Դռնից պահանջում վերացնել ռազմական դրությունը Կարինում»:

Հուլիսի 2-ին ութ հայ երիտասարդներ երգելով չրջում էին Քեսիբեկ գյուղի փողոցով: Թուրքերը, զայրացած, որ հայերը համարձակվում են երգել փողոցում, հարձակ-

---

[206] *Положение армян в Турции...*, стр. 254.
[207] «Հնչակ», 1890, թիվ 3:
[208] Գանգրունի Հ., նշվ. աշխ., էջ 107:
[209] *Ռուսաստանի դեսպանի 1890 հունիսի 21-ի թիվ 89 զեկուցագիրը, տե՛ս* ԳԱԹ, ֆ. Ապապյան Թ., գ. 11514:

վում են նրանց վրա և հինգ հոգու դանակահարում: Ոստիկանությունը մի քանի թուրքի ձերբակալում է: Հազարապետը ոստիկաններին հայհոյում է և թուրքերին ազատ արձակում: Իսկ երբ հայերն այդ ապօրինության դեմ գանգատվեցին, պատժվեցին ոչ թե հանցագործները, այլ իրենք: Նույն գյուղի հայ մսավաճառը բանտ է նետվում՝ թուրքի վարակիչ հիվանդությամբ հիվանդ չանը ծեծելու համար:

* * *

Նույն ժամանակաշրջանում Վասպուրականում գործում էին Վանեցի Ավոն, Վանեցի Կարապետը: Հայ երիտասարդները ահաբեկում էին Վանի 1876թ. հրդեհի կազմակերպիչ Մեհմեդին: Ստեղծվում էին խմբակներ ու ընկերություններ, որոնք նպատակ էին հետապնդում «տարածել ինքնապաշտպանության ոգին, հայ մարդուն տեր դարձնել իր իրավունքներին և նրան մղել ապրելու մարդավայել»[210]: Հայ ազգային քաղաքական կյանքի աչխուժանալը լուրջ անհանգստություն պատճառեց, մանավանդ որ կասկած կար, թե դրա հետևում կանգնած էր Ռուսաստանը: Վանում ռուսական հյուպատոս կամսարականն աշխատաքսվում է:

Հայկական մյուս շրջաններում ևս ինքնապաշտպանական բնույթի դեպքեր տեղի ունեցան, որոնք հայ և օտար շատ թերթեր հռչակեցին ապստամբություն: Վիեննայի "Politique correspondance"-ը գրեց. «Բայազետի շրջանում ստեղծված է ապստամբական հզոր կենտրոն՝ կազմված 2800 զինյալներից, հրդեհել են քրդաբնակ յոթ գյուղ, ասորիների ամենամեծ ղեկավար Մար Շիմոնը չարժվում է Վանի վրա: Կուսակալ Սամի փաշան սկսել է քրդերից կամավորական խմբեր կազմակերպել»[211]:

Տարոնի ազգային զարթոնքի գործում մեծ է Մ. Խրիմյանի վաստակը: Լինելով Սբ. Կարապետի վանքի առաջնորդ՝ նա կարողացավ աճեցնել ազգային գործիչների մի նշանակալից ջոկատ՝ Ն. Խարախանյան, Հովհ. Մուրադյան, Վարդան Հակոբյան, Ղազար, Առաքել, Ստեփան վարդապետներ: Նրա գործը չարունակեցին Մկրտիչ Սարըյանը, Միհրան Տամատյանը, Համբարձում Պոյաճյանը: Ազգային ոգու դրսևորումները աննկատ չմնացին: Մ Խրիմյանին, ապա նաև Ալաթաճյանին ու Սրվանձտյանցին հեռացրեցին Տարոնից, 1887թ. ձերբակալեցին և Պոլիս տարան Մ. Սարըյանին: Խիստ հետապնդումներ սկսվեցին Արաքոյի, Մխոյի ու Հրայր Դժոխքի դեմ:

Եթե Էրզրումի ու Վանի նահանգներում առաջինն ընդվզեցին քաղաքաբնակ, իսկ Տարոնում՝ գյուղաբնակ հայերը, ապա հայկական մյուս նահանգների թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում չարունակում էր տիրապետել դարավոր նիրհը: Բացառություն էր կազմում Զավղավարճյանի նախաձեռնությամբ Դիարբեքիրում ստեղծված Հայրենասիրաց ընկերությունը: 1867թ. Դիարբեքիր աքսորված 16 բուլղար հեղափոխականների կարգախոսը՝ «Սպանել սովորեցրեք երիտասարդությանը, որովհետև թուրքի հետ հնարավոր է գլուխ հանել միայն զենքի ուժով և սպանությունով», քաղաքում արձագանք ունեցավ:

Բարենորոգումների ձախողվելը հայ գործիչներն ընկալեցին երկակի: Կղերն ու հարուստ խավերը հուսալքվեցին՝ գտնելով, որ բարենորոգումներն այլևս անհնար են, քանի որ դրանցում չահագրգռված չեն ո՛չ սուլթանը և ո՛չ էլ տերությունները: Հետևաբար հարկ է հրաժարվել բարենորոգումների՝ գաղափարից ու ապավինել սուլթանի հետ լավ հարաբերություններ կառուցելու հեռանկարին: Մյուս թևը՝ մտավորականությունը, գտնում էր, որ անպայման պետք է հասնել բարենորոգումների՝ առանց հույսը որևէ մե-

---

[210] Ճանկիւլեան Ե., Ծիչատակներ հայկական ճգնաժամէն, Կ. Պ., 1913, էջ 51:
[211] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Հ. Ա., էջ 130:

*կի վրա դնելու,— այսինքն՝ զենքի ուժով,— որ գլխավորն ազգային արժանապատվությունն է, քանի որ հայ մարդու անձնական արժանապատվությունը ոտնահարվում է հայ լինելու համար, հետևաբար անձնական արժանապատվությունն ուղղակի կախման մեջ է ազգային արժանապատվությունից: Թերևս այդ էր պատճառներից մեկը, որ ազգային արժանապատվության համար պայքարը դարձավ լայն զանգվածների սեփականությունը:*

*Այս երկակի մոտեցումը չուտով համակեց նաև հոգևորականությանը: Եթե Խորեն Նար Պեյն և Մաթեոս Իզմիրլյանը իշխանությունների հանդեպ անզիջում կեցվածքի կողմնակիցներ էին, ապա Վեհապետյանն ու մյուսները՝ հնազանդ ու հաշտվողական վերաբերմունքի: Ի վերջո, այս վերջին թևը գերակշիռ ուժ դարձավ, և պատրիարքարանը փաստորեն դադարեց բարենորոգումների խնդրով զբաղվելուց, չնայած Հայաստանի լայն զանգվածների տրամադրությունները զարգանում էին տրամագծորեն հակառակ ուղղությամբ:*

*Այն հանգամանքը, որ պոլսահայ գաղութը իր սկզբանե ղեկավար դեր է խաղացել արևմտահայ կյանքում,— նկատում է Լ. Զորմիսյանը,— մեծ անպատեհություններ էր ստեղծել «հայ ժողովրդի քաղաքական զարգացման համար: Այդ, նախ, պատճառ էր դարձել հայրենիքի գաղափարի տարրալուծման գործում: Նույնիսկ հայրենի հողի վրա բնակվող հայը, տեսնելով օսմանյան մայրաքաղաքում հաստատված իր ղեկավարությանը, հետզհետե վարժվեց տեսնելու նաև իր պետականությունը այդ մայրաքաղաքում: Հայրենիքը վերածվում էր չփոթ, անչրջագիծ և լոկ երազային պատկերի՝ զրկված իր շոշափելիությունը հաստատող կազմակերպական, վարչական ղեկավարությունից: Հայրենիքը դարձել էր լոկ պատմություն և անցյալ, ինչ-որ հեքիաթային աշխարհ: Այն դադարում էր ոչ միայն հրապուրիչ տարածք, այլև նույնիսկ շոշափելի իրականություն լինելուց..., բացի պատմությունից, ուրիշ բան չէր մնացել հայրենիքի հատկանիշներից»*[212]*:*

*Պոլիսը դարձել էր հայ արժեքների պահպանման ու զարգացման կենտրոն՝ խզելով այդ արժեքների և հայրենիքի միջև գոյություն ունեցող բնական կապը: Այս իրողությունը հանդիսացել է խոչընդոտ հայ ժողովրդի քաղաքական գիտակցության կազմավորման համար: Հայրենիքն է ցանկացած ժողովրդի քաղաքական ըմբռնումն ու քաղաքականությունը: Հայրենիքի հանգացողություն չունեցող անձի համար քաղաքականություն գոյություն ունենալ չի կարող:*

*Բացի այդ: Պոլսի հայությունն, անկախ իր սոցիալական վիճակից, մայրաքաղաք եկել էր անձնական նպատակադրումներով, այլ ոչ թե հասարակական-քաղաքական խնդիրներ լուծելու շահագրգռությամբ: Հետևաբար, միանգամայն բավարարվում էր, երբ իր անձնական պլաններն իրականանում էին: Նա դժվարությամբ էր հակվում դեպի հասարակական-քաղաքական գործունեությունը և մնում էր հայ այնքանով, որ եկեղեցի էր գնում (մեծ մասամբ հայերեն չէր խոսում), հիշողություններ ուներ իր ծննդավայրից ու հայոց պատմությունից:*

*Սակայն, սկսած 60-70-ական թվականներից, պանդխտության մեծ հոսքի հետևանքով հայրենիքի գաղափարն առօրեականացավ: Չնայած դրան, պոլսահայությունը քաղաքական-ազգային զարթոնքի շրջան ուրք դրեց հայրենիքի մասին աղոտ պատկերացումներով: Նա ծանոթ չէր հայաստանաբնակ հային և նրան պատկերացնում էր պոլսահայ բեռնակրի վիճակով ու տեսքով՝ «քաղցած, մերկ, մարդկային արժանապատվությունից զուրկ, ստրուկ, թուրքի ու քրդի հալածանքներին անմռունչ համակերպվող»: Ահա այս վերացական պատկերացումներն էլ հիմք հանդիսացան Կ. Պոլսի հայերի քաղաքականության ու վարքագծի համար: Պատճառը նույնն էր՝ պոլսահայությունը Հայաստանն ու հայաստանաբնակ հային չգիտեր, ի զորու չէր ոչ միայն նրա բախտի համար*

[212] Զորմիսյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 165-166:

*կանխորոշող քայլերի դիմելու, այլև նրա անունից հանդես գալու, մինչդեռ իրերի բերումով նա հանդես եկավ հայ ժողովրդի ազգային քաղաքականությունը մշակողի և ներկայացնողի դերում: Դա արևմտահայության դժբախտությունները սնող աղբյուրներից մեկն էր:*

*Շուտով ակնհայտ դարձավ, որ սուլթանը բարենորոգություն երբեք չի մտցնի, ինչը բխում էր ոչ միայն թուրքական վարչակարգի, այլև ազգային քաղաքականության բնույթից: Այդ վարչակարգին խորթ էր ժողովրդի կյանքը բարվոքելու մտահոգությունը, այն անտարբեր էր սեփական ժողովրդի կյանքի պայմանների հանդեպ, ուր մնաց, թե հոգ տաներ ռայա հայերի մասին:*

*Նաև ակնհայտ էր, որ դրսի միջամտությունը թուրքերը շատ հիվանդագին էին ընդունում, և այդ միջամտությունը խոչընդոտ էր թեկուզ աննշան բարենորոգումների համար: Սուլթանն ու նրա վարչակազմը հասկանում էին, որ հայերին բարենորոգումներ չնորհելն ուղղակի հարված էր թուրք և քուրդ բնակչությանը, մասնավորապես՝ դրանց վերնախավերի շահերին. նրանց ձրկում էր հայերին շահագործելու ու հարստահարելու հնարավորությունից: Բացի այդ, կայսրությունը տնտեսական, ֆինանսական, քաղաքական այնպիսի խորը ճգնաժամի մեջ էր, որ անզոր էր որևէ արմատական փոփոխություն կատարել: Կարող էր հարցը նաև այլ լուծում գտնել, եթե հայերը հզոր մարտական ուժ լինեին: Մինչդեռ թուրքերը բացարձակ գերակշռություն ունեին հայերի հանդեպ: Ընդորում, հայերի անգամ տնտեսական, մտավոր ու բարոյական ուժերը շատ ավելի թուրքերին էին ծառայում, քան իրենց՝ հայերին:*

*Այս պայմանները թելադրում էին ստեղծել հայերի հավաքական ուժ ու կազմակերպություն, զինվել և զենքի ուժով ճգտել Հայկական հարցի լուծմանը: Ահա այս խնդրում էր, որ արևմտահայությունը բարոյական պարտություն կրեց, որին հետևեց քաղաքական պարտությունը, ապա նաև՝ համազգային ողբերգությունը: Պարզվեց, որ Օսմանյան կայսրությունում համազգային հայկական կազմակերպություն, ազգային համախմբվածություն ձևավորելը գործնականում անհնար էր, քանի որ ոչ միայն սոցիալական, այլև տարածքային սկզբունքների մղումով՝ արևմտահայության մեծաթիվ զանգվածններ պարզապես դրա անհրաժեշտությունը չէին զգում, անգամ վտանգավոր ու վնասակար էին համարում: Ինչ վերաբերում էր զինված պայքարին, ապա օսմանյան վայրագ լծի տակ հարյուրամյակներ գտնվելը, ահաբեկվածությունն ու կրավորականությունը ստեղծել էին ճակատագրական վախի զգացողությամբ համակված մթնոլորտ: Այդ էր պատճառը, որ նույնիսկ արմատականի համբավ ունեցող գործիչների զինված պայքարի կոչերը կարգախոսից այն կողմ չէին անցնում, նրանց ուշադրությունը հիմնականում հառած էր խաղաղ միջոցներին:*

*Որքան խորանում էր Օսմանյան կայսրության ճգնաժամը, որքան Արևմուտքն ուժեղացնում էր ճնշումը սուլթանի վրա, այնքան թուրքական պաշտոնական քաղաքականությունը հակվում էր դեպի Ռուսաստան: 1891թ. Պետերբուրգի և Կ. Պոլսի միջև մի քանի համաձայնագրեր ստորագրվեցին, որոնք ավելի քան մեծացրին ռուսական ազդեցությունը Բ. Դռան վրա: Բանը հասավ այնտեղ, որ Ռուսաստանի պահանջով պաշտոնաթող արվեց անգլիական կողմնորոշում ունեցող մեծ վեզիր Քյամիլը: Դեսպանի պաշտոնից վարչապետի պաշտոնի առաջ քաշված Լոբանովին փոխարինած Նելիդովը եռանդուն գործունեություն ծավալեց և շուտով մեծ ազդեցություն ձեռք բերեց Ելդըզ Քեոշքում, ռուս-թուրքական ալյանսն իրողություն էր դառնում: Դրան նպաստեցին նաև ռուսական գործակալների տարածած լուրերը, թե հայերը պատրաստվում են 1891թ. ապստամբություն բարձրացնել: Ցարը սուլթանի ձեռքերին ազատություն տվեց՝ խեղդելու հայկական այդ «ապստամբությունը»: Սակայն գործընթացում երևան են գալիս նաև ռուս-թուրքական հակասությունների պահերը, ինչից անմիջապես օգտվում էր Անգլիան, իսկ սուլթանը դեմ չէր խաղալու երկու լարի վրա:*

*Կարինի իրադարձությունները խորը վրդովմունք առաջացրին պոլսահայության շրջանում: Մանավանդ, որ եվրոպական դիվանագիտության կողմից Էրզրումում կատարված վայրագությունները միայն ի գիտություն ընդունվեցին: Հնչակյան կոմիտեն որոշեց Կ. Պոլսում բողոքի ցույց կազմակերպել սուլթանի հայատյաց քաղաքականության և աչխարհի քար անտարբերության դեմ: Ցույցը տեղի ունեցավ հուլիսի 15-ին և հայտնի է Գում Գափուի ցույց անունով:*

*Նկատի ունենալով ստեղծված վտանգավոր կացությունը՝ Լեոն նկատում է. «Գրվում էր Թուրքահայ ժողովրդի մահվան դատավճիռը: Համիդը որոշել էր կոտորածներով պատասխանել հեղափոխականներին...»[213]:*

*«Հնչակ» թերթը հետևյալ կերպ է ներկայացնում այդ օրվա դեպքերը: Կրոնական արարողության ժամանակ Հ. Պոյաճյանը մոտենում է պատրիարք Խ. Աշըգյանին և խնդրում ցուցարարների գլուխն անցած՝ ներկայանալ սուլթանին ու հանձնել «Հայ ժողովրդի պահանջները» անունը կրող մոտավորապես հետևյալ բովանդակությամբ փաստաթուղթը.*

*«Ձուրկ բոլոր իրավունքներից, ծանրաբեռնված սարսափելի հարկերով, անխղճորեն հարստահարված պաշտոնյաների, վաչխառուների, մուլթեզիմների և այլոց կողմից, նաև ղուրկ ինքնապաշտպանության իրավունքից և անպաշտպան կանգնած թշնամու հրացանի ու սվինի առաջ, ղուրկ անգամ հաց կտրելու դանակից՝ հայերս քայքայվում, կորչում ենք... Պատառ հացը՝ մի քիչ սև գըլգլը, որը հարստահարվելուց, հարկերը վճարելուց հետո մնում է, այդ քոնը չէ՝ զինվորները գալիս խփում են գլխիդ, այրում են տունդ, անպատվում կնոջդ ու լաճիդ բերանից խլում պատառ հացն էլ, սև գըլգլն էլ...:*

*Մեր պահանջներն են. Հողը նրան, ով այն մշակում է: Բերքը նրան, ով այն արտադրում է: Բոլորը պետք է աչխատեն և սեփական քրտինքով վաստակեն իրենց ապրուստը: Հայաստանի տերերը հայերը պետք է լինեն: Օրենսդիր ժողով, ազատ ընտրություններ: Ինքնի՝ կրոնի ազատություն, բոլոր տեսակի խտրականությունների վերացում: Նահանգների լայն ինքնավարություն: Մամուլի, խոսքի, կազմակերպությունների ազատություն»[214]:*

*Հարթակ է բարձրանում Հայկի Արությունը (Հարություն Ճանկյուլյան) և ընթերցում այդ պահանջները: Սուքիաս քահանան փորձում է նրան խանգարել: Հ. Ճանկյուլյանն ատրճանակը ճեռքին հետապնդում է քահանային: Այդ ընթացքում սարսափած պատրիարքը փախչում է պատրիարքարան: Հ. Ճանկյուլյանը բռնում է նրա մորուքից և դուրս քաշում, սակայն վրա են հասնում հրչեջները ու վիրավորում են Հարությունին: Հնչակ երիտասարդները ջարդում են պատրիարքարանի պատուհանի ապակիները: Ճանկյուլյանը ցած է բերում պատրիարքի աչխատասենյակի պատից կախված սուլթանական զինանչանը: Ժողովուրդը դուրս է գալիս գավիթ ու մերճակա փողոցներ: Այստեղ ևս ճառեր հնչեցին: Նազարեթ անունով մի երիտասարդ ասաց. «Մենք՝ հասարակ աչխատավորներս, որ կոչտացած ճեռքերով և մաչված մարմնով գիչեր-ցերեկ քրտինք ենք թափում մեր ընտանիքներին մի պատառ սև հաց հայթայթելու համար, ահա թե ինչ ենք լսում այսօր. մեր կանայք, մեր զավակները, մեր հայրերը, մեր մայրերը Թուրքի հրացաններից արյունլվա մեռնում են, մենք էլ այստեղ կիսամեռ վիճակում ենք...»:*

*Ամբոխը Խորեն պատրիարքին հարկադրեց, որ իրենց առաջն ընկած գնա դեպի պալատ: Սակայն ճանապարհին նա իրեն վատ զգաց, և իջեցրին մի հույնի տանը: Երբ ցույցի լուրը սուլթանին հասավ, բղավեց. «Ջորք, ջորք, կոտորել ապստամբներին»[215]: Ցու-*

---

[213] Լեո, *Անցյալից*, էջ 79:
[214] «Հնչակ», *1890*, թիվ 4:
[215] «Հնչակ», 1890, թիվ 6:

*ցարարները բոլոր կողմերից չրջափակվեցին ու մի չնչին պատրվակով հարձակման ենթարկվեցին: Մարդիկ խփվում էին, բայց չէին ընկրկում: Զինված ընդհարումը տարածվեց նաև Գում Գափուի փողոցները: Մարտինի հրացաններով զինված զինվորներն անխնա կրակում էին, իսկ հայերը պատասխանում էին ատրճանակների հատուկենտ կրակով ու քարեր նետելով:*

*Պատրիարքի մոտ եկավ Դերվիշը և պահանջեց հայտնել ցույցի կազմակերպիչների անուններն ու հանձնեց սուլթանի հեռագիրը՝ «Լսեցի ու սաստիկ բարկացած եմ: Այլևս նման դեպքեր չլինեն, թե չէ ձեզ ու ձեր ժողովրդին լրիվ կջախջախեմ: Հայտնեք, թե ինչու այդ դեպքերը պատահեցին: Անչուշտ դրանց մասնակցություն ունեցել եք»: Պատրիարքը պատասխանեց. «Ի՞նչ անի խեղճ հայ ժողովուրդը, երբ տեսնում է իր տունը կողոպտված, կանայք ու հարսները լկված, պանդուխտ հայրենակիցներին ուղղված նամակները փոստատանը բացված, նյութական միջոցներից զրկված և այլ բազում թշվառությունների մատնված: Հայ գավառցին էլ այլևս չկարողանալով տոկալ և ծայրահեղությունների դիմելով, ցույց արեց, որ ես ձեզ ասեմ: Քանի-քանի՛ անգամ հայտնել եմ այս ամենի մասին ու անհետևանք է մնացել: Ուստի, այլևս չկարողանալով տոկալ և իմ սիրելի ազգի թշվառության պատճառ դառնալ, գալիս եմ իմ ներկա հրաժարագիրս մատուցելու ձերդ կայսրական գահիդ ոտին»*[216]*:*

*Ընդհարումից հետո բանտ նետվեց 600 մարդ: Հ. Ճանկյուլյանը մահվան դատապարտվեց՝ սուլթանի նկարը պատռելու և ոտի տակ նետելու մեղադրանքով: Շատերը դատապարտվեցին 6-15 տարվա բանտարկության: Բ. Դուռն իր վրա վերցրեց պատրիարքի անձի անվտանգության ապահովման պարտականությունը՝ հասկացնելով, թե Գում Գափուի ցույցն ուղղված էր ոչ թե իշխանությունների, այլ պատրիարքի դեմ: Նույնիսկ զոհված հայերի թաղման ժամանակ գերեզմանոցում մարդիկ էին ձերբակալվում: Պաշարվեցին հայկական թաղերը, խուզարկություններ տևեցին մի քանի օր: Հայերին արգելվեց քաղաքից հեռանալ:*

*Այդ ընթացքում չարագույժ լուրեր էին տեղ հասնում գավառներից: Անհատ սպանություններին փոխարինել էին զանգվածային կոտորածները: Կառավարությունը «կատաղած՝ հրամաններ է արձակում. հայերի ամեն մի չարժում դիակներով ծածկել: Երզնկայի ամբողջ բանակը չարժման մեջ է, մեր երկրի բոլոր կողմերը զինվորներով են լցված»: Սուլթանի նախկին քարտուղար Մուստաֆա Նեդիմը պատմում է, որ լսելով ցույցի մասին՝ Համիդը գաղտնի խորհրդակցություն անցկացրեց, և հանձնարարեց պարզելու կատարվածի բնույթը:*

*... «Երբ իմ կառքը կետիկ փաշայի զայրիվայրից ցած էր իջնում, անընդհատ հետևում էի, որ զենքի ձայն լսեմ: Սակայն ձայն-ճուն չկար... տեսա Դայի Դիմիտրի անունով ծանոթիս, որը պատմեց.*

*— Ոչ մի առանձնակի բան չի կատարվել... Եկեղեցու արարողության ընթացքում ռոդոստեցի մի ձկնորս աղմուկ է բարձրացրել, մի քանի անգամ կրակել են: Գնդակներից մեկը կպել է ոստիկան Կարապետ Էֆենդուն, խեղճը մեռել է... Զորանոցում դեպքի մասին իմանում են: Ո՞վ իմանա, ինչպես են ներկայացրել, որ Սպարապետի դռնից զորք եկավ: Պատրիարքարանն ու փողոցները չրջափակված են:*

*Վանեցի սրճարանատեր Հակոբ աղան ասաց.*

*— Կատարվածը նշանակությունից զուրկ է, բայց զգում եմ, որ անիրավորեն փորձանք է գալու հայերի գլխին:*

*Վերադարձա պալատ ու գրեցի տեսածներս ու լսածներս: «Այս դեպքը, իրոք... դիվանագիտության և քաղաքականության հետ կապ չունի: Եթե նույնիսկ քաղաքական բնույթ էլ ենթադրվի, կառավարության համար ավելի նպատակահարմար է*

---

[216] Նույն տեղում:

*մի սովորական դեպքի դույն տալ: Հակառակ պարագայում ոչ հեռվում եղած կրակը, որն ուշ էր բռնկվելու, մեր ձեռքով խառնում ենք, և հիմա է բռնկվելու: Դժբախտաբար, անձնական օգուտներ ապահովելու համար հազար հրդեհ ցանկացող անձանց, անձրևի նման տեղացող ժուռնալների (լրտեսագրերի) դեմ իմ անհատ խորհրդածությունները որևէ ազդեցություն չունեցան: Ասածիս նման հրդեհը հանկարծակի պատեց տանիքը...*

*Մի հայ չմնաց, որ վստահ լիներ իր անձի և ունեցվածքի անվտանգության համար...»:*

*Գում Գափուի դեպքից հետո Պոլսի հայերից հազարավորների օջախները մարեցին[217]:*

*«Այդ մի աննշան ու չնչին դեպքի օր էր,– գրում է Լեոն,– որ սակայն դարձավ մի ընդարձակ և լայն բացված դուռ, որի միջով աղետներ իրար հետևից սկսեցին թափվել անմեղ ու անգետ թուրքահայ գյուղացիության գլխին»: Սուլթանին առիթներ էին հարկավոր, և «ահա այդ առիթները առատությամբ մատակարարում էին հայ թեթևամիտ, քաղաքականապես անգրագետ հեղափոխականները»[218]: Ծույլի կազմակերպիչներն ավելին չէին, քան երեխաներ և «միայն դժբախտ իրականությունն էր կարող այդպիսիներին հանձնել ամբողջ ժողովրդի ճակատագիրը[219]: Ծույլը «ռոմանտիկ զառանցանք», «հայկական ջարդերի հիմք դնող» սադրանք էր:*

*Լեոն ունեցավ նաև հետևորդներ, որոնք նույնպես դատապարտեցին այդ ցույցը՝ այն պիտակավորելով «ավանտյուրա», որն «այնքան թանկ նստեց թուրքահայ ժողովրդին»: Սակայն շատ ավելի մեծ է այն մասնագետների թիվը, ովքեր համաձայն չեն Լեոյի մերժողական գնահատականներին: Բնականաբար, «Հնչակ»-ը խոսքեր չէր խնայում հնչակյան ցույցը փառաբանելու համար: «Թուրքիո բաժանման խնդիրը նորից երևան եկավ... Թուրքիո բազմավեր մերկ մարմինը կրկին ընդհանուրի քննության ենթարկվեց, ամենքը տեսան, որ Թուրքիան երկունքի մեջ է, նրան դեռևս ստրուկ մնացած օտար ազգությունների ազատությունը ծնվելու վրա է, գնով նրա՝ Թուրքիո սեփական մահի»:*

*«Գում Գափուի ցույցը հայկական աքաղաղն էր, որ իր վրա հրավիրել էր անտարբեր Եվրոպայի և մեծ տերությանց ուշադրությունը: Օտար մամուլը գնահատեց զայն իբրև առաջին հայ հեղափոխական գիտակցական ու նախագծված քայլ և իբրև հայկական ձգտումներու գործնական արտահայտություն: Անիկա մեծագույն պրոպագանդա էր ի նպաստ հայկական հեղափոխության, որ կուգար սարսափեցնելու խոստումնադրուժ կառավարությանը...»[220]:*

*Սմբատ Շահազիզը գրեց.*

Լախտերը չափելով կաչեհան մեջքին,
Գաչում են անապատ անմեղ Հիսուսին...
Ազատ է Բարաքա՝ գող ու ավազակ,
Ազատ է օսման, վճռեց Եվրոպան,
Խեղդեցեք դրան, չարդեցեք կզակ,
Որ այլևս մեզ բողոք չկարդա:

*Գում Գափուի ցույցի նշանակությունն իրոք առանձնահատուկ է, սակայն ոչ այն առումով, ինչը չեչտում են վերը բերված մեջբերումները, այլ ա) դա խաղաղ ցույց էր, ուղղված չէր ոչ սուլթանական վարչակարգի և ոչ էլ թուրքական տիրապետության դեմ, սակայն ոչ միայն զենքի ուժով ճնշվեց, այլև որպես պատրվակ օգտագործվեց հայերի*

---

[217] Մուստաֆա Նեզիմ, *Հայ եղեռնը. իմ վկայություններս*, էջ 29-39:
[218] Լեոն, *Թուրքահայ հեղափոխության ...*, հ. Ա, էջ 175:
[219] Նույն տեղում:
[220] Օզանյան Գ., *Հայապատում*, Մարզվան, 1912, էջ 88:

ջարդ կազմակերպելու համար, բ) ցույցն ու կոտորածը տեղի ունեցան ոչ թե կայսրության որևէ անկյունում, այլ մայրաքաղաքում, այսինքն, հայ-թուրքական առճակատման գլխավոր կենտրոններից մեկը դառնում էր Կ. Պոլիսը: Եվ այն, որ նույնիսկ այդ պարագայում Բեռլինի դաշնագիրը ստորագրած տերությունները չտեսնելու տվեցին ու անտարբեր մնացին, ակնհայտ է դարձնում, որ սկսած 90-ական թվականների սկզբներից Հայկական հարցը նրանց արևելյան քաղաքականության մեջ մղվել էր հետին պլան: Հայերի համար սկսվում էին ծանր փորձությունների տարիներ:

Ինչպես և սպասվում էր, սուլթանը պոլսահայերին «փոքրիկ դաս» տալով, բավարարվեց և շուտ եկավ հաշվեհարդարի ենթարկելու Հայաստանի հայերին: Բանտերը լցվեցին, աննախադեպ ծավալներ ու բնույթ ստացան հարստահարություններն ու սպանությունները: «Հայաստանի բոլոր կողմերից սպանությունների լուրեր են շարունակ հասնում,– 1890թ. սեպտեմբերի 14-ին գրեց «Հնչակ»-ը:– Բոլոր քրիստոնյաներին սպանելու սարսափն ընդհանուր է ամբողջ Հայաստանում: 3-4 օր առաջ այստեղ հասան ելլեզ օղլի Ալի բեյը և չեյխ Շեմսէդդինը՝ Սեբաստիայի հայերին կոտորելուն նախապատրաստվողների գլխավորները, և առաք-փառաք չրջում են»: 1890թ. հուլիսի 30-ին Տրապիզոնից գրում են, որ եթե կարինի դեպքերից հետո թուրքերը սկսեցին բացեիբաց խոսել հայերին կոտորելու մասին, ապա «Պոլսի ցույցերից հետո դիմեցին գործնական քայլերի: Հուլիսի 26-ի գիշերը 2000 զինված թուրք հավաքվում են Մեյդանում հայոց թաղերի վրա հարձակվելու համար: Հավաքվածների մեջ կային նաև թրքուհիներ՝ զինված ատրճանակներով ու կացիններով: Սակայն քաղաքի մի քանի լրջմիտ թուրքերի ջանքերով կոտորածը կանխվեց»[221]:

Ստեղծված իրավիճակն է արտահայտում Պոլսից ստացված մի նամակ. «Հայաստանի բոլոր կողմերից սպանությունների, հափշտակությունների լուրեր են շարունակ հասնում: Բոլոր քրիստոնյաներին կոտորելու սարսափն ընդհանուր է ամբողջ Հայաստանում»[222]:

Հայկական նահանգներում վերանորոգվում էին ռազմական նշանակություն ունեցող բերդերը, մեծացվում էին զորքերի, մասնավորապես կայազորների զորքերի թիվը, մի շարք բնակավայրեր չրջափակվել էին: «Ո՛վ կարող է հավատացած չլինել,– գրում է «Հնչակ»-ը,– որ... տաճկական տերությունը Արևելյան հարցի այդ հիվանդ գերին, դիտավորությունն չունի ամենամոտ ապագայում հայ տղամարդու, հայ կնոջ, հայ երեխայի մսով, ոսկրով ու արյունով, իբրև ցեխով ու ջրով, լցնել ու փակել իր տերության խախուտ չենքի ճեղքերն ու ծակերը՝ հուսալով ամրացնել այն... Անտարակույս, ամենամեծ ծանր դեպքերը մոտալուտ են»[223]:

Նույն այդ օրերին գուժեցին Մարզվանից. «Արյան հոտը օդի մեջ է»: «Ադամանդն ադամանդով հղկելու» այսինքն, հայերին ու քրդերին իրար ոչնչացնելու մղելու և այդ միջոցով մուհաջիրների համար թափուր տարածքներ ստեղծելու թուրքական ավանդական քաղաքականությունը թևակոխում էր նոր փուլ:

Մեծ վեզիր Ջևադը տեղական իշխանություններից պահանջում էր «գործել», բայց այնպես, որ օտարերկրացիները «չկարողանան ծանոթանալ գործերի իրական վիճակին»: Նման զգուշացումը հիմքից զուրկ չէր, քանի որ հայերի հանդեպ բռնություններին կարինում, Բաղեշում, Վանում բացեիբաց մասնակցում էր բանակը, ջարդեր տեղի ունեցան Ադանայում, կոտորվեցին կեսարիայի եկեղեցիներում ծիսակատարության մասնակից հայերը:

Բնականաբար, սպառնացող համընդհանուր աղետը զգոնացրեց ու ի մի բերեց հայ հասարակության տարբեր խավերին: Ամիրաները, բուրժուական և կալվածատիրական մյուս տարրերը հասկանում էին, որ ահագնացող աղետին դիմակայելու մի ուղի կար՝ համազգային միասնություն, ուժերի միավորում ինքնապաշտպանության համար:

---

[221] «Հնչակ», 1890, թիվ 4:
[222] Նույն տեղում, թիվ 4:
[223] Նույն տեղում:

Հայկական ինքնապաշտպանական կռիվների նախնական եղանակը չելոյական խմբերի գործողություններն էին: Դրանք ստեղծվեցին հրոսակախմբերի օրինակով: Այդ խմբերի պայքարը չեչոված ազգային բնույթ չուներ: Դրանցում հայերից բացի ընդգրկված էին քրդեր, թուրքեր, չերքեզներ: Չելոյականությունը հող նախապատրաստեց հայդուկային շարժման համար: Պատահական չէ, որ հայդուկային անդրանիկ խմբերը կրում էին դրանց ընդգծված ազդեցությունը: Այդ ազդեցությունը նկատելի էր անգամ Տարոնում, չնայած այստեղ չելոյական կռիվները տարածում չունեցան: Չելոները թշնամի էին անարդարություններին, նրանք թալանում էին թալանչիներին ու հարստահարիչներին և կողոպտածը բաժանում աղքատներին:

Թե ով էր շարժման հիմնադիրը՝ Չելոն, անհայտ է: Կա ենթադրություն, որ նա ավշար ցեղից է եղել: Նրա գործունեությունից հայտնի են միայն մի քանի դեպքեր: Էնկյուրիի բանտից ազատվելուց հետո՝ Ցոզղաթի ճանապարհին նրա փոքրիկ խմբի դեմ է դուրս գալիս 60 ոստիկան: Չելոն անմիջապես հարձակման է անցնում: Ոստիկանները երկու զոհ տալով փախչում են: Ցոզղաթից մեծ ուժեր են գալիս, բայց դրանք էլ են պարտվում: Չելոյի դեմ կռվելուց խուսափելու համար չատ ոստիկաններ հրաժարական տվեցին[224]:

Հայ չելոներից առաջինն ու ամենահամբավավորը Թորոս Ծառուկյանն էր, որի կազմակերպած խմբերը կողոպտում էին հարուստներին, պետական սեփականությունն ու բաժանում աղքատներին: Այլ խնդիր էր իր առաջ դրել Մարզվանի մտավորականների խումբը, որը մասնաճյուղեր ուներ գյուղերում և զբաղվում էր մայրենի լեզվի քարոզչությամբ, հայերի շրջանում առևտրի զարգացմամբ, նրանց օգնության կազմակերպմամբ: Այդ չիրքեթը (ընկերությունը) լուծում էր նաև ինքնապաշտպանական խնդիրներ և չուտով հարեց Հնչակյան կուսակցությանը:

Երբ Անատոլիայի հայաբնակ գյուղերում սկսեցին մուհաջիրներ բնակեցնել, չելոներն իսկույն հայտնվեցին այդ գյուղերում և հայ բնակչությանը պաշտպանեցին մուհաջիրների բռնություններից:

Չելոների գործունեության գլխավոր կենտրոններն էին Կոնիան, Կեսարիան, Սեբաստիան, Ադանան: Չելոյականությունը արտահայտություն էր ազգային-սոցիալական շարժումների օրորոցային շրջանի, այն սկիզբ էր և պատահական չէ, որ ծնվեց զարգացման համեմատաբար բարձր մակարդակ ունեցող շրջաններում: Ավազակության դեմ ավազակային եղանակներով պայքարելը շարժմանը չէր զրկում քաղաքական բնույթից, այլ միայն չեչոում էր, որ արթնացող զանգվածների համար այդպիսի ոճով ըմբոստությունը սկիզբն էր հետագա պայքարի: Չելոյականները պաշտպանում էին հասարակության ճնշված խավերին հարստահարիչներից, այդ թվում նաև իշխանություններից: Չելոյականության քաղաքականացման գործում վաստակ ուներ Մկրտիչ Փորթուգալյանը:

Չելոյականությունն ու հայդուկությունը մերձավոր ազգականներ էին: Պատմաբաններից չատերը այդ երկու երևույթների միջև տարբերություն չեն տեսնում: Լ. Զորմիսյանը չելոյականների շարքին է դասում անգամ Մինաս Օղլուի գործունեությունը՝ նկատի ունենալով, որ նա կռիվներ էր մղում Շերին Ալիի և Մևլուտի ավազակախմբերի դեմ: Չելոյական էին նաև Գյուլբենգ Համալյանը, գեմերեկցի Էհմուլյան եղբայրները, Սարաֆ Միհրանը, մարզվանցի Թումայանը և Գայայանը: Վերջիններն էին ղեկավարում «Փոքր Հայքի կազմակերպությունը»: Մի բան, սակայն, ակնհայտ է. թե՛ չելոները և թե՛ հայդուկները հող նախապատրաստեցին քաղաքական կուսակցությունների գործունեության համար: Գալուստ Պոյաճյանը չելոյական-քարոզչական աշխատանք էր տանում, և երբ ստեղծվեց Հնչակությունը, անմիջապես մտավ այդ կուսակցության շարքերը: Նրա հետ համատեղ էր գործում նաև Կեսարիայի Դերեվանքի վանահայր Դանիել վարդապետը:

[224] Նույն տեղում, 1893, թիվ 6:

Թե՛ էելոյականությունը և թե՛ հայդուկությունը նույն տագնապի՝ բնաջնջման վտանգի, ծնունդն էին: 1893թ. Թորոս Մատուկյանն իր 50 ընկերների հետ սուլթանին տապալելու կոչ անող թռուցիկներ տարածելու համար ձերբակալվեց: Նա Անկարայի բանտից գրեց. «Կախաղանիս տակեն կարծես ավելի պարզ կտեսնեմ մեր ցանկացած արշալույսը: Այս համոզումն ալ միշտ պիտի մնա, որ նահատակների արյունով միայն հայ ժողովուրդը կրնա ունենալ նոր բախտավոր կյանք»[225]: Եվ ապա. «Հայուն ազատությունը հայը պիտի իրականացնե, մուրալը օգուտ չունի, միշտ պիտի խաբեն մեզ... Սիրտ տվեք, պատրաստեցեք ժողովուրդը...»: Նման ինքնազոհողությունը նկատի ունենալով էր, որ Ստ. Շահումյանը Ղ. Աղայանի տարելիցին արտասանած ճառում ասաց. «Թող չասեն, թե լինում են պայմաններ, երբ կռիվն անհնարին կամ անմիտ բան է: Չկա այն զորեղ թշնամին, որի դեմ կռիվն անհնար լինի, չկա այն բռնությունը, անարդարությունը, որի դեմ բողոքն անմիտ բան լինի: Կռվողն այն դեպքում չի կռվում միայն, երբ համոզված է, որ ինքը կհաղթի, նա չի կռվում միայն հաղթելու համար: Նա կռվում է, որովհետև չի կարող չկռվել, նա կռվում է երբեմն մեռնելու համար»[226]:

Հայդուկային չարժման գնահատման գործում կան իրարամերժ կարծիքներ: Ոմանք և, առաջին հերթին, այդ չարժման մասնակիցներն ու ժամանակակիցները գերագնահատում են հայդուկության դերը և գտնում, որ ֆիդայական խմբերը իր վիճակի էին դեռ երկար մաքառելու և խոչընդոտելու կոտորածները, եթե չլինեին սուբյեկտիվ բնույթի գործոնները: Ոմանք էլ, այդ թվում նաև առանձին պատմաբաններ, նսեմացնում, խեղաթյուրում են չարժման բնույթը, վարկաբեկիչ պիտակներ կպցնում:

Հայդուկության պատմության կեղծարարներից Լոուրին գրում է, թե ընդհանուր նմանություն «կա այսօրվա և 19-րդ դարավերջի ու 20-րդ դարասկզբի (հայկական) ահաբեկչական կազմակերպությունների ձգտումների, նպատակների ու մարտավարության միջև»: Ինչպես 19-րդ դարի, այնպես էլ մեր ժամանակների հայկական ահաբեկչությունը նպատակ ունի «Արևելյան Անատոլիայում ստեղծել անկախ հայկական պետություն», ինչն այսօր շատ ավելի անհնար է, «քան 100 տարի առաջ: Հայերն ի վիճակի չեն լրջմիտ գնահատել իրականությունը, նրանք չեն հասկացել ու չեն հասկանում, որ թուրքական ուժեղ պետությունը երբեք չի բավարարի ահաբեկիչների մի ողորմելի խմբի պահանջները», այսինքն, հայկական ահաբեկչությունը զուրկ է «տարրական տրամաբանությունից»[227]:

Ամերիկյան պատմաբանը նույնիսկ չի փորձում տեսնել, որ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակները եղել են Թուրքիայում հայերի բնաջնջման ժամանակաշրջան: Տարբեր ժամանակահատվածներում կիրառվել են ոչնչացման տարբեր ձևեր ու եղանակներ, բայց եղեռնը երբեք կանգ չի առել: Ոչ քիչ դեպքերում ցեղասպանության եղանակների փոփոխությունը կատարվում էր համաշխարհային հասարակական կարծիքն ապակողմնորոշելու համար: Եվ հաճախ այդ աճպարարությունը հաջողություն ունենում էր:

«Տխուր պատկեր է ներկայացնում այսօր Տաճկա-Հայաստանը: Հայ մարդու, հայ կնոջ ու հայ երեխայի անմեղ արյան կաթիլներն են, որ ողողում են Տաճկա-Հայաստանի հայաշատ կենտրոնների միջավայրերը: Շարունակ հարստահարություն, բռնաբարություն, ունեցվածքի և եկամտի վտանգվածություն, սպանություն՝ ահա անպաշտպան հայ երկրագործի թշվառ դրությունը, որ երկար դարերից ի վեր հանգիստ չունչ չի կարողանում քաշել իր հայրենիքում: Վերջին ժամանակներս տաճկահայ գյուղացին, այլևս անկարող լինելով տանելու այդ նորանոր հանդուգն բռնաբարությունները, որոնք տեղում էին ու տեղում են նրա գլխին թե՛ բարբարոս ցեղերի և թե՛ թուրք պաշտոնյաների

---

[225] Գանդրունի Հ., նշվ. աշխ., էջ 120:
[226] Շահումյան Ստ., Երկեր, հ. I, Երևան, 1955, էջ 38:
[227] «Արմենիեն ռեպորտեր», 07-14.06. 1984:

կողմից, համբերությունը հատած, զենքը ձեռքն առավ գեթ իր արյան գնով պաշտպանելու իր ազգակիցների սուրբ իրավունքները: Այժմ հայ գյուղացու այդ ինքնապաշտպանության գաղափարը կարծես տարածվել է տաճկահայերի բոլոր շրջաններում, որը ներկա պայմաններում միակ միջոցն է մեկընդմիշտ վերջ տալու ավազակաբարո ցեղերի լրբություններին»[228]:

Այդ լրբությունները ծնել էին սուլթանն ու նրա կառավարությունը: Օտար հետազոտողներից մեկը վերջիններիս անպարկեշտությունը ներկայացնում է հետևյալ կերպ. «Թեև 1856թ. հրովարտակը մտել էր Փարիզի դաշնագրի մեջ, նահանգներում երբեք չի գործադրվել: Օրենքի առաջ հայերի ու թուրքերի իրավահավասարությունը մնաց թղթի վրա: Թուրքիայի քրիստոնյաներն՝ ընդհանրապես, իսկ հայերը՝ մասնավորապես, զուրկ են քաղաքական կյանքի ամենակարևոր տարրից՝ կյանքի և ունեցվածքի անվտանգությունից: Հայերը, բուլղարները և մյուս քրիստոնյա հպատակները նման էին անօգնական հոտի, անպաշտպան՝ այնպիսի գայլերի հարձակումներից, որպիսիք են քրդերը, չերքեզները... իսկ կառավարությունը... հաճախ ավազակներին էր պաշտպանություն ցույց տալիս և ավարը նրանց հետ կիսում: Հայերի այս անմխիթար վիճակը չարունակվում է մինչև օրս...»[229]: Նույն խնդրին 1876թ. նոյեմբերի 1-ին անդրադարձավ նաև թուրքական "Ittihad" թերթը. «Քաղաքականությունը, որը մինչև օրս վարել է Բ. Դուռը, ստի ու կեղծիքի քաղաքականություն է: Շատ է խոստանում, բայց ոչինչ չի կատարում»:

Երբ վանում ընդհարում տեղի ունեցավ հայերի ու թուրքերի միջև, «Թուրք կառավարությունը սոսկում» ապրեց, «որովհետև կարծում է, թե դա ընդհանուր հայկական ապստամբության սկիզբն է»: 1892թ. հունիսին ձերբակալվեց Համբարձում Դավթյանը: Հարցաքննության ժամանակ նա ասաց, թե սուլթանական վարչակարգը «դատապարտված է ոչնչացման, և մենք ուզում ենք այդ դատավճռի գործադրողները լինենք...»: Սա նոր մտածողություն չէր, բայց նոր էր որպես գործելակերպ:

Հայերի, իշխանությունների ու քրդերի միջև բախումները հաճախակի դարձան: Ալաշկերտում գործող Հարությունի հայդուկային խումբը արյունահեղ կռիվների մեջ էր քրդերի հետ: Սամսոնում գործում էր Կարապետի խումբը: Սակայն հայդուկության խոշոր կենտրոնները Փոքր Հայքն ու Տարոնն էին: Խոսելով հայերի հայդուկային ընդվզումների մասին՝ Ֆ. Նանսենը գրում է. «Եվրոպական տերությունները դավաճանեցին հայկական հարցին: Ուրեմն ինչո՞ւ եք զարմանում, որ հայերն իրենց ձեռքը վերցրին սեփական դատը: Կտրիճները, զենքը ձեռքներին, քաշվեցին լեռները: Ուզեցին վրեժ լուծել քրդերից ու թուրքերից, որոնց չարագործությունները չափ ու սահման չունեին: Նրանք մի նպատակ ունեին՝ հնարավորության սահմաններում օգնել իրենց հայ ազգականներին:

Թուրքական բռնակալությունից դժգոհ քրդերը նույնպես միացան հայերին: Հայ կտրիճներն, անշուշտ, քաղցրաբարո չեղան իրենց հալածողների ու կոտորողների նկատմամբ: Այդուհանդերձ, նրանց արարքներն անգամ հեռավոր ձևով անհնար է համեմատել այն գազրելի արարքների հետ, որ նրանց արյունարբու հակառակորդները կատարեցին»[230]:

Հայդուկային շարժման հիմնադիրը հայ կյանքում Արաբոն էր, որի գործունեությունը ներկայացնում էր անցում չելոյությունից դասական հայդուկության: Նա հրոսակային հարձակումները զուգակցում էր ազգային պայքարի հետ, ձգտում հասնելու միավորման՝ իշխանությունների դեմ: Շնորհիվ իր բնավորության գծերի՝ Արաբոն աջակցություն էր գտնում քրդերի կողմից, ինչից «հայերը զգուշանում էին»[231]:

---

[228] «Արաքս», 1890:

[229] Probyn J. W., *Armenia and the Lebanon*, London, 1877, տե՛ս «Փորձ», 1877-1878, էջ 376:

[230] Նանսեն Ֆ., նշվ. աշխ., էջ 253:

[231] Առաջին հայդուկներից էր ցրոնքցի Մհեր Մանուկյանը, որը Թիֆլիսում ցատկեց Գոլիցինի կառքը, նրան կառքից դուրս նետեց ու դաշունահարեց: Մահից հայատյացին փրկեց նրա կինը, որն իրենով փակեց ամուսնու մարմինը:

*Սասունում ձևավորվեց հայդուկային փայլուն համաստեղություն՝ Արաբո, Աղբյուր Սերոբ, Գևորգ, Անդրանիկ, Մակար, որոնք հայ ժողովրդի տարեգրության մեջ գրեցին բազմաթիվ պայծառ էջեր:*

*Հայդուկ հասկացությունը, գալով Բալկաններից, Հայաստանում ձեռք բերեց տեղական պայմաններից բխող որոշակի առանձնահատկություններ: Հայդուկ բառը հունգարական է, և երկու իմաստով էր օգտագործվում՝ ավազակ կամ օգնության ձեռք մեկնող: Հայդուկն ինքնատիպ երևույթ ու հասկացություն էր: Նա ամբողջական ինքնանվիրում ու ինքնազոհողություն էր: Նա սեփականություն չուներ և ունենալու իրավունքից զրկված էր: Անվերջ շարժման մեջ էր, ոչ ոք չպետք է իմանար նրա տեղն ու ուղերթերը: Հայդուկի բնակարանը քարայրն էր, ձնե տնակը, լեռներն ու կիրճերը, անասնագոմը կամ մարագի մութ անկյունը: Դիշերը հայդուկինն էր, մթում նա էր դրության տերը, ցերեկը, լույսը նրա թշնամին էին, գլխավոր հոգսն աննկատ մնալն էր: Հայդուկի բեռը, 100 կգ-ի հասնող, նրա ողջ ունեցվածքն էր, այդ թվում՝ միշտ անքաժան հրացանն ու ռազմամթերքը: Վտանգը, մահվան ներկայությունը հայդուկի մշտական ուղեկիցներն էին, նա ամեն պահի կարող էր կնքել իր մահկանացուն: Հայդուկը մահվան դեմ չէ, որ մաքառում էր: Նրա կռիվը հայրենիքը բռնադատողների դեմ էր: Նրա օրերն անցնում էին ձյան ու բքի մեջ, անձրևի ու կարկուտի տակ: Նա հիշում էր միայն կուշտ օրերը, քանզի դրանք հատուկենտ էին: Նրա կյանքը նաև մաքառում էր քաղցի ու ծարավի դեմ: Նրա քունը մղձավանջ էր, մշտապես՝ ականջը ձայնի: Նույնիսկ քնած ժամանակ պարտավոր էր պատրաստ լինել, առանց ակնթարթ կորցնելու կռվի մեջ մտնել, վտանգի րոպեին մագլցել լեռն ի վեր, գրավել նոր դիրքեր և անպայման՝ ամենաբարձր կետերում: Մի ձեռքով կռվում էր, մյուսով ճանկռում հողը և ծածկում սպանված ընկերոջ դիակը: Նա ոգալու, կորուստը ողբալու ժամանակ չուներ: Մշտապես զգույշ, խոսելու, նույնիսկ ծառերին, տերևներին դիպչելու, հազալու և փռշտալու իրավունքից զուրկ: Կորովի ու անվախ մարդը հարկադրված էր թաքնվել բոլորից՝ հայից ու քրդից, կենդանիներից, որովհետև այդ ամենը ուշադրություն էին գրավում: Տեղափոխությունների ժամանակ, անկախ դրանց տևողությունից, 10-15 րոպեից ավելի հանգստանալ չէր կարող: Միշտ պետք է լիներ մարտական վիճակում, որպեսզի առաջինն ինքը հարձակվեր: Պաշտպանությունը հայդուկի համար մահ էր: Ցուրաքանչյուր հայդուկ պետք է կարողանար կռվել առնվազն 10-15 թշնամու դեմ: Եվ այսպես ամեն օր, ամեն ժամ, տասնյակ տարիներ, այնքան, քանի դեռ չնչում էր:*

*Սկզբում հայդուկ գրվելու հատուկ ծիսակատարություն գոյություն չուներ: Ժամանակի ընթացքում ձևավորվեց շատ պարզ, բայց դաժան ծիսակատարություն: Հայդուկ դառնալու ցանկություն հայտնողին նախ հանձնարարում էին օժանդակ աշխատանքներ ու ստուգում, ապա մարտական հանձնարարություններ տալիս ու կրկին ստուգում, որից հետո մի քանի հայդուկ պետք է նրան երաշխավորեին՝ իրենց վրա վերցնելով հայցվորի վարքագծի պատասխանատվությունը: Այս ամենից հետո աղ ու հացի կողքին դնում էին հրացան ու դաշույն, որոնց վրա հայդուկ ընդունվողը երդում էր տալիս:*

*Հայդուկների մեծամասնությունը սերված էր աղքատ գյուղացիներից, ովքեր հարստահարությունների հետևանքով հեռացել էին տունուտեղից: «Հայդուկը,— գրում է Րաֆֆին,— բնական արտահայտությունն է բռնակալության լծի տակ ճնշված, հարստահարությունից տանջված և յուր մարդկային բոլոր իրավունքները կորցրած ժողովրդի կյանքի: Հայդուկը ստրուկի բողոքն է իշխողի բարբարոսության դեմ: Նա թողնում է ընտանեկան օջախը, որ յուր համար պղծված էր, նա թողնում է յուր հասարակությունը, առանձնանում է մթին անտառների խորքում, սարերի անմատչելի փապարներում, և այնտեղից որպես մի փոքրիկ թագավոր, լեռների ազատ որդին, սկսում է տիրել ամայության վրա... Հայդուկի գործունեությունը հեղափոխական բնավորություն է ստանում..., որովհետև նա իր սրով պաշտպան է հանդիսանում նեղյալին և ուխտում է*

*անգթաբար պատժել անիրավությունը: Իր սիրելի հայրենիքը ազատված տեսնել տիրանի ճնշումից, իր արյունակից եղբայրներին փրկել բարբարոսի ձեռքից— ահա դրանք են նրա ցանկությունները»*[232]:

*Եվ պատահական չէ, որ ոչ թե քաղաքական կուսակցություններից, այլ ժողովրդական վրիժառուներից ծնվեց այն անձը, ով էպոսի հերոսին վայել առաքինություններով մարմնավորեց սեփական ժողովրդի ձգտումներն ու երազանքը: «Անդրանիկի ահագին ժողովրդականության աղբյուրը,— գրում է Ավ. Ահարոնյանը,— նրա եզակի արիության և բարձր անձնազոհության մեջ է, որ կախարդանքն է ամբոխների...»: Հայդուկների «փայլուն կաճառը Անդրանիկին բարձրացրեց մինչև աստղեր: Մի հատիկ գաղափարի մեջ՝ զանգված անվեհեր ու անձնուրաց ռազմիկների, մեկը մեկից փորձված, մեկը մեկից հրայրքոտ, որ Անդրանիկի փառքի պատվանդանն են կերտել, կրտսեր եղբոր սիրով ու հավատարմությամբ, առանց նախանձի, առանց խեթ հայացքի, ասես սեփական բախտը կերտեին... Զուլումի տակ կորաքամակ ազգը երջանիկ էր, որ Մեկը կար լեռներում... (Անդրանիկին) սիրում էր Սասունը նրա արիության, նրա անընկճելի ոգու, նրա ռազմիկ հպարտության, նրա բարձր ճակատ տղամարդկության համար»*[233]: *Անդրանիկը տվյալ դեպքում հայդուկի հավաքական կերպար է: Նույն բնութագրությունն անպայման կարելի է տալ նաև Արաբոյին, Աղբյուր Սերոբին, Գևորգին և ուրիշներին:*

*Հայդուկության պայքարի գլխավոր ուղղություններն ազգային ճնշումներն էին, սակայն այն զերծ չէր նաև դասակարգային հնչեղությունից: Գյուղացին էր համալրում հայդուկների շարքերը, գյուղացին էր զինում հայդուկին, կերակրում, անհրաժեշտ տեղեկատվություն հայթայթում, հայդուկներին պատսպարում և, հարկ եղած դեպքում, նրանց կողքին կռվում: Գյուղերում գործող ինքնապաշտպանական խմբերը հայդուկների պահեստային ուժերն էին և ոչ քիչ դեպքերում վճռական դեր էին խաղում կռիվներում: Հայդուկային շարժումն իր մեջ միավորում էր գյուղացիության ձգտումը՝ ապահովել հայի կյանքի անվտանգությունը, վերացնել ճնշումները: Դրա համար էր վայելում լայն զանգվածների համակրանքն ու սերը:*

*Հայդուկային շարժման ձևավորումը ժամանակի առումով համընկավ հայության համազգային գիտակցության ձևավորման, Մայր Հայաստան գաղափարի՝ ազգային միասնության համար պայքարի դրոշ դառնալուն, հոգևոր հայրենիքի գաղափարի ձևավորման հետ:*

* * *

*1892թ. "Daily News"-ի թղթակից Ֆիցջերալդը «Հնչակ»-ի խմբագրության առաջարկում է թուրքաց լեզվով երկու թռուցիկ բազմացնել ու տարածել կայսրությունում: Նազարբեկյան ամուսինները համաձայնվում են: 1893թ. հունվարի առաջին ուրբաթ օրը Կեսարիայում ու սանջակի մյուս բնակավայրերում զինչերապահ զորքերը տեսնում են, որ հրապարակներում, կառավարական տների ու խանութների պատերին փակցված են «Հայոտարարություններ» (յաֆթա): Դրանցում մասնավորապես ասվում էր. «Օսմանցիներ: Հասել են Աբդուլ Համիդ բռնակալի թագավորության վերջին օրերը, որն անպատվել է իսլամության վարկը և աղտոտել Օսմանի սուրբ գահը: Այդ բռնակալը հափշտակել է կայսրությունը և ավերել մեր սիրած հայրենիքը և իշխանության գլխին մնալու համար մեր ամենահայրենասերների արյունն է հոսեցնում»*[234]:

---

[232] Րաֆֆի *Ե՛ժ*, հ.Գ, Երևան, 1964, էջ 323:
[233] «*Նորք*», 1990, թիվ 2, էջ 13, 15, 18:
[234] «*Հնչակ*», 1892, թիվ 9:

Հետաքննելու համար Կ. Պոլսից գալիս են երկու փաշաներ: Նրանց առաջին գործը լինում է Կեսարիայից ու մերձակա շրջաններից չուրջ 500 երևելի հայի ձերբակալությունը: Ձերբակալվածներից մեկը, խոշտանգումներին չդիմանալով, թվում է «քաղաքի հեղափոխական համարվող հայերի անունները»: Երբ սկսում են ձերբակալել այդ «հեղափոխականներին», ժողովուրդն ըմբոստանում է: Իշխանությունները փորձում են ըմբոստությունը խեղդել՝ թուրք ամբոխին դրդռելով հայերի դեմ: Ընդհարումների ժամանակ ձերբակալվում է նաև հայդուկապետ Անտոն Ռիշտունին, որն իր համարձակ պատասխաններով «չփոթեցնում է քննիչներին»: Նա հայտարարում է, որ իրենք և իրենց թիկունք կանգնած «բազմաթիվ հրոսակախմբեր ճգտում են, որ աշխատավորների համար նպաստավոր օրենքներ հրապարակվեն»: Դիմելով Կեսարիայի մութեսարիֆին՝ ասում է. «Իսկ դու, որ այսօր իբրև կառավարության շահերի ջատագով, ինձ հարցեր ես տալիս, ինքդ մեկը չե՞ս կառավարությանը կողոպտողներից: Այդ դու չէի՞ր, որ ինձնից 800 միջիդ առնելով, հրացանի 800 փամփուշտ տվեցիր»:[235]

«Հայտարարությունների» առիթով ձերբակալված հայերից մեկը հարցաքննության ժամանակ ասաց. «Ես կլռեմ, բայց մեր թիկունքում հարյուրավոր սպառազեն հրոսակներ կան, որոնց լռեցնելն այնքան էլ հեշտ չի լինելու: Նրանք ձեզ կստիպեն լսել մեր պահանջները ու կատարել»[236]: Երբ թուրքերը նորից հարձակվեցին հայկական թաղերի վրա, հայերը հերոսական դիմադրություն ցույց տվեցին, եղան զոհեր: Կեսարիայում իշխանությունների կողմից զինված թուրք ամբոխը «հայտարարությունների» առիթով հարձակվեց հայերի վրա: Գրոհի տարան մոտ 7000 մարդ: Հայերը քաջաբար դիմադրեցին: Երկու կողմից էլ տասնյակ զոհեր եղան: Այդ ընթացքում թուրք խուժանը կողոպտում ու հրդեհում էր հայերի տները, հաշվեհարդարի ենթարկում թե՛ հասարակական դրդապատճառներով և թե՛ անձնական վրեժխնդրության մղումներով ձերբակալվածներին: «Հայերից ում հետ որ թուրքերը խնդիր կամ հաշիվ ունեին, բախչիչ կամ կաշառք էին պահանջում, հակառակ դեպքում սպառնում էին, իբրև «հեղափոխական» կառավարությանը մատնել... ոչ մի հայ չէր համարձակվում կառավարությանը դիմել բողոքով»:[237]

Կեսարիայի թուրքերը միանում են Հաճլար գյուղի թուրքերին ու մտնում քաղաքին մերձակա այգիները: Նախ ջարդում ու ոչնչացնում են բուսականությունը, ապա կրակի են տալիս տները: Թալանում են հայերի բնակարաններն ու խանութները, չուկան, կողոպտում կրպակները, հայերի վրա հարձակվելով, ծեծում են, խփում, կոտորում: Էֆքեր գյուղում հայ հարսները լկվեցին, կույսերը պղծվեցին, տղամարդիկ ծեծվեցին ու սպանվեցին:

Իրականում «հայտարարությունների» կազմողները հնչակյանները չէին, այլ Լոնդոնում գործող Իսլամի կոմիտեն, որը անգլիացի լրագրողի միջոցով հայերին խնդրել էր դրանք խմբագրել ու տարածել, որովհետև տեղական կազմակերպություններ չունեին: Չնայած իշխանություններն այդ մասին քաջատեղյակ էին, «խոհեմ համարեցին հետապնդել հայերին», որպեսզի դա ևս օգտագործեին հայերի հանդեպ մահմեդական հետամնաց խավերի ատելությունն ավելի բորբոքելու:

...«Պետք է գիտենալ,— գրում է մի անհայտ հեղինակ 1893-ին,— որ այս ամենը կառավարության անուղղակի և մերթ ուղղակի թելադրանքով ու հրահանգով գործադրվեցան: Կեսարիայի բանտում թուրք գյուղացիները պարզամտորեն հայերին պատմում էին. թե իրենց իմամներն ու խոջաները վերջին մի քանի տարիներին ինչ էին քարոզում մզկիթներում, այն է՝ բոլոր միջոցներով պաշտպանել սուրբ կրոնը և Մարգարեի հետնորդներին հանել հայերի դեմ»[238]:

---

[235] «Մուրճ», 1895, թիվ 7:
[236] «Հնչակ», 1893, թիվ 3:
[237] «Մուրճ» 1895, թիվ 7:
[238] Նույն տեղում:

Գաղաթիայի բանտ նետվածներից մեկը գրում է, որ այստեղ էին պահվում 500 «քաղաքական հանցագործներ», որոնց ամենազազրելի խոշտանգումների էին ենթարկում «խոստովանություն պոկելու համար... չարչարանք, անարգանք, ծեծ, լկանք, սոված ու ծարավ թողնել... մկների կրծած հացի փշրանքներ՝ կերակուրի փոխարեն, կեղտոտ սափորներով գարշահոտ ջուր... ժանգոտած ծանր շղթաներ, փայտե և երկաթե ձեռնակապեր...

Մերթ ժամը 3-ին, մերթ կեսգիշերին և մերթ առավոտյան դեմ բանտի բոլոր նկուղներից լսվում էին լալախառն ու հեղձամղձուկ հեկեկոցներ և երբեմն էլ աղիողորմ աղաղակներ՝ «Ջգիտեմ, չեմ տեսել... մեռա՛» և այլն, որոնց խառնվում էին թուրք բանտարկյալների սոսկալի գոռումն ու գոչյունը, բոլոր կողմերից երգվող այլազան և սրիկայական թուրքիներն ու մանիները՝ կառավարության հանձնարարությամբ, որպեսզի չլսվեին փայտի հարվածների տակ կամ տաքացրած ու չիկացրած չշերի առջև կամ ճյան կույտերի վրա լրիվ մերկ ծնրադիր հայ պատանիների ու երիտասարդների ճիչն ու վայնասունը: Մեկը փայտի հարվածների տակ բղավում էր «Մեռա՛», մյուսը ճյան կույտերի վրա գլխին թափված սառը ջրից սարսուռ զգալով գոչում էր «Սառեցի՛», քիչ այն կողմ մի երրորդը հրաշեկ ու տաքացրած շշերից ճչում էր ու աղիողորմ ճայնով ասում՝ «Այրվեցի, բավ է, հրեշներ... մեռցրեք, որ ազատվեմ»... այսպես չատերը տանջվեցին... սակայն գործի դրվեցին նաև այնպիսի լիրբ միջոցներ թե պատանիների և թե չափահասների վրա, որոնց մասին նույնիսկ լսելիս՝ մարդ անպայման սարսափում է...»[239]:

«Մուրճ»-ի թղթակիցը նույնպես մանրամասն նկարագրում է, թե բանտ նետված հայերից յուրաքանչյուրի հանդեպ ինչպիսի դաժանություններ են գործադրվել: Մեկին, 48 ժամ քաղցած ու ծարավ թողնելուց հետո, 6 օր խոնավ գետնին մերկ պառկեցրած պահեցին ու գավազանով ծեծեցին, մյուսին ձմռան ցրտին նստեցնում են ցեխի մեջ ու գլխին սառը ջուր լցնում, բեղը փետրում, գլխիվայր կախում, ծնկների մեջ մեծ քարեր դնում և ծնրադրել հարկադրում, հետանցքը քարեր մտցնում, տաքացած շիշ անցկացնում միզանոթի մեջ, մարմինը երկաթով այրում, բանտարկյալներին հարկադրում են միմյանց բռնաբարել, վզներին պարան են կապում ու գետնի վրայով քարշ տալիս, 10-15 օր ածխի ամբարում քաղցած պահում, գիշերը մի քանի անգամ բռնաբարում և այլն: Մի քանիսը խոշտանգումներից մեռան, 200 հոգու տեղափոխեցին Գաղաթիա և 17-ին մահվան դատապարտեցին[240]: Ջերբակալություններին անդրադարձավ նաև «Արձագանք»-ը՝ տպագրելով ալաշկերտցի 35 հայ բանտարկյալների ցուցակը, որոնցից բանտում չորսը մահացել էին և մեկը իսլամացել[241]: Հասան Կալեի ու Կարինի բանտերում կար 157, իսկ Շապին Կարահիսարի բանտում՝ 30 քաղաքական բանտարկյալ:

Ջերբակալված հայերի մեծ մասն իրեն աննկուն էր պահում: Քերովբե Փափազյանը դատարանում հայտարարեց. «Կաշառք տվողը թուրքն է, վայրագություն անողը թուրքն է, խփող, սպանողը թուրքն է, թալանող, կողոպտողը թուրքն է, անասելի սրիկայություններ, բռնաբարություններ կատարողը թուրքն է: Ձուլյ տվեք մի քրիստոնյա, որ նման հանցագործություններ կատարած լինի: Մեր պահանջները պարզ են՝ կաշառակերության ջնջում, առևանգումների, գողությունների, ավազակությունների, մարդասպանությունների, բռնաբարությունների վերացում, արդարադատ դատարաններ»[242]:

Մի ուրիշ դատապարտյալ հայտարարեց. «Անիրավության դեմ բողոքողները չեն հանցագործ, այլ հանցագործությունները առաջացնողները: Վճռել ենք մինչև մահ կռվել՝ իրագործելու համար մեր պահանջները, որոնք միաժամանակ թուրք աշխատավորության

---

[239] Նույն տեղում:
[240] Նույն տեղում:
[241] «Արձագանք», 1895, թիվ 70:
[242] Ջոլֆայան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 227:

պահանջներն են: Մենք ուզում ենք, որպեսզի մշակվեն ժողովրդի համար նպաստավոր օրենքներ, որպեսզի նա ազատվի բռնության ճիրաններից ու ձեռք բերի քաղաքական ազատ կյանքի պայմաններ...»[243]:

Էնկյուրիում ոստիկանությունը պաշարում է հայոց թաղերը: 15 օր հայերը չուկա չեն իջնում: Կուսակալը հայերին անվտանգություն է խոստանում: Հայերը բացում են խանութները: Թուրքերը հարձակվում են նրանց վրա, փողոցներում մեծ թվով հայեր են սպանվում, ձերբակալվում է 850 մարդ, բանտում խոշտանգումներից մեռնում է 13-ը: Պահանջում են հանձնել Ժիրայրին: Խժդժություններին վերջ դնելու համար վերջինս կամավոր հանձնվում է: 16 օր տևած դատավարության ընթացքում նա փայլուն պաշտպանում է իր հայացքները: 1894թ. մարտի 24-ին Յոզղաթի Սահաթխանե հրապարակում Ժիրայրը կախաղանի առաջ ոգեչունչ ճառ է արտասանում, ապա պարանը վիզն անցկացնում, աթոռը ոտներով դեն հրում ու ճոճվում օդում:

Ժիրայրը (Մարտիրոս Պոյաճյան)՝ Մեծ Մուրադի եղբայրը, հայդուկային չարժման հիմնադիրներից էր: Հոգևորականի տարազ հագած՝ գյուղից գյուղ էր անցնում, ազատագրական գաղափարներ քարոզում: Նրան հաջողվեց միավորել չրջանի հայ ու թուրք գյուղացիներին և միացյալ ուժերով հակահարված տալ իշխանությունների ոտնձգություններին: Վերջիններին մեծ անհանգստություն պատճառեց նրա գործունեությունը Յոզղաթում: Ժիրայրին ձեռք ձգելու համար Յոզղաթ է ուղարկվում Աբեդինը, որը մահմեդական բնակչությանը հանում է հայերի դեմ: Մզկիթներում մոլլաները բացեիբաց կոչ էին անում կոտորել հայերին:

Արաբկիրում գործում էր Գաբրիել Կաֆյանի (Շմավոնի) հայդուկային խումբը: Նա Գում Գափուի ցույցի մասնակիցներից էր: Ձերբակալությունից կարողանում է խուսա տալ, հեռանալ Կ. Պոլսից, անցնել սկզբում Սեբաստիա, իսկ ապա՝ Արաբկիր և ստեղծել հայդուկային խումբ, որը Փոքր Հայքում մեծ համբավ է ձեռք բերում: Նա կազմակերպում է նաև զինամթերքի արտադրություն, հարաբերություններ հաստատում Դերսիմի քրդերի հետ: Սակայն իշխանություններին հաջողվում է Շմավոնին ձեռք գցել: Նա բանտում երկար չի մնում՝ փախչում է, անցնում Եվդոկիա, որտեղ նույնպես հայդուկային խումբ է կազմում ու ֆիդայական կռիվներ մղում:

Մարզվանի հայդուկության ղեկավարը Լևոնն էր՝ Բարսեղ Զաքարյանը, որը նույնպես չրջում էր հայաբնակ գյուղերն ու զինվելու, պայքարի կոչ անում: 1893թ. սեպտեմբերի 8-ին Մարզվանում նրան խոշտանգելով՝ սպանեցին: 1893թ. սեպտեմբերի 12-ին 150 զինվոր, մեծ թվով չերքեզներ ու գյուրջիներ՝ մոտ 500 հոգի, չրջապատում են Մարզվանի Ղափլան և Ճամիի-աթիկ թաղերը: Յոթ հայդուկները չրջանային պաշտպանության են կանգնում: Հանձնվելու թուրքերի պահանջին նրանք պատասխանում են. «Միայն մեր դիակները ձեր ձեռքը կընկնեն»: Հայերը կռվեցին աներևակայելի քաջությամբ, թշնամուն զոհեր պատճառեցին, և նրանցից երեքին հաջողվեց ճեղքել չրջափակումն ու հեռանալ:

Կեսարիայի կողմերում գործում էր նաև Ճանոյի հայդուկային խումբը: Ոստիկանները երեք օր չարունակ հետապնդում են հինգ հոգանոց այս խմբին: Հայդուկները կռվելով հասնում են Ալիս գետի Շաուլք-Քյորքյուսիվ կամրջին, որտեղ վեց ժամ ճակատամարտ են տալիս 200 ոստիկանների դեմ: Երեկոյան վերջիններին օգնության է գալիս 100 չերքեզ: Ճանոն զոհվում է:

1895թ. օգոստոսին Քեմախի կիրճում Քեռու հայդուկային խումբը հարձակվում է կայմակամի ու նրան ուղեկցող չորս ոստիկանների վրա: Պատճառն այն էր, որ հուլիսի 31-ին Երզնկայում թուրքը կացինով սպանել էր մի հայ երիտասարդի: Բողոքում են իշխանություններին, սակայն մարդասպանն ազատ է արձակվում, իսկ բողոքողը՝ բանտ նետվում: Հայդուկները ոստիկաններին ոչնչացնում են, զենքերը վերցնում և անցնում

[243] «Արձագանք», 1895, թիվ 70:

Սեպուհ լեռ ու ամրանում քարայրում: Նրանց դեմ ռազմական նշանակալից ուժեր են հանվում, բերվում են թնդանոթներ: Սակայն հայդուկներին հաջողվում է թշնամուն մեծ զոհեր պատճառելով դուրս գալ շրջափակումից ու անհետանալ:

Փոքր Հայքի և Կիլիկիայի հայդուկապետերից ամենաճանաչվածը Հովհաննես Մինասյանն էր՝ Մինաս Օղլուն: Նա ծնունդով Զարսամպայից էր, որտեղ իշխանությունները հետևողական աշխատանք էին տանում հայերին դուրս մղելու և նրանց հողերի վրա մուհաջիրներ բնակեցնելու ուղղությամբ: Իշխանությունների անթաքույց հանդուրժողականությունը մուհաջիրներին սանձարձակ էր դարձրել: Նրանց ավազակախմբերը սարսափ էին տարածում Զարսամպայի և Սամսոնի հայության շրջանում: Իշխանությունները գանգատներն անարձագանք էին թողնում, ինչն էլ հայերին հարկադրեց ինքնապաշտպանության նպատակով զինվել: Այդ պայքարի կենտրոն դարձավ Մինասի հայրենի՝ Գաբու Գայթա գյուղը: Մինասը իշխանությունների խնդրանքով երկու տարի հաջող պայքար էր մղել ավազակության դեմ, սակայն, նկատի ունենալով, որ հայերի հանդեպ մուհաջիրների բռնությունների հետևում կանգնած էին նույն այդ իշխանությունները, հրաժարվում է պաշտոնից և իր եղբայրների հետ անցնում ընդհատակյա պայքարի: Նա նոր խումբ է ստեղծում և կռիվը շարունակում հայդուկային եղանակներով:

Կայսրության ոստիկանության պետ Նազըմը իր հուշերում գրել է.

«Սամսոնի ենթակա Զարսամպա կազայի Գաբու Գայթա գյուղում Մինաս անունով մի ոճրագործ հայտնվեց: Նա ուներ 300 ֆիդայի: Կարահիսարի, Թոկատի և Մարզվանի միջև թուչուն չէր թռչում...

Բոլոր միջոցներին դիմեցի Մինասին ձերբակալելու համար, որովհետև արևելյան նահանգների հայերի տրամադրությունը նորից փոխվել էր, և առիթ էին փնտրում շարժումն ընդարձակելու... Մինաս Օղլուն մարտահրավեր էր կարդում, արշավում էր գյուղերը, դրամ էր հավաքում և նոր ֆիդայիներով հզորանում: Նա 150 հոգով հարձակվում է Վեզի պահականոցի 200 ժանդարմների վրա, չեթեներից 88 մարդ սպանվում է»[244]:

Կառավարական ուժերի և Մինասի խմբի միջև վճռական բախումը տեղի է ունենում Դեյիրմեն Դերեսիում: Արդյունքում թուրքական մեծաթիվ ուժերը նահանջում են, իսկ Մինասի խումբը քաշվում է Դավչան Դաղի բարձունքները: Մինասը խմբի անդամներին ազատ է արձակում ձմեռն իրենց օջախներում անցկացնելու համար, իսկ ինքը հաստատվում է Մատիչ հայկական գյուղում: Տունը, որտեղ նա ապաստանել էր, հանկարծակի շրջապատվում է թուրքական զորքերով: Կատաղի կռվում Մինասը ծանր վիրավորվում է. նրան գերի են վերցնում:

Սամսոնի բանտում նա հանդիպում է մորը, կնոջն ու երեք երեխաներին, որոնց թուրքերը բանտ էին նետել: Մինասը կտրում է պատուհանի երկաթե ճաղերն ու փախչում: Նրա փախուստը խանդավառում է հայ գյուղացիությանը, մի քանի օրում Մինասի խմբում արդեն կար շուրջ 200 մարդ: Նա հայդուկներին ուղարկում է հայկական գյուղերը՝ հանձնարարությամբ պատժել հարկահավաքներին, հայերի մեջ արթնացնել ինքնապաշտպանության ոգի, օգնել նրանց զինվելու: Իշխանություններն ուժեղացնում են հետապնդումները, Սամսոնի հայկական գյուղերում ջարդեր կազմակերպում: Մինասի 30 հոգանոց խումբը զենք ու զրահով օրը ցերեկով հանդիսավորաբար Սամսոն է մտնում՝ պաշտոնեությանն ահաբեկելու և ջարդերի առաջն առնելու համար: Կ. Գոլիքը Մինասին ներում է խոստանում, եթե նա զենքերը վար դներ: Մինասը համաձայնում է, սակայն նրա մնալը հայրենի գյուղում իշխանություններին տագնապ էր ներարկում և նրան առաջարկում են ժամանակավորապես անցնել արտասահման: Նա համաձայնում է, սակայն այլևս նրան թույլ չեն տալիս վերադառնալ Թուրքիա:

---

[244] Կիտուր Ա., Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության, էջ 108:

*Մինասը մեծ հեղինակություն ուներ ոչ միայն հայերի, այլև հույն, քուրդ և թուրք գյուղացիության շրջանում: Նրա զինված խմբերի կազմում կային նաև այդ ժողովուրդների ներկայացուցիչներ:*

*1891թ. հարձակման է ենթարկվում Մնձուրիի Փոքր Արմտան գյուղը, 12 հոգի ձերբակալվում ու տարվում է Երզնկա, մի խումբ երիտասարդների իրար են կապում, դեմքերին մեղր քսում ու մեջքի վրա պառկեցնում արևի տակ, որպեսզի մեղուները բզկտեն: Այդ ժամանակ Փոքր Հայքում հայդուկների թիվն անցնում էր 1000-ից: Հայդուկային խմբերի գործունեությունը համակարգելու համար Սեպուհ լեռան վրա տեղի է ունենում դրանց ղեկավարների ժողով, որին մասնակցում էր նաև 18 տարեկան Անդրանիկը: Ժողովի ավարտից հետո Գալուստ Արխանյանի խումբը չախչախիչ հարված է հասցնում քրդական հրոսակներին: Որոշ ժամանակ անց իշխանություններին հաջողվում է խաբեությամբ Արխանյանին ձեռք ձգել և դատել: Նա մեռնում է բանտում: «Դրոշակ»-ի 1893թ. նոյեմբերի համարում կարդում ենք. «Դեռ ամեռը կառավարությունը զորք պատրաստեց Դերսիմի վրա հանելու ոչ թե քրդերի, այլ Արխանյանի դեմ..., սակայն չստացվեց և կորագլուխ ետ դարձավ... Դերսիմից Արմտան վերադառնալիս Գալուստը պատահմամբ համդիպում է կառավարության ուղարկած զորքերին: Արխանյանի խումբը մտնում է մերձակա քարայրը: Թուրքերն այն շրջապատում են: Քարայրում 8 հոգի էին, իսկ շրջապատողները՝ 600-700 հոգի: Կռիվը տևում է երեք ժամ: Հայդուկները երեք անգամ փորձում են ճեղքել օղակը, բայց չի հաջողվում: Կայմակամը Արխանյանի մորը, կնոջն ու գյուղի քահանային ուղարկում է Գալուստին համոզելու, որ հանձնվի: Այլ ելք չկար: Հանձնվում է»:*

*"Daily News"-ը 1895թ. ապրիլի 25-ին գրեց. «1892-ի գարնանը Եվմեր Փեքլիվան անունով թուրքին՝ Բոյուկ-Արմտան գյուղացի, խեղդված և մասամբ այրված գտան իր անկողնում: Ո՞վ էր նրան սպանողը: Հարկավ, ամենահասկածելին այն հայն էր, որը Փեքլիվանի կնոջ հետ հարաբերություններ էր ունեցել և սպանության գիշերը փախել էր անհայտ ուղղությամբ: Սակայն այդ պարզ բացատրությունն ամենևին էլ չէր հարմարվում թուրք պաշտոնյաների դիտավորությանը: Նրանք սկսեցին տարածել, թե ե. Փեքլիվանը կառավարության գաղտնի լրտեսն էր, որին հանձնարարված էր հսկել հատկապես հայ «կոմիտեին»... իսկույն ձերբակալեցին 50 արմտանցի հայ... և չղթայակապ տարան Երզնկայի բանտ: Նրանց թվում էր... Վարդան եպիսկոպոսը՝ ավելի քան 80-ամյա ծերունի, իր փոքրիկ թոռան հետ, որը մեռավ ճանապարհին»:*

*Հայդուկների դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով թուրքական 400 հոգանոց մի ջոկատ է մտնում Աղբակի Բարդուղիմեոսի վանքը և միաբանությանը դուրս քշում ու ամրանում այնտեղ: Վանքի մերձակայքում գործում էր հայդուկային խումբ: 1895թ. հոկտեմբերին 1500 քուրդ հարձակվում է այդ խմբի վրա: Շուտով օգնության է գալիս նաև զորքը: 60 հայդուկի կռիվը թուրքական ուժերի դեմ տևում է երկու օր: Երկրորդ օրվա գիշերը հայդուկները ճեղքում են շրջափակումն ու ամրանում Մամադալանա Կռեր քարաբլուրների վրա: Սակայն թշնամու գերակշիռ ուժերի ճնշման տակ նահանջում են դեպի Հալի Ղշլաղ գյուղը: Քրդերը պահանջում են հանձնվել: Հայդուկները համաձայնվում են պայմանով, որ իրենց մոտ գնան 20 ցեղապետեր: Ցեղապետերը մոտենում են: Հայդուկները նրանց ոչնչացնում են ու բարձրանում Աղթա-դաղ:*

*Կ. Պոլիսը տեղական իշխանություններից պահանջում էր խստացնել հայերի հանդեպ քաղաքականությունը: "Daily Telegraph"-ը պատմում է մի դեպքի մասին, որի հետևանքով բանտ ընկավ 25 հայ: Խնուսում այգիների հարկը բարձրացվում է 25 %-ով: Հայերը, ճիշտ է, դժգոհում են, բայց հարկերը վճարում են: Սակայն այգիների հարկը նորից են բարձրացնում, այս անգամ 1000%-ով: 25 խնուսցի գնում են կայմակամի մոտ՝ խնդրելու, որ հարկի նոր բարձրացումը կազմի ոչ թե 1000, այլ 250 տոկոս: Մինչ նրանք կայմակամին խնդրում էին, վերջինիս նշանով թաքնված ոստիկանները ներս են խուժում, բոլորին ձերբակալում ու բանտ նետում:*

Այսպիսով, 19-րդ դարի երկրորդ կեսին, մասնավորապես 80-90 ական թվականներին հայ-քուրդ-թուրք առճակատումները դադարել էին միակողմանի բնույթ ունենալուց: Դրանք ավելի ու ավելի կրում էին երկկողմանի բախումների բնույթ: «Ես և գուցե իմ բոլոր համախոհներն ընկնենք, բայց անկումը ճանապարհ կը բացի մեր հետնորդների առջև: Նրանք կանցնեն մեր դիակների վրայով» (Րաֆֆի):

1889թ. հունիսի 4-ին Վանի մերձակայքում Հ. Ագրիպասյանը, Վ. Գոլոչյանը և Կ. Գյուլաղազյանը հանդիպում են 10 զափթիեների: Սկսվում է կռիվ. մի քանի զափթիե սպանվում է: Սպանվում է նաև Հ. Ագրիպասյանը[245]: Սասունի հայերն ու եզդիները խռովություն բարձրացրին տեղի թուրք պաշտոնատարների դեմ: Կառավարությունը նրանց դեմ հանեց զորք ու թնդանոթներ: Թուրքերը հաղթեցին, սակայն նաև մեծ կորուստներ տվեցին[246]: Մուսայի եղբայր Զազոն քաջալերված եղբոր անպատիժ մնալուց մտնում է մի տուն՝ աղջիկ առևանգելու դիտավորությամբ: Գյուղացիները ոտի են կանգնում: Սկսվում է կռիվ: Սպանվում է 12 քուրդ, այդ թվում, նաև Զազոն[247]: Զարչամպայի բնակիչները՝ հայ, թուրք, չերքեզ, հույն, հրաժարվում են հարկ վճարելուց: Նրանցից մի քանիսին ձերբակալում են: Այդ մասին իմանալով՝ քաղաքի ու շրջակա գյուղերի բնակիչները ոտի են կանգնում և 2000-3000 հոգով հարձակվում են բանտի վրա: Նրանք հարկադրում են, որ բոլոր բանտարկյալներն ազատ արձակվեն, ապա հանրահավաք են անցկացնում կապալառուների և, ընդհանրապես, կառավարության քաղաքականության դեմ: Երզնկայում ևս շատ հայեր հրաժարվում էին հարկ վճարել, որպեսզի արտահայտեին իրենց դժգոհությունը հարկային քաղաքականության դեմ[248]: Ալաշկերտում համիդիե մի գունդ 1892թ. սեպտեմբերի 14-ին հարձակվում է Հարություն աղայի հայդուկային խմբի վրա: Չնայած վերջիններս թվով փոքր էին ու վատ զինված, մինչև երեկո հերոսաբար մարտնչեցին: Համիդիեներին օգնության է գալիս 400-500 քուրդ, անգամ քրդուհիներն էին մասնակցում կռվին: Հայերը շրջապատվում են, սակայն հաջողվում է ճեղքել շղթան և հեռանալ[249]: 1892թ. սեպտեմբերին Շատախի Կարկառի ձորում հայ երիտասարդների մի խումբ շրջապատում է տխրահռչակ ավազակապետ Շաքիրի ջոկատը, բացի խմբապետից բոլորը ոչնչացվում են[250]:

Մուշից «Դրոշակ»-ին գրում են. «Վերջերս այստեղ-այնտեղ...սկսում են հանդես գալ անվեհեր կտրիճներ, որոնք, այլևս անկարող լինելով դիմանալ... հալածանքներին, թողնում են իրենց «խաղաղ» կյանքը և անճնատուր լինում ժողովրդի պաշտպանությանը»[251]:

Ախլանցի Սերոբը չորս ընկերներով գնում է Ջուխուր փայտ բերելու: Նրանց վրա հարձակվում են զինված քրդեր: Սկսվում է անհավասար մարտը: Հայերը մինչև վերջին չունչը մաքառում են:

1890թ. հուլիսի 27-ին Սեբաստիայում 200 թուրք հարձակվում է հայկական թաղերի վրա, սակայն փախուստի է մատնվում: Թուրքերը կոտորելու նպատակով հարձակվում են նաև Խարբերդի Եգեքի գյուղի վրա, բայց հետ են շպրտվում: Հայերը թուրքերին փախուստի են մատնում նաև Բասենի Ալի Ջեկրեք գյուղում: Նույն օրերին Սեբաստիայի մերձակայքի Երեքաչէք Ղրաղացի մոտ թուրքերը հարձակվում են հայերի վրա, սակայն վեց հոգի սպանված թողնելով՝ փախչում են[252]:

Գոլսի մերձակայքի Թեքիր Դաղ փոքրիկ քաղաքում միայն հայեր էին բնակվում: 1890-ին իշխանությունները արգելեցին տոնելու Աստվածածնի տոնը: Հայերը չենթարկ-

---

[245] «Հնչակ», 1889, թիվ 3:
[246] Նույն տեղում, թիվ 4:
[247] Նույն տեղում, 1890, թիվ 1:
[248] Նույն տեղում, թիվ 2:
[249] «Դրոշակ», 1892, թիվ 3:
[250] Նույն տեղում, 1893, թիվ 4:
[251] Նույն տեղում, 1894, թիվ 4:
[252] «Հնչակ», 1890, թիվ 5:

վեցին այդ հրամանին: Զինվորներն ու ոստիկանությունը հարձակվեցին խաղաղ բնակչության վրա: Հայերը նրանց դիմավորեցին փայտերով ու քարերով: Երկու կողմերն էլ սպանվածներ ու վիրավորներ տվեցին[253]:

Կարին–Տրապիզոն խճուղու վրա ոստիկանները ձերբակալում են երեք հայի ու տանում Տրապիզոն: Քաղաքի հայ բնակչությունը ոտի է կանգնում՝ անմեղ ձերբակալվածներին ազատ արձակելու պահանջով: Տեղի է ունենում բախում[254]:

1890թ. օգոստոսին Պարտիզակի չուկայում երկու հայ հարձակվում են իրենց վիրավորանք հասցրած կայմակամի վրա: Միջամտում են թուրք խուժանն ու ոստիկանները: Նրանց դեմ են դուրս գալիս դեպքի վայրում եղած հայերը: Տեղի է ունենում բախում. եղան զոհեր[255]: Հայերի ու թուրքերի միջև խոշոր բախում տեղի ունեցավ նաև Բայազետում: Ադաբազարի չուկայում հայերը սպանում են մի լրտեսի, որի պատճառով զորքը հարձակվում է նրանց վրա: Երկու կողմերն էլ 10-12 զոհ են տալիս[256]:

Կարին–Բայազետ ճանապարհին հայերը բախվում են 400 զինվորի հետ: Թուրքերը փախուստի են դիմում[257]: Իսկ Մարաշի մերձակայքում զեյթունցիները 67 ժամ տևած մարտում փախուստի են մատնում թուրքական բանակային գնդերի[258]: Տիվերիկի Փինկյան հայկական գյուղում քրդերը հայերի ոչխարները հափշտակելուց հետո փորձում են նաև ջարդ կազմակերպել, սակայն գյուղացիները նրանց դուրս են քշում գյուղից: Մուշ քաղաքի Սբ. Հարություն եկեղեցում պղծարարք կատարելու պատճառով Վերին Թաղի հայերի ու թուրքերի միջև կռիվ է տեղի ունենում, զոհվում է մեկ տասնյակից ավելի մարդ: 1890թ. հոկտեմբերի վերջերին չուրջ 100 քուրդ մտնում են Տարոնի Արգավանդ գյուղի նախկին տանուտեր, Մուսա բեյի կողմից 1889թ. կոտնի գյուղում այրված Օհան Փոստոյանի տունը: Վերջինիս որդի Սարգիսը կազմակերպում է տան պաշտպանությունը: Մի քանի քուրդ սպանվում են, զոհվում է նաև Սարգիսը[259]: Վանի Մարկս գյուղի Փանոյի դեզերը քրդերը հրկիզում են: Փանոն իր ընտանիքի անդամների հետ հարձակվում է քրդերի վրա և երկու հոգու սպանում է, իսկ ինքը խոշտանգումներից մեռնում է բանտում: 1892թ. նոյեմբերի սկզբներին հայկական մի զինված ջոկատ ռուս-թուրքական սահմանի վրա Ծոնջալու գյուղի մոտ կռվի մեջ է մտնում քրդերի հետ ու ոչնչացնում չուրջ 30 հոգու: Աղմուկի վրա հավաքվում են մեծ թվով քրդեր և չրջապատում կիրճում գտնվող հայ ինը խիզախներին, որոնք այլևս փամփուշտ չունեին[260]:

Արաքոյի զինակիցներից Տերգևանցի Մխոն նոյեմբերի 10-ին թաքուն մտնում է իր տունը հրաժեշտ տալու, որովհետև հեռանալու էր Տարոնից: Սակայն անմիջապես չրջապատվում է: Մխոյին Մշո բանտ են տանում: Հաջորդ օրը 10 ոստիկանի ուղեկցությամբ նրան Բաղեշ են ուղարկում վալուն ուրախացնելու համար: Բաղեշից վերադառնալիս գիշերելու համար կանգ են առնում Ավզուտ գյուղում: Ոստիկանների հրամանատարը պատվիրում է. «Լավ հսկեցեք, չլինի թե այդ չունը փախչի» ու քնում է: Մխոյին հաջողվում է կապանքները արձակել: Նա վերցնում է ոստիկանի հրացանը, փամփուշտները կապում կրծքին և չչնջալով. «Ահա գնացի, թե կարող եք, բռնեք», հեռանում է: Մեկ ամիս չարունակ ամենուրեք նրան էին փնտրում: Մառնիկում Մխոյին նորից ձեռք են ձգում ու 50 ոստիկանի ուղեկցությամբ հասցնում են Մուշ: Քաղաքի մահմեդական բնակչությունը փողոցներն էր լցվել գյավուրին տեսնելու համար[261]:

---

253 Նույն տեղում, թիվ 6:
254 Նույն տեղում:
255 Նույն տեղում:
256 Նույն տեղում:
257 Նույն տեղում, թիվ 10:
258 Նույն տեղում:
259 Նույն տեղում, 1891, թիվ 2:
260 «Հնչակ», 1892, թիվ 2:
261 Նույն տեղում:

Արաբկիրի հասարակայնության ներկայացուցիչները նամակներ են ուղարկում պատրիարքարան և Բ. Դուռ՝ սանջակում կատարվող բռնարարքների վերաբերյալ: Երբ բողոքն անարձագանք է մնում, բոլոր հայ պաշտոնատարները հրաժարական են տալիս:

Տարոնի Գոմս գյուղ են գնում չերքեզ հարկահանները և գյուղապետից պահանջում իրենց համար ապահովել գեղեցիկ աղջիկներ, առանձին սենյակներ և մեկ ժամվա ընթացքում գանձել պարտք մնացած հարկերը: Տանուտերը մերժում է: Նրան կապում են սյունից և ծեծում են, բայց ոեսը մնում է անհողդողդ: Հայերին ծաղրելու համար հարկահավաքները ինը հայ կանանց երեսին մուր են քսում ու տանում Մուշ: Թեմի առաջնորդ Ն. Խարախանյանը կառավարչին գրում է. «Եթե չեք ուզում, որ երկու դրացի ազգերի մեջ արյան հեղեղներ հոսեն, (կանանց) հանձնեք հայոց առաջնորդարան»: Փաշան բավարարում է այդ պահանջը[262]:

Մինաս Օղլուի խմբից Բաղդասարն ու Հովհաննեսը չարունակում էին պայքարը: Ամիսներ չարունակ զորքերին չէր հաջողվում նրանց բռնել: Սակայն Մարթիլ գյուղի քահանան նրանց մատնում է: 60 քայլեր չրջապատվում են, բայց չեն հանձնվում, կռվում են վագրի նման: Բաղդասարն ու Հովհաննեսը վիրավորվում են և տարվում ոստիկանատուն, որտեղ Բաղդասարը ճառ է արտասանում, մերկացնում թուրքերի հայաջինջ քաղաքականությունը:

Ռուսաստանից վերադառնալիս Արաբոն վեց ընկերներով մտնում է Խոշգելդի գյուղը և կանգ առնում մարագում: Երդիկից մի թուղթ է ընկնում՝ «Զորս կողմը քրդեր են»: Գիշերը խումբը դուրս է գալիս ու չարունակում ճանապարհը: Հագնված էին համիդիեների տարազ: Գյոլ Առաչ գյուղի մերձակայքում մեկը գլխի է ընկնում, որ հայ են, և նրա աղմուկի վրա հավաքվում են քրդերը: Խումբը չրջապատվում է: Մարտոն, Բուլղարն ու Ավոն զոհվում են, իսկ Արաբոն ու Վարդանը կրակելով առաջանում են: Երբ Արաբոյին ու նրա ընկերներին կարինով աքսոր էին տանում, ուղերթի երկարությամբ հավաքված հայերի բազմությունը ջերմեռանդ խոսքերով ու բացականչություններով էր նրանց ճանապարհում: Ոստիկանները հայերին սպառնում էին. «Հեռացեք: Հերթը ձեզ էլ կգա»: Հետևում է պատասխան. «Հիմա տարեք, մենք նրանցից ավել չենք»[263]:

Տեղական իշխանությունների հանձնարարությամբ քրդերը հարձակվում են Սբ. Կարապետի վանքի վրա և պահանջում հրաժարվել Կվարս գյուղի վանքապատկան հողերից: Միաբանությունը կռվի մեջ է մտնում քրդերի հետ ու նրանց զոհեր պատճառելով փախուստի մատնում: Նույն օրերին արյունահեղ կռիվ է տեղի ունենում Ղզլաղալջ գյուղի հայերի և Աղքան գյուղի քրդերի միջև: Ընդհարում է տեղի ունենում նաև Բաղլու գյուղում: 1891-93ԹԹ. Տարոնի գյուղերում մի քանի տասնյակ միջադեպեր եղան հայերի և քրդերի ու ոստիկանության միջև: Ժամանակակցի խոսքերով Տարոնի չարժումները «արյունոտ կերպարանք էին ստանում», քանի որ հրապարակ էր իջել «պայքարել կամ անհետանալ» երկընտրանքը: Երզնկայում Սարգիս անունով մի հայ մտնում է թուրք մատնիչի տունը, նրան խեղդում է ու դիակը այրում: Հեծյալ ոստիկանները հետապնդում են Սարգսին ու ընկերոջը: Վերջիններս դիրք են գրավում մի մեծ քարի հետև ու կրակ բացում ոստիկանների վրա: Երկու հոգի սպանվում է: Գնդակը խոցում է նաև Սարգսին: Փամփուշտները սպառվել էին, բայց նա մահամերձ վիճակում չարունակում է մարտնչել դաշույնով: Զարչամպայի Գյուրչումլու գյուղում 1892Թ. ապրիլի 30-ին կռիվ է տեղի ունենում հայերի ու թուրքերի միջև: Պատճառը թուրքերի կողմից մի հայ կնոջ բռնաբարելն էր: Մարզվանի Թեքիր գյուղի բնակիչները զափթիեներին գյուղից վռնդում և հրաժարվում են վճարել զինվորական հարկ:

Նույն Մարզվանում մի հայ երիտասրդի են ձերբակալում և դաժան խոշտանգումների ենթարկում չարժման ղեկավարներին չմատնելու համար: Փորձում են ոսկով կաշա-

---

[262] Նույն տեղում, թիվ 3:
[263] Նույն տեղում, թիվ 6:

ռել: Նորից անարդյունք: Նորից են խոշտանգում ու կիսամեռ գցում խուցը: Երիտասարդը քնած բանտապետի դրպանից հանում է բանալիները, վերցնում թուրն ու հրացանը և փախչում: Նրան բռնելու բոլոր ջանքերը արդյունք չեն տալիս: Իսկ երբ Մարզվան է գալիս Ամասիայի կառավարիչը, այդ նույն երիտասարդը նրա կացարանի պատին փակցնում է ազդարարություն. «Կառավարական պաշտոնատարները գող ու ավազակներ են, անմեղ մարդկանց բռնելով նրանց քսակներն են դատարկում: Գողերին այլ տեղ փնտրելու հարկ չկա: Դրանք կառավարության մեջ են: Կառավարություն ասածը գիննետուն է, կանանոց, փող չինելու տեղ: Կառավարության բոլոր անդամները բացեիբաց կաշառք են ուտում: Նրանք կրթված գողեր են...»[264]: Նա 10 հոգուց խումբ է կազմում և քաշվելով Դավչան-դաղի լեռները, իշխանություններին լուր է ուղարկում, թե եկեք: Մի քանի անգամ ոստիկանական ջոկատներ են ուղարկվում նրանց բռնելու, սակայն ոստիկանները վախենում էին լեռը բարձրանալ: Հայդուկները որոշում են գիշերով քաղաք մտնել: Նրանք հարձակվում են կառավարչատան վրա: Հաջորդ օրը սկսվում են խուզարկություններ ու բռնություններ: Հայդուկները լուր են ուղարկում, թե ժողովրդին իզուր մի տանջեք, մենք այսինչ տեղում ենք, թե ուզում եք մեզ բռնել, եկեք:

Անտոն Ռչտունու ձերբակալությունից հետո Էվերիկում ստեղծվեցին հայդուկային նոր խմբեր, որոնք, «հերոսական կռիվներ մղելով կառավարության դեմ, ահ ու սարսափի էին մատնել Սեբաստիայի և Էնկյուրիի կառավարություններին»[265]:

Ամասիայում հայերը հարձակվում են բանտի վրա և ազատ արձակում բանտարկյալներին: Սեբաստիայում նրանք հարձակվում են կառավարչատան վրա, պաշտոնատարներին փախուստի մատնում: Մի քանի օր անց մեծ զորամաս է խուժում քաղաք: Հայերը կռվի մեջ են մտնում: Երեք վաշտ զորք է բերվում նաև Պոլսից: Մայրաքաղաքի պաշտոնական շրջաններում իրարանցում էր, սուլթանը հեռագրական կայանքից չէր հեռանում:

Ցոզղաթում հայերը 1894 թ. հունիսին սպանում են չարդերի կոչ անող մուֆթիին, արյունահեղ ընդհարում է տեղի ունենում: Հայերը փախուստի են մատնում նաև զորքին: Քաղաքում ռազմական դրություն է հայտարարվում: Միայն Ցոզղաթում 400, իսկ Երկրում չուրջ 4000 հայ քաղաքական բանտարկյալ կար[266]: 200 զինվոր և 500 բաշիբոզուկ հարձակվում են Օջախլու գյուղի վրա: Օգնության են հասնում Ջոկ Մարզվանի հայերն ու թուրքերին փախուստի մատնում: Սղերդի փոստատան աշխատակից Ադմոն ստանում է սուլթանի հեռագիրը հայերին կոտորելու մասին: Նա իսկույն լուր է հասցնում հայերին: Թուրքերը Ադմոյին ու նրա եղբորը որպես «ստախոսների» սպանում են, իսկ հայերին համոզում բացել խանութները: Ժամը $15^{00}$-ին հնչում է փողը, և զորքերը հարձակման են տանում ամբոխին: Սպանվեց մոտ 100 հայ: Թուրք երկու երիտասարդներ հայերին պաշտպանելու ժամանակ զոհվեցին:

Մենք աշխատել ենք հնարավորության սահմաններում առավել շատ նյութեր հավաքել արևմտահայության մեծ ու փոքր ընդվզումների վերաբերյալ և դրանք ներկայացնել ընթերցողին խնդիր ունենալով ցույց տալու, որ արևմտահայության պայքարը թուրք-քրդական վայրագությունների, հայ ազգաբնակչության հարստահարությունների, նրա մարդկային արժանապատվության ոտնահարումների, բռնությունների ու կոտրածների դեմ էր, այլ ոչ թե ապստամբություններ՝ թուրքական լծից ազատագրվելու համար: «Հայկական ապստամբությունների կամ հայերի ապստամբական դիտավորությունների» մասին պնդումները չունեին որևէ իրական հիմք: Սուլթանական վարչակարգը հայությանը դրել էր այնպիսի վիճակում, որ անհնար էր դարձրել նրա կողմից զանգվածային բնույթի որևէ կռիվ:

---

[264] «Հնչակ», 1892, թիվ 9:
[265] Նույն տեղում, 1893, թիվ 6:
[266] Նույն տեղում, թիվ 9:

Կարապետ Եզյանի խորհրդով 1890 թվին Պետերբուրգից Թիֆլիս է գալիս ուսանող Սարգիս Կուկունյանը՝ մարտական խումբ ստեղծելու և մասնակցելու արևմտահայության պայքարին: Տեղի հայերի ֆինանսական և կազմակերպչական աջակցությամբ հաջողվում է ստեղծել փայլուն մարտական ջոկատ, որը հիմնականում կազմված էր արևմտահայ երիտասարդներից: Արշավանքի մասնակից Հովսեփ Մովսիսյանը հիշում է. «Այդ օրերին եկավ Հովսեփ Արղությանը համոզելու, որ ցրենք մեր խումբը: Մենք չհամաձայնեցինք, և 1890թ. սեպտեմբերի 23-ին 110 հոգուց բաղկացած խումբը Զուրուկից Շահեոլի վրայով անցավ տաճկական սահմանը»: Նոր էին սահմանն անցել, երբ հանդիպեցին քրդերի, որոնք օգնության աղմուկ բարձրացրին: Սկսվում է կռիվը: Հայերը հետ են քաշվում սահմանի ուղղությամբ, բայց դեմ են առնում կոզակների համազարկներին: Կուկունյանը արգելում է ռուսների վրա կրակել: 60-70 հոգու հաջողվում է փախչել հեռանալ, իսկ Ս. Կուկունյանը 40 հոգու հետ գերի է հանձնվում ռուսներին: Երևանում տեղի է ունենում խմբի դատավարությունը, որը տևում է երկու տարի: 26 հոգի աքսորվում է Սախալին: 1906թ. Կուկունյանին ներում է չնորհվում, սակայն հեղափոխությանը մասնակցելու համար նա նորից բանտ է ընկնում Օրյոլում, որտեղ և մահանում է:

Կուկունյանի խումբը Երկիր անցնելու փորձ անող առաջին մարտական ջոկատն էր, որը չնայած անհաջողություն կրեց, սակայն ունեցավ մեծ ազդեցություն: Դրան հաջորդեցին բազմաթիվ նման փորձեր, որոնց մեծ մասը, սակայն, նույնպես անհաջողության մատնվեց: Հայկական այդ խմբերի դեմ համատեղ էին գործում Թուրքիայի և Ռուսաստանի համապատասխան ծառայությունները: Ռուսների նման կեցվածքի պատճառը նույնն էր. սկսած 80-ական թվականների կեսերից ցարական կառավարությունը որդեգրել էր Օսմանյան կայսրության ամբողջականությունը պաշտպանող ժանդարմի դեր, որը հանգեցրեց Թշնամական քաղաքականության հայկական շարժումների հանդեպ:

Սակայն հայերը հետ չկանգնեցին մարտական խմբեր Արևմտյան Հայաստան ուղարկելուց: Ստեղծվեցին նաև զինատար խմբեր: Առաջին այդպիսի խումբը Սալմաստում կազմակերպեց Վարդանը: Այդ գործով էր զբաղվում նաև Նիկոլ Դումանը, որի ստեղծած 60 հոգանոց խումբը Սարայի մերձակայքում հարձակման է ենթարկվում և միայն Տերոյանին է հաջողվում մի քանի հոգով հասնել Վան: Զինատար խմբերը Երկիր էին գնում հիմնականում երեք ուղերթերով՝ Երևան–Փոքր Մասիս–Սասուն, Կարս–Խնուս և Սալմաստ–Վան:

Ց. Սիբիրսկին գրում է. «Ռուսաստանից զենքը տեղափոխվում էր Բաքու կամ Թիֆլիս, այնտեղից պարսկական Սալմաստ քաղաք, այնուհետև... հրացանները տանում էին ուսերին գցած: 15-20 մարդուց բաղկացած խումբը վերցնում էր 20-30 հրացան, հազարավոր փամփուշտ... Րաֆֆու գրքերի կապոցները... Գիշերով, լեռնային կածաններով ու կիրճերով, վայրի գազանների նման թաքնվելով մարդկանց հայացքներից, ուսներին երկուական հրացան գցած, երկուական փամփշտակալ կրծքներին՝ խաչաձևած, դաշույնն ու ատրճանակը գոտիները խրած... Թափառական գայլի պես ապաստանից ապաստան էին անցնում... Վան հասցված գրեթե յուրաքանչյուր հրացան արժենում էր մի կյանք»[267]:

Արևելահայերը, չնայած ծանր կորուստներին, համառորեն չարունակեցին օգնության ձեռք մեկնել Թուրքերի կողմից կոտորվող իրենց եղբայրներին: «Քաղաքական այն ծանր պայմանները,– գրում է Բ. Կնունյանցը,– որոնցում ապրում են Թուրքիայում երեք միլիոն հայեր, բարբարոսական հետապնդումները, զանգվածային հալածանքները, Փոքր Ասիայում մի քանի անգամ կազմակերպված ջարդերը չեն կարող չհրավիրել ռուսահպատակ հայերի, մասնավորապես, մտավորականության արմատական մասի ուշադրությունը»[268]:

---

[267] «Նորք» հանդես, 1989, թիվ 12, էջ 14-15:

[268] *Второй съезд РСДРП, Протоколы*, Москва, 1959, стр 530.

Հավանաբար արևելյան բռնատիրություններում, որտեղ սոցիալականը, ազգայինն ու կրոնականը միահյուսված են, ազատագրական պայքարի զանգվածային եղանակներ առաջ բերելն ավելի քան դժվար էր և պայքարի առաջատար ձևերը հանդիսանում էին ոչ թե զանգվածային, այլ խմբակային պարտիզանական՝ ֆիդայական եղանակները: Հայդուկները վայելում էին զանգվածների և, առաջին հերթին, հայ գյուղացիության աջակցությունը: «Գյուղով... անցնում էին մի խումբ կամավորներ... Մի չքավոր այրի կին, դիմելով խմբապետին, ասաց. «Ես ոչ փող ունեմ և ոչ զենք: Ինչ ունեմ, այն եմ տալիս: Սա էլ թող լինի իմ նվերը»: Այս ասելով՝ կինը բռնեց իր միակ որդու ձեռքից և տվեց խմբապետին»: Շատ տեղերում գյուղացիները վաճառում էին եզները և զենք գնում: Կանայք զարդեղենները տալիս էին իրենց ամուսիններին և հորդորում, որ վաճառեն ու զենք ունենան: Երկու եղբայր վիճում են հայդուկ դառնալու համար: Նրանք դիմում են ծեր հորը՝ հարցը լուծելու: Մերուներին պատասխանում է. «Դուք կարող եք գնալ, ես չե՞մ կարող: Երեքիս մեջ չոփ (վիճակ) գցենք, ումը կընկնի, թող նա գնա»[269]:

Հայդուկային շարժման և ինքնապաշտպանական կռիվների ծավալման գործում հայ քաղաքական կուսակցությունները որոշակի դեր են խաղացել: Գոյապայքարը վերածվել էր արևմտահայության բոլոր խավերի կենսագործունեության: Տարբերությունները մոտեցումների մեջ էին, որոնք առաջին հերթին արտահայտվում էին հայդուկային շարժմանը քաղաքական կուսակցությունների վերաբերմունքում: Դրանք ոչ միայն տարբեր էին, այլև հակասական, ոչ քիչ դեպքերում զանգվածներին ապակողմնորոշող:

Պատմագրության մեջ ոչ քիչ դեպքերում իրար են հակադրվում հայդուկությունն ու համազգային ապստամբությունը: Աչքաթող է արվում երկու հանգամանք՝ ա) հայդուկությունը հեռու գնացող քաղաքական նպատակ չէր հետապնդում և իր խնդիրը համարում էր պայքարը բռնության, հայի պատվի ու կյանքի հանդեպ ոտնձգությունների դեմ, բ) Արևմտյան Հայաստանի բնակչության ազգային կազմը խիստ խայտաբղետ էր, և այլազգիների ծովում մեկուսացած հայկական ազգային շարժումը, առավել ևս՝ համազգային ապստամբությունը, անիրականանալի էր: Հայ ժողովրդի ազատագրության ուղին անցնում էր Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների և, առաջին հերթին, քրդերի ազատագրական պայքարի խաչմերուկներով:

Հայ բոլոր հասարակական-քաղաքական ուժերը հասկացա՞ն այս ճակատագրական երկընտրանքը: Դժբախտաբար, ոչ: Ովքեր համազգային ապստամբության գաղափարը հակադրում էին հայդուկային շարժմանը և վերջինիս մեղադրում, թե խանգարում էր այդ ապստամբությանը, չլատում ազգային շարժման ուժերը և թուրքերի համար առիթներ ստեղծում կոտորելու հայերին, իրենց նեղություն չէին տալիս համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների կապանքներից դուրս պոկվելու և ըմբռնելու Արևմտյան Հայաստանի ոչ միայն ազգային-էթնիկական, այլև սոցիալ-քաղաքական վիճակի առանձնահատկությունները: Մանավանդ, որ առկա էր նաև պատմական փորձը: Թուրքական բռնակալությունից մակեդոնական ժողովրդի ազատագրության հարվածային ուժը հայդուկներն էին, ովքեր պարտիզանական տևական ու ծանր կռիվների բովում միավորեցին ազգային ուժերը, նրանց պայքարի ոգի ներշնչեցին, մարտունակ դարձրին և, ինչպես ասում են, կենաց ու մահու պայքարի հանեցին: Ու եթե հայ իրականության մեջ հայդուկների պայքարը նման երջանիկ վախճանի չհասավ, դա ոչ թե հայ հայդուկների, այլ գոյություն ունեցող իրավիճակի ու նաև «համազգային ապստամբության» չատագովների մեղքն էր, ովքեր այդպես էլ չհասկացան, որ շուրջ 900 տարի պետականությունն ու ազատությունը կորցրած, վայրագ ճնշումների ու հալածանքների հետևանքով հլու-հպատակի հոգեբանություն որդեգրած, ոգու մարտունակությունից ու զենքով մաքառելու ունակությունից զրկված ռայան, որպեսզի հոգեբանորեն նախապատրաստվեր, միավորվեր և համազգային գոյամարտի դուրս գար, պետք է անցներ այդ պայքարը

[269] «Դրոշակ», Թուսցիկ-Թերթիկ, 1890, թիվ 2:

նախապատրաստող մի ամբողջ համակարգի բովով, որում, թերևս ամենաարդյունավետը ժողովրդական վրիժառուների՝ ֆիդայության պայքարն էր: Մեր ժողովրդի համար Արաբոն ու նրա հետնորդները շատ թանկ են ոչ միայն իրենց խիզախությունների, այլև ազատատենչ, խրոխտ ոգու, ազատ մարդուն վայել կեցվածքի համար: Իհարկե, խեղճ գյուղացուն թալանած ավազակներին պատժելն առաջին հայացքից Արաբոյի գործողություններին ազգային ազատագրական պայքարի երանգ չէր տալիս, բայց այդ գործողություններն օգնում էին դարավոր նիրհի մեջ գտնվող, կրավորական վարքագծի ախտի տակ կքված հայ գյուղացուն արթնանալու, մեջքը չտկելու ու հավատալու, որ ավազակի ուժը «ի վերուստ չէ», որ նրան պետք է ընդդիմանալ, պայքարել ու հաղթել:

Մի անգամ Արաբոն հարձակվեց հայ ու քուրդ գյուղացիներին թալանող թուրք ոստիկանների վրա, նրանց սպանեց և թալանը վերադարձրեց տերերին: Արդի պատկերացմամբ սա զուտ առօրեական քրեական դեպք էր, բայց այն ժամանակ հսկայական քաղաքական լիցք ուներ՝ ռայան ճեռք է բարձրացրել օսմանյան պաշտոնատարի վրա, որի հետ նրա հարաբերությունները միշտ եղել են անտրտունջ ստրուկի և կամակոր ստրկատիրոջ հարաբերություններ: Առաջին հայդուկների գործունեության իմաստն էր թուրքական բարբարոսներին ցույց տալ, որ հայն ի վիճակի է զենքի դիմելու, իր կյանքն ու պատիվը պաշտպանելու:

Հայդուկները, թեպետ տեռորը չէին մերժում և հաճախ էին օգտագործում, սակայն երբեք այն չեն համարել պայքարի գլխավոր ու հիմնական եղանակ: Նրանց պայքարի հիմնական եղանակը եղել է պարտիզանական կռիվը: Մինչդեռ հայդուկների դեմ թուրքական իշխանությունների կողմից ամենաշատ օգտագործվող եղանակը ահաբեկչությունն էր: Բացի այն դեպքերից, երբ հայդուկների դեմ հանվում էին ռազմական ուժեր, տարիներ ու տասնամյակներ շարունակ թուրքերը հայդուկներին ու նրանց ղեկավարներին ֆիզիկապես ոչնչացնելու համար մեծ գումարներ էին խոստանում, վարձում պրոֆեսիոնալ մարդասպաններ, այդ խնդրին էր ծառայում լրտեսական լայն ցանցը: Այդպես սպանեցին հայդուկային ամենանշանավոր առաջնորդներից մեկին՝ Աղբյուր Սերոբին, մի քանի մահափորձեր եղան Գևորգի ու Անդրանիկի վրա և այլն:

Հայդուկային շարժումը նաև ուղղված էր թուրք ու քուրդ բեկերի, աղաների, շեյխերի, փաշաների, հոգևոր ու աշխարհիկ մյուս շահագործողների ճնշումների ու հարստահարությունների դեմ: Այստեղ սոցիալականն ազգային պատյանի մեջ է՝ այն հասկանալի պատճառով, որ ազգային ճնշման վերացումը միաժամանակ նշանակում էր շահագործումների ու հարստահարությունների վերացում:

Հայդուկները, վրեժխնդիր լինելով հայության հանդեպ վայրագությունների համար, վառ էին պահում նրա ազատատենչ ոգին: Նրանք կյանքի փորձով համոզվել էին, որ հայ ժողովրդի արևմտյան հատվածի գոյատևումը հնարավոր է միայն դահճի դեմ զինված պայքարով, որ Արևմուտքի պետությունների վրա հույս դնելը պատրանք է և միակ իրական ուժը համարում էին Ռուսաստանը, հավատացած, որ «Հայկական հարցի լուծման բանալին գտնվում է ոչ թե Լոնդոնում կամ էլ Բեռլինում, այլ Պետերբուրգում»[270]:

Ահաբեկչությունը ազգային հեղափոխական շարժումները նախապատրաստող միջոցներից ու դրանց ուղեկիցներից է: Այդ առումով մինչև 90-ական թվականների երկրորդ կեսը հայկական ահաբեկչությունը ղեկավարվում էր դասական ահաբեկչության սկզբունքներով. այն քաղաքական հեռահար խնդիրներ չէր դնում, այլ կոչված էր «արթնացնելու» լայն զանգվածներին, նրանց հանելու բռնությունների դեմ և լուծելու ինքնապաշտպանական խնդիրներ:

Սակայն Համիդյան ջարդերից հետո ահաբեկչությունը վերածվեց պայքարի գլխավոր եղանակի, որի հետևանքով ուշադրությունից դուրս թողնվեցին քաղաքական պայ-

[270] Աղայան Ս., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, էջ 95:

քարի, ազատագրական շարժման ծավալմանը կոչված կազմակերպչական աշխատանքները, միաժամանակ սուլթանական իշխանությունների համար ոչ միայն պատրվակ, այլև բարոյական ծխածածկույթ ստեղծելով՝ հայերին կոտորելու:

Պատշաճը մատուցելով հայ ահաբեկիչների խիզախությանն ու անձնազոհությանը՝ անհնար է չնշել, որ ոչ քիչ դեպքերում նրանք արևմտահայությանն արջի ծառայություն էին մատուցում. օրինակ, Բահրիի և Տրապիզոնի վիլայեթի զորահրամանատարի վրա 1895թ. օգոստոսի 20-ին իրականացված անհաջող ահաբեկչությունը: Առանց այդ էլ Կ. Պոլսից եկած սոֆթաները Տրապիզոնի մահմեդական բնակչությանը նախապատրաստում էին օր առաջ քաղաքի հայության կոտորածը սկսելու, և ահա այդ ահաբեկչությունը դարձավ ավելի քան հարմար պատրվակ: Անհասկանալի է Խանասորի ահաբեկչության իրականացման եղանակը: Եթե նպատակը քրդական մազրիկ ցեղի ցեղապետից ու զինված խմբից վրեժ լուծելն էր, ապա ինչպե՞ս պատահեց, որ կանանցից ու երեխաներից չատերը սպանվեցին, իսկ գլխավոր հանցագործներն անվնաս մնացին: Վերջին հաշվով այդ ահաբեկչությունը օգնե՞ց, թե՞ վնասեց Աղբակի և պարսկա-թուրքական սահմանամերձ բնակավայրերի հայերի անվտանգությանը: Անպայման վնասեց և փոքր դեր չխաղաց, որ այդ չրջանների հայաթափումը շատ ավելի արագ կատարվեր, քան հարևան տարածքների:

Բացարձակապես միամիտ ու չմտածված էր Օսմանյան բանկի գրավումն ու Կ. Պոլսի մի քանի ահաբեկչական գործողությունների անթաքույց, գրեթե բացահայտ նախապատրաստումը, ինչը սուլթանին հնարավորություն տվեց աշխարհի առաջ արդարանալ, թե Պոլսում, Իզմիրում և այլուր հայերը նախապատրաստել էին դավադրական-ահաբեկչական գործողությունների մի երկար շարք և այն էլ՝ հիմնականում ուղղված ոչ թե օսմանյան, այլ եվրոպական հաստատությունների դեմ: Եվ դրանից հետո հույս դնել, որ տերություններն անմիջապես ռազմանավեր կմտցնեին և Հայկական հարցը կլուծեին, իհարկե պատրանք էր:

Տարօրինակն այն էր, որ այդ դեպքերից հարյուր տարի անց էլ գտնվում են պատմաբաններ, որոնք փորձում են 90-ական թվականների երկրորդ կեսին Աբդուլ Համիդ 2-րդի «մեղմանալը» բացատրել Կ. Պոլսում տեղի ունեցած այդ ահաբեկչությամբ: 300 հազար հայի արյուն հեղած սուլթանը «մարսում էր» խմած արյան գետերը և վախվորած հետևում տերությունների վարքագծին: Առավել ևս բարոյական չէ Օսմանյան բանկի գրավումն անվանել «հայ ազատագրական զինված պայքարի բարձրակետ», իսկ սուլթան Աբդուլ Համիդի վրա 1905թ. հուլիսի 21-ի անհաջող ահաբեկչությունը՝ «ազգերի պատմության մեջ արձանագրված ամենախիզախ դավադրություններից մեկը»:

Ժամանակակից դաշնակցական հեղինակներն այդ կուսակցության պատմության մեջ որևէ սխալ, որևէ սև կետ չեն տեսնում և կատաղում են, որ ուրիշները տեսնում են ոչ միայն սխալներ, սև կետերի շարքեր, այլև հանցագործ, օբյեկտիվորեն ազգադավ նշանակությամբ գործողություններ: Հնարվում են ստեր, կեղծվում են պատմական ակնհայտ փաստերը: Օրինակները շատ են: Բերենք դրանցից մի քանիսը: Ասվում է այն մասին, որ 1894-96թթ. ջարդերի չրջանում ՀՅԴ «զբաղվել է միայն արևմտահայերի ինքնապաշտպանության կազմակերպմամբ»[271]: Իրականությունն այլ էր: Բացի Վանից, որտեղ ՀՅԴ-ն արմենականների հետ միասին, իրոք, ղեկավարեցին հայերի ինքնապաշտպանությունը, Արևմտյան Հայաստանի ուրիշ ոչ մի չրջանում՝ դաշնակների կողմից նման գործունեությամբ զբաղվելը՝ պատմությանը հայտնի չէ: Դա՝ մի պարզ պատճառով, ինչը խոստովանում են նաև վերը նչված մտքի հեղինակները, որ անգամ «արևմտահայերի գոյամարտի բնօրրան Տարոնում ՀՅԴ լուրջ ներկայություն է դարձել միայն 1895-ի ջարդերից հետո...»[272]:

---

[271] Թումանյան Գ., Հակոբյան Ա., նչվ. աշխ., էջ 17:
[272] Նույն տեղում:

Նենգափոխվում է նաև Խանասորի «արշավանքի» արժեքավորումը: Մի բան ակնհայտ էր, որ Խանասորի «արշավանքը» մտահղացված էր ճիշտ, բայց իրականացվեց անհաջող: Այն, որ «արշավանքին» մասնակցում էր 250 մարդ, չի փոխում դրա պատժիչ-ահաբեկիչ բնույթը և դրանում վիրավորական ոչինչ չկա: Ո՞վ է ասել, թե Խանասորի «արշավանքը» հայդուկայինից տարբերվում էր նրանով, որ մասնակիցների մեծ թիվ ուներ: Փոքր Հայքում գործում էին հայդուկային խմբեր, որոնցում կար 300-500 մարդ:

Անհեթեթ է Օտոմոնյան բանկի վրա հարձակման գնահատականը: Ասվում է, թե այդ հարձակումը «դրսի աչխարհի» արձագանքի համար չէր, այլ «հայկական բարենորոգումների իրականացման», այսինքն՝ ահազանգ էր տերություններին ճնշում գործադրելու սուլթանի վրա բարենորոգումներ մտցնելու համար: Իսկ մի՞թե տերություններ ասածը «դրսի աչխարհը» չէր: Ապա բերվում է Սամաթիայում կազմակերպված «ինքնապաշտպանությունը»: Արդյունքում կյանքից զրկվեց 8-10 հազար պոլսահայ, այսինքն՝ դա պոլսահայության ամենամեծ ջարդն էր: Ավելին, Կ. Պոլսում տեղի ունեցած բոլոր կոտորածների ժամանակ, միասին վերցրած, այնքան հայ չէր ջարդվել, որքան 1896-ին ՀՅԴ կազմակերպված «ինքնապաշտպանության» չնորհիվ:

Մարդկային ու նյութական ամբողջ ուժերը ծախսելով ահաբեկչական և նման այլ գործողությունների վրա՝ Դաշնակցությունը ժամանակ չունեցավ տեսնելու, որ ահազանում էր համազգային ողբերգությունը, որ օրվա հրամայականն էր՝ ժողովրդին նախապատրաստել ինքնապաշտպանության: Վրա էր հասել մի ժամանակաշրջան, երբ ազգային տրամադրությունների աճը բախվում էր սուլթանական հարաճուն ռեակցիայի հետ: Արգելվեցին կրոնական արարողությունների ժամանակ հայերեն խոսելը, փոխվեցին բնակավայրերի հայկական անունները, բանակից ու դատական մարմիններից հեռացվեցին հայ մասնագետները, դադարեցվեց Միացյալ Հայոց Ընկերության գործունեությունը, փաստորեն դեն նետվեց Ազգային Սահմանադրությունը, սկսվեց համընդհանուր արշավ հայդուկների դեմ:

* * *

Հայ քաղաքական գործիչները հասկանում էին, որ սուլթանը դիվային ծրագրեր էր հյուսում:

«Այն հայտարարությունը,— գրում է Ս. Սապահ Գյուլյանը,— թե հայերի կրած տառապանքները հար և նման են թուրքերի կրածին, որ թուրքական կայսրությունում եղած բոլոր ժողովուրդները նույն հալածանքներին, նույն տանջանքներին, նույն զրկանքներին էին ենթարկված, կարող է ասել նա, ով աչք է փակել տիրող իրականության առաջ: Հային վերացնում են իր երկրից, ստիպում հեռանալ իր օջախից, կառավարության կարգադրությամբ նրան զրկում են հողից»[273]: Հարձակում ծավալվեց հայ մտավորականության վրա՝ ստիպելով նրան մտահոգվել լոկ իր անվտանգության մասին: Փողոցում թուրքը հային ամեն տեսակի վիրավորանք հասցնում էր, իսկ հայը նույնիսկ բառ ասելու իրավունք չուներ: «Կոմիտեի անդամ» լինելու մեղադրանքը դարձավ ամեն ու բոլոր պարագաներում հայերի դեմ օգտագործվող սադրանք: Կարինի վալին հայ հարուստների ժողովում հայտարարեց. «Կառավարության և երկրի համար ամենավնասակարը հայերն են, նրանց բնաջնջումը ամենակարևոր պետական գործն է»: Մշո դաշտում կառավարության գաղտնի հանձնարարությամբ քրդական ավազակախումբ էր ստեղծվել, որը թալանեց շատ գյուղեր ու մարդկանց: Խստորեն սահմանափակվեցին հայերի տեղաշարժերը: Գում Գափուի ցույցից հետո մեծ թվով հայեր փորձեցին վերադառնալ իրենց բնակավայրերը, սակայն թույլ չտվեցին, մինչդեռ միայն մեկ շաբաթվա ընթացքում երեք հա-

[273] «Հնչակ», 1901, թիվ 12:

*րյուրից ավելի զինված քրդեր մեկնեցին Հայաստան: «Կառավարությունը նրանց ոչ միայն զենք էր տվել, այլև յուրաքանչյուրին չորս օսմանյան ոսկի՝ որպես ճանապարհածախս»:*

*"Daily News"-ի վկայությամբ՝ Բայազետում մի քանի թուրք զինվորներ ժամասացության պահին մտնում են հայոց եկեղեցի և, պատճառաբանելով, թե «թագավոր» բառն օգտագործում են «Աստծո, իսկ թագուհին՝ Մարիամ կույսի վերաբերմամբ», ժամասացությունը համարում են դավադրություն և հարձակվելով քահանայի վրա՝ անարգում են: Բանտ նետվեցին Ամասիայում մի հայ «Բազմավեպ»-ին թղթակցելու, Երզնկայի Տանձիկ գյուղի մի հայ՝ տանը «Հայոց պատմություն» և «Երգարան» գրքերն ունենալու, Կարինում՝ հայրենասիրական երգեր երգելու, Ալաշկերտում "Times"-ի թղթակցի հետ հանդիպելու փորձի համար և այլն:*

*Սանձարձակ գործունեություն էին ծավալել չեչխերը: Սեբաստիայից տրտնջում էին, թե «թուրքական կառավարությունն իմամի ու խոջաների միջոցով մզկիթներում թուրք հասարակայնությանը գրգռում է հայ ժողովրդի դեմ»: Էրզինի մզկիթում քարոզում էին. «Ով հային իր տանն ընդունի, պիղծ է: Ով հայի հետ ընկերանա, պիղծ է: Հայի ապրանքն ու պատիվը մուսուլմանին հալալ են»: Ալաշկերտում բացեիբաց հայտարարում էին. «Հայերին բութ դանակով պիտի մորթենք»: Հայ կանանց ու աղջիկներին առևանգողները պատժից ազատ էին: Քարոզվում էր այն միտքը, թե Մուհամմեդն ասել է. «Քրիստոնյա աղջիկ առևանգողի ու նրան մահմեդականացնողի ոգին չեննեթի մեջ է լինելու, այդ գործը բարիք է, մարդը դժոխքից փրկվում է»: Կեսարիայում քրիստոնյա աղջիկ առևանգողը զինվորական ծառայությունից ազատվում էր: Ընդունվեցին օրենքներ քրիստոնյաների կողմից զենք պահելու և պատրաստելու դեմ: Զենք վաճառողն ու գնողը դատապարտվում էին տասը տարվա բանտարկության:*

*Մոլագար ու կասկածամիտ սուլթանը միանձնյա լուծում էր ոչ միայն առանձին անձանց, այլև ամբողջ ժողովուրդների լինել-չլինելու հարցը: Նրա տրամադրության տակ էր 30 հազար լրտես: Պալատում հինգ կառույց էր գործում «կասկածելիների» մասին տեղեկություններ հավաքելու համար: Հետագայում գաղտնի ոստիկանության պետ Զիանը խոստովանեց, որ եթե ինքը կատարեր կամ ժամանակ ունենար կատարելու Ելդըզի բոլոր հրամանները, ապա «Թուրքիայում ազգաբնակչությունը կպակասեր մեկ երրորդով»[274]:*

*«Սով է Հայաստանում,— գրում է «Դրոշակ»-ը,— հայ ժողովուրդը հարյուրավոր ընտանիքներով է գաղթում, և այդ սովն ու գաղթականությունն ահա երկրորդ տարին է, որ սկսվել և չարունակվում է այսօր ավելի ուժեղ, ավելի կատաղի: Սովից գաղթում, մեռնում են մարդիկ այն երկրում, որտեղ ոչ երաշտ է եղել, ոչ մորեխ է երևացել և ոչ բնական որևէ պատուհաս: Սովից գաղթում, մեռնում են այն երկրում, որը հայտնի է իր առատությամբ, ճոխ ու հարուստ բնությամբ, որտեղ ապրում ու աշխատում է չարքաշ ժողովուրդ...»[275]:*

*Ինչո՞ւ: Ո՞րն է պատճառը:*

*«Ծանր, միանգամայն անտանելի, անընդհատ աճող հարկերը, վաշխառուների, կապալառուների, աղանների, հարկահանների՝ այդ ահագին լեգեոնի կողմից չահագործումը, կեղեքումները նաև պաշտոնյաների՝ սկսած ամենաբարձրից մինչև ամենաստորինը, սկսած փաշայից մինչև ամենահետին զափթիեի, բռնազբոսիկ ու վայրենի զեղծումները, տուգանքները, քուրդ ավազակների թալանն ու հափշտակությունը, տուն-տեղ, արտ, կալ ավարի ու հրդեհի ենթարկելը և, վերջապես, ինքը՝ ճոխ ու փարթամ, մարդկային արյունով ներկված Ելդըզի պալատի գահակալ սուլթան Համիդը՝ այս բոլոր արյունարբուների խմբապետը, չրջապատված իր նմաններով, որոնց կյանքի միակ նպատակն է*

---

[274] «Հնչակ», 1890, թիվ 12:
[275] «Դրոշակ», 1894, թիվ 7:

*հարեմը և զվարճությունը, անասնական կյանքը, որոնք իրենց գոյությունը պահպանում են հազարավոր զոհերի արյունը ծծելով... ահա թե որտեղ պետք է փնտրել սովի ու գայթակղության բուն արմատները»*[276]:

*...«Սուլթանի կառավարությունը այժմ սովը քաղաքական զենք է դարձրել իր նպատակին հասնելու, այդ վնասակար տարրից (հայից) ազատվելու: Նա կապալառուների, վաշխառուների, հարկահանների միջոցով երկրի ցորենը հավաքել է իր և վերջիններիս ամբարները, խլել է նույնիսկ գյուղացու սերմացուն և այդպիսով ցորենի մի չափը 1ռ.90 կոպեկից հասցրել 7 ռուբլու...»: Ահա գաղթի պատճառները: Իսկ «կառավարությունն էլ հենց այդ է ուզում և դրա համար էլ ոչ մի արգելք չի դնում, այլ հրճվում է, բերկրում՝ հուսալով, որ սովի ու գայթակղության միջոցով կազատվի այդ տարրից...*

*1893-ի գարնանը կառավարությունը Վանի հացը՝ գլխավորապես Արճեշ գավառի..., քաշեց տարավ Էրզրում և Երզնկա..., ապա սկսեց լուրեր տարածել, որ այդ տարի հացի բերքը վատ է լինելու, ինչը շատ թանկացրեց կապալի գինը: Եթե 1892-ին կառավարությունը Վասպուրականի հարկահավաքությունը կապալառուներին վաճառել էր 100 հազարով, ապա 1893-ին՝ 150 հազարով:*

*Ամեն տարի հարկ հավաքված հացը վաճառքի էր հանվում, իսկ 93-ին այն ամբարվեց, որը հացի գինը թանկացրեց երկու անգամ»*[277]:

*Արճեշում կալի ժամանակ հայտնվում էին քրդերը և յուրաքանչյուր տնից մինչև 30-50 փութ ցորեն վերցնում: Կուրավու գյուղում խաֆիրի տուրքեր հավաքելու համար մեկը մյուսի հետևից քրդեր էին գալիս ու պահանջածը ստանում: Ալաշկերտում Թեմուր անունով մի ավազակախումբ չրջում էր հայկական գյուղերն ու, բռնությունն գործադրելով, դրամ հավաքում: Ամասիայի բանտից «ոճրագործ, գող, չնացող և այլ հանցապարտ չերքեզներին ազատ արձակելով և չերքեզ բեյերին զանազան նվերներ տալով՝... 1500 հոգուց բաղկացած համիդիե գունդ կազմեցին գործածելու համար մասնավորապես հայ հեղափոխականների դեմ»*[278]:

*Տարոնում համիդիե հազարապետ Իբոն հափշտակում է հայերի ոչխարի հոտը: Քանի որ իշխանություններին դիմելն անօգուտ էր, հայերն Իբոյին խնդրում են վերադարձնել գոնե ոչխարների կեսը: Իբոն մերժում է՝ ասելով. «Թագավորն էլ եմ ես, վալին էլ, ոչ մեկից էլ չեմ վախենում: Ահա ոչխարները, բայց չեմ տա»:*

*1894-ի հունվարի 21-ին 40-50 մահմեդական, Խնուսի կառավարչի լուռ համաձայնությամբ, «Բոլոր հայերին պետք է ոչնչացնենք» աղաղակներով անցնում են փողոցներով: Կեսօրին մինարեթից հնչեց պատերազմի կոչող փողը և «զորքերը միացած բազում ժողովրդին, փակեցին կամուրջները, մեծ փողոցները, հարձակվեցին տների ու խանութների վրա և կրակի մատնեցին: Ճանապարհներին, չուկայում և նույնիսկ տներում մի չարք անզոր հայերի բռնելով, զորքերը՝ մարտինի հրացաններով ու սվիններով, իսլամ հասարակությունը՝ դաշույնով, կացնով, քարով, փայտով քամնելի գործեր են կատարում... 42 վիրավոր ձերբակալվում է, 40 հոգու հաջողվում է տներում ապաստանել... 14 սպանվածի թողնում են հրապարակում, խանութներն ու տները ավերի են մատնվում: Գործը հետաքննվեց: Բանտարկվեց մի մարդ, այն էլ հայ: Հայերին թալանելը, խոշտանգելն ու կոտորելը վեր էր ածվել իշխանությունների կողմից իրականացվող առօրյա քաղաքականության, գործելակերպի»*[279]:

*Եթե 1870-ական թվականների վերջերին և 80-ական թվականներին, հանձինս Բեռլինի վեհաժողովի, հայերի որոշ չրջանակներ տեսնում էին Հայկական հարցի քաղաք-*

---

[276] Նույն տեղում:
[277] Նույն տեղում:
[278] «Հնչակ», 1895, թիվ 3:
[279] «Դրոշակ», 1894, թիվ 11:

կիրթ լուծման ուղի, ապա 90-ական թվականներին, մասնավորապես կոտորածներից հետո, համոզվեցին, որ այդ վեհաժողովը կանխորոշել է գոյության անհավասար կռիվ: Իսկ հայն անպատրաստ էր նման կռվի և հանկարծակիի գալով, հայտնվեց կործանման եզրին: Նա այլ ելք չուներ և դիմեց ինքնապաշտպանության՝ համոզված, որ այլապես իր գոյությունը դառնալու էր անհնար:

1997թ. Երևանում լույս տեսած «1915 թվական: Անհերքելի վկայություններ» (հեղինակ Ա. Օհանջանյան) ուսումնասիրությունը սկսվում է Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Վ. Բիհլի «երկու խոսք»-ով, որտեղ կարդում ենք. «Ջկա հայ-թուրքական ավանդական թշնամություն, ընդհակառակը, մինչև 19-րդ դարը հայերը կոչվում էին «միլաթի սադիղա» (հավատարիմ ազգ): Ողբալի իրադրությունը սկսվեց այն օրվանից, երբ... հայերն իրենց կրոնական ինքնավարության համար պայքարը փոխեցին ինքնակառավարման համար պայքարով: Այդ պատճառով էլ Թուրքիան իր հողատարածքների կորստի վտանգ զգաց: Հզոր երկրների, ամերիկյան և եվրոպական միսիոներների քարոզչության միջոցով հայերին պատիր հույսեր ներշնչվեցին... Նման ծրագիր ունեցող հայ փոքրամասնությունը Օսմանյան կայսրությունում հայ մեծամասնությանը դրեց բնաջնջման սպառնալիքի տակ»[280]: Այս միտքը հաստատելու համար Ա. Օհանջանյանը վկայակոչում է մի քանի հեղինակների: Փոքրամասնությունների՝ 19-րդ դարում իր գագաթնակետին հասած և նշանաբան դարձած ազգային խնդիրն էր՝ «Ցուրաքանչյուր ազգ պետք է պետություն կազմի: Ցուրաքանչյուր պետություն պետք է միայն մի ազգ ընդգրկի»[281]: Բառերը միանգամայն իրավացի էր, երբ նշում էր. «Ատելի պայմանները, ինչպես, օրինակ, զենք կրելու կամ թամբած ձի նստելու արգելքը արհամարհված ռայային ամեն օր զգալ էին տալիս ճնշված լինելու փաստը: Այնպես որ, ճնշված ժողովուրդը ստիպված էր ըմբոստանալ օտար տիրապետության դեմ...»[282]: Սակայն դրանից եզրակացնել, թե «քրիստոնյա ազգությունների նկատմամբ թուրքերի վերաբերմունքում արմատական փոփոխություն կատարվեց միայն այն ժամանակ, երբ սկիզբ առավ ազատության համար քաղաքական պայքարը», սխալ է[283]:

Վկայակոչվում է նաև Հ. Վեգեները, թե Անգլիան իր միսիոներների միջոցով նպատակ ուներ «հրահրել Թուրքիայում կրոնական հակազդեցություններ և այնքան ուժեղացնել հայերի ազգային ինքնագիտակցությունը, որ նրանք ներքաշվեն հակապետական գործունեության մեջ»[284]:

Հեղինակը հետևողական է իր տրամաբանության մեջ: Նա գրում է, թե հայերի հետապնդումն ուժեղացավ, երբ Մարզվանի քոնֆերանսում պատրաստված թուրքիկները տարածվեցին: Նման դիրքորոշումը պարունակում է շատ սխալներ, թյուրիմացություններ ու կողմնակալ մտածողություն: Նախ, հայերին «հավատարիմ ազգ» հռչակեցին ոչ թե մինչև 19-րդ դարը, այլ 19-րդ դարում, երբ բացի հայերից բոլոր հպատակ ժողովուրդները պայքարի էին ելել թուրքական լուծը տապալելու համար: Ընդ որում, հայ-թուրքական թշնամությունը գենետիկ անհրաժեշտություն չէր: Այն, որ մինչև 19-րդ դարի կեսերը հայը անմռունչ տարել էր թուրքական վայրագությունները, չէր ըմբոստացել, չէր պայքարել, օսմանյան տիրապետության 500 տարին ներկայացվում է որպես հայ-թուրքական գրեթե ներդաշնակ հարաբերությունների ժամանակաշրջան:

19-րդ դարում հայերի ընդվզումները վերագրել օտար քարոզչության ազդեցության, առնվազն ազնիվ չէ: Հայը պարզապես այլ ելք չուներ, նա բնաջնջման, անհետացման վտանգի առաջ էր, և օրվա հրամայական էր դարձել՝ պայքարով փրկություն

---

[280] Օհանջանյան Ա., նշվ. աշխ., էջ 8:

[281] Bauer O., *Die Nationalitäten-Frage und die Sozialdemokratie*, Wien, 1924, S. 171.

[282] Նույն տեղում, էջ 174:

[283] Pomiankowski J., *Der Zusammenbruch des Ottomanischen Reiches*, Leipzig, 1928, S. 156.

[284] Wegener H. L., *Der britische Geheimdienst im Orient*, Berlin, 1924, S. 132.

*կամ անմռունչ անհետացում: Ցեղասպանության քաղաքականությանը անցման գործում հայերի կեցվածքը վճռական դեր խաղալ չէր կարող: Առավել ևս, հայկական շարժումը ի վիճակի ու ի զորու չէր սպառնալիք դառնալու Օսմանյան կայսրության գոյությանը: Ա. Օհանջանյանն ինքն է վկայություններ բերում, որ սուլթանի իսկական նպատակը հայերի բնաջնջումն էր: Սուլթանական բարձրաստիճան պաշտոնատարներից մեկը 1896թ. հոկտեմբերի 10-ին Ավստրո-Հունգարիայի դեսպանին հավաստիացնում էր, եթե Եվրոպան վճռականություն հանդես չբերի, ապա Բ. Դուռը նոր կոտորածների հրաման կտա: Հայերի դեմ բոլոր մահմեդականներին զինելու վճիռ էր կայացված, որն այլ բան չէր, եթե ոչ «մահմեդականների խաչակրաց արշավանք քրիստոնյաների դեմ»*[285]*:*

*«Հայոց ցեղասպանությունը սկսվել է այն ժամանակահատվածից, երբ թուրքական ցեղերը գրավեցին Փոքր Ասիան և Հայաստանը... Այդ ցեղասպանությունը... տևել է 500 տարի...*

*1890-1920թթ. ցեղասպանությունը նախորդ շրջանից տարբերվում է նրանով, որ թուրքերը սպիտակ գենոցիդից անցան ամբողջ հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման քաղաքականության իրագործմանը»:*

*Եթե ցեղասպանություն հասկացությանը մոտենանք գիտական տեսանկյունից, ապա այն ծնունդ է ազգերի ու համազգային գիտակցության ձևավորման որոշակի ժամանակաշրջանի՝ 19-րդ դարի երկրորդ կես և 20-րդ դարի սկիզբ: Այնպես որ 500-ամյա ցեղասպանության մասին պնդումը քննադատության չի դիմանում: Այլ բան են կոտորածները, այդ թվում՝ նաև զանգվածային կոտորածները, որոնք հետևանք էին տարբեր քաղաքական, ռազմական և գաղափարախոսական պատճառների ու, իսկապես, գործադրվել են օսմանյան պետության ստեղծման առաջին տարիներից սկսած: Սակայն թուրքերը կոտորում, մահմեդականացնում, ուծացնում էին ոչ միայն հայերին, այլև բոլոր նվաճված ժողովուրդներին: Ի դեպ, ուծացման ավելի շատ ենթակվեցին առաջին հերթին զարգացման ցածր աստիճանի վրա գտնվող ցեղերն ու ժողովուրդները:*

*Թուրքերի այդ քաղաքականությունը ամբողջ ազգությունների ծրագրված բնաջնջման նպատակ չուներ: Պատճառն ավելի քան պարզ էր. մի փոքրիկ ցեղ ստեղծել էր աշխարհակալ տերություն, որտեղ բնակչության կազմում ինքը չնչին փոքրամասնություն էր, ինչը հասկանալի պատճառով վտանգում էր կայսրության գոյությունը: Թուրքերն, այո, տանում էին կայսրության բնակչության էթնիկական կազմը հօգուտ իրենց փոխելու քաղաքականություն: Բայց ասել, թե հենց սկզբից թուրքերը վարել են Հայաստանը հայաթափելու, այսինքն, առանց հայի թողնելու քաղաքականություն, տրամաբանական չէ և պատմական իրողություններով չի հիմնավորվում: Եթե թուրքերը հենց սկզբից որոշել էին բնաջնջել հայերին, ինչո՞ւ նրանց տվեցին միլիեթների համակարգով նախատեսված ազգային-մշակութային ինքնավարություն, պատրիարքին՝ մի շարք արտոնություններ, ինչո՞ւ թուլլատրեցին հայկական դպրոցական-հոգևոր կյանքի զարգացում, ինչո՞ւ թույլ տվեցին, որ Կ. Պոլիսը դառնա հայ մշակույթի ամենախոշոր կենտրոններից մեկը:*

*Դժվար է համաձայնել նաև հետևյալ մտքերին. «Թուրքիզմի իրականացումը նշանակում էր Թուրքիայի մահմեդականացում»: Թուրքիայի մահմեդականացումը իսլամիզմն էր: Բեռլինի կոնգրեսից հետո «փոխվեց ազատագրական պայքարի մարտավարությունը, օրակարգի մեջ մտավ զինված ուժով Հայկական հարցը լուծելու գաղափարը»: Եթե վերջին միտքը շարունակվեր, անպայման ասվելու էր, որ այդ շրջադարձը ծնեց հայերի բնաջնջման համիդյան քաղաքականությունը: Իսկ նման եզրահանգման համար 1880-90-ական թվականների ո՞ր իրադարձություններն են հիմք ծառայում: Կարինի 1890թ. հունիսի իրադարձություննե՞րը, թե՞ Կ. Պոլսի 1890թ. խաղաղ ցույցը: Այդ տասնամյակին հայ-թուրքական հարաբերություններում տեղի ունեցած փոփոխությունների*

---

[285] Օհանջանյան Ա., նշվ. աշխ., էջ 28-29:

հեղինակը ոչ թե հայերն էին, այլ սուլթանը: Նա որոշեց գործողության մեջ դնել հայերի բնաջնջման, տվյալ դեպքում՝ իսկապես ցեղասպանության քաղաքականությունը, և հայերին այլ բան չէր մնում անելու, եթե ոչ կանգնել ինքնապաշտպանության:

Մի մեջբերում ևս. «1896-98 թվականներին հայ քաղաքական կուսակցությունները հրաժարվում են ֆիդայական կռվի տակտիկայից և անցնում երկրում զինված ուժեր պատրաստելուն՝ ընդհանուր ապստամբության համար»:

Իրողությունը ճիշտ հակառակն է: 1895-1905թթ. եղել է հայդուկային չարժման ամենածավալուն շրջանը, որն իր մեջ ներառնում է Աղբյուր Սերոբի, Գևորգի, Անդրանիկի և հայդուկության ուրիշ ներկայացուցիչների գործունեությունը, Առաքելոց վանքի կռիվը, Սասնո 1904թ. ինքնապաշտպանական կռիվները և այլն, և այլն:

ՀՅԴ և իթիհադի միջև հարաբերությունների ձևավորման նախաձեռնողը երիտթուրք պարագլուխներն էին, և այդ հարաբերությունների հիմքում փոխզիջումներ տեսնելու ցանկությունն ավելորդ է, որովհետև բացի դեկլարատիվ հայտարարություններից իթիհադը դաշնակցությանը, մանավանդ ինքնավարության հարցում, զիջում չի կատարել: Հիմնավորված չէ նաև հետևյալ պնդումը՝ թե երիտթուրքերի ու ՀՅԴ միջև հարաբերությունները «չարունակվեցին մինչև 1908 թիվը»: Այդ հարաբերությունները չխզվեցին անգամ բալկանյան պատերազմների տարիներին:[286]

Վիճահարույց շատ հարցադրումներ կան Ռ. Սյունու «Հայաստանը 20-րդ դարում» ուսումնասիրության մեջ: Նա հայերի ազգայնականության բնորոշ գծերից է համարում տարբերակված վերաբերմունքը երկու կայսրությունների նկատմամբ,[287] իբր դարեր շարունակ հայերը հույսը կապել են Ռուսաստանի հետ, իսկ թուրքերի նկատմամբ ատելություն, եթե չասենք «ռասայական արհամարհանք» են տածել: Հայ ազգայնականության առանձնահատկություն համարվում է նաև նրա «հեղափոխական և սոցիալիստական բնույթը»: Սյունու մյուս «հայտնագործությունը» հետևյալն է. «Սոցիալիզմը հայոց դատը դարձրեց միջազգային չարժման մաս, ինչը հարուցեց եվրոպական քաղաքական առաջնորդների անվստահությունը հայերի նկատմամբ»[288]:

Սյունին չի թաքցնում իր կույր անգլասիրությունը: Ըստ նրա, Թանզիմաթին ու 1856 թվի բարեփոխումներին սուլթանը «ձեռնամուխ եղավ Բրիտանիայի ճնշման տակ»: Իսկ դրանք ձախողվեցին, որովհետև «հավասարությունը ֆրանսիական գաղափար է»: Պարզվում է, որ թուրքական ազգայնականությունը զարգացավ ի հակակշիռ «քրիստոնյա փոքրամասնությունների ազգայնականության», ինչը և անխուսափելի դարձրեց հայ-թուրքական բախումը, որ հայերի հանդեպ թուրքական ջարդարար քաղաքականությունը ևս ընդամենը «հակազդեցություն էր հայ հեղափոխականների գործողություններին» և նպատակ ուներ «վերացնելու հայկական վտանգը Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանի մոտ»[289]:

Թուրք մի քանի պատմաբաններ, միասին վերցրած, այնքան կեղծարարություններ թույլ չեն տալիս հայկական հարցում, որքան Ռ. Սյունին միայնակ: Նախ, նա «մոռանում է», որ մինչև 1880-ական թվականները արևմտահայության ղեկավարությունը՝ կ. Պոլսի հայ չոզերը, շատ ավելի կողմնորոշված էին ոչ թե դեպի Ռուսաստան, այլ Անգլիա, և, միայն վերջինիս նենգությունը հայերին նետեց Ռուսաստանի գիրկը: Արևմտահայ չարժումը երբեք սոցիալիստական բնույթ չի կրել: Այն, որ եվրոպական սոցիալիստական չարժման առաջնորդները պաշտպանում էին հայ դատը, չի նշանակում, որ վերջինս վերածվեց միջազգային չարժման մի մասի: Լավ կլիներ, եթե այդպես լիներ, բայց այդպես չեղավ, քանի որ եվրոպական ու հայկական չարժումների միջև դասակարգային առումով ոչ մի ընդհանրություն չկար:

---

[286] Հայոց ցեղասպանություն. Ֆատճառներ և դասեր, Երևան, 1995:
[287] Suny R. G., *Armenia in the Twentieth Century*, California, 1983, p. 11.
[288] Նույն տեղում, էջ 12:
[289] Նույն տեղում, էջ 11:

*Վերջին տարիներին թե՛ արտասահմանում ու թե՛, մասնավորապես, մեզանում հաճախակի են հնչում դատողություններ, թե համիդյան կոտորածները ցեղասպանություն չէին և որպես հիմնավորում ասում են, թե այդ կոտորածները այնպիսի ծավալներ չունեին, ինչպիսին ուներ Մեծ Եղեռնը: Անտեսվում է այն պարզագույն դրույթը, որ ոչ թե կոտորածների ծավալները, այլ դրանց բնույթն էր որոշում տվյալ կոտորածի ինչ լինելը: Ի դեպ, նաև նշենք, որ 19-րդ դարի երկրորդ կեսին հայերի մարդկային կորուստները ավելի փոքր չէին, քան 1915-ին էր:*

*Այս տեսակետը մերժվել է հայ և օտար մի քանի նշանավոր մասնագետների կողմից: Դրանց թվում է միջազգային իրավունքի խոշոր մասնագետ Շավարշ Թորոսյանը: Այդ եզրակացությանն է հանգեցնում Կ. Պոլսի ջարդերի նկարագրությունը Դ. Սպիրովի կողմից: Նրա «Հայաստան և սուլթան Աբդուլ Համիդը» գրքում Կ. Պոլսի 1896թ. օգոստոսի 25-26-ի ջարդերի մասին կարդում ենք. «Դա մի սրտակեղեք պատկեր է, որի համեմատությամբ աղոտանում է միջնադարյան ամենաահավոր բռնակալի կատարածը... քրդերը, մանաֆները և ամեն տեսակի փողոցային սանկյուլոտները..., զինված այլևայլ զենքերով, հանդիսավորաբար խաչաձևում են Բերայի փողոցները, գազանաբար սպանում խաղաղ հայերին և թալանում նրանց տները, խանութները ու կրպակները: Իսկ Գալաթայում՝ Ստամբուլում, թաքստոցներից դուրս են բերում խեղճ հայերին և ինչպես շների սպանում փողոցներում... փողոցները բոլորովին ամայի են... Երեկ գիշեր (26.08.1896) ահավոր ջարդեր Խասգյուղում, Քասըմ փաշայում, Սամաթիայում, Գում-Գափուում, Եդի-Կուլերում և այլ տեղերում: Աննկարագրելի սարսափներ: Սրտաճմլիկ տեսարաններ: Արյունաներկ փողոցներ: Արյան լճակներ փողոցների փոսերում: Աղքատաբո սայլերն անընդհատ տանում են հենց նոր սպանված կամ դեռ կիսակենդան հայերին: Հրացանների ու հրանոթների որոտը ճեղքում է օդը: Վայրենի ամբոխը հայերին հանում է տներից, թաքստոցներից և սպանում ինչպես շների... և այս ամենի վրա ոստիկանությունը նայում է անվրդով, սառնասիրտ... Հազարավոր սպանված կա նաև Բերայում... Խառնամբոխը շարունակում է կատաղորեն վայրագություններ գործել ասիական ձևով: Հեռագրերում զոհերի թիվը խիստ նվազեցված է: Վստահելի անձանց տեղեկությամբ միայն սպանվածների թիվը հասնում է 20000-ի, իսկ վիրավորների հետ միասին՝ 40000-ի»*[290]*:*

***Սա ցեղասպանություն է:***

*1890-ական թվականների ջարդերի ցեղասպանություն լինելը պրոֆ. Հ. Ղազարյանը հիմնավորում է հետևյալ կերպ.– ա) Այդ ջարդերն «իրենց ընդգրկած տարածքներով աննախադեպ էին պատմության մեջ: բ) Դրանց զոհ գնաց «400000 խաղաղ, անմեղ, աշխատասեր ու արարող մի ամբողջ ժողովրդի ստվար հատվածը: Ա. Վանդալը, խոսելով «կանխամտածված, հետևողականորեն կիրառած՝ մարդկային ցեղի՝ հայերի ոչնչացման մասին», այն դիտարկում է իբրև մի ամբողջ ցեղի սպանություն»*[291]*: գ) Մնողներին կորցրած հարյուր հազար որբերի թուրքերը մահմեդականացրին, աճուրդով վաճառեցին, տնային ստրուկ դարձրին, աղջիկներին քշեցին հարեմները: դ) Թուրքերը հայերին սպանում էին «համայնքներով, ծաղրուծանակի ենթարկելով, բարբարոսաբար մարդկանց վրա նավթ լցնելով ու վառելով, հղի կանանց արգանդը բանալով»*[292]*:*

---

[290] **Սպիրով Դ.**, *Հայերի սարսափելի կոտորածները (1894-1896թթ.)*, Ե., 1997, էջ 62:

[291] **Барсегов Ю.**, *Геноцид армян – преступление по международному праву*. М., 2000, с. 33.

[292] **Ղազարյան Հ.**, նշվ. աշխ. հ. I, էջ 64-65:

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

# ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ. 1880-1896 ԹԹ.

### 1. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒԻՎՆԵՐԸ ՍԱՍՈՒՆՈՒՄ

*Սասունի 1894-ի, ամբողջությամբ վերցրած՝ արևմտահայության 1890-ական թվականների, կոտորածների պատճառների հարցում կարծիքները միատեսակ չեն. դրանք թե՛ շատ են և թե՛ իրարամերժ: Հարկ չկա բոլորին անդրադառնալ, բայց չենք կարող չասել, որ իրականության հետ ընդհանուր ոչինչ չունի այն պնդումը, թե ՀՅԴ և Հնչակը «19-րդ դարի 90-ական թվականներին կողմնորոշված էին զինված ապստամբության միջոցով հասնելու Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը: Հնչակների ձգտումների դադաթնակետը հանդիսացավ Սասունի 1894թ. ապստամբությունը, իսկ դաշնակցականներինը՝ Օսմանյան բանկի 1896թ. գրավումը»[1]: Նախ՝ 90-ական թվականներին ՀՅԴ ապստամբական կողնորոշում չի ունեցել, երկրորդ՝ Հնչակը ձգտում էր ոչ թե ինքնավարության, այլ անկախության և երրորդ՝ Սասունի 1894թ. կռիվները ոչ թե ապստամբություն էին, այլ ինքնապաշտպանություն:*

*Անհերքելի է նաև այն պնդումը, թե «1894-1897թթ. հայկական հուզումների շրջանը, որ ստացել էր «Զուլում» անունը, վերածվեց 300 հազար հայերի կործանման»[2]: «Զուլումը» սկսվեց ոչ թե 1894թ., այլ Բեռլինի կոնգրեսից անմիջապես հետո, երկրորդ՝ «Զուլումը» ոչ թե «հայկական հուզումներ» էր, այլ հայերի հանդեպ օսմանյան ցեղասպան քաղաքականության եղանակ: 90-ական թվականների սկզբին ակնհայտ դարձավ, որ սուլթանական կառավարությունը ոչ միայն բարեռորոգումների մասին լսել չէր ուզում, այլև գործնական քայլերի էր դիմում արևմտահայության առավել եռանդուն և ինքնավար հատվածները բնաջնջելու կամ առնվազն ուժաթափ անելու: Կարինում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսը 1890թ. հուլիսի 31-ին գրում է Նելիդովին. «Թուրքական իշխանությունները խելահեղ կասկածամտությամբ և խիստ միջոցների անթաքույց գործադրմամբ հայ բնակչության հանդեպ հարուցում են ատելություն և թշնամություն... Դրանից կարող են հեչտությամբ ծագել շատ վտանգավոր բարդություններ»[3]: Իրավիճակին գրեթե նույն գնահատականն են տալիս նաև հայկական աղբյուրները. «Պահեստի զորքերը զենքի տակ են կանչված հայերին կոտորելու համար... Կառավարության հրամանով տաճիկ մոլլաները մուսուլմաններին մոլեռանդության են մղում քրիստոնյաների դեմ և նրանց վրեժխնդրության կոչում միանալու բարբարոս կառավարությանը հայերի վերջին կաթիլ արյունը խմելու համար»[4]: Կառավարության թելադրանքով մեկը մյուսի հետևից սպանում են հայ գյուղերի այն ռեսերին և իշխաններին, ովքեր ինչ-որ կերպ պաշտպանում են ժողովրդի շահերը: Քրդերի առօրյա խոսքերն են. «Ձեր կյանքը կարճ է, առաջիկա տարին ձեր վերջին օրերն են»[5]:*

---

[1] Тунян В., *Младотурки и Армянский вопрос: 1908-1912,* Ереван, 2004, стр.19-20.
[2] *Նույն տեղում,* էջ 20:
[3] *АВПР, Политархив,* д. 3431, стр. 30-31.
[4] «Հնչակ», 1890, թիվ 4:
[5] «Դրոշակ», 1891, թիվ 1:

Օսմանյան կառավարությունը խնդիր էր առաջադրել Սասունը դատարկել հայերից՝ ոչնչացնել լեռնաշխարհի հայ բնակչությանը: Սասունցիները դա լավ էին հասկանում և ինքնապաշտպանության ելան: Այո, ինքնապաշտպանության և ոչ թե քաղաքական այլևայլ բարեփոխումների համար: Դա պայքար էր հանուն ապրելու իրավունքի:

Բնականաբար, կենաց և մահու կռվում, ներազգային-խմբակային տարընթացությունները հետին պլան մղվեցին, և Լեռնաշխարհի ամբողջ ժողովուրդը համախմբվեց բնաջնջման վտանգի դեմ: 1890-1894թթ. ինքնապաշտպանական կռիվների կազմակերպիչը ոչ այնքան քաղաքական կուսակցություններն էին, որքան ինքը՝ ժողովուրդը, որին ոտքի էր հանել գոյատևման հրամայականը: Ժողովրդի այդ ինքնահամախմբման գործընթացում էին ձևավորվում չարժման ղեկավարներն ու առաջնորդները: Առճակատման նախաձեռնողը ոչ թե հայերն էին, այլ կառավարությունը, որը ձգտում էր կայսրությունում ստեղծել ներքին համախմբում, ինչը նշանակում էր չովինիստական-ռասսայական կրքերի բորբոքմամբ իսլամի դրոշի տակ միավորել թուրքահպատակ բոլոր մահմեդականներին:

Երբ քուրդ-թուրքական ուժերն արդեն Սասուն էին բարձրանում, Տարոնի Հնչակյան կոմիտեն կոչ հրապարակեց, որում ասված է. «Հայ ժողովուրդ, Սասունը և Տարոնը, սաստիկ հալածանքներե հարկադրված, պարզած են հեղափոխական կարմիր դրոշակը: Ոտքի կանգնեցեք, ամենուրեք և միևնույն ուժգնությամբ կռվեցեք թշնամու դեմ, քանի որ ամենուրեք միևնույն վիճակն ու հալածանքը կը տիրեն: Թող չկարծեն մեր հայ եղբայրները, թե մենք ընդարձակ պատրաստություն, պաշար, զենք, դրամ, ռազմամթերք ունինք երկար դիմադրավելու թշնամու հարձակմանը, այլ ունինք հուսահատություն, ծանր ճնշում: Լուռումունջ կորավելու տեղ՝ կռվելով մեռնելու պատրաստակամությունը մղեցին մեզ այս գործին»[6]:

Որոշ պատմաբաններ Սասունի իրադարձություններին հետևյալ բացատրությունն են տալիս: Օսմանյան կառավարությունը, բախվելով Հայկական հարցի սրմանը, 1893թ. սկզբին գնաց սադրանքի՝ հայերին հակապետական գործունեության մեջ մեղադրել և չեզոքացնել եվրոպական տերությունների ջանքերը՝ ուղղված նրանց պաշտպանությանը[7]: Սա թուրքական տարբերակներից մեկի կրկնություն է: Սուլթանը Սասունում ռազմական գործողություններ սկսեց ոչ թե 1893, այլ 1890 թվին և, այդ գործողությունների նպատակը հայերի բնաջնջումն էր, Սասունի հայ ազգաբնակչության վերացումը:

Ըստ այդմ էլ, եթե մինչև 1890 թիվը Սասունում հայերի ու քրդերի միջև բախումները դիտվում էին որպես միջցեղային հակամարտություն և առանձնակի ուշադրության չէին արժանանում, ապա դրանից հետո այդ բախումներին սկսեցին նայել ուրիշ աչքերով, ու դրանց նկատմամբ ձևավորվեց բոլորովին այլ մոտեցում: Տարոնը Զուլումի քաղաքականության գործադրման կիզակետերից էր: Ջերբակալված էին կամ արտաքսված մեծ թվով կրոնավորներ, ուսուցիչներ, երևելի անձինք, խուզարկված էին վանքերն ու եկեղեցիները, ամենուրեք թուրք զորքեր էին ու ոստիկանություն: Կրոնական մոլեռանդ քարոզչությունն իր բարձրակետին էր հասել: Մահմեդականն արդեն հային հարստահարում էր ոչ միայն նյութական շահի ակնկալիքով, այլև «իսլամական սուրբ գործ» կատարելու համոզմունքով: Այս պայմաններում հայերի պայքարը իշխանությունների ապօրինությունների և քրդերի կողոպուտների դեմ քաղաքական բնույթ ստացավ: Պայքարի մասնակիցներին անվանում էին ֆիդայի, այսինքն՝ անձնազոհ մարդ: Արաբոն կարճ ժամանակահատվածում ավազակապետից վերածվեց ֆիդայական առաջնորդի, քանի որ խնդիր էր հետապնդում վերացնելու ոչ միայն հայերի հանդեպ քրդերի ոտնձգությունները, այլև կանոնակարգված և գրեթե օրենքի ուժ ստացած արտոնությունները՝ ղշլաղ, խաֆիրություն և այլն:

---

[6] Կիւտւք Ա., Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության, էջ 143-144:

[7] Тунян В., նշվ. աշխ., էջ 126:

Մինչև կուսակցությունների հանդես գալը հայդուկային խմբերը գործում էին՝ զորավիգ ունենալով հայ կրոնական գործիչների բարոյական ու գործնական աջակցությունը, հենվելով ազգային ոգով տոգորված երիտասարդության օգնության վրա: Ծանոթանալով Սասունի վիճակին՝ Մ. Տամատյանը Հնչակյան կենտրոնին գրեց. «Դեպքերը ցույց են տալիս, որ սուլթանը նպատակադրվել է անպայման ընկճել Սասունը: Սասունցին պատրաստ է հակահարվածի, բայց նրան պետք է ուղղություն տալ...»[8]: Տամատյանի մեկ այլ տեղեկագրում (1892թ.) հասցեագրված էրզրումի անգլիական հյուպատոսին, մանրամասն՝ թվերով, վայրերով, ներկայացված են թուրքերի ու քրդերի կիրառած տնտեսական, քաղաքական հալածանքները, բանտարկյալների խոշտանգումները: Տեղեկագիրն ավարտվում է հետևյալ խոսքերով. եթե «անգլիական կառավարությունն օր առաջ ազդու միջամտություն չկատարի, անխուսափելի են դառնալու անկարգություններն ու կոտորածները»:

90-ական թվականներին սուլթանական կառավարության քաղաքականությունը Սասունում ուղղված էր ոչ միայն ինքնապաշտպանական ջոկատների՝ հայդուկների դեմ: Վերջինների գոյությունը պարզապես պատրվակ էր կոտորածները սկսելու համար: Հայ հեղափոխականների թիվը Թուրքիայում չէր անցնում երկու-երեք հազարից, իսկ 1894-96թթ. ոչնչացվեց 300 հազար մարդ[9]: Ոչ միայն հայերը, այլև օտարերկրացիները համոզված էին, որ սուլթանը Սասունում արյունահեղություն էր նախապատրաստում: «Կապույտ գրքում» կան հետևյալ տողերը. «Թուրքական անարգ կառավարությունը վաղուց ի վեր մտադրվել էր ոչնչացնել Սասունի չրջանի ազգաբնակչությանը: Սասունցիների ինքնիշխան ճգտումները նա հանդուրժել չէր կարողանում: Նրա մտադրությունն էր հայերին ոչնչացնել փոքր խմբերով, աննկատ և առանց աղմուկի»: Սասունցիների համար ստեղծվել էր ավելի քան ծանր կացություն: Իսկապես զավեշտ էր: «Սովի մատնված հայ գյուղացիներից պահանջվում էր կերակրել իրենց կոտորելու եկած զինվորներին, որոնք խլում էին նրանց ոչխարներն ու կովերը, նրանց հացի վերջին պատառը: Բայց քանի որ գյուղացիներն անկարող էին բավարարել կառավարության պահանջը, գայլը բարկացավ գառան վրա և ասաց նրան. «Մի պղտորիր իմ ջուրը»»:[10]

Սուլթանական կառավարությունը որոշեց հայերի բնաջնջումը սկսել Սասունից, քանի որ ա) Սասունն իր կիսանկախ կեցվածքով արևմտահայության չրջանում խթանում էր ազատասիրական տրամադրություններ, բ) Սասունը կայսրության խորքերում էր, մեկուսացված արտաքին աչխարհից, ինչը հնարավորություն էր տալիս բնաջնջումն իրականացնել «դրսի աչքից հեռու», գ) Սասունն ու Քրդստանը սահմանակից էին, և հնարավորություն կար հայերի բնաջնջմանը մասնակից դարձնելու նաև Քրդստանի քրդերին:

Հ. Լազարևը «Թուրքիայում հայերի թշվառության պատճառները և Սասունի քայքայման պատասխանատվությունը» ուսումնասիրության մեջ մանրամասն վերլուծում է Սասունում և հարակից չրջաններում վարվող հարկային քաղաքականությունն ու պետական աջակցությամբ հայ բնակչության թալանը:

"Неделя" չաքաթաթերթն իր 1894թ. թիվ 50-ում գրում է, որ Օսմանյան կայսրությունում հայ ազգաբնակչությունը կրկնակի կախման մեջ է: Մի կողմից «նա պարտավոր է կանոնավոր հարկ վճարել սուլթանին, մյուս կողմից ենթարկվում է քրդերի կամայական ու ավերիչ հարստահարություններին... Ահա այդպիսի երկու կրակի մեջ գտնվելը հարկադրում է հայերին երբեմն մեկ կամ մյուս կողմին հարկ վճարելուց հրաժարվել: Սովորաբար չէին վճարում պետական հարկերը, որովհետև քրդերն իրենց բաժինը բռնությամբ ստանում էին: 1879, 1882 և 1890 թվականներին թուրքերին հաջողվեց հայերի

[8] Կիտուր Ա., նշվ. աշխ., էջ 137:
[9] ԳԱԹ, ֆ. Զոպանյան Ա., բաժին VII, մաս II, գ. 3062, թ.թ. 2-3:
[10] «Մշակ», 1895, թիվ 51:

ընդվզումները ճնշել «տնային միջոցներով», առանձնապես չգրավելով եվրոպական պետությունների ուշադրությունը»:

Օսման Նուրին Սասունի մասին գրում է, որ չնայած լեռնաշխարհ է, բայց «բավական խիտ է բնակեցված»: Ըստ նրա՝ Սասունում բնակվում էր 15 հազար քուրդ և 12 հազար հայ: «Քրդերի ու հայերի կենցաղում տարբերություններ չկային: Միակ տարբերությունը կրոնն էր... Քրդերն այս չրջանը համարում էին իրենց սեփականությունը և տեղաբնակ հայերից հարկ էին վերցնում: Սասունը նույնիսկ արքունիքի համար եկամտի աղբյուր էր: Օրինակ, երբեմն պալատից ստացվում էր հեռագիր. «Ուղարկեք 500 լիրա»: Կուսակալը պատասխանում էր. «Հարկերը հավաքված են»: Այնուհետև հեռագրերն իրար էին հաջորդում: Իսկ կուսակալը գիտեր, որ եթե չարունակեր նույն պատասխանը տալ, պաշտոնանկ կարվեր..., ուստի սկսում էր նեղել տեղի հարուստներին»[11]: 1892թ. «Հայերն ասացին, որ չեն կարող երկու անգամ հարկ վճարել (քրդերին և պետությանը): Կուսակալը որոշեց վրեժ լուծել»: Մի քանի խնդիրներում Օ. Նուրին աղճատում է իրական պատկերը: Նախ՝ Սասունում քրդերի թիվը՝ 15 հազարը, հնարված է: Ըստ թուրք հեղինակների՝ Սասունը կազմված էր Գելիեգուզանի և Տալվորիկի գյուղախմբերից, յուրաքանչյուրում 350-400 ծուխ, ամեն տանը՝ միջին հաշվով 10-15 անձ, այսինքն՝ ընդամենը՝ 12 հազար մարդ: 1891-94թթ. Սասունում կոտորվեց 10 հազար մարդ (թիվը հաստատում են նաև թուրքական որոշ աղբյուրներ): Հետևաբար, կոտորածից հետո լեռնաշխարհում պետք է մնացած լիներ 2-3 հազար հայ: Մինչդեռ 10 տարի անց՝ 1904թ. ինքնապաշտպանական կռիվների ընթացքում Սասունում կոտորվեց ևս 7-8 հազար մարդ, և դրանից հետո էլ կենտրոնական Սասունում ու Շատախում հայերը մեծամասնություն էին: Հաշվարկները ցույց են տալիս, որ 1891թ. Սասունում բնակվում էր 25-26 հազար հայ:

Օ. Նուրին, կրկնելով սուլթանական կառավարության պաշտոնական կարծիքը, Սասունի իրադարձությունների պատճառը համարում է հարկերը: Մինչդեռ Սասունի կոտորածներն իրականացվեցին ոչ թե տնտեսական, այլ քաղաքական պատճառով. գործադրվում էր Սասունը սասունցիներից դատարկելու համիդյան ծրագիրը: Համենայն դեպս, պատմությանը հայտնի չէ թեկուզ մի դեպք, երբ հարկերի պատճառով իրականացվեր բնաջնջում: Սասունի պարագայում հարկերը լոկ ծխածածկույթ էին: Խաբեություն էր նաև Կ. Պոլսի տարածած լուրը, թե Սասունի վրա էր չարժվում Պարսկական բանակը լեռնաշխարհը Պարսկաստանին միացնելու համար[12]:

Արհավիրքին դիմակայելու համար առաջնային նշանակություն ուներ հայ բնակչության զինումը: «Միայն զենքով կա հայոց փրկություն»: Զենք ստանալու նշանակալից որևէ աղբյուր գոյություն չուներ: Զենքերը պատրաստվում էին արհեստանոցներում: Սակայն այդ զենքերը պարզունակ էին և ոչ այնքան պիտանի: Ուստի սկսեցին զենքեր գնել՝ առաջին չրջանում բերդանկա կայծքարային, ապա մարտինի, մոսին հրացաններ և մաուզերներ, չնայած հայերին զենք վաճառելը խստիվ արգելվում էր, վաճառողին սպառնում էր մահապատիժ: Բացի այդ, հրացանը շատ թանկ արժեր: Ուսուցչի ամսական վաստակը երկու օսմանյան ոսկի էր, իսկ մոսին հրացանն արժեր 100 ոսկի: Այս պայմաններում հաջողվում էր տարվա ընթացքում հայթայթել ընդամենը 2-3 հարյուր հրացան, որի չնչին մասն էր ստացվում Կովկասից արևելահայ զինակիր խմբերի ու մարտական չոկատների միջոցով:

Տարոնում ինքնապաշտպանական տրամադրությունների ձևավորման գործում մեծ դեր խաղացին հնչակյան գործիչներ Մ. Տամատյանն ու Հ. Պոյաճյանը (Մեծն Մուրադը): Տամատյանի մասին Լինչը գրում է. «Նույնիսկ «Կապույտ գրքի» լրջմիտ նկարագրություններում նա ներկայանում է որպես հիանալի, գրեթե լեգենդար գործիչ»: Նա ու

---

[11] Թուրքական աղբյուրները..., էջ 174:
[12] Նույն տեղում:

նրան փոխարինած Պոյաճյանը Սասունում հող ստեղծեցին ազգային շարժման համար, մանավանդ որ Սասունի գյուղացիությունը «զենք ուներ և գիտեր այն օգտագործել»:

Գ. Սրվանձտյանցը, որ այդ տարիներին Սբ. Կարապետի վանքի վանահայրն էր, 1879թ. շրջագայում էր Խուլբի և Խիանքի գավառակները և նկարագրում հայ բնակչության անմխիթար վիճակը: Բարդ Թելում Թուրքը «կը մտնե հովիվի (հայ) գոմը, կրակը վառել կուտա, և խեղճ հովիվը երկու ձեռքի և երկու ոտքի վրա կորացնելով աթոռի տեղ կը գործածե, նստելով կռնակի վրա իր լաթերը կը չորացնե: Ուրիշ անգամ մը իր ճիւն թամբը կը դնե գեղացվուն պառկը, սանձը կը զարնե բերանը և կը հեծնե չորքոտանվո մը պես, կը վարե ժամու մը չափ»[13]: «Գնդակներու հարձակում, արյան հոսում, ընչից ավար, ընտանյանց բռնաբարություն, եկեղեցյոց կողոպտում, օրինաց եղծում, կենաց գրավում»[14]: Սրվանձտյանցը ներկայացնում է նաև տիրող անիշխանությունը՝ «...Պակ չեյ-խերա հրամանով կըլլա, քահանայից իշխան սոքա են և վարիչ... Սոքա են երկրի առաջնորդ, դատավոր և այլն»[15]:

Նախապատրաստելով հայերի զանգվածային ջարդերին, սուլթանը տեղական իշխանությունների առաջ 1890թ. փետրվարին խնդիր դրեց զինաթափելու հայերին, մասնավորաբար՝ Տարոնի և Սասունի հայությանը: Էրզրումում սևագործ աշխատանքով զբաղվող Հաջի Ղազարը պատմել է. «Մուշի դաշտին վրա ապրող ժողովուրդը խեղճ է, ոչ զենք ունի, ոչ պաշտպան: Հայը զենք կրելու համար պիտի թուղթ ունենա փաշայեն»[16]:

Հնչակյան կուսակցությունը իր ստեղծման առաջին իսկ ամիսներից աշխատանք տարավ Արևմտյան Հայաստանում լուսավորչական շարժում ձևավորելու համար՝ համոզելով, որ արևմտահայության ազատագրական պայքարի հաջողությունը պայմանավորված է լայն զանգվածների կրթական-մշակութային մակարդակի բարձրացման միջոցով զանգվածային-համազգային շարժման ձևավորմամբ: Այդ նպատակով հայկական նահանգները ուղարկվեցին հիմնականում պոլսահայ մտավորականներ: Հասկանալի պատճառով առանձնակի ուշադրություն էր դարձվում Աղձնիքին, մասնավորապես Սասունին ու Տարոնին: 1888թ. Տարոն գնացին մի խումբ ճանաչված հնչակյան գործիչներ: Նրանց թվում էին Տամատյանը, Սարըյանը, Թումթելյանը, Պերպերյանը՝ մշո կեդրոնական վարժարանում աշխատելու: Մ. Տամատյանը նաև Տարոնի և Սասունի դպրոցների տեսուչի պարտականություններն էր կատարում: Կրթական այդ օջախները կարճ ժամանակամիջոցում վերածվեցին ազգային-հայրենասիրական ոգու ձևավորման կենտրոնների:

Հարկ է նաև նշել, որ Սասունի և Տարոնի հայության պայքարն այլացեղ հարստահարիչների դեմ դարերի պատմություն ունի, այն ավելի եռանդուն դարձավ 19-րդ դարակեսից: Մասնավորապես, սաստկացան հայ-քրդական բախումները: 1862-1863թթ. այդ բախումները ղեկավարում էին երկու դարբիններ՝ Ավդոն ու Մելոն: Կռիվը գնում էր խիանցի, բագրանցի, ռաշքոթանցի քրդական ցեղերի դեմ, ովքեր հարձակվել էին Տալվորիկի վրա ու փախցրել հայերի անասնահոտերը: 40-50 հայ կռվում է ավելի քան 800 քրդի դեմ ու կարողանում նրանց փախուստի մատնել և հետ բերել ավարը: Գլխավորն այն է, որ հայերը փակեցին քրդերի ճանապարհը դեպի Մուշ, ինչը հայ-քրդական հարաբերությունները վերածեց բացարձակ թշնամության[17]:

1877-ին մի խումբ քրդեր գնում են Շենիկ գյուղի ամառանոցը, որտեղ այդ պահին միայն կանայք էին: Վերջինները քրդերին կերակրում են: Ճաշելուց հետո քրդերը ցուցադրաբար գդալները չեն վերադարձնում, ինչը վիրավորում է կանանց. նրանք հարձակվում են քրդերի վրա: Շուտով տեղ են հասնում հայ տղամարդիկ, իսկ ապա՝ նաև

---

[13] Սրվանձտյանց Գ., «Թորոս աղբյուր», Հ. Բ., Կ. Պոլիս, 1884, էջ 207-208:
[14] «Արծվիկ Տարոնո», 1864, թիվ 1:
[15] Նույն տեղում:
[16] Սաքպեյան Լ., Այց Թուրքական Հայաստան, Թիֆլիս, 1890, էջ 244:
[17] Պետոյան Վ., Սասունն անցյալում և Սասունի ազատագրական շարժումները, Երևան, 2005, էջ 88-89:

քրդերը: Հայ-քրդական այդ բախումը, որը հայտնի է «Ծոթ դղալների կռիվ» անունով, ընդմիջումներով տևում է մոտ երեք ամիս: Գործը քննում է Մուշ քաղաքի դատարանը, որ վճռում է չորս հայ սպանվածներին հաշվել երկու քրդի դիմաց, իսկ երկու քրդի արյան գինը գանձել Շատախի հայերից:

1877-78ԹԹ. ռուս-թուրքական պատերազմն էլ ավելի սրեց հայ-քրդական հարաբերությունները: Թուրքերի կողմից այդ պատերազմին մասնակցում էր շուրջ 30000 քուրդ՝ քրդության չրջանում մեծ հեղինակություն վայելող չեյխեր Ջելալեդդինի, Օբայդուլայի, Ամըրի առաջնորդությամբ: Քրդական այդ ուժերը գլխովին ջախջախվեցին Տեր-Ղուկասովի և Շելկովնիկովի հրամանատարությամբ գործող Ռուսական բանակի կողմից: Շեյխերը, մասնավորապես Ամըրը, որոշեցին վրեժխնդիր լինել՝ Տարոնի և Սասունի հայությանը կոտորելու միջոցով: Սակայն հայերի հերոսական մաքառումը ձախողեց չարդարարների դիտավորության իրականացումը:

Լեռնաչխարհի ինքնապաշտպանությունը ղեկավարում էր Առաքելոց վանքի միաբան Հ. Հոլոյանը: Հայերին օգնում էին քուրդ մի քանի առաջնորդներ, մասնավորապես Ցեթուլահը, որը համերաշխ էր Տարոնի առաջնորդ Ա. Ալեքթջյանի հետ: 1870-ական թվականների վերջերի կռիվներում ձևավորվեց հայերի ինքնապաշտպանության ղեկավարների փայլուն համաստեղությունը, որն ուղենիշ հանդիսացավ հայդուկային շարժման ծավալման համար: Դրանք էին Գելիեգուզանցի Սադոն և Պետոն, սեմալցի Մարտեն ու Գորգեն, չենիկցի Մոսեյան Գրիգորը և տալվորիկցիներ Հակոբը, Պետրոսը, Թաթարն ու Գասպարը[18]: Առաքելոց վանքի վարդապետ Հովհ. Մուրադյանի հորդորներին՝ ձեռնպահ մնալ չեյխ Ամըրի հետ առճակատումից, Գորգեն պատասխանում է. «Անտարակույս կը մեռնեինք մարդու պես քայ-քայ ընկնելով, ոչ թե խեղճ մչեցու պես աղերսելով, խնդրելով: Դու մեզ մի լար, հայր սուրբ, լաց մչեցուն արևը»[19]:

Սա արդեն նոր մտածողություն ու կողմնորոշում էր՝ ոչ թե ապրելու իրավունք հայցել, այլ դրա համար կռվել, պայքարել: Հայությանն այդ նոր կեցվածքը հարկադրեց Մշո մութեսարիֆին հեռագրելու սուլթանին. «Բաղդադի խալիֆների ցեղակից ժառանգ հալի չեյխ Ամըր էֆենդին, կռվի դաշտից փախչելով իր բաշիբոզուկների հետ, բարձրացավ Դիարբեքիրի Սասուն լեռնաշղթան և մտադիր է այս օրերը բնաջինջ անել վաթսունի չափ հայ գյուղեր... Մենք Մշո մեջ ոչ մի զորք ու զափթիե չունինք, որ կարողանանք միջամտել և մեծ չեյխի դիտավորությունը խափանել: Սպասում ենք Ձեր բարձրագույն կարգադրության»[20]: Սա հարկադիր երկերեսանություն էր, որովհետև այդ նույն մութեսարիֆն էր հաղորդել Ամըրին անխնա վերաբերվել հայերին «ի փառս Ալլահին»: Ի դեպ, Ամըրին մութեսարիֆի հասցեագրած այդ նամակը տեղ չհասավ, որովհետև դարանակալած հայերը նամակատարից այն խլեցին: Ա. Ալեքթջյանը 1879Թ. նամակը կամսարականի միջոցով հանձնեց Ն. Վարժապետյանին, որի ջանքերով մութեսարիֆը պաշտոնանկ արվեց[21]:

Նույն այդ ժամանակաշրջանում է տեղի ունենում ընդհանուր թշնամու հետ համատեղ ուժերով կռվելու նպատակով Սասնո կռվող ուժերը կազմակերպորեն միավորելու առաջին քայլը: Խնդիրը լուծելու նպատակով ժողովի են հավաքվում Սասնո տանուտերերը և որոշում՝ ունենալ «գերագույն հրամանատարություն» և լեռնաչխարհի մարտական խմբերը բաժանել հետևյալ կերպ: Սրգեի ղեկավարության տակ եղած ուժերով պաշտպանվելու էր Անդոկը, լեռան «հյուսիսային փեշի պաշտպանությունը հանձնարարվում է Գելիեգուզանի, Աղբիկ, Հիթընք գյուղերի կռվողներին՝ Տեր-Քալչի հրամանատարությամբ: Անդոկի հարավային փեշերը, Սասնո քերդի, Խարզանի և Բշերիկի կիրճերի

---

[18] Պետոյան Վ., նշվ. աշխ., էջ 90:
[19] Սեյլան, նշվ. աշխ.:
[20] Նույն տեղում:
[21] Նույն տեղում:

պաշտպանությունն իրականացնելու էին Տալվորիկի զինյալները՝ Միր Հակոյի ղեկավարությամբ: Նորություն էր նաև ժողովի ընդունած կոչը ոչ միայն որպես այդպիսին, այլև իր ուղղվածությամբ: «Մենք՝ սասունցիներս հինգ հարյուր տարուց ավելի է՝ պահել և պահպանել ենք հայ ազգի խորտակված փառքի վեհությունը, հայ ժողովրդի անկախության և ազատության անթեղն ենք, անմար կը պահենք այդ սրբազան կրակը՝ ի զեն, ի մարտ... Խնուս է հասել հայազգի ռուսական գեներալ Քիշմիշովը. ռուսաց արծվադրոշը պիտի ծածանի Սասնա սարերու վրա»[22]:

Հայ-քրդական կռիվների այս չրջանն ավարտվում է հայերի փայլուն հաղթանակով, ինչը թուրքական իշխանություններին հարկադրում է ցուցադրել «հպատակների հանդեպ արդար» վերաբերմունք: Նոր մոտեցման արտահայտություններից էր Սասնո Խիանք գավառակի Ներջիկ գյուղի աշիրեթապետ Միրզայի հետ կատարվածը: Այդ քուրդը տեր էր 56 գյուղի և կեղեքում էր դրանց բնակիչներին: Երբ նա դավադրաբար սպանում է Ահրոնք գյուղի իշխան Գրգոյին, Խուլբի հայերը հարձակվում են նրա քյոշքի վրա և հրդեհում: Միրզան փախչում է: Հայերը Փասուրի իշխանություններից պահանջում են պատժել նրան: Դիարբեքիրի դատարանի վճռով Միրզան կախաղան է հանվում[23]:

Հաղթանակով է ավարտվում Խիանքի Բերմ և Բացի գյուղերի հայ գյուղացիների 40 օր տևած կռիվը, Սլեմանի 1500 հոգուց կազմված Փսանքի Մշգեղի գյուղացիների կռիվը, Սլիվանի ցեղապետ Բշարե Ջաթոյ դեմ: Շնորհիվ մշգեղցիների հերոսական մարտնչումների 42 գյուղ թոթափում է քրդական լուծը: Հայերի հաղթանակով են ավարտվում նաև Խարզանի, Տալվորիկի և Սասունի մի քանի ուրիշ գավառակների ընդվզումները քրդերի դեմ: Հավանաբար իրավացի է Վ. Պետոյանը, որ հայերի 1880թ. մղած կռիվների հաջողությունը պայմանավորում է նրանով, որ «թուրքական կառավարական գործը չէր միջամտում այս մարտերին, որովհետև ցանկանում էր և՛ հայերի, և՛ քրդերի թուլացում...»: Սակայն Վ. Պետոյանը սխալվում է, երբ այդ բախումներն անվանում է «Սասունի 1878-1880թթ. երկրորդ ապստամբություն»[24]: Դրանք ոչ թե ապստամբություն էին, այլ դիմակայություն, ինքնապաշտպանություն: Բոլոր նման դեպքերի առիթ տվողներն ու նախաձեռնողները եղել են քուրդ բեյերն ու թուրքական իշխանությունները. հայերը մշտապես հանդես են եկել հակահարված տվողի դերում: Այդպես էր նաև Բերմում 1886 թվականին, երբ Բաղեշի վալին և Մշո մութեսարիֆը մի քանի հարյուր զինվորների գլուխն անցած հանկարծակի խուժում են գյուղ, հայերը դերադասում են չդիմադրել, բայց դա նշանակություն չի ունենում՝ թուրքերը ամբողջությամբ տրվում են թալանին: Հյուրընկալվելով գյուղապետ Հարոյի տանը՝ փաշաներից մեկը պահանջում է, որ տանտիրուհին իրեն լողացնի թարմ կաթով: Հայերն անցնում են հակագործողությունների՝ թուրքերին հարկադրում հեռանալ Բերմից:

Հայի Ղազարի կարծիքով, ի տարբերություն Դաշտի հայերի, սասունցիները «քաջ են, քուրդ և տաճիկ անոնցմե կը վախենան», Սասունի հայերը «միայն հայերեն լեզու կը խոսին, պասը պինդ կը պահեն: Անոնք չեն թողնի, որ տաճիկ մը կամ քյուրդ վնասի իրենց: Եթե անոնցմե զմին քրդեր զարնեն սպանեն, այդ հայերը մեկի տեղ հիսուն քյուրդ կը ջարդեն: Եթե հայ մը փախավ կառավարութենեն անոնց մոտ, նրանք կը պախեն իրենց քով զանիկա, չեն մատնի... Տաճիկներ չեն խառնվի անոնց գործին մեջ»[25]:

Ելնելով այս ու նման վկայություններից, ինչպես նաև այն իրողությունից, որ սասունցիները, կորցրած հավատը թուրքական իշխանությունների հանդեպ, ամեն կերպ ձգտում էին վերջիններիս հետ գործ չունենալ՝ իրենք էին լուծում ներհամայնքային վե-

---

[22] Նույն տեղում:
[23] Սասունի Կ., Պատմություն Տարոնի աշխարհի:
[24] Նույն տեղում:
[25] Սարգսյան Լ., նշվ. աշխ., էջ 144-145:

ճերը, գյուղապետերի ղեկավարությամբ գործող համայնքային դատարաններն էին վճիռներ կայացնում քրեական հանցագործությունների կապակցությամբ, գյուղացիները ինքնակամ էին մուծում հարկերը, որոշ հեղինակներ խոսում են լեռնաշխարհի քաղաքական կիսանկախության, պետության և սասունցիների «հարաբերությունների խզման» մասին: Դժբախտաբար իրականությունն այլ էր: 1890-ականների սկզբներից հարկերի գանձման, քրդական հափշտակությունների, կաշառակերության ու բացարձակ թալանի հետևանքով լեռնաշխարհի հայ բնակչությունը տնտեսապես հյուծվեց, նրա վրա շատ ծանր էր անդրադառնում նաև հայ-քրդական առճակատումը, որովհետև բոլոր պարագաներում իշխանությունները պատժում էին հայերին:

90-ական թվականների սկզբներին հայ ազգաբնակչության համար ստեղծված անտանելի վիճակը «Հնչակ»-ը ներկայացնում է հետևյալ կերպ. «Ամեն օր մի գյուղ թալանվում է: Ամենուրեք թալան և սպանություն: Վարդենիս, Արտոնք լրիվ Անիի նման են դարձել: Թուրքերի դեմ կռիվ եղավ, զորքը հասավ, հայերին ցիրուցան արեցին, ոմանց սպանեցին, ոմանց անհետ կորցրեցին, հիմնահատակ են արվել շատ գյուղեր: Բացի Բերդակից ուրիշ տեղեր ոչխար չթողեցին և յուրաքանչյուր գյուղից օրական 3-4 մարդ սպանում, տները կողոպտում են...»[26]:

Ժամանակակիցներից մեկը սասունցիների ապրուստը նկարագրում է. «Ո՛չ կարգին հագուստ, ո՛չ ուտելիք, ո՛չ անկողին և ո՛չ էլ բնակարան... Գերակչիռ մասի հագուստը ցնցոտիներն են, որի մեջ մի թելը եթե քաշես, 40 կարկատան միանգամից կթափվի: Ուտելիքն է կա՛մ խոտեղեն, կա՛մ թան ու թանհատ և կա՛մ մի պատառ սև հաց: Անկողինը փափուկ խոտն է կամ անչարժ հողե մահիճը, մեզարի (չալի) վերմակը: Իսկ բնակարանը բաղկացած է գետնափոր ախոռից, մարագից կամ գոմից»: Սերմ չկար, «հինգ արտից հազիվ մեկն էր ցանվում, որից մի մասն էլ քրդերն էին փչացնում»: Հարկահավաքները մոլեգնում էին: «Կանանց վրայի լաթերն անգամ հանելով՝ վաճառում էին տուրքի դիմաց»:

Ականատեսների, մասնավորապես՝ անգլիացիների (Մ. Շիփլեր, Է. Դիլոն) վկայություններով՝ որևէ ապստամբություն Սասունում տեղի չէր ունեցել: Թուրքերի հետապնդած նպատակը ոչ թե Մուրադին բռնելը, ոչ թե հայերի երևակայական ապստամբությունը ճնշելն էր, այլ ամբողջ լեռնաշխարհի հայերի բնաջնջումը: Հարկային հարստահարությունների դեմ հայերը նախկիններում ևս բազմիցս ըմբոստացել էին: Ըմբոստությունները դաժանորեն ճնշվել էին, սակայն դրանք չէին հանգեցրել զանգվածային սպանությունների: Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչ Գոմիանկովսկին գրում է. «Հայերն առավել ուժեղ, դիմացկուն, խելացի, իրենց ազգային ոգուն ու կրոնին մոլեռանդորեն կառչած ազգ են: Նրանք եռանդով պաշտպանվում են ու միշտ արյունոտ վրեժ են լուծում»:

Այո, 1891-94 թվերին Սասունի հայությունն իսկապես «եռանդով պաշտպանվեց և արյունոտ վրեժ լուծեց»: Այն, որ Սասունը 19-րդ դարի վերջին քառորդում դարձավ Արևմտյան Հայաստանում ծավալված դժբախտ իրադարձությունների սկզբնատեղին ու գլխավոր թատերաբեմը, ամենից առաջ հետևանք էր հենց այն իրողության, որ Սասունում մեկտեղվեցին հայ ժողովրդի հանդեպ համիդյան քաղաքականության ամենագարշելի դրսևորումները: Ճնշումների օսմանյան համակարգը նույնությամբ չէր գործում ոչ միայն տարբեր նահանգներում, այլև տարբեր սանջակներում, կազաներում և նույնիսկ նահիեներում: Տարոնի այն գյուղերն ու նահիեները, որտեղ հայերը մեծամասնություն էին կազմում (Շատախ, Տալվորիկ) և որտեղ չարունակում էին գործել իշխանական տների ավանդական սովորություններն ու բարքերը, հայերը որոշ ինքնուրույնություն ունեին, իսկ այնտեղ, որտեղ ցրված էին քրդական հոծ բնակչության մեջ, նրանց վիճակն ավելի քան անտանելի էր:

---

[26] «Հնչակ», 1890, թիվ 4:

Դրութիւնն ավելի վատթարացավ 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ և դրանից հետո, երբ քրդերն ու նրանց չեխխերը սանձարձակ վայրագութիւնների կատարում»: Պատերազմի սկզբին Մշո մութեսարիֆ Սայիդը հայերից իմդաղ (դրամական հատկացում) պահանջեց: Հայերը հայտարարեցին, թե բացի հարկերից, այլևս անկարող են որևէ վճարում կատարել: Սակայն նրանց ի վերջո հարկադրեցին իմդաղ վճարել: Նույն այդ ժամանակ Բաղդադից ու Դիարբեքիրից ռազմաճակատ մեկնող թուրքական զորքերն անցան Տարոնով և մատակարարվեցին հայերի հաշվին: Ծուրաքանչյուր տուն կերակրում էր 5-20 զինվորի, ինչպես նաև նրանց ձիերին: Բանակի հրամանատարութիւնը տեղեկանք տվեց, որ այդ ծախսերը փակվելու էին հարկերի հաշվին: Պատերազմական բեռնափոխադրումները ևս կատարում էին հայ գյուղացիները իրենց քաշող ուժով:

Ռուսների կողմից Կարսի ու Էրզրումի գրավումից հետո՝ նահանջող բանակը նորից մտավ Տարոն ու կրկնեց ռազմաճակատ մեկնելու ժամանակ կատարվածը: Ազգաբնակչութիւնը հարկադրված վաճառքի հանեց իր ունեցվածքը: Իսկ երբ զորքը թողեց Տարոնը, հայերին լրիվ թալանեց, տարավ նույնիսկ կանանց գլխաշորերը:

1880-ին Մշո մութեսարիֆը հայտարարեց, թե զորքերի վրա կատարված ծախսերը կառավարութիւնն չի կարող հաշվել հարկերի դիմաց և պահանջեց մուծել անցած երկու տարիների հարկերը: Բ. Դուռը չուտով սահմանեց, որ արական սեռի քրիստոնյան, սկսած ծննդյան օրից, ամեն տարի պետք է վճարեր «նուֆուզ», ինչը դարձավ հայերի թշվառութիւնի գլխավոր պատճառներից մեկը: Եթե մինչև 1877 թիվը յուրաքանչյուր ծուխ վճարում էր մեկ մեջիդ նուֆուզ (բաղալիթե-զինվորական հարկ), ապա պատերազմից հետո՝ տասը մեջիդ:

Կյանքի ծանր պայմանների պատճառով սասունցին արտագաղթում էր, պանդխտութիւնի մեկնում Ռուսաստան, ինչպես նաև կայսրութիւնի ծովափնյա քաղաքները, մասնավորապես Կ. Պոլիս: Է. Դիլոնը հանդիպում ու զրույց է ունենում 38 տարեկան սասունցի համալի հետ:

...«Նա կանգնած էր մի դաշնամուրի մոտ, կամրջի մեջտեղը և սրբում էր ճակատի առատահոս քրտինքը,— պատմում է Դիլոնը:

— Մենա՞կ ես տանելու դաշնամուրը,— հարցրեցի ես,— չէ՞ որ շատ ծանր է: Եվ ո՞վ է այն դնելու չալակիդ:

— Մենակ եմ տանելու: Ճիշտ է, ծանր է, բայց հենց չալակիս դրի, այլևս հոգ չէ, իսկ չալակիս դնելուն օգնում է անցորդներից որևէ մեկը:

— Սասունից որևէ լուր ունե՞ս, կարապետ:

— Ունեմ, էֆենդի, եղբայրս Մուշից գրում է: Երկու շաբաթ առաջ եմ ստացել երկու տող... Սասունում կոտորած ամեն օր էլ պատահում է, տարբերությամբ, որ այս անգամ մերոնք առաջվանից փոքր-ինչ ավելի ձայն հանեցին և ուրիշ ոչինչ:

— Ուրեմն, թուրքը ձեզ հետ շա՞տ վատ է վարվում:

— Մենք ունեինք ոչխար և այծ, մի կտոր էլ հող և կարող էինք փաշայի նման ապրել: Սակայն մեր ընտանիքը ցիրուցան եղավ, և ես էլ Կ. Պոլիս եմ ընկել այս մեքենայի նման ծանր բեռներ կրելու համար: Մի՞թե կարծում եք, որ ես կթողնեի տունուտեղս, դառներս և կգայի այստեղ՝ սև ստրուկի նման չարչարվելու, եթե հարկադրված չլինեի: Եվ մի՞թե ամեն օր այստեղ մի զույգ եզի բեռ կքաշեի միայն մի բանի՝ գոյութիւն ունենալու չափ հաց վաստակելու համար: Եթե մեր երկրում հնար լիներ ապրելու, հենց այսօր կվերադառնայի տուն: Սասուն, Սասու՛ն: Ի՛նչ է Սասունը: Ամբողջ Հայաստանը Սասուն է: Բայց լրտեսը մեզ լսում է: Լավ կանենք, որ բաժանվենք:

*Կարապետը, նշան անելով երկու անցորդ մշակների, ուղտի նման չոքեց, և վերջիններս բեռը նրա մեջքին բարձեցին: Նա փոքր-ինչ դանդաղեց, ապա ուժգին ցնցումով բարձրացավ և կամուրջով հանգիստ առաջ գնաց՝ թաչկինակը ձեռքին»*[27]:

*Մշո առաջնորդ Բաբկեն վարդապետի կազմած տեղեկագրում կարդում ենք, «Հայերի նկատմամբ քրդերի կողմից գործադրվող հարստահարություններն արդեն հանրահայտ իրողություններ են: Սակայն այս հարստահարությունները վերջին տարիներին կազմակերպված տեսք ստացան, որովհետև բոլոր տեսակի խժդժությունները գործադրվում են անարգել և առանց պատասխանատվության ենթարկվելու: Ցուրաքանչյուր հայ գյուղին քուրդ աղա ամրացրին: Վերջիններս կա՛մ բնակություն հաստատեցին գյուղում և կա՛մ իրենց ենթակա անձանց ուղարկեցին, ու չմնաց որևէ հայկական գյուղ, որտեղ մահմեդականներ չբնակվեին: Սրանց առաջին գործը եղավ հայերի արտերի ու տների բռնագրավումը, որովհետև այդ անելու համար ունեին բոլոր դյուրություններն ու միջոցները: Հայկական գյուղերի աղաները, նրանց արբանյակներն ու սպասավորները իրենց բոլոր պետքերը բավարարում են բռնի միջոցներով, առանց փոխհատուցում տալու: Դիմադրողները սպանվում են: Հայերը տարապարհակ աշխատանքով վարում են աղաների արտերը, հնձում ցանքսերն ու խոտհարքերը: Հայ կանանց ու աղջիկների բռնաբարություններն ու առևանգումները հայտնի իրողություններ են: Դրանք չատ ավելի հաճախակի ու տիրապետող են դարձել, քանի որ գիշեր ու ցերեկ, որ տունը ցանկանան, դռները կոտրելով կմտնեն և անարգել ամեն տեսակի չարիքներ կգործեն: Բերքը հասնելու ժամանակ քրդերը թափվում են հայերի արտերը, հափշտակում ու տանում են խուրձերը, կալերը չափելու ժամանակ բռնությամբ կալմաստ անունով տուրք են վերցնում: Սասունի հայերը հարկադրված են «խաֆիրություն» անունով «տուրք տալ քուրդ աղաներին, ովքեր այս գավառակը իրար մեջ են բաժանել»:*

*Քուրդ ցեղապետերը հայ խաֆիրներին վաճառում ու գնում էին: Հայերը խաֆիրգերիներ էին: Երբ մի ցեղապետ թալանում կամ սպանում էր ուրիշներին պատկանող հային, վերջինս էլ հարձակվում էր մյուսին պատկանող հայերի վրա, ավեր ու սպանդ էր գործադրում, և այսպես միշտ հայն էր զոհը*[28]:

*Երբ Սասունի Հիթընք գյուղի հայերը հրաժարվեցին իրենց հողերը տալ աղաներին, գյուղը հարձակման ենթարկվեց, տներն այրվեցին, և երևելիներից հինգ հոգու հոչոտված դիակները գետը նետեցին: «Հայաստանը,— գրում են Խրիմյան Հայրիկին,— իր բազմադարյան պատմության ընթացքում այս տեսակ հալածանքի դեռ չէր ենթարկվել: Այսօրվա հալածանքի բուն նպատակը ոչ այլ ինչ է, եթե ոչ բնաջինջ անել հայ ժողովուրդը իր մայրենի երկրում... Նրան զրկում են գույքից, կյանքից, պաշտոնից, նրա աչքի առաջ լկում, բռնաբարում են անմեղ կույսերին, հարսներին, մորթում են նորաբողբոջ երեխաներին, այրում, հրկիզում են բնակարանները, ավերում դաշտերը, առևանգում հոտերը, մի խոսքով ամբողջ Հայաստանը դարձել է սպանդանոց...»*[29]: *«Լումա»-ն ի մի է բերում այն գործոնները, որոնք Սասունի ու, ամբողջությամբ վերցրած, Տարոնի ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև ազգային-մշակութային կյանքը փակուղի մտցրեցին:*

*Տարոնում «տերության օրենքները գրեթե չեն գործադրվում և չատ դեպքերում կառավարության թուլությունը ժողովրդի թշվառության և դժգոհության պատճառ է դառնում: Այս երկրի հայերի աղքատության պատճառն են՝ արքունի հարկերի հավելյալ ծանրություններն ամենատարբեր անուններով... անխուսափելի կաշառքները և սարսափելի տոկոսները, դրանց վրա ավելացրած՝ ձրի ճանապարհորդող քրդերին, ժանդարմներին և այլոց ու նրանց ձիերին, նաև զորքերին և մեծաթիվ գաղթականներին կերակրելը: Այս բոլորը ժողովրդին այնքան են ընկճում, որ նա ուր էլ որ աշխատանքի է գնում,*

---

[27] *"Daily Telegraph"*, 27.02.1895.
[28] «Դրոշակ», 1901, Հունվար:
[29] ԳԱԹ, ֆ. Առաքելյան Հ., գ. 1944, թ. 1:

անհնար է լինում պարտքերից ազատվել: Սրանից զատ երկրի աղքատացման գլխավոր պատճառներն են նաև Մշո ժանդարմերիան, մուլթեզիմները, մեջլիսի աղանները, ղազիներն ու քրդերը:

Ժանդարմները, որոնցից շատերը քուրդ են կամ քրդի սերունդ, ձրի ուտում են ու ժողովրդին կեղեքում, և եթե հայը բողոքի, հնարավորություն ունեն Մուշում իրենց պաշտպան աղաների կամ քուրդ ազգականների ու հենց սեփական ձեռքով նրան վնաս հասցնելու:

Մուլթեզիմներն ու աղնամճինները ևս մեծամեծ գեղծումներ են կատարում, խստագույնս պահանջում են և սահմանվածից շատ ավելին են պոկում, հափշտակության սիրահար են և քրդերի նման կեղեքիչ: Սակայն, քանի որ նրանց մեծ մասը Մշո կառավարության անդամների ազգականները կամ ընկերներն են, այդպիսիների վրա գանգատվելը ևս խիստ դժվար ու երբեմն էլ վտանգավոր է: Մշո աղաները օրենքը արդարությամբ գործադրելուն չեն հսկում, քրիստոնյաներին զրկում են հավասարությունից, անտեսում են նրանց վկայությունները, նրանց իրավունքներն ի չիք դարձնում... խիստ կաշառասեր են, մուլթեզիմներին պաշտպան, նրանց գողությունները քաջալերող և նրանց ձեռքով երկիրը կողոպտում են, քրդերի նման աշխատում են ամեն ինչ ձրի անել տալ... քրդերի և թուրքերի հետ դատի մտնելը հային հաջողություն չի բերում, նրանց կատարած հանցագործությունը հաստատելն ու դատը շահելն անհնար է: Քրդերը..., օգտվելով կառավարության թուլությունից, դարձել են երկրում երկրորդ կառավարություն...»[30]:

Սասունում ու հարակից շրջաններում ևս հարկերը բացարձակապես անարդար էին բաշխվում, իսկ դրանց հավաքման եղանակները հրեշավոր էին: Հարկ էին մուծում նաև մեռածների համար, դրա դեմ սասունցիների բողոքներին հետևում էին բանտարկությունները: Մահմեդական հողատիրող ձեռքին էր ոչ միայն տնտեսական, այլև հասարակական-քաղաքական կյանքը: Հողատերը նաև դատավոր էր՝ իր անձի մեջ միավորում էր տեղական իշխանության ամբողջ համակարգը: Իսկ դա նշանակում էր, որ քրիստոնյա ռայան անելանելի կացության մեջ էր ոչ միայն տնտեսական, այլև իրավա-քաղաքական վիճակով: Ընկնելով փակուղու մեջ՝ նա դրանից դուրս գալու միայն մի ուղի էր տեսնում՝ լքել հողը, որը թաքուն էր արվում: Իսկ թաքուն սեփականատիրական անորոշ հասկացություն էր, ինչը դուներ էր բացում պաշտոնատարների կաշառակերության և ինքնագլխության առաջ: Արդյունքում թաքուն տարածվում էր ոչ միայն լքված հողերի ու սեփականության, այլև հայերին պատկանող բոլոր այն տարածքների, շինությունների ու գյուղերի վրա, որոնք ցանկալի էին մահմեդականին: Եվ ամբողջ գյուղեր էին հայաթափվում ու թաքուն միջոցով սեփականացվում:

Սասունում, ի տարբերություն մյուս գավառների, ընտանիքը ոչ միայն ամուր էր, այլև բազմանդամ: Գյուղերի բնակչության արագ աճի չնորհիվ ստեղծվում էին նոր թաղեր, որոնք ժամանակի ընթացքում վերածվում էին առանձին գյուղերի ու գյուղախմբերի: Տներն իրարից հեռու էին, հաճախ անհնար էր լինում որոշել գյուղերի սահմանները: Դրա հետևանքով խառնաշփոթ էր գյուղերի տների թվի հարցում: Օրինակ, ոմանք Գելիի տների թիվը նշում են 80, իսկ ուրիշները՝ 210:

Շատախում հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր, Տալվորիկում երկաթ կար, Անդոկում՝ ոսկի: Ոչ մի գյուղում խանութ կամ կրպակ գոյություն չուներ, գնումները կատարում էին Մուշում կամ Հազոյում: Դրամը բացակայում էր: Գործ ապրանքափոխանակություն էր:

Այս ամենով հանդերձ, ընդհանուր առմամբ, սասունցիները իրենց ավելի ինքնուրույն ու վստահ էին զգում, քան մյուս շրջանների հայ բնակչությունը: Սասունում թույլ էր թուրքական իշխանությունների ներկայությունը: Դրան նպաստում էին թե՛ Արծվաբնի դիրքն ու ռելիեֆը և թե՛ քրդերի հակազդեցությունը, ովքեր պետական իշ-

[30] «Լումա», 1899, դիրք Ա., էջ 126:

խանության ներկայության մեջ տեսնում էին հարված իրենց թե՛ եկամուտներին և թե՛ արտոնություններին: Դեր էր խաղում նաև այն, որ Սասնա հայերը համախումբ էին, քրդերի հետ հարաբերություններում՝ միանգամայն անզիջում: Ճիշտ է, քրդերը Սասունում նույնպես ցեղային-աշիրեթական կյանքով էին ապրում, այստեղ ևս թոռունները մեծ ուժ էին, իրենց ենթակայության տակ ունեին բեյեր և աղաներ, տեր էին բերդերի, զինված ուժերի, դոլմաների, սակայն խուսափում էին սասունցիների հետ առճակատման գնալուց, որովհետև վերջինները զինված էին, գյուղերում գործում էին մարտական խմբեր, պաշտպանական համակարգ[31]: Դեռ ավելին, քրդերը ձգտում էին հայերի հետ համագործակցել իշխանությունների դեմ, նաև սիրաշահել, որպեսզի նրանք հարկերը վճարեին ոչ թե պետությանը, այլ իրենց:

«Ատամ ընդ ատաման» սկզբունքն էր սասնահայության գոյատևման հիմքը, քանի որ այդ սկզբունքը մի այնպիսի բարբարոս պետությունում, ինչպիսին Թուրքիան էր, նշանակում էր. «Կրակ էր բռնվել ողջ Սասունում, ծուխն էր բռնել երկինք ու երկիր»[32]: Այսինքն՝ սասունցին ոչ թե հանձնվում էր ջարդարարների ողորմածությանը, այլ պատերազմում էր նրանց դեմ:

Տարոնի հայ գործիչներից չատերը կռահում էին, որ սուլթանը Սասունում արյան բաղնիք էր նախապատրաստում: Կոտորածից դեռ երեք տարի առաջ տեղի թեմի առաջնորդ Ն. Խարախանյանը Բիթլիսի վիլայեթի վիճակի մասին մի տեղեկագիր է ուղարկում Կարինի առաջնորդ Ղ. Շիշմանյանին՝ Անգլիայի փոխհյուպատոս Հոլվորդին հանձնելու համար: Տեղեկագրում, որը մի քանի տարի անց՝ 1895թ. ապրիլի 13-ին տպագրվեց "Daily Telegraph"-ում, ուղղակի ասվում է, որ սուլթանը նախապատրաստվում է ջնջել Սասունի հայ բնակչությանը[33]:

Ելքը ծրագրում էր դա իրականացնել քրդերի ձեռքով: Թուրքիայում երկար տարիներ դիվանագիտական աշխատանք կատարած արքունական խորհրդական Սմիռնովի կազմած զեկուցագրում մանրամասն շարադրված է, թե ինչ միջոցներով սուլթանական իշխանություններին հաջողվեց ստեղծել հայ-քրդական հակամարտություն: «...Դիարբեքիրից ամառային յայլաները եկած բեքրանլի ցեղի քուրդ աշիրեթապետերը հայերից պահանջել էին վճարել սովորական հարկերը և, մերժում ստանալով, քշել էին հայերի անասունները: Հայերը դիմել էին Սասունում տեղակայված 32-րդ գնդի 4-րդ գումարտակի հրամանատար Սալիհ էֆենդուն, որպեսզի իրենց պաշտպանի: Սալիհ էֆենդին, չնայած հայերից փող էր վերցրել, քրդերին պաշտպանեց... Հայերը, տեսնելով, որ իրենց խնդրանքներն անարձագանք են մնում, ետ են խլում անասունները: Ընդհարման ժամանակ սպանվում է մի քանի մարդ: Դրանից հետո կայմակամն է գալիս հարկերը (այս անգամ արդեն՝ պետական) հավաքելու: Հայերը խնդրում են հարկահանությունը հետաձգել, քանի որ առանց քաշող ուժի բերք հավաքել չեն կարողացել և դրամ չունեն: Կայմակամը հրամայում է ձերբակալել մի քանի հայի, բայց ժողովուրդն ազատում է ձերբակալվածներին: Կայմակամը փախչում է Մուշ ու զեկուցում հայերի ապստամբության մասին»[34]:

Եվ սկսվում է:

Մաքքոլն իր «Անգլիայի պատասխանատվությունը Հայաստանի առաջ» աշխատության մեջ գրում է. «... Բոլոր լուրերը մի բանում համընկնում են՝ Հայաստանում օրերս կատարված դազանությունները առաջացել են մասամբ նրանից, որ հայերը փորձել են իրենց ու իրենց ունեցվածքը պաշտպանել քրդերից, մասամբ էլ այն բանից, որ հայերը հրաժարվել են կառավարական հարկերը վճարել, որովհետև զուրկ էին այդ հնարավո-

---

[31] Лазарев Я., նշվ. աշխ., էջ 22:
[32] «Արձագանք», 15.02.1895:
[33] «Մուրճ», 1895, թիվ 7:
[34] АВПР, ф. Политархив, Армянский вопрос, янв.-июнь, 1895, л.л. 53-75.

*րությունից: Դրա հետևանքով նրանք զրկվեցին նաև ապրելու իրավունքից, և ջարդերը համարվեցին օրինական»*[35]:

*Ֆր. Գրինի «Հայկական ճգնաժամը և Թուրքիայի տիրապետությունը (Սասունի ջարդը)» աշխատության առաջաբանում Լաուելը, նշելով, որ ինքը լավ է ճանաչում հայ ժողովրդին, գրում է, թե Թուրքիայում «մատի ամեն մի շարժմանը հետևում է սոսկալի վրեժխնդրություն», թե հայերի հեղափոխությունն անհնար է: «Իրականում նրանք նման բան չեն էլ մտածում: Գոյություն ունեն առանձին ագիտատորներ, բայց նրանց նպատակն էլ բացառապես այն է, որ քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը հրավիրեն իրենց ժողովրդի հեծեծանքների վրա, որոնք նույնիսկ Աստված չի լսում»*[36]: *Օտարերկրացի գործակալներից մեկը Բիթլիսից գրում է. «Կառավարությունը կասկածում է, որ Տալվորիկ գյուղում ապաստան են գտել ագիտատորներ և հրաման է տալիս քրդական մի քանի առաջնորդների հարձակվել այդ չրջանի վրա: Ընդ որում, նա իր վրա է վերցնում քրդերի կողմից կատարվելիք բոլոր սպանությունների պատասխանատվությունը և խոստանում նրանց տալ ամբողջ ավարը»*[37]:

*Քուրդը խիզախ էր, երբ հայն անզեն էր, իսկ երբ զինված էր, իսկույն խիզախաթափ էր լինում: Սուլթանը դա լավ գիտեր և հրամայեց քրդի երկչոտությունը հաղթահարել ոսկու ուժով: Արդյունքը սպասեցնել չտվեց, քուրդ ցեղապետերը մեկը մյուսի հետևից կանգնեցին սուլթանական հայացինյալ քաղաքականության դրոշի տակ:*

*Մի ուրիշ աղբյուր իրավիճակը հետևյալ կերպ է ներկայացնում. «Մի քանի տարիներից ի վեր Տալվորիկը և, նրա օրինակին հետևելով, Գելիեգուզան, Իշխանձոր, Աղբիկ, Հիթընք, Շենիկ, Սեմալ հայաբնակ գյուղերը վճռապես մերժում են կառավարությանը տուրք և չրջակա քուրդ ցեղերին խաֆիրության երկու տարվա հարկը վճարել»: Այս գյուղերի օրինակին հետևում են մյուսները ու ամենուրեք «հալածում են հարկահան ոստիկաններին: Փասուրի կայմակամը ձերբակալում է Խուլբի ու Խիանքի բոլոր հայ մեծամեծներին», իսկ տալվորիկցիներից պահանջում է հանձնել Սասունի ազդեցիկ անձանց: Սասունցիները ոչ միայն մերժում են, այլև սպանում մի ոստիկանի և 12 քրդի: Մյուսները փախուստի են դիմում*[38]:

*Բնականաբար, թուրք-քրդական չարդարարներին սասունցիների ընդդիմությունը պատերազմական ծավալուն կռիվների բնույթ չուներ: Այդ մասին «Դրոշակ»-ը գրում էր, որ ոչ միայն սասունցիների, այլև ամբողջ արևմտահայության կռիվը օսմանյան բռնատիրության դեմ եղել է պարտիզանական կռիվ, որովհետև Սասունը հնարավորություն չուներ ստեղծելու կանոնավոր կռվող ուժ և ոչ էլ ի զորու էր մեծ ճակատամարտերի: Հայդուկություն՝ ահա պայքարի գլխավոր ուժը*[39]: *Նաև իրողություն էր, որ հայն այլևս երեկվա անմռունչ ռայան չէր, այլ մարտականորեն տրամադրված ուժ՝ պատրաստ մարտնչելու ոչ միայն բնաջնջման վտանգի դեմ, այլև մարդավայել ապրելու իրավունքի համար:*

*Գործողությունները զարգացան հետևյալ կերպ: 1890թ. սուլթանական կառավարությունը Սասունը համարեց ապստամբական չրջան և լեռնաչխարհին հարող գավառներում ռազմական ուժեր կենտրոնացրեց, որոնք դանդաղ, բայց հետևողականորեն ներթափանցում էին Սասուն և տիրանում ռազմավարական կարևոր կետերին: Դիարբեքիրի վիլայեթից Տարոն տեղափոխվեցին քյոշքեր քրդական վայրագ ցեղերը: Ավազակներին պատժելու անվան տակ զորքեր բերվեցին: Բիթլիսի կուսակալ Թահսին Զիլանի և Տատերիկի չեյխերին սուլթանի անունից հանձնարարեց կրոնական պատերազմ սկսել սասուն-*

---

[35] *Положение армян в Турции ...*, стр. 133.
[36] *Նույն տեղում*, էջ 225:
[37] *Նույն տեղում*, էջ 125:
[38] ԳԱԹ, ֆ. Աուաքեյան Հ., պ. 165, թ. 1:
[39] «Դրոշակ», 1892, թիվ 2:

ցիների դեմ: Բայց քրդերը դրան պատրաստ չէին, և ո՛չ 1891-ին, ո՛չ էլ 1892-ին սրբազան պատերազմ չսկսվեց: Հայերը կարողացան թոռուններին ահաբեկել, թե հարձակման դեպքում իրենց արյան հետ թափվելու է նաև քրդերի արյունը: Այնուամենայնիվ հարձակումներ ու բախումներ տեղի ունեցան: Կ. Պոլսից «Հնչակ»-ին գրում են.

«Մշո դաշտը քրդերի, չերքեզների և քեոչքների անդադար ավարառության ու ավերմունքի վայր է դարձել, նրանց աջակցում են թուրք զինվորները՝ խաղաղություն և բարեկամություն հաստատելու պատրվակով: Տեղ-տեղ պահեստայիններին զենքի են կոչում: Արաբկիրից մի զինվորական վաշտ է մեկնում Բաղեշ... Հայերի ու թուրքերի միջև անվստահությունն ահագնանում է, և տարակույս չկա, որ երկուստեք կոտորածների երկյուղը բոլորովին անտեղի չէ և վաղ թե ուշ պետք է իրականանա»:

Բոլոր գյուղերում լրտեսներ ու ոստիկաններ էին վխտում: Մուշը փաստորեն պաշարված էր: Կոփ գյուղ զորքեր բերվեցին, մի քանի տներ վերածվեցին զորանոցի: Ոստիկանների խժդժությունների հետևանքով մեծ թվով գյուղացիներ ցիրուցան եղան[40]: Սակայն իշխանությունների այս սադրիչ ու ահաբեկող քայլերը սասունցիներին ոչ թե ընկճում, այլ համախմբում էին: Սասունցին զենքով պաշտպանվելն ընտրեց որպես «փրկության միակ ճանապարհ»: Գործունեության նշանաբան դարձան Արաբոյի խոսքերը. «Հային այնքան պետք է ուժեղացնել, որպեսզի նրա աստղը պայծառանա, և ուժ ունենա մինչև Շամ քշելու այս եկվոր անօրեններին»: Սասունցիները մարտական խմբեր էին կազմակերպում:

Առաջնային նշանակություն ուներ աշխատանքը քրդերի շրջանում: Սկզբում դա հաջողություն ունենում էր: Խնդրի լուծմանը օգնում էր նաև այն, որ քրդերի ու սասունցիների բարքերի ու նպատակների միջև ընդհանուր բաներ կային: Սասունցիները (հայերը՝ ընդհանրապես) պահպանել էին հեթանոսական կրոնի շատ սովորություններ, մոգերին առնչվող պատկերացումներ: Սասունցին պահպանել էր մատաղի սովորությունը, ոչխարը կամ կովը մորթելուց առաջ դրանց տալիս էր քահանայի օրհնած աղ, մատաղի միսն անպայման բաժանում էր հարևաններին ու համագյուղացիներին: Նույն հեթանոսական ակունքներից էր բխում սասունցիների երկյուղալի հարգանքը կրակի, արեգակի, օջախի համդեպ: Նրանք ևս խոզի միս չէին ուտում: Սասունի ծայրամասերում ու հարակից շրջաններում հայ կանայք օտար տղամարդկանց ներկայությամբ ծածկում էին իրենց դեմքի 3/4-ը, գրել-կարդալ չէին սովորում, տղամարդու հետ խոսելու իրավունք չունեին, ընտանիքում տնային աշխատանքներից բացի, խնամում էին անասունները:

Սասունցիների մեծ մասը քրդերեն գիտեր, իսկ տեղի քրդերն էլ՝ հայերեն: Շատ հայերի ու քրդերի միջև գոյություն ունեին քիրվոյական կապեր՝ հենված փոխադարձ վստահության ու հարգանքի վրա: Եկվոր քրդերը հայերից շատ բաներ էին յուրացրել: Նմանություններ կային նաև հագուստի, պարերի, երգերի և այլն: Այսինքն՝ Սասունում բարենպաստ հող կար հայերի ու քրդերի համերաշխության համար: Սակայն չստացվեց: Քրդերն ասում էին. «Մենք նույնչափ մահմեդական ենք, որքան թուրքը և մեզ էլ բաժին պիտի հասնի քրիստոնյայի աշխատանքից: Մենք ապրում ենք մեր սրով ու դաշույնով և անհրաժեշտ է, որ մեկը աշխատի, և մենք արմտինք, յուղ, մեղր և ոչխարներ ուննանք: Այդպես որոշել է Մարգարեն և նա գիտի, թե ինչու: Քրիստոնյաները գոյություն ունեն դրա համար... Նրանք պարտավոր են մեզ համար աշխատել, որովհետև գյավուր են... միշտ այդպես է եղել և այդպես էլ կմնա... չէ՞ որ մենք նրանց պաշտպանում ենք... Գյուղից դուրս գալիս իմ միակ նպատակն է ավար ճեռք բերել, լավ կարպետներ, փող, տավար և սիրուն կին...»[41]:

Քուրդն անհոգ էր, քաջ, միաժամանակ գողության սիրահար: «Մորթելն ու սպանելը,— ասում էր նա,— գուցե և անախորժ են, բայց դրանցում ահագին զվարճություն կա»:

---

[40] «Հնչակ», 1890, թիվ 10:
[41] "Daily Telegraph", 03.04.1895.

Սակայն քրդի քաջությունը երևակայական էր: Նրանք Սասունում քանիցս պարտություն էին կրել նույնիսկ տասնյակ անգամներ փոքրաթիվ հայերից: «Քրդի սիրտը. երկնաքարի նման կարծր է: Սակայն նրա անգթությունը ավազակի անզուսպ կրքերի սանձակտոր bête humaine-ի անգթություն է: Մինչդեռ թուրքերինը... շատ նուրբ դժոխային և հաշվենկատ գազանություն է: Թուրքը սառն է, ժպիտը դեմքին, դավաճան, զգուշ ու նենգ: Նա բարեկամաբար կարող է աջ ձեռքը մեկնելու պահին ձախով մերկացնել դաշույնը: Դրան հակառակ, քուրդը տաքարյուն է, վարվուռն, ամեհի, նրա անգթությունը չի ծագում նպատակին հասնելու ձգտումից: Հայաստանում քուրդը կռանի, իսկ հայը սալի դեր են խաղում: Հայերը բնակվում են հարթավայրում, իսկ քրդերը՝ սարերում, բացի Բեչերիկից ու Սլիվանից»[42]:

«Քրդական ցեղախմբերը,– գրում է Կ. Սասունին,– տեղական կռիվներ կը մղեին իրենց շահերուն համար, երբեմն ալ հասկացողության կու գային հայերուն հետ: Մինչդեռ թուրքական կառավարությունը զանոնք կը մղեր բնաջնջելու Սասունը, որ քաղաքական նոր վտանգի մը միջնաբերդը կը հանդիսանար... Քրդական ղեկավարներեն ոմանք կը տատանեին՝ միշտ վախենալով Թրքական խաբեութենե: Անշուշտ, Վարդան վարդապետն ալ պարապ նստած չէր»:

Թերևս այդ չանքերի շնորհիվ էր, որ 1891 թվին քրդերը եռանդ չդրսևորեցին հայերի վրա արշավելու վերաբերյալ Կ. Պոլսից ստացվող հորդորներին ընդառաջ գնալու գործում[43]:

Սակայն ավարի, հափշտակության կիրքը վճռական խոսքն ասեց: 1891թ. քրդերը հարձակվում են Վարդենիսի հարսանքավորների վրա հարսին փախցնելու դիտավորությամբ: Հայերը հակահարված են տալիս, մի քանի քուրդ սպանվում է:

Այս իրադարձությանն է նվիրված «Վարդենիսցի կնոջ երգը»:

Կռիվ կար Վարդենիսում Մուսա բեկի դեմ,
Թալան տանելու էր եկել այդ չունը:
Հավար գցեցին գյուղից՝ Արտոնքից,
Ամեն մարդ վազեց, մարդ չմնաց տանը:

Քրդերի բողոքին իշխանություններն արձագանքում են անմիջապես: Զորքն ու ոստիկանությունը շրջապատում են Վարդենիսը: Հայերը կոտորածի պատրվակ չստեղծելու համար խուսափում են բանակի ու ոստիկանության հետ ընդհարվելուց: Թուրքերն ու քրդերը ներխուժում են այդ մեծ գյուղը: Տղամարդկանց փակում են մի քանի տներում և 3-4 օր շարունակ գյուղը թալանում, նույնիսկ անկողիններն են տանում: Այդ գործողությունները ղեկավարող բինբաշին ու չեյխը հայտարարեցին, թե կատարում են «կառավարության պահանջը»: Մշո բանտ տարված 70 վարդենիսցիներից 5-ը բանտում մեռավ, 15-ը դատապարտվեց 15 տարվա բանտարկության: Գրեթե նույն բանը կատարվեց Ավզուտ գյուղում. երբ թուրք սպան որբ աղջնակին տիրանալու համար սպանվեց, գյուղի բոլոր տղամարդկանց բանտ նետեցին:[44]

Մի չաուշ յոթ զափթիեով գնում է եղկարդ գյուղը հարկ հավաքելու: Գյուղացիները հրաժարվում են հարկ վճարել, իսկ երբ փորձում են բռնությամբ հավաքել, հայերը զենքի են դիմում ու նրանց դուրս քշում գյուղից:

Հայդուկների վեց հոգիանոց մի խումբ սպանում է Ալիզոնանի տանուտեր Կրպոյին, որը լրտես էր: Հաջորդ օրը գյուղ են գալիս զինվորական չոկատներ: Բերդակը շրջապատվում է մոտ 200 զինվորով, մի քանի հոգի ձերբակալվում ու խոշտանգվում է՝ մեկի

---

[42] Նույն տեղում:
[43] Սասունի Կ., Տարոնի պատմություն, էջ 557-558:
[44] Նույն տեղում, էջ 26:

վիզը խարազան են անցկացնում, երկրորդի ամորձիքներն են ճզմում, երրորդի մորուքը փետրում հայդուկների տեղը իմանալու դիտավորությամբ: Ջերբակալություններ տեղի ունեցան նաև ուրիշ գյուղերում: Բանտ նետվածներից մեկի մատնությամբ սկսվեցին ձերբակալություններ: Շմլակ գյուղի բնակիչները հեռացան Կիլիկիա: Իսկ երբ հիթքնքցիներից և աղբիկցիներից հարկ պահանջեցին, նրանք ոստիկաններին գյուղից դուրս քշեցին:

Հունիսի կեսերին հավետանցի, բագրանցի, մանգունցի, սլիվանցի և խարզանցի աշերիթները ներխուժում են Անդոկ և Մովսասր: «Ոչխարի հոտեր կը կտրեն կը տանեն, հովիվներ կը սպանեն և կարգ մը լեռնագագաթներ կը բռնեն որպես ամուր հենարան»[45]:

Տալվորիկի մերձակայքում քրդերը չախչախիչ պարտություն են կրում: Ի պատասխան նրանց ավազակությունների, հայերն էլ քշում են քրդերի ոչխարները: Օգոստոսին վերջիններս հարկադրված եղան հեռանալ Անդոկից ու Մովսասրից: Իշխանությունների հանձնարարությամբ, Զիլանի շեյխ Մեհմեդից բացի, հակահայ վայրագ գործողություն ծավալեցին Մուշ քաղաքում Հաջի Դայիրը, Խուլբում՝ շեյխ Էմները: Մոլլաներն ու շեյխերը քրդերին հորդորում են զոհված ամեն մի մահմեդականի դիմաց սպանել երկու հայի:

1892թ. հունիսին Հազրոյի կայմակամը գնաց Սասուն հայերի տրամադրություններին ծանոթանալու: Նա ահաբեկելու համար մի քանի հոգու ձերբակալեց, սակայն սասունցիները հարկադրեցին ձերբակալվածներին ազատել: Հաջի Դայիբի չանքերով բագրանցի քրդերը «վրաններ դրեցին Շեննիկ, Սեմալ և Գելիեգուզան գյուղերի արանքում՝ Ջայում»: Քրդերի մի մասը կտրեց Շատախի կապը Տարոնի հետ: Նրանք ավերեցին Սեմալի արտերը, քշեցին Շեննիկի և Առաքելոց վանքի ոչխարները, փորձ արեցին թալանելու Սբ. Աղբերիկ վանքը[46]: Հարձակումը ղեկավարում էր Ալադինի տնից Հաջի Ծահիմը: Ապրիլի 16-ին նրա հրամանատարությամբ մի վաշտ ոստիկաններ մտնում են Շատախի գյուղերը՝ Տապք, Իրիցունք, Գերմավ, Գեղաչեն և գյուղացիներին բռնությունների ենթարկելու միջոցով՝ ձգտում տեղեկություններ ստանալ «ապստամբության ղեկավարների մասին»:

Շեննիկի շրջանում քրդական մի ցեղ փախցրեց Ալիանք գյուղի ոչխարի հոտը: Հայդուկները հարձակվեցին հափշտակիչների վրա և գյուղացիների օգնությամբ հետ խլեցին հոտը: Տևական կռիվների մեջ էին Խուլբն ու Տալվորիկը: Տատրագոմի գյուղացիները դուրս քշեցին գյուղ խուժած զափթիեներին ու համիդիեականներին: Նման բազում ընդհարումներ տեղի ունեցան, և ամեն անգամ, երբ հայերի հետ բախվելիս քրդերը պարտվում էին, հրապարակ էր իջնում զորքը և Մ. Տամատյանին փնտրելու պատրվակով՝ խժդժություններ կատարում: Օգոստոսին քրդերը հարձակվում են Շուշնամերկ գյուղի վրա: Հայերը դիմադրում են բահերով, քարերով: Բանակային մի ջոկատ մտնում է Ալվառինջ գյուղը, սակայն ուժեղ դիմադրության հանդիպելով հեռանում է: Երբ լուր է ստացվում, որ Մշո սարերում հայդուկներ կան, Կոփի հազարապետն իր 100 զինվորներով փախչում է Մուշ:

Վրա հասավ ձմեռը: Հայերին սովի մատնելու նպատակով՝ իշխանությունները Մուշում բռնագրավում էին նրանց հացահատիկն ու բաժանում մահմեդականներին: Սովն ու համաճարակը հնձում էին Դաշտի հայությանը: Շատ գյուղերում մահացավ բնակչության 1/3-ը: Տարոնում տիրող վիճակը նման էր «խուլ երկրաշարժի առաջին հարվածին», որին հաջորդելու էին նորանոր հարվածներ:

Սասունցիները գիտեին, որ գարնան հետ թուրքերն ու քրդերը նորից ներխուժելու էին լեռնաշխարհ, և ձմռան ամիսներին նախապատրաստություններ տեսան:

Տարոնում ու մերձակա շրջաններում հայտարարվում է զորահավաք: Սասունի վրա շարժվեց մի քանի գումարտակ զորք՝ 16 դաշտային և 34 լեռնային թնդանոթներով: Սա-

---

[45] Նույն տեղում, էջ 559:
[46] «Հնչակ», 1892, թիվ 3:

սուն են գնում նաև Երզնկայի 19-րդ և Մշո 12-րդ հեծյալ գնդերը, Էրզրումից մի գումարտակ՝ երկու թնդանոթներով, նաև՝ ոստիկանական ջոկատներ: Ապրիլին թուրքական զորքերը երևացին Սեմալ գյուղի մերձակայքում: Թշնամու ուժերի դիմաց կանգնած էր մոտ 2000 գյուղացի՝ զինված չախմախլի հրացաններով, դաշույններով ու դանակներով: Շատախի և Գավառի հայերին ահաբեկելու համար իշխանությունների հրահանգով դեպի Սիմ լեռ չարժվեցին քեռչե քրդերը: Հաջի Դայիբը նրանց հորդորեց. «Այս տարի ձեր համար շատ որս կա»:

Ոստիկանությունն ամենուրեք հայդուկներ էր փնտրում: Հաջի Ֆեյիմը Մուշ է կանչում Գելիեգուզանի, Սեմալի և Շենիկի գյուղապետերին, սակայն նրանք չեն ներկայանում՝ գիտենալով, որ կանչել էր ձերբակալելու: Փորձեր արվեցին հավաքելու հայ ազգաբնակչության մոտ եղած զենքերը: Թալանվեցին ու ավերվեցին Խասգյուղի, Հայկերտի եկեղեցիները, խուզարկվեցին վանքերը: Հայդուկ բռնելու համար նախկինում վճռրում էին 20, իսկ 1893-ին՝ 200 ոսկի: Քրդերը հարձակվեցին Սբ. Կարապետ վանքի վրա, սակայն վանքի միաբանները կռվի մեջ մտան և չորս զոհ տալով ու 10 քուրդ սպանելով՝ նրանց հետ չպրտեցին:

Մայիսի 19-ին Մուշից գրում են. «Ոստիկանական վաշտերը ավելի քան մի ամիս Սասունում են՝ Տամատյանին ու նրա հետ հարաբերությունների մեջ գտնվող գյուղապետերին ձերբակալելու համար: Այդ վաշտերը գյուղերում բազմաթիվ խժդժություններ կատարեցին, սակայն ոչինչ հայտնաբերել չկարողացան, իսկ տանուտերերը կուսակալ Թահսին փաշային ներկայացան այնպիսի պայմաններով, որ վերջինս նրանց ձերբակալել չհամարձակվեց: Թուրքերն իրենց զայրույթը թափեցին Խուլբի ձորի երկայնքով ընկած հատուկենտ անպաշտպան ցրված գյուղերի վրա», որոնց գյուղացիները գազանային խոշտանգումների ենթարկվեցին, ոմանց բեղերն աքցանով դուրս քաշեցին[47]: Հազոյի կայմակամը հարձակվեց Խնձորիկ հայաբնակ գյուղի վրա, բայց հարևան գյուղերի օգնությամբ հաջողվեց թուրքերին դուրս քշել: Օգոստոսին քրդերը հարձակում գործեցին Շուշնամերկ գյուղի վրա, սակայն հաջողության հասնել չկարողացան: Հայերը մարտականորեն էին տրամադրված գրեթե բոլոր գյուղերում: Մշո կառավարիչը դիմում է Բ. Դուանը իր գործելակերպը ճշտելու հարցումով: Ստացվում է պատասխան՝ գործել զգուշ:

Մայիսին Հազոյի ոստիկանական ջոկատը նորից երևաց Տալվորիկի մերձակայքում, բայց գյուղ մտնել չհամարձակվեց, այլ պահանջեց մուծել հարկերը: Տալվորիկցիները մինչ այդ պետությանը հարկ չէին վճարել և հրաժարվեցին կայմակամի պահանջը կատարելուց: Հարկերը բռնությամբ հավաքելը դիմադրության հանդիպեց, և ոստիկանները գերադասեցին հեռանալ: Թուրքական զորքերն ամրացել էին Կուրտիկի բարձունքներին, իսկ քրդերը ընդհուպ մոտեցել էին հայկական բնակավայրերին: Ակնհայտ էր, որ Սասունի վրա հարձակում էր պատրաստվում: Սակայն սասունցիներն իրենց մարտական կեցվածքով հարկադրեցին այն հետաձգել:

Սասունում կոտորածների նախապատրաստությունն այնքան բացահայտ էր կատարվում, որ Էրզրումում անգլիական հյուպատոսն իր կառավարությունից խնդրեց պաշտպանել հայերին[48]: Օտարերկրացի ականատեսներից մեկը գրում է, որ 1892թ. վերջերին Բիթլիսում անհանգիստ վիճակ էր: Բոլոր նամակները բացվում էին, որոշ նամակներ տերերին ընդհանրապես չէին հասնում, հարկերի հավաքումը ծայրաստիճան խստացել էր: Զափթիեներ ու զինվորներ ուղարկվեցին գյուղերում մնալու, զանգվածային էր դարձել արտագնա աշխատանքի մեկնածների ունեցվածքի բռնագրավումը[49]: Գյուղերը լցված զորքը զբաղվում էր խժդժություններով ու թալանով: Մուշ քաղաքում թուրք

---

[47] «Հնչակ», 1892, թիվ 6:

[48] Брандес Г., *Армянский вопрос*, Астрахань, 1906, стр. 10.

[49] *Положение армян в Турции* ..., стр. 235.

*քնակչությանը զենք էր բաժանվում: Բռնությունների դեմ գանգատներն իշխանությունների կողմից անտեսվում էին, կամ պատասխանը լինում էր՝ քրդերին զսպելը մեր ուժերից վեր է: Բանտերը լեփ-լեցուն էին հայերով*[50]*: Հրայր Դժոխքը գրեց. «Տաճիկ կառավարության փափագներն ու ձգտումները գրեթե իրականացան: Տարոնը քաղաքական և տնտեսական հալածանքների հետևանքով լրիվ ավերակ է դարձել... բյուրավոր Թշվառ ընտանիքներ փողոցից փողոց են թափառում, անցնում Տիգրանակերտ, Հալեպ և այլ դաշտավայրային չրջաններ: Իսկ Սասունի ժողովուրդը նույնիսկ փախչելու հնարավորություն չունի, քանի որ պաշարման մեջ է...»*[51]*:*

*Ոստիկանական հարյուրապետ Իսկենդերը Ղզլաղաջ, Գոմեր և Տատրագոմ գյուղերում նոր խժդժություններ սարքեց: Բանտ նետվեց տասը երիտասարդ: Բայց սասունցիների մարտական ոգին անընկճելի էր: Երբ գելիեմսուրցի Նորեի մարմինը երկաթով խարանում էին, բղավեց. «Միևնույն է, դուք կործանվելու եք»: Ունելիով նրա բեղերը փետրեցին, ատամները հանեցին և սպանեցին առանց դատ ու դատարանի:*

*1892թ. Թուրքերը որևէ հաջողություն արձանագրել չկարողացան՝ ո՛չ կոտորածի և ո՛չ էլ ռազմական առումով: Դրա համար մութեսարիֆը պաշտոնազրկվեց:*

*Մ. Տամատյանը բազմիցս խնդրել էր Հնչակյան կենտրոնից իրեն օգնականներ ուղարկել: Ի վերջո Սասուն է ուղարկվում Հ. Պոյաճյանը, որը նախ գնում է Թիֆլիս՝ օգնություն հանգանակելու, սակայն հաջողություն չի ունենում և 1892թ. քահանայի հագուստով ծպտված, մտնում է Էրգիր: Նա Վարդենիս է հասնում այն պահին, երբ Տամատյանը ռեսերի հետ քննարկում էր Մշո կառավարչի պահանջը՝ ներկայանալ Մուշ բանակցությունների համար: Ժողովն այդ պահանջը մերժում է: Մուրադն ու Տամատյանը յոթ հոգանոց խումբ են ձևավորում, որն ահաբեկում է մի քանի հայ լրտեսների և ոստիկանների:*

*Մուրադը օգնություն ստանալու հույսով նորից մեկնում է Կովկաս, սակայն այնտեղի հնչակյան կազմակերպությունը շատ թույլ էր և օգնել չի կարողանում: Նա Ղազարոս Աղայանի միջոցով օգնություն է խնդրում Ս. Զավարյանից: Պատասխանը լինում է՝ «Դաշնակցությունը կօգնի, եթե ապստամբությունը համարվի Դաշնակցության գործը»*[52]*:*

## 2. ՏԱԼՎՈՐԻԿԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

*1893-ի գարնանը քրդերն ու Թուրքերը նորից չարժվեցին Սասունի վրա: Սեմալում ձերբակալվեց Մ. Տամատյանը*[53]*: Հարցաքննության ժամանակ նա հայտարարեց. «Ոչ թե ցանկանում ենք Թուրք տարրը ոչնչացնել, այլ մեր չանքերը ուղղված են այն բանին, որ հայ ու Թուրք ժողովուրդները հավասար իրավունքներ ունենան և ապրեն բարվոք կյանքով»: Տամատյանի ձերբակալությանը հետևեց Թուրքական ռազմական ուժերի գործողությունների աչխուժացումը, որը պատճառաբանվում էր լեռնաչխարհում արտասահմանցի հեղափոխականների առկայությամբ: «Բաղեշի կուսակալության տեղեկագրից կառավարությունը տեղյակ է, որ զանազան օտարականներ թաքնվում են սասունցիների մեջ, որոնք աչխատում են ժողովրդին գրգռել կառավարության դեմ և արտասահմանից զենք են բերում, ու ստեղծված է հայ հրոսակների մի խումբ, որը մշտական հարձակում-*

---

[50] «Դրոշակ», 1894, թիվ 8:
[51] Նույն տեղում, թիվ 9:
[52] Կիտուր Ա., նշվ.աչխ., էջ 141:
[53] Տամատյանը բռնվեց «վատ ու անգետ հայերի ձեռքերով»: Երբ Ալիանքի գյուղացիները լսեցին այդ մասին, հարձակվեցին Սեմալի վրա, սակայն ընդառաջ գնալով սեմալցի կանանց աղաչանքներին՝ հետ դարձան: Սեմալցի Դավոն Թուրքերին հայտնում է Տամատյանի տեղը: Ոստիկանները չրջապատում են գոմը, որտեղ գտնվում էին Մ. Տամատյանն ու Սողոն: Վերջիններս կրակելով դուրս են գալիս հետևանալու, սակայն նույն դավաճանները նույն խաբեությամբ նրանց ձեռքից զենքերը վերցնում են, ձերբակալում ու հանձնում ոստիկաններին:

ներով սարսափի մեջ է պահում չրջակա քրդերին»[54]: Ամենուրեք փնտրում էին Արաբոյին:

Պատրվակ բռնելով, թե Տալվորիկում Տամատյանի նման ուրիշ ագիտատորներ կան, Կ. Պոլիսը քրդերին հրահանգեց հարձակվել այդ չրջանի գյուղերի վրա: Հունիսի սկզբին բեկրանցի քրդերը հավաքվեցին Տալվորիկի մերձակայքում: Շուտով նրանց թիվն անցավ մի քանի հազարից: Թուրքական հրամանատարությունը վերջնագիր ներկայացրեց՝ «Հնազանդվեք թագավորին և վճարեք հարկերը»: Տալվորիկցիները պատասխանեցին, թե ամեն թուրք ու քուրդ թագավոր է ճանաչում: «Մենք էլ, փոխանակ ենթարկվելու այդ թագավորներին, ապավինում ենք Աստծուն»: Նրանք քանդում են Սատանի կամուրջը՝ թշնամու գրոհի ճամփան փակելու համար:

«1892-93ԹԹ. ձմռանը,– գրում է Դիլոն,– (կուսակալը) Բիթլիսում հավաքում է չրջակա վայրերի քրդական առաջնորդներին և հրամայում է գարնանը հարձակվել հայերի վրա՝ խոստանալով թալանված ամբողջ ավարը թողնել նրանց...»:

Վտանգը կանխելու և քրդերի հավաքվելը խափանելու համար՝ հայերը նախահարձակ են լինում: Նրանք ընդամենը 60 հոգի էին, իսկ քրդերը՝ չուրջ 4000: Բայց հայերի դիրքերը հնարավորություն էին տալիս հետ մղելու քրդերի գրոհները: «Մութն ընկնելուն պես քրդերը նահանջում են: Նրանք կորցրել էին նվազագույնը 100 մարդ... Հայերից սպանվել էր հինգ տղամարդ և կին: Մի քանի հրացանից բացի, որոնք լիցքավորվում էին ետևից, հայերի մյուս բոլոր հրացանները կայծքարի էին: Կառավարությունը, հենց որ տեղեկանում է այս դեպքի մասին, Տալվորիկ է ուղարկում մի քանի գումարտակ՝ ռազմամթերքով ու լեռնային թնդանոթներով... Պատրաստություններից երևում է, որ հարձակում է նախապատրաստվում, սակայն, կամ վախենալով, որ պարտության կմատնվեն և կամ անաղմուկ գործելու մասին Կ. Պոլսից ստացված հրամանից զգուշանալով, իշխանությունները հանձնարարում են կանոնավոր զորքին քրդերի օգնությամբ պաշարողական դիրքեր գրավել: Զորքերն իրենց վրանները տարածել են մինչև գյուղի սահմանները, այն էլ այնպիսի սովի ժամանակ, ինչպիսին ներկա տարվանն էր, ձիերին բաց էին թողել արածելու արտերում և ոչնչացրել ամեն ինչ»[55]:

Քրդերը մի նոր հարձակում սկսեցին, որ տևեց մինչև երեկո: Հաջողության չհասնելով՝ հարձակվողները նահանջեցին: Նույն ժամանակ ոոստիկանական մի ջոկատ արշավում է Շենիկի վրա, սակայն Գրիգոր Մոսեյանի խումբը թուրքերին փախուստի է մատնում:

Իսկ Մուշ քաղաքում հայ համայնքի ղեկավարները ձերբակալվում ու տարվում էին կարին:

Տալվորիկի վրա ընդհանուր հարձակումն սկսվեց հունիսի 15-ին: 36 ժամ տևեցին մարտերը Սպիտակ սարում: Երկու կողմերն էլ ծանր կորուստներ ունեցան: Թշնամուն, որն անընդհատ համալրումներ էր ստանում, հաջողվեց առաջանալ ու հասնել մինչև Տալվորիկի տները: Թվում էր, թե պարտությունն անխուսափելի էր: Սակայն Գևորգի ջոկատը վերևի ժայռից կրակի տակ առավ հանճակման մասնակից քրդերին և հնարավորություն ստեղծեց գյուղից հանելու և անվտանգ վայրեր տեղափոխելու կանանց ու երեխաներին:

Տալվորիկի հունիսի 15-ի կռիվը հայտնի է «Գոլի կռիվ» անունով, որովհետև տեղի ունեցավ Գոլ անունը կրող վայրում (Փորըխ և Հարթք գյուղերի արանքում): Հարձակումը սկսեցին քրդերը՝ չուրջ 300 հոգի: Հայերից զենք ուներ միայն 150 հոգի: Քրդերի մի մասը զբաղվում է հայերի անասուններն թալանով: Սպանվում է քրդերի ղեկավար Սելիմը, նրանք նահանջում են: Հայերը հետ են խլում թալանված ունեցվածքը: Տեր-Գաբրիել քահանան կարողացավ հմտորեն ղեկավարել գյուղի պաշտպանությունը[56]:

---

[54] ԳԱԹ, ֆ. Աուաքելյան Հ., գ. 165, թ. 3:
[55] Սպիրով Դ., Նշվ. աշխ., էջ 37-38:
[56] *Положение армян в Турции ...*, стр. 236.

Վալի Թահսինը նորից պահանջեց, որ սասունցիների ավագանին ներկայանա իրեն: Փաշան նպատակ ուներ գլխատելու Սասունի հայերին: Սասունցիները դա հասկանալով բանակցությունների ուղարկեցին մի քանի հոգու՝ դրա դիմաց պատանդ վերցնելով ութ քուրդ բեկերի: Փաշան պահանջեց զինաթափվել, վճարել հարկերը և ստորագրել մի թուղթ, թե գոհ են տեղական իշխանություններից: Սասունցիները պատասխանեցին՝ զենքերը վար կդնեն, եթե զինաթափվեն նաև քրդերը, հարկեր վճարել չեն կարող, քանի որ գյուղերը թալանված են. քրդերին ու պետությանը միաժամանակ հարկ վճարելը ուժից վեր է: Եթե կառավարությունը արդելի քրդերին հարկ հավաքել, ապա համաձայն են պետական հարկերը վճարել: Նրանք նաև պահանջեցին քուրդ 14 բեկերի հեռացնել Սասունից, զինաթափել համիդիե հեծելագնդերը: Բանակցությունները ձախողվեցին, և հարձակումը վերսկսվեց: Մարտերը հատկապես ծանր էին Գաբլորի վրա: Օրվա երկրորդ կեսին Գաբլորը ընկավ: Թշնամու թնդանոթները սկսեցին ռմբակոծել գյուղի թաղերը:

...«Սուլթանի կատաղությունը հասել էր գագաթնակետին,– գրում է Սիրվարդը,– վասնզի մասնակի արշավանքները դերբեյներու և հրոսակային հարձակումները անզոր էին եղել ընկճելու Սասունը:

– Պետք է բնաջնջել Սասունը...

Սուլթանն իր այս ոճրային միտքը հայտնում է սև ուժերի գործակալ Ղազի Օսման և Դերվիշ փաշաներին և համախորհուրդ որոշում են 4-րդ զորաբանակի մուշիր Զեքի փաշայի միջոցով մտադրությունն իրագործել: Զեքի փաշան գտնվում էր Բիթլիսում՝ «քննական պետյատ» անվան տակ քաջալերում հայատյաց մութ ուժերին:

Սուլթանի որոշումը Զեքիին հաղորդելու համար՝ պատգամավորներ Սայիդը ու Շեյխ Սուլեյմանը, սուլթանական դանձարանից հազարավոր ոսկիներով ու չքանչաններով բեռնավորված, մեկնում են Բիթլիս:

...Զեքին արտակարգ պատիվներով է ընդունում սուլթանի պատվիրակներին... տեղեկանալով նրանց միսիային՝ անմիջապես զանազան ցեղախմբերի պետերի գաղտնի ժողով է գումարում իր նախագահության ներքո: Ժողովին ներկա էին բագրանցի, ուշկոթանցի, ինարկանցի, թենջարի, խարզանի աշիրեթները, Բշերիկի մեծ աշիրեթապետը, բեչիկցիների ցեղապետերը, Խութի, Բռնաշենի իշխանները, մոտկանցիների, խեչանցիների պետերը, բասկանցիների, ժալրկանցիների, խնկանցիների, խիանցիների և Սլիվանիկի բոլոր ցեղապետերը և հյուսիսային բերդերի Բեհմեդին փաշան: Սուլթանի ներկայացուցիչները նախ ներկա եղող ցեղապետերի կրծքերը զարդարում են համիդի չքանչաններով և հետո հազարավոր ոսկիներ են նվիրում նրանց: Տրված կաշառքը և համիդի ծրագրի պարզաբանումը խանդավառում են բոլորին: Նրանք երդվում են առաջապահ դառնալ, երբ սկսվի հարձակումը Սասունի վրա»[57]:

Ֆ. Գրինը նկատում է, թե հավանաբար երբեք չի բացահայտվի սուլթանի հրամանի բառացի բովանդակությունը: «Սակայն ակնհայտ է մի բան՝ այն գործադրվեց թուրքական բարձրաստիճան սպանների հրամանատարությամբ»[58]: Այդ ընթացքում քրդերը հանդիպելով սասունցիների համառ դիմադրությանը, փախուստի էին դիմել և որոշել այլևս Տալվորիկի վրա չգնալ: Սակայն ճանապարհին հանդիպելով Դիարբեքիրից եկող 5000 հոգուց կազմված մի ամբոխի, որին գլխավորում էին ծպտված ոստիկաններն ու հարյուրապետ էմները, վերադարձան:

Տալվորիկցի 200 կռվողներ հանդիսավոր երդում են տալիս՝ մեռնել հանուն հայրենիքի փրկության: Նրանք հունիսի 16-ին ժողովի են հավաքվում Մերկերի բլրի վրա և որոշում իրենց անելիքը: Ստեղծվում են մարտական խմբեր Գաբրիել քահանայի, Գաս-

---

[57] Սիրվարդ, *Մեծն Մուրադ*, Երևան, 1991, էջ 13-14:

[58] *Положение армян в Турции* ..., стр. 230-231.

պար Խաչոյանի, Պետրոս Ջուարեյանի, Գասպար ու Մկրե Պէոյանների և Համզե Գարբյանի ղեկավարությամբ: Օգնության եկած գելիեցիների ղեկավարներն էին Տեր Քալ քահանա Մ. Հովհաննիսյանը, Պետրոս Ղազարյանը և Սրքո Օսեյանը: Շենիկցիների ղեկավարն էր Գրիգոր Մոսեյանը: Տալվորիկին օգնության հասան նաև Հրայրի մարտական ջոկատը, իշխանաժորցիները ու սեմալցիները:

Հունիսի 17-ին տեղի ունեցավ գլխավոր ճակատամարտը: Թուրքերի ուժերը 40-50 անգամ գերազանցում էին հայերին: Քրդերը, մեծաթիվ զոհեր տալով, առաջ էին շարժվում: Ամբողջ Տալվորիկը մաքառում էր, կանայք կռվողներին ջուր էին հասցնում, երեխաներին էին կրակոցից հանում: Քրդերը լցվեցին մի քանի թաղերի տները և թալանեցին ու հրդեհեցին, գյուղից չհեռացած կանանց և երեխաներին սպանեցին կամ ժայռից վար նետեցին:

Երբ կարծես վիճակն անհուսալի էր, հայերն անսպասելի հակահարձակման անցան և հակառակորդին փախուստի մատնեցին: Հրայր Դժոխքը նշեց. «1893-ի հունիսի 17-ի պատերազմը թուրք և քուրդ տարրերի սրտի անբուժելի վերքը եղավ»:[59] Հաջորդ օրը դադար էր, կողմերը թաղում էին իրենց զոհերին: Հիսուն հայ սպանվել էր, և մոտ 100 կին ու աղջիկ անդունդ էին նետվել, նույնքան երեխա հոշոտվել էր քրդերի կողմից:

Առաջին հարձակումը կատարվում է Շենիկի վրա, սակայն հայերը հակահարձակման են անցնում ու թշնամուն քշում մինչև Շեն գյուղը: Այդ ընթացքում 5000 քուրդ, զորքի աջակցությամբ, հարձակվում է Տալվորիկի վրա: «Հունիսի 17-ին քուրտական մեծ զանգվածը Սպիտակ սարեն կանցնի հարձակողականի: Զիլանի շեյխ Մուհամմետն իր ունեցած 2000-են ավելի զինյալներուն գլուխն անցած օգնության կը հասնի քուրտերուն: Տալվորիկցիները հազիվ 400 զինակիր ունեին դիրքերուն մեջ»: Սակայն մյուս գյուղերից եկած հայերի օգնությամբ կարողացան ետ շպրտել թշնամու գրոհները: Քրդերը կորցրին չուրջ 1000 մարդ:

«Քուրտերու պարտությունը Տալվորիկի ճակատին վրա պատճառ կը դառնա, որ մյուս ցեղախմբերն ալ քաշվին Շենիկի ու Անդոկի ստորոտներեն»[60]:

Հունիսի 20-ին սկսվեց նոր հարձակում, որին մասնակցում էր նաև զորքը, սակայն հայերը այն ևս ձախողեցին: Թահսին հարկադրված նահանջի հրաման տվեց: Լինչը Թահսինի այդ քայլը խոհեմ է համարում, քանի որ, նախ, դադարեցվեց արյունահեղությունը և ապա՝ վալին քրդերի զավթած անասուններն վաճառեց և փակեց հարկերի պարտքը[61]:

Սասունցիները տարել էին խոշոր հաղթանակ, որը խանդավառություն առաջացրեց հայերի շրջանում: «Սասունի կողմերում,— 1893թ. թիվ 8-ում գրում է «Հնչակ»-ը,— մեծ կռիվ է տեղի ունեցել հայերի և թվով անհամեմատ շատ համիդիե զորքերի միջև: Սպանված է 50-60 հայ և ավելի քան 200 քուրդ»:

Քրդերի պարտությունը պատահական չէր: Ճիշտ է, նրանք մեծաթիվ էին, սակայն կռվում էին անկազմակերպ՝ չէին ուզում թուրքերի համար արյուն թափել: Առաջին իսկ բախումից հետո այլևս հրաժարվեցին առանց զորքի մասնակցության մարտի մեջ մտնել. թուրք հրամանատարությունը հարկադրված եղավ զինվորներին քրդի տարազ հագցնել ու հարձակումներին մասնակից դարձնել: Նաև կարգ սահմանվեց՝ երկու օր կռվող քրդերին թույլատրվում էր թալանել հայկական որևէ գյուղ:

«Մ՛ով գիտե,— գրում է Հրայրը 1893թ. հոկտեմբերի 1-ին,— դուցե այս թղթակցությունը տեղ չհասած, մեր կողմերից հասնի արյան հոտն ու ճայնը»[62]: Չնայած վալին հեռացավ, բայց Կենճի Մուստաֆա փաշան շարունակում է շրջափակման մեջ պահել Սա-

---

[59] Լինչ Գ., նշվ. աշխ., էջ 203:
[60] Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 567-571:
[61] «Հնչակ», 1895, թիվ 1:
[62] Նույն տեղում, 1894, թիվ 3:

սունը: Գյուղերի մեծ մասը դատարկ են, բնակչությունն ապավինել է լեռներին: 20 ոստիկան ու բատկանցի քրդերը հարձակվել են Գելիեգերմավ գյուղի վրա: Նույն ժամանակ չիբրանցի ու հասնանցի քրդերը արշավում են Դաշտի հայկական գյուղերի վրա: Սակայն «...զորքերն այնքան չարիք էին հասցրել տեղացիներին, որ գյուղացիները դիմում են կառավարությանը զորքերը հեռացնելու խնդրանքով: Քրդերի հարստահարություններն ավելի տանելի էին, քան զորքերինը»[63]:

Աթենք փախած սասունցիները պատմել են. «1893-ի վերջերից մինչև 1894թ. օգոստոսը ամբողջ Սասունը պաշարման մեջ էր: Մենք այդ ընթացքում անվում էինք բանջարեղենով ու խոտի արմատներով, իսկ ձմեռն անկացրինք սոսկալի վիճակում... Այս տարվա ապրիլի վերջին կառավարությունը, կասկածելով, թե Մշո դաշտի Վարդենիս գյուղի բնակիչները մեզ գաղտնի ուտելիք են մատակարարում, նրանց անմիջապես հանձնեց զորքերի ու քրդերի ավարառությանը: Վարդենիսի 325 տնից հազիվ 25-ը կանգուն մնաց: Երբ Վարդենիսում կատարված վայրագությունների լուրը Տալվորիկ հասավ, բնակիչները զայրացած հարձակվեցին Վարդենիսը չրջապատող զորքի վրա: Մի մեծ գունդ բերվեց բազմաթիվ թնդանոթներով, և սկսվեց ընդհանուր կոտորածը...»[64]:

Քրդերը տեսնելով, որ Բիթլիսի կուսակալը, կենճի կառավարիչը, Մշո զորահրամանատար Մուստաֆան զորքերով չարժվեցին դեպի Սասուն, գրում է Կ. Սասունին, իրենք էլ միացան հարձակմանը: Շեյխերի ղեկավարությամբ հարձակման գնացին նաև խարզանցի, բագրանցի, փանջարանցի, ռաշկոթանցի, խիանքցի և բատկանցի աշիրեթները:

«Նոր դար»-ը 1894թ. իր թիվ 204-ում գրում է. «Ապստամբության սկիզբը իրապես ոչ թե մեկ տարի է, ինչպես առհասարակ գտնում են, այլ երեք տարի, այսինքն՝ այն օրից, երբ Թուրք կառավարությունը, ինչպես ինքն է ասում, կասկածելով մի չարք «կոմիտեների» վրա, սկսել է հետևել Սասնո ժողովրդական ամեն մի չարժման, որի ընթացքում ամեն անգամ անպակաս են եղել բռնությունները թե՛ հարևան քուրդ աշիրեթների և թե՛ Թուրք կառավարության կողմից, տեղի են ունեցել ժողովրդական պարագլուխներ համարվող հայերի առանձին բանտարկություններ, հետևաբար և հայերի կողմից՝ ընդդիմություն»: Թերթը հիմնականում ճիշտ է ներկայացնում կացությունը և հաչողությամբ էլ ինքն իրեն ժխտում՝ Սասունում ապստամբություն տեղի չի ունեցել, այլ դիմադրություն իշխանությունների ու քրդերի թշնամական գործողություններին: Իսկ որ Սասունի ինքնապաշտպանական կռիվները սկսվեցին ոչ թե 1894, այլ 1891 թվին, ակնհայտ է: Սակայն թերթը սխալվում է, երբ Սասունում հայաբնակ գյուղերի թիվը նշում է 46, որովհետև մոտավոր հաշվարկներով այդ թիվը անցնում է 100-ից, չնայած դրանց մի մասում կար ընդամենը 3-4 տուն:

«Նոր դար»-ը նաև գրում է, որ Սասունը չքավորության պատճառով 3-4 տարուց ի վեր դադարել էր հարկ վճարել, ինչը կառավարությունը «պատրվակ դարձնելով... սկսեց իրականացնել իր թաքուն նպատակը, որն է՝ ոչնչացնել այդ ժողովուրդը և հիմնահատակ անել հայ բնակավայրերը երևակայական ապստամբության առաջն առնելու համար»: Իրավացի է թերթի նաև հետևյալ միտքը. «Կառավարությունը խորամանկ քաղաքականության դիմեց... իր ծրագրի իրականացման գործիք դարձրեց քրդական այն աշիրեթներին, որոնք բնակվում էին» Սասունի մերձակայքում:

Հարկերի հարցը իսպառ մերժելը ճիշտ չէ: Սասունցիները, իսկապես օգտվելով իրենց աշխարհագրական դիրքից, տասնամյակներ առաջ լեռնաշխարհից դուրս էին քշել Թուրք պաշտոնատարներին և հարկ չէին վճարում: Սակայն 80-ական թվականներին համաձայնեցին որոշ քանակությամբ հարկ մուծել՝ պայմանով, որ դրանք հավաքեն ոչ թե պաշտոնատարները, այլ տանուտերերը: Սասունցիները բարեխղճությամբ կատարում էին իրենց պարտականությունները: Սակայն Թուրք հարկահանների Ջրիկ գյուղում կատա-

---

[63] Նույն տեղում:
[64] Նույն տեղում, թիվ 13:

րած գազանությունների հետո սասունցիները դադարեցին հարկ վճարել: Այսինքն՝ բանը ոչ թե հարկեր վճարելուց սասունցիների հրաժարվելն էր, այլ թուրք պաշտոնատարների ճգտումը՝ անճամբ դրանք հավաքել՝ անձնական շահ ունենալու ակնկալիքով:

Տալվորիկի կռվից քրդերը դժգոհ էին. իրենք որպես գործիք էին օգտագործվել: «Քուրդ գլխավորներից ոմանք միամտաբար ցույց էին տվել այն գրավոր հրամանները, որոնցով կառավարությունն իրենց ստիպել էր հարձակվել հայերի վրա... Սասունի քրդերը չկամությամբ են մասնակցել կռիվներին: Նրանք զբաղվել են բացառապես կողոպուտով: Իսկ ոմանք գաղտնի օգնել են հայերին: Իշխանությունները քրդերի երեք գլխավորներին բանտարկել են...»[65]:

Սասունից ստացված լուրերը մեծ տագնապ առաջացրին արևելահայության շրջանում: 1894թ. մարտի 8-ին կաթողիկոս Մ. Խրիմյանը հովվապետական ուղերձ է հղում Կ. Պոլսի պատրիարքին՝ կոչ անելով եռանդուն միջոցների դիմել թուրքահայ բնակչությանը պաշտպանելու, սուլթանական կառավարության միջոցով գալիք աղետների առաջն առնելու համար: Սուլթանը, կարդալով այս ուղերձը, զրույցի է հրավիրում Նելիդովին և, խիստ անհանգստացած ձևանալով, ասում է, թե կաթողիկոսը «Թուրքիայում հայկական շարժումների մասին արտահայտվում է նույնքան սրտացավ, որքան անհարգալից և թշնամական՝ օսմանյան կառավարության գործողությունների վերաբերյալ»: Նա ուղերձի բովանդակության մեջ տեսնում էր «իր արժանապատվության հանդեպ ոտնձգություն և հայ բնակչության շրջանում դժգոհությունների գրգռում»՝ պահանջելով, որ կաթողիկոսը այդ կոնդակը չեղյալ հայտարարի, ինչը Մ. Խրիմյանը հրաժարվեց կատարել:

## 3. 1894 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Սասունցիները համոզված էին, որ իրենց համար 1894-ը լինելու էր դաժան ու ողբերգություններով հղի տարի և ամենայն պատասխանատվությամբ էին նախապատրաստվում գալիքին:

Դեռ գարունը չբացված Զեքին պատանդներ տալով, հանդիպում ունեցավ Սասունի ազդեցիկ մարդկանց հետ և պահանջեց զենքերը վար դնել ու վճարել հարկերը: Սասունցիները համաձայնեցին՝ պայմանով, որ զորքերն ու աշիրեթները լեռնաշխարհից դուրս հանվեն և երաշխավորվի հայերի անվտանգությունը: Բանակցությունները ձախողվեցին:

Սասունի հարավ-արևմտյան շրջաններում՝ Փասուրի կողմերում, վաղ գարնանից ոստիկանները սկսեցին բռնություններ գործադրելով՝ հարկեր հարվաքել: Հարկահանությունը տարածվեց ամբողջ լեռնաշխարհում:

Տալվորիկի պարտությունից հետո քրդերն այլևս վախենում էին ամառանոց գալ Սասուն: Իշխանությունները դրա հետ հաշտվել չէին կարող, և նրանց շրջանում աշխատանք տարան նոր հարձակում սկսելու համար:

Լուր տարածվեց, թե սասունցիները մտադիր են հարձակվել Մուշ քաղաքի վրա: Քրդերին սասունցիների ջարդերի հարվածային ուժ դարձնելու նպատակով՝ Ծլղոզից ու Բ. Դռնից մեկը մյուսի հետևից նամակներ էին գնում Զիլանի շեյխ Մեհմեդին ու Ամբրին, նրանց մոտ պաշտոնատարներ ուղարկվեցին, ովքեր հորդորում էին. «Քրիստոնյայի կինն ու աղջիկը առևանգելն արդարություն է, նրան կողոպտելն Ալլահի համար աշխատել է, սպանված գյավուրի արյան կաթիլների չափ հուրի եք ստանալու ջեննեթում»: Քրդերին կոչ էր արվում հարձակվել Սասունի վրա[66]:

Սասունի իրադարձությունների պատճառների հարցում միասնական կարծիք, բնականաբար, գոյություն չունի: Թուրքերի պաշտոնական կարծիքն է՝ սասունցիները հրա-

---

[65] Սալիբով Դ., նշվ. աշխ., էջ 38-39:
[66] «Հնչակ», 1894, թիվ 1:

ժարվում էին պետական հարկեր մուծելուց և բախման մեջ էին քրդական մի քանի ալիրեթների հետ: Ըստ թուրքական աղբյուրների՝ նշված բովանդակությամբ հեռագրեր սուլթանը ստացել էր թե՛ Բիթլիսի վալուց և թե՛ Մշո մութեսարիֆից: Սմբատ Բյուրատն իր «Ելդըզեն Սասուն» գրքում բերում է այդ ահազանգերին Աբդուլ Համիդ 2-րդի արձագանքը. «Սասուն, Սասուն, հրաբուխի բերան, խառնարան. պետք է մարել այդ հրաբուխը»[67]: Համաձայն հայ հեղինակների՝ Զեքիին սուլթանի հղած հեռագրում եղել է հետևյալ պահանջը՝ «Բնաջնջել Սասունի և շրջակայքի բովանդակ հայերին»: Թե իսկապես ինչ բովանդակություն է ունեցել այդ հեռագիրը, մեզ իսկապես հայտնի չէ, բայց փաստ է, որ երբ դրանից հետո 4-րդ բանակը Երզնկայից շարժվեց դեպի Մուշ, մեծ պետությունների Կ. Պոլսի դեսպանները խիստ անհանգստացան: Գլարֆորդը, Գամբոն և Նելիդովը այցելում են սուլթանին և հետաքրքրվում զորքի տեղաշարժերով: Սուլթանը պատասխանում է. «Բյուրդիստանի կողմերը աշիրեթներու միջև ծագած խռովությունները հանգստացնելու համար և մեկ քանի ապստամբ ցեղերու զսպելու համար հրամայած եմ Զեքի փաշային քանի մը վաշտերով երթալ այդ կողմերը»[68]: Սուլթանի «անդորրությունը կատարյալ էր», ինչը դեսպանները գոհունակությամբ ընդունեցին և որոշվեց մի համատեղ հանձնաժողով կազմել Տարոնում տեղի ունեցող իրադարձություններին ծանոթանալու: Սեպտեմբերի 10-ին Մուշից «Մշակ»-ին գրեցին. «...մեր տաճկական զորաբանակները կարինից, Երզնկայից, Վանից, Բաղդատից, Տիգրանակերտից, Բաբերդից Մուշ հասան և նաև այդ նշանավոր քաղաքների գավառների լեռների բնակիչ համիդիե քուրդ ու էչիրներ միասին ստեղծեցին 50000 զորաբանակ, որից հետո Ջերիդ փաշան լուր ուղարկեց հայկական գավառներ, որ պատրաստ լինեն, ասելով, թե եկել ենք ձեզ սրոճարագ անելու, որովհետև ապստամբել եք, և չեք հնազանդվում տերությանը»: Մուշ քաղաքում Զեքին մի քանի խորհրդակցություններ անցկացրեց, ինչը ավելի չի կացրեց մթնոլորտը: Նշանաբան հռչակվեց. «Ելեք, զինվեցեք և պատրաստ եղեք սուրբ պատերազմին...»: Տարոնի մահմեդականությանը հայերի դեմ հանելու համար՝ նա հայտարարեց, թե Սասունն ապստամբել է սուլթանի դեմ, հարկ չի վճարում: «Ուստի պետք է մոխրակուտի վերածենք Սասունը»:

Սասունցիներին, իհարկե, լուրեր հասնում էին իրենց դեմ նախապատրաստվող հարձակման մասին: Նրանք արդեն ավարտել էին գարնան գյուղատնտեսական աշխատանքները և ավանդության համաձայն՝ չատերն ուխտավայրերում էին, մասնավորապես՝ Սպաղանքի վանքի շրջանում, որտեղ զբաղվում էին նաև զինավարժություններով: Լսելով սուլթանի հայասպան կոչերի մասին՝ Սպաղանքի գյուղապետ Խաչոն փամփուշտ խնայելու նպատակով հրամայում է դադարեցնել հրաձիգ նշանառությունը[69]: Քրդերը առանց ոգևորության արձագանքեցին փաղիշահի կոչին: Մանավանդ, որ իշխանությունները կայսրության ամենատարբեր մասերից զորքեր էին բերում: Բաղեշից եկան Թահսինը և Աբդուլան՝ 12 հազար զորքով ու թնդանոթներով: Դիարբեքիրից եկավ Օսմանը 3000 զինվորով, ինչպես նաև Զեզիրե Բոհտանից՝ Բաբուրի գլխավորած բաշիբոզուկների հեծելազորը[70]: Հավաքվեց մոտ 20 հազար քուրդ, այդ թվում՝ 500 համիդիե:

«Աներևակայելի արագությամբ բոլոր շրջակա կուսակալություններից զորքեր դիմեցին դեպի Մուշ... 7849 հետևակ, 2000-ի չափ հեծյալ և 150 թնդանոթաձիգ ուղարկվեց Սասուն: Ռուսական և պարսկական սահմաններից սկսած՝ բոլոր գնդերը... դիմեցին այնտեղ: Միայն Բայազետից եկան հայդարանցիք 3000 հեծյալով, որով կարելի է պատկերացնել, թե ինչ ահեղ բազմություն մի ակնթարթում պաշարեց Սասնո գավառը... չորս կողմից լրաբերները սարսափելի տեղեկություններ էին հասցնում... Դեռևս արտերը

---

[67] Բյուրատ Սմբատ, Ելդըզեն Սասուն, Կ. Պոլիս, 1912, էջ 160:
[68] Նույն տեղում, էջ 36:
[69] «Մշակ», 1894, թիվ 118:
[70] Лазарев Я., նշվ. աշխ., էջ 32:

հնձված չէին, սասունցիները նույնիսկ մեկ օրվա պաշար չունեին, առանց վառոդի ու փամփուշտի, բոբիկ, հագներին միայն մի շապիկ, ապավինած իրենց անառիկ սարերին, քարանձավներին... Այստեղ գումարված քրդերի թիվը մոտավորապես 43 հազար էր: Նրանք օսմանյան կառավարությունից զենք ու ռազմամթերք ստացան...»[71]:

Հասկանալի է, որ այս թվերը մոտավոր են, բայց բացարձակ չափազանցություն է պնդումը, թե «Հարյուր հազարանոց զորքը հետևից գցած ավարածարավ ամբոխը, ուժեղացնում էր հայասպան փոթորիկը»[72]:

1892-93 թվերի կռիվներում սասունցիները հաղթել էին: Այդպես էր նաև 1894թ. քանի դեռ կռվի մեջ չէր մտել թուրքական բանակը: Հարձակումը հայերի վրա սկսվեց հանկարծակի՝ բինբաշի Աբդուլռահմանի կողմից հարկերը հավաքելուն զուգընթաց: Վերջինս իր զորքով կանգ է առնում Շենիկ գյուղում: Զորքը 16 օր ապրում է Շատախի գյուղացիների հաշվին: Նրանցից ամեն օր ստանում էր 14 ոչխար, 24 փութ ալյուր, 17 կգ յուղ, 17 կգ պանիր, 80 հավ, 18 փութ գարի, 30 ման սեր: Արական սեռի յուրաքանչյուր հայի (սկսած նորածին երեխայից) համար պահանջում էին 50 ղուրուշ: Մննդամթերքի հավաքումը, ինչպես միշտ, ուղեկցվում էր ամենաայլանդակ բռնարարքներով: Շենիկցի Օհանին հրացանի խզակոթով դաժանորեն ծեծեցին, ապա լրիվ մերկացրին ու գյուղամեջ հանեցին: Աբդուլռահմանը իր անձնական կարիքների համար գյուղացիական ամեն մի ընտանիքից չորթեց 150 ղուրուշ: Նա այս թալանը արդարացնում էր, ասելով, թե սուլթանի ներմանն արժանանալու համար սասունցիները պետք է լրացուցիչ հատուցում տային[73]:

«Թե՛ կառավարությունը և թե՛ զորքը լուր ուղարկեցին քրդերին՝ անպայման այս կողմն անցնեք, ինչ որ անեք (թալանեք), ձեզ կմնա, և հայերից բոլորովին չվախենաք, մենք ձեզ ենք օգնելու: Այս հրավերի վրա քրդերը լցվեցին Սասուն և Գավառ: Նախ եղան զորքերի մոտ, տեսնվեցին հազարապետների հետ և մեծ պատվով հյուրասիրվեցին»[74]:

Փաշուրի կայմակամը, Սասունի հարավի գյուղերի տանուտերերին ձերբակալելով, հասնում է Իշխանձոր և պահանջում հանձնել Տալվորիկի իշխաններին ու Մուրադին: Հայերը պատասխանում են. «Ահա Տալվորիկը, գնացեք անձամբ ձերբակալեք»: Գազազած կայմակամը սկսում է խժդժությունները, ինչը համբերությունից հանեց գյուղի երիտասարդությանը: Նրանք 12 ոստիկանի սպանեցին ու քաշվեցին Անդոկ: Կ. Գոլսում Ռուսաստանի դեսպանատան խորհրդական Վ. Ժադովսկին տեղեկագրում է. «Հայերի դեմ զայրացուցիչ ռազմական միջոցների մասին մամրամասները թափանցել են եվրոպական մամուլ և մեծ աղմուկ առաջացրել...»:

Բաղեշի վալին քուրդ ցեղապետերի ժողով է հրավիրում, որը որոշում է՝ Սասունն իր անառիկ դիրքով ու մարտնչող ժողովրդով մշտական վտանգ է կառավարության համար, և քանի դեռ մյուս գավառները սասունցիների օրինակին չեն հետևել, անհրաժեշտ է սասունցիներին ընկճել[75]: «Այդ բանի վրա,— գրում է «Հնչակ»-ը,— զորքն ու կառավարությունը կրկին ու կրկին մարդիկ են ուղարկում քրդեր բերելու, և ավելի քան 10 աշիրեթներ հարձակվում են Գավառի վրա, սակայն հայերին լուրջ վնաս հասցնել չեն կարողանում»[76]: Քրդերը մեծ կորուստներ տալով, հետ են փախչում ու հրաժարվում են այլևս առանց զորքի մասնակցության հարձակման գնալ: Զեքին հարցը լուծում է այնպես, ինչպես մեկ տարի առաջ Տալվորիկում. յուրաքանչյուր աշիրեթ ամբողջ օրը կռվելուց հետո ստանում էր անուն, վառոդ ու փամփուշտ: «Մեզ թուլլատրված էր,— հիշում է մի

---

[71] ԳԱԹ, ֆ. Առաքելյան Հ., գ. 165, թ. 4:
[72] Ղազարյան Հ., նշվ. աշխ., հ. II, էջ 52:
[73] Лазарев Я., նշվ. աշխ., էջ 29:
[74] «Հնչակ», 1895, թիվ 12-13:
[75] «Դրոշակ», 1894, թիվ 13:
[76] «Հնչակ», 1895, թիվ 12-13:

*թուրք սպա,– նրանց (քրդերին) ռազմամթերք տալ, և նրանք ստանում էին հրացան, վառոդ, գնդակ, որ հատուկ քրդերի համար էին բերել»: Հայերն այլևս քրդական հարձակումներից դադար չունեին:*

*Սասունի վրա հարձակումը սկսվեց բոլոր ուղղություններով: 73 հազար թուրք ու քուրդ լցվել էին Արծվաբույնը և սպանում էին, թալանում, հրդեհում: Սակայն այդ հարձակումները ևս հաջողություն չունեցան: Քրդերի զոհերի թիվը հասավ 600-ի: Այդ իրադարձությունների բնույթը թաքցնելու համար թուրքական իշխանությունները լեռնաչխարհը շրջափակել էին, մեկուսացրել արտաքին աշխարհից, թույլ չէին տալիս որևէ լրագրողի մուտք՝ միաժամանակ ամենատարբեր լուրեր տարածելով, ապակողմնորոշում էին հասարակական կարծիքը: Սակայն տեղեկատվության տարածման առաջն ամբողջությամբ առնելն անհնար էր: Շնորհիվ միջազգային ճանաչում ունեցող մի քանի լրագրողների ջանքերի՝ աշխարհը տեղեկացավ կատարվածի մասին: Է. Դիլոնը գրում է.*

*«Գարնանը, մայիսի վերջերին, հենց որ ձյունը հալվել է, մի գունդ չարժվել է դեպի Սեմալ ու Շենիկ գյուղերը... Ձմռանը քրդերը լցվել էին ըմբոստությունների ալիքներով ողողված վայրերը և դրանք պահել գրեթե պաշարողական դրության մեջ, մանավանդ՝ Տալվորիկը: Համբերությունը կորցրած գյուղացիները հավաքվել են և հարձակվել քրդերի վրա, խլել իրենց ոչխարներն ու մի բան էլ ավելի: Ընդհարման ժամանակ երկու քուրդ սպանվում է: Քրդերն անմիջապես վերցնում են սպանվածներին և տանում Մուշի կառավարչի մոտ: Ավելի մեծ աղմուկ բարձրացնելու համար սպանվածների մարմիններն այլանդակում են և կառավարչին հայտնում, թե լեռներում վխտում են հայ զինվորներ... Կառավարությունը քրդերին իրավունք և ազատություն էր տվել՝ հայերի հանդեպ անել ինչ կարող էին: Տեղում գտնվող քուրդ երկու առաջնորդներից մեկը, զորքի հրամանատարի հետ խորհրդակցելուց հետո, 50 ձիավորով գնում է Շենիկ և Սեմալ գյուղի մոտերքը ու... պահանջում 20000 լիրա: Հայերը պատասխանում են, թե այդքան գումար չունեն, բայց կարող են փոխարենն ապրանք տալ: Այս պատասխանը քրդերին դուր չի գալիս: Նրանք կռվի առիթ էին փնտրում... Հարձակվում են երկու գյուղերի վրա, որի հետևանքով կռիվ է բորբոքվում հայերի և քրդերի միջև... Ընդհարման ժամանակ սպանվում է 20 քուրդ... Ամբողջ 10 օր հայերն ու քրդերը կռվում են... Վալին չտապում է... զորքեր կենտրոնացնել: Տարբեր տեղերից հավաքում է 15-16 գունդ: Սրանց միանում են քրդական բոլոր ցեղերը... Քրդերին առաջ են թողնում, բայց հայերը կարողանում են պաշտպանվել... Նկատելով, որ քրդերը պարտվում են՝ թուրքերը նրանց ավելի լավ զենքեր են տրամադրում: Չնայած դրան, հայերը դիմադրում են: Միայն այն բանից հետո, երբ նրանք տեսնում են, որ քրդերին միացել են կանոնավոր զորքի ստվար զանգվածներ, որոշ չափով տեղի են տալիս: Որքան տեղեկացա, նրանք ոչ մի զենք չեն պարպել կանոնավոր զորքի դեմ»*[77]*:*

*Է. Դիլոնի նկարագրությունը հաստատում է այն իրողությունը, որ հայերի վրա քրդերի հարձակումը՝ ոչ թե ցեղապետների նախաձեռնությունն էր, այլ նախապատրաստվել ու գործադրվել էր թուրքական իշխանությունների և 4-րդ բանակի հրամանատարության կողմից: «Նոր դար»-ի թիֆլիսյան սեպտեմբերի 6-ին կ. Պոլսից հայտնում է. «Այս պահին ամբողջ Սասունը պաշարողական դրության մեջ է... ճանապարհները փակ են... Սասունի հետ կապը՝ խզված»: Եվ թերթը հարկադրված որպես իրականություն է ներկայացնում Սասունից «հենց նոր վերադարձած մի երիտասարդի» պատմածները, թե սասունցիները «զինված էին նոր տեսակի զենքերով և երկաթապատ փայտե թնդանոթներով», թե «ապստամբությունը սկսվել է Սեմալում», երբ մի խումբ երիտասարդներ հարձակվել են քրդերի վրա ու «բավական կորուստներ» պատճառել, որից հետո ամեն կողմից Սասուն են լցվել զորքեր ու հարձակման անցել, սակայն «միշտ հետ են մղվել՝ իրենց կազմի 90%-ը կորցնելով», իսկ համիդիե «նոր հեծելագունդը հրաժարվել է Սա-*

[77] Սպիրով Դ., նշվ. աշխ., էջ 39-40:

սուն բարձրանալ»[78]: Նման զրույցները նույնպես կազմում էին Սասունի իրադարձությունների վերաբերյալ ժամանակի լրատվության բովանդակությունը:

Հուլիսի 15-ին Տալվորիկում Գասպարի տանը տեղի է ունենում Սասունի ինքնապաշտպանության ղեկավարների ժողովը, որը քննարկեց կացությունն ու սասունցիների անելիքները: Ժողովում տիրապետող կարծիքն էր՝ «Լավ է մեռնել պատվով ու զոհվել ժողովրդի չահերի համար, քան լինել ստրուկ այն կառավարության, որը վաղ թե ուշ կոխոտելու և ոչնչացնելու է»: Շառոյան Պետրոսը նկարագրում է իրենց նյութական ու ռազմական պաշարից իսպառ զուրկ վիճակը և բղավում. «Մեռնենք ու ազատվենք այս կյանքից: Մահն է մեր բաժինը»:

Ժողովը միացավ Մուրադի բանաձևմանը. «Մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել մեր հայրենի լեռները, մեր ընտանեկան սուրբ օջախը»: Որոշվում է նախահարձակ լինել և նախաձեռնությունը թշնամուն չտալ: Պատվիրակություն է ուղարկվում Շատախ՝ տեղի գործիչներին տեղյակ պահելու Տալվորիկում ընդունված որոշման մասին: Այստեղ ևս կայանում է գյուղերի երևելիների ժողով, որը միանում է Տալվորիկում ընդունված որոշմանը՝ «Ընկերով մահը հարսանիք է»:

Գենջի կայմակամ՝ Մուստաֆան կանոնավոր բանակի զինվորների ու քրդերի գլուխն անցած, գնում է Խիանք: Երբ մոտենում է Իշխանձորին, ընդառաջ են գալիս տերտեր Մաթևոսն ու գյուղապետ Թորոսը՝ հնազանդության հավաստիքով և պատրաստակամությամբ՝ բավարարելու անկոչ հյուրերի պահանջները, միայն թե գյուղացիներին վնաս չտան: Փաշան պատասխանում է. «Ես չեմ եկել ձեզ խնայելու. հանձնարարված է արմատախիլ անել գյավուրներին», և հանձնարարում է մորթել տերտերին: Գյուղացիները փախուստի են դիմում. թուրքերն ու քրդերը հետապնդում են ու չատերին սպանում, գեղեցիկ կանանց բռնում ու տանում Մուստաֆայի հարեմի համար, որոնցից հինգին վերջինս նվիրում է Թահսինին: Թուրքերը հետապնդում ու կոտորում են դաշտային աշխատանքներն ընդհատած ու փրկվելու համար անտառ փախչող գյուղացիներին, Ընկուզնակում, Սևիդում և Արղունում, ինչպես նաև լեռներում ապաստանած հայերին, իսկ քրդերը զբաղվում են թալանով: Խուլբի և Խիանքի 40 գյուղեր չորս օր շարունակ թալանվում էին, որին մասնակցում էր նաև Թահսինի ուղարկած հատուկ ջոկատը: Մի այլ ջոկատ, Օսմանի հրամանատարությամբ, սպանություններով ու թալանով էր զբաղված Մովսասարում:

«Կառավարությունը,— գրում է Հրայրը,— գարնան բացվելուն պես արհեստավորներ ուղարկեց Սասնո սիրտն ու հոգին՝ Տալվորիկի Սատանի կամուրջը վերականգնելու: Սասունցիները հասկացան դրա օրհասական և սարսափելի վտանգը»[79]: Հայերի մի խումբ հարձակվում է կամուրջը վերականգնողների և նրանց պահապան զինվորների վրա: Ոմն զինվոր սպանվում է, մյուսները փախչում են Մուշ և «լուր հասցնում կառավարությանը: Վերջինս առիթը բաց չի թողնում՝ հրավեր կարդալու աշխրեթությունններին և հատուկ պատվիրակ ուղարկելու զիլանցի շեյխ Մուհամեդի մոտ, որի անունն ու պատիվը անցյալ տարվա պատերազմից հետո ավելի էր բարձրացել, և հրահանգում է հարձակվել Տալվորիկի ու չրջակայքի վրա»:

Քուրդ աշիրեթները, նախորդ տարվա փորձից վախեցած, փոխանակ ճակատամարտելու, սկսում են «ավազակային հարձակումներ գործել այն տների և ոչխարանոցների վրա, որոնք առանձին չինություններ էին»: Հայերը սկսեցին նույնն անել, քրդերը սարսափած հետ են փախչում: Մուշում բնակվող օլիգոյի ցեղը՝ բատկանցիները, հուլիսի 27-ին հափշտակում է Սեմալի և Շենիկի անասունների հոտերը: Այդ գյուղերի երիտասարդները, Գրիգորի (Գրգո) և Սեմալի տերտեր Տեր Հովհաննեսի գլխավորությամբ, հետապնդում են քրդերին, ովքեր 34 դիակ թողած, փախչում են: Հայերը գրավում են նրանց

[78] «Նոր դար», 1894, թիվ 151:
[79] «Հնչակ», 1895, թիվ 1:

վրանները, հետ բերում ոչ միայն իրենց, այլև քրդերի ոչխարները: Դա Մուշում իրա-րանցում է առաջացնում: Քրդերն ահաբեկված էին, թե սասունցիներին երկնքից օգնա-կան ուժ է եկել, և նրանք պատրաստվում են հարձակվել Դաշտի վրա: Մուշում մթնոլոր-տը չիկանում է և հանգեցնում հայերի ու թուրքերի ընդհարման: Այն ավարտվում է հա-յերի հաղթանակով: Մութեսարիֆն օգնական ուժեր է խնդրում, մահմեդականներին դրգռում հայերի դեմ: Հարձակմանը միանում է զորքը: Հայերը մեծ կորուստներ են տա-լիս՝ 270 սպանված, 450 վիրավոր: Սկսվում են ձերբակալություններ: Նոր հարձակում է տեղի ունենում Շենիկի և Սեմալի վրա:

Հայերը հենց սկզբից անկոտրում կամք դրսևորեցին: Շատախում Զեքիի չտաբում քուրդ ցեղապետերի ղեկավարությամբ մի խորհրդակցություն է հայդուրանցի չեյխը ա-սում է. «Այս ֆլահները (հայ անհավատները) Մշո կամ այլ տեղերի ֆլահներին չեն նմանիր, սոնք չինված են տարբեր ցեխե, տարբեր խմորե, սոնց հետ չեն կրնալ չափ-վիլ: Փաշա, եթե համաձայնվեք, մենք կերթանք Դաշտ»[80]: Մի ուրիշ ցեղապետ հայտա-րարեց. «Այս լեռներուն, այս ապառաժներուն վրա ձիեր կրնա՞ն արշավել»[81]: Զեքին «արժանի հակահարված տվեց» քուրդ աղաների և ցեղապետերի խուճապային տրամադ-րություններին ու ստացավ նրանց համաձայնությունը մասնակցելու Սասունի վրա հարձակմանը:

«Նոր դար»-ը գրում է, թե քրդերն իրենց նախահարձակ լինելու պատճառը համա-րում էին հետևյալը. բատկանցի և մի քանի այլ աշիրեթներ, մոտ 500 հոգի, խուժում են Շատախ և, մարդիկ ուղարկելով Սեմալ գյուղ, պահանջում են 10 ոչխար: Սեմալցիները հրաժարվում են այդ պահանջը կատարելուց և 100 հոգանոց երիտասարդական մի խմբի հանձնարարում են պաշտպանել գյուղի մուտքերը: Քրդերը կրակ են բացում այդ խմբի վրա, և սկսվում է կռիվը: Սեմալը դատարկվում է՝ կանայք ու երեխաները տեղափոխ-վում են Գելի: Տղամարդիկ օգնության հասած չենիկցիների, գելիեցիների, այլանքցինե-րի, գելիեգերմավցիների հետ պաշտպանության են կանգնում: Քրդերն ու քրդական տարազ հագած զինվորները՝ մոտ 5000 մարդ, հարձակման են անցնում: Ընդհարումը տևում է 36 ժամ: Սպանվում է չուրջ 200 քուրդ, գրեթե նույնքան էլ հայ: Ի վերջո թշնամին փախուստի է դիմում:

"Daily News"-ը գրում է. «Մի կողմում՝ մի քանի հազար վատ զինված հայ գյուղա-ցիներ, որոնք մարտնչում էին իրենց կյանքի, կանանց ու երեխաների համար, մյուս կող-մում՝ մոլեռանդ թուրքերի կանոնավոր զորքի հզոր վաշտերը՝ զինակից ունենալով ար-յունռուշտ քրդերի վայրենի հրոսակները՝ զինված լավագույն զենքերով ու թնդանոթնե-րով,— և հետապնդելով հայերին իսպառ ջնջելու նպատակ»:[82]

Թուրք-քրդական ուժերի դեմ կանգնած էր Սասունի ամբողջ բնակչությունը՝ տղա-մարդ, կին, ծեր, երեխա: Զենք ունեին Տալվորիկից՝ 304, Գելիեգուզանից՝ 741, Շենիկից՝ 209, Սեմալից՝ 160, Իչխանձորից՝ 180, Հիթընքից՝ 134, Աղբիկից՝ 120, Ալիանքից՝ 208 մարդ: Իհարկե, սրանք ամբողջական թվեր չեն: Զենք ունեին նաև հայկական մյուս գյուղերը: Սակայն ընդհանուր թիվը 2500 փողից չէր անցնում:

Օգոստոսի 1-ին սկսվեց թուրքերի ընդհանուր հարձակումը: Հարավ-արևելքից և Դիարբեքիրի կողմից եկող խարզանցի, բելըքցի, զիլանցի, ռաչկոթանցի, չեյխկութանցի, խիանցի, չելալցի՝ մինչև Հալեպի մերձակայքի քրդերը, չարժվելով դեպի Տալվորիկ, այն չրջապատման մեջ առան: Մուշում կուտակված 12-հազարանոց զորքը Մուստաֆայի և Թահսինի հրամանատարությամբ միացավ Շենիկի ու Սեմալի վրա հարձակվողներին: Նրանց միացան նաև Խնուսի և Բուլանըխի գնդերը՝ հայդարանցիները, հասնանցիները, չեքրանցիները և սոյտանցիները՝ մինչև ռուսական սահմանի մեծ աշիրեթությունը: Շա-

[80] Բյուքստ Ս., նշվ. աշխ., էջ 1176:
[81] Նույն տեղում:
[82] «Մշակ», 1895, թիվ 1:

տախի գյուղերն անկարող էին դիմադրել չուրջ 30 հազար թուրք զինվորներին և քուրդ հրոսակներին:

Քրդերը հրդեհում են Շենիկ (160 տուն) և Սեմալ (85 տուն) գյուղերը և հետապնդում հեռացող հայերին: Ջայի կիրճում ճակատամարտ է տեղի ունենում, որը տևում է յոթ ժամ: Անդոկից հայերին օգնության են հասնում հայդուկներն ու 400 գելիեցիներ: Քրդերը կռվի դաշտում թողնում են 354 դիակ և ապաստանում օսմանյան բանակի վրաններում: Օգոստոսի 3-ին, առավոտյան նորից հնչում են պատերազմի փողերն ու հարձակում է սկսվում Տալվորիկի, Իչխանձորի, Աղբիկի, Անդոկի վրա: Հավատորիկի բարձունքներից ռումբեր են տեղում Շատախի վրա: Սասունի լեռները թուխպով են ծածկվում, «կարծես հրաբխային լավաներ էին հոսում»: Թուրքերը գիշերը գրավում են Ալիանքն ու հրդեհում 165 տուն, այրում են Գելիի մի քանի, այդ թվում՝ նաև Պետոյի, տները: Պետոն սպանում է թշնամու 27 կռվողի, իսկ երբ վառոդը սպառվում է, սրամարտի մեջ է մտնում ու 13 վերք ստանալով, զոհվում է: 25 ժամ տևած մարտում քրդերը, տալով 740 զոհ, նահանջում են: Հայերը կորցնում են 74 տղամարդ, 17 կին, 9 երեխա:

Ամբողջ Սասունը վերածվել էր կռիվների թատերաբեմի: Վերացվել էր սեփական տուն հասկացությունը: Գյուղացին քաշվել էր լեռներն ու կիրճերը և կռիվ էր տալիս իր հողը խուժած անթիվ ու անհամար թշնամիների դեմ: «Ձեզի փաչան ձգտում էր,– գրում է Հրայրը,– հիմնովին կործանել Սասունը: Նա զորքին ու քրդերին կարդաց սուլթանի ֆերմանը, որը պահանջում էր անխնա կոտորել ապստամբ հայերին: Զինվորները սկզբում վարանում էին, խուսափում խոշտանգումներին մասնակցելուց, բայց ընկրկելով սպանների սպառնալիքների առաջ, սկսեցին ջարդել ու ավերել ամենայն անողոքությամբ»[83]: Սասունցիները լավ հասկանում էին, որ այս անգամ թուրքերը եկել էին ոչ թե ընկճելու, այլ ոչնչացնելու Սասունը: Գելիեգուզանի վրա թուրքերը հարձակման տարան 30 հազար մարդ՝ 50 թնդանոթով: Գյուղը դիմադրեց 30 օր: Գելին դատարկվեց և ապա միայն թողնվեց թշնամուն: Թուրքերը ներս խուժելով գազանաբար ոչնչացրին բոլոր նրանց, ովքեր գյուղից չէին հեռացել: Դեպի Տալվորիկ չարժվող թուրքերն Աղբիկի չրջանում սպանեցին 1200 մարդ:

Օգոստոսի 4-ին, 5-ին, 6-ին կռիվներն ընթացան փոփոխական հաջողություններով: Թուրք զինվորներից մեկը վկայել է, որ փաչայի հրամանով փոս էին փորում, սպանվածներին ու վիրավորներին լցնում դրանց մեջ ու այրում: Այդ իրողությունը հաստատում է նաև Հոլվորդը: «Այրում էին կենդանի մանուկներին ու ձողի վրա բարձրացնելով՝ բղավում. «Անխելք հայեր, թե տղամարդ եք, եկե՛ք, փրկե՛ք ձեր մանուկներին»: Ցոթ տարեկան մի աղջնակ փախավ կրակից, տեսա և խղճահարվեցի, փակեցի աչքերս ու հեռացա՝ զզվելով կատարվածից: Բայց փաչան հրամայեց նորից կրակը նետել կիսամեռ աղջնակին»[84]: Մի այլ տեղ զինվորները ղազուխի էին բարձրացրել մի գեղեցիկ հայուհու: Նրա մարմինը մաս-մաս կտրտում էին ու հայերին չպրտելով՝ բղավում էին. «Հա՛յ ե՛ր, սոված եք, ահա ձեր սիրելի կանանց միսը՝ կերեք, կշտացեք»:

Օգոստոսի 7-ը ուրբաթ էր, և օսմանցիները դադարեցրին կռիվը: Օգտվելով դրանից՝ Շատախի գյուղերի բնակիչներն, ինչպես նաև իշխանձորցիները բարձրանում են Անդոկ, իսկ Տալվորիկի ու մերձակա գյուղերի բնակիչները՝ Ցոփքար: Անդոկում հավաքվել էր 21745 տղամարդ, կին, երեխա: Հայերը լեռ բարձրացան մարտական տրամադրությամբ, թշնամուն հակահարված տալու վճռականությամբ, չնայած բավարար քանակությամբ ռազմամթերք չունեին, ուտելիքը թանն ու թանհատն էր, բույսերն ու անալի միսը:

Օգոստոսի 8-ին թուրքերն անցան ընդհանուր հարձակման: Նրանք կրակի մատնեցին Շատախի բոլոր գյուղերի հացահատիկի արտերն ու անասունները: Հրդեհվեց նաև Գետաչեն գյուղը: Սոսկալի կոտորած տեղի ունեցավ Սպաղանքում: Բայց հայերը որոշել

---

[83] «Հնչակ», 1895, թիվ 1:
[84] «Դրոշակ», 1895, թիվ1:

էին չհանձնվել, մեռնել կռվելով: Նորահարսները, գրկներին երեխաներ, քաջալերում էին կռվողներին՝ «Մարաբան ձեզ օգնական»: Դիակներ, դիակներ... Քրդերը լքում են դիրքերն ու փախչում, իսկ Թուրքական թնդանոթները փակում են նրանց փախուստի ուղիները: Կռիվը տևեց 19 ժամ:

Հաջորդ չորս օրերին գնացին դիրքային կռիվներ: Հայերի վառոդը սպառվում էր: Հաջողվեց որոշ քանակությամբ վառոդ բերել Տալվորիկից:

Օգոստոսի 13-ին տեղի ունեցավ ամենաահեղ մարտը, որը տևեց 27 ժամ և չարունակվեց մինչև լուսաբաց: Այդ օրը Թշնամին հարձակում ձեռնարկեց ամբողջ Սասունով մեկ: Սակայն վճռական տեղամասերը մնում էին Գելին ու Անդոկը: Հայերը կռվում էին աներևակայելի քաջությամբ: Հերոսության փայլուն օրինակներ ցույց տվեցին չենիկցի Գրգոն, Հայդուկներից Արամը, Գևորգը, Կրպոն: Թշնամին փախուստի դիմեց: Երկու կողմից էլ կորուստները մեծ էին: Գելիում և Անդոկում սպանվեց 675 մահմեդական, 236 հայ: Թուրքերը թալանեցին Գելիեզուզանի եկեղեցին:

Օգոստոսի 14-ին քրդերը հրաժարվում են կռիվը չարունակել: Նրանք դիմում են Զեքիին. «Հաղթելն անհնար է, սրանց հետ կա մի գերբնական ուժ, որն անընդհատ ջարդում է Մահմեդի զավակներին: Մեզ բաց թողեք, թե չէ իրար դեմ ենք կռվելու»: Զեքին դիմում է խորամանկության: Նա ապիտակ դրոշ է բարձրացնում, պատվիրակներ ուղարկում Անդոկ և սուլթանի անունից ներողություն խնդրում՝ խոստանալով հատուցել հայերին հասցրած վնասները: Նկատի ունենալով, որ այլևս ոչ սննդամթերք էր մնացել և ոչ էլ ռազմամթերք, եղան բանակցությունների գնալու առաջարկություններ: Գրգոն վճռականորեն հանդես եկավ դրա դեմ՝ ասելով. «Օսմանցին չի կարող մոռանալ իր կորուստները և վաղ թե ուշ կաշխատի մեզ պատժել այն պահին, երբ պատրաստ չենք լինի: Ավելի լավ է այսօր մեր արյունը խառնենք մեր եղբայրների արյանը և գլուխ չծռենք օսմանցուն: Շնորհակալ ենք սուլթանի բարեսրտությունից՝ անձնական գանձարանից փոխհատուցելու հասցված վնասների դիմաց: Հեռացե՛ք մեր երկրից, և խաղաղությունն ինքնըստինքյան կհաստատվի»[85]:

Օգոստոսի 15-ին փաշան 500 հեծյալներով անձամբ է գնում Անդոկի ստորոտը և պահանջում, որ սասունցիները մարդիկ ուղարկեն բանակցությունների: Հայերի մի մասն ընդունեց այդ առաջարկությունը: 184 հրացանակիրներից կազմված մի խումբ Սեմալի Տեր-Հովհաննեսի գլխավորությամբ իջնում է բանակցությունների: Թուրքերը նրանց չրջապատում են: Սկսվում է օրհասական կռիվ: Դիակները լեռնանում են: Գրգոն վերևից տեսնում է մի ծերուկի, որը թևերը քշտած, դամասկոսյան դաշույնով դիակներ էր գետին փռում: Նրա հետևից գնում է որդին՝ թռչելով զոհերի վրայով: «Հայր, հայր, քաջազուններն այսպես են թռչում դիակների վրայով»: Տեր-Պետրոսը յոթ քուրդ սպանելուց հետո բղավեց. «Այժմ հանգիստ կմեռնեմ»: Քրդերը նրան բռնեցին, գլխից մինչև ոտակատեղը քերթեցին, մարմինը մանր մասերի բաժանեցին ու կրակը նետեցին: Քահանան այդ ամենը տարավ առանց ձայնի, հպարտ ու այդպես էլ չունչը փչեց: Տեր-Հովհաննեսի աչքերը հանեցին ու հարկադրեցին պարել, ապա սվիններով ծայրերին նետելով սպանեցին:

Կոտորածը Վ. Պետոյանը ներկայացնում է հետևյալ կերպ. Հայերի հետ հանդիպելուց հետո դրա արդյունքների մասին Ռեշիդը ծանոթացրեց Զեքիին՝ հավաստիացնելով, թե հայերը համաձայնվել են սկսելու բանակցությունները: «Հազիվ (սասունցիների) պատգամավորությունը հասել էր չտաբին մոտիկ, Զեքի փաշան իր զորքերով պաշարման մեջ է առնում նրանց: Կարգադրում է պատգամավորության ղեկավարներին կանչել իր մոտ: Սեմալցի Տեր-Հովհաննեսը և Կաժոյան Շառոն, գելիեզուզանցի Տեր-Պետրոս Ղազարյանը... ներկայանում են Զեքի փաշային, որն անմիջապես ձերբակալում է և կապել տալիս... իսկ պատգամավորության զինված մասը... գնդակոծման է ենթարկվում: Թեև հայերը անակնկալի եկան, սակայն դիրքավորվեցին ու սկսեցին կռվել: Նրանց մեծ

[85] «Մշակ», 12.11. 1894:

մասը սպանվեց, մի մասն էլ գելիուգուզանցի Պետոյի ղեկավարությամբ կռվելով մի կերպ հասավ Անդոկ:

Կալանքի առնվածներին գազանային դաժանությամբ չարչարում են, սրերով վիրավորում, ստիպում տեղեկություններ տալ սասունցիների ուժերի և դասավորության մասին, սակայն ոչինչ չիմանալով, սպանում են: Զեքի փաշան հրամայում է ողջ-ողջ կտրատել Սեմալի... Հովհաննես քահանայի մարմինը, որը և կատարվում է մյուսների աչքի առաջ, հետո նրանց էլ սպանում են: Սպանվածների դիակներն իրար վրա հավաքել են տալիս և այրում»[86]:

Այս խմբից Զեքին իմանում է, որ լեռներում սասունցիներից բացի ուրիշ կռվողներ չկան, որ հայերի պաշարներն սպառված են: «Երրորդ օրը (բանակցությունների իջած) խեղճ հայերին, որոնց մեղքը միայն այն է, որ... հավատացել էին կառավարության ազնիվ խոսքին ու ներողամտությանը, շարում են մի խանդակի մոտ, ապա... զինվորները, հրաման ստանալով, հարձակվում են և հրացաններով, սվիններով ու խզակոթերով նրանց գցում խանդակի մեջ ու կիսակենդան թաղում...»[87]:

Անդոկի փեշերին մնացած հայերը էլս վեց օր քարով ու սրով հետ են մղում Թշնամու գրոհները, բայց սովն իր սև գործն է անում: Քաղցից ուժասպառ մարդիկ ընկնում են, նրանց փոխարինում են կանայք ու «Կատաղած բորենու նման, որոնց ձագերին հափշտակել է ուզում գիշատիչ վագրը», հետ են մղում Թշնամու գրոհները: Գրգոն, տեսնելով, որ քաղցած ու առանց փամփուշտի դիմադրելն այլևս անհնար է, Անդոկի պաշտպանությունը հանձնարարում է կանանց ու չենիկցի տղամարդկանց, իսկ ինքը մի փոքր խմբով իջնում է Խուլբ ռազմամթերք և սննդամթերք հայթայթելու: Կանայք մի ամբողջ օր դիմադրում են: Սակայն Թշնամու ճնշումը գնալով ուժեղանում է ու դիմադրելն այլևս անհնար է դառնում: Նրանք կռվելով, երեխաները գրկներին, չարժվում են դեպի Գեբին լեռը: Սկսվում է աննկարագրելի կոտորած: Երեխաների ճիչն ու լացը երկինք են բարձրանում: Հայերը մտնում են անտառ, որն իսկույն չրջապատվում ու հրդեհվում է: Տեսնելով, որ փրկվելու հնար չկա, Գրգոյի հարս Շաքեն երեխան գրկին բարձրանում է ժայռը ու դիմում կանանց «Քույրեր, մեզ երկու ճանապարհ մնաց՝ մեռնել կամ քարից վար նետվել, բայց չընկնել Մահմեդի զավակների պիղծ ձեռքը»: Եվ երեխայի հետ վար է նետվում: Նրա օրինակին հետևողներ եղան, իսկ երեխաներն էլ գնացին մայրերի հետևից՝ առանց գիտակցելու իրենց արածը: Թշնամին սարսռաց ու մի պահ ընկրկեց: Բայց միայն մի պահ և նորից առաջ մղվեց: Գեբինի ստորոտից որոտում էին թնդանոթները: Բոլորն անխնա թրատվում էին, երեխաների դիակները ճոճվում էին սվիններին, կանանց աղիքները՝ նիզակների ծայրերին: Ամենուրեք դիակների կույտեր էին:

Ողջ մնացած մոտ 50 կին ու մի քանի հարյուր երեխա գերի են վերցվում ու տարվում փաշայի մոտ: Զեքին կանանց առաջարկում է ընդունել մահմեդականություն: Պատասխանը միահամուռ մերժումն էր: Սկսում են բռնություններ գործադրել: Մուրադի, տալվորիկցիների, Գրգոյի մասին և նման հարցերին կանայք հրաժարվում են պատասխանել: Նրանք բոլորը ոչնչացվում են: Հոլվորդը գրում էր. «Հերոսաբար կռվող հայ տղամարդիկ և նրանց կողքին մարտնչող կանայք ի սկզբանե որոշել էին որքան հնարավոր էր թանկ վաճառել իրենց կյանքը: Թուրքերն ու քրդերը հարձակվում էին նրանց վրա, սակայն ապարդյուն: Կանայք կռվում էին մինչև վերջին գնդակը, անգամ սովահար վիճակում: Ապա մահմեդականների ձեռքը չընկնելու համար նետվում էին լեռների ծերպերից»[88]: «Մայրերն իրենց զավակներին գրկած գահավիժում էին անդունդ: Ովքեր չէր հասցրել բարձունքից նետվել, թուրքերի և քրդերի կողմից գազանաբար բզիկ-բզիկ էին արվում ու սպանվում»[89]:

---

[86] Պետոյան Վ., նշվ. աշխ., էջ 125:
[87] Սպիրով Դ., նշվ. աշխ., էջ 41:
[88] АВПР, ф. Политархив, д. 3435.
[89] ՀՀՊԿՊԱ, գ. 56:

*Այս և նման կարծիքների կարելի է հանդիպել Թուրքիայում գտնվող ամենատարբեր երկրների դործակալների զեկուցագրերում ու նամակներում: 1894թ. երկրորդ կեսի Սասունի կռիվները ժամանակակիցներից մեկը ներկայացնում է հետևյալ կերպ. «Տալվորիկի կողմից, հարավից է սկսվում Թչնամու ուժգին արշավանքը: Սասունցի կռվողների թիվն այդ ժամանակ զգալիորեն պակասել էր անգամ 2000 հոգուց, ովքեր կռվում էին 48000-ից ավելի կառավարական զորքի և քուրդ աշիրեթների դեմ: Կռիվը սարսափելի չափերի է հասնում: Թնդանոթի ռումբերը փշրում են Անդոկի ամուր ժայռերը. քարերը թափվում են լեռան ստորոտ և երբեմն դառնում աղետ Անդոկ բարձրացող Թչնամու համար»: Երկու օրվա կատաղի մարտերից հետո սասունցիների ռազմամթերքն այնքան է սպառվում, որ պահեստային վերջին փամփուշտները երկու-երեք կտոր էին դարձնում ու գործածում, իսկ փամփուշտն սպառած մարտիկների միակ զենքերը մնում էին Անդոկի դագաթի ժեռ քարերը, որ գլորվում էին հարձակվողների վրա և ահագին վնասներ պատճառում նրանց... Զորքն ու բաշիբոզուկը ետ են նահանջում... և երկուստեք սպասողական դրություն է ստեղծվում: Սասունցիներն այդ ժամանակավոր դադարն օգտագործում են ազգաբնակչությանը՝ կին, երեխա, տեղավորելու հայրենի երկրի հյուրընկալ ձորերի քարայրներում և անտառներում, որպեսզի Անդոկում և Տալվորիկում մնային միայն կռվողները....»*[90]:

*Օգոստոսի 24-ին Հեղին գյուղի մերձակայքում Գրգոյի խմբի անդամները զոհվում են, իսկ ինքը՝ ծանր վիրավոր ու ուշաթափ, գերի է վերցվում: Նրան էս տանում են Զեքիի մոտ: Գրգոն աչքերը բացում է ու հաց խնդրում: Սակայն իսկույն հասկանալով, թե ինչ չրջապատում է, վեր է թռչում, խլում մի հրացան և այն ուղղում փաշայի վրա, բայց ինքն է հրացանազարկ լինում ու սրերի հարվածների տակ գետին տապալվում: Նրա վերջին խոսքը էր. «Կեցցե՛ Հայաստանը»*[91]:

*Տալվորիկը չարունակում է մարտնչել: Սակայն Անդոկի պարտությունից հետո դիմադրելն այլևս անօգուտ ու անհնար էր: Գյուղի պաշտպանները գիշերը հեռանում են տարբեր ուղղություններով: Լրիվ քարուքանդ են արվում Շենիկը, Սեմալը, Ալիանքը, Գելիեգուզանը, Աղբիկը, Գելիեգերմանը, Գեղաչենը, Շուշնամերկը, Կոփը, Իրիցուքը՝ թվով 40 գյուղ: Սկսվում է մարդադորսը: Մոտ 10 հազար հայ ոչնչացվում է, իսկ ողջ մնացած մոտ 142000 սասունցիներ ընկնում են ողբալի կացության մեջ: Քրդերը կողոպտում էին ամեն ինչ, զավթում ամեն բան՝ արտ, տուն, եկեղեցի, տնային իրեր, հագուստ, խլում վերջին շապիկը: Հայերը մերկ ու քաղցած ցաքուցրիվ են լինում լեռներում: «Օգոստոսի վերջին օրը,– գրում է Ֆ. Գրինը,– այսինքն՝ սուլթանի գահ բարձրանալու տարելիցին, զինվորներին առանձնապես էին հորդորում աչքի ընկնել, և նրանք այդ օրը կատարեցին ամենագազանային կոտորածը»*[92]:

*Սուլթանը Սասունում իրականացնում էր ցեղասպանություն: Կռիվների ընթացքում սասունցի կորուսյալների թիվը չանցավ 1500-ից, իսկ մարտական գործողությունների դադարից հետո ոչնչացված հայերի թիվը անցավ 9000-ից:*

*«Մշակ» թերթի 1894թ. նոյեմբերի համարներում ներկայացված է Սասնո կռիվների հետևյալ հաջորդականությունը:*

*27 հուլիսի. վոլկցի քրդերը հարձակվում են Շենիկ և Սեմալ գյուղերի վրա. սպանվում է երկու հայ, 34 քուրդ:*

*2 օգոստոսի. Գելիեգուզանում կռիվը տևում է յոթ ժամ, սպանվում է 359 քուրդ, 36 հայ:*

*3 օգոստոսի. Անդոկում կռիվը տևում է 22 ժամ, Թչնամին կորցնում է 760, հայերը 100 մարդ, որից 17 կին, 9 երեխա:*

---

[90] Գևորյան Վ., նշվ. աշխ., էջ 126:
[91] ԳԱԹ, ֆ. Աուաքելյան Հ., պ 165, թ. 4:
[92] *Положение армян в Турции ...*, стр. 225.

*8 օգոստոսի. Անդոկում կռիվը տևում է 19 ժամ:*

*13 օգոստոսի. Սպանվեց 673 թուրք ու քուրդ և 236 հայ:*

*21-28 օգոստոսի. Անդոկը լրիվ պաշարված է, զոհվում են մեծ թվով հայեր, տղամարդկանց փոխարինում են կանայք:*

*23 օգոստոսի. Ճակատամարտը տևում է 24 ժամ:*

*Գրինը հիմնովին մերժում է հայերի ապստամբության մասին թուրք պաշտոնական շրջանների կողմից թմբկահարվող թեզը: «Բնակիչները,– գրում է նա,– զենքի են դիմել միայն քրդերից պաշտպանվելու համար»:*

*Հոլվորդը 1894թ. նոյեմբերի 6-ին տեղեկագրում է. «Փաստերը հավաքել եմ կոտորածներին մասնակցած զինվորների պատմածներից»: Իսկապես, նրա բերած փաստերն այնպիսին են, որ դրանց մասին կարող էին իմանալ միայն իրադարձությունների ականատեսներն ու մասնակիցները: Թուրք զինվորները արդարանում էին, թե իրենք հակաիրավական ոչինչ չեն արել, այլ կատարել են փադիշահի հրամանը: Նրանք ոչ միայն չէին խուսափում իրենց հրեշագործությունների մասին պատմելուց, այլև այդ անում էին հպարտությամբ:*

*Կոտորածների մասին ռուսական, անգլիական և ամերիկյան տվյալները համընկնում են, քանի որ դրանց աղբյուրները հիմնականում նույնն էին՝ կոտորածներին մասնակցած թուրք զինվորականների պատմածները: Այլ կերպ ասած, այն, ինչ մենք գիտենք Սասունի կոտորածի մասին, հիմնականում թուրքերի պատմածներն են:*

*"Daily News"-ը գրում է. «...Արդեն սեպտեմբերի 5-ին Զեքի փաշան տեր էր լայնածավալ տարածքների, որոնք ծածկված էին հայ գյուղերի ավերակներով ու մոխիրներով և մարդկային էակների արյան լճերով ու դիակներով, էակներ, որոնց միակ հանցանքն այն էր, որ հայ էին: Բացի այն հայերից, ովքեր կարողացան ճողոպրել լեռներն ու կիրճերը, մնացած բոլորն ընկան, ոչնչացվեցին: Անհնար է ճիշտ որոշել զոհերի թիվը, սակայն հրդեհված ու քանդված գյուղերի թիվը հուշում է, որ այն բազում հազարների է հասնում: 23 գյուղ հիմնովին դարձել է հրո ճարակ, ավելի մեծ թվով գյուղեր կողոպտված են: Զեքի փաշան հեռագրով ավետեց սուլթանին իր զորքերի քաջությունը և փոխարենը միապետի չնորհակալությանն արժանացավ»[93]:*

## *4. 1894 ԹՎԱԿԱՆ. ԱՐՑՈՒՆՈՑ ՏԱՐԻ*

*Սասունի կոտորածի նախօրյակին Բիթլիսի նահանգի զորքերին բաժանվել էր 50 հազար փամփուշտ, որից 20 հազարը ծախսվեց կոտորածի ընթացքում[94]:*

*Քիլիսում ապաստանած սասունցիների տվյալներով՝ օգոստոսի 19-ի կռվից երեք օր անց սկսվել էր կոտորածը և տևել 40 օր՝ մինչև հոկտեմբերի 1-ը: Վերևից ստացված հրամանով հայերին ոչնչացնում էին ամենուրեք՝ լեռներում, կիրճերում, անտառներում, այրերում: Թուրքերը ջորիներին բարձած 80 կուժ նավթ էին տարել Սասուն և հրդեհեցին 80-ից ավել գյուղ, որից 74-ը հիմնովին կողոպտվեց: Սպանվել էր 12850 մարդ[95]: Հոլվորդը տեղեկագրել է. «Նավթը բերեցին Բիթլիսից և օգտագործեցին հրդեհելու մարագներն ու գոմերը՝ դրանցում պատսպարված հայերի հետ միասին... Նավթն օգտագործում էին նաև դիակներն այրելու համար»[96]: Նա նաև գրում է, թե «կոտորածը կատարվել է առանց խղճահարության կամ տարիքի ու սեռի խտրության: Երևելի անձանց մի մեծ խումբ, քահանայի գլխավորությամբ, ընդառաջ են գնացել հրամանատարին՝ ճեռներին հարկերի վճարման ստացականները... և գթություն են խնդրել: Նրանց կոտորել են*

---

[93] «Մշակ», 1895, թիվ 1:
[94] «Արձագանք», 1895, թիվ 3:
[95] «Մուրճ», 1895, թիվ 1:
[96] АВПР, ф. Политархив, д. 3435.

մինչև վերջին մարդը»[97]: Է. Դիլոնը նկարագրում է իր այցելությունը Գելիեգուզան. «Ավերակներն ասում են, որ տներ եղել են: Մոտեցանք ավերակների կենտրոնական խմբին, որի կենտրոնում է կործանված եկեղեցին, որտեղ բարբարոս զինվորները բանտարկեցին կանանց ու աղջիկներին և հագուրդ տալով իրենց գազանային կրքերին՝ կոտորեցին: Ապա անցանք այն տեղը, որտեղ դեռ երևում էին զինվորների վրանների հետքերը: Ճիշտ դրանց ներքևում էր այն պատմական մահ-դաբերից մեկը, որտեղ 40 թշվառներ այնքան անգթորեն սպանվեցին: Գետնին սփռված մարդկային ոսկորներն ու հագուստների կտորները լուռ վկա են տխուր պատմության: Մի քիչ այն կողմ պատրաստված էր մի այլ հոր ուրիշ թշվառների համար, որոնք, սակայն, հնար էին գտել խույս տալու: Կար նաև մի այլ փոս, որտեղ Տեր-Հովհաննեսը արժանացել էր իր հավատարիմ հոտի բախտին: Մենք զգում էինք, որ կանգնած ենք նվիրական հողի վրա. այն կարող էր դառնալ մի տաճար, որտեղ ապագայում ուխտավորներ կհավաքվեն հիշելու այստեղ թափված մարտիրոսական արյունը»[98]:

Թուրքը հրճվում էր: Մարդկանց խոշտանգելու և ոչնչացնելու նրա վայրենի երևակայությունը դրսևորվելու լայն հնարավորություն էր ստացել: Հղի կանանց արգանդը պատռում, պտուղը սրի ծայրին առնում ու չուրջպար էին բռնում, կանանց կրծքերը կտրում էին՝ պտուկներից մեղսիկներ պատրաստելու համար և այլն, և այլն: Մարդ անզոր է թվել այն բոլոր եղանակները, որոնցով մեռցվում էին կանայք և երեխաները:

Էրզրումում ռուսական գլխավոր հյուպատոս Վ. Մաքսիմովը գրում է. «...Թուրքերը Սասունում ոչնչացրել են 15000 հայ: Ընդ որում, առանձնակի դաժանությամբ աչքի էր ընկել գնդապետ Իսմայիլ բեյը, սասունցիների դեմ ուղարկված զորքի հրամանատարը. նա հրամայել է բռնել գյուղերի երևելիներին ու տանջամահ անել: Իսկ երբ այդ գյուղերի բնակիչները, իմանալով մահմեդականների գազանությունների մասին, փախել են սարերը, բեյը հրամայել է ոմբակոծել նրանց և պահանջել հանձնվել: Բոլոր հանձնվողները նույն գիշեր անգթորեն ոչնչացվել են: Թուրքերը 25 օր վայրագություններ են արել և կործանել են 50 գյուղ»[99]: Մեկ ամիս անց, նոյեմբերի 26-ին նա հայտնում է. «...Քրիստոնյա բնակչությունն ամենաանգութ և բարբարոսական ձևերով ոչնչացվել է հայկական 35 գյուղերում: Դժվար է բառերով ներկայացնել սուլթանի զինվորների վայրագությունները: Նրանք սպանում են մանուկներին, իրենց անասնական կրքերին հագուրդ տալուց հետո անգթորեն ոչնչացնում են աղջիկներին ու կանանց... զինվորները և քրդերը... տարել են վիթխարի քանակությամբ անասուններ», որի հետևանքով Մուշում անասնամթերքների գները չեչտակիորեն ընկել են[100]: Էրզրումում Անգլիայի հյուպատոս Գրեյվսը գրում է, թե Սասունում «ունեցվածքի ոչնչացումն այն աստիճանի է, որ հեշտ չէ թաքցնել դրա հետքերը»[101]: Հոլվորդը նույնպես վկայում է, որ Սասնո մի գյուղում կանանց ու աղջիկներին լցրել են եկեղեցին, նրանց վրա բաց են թողել զինվորներին և ապա բոլորին սպանել:

Դիլոնը նկարագրում է Անդոկում հայերի վիճակը. «Ճիչերի, կանչերի արձագանքն էր հնչում լեռան բարձունքներին: Շատերն ընկել էին թշնամու գնդակների տարափի տակ, ապա սկսվել է կոտորածը թրերով ու սվիններով: Ասում են, թե կոտորվել է 40-50 հազար մարդ: Դիակները դիզվել են նավթի մեջ թաթախված փայտերի վրա, որ չուտ վառվեն: Իսկ ժայռերի ու թփուտների մեջ սպանվածներին թողել են անթաղ, որպեսզի գազանները հոշոտեն»[102]:

---

[97] Նույն տեղում, Посольство в Константинополе, д. 3135.
[98] "Daily News", 270.8.1895:
[99] АВПР, Посольство в Константинополе, д. 3716.
[100] АВПР, Посольство в Константинополе, д. 3716.
[101] Նույն տեղում, д. 3435:
[102] Սպիրով Դ., նշվ. աշխ., էջ 45:

*Ծաթաղանից մազապուրծ սասունցիները ցիրուցան եղան լեռներում և անտառներում՝ զոհ դառնալով սովին, ցրտին ու հիվանդություններին:*

*Թուրքական հրամանատարությունը հրամայել էր գերի չվերցնել: Վ. Օ. Մաքսիմովը գրում է, որ չնայած ամբողջ բնակչության, «նույնիսկ կանանց անճնազոհ հերոսության, սասունցիները զոհվեցին անհավասար մարտերում»:*

*«...Տալվորիկում այս րոպեին,— գրում է ականատեսը,— ոչ մի մարդ, տուն չկա: Մնացած գյուղերում հազիվ 5-6 տուն է մնացել: Բոլոր գյուղերն այրվել են...»[103]: Միայն Տալվորիկում թալանը կազմեց 3100 խոշոր և 245 հազար մանր եղջյուրավոր անասուն, 260 ջորի, 780 պղնձե ամանեղեն, 14 հազար մեղվաընտանիք, 216 վրան, 8000 ոսկի արժողությամբ այլևայլ իրեր:*

*Դիարբեքիրում ֆրանսիական փոխհյուպատոսը 1894թ. հոկտեմբերի 5-ին գրում է. «Կ. Պոլսի հրամանով Երզնկայի 4-րդ բանակային կորպուսի հրամանատարը մեկնել է Բիթլիսի վիլայեթ՝ անցած բավական մեծաթիվ ռազմական ուժի գլուխ՝ մասնավորապես 15 հազար մարդ, կազմված կանոնավոր զորքերից, քրդերի բերած հանրահայտ ուժերից և որոշ թվով համիդիեից: Մի քանի անհաջող հարձակումներից հետո այդ հրամանատարին հաջողվեց ծնկի բերել հավանաբար հուսահատորեն պաշտպանվող խռովարարներին»[104]: Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան Կամբոնը 1894թ. նոյեմբերի 14-ին հայտնում է. «Բիթլիսի նահանգում տեղի ունեցած արյունալի դեպքերը, չնայած դրանք թաքցնելու օսմանյան կառավարության ջանքերին, ամենևին էլ չեն մոռացվել: Սպանությունների վայրերի հետու գտնվելու և այնտեղ օտար գործակալներ չլինելու պատճառով Բ. Դռանը հաջողվեց կասկածի տակ դնել Կ. Պոլսի դեսպանատներ հասած լուրերը... Չնայած դրանց բացառիկ կարևորությունը պահանջում էր այլ բացատրություն, քան այն հերքումները, որ անընդհատ անում էր Բ. Դուռը... Դիարբեքիրում մեր գործակալի հավաքած տեղեկությունները գրեթե ամբողջությամբ համընկնում են անգլիական դեսպանության ստացած տեղեկատվությանը»[105]:*

*Ֆ. Գրինը նկարագրում է. «Սասունում... կատարվել է մի վիթխարի և իր դաժանությամբ աննկարագրելի ջարդ, որին ենթարկվեցին հայ տղամարդիկ, կանայք ու երեխաները, և այդ ջարդը կազմակերպել են սուլթանի կողմից զինված քրդական զորքերն ու կանոնավոր բանակի զինվորները, որոնք ուղարկված էին հատուկ հրամանով: Այն գործադրվել է թուրքական բարձրաստիճան սպաների անմիջական ղեկավարությամբ»[106]:*

*Սասունը շրջափակված էր զորքերով ոչ միայն ջարդերի ժամանակ, այլև դրանցից հետո՝ ամիսներ շարունակ: Այնպես որ ոչ ոք չէր կարող մտնել լեռնաշխարհ: Գրինը նկատում է. «Թուրքիան նպատակ էր դրել քրստոնյաներին ոչնչացնել ամբողջ կայսրությունում»: Հոլվորդի կարծիքով՝ «Սասունի բոլոր գյուղերի բնակիչները ջարդվեցին»: Անգլիական մի ուրիշ դիվանագետ՝ Շիփլեյը, գրում է. «Հայերը երեք շաբաթվա ընթացքում (օգոստոսի 13-ից սեպտեմբերի 4-ը) ջարդվեցին առանց տարիքի ու սեռի խտրականության: Հայերը սպանվեցին՝ հալածվելով վայրի կենդանիների նման...»[107]: "Daily News"-ը «Փոսի կոտորած» հոդվածում նշում է, որ Գելիեգուզանում թուրքերը հայերին իրար կապեցին, թաղիքով ծածկեցին ու այրեցին: Հայերին հարկադրում էին փոս փորել և այդ փոսերում էլ նրանց թաղում էին կիսամեռ: Ոչնչացման գործողությունը չարունակվեց 7-10 օր: Մի այլ տեղ մարդկանց նետում էին ցցված սվիններով վրա ու տանջամահ անում: Կանանց ու աղջիկներին լցնում էին եկեղեցին՝ բռնաբարում, ապա բոլորին*

---

[103] «Դրոշակ», 1894, թիվ 13:

[104] *Братская помощь ...*, стр. 93.

[105] Նույն տեղում, էջ 93-94:

[106] *Положение армян в Турции ...*, стр. 229.

[107] Թումայան Կ., Պատմություն Արևելյան խնդրո և առաջնորդ Հայկական հարցի, Լոնդոն, 1905, հ. II, էջ 555:

*այրում կամ սրի քաշում: Կրոնափոխվելուց հրաժարվող գեղեցիկ տղաներին ու աղջիկներին մորթում էին: Զվարճության համար հային թիրախ էին դարձնում ու գազանային հրճվանքով կրակում: Երեխաներին շարք էին կանգնեցնում ու երկայնքով հրացան արձակում, իրար հետ մրցելով, թե մի գնդակով ով քանի երեխա կարող է սպանել*[108]*: Գ. Բրանդեսը նույնպես նկարագրում է Սասունի ողբերգությունը:*

*...«...Անխտիր կոտորեցին տղամարդկանց, կանանց ու երեխաներին... սպանվելուց առաջ կանայք լլկվեցին... Նրանցից հարյուրավորները, սրին ու սվիններին զոհ դառնալուց առաջ, հանձնվեցին զինվորներին... քրդերը երդվել էին հինգ տարեկանից բարձր իգական ամբողջ սեռը պղծել:*

*Մի հղի կին ծնկաչոք զորքին աղերսում էր խնայել:*

*– Տղա՞ է, թե՞ աղջիկ,– գոռացին զինվորները... յոթ մեջիդով գրազ բռնեցին:*

*– Տեսնենք ո՞վ է, ասացին ու թշվառ կնոջ արգանդը պատռեցին...*

*Մի այլ տեղ քրդերը մրցում էին, թե ով կարող է սրի մի հարվածով չորս երեխայի գլուխ թռցնել: Նրանք այդ արեցին երեխաների աչքի առաջ»:*[109]

*Թուրքերը հիմնականում զբաղվում էին սպանությունով, իսկ քրդերը՝ թալանով: Թուրք զինվորները դժգոհում էին, որ քրդերն իրենց թալանելու ոչինչ չէին թողել: Սպանում էին առանց խտրականության: Տղամարդիկ, կանայք ու երեխաները նույն բախտին արժանացան: Դեռ ավելին, կանայք մինչև սպանվելը պետք է նաև խայտառակությունը ճաշակեին: Նրանց զրկեցին անգամ ստրուկի գոյության հնարավորությունից: 200 կին ծնկաչոք աղաչում էին ցեղապետին իրենց չսպանել, բայց արյունարբու սրիկան կարգադրում է բոլորին բռնաբարել և ապա սպանել: Սպանում էին հաշվի չառնելով՝ տվյալ անձը «մեղավո՞ր է, թե՞ անմեղ»: Մի գյուղում գեղեցիկ կանանց խոստացան ներել, եթե հավատափոխ լինեն: «Մենք ինչո՞ւ պիտի հեռանանք Քրիստոսից,– պատասխանեցին նրանք՝ ցույց տալով իրենց ամուսինների ու եղբայրների դիակները,– Մենք նրանցից ոչնչով լավը չենք, մեզ էլ սպանեք»: Եվ սպանեցին: Մի հոգևորականի մարմինը կտոր-կտոր արեցին եկեղեցու տանիքին: Զինվորներից մեկը ամերիկյան միսիոներին պատմել է, որ ինքը սպանել է 80 հղի կին:*

*Մարդկանց մեռցնում էին ամենավայրագ եղանակներով: «Համեմատաբար ոչ այնքան դաժան սպանությունները հետևյալներն էին՝ սվինահարում, վիրավորների այրում կամ կենդանի թաղում... տները կրակի էին տալիս և բնակիչներին չպրտում բոցերի մեջ»*[110]*: Շատերը, մասնավորապես կանայք, խելագարվում էին: Մի թուրք զինվոր ուզում է փրկել փողոցում տանջահար ընկած գեղեցիկ երեխայի կյանքը: Գտնում է մորը, բայց նա խելագարված էր և սեփական երեխային չի ճանաչում:*

*Հ. Լազարևը գրում է. «Սասունի ավերման և սասունցիների կոտորածների համար անհնար է մեղադրել միայն քրդերին, քանի որ գործում էր կանոնավոր բանակը թնդանոթների հետ և գործում էր կառավարության հրամանով: Հանցագործության գլխավոր գործող անձինք էին Զեքի, Թահսին, Աբդուլլահ, Մուստաֆա և Օսման փաշաները: Այդ նրանք էին թե՛ թուրք զինվորներին և թե՛ քրդերին մղում, հորդորում, հրամայում ոչնչացնել հայերին: Մուստաֆան հրամայեց անխնա կոտորել Խուլբի 42 գյուղերի հայ բնակչությանը, ովքեր կռիվներին որևէ մասնակցություն չէին ունեցել և զբաղված էին իրենց առօրյա խաղաղ գործերով: Սասունում 102 գյուղից թալանված ունեցվածքն ուղարկվեց Մշո իշխանություններին»: 1894-96 թվերին Արևմտյան Հայաստանի ոչ մի հատվածում թուրքերի դեմ ապստամբության կամ ընդվզելու որևէ լուրջ փաստ հայտնի չէ, մինչդեռ զանգվածային ջարդերի արյան հեղեղն իր մեջ առավ գրեթե բոլոր հայաբնակ շրջանները: Ապստամբության ճնշման նպատակով չէր, որ թուրքական բանակը*

---

[108] *Геноцид армян ...*, стр. 39.

[109] Брандес Г., նշվ. աշխ., էջ 4:

[110] *Положение армян в Турции ...*, стр. 244.

տակառներով նավթ տարավ Սասուն և հրո ճարակ դարձրեց տասնյակ գյուղեր: Գ. Բրանդեսը գրում է. «Հայերի կրած տանջանքներն այնքան մեծ ու ահարկու են, որ սովորաբար անհնար էր մինչև վերջը լսելու մանրամասն պատմություններն ու նկարագրությունները... տղամարդիկ, կանայք, երեխաները՝ բոլորն առանց խտրականության մորթվել են...»[111]: «8-10 հազար մահն ինքնին քիչ չէ,– գրում է ամերիկացի միսիոներներից մեկը,– սակայն անհնար է նկարագրել սպանության եղանակները: Ոմանց նստեցրել են ցցի վրա, ոմանց կենդանի թաղել, երրորդներին այրել են տներում... Հղի կանանց փորն են բացել, երեխայի մազերից բռնած բարձրացրել են և կտրել գլուխը...»[112]:

Դիարբեքիրի ֆրանսիական հյուպատոսը ներկայացնում է, վ. Բերարի խոսքերով ասած, «Սասունում խաղացված ահավոր դրաման: Մոտ 7.5 հազար մարդ զոհվել էր, 30 հայկական գյուղ հրդեհվել, 40 կին ստրկության տարվել: Մուշիրի կողմից ազատված... կանայք գերադասում են չապրել, քան տանել խայտառակությունները: Ընդհանուր առմամբ երկրում սարսափ է տիրում»[113]:

Օսմանյան զորքերի դաժանությունների գլխավոր զոհը հայության չզինված մասն էր՝ երեխա, կին: «Այդ զորքը,– գրում է ժամանակակիցներից մեկը,– մինչև օրս էլ չկարողացավ բուն ապստամբների հետ կռվել»[114]:

Պաշտոնական բոլոր գրություններում չեչտվում է մի միտք, որն արտահայտված է հետևյալ տեղեկագրում. «Հայ ապստամբների թիվը կանոնավոր զորքի մի տոկոսը չի կազմում, եթե անգամ նկատի չունենանք, որ բոլոր իսլամներն ու քրդերը» նույնպես հալածում են հայերին, ովքեր երկար դիմանալ չեն կարող, նախ, այն պատճառով, որ «սննդամթերքի և ռազմամթերքի պաշարներ չունեն... և, երկրորդ, ...եղանակը գնալով ցրտում է, չուտով լեռները կծածկվեն թանձր ձյունով, և բացօթյա ապրելն այլևս անհնար կլինի»[115]:

...«Մի կողմից ոստիկանությունը,– գրում է «Նոր դար»-ը,– այնքան ձերբակալություններ է կատարում, որ բանտերում այլևս տեղ չկա, մյուս կողմից էլ արյունարբու զորքը կատաղի հեղեղի նման խուժել է գյուղերը՝ իր հետևում թողնելով մոխիր ու ավերակ՝ ներկված անմեղ բնակիչների արյունով: Ինչպես տներում մնացածներն, այնպես էլ դաշտ ու լեռ փախչողները մշտապես հանդիպում են զորքի և զոհ դառնում նրանց արյունլվա սրերին: Ընդհանրապես երիտասարդ ուժերն են սպանվում... Տները կողոպտվում են... Այգիներն ու դաշտերն արդեն խոպանացել են:

Կույս աղջիկներն ու մատաղ հարսները զոհ են գնում բարբարոս զորքի գազանային կրքերին: ...Սրի ու գնդակի սպառնալիքով հարկադրում են նրանց, որ խաչն ու քրիստոնեական այլ սրբություններ հայհոյեն:

Փոքր երեխաները գառան նման մորթվում են իրենց մայրերի աչքի առաջ»[116]:

Համիդիե սպաներից մեկը հանդիպում է ժայռերում ապաստանած մի երիտասարդ կնոջ երեք տարեկան երեխայի հետ: Փորձում է կնոջ հետ կենակցել: Կինը մերժում է: Սպան նրան հարկադրում է սպանել երեխային: Կինը դաշույնը վերցնում է, բայց խրում է ոչ թե երեխայի, այլ սպայի կուրծքը: Վրա են հասնում քրդերը: Տեսնելով, որ փրկություն հնար չկա՝ կինը սպանում է երեխային ու ապա ինքնասպան լինում:[117]

...«Հետո քրդերն արցունքն աչքերին պատմել են,– գրում է Դիլոնը,– թե չնայած հայերը իրենց թշնամիներն են, սիրտ չեն արել սպանել նրանց կանանց ու երեխաներին, ինչպես արել են զինվորները... Բոլոր հայերի տները հրկիզվել են, մեծահասակներն ու

---

[111] Брандес Г., նշվ. աշխ., էջ 5-6:
[112] *Положение армян в Турции ...*, стр. 248.
[113] *Братская помощь ...*, էջ 93-94:
[114] «Նոր դար», 1894, թիվ 214:
[115] Նույն տեղում, թիվ 197:
[116] Նույն տեղում:
[117] Նույն տեղում:

*փոքրերը, տղամարդիկ, կանայք սրի են քաշվել: Ջեռքներն ընկած երիտասարդ տղաներին կապկպած տապալել են, նրանց վրա չոր փայտ դիզել ու վառել... Ուրիշներին կտոր-կտոր են արել: Շենիկում՝ մի տանը հավաքել են 50 տղամարդ, կին ու երեխա և կրակի են տվել, զինվորները հսկել են, որ ոչ ոք դուրս չպրծնի: Մի տղա փորձել է փախչել, բայց խոցել են սվինով»: Նաև պատմում են, որ ... «Գրգոյին տարել են իր տունը, անկողնում պառկած էր կինը՝ մի քանի օր առաջ էր ծննդաբերել: Նորածնին դրել են մոր կրծքին ու երկուսին էլ ջարդել, երկու կտոր են արել: Ապա Գրգոյին տարել են հեռու և սպանել: Հետո մարդիկ գտել են նրա չապիկը... սվիններով ու դաշույններով ծակծկված 20 տեղից: Գրգոյի եղբոր կնոջը մի քանի օր պահել են զինվորների մոտ ու բռնաբարել են, որ հավատը փոխի, սակայն տեսնելով, որ անդրդվելի է, սպանել են...»:*

*Ամենուրեք սպանները զինվորներին ստիպել են վայրագություններ գործել: Շատերը հրաժարվել են: Վստահություն վայելող զինվորներից մեկը պատմել է. մի կին «երկու հոգով» (հղի) փախչում էր մերձակա գյուղից: Սպան հրամայում է կրակել նրա վրա: Բայց զինվորը չի ցանկացել սպանել և կրակել է այնպես, որ չկպչի կնոջը: Սպան կատաղած հարձակվել է նրա վրա, սաստիկ ծեծել, վերցրել հրացանը և սպանել կնոջը: Ապա սպանվածի որովայնը ճեղքել և դուրս է բերել երեխային»: Նման դեպքերը եզակի չէին: Զինվորները փողոցում տեսնում են գետնին նստած երեխա: Սպան հրամայում է սպանել նրան: Զինվորը համարձակություն է ունեցել հարցնել, թե այդ փոքրիկն ի՞նչ է արել, որ նրան մահվան բաժին անի: Սպան զինվորին, թե՝ չլինի՞ «քյաֆիր», այսինքն՝ ապստամբ է դարձել և վերջինս ստիպված թրի երեսով խփել է երեխային... Մի քրդուհի մարագում թաքցրել էր 20 մանչուկի ու ամեն օր նրանց հաց էր տանում: Հացը չպրտում էր հեռվից և հեռանում, որ տեսնող չլիներ: Մի օր, սակայն, զինվորները հետևում են և բռնում նրան՝ գոգնոցում հացը: Երեխաներին հայտնաբերում են, ու անմիջապես կոտորում: Զինվորները հազարապետի մոտ են բերում չորս փոքրիկների: Հազարապետը հրամայում է մոր աչքի առաջ չարդուփշուր անել երեխաներին: Մի ուրիշ մայր, երեխային գրկած փախչելիս, խփվել է ծառին, և մանկիկը վայր է ընկել: Նրան հալածող զինվորները երեխային չամփրել են սվինի վրա:*

> *...«Միայն Տալվորիկում կար բանակային 150 վրան: Ամեն առավոտ զինվորները դուրս էին գալիս գյուղացիներ որսալու... Տալվորիկի միջով հոսող կատաղի գետի գահավեժ ափերին նստած զինվորները զոհերին չամփրել են սվինների վրա և նետել ջրերի մեջ... Թշնամուն անճնատուր եղող 70 տալվորիկցիների զինվորական ճամբարում ստիպում են գետինը փորել: Երբ փորում են մի մեծ խանդակի չափ, նրանց սպանում են, կտոր-կտոր անում կամ կտրատում են, ինչպես ծխախոտ, ու լցնում խանդակը: Եվ որպեսզի հրճվեն մարդկային մսի այդ կույտի վրա, բերում են մի շուն, կտրատում են ու նետում աճյունների վրա, ապա միայն հողով ծածկում: Ճամբար վերադառնալով՝ այս գազանները դուրս են հանում... քահանային, խաչում մի գերանի վրա, մաս-մաս կտրատում են... կտորները շպրտում: Քրդերը քահանայի պարեգոտն ու գլխարկը վաճառում են հայկական մի գյուղում: Քահանայի եղբայրը ճանաչում է: Եվ հիմա այդ պարեգոտն ինձ մոտ է: Մի այլ վայրում քահանայի... վզին գցում են շղթա և երկու զինվոր ձգում են: Քահանան հենց ուշաթափ է լինում, շղթան թուլացնում են..., ապա նորից տանջում... Սվինները չարում են ուղղահայաց և գոհին նետում դրանց վրա: Վեց թե յոթ քահանա սպանվում է ամենազազրելի եղանակներով»:*

*Գյուղերի մեծ մասը հանձնվել է առանց դիմադրության: Հարձակումներից վերադարձած զինվորներն ու քրդերը հանդիպել են մի կույր հայ մարդու, որը դեպքերի մասին լսել էր ու նրանց հարցեր է տվել՝ լսածները ճշտելու համար: Թուրքերն ու քրդերը ատելով ասել են, թե գյուղացիները հաղթել են: «Խեղճ կույրը ժպտացել է և այդ ժպիտի համար տեղնուտեղը սպանվել»[118]:*

*Դիլոնի տվյալներով՝ հրդեհվել էր 62 գյուղ, և դրանց բնակիչները ոչնչացվել էին:*

---

[118] Սալիբով Դ., նշվ. աշխ., էջ 40-44:

«Իսկ թե հայերից, ընդհանրապես, որքան մարդ է զոհվել, դժվար էր հաշվել: Քրդերը կռիվներից վերադառնալիս՝ համոզված են եղել, որ հրկիզված գյուղերում ոչ մի կենդանի մարդ չէին թողել: Սակայն կասկածից վեր է, որ շատերը փրկվել էին... Մշո կառավարիչը հայտնում է, որ կոտորել են 20 հազար մարդ: Դրա համար նրան պաշտոնանկ են արել... Մութեսարիֆը այս չրջաններում սպանվածների թիվը հասցնում է 10 հազարի: Թահսին փաշան զայրանում է... և հրամայում է գրել, որ կոտորվել է միայն 2000 հոգի: Ես գտնում եմ, որ սպանվածների թիվը 25 հազարից պակաս չէ: 16 հազարը նվազագույնն է, և չէի առարկի այն մարդկանց, ովքեր ասեին, որ զոհվել է 36 հազար հոգի:

...Քանի գյուղ, որ հրկիզվել է, դրանից ոչ պակասը թալանվել է: Մկունդ գյուղը, օրինակ, որ փրկվելու համար վճարել է 1000 լիր, այդուհանդերձ թալանվել է: 30 տուն ունեցող Պուվի գյուղը թալանվել է... Հոսներ գյուղը երկու անգամ դատարկվել է բնակիչներից: Եթե հաշվի առնենք առհասարակ բոլոր կոտորվածներին, գերեվարվածներին, անտուն-անտեր մնացածներին ու թալանի հետևանքով ծայրահեղ աղքատության եզրը հասցվածներին, զոհերի թիվը կհասնի 30000-ի: Դրան պետք է ավելացնել նաև զորքի բերած հիվանդությունների հետևանքով տարածված համաճարակի զոհերին...»[119]:

Սասունը վերածվեց կատարյալ ավերակի: Հրդեհված գյուղերի թվում էին լեռնաշխարհի խոշոր ու սուլթանական վարչակարգի դեմ պայքարում առաջատար դեր ունեցած գյուղերը: Քրդերն անմիջապես ձեռք մեկնեցին հայերի տներին, հողերին, մյուս ունեցվածքին, խլեցին նրանց «չապիկն իսկ, նրանց մերկ ու անպաշտպան, ցաք ու ցրիվ աննեղով»: Սասունցին ծվարել էր քարանձավներում ու կիրճերում: Արծվաբույնը չրջափակված էր զինվորական չղթայով, հեռանալու կամ դրսից օգնություն ստանալու որևէ հնարավորություն չկար: Պաշարման մեջ էին նաև Մշո դաշտի մի չարք գյուղեր (Ղզլաղաջ, Տատրագոմ, Սբ. Հովհաննու վանք, Մառնիկ), նույնիսկ չէին կարողանում դաշտ գնալ բերքը հավաքելու: Մուշ քաղաքում մեծ թվով հայեր ձերբակալվեցին:

Սասունից, գրում է Դիլոնը, «ոչխարներից, կովերից ու այլևայլ ունեցվածքից բացի, քրդերը, որպես ավար, տարել էին նաև շատ կանանց ու երեխաների: ...Միայն բակրանլի ցեղի քրդերը առևանգել էին 400 կին: Քրդերի ու զորքի, մանավանդ ապաների տարած կանանց ու երեխաների թիվը հասնում էր 1000-ի: Զիլանի քրդերի առաջնորդը վերցրեց ավարի 1/8-ը: Նրան բաժին ընկավ 8600 ոչխար ու այծ, 40 ջորի, 33 ընտիր կով, երեք կամ չորս զամբիկ... Դրանից բացի նրան բաժին հասան շատ հագուստ, գորգ, ամանեղեն և այլն: Այդ առաջնորդը հայտարարեց, թե իր 14 կամ 15 հազար մարդկանցից սպանվել է 120 հոգի: Կառավարությունը սակայն ժխտում է, որ զինվորներից սպանվածներ կան»[120]: Նելիդովը գրեց. «Վերջին չաթաթ էրզրումի սրճարանի այցելուները հաճախ են լսել թուրքերի խոսակցությունները, թե «Աստված իրենց չի ների Սասունում թափված արյունը...»»[121]: Ամֆիտեատրովը նկատում է. «1894թ. Սասունի սարսափները հետևում թողեցին թե՛ Բարդուղիմեոսյան գիշերը, թե՛ Քրիստիանոս 2-րդի Արյունոտ բաղնիքը և թե՛ նույնիսկ բուլղարացիների կազանլիկյան ջարդը Վարդերի հովտում...»: Ֆ. Գրինը ներկայացնում է օտարերկրացիների նամակները, ովքեր Սասունի կոտորածի ժամանակ մերձակա չրջաններում էին եղել ու նյութեր էին հավաքել ջարդերի մասին: Նամակների հեղինակները ամերիկյան այն քաղաքացիներն էին, ովքեր 6-30 տարի բնակվել էին Թուրքիայում և 100-200 մղոն էին հեռու կոտորածների վայրերից: Նամակները կազմված էին փաստաթղթերի և ջարդերն իրականացրած թուրք զինվորների պատմածների հիման վրա: «Մենք,– գրում է Գրինը,– լրիվ հավատում ենք նրանց պատմածներին...»: Նամակների հեղինակները փաստերը խեղաթյուրել չէին կարող: Նախ, դրա անհրաժեշ-

---

[119] Նույն տեղում, էջ 46:
[120] Սպիրով Գ., Նշվ. աշխ., էջ 45-46:
[121] АВПР, Посольство в Константинополе, д. 3176, л. 26.

տուքյունը չունեին և ապա կվտարվեին կեղծ փաստեր փոստով ուղարկելու համար, չնայած նամակների մի մասը թաքուն էր դուրս հանվել Թուրքիայից: Նամակների հեղինակներն իրադարձությունների ականատես չէին, նրանք արձանագրել էին փախստականների, քրդերի և զինվորների պատմածները, այսինքն՝ փաստերը քաղված էին ականատեսներից, դեն նետելով այն ամենը, որոնք բնորոշ էին «արևելյան վկայություններին»՝ չափազանցություններին ու երևակայության պտուղներին: Նամակների թիվը 16-ն է՝ գրված յոթ տարբեր քաղաքներից, որոնցից հինգը՝ Սասունի մերձակայքի: Նամակների հեղինակները, չնայած միմյանց հետ ոչ մի կապ չեն ունեցել, բայց հաստատել են նույն իրողությունը, ինչը ևս վկայություն է նրանց պատմածի հավաստիության:

Մի քանի քաղվածքներ այդ նամակներից: 1894թ. հոկտեմբերի 31-ի նամակում շարադրված է Բիթլիսից ստացված հաղորդումը. «Սասունում 27 գյուղ ոչնչացվել է: 6000 տղամարդ, կին և երեխա սպանվել են զորքերի ու քրդերի կողմից... Թուրքերը բոլոր միջոցներին դիմել են խանգարելու դրանց մասին լուրերի տարածմանը...»[122]: 1894թ. նոյեմբերի 11-ի նամակից. «Հնարավոր է որոշել սպանվածների միայն մոտավոր թիվը, որովհետև շատ դիակներ լցվել են փոսերը և ծածկվել հողով, ներկայումս անճրևն արդեն սրբել է նրանց գերեզմանների հետքերը... Հավանաբար օկրուգի բոլոր գյուղերը ոչնչացվել են: Առանց կասկածի կարելի է ասել, որ 40 գյուղ լրիվ կործանված է... սպանվել է ոչ պակաս, քան 16 հազար մարդ: Ամենափոքր թիվը 10 հազարն է...»[123]: 1894թ. նոյեմբերի 16-ի նամակից. «Մոտ 20 գյուղ ոչնչացվել, բնակչությունը սրի է քաշվել, տները հրդեհվել են: Մի քանի ուժեղ, երիտասարդ հայերի գերի են վերցրել, իրար կապել, ծղոտով ծածկել են ու այրել... ոչ պակաս, քան 100 հայ հանձնվել ու ներում է խնդրել: Նրանցից չատերը տեղում գնդակահարվել, իսկ մնացածները մորթվել ու սվինահար են եղել: ...Սպանվածների թիվը հասնում է 20-25 հազարի... կոտորածն իրականացվել է կանոնավոր բանակի զինվորների միջոցով, որոնց մեծ մասը զինվորական բարձր կոչումներ ունեցող սպաների ենթակայության տակ էին»[124]: 1894թ. դեկտեմբերի 4-ի նամակից. «...Կ. Պոլսից ստացվում է կեղծ հաղորդագրություն, թե հայերը զինվել և ապստամբել են... Հրամանն ընթերցվեց այն զորքերի առաջ, որոնք չտապ հավաքվել էին Արևելյան Թուրքիայի բոլոր գլխավոր քաղաքներից: Ցերմանում ասված էր. «Ով խնայի տղամարդկանց, կանանց կամ երեխաներին, կդավաճանի հավատի հպատակի կոչմանը»... Տեղանքը շրջապատվեց կանոնավոր բանակի զինվորներով: Ասում են, որ այնտեղ հավաքված էր 20 հազար քուրդ: Ամենամոտավոր հաշվարկներով 15 հազար հոգի սպանվել է, 35 գյուղ ավերվել... Չնայած թուրքերի չանքերին՝ թաքցնելու այս արյունոտ պատմությունը, այն հայտնի դարձավ և հանդիսանում է 19-րդ դարում տեղի ունեցած ամենասարսափելի արյունոտ պատմությունը: Որոշ զինվորներ, հավանաբար ամաչելով իրենց խայտառակ արարքներից, ասում էին. «Մենք ի՞նչ կարող էինք անել: Մենք գործել ենք համաձայն հրամանի»»[125]: 1894թ. հունվարի 12-ի նամակից «(Սասունի) բոլոր գյուղերը վերածված էին ավերակների: Այլանդակված դիակները վկայում էին սարսափելի իրադարձությունների մասին... Ամեն օր փախստական բնակիչների խմբեր էին գալիս և հանձնվում հրամանատարներին: Արևամուտից մոտավորապես երկու ժամ անց, օրվա ընթացքում այդ միջոցով հավաքված գերիներին տանում էին մերձակա դաշտը, և օդը խլանում էր նրանց աղեկտուր ճայներից»:

Գրում է մի ամերիկացի. «Կարանտինի մեջ եղած զինվորներից մեկն ասաց, որ ինքը սպանել է 5 հոգու... Մեկ ուրիշը պարծեցավ, թե՝ 100 հոգու»[126]: «Այժմ արդեն ապացուցված է,— հավաստում է Է. Դիլոնը,— որ Սասունի կոտորածը պայծառափայլ Բ. Դուան

---

[122] Положение армян в Турции ..., стр. 232.
[123] Նույն տեղում, էջ 237-240:
[124] Նույն տեղում, էջ 233-234:
[125] Նույն տեղում, էջ 242-243:
[126] Положение армян в Турции ..., стр. 242-243.

կանխամտածված գործն է, որը նախապատրաստվեց խնամքով և իրագործվեց դաժանորեն»[127]: «Կռիվ» Թերթը 1894թ. №1-ում «Նամակներ Սասունից» խորագրի տակ տպագրեց «Տատասկ Մուշի» ստորագրությամբ նամակը, գրված 1894թ. սեպտեմբերի 21-ին: Նամակի հեղինակը պատմում է, որ 1894թ. հուլիսին Թուրքական մոտ 30 հազար կանոնավոր զորք և 50 հազար քուրդ թնդանոթներով շրջապատեցին Սասունը, մասնավորապես Անդոկը, որտեղ հավաքվել էր 6000 բնակիչ: Օրհասական կռիվը տևեց մինչև սեպտեմբերի 5-ը: Հայերից սպանվեց 3000 հոգի, իսկ թշնամին կորցրեց իր ուժերի 2/3-ը և ետ քաշվեց ու այլևս հրաժարվեց հայերի հետ կռվելուց: Այդ կռիվներում հերոսությամբ աչքի ընկան Մուրադը, Ադամը, Գրգոն, Շաքեն, Սասնո ամբողջ հայ ժողովուրդը: Կռվից հետո զորքերին հաջողվեց առանց դիմադրության հանդիպելու մտնել մի քանի գյուղեր և սոսկալի կոտորածներ անել...

Հերոսական քաջությունը, որ (ցույց տվին) հայերն այդ կռվում... անչուշտ սուլթանին համոզեցին, որ հայի հետ (գործ) ունենալը հեշտ չէ... Սուլթանի կատաղությունն իր գագաթնակետին էր հասել: Հուսահատված հայկական հեղափոխությունը ճնշելու, ոչնչացնելու և խանձարուրի մեջ խեղդելու անկարողությունից՝ կախաղանների, բանտերի ու աքսորի միջոցով հարեմի վեհափառ առյուծը ուզեց միանգամից ոչնչացնել «հեղափոխության ճգտումը»:

Իհարկե, նման ձևակերպումներն արդյունք էին ոչ այնքան իրողությունների քննական օբյեկտիվ վերլուծության, որքան ցանկալին իրականության տեղ անցկացնելու ճգտման: Հայկական հեղափոխությունը ոչ թե «ահարկու իրականություն» էր, այլ սուլթանական իշխանությունների կողմից բազում անգամ «ուռճացված վտանգ» սեփական վայրագությունները արդարացնելու համար:

1891-94թթ. եղերական իրադարձություններն իրենց վախճանին էին մոտենում: Թուրքական զորքերն ու քրդերը բնակավայրից բնակավայր էին անցնում: Բոլոր գյուղերը դատարկ էին, այլևս սպանելու մարդ չկար, ունեցվածք չկար թալանելու, հարս ու աղջիկ չկային առևանգելու: Սակայն դատարկված լեռնաչխարհն իսկ սարսափ էր ներշնչում թուրքերին, և նրանք չտապեցին օր առաջ հեռանալ: Գրում է ականատեսը.

> ...«Սասունի ծխացող ավերակների արհավիրքներից և քստմնելի տեսարաններից նույնիսկ այդ բարբարոսությունների հեղինակներն էին սարսափել և թողել-հեռացել էին... Իսկ կենդանի մնացած թշվառ սասունցիները, հեռու իրենց կործանած հարկերից, թափառական ու հալածական, փախուստական, սովի մահաբույր կծկումների դեմ էին մաքառում: Սասունը հանգչում էր գերեզմանային ամայության մեջ, և ձյունե թանձր ծածկոցը վարագուրում էր մերկությամբ երևան եկած մարդկային հրեշության և վայրագության ամոթալի երևույթները: Թնդանոթների որոտներից և կռվողների, վիրավորների ու օրհասական վիճակում գտնվողների գոռում-գոչյունից հետո դադարել էին նաև կուշտ ատամների ուրախ կրինչը և բուերի եղերական վայնասունը: Սարսափազդու լռություն էր տիրում այդ ահեղ ձորերում և լեռներում...»[128]:

«Նոր դար»-ը թվարկում է ավերված գյուղերը՝ Բերմ, Մազրեն, Հագմագ, Դուալինք, Փարխ, Հոսնուտ, Հարդք, Տալվորիկ, Սպաղանք, Մորին, Եղկարտ, Աղբի, Խտան, Գելիեգուզան, Ալյանք, Շենիկ, Սեմալ, Գելիեգերման, Կափռնի, Հեղին, Գրեմորի, Բահմտա, Մազրեն Խիան և Խլհովիտ: Մնացած գյուղերը կիսավեր էին[129]: Ճիշտ է նկատել «Նոր դար»-ի թղթակիցը, չնայած Սասունի բնակչության զանգվածային ջարդերին, այնուամենայնիվ, տեղ-տեղ «հայերի խմբերն իրենց հանկարծակի հարձակումներով չփոթություն էին առաջացնում կանոնավոր զորքի մեջ»: Թերթը գրում էր, որ «ավելի քան 5000

---

[127] *Геноцид армян ...*, стр. 77.

[128] *Положение армян в Турции ...*, стр. 240.

[129] «Նոր դար», 1894, թիվ 211:

զինվոր է սպանվել ու վիրավորվել»: Ակներև չափազանցություն է, թուրքական զորքերի կորուստը մի քանի հարյուրից չէր անցնում: Նման չափազանցությունը հետևանք էր այն բանի, որ զորքերի զոհերի և վիրավորների թվի մասին պաշտոնական հաղորդագրություններ չէին տրվում, իսկ մասնավոր անձանց նշած թվերի միջև տարբերությունները ոչ մի տրամաբանության չէին ենթարկվում:

Իշխանություններն իրենց հաղթանակն էին տոնում: Սասնո «քաջագործության» համար սուլթանը չքանչանով պարգևատրեց Զեքիին, քուրդ չորս ցեղապետեր արժանացան մետաքսե դրոշի:

Սասունի հարցը կարծես լուծվել էր: Բայց թուրքական զորքերը դեռ նոր էին հեռացել, երբ թաքստոցներին ապավինած հայերը վերադարձան իրենց գյուղերը: Եվ երբ մի քանի օր անց ոստիկանական ջոկատը Սասուն բարձրացավ, ականատես եղավ հրաշքի՝ ծուխ էր բարձրանում բոլոր գյուղերից, մարդիկ զբաղված էին առօրյա գործերով: Սասունը հարություն էր առնում: «Կոտորածներից մազապուրծ 5000 հոգի արդեն հավաքվել էր՝ փորձելով վերահաստատվել նախկին տեղերում, և հնարավոր է, որ 1000 հոգի ևս ցրված լիներ աշխարհի երեսին»: "Daily News"-ը 1895թ. օգոստոսի 27-ի հայտնի հոդվածում անդրադառնում է սուլթանի աճպարարություններին: Թուրքական իշխանությունները մի կողմից թույլ չէին տալիս Անգլիայից ստացված փողերը բաժանել կոտորածներից փրկվածներին, իսկ մյուս կողմից, «կամեցան բարերարներ ներկայանալ և հայտարարեցին, թե ողորմած սուլթանը մի քանի հարյուր ֆունտ փող է նվիրել...»: Ստեղծվեց այդ դրամը բաշխող հանձնաժողով, որը հայտարարեց՝ օգնություն կստանան միայն նրանք, ովքեր հարկ վճարելու խոստումնագիր կտան և գրավոր կվկայեն, թե «զորքերն իրենց որևէ վնաս չեն հասցրել, այլ միայն մի փոքր ընդհարում է տեղի ունեցել հայերի ու քրդերի միջև»: Ժողովուրդը հրաժարվեց նման պայմաններով օգնություն ստանալուց: Դրա փոխարեն, ինչպես գրում է հանձնաժողովի գանձապահ Կ. Գոլենը, հաջողվեց «Սասունի խեղճ ժողովրդին գործի դնել, որպեսզի կառուցեն իրենց ավերված տները»:

Սասունի 1894թ. ինքնապաշտպանական կռիվներում դժվար է գերագնահատել Հնչակյան գործիչ, հայ ժողովրդի ամենապայծառ և ամենաանձնվեր ու հերոսական զավակներից մեկի՝ Մեծն Մուրադի դերը: Սակայն հարկ է նաև չեշտել հետևյալ իրողությունը: Չնայած այն բանին, որ 1891-94թթ. իրադարձություններում հնչակյան գործիչները ղեկավար դեր են խաղացել, այդ իրադարձությունները կուսակցական բնույթ չունեին: 1891-94թթ. կռիվները կնքել «Հնչակյան ապստամբություն» անունով, ճիշտ չէ. ճշմարտությունն այն է, որ հնչակյան գործիչները չատ ավելի քարոզչական, քան կազմակերպչական դեր խաղացին: Թերևս նման վիճակը ևս ազդեց, որ Սասունի ու Զեյթունի կռիվներից հետո Հնչակը «կորցրեց ներքին բարոյական ու կազմակերպչական ուժը, արտաքին հմայքը և հեղինակությունը»: Ընդհանրապես, Սասունը չստացավ օգնություն ո՛չ դրսից և ո՛չ էլ կայսրության, այդ թվում՝ նաև հարևան չրջանների, հայությունից, ինչը խրախուսվում էր իշխանությունների կողմից:

Հասկանալի է, որ նման պայմաններում սասունցիների պարտությունն անխուսափելի էր, չնայած նրանց պայքարն անիմաստ ու ինքնանպատակ չէր: Հայ քաղաքական որոշ չրջաններ այդպես էլ համոզմունք չդարձրեցին, որ «թուրքական հալածանքները ուղղված չէին հայերի այս կամ այն հատվածի դեմ, դրանք հակապետական գործունեությամբ զբաղվող հայերի դեմ ուղղված հատուկ միջոցառումներ չէին, այլ ծրագրված էին ու գործադրվում էին ողջ հայությանը թուլացնելու, արյունաքամ անելու, քայքայելու, կազմալուծելու, եթե հնարավոր լիներ, բնաջնջելու համար»:

Իհարկե, սասունցիների 1894թ. կռիվները թե՛ իրենց ընդգրկումներով և թե՛ գործելակերպով տարբերվում էին նախորդ տարիների կռիվներից, սակայն բովանդակությամբ նույնն էին՝ ինքնապաշտպանություն: Կռիվների նախաձեռնողը հայերը չէին: Նրանք պարզապես ընդվզեցին իրենց կյանքն ու սեփականությունը պաշտպանելու համար: Սա-

սունում մարտնչողների չարքերում անպայման կային «ազգային ազատագրական պայքար վարելու ոգով տոգորվածներ», սակայն աննշան թիվ էին կազմում: Սասունցիների բացարձակ մեծամասնությունը կռվում էր իր ընտանիքը, հողը, հոտը պաշտպանելու, թուրք ցեղապետերին զոհ չդառնալու և իշխանությունների բռնություններից խուսյս տալու համար: Ինքնապաշտպանությանը հակապետական ապստամբության տեսք տալու դիտավորությունը ոչ միայն իրականությանը չի համապատասխանում, այլև քաղաքականորեն սխալ է, ինչը հայ կուսակցությունները թույլ էին տալիս հեղափոխություն, ապստամբություն կազմակերպողի բարոյական վարկ, գաղափարախոսական հմայք ունենալու մղումով:

«Համիդը համբերությամբ կը դիտեր ու վոլթեռական ժպիտով մը կը կարդար արտասահմանի հայ մամուլի թարգմանությունները, որոնք իր համար անհարկի սպառնալիքներ էին: Ան իր հրեշային ծրագիրը լարված ժամացույցի մը կանոնավորությամբ գործադրության պիտի դներ: Հայաստանի մեջ օրըստօրե կացությունը վատթարեցուց. մեծերու բողոքներուն նույն աղվեսալեզու խոստումներով պատասխանեց: Ընդհանուր ջարդեն հառաջ պզտիկ փորձ մը ըրավ, հրամայեց Սասունի չրջակայքի ջարդը 1894 հունիս ամսուն:

Առաջին փորձ մը, որ ըրավ, հարվածեց Հայաստանի սիրտը կազմող Սասնո տարերը և ուննկնդրեց իր ոճիրին հակազդեցության արձագանքը կյավուր հայու պաշտպան կյավուր Եվրոպայի տերությանց մոտ»[130]:

Սասունի իրադարձությունների պատճառներին ու բնույթին առնչվող հարցերի չուրջ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Ոմանք դրանք համարում են համազգային ծրագրի մարտավարությունից բխող ապստամբություն, ուրիշները՝ ինքնապաշտպանական կռիվներ, երրորդները՝ պարզապես կոտորածներ՝ Հայոց ցեղասպանության առաջին արարը: Հարկավ, սուլթանական կառավարությունը նպատակադրվել էր կոտորել Սասունի հայությանը, սակայն, չնայած խոշոր կորուստներին, հաջողվեց գոյապայքարի կանգնելով և ինքնապաշտպանական կռիվներ մղելով, ձախողել սասունցիների ամբողջական բնաջնջման սուլթանական դիտավորությունը: Ինչ վերաբերում է ապստամբության համազգային ծրագրի գոյության մասին պնդումներին, ապա թվում է, թե այն լրջորեն հաշվի չի առնում արևմտահայության կացությունը 19-րդ դարի երկրորդ կեսին՝ նախ, Արևմտյան Հայաստանի ավելի քան բարդ ազգային կազմը, այն, որ 2.6 միլիոն արևմտահայերի կեսից ավելին իր բնօրրանում չէր բնակվում, այլ ցրված էր ամբողջ կայսրությունում, նաև այն, որ օսմանյան դարավոր լուծը, ինչպես արդեն նշվել է, ոչ միայն տնտեսապես քայքայել էր հայությանը, այլև ծծել էր նրա մարտունակության հյութերը. անկախությունը հայի համար վերածվել էր անցյալի իրողությունների առասպելական վերարտադրության, չքնաղ երազի և ինքնասիրության բնական պահանջմունքներին արձագանքելու միջոցի: Անզեն ու իրավազուրկ արևմտահայը 500 տարի գտնվել էր զինված, թշնամի ու արտոնյալ, հետամնաց ու բարբարոս բնազդներով գործող տարրերի չրջապատում, ազգամիջյան ոչ միայն թշնամական, այլև մշտատև պատերազմի պայմաններում, որն իր գագաթնակետին հասավ, երբ հրապարակը բռնեց երեք ժողովուրդների՝ հայերի, թուրքերի և քրդերի, կենացումահու պայքարը Արևմտյան Հայաստանի համար: Փոքր դեր չխաղացին նաև արևմտահայության ներքին հակասությունները՝ սոցիալական (ամիրաներ, բուրժուական տարրեր, գյուղացիություն), տարածքային (արևելահայ գործիչների ազդեցիկ հոսանքներ, գավառահայության և պոլսահայության գերակչիռ չերտեր), կրոնական (Առաքելական եկեղեցի, կաթոլիկներ, բողոքականներ), իրավիճակ, որը թույլ չէր տալիս ոչ միայն այնպիսի խոշոր, համազգային

---

[130] Ցազճյան Գ., նշվ. աշխ., էջ 405-406:

*բարդ խնդրում, ինչպիսին Հայաստանի ապագա կարգավիճակն էր, այլև նույնիսկ մասնակի նշանակության հարցերում ընդհանուր մոտեցումներ ձևավորել:*

*Ն. Ադոնցը Սասունի կոտորածները հետևանք էր համարում Բեռլինի վեհաժողովից հետո տերությունների և, մասնավորապես, Ռուսաստանի բռնած դիրքի: «Թուրքերը,– գրում է նա,– հիրավի ծաղրելով Եվրոպայի ձեռնարկը, յուրովի բարեփոխումներ մուծեցին՝ նրանք բարեփոխում էին ավարառուություններն ու վայրագությունները», ստեղծելով հայաջինջ համիդիե գնդեր, «...Հայկական արյունը հեղվում էր անչափ ու անարդար, և ժամանակ առ ժամանակ բռցավառվում էին արյունալի հրդեհներ, ինչպես 1894 թվին...»*[131]*:*

*Մեյրիեն գտնում էր, որ Սասունի իրադարձությունները «հուսալքությունից դրդված, իրենց հանդեպ քրդերի և անգամ օսմանյան պաշտոնյաների կիրառած անհամար հարստահարությունների» հետևանք էին*[132]*: «Սասունի իրադարձություններից հետո մահմեդականների թշնամությունը քրիստոնյաների հանդեպ թվում է թե կրկնապատկվել է, և նրանք դա ամենևին չեն քողարկում»*[133]*:*

*Սասունի կոտորածները նախերգանք էին: Դրանք Հայկական հարցում առաջ մղեցին նոր, ճակատագրական նշանակության երևույթներ: Ահա թե ինչ է գրում Արևմտյան Հայաստանում երկար տարիներ աշխատած, հայերի կեցվածքին վերապահումներով և նույնիսկ թշնամանքով վերաբերվող ռուս դիվանագետ, գեներալ Մաևսկին: Նա Սասունի իրադարձություններն անվանում է «Հայկական հարցի առաջին բռնկում: Չնայած այդ արյունահոս իրադարձություններում թուրքական իշխանությունների արյունարբու մեղքը կասկածից վեր է, սակայն հավաստի է նաև այն..., որ առիթը տվեցին հայերը... Սասունի իրադարձություններն էլ հանդիսացան Թուրքիայի ներքին գործերին տերությունների միջամտության գլխավոր պատրվակը: Նաև իրողություն է, որ հետաքննող հանձնաժողովի ուսումնասիրություններն ու եզրակացությունները տերություններին մղեցին արևելյան նահանգներում բարենորոգումներ մտցնելու հարցով նախագիծ ներկայացնել սուլթանի ստորագրությանը»*[134]*:*

*Սասունի դեպքերի կապակցությամբ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության գաղտնի հրահանգում, հասցեագրված Կ. Պոլսի դեսպանին, ասվում է.*

*«1890 թվականին մենք թուրքական կառավարությանը քիչ ապացույցներ չենք տվել մեր բարի հարևանության և հաստատ մտադրությունների մասին՝ չբարդացնել Բ. Դռան դժվարին դրությունը իր հայ հպատակներին զսպելու գործում:*

*Սկսած այդ ժամանակից կողմերի վերաբերյալ մեր հայացքները չեն փոխվել»*[135]*:*

*Լաուերը գրում է. «Ներկայումս թուրքական կայսրության ամենակարևոր ազգությունների մեկը ճգնաժամ է ապրում: Այդ ճգնաժամը տարածվելու է ամբողջ Թուրքիայում, հավանաբար նաև՝ Եվրոպայում, եթե եսապաշտությունը, նախաձեռ ու երեսպաշտությունը չարունակեն ճնշել մարդասիրության, ազգային արժանապատվության բոլոր նկատառումները...»*[136]*:*

*Սասունի կոտորածներից մի քանի ամիս առաջ Կամբոնը գրեց, թե թուրքական կառավարությունը «համառորեն ձգտում է Հայաստանում պահպանել սարսափների, կոտորածների, բռնությունների ռեժիմ»*[137]*:*

---

[131] **Ադոնց Ն.**, *նշվ. աշխ.*, էջ 51:

[132] *Տե՛ս* **Meyrier G.**, *Les massacres de Diarbékir. Correspondance diplomatique du Vice-Consul de France*. 1894-1896. Paris, 2000, p. 42.

[133] *Նույն տեղում*, p. 48.

[134] **Маевский В. Т.**, *նշվ. աշխ.*, էջ 160:

[135] *АВПР, ф. Политархив, д. 3435, л. 106.*

[136] *Положение армян в Турции ...*, стр. 222.

[137] *Братская помощь ...*, стр. 92.

"Sabah" թերթը 1894թ. նոյեմբերի 11-ին նուիրեալս գրեց, որ նորից զորք է մեկնել ապստամբութեան վայր չարագործներին հալածելու համար, ինչից էլ կարելի է ենթադրել, որ Սասունում ընդհարումները չարունակվում էին: Լեռնաչխարհ տանող ճանապարհները փակ էին: Այսինքն՝ Անդոկի ու Տալվորիկի անկումը չնշանակեց ռազմական գործողութիւնների ավարտ: Սասունցին, ապավինած հայրենի լեռներին, փոքր ու մեծ խմբերով չարունակում էր մարտնչել իր օջախն ավերող, իր արյունը հեղող ջարդարար թշնամու դեմ[138]:

Ռեյթեր գործակալութիւնը մի քանի հեռագրեր հրապարակեց Հայաստանում թուրքերի նոր վայրագութիւնների մասին: Վանի վալի Բահրին գրավում է հայկական մի քանի գյուղ և բնակիչներին հաշվեհարդարի ենթարկում: Բանտ է նետվում 126 հայ: Բիթլիսում չկար հայ ընտանիք, որ բանտարկյալ չունենար[139]: Հայաստանում կատարվող բարբարոսութիւնները լոնդոնյան մամուլը համեմատում էր ամերիկյան նեգրերի հանդեպ գործադրված դաժանութիւնների հետ:

Ջարդարար Զեքին բանակային մեծ ուժերով հարձակվում է Քեմախի վրա ու կոտորածներ սարքում[140]: Երզնկայի առաջնորդը օգոստոսի 15-ին այդ ջարդարարի մասին պատրիարքին գրում է, որ Հունիսի 30-ին հայկական եկեղեցու մերձակայքում սպանվում է մի հայ երիտասարդ: Հաջորդ օրը Քեմախի կամուրջի վրա սպանված են գտնում մի թուրք չաուշի, ինչը վերագրվում է «չրջակա լեռներում ապաստանած մոտ 17 հայ ասպատակներին», և զորքն ու բաշիբոզուկը բարձրանում են Սեպուհ լեռը, «Քեմախի Թահիր փաշան հարյուրավոր բաշիբոզուկներով, Կերճանիսի Կուճառ-օղլի Համիդ բեյը նույնպես 150 բաշիբոզուկներով»: Նրանք Սեբաստիայի կողմից եկած բաշիբոզուկների հետ չտապում են հայկական գյուղերը՝ ավելի շուտ կողոպտելու և հափշտակելու, քան հայտարարված նպատակին ծառայելու: Նույն օրը բանակն ամբողջութեամբ չարժման մեջ է դրվում, քաղաքը չրջապատվում է, Սեպուհ լեռ է չարժվում 1000 հոգանոց ևս մի զորամաս: Լեռը չրջափակվում է, իսկ նրա ստորոտի Գառնի, Գոմեր, Թորթուն, Թավկեր, Մարեկ, Հոռոփլու, Ուռի և Բաբաուրիճներ գյուղերում գործադրվում են ամենասոսկալի խժդժութիւններ: Բազմաթիվ հայեր, տարբեր դասերի ու տարիքի, բիրերի հարվածների տակ հասցվում են մահամերձ վիճակի, գյուղերը կողոպտվում են: Ավագ Լուսավորչի և Սբ. Հակոբի վանքերը զորքերի կողմից ոտնատակ են արվում ու պղծվում: Հազարապետը բղավում է վանահոր վրա. «Քեզ մազերիդից եմ կախել տալու: Սասունը կոտորողը ես եմ...»: 17 ֆիդայիներից 2-ը սպանվում են, 3-ը գերի են վերցվում: Քաղաքում խուզարկութիւններ են կատարվում: «Զերբակալվածների թիվն աճում է, իշխանութիւնների վարմունքից խրախուսված թուրք մոլեռանդ ժողովուրդը» իրեն կատաղի է պահում: Քաղաքի մի քանի տասնյակ երևելի հայեր բանտ են նետվում:[141] "Daily News"-ը գրում է. «Այդպիսի խիստ ու արյունածարավ դատավճիռ նույնիսկ Երզնկայում չէր եղել»:

Անգլո-հայկական կոմիտեի ստացած նամակներից մեկում գրված է, որ Մարաշի և Զեյթունի թեմերի առաջնորդները խոշտանգվել ու սպանվել են: Ադանայում, Հաճնում ու Բեյլհնում մեծ հրդեհներ բռնկվեցին, որոնց մեղքը բարդեցին հայերի վրա և մահմեդականներին գրգռեցին նրանց դեմ, չնայած հրդեհը ոչնչացրել էր միայն հայերի տներն ու կրպակները: Սիսի, Հաճնի, Զեյթունի և Ֆոնուզի եկեղեցիները փակվեցին, Ադանայի եպիսկոպոսն աքսորվեց: Կոտորած տեղի ունեցավ նաև Սեբաստիայի գյուղերում[142]:

---

[138] «Նոր դար», 1894, թիվ 197:
[139] Նույն տեղում, թիվ 216:
[140] «Մշակ», 1895, թիվ 95:
[141] «Արձագանք», 1895, թիվ 100:
[142] «Արձագանք», 1895, թիվ 3:

*Այդ ամենը չէ՞ նանգարեցին Սոլսբերիին Լորդերի պալատում հայտարարելու. «Մենք հավատում ենք, որ ներկայումս որևէ վտանգ չկա, բայց Հայաստանում կարող են կրկնվել անկարգություններ ու հանցագործություններ»:*

*"Daily News"-ը 1895թ. հունվարի 1-ին տպեց Սարիղամիշից ստացված մի լուր. «Մուշից ու Բուլանըխից շարունակ գալիս են բազմաթիվ հայ փախստականներ, որոնք ամենասոսկալի վիճակում են: Նրանք հաստատում են Սասունի կոտորածների վերաբերյալ նախկինում ստացված տեղեկությունները: Այդ թշվառներից մեկը, վերքով ծածկված ու հաշմված, գրավոր ներկայացրեց իր տանջանքները, որ կրել էր «Սասունի արյունահեղ մկրտության» ժամանակ: Փախստականները նաև հաստատեցին, որ իրենց ազգականներից շատերը հարկադրված մահմեդականություն էին ընդունել»[143]:*

*Ժամանակի մամուլը փորձում էր ներկայացնել նաև կատարվածի բնույթը. «Սասունի կոտորածը միայն մի պայթուն էր այն պալարի, որ տարիներ ի վեր նեխել էր՝ ոչնչացնելով հարյուրավոր ու հազարավոր կյանքեր»: Բերվում է հետևյալ օրինակը. «Տասը տարեկան մի հայ աղջնակ... այնքան էր ցնցվել իր տեսած սարսափներից, որ արգանդախեղդ հիվանդություն էր ստացել՝ քուրդ կամ թուրք զինվոր տեսնելիս՝ ցնցվում էր: Որքան չփվում ես ժողովրդի հետ, այնքան ավելի սարսափելի պատկեր է գծագրվում: Քրդերի ու թուրքերի համար կարծես հաճույք է մարդկային կյանքը հեգնելն ու դրա հետ խաղալը»[144]: Մանրացավ Տարոնի հայության վիճակը: Քրդերի ավազակություններն ու իշխանությունների խժդժությունները զանգվածային, հրեշավոր բնույթ ստացան: Բոլոր գյուղերում գործ կար: Չնայած գյուղացիությունը սովի էր մատնված, գործքերն ապրում էին նրա հաշվին: Երբ Տատրագոմը դիմադրեց, հայերի մի մասին գյուղից քշեցին, ոմանց սպանեցին և գյուղում քրդեր բնակեցրեցին: Իրավիճակը սրվել էր նաև Մուշ քաղաքում: Հայերին բռնի մահմեդականացնում էին, 10 տարեկան հինգ երեխայի հրապարակավ գնդակահարեցին: Դաշտի 20 գյուղեր պաշարման մեջ էին: Միայն Մառնիկում հափշտակվեց 5000 ոչխար: «Տարոնը,– գրում է «Նոր դար»-ը,– ներկայացնում է իսկական բռնության վայր, որտեղ անպաշտպան ժողովրդի կրածները տեսնելով ու լսելով՝ մարդու սիրտն անկարող է դիմանալ»[145]:*

*Սասունցիների մի մասը սովամահ չլինելու համար իջավ Դաշտ: Բուլանըխից ահազանգում են. «Կոտորած ու ջարդ կրելուց և 80%-ը կորցնելուց հետո, խեղճ սասունցիներից մի քանիսը՝ մերկ, բոկոտն, քաղցած ու վիրավոր, մեր գավառն էին գալիս, դռնեդուռ մուրալով մի կտոր հաց էին ճարում՝ գոնե կիսամեռ զավակներին սովից փրկելու...»: Հոլվորդը հայտնում է. «Ամբողջ Բիթլիս վիլայեթում ու Էրզրումի վիլայեթի մեծագույն մասում ցրված են Սասունի կոտորածից կենդանի մնացած թշվառները՝ գլխավորապես անպաշտպան թողնված կանայք ու երեխաները»: «Մշո դաշտի բոլոր գյուղերը,– գրում է ականատեսը,– առանց բացառության, կողոպտված են և դարձել են մարդասպանության թատերաբեմ»[146]: «Տաճիկ կառավարության ցանկություններն ու ձգտումները գրեթե իրականացան: Տնտեսական ու քաղաքական հալածանքների հետևանքով Տարոնը լրիվ ավերակ է դարձել: Այսօր բյուրավոր թշվառ ընտանիքներ փողոցից փողոց են շրջում Տիգրանակերտում, Հալեպում և այլ վայրերում»[147]: Այնուամենայնիվ, կոտորածներից հետո «Մշո վրա մի անորոշ հանդարտություն իջավ: Կարծես կառավարությունն ու իր մեղսակիցները՝ քրդերը, մի վիթխարի որս կուլ տալուց հետո, հղփացած ու մարսողական թմրության մեջ մտած պոտ օձի պես մի վայրկյան ընդհատել են իրենց չատակերությունը, երևում է, հետաքննության վերջավորությանն են սպա-*

---

[143] Նույն տեղում, թիվ 40:
[144] Նույն տեղում:
[145] «Նոր դար», 1894, թիվ 204:
[146] «Հնչակ», 1896, թիվ 4:
[147] «Դրոշակ», 1894, թիվ 9:

սում՝ հասկանալու համար, թե կարո՞ղ են մարսել բյուրավոր հայ նահատակների արյունը, որ խմել էին...»[148]:

Հասարակության լայն շրջաններում գլուխ էր բարձրացնում ճակատագրական նշանակության մի հարց՝ ո՞ւմ հրամանով, ո՞վ և ինչպե՞ս կազմակերպեց Սասունի եղեռնը: «Անհերքելի փաստերով հաստատվեց ու ապացուցվեց,– գրում են Կ. Պոլսից,– որ Սասունում ու Մուշում չլսված ու չտեսնված գազանություններն ու անգթությունները մինչև այժմ կատարվել են «ամենագութ և ամենաողորմած» հռչակված արյունարբու սուլթան Համիդի բարձրագույն իրադեով»[149]: Կ. Պոլսի Անգլիական դեսպանատան թարգման Ա. Բլոքը 1894թ. դեկտեմբերի 25-ին տեղեկացրեց, որ սուլթանն անձամբ է հրաման տվել 4-րդ բանակի հրամանատար Զեքիին, սուլթանի առաջին քարտուղար Սուրեայիին և գազանային բարքերով հայտնի Աբդուլլահին կազմակերպելու Սասունի արյունահեղությունը[150]: Նաև հայտնի դարձավ, որ թուրքական պաշտոնեության ամենավերին շրջանակներում եղել են գործիչներ, ովքեր ոչ միայն չեն խրախուսել սուլթանի հրեշավոր ծրագիրը, այլև ընդդիմանալու փորձեր են արել (Ղազի Օսման, սուլթանի առաջին քարտուղար Սուրեա): Վերջինս համարձակություն է ունեցել սուլթանին նաև առաջարկել, որ կոտորածների «հերոսները» չպարգևատրվեն: Սակայն նման հատուկենտ գործիչների կարծիքը որևէ դեր խաղալ չկարողացավ: Տիրապետող մնաց իրականության կեղծարարությունը: Ֆրանսերեն լեզվով սկսեց հրատարակվել "Orient" լրագիրը, որի միջոցով էին տարածվում թուրքական պաշտոնական տեսակետները: Սուլթանը մարդիկ գործուղեց Եվրոպա՝ մամուլին կաշառելու: Թերթերի մեծ մասը, չլացած ոսկու փայլից, մասնակցեցին «լուության դավադրությանը»: Սայիդի հաշվումներով արտասահմանյան մամուլին կաշառելու համար սուլթանը ծախսել էր 235 հազար օսմանյան ոսկի և 640 չքանչան: Կաշառք ստացողների թվում էր նաև Վիլհելմ կայզրը, որին բաժին հասավ վեց միլիոն ֆրանկ: Պոլսի դեսպաններին կաշառելու համար սուլթանը հատկացրեց 400 հազար ոսկի: Նա նույնիսկ «իր հարեմի գեղեցկուհիներին, իր կանանց էր աճուրդի հանել»: Փորձեր արվեցին գնելու նաև հայկական վերնախավին: 740 ոսկի տրամադրվեց երկրաշարժից տուժած եկեղեցիները վերականգնելուն, կաշառվեց հայ կաթոլիկների առաջնորդը, որին օգտագործեցին Հռոմի պապի հետ բանակցություններում, որպեսզի վերջինս կոտորածների կապակցությամբ չդատապարտեր սուլթանին: Թույլատրվեց վերսկսելու Հայ Ազգային Ժողովի աշխատանքը: Իրավունք տրվեց հայերին ինքնուրույն ընտրելու պատրիարքին և կրոնական ու քաղաքական ժողովների անդամներին: Սիրաշահումների այդ մանանայից դուրս չմնացին նաև սասունցիները: Նրանց խոստացան մի քանի տարի հարկերից ազատել, վերադարձնել թալանված ունեցվածքը: Զեքին հայերին հորդորում էր վերադառնալ իրենց գյուղերը՝ խոստանալով օգնել նրանց՝ վերականգնելու ավերված տները: Մի քանի գյուղերում զինվորները ցուցադրաբար մասնակցում էին վերականգնման աշխատանքներին:

Այս ամենը Բ. Դռան գործողությունների արտաքին քարոզչական կողմն էր. միանգամայն այլ էր նրա գործունեության բուն իմաստը: Երբ Սասունի հայ և մահմեդական բնակչության ներկայացուցիչները համատեղ ժողովներ անցկացրին խաղաղություն հաստատելու հարցի շուրջ, թուրքերը պահանջեցին, որ հայերը միսիոներներին թույլ չտան կոտորածներից փրկվածներին նպաստներ բաժանել, հակառակ դեպքում կկրկնեն կոտորածը: Համփսընը հեռագրեց Կ. Պոլիս, թե հայերին վտանգ է սպառնում: Անգլիայի դեսպանությունը միսիոներներին հրահանգեց հեռանալ Սասունից: Այդ ընթացքում քրդերը հայերից խլում էին ստացած նպաստները: Պատրիարքը բողոքեց: Սակայն ոչինչ չարվեց քրդերի սանձարձակության առաջն առնելու համար[151]:

---

[148] «Հնչակ», 1895, թիվ 15:
[149] «Դրոշակ», 1894, թիվ 14:
[150] Walker C., *Armenia, Survival of a Nation*, New York, 1980, pp. 146-147:
[151] «Մշակ», 1895, թիվ 126:

Քաղաքական բանավեճերը Սասունի իրադարձությունների պատճառների ու բնույթի շուրջ չարունակվում էին: Գ. Քիյառը գտնում էր, որ «...չարդերը հրահանգվել են վերուստ, դրանք... չեն առաջացել մահմեդական ամբոխի ինքնաբուխ չարժումից...»[152]: "Pro Armenia"-ն գրում է. «Ինչ նոր ապացույցների անհրաժեշտություն կա համոզվելու, որ հենց Կ. Պոլսում է հղացվել խողխողման ծրագիրը»: Ծրանսիական խորհրդարանում Գ. Ռուանեն հայտարարեց. «Սուլթանն ինքն է հրամայել, որ Հայաստանում ոճիրներ կատարվեն»[153]:

Սասունի իրադարձությունները ծուռ հայելու մեջ ներկայացնելու գործում առանձնակի չանքեր էր թափում Թահսինը: Նա հայերին բանտարկում, խոշտանգում և հարկադրում էր ստորագրել գրություն, թե Սասունի ողբերգության հեղինակները հայ հեղափոխականներն էին: Երբ հայերը հրաժարվում են ստորագրել, փաշան նրանցից մեկին կախել է տալիս բանտի առաստաղից՝ սպառնալով, որ նույն բախտին կարժանանան բոլորը: Հայերը պատասխանում են. «Մենք հանգիստ նստած էինք մեր տներում, դուք զորքով հարձակվեցիք, մեր կանանց, երեխաներին, եղբայրներին սրի քաշեցիք, մեր հարևաններին ու աղջիկներին գերի տարաք, մեր տներն այրեցիք»:

Հայկական շրջաններում Սասունի չարդերի մասին լուրերի ծնած հուզումները օր օրի աճում էին: Բ. Դուրը հոգ տարավ, որ դրանք շրջանառության մեջ չմտնեն Կ. Պոլսում: Դրա համար էլ ամենախիստ արգելքներ սահմանեց գավառահայերի համար: Նրանք Կ. Պոլիս հասնելիս անմիջապես ձերբակալվում էին: Այդ կարգը գործեց գրեթե ամբողջ 1895թ. ընթացքում: "Daily News"-ը հուլիսի 8-ին գրեց. «Բիթլիսից Պոլիս եկած յոթ հայ ձերբակալվեցին... նպատակով, որ տեղեկություններ չտարածեն երկրի դրության մասին... Եվս 100 հայ ձերբակալվեց ամբաստանությամբ, թե արգելված լրագրեր են կարդում կամ զրուցում օրվա չարիքների մասին»: Էլ ավելի խստացվեց գրաքննությունը: Կ. Պոլսի բնակչությունը տեղեկություն չուներ, թե ինչ էր կատարվում գավառներում[154]:

Օսմանյան պաշտոնական մամուլի գլխավոր խնդիրը դարձավ գավառների մասին ստահոդ լուրերի տարածումը: Սեբաստիայում տեղի ունեցած կոտորածից ուշադրությունը չեղելու համար թերթերում տպագրվեց «Մի գիժ կով» հոդվածը: «Քաղաքումս մի կով է գժվել, որի պատճառով տեղիս ամբողջ ազգաբնակչությունը հուզված վիճակում է»[155]: Արգելվեց ազգային-մշակութային կյանքի վերաբերյալ լրատվությունը: Հայ մամուլի 100-ամյակի կապակցությամբ մի հրատարակության մասին լուր տպագրելու համար փակվեց «Մաղիկ» շաբաթաթերթը: Արգելվեց Մ. Իզմիրլյանի պատրիարք ընտրվելու վերաբերյալ (դեկտեմբեր, 1894թ.) տեղեկատվությունը և «ազգային» բառի օգտագործումը: Ներքին կյանքի մասին լուրերը պատրաստվում էին ոստիկանատանը: Գավառներում դեռ չարդերը չարունակվում էին, իսկ թերթերը գովաբանում էին՝ իշխանությունների չանքերով հաստատվում է անդորրություն; անվտանգությունը, որի համար հայերն իրենց «գոհունակությունն» են արտահայտում: Տպագրվեցին «մշեցիների թղթակցությունները», որոնք փառաբանում էին Տարոնի երջանիկ առօրյան[156]:

1894թ. նոյեմբերի 14-ին Կ. Պոլսից «Նոր դար»-ին գրում են. «...Թուրքական կառավարությունը սկսել է իր տեսակի մեջ բոլորովին նոր հալածանք: Այդ հալածանքը, հայ սրբերի, հայ երևելիների ու Հայ Եկեղեցու և ազգության համար հին ժամանակներում նահատակվածների դեմ է»: «1895-ի հայոց օրացույցի մի[ից] գրաքննիչը, կառավարությունից ստացած հրահանգի համաձայն, ջնջում է այն բոլոր անունները, որոնց հետ սերտորեն կապված է Հայ Եկեղեցին... արգելվում է հիշել Վարդանանց, Սբ. Աբգար,

---

[152] «Դրոշակ», 1902, թիվ 1:
[153] Նույն տեղում, թիվ 2:
[154] «Մշակ», 03.05.1894:
[155] «Մուրճ», 1905, թիվ 11-12:
[156] «Արձագանք», 27.01.1895:

Սբ. Գրիգոր Լուսավորիչ և նման այլ անուններ, ինչպես նաև տոների առաջին կիրակին ցույց տվող խաչանիշներ... այսօր հալածանքն ու բռնությունը այլևս հասել են իրենց գագաթնակետին: Այդ հալածանքը ազգային լինելուց բացի նաև կրոնական է»[157]:

Էրզրումի անգլիական հյուպատոսը, փութաց Սասուն, բայց թուրքական իշխանությունները արգելեցին լեռնաշխարհ բարձրանալ: Մուշում ևս նրան թույլ չտվեցին հանդիպել հայ երևելիների հետ: Այնուամենայնիվ, հյուպատոսին հաջողվեց նյութեր հավաքել Սասունում կատարվածի մասին, որոնց հիման վրա Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Ֆ. Քըրրին Բ. Դռնից բացատրություն պահանջեց: Դրա հետ միասին Կ. Պոլսում տևական ժամանակ թուրքական թերթերի հրապարակած լուրերով էին պատկերացում կազմում Սասունի իրադարձությունների մասին, մինչդեռ այդ թերթերը «ոչ միայն անպետք էին, այլև որոշակի թյուրիմացություններ առաջացնող, քանի որ պարտավոր էին կրկնել այն, ինչ պաշտոնապես թելադրում էր վարչությունը»: Իսկ վարչության վարկածն էր. «Մի քանի հայ ավազակներ դրդռել են խաղաղ ու գոհ հպատակներին»[158]: Բ. Դուռը պատրանք ուներ, որ իրեն հաջողվում էր ճշմարտությունը թաքցնել, տպավորությունն այնպիսին էր, թե Անգլիան միայնակ է մնացել «հայերի հանդեպ համակրանքի մեջ»: Թուրք նախարարները նույնիսկ հրապարակավ էին պարծենում, թե որևէ թղթակից Սասուն մտնել չի կարող: Այսինքն՝ Սասունում կատարվածի վերաբերյալ կար միայն մեկ աղբյուր՝ թուրքական պաշտոնականը: Սակայն չուտով ակնհայտ դարձավ, որ աղբյուրը մեկը չէ, այլ բազում ու բազմատեսակ, ինչը տագնապ առաջացրեց թուրք վերնախավի շրջանում: «Նման տագնապ տարիներ ի վեր նրանք չէին զգացել»:

Սասունում կատարվածի մասին լուրը լեռնաշխարհից առաջինը դուրս հանեց մի սասունցի, որը թաքուն անցավ Կարին և պատմեց իր տեսածն ու լսածը: Դա մեծ արձագանք ունեցավ ոչ միայն Կ. Պոլսում, այլև արտասահմանում: Սուլթանը չփոթվեց: Ելդըզում իրար հետևից խորհրդակցություններ էին տեղի ունենում՝ «հերքում հերքումի հետևից, կաշառք թղթակիցներին, դեսպաններին»: Եթե մինչև մարտի սկիզբը տեղեկատվության անորոշության պատճառով Պոլսում «մի տեսակ կասկածամտություն և գաղջություն էր տիրում», ապա չուտով վիճակը լրիվ փոխվեց, գրեթե ամեն ինչ բացահայտ դարձավ: Անգլիական մամուլը միաբան նշեց, թե «վերջին 20 տարվա ընթացքում երբեք Կ. Պոլսում եվրոպական դեսպանների միջև Հայկական հարցում այնպիսի միասնություն չի եղել, ինչպես այժմ»[159]: Ռեյթեր գործակալությունը Պոլսից հաղորդեց, թե նահանգներում թուրք պաշտոնատարները սաստկացրել են բռնությունները հայերի նկատմամբ: Այս վիճակը նկատի ունենալով՝ տերությունների դեսպաններն ամեն օր նիստեր էին անցկացնում: 1895թ. ապրիլի 15-ին Ֆ. Քըրրին Բ. Դռանը վերջնագիր ներկայացրեց պաշտոնատարների կողմից հայերի ճնշումների ու հալածանքների վերաբերյալ[160]:

Երբ կոտորածների իրողությունը ժխտելու սուլթանի ճիգերը ձախողվեցին, նա օգտագործեց մի նոր հաղթաթուղթ՝ կոտորածների մեղքն ամբողջությամբ բարդեց քրդերի վրա: Նրանց հարկադրեցին հանրագիր ստորագրել՝ թե կոտորածներ ու ավարառություններ միայն իրենք են կատարել, զորքերը մասնակցություն չեն ունեցել: Կառավարության հանճնարարությամբ Ալայը հարձակվեց քրդերի վրա, փորձեց խլել հայերից թալանված իրերն ու տավարը: Քրդերը դիմադրեցին, սակայն ինչ-որ քանակությամբ անասուն հաջողվեց խլել, բայց դրանց 10%-ն էլ չհասավ նախկին տերերին: Բանտ նետվեցին մի շարք քուրդ առաջնորդներ: Սակայն երկար չմնացին բանտում: Աղաներից մեկը «կառավարությանը սպառնացել էր դեսպանների առաջ բաց անել բոլոր գաղտնիքները,

---

[157] «Նոր դար», 1894, թիվ 200:
[158] "Daily News", 15.04.1895:
[159] «Մուրճ», 1895, թիվ:
[160] «Արձագանք», 1895, թիվ 44:

ցույց տալ, որ քրդերն ամեն ինչ կատարել են կառավարության դրդմամբ»: Իսկ խիզանցի աշիրեթապետ Խշման հայտարարեց. «Կառավարությունը աշիրեթներին դրդեց կռվի, կոտորածն էլ հիմնականում կատարել է զորքը»:

Քղիից երկու հայ երիտասարդների հաջողվում է կաշառքի միջոցով ստանալ քուրդ ցեղապետերին հասցեագրված կայմակամի և շեյխ Մեհմեդի նամակը: Այն սկսվում է հետևյալ տողերով. «Ջնջեցեք բոլոր որդերին: Սույն նամակը ստանալուն պես, եթե Մուհամմեդի իսկական հավատացյալներն եք, հավաքեք ձեր բոլոր մարդկանց և սկսեք թալանել հայ գյուղերը, այրել ու սպանել: Գյավուրները աշխատում են տիրանալ այս երկրին և ձեր տերերը դառնալ: Գործելու ժամանակն է: Դրանց արմատները չորացրեք: Ոչ մի հայ թող չմնա: Մեր առատագութ սուլթանը, եթե լսի ձեր քաջագործության մասին, պատիվներով ու չքանչաններով կփառավորի ձեզ...»: Նույն միտքն է հաստատել նաև Ջիբրանցի մի քուրդ աղա. «Անցյալ տարի Սասնո կոտորածի համար կառավարությունից գիր եկավ մեզ և հասնանցիներին, թե պետք է ձեր բոլոր հեծյալների բազմությամբ և զենքով գնաք Սասունի հայերի վրա և կոտորեք, որովհետև դա թագավորի հրամանն է: Եթե չգնաք, համիդեությունից զրկվելու եք, ձեր տները թալանելու են, իսկ ինքներդ մաշվելու եք բանտերում: Բայց մենք կարևորություն չտվեցինք և չգնացինք: Հիմա նոր հասկացանք, թե ինչու անցյալ տարի հոկտեմբերին Ալայ բեյը զորքերով մեր տներն ավերեց, եղած-չեղածները տարավ և մեզ բանտ ուղարկեց...»[161]:

Կարելի է բերել բազմաթիվ այլ փաստեր ու վկայություններ ցույց տալու համար, որ քրդերի միջոցով հայերին բնաջնջելը սուլթանական կառավարության ներքին քաղաքականության առանցքային ուղղություններից էր: 1894թ. այդ քաղաքականությունը դրսևորվեց բացահայտ: Սուլթանին իսկապես հաջողվեց քրդերի շրջանում ատելություն բորբոքել հայերի նկատմամբ և նրանց միջոցով կազմակերպել բնաջնջումը: Սակայն բոլոր քրդերն ու թուրքերը չէին, որ հավանություն տվեցին սուլթանի հայաջինջ քաղաքականությանը: Եղան անհատներ, որոնք այդ քաղաքականությունը վճռականորեն համարեցին: «Դարեր շարունակ,– գրում է մի թուրք,– հայը գոյության կռվում օգնության ձեռք է մեկնել Ալլահի որդիներին՝ մահմեդականներին: Տերության գանձարանը լցրել են հայերը, արհեստն ու առևտուրը ծաղկել են նրանց ձեռքերով, երկրի քաղաքական ղեկավարները եղել են նրանք: Առանց հայի մենք կյանք չունեինք, մենք ինքներս կտրեցինք մեզ կերակրող ձեռքը»[162]:

Գրականության մեջ չատ հաճախ չեշտվում են քրդերի վայրագությունները, և աչքաթող է արվում թուրքերի, մասնավորապես, պաշտոնատարների ցեղասպան գործունեությունը: Խնուսի Խոզլի գյուղի բնակիչները երկու օր դիմադրում էին քրդերին: Բայց երբ հարձակմանը միացավ զորքը, հայերը փախան լեռներ, իսկ գյուղում մնացածներին զորքը սրախողխող արեց: Երբ այդ գազանությունների մասին հայերը զանգատվեցին Խնուս այցելած Շաքիրին, վերջինս կարգադրեց հայերին բանտ նետել, իսկ քրդերին էլ հանդիմանեց, որ տարվելով կողոպուտով՝ չեն հասցրել բոլոր հայերին ոչնչացնել: Փաշայի այցելությունից հետո մահմեդականները հայերին սպառնում էին՝ «Ձեր վերջը մոտ է»: "Daily Telegraph"-ը տպագրեց 1895թ. մարտի 26-ին Մուշից ստացված հետևյալ նամակը. «Անցյալ աշնան սկզբին Բիթլիսի վիլայեթի Մոտկանի կառավարիչ Ռուֆդի էֆենդին մարդ է ուղարկում Տարոն անունով քուրդ իշխանի մոտ... և հայտնում. «Զինվորների ուղեկցությամբ Բիթլիս եմ ուղարկում գավառի մեծատուն հայերին: Շտապ հավաքիր մի քանի քուրդ, հայի չորեր հագցրու և հարձակվիր նրանց վրա ու կոտորիր»: Քուրդը հրաժարվում է այդ հրամանը կատարելուց»:

Ղշման աղան Դիլոնին պատմել է, թե 1894թ. հայերին կոտորելու հրաման ստանալով (իբր նրանք թաքցնում էին հեղափոխականների), գնում է Տալվորիկ և համոզվում,

---

[161] «Հնչակ», 1895, թիվ 14:
[162] «Դրոշակ», 1896, թիվ 8:

որ նման բան գոյություն չունի: Իշխանությունները նրան մեղադրում են խռովարարներին համակրելու մեջ: Զգալով սպառնացող վտանգը՝ քաշվում է Մովսեսար: Նրան հրամայում են մասնակցել հայերի կոտորածներին: Աղան պատասխանում է. «Ես Տալվորիկի գյուղերի տերն եմ և ոչ ոքի թույլ չեմ տա դրանք ասպատակել»: Տալվորիկն ընկնում է: Ղշման աղան 300 տալվորիկցու ապաստան է տալիս Մովսեսարում, որի համար բանտ է նետվում: Նա չէր հերքում, որ քրդերը կոտորել են հայերին, սակայն պնդում էր, որ նրանք անպաշտպան մարդկանց չեն սպանել: «Ես ինքս էլ,— ասաց նա,— շատ ավար եմ հափշտակել հայերից... Թուրքերի կողմից արդար չէ, որ ինձ բանտարկել ու չարչարում են հայ փախստականներին հովանավորելու համար, մարդկանց, որոնց անձամբ ճանաչելով, ցանկացել եմ փրկել թե՛ թուրքերի և թե՛ քրդերի որսից»: Սակայն խոշտանգումները կոտրեցին քուրդ ցեղապետի կամքը: Նա Սասունի իրադարձությունները հետաքննող հանձնաժողովին այլ ցուցմունք տվեց: Այդ մասին "Daily Telegraph"-ի թղթակիցը ապրիլի 20-ին հեռագրեց. «Զարմանալին այն է, որ նա կանչվեց որպես վկա... Սակայն նրա պատասխանները եվրոպական պատվիրակների հարցերին այնքան հակասական և իրարամերժ էին, որ տված վկայությունների հավաստիությունը հարցականի տակ դրվեց: Մի քանի քրդերի, որոնց ուղարկել էին Սալի աղան և Թալիբ էֆենդին (ովքեր կաշառքի ու ահաբեկման միջոցով ստիպում էին ցուցմունք տալ հօգուտ իշխանությունների), հարցաքննության ժամանակ ևս, մանավանդ բրիտանական ու ռուսական պատվիրակների հարցերին նրանց տված պատասխաններով, բացահայտվեց, որ նախկինում տրված վկայությունները ծայրեծայր չինծու էին»:

Հայերի հանդեպ թուրքական քաղաքականությունը ճիշտ է ներկայացնում Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Զինովևը: Նա գրում է, որ թուրքական կառավարությունը, ուժից վեր հարկեր նշանակելով, լռելյայն շարունակում էր ջարդերը: Տարվող քաղաքականությունը նպատակ ուներ «կա՛մ ազատվել հայերից, կա՛մ էլ նրանց դնել այնպիսի վիճակում, որ դառնան անմռունչ ստրուկներ: Այդ նպատակով էլ միջոցներ են ձեռնարկվում ստիպելու հայերին հեռանալու Սասունի լեռներից, որտեղ նրանք հնարավորություն ունեն պաշտպանվելու ավազակային հարձակումներից...»[163]:

Սասունի իրադարձությունների կապակցությամբ ձերբակալվածները հիմնականում նետվում էին Բաղեշի, մասամբ նաև՝ Վանի ու Էրզրումի բանտերը: Իսկ թե ինչ էին իրենցից ներկայացնում այդ բանտերը, պատկերացում է տալիս «Մշակ»-ի 1895թ. մարտի 28-ի համարում տպագրված հոդվածը: Բաղեշի բանտն ուներ 7 խուց՝ յուրաքանչյուրը 10-12 մարդու համար, բայց դրանցում խցկված էր 20-30 մարդ: Սանիտարական պայմաններն անտանելի էին: Ներքի հատակը ծածկված էր արտաթորանքով, մարդկանց կղկղանքով: Ամենուրեք՝ մրջյուն, լու, ոջիլ: Բանտարկյալ հայերը պարտավոր էին վճարել զափթիեներին: Նրանք պարտադրված էին նամակ գրել միայն թուրքերեն... Ջուր չկար և հարկադրված էին խմել «խոզաճի ջուրը»՝ թուրքերի լվացումներից մնացածը: Ամենաչնչին դժգոհության դեպքում նետվում էին մութ «գառագեղները», և ենթարկվում վայրագ քմահաճույքների: Մեծը սովորական երևույթ էր, երկաթե հաստ չղթայով բանտարկյալի մարմինը ջարդուփշուր էին անում, գանակոծում և խեղդում, ոտը, թևը ջարդում, չիկացած երկաթով այրում, բռնաբարում, բազում օրեր քաղցած ու ծարավ թողնում, պարանը վիզը գցած՝ քարշ տալիս, մազերը, հոնքերը փետրում, բռնի կրոնափոխում:

Բանտարկությունը շատ հաճախ կատարվում էր առանց դատ ու դատաստանի: Թահսինի հրամանով Կոփում 17 երևելի հայ բանտ նետվեց, նրանց մի մասն այնտեղ էլ կնքեց իր մահկանացուն: Միայն Բաղեշի բանտում կար 110 քաղբանտարկյալ: 1893թ.

---

[163] Саркисян Е. К., *Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XXвв.*, Ереван, 1972, стр. 202.

այս բանտը նետվեց նաև Մ. Տամատյանը, որին Բաղեշ բերելիս, ոտը չարդեցին, որպեսզի չկարողանա փախչել: Մուրադին (Հ. Պոյաճյանին) ձերբակալեցին 1894թ. օգոստոսի 23-ին Ցոփքարի քարայրում: Երեք օր արևի տակ պահելով հիվանդացրին: Ապա տարան Սեմալ և Զեքիի ներկայությամբ դանակոծեցին և նետեցին Մշո բանտ: 21 բանտարկյալներից 5-ը մեկ ամսվա ընթացքում մեռան խոշտանգումներից: Երկու ամիս անց Մուրադին ու իր զինակիցներին տեղափոխեցին Բաղեշի բանտ: Այստեղ ևս երկուսը մեռան: Մուրադին գազանային չարչարանքների էին ենթարկում, օրերով սոված ու ծարավ թողնում, ծեծում էին բիրերով, փետում մազերը, ծանր չղթաների մեջ պահում:

Բաղեշի բանտարկյալներից էր նաև Մշո առաջնորդ Ներսես վրդ. Խարխանյանը: Նրան բանտ նետեցին 1893թ. իսկ 1895թ. ապրիլին տեղափոխեցին Կ. Պոլիս: Ձերբակալության պատրվակը հետևյալն էր: 1893թ. անթերրի տարի էր, և Խարխանյանը Մշո փաշայի համաձայնությամբ թեմի գյուղերում ցորեն էր հանգանակում: Մատնում են, թե ցորենը հավաքում է ոչ թե Սբ. Կարապետի վանքի, այլ հեղափոխականների համար: «Մշակ»-ը 1894թ. նոյեմբերի 17-ին գրում է. «Անգլիայի քննիչ փաշան հենց եկավ, ուղղվեց Հայոց առաջնորդարան, բայց երբ այն փակ տեսավ, հարցրեց. «Ինչո՞ւ է փակ, որտե՞ղ է ձեր առաջնորդը»: Նրան պատասխանում են, թե «արդեն երեք տարի է, որ մեր առաջնորդը ձերբակալված է, ներկայումս Բաղեշի բանտում է»: Այդտեղից գնում է հայ կաթոլիկների առաջնորդարանը: Այդտեղ ոստիկանները հսկում են մուտքը, որպեսզի որևէ հայ ներս մտնել չկարողանա... Երբեք թույլ չեն տալիս, որ հայերը փաշայի երեսը տեսնեն ու իրենց ցավերը պատմեն»:

Սասունցի ձերբակալված 27 տանուտերերից,– գրում է «Տարազ»-ը,– 17-ը մահացել են բանտի տաժանակիր կյանքից, վայրենի ծեծից, քաղցից ու տանջանքից: Կառավարությունն այժմ ստիպում է նրանց, որ թուղթ տան, թե մեռածները դարձել են խոլերայի զոհ»:[164]

Սասունի իրադարձություններին զուգընթաց ուժեղացան բռնությունները հայկական բոլոր նահանգներում: 1894թ. դեկտեմբերին Ամասիայում բանտ նետվեց 120 հայ: Անգլիայի խորհրդարանը անդրադարձավ այս հարցին: Շվեն հայտարարեց, թե "Daily Telegraph"-ի մարտի 16-ի համարում լրատվություն կա այն մասին, որ երեք ամիս առաջ «հեղափոխականի» մեղադրանքով Ամասիայի բանտում եղած 120 բանտարկյալները թեև ազատ են արձակվել, սակայն վալի Բեքիրը տարբեր հնարքներով նրանց նորից բանտարկել է: Արտաքին գործերի փոխնախարար Գրեյը պատասխանեց, թե այդ վալին մի անգամ նման բան անելու համար աշխատանքից ազատվել է: Անգլո-հայկական կոմիտեի նախագահ Ֆ. Սթիվենսոնն ասաց, թե 700 բանտարկյալ ազատելու մասին Բ. Դուան հայտարարությունից հետո նրանցից 500-ը նորից բանտ է նետվել[165]:

Բանտարկյալների խնդրում սուլթանի այս ցինիկ խաղերը զուգակցվում էին հայաբնակ շրջաններում լրացուցիչ խստություններ մտցնելու հետ: Գրում են կեսարիայից. «Այս կողմերում օրը 1-2 հայ սպանելը սովորական բան է»: Սպանությունները հաճախակի դարձան Խնուսում: Բուլանըխում հայերը թալանվում էին հրապարակավ: Բալուից գրում են. «Գիշերը հանգիստ քնել չենք կարող, որովհետև մի տեղ պատ է ծակվում, մի տեղ տուն է կողոպտվում, մեկի անասունն են հափշտակում... ոստիկանները մեզ սպառնում են գցել Տալվորիկի օրը»[166]: Տերությունների կառավարություններին ուղղված մի բողոքագրում կարդում ենք. «Կառավարության պաշտոնատարների, իսլամ հասարակության և չերքեզների կողմից Ծոզղաթում և շրջակա հայ գյուղերում պարբերաբար կատարվող հարստահարությունները, սպանությունները, անարգանքը, ավարառությունները և զրկանքները այլևս անտանելի են դարձել»:

---

[164] «Տարազ», 1895, թիվ 12:
[165] «Մուրճ», 1895, թիվ 3-4:
[166] «Դրոշակ», 1894, թիվ 11:

Երբ Սասունի կոտորածներն արդեն դաժան իրողություն էին, պոլսահայ չրջանները սկսեցին մեղավորներ փնտրել... հայերի մեջ: «Սասունի հետ այժմ գործ չունենք, թող հանգիստ մնան, հիմա կա մի ավելի մեծ խնդիր՝ կաթողիկոսական խնդիրը»: Այդ առնչությամբ «Հնչակ»-ը իր 1894թ. թիվ 13-ում գրեց. «Թուրքերի ակնհայտ բարբարոսությունները տեսնելով հանդերձ, զարմանալի է, որ մեր մեջ գտնվում են այնպիսի անձինք, որոնք ասում են, թե «Այս մի քանի տարում կատարված վնասակար ցույցերը միայն պատճառ դարձան թշնամու կողմից հարստահարությունների խորացմանը»: Մինչդեռ այդ ցույցերն այլ նպատակ չունեին, եթե ոչ թշնամու գործադրած սոսկալի կեղեքումները... ի դերև հանելը և հարստահարված ժողովրդի արյունոտ պատկերը հրապարակի վրա դնելը»:

Վանի ամբողջ ժողովուրդը հուսահատության մեջ էր: Կուսակալ Բահրին քթի տակ ժպտալով, ասում էր. «Հայեր, ձեզ բոլորիդ մուրացկան եմ դարձնելու»: Եվդոկիայում մունետիկները կոչ էին անում թուրքերին «Հարձակվեք Հայոց թաղի վրա, կոտորեք անհավատներին, պղծեք նրանց կանանց: Մուհամմեդից կվարձատրվեք»: Ամբոխը հարձակվում է: 15 հայ զոհվում է, 180-ը՝ վիրավորվում: Անելանելի դրության մեջ հայտնված չատ հայեր թրքացան: Օրդուում նույնպես պաշտոնատարները թուրք գյուղացիներին հրահրում էին կոտորել հայերին: Վերջիններս փախան սար:

Ապրիլի 3-ին Բերայի հայկական գերեզմանատանը Զատկի տոնի էին հավաքվել չատ հայեր: Հայտնվեցին ոստիկանները: Տեղի ունեցավ ընդհարում: Մի ջամտեց Նելիդովը, որի պահանջով ոստիկանները հեռացան: Այս դեպքի կապակցությամբ՝ սուլթանը աչխատանքից ազատում է պալատի մի չարք հայ ծառայողների: Մայիսի 11-ին Սբ. Փրկչի հիվանդանոցի բակում կայացած հանրահավաքի առիթով բանտարկվեց ևս 50 հայ: Սուլթանի 1895թ. մարտի իրադեով հայաբնակ վայրերում ու թաղերում չուրջօրյա պարեկություն հաստատվեց: Տրապիզոնում թուրքերին զենք բաժանեցին: Ոչ միայն այստեղ, այլև Բաբերդում, Երզնկայում և այլ քաղաքներում ընթանում էր կոտորածների նախապատրաստություն:

Պատրիարք Իզմիրլյանը սուլթանին հասցեագրած մի հուչագրում ապացուցում է, որ Բեռլինի կոնգրեսից հետո կայսրության հայ բնակչության վիճակն ավելի քան ծանրացել էր: Հուչագիրն ստանալով՝ սուլթանը պատրիարքին պալատ է հրավիրում և ընդունում ընդգծված սիրալիրությամբ: Նրան նստեցնում է իր կողքն ու ասում. «Ես հայ ազգին չատ եմ սիրում, մոտ ժամանակներս մեծ բարիքներ եմ անելու ձեր ժողովրդին: Փոխանակ ուրիչ տեղ դիմելու, համարձակ առաջարկեք, ինչ ցանկանում եք, և պիտի կատարեմ»:[167] Սուլթանը պատրիարքին մի բան էր խոստանում, իսկ մտմտում բոլորովին այլ բանի չուրջ: Թուրքերը բացեիբաց ասում էին, թե հայերին թալանելու բարձրագույն հրաման ունեին: Շապին Կարահիսարի կայմակամը հայերի երեսին չպրտեց. «Մինչև վերջին չունչս պետք է աչխատեմ ոչնչացնել ձեր ազգը»: Սեբաստիայի հայկական թաղերում պահականոցներ կառուցեցին և դրանք զինվորներով լցրեցին «հայերին պաչտպանելու» համար: Իրականում այդ թաղերը չրջափակվեցին: Քաղաք լրացուցիչ ուժեր բերվեցին: Գյուղերում ավելի հաճախակիացան սպանություններն ու ավարառությունները: Հայերը զգում էին, որ չարագույժ բան էր նախապատրաստվում:

Գրում է Ֆ. Նանսենը. «Աբդուլ Համիդն իր ծրագրի իրականացմանը հետամուտ եղավ անխռով: Մտավ «անմեղ հալածվածի» դերի մեջ, և Սբ. Պալին տրտնջաց անգլիական մեղադրանքների կապակցությամբ... Նույն ժամանակ Անատոլիայի թուրքական բոլոր իչխանություններին հրաման տվեց պատրաստ լինել «պաչտպանելու» մահմեդական բնակչությանը քրիստոնյաների ապստամբություններից»: Քրիստոնյաներին զինաթափում էին: Նույնիսկ դանակներն էին հավաքում. հայերից խլված զենքերը բաժանում էին մահմեդականներին[168]:

---

[167] «Հնչակ», 1895, թիվ 4:

[168] Նանսեն Ֆ., նչվ. աչխ., էջ 340-347:

*Ամերիկյան միսիոներներից մեկը 1895թ. հունվարի 7-ին գրում է. «Օսմանյան կայսրության ներքին ճգնաժամն իմ աչքում ավելի ու ավելի է աճում: Նախ, Թուրքիան գնում է ահավոր աղետի՝ ճնշելով հայերին ու զինելով Սըվազի, Հալեպի, Կաստամոնուի ու մյուս նահանգների մահմեդականներին և, երկրորդ, բացի հանճնաժողովի գտնված նահանգից, ամենուրեք ճնշումներն ուժեղացնում են»*[169]*: Թուրքերը հասկանում են, որ «չատ հեռու են գնացել... և ունենում են ղղագրգռվածության ճնշող զգացողություն»:*

* * *

*Երբ եվրոպական մամուլն սկսեց Սասունի կոտորածի մասին առաջին լուրերը տպել, Կ. Պոլիսն օգտագործեց իր դիվանագիտական ներկայացուցիչներին՝ դրանք հերքելու համար: Պետերբուրգում թուրքական դեսպանը, բողոքելով "Новости" թերթում հրապարակված որոշ նյութերի դեմ, գրեց, թե թուրքական դեսպանությունը խնդրում է հերքել սխալ լրատվությունը, քանի որ «Հայ ավազակները, զինված արտասահմանից ստացված զենքերով, միացել են քուրդ ապստամբներին և թալանելու նպատակով հրդեհել ու ավերել են մահմեդական գյուղերը, դյուրավառ հեղուկով այրել մահմեդականներին: Իսկ գնդերին, որոնք ուղարկված էին դեպքերի վայրերը, հրամայված էր պաշտպանել տուժած բնակչությանը, և կայսրական զորքը ոչ միայն պաշտպանության տակ առավ խաղաղ բնակչությունը, մասնավորապես կանանց ու երեխաներին, այլև օրինական միջոցներով հաստատեց կարգուկանոն... Աչխատում են համոզել, թե քրդերը հափշտակել են հայերի ունեցվածքը, եկամուտն ու անասունները: Նման բան չի եղել, իրենք՝ ավազակ հայերն են «ապստամբությունից առաջ անասունները քշել լեռները», իսկ ունեցվածքը «հանձնել իրենց քիրվո քրդերի հոգացողությանը»: Նաև ճիշտ չէ, որ քրդերը բազմաթիվ հայ կանանց են առևանգել: Դրանք «նույն հայ ավազակների կանայք են, ովքեր իրենց կամքով գնացել են ապստամբ քրդերի մոտ»: Հայերն իրենք են ավերել իրենց գյուղերը*[170]*: Թուրքական քարոզչությանն իսկույն արձագանքեցին եվրոպայում: "Le Figaro"-ն փետրվարի 2-ին տպագրեց «Կոտորածները Հայաստանում» հոդվածը, որտեղ ասվում է, թե կոտորածների մասին եղած լուրերը չափազանցված են: Չի կարելի պնդել, թե «կարգը պահպանելու համար նշանակված քրդերը բարեհաճությամբ են վերաբերվել հայերին... սակայն լրիվ պարզ է, որ տվյալ դեպքում խոսքը չի գնում տերության կողմից կազմակերպված կոտորածների մասին»: Անհոգության համար պաշտոնից ազատվել է նահանգապետը (Թահսինը): «Եվ եթե ամեն ինչ ընթանա այնպես, որ հաչվի չառնվեն Թուրք ստորադաս պաշտոնյաների անգթությունները, ապա իրավունք ունենք հուսալու, որ Հայաստանի հարցը վաղը գոյություն չի ունենա, ինչպես այն գոյություն չուներ երեկ»:*

*Հազար անգամ կրկնված միտք՝ հայերի հալածանքները ոչ թե հետևանք էին պետական պաշտոնական քաղաքականության, այլ «ստորադաս պաշտոնյաների անգթության»:*

*«Սասունցիները,— գրում է Լինչը,— լինելով լեռնցիներ, հայտնի էին իրենց խիզախությամբ ու համառությամբ: Եվ միանգամայն բնական է, որ հայ ագիտատորները, ինչպես, օրինակ, Տամատյանը նրանց էին ընտրել, որպես ապստամբության համար հարմար նյութ: Նպատակն է թույլ չտալ, որ հանդչի Հայ դատը: Ուստի հրդեհ էին բորբոքում մեկ մի, մեկ մի այլ տեղ և բարձրակոչ բղավում՝ «փրկությո՛ւն»: Այս կոչին արձագանքում է եվրոպական մամուլը, իսկ երբ մարդիկ վազում են տեսնելու, թե ինչ է պատահել, ապա կարելի է համոզված լինել, որ այդ թակարդն անպայման ընկել են թուր-*

---

[169] *Положение армян в Турции ...*, стр. 246.
[170] *«Մուրճ»*, 1894, թիվ 11-12:

քական մի քանի չինովնիկներ, որոնք կատարել են ամեն տեսակի խայտառակություններ»[171]: Լինչը, խոսելով Տալվորիկում երկաթահանքի մշակման և զենքի արտադրության մասին, նշում է, որ Մ. Տամատյանն այս իրողությունը ևս նկատի ուներ, որ իր քարոզչության կենտրոնը դարձրեց Տալվորիկը: Նա մեծ ջանքեր էր թափում հայերի ու քրդերի միությունն ձևավորելու և պետական հարկերի վճարումը ձախողելու համար: Բիթլիսում ասում էին, չարունակում է նա, որ վալի Թահսինը գոհ էր իրադարձությունների զարգացման ընթացքից՝ «հնարավորություն էր ստեղծվում իր մեղքերը սքողել երևակայական ապստամբության ճնշումով: Դա էր պատճառը, որ նա անձամբ գլխավորեց Տալվորիկի դեմ հարձակումը»[172]: «Սասունի վայրի ծերպերի լեռնականների չրջանում աննչան հուզումները գավառական իշխանությունները հռչակեցին իսկական հեղափոխություն և այն ճնշեցին բարբարոսների դաժանությամբ: Սակայն մի կոտորածը նրանց քիչ թվաց հայերին սարսափեցնելու համար»[173]:

Այսպիսով, Սասունի իրադարձությունների բնույթի հարցը ի վերջո լայն քննարկման նյութ դարձավ: Կարծիքները տարբեր էին, բայց հիմնականում երկուսը՝ թուրքական և թուրքամետ կարծիք, ըստ՝ որի «Թուրքը հաչտ էր հայի հետ: Երկուսն էլ նույն նավում էին, բայց թիավարում էին հակառակ ուղղություններով: Երկուսն էլ տանջվում էին թուրք պաշտոնատարների կեղեքումներից և ամեն տեսակի ճնշումներից... Հայերն իրենք էին մեղավոր: Նրանք սկսեցին անգթություններն ու կոտորածները... Քուրդ հրոսակներն իսկապես պատիժ էին Քրդստանի իսլամ և քրիստոնյա բնակչության համար»: Սակայն, եթե թուրքն այդ աղետը կրում էր լուռումունջ, ապա հայն աղմուկ էր բարձրացնում: Դա բնական է, քանի որ հայն իր բնույթում վայրենի «հոսանք ունի», և հայ ավազակախմբեր ավելի հաճախ են հանդիպում, քան մահմեդական: Գլխավոր հանցագործները հայերին գրգռողներն էին: «Սասունի կոտորած սարքող և ամբողջ երկրում հազարավոր անդամներ ունեցող հայ դավադիրները... սուտ խոստումներ տվեցին, թե ապստամբելուն պես Անգլիան օգնության կգա: Այդպես մեծ դավադիր Մուրադը... դրդեց Սասունի միամիտ գյուղացիներին դիմադրելու կայսրական գնդերին և սպանելու սուլթանի համազգեստ կրող զինվորներին: Այսինքն՝ դա միակողմանի կոտորած չէր, այլ կատարյալ պատերազմ», հայերի մեծագույն դավաճանության հետևանք: Նրանք, զինված նորագույն զենքով, կատարեցին բազմաթիվ ոճրագործություններ:

Համաձայն երկրորդ կարծիքի՝ սուլթանը միտումնավոր բնաջնջում էր հայերին: «Նման անգութ և դիվային կոտորած մեր դարում չի եղել, դրա համեմատությամբ բուլղարական արհավիրքն անմեղ կատակ էր... նույնիսկ միջնադարում հազիվ թե հնարավոր լինի գտնել դրան հավասար ոճիր: Այն եզակի է պատմության մեջ: Թուրքիան քաղաքական ավգյան ախոռ է, որտեղ դիզված աղբը մաքրելու համար նոր Հերակլես է հարկավոր: Ամենաճիշտը Թուրքիային լրիվ վերացնելն է»:

Սասունի ջարդերը եզակի չէին հայերի հանդեպ թուրքական քաղաքականության պատմության մեջ: Մի եվրոպացի զարմացած հարցնում է. «Ինչո՞ւ են այս տարի այդքան աղմուկ բարձրացնում, չէ՞ որ նախորդ տարիների համեմատությամբ ոչ ավել, քան 200 մարդ է սպանվել»: Մի ուրիշ օտարերկրացի գրում է. «Մինչև 1894թ. մայիսը... այս վայրերի բոլոր քրիստոնյաները սարսափից քարացած վիճակում էին... հայերի չրջանում հեղափոխական տրամադրությունների որևէ արտահայտություն չկար»[174]:

Սասունում կատարված վայրագություններում օսմանյան կառավարության դերն արդարացնելու համար՝ Բ. Դուրը հրապարակեց ամերիկյան միսիոներ, Ռոբերթ քոլեջի երկար տարիների տնօրեն Ռ. Հեմլինի 1892թ. գրված գրքույկը, որում նա ներկայացնում

---

[171] Линч Г., նշվ. աշխ., էջ 198:
[172] Նույն տեղում, էջ 203:
[173] Նույն տեղում, էջ 303:
[174] Положение армян в Турции .... стр. 248.

է մի ամերիկահայի պատմածը Թուրքիայում ապստամբություն հրահրելու դիտավորության մասին: Այդ կապակցությամբ Հեմլինը "Daily News"-ի դեկտեմբերի 12-ի համարում գրում է. «Թուրքական կառավարությունն իր սարսափելի անգթություններն արդարացնելու համար կառչել է մի թույլ ու հիմար դատավարության մասին իմ նամակից: Թուրք տերությունը քաջ գիտի, որ Հայաստանում ոչ մի ապստամբական շարժում չկա: Թե՛ ավազակությունները և թե՛ սպանություններն իր իսկ ձեռքի գործն են»:

Թուրքական իշխանությունների սադրանքների մի օրինակ: Նիկոմեդիայի հայերը խաղաղ էին, սակայն զինվորական նավահանգապետը առիթը բաց չէր թողնում ասելու, թե ապստամբության վտանգ կար: Նա չերքեզներից հեծելագնդեր կազմակերպեց և ուղարկեց հայկական բնակավայրեր՝ դիտավորություն ունենալով առաջացնելու ապստամբություն: Ոչ միայն այստեղ, այլև ամենուրեք իշխանություններն օգտագործում էին Սասունի կոտորածներին մասնակցած զինվորականների պատմածները մահմեդական բնակչության մոլեռանդությունը բորբոքելու և հայերին ահաբեկելու համար: Նաև համառ լուրեր էին տարածվում, թե կոտորած ասածը կեղծիք է, թե «Թուրքն անընդունակ է նման գործողությունների», թե կոտորածը հայերի երևակայության պտուղ է: Հայը «արևելյան չափազանցության բնածին և անհաղթահարելի հակումներով օժտված ազգ է... նրա սխալվելու ոգին բթացրել է արդարության ամենատարրական զգացողությունը, իսկ ժառանգական համառությունն ու ձեռքբերովի ըմբռստ կեցվածքը... նվվել են արհեստականորեն բորբոքվող հեղափոխական անիշխանություններից»: Պատահական չէ, որ նման հոգեբանություն ունեցող ազգն անմիջապես ենթարկվեց հեղափոխականների սադրանքին, ովքեր «նույնիսկ եղեռնական միջոցներից չխորշեցին սեփական ազգի կոտորած առաջացնելու համար», որպեսզի «ամբողջ Եվրոպային ոտի հանեին ճակատագրապաշտ ու անհոգ թուրքերի դեմ»: Ահա այս ամենը «մահմեդական միամիտ ժողովրդին տրամադրեցին վրեժխնդրության և նույնիսկ որոշ բարբարոսությունների»[175]:

Իրականությունն այն է, որ ինչպես նշում է Ա. Միլլերը, «Սասունում ծայր առած հայերի զանգվածային ջարդը վերածվեց միջնադարյան ամենախավար սարսափների: Համիդիե զորամասերը սպանում էին հայկական գյուղերի ու քաղաքների բնակիչներին՝ չխնայելով ո՛չ երեխաներին, ո՛չ կանանց, ո՛չ ծերերին: Սասունի կոտորածը տասնյակ հազարավոր զոհեր խլեց»[176]: Ի դեպ, չի կարելի պնդել, թե Սասնո կոտորածների վերաբերյալ բազմակարծության հիմքը ազգային պատկանելիությունն էր: Միանշանակ չէին անգամ թուրքերի կարծիքները: "Les nouvelles d'Orient" հանդեսի 1895թ. հունիսի 15-ի համարում տպագրված է նախկինում սուլթանական պալատում բարձր պաշտոն զբաղեցրած մի թուրքի հոդվածը, որտեղ ասվում է, թե Սասունի կոտորածը կատարվեց սուլթանի հրամանով, որը տրվել էր 4-րդ բանակի հրամանատար Զեքի փաշային և Բիթլիսի վալի Թահսին փաշային: Բ. Դուան բացատրությունը, թե այդ սպանությունները թելադրված էին հայերի ապստամբությամբ, անհիմն էր, քանի որ կոտորածի վայրերն անմատչելի էին դրսեցիների ներթափանցման համար, և անհնար էր դրանցում ապստամբություն առաջացնել:[177]

Սասունի կոտորածը «19-րդ դարի ամենասարսափելի» իրողությունն էր[178]:

Նոյեմբերի 28-ին Անգլո-Հայկական կոմիտեն մի հայտարարություն է հրապարակում, որով կոչ էր արվում «եռանդուն բողոք բարձրացնել Սասունում կատարված անգթությունների դեմ, պահանջել անհապաղ իրականացնել վարչական բարենորոգումներ և միջազգային հանձնաժողով նշանակել» քննելու կատարվածը»[179]:

---

[175] *Братская помощь ...*, стр. 92-95.

[176] Миллер А.Ф., *Краткая история Турции*, Москва, 1948, стр. 107.

[177] «Արձագանք», 1895, թիվ 67:

[178] *Положение армян в Турции ...*, стр. 243.

[179] "Daily News", 05.02.1895.

Եվրոպայում Սասունի իրադարձությունների մասին լուրերը իրականում ստացվել էին դեռ օգոստոսին: Սակայն Եվրոպան չարձագանքեց՝ մասամբ չհավատալով, քանի որ դրանց պարունակությունը չէր տեղավորվում մարդկային ուղեղում, և մասամբ էլ դժվարանում էր կողմնորոշվել: Վ. Բերարը վկայում է. «Արդեն 1894թ. օգոստոսի վերջին Էրզրումի ֆրանսիական փոխհյուպատոսը արտաքին գործերի նախարարին հայտնեց, որ Էրզրումում «որոշ ժամանակից ի վեր գիտակցությունների վրա տագնապն է իշխում զինվորական իշխանությունների կողմից վերջերս ձեռնարկված միջոցառումների հետևանքով»: Կանոնավոր զորքերի 2.5 հազարանոց մի չոկատ հրաման է ստացել գնալ Սասուն՝ ճնշելու ինչ-որ ապստամբություն, որն այդ վայրերում բռնկվել է վաղուց: Իսկ թե դրանից հետո ինչ կատարվեց, տեղեկություններ չկան, որովհետև «իշխանությունները ձգտում են հնարավորին չափ թաքցնել այդ տխուր իրադարձությունները»[180]:

Կ. Պոլսում Անգլիայի դեսպանի՝ կատարվածի մասին օբյեկտիվ տեղեկություն ստանալու և այդ նպատակով լրագրողներին Սասուն մուտք գործելու թույլտվություն տալու չանքերը, հանդիպեցին Բ. Դուան կատաղի դիմադրությանը: Թուրքերին հաջողվեց երկու ամիս չարունակ դրսի աշխարհի աչքերին թոզ փչել, բայց ավելին անելն անհնար էր: Նոյեմբերի 11-ին «Նոր դար»-ի թղթակիցը Կ. Պոլսից հաղորդեց. «Սասունում կատարված դեպքերը որքան էլ ծածուկ են պահում... այնուամենայնիվ, այսօր իրողություն է, որ Պատմական Սասունը կիսով չափ այլևս չկա, կործանված է»[181]:

Մեծ եպարքոսը Քըրիին չարադրեց Թուրքիայի պաշտոնական կարծիքի առաջին տարբերակը՝ «Հայերը Վանի անգլիական հյուպատոսի դրդմամբ ապստամբել են»: Խոսքը Հոլվորդի հրապարակած նյութերի մասին է, որ Բ. Դուռը համարում էր միջամտություն կայսրության ներքին գործերին: Ցարական դիվանագետներից մեկը գրում է. «Սուլթանը, զրգռված օրերս անգլիական մամուլում Սասունի հայերի ջարդերի մասին տպագրված պատմություններից, որոնցում հիշատակված էին 20 ավերված գյուղի, 3000 զոհի մասին և, հույս ունենալով թաքցնել քրդերի օգնությամբ թուրքական զորքերի կատարած վայրագությունները, հրամայել է եվրոպական հանդեսներին ուղարկել կորուկ հերքումներ և անգլիական դեսպանորդից պահանջել է Մուշից հետ կանչել գործը քննելու համար այնտեղ գտնվող Վանի հյուպատոսին, որի հաղորդումներին է Բ. Դուռը վերագրում սուլթանի համար տհաճ տեղեկությունների հրապարակումը»: Դեսպան Քըրրին մերժում է սուլթանի պահանջը և հայտարարում է, որ տեղում վիճակը ստուգելու համար մտադիր է Մուշ և Բիթլիս ուղարկել ռազմական կցորդ Զերմսայդին: Երբ արտաքին գործերի նախարար Սայիդն այդ պատասխանը հասցնում է սուլթանին, վերջինս ասում է, թե «կայսրության ներսում գործը քննելու համար անգլիական մի նոր աստիճանավորի գործուղումը միջազգային իրավունքի խախտում կլինի և չի կարող թույլատրվել»[182]: Հարցը փակվում է նրանով, որ Բ. Դուռը հրաժարվում է անգլիական հյուպատոսին հետ կանչելու պահանջից, իսկ դեսպանը՝ Զերմսայդին գործուղելու մտադրությունից: Այնուամենայնիվ, Բ. Դուռը չարունակում է արգելել արտասահմանցիների, մասնավորապես լրագրողների մուտքը Սասուն: "Times"-ը գրեց. «Ցավով հայտնում ենք, որ Սասունի դեպքերի անաչառ քննության նպատակով մեր հատուկ թղթակցին Հայաստան մտցնելու իրավունք ստանալու համար ու տևական չանքերն ապարդյուն անցան»[183]: Թուրքական իշխանությունները գործունեություն ծավալեցին ոչ միայն Սասունում կատարվածի վերաբերյալ լուրերի արտահոսքի, այլև արտասահմանյան այն քաղաքացիների, հատկապես լրագրողների դեմ, ովքեր այդ իրադարձությունների մասին թուրքական տեսակետին հակադրող նյութեր էին հրապարակում:

---

[180] *Братская помощь ...*, стр. 93.
[181] «Նոր դար», 1894, թիվ 197:
[182] *АВПР, Политархив, д. 3435. Сасунские дела*, л.л. 44-46.
[183] «Մասիս», 1895, թիվ 1:

«Նոր դար»-ի թղթակիցը 1894թ. նոյեմբերի 22-ին գրում է. «Թուրքա-Հայաստանում, մանավանդ Մուշում ու Սասունում, տիրող անկարգությունները հասել են այնպիսի աստիճանի, որ եվրոպական բոլոր կուսակցություններին պատկանող թերթերը ևս սկսել են շատ մանրամասը նկարագրել տաճկական զենքի գործադրած բարբարոսությունները և դրանց ենթակա ժողովրդի այսօրվա ծանր վիճակը»: Բացառություն էին կազմում կաշառված թերթերը: «Սակայն այսօր, երբ իրողությունը հերքելն արդեն անհնար է, այդ կաշառված թերթերը ևս սկսեցին դատապարտել Թուրք կառավարության բռնակալ քաղաքականությունը և նրա իրականացրած կոտորածները: Բայց մամուլը, նկարագրելով իրադարձությունները, խուսափում է դրանց պատճառները բացահայտել, ասել, թե ով է նախաձեռնողն ու ջարդարար քաղաքականություն իրականացնողը»: Բացառություն էին կազմում հունական թերթերը: «Ակրոպոլիս»-ի տվյալներով՝ սպանված էր ավելի քան 10 հազար, բանտարկված՝ 7000-8000 և անհետացած 5000 մարդ: Լրիվ կամ մասնակի հրդեհված էր 32, քանդված կամ կիսաքանդ՝ 121 գյուղ: Զկար մի բնակավայր, որ բարբարոսները ոտնատակ տված չլիներին: Հունական մի ուրիշ լրագիր, համաձայնվելով այս թվերին, սխալ է համարում այն կարծիքը, թե կոտորածի հեղինակը համիդիե գնդերն էին, քանի որ «քրդերը հենց սկզբից հրաժարվեցին լեռնային այդ գյուղերի դեմ ճակատ առ ճակատ կռիվ մղելուց: Նրանք գնում էին թալանելու, ավազակության հաճույքն ըմբոշխնելու, սակայն զինված ուժի հետ բախվելուց խուսափում էին»[184]:

Օսմանյան գործակալները չարունակեցին համառ ջանքեր գործադրել եվրոպական մամուլում Սասունի մասին օբյեկտիվ հրապարակումները հերքելու կամ դրանց հանդեպ կասկածներ հարուցելու համար: Մասնավորապես, հարձակումներ էին գործում Դիլոնի դեմ, կասկածի տակ առնում նրա ներկայացրած փաստերը, անգամ Սասունում նրա գտնվելու իրողությունը: "Globe" թերթը կասկածի տակ առավ Մուշից փետրվարի 23-ին Դիլոնի ուղարկած հեռագիրը: Նույն թերթը մարտի 14-ին տպեց «Թուրքական դեսպան Մահմուդ Նեդիմ բեյը ծաղրում է Հայաստանի մասին միտումնավոր տարածված տեղեկությունները» հոդվածը: "Daily Telegraph"-ին նրա ուղարկած նյութում փետրվարի 23-ի հեռագրի մասին ասված է. «Ըստ իս, այդ ամբողջ պատմությունը ստահոդ է»: Թերթի թղթակցի Սասունում գտնվելն անհնար էր համարվում, քանի որ արգելված էր Սասուն մուտք ունենալը: Ասվում էր, որ Թուրքիան միայն իր իրավունքներն է պաշտպանել և իր պարտքը կատարել՝ որպես անկախ պետություն դիմագրավելով հեղափոխական և անիշխանական ձգտումներին: «Այս խնդրի դժվարությունն այն է, որ եվրոպացիք լավ ծանոթ չեն ո՛չ Թուրքիային և ո՛չ էլ օսմանյան կառավարությանն ու օրենքներին: Օրինակ՝ նրանք ասում են, թե Թուրքիայում հայերը հալածված են, բայց չգիտեն, որ մեր բարձր պաշտոնների մեկ քառորդը զբաղեցնում են հայերը: Արքունի դանձարանի նախարարը հայ է, արտաքին գործերի նախարարի տեղակալը հայ է, պետական խորհրդի անդամներից հինգը հայ են...»:

Ճշմարտամիտ մամուլը հերքեց այս ու նման ստահոդ տեղեկատվությունները "Daily News"-ը տպագրեց. «Ճշմարտությունը պիտի պարտվի» հոդվածը, որում կարդում ենք՝ «Մի քանիսը նյութեր հրապարակեցին, թե Սասունում ոչինչ տեղի չի ունեցել: Կեղծիք է»: Ավստրիայի դեսպան Կալիչեն 1894թ. նոյեմբերին գրեց. «Խոստովանում եմ, որ հայերի հանդեպ քիչ համակրանք ունեմ... սակայն... ոճրագործությունները, որոնց մասին պատմում են, սարսափելի եմ համարում...»[185]: «Քաջ սասունցիների ապստամբությունն ու նահատակությունները,— արձագանքեց «Հնչակ»-ը,— այսօր հայկական հարցի վրա ամբողջ Եվրոպայի և Ամերիկայի լարված ուշադրությունն են բևեռել: Բոլոր երկրների և, մասնավորապես, Անգլիայի բազմաթիվ թերթերում արդեն երեք

---

[184] «Նոր դար», 1894, թիվ 205:
[185] Օհանջանյան Ա., նշվ. աշխ., էջ 22:

*չաբաթից ի վեր ամեն օր բազմաթիվ լուրեր և ընդարձակ հոդվածներ են զետեղվում թուրքական զորքերի ու քրդերի գործած խժդժությունների մասին: Գրեթե բոլոր անգլիական թերթերը արտահայտում են այն միտքը, որ ժամանակն է հայկական հարցին վերջ տալու՝ գոհացնելով հայերի պահանջները: Մի քանի թերթեր խոսում են «հայկական ինքնավարության մասին»»*[186]:

*Անգլիական "Speaker"-ը գրեց, որ այլևս կասկածից դուրս է կոտորածի փաստը: «Մենք արդեն ունենք Վանի, Էրզրումի, Սըվազի և Դիարբեքիրի հյուպատոսների պաշտոնական զեկույցները, մենք ունենք հայ փախստականների ցուցմունքները, մենք ունենք թուրք զինվորների վկայությունները, որոնք մասնակցել են կոտորածներին: Այդ զինվորները պատկանում են կանոնավոր զորքին և կանչված են եղել Էրզրումից, Երզնկայից, Վանից, Բիթլիսից, Խարբերդից և Սըվազից: Նրանք արդեն վերադարձել են և սուլթանի կողմից պաշտոնապես շնորհակալության են արժանացել իրենց կատարած գործերի համար... Սասունի սարսափները իրոք տեղի են ունեցել և կատարվել են կանոնավոր զորքի միջոցով և այն մարդկանց հրամաններով, ովքեր հետո չքանչան են ստացել սուլթանից»*[187]:

*Հունվարի 4-ին Պոլսից ստացված մի տեղեկատվությունում կա հետևյալ խոստովանությունը. «Հեռագիրը, որ հաղորդում էր, թե վերջին ժամանակներս Սասունում սպանվել է 1720 հոգի, բարձրագույն կարգադրությամբ վերցվել է ռազմական նախարարությունից»*[188]: *Մի այլ հեռագիր վկայում էր, թե հայերը հալածվում էին ամենուրեք, մինչև անգամ այնպիսի գավառներում, որտեղ խռովություն չի եղել: "Daily News"-ը հունվարի 6-ին գրեց. «Սըվազում բոլոր խոշոր առևտրականները կա՛մ բանտում են հեծում, կա՛մ էլ չեն համարձակվում որևէ գործ կատարել»:*

*Սասունի կոտորածներն առաջ բերեցին առաջավոր մարդկության ցասումը: Անատոլ Ֆրանսը Համիդին անվանեց «Մի բռնակալ, որը սարսափից խելագարվել է»: Ժան Ժորեսը հայկական ողբերգության իսկական մեղավոր համարեց տերությունների չհամոզ և տմարդի քաղաքականությունը, ինչը նույնիսկ ժողովրդավարական ուժերին դարձրեց եսասիրական հաշիվների խաղալիք: «Ժամանակն է,— ասաց Գլադսթոնը,— որ մի ընդհանուր անեծքի ու ցասումի ճիչ արձակվի այդ դաժան չարագործության դեմ: Մարդկությանը հասցրած այս վիրավորանքը պետք է պայթի սուլթանի ականջին և նրան զգուշացնի... այս սարսափներն անպատվություն են քաղաքակրթության համար... ապտակ են մարդկությանը»*[189]: *Ֆրանսիական հայտնի գրող Սևերինը գրեց. «...ինձ զայրացնում է լռությունը, եսասիրությունից բխող այն եղերական թմրությունը, որ փակել է մեր աչքերը և խցանել ականջները»*[190]: *Իսկ իտալական "Peroquet" թերթը արձանագրեց. «Եվրոպան, որ աճապարում է ամեն տեղ, որտեղ խժռելու բան կա, այնքան էլ չի չտապում գթասրտություն դրսևորելու»: "Daily News"-ը գրեց. «Ամեն օր, ամեն ժամ կրկնվող սպանությունները, կանանց ու կույս աղջիկների բռնաբարությունները, առևանգումները, այն անթիվ անհամար գազանությունները, որոնք օրը ցերեկով կատարում էին թուրք ու քուրդ բաշիբոզուկները 19-րդ դարավերջին «լուսավորյալ» Եվրոպայի քթի տակ, անվերջ ավերումները, կողոպուտը, թալանը, հրդեհը, որին ենթական է Թուրքա-Հայաստանի բազմաչարչար, թշվառ ժողովուրդը, շատ հազվադեպ է արժանացել եվրոպական մամուլի ուշադրության: Այն անգամ աշխատել է դրանք թաքցնել»*[191]: *Բնութագրական են նաև Վանքերիի «Հուշեր»-ի տողերն այն մասին, թե սուլթանն ուղղակի ասել է իրեն, որ Սասունի ջարդերը միայն նախերգանք են, որ չուտով այնպիսի դաս է*

---

[186] «Հնչակ», 1894, թիվ 13:
[187] «Մշակ», 28.01.1895:
[188] «Մուրճ», 1895, թիվ 1:
[189] «Դրոշակ», 1895, թիվ 2:
[190] Նույն տեղում:
[191] Նույն տեղում, 1894, թիվ 13:

տալու, որ մոռանան ամեն ինչ[192]: Նման տրամադրությունները չէին մնում Ելդըզ Քյոշքում, այլ վերածվում էին պաշտոնական վարքագծի: 1895թ. հունվարի 11-ին, այսինքն՝ համիդյան ընդհանուր ջարդերից ութ ամիս առաջ, ամերիկյան միսիոներներից մեկը գրեց. «Լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ տեղական իշխանությունները մտադրվել են քրիստոնյա ազգաբնակչության համընդհանուր կամ մի շարք կոտորածներ կազմակերպել... քրիստոնյաների անվերջ հալածանքներն ու ճնշումները, նրանց ամենուրեք չընդփակելու և ոչնչացնելու ուղղությամբ իշխանությունների ձգտումը, նրանց ունեցվածքի թալանը վկայում են, որ գոյություն ունի բնաջնջելու մի նոր պլան»[193]:

Ֆրանսիայի ԱԳ նախարարության կողմից 1893-97թթ. հրատարակված «Դիվանագիտական փաստաթղթեր» շարքի «Հայկական հարց» հատորի 65-րդ էջում զետեղված է Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան Գ. Կամբոնի զեկուցագիրը, որում կան հետևյալ տողերը. «Ավերումներն ու գյուղերի հրդեհումները կասկածից վեր են, կասկածից վեր է նաև ժողովրդի ջարդը՝ ապացույց ոսկորների կույտերը և կտոր-կտոր արված դիակները, որոնք դեռ թափված մնում են Գելիեգուզանի փոսերում»:

Ջեսթերնում 1895թ. հուլիսի 26-ի արտասանած ճառում Գլադստոնը նորից անդրադարձավ Սասունին: Նա ասաց, որ մինչև այդ եղած բոլոր սարսափները «ստվերի մեջ են մնում և կորցնում իրենց նշանակությունը այն աներևակայելի ողբերգությունների համեմատությամբ, որ տեղի են ունենում Հայաստանում ամսեամիս, չաքաթեչաքաթ, օրեցօր... թալան, սպանություն, բռնություն, խոշտանգումներ: Հայաստանում որևէ չարագործություն չի կատարվել, որի համար Կ. Պոլսի կառավարությունը գոնե բարոյապես պատասխանատու չլինի: Թուրք զինվորները չարագործություններով քրդերից հետ չէին մնում: Հայերը չեն ապստամբել, այլ «պաշտպանել են իրենց ունեցվածքը, տուները, կնոջն ու երեխաներին: ...Գոնում եմ, որ զափթիեներն ու մյուդիրները, բինբաշիներն ու յուզբաշիները, կայմակամներն ու փաշաները իրենց ազգուտակով պետք է մաքրեն երկիրը, որին հասցրին հուսահատության: Սա լինելու է արմատական մաքրում, աստվածահաճո ազատագրություն, վրեժի միակ միջոցը շատ ու շատ սպանվածների համար»[194]:

Սուլթանը պահանջեց, որ անգլիական կառավարությունը պաշտոնական հայտարարություն հրապարակի, թե չի կիսում նախկին վարչապետի կարծիքը: Նա հրամայեց հետ կանչել Լոնդոնում թուրքական դեսպան Ռուստեմին, բայց մինչև հետ կանչելը՝ վերջինս մահացավ: Ջ. Բրայսը գրեց. «Աբդուլ Համիդը ձեռքի մի շարժումով մահ է տարածում»: Խաղաղասեր հայը «երբեք մտադրություն չի ունեցել ընդվզելու սուլթանի դեմ կամ ձեռք բարձրացնելու մահմեդական հարևանների վրա: Բազմաթիվ գյուղեր հրո ճարակ դարձան, եկեղեցիները վերածվեցին մզկիթների, կանայք բռնաբարվեցին, տղաներին ու աղջիկներին վաճառեցին որպես ստրուկներ»[195]:

Ց. Սթիվենսոնին ընդունեց արտաքին գործերի նախարար Քիմբերլեյը: Նոյեմբերի 25-ին Սթիվենսոնը հուշագիր հանձնեց տերությունների ներկայացուցիչներին՝ պաշտպան կանգնել հայերին: "Times"-ը գրեց, թե «բրիտանական կառավարությունը որոշել է եռանդուն գործել հայկական հարցի ուղղությամբ և առաջարկելու է տերություններին միաբանվել ու ստիպել իրագործելու Բեռլինի դաշնագիրը»: "Daily Telegraph"-ը Լոնդոնին առաջարկեց ռուսների հետ համաձայնության գալ և միասին պաշտպանել հայերին: «Անգլիան պետք է ազատի թուրքահայերին, ինչպես Ռուսաստանն ազատեց Բուլղարիային»: "Observer"-ը գտնում էր, որ հայերի փրկությունը Ռուսաստանի կողմից հայաստանի գրավումն է: Օ. Նովիկովայի կարծիքով «Ռուսաստանի մասնակցությունից դուրս հայերը փրկություն չունեին», իսկ "Daily News"-ի կարծիքով՝ Անգլիայի միջա-

---

[192] Գաբրիելյան Մ. Սմբատ, նշվ. աշխ., էջ 64:
[193] Նույն տեղում:
[194] Положение армян в Турции ..., стр. 17.
[195] «Արաքս», 1894-1895, դիրք Ա., էջ 4:

մտությունը հաջողություն կունենա, եթե հիմնված լինի Ռուսաստանի աջակցության վրա: "Биржевые ведомости"-ն գուշակեց. «Հայերն արդեն այժմ վերջնականապես կհամոզվեն, որ Մեծ Բրիտանիայի միայնակ միջամտությամբ իրենք թուրք-քրդական ճնշումից ազատվել չեն կարող»: "Русские ведомости"-ում Կոմարովսկին գրեց. «Մեծ պետությունները թե՛ դաշնագրով և թե՛ մարդասիրական բարձր սկզբունքներով պարտավոր են օգնության հասնել թուրքահայերին»: Քիմբերլեյը թուրքական դեսպանին ասաց, որ հարկավոր է Հայաստանում լավ կառավարում հաստատել և հանճնաժողով ստեղծել՝ անկողմնակալ քննելու Սասունի իրադարձությունները[196]:

Բայց Եվրոպայում հասկանում էին, որ Կիպրոսի կոնվենցիայից հետո, բացի խորհուրդներ տալուց, Անգլիայից այլ բան ակնկալելն անհնար էր: Դրան հակառակ, Ռուսաստանը հայերին պաշտպանելու պատրվակով քայլեր կատարեց՝ ներխուժելու Հայաստան: Գերմանիան վճռական միջոցների դիմեց դա թույլ չտալու, և դա նրան հաջողվեց:

Սասունի կոտորածի հարցում, սակայն, Ռուսաստանի մոտեցումները միանշանակ և որոշակի չէին: Զարդարացնելով Չմրդերը՝ Պետերբուրգը դրանք նաև չէր դատապարտում, հաճախ նաև փառաբանում էր սուլթանին: «Ինքը՝ սուլթան Համիդը,— գրեց "Неделя"-ն,— որպես անձ վաղուց վայելում է Եվրոպայի համակրանքը... Նա ավելի եվրոպացի է, քան ասիացի: Բայց նաև համոզված մահմեդական է, և նրա քաղաքականությունն ազգայնամոլությունից բացի, ուրիշ լինել չի կարող...»[197]: Մանավանդ, որ սուլթանը ցարի սիրալիր վերաբերմունքի համար մեծ գին առաջարկեց՝ թույլատրեց ռուսական նավերի ազատ մուտքը Դարդանել:

Նույն օրերին Վիլհելմ 2-րդը սուլթանից նվեր ստացավ պատվավոր սուր: Թանկարժեք նվերի արժանացավ նաև Վիկտորիա թագուհին: Թագուհին Կարմիր սուլթանից նվեր էր ստանում, իսկ անգլիական հասարակությունը բողոքում էր այդ նույն սուլթանի հայացինչ քաղաքականության դեմ: 1894թ. նոյեմբերի 14-ին Անգլո-Հայկական կոմիտեի կազմակերպած բազմամարդ հանրահավաքը որոշեց պահանջել. ա) Սասունի կոտորածների կապակցությամբ նշանակել հյուպատոսական հետաքննություն, բ) հրապարակել հյուպատոսների տեղեկագրերը և գ) իրականացնել 61-րդ հոդվածը[198]: Դեկտեմբերի 17-ին կոմիտեն մի նոր հանրահավաք կազմակերպեց: Կարգախոսն էր. «Հայերն ուզում են խաղաղ ապրել իրենց հայրենիքում»: Հանրահավաքին ողջույն էր հղել Գլադստոնը. «Եթե Հայաստանից ստացված լուրերը հաստատվեն, քաղաքակիրթ աշխարհը նորից է հարցնելու՝ մինչև ե՞րբ համբերենք»: Ջ. Սթանհոփեդն ասաց. «Մի՞թե ամոթ ու հանցանք չէ, որ քաղաքակիրթ Եվրոպան իր վիթխարի ռազմական հզորությամբ անգործ կանգնած է»: Հանրահավաքը վարողը հայտարարեց՝ ստացված արձագանքները «ցույց են տալիս, թե որքան խորն ու ընդգրկուն է այն սոսկումը, որ պատճառել են Սասունում կատարված գազանությունները... Եվրոպական պետությունները պարտավոր են պաշտպանել հպյերին թուրքերից»: Լոնդոնի եկեղեցիներում քարոզների նյութը Հայաստանում կատարված չարագործություններն էին: Անգլո-հայկական կոմիտեն Սասունի կոտորածների առնչությամբ իրոք եռանդուն գործունեություն ծավալեց: Կոմիտեի գլխավոր հանճնաժողովը նիստեր էր անում ամեն օր, կարդում էին Հայաստանից ստացված նամակները, Հայկական հարցի վերաբերյալ մամուլում տպագրված նյութերը, քննարկում արևմտահայության ազատագրության հնարավորությանն առնչվող հարցեր, եվրոպական մամուլին [illegible] հայերի վիճակի վերաբերյալ:

Պահպանողական [illegible] կառավարությունը Հայկական հարցում չարունակեց Ռոզբերիի կաբինետի քաղաքականությունը: Սոլսբերին հանդես եկավ Սասունի կոտորածները դատապարտող հայտարարություններով, որոնցում օգտագործված էին խիստ արտահայ-

---

[196] «Մուրճ», 1894, թիվ 11-12:
[197] «Արձագանք», 1895, թիվ 23:
[198] «Մշակ», 09.12.1894:

տուրյուններ անգամ սուլթանի հասցեին: Աբդուլ Համիդը ձևացրեց, թե չատ հուզված է, նույնիսկ լաց եղավ: Սակայն անգլիական երկու կառավարություններն էլ ոչ միայն գործողությունների, այլև հայտարարությունների մեջ հետևողական չէին: Ռոզբերին գտնում էր, որ եթե ստացված լուրերը ճիշտ են, ապա «չի կարելի այդ քրիստոնյաներին թողնել ներկայիս պայմաններում, որովհետև այնպիսի վրեժխնդրության կհանդիպեն, որ ապագան նրանց համար ավելի վատ կլինի, քան ներկան»: Իսկ Սոլսբերին ասում էր. «Արդյո՞ք հետաքննությունը լիակատար կլինի, եթե զբաղվի միայն սուլթանի սպանեերին ու զինվորներին վերագրվող հանցագործություններով... Հանցանք գործել են չատերը, ովքեր ոչ զինվոր են և ոչ էլ սպա: Եթե քննություննն ազգաբնակչության (հայերի) կողմն անցնի և ներշնչի, թե նրանց պահանջները կարժանանան դրսի աջակցությանը... մենք ամենամեծ սխալը թույլ կտանք, մանավանդ, եթե այդ արևելյան ժողովուրդներից որևէ մեկի մեջ տպավորություն ստեղծենք, թե հզոր աջակցություն ենք ցույց տալու նրա ձգտումներին ու պահանջներին»[199]: Հանդես գալով Սենթ Ջեյմս Հոլի 1895թ. մայիսի 7-ի մեծ հանրահավաքում՝ Արգայլի դուքս Ջ. Քամփբելը հայտարարեց, թե Անգլիայի տեսակետը միշտ էլ եղել է հետևյալը. «Ինչ էլ լինի Թուրքիայի ճակատագիրը կամ ապագան, այն պետք է լինի Եվրոպայի, այլ ոչ թե Ռուսաստանի ձեռքում»[200]: Սա էր հայկական ջարդերի և ընդհանրապես հայկական հարցի հանդեպ Անգլիայի քաղաքականության ելակետը:

Երբ Ն. Վարժապետյանը հանդիպումներից մեկի ժամանակ Կալիչեին ասաց, թե տերությունները պետք է հարգեն իրենց իսկ ստորագրած պայմանագիրն ու կատարեն 61-րդ հոդվածի պահանջները, հյուպատոսը պատասխանեց. «Ուզում եմ պատրիարքին խորհուրդ տալ՝ չատ հույս չդնել եվրոպական պետությունների միջամտության վրա»[201]: 1894թ-95թթ. իրադարձություններն ավելի քան հաստատեցին դիվանագետի խոսքերի ճշմարտացիությունը: Այդ իրողությունը լավ հասկացել էին նաև Եվրոպայի լավագույն ուղեղները, ովքեր քարոզչական աղմուկ բարձրացրին Արևմուտքի քնած խիղճն արթնացնելու համար: "La libre parole"-ի №1020-ում Սևերինը դիմելով եվրոպական հասարակությանը, գրում է. «Մորթված են ձեր նման հազարավոր մարդիկ՝ անզգամաբար, ստորաբար: Մորթվել են, որովհետև քրիստոնյա էին: Նրանք նահատակներ են ու նրանց լկանքները ծաղր են մարդու իրավունքների հասցեին»:

Լոնդոնի Հայկական ազգասիրաց միությունը Անգլիայի ԱԳ նախարարին հղած հուշագրով խնդրում էր Արևմտյան Հայաստանում թուրքական իշխանությունը փոխարինել Անգլիայի հովանավորությամբ կամ այն վերցնել Բեռլինի դաշնագիրը ստորագրած պետությունների վերահսկողության տակ: Հուշագրին կցված էր Բաղեշից սեպտեմբերի 27-ին ստացված մի նամակ Սասունում կատարվածի մասին: «Քրդերը գողացել էին հայերի անասունները, հայերը հարձակվել են գողերի վրա, նրանցից երկուսին սպանել և երեքին վիրավորել են: Դա պատրվակ դարձավ կոտորածների: Զորքեր ուղարկվեցին, որոնց հրամանատար փաշան Պոլսից ցուցում ուներ սպանելու հայերին: Սպանված է 6-10 հազար հայ»[202]:

Սասունի կոտորածն առիթ հանդիսացավ ռուս-անգլիական նոր հակամարտության համար: Եթե Անգլիայի կառավարությունն ու մամուլը ձգտում էին օգտագործել այդ ողբերգությունը սուլթանի դեմ, ապա ցարական կառավարությունն ու մամուլը պաշտպանության տակ առան սուլթանին և աշխատեցին մեղմել Սասունի իրադարձությունների տպավորությունը: Ռուսական կիսապաշտոնական "Новое время"-ն գրեց. «...Այլևս կասկածից վեր է, որ անգլիական մամուլի կողմից մեծապես ուռճացրած հայկական հար-

---

[199] «Մշակ», 1895, թիվ 1:
[200] Նույն տեղում, թիվ 5:
[201] Օհանջանյան Ա., նշվ. աշխ., էջ 24:
[202] «Դրոշակ», 1894, թիվ 13:

ցը պայթելու է օճառի պղպջակի նման: Հայկական հարցին եվրոպական միջամտությունը գլուխ չի գա, և խնդրի նման լուծումը միջազգային և, մասնավորապես, ռուսական շահերի տեսակետից կարելի է բարեհաջող համարել»: Թերթի հակաանգլիական մարմաջը ծնում է հակահայ վայրահաչոց: Այն արևմտահայերի ընդհանուր թիվը նշում է 200 հազար, որոնք ցրված են «Եվրոպայի ամբողջ արևելյան մասերում... Վանի հայ գյուղերը ներկայացնում են մի տեսակ օազիս, որովհետև ինչպես Վանում, այնպես էլ հարևան Մուշում գերակշռող թիվ են կազմում քրդերը»: 1877-78թթ. պատերազմը, շարունակում է թերթը, հայերի մեջ «ծնեց ինքնավարության ցնորք: Կ. Պոլսում մինչև անգամ պատրաստում էին այդ ապագա Հայաստանի քարտեզը, որի սահմանների մեջ մտնում էին ոչ միայն Գանձակի և Երևանի նահանգները, Թիֆլիսի նահանգի և Էրզրումի վիլայեթի մի մասը, այլև Ատրպատականը, Քրդստանը և գրեթե ամբողջ Միջագետքը»: Կեղծիքների մեջ առաջ գնալով "Новое время"-ն գրում է. «Վանի վերջին դեպքերը... արտաքին քաղաքչության հետևանք էին: Այս աշնանը Սասունի, Տալվորիկի և այլ տեղերի բնակիչները երկու անգամ զենք բարձրացրին... ապստամբությունը սարքել էին արտասահմանից գնացած ոմն Համբարձում և ուրիշներ: Նրանց հաջողվել էր լեռներում ավազակախմբեր կազմել... Ռուսաստանի ազդեցությունը Թուրքիայի վրա այնքան ուժեղ էր,– շարունակում է թերթը,– որ մեր դիվանագիտության եռանդուն դիմումները և իրադարձության վայրերը... գործակալներ ուղարկելը բավական կլինի Թուրքիային վերջապես հարկադրելու, որ ճշտորեն պահպանի Բեռլինի դաշնագրի 62-րդ հոդվածը»[203]: Այսպիսով, թերթը փաստորեն մերժում էր 61-րդ հոդվածը, իսկ Լոնդոնը լավ հասկանում էր, որ առանց Ռուսաստանի Հայկական հարցում որևէ բան անելն անհնար էր: Դրա համար էլ լուրեր էր չրջանառության մեջ դնում, թե Հայկական հարցում ձևավորվել է անգլո-ռուսական համագործակցություն: "Times"-ի 1894թ. դեկտեմբերի 31-ի համարում տպագրված «1894» հոդվածում նշված է. «Լորդ Ռոզբերին... հայտարարեց, որ մեր հարաբերությունները ցարի կառավարության հետ վաղուց այնքան բարեկամական չեն եղել, որքան ներկայումս»: Սակայն որքան Անգլիան պնդում էր ռուս-անգլիական համագործակցության վրա, այնքան Ռուսաստանը խույս էր տալիս դրանից: Նոյեմբերի 26-ին "Новости" թերթը գրում է. «Հայերը Թուրքիայից բաժանվելուց հետո իրենց մասը կստանան ու կապրեն ինքնուրույն կյանքով, և բնական ընթացքը չտապեցնելու կարիքը չկա»: Թերթը նաև նշում է, որ միևնույն է՝ սուլթանը արևելյան նահանգներում բարենորոգումներ չի մտցնի: «Դրա համար էլ Սասունի ապստամբության նման հուզումներն անպտուղ են... Հայաստան գոյություն չունի: Դա Բուլղարիա չէ երեք միլիոն խիտ բնակչությամբ: Ո՛չ Անգլիան և ո՛չ էլ Ռուսաստանը մտադրություն չունեն Հայաստանում մի կառավարություն ստեղծել, որին երբեք հայերը պաշտպանել չեն կարող, քանի որ ցրված են ու թույլ»[204]:

"Новое время"-ն իր № 6738-ում գրում է, որ Անգլիան արհեստականորեն է ստեղծել Հայկական հարցը: Թերթի ատելությունը հայերի հանդեպ այնքան խորն էր, որ նրանց մեղադրում էր անգամ ռուսամետության մեջ: «Մինչև վերջին Ռուս-Թուրքական պատերազմը քրդերի դեմ հիմնականում բողոքում էին Վանի հայերը: Անցյալ պատերազմի ժամանակ հայերի վարկը Թուրքերի աչքում ընկավ: Քրդերը Մուխտար փաշայի հրամանով անկանոն զորքեր կազմակերպեցին, իսկ հայերը ոչ միայն ոչինչ չարեցին, այլև զանազան արարմունքներով իրենց ատելությունն էին արտահայտում Թուրքերի դեմ, օրինակ, ամեն տեղ ռուսներին հաղողություն էին մաղթում»: Հայ մտավորականությունն էլ առաջ քաշեց Հայաստանի ինքնավարության գաղափարը, որի մեջ մտցվում էին ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանները[205]:

---

[203] «Նոր դար», 1894, թիվ 211:
[204] «Մուրճ», 1894, թիվ 11-12:
[205] «Նոր դար», 1894, թիվ 210:

Բ. Դռանն Անգլիայի դիմումներին Ռուսաստանը խիստ զուսպ էր վերաբերվում: Ֆրանսիան, Գերմանիան և Ավստրո-Հունգարիան նույնպես դրանց դեմ էին, իսկ Իտալիան անորոշ կեցվածք ուներ: Ավստրիական մամուլն ուղղակի գրում էր, թե անգլիացիներին չպետք է հավատալ, Անգլիան ցանկանում է Թուրքիային վախեցնել Ռուսաստանին դուր գալու համար:

Սասունի կոտորածների կապակցությամբ եռանդուն գործունեություն ծավալեց ֆրանսիական "Le Temps"-ը, որը գտնում էր, թե Անգլիան ոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է միջամտել հայկական գործերին և կատարել Կիպրոսի կոնվենցիան: Թերթը հրապարակեց կոտորածներին վերաբերող բազմաթիվ փաստեր: Հրապարակումներից մեկում նշվում է, որ Զեքին իր զորքերին հրամայել էր Սասունի գյուղերում կոտորածներ իրականացնել: Սկզբում զինվորները չեն հնազանդվել: Սակայն, երբ փաշան հարկադրել է կրակ բացել հայերի վրա, այդ ժամանակ սկսվել է կոտորածը:[206] Մի ուրիշ անգամ թերթը գրում է. «Դեռ հունիսի վերջերին քրդական ավազակախումբը հարձակվեց հայ գյուղերի վրա և քշեց դրանց անասունները: Հայերը... հետ խլեցին տավարը: Այս ընդհարումը պատճառ դարձավ սոսկալի վրեժխնդրության: Բիթլիս թուրքական զորքեր ուղարկվեցին: ...Հրամայված էր վերջնականապես կոտորել բոլոր հայերին: Թուրք զինվորները 6-10 հազար հայ քրիստոնյա կոտորեցին: Մի գավառում 400, մի այլ գավառում՝ 200 կնոջ մաս-մաս կտրտեցին ամենածանր լլկանքներից հետո: Երեխաներին չամփրում էին սվինների ծայրին, ապա գլխատում: Թշվառ գյուղացիներն այրվում էին իրենց աղքատիկ ունեցվածքի հետ»:[207] Թերթը ծաղրում է, թե Եվրոպան սուլթանին չի կարող անհանգստություն պատճառել, քանի որ «այդ հսկա մարմինն ահավոր ծանր է և չի ձգտի այնպիսի գործերի, որոնք հակասում են միջազգային իրավունքին և դաշնագրերին»: Սուլթանն այդ գիտեր: Իսկ հայերը միայն մի բան էին ցանկանում՝ «կյանքի և ունեցվածքի տարրական անվտանգություն ուղղափառների պետի գայիսոնի տակ»[208]:

Ց. Պրեսանսեն գրեց՝ Կ. Պոլսում «Ֆրանսիական Հանրապետության դեսպանը ոստայնի մեջ կծկված սարդի նման խալիֆի ճեռքին գործիք է դարձել: Դեսպանը նրանից արտոնություններ, ...ֆերմաններ, երկաթուղի, իրադեներ է խնդրում և փոխարենը նրա պաշտպանը, նրա մեղսակիցն է դառնում... Ահա արդյունքն այդ քաղաքականության. հայկական սարսափների առթիվ պաշտոնական հանդիմանություններից բացի, մի այլ բանով պատասխանել չուզեց... Լավ գիտեմ, որ... այս պահին Կ. Պոլսում ստորության մեջ մրցում է՝ սուլթանի առանձնաշնորհումներից մաս ճեռք բերելու համար»[209]:

Բարենորոգումների ծրագրի չափավորության գործում Ռուսաստանի չհագեցվածությունը Ռուսական գլխավոր շտաբի գնդապետ Ժիլինսկին բացատրում է հետևյալով. «Հայաստանի ինքնավարության ստեղծումը վտանգավոր է նաև Ռուսաստանի համար: Թուրքիային է պատկանում Հայաստանի միայն մի մասը, մյուս մասը մեր սահմաններում է... Եթե Հայաստանի մի մասը դառնա կիսանկախ, ապա մյուսը՝ ռուսական մասը, կձգտի դեպի նա»[210]: Լոբանովը նույն կարծիքին էր. «Ես չեմ ուզում, որ թուրքական Հայաստանը դառնա երկրորդ Բուլղարիա, որպեսզի ռուսահայերը չտրամադրվեն մեր հիմնարկների դեմ...»[211]:

"Новое время"-ի №6868-ում կարդում ենք. «Առաջին հայացքից անգլիացիք հանդես են գալիս որպես հայերի վեհանձն, ոգևորող և անձնազոհ բարեկամներ: Քարոզներ, հոդվածներ, հանրահավաքներ, ցույցեր: Այդ բոլորը կատարվում է այնպես բարձրակոչ, այնպիսի աղմուկով, որ թվում է, թե կասկածելն անտեղի է»: Իսկ Ռուսաստանը կարծես

---

[206] Նույն տեղում, թիվ 207:
[207] «Մուրճ», 1894, թիվ 1-12:
[208] «Նոր դար», 1894, թիվ 207:
[209] «Եվրոպացիների կարծիքը Հայկական դատի մասին», Կ.Պ., 1908. էջ 42-43:
[210] Նույն տեղում, էջ 43:
[211] Նույն տեղում:

*թե անգործության է մատնված, չնայած ռուսական սահմաններում արդեն կա 15 հազար փախստական, որոնք պահվում են պետության հաշվին: «Փախստականները հիացած են այն բարեսրտությունից և սրտագին ցավակցությունից», որ նրանց հանդեպ հանդես է բերվում Ռուսաստանում: Մինչդեռ Եվրոպա փախած հայերը ոչնչով չեն ապահովվում»*[212]:

*Նկատի ունենալով Հայաստանի շուրջ տերությունների միջև ընթացող առևտուրն ու սուլթանի կեցվածքը՝ "Биржевые ведомости" թերթն իր №223-ում գրեց. «Հնարավորություն չունենալով իր հզոր հակառակորդի (Անգլիայի) դեմ սովորական միջոցներով կռվել, Դուռը դիմում է դիվանագիտական ամեն տեսակի խորամանկությունների... խոստովանելով թե՛ Թուրքիայի հայերի իսկապես թշվառ կացությունը և թե՛ իր իրավունքը՝ մերժել ամեն արտաքին միջամտություն... Սուլթանը միաժամանակ որոշել է իր ներկայացուցիչների միջոցով դիմել Փարիզի և Պետերբուրգի կաբինետներին՝ բողոքելով Անգլիայի գործողությունների դեմ: Դրանով ձգտում է հակառակորդների միջև խռովություն գցել և այդպիսով գործը խեղդել: Հայկական խնդրում Դուռը... աշխատում է հետաձգել վճռական պահը, որպեսզի հնարավորություն ունենա օգուտ քաղել առաջին իսկ հարմար պահից...»:*

*Իսկ Ռուսաստանի կեցվածքը դրա համար ստեղծում էր լիակատար հնարավորություն: Պետերբուրգում արևմտահայության նկատմամբ սադրանքները չարունակվեցին նաև Սասունի կոտորածներից հետո: 1895թ. ապրիլին ցարական ոստիկանական գերատեսչությունը հանձնարարեց կովկասի ժանդարմական վարչությանը՝ խստորեն հետևել հայերի գործողություններին, քանի որ մայիս ամսին սպասվում էր նրանց «զինված ապստամբությունը թուրքական փոքրասիական նահանգներում», ինչը կարող է անկարգություններ առաջացնել մեր սահմանագլխին*[213]: *"Гражданин" թերթը սեփական կառավարությանը հասկացնում էր. «Վիրավորական ու ցավալի է, որ մեր դիվանագիտությունը ակնհայտորեն խաբված է հայերի կողմից, այն հայերի, ովքեր Թուրքա-Հայաստանի փոխարեն ցանկանում են ունենալ ազատ Հայաստան և այդ պատճառով ստեր են հնարում թուրքական անգթությունների վերաբերյալ... Ռուսաստանի գլխավոր շահը Արևելքում պահանջում է երբեք չդաշնակցել Անգլիայի հետ և միշտ լինել Թուրքիայի դաշնակիցը»*[214]: *"Московские ведомости"-ն ավելացրեց. «Անկախ կամ կիսանկախ Հայաստանի ստեղծումը սպառնալիք է Օսմանյան կայսրության համար»*[215]: *"Новости"-ն բացատրեց Ռուսաստանի հեռահար պլանները: Եթե Հայաստանում բարենորոգումների խնդիրը հօգուտ Թուրքիայի լուծվի, «Բ. Դուռը հնարավորություն կունենա Ռուսաստանի առջև ուղի բանալ մինչև Եփրատի հովիտը: Այդտեղից մինչև Պաղեստին կարճ ճանապարհ է, իսկ, ինչպես հայտնի է, Պաղեստինը եգիպտոսի բանալին է»*[216]: *"Новое время"-ն իր № 6965-ում խնդրին ավելի գործնական տեսք է տալիս. «Ռոզբերիի ազատամիտ կառավարությունը Հայկական հարցում երկու ծրագիր ուներ: Դրանցից մեկը «պաշտոնական» բնույթի էր և արտահայտում էր բրիտանական կառավարության՝ Հայաստանում բարենորոգումներ մտցնելու հարցում Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ միաբան գործելու համաձայնությունը: Մյուս ծրագիրը... բոլորովին այլ նպատակ ուներ... Հայաստանը դարձնել մի ինքնավար երկիր, որը Թուրքիայի հետ միայն հարկային հարաբերություններով կապված լինի և այնպիսի կազմակերպություն ունենա, որ Ռուսաստանի հայերին ստիպի ցանկանալ մտնելու այդ կազմակերպության մեջ»:*

---

[212] «Արձագանք», 03.05.1895:
[213] «Նորք» հանդես, 1895, թիվ 5-6, էջ 43:
[214] «Արձագանք», 1895, թիվ 99:
[215] Նույն տեղում, թիվ 90:
[216] Նույն տեղում, թիվ 97:

Ռուսական մի քանի թերթերի թշնամությունը հայերի հանդեպ այնպիսի ցնդաբանության հասավ, որ անգամ սկսեցին ժխտել հայ ազգի գոյությունը, իբր հայ ազգը «ոչ անցյալում և ոչ էլ ներկայում գոյություն չի ունեցել և չունի, և հայն այլ բան չէ, եթե ոչ վաչխառուս»: "Новое время"-ն մարտի 20-ին ահազանգեց. «Թուրքական կառավարության գործակալները Անգլո-Հայկական կոմիտեի հետ բանակցություններ են վարում, որոնց նպատակն է Հայկական հարցը լուծել հօգուտ անգլիացիների»: Ապրիլի 12-ին "Daily News"-ը գրեց, որ Անգլո-Հայկական ընկերությունում ընդունել են սասունցի երեք հայերի, Գրինի խոսքով՝ կոտորածներից հրաշքով փրկվածների»: "Новое время"-ն դա դավադրություն էր համարում ու նաև դժգոհում, որ անգլիական մամուլը «բացարձակ կռիվ է հայտարարել ռուսական մամուլին, որովհետև վերջինս բացասական կարծիք ունի Հայաստանի վերաբերյալ Անգլիայի ծրագրի մասին»:

Իր հերթին, «Անգլիան երբեք թույլ չի տա Ռուսաստանին,– հունիսի 18-ին գրեց "Daily News"-ը,– գործել որպես արևելյան քրիստոնյաների իրավունքների, կյանքի ու գույքի պաշտպան»: "Indépendance Belge"-ն նկատում է, որ Անգլիան ղաճգություն է ունենում, երբ չի կարողանում ազդեցություն ունենալ Էրզրումի շրջանում, որտեղ վճռորոշ դերը Ռուսաստանինն է: Այդ ամենով հանդերձ Անգլիան շարունակում է մնալ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջության պաշտպանության դիրքերում: Անգլո-Հայկական կոմիտեի փոխնախագահ Աթկինը, նշավակելով Հայկական հարցում Անգլիայի երկդիմի քաղաքականությունը, հայտարարեց. «Անգլիան նախ զիջեց՝ ընդունելով թուրքերի կեղծ հետաքննությունը, փոխանակ պահանջելու միջազգային հետաքննություն, հետո մի պատվիրակ ուղարկեց առանց թարգմանչի և, վերջապես չպահանջեց, որ անգլիական թղթակիցներն ազատ մուտք ունենային Բիթլիսի, Վանի և Դիարբեքիրի վիլայեթները»[217]:

Սասունի ջարդերի կապակցությամբ մամուլում քննադատություն ծավալվեց «Անգլո-թուրքական կոնվենցիայի հեղինակի»՝ Սոլսբերիի հասցեին, որը փաստորեն չարունակում էր հովանավորել Թուրքիային: «Եթե Կ. Պոլսի մեր դեսպանին հանձնարարվեր,– գրում է "The Gardian"-ը,– ասելու սուլթանին, որ քրիստոնյա հպատակներին անվտանգության մինիմումը չերաշխավորելու դեպքում Անգլիան չի ընդդիմանա գործողությունների այն եղանակին, որ կարող է ընտրել Ռուսաստանը, հայերի դրությունը մեծապես կփոխվեր: Ռուսաստանը պատրաստ կլիներ օգնելու նրանց, եթե թույլ տային, որ նա ազատորեն գործեր՝ ղեկավարվելով իր շահերով»[218]: Երբ Անգլիայի դեսպանի ջանքերով պարզվեց, որ կոտորածների հրամանը տրվել էր Ելդըզից, եվրոպական քաղաքներում հանրահավաքներ տեղի ունեցան, կատարվեցին հարցապնդումներ, ստեղծվեցին հայանպաստ ընկերություններ: Սակայն սուլթանը նման ճեռնարկումների արժեքը լավ գիտեր, նա լուրջ նշանակություն չէր տալիս նաև Հայկական հարցի չուրջ տերությունների բանակցություններին:

Գլխավոր խնդիրը լուծված էր՝ Սասունը կոտորված էր, մնում էր մեղմել հասարակայնության հուզումները: Եվրոպայի աչքերին թոզ փչելու համար որոշ զիջումներ պարտադիր էին: Երբ Մ. Իզմիրլյանը պատրիարք ընտրվեց, շատերը կարծում էին, որ սուլթանն այդ ընտրությունը չի հաստատի, սակայն հանուն «հուզումի վերացման», սուլթանն ընտրության արդյունքները հաստատելուց զատ Մ. Իզմիրլյանին չքանչանով պարգևատրեց: Համիդը Քըրրիին ասաց, որ պատրաստ է բանտից ազատել 65 Հայ հոգևորականների՝ պայմանով, որ նրանք գրավոր պարտավորվեին «օրինապաշտ լինել», և պատրիարքն էլ խոսք տար, որ ազատվածները նախկին աշխատանքում չեն վերա-

---

[217] "Daily News", 12.04.1895.
[218] «Արձագանք», 1895, թիվ 59:

կանգնվի: Դրան հաջորդեց հայկական նահանգներում բարենորոգումներ մտցնելու հանձնաժողովի նիստը վարչապետի նախագահությամբ:

Նման մի քանի ուրիշ «զիջումների» հետ մեկտեղ, սուլթանը համաձորեն մերժում էր հիմնարար նշանակության խնդիրների քննարկմանն ու լուծմանը տերությունների մասնակցությունը: Խոսքը վերաբերում էր հայկական բարենորոգումներին և յաթաղանից փրկված սասունցիներին նյութական օգնություն հասցնելուն: «Ամենուրեք,– գրում է Ֆ. Նանսենը,– Եվրոպայում և Ամերիկայում Հայաստանի բարեկամների նախաձեռնությամբ հանգանակություններ եղան: Այդ շարժումը սուլթանին հաճելի չէր: Նա հայտարարեց, թե ինքն է ուզում օգնել իր... կարոտյալներին: Նրա ծիծաղելի օգնությունը, որի բուն նպատակը օտարներին հեռու պահելն էր երկրից, նորից նախատինքների առիթ դարձավ... Ոստիկանները ցորեն էին բաժանում՝ քրիստոնյա երիտասարդ կույսեր ստանալու պայմանով...»[219]:

Եվրոպական հասարակայնության ճնշման տակ տերությունները հարկադրված եղան դիմելու գործնական քայլերի: Լոնդոնից նոյեմբերի 28-ին "Новое время"-ին հայտնեցին, որ Կ. Պոլսում տերությունների դիվանագիտական ներկայացուցիչները բանակցություններ են վարում առանձին, լրիվ անկախ հանձնաժողով ուղարկելու Հայաստան, որը տեղում քննի իրերի դրությունն առանց պաշտոնյաների (թուրքական) մասնակցության[220]:

Այնուամենայնիվ, տերությունները համակարծիք էին Գերմանիայի հյուպատոս Ֆ. Ռադլինի հետ՝ «... կարող եմ համոզված ասել, որ Թուրքիայում կամ նրա որևէ մի անկյունում բարեփոխությունների կարիք չկա»[221]: Գերմանիայի մի ուրիշ ներկայացուցիչ ավելացրեց. «Հայաստանի հարցին խառնվելու ոչ մի պատճառ չեմ տեսնում»[222]:

Տերությունները հայի արյունը աճուրդի էին հանել այլևայլ շահերի համար, իսկ հայը շարունակում էր դեգերել սեփական արյան լճակներում և, այլ ելք չունենալով, նորից ու նորից էր դիմում տերություններին: Պատրիարքը նրան առաջարկեց բարենորոգումների իրականացումը վերցնել վերահսկողության տակ, քանի որ իրավիճակը բախտորոշ էր հայերի համար և միայն Եվրոպայի բարի կամքն էր ի վիճակի կանգնեցնելու դեպքերի ողբերգական ընթացքը:

Սասունի ջարդերը սարսուռ էին պատճառել ողջ հայությանը: 1895թ. փետրվարի 6-ին "Daily News"-ը գրեց. «Դամասկոսի և Բեյրութի քրիստոնյաների շրջանում կատարյալ սարսափ է տիրում: Շատ քրիստոնյաներ իրենց տները շրջապատել են պատնեշներով՝ բարիկադներով, երկյուղելով, որ գիշերները մահմեդականները հարձակումներ կգործեն»: Ընդ որում, ահաբեկված էին ոչ միայն հայերը, այլև արաբները: Արաբական լրագրերը փակված էին, «իշխանությունները վախենում էին՝ չլինի թե այդ լրագրերը խոսք փախցնեին գավառներում տեղի ունեցած անկարգությունների մասին»: Մասնավորապես ծանր էր մահմեդականների միջավայրում ապրող հայերի վիճակը: Նույն թերթը վկայում է. «Իզմիթի շրջակայքի մի քանի հայ գյուղերում սարսափ է տիրում: Ժողովուրդը վախենում է, որ սաստիկ գրգռված մահմեդականները հարձակում գործեն հայերի վրա»:

Շղթայված հայերի քարավանները, որոնք չարժվում էին Սիրիայի ուղղությամբ, աստիճանաբար ավելի մարդաշատ էին դառնում: Սասունցի հայը կա՛մ աքսորի ճանապարհին էր և կա՛մ շրջափակման մեջ: Որպեսզի գյուղից դուրս գար, նա պետք է ունենար «ռեխս թեզքերե», որը տալիս էր գյուղապետը, պարզելուց հետո, թե գյուղացին ուր

---

[219] Նանսեն Ֆ., նշվ. աշխ., էջ 252:
[220] «Նոր դար», 1894, թիվ 208:
[221] Lepsius J., նշվ. աշխ., B. 9, p. 255.
[222] Նույն տեղում, B. 9, p. 62.

է գնում, քանի օրով և ում հետ է հանդիպելու: «Թեզքերե» չունեցողը «որպես հակասուլթանական, ենթարկվում էր խիստ պատժի՝ բանտարկության, կամ վճարում էր մեծ տուգանք: Դա վերաբերում էր թե՛ Թուրքիայի քաղաքացիներին և թե՛ օտարերկրացիներին»[223]: «Այս կարգը պատրվակ էր, որպեսզի պաշտոնատար և անպաշտոն Թուրքն ու ավազակ քուրդը հանդիպած հայի հետ վարվեին իրենց քմահաճույքով, անգամ նրանց հետ, ովքեր տեղեկանք ունեին»[224]:

## 6. ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Սասունի դեպքերը քննելու համար հանձնաժողով ստեղծելու և մեղավորներին պատժելու վերաբերյալ սուլթանի հայտարարությունը ընկալվեց որպես գործը քնեցնելու փորձ, քանի որ Թուրքիան ի զորու չէր անաչառ հետաքննություն իրականացնել: Լոնդոնում կայացած հանրահավաքներից մեկը արձանագրեց. «Սուլթանի ուղարկած հանձնաժողովը որևէ նշանակություն ունենալ չի կարող, քանի որ այդ բոլոր անգթությունները ու սպանությունները տեղի էին ունեցել թուրքական կառավարության գիտությամբ»[225]:

Ի դեպ, սուլթանը ո՛չ չտապում էր հանձնաժողով ձևավորել և ո՛չ էլ համաձայնվեց, որ այդ անեին դեսպանությունները: 1894թ. նոյեմբերի 30-ին Փարիզից ստացված մի հեռագիր հայտնում էր. «Հայկական հարցը հանված է հերթական խնդիրների շարքից: Կառավարությունները տատանվում են, չգիտեն, թե այդ հարցում ինչպես գործեն և այլևս որամադիր չեն միջոցների դիմել, մինչև որ նախապես նոր տեղեկություններ չստանան»[226]: Ֆրանսիական "Le Temps"-ը գրեց, թե Եվրոպան չի կարող սուլթանին անհանգստություն պատճառել, քանի որ վերջինս չի ձգտի գործերի, որոնք հակասում են միջազգային պայմանագրերին: Թերթը գտնում է, որ պետք է ստեղծել խառը հանձնաժողով, և «Աբդուլ Համիդը որևէ պատճառ չունի թույլ չտալու, որ այն անպայման անաչառ քննություն կատարի...»: Միջամտեց Գերմանիան, որի խորհրդով սուլթանը տերություններին առաջարկեց ներկայացուցիչներ ուղարկել թուրքական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու, ինչպես նաև Հայաստանում մտցվելիք բարեփոխումները վերահսկելու համար:

Հռոմը, Վիեննան և Բեռլինը գտնում էին, որ հայկական խնդիրները միայն Ռուսաստանին ու Անգլիային են վերաբերում, և նրանք պետք է համաձայնության գան, իսկ իրենք պատրաստ են մասնակցել այդ երկու երկրների համատեղ գործունեությանը և «Կպաշտպանեն նրանց բոլոր պահանջները: Միայն կասկածելի է, որ Ռուսաստանը համաձայնի միաբան գործել Անգլիայի հետ»: Եվ իսկապես, Սասունի իրադարձությունները հետաքննելու խնդրում Անգլիայի հետ համագործակցելուն Պետերբուրգը մեծ զգուշությամբ էր վերաբերվում: Նելիդովը վախենում էր, որ այդ «համագործակցությունը կարող է բացասաբար անդրադառնալ Կ. Պոլսի հետ Ռուսաստանի հարաբերությունների վրա», և Լոնդոնը ցարական դիվանագիտությանը կարող էր «ներքաշել հայկական գործերի մեջ»[227]: Այնուամենայնիվ, հետաքննիչ հանձնաժողովի հարցում համաձայնության հասնելու փաստը մեծ հաղթանակ համարվեց, քանի որ, ինչպես հաղորդեց Ռեյթերը, այդ իրողությունը, հույս էր ներշնչում, որ «Արևելյան հարցում հնարավոր է պետությունների նոր համախմբում»:

---

[223] «Արձագանք», 22.03.1895:
[224] Նույն տեղում, 1895, թիվ 1:
[225] «Մուրճ», 1894, թիվ 11-12:
[226] Նույն տեղում:
[227] Ламздорф В. Н., *Дневник, 1886-1890*, Москва, 1991.

Սակայն սուլթանը Եվրոպայի ոգևորության վրա իսկույն սառը ջուր լցրեց: "Daily News"-ը գրեց. «Զեքի փաշային իմթիազի չքանշանով պարգևատրելն այնպիսի ծանր տպավորություն գործեց, որ Բ. Դուռը հարկադրված եղավ հայտարարել, թե պարգևատրման մասին որոշումը կայացվել էր մինչև Սասունի դեպքերը»: Իսկ գերմանական "Kölnischen Zeitung"-ը ծաղրեց, թե այդ չքանշանը նախատեսված էր միայն «մեծահռչակ գեներալների համար և, հավանաբար, հազարավոր մարդկանց սպանելը Զեքի փաշային դարձրել էր հռչակավոր»:

Դեկտեմբերի 4-ին "Times"-ը գրեց. «Ավելի քան վստահելի և կողմնակալության ամբաստանությունից զերծ անձանց պարզած ճշմարտությունը միանգամայն բավարար է հավաստելու, որ Սասուն գավառի թուրք որոշ պաշտոնատարներ մեղապարտ են անլուր ոճիրներ գործելու համար և մեծ պատասխանատվություն է ծանրանում Բ. Դռան վրա, որը հանցագործներին պատժելու փոխարեն վարձատրել է»: "Daily News"-ը նույն այդ օրերին փորձեց բացահայտել Անգլիայի օսմանյան քաղաքականության բուն իմաստը. «Հայաստանը կդառնա Ռուսաստանի սեփականությունը, եթե Թուրքիան Հայաստանը չդարձնի ինքնավար նահանգ քրիստոնյա նահանգապետով»: Դրա համար էլ Անգլիան ոչ թե հովանավորում է սուլթանին, այլ աշխատում է կոչտ ճնշման միջոցով հասնել հարցի լուծմանը:

Եվրոպայում կրքերը հանգստացնելու համար Բ. Դուռը դեկտեմբերի 17-ին, այսինքն՝ նույն օրը, երբ Լոնդոնում բազմահազարանոց հանրահավաք էր տեղի ունենում՝ նվիրված Սասունի կոտորածներին, հայտարարեց, թե «սկզբունքային հավանություն է տվել մի նախագծի՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի և Մուշի վիլայեթներից ձևավորելու մի նահանգ... Սուլթանը ստեղծել է հետաքննիչ հանձնաժողով՝ իր թիկնապահ Ֆերիկ Աբդուլլահի գլխավորությամբ: Հանձնաժողովի կազմում են Կ. Պոլսի անվտանգության նախկին տնօրեն Էմները, ներքին գործերի նախարարության թղթակցության դիվանի առաջին քարտուղար Մեջիդը և սուլթանի անձնական սպայակույտի մերլիվա Հաֆըզ Թևֆիկը: Հանձնաժողովի կազմն իսկ ասում է, որ հետաքննությունը խնդիր չուներ բացահայտելու ճշմարտությունը, այլ ջարդարարությունը «ծածկող քողի տակ մի նոր թանձր քող էր քաշվելու՝ այն լրիվ անտեսանելի դարձնելու համար»[228]: Հանձնաժողովի անդամները կասկածելի կենսագրություն ունեին: Նրանցից մեկը մեղադրվում էր «զանազան տգեղ գործերի մեջ»: Հանձնաժողովի նախագահին էլ չուտով հետ կանչեցին ու փոխարենը նշանակեցին արդարադատության նախարարության երկու աշխատակիցներ: Աբդուլլահը երկար հարցաքննվում էր սուլթանական պալատում: Նրան մեղադրում էին, որ կորցրել էր մի պայուսակ՝ գաղտնի փաստաթղթերով՝ Բ. Դռնից ստացած հրահանգների հետ միասին: Սակայն իրականությունն այն էր, որ Աբդուլլահն ինքնուրույն, պաշտոնականից զատվող, կարծիք ուներ Սասունում կատարվածի վերաբերյալ և հանձնաժողովի մեջ մտցվել էր հակառակ իր կամքի: Ելդըզում նրան ինչպես հարկն էր «մշակեցին», ապա հարկադրեցին գնալ Ֆ. Քըրրիի մոտ և հերքել կոտորածների վերաբերյալ իր կարծիքը: Զեքիի տեղակալ Էդհեմը, ինչպես վկայում է "New-York Herald"-ը, կանչվեց Կ. Պոլիս և համապատասխան հրահանգներ ստացավ հանձնաժողովի գործունեության առնչությամբ:

Հանձնաժողովի Մուշ հասնելուց մի շաբաթ առաջ՝ քաղաքի հայկական չորս թաղերում մեկական վաշտ զորք էր հերթապահում, բոլոր կասկածելի հայերի տները խուզարկվում էին, նրանց բանտ էին նետում: Խուզարկեցին Միացյալ ընկերության վարժարանը, ուսուցիչների մի մասին բանտարկեցին: Քաղաքը 2.5 ժամ որոշ չառավղով չրջափակվեց: Ռազմական մեծ ուժեր կուտակվեցին Սասունը Մուշի հետ կապող ճանապարհներին ու անցքերին: Քանի որ Ն. Խարախանյանը բանտում էր և, որպեսզի հանձնաժողովը Մշո առաջնորդի աթոռը թափուր չտեսնի, բերեցին ու դրա վրա բազմեցրին Առա-

[228] «Նոր դար», 1894, թիվ 214:

քելոց վանքի վանահայր Հովհ. Մուրադյանին: Կոտորածից հետո Մուշում ապաստանած բոլոր սասունցիները բռնությամբ քաղաքից հանվեցին: Տարոնից հեռացրին նաև կոտորածներին մասնակցած քրդերին՝ վախենալով, որ նրանք կարող են հանձնաժողովին պատմել ճշմարտությունը: "Le Rappel" թերթը մարտի 2-ին գրում է, թե Բիթլիսից Դամասկոս են բերել մոտ 300 քուրդ ընտանիք, որոնք բնակվելիս են եղել Սասունի մերձակայքում և մասնակցել են կոտորածներին: Նրանց հեռացնում են, որպեսզի Քննիչ հանձնաժողովին չհանդիպեն: Նույն օրերին կեսարիայից գրեցին. «Դեռ ոչ մի տարի... կերասոնը անմեղ հայ աքսորյալների տասնյակ խմբերի այդքան դժբախտ իրողությանն ականատես չի եղել... Օր չկա, որ մեկական խումբ չղթայված հայ բանտարկյալ աքսորականներ չբերվեն քաղաք և չուղարկվեն հեռու աքսորավայրեր... այդ խմբերը կազմված են Մուշի, Վանի, Բաղեշի, Կարինի վիլայեթների հայ ազգաբնակչությունից»[229]: Աքսորվում էին նաև քրդերը և պաշտոնական շրջանները քրդերի աքսորը ներկայացնում էին՝ իբր իշխանությունները «պատժում են ավազակ քրդերին»: Իրականում հետապնդում էին ոչ թե ջարդարարներին, այլ քուրդ անմեղ գյուղացիներին: Տպավորություն ստեղծելու համար տանջանքի ու լլկանքի էին ենթարկում նաև քրդուհիներին, Մուշում քրդերին ցուցադրաբար բանտարկեցին հանձնաժողովի ներկայությամբ:

Սուլթանը Հետաքննիչ հանձնաժողովի ստեղծմամբ չբավարարվեց և կազմեց նաև մի ուրիշ հանձնաժողով, որը նույնպես զբաղվելու էր Հայկական հարցով ու նիստերն անցկացնում էր Ելդըզում: Այդ հանձնաժողովի կազմում էին նախկին մեծ վեզիրներ Քյամիլը և Սայիդը, մարշալ, սուլթանի սիրելի Շաքիրը: Ակնհայտ է, որ սուլթանական քաղաքականությունը որոշելու էր ոչ թե առաջին, այլ երկրորդ հանձնաժողովը: Խորհրդանշական մի փաստ: Այս հանձնաժողովի անդամներից պահանջեցին երդում տալ, որ գաղտնի կպահեն նիստերում իրենց տրամադրված նյութերը:

Հուլիսի 11-ին լուր ստացվեց, որ անգլիական ռազմանավերը շարժվում են Դարդանելի ուղղությամբ, իսկ Ֆ. Քըրրին հայտարարեց, թե արձակուրդ է մեկնում: Դրանք հակաթուրքական ցույցերի հնչեղություն ունեցան: Սուլթանը հրամայեց Շաքիր և Դերվիշ փաշաների գլխավորած հանձնաժողովին չտապ մեկնել Հայաստան: «Բարենորոգումների» բազմամարդ հանձնախմբին ճանապարհ դրեցին մեծ չուքով՝ տպավորություն էր ստեղծվում, թե գործնական լուրջ քայլ էր կատարվում բարենորոգումներն իրականացնելու ուղղությամբ, և Անգլիան վրդովվելու պատճառ չուներ:

Սասունի կոտորածները հետաքննող հանձնաժողովի աշխատանքներին միանշանակ գնահատական տալ չի կարելի, որովհետև դրանցում տեղ գտած թերությունները պայմանավորված էին ամենից առաջ այն բանով, որ հանձնաժողովը ստեղծվել էր ոչ թե սուլթանի նախաձեռնությամբ, այլ տերությունների ճնշմամբ: Հանձնաժողովն ստեղծելուց մի քանի օր անց Բ. Դուռը հայտարարություն հրապարակեց, թե այն քննելու է «հայ ավազակների գործողությունները»: Քըրրին այդ կապակցությամբ եղավ սուլթանի մոտ և ասաց, թե թուրքական հանձնաժողովին վստահել չի կարելի, և Սասուն է ուղարկելու իր հյուպատոսին, որպեսզի մյուս տերությունների ներկայացուցիչների հետ միասին իրականացնեն հետաքննություն: Սուլթանը նպատակահարմար գտավ, որ հետաքննությունն անցկացնի Միացյալ Նահանգները: Վաչինգտոնը սկզբում համաձայնեց և դուկտ. Դրյուտտին հանձնարարեց ինքնուրույն հետաքննություն կատարել: Դեկտեմբերի 27-ին "Times"-ը գրեց, որ ամերիկյան մի ռազմանավ առաջադրանք է ստացել ընդհուպ մոտենալ Թուրքիայի ափերին և «հարկ եղած դեպքում օգնել Դրյուտտին...»: Մի քանի օր անց Բ. Դուռը հետ կանգնեց իր առաջարկից՝ պատճառաբանելով, թե չի կարող ապահովել ԱՄՆ ներկայացուցչի անվտանգությունը: Եվս մի քանի օր և հարկադրված եղավ համաձայնել, որ կայսրության ներքին գործերին միջամտեն Ռուսաստանը, Անգլիան ու Ֆրանսիան: Հարաբերությունները գնալով սրվում էին և, ինչպես գրում

[229] «Արձագանք», 1895, թիվ 33:

է "Биржевые ведомости"-ն, Անգլիայի ամբողջ «մամուլը զինվել էր Բ. Դուռն դեմ», նույնիսկ պահանջներ էին հնչում խաչակրաց արշավանք սկսել[230]: Սուլթանը հարկադրված եղավ համաձայնել, որ թուրքական հանձնաժողովի աշխատանքին մասնակցեին նաև տերությունների նեկայացուցիչները:

Հանձնաժողովը Կ. Պոլսից դուրս եկավ դեկտեմբերի 31-ին: Այն երկար մնաց Էրզրումում և Մուշ հասավ հունվարի 18-ին: Հանձնաժողովի Մուշ գալը ականատեսը նկարագրում է հետևյալ կերպ: Խնուսից նրան ուղեկցում էին սասունցի երկու երիտասարդներ, որոնք կոտորածներից փրկվածներից էին և «արդեն ամեն ինչ պատմել էին ու նկարագրել իրենց գլխով անցած անգթություններ: Հանձնաժողովին օգնում էր նրա հետ եկած մի քրիստոնյա պարոն»: Հանձնաժողովը Մուշից չորս ժամ հեռավորության վրա էր, երբ նրան դիմավորելու եկան պաշտոնատարները հեծելազորով: Ցնծավա հայկական գյուղից մինչև Մուշ ճանապարհը «կծող մացառների նման ցանկապատված էր արքունական զորագնդերով», որպեսզի ոչ մի հայ չմոտենար եվրոպացիներին: Փակված էին նաև Արածանիի և Մեղրագետի կամուրջները: Ոչ ոքի թույլ չէին տալիս քաղաք մտնել[231]:

Անդրադառնալով այդ իրադարձությանը՝ "Frankfurter Zeitung"-ը գրեց. «Հետաքննիչ հանձնաժողովը 6-ին հասավ Խնուս, այնուհետև եղավ չորս գյուղերում և դրանց թշվառ բնակիչներից ընդունեց գրավոր բողոքներ... Հանձնաժողովը դժվարության է հանդիպում, որովհետև կոտորածից ազատված սասունցիները ցրված, իսկ նրանց գյուղերը մոխրաշեղջեր են... Մի հայ քահանա Սասունից գրում է, թե այստեղի թուրք իշխանությունները հանձնաժողովին անվանում են իրենց սեփականը և նրա հետ մեծ հույսեր են կապում՝ հավատացած, որ չի հաջողվի ջրի երես հանել թուրք զինվորների գործերը: Վկաներից ոմանք բանտում են, ուրիշներն՝ անկողնում: Իշխանություններն ամեն ինչ անում են թաքցնելու թուրքական զորքի, մանավանդ դաշտային թնդանոթների մասնակցությունը կոտորածին... ինչն ապացուցելու համար հանձնաժողովը ստիպված էր լինելու բացել տալ այն ընդհանուր գերեզմանները, որոնցում թաղված են թնդանոթի ռումբերից սպանվածները... հայերը հսկում ու պահպանում են այդ գերեզմանները՝ հուսալով, որ կհաջողվի հանձնաժողովին ցույց տալ»[232]:

Հանձնաժողովին Մուշում մեծ չուքով ընդունեցին ու տեղավորեցին մի հարուստ հայի պատկանող տանը, ոստիկանական խիստ հսկողության ներքո, որպեսզի նրանք չփում չունենային սասունցիների հետ:

Տեղ հասնելուց անմիջապես հետո՝ հանձնաժողովը ճևավորեց նախապատրաստական խորհուրդ, իսկ հաջորդ օրը վերադարձավ Կարին: Դա հայերի չրջանում անհանգստություն առաջացրեց, նրանք չէին համարձակվում «տնից տուն, խանութից խանութ գնալ, չուկա իջնել առօրյա պետքերը հոգալու, խանութները չբացվեցին, երթևեկությունը կանգ առավ, հայերը փակվեցին իրենց տներում, վախենում էին թուրք ամբոխի վրեժխնդրությունից, մանավանդ այն հայերը, ովքեր հասցրել էին պատվիրակներին նամակներ և հանրագրեր հանձնել»: Կարինում հանձնաժողովին հավաստիացրել էին, թե Մուշ հասնելուն պես նրան կմատուցվեն սուլթանին հասցեագրված չնորհակալական ուղերձներ: Մինչդեռ տեղի ունեցավ լրիվ հակառակը՝ հանձնաժողովը ողողվեց ժողովրդի ծանր վիճակի վերաբերյալ բողոքներով: Կարինից վերադառնալուց հետո հանձնաժողովն օրեր շարունակ քննարկում էր աշխատանքների կազմակերպման կարգը, ճչգրտում տերությունների նեկայացուցիչների հետ փոխհարաբերությունները, վկաների ընտրության, նրանց Մուշ բերելու և հարցաքննելու պայմանները: Այս հարցերի կարգավորումը հանձնաժողովից խլեց մոտ երկու ամիս: Հարցաքննվածների թիվը հունվար-ապրիլ

---

[230] Նույն տեղում, թիվ 1:
[231] «Արձագանք», 1895, թիվ 9:
[232] Նույն տեղում:

*ամիսներին չանցավ մի քանի հոգուց: Ահա թե ինչպես է հանձնաժողովի ձևավորումն ու աշխատանքը ներկայացնում Կ. Թումայանը: «Պոլսո դեսպան սըր Ճիլիփ կը բողոքե Բ. Դուռ և անկախ քննություն մը կատարելու համար դեսպանատուներն մեկը ղրկել կուզե: Սուլթանը ազդու միջամտութենե մը վախենալով, իր կողմե արդեն քննիչ հանձնախումբ մը ճամբա ելած կը հայտարարե: Դեսպանը կը պահանջե, որ հանձնախումբը խառն ըլլա, անդամներեն երեքը հյուպատոսներ ըլլան: Փադիշահը կը մերժե ժամանակ չահելու համար և կը սկսի բանակցություն մը: Անգլիական դեսպանը վերջապես կը հաջողի արտոնություն ստանալ, որ գոնե անգլիացի, ֆրանսիացի և ռուս երեք պատվիրակներ մասնակցեին հանձնախումբին ոչ թե իբր անդամ, այլ հարցաքննական նիստերուն ներկա գտնվեին և իրենց թուլլ տրվի հարցումներ ուղղել վկաներուն:*

*Այս երեք պատվիրակները ոչ թե հյուպատոսներ պիտի ըլլային, այլ կարնո հյուպատոսներուն գրագիրները... որոնց թարգման մը իսկ ունենալ մերժվեցավ, որով իբր գրագիր որևէ հեղինակութենե զուրկ էր: Պոլսո դեսպանը կը հաջողի թարգման մը ղրկել: Քննությունները կը տևեն 6 ամիս, հունվարի 24-են հուլիսի 21, 1895: Տեղի կունենա 180 նիստ, 190 վկաներու ունկնդրություն: Եվրոպական պատվիրակության զեկույցը կը հաստատե, որ հայերը ոչ թե ապստամբած էին, այլ ինքզինքնին պաշտպանած, որով բոլոր պատասխանատվությունը կիյնար Թրքական կառավարության վրա»[233]:*

*Քննիչ հանձնաժողովում Անգլիան ներկայացնում էր Մանասթրի փոխհյուպատոս Շափլեյը, Ֆրանսիան՝ Տրապիզոնի փոխհյուպատոս Վիլբերը, Ռուսաստանը՝ Էրզրումի փոխհյուպատոս Պրժևալսկին: Արդեն հունվարի 27-ին, այսինքն՝ աշխատանքն սկսելուց երեք օր անց, տերությունների պատվիրակները բողոք հղեցին Բ. Դռանը, որ Մշո իշխանությունները խոչընդոտում են հանձնաժողովի աշխատանքը: Սակայն դա և հետագայում ներկայացված նման բողոքների մեծ մասը մնացին անհետևանք, որովհետև տեղական իշխանությունները գործում էին Բ. Դռան հրահանգներին համապատասխան[234]:*

*Պետությունների պատվիրակների իրավասությունների հստակության պակասը, հենց այն փաստը, որ պաշտոնապես հանձնաժողովի անդամ չէին, նրանց դրեց դժվար կացության մեջ: Նրանք անգամ անզոր էին իշխանությունների ու քրդերի դեմ վկայություն տվողների անվտանգությունն ապահովել: "Daily News"-ը նկատում է, որ տերությունների դեսպաններն աչքաթող էին արել երեք հանգամանք՝ 1. պատվիրակներին թարգմանիչների տրամադրում, ովքեր իրավունք ունենային միջամտելու պաշտոնական թարգմանչի սխալ թարգմանելու դեպքում, 2. պատվիրակների տրամադրության տակ պետք է դնեին բավարար թվով զաֆազներ (թիկնապահ ոստիկաններ), որոնք զափթիեների հետ մասնակցեին վկաներ բերելուն, որպեսզի վերջինները խարդախություն թուլլ տալ չկարողանային, 3. պատվիրակներին տրամադրեին հմուտ բժիշկներ:*

*Կ. Պոլսում լավ հասկանում էին հետաքննիչ հանձնաժողով ստեղծելու գործի հանդեպ տերությունների ձևական մոտեցման նպատակը: Խաղի առաջարկված կանոնները սուլթանի օգտին էին, և նա հաճույքով ընդունեց դրանք: Ինչն արտահատվեց նաև հետևյալ կերպ. զորքեր էին ուղարկվում Սասուն՝ հավանական վկաներին վախեցնելու կամ հեռու վայրեր քշելու համար, սասունցիներին հարկադրում էին չնորհակալական հանրագրեր ստորագրել, որպեսզի «ուժաթեկ արվեն այն վկայությունները, որոնք հետո նրանք տալու էին հանձնաժողովին»: "Contemporary Review"-ի 1895թ. փետրվարի համարում Ֆ. Սթիվենսոնը գրում է. «Սա ոչ թե միջազգային, այլ թուրքական հանձնաժողով է և, եթե դատելու լինենք անցյալի փորձով, թուրքական հանձնաժողովները միջոց են հանդիսանում ճշմարտությունը քողարկելու և հարցերը բարդացնելու»: Սակայն տվյալ պարագայում կարևորն այն է, որ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի ներկայացուցիչները մասնակցելու էին հանձնաժողովի աշխատանքներին, դրա արձանագ-*

---

[233] Ցազճյան Գ., նշվ. աշխ., էջ 406:
[234] «Մուրճ», 1896, թիվ 3-4, «Արձագանք», 1895, թիվ 13:

*րությունների կազմմանը, եթե հանձնաժողովը մերժեր նրանց առաջարկը, ապա կարող էին ինքնուրույն հարցաքննություն անցկացնել:*

*Նոյեմբերի 26-ին Բոստոնում տեղի ունեցավ Հայոց բարեկամների միացյալ ընկերության ժողովը, որը դիմեց ԱՄՆ նախագահին՝ ներկայացուցիչ ուղարկել Սասունի կոտորածները հետաքննող հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար: «Բողոքում ենք սուլթանի ընտրած քննիչ հանձնաժողովի դեմ... և եվրոպական կառավարությունների պարտքն ենք համարում անկախ քննություն կատարել... Նաև դիմում ենք Բեռլինի վեհաժողովին մասնակցած պետություններին և խնդրում անմիջապես գործողության մեջ դնել 61-րդ հոդվածը...»[235]: Հայկական մյուս գաղութներում ևս նման միջոցառումներ տեղի ունեցան, մտավախությունը, թե տերությունները կարող էին գործարքի մեջ մտնել սուլթանի հետ և հայերի հեղված արյան գինը խժռել, առանց զոհերին հատուցում տալու, հայությանը մղում էր դիմելու գործողությունների: Իսկ սուլթանական կառավարությունը հանձնաժողովի գործունեությունն ի չահ Թուրքիայի ուղղելու համար գլխավոր ուշադրությունը դարձրեց դրա հրապարակայնության խափանմանը:*

*"Daily News"-ը 1895թ. հունվարի 17-ին գրեց. «Շատ քիչ կլինեն մարդիկ, ովքեր կհամաձայնեն ճիշտ վկայություն տալ... Հայերն այնքան են ճնշված, որ գանգատվել չեն կարող»: Մանավանդ, որ մինչև հանձնաժողովի տեղ հասնելը թուրք պաշտոնատարները մահվան սպառնալիքով վկաներ էին նախապատրաստել:[236] Ամեն ինչ արվում էր գործը հանգեցնելու քրեական հանցագործությունների: Այդ անելը հեշտ էր թվում, որովհետև, ըստ մտահղացման, հանձնաժողովը հիմնականում հարցաքննելու էր կոտորածներին մասնակցած թուրքերին ու թուրք պաշտոնեությանը: Անգլիական մամուլն արձանագրեց. «Հետաքննիչ հանձնաժողովն ամենից ավելի ուզում է քննել ոչ թե թուրքական իշխանության ձեռքով իրականացված հայերի կոտորածը, այլ քրդերի ավազակային սխրագործությունները»:[237] Լաուերը գրում է. «Եթե բավարար ճնշում գործադրվի... ապա հնարավոր է հասնել շատ ավելիին, քան թուրքական հանձնաժողովի ստեղծումն է, որը ներկա պայմաններում ֆիզիկապես ու բարոյապես ի վիճակի չէ կազմելու հավաստի և մանրամասն տեղեկագիր... Բ. Դուրը խստագույն միջոցների է դիմել թույլ չտալու, որպեսզի Քննիչ հանձնաժողովի նիստերին Մուշում մասնակցի մամուլի որևէ ներկայացուցիչ, և տեղում իրականացվեն ինքնուրույն ուսումնասիրություններ: Նման զգուշությունը հազիվ թե անհրաժեշտ է, քանի որ հայերի կոտորածի մասին բոլոր վկայությունները վեց ամիս առաջ ոչնչացվել են կրակով ու սրով: Եվ եթե դահիճները ձեռից բաց են թողել մի քանի զոհի, ապա այն ժամանակից ի վեր չնագայլերը, շները և ուրուրներն անկասկած հասցրել են դրանց բռնել»[238]:*

*Լոնդոնի դեկտեմբերի 17-ի հանրահավաքի բանաձևում ասվում է. «Թեև մենք ուրախ ենք, որ միջազգային քննիչ հանձնաժողով է կազմված, բայց բոլորս էլ գիտենք, թե ինչքան քիչ արդյունք կարելի է սպասել նման հանձնաժողովից՝ նկատի ունենալով անցյալի փորձը: Մենք գիտենք, թե թուրքն ինչպիսի հաջողությամբ է կարողանում խուսափել անհաճո վկայություններից... Մենք բավարար տեղեկություններ ունենք, որոնք հաստատում են՝ Սասունի դեպքերն ամբողջությամբ իրողություն են: Պետք է հիշել, որ այդ կոտորածը, որքան էլ ահռելի լինի, միակը չէ: Նման կոտորածներ տեղի են ունեցել Մուշի, Էրզրումի գավառներում և երկրի այլ մասերում»[239]: Դրա փոխարեն անգլիական պաշտոնական շրջանները շատ գոհ էին, որ «Բ. Դուռն ընդունել է, իսկ եռապետական դաշնակցությունը համաձայնել է նոր ծրագրին՝ Հայաստանում կատար-*

---

[235] «Մուրճ», 1894, թիվ 11-12:
[236] «Արձագանք», 1895, թիվ 7:
[237] «Նոր դար», 1894, թիվ 214:
[238] *Положение армян в Турции* ..., стр. 224.
[239] «Նոր դար», 1894, թիվ 217:

վող դեպքերը պետք է քննի Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի... հյուպատոսների մասնակցությամբ հանձնաժողովը: "Times"-ը նույնիսկ չնորհավորեց Ա.Գ նախարար Ջեմբերլեյին, որ այդ քաղաքականության շուրջ միավորել է նաև Ֆրանսիային ու Ռուսաստանին»[240]:

Անգլիական հայասերները պահանջում էին «Հայաստանում գործադրել այն բարեկորոգումները, որոնց ծրագիրը 1879-ին մշակել էր ինքը՝ Բ. Դուրը»[241]: Կար նաև այլ կարծիք: Լուբուշերը գրեց, թե հայերի դրությունը կբարելավվի, եթե Ռուսաստանը գրավի Փոքր Ասիայի հայաբնակ շրջանները[242]: Սակայն ուշադրության կենտրոնում Հետաքննիչ հանձնաժողովն էր: Բ. Դուրը հաստատեց տերությունների դեսպանների կազմած հրահանգը, որով պետք է առաջնորդվեին հանձնաժողովում օտարերկրյա ներկայացուցիչները՝ հարցաքննել վկաներին, հետաքննել, կատարվածի վերաբերյալ արձանագրություն կազմել: Հետաքննության վերջնական արդյունքների մասին յուրաքանչյուր ներկայացուցիչ առանձին զեկուցագիր էր կազմելու և ներկայացնելու իր կառավարությանը[243]:

Սուլթանը զիջումների գնալով հանդերձ, ձեռնարկում էր դիմադիր քայլեր: Նոյեմբերի 25-ին Պետերբուրգ է ուղարկվում Ֆուադը՝ չնորհավորելու Նիկոլայ 2-րդի գահակալությունն ու նրան հանձնելու Իմթիազի շքանշան: Ֆուադին հանձնարարված էր Պետերբուրգին համոզել, որ սուլթանն «արդարություն է գործելու հայերի հանդեպ», որ նա ամեն ինչ կանի «օտար պետությունների հանձնաժողովին պաշտպանելու և խստորեն կպատժի այն պաշտոնատարներին, ովքեր հանցավոր են հայերի հանդեպ բռնության գործում»[244]: Նույն ժամանակ Բ. Դուրը Մ. Իզմիրլյանից պահանջեց կառավարությանը հավատարմության ստորագրություն տալ: Պատրիարքը մերժեց և նոր տեղեկագիր ներկայացրեց գավառների ծանր դրության վերաբերյալ:

Օտարերկրացիներից մեկը Տարոնի մասին գրում է. «Ազգաբնակչությունը ջարդերի տպավորության տակ է, ահաբեկված վիճակում: Իշխանություններն ամեն ինչ անում են իրենց մեղքերը թաքցնելու և ավելի ահաբեկելու նրանց, ովքեր ամենայն հավանականությամբ հանդես են գալու որպես վկա»: Ապառնում են, թե՝ չմոռանաք, որ «հանձնաժողովը մեկնելու է, իսկ մենք մնալու ենք»: Հավանաբար սխալ է Հայաստանի բախտը հանձնաժողովի աշխատանքի արդյունքների հետ կապելը: Սասունում տեղի ունեցածը կառավարման որոշակի համակարգի հետևանք է: Եվրոպայի զիջողականությունն է «ստեղծել բարենպաստ պայմաններ, որպեսզի այդ համակարգը գործի անխոնա՝ իր ողջ կարողությամբ: Այն առաջացել է ռասայական ու կրոնական ատելությունից և կոչված է կոտորելու, ոչնչացնելու քրիստոնյաներին»: Եվ նշանակություն չունի, որ ողջ մնացած 5000 սասունցի «երկնքին են դիմում սարսափազդու ողբով՝ արդար վրեժի պահանջով»: Նույն բանն են պահանջում ավերված օջախները, անարգված պատիվները, չարունակվող բռնարարքները»[245]:

Այնուամենայնիվ, Հետաքննիչ հանձնաժողովի ստեղծումն ու հետաքննությանը պետությունների ներկայացուցիչների մասնակցությունը հայկական շրջաններում հույսեր ծնեցին: Հայ հասարակության գրեթե բոլոր խավերն ու կուսակցությունները հանդես եկան խնդրի վերաբերյալ իրենց դիրքորոշման շարադրմամբ: Ահա թե ինչ են գրում հայ պանդուխտները իրենց բաց նամակում:

«Մենք՝ պանդուխտ մշակներս, հայրենիքից, տնից, զավակներից հեռու, դժբախտ գլուխներս քարե քար տալով՝ մեր ծանր հարկերը վճարելու մասին էինք մտածում, հան-

---

[240] Նույն տեղում, թիվ 212:
[241] "Новое время", 09.12.1894.
[242] «Նոր դար», 1894, թիվ 216:
[243] Նույն տեղում, թիվ 213:
[244] «Արձագանք», 1895, թիվ 1:
[245] Положение армян в Турции ..., стр. 246-247.

կարծ լուր հասավ, որ քուրդը և օսմանլի նիզամը, մի ամբողջ գավառ, մի մահալ մորթվել են:

Սասունը մի անգամ կոտորվեց, բայց մեր ամբողջ երկիրը ամեն տարի, ամեն օր, կամաց-կամաց արյունաքամ է լինում: Մինչև այժմ մի քանի Սասուններ են կոտորվել, բայց այդ բոլորին ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, որովհետև սպանություններն, ավերումները լինում էին տեղ-տեղ, հեռու կողմերում և անզեն ժողովրդի վրա... (Այժմ տերությունները քննություն են կատարում) Այդ քննությունից է կախված մեր մոտիկ ապագան: Եթե տաճիկը հավատացնի քրիստոնյա տերություններին, թե Սասունը կոտորված չէ, թե Հայաստանում ամենուրեք, հարստահարություններ, Զուլում չկա, այն ժամանակ այլևս խիղճ, գութ չպետք է տաճիկից սպասել, վայը եկավ և մեզ տարավ, եթե նորից նրանց ձեռքի տակ մնացինք:

Պետք է ամեն բան բացենք քննիչների առաջ:

1. Թող ամեն գյուղ մարդ ընտրի և իբրև վեքիլ քահանայի հետ ուղարկի Սասուն քննիչների մոտ:

2. Թող ամեն գյուղ պատրաստի և տա այդ վեքիլներին իր բնակիչների կրածների վերաբերյալ տեղեկագիր»:

Կարինի առաջնորդը մի հայի հանձնարարում է լինել հանձնաժողովի ուղերթի երկայնքով ընկած գյուղերում, հայերին տեղյակ պահել պատվիրակների գալու մասին և հանրագրեր պատրաստել նրանց ներկայացնելու: Այդ հայը բարեխղճությամբ է կատարում հանձնարարությունը: Միայն Խնուսում 22 գյուղի անունից հավաքում է 35-40 հանրագիր: Ցուրաքանչյուր գյուղ կազմում էր երկու հանրագիր՝ մեկում պատմվում էր իշխանությունների բռնությունների, ապօրինությունների, հարկերի անտանելի ծանրության, իսկ մյուսում՝ քրդերի և թուրքերի բռնությունների, թալանի, սպանությունների, հրդեհումների և բազում այլ քստմնելի գործողությունների մասին[246]: Խնուսից հայն անցնում է Ալաշկերտ: Այդ օրերին տեղ հասավ մի վաշտ զորք ու տեղավորվեց հայկական հինգ գյուղերում: Չնայած դրան՝ Ալաշկերտում հաջողվում է հանրագրերի թիվը հասցնել 30-ի: Հայերի նման ակտիվությունը հասկանալը դժվար չէ: Ինչպես ականատեսներից մեկն է գրում. «Հայ ժողովուրդը... ոչ միայն պատրաստ էր թղթին հանձնել իր դարավոր տառապյալ վիճակի գեթ համառոտ նկարագրությունը..., այլև այր ու կին, ծեր ու երեխա միահամուռ թափվել ու գալ ներկայանալ քննիչներին ու նրանց առաջ բացել իրենց ծայրահեղ անմխիթարական վիճակը»[247]:

Սակայն նաև իրողություն էր, որ շատ հայ գործիչներ մեծագույն թերահավատությամբ էին վերաբերվում հանձնաժողովի օբյեկտիվությանն ու կարողությանը: Ոչ-թեր գործակալությունը հաղորդեց: «Թուրքահայերի պատրիարք Մաթեոս եպիսկոպոս Իզմիրլյանը դիմել է Թուրքիայի արդարադատության նախարարությանը մի գրությունով, որով հիմնվելով մինչև իր պատրիարք դառնալը Հայաստանում կատարված բարբարոսությունների մասին եղած նյութերի վրա՝ հայտարարում է, թե տիրող կարգերի դեմ բողոքելու իրավունքը թողնելով ապագային, ամենից առաջ իրեն պարտավորված է համարում կառավարության ուշադրությունը հրավիրել Սասունի անցքերի վրա: Նկատի ունենալով Մշո և այլ վայրերի եպիսկոպոսների կրած տառապանքները բանտերում՝ անհնար է այդ գավառներ ուրիշ հոգևորականներ ուղարկել: Գործերի դրությունը քննելու համար պատրիարքը որոշել է Սասուն ուղարկել իր ներկայացուցչին»[248]:

"Morning Post"-ը գրեց, որ փարիզաբնակ հայերը դիմել են արտաքին գործերի նախարար Հանոթոյին, թե եվրոպական Քննիչ հանձնաժողովը պետք է ոչ միայն խոսքով

---

[246] "Daily News", 09.05.1895.
[247] «Արձագանք», 1895, թիվ 57:
[248] «Մուրճ», 1895, թիվ 1:

պահանջի, այլև գործով երաշխավորի, որ ցուցմունքներ տվող վկաները քննությունից հետո կառավարության կողմից հալածանքների չենթարկվեն[249]:

Ձգտելով քննություններն ամփոփել թուրք և քուրդ վկաների հարցաքննությամբ՝ հանձնաժողովը Մուշ հասնելուց անմիջապես հետո ոստիկաններ ուղարկեց աշիրեթներ ու հրահանգեց գալ Մուշ, վկայություն տալ, թե հայերը քրդերին թալանել են, «առանց խտրության կանանց ու աղջիկներին, ծերերին ու երեխաներին սրակոտոր են արել և ամեն ինչ հրի մատնել»:[250] Քրդերը, չնայած ոչ եռանդուն, բայց արձագանքեցին: Սակայն առանց հրահանգի, սեփական կամքով Մուշ եկան նաև խորմանկցիների 12 ցեղապետեր թուրքերի ու քրդերի դեմ բողոքելու: Նրանք կոլեկտիվ բողոքագիր հանձնեցին հանձնաժողովին ու անմիջապես քաղաքից հեռացան: Դա առաջին չպլանավորված գործողությունն էր և պաշտոնատարների չրջանում չփոթ առաջացրեց: Հունվարի 31-ին ծպտված քաղաք մտան երկու լեռնցիներ և նույնպես բողոքագիր հանձնեցին պատվիրակներին: Հանձնաժողովի գալու երկրորդ օրը ներկայացավ սրի ու փամփուշտի 12 վերք ստացած մի սասունցի: Թուրք կոմիսարները փորձեցին համոզել, որ այդ վերքերն ինքն է իրեն հասցրել: Նրանք թարգմանչին հարկադրեցին պատկերն այդպես ներկայացնել պատվիրակներին: Վերջինս հրաժարվեց և թարգմանեց այն, ինչ պատմում էր վիրավոր սասունցին: Երկու օր անց թարգմանիչն աշխատանքից ազատվեց: Սա թուրքերին խուճապի մատնող երկրորդ իրավիճակն էր:

Մարտի 10-ին Մուշ հասան Բուլանըխի 23 գյուղերի 25 ներկայացուցիչներ: Նրանց կրծքերին փակցված էին արտասուքով գծված թղթեր: Պահանջում էին կյանքի և ունեցվածքի անվտանգություն, հակառակ ցեպքում կմահմեդականան, կամ «Թող որևէ երկրում մի կտոր հող տան, գնան փրկվեն»: Նրանց հետ էր մի երիտասարդ սասունցի՝ 32 վերքով: 15 օր նրանց թույլ չտվեցին մոտենալ հանձնաժողովին: Փոխարենը պատվիրակներին ներկայացրեցին ութ քրդի՝ սասունցու տարազով՝ իբրև սասունցիների ներկայացուցիչներ: Այդ «սասունցիները» հանձնաժողովին աղերսում էին «իրենց ազատել քրդերի ոտնձգություններից», որոնցից տուժում էր նաև «խոհեմ ու հանդարտաբարո» թուրքը: Սակայն կեղծիքը բացվեց ու, եթե մինչ այդ բողոքողները հանձնաժողովին հանդիպելու համար նախ պետք է ներկայանային հերթապահող ոստիկաններին, ապա մտցվեց կարգ՝ այլևս դա անել առանց միջնորդ օղակի:

Թալիքը տալվորիկցի Տեր Ստեփանին, որ մահմեդականություն էր ընդունել, քահանայի հագուստ է հագցնում և ուղարկում հանձնաժողովին ցուցմունք տալու հօգուտ թուրքերի: Սակայն տալվորիկցիները մերկացնում են կեղծիքը, որի համար բանտարկվում են ու տարվում Մշո բերդի Թուշխանե զնդան: Բանտում բացի տղամարդկանցից նստած էին նաև սասունցի երկու կին:

Մարտի 30-ին Մուշ եկավ բուլանըխցիների ևս ութ պատվիրակություն: Նրանց հաջորդեցին Մանազկերտի 16 գյուղերի ներկայացուցիչները: Վերջինների բողոքագրում կային այսպիսի փաստեր: Քուրդ աղան աշնանը 12 խոշոր եղջերավոր անասուն է բերում Խոթանլու գյուղը և պահ տալիս առանց վարձ վճարելու: Համաճարակից գյուղի, այդ թվում նաև քրդի, անասունները սատկում են, որի դիմաց քուրդ աղան ուժի գործադրմամբ գյուղից տանում է 22 անասուն: Մի քուրդ Խասմեկ գյուղի բնակչից պահանջում է, որ իր երիտասարդ հարսի հետ ներկայանա: Գյուղացին հրաժարվում է: Քուրդը հարձակվում է նրա տան վրա, տանտիրոջը կապում է այնից, գավազանահարում է, ապա հարսին բռնաբարում, 40 ոչխար և 55 բարդ ցորեն վերցնում ու հեռանում է: Նույն քուրդը մի այլ հայի ոսկիները խլելուց հետո այնպես է ծեծում, որ մի քանի օր հետո մեռնում է: Շատախի Կասաբի գյուղում քրդերը սպանում են երեք եղբայրների և զավթում նրանց տունը: Հայերը սպանվածների արյունաթաթախ չապիկները վերցրած,

---

[249] «Մուրճ», 1895, թիվ 1:
[250] «Արձագանք», 1895, թիվ 36:

գնում են Մուշ, սակայն պատվիրակներին հանդիպել թույլ չեն տալիս: Սասունի կորթեր գյուղում քուրդ աղան մի հայ ընտանիքի վաճառում է մի ուրիշ քրդի 30 լիրայով: Գնող քուրդը չի հապաղում գործադրելու խաֆիրի իր իրավունքը: Մանազկերտի Ինքնակոչ գյուղում թուրք աղան թույլ չի տալիս մի հայ աղջկա ամուսնությունը «մինչև իր ավատատիրական իրավունքը չգործադրեր»: Հարսը փեսայի հետ փախչում է: Աղան հետապնդում է և սպանում փեսային:

Նման գանգատներով չատերն էին եկել, սակայն հանձնաժողովը զբաղվելու իրավունք չուներ[251]:

Հետաքննությունը, եթե ոչ ձախողելու, ապա գոնե փակուղի մտցնելու համար Բ. Դուրը իրականացրեց նաև մի քանի այլ միջոցառումներ: Մուշ եկավ Երզնկայի բանակի սպաներից կազմված մի հանձնախումբ, իբր սասունցիների գանգատները լսելու: Սակայն Թահսինը արգելում է գրագիրներին սասունցիների բողոքները թուրքերեն արձանագրել: Սասունցիներին նաև թույլ չեն տալիս դրանք հայերեն կազմել: Վերջինները որոշում են ճնշում գործադրելով, գանգատները տեղ հասցնել: Աղմուկի վրա հանձնաժողովի անդամներից մեկը դուրս է գալիս գանգատագիրը վերցնելու: Սասունցիները անմիջապես նրան ճանաչում են՝ «Ահա մեր դահիճներից մեկը»:

Սուլթանական կառավարությունը լավ հասկանում էր, որ տերությունների պահանջը Սասունի կոտորածների հետաքննություն անցկացնելու վերաբերյալ մի խնդիր էր հետապնդում՝ հանգստացնել Եվրոպայի հասարակական կարծիքը: Այդ էր պատճառը, որ հետաքննության հետ կապված սկզբունքային նշանակության շատ հարցեր չլուծվեցին, դրա փոխարեն եվրոպական մայրաքաղաքներում չէր դադարում Սասունի կոտորածների չուրջ չոուներ կազմակերպելը: "Daily News"-ը փետրվարի 5-ին պատմեց Վեսթմինիսթր պալատում տեղի ունեցած մի հավաքի մասին, որին մասնակցում էին բոլոր քաղաքական ուժերի ներկայացուցիչները: Ժողովը միահամուռ էր ոչ միայն Սասունի իրադարձությունների գնահատման, այլև բարենորոգումներ մտցնելու անհրաժեշտության խնդրում: Անդրադարձ եղավ նաև Քննիչ հանձնաժողովին: Այդ հարցում հավաքը հստակ կողմնորոշում չուներ: Ընդունված բանաձևում նշված էր, որ չնայած հանձնաժողովի թուրք անդամները եվրոպական պատվիրակների «հսկողության տակ են, սակայն պատվիրակները պետք է հնարավորություն տան թուրքերին իրենց գործը կատարելու»: Շատ ավելի որոշակի դիրքորոշում ուներ ոչ պաշտոնական Անգլիան. նշված հավաքից մի օր առաջ կայացած հանրահավաքում Դոդդը առաջարկեց ռուսական և անգլիական զորքեր ուղարկել հանձնաժողովի անդամներին և հայերին պաշտպանելու համար: Նաև նշվեց, որ Հայկական հարցը միջազգային դիվանագիտության ամենադժվար հարցն է, որի լուծումը մեծ ջանքեր է պահանջում:

Գ. Կամբոնը 1895թ. փետրվարի 6-ին գրում է. «Օսմանյան իշխանությունները բոլոր միջոցներով աշխատում են վկաներին խանգարել խոսելու»: Հետագայում Ֆրանսիայի դեսպանի գրեթե բոլոր զեկուցագրերում այդ միտքը կրկնվում էր: Նույն Կամբոնի մարտի 6-ի տեղեկագրում նշվում է, որ օսմանյան կոմիսարները ձգտում են հետաքննությունը չեղել բնականոն ընթացքից: Նրանք անհանգստացած Հերքոյի ցուցմունքից, ընդունում են, որ զորքերը մասնակցություն ունեցել են Սասունի կոտորածին, բայց նաև պնդում են, որ դրանք եղել են «անհրաժեշտ բռնություններ ապստամբած հայերի նկատմամբ»: Ապրիլի 4-ին նա գրում է. «Վիլբերը պնդում է այն դժվարությունների վրա, որոնց հանդիպում են եվրոպական պատվիրակները իրենց պարտականությունները կատարելու ժամանակ: Ակնհայտ է, որ օսմանյան կոմիսարները ձգտում են վախեցնել Սասունի իրադարձությունների իսկական վկաներին և նախատեսում են քննությունը տանել՝ հիմնվելով միայն պաշտոնական փաստաթղթերի ու այն ցուցմունքների վրա, որոնք տալիս են չինովնիկները կամ իշխանության հետ կապ ունեցող անձինք...»: Գյու-

[251] "Daily News", 09.04.1895.

ղերից եկած վկաները, Մուշ հասնելուց անմիջապես հետո, դրվում են ոստիկանության հսկողության տակ: Ոմանք հրաժարվեցին իրենց նախկին ցուցմունքներից՝ մի գիշեր ոստիկանության ձեռքում մնալուց հետո: Ուրիշները, ովքեր հավատարիմ էին մնում իրենց նախկին ցուցմունքին, բանտարկվում էին: Վկաների մեծ մասը կարծես իրենց հայտարարություններն անգիր արած լինեին: Դրանք պարունակում էին նույն արտահայտությունները, ինչն անվստահություն էր ներշնչում: Շատերը, ովքեր ցանկություն էին հայտնել գալու և հանձնաժողովին ցուցմունք տալու, «իշխանությունների կողմից պահվում են գյուղերում: Չնայած սուլթանի բազմաթիվ հավաստիացումներին, քննության ազատություն գրեթե գոյություն չունի», սակայն «փաստերն այնքան զարհուրելի ու բազմաթիվ են, որ հակառակ թուրքական իշխանությունների բոլոր ջանքերին ու մեքենայություններին, չհաջողվեց դրանք թաքցնել»[252]:

«Ահա արդեն ավելի քան մեկ ամիս,– գրում է «Հնչակ»-ը,– եվրոպական հանձնաժողովը գտնվում է Մուշում: Ստացված տեղեկություններից իմանում ենք, որ քննությունները կատարվում են չատ դանդաղ և աննպատակահարմար ձևով: Հանձնաժողովի անդամները չունեն հմուտ թարգմանիչներ և, բացի այդ, թուրք կառավարությունը բազմաթիվ արգելքներ ու խոչընդոտներ է հարուցում հանձնաժողովի առջև»[253]: Օրինակ, «կառավարությունը ձերբակալում է և երբեմն, մինչև իսկ սպանում այն բոլոր հայերին, ովքեր հանդգնում են հանձնաժողովի մոտ գնալու փորձեր կատարել: Արգելքներ են նաև ճիգերը՝ ջնջելու կամ ծածկելու Սասունի խժդժություններից մնացած առավել ակնհայտ հետքերը»: Մարտի կեսերին "Daily Telegraph"-ը նույնպես անդրադարձավ հանձնաժողովի աշխատանքի դանդաղ ընթացքին՝ մինչև մարտի 10-ն ընդամենը 28 մարդ էր հարցաքննվել: Դա նաև հետևանք էր թուրք և եվրոպացի ներկայացուցիչների միջև եղած տարաձայնությունների: Թուրքական հանձնաժողովը միտումնաբար հարցաքննության է կանչում վատ համարում ունեցող մարդկանց, որպեսզի դրանով արժեզրկվեին օբյեկտիվ վկայությունները, կամ բերում էին միայն այնպիսի վկաների, ովքեր կոտորածների ամբողջ մեղքը բարդում էին քրդերի վրա: "Daily Telegraph"-ի մարտի 18-ի համարում տպագրված հոդվածում Դիլոնն ուրախությամբ նշում է, որ չնայած վկաների հարցաքննությունը դանդաղում է, սակայն հակառակ թուրք պաշտոնատարների ջանքերի, «ցուցմունքների ծանրությունը վճռականապես հակվում է հայերի օգտին»: Նույն թերթը ապրիլի 1-ին գրեց, որ պատվիրակները հեռագրեր են ստացել իրենց դեսպաններից՝ խստորեն պահանջել վերացնելու հանձնաժողովի աշխատանքները խոչընդոտող արգելքները... Հայ, քուրդ և թուրք վկաների ցուցմունքներն այլևս թաքցնելն անհնար է: Տպավորությունը մեծ է... Նաև անհնար է թե՛ ուրանալ կոտորածը և թե՛ պնդել, որ դրա հեղինակը քրդերն են, որոնք թեև անգութ և արյունախում մարդիկ են, սակայն հաճույք չեն զգում իրենց զոհերի չարչարանքը երկարացնելուց... Գազանությունները կատարել են կանոնավոր զորքերը, որոնց չատ հաճախ սպանները սվինների ծայրով են առաջ մղել: Այդ սպանները փորձում են արդարանալ վերևից ստացված հրամանով... Դեռևս նպատակահարմար չէ տալու երկու բարձրաստիճան սպանների անունները... Այժմ նրանք պատրաստվում են իրար վրա բարդելու հանցանքը, և, հավանաբար, ոչ մեկն էլ ինքնագլուխ չի գործել... Օգոստոս ամսին ստացված հեռագիրն անհետացել է, իսկ դա կարող էր լիովին պարզաբանել խնդիրը... Արդյո՞ք Սասունի կոտորածը հայերին բնաջնջելու բաղկացուցիչ էր: Բազմաթիվ վկաների ցուցմունքներով դա կասկածից վեր է, սակայն պատվիրակներին արգելված է այն քննարկել: Օսմանյան կայսրության պահպանման համար Շաքիր փաշայի կողմից չորս տարի առաջ կազմված ծրագիրը երկու պայման է պարունակում՝ առաջին, կազմել համիդիե գնդեր, որոնց

---

[252] *Братская помощь* ..., стр. 95-96.
[253] «Հնչակ», 1895, թիվ 4:

*խնդիրն էր պաշտպանել արևելյան սահմանները, երկրորդ՝ սահմանամերձ չրջաններից հեռացնել բոլոր քրիստոնյաներին»:*

*Հանձնաժողովի դանդաղկոտությունը ոգևորում էր ջարդարարներին: «Քրդերը, քաջալերված դանդաղկոտությունից, որով կատարվում է Սասունի գործերի քննությունը,– գրեց "Daily News"-ը,– Բիթլիսի նահանգում նոր անգթություններ են կատարել: Պաշտոնից հեռանալու նախօրեին Թահսին փաշան հրամայեց բանտարկել այն բոլոր հայերին, որոնց ցուցմունքները կարող են լույս ձգել նրա գործած հանցանքների վրա: Բանն այն է, որ Սասունում ոչ մի ապստամբություն չի եղել և հայերին կոտորել են առանց որևէ պատճառի»*[254]*: Թահսինի՝ նման չահագրգռվածությունը կարելի է հասկանալ, քանի որ Սասունի իրադարձությունների ճշմարիտ պատկերի բացահայտումը նրան առնչվում էր ոչ միայն պետական հանցագործ քաղաքականությունը կյանքի կոչելու, այլև այդ ընթացքում իր իսկ կողմից հանդես բերած դաժանության, ապօրինության ու չհամոզության առումով: Թահսինին վալի էին նշանակել հատուկ առաջադրանքով: Նա առիթը բաց չէր թողնում ասելու. «Այստեղից չեմ հեռանա մինչև Հայաստանը Թուրքիստանի չվերածեմ»: Եվ պատահական չէ, որ այդ ավազակն ամեն կերպ խուսափեց հանձնաժողով ներկայանալուց և Պոլիս փախավ ոչ թե Մուշ-Էրզրում, այլ Դիարբեքիր-Սեբաստիա ճանապարհով: Աչխատանքից հեռացվեց նաև տխրահռչակ Բահրին, որը բազում չարագործությունների, սպանությունների, հարստահարությունների հեղինակ էր: Թահսինի տեղը վալի նշանակվեց հետաքննիչ հանձնաժողովի անդամներից Էմոները: Այդ կապակցությամբ Անգլիական խորհրդարանում Շվենը հարցապնդում արեց՝ կառավարությանը հայտնի՞ է, որ հենց այն պահին, երբ «հայ վկաները պատրաստ էին ներկայանալ թուրքական քննիչ հանձնաժողովին, դրա անդամ Էմոր բեյը վալի է նշանակվում... որպեսզի հայ վկաները երկյուղեն»*[255]*:*

*Երբ փետրվարի 25-ին հանձնաժողովը մեկնեց Բաղեշ, սկսած Նեմրութից ճանապարհը լցված էր զորքով ու քրդերով՝ տպավորություն ստեղծելու, թե այդ տարածքներում հայ չի բնակվում: Հայերին սպառնացել էին, որ տնից դուրս չգան: Իսկ երբ հանձնաժողովը Բաղեշ հասավ, իշխանությունները տեղերը ոստիկաններ ուղարկեցին, որպեսզի վիլայեթի բոլոր գյուղերի ռեսերը, մեջլիսի անդամները և մյուս պաշտոնատարները ներկայանան Բիթլիս: Այստեղ նրանք համապատասխան հրահանգներ ստացան, ապա ոստիկանատանը «ենթարկվեցին ծանր երդման» (նախարարի հրամանն էր) և նոր միայն ներկայացան հանձնաժողովին ցուցմունք տալու:*

*Հանձնաժողովը մարտի 2-ին հեռագրեց Կ. Պոլիս. «Արդեն հարցաքննված են բազմաթիվ քրդեր, սակայն դեռևս էական ոչինչ չի պարզվել: Սպասում ենք մի քանի նշանավոր հայ վկաների գալուն Էրզրումից, որոնք բոլորն էլ բուն սասունցիներ են: Հանձնաժողովի առաջին 12 նիստերի արձանագրությունները... հիմնականում պարունակում են թուրք վկաների ցուցմունքները»: Դրանք «պատկերացում են տալիս Անդոկ սարից հայերին արտաքսելուց առաջ տեղի ունեցած դեպքերի մասին»*[256]*:*

*Այս առիթով հետաքրքիր է նաև Մամուրեթ-ուլ-Ազիզի կազայում տեղի ունեցածը: Այստեղ մեծ թվով փախստական սասունցիներ էին կուտակվել: Կազան նույնպես ավերածություններից էր ենթարկվել՝ քանդվել էին վանքեր, հայ բնակչությունը ենթարկվել էր հրեշավոր բռնություններից: Քուրդ ցեղապետ Ալի Շևքեթը հայերից փող էր պահանջում և չտվողին սպանում էր: Բողոքող հայը վրեժխնդրության զոհ էր դառնում: 100 հայ բանտարկվեց ու Կ. Պոլիս տարվեց: Մի քանի քուրդ ընտանիքների, որոնք մասնակցել էին Սասունի ջարդերին, տեղափոխեցին Դարաս, որպեսզի հանձնաժողովը նրանց չգտնի: Բաղեշում ևս մեծ թվով քրդեր մեկուսացվեցին:*

---

[254] «Արձագանք», 1895, թիվ 18:
[255] Նույն տեղում:
[256] Նույն տեղում, թիվ 24:

Մարտի 4-ին ոստիկանները Կոփ գյուղում 12 հայ ձերբակալեցին ու տարան Մուշ: Կայմակամը նրանցից պահանջեց ստորագրել մի հանրագիր, որը «հերքում էր այն ամեն սուտ ու չինծու լուրերը, որ տարածված են աշխարհով մեկ»: Հայերը հրաժարվում են ստորագրել: Հարյուրապետը սուրը քաշում է ու գոռում. «200-ից ավելի հոգու արյունով է սա ներկված և, այս բազուկը, որի բոի մեջ նույնքան և ավելի դեռատի և կույս աղջիկներ ու հարսներ են բռնաբարվել, կարող են նույն վիճակի հասցնել նաև ձեզ...»: Հայերը չարունակեցին համառել: Խուժանն ու զորքը փողոց թափվեցին՝ բղավելով «Մահ կամ ստորագրել հանրագիրը»: Գյուղացիներին մի ամբողջ օր տանջեցին: Ի վերջո հաջողվեց լուր հասցնել պատվիրակներին, որոնց միջամտությամբ խոշտանգումներին վերջ դրվեց: Իսկ երբ պատվիրակները ցանկանում էին այս կամ այն (իրենց տվյալներով) օբյեկտիվ վկաների հարցաքննել, իսկույն զափթիեներ էին ուղարկվում այդ վկաներին ցիրուցան անելու կամ այն աշխարհն ուղարկելու համար: Եթե հանձնաժողովին բողոքելու համար ոմանց հաջողվում էր հասնել Մուշ, ոստիկանները դուրս էին քշում կամ բանտ նետում: Եթե նույնիսկ հաջողվեր հանդիպել պատվիրակների հետ, հանձնաժողովի թուրք անդամները մատնում էին, և հայը իսկույն հայտնվում էր բանտում:

Մարտի 15-ին հինգ հայ բանտարկյալի Մուշից Բիթլիս տարան: Նրանք Սասունի Աղբիկ գյուղից էին: Բռնվել էին Մշո ճամփին, երբ փորձել էին քաղաք մտնել պատվիրակներին հանդիպելու համար: Տարոնի Տափք, Այգերմ, Գեղաչեն, Շուշնամերկ, Երիցունք գյուղերի բնակիչներին տանջում էին ու պահանջում ստորագրել հանրագիր, թե կատարողները ոչ թե թուրքական զորքն էր, այլ քրդերը, թե հայերն իրենց երջանիկ են զգում: Գյուղացիները հրաժարվեցին ստորագրել և պատվիրակությունն ուղարկեցին Մուշ՝ կոտորածների իսկական պատկերը հանձնաժողովին ներկայացնելու:

Արդեն փետրվարի 25-ին "Indépendance Belge"-ն գրեց. «Այն ցուցմունքները, որ վերջերս հավաքել է Սասունի հանձնաժողովը, արդեն թույլ են տալիս որոշ եզրակացություններ հանգելու: Կան թե լավ և թե վատ վկայություններ՝ հանգամանք, որ վկայում է հանձնաժողովի բարեխղճության մասին... մի հայ, անուն առ անուն թվելով բազմաթիվ անձանց, ովքեր կարող էին վկայություն տալ, հանձնաժողովի անդամներին ճիշտ ճանապարհի վրա է դրել... Հանձնաժողովի աշխատանքի արդյունքը լինելու են վարչական փոփոխությունները ասիական վիլայեթներում»:

Որպես կանոն, եվրոպական պատվիրակները համառություն և կամքի ուժ էին հանդես բերում թուրքերի խարդախությունների ու կամակորությունները հաղթահարելու համար: Պատվիրակների բարեխղճության մասին գրեց նաև "Daily Telegraph"-ը. «Պատվիրակները գործում են անդադար, գիշեր ու ցերեկ...»: Նրանց համառությունն ու բարեխղճությունը դեր խաղացին ձախողելու Բ. Դուան պլանը՝ հետաքննությունը հանգեցնել թուրքերի հարցաքննության: Մարտի 2-ին պատվիրակները Կ. Պոլիս հայտնեցին. «Այժմ թուրք պաշտոնատարներն այլևս արգելք չեն դնում... երբ (իրենք) առաջարկում են կարևոր համարվող վկաների քննել»[257]: Մարտի 1-ին Պոլսից գրեցին, թե եվրոպական պատվիրակների «առաջին զեկուցագրերն արդեն ստացվել են Կ. Պոլսի դեսպանատներում, և պատճեններն ուղարկվել են Բ. Դուռ: Դրանք լիովին հաստատում են եվրոպական լրագրերում տպվածները: Տեղեկագրեր էր ուղարկել նաև թուրքական հանձնաժողովը, որոնք պատվիրակների տեղեկագրերից միայն չարադրանքի ձևով էին տարբերվում»: "Daily Telegraph"-ն ապրիլի կեսերին գրեց. «Վկաները բազմաթիվ են, և նրանց բոլոր ցուցմունքները լրիվ համապատասխանում են իմ (Դիլոնի) հաղորդածներին, այնպես որ թուրքական կառավարությանն այլ բան չի մնում, եթե ոչ խոստովանել, որ Սասունի կոտորածն ապացուցված է»[258]:

---

[257] «Արձագանք», 1895, թիվ 24:
[258] Նույն տեղում, թիվ 33:

*Սակայն տպավորությունը, թե իրենց եզրակացություններում պատվիրակները համակարծիք էին, սխալ է, քանի որ նրանց կարծիքները հիմնված էին ոչ այնքան իրական փաստերի, որքան իրենց դեսպաններից ստացած հրահանգների վրա: "Philarmene d'Embassade"-ն գրում է. «Անգլիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի դեսպանատներն արդեն զեկուցագրեր ստացել են Սասունի հետաքննիչ հանձնաժողովի իրենց ներկայացուցիչներից: Անգլիայի ներկայացուցչի զեկուցագիրը նպաստավոր է հայերին, Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչների զեկուցագրերն ավելի նպաստավոր են թուրքերին»*[259]:

*Եվրոպական պատվիրակների աշխատանքը հաջողության հասնել չէր կարող, եթե չլիներ սասունցիների անձնազոհ աջակցությունը: Նրանք, չնայած սփռված էին ամենուրեք՝ սկսած իրենց լեռներից մինչև հարևան սանջակներն ու վիլայեթները, հանձնաժողովի գալու լուրը ստանալուն պես իրար գտան և գյուղ առ գյուղ հանրագիր-գանգատագրեր կազմեցին ու ամենատարբեր միջոցներով, հնարամտությամբ ու մահն աչքերն առած, հասցրեցին եվրոպական պատվիրակներին: Այդ հանրագրերի մեծ մասը պարզապես թուրքերի ու քրդերի վայրագությունների ցուցակներ էին: Հանձնաժողովին ներկայացավ նաև Վարդենիսի ներկայացուցիչը: Նա բերել էր «Պատասխան» խորագրով մի ձեռագիր մատյան, որում մանրամասն նկարագրված էին Ջխուրի ենթաշրջանի ողբերգությունները:*

*Անգլիական խորհրդարանում Ֆ. Սթիվենսոնն է. Գրեյին հարցրեց, թե որքանով է իրականությանը համապատասխանում այն, որ թուրք պաշտոնատարները թույլ չեն տվել եվրոպական պատվիրակներին այցելել մերձակա գյուղերը տեղեկություններ ստանալու համար: Է. Գրեյը պատասխանեց. «Պատվիրակների պարտքն է մշտապես ներկա գտնվել հանձնաժողովի աշխատանքներին և տեղյակ լինել բոլոր քննություններին: Նրանք իրավասու են պահանջելու ուղղումներ մտցնելու ամենօրյա տեղեկագրերում: Եթե անհրաժեշտ գտնեն, կարող են առաջարկել, թե ինչ մարդիկ պետք է քննվեն և պահանջել, որ իրենց կողմից կարևոր համարվող հարցերը որոշակի ու պարզորոշ դրվեն, և եթե այդ պահանջը չկատարվի, անձամբ առաջարկեն հարցերը»: Ճիշտ է, պատվիրակները «Հայաստանում ոչ մի վարչական կամ նման այլ իշխանություն չունեն», սակայն եթե իրական վտանգ սպառնա կանոնավոր գործունեությանը կամ վկայություն տվողների կյանքին, ապա պատվիրակը պարտավոր է անմիջապես այդ մասին տեղյակ պահել Կ. Պոլսի իր դեսպանին*[260]:

*Փետրվարի 23-ին Reuter գործակալությունը նորից անդրադարձավ կարանտինի հարցին՝ նշելով, թե կառավարությունն այնպես է չրջափակել «կոտորածների հայկական նահանգը, որը բոլորին, ով կարող է անկախ հետաքննություն կատարել, լրիվ հեռացնում է կոտորածների վայրերից և դրանց ականատես վկաներից: Հայտարարված է, թե Վանում, Բիթլիսում և Մուշում խոլերա կա, հետևաբար անհրաժեշտ է խստացնել 40-օրյա կարանտինի կանոնները... Կարանտինի օրենքները որքան էլ սուրբ լինեն բոլորիս համար..., այնուամենայնիվ, երբ լսեցինք, որ Սասունի կոտորածների շրջանում (ձմռանը) հանկարծակի համաճարակ հիվանդություն է բորբոքվել, ակամա կասկածեցինք, որ կարանտինը սահմանված է թուրքական հանձնաժողովի քննության կապակցությամբ... (Հավանաբար խոլերան) ձյան հետ է վերևից թափվել ժայռերի ու սարերի վրա, քանի որ ստույգ՝ Սասունի լեռներում մարդարարած չի մնացել, որ կարողանար անունդ տալ հիվանդությանը: Ով կոտորածի ժամանակ չի սպանվել, փախել է մի այլ վայր: Այդ կարանտիններն առիթ են տալիս կարծելու, որ ավերված գյուղերի վերաշինման համար ուղարկված դրամը գողացել են... Թուրքերը լավ են հոգ տարել, որ հանձնաժողովը գարնանից չուտ Սասուն չհասնի և կոտորածի բոլոր հետքերը վերացվեն...»*[261]:

---

[259] «Արձագանք», 1895, թիվ 24:
[260] «Մուրճ», 1895, թիվ 3-4:
[261] Նույն տեղում:

Այնուհետև գործակալությունը նշում է, թե Բրիտանիայի կառավարությունը կարիք չուներ թուրքական հանձնաժողովի հետ համատեղ աշխատելու համար Շափլեին ուղարկելու, որ «Սասունի կոտորածների մասին ընդարձակ զեկուցագիրն» արդեն ստացված է Վանում անգլիական փոխհյուպատոս Հոլվորդից: Այդ զեկուցագիրը հիմք ընդունելով էր, որ Լոնդոնը պնդեց ավելի հիմնավոր հետաքննություն անցկացնելու վրա, քանի որ թուրքերը Հոլվորդին թույլ չտվեցին «ավելի մանրամասն քննություն կատարել», չնայած զեկուցագիրը «հիմնական փաստերը պարունակում է»:

Հայաստանում հանձնաժողովը,– գրում էին եվրոպական թերթերը,– մտավ թուրքերեն, պարսկերեն, արաբերեն, ասորերեն և հայերեն խոսող խայտաբղետ ազգաբնակչության միջավայր: «Մի քննիչ մարմին, որ ճամփա է ընկնում առանց ժողովրդին հասկանալու, հազիվ թե հավակնի անսխալականության»[262]: Թարգմանիչ չունենալու հետևանքով «պատվիրակներից ոչ մեկը չկարողացավ երկրորդ զեկուցագրերն անգամ փետրվարի վերջերին ուղարկել Կ. Պոլիս դեսպանին»: Վերջապես թարգմանիչներ նշանակում են թուրքերը: Իսկ ովքե՞ր էին դրանք: «Մուրճ»-ը ապրիլի 1-ին գրեց. «Հռչակավոր դոմինիկոս Սրապյանի եղբայր մայո Ժան Սրապյանը, ծխախոտի ռեժիի պաշտոնյա, հայերի հակառակորդ, որոշ գույնի կաթոլիկ, որ խորշում է հայերեն խոսել, ընդհակառակը, ֆրանսերեն կամ թուրքերեն է իր մտքերն արտահայտում, նշանակվեց Քննիչ հանձնաժողովի ֆրանսիական պատվիրակի թարգմանիչ, ոմանց ասելով, Բ. Դռան թելադրանքով: Հայտնի է, թե նա ինչ դեր պիտի խաղա իր փեսա Ցուսուֆյանի հետ, որը նույն հանձնաժողովի անգլիական հյուպատոսի թարգմանիչն է...»:

Արդեն նշվեց, որ թուրք պաշտոնատարները հնարավոր ու անհնար բոլոր միջոցներին դիմում էին, որպեսզի պատվիրակները գյուղերը մեկնելու և տեղեկություններ հավաքելու հնարավորություն չունենային: «Թուրքերն այդ մասին նույնիսկ պաշտոնական բողոքներ էին ներկայացնում: Նման մի գանգատում (ներկայացված փետրվարի 16-ին) գրված է, թե պատվիրակների պարտականությունն է հսկել հետաքննության վրա, այլ ոչ թե վկայություն հավաքել: Պատվիրակները մտադիր են գնալու անգամ Շենիկ, որն ավերված էր, իսկ բնակիչները պատսպարվել էին դաշտի գյուղերում: Բողոքն անարձագանք չմնաց: Այցելությունը Շենիկ արգելվեց: Մերժվեց նաև հարցաքննության համար չենիկցիներին Մուշ բերելու պատվիրակների խնդրանքը[263]:

Ճիշտ է, հանձնաժողովի ներկայությունն ինչ-որ չափով թուրքերին զսպում էր հայերի հանդեպ բռնություններ գործադրելու, այնուամենայնիվ, դրանք չարունակվում էին, իսկ մի շարք բնակավայրերում նույնիսկ ավելի դաժան բնույթ ստանում: Հայը դրվել էր այնպիսի պայմանների մեջ, որպեսզի անկարող լիներ առանց ոստիկանության քայլ իսկ կատարել կամ որևէ մեկի հետ տեսակցել:

Մթնոլորտը չիկացած պահելու համար անընդհատ սադրիչ լուրեր էին տարածվում: "Daily News"-ը ապրիլի 29-ին գրեց, թե լուրերը, որ հայերը մայիսին ապստամբելու են, կեղծիք են: Մարտի 23-ին Դիլոնը խնուսից գրեց, որ քրդերն իշխանությունից զենք են խնդրել՝ ասելով, թե հայերը դիտավորություն ունեն հարձակվելու իրենց վրա: Խնդրանքը բավարարվեց, ոտի հանվեցին նաև համիդիե գնդերը: Մարտի 29-ին նրանք հրդեհեցին Քաղկիկ գյուղը: Հայերը բողոքեցին: Իշխանությունների արձագանքն այն եղավ, որ գյուղից սկսեցին ոչխարի հարկ հավաքել, սակայն ոչ թե եղած (200 ոչխար), այլ նախորդ տարիների գլխաքանակի (900 ոչխար) հաշվով:

Այդ ընթացքում Լոնդոնում մահմեդականների հանրահավաք է կազմակերպվում Անգլիայի հայկական քաղաքականության դեմ: Հանրահավաքը կոչ է անում թուրքական կառավարությանը. «Ոչ մի զիջման չգնալ և ոչ մի բարենորոգում չմտցնել»:

---

[262] «Արձագանք», 1895, թիվ 40:
[263] «Արձագանք», 1895, թիվ 19:

Օսմանյան կառավարության դիվանագիտական աճպարարությունները ուղեկցվում էին հայերի արտամղման քաղաքականությունը հետևողականորեն իրականացնելու հետ: Ապրիլի 26-ին Ռեյթեր գործակալությունը Կ. Պոլսից հաղորդում է. «Սովորաբար հարկերը հավաքվում էին եւևմտական տարվա վերջին, մինչդեռ այս անգամ սկսել են հարկեր հավաքել մարտ ամսին՝ ժանդարմների վաշտեր ուղարկելով գյուղերը: Վերջիններս գյուղ են գալիս գիշերով և ամբողջ տարվա հարկը պահանջում նախապես»: Քղիի Սերկևիլիկ գյուղում «զինվորները ծեծում են ժողովրդին... նրանց տեղաշորներն ու կահկարասին են պահանջում: Տղամարդիկ փախչում են դաշտ... զինվորները ձերբակալում են մոտ 30 կին... Վերջապես դաշտում բռնում են մի քանի տղամարդ և հայտարարում, թե նրանք ապստամբներ են: Նույն վիլայեթի Ճերմակ գյուղում ևս զինվորները գիշերով ներխուժում են տները, մարդկանց հալածում և 12 կնոջ լլկում: Զափթիեներն ասացին, որ այդպես վարվել հրամայել էր կայմակամը: Բոյուկ գյուղում ձերբակալվում է 30 կին, գյուղացիների հագուստն ու կահկարասին աճուրդով վաճառում են»[264]:

"Daily Telegraph"-ը ապրիլի 1-ի համարում, բազմաթիվ փաստեր վկայակոչելով, եզրահանգում է. «Դժվար թե ամբողջ 19-րդ դարում մահմեդական մոլեռանդությունը երբևիցե այն աստիճանի վայրենի դրսևորված լինի, ինչպիսին է Սասունի կոտորածից ի վեր... (ամենուրեք) հայ քրիստոնյաներն անգամ անարգվում են, ծեծվում և սպանվում են բացարձակապես անպատիժ... Մարդիկ վախենում են տնից դուրս գալ... բոլորին պաշարել է մոտալուտ կոտորածի սարսափը, քանի որ սպանները հաճախ են սպառնում»: Էրզրումում քուրդը հարձակվում է հայերի վրա, սրով հարվածներ հասցնում ու բղավում. «Թուրս ինձ պետք է գալու բայրամից հետո այս գյավուրներին կոտորելու համար»: Իսպիրի Զիպոր գյուղում թուրքերը զավթում են հայերի հողերը և նրանց արգելում են գյուղից դուրս գալ՝ կատարվածի մասին լուր չտարածելու համար: «Թուրքերի ու քրդերի վարքագծի նշանաբանը նույնն էր: Մահմեդականն ազատ է քրիստոնյայի հանդեպ ցանկացած հանցագործություն կատարելու և մնալու անպատիժ»[265]:

Նույն թերթը ապրիլի 8-ին նշում է. «Հայ ազգաբնակչությունը զարմանալի համբերատար է, նրա կրած հալածանքները անպայման ցանկացած ազգին բացարձակ ապստամբության կմղեին... Բողոքի ձայն բարձրացնողը բանտարկվում է... օրը ցերեկով մահմեդականը հափշտակում է քրիստոնյա առևտրականի ապրանքը»: «Հայերի չրջանում սարսափի նման ինչ-որ բան է տիրում, որովհետև նրանցից չատերը ամեն օր ծեծվում են ու թալանվում, և անողները ոչ միայն անպատիժ են մնում, այլև խրախուսվում են ոստիկանների կողմից»: Զավիրմե և Գոփալ գյուղերի հայ բնակչությունը գաղթեց: Գյուղատնտեսական աշխատանքն անհնար է դարձել, որովհետև «հափշտակում են գյուղացիների եզները, ծեծում հողագործին, բռնաբարում կանանց ու աղջիկներին»: Է. Դիլոնը ապրիլի 20-ին Մուշից գրում է, որ սասունցիների ձերբակալություններն ու հարստահարությունները շարունակվում են և ամեն օր սպառնում են, թե պատվիրակների գնալուց հետո ավելի վատթար չարիքներ են լինելու[266]: Սևքիլիկ գյուղում զափթիեները զավթեցին գյուղացիների ողջ ունեցվածքը, անգամ անկողինները, իսկ երբ տուժածները բողոքեցին փոխնահանգապետին, բանտ ընկան[267]:

Ժամանակակիցներից մեկը հետևյալ կերպ է ներկայացնում իրավիճակը: Տարոնի գյուղերն իրենց սուղ միջոցներով անմռունչ և ամենայն սիրով ոչ միայն տանում էին Սասնո ուղ գավառների դժբախտության մատնված ու մազապուրծ հայերի կարիքները հոգալու ծանրությունը, այլև դառնում քրդերի ու իշխանությունների նոր հարստահարությունների զոհ: Պահանջում են միանգամից վճարել անցած տարիներից պարտք մնա-

---

[264] Նույն տեղում, 10.05.1895:
[265] Նույն տեղում, 1895, թիվ 51:
[266] «Արձագանք», 1895, թիվ 51:
[267] Նույն տեղում, 10.05.1895:

ցած հարկերը՝ հավաքում են 21 տուրք, այդ թվում, նուֆուս՝ 40 ղուրուշ, ամլակ (հողահարկ) 10 ղուրուշ, ամուլիա (բանվորական)՝ անձից 3 ղուրուշ, խամջուր (ոչխարի)՝ գլխից 3 ղուրուշ, իթհիխալ (հողի օգտագործման իրավունքի վերահաստատման)՝ 10 ղուրուշ, թեչիր հացահատիկից՝ 1/10-1/7-ի չափով, թեչիր խոտից՝ 2,5 ղուրուշ, ինթիզամ բանջարանոցի, գինու, ծխախոտի՝ 6-10 ղուրուշ, ձկան մաքս՝ 10 ղուրուշ, գյուղատնտեսական մյուս մշակաբույսերի մաքս՝ 1.5-6 ղուրուշ և այլն: Ինչ վերաբերում է ապօրինի տուրքերին, ապա դրանց թիվն ավելի մեծ էր[268]:

Տարոնի Քրդագոմ գյուղում բնակությունն հաստատեցին վեց քուրդ ընտանիքներ, հայերի ուժերով գյուղի կենտրոնում տներ կառուցեցին, ապա տիրացան մեծ հողատարածքների ու սկսեցին դաժան հալածանքների ենթարկել գյուղացիներին: Վերջիններս հարկադրված լքեցին իրենց տներն ու ունեցվածքը և «ցիրուցան եղան՝ սկսած Ռուսաստանից մինչև Բուլղարիա, Ռումինիա, Կ. Պոլիս»: Գյուղը լքեց 85 ընտանիք[269]: Տխրահռչակ քուրդ ավազակ Մուհամմեդ Ալին, որը յոթ տարի շարունակ թալանում, ավերում էր Սբ. Կարապետի վանքից մինչև Բյուրակն ընկած չրջանները, ասպատակություններ գոհ դարձրեց Տարոնը, ապա տիրացավ 250 տուն ունեցող Խեյպան գյուղին ու ապրում էր ոչ միայն այդ, այլև մերձակա գյուղերի հայ բնակչության արյուն-քրտինքով:

Մայիս ամսին Մանազկերտի գյուղերում հայտնաբերվեց սասունցի 16 գերված աղջիկ, որոնք Հուսեյինի սեփականությունն էին և պահվում էին նվիրատվությունների համար: Մանազկերտի Համիկ գյուղում ավազակապետ Ռզախը, որը միաժամանակ համիդիեի գնդապետ էր, բռնաբարեց մի կնոջ ու սպանեց: Մի այլ ավազակ՝ Խամոն, Տելաղբաշ գյուղից 250 ոչխար փախցրեց, մի հայի սպանեց, մեկ ուրիշին ծանր վիրավորեց: Իբրահիմ բեկը Ակներ գյուղից աղջիկ փախցրեց: Սասունցի չատ փախստականներ, մեծ մասամբ կանայք ու երեխաներ, մերկ ու բոբիկ մուրացկանությամբ էին զբաղվում Էրզրում քաղաքում և վիլայեթի գյուղերում:

Մայիսի 2-ին Շապին Կարահիսարում ինչ-որ անձինք կողոպտում են մի թուրքի: Իշխանություններն իսկույն հայտարարում են, թե հայերն են արել, և մութեսարիֆը, 80 ոստիկանի գլուխն անցած, ավերում ու թալանում է հայերի խանութները, չատերին խոշտանգում «հեղափոխականներ» թաքցնելու համար[270]: Ապրիլի 27-ին Խասգյուղում հարկերի հավաքման ժամանակ ոստիկանները չբավարարվելով տղամարդկանց խոշտանգելով, լկում են նաև կանանց, այդ թվում նաև անչափահասներին: Պանդխտության մեջ գտնվողների կանանց բանտարկում են զուգարաններում: Կանայք դուռը չարդում են, դուրս գալիս և մոտ 200 հոգով չարժվում դեպի Մուշ: Եվրոպական պատվիրակները, նրանց լսելուց հետո, առաջարկում են դիմել մութեսարիֆին, սակայն վերջինիս հրամանով կանայք դաժան ծեծի են ենթարկվում հենց կառավարչատան բակում: Նրանց ձեռները կապում ու տանում են Սեմալ գյուղ: Ձերբակալում են գյուղի տանուտիրոջը և Մուշում նետում մահապարտների խուցը[271]:

Բուլանըխի Կոփ գյուղում մի հայ կնոջ սպանում են ու դիակը նետում փողոց: Այդ գործով ձերբակալվում է 40 հայ, չնայած սպանվածի եղբայրը հայտնել էր, թե ով էր մարդասպանը: Նույն գյուղի թուրքերի տներում հայտնաբերվում են թուրքացած հինգ հայ կին ու աղջիկ[272]:

"Daily News"-ն ապրիլի 29-ին գրեց. «Հայաստանի բոլոր կողմերից նամակներ են ստացվում... (դրանք) պատմում են թուրք պաշտոնատարների անիրավության ու բարբարոսության անթիվ դեպքերի մասին, ներկայացնում են թուրքերի ու քրդերի հարձակումների, կեղեքումների, հափշտակությունների, կանանց բռնաբարությունների, հայ-

---

[268] Նույն տեղում, թիվ 67:
[269] Նույն տեղում, թիվ 85:
[270] Նույն տեղում, թիվ 61:
[271] «Արձագանք», 1895, թիվ 60:
[272] Նույն տեղում, թիվ 62:

կական ամբողջ գյուղերի կողոպուտների դեմ գրված անթիվ գանգատների մասին, որոնք թեև ժամանակին հասել էին ում հարկն է, սակայն իշխանությունների կողմից կա՛մ բացարձակ անուշադրության էին մատնվել և կա՛մ ուշադրության արժանանալն այն հետևանքն էր ունեցել, որ բողոքողները բանտարկվել էին, և հայերի տառապանքն էլ ավելի էր սաստկացել»: Թերթը մահմեդականների այդ վրեժխնդրության պատճառներից մեկը համարելով այն, որ «մինչև վերջին ժամանակները, չնորհիվ աշխատասիրության ու գործնականության, հայերը նյութապես ավելի բարվոք վիճակում էին»՝ մեջբերում է կատարում բիթլիսցի մի թուրք կալվածատիրոջ ասածներից. «Այդ ժողովուրդը մեզ հաց է տալիս, և մենք ոչ միայն ստիպում ենք նրան ծանր գնով գնել մեզ համար աշխատելու իրավունքը, այլև նրան անգամ զրկում ենք աշխատելու միջոցներից»՝ չհասկանալով, որ եթե հայերը լրիվ անհետանան, վատ օրեր կսկսվեն թուրքերի համար՝ նրանք հարկադրված կլինեն աշխատել: Թուրքը, օգտվելով իշխողի իր վիճակից ու նաև հետամնաց բարքերի ու սովորությունների պատճառով, հայի հանդեպ վարվեցողությունը վերածել է մոլագար դաժանության ու բթամիտ խեղկատակության: Էրզրումի Կան գյուղի ճանապարհին մի խումբ թուրքեր ապրիլի 3-ին չրջապատում են հայ աղջնակին ու հարկադրում մերկ պարել[273]: Ապրիլ ամսի միայն հինգ օրվա ընթացքում Էրզրում քաղաքում հայերի վրա ավազակային 20 հարձակում է տեղի ունեցել[274]: Խարզանի գավառում հրդեհվել է ու գրեթե անբնակ դարձել 40 գյուղ[275]:

Թուրքերն ու քրդերն իսկույն ընկալում էին Բ. Դռան յուրաքանչյուր քայլը, յուրաքանչյուր ակնարկն ու ըստ այդմ էլ գործում: Մուշ քաղաքը ողողվել էր գյուղացիներով: Նրանք բողոքի էին եկել «հարկահավաք ոստիկանների անլսելի... կոպիտ վարքի ու վարվեցողության դեմ»: Նրանք քաղաք էին բերել նաև իրենց անասունները, ավելի ճիշտ նրանց քաղաք էին քշել զափթիեները՝ «բանտարկելու և տանջելու միջոցով տուրքերը ստանալու՝ անասունները կես գնով վաճառքի հանելով... Հունան գյուղում զափթիեները մերկացրել էին պարտատեր մարդկանց՝ անխտիր այր ու կին, հաստ պարաններով կապել սյուներին և ապա տաք և սառը ջուր լցնելով նրանց վրա մտրակահարել էին»[276]:

Տասնամյակներ չարունակ իշխանությունները ձեռնպահ էին մնում հայ կաթոլիկների հանդեպ բռնություններ գործադրելուց, իսկ վերջիններս էլ չեզոք կեցվածք էին դրսևորում հայ ազգային չարժման նկատմամբ, բայց 1895-ին նրանց ևս չխնայեցին: Նորաշենի, Առինջի և Օգունքի կաթոլիկները դաժան հաշվեհարդարի ենթարկվեցին: Կարահիսարը անընդհատ հարձակումների էր ենթարկվում, ողջ բնակչությունը ծվարել էր գերեզմանոցում: Նույն օրերին Բաղեշից գրում են. «Գրեթե ոչ մի տարի... երկյուղն ու նեղությունը այն աստիճանի ընդհանրական չեն եղել տեղիս քրիստոնյա ժողովրդի համար, որքան վերջին երկու տարիներին»: Առաջներում օտարահպատակ հայերը վտանգի չէին ենթարկվում, իսկ 1895-ին նրանց ևս չէին խնայում[277]:

Դրությունը ծայրաստիճան սրվեց հատկապես սահմանամերձ չրջաններում: Կարսից 30 հազար մահմեդական գաղթական է պատրաստվում սահմանն անցնել Թուրքիա մշտական բնակության համար: Ռուսական սահմանին կից գյուղերի մահմեդական բնակչությանը զենք էր բաժանվում, չնայած այդ չրջանների հայերը որևէ չարժման չէին մասնակցել[278]: Աչխուժացավ հայկական բնակավայրերում մահմեդական բնակչության վերաբնակեցման գործընթացը: Իշխանությունների հավանությամբ քրդերը բարձրանում էին Սասուն և սեփականացնում հայերի գյուղերն ու հողերը: Հետևելով իշխա-

---

[273] Նույն տեղում, թիվ 49:
[274] Նույն տեղում, թիվ 50:
[275] Նույն տեղում, թիվ 18:
[276] Նույն տեղում, թիվ 100:
[277] Նույն տեղում, թիվ 98:
[278] Նույն տեղում, թիվ 89:

նությունների օրինակին՝ քրդերը ևս սկսեցին տուրքեր պահանջել կոտորածներից փրկված հայերից, իսկ քանի որ վերջիններս վճարելու ոչինչ չունեին, հափշտակում էին նրանց աղջիկներին ու տղաներին: Մոտկանում համիդիե նոր գնդեր կազմակերպվեցին: Արգելում էին ոչ միայն օտարների, այլև հայերի նյութական օգնությունը սասունցիներին: Երբ էրզրումցիները դրամ հանգանակեցին և ուղարկեցին Մուշ սասունցիներին հասցնելու համար, Մշո կառավարիչը թույլ չտվեց: Ամերիկյան միսիոներներ Ռեյնոլդին և Քոլին արգելեցին Սասուն բարձրանալ օգնություն բաժանելու: Ծ Քըրրիի միջամտությամբ արգելքը հանվեց, սակայն նպաստ այսպես էլ չբաժանվեց՝ զորքը թույլ չտվեց[279]:

"Daily News"-ը օգոստոսի 6-ին գրում է. «Կատարյալ արատավորությունը... ստիպում է թուրքերին խաբեության դիմել և ասել, թե սուլթանն իր զինվորների կենդանի մնացած զոհերին 2000 լիր օժանդակություն է ցույց տվել, և այդ մի նպատակով, որպեսզի հայերը հասարակական բարենորոգությունից զրկվեին: Իսկ երբ, հակառակ այդ նողկալի կեղծիքի, դրամ ուղարկվեց, թուրքերի բարեգործական հանձնաժողով ստեղծվեց զզվելի նպատակով, որպեսզի առաքված փողերը հափշտակեն և թույլ չտան, որ դրանք հասնեին հայերին»:

"Daily Telegraph"-ը մարտի 18-ին ահազանգում է, որ հայկական նահանգներում տագնապն աստճանաբար ուժեղանում է «մահմեդական բնակչության բռնած սպառնալից դիրքի հետևանքով»: Ահաբեկիչ խոսքեր են լսվում Խարբերդում, Վանում, Բիթլիսում, Մուշում և Էրզրումում, թե քննիչների «մեկնելուց հետո սկսվելու է քրիստոնյաների կոտորած»: Դրանք միայն սպառնալիք չէին, այլ մասամբ նաև գործողություն: «Ազդեցիկ հայերից չատերը հրապարակավ ծեծվել են և նույնիսկ սպանվել», իսկ նրանց ահաբեկված ազգականներն այդ ողբերգությունները թաքուն էին պահում: Էրզրումի Սուլջերմուկ գյուղում մի հայի սպանեցին, որովհետև համարձակվել էր կոչիկ հագնել:

"Вестник Европы"-ի 1895թ. մարտի գրքում նշվում է, որ հակառակ մտավախության, թե հետաքննությունը որևէ արդյունքի չի հասնի, «այժմ արդեն պարզվել ու լույս աշխարհ են հանվում մի քանի մանրամասներ, որոնք ծանր տպավորություն են թողնում թուրքական մայրաքաղաքի դիվանագիտական շրջաններում: Սուլթանի առաջին քարտուղար Սուրեա փաշան հանկարծամահ է եղել փադիշահի խիստ հանդիմանության հետևանքով: Սասունի հայերի խռովության առաջին լուրը ստանալուն պես, սուլթանը բանավոր հանձնարարել էր Սուրեա փաշային հեռագրել տեղական զորաբանակի հրամանատար Զեքի փաշային՝ անմիջապես զորք ուղարկել Սասուն ապստամբությունը սաղմի մեջ խեղդելու համար, իսկ հետո, երբ հայտնեցին, թե դա ինչ ձևով է կատարվել, որն առաջացրեց դիվանագիտական միջամտություն, սուլթանը բարկացավ, թե Սուրեան չտապել է կատարել իր հրամանը: Սուրեան վայր ընկավ իր վեհապետի ոտքերի առաջ»:

Ախլաթի Փրխուս գյուղից մի կին հանձնաժողովին դիմեց, որ իր ամուսնուն առանց դատավճռի 25 տարի պահել են բանտում, իսկ Տափավունք գյուղից բողոքեցին, թե քրդերը երեք երիտասարդ են սպանել ու անպատիժ մնացել: Բուլանըխի Ատկոն գյուղից դիմեցին, թե մոլլաները մի հայ երիտասարդի սպանել են ու անասունները թալանել: Գյուղի մի քանի հայ ընտանիքներ մահմեդականություն են ընդունել: Ապրիլի 5-ին ամերիկյան միսիոներ Ջորջը Բաղեշից Մուշ բերեց և հանձնաժողովին ներկայացրեց մի առևանգված աղջկա, որը Անդոկում գերեվարվածներից էր: Զինվորները նրան նվիրել էին իրենց հրամանատարին: Աղջկան հաջողվել էր հարեմից փախչել: Մուշ եկան նաև Խնուսում թաքնված ասունցի հինգ կանայք: Նրանց գերի էին վերցրել Անդոկից Գեբին նահանջի ժամանակ:

Ջորջն ու ամերիկյան բողոքական քարոզիչ Քոլը Բաղեշի վալուն ներկայացրին հետևյալ պահանջները: 1. Սասունի կոտորածի ժամանակ թուրքերը Բաղեշ էին բերել մի հայ աղջկա, որին ազատ արձակելու համար մի խումբ հայ երիտասարդներ ինչ-որ քայ-

[279] «Արձագանք», 1895, թիվ 65:

լերի դիմեցին և իսկույն բանտ ընկան «թուրք աղջիկ առևանգելու մեղադրանքով»: 2. Սղերդում մի հայի սպանությանն առիթով հայեր ձերբակալվեցին, ովքեր սպանության հետ որևէ առնչություն չունեին: 3. Քաղաքի երևելի թուրքերից Խալիդը հրապարակավ հայտարարեց. «Հայեր, երեք օր մնաց: Ձեր մայրերը լաց են լինելու, ձեզ սրի ենք քաշելու»: 4. Մոտկանի քրդերը բնաջնջեցին տեղի ողջ հայությանը, որից հետո կանչվեցին Բաղեշ և նրանցից ձևավորվեց համիդիե գունդ: Վալին նրանց հանձնարարեց, որտեղ «հեղափոխական տեսնեն, սպանեն և թաղեն՝ առանց որևէ մեկին, այդ թվում նաև իշխանություններին, տեղյակ պահելու...»: Այսինքն՝ մոտկանցի քրդերին հանձնարարվեց ոչնչացնել հայերին, քանի որ այդպիսիներին «այսուհետև հեղափոխականների հաշվին են գրելու»[280]:

Կոտորածից փրկված սասունցիների վիճակը գնալով ավելի ողբերգական էր դառնում: «Այդ դժբախտ ժողովուրդը,– գրում է ականատեսը,– բառի բուն իմաստով մերկ է: Նրանք բնակվում են այրերում ու փչակներում, կերակուրի փոխարեն խոտ ու տերև ուտում, որից ուռել են, մազերը թափվել, ջերմից տանջվում են: Նրանք չրջապատված են քրդերով, ովքեր Հետաքննիչ հանձնաժողովի մեկնելուն են սպասում»[281]:

Կուրտիկը լցվել էր քրդերով, Մուշի հետ կապը շարունակվում էր խզված մնալ: Իշխանությունների թուլլտվությամբ համիդիե գնդերն օգոստոսի 7-ին լցվեցին Մրկեմոզան, ոստիկանները հայերին հավատորիկից դուրս քշեցին ու գյուղը հանձնեցին քրդերին: Քրդական ցեղապետերն իրենց ավազակախմբերով հավաքվել էին Մուշ քաղաքում:[282] Թուրքերը նրանց նախապատրաստում էին նոր «խիզախությունների»: Ուժեղացավ հայերի արտագաղթը: Եթե 1893թ. Ալաշկերտից արտագաղթել էր 3000, ապա 1895-ին՝ 5000 մարդ: Նույն 1895թ. Բ. Դուռն արգելեց պանդուխտ հայերի վերադարձը՝ պատճառաբանելով՝ քանի դեռ հանձնաժողովը Մուշում է, այդ հայերի վերադարձը ցանկալի չէ: «Ոչ ոք չի զարմանում, իհարկե,– օգոստոսի 29-ին գրում է "Daily News"-ը,– որ թուրքն արգելում է գաղթական հայի վերադարձը: Փախչողների առաջ դռները լայն բացելով, տեղում մնացածներին կոտորելով, վերադարձողների ճանապարհը փակելով, մյուս կողմից էլ չեչեններին և այլ մահմեդական տարրերին բնակեցնելով հայերի երկրում՝ օսմանյան կառավարությունը ձգտում է հայ տարրի թիվն այնպիսի մինիմումի հասցնել, որ Հայկական հարցը գոյություն ունենա լոկ օդից կախված»: Բնաջնջումը շարունակվում էր: Նույն թերթը օգոստոսի 6-ին գրում է. «Հայաստանում բացարձակ հալածանքները, տանջանքները, սպանությունները և կողոպուտները հետևողականորեն շարունակվում են դիվական դյուրությամբ և տոկուն եռանդով, ինչպես նախորդ տարիներին էր»: Հայերը խոշտանգվում ու ոչնչացվում էին պետության տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով: «Երկրային դժոխք» Բիթլիսի բանտում խոշտանգումներն ու քստմնելի արարքները հրեշավոր ծավալներ ու բնույթ ստացան, իսկ դրանց հեղինակ Աբդուլ Կադիրը սուլթանի կողմից չքանչանի և զինվորական բարձր կոչման արժանացավ: «Հայերին հալածելը,– շարունակում է թերթը,– ոչ միայն բարօրության հասնելու հաստատ ճանապարհ է դարձել, այլև կատարյալ անհրաժեշտություն է ճոխ ապրելու համար... Ոճրագործներին վարձատրում, իսկ արդարներին պատժում են... պաշտոնից հեռացրել են այն պաշտոնատարներին, ովքեր ասել են, թե մահմեդականների դեմ հայերի բողոքներում եղած փաստերը հաստատվում են... Անօգուտ է հայերին զգուշության կոչել, դա կնշանակի մահվան դատապարտվածին մրսելուց զգուշացնել»: Թերթը հուլիսի 29-ին գրեց. «Ամեն րոպե կարող են կրկնվել Սասունի սարսափները»: Նույն կարծիքին էր «Արձագանք»-ը, որն օգոստոսի 9-ին ահազանգեց. «...Հայերի դրությունը ծանր է, անտանելի, հեշտությամբ կարող են կրկնվել վերջին տարվա դեպքերը...»:

---

[280] «Հնչակ», 1895, թիվ 12-13:
[281] «Արձագանք», 1895, թիվ 89:
[282] Նույն տեղում, թիվ 71:

*"Daily News"-ը իր ապրիլյան համարներից մեկում գրում է, որ Վանի ու Բիթլիսի վիլայեթներում «դրությունը տագնապալից է, ամեն տեսակի մոլեռանդներ, առանց քաշվելու, հոչոտում են ժողովրդին: Վիճակն այնքան վտանգավոր է, որ եթե հյուպատոսներն այստեղից հեռանան... կարող են սոսկալի դեպքեր տեղի ունենալ»:*[283]

*Մուշից հունիսի 23-ին գրում են. Տալվորիկում «այժմ ամեն ինչ քայքայված է, ո՛չ բնակիչներ, ո՛չ տուն և ո՛չ էլ փայտի կտոր է մնացել... հայերը վտարանդի են: Անցյալ ձմռանը նրանց պահեցին Բանանց գավառում..., մի մասն էլ ցրվեց Դիարբեքիրի կողմերը: Գարնանը ենթարկվեցին քոչվոր քրդերի և այլոց հարձակումներին... Այդ թշվառներից 860-ը այժմ ապրում է անտառներում, լեռներում՝ այրերում և ծմակներում, նրանք կիսամերկ են, չատերի մերկությունը ոչնչով չի ծածկված: Ամիսներ չարունակ հացի համ չեն առել... Նրանք նախընտրում են խոտի երկու տեսակ: Դրանցով սնվելով՝ հիվանդացել են, դեմքերը դեղնել, ուժերն սպառվել, մարմինները կծկվել, չատերը հիվանդ են ջերմախտով*[284]*: Գրում են Բուլանըխից. «Մեր կողմերում հաղորդակցություն չկա: Գյուղից գյուղ գնալն արգելված է: Կառավարության կողմից ամեն գյուղում 2-3 պահապան և երկուական զինվոր է դրված հաղորդակցությունն ընդհատելու համար, որպեսզի չլինի թե Մուշ գալով, բողոքագիր հանձնենք օտար քննիչներին»: Մի սաստկացու կարծիքով, երբ եվրոպական քննիչները եկան, թվաց, թե դժոխքի վերջն է: «Սակայն ընդհակառակը, նրանց գալով օսմանյան ճնշումը հետզհետե խստացավ, մեծացավ, գերազանցեց այն սաստիկ կոտորածը, որ եղավ Սասունում և Տալվորիկում»:*

*Իշխանությունները սասունցիներից պահանջում էին. «կա՛մ պետք է գաք ասեք, որ քրդերն են արել (կոտորել), կա՛մ ձեզ ձեր նախնիներին ենք հասցնելու»: Մշո ճանապարհին սահմանված էր ոստիկանական հսկողություն, «չէին թողնում, որ որևէ սասունցի Մուշ գնար»: Նա պետք է թուրքերի թելադրանքով խոսեր կամ էլ ձերբակալված մնար բանտում: «Ովքեր չեն կարողացել ուրանալ ճշմարտությունը և քննիչներին ամեն բան ճշտորեն և բառ առ բառ խոստովանել են, այսօր բանտում դառնորեն չարչարվում են»,— գրում է «Հնչակ»-ը: «Շեներիկ գյուղից 10 հոգի երկար ժամանակ ձերբակալված մնացին խոսելու համար»*[285]*: Սասունից մի քանի հոգու հաջողվեց հասնել Մուշ: Նրանք «իրենց բողոքներն ասացին և գիշերը փախան»: Դա կատարվեց հետևյալ հանգամանքներում: Ոստիկանությունը այդ սասունցիներին ձերբակալեց և տանջեց: Նրանք, թե՝ մեզ մի չարչարեք, պատրաստ ենք ասելու, ինչ դուք ցանկանաք: Թուրքերը հավատացին, իսկ հայերը քննիչներին ասացին իրողությունը:*

*Ոստիկանները, մեկը մյուսի հետևից հանրագրեր էին պատրաստում ու սասունցիներին հարկադրում ստորագրել: Բնականաբար, սասունցիները գերադասում էին ոստիկանների հետ չհանդիպել և, երբ նրանք գյուղ էին գալիս, տղամարդիկ հեռանում էին գյուղից: Հանրագրերը ստորագրում էին միայն ծերերն ու հիվանդները: Դրա հետ մեկտեղ հայերը խիստ հսկողության տակ էին, որպեսզի, մանավանդ, ջարդերի ժամանակ վիրավորվածները հանձնաժողովին չհանդիպեին: Այդպիսիներին հայտնաբերելիս, պարզապես ոչնչացնում էին: «Մեծ դժվարությամբ հայերը 41 տեղից վիրավորված մի սասունցու բերին պատվիրակներին ցույց տալու: Եթե կնոջ հագուստ չհագցնեին, անհնար էր, որ կարողանային այդ անել»: Իշխանությունների ջանքերն ապարդյուն չէին անցնում: Օրինակ, ոչ մի կերպ չհաջողվեց որևէ տալվորիկցու, ցուցմունք տալու համար, Մուշ տանել: «Մի քանի խաչնարած մարդկանց ոչխարների գոմերում բռնելով՝ այս կամ այն գյուղապետի անվան տակ, ոստիկանների ուղեկցությամբ Մուշ են ուղարկում՝ հարկադրելով ասել այն, ինչ հեռու էր ճշմարտությունից և չահեկան օսմանյան կառավարությանը»: Մշո մութեսարիֆը սասունցիներին սպառնում էր. «եթե այս անգամ էլ մերժեք,*

---

[283] Նույն տեղում, թիվ 89:
[284] Նույն տեղում, թիվ 90:
[285] «Հնչակ», 1895, թիվ 4:

գիտցած եղեք, որ կյանքներնիդ ձերը չէ, և հավերժ կորած եք: Նշան և պատիվներ կստանաք, եթե մեր խոսքերին ուննկնդրեք»:

Հանձնաժողովին ցուցմունք տալու հարցում իշխանությունների և հայերի միջև գնում էր անզիջում պայքար: Մի քանի գավառների հայերի կողմից հանձնաժողովին հանձնված աղերսագրերում անդրադարձներ կային նաև «ոստիկանների բռնություններին, քրդերի գործողություններին, ավարառություններին, քրիստոնյա կանանց ու օրիորդների առևանգումներին և բռնի կրոնափոխություններին, սրբապղծություններին՝ կրոնի անարգումներին, պաշտոնական մարմինների զեղծումներին ու կաշառակերություններին, կապալառուների անտանելի արարքներին...»: Սակայն ժանդարմները ոչ մի կերպ թույլ չտվեցին դրանք հանձնաժողովին հանձնել: Երբ սասունցի երիտասարդների ջանքերը հաջողություն չունեցան, նրանցից մեկը բարձրացավ պատվիրակների բնակարանի տանիքը և ծխնելույզից ցած նետեց գանգատագրերը:

Հետաքննիչ հանձնաժողովի գործունեության ժամանակաշրջանում բնականաբար քննարկման նյութ էին հետաքննության հետ կապված ամենաբազմազան խնդիրներ: "New York Herald"-ը մարտի 9-ին մեջբերում կատարեց "Globe"-ից. «Սըր Է. Գրեյի պատասխանը այն հարցին, թե արդյո՞ք Հայաստան ուղարկված եվրոպական պատվիրակները պետք է վերստուգեն "Daily Telegraph"-ի զեկուցագրերը, այն աստիճանի գլադստոնական էր իր զգուշացմամբ, որ դժվարանում ենք հասկանալ, թե հատկապես ինչ է հանձնարարված պատվիրակներին»:

"Daily News"-ը գրեց, որ «հանձնաժողովի անկողմնակալությունը չատ կասկածելի է»: Հանձնաժողովի անդամները թուրքեր էին ու մահմեդական: Քրիստոնյա հպատակների նկատմամբ վարվեցողության և քաղաքակրթության սկզբունքները անհամատեղելի էին... Ակնհայտ է, որ տեղական պաշտոնյաներից նրանք չեն քաշվի: Սակայն ի՞նչ կարող են անել, եթե կոտորածների գլխավոր դրդիչները նստած են Պոլսում... Հանձնաժողովը ոչինչ է, քանի որ չարագործները կարող են պաշտպանություն գտնել չատ ավելի զորեղ շրջաններում... Մեզ մնում է սպասել, որ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հյուպատոսներն ազնիվ ու համարձակ կարծիք հայտնեն: ...Եթե հանձնաժողովը բոլորովին կեղծի, դրան մի այլ հանձնաժողով կհաջորդի»[286]:

Հանձնաժողովը հնարավորություն չունեցավ ամբողջությամբ պարզաբանել հայկական ողբերգության ծավալները ու բնույթը: Այն միայն կարողացավ «վարագույրի մի ծայրը բարձրացնել և այն էլ չատ աննշան չափով»: Դրա պատճառները մեկից ավելի էին: Օրինակ, «Վերջերս,– գրում են Մուշից,– մի խումբ ոստիկաններ լցվել էին Սասուն, ընկել գյուղեգյուղ և սարսափելի բարբարոսություններով պահանջել էին իրենց հանձնել այն անձանց, ովքեր համաձայնել էին քննիչներին ցուցմունքներ տալ»[287]: Իսկ սասունցիների տված ցուցմունքները իսկապես սպանիչ մեղադրանքներ էին պարունակում սուլթանական բարբարոսությունների վերաբերյալ: Հանձնաժողովի թուրք նախագահը սասունցի մի կնոջ ցուցմունք-մեղադրականից ինքնատիրապետումը կորցրեց և եվրոպացիների ներկայությամբ նրան ծեծեց: Բռնությամբ Մուշ է տարվում չենիկցի ուսուցիչ Միքայելը: Նրան պաշտպանելու համար քաղաք է գնում նաև 40-50 կին: Զնայած ոստիկանության արգելքներին, ծեծված ու ջարդված, ցնցոտիների մեջ ու բոկոտն կանայք ներկայանում են հանձնաժողովին և հանրագիր հանձնում:

Երբ հանձնաժողովը պատրաստվում էր Սասուն բարձրանալ, Մշո մութեսարիֆի նախագահությամբ «մի արտակարգ նիստ տեղի ունեցավ: Բացի վարչական ամբողջ կազմից, նիստին մասնակցում էին չեյխ Հաջի Դայիբը, Բերդի թաղի ցեղապետ Սալի աղան, Թալիբ էֆենդին, քոթանենց Զաղայիրը և մյուս ցեղերի կրոնական և ոչ կրոնական ներկայացուցիչները»: Քննարկվում էր հարց. նախ՝ անհնար դարձնել հանձնաժողովի Սա-

---

[286] «Մուրճ», 1895, թիվ 3-4:
[287] «Դրոշակ», 1895, թիվ 6:

սուն բարձրանալը և, երկրորդ՝ եթե այդ չհաջողվի, ի՞նչ անել, որ այն «թե՛ հայերից լրիվ դժգոհ լինի և թե՛ չկարողանա Սասունում հարցաքննել անձանց, ովքեր հայտնի էին կառավարության դեմ տված ցուցմունքներով: Այդ նիստում շոշափվել է նաև քյաֆիրներին ջարդելու, անխնա հալածելու խնդիրը»: Առաջ է քաշվում ահաբեկչական մի ծրագիր, համաձայն որի՝ պետք է լրտես, դավաճան հայերի,– ինչպես նաև՝ մարդասպան,– վարձելու միջոցով սպանեին 1-2-ական թուրք, ինչպես նաև եվրոպացի քննիչ և այդպիսով հայերին ամբողջ աշխարհում հռչակեին որպես «իսկական չարագործներ՝ լրիվ անարժան կարեկցանքի»: Ժողովը որոշում է գործը սկսել ազդեցիկ մարդկանցից կազմված մի հանձնաժողովի ստեղծմամբ, որը մինչև եվրոպացիների Սասուն բարձրանալը, այցելելով լեռնաշխարհ, «հայերի հուզված սրտերը մեծագույն խոստումներով խաղաղեցներ», նաև սիրաշահեր ազդեցիկ սասունցիներին ու հանձնաժողովի հետ հանդիպելու պատրվակով նրանց բերեր Մուշ»:

Եվրոպացիները դեռ չէին հասցրել բարձրանալ Առաքելոց վանք, երբ Թալիբի հանձնախումբը մի այլ ճանապարհով «թվով 150 սասունցու ոչխարների նման առաջն արած լցրեց Մուշ»: Վերջիններս, հակառակ թուրքերի չանքերի, անմիջապես գնացին եվրոպացիների կացարանը, որի դռները սակայն փակ էին: Հերթապահ ոստիկանները հարձակվեցին նրանց վրա: Սկսվեց տուրուդմփոց: Միջամտեց զորքը, և լեռնականները ողբալի աղաղակներով, «գոռում-գոչյունով հետ դարձան ու բարձրացան իրենց ավերված աշխարհը»: Ոստիկանությունը նրանց մի մասին բռնությամբ հետ բերեց, իսկ մյուսները «մագլցելով, հասան հանձնաժողովին, բայց Սասունում էլ նրանց դիմավորեցին ոստիկաններն ու ծեծեցին: Իսկ երբ պատվիրակները փորձեցին պարզել պատճառը, իրենք էլ ծեծի ենթարկվեցին, չխնայեցին անգամ հանձնաժողովի թուրք անդամներին»[288]:

Նաև ասենք, որ դա թուրք ոստիկանության կողմից հետաքննիչ հանձնաժողովի և մասնավորապես, տերությունների ներկայացուցիչների դեմ գործադրված միակ բռնարարքը չէ: "Daily News"-ը հունիսի 1-ին գրեց, որ մի քանի ժանդարմներ պատվիրակների ճանապարհը կտրեցին ու փորձեցին ձերբակալել նրանց ծառաներից մեկին: Մի այլ անգամ ժանդարմները բռնությամբ մտան պատվիրակների բնակարանը: Reuter գործակալությունը հաղորդեց, թե հանձնաժողովին սպասարկող մի հայ, որը պատվիրակների հետ նավում էր, ենթարկվեց ժանդարմների հարձակմանը: Նույն այդ օրերին Ջիդդոյում սպանվեց Անգլիայի փոխհյուպատոսը, ռուսական հյուպատոսը մահացու վերք ստացավ, իսկ անգլիական հյուպատոսներից մեկն էլ գանակոծվեց: Հարձակման ենթարկվեցին տերությունների ուրիշ այլ դիվանագետներ ու ներկայացուցիչներ: Հավանաբար դա հետևանք էր մահմեդականների՝ Լոնդոնում տեղի ունեցած հանրահավաքի սադրիչ կոչերի:

Թալիբը խփանելի քրդերից վարձեց 25 մարդ, որպեսզի մինչև հանձնաժողովի տեղ հասնելը գնան Գելիեգուզան գյուղը, բացեն Պետոյի տան հետևի փոսը և ոչնչացնեն եղեռնագործության հետքերը: Սակայն քրդերին դա անել չհաջողվեց, պահապան հայերը նրանց վռնդեցին[289]: Այդ նույն ժամանակ նախկին բանտապետ Ռաշիդը, որն իր «սխրագործությունների համար» ոստիկանության հարյուրապետի պաշտոն էր ստացել, 17 ոստիկանի հետ նույնպես բարձրացել էր Սասուն «հեղափոխականների մուտքը» խափանելու համար: Նրա արյունախումները հարձակվեցին Սեմալի վրա և խուզարկեցին «ավերի ու մոխրի տակ թաղված հյուղակներն ու խրճիթները»: Գյուղում տղամարդ չէր մնացել, իսկ կանայք հարձակվեցին ոստիկանների վրա և նրանց քշեցին մինչև Մուշ:[290]

Ապրիլի 27-ին խիստ հակողության տակ Բիթլիսից Մուշ բերեցին Մուրադին իր չորս ընկերների հետ: Նրան երկու օր չարունակ (մայիսի 3-4) հարցաքննեցին: Նրա մոտ հայտնաբերված օրագիրը, մի քանի նամակներն ու բանաստեղծություններն աշխատում

---

[288] «Արձագանք», 1895, թիվ 59:
[289] "Daily Telegraph", 02.04.1895:
[290] «Արձագանք», 1895, թիվ 60:

էին օգտագործել՝ ասելու, որ Սասունի իրադարձությունները հայերի կողմից ծրագրված ու նախապատրաստված էին: Սակայն Մուրադը հաջողությամբ ապացուցեց նման պնդումների հնարովի ու սադրիչ լինելը: Մուրադին հարցաքննելու վրա պնդում էր անգլիական կառավարությունը: Անգլիայի խորհրդարանի ապրիլի 4-ի նիստում է. Գրեյը հայտարարեց, թե որոշված է, որ Մուրադը և Բիթլիսի բանտի մի քանի ուրիշ հայ կալանավորներ, այդ թվում նաև Մշո առաջնորդ Ն. Խարխանյանը, հարցաքննվեն:

Ծանոթանալով Սասունի ջարդերին, ինչպես նաև օգտագործելով Քննիչ հանձնաժողովի տրամադրության տակ եղած նյութերը, Ս. Վիլբերը, Հ. Շափլեյը և Մ. Պրժևալսկին կազմեցին ընդհանուր տեղեկագիր, եզրահանգելով, որ «Սասունի երեք գյուղերը՝ Շենիկ, Սեմալ, Գելիեգուզան, Տալվորիկի ամբողջ շրջանը՝ Աղբի, Հիթընք, Սպաղանք իրենց տեղամասերով ամբողջությամբ ավերված են, բնակչությունը լրիվ թողնված առանց ծածկի, առանց ապրուստի որևէ միջոցի և գրեթե բոլոր սասունցիները հեռացել են Դիարբեքիր և Դաշտի գյուղերը: Մի ամբողջ շրջանի բացարձակ ամայացումը չի կարելի դիտել որպես պատժամիջոց նույնիսկ, եթե ապստամբություն տեղի ունեցած լիներ: Առավել ևս, որ տվյալ պարագայում հայերի միակ հանցանքն այն էր, որ պատսպարել են և թաքցրել Մուրադին ու նրա խմբին կամ չեն հպատակվել իշխանություններին...»[291]:

Հանձնաժողովի այցը Սասուն ոչ միայն թուրքական իշխանությունների, այլև հայ և օտար մամուլի ուշադրության կենտրոնում էր: «Տարազ»-ը իր 1895թ. թիվ 16-ում հայտնեց. «Հրահանգ է ուղարկված Քննիչ հանձնաժողովի անդամներին՝ անմիջապես գնալ Գելիեգուզան և աչք անցկացնել այն փոսը, ուր... նետված են կոտորածի զոհ հայերի դիակները»: «Մշակ»-ը տպագրեց ապրիլի 24-ին թվագրված հեռագիրը, թե հանձնաժողովի անդամները «սարսափահար են եղել, երբ հայերը նրանց ցույց են տվել մի մարագ, որում կուտակված էին մանուկների 600 դիակ»: «Տարազ»-ը իր 1895թ. թիվ 12-ում գրում է. «Հայերը հույս ունեին, որ երբ հանձնաժողովի անդամները այցելեն Սասուն, նրանց կհաջողվի գտնել տեղի ունեցած կոտորածի հետքերը և գլխավորապես այն հորը, որտեղ թաղված են տաճկական գազանությունների զոհերը»: «Տարազ»-ի թիվ 15-ում կարդում ենք հետևյալ եզրահանգումը. «Դա վաղուց որոշված փորձ էր բնաջնջելու Սասունի բնակիչներին և վերոհիշյալ ծրագիրը հղացվել էր Կ. Պոլսի գիտությամբ և համաձայնությամբ»: Եվ ապա. «Քննիչ հանձնաժողովը Սասունում շատ կարևոր գազանություններ է բացահայտել, սակայն բժիշկ էքսպերտների բացակայության պատճառով խիստ դժվարությունների է հանդիպում դիակների զննության ժամանակ»:

Ապրիլի 22-ին Հետաքննիչ հանձնաժողովը եղավ Սեմալ, Շենիկ, Գելիեգուզան գյուղերում: «Բոլոր տները այրված էին, նորաշեն հյուղակներում տեսան մի քանի փրկված հայերի, որոնք Գելիում ցույց տվին այրված եկեղեցին, տներն ու չենքերը», ապա նրանց տարան ցույց տալու փոսերը, «Ահա մարդկային մարմինները սկսեցին երևալ. գարշահոտություն տարածվեց»: Քննիչները հարկադրված, Մուշից հականեխիչ դեղորայք բերել տվին: Մի կիսամերկ կին, ցույց տալով այրված ու քանդված եկեղեցին, ասաց. «Այստեղ 50 կին ու երիտասարդ աղջիկ պղծեցին ու մորթեցին: Ես էլ այնտեղ էի...»[292]: Բացեցին Պետոյի տան մոտի մեծ փոսը, գտան Սեմալի Տեր-Հովհաննեսի մաշկազերծ մարմինը, աչքերը փորված ու պարանը վզին, ճիշտ այնպես, ինչպես նկարագրել էին սասունցիները: Դիակների կույտեր, ծեր ու երեխա, այր ու կին՝ խառը լցված: Եվրոպացիները չդիմացան ահավոր տեսարանին ու հրամայեցին փակել փոսերը: Պատկերը պարզված համարեցին և առանց Տալվորիկ այցելելու վերադարձան Մուշ: Նախատեսված 15 օրվա փոխարեն նրանք Սասունում մնացին երկու օր: Այս այցելության մասին "Kölner Zeitung"-ը գրեց. «Նրանք անցան լիովին ավերված մեծաթիվ գյուղերով... Գելիուգուզանում հրդեհվել էր 120 տուն: Պատվիրակները ստուգեցին ու համոզվեցին, որ հայերի պատմածները ճիշտ

---

[291] Տե՛ս ԳԱԱ Պատմության ինստիտուտի Լեոյի արխիվ, թղթապանակ թիվ 17:
[292] «Դրոշակ», 1895, թիվ 9:

*էին, բազմաթիվ դիակներ էին լցված փոսերը»*[293]*: Իսկ "Frankfurter Zeitung"-ն ավելացնում է. «Սկզբում թուրք կոմիսարները հրաժարվեցին ուղեկցել եվրոպացի քննիչներին, բայց հետո՝ Սեմալում, միացան նրանց... Գելիուգուզանում քննեցին այն փոսերը, որոնց մեջ թուրքերը կոտորելով լցրել են սպանված հայերի դիակները: Այդ փոսերում գտան մարդկային մարմնի մասեր և հագուստի կտորտանքներ: Երբ հարցուփորձ արեցին, հայ գյուղացիներն ասացին, թե իրենք են փորել փոսերը և հանել իրենց ազգականների դիակները գերեզմանատունը թաղելու համար: Այնուամենայնիվ, փոսերում դիակների հոտն այնքան սաստիկ էր, որ գործավարները չէին համաձայնում փորելը շարունակել, սակայն կոմիսարները նրանց հարկադրեցին այդ անել»*[294]*:*

*Եվրոպական մի ուրիշ թերթ գրում է. «Կոտորածների երեք հորերի վերստուգումն անձամբ կատարելուց բացի, հետաքննիչ հանձնաժողովը Հըֆսե անունով մի կնոջ առաջնորդությամբ տեսել է նաև մի այլ հոր՝ դեռ համարյա լի մարդկային ոսկորներով: Դա երեք մեծ հորերից քիչ հեռու է, ձորակի եզրի ամեհի ժայռի ստորոտում... Հըֆսեի ցուցմունքով փակ հորում թաղվածները Զեքի փաշայի խորհրդով առաջինն անձնատուր եղածներն են»*[295]*:*

*Ի դեպ, մինչև Սասուն բարձրանալը պատվիրակները պահանջեցին Մուշ բերել կոտորածի ժամանակ Բերդակ գյուղում ապաստանած ծանր վերքեր ստացած սասունցիներին: Թուրքական զորքերն իսկույն գյուղը շրջապատեցին և պահանջեցին վիրավոր սասունցիներին տանել լեռներն ու թաքցնել: Հայերը հրաժարվեցին դա անել: Բերդակի ազդեցիկ անձինք ձերբակալվեցին, իսկ բնակչությունը լցվեց Մուշ: Մութեսարիֆը հարկադրված եղավ ձերբակալվածներին ազատել:*

*Սասունում հանձնաժողովը համոզվեց, որ հիմնովին ավերվել էր 46 գյուղ, 14 եկեղեցի, 5 դպրոց: Շենիկի 80 տնից ոչ մեկը կանգուն չէր, Ալիանքի 50 տնից մնացել էր 7 հյուղակ: Ընկուզնակի 30 տնից՝ 7-ը, Աղբիի 35-ից՝ 8-ը, Իչխանձորի 80-ից՝ 13-ը: Շատ գյուղեր լրիվ ամայի ու անմարդաբնակ էին դարձել:*

*Քուրդ ցեղապետերից շատերը պատրաստակամություն էին հայտնում ներկայացնելու հանձնաժողովին կառավարությունից ստացած հրամանները, որոնց ուժով են իրենք մասնակցել Սասունի կոտորածին, եթե միայն հյուպատոսները երաշխավորեին նրանց անվտանգությունը: Համենայն դեպս, քրդերի մեծամասնությունը հրաժարվեց հագուստ թուրքերի ցուցմունք տալուց: Բացառություն կազմողների շարքում էին Մ. Տամատյանին նենգաբար ձերբակալող Դերվիշը և Մեհե Ջաուշը:*

*...«— Ձեր տները Սասունից հեռո՞ւ են,— նրանց հարցնում են պատվիրակները:*
*— 10 կամ 12 ժամ,— պատասխանում է Դերվիշը:*
*— Գյուղերը հրդեհելուց հետո որտե՞ղ գիշերեցիք:*
*— Կայսրական բանակում, որը Շատախի դաշտում էր:*
*— Սուտ ես ասում,— բղավեց հանձնաժողովի թուրք անդամներից մեկը,— կոտորածի ժամանակ այնտեղ զորք չի եղել»*[296]*:*

*Այսինքն՝ թուրքերի օգտին ցուցմունք տվողները ևս, իրենցից անկախ, որոշ ճշմարտություններ էին ասում, որոնք հերքում էին թուրքական վարկածները: Տվյալ դեպքում խոսքը գնում էր կոտորածին բանակի մասնակցության մասին: Թուրքերը պնդում էին, որ մինչև Զեքիի Սասուն գալը լեռնաշխարհում զորք չի եղել և, հետևաբար, Շատախի*

---

[293] «Արձագանք», 1895, թիվ 53:
[294] Նույն տեղում, թիվ 51:
[295] «Արձագանք», 1895, թիվ 60:
[296] "Daily Telegraph", 02.04.1895:

հայության կոտորածին մասնակցել չէր կարող, իսկ Դերվիշն իր կամքից անկախ բացահայտեց իրողությունը:

«Նաև ճշմարիտ է,— գրում է Դիլոնը,— որ քրդերի ցուցմունքները փոքր դեր չխաղացին ապացուցելու, թե սասունցիները չեն սկսել կռիվը, որ նրանք միայն պաշտպանվել են քրդերից, «հայերը ոչ մի գնդակ չեն արձակել կայսրական զորքերի դեմ, նրանցից դյուղացիները պաշտպանություն էին սպասում: Նաև ապացուցված է՝ քրդական բարբարոսությունները ոչինչ էին համեմատած այն գազանությունների հետ, որ գործել են կանոնավոր բանակի զինվորները... Թուրքերի վրիժառությունը չնչին իսկ հիմք չի ունեցել: Եվրոպական քննիչները հանգել են նույն եզրակացության»[297]:

Թուրքերի կողմից քրդերին հայերի դեմ օգտագործելու մի փաստի մասին գրեցին եվրոպական մի քանի լրագրեր: Թոփրախ Կալեի Ահմեդը ժողովի է կանչում զիլանցի աչիրեթապետերին, նաև տեղական թուրք և քուրդ ավագանուն՝ չելխեր, մոլլաներ, ֆախիրներ, սայիդներ, ինչպես նաև չորս քուրդ սպաների, որոնց հետ քննարկում է հայերի հանդեպ վերաբերմունքի հարցը: Որոշվում է. «Անխնա հրի ու սրի մատնել բոլոր այն հայերին, ովքեր կհրաժարվեն ընդունել... սուրը կրոնը»[298]: Բայց նման որոշումներին քրդերը շատ հաճախ միայն խոսքով էին համաձայնվում: Նրանց մեծ մասն այլևս խուսափում էր հակահայ բացահայտ ելույթներից: Այս առնչությամբ ուշադրության է արժանի Է. Դիլոնի հետևյալ միտքը. «Թուրքա-Հայաստանի արդի պատմությանն անտեղյակ մարդիկ կդժվարանան հասկանալ Սասունի կոտորածն առաջ բերող պատճառները: Թուրքերը մեղադրեցին թե՛ հայերին և թե՛ քրդերին՝ ասելով, որ նրանք սկսեցին կռիվը: Իսկ հայերն ու քրդերն իրենց հերթին միաբան մեղադրում են թուրքերին, և փաստերը ցույց են տալիս, որ վերջին մեղադրանքը ճիշտ է: Օսմանյան կառավարության անցած երեք տարիների գլխավոր ձգտումն էր հայկական տարրը վտարել, հեռացնել թուրքական պետության սահմաններից... Թուրքերը բռնի տարագրել են հայերին, քրդերը հափշտակել են գյուղեր, թուրքերն ու քրդերը միասին կոտորել են հատկապես այն հայերին, ովքեր քաջություն են ունեցել չլքելու իրենց հայրենի երկիրը: Այդ բոլոր միջոցները լրացրել են միմյանց, և համիդիե գնդերի նպատակը եղել է բնաջնջել հայերին: Այս ճշմարտությունը հենց սկզբից գիտակցել են Կ. Պոլսում թե՛ զինվորական ու քաղաքացիական պաշտոնատարները, թե՛ քրդերն ու անգամ չարքային մոլեռանդները, որոնք պետությունով մեկ բացահայտ քարոզել են հայերին բնաջնջելու անհրաժեշտությունը»[299]:

Է. Դիլոնը բացարձակապես իրավացի է՝ հայերի հարցում քրդերի վարքագծին անհնար է միանշանակ գնահատական տալ: Հայերի դեմ քրդերն օգտագործվել են որպես գործիք, բայց միաժամանակ քրդերն են օգտագործել հայ-թուրքական առճակատումները ոչ միայն հարստանալու, այլ Հայաստանը Քրդստան դարձնելու համար: Այս միտքը հաստատելու համար Դիլոնը բերում է հետևյալ օրինակը: Քրդերն իշխանություններից հանձնարարություն էին ստացել հայերին դուրս քշել Ալաշկերտի Զլկան գյուղից: Նրանք հարձակվում են մի հայ հարուստի տան վրա, երկու եղբայրներին սպանում են և տիրանում նրանց ունեցվածքին: Նույն այդ իշխանությունները հայերի գանգատին պատասխանում են. «Մենք ի՞նչ կարող ենք անել, հարձակվողները քրդերն են: Նրանք ոչ միայն ձեր, այլ մեր կյանքը չեն խնայում: Դուք էլ թուրքերի նման վարվեք՝ ինքներդ հետ խլեք ձեր ունեցվածքը... իսկ եթե չեք կարող, Ռուսաստանի ճանապարհը ձեր առաջ բաց է»[300]:

Իշխանությունները Ղարաքիլիսեի Քիդր, Մանկասար, Ջուլյան, Ջիրո, Կուփքերան գյուղերի հայերին ստիպեցին գաղթել: Այս հրամանը գործադրեց քուրդ ցեղապետ Էյուբը: Նա նշված գյուղերը գրավեց, թալանեց և զենքի ուժով հայերին քշեց Ռուսաստան:

---

[297] «Արձագանք», 1895, թիվ 28:
[298] Նույն տեղում, թիվ 53:
[299] «Արձագանք», 1895, թիվ 55:
[300] Նույն տեղում:

*Այդ չորս գյուղում կար 400 տուն և 5000 հայ բնակչություն: «Ես պետք է ասեմ,– շարունակում է Դիլոնը,– որ սա բացառիկ դեպք չէ... Կարող եմ 40 նման դեպք պատմել, որ անձամբ ստուգել եմ... Թուրքական կառավարության ծրագիրն է՝ զրկել հայերին իրենց եկամուտներից և ապա քշել Ռուսաստան...»: Օսմանյան պետությունում «ես չատ տեղերում՝ Բասենում, Ալաշկերտում, Քրդստանում և Անատոլիայում սնանկության միևնույն պատմությունը պարզապես գրված գտա հազարավոր հայերի աղքատանալու իրողությունների մեջ»: Սամսոնի հարուստ տներից միայն մեկն է մնացել: «Լրտեսություն, բանտարկություն, զրպարտություն՝ ամեն որագայթ գործադրվեց այդ թշվառ մարդկանց կողոպտելու» համար: Ունիե քաղաքում ևս մի ուննևոր հայ է մնացել, Օրդուում՝ ոչ մի ղրամատեր հայ, Կերասոնում սնանկացրել են բոլորին: Նույնը Տրապիզոնում*[301]*:*

* * *

*Վերադառնանք Հետաքննիչ հանձնաժողովի գործունեությանը: Հանձնաժողովի թուրք անդամների ու եվրոպացի պատվիրակների միջև լարված հարաբերությունները աստիճանաբար սուր բնույթ ստացան և ավարտվեցին նրանով, որ հունիսի սկզբներին պատվիրակները հրաժարվեցին այլևս թուրքական հանձնաժողովի հետ համատեղ աշխատելուց և սկսեցին գործել առանձին:*

*"Daily News"-ը հունիսի 10-ին գրեց. «Եվրոպական պատվիրակների համար այս հինգ ամիսը մշտական երկյուղի և ամենօրյա դժգոհությունների ժամանակաշրջան էր»: Նրանք համերաշխությամբ հաղթահարեցին «հազար ու մի արգելք ու խոչընդոտ... նրանց թուրք գործընկերներն իրենց բանտարկություններն ու ստախոսությունը քողարկում էին սիրալիր ժպիտով և ստոր հնարքներով»: Նույն թերթը օգոստոսի 21-ին, անդրադառնալով այս խնդրին, գրում է. «Շատ նշանավոր վկայություններ լսելու արգելքը պատճառ հանդիսացավ հանձնաժողովից պատվիրակների հեռանալու համար... և դա չատ լավ եղավ, որովհետև, հակառակ դեպքում, թուրքերի ղեկավարությամբ գործող հանձնաժողովի հետաքննությունները տարբեր էին տևելու»:*

*Մուշում անցկացրած օրերն ու ամիսները հանձնաժողովի ու տեղական բնակչության փոխհարաբերություններում ձևավորեցին թե՛ դրական և թե՛ բացասական երևույթներ: Եվրոպացի պատվիրակները մերժեցել էին հայկական շրջաններին, ծնվել էր փոխադարձ համակրանք: Պատվիրակները մի քանի անգամ եղան հայկական վանքերում, ծանոթացան կրոնական ծեսերին, Հայ Եկեղեցու պատմությանը: Նման բոլոր այցելությունները կատարվում էին մեծ թվով հայերի ուղեկցությամբ: Հունիսին, երբ պատվիրակները վերադառնում էին Սբ. Հովհաննու վանք կատարած այցելությունից, ճանապարհին հայ հոծ բազմություն էր հավաքվել, ոմանք հանձնաժողովին ողջունում էին, մյուսները՝ խնդրագրեր հանձնում*[302]*: Նման ջերմ վերաբերմունքը բացատրվում է նաև այն բանով, որ եվրոպական պատվիրակների ներկայությունը, չնայած էապես չէր սանձահարում թուրքերին, սակայն նշանակալից զորակցություն էր հայերին: Մշո Առաջնորդարանում, եթե նախկինում մեծ թվով հայեր էին հավաքվում (10 օրում 1500 մարդ)՝ արտագաղթի կամ պանդխտության մեկնելու աջակցության հույսով, ապա հանձնաժողովի Մուշում գտնվելու ընթացքում նրանք Առաջնորդարանի միջամտությունն էին խնդրում եվրոպական պատվիրակների հետ հանդիպելու համար: Մուշը կատարյալ ուխտատեղի էր դարձել: Երբ հանձնաժողովը Սասունում էր, ոստիկանությունը, ժանդարմներն ու քրդերը եռանդուն «մաքրազարդման» գործունեություն ծավալեցին, իսկ երբ լուր տարածվեց, որ այն վերադառնում է, բանտից ազատեցին մի քանի տասնյակ հայի:*

---

[301] *Նույն տեղում:*
[302] *Նույն տեղում,* թիվ 66:

Թուրքական իշխանությունները, համոզվելով, որ Մուշում անհնար է ապահովել հետաքննության թուրքօգուտ արդյունքներ, եվրոպական պատվիրակներին առաջարկեցին աշխատանքը շարունակել Բիթլիսում՝ պատճառաբանելով, թե այդ քաղաքում մեծ թվով կարևոր վկաներ կային: Իրականում պատճառներից գլխավորն այն էր, որ Բաղեշը կոտորածի վայրերից հեռու էր գտնվում: Եվրոպացիները չհամաձայնեցին:

Հետաքննիչ Հանձնաժողովը հուլիսի 16-ին ավարտեց աշխատանքը: Հուլիսի 28-ին եվրոպական պատվիրակները ներկայացրին կոլեկտիվ զեկուցագիր, որում գրված է. «... Փաստերն ամենևին չեն ապացուցում, որ 1894թ. հուլիսի վերջին հայերն ապստամբություն են բարձրացրել»:

Հանձնաժողովը (թուրքական) պնդում էր, որ հայերն ապստամբել են դեռ մայիս ամսին՝ հիմք ընդունելով մութեսարիֆի մայիսի 15-ի հեռագիրն ու պետական պաշտոնատարների մի շարք ամբաստանագրեր: Եթե հայերն իրոք ապստամբել էին, ապա տրօրինակ է, որ իշխանություններն երեք ամիս շարունակ (մայիս, հունիս, հուլիս) նրանց դեմ որևէ քայլ չէին ձեռնարկել: Միծաղելի էր Հանձնաժողովի նաև այն պնդումը, որ հայերն իրենք են հրդեհել ու ավերել սեփական գյուղերն ու անասնագոմերը:

«Ներքոստորագրողները հարկադրված են հավաստիացնել, որ իրականում հայերը՝ տղամարդ, կին, երեխա, դարձան զինվորների, քրդերի և զափթիեների տևական հետապնդումների զոհեր: Սպանում կամ վիրավորում էին բոլորին, ով նրանց ձեռքն էր ընկնում... Կանոնավոր զորքը կառավարության կարգադրությամբ կանխամտածված կոտորել է հայերին, քրդերի մասնակցությունը (կոտորածին) նույնպես կառավարության հանձնարարությամբ է եղել»[303]: Հայերը Սասունում զենքի են դիմել հարկադրված, ինքնապաշտպանության նպատակով, իսկ իշխանություններն իրականացրել են հրեշավոր եղեռն:

Գելիեգուզանի զանգվածային կոտորածների, կանանց ու երեխաների վրա գործադրված բռնությունների մասին պատմածները... ցուցմունքներով լրիվ ապացուցված են... միայն մի գյուղում հարյուրից ավելի մարդ է սպանված... Համոզիչ ապացույցներ կան, որ հայերը 12 օր ենթարկված են եղել քրդերի օրեցօր ահագնացող հարձակմանը[304]:

Հանձնաժողովը արձանագրեց, որ 1894-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Սասունում սպանվել էր 9000 հայ[305]:

Տեղեկագրում նաև նշվում է, որ իշխանությունները ոչինչ չարեցին հայերի հետ բախմանը խաղաղ լուծում տալու, ինչպես նաև Անդոկում գտնվող երեխաների կյանքը պաշտպանելու ուղղությամբ: Հայերը մեծ կորուստներ են ունեցել, չատերը պարզապես սպանվել են զինվորների, քրդերի և զափթիեների կողմից, մյուսները մեռել են զրկանքներից, ոմանք անհետացել են հետապնդումների ընթացքում ստեղծված խուճապի հետևանքով, ովքեր մնացել էին գյուղերում, այրվեցին տներում, մյուսները խոշտանգվեցին Սեմալի տերտերի հետ միասին Գելիեգուզանի ճամբարում: Ռազմական գործողությունների ընթացքում, նույնիսկ ամենակատաղի ճակատամարտերում հայերի կորուստների թիվը փոքր էր: Նրանք ոչնչացվեցին ռազմական գործողությունների ավարտից հետո: Թուրքերն ու քրդերը հայերին վիրավորում կամ սպանում էին առանց հաշվի առնելու սեռը, սպանում էին բոլորին, ով նրանց ձեռքն էր ընկնում: Ընդ որում, բացի Տալվորիկի 11 գյուղացիներից, որևէ այլ գերի չի եղել: Կոտորածների իրողությունը ապացուցվում է հայերի բազմաթիվ վկայություններով, որոնք համընկնում էին, թե՛ բերված տվյալներին և թե՛ զոհվածների ինքնությունը հաստատող փաստերին: Հայերի նկատմամբ գործադրված բարբարոսությունը «լրիվ հաստատվեց Գելիեգուզանում փոսերը բացելով...»: Հետևաբար, ի հակադրություն Թևֆիկ բեյի և Հալջի Մուստաֆա էֆենդու

---

[303] «Դրոշակ», 1895, թիվ 8:
[304] Նույն տեղում:
[305] АВПР Политархив, д. 3437.

ձևական ժխտման, Գելիեգուզանում զորքի կողմից Սեմալի քահանա Հովհաննեսի խոշտանգումը հաստատվեց: Գավառը, Շենիկը, Սեմալը, Գելիեգուզանը, Տալվորիկի ամբողջ շրջանը, Աղբին, Հիթընքը, Սպաղանքն իրենց շրջակայքով և դրանց ամբողջ ազգաբնակչությունը, զրկված գոյության միջոցներից ու օթևանից «հարկադրված հեռացել է, ոմանք՝ Դիարբեքիրի ուղղությամբ, մյուսներին, իշխանությունների մասնակի աջակցությամբ, տեղավորել են Դաշտի հայկական գյուղերում...»:

Մայիս ամսին ծայր առած դաժանություններին, ապա հայերի ու քրդերի միջև ծանր բախումներին վերջ տալու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու համար «կատարվածի ամբողջ պատասխանատվությունը տեղական քաղաքացիական և ռազմական իշխանությունների վրա է»: Մրկեմոզանում զորքերի մասնակցության բնույթը մնում է անհասկանալի և ոչնչով չի արդարացվում, քանի որ չնայած իրադարձությունները տեղի էին ունենում զորքի ներկայությամբ, ոչինչ չարվեց երեխաներին պաշտպանելու և հայերին իրենց բնակավայրերը վերադարձնելու համար[306]:

Հանձնաժողովի արձանագրումներն ու գնահատականները, իհարկե, պարունակում էին նաև լուրջ թերություններ, սխալ տվյալներ ու մեկնաբանություններ: Սակայն զեկուցագիրը հաստատում է գլխավորը, Սասնո հայերը չեն ապստամբել: Չնայած դրան, կոտորվել են քրդերի ու թուրքական զորամասերի կողմից: Զեկուցագիրը նաև ապացուցում է, որ Սասունի ջարդերի մոտիվներն ու գործադրման եղանակները հար և նման են դասական ցեղասպանություններին: "Daily News"-ը, նկատի ունենալով հանձնաժողովի, մասնավորապես եվրոպական պատվիրակների գործունեության առանձնահատկությունները ու ծանր պայմանները, մանրամասն վերլուծում է զեկուցագիրն ու փորձում բացատրություն տալ դրանում տեղ գտած թերություններին[307]: Թերթը գրում է. «...Պատվիրակներին անվանում են միջազգային հանձնաժողովի անդամներ կամ եվրոպական կոմիսարներ: Դա մի մոլորություն է, որն ուղղելը շատ կարևոր է... Հանձնաժողովը միջազգային չէր, իսկ եվրոպական պատվիրակներն էլ դրա անդամները չէին: Նրանց նշանակել էին Կ. Պոլսի դեսպանները՝ հսկելու թուրքերի հետաքննությունը: Նրանց նաև իրավունք էր տրված պահանջել, որ ցուցմունքներ տվողների թիվն ավելացնեն և հրավիրեն այս կամ այն վկային: Երբեմն հանձնաժողովի անդամները մերժում էին կատարել այդ պահանջները: Նման մի մերժման պատճառով էր, որ պատվիրակները հրաժարվեցին մասնակցել հանձնաժողովի աշխատանքին: ...Պատվիրակները կարող էին ստուգել արձանագրությունները, քանի որ իրենք ևս արձանագրում էին հանձնաժողովի նիստերի մանրամասները և ունեին թուրքերեն պատճենները: Միացյալ տեղեկագիրը, որ նրանք ներկայացնելու էին իրենց կառավարություններին, անշուշտ պետք է համապատասխաներ այն տեղեկագրին, որ թուրքաց հանձնաժողովն էր ներկայացրել...»:

Թուրքերի հանձնաժողովը փորձում էր հաստատել, որ Սասունում գոյություն է ունեցել ապստամբական կազմակերպություն, որը ճնշելու համար պահանջվում էր ռազմական միջամտություն: Մինչդեռ ապացույցներ կային, որոնք հստակ վկայում էին հետևյալը: Տամատյանը թեև, անկասկած, արթնացրել էր հեղափոխական զգացումներ, և նրա գործունեությունը շարունակող Մուրադը խրախուսել ու քաջալերել էր հայերին՝ դիմելու ինքնապաշտպանության քրդերի դեմ, նույնիսկ կոտորածի միջոցին, սակայն այդ տրամադրությունները սաղմնային չրջանում էին և չունեին այնպիսի ընդգրկումներ, որ արդարացվեր թուրքական զորքի Սասուն ուղարկելը:

Պատվիրակներից մեկը շատ դիպուկ նկատել է, որ «հետաքննությունը ո՛չ սկիզբ ունեցավ և ո՛չ էլ վերջ: Թուրքերն զբաղված էին դատարկաբանություններով՝ աշխատելով դրանց մեծ կարևորություն տալ: Այդ պատճառով գործը ձգձգվում էր և վեց ամիս խլեց... Թուրքերին ձեռնտու չէր կոտորածների ապացույցների մանրամասներն արձա-

---

[306] *Братская помощь* ..., ч. II, стр. 97-106.
[307] «*Մշակ*», 1895, թիվ 95:

նագրելը: Պատվիրակները մեծ չանք են գործադրել կոտորածին վերաբերող գլխում մտցնելու ապացույցներ, փաստեր ու թվեր մարդկանց և անասունների կորստի մասին: Ամենամխիթարականն այն է, որ կոտորածին վերաբերող գլխում անհերքելի բազմաթիվ վկայություններ ու ապացույցներ կան՝ Գելիեգուզանի ժողովրդին ամբողջ խմբերով կոտորելու, Տեր Հովհաննեսին, կանանց, երեխաներին հոչոտելու վերաբերյալ...

Պատվիրակները պատմում են, որ Գելիից Սեմալ տանող ճանապարհը անցնում էր մի կործանված երկրով, ինչպես լինում է հեղեղից հետո: Գյուղերը հիմնովին ավերված էին: Գելիի եկեղեցու սեղանի քարը կոտրտվել էր քրդերի ձեռքով: Կոտորածի սկզբում ամբողջ 12 օր հայերը հետ են մղել օրեցօր ավելացող քուրդ հրոսակների հարձակումները: Այդ միջոցին կանոնավոր զորքի երկու վաշտեր վրան էին խփել Մրկեմոզան կոչված հովտում, որը կռվի դաշտից միայն մեկուկես մղոն հեռավորության վրա է: Այդ վաշտերի հրամանատար Հաջի Մուստաֆա էֆենդին հանձնաժողովի հարցաքննության ժամանակ ասաց, որ նա այդ ընդհարումը ո՛չ տեսել է և ո՛չ էլ այդ մասին լսել: Հաջի Մուստաֆան կարող էր արդարանալ, քանի որ փոքր-ինչ խուլ էր, բայց զարմանալի է, որ նույն վիճակում են եղել նրա զինվորները:

Այնուհետև բազմաթիվ վկայություններով հաստատվում է, որ կոտորածը չարունակվել է երեք չաբաթ. հայերին, որտեղ բռնել, սպանել ու հոչոտել են[308]:

Լեոն նկատում է. «Սասունի հյուպատոսական հանձնաժողովը, չնայած թուրք կառավարության գործադրած բոլոր չանքերին ու հնարքներին, ապացուցեց այդ կառավարության մեղավորությունը, կատարված մեծամեծ խժդժությունները»[309]:

Օ. Նուրին, անդրադառնալով հանձնաժողովի եզրակացություններին, գրում է, որ Բ. Դուռը դեպքերն այնպես է ներկայացնում, թե իբր հայերը հրաժարվում էին հարկեր վճարելուց, և ինքը հարկադրված եղավ զորքեր ուղարկել, բայց «դրանք դեռ տեղ չհասած, հայերն ապստամբելու նպատակով այրել էին իրենց գյուղերն ու ավանը և քաշվել սարերը»: Մինչդեռ, չարունակում է Օ. Նուրին, Քննիչ հանձնաժողովի զեկուցագիրն «այդ փաստը լրիվ հերքում է: Համաձայն զեկուցագրի, քաղաքացիական և ռազմական իշխանությունների հրամանով քրդերը հարձակվել էին (հայկական) գյուղերի վրա, բայց հետ էին մղվել, որից հետո էին միայն բանակային ուժեր ուղարկվել: Այդ ժամանակ զինվորներն այրել էին գյուղերն ու բազմաթիվ մարդկանց կոտորել: Թե՛ այս հայտարարությունը և թե՛ մյուս փաստարկները եվրոպական կոմիսարների կողմից ընդունվել էին որպես ճշմարտություն: Ըստ նրանց՝ հայերի վրա քրդերի հարձակումն ուներ ածանցիկ նշանակություն, քանի որ այդ հարձակումների հրամանները տվել էին տեղական պաշտոնյաները, որոնց ձեռքին քրդերը գործիք էին: Հետաքննիչ հանձնաժողովը նաև արձանագրել է, որ պետության հանդեպ հայերի որևէ դատապարտելի արարք տեղի չի ունեցել: Եթե նույնիսկ «հայերը կառավարության դեմ» ապստամբած լինեին, միևնույն է, դրա համար ամբողջովին պատասխանատու էին իշխանությունները, քանի որ ոչինչ չէին ձեռնարկել հայերի ու քրդերի միջև խառնարկությունները կանխելու համար: Գյուղերն էլ հրդեհել էին ոչ միայն քրդերը, այլև զորքը»[310]:

Քննիչների մեկնելուց հետո թուրքերի մեծագույն մասի համոզմունքն այն էր, թե Հայոց հարցը բոլորովին մեռավ: Նրանք նկատի ունեին, որ նույնիսկ տերությունների առաջարկած բարենորոգումների ծրագիրը չի կանխի վայրագությունների հետագա ծավալումը, քանի որ «ըմբռնում են այդ բարենորոգումների անարժեք, անգործադրելի, բոլոր տեսակի երաշխավորություններից զուրկ լինելը և քաջ գիտեն, որ թուրք կառավարությունը իր վերջին ճիգը կթափի ծրագիրը մերժելու»[311]:

---

[308] «Մշակ», 1895, թիվ 95:
[309] Լեո, Անցյալից, էջ 106:
[310] Նուրի Օսման, նշվ. աշխ., էջ 827-828:
[311] «Հնչակ», 1895, թիվ 15:

Իսկ Սասունը չարունակում էր մնալ պաշարման մեջ, ոստիկաններն էլ չարունակում էին փնտրել այն սասունցիներին, ովքեր կարողացել էին հանդիպել եվրոպացի քննիչներին: Մերկ, սոված և անօթևան լեռնցիները, ովքեր օձի նման հող ուտելով և սկյուռի պես արմատ կրծելով, դեռ կառչած էին իրենց ապառաժներին, իշխանությունների անհանգստության աղբյուրն էին, և վերջինները նոր քայլերի էին դիմում Սասունը վերջին մոհիկաններից էլ մաքրելու: Նորից գործողության մեջ դրվեցին քրդերը: Մեծ խոստումներ տալով՝ Կուրտիկ բերեցին բագրանցի ու բատկանցի քրդերին: Այս անգամ քրդերի կողմից հայերի ոչնչացումը նաև խնդիր ուներ աշխարհին համոզելու, որ 1894-ին էլ նրանք են կոտորել հայերին և ոչ թե զորքը: Հաջի Դայիբի գլխավորությամբ 20 հազար քուրդ ողողեց Տարոնն ու Սասունը: Դայիբն ուներ «առանձնապես վտանգավոր» հայերի ցուցակը: Առանց այս գործչի տված անցագրի, սասունցին Տարոն և տրոնցին Սասուն գնալ չէր կարող, իսկ Սեմալի, Շենիկի և Գելիի գյուղացիներին լրիվ արգելված էր գյուղից որևէ տեղ մեկնել: Ամբողջությամբ վերցրած, Սասունում չարունակվում էր պատերազմական վիճակը: Նպաստ բաժանելու առիթով ստեղծված հայ-թուրք հանձնաժողովը փաստորեն զբաղվում էր մարդահամարով:

"Central News"-ը հունիսի 30-ին գրեց, որ հանձնաժողովի աշխատանքը կարելի է ավարտված համարել, որովհետև ցուցմունքներով լիովին հաստատվել է կոտորածի իրողությունը:

Աշխատանքն ավարտելուց հետո պատվիրակներն այցելեցին հայկական եկեղեցիներն ու դպրոցները, գնացին Առաքելոց վանք և մինչև Համբարձման տոների ավարտն այնտեղ մնացին: Նրանց ուղեկցում էին մեծ թվով հայեր: Հունիսի 9-ին Մուշ լցվեցին Դաշտում ապաստանած մեծ թվով սասունցի ընտանիքներ: Հայերը հավաքվեցին հանձնաժողովի կացարանի շուրջ և վանկարկեցին՝ «Մահ կամ ազատություն այս տանջանքներից», «Վերադարձրեք մեր սպանված ու կոտորված զավակներին, մեր ամուսիններին, մեր այրերին ու մայրերին, քույրերին ու եղբայրներին»: «Վերադարձրեք մեզանից թալանվածը», «Մենք կարոտ չենք սուլթանի 2000 ոսկուն, դա խաբեություն է»: Ոստիկանությունը մի քանի հոգու ձերբակալեց, սակայն հայերը, մանավանդ կանայք, հարկադրեցին նրանց ազատ արձակել[312]:

Սասունցիները պատվիրակներից պահանջեցին չմեկնել, քանի դեռ նրանց փոխարինողներ չէին նշանակվել: Այդ օրերին էլ անգլիական կառավարությունը որոշեց Մուշում փոխհյուպատոս ունենալ: Օգոստոսի 8-ին Մուշ հասավ առաջին փոխհյուպատոսը:

«Քննիչներն ամսի 7-ին այստեղից մեկնեցին,— գրում են Մուշից,— և անմիջապես հանգամանքները փոխվեցին: Մի քանի օր է՝ տեղի թուրքերն ուզում են իրենց կրած նվաստացման վրեժը հանել, մանավանդ լսել էին, որ քննիչների հավաքած նյութերը մեծապես վնասում էին թուրք կառավարությանն ու նրա արբանյակներին, չնայած այդ քննությունները շատ թերի էին, որովհետև քննիչներն անճամբ չկարողացան գնալ Սասունի խորքերը, որոնք էին հանդիսացել ամենաքստմնելի վայրագությունների թատերաբեմ»:

Հակառակ իշխանությունների ձեռնարկած միջոցների, պատվիրակներին ճանապարհեցին մեծ թվով հայեր:

Reuter գործակալությունը օգոստոսի 12-ին Կ. Պոլսից հարղորդեց «Միստր Շափլեյը... ռուսական կոմիսար Պրժևալսկու ուղեկցությամբ ամսի 14-ին էրզրումից Կ. Պոլիս են մեկնելու, որտեղ լինելու են 25-ին: Ֆրանսիայի ներկայացուցիչ Վեբերտը հիվանդության պատճառով Մուշից մի օր շուտ է մեկնել և արդեն Կ. Պոլսում է: Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոս Հեմփսընը Տալվորիկ է գնում կարիքավորներին դրամական նպաստ բաժանելու: Վեբերտն իր հետ տարել է ամփոփիչ զեկուցագիրը (4 օրինակ) դեսպաններին

[312] «Արձագանք», 1895, թիվ 62:

հանձնելու»[313]: Պրժեւալսկու մոտ էին հանձնաժողովի նիստերի արձանագրությունները: Պոլսում պատվիրակները հայտարարեցին, թե հավաքվել են «Թուրք զինվորների, պաշտոնատարների և իշխանությունների կողմից գործադրված բռնությունների վերաբերյալ ահագին տվյալներ»[314]: Սասունի կոտորածները հետաքննող հանձնաժողովի զեկուցագրերն անպայման հասցեատերերին հասան: Սակայն կատարվեց ամենատարօրինակը: Նախ տերությունների դեսպանները, առանց ամփոփիչ տեղեկագիրը ստանալու, սկսեցին ճնշում գործադրել Բ. Դռան վրա բարենորոգումներ անցկացնելու համար: Առաջին հայացքից ստեղծվում էր տպավորություն, թե աշխարհի հզորները էական նշանակություն չէին տալիս հետաքննության արդյունքներին: Իրականում այդպես չէր: Հանձնաժողովից ու պատվիրակներից ստացվող ընթացիկ տեղեկագրերը բավարար էին երկուստեք կողմնորոշումների համար: "National Zeitung"-ը հունիսի 1-ին գրում է. «... Հետաքննությունն անշուշտ բացահայտել է վատ պատահարներ և հոռի իրողություն, թե չէ Ռուսաստանն ու Ֆրանսիան չէին համագործակցի բարենորոգումների ծրագիր կազմելու և սուլթանին ներկայացնելու գործին»:

Այնուամենայնիվ, զեկուցագրի չհրապարակելը և հետագա բանակցությունների վերաբերյալ տեղեկատվություններում դրա մասին հիշատակության բացակայությունը վկայում են, որ այն ձեռնտու չէր ոչ միայն սուլթանին, այլև տերությունների կառավարություններին: Սուլթանի լռությունը հասկանալի էր, իսկ տերություններն էլ հավանաբար առանձին-առանձին ձգտում էին «լեզու գտնել» Կ. Պոլսի հետ, իրենց համար չհեկան համաձայնությունների հասնելու համար, ինչին զեկուցագիրը միայն կարող էր խանգարել:

Մինչդեռ մթնոլորտը գնալով չիկանում էր: Սասունի ողբերգության տարելիցին նվիրված հոգեհանգստի ծեսեր տեղի ունեցան կայսրության չատ քաղաքներում ու բնակավայրերում: Կ. Պոլսում ծիսակատարությունը վարում էր Մ. Իզմիրլյանը: Բ. Դուռը պատրիարքից բացատրություն պահանջեց: Իզմիրլյանը պատասխանեց՝ Հայ Եկեղեցու ավանդությունն է աղոթել մեռածների հիշատակի համար: Մայր եկեղեցում նրա կարդացած քարոզի բնաբանն էր. «Հա՛յր, ների՛ր նրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում»: Բերայի գլխավոր եկեղեցում հանդես եկավ Ն. Խարխանյանը: «Մենք գործադրեցինք բոլոր չանքերը,— ասաց նա,— կոտորածի առաջն առնելու, բայց աջակցող չեղավ... Սասունի քաջ ժողովուրդը զոհվեց, որովհետև որոշել էր պաշտպանել իր կյանքն ու կրոնը»[315]:

* * *

Սասունի կոտորածների և դրանց հաջորդած իրադարձությունների լուսաբանման գործում անգնահատելի են Դիլոնի ծառայությունները: Նա ազգությամբ իռլանդացի էր, ծնվել էր 1854թ. Իռլանդիայի Դուբլին քաղաքում: Կրթությունը ստացել էր տեղում, ապա ուսումը շարունակել Ֆրանսիայում ու Գերմանիայում: Ուսումնասիրել էր լեզվագիտություն, փիլիսոփայություն և իրավագիտություն: Բացի նոր լեզուներից, ուսումնասիրել էր սանսկրիտ և արևելյան մի քանի այլ հին լեզուներ: Փիլիսոփայության դոկտոր էր: Պետերբուրգի համալսարանում շարունակել էր հին լեզուների ուսումնասիրությունը: Պրոֆեսորի պաշտոնով դասավանդել էր Խարկովի համալսարանում: Այստեղ նա կենտրոնանում է հայոց լեզվի և գրականության ուսումնասիրության վրա, գրում է երկու մենագրություններ հայոց լեզվի ու Վարդանանց պատերազմի վերաբերյալ: Ապա

---

[313] «Արձագանք», 1895, թիվ 78:
[314] Նույն տեղում, թիվ 92:
[315] «Մշակ», 1895, թիվ 99:

մեկնում է Վենետիկ և Մխիթարյանների մոտ չարունակում հայագիտական ուսումնասիրությունները:

Դիլոնն առաջինը ճեղքեց Սասնո իրադարձությունների տեղեկատվական չրջափակումը: Օր առաջ տեղեկատվությունը Լոնդոն հասցնելու համար՝ նա հրաժարվեց Պոլսի հեռագրական կապից և նյութերն ուղարկում էր Կարսից: Ապրիլի սկզբներին "Daily Telegraph"-ին Կ. Պոլսից գրեցին. «Հատուկ աղբյուրներից իմացանք, որ բրիտանական դեսպանը ներկայացրել է սուլթանին մեր հատուկ թղթակցի հեռագրերն Հայաստանից... սուլթանն այժմ համոզված է, որ նչված դեպքերի մեծ մասը ճիչտ է: Հավաստի փաստերն այնպիսի ազդեցություն են գործել սուլթանի վրա, որ նա հայտարարել է, թե որոչել է Հայաստանում հնարավորին չափ չուտ բարենորոգումներ մտցնել և արագ պատժել բարբարոսական գործերի հանցավորներին»[316]:

Չկարողանալով Դիլոնին այլևայլ միջոցներով լռեցնել՝ թուրքական իշխանությունները մի հնարովի պատրվակով նրան ձերբակալեցին, սակայն Եվրոպայում դա զայրույթի այնպիսի ալիք բարձրացրեց, որ չուտով ազատ արձակեցին:

Դիլոնը Սասուն եկավ, երբ դեռ ծխում էին հրդեհված գյուղերը, երբ սասունցին դեռ չէր հասցրել հողին հանձնել յաթաղանի զոհերին: 1895թ. ապրիլի 3-ին նա գրեց. «Թուրքերը չատ կատաղած էին վրաս, բազմիցս զգուշացումներ եմ ստացել, որ ինձ թույլ չեն տա ողջ ու առողջ վերադառնալ... Սակայն ոչնչից չեմ վախենում: եթե ինձ հետ բան պատահի, ավելի վատ թուրքերի համար»: Եվ նա երկրորդ անգամ մեկնեց դժոխքի վերածված Հայաստան և աչխարհի ուշադրությունը հրավիրեց սուլթանական երկաթե վարագույրի հետևում կատարված վայրագությունների վրա: Նա Սասունից 25 նամակ-թղթակցություն գրեց, որոնք տպագրվեցին "Daily Telegraph" թերթում[317]:

Է. Դիլոնի հոդվածներում և ուսումնասիրություններում հայերի վիճակը քննարկվում է բազմակողմանի, բացահայտվում են թուրքական իշխանությունների գործողությունների պատճառները: Նա հայի ու թուրքի հարաբերությունները համեմատում է գայլի ու գառան հարաբերությունների հետ.

«Հայերը ի ծնե խաղաղասեր են, գյուղերում նրանց ողջ եռանդը նվիրված է հողագործությանը, իսկ քաղաքներում ամբողջությամբ կլանված են առևտրով»: Սասունի բարեկեցիկ գյուղերը 1894թ. արդեն ավերակներ էին, իսկ «հացահատիկի 70 հսկա դեզերի մոխիրը ամբողջացնում էր տխուր պատմությունը»: Դա «քրդերի արածն էր... իրենց բարեկամ թուրք զինվորների» աչքի առաջ: «Զորքերն իրոք պաչտպանում էին, սակայն միայն քրդերին և որպես վարձատրություն ստանում ավարի մի մասը: Շունը հաչում է, երբ նրա ներկայությամբ գնդակահարում են մի այլ չան: Իսկ հայերը նույնիսկ չէին բողոքում: Պարզապես հանցանքի վայր էին հրավիրել օրենքի ու արդարության ներկայացուցիչներին, ովքեր նրանց հետ վարվեցին մարդասպանների նման»: Այժմ խայտառակ ստորացումից հետո, որին թուրքիայի եվրոպացի բարեկամները ենթարկեցին նրան, թուրքերն ատում են նույնիսկ Հայաստան անունը և այն կարծիքին են, թե ոչ մի բռնություն չի կարող հագուրդ տալ իրենց վիրավորված ինքնասիրությանը: Էրզրումի վալին հյուպատոսներին հայտարարեց. «Թուրքիայի կառավարությունը և հայ ժողովուրդը միմյանց հանդեպ ամուսնու և կնոջ հարաբերություններում են և կողմնակի մարդիկ, ովքեր կարեկցում են կնոջը, որի հետ ամուսինը վատ է վարվում, լավ կանեին, եթե ձեռնպահ մնային միջամտությունից... քանի որ դաժան ամուսինը միշտ էլ կարող է ժամանակ ու տեղ գտնել չարությունը թափելու իր անօգնական կողակցի վրա... ինչը ներկայումս տեղի է ունենում Թուրքա-Հայաստանում»:

...«Մուշում,— չարունակում է Դիլոնը,— ռուս, անգլիացի և ֆրանսիացի պատվիրակների աչքի առաջ այն վկաներին, ովքեր արիություն ունեին տերու-

---

[316] «Արձագանք», 1895, թիվ 38:
[317] ԳԱԹ, ֆ. Ասաքեյան Հ., գ. 566:

թյունների ներկայացուցիչներին ասելու ճշմարտությունը, բանտ էին նետում, և ոչ ոք նրանց չէր պաշտպանում. ներկայումս էլ սուլթանի հպատակ հայերին օտար երկրյա հյուպատոսներից ընդամենը մի քարընկեց հեռավորության վրա կախում են ոտքերից՝ գլխի մազերն ու մորուքը իրար կապած, իսկ մարմինները խարանում չիկացած երկաթով և այնպիսի եղանակներով այլանդակում, որոնց մասին ո՛չ կարելի է պատմել և ո՛չ էլ պատկերացում տալ... Ընդսմին, ամուսինների ներկայությամբ նրանց կանանց անարգում են, դուստրերին առևանգում... Ավելի լավ չէ՞ր լինի լուծյան մատնել Սասունի կոտորածը և աչք փակել սարսափների հանդեպ, քան կատաղության աստիճանի գրգռել թուրքերին և հետո նրանց հնարավորություն տալ, իրենց չարությունն ազատորեն թափելու քրիստոնյաների գլխին...

Սասունի կոտորածը, որը վրդովմունքի այնպիսի բուռն պոռթկումներ հարուցեց անգլիական ժողովրդի շրջանում, մեր լիբերալների վերջին կառավարության վրա չոչափելի ազդեցություն ունեցավ՝ նրան դրդեց ավելացնել նամակների, հեռագրերի և հյուպատոսական հաշվետվությունների թիվը... Լիբերալ կառավարությունը տակավին անցյալ սեպտեմբերին տեղյակ էր այդ կոտորածի հիմնական փաստերին և միջոցներ չխնայեց դրանք թաքցնելու համար... Տարաբախտ հայերը ներկայումս մատնված են էլ ավելի դաժան հալածանքների և կենդանահերձման: Այնուհանդերձ, մենք անհոգ սպասում ենք ինչ-որ բանի, որպեսզի տեղից չարժվենք: Ժամանակի այս խայտառակ վատնման պատասխանատվությունը, ինչպես մեզ հայտարարում են որոշ քաջատեղյակ քաղաքագետներ, ընկնում է Ռուսաստանի ուսերին, որի «թաքուն խարդավանքը, իրենց իսկ խոսքերով, անզոր է դարձնում Անգլիայի եռանդուն ձգտումները»: Սակայն փաստերին քաջատեղյակ լինելով՝ ասում եմ. «Ինչ արգելքների էլ որ հանդիպեր մեր կառավարությունը իր հայանպաստ գործունեության մեջ, դրանցից և ոչ մեկը կապված չէր «Մոսկվայի խարդավանքների» հետ: Ռուսաստանը հարեց Սասունի ջարդերը հետաքննելու մեր առաջարկությանը և ճշտիվ ու բարեխղճությամբ կատարեց այն ամենը, ինչ խոստացել էր... ոչ մի անձնական նախապաշարում կամ քաղաքական շահ չէր խոչընդոտում համակողմանի հետաքննության անցկացմանը...»:

«Նոր մեզ հասավ հետևյալ նամակը Մուշից,– գրեց "Daily News"-ը,– որն ուղարկված է Կարսի ռուսական հեռագրաթելի միջոցով: Կարևոր նամակի հեղինակը մեր հատուկ թղթակիցն է, որն ուղարկված էր Հայաստան՝ անձամբ տեսնելու կոտորածների վայրերը և անկողմնակալ քննել, թե որքանով են ճիշտ կամ սուտ տարածված լուրերը: Այդ պատասխանատու պաշտոնը ստանձնած մեր գործակալը, ծանոթ լինելով երկրին ու տեղական լեզուներին, լիովին ձեռնհաս է իր պարտականությունը կատարելու և... հաղթահարել է բոլոր դժվարությունները, որպեսզի կարողանա արժանահավատ վկաներից լսել և կամ անձամբ ստուգ փաստեր հավաքել»:[318]

Մուշ քաղաքից Դիլոնը փետրվարի 23-ին հեռագրում է.

«Կատարելով ձեր հանձնարարությունը և անելիքս հանդարտ ու հաջող առաջ տանելով՝ ահա ի զորու եմ ուղարկելու ձեզ առաջին զեկուցագիրս, թեև թուրքերը ծածուկ ու մշտապես ամեն հնար գործադրում են քննությունը խափանելու և դիտողի աչքից դեպքերն ու դրանց չարժահրինները թաքցնելու համար:

Դեռ պատվիրակների գալուց շատ առաջ, երբ հյուպատոս Հոլվորդն աշխատում էր Սասուն հասնել, թուրք պաշտոնյաները և մասնավորապես պատասխանատու բանակային հրամանատար Զեքի փաշան շտապում են ծածկել զարհուրելի կոտորածի հետքերը, որի գոյությունն անգամ Զեքին համառորեն ուրանում է, և որը, սակայն, ես պիտի նկարագրեմ: Փախստական հայերին մերթ հորդորելով, մերթ սպառնալով՝ հարկադրում են վերադառնալ իրենց ավերակ գյուղերը և քա-

[318] «Մուրճ», 1895, թիվ 3-4:

*բուքանդ տները վերաշինել: Գելիեգուզան, Սեմալ և Շենիկ գյուղերի չուրջը կանգնած զորքերն անգամ հրաման են ստացել հայ գյուղերը նորոգելու և վերականգնելու, ինչ որ նրանք մի կերպ անում են: Այնուհետև փորձում են դատարկել Գելիեգուզանի գյուղապետի տան հետևը գտնվող փոսը, որտեղ խառնիխուռն դցված են հարյուրավոր հոշոտված դիակներ, գլուխներ, ձեռքեր, ոտքեր, իրաններ, իբրև մի նեխած զանգված:*

*Միևնույն ժամանակ գալիս է թուրքական հանձնաժողովը Աբդուլլահ փաշայի առաջնորդությամբ և հայտարարում, թե ողորմած ու գթառատ սուլթանը հրամիրում է հայերին՝ հայտնելու իրենց տրտունջները և մերկացնելու քուրդ կամ թուրք զինվորների բոլոր չար գործերը, որովհետև վեհապետը որոշել է պատժել հանցավորներին և լիակատար հատուցում տալ զրկվածներին»:*

*Մի այլ նամակում, վերնագրված «Հայերին բնաջնջելու պաշտոնական քաղաքականություն», Դիլոնը գրում է, որ Հայաստանը հայաթափելու թուրքական քաղաքականությունն այնպիսի ծավալներ ունի, որ ևս մեկ կամ երկու տարի, ու Եվրոպան կհայտնվի այն իրողության առջև, երբ հայ տարրի թիվը չափազանց կրճատված լինելու պատճառով, նրա համար առանձին բարենորոգում մտցնելը դառնալու է անիմաստ:*

*Դրան հասնելու նպատակով է, որ ընդամենը երեք տարում անընդմեջ հափշտակությունների միջոցով միլիոնավոր սթերլինգ և հազարավոր օրավար հող քրիստոնյա հայերից անցավ մահմեդականների ձեռքը, և մեծ թվով հայեր ձերբակալվեցին, ծեծվեցին, տանջվեցին, թունավորվեցին, անհամար թվով կանայք ու մանուկներ այնպիսի գազանային լկականքներ կրեցին, որոնք նկարագրել անգամ չի կարելի որևէ քաղաքակիրթ ազգի լեզվով: Ալաչկերտի ամբողջ հովիտը հայազրկվեց:*

*Նույն չարժառիթով պետությունը փակեց իր ատյանների դռները հայերի առաջ: Դատարանին հայի գանգատվելը նկատվում էր անբարեմտության նշան և պատժվում էր որպես հանցանք: Մինչև համիդիեի կազմակերպումը դեռևս հնարավոր էր պետության քաղաքականության մեջ արդարության գոնե արտաքին նշույլներ գտնել, գոնե ձևի համար օրենքը հարգվում էր: Հետագայում այդ էլ վերացվեց: Գավառային ատյանի քրիստոնյա անդամին, որը նախկինում ձայն և ինչ-որ ազդեցություն ուներ, այլևս միայն մի պայմանով էին հանդուրժում՝ մշտապես լուռ նստել ու ձայն չհանել: Նույնը նաև մյուս ատյաններում: Դատարանը բանտի նախասենյակ դարձավ: Եթե բողոքողը քրիստոնյա էր, իսկ պատասխանողը՝ մուսուլման, քրիստոնյան էր բանտ նետվելու:*

*Առաջներում օսմանյան պաշտոնատարները սաստուցիներին նաև պաշտպանում էին քրդերի հարձակումներից, զորքերը երբեմն հետ էին մղում բաքրանլի քրդերին, որոնք ամռանը թողնում էին Տիգրանակերտի տոթակեզ չրջանները և գալիս Շատախի զով հարթություններ, հարձակվում Կուրտիկի հայ գյուղերի վրա, հարկ պահանջում: Դրա դիմաց հայերը բարեխղճությամբ վճարում էին պետական հարկերը: Բիթլիսի վալի Ռաուֆ փաշան խաղաղասեր էր տրամադրված հայերի հանդեպ, բայց հենց որ գործողության մեջ դրվեց նոր քաղաքականությունը, նա անմիջապես աշխատանքից ազատվեց, և նրա տեղը նշանակվեց չարագործ Թահսին փաշան: Այս նոր պայմաններում հայերի հանդեպ քաղաքականությունը ոչ միայն խստացվեց, այլև վտանգավոր դարձավ: Իշխանությունները սկսեցին քրդերին խրախուսել, որ գան, լեռնաշխարհը մաքրեն հայերից. «Վայրենի քրդերի գոտկատեղը փայլփլում էր կառավարության զինանոցների զենքերի շողքից, և նրանց քաջալերում էին կողոպտելու հայաբնակ գյուղերը, սպանելու հայ տղամարդկանց ու կանանց: Հայերին բանտարկում էին, տանջում, կախում, եթե նրանք իրենց անձը պաշտպանելու համար գեթ մի հարված հասցնեին»: «Հեղափոխական էր համարվում ամեն ոք, ով կփորձեր թեկուզ մի հարված հասցնել իր կնոջ կամ դստեր պատիվն անարգանքից փրկելու համար»:*

*Հայերի հարցին՝ «Արդյոք հնարավո՞ր է զենք ստանալ, որ ինքներս մեզ պաշտպանենք բաքրանլի և բաղչեջուխի քրդերից», պատասխանում էին՝ «Կբանտարկվեք և մահա-*

պատժի կարժանանաք, եթե հանդգնեք որևէ հրազեն գնել կամ պահել»: Հայերը, թե՝ «Ահա քրդերը եկել ու հարկ են պահանջում: Դուք մեզ կպաշտպանե՞ք, եթե նրանք քշեն մեր ոչխարն ու տավարը»: Հետևում էր պատասխան. «Գնացեք կորեք, անհավատ շներ, և ձեր գլխի ճարն ինքներդ տեսեք»: Սասունցիները խնդրում էին թուրք պաշտոնատարներին իրենց պաշտպանել, առանց իմանալու, որ «Սուլթանի պաշտոնատարները հանձնարարություն ունեին անզեն ու անպաշտպան թողնել հայերին և ուրախ էին, որ քրդերն ասպատակում էին հայ գյուղերը, վիրավորում տղամարդկանց ու պատանիներին, անարգում ու պատվազրկում կանանց ու աղջիկներին»: Հայ գյուղացիներից միայն մի քանիսը որոշեցին իրենց անձն ու ընտանիքը պաշտպանել: Եվ այդ մի քանիսը հեղափոխականի անուն ստացան:

Այդպես եղավ նաև 1893թ.: Բաքրանլի քրդերը Տիգրիսի ափերից հասան Սասուն՝ Կուրտիկ: Ճանապարհին, սովորության համաձայն, փորձեցին թալանել հայկական գյուղերը, սակայն տալվորիկցիները թույլ չտվին և դիմեցին իշխանություններին ավարառության առաջն առնելու համար: Պատասխանը վիրավորական էր, և հայերը փակեցին քրդերի ճամփան: Քրդերը հարձակվեցին հայկական գյուղերի վրա: Դա պատահական հարձակում չէր: Մինչ այդ քուրդ ավազանուն կանչել էին Բիթլիս, հանձնարարություն տվել հարձակվելու հայկական բնակավայրերի վրա: «Այդ բոլոր շները հեղափոխական են,— ասել էին նրանց,— և որքան շուտ չորացնենք դրանց արմատն, այնքան լավ»: Այս վերին աստիճանի կարևոր փաստը, որ ես լսել եմ մի քանի քրդերից, լիովին հաստատվում է նաև սասունցիների վկայություններով, ովքեր իմանալով, թե Բիթլիսի նահանգապետի և քուրդ շեյխ Մահմեդի միջև նամակագրություն կար հայերին կոտորելու վերաբերյալ, կարողացել են երկու անգամ բռնել սուրհանդակներին և ձեռք գցել նամակները: Լսելով, որ ոչ միայն Շատախի չրջանը, այլև իրենց տունն ու տեղն էլ են ասպատակության ենթարկելու՝ գյուղացիներն այս անգամ ինչ-որ չափով զինվում են... Տալվորիկցի 70 հայ պաշտպանության կանգնեցին: Շաքե անունով մի քաջասիրտ կին հանձն առավ վառոդ հասցնել նրանց: Քրդերը բազում անգամ շատ էին, իսկ հայերի դիրքերն էին հարմար: Մինչև իրիկուն կռվեցին: Շաքեն զոհվեց: Այդ օրը հայերը վեց, իսկ քրդերը 100 զոհ ունեցան: Քրդերը հեռացան: Սակայն իշխանությունները զայրացած էին և մի քանի գունդ ու թնդանոթ ուղարկեցին Տալվորիկ»:

Թահսինի նպատակը ոչ թե քրդերին պատժելն էր, այլ հայերին զինաթափելը:[319]

Մ'վ էր Տալվորիկի կռվի մեղավորը: Հայերը որևէ մեղք չունեին, քանի որ զբաղված էին խաղաղ աշխատանքով: Տալվորիկում կատարվածը «զինվորական, քաղաքացիական և հոգևոր պաշտոնատարների կողմից թելադրված» հարձակում էր: ...«Հայերը թե՛ հարձակման պահին և թե՛ հետո բոլորովին պատրաստ չէին կռվին...»: Թուրքերը, որպեսզի ապացուցեին, թե հայերն ապստամբել էին, ասում էին, որ «սասունցիք չորս հատ նոր հրացան ունեին»: Մինչդեռ թվով շատ անգամ գերակչիռ քրդերը բացառապես զինված էին կառավարությունից ստացած մարտինի հրացաններով: Եվ եթե «գյուղացիները զգոն չլինեին և վաղօրոք չիմանային, թե ինչպիսի նենգ դավ է նյութված իրենց դեմ, և հարմար դիրք չունենային, լրիվ կկոտորվեին արդեն 1893-ին, այլ ոչ թե 1894-ին»: Տալվորիկից հետո էլ, չնայած տեղեկատվության, որ թուրքերը նոր կոտորած են պատրաստում, սասունցիներն իրապես չզինվեցին՝ հնարավորություն չունենալու պատճառով: Կարողացան «մի քանի հրացան փախցնել Մուշից, մի քանի հրացան էլ պարտքով վերցրին քիրվո քրդերից, Մուրադը ճարեց վեց հրացան», որոնցից մեկը՝ մարտինի: Նույնիսկ թուրք պաշտոնատարներն էին հեգնում հայերի ապստամբական տրամադրությունների վերաբերյալ Բ. Դռան տարածած լուրերը: Դիարբեքիրի վալի Սուրրի փաշան այդ մասին զեկուցագիր ներկայացրեց, որի հետևանքով պաշտոնանկ արվեց: Եթե նախկինում իշխանությունները հետապնդում և ուզում էին բանտ նետել Զիլանի շեյխ Մուհամմեդին, որը «քաջ հայտնի էր որպես օսմանյան ամբողջ պետության ամենավատաթար անձանցից

[319] «Մուրճ», 1895, թիվ 3-4:

մեկը», անթիվ հրդեհների, գողությունների, առևանգումների և ասպատակությունների հեղինակ, իշխանությունների կողմից քաջալերվեց հայերի դեմ:

Նախապատրաստվելով վճռական հարձակման Սասունի վրա՝ թուրքական իշխանությունները նորից սկսեցին շահագործել Ջերակ գյուղի (Մուշից ինը կիլոմետրի վրա) բորակի հանքերը և վառոդ պատրաստել, հրամայեցին «վերացնել քրդերի, ավազակների գործած դիվային եղեռնագործության հետքերը և նրանց ազատել բանտերից՝ պայմանով, որ անմիջապես Սասուն գնան և օգնեն ընկճելու հայ գյուղացիների ըմբոստ ոգին»: Նրանց թվում էր նաև Քոռ Հուսեյինը: Նրա մտերիմ ընկերը վկայել է, որ դա արվել էր Պոլսի հրամանով: Անգամ այդ ավազակը, լինելով Սասունում, «սարսափած մնաց՝ տեսնելով թուրքերի արարքները»:

Դիլոնը միանգամայն իրավացի է, երբ կանխագուշակում է հայերին սպառնացող նոր արհավիրքների իրական վտանգը:

Մարտի 18-ին "Daily Telegraph"-ը նորից անդրադարձավ Դիլոնի գործունեությանը. «Մեր քաջարի և կատարյալ չենթարկվող թղթակիցը, մեր և մարդկության հանդեպ իր պարտականությունը կատարելիս, ամեն անգամ վտանգում է իր կյանքը... Նա ձեռնարկել է այս ուսումնասիրությունը որպես տեղական պայմաններին քաջածանոթ, անկողմնակալ և ազնիվ կողմնորոշմամբ անձնավորություն: Ուստի հարկ ենք համարում խստորեն կշտամբել սըր Բարթելդի զրպարտությունն ու լրբությունը՝ նա թույլ տվեց իրեն... խորհրդարանում կասկածի ստվեր ձգել (Դիլոնի) զեկուցագրերի ճշմարտության վրա»:

Կեղծարարությունների ակունքը մնում էր ելդըզը: "Daily News"-ը ապրիլի 16-ին գրեց, թե, ընդունելով Վիեննայի "Neue freie Presse" լրագրի հրատարակիչ է. Բախերին, սուլթանն ասաց. «Թե՛ քաղաքական և թե՛ վարչական գործերում ինձ առաջնորդող սկզբունքներն են՝ չափավորությունը և հավասար հոգածությունը բոլոր հպատակների հանդեպ, առանց խիստ միջոցների դիմելու: Հույս ունեմ, որ վերջերս օրինական ճանապարհից չեղված իմ հայ հպատակները կզղջան և գործով ցույց կտան ինձ այդ զղջումը: Իմ պետության մեջ ապրող հայերը միշտ օգնություն և հովանավորություն են գտել իմ կողմից, և նրանց երևելիներից շատերը բացառապես մեր տոհմի բարեսիրության շնորհիվ են հարստություն և դիրք ստացել: Հետևաբար, վերջերս իրենց հպատակության պարտքին հակառակ ընթացք ցույց տվող հայերի վրա ես նայում եմ որպես մոլորված որդիների վրա, ովքեր գայթակղվել են օտարների սադրանքներից...»: Սուլթանի հեղինակած այս կեղծիքին, որը թուրքերի կողմից օգտագործվում է մինչև օրս, հետևեց կեղծիքների մի ամբողջ շղթա: Անգլիայում Քսիմենես անունով մեկը գրքույկ հրատարակեց՝ նվիրված Փոքր Ասիա կատարած իր ճանապարհորդությանը, որում նա գլխիվայր է շուռ տալիս ոչ միայն Սասունի իրադարձությունները, այլև արևմտահայության վիճակն ամբողջությամբ վերցրած: "Revue d'Orient"-ում այդ գրքույկի պաշտպանությամբ հանդես եկավ Վամբերին, որը Գում Գափուի դեպքերի ժամանակ փորձեց ստանձնել միջնորդի դեր, սակայն անհաջողության մատնվեց, որովհետև դիմում էր ամեն տեսակի կեղծիքի: Ըստ նրա, Թուրքիան չնաչխարհիկ երկիր է, իսկ հայերը՝ խառնակիչներ: Սասունի դեպքերից հետո սուլթանին թեթևակի հանդիմանեց բարեկործությունները ձգձգելու համար, սակայն աչքատեց հասարակայնության ուշադրությունը բևեռել այն մտքի վրա, թե Եվրոպայի միջամտությունը կարող է վերացնել քրիստոնյաների հանդեպ սուլթանի ավանդական ներողամիտ քաղաքականությունը:

Թուրքական կեղծարարությունների կառքին լծված "Новое время"-ն ավելի հեռուն գնաց՝ հերքելով ի վնաս թուրքերի ռուսական մամուլում տպագրված բոլոր նյութերը: Թերթը հավաստի էր համարում միայն թուրքական «պաշտոնական հաղորդագրությունները», իսկ դրանք հաստատում էին, որ Արևմտյան Հայաստանում «լրիվ հանգստություն էր տիրում»: Սակայն ռուսական մամուլի գործիքությունը բավարար չէր, և սուլթանը համառորեն շարունակում էր գնել եվրոպական, մասնավորապես անգլիական ու գերմանական թերթերը: Նախկինում օտար թերթերի թղթակիցներն իրենք էլ էին

*թարգմանիչ վարձում, ինչը Բ. Դուան համար քարոզչական դժվարություններ էր ստեղծում: Դրա համար էլ մշակվեց Թարգմանիչների կանոնադրություն, համաձայն որի՝ թարգմանչությամբ զբաղվել կարող էին նրանք, ովքեր ունեին համապատասխան վկայական, որն ստանալու համար պահանջվում էին տեղեկանքներ ու երաշխավորություններ: Նաև հաստատվեց հրահանգ, համաձայն որի՝ հյուրանոցների բոլոր աշխատողները պարտավոր էին ոստիկանությանը մանրամասն տեղեկություններ հաղորդել «ամեն մի եկողի ու մեկնողի մասին»: Հյուրանոցներում բնակվողների ցուցակները ոստիկանության կողմից մանրակրկիտ ուսումնասիրվում էին, նրան իրավունք վերապահվեց խուզարկելու հյուրանոցները:*

*Գլադսթոնն ապրիլի 3-ին հայտարարեց. «Մեր չուրջը մի չարամիտ խաղ են խաղում. բարեհորոգումներ խոստանալով՝ մեզ հետ կանգնեցնել որևէ ազդու քայլից: Դատարկ խոսքեր են թուրքի խոսքերը, անարժան անգամ այն օդին, որ արտաշնչում են դրանք կրկնելիս»*[320]:

[320] «Արձագանք», 1895, թիվ 40:

## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

# 1895-96 ԹԹ. ՋԱՆԳՎԱԾԱՑԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

### 1. ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՄԱՑԻՍՑԱՆ ԾՐԱԳԻՐ

*Սասունի կոտորածը նորից առաջ քաշեց հայկական բարենորոգումների հարցը և այնպիսի ուժգնությամբ, որ Ա. Արասխանյանը գրեց. «Ներկա դեպքում ծանրակշիռ քաղաքական խնդիրը ոչ միայն Սասունի կոտորածն է, այլև այն դիրքը, որ բռնեց Անգլիան հայկական խնդրում Սասունի կոտորածների պատճառով»: Նա գտնում էր, որ Սասունի կոտորածի հետևանքով հայկական հարցը «չատ է մոտեցել Արևելյան խնդիր դառնալու վախճանին»: «Սասունի կոտորածները եկան բարձրացրել վկայելու Թուրքիայի կառավարության կատարյալ անկայունությունը այն նահանգներում», որոնց պատկանելն «այնքան մեծ քաղաքական նշանակություն ունի մասնավորապես Անգլիայի համար»[1]:*

*Սուլթանին առաջարկվեց ստեղծել հանձնաժողով, որը մշակեր բարենորոգումների ծրագիր և ներկայացներ տերություններին: Այդ հանձնաժողովի գործունեությունը պետք է ելակետ ունենար հետևյալ սկզբունքները: Հայաստանի գլխավոր հիմնահարցը անձի, հոգևոր կյանքի և ունեցվածքի անվտանգությունն էր: Խնդրի լուծման համար նպատակահարմար էր համարվում ստեղծել խառը ժանդարմերիա և այն դնել եվրոպական սպաների հրամանատարության տակ: Ժանդարմերիան հարկահանությամբ չպետք է զբաղվեր:*

*Վարչական կառավարմանը քրիստոնյաների լայն մասնակցությունը պարտադիր պետք է համարվեր այն նահանգներում, որտեղ հայ բնակչությունը մեծամասնություն էր կազմում: Նահանգների ազգությունները իշխանության մարմիններում ներկայացուցիչներ ունենալու էին ըստ իրենց թվաքանակի, քանի որ միայն թուրքերով համալրված իշխանության մարմինները անօրինություններ էին գործում քրիստոնյա բնակչության հանդեպ: Որպես ապացույց Բ. Դուանը ներկայացվեց հետևյալ փաստը. հայաբնակ մի գյուղի մերձակայքում գտել էին թուրքի դիակ, և վալին հրամայել էր բանտ նետել այդ գյուղի բոլոր տղամարդկանց:*

*Նախատեսվում էր հայաբնակ նահանգները միավորել կայսրական կոմիսարի ղեկավարության տակ, որին պետությունների համաձայնությամբ նշանակելու էր սուլթանը: Կար նաև կարծիք, որ կոմիսարը նշանակվեր տերությունների կողմից, լիներ եվրոպացի և ազատ սուլթանի վերահսկողությունից. նահանգային պաշտոնատարներն էլ հաշվետու լինեին ոչ թե Բ. Դուանը, այլ կոմիսարին: Պահանջվում էր զրդեների զինաթափում:*

*"Daily News"-ը 1895թ. փետրվարի 18-ին գրում է. «Ռուսաստանի, Ծրանսիայի և Բրիտանիայի դեսպանները ցուցում են ստացել իրենց կառավարություններից՝ պահանջել Բ. Դռնից ընդհանուր նահանգապետ նշանակել Քրդստանում (Արևմտյան Հայաստանում) մինչև ռամազանի տոնը»: Նաև քայլեր էին կատարվում ձևավորելու միջազգային հանձնաժողով՝ քննելու «քրիստոնյաների վիճակը, ազատելու թուրքական բանտերում եղած բանտարկյալներին (քաղաքական), որովհետև գործող հետաքննիչ հանձ-*

[1] «Մուրճ», 1895, թիվ 6:

նաժողովը տեղական նշանակություն ունի և չոշափում է միայն Սասունում տեղի ունեցած տխուր անցքերը»[2]:

Մարտի 8-ին "Times"-ը գրում է. «եթե Անգլիան առաջարկի մի դեսպանաժողով գումարել Հայաստանում հիմնավոր բարենորոգումներ մտցնելու նպատակով, թվում է, թե պետություններից ոչ մեկը դրան դեմ չի լինի... Սակայն Բ. Դուռը գուցե կամենա պետությունների միջամտության առաջն առնել և որոշի բարենորոգումներն ինքը անցկացնի, ինչպես, օրինակ, հայկական չորս նահանգներում քրիստոնյա գլխավոր նահանգապետ կարգել և խառը ժանդարմերիա կազմել»:

Իհարկե, Բ. Դուռը դրան չգնաց: Մանավանդ «բարենորոգումների խնդրում վերջին խոսքը թողնված էր Թուրքիային... Նույնիսկ խառը ժանդարմերիա կազմելու պահանջը վախ չպատճառեց, որովհետև քրիստոնյա ժանդարմները... գտնվելու էին մահմեդական սպաների հրամանատարության տակ»[3]:

Ասվածից հետևում է, որ սուլթանից պահանջվում էր Արևմտյան Հայաստանին տալ վարչական ինքնավարություն հիշեցնող կարգավիճակ: Սակայն իրադարձությունների հետագա ընթացքը դեն նետեց այդ պահանջը, որը շատ ավելի սուլթանին ահաբեկելու, քան իրականություն դառնալու խնդիր ուներ: Ա. Արասխանյանը «Մուրճ»-ի 1895թ. թիվ 3-4-ում տպագրած ծավալուն հոդվածում վերլուծում է խնդրի բովանդակության մեջ կատարված փոփոխությունները: Նա գրում է. «Դեկտեմբերին Թուրքիան, Սասունից եկած լուրերի առիթով իրեն տեսնելով Եվրոպայի արդար զայրույթի հանդեպ, խոստացավ թուրքահայ երեք նահանգները միավորել մի առանձին կառավարության ներքո՝ որոշ ինքնավար իրավունքներով...»: Անգլիան գնալով ուժեղացնում էր ճնշումը Թուրքիայի վրա: Իսկ Թուրքիան խրախուսվում էր Ֆրանսիայի, Գերմանիայի և Ռուսաստանի բռնած դիրքից: Մարտի 28-ին Լոնդոնում արտաքին գործերի նախարար լորդ Քիմբերլեյին մի պատվիրակություն ներկայացավ Հայոց հարցի խնդրով: «Ներկայումս բոլորին զբաղեցնող հարցը միայն Սասունի առանձին դեպքը չէ,— ասաց նախարարը,— այլ հայերի կյանքի, ունեցվածքի, կրոնի, պատվի ապահովումը: Խնդիրը միայն գազանությունների հեղինակներին պատժելը չէ, այլ այնպես անելը, որ դրանք չկրկնվեն: Միակ ելքը բարեփոխումներն են... Բարեփոխումների իրականացման գործում գլխավոր դժվարությունն այն է, որ Հայաստան ասելով չպետք է հասկանալ մի երկիր, որը բացառապես բնակեցված է հայերով: Ոչ, այն ասիական Թուրքիայի մի մասն է, որը սովորաբար կոչվում է Հայաստան, որտեղ մեծ թվով հայեր կան և շատ տեղերում խիտ են բնակեցված: Սակայն այնտեղ կա նաև մի մեծ մահմեդական ազգաբնակչություն, որը որոշ նահանգներում մեծամասնություն է կազմում: Կան նույնպես հայկական շատ համայնքներ, ցրված թուրքական կայսրության ասիական մասի զանազան վայրերում և, թեև շատ էլ բազմաթիվ չեն, բայց նույնպես արժանի են համակրանքի ու չպետք է անտեսվեն... Մի բան պարզ է, որ սուլթանի հպատակների մեծ մասը դժգոհ է հոռի կառավարումից մինչև այն աստիճանի, որ հարկադրված է հեղափոխական մտքեր սնուցել»[4]:

Այնուամենայնիվ, բարենորոգումների ծրագիր մշակելու նախաձեռնության հեղինակը Լոնդոնն էր, որը 1895թ. փետրվարին Պետերբուրգի, Փարիզի և Կ. Պոլսի իր դեսպանների միջոցով պաշտոնապես առաջարկեց, որ անհրաժեշտ է Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ մտցնել: Բարենորոգումների ծրագրի նախագիծը մշակեցին Կ. Պոլսում Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանությունները: Դրա քննարկմանը մասնակից էին նաև Գերմանիայի, Իտալիայի և Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչները: Դեսպանները ծրագրի նախագիծը հանձնեցին սուլթանի քարտուղար Թահսինին և արտաքին գործերի նախարար Սայիդին՝ հայտարարության հետ միասին, որը

---

[2] «Արձագանք», 1895, թիվ 30:

[3] Նույն տեղում, թիվ 56, արտատպություն "Новости"-ից:

[4] «Մուրճ», 1895, թիվ 3-4:

Բ. Դուանը խորհուրդ էր տալիս նախագիծը լրջորեն քննարկել և ընդունել: Եթե այդ ծրագրի սկզբունքային նշանակության հոդվածները չընդունվեին, նշվում էր հայտարարության մեջ, չէր բացառվում տերությունների նոր համաժողովի հրավիրումը: Դրանից սուլթանը երկնչում էր, քանի որ այդպես էլ կյանքի չէր կոչել ո՛չ Բեռլինի և ո՛չ էլ մի քանի ուրիշ պայմանագրեր: Որպեսզի խափաններ բարենորոգումները, դեռ փետրվար ամսին նա Ա. Կարաթադորիին հանձնարարեց մշակել բարենորոգման ծրագրեր ամբողջ Անատոլիայի, իսկ ապա նաև՝ Սեբաստիայի, Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթների համար: Կարաթադորին մշակում է այդ ծրագիրը, որից հետո հաստատվում է կայսրական կոմիսար՝ բարենորոգումները նախապատրաստելու համար: Քիչ անց Կարաթադորին նշանակվում է այդ չորս վիլայեթների միացյալ նահանգապետ: Նա ազգությամբ հույն էր, Բեռլինի կոնգրեսում օսմանյան պատվիրակության ղեկավարը, կայսրության ԱԳ նախարարը. սուլթանը հույս ուներ, որ Եվրոպան իր այդ քայլը կողջուներ: Սակայն չուտով Կարաթադորին հանձնաժողովի նախագահի պարտականությունից ազատվեց, և հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ Կրետեի վալի Թուրքանի նախագահությամբ:

Հայկական հարցի նոր հանձնաժողով կազմելու մասին չարունակվող խոսակցությունները թուրքերին չփոթեցնում էին, որովհետև նման պահանջով հանդես էին գալիս թե՛ Անգլիան և թե՛ Ռուսաստանը: Նրանց հետ համերաշխվեց նաև Ֆրանսիան: Իսկ Գերմանիան հասկացնում էր, թե համաժողովին դեմ չէ:

Ըստ սուլթանին ներկայացված ծրագրի, որն ստացավ Մայիսյան ծրագիր անունը (այն Բ. Դուանը հանձնվեց 1895թ. մայիսի 11-ին), բարենորոգումները ներառնելու էին Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Սեբաստիայի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթները: Նահանգային մի շարք պաշտոններ դառնալու էին ընտրովի, ներում էր չնորհվելու քաղաքական բանտարկյալներին, բարենպաստ պայմաններ էին ստեղծվելու, որպեսզի արտագաղթած և աքսորված հայերը վերադառնային, Կ. Պոլսում ստեղծվելու էր վերահսկիչ հանձնաժողով բարենորոգումների ընթացքին հետևելու համար: Իշխանությունները պետք է հատուցեին հայերին հասցրած նյութական վնասները, թույլ չտային բռնի կրոնափոխություն, վերականգնեին և գործողության մեջ դնեին տարբեր ժամանակներում հայերին տրված առանձնաշնորհումները:

Սակայն գլխավորը վարչական բնագավառին վերաբերող կետերն էին, որոնք նախատեսում էին իշխանության տեղական մարմիններում քրիստոնյաների համամասնական մասնակցությունը: Նույնը և ժանդարմերիայի ու դատարանների ձևավորման բնագավառում: Արմատական փոփոխություններ էին առաջարկվում հարկերի բաշխման և հավաքման գործում: Նախատեսվում էր հարկերից ստացված գումարների մի մասը ծախսել տեղական կարիքների համար: Պարտադիր էր համարվում քրդերի զինաթափումը և այլն:

Բարենորոգումների ծրագրի նախագիծը հայերի շրջանում մեծ ոգևորություն առաջացրեց: Մայիսի 11-ին մոտ 20 հազար մարդ հավաքվեց Սբ. Փրկչի հիվանդանոցի բակը, որի փոքրիկ եկեղեցում պատրիարքը պատարագ մատուցեց: Ապա թափորը նրա առաջնորդությամբ սպիտակ դրոշներով և հայրենասիրական երգերով. «Կեցցե՛ Իզմիրլյանը» կարգախոսով անցավ հիվանդանոցի այգին, որտեղ տեղի ունեցավ հանրահավաք: Ոստիկանությունը չմիջամտեց, բայց հաջորդ օրը շուրջ 50 հոգի բանտ նետվեց:

Սուլթանը գոհունակ զարմանք արտահայտեց ծրագրի նախագծի չափավորության առնչությամբ, սակայն երբ Քյամիլին հարցրեց, թե այդ ծրագիրը գործադրելի՞ է, ու դրական պատասխան ստացավ, կատաղած չպրտեց՝ «Դավաճան»: Նա ծրագիրը մերժեց՝ պատճառաբանելով, թե դրանում կետեր կան, որոնք չոչափում են սուլթանի բացարձակ իրավունքները: Մերժվում էին հիմնականում այն կետերը, որոնք հայկական նահանգներում ներքին-վարչական ինքնավարություն էին նախատեսում: Շուտով Լոնդոնում լուրեր տարածվեցին, թե Աբդուլ Համիդը Ռուսաստանին ինչ-որ գաղտնի առաջարկու-

թյուն է արել: Ռուսաստանն իրոք բարենորոգումների հարցում վերապահ կեցվածք էր որդեգրել: Անգլիայի դեսպանը Պետերբուրգից հեռագրեց. «Տեսա իշխան Լոբանովին: Անհամբերությամբ սպասում է դեսպանների առաջարկին: Նրա կարծիքով՝ հայերը մեծամասնություն էին կազմում միայն Բիթլիսում, Անկարայում և Ալեքսանդրեթում, իսկ այդ երեք քաղաքներն իրարից այնքան հեռու են, որ անհնար է մի նահանգի մեջ միավորել: Հայերը ցրված են ամբողջ երկրում, ավելի ճիշտ ամբողջ աշխարհում... այսօր գոյություն չունի մի կետ, որը կարողանա Հայաստան կոչվել: Հետևաբար տվյալ պարագայում չի կարելի նկատի առնել Լիբանանի կարգավիճակը»[5]: Ռուսական թերթերը գրեցին, թե որևէ պատճառ չկա Հայկական հարցի համար հարաբերությունները վատացնելու Բ. Դռան հետ[6]: Նույնիսկ սկսեցին վարկաբեկիչ տեղեկություններ տարածել հայերի վերաբերյալ, թե 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հայերը ֆինանսական մեծ օգնություն են ցույց տվել սուլթանին: Լոբանովը Նելիդովին հեռագրեց, որ Ռուսաստանը վճռականապես դեմ է Անատոլիայում Հայկական Թագավորությանը նմանվող նահանգի ստեղծմանը: Իսկ երբ ստացվեց սուլթանի մերժողական պատասխանը, հայտարարեց, թե նման պատասխանը սպասելի էր, և եթե սուլթանը նույնիսկ ընդուներ ծրագրի նախագիծը, ինքը հավանություն չէր տա:

Թերևս Պետերբուրգի այդ վերապահ կեցվածքը վճռական դեր խաղաց, որ նախագծի ինքնավարության հետ առնչվող կետերը վերախմբագրվեցին և փաստաթղթի բովանդակությունը հանգեցվեց լոկ վարչական, դատական և ֆինանսական բարեփոխումների:

Սխալ է այն կարծիքը, թե «Բարենորոգումների Մայիսյան ծրագրի առկայությունը տպավորություն էր ստեղծում, թե դեպի ինքնորոշում Հայաստանի գործը տեղից չարժվում էր»[7]: Այնուամենայնիվ սուլթանն այս տարբերակը ևս մերժեց և հունիսի 3-ին հրապարակեց բարենորոգումների ծրագրի իր նախագիծը, որի մասին Պ. Կամբոնը գրեց, թե այն չի կարող հիմք հանդիսանալ նույնիսկ քննարկման համար: Սուլթանը մաքիավելիական խաղի մեջ էր բարենորոգումները ձախողելու համար: Օ. Նուրին գրում է, որ անգամ «բարենորոգում բառը վրդովեցնում էր Աբդուլ Համիդին և գրգռում նրա ոճրային բնազդները... նրա միակ նպատակը դարձավ թույլ չտալ Եվրոպայի միջամտությունը, ի չիք դարձնել անգլիական ազդեցությունն Անատոլիայում, միաժամանակ ներկայանալ իբրև գործիչ, որն անհրաժեշտ նախազգուշական միջոցներ է ձեռնարկել վերահաս հեղափոխությունը կանխելու համար»[8]: Նա համառորեն այն թեզն էր առաջ մղում, թե «Սասունի կողմերում ապստամբած հայերի դեմ զորք ուղարկելով, ապահովել է անդորրությունն ու խաղաղությունը»: Նաև նպատակ էր հետապնդում Սասունի ջարդի հետաքննության հարցում խոչընդոտել Ռուսաստանի ու Ֆրանսիայի մերձեցմանն Անգլիային[9]: Նորից առաջարկեց բարենորոգումներ մտցնել ոչ միայն հայաբնակ նահանգներում, այլև ամբողջ կայսրությունում: Իսկ երբ տեղեկացավ, որ Դիարբեքիրում Ֆրանսիայի հյուպատոսը հայտնել է, թե քրդերը մտադիր են նորից հարձակվել հայերի վրա, իսկույն հայտարարեց՝ բարենորոգումների ծրագիրը քննարկելու ժամանակը չէ: Եթե ռուսական և ֆրանսիական մամուլի ու դիվանագիտության ջանքերով այլևս խոսք չէր գնում Հայաստանի ինքնավարության մասին, ապա Գլադստոնը գտնում էր. «Հայկական հարց ասելով պետք է հասկանալ հայկական նահանգներին ինքնավարություն տալ, անջատելով այդ նահանգները օսմանյան պետության ընդհանուր վարչակազմից»[10]: Դրան "Новое время"-ն պատասխանեց, թե ինքնավարության հարցը բխում է Անգլիայի շահերից, և «մենք բոլորովին չենք զարմանում, որ այդ առթիվ Լոնդոնում ուրախանում են»:

---

[5] «Մուրճ», 1895, թիվ 6:
[6] Նույն տեղում, թիվ 1:
[7] Тунян В., նշվ. աշխ., էջ 21:
[8] Նուրի Օսման, նշվ. աշխ., էջ 838:
[9] Նույն տեղում, էջ 851:
[10] «Մուրճ», 1895, թիվ 1:

թերթը գոհունակությամբ է նշում, որ «Հայաստանում կատարված թուրքական անգթությունները վրդովեցուցիչ արձագանք չգտան մեր կառավարական շրջանակներում, որոնք իմաստուն հանգստություն են պահում»[11]:

Տրամագծորեն հակամետ կարծիքների խառնաշփոթում չեզոքացվում էր տերությունների ձեռնարկների ազդեցությունը և հրապարակում մնում էին միայն բանավոր կամ գրավոր արտահայտությունները կոտորածների ու դրանց հեղինակների հասցեին: "Daily News"-ը գրեց, որ հայ ազգի դժբախտություններն «այնպիսի արարածների գործն են, ովքեր ոչինչ մարդկային չունեն, բացի արտաքինից և որոնք թեև զորք-ոստիկաններ չեն, բայց միևնույն է՝ գազաններ են: Քուրդ և թուրք զինվորները, որոնք գործակցում էին այդ գազաններին, 19-րդ դարում քրիստոնյաների հանդեպ նույնն էին, ինչ որ Ներոնի և Դիոկղետիանոսի զինվորները առաջին և երրորդ դարերում»[12]:

"Неделя" թերթի 1895թ. № 41-ում տպագրված «Գերված ժողովուրդ» հոդվածում կարդում ենք. «Տերությունների միջև տագնապալից դժտությունները սկսել են ազդել Հայկական հարցի վրա: Փոխանակ միասնաբար և վճռականորեն պահանջեն Բ. Դռնից անհապաղ կատարելու Հայաստանում բարենորոգումներ մտցնելու վերաբերյալ դեռ 17 տարի առաջ վերցրած պարտավորությունը, օգտվում են առիթից՝ կողմնակի և հին հաչիվներ մաքրելու: ...Թուրքական կառավարությունը նկատում է այդ... և դիմում է արևելյան քաղաքականության սովորական միջոցներին՝ խոստանում է, որպեսզի չկատարի, հարցի լուծումը հետաձգում է, ձգձգում և բարդացնում սպասումների մեջ, մինչև որ քաղաքական այլևայլ իրադարձություն տերությունների ուշադրությունն ուրիշ կողմ չուղ տա: Հայերն այդ շատ լավ են տեսնում և հուսահատված դիմում են չուտափուլթ, անխոհեմ, գուցե իրենց գործի համար կործանարար, բայց միանգամայն հասկանալի միջոցների... Նրանք ամբողջ հարյուրամյակներ սպասել են ազատության և չեն հասել»: Թուրքական տիրապետության տակ եղած շատ ժողովուրդներ ազատագրվեցին, իսկ իրենք չարունակում են մնալ «ասիական հորդայի իշխանության տակ..., որը բարբարոս է և կանգ չի առնում ահավոր գազանությունների առջև», տերությունները չարունակում են հապաղել, չնայած երբ «ցանկանում են, իրենց կամքն են թելադրում կիսափտած Թուրքիային»: «Բավական էր խաղաղ, բայց համառ պահանջը Հայկական հարցը լուծելու»: Դրա համար անհրաժեշտ էր տերությունների միասնությունը և անկեղծ ցանկությունը օգնելու տառապյալ ժողովրդին: Մինչդեռ «բոլոր երկրներում պարզ ու բարի գիտակցությունը մթագնվում է չովինիստների և quasi-հայրենասերների աղմուկով, որոնք հայերի անունով բարբառում են իրենց երկրների «հեղինակության», «իրավունքների» և «առավելությունների» մասին»:

Այդ նեղ պոլիտիկանությունից զերծ չէին նաև ռուսական որոշ թերթեր, որոնք կառավարությանը խորհուրդ էին տալիս՝ դեն նետել Հայկական հարցը և պաշտպանել Թուրքիայի իրավունքները: Կային նաև թերթեր, որոնք գտնում էին, թե թուրքական տիրապետության խայտառակությունների մեղքն ամենից առաջ ընկնում է «մեծ և ուժեղ քրիստոնյա ժողովուրդների վրա»: Եվ իզուր են «քրիստոնյա եղբայրները» դատապարտում հայերին թուրքական ճնշումները թոթափելու ձգտման ու գործողությունների համար, որովհետև այդ ճնշումներն այնպիսի ծավալներ ու բնույթ էին ստացել, որ դարձել էին անտանելի: Մինչդեռ դատապարտում էին, որովհետև «քրիստոնյա պետությունների քաղաքականությունը ներծծված էր հեթանոսական հաշվենկատությամբ»: Նրանց ի՞նչ հոգսն է, թե «102 գյուղ կործանվել էր միաժամանակ, իսկ դրանցից 89-ը՝ հրո ճարակ դարձել», իրականացվել էր զանգվածային կոտորած: Ի՞նչ է մնում անել ժողովրդին: Միայն մեկ բան՝ պայքարել այնքան ժամանակ, քանի դեռ չարության ոգին տիրապետող է:

---

[11] Նույն տեղում:
[12] «Մշակ», 1895, թիվ 99:

Ռուսաստանն իրավունք չունի անտարբեր մնալու, քանի որ Հայաստանի զգալի մասն իր կազմում է: Եթե նույնիսկ «հայկական բարենորոգումներում լինի անչահեկանության նշույլ, արդյո՞ք մեծ ժողովրդին պատվաբեր է իր ողորմելի օգուտները բարձր դասել փոքր հարևանի ամենաթանկագին արժեքից»[13]:

Ջեսթերնում արտասանած ճառում (26-ը հուլիսի 1895թ.) Գլադսթոնն ասաց. «Եվրոպական երեք մեծ կառավարությունները, որոնց հպատակության տակ է 209 միլիոն մարդ, ինչը Թուրքիայի ազգաբնակչության թիվը գերազանցում է 8 կամ 10 անգամ, կառավարություններ, որոնց հնարավորությունները 20, իսկ ազդեցության ուժը 50 անգամ գերազանցում են թուրքականին, որոնք հայկական հարցի կապակցությամբ վերցրել են պարտականություններ, եթե սուլթանի և օսմանական վարչության ընդդիմության պատճառով նահանջեն, կխայտառակվեն ամբողջ աշխարհում...»[14]:

Սասունի իրադարձությունների հանդեպ տերությունների վերաբերմունքն ուղիղ համեմատական էր կոտորածներին նրանց տված գնահատականներին ու հետևություններին: Վճռորոշը Ռուսաստանի և Անգլիայի դիրքորոշումներն էին: Հարցն ավելի խճճված ու վտանգավոր էր դառնում, որովհետև հայկական հարցում այդ երկու տերությունները, չախմատային լեզվով ասած, փոխատեղման էին ենթարկվել: Եթե 1878թ. Անգլիան էր Ռուսաստանից պաշտպանում Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը, ապա 1895-ին՝ ընդհակառակը, status quo-ն պաշտպանողի, սուլթանական քաղաքականությունը սրբագործողի դերում հանդես էր գալիս Ռուսաստանը:

1896թ. սեպտեմբերին "Spectator" շաբաթաթերթը հույս հայտնեց, թե վերջապես տերությունները հայկական հարցում համաձայնության կգան, ինչը հնարավոր է միմիայն Օսմանյան կայսրության տարածքների բաժանման միջոցով, իսկ եթե նորից հաղթի status quo-ի քաղաքականությունը, ապա հարկ է, որ սուլթան Աբդուլ Համիդը փոխարինվի մեկ ուրիշով[15]: Նույն թվի աշնանը Նիկոլայ 2-րդը Լոնդոնում, անդրադառնալով այդ խնդրին, ասաց. «Հարկադրանքի միջոցով Թուրքիայից տարածքներ խլելը վտանգավոր է ցանկացած տերության համար, քանի որ կսրի հարաբերությունները պետությունների միջև և կհասցնի պատերազմի...»: Մյուս կողմից՝ «վտանգավոր է ամեն ինչ թողնել այնպես, ինչպես է», որովհետև Օսմանյան կայսրությանը սպառնում է ֆինանսական կրախ, որին կհետևի որոշ տերությունների... միջամտությունը, ինչն առիթ կդառնա եվրոպական պատերազմի համար[16]: Սոլսբերին պատասխանեց, թե status quo-ն չարունակում է մնալ Անգլիայի քաղաքականությունը:

Սկզբում ցարը գտնում էր, որ Աբդուլ Համիդի գահընկեցությունն անհրաժեշտություն էր, իսկ ապա այդ մտքից հրաժարվեց, թե դա վատ կընդունվի աշխարհի մահմեդականության կողմից: Նա նաև դեմ եղավ սուլթանի վրա հովանավորություն սահմանելու անգլիական առաջարկին: Ցարը միաժամանակ պահանջում էր Ռուսաստանին տալ Բոսֆորն ու Դարդանելը, քանի որ Նելուցները «հանդիսանում են այն սենյակի դռները, որտեղ նա բնակվում է և պահանջում է այդ դռների բանալին»: Նա ծաղրեց անգլիական քաղաքական գործիչներին, ովքեր կողմ էին, որ Ռուսաստանը բռնագրավեր Հայաստանը, որովհետև դա «չատ թանկ ձեռնարկ էր և Ռուսաստանին փոխհատուցում չէր բերի»:

Ռուսաստանի Թուրքամետ քաղաքականությունը մեծ լիցք ստացավ, երբ գահ բարձրացավ Ալեքսանդր 3-րդը: Արևելահայ գործիչները կաթողիկոս Խրիմյանին հորդորեցին մեկնել Պետերբուրգ և ցարին խնդրել, որ իր հովանավորության տակ վերցնի արևմտահայերին: Ցարական իշխանությունները հայերի հոգևոր առաջնորդին հարկա-

---

[13] *Положение армян в Турции...*, стр. 432-436:

[14] *Положение армян в Турции...*, стр. 27:

[15] *"The Spectator"*, 05. 09. 1896, p. 292.

[16] *Lord Solisbury's Conversations with the Tzar at Balmoral, 27 and 29 September, 1896. "The Slavonic and East European Review"*, 1960, vol. 39.

դրեցին ամիսներ չարունակ սպասել Նոր Նախիջևանում, որպեսզի «սուլթանը համոզվեր, թե այդ ուղևորությունը քաղաքական նշանակություն չուներ»: Արևելահայ գործիչները վախով էին ընդունում Լոբանովի նշանակումը ԱԳ նախարար, որը նույնպես դեր խաղաց Անգլիայի հետ հայ գործիչների հարաբերությունների սերտացման գործում, ինչը Պետերբուրգում ծայրաստիճանի թշնամաբար էր ընդունվում: Թիֆլիսահայությունն ուղերձներ, նվերներ էր ուղարկում Գլադստոնին, մինչդեռ ոչ մի դիմում չէր հասցեագրվում ցարական կառավարությանը:

Ընդունելով կաթողիկոսին՝ Լոբանովն ասաց՝ ոչ թե թուրքերն են հարձակվել հայերի վրա, այլ հայերն են ապստամբել և հարձակվել թուրք ժողովրդի վրա: Ռուսական իշխանությունները նույնիսկ արգելեցին կոտորածների զոհերի հիշատակին նվիրված կրոնական ծեսերը: «Հայերը,– գրում է Լեոն,– լքված էին ամենատմարդի եղանակով: Լքված էին այնպիսի ժամանակ, երբ դեռ լողում էին իրենց արյան մեջ...»[17]:

Ռուսաստանի այս հակահայ կողմնորոշումը բնականաբար բուռն արձագանք ունեցավ արևմտահայության շրջանում: Դանիել Վարուժանը գրեց, թե Պատմական Հայաստանի հողերի միավորումը «չատ անհանգստացնում էր ռուս դիվանագետներին»: Դրա հետևանքով «հայ հեղափոխությունը իր դեռ սկզբնավորման մեջ զենքը կուղղեր թե՛ թուրքին և թե՛ ռուսին» և, չնայած Հայաստանի նման «փոքր թշնամիե մը վախենալու որևէ տեղ չուներ ռուսը, բայց հայության այս ձգտումները զինքը մեզի թշնամի կընեին...»: Վարուժանի կարծիքով՝ դեռ մինչև Բեռլինի վեհաժողովը հայերն «իրենց հարցին լուծումը կը սպասեին Անգլիայեն» ու այլևս «ո՛չ Ռուսիո բարեկամության վրա խորհվեր և ոչ անոր օգնության»: Ռուսաստանը ընդգծված հակահայ դիրքորոշում դրսևորեց: Ոչ միայն մերժեց «Հայկական հարցին որևէ օժանդակություն» ցույց տալ, այլև «զայն ուզեց խաբանիլ և արգելք ըլլալ»: Ցարական կառավարությունը նախ փորձեց Լորիս Մելիքովի միջոցով հասնել այն բանին, որ «Հայերը Մեծ Հայաստանի անկախության գործեն ձեռնթափ ըլլան»: Ռուսաստանն «արդեն չէր ուզեր իր թիկունքին երկրորդ Պուլկարիա մը ունենալ և պիտի չխնայեր ամեն մի միջոց, որ հայերուն թիվը և ուժը Կովկասեն և Կովկասի թրքական շրջաններեն պակասի և չքանա»: Դրա համար էլ 1895-96ԹԹ. «ջարդերուն ժամանակ... մեղսակից կըլլա իսլամական վայրագության»[18]: Քանի որ այն ժամանակ Բ. Դուռն վրա Անգլիայի ազդեցությունն ավելի թույլ էր, քան Ռուսաստանինը, Լոբանովը «միշտ կեսկատակ կը գտներ Անգլիայի դեսպաններուն ծրագրած Հայաստանի բարենորոգումները և անոնց գործադրելուն արգելք կը հանդիսանար», իսկ մյուս կողմից, սուլթանին մղում էր հայերին «զսպելու և խեղդելու հայկական հարցը»: Ռուսաստանը սուլթանին «հանդգնություն տվավ, որպեսզի առանց որևէ ակնածության ջարդերը սկսի», իսկ կոտորածների ընթացքում Ռուսաստանի խաղացած դերը արժանի է միայն «սև շրջանակի», ռուսական դիվանագետները «գազանային անտարբերությամբ իրենց դուռերը կը գոցեին սուրեն և կրակեն խուսափած դժբախտներուն առջև», նենգությամբ նրանց երեսին չպրտելով՝ դիմեք ձեր «սիրելի Անգլիո դեսպանատանը»[19]: Նույն կերպ էր մտածում նաև Ակնունին: Նա գրում է. «Գուցե հին Ռուսաստանն այնքան չէր վախենում մոնղոլական արշավանքից, որքան ժամանակակից ռուս դիվանգիտությունը անգլիական քաղաքականությունից: Ահա թե ինչու «անգլիական» անվան հանկարծակի կապը Կովկասի հայերի հետ դող պատճառեց ռուսաց պոլիտիկոններին...»: Պետերբուրգյան շրջանակներում, ինչպես նաև Կովկասի փոխարքայի պալատում, նկատի ունենալով հայերի համակրանքն Անգլիայի հանդեպ, «ատամներն էին կրճտացնում»: Ռուսաստանի ներքին գործերի նախարարը կաթողիկոսի ներկայացուցիչ Բերբերյանին ասաց. «Մենք փակում ենք ձեր դպրոցները իբրև պատիժ այն հա-

---

[17] Լեո, Անցյալից, էջ 116-117:
[18] ԳԱԹ, ֆ. Վարուժան Դ., գ. 45, թթ. 9-10:
[19] Նույն տեղում, գ. 11:

մակրանքի, որ տածում են հայերը հանդեպ Անգլիայի»[20]: Այս պայմաններում պատահական չէ, որ Արաքսի այն կողմում գտնվող իրենց ազգակիցներին օգնելու արևելահայերի փորձերը ոչ միայն ռուսական կառավարության հավանությանը չէին արժանանում, այլև հաչվեհարդարի էին ենթարկվում: Պաշտոնական Ռուսաստանն արևմտահայ չարժումները համարում էր հեղափոխական գործողություններ և իր պարտքն էր համարում դրանք ճնշել[21]: Լոբանովը հայկական նահանգներում բարենորոգումներ մտցնելու պատճառ համարում էր այն, որ արևելահայերը աչխատում էին Թուրքիայում ապստամբություն առաջացնել: Եթե Օսմանյան կայսրության բոլոր քրիստոնյաների համար բարենորոգումներ մտցվեն, ասում էր նա, հասկանալի է, իսկ եթե միայն հայերի համար է, չի կարելի, քանի որ «հայերին այդ արտոնյալ վիճակը հնարավորություն կտա ստեղծելու Ռուսաստանին թչնամի հայկական անկախ թագավորություն»: Բացի այդ, բարենորոգումներ մտցնելու համար ընտրված նահանգները չատ են ընդարձակված և կազմում են Փոքր Ասիայի գրեթե կեսը՝ Կարին, Բիթլիս, Վան, Տրապիզոն, Սեբաստիա, Խարբերդ: Իսկ եթե սուլթանը չընդունի ծրագրի այդ նախագիծը, ի՞նչ ենք անելու: Ցարն ու ինքը դեմ են սուլթանի վրա ճնշում գործադրելուն[22]:

Խաբուսիկ էր Անգլիայի հայամետ դիրքորոշումը: Սոլսբերին հայկական կոտորածները համարում էր ոչ թե սուլթանի քաղաքականության, այլ «տարբեր վայրենի ազգությունների և դավանանքների միջև գոյություն ունեցած ատելության հետևանք»: Նա Հայաստանն ու հայերին բացարձակապես չգիտեր և կարծում էր, թե հայերի լեզուն թուրքերենն է:

Ստասլը 1895թ. հոկտեմբերին գրում է. «...կա մի համոզմունք, որի վերաբերյալ իմ կարծիքը ձևավորված է ամենայն հստակությամբ: Խոսքն այն մասին է, որ լորդ Սոլսբերիին վերագրվում է Օսմանյան կայսրությունը կործանման մղելու ցանկություն: Անձամբ համոզված եմ և դրանում չատերն են համոզվել... որ ներկա կաբինետի ձգտումները ամենևին էլ ուղղված չեն արագացնելու թուրքական տիրապետության վերացումը Եվրոպայում»[23]: Սոլսբերին ուղղակի հայտարարեց. «Սուլթանը մեղք չունի և բարենորոգումներ անցկացնելու համար սուլթանին պետք է ժամանակ տալ»: Դրան լիբերալ Հարֆորդը պատասխանեց, թե մի ժամանակ Սոլսբերին, դժգոհ «դիվանագիտական սպառնալիքներից, բնության և նախախնամության ուժերին էր կոչում սուլթանի դեմ, իսկ ներկայումս հրապարակավ մեղա է ասում Թուրքիայի վեհապետին, որ նրան վչտացրել են»[24]: 1895թ. փետրվարին Սոլսբերին մի նոր հայտարարություն է անում, թե «իրենք հրաժարվում են միջամտել հայկական գործերին ոչ միայն ներկայումս, այլև ապագայում, որ Անգլիան իր վրա հայկական հարցում հատուկ պարտականություն չի վերցրել»: Դա ԱՄՆ նախագահ Քլիվլենդին հիմք տվեց Անգլիայի կառավարությանը մեղադրել հայկական կոտորածների համար՝ «Լոնդոնին համարելով հայկական ողբերգության գլխավոր մեղավորը»[25]:

Ամֆիտեատրովը իրավունք ուներ գրելու, որ «հայերի ազատագրության խոչընդոտի դեր հերթով խաղացել են Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը»[26]: Դրան Բ. Բորյանն ավելացնում է. «Մերձավոր Արևելքում ցարական Ռուսաստանի զավթողական քաղաքականության անհաջողությունները... և Հայաստանի հարցում ցարական դիվանագիտության ձախողվելը հետևանք էին Գերմանիայի կողմից Բ. Դուանը հովանավորելուն, ինչը և հարկադրեց Ռուսաստանին հասկանալու, որ տվյալ ժամանա-

[20] Նույն տեղում, գ. 45, էջ 11:
[21] Ադոնց Ն., նշվ. աչխ., էջ 51:
[22] Ցագճյան Գ., նշվ. աչխ., էջ 407-408:
[23] Ламздорф В.Н., նշվ. աչխ., էջ 301:
[24] «Դրոշակ», 1896, թիվ 14:
[25] *Инф. бюллетень, АН Арм. ССР*, 1984, стр. 16.
[26] Амфитеатров А.В., նշվ. աչխ., էջ 37:

կաշրջանում այլևս հնարավոր չէ օգտագործել Բալկանյան և Հայկական հարցերը հօգուտ իր շահերի և հայացքն ուղղեց Հեռավոր Արևելք»[27]: Անգլիան գոհ էր ցարի այս նոր կողմնորոշումից և այն պատրվակ դարձրեց հետ կանգնելու տված խոստումներից ու հայտարարելու, թե Անգլիան միայնակ ի զորու չէ զբաղվելու Հայկական հարցով: Միջազգային կյանքում այս իրավիճակը, մասնավորապես Ռուսաստանի և Անգլիայի առճակատումը, նկատի ունենալով՝ սուլթանը իրականացրեց Սասունի և դրան հաջորդած կոտորածները: Նույն այդ գործոնը նկատի ունենալով՝ Աբդուլ Համիդ 2-րդը ամիսներ շարունակ ձգձգեց հայկական նահանգներում բարենորոգումներ մտցնելու ծրագրի ընդունումը և, ի վերջո, ստորագրեց մի փաստաթուղթ, որը լոկ տեսական բնույթի դատողություններ էր պարունակում և ավելի հռչակագիր էր, քան պետական իրավական ակտ՝ զուրկ կատարումն ապահովող որևէ երաշխիքից ու մեխանիզմից: Մրագրում 61-րդ հոդվածն անգամ չէր հիշատակվում: Նաև չկար պարտականություն «կատարվածի մասին» տերություններին տեղյակ պահելու վերաբերյալ: "National Zeitung"-ը 1895թ. հունիսի 1-ին գրեց, որ Բեռլինից հետո ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցածից ելնելով, «սուլթանը եզրակացրել էր, թե ինքն իրականում գործ ունի միայն Անգլիայի հետ, թե մյուս երկու պետությունները (Ռուսաստան, Ֆրանսիա) ավելի հակված են դեպի արմատական բնույթի քայլերի առաջն առնելուն, քան Անգլիային օգնելուն: Դրանով էր բացատրվում այն վճռականությունը, որով սուլթանը մերժեց երեք պետությունների առաջարկը... նա դեմ էր Հայաստանում բարենորոգումներ մտցնելուն»: Սուլթանը, ի վերջո ստորագրելով բարենորոգումների ծրագիրը, այն թաքուն պահեց, չհրապարակեց: Դա մի կողմից հետևանք էր թուրքական հասարակության հանդեպ նրա անասնական վախի, իսկ մյուս կողմից՝ քաղաքական նուրբ հաշվարկների:

"Daily News"-ը դեռ մայիս ամսին գրեց, թե ինչ դիրք է գրավելու Բ. Դուռը դեսպանների ներկայացրած նախագծի հանդեպ: Նա նախ կառաջարկի մի քանի փոփոխություններ մտցնել: «Իհարկե, թուրքական կառավարության մտահոգությունը փոփոխությունները չեն, այլ խնդիրը ձգձգելն ու ժամանակ շահելը: Եթե պահանջված փոփոխությունները մտցվեն, նոր փոփոխություններ կառաջարկի և նորից պատճառ կգտնի գործը հետաձգելու»: Սուլթանի նման կեցվածքը հիմնավորված էր: "Standard"-ն այդ օրերին գրեց. «Եթե Հայաստանի բարենորոգման ծրագիրն ամբողջովին չի ընդունվել, դրանից չի հետևում, թե անհրաժեշտ է թուրքիայի դեմ ձեռնարկել այնպիսի թշնամական միջոցառումներ, որպիսիք են Հայաստանում եվրոպական մշտական հանձնաժողով կարգելը և Ֆրանսիայի, Անգլիայի ու Ռուսաստանի դեսպաններին Կ. Պոլսից հետ կանչելը: Անգլիան, ինչպես միշտ, այժմ էլ ցանկանում է օսմանյան պետության ամբողջության պահպանումը»: "Daily News"-ը 1895թ. օգոստոսի 6-ին «Հայաստանն այսօր» առաջնորդողում նշեց. «Թուրքիայում ոչ ոք չի կասկածում, որ բարենորոգումների ծրագրին սուլթանի տեսական դիմադրությունը հետևանք է Բրաթֆորդում Սոլսբերիի արտասանած համառոտ խոսքի»: Սուլթանի վախվորածությունն աստիճանաբար անցավ, նա հասկացավ, որ դրսից Թուրքիային վտանգ չի սպառնում և սկսեց վստահ գործել: Շաքիրն իր բազմամարդ շքախմբով մեկնեց արևելք՝ արդեն որպես Հայաստանի գլխավոր կոմիսար: Ընդ որում՝ սուլթանը վճռականորեն մերժեց եվրոպական որևէ վերահսկողություն Հայաստանի կառավարչի գործունեության վրա: Փաշան մեկնելուց առաջ հայտարարեց, թե գնում է ոչ թե Հայաստան, այլ Քրդստան և գնում է Թուրքիայի ու Անգլիայի միջև նախկին բարեկամությունը վերականգնելու: «Հայաստան բառը մեզանում արհամարհված է,— ասաց նա,— սակայն շնորհակալ կլինեմ, եթե ինձ ցույց տայիք Հայաստանի սահմանները»[28]: Նա ոչ մի բառ չասաց քրդերին զինաթափելու, մոլեռանդ տարրերին զսպելու, հայերի անվտանգությունն ապահովելու մասին: Շաքիրի նման դիրքորոշումը

[27] Боян Б.А., նշվ. աշխ., հ. I, էջ 277:
[28] «Արձագանք», 1895, թիվ 100:

պատահական չէր: Սկսած 80-ական թվականների վերջերից սուլթանի այդ սիրելին նրա հույսն էր Հայկական հարցի համիդյան լուծման գործում: Հայերի դեմ ձեռնարկված բոլոր միջոցառումները փաղիշահը հանձնարարում էր երիտասարդ մուշիրին: Նա Շաքիրի դլխավորած հանձնաժողովին հանձնարարեց «խստորեն հետևել բարենորոգումների ընթացքին»: Նման հանձնաժողովներ ստեղծվեցին նաև նահանգներում (Վան, Էրզրում): «Իրականին մեջ բարենորոգումների խնդիրը լոկ ցուցատախտակ մը կը կազմեր այդ հանձնախմբերուն համար, որոնց իբրև հիմնական դեր և պաշտոն տրված էր, տեղական պայմաններուն համաձայն, հայկական ջարդեր կազմակերպելու պարտականությունը: Բարենորոգումներ պիտի կատարեին ջարդերու միջոցով, ուրիշ խոսքով բարենորոգումներու հարցը պիտի ջնջվեր հայերու բնաջնջումով... Հանձնաժողովները երևան պիտի հանեն հայերու կողմե պատրաստված հակապետական ըմբոստություններ, թշնամական հարձակումներ, մյուս կողմե, պիտի պատրաստեին քուրդ աշիրեթները՝ զարգացնելով անոնց մոտ հայերու հանդեպ ատելության ոգին, շլացնելով զանոնք նվերներով, պաշտոններով, պատվանշաններով, բայց մանավանդ հայերու հարստությունը թալանելու առաջարկներով»[29]:

Սուլթանին քաջ ծանոթ էին Արևելյան հարցում թե՛ տերությունների դժվարությունները և թե՛ պետական գործիչների մոտեցումների տրամաբանությունը: Նա լավ դիտեր, որ Հայկական հարցի կապակցությամբ Թուրքիան լուրջ բարդություններ չէր ունենալու, որովհետև որևէ առանձին տերություն այդ առնչությամբ զենքի չէր դիմի: Պատերազմ հնարավոր էր միայն տերությունների միահամուռ որոշման դեպքում: Առանց նման միաձայնության ամեն մի պատերազմ Թուրքիայի դեմ հրապարակ կվերադարձներ Արևելյան հարցը: Իսկ այդ հարցում հակասություններն ավելի քան ուժեղ էին: Անգլիան ձգտում էր հօգուտ իրեն լուծել Եգիպտոսի հարցը և թույլ չտալ, որ Ռուսաստանը տիրանար Նեղուցներին ու կ. Պոլսին: Նեղուցների հարցում նույն կարծիքին էին նաև Իտալիան ու Ավստրո-Հունգարիան: Սակայն, եթե նույնիսկ այս երեք պետությունները միասնաբար գործեին, առանց Գերմանիայի հարցը լուծել չէին կարող, իսկ Գերմանիան Թուրքիայի դեմ պատերազմին մասնակցել չէր կարող, որովհետև այդ դեպքում Ռուսաստանն ու Ֆրանսիան անմիջապես կանցնեին Թուրքիայի կողմը: Եվ եթե վերջիններիս հաջողության հասնեին, Թուրքիան «ի նչան երախտագիտության», Նեղուցները զիջելու էր Ռուսաստանին: Սուլթանը քաջ հասկանում էր, որ քանի դեռ Գերմանիան չեզոք է, ինքը վախենալու պատճառ չուներ և կարող էր շարունակել խաղը բարենորոգումների շուրջ, իսկ Գերմանիան չեզոքությունից դուրս չէր գա նաև այն պատճառով, որ Ռուսաստանն ու Ֆրանսիան կօգտվեին պատերազմից՝ լուծելու Էլզաս-Լոթարինգիայի հարցը: Դրանով էր բացատրվում, որ երբ Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարար Գոլուխովսկին առաջարկեց միասնաբար հանդես գալ Թուրքիայի հարցում, Գերմանիան անորոշ դիրք գրավեց:

Տերությունների մոտեցումները հայկական բարենորոգումների ծրագրերը մշակելիս միասնական էին, իսկ դրանց գործադրմանը հասնելու եղանակների խնդրում՝ հակամետ: Այդ ուղղությամբ նրանց ջանքերը հանգեցրին կ. Պոլսի դիմաց ռազմանավ կանգնեցնելու համար սուլթանի համաձայնությունը ստանալուն: Դրա փոխարեն անհաջողություն կրեց տերությունների թնդանոթաձիգ նավերը Նեղուցներ մտցնելու ծրագիրը: Այդ ամենով հանդերձ, սուլթանը ռազմական նախապատրաստություններ իրականացրեց: Զենքի տակ կանչվեցին նաև պահեստային ուժեր:

Միանգամայն հակառակ դիրքորոշում հանդես բերեցին Եվրոպայի առաջադեմ գործիչները: Անգլո-հայկական կոմիտեն առաջարկություն ներկայացրեց կայսրությունը մասնատել և Կիլիկիան դարձնել անկախ հայկական իշխանություն, ինչին տերությունները լուրջ նշանակություն չտվեցին: Կատարվածից հայ քաղաքական ուժերի եղրահան-

[29] Զորմիսյան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 437:

գումը հետևյալն էր. «...թուրքահայերի փրկության կամ անվտանգության խնդիրն այլևս չի կարող կապվել թուրքական որևէ բարենորոգության հետ, այլ պիտի կապվի միջազգային քաղաքական խոշոր ձեռնարկմանը, որով կորոշվի Հայկականից շատ ավելի լայնածավալ Արևելյան հարցն իր ծանրակշիռ հետևանքներով թուրքիայի պետական անկախության համար...»[30]:

Արևմտահայությունը միանշանակ մոտեցում չուներ դեսպանների առաջարկած նախագծին և բարենորոգումներին՝ ընդհանրապես, հավատ չունենալով, թե սուլթանական բռնատիրության պայմաններում հնարավոր էր որևէ բարենորոգում: Խրիմյան Հայրիկն այդ նախագիծն անվանեց «Հայոց գերեզման»: 1895թ. հուլիսի 25-ին Շապին Կարահիսարի 475 բնակիչների ստորագրությամբ Նելիդովին հասցեագրված նամակում գրված է. «Հայկական բարենորոգումների ծրագրի գործադրումը նորին մեծության սուլթանին հանճնարարելը ծաղր չէ՞ մեր հասցեին: Ակնհայտ է, որ մեր դեռ չփակված վերքերը թողնվելու են արյունահոս»[31]: Ջնայած Սոլսբերին հոխորտում էր, թե Հայկական հարցում Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի համերաշխությունը հնարավորություն էր տալիս ասելու, թե «Թուրքիայի անկախությունը հիմնված էր այդ տերությունների ցանկության» վրա, իսկ սուլթանի բռնած դիրքը նրանց հարկադրում էր հրաժարվել «Թուրքական պետության արհեստական գոյությունը պաշտպանելուց», Կ. Պոլսի ճարպիկ խաղերը, բնականաբար, անհանգստացնում էին հայերին: Նրանք հասկանում էին, որ տերությունների միջև իրապես համերաշխություն գոյություն չուներ և սուլթանն այդ օգտագործելով, տապալելու էր ծրագրի իրականացումը:

Բարենորոգումների խնդիրը տասնամյակներ շարունակ ներկա էր Հայկական հարցին առնչվող բոլոր գործընթացներում, նաև իր կնիքը դրեց կոտորածների հետաքննության վրա:

Սուլթանը, երբ ստացավ Մայիսյան ծրագրի նախագիծը, կարծես զարմացավ: «Կառավարման համակարգը,— ասաց նա,— խոշոր թերություններով է տառապում ոչ միայն Հայաստանում, այլև Թուքիայի մյուս նահանգներում», հետևաբար բարենորոգումներ պետք է մտցնել ամբողջ կայսրությունում և ոչ թե միայն Հայաստանում: «Այդ նշանակում է,— ասաց Գլադսթոնը,— որ սուլթանը կձեռնարկի վերջ չունեցող հետաքննություններ և այդ միջոցով հարցն օրակարգից կհանի»: Գլադսթոնը սուլթանին գիտեր իր հինգ մատի պես: Այդպես էլ եղավ[32]:

Աբդուլ Համիդը նորից բորբոքեց պանիսլամիզմի կրակը: Կ. Պոլսի մզկիթները վերածվեցին հակաքրիստոնեական քարոզչության և քրիստոնյա ժողովուրդների հանդեպ անհանդուրժողական մարտակոչերի հրապարակների: Թուրքերին համոզում էին, որ եթե քրիստոնյաների իրավունքները հավասարեցվեին մահմեդականների իրավունքներին, եթե նրանք ազատ թողնվեին, չատ ժամանակ չանցած կկլանեին թե՛ մահմեդականներին և թե՛ մահմեդականությանը: Ուրեմն պետք է փակել ճանապարհը և տեղնուտեղը ջախջախել ճամփա բանալ ցանկացողին[33]:

Հայերը տեսնում, հասկանում էին, որ ոչ միայն սուլթանը, այլև տերությունների կառավարությունները բարենորոգումների հարցում ընտրել են «արգելակման և դանդաղ մարման» քաղաքականություն, որ բարենորոգումները վտանգված են: Հարկ էր փոխել իրադարձությունների ուղղությունը, Բ. Դուռն ու տերությունների կառավարությունների վրա ճնշում գործադրելու միջոցով հասնել Մայիսյան ծրագրի իրագործմանը:

Կարծես դեսպանների կողմից նույնպես ամեն ինչ արվում էր սուլթանի «աչքը վախեցնելու» համար: Նրանք համերաշխ ու համաձայնեցված գործելու «երդում տվին», եպարքոսին հանձնեցին իրենց համատեղ հայտարարությունը: Պահանջեցին Կ. Պոլսում

---

[30] «Մուրճ», 1895, թիվ 11:

[31] Положенне армян в Турции..., стр. 74:

[32] Восточный вопрос ю внешней политике Россни, конец XVIII - начало XX вв., Москва, стр. 266.

[33] ԳԱԹ, ֆ. Աղանյան Գ., գ. 144, թ. 24:

անմիջապես վերականգնել կարգուկանոնը և դադարեցնել հայերի ձերբակալությունները: Սուլթանը խեղճացած ձևացավ, անգլիասեր Սայիդին նշանակեց արտաքին գործերի նախարար: Դա լոկ խաղ էր, և պատահական չէր, որ "Times"-ը տերություններին կոչ արեց «խոսքից անցնել գործի»: Տերությունները այդպես էլ գործնական քայլ չարեցին, իսկ սուլթանն իսկապես խոսքից գործի անցավ՝ բարենորոգումների ծրագրի ստորագրումից անցավ արևմտահայության զանգվածային կոտորածներին: Հայերի բնաջնջման Սասունում սկսված գործընթացը թևակոխեց իր վճռական փուլը: Սասունի ջարդերի կապակցությամբ մեծ տերությունների հոխորտանքների՝ սուլթանական բացառիկ ճշգրիտ արձագանքն էր ջարդը մայրաքաղաքում, դեսպանների աչքի առաջ, որպես ցեղասպանություն ազդարարող ահաբեկիչ քայլ՝ համոզված, որ տերությունները դիվանագիտական խեղկատակությունից այն կողմ չէին անցնելու: Այս արյան քարաբաղնիսը կազմակերպելուց հետո միայն սուլթանը հոկտեմբերի 18-ին ստորագրեց Բարենորոգումների ծրագիրը: Հայ ժողովուրդը աճուրդի հանվեց տերությունների գծուծ չահերի համաչխարհային շուկայում: Գերմանիան անվերապահ պաշտպանեց սուլթանի ձեռնարկումները, Անգլիան դրանց դեմ էր: Ռուս լրագրող Օլգա Նովիկովան նկատում է, որ Անգլիան Թուրքահպատակ քրիստոնյաներին զրկեց Ռուսաստանի հովանավորությունից, իսկ ինքը նրանց համար ոչինչ չարեց: Եվ իսկապես, Սոլսբերին վճռական պահին հայտարարեց, թե «անգլիական նավերը Տավրոսյան լեռները բարձրանալ չեն կարող»: Անգլիայի այդ «չափավոր թուրքասիրական և ուժեղ հակառուսական քաղաքականությունն էր... հայկական ողբերգության գլխավոր արտաքին պատճառը»[34]: Ժամանակակիցներից մեկը Ֆրանսիայի կառավարության ղեկավար Հանոթոյի մասին գրում է. «Գրպանները թուրքական ոսկիներով ուռած, դեմքը հայերի արյունով չպարված երեսփոխանների և մամուլի ներկայացուցիչների մեծամասնության ծափահարությունների ներքո բեմ է բարձրանում: Համիդի գանձը ծանր է կշռում: Երիու տարի ամբողջ Փոքր Ասիայում, ինչպես նաև Պոլսում ֆրանսիական դեսպանի աչքի առաջ Համիդի... արբանյակները սպանեցին, խոշտանգեցին, հաշմեցին, անդամահատեցին Ֆրանսիայի պաշտպանյալներին, լկեցին տղամարդկանց, մայրերի գրկում հոշոտեցին երեխաներին, քրիստոնյա կանանց ու կույսերի վրա փորձեցին այնպիսի վայրագություններ, որոնք միայն մարդակերները կարող էին երևակայել ու հնարել: Եկեղեցիների մեջ խորովեցին... բնակիչներին՝ թողնելով 300 հազար դիակ... բնաջնջեցին գրեթե մի ամբողջ ցեղ»[35]: Լոբանով-Ռոստովսկու ցինիկ հայտարարությունը կարգախոսի նշանակություն ստացավ. «Ես չեմ ուզում, որ Թուրքական Հայաստանը դառնա երկրորդ Բուլղարիա, որպեսզի ռուսահայերը չտրամադրվեն մեր հիմնարկների դեմ, ինչը կստեղծի հայկական ինքնավարություն Թուրքական գերիշխանության տակ...»[36]: Գարիբալդիական չարժման նշանավոր գործիչներից Ա. Ջիբրարին տերությունների հայկական քաղաքականության մասին գրում է.

«1894-96-ի զարհուրելի, անլուր, խուժ, տմարդի և եղերական կոտորածները, որոնք այսօր հուզում են աշխարհին, մեծ տերությունների ղեկավարներին անտարբեր թողեցին:

Ձեր արյունը,— դիմում է նա հայերին,— նրանց երեսին ցայտեց, ձեր քաղաքները, տները հրի մատնվեցին, սակայն նրանք (տերությունները) տեղից չչարժվեցին, լքեցին ձեզ... որովհետև բոլորն էլ Թուրքիան բաժանելու չար ցանկություն ունեին, և յուրաքանչյուրը ձգտում էր առյուծի բաժին ստանալ... Այո՛, Եվրոպան ձեզ սպանողի մեղսակիցն ու... նրա հետ համերաշխվողը եղավ, գերադասեց ձեր արյան մեջ թաթախված ձեռքեր ունենալ, քան ձեռք տալ մի գահի, եթե նույնիսկ այդ գահին բազմած է գռեհիկ չարագործ, ավազակ, եղեռնագործ»[37]:

---

[34] Լևո, Գլադստոն, Թիֆլիս, 1899, էջ 243:
[35] Ցազճյան Գ., նշվ. աշխ., էջ 621-623:
[36] Ламздорф В.Н., նշվ. աշխ., էջ 17:
[37] Եվրոպացիների կարծիքը Հայկական դատի մասին, ժնև., 1907, էջ 6-7:

«...Հայ ժողովրդի արյունը,– գրում է Լեոն,– նորից վաճառքի էր հանված իմպերիալիստական բորենիների միջև, կատարվում էին քաոսմնելի սակարկություններ, և սուլթանը չահում էր նոր կողմնակիցներ»[38]: Պատահական չէ, որ այդ օրերին թուրքական լրագրերը գրեցին. «Հակոտնյա և անմիաբան Եվրոպայից պետք չէ վախենալ»:

Նման պայմաններում միանգամայն հասկանալի էին Կամբոնի հեռագրի հետևյալ տողերը. «Սուլթանը մտադիր չէ իր խոստումները կատարել, որովհետև համոզված չէ, որ Եվրոպան համերաշխ է... Կրետեի հարցը լուծված է, որովհետև սուլթանն ըմբռնեց, որ ապստամբության չարունակվելը տեղիք կտա տերությունների միջամտության, բայց Հայկական գործը ձգձգվում է, որովհետև սուլթանն այդ գործում եվրոպական միջամտությանը չի հավատում»[39]: Աբդուլ Համիդ 2-րդը գիտեր, որ «քաղաքակիրթ աշխարհն» առանց եսասիրական շահերի, լուրջ քայլերի չի դիմի: Օրինակ՝ ԱՄՆ հրաժարվեց Սասունի Հետաքննիչ հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելուց, բայց երբ Թուրքիան ձգձգեց վճարել նրա քաղաքացիներին հասցված վնասները, զրահանավ ուղարկեց Զմյուռնիա և սուլթանին հարկադրեց հարցը լուծել: Ֆրանսիական քաղաքական գործիչ Գ. Ռուանեն "Lanterne" լրագրի 1901 թվի օգոստոսի 30-ի համարում գրեց. «Ֆրանսիական կառավարությունը, որը Աբդուլ Համիդի կողմից չճանաչված պարտքերը ստանալու համար մի քանի պահանջագրեր ներկայացնելով չբավարարվեց, արդյո՞ք չէր կարող հիշեցնել Պոլսի մենամոլին, որ դրժել է նաև այլ (հայկական բարենորոգումների) պարտավորությունները...»:

Տերությունների միջև հարաբերությունները չարունակում էին մնալ բզկտված: Հակասություններ կային ոչ միայն տերությունների, այլև դրանց կրոնական համակարգերի միջև: Հայի անգամ կյանքը ենթարկվում էր կրոնական չահադիտական նկատառումներին: Նրան հարկադրում էին ընտրություն կատարել մահվան և հավատափոխության միջև: Ֆրանսիական միսիոներներն ապաստան էին տալիս միայն այն հայերին, ովքեր համաձայնում էին դառնալ կաթոլիկ:

Սակայն գլխավորը չարունակում էին մնալ տնտեսական և աշխարհատարածքային հակասությունները: Ռուսաստանը բարենորոգումների ծրագիրը համարում էր խորամանկ քայլ հօգուտ Անգլիայի: Նելիդովը սուլթանին խորհուրդ տվեց իրականացնել մի քանի վարչական փոփոխություններ քրիստոնյա ազգաբնակչության տարրական իրավունքները պաշտպանելու և կարգուկանոն հաստատելու համար: Սակայն սուլթանը, ոչ առանց հիմքի, չհետևեց այդ խորհրդին: «Այն, ինչ այժմ կատարվում է Հայաստանում,– գրում է Լամսդորֆը,– նրան (Նելիդովին) հիշեցնում է Բուլղարիայի դեպքերը 1877թ. պատերազմից առաջ՝ այն տարբերությամբ, որ բարդությունները Հայաստանում մեզ անմիջականորեն են կպչում: Դրա համար էլ նա կարծում է, որ Սասունի հանձնաժողովում մեր պատվիրակը պետք է ցուցում ստանա մոտ լինելու ոչ թե իր անգլիական, այլ ֆրանսիական գործընկերոջը»: Ցարը Նելիդովի զեկուցագրի վրա նշում է. «Միանգամայն ճիշտ է»: Այս իրողությամբ էլ պայմանավորված էր բարենորոգումներին Նելիդովի երկակի մոտեցումը: Նա մի կողմից մտավախ էր, մյուս կողմից Պետերբուրգի առջև հետևողականորեն բարձրացնում էր հայաբնակ նահանգներում բարենորոգումներ մտցնելու անհրաժեշտությունը: Լոբանովն այդ կարծիքին չէր: «Այսօր ցարն ինձ ասաց, գրում է նա, որ ընդունելով պարսկական նախկին ներկայացուցիչ Մահմուդ խանին, որին հենց նոր նշանակել են դեսպան Կ. Պոլսում, ինքը շատ խիստ է արտահայտել իր կարծիքը Հայկական հարցի վերաբերյալ, այն հաշվով, որպեսզի նա այդ մասին պատմի ուրիշներին»: Նելիդովի համառությունը կոտրելու համար՝ Լոբանովը գտնում էր, որ պետք է օգտագործվեին ցարի արտահայտությունները: Նա առաջարկում է Կ. Պոլսի ռուսական դեսպանին ուղարկվելիք նամակը սկսել հետևյալ բառերով. «Ես արդեն մի

---

[38] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, էջ 182:
[39] «Դրոշակ», 1896, թիվ 25:

*չարք անգամներ հնարավորություն եմ ունեցել Ձեզ փոխանցել մեր օգոստոսափառ վեհապետի հրամանը» և ապա շարունակել. «Եթե դուք առիթ կունենաք հանդիպելու Մահմուդ խանին, ապա նա կարող է հաստատել այն ամենը, ինչ տվյալ հարցի մասին ձեզ գրել եմ...»: Լամսդորֆը նկատում է. «Սեփական հանձնարարությունը մի ինչ-որ ողորմելի ու աննշան պարսիկի վկայությամբ հաստատելու մասին միտքը ինձ ավելի քան տարօրինակ էր թվում: Ես նաև զարմացած էի Նելիդովի նկատմամբ Լոբանովի անվստահության աստիճանով..., իսկ երբ ընթերցում եմ Նելիդովի նամակը..., հարկադրված եմ ընդունել, որ նրանում ավելի շատ լուրջ համոզվածություն կա, քան երեխայական ինքնասիրություն: Մեր դեսպանը գտնում է, և հնարավոր է ոչ առանց հիմքի, որ եթե Բ. Դուռը հօգուտ հայերի մեր պահանջների մեջ հայտնաբերի թեկուզ ամենափոքր տատանում, ապա նա հայերին ոչինչ չի զիջի: Փոքր Ասիայի քրիստոնեական բնակչությունը հասցված է հուսահատության և կարող է դիմել գործողությունների, որոնք կունենան ամենալուրջ հետևանքները: Երեք դեսպանների մշակած բարենորոգումների նախագիծը, որը Լոբանովը ձգտում է դարձնել ոչինչ, իրականում այդքան էլ վատ չէ...: Մենք չենք կարող աչքաթող անել, որ երբևէ որևէ մտադրություն չի եղել Նելիդովի և նրա անգլիական և ֆրանսիական գործընկերների կողմից մշակված բարենորոգումների նախագծին տալու Բ. Դուռը ներկայացվող վերջնագրի բնույթ»*[40]:

*1895թ. ապրիլի 21-ին Նելիդովը հեռագրեց. «Սուլթանը խնդրում է միջնորդել այստեղ ուղարկելու չինովնիկ, ավելի լավ է զինվորական, որը անձնական ճանապարհորդության պատրվակով անցնի Փոքր Ասիայով ու Անատոլիայով, որպեսզի համոզվի անգլիացիների, ինչպես նաև բողոքական ու կաթոլիկ միսիոներների բանսարկություններում և հայկական հուզումների հետ նրանց կապի մեջ»: Ցարը մակագրեց. «Համենայն դեպս, կարելի է օգտվել սուլթանի այդ ցանկությունից»*[41]:

*Հայաստան է ուղարկվում գլխավոր շտաբի գնդապետ Վ. Պուտյատան, որին սուլթանական իշխանությունները արգելք չեն հարուցում ծանոթանալու իրավիճակին, բացառությամբ Սասունից, որտեղ նրա մուտքն արգելվեց: Ուսումնասիրությունների հիման վրա Պուտյատան կազմեց «Փոքր Ասիայի մասին» տեղեկանքը, որում հարուստ նյութեր կան արևմտահայության ծանր վիճակի ու Անգլիայի քաղաքականության վերաբերյալ:*

*Հատկանշական մի իրողություն՝ ցարական կառավարությունը ձգտում էր հայերին իր նպատակներին ծառայեցնել ոչ թե նրանց խոստումներ տալու, այլ ահաբեկելու միջոցով: Այդ նպատակով նորից հրապարակ հանվեց Հայաստանը Քրդստան վերանվանելու խնդիրը՝ հայկական հարցին նորից հակադրվեց Քրդական հարցը:*

*Հունիսի 3-ին Լոբանովը ցարին է ուղարկում մեծ վեզիրի խնդրանքը՝ Ռուսաստանի «աջակցությունը տրամադրելու ժամանակ, որպեսզի այնպիսի համաձայնագիր նախապատրաստվի, որը Հայկական հարցում բավարարի երեք տերությունների պահանջները»:*[42] *Ցարը մակագրում է. «Իհարկե, մենք համաձայն ենք տալու լրացուցիչ ժամանակ»: 1895թ. հունիսի 13-ին Նելիդովը հեռագրում է. «Հայկական հարցում դեռևս ոչ մի որոշում չկա»: Սայիդ փաշան սկսում է հուսահատվել, որովհետև սուլթանը, որի դեմ դժգոհությունն աճում էր, մտադիր էր դպրոցներում իբր բացահայտել դավադրություններ*[43]: *Հաջորդ օրը Լամսդորֆը գրում է. «Սուլթանի դեմ դժգոհությունը Թուրքիայում... իսկապես աճում է: Դրա արձագանքները հասել են անգամ Եգիպտոսի մեր գործակալին: Խոսքը այդ կամակոր, անհավասարակշռված և տարօրինակ միապետի տապալման կամ նրա իրավունքների սահմանափակման մասին է»*[44]: *Հունիսի 1-ին "Новости и*

---

[40] Ламсдорф В.Н., նշվ. աշխ., էջ 238-240:
[41] *Նույն տեղում*, էջ 170:
[42] Ламсдорф В.Н., նշվ. աշխ., էջ 170:
[43] *Նույն տեղում*, էջ 219:
[44] *Նույն տեղում*:

*биржевая газета" թերթը Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության անունից նամակ է ստանում, թե իբր Կ. Պոլիս հայտնել են, որ ցարական կառավարությունը հայկական ցանկացած գործ դիտում է որպես անգլիական բանսարկություն և չի ցանկանում դրան որևէ մասնակցություն ունենալ: Լոբանովը հանձնարարում է գտնել այդ կեղծիքի հեղինակին: Նույնատիպ նամակ էր ուղարկվել նաև Հայոց կաթողիկոսին: Չնայած նամակի հեղինակի անձը չպարզվեց, բայց մի բան ակնհայտ էր, որ նամակը գնացել էր Լոբանովի գերատեսչությունից:*

*Նելիդովը նորից ու նորից պնդում էր դեսպանների մշակած նախագիծն ընդունելու վրա, ինչը Լոբանովը համարում էր հետևանք Նելիդովի ծայրահեղ ինքնասիրության: «Հեռու ենք ցանկությունից,– գրում է նա,– Թուրքիայի վզին փաթաթելու վարչական փոփոխությունների մանրամասները, որոնց անհրաժեշտության մասին հայտնված է օսմանյան կառավարությանը: Մենք գերադասում ենք նրա վրա դնել բոլոր այն միջոցառումների պատասխանատվությունը, որոնք պետք է իրականացվեն: Համաձայն ցարի հրամանի, մենք կչարունակենք կողմնակից մնալ բազմիցս հայտարարված ծրագրին... ձգտելով հնարավորության սահմաններում աջակցել, որպեսզի Փոքր Ասիայի քրիստոնյա ազգաբնակչության չրջանում վերականգնվի կարգն ու անվտանգությունը: Նորին մեծությունը մտադիր չէ անցնել Բեռլինի դաշնագրով նախատեսված վերահսկողության միանգամայն օրինական սահմանները, ոչ մի ձևով չխրախուսել Հայաստանում ապստամբական չարժման թաղանթի տակ դանդաղ ծխացող քաղաքական իղձերը»[45]:*

*Օգոստոսի 22-ին Լոբանովը Լոնդոնի Ռուսական դեսպանության քարտուղար Կրուպենսկուն գրում է. «Բ. Դուրը, որպեսզի խուսա տա Սոլսբերիի առաջարկած դիտորդ հանձնաժողովի ստեղծումից, համաձայնվել է, որ Հետաքննիչ հանձնաժողովի հետ դեսպանատների թարգմաններն անմիջական չփում ունենան, որը երաշխավորված է դեսպանների կազմած նախագծով: Բ. Դուրը համեմատաբար աննչան փոփոխություններով ընդունում է մեր բոլոր պահանջները: Մենք գտնում ենք, որ պետք է բավարարվել նման արդյունքով և վերջ դնել հայկական գործին»[46]:*

*Քըրրին 1895թ. հունիսի 14-ին գրում է. «Իշխան Լոբանովն ասաց, չնայած երեք դեսպանները Կ. Պոլսում մշակել են Հայաստանում բարեփոխումների պլան, սակայն, եթե սուլթանը հրաժարվի ընդունել այն կամ ներկայացնի հանդիպակաց առաջարկություններ, այդ պլանը ոչ մի կերպ չի կարող պատրվակ դառնալ դիմելու հարկադիր միջոցների կամ սպառնալիքների: Լոբանովը բոլորովին չթաքցրեց, որ ներկայացված պլանը ենթակա է առարկության և հետևաբար վերջին խոսք համարվել չի կարող... (Նա) վախենում է, որ Նորին մեծության կառավարությունը հասարակական կարծիքի ազդեցության տակ... դիմի այնպիսի միջոցների, որոնց Ռուսաստանը միանալ չի կարող: Բանն այն է, որ Լոնդոնում և այլուր գործող հայկական կոմիտեները նպատակ ունեն Փոքր Ասիայում ստեղծել մի մարզ, որտեղ հայերը օգտվեն բացառիկ արտոնություններից, և որը դառնա ապագա Հայկական Թագավորության կորիզը, իսկ Ռուսաստանը դրա հետ համաձայն չէ և համաձայնել չի կարող»: Ռուսաստանի նման դիրքորոշումը իր սև գործը կատարեց: «Գործերը Հայաստանում,– հունիսի 17-ին գրեց Լամսդորֆը,– սառելու կետին են... Այդ նույն ժամանակ Բ. Դուրը հանձնաժողով կազմեց, որին հանձնարարված է ուսումնասիրել ընթացիկ տարաձայնությունները»: Բացարձակ ձախողման վտանգը Լոբանովին հարկադրեց օգոստոսի 1-ին Լամսդորֆին հանձնարարել Նելիդովից պահանջելու «նորից պնդել նշված բարենորոգումների անցկացման անհրաժեշտության վրա: Բ. Դուռն պատասխանը հականախագիծ չէ: Նրանում կետ առ կետ քննադատվում է երեք դեսպանների նախագիծը, ընդ որում՝ նույնիսկ չեն հիշատակվում այն բարենորոգումները, որ Հայաստանում անցկացնելու համար հանձնարարված են Շաքիր փաշային:*

---

[45] Նույն տեղում, էջ 235:
[46] Նույն տեղում, էջ 243:

*Համենայն դեպս, մենք կարող ենք բարենպաստ նշան համարել Բ. Դուան մտադրությունը՝ թույլատրել քրիստոնյաներին մտնելու տվյալ չրջանի վարչության կազմը: Մենք չենք կարող աչք փակել մի շարք դժվարությունների առջև՝ կապված նման ընդգրկուն բարենորոգումների հետ: Ամենաճիշտն այն է, որ դրանց համար ամբողջ պատասխանատվությունը դրվի Թուրքիայի վրա: ...Մենք լրիվ բավարարված ենք, որ անգլիական կառավարությունը հասկանում է մեր սահմանի մոտ արտոնյալ որևէ նահանգի ստեղծման անհնարինությունը: Սոլսբերիի առաջարկությունը կ. Պոլսում ինչ-որ «դիտորդ մարմնի ստեղծման մասին, ինձ թվում է միանգամայն ընդունելի: Մենք միայն սպասում ենք, որ այդ մտադրությունը ներկայացվի ավելի ծավալուն տեսքով: Նելիդովին պետք է ասել, որ մենք երբեք երեք դեսպանների նախագիծը չենք դիտել որպես յուրատիպ վերջնագիր և չենք կարծում, թե տեղին կլինի, եթե նշված նախագիծը Բ. Դուան վզին գոռով փաթաթվի... Իմ հիմնական նպատակը դեսպանների աշխատանքը զրոյի հանգեցնելն է»*[47]:

*1895թ. օգոստոսի 31-ին "Correspondent bureau"-ն տեղեկագրեց. «Ռուսական և ֆրանսիական դեսպանները ստացան Թուրքան փաշայի տեղեկատվությունը՝ Հայաստանում մտցվելիք բարենորոգումների վերաբերյալ թուրքական կառավարության զիջումների մասին: Անգլիական դեսպանը, գտնելով, որ զիջումներն ուշացած են, Դուանն առաջարկեց այդ մասին ուղղակի բանակցել Լոնդոնի հետ: Դուռը համաձայնել է ստեղծելու գլխավոր հանձնաժողով, որն զբաղվելու է հայկական գործերով և անմիջական հարաբերությունների մեջ է լինելու դեսպանների հետ, նաև ընդունել է երեք պետությունների մայիսի 11-ի կոլեկտիվ նոտայի հինգ կետերը: Այդպիսով, Դուռն ընդունել է ամենաէական առաջարկությունները»: Համաձայն տեղեկատվության միջոցների, սուլթանի այս զիջումներն արվել են անգլիական թագուհու գահակալական ճառում արտահայտած հույսերի և լորդ Սոլսբերիի վերին աստիճանի սպառնալից խոսքերի՝ Միջերկրական ծովի անգլիական նավատորմիղը Դարդանել մտցնելու սպառնալիքի՝ Եոյակ Դաշնության անդամների բարեկամական խորհուրդների և Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Հանոթոյի հետ հանդիպման ազդեցության տակ, որից երևում է, որ բարենորոգումների հարցում լիակատար համաձայնություն կա Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի միջև: «Մենք արդեն ասել ենք, որ Հայկական խնդիրը Անգլիայի համար արժանապատվության խնդիր է, որով նաև դարձել է անգլիական խնդիր... Անգլիան է խնդրի ծանրությունն իր ուսերին տանողը»*[48]:

*Այսպիսով, ցարը, բացեիբաց հանդես չգալով բարենորոգումների դեմ, միաժամանակ ամեն ինչ անում էր, որպեսզի չխրախուսվեին «Հայաստանի ապստամբական չարժման թաղանթի տակ դանդաղ ծխացող քաղաքական իղձերը»:*

*Շուրջ մեկ ամիս անց Նելիդովը «սև գույներով» է նկարագրում կ. Պոլսում տիրող վիճակը: Նոյեմբերի 6-ին Լոբանովն իր մոտ է հրավիրում Լամսդորֆին և գանգատվելով, որ ռուսական թերթերը դրական են գնահատել Թուրքիայի նկատմամբ Անգլիայի քաղաքականությունը, հանձնարարում է առաջարկություններ նախապատրաստել այդ լրագրերի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ, ասելով. «...Սոլսբերիի վարքագիծը ամենևին էլ անաղարտ չէ և միանգամայն ի վիճակի է առաջացնելու կասկածներ: Մենք նրա հետ համատեղ ենք գործել, իսկ այժմ, երբ սուլթանը վերջապես համաձայնել է մեր պահանջներին, Սոլսբերին շարունակում է նրա վրա հարձակվել և հեղինակազրկել, իսկ փորձեք բարենորոգումներ անցկացնել՝ չունենալով անհրաժեշտ հեղինակություն: Ծանկացած կառավարության իրական իշխանությունը պայմանավորված է ոչ միայն նրա նյութական հնարավորություններով, այլև այն հեղինակությամբ, որից օգտվում է»: «Այս առումով,– գրում է Լամսդորֆը,– մեր առաքինի իշխանի դատողությունն ինձ չատ տարօրինակ է թվում՝ 2-3 լավ զինված գունդ և մի լավ հրետա-*

---

[47] Ламсдорф В.Н., նշվ. աշխ., էջ 221:
[48] «Մուրճ», 1895, թիվ 8:

նային մարտկոց բավական են խելքի բերելու հարյուր հազարավոր անզեն բնակիչների: Տվյալ դեպքում հեղինակությունը հենվում է չատ պատկառելի նյութական ուժի վրա: Վերջնահաշվում իշխանը ինձնից սպասում է կազմել մի նամակ... որում արտահայտվեր մեր ցանկությունը՝ հայկական գործերի ներկա ժամանակաշրջանում տերությունների միջև պահպանել լիակատար համաձայնություն, որպեսզի հեշտանա Թուրքիայի անելիքը, այսինքն, նրան չչտապեցնել անցկացնելու այն բարենորոգումները, որ ինքը համաձայնել է կյանքի կոչել»[49]:

"Daily News"-ը տպագրում է Հռոմից ստացված հետևյալ հեռագիրը. «Հավաստի աղբյուրի վկայությամբ Թուրքիայում տերությունների միացյալ գործողությունների վերաբերյալ կոմս Գոլուխովսկու առաջարկությունը ուղղված է այն բանին, որ սուլթանին հնարավորություն տրվեր կարգը վերականգնելու և խուսափելու հեղափոխությունից: Այդ նպատակին հասնելու համար բոլոր տերությունների նավերը պետք է կենտրոնացվեն Բեզիկի ծովածոցում, ապա կուվացնեն Դարդանելը և, անհրաժեշտության դեպքում, մտնեն Մարմարա ծով ու, եթե հանգամանքները պահանջեն, գրավեն նույնիսկ Կ. Պոլիսը: Այս առաջարկությունը Ռուսաստանը վճռականորեն մերժեց, Ֆրանսիան հետևեց Ռուսաստանի օրինակին, Գերմանիան Ավստրո-Հունգարիայի հարցմանը պատասխանեց անորոշ արտահայտություններով»[50]:

Նյու Յորքից ստանալով Բլենքերի, Միլլերի, Շերմանի ստորագրություններով հետևյալ հեռագիրը. «Հայերի զանգվածային կոտորածները խայտառակում են քրիստոնեական աշխարհը: Զանգվածային ցույցի հավաքված Նյու Յորքի բնակիչները միահամուռ բողոքում ու կոչ են անում եվրոպական տերություններին անհապաղ գործողությունների դիմել արյունահեղությունը դադարեցնելու համար»՝ Նիկոլայ 2-րդը հեռագրի վրա մակագրում է. «Ավանակներ»[51]:

Նոյեմբերի 9-ին Լոբանովը Ստաալին գրում է. «Բազում դժվարություններից հետո տերությունների միջև համաձայնությունը վերջապես հանգեցրեց անհրաժեշտ համարված բարենորոգումների նախագիծը սուլթանի կողմից ընդունվելուն, սակայն հենց այն պահին, երբ հնարավոր էր դարձել կյանքի կոչել բարենորոգումները, լորդ Սոլսբերին, փոխանակ հավանություն տալու Աբդուլ Համիդի այդ քայլին և աջակցելու հպատակների նկատմամբ նրա իշխանության ուժեղացմանը, հավանաբար գերադասում է բազմապատկել սպառնալիքները և կանխագուշակել ճակատագրական ելքը: Դրանք Կ. Պոլսում չեն կարող դիտվել այլ կերպ, քան խրախուսանք խառնակչություն տարածողներին: Ճշմարիտն ասած, եթե լորդ Սոլսբերիի հետապնդած նպատակը Թուրքիայի լիակատար փլուզումն է, նա այլ կերպ գործել չի կարող... Արդյո՞ք կառավարության հեղինակության վրա հետևողական հարձակումները, հատկապես այն պահին, երբ նա հեղինակության բարձրացման առավել մեծ կարիք է զգում, լավագույն միջոց չէ նրա ջանքերը չեզոքացնելու և անկումը նախապատրաստելու համար: Ուզում ենք հավատալ, որ Օսմանյան կայսրության կործանման սարսափելի հեռանկարը չի մտնում լորդ Սոլսբերիի բարդ մտահղացումների շրջանակի մեջ: Երկրագնդում խաղաղության պահպանմամբ մտահոգված բոլոր պետությունները խիստ շահագրգռված են, որպեսզի բացառվի նման հեռանկարը, քանի որ այն ելակետ կհանդիսանա համընդհանուր բախման համար»[52]:

Գ. Կամբոնի "Correspondance" գրքում կա հետաքրքիր դիտարկում: «Համոզված եմ, որ եթե լորդ Սոլսբերին և, մանավանդ, իշխան Լոբանովն իրենց դեսպաններին ազատ թողնեին գործելու, վերջիններս կհաջողեցնեին սուլթանին հարկադրել իրականացնելու բավարար բարենորոգումներ: Եթե Ռոզբերին հրաժարական չտար, մեր նպատակին գրե-

---

[49] Ламсдорф В.Н., նշվ. աշխ., էջ 302:
[50] Նույն տեղում, էջ 306:
[51] Նույն տեղում, էջ 307:
[52] Նույն տեղում, էջ 309-310:

թե հասել էինք... իրականությունն այն է, որ ռուս վարչապետը (նկատի ունի Լոբանով-ին) Պետերբուրգում օսմանյան դեսպանի հետ այնպիսի զրույցներ էր ունենում, որոնք Կ. Պոլսում ռուսական դեսպան Նելիդովի հեղինակությունն իսկույն գցում էին: Հայկական գործերի վերաբերյալ բանակցությունները Թուրքերը Պոլսից Պետերբուրգ տեղափոխեցին, և իմ ռուս գործընկերն... այլևս մեզ զորավիգ լինել չէր կարող...»:

Լոնդոնն ու Պետերբուրգը «փոխադարձաբար իրար ամբաստանում էին, թե Հայաստանում սեփական շահեր էին հետապնդում»:[53] Սեպտեմբերի 3-ին Համայնքների պալատում արտաքին գործերի նախարարի տեղակալ Քերզընը հայտարարեց. «Բարենորոգումների ծրագիրը պաշտպանություն չգտավ Գերմանիայում, Ավստրիայում և Իտալիայում, սակայն, կարծում եմ, այդ երեք տերությունները համաձայն են ծրագրին, քանի որ ոչ պաշտոնական եղանակով Բ. Դռանը խորհուրդ են տվել բարեհաճությամբ վերաբերվել դրան»[54]: Պաուլ Ռորբախի կարծիքով, եթե Բեռլինի վեհաժողովից հետո տարիներ շարունակ Թուրքիան ոչ միայն ձեռնամուխ չեղավ բարենորոգումների, այլ սկսեց կոտորածներ, նման համարձակությունը «բացառապես հետևանք էր Թուրքիայի հանդեպ Գերմանիայի հիանալի վերաբերմունքի»[55]: Այդ պայմաններում, Բեռնշտայնի խոսքերով, «Սուլթանի կառավարության քեֆին քեֆ չէր հասնում: Գանգատներն ընդունեց ամենամեծ անտարբերությամբ և, առանց աղմուկ բարձրացնելու, շարունակեց կոտորել հայերին»:

Նույն տարվա հոկտեմբերի 17-ին Նելիդովը հեռագրեց ցարին. «Հենց նոր սուլթանը, երկու աննշան ուղղումներ կատարելուց հետո, հաստատեց բարենորոգումների կանոնակարգման փաստաթղթերը, ինչպես նաև դրանց հրապարակման մասին այն հոդվածները, որոնք մտցվելու են հրամանագրի մեջ: Այդ հոդվածները մշակվել են մեր կողմից Թուրքիայի Ա Գ նախարարության հետ միասին: Սպասվում է, որ հրամանագրի հրապարակումը տեղի կունենա մոտ ապագայում»: Նիկոլայ 2-րդը մակագրեց. «Գերազանց»[56]: Իսկ սուլթանը հավատարիմ էր իրեն: Նա մեծ համառությամբ խաղում էր, խաբում տերություններին և հասարակայնությանը, նրանց խճճում հույսերի և ապատումների սարդոստայնում: Նույնիսկ փորձված դիվանագետներն էին ընկնում պատրանքների գիրկը: Նելիդովի հոկտեմբերի 17-ի հեռագրից երեք օր անց՝ Լամսդորֆը գրում է. «Կարելի էր համարել, որ, այսպես կոչված, հայկական գործը այս կամ այն չափով կարգավորվում էր, սակայն սուլթանի կողմից Նելիդովին ընդունելու մասին երկրորդ հեռագիրը պարունակում է տագնապալի չեշտադրումներ: Արդուլ Համիդը շատ անհանգստացած է իր հպատակների վրա այդ բարենորոգումների ազդեցությունից: Ահաբեկված՝ ինչպես Անգլիայի ներխուժումից, այնպես էլ հեղափոխությունից, փադիշահը, հավանաբար, այս երկու վտանգներից ավելի շատ անհանգստացած է երկրորդից: Սակայն Նելիդովը գտնում է, որ իրեն հաջողվել է սուլթանին հասկացնել, թե մեր գործողությունները բացառապես կրում են զսպող բնույթ, և որ մենք ու Ջրանսիան, միանալով հօգուտ հայերի անգլիական դեմարշին, խանգարեցինք միայնակ եռանդուն գործողությունների անցնելու անգլիացիների մտադրությունների իրականացմանը»: Այնուամենայնիվ, սուլթանը հարկադրված էր ինչ-որ թուղթ ստորագրել, և Լամսդորֆը գրեց, որ նոյեմբերի 4-ին «Լոնդոնից հաղորդեցին, թե Հայաստանում բարենորոգումներ մտցնելու վերաբերյալ երեք դեսպանների պահանջը հավանաբար Բ. Դռան կողմից ընդունվել է»[57]:

Թե՛ օտար և թե՛ հայ գործիչները պատմական փորձով համոզվել էին, որ Թուրքիան Հայաստանում բարենորոգումներ ոչ միայն չի մտցնի, այլև մտցնել չի կարող: Մ. Օրմա-

---

[53] Լապյան Գ., նշվ. աշխ., էջ 89:
[54] «Մուրճ», 1895, թիվ 8:
[55] Թումայան Կ., նշվ. աշխ., էջ 22:
[56] Ламздорф В.Н., նշվ. աշխ., էջ 264:
[57] Նույն տեղում, էջ 264:

նյանը գտնում էր, որ դրանք հնարավոր էին միմիայն արտաքին ճնշման միջոցով: Գ. Նորատունկյանի կարծիքով՝ հայերի համար առանձին բարենորոգումներն անհնար էին: Եթե Թուրքիայում հաստատվեն բարվոք կարգեր, ապա հայերը, իբրև առավել կուլտուրական, աշխատունակ տարր, մյուս ժողովուրդներից շատ կօգտվեն դրանից[58]: Քելեքյանն ընդհանրապես մերժում էր Հայկական հարցի և հայերի համար բարենորոգումներ մտցնելու անհրաժեշտությունն ու հնարավորությունը: Ընդհանուր առմամբ, արևմտահայ գործիչների չրջանում տիրապետողն այն կարծիքն էր, որ Թուրքիան անզոր է բարենորոգվել, չատերը գտնում էին, որ միայն Եվրոպայի կողմից ճնշման և Ռուսաստանի միջամտության պայմաններում են հնարավոր ինչ-որ տեղաշարժեր: Արտաքին օգնություն հայցող այդ խմբերգում ամենաուժեղ հնչում էր ռուսամետությունը, որը, եթե ավանդաբար հզոր է եղել միայն հայկական գավառներում, աստիճանաբար այդպիսին էր դառնում նաև Կ. Պոլսում: Այն վերածվում էր ազգային տրամաբանության:

Այսպիսով, 1895-96 ԹԹ. հայոց ջարդերը տերություններին հարկադրեցին մի նոր դեսպանաժողով անցկացնել Կ. Պոլսում: Նախաձեռնողը Մեծ Բրիտանիայի կառավարությունն էր, որը 1896Թ, հոկտեմբերի 20-ին նման առաջարկությամբ դիմեց մյուս մեծ տերությունների կառավարություններին: Հայ գործիչները, նկատի ունենալով ցարական կառավարության թշնամական կեցվածքը արևմտահայերի և Հայկական հարցի լուծման հանդեպ, սպառնացին, թե պայթեցնելու են Կ. Պոլսի Ռուսական դեսպանատունը: Դա պառակտեց դեսպանաժողովը: Քըրրին ընկրկեց, Ավստրո-Հունգարիայի դեսպանը Նելիդովին համոզում էր միջոցներ ձեռնարկել հայերի նոր ջարդեր թույլ չտալու համար: Որոշվեց սուլթանի պալատի մերձակայքում տեղակայել ռուսական և ավստրիական ռազմանավեր: Հունվարի 19-ին դեսպանաժողովը որոշում կայացրեց կայսրությունում բարենորոգումներ անցկացնելու համար կազմել միջազգային երկու հանձնաժողով, ապա գերադասեցին ստեղծել մեկ ընդհանուր հանձնաժողով՝ կազմված օսմանյան և եվրոպական ներկայացուցիչներից: Դեսպանաժողովը 1897-ի փետրվարի 2-ին ավարտեց Օսմանյան կայսրության բարենորոգումների ծրագրի նախագծի քննարկումը: Այն ուներ հետևյալ բովանդակությունը. 1) կազմել բարենորոգումների բարձրագույն խորհուրդ, 2) ստեղծել բարենորոգումների ընթացքը վերահսկող հանձնաժողով, 3) սահմանել վերահսկողություն Օսմանյան կայսրության ֆինանսների վրա, 4) բարեփոխել դատական համակարգը, 5) վերակառուցել իշխանության տեղական մարմինները, 6) ապահովել մամուլի ազատություն: Սակայն ինչպես տերությունների մյուս «վճռական» քայլերը, այս մեկն էլ մնաց թղթի վրա ու իր իրավաստությունները սկսեց ու ավարտեց՝ տեղ գրավելով արխիվների փոշիների մեջ:

## 2. 1895-96 ԹԹ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Կ. Մուրադյանը Սասունի ջարդերը համարում է այն սցենարի առաջին գործողությունը, որը կրկնվելու էր հայերով բնակեցված բոլոր վիլայեթներում[59]: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ օսմանյան ցեղասպան քաղաքականության տարրերը ձևավորվել էին 1890-ական թվականների կոտորածներից շատ առաջ: Ի սկզբանե թուրքերը կոտորածները համարել են հպատակ ժողովուրդներին հպատակության մեջ պահելու միջոց: Այդ կոտորածներն էլ հանդիսացան ցեղասպանության ձևավորման գլխավոր բաղադրիչը:

Կոտորածները Արևմտյան Հայաստանի հայաթափման համիդյան ծրագրի ամենահիմնական միջոցն էին. նպատակը մեկն էր՝ հայկական նահանգներում հայերին դարձնել ազգային չնչին փոքրամասնություն: Ա. Վամբերիի վկայությամբ՝ սուլթանը ծրա-

[58] Ադանց Ն., նշվ. աշխ., էջ 41:

[59] Տե՛ս Meyrier G., *Les massacres de Diarbékir. 1894-1896*, Paris, 2000, p. 17.

գրում էր ոչնչացնել արևմտահայերի 1/3-ին և կարծում էր, որ դրանից ահաբեկված հայերի 1/3-ն էլ կփախչեր Ռուսաստան և հարցը կփակվեր: Պատմաբանները, սա չբացառելով հանդերձ, նշում են մի քանի գլխավոր ու երկրորդական նշանակության պատճառներ ևս: Ամերիկյան գիտնական Է. Փիրսը կոտորածների պատճառներ համարում է. «Առաջին՝ Հայաստանի մահմեդական հարևանների դարավոր համոզմունքը, որ իրենք իրավունք ունեն թալանելու քրիստոնյաներին, երկրորդ՝ հայերի աշխատասիրությունն ու խնայողական լինելը, որի շնորհիվ նրանք կարողացել էին հող ձեռք բերել և, ընդհանուր առմամբ, իրենց հարևաններից հարուստ էին... երրորդ՝ հայերի մշակութային առավելությունները, որ պայմանավորված էր կրթություն ստանալու ձգտմամբ: Դրա շնորհիվ նրանք առաջվա նման համբերատար չէին և չէին հանդուրժում իրենց կանանց ու դուստրերի վրա հարձակումներն ու հափշտակությունները: Այլ կերպ ասած, կրթությունը ծնել էր ազատ լինելու ցանկություն, ինչպես նաև մահմեդական հարևանների կողմից հասցված բազմաթիվ վիրավորանքների և վնասների հատուցման անհնարինության գիտակցում: Այս բոլորը հանգեցրեցին մեծ թվով հայերի արտագաղթի՝ Ռուսաստան և Ամերիկա: Նրանք Թուրքիայի սահմաններից դուրս սկսեցին ստեղծել հեղափոխական կոմիտեներ: Այդ կոմիտեներին հարում էին ռուսահպատակ հայեր: Դրանց գոյությունն Աբդուլ Համիդի համար պատրվակ դարձավ կազմակերպելու կոտորածներ»[60]: Ռ. Բերբերյանը «Մուրճ»-ի 1905թ. հունիսի համարում գրում է. «Հենց նյութական պայմաններով է բացատրվում նաև պատմական այն իրողությունը, որ հայերը կամ մահմեդականները... վերջին 20-25 տարիներին սկսեցին մեկը մյուսի հետևից ապստամբել», ինչը և օգտագործվեց հայերին կոտորելու համար: Է. Քարալը գտնում է. «Աբդուլ Համիդը իրապես իրավունք ուներ զայրանալու հայերի վրա, ովքեր քաղաքական նպատակներով իր դեմ էին հրահրում ռուսներին և անգլիացիներին...»[61]:

Հայերի «ապերախտության», ինչպես նաև նրանց «ապստամբական գործունեության» առնչությամբ Ջ. Բրայսը գրում է. «Հայաստանցիք խաղաղ են, սակայն խոսք լինել չի կարող նրանց հավատարիմ հպատակության մասին. չի կարելի պահանջել կալանավորից, որ նա հավատարմության զգացում տածի դեպի բանտապետը»[62]: Ֆրանսիացի գիտնական Գ. Մոնրեին է. Դրիոյի «Արևելյան խնդիրն ու Հայկական հարցը ծագումից մինչև մեր օրերը» գրքի (Կ. Պոլիս, 1913թ.) առաջաբանում գրում է. «...Դժբախտաբար, Ռուսաստանն ու Ֆրանսիան թույլ տվեցին, որ հայերը կոտորվեն, որովհետև Ռուսաստանը ցանկանում էր ապացուցել, թե ավելի լավ է ռուսների կողմից հարստահարվել, քան թուրքերի կողմից կոտորվել»[63]:

"National Zeitung"-ի 1901թ. սեպտեմբերի 27-ի համարում կարդում ենք. «Թուրքական պաշտոնական շրջաններում հաճախ կարելի է լսել՝ եթե ասվում է, որ Եվրոպան քրիստոնյաներինն է, ապա պետք է նաև ասվի, որ Ասիան մահմեդականներինն է: Հայկական կոտորածները թուրք կառավարող դասակարգերի այս մտածողությունից են ծնվել, որովհետև հայերը միակ քրիստոնյաներն են, որոնք Փոքր Ասիայի խորքերում հոծ բազմությամբ են ապրում: Եվ Պոլսում ճիգ են թափում ոչ միայն Անատոլիայի քրիստոնյաներին հարավային սահմաններից դեն չպրտելու, այլև ուզում են ավելի մեծ չափերով Անատոլիայի ազգաբնակչության ներքին միատարրություն ստեղծել»:

"Pro Armenia"-ի 1901թ. №17-ում տպագրված գերմանացի ճանապարհորդ-գիտնական Հյուգո Գրոթեի Տրապիզոն և Կարին կատարած այցելության վերաբերյալ նոթագրություններում ներկայացվում են ջարդերի զարհուրելի տեսարանները, իսկ "Die Kritik" հանդեսում նույն հեղինակը փորձում է բացահայտել դրանց պատճառները: Նա

---

[60] **Pears E.**, *Turkey and Its People*, London, 1912, pp. 276-777.
[61] **Karal E.Z.**, *Osmanlı Tarihi*, cilt VIII, s. 62.
[62] «Դրոշակ», 1899, թիվ 4:
[63] **Drio E.**, *La Question Arménienne, Constantinople*, 1913, p.j.a.

գրում է. «Արևելքում ճանապարհորդը թուրքերին կհամակրի, հույներին կարհամարհի, իսկ հայերին կատի: Հայերը, չնչին բացառությամբ, վաշխառուներ ու վաճառականներ են և տգրուկի նման ծծում են թուրք ժողովրդի արյունը: Այստեղ պետք է փնտրել հայկական կոտորածների բուն շարժառիթը»: Սա, իհարկե, կարծիք է, որը ճշմարտության հետ մասնակի առնչությունից բացի, նաև տուրք է թուրքական պաշտոնական քարոզչությանը: Թվում է՝ չափազանցության չափաբաժին է պարունակում նաև «Հնչակ»-ի 1897թ. թիվ 5 և 7 համարներում տպագրված հոդվածի հետևյալ կարծիքը, օսմանցի կառավարողները «լավ հասկացել էին, որ իրենց լծի տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների ճարտարությունը արդյունագործության, առևտրի, երկրագործության մեջ, ինչպես նաև նրանց մտավոր և բարոյական ուժերն ու ընդունակությունները մի մեծ վիհ են բացել այդ ժողովուրդների ու թուրքերի միջև: Ջունհնալով նման հատկություններ և չլինելով արդյունաբերող, այլ միայն պատերազմիկ ցեղ, ընդունակ արշավանքների և անընդունակ կառավարող, աշխատավոր և առաջադիմող տարր լինելու, թուրքը կարող է միայն ապրել իբրև օտարակեր (պարազիտ), իբրև այդ քրիստոնյա ժողովուրդների հարստությունները սպառող ու կործանող... օգտվելով հաղթական արշավանքների ու երկրի տերերի իրավունքից ու դիրքից: Այնքան ժամանակ, որքան նրանք (հպատակները) տանում էին թուրքական կեղեքումը, կամայականությունը, կողոպուտը... այդ օտարակերության գործադրությունն ազատ էր և դյուրին թե՛ օսմանյան կառավարությունների և թե՛ պաշտոնեության համար... Դրա հետ միասին օտարակերությունը դարձել էր քաղաքական գործիք և զենք քրիստոնյա ժողովուրդներին միշտ պահելու նյութական սահմանափակ հնարավորությունների մեջ: Բայց հենց որ քրիստոնյա ժողովուրդների մեջ արթնացավ սեփական վիճակի գիտակցում, բողոքներ տեղացին կառավարության գլխին, վերջինս փոխանակ որևէ նպատակահարմար միջոցի դիմելու, բացեց անլուր հալածանքների դարագլուխը, որ միշտ ավարտվում էր կոտորածներով: ...Թուրք կառավարությունները չանք չէին խնայում ջնջելու, ոչնչացնելու նրանցից (քրիստոնյա ժողովուրդներից) մեկին կամ մյուսին, ով ցույց էր տալիս ավելի բարձր գիտակցություն, ուժ խլրտումների և ապստամբական շարժումների համար»[64]: Նշված պատճառը դեր խաղացե՞լ է: Այո, անպայման: Բայց ոչ գլխավոր, ոչ առաջնային: «Հնչակ»-ի կարծիքը գիտական հնչեղություն ձեռք կբերեր, եթե առաջ քաշվեր հայերի հայրենիքին մեկընդմիշտ տիրանալու թուրքական ռազմավարության համապատասխանների վրա:

Կոտորածների պատճառների ու նպատակների շարքում, գրում է Պ. Բելյաևը, փոքր դեր չխաղաց կրոնական գործոնը, իսլամի հին պատգամը՝ անհավատներին կոտորել կամ մահմեդականացնել: Շատ դեպքերում կոտորածներ հրահրողները մահմեդական հոգևորականներն էին: Կարգախոսն էր՝ ոչ մահմեդականի չսպանողը դրախտ չի գնա[65]: Որոշ հեղինակներ նշում են նաև հետևյալը. «Համոզվելով, որ իրենց տիրապետությանը վտանգ է սպառնում բոլոր կողմերից, թուրքերը արդեն ձգտում էին քրիստոնյաների նկատմամբ բացի արհամարհանքից, ունենալ նաև կատաղի ու սանձարձակ ատելություն: Մի կույր կատաղություն, որը... ուժեղանում էր Եվրոպայի անկարող ու անվճռական միջամտություններով: Թուրքերն այլ միջոց չէին տեսնում իրենց հզորությունը պաշտպանելու և սպառնացող վտանգը հետ մղելու, եթե ոչ կոտորածների միջոցով քրիստոնյաների ոչնչացումը... Այս հանգամանքը կոչվում է «խաղաղեցում» և մեծահոգի փադիշահի հայրական կառավարման վերականգնում»[66]:

"L'Orient" հանդեսի 1897թ. փետրվարի 1-ի համարում Մելքոն Խանը գրում է. «Արդեն 100 տարի է, որ Եվրոպան օգտագործում է բանակցությունները, զենքը, ծախսեր կատարում, խորհուրդներ, խոստումներ տալիս՝ օգտագործում ամենատարբեր միջոցներ,

---

[64] «Հնչակ», 1897, թիվ 5:
[65] Братская помощь..., стр. 57-59.
[66] Նույն տեղում, էջ 57-59:

որպեսզի հարկադրի Թուրքիային բարենորոգումներ իրականացնել: Ինչպիսի՞ն են այդ ամենի արդյունքները: Հայկական տարածքների համար՝ ավերակների չեղջեր, իսկ ժողովրդի համար՝ արտասուքի անսպառ աղբյուր: Ինչո՞վ բացատրել Եվրոպայի իմաստունության և հզորության այս տարօրինակ անհաջողությունը: Պատասխանը հակիրճ է՝ քրիստոնյա տերությունները բացարձակապես չեն հասկանում իսլամին, որի գլխավոր սկզբունքն է՝ քրիստոնյա Եվրոպան Թշնամի է, որ մահմեդական գործերին քրիստոնյաների որևէ միջամտություն թույլ տալը սրբապղծություն ու հանցագործություն է: Հնարավոր է մահմեդական ժողովրդին հնազանդեցնել, ոչնչացնել, ցաքուցրիվ անել, բայց նրա համար ավելի քան անընդունելի են քրիստոնեական տերությունների կողմից իր վզին փաթաթվող բարենորոգումները: Ինչո՞ւ, որովհետև մահմեդականի համար յուրաքանչյուր բարենորոգում կարող է ունենալ միայն մեկ օրինական աղբյուր՝ իսլամը»:

Հայերի ցեղասպանությանը ձեռնամուխ եղած սուլթանական վարչակազմի քաղաքականության վերը նշված ու բազում այլ մեկնաբանությունների հետևանք են խնդրի ակնթարթային, ոչ քիչ դեպքերում նաև չհարկումային դիտարկումները: Մասնավորապես, Անատոլիայում Օսմանյան կայսրությանը սպառնացող ոչ չարժում կար և ոչ էլ մտադրություն: Դրանց մասին խոսակցությունները սուլթանն ու նրա կառավարությունը հնարեցին Փոքր Ասիան Թուրքացնելու քաղաքականությունն արդարացնելու համար: Օսմանյան տիրակալները Փոքր Ասիան Թուրքերի հայրենիք դարձնելու ճանապարհին հայերի կոտորածը համարեցին թիվ մեկ խնդիր և գտան, որ «կառավարության ու երկրի համար ամենավնասակարները» հայերն են, և սուլթանական վարչակարգի «ամենամեծ գործը նրանց բնաջնջումն է»[67]: Կոտորածը լուծելու էր երեք հիմնախնդիր. ա) հայերի թվի փոքրացում, այսինքն՝ Արևմտյան Հայաստանում մահմեդական տարրի թվական գերակշռության ստեղծում, բ) ահաբեկման միջոցով հայերի ազատագրական ձգտումների խորտակում՝ հայ ազգային չարժման վերացում և գ) հայերի ու քրդերի միջև այնպիսի թշնամության ձևավորում, որպեսզի անհնար դառնար այդ երկու ժողովուրդների խաղաղ համակեցությունը, որպեսզի Քրդստանի վերածված Հայաստանը դառնար Թուրքիա, Թուրքերի ազգային պետականության անքակտելի մասը: Եվ դա սուլթանին հաջողվեց: Վ. Մաևսկին նկատում է, որ կոտորածներից հետո քրդերն «առանց չափազանցության հայ ազգաբնակչության համար դարձան իսկական պատիժ, բայց ամենևին ոչ նրա համար, որ հայերի և քրդերի միջև գոյություն ուներ հավերժական թշնամություն»[68]: Հետաքրքրությունից զուրկ չէր նաև Նելիդովի հետևյալ տեղեկագրությունը՝ հիմնված Թուրքիայում ռուսական հյուպատոսական ծառայություններից ստացված նյութերի վրա. «...քրիստոնյաները սարսափով սպասում են մուսուլմանների հարձակմանը... Մուսուլմանների գրգռվածությունն ու սանձարձակությունը արդյո՞ք չեն հասել այն չափերի, երբ դատողություններն ու հորդորանքներն անզոր են, երբ ներգործություն կարող է ունենալ հաստատուն նյութական ուժը... Դրա հետ միասին մահմեդականների վրա ուժեղ տպավորություն են գործում նաև տարածվող լուրերը, թե հայերի ջարդերն իբր առաջ են գալիս գերագույն իշխանության թույլտվությամբ, որ դրանք հրահանգված են հոգևոր վերնախավի կողմից և հաճելի են Ելդըզին, որտեղից խալիֆի մերձավոր անձինք տալիս են դավաճանության համար հայերին պատժելու բազում հրամաններ: Այս կարգի պատմություններն շատ տարածված են: Որքան էլ կասկածելի թվա նման հրահանգների գոյությունը, չի կարելի ժխտել, որ մահմեդականների գործողությունները կարծես ամենուրեք ղեկավարվում են դրանցով: Թուրքերի կողմից լուրեր են տարածվում Թուրք խաղաղ բնակչության վրա հայերի հարձակումների վերաբերյալ, և անմիջապես սկսվում է բնաջնջում, որի ընթացքում սպանվածների մեջ Թուրքեր գրեթե չկան»[69]:

---

[67] «Հնչակ», 1897, Թիվ 7:

[68] Маевский В.Т., նշվ. աշխ., էջ 41:

[69] Մարկոսյան Ս., Արևմտահայության վիճակը XIXդ. վերջին, Երևան, 1968, էջ 245-246:

Նելիդովի առաջ քաշած միտքը, իհարկե, ոչ թե կոտորածների պատճառ էր, այլ այն իրականացնելու միջոց: Հայ և մահմեդական բնակչության միջև առճակատումն ու ատելությունը փոխադարձ մերժման աստիճանին հասցնելուց հետո՝ սադրիչ լուրեր հրապարակ նետելն է դրանց հանդեպ վերաբերմունք դրսևորելը: Զևավորված մթնոլորտը միջոցից վերածվեց պատճառի, քանի որ հնարավորություն ստեղծվեց խնամքով քողարկել զանգվածային կոտորածների իսկական նպատակը և դրանք լայն հասարակությանը ներկայացնել որպես ազգամիջյան բախումներ:

Դեռ 1881թ. "Вестник Европы"-ն գրել է. «Թուրքական իշխանությունները ձգտում են մատների արանքից նայել զինվորականության կողմից սանձազերծված ոճրագործություններին, քանի որ «անհավատների» կոտորածը և թալանը ոչնչով չեն հակասում «Թուրք հայրենասերների» գաղափարներին և «ավանդույթներին»: Թուրքերը միայն այն ժամանակ իրենց հանգիստ կզգան, երբ կայսրության բոլոր «անհուսալի տարրերն» իսպառ չնչված լինեն»[70]:

Գոլոբորոդկոն, անդրադառնալով կոտորածներին, գրում է, որ Աբդուլ Համիդը չի սիրում միջոցների մեջ խտրություն դնել: Նա իր մերձավոր գործիչների հետ կազմեց Հայաստանի ամբողջ արևելյան սեռի բնակչությունը ոչնչացնելու հրեշավոր պլան: Վախը Եվրոպայի հասարակական կարծիքից սուլթանին թույլ չտվեց այդ անել բացահայտ, և նա դիմեց քուրդ բեյերի համագործակցությանը: Կոտորածները սկսվեցին հայկական բնակավայրերի վրա քրդերի հարձակումներով: Նախապես հայերից խլեցին բոլոր զենքերն ու այն ամենը, ինչը կարող էր լինել ինքնապաշտպանության միջոց: Երբ ոստիկանությունը հավաքում էր հայերի զենքերը, նույն ժամանակ չուկայում թուրքերը զենք էին գնում, իշխանություններն ու մոլլաները ամբոխի մոլեռանդություններն էին գրգռում իսլամի հանդեպ հայերի իբր գործադրած բռնությունների մասին լուրերով, թուրքերին ու քրդերին բաժանում էին խմբերի, նրանց զենք, փամփուշտ տալիս, նշանակում հարձակման օրն ու ժամը: Սովորաբար որոշված օրը փողոցում վեճ էր «ծագում» հայերի ու թուրքերի միջև, որին միջամտում էր ամբոխը, ապա նաև՝ զորքն ու քրդերը: Ամբոխը նետվում էր հայերի խանութների ու տների վրա, զորքերը կրակ էին բացում, թալանից անցնում էին կոտորածի և ավերածության: Խելահեղ ամբոխը «կրկնում էր Թամերլանի ժամանակի բոլոր սարսափները՝ հայերին գցում էին կրակը, գլխիվար կախում, կաշեհանում, մարմինները մանր մասերի բաժանում», կենդանի հորում, գլուխները կտրում, կանանց կրծքները պոկում, մազերի մեջ վառոդ լցնում ու պայթեցնում, բռնաբարում ոչ միայն կենդանի մարդկանց, այլև մեռածներին: «Հայերի կոտորածներին բանակի, իշխանությունների և սուլթանի գործակալների մասնակցությունը ապացուցված է... Կոտորածների պլանավորված կազմակերպումը, սահմռկեցուցիչ ծավալները և դրանց բարձրագույն իշխանության մասնակցությունը խաղաքարտի վրա դրեցին հայ ժողովրդի բուն գոյությունը»[71]:

Եվրոպայում հայոց կոտորածի վերաբերյալ լուրերին երկար ժամանակ անվստահությամբ էին վերաբերվում նաև այն պատճառով, որ մարդու երևակայությանն անհասկանալի էր, որ հնարավոր է պլանավորել և իրականացնել ամբողջ ժողովրդի բնաջնջում:

Օտար մամուլը հաճախ էր խճճվում թուրքական քարոզչության գործած բավիղներում: Գալսի ջարդերի օրերին Բ. Դուրը հրապարակեց հայտարարություն՝ Բիթլիսի հայերի բողոքը, թե «վերջին խռովությունների ժամանակ մահմեդականները հափշտակել են նրանց գույքը, այդ իրողությունը կառավարության կողմից խիստ հետաքննության է ենթարկվել, ապացուցվել է գանգատի կատարյալ կեղծությունը և հաստատվել է, որ հայերն իրենք են իրենց գույքը հանձնել մահմեդական հարևաններին և դրանք արդեն վերադարձվել են տերերին»: Թուրքական քարոզչության ազդեցության տակ Թավրիզի

---

[70] "Вестник Европы", 1881, т.VIII, стр. 424.

[71] Головородько И., նշվ. աշխ., էջ 223:

«Նասր» թերթը գրեց, թե կոտորածի պատճառը հայերն են, նրանք են հարձակվել մուսուլմանների վրա նամազի պահին[72]:

Թուրքական իշխանությունները, հակահայ քարոզչությանը մեծ տեղ հատկացնելով հանդերձ, օգտագործում էին արտասահմանյան մամուլի հրապարակումներն ու պետական գործիչների թուրքամետ հայտարարությունները հայերին ահաբեկելու համար: Սեբաստիայի վալին հայերին սպառնաց: «Հայե՛ր, հանգիստ մնացե՛ք, իզուր հույսեր մի կապեք Անգլիայի կամ ուրիշների հետ: Մենք արդեն գիտենք Եվրոպայի հետ վարվելու եղանակը: Եթե հարկ լինի, Անգլիային էլի մի բան կտանք, ինչպես 1878թ. տվեցինք Կիպրոսը, և ձեր բոլորի հոգին կհանենք»[73]:

Սասունի իրադարձությունների տերությունների վերաբերմունքը սուլթանին մեկ անգամ ևս համոզեց, որ նրանք խոչընդոտ չէին: Նա մարդկանց հնձելու մանգաղը գործածելու ժամանակը եկած համարեց ու արձակեց կոտորածների հրամանը: Այդ նպատակով Շաքիրը բարեկարգություններ անցկացնելու պատրվակով մեկնեց գավառները աչքբեթության հետ կոտորածների խնդրում պայմանավորվելու համար: Քրդերը, ազդանշան ստանալով, պետք է սկսեին կոտորածները, իսկ բանակը դրանք չարունակելու էր՝ իբր խաղաղություն էր հաստատում հայերի ու քրդերի միջև:

Ջարդերը վարպետորեն կազմակերպեցին: Դրանք միաժամանակ տեղի չէին ունենում: Մերթ Սև ծովի ափամերձ գավառները, մերթ Միջագետքի սահմանագլուխը, մերթ Կիլիկիան կոտորածների թատերաբեմ էին դառնում և կողքից դիտողի մեջ ընդհանուր ջարդերի տպավորություն չէր ստեղծվում: Դա Համիդին հնարավորություն էր տալիս արդարանալ, թե «կայսրության բոլոր անկյուններում խլրտումներ են, հազիվ զսպում եմ մեկը, մի ուրիշ տեղ նոր ապստամբության իրողության առաջ եմ կանգնում: Այնպես, որ բարենորոգումներ մտցնելու հնարավորություն առայժմ չունեմ»:

Կոտորածները իրականացվեցին որոշակի համակարգով՝ քրդերի և զինվորների մի մասը սպանում էր 10 տարեկանից բարձր արական սեռի հայերին, մյուս մասը փախցնում էր կանանց ու փոքր երեխաներին, վերջապես, երրորդ խումբը թալանում էր հայերի տները: Ամենուրեք կոտորածները նույն կերպ էին սկսվում՝ կատաղած ամբոխը, կանաչ դրոշներ պարզած, հարձակվում էր հայկական թաղերի կամ չուկայի վրա, խուժում հայերի տները, խանութներն ու արհեստանոցները, կոտորում, խոշտանգում, թալանում ու հրդեհում: Ելդըզն ու Բ. Դուրը գանգատներ չէին ընդունում և ջարդերը ներկայացրին որպես «խեղճ թուրք ժողովրդի վրա գյավուրների հարձակումներ»: Սուլթանը հենց սկզբից հերքեց կոտորվածների մասին օտար մամուլում տպված լուրերը, դիվանագիտական ծառայությունների տեղեկատվությունները: Նա անողոք էր այն պաշտոնատարների հանդեպ, ովքեր թերանում էին կոտորածների վերաբերյալ Ելդըզից ստացված ցուցումների կատարման գործում: Նախարարներ էին փոխվում, պաշտոնյաներ էին բանտ նետվում կամ աքսորվում:

Նոյեմբերի 4-ին Մ. Իզմիրլյանը կաթողիկոսին գրեց. «Կհաստատեմ, թե աղետը սաստկագույն արագությամբ կընդհանրանանա այլևս և կոտորածն, ավարառությունների և հրաձգություններով հանդերձ, կկատարե իր ահռելի ու մոլեգին արշավը գրեթե ընդհանուր հայաբնակ գավառաց մեջ մեկ ծայրեն մյուսը և, ափսո՛ս, ճիշտ այն միջոցին, երբ բարենորոգումներ կհռչակվեին, որոնք սկսվում են կոտորածով և հայոց անհետացմամբ... Հայաստանն ամբողջ, Վեհափառ Տեր, սպանդարան է դարձել, ո՛չ քաղաքացուն, ո՛չ չինականին, ո՛չ կնոջ և ո՛չ մանկան կխնայվի»[74]: Մի քանի օր անց նա տեղեկագրեց. «Սոսկալի աղետ է, որ կդառնա բնաջինջ ընել Թուրքիայի հայ ժողովրդին... կգուժեն նորանոր նախճիրներ, հայտնի համարձակ գործված զինվորների, ոստիկանների, պաշտո-

---

[72] «Ալիք», 18.11.1972:
[73] «Մշակ», 1895, թիվ 67:
[74] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 226, վավեր. 115, քք. 1-3:

նյաների դրդումով կամ թողտվությամբ և կամ գործակցությամբ ու ամենուրեք միաձև դրությամբ»[75]: «Հայերին,– գրում է Յ. Լեփսիուսը,– կոտորելն անկասկած թուրքերի համար տոն էր: Ամեն ինչ ընթանում էր հիանալի կազմակերպված և նախապես կազմված ծրագրով: Կոտորածը սկսվում է փողի ազդանշանով, ավարտվում հանդիսավոր ծիսակատարությամբ՝ մոլլաները մինարեթների բարձունքից Ալլահի չնորհակալություններն էին հղում ջարդարարներին: Կանոնավոր բանակը, ժանդարմերիան և համիդիեն գործում էին եղբայրական համերաշխությամբ ամբոխի հետ, որին նախապես զենք էին տվել... Թուրք կանայք իրենց կոկորդային ձայնով մարտաշունչ կոչեր էին հղում, խրզախներին քաջալերում հետագա քաջագործության և հարստանեկան աղմկոտ երգերով խլացնում էին զոհերի ողբն ու հառաչանքները»[76]: Վայրագ, արյունարբու ոգին էր դրության տերը: Ամբոխը ոգեշնչված էր, մանավանդ որ ոչ միայն սուլթանի կամքն էր կատարում, այլև հարուստ ավարի տեր դառնում: Նրան ոգևորում էր թուրք սպան. «Մահ հայերին՝ սուլթանի կամքն է»: Տրապիզոնի վալին կոչ էր անում. «Համարձակ կոտորել, թալանել և աղոթել սուլթանի համար»: Ընչաքաղց լյումպենի բերանից փսլինք էր հոսում, երբ դիմացը տեսնում էր հայերի խանութների ապրանքները: «Վերցրու, որքան ուզում ես: Վերցրու, սպանիր, հրդեհիր, առևանգիր, արա ինչ սիրտդ ուզում է ու պատժի փոխարեն կարժանանաս աստվածային չնորհների»: Եվ ոչ միայն այդ[77]: Փաղիչահն ամեն ինչ արել ու անում է, որպեսզի «հավատարիմ հպատակների» արյունարբու առաքելությունը հաջողությամբ պսակվի, նրանց կյանքը չվտանգվի, և թող մահմեդականը հային մորթի, ինչպես ոչխարին սպանդանոցում:

1896թ. հունվարի 31-ին սուլթանին ուղարկված մի «ժուռնալում» (լրտեսագրում) կարդում ենք. «Սուլթանի չնորհիվ ներկայումս ամեն ինչ կարգին է, և մահմեդականների մեծամասնությունն ապահովված է»:[78] Սուլթանի լրտեսը միանգամայն ճիշտ էր գնահատել իրավիճակը: Իսկապես յաթաղանի խորշակն անցել էր կայսրությունով մեկ ու մահվան սարսափով ճգմել, ընկճել այն ամենն ու բոլորին, ովքեր ինչ-որ ժամանակ կարող էին գլուխ բարձրացնել սուլթանական վայրագությունների դեմ:

Աբդուլ Համիդ 2-րդը սկզբում խուսափում էր հայերի կոտորածներին ու թալանին մասնակից դարձնել թուրքերին և ձգտում էր իր հրեշավոր ծրագիրն իրականացնել քրդերի միջոցով: Քրդերը հաճույքով ընդառաջ գնացին՝ հասկանալով, թե սուլթանի դիտավորությունը թալանի ինչպիսի մեծ դուռ է բացում իրենց առաջ: Բայց չուտով ակնհայտ դարձավ, որ այդ գործելակերպից թուրքերը զոհ չէին, նրանք ափսոսանքով էին ասում. «Հայերի կոտորածներից միայն քրդերն են օգտվում»[79]: Սուլթանը չէր կարող այս խնդիրն անտեսել:

Աբդուլ Համիդը ձգտում էր արտաքին աշխարհում հակաթուրք կրքերը հանգստացնելու համար ներքին կայունություն ստեղծել: Չնայած համոզված էր, որ եվրոպական տերություններից ոչ մեկը հայկական հարցի առնչությամբ զենք օգտագործելու մտադրություն ու ցանկություն չուներ և չէր էլ ունենալու, սակայն քաղաքական եռանդուն միջամտությունը չէր բացառվում: Նախ, միջնորդի միջոցով բանակցություններ սկսեց Իզմիրլյանի հետ և առաջարկեց Եվրոպայից ձեռք քաշել ու «մի թուղթ տալ, որ հայերը բարեկորոգումներ ակնկալում են միմիայն սուլթանից»: Այդ թուղթը նրան պետք էր օձիքը Եվրոպայից ազատելու համար: Սուլթանի հանձնարարությամբ՝ Իզմիրլյանի հետ բանակցություններ էին վարում Աբրահամ փաշան, Նուբյանը, Գ. Նորատունկյանը: Իզմիրլյանը հայտնվեց մի վիճակում, երբ կա՛մ պետք է ընդուներ այդ առաջարկը, կա՛մ

---

[75] Նույն տեղում:
[76] Lepsius J., *L'Arménie et l'Europe*, p. 211.
[77] Նույն տեղում, էջ 177:
[78] Օհանջանյան Ա., նշվ. աշխ., էջ 27:
[79] Նույն տեղում:

հրապարակից հեռանար: Նա հրաժարական տվեց, ինչը սուլթանին ձեռնտու չէր, և նա մերժեց հրաժարականը՝ միաժամանակ ուժեղացնելով քարոզչությունը պատրիարքի դեմ[80]:

Միանգամայն հակադիր եզրահանգման էին հայ քաղաքական առաջատար ուժերը:

Ջարդերի կապակցությամբ ՀՅԴ հրապարակած հայտարարության մեջ ասված էր.

«Այլևս անցել է դիվանագիտական նենգությունների ժամանակը: Հարյուր հազարավոր անմեղ հայերի թափված արյունը մեզ իրավունք է տալիս ազատություն պահանջելու: Հակառակ Թշնամիների թելադրանքների, մենք պահանջել ու պահանջելու ենք լոկ ամենաանհրաժեշտը՝ 1. Մեծ տերությունների կողմից Եվրոպայի արտակարգ կոմիսարի նշանակում Հայաստանում: 2. Կուսակալների, տեղակալների և կառավարիչների նշանակում արտակարգ կոմիսարի, իսկ հաստատումը սուլթանի կողմից: 3. Եվրոպացի սպաների հրամանատարության տակ տեղաբնակ ազգություններից ժանդարմերիայի կազմավորում»:

Հայերի խնդրանքով Վիկտորիա թագուհին նամակ գրեց սուլթանին՝ առաջարկելով վերջ դնել ջարդերին: Աբդուլ Համիդը պատասխանեց, թե թագուհին թյուրիմացության մեջ է և ուրիշներին էլ թյուրիմացության մեջ է գցում, թե ամենուրեք ոտնձգություն առողները հայերն են, նրանք մուսուլմանների վրա հարձակվում են մզկիթներում, վայրագություններ գործում, բոլոր հայերը զինված են մարտինի հրացաններով, ուժանակներով, իսկ մահմեդականները պաշտպանվում են, թե ինքը և թե իր զինվորներն «արյունահեղության հանդեպ խոր զզվանք են տածում»[81]:

Բաբը Ալիի ցույցից հետո Համիդը պատրիարքին ասաց. «Հայերն այդ միջոցներով ուզում են առաջ բերել եվրոպական միջամտությունը: Լավ իմացեք, որ եվրոպական նավերը կարող են Նեղուցներից ներս մտնել և եվրոպական բանակները կկոխեն իմ մայրաքաղաքը, բայց նրանց մտնելուց առաջ Բոսֆորի ալիքները կներկվեն բոլոր հայերի արյունով»[82]: Իսկ մեծ ջարդերից հետո կաթոլիկ հայերի առաջնորդի մոտ արդարանում էր՝ ասելով, թե ինքը այդ ջարդերի համար պատասխանատու չէ, թե ինքը մի հասարակ գործիք է եղել: Գիտենալով, որ իր հանդեպ ընդհանուր հակակրանք կա, նա աշխատում էր ամենուրեք համակրանք շահել և հաճախ գանգատվում էր մարդկանց ապերախտությունից: Նրա հորդորներից ու գանգատներից չատերն էին խաբվում: Հազվադեպ կարելի էր հանդիպել եվրոպացու, որը չհրապուրվեր Համիդի բարեհամբույր կեցվածքով: Եվրոպացի նույնիսկ ամենաչարքային զբոսաշրջիկներին հյուրասիրում, պատիվ էր տալիս և սելամըքի ժամանակ նրանց արքայական բարևներ ուղարկում: Նպատակը պարզ էր՝ այդ մարդիկ պետք է համոզվեին, որ սուլթանի հասցեին Եվրոպայի տրտունջներն անհիմն են և, վերադառնալով, Արևմուտքի սալոններում իրեն գովեին:

Երբ Գլադստոնը նրան Մեծ մարդասպան անվանեց, Լոնդոնի մամուլն առաջարկում էր գահընկեց անել, իսկ ծովակալ Սեյմուրն արդեն հասնում էր Դարդանել, Համիդը Լոնդոնի իր դեսպանից այդ լուրն ստանալով, փրկության միակ միջոցը տեսավ փախուստի մեջ: Անմիջապես նախարարների արտակարգ նիստ հրավիրելով՝ ստեղծված վիճակի մասին խորհուրդ հարցրեց: Կայսրական «Իզեդին» նավը պատրաստ կանգնած էր Պեչիկթաշի առաջ՝ փադիշահին Օդեսա տանելու համար: Նախարարներից Մ. Ջալալեդդինն առաջարկեց Գերմանիայի դեսպանից խորհուրդ հարցնել: Սուլթանն անմիջապես Իզզեթին ուղարկեց Կիյոմի մոտ: Սուլթանի գոտու կամարները այդ ժամանակ լցված էին թղթադրամներով ու գոհարեղենով: Երբ Իզեդը գերմանական դեսպանի հավաստիացումը բերեց՝ Կիյոմը պաշտպանելու է «իր բարեկամին», սուլթանը ուրախությունից Իզեդի առաջ ծունկի եկավ:

Համիդը որևէ համակրանք չուներ անկախ ու հպարտ հոգիների հանդեպ, բայց աշխատում էր այդպիսիներին կաշառել: Կաշառելու շատ ձևեր գիտեր, մանավանդ, երբ

---

[80] ԳԱԹ, ֆ. Աստքեյան Հ., գ.117:
[81] Նույն տեղում, գ. 118:
[82] Նույն տեղում:

գործը վերաբերում էր երիտասարդությանը՝ պաշտոն, չքանչան, դրամ, գեղեցիկ կին: Իսկ ով դրանից ոչ մեկով չէր հրապուրվում, գործի էին դրվում զրպարտությունն ու հալածանքը: Նա այդ միջոցներով հիմնովին ապականեց թուրք ազնվականությանը և ճեպավորեց անբարոյական ու ստոր սկզբունքներով առաջնորդվող վերնախավ:

Աբդուլ Համիդը լուրջ չէր վերաբերվում կրոնին, այդ թվում նաև՝ մահմեդականությանը, որի խալիֆն էր: Նա առերես էր հավատացյալ, իսկ քրիստոնյաների հանդեպ առանձնական ատելություն էր տածում: Պալատի արարողապետ Մյունիրի վկայությամբ՝ «Մի օր սուլթանը Պապի ներկայացուցիչ մոնսենյոր Պոնետիի ներկայությամբ այնպիսի ջերմեռանդությամբ էր փառաբանում կաթոլիկությունն ու պապականությունը, որ մոնսենյորը խորապես հուզվեց»: Սակայն, երբ վերջինս մեկնեց, Համիդը քահ-քահ ծիծաղելով ասաց. «Ինչ-որ բրդեցի, ապուշը հավատաց, մինչև իսկ աչքերը լցվեցին»: Նա հարգանք չուներ նաև թուրք ժողովրդի հանդեպ: Նրան արհամարհում էր ու անվանում «առնարգ հոգի»: Պատեհ առիթով ծաղրում, անպարկեշտ պիտակներ էր կպցնում իր պալատականներին ու նախարարներին: Մի անգամ, երբ Ա. Վամբերին բարենորոգումների կապակցությամբ գովում էր օսմանյան նախարարներին, սուլթանը ծիծաղեց. «Նրանք ապուշ են ու հիմար», ապա չուռ գալով Սայիդին, հարցրեց. «Այդպես չէ՞»: «Այո, տեր»,— եղավ պատասխանը: «Բոլորն էլ սրա (մեծ վեզիր Սայիդ փաշայի) նման են»,— նետեց սուլթանը: Համիդը իր վարչակազմի գործունեությանը քաջատեղյակ էր, ամեն ինչ կատարվում էր նրա գիտությամբ ու հանճնարարությամբ, ամբողջ այդ վարչակազմը նրա ճեռքին լոկ գործիք կամ խաղալիք էր[83]:

## 3. ԲԱԲԸ ԱԼԻՒ ՅՈՒՍՈՒՖԸ

1895-96 թվերի կոտորածների վերաբերյալ առկա են հարուստ նյութեր ու վկայություններ: Ուսումնասիրողների ճեռքի տակ են այնպիսի հավաստի փաստագրություններ, ինչպիսիք են Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան Կամբոնի և Դիարբեքիրի փոխհյուպատոս Մեյրիեի զեկուցագրերը, Բրայսի «Եվրոպան և Հայաստանը», Բերարի «Սուլթանի քաղաքականությունը», «Կոտորածները Հայաստանում», Հայաստանից ստացված 34 նամակների ժողովածուն Կլեմանսոյի առաջաբանով և շատ ուրիշ հրապարակումներ, որոնք հաստատում են կոտորածների նախապատրաստության ուղղությամբ իրականացված հետևյալ իրողությունները. «Կյանքը, ունեցվածքն ու պատիվը վտանգված են, և ընդհանուր կոտորածն անխուսափելի է թվում»[84]: «...Զգացվում էր, որ հայերի հանդեպ ամեն տեսակի հաչվեհարդար մնալու էր անպատիժ»[85]: Թուրքերը հարճակում գործեցին չուկայի վրա: Նրանց խրախուսում էին ոստիկաններն ու զինվորները: Թալանում էին կրպակները՝ բղավելով. «Սպանենք հայերին: Փառք Մուհամմեդին»[86]: Պաշտոնատարները «քրդերին հրահանգավորում են կոտորածները իրականացնելու համար»[87]: «Թուրքերը չուկայում զենք են գնում, իսկ հայերը բռնի զինաթափվում են»[88]: «Կոտորածների նախապատրաստության ուղղությամբ տարվում է ապշեցնելու աստիճանի հետևողական աշխատանք»[89]: «Բոլոր թուրքերը, սկսած ծերերից և վերջացրած տասնմեկ տարեկան տղաներով, զենք ստացան»[90]:

---

[83] Աբդուլ Համիդ 2-րդի այդ օրերի վարքագծի նկարագրությունը վերցված է Кауфман А., *Коронованный узник*, СПб., 1910, стр. 135, Ցագեյան Գ., նշվ. աշխ., էջ 320-391:

[84] *Les massacres d'Arménie*, Paris, 1896, p. 84.

[85] Նույն տեղում, էջ 85:

[86] Նույն տեղում, էջ 240:

[87] Նույն տեղում, էջ 183-185:

[88] Նույն տեղում, էջ 21-25:

[89] Նույն տեղում, էջ 249-250.

[90] Նույն տեղում, էջ 244:

*Այս, նման ու այլ գործողությունների ցուցակը մեծ է: Դժբախտաբար, հայ քաղաքական ուժերը ըստ արժանվույն չգնահատեցին և աղետի առաջն առնելու ուղղությամբ գործնական լուրջ քայլեր չկատարեցին: Արևմտահայության ողբերգության մեջ այս ոչ ճկուն վարքագիծն ու կարճատես մոտեցումները մեծ դեր են խաղացել:*

*Սուլթանի հրամանով 1895թ. մարտից Կ. Պոլսի հայաբնակ թաղերում չուրջօրյա հերթապահություն սահմանվեց: Ելդըզը Բ. Դուռը հանձնարարեց դրամ և ոսկի չխնայել Կ. Պոլսի եվրոպական դեսպաններին և լրագրողներին կաշառելու համար: Սուլթանն այդ նպատակի համար իր անձնական միջոցներից հատկացրեց 300 հազար ոսկի: Նրան հաջողվեց հայ կաթոլիկների պատրիարք Ազատյանի միջոցով կաշառել ԱՄՆ-ի դեսպանին: Նույն ժամանակ թուրք հեղափոխականները սուլթանի դեմ «հայտարարություններ» էին տարածում: Բարեկենդանի օրը քաղաքում ձերբակալվեց մոտ 200 հայ Սասունի «զոհերին և սուրբ գործին» նվիրված հանգանակություն կազմակերպելու համար:*

*Իրադարձությունների 10-15 օր առաջ պոլսահայերի շրջանում համառ խոսակցություններ էին գնում քաղաքում նոր ցույց կազմակերպելու մասին: Ցույցի նախապատրաստությունից տեղյակ էին նաև պալատում, կառավարությունում, ինչպես նաև պետությունների դեսպանատներում: Հնչակյան կոմիտեն քաղաքում տարածեց հայերեն և ֆրանսերեն թռուցիկներ, որոնցում ասվում էր, թե այլևս անհնար է համբերել, եվրոպական քաղաքականությունից ակնկալիքներն ինքնախաբեություն են: Պլանավորված էր ցույցն անցկացնել կիրակի օրը՝ Սբ. Խաչի տոնին: Սակայն կազմակերպիչները հարկադրված եղան այն մեկ օր հետաձգել՝ նկատի ունենալով, որ ոստիկանության նախապարապմունքը ծավալուն միջոցառումներ էր ձեռնարկել ցույցը ձախողելու և մասնակիցներին հաշվեհարդարի ենթարկելու: Նախապարապմունքը դիմեց Մ. Իզմիրլյանին՝ թույլ չտալ, որ հանրահավաքը տեղի ունենա: Պատրիարքը նույնպես դեմ էր այդ միջոցառմանը՝ այն համարելով ոչ խոհեմ ձեռնարկ, սակայն նախարարին պատասխանեց, թե ցույցը խափանելն իր ուժերից վեր է:*

*1895թ. սեպտեմբերի 18-ին Գում Գափուի մայր եկեղեցու բակում հավաքվել էր 3000-4000 մարդ, հիմնականում պանդուխտներ, պատանիներ ու աղջիկներ: Հանրահավաքն սկսվեց Բ. Դուռը հասցեագրված դիմումի ընթերցմամբ: Գլխավոր պահանջն էր ընդունել ու գործադրել բարենորոգումների Մայիսյան ծրագիրը: Ամբողջությամբ վերցրած այս դիմումի պարունակած պահանջները ընդգծված ազգային կողմնորոշում ունեին: Շեշտվում էր, որ կայսրությունում պետական քաղաքականություն է դարձել՝ «բնաջինջ անել հայերին և դատարկել նրանց հայրենիքը»[91]: Ցույցը խաղաղ էր և խնդիր ուներ թուրքական կառավարությանը դիմում հանձնել և ոչ ավելին: Ժամը 17.00-ին ցուցարարները երգելով շարժվեցին դեպի Բ. Դուռը, որը գտնվում էր Բաբը Ալիի հրապարակի վրա[92]:*

*Լեոն գրում է. «...1895-ի ամբողջ ամառն անցավ անհայտության մեջ: Զգիտեին՝ պիտի ընդունի՞ սուլթանը մայիսյան ռեֆորմները, թե՞ ոչ... Եվ ահա Հնչակյան կուսակցությունը կորցնում է համբերությունը... Որոշված էր, որ այն (ցույցը) լինի խաղաղ, անզեն... բայց այս ամենը նորություն չէր: Նորությունն այն էր, որ այդ կռիվը դառնում էր ազդանշան մի վաղօրոք պատրաստված և ծրագրված ընդհանուր արյունահեղության... Այժմ Աբդուլ Համիդը հեղափոխականներին չէր միայն պատժում, այլ՝ անխտիր բոլոր հայերին: Եվ Կ. Պոլսում, դեսպանների քթի տակ, տեղի էր ունենում մի կազմակերպված կոտորած»[93]:*

---

[91] Պատմություն Ս.Դ. Հնչակյան կուսակցության, հ. Ա, էջ 155:

[92] Տե՛ս Ղազարյան Հ., Նշվ. աշխ., հ. I, էջ 66: Սխալվում է պրոֆ. Հ. Ղազարյանը, երբ գրում է, թե «ցուցարարները շարժվում են դեպի սուլթանի նստավայրը՝ Բաբը Ալի»: Բաբը Ալիի վրա ոչ թե սուլթանի նստավայրն էր, այլ կառավարության Բարձրագույն Դուռը:

[93] Լեո, Անցյալից, էջ 109:

*Բաբը Ալիի հրապարակի մերձակա բոլոր փողոցներում նախապես զորքեր ու ոստիկանություն էր տեղակայված: Նրանք փակեցին ցուցարարների ճանապարհը: Փակ էին նաև Բ. Դուռն դարպասները: Հայերը խնդրեցին ոստիկաններին՝ մի քանի հոգու թույլ տալ հանրագիր հանձնելու նպատակով: Այդ պահին նրանց ընդառաջ է գալիս սուլթանի թիկնապահ Սերվեթը ու ոստիկանության հազարապետին հանձնում ցուցարարների վրա գրոհելու հրամանը: Ատրճանակի կրակոցներ, և Սերվեթն ու մի քանի հայ գետին են տապալվում:*

*Կոտորածն սկսվեց:*

*Եվրոպական, մասնավորապես, իտալական շատ թերթեր գրեցին, թե հավանական չէ, որ Սերվեթին հայերը սպանած լինեին, թե նրա վրա կրակել էին մեծ վեզիրի թիկնապահները կոտորածի պատրվակ ստեղծելու համար: Մի ակնթարթում քաղաքի գլխավոր փողոցները բռնվեցին զորքերով և բաշիբոզուկով: Հայերի դիմադրությունը երկար չտևեց: Սկսվեց կոտորածը, որի գլխավոր գործող անձինք սոֆթաներն էին՝ մահմեդական կրոնական դպրոցների սանները: Նրանք էին գլխավորում թուրք ամբոխի արյունահեղ գործողությունները: Նրանցից մեկը ցուցադրաբար խմեց սպանված հայի արյունը: Փողոցում հանդիպած հային սպանում էին կամ ձերբակալում: Հիմնարկները փակվեցին: Սոֆթաներն այդ օրվան վաղուց էին նախապատրաստվել: «Ավելի քան մեկ տարի զենք էին հայթայթում... Բեռնակիրները խմբերով էին բանտ տարվում... Սոֆթաները գիշերը հարձակվում են Թահթե Կալեի, Կետիկ փաշայի և Գում Գափուի հայերի տների վրա: Նրանք հայերին ծեծում էին և ապա հանձնում ոստիկանությանը, որն առանց հարցաքննության բանտ էր նետում: Մինչև երկուշաբթի երեկոյան ձերբակալվեց մոտ 2000 հոգի»[94]: Բանտարկվածներին սպանում էին խոչտանգելով: Ֆրանսիական դեսպանության թարգման Ռուննեն անձամբ տեսել էր, թե ոստիկանության բակում ինչպես էին ծեծելով սպանել վեց հայի: Թաղապետարանի սայլերը կազմ ու պատրաստ սպասում էին դիակները ծովափ տեղափոխելու համար, որտեղից լաստերը դրանք տանում թափում էին բաց ծով:*

*Երեքշաբթի Ղալաթիայում է կռիվ ծագում սոֆթաների ու հայերի միջև: «Սոֆթաները իրենց լայն անդրավարտիքների մեջ թաքցրած ունեին վեց հարվածանի հրացան»: Նրանք փորձեցին հարձակվել պատրիարքարանի վրա, բայց ոստիկանները թույլ չտվեցին: Գրոհեցին Հասան փաշա խանի վրա, որտեղ հիմնականում հայեր էին բնակվում: Հրամայված էր. «Շեմին մի կանգնեք, ներս մտեք և այնտեղ գործեք», այսինքն, սպանեք:*

*Մեծ թվով հայեր ապաստանեցին եկեղեցիներում:*

*Ցույցի հաջորդ օրը հրապարակվեց պաշտոնական հաղորդագրություն. «Ովքեր զենքը ձեռքին դիմադրեցին... բնականաբար կալանավորվեցին»[95]: Ձերբակալությունները ու սպանությունները շարունակվեցին ևս մի քանի օր: Եպարքոսը պատրիարքին կանչեց Բ. Դուռ, սակայն վերջինս հիվանդ ձևացավ և չգնաց: Եպարքոսն ինքը գնաց պատրիարքարան: Պատրիարքի ջանքերը՝ ժողովրդին եկեղեցիներից դուրս հանելու, հաջողություն չունեցան: Ընդ որում՝ վարչապետը «երաշխավորում էր հայերի անվտանգությունն ու բարենորոգումների անցկացում», երբ նույն պահին կոտորածները շարունակվում էին ամբողջ թափով:*

*«Մուրճ»-ը 1895թ. իր թիվ 9-10-ում տպագրեց ականատեսների վկայությունները: Նրանցից մեկը պատմում է, որ երբ ցուցարարները Բաբը Ալի հասան, ոստիկանները պահանջեցին բողոքագիրն իրենց հանձնել և հեռանալ: Հայերը հրաժարվեցին:*

*«Ոստիկանները դուրս են քաշում սվիններով... և մերոնք հարկադրված են լինում իրենց պաշտպանել գնդակով...*

---

[94] *«Մուրճ»*, 1890, թիվ 9-10:
[95] Նույն տեղում:

Նախապես տեղյակ լինելով, որ այդ օրը հայերը հարձակվելու են, ինչպես իրենք էին ասում, Բաբը Ալիի վրա՝ փողոցներում զորքեր էին տեղադրել և այլևայլ տեղերում հեծյալ ժանդարմներ էին քողարկել, որոնք անմիջապես փորձեցին չընդհատել ապստամբ հայերին, փողոցներում արգելեցին անցուդարձը: Բայց հայերը ևս բավական խելոք գտնվեցին՝ ճյուղավորվեցին և փախչելով զանազան փողոցներով», փրկվեցին:

«...Սոֆթաները Պոլսի այն մասերում, որտեղ եվրոպացիներ չկային, հանդիպած հային գազանաբար խոշտանգում էին, սրերով սպանում ու վիրավորում: Բանտերում հայերին լլկում էին, սպանում: Դիակները դիզված էին: Առաջին օրը սպանվածների դիակները ծովի հատակն իջեցրին»: Մի ուրիշ ականատես պատմել է, որ իր 15 ընկերների գլուխները չարդեցին և ուղեղները դուրս թափեցին: Երեքշաբթի օրը զինվորները, սոֆթաներն ու ամբոխը պաշարեցին Կարա-Գյոմրյուկի հայոց եկեղեցին, սակայն գրավել չկարողացան և կատաղությունը թափեցին մերձակա հայկական տների վրա, որոնց բնակիչներին խողխողեցին, երեխաներին սրերի ծայրին անցկացրին, մի հղի կնոջ որովայնը ճղեցին՝ մանկանը դուրս հանելու համար, և դստերն էլ բռնաբարեցին: Հայ ածխավաճառին փողոց քաշեցին ու սպանեցին: Երեկոյան հարձակվեցին Կասմ Փաշա թաղի վրա, կոտորեցին ու ավերեցին: Պեշիկթաշի սոֆթաներն ու ոստիկանները սպանում են վանեցի բռնակիրներին: Նման բռնություններ ու սպանություններ կատարվեցին նաև Գում Գափու, Թավուգ Փաշա, Ջիբալի, Օդուն Գափու, Ուն Գաբան, Քերեմտելեր, Սամաթիա, Սուլթան Բայազիդ, Խասգյուղ, Ղալաթիա, Թոփհանե, Պեշիկթաշ և քաղաքի մյուս թաղերում[96]:

Նելիդովը 1895թ. սեպտեմբերի 18-ին Կ. Պոլսից գրում է. «Այսօր պատրիարքարանի առաջ կայացավ հայերի մեծ ցույց: Այն վաղուց էր նախապատրաստվում և դրա մասին Հնչակ կազմակերպության կոմիտեն նախապես նամակով նույնիսկ դեսպաններին էր հայտնել: Հայերի խմբերը չարժվեցին Բ. Դուռ, որպեսզի հանձնեն հանրագիրը, որի տեքստը ուղարկվել էր նաև դեսպաններին: Այդ խմբերին ոստիկանությունը կանգնեցրեց ու ցրեց, ընդ որում՝ մի քանի ոստիկան սպանվեցին ու վիրավորվեցին: Սպանվածներ ու վիրավորներ կային նաև հայերից, մեծ թվով ցուցարարներ ձերբակալվեցին: Մահմեդական զրգռված բնակչությունն ու մեջիդներին կից դպրոցների աշակերտները հարձակվեցին ձերբակալվածների վրա, և ոստիկանությանը դժվարությամբ էր հաջողվում նրանց պաշտպանել թուրքական գազանացած ամբոխից: Ստամբուլում ուժեղ հուզումներ են: Այստեղ երկյուղում են մահմեդականների վրեժխնդրությունից: Անգլիացիները, որոնց նավատորմը Կ. Պոլսից 17 ժամ հեռավորության վրա է, խոսում են քաղաք մտնելու անհրաժեշտության մասին, որպեսզի վերականգնեն կարգուկանոնը»[97]: Այս հաղորդագրությունից նույնպես հետևում է, որ հայերի ցույցը խաղաղ բնույթ ուներ, որ արյունահեղության պատճառը թուրքական ոստիկանության միջամտությունն էր: Սակայն Նելիդովը, միտումնաբար կամ գուցե իսկապես տեղեկություններ չունենալու պատճառով, հստակ չի արտահայտվում: Նրա գրածից տպավորություն է ստեղծվում, թե ոստիկանության ու ցուցարարների միջև կռիվ է գնացել: Իրականությունն այն էր, որ ոստիկանությունն ուղղակի հարձակվել էր խաղաղ ցուցարարների վրա, որոնցից միայն հատուկենտ մարդկանց մոտ ատրճանակ կար: Նելիդովը նաև սխալվում է, երբ գրում է, թե ոստիկանության օգնությամբ իշխանությունները հայերին պաշտպանում էին ամբոխից: Իրականում ամբոխին հայերի դեմ գրգռողն ու դրդողը այդ նույն իշխանություններն էին: Ինչ վերաբերում է անգլիական նավերի գալուն, ապա երկար բանակցություններից հետո դրանցից միայն հինգ փոքր նավ չարժվեց Կ. Պոլսի ուղղությամբ:

«Սա մի արյունոտ նախաբան էր,— գրում է Լեոն,— այն քստմնելի պատմության մեջ, չնականության մեջ իր նմանը չունեցող մի զավեշտ, որ գալիս էր «քաղաքակիրթ»

---

[96] Նույն տեղում, 1895:

[97] Ламздорф В.Н., նշվ. աշխ., էջ 250:

կոչված մարդկության առաջ խաղալու արյունռուչտ սուլթանիզմը՝ եվրոպական մեծ պետությունների աչխատակցությամբ»[98]: Ջեյմս Բրայսը հեգնեց. «Հայերին կոտորելու հարցում սուլթանն այնքան հեռու գնաց, որ որոշում էր, թե ինչպիսի զենք պիտի գործածվի: Նա չէր սիրում հրաձիգ զենքը: Աղմուկն ազդում էր նրա նյարդերի վրա: Նա կարգադրեց գլուխ կտրողների իր բանակը զինել արճճե գլխիկ ունեցող մահակներով»[99]: Է. Բեռնշտայնը նկատում է. «Աստվածաբանության թուրք ուսանողները հարձակվեցին հայերի վրա... բազմաթիվ հայեր սպանվեցին: Իսկ ձերբակալվածները դաչույնի հարվածներով խողխողվեցին... Դիչերը հարձակման ենթարկվեցին նաև հայերի խանութները... խաղաղ ցույցը սուլթանը որակեց «ապստամբություն»»:

«Հիմա ժամը 10-ն է,– գրում է ականատեսը,– ամբոխի մոլեգնությունը դեռ իր բարձրակետին չի հասել: Զոհերի թիվը մի քանի հարյուր է, իսկ ձերբակալվածներինը՝ հազարներ: Մովի մակերևույթին արդեն դիակներ են լողում: Երեկ կախեցին մի քանի հոգու... Գիչերը կոտորածներ են տեղի ունեցել քաղաքի չատ թաղամասերում, քրդերը, սոֆթաները ու մոլլաներն անդադար զբաղված են սպանություններով և կողոպուտով: Երկու օր է, ինչ հարյուրից ավելի հայեր, կարծեցյալ հեղափոխականներ, խոչտանգվում են թամերլանյան եղանակով: Երեկ գիչեր կասմ Փաչայի թաղն ահավոր ջարդերի թատերաբեմ էր դարձել: 300-ից ավելի սպանվածներ կան... Շատ խանութներ, տներ ու կրպակներ թալանված են: Պատվազրկված են բազում կանայք, երեխաներ ու աղջիկներ: Ոստիկանությունն ուժեղացված է ոստիկանի համազգեստ հագած զինվորներով ու սպաներով: Մի խոսքով՝ սոսկալի է, սոսկալի...»[100]:

«Ամբոխը,– գրում է Նանսենը,– բաղկացած էր քրդերից ու թուրքերից, այդ ամբոխին հրամայում էր ոստիկանությունը: Կանոնավոր բանակը «հսկում էր» կարգուկանոնին, «գործում էր» միայն այն ժամանակ, երբ «աչխատանքը» ընդհատվում էր, այսինքն, հայերը դիմադրում էին իրենց թաղերում: Թնդանոթներն ավերում էին այդ թաղերը»[101]: Օ. Նուրին պատմում է, որ երբ սկսվեց Ստամբուլի ջարդը, դեսպանությունների թարգմանները, բացի Ռուսաստանի ներկայացուցչից, գնացին Բ. Դուռ տեղեկատվություն ստանալու: Նրանց պատասխանեցին՝ «Տեղեկություն չունենք»: Դեսպանները հուշագիր ներկայացրին՝ պահանջելով քաղաքում ապահովել անվտանգություն: Բ. Դուռը պատասխանեց, թե հանցավորները բացառապես հայերն են: Անգլիական "Spectator"-ն այն կարծիքին էր, որ «բռնություն գործադրելու ոչ մի անհրաժեչտություն չկար: Քաղաքը տառացիորեն խեղդվում էր, այնքան թուրք զինվոր էր բերվել: Մինչդեռ աննչան թվով քրիստոնյաներ էին զինված՝ այն էլ ատրճանակներով, և ընդամենը երեք ժամում Օսման Ղազին կարող էր քաղաքում կարգուկանոն հաստատել առանց արյունահեղության... 24 ժամ չարունակ Պոլիսը ահաբեկչության և բռնության թագավորություն էր... հայերը 400 մարդ զոհ տալուց հետո միայն, այլ ելք չունենալով, բարիկադներ կառուցեցին»: Սկզբում բոլորովին այլ կարծիքի էր Լոնդոնի "Standard"-ը, որը հոկտեմբերի 10-ին գրեց. «Հայերի այդ վարմունքն ավելի քան աններելի է, քանի որ հօգուտ նրանց Անգլիայի ջանքերը սկսել էին պտուղ տալ... եթե հայերը մի փոքր էլ համբերեին, սուլթանն անչուչտ ստիպված էր լինելու» ընդունելու բարենորոգումների ծրագիրը: Թերթը կոտորածների ամբողջ մեղքը բարդում է կոմիտեների վրա, որոնք փորձեցին Եվրոպային ցույց տալ, թե «իրենք գիտեն կոտորածներ սարքել»: Մի քանի օր անց, ստանալով լրացուցիչ տեղեկատվություն, թերթը գրեց, թե երեք տերությունները գործում են համերաչխ: «Ջորեքչաբթի նրանց համատեղ հայտարարությունը հանձնվեց մեծ եպարքոսին, հաջորդ օրը Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները եր-

---

[98] Լեո, Անցյալից, էջ 110:
[99] Амфитеатров А.В., նչվ. աչխ., էջ 5-6:
[100] Սպիրով Դ., Ա. նչվ, աչխ., էջ 10:
[101] Նանսեն Ֆ., նչվ. աչխ., էջ 246:

կար զրույց ունեցան մեծ վեզիր Քյամիլ փաշայի հետ, ապա ներկայացվեց նոր նոտա: Եթե «դիվանագիտական առաջարկությունները» բավարար չլինեն, կգործադրվեն «ավելի վճռական գործողություններ» թուրքական վայրագությունների առաջն առնելու համար: Սակայն դրանք միայն խոսքեր էին: Գործնական որևէ քայլ չարվեց[102]: "Times"-ը հոկտեմբերի 5-ին գրեց. «Եթե նույնիսկ հայերի գրգռումները վերագրենք հեղափոխականներին, այնուամենայնիվ, բազմաչարչար ազգի հանդեպ չպետք է գործադրվեին միջոցներ, որոնք գործադրվում են հեղափոխականների դեմ»:

Լեոն հետևյալ կերպ է նկարագրում այդ ցույցը: «Թուրք կառավարությունը վաղօրոք իրազեկ էր այդ ցույցին: Նա զինել էր սոֆթաներին և մահմեդական խուժանին հատ իրերով ուղարկել էր փողոց: Ցուցարարների ճանապարհը կտրեցին թուրք ոստիկանությունն ու զորքերը՝ հրամայելով նրանց ցրվել: Բայց որովհետև ցուցարարները զինված էին, ուստի դիմադրություն առաջ եկավ նրանց կողմից, հրաձգություն սկսվեց երկու կողմերի միջև: Մի հայի արձակած գնդակով սպանվեց զինվորական հրամանատարը, թուրքերը հարձակում գործեցին, իսկ հայերը փախուստի դիմեցին՝ թողնելով կռվի տեղում բազմաթիվ դիակներ: Այնուհետև սոֆթաներն ու խուժանը սկսեցին իրենց գործը փողոցներում՝ հարձակվելով հայերի վրա և իրենց թրերով ջարդելով նրանց գլուխները»: Լեոյի այս նկարագրությունը և մասնավորապես «ցուցարարները զինված էին» արտահայտությունը քննադատվել է հայ մի քանի պատմաբանների կողմից, ովքեր գտնում են՝ եթե ցույցը խաղաղ էր, իսկ այն իսկապես խաղաղ էր, ապա ցուցարարների զինվածության մասին խոսք լինել չի կարող: Մեզ թվում է, որ նման կտրուկ հարցադրումը տեղին չէ: Որ որոշ ցուցարարներ, իրոք, զենք կրում էին, անվիճելի է: Պոլսահայերի հիշողության մեջ դեռ թարմ էր Գում Գափուի (1890թ.) ցույցը, որը նույնպես խաղաղ էր, բայց վերածվեց արյունահեղության:

Իսկ կոտորածները չարունակվում էին: Դրանք, ճիշտ է, առաջին երկու օրերի կատաղությունը չունեին, սակայն գնալով ծավալվում էին, իրենց արնախում երախի մեջ առնում նոր թաղեր ու նաև տարածվում քաղաքից դուրս: "Standard"-ի թղթակիցը հոկտեմբերի 14-ին կ. Պոլսից գրում է, որ քաղաքում խառնակությունները վերսկսվել են, սպանությունները չարունակվում են, խանութները փակ են, քաղաքը պաշարողական դրության մեջ է: Ղալաթիայում ոստիկանները սպանեցին մի հայի, մեծ թվով հայեր ձերբակալվեցին կասմ Փաշայի թաղում: Սպանվածների թիվը տատանվում է 20-150-ի միջև: Նախարարների խորհուրդն ամբողջ գիշեր քննարկում էր իրավիճակը: Խժդժություններ էին տեղի ունենում Բոսֆորի երկարությամբ գտնվող գյուղերում ու քաղաքներում[103]:

Մեծ թվով հայեր լքեցին իրենց տներն ու քաղաքը, ապաստանեցին անվտանգ համարվող վայրերում, չատերը թաքնվեցին կղզիներում ու գյուղերում: Բալուռում զինվորները ու խուժանը մոտ 50 հայ սպանեցին ու նետեցին Մարմարա: Թուրք նավաստիները, բեռնակիրները, ջրկիրները հագել էին սոֆթայի արտահագուստ և արտոնություն էին ստացել հայերին ոչնչացնելու: Ամենուրեք թուրք ազգաբնակչությունը մասնակցում էր ջարդերին: Քիչ հայեր չզոհվեցին նաև թուրքերի անձնական վրեժխնդրության հետևանքով: Մարմարան բազմաթիվ դիակներ ափ նետեց:

Բոլոր եկեղեցիները ոստիկանության ու զինվորականների հսկողության տակ էին, մուտքն արգելված էր: Սուլթանը հանձնարարեց Աբիկ Ունճյանին և Հովհաննես Նուրյանին համոզել ժողովրդին դուրս գալ եկեղեցիներից: Նուրյանը չհամարձակվեց եկեղեցի մտնել, իսկ Ունճյանը պարզապես դուրս չպրտվեց թե՛ Մայր եկեղեցուց և թե՛ կասմ Փաշայի թաղի եկեղեցուց: Փորձեցին ներսում եղածներին անգամ սուվի օգնությամբ

---

[102] «Մուրճ», 1895, թիվ 9-10:
[103] Նույն տեղում:

*հարկադրել դուրս գալ: Եկեղեցիներում փակված հայերին համոզելուն ձեռնամուխ եղան նաև տերությունների դեսպանները, և նրանց հաջողվեց մի մասին դուրս հանել:*

*Թուրքերին խստիվ արգելվեց տներում հայ պահել: Կ. Պոլսում հայ-թուրքական առճակատումը հասել էր բարձրակետի: Բարենորոգումներ մտցնելու վերաբերյալ սուլթանի հայտարարությունից հետո թուրքական թերթերը մի շարք հոդվածներ տպագրեցին հայկական հարցի վերաբերյալ՝ միահամուռ պնդելով, թե նման հարց գոյություն չունի, որ հայերին իշխանություն և առանձնաչնորհումներ տալ չի կարելի: Դժգոհությունը սոֆթաների կողմից արտահատվում էր զղջման հայտարարություններով, թե մեծ սխալ են թույլ տվել, որ քիչ հայ են սպանել[104]:*

*1909թ. «Թանին» թերթը տպագրեց նախկին մեծ վեզիր, ծերակուտի նախագահ Սայիդի հուշագրությունները, որոնցում կան հետևյալ տողերը. «Սուլթանը զորք չէր կանչել հայերի ցույցը ցրելու համար. նա կարող էր ցույցն ընդհանրապես թույլ չտալ, սակայն գիտակցաբար այդ չարեց, որպեսզի թուրք զինված ամբոխը հաշվեհարդարի ենթարկեր հայերին: Սուլթանի հրամանով զինեցին սոֆթաներին, զինվորներին հագցրեցին ուսանողական արտահագուստ և տարան հայերի դեմ»[105]:*

*Կ. Պոլսի կոտորածները գուժեցին, որ արևմտահայությունը վտանգավոր ճգնաժամի շեմին է: Սպանությունները հիմնականում տեղի ունեցան ոչ թե ցույցի օրը, այլ դրանից հետո: Եթե առաջին օրը սպանվեց 700, ապա հաջորդ օրերը՝ մոտ 2000 հայ:*

*Որոշ ժամանակ անց եկեղեցիների պատերին երևացին սգո ժապավեններ ու պաստառներ: Վեց տերությունների դեսպաններն այցելեցին պատրիարքին: Մզկիթներում մահմեդականներին հորդորում էին հայերի հետ հաշտ լինել: Հասկանալի էր: Մոտ 3000 հայի կյանքն այդ օրերին բավարարեց արյունախում հրեշին՝ սուլթանին: Նա ժամանակավոր դադարի հրաման տվեց: Բայց միայն ժամանակավոր: Այդ նույն օրերին նա բարենորոգումների ծրագիրը ստորագրեց ու միաժամանակ նոր հրաման արձակեց՝ սկսել հայերի կոտորածներ այս անգամ արդեն կայսրության ամբողջ տարածքում: Եվ երեք ամսվա ընթացքում արևմտահայությունն ապրեց իր պատմության ամենաեղեռնական ժամանակները:*

*Կ. Պոլսի 1895թ. ցույցի ավարտին «Մշակ»-ի խմբագրությունում ստացվեց հետևյալ նամակը.*

*...«Սասունի դեպքերից առաջ և հետո զանազան խժդժությունները ստեղծեցին անապահով, անվստահ վիճակ, որը հետզհետե հանգեցրեց հուսահատության...*

*Եվրոպական միջամտությունից հուսախաբությունը ավելի սրեց մթնոլորտը: Մանավանդ անհանգիստ էին գավառներից եկածները: Բանտարկություններն անհաշիվ դարձան: Ոստիկանները ծեծում ու անխտիր տանջում էին հայ պանդուխտներին: Իսկ մամուլը օրեցօր հակասական լուրեր էր բերում գավառներում կարդերի մասին: Երեք շաբաթ առաջ լուր տարածվեց, թե ամսվա վերջին ցույց է լինելու և ոստիկանությունն էլ հավաստի տեղեկություններ ուներ, իսկ արդարադատության նախարարն այդ մասին պատրիարքին գրավոր հայտնելով, նաև նշում էր, որ ցույցը գլխավորելու են հոգևորականները, այսինքն՝ ակնարկում էր իրեն՝ պատրիարքին: Վերջինս անմիջապես պատասխանում է, թե հոգևորականությունը որևէ շարժման չի մասնակցում և մերժում է նման ամբաստանությունը: Բայց նաև պատիվ ունի կառավարությանը տեղյակ պահելու, որ հայ ժողովրդի վիճակը լրիվ անտանելի է դարձել: Գավառներից ստացված լուրերն արյունածոր են: Ամեն օր կարդ, խժդժություններ: Ժողովուրդը պատրիարքարանի հանգստացնող հորդորներից բան չի հասկանում, քանի որ պատրիարքարանն ինքը հավաստի ոչինչ չգիտե:*

---

[104] *«Մուրճ»*, 1895, թիվ 9-10:

[105] Тунян В., *Младотурки и Армянский вопрос. 1908-1912*, Е. 2004, стр. 91.

Ծույցի մասին լուրերը ժողովրդին ավելի անհամբեր էին դարձնում: Երկուշաբթի առավոտյան գավառցիները դիմում են Գում Գափուի եկեղեցի: Ոչ ոք չգիտեր, թե ինչ է լինելու, բոլորն էլ մոտալուտ վտանգի հեռանկարի առջև երերում էին: Պատարագի ավարտից հետո պատրիարքը հայերով չրջապատված մտնում է պատրիարքարան: Մի աղջնակ նրան աղաչում է գլխավորել ցույցը: Պատրիարքը հրաժարվում է՝ պատճառաբանելով, թե հույս ունի, որ մոտ ժամանակներում Հայկական հարցն ինչ-որ լուծում ստանալու է:

— Ոչ, ոչ,— բղավում է ամբոխը,— սուլթանին չպետք է հավատալ: Նա ամբողջ Եվրոպային է խաբում:

— Խոհեմություն, որդիներս, խոհեմություն:

— Էլ ի՛նչ խոհեմություն, գավառներում ամենուրեք արյուն է հոսում: Ապրել կամ մեռնել:

Ժողովուրդը եկեղեցուց դուրս է խուժում:

Ոստիկանությունը չրջապատել էր թաղը, այնտեղ էր նաև ոստիկանության նախարարը և մարդիկ ուղարկեց հայերին ասելու, թե Հայկական հարցը լուծվելու է: Սակայն ցուցարարները չեն հավատում: Պատվիրակ է գալիս սուլթանից և ճին քշում է դեպի պատրիարքարան, սակայն տեսնելով իրեն ուղղված ատրճանակները՝ վար է նետվում: Նա սուլթանից լուր էր բերել, որ ինքը շատ է ցավում ցույցի համար: Պատրիարքը սուլթանի միտքը հայտնում է ամբոխին, բայց բոլոր կողմերից որոտընդոստ աղաղակներ են հնչում, թե իրենք չեն հավատում և պահանջում են սուլթանական հրովարտակ՝ բարենորոգումների ծրագիրը հաստատելու մասին:

Մի զինվորական բղավում է՝ «Խփեք գյավուրներին»: Բազմությունը զենքը հանած առաջ է չարժվում: Վրա է հասնում հեծելազորը, չրջափակում է նաև ոստիկանությանը և ժողովրդին թույլ չի տալիս առաջ չարժվել: Եղան սպանվածներ ու վիրավորներ: Գազազած ամբոխը ումը բռնում, խոշտանգում է: Երեկոյան ձերբակալությունները չարունակվում են: Ոտից գլուխ զինված սոֆթաները ավելի են բորբոքում թուրքերի մոլեռանդ արյունը: Իսկ ոստիկանությունը պատահած հային խուզարկում է և երբ զենք է գտնում, բղավում է՝ «Սա էլ նրանցից է», ու անխնա գանակոծում: Թուրք ամբոխը հարձակվում է հայերի տների վրա, նրանց գործողությունները ղեկավարում են ոստիկաններ: Երեկոյան սոֆթաները խուժում են հայերով բնակեցված խանը՝ օգնական ունենալով ոստիկանությունն ու թուրք խուժանը: Հայերն անտեղյակ նստած էին խանի կողքի սրճարանում, մի մասն էլ ներսում զբաղված էր առօրյա գործերով: Ոստիկանությունը հայերին որսում ու հանձնում է խուժանին: 150 հայ է սպանվում: Նրանց դիակներն անմիջապես անհետանում են: Գիշերը ևս հարձակումներ եղան հայերի տների ու եկեղեցիների վրա...

Շուկան հաջորդ օրը փակ էր: Երկու օր չարունակ բազմությունը մնում է պատրիարքարանում և Մայր եկեղեցում: Սուլթանը պատրիարքին մի քանի անգամ կանչում է պալատ, սակայն նա չի գնում: Բերայի հայոց եկեղեցին ևս լցված էր հայերով, լիքն էր նաև Ղալաթիայի եկեղեցին իր չրջակայքով: Անգլիական, իտալական դեսպաններն իրենց դռները բացեցին հայ ընտանիքների, գլխավորապես նրանց առջև, ովքեր, դրացի լինելով թուրք թաղերին, բնավ անվտանգ չէին...

Սուլթանը գլուխը կորցրել է: Ուզեց պատրիարքին միջնորդ դարձնել, որ ժողովրդին հորդորի վերադառնալու տները... Պատրիարքը բացեիբաց մերժեց...

Այդ ընթացքում սպանությունները դուրս են գալիս Պոլսի չրջանակներից: Ոսկեչրում զինվորները հարձակվում են հայ մչակների վրա. 7-8 հոգի դաժանորեն սպանվում է: Սուլթան Բայազետի հրապարակում օրը ցերեկով մի հայ է սպանվում: Գլխատվում է մի հույն քահանա, որին հայի տեղ էին ընդունել: Եպարքոսը փոխվեց՝ նշանակվեց Քյամիլ փաշան, որը անգլիամետ քաղաքականության կողմնակից է: Ոստիկանությունը սայլերով տեղափոխում է սպանվածներին... Սոսկալի, քստմնելի տեսարան է՝ կորտված,

կոտրտված, ճզմված դիակներ: Մինը դաստակներ չունի, մյուսի գլուխը ճզմված, կրծքներին սվիններուն լայն անցքեր, չուռ տված փորեր, երկու մասի բաժանված թիկունքներ... Ապա՝ անհետացած դիակներ:

Սեպտեմբերի 21-ին Ռոդոսթոյից սարսափելի լուրեր ստացվեցին: Պոլսի ցույցից հետո սկսվել է ընդհանուր չփոթությունը: Կեսարիա երկու գունդ զորք է ուղարկվել: Կարինի վերաբերյալ տարբեր լուրեր են չրջում, թե այնտեղ ևս խառնակություններ են: Սեպտեմբերի 22-ին չուկան գրեթե ամբողջությամբ փակ էր: Հույները ևս վաճառատները չէին բացել: Շուկայի անգործությունը մեծագույն ցույց է իր տեսակի մեջ: Օսմանյան բանկը որևէ դրամ չի մուծվում: Դեսպանները եռուն չարժման մեջ են: Նրանք սեփական աչքերով շատ բան են տեսել, թուրքերի խժդժությունների ու վայրագությունների չուրջ որևէ կասկած չկա: Խորհրդակցություն խորհրդակցության հետևից: Անգլիական դեսպանն առաջինը կարծիք հայտնեց եվրոպական միացյալ նավատորմիղ ներս բերելու վերաբերյալ: Մյուսները ձեռնպահ են ուզում մնալ և որևէ բան չանել: Ասում են, թե 24 ժամ պայմանաժամանակ են տվել սուլթանին՝ բարենորոգումների ծրագրի վերաբերյալ իր որոշակի վերաբերմունքը հայտնելու»[106]:

## 4. ԿՈՏՈՐԱԾԸ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՎԻԼԱՅԵԹՈՒՄ

Սասունի և Կ. Պոլսի իրադարձությունները մթնոլորտն ավելի չիկացրեցին: Իշխանությունները հակվում էին քոչվորների հետ դաշինքին: Տխրահռչակ Մուսան նշանակվեց Զարշամպայի կայմակամ: Այդ ավազակին 50 ոսկի տալուց հրաժարվելու համար՝ հեղափոխականի պիտակով բանտ նետվեց 86 տարեկան մի ծերունի: Նույն օրերին Վեհիբը հանդիսավոր ծեսերով Տրապիզոնից անցավ Երզնկա՝ Սասնո կոտորածի համար Զեքի փաշային սուլթանական չքանչան հանձնելու: Քաղաքում թուրք աղանները ստորագրություն էին հավաքում հայերի կոտորածին հավանություն տալու վերաբերյալ: Բերդի չրջանում իշխանությունները մահմեդականներին զենք էին բաժանում, մի քանի մզկիթներում ռազմամթերք էր կուտակվում, հայոց թաղերում գիշերային պահակություն սահմանվեց, որի ծախսերը փակվում էին հայերից լրացուցիչ գումարներ հավաքելու միջոցով:

Զգալով չարդերի ահագնացնող վտանգն ու իր անզորությունը դրա առաջն առնելու՝ Տրապիզոնի առաջնորդ Ե. Այվազյանն ինքնասպանություն գործեց: Կոտորածի առաջին փորձն արվեց դեռ սեպտեմբերի 22-ին, սակայն չստացվեց, որովհետև այն սկսվեց երեկոյան ժամը 9-ին, երբ հայերն իրենց տներում էին: Բացի այդ, զորքը խուժանին թույլ չտվեց մտնել բացառապես հայերով բնակեցված Ենի Մահլան, քանի որ այնտեղ չարդարարների հաջողությունը բացառված էր: Տրապիզոնի կոտորածները ոչ միայն Կ. Պոլսի չարդերի արձագանքն էին, այլև ուղղակի չարունակությունը: Բաբը Ալիի ցույցից ու կոտորածներից հետո հարյուրավոր սոֆթաներ լցվեցին Տրապիզոն և դարձան կոտորածների գլխավոր ուժն ու կազմակերպիչները:

Իրադարձությունները ծավալվեցին հետևյալ կերպ: Հոկտեմբերի 2-ին ահաբեկչության անհաջող փորձ է կատարվում Բահրիի ու Համդիի վրա, և լուրեր են տարածվում, թե կրակողները հայեր էին: Երկու օր անց տեղեկություն է ստացվում Պոլսի կոտորածների մասին, և 3000 զինված մահմեդականներ լցվում են քաղաք: Շուտով կենտրոնական հրապարակում՝ Մեյդանում, հավաքվում է զինված մահմեդականների ստվար ամբոխ: Հաջորդ օրը հայերը խանութները չբացեցին: Հայոց թեմի առաջնորդը դիմեց վալի կադրիին՝ պարզելու ստեղծված իրավիճակի պատճառը: Վալին պատասխանեց. «Հայերին վնաս հասցնելու համար իմ դիակի վրայով են անցնելու»[107]:

---

[106] ԳԱԹ, ֆ. Աուքելյան Հ., գ. 160:

[107] Les massacres d'Arménie, p. 21-25.

*Հայերին հանգստացրեցին նաև հյուպատոսները: Եվրոպական տերությունների դեսպանների տեղեկագրում Տրապիզոնի կոտորածների սկիզբն ու ընթացքը ներկայացված են հետևյալ կերպ: «3000 զինված մահմեդական խուժում է քաղաք և հարձակվում հայոց թաղերի վրա: Նրանց մի մասը եկել էր հեռու ծայրամասերից, այսինքն, հարձակումը նախապատրաստված էր: Հոկտեմբերի 4-ին մեծ քանակությամբ զենք բերվեց չուկա: Մինչև հոկտեմբերի 8-ը հայերը մահմեդականների խժդժություններին ոչ առիթ և ոչ էլ լուրջ հակահարված էին տալիս, մանավանդ որ առանց զորքի ամբոխը վախենում էր հայերի հետ բախման մեջ մտնելուց»*[108]:

*Հոկտեմբերի 8-ին ժամը 3-ին հնչեցին փողերը, և փողոցներում եղած հայերը սպանվեցին: Սպանվեցին նաև խանութների տերերը, նրանց ունեցվածքը թալանվեց: Մեծ եռանդով էին գործում մուհաջիրներն ու զորքը:*

*Ի դեպ, Տրապիզոնի կոտորածները սկսելու վերաբերյալ չրջանառության մեջ է հետևյալ վարկածը, որն ամենևին էլ իրականությունից հեռու չէ: Բահրիի վրա կատարված մահափորձից հետո սուլթանն իր քարտուղար Սուրեային հանձնարարում է հեռագիր ուղարկել Զեքիին՝ սկսելու ջարդերը: Սուրեան սուլթանի հանձնարարության մասին հայտնում է պալատի բժշկապետ Տիգրան Փեչտիմալջյանին: Վերջինս իր հերթին տեղյակ է պահում տերությունների դեսպաններին: Սուլթանն այդ մասին իմանում է ու ապտակում է Սուրեային, իսկ Փեչտիմալջյանին չուտով մեռած են գտնում: Նրան թունավորել էին*[109]*: Եթե այս վարկածն իրողություն է, ապա միանգամայն ուրիշ հնչեղություն է ստանում Բահրիի ահաբեկչությունը: Ծագումով քուրդ, ճարպիկ, Կ. Պոլսի բարձր ոլորտներում հեղինակություն վայելող, ինքնագլուխ գործունեության սիրահար, ավելի քան հայատյաց այս գործիչին հրապարակից հանելը սուլթանին միանգամայն ձեռնտու էր: Ահաբեկչության ենթարկվեց մի «ինքնագլուխ» պետական գործիչ, որը հայտնի էր որպես հայ ժողովրդի արյունախում թշնամի ու միաժամանակ քրդական ցեղապաշտության կրող: Նաև նշենք, որ նա սպանվեց Տրապիզոնում, բայց ջարդերը տեղի էին ունեցել Սասունում: Առաջին հայացքից ներքին կապից զուրկ այս իրողությունը, ամենայն հավանականությամբ, կանխորոշեց աբդուլհամիդյան ջարդերի մեկնարկը:*

*Բահրիի սպանությունից անմիջապես հետո Տրապիզոնի իշխանությունները սկսեցին վիլայեթի հայության զանգվածային ջարդերի նախապատրաստությունը: Քաղաքում վաճառքի մեջ եղած բոլոր զենքերը գնվեցին ու ինչ-որ անձանց կողմից ստեղծվեցին զենքի պահեստներ: Թուրքերը բաժանվեցին մարտական խմբերի: Այդ նպատակով ձևավորվեց լրտեսական ցանց*[110]*: Բիթ բազարում մահմեդական բնակչությանը զենք էր բաժանվում: Միաժամանակ մանրակրկիտ խուզարկվում էին հայերի խանութներն ու տները զենք հայտնաբերելու համար:*

*Վալին պահանջեց հանձնել Բահրիին ահաբեկողներին, այլապես հայերի անվտանգությունը երաշխավորել չէր կարող: Բնականաբար, հայերն այդ պահանջը բավարարել չէին կարող: Հույներին հրամայեցին հայերին ապաստան չտալ և չթաքցնել: Մոլլաները կոչ էին անում. «Հայերը, միացած Անգլիայի հետ, ուզում են կործանել մեր օսմանյան թագավորությունը, ջնջել Իսլամը: Գալիք ուրբաթ օրը հայերը հարձակվելու են մզկիթների վրա և կոտորելու են մուսուլմաններին: Ուստի հարկ է առաջ ընկնել և թույլ չտալ, որ անհավատ հայերը կոտորեն մեզ»*[111]*:*

*Քաղաքում հավատարմագրված դիվանագիտական հաստատությունները վալիից անվտանգության երաշխիք պահանջեցին: Կադրին երաշխավորություն տալ չզլացավ, սակայն նաև Կ. Պոլսից թույլտվություն խնդրեց կոտորածն անմիջապես սկսելու համար:*

---

[108] «Դրոշակ», 1896, թիվ 8:
[109] Զորմիհյան Լ., նշվ. աշխ., էջ 438:
[110] *Les massacres...*, p.25:
[111] *Les massacres...*, p. 27:

թուլլտվությունը ստացվեց: Խառը բնակչություն ունեցող թաղերում հայերի տներին նշաններ փակցվեցին: Խուժանին բաժանվեցին երկաթյա ճողեր ու գործիքներ՝ դռները բանալու համար:

Կոտորածներն ու թալանը սկսվեցին Մեյդանում, որտեղ եղած 150 խանութից 45-50-ը հայերինն էր: Ցուրաքանչյուր խանութում 2-4 հայ կար՝ բոլորը կոտորվեցին: Ջարդարարները քաղաքի հինգ կետերից չարժվեցին Մեյդան՝ ոչնչացնելով ճանապարհին հանդիպած հայերին: Ջարդարար խմբեր եկան Ջարսի, Գյուզելի Սարա, Ենի Ջումա, Պես Թեսպե, Օրթա Սարա թաղերից: Նրանց հետևից քայլում էին զինվորները: Թուրք խուժանը կրում էր սուր՝ փալա, դուրդուրլախ կամ մարտինի հրացան: Նույն օրը տեղ էր հասել ավստրիական «Լլոյդ» չոգենավը, որի բերած նամակները Մեյդանի վրա գտնվող փոստատնից ստանալու համար հավաքված հայերն առաջինը ոչնչացվեցին: Վալին անձամբ էր հսկում, որպեսզի քաղաքից որևէ հեռագիր կամ նամակ դուրս չգար: Նա ավազակախմբի ուղեկցությամբ չրջում էր քաղաքում և սպանությունների հանձնարարություններ տալիս[112], հորդորում էր նախ սպանել հարուստ հայերին:

Ֆրանսիական հյուպատոսն իր դեսպանին հաղորդում է. «Հոկտեմբերի 5-ին քաղաքում սկսվել է կոտորած ու թալան: Հրացանային կրակ, քարերի չաչյուն, չարդվող դռների ճռնչյուն, փլվող տների ու խանութների դղրդյուն, մոլագար ամբոխի աղմուկ, երկու սեռի ու տարբեր տարիքի հայերի այլանդակված և արյան լճերում լողացող դիակներ, խոշտանգումներ, ահա Տրապիզոնի այդ օրվա համայնապատկերը»[113]:

Սպանվածներին լցնում էին սայլերը, չատերին նետում ծովը, մյուսներին տանում հայկական գերեզմանատուն, մեծ փոսեր փորում և յուրաքանչյուրում 7-8 դիակ լցնում: Օրեր անց թաղվեցին նաև այն դիակները, որոնք ջրի մակերես էին ելել: Կոտորածը տարածվեց ամբողջ քաղաքում, բացի Ենի Մահլայից, Փոքր Մեյդան և Խաչբառ թաղերից, որոնցում միայն հայեր էին բնակվում: Սպանում էին Հայ Լուսավորչական եկեղեցուն պատկանողներին[114]: Մինչև հոկտեմբերի 15-ը, այսինքն՝ մեկ շաբաթվա ընթացքում, սպանվեց չուրջ 2000 հայ, ուր հայի թուրքական դատարանը մահվան դատապարտեց, 500 հոգի բանտ նետվեց: Նրանց մեծամասնությունը մտավորականներ էին, որոնց մեղադրեցին ապստամբություն հրահրելու մեջ: Քաղաքից փախավ 1500 հայ: Փախչողների մեծ մասն անցավ Ռուսաստան: Ֆրանսիական միսիոներները (ֆրերները) ապաստան տվեցին 3300 հոգու[115]: Կատարվածը ապստամբություն ճնշելու գործողություններ ներկայացնելու դիտավորությամբ սպանում էին միայն տղամարդկանց: Սակայն դա՝ լոկ առաջին պահին: Հետո չխնայեցին նաև կանանց ու երեխաներին: Կամբոնը գրում է, որ սկզբում կոտորեցին հայ բեռնակիրներին, որոնցից մի քանիսը փրկվելու համար նավակներով գնացին դեպի նավերը, սակայն նրանց էլ թրերով սպանեցին: Փողոցներում, խանութներում, արհեստանոցներում և հրապարակներում հանդիպած բոլոր հայերը սպանվում էին[116]: «...Մի տեղ չէին կարողանում գրավել հայերից մեկի տունը,— գրում է Կամբոնը,—... այդ տեսնելով՝ զինվորները հագուստները փոխեցին ու միացան մարդասպաններին, կրակ բացեցին... կասկածից վեր է, որ դա մանրամասն կանխամտածված դավադրություն էր»: Ջարդերն ամենուրեք սկսվեցին ու ավարտվեցին միաժամանակ, ազդանշանով: Հարձակման ենթարկվեցին նաև վիլայեթի հայկական գյուղերը, մի քանի գյուղ հրդեհվեց[117]:

Իրադարձությունների ականատես Ն. Պասալսկին պատմում է, որ երբ ռուսական «Ազով» նավը հասավ Տրապիզոն, ժամը 10-ն էր: Քաղաքի հրապարակում կրակոցների

---

[112] Նույն տեղում, էջ 24:
[113] *Братская помощь...*, стр. 101.
[114] Նույն տեղում, էջ 101-102:
[115] *Les massacres...*, p. 24.
[116] *Братская помощь...*, стр. 101-102.
[117] Նույն տեղում:

ձայները լավեցին, իսկ քիչ անց սկսվեց սոսկալի աղմուկ, վայնասուն և մոլեգին աղաղակ՝ «Զարկե՛ք գյավուրներին»: Խառնիճաղանջ բազմությունը՝ կազմված թուրք նավաստիներից, բեռնակիրներից, մասնաճառներից, զինված մարտինի հրացաններով, խռնվում է հրապարակում, խուժում փողոցները, հարձակվում հայերի վրա: Շուտով փողոցներում առաջացան դիակների կույտեր: Սոսկալի էին փախչող հայերին հալածելու տեսարանները, կարծես վայրի գազանների որս լիներ: Սպանողները բոլոր տարիքի թուրքերն էին, զոհը հայն էր՝ այր, կին, ծեր, երեխա: Զինվորները, վարակվելով այդ բյուրավոր խուժանի գիշատանձ խանդավառությունից, իրենք էլ սկսեցին խփել ու թալանել հայերին: Մեյդանը հիշեցնում էր Ումանի կամ Բարդուղիմեոսյան ջարդերը[118]:

Տրապիզոնում ռուսական առևտրական ներկայացուցիչ Վ. Դ. Աբրաչկևիչը գրում է.

«...Կոտորածը սկսվելուց 20 րոպե անց հրապարակում երևացին հատուկենտ զափթիեներ, որոնք, սակայն, ոչ մի զինված թուրքի չձերբակալեցին, որևէ կերպ չփորձեցին արգելք հանդիսանալ կոտորածները շարունակելուն... Անզեն թուրքերը զինվորներին ցույց էին տալիս փախչող հայերի, և վերջիններս նշան էին բռնում ու կրակում խեղճ փախստականների վրա:

Տասնմեկ հայ, թուրքական յաթաղանից փրկվելու հույսով, նետվեցին նավակները և նավարկեցին դեպի ամենամոտ չոգենավը՝ ավստրիական «Վենիստը», բայց չոգենավի սանդուղքն անմիջապես վեր քաշվեց, և նավից կրակ բացեցին ու փախստականներին հետ քշեցին: Վերջիններս փորձեցին ապաստան գտնել ռուսական դրոշի ներքո, սակայն թուրք բանվորները հարձակվեցին խեղճերի վրա, խողխողեցին ու նետեցին ծովը: Նավապետի օգնական Ա. Ի. Կոնստանտինովին և նավաստիներին հաջողվեց զսպել սրիկաներին և ներս առնել ապաստան փնտրող հայերի մի մասին, ովքեր հրազենի ու յաթաղանի ծանր վերքեր ունեին»:

Աբաչկևիչը նաև պատմում է, որ հյուպատոսարանի ճանապարհին եղած հայերի խանութները թալանված ու ավերված էին: Նա քաղաք գնալիս հայի յոթ դիակ էր տեսել, ոմանց գլուխները չախչախված, կոկորդները կտրված էին: Թուրքերն ուրախանում էին, որ այլանդակում էին հայերի դիակները: Երբ ռուսը վերադառնում էր չոգենավ, փողոցում տեսել էր 44 դիակ, իսկ թուրքերը քարշ էին տալիս հայերից հափշտակված գույքը: Նույն օրվա երեկոյան սկսվեց հրդեհը, որը շարունակվեց նաև հաջորդ օրը[119]:

Սերաֆիմովի կարծիքով՝ սպանվածների թիվը հասնում էր 1000-ի: Զեֆանոս, Բայրամ, Թողի հայկական գյուղերը հիմնահատակ այրվեցին: «...Տեսանք մի կնոջ սպանվելը ծովափին... տեսանք դիակների կույտեր, որոնք երեք օր մնացին փողոցներում: Տեսանք թուրքերի խմբեր, որոնք չրջելով ծովափին տեղ-տեղ կանգ էին առնում ծովից դուրս նետված դիակները քարկոծելու համար...»[120]:

Ծովը չարունակ դուրս էր նետում հայերի դիակներ, հավանաբար սպանված նավերում ու նավակներում: 26 տարեկան մի հայի վրա նավթ էին լցրել ու այրել, մեկ ուրիշին պարզապես գլխատել էին:

Տրապիզոնում հայերին հասցված վնասը կազմեց հինգ միլիոն ֆրանկ: Քաղաքից հեռանալ ցանկացող հայերին անցագիր չէին տալիս՝ պատճառաբանելով, թե նրանք ապստամբներ են ու պետք է գտնվեն հսկողության տակ:

Հոկտեմբերի 15-ին Ֆրանսիական հյուպատոսը գրեց. «Այժմ լրիվ ապացուցված է, որ մահմեդականները... միահամուռ ու միաժամանակ հարձակվեցին հայերի վրա»: Կոտորածներին հաջորդեց թալանը: «...Զինվորներն ու զափթիեները ոչ միայն չէին խոչընդոտում, այլև խրախուսում էին այդ (գազանությունները)... Պաշտոնական հաղորդագրությունով կոտորածների առիթ համարվեց մի հայի կրակելն ատրճանակից: Դա

---

[118] «Դրոշակ», 1895, թիվ 17-18:
[119] Նույն տեղում:
[120] Նույն տեղում:

անհավանական ու սուտ է, քանի որ քաղաքի բոլոր ծայրերում կոտորածը սկսվեց միաժամանակ: Կասկածից վեր է, որ կոտորածը նախապատրաստվել էր խնամքով: Այդ էր վկայում նաև կանոնավոր բանակի զորքերի մասնակցությունը թե՛ կոտորածին և թե՛ թալանին: Ու նաև այն, որ կոտորածն ինչպես սկսվել էր, այնպես էլ ավարտվեց՝ հատուկ ազդանշանով: Հյուպատոսները միահամուռ վկայում էին, որ հայերը ոչ մի առիթ չեն տվել, ջարդարարների գործողությունները «սկսվել են վարչակազմի գիտությամբ»»:[121]

Թուրքական պաշտոնական աղբյուրների տվյալներով՝ սպանվածների թիվը հասավ 7500-ի[122]: Արտասահմանցի ականատեսի վկայությամբ՝ սպանում էին բոլորին, նրանց, ովքեր հանձնվում էին ու նաև «նրանց, ովքեր ներողամտություն էին խնդրում, ովքեր փախչում էին՝ ծերեր, երեխաներ, երիտասարդներ: Բոլորին անխնա մորթեցին, կտոր-կտոր արեցին»: «Ողան թուրքեր, ովքեր սպանեցին իրենց հարևաններին, բարեկամներին, ընկերներին: Կատաղած գազանի նման հոշոտում էին անգամ դիակները: Ողբալի պատկեր էր հայկական թաղերում: Կանայք, նորապսակները, երեխաները փախչում էին՝ չիմանալով, թե ուր: Ոմանք կախվում էին բարձր պատերից, մյուսները ուշաթափ էին լինում: Երիտասարդ կանայք մի ձեռքով կրծքին էին սեղմել երեխաներին, մյուսով բռնած պատուհանից կապած պարանը, ցած էին սահում... Մերերը թաքնվում էին հորերի մեջ: Սարսափն ահավոր էր: Հարյուրավոր զինվորներ ու ավազակներ մտնում էին տները և պահանջում հանձնել տղամարդկանց: Զինվորները պատուհաններից ներս էին կրակում, բաշիբոզուկները տղամարդկանց մորթում ու կտրատում էին նրանց կանանց ու աղջիկների աչքի առաջ»[123]:

Սակայն Տրապիզոնի ողբերգությունը դրանով չավարտվեց: Դեկտեմբերին բաշիբոզուկներն ու զորքը հարձակվեցին հայկական գյուղերի վրա և թալանեցին: 60 աղջկա գերեվարեցին, 28 հայուհիներ խայտառակությունից փրկվելու համար նետվեցին ջրհորները: Այդ ընթացքում Տրապիզոնի ռազմական դատարանը «դատում էր հայերին», իբր նրանք «կրակել էին խանի վրա հարձակվող խուժանի վրա»: 15 հոգի մահվան դատապարտվեց: Մահվան դատապարտվածներից երեքը մեղադրվել էր հրացան պահելու, մեկը՝ սեփական տունը ատրճանակով հարձակումից պաշտպանվելու, մյուսը՝ տնից զարդարանների վրա կրակելու համար: Դատապարտվածներից մեկը 24 տեղից վիրավորված էր, աջ ձեռքի չորս մատը կտրված:

Տրապիզոնում ահաբեկող մթնոլորտը պահպանվեց նաև 1896-ին: Այդ մասին է վկայում 1896թ. սեպտեմբերի 29-ի հանրագիրը:

«Քաղաքի հայերը գրեթե ցամաքեցին: Ամբողջ թաղեր դատարկ են, տներից չատերը՝ նույնպես: Միայն փոքր մասն է սովորականի քառորդ գնով վարձով տրված: Հայերը փախչում են, բայց թե ուր, իրենք էլ չգիտեն: Այս ծանր վիճակում հարկադրված են հարկահավաքի կծու աղաղակներին դրամով պատասխանել... ամենուրեք թալան է... Ռազմական ատյանը կազմվեց այնպիսի անձանցից, որոնք մեզանից չատերի հայրերին, եղբայրներին են սպանել տվել և մեր խանութներն ու տները կողոպտել ու կողոպտել են տվել»[124]:

Նույն խնդրին է անդրադառնում սեպտեմբերի 4-ի նամակը.

«Կոտորածին հետևեց արտագաղթը, և կառավարությունն էլ ամեն կերպ դա խթանում էր... Փորձով գիտենք, որ առանց կառավարության թուրք խուժանը ոչինչ անել չի կարող և թուրքերից խելահասներն էլ ասստիկ մտահոգ են... և չեն ուզում, որ վայրենի դեպքերը կրկնվեն»[125]:

---

[121] Նույն տեղում:
[122] Սպիրով Դ., նշվ. աշխ., էջ 10:
[123] *Братская помощь...*, стр. 108-109.
[124] ԳԱԹ, ֆ. Առաքելյան Հ., գ. 133:
[125] Նույն տեղում, գ. 162:

Հոկտեմբերի 21-ի նամակում ավելի հանգամանալի է ներկայացվում վիճակը: Զոհերի թիվը նշվում է 3000 հոգի: Ճոշարա գյուղի Շախրզադե Միդհատ բեյն ու նրա եղբայրը գյուղացիների վիզը պարան էին անցկացնում և 200-ական օսմանյան լիրա պահանջում: Ուրիշ ելք չունենալով՝ գյուղացին դիմում էր ինքնապաշտպանության: 1896թ. սեպտեմբերի 30-ին կոտորվում է Օրդուի Ուչուբեյ գյուղը[126]: Այսինքն՝ Կադրին քաղաքում «գործն ավարտելով», անցել էր գյուղերը: Նա մահմեդականներին զենք էր բաժանում, հանձնարարություններ տալիս: 300 խուժան հարձակվեց Ժիժք գյուղի վրա, բայց հետ շպրտվեց: Հարձակմանը միացավ ոստիկանությունը: 1500 խուժան և ոստիկան գրոհեցին Քինասլի գյուղի վրա: Գյուղը պաշտպանության կանգնեց: Թուրքերը մինչև հաջորդ օրը չհամարձակվեցին գյուղ մտնել: Խուժանի թիվը հասավ 5000-ի, սակայն նորից ժիժք չմտան և հարձակման գնացին Կատրասի և Էլեմենոսի վրա, բայց մեծ կորուստներով հետ մղվեցին: Շուտով նրանց թիվը հասավ 10000-ի: Հայկական չորս գյուղերի բնակիչները քաշվեցին անտառ: Հոկտեմբերի 25-ին կոտորեցին Գյումուշխանեի ու մերձակա գյուղերի հայերին, 11 գյուղ թալանվեց: Դեկտեմբերի 7-ին կոտորվեցին Սամսոնի, դեկտեմբերի 14-15-ին՝ Ազդիագունեի գյուղերի հայերը[127]: Ոչնչացվեց 34 գյուղ: Թուրքերի ու հայերի հարաբերությունները լրիվ խզվեցին, հայությունը շրջափակվեց: Ցաթեզաներից փրկվածները հեռացան գյուղերից և ապաստանեցին քարայրներում:

Ռիզեում Ռուսաստանի հյուպատոս Գիպիուսը 1896թ. փետրվարին գրում է Նելիդովին, թե հայերի ապստամբության մասին թուրքերի պնդումները կեղծ են, որ «բացի խոսքերից ու գրություններից» հայերի կողմից հեղափոխության նախապատրաստումը «ոչ մի բանով չի արտահայտվել: Հայերը զենք չունեն, և թուրքական իշխանությունների բոլոր պնդումները... խնդիր ունեն արդարացնել հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների գործելակերպը»: Կոտորածը սկսելուց առաջ կատարված խուզարկությունը ևս այդ հաստատեց. «չի հայտնաբերվել զենքի ոչ մի պահեստ...» և, եթե դրանից հետո էլ «պաշտոնական փաստաթղթերում հայերի հացեին մեղադրանք է տեղ գտնում», ուրեմն թուրքերը նոր խժդժություններ են պատրաստում: Եվ իսկապես, 1896թ. փետրվարի 16-ին Տրապիզոնում սկսվեց հրացանաձգություն, որը տևեց 1.5 ժամ, ինչը խուճապի մատնեց հայերին: Պաշարողական վիճակում գտնվող քաղաքում նման հրացանաձգությունը վկայություն է, որ մահմեդական բնակչությունը զինված էր՝ չնայած վալու բազմիցս արած հայտարարություններին, թե «օրենքը մասնավոր անձանց խստորեն արգելում է զենք կրել, և ով որ այդ հանցանքի մեջ բռնվի, խստագույն պատժի կենթարկվի»[128]:

## 5. ԿՈՏՈՐԱԾԸ ԿԱՐԻՆԻ ՎԻԼԱՅԵԹՈՒՄ

Կարին քաղաքում և նահանգում տեղի ունեցած կոտորածների մասին կան մեծ թվով վկայություններ: Փորձենք դրանց միջոցով ներկայացնել ողբերգական անցքերը:

Պատրվակ ծառայեց չեխ Հայդարի մահը, որի մեղքը բարդեցին հայերի վրա: Պաշտոնական վարկածն արտահայտված է Շաքիրի հոկտեմբերի 18-ի հեռագրում. «Մի քանի ֆրիտասարդ հայեր ներխուժեցին նահանգապետի տուն և կրակեցին ժանդարմների պետի վրա, բայց վրիպեցին: Սպանվեց մի ենթասպա: Խուզարկությունը սկսված է»[129]: Թուրքական մեկ այլ աղբյուր վկայում է. «Ոստիկանները կրակ բացեցին հայերի վրա, որոնք ուզում էին ներխուժել նահանգապետի տուն: Մի քանի հոգի վիրավորվեցին: Սկսվեց կռիվ, սպանվածների ու վիրավորների թիվը հասնում է 50-ի»[130]: Ահա նաև հայկական

---

[126] Նույն տեղում, թ. 159:
[127] Նույն տեղում, թ. 33, էջ 1-17:
[128] АВПР, Посольство в Константинополе, д. 3184, л.102.
[129] «Մուրճ», 1895, թիվ 11:
[130] Նույն տեղում:

աղբյուրը՝ հոկտեմբերի 23-ին և 25-ին Թիֆլիսում ստացված հեռագրերը. «Հոկտեմբերի 18-ին, ցերեկվա ժամը 12-ին զինվորական փողերի կանչը 2000 հոգուց կազմված բանակային ուժերին առաջնորդեց դեպի չուկա. նրանք բոլոր կողմերից չրջապատեցին հայերի խանութներն ու տները»: Այստեղ ևս ղեկավար ուժը սոֆթաներն էին, ովքեր Տրապիզոնում «գործն ավարտելուց» հետո չարժվեցին դեպի Կարին ու այն առան չրջափակման մեջ:

Կոտորածը միաժամանակ սկսվեց բոլոր թաղերում՝ Թավրիզքափ, Գյուրջիքափ, Սպայաբազար, Աթմեյդան, Ջայխուր, Գյուլիխան, Գեոնաթոչմ՝ ամենուրեք, որտեղ հայը բնակվում կամ առևտուր էր անում, բացի այն թաղերից, որտեղ եկեղեցիներն էին ու Սանասարյան վարժարանը: Հրաձգությունն ու կոտորածը տևեցին մինչև կեսգիշեր: Ջորքերի հետևից գնում էին բաշիբոզուկները: 20 հազար խուժան կողոպտում էր հայերի տներն ու խանութները, մի քանի թաղեր հրդեհվեցին, սակայն բարեբախտաբար հրդեհը, մեղմ եղանակի չնորհիվ, չտարածվեց: Այս հարձակման ընթացքում սպանվեց 809 հայ, վիրավորվեց՝ 500, չատերն անհետ կորան: Գիշերը դիակները քաղաքից դուրս տարան և գցեցին նախապես պատրաստված փոսերը: Հաջորդ օրը այրիացած կանայք գտան 350 դիակ, հոկտեմբերի 20-ին՝ ևս 200 դիակ: Դպրոցների աշակերտները օրերով փակված մնացին եկեղեցիներում: Նույն օրը գիշերը կոտորվեց կես գյուղի հայ բնակչությունը: Հոկտեմբերի 22-ին քաղաքում սպանվեց ևս 37 հայ: Ֆիդայի Հ. Կորկոտյանի չոկատը կռվի մեջ մտավ չարդարարների դեմ: Էրզրումի չրջակայքում կործանվեց ավելի քան 80 հայկական գյուղ: Մարդկանց կոտորում էին, տնային իրերը, ամբողջ հացահատիկն ու անասունները տանում: Բազմաթիվ սովյալ որբեր ու թչվառներ մեռան անօգնական: Կանայք թաղում էին սպանվածներին[131]: Հայերը փախչում էին տանիքներով, նրանցից մի քանիսին ապաստանեց Անգլիական հյուպատոսարանը: Շատերը տանիքներից նետվեցին Պարսկական հյուպատոսարանի բակը: «Կանանց ընդունեց հյուպատոսի տիկինը... Հյուպատոս Իսխակ խանը լաց էր լինում և, դիմելով զինվորներին, աղերսում էր անմեղներին չկոտորել»: Նա ապաստան տվեց մոտ 1000 հայի:

"Daily News"-ում տպագրվեց ականատեսի վկայությունը՝ «Էրզրումում կոտորվել էր 1000 քրիստոնյա, կատարվել են անլուր բարբարոսություններ: Հոկտեմբերի 22-ին հայոց գերեզմանատունը թաղեցին 521 դիակ»[132]: Քաղաքին հասցված վնասն անցավ 500 հազար ոսկուց:

Պատմում է ականատեսը. Կարինում կոտորածը սկսվեց հոկտեմբերի 18-ին: «Զինվորներին հրամայված էր կոտորել հայերին... զորքը սկսեց կոտորածը, նա էր խուժանի համար ճանապարհ հարթում»[133]:

Ժամը 12-ին փողը հնչեց, և խուժանն ու զորքը հարձակման անցան: Առաջինը սպանվեցին կառավարչատունը գտնվող հայերը: Փողոցներում զորքը սկզբում գնդակահարում էր որոշ հեռավորության վրա խուճապը սաստկացնելու համար, բայց հենց կատաղած ամբոխը չարժվեց, զորքը մտավ իր իսկական դերի մեջ և սպանեց պատահած հային... Հայերը փակվում են իրենց տներում ու խանութներում: Մի կողմից «դիակները դիզվում են փողոցներում, մյուս կողմից զորքն ու ամբոխը զբաղվում են թալանով»: Մի քանի «հայերի կախել են սպանդանոցում, մորթել ու քերթել են ոչխարների նման», չատերին էլ մորթելուց հետո այրել են... Հափշտակելով կաթնակեր երեխաներին իրենց մայրերի գրկից՝ նետում էին օդ և ապա սրերը դեպի վեր պահելով՝ երեխային նրա ծայրին էին առնում ու չամփուրի նման պտտում[134]:

Կարինի կոտորածին մասնակցեց 20 հազար թուրք, քուրդ, լազ, չերքեզ՝ հիմնականում բերված գյուղերից[135]:

---

[131] «Մուրճ», 1895, թիվ 11:
[132] Նույն տեղում:
[133] «Դրոշակ», 1895, թիվ 21:
[134] «Դրոշակ», 1896, թիվ 3:
[135] Նույն տեղում, թիվ 5:

Լուսնյակ գիշեր էր, և կոտորածը չարունակվեց մինչև լուսաբաց: Այդ օրը սպանվեց 520 մարդ, մեծ թվով վիրավորներ ու կորածներ կային: Կոտորածն սկսվեց չուկայում, չարունակվեց հայկական թաղերում: Գերեզմանատանը թափված էին հայերի դիակներ: «Մեկի վիզը, մեկի թևը, մեկի ականջը կտրված էր: Շատերին սպանելուց առաջ սաստիկ խոշտանգել էին»[136]: Կոտորածի երկրորդ օրը գերեզմանատուն բերեցին 315 լրիվ մերկ դիակ: Ջկար մի դիակ, որ կրած չլիներ հրացանի ու ատրճանակի 5-10 հարված: «Էրզրումի հայկական գերեզմանատունը,– գրում է ռուս հրապարակախոս Պ. Բելյաևը,– իրենից ներկայացնում էր սարսափելի և մարդու ներաշխարհը քարուքանդ անող տեսարան, կային հարյուրավոր արյունաթաթախ, անճանաչելիության աստիճանի այլանդակված դիակներ՝ թափված իրար վրա, և դրանց չուրջը մեծ թվով հայեր, արհամարհելով ճանապարհին սպանվելու վտանգը, եկել էին փնտրելու իրենց հարազատներին ու մերձավորներին...»[137]:

Կոտորածից հետո Կարինը վերածվել էր ավերակի: Փողոցներում չրջող զինվորներն ու դադաչները պարծենում էին, թե ինչպես մոր գրկից խլել էին երեխային ու անցկացրել սրի ծայրին, թե ինչպես մի գնդակով տապալել էին խաղաղ աշխատանքով զբաղված արհեստավորին, թե ինչպես ժամեր չարունակ հոշոտել էին դիակները: Մի քանի օր անց պարզվեց, որ քաղաքը զրկված էր ամեն ինչից՝ սկսած վարսավիրից մինչև բժիշկը: Թուրքերի ու հայերի միջև այնպիսի անջրպետ առաջացավ, որ նրանց համակեցությունն անհնար դարձավ[138]:

Քաղաքի հայ վերնախավը կոտորածից հետո անցավ սուլթանի կողմը: Նրա ներկայացուցիչները չնորհակալություն հայտնեցին կառավարությանը, որ «սուլթանը» ծնողական սիրուց զրկված ցանկացել է կոտորածով պատժել ստահակներին»: Նրանք Շաքիրի պահանջով հանրագիր ուղարկեցին պատրիարք Իզմիրլյանին՝ Կարինի առաջնորդ, առաջադիմական հայացքներ ունեցող Շիշմանյանին աշխատանքից ազատելու պահանջով, չնորհակալական հանրագիր ուղարկեցին սուլթանին «հայրական հոգատարության համար»: Եվ դա այն դեպքում, երբ 1891-95 թվերին Կարինի հայ ազգաբնակչությունը չորս անգամ կոտորվել էր[139]:

Մշո առաջնորդ Վարդան վրդ. Հակոբյանը 1895թ. դեկտեմբերին Խրիմյան Հայրիկին գրած նամակում անդրադառնում է նաև Կարինի վիճակին: «Էրզրումը երթարկվել է կոտորածի ու կողոպուտի: Էրզրումի հարթավայրը թալանվել է, և... սպանություններ են կատարվել... Բասենը նույնպես թալանել են, կատարվել են սպանություններ: Նույնը նաև Խնուսում: Դերջանն իր գյուղերով թալանված է, բնակչությունը կոտորված, փրկվածները տեղի վարդապետի հետ բռնությամբ մահմեդականացվել են: Ամենասարսափելի կոտորածները տեղի են ունեցել Բայբուրդում: Սողանլու գյուղում հայ կանանց ու աղջիկներին բռնաբարել են, սպանել և ապա մերկ ու արյունաշաղախ... նետել ամենուրեք: Մծկեր երեխաներին սպանել են՝ գլխատելով, ձեռքուոտները թրատելով: Ոմանք էլ, ողջ մնալով, իրենց մեռած-սառած մայրերին կպած սարսափելի ճչոցով ծծել են նրանց արյունաշաղախ ու ցամաքած կրծքերը»[140]:

Էրզրումի կոտորածը «Սասունից վատթար էր»: Հարճակումը չուկայի վրա տևեց վեց ժամ: Պաշտոնատար անձինք բացականչում էին՝ «Ջարկեք գյավուրներին»[141]: Կոտորածի օրը ոստիկանները չուկա եկած բոլոր հայերին խուզարկել ու զինաթափել էին: Նույն բանն արեցին փողոցների երկայնքով նախապես տեղակայված զորքերը: Իսկ

---

[136] Նույն տեղում, թիվ 21:
[137] *Братская помощь...*, стр. 60.
[138] «Դրոշակ», 1896, թիվ 9:
[139] Նույն տեղում:
[140] *АВПР, Посольство в Константинополе*, д. 3184.
[141] *Les massacres...*, p.27.

թուրք գյուղացիներին հանձնարարված էր չուկա գալ զինված: 70 հոգի բանտում տանջամահ արվեց, որովհետև հրաժարվել էին սուլթանի հասցեով չնորհակալական հանրագիր ստորագրել: Իշխանությունների հանձնարարությամբ դիակների մի մասը թափվեց Եփրատ և քաղաքի մերձակայքի փոսերը: Թուրք զինվորներն իրենք էին խոստովանում. «Մենք տեսել ենք Սասունի կոտորածները, հիմա էլ սա տեսանք: Եթե այս բոլորը մարսենք, ուրեմն Աստված գոյություն չունի»:

Զեքին անձամբ էր ղեկավարում ջարդարար գործողությունները: Նա, թնդանոթի փողերն ուղղելով հայկական թաղերին, պահանջեց զենքերը հանձնել: Հայերը հանձնեցին, և զորքը խուժանի հետ խուժեց հայերի տները:

Երզնկայում ևս մինչև կոտորածը կառավարիչը հայերին հավաստիացնում էր, որ նրանց որևէ վտանգ չի սպառնում: Այստեղ նույնկերպ կազմակերպեցին, որպեսզի թուրքերը զենքեր գտնեին, խուժանին խմբերի բաժանեցին, հանձնարարություններ տվեցին հայերի վրա հարձակվելու եղանակների ու ժամանակի մասին: Քրդերն այստեղ ևս հայտարարում էին. «Որտեղ հայ կա, սպանելու ենք, հայ անունը վերացնելու ենք: Մեզ այդպես է հանձնարարված»[142]: Այստեղ ևս ջարդարարները «հայկական ապստամբություն հայտնաբերեցին» և փորձեցին այն պատրվակ դարձնել իրենց բնաջնջման կրքերին հագուրդ տալու[143]: Հոկտեմբերի 7-ին թուրք խուժանը ներխուժում է քաղաքի չուկա, և սկսվում է հայերի ջարդն ու նրանց ապրանքների թալանը: Սպանվեց 95 մարդ: Ապա ջարդերը տեղափոխվեցին գյուղերը: Հատկապես շատ տուժեցին Բզվան, Տաճրակ, Կլոնցիկ, Գյուլիջե, Մեծ ու Փոքր Ջիքջիկ գյուղերը: Մթննի գյուղացիները Մ. Բզնունի քահանայի գլխավորությամբ հերոսական դիմադրություն ցույց տվեցին: Նույնը՝ Ջարչարանաց Սբ. Լուսավորիչ վանքը: Երզնկայի կոտորածի մանրամասն նկարագրությունը կա ականատեսի թղթակցություններում, որը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում: Ընթերցողին ենք ներկայացնում թղթակցության համառոտագրությունը:

«...Թուրքերն օրեր առաջ իրենց չար մտադրությունները կատարելու համար հավաքներ էին անցկացնում: ...Մեր մեծերից ոմանք առաջնորդական փոխանորդի և տասը քահանաների հետ մուշիրի մոտ են գնում աղաչելու, որ իրենց սպառնացող վտանգի առաջն առնի»: Մուշիրը երդվում է, որ հայերին ոչ մի վտանգ չի սպառնում: «Միաժամանակ հրահանգում է թուրքերին ի գործ դնելու իրենց վայրագ տրամադրություններըը»: Հոկտեմբերի 20-ի կիրակի օրը գյուղերի զինված թուրք խուժանը լցվում է քաղաք... Հայերը նորից պատվիրակներ են ուղարկում մուշիրի մոտ: Նրանք Զեքիին ասում են. «Մենք հանձնվում ենք ձեզ, հրամայեք. ուզում եք՝ գնանք չուկա և ջարդվե՞նք, թե՞ տներում մնանք...Հաստատ տեղյակ ենք, որ մեզ ջարդելու են»: Մուշիրը պատասխանում է, թե՝ քանի ինքը կա, «հայերի նույնիսկ քիթը չի արյունոտի», ու հանձնարարում է խանութները բացել: Իսկ ժանդարմները ցրվում են հայկական թաղերը, իբր հայերին պաշտպանելու, բայց սկսում են խուզարկել չուկա գնացողներին և խլել զենքերը: 1500 բաշիբոզուկ հարձակվում է չուկայի վրա՝ հրազենով, լախտերով, սրերով, տապարով: Խփում են պատահած հային, կոտորում բոլորին, զբաղվում թալանով: Սպանդը տևեց 4-6 ժամ և «մի ազդանշանով ամեն ինչ դադարեց»: Այդ ընթացքում զորքը ոչնչացնում էր փրկվելու համար դես ու դեն փախչող հայերին: Սպանվածները թաղվեցին մի ընդհանուր փոսում: Բնաջնջումը չարունակվեց գյուղերում: Հիմնականում սպանեցին տներում, դիակները կտոր-կտոր արեցին: Բզվանի գյուղացիները լցվում են եկեղեցի, սակայն խուժանը ներս է խուժում ու ոչխարի նման մորթում 40-50 տղամարդ, կին, երեխա: Մթննի գյուղը կրակի տրվեց: Նույն բախտին արժանացան Միղուցիք, Ագարակ, Գարաթուշ գյուղերը, փրկվածները մերկ ու քաղցած, ապաստանեցին լեռներում: Բթասիճ և

---

[142] *Les massacres...*, p. 27.
[143] Նույն տեղում, էջ 29:

Շիխլի գյուղերում փրկվեցին միայն նրանք, ովքեր մահմեդականություն ընդունեցին: Ութ վանք ավերվեց: Զարզուրանի Լուսավորչի վանքը մինչև ռազմամթերքի վերջանալը դիմադրում էր, իսկ երբ հանձնվեց, նրանում ապաստանողները մորթվեցին: Բոլոր գյուղերը դատարկ էին: Փրկվածները լցվել էին քաղաք ու հաց էին մուրում:

Այդ ամենից հետո Զեքին հայերից պահանջում է հանձնել 1000 հրացան և «ապստամբներին»: Նույն ժամանակ «բարեկորոգումներ» իրականացնելու համար Կարին հասած Շաքիրը Դերջանի կայմակամի միջոցով քուրդ ցեղապետերին չարունակում էր նամակներ ուղարկել, որպեսզի որոշված օրը Կարին գան հայերի վրա հարձակվելու համար:

Միզու գյուղի հայերը վտանգը զգալով, նախապատրաստվում են պաշտպանության և կարողանում են մի քանի օր հետ չպրտել թշնամու գրոհները: Նրանց օգնում էին համագյուղացի թուրքերը, ովքեր ապաստան են տալիս հայերին, սակայն երբ խուժանը գյուղ է լցվում, հայերին հանձնում են չարդարարներին, և նրանք ոչնչացվում են: Ողջ մնացածներին քշում են եկեղեցի, քահանայի գլխին ֆես դնում ու պահանջում սելևեթ կարդալ: Սակայն տեղի թուրքերից մեկի՝ Սուլեյման աղայի չանքերով հաջողվում է այդ հայերին փրկել: Իսկ Բազվանի գյուղացիները չփրկվեցին: Նրանք նույնպես ապաստանեցին եկեղեցում, սակայն զինվորները ներս մտան և 60 հոգու մորթեցին[144]:

Մեկ այլ փաստաթղթում նշվում է, որ հոկտեմբերի 20-ի գիշերը վեհիբը կրակում է հայ երևելի Դանիելյան էֆենդու պատուհանից ներս: Առավոտյան քաղաքի շատ տների պատերին փակցված էր՝ «Թուրք հեղափոխականի մեկ գնդակը հայ հեղափոխականի հարյուր գնդակին է հավասար»: Հայերը նորից դիմում են Զեքիին, որը պատասխանում է. «Մենք բոլոր միջոցները կձեռնարկենք Ձեզ պաշտպանելու համար, սակայն եթե հայ հասարակությունից ձայն դուրս գա, գալիք վնասների համար պատասխանատու չենք»: Հայերին հարկադրեցին խանութները բանալ: Իսկ երբ խանութները բացվեցին, «գործակալներն աշխատանքի անցան, հայկական թաղերում տղամարդ չմնաց»: Թուրքական զորքերը չրջապատեցին այդ թաղերը: Հաջորդ օրը վաղ առավոտյան թուրք զինված ամբոխը հարձակվեց հայերի վրա՝ 6000 կատաղած խուժան, որին ջարդի էին կոչում մոլլաներն ու իմամները. «Մի խնայեք գյավուրներին, սպանեք, կոտորեք, ամեն ինչ մուսուլմանին հալալ է»: Կոտորածն սկսելուց կես ժամ անց Զեքին գալիս է առաջնորդարան ու չքմեղանում. «Ի՞նչ անեմ, ժողովրդին չկարողացա կանգնեցնել»: Հոկտեմբերի 9-ին դիակների թիվը 313 էր, 84 էսնաֆներ անհետացել էին, 485 վիրավորներից ամեն օր մեռնում էր 15-20 հոգի: Շատ տեղերում դիակները չներն էին ուտում: Հոկտեմբերի 11-ին հրաման եղավ՝ դիակները թաղել: Քաղաքի հայությանը հասցվեց ավելի քան մեկ միլիոն օսմանյան ոսկու վնաս: Կոտորածից հետո Զեքին 50 հայի բանտ նետեց՝ ասելով, թե հայերի մոտ 4000 մարտինի հրացան, երկու լեռնային թնդանոթ կա, որ «17000 հեղափոխականներ իրենց Մուրադ իշխանի գլխավորությամբ ապստամբության են պատրաստվում»[145]:

Թուրքական աղբյուրները Երզնկայի կոտորածի սկսվելը հետևյալ կերպ են ներկայացնում՝ իբր հայերը սպանել էին մահմեդականների չրջանում մեծ հարգանք վայելող մի թուրք իմամի, որից հետո մահմեդականները հարձակվել էին հայերի վրա[146]:

Բաբերդում ջարդերը տեղի ունեցան սեպտեմբերի 30-ին: Քաղաքի վրա չարժվեց 10 հազար թուրք: Կանայք ու երեխաները, ջարդարարներից խույս տալով, նետվում էին Ճորոխ գետը: Գյուղերում զոհվեց 2.5 հազար մարդ: 30 գյուղ ավերվեց, թալանվեց 1760 տուն, 36 եկեղեցի: 20 գյուղ լրիվ ոչնչացվեց, 5 գյուղի բնակիչներ կրոնափոխվեցին: Բաբերդի կոտորածին մասնակցում էին նաև Զեքիի զորքերը[147]: Խուժանը մասամբ

---

[144] «Դրոշակ», 1896, թիվ 4:
[145] ԳԱԹ, ֆ. Առաքելյան Հ., գ. 167, թթ. 1-4:
[146] «Մուրճ», 1895, թիվ 11:
[147] "National Zeitung", 1896, № 51.

ու նրա որդու մարմինները մանր մասերի բաժանեց, կեռերից կախեց ու հրավիրում էր. «Ի՞նչ եք ուզում՝ թև՞, սրո՞ւնք, ո՞տք, գլո՞ւխ: Գնեցեք, էժան է»: Վիրավորների «կոկորդը կամ որովայնը դաշույն մտցնելով... պտուտակի պես պտտում էին և, աղիները դուրս թափելով, ոլորում»:

Բաբերդի կոտորածի մասին "Daily News"-ը գրեց, որ հայերը նախապես լուր ստանալով, թե լազերն արշավելու էին իրենց վրա, նախապատրաստվեցին: Հոկտեմբերի 13-ին 600 լազ, զինված մարտինի հրացաններով, մտան քաղաք: Նրանց միացավ տեղի թուրք բնակչությունը: Հրոսակները հրդեհեցին տներ, դպրոցներ, անասնագոմեր: Տնից ոտը դուրս դնողը գնդակահար ընկնում էր: Կանանց ու երեխաներին այրում կամ ցից էին հանում: Կոտորեցին նաև եկեղեցում ապաստանածներին: Լազերն իրենց հետ կանայք էին բերել թալանի համար: Ֆրանսիական աղբյուրները նշում են, որ սպանվածների թիվը հասավ 1000-ի, 14 կին այրվեց կրծքի երեխաների հետ, 100 կնոջ մարմինները կոտրեցին, 50 երիտասարդ կանայք անպատվությունից փրկվելու համար ինքնասպան եղան[148]: Բաբերդից ստացված մի նամակում ասվում է. «Բաբերդում թագավորում են ողբն ու ավերակները»[149]:

Հայկական աղբյուրի վկայությամբ՝ «Հոկտեմբերի 1-ից սկսած Տրապիզոնի մոտի... գյուղերի տաճիկների ահագին բազմությունը, զինված պետական հրացաններով, շարժվեց մեր Բաբերդի գյուղերի վրա»: Զորքի գալուց հետո անկարգություններն ավելի լայն ծավալ ստացան: Արյունն սկսեց առատ հոսել: Լուսհանք գյուղում մի գյուղացի, որը հրացան ուներ, ժամեր շարունակ դիմադրում էր իր տան վրա հարձակվող հարյուրավոր խուժանին: Մի այլ գյուղում կար միայն մի հրացան և քանի դեռ այդ հրացանակիրը չէր սպանվել, լազերը գյուղ մտնել չհամարձակվեցին[150]:

Իշխանությունները միայն կոտորածներով, թալանով, ավերով ու այլևայլ բռնաբարքներով չէին բավարարվում: Բաբերդում բանտ նետվեց շուրջ 200 հայ: Թուրք բանտարկյալների օգնությամբ հայերին հարկադրեցին ստորագրել թղթեր, որոնք պարունակում էին կեղծ մեղադրանքներ քաղաքի հայ երևելի անձանց դեմ, իբր «նրանք կոմիտե են ստեղծել ընդդեմ սուլթանական կառավարության և Ռուսաստանից զենք են բերել, որպեսզի հեղափոխություն աներն...», իսկ որ հայերը անմեղ էին, «կարեկցանքով խոստովանում էին նույնիսկ թուրք հարևանները»[151]:

Գյուղերի հայերի պաշտպանելու խնդրանքին կառավարիչն արձագանքեց՝ երեք ժանդարմ ուղարկեց, որոնք տեղ հասան կոտորածից հետո:

Բոլոր հայ ուսուցիչներն ու հոգևորականները ոչնչացվեցին[152]:

Օրդուում խուժանի առաջին հարձակումը տեղի ունեցավ հոկտեմբերի 12-ին. այն հայերի կողմից հետ շպրտվեց: Հաջորդ օրը կոտորած չեղավ՝ կայծակն ու հորդառատ անձրևը խանգարեցին: Մի քանի օր անց լուր տարածվեց, թե «Դանիել անունով մի հայ 800 հոգով ոչնչացրել է գյուղերի մահմեդականներին: 1500 զինվոր չտապեցին օգնության», այսինքն, գնացին կոտորելու հայերին: 900 քրդի զինեցին մարտինի հրացաններով ու հարձակման տարան Քեմախի հայկական գյուղերի վրա: Քրդերը գոչում էին. «Որտեղ հայկական գյուղ կա, պիտի ոչնչացնենք և հայի անունը պիտի վերացնենք: Այդպես է պատվիրված»: Նույնը հաստատում էին Դերսիմի քրդերը՝ «Բարձրագույն հրաման կա հայերին կոտորելու և նրանց գյուղերն ու քաղաքները ավերելու»[153]:

Թորթումում սպանվեց շուրջ 500 մարդ: Հրկիզվեցին և ավերվեցին Զեփանոս, Կրոմիլա, Աղրիթ, Թոփալի, Բալթա, Ասիաֆալթոց, Կոգոնա, Գարեան, Նոխաճանա, Զիզագ-

---

[148] Berard V., *La politique du Sultan*, Paris, 1897, p. 18.
[149] *Les massacres...*, p. 62.
[150] «Դրոշակ», 1896, թիվ 2:
[151] *АВПР, Посольство в Константинополе*, д. 3197.
[152] «Մուրճ», 1895, թիվ 11:
[153] Նույն տեղում:

սա, Կոռքի, Վերանլա, Արղալիա գյուղերը: Հայաբնակ գյուղերից չվտանգվեց միայն Մալան:

Ադաբազարի շրջանում կոտորածը սկսվեց սեպտեմբերի 21-ին: Երբ թուրքերը հարձակվեցին, հայերն զբաղված էին առօրյա գործերով: Չնայած դրան, վերջիններս միակամ պաշտպանության կանգնեցին: Սպանվեց ավելի քան 100 թուրք: Կոլուստներ տվեցին նաև հայերը:

1895թ. աշնանը հայերը կոտորվեցին Վերին Բասենի վարչական կենտրոն Հասան Կալայում, շատ հայեր բռնի կրոնափոխվեցին: Այդ ժամանակ Բասեն է հասնում Հրայր Դժոխքը, կազմակերպում տեղի հայության ինքնապաշտպանությունը և զենքի տեղափոխությունն Արևմտյան Հայաստան:

Հասան Կալեի վանքը կողոպտելուց հետո միաբանության յոթ անդամների մորթեցին ու դիակներն այրեցին:

Նոյեմբերի 16-ին Կարինում նոր կոտորած տեղի ունեցավ: Սպանվեց 1500 մարդ, կողոպտվեց 1500 խանութ: Ջիրկվեցին անգամ պետական ծառայության մեջ եղած հայերը: Ավերվեց 20 եկեղեցի: Ֆրանսիական հյուպատոսը պահանջեց «դատի տալ Թալանին ու ջարդերին մասնակցած զինվորականներին: Իմ գործընկերները՝ Անգլիայի, Իտալիայի և Ռուսաստանի հյուպատոսներն ու ես ունենք նման մասնակցության անժխտելի ապացույցներ»[154]: Նույն հյուպատոսի զեկուցագրերից մեկում նշվում է, որ մահմեդականները կոտորածներին նախապատրաստվել էին բացահայտ և, չնայած հյուպատոսների պահանջներին, իշխանությունները ոչինչ չարեցին կոտորածի առաջն առնելու համար և միջամտեցին միայն այն ժամանակ, երբ հայերի տներն արդեն ավերված էին, իսկ խանութները՝ թալանված: Ջորքը մասնակցում էր սպանություններին ու թալանին[155]:

Դեռ 1895-ի ամռանն ու աշնանը համիդիե գնդերն ու խուժանը կոտորածի փորձ արեցին Դերջանում. ավելի քան երկու տասնյակ գյուղեր դատարկվեցին հայերից: Քղիում հիմնովին ավերվեցին Մելիքյան և Առեկ գյուղերը: Սակայն Դերջանի գյուղերում գլխավոր կոտորածը տեղի ունեցավ հոկտեմբերի 7-ին: Կազան վերածվեց ավերակի, սպանվեց մոտ 1000 մարդ, փրկվածների մեծ մասը մահմեդականացվեց: Զանգվածաբար թլպատում էին տղամարդկանց, իսկ կանանց քշում հարեմներ: Ումուդում, Դենիկում, Գավաշում, Կոյնիղում և մի քանի այլ գյուղերում եկեղեցիները ավերվեցին: Լեյերոիլի հարթավայրում ավերվեց 24, Տերդիան կազայում՝ 40, Բասենում՝ 14, Հովի կազայում՝ 23 գյուղ: Վիլայեթի երկու գյուղեր, որոնք ռուսական սահմանի մոտ էին, ինքնապաշտպանության կանգնեցին և զերծ մնացին կոտորածից[156]:

Ամբողջությամբ վերցրած՝ վիլայեթում ավերվեց 7500 տուն, 2600 կրպակ, սպանվեց 6175 քրիստոնյա, 30 մահմեդական: Կրոնափոխվեց 5200, թշվառության մատնվեց 55300 մարդ:

"National Zeitung"-ը 1896թ. հունվարի 24-ին գրեց. «Ավետարանական միությունը մեզ հայտնում է հետևյալ միանգամայն հավաստի տեղեկությունները: Հոկտեմբերի 1-ին թալանվել է Քեմախի կազայի Վարագա վանքը, հոկտեմբերի 10-ին՝ նույն կազայի վեց այլ վանքեր, իսկ հոկտեմբերի 21-24-ը՝ ևս ութ վանք: Հոկտեմբերի 22-ին Երզնկայի կազայում թալանվել է Փեզենաս եկեղեցին, իսկ հոգևորականներն ու եկեղեցում ապաստանած 30 հայեր սպանվել են... Լրիվ կործանվել է Ռաֆֆասեթ հայկական գյուղը»:

Ջարդերի հետևանքով, եթե, օրինակ, Նահանգի Կզըլքիլիսե գյուղը 1879-ին ուներ 30 ծուխ և 230 չունչ հայ բնակչություն[157], ապա 1914թ.՝ 4 տուն, 20 չունչ[158]:

---

[154] Lepsius J., նշվ. աշխ., p. 140.
[155] Նույն տեղում, p. 141.
[156] ԳԱԹ, մմ 11881, գ. 946:
[157] ԳԱԹ, Սրվանձտյանի ֆ., գ.23:
[158] ՀՀ, ՊԿՄ, ֆ. 476, ց.1, գ. 319:

Բաբերդի Բլրակ գյուղը 19-րդ դարի առաջին կեսին ունեցել էր 700 տուն և 4900 բնակիչ, իսկ 20-րդ դարասկզբին՝ 234 ծուխ և 1414 հայ բնակիչ: Բաբերդ քաղաքը՝ 1850թ. 8000, իսկ 1905թ.՝ 1823 հայ բնակիչ[159]: Եթե Դիադին քաղաքը 19-րդ դարի առաջին կեսին ուներ 500 ծուխ խառը բնակչություն, ապա 1909-ին քաղաքում բնակվում էր ընդամենը 15 տուն հայ[160]: Քաղաքում հայերի թիվը կրճատվել էր մոտ 1700 չնչով:

Երզնկայի գավառի Մեղուցիկ գյուղը մինչև 1890-ական թվականների ջարդերը ուներ 1700, երկանը՝ 1000, Մահմուտցիկը՝ 1500, Գյուլիեն՝ 2000, Մթննին՝ 1750 հայ: Կոտորածից այդ գյուղերից փրկվել էր ընդամենը 34 հայ: Գավառի գյուղերի 15064 հայից փրկվեց 206 մարդ[161]:

Էրզրումի նահանգը 1881թ. ունեցել է 333476, իսկ մեկ տարի անց՝ 280000 հայ բնակիչ[162]: 1877-1912թթ. նահանգում կոտորվել է 341000, արտաքսվել՝ 437760 հայ[163]:

Բաբերդի գավառում 1895-96թթ. ավերվեց 165 գյուղ, որոնց բնակիչները կոտորվեցին: Գավառներում ավերվեց – Թորդանում՝ 40, Բասենում՝ 14, Կարինի գավառում՝ 23, Ղղիում՝ 9, Բայազետում՝ 24 գյուղ, այսինքն՝ վեց գավառում ավերվեց 110 գյուղ:

Դերջանի գավառակի 20000 հայ բնակչից փրկվեց 95 հոգի[164], Բայազետ քաղաքի 300 հայ տներից՝ 100 հոգի[165]:

## 6. ԿՈՏՈՐԱԾԸ ՍԵԲԱՍՏԻԱՑՈՒՄ

Երբ լուր ստացվեց, թե սուլթանն ընդունել է Բարենորոգումների ծրագիրը, մահմեդականներն իրար անցան: Սկսեցին պոլսից զենք բերել, համիդիե նոր գնդեր կազմակերպել: Հայերին զինաթափեցին, իսկ հայկական թաղերը չրջափակեցին: Բանակային մի գունդ չրջապատեց քաղաքը, և արգելվեց մուտքն ու ելքը: Հոկտեմբերի 30-ին հայերը չբացեցին խանութներն ու մնացին տներում: Վալի Խալիլին հաջողվեց անգլիական և ֆրանսիական հյուպատոսների միջոցով համոզել նրանց խանութները բանալ: Միաժամանակ քաղաքում ու մերձակայքում հավաքվեց 30-40 հազար բաշիբոզուկ: Մահմեդականները զինանոցից զենք ստացան:

Թուրքերը կոտորածի համար առիթ էին փնտրում, իսկ հայերն ամեն ինչ անում էին առիթ չտալու համար: Կոտորածն սկսվեց առանց որևէ լուրջ առիթի: Մոլլան նամազի ժամանակ կոչ արեց կոտորել գյավուրներին: Կառավարչատանը գնդի հրամանատար Մեհմեդը ցուցադրաբար մի հայի սպանեց ու ասաց. «Ահա օրինակ ցույց տվի... Վաստահ եղեք, որ հայ ցեղը ոչնչացնելու կայսրական իրադե կա»[166]:

Կոտորածի հենց սկզբից տեղի առաջնորդը դիմեց վալուն զորքի միջոցով հայերին պաշտպանելու: Վալին պատասխանեց. «Մի քանի սրիկաներ են կռվում, դրա համար ինչո՞ւ զորք հանեմ»: Առաջնորդը իր խնդրանքի վրա պնդեց: Վալին ցույց է տալիս մի հեռագիր ու ասում. «24 ժամ պետք է կոտորեն, թալանեն: Դրանից հետո միայն կառավարությունը զորք կհանի և խաղաղություն կվերահաստատի»[167]:

Նոյեմբերի 6-ին Կ. Պոլսում ստացված մի հեռագրում նշվում էր, թե Սեբաստիայում 500 հայ չրջապատված է: Այստեղ կոտորածների հարվածային ուժը չերքեզ Միր Ալիի

---

[159] «Հայաստանի և հարակից չրջանների տեղանունների բառարան» (ՏՔ), հ.2, ե., 1988, էջ 527:

[160] Ինճիճեան Հ., Աչխարհագրութիւն չորից մասանց աչխարհի, հ. Ա., Վենետիկ, 1906, էջ 270 և «Հայաստանի և հարակից չրջանների տեղանունների բառարան», հ2, էջ 973:

[161] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց.5, գ.164:

[162] Նույն տեղում, ֆ. 476, ց.1, գ. 332 և գ. 2341:

[163] Նույն տեղում, գ. 28:

[164] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց.5, գ.146:

[165] Էփրիկյան Հ., Պատկերազարդ բնաչխարհիկ բառարան, հ. 2, գ. Ա, Վենետիկ, 1906, էջ 393:

[166] Lepsius J., նչվ. աչխ., էջ 140.

[167] «Դրոչակ», 1896, թիվ 3:

ավազակախումբն էր: Նոյեմբերի սկզբին վիլայեթը հեղեղեցին քրդերը և հրի ու սրի մատնեցին: Նոյեմբերի 12-ին սպանվեց չուրջ 1000 հայ:

Տերությունների դեսպանների տեղեկագրում կարդում ենք.

«Վալին չի կարողանում Բ. Դռնից լիազորություն ստանալ համապատասխան միջոցներ գործադրելու համար: Բուն Սեբաստիա քաղաքում կոտորածը սկսվեց նոյեմբերի 12-ի կեսօրին և տևեց երեք ժամ: Սկզբում հայերը հաջողությամբ հետ էին շպրտում բաշիբոզուկի հարձակումները: Այդ տեսնելով՝ խուլուսը հրամայեց հնչեցնել պատերազմի փողերը, և հարձակման անցավ զորքը: Սկսվեց սպանդը: Ոչ միայն սպանում էին, սրախողխող անում, մորթում, այլև դիակները մանրատում և գլուխները սվիններին հագցրած՝ տանում վալիին:

Նոյեմբերի 14-ին կոտորածը վերսկսվեց: Հրապարակներում դիզվում էին դիակներ: Թուրքական թաղերում բնակվող ոչ մի հայ չազատվեց: Ներանց խանութները թալանվեցին: Զոհերի թիվը հասավ 2000-ի: Երեկոյան մոլլան մինարեից հռչակեց, թե Ալլահը օրհնել է իսլամների կատարածները: Կոտորածներից հետո գերեզմանոցում թափված էր 800 դիակ: Թալանվեց չուրջ 2000 կրպակ»[168]:

Սեբաստիայի կոտորածների մասին տեղի ֆրանսիական փոխհյուպատոսը 1895թ. նոյեմբերին տեղեկագրում է.

«Կոտորածն սկսվեց ուղիղ կեսօրին, քաղաքի բոլոր մասերում միաժամանակ:

Շուկա.— Հայերի բոլոր կրպակներն ու խանութները լրիվ ավերված ու թալանված են: Նույնիսկ լուսամուտներն են հանել տարել... Դեղատների դեղորայքները փչացրել են: Մոտ 400 հայ փակվել էր շուկայի նոր խանում: Խուժանը ոստիկանության ներկայությամբ, դուռը ջարդելով, ներս է մտել: Հայերն առանց դիմադրության անձնատուր են եղել:

Սպանություններ.— Կոտորածը հավանաբար նախապատրաստված էր, քանի որ աչքի էր ընկնում առանձնահատուկ միաբանությամբ: Որ իշխանության կողմից խրախուսիչ թույլտվություն եղել է, շատ հավանական է: Այն խնամքով գաղտնի էր պահվում, թեև նախորդ երեկոյան մի քանի նախազգուշացումներ արվել էին, բայց դրանք չափազանց անորոշ էին...

Ավելորդ է ասել, որ զափթիեները, զինվորները, կառավարչական ծառայողներն ու ուրիշները անձնական մասնակցություն ունեցել են ինչպես սպանություններին, այնպես էլ կողոպուտներին: Նրանք միայն երեկոյան ստանձնեցին ոստիկանի իրենց դերը: Համիդիե սպաները ոստիկանների հետ միասին ուղեկցում էին ավարով բեռնված ձիասայլերին:

Հաջորդ օրը իշխանությունները հաշվեցին, որ սպանվել է 200-300 մարդ: Դիակները հավաքել էին չուկայի խաներից մեկում: Իրականում դրանք 500 հոգի էին: Հայերը միայն մի քանի մահմեդականի էին սպանել... Որոշ ժամանակ անց իմացա, որ մի այլ խանութում ևս սպանվածների նույնքան դիակներ են եղել՝ մեծ մասամբ չուկա ապրանք բերող գյուղացիներն էին: Կային անհետ կորածներ: Սպանվածների մեջ շատ քիչ են գնդակահարվածները, համարյա բոլորի գանգերը ջախջախված էին կացիններով, փայտերով, երկաթե լինգերով...

Վիրավորները համեմատաբար քիչ են, որովհետև նրանց անմիջապես սպանում էին... Ես մեկին գիտեմ, որի վրա 12 գնդակ էին արձակել և ուրիշ վերքեր հասցրել: Վառարանագործ մի հայի զինվորները սպանել ու կտոր-կտոր էին արել»[169]:

Սեբաստիայից ստացված մի նամակ կարծես չարունակում է ֆրանսիական դիվանագետի միտքը. «Մեր քաղաքն այժմ ավերակ է: Շուկա չկա, ոչ ոք չի աշխատում, բանվորներից խլել են նույնիսկ գործիքները... Բոլորս աղքատ ենք, անգործ, անհաց, ան-

---

[168] *Les massacres...*, p. 223-224.

[169] *Братская помощь... (քաղվածք ֆրանսիական «Դեղին գրքից»)*, стр. 60.

փող, սարսափով սպասում ենք: Թուրքերը հիմա 40 ղուրուշ են ուզում մեզնից խլած ապրանքի համար, որ նախկինում արժեր 10 ղուրուշ»:

Կոտորածի հաջորդ օրը իշխանությունները այն դադարեցրին՝ ասելով. «Երեկ մահմեդականի պարտքը պարտավորեցնում էր սպանել, և թալանվածը նրա պարգևատրությունն էր, իսկ այսօր պետք է ամեն ինչ ավարտվի»[170]:

Քաղաքից 10 կմ չառավղով ընկած բոլոր գյուղերն ավերվեցին: Նոյեմբերի 12-ին 2000 քուրդ կամ, ինչպես անվանում էին, պահեստային զորքեր, շրջապատեցին Գուրունը: Հայերը չորս օր դիմադրելուց հետո անձնատուր եղան, ու քաղաքն անմիջապես վերածվեց ավերակի: Զոհվեց 2000 մարդ, դիակների մեծ մասն օրեր շարունակ ընկած մնաց փողոցներում: Քրդերը սեփականացրեցին 150 կին ու աղջիկ, 5075 մարդ մնաց առանց ոչնչի:

Շարքում ու մերձակա գյուղերում կոտորածները տեղի ունեցան հոկտեմբերի 27-29-ը, իսկ նոյեմբերի 1-ին սպանվեց չուրջ 2000 մարդ, հիմնականում կանայք ու երեխաներ: Քաղաքի մերձակայքում սպանվեց 3000 մարդ: Երեսուն գյուղ թալանվեց, դրանց բնակիչների 40-50%-ը սպանվեց: Շատերին իսլամացրին: Միայն Ղասմում կրոնափոխվեց 655 մարդ: 18 հազար հայ ընկավ անելանելի կացության մեջ[171]:

1895թ. նոյեմբերի 17-ին իշխանությունները Կեսարիայում հրահրում են հայ-թուրքական ընդհարում, որը դարձավ հայոց ջարդերի ազդանշան: Հայերը դիմեցին ինքնապաշտպանության հատկապես Բամբուկ խանում և չուկայի մերձակայքում: Կոտորածները դադարեցին երկու օր անց՝ եվրոպայի դիվանագետների միջամտությամբ: Սպանվեց 346 հայ, 10 հույն:

Կեսարիայում կոտորածի մասին ճեռքի տակ է Կոնիայում Ռուսական հյուպատոս Ալ. Լևիտսկու 1896թ. մարտի զեկուցագիրը: Նա հայտնում է, որ քաղաքում ջարդը տեղի ունեցավ 1895թ. նոյեմբերի 18-ին: Կոտորածին մասնակցում էին նաև զինվորներն ու ոստիկանները: Որ կոտորածները նախանշված եղել են «կենտրոնական բարձրագույն իշխանությունների կողմից և հրամայված էին գործադրել, հազիվ թե կասկածի ենթակա է»: Հայերը հիմնականում սպանվել են սառը զենքերով: Կոտորածից հետո «ոստիկանությունը հայերին հրավիրեց... տանելու իրենց զոհերին», իսկ Փամբուկլի խանում սպանված 200 հոգու դիակները սայլերով «տարան նետեցին բերդի բակը»: Մութեսարիֆի տվյալներով սպանվել էին 243 հայ, 10 հույն, իսկ հայ հոգևոր առաջնորդի տվյալներով՝ սպանված էր 346 հայ: Երկու տան մեջ այրվել էր 13 առևանգված աղջիկ: Տեղի ճիզվիտական դպրոցի պետը սպանվածների թիվը նշում է 360, իսկ կաթոլիկների առաջնորդը՝ 395: Առևանգվել էր 60 հոգի: Թալանվել էր 500 տուն, 200 խանութ, 2500 հոգի մնացել էր անօթևան:

«Հազարավոր թուրքեր՝ մոլեռանդ ու բիրտ,— նկարագրում է ականատեսը,— թափվում են փողոցները՝ սրերով, ատրճանակներով, բահերով ու կացիններով կատաղի հարձակում են սկսում չուկայի ու հայկական թաղերի վրա և անխնա ջարդում են... Բաղնիքում լկկվում ու սպանվում է տարբեր սեռի ու տարիքի չուրջ 250 հայ»: Հայերի տների թալանին մասնակցում էին նաև թրքուհիները: Նրանք առանց չադրայի «գնում-գալիս էին՝ չարունակ կողոպտվածը փոխադրելով»: Հաջորդ օրը կոտորածը դադարեց, իսկ կողոպուտը չարունակվեց: Հարյուրավոր հայեր ապաստանել էին Մայր տաճարում, խուժանը կրակ բացեց տաճարի պատուհաններից ներս: Հայերը 30 օր այդպես փակված մնացին: Մսագործների խանութներում հայերի մարմնի մասեր էին կախել ու վայրագ քրքիջով գոչում էին. «Մսի օխան՝ 30 փարա, իսկ գլուխը՝ 10 փարա»[172]: «Տեսնելով Կեսարիայի նոյեմբերի 18-ի խժդժության հեղինակների անպատիժ մնալը՝ թուրքերը թալա-

---

[170] Les massacres..., p. 226.

[171] "National Zeitung", 1896, № 51.

[172] АВПР, Посольство в Константинополе, д. 3184.

նում են քրիստոնյաներին, բռնություններ ենթարկում, ճանապարհներին կողոպտում են հայերին ու հույներին...»: Առանց ոստիկանի ուղեկցության վերջիններս քաղաքից դուրս չէին գալիս: Հայերը բարոյապես նույնպես պարտվեցին, դարձան մահմեդականների հլու կամակատարներ, չմայած դա ոչ մի կերպ չմեղմացրեց նրանց հանդեպ թուրքերի ատելությունը[173]:

Համաձայն հայկական աղբյուրների՝ 1895թ. նոյեմբերի 18-ին ժամը 9-ին կեսարիայի երեք թաղերից միաժամանակ հրացան արձակեցին: Դա ազդանշան էր: «Հազարավոր թուրքեր, մոլեռանդ ու բիրտ, թափվում են փողոցները՝ սրերով, ատրճանակներով, բահերով ու կացիններով և կատաղի հարձակում գործում չուկայի ու հայկական թաղերի վրա: Խանում ապաստանած չուրջ 100 հայ տեղնուտեղը սպանվում է: Բաղնիքում լկվում ու սպանվում է 200-250 տարբեր սեռի ու տարիքի հայ»[174]:

Կոտորածներից զերծ չմնաց նաև Փենեսսեն, որտեղ սպանվածների ու վիրավորների թիվը հասավ 150-ի[175]:

Մարզվանում ջարդերը սկսվեցին նոյեմբերի 9-ին: Նախապես քաղաք բերված զորքն ու ավազակախմբերը թալանեցին ու ավերեցին հայերի խանութներն ու արհեստանոցները: Սակայն երբ փորձեցին խուժել հայկական թաղերը, ուժեղ դիմադրության հանդիպեցին ու հետ քաշվեցին: Չնայած դրան, առաջին օրը սպանվեց ու վիրավորվեց չուրջ 600 հայ: Ահա մի վկայություն Մարզվանի ջարդի մասին: «Կեսօրից քիչ անց ոստիկանապետ Թևֆիկը ոստիկանների խմբով մտավ... հայերի կրպակները և նախազգուշացրեց սպառնացող վտանգի մասին... Նույն օրը կայմակամի դուստրը իր հայ աղախնին հայտնել էր, թե հայերն այսօր կոտորվելու են»[176]:

Նման տառնյակ վկայություններ կարելի է բերել, որոնք հաստատում են անվիճելի ճշմարտությունը. տվյալ դեպքում խոսքը ոչ թե ապստամբական գործողությունների, ոչ թե ազգամիջյան բախումների, այլ պետության կողմից ծրագրված ու իրականացված բնաջնջման քաղաքականության մասին է:

Ռուսաստանի հյուպատոսին քաղաքի բնակչության կոլեկտիվ նամակում (նոյեմբերի 21-ի) կարդում ենք. «Թուրքերի մի մեծաթիվ ամբոխ, զինված խանչալներով, սվիններով ու կացիններով..., որոնց միացան զորամասից եկած զորքերը, ինչպես նաև մերձակա գյուղերի թուրքերը» հարձակվեցին չուկայի վրա «և չեփորների խլացուցիչ չաչյունների տակ սրբեցին տարան իրենց ճանապարհին եղած ամեն ինչ՝ սպանելով բոլոր հայերին, առանց տարիքի ու սեռի խտրության...»: Միաժամանակ թալանեցին ու ավերեցին նրանց կրպակները: Թալանված ապրանքները տեղափոխում էին սայլերով ու ջորիներով՝ զորքի պաշտպանությամբ: Հափշտակեցին «նույնիսկ կոշկակարների փայտե կաղապարներն ու հացավաճառների ցախը»: Թուրքական թաղերի հայերի տները վերածվեցին ավերակների: Երեկոյան ժամը 11-ին, երբ չուկայում ոչինչ չէր մնացել, երևաց կայմակամը, «նա քայլում էր դիակների վրայով... Վիրավորները, որոնք չէին կարողացել իրենց տները հասնել և մնացել էին չուկայում, սպանվեցին զինվորների կողմից»: Քաղաքի բոլոր հայ ընտանիքները զոհ ունեցան: Հաջորդ օրը հայերը փակված մնացին իրենց տներում: Կայմակամի կարգադրությամբ չուկայում թափված դիակները բարձեցին աղբ տեղափոխող սայլերն ու տարան հայկական գերեզմանատուն: Բոլորին լցրեցին մի փոսի մեջ: «Հայերը սպանվել են դաժան ու սարսափելի մահով: Մահակներով ջարդելուց ու գնդակահարելուց հետո... խանչալներով կտրել են նրանց գլուխն ու մարմնի մյուս մասերը... Դիակներն այնքան այլանդակված էին, որ անհնար էր ճանաչել»: Սպանվել էր 80 տղամարդ, 13 երեխա և 5 կին: «Այս թվի մեջ չեն մտնում... դաշտերում, այգիներում

---

[173] Նույն տեղում, д. 3183.
[174] «Դրոշակ», 1896, թիվ 5:
[175] Նույն տեղում:
[176] АВПР, Посольство в Константинополе, д. 3181, л.38.

և թուրքական գյուղերում սպանվածները»: Վիրավորների թիվը հասնում էր 500-ի, օրական նրանցից 4-5 հոգի մահանում էր: Իշխանություններն արգելել էին վիրավորներին դեղորայք հասցնել: Ավերվել ու թալանվել էր հայերի 150 կրպակ, ընդհանուր վնասն անցնում էր 150 հազար ոսկուց: Հայկական թաղերը շարունակում էին մնալ պաշարված: Դրանցում մնացածներին թողել էին առանց հացի ու ջրի:

Նոյեմբերի 21-ին քաղաք է գալիս մի հանձնաժողով Աբդուլլահի գլխավորությամբ, որին քաղաքի հայ ավագանին կոլեկտիվ նամակ է հանձնում: Փաշան, առանց այն ընթերցելու, հայտարարում է. «Հայերին հնազանդեցնելու համար թուրքական կառավարությունը հավաքել է 150 հազար զինվոր և մտադիր է ոչնչացնել բոլոր հայերին...» ու վռնդում է հայ պատվիրակներին[177]:

Մարզվանի հայ բնակչության ներկայացուցիչները 1895թ. նոյեմբերին գրում են Սամսոնում ռուսական փոխհյուպատոսին.

«1895թ. նոյեմբերի 3-ը՝ ուրբաթ օրը, մեր քաղաքի համար սև օր դարձավ... Այդ օրը... Թուրքիան մեկ անգամ ևս իր արյունոտ գահն օծեց բազմաթիվ անմեղ քրիստոնյաների արյունով... Հենց որ ավարտվեց կեսօրվա աղոթքը, թուրքերի մեծաթիվ ամբոխը, զինված թրերով, սվիններով ու կացիններով, դուրս եկան մզկիթից, նրանց միացան զորանոցից եկած զորամասը, ինչպես նաև մերձակա գյուղերի թուրքերը: Այս ամբողջ ամբոխը... հանկարծակի հարձակվեց չուկայի վրա և չեփորների խլացուցիչ աղմուկի տակ սրբեց տարավ իր ճանապարհին եղած ամեն ինչ, սպանելով բոլոր հայերին՝ առանց տարիքի ու սեռի խտրության... Նույն ժամանակ թուրքերը թալանում էին ու ջարդուփշուր անում հայերի կրպակները... Ցուրաքանչյուր ընտանիքում կորուստ կար. մեկն իր սիրելի որդուն էր փնտրում, մեկը կորած ամուսնու մասին էր հարցուփորձ անում, մեկն իր եղբոր և այլն... ավա՛ղ, հաջորդ օրը լուսաբացը էլ ավելի սաստկացրեց նրանց վիշտը՝ չուկայում հայտնաբերել էին միայն դիակներ»[178]:

Ամասիայում նոյեմբերի 7-20-ին կոտորվեց մի քանի հարյուր հայ: Կոտորածները կրկնվեցին 1897-ի մարտին. քաղաքում հայերի թիվը նվազեց կիսով չափ:

Շապին-Կարահիսարում հայերի հանդեպ բռնությունները սկսվեցին 1894թ. հուլիսից. վեց հայ գործիչ գնդակահարվեց, ձերբակալվեց 80 մտավորական, փակվեցին հայկական բոլոր դպրոցները, խոչընդոտվում էր հայերի տնտեսական գործունեությունը, մահմեդականներին զրդռում էին հայերի դեմ: 1895-ի աշնանը կոտորածներ տեղի ունեցան Շապին Կարահիսար և Թամզարա քաղաքներում ու Ագչար-օվա գավառակում: Հայերի զոհերի թիվը հասավ 5000-ի՝ չնայած գավառում գործում էր Դանիել Ջաուշի ջոկատը, որ իր վրա էր վերցրել բնակչության ինքնապաշտպանության գործի կազմակերպումը:

## 7. ԿՈՏՈՐԱԾԸ ԲԱՂԵՇՈՒՄ

Սկսվեց հոկտեմբերի 13-ին: Դեռ ամավա սկզբին «քաղաքում անծանոթ դեմքեր էին ավելանում՝ դերվիշներ, մոլլաներ, ֆախիրներ, շեյխեր և զանազան ցեղերի պատկանող քրդեր: Թուրք ժողովուրդը բացահայտ կամ ծածուկ զինվում էր...»: Վալի Էմմերը խորամանկեց՝ ընդառնոթի փողերն ուղղեց թուրքական թաղերին ու հայերին ասաց. «Ձեր հավի փետուրի համար էլ եմ պատասխանատու»[179]:

Հաջորդ օրը թուրքերը լցվում են մզկիթները, փակում խանութները: Խանութները փակում են նաև հայերը: Ոստիկանը մի հայից պահանջում է խանութը չփակել: Հայը չի լսում: Ոստիկանը կրակում ու սպանում է նրան: Դա ազդանշան էր. «Մզկիթներից դուրս են թափվում թուրք, քուրդ, մոլլա, շեյխ, սոֆթա և սկսում անխնա կոտորել հայե-

---

[177] Նույն տեղում:
[178] Նույն տեղում, թ. 311:
[179] «Հնչակ», 1896, թիվ 4:

րին: Սպանում են խանութներում, չուկայում: Կոտորածը տարածվում է թաղերն ու փողոցները: Թուրքերը հարձակվում են Սբ. Սարգսի վարժարանի վրա և սպանում 5-12 տարեկան 120 երեխա: Փողոցն այդ անմեղ հոգիների դիակներով ծածկվեց»: Քաղաքում սպանվեց չուրջ 1000 մարդ: Նրանց դիակները նավթով այրում ու գցում էին փոսերը: Դիակները լրիվ մերկ էին, անգամ առանց վարտիքի: Թուրքերից ոչ ոք չէր զոհվել, որովհետև հայերի զենքերը հավաքված էին:

*Իշխանությունները պահանջեցին չնորհակալական հանրագիր ստորագրել, սպառնալով, թե այլապես «քաղաքում կենդանի հայ չի մնա»: Հայերը ստորագրեցին: «600 տարի երջանիկ ապրում ենք մեր իսլամ հայրենակիցների հետ: Ուրիշները չահադիտական նպատակով մեզ դրդեցին հարձակվել թուրքերի վրա: Ողջ հանցանքը մերն է: Ամոթահար ենք: Ինչ պատիժ տրվի, արժանի ենք...»*[180]:

*22 գյուղ ավերվեց ու հրդեհվեց, մի գյուղ իսլամացվեց: Սիզեռք գյուղում կատարվածի մասին պատմում է ականատեսը.*

*«Հոկտեմբերի 13-ից սկսած՝ չեյխերի հրամանատարությամբ բարբարոս քրդերը հարձակվեցին հայ և ասորի գյուղերի վրա: Աչքի ընկած անձանց չարաչար սպանելով կամ կենդանի այրելով՝ գյուղը (Սիզեռքը) լրիվ կողոպտում են...*

*Մահվան սպառնալիքով պահանջում են մահմեդականանալ, ընդդիմացողներին սրախողխող են անում, իսկ մնացածներին թլպատում: Քահանաների գլխին սպիտակ փաթթոցներ են դնում: Քահանաների կանանց մոլլաների կամ այլ մահմեդականների կանանց հետ են փոխանակում, որպեսզի մահմեդականացումը ոչ թե առերևույթ, այլ իրական լինի: Որ տանը մի քանի եղբայր կար, մի մասին սպանում էին, իսկ նրանց կանանց ողջ մնացած եղբայրներին էին կնության տալիս՝ հրամայելով, թե «մահմեդական կրոնի պահանջն է, որ ձեր եղբայրների կանանց նույնպես ընդունեք որպես ձեր կին»:*

*Եկեղեցիների աղոթարանները դեպի հարավ չուռ տալով՝ մզկիթների էին վերածում»*[181]:

*Երբ Բաղեշի կոտորածի լուրը հասավ Մուշ, կառավարիչը հայտարարեց, թե մեղավորը հայերն են: 50 հեծյալներ շրջում էին հայկական թաղերում ու գոչում. «Անհավատներ, այդ ամենի պատճառը դուք եք»: Կառավարիչը հայտարարեց. «Երեկ կեսօրին Բաղեշում թուրքերի աղոթքի ժամանակ հայերը հարձակվել են մզկիթների վրա, լուսամուտներից ու դռներից կրակել ու սպանել են իսլամ հասարակությունից 90 հոգի: Մուշում ևս հայերը հարձակվելու են իսլամների վրա: Ուստի դուք պիտի միջոցների դիմեք վտանգը կանխելու համար»: Նոր միայն Բաղեշից վերադարձած Հաջի Դայիբը գրգռում էր հավատակիցներին՝ «Կողոպտել ու կոտորել հայությանը»:*[182] *Քաղաքային ժողովի անդամները կառավարչից խնդրեցին միջոցներ ձեռնարկել կոտորածները կանխելու համար: Վերջինս խոստացավ, բայց նաև զենքի պահեստների դռները բացեց մահմեդականների առաջ: Քաղաք բերվեցին աշիրեթներ ու չերքեզներ, որոնց հրահանգավորեցին և ուղարկեցին Թաղերը*[183]:

*Նոյեմբերի 3-ին մի քուրդ իր ատրճանակը տանում է հայ զինագործի մոտ վերանորոգելու: Բայց երբ հայը չախմախը ձգում է, ատրճանակը կրակում է: Դա նույնպես ազդանշան էր: Թուրքերը սկսում են հարձակումը՝ սկզբում չուկայում, ապա նաև՝ հայկական թաղերում:*

*Նախօրդ օրը վերսկսվել էր Տարոնի 12, Բուլանըխի՝ 7, Սասունի՝ 12 գյուղերի կողոպուտը: Ծուրաքանչյուր գյուղի թալանը տևում էր 3-4 օր: Զնայած Շաքիրի՝ «Սպանեցեք և ապա թալանեք» կոչին, քրդերը ավելի շատ թալանում, քան սպանում էին: Հայե-*

---

[180] Նույն տեղում, 1895, թիվ 24:
[181] Նույն տեղում:
[182] Նույն տեղում:
[183] Նույն տեղում:

*րի բողոքին կառավարիչը պատասխանեց. «Քրդերի հարձակմանը մի դիմադրեք՝ թագավորի հրամանն է»*[184]*:*

*Ոչ լրիվ տվյալներով, Բիթլիսի վիլայեթում ավերվեց 6000 տուն, 430 կրպակ: Սպանվեց 1400 քրիստոնյա, 3 մահմեդական: 6.5 հազար մարդ կրոնափոխվեց, 50 հազար մարդ մատնվեց թշվառության*[185]*: Վարդան վրդ. Հակոբյանը Տարոնի կոտորածների վերաբերյալ մի քանի նամակներ ուղարկեց կաթողիկոսին և պատրիարքին: Այդ նամակներում տրված են Սալնոճորի բնակավայրերում և Մուշ քաղաքում ու Տարոնի գյուղերում կատարված բարբարոսությունների նկարագրությունները: 1895թ. դեկտեմբերին կաթողիկոսին հասցեագրված նամակում նա գրում է. « Բոլոր այս ողբալի իրադարձությունների ընթացքում ամենաշատը տուժել են կենջի... 47 հայկական գյուղերի բնակիչները, որոնք, մնալով անտուն և օրվա հացի կարոտ, ցրիվ են եկել քարայրներով մեկ և այլուր՝ սովալլուկ ու ցրտահար»*[186]*: «Բիթլիս քաղաքը կոտորված է և թալանված՝ չրջակա գյուղերով ու գավառներով հանդերձ» 102 գյուղ: «Զգալի թվով մարդիկ էլ իրենց քահանաների հետ բռնի մահմեդականացվել են, եկեղեցիները վերածվել մզկիթների»: Ճապաղչրի Զևլիկ, Սարագ, Սևասր, Դարբասան, Վալեր, Դիար Բոք, Զմասնի, Կուպիր, Բեչուրի Նահիթի Բեչար, Ռիե, Նորաշեն, Մորդարեկ, Անդիվ, Իզակ գյուղերի հայերը մասամբ կոտորված, մասամբ էլ իսլամացած են:*

*Նույն բախտին է արժանացել Մանազկերտի 9, Խուլբի և Խիանքի 28 գյուղ: Դրանցից 6-ը (Սաղտուն, Փարկան, Արսըք, Գրեմորին, Գրեխոխին, Գհամպան) վերածվել է ավերակի. իսկ բնակչությունն ապաստան է գտել քարայրներում: Տարոնի դաշտում թալանվել ու կոտորվել է 14, Բուլանըխում՝ 16 գյուղ: «Այստեղ (Թուրք) դեկավարությունը,– չարունակում է Վարդան վարդապետը,– ձգտում է մեզնից և բոլորից բռնությամբ վերցնել չնորհակալական նամակներ: Առայժմ չենք համաձայնել և մտադիր չենք ընդունելու նրա (կառավարչի) առաջարկը... Բայց հազիվ թե կարողանանք դիմանալ մինչև վերջ, և վախենում եմ, որ դրա դիմաց հարկ լինի կյանքով փոխհատուցել, և ոչ միայն իմ, այլև՝ չատերի»*[187]*:*

*«Հայերի չարդերը» ժողովածուում զետեղված մի նամակում կարդում ենք. «Ներկայումս (1895թ. նոյեմբեր) հայ բնակչությունը քաղաքում ու չրջակայքում սարսափի մեջ է... կյանքը, ունեցվածքն ու պատիվը վտանգի տակ են, և ընդհանուր կոտորածն անխուսափելի է թվում... Զգացվում է, որ հայերի նկատմամբ ամեն մի հաչվեհարդար անպատիժ է մնալու...»*[188]*:*

*Թե ինչ ծավալներ ունեին կոտորածները, պատկերացում է տալիս Տարոնի 28 գյուղերի ստորև ներկայացված պատկերը*[189]*:*

*Սևքարն ունեցել է 20 ծուխ, սպանվել է 13 մարդ: Համապատասխանաբար.*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| *Դիանչուն* | *50* | *25* | *Բադրանց* | *16* | *6* |
| *Ներքին Գոդենց* | *30* | *13* | *Ներքին Խորուգ* | *12* | *6* |
| *Ներպան* | *10* | *6* | *Խութ* | *10* | *5* |
| *Օխանց* | *13* | *5* | *Սորի* | *10* | *5* |
| *Խորուգ* | *40* | *25* | *Պախտ* | *60* | *50* |
| *Վերին Գոդենց* | *12* | *7* | *Սոգանց* | *18* | *13* |
| *Պագանց* | *20* | *12* | *Արնճիս* | *20* | *12* |
| *Լուան* | *13* | *5* | *Դուագս* | *20* | *13* |

---

[184] «Դրոշակ», 1896, թիվ 10:
[185] «Հնչակ», 1896, թիվ 3:
[186] *АВПР, Посольство в Константинополе*, д. 3184.
[187] Նույն տեղում:
[188] *Les massacres...*, p. 84–85.
[189] *АВПР, Посольство в Константинополе*, д. 3184.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Քղի | 13 | 7 | Գերան | 10 | 6 |
| Տանձիկ | 10 | 4 | Տաշտ | 13 | 7 |
| Սոս | 20 | 13 | Հանդ | 20 | 9 |
| Արգվին | 5 | 3 | Տծմեն | 16 | 8 |
| Տալարս | 12 | 4 | | | |

Իրողությունն այն է, որ 1895-1896 թթ. Բաղեշի գավառի բոլոր հայաբնակ գյուղերը ենթարկվեցին ջարդի ու թալանի, մեծ թվով հայերի հարկադրեցին մահմեդական դառնալ:

Դրա հետ միասին հարկ է նկատի ունենալ, որ այդ ջարդերի ժամանակ Տարոնը և Սասունը քիչ տուժեցին, որովհետև Սասունի 1894թ. կոտորածն այս շրջանին էր գամել ոչ միայն պոլսահայության, այլև Եվրոպայի հասարակական որոշակի շրջանների ուշադրությունը:

## 8. ԿՈՏՈՐԱԾԸ ԽԱՐԲԵՐԴՈՒՄ

Իշխանությունները Դերսիմի քրդերին ոչ միայն հետևողականորեն լարում էին հայերի դեմ, այլև հեղափոխականներ բռնելու պատրվակով ձերբակալում էին մեծ թվով մարդկանց, որոնց քիչ անց, 50-ական ոսկի կաշառք ստանալուց հետո, բաց էին թողնում:

Թե՛ Խարբերդի և թե՛ Բալուի ու Զարսանջակի կողմերում հայ գյուղերը մոխրակույտի վերածվեցին: Բնակչության մի մասը ջարդվեց, իսկ շատերն էլ իսլամացան: Խարբերդի վիլայեթում կոտորածը սկսվեց Զարսանջակի Բերդակ գյուղի վրա հարձակումով, որը տեղի ունեցավ հոկտեմբերի 10-ին: Բերդակը, սակայն, անձնատուր չեղավ և մի քանի անգամ հետ շպրտեց քրդերի գրոհները: Տեսնելով, որ գյուղացիները մահուկենաց կռվի են ելել՝ կառավարիչը խորամանկեց: Խոստացավ հայերին պաշտպանել, եթե նրանք ոստիկաններին թույլ տան մտնելու գյուղ: Հայերը համաձայնեցին, որին հետևեց քրդերի ներխուժումը: Սկսվեց կոտորած ու թալան, հրդեհեցին տները, կոտորածից փրկվածները մահմեդականացվեցին[190]:

Երեկոյան հարձակման ենթարկվեցին Բերդակի մոտակայքի երկու գյուղեր, կոտորվեցին Հարսիկ, Ճորկուխ, Կորե, Բեղլուշեն, Կուլկուխ գյուղերի հայերը: Հրդեհվեցին ու ավերվեցին Ջեփանոս, Կրոմիլա, Աղրիթ, Թոփալի, Գելի Բալթա, Անի Ֆալթոց, Կոգոնա, Բարեան, Սովուղ, Նորաճանա, Զիզագաս, Կռորի, Վերեանա, Արղալիա գյուղերը: Զարսանջակում այդ օրը սպանվեց չուրջ 3000 մարդ: Եկեղեցին, որում ապաստանել էին տասնյակ հայեր, հրդեհվեց:

Զարսանջակցիները 1895թ. նոյեմբերի 28-ին Սամսոնում ռուսական հյուպատոսին գրում են. «Հայը զրկված է ինքնապաշտպանության որևէ միջոցից և բառի բուն իմաստով նման է կապված ու սպանդանոց ուղարկվող ոչխարի», և թուրք կառավարությունն ու բնակչությունը «վայրկենական քմահաճույքի դրդմամբ պատրաստ են մորթել այդ ոչխարին՝ չվախենալով որևէ պատժից կամ խոչընդոտից... Թուրք խաժամուժը, խրախուսված կառավարության կողմից, սպասում է աննշան առիթի, որ մի քանի օրից տեղացի հայերին բախտակից դարձնի մյուս քաղաքների հայերին, որոնք ենթարկվեցին ա-նողորմ կոտորածի»[191]:

Խարբերդ քաղաքում կոտորածը սկսվեց ծայրամասերում ու թուրքական թաղերում: Հաջորդ օրը քաղաքի որոշ մասեր գնդակոծվեցին, հայկական թաղը թալանվեց: Վերին թաղի շինությունները հրո ճարակ դարձան, կոտորվեցին Մինամուդ և Ասորական թա-

[190] АВПР, Посольство в Константинополе, д. 3184.
[191] Նույն տեղում:

ղերի հայերը[192]: Բացի Մեզրեից, քաղաքի մյուս դպրոցների աշակերտները կոտորվեցին: Ավերվեցին եկեղեցիները: Ընդ որում, Խարբերդում ևս ոստիկանությունը զբաղվում էր հայերին խաբելով, նրանց պաշտպանելու խոստումներով մտավ հայոց թաղերն ու ճանապարհ բացեց խուժանի առաջ[193]:

Դիմենք օտար հեղինակների և ականատեսների վկայություններին: "Daily News"-ը Խարբերդի ջարդերին նվիրված հոդվածում հաստատում է, որ դրանք կատարվել են սուլթանական կառավարության հանձնարարությամբ: Քրդերը մեկ շաբաթում լրիվ թալանեցին վեց գյուղ և ապա չարժվեցին քաղաքի վրա: Երբ հայերը թուրք ազդեցիկ պաշտոնատարից պաշտպանություն խնդրեցին, նա պատասխանեց. «Ինչո՞ւ պիտի գյավուրներին պաշտպանեմ: Թող կոտորեն»: Սադրիչները ամբոխին կոչ էին անում. «Անխնա մուսուլմաններ, դուք զզվելի թուլլ գտնվեցիք: Ուրիշ տեղերում քրիստոնյաներին սպանել են ու տիրացել նրանց գույքին: Դուք ինչո՞ւ նույնը չեք անում»[194]: "Reuter" գործակալությունը նոյեմբերի 6-ին հաղորդեց, որ Մամուրեթ ուլ Ազիզը վերածվել է բոլոր տեսակի բռնությունների հրապարակի: «Սպանվել է 700 մարդ: Ամերիկյան հոգևոր միսիայի նստավայրը մոխրակույտ է դարձել... Խարբերդի դեպքերի կապակցությամբ սպասվում է ամերիկյան ռազմանավերի մուտքը Թուրքական ջրերը»[195]:

Խարբերդի կազայի 55 գյուղերից ոչ մեկը կոտորածից զերծ չմնաց: Իշխանությունները զենք էին բաժանել հանցագործ տարրերին, որոնք ջարդում էին հայերին: Կոկուլու գյուղի վրա հարձակումը ղեկավարող զինվորականի հրամանով նավթ բերեցին և հրդեհեցին Կոկուլու, Գոմք և Դադեմ գյուղերը: Ողջ-ողջ այրեցին Կոկուլուի և Դադեմի քահանաներին, Բարձրահայացի վանահոր մարմինը կտոր-կտոր արեցին: Կեսարիկի վրա հարձակումն իրականացվեց զորքի մասնակցությամբ: Խուժանին չհաջողվեց գրավել Հուսեյնիկ գյուղը: Եկավ զորքը, տիրացավ Բերդին, մահմեդականների առջև դարբասները բացեց հայերին կոտորելու համար: Սպանվեց 300 մարդ: Խարբերդի և Բալուի շրջաններում ոչնչացվեց 93 գյուղ, սպանվածները օրեր չարունակ չէին թաղվում և թողնվել էին գազաններին ու անգղներին:

Գատմում է Մ. Նեդիմը.

...«Այն ժամանակ Խարբերդի կուսակալն էր... Էնիս փաշան: Այդ մարդը վերին աստիճանի տգեղ ու ապուշ էր: Նրա ամբողջ արժեքը Զեքի փաշայի (Թոփհանեի հրամանատար) աները լինելն էր: Հոգով, սրտով փարում էր գող պաշտոնյաներին ու նրանցից բաժին էր ստանում: Կոտորածները գեղեցիկ առիթ համարելով՝ մյուս պաշտոնատարները նույնպես ծանրանալով ծանրացան հայերի վրա: Մանավանդ ոստիկանների անզգամությունները ու կեղեքումները դարձել էին աներևակայելի: Գյուղ մտնելուն պես մտրակում էին առաջին իսկ հանդիպած հային»: Նրանք գյուղով անցնում էին ծեծվածների հեծեծանքների ուղեկցությամբ: Հավաքում էին գյուղի երևելիներին ու տասանորդը պահանջում դրամով, որևէ առարկության պատասխանը լինում էր գազանաբնույթ գանակոծումը: Գյուղացին վաճառում էր ամեն ինչ հարկը վճարելու համար, որի դիմաց նրան տալիս էին մեջիդիե թուղրայի (ստորագրված թղթի կտոր): Հայ գյուղացու համբերատարությունը մեծացնում էր ոստիկանների ու քրդերի ախորժակը: «Ես եպարքոս Զևադ փաշային տեղյակ պահեցի վալի Էնիս փաշայի խայտառակությունների մասին»: Վալին պաշտոնանկ արվեց: Մի առավոտ քաղաքում լուր տարածեցին, թե Դիարբեքիրում, երբ «մահմեդականները մզկիթի բակի չատրվանի տակ լոգանք ընդունելիս են եղել, հայերը հարձակվել են նրանց վրա ու սպանել 7-8 հոգու: Հաջորդ օրը լուր ստացվեց, որ Դիարբեքիրի վիլայեթում քրդերը հարձակվել են հայկական գյուղերի, իսկ

---

[192] Նույն տեղում:
[193] Les massacres..., p. 124.
[194] ԳԱԲ, ֆ. Առաքելյան Հ., գ.27, թ. 4-5:
[195] АВПР, Посольство в Константинополе, д. 3184.

*թուրքերը՝ քաղաքի հայերի տների վրա՝ սպանություններ, հրդեհ, թալան: Երեքշաբթի լուր եկավ, թե Մալաթիայում հայ սափրիչը կտրել է սափրվելու եկած քրդի գլուխը, և կատաղած խուժանը հարձակվել է հայերի վրա՝ թալանել է նրանց տներն ու ապա հրդեհել, սպանություններ, կողոպուտներ գործել:*

*Մի գիշեր կառավարչի աշխատասենյակում եմ: Հանկարծ դրսից աղմուկ լսվեց, իբր բռնել են հայկական կոմիտեի նախագահին՝ Ցազըճյան Գրիգոր էֆենդուն, որը մեծ հարստություն ուներ և քաղաքականությամբ բացարձակապես չէր զբաղվում: Հասկացա, որ իշխանություններին ոչ թե հայերի վարկն է հետաքրքրում, այլ քսակն ու սպրանքի հնարավորությունը»*[196]*:*

*Մի նամակում կարդում ենք.*

*...«Խարբերդում ու նրա շրջակայքում տեղի ունեցած սարսափելի իրադարձությունները հետևանք են վերևից եկած հրամանի, որն իրականացվում է մաքիավելական եղանակներով վալու ժամանակավոր պաշտոնակատար Մուստաֆա փաշայի և պարետ Ռահիբ փաշայի կողմից: Վերջինս օգոստոսին խաղաղություն հաստատեց քրդական բեյերի և շրջակա ցեղերի ու գյուղերի աղաների միջև՝ հուսալով նրանցից օգնություն ստանալ ծրագրված կոտորածի ժամանակ... Քուրդ ցեղապետերն ու մեծամեծները, որոնք տարբեր պատճառներով գտնվում էին բանտերում, ազատ արձակվեցին և ցուցումներ ստացան կոտորածի իրականացման վերաբերյալ»:*

*Մի քանի օր անց մարտինի հրացաններ բաժանվեցին քրդերին: Զենքը վերցնում էին զինվորական պահեստներից: Խարբերդի և Արաբկիրի կայազորները փոխարինվեցին մեկը մյուսով, որպեսզի կոտորածի մասնակիցներն անճանաչ մնան... Մոբիլիզացվել էին պահեստայինները, որոնց հագցնելով զեղծուկի չորեր՝ ուղարկեցին գյուղերն ալան-թալանի:*

*...Այն ժամանակ, երբ Բերդակում և շրջակայքում կատարվում էր ավազակային հարձակում, հորդանները շարժվում էին դեպի Ույուլ-օվա, Զիչմեից մինչև Ույուլ-օվա ճանապարհին՝ կատարելով ոչ պակաս գազանային ոճրագործություններ: Զիչմեում խնայվել էր 40 անվանի հայի կյանք, որոնց թույլ էին տվել ապաստանելու եկեղեցում: Սակայն մի շաբաթ անց շեյխերից մեկը, դատապարտելով նրանց հանդեպ դրսևորված չափավորությունը, առաջարկեց մահմեդականություն ընդունել: Հայերը հրաժարվեցին: Շեյխը հրամայեց նրանց սպանել եկեղեցու շեմին և ապա կարգադրեց դիակները պարաններով քարշ տալ դեպի գետը: «Շուն գյավուրներին ձեռք տալ չեմ ուզում, չպղծվեմ»:*

*Բուղսուում հայերը թաքնվել էին եկեղեցում. չարդարարներն այն հրդեհեցին, և բոլորը զոհվեցին: Ով փորձեց փախչել, ընկավ դաշույնի հարվածներից*[197]*: Ավազակապետ Հաջի Բեգոն հրամայել էր քառատել մի կնոջ և ի տես ամենքի, մարմնի մասերը կախել այուններից: Նա սեփական ձեռքերով սպանել էր ավելի քան 100 հայ: Մի թուրք հացավաճառ հայտարարեց, թե սպանել է 97 հայ և դեռ 3 հոգու էլ սպանելու է՝ թիվը կլորացնելու համար*[198]*:*

*Նորից դիմենք Մ. Նեդիմին. «Հաջորդ օրը պատուհանից տեսա, որ այրվում է Մորնիքը: Թուրք ու քուրդ խուժանը շրջափակել էր բոցերով ողողված գյուղը: Դիմեցի կառավարչի փոխանորդին: Վերջինս, ձեռքին փոքրիկ մատիտ ու թղթի կտոր, ավարտում էր մի բանաստեղծություն, որը սկսել էր գրել շաբաթներ առաջ զուգարանում: Զգալով, որ խոսքերս նրա վրա չեն ազդում՝ մի քանի հայերի հետ գնացի հրամանատար փաշայի մոտ և առաջարկեցի զորք հանել բնակչությանը պաշտպանելու համար: Նա հրաժարվեց: Հայերին ասացի. «Ակնհայտ է, որ ստոր քայլերին դիմողը կառավարությունն է:*

---

[196] **Նեդիմ Մ.**, նշվ. աշխ., էջ 43-50:

[197] *АВПР, Посольство в Константинополе*, д. 3184.

[198] *Les massacres...*, p. 125-129.

*Ամեն ոք պետք է իր գլխի ճարը տեսնի»»[199]: «Իմ ապրած տանը,– չարունակում է Մ. Նեդիմը,– ապաստան տվեցի 700-800 հոգու: Կոտորածներից մազապուրծ գյուղացիները լցվեցին քաղաք: Բոլորի դեմքերն ու մարմնի զանազան մասերն արյունլվա էին՝ հետևանք դանակի հարվածների»[200]:*

*Խարբերդի կազայի Փինիակ գյուղում սպանվեց երկու հոգևորական, իսկ Տանձիկի բնակչությանը մահմեդականացրին: Լիկ գյուղի հայերին առաջարկեցին՝ մահ կամ իսլամ: «Քաղաքում,– նկատում է Մ. Նեդիմը,– ոչ մի ոստիկան չէր երևում, գնացել էին գյուղերը թալանելու: Փողոցներում, բացի փախստական վիրավորներից, ոչ ոք չկար»[201]: Խարբերդը սգի ու ամայության մեջ էր: Երբ մթնեց, տեսանելի դարձավ, որ հին Խարբերդը բոցերի մեջ էր: «Մահմեդականների տներում ապաստանած հայերն իրենց զգում էին ինչպես մսավաճառի սպանդանոցում փակված հոտ»[202]:*

*Կ. Պոլիս ուղարկելու համար կուսակալը հեռագիր էր պատրաստել. «Շնորհիվ կայսրական կառավարության անդորրությունը կատարյալ է, ամեն ոք զբաղված է իր գործով»[203], մինչդեռ կառավարչատան տանիքից պարզ երևում էին «մոմի պես այրվող գյուղերը, լսվում էին սպանվող կանանց ու երեխաների օգնության ողբալի կանչերը... 70-80 հազար հոգի, ամենուրեք սփռված, ջրի նման արյուն էին հոսեցնում, չուրջբոլորը հրդեհ էր»[204]:*

*Հեռագրեցի եպարքոսին. «Դերսիմի, Քաղդեկի քրդերը Բերդակ գետի գլխին ի մի են եկել և զգալով, որ լուրջ ուժ են, սկսել են մրմնջալ. «Ինչո՞ւ թուլլ տանք, որ այստեղ կազմավորվի Հայաստան և, այսքան ուժ ունենալով, ինչո՞ւ ապրենք օսմանյան լծի տակ... անպայման քուրդ կառավարություն պիտի ստեղծենք»: Սա պալատին վախեցրեց: Ստացվեց հեռագիր կառավարչի անունով՝ զորքերի միջոցով անպայման ցրել քրդերին: Սակայն զորքը քրդերի վրա կրակելու պատրվակով ռումբի ու գնդակի թիրախ դարձրեց փրկվելու հույսով դեսուդեն փախչող հայերին: Այն քրդերը, որոնք արդարանում էին, թե կառավարության հրամանով էին հայերին կոտորում, հարկադրված եղան ցրվել»[205]:*

*1895թ. դեկտեմբերի 13-ին Ակնի առաջնորդարանին գրում են գյուղերում կատարված խժդժությունների մասին: «Շատերն իրենց սիրելիներին են կորցրել, շատերի տներն այրված են ու թալանված: ...Նրանք, ովքեր սրից փրկվել են, եթե օգնություն չստանան, քաղցից մեռնելու են»: Սպանություններ տեղի են ունեցել բոլոր գյուղերում: Գերջանիսում սպանվել է 17, Մեծ Արմտանում՝ 25 հոգի, գյուղերի գրեթե բոլոր տներն ու խանութները թալանված են, շատերը՝ քանդված: Պղծված է Հասան-օվայի եկեղեցին, Կասմաճ գյուղի եկեղեցին վերածվել է մզկիթի, գյուղացիներին էլ մահմեդականացրել են, իսկ ով հրաժարվել է, սրի են քաշել: Նույն բանը կատարվել է Ջիմառու, Լիճք և տասնյակ այլ գյուղերում: Բինկեյան գյուղի վրա հարձակվեցին քրդերն ու թուրքերը: Անզեն հայերը ամեն ինչ թողեցին ու փախան լեռները: Նրանց տները թալանեցին, պղծեցին եկեղեցին, ապա գյուղը հրդեհեցին:*

*Ակնում կոտորածը տևեց երեք օր: Շատերն ահաբեկված համաձայնեցին իսլամանալ[206]: Սակայն ոչ միայն օրեր, այլև ամիսներ չարունակ հարձակումներ էին կատարվում հայերի ու նրանց ունեցվածքի վրա[207]: Քաղաքի Վերին թաղն ու Սբ. Աստվածածնի եկեղեցին հիմնահատակ ավերվեցին:*

---

[199] Նեդիմ Մ., նշվ. աշխ., էջ 51-52:
[200] Նույն տեղում, էջ 52:
[201] Նույն տեղում:
[202] Նույն տեղում, էջ 53:
[203] Նույն տեղում, էջ 43-50:
[204] Նեդիմ Մ., նշվ. աշխ., էջ 43-50:
[205] Նույն տեղում, էջ 54:
[206] ԳԱԹ, ֆ. Ազատյան Թ., ք. XII, գ.785:
[207] Նույն տեղում, գ. 786:

Կ. Պոլսում Բրիտանիայի դեսպանությունը 1896թ. նոյեմբերին Ռուսաստանի դեսպանին գրեց, որ Ակնի կոտորածները սկսվել էին հետևյալ կերպ. «Հայ տղամարդկանց մեծ մասը թաքնված է եղել զինվորական բարաքների թաղամասում»: Նրանց այդտեղից հեռացրել են: Կառավարչի մոտ գնալիս այդ հայերը հարձակման են ենթարկվել զորքերի կողմից: «Սպանվել է 1.5 հազար մարդ, որից 200-ը՝ կին ու երեխա: Հայերը բոլորովին անմեղ էին, ոչ մի հեղափոխական չարժում չի եղել: Հայերը ոչ մի գնդակ չեն արձակել... Հետաքննության համար առաջարկվում է ստեղծել եվրոպական հանձնաժողով»[208]: Ամերիկյան միսիոներ Բարնեմը 1896թ. սեպտեմբերին գրում է. «...Սպանվածների թիվը հաշվվում է 2000 հոգի... դաժան ճակատագրի զոհ գնացած կանանց ու երեխաների թիվը մեծ է»: «Սպանվածների դիակները մի քանի օր մնացել են փողոցում՝ դարձել շների կեր: Մեծ թվով դիակներ նետվել են Եփրատ: Այդ դիակները տեսել են ջրի երեսին Ակնից 45-50 մղոն ներքև... Երկյուղ կա, որ 2000 թիվը նվազեցված է»: Այսինքն՝ ոչնչացել է քրիստոնյա բնակչության 30-35%-ը: 1100 տնից անվնաս է մնացել 150-ը (Գ. Սրվանձտյանի տվյալներով՝ ոչնչացվել էր 3000 հայ):

Բոլոր վկաների ցուցմունքները հաստատում են, որ կոտորածը կազմակերպված է եղել պաշտոնական շրջանների կողմից և սկսվել է առանց որևէ առիթի: Խռովարար տարրերը սոսկ որոշ պաշտոնատարների երևակայության մեջ են գոյություն ունեցել... Այս տեղի վալին ու զինհրամանատարները կոտորածի օրերին... ժամանակի մեծ մասն անցկացրել են հեռագրատանը՝ կապի մեջ են եղել Կ. Պոլսի հետ... զոհերը որևէ դիմադրություն ցույց չեն տվել, և չի սպանվել ոչ մի թուրք, բացի նրանցից, ովքեր սպանվել են թալանն իրար մեջ բաժանելիս: Այս տեղերում քրդեր չեն եղել: Կոտորածը տարածվել է Ակնի շրջակայքի չատ գյուղերում...»[209]: Շարունակում էր խզված մնալ կապը հայկական գյուղերի միջև, որտեղ սպանվածները կազմում էին բնակչության նշանակալից տոկոսը: Օրինակ, Մորաշխա գյուղում սպանվել էր 47, Կամարակապիտ գյուղում 30 մարդ[210]: Գյուղերից, մանավանդ ծայրամասային գյուղերից, փախած հայերը զարհուրելի բաներ էին պատմում կոտորածների մասին:

Գրում են Տրապիզոնից. «Ակնը երեք օրում դարձավ հայի գերեզմանոց: Պաշտոնեության հանձնարարությամբ մսագործ Մանուկի թուրք ընկերը նրան ասում է. «Շտապ անցիր մերձակա լեռները, քանի որ քրդերը հանկարծակի հարձակվելու են քաղաքի վրա»: Մանուկը հավատում է և մեծ բազմությամբ չարժվում է լեռն ի վեր: Տեղական իշխանությունները Պոլիս հեռագրում են. «Մերձակա բարձրություններից 300 զինված հայեր պատրաստվում են հարձակվել իսլամի վրա և խնդրում են Ելդըզի հրամանը անցնելու հարձակման»: Հրամանը չի ուշանում և զինվորների առաջնորդությամբ խուժանը հրաձակման է անցնում (800 հոգով) վերին թաղի վրա, ոմբակոծում են, նավթ լցնում ու հրդեհում ամբողջ թաղը: Հերթարձակ կանայք, երեխաները գրկներին, բոցերը պատռելով փորձում են դուրս պրծնել, սակայն հանդիպում են սրի ու կացնի հարվածներին: Հաջորդ օրը իշխանությունները գլխագին առաջարկեցին նրան, ով կենդանի մնացած հայ երևելի անձնավորություն բերի: Եվ խուժանը ոստիկանների օգնությամբ սկսեց թաքստոցներից հանել հայերին ու խողխողել: Քաղաքում մնաց շուրջ 150 ծեր, իսկ 12 հոգևորականներից՝ միայն մի խելագար քահանա»:

Մ. Նեդիմի կարծիքով միայն Խարբերդի կուսակալությունում կոտորվածների թիվը հասնում էր 50 հազարի: Ամենաքիչը տուժեց վիլայեթի կենտրոնը: Քաղաքի վրա հարձակումը տևեց երկու օր, բայց անհաջող, և քրդերը հուսահատված հեռացան:

Հայն անօթևան էր, իսկ ձմեռը վրա էր հասնում: «Այդ ժամանակ մեջտեղ եկավ երկրորդ ողբերգությունը: Երեխաները, որ կորցրել էին իրենց հորն ու մորը, հայրեր ու մայ-

---

[208] *АВПР, Посольство в Константинополе*, д. 3183.
[209] Նույն տեղում:
[210] ԳԱԲ, ֆ. Ազատյան Թ., բ. XII, գ.788:

*րեր, որոնք լուր չունեին իրենց սրտահատորներից, իրար կորցրած քույրեր ու եղբայրներ՝ հույս ունեին, թե նրանք ինչ-որ տեղ թաքնված են: Սակայն գյուղ վերադառնալուց հետո ոչ ոքի չէին գտնում: Տներում կահույք ու սնունդ չէր մնացել: Ջմռանն անտուն, քաղցած, առանց անկողնի: Այս կացության հետևանքով հազարավոր դժբախտներ... գետին փռվեցին բոլորովին անպատսպար: Պառկեցին հրկիզված տների փլվող պատերի տակ, խոնավ հողին: 4-5 ժամ հեռավորությունից այս թափառական թշվառները վերադառնում էին կուսակալության կենտրոն՝ ստիպված լինելով դռնեդուռ ճեռք մեկնել և... հաց մուրալ... Ողջ մնացած ոչ մի հայի դեմքին արյան հետք չկար: Անասելի վատություններ էին տեսել այն թուրքերից, որոնց մինչ այդ օգնել էին: ...Մահմեդականների և ոստիկանների գրպանները դրամով, իսկ տները գույքով և կահկարասիներով էին լցվել... Մի անգամ տեսա մոտակա գյուղերից չուկա եկած 70 տարեկան մի քուրդ իմամի՝ զարդարված ժանյակավոր բաճկոնով, կանաչ փաթթոցով, սրունքի ցածի մասում նկատվում էր կանացի վարտիքի ֆիսթոնը»*[211]:

*Խարբերդի մերձակայքում գտնվող ԻԹՀայում հայերը թաքնվել էին եկեղեցում: Նրանցից ով հրաժարվում էր մահմեդականություն ընդունել, սպանվում էր: Եկեղեցին վերածեցին մզկիթի, իսկ բողոքականների եկեղեցին՝ ախոռի: Խարբերդի կազայի հինգ խոշոր վանքեր թալանվեցին ու ավերվեցին: Քաղաքի հիվանդանոցները լեփ-լեցուն էին: Ադանայից Խարբերդ փախչող 200 հայերի քարավանը հարձակման ենթարկվեց և 193 հոգի սպանվեց:*

*«...Հյուպատոսների բոլոր հաղորդագրությունները հաստատում են, որ ամբողջ վիլայեթը քայքայված է... Զինվորներն ու սպաները մասնակցում էին ոչ միայն սպանություններին, այլև թալանին»*[212]:

*Նահանգում ավերվեց մոտ 10600 տուն և 915 կրպակ, սպանվեց 11600 քրիստոնյա և 319 մահմեդական, մահմեդականացվեց 12600 մարդ: Թշվառության մատնվեց 41500 մարդ:*

*Դերսիմի քրդերը նոյեմբերի 8-ին հարձակվում են կամարակապ գյուղի վրա: 300 տուն ավերվում է, թաղերից մեկը լրիվ հրկիզվում, բնակչության մի մասը սպանվում, իսկ մյուսները մահմեդականանում: Հեղինը փրկվում է 1500 թուրքական ֆունը փրկագին վճարելով: Պիղլանում թալանվում է 250, Լիճում՝ 220, Թեղուտում՝ 160 տուն*[213]: *"The Golignyni Messages"-ը գրում է, որ Մամուրեթ-ուլ-Ազիզի կազան լցված էր փախստականներով, որոնք եկել էին քրդերի կողմից ավերված Դիյքե, Ուլու, Գալե և Օձիզիլ գյուղերից: Ավերված էր նաև Սբ. Նշան վանքը: Ալի Բեյ օղլու Շևքեթը բռնաբարում էր հայ տղաներին, հափշտակում աղջիկներին, բանտարկում հայերին ու փրկագին պահանջում:*

*Արաբկիրում իշխանությունները որոշել էին, որ ամեն թուրք կոտորածը պետք է սկսի՝ սպանելով իր մտերիմ հային: Ութ օր շարունակ կառավարչատունը զբաղված էր կոտորածի նախապատրաստությամբ: Զորքերի ղեկավարությունը հանձնվեց հայատյաց սպաներին, խաբեությամբ հավաքեցին հայերի զենքերը, քաղաքը շրջափակվեց, փողոցներում պարեկներ նշանակվեցին*[214]: *Հոկտեմբերի 25-ի օրվա երկրորդ կեսին հնչեցին փողերը: 20 հազար զորք ու խուժան թափվեցին քաղաք: Հայերը կոտորվեցին առանց դիմադրություն ցույց տալու, բացառությամբ հայկական թաղերի, որտեղ հաջողվեց երեք օր կասեցնել ջարդարարների հարձակումները: Քաղաքի փողոցներում «այլանդակված դիակները բլուրներ են կազմում, տեղ-տեղ մարդկային կարմիր արյունն առատ առու կազմած գետինն է ներկում... Քաղաքը բոցերի օվկիանոս է դարձել... Ավերմունք, թա-*

---

[211] **Նեդիմ Մ.**, նշվ. աշխ., էջ 58-62:
[212] *АВПР, Посольство в Константинополе*, д. 3184.
[213] **ԳԱԹ, ֆ. Աուգերյան Հ.**, գ. 30, թ. 1:
[214] **«Հնչակ»**, 1896, թիվ 20:

*լան, քանդում... փողոցներում անտեր ու մոլորված երեխաներ: Մի տեղ փոքրիկը սողում է մոր արյունլվա դիակի վրա, մի տեղ հայրն իր զավակների աչքի առաջ կացնահար է լինում... Թուրքերի ձեռքը չընկնելու համար շատ կանայք ինքնասպանություն են գործում»*[215]:

*Կոտորածն ու հրդեհը տևեցին 15 օր: Դիակները թաղում էին (հայ) բանտարկյալների միջոցով: Գործն ավարտելուց հետո նրանց նույնպես սպանում էին*[216]:

*«Հայերի ջարդերը» գրքում կարդում ենք. «Տեղական աչխարհիկ, հոգևոր, զինվորական իշխանությունները մի շարք տեղերում բացեիբաց ղեկավարում էին ջարդերը կամ դրանց ուղղակի մասնակցում... Զորքերին և ամբոխին կոտորածի էին կանչում ինչպես պատերազմում՝ փողի ազդանշանով»: Միայն քաղաքում հայերի կոտորածներին մասնակցեց 1600 զինվոր, իշխանությունները ջարդարարներին մարտինի հրացաններ էին բաժանել*[217]:

*Համաձայն վկայությունների, Արաբկիրում կոտորածի պատրվակ է հանդիսացել այն, որ «չատ բարձր» պաչտոն զբաղեցրած մի թուրք հայերին առաջարկել էր կրոնափոխ լինել ու մերժողական պատասխան էր ստացել*[218]: *Իշխանությունները մահմեդական բնակչությանը դիմեցին կոչով. «Մահմեդականները պետք է կատարեն իրենց պարտքը՝ սպանեն բոլոր հայերին, կողոպտեն ու հրդեհեն նրանց տները: Ոչ մեկին չխնայել՝ սուլթանի հրամանն է: Ով չենթարկվի հրամանին, պետք է սպանվի որպես հայ»*[219]:

*Գրում է Մ. Նեդիմը. «Արաբկիրում քրդերը չրջապատել են ամբողջ քաղաքը, չարդել քաղաքից դուրս տեղադրված նավթի տարողություննները և նավթը տարել-ցիխել Արաբկիրի հայկական թաղերում ու կրակի տվել: Թաղում գտնվողներն այրվել են, իսկ փախչողները՝ գնդակահարվել: Կոտորվել էր ավելի քան 4000 հայ»*[220]:

*Նոյեմբերի 1-5-ին քաղաքում սպանվեց 2800 քրիստոնյա: Թալանն ու հրդեհները չարունակվեցին 10 օր: Թալանվեց 2400 տուն: Համբարձ գյուղի բոլոր բնակիչները, բացի երեքից, մորթվեցին, տները լրիվ թալանվեցին: Շենիկ գյուղից միայն վեց հոգի փրկվեց: Հարթավայրի գյուղերն ավերվեցին: Զսպանված հայերը բանտ նետվեցին: 1896թ. նոյեմբերի 22-ին Արաբկիրից «Մշակ»-ին գրում են, որ քաղաքի հայերի կոտորածն իրականացրել են քրդերը, Թուրք խուժանն ու սուլթանի կանոնավոր բանակը: Ամբողջ քաղաքն ավարի ու կրակի մատնվեց: Կենդանի մնացած 300 ընտանիք պատսպարվել էր վրանների տակ: Մնունդ չկար, իշխանության տված նպաստից ժողովուրդը վարակվեց և 200 հոգի մեռավ*[221]: *Մեկ ուրիշ աղբյուրի վկայությամբ՝ ավերվել էր 1100 տուն ու կրպակ, սպանվել 3200 քրիստոնյա և 45 մահմեդական, կրոնափոխվել 5200 հոգի, 34 հազար մարդ մատնվել թշվառության: Քաղաքում կանգուն էր մնացել 150 կիսավեր ու թալանված տուն*[222]:

*Ականատեսներից մեկը Արաբկիրի ջարդերը ներկայացնում է հետևյալ կերպ. «Սկսեցին սպանել ու հրդեհել: Սարսափահար հայերը տներից փախչում էին սարեր ու դաշտեր: Սակայն նրանց մեծ մասն ընկնում էր թուրքերի ձեռքն ու մեռնում ահավոր մահով: Ոմանց կրակն էին նետում, ոմանց գլխիվայր կախում ինչպես ոչխարների և կաչին քերթում, մյուսներին մորթում ու փրթում էին կացնով ու մանգաղով, ուրիշների վրա նավթ էին լցնում ու այրում, ապա նրանց վրա նետում այլ զոհերի, որոնք խեղդվում էին ծխից: Շատերին ողջ-ողջ թաղում էին, ուրիշներին գլխատում ու գլուխները ձողին*

---

[215] *Նույն տեղում*, 1897, թիվ 1:
[216] *Նույն տեղում*, թիվ 2:
[217] *Les massacres...*, p. 142-144.
[218] *Նույն տեղում*, թիվ 165:
[219] **Նանսեն Ֆ.**, *Հայաստան և Մերձավոր Արևելք*, էջ 247:
[220] **Նեդիմ Մ.**, *նշվ. աշխ.*, էջ 57:
[221] **ԳԱԹ**, ֆ. **Աուաքեյան Հ.**, գ. 166, թ. 1:
[222] *Братская помощь...*, стр. 42.

տնկում: 50-ական հայերի պարանով կապում էին իրար, գնդակահարում և դիակները... փրթում»[223]:

Քրդերը սեփական ազգային պետություն այդպես էլ չստեղծեցին, այդ ուղղությամբ անգամ լուրջ քայլեր չկատարեցին, մինչդեռ ծանրակշիռ ներդրում ունեցան Հայաստանը հայաթափելու գործում: Պետական զանգվածային ահաբեկչության պայմաններում արյունախում խրախճանքի մեջ էր մահմեդական մոլեռանդությունը: Արաբկիր քաղաքում սպանվեցին տասնյակ հայ հոգևորականներ: Գյուղերում վիճակն ավելի զազրելի էր՝ ամենաայլանդակ եղանակներով հոշոտում էին քահանաներին, հափշտակում եկեղեցիների ունեցվածքը, պղծում սրբությունները: Ի դեպ, Արաբկիրի գյուղերում ոչ միայն շատ քիչ հոգևորական, այլև բնակչություն փրկվեց: Հայ գյուղացիներին հաշվեհարդարի ենթարկելով՝ քուրդ ավազակ Մուհամմեդը իր 2000 հոգանոց զինյալ խմբով հարձակում գործեց Արաբկիր քաղաքի վրա: Նրան միացան մեծ թվով վրանաբնակ քրդեր: Սակայն հայերը կարողացան քրդերի գրոհները հետ մղել: Կռվի մեջ մտավ զորքը՝ 800 զինվոր: Որոշ ժամանակ անց իշխանությունները հայտարարեցին, թե սկսում են խառնակչությունների հետաքննությունը, կազմվել է 500 հանցագործի ցուցակ, որոնց մեծ մասը հայեր էին, ովքեր իբր «կոտորածի տեղիք էին տվել»:

Մալաթիայում նույնպես նախապես մահմեդական բնակչությանը զենք բաժանվեց: Զգալով կոտորածի վտանգը՝ հայերը փակում են խանութները: Կառավարիչ Ալի Ռզային հաջողվում է անվտանգություն երաշխավորող խոստումներով հայերին աշխատանքի հանել: Նա կառավարչատանը հավաքում է քաղաքի երևելի հայերին ու առաջարկում կրոնափոխվել: Հայերը մերժում են: Բոլորը ոչնչացվում են: Կոտորածի ահազանգ է դառնում թուրք զինվորի կողմից մի հայի սպանությունը: Հայերը համառ դիմադրություն են ցույց տալիս չուկայի մերձակայքում գտնվող հայկական թաղերում, նրանք մի քանի անգամ հետ են մղում խուժանի, զորքի ու ոստիկանության հարձակումները: Սակայն, ի վերջո, թուրքերին հաջողվում է հայերի դիմադրությունը հաղթահարել: Կոտորածը տևեց վեց օր՝ նոյեմբերի 4-9-ը: Հայերի մի մասն ապաստանել էր զորանոցում և հիմնականում փրկվեց: Քաղաքին հասցված վնասը կազմեց 120 հազար ֆրանկ: Այստեղ ևս մութեսարիֆը պաշտոնապես թուլլատրել էր 24 ժամ կոտորել ու թալանել:

Լեփսիուսի տվյալներով՝ Մալաթիայում սպանվեց 5000 մարդ, հրկիզվեց 1000 տուն: Սանջակում ավերվեց 176 գյուղ ու քաղաք, թալանվեց ու ավերվեց 7542 տուն, 512 կրպակ, սպանվածների թիվը կազմեց 25845 մարդ: 100 հազար հայ մատնվեց սովի[224]:

Նաև նշենք, որ Մալաթիայում հայերի վրա հարձակումները սկսվել էին դեռ 1889թ. նոյեմբերին և վերսկսվեցին 1890թ. հոկտեմբերին: 1895-ի հոկտեմբերի 20-ին մզկիթներում կոչեր հնչեցին կոտորելու հայերին: Կառավարչի հրամանով բանտից ազատվեցին մեծ թվով քրեական հանցագործներ: Հոկտեմբերի 23-ին սկսվեց հարձակումը, որը շուտով զանգվածային տեսք ստացավ: Հայերի դիմադրության գլխավոր օջախներն էին Մայր եկեղեցու բակը ու Պ. Պոնաբարդյանների թաղը: Ուոլյան եղբայրներին հաջողվեց գիշերը հարձակվել և քուրդ խուժանից հետ խլել հայերից թալանված ունեցվածքը: Թուրքերը մի կողմից հայերի հետ բանակցություններ էին վարում, իսկ մյուս կողմից, շարունակում հարձակումը նրանց դիրքերի վրա: Հնչակյան գործիչների նախաձեռնությամբ ստեղծվում է քաղաքի պաշտպանության շտաբ Գ. Պոզոյանի գլխավորությամբ: Թուրքերի բոլոր ջանքերը՝ հայերին ծունկի բերելու, հաջողություն չեն ունենում և նրանք հաշտություն են առաջարկում: Այնուամենայնիվ, 1895թ. Մալաթիայում ու շրջակա գյուղերում սպանվեց 1500 և բռնի մահմեդականացվեց 989 հայ:

«Մալաթիայում նույնպես,— գրում է Մ. Նեդիմը,— նավթով այրել ու ոչնչացրել են եկեղեցում ապաստանած հազարավոր հայերի»: Զեյթարարի համարում ունեցող կառա-

---

[223] Les massacres..., p. 41-43.

[224] Ալպոյաճյան Ա., նշվ. աշխ., էջ 885-890:

վարիչ Ալին պատճառ դարձավ Մալաթիայում 10 հազար մարդու ոչնչացման: Նա խաբեությամբ իր մոտ է հրավիրում «գավառական ժողովների, դատարանների հայ անդամներին, հայտնի վաճառականներին», իբր նրանց պաշտպանելու համար ու նենգաբար բոլորին սպանել տալիս: Նա իր այդ «քաջագործության» մասին հաճույքով էր պատմում[225]:

Տիվերիկի ու նրա գյուղերի վրա առաջին հարձակման ժամանակ զավթվեց 4500 անասուն, իսկ երկրորդ հարձակումից տուժեցին գրեթե բոլոր գյուղերը, նույնիսկ ջրամանները թալանեցին: 120 հայ սպանվեց: Բուն Տիվերիկում ամեն քայլափոխին դիակ էր ընկած: Վիրավորների աղեկտուր հառաչանքը, հրդեհվող տներից փախչող կանանց ու երեխաների վայնասունը սիրտ էր ծակում... մի կին քաջաբար դիմադրում էր խուժանին, մինչև որ հրացանի մի քանի հարված ստացավ ու տապալվեց: 300 հոգի սպանվեց, 100 տուն հրկիզվեց, 10 ընտանիք կրոնափոխվեց: Ջարդից հետո ամեն օր 3-4 մարդ մեռնում էր սովից: Մի գյուղացի ողբում էր. «Ձմեռ է գալիս, բայց չոր խսիր անգամ չկա, որ վրան նստենք: Քաղցած ենք, երեխաները լաց են լինում, ողբում, հաց ուզում... գնում ենք քրդերից մուրալու»: Բազվանի գյուղացիներն ապաստանեցին եկեղեցում: Զինվորները ներս խուժեցին և 60 հոգու մորթեցին:

Այս չրջանում կոտորածին մասնակցեցին նաև որոշ թվով քրդեր Դերսիմից: Նրանք արդարանում էին, թե՝ «մեր ձեռքին բարձրագույն հրաման կա հայերին կոտորելու և նրանց գյուղերն ու քաղաքներն ավերելու»: Եվ որպեսզի դերսիմցիները թուրքերի տներ վրա չհարձակվեին, դրանց տանիքին սպիտակ դրոշ էին տնկում[226]:

Հոկտեմբերի 31-ին չրջակա գյուղերի թուրքերը, քրդերն ու չերքեզները լցվեցին Կյուրին ու սկսեցին հայերին կոտորել՝ փողոցում, տանը, աչխատատեղում: «Կաթնակեր երեխաներին խլում էին մայրերից, նետում օդ ու հազցնում դեպի վեր պարզած սրերի ծայրերին ու չամփուրի նման պտտում»: Դիակները երկար ժամանակ անթաղ մնացին, ու գարչահոտություն էր տարածվել: 10 հազար խուժան չորս օր չարունակ սպանում ու թալանում էր: Սպանվածների թիվը հասավ 1800-ի: Կյուրինը հրդեհվեց[227]:

## 9. ԿՈՏՈՐԱԾԸ ԴԻԱՐԲԵՔԻՐԻ ՎԻԼԱՅԵԹՈՒՄ

Սպանդից զերծ չմնաց նաև Դիարբեքիրը: 1895թ. հոկտեմբերի սկզբին այնտեղից ստացված մի նամակում կարդում ենք. «Թուրքերը, քրդերը, արաբները, քաջալերվելով կառավարութենեն և տաճիկ զինվորներեն... ամեն տեսակ գազանություն և վայրենություն կգործադրեն հայերիս վրայ, որ հայ տարրը ոչնչացնեն: Ամբողջ քաղաքը... սպանդանոց դարձած է... եթե միջոց չձեռնարկվի, մեր չարդն անխուսափելի է... Բացարձակապես հայտարարում են, թե սուլթանից հրաման է եկել՝ բոլոր դյավուրները պիտի չարդենք»[228]:

Ծրանսիական փոխհյուպատոս Մեյրիեի 1895թ. դեկտեմբերի 18-ի զեկուցագրում կարդում ենք. «Մարդինի մութեսարիֆ Էնիս փաշան... 1894թ. հոկտեմբերին նշանակվում է Դիարբեքիրի վալի: Նա ուներ մոլեռանդի ու քրիստոնյա բնակչության հանդեպ թշնամական վերաբերմունք ունեցողի համարում... Ահա թե ինչու, երբ հոկտեմբերի 4-ին լուր ստացվեց Էնիսի նչանակման մասին, քրիստոնյաները հուսահատվեցին, իրենց զգացին անպաչտպան մի անձի բացարձակ իչխանության տակ, որից հարկ էր միչտ ու ամեն դեպքում երկյուղել: Եվ այդ պահից նրանք կորցրին ամեն մի վստահություն իչխանությունների հանդեպ»[229]:

---

[225] **Նեդիմ Մ.**, նչվ. աչխ., էջ 57:
[226] **Lepsius J.**, նչվ. աչխ., p. 67-72:
[227] «Հնչակ», 1896, թիվ 3:
[228] **Մարկոսյան Ս.**, *Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջին*, էջ 246:
[229] «Դրոշակ», 1895, թիվ 15-16:

Զգուշանալով հայերի անվստահության հետևանքներից՝ Էնիսը նրանց վերնախավին հարկադրեց երախտագիտական հեռագիր-հանրագիր ուղարկել սուլթանին, թե Էնիսի թեկնածությունը հաջող է ընտրված, որ նոր վալու չանքերով քաղաքում արդարություն և անդորր է տիրում:

Երբ հեռագրի լուրը քաղաքում տարածվեց, հայությունն ըմբոստացավ: Եկեղեցիները ու վարժարանները փակվեցին: Հայերը խռնվում էին եկեղեցիների գավիթները, ճառեր էին արտասանում: Կազմվեց տեղական իշխանությունների ապօրինի գործողությունների ցուցակ, նոր հեռագիր ուղարկվեց Ելդըզ Քեոշք, որով հերքվում էին նախորդ հեռագրի հավաստիացումները: Դա ավելի սրեց Էնիսի և հայերի հարաբերությունները: Օսման Նուրին նկատում է, որ Դիարբեքիրում մահմեդականների ու քրիստոնյաների թիվը գրեթե հավասար էր: Նրանք միշտ «ապրել են եղբայրաբար»: Սակայն, սկսած 1880 թվից, «այստեղ ևս կրկնվեցին Սասունի դեպքերը: Տեղի պաշտոնատարները հայերի հանդեպ բարյացակամ չէին... Էնիսի նահանգապետության ժամանակ թշնամությունը գնալով ավելի սրվեց»: Վալին գործում էր հայերի դեմ, պնդում, թե «հայերը մտադիր են հարձակվելու մզկիթների վրա, թե հայերի պահանջած բարենորոգումները վնասելու են մահմեդականների շահերին»: Ջեմալ անունով մեկի տանը տեղի ունեցած ժողովներում, որոնց մասնակցում էր նաև Զիլանի չեյխը, պատրաստվեց ծրագիր՝ քրիստոնյաների դեմ: Հակահայ ազդարարություններ փակցվեցին մզկիթների պատերին[230]:

Հոկտեմբերի 22-ին լուր ստացվեց, թե սուլթանն ընդունել է հայկական բարենորոգումների ծրագիրը: Մահմեդականների դժգոհությունը վերածվեց կատաղի վրեժխնդրության: «Հայկական բարենորոգումների դեմ հեռագրեր գնացին Աբդուլ Համիդին՝ սպառնալիքով՝ նոյեմբերի 1-ին վրեժ լուծել քրիստոնյաներից»[231]: Քաղաքում վաճառքի մեջ եղած զենքերն անմիջապես սպառվեցին և այն էլ արտակարգ թանկ գներով:

Ինչո՞վ բացատրել նման պատրաստակամությունը և կոտորածի ամբողջ ընթացքում միանգամայն կազմակերպված, համակարգված գործողությունները: Միայն մի բանով՝ մինչև կոտորածը սկսելը տարվել էր նախապատրաստական լուրջ աշխատանք: Այդ խժդժությունները «թուրքերի կողմից մասնակի խլրտումներ չէին, այլ բարձրագույն, այսինքն, կայսրական իրադեով ամբողջ հայ տարրը ոչնչացնելու մի վայրենի դիտավորություն... Դեռ բարենորոգումների ծրագիրը ստորագրելուց առաջ սուլթանը գաղտնի հրահանգներով գրգռեց թուրք խուժանին, որ աղմուկ բարձրացնի և չընդունի այդ ծրագիրը»[232]:

Մայր առան չարագույժ լուրեր: Մեյրիեն դիմում է վալուն: Էնիսը հանգստացնում է, թե «ինքը պատասխանատու է հանգստության համար»: Նա խնդրեց «համոզել քրիստոնյաներին անկարգությունների առիթ չտալու»: Նույն ժամանակ թուրք մունետիկը փողոցից փողոց էր անցնում ու կոչ անում ջարդել հայերին: Հայ հասարակությունը անհանգստացած էր, և խանութները փակվեցին: Հայոց թեմի առաջնորդը դիմում է Էնիսին: Վերջինս նրան նույնպես հանգստացնում է ու համոզում, որ բացեն խանութները[233]:

Դեպքերի հետագա ընթացքը բնութագրական է թե՛ եվրոպական կառավարությունների և թե՛ Բ. Դռան վարքագծի համար: Մեյրիեն նշում է, որ Էնիս փաշայի հավաստիացումներն իրեն բոլորովին չհանգստացրին, դրա համար էլ հեռագրեց Կամբոնին: "Times"-ը գրում է, թե երբ դեսպանն իմացավ, որ Դիարբեքիրի իր հյուպատոսին վտանգ է սպառնում, «կես գիշերին մարդ ուղարկեց եպարքոս Քյամիլ փաշայի մոտ՝ սպառնալով, որ եթե հյուպատոսի հանդեպ թշնամություն դրսևորվի, պահանջելու է Դիարբեքի-

---

[230] Նուրի Օսման, նշվ. աշխ., էջ 841:
[231] Նույն տեղում:
[232] «Հնչակ», 1896, թիվ 12:
[233] «Արմենիա», 1896, թիվ 54–56:

*րի վալու գլուխը, ֆրանսիական ռազմանավերն էլ գրավելու են Ալեքսանդրեթը... Երկու ժամ անց Դիարբեքիրում խաղաղություն է հաստատվում»*[234]:

*Բայց այդ «խաղաղությունը» երկար չտևեց: Քաղաքում խուճապը գնալով ուժեղանում էր: Տեղ-տեղ բախումներ եղան: Հուսեին անունով մի մոլլա, մզկիթում դժգոհություն արտահայտելով բարենորոգումների ծրագրի ընդունման կապակցությամբ, եզրակացրեց. «Պետությունը գյավուրներին տվել է վեց նահանգ...»*[235], *և կոչ արեց խափանել այդ դիտավորությունը: Վալուն հանրագիր ներկայացվեց հայերին կոտորելու սպառնալիքով: Հոկտեմբերի 30-ին Կ. Պոլսից քաջալերող պատասխան ստացվեց: Քաղաք բերվեց 8000 զինված զիլանցի, որոնք վճռական դեր խաղացին կոտորածներում: Բախում հրահրելու դիտավորությամբ մի խումբ թուրքերի հայի հագուստ հագցրին և հարձակման ուղարկեցին մահմեդական ճամբարի վրա*[236]: *Նամազից հետո ոտից գլուխ զինված մահմեդականները դուրս են թափվում և չարժվում դեպի չուկա՝ բղավելով, թե իրենք փերման են ստացել կոտորելու քրիստոնյաներին*[237]:

*«Կեսօրից անց սկավեցին չարդերը»: Մեյրիեն անճամբ էր տեսել, որ «մեծ մզկիթից դուրս եկող ժողովուրդը վազում էր առջևում ունենալով չորս ոստիկան... ամբոխը հարձակվում է քրիստոնյաների թաղերի, չուկաների վրա... կոտորածը շարունակվեց ամբողջ երեք օր: Դեկտեմբերի 31-ին չարդը վերսկսվեց»*[238]:

*Նույն իրողությունն է հաստատում մի այլ ականատես. «Ուլլի Ճամիի աշտարակից ազդանշան տրվեց, թուրքն ու քուրդը (մերձակա շրջանների քրդերը քաղաքում սովորականից շատ էին), բղավելով Մուհամմեդի սալավաթը, հարձակվեցին հիմնականում չուկաների վրա... Մահմեդականները դուրս թափվեցին նաև մզկիթներից և զենքերը ձեռքներին հարձակվեցին առաջին իսկ հանդիպած քրիստոնյայի վրա: Սրերով, տապարով ու կացինով չարդուփշուր անելով՝ մարտիրոսեցին... ձեռք ձգածներին ոչխարի նման մորթեցին և կամ ողջ-ողջ մսավաճառների կեռերին կախելով, չարդեցին... Խանութները սկսել են խորտակվել: Անթիվ խուժանների փութաջանության պատճառով հազիվ րոպեներ էր տևում ամբողջ չուկաներ դատարկելը... Ոստիկանների, ժանդարմների և զորքերի մի մասն ուղղակի աջակցում էր խուժանին...»*[239]:

*Նորից հնչեցին զորանոցի փողը և հրահանգը. «Կրակի տվեք խանութները»: Հրդեհը լափեց նաև չուկայի խանութների նկուղներում թաքնված հայերին: Խուժանը շարժվեց թաղերի վրա: Աղմազար թաղի մի տանը հավաքված ավելի քան 80 հայի «անգթաբար մորթեցին, աչքերը փորեցին, անդամահատեցին»:*

*Շաբաթ գիշեր ամենուրեք «անթիվ նահատակների դիակների սարսռեցուցիչ հոտն էր, հրդեհների մուխն ու ծուխը», իսկ լույսը չբացված՝ «բարբարոսները նորից հարձակման անցան ու նորից գործում էին ժանդարմների ու պաշտոնատարների հետ համագործակցված»:*

*«Պարիսպների բոլոր հարմար դիրքերից, մզկիթների աշտարակներից, բերդից ու թուրքերի տների տանիքներից կառավարական զենքերից անընդհատ գնդակներ էին տեղում քրիստոնեական թաղերի վրա»: Զորքը քաղաքի պարսպի վրայից ու Ֆսգայի բարձունքներից գնդակոծում էր հայկական թաղերը, որոնք լրիվ շրջափակման մեջ էին: Հայերը չարունակում էին հետ մղել թուրքերի ու քրդերի գրոհները: Իչխանությունները լրացուցիչ ուժեր են բերում:*

*Քաղաքի պարիսպների վրայից պարզ երևում էին 20 հրդեհված գյուղերից համբառնվող բոցերը: Նոյեմբերի 4-ին ծխի մեջ էր մոտ 50 գյուղ: Ամենամեծ գյուղից միայն 40 մարդ ազատվեց: Զեյթլի գյուղի 250 տնից փրկվեց միայն մի պառավ, մի ուրիշ գյու-*

---

[234] Զորմիսյան Լ., նշվ. աշխ., հ. II, էջ 443:
[235] «Դրոշակ», 1896, թիվ 9:
[236] Նույն տեղում, թիվ 10:
[237] ԳԱԹ, ֆ. Ալաքելյան Հ., գ. 27, թ. 5:
[238] *Братская помощь...*, стр. 93-94.
[239] «Արմենիա», 1896, թիվ 54-56:

դում՝ 11 տարեկան մի աղջնակ, որին էլ ենթասպան բռնաբարեց: Ալիբունար գյուղի բնակիչները լցվեցին Սբ. Աստվածածնի եկեղեցին: Զարդարարները դուռն այրեցին, եկեղեցին թալանեցին ու հրդեհեցին: Տղամարդկանց դուրս հանեցին, բոլորին մորթեցին ու այրեցին, իսկ կանանց 10 օր շարունակ լլկեցին և ապա միայն ազատ արձակեցին: Քաղաքի մերձակայքում գտնվող Գիրրպիլ գյուղի վրա հարձակվեց 4000-5000 խուժան, բանակային ուժերը գնդակոծեցին տները: Զինվորները ծակեցին եկեղեցու տանիքը և վառված գերանները ներս նետեցին: Մխից խեղդվող հայերը հարկադրված բացեցին դուռը: Խուժանը կոտորեց չուրջ 400 մարդ:

Նման բարբարոսություններով 20 օրվա ընթացքում նահանգի «գյուղերը, գյուղաքաղաքները, վանքերն ավերակի վերածվեցին, քրիստոնյաներին բնաջնջեցին և նրանց դիակները չների, գազանների կեր թողեցին, ոսկորները ցրեցին դաշտ ու ձոր»[240]:

«Շատ հայ գյուղեր բռնությամբ իսլամացվեցին, իսկ եկեղեցիներն ու վանքերը վերածվեցին մզկիթների»[241]:

Իրենց բարբարոսությունների հետքերը թաքցնելու համար՝ ավերված գյուղերի տարածքները հերկում էին, կախաղանի հարկադրանքով պահանջում ստորագրել հանրագիր՝ իբր կոտորածի մեղավորները քրիստոնյաներն էին:

Ջնայած հայերի մի մասը այլևայլ հնարքներով հեռացավ քաղաքից, հայկական թաղերը շարունակում էին դիմադրել: Եկեղեցիները լիքն էին վիրավորներով ու երեխաներով: Կիրակի օրը թուրքերը սաստկացրին հարձակումը: Նորից անհաջող: Հարկադրված կուիվը դադարեցրին և պահանջեցին զենքերը հանձնել՝ խոստանալով ապահովել նրանց անվտանգությունը: Հայերը համաձայնեցին, սակայն թուրքերի խոստումն ուժի մեջ մնաց միայն մեկ շաբաթ: Այդ ընթացքում թուրքերը քրիստոնյաներից թալանած ապրանքներն էին վաճառում: Մահմեդական խուժանը հրճվանքի մեջ էր և «երազում էր շարունակել կոտորել ու թալանել ողջ մնացած թշվառ քրիստոնյաներին»: Կոտորածներից վեց օր անց հայերի ունեցվածքի առևտրով սկսեցին զբաղվել նաև իշխանությունները: Նրանք աճուրդի հանեցին կողոպտված ունեցվածքը գնի 10%-ի չափով: Աճուրդ-վաճառքը տևեց հինգ օր: Վիլայեթի սահմաններից դուրս հանվեց 1400 ուղտաբեռ ունեցվածք: Հրդեհվեցին թուրքական թաղերում եղած հայերի տները: Նույնիսկ հյուպատոսարանները պաշտպանող զինվորները «փողոցներում հանդիպած հային ջարդելու... պարտականություններ մեջ բնավ չէին երացան»[242]: Ոմն Ազամեթ կոչ էր անում. «Ջավակներս, ջարդեք անհավատներին: Նրանց ունեցվածքը հալալ է ձեզ»: Նա ինքն էր կոտորելու օրինակ ցույց տալիս: Ջորքը առավել եռանդ դրսևորեց խանութներն ու պահեստները թալանելու գործում: Հայերին՝ մեծ թե փոքր, սպանում էին որտեղ պատահեր: Մի կնոջ սպանելուց հետո գրկից վերցրին երեք ամսական երեխային ու գցեցին մսաղացի մեջ: Հնոցը ձգեցին հացագործին ու նրա աշակերտներին:

«...12-ից պակաս էր հինգ րոպե,– նկարագրում է Մեյրենն,– սկսվեց կոտորածը – փողոցում լսվեց հետապնդողների աղմուկը... Կոտորածն առանց դադարի տևեց երեք օր ու գիշեր այնպիսի ահագնությամբ, որ ողջ մնացածները հրաշք էին համարում իրենց փրկվելը»: Սպանությունները սկսվեցին «Սալավաթ Մահմեդ» բացականչություններով, նշանակված ժամին, նախապես պայմանավորված ազդանշանով, առանց որևէ առիթի: Ուրբաթ օրը բացարձակապես նվիրված էր չուկային:

«Ինձ հավաստիացրին, որ թալանին մասնակցել են բոլորը, մեծից փոքր՝ քրդերը, զինվորականները, զափթիեները և շատ բարձրաստիճան մահմեդականներ: Երբ չուկան թալանով դատարկվեց... հրդեհվեց: Ցերեկվա ժամը 2-ն էր: Հրդեհը տևեց մինչև հաջորդ օրը: Բայց իսկական կոտորածը սկսվեց միայն չաբաթ օրվա առավոտյան: Մինչ այդ քրիստոնյաներին սպանում էին փողոցներում, տների բակերում՝ նրանց վրա կրակելով

---

[240] Նույն տեղում, թիվ 54-56:
[241] «Դրոշակ», 1896, թիվ 18:
[242] Նույն տեղում, թիվ 9:

պատուհաններից ու մինարեթներից: Այդ օրն արևածագից հետո սկսվեց արյունահեղությունը և չարունակվեց մինչև կիրակի օրվա երեկո: Նրանք (ջարդարարները) բաժանվել էին ջոկատների և գործում էին հետևողականորեն, անցնում տնից տուն՝ պարտաճանաչությամբ չրջանցելով մահմեդականների տները: Ջարդելով դռները՝ թալանում էին ամեն ինչ և, եթե տներում դեռևս ապրողներ մնացել էին, սպանում էին»[243]: Շուկայի հրդեհը նպատակ ուներ ոչնչացնելու հանցագործությունների հետքերը՝ «մոխիրների մեջ թաղել սպանված հազարավոր քրիստոնյաների մարմինները»[244]:

Գիշերվա ժամը 5-ին Էնիս փաշան Ազմեթ և Ջեմիլ փաշաների հետ մտան Շիֆթե խանի իվևանատունը և հրամայեցին զորքին՝ սվինահարել այնտեղ եղած հայերին: Դիակները նետեցին շուկայի հրդեհի բոցերի մեջ: Երբ այդ փաշաները զբաղված էին ավարը բաժանելով, մի քուրդ դուռը բացեց ու բղավեց. «Թագավորը հրամայել է, որպեսզի մենք կոտորենք գյավուրներին և տիրանանք նրանց ողջ ունեցվածքին... Մինչդեռ դուք եք տիրանում ավարին»[245]: Այդ քուրդը կյանքով վճարեց հանդգնության համար:

Գիշերը քաղաքի բոլոր մահմեդականների տներում ավար էր բաժանվում:

Սբ. Սարգիս եկեղեցում ապաստանել էր 567 մարդ: Խուժանը ներս մտավ ու, բացի հինգ գեղեցիկ աղջիկներից, բոլորին կոտորեց: Քահանայի ականջները և քիթը կտրեցին, մաշկեցին կուրծքը, փայտ մտցրին հետանցքը: Մի տան մեջ երկու հղի կնոջ արգանդը բացեցին[246]: Նույն օրը հարձակվեցին նաև Սբ. Կիրակոս մեծ թաղի վրա, կոտորեցին ու թալանեցին: Փրկվածները ապաստանեցին Մ. Մեյրիեի տանը[247]: Մեծ մզկիթի մոտ գտնվող մսի խանութի պատից կախել էին 4-7 տարեկան չորսական տղաների ու աղջիկների մարմիններ:

Մի տեղեկանք Դիարբեքիրից, որը գրվել է 1895թ. դեկտեմբերի 31-ին. «Նոյեմբերի 1-ի ուրբաթ օրը կեսօրին Ուլի ձամիի օրվա քարոզիչն էր Աբաս Հոջան, որի քարոզի վերջաբանը հարձակում սկսելու հետևյալ խոսքերն էին. «Քանի որ գյավուրները ձգտում են թոթափել օսմանյան լուծը, մեր Կորանի օրենքներով և կայսեր հրամանով ամեն մի իսկական մահմեդական պետք է 25 անհավատ քրիստոնյա ջարդի և նրանց ունեցվածքին, եկամտին ու կնոջը տիրանա: Ձեզ տեսնեմ, Ղազի լինեք թե Շիհիթ, Մուհամմեդն արքայության մեջ գրկաբաց սպասում է ձեզ»»[248]:

«Տիգրանակերտում,— պատմում է Մ. Նեդիմը,— հրդեհվել են բոլոր հայերի տները, ոչնչացվել է հազարավոր մարդ, թալանվել ու հրդեհվել են նաև չուկաները, գյուղերում որևէ տուն չի փրկվել...

Այստեղ ևս ջարդերը, թալանն ու հրկիզումները ղեկավարել են պետական պաշտոնյաները, ոստիկանները, բանակային սպաները: Կուսակալ Էնիս փաշան թե՛ խոսքով և թե՛ գործով գրգռում էր մահմեդականներին»: «Կոտորվեցին հազարավոր մարդիկ... Ոչ մի հայ օթևան չուներ»: Զորամասի հրամանատար Մյունիր փաշան ջանացել է կանգնեցնել կոտորածն ու ավերածությունները, սակայն նրան պաշտոնանկ են արել[249]:

Էնիսի վայրագությունները այնքան հանրահայտ էին, որ երբ փորձեցին նրան նշանակել Հալեպի վալի, հյուպատոսներն ու դիվանագիտական մյուս ծառայությունները միահամուռ բողոքեցին և թույլ չտվեցին[250]:

Թե՛ Դիարբեքիրում ու թե՛ վիլայեթում հայերը, իհարկե, նաև զենքի դիմեցին: Ինչպես նշում է Մեյրիեն, նրանք քաղաքի մի քանի թաղերում պաշտպանվում էին հաջողությամբ, և մահմեդական ամբոխը մինչև վերջ էլ չհամարձակվեց հարձակվել նրանց

---

[243] *Братская помощь...*, стр. 102-107.
[244] «Հնչակ», 1896, թիվ 6:
[245] Նույն տեղում:
[246] Նույն տեղում, թիվ 8:
[247] «Հնչակ», 1896, թիվ 12:
[248] «Արմենիա», 1896, թիվ 54-568:
[249] Նեդիմ Մ., նշվ. աշխ., էջ 68:
[250] Նեդիմ Մ., նշվ. աշխ., էջ 69:

վրա: Փրկվեց նաև եկեղեցիներում և հյուպատոսարաններում ապաստանածների մի մասը: Ս. Հայրերի վանքում փրկվեց 3000 մարդ, Ֆրանսիական հյուպատոսարանում՝ 1500: Քանի որ փողոցներն անանցանելի էին, հայերը տների պատերը ծակում և դրանց միջոցով կամ տանիքների վրայով էին փախչում:

Կիրակի երեկոյան ժամը 11-ին մուենետիկները հայտնեցին, որ նահանգապետն արգելում է կրակել: Հրաձգությունն այլևս չվերսկսվեց: «Խիղճս թելադրում է,— գրում է Մեյրիեն,— համոզված հայտարարել, որ սպանությունները Դիարբեքիրում կատարվեցին մահմեդականների կողմից և առանց որևէ առիթի, որ վալին, զորքերի հրամանատարը, ժանդարմերիայի պետը անտարբեր մնացին սարսափելի տեսարանների հանդեպ և ոչինչ չձեռնարկեցին դրանք կանգնեցնելու համար...»[251]:

Որ Դիարբեքիր քաղաքում սպանում էին ոչ թե ընդհանրապես քրիստոնյաներին, այլ միայն հայերին, վկայում են նաև հետևյալ թվերը: Սպանվեց 3000 և վիրավորվեց 250 հայ, թալանվեց հայերի 1690 տուն, 2100 կրպակ: Նույն ժամանակ սպանվել էր 40 սիրիացի, 14 քաղդեացի, 3 հույն:

Դիարբեքիրի սանջակում թալանվեց ու հրդեհվեց 119 գյուղ, սպանված ու անհայտ կորածների թիվն անցավ 30 հազարից: Միայն Դիարբեքիր քաղաքին հասցված վնասը կազմեց 2 միլիոն թուրքական ֆրանկ:

Ջարդերից հետո հայերին զինաթափեցին, իսկ մահմեդականները մնացին զինված: Բանտերում խոշտանգումներն աներևակայելի բնույթ ստացան՝ ձգտում էին հայերից հօգուտ իշխանությունների վկայություններ պոկել: Խլեցին նույնիսկ դրամական օգնություն ստացած չնչին միջոցները: Վիլայեթի հայերը կորցրեցին իրենց ունեցվածքի 90%-ը՝ մոտ 10 միլիոն ոսկի: Քաղաքում սպանված հայերի մի մասի դիակները դիզեցին պարիսպներից դուրս և այրեցին: Կա կարծիք, որ նահանգի հայության ընդհանուր կորուստը կազմեց 25 հազար մարդ[252]: Ճշմարտությանն ավելի մոտ է, որ գյուղերում զոհվեց 10 հազար, իսկ Դիարբեքիրից բացի, մյուս քաղաքներում ու բնակավայրերում՝ 5-8 հազար մարդ: Անօթևան և որբ մնաց 450 երեխա, գերեվարվեց մոտ 300 աղջիկ, այրիացավ 900 կին[253]: Բալու քաղաքում սպանվեց 1200 հայ, առևանգվեց 250 կին: Սահրադ գյուղի տանուտեր Իբրահիմը, փրկելու խոստումներով, կոտորածներից մազապուրծ մեծ թվով հայեր է հավաքում: Այդ «բարերարը» հայերին հարկադրում է իր ծառայության համար վճարել, նրանց ենթարկում է ամենանվաստացուցիչ անարգանքների և, ի վերջո, հանձնում է ջարդարարների հաշվեհարդարին[254]:

Լիճե ավանը երկու մեծ գյուղերի՝ Սաթնխի և Օկումի հետ իրենց յոթ քահանաներով իսլամացվեցին: Ցաղապայի վանքում կոտորվեց 2000 հայ: Դիարբեքիրի գավառները՝ Սևերիկը, Արղանին, Էգիլը, Ջերմուկը, Ջնգուշը և Ադիչը, ամբողջությամբ կոտորվեցին ու թալանվեցին: Փաստորեն, ոչնչացվեց Մարդին քաղաքը[255]: Մեյրիեն գրում է. «Այն պնդումը, թե քրիստոնյաներն սկսեցին անկարգությունները, ժխտվում է բոլոր հյուպատոսների կողմից... Հյուպատոսները լրիվ պարզել են, որ իշխանությունները մահմեդականներին նախապատրաստել էին ջարդարարության... Վալին կարգը պաշտպանելու պատրվակով զինաթափեց միայն քրիստոնյաներին»: Դրա հետ մեկտեղ, չարունակում է նա, սեփական «աչքերով տեսա զինվորներին, զափթիեներին, որոնք միացած մահմեդականներին ու քրդերին, կրակում էին քրիստոնյաների վրա, վերջինները զենքի էին դիմում միայն ինքնապաշտպանության համար»[256]: Նույն իրողությունն է հաստատում ռուս սպա Տոմիլովը, որը 1904թ. եղել էր Դիարբեքիրում: «Հայերին փակել են իրենց թաղերում... պահանջել են զենքերը հանձնել: Հայերը հրաժարվել են՝ հավատաց-

---

[251] *Братская помощь...*, стр. 110-111.
[252] «Արմենիա», 1896, թիվ 54-56:
[253] «Հնչակ», 1896, թիվ 13:
[254] *Les massacres...*, p. 205.
[255] *АВПР, Посольство в Константинополе*, д. 3184.
[256] **Մարկոսյան Ս.**, նշվ. աշխ., էջ 249:

նելով, որ զենք չունեն... խուզարկություններ կատարվել են ոչ միայն տներում, այլև գերեզմանոցներում... Առանձնապես սոսկալի էր 2000 հայերի վիճակը, որոնք փակվել, իսկ ապա՝ կենդանի հրկիզվել էին եկեղեցում... Կենդանի էր մնացել միայն երկու տղամարդ և մեկ երեխա... Այդ բոլորը կատարվել է Կ. Պոլսից տրված հրամանով ու կազմակերպվել է տեղական իշխանությունների կողմից: Զորքերը եռանդուն մասնակցություն են ունեցել հայերի ջարդերին»[257]:

Դիարբեքիրի կոտորածների մասին ամենաանաչառ և ամենահավաստի աղբյուրը Գ. Մեյրիեի վկայություններն են. նրա դիտարկումներն ու գնահատականները հաստատվում են մեկից ավելի հեղինակների կողմից: Ուստի մեզ թույլ ենք տալիս նորից և փոքր-ինչ մանրամասն անդրադառնալ Ֆրանսիացի դիվանագետի ներկայացրած փաստական նյութին ու գնահատականներին:

1895թ. մարտի 23-ին նա գրում է. «Մահմեդականներն ավելի քան երբևէ գրգռված են: Նրանց թշնամանքը բացահայտ դրսևորվում է անընդհատ կրկնվող հարձակումների միջոցով, ինչին նպաստում է իշխանությունների և մասնավորապես ոստիկանության կոմիսարի կեցվածքը»[258]:

Մայիսին, գրում է Ֆրանսիացին, իշխանությունների թույլտվությամբ դրությունը սրվեց վիլայեթի ամբողջ տարածքում:

«Բոլոր կողմերից՝ Մարդինից, Սլիվանից, Արղանայից, Դիարբեքիրի շրջակայքից, հայտնում էին քրդերի, հաճախ մահ սփռող, հարձակումների մասին, որոնք բացարձակապես հաստատում են, որ ստացվել է բոլոր քրիստոնյաներին ոչնչացնելու վերաբերյալ կառավարական հրաման: Այդ միտքը հաստատում են իշխանությունների անգործությունն ու կեցվածքը: Վտանգը կատարյալ է, քրիստոնյաները չեն համարձակվում դուրս գալ իրենց բնակավայրերից»[259]:

Դիարբեքիր քաղաքում 1895թ. նոյեմբերին ծայր առած ջարդերը Մեյրիեն անվանում է «սարսափազդու սպանդ»[260]: Նա հաստատում է, որ կոտորածը սկսվեց «ճշգրիտ ժամին տրված ազդանշանով, սահմանված կարգով և առանց որևէ մեկի սադրանքի»[261]: Դա նախապես պլանավորված ու նախապատրաստված ջարդ էր[262]: 1895թ. դեկտեմբերի 18-ին նա գրում է Կամբոնին. «Հարկ եմ համարում հաստատապես հայտարարել, որ սարսափելի տեսարանների հանդեպ գլխավոր կառավարիչը (վալին), զինվորական հրամանատարը, ժանդարմների պետը անտարբեր էին, և նրանք ոչինչ չձեռնարկեցին դրանք կանխելու ու, եթե ջարդերին անձամբ չեն մասնակցել, ապա իրենց վարքագծով քաջալերել են դրանք»[263]:

Ջարդարար կացությունը չարունակվեց 1896-ին: Մեյրիեն հունվարի 8-ին գրում է. «Դիարբեքիրում դրությունը չարունակում է մնալ վտանգավոր: Մահմեդականները չեն զինաթափվում, քրիստոնյաների հանդեպ նրանց ատելությունը նույնքան խորն է, որքան անցյալում և աննշան պատրվակ է պետք, որ վերսկսվեն վայրագությունները... Կառավարության բոլոր պաշտոնյաների, մասնավորապես, կառավարչի կեցվածքը քաջալերում է նրանց (ջարդարարների) գործողությունները»[264]: Քաղաքում կատարված դաժանությունների հրահրողները իշխանություններն են: «Կառավարությունը ոչինչ չի անում,– գրում է նա ապրիլին,– և չի ցանկանում որևէ բան անել»[265]: Մայիսին նա

---

[257] Отчет о поездке по Азиатской Турции сотрудника Генштаба подполковника Томилова в 1904г., ч. I, СПб., 1907, стр. 292-294

[258] Meyrier G., նշվ. աշխ., էջ 63:

[259] Նույն տեղում, էջ 72:

[260] Նույն տեղում, էջ 131:

[261] Նույն տեղում, էջ 129:

[262] Նույն տեղում, էջ 138-139:

[263] Նույն տեղում, էջ 134:

[264] Նույն տեղում, էջ 150:

[265] Նույն տեղում, էջ 191:

հանգում է ընդհանրացնող եզրակացության. «Այս երկրամասում օսմանյան կառավարության չանքերով իրավիճակն այնպիսին է, որ կոտորածի վտանգը երբեք չի վերանա և մի օր իրողություն է դառնալու: Ինձ նույնիսկ զարմանք է պատճառում, որ մինչև այժմ ջարդերը չեն վերսկսվել»[266]: Հունիսի 23-ին նա տեղեկացրեց. «Ակնհայտ են օսմանյան կառավարության անհոգությունն ու կոտորածները վերսկսելու կամ առնվազն դրանք չխոչընդոտելու մտադրությունը... Իշխանավորների կեցվածքն ու վարքագիծը... դրա անժխտելի ապացույցն են»[267]:

Մեյրիեի տվյալներով վիլայեթում կոտորվել ու հրկիզվել է ընդհանուր թվով 6000 ծուխ ունեցող 119 հայաբնակ գյուղ, որոնց 30000 հայ բնակչությունը սպանվել կամ անհետ կորել է: Աևևանգվել են անհամար թվով հայ կանայք: Դիարբեքիր քաղաքին հասցվել է երկու միլիոն թուրքական լիրայի վնաս[268]: Մի ուրիշ անգամ նա Դիարբեքիր քաղաքում և մերձակա գյուղերում սպանված հայերի թիվը նշում է 40000: Նա առանձնակի է անդրադառնում վիլայեթի հայության չեզոք կողմնորոշմանը. «Այս վիլայեթում բնակվող հայերը չեն կարող և չեն ձգտում դավեր նյութել սուլթանի տիրապետության դեմ... Նրանք միայն պահանջում են վարչակարգի փոփոխություն և արմատական բարեկարգումների իրականացում, որպեսզի բարեփոխվի հայի նկատմամբ վերաբերմունքը»[269]:

1895թ. հոկտեմբերի 31-ի նամակում Մեյրիեն նաև ներկայացնում է իշխանությունների սադրանքների մեխանիզմը.

«Իրավիճակը աստիճանաբար լարվում է: Մահմեդականները չեն թաքցնում քրիստոնյաներից վրեժխնդիր լինելու իրենց դիտավորությունը՝ ի պատասխան սուլթանի հավանությանն արժանացած բարեկարգումների իրականացման: Նրանք բողոքի հեռագիր են ուղարկել սուլթանին, իսկ պատճենը հանձնել են վալիին...

Այդ փաստաթղթում ասվում է, թե օսմանցիները Հայաստանը նվաճել են արյունով և կպիջեն միայն արյունով»[270]:

Մեյրիեն արդեն 1896-ին նկատել էր երիտթուրքերի գազանային դիտավորությունները: Մայիսի 26-ին նա գրում է. «Ասում են, թե երիտթուրքերը, հավանաբար համոզել են «հին» թուրքերին միանալ իրենց՝ քրիստոնյաների, ինչպես նաև սուլթանի հարցերը վերջնականապես լուծելու, որոնց համարում են այս երկրի բոլոր դժբախտությունների պատճառը»[271]: Այսինքն՝ արդեն առաջին ջարդերի օրերին ֆրանսիացին ամենայն որոշակիությամբ ձևակերպեց՝ երիտթուրքերը պայքարում էին ոչ թե սուլթանական վարչակարգի, այլ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի դեմ. նրանք իրենց երկրորդ գլխավոր խնդիրը համարում էին քրիստոնյա բնակչությանը հաշվեհարդարի ենթարկելը:

## 10. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՑՈՒՄ ԵՎ ԱՆԱՏՈԼԻԱՑՈՒՄ. ՉԵՑԹՈՒՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքների նավահանգիստներում օտարերկրյա ռազմանավերի առկայությունը, բնականաբար, զսպում էր թուրքերի ջարդարար հակումները: Գյուղերն ավելի շատ տուժեցին: Ադանայի կազայում թալանվեց 20, Պայասում՝ 16 գյուղ, ավերվեց 1809 տուն:

Հատկանշական մի երևույթ: Այդ օրերին Ադանայի վալին չրջագայության էր ելել և որ գյուղում կանգ էր առնում, իսկույն սկսվում էր թալանը: Ամենուրեք քրիստոնյաների զենքերը հավաքում էին: Ոչնչացնում էին խաղողի այգիները: Միայն Տավրոսում հասցված վնասը կազմեց մեկ միլիոն ոսկի: Կազա էին լցվել 7000 փախստական. թվա-

---

[266] Նույն տեղում, էջ 197:
[267] Նույն տեղում, էջ 202:
[268] Նույն տեղում, էջ 136-138:
[269] Նույն տեղում, էջ 54:
[270] Նույն տեղում, էջ 84:
[271] Նույն տեղում, էջ 196:

ուրյան մեջ գտնվողների թիվը հասել էր 17 հազարի: Միսիս գյուղում զորքերի հրամանատարը պատարագի ժամանակ մտնում է եկեղեցի, պղծում սպասքները, թափում մեռոնը, պատռում Աստվածաշունչն ու կրոնական այլևայլ գրականություն: Նա տերտերին դաժանորեն ծեծում է, իսկ իրիցկնոջը՝ բռնաբարում: Տերտերը բողոքում է, սակայն ինքն է բանտ ընկնում զրպարտության մեղադրանքով[272]: Շրջափակեցին Սվեդիայի հայ գյուղերը, հեղափոխական գտնելու պատրվակով դրանք անընդհատ հարձակման էին ենթարկվում: Իշխանությունները լուր տարածեցին, թե ամերիկացիները ծրագրել են ծովից հարձակում գործել: Թուրքերը խուճապահար փախան Ադանա: Այստեղ նրանց զինեցին և ուղարկեցին հայկական թաղերի վրա: Քաղաք բերվեցին նաև լրացուցիչ ռազմական ուժեր: Ադանայի վիլայեթում հատկապես շատ տուժեց Հաճընը ու իր շրջակայքը[273]:

Քրիստոնյաների դեմ թշնամական գործողություններ ծավալվեցին նաև Սիրիայում: Կոտորածներ տեղի ունեցան Հալեպի մերձակայքում, որտեղ ոչնչացվեց 1000 հայ: Համիդիեականները ջարդեցին մի քանի գյուղերի հայ բնակչությանը: Դրա փոխարեն նոյեմբերի 3-ին արյունահեղ ընդհարում տեղի ունեցավ Փասայում, անհանգիստ էր Ալեքսանդրեթում[274]: Սակայն Հալեպում կոտորածները լայն ծավալներ չընդունեցին: Վալի Ռաուֆը, որը օսմանյան սահմանադրական շարժման գործիչներից էր, թնդանոթներ տեղակայեց քաղաքի վրա՝ իշխող կետերում՝ սպառնալով հայերի վրա հարձակվելու դեպքում՝ ոմբակոծել մահմեդական թաղերը:

Բիլեջիկում նույն օրերին սպանվում է 95, Էլ-օղլիում՝ 250, Ալբիստանում՝ 300, Ենիջե Քալեում՝ 600 մարդ[275]: Բրուսայի Բազարի կայմակամը հոկտեմբերի 7-ին հեռագիր է ուղարկում Կ. Պոլիս, թե՝ հայերը պատրաստվում են հարձակվել թուրքերի վրա, զորք ուղարկեք: Անմիջապես ուղարկեցին: Ասկյարները թալանում են Կյուրյե գյուղը: Խալիլը 450-500 զինվորով ու բաշիբոզուկով պաշարում է Ջենկիլեր գյուղը: Սակայն լուր ստանալով, որ Մեծ Նոր գյուղի հայերը օգնության են գալիս իրենց ցեղակիցներին, վերացնում է շրջափակումը: «Այս բոլոր գազանությունները կատարելիս,— գրում է Լեփսիուսը,— գործն ամենուրեք ուներ հետևյալ տեսքը. կա՛մ զինված ավազակախմբերը զորքի հրահրմամբ հանկարծակի հարձակվում էին բանից անտեղյակ քրիստոնյաների վրա, կա՛մ էլ իշխանությունները նենգությամբ քրիստոնյաներին զինաթափում էին, զրկում պաշտպանության բոլոր միջոցներից և ապա կազմակերպում նրանց կոտորածը և ջարդում ինչպես ոչխարների: Դեսպանների տվյալներով՝ զինվորները, պահեստային զորքերը, համիդիեն անմիջական մասնակցություն են ունեցել սպանություններին, թալանին, և քրիստոնյաների վրա հարձակումները կատարվել են թուրքական բանակի սպաների հրամանատարությամբ»[276]:

Կոտորածներից զերծ չմնացին նաև Կ. Պոլսի մերձակա շրջանները: Դեռ 1895թ. սեպտեմբերի 27-ին Ագհիսարում ոստիկանությունը խուժանի գլուխն անցած հարձակվեց չուկայում եղած հայերի վրա: Կոտորվեց 100-150 մարդ, չուկան թալանվեց: Օրեր անց հորերից մեծ թվով դիակներ հանեցին:

Կաթոլիկ հոգևորական Սալվատորը, որին նույնպես սպանեցին, մինչև իր ողբերգական մահը հասցրել էր մի քանի նամակ գրել: Նոյեմբերի 1-ին՝ «Ահա չորս օր է... ամենուրեք շրջափակում են, լսվում են սպառնալիքներ, և իրապես մենք ծայր աստիճանի վտանգավոր վիճակում ենք»: Նոյեմբերի 7-ին՝ «Դեռ կենդանի ենք, բայց ամբողջ ժամանակ հսկողության տակ, որովհետև բոլոր կողմերից ավազակները շրջապատել են՝ սպասելով պատեհ պահի՝ թալանելու համար»: Նոյեմբերի 15-ին Մուջուկ-Դերեսի վան-

---

[272] "National Zeitung", 1896, № 51.
[273] АВПР, Посольство в Константинополе, д. 3184.
[274] «Մուրճ», 1895, թիվ 11:
[275] Братская помощь..., стр. 56.
[276] Lepsius J., նշվ. աշխ., p. 141.

քի չրջանում բանակ են դնում թուրքական զորքերը: Ահաբեկված քրիստոնյաները փախչում, հեռանում են, իսկ ով չի հասցնում հեռանալ, բանտ է նետվում: Նոյեմբերի 21-ին տղամարդկանց բանտից հանում են, նրանց միմյանց կապում ու տանում: Պատմել է թուրք զինվորը. «...անցնելով որոշ տարածություն՝ սպայի հրամանով բանտարկյալներին չրջապատեցինք, սվինների օգնությամբ ճոճեցինք, ապա բոլորին այրեցինք... (որովհետև) ստացել էինք կառավարական հանձնարարություն՝ սպանել բոլոր քրիստոնյաներին»[277]:

Այնթապի թուրքերը սպառնում էին. «Կտեսնե՛ք, ոչ մի գյավուրի ողջ չենք թողնելու»[278]:

Այնթապում կոտորածները սկսվեցին նոյեմբերի 16-ին և տևեցին երեք օր: Հրդեհվեց 3500 տուն[279]: Քաղաքը լրիվ թալանվեց, մեծ թվով հայեր բանտ նետվեցին: Կոտորածներին մասնակցեց նաև զորքը[280]: Էլին էգ չուն էին նստացրել, պտտում էին փողոցներում ու գոչում. «Հայոց տեր Անգլիայի թագուհի, չուտ հասիր, գյավուրներին ազատիր»[281]: Քաղաքում կողոպտվեց 2000 տուն ու խանութ, սպանվեց ու անհետ կորավ 5800 մարդ, 1000 աղջիկ առևանգվեց և Մոսուլում վաճառվեց[282]:

Այնթապի վնասը կազմեց 400 հազար ոսկի[283]:

Անկարայի վիլայեթում կոտորածը սկսվեց նոյեմբերի 30-ին, առանց որևէ առիթի կամ պատրվակի: Սպանվեց 1000 և վիրավորվեց 600 հայ, թալանվեց 200 կրպակ, խուժանը հարձակվեց կանանց բաղնիքի վրա:

Կոտորվեց Յոզղաթի բնակչությունը, Հաջի Քյոյում սպանվեց 90 հայ: Հայաբնակ 45 գյուղ թալանվեց: Էկրեկ գյուղում՝ 800, իսկ Մունդյուրզուում 1000 տուն կործանվեց, բնակիչները կոտորվեցին: Զինվորների աչքի առաջ չերքեզները ամեն ինչ հրի ու սրի էին մատնում: Դեռ ավելին, նրանք, այդ թվում նաև բարձր հրամայազմի ներկայացուցիչները, մասնակցում էին հայերի հանդեպ գործադրված գազանություններին:

Դեսպանների տեղեկագրերը միահամուռ հաստատում են, որ նման գործողությունների համար հայերը որևէ առիթ չէին տվել, «ոչ մի ապստամբություն չէր եղել»: Խորհրդանշական էր, որ ինչպես Սասունում, Զեյթունում նունպես հայ-թուրքական առճակատումը, ավելի ճիշտ Զեյթունի հանդեպ Ելդըզի նոր ոտնձգությունները սկսվեցին ավելի վաղ, քան 1895-96 թթ. կոտորածները:

1892թ. Զեյթունի կայմակամ է նշանակվում Թևֆիկը: Նա հանձնարարություն ուներ այնպիսի քաղաքականություն վարել, որ «քարտեզի վրայից ջնջվեր Զեյթունի անունը»: Զորքերն ու բաշիբոզուկը սկսեցին հարձակումներ լեռնային Կիլիկիայի վրա: Մարաշում հոկտեմբերի 25-ին սպանվեց մի հայ: Հաջորդ օրը կարամանլիս թաղի մահմեդականները հարձակվեցին հայերի վրա: Տեղի ունեցան սպանություններ ու թալան: Հարձակումները կրկնվեցին հոկտեմբերի 27-ին, 28-ին, նոյեմբերի 3-ին, 18-ին: Դրանց մասնակցում էր նաև զորքը: Զոհվեց ավելի քան 1000 հայ: Բայց դրանով կոտորածները չավարտվեցին: Նոյեմբերի 18-ին Մարաշում սպանվեց ևս մի քանի հարյուր հայ, հիմնականում բողոքականներ: Զորքը այդ սպանություններին չմասնակցեց, բայց թալանեց հոգևոր ճեմարանը: Մեծ թվով հայեր նետվեցին բանտ: Հարձակումներ տեղի ունեցան Հաճընի, Ֆոնուզի, Ալբիստանի և հայաբնակ ուրիշ բնակավայրերի վրա: Չնայած Լեռնաչխարհի մարդիկ հակահարված էին տալիս, սակայն թուրքական հարձակումները գնալով ցեղասպան բնույթ էին ստանում. ուստի զեյթունցիները ձեռնարկեցին նախա-

---

[277] Братская помощь..., стр. 116-119.
[278] Les massacres..., p. 257.
[279] Նույն տեղում:
[280] «Դրոշակ», 1896, թիվ 13:
[281] Նույն տեղում, թիվ 5:
[282] Նույն տեղում, էջ 7:
[283] Նույն տեղում, թիվ 12:

պատրաստական լուրջ աշխատանքներ թշնամուն հակահարված տալու համար: Զեյթուն գնացին Աղասին, Ապահը, Զելուքը, Հրաչյան, Մլեհը և ուրիշներ, հիմնականում Հնչակյան կուսակցության գործիչներ: Ստեղծվեց ինքնապաշտպանության ղեկավար մարմին, որը 1895թ. հոկտեմբերի 12-ին հրավիրեց մարտական ուժերի ղեկավարների ժողով: Այն արտահայտեց զեյթունցիների կամքը՝ բոլոր հնարավոր միջոցներով հակահարված տալ թշնամու ոտնձգություններին: Հաջողվեց հայթայթել 5000 հրացան, որոշ քանակությամբ վառոդ, արճիճ, նավթ, աղ և այլն: Ինքնապաշտպանության շտաբը տեղավորվեց Զեյթունի Սբ. Աստվածածնի վանքում:

1895թ. հուլիսին Զեյթուն է գալիս Մարաշի կառավարիչ Ասլան բեյը և փորձում է ձերբակալել 1892թ. կռիվների հերոսներից Խաչեր Կարապետյանի որդուն, սակայն հայերը թույլ չեն տալիս: Դա համարվեց ըմբոստություն և իշխանությունները սկսեցին զորք կուտակել: Արեգ գյուղը 10 անգամ թալանվեց: Հայերը հասկացան, որ թուրքերը ձգտում են իրենց նյութապես խեղճացնել: Արեգցիները պաշտպանության կանգնեցին և թշնամու հարձակումները հետ մղեցին: Սակայն Զեյթունը մեկուսացվեց, կտրվեց Լեռնաշխարհի կապը «դրսի» հետ: Թշնամու գործողություններին հակահարված տալու համար բոլոր գյուղերը պաշտպանության կանգնեցին: Ֆռնուզի երիտասարդները հարձակվում են հայկական գյուղերում բռնություններ կատարող ոստիկանների վրա և հազարապետին ու հինգ ոստիկանի սպանում:

Հոկտեմբերի 12-ին Զեյթունի գավառի ավագանու ժողովը որոշում է կռվել մինչև վերջ, նախահարձակ չլինել, բայց հակահարված տալ թուրքերի հարձակումներին: «Ավո» զորագունդը, որը հիմնականում կազմված էր հայդուկներից, տագնապի լուր ստանալով առաջինը հասավ Ալապաշ, որի բնակիչների մեծ մասն անզեն էր: Տեղ հասան նաև Թելե Ելիքի և Ֆռնուզի չոկատները (30-40 մարդ) Տեր Մարտիրոսի և գյուղապետ Եղիայի գլխավորությամբ: Թելի Արթինի ղեկավարությամբ 30-40 հոգի եկավ Մխալի կողմից: Տեղ հասան հին հայդուկ Հաջի Փանոսը (Շամ Քեչիչյան), Նազարեթ Նորաշխարհյանը:

Ջահան գետի մյուս ափին թուրքական բանակն էր: Լուսը դեռ չբացված՝ 150 հոգանոց մի չոկատ, Ջալլադի հրամանատարությամբ, չրջանցեց Թշնամուն, սակայն օգնություն չստացավ, և թուրքական զորքերն ու թուրք գյուղացիները հայերին աքցանի մեջ առան: Նորաշխարհյանի չոկատը փորձեց օգնության հասնել, բայց փամփուշտները միայն երեք ժամ հերիք արեցին, և 2000 թուրք չրջապատեց նաև այս չոկատին Բերդուս գետի հովտում: Վիճակն օրհասական էր: Դրությունը փրկեցին հայդուկները, որոնք չեշտակի հարվածով հնարավորություն տվեցին չոկատին չրջափակումից դուրս գալ: Զոհվեց Ջալլադը: Թուրքերը հերոսի գլուխը կտրեցին ու տարան Մարաշ:

Հայերը, 100 հոգու թողնելով թշնամու առաջխաղացումը կասեցնելու համար, վերադարձան Զեյթուն: Նրանց չարքերը գնալով ստվարանում էր. զինյալների թիվը 600 էր: Զեյթունցիները բանակ դրեցին Խախտոց գյուղում: Նորաշխարհյանի խումբը մեկնեց Սբ. Աստվածածնի վանք, իսկ մյուսները զորանոցը չրջապատեցին հարավից և արևմուտքից: Սարեյան թաղի զինված չոկատը դիրք գրավեց հյուսիսային կողմում: Հայ կռվողների թիվը հասավ 2000-ի: Հոկտեմբերի 15-ին զեյթունցիները գրավեցին կառավարչատունը և գերի վերցրին թուրք պաշտոնատարներին: Նույն օրը հայերը կտրեցին զորանոցի ջուրը: Կատաղի մարտեր գնացին: Կեսօրին հայերը գրավեցին զորանոցի մերձակայքի տներն ու հրդեհեցին: Թուրքերը գործի դրեցին թնդանոթները: Հայերը գրավեցին մզկիթը: Գիշերը թուրքերն անձնատուր եղան: 700 թուրք զինվոր և սպա գերի վերցվեց:

Հոկտեմբերի 20-ին կազմվեց ժամանակավոր կառավարություն՝ ստեղծվեց 40 հոգանոց Ընդհանուր վարչական գործադիր ժողով: Զևավորվեց ոստիկանություն:

Ջուգուր Հիսարում 800 թուրքի և 150 հայի միջև տեղի ունեցած ճակատամարտում թուրքերը 70 զոհ տալով հեռացան: Բայց թուրքերին հաջողվեց խաբեությամբ զինաթա-

փել Զեյթունի դաշտային մասի 16 գյուղերի հայերին: Այդ գյուղերից 10 հազար մարդ լցվեց Զեյթուն և լեռնային մյուս բնակավայրերը:

Զեյթունում անհաչողությյան մատնվելով՝ թուրքերը հարձակվում են Մարաշի խաղաղ բնակչության վրա: Հոկտեմբերի 24-ի գիշերը սկսվում է առաջին կոտորածը: Քաղաքի հայ բնակչությունը տասն օր փակված մնաց տներում, բայց դա նրանց չփրկեց ջարդից:

Հոկտեմբերի 27-ին Ջահան գետի ափին և Թելեմելիք գյուղում հայերը թուրքերին պարտության մատնեցին: Թուրքերը հետ չպրտվեցին նաև Շիվիլիկ գյուղից, զեյթունցիներին ենթարկվեցին Կապանի թուրքաբնակ գյուղերը: Թուրքերը պարտություն կրեցին նաև Աղզտի դաշտում, Ենիջե Կալե գյուղում:

Ջորանոցը գրավելուց հետո հայերը թուրք զինվորականների ընտանիքների անդամներին ազատ արձակեցին: Զեյթունցիների ճեռքն ընկավ մեծ քանակությամբ զենք ու զինամթերք[284]: Զեյթունի իրադարձություններն իրարանցում առաջացրին Կ. Պոլսում: Թուրքական 30 հազարանոց զորքը և նույնքան էլ բաշիբոզուկ չարժվեցին Լեռնաշխարհի վրա: Դեկտեմբերի 2-ին Ալիի հրամանատարության տակ գործող զորքերը ներխուժեցին Ճոնուզ: Հայերը հետ քաշվեցին: Թուրքերը դաժան հաշվեհարդարի ենթարկեցին Զեյթունից դուրս գտնվող հայ բնակչությանը: Մեծ թվով կանայք քշվեցին Մարաշ և բռնությամբ թուրքացվեցին: Այդ կանանց մի մասը թուրքական գազանություններից փրկվելու համար նետվեց անդունդները:

Չնայած զեյթունցիները կռվում էին խելահեղ, թուրքերին հաջողվեց դեկտեմբերի 2-ին գրավել ու հրդեհել Սբ. Փրկիչ վանքը: Հաջորդ օրը նրանք տիրացան նաև քաղաքի վրա իշխող բարձունքներից մեկին: Բայց հայերը հանկարծակի հարձակման անցան և Սանդուխ լեռան վրա ոչնչացրին մոտ 1000 թուրք զինվոր ու սպա: Զեյթունում և Ճոնուզում կուտակվել էր 40 հազար հայ, հիմնականում կանայք ու երեխաներ: Գլուխ բարձրացրին բանտարկված թուրք զինվորները: Նրանք փորձեցին հրդեհել քաղաքը: Սակայն հայ կանայք թույլ չտվեցին: Ալիի բոլոր հարձակումները հետ էին շպրտվում. մարտերից մեկում ծանր վիրավորվում է թուրքական զորախմբի հրամանատար Ռեմզին: Նա տենդի մեջ հեռագրով Կ. Պոլիս օգնական ուժեր է խնդրում: Ռեմզին անմիջապես պաշտոնանկ է արվում, նրա տեղը նշանակվում է 5-րդ բանակի հրամանատար Էթհեմը, որը մեկը մյուսի հետևից կատաղի գրոհներ է ձեռնարկում: Զեյթունցիները բոլոր այդ գրոհները հետ են մղում:

Նոյեմբերի սկզբներին Ուլնիոյի և Ճոնուզի միջև հավաքվեց 40 հազ. մահմեդական, որոնցից 15 հազարը՝ զինված: Զեյթունցիները չընկրկեցին. «Մենք ուխտել ենք մինչև վերջին չունչը, մինչև արյան վերջին կաթիլը կռվել»: Եթե Զեյթունը պաշարման օղակի մեջ էր, ապա թուրքական «բանակը տառապում էր ցրտից, սովից, հագուստի պակասից»: Հուսալքություն էր, մեծ թվով դասալիքներ կային: Գնալով ավելի էր ծանրանում նաև հայերի վիճակը. անվում էին միայն մսով ու խոտով, տեղի աղբյուրների աղի ջուրն էր լրացնում աղի պակասը: Օրական մեռնում էր շուրջ 40 մարդ: Սակայն զեյթունցին անհերթ էր:

Որոշ հեղինակների տվյալներով՝ մարտական գործողությունների ընթացքում հայերը կորցրեցին 3.5 հազար, իսկ թուրքերը՝ 20 հազար մարդ, հիմնականում ցրտից ու համաճարակից: «...Թապուր Քյաթիայի Մուստաֆա Էֆենդու կարծիքով,— գրում է Մ. Սեմիրճյանը,— թշնամու բանակը 25600 մարդ է կորցրել, մինչդեռ հայերի ուղղակի պատերազմական կորուստները 71 անձ է... տարափոխիկ հիվանդություններից մեռածները՝ 500 զեյթունցի, և քաղաքում ապաստանածներից՝ 3000 հոգի»[285]: Հասկանալի է, որ այս տվյալները կարիք ունեն քննական վերլուծության:

---

[284] «Դրոշակ», 1895, թիվ 19:

[285] Սեմիրճյան Մ., Զեյթունի անցյալեն և ներկայեն, հ. I, կ. գ., 1909, էջ 251:

*Հայերի ու թուրքերի միջև խոշոր բախում տեղի ունեցավ նոյեմբերի 25-ին: Մուստաֆայի 15 հազարանոց բանակը նահանջեց[286]: Հայերը տիրացան մի շարք բնակավայրերի ու շարժվեցին Ադանայի ուղղությամբ[287]:*

*Ահա թե "Daily News"-ը ինչպես է ներկայացնում հայերի ու թուրքերի ռազմական ուժերը. «Մուստաֆա Զեքի փաշան... հավաքելով Կրետե կղզու զորախումբը, տասն օր առաջ 20 թնդանոթով և ռազմամթերքի մեծ պաշարով Ալեքսանդրեթից գնաց Մարաշ: Ջորս օր առաջ նա Մարաշից դուրս եկավ 12 հազարանոց զորքով...և կանգ առավ Զեյթունից չորս ժամ հեռավորության վրա: Ապա կառավարությանը տեղեկացրեց, թե Զեյթունը գրավելու համար անհրաժեշտ է 50 հազարանոց կանոնավոր զորք և 50 թնդանոթ... Զեյթունի զինված բնակիչների թիվը 20 հազար է... 5000-6000 զինված հայեր բռնել են Ադանայի շրջակայքի սարերը, իսկ Մարզվանի ճանապարհի վրա 6000-ից ավելի մարդ կա: 5000 զինյալ իջել է ծովափ՝ Քեսաբի մերձակայքը»[288]: Ֆրանսիական "Le Temp"-ը գրեց. «Թուրքական զորքը Զեյթունի առջև փառավոր պարտություն է կրել: Մարաշի բողոքական եկեղեցիները լիքն են վիրավոր զինվորներով, որոնց խնամում են միսիոներները»[289]:*

*Զեյթունի նոր ընդվզման չարժառիթները չատ էին: Բաքը Ալիից հետո Զեյթունը նորից չրջափակվեց: Հնչակյան գործիչ Նազարբեկը Զեյթունի ինքնապաշտպանության ղեկավար Աղասուն գրում է, թե Սոլսբերին խոստացել է օգնել, եթե կարողանանք դիմադրել երեք ամիս: Զեյթունի հայդուկների 1895թ. հոկտեմբերի 12-ի ժողովում այդ նամակը հրապարակվում է ու որոշում է ընդունվում՝ կռվել թուրքական բռնակալության դեմ «տնտեսական ու քաղաքական ազատության համար»: Ստացվում է Իզմիրլյանի հեռագիրը, որ պահանջում էր խռովությունից ձեռնապահ մնալ, քանի որ սուլթանը խոստանում է բարենորոգումներ մտցնել: Զեյթունցիները հնազանդվում են:*

*Մարաշի չուկայում ու Գարաման թաղում թուրքերը կոտորում են հայերին, սպանում դաշտային աշխատանքներից վերադարձող գյուղացիներին, ճանապարհորդներին: Թաքուն զորքեր էին կենտրոնացվում: Զեյթունցիները այդ մասին տեղեկություններ ունեին և հասկացան, որ այլևս հապաղելը հավասարազոր էր մահվան: Մարտական գործողություններն առաջինը սկսեցին Ջաքը Դերեում հավաքված 500 զինյալ հայերը: Նրանք գիշերը հարձակվեցին Մարաշ-Ալպիստյան խճուղու վրա, ոչնչացրին թուրքական մի զորամաս, կտրեցին հեռագրագծերը: Սակայն հակառակորդին օգնության հասած ուժերի ճնշման տակ հարկադրված նահանջեցին: Թուրքական 40 հազարանոց բանակը չարժվեց Զեյթունի վրա: Հրդեհվում է Սբ. Կարապետի վանքը, Ֆոնուզում սպանում են բոլոր այն հայերին, ովքեր հրաժարվում էին իսլամանալ: Այդ լուրը Զեյթունի հայ կանանց մղում է հարձակվելու գերի թուրք զինվորների վրա: 500 հոգի սպանվում է:*

*Զեյթունը երեք օր հետ մղեց Թչնամու գրոհները: Թուրքերը մեծ կորուստներ էին տալիս, սակայն քաղաքը շարունակում էր չրջափակման մեջ մնալ: Հայերը բերդը հրդեհում են ու հեռանում քաղաքից: Մի կիլիկիահայ հերոսուհու՝ Կուտուր Աբուսեֆյանին, հաջողվում է դուրս գալ չրջափակման գծից և նամակներ հասցնել ամերիկյան միսիոներներին: Նա լուր է բերում, որ տերությունների դեսպանները միջնորդել են Բ. Դռան առաջ՝ Զեյթունում պատերազմական գործողությունները դադարեցնելու համար:*

*Նելիդովը դեկտեմբերի 11-ին գրում է Պետերբուրգ, որ Զեյթունում չրջափակված հայերի հանձնվելու չուրջ բանակցություններն արդյունք չեն տվել, և թուրքական զորքերը հրաման են ստացել ուժի գործադրմամբ տիրանալ հայերի դիրքերին: Հայ-Գրիգորյանական պատրիարքը դիմել է տերություններին՝ խնդրելով միջամտել, որպեսզի*

---

[286] «Դրոշակ», 1895, Թիվ 20:
[287] Նույն տեղում, Թիվ 21:
[288] "Daily News", 14.12.1895.
[289] «Դրոշակ», 1896, Թիվ 3:

*կանխվեն բնակչության զանգվածային սպանությունները, որոնք անխուսափելի էին Զեյթունը գրոհով վերցնելու դեպքում: Դեսպանները Բ. Դուռն առաջարկում են իրենց ծառայությունները՝ մտադրվելով հանձնարարելու Հալեպի իրենց հյուպատոսներին հանդես գալու միջնորդի դերում՝ Զեյթունի բնակչության հանձվելն ապահովելու և հետևելու պայմանավորվածության խստիվ կատարմանը՝ անմեղների կյանքն ու անվտանգությունը երաշխավորելու նպատակով: Նելիդովը խնդրում է թույլ տալ միանալու այդ դեմարշին, որը ձեռնարկվում էր բացառապես մարդասիրական նկատառումով: Դեսպանն ավելացնում է. «Եթե ինչպես պնդում են թուրքերը, Զեյթունի պաշտպանների մեջ կան օտար, մասնավորապես, անգլիական ծագում ունեցող սպաներ ու զինվորներ, ապա առաջարկվածը կարող է միջոց հանդիսանալ պաշտոնապես ճշտելու այդպիսիների ներկայությունը: Արտաքին գործերի նախարար Լոբանովը պատասխանում է անմիջապես, առանց նույնիսկ ցարի կարգադրությանը սպասելու. «Կարող եք միանալ ձեր դործընկերներին, որպեսզի Բ. Դռանը առաջարկեք բարի ծառայություններ և, եթե դրանք ընդունվեն, Հալեպի հյուպատոսին հանձնարարեք հանդես գալ որպես միջնորդ Զեյթունի բնակիչների և թուրքերի միջև»»[290]: Նելիդովը դեկտեմբերի 13-ին գրում է սուլթանի հետ իր նոր հանդիպման մասին: Աբդուլ Համիդը հավանաբար հակված էր ընդունել դեսպանների միջնորդությունը, սակայն «այդ ժամանակ լուր ստացվեց, որ թուրքերը գրավել են Զեյթունը, իսկ քաղաքի պաշտպանները փորձում են փախչել լեռները»[291]:*

*Նելիդովի դեկտեմբերի 7-ի նամակում համոզմունք է արտահայտված, որ «թուրքիան ներկա ճգնաժամից դուրս գալ չի կարող և ցանկացած պահի կարելի է սպասել աղետի»: Դեսպանի մտահոգությունն «ամենից առաջ սուլթանի մահմեդական հպատակների անգթանալն է: Նրանք սկսել են բարձրաձայն հայտարարել, որ քաղաքակիրթ Եվրոպան փոխանակ հանդես գալու բացառապես քրիստոնյաների օգտին, կարող էր խղճալ նաև իրենց և ազատել բռնատիրությունից, որի ճնշման տակ նրանք մատնված են տանջանքների: Այս բոլոր գժտություններին ու թշնամություններին այժմ ավելանում է թուրքիայի ֆինանսական ճգնաժամը: ...Ստեղծված վիճակը չի կարող երկար չարունակվել, և սուլթանն ընդունակ չէ դրանից դուրս հանել»: Դեսպանը նորից չեչտում է «Քրիմի կասկածելի քարոզչությունը և անգլո-հայկական կոմիտեների չարունակվող բանսարկությունները»: Վերջիններիի գործունեությունը խթանում է անկարգություն և հավերժացնում այն դժբախտ մարզերի քայքայումը, որոնց իբր ձգտում են օգնել: Դեկտեմբերի 17-ին Անգլիայում Ռուսաստանի դեսպան Ստաալը գրում է. «...Սոլսբերին սուլթանին համարում է նենգ, ով հանուն իր անձնական շահերի ընդունակ է ցանկացած դաժանության: Դրա համար էլ նա գտնում է, որ ժամանակ առ ժամանակ սուլթանի վրա ահեղ ճնշում պետք է գործադրվի»[292]:*

*Ահա «մարդասիրական» այն եզրակացությունները, որոնց հանգեցին աշխարհի բախտը տնօրինողները:*

*Դեկտեմբերի 31-ին Բ. Դուռն ընդունեց տերությունների դեսպանների առաջարկը՝ նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ զեյթունցիների հետ բանակցելու վերաբերյալ: Հյուպատոսներին հրահանգված էր «բանակցություններում գործել համաձայն Բ. Դուռն պահանջների»: Թուրքերը զեյթունցիներին առաջարկեցին հանձնել չարժման ղեկավարներին: Զեյթունցիները պատասխանեցին, թե իրենք եղբայրներ են և իրենց չարքերում գլխավորներ չկան[293]:*

*Մի բնորոշ փաստ. 23 օր տևած զինադադարի ժամանակ թուրքերն ավելի շատ հայ սպանեցին, քան կռիվներում:*

---

[290] Ламсдорф В.Н., նշվ. աշխ., էջ 350:
[291] Նույն տեղում, էջ 351:
[292] Նույն տեղում, էջ 352-353:
[293] «Դրոշակ», 1896, թիվ 3:

"Le Temps"-ը գրում է. «...Տաճկական զորքը Զեյթունի դեմ մղած մարտերում լիակատար պարտություն է կրել: Մարաշի բողոքական եկեղեցիները լիքն են վիրավոր զինվորներով»: Թուրքերն իրենք էին խոստովանում, որ Զեյթունում 6000 մարդ են կորցրել: Այս պարագաներում զեյթունցիների պատասխանը թուրքական պահանջին միանգամայն օրինաչափ էր: Սակայն հայերի վիճակը ծանր էր: Նրանք կռիվներում ու սովից կորցրել էին ավելի քան 8000 մարդ: Զեյթունում լինելուց հետո հյուպատոսները հայտարարեցին, թե 8000 հայ էլ թշվառ վիճակում է: «Ֆրանսիական հյուպատոսը 4000 ղուրուշով Մարաշի 1000 գյուղացիների կաթոլիկ դարձրեց»[294]:

Էահեմը զեյթունցիներին հանձնեց Հալեպում տերությունների հյուպատոսների հետևյալ հեռագիրը. «...Մեր դեսպաններից հրաման ստացանք միջնորդ լինել օսմանյան կառավարության և Ձեր միջև: Որպեսզի գործը արագացվի, Բ. Դուռը պայման է դնում զինադադար կնքել»: Հայերը համաձայնվում են: 1896թ. հունվարի 17-ին տերությունների հյուպատոսները հանդիպում են հայ պատվիրակությանը: Թուրքերի խարդավանքներն այս բանակցություններում էական հաջողություն չունեցան, և հունվարի 30-ին համաձայնագիրը ստորագրվեց, որով սուլթանը ներում էր շնորհում զեյթունցիներին և համաձայնվում Բ. Դռան ծախսերով «չորս դրսեցիների» ուղարկել արտաքսման: Զեյթունում և Հաճընում նշանակվելու էին քրիստոնյա կառավարիչներ: Ոստիկանները, հարկահավաքներն ու մնացած պաշտոնատարները նշանակվելու էին հայերից, իսկ դատավորները՝ թուրքերից: Հայերի ավերված տները վերականգնվելու էին պետության հաշվին, Զեյթունը հինգ տարի ազատվում էր հարկերից: Հայերը հանձնելու էին զենքերը: Զորքերը քաղաքացիական գործերին միջամտելու իրավունք չունեին: Համաձայնագրի կատարմանը վերահսկելու համար Մարաշում հյուպատոսություններ էին բացվելու:

Ճիշտ է, այս համաձայնագիրը միայն չնչին մասով կատարվեց, սակայն անհնար է գերագնահատել Զեյթունի հերոսամարտի նշանակությունը: Այն մեծ դեր խաղաց Փոքր Ասիայի արևմտյան շրջանների կոտորածները կասեցնելու և բարգավաճ Ադանան փրկելու գործում:

Հայերի 1894-96 թթ. ինքնապաշտպանական կռիվների շարքում Զեյթունի հերոսամարտն առանձնանում է ոչ միայն ընդրկումներով, ռազմավարությամբ, այլև արդյունքներով: Հայերը ռազմական հաղթանակի հետ միասին կարողացան այն վավերացնել դիվանագիտական փաստաթղթով:

## 11. ՈՒՐՖԱՅԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՋԱՐԴԸ

Ուրֆան (Ուռհա, Եդեսիա) միջագետքում էր. այնտեղ հայերից բացի բնակվում էին ասորիներ, թուրքեր: Վերջիններս, հասկանալի պատճառով, տնտեսությունում ու կառավարման ասպարեզում գերիշխող դեր ունեին՝ նրանք խոշոր սեփականատերեր էին և ապրում էին կալվածքներից ստացված եկամուտներով: Մինչև 1890-ական թվականները քաղաքի հայ և թուրք բնակիչները համերաշխ ու խաղաղ էին:

Սակայն 1890-ական թվականներին Եդեսիայի հայությունը հարկադրված եղավ «իսկական պատերազմ» մղել թուրքերի դեմ, մանավանդ որ, 1890-ի առաջին կեսերից սկսած, իշխանությունները այնպիսի քաղաքականություն էին վարում, որը թուրքերին մղում էր հայերի դեմ: Ահաբեկման սկիզբ համարում են 14 տարեկան պատանու բռնաբարությունը 40-50 թուրքերի կողմից: Մի քանի օր անց բաղնիքում սպանված գտան մի հայի: Իշխանությունները երկու դեպքում էլ մնացին կողքից դիտողի դերում: Այս և մի քանի ուրիշ դեպքեր սթափեցրեցին հայ երիտասարդներին: 1895-ի սեպտեմբե-

[294] Նույն տեղում, թիվ 19:

րին թուրքերը մտնում են Հայոց թաղ ու դաշույնով սպանում մի հայի: Սպանողին հայերը հանձնում են ոստիկանությանը: Ոստիկանատանը նրան սպառնացին. «Դու պիտի մեռնես, որ ուրիշները հետևեն քո օրինակին», այսինքն՝ սպանեն հայերին: Եվ պատահական չէ, որ այդ թուրքի սպանության մեղքը բարդեցին հայերի վրա՝ հայտարարելով, թե հայերն ապստամբել են: Այսինքն՝ թուրքի սպանությունը պատրվակ դարձրեցին հայերի կոտորած սկսելու: Պահեստայիններն անմիջապես զենքի կանչվեցին:

Տեղի Հնչակյան կոմիտեն որոշում է ինքնապաշտպանության կանգնել: Հայկական թաղում ոստիկանները կրակ են բացում հայերի վրա, ապա հարձակվում քաղաքամերձ այգիներում այգեկութ կատարող չուրջ 1000 հայի վրա, «սպանեցին, թալանեցին, առևանգեցին զանոնք... անոնցմե կենդանի մնացածները բանտ լեցուցին՝ առանց հասակի ու սեռի խտրության»[295]:

Ոչ քիչ տեղերում կոտորածներին ոստիկանության և զորքի մասնակցությունը թուրքական իշխանությունների կողմից հրամցվում էր որպես հայերի պաշտպանություն: Ս. Պեշիմյանի հայոց թեմի առաջնորդին հորդորեց. «Գնացե՛ք, ոչնչից մի վախեցեք, զորք կուղարկեմ ձեզ պաշտպանելու համար»[296]: Իսկ որպեսզի արդարացնեն ջարդը և մահմեդականներին ավելի գրգռեն հայերի դեմ, վերջիններին մեղադրեցին բազում հանցանքների, այդ թվում նաև ապստամբելու մեջ, իբր քրիստոնյաները հարձակվել էին մահմեդական թաղի վրա, սակայն անհաջողության էին մատնվել: Նույնիսկ հեռագիր ուղարկվեց Բ. Դուռ, թե հայերը կործանել են մեջիթները և կոտորել են 1000 մահմեդականի: Այսպես ձևավորվեց բնաջնջման մթնոլորտը, որը բազում եղանակներով տիրապետող դարձավ թուրքերի շրջանում: Հայերը չփոթված էին, չգիտեին ինչ անել: Բավարար քանակությամբ զենք չունեին պաշտպանվելու համար: Մինչդեռ թուրքերը զինված էին և անում էին այն, ինչ վերևից հանձնարարվում էր[297]: Որոշ թուրքեր կոտորածի նախօրյակին իրենց բարեկամ քրիստոնյաներին խորհուրդ էին տվել կրպակները փակել, հեռանալ շուկայից, որովհետև կոտորածը նշանակված էր չորեքշաբթի օրը: Իսկապես, երեկոյան դեմ Դելֆեդեր թաղում մեծ բազմություն է կուտակվում: Բերդից տրված ազդանշանով մահմեդականները չորս ուղղություններով խուժում են հայկական թաղը: Կոտորածը ղեկավարում էր շեյխ Սեիդ Ահմեդը: Նա մի հայի պատվեցրեց գետնին ու մորթեց: Կալա Բուանյա հրապարակում հավաքված մահմեդականներին կոչ արեց հայերին կոտորել որպես «պետության թշնամիների, սուլթանի իշխանությանը չենթարկվողների»: Տեղի զինվորական հրամանատարը՝ Հասանը խուժանին կոչ արեց. «Ոտքի ելեք... ձեզ տրված է 48 ժամ, կոտորեցեք բոլոր գյավուրներին, ու նրանց հարստությունը ձերը կլինի»[298]:

Շուկա իջած հայերը հոշոտվում էին: Սկսվեց նաև քրդերի հարձակումը Հայոց թաղի վրա. նրանց միանում են Ադյամանից բերված զազա քրդերը, արյունարբու մահմեդականների ոհմակի շեյխի գլխավորությամբ: Հայերը կրակ են բացում, շեյխը սպանվում է. խուճապահար խուժանը չուկայում թալանում և ավերում է հայերի կրպակները: Այդ ընթացքում զորքը շրջապատում է հայկական թաղը: Թուրքերը պահանջում են հանձնել ինքնապաշտպանության կազմակերպիչներին՝ խոստանալով հայոց թաղ չմտնել: Հայերը հավատացին ու հանձնեցին, բայց թուրքերը թաղը շրջափակման մեջ պահեցին ևս երկու ամիս, ապա բնակչությանն առաջարկեցին միասին գնալ կառավարչատուն՝ արտահայտելու իրենց հավատարմությունը սուլթանին և ընդունելու մահմեդականություն: Տեղի առաջնորդ Խորեն վարդապետը, նստած էշին, մի խումբ հայերի առաջնորդում է կառավարչատուն, որտեղ նրանք հայտարարվում են մահմեդական: Սա-

---

[295] Գալանճյան Ն., Հուշագրություն Եդեսիո 1895-ի ջարդեն մինչև 1915-ի հերոսամարտը և եղեռնը, Ե., 2004, էջ 47:

[296] *Les massacres...*, p. 249-250.

[297] Նույն տեղում, էջ 250-256:

[298] «Արարատ», մայիս, 1896, էջ 127:

կայն դա էլ փրկություն չէր: 1895-ի նոյեմբերի 17-ի շաբաթ օրը գյուղերից կանչված թուրքերը, քրդերն ու խուժանը հավաքվում են քաղաքի ամենամեծ մզկիթում, որտեղ մահմեդական կրոնավորները գրգռիչ ճառեր են ասում, թե՝ ով մի «գյավուրի մեռցնի, արքայության մեջ 40 հավերժահարս է ունենալու»: Կոտորածը դառնում էր իրողություն:

Հոկտեմբերի 16-ին զորքը, խուժանը հարձակվեցին հայերի խանութների վրա, թալանեցին ու հրկիզեցին: Իշխանությունները թուրքերին զենք են բաժանում: Հայկական թաղը լրիվ շրջափակվեց: Թաղից դուրս մնացածները, մասնավորապես՝ ջրաղացներում բանող պանդուխտ սասունցիները, սպանվեցին: Հասանը հավաքեց հայ երևելիներին ու պահանջեց հանձնել 1800 մարտինի հրացան: Մերժում ստանալով՝ բոլորին բանտ նետեց ու թնդանոթների փողերն ուղղեց Հայկական թաղերին[299]: Հայերը հարկադրված էին ունեցած զենքերը հանձնել, սակայն նաև կարողացան դիմադրել 50 օր: Զգալով, որ նոր հարձակում է նախապատրաստվում, նրանք բանակցություններ են սկսում կառավարչի հետ: Հայերին պաշտպանելու անվան տակ՝ Հայկական թաղ ուղարկված 3000 զինվորները և 1500 համիդիեն սկսում են ջարդը: Այդ օրը կոտորվեց 7000 մարդ, այնուհետև օրական 10-15 մարդ մեռնում էր «վերքերից կամ սարսափելի տեսարանների սոսկումից»: Քաղաքը վերածվեց ավերակի: Հայերը փակվեցին տներում[300]: Հաջորդ օրը քաղաք բերվեցին մահմեդական գյուղացիներ: Նրանց զինեցին և ուղղեցին հայկական թաղերի վրա: Ջարդարարները միայն մի տան մեջ մորթեցին 120 հոգու: Դեկտեմբերի 31-ին մուհետիկը մահմեդականներին կոչ արեց կառավարչատանը հանձնել առևանգված հայուհիներին, և 30 հոգու հանձնեցին[301]:

Ի վերջո, Հայկական թաղն ամբողջությամբ վերածվեց կոտորածի ու թալանի հրապարակի: «Այս ամենը կատարվեց Հանուն Մարգարեի և երկրի վրա նրա ստվեր սուլթանի»: «3000 խելագարված հայ փրկություն փնտրեց Մայր տաճարում: Հիմնականում կանայք, աղջիկներ, երեխաներ... Կարելի էր մտածել, որ ջերմեռանդները կխնայեին սրբությունը: Այդպես չեղավ: Նրանք կացինով խորտակեցին դուռը և ներս խուժելով, սպանեցին որքան կարողացան... Տաճարը հրդեհեցին և բոլոր նրանք, ովքեր փրկվել էին զենքից, զոհվեցին բոցերի մեջ: Այդ նույն ժամանակ տաճարի տանիքից մոլլան երախտագիտություն էր հայտնում Մուհամմեդին»[302]: Կոտորածը հայերին հասցրեց չորս միլիոն օսմանյան ոսկու վնաս:

«Ուրֆայում,– գրում է Մ. Նեդիմը,– ոճիրն ու կոտորածը չատ ու չատ ցավալի են եղել, քան մեր տեսածներն ու լսածները: Մի կողմից տեղալով կապարի տարափ, մյուս կողմից նավթ լցնելով՝ ողջ-ողջ այրել են 10 հազարից ավելի տղամարդ, կին, երեխա...»[303]:

Ֆրանսիական միսիոներ Օ. Շերմենտանն իր "Livre d'or des martyres de la Charité" (1897թ.) գրքի առաջաբանում գրում է, որ Ուրֆայի մեծ եկեղեցում վիթխարի հրդեհ էր: Երկու օր չարունակ գազազած ամբոխը սպանեց հայերին՝ հիմնականում արևական սուրն, իսկ կանանց ու աղջիկներին պահեցին հարեմների համար: «Բթացած մոլեռանդները, ջարդելով երկաթյա դուռը, թալանեցին տաճարը, ծաղրուծանակի ենթարկեցին քրիստոնեական սրբությունները»: Հոգնելով երկու օրվա կոտորածներից, օգտագործելով բնաջնջման այնպիսի «նրբորեն մշակված դաժան եղանակներ, որոնց նմանը պատմությունը չգիտե»՝ որոշեցին միանգամից ոչնչացնել եկեղեցում հավաքվածներին: «Ոչ ոք փրկվել չկարողացավ: Նրանք, ովքեր կրակից դուրս էին նետվում, անմիջապես դնդակա-

---

[299] «Հնչակ», 1896, թիվ 7:

[300] *Братская помощь...*, стр. 109.

[301] *АВПР, Посольство в Константинополе*, д. 3182.

[302] *Братская помощь...*, стр. 109-111.

[303] **Նեդիմ Մ.**, նշվ. աշխ., էջ 73:

հարվում էին մարդկային կերպարանքով հրեշների կողմից: Մի քանի ժամ չարունակ քաղաքում անտանելի գարշահոտություն էր մարդկային այրված մսի այդ զանգվածից»[304]:

«Անհետացան ամբողջ գյուղեր. կոտորածները, սովն ու արտագաղթը» դրանք անմարդաբնակ դարձրին: Տղամարդիկ մորթված էին, որոշ գյուղերում մնացել էին միայն կանայք ու երեխաներ: Նրանք էլ կրում էին «աննկարագրելի ֆիզիկական ու բարոյական տառապանքներ, բառացիորեն սովամահ էին լինում ու, չնայած ոչ մի տեղից օգնություն չէին ստանում, թուրքերին ձեռք չէին պարզում»[305]:

Մեջբերումներ մի ուրիշ ականատեսի վկայություններից: «Նոյեմբերի 6-ին (1895թ.) ժամը 17-ին (թուրքական ժամանակով) մի երիտասարդ թուրք իր երեք ընկերների հետ մորթեց մի հայի Մայր եկեղեցու հենց դիմաց: Նա ցուցմունք տվեց, թե գործել է «թուրք սպայի հրամանով»: Այդ երիտասարդը բանտում սպանվեց: Քաղաքում լուր տարածվեց, թե սպանել են հայերը: Վերջինները խանութները փակեցին: Նույն օրվա գիշերը թուրքերը սկսեցին հրացանային համազարկերը: Առավոտյան ոստիկանությունը «մահմեդականներին գրգռելու համար լուր տարածեց, թե գիշերը հայերը կրակել են մահմեդականների վրա, և իրենք պատրաստ սպասում են սուլթանի հրամանին՝ գյավուրներին արմատախիլ անելու»: Թուրք խուժանը պատրաստվեց հարձակման: Ընդ որում՝ թուրքերն իրենք էին ասում, որ գիշերը կրակել են ոչ թե հայերը, այլ ոստիկանները: Թուրքական բանակի սպա Հաբհարն ուղղակի վկայեց, որ «գիշերվա կրակոցի հեղինակը թուրքերն էին»:

«Վատթարագույնից խուսափելու համար հայերը գնացին իրենց տները»: Թուրքերը ջարդեցին կրպակների դռները և զինվորների օգնությամբ դրանք թալանեցին: Հասան փաշան գտավ, որ դա քիչ է, ու թալանչիներին հորդորեց: «Դեռ ժամանակ կլինի թալանելու: Հիմա գնացեք Հայկական թաղ ու խփեք հայերին, որից հետո միայն նրանց տներից ու կրպակներից վերցրեք ինչ ցանկանաք»: Սակայն ամբոխը վարանում էր: Այդ տեսնելով՝ փաշան հրամայեց հարյուրապետին զինվորների օգնությամբ խուժանին քշել Հայկական թաղ: Զորքերը գործի անցան՝ գոչելով՝ «Մահ քրիստոնյաներին», ամբոխին տարան դեպի հայերի տները: Թուրքերին հաջողվեց թալանել ու ավերել 300 տուն, սպանել 120 հոգու: Բայց չուտով հարկադրված եղան հեռանալ ու «վայրենի կատաղությամբ նորից հարձակվել չուկայի վրա: Թալանեցին 1700 կրպակ»[306]:

Իշխանությունները չարունակեցին սադրանքը, հայտարարելով, թե հայերն են եղել նախահարձակները և ռազմական դատարանին հանձնեցին մի քանի հայի գործ, որոնց, սակայն, ոչ թե դատեցին, այլ խոշտանգեցին և դիակները նետեցին աղբանոց: Ապա նորից քաղաք բերեցին գյուղացիների, զինեցին ու տարան Հայկական թաղի վրա: Հայերը նորից հակահարված տվեցին: Բանտում խոշտանգումների միջոցով հայ երևելիներից պահանջեցին խոստովանել, որ մասնակցել են հեղափոխական կոմիտեների գործունեությանը:

Ջարդերի բնույթն «անվիճելիորեն ապացուցում է, որ կառավարությունը նախապատրաստեց ու գործադրեց կոտորածները»[307]: Եվ պատահական չէ, որ «գազանությունների մեղավորները մնացին անպատիժ,– գրում է Հալեպում Պորտուգալիայի հյուպատոսը,– իսկ փրկված դժբախտները (մոտ 6800 հոգի)՝ զուրկ են գոյության միջոցներից: Առանց ծածկի ու հագուստի՝ կենդանի մնացածների մեծ մասը դաժան ձմռանը չի դիմանա»[308]:

Ուրֆայում մինչև հունվարի 16-ը սպանվեց 10 հազար հայ: «Մեկ շաբաթ չարունակ հրեանները կառավարության հրամանով դիակները փողոցներից հավաքում և նե-

---

[304] *Les massacres...*, p. 239-241.
[305] Նույն տեղում:
[306] *Братская помощь...*, стр. 110.
[307] *Братская помощь...*, стр. 110.
[308] *АВПР, Посольство в Константинополе*, д. 3182.

տում էին փոսերը: Քաղաքում չարունակվում էր կանանց ու աղջիկների վաճառքն էժան գներով»[309]:

Ուրֆայի կոտորածների մասին ամենատարբեր վկայությունների համադրումը մեկ անգամ ևս հաստատում է, որ ա) հայ և թուրք ու քուրդ ազգաբնակչության բախումները, եթե նույնիսկ դրանց մասնակցում էին իշխանության կողմից զինված բաշիբոզուկն ու մահմեդական գյուղացիությունը, հայերի զանգվածային կոտորածի հանգեցնել չէին կարող: Այդ բախումները կրում էին փոփոխական հաջողություններով մարտական գործողությունների բնույթ և որովհետև հիմնականում տեղի էին ունենում հայաբնակ գյուղերում ու քաղաքների հայկական թաղերում, հայերը կոտորածից պաշտպանվելու, զանգվածային զոհեր տալուց զերծ մնալու ավելի մեծ հնարավորություն ունեին, քան հակառակորդը, բ) հայերի կոտորածների իրականացման ղեկավար ուժը թուրքական բանակն ու իշխանություններն էին: Բանակը ոչ միայն գործում էր որպես ինքնուրույն մարտական միավոր, այլև ամբոխի գործունեությունը կարգավորող, նպատակամղող, նրան համարձակություն ներարկող գործոն, իսկ իշխանությունները վիթխարի նախապատրաստական կազմակերպչական աշխատանք տարան հայերի դիմադրողականությունը կազմալուծելու, նրանց ջարդը հեշտացնելու և բանակի, ոստիկանության, ժանդարմերիայի ու ամբոխի գործունեությունը համակարգելու համար, գ) կոտորածները տեղի ունեցան հայոց քարաշեն բնակավայրերում, մասնավորապես քաղաքներում, ինչը որոշիչ նշանակություն ունեցավ, որ սուլթանի հայասիրական քաղաքականությունը ելդզի ակնկալած արդյունքը չապահովեց՝ հայերը կարողացան ընդդիմանալ կոտորածներին և փրկել այն ամենը, ինչը նման պայմաններում հնարավոր էր փրկել:

## 12. ՎԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՈՏՈՐԱԾԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Ամբողջ Վասպուրականը հայերի արյունով ողողվեց: «Հայերին ջնջելու սուլթանի ծրագիրը,– գրեց «Դրոշակ»-ը,– սկսեց գործադրվել ամենայն ճշտությամբ... բազմաթիվ գյուղեր հրդեհվեցին: Քրդերը հայերից թալանածը ազատ վաճառում էին Խոյ և Սալմաստ գավառներում»: Իշխանությունները քայլեր կատարեցին հայերի դեմ հանելու նաև պարսիկներին՝ սպանում էին մոլլաներին ու մեղքը բարդում հայերի վրա[310]:

Վասպուրականը նաև դիմադրեց: Մի քուրդ պատմել է. «Մենք 2000 հոգի էինք... Հայդուկները 70 հոգուց ավելի... Մեզ հաջողվեց նրանց իջեցնել լեռներից ու գցել բաց դաշտ... փախչելու ոչ մի հնար չունեին: Բայց որքան զարմացանք, երբ այդ ֆիդայիներից չատերը, երբ մենք կրակ բացեցինք, ամենայն սառնասրտությամբ ու հանգստությամբ հանեցին իրենց թաշկինակները և սկսեցին պարել «Կլոր պար»: Տեսնելով արհամարհանքը դեպի մեր գնդակները՝ ակամա դադարեցրինք հրաձգությունը և ապշած նայում էինք այդ տարօրինակ մարդկանց»[311]:

Սակայն կոտորածների ալիքը քչեց տարավ դիմադրության առանձին փորձերը: Պատրիարքական փոխանորդը գրում է. «Արճեշո գավառի 17 գյուղերեն զատ, որ ցարդ անվնաս կմամարվին, մնացորդ 16 գլխավոր ու զուտ հայաբնակ գյուղորայք, նմանապես բոլորովին ավարի զարկված, ոմանք սպանված, ոմանք վիրավոր, բնակիչներն ամբողջությամբ մերկ ու քաղցած, ցրված թափառում են»[312]:

1895թ., Արճակի բնակչությանը քրդերից պաշտպանելու պատրվակով, տեղում զորքեր տեղակայվեցին, որոնք ապրում էին հայ բնակչության հաշվին: 1896թ. հունիսին համիդիե հեծյալները պաշարեցին Արճակն ու զորքերից պահանջեցին հեռանալ: Նրանք

---

[309] Братская помощь..., стр. 111.
[310] «Դրոշակ», 1896, թիվ 3:
[311] Նույն տեղում, թիվ 4:
[312] ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. Լեո, ց. 1, գ. 144, թ. 14:

մյուդիրին վճարում են 150 լիրա որպես արվելիք թալանի թուլլտվության գին: Մյուդիրը պահանջում է նաև Խառակոնիս գյուղի թալանի «գինը»: Խառակոնիսը մասամբ փրկվում է, իսկ Արճակը՝ հիմնովին թալանվում: Սպանում են տղամարդկանց, գերեվարում 180 կին ու աղջիկ[313]: Գավառի միայն յոթ հայաբնակ գյուղերում սպանվեց 280 մարդ. մեծ թվով հայեր արտագաղթեցին: Արճակցիների զգալի մասը, Ասպաստան և մի քանի ուրիշ գյուղերի ամբողջ բնակչությունը բռնությամբ կրոնափոխվեց: Նույն թվին հիմնահատակ կործանվեցին Արճեշ գավառի հայաշատ խոշոր գյուղերը՝ Աղսրավ, Արմիդոնք, Բանոն, Բերդաղ, Բլուրմակ, Գանձակ, Դիլան, Մայծակ, Հարուբյուն, Մատղվանք: Հունիս ամսին գավառի 16 գյուղերում զոհվեց 1686 հայ, մեծ թվով մարդիկ արտագաղթեցին: Աբաղայի քրդերը ոչնչացրեցին մեծ թվով տեղաբնակ հայերի, շատ հայեր արտագաղթեցին: Առանձնապես տուժեցին Անձավ, Առեղ, Գյուզակ, Գործոթ, Պատիկգեղ, Ջյաբաբիկ գյուղերը:

Վասպուրականի առաջնորդական փոխանորդ Ա. Մարգարյանի վկայությամբ՝ Շատախի 18 գյուղում սպանվել էր 270 մարդ: Վասպուրականի հայության համար մեծ վտանգ էին համիդեականները: 1892թ. նահանգում գործում էր 14 գունդ՝ 7000 համիդիեականներով: Խիզանի կայմակամ Էշանը, ստանալով հայերին կոտորելու վերաբերյալ հրամանը, չեյխերին լուր ուղարկեց. «Գյավուրների մալն ու կյանքը ձեզ հալալ է... ոչինչ չթողնեք. վեհափառ սուլթանի կամքն է»: Սկսվեց կոտորածը, որը շարունակվեց Սպարկերտում և Կասկուում: 3000 քուրդ լցվեց այդ գավառները: Շատերին սպանեցին, շատերին իսլամացրին, մեծ թվով կանանց ու աղջիկների տարան: Բոլոր հայկական գյուղերում թուրքական դրոշակ բարձրացրին ի նշան մուսուլման դառնալուն:

Պարսկաստանի քրդերը մի քանի անգամ ներխուժեցին Վասպուրական ու Թալանեցին շատ գյուղեր: Աբաղայի դաշտից բերած ավարից միայն ցեղապետ Դահարին բաժին ընկավ 4000 ոչխար, 1500 կով և եզ, 600 գոմեշ, 800 ձի, մեծ քանակությամբ կահկարասի ու գյուղատնտեսական գործիքներ:

Կոտորածներն ու թալանը տարածվեցին ամբողջ Վասպուրականում: Փրկվածների մի մասը լցվեց Վան: Բնականաբար, դա չիկացրեց մթնոլորտը քաղաքում: Ահա այդ ժամանակ Վան հասավ սուլթանի օգնական Սաաէդդինը: Բարենորոգումներ իրականացնելու առաքելությամբ եկած այդ բարձրաստիճան չինովնիկի պահվածքը, սակայն, «հետզհետե ավելի գրգիռ և խրախուսյա տվեց խուժանի վրեժխնդրական զգացմունքներին... Նա անչափ առաջ գնաց, մինչև իսկ չվարանեց իր տանը հյուր ընդունել հռչակավոր ավազակապետ Շարաֆին և երկու օր ամեն տեսակի պատիվներով հյուրասիրել այդ չարագործին»[314]: Քաղաքի թուրքերին ու քրդերին մեծ քանակությամբ զենք բաժանվեց, մզկիթներում կոչ էին անում կոտորել հայերին: Մի քուրդ հիսնապետի վկայությամբ՝ Սաաէդդինն այցելեց համիդիե գնդի հրամանատարին և կարգադրեց հայերին կոտորելու հրամանը ստանալուն պես գունդը ուղի հանել և «հայկական գյուղերը կոտորելուց հետո լցվել Վան քաղաք, որպեսզի ննջենք քյաֆիրներին, որոնք ուզում են թագավորություն ձեռք բերել և իշխել մուսուլմանների վրա: Որքան կարող եք անխնա ու աներկյուղ կոտորեք: Քաղաքի ամբողջ ավարն ու հարստությունը ձերն է»[315]: Վանում Անգլիայի հյուպատոս Վիլյամսը վկայում է, որ «Թուրքերին զենք են բաժանում՝ պատրվակով, թե հայերը խախտել են սահմանը... Թուրքերն առիթի են սպասում հայերին ջարդելու»[316]:

Քաղաքի բնակչության վիճակն օրեցօր վատթարանում էր, ճնշումը սաստկանում: «Տանից դուրս գալ չենք կարող,— այդ օրերին գրեցին Վանից,— ծառերի տերևներ ենք ուտում: Ամեն օր սպանություններ են: Թուրքերը հոխորտում են. «Մեր թագավորի հրա-

---

[313] Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. VIII, 1978, էջ 16-17:
[314] ԳԱԹ, ֆ. Աուքելյան Հ., գ. 144, թ.1:
[315] Նույն տեղում, գ. 155, թ. 3:
[316] «Դրոշակ», 1897, թիվ 11:

*մանն է. պետք է կոտորենք, որ արքայություն գնանք»»[317]: Կոտորածի նախօրեին գիշերը հայկական թաղերից մի քանիսում խուզարկություններ կատարվեցին զենքի պահեստներ գտնելու պատրվակով: Ո՛չ զենքի պահեստ գտան և ո՛չ էլ մի հատիկ հրացան: Քաղաքի չուկան փակ էր, խուժանը չրջում էր զինված: Այդ օրերին դեպի Վան չարժվող հայդուկային մի խումբ Սարայ գյուղում չրջապատվում է, թաքստոց-կացարանը հրդեհվում: Հայդուկները դուրս են թռչում ու կրակ բացում քրդերի վրա, որոնք, 40-50 զոհ տալով, փախչում են:*

*«Վերջապես մայիսի 31-ին եկավ սուլթանի դժոխային հեռագիրը, որը վճռականորեն պահանջում էր անհապաղ իրականացնել Վանի կոտորածը»[318]:*

*Վանի հարցում սուլթանն առանձնակի մտավախություն ուներ: Մայրամասային այդ վիլայեթն ամենից ավելի էր չփման մեջ Ռուսաստանի հետ և ամենից ավելի էր ենթակա ռուսական քաղաքականության ազդեցությանը: Սկսած 1890թ. 4-րդ բանակի հրամանատար Զեքին չատ ավելի Վանում էր լինում, քան Երզնկայում՝ իր բանակային չտաբում: Այստեղ նա կազմակերպեց մի քանի համիդիե գնդեր: Վանի հանդեպ սուլթանի անհանգստության արտահայտությունն էր նաև այն, որ այստեղ վալի նշանակեց իր թիկնապահին՝ Գյուրջիին: Շուտով երևան եկավ կուսակալի և սուլթանի երկու ներկայացուցիչների՝ Սաաէդդինի և Շեմզիի ստորագրությամբ մի հեռագիր, որը ծանուցում էր, թե հայ հեղափոխականները փորձում են ամսի 15-ին խառնակություն առաջացնել Վանում[319]: Ահա ևս մի նամակ Սաաէդդինի գործունեության մասին, թվագրված 28-ը օգոստոսի 1897թ.՝ ամենուրեք սուլթանի հրամանն է. «Խորտակեցեք ու կոտորեք հայերին»: Արքայական այդ ֆերմանը չտապ գործողության մեջ դրվեց մայրաքաղաքից սկսած մինչև վերջին հայկական գյուղը: 1895-ի վերջերին համիդիե հեծելազորը կողոպտեց ու ավերեց Վասպուրականի գյուղերի մեծ մասը, զերծ չմնացին նաև ասորիների գյուղերը:*

*Թեև Վանի կուսակալ Նազըմը Բ. Դռնից կոտորելու հեռագրեր էր ստացել, սակայն ձգձգեց՝ պատճառաբանելով, թե «տեղի հայերն անմատչելի դիրք են բռնել, տներում փակված ինքնապաշտպանության են նախապատրաստվում»: Դրա համար էլ սուլթանը նրան ապիկար համարեց, գազանային դերը կատարելու ուղարկեց «իր թիկնապահ Սաաէդդինին, իբր բարեփոխումներ իրականացնելու և երկրի ներքին վիճակը քննելու»: Հայ ժողովուրդը ոգևորությամբ և ուրախությամբ դիմավորեց նրան՝ հույս ունենալով, որ իրեն կփրկի մահմեդական մոլեռանդությունից: Սկսվեց խնդրագրերի կարկուտը Սաաէդդինի վրա... Մինչդեռ Սաաէդդինն ուղարկված էր հայ ժողովրդի սիրտը նորանոր սլաքներ մեխելու: Նա նախ պահանջեց, որ հայերը տներից դուրս գան ու խանութները բացեն: Բայց տեսնելով, որ հայ ժողովուրդը ավելի է հուսահատվում իր կեցվածքից, սկսեց տները խուզարկել իբր հեղափոխական բռնելու և բանտերը անմեղներով լցրեց: Զգալով, որ հայերի դեմ բացահայտ գործողությունները նրանց կարող են պատասխան քայլերի մղել՝ կազմակերպեց թուրք ժողովրդին, քուրդ ցեղապետերին իր տուն հրավիրելով, հարկ եղած հրահանգներ տվեց: Նրա ամենասիրելին հանրածանոթ ավազակապետ քուրդ Շարաֆն էր, որը գիշերները իջևանում էր նրա մոտ, և որին նա համարում էր իր աչքի լույսը, քանի որ նա բոլորից լավ էր կատարում մուսուլմանի նվիրական պարտականությունները՝ «հային կոտորելն ու խողխողելը»:*

*1896-ի մայիսին Սաաէդդինը պտույտի ելավ Վասպուրականի քրդաբնակ չրջաններըը, այցելեց համիդիե զորագնդերն ու նրանց հաղորդեց սուլթանի բարձրագույն հրամանը և իր կողմից էլ հարկ եղած հանձնարարականները տվեց կոտորածների համար: Մի քուրդ հիանալեթ վկայել է. «Սաաէդդին ֆերիքը եկավ մեր մեծամեծի մոտ ու ասաց.*

---

[317] *Նույն տեղում*, 1896, թիվ 2:
[318] «Դրոշակ», 1897, թիվ 11:
[319] *Նույն տեղում*, 1896, թիվ 16:

«Պետք է ըստ ամենայնի պատրաստ լինենք, որ հեռագիրը գալուն պես համիդիե հեծելագնդերով ճամփա ելնենք ու ապստամբած հայ գյուղերը կոտորելուց ու կողոպտելուց հետո լցվենք Վան քաղաքը, որպեսզի չնչենք անիծյալ քյաֆիրները, որոնք ուզում են թագավորություն ձեռք բերել և իշխել մահմեդականների վրա: Ուրեմն նրանց անխնա ու աներկյուղ կոտորենք, իսկ քաղաքի ամբողջ ավարն ու հարստությունը ձեզ համար է...»: Այսպես Սաաէդդինը, սուլթանի այդ հրամանը կրկնելով բոլոր ցեղապետերին, նրանց միջև եղած ներքին խռովությունները վերացրեց և համիդիե բանակը կարգի գցելուց հետո, վերադարձավ Վան»:

Մայիսի 31-ին եկավ սուլթանի... հեռագիրը, որը պահանջում էր անհապաղ ու վճռականապես կոտորել հայերին: Վանում ընդհանուր ժողով եղավ Սաաէդդինի նախագահությամբ՝ կոտորածի համար հարմար պատրվակ գտնելու:

Հունիսի 3-ի գիշերը սկսվեց հրացանաձգությունը, իբր կռվի են բռնվել հայ հեղափոխականների հետ և առավոտյան երկու փաթաթված դիակ բերին քաղաքի կենտրոնը, հրդեհեցին Խուզն Փողոց կոչված հրապարակը: Թուրք խուժանը հավաքվեց՝ «Պետք է կոտորել ու ջնջել այս գյավուրներին»: Նույն գիշերը Սաաէդդինը բաց արեց պետական զինանոցի դռները, և բաչիբոզուկը զենք ստացավ: Այդ իրողությունը կոտորածից հետո խոստովանում էին շատ թուրքեր:

Այս իրադարձություններում անգլիական հյուպատոսը «թուրք ոստիկանի դեր էր կատարում»: Նա հրապարակում դաժանորեն ծեծեց գյուղերի կոտորածներից մազապուրծ հայերի ղեկավարներին՝ պահանջելով, որ վերադառնան իրենց տեղերը, հայերին առաջարկեց իրենց հողերը չնչին գներով վաճառել ու վերաբնակվել Բաբերդում: Սպարկետի Շաչոն պատասխանեց. «Մենք կառավարությանը չենք հավատում, իսկ եթե դուք թուրքերին ու քրդերին այդքան հավատում եք, հագեք քյալախիկը, դրեք իմ քոլոզը և քաղաքից հեռացեք երկու ժամ հեռու: Եթե անվնաս հետ գաք և գլուխդ վրադ լինի, բոլորս կվազենք մեր ավերակ տները»[320]: Իրականում անգլիացին կատարում էր կուսակալի կամքը՝ բոլոր միջոցներով գյուղացիներին քաղաքից հանել՝ Վանում փոքրացնել հայերի թիվը[321]:

Իսկ նահանգի հայկական գյուղերը վերածվեցին կատարյալ դժոխքի: «Խուժանը բոլոր կիրճերը, ճանապարհները բռնում է և անզեն ժողովուրդը մնում է գազանների ճանկերում: Ոչ մի գյուղ հարձակումից զերծ չի մնում, յուրաքանչյուր գյուղում տասնյակ հայերի դիակներ են փռվում: Խոշտանգումներ՝ դաղել, մարմնի զանազան մասերը լարով կապել, ցից հանել, մարդու մաչկի մեջ ծղոտ լցնել ու ծառից կախել, հայերին մի տեղ հավաքել ու այրել»[322]: Լեռներում ապաստանած մարդիկ խեղդվում էին բքից, «երեխաները սառչում էին մայրերի գրկում: Թուրքը հրացանը տալիս էր հայի ձեռքը և հրամայում սպանել եղբորը ու տիրանալ նրա կնոջը: Մի հայի ամուսնացրին սեփական եղբոր աղջկա հետ և հարկադրեցին հրապարակավ կենակցել, որպեսզի ծածուկ քույր ու եղբայր չմնան»[323]: Սպանությունները հաճախակի դարձան: Քաղաք բերվեց ևս 4000 զինվոր: Այգեստանում 35 պահակակետ ստեղծվեց, այն չրջափակվեց զորքերով: Գյուղերում կոտորածները շարունակվում էին, որին զոհ գնաց 30 հազար հայ: Գնալով սաստկանում էր գյուղերի հայության հոսքը քաղաք: Վանում իրավիճակը ծայրաստիճանի լարված էր, բախումն՝ անխուսափելի:

Իրադարձությունները զարգացան հետևյալ սցենարով: Զարուհի անունով մի օրիորդի (Վազգեն Տերոյանի քրոջ) մոտ «խռովարար թղթեր» հայտնաբերեցին ու ձերբակալեցին, ինչը դարձավ պատրվակ: Սկսվեցին ձերբակալություններ: Ձերբակալվածներին սպանում էին: Քաղաք լցվեցին քրդերը: Հաջորդ օրը հրացանային համազարկ

---

[320] «Դրոշակ», 1896, Թիվ 11:
[321] Նույն տեղում, Թիվ 13:
[322] Նույն տեղում, Թիվ 16:
[323] Նույն տեղում:

սկսվեց Արարուց հրապարակում և թուրքական թաղերում: Նորչեն, Սբ. Հակոբ, Արարուց թաղերում ծայր առան թալանն ու ջարդերը: Մի խումբ զինված երիտասարդների հաջողվում է հնարավորություն տալ հայերին հեռանալու Այգեստան կամ հյուպատոսարաններ: Այդ օրը զոհված հայերի թիվը հասավ 200-ի: Մզկիթներում մոլլաները մահմեդականներին կոտորածի էին կոչում: Քաղաքի կենտրոնում հայերը փրկվեցին միայն շնորհիվ չերքեզ հազարապետ Էմինի ջանքերի: Քաղաքագլուխ Ղալիբի տանն ապաստանած հարյուր ընտանիքների 175 տղամարդու գազանաբար սպանեցին: Հունիսի 1-ին չուկան փակվեց: Հաջորդ գիշերը հանդուգն բախվեցին գիշերապահ զինվորներն ու հայերը: Երկու թուրք զինվոր սպանվեց: Նրանց դիակները քաղաք տարան ու պտտացրեցին փողոցներով: Նպատակը խուժանին գրգռելն էր: Ցերեկը թուրքական թաղերում եղած հայերի տները հրդեհեցին, իսկ տղամարդկանց սպանեցին: Հայերն այլ ելք չունեին, եթե ոչ ինքնապաշտպանության կանգնելը:

Սասնո և Սղերդի հայության ջարդարար ոստիկանապետ Հաշիմը, անցած զորքերի գլուխ, մոտեցավ հայերի տներին ու կրակելու հրաման տվեց:

Ոստիկանները սկսեցին զանազան կետերից կրակ բացել, և թուրք խուժանը անցավ կոտորածի: Գոռում-գոչյունը լցրեց հայոց թաղերը: Ահռելի ու քստմնելի տեսարան էր:

...«Հայ գյուղերում կոտորածները ավարտելուց հետո, երևացին նաև համիդիե հեծյալները... Սակայն կոտորածը մեկընդմեջ պատերազմի բնույթ էր ստանում, քանի որ հայ բնակչությունը, զգալով պահի ճակատագրականությունը, ինքնապաշտպանության կանգնեց: Մի քանի հարյուր հայ, ամրանալով տներում, վեց օր դիմադրեց: Սասէդդինը կատաղած էր: Նա սուլթանից թնդանոթներ գործադրելու թույլտվություն խնդրեց: Հունիսի 9-ին 25 հազար համիդեական, կանոնավոր զորքի և խուժանի հետ վեց թնդանոթներով, հարձակման անցավ. մինչև երեկո հայերի դիրքերը ռմբակոծվում էին:

Սասէդդինը գոչեց. «Ահա այսպես չարաչար պատժվելու են Կորանին չհնազանդվողները»[324]:

Հարձակվողներին միացավ ևս 7000-8000 քուրդ»:

Հայերին կոտորում էին՝ որտեղ հանդիպեին: Թուրքական թաղերում գտնվող հայերի տները շարունակում էին թալանվել ու հրդեհվել, հայ բնակչությանը, անկախ սեռից ու տարիքից, սպանում էին: Առանց դիմադրության կոտորվեց Կլոր Դար, Հայկավանք, Թորոմանի, Սբ. Հակոբ թաղերի հայությունը:

Այգեստանում հայ կուսակցությունները համախմբվեցին ընդհանուր վտանգին դիմակայելու: Պաշտպանական հիմնական ամրոցներն էին. հյուսիսում՝ Շան թաղը, հարավում՝ Թութունջյանի տունը, Արիշյանների թաղը, Նախրի փողոցը, արևմուտքում՝ Սահակ բեյի տունը: Այգեստանն անկախ էր: Թշնամուն ոչ մի կերպ չէր հաջողվում գրավել քաղաքի այդ հայաբնակ մասը: Հայերը հարձակվեցին թուրքերի թնդանոթային կետերի վրա, որոնք մեծ ավերածություններ էին գործում: Թուրքերը լքեցին թնդանոթներն ու փախան: Հայերը հետ չպրտեցին ջարդարարների գրոհները: Այգեստանը վերածվել էր ռազմական ճամբարի: Կռվին մասնակցում էին բոլորը, այդ թվում նաև՝ կանայք ու երեխաները: Հայերը մերժեցին Անգլիական հյուպատոսի միջնորդությունը ու պահանջեցին բանակցություններին Ռուսաստանի ու Պարսկաստանի ներկայացուցիչների մասնակցությունը: Սակայն, հաշվի առնելով ստեղծված ծանր կացությունը, զինամթերքի ու սննդամթերքի սպառվելու վտանգը, ինքնապաշտպանության ղեկավարները ընդունեցին թուրքերի առաջարկությունը՝ հեռանալ Պարսկաստան: Վերջինները նաև խոստացան քաղաքի բնակչությանը բռնությունների չենթարկել և հեռացող մարտական չոկատներին վնաս չպատճառել:

Գիշերը հայկական չոկատները թողեցին Վանը: Դա 1896թ. հունիսի 12-ն էր: Սակայն թուրքն ամեն տեղ ու ամեն պարագայում մնում է թուրք՝ խարդախ ու դավադիր,

---

[324] ԳԱԹ, ֆ. Առաքելյան Հ., գ. 2069:

ուխտադրուժ ու նենգ: Հենց մարտական ջոկատները հեռացան, սկսվեց հարձակումը հայկական թաղերի վրա: Միայն Այգեստանում կողոպտվեց 3000 և հրդեհվեց 600 տուն, 3 եկեղեցի: Հայերին հասցված վնասը կազմեց մեկ միլիոն ոսկի: Հալիմը խուժանին հորդորում էր. «Զավակնե՛րս, նախ կոտորեք, կողոպտելը թող մնա վերջում»:

«Վանի կռիվը,– գրում է Վազգենը,– սկսվեց հունիսի 3-ին, երկուշաբթի ժամը 4-ին և չարունակվեց 12 օր: Հայերի դիմադրության չնորհիվ Այգեստանում կոտորածը դադարեց: Մեր դեմ գործում էր կառավարությունը. առաջին օրերին խուժանի միջոցով և զորքի գաղտնի մասնակցությամբ, իսկ հունիսի 5-8-ը՝ բացահայտ...»: Հունիսի 8-ի արշալույսին սկսեցին ռմբակոծել Այգեստանը: Զորքը, համիդիե մեծաթիվ ուժերն ու խուժանը հարձակման անցան: Մինչև երեկո հայերը դիմադրեցին: Նրանք տվեցին երկու, իսկ թշնամին երկու հարյուր զոհ: Երեկոյան մթին քաշվեցինք լեռները:

Վարագում հավաքվել էր մի քանի հազար մարդ, որոնցից զենք ուներ միայն 400-500-ը: 1000 հոգի չարժվեց դեպի պարսկական սահման: Այդ ուղղությամբ չարժվեց նաև 87 հոգուց կազմված հայդուկային խումբը: 70 հայդուկ Վարդանի հրամանատարությամբ մնացին Շատախում: Քաղաքից հեռացածներին ոչնչացնելու համար հունիսի 17-ին թուրքերը շրջապատեցին Վարագա վանքը: Սակայն հայերը հասցրել էին ժամանակին հեռանալ: Խուժանը թալանեց ու հրդեհեց Սբ. Գրիգորի վանքը: Որպեսզի թաքցնեն կռիվների ու չարդերի ժամանակ հրետանու օգտագործումը, Անգլիայի հյուպատոսն ու ամերիկյան միսիոներ Ռեյնոսը կազմակերպեցին ականների պարկուճների հավաքում՝ սահմանելով դրամական հատուցում[325]:

Հասարակական կարծիքը ապակողմնորոշելու համար Բ. Դուրը "Berliner Tageblatt"-ում տպագրեց. «Վանում մեծ խռովություն է տեղի ունեցել: Մեծաթիվ զինված հայեր (ըստ լուրերի՝ մոտ 6000 հոգի) հարձակվել են թուրքական բերդապահ զորքերի վրա և ծանր կորուստներ պատճառել: Վալին խոշոր ուժեր է պահանջել ապստամբությունը ճնշելու համար»[326]: Վիեննայի "Politique correspondance" ուղարկված կիսապաշտոնական հեռագրում հայերը ներկայացված են որպես ավազակներ: Նրանց էին վերագրվում Վասպուրականում կատարված վայրագությունները[327]: Աթենքի "Comba"-ն գրեց. «Հայ ապստամբական շարժումը Վասպուրականում մեծ ուրախություն է պատճառել դժբախտ ժողովրդին, որն այնքան տարիներ հեծում է մահիկի բռնապետության տակ»[328]:

Ականատեսներից մեկը վանահայության ինքնապաշտպանության մասին գրում է. «Հայերը տանիքներին նույնպես դիրքեր էին կառուցել, ծառերը կտրել ու փակել էին փողոցները, ինչը 5-6 օր կասեցրեց թուրքերի մուտքը հայկական թաղեր: Այգեստանը թուրքերից անկախ էր: Զենքով հաղթել չկարողանալով՝ վալին դիմեց Անգլիայի հյուպատոսին, որը վեց տերությունների անունից գնաց հայերի հետ բանակցելու: ...Հյուպատոսները պահանջում են անձնատուր լինել, դիրքերն ու զենքերը, ինչպես նաև գլխավոր դեմքերից 10 հոգու հանձնել կառավարությանը: Առանց պատասխանի սպասելու՝ հաջորդ օրը խոսեցին թնդանոթները»: Այդ ընթացքում Անգլիական հյուպատոսը միսիոներների մոտ ապաստանած հայերից առանձնացնում էր արական սեռի ներկայացուցիչներին և հանձնում իշխանություններին:

Հայերի ոչնչացումը հաջողությամբ կազմակերպելու համար Սաաէդդինը սուլթանից նվեր ու չքանչան ստացավ[329]:

"Армянский вестник"-ի 1916թ. № 16, 17-ում Ֆ. Սիբիրսկին մանրամասն ներկայացնում է Վանի իրադարձությունները, որոնց ականատես էր եղել: «Վանը,– գրում է նա,–

---

[325] «Դրոշակ», 1896, Թիվ 19:
[326] Նույն տեղում, Թիվ 24:
[327] Նույն տեղում, 1897, Թիվ 11:
[328] Նույն տեղում:
[329] «Դրոշակ», 1897, Թիվ 18:

*ահի մեջ էր: Ընդհանրապես Թուրքա-Հայաստանում խաղաղ կյանք չկար, կոտորած կարող էր տեղի ունենալ ամեն մի պահի... Հայերին ջարդելու հատուկ հանձնարարությամբ Վան էր եկել Աբդուլ Համիդի սիրելի Սաաէդդին փաշան»: Վանում ֆիդայիներ կային, սակայն հայերը չէին բացահայտում իրենց ծրագրերը: Չնայած դրան, Սաաէդդինը որոշեց, եթե «հնարավոր չէ գնդակահարել միայն հեղափոխականներին, ապա կարելի է մորթել Վանի ամբողջ հայ բնակչությանը, իսկ այն աշխարհում Ալլահը կորոշի՝ նրանցից ով հեղափոխական է եղել և ով՝ պարզապես ռայա»: Ու սկսեց: Հայի տան մոտ նետեցին Սաաէդդինի լրտեսներից մի թուրքի արյունոտ դիակը: Թուրքերը հասկացան, որ ջարդի ժամանակն է: Հաջորդ օրը հարձակումն սկսվեց, սակայն հայերն «ահեղ հակահարված տվեցին... Յոթ օր տևեցին տաք մարտերը»: Հույսը կորցնելով, որ կկարողանա ընկճել հայերին՝ Սաաէդդինը դիմեց խորամանկության: Նա թնդանոթներ դրեց Այգեստանի վրա իշխող բարձունքներին: Սկսվեց ռմբակոծությունը: Միաժամանակ եվրոպական հյուպատոսների միջոցով հայերի զինված ջոկատներին առաջարկեց հեռանալ քաղաքից և անվտանգ անցնել Պարսկաստան: «Հակառակ դեպքում զորքերը քաղաքից դուրս կգան, և թնդանոթներն այն ավերակի կվերածեն»: Հայերը համաձայնեցին: «Քաղաքից Վարագի ժայռոտ, չքեղ կանաչով ծածկված լեռը գնաց 1500 հեղափոխական: Գնաց Վանի ամբողջ երիտասարդությունը... Հեղափոխականներն ուրախ տրամադրությամբ հեռացան քաղաքից... Նրանք բարոյական հաղթանակ էին տարել»: Միայն Վազգենն էր դեմ քաղաքից հեռանալուն: Նա ասաց. «Ես քաղաքը չեմ թողնի: Սաաէդդինը ստում է... Վանին կոտորած է սպառնում, իսկ քաղաքից մեկնող հեղափոխականներին՝ աքսորն ու քրդերը»: Նա իրավացի դուրս եկավ: «Դեռ զինվորները չէին հասցրել անտեսանելի դառնալ Վարագի» լեռներում, «երբ Այգեստանի վրա բարձրացան ծխի խիտ սյուներ: Սաաէդդինի «օրհնանքով ասքյարներն ու քրդերը հյուպատոսների աչքի առաջ մորթում էին, բռնաբարում, այրում, թալանում»: Սաաէդդինն ամենուրեք հեռագրեր ուղարկեց. «Վանից գալիս են հեղափոխականներ: Բոլոր միջոցները գործադրել նրանց բռնելու և ոչնչացնելու համար»: Ճանապարհները փակվեցին ասքյարների, համիդիե գնդերի, քրդական հրոսակների միջոցով, իսկ հայ զինյալ երիտասարդությունը, բաժանված փոքր խմբերի, թաքուն շարժվում էր դեպի պարսկական սահման: Բայց չհասան: Թուրքերն ու քրդերը դարանակալել էին Իրան գնացող բոլոր անցումներում: «Հայերը թշնամու արձակած 10 գնդակին պատասխանում էին մեկով»: Վանեցիները հոգնած էին, քաղցած, անընդհատ հարձակումների ենթակա, բայց կանգ չէին առնում: Նրանց շարքերն արագորեն նոսրանում էին, և միայն 20-30 հոգու հաջողվեց սահմանն անցնել:*

*Սաաէդդինի վայրագությունները դժգոհություն առաջացրին նաև տեղական պաշտոնեության շրջանում: Վանի վալի Նազըմը դեմ էր կոտորածներին, սակայն չուտով պաշտոնազրկվեց: Հայերի վիճակն ավելի վատացավ: Նոր վալին հենվում էր քրդերի վրա և նրանց հրահրում հայերի դեմ: Վանում կար 30 հազար անօթևան մարդ, զուրկ օգնության որևէ հույսից: Եկեղեցիները փակ էին. դրանց մի մասը վերածվեց մզկիթի: Շատ հոգևորականներ սպանվեցին, շատերն էլ մահմեդականացվեցին: Քաղաքում ավերվեց ու թալանվեց 1514 տուն, սպանվեց 546 և առևանգվեց 208 մարդ:*

*Վանի հարցը լուծելուց հետո Սաաէդդինը չուռ եկավ Վասպուրական: Սկսվեց ջարդերի մի նոր շղթա: Ականատեսներից մեկը պատմում է, որ գյուղերի հայ բնակչության հոսքը դեպի Վան ավելի սաստկացավ: Քաղաքում կուտակվեց 15 հազար գաղթական, հիմնականում ծերեր, կանայք ու երեխաներ: Նրանք այնպիսի վիճակում էին, որ «նույնիսկ թուրքերից շատերն արցունքը զսպել չկարողացան»: Ամեն օր մեռնում էր 50-60 մարդ: Գյուղացիների մի մասն էլ պատսպարվել էր Վարագի լեռներում[330]: Կան վկայություններ, որ գյուղական վայրերում կոտորածները, իրոք, կազմակերպվեցին Վանից*

[330] *Братская помощь...*, стр. 120-124.

ստացված հրահանգով: Քրդերը հեղեղեցին հայկական գյուղերը և իրականացրին զանգվածային բնաջնջում ու թալան:

Խիզանի կայմակամը հրամայել էր. «15 տարեկանից փոքրերին չկոտորեք, իսկ չափահասներին նախ պետք է թուրքացնել և ապա միայն սպանել, որպեսզի նրանց որդիները հայրերի թուրքական գերեզմանը տեսնելով, այլևս չհիշեն իրենց հայկական կեղտոտ ծագումը»[331]: Կազայի 40 գյուղերում սպանվեց 400 հոգի: Կոտորածը ղեկավարում էր Ջալալէդդինի որդին: Բոլոր վանքերն ամայի էին, թալանված ու պղծված[332]: Վարդան վարդապետի տվյալներով Խիզանի գյուղերի մեծ մասը կողոպտված էր, արական բնակչությունը կոտորված, աղջիկներն ու կանայք՝ բռնաբարված[333]: Ռչտունիքի Փախներ գյուղը չարդարարներին 15 օր դիմադրեց, սակայն երբ հանձնվեց, մոխրակույտի վերածվեց:

«Մուրճ»-ը 1905թ. իր թիվ 6-ում գրեց. «Կոտորածի հետևանքով Աղբակի գյուղերը չատ էին տուժել»: Շրջապատված լինելով քրդերով, չունենալով ինքնապաշտպանության միջոցներ, տեղի հայությունը կոտորվեց գրեթե ամբողջությամբ: «Աղբակի մնացյալ հայաբնակ գյուղերից կոտորվեցին – Բազ՝ 60 տուն, Մալքավա՝ 30, Կարապալի՝ 13, Ենկունի՝ 75, Խառատուն՝ 32, Հասպիտան՝ 45, Սորատեր՝ 30, Աչկերտ՝ 4, Բժնկերտ՝ 35, Լաչկոտ՝ 30 և Ջավովկ՝ մեկ տուն հայ: Գյուղերը այժմ կորցրել են իրենց բնակիչների 3/4-ը»: Բաբլասան գյուղում ոչ մի հայ չէր մնացել, իսկ Ջավովկ գյուղի միակ հայ ընտանիքը, կազմված 40 չնչից, բռնի իսլամացվել էր: Գավառի 23 գյուղեր լրիվ ավերվեցին, թալանեցին 11.2 հազար ոչխար, 500 գոմեշ, 1200 կով և եզ: Աղբակի ու Նորդուզի շրջանները փաստորեն հայաթափվեցին: Կոտորածներից փրկվածներն անցան Ռուսաստան ու Պարսկաստան: Սպարկետից 1000 երիտասարդ, ճյունը ճեղքելով, անցավ Մոկս, մնացած բնակչությունը ոչնչացվեց կամ իսլամացվեց: 14 հազար հայից 4000-ը կոտորվեց, 2000-ը փախստական դարձավ, 8000-ը մահմեդականացավ: Ջմշկածագի գյուղերի վրա հարձակումը սկսվեց հոկտեմբերի 15-ին: Վաղչեն գյուղի տղամարդկանց խաբեությամբ գյուղից հանեցին ու սպանեցին: Եկեղեցու զանգակատունը խորտակեցին, խորանն ու խաչկալը ջարդեցին, վեմի քարը փշրեցին, մինչև անգամ հատակի սալաքարերը հանեցին, տարան»: Սորբի Սբ. Կարապետի վանքի վանահոր մարմինը կտոր-կտոր արեցին, կտրեցին լեզուն և խոշտանգելով՝ սպանեցին: Վասպուրականում նույնպես քրդերը հիմնականում թալանում էին, մինչդեռ «թուրքերը կրոնափոխում էին, հրդեհում, պատվազրկում, բռնաբարում և սպանում»:

«Ամենասարսափելի կոտորածները տեղի ունեցան Արճեշում, Հայոց Ձորում, Գևաչում և Հարաչանայում: Արճեշում այս երկրորդ ջարդից հետո գրեթե բնակչություն չմնաց: Քուրդ ավազակապետ Ջեֆարը սպանեց 200 հոգի, իսկ Բելու գյուղում սպանվածների թիվն ավելի մեծ էր: Մի այլ տեղ քուրդ եղբայրներից յուրաքանչյուրը (Աբդուլ Համիդ և Աբդուլ Կաֆյուր) սպանեցին 200-ական հայ: Նույնքան մարդ սպանվեց Շահբազում: Արշակ գյուղը զոհ գնաց թուրքական զինվորական չոկատի տմարդությանը: Արճեշի գյուղերում թուրք ցեղապետերը հայերին կենդանի թաղեցին ցորենի հորերում: Հայդարանլի ցեղապետ Մուհամմեդը փորձեց փրկել Բերկրին, սակայն հենց նրա ցեղն իրականացրեց Գավառի հայության գազանային կոտորածը: Շատերին բռնությամբ իսլամացրին, առաջին հերթին նրանց, ովքեր ապավինել էին մոլլաներին ու չեյխերին: Եղան նաև թուրք բեկեր, որոնք չատ հայերի փրկեցին... Հիմնականում նրանց, ովքեր այդ բեկերից ճորտական կախման մեջ էին»: Ավազակապետ Շարաֆը չարունակում էր ասպատակությունները՝ երես առած թուրքական կառավարության խրախուսանքներից: Նա թալանում էր ճանապարհորդներին, անպաշտպան գյուղերը, չէր խորշում արյուն թափե-

---

[331] *Les massacres...*, p. 191.

[332] *АВПР, Посольство в Константинополе*, д. 3184.

[333] Նույն տեղում:

լուց[334]: Նրա գլխավորությամբ քրդերը կործանեցին Շատախի գյուղերը, բացի Գավառի կենտրոնից, իսկ այդ կենտրոնը փրկվեց, որովհետև ինքնապաշտպանության կանգնեց: Քրդերը նախ հարձակվեցին Փեսադաշտի վրա: Վարդանի հայդուկային խումբը մինչև մութն ընկնելը դիմադրեց ու հեռացավ: Քրդերը լցվեցին Շիտուն գյուղը, թալանեցին, ապա չարժվեցին Թաղի վրա, որտեղ 70 հայ պաշտպանության էին կանգնել: Սկզբում հաջողությունը թշնամու կողմն էր, սակայն հայերը՝ մեծ ու մանուկ, կառչեցին իրենց զբաղեցրած դիրքերից և ի չիք դարձրեցին խուժանի բոլոր ջանքերը: Հարձակմանը միացավ զորքը, որը երկու գիշեր անընդհատ կրակ տեղաց հայերի դիրքերի վրա: Վերջիններս դիրքերից դուրս եկան ու հակահարձակման անցան: Սպանվեց 80-90 հայ և 50-60 քուրդ ու թուրք, վիրավորվեց նաև Շարաֆը: Շատախի հայությունը կոտորածից փրկվեց:

Թալանվեցին կաճկանի բոլոր գյուղերը: Իսկ Բոհտան գավառում ու շրջակայքում «չէր մնացել ոչ մի քաղաք, ոչ մի գյուղ, որը վնասված չլիներ»[335]: Մարմրտանի գավառի 20 գյուղերում ամենագազանային եղանակներով մորթեցին 160 հայի: Ողջ մնացածների մեծամասնությանը մահմեդականացրեցին: Վանքերն ու եկեղեցիները ավերվեցին կամ մեջիթի վերածվեցին[336]:

Սղերդում մորթվեցին մեծ թվով բնակիչներ, ողջ մնացածների զգալի մասը բռնի իսլամացվեց: Եկեղեցիները կործանվեցին կամ մեջիդի վերածվեցին, գյուղերը թալանվեցին: Սբ. Աստվածածնի վանքը թալանվեց, վանահորը մահմեդականացրեցին ու երկու կնոջ հետ ամուսնացրեցին: Կեչուի Սբ. Կիրակոսի վանքը նույնպես թալանեցին, վանահորը սպանեցին: Թալանված ու ավերված էին Սարի Սբ. Աստվածածնի, Սգավարակի վանքերը: Դրանց վանականներին սպանեցին կամ իսլամացրեցին: Գրում է Վարդան վարդապետը. «Կոտորել են Սղերդ քաղաքի բնակիչներին: Կրպակներն ու տները թալանված են, կանայք ու աղջիկները՝ բռնաբարված, թեմական առաջնորդարանի, եկեղեցիների և դպրոցների դռները ջարդված են ու թալանված»: Քահանաներն, ուսուցիչներն ու ծառաները սպանված են, մնացածները՝ բռնի մահմեդականացված: Կոտորված է Սղերդի կազայի էրուն նահիեի ինը գյուղ: «Սարերն ու կիրճերը փախածները կոտորվել են սովից ու ցրտից...»: Նույն կազայի Շիրվան նահիեի գյուղերը «թալանված են ամբողջությամբ, բնակչության մեծ մասը կոտորված է, կանայք ու աղջիկները բռնաբարված են, նրանց մի մասը ցրիվ է եկել տարբեր կողմեր ու մեռել քաղցից ու ցրտից», ողջ մնացածները մահմեդականացվել են: Նույն վիճակում են Սղերդի շրջակայքի 27 գյուղերն ու դրանց բնակիչները[337]:

Կոտորածների վերաբերյալ հետաքրքիր դիտարկումներ ուներ Մաևսկին: Նախ՝ Արևմուտքի նյութական օգնության մասին: Անգլիական հյուպատոսը ամերիկյան միսիոներների միջոցով նպաստներ էր բաժանում հայ գյուղացիներին: Օգնությունը լուկ խորհրդանշական էր և շատ ավելի նպատակ էր հետապնդում սիրաշահելու հայերին: Նույնիսկ կատակում էին, թե «անգլիացիները հայերի արյան ֆունտին ավելի քիչ են վճարում, քանի Վանի աղյուսի ֆունտին»: «Վանի շրջակայքում,— գրում է ռուս դիվանագետը 1896թ. կեսերին,— իմ հանդիպած հայկական գյուղերում ես չտեսա կյանքի անգամ փոքրագույն նշան: Գյուղերն ավերված չէին, բայց ունեին տարօրինակ ու խղճուկ տեսք... Ամենուրեք թալան էր, քիչ տուժեցին միայն այն գյուղերը, որոնք կարողացան քուրդ հովանավոր գտնել»: Օրինակ՝ Մոկսի կազան անվնաս մնաց շնորհիվ քուրդ Մաթթալա բեյի ներկայության: Ազլևազի կազայում հայերին հովանավորեց հայդարանլի ցեղապետ Հուսեինը, իսկ Նորդուզի նահիեում՝ Հաջի աղան: Սակայն նման իրողությունները հատուկենտ էին: Ամբողջությամբ վերցրած, հայ ժողովուրդը դրվեց «ամենա-

---

[334] Նույն տեղում:
[335] АВПР, Посольство в Константинополе, д. 3184.
[336] Նույն տեղում:
[337] Նույն տեղում:

հուսահատական և անելանելի վիճակի մեջ»: Անգամ Նորդուզի նահիեում, որը փրկվեց կոտորածից, հայաթափման գործընթացը գնալով ահագնանում էր: Այդ նահիեի Սուքինիա գյուղի հայերին գաղթեցրեցին վիլայեթի մյուս մասերը:

Հայերի ողբերգական վիճակին մեծ վերապահումներով մոտեցող գեներալը չի կարողանում ժխտել, որ նրանք իրոք ծանր կացության մեջ էին, սակայն դա համարում էր ոչ թե սուլթանական քաղաքականության, այլ ընդհանուր անիշխանության հետևանք, երբ «տեղական բեկերի ու շեյխերի հեղինակությունն ունեցել է և ունի ավելի մեծ դեր, քան չատ հաճախ կայմակամի և մյուդիրի ձևական իշխանությունը»»:

Մաևսկին զբաղվում է բացարձակ կեղծարարությամբ, երբ գրում է. «...Զանազան ընկերությունների (հայկական) հեղափոխական գործունեությունը, որոնք, իհարկե, թաքուն աջակցություն էին ստանում արևմտա-եվրոպական քաղաքական գործիչների կողմից, չէր ապահովվում նախատեսնված բարենորոգումներով, և փորձեր էին կատարվում հասնելու Հայկական հարցի որևէ բարեհաջող լուծման: Հարկ է նորից մի փոքր արյուն թափել, և հայերն անպայման կստանան իրենց ցանկացածը»: «Ահազանգը եռանդուն գործողություններ սկսելու մասին,- չարունակում է ռուս դիվանագետը,- տրվեց Կ. Պոլսից: 1895-ի սեպտեմբերի 18-ին Կ. Պոլսի փողոցներում տեղի ունեցավ իր ծավալներով վիթխարի հանրահավաք-չքերթ, որն ավարտվեց հարյուրավոր հայերի սպանդով ու բանտարկություններով: Եվ որովհետև այդ ցույցը լայն արձագանք ունեցավ, հայ հեղափոխականները որոշեցին կայսրության ամենատարբեր մասերում այնպիսի միջադեպեր հրահրել, որոնք առաջացնեին «մոլեռանդ-մահմեդական բնակչության հակազդեցությունը, ինչը, ամենայն հավանականությամբ, զայրույթը թափելու էր գյուղական անպաշտպան բնակչության վրա, և կստեղծեր բավարար առիթ տերությունների վերջնական միջամտության համար»: Հետևանքն այն եղավ, որ «Թուրքերն ու քրդերը գնացին իրենց ընդհանուր թշնամու՝ հայերի վրա... Դրանով Թուրքիայի մի քանի մասերում սկսվեց մահմեդական բնակչության ինքնակառավարման շրջանը, և երևան եկավ մի նոր չարժում՝ լրիվ հակադիր հայկականին: Դժվար է որոշակի ասել՝ այդ չարժումը միտումնավո՞ր, թե՞ ինքնաբուխ սկսվեց: Անկասկած է, որ թուրքերի համար քրդական չարժումը չատ շահեկան էր հայկականին հակադրելու համար»:

Սակայն այդ երկու չարժումների բախումը տեղի ունեցավ ոչ թե Ելդըզի ջանքերով, այլ ինքնաբերաբար: Վանի թուրքերն ու քրդերը, տոգորված մահմեդականների հակահայ տրամադրվածությամբ, վրա տվեցին և հայկական գյուղերից նորից չատ հարկ վերցրին... Թուրքական իշխանությունները սկզբում չէին ձգտում խոչընդոտել հատկապես քրդերի ինքնագլխությունը: Սակայն 1895 թվի նոյեմբերի վերջերին, վախենալով եվրոպական պետությունների միջամտությունից, խիստ հրաման ուղարկեցին՝ դադարեցնել հայերի հետապնդումը»: «Վանում,— չարունակում է Մաևսկին,— մեծ թվով հայ գյուղացիներ էին կուտակվել ամերիկյան օգնություն ստանալու համար, ինչը թուրքերն ընկալեցին, թե քաղաքում հեղափոխականներ էին հավաքվում: 1896-ի հունվարին ինչ-որ նպատակով Վան ուղարկվեց» Սասէդդինը, որը պարտադիր համարեց օգնություն բաժանելու ժամանակ ոստիկանների ներկայությունը: Նա նաև միջոցներ ձեռնարկեց գյուղացիներին հետ ուղարկելու: Սակայն հաջողության չհասավ: Քաղաքում եղած զորքը քիչ համարվեց, և Վանի չուրջը հավաքվեց 10 հազար քուրդ:

Իրադարձությունները նկարագրելիս Մաևսկին ինչ-որ չափով հեռանում է իր իսկ կողմից հնարված վարկածներից, քանզի երևույթների սահմռկեցուցիչ դաժանությունը նրան զրկում է կեղծելու կարողությունից: Նա գրում է. «Հայ ամբողջ բնակչությունը թաքնվել էր հայկական թաղերում և հյուպատոսարաններում: Քրդերը թափառում էին քաղաքի չուրջ ու մերձակա գյուղերում զբաղվում թալանով»: «Ամսի 8-ին գործի անցավ զորքը լեռնային երկու թնդանոթի ու քրդերի հետ»: «Վանից հեղափոխականների հեռանալը հարկ է վերագրել Անգլիական հյուպատոսի» ազդեցությանը: «Հեղափոխա-

*կանների հեռանալուց հետո... անկարգությունները չդադարեցին: Քրդերին թույլ տրվեց որոշ ժամանակ տեր ու տիրական դառնալ հայկական թաղերի լքված մասերին», թալանել դրանք, ավերել ու հրդեհել: Միայն ամսի 11-ին Սահէդդինը որոշեց դադարեցնել խժդժությունները, և քրդերը հնազանդվեցին: Այս ամենից հետո ասվում է գլխավոր ճշմարտությունը: «Այն փաստը, որ կարգն արագ վերականգնվեց... ցույց է տալիս, որ բացարձակապես անհիմն է քրդերին ինքնագլխության և իշխանություններին չենթարկվելու մեջ մեղադրելը»: Հետագա իրադարձությունները ևս վկայեցին, որ Վանի քրդերը «միանգամայն պատրաստակամ էին կատարում իրենց տրված բոլոր կարևոր հրամանները»[338]:*

## *13. ՋԱՐԴ Կ. ՊՈԼՍՈՒՄ*

*Ջարդերը 1895 թվով չավարտվեցին: Մարտ ամսին կոտորածի նոր փորձ արվեց Դիարբեքիրում: Հայերը որոշեցին դիմադրել: Լսելով այդ որոշման մասին՝ Զիան խուժանին համոզեց հետ կանգնել ջարդից: Չնայած դրան, գրեթե ամեն օր փողոցներում հայերի դիակներ էին գտնում: Մի կնոջ 15 հոգով բռնաբարեցին ու քաղաքի պարսպից ցած նետեցին: Սովամահների թիվը գնալով չատանում էր: Որոշ ծնողներ նախ սպանում էին իրենց երեխաներին, ապա ինքնասպան լինում:*

*Ջոք Մարզվանը սկզբում հետ մղեց խուժանի հարձակումները, ապա չդիմացավ զորքերի կողմից: Նիկ Հասարում կոտորած եղավ: Ջոհվեց մոտ 500 մարդ: Պոլսից գավառահայերին աքսորում էին անհայտ վայրեր: Ահմեդ Լուֆթին Ուրֆայի հայերին առաջարկեց. «Եթե նոր ջարդից խուսյա տալ եք ուզում, ինձ տվեք ձեր ունեցվածքի 20%-ը»: Այնթապի թուրք վերնախավի ժողովը որոշում է ընդունում երեք ժամով թույլատրել հայերի կոտորած: Ջարդ էր նախապատրաստվում նաև Մարաշում, բայց զեյթունցիները բանակի հրամանատարությանը սպառնացին, որ եթե այդպիսի բան կատարվի, իրենք նորից զենք կվերցնեն: Հունիսի 8-ին Եվդոկիայի Նիքսար գյուղում կոտորած տեղի ունեցավ, որը տևեց մի ամբողջ օր, գյուղում հայ չմնաց: Նույն բախտին արժանացավ Գաբվաղզ գյուղի հայությունը: Տեղի ռազմական դատարանի նախագահը Նիքսարի ջարդի մասին ասաց. «Իսլամներն արդեն գրգռված էին հայերի դեմ և առիթ գտան վրեժխնդրությունը հագեցնելու»[339]: Ջմչկածագի Միատուն գյուղը 150 օր չդիմադրեց մեջ էր: Պահանջեցին իսլամություն ընդունել: Հայերը հրաժարվեցին: Խուժանը լցվեց գյուղ և սկսեց կոտորել: Փրկվածներն անցան Եփրատի մյուս ափը, բայց ոչնչացվեցին քարայրներում: Կարինի դաշտի գյուղերը թալանելուց հետո 3000 հոգուց կազմված թուրք խուժանը հարձակվեց Արշավան գյուղի վրա, որտեղ հայդուկային խումբ կար: Խուժանի հինգ հարձակումները հետ մղվեցին, որի չնորհիվ փրկվեց մերձակա հինգ հայկական գյուղ:*

*Մարտի 1-ին քրդերը հարձակվում են Շամշեդդին գյուղի վրա, որտեղ հայեր ու եզդիներ էին բնակվում, և պահանջում են հայերին: Եզդիները դիմադրում են, իսկ գիշերը հայերին տեղափոխում են Գործոթ գյուղը: Ցոթ օր անց քրդական ամբոխը պաշարում է այդ գյուղը: Սակայն հայերին ջարդել չի հաջողվում:*

*Ադանայում մի քանի հայ սպանեցին, շատերին վիրավորեցին: Կոտորածը կասեցրեց հենց նոր խարիսխ ձգած ամերիկյան զրահանավը: Քրդերը հարձակվում են Գյումուշխանեի վրա և շրջապատում Ն. Իսրայելյանի տունը: Հարձակվողները տունը գրավել չեն կարողանում և այն հրդեհում են: Քիլիսում մարտի 20-ին սպանվեց 120 հայ, հայերի տներն ու չուկան թալանվեցին: 1896թ. սեպտեմբերի 3-ին զորքն ու խուժանը լցվեցին*

---

[338] Маевский В.Т., նշվ. աշխ.:
[339] «Հնչակ», 1896, թիվ 16:

Ակնի հայկական թաղերը: Վերին թաղի 800 տուն բնակիչների հետ հրո ճարակ դարձան: Կոտորածը չարունակվեց հաջորդ օրը: Սպանում էին ամենուրեք՝ տանը, փողոցում, այգում, ճանապարհին: Դիակները օրերով անթաղ էին մնում: Շատ աղջիկներ նետվեցին Եփրատը: Կոտորվեց նաև շրջակա գյուղերի հայությունը: "Daily News"-ը գրեց, որ Կեսարիայի շրջանում ու Խարբերդում նոր կոտորածներ են տեղի ունեցել, որոնք խլել են չուրջ 500 մարդկային կյանք:

Կոտորածների ալիքներն իրենց մեջ առան նաև կայսրության մայրաքաղաքը: Պատրվակ ծառայեց մի խումբ դաշնակցականների կողմից 1896թ. օգոստոսի 26-ին Օսմանյան բանկի գրավումը, ինչը նպատակ ուներ տերությունների ուշադրությունը բևեռելու Հայկական հարցի վրա: Խմբին հաջողվեց բանկից անվնաս դուրս հանել և արտասահման ուղարկել, մինչդեռ Կ. Պոլսում սկսվեց հայերի զանգվածային ջարդ, որը տևեց երեք օր: Օսմանյան իշխանությունները լրիվ տեղեկություններ ունեին բանկի գրավման դիտավորության մասին, սակայն միտումնավոր չխանգարեցին դրա իրականացմանը հայերի դեմ տրամադրություններն ավելի բորբոքելու և հօգուտ հայերի որևէ ճեռնարկի հնարավորությունը բացառելու համար: Օգոստոսյան ջարդը եվրոպական մամուլը կնքեց «Բարդուղիմեոսյան գիշեր» անունով:

Օսմանյան բանկի գրավման առնչությամբ Արփիար Արփիարյանը գրեց. «Հեղափոխական չարժման մեջ պետք է, որ չարժումը կազմակերպողները բոլորից ավելի վտանգի ենթարկվեն, իսկ չմասնակցողները, որքան հնարավոր է, քիչ վնասվեն: Մինչդեռ խեղճ ժողովրդի հարյուրից հարյուրը վտանգված է, իսկ բանկը գրավողների հարյուրից իննսունը ազատվելու հույս ունի... Սուլթանի քաղաքականությունը հանցավոր բռնելն ու դատելը չէ, այլ հային ջարդելը: Նրա համար ի՞նչ փույթ, որ քսան հայ բանկից ազատ դուրս են գալիս: Բավական է, որ նրանց փոխարեն ուրիշ հայեր ջարդի»[340]: Նախապես թուրք խուժանին բաժանվել էին երկաթյա մահակներ: Ցուցում էր տրված. «Ազդանշան ստանալուն պես 48 ժամվա ընթացքում սպանել ամեն մի հայի, անկախ տարիքից ու սեռից»[341]: Ջարդերի նախօրեին մայրաքաղաք բերվեցին «քուրդ համիդիեներ, ալբաններ և լազերի հրոսակախմբեր»[342]:

Պոլսահայերի սպանդը հավանաբար նախապատրաստվել էր տևական ժամանակում, հօգուտ ջարդերի քարոզչություն տարվել հասարակության գրեթե բոլոր խավերի շրջանում: Դա էլ դեր խաղաց, որ ջարդերին ու թալանին մասնակցեցին նաև թրքուհիներ: «Թուրք կանանց ամբոխը,– վկայում է ականատեսը,– աղմուկով, ծիծաղով, տրորելով այն ամենը, ինչ տանել չէր կարող, թալանում էր իր իսկ կողմից սպանված հայերի կրպակները»[343]:

Կ. Պոլսում Միացյալ Նահանգների դեսպանատան աշխատակից Ռոբերթսոնը նույնպես այն կարծիքին էր, որ Աբդուլ Համիդը չկանխեց բանկի գրավումը, որպեսզի աշխարհի աչքում արդարացնի հայերի գալիք սպանդը: Նույն միտքը հաստատում է մի ուրիշ ականատես՝ Լ. Կամարովսկին. «Թուրքական իշխանությունները, նախապես իմանալով Օսմանյան բանկի վրա հայերի կողմից հարձակման նախապատրաստության մասին, ոչ միայն ոչինչ չարեցին դրա իրականացումը կանխելու, այլև ոստիկանության ճարպիկ գործողությունների միջոցով բորբոքեցին հայերի հայրենասիրական խանդավառությունը և ապա օգտվեցին առիթից՝ զանգվածային կոտորած կազմակերպելու համար»[344]:

Սուլթանի նման դիրքորոշումը ծնունդ չէր միայն հայատյաց վրեժխնդրության: Այլ ամենից առաջ միջոց էր կյանքի ծանր պայմանների, մասնավորապես՝ սովի սպառ-

---

[340] ԳԱԹ, ֆ. Զոպանյան Ա., թ. VII, գ. 909:
[341] *Les massacres...*, p. 245-246.
[342] *История дипломатии*, т. II, М., 1963, стр. 336.
[343] *"The Contemporary Review"*, p. 400.
[344] Ղազարյան Հ., նշվ. աշխ., հ. II, էջ 73:

նալիքի, հետևանքով թուրք հասարակության ահագնացող դժգոհությունը սուլթանական վարչակարգից հեռացնելու և հայերի վրա պարպելու համար:

Սովորաբար սուլթանը, ջարդարար ծրագրեր իրականացնելիս, աշխատում էր մնալ աննկատ, առաջին պլան դուրս չգալ: Պատճառը հասկանալի է՝ սեփական անձին չզրկել մարտավարական աճպարարության հնարավորությունից: Ամերիկյան միսիոներ Փիրսի վկայությամբ՝ Օսմանյան բանկի հարցում սուլթանը հավատարիմ չմնաց «ստորադասների միջոցով գործելու» վարքագծին և մզկիթում արարողությունից հետո մահմեդականներին կոչ արեց կոտորելու Կ. Պոլսի հայությանը[345]: Նա դրանով չբավարարվեց. 1890-ական թվականների ջարդերի ժամանակ փորձարկեց ջարդարարների մի կազմակերպություն, որը Մեծ Եղեռնի տարիներին հանդես եկավ հատուկ կազմակերպություն անունով, երբ հասարակության թափթփուկներից, քրեական հանցագործներից, մարդասպաններից ձևավորում էին ջարդարար խմբեր, դրանց վարժեցնում զանգվածային ջարդեր իրականացնելու համար: Հանցագործների համար դա աշխատանք էր, որը պետության կողմից վարձատրվում էր ամսավճարով[346]:

Մարդասպանների այդ կոկտեյները Կ. Պոլսի հայոց ջարդերի իրականացման գործում խաղացին առաջատար դեր: Նաև իրողություն է, որ ջարդարարներին, այդ թվում՝ նշված կոկտեյներին, հայերի դեմ հարձակման էին տանում օսմանյան պաշտոնատարները, զինվորական բարձր դիրք ունեցողները, ժանդարմերիայի և ոստիկանության սպաները:

Այն, ինչ կատարվեց Կ. Պոլսում, պատկերացում է տալիս Ա. Նելիդովի 1896թ. օգոստոսի 16-ի տեղեկագիրը: Նա գրում է՝ երբ երեսուն հայ երիտասարդ զինված դինամիտներով ու ատրճանակներով մտան բանկ՝ «պահանջելու բարենորոգումների մայիսյան ծրագրի գործադրում...», թուրքական զանազան թաղամասերից դուրս թափվեցին դանակներով ու մահակներով զինված բաչիբոզուկների ամբոխներ և հարձակվեցին բոլոր նրանց վրա, ում հայ էին համարում, ու սկսվեց անպաշտպան և որևէ հանցանք չունեցող քրիստոնյաների ջարդը: Ոստիկանությունը մնաց ոչ միայն կատարվող սարսափելի արարքները դիտողի դերում, այլև հաճախ մասնակցում էր կոտորածին ու թալանին... Մինչ Օսմանյան բանկում դիրքավորված հեղափոխականները պատուհաններից ռումբեր էին նետում... զինվորների և ոստիկանների վրա, վերջիններս բավարարվեցին չենքը հեռվից շրջափակելով: Հայերը պալատ ուղարկեցին բանկի տնօրենի տեղակալ պ. Օբալոնոյին՝ սուլթանին հայտնելու, որ իրենք բանկից դուրս կգան, եթե «ապահովվի օտար դեսպանների մասնակցությամբ իրենց բոլոր պահանջների կատարումը»: Սուլթանը Ռուսական դեսպանության թարգման Մաքսիմովին «ջերմագին խնդրում է... ապստամբներին խոստանալ բանկից ազատ հեռանալ և Թուրքիայից մեկնել, եթե նրանք հրաժարվեն բանկը պայթեցնելու դիտավորությունից»: Ա. Մաքսիմովին հաջողվում է բանկը գրաված հայերին համոզել և անգլիական նավով ճանապարհել Մարսել[347]:

Կ. Պոլսի իրադարձությունների մասին ուշադրության արժանի հուշագրություն ունի ռուս լրագրող Ա. Տիրկովան, որը ջարդերի օրերին գտնվում էր Կ. Պոլսում: Նա նկարագրում է հայերի հանդեպ թուրքերի գործադրած սահմռկեցուցիչ վայրագությունները: Ըստ Տիրկովայի՝ Օսմանյան մայրաքաղաքում երեք օրում ոչնչացվեց 10000 հայ: Ականատեսները նաև վկայում էին, որ ջարդերի ընթացքում լայն տարածում գտավ մարդավաճառությունը՝ հայերին ստրկության էին վաճառում: Ռուս սպա Պեչկովը նույնպես հաստատում է, որ օսմանյան ոստիկանությունը ոչ միայն կազմակերպեց ջարդերը, այլև մասնակցեց դրանց: Նա գրում է. «Կոտորածներն իրականացրել են կառավարու-

---

[345] АВПР, Посольство в Константинополе, д. 3441.

[346] ЦГВИАР, ф. 450, д. 113.

[347] АВПР, Политархив, д. 3449.

*թյան կողմից նախապես կազմակերպված հրոսակախմբերը՝ ոստիկանական պաշտոնյաների գլխավորությամբ»: Պեչկովը կատարվածն անվանեց «տարօրինակ կոտորած»[348]:*

*Մոսկվայում 1897թ. հրատարակված բացառիկ արժեքավոր "Братская помощь пострадавшим в Турции армянам" ժողովածուում հրապարակված է նաև Օլգա Կայդանովայի վկայությունը: Նա գրում է, որ ջարդերի առաջին օրը ազդանշան հանդիսացան փոստատան կուիվն ու գանձապահի սպանությունը, որից հետո «սկսվեց թուրքերի կողմից հայերի հետապնդումն ու անխտիր սպանությունը... Ամեն քայլափոխին փողոցներում, սալահատակների վրա ընկնում էին հայերը գլուխներին տեղացող մահակների և թրերի հարվածներից... Ջարդերը չարունակվեցին տներում»: Օ. Կայդանովան ճիշտ է նկատում, որ «կոտորածն ամբողջ քաղաքում սկսվել էր միաժամանակ և դա բացատրել... բանկում հայերի կողմից գանձապահին սպանելու վրիժառությամբ, տարօրինակ կլիներ...»: Նա նաև գրում է, թե ջարդարարներն իրենց մահակների ծանրությունը և սրերի ուժը փորձում էին հայերի, հատկապես պանդուխտների վրա: «Նավահանգստում աշխատող մի քանի հայ... սպանվեց վայրկենապես՝ տեղնուտեղը գլուխներին ստանալով փայտի մի քանի հարված: Թռչելով նրանց դիակների վրայով... հետապնդողները նետվեցին դեպի բանվորների տունը»: Առջևից գնացողները ներս էին խուժում, իսկ «մնացած ամբոխը կանգնել էր ներքևում՝ սպասելով ավարին, որ նետելու էին իրենց՝ բզկտելու համար... Ահա լուսամուտներին երևացին թուրքերը՝ քարշ տալով հայերին... դժվար էր որոշել՝ նրանք արդեն սպանվա՞ծ էին, ծեծից կիսամեռ դարձա՞ծ, թե՞ սարսափից ուշագնաց: Այդ հայերին նետեցին ամբոխին, որը սկսեց նրանց ջարդել, քարշ տալ փողոցներով... Տեսարանն այնքան զարհուրելի էր, որ անհնար էր նայել»[349]:*

*Ցրանսիական «Միդոն» նավի անձնակազմի անդամներից մեկի վկայությամբ՝ կոտորածը սկսվեց հանկարծակի: Հայերն սպանվում էին ամենուրեք մահակներով ու սրերով: Դիակներն անմիջապես հավաքվում և թափվում էին Բոսֆոր-Մարմարա միացման մասի ջրի ուժեղ հոսանքի մեջ: Կատարվածի անտարբեր ականատեսների դերում էին ոչ միայն թուրք բարձրաստիճան պաշտոնատարները, այլև նավահանգստում կանգնած օտար երկրներին պատկանող նավերի անձնակազմերը[350]:*

*Կ. Պոլսում Սերբիայի դեսպան Վլադան Ջորջևիչը օգոստոսի 27-ին տեղեկագրեց. «...Քաղաքում կոտորածը տևեց մինչև կեսգիշեր և արդեն հայտնաբերված է 250 հայի և 30 զինվորի դիակ», բայց հավանաբար հայ զոհերի թիվը հասնում է 500-ի[351]: «Դիակները նետվում են Ոսկեղջուր»: Անգլիայի ներկայացուցիչ Հերբերթը խոստովանեց, որ կոտորածի նախօրյակին հայերն ահազանգեցին դեսպանատուն՝ սպասվող արյունահեղության մասին, սակայն այդ նախազգուշացումը անուշադրության մատնվեց: Ջարդը չարունակվեց նաև հաջորդ օրը: «Հայերը սպանվում են փողոցներում և նավահանգիստներում՝ նավակների մեջ... ոստիկանությունը չի միջամտում»: Ջորջևիչը Գալաթիայում սեփական աչքերով էր տեսել. «Մի հայ թիավարում էր նավակը: Թուրք սպաչիները (խուժան) նետվեցին նրա վրա: Ես լսեցի ատրճանակի կրակոց ու տեսա՝ նավակում ճողերով նրան այնպես էին հարվածում, ինչպես դա անում էին փողոցներում հայերին սպանելուց առաջ: Այդ ամբողջ ժամանակ նավակի կողքին կանգնած էին ոստիկանական կատերները»: Քաղաքի նույնիսկ ամենամարդաշատ փողոցները դատարկ էին, խանութները՝ փակ: «Շատ տեղերում արյունաներկ սալահատակներին տեսա անգործ թափառող, ճողերով զինված խուժանների, որոնք ստուգում էին յուրաքանչյուր անցորդի, այդ թվում նաև ինձ, չնայած առջևիցս գնում էր դավազը (թիկնապահը): Մի խաչմերուկում սալահատակին պառկած ողբում էր ինչ-որ դժբախտ, իսկ «15 սպաչիներ հաստ ճողերով*

---

[348] *Նույն տեղում:*

[349] *Братская помощь...*, стр. 75-76.

[350] *Նույն տեղում*, էջ 78-79:

[351] *АС, МИД, ПО, И/В*, ф. III, д. 1527, л. 122.

*հարվածում էին նրա արյունաշաղախ գլխին»: Երեւացին մեծ թվով զինված ոստիկաններ, որոնք սակայն չփորձեցին միջամտել»: Բերայում Ջորջևիչը տեսել էր, թե ինչպես ամբոխը կանգնեցրել էր կառքը և դաժանաբար ծեծել նրանում եղած հային, չնայած վերջինս կողքին նստած էր թիկնապահ ժանդարմը: Որոշ տվյալներով՝ ջարդերի առաջին երկու օրում սպանվեց 3000 հայ: Ղալաթիայում հայերի վրա հարձակում գործեցին բանակային ուժերը: Ղալաթիայի ու Թոփխանեի միջև ընկած փողոցներում զինվորները սպանում էին բոլոր հայերին: Շատ հայեր երեխաների հետ միասին փորձում էին թաքնվել տանիքներին, սակայն նրանց վրա կրակում էին փողոցից*[352]:

*Սերբական "Царградский гластник"-ի խմբագիր Ն. Սավիչը գրում է.*

*«Սեփական աչքերով տեսա, թե ինչպես վիթխարի թվով համալներ և ամեն տեսակի թափթփուկներ... չտապում էին ոստիկանական երկրորդ բաժանմունք: Երբ վերադարձան, նրանց բոլորի ձեռքում փայտյա կամ մետաղյա ձողեր կային: Ասում էին, որ նրանց կանչել էին այդ զենքերը տալու համար: Ամբոխը գնաց Ղալաթիա: Բանկի մերձակայքում՝ Քարաքեուզ և հատկապես Փերշամբի բազարում կատարյալ սպանդ էր: Ակնհայտ էր, որ հայերի դահիճները քաջատեղյակ էին, թե ինչպես պետք է կատարեին իրենց պարտականությունները: Սկզբում նրանք հարվածում էին ձողերով, իսկ ապա դանակներով՝ զոհերի սրտին ու գլխին և նրանց մեռցնում էին: Ոստիկանները միայն հետևում էին, որ լայներիզ գլխարկներով զբոսնողներն ականատես չդառնային կատարվածին...*

*Հինգշաբթի առավոտյան ժամը 5-ին ես պատուհանից տեսա, թե ինչպես են վերադառնում համալներն ու Ղալաթիայի հանցագործները: Ոստիկանները նրանց կանգնեցրին և վերցրեցին ձողերն ու դանակները՝ ասելով. «Տուր, բավական է»»*[353]:

*Օգոստոսի 28-ին Ջորջևիչը գրեց. «Կոտորածներն ու հայերի տների թալանը չարունակվեց մինչև այսօր առավոտ: Դեսպանները երեկ Բ. Դռնից պահանջեցին վերջ դնել կոտորածին, սակայն անարդյունք: Այսօր նոր, ավելի խիստ վերջնագիր ներկայացրին»: Ա. Նելիդովը վկայում է, որ օգոստոսի 28-ի գիշերը Ռումելիայում ջարդերը տեղի ունեցան անգամ հյուպատոսական հաստատություններում: Բ. Դուռը հավաստիացնում էր կոտորածների դադարեցումը, սակայն դրանք չարունակվում էին:*

*«Խասգյուղում, որտեղ կար հայերի 34 հազար տուն, ոչ մեկն առանց թալանվելու չմնաց: Թալանում էին թուրքերը, քրդերը և թուրքական նավատորմի նավաստիները: Նրանց օգնում էր նաև հրեական թափթփուկը: Թե Խասգյուղում քանի մարդ սպանվեց, հայտնի չէ, սակայն հայտնի է, որ խնայեցին միայն կանանց ու երեխաներին... Ջախջախաս տղամարդիկ մորթված էին: Ամբողջ թալանը տարվում էր Հոք մեյդան, որտեղ բաժանվում էր... Մինչև սպանության ու թալանի սկսելը սապանջիներն ու թուրք նավաստիները աղոթեցին ալլահին...»*[354]:

*Թուրքիայի գյուղատնտեսության նախարարը հայտարարեց, որ հայերի դեմ բռնությունները շատ դաժան էին, բայց առանց դրա՝ հայկական ռումբերը լոկ սպանելու էին եվրոպացիների համակրանքն այդ չարագործների՝ հայերի, հանդեպ:*

*Ղալաթիայի կոտորածից հետո տեղի գերեզմանատուն բերվեց չուրջ 1000 դիակ: Գերմանիայի, Անգլիայի և Իտալիայի դեսպանների վկայությամբ սպանվածների ընդհանուր թիվը հասավ 6000-ի, չհաշված նրանց, ում դիակները նետվեցին ծով: Ռուսական առևտրական նավերից մեկը Բոսֆորում հանդիպեց նավի, որը քաշում էր երեք վիթխարի բարկասներ՝ լցված սպանվածներով, իսկ երեկոյան Թերափիում դուրս ցցվեցին մարդկանց կտրված գլուխներ:*

---

[352] *AC, МИД, ШПЦ,* пов. № 533, л. 207.

[353] *AC, МИД, ШПЦ,* пов. № 546:

[354] *AC, ШПЦ,* пов. № 542.

Կ. Պոլսից 1896թ. օգոստոսի 19-ին «Մշակ»-ին գրում են. «Բանկի չուրջը գնալով իրարանցումը սաստկանում է: Ղալաթիայի բոլոր փողոցները փակ են, մի ակնթարթում Ոսկեղուրն ու Բոսֆորը ծածկվեցին նավերով: Սամաթիայում, Ենի Գափուում և Գում Գափուում խուզարկություններ տեղի ունեցան, սակայն ոչինչ չհայտնաբերվեց... Կեսօրին չփոթություններն ահագնացավ, զորքը չարժման մեջ դրվեց, անընդհատ լսվում էին պայթյունների ձայներ: Սամաթիայում սկսվել էր ռմբակոծությունը...»:

Հարձակվեցին բանկի վրա: Հեղափոխականները պատասխան կրակ բացեցին, զորքերից կորուստներ եղան: Այդ ընթացքում «բանկի չուրջն ու մերձակա փողոցներում սկսվեց ահռելի կոտորած: Կոտորում էին զորքն ու խուժանը: Կոտորում էին հրացանով ու բիրով: Զոհերի արյունը ողողել էր դահիճների հագուստներն ու դեմքերը: Նրանք փոշու և ավազի մեջ ցամաքեցնում էին իրենց արյունաթաթախ ձեռներն ու շարունակում մորթել պատահած քրիստոնյային... Ռումբ էր ընկել Ղալաթիայի վարժարանի մերձակա չենքերին: Զինվորները կրակ բացեցին այդ չենքերի վրա»: Զորքը կրակեց մի ֆրանսիացու, ապա նրանից ստորագրություն վերցրեց, թե իր վրա կրակել են հայերը:

Հրապարակում 10 փարայով բիրեր էին վաճառում, ոստիկանության թողտվությամբ թալանվեց հրազենի մի քանի խանութ: Գաղտնի հրաման կար հայերին սպանելու մասին: Զորքի մասնակցությամբ սկսվեց նրանց ունեցվածքի թալանը: Նախապես քաղաք բերված համիդիե գնդերին հրամայվեց զիչերը ջարդել հայերին: Արդեն կոտորվել էին Կասըմ Փաշայի, Խասգյուղի, Սամաթիայի և քաղաքի այլ մասերի հայերը: Կասըմ Փաշայից սայլերով հայերի դիակներ էին տեղափոխում: Բոսֆորի չոգենավերում եղած հայերին թափեցին ծով: Հարձակվեցին խանների վրա և բոլոր հայերին թալանեցին ու սպանեցին: Ավերվեց Քարափի վրայի անգլիական գործարանը, հայ աշխատակիցներին սպանեցին:

Բ. Դուռը միայն ուրբաթ օրը հայտարարություն հրապարակեց, թե արգելում է թուրք խուժանի հարձակումները: Զինվորական նոր ուժեր քաղաք բերվեցին:

Շաբաթ օրը տեղ-տեղ ռումբեր պայթեցին[355]:

Երկուշաբթի քաղաքը խաղաղ էր: Զորքերը հսկում էին փողոցները: Սուլթանի գահակալության տարելիցին նվիրված հանդեսը տեղի չունեցավ: Օգոստոսի 21-ին Ելեզոզում նիստ հրավիրվեց՝ նվիրված հայկական հարցին[356]: Վաճառատները բացվել էին, բայց առանց առևտրի: Փողոցներում մարդիկ նման էին ստվերների: Ահա բանտից ստացված մի նամակ. «Օրական 20-30 հայ է մեզ մոտ բերվում մի պատճառով՝ անխոհեմ էին գտնվել և տնից դուրս էին եկել: Բանտ է Պոլիսը, բանտ է ամբողջ Թուրքիան, իսկ մեր բանտը սպանդանոց է... Հարցաքննության ենթարկվել՝ նշանակում է հարձակման ենթարկվել... ըստ քննիչների՝ ամեն մի գավառցի հայ ոստիկանի վրա զենք է արձակել, ռումբ է նետել... Հայերին բանտերում պահում են հնարովի մեղադրանքներով ու վկայություններով... ծեծ, խոշտանգում, գանակոծություն, գարշահոտություն... Մարդասպանության և այլ ծանր հանցագործությունների համար մեղադրված թուրքերը բոլորովին ազատ են, խոշտանգում են միայն հայ բանտարկյալներին... Բանտապահ թուրքերը հայերից հավաքված փողերով լավ ապրում են և հային իրենց ծառայեցնում: Ու երբ ղաչմանում ենք, սպառնում են բոլորիս կոտորել... բանտերում ստվար թիվ են կազմում հայ կանայք»[357]:

Այդ օրերին տարածված մի ազդարարության մեջ կարդում ենք. «Եվրոպական պետություններին դիմելու... նպատակով տեղի ունեցած ցույցի հետևանքով հազարավոր հայեր 48 ժամվա ընթացքում մորթվեցին ու խոշտանգվեցին: Կայսրական պալատը, չբավականանալով դրանով, մինչև օրս շարունակում է ոչնչացնել բանտարկությունների ու

---

[355] ԳԱԹ, ֆ. Առաքելյան Հ., գ. 108:
[356] ԳԱԹ, ֆ. Առաքելյան Հ., գ. 109:
[357] Նույն տեղում, գ. 114:

աքսորների միջոցով: Մայրաքաղաքում ու արվարձաններում չկա մի հայ տուն, որը չխուզարկվի և մի փողոց, որը հսկողության տակ չլինի»[358]:

Դեսպանների միջնորդությամբ մի քանի հայ բանտից ազատվեց, բայց Բերայի կառավարիչ Էնվերը սեպտեմբերի կեսերին նոր ձերբակալություններ սկսեց: Հայերը հարկադրված արտագաղթում էին: Մոտ 30-40 հազար մարդ լքեց օսմանյան մայրաքաղաքը: Եկեղեցիները վերածվեցին ոստիկանական պահականոցների, փակվեցին հայկական վարժարանները, Սամաթիան, Խասգյուղը, Կասըմ Փաշան ավերված էին: Դիակների փոխադրությունը չարունակվեց մինչև սեպտեմբերի 3-ը: Պատրիարք Մ. Իզմիրլյանին աքսորեցին Երուսաղեմ, սակայն Ֆ. Քըրրիի չանքերով հետ բերվեց[359]:

Փողոցներում հանդիպած հայը բանտ էր տարվում: Դրանից խուսափելու համար շատ հայեր տնից դուրս էին գալիս փաթթոցով: Բանտերում այլևս տեղ չկար: Բանտի էին վերածել նաև Բին-Բին Դերեք ստորգետնյա հսկա նկուղը: Բազմաթիվ հայեր սպանվեցին ոստիկանական պահականոցներում: Սպանված հայերի տները իրական արժեքի հինգ տոկոսով վաճառում էին: Հայերը զրկվեցին բոլոր ծառայություններից, բացի բեռնակրությունից[360]: Թուփհանեում ցուցադրում էին հայերից խլված ռումբերը, այդ թվում նաև դինամիտը: Ցուցադրում էին նաև զանազան կենցաղային ու արհեստագործական իրեր որպես ռումբի մասեր: Հարեմներ տարվեցին մեծ թվով հայ կանայք ու աղջիկներ: Նրանց պարզապես որսում էին փողոցներում: Հայ բոլոր լրագրերը փակվեցին[361]: Թուրքական մամուլը լի էր հայերի հասցեին նույնիսկ փողոցային հայհոյանքներով:

"La politique du Sultan" (Փարիզ, 1897) գրքում Վ. Բերարը գրում է, թե Խասգյուղի հայերից շատերն իրենց տներում պատսպարում էին գավառներում կոտորածներից փրկվածների: Նույն Խասգյուղի նավամատույցի մերձակայքում հույներն ու հայերը խառն էին բնակվում, սակայն հույների ոչ մի տուն չվնասվեց, իսկ հայերի տները լիովին ավերվեցին: «500 ընտանիք ունեցող այս թաղում տղամարդիկ հատուկենտ են»: Վ. Բերարն անձամբ էր եղել կոտորածի թաղերում ու վկայում է՝ փրկվել էին միայն այն տղամարդիկ, ովքեր այդ օրը եվրոպացիների տանն են եղել՝ որպես տնային ծառայողներ, կամ Խասգյուղից բացակայել են: Տեղի երևելի թուրքերից Էյուբ Ֆեհմի փաշան ասաց. «Արդեն մեկ տարի է՝ ես հայերին ասում եմ, որ նրանց սպանելու են: Եթե Ելդըզի մարդը (սուլթանը) քրիստոնյաներին ջարդելու լինի, ինձ մոտ եկեք...»: Նա խոսքի տերը եղավ: Երբ կոտորածն սկսվեց, մոտ 100 հայի տարավ մզկիթ և իմամին խնդրեց պաշտպանել: Մզկիթում ապաստանածներին սնունդ էին հասցնում թաղի թուրքերը: Երկրորդ օրը մզկիթ է գալիս մի սպա և ասում. «Էֆենդիմիզը (մեր տերը) թույլ է տվել հայերին ջարդել»: Իմամը պատասխանում է. «Մարգարեն հրամայել է միայն անհավատներին ջարդել: Այս մարդիկ քրիստոնյա են և նրանց պետք չէ մեռցնել» ու թույլ չի տալիս, որ զինվորները ներս մտնեն[362]:

Պատմում է մեկ ուրիշ ականատես.

...«Խուժանը նախապես պատրաստվել էր: Հայերի տներին կավիճով նշան էին արել: Ջարդը տևեց 30 ժամ: Նավամատույցներում հանդիպած հայերին մսագործների խանութները քշեցին և քանի որ խեղճերը դիմադրում էին, նրանց ձեռները մսավաճառանոցի տախտակի վրա ջարդեցին... հետո... սպանեցին՝ կատարելով համապատասխան կազմակերպությունների վճիռը: Հրոսակները... ունեին բիրեր՝ բոլորը նույն ձևի ու նույն չափի... Դրանք հատուկ այս գործի համար էին պատրաստվել Թոփխանեում... և բաժանվել էին ոստիկանական պահակակետերում, քանի որ կառավարությունը նախապես տեղյակ էր, որ հայ հեղափոխականները հարձակում էին գործելու... խուժանը, հենց հայ

---

[358] Նույն տեղում:
[359] Նույն տեղում, գ. 111, 112:
[360] Նույն տեղում, գ. 110:
[361] Նույն տեղում, գ. 115:
[362] ԳԱԹ, ֆ. Ասաքեյան Հ., գ. 128, ԹԹ.5-10:

էր տեսնում, կամ ծնկի էր բերում, կամ երեսն ի վար գետին էր դցում և այնքան էր գլխին խփում, մինչև կտոր-կտոր դառնար... Ոստիկանությունը թաղը չրջապատել էր, և երբ հայերը փախչելու փորձ էին անում, բռնում էին... Հրոսակները հերթով տնից տուն էին մտնում... ոչ մի հայի տուն աչքաթող չարեցին... Երբեք հույնի տան վրա չհարձակվեցին... Նրանց ստացած հրամանը վերաբերում էր միայն հայ տղամարդկանց, որոնց կոտորում, խմոր էին դարձնում ու նետում չներին... Փողոցներում հոսում էին արյան գետեր»[363]:

Պատմում է "Le Temps"-ի թղթակիցը.

...«Հրոսակների խուժելու ժամանակ մանկամարդ կանանցից ոմանք դաշտերը և ոմանք էլ գետնափոր չտեմարանները նետվելով, ազատվել են... Իսկ ծեր կանայք իրենց ամուսիններին ու որդիներին փաթաթված, նրանց վզերից կախված, դուրս են քշվել...

Փողոցների անցումներին ծնրադրած, ցեխի մեջ թավալվող այդ կանայք եղունգներով ճանկռում էին հողը, բերանները ու մազերը հողին էին քսում և այծյամների նման ձայներ հանում... կամ լուռումունջ գլուխները էին տարուբերում ապուշ չարժումներով: Փողոցները դատարկ էին, հատուկենտ մուրացկաններ էին երևում... Տեսանք տների վրա կավճով գրվածները, օրինակ. «Այստեղ Հակոբ հայն է»: Թալանել էին ամեն ինչ, չտարածը չարդուփշուր էին արել: Գերեզմանոցում թարմ հողաթմբեր են... Իսկ քե՛ քանի՛ մարդու ոտքերից են քարշ տալով նետել Ոսկեջրի ծովախորշը... Գոլսում մարդիկ չաբաթներով ճուկ չէին ուտում...

Խասգյուղից գնացի Ղալաթիա: Կամրջին ամեն օր տեսնում էի նույն մարդկանց՝ «ձեռներին մեկական գավազան»: Նրանք հարձակվում էին հայերի վրա: «Հայ բռնակիր տեսնելիս... վրայի բեռը գետին էին նետում և ծոծրակին փայտի հարվածներ իջեցնելով՝ սպանում»:

Ով փորձում էր փախչել, զորքը թույլ չէր տալիս: Ով ասում էր՝ «Թուրք եմ», տաբատը ներքև էին քաշում՝ ստուգելու... Երբ հայն արդեն մեռած էր, լրտեսները կոչիկները հանում էին... Մոտեցա մի խմբի, որը սպանում էր մի ծերուկի: Իսկույն հայտնվեց ոստիկանն ու երեսիս բղավեց. «Կորիր, դու այստեղ գործ չունես»:

Ալեքսանդրի խանի դռները փակ էին, և զորքերն այն պահում էին, իսկ ներսից լսվում էին գավազանի հարվածների ձայներ և մարդկանց վայնասունի աղաղակներ... Ներսում գլուխներ էին կտրում: Իսկ ծովափին սկսվեց հրացանազարկ:

Գնացինք մեր բնակած խանը... Այն չրջապատել էր սուլթանի թիկնապահ չոկատը: Ասացի, որ ես թուրք եմ: Սուլթանի այդ ալբանացի թիկնապահները, տեսնելով, որ զինվորներն ինձ նեղում են, ասացին. «Մեր տերն ասել է, որ միայն հայերին սպանեք...»: Ղալաթիայի խաներում ու փողոցներում հրոսակները խփում և բղավում էին: Մեռած բեռնակիրների դիակների ոտներից քաշելով՝ Բոսֆոր էին նետում, և ջրի հոսանքը դրանք անմիջապես քշում էր Մարմարա: Ուրիշները բազում մեռածներին ու վիրավորներին բարձում էին սայլերն ու տանում նետում էին Շիշլիի գերեզմանատուն: Բերայի մեծ փողոցն ամբողջ երկարությամբ արյունով ողողված էր, այնտեղով անցնում էին դիակներով լցված սայլերը: Մալթեզ փողոցով անցնող առվակով արյուն էր հոսում...

Մի ֆրանսիացի պատմել է, որ Մեծ կղզում կոտորածներ տեղի չունեցան, քանի որ շատ եվրոպացիներ կային: Հյուրանոցների պարտեզներում աշխատող քրդերը դրանց տերերին խնդրեցին մի քանի օր իրենց ազատ արձակել, որ «գնան Ստամբուլ հայերին կոտորելու՝ համաձայն Մեծ էֆենդու (սուլթանի) հրամանի»:

Սկյուտարում կոտորածը խափանեց մի իմամ: Գատր գյուղում Ծուռադ փաշան ինքը դուրս եկավ հրոսակների դեմ: Գում Գափուում կոտորածը կանգնեցրեց Հասան աղա անունով մի զինվորական»:

---

[363] Նույն տեղում, գ. 128, քք. 11-12:

Հազիվ թե այս կոտորածը, չարունակում է թղթակիցը, հետևանք է մոլեռանդության: Եթե Պոլսի առաջին կոտորածում (1895թ. հոկտեմբեր) գլխավոր դերը խաղացին սոֆթաներն ու մեդրեսների սովորողները, այս տարի նրանք մզկիթներից դուրս չեկան: Վերջին կոտորածի ժամանակ ժողովրդական չարժում չկար: Բիր, գավազան, խուժան, լրտես, սայլ՝ ամեն ինչ նախապես պատրաստված էր: Մի ազդանշանով չարժվեցին և մի այլ ազդանշանով էլ հանկարծակի կանգ առան: Իսկ ազդանշանը հետևյալն էր. «Մեր տերը թույլ է տալիս հայերին սպանել»՝ 6000-7000 հոգու: Բժիշկների վկայությամբ՝ միայն Շիշլիի գերեզմանոցում թաղվել էր 3000 հոգի[364]:

Ականատես ծովայինները Ա. Ամֆիտեատրովին պատմել են. «Ջարդի ամենասարսափելի գործողությունը գիշերը հայկական աշխատավորական թաղամասի ամայացումն էր: Կ. Պոլսի ոստիկանությունը կասկածում էր, որ այդ թաղում էր գտնվում հայ հեղափոխական չարժման, այսպես կոչված, ապագա բանակի շտաբը»: Թաղամասում գործում էր ոչ թե ամբոխը, այլ կայազորը: Քնատ, որևէ վատ բան չսպասող մարդկանց մորթեցին անակնկալ, ինչպես ոչխարների, առանց կրակոցի: Գործադրվեցին միայն խզակոթ, սակր և չուգունե գլխիկով մահակ... Դիակները բեռնել էին հին նավակները, դրանց վրա քարեր լցրել, պարաններով կապել ու ապա տեղափոխել Ոսկեղուր, որտեղ, ափից հեռու, նավաքթի կամ նավախելի ծակվածքը նավակը հատակ էր իջեցրել: Հետո, երբ հոգնել են սպանելուց և մարդկանց ուղեղները խառնելուց, ոստիկանները սկսել են ջրախեղդ անել նաև կենդանի մարդկանց... Այգաբացը... երևան հանեց ողբերգական տեսարանը, նավակներից տիկնիկների նման ջուրն էին ընկնում ոտներն ու ձեռները կապված մարդիկ՝ խցանված բերաններով, իսկ ոստիկանական նավակների շարքը հետևում էր, որպեսզի լողալով չփրկվին, և եթե զոհն անմիջապես քարի նման չէր սուզվում, այլ թպրտում էր մակերեսին, նրան սպանում էին թիակներով: Փրկվելու հույսով հայերը լողում էին դեպի օտարերկրյա նավերը, սակայն նրանց հետ էին չպրտում: Հետապնդողների կողմից բռնվելով՝ զոհվեցին նույն այն մարդկանց աչքի առաջ, որոնցից ապարդյուն պաշտպանություն էին աղերսում...»[365]:

Սպանվածների և վիրավորների միջև խտրականություն չէր դրվում: Նրանց սայլերով փոխադրում էին մեռելափոսեր կամ ծովափ: Ամֆիտեատրովը վկայում է, որ մեծ ընկնելու պես կոտորածի վայրերից չարժվում էին «սպանվածների մարմիններով բեռնված մեծ սայլեր»:[366]

"Новое время"-ն գրեց. «Եվրոպացիները հիմա Կ. Պոլսում ճուկ չեն ուտում»:

Խոսքը կրկին հազարավոր մարդկանց ծով թափելու մասին էր: Ղալաթիայի և Բերայի փողոցներից դիակներ էին տեղափոխում 98 եզասայլ, 136 սովորական սայլ, Գատր գյուղի ճանապարհով ամեն օր դիակներ էին տեղափոխում 70 սայլեր:

Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի զինվորական կցորդ Գիզլը փորձեց մի հայի փրկել թուրք սպայի ձեռքից: Վերջինս պատասխանեց. «Տեր, մի խառնվիր, հրամանն այդպիսին է»[367]:

> «Պոլսի փողոցները,— գրում է Դ. Սպիրովը,— ողողվում են անպաշտպան հայերի արյունով... Նորածին մանուկների, անպաշտպան կանանց արյունը հեղվում է վայրագ անհավատների ձեռքով... եվրոպական մեծ տերությունների ներկայացուցիչների աչքի առջև... գազանաբար մորթվում է 20000-ից ավելի հայ... "Times"-ի թղթակցի հաղորդումը, թե «կոտորածներն իրականացվել էին պալատի հատուկ հրամանով, մեկ անգամ ևս պարզում է կատարվածի բնույթը:
>
> Ասիական փաթթոցավորը խրախճանքի ու հաճույքի համար իր հպատակներին հազարներով կոտորում է, և եթե նրա բարբարոսական բնազդը թելադրում է երկրի երեսից բնաջնջել մի ամբողջ ժողովուրդ, ապա Եվրոպան... հարյուրապա-

---

[364] ԳԱԹ, ֆ. Առաքելյան Հ., գ. 128, թթ. 13-29:
[365] Սպիրով Դ., նշվ. աշխ., էջ 12-14:
[366] Амфитеатров А., Армянский вопрос, СПб., 1906, стр. 5-6.
[367] Նույն տեղում:

*տիկ հանցավոր է..., քանի որ տարիներ շարունակ հովանավորում է այդ նեխած բռնակալին»*[368]:

*«Ցոթ պետություն մեկ թագավոր» սկզբունքով սուլթանն իր ձեռքում պահում է «հոգևոր ու բարեգործական ընկերությունների, դերվիշների, վանքերի ու մզկիթների հարուստ եկամուտները... իրականացնելով իր նվիրական գաղափարը՝ գլխովին ոչնչացնել երկրագնդի բոլոր դյավուրներին»: Դա իսլամականների կառավարություն էր, որը արտաքուստ չէր երևում, բայց կայսրության իրական տերն էր: «Բ. Դուռն այս կառավարության ձեռքին զենք էր Եվրոպային խաբելու և ժամանակ շահելու համար, հնարավորություն ստեղծելով, որ սոֆթայական կառավարությունը գործեր եվրոպական պետությունների անմամլ կարգադրությունների դեմ...*

*Սոֆթաների այս կառավարությունը մի կիրք ուներ՝ կողոպուտ: Եվրոպան չէր ուզում հասկանալ, որ չիբից չաքար չի ստացվի, որովհետև ավելի մտահոգված էր այլասերված ու քայքայված Օսմանյան կայսրության վերականգնումով, քան կոտորածները կանխելու և խեղճ քրիստոնյաներին որոշ իրավունքներ տալու խնդրով...»*[369]:

*Բանկի գրավման «հաջորդ օրը,– նշում է Ֆ. Նանսենը,– հայերն ու նրանց տները միանգամից հարձակման ենթարկվեցին քաղաքի զանազան մասերում ավազակախմբերի կողմից, որոնց ղեկավարները քրդերն ու լազերն էին: Սայլերը սպասում էին փողոցներում դիակները տանելու համար: Զինվորները միայն մի քանի տեղում մասնակցեցին կողոպուտին: Նրանք պաշտպանում էին եվրոպական և հունական թաղերը... Ջարդերը տևեցին երկու օր, բայց մոտավորապես յոթ հազար հայ սպանվեց»*[370]:

*Տերությունների դեսպանների օգոստոսի 31-ի նոտայում ասվում է.*

*«Մեծ տերությունների դեսպանները... Բ. Դռան ուշադրությունն են հրավիրում վերջերս մայրաքաղաքն ու նրա շրջակայքն ալ կարմիր արյունով շաղախած խառնակությունների, հատկապես շատ վտանգավոր հետևյալ կետի վրա: Ստույգ ապացուցված է, որ հայերին սպանող գրգռիչներին գտնելու պատրվակի տակ տներն ու խանութները կողոպտող վայրագ հրոսակները մոլեռանդ ժողովրդի կողմից պատահաբար կազմակերպված չէին, այլ տեղական իշխանություններին հայտնի, բայց դրանց կողմից չղեկավարվող մի քանի հատուկ կազմակերպությունների ձեռքի գործն էին:*

*Հետևյալ պարագաները հաստատում են այս պնդումը:*

*1. Հայ խռովարարների կողմից Օսմանյան բանկի գրավման լուրը հազիվ էր տարածվել, դեռ ոստիկանությունն ու զինված ուժերը դեպքի վայր չէին հասել, երբ այդ հրոսակները քաղաքի տարբեր կետերից դուրս եկան միաժամանակ: 2. Հրոսակախմբերի մեծամասնությունը զգեստավորված և զինված էր նույնանման: 3. Նրանց հետ կային նաև չարքաշային զինվորներ և ոստիկաններ: Ոստիկանությունը ոչ միայն չէր կանխում ամբոխի ոճրագործությունները, այլև ինքն էր մասնակցում դրանց: 4. Ոստիկանների մի մասը խուժանին սուր ու դանակ էր բաժանում և ամբոխին ցույց տալիս հայերի գտնված տեղերը: 5. Կայսրական պալատի շրջակայքում, զինվորականների աչքի առաջ ամբոխը լրիվ ազատ թափառում էր և ոճիրներ գործում: 6. Մարդասպաններից մեկը... պալատ տարվելիս՝ պալատականների կողմից ընդունվել է որպես մտերիմ բարեկամ: 7. Եվրոպացիների մոտ ծառայող և ջարդի ընթացքում անհետացած երկու թուրքեր վերադառնալուց հետո հայտնել են, որ հայերին սպանելու համար իրենց սուր ու դանակ են տվել»*[371]:

*Ջորջևիչը գրում է. «Ջնայած խիստ վերջնագիր էր, սակայն գիտեմ, որ ցանկալի ազդեցություն չի ունենա, քանի որ Համիդ 2-րդը չի վախենում վերացական արտահայտու-*

---

[368] *Նույն տեղում:*
[369] **Սպիրով Դ.**, *նշվ. աշխ.*, էջ 9:
[370] **Նանսեն Ֆ.**, *նշվ. աշխ.*, էջ 250:
[371] **Նուրի Օսման**, *նշվ. աշխ.*, էջ 864–865:

*թյուններից՝ որքան էլ դրանք խիստ լինեն: Միակ արդյունքն այն եղավ, որ այժմ կրակում են նաև զորքերը, սակայն ոչ թե մարդասպանների, այլ հայերի վրա»*[372]:

***Ճշմարտություն է:***

*Ստանալով այս նոտան՝ «սուլթանը ծիծաղեց դեսպանների սպառնալիքների վրա և կոտորածները չարունակեց ևս երկու օր»*[373]: *Ամեն ինչ կատարվեց կատարյալ կազմակերպված: Սկսելու հրամանը տրվեց զինվորական իշխանությունների կողմից, փողի ազդարարությամբ չարդը սկսվեց և վերջացավ նույնպես փողի ազդարարությամբ: Մի կողմից՝ գազանաբար չարդում էին քրիստոնյաներին՝ հայերին, մյուս կողմից՝ «մարդասիրաբար» հարգում էին օտարներին՝ ֆրանսիացիներին, անգլիացիներին և ուրիշներին: Սուլթանը գիտեր, որ օտարների դեմ գործած արարքը կարող էր բարդություն ստեղծել և տեղի տալ տերությունների միջամտությանը: Նա հրամայեց չարդերը չարունակել, միաժամանակ եվրոպական տերությունների ներկայացուցիչներին հայտարարեց, թե ինքը զոհ է ամոթալի զրպարտությունների: Տեղի են ունեցել արյունալի կռիվներ, իսկ ինքը պարզապես իսլամներին պաշտպանել է հայերի հարձակումներից:*

*"Петербургские ведомости"-ի 1898թ. հուլիսի 15-ի համարում տպագրվեց ռուս հրապարակախոս Վ. Գոլմստրեմի «Արյան գինը» հոդվածը, որտեղ կարդում ենք. «Փոքր Ասիայի զանազան մասերում զանգվածային սպանությունների համար սուլթանի հեռագրերը հանդիսացան սպանությունների ազդարարիչներ: Կոտորածներից մազապուրծներին օգնություն ցույց տալուց թուրքական կառավարության հրաժարվելը պետք է դիտել որպես այդ կառավարության համակրանքի արտահայտություն ջարդարարների հանդեպ, ինչը վերջիններին ազատում է որևէ պատասխանատվությունից, միաժամանակ հաստատում, որ սպանությունների քաղաքականությունը վայելում է համակայսրական քաղաքականության ղեկի մոտ կանգնածների հավանությունը»: "Vossische Zeitung"-ը գրեց. «Այս կոտորածներն արտահայտությունն էին մի ամբողջ ազգի հանդեպ կատաղի ատելության, որը բխում է կառավարական շրջանակներից և առավելապես պալատից: Սուլթանը, եթե ցանկանար, կարող էր կոտորածն անմիջապես դադարեցնել, բայց նա այդ չցանկացավ...Այդպես էլ պետք է լիներ, քանի որ հրամայված էր ամբողջ 50 ժամ կոտորել: Ինչպես տեղեկացանք պալատից, այնտեղ շատ ուրախ են և անգամ պարծենում են այս սարսափելի կոտորածի առիթով»*[374]: *Վիեննայի "Neue freie Presse"-ն, որը թուրքամետ համբավ ուներ, նույնպես հաստատում է, որ կոտորածները տեղի են ունեցել ոստիկանության և բանակայինների մասնակցությամբ: «Թուրքական կառավարությունը,- գտնում է թերթը,- իր վերաբերմունքով միանգամայն պատասխանատու է ամբոխի գործադրած բարբարոսությունների համար»*[375]: *"Kölnische Allgemeine Zeitung"-ը գրեց. «Ասիայի հեռավոր անկյուններում նախապես կազմակերպված մահմեդական ամբոխը կառավարության հաճությամբ և անգամ նրա ազդու գործակցությամբ հազարավոր հայերի անմեղ արյունն է թափում և այդ ամենը եվրոպական դեսպանների աչքի առաջ»: "Norddeutsche Allgemeine"-ն ավելացրեց. «Հիրավի միանգամայն կեղծիք է, երբ թուրքական կառավարությունն իր հավատարիմ մահմեդական ամբոխի մոլեռանդությունը քրիստոնյաների արյունով հագեցնելուց հետո մի քանի մահմեդականի բանտարկում է և հայտարարում, թե հանցավորներն անպատճառ պատժվելու են: Բայց այդ կառավարության չիտակությանն այլևս ոչ ոք չի հավատում, և հասել է ժամը, երբ այն այլևս չի կարող պետությունների նախաձեռնությունն իր հանցանքների գործիք դարձնել»*[376]:

---

[372] *АС, МИД, ШПЦ,* пов. № 542, л.л. 226-227.
[373] *Братская помощь...,* стр. 32-33.
[374] ԳԱԹ, ֆ. Առաքելյան Հ., գ. 165, թ. 1:
[375] Նույն տեղում, թիվ 2:
[376] Նույն տեղում:

Կ. Պոլսի այս կոտորածը թուրքական պատմագրության կողմից ներկայացվում է միանգամայն այլ տեսքով: Նույն Օսման Նուրին, փաստերն ու իրողություններն իրար խառնելով, հիմնավորված է համարում սուլթանի գործողությունները: Ըստ նրա՝ հայերը ոչ միայն գրավեցին Օսմանյան բանկը, այլև փորձեցին պայթեցնել Բ. Դուռը, սեյամլըքի գնացող զորքերի վրա ռումբ նետեցին: Նման բաղում գործողությունները «բորբոքեցին թուրք ժողովրդի մոլեռանդությունը: Այդ օրվանից էլ Ստամբուլում սկսվեց սոսկալի ջարդ... Մի կողմից՝ ռումբեր էին նետվում պանդոկներից, սենյակներից, պատշգամբներից, մյուս կողմից՝ մարտինի հրացանի սաստիկ կրակի տակ էին առնվում այն լուսամուտները, որոնցից ռումբ էր նետվում: Երկու կողմերն էլ մեծ կորուստներ տվեցին»[377]:

Է. Բեռնշտայնը Կ. Պոլսի կոտորածն անվանեց վերջաբան հայաստանյան ջարդերի, որի ընթացքում «սպանվեց 6000 մարդ, չհաշված ծովը նետվածները: Մայրաքաղաքի ամբողջ խուժանը թափվեց հայերի վրա սուլթանի թիկնապահների դրգռմամբ և հովանավորությամբ: Այս ամենը կատարվեց եվրոպական դեսպանների աչքի առաջ, որոնք ոչինչ չարեցին այդ ոճրի քավության համար»[378]: Եվրոպացի ականատեսները չեշտում են այն իրողությունը, որ սուլթանը բանկն ազատելու ուղղությամբ որևէ քայլի չդիմեց, այլ գործողությունները կենտրոնացրեց քաղաքի հայ բնակչությանը կոտորելու վրա: Դա պատահական չէր: Բանկը գրաված հայերի արագ ձերբակալությունը կնեղացներ կոտորածների ծավալման հնարավորությունը: Որքան երկար տևեին գործողությունները, այնքան ավելի շատ ժամանակ ու հիմնավոր պատրվակ կլիներ հայերին ջարդելու:

Սուլթանը նախապես մշակված պլանով Ստամբուլում, Ղալաթիայում և Բերայում հավաքել տվեց մարդասպանների ավազակախմբեր՝ կազմված քրդերից, լազերից և թուրք ազգաբնակչության ցածր խավերից, զինված ձողերով, դանակներով և հրազենով: Մինչոցների էին դիմել, որ ոչ ոք սպանություններով ու թալանով չզբաղվեր իր թաղում և հետագայում, եթե դեսպանությունները պահանջեին պատժել ջարդարարներին, ոչ ոք չճանաչեր և չմեղադրեր մարդասպաններին: Զորքն ու ոստիկանությունը հրաման էին ստացել՝ խափանել ամեն մի դիմադրություն և անհրաժեշտության դեպքում օգնել ամբոխին... Կոտորածն ու թալանը սկսվեցին միաժամանակ բոլոր տեղերում... Բոսֆորում նավ նստող եվրոպացի լեդիները հանկարծակի չրջապատվում են մարդասպանների կողմից և ականատես դառնում սահմռկեցուցիչ տեսարանների: Եվրոպական առևտրականները տեսել էին, թե ինչպես տների շեմերին թուրքերը կտոր-կտոր էին անում իրենց մոտ բանող հայերին: Բոլոր խանութները փակ էին, ամբողջ քաղաքը խուճապի մեջ էր: Մահվան ու թալանի գործն անարգել առաջ էր տարվում: Սպանությունները շարունակվեցին մինչև երկուշաբթի: Դեսպանների տվյալներով սպանվածների թիվը հասնում էր 5000-6000-ի, իսկ պալատի տվյալներով՝ 875-ի՝ չհաշված ծովը նետվածները: Ամենասարսափելին Ոսկեջրի երկայնքով ձգված թաղերի, Դոլմաբահչեի պալատից մինչև Խասգյուղ և Սարայբուրնուից մինչև Այվանի պալատը, ինչպես նաև Սամաթիայում Ցոթ-աշտարակների բերդի և Ադրիանապոլսի դարպասների մերձակայքում տեղի ունեցած կոտորածներն ու թալանն էին: Մեծ թվով հայեր սպանվեցին Բերայում: Կոտորվեցին հասարակական բոլոր խավերին պատկանող մարդիկ, առաջին հերթին՝ համալները: Սպանություններին մասնակցում էին ոչ միայն թուրք տղամարդիկ, այլև կանայք: Ռուսական դեսպանության խորհրդական Մաքսիմովը բռնում է հայերին ծեծող մի մահմեդականի ու տանում պալատ, որտեղ պարզվում է, որ նա ոչ անհայտ թուրք սպա էր:

Գլխավոր մարդասպանը Ելդըզն էր:

...«Կ. Պոլսի բացահայտ կոտորածները,— գրում է Դ. Ա. Սպիրովը,— իրր դադարեցին... Բայց գաղտնի սպանությունները, բռնությունները, քաղաքի խուլ փողոցներում ու անկյուններում տղաների ու աղջիկների պատվազրկումները չարունակվում են ա-

---

[377] Նուրի Օսման, նշվ. աշխ., էջ 839:

[378] Օտարերկրացիները Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին, էջ 23:

սիական ամբողջ վայրագությամբ... Հայերի համարյա բոլոր խանութներն ու կրպակները փակ են: Մեծ թվով հայեր, գրեթե ամբողջ մտավորականությունը և երիտասարդությունը... արտագաղթեցին գարշահոտ Կ. Պոլսից... Այն, ինչ սանկյուլոտները (այլասերված թուրքերի կատաղած ամբոխը) կատարում են Հայաստանում, առնաուտները՝ Մակեդոնիայում, նույնն անում են մոլլաները, սոֆթաները և ոստիկանությունը Կ. Պոլսում, այն էլ եվրոպական դեսպանների քթի տակ, 20 հազար եվրոպացիների աչքի առաջ: Եթե հայերի ոչնչացումը նույնությամբ չարունակվի մեկ-երկու տարի ևս, Հայաստանում հազիվ թե մնա հայ տղամարդկանց մի այնպիսի սերունդ, որը ունակ լինի մտածելու մարդկային իրավունքների մասին: Այստեղ ամեն օր, ամեն ժամ, նույնիսկ ամեն րոպե, ասիական բոլոր միջոցներով մորթվում, կոտորվում և ոչնչացվում են հայերի լավագույն ուժերը... Ոչ մեկը վստահ չէ իր կյանքի, պատվի և ունեցվածքի ապահովության վրա:

Սուլթանը, որն իր ձեռքում կենտրոնացրել է ամբողջ իշխանությունը, բնական է, եթե ցանկանար, կարող էր կոտորածների առաջին իսկ օրը սանձահարել մոլեգնած ամբոխի կատաղությունը, որին առաջնորդում էին ոստիկանությունն ու զորքը, բայց նա ցանկանում էր դաժանորեն վրեժխնդիր լինել հայերից... վայրագությունները կատարվել են նրա հույժ գաղտնի հրամանով: Որովհետև նա ամենամեծ, ամենամոլեռանդ թուրքն է և, ինչպես ամեն մի թուրք, հոգով ու սրտով ատելությամբ է լքված քրիստոնյա աշխարհի հանդեպ:

Իսկ հայ ժողովրդի նկատմամբ նրա ատելությունն անսահման է: Նա երդվել է մահմեդական Կորանի վրա, որ երկրի երեսից վերացնելու է այս դժբախտ ժողովրդին և կամ նրա թիվը նվազեցնելու է այն աստիճան ու այնպես է ջնջելու հայ տղամարդկանց, որ եթե բարենորոգումներ անելու էլ լինի, ղեկավարությունը դարձյալ մնա թուրքերի ձեռքին»:[379]

Կոտորածներից հետո սուլթանը հրամայեց, որ գավառներից եկածներն անմիջապես հեռանան մայրաքաղաքից: Մարդկանց բռնությամբ լցնում էին նավերը և ռազմանավերի ուղեկցությամբ տանում Մարմարա և «պարկերի պես նետում ծովը»:

«...Հայ հոգևորականի սենյակում նստած 10-20 մարդն այն բոլորն էին, ովքեր մնացել էին հայկական այդ թաղի (Խասգյուղի) 500 ընտանիքների տղամարդկանցից: Մարդասպանները եկան օգոստոսի 26-ին, երեկոյան ժամը 5-ին և առաջին իսկ պատահած հային բերեցին մսագործի մոտ, որը նրա երկու ձեռքերը մսի կոճղի վրա կտրեց ու կանչեց. «Վաճառվում են խոզի տոտեր»: Ոստիկանությունը չրջապատել էր թաղը և այնտեղից դուրս գալ թույլ չէր տալիս... Ամեն ինչ ավերվեց, ամեն ինչ քանդեցին, շները գալիս էին հագենալու մարդկային արյունից: Հատուկենտ տներում մարդ մնաց, այն էլ միայն սովյալ ու ուտելիք ակնկալող կանայք: Մի թուրք պատմել է. «Ղալաթիայում ոստիկանական կետի մոտ կանգնած էի ու տեսա, որ վատ հագնված մարդիկ ոստիկանատնից դուրս եկան գավազաններով ու հարձակվեցին հայերի վրա: Միլիեթ խանում գլուխներ էին կտրում»»[380]:

Այսպիսով, թե՛ հայ և թե՛ թուրք ու եվրոպացի հեղինակները Կ. Պոլսի ջարդերի պատճառների, բնույթի, ընթացքի և հետևանքների վերաբերյալ բացարձակապես նույն կարծիքին էին, նույնիսկ մանրամասները նրանք ներկայացնում են նույնանման: Այսինքն՝ տվյալ դեպքում կեղծիքի, չափազանցության և կողմնակալ վերաբերմունքի մասին խոսք լինել չի կարող: Եվ մենք լիակատար հիմքեր ունենք ասելու, որ Պոլսի ջարդերը 19-րդ դարի համիդյան ցեղասպանության վերջին ու ամենավայրագ ակորդն էին:

Հայ պատմագրության մեջ Կ. Պոլսի կոտորածի մասին կարծիքները միասեռ չեն: Մասնավորապես, ՀՅԴ գործիչներն ու հեղինակները «Բանկ Օտոմանի» գրավումը համարում են խիզախության, նվիրվածության և հնարամտության վերջին խոսք: Մյուսնե-

[379] Սպիրով Դ., նշվ. աշխ., էջ 47-48:
[380] ԳԱԹ, ֆ. Աուգիյան Հ., գ. 116:

*րը հակառակ կարծիքին են և այն անվանում են անպատասխանատու արկածախնդրություն: Առանց վերապահության իրավացի են երկրորդները: Ինչո՞ւ: Նախ. դեռ մեկ տարի չէր անցել Բաբը Ալիի ցույցից, որը նույնպես նպատակ ուներ ուշադրություն հրավիրել հայկական բարենորոգումների խնդրին: Բացարձակապես խաղաղ ցույց էր, բայց սուլթանական իշխանություններն այն պատրվակ դարձրեցին մայրաքաղաքի և ապա ամբողջ կայսրության հայերի ջարդեր իրականացնելու համար: Մի՞թե պարզ չէր, որ Օսմանյան բանկի գրավումն անպատիժ չէր մնալու: Եվ չմնաց. այդ անմիտ, անպատասխանատու գործողության համար զոհ գնաց մինչև 10 հազար հայ: Երկրորդ. դետեկտիվ ժանրին պատկանող այդ արկածախնդրությունը ոչ միայն իր բնույթով, այլ նախապատրաստման եղանակով պիտանի չէր: Միայն պարզունակ մտածողություն ունեցողը կարող էր հավատալ, որ բանկի գրավումը նպաստելու էր բարենորոգումների իրականացմանը: Հավանաբար բանը ոչ այնքան բանկի գրավումն էր, որքան այդ միջոցով սուլթանին մղելը հայկական նոր ջարդերի, որպես խթան տերությունների միջամտության: Այլապես ինչո՞վ բացատրել, որ բանկի վրա հարձակման նախապատրաստությունը իրականացվում էր բացահայտ, իսկ սուլթանը քաջատեղյակ լինելով, որ բանկի վրա հարձակում էր տեղի ունենալու, ոչինչ չարեց թույլ չտալու համար, այլ հանձնարարեց իրականացնել մայրաքաղաքի հայության զանգվածային ջարդ: Երրորդ. մի՞թե հասկանալի չէր, որ հարձակումն առաջացնելու էր ոչ միայն իշխանությունների, այլև մահմեդական բնակչության վրեժխնդրությունը, ինչո՞ւ ոչինչ չարվեց հայ բնակչության ինքնապաշտպանության կազմակերպման ուղղությամբ:*

*Որոշ գրչակների պնդումները, թե Կ. Պոլսի որոշ թաղերում հայերը կազմակերպված դիմադրություն ցույց տվեցին ջարդարարներին, կեղծիք է: Բերվում է Սամաթիայի օրինակը՝ այն, որ Սամաթիայի վարժարանում ապաստանած մի խումբ հայ երիտասարդներ թուրքերին համառ դիմադրություն ցույց տվեցին և ապա ինքնասպան եղան: Ահա և ամբողջ ինքնապաշտպանությունը:*

## *14. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԵՄՔԸ*

*Կոտորածները, ըստ Լեփսիուսի, հայերին հասցրին հետևյալ կորուստներն ու վնասները: Սպանվեց 85000 մարդ, կործանվեց 2500 գյուղ ու քաղաք, 568 եկեղեցի ու վանք: 559 բնակավայրերի մեծ թվով հայեր մահմեդականացվեցին: 282 եկեղեցի վերածվեց մզկիթի: 500000 մարդ մնաց առանց օթևանի ու ապրուստի միջոցի: «Եթե սրան գումարենք գյուղերում հազարավոր սպանվածներին, դեռևս ցուցակներում մնացած, բայց վերքերից ու քաղցից մեռածներին, անհետ կորածներին, համաճարակներին զոհ դարձածներին, բնական աղետներից (լեռներում բքից) մեռածներին, ապա զոհերի թիվը հասնում է ավելի քան 100 հազար մարդու»[381]:*

*Վանի վիլայեթում թալանվել ու հիմնականում ավերվել էր 543 գյուղ: Լեփսիուսի տվյալներով՝ Վանի նահանգում սպանվածների թիվը համեմատաբար մեծ չէր, որովհետև հիմնական գործող անձինք քրդերն էին: Հարկ է նկատի ունենալ, որ Լեփսիուսի տվյալները վերաբերում էին մինչև 1896թ. հունիսի 22-ն ընկած շրջանին, որից հետո սպանությունները զանգվածային դարձան և զոհերի թիվը հասավ տասնյակ հազարի: Շեչտաևի աճեց նաև անօթևանների ու սովյալների թիվը՝ վիլայեթում 70000, իսկ Վանում՝ 13000 մարդ[382]: Կոտորածների հետևանքով հայերի թիվը կրճատվեց 15-20%-ով, «գյուղեր ու տեղեր կային, որտեղ ժողովրդի կեսից ավելին ջարդվեց ու գաղթեց»[383]: Վիլայեթում ավերվեց 2900 տուն, 255 խանութ:*

---

[381] Lepsius J., նշվ. աշխ., p. 42-48.
[382] Նույն տեղում, էջ 38:
[383] Թումանյան Հովհ., Եժ, հ. IV, էջ 214:

*Փաստերի ու թվերի համադրությունը վկայում է, որ ոչ միայն Լեփսիուսը, այլև շատ ուրիշ օտարերկրացիներ հնարավորություն չեն ունեցել խորանալու իրողությունների մեջ, ոչ քիչ դեպքերում հարկադրված են եղել հիմք ընդունել տեղական իշխանությունների կամ առանձին անհատների հաղորդած տվյալները, որոնք, որպես կանոն, թերի կամ նվազեցված էին: Օրինակ. ըստ պաշտոնական տվյալների՝ հայկական նահանգներում ավերվել էր 37300 տուն, 6500 խանութ ու արհեստանոց, սպանվել էր 29100 քրիստոնյա և 867 մահմեդական: Մահմեդականացվել էր 36500 և թշվառության մատնվել 247000 մարդ:*

*Փարամազը 1898թ. օգոստոսի 1-ին Վանի թուրքական դատարանում հայտարարեց. «Ջորս տարվա ընթացքում կոտորվել է 175000 հայ, ավելի քան 80000 ընտանիք կողոպտվել է, 2500 գյուղ կրակի է տրվել: Այս ամենը կատարվել է տերության հրամանով»[384]:*

*1894-96 թթ. «զենքով, դաշույնով, կացինով կամ այլ գործիքով սպանվածները 100 հազարից ավելի էին, իսկ ջարդերի ժամանակ վիրավորված, հիվանդացած, քաղցի մատնված մարդկանցից հետագայում մեռածների թիվն անցավ 200 հազարից»: Դա նշանակում է՝ ոչնչացվեց արևմտահայության 15%-ը, այսինքն՝ ավելի շատ, քան ամենաարյունահեղ պատերազմում[385]:*

*Ֆրանսիական «Դեղին գիրքը» ներկայացնում է հայերի զոհերի ու վնասների միանգամայն այլ պատկեր: Գրքում վերը նշված թվերին գումարվում են Հալեպի (սպանվել է 6600 քրիստոնյա և ոչ մի մահմեդական, կրոնափոխվել է 1500 մարդ), Ադանայի (սպանվել է 350 քրիստոնյա և 9 մահմեդական) նահանգների տվյալները: Նշվում է, թե կայսրության 10 նահանգներում ավերվել ու թալանվել է 40000 տուն, 8000 կրպակ, սպանվել 37000 քրիստոնյա և 938 մահմեդական, կրոնափոխվել է 41000 և թշվառության մատնվել 290000 մարդ[386]: Նշենք, որ գրքում տեղ են գտել մինչև 1896թ. փետրվարի տվյալները: Երեք հանգամանքներով՝ սպանվածների թիվն ու ավերածության ծավալները փոքրացրել են մոտ իննանգամ. 1. կոտորածները չարունակվել են նաև փետրվարից հետո, 2. կարճ ժամանակահատվածում՝ 1-1.5 ամսում, այն ժամանակվա պայմաններում ամբողջական տվյալներ հավաքելն անհնար էր, 3. թվերը միտումնավոր աղավաղված էին:*

*«Ինչո՞վ բացատրել այն փաստը,– գրում է Ց. Լեփսիուսը,– որ հայերի հարյուրավոր, հազարավոր զոհերի առկայության պայմաններում դեսպանական հաշվետվություններում նշված են սպանված մահմեդականների նույնիսկ ամենաանչնչին թվերը: Ընդ որում՝ դրանք վերցված են թուրքերի պաշտոնական վիճակագրություններից, իսկ թուրքերը չահագրգռված չէին փոքրացնել թվերը»: Ըստ այդ տվյալների՝ ութ վիլայեթներում սպանվել էր 11000 քրիստոնյա և 210 մահմեդական[387]:*

*Թուրքական տվյալներն էին հիմք ընդունում նաև տերությունների կառավարությունները:*

*Գիտնականների մեծամասնության կարծիքով՝ 1894-96 թթ. ոչնչացված հայերի թիվը չուրջ 300 հազար է: Սակայն մինչև օրս էլ այս հարցում կարծիքների միասնություն գոյություն չունի: Մ. Մաքքոլը զոհերի թիվը նշում է 200 հազար: Նրա կարծիքին է Ժ. Մորգանը, որը նաև գրում է, թե բռնի կրոնափոխվել է 100 հազար հայ, նույնքան կին և աղջիկ տարվել են հարեմներ: Ֆրանսիացի մեկ այլ գիտնական՝ Էմիլ Անտուանը, սպանվածների թիվը նշում է 250 հազար, Շարմետանը՝ 400 հազար, Վ. Բերարն ու Ռ. Ռամզեյը՝ 500 հազար, Ռիչարդ Հովհաննիսյանը՝ 100 հազար: Անգլիացի գիտնական՝*

---

[384] *Փարամազի ճառը: Իմ դատավարությունը Տաճկաստանում, 1898*, Զիկագո, 1919, էջ 6:
[385] **Ջորմիսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 453:
[386] *Les massacres...*, p. 122-124, 223-224, 258.
[387] **Lepsius J.**, նշվ. աշխ., էջ 144.

Է. Փիրսը, գտնում է, որ սպանվել է 200 հազար հայ[388],– Վ. Տատրյանը՝ 200 հազար[389]: Զարդերի զոհերի թիվը ճշգրտելն այևս հազիվ թե հնարավոր է, բայց ամենահավանականը 300000 է, քանի որ այն ստացվել է մոտավոր, բայց իրականին չատ մոտ հաշվումներով:

Գոլոբորոդկոյի տվյալներով՝ 10 վիլայեթներում ավերվել էր 50000 տուն, ավելի քան 8000 գյուղ, 300000 մարդ մնացել էր անօթևան ու առանց ապրուստի միջոցների: «Կարծես արյունարբու մրրիկ էր անցել երկրի վրայով և երկու տարում քշել-տարել այն ամենը, ինչը ստեղծվել էր բազում տարիների աշխատանքով: Միլիոնավոր մարդիկ դարձան ընչազուրկ, հարուստներն՝ աղքատներ: Հայերի գործարարությանը հասցվեց անչտկելի հարված», տնտեսությունն անցավ թուրքերի ձեռքը[390]:

Ամենուրեք պարզ գծագրվում էր, որ կոտորածների կազմակերպիչ ուժը բանակն էր: Սովորաբար խուժանն առանց զորքի մասնակցության խուսափում էր հայերի վրա հարձակվելուց: Բաբերդում հայերը կազմում էին բնակչության 10%-ը, ու չնայած դրսից բերվել էին մեծ թվով լազեր, բայց մինչև երզնկայից զորքի գալը՝ կոտորածը չկավեց: Տրապիզոնում քանի դեռ հարձակվում էր միայն ամբոխը, հայ չզոհվեց: Կոտորածն սկսվեց, երբ խուժանին զինեցին և հարձակմանը մասնակից դարձրին բանակին: Վանում կոտորածը սկսելու ժամկետները ձգձգվեցին, որովհետև տեղում բավարար քանակությամբ բանակային ուժեր չկային:

Կոտորածները ղեկավարվում էին Կ. Պոլսից տեղերը գործուղված պաշտոնատարների միջոցով: Դրանք սկսվում էին Բ. Դունից և առավելապես Չղըզից ստացված հրահանգներով: Օրինակ՝ Վանի վալի Նազըմը Կ. Պոլսից հեռագրեր էր ստացել. «Կոտորել հայերին, չխնայել տղամարդկանց, հրկիզել նրանց ունեցվածքը, հնարավորին չափ խնայել միայն կանանց»[391]: «Զարդերը,– գրում է Մ. Իզմիրլյանը,– խաժամուժ ամբոխի կատաղության կամ վրեժխնդրության հետևանք չէին երբեք, այլ պարզապես բարձրեն արձակված հրամանների գործադրություն էին»[392]: «Կասկած չկա,– համոզված էր Լինչը,– որ 1895թ. կոտորածը չէր հանդիսանում քրիստոնյաների դեմ մահմեդականների ինքնաբուխ բռնարարք: Դրանք բոլորը կամ գրեթե բոլորը կազմակերպված էին դրսից»: Մի թուրք պաշտոնյա պատմել է. «...Հիշում եմ, թե այս սենյակում նստած, ինչպես տեսա ամբոխի կողքով անցնող տարօրինակ մարդկանց, արտաքինից նման հյուսիսային լեռներից իջած եկվորների: Քիչ ժամանակ անց սկսվեց ջարդը»[393]:

Տարածված ու տիրապետող կարծիք է, որ 1894-96 թթ. կոտորածները սուլթանը կազմակերպեց հայերին ահաբեկելու համար: Ճիշտ չէ. 90-ական թվականների ջարդերը ցեղասպան խնդիրներ էին լուծում և հանդիսացան հայերի ցեղասպանության ներածությունն ու առաջին արարը: Դրանք անհնար է բացատրել կրոնական մոլեռանդությամբ, որովհետև հայերից բացի որևէ այլ քրիստոնյայի ձեռք չտվեցին: Կոտորածների անմիջական ոգեշնչողը իշխանություններն էին ու դրանց հրահանգներով գործող շեյխերն ու իմամները, չնայած մի քանի տեղերում (Ղալաքիլիսա, Ծուզվերան) շեյխերը հայերին պաշտպանեցին[394]:

Կոտորածներին պասիվ մասնակցություն ունեցավ թուրք երկրագործը, իսկ հարվածային ուժը լեռնաբնակ քոչվորներն ու կիսաքոչվորներն էին՝ թուրք, քուրդ, չերքեզ, լազ: Ճիշտ է, թուրք երկրագործների մի մասը նույնպես մասնակցեց թալանին, բայց նրանցից, ինչպես նաև թուրք առևտրականներից ու արհեստավորներից չատերը, չնա-

---

[388] **Pears E.**, նշվ. աշխ., էջ 270:
[389] **Дадрян В.**, *Геноцид армян: Содержание преступления*, Е., 2005.
[390] **Голоборолько И.**, նշվ. աշխ., էջ 252:
[391] «Արաքս», 1897, գ. Բ, էջ 103:
[392] **Օրմանյան Մ.**, *Հոհ և խոսք*, Երուսաղեմ, 1929, էջ 176:
[393] **Линч Г.**, նշվ. աշխ., հ.II, էջ 556:
[394] «Դրոշակ», փետրվար, *1896*:

յած երկչոտորեն, այնուամենայնիվ պաշտպանեցին հայերին: Նույնիսկ կարինում, որտեղ իշխանությունները տարիներ շարունակ մահմեդականներին հրահրել էին հայերի դեմ, և որտեղ էր կոտորածների «հերոս» Շաքիրի նստավայրը, թուրք արհեստավորների ու առևտրականների զգալի մասը ձեռնպահ մնաց կոտորածներից:

Որոշ տեղերում հայերին պաշտպանեցին նաև քրդերը՝ Հասան Կալայի, Բասենի, Ալաշկերտի, Բայազետի, Երզնկայի մի շարք գյուղեր: Հայերին պաշտպանեցին նաև մի քանի քուրդ աղաներ. Նարիման գյուղում՝ Էմին, զիլանցի Սելիմ, Հայդարանլիում՝ Մուստաֆա, Միրվան ու Նաբի[395]: Որոշ թվով հայեր փրկվեցին՝ ապաստանելով թուրքերի տներում: «...Ազգաբնակչության մի մասն արդեն,— գրում է Ռոստոմը,— նկատում է շահերի անհամեմատելիություն, ինչը վաղուց ի վեր գոյություն ուներ սուլթանի և իր բոլոր հպատակների միջև, բայց որը մինչև այժմ մնում էր խորին մթության մեջ...»[396]:

Կոտորածների հիմնական զենքը համիդիե զորագնդերն էին: Դա էլ նշան, որ թուրքական իշխանությունները հույս չունեին, թե 19-րդ դարավերջին կկարողանան մահմեդական-քրիստոնյա հակամարտությունը վերածել քրիստոնյաներին մահմեդական լայն զանգվածների միջոցով ոչնչացնելու գործնական քաղաքականության:

Մի իրողություն ևս: Այնտեղ, որտեղ հայերը ջարդարարներին դիմադրություն ցույց տվեցին, զանգվածային ջարդեր տեղի չունեցան: Սղերդի փոստատանն աշխատող հայազգի Ադմոն, ստանալով կոտորածի մասին սուլթանի հեռագիրը, անմիջապես այդ մասին տեղեկացնում է հայերին, ովքեր պաշտպանական միջոցներ ձեռնարկեցին ու փրկվեցին, իսկ Ադմոն սպանվեց որպես «ստախոս»[397]:

Հազար անգամ իրավացի է Դ. Սպիրովը, երբ գրում է. «Բ. Դուռը չափազանց զգայուն է, երբ գործը վերաբերում է մուսուլմանների նկատմամբ կատարված դաժանություններին (հնարովի, թե իրական), իսկ երբ նրա վայրի հորդաները, զեյբեկները, բթամիտ մանաֆները և այլ գազաններ ամայացնում ու կոտորում են հազարավոր դժբախտներով լի ամբողջ շրջաններ, ինչպես դա անընդհատ տեղի է ունենում Մակեդոնիայում և Հայաստանում, որտեղ բնակչության ինչքն ու պատիվը գտնվում են մինչև ուղնուծուծը այլասերված աղաների, փաշաների և լեռնային ավազակների ձեռքին, այդ ժամանակ նա դյուրազգաց չէ, չի հասկանում, թե ինչ են դաժանություններն ու ավերածությունները: Ի՞նչ է պատահել որ, ի՞նչ է եղել, մի տարվա ընթացքում կոտորվել է մի քանի հարյուր գյավուր, պատվազրկվել են հարյուրավոր կույսեր, թալանվել են հազարավորներ և, թեկուզ, դերվիշական Գոլսում 20 հազար հայ գյավուրների չների պես մորթել են... Բայց չէ՞ որ դրանք ռայաներ են, որոնք մարգարեի կողմից որպես պարգև տրված են կարմիր կիսակոշիկով և անգորյան բրդյա չալմայով ուղղափառ մուսուլմաններին և դրված են նրանց տրամադրության տակ, որպեսզի իրենց քեֆի ու հաճույքի համար խաղան գյավուրի կյանքի, ունեցվածքի ու պատվի հետ: Հազարավոր չուն գյավուրներ մի մուսուլմանի կյանք չարժեն: Ահա թե ինչու՝ մահ գյավուրներին, բոլորին պետք է ոչնչացնել, ինչպես... տարաբախտ Հայաստանում, որտեղ երկու տարում արդեն մորթվել է 250000 մարդկային էակ, ամեն տեսակի խոշտանգումներով, դաժանություններով և ասիական վայրենի մուսուլմանների չրջանում ընդունված կոտտանքներով»[398]:

Կոտորածները խաթարեցին արևմտահայերի բնականոն գոյությունը: Նրանք օրենքից դուրս դրվեցին, որոնց հաչվեհարդարն արագացնելու համար առանձին դատարաններ ստեղծվեցին: Թշվառություն, սով, համաճարակ, ահաբեկչություն: Հայաստանը դարձավ որբանոց:

---

[395] Նույն տեղում:
[396] Նույն տեղում:
[397] Նույն տեղում:
[398] Սպիրով Դ., նշվ. աշխ., էջ 22-23:

Որպեսզի պատկերն ամբողջական լինի, մեզ թույլ ենք տալիս ընթերցողին ներկայացնել հետևյալ տվյալները: Արդեն ասվել է, որ համաձայն թուրքական վիճակագրության՝ 1845թ. Արևմտյան Հայաստանում բնակվում էր 3833297 հայ: Տարեկան 0,7% բնական աճի դեպքում՝ 1915թ. այդ թիվը պետք է հասներ մոտ 5,5 միլիոնի: Ընդ որում՝ Հայաստանից դուրս, այսինքն՝ կայսրության մյուս մասերում բնակվում էր 1030000 հայ, որից Կիլիկիայում՝ 380000, Ասիական Թուրքիայում՝ 455000, Եվրոպական Թուրքիայում՝ 195000: Այսինքն՝ ընդամենը 3904637 հայ: Եթե հայերի ընդհանուր թվից հանենք մեկ միլիոն գաղթականներին, 530 հազար մահմեդականացվածներին, ապա, ինչպես նկատում է Հ. Ջատիկյանը, Մեծ Եղեռնին զոհ էր գնացել 2,4 միլիոն մարդ՝ կոտորվել էր բնակչության 74,3 %-ը[399]:

Այդ նույն հաշվարկներով՝ 1895-1915թթ. ոչնչացվել էր 1,8 միլիոն հայ: 1894-1896թթ. ջարդերի զոհերի թիվը ըստ նահանգների ներկայացնում է հետևյալ պատկերը. Վան՝ 46011, Բիթլիս՝ 27606, Դիարբեքիր՝ 27606, Էրզրում՝ 51133, Խարբերդ՝ 49692, Սեբաստիա՝ 51533[400]:

Ընդամենը՝ 299994 մարդ:

## 15. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ

1894-96 թթ. կոտորածները երևան հանեցին թուրքական գործելակերպի ամենաստոր, ամենաարյունատենչ, նախնադարյան բարբարոսական բնույթը: Հայերին սպանում էին մարդկությանը հայտնի ու անհայտ սպանությունների ամենազազրելի միջոցներով: Օսմանի ժառանգների երևակայությունը ի՛նչ սադիստական խրախճանքներ ասես, որ չէր մոգոնում:

Փրկվելու համար հայերը տեղից տեղ էին փախչում: Բայց յաթաղանն ամենուրեք էր: Արևմտյան Հայաստանը վերածվել էր սպանդանոցի, մահվան թագավորության: Շուրջբոլորը՝ արյան լճեր, անթաղ դիակներ, մարդկային մսով հագեցած շներ: Ջարդերի հաջորդ օրը Ուրֆայում թուրքերն իրենց կողմից սպանված հայերի մսով ճաշ հրամցրին սովյալներին: Այնթապում դարբինների գլուխները մտցրեցին հնոցի մեջ, ապա դրեցին սալի վրա ու մուրճով ջախջախեցին: Մերունի նալբանդի ծնկների վրա մորթեցին նրա երկու որդիներին[401]: «Որոշ տեղերում հայերին նետում էին կրակի մեջ,– պատմում է Բեյլաևը,– ուրիշներին կախում էին գլխիվայր ու քերթում ոչխարի նման, այլոց կացնով ու մանգաղով կտրատում էին, նավթ էին լցնում ու այրում: Նրանց վրա դնում էին նոր զոհերի: Շատերին կենդանի հորում էին, մյուսներին գլխատում և գլուխները չարում երկար ձողի վրա»[402]: «Մարդու մարմնով սարսուռ է անցնում,– չարունակում է նույն հեղինակը,– կոտորածների ժամանակ տեղի ունեցած սարսափներից... Եվրոպացիներին նույնիսկ անհասկանալի է այնպիսի գազանությունների հոգեբանությունը, ինչպիսիք են դիակների մանրատումն ու դրանց ծաղրելը, սպանվածի վրա սեռական կրքերին հաղորդ տալը, հղի կանանց արգանդը բացելն ու պտուղը սպանելը: Դա բարբարոսության ու այլասերվածության խառնուրդ է...»[403]:

Սըվազից գրում էին, թե հայերից մեկը փրկվելու համար ապաստանում է իր հարևան թուրքի տանը: Վերջինս նրան սպանում է սարսափելի տանջանքներով՝ սկզբում կտրելով քիթն ու ականջները, ապա հանելով աչքերը: Աղթամարում ոմն Ջևիթ

---

[399] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 335:

[400] Տե՛ս «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», № 9, Ե., 2004, էջ 149:

[401] Les massacres..., p. 250-258.

[402] Братская помощь..., стр. 54.

[403] Նույն տեղում:

երկու եղբայրների իրար է կապում, մեխում գետնին ու սպանում: Բայբուրդում վայրենիները հրճվում էին՝ սուրը մտցնում վիրավորի կուրծքը կամ վիզը և պտտում ինչպես հողմահար[404]:

Սեբաստիայում Ֆրանսիայի փոխհյուպատոս Քառնիեն գրում է, որ այդ քաղաքի սպանվածների մեջ գհդակահարվածների թիվը չատ փոքր էր: Գրեթե բոլորի գանգերը ջարդված էին կացնով, փայտով, երկաթյա իրերով: Վիրավորներ գրեթե չկային՝ բոլորին սպանում էին:

Տրապիզոնում խուժանը հարձակվում է խանութից դուրս եկող մի հայի վրա: Սկզբում կտրում են մի ձեռքն ու դրանով հարվածում տիրոջը, ապա կտրում են մյուս ձեռքն ու հրամայում խաչակնքել: Պոկում են ականջն ու խոթում բերանը, կտրում են լեզուն, դաշույնի ծայրով հանում աչքերը, անդամահատում են ոտքերը և ապա միայն մեռցնում:

Անգլիացի Հարիս ամուսինները գրում են, որ իրենց այցելությունից երեք չաբաթ առաջ Քիլիսում սպանվել էր հարյուրավոր տղամարդ, բազմաթիվ էին վիրավորները: Ընդ որում՝ «թուրքերը ձգտում էին կտրել իրենց զոհերի ձեռքերը: Հայերին այլանդակելու այդ ձևը, որ նրանց զրկում էր ձեռքի աշխատանքով սնունդ վաստակելու հնարավորությունից, թուրքական վերջին գազանությունների բնորոշ գիծն էր: Այնթապում... սպանվեց 300 մարդ, իսկ չատերին էլ այլանդակեցին՝ նրանց ձեռքերը կտրելու և աչքերը հանելու միջոցով: Կոտորածից մի օր անց սարսափելի էր տեսնել այդ դժբախտներին, որոնք աղաչում էին իրենց վերջը տալ: Տանջանքներին ավելանում էր ծաղրը: Հայերի կրծքներին խաչ էին կտրում և բղավում. «Ո՞ւր է ձեր Քրիստոսը... ինչո՞ւ ձեզ չի փրկում»»[405]:

Բալու քաղաքում մեծ թվով հայերի սպանելուց հետո մնացածին իրենց յոթ քահանաների հետ թլպատեցին ու համարեցին մահմեդական:[406] Մակաբայեցիների վանքում ապաստանած 300 հայեր պարզապես մորթվեցին:

Է. Դիլոնը գրում է.

...«եթե պատկերացնենք Անգլիայի հին Աստղային պալատի, իսպանական հավատաքննության, օփիումի ծխով լցված չինական ավազակաբների, դողէրոցքի հիվանդությունների և Դանթեի դժոխքի ամենամռայլ անկյունների միաձուլումը, ապա պատկերը կնմանվի թուրքական բանտին: Կեղտ, գարշահոտություն, հիվանդություններ, խայտառակություն, ահավոր տեսակների ու ծավալների խոչտանգումներ... Բանտերում տիրող հոգեբանական մթնոլորտը բացարձակ հուսահատություն է, վայրի չարություն, մարդկային տանջանքներից սատանայական բավարարվածություն, եղկելի այլանդակություններին աջակցելու համար ստոր ինքնասիրություն, բարոյական կերպարի լրիվ այլանդակումը և այդ ամենը մարմնավորված զզվելի էություններ մեջ, որոնց մարդկային կերպարանքը երկնային վիրավորանք է:

Այս սարսափելի խցերում խոչտանգվողների ոռնոցը խառնվում է անբնական հեչտանքների գոռոցներին, կեղտոտ երգերը երգվում են հոգի մղկտացնող ողբի ուղեկցությամբ: Այդ նույն ժամանակ մարմիններից, որոնք վաղուց զրկվել են կենսական ուժերից, համբառնում է հոգին, առանց որևէ մեկի ողբի: Իրականում սա աներևակայելի մղձավանջ է»[407]:

Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Զաուրմանը գրում է. «Նա, ով պատկանում էր այդ ազգին (հայ), հանդիպած վայրում իսկույնևեթ անպայմանորեն մորթվում էր: Բոլո-

---

[404] Lepsius J., նշվ. աշխ., p. 91.

[405] Harris R., *Letters from the Scenes of the Recent Massacres in Armenia*, London, 1897, p. 68.

[406] *Les massacres...*, p. 201.

[407] Դիլոն Է.Ջ., *Իրավիճակը Թուրքա-Հայաստանում*, Երևան, 1997, էջ 32-33:

ըին գետին էին գլորում ու ոտնատակ տալիս, սրախողխող անում կամ կրակում այնքան, մինչև որ չունչը փչեր»[408]:

Իզմիթի Ագհսար գյուղի հայերին մահմեդականների աչքի առաջ սպանեցին և դիակները լցրեցին ջրհորները: Բաբերդի Լուսահանք գյուղում վիրավորված հայերի «կոկորդը կամ որովայնը դաշույն մեխելով պտուտակի պես պտտում էին և աղիները դուրս թափելով՝ ոլորում էին», սպանվածների մարմինները կացինով կտոր-կտոր էին անում[409]: Գերեզիկում բռնաբարեցին մի գեղեցիկ հայուհու դիակը: Մարաշում աղջիկներին հրամայում էին պարել, ապա նրանց հարկադրում էին կատարել իրենց լկտի քմահաճույքները, որից հետո բոլորին սպանում էին[410]: Արաբկիրում հինգ եղբայրների իրար կապեցին ու սպանեցին: Մեկ ուրիշին մորթեցին եղբոր դիակի վրա: Մի ընտանիքի 16 անդամների միատեղ սպանեցին:

Դիակները չէին թաղվում: Շները դարձել էին կատաղած ու հարձակվում էին զինվորականների վրա: Կոտորածից մազապուրծ կանայք ու երեխաները քաղցած, մերկ թափառում էին ավերակների մեջ, «նրանք ավելի դիակների էին նման, քան կենդանի էակների»[411]:

1895թ. դեկտեմբերի 19-ին Աղթամարի կաթողիկոսը Մ. Իզմիրլյանին գրում է. «Ամենագազանային եղանակներով մորթվել են հազարավոր մարդիկ... Մարդկային ուժերից վեր է չարագրել բոլոր դաժան արարքները, բոլոր չարագործությունները: Դժբախտ ժողովուրդը, անզեն և հլու հնազանդ, անողորմաբար մորթվել է: Քաղաքներն ու գյուղերն ամայացել են և տեղ-տեղ էլ չնչվել երկրի երեսից...

Հոգևորականների մաչկը գլխից պլոկում էին, հասարակ մարդկանց, ցանկացած տարիքի ու խավի, գազանային կտտանքների ենթարկում, ապա սպանում... իր ամբողջ պատմության ընթացքում հայ ժողովուրդը երբեք չի տեսել այսպիսի աղետներ, և կարելի է ավելացնել, որ ոչ մի քրիստոնյա ազգ այսքան դաժան հալածանքների զոհ չի եղել... հազարավոր քրիստոնյաներ բռնի մահմեդականացան՝ ստուղղ մահից խուսափելու համար, ընդ որում՝ նրանց ստիպում էին ամեն կարգի անբարո արարքներ կատարել, ընդհուպ մինչև արյունապղծությունը...»[412]:

Է. Բեռնշտայնը նկատում է, որ սպանվածների թվերն իսկ «մեր ականջներին հնչում են կսկծագին, բայց եթե դուք կարդաք այս սպանությունների նկարագրությունները, եթե իմանաք, թե ինչ պայմաններում են սպանվել մարդիկ՝ կին, ծեր, մանուկ, ինչ անգթությամբ և ինչ դիվային գազանությամբ են գործված այդ ոճիրները և հոչոտումները (որին ընդունակ են միայն արևելցիները իրենց մոլեռանդությամբ և մտաբորբոքմամբ), այնժամ պիտի հասկանաք, թե ինչու է մի անգլիացի ոչ զգայապաշտ պետական գործիչ ասել, որ Հայաստանի կոտորածների տեսիլքը գիշերները խռովել է իր քունը: Մանուկներին իրենց ծնողների աչքի առաջ վայրագորեն խողխողել են, հղի կանանց արգանդները իրենց ամուսինների ներկայությամբ ճեղքել են և տղամարդկանց սպանելուց առաջ խայտառակ ձևով անդամահատել են: Թերևս փախստականների կամ ողջ մնացածների գրգռված երևակայությունը շատ բան է չափազանցնում, բայց եթե կրճատենք այս բոլոր զրույցների կեսը կամ երեք քառորդը, դեռ կմնան մարդու մտքով չանցնող այնքան գազանություններ, որքան մարդկությունը չի տեսել ամբողջ պատմության ընթացքում: Կոտորածների ժամանակ, սպանվածներից բացի, քանի հազարավորները վիրավորվեցին, քանի-քանիսը ցավագին մահ ընդունեցին կարծեցյալ հիվանդություններից բանտերում: Դրանից բացի, թուրք զինվորները, իրենց սպանների հետ խոսքերը մեկ արած, ավերեցին գյուղ ու քաղաք, դարձրին մոխիր: ...Պատմության տարեգրությունների մեջ, որքան էլ

---

[408] Արզումանյան Մ., *Հայաստանը 1914-1917ԹԹ.*, Երևան, 1969:
[409] «Դրոշակ», 1895, թիվ 20:
[410] Նույն տեղում, 1896, թիվ 16:
[411] «Դրոշակ», 1896, թիվ 7:
[412] *АВПР, Посольство в Константинополе*, д. 3184.

*փնտրեք, մի ամբողջ ժողովրդի դեմ գործած նման վայրագությունների ուրիշ օրինակ չեք գտնի»*[413]:

*«Տներից ու թաքստոցներից,– գրում է Լեփսիուսը,– դուրս քաշել հարյուրավոր անզեն և անպաշտպան հայերի, կտրել նրանց գլուխները, մորթել, ճզմել, կախել, սպանել փայտերով, կացնով, երկաթյա ձողերով. այս ամենը չուտով զզվացրեց, և ջարդարարները անցան այլ եղանակների՝ ջրի մեջ եփել, վիրավորներին սյունից գլխիվայր կախել և նրանց մեխով ուրիշներին ամրացնել, մարմնի մասերը մեկ առ մեկ կտրել, աչքերը հանել, հայերին իրար կապել, «լողացնել կերոսինով» և այրել ու «մինչև վառվում էին», նրանց կույտի վրա նետել ուրիշներին՝ ծխից խեղդելու համար... Ահա մի էֆենդի՝ Աբդուլլա անունով: Խաչէորահաց վանքում նա հարկադրեց երիտասարդին ու աղջկան իրար վրա պառկել ու սրի հարվածով միանգամից կտրեց երկուսի գլուխը»:*

*Սուլթանը հրամայել էր 17 տարեկանից բարձր քրիստոնյաներից իրեն ազատել:*

*Մարաշի մերձակա գյուղերից մեկում մեկ տարեկան երեխային չվրտեցին կրակի մեջ, մեծ թվով երեխաներ խեղդվեցին իրենց մայրերի գրկում, իսկ էրզրումում երեխային սպանեցին հոր խոշտանգված դիակի վրա: Երեխային չէին խնայում նաև մոր արգանդում: Նրան դուրս էին քաշում ու ջրհորը նետում կամ քառատում և նորից մոր արգանդը խցկում: Սեբաստիայի գերեզմանոցում թաղված 450 կնոջից 100-ի որովայնը պատռված, բացված էր: «...Սպանված քրիստոնյաների հազարավոր դիակներ... ոտից գլուխ մերկ, սարսափելի այլանդակված ու պղծված, թափված էին ամենուրեք՝ սարերում, գյուղերում, քաղաքներում, փողոցներում, աղբանոցներում, փոսերում, ջրհորներում: Արաբկիրում շարքով կանգնած սյուներին հագցրեցին մարդկային գլուխներ: Բայբուրդի ոստիկանապետի հրամանով Քանտ գյուղի բոլոր կանայք ու երեխաները մորթվեցին»: Մարաշի 4000 փախստականներից փրկվեցին միայն 380 կին ու երեխա, որոնց բռնագաղթեցրին՝ ճանապարհին ոչնչացնելով հետ մնացողներին ու հիվանդներին: Մի կին գրկած տանում էր իր երկու երեխաներին: Նա հոգնած վայր է ընկնում: Վրա հասած զինվորները երեխաներին գետն են նետում:*

*«Սպանեք տղամարդկանց: Նրանց ունեցվածքը, կանայք ու աղջիկները մերն են»,– սա ամենահաճախ լսվող կարգախոսն էր: «Շատ հաճախ մայրերին սպանում էին, իսկ դուստրերին՝ ոչ, որովհետև նրանք դառնալու էին մահմեդականների սեփականությունը»: Ամեն մի հարձակումից հետո սկսվում էր կանանց ու աղջիկների վաճառքը, նրանց փոխանակում էին ձիերով, էշերով և կամ տանում անազատների շուկա*[414]:

*Կոտորածների ընթացքում ակնհայտ դրսևորվեց իշխանությունների երկդիմի անբարոյական քաղաքականությունը, ինչը ևս փաստում է, որ խուժանի գործողությունները կառավարվում էին նրանց կողմից: Բալուի կազայում զորքերի հրամանատար Հուսեին բեյը մի կողմից՝ հայերին վստահեցնում էր, որ վտանգ չի սպառնում, իսկ մյուս կողմից՝ քրդերին հրահանգում կոտորել նրանց: Այս վարքագիծն ընդհանուր էր բոլոր նահանգների պաշտոնատարների համար: Ընդհանուր էր նաև այն, որ հայերին «միամտացնելուց» հետո թուրք պաշտոնատարների «խոսելաձևը փոխվում էր... Նրանք սկսում էին հայ պատվիրակներին հանդիմանել», բանտարկել կամ այլ բռնի գործողություններ կիրառել, պահանջել հանձնելու զենքերն ու «հեղափոխականներին»: Բալուի կոտորածից մեկ օր առաջ հայերին հարկադրեցին ստորագրել հանրագիր-չնորհակալագիր, որ «զորքերի օգնությամբ կարգուկանոնը վերականգնվել է»: Մարաշում նույնպես հայերը հարկադրաբար ստորագրեցին հանրագիր, որում գրված էր, թե իրենք էին ուզում կոտորել մահմեդականներին, և անկարգությունների համար պատասխանատվությունն ընկնում է իրենց վրա*[415]: *Խարբերդում «պահեստայինների մի մասին» գյուղացու*

---

[413] *Օտարերկրացիները Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին*, էջ 21-22:
[414] Lepsius J., նշվ. աշխ., էջ 42.
[415] *Les massacres...*, pp. 88, 184-185, 236.

հագուստ հագցրին և ուղարկեցին թալանելու ու ավերելու գյուղերը, իսկ թուրք գյուղացիներին քաղաք բերեցին ու հրամայեցին ջարդել հայերին:

Երզնկայում իշխանություններին հաջողվում է կեղծ հավաստիացումներով հայերին հավաքել չուկայում ու կոտորել: Խարբերդում քուրդ հանցագործները բանտերից հանվեցին կոտորածներին մասնակցելու համար: Ուրֆայում ոչ միայն լուրեր էին տարածվում, այլև սուլթանին հեռագրեցին, թե հայերը կործանել են մեչիթը և կոտորել հազար մուսուլման: Տրապիզոնում տարածեցին, թե հայերը, դաշնակցած անգլիացիների հետ, նպատակ ունեն կործանել Օսմանյան կայսրությունը:

Կոտորածների կոչերում երբեմն նշվում էր, որ գործողությունների նպատակը հայերի ոչնչացումն է: Բալուում մուֆթին ու պաշտոնատարները ջարդարարներին հորդորում էին. «Նախ, սպանեք, ժամանակ մի կորցրեք թալանի վրա»: Երզնկայում բարձրաստիճան չինովնիկները ամբոխին կոչ էին անում. «Կոտորեք գյավուրներին, մի վախեցեք»: Արաբկիրում մուեզինները գոչում էին. «Մուհամմեդի զավակները պարտավոր են կատարել իրենց պարտականությունը՝ ոչնչացնել բոլոր հայերին, թալանել ու հրկիզել նրանց տները: Ոչ մի հայ չպետք է ողջ մնա...»: Ուրֆայում իշխանությունները ջարդարարներին 48 ժամ ժամանակ տվեցին և կոչ արեցին. «Մորթեք բոլոր գյավուրներին...»[416]: «Մա՛հ քրիստոնյաներին, փառք Մուհամմեդին,— այս կոչով էր ամբոխը գնում հայերին կոտորելու: Եվ կոտորում էր, կոտորում անխնա:

«Դեղին գրքում» զետեղված նյութերի համադրությունը հնարավորություն է տալիս հայկական կոտորածների գործադրման եղանակների ու միջոցների մեջ տեսնել որոշակի օրինաչափություններ ու ընդհանրություններ:

*Առաջին.*— Ամենուրեք կոտորածին նախորդում էր հայերի ահաբեկված վիճակը, սարսափը, թե կոտորածները ոչ միայն հնարավոր էին, այլև անխուսափելի:

*Երկրորդ.*— Այդ ընթացքում մահմեդական ազգաբնակչության կողմից հայերի հանդեպ բռնությունները սաստկանում էին. դրանց մի մասը հետևանք էր անձնական քինախնդրության, իսկ մղիչը մեկն էր՝ համոզմունքը, որ հայերի հանդեպ բռնարարքներն անպատիժ էին մնալու:

*Երրորդ.*— Վտանգի զգացողությունից դրդված հայերը փորձում էին հովանավոր գտնել հանձինս տեղական իշխանությունների: Վերջիններս չէին հապաղում նրանց խոստումներ տալ՝ իրենք պատասխանատու են հայ բնակչության անվտանգության համար: Հայերը, այլ ելք չունենալով, թեթևացած չունչ էին քաշում ու վերադառնում իրենց առօրյա գործերին, ինչը ձեռնտու էր իշխանություններին կոտորածի ծրագիրը կենսագործելու համար:

*Չորրորդ.*— Իշխանությունները հաջողությամբ մահմեդական զանգվածներին հայերի դեմ էին հանում վերջիններիս հանդեպ մահմեդականների ատելությունը բորբոքելու համար անհեթեթ լուրեր տարածելով և մահմեդական բնակչությանը զինելով:

*Հինգերորդ.*— Իշխանությունները ձգտում էին, որ հայերի վրա հարձակումը սկսեր խուժանը և ոչ թե ոստիկանությունը կամ զորքը, ինչը հնարավորություն էր տալիս ջարդերը ներկայացնելու որպես մահմեդականների զայրույթի բռնկում: Երզնկայում կառավարիչը հայերի ներկայացուցչին անվտանգության հավաստիացումներ տվեց նույն պահին, երբ սկսվեց խուժանի հարձակումը չուկայի վրա: Այդպես եղավ նաև Կեսարիայում, Ուրֆայում, Սեբաստիայում, Խարբերդում, Արաբկիրում, Հասանի Մանզուրում»[417]: Որպեսզի հայերը ոչինչ չկասկածեին, բանտարկում էին քուրդ հայտնի ավազակներին, բայց քիչ անց բաց էին թողնում[418]:

---

[416] Նույն տեղում, էջ 24, 211, 258 :
[417] Նույն տեղում, էջ 138-140, 164, 240-241, 217-218:
[418] Նույն տեղում, էջ 183-185:

*Վեցերորդ.— Գրեթե ամենուրեք իշխանությունները խառնակություններ սկսելու մեղքը բարդում էին հայերի վրա և կոտորելուն զուգահեռ ձերբակալություններ կատարում: Հիմնականում բանտ էին նետում ազդեցիկ հայերին:*

*Ծոթերորդ.— Աչխատում էին ջարդարար գործողությունները սկսել ոչ թե տեղացիների միջոցով, այլ ուրիշ վայրերից էին մարդիկ բերում, որպեսզի նրանց չճանաչեին՝ հետագա բարդություններից խուսափելու համար: Նույն տրամաբանությունն էր ընկած կոտորածներում բանակի, ժանդարմերիայի և ոստիկանության օգտագործման հիմքում*[419]*:*

*Ութերորդ.— Այդ «դժոխային մեքենայություններին, որոնց հետևողականությունը ստիպում է մտածել, որ մենք գտնվում ենք սպանդանոցում... հաջորդում է բուն կոտորածը: Վերջինիս սարսափելի վայրիվերումներում գլխապտույտ արագությամբ իրար փոխարինում են սպանությունը, թալանը, հրկիզումը, բռնաբարությունը, կոտտանքների բազմազանությունը»*[420]*: Հայերը պարզապես չփոթվում էին, դժոխքից ելք չէին տեսնում և չէին պայքարում: «...Բազում կանանց ու աղջիկների էին խայտառակում նրանց հայրերի ու ամուսինների աչքի առաջ, կտրում էին խայտառակվածների կրծքերը, քառատում և սպանում էին տևական ու սարսափելի տանջանքներով: Սատանայական դաժանությամբ մորթում էին նախ երեխաներին, ապա ծնողներին՝ զվարճանալով, որ խոշտանգվողներն աղերսում էին չուտ վերջ տալ իրենց կյանքին: Եղել են գազաններ, ովքեր սեփական կիրքը բավարարել են՝ խայտառակությունից խուսափելու համար իրենց կյանքին վերջ տված աղջիկների դիակների վրա... արյունը վտակ դարձած հոսում էր՝ ներկելով փողոցներն ու տները... Կանայք ընկնում էին մարդասպանների ոտքերը, որոնք հոչոտում էին նրանց զավակներին, քույրերին, եղբայրներին, ամուսիններին... բայց գազանները կոխկրտում էին նրանց մարմինները, ոտքի տակ տալով՝ մորթում էին ամբողջ գերդաստաններ»*[421]*: «Կային թուրքեր, որոնք սպանում էին իրենց հարևաններին, ընկերներին, բարեկամներին: Նրանք մոլեգնած գազանների նման փրթում էին նույնիսկ դիակները... քառատում էին կանանց»*[422]*:*

*Իններորդ.— Տեղական իշխանությունները՝ քաղաքացիական, հոգևոր, զինվորական, որոշ տեղերում բացահայտ, իսկ շատ հաճախ թաքուն ղեկավարում էին ջարդի գործողությունները, նաև ուղղակի մասնակցություն ունենում դրանց: Հնարավորին չափ շատ հայեր սպանելը թուրք և քուրդ վերնախավի (նաև հասարակ մարդկանցից շատերի) համար դարձել էր սուլթանին ու իսլամին նվիրվածության չափանիշ: Ոմն Սուլեյման իր եղբոր հետ սպանեց 300 հայ:*

*Տասներորդ.— Մասնավորապես դաժան էին մահմեդական հոգևորականները: Տարածված կարգախոսներից էին՝ «Մահմեդականություն ընդունեք, թե չէ բոլորիդ կմորթենք»: «Ոչ մի գյավուրի կենդանի չթողնել»: «Եթե գյավուրներին չոչնչացնենք, երբեք դրախտ չենք ընկնի»*[423]*: Մուհամմեդի «զավակների պարտականություն» հռչակվեց հայերի ոչնչացումը, նրանց ունեցվածքի կողոպտումն ու հրկիզումը*[424]*: Դրանով է բացատրվում այն առանձնակի սադիստությունը, որ դրսևորվում էր հայ հոգևոր հաստատությունների ու հոգևորականների հանդեպ*[425]*: Թուրքական արդարադատության նախարարին 1895թ. դեկտեմբերի 4-ին ուղարկած նամակում Մ. Իզմիրլյանը, անդրադառնալով հայաբնակ բոլոր չրջաններում ծավալված «նախապես կազմակերպված» ոճրագործություններին, որոնք «խրախուսվել են տեղական իշխանությունների» կողմից, և*

---

[419] Նույն տեղում, էջ 123-124:
[420] *Братская помощь...*, стр. 52.
[421] Նույն տեղում, էջ 53-54:
[422] Նույն տեղում, էջ 54:
[423] Նույն տեղում, pp. 218, 257, 246:
[424] Նույն տեղում, էջ 143-144:
[425] Նույն տեղում, էջ73, 76, 105, 118, 137, 177, 234-235:

որոնց մասնակցել է զորքը, ներկայացնում է փաստեր նաև հայ հոգևոր կյանքի հանդեպ իրականացված գենոցիդի վերաբերյալ: «Ադանայում կանանց ու աղջիկներին հավաքել են մի վայրում գեղեցիկներին ջոկելու և մնացածներին կոտորելու համար: Նույն վայրերում պատարագող քահանայի ներկայությամբ բռնաբարել են նրա կնոջը: Քահանային էլ բանտ են նետել, որովհետև համարձակվել է կատարվածի մասին տեղյակ պահել եպիսկոպոսին: Ոչնչացումից զերծ մնացած բնակչությունը զրկված է ծածկից, ուտելիքից, հագուստից...»[426]: Զանգվածային բնույթ ստացավ հայ բնակչության բռնի մահմեդականացումը: «Ամբողջ գյուղերով ստիպված էին լինում մուսուլմանություն ընդունել, որովհետև միայն այդ պայմանով կարող էին ողջ մնալ»: Այդպես վարվեցին, օրինակ, Էգինի 14 գյուղերի բնակիչները, շատ գյուղեր Վասպուրականում, Սղերդում, Բիթլիսում[427]:

**Տառնմեկերորդ.**— Ջարդերից հետո իշխանությունները կատարյալ անհոգություն էին դրսևորում դրանց հետևանքների վերացման հանդեպ: «Հալեպից եկող-գնացող վաճառականները... ճանապարհներին և դաշտերում տեսնում էին հարյուրավոր կանանց՝ լրիվ մերկ, անպատվված, խոշտանգված, մեռած կամ հոգեվարքի մեջ, ոմանց մոտ՝ կրծքի կենդանի երեխաներ»: Կոտորածից հետո անթաղ դիակները քայքայվում էին: Համընդհանուր սով էր: Ամենուրեք վխտում էին հայ մուրացկանները: «Փողոցները լիքն են դժբախտ զոհերով, որոնց մեջ... կիսամերկ կանայք և աղջիկներ, հազիվ շարժվող ծերուներ»: Ցրտից ու քաղցից չատ դժբախտներ էին զոհվում: «Մեծ թվով երեխաներ,— գրում է Աղթամարի կաթողիկոսը,— որբ են մնացել: Ամենուրեք հանդիպում էին անմխիթար ծնողներ, ովքեր փնտրում էին որդու կամ կորած դստեր հետքերը»[428]: Պատրիարքի տվյալներով՝ որբ մնացած երեխաների թիվը հասավ 50 հազարի: Նույնքան էլ այրի կանայք կային[429]: Կոտորածների հետևանքով հայերի նյութական վնասը կազմեց 4 մլն. օսմանյան ոսկի[430]:

**Տասներկուերորդ.**— *1894-99 թթ.* կոտորածների ընթացքում փորձարկվեցին բնաջնջման, սադիզմի, վայրագության եղանակները: Դրանք զանգվածային տարածում ու գործադրություն ունեցան Հայոց ցեղասպանության երկրորդ շրջանում՝ Մեծ եղեռնի տարիներին:

## 16. ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՎԱՑՐԻՎԵՐՈՒՄՆԵՐ

Կոտորածներն ուղեկցվում էին քարոզչական արշավով: Մի քանի շրջաններում թուրքական քարոզչական միջոցները հայերի դիմադրությունը կառավարական ուժերին ներկայացրին որպես «խռովարարների» և «ավազակների» գործողություններ: Այս ճևակերպումը թուրքերն օգտագործում են մինչև օրս:

Նույն նպատակով սուլթանական իշխանությունները հայերին հարկադրում էին հանրագրեր կազմել և խոստովանել իրենց մեղքը, թուրքական մամուլն էլ անմիջապես հրապարակում էր նման «խոստովանությունները»: Այդ գործելակերպն առաջին անգամ կիրառվեց Սասունի կոտորածների ժամանակ: *1894թ.* սեպտեմբերի 19-ին թուրքական մամուլում պաշտոնական հայտարարություն երևաց, թե «Տալվորիկի զինված ավազակների ու խռովարարների հետ չգործակցելով, մյուս վայրերի հնազանդ և հավատարիմ հայերը Բիթլիսի կուսակալին գրեր են գրել, որոնցով հանուն կայսրական գահի չնորհակալություն է հայտնվում ավազակներին պատժելու համար»[431]:

---

[426] *АВПР, Политархив,* д. 3449, л.л. 62-63.
[427] *Les massacres...*, pp. 74, 82, 91, 106:
[428] *Les massacres...*, pp. 105, 119-120, 232, 225, 165, 105, 160.
[429] *АВПР, Посольство в Константинополе,* д. 3185.
[430] «Դրոշակ», 1899, թիվ 1:
[431] «Մուրճ», 1905, թիվ 8:

"Sabah" թերթը «խռովարարներին» հակադրում է նրանց «հանդարտ ու հավատարիմ» հայրենակիցներին: Նման մոտեցումը խնդիր ուներ. նախ՝ եվրոպային համոզել, որ կոտորած չկա, այլ պարզապես իշխանությունները գործողություններ են իրականացնում մի բուռ «խռովարարների» դեմ և երկրորդ՝ մահմեդական ամբոխի մեջ ատելություն բորբոքել «անհնազանդ», «պատրանքներով տարված» հայերի հանդեպ, ովքեր դառնալով գործիք անգլիացիների ձեռքին, ձգտում են մասնատել կայսրությունը[432]: Տեսնելով, որ թուրքական քարոզչությունը մեծ եռանդով չահարկում է հայերի հանրագրերը, պատրիարք Մ. Իզմիրլյանը հանձնարարեց դրանք հասցեատերերին ուղարկել միայն պատրիարքարանի միջոցով:

Հայերի դեմ թուրքական մամուլի արշավը Եվրոպայում աննկատ չմնաց: "Daily News"-ը գրեց. «Կ. Պոլսի քրիստոնյա ազգաբնակչության շրջանում մեծ անհանգստություն է տիրում գլխավորապես հայերի վրա թուրքական թերթերի հարձակումների պատճառով: Թուրք ազգաբնակչության նույնիսկ ամենախոնարհ դասը օրեցօր ավելի է հավատում, թե հայերը հարձակման են պատրաստվում մուսուլմանների վրա: Եվ այդ մի իրավիճակում, երբ հայ մամուլը խիստ զրաքննության է ենթարկվում, իսկ թուրքական թերթերն անպատիժ հրապարակում են հուզումնալից հոդվածներ և թուրք հասարակությանը գրգռում հայերի դեմ»[433]: Հայկական մամուլի նկատմամբ ճնշումն էլ ավելի սաստկացավ Բաբը Ալիի ցույցից հետո: Թերթերի ու հանդեսների յուրաքանչյուր համար 5-6 անգամ «տարբեր զրաքննիչների քննության էր ենթարկվում»[434]:

Է. Փերսը նկատում է, որ պաշտոնական հայտարարություններն այս կամ այն վիլայեթում տիրող «խաղաղ վիճակի» մասին այնքան հաճախակի ու անլուրջ էին արվում, որ ամեն անգամ ընկալվում էր, թե տվյալ վիլայեթում ինչ-որ իրադարձություն է տեղի ունեցել: Նման մի հաղորդագրության մեջ ասվում է. «Հունիսի 25-ի ամսաթվով մեծ եպարքոսին հասած հեռագրերը հայտնում են, որ Դիարբեքիրի, Կասթեմանուի, Խարբերդի, Մոսուլի, Տրապիզոնի, Բրուսայի, Հալեպի, Կոնիայի, Էնկյուրիի, Ադանայի և Բիթլիսի նահանգներում... չնորհիվ Վեհ. սուլթանի, կատարյալ անդորրություն ու անվտանգություն է տիրում»[435]: «Իգդամ»-ը ճգնում էր հերքել Վանի ինքնապաշտպանության մասին եվրոպական մամուլի լուրերը՝ կրկնելով պաշտոնական քարոզչության թեզը՝ «այդ կողմերում բարեկարգության որևէ չարժում տեղի չի ունեցել»[436]:

«Թերջյուման հակիկաթ»-ը և մի քանի ուրիշ թերթեր խեղաթյուրում էին օսմանյան պատմությունը, մերժում պատմական անցյալում թուրքերի կողմից քրիստոնյաների հանդեպ կատարված բռնարարքները[437]: Սահմանադրական չարժման առաջնորդ Միհդատի որդին «Իգդամ» թերթում փառաբանում էր մահմեդականությունը՝ նշելով դրա գերազանցությունը քրիստոնեության հանդեպ[438]:

Իսկ հայի մամուլի ամենաանմեղ տողերում այլաբանություն տեսնելու ոստիկանության կասկածամտությունն աստիճանաբար վերածվում էր բացարձակ կամակորության: Մեծ դժվարությամբ ձեռք բերվեց «Սուրհանդակ»-ի հրատարակության իրավունքը, որովհետև թերթի անունը մեկնաբանվում էր «սուր-հան-դակ», այսինքն՝ «սուրը հանիր թաքմիշ արա (խփիր)»[439]: Նորից «վերախմբագրվեց» Աստվածաշունչը: Գրաքննիչները գտան, որ «Հրեաստանը» «Հայաստան» բառի նման է հնչում: Մերժվեց նաև Քրիստոսի

---

[432] "Sabah", 1904, № 12:
[433] «Արձագանք», 25.10.1896:
[434] Նույն տեղում, 13.01.1896:
[435] «Մշակ», 13.01.1896:
[436] Նույն տեղում, 16.11.1896:
[437] Նույն տեղում, 30.07.1896:
[438] Նույն տեղում, 16.03.1896:
[439] Նույն տեղում, 27.10.1898:

համար զոհված Սբ. Ստեփանոսը, որովհետև նրա քարկոծման հանգամանքը կարող էր հիշեցնել 1896թ. օգոստոսյան օրերը, երբ մեծ թվով հայեր նույն եղանակով սպանվեցին[440]:

Ոստիկանությունը ձգտում էր հավաքագրել մամուլի ղեկավարներին, խմբագիրներին, նրանց իր գործակալները դարձնելու միջոցով թերթերն ու ամսագրերը վերածել սուլթանական վարչակարգի հենարանի: Արամ Անտոնյանը պատմում է, թե ինչպես տպագրության տեսչության տնօրեն Ֆերիդ Սիսակը փորձել էր իրեն դարձնել ոստիկանական գործակալ[441]: «Համիդի իշխանության տարիներին,– գրում է իրավիճակին քաջատեղյակ Սեֆերը,– անթիվ և անհամար խմբագիրներ սիրաշահվում էին տաճկական մեդալներով ու չքանշաններով: Այդ պայմաններում ինչպե՞ս պահանջել, որ նրանք՝ իշխանությունները, նշանակություն տան Եվրոպայի կարծիքին»[442]:

Կոտորածներից հետո սուլթանը նորից մարդիկ գործուղեց Եվրոպա՝ մամուլին կաշառելու, որպեսզի կոտորածները լռության մատնեն: Սուլթանի ոսկին, իրոք, փակեց մամուլի բերանը: Միայն մի քանի լրագրողներ հրաժարվեցին «լռության դավադրությանը» մասնակցելուց: Դրանց թվում էր "Intransigeant"-ի խմբագիր Ռոշֆորը, որին համոզելու համար սուլթանի ներկայացուցիչը մեկ առ մեկ թվեց, թե ում որքան կաշառք է տվել: Կաշառք ստացածների թվում էր նաև Վիլհելմ 2-րդը: Հաջորդ օրը Ռոշֆորն ամբողջ զրույցը տպագրեց:

1908թ. երիտթուրքական կոմիտեի ձեռքն ընկավ եվրոպական կաշառված թերթերի ցուցակը, որ կազմել էր սուլթանի քարտուղար Իզզեթը: Կաշառվածների թվում էին գերմանական և ավստրո-հունգարական "Prechtaler Lloyd"-ը, "Neue freie Presse"-ն, "Vossische Zeitung"-ը և մի շարք այլ պարբերականներ[443]:

1895թ. պետական խորհրդի նիստերից մեկում սուլթանը պահանջում է սկսել հայերի կոտորածները: Երբ նիստի մասնակիցներից մեկը խոսք է բացում տերությունների և մամուլի վերաբերմունքի մասին, Աբդուլ Համիդն ասում է. «Եվրոպան... ամբողջ 19-րդ դարում ատամները թափած պառավի նման անընդհատ փնթփնթում է ու հետ քաշվում: Ինչ վերաբերում է եվրոպական մամուլին, ապա անհանգստանալու առիթ չկա, մի բուռ ոսկով կարելի է ամենամեծ լրագրողի բերանը փակել»[444]:

Իհարկե, ոչ բոլոր թերթերն էին ենթարկվում սուլթանի քմահաճույքներին ու սիրաշահումներին: Շատ խմբագիրներ խուսափում էին ձոներ գրել սուլթանի հասցեին և այդ գործը հանձնարարում էին «կեղտոտ աշխատանք» կատարող գրչակներին:

Թուրքական քարոզչության մաղձի զոհ դարձածների թվում էր թուրք առաջավոր գործիչ Թևֆիկ Ֆիքրեթը, որը խարազանում էր հայերի նկատմամբ համիդյան ջարդարար քաղաքականությունը: "Boulevard" թերթում թուրք լրագրող Կ. Երեթչը Թ. Ֆիքրեթին հռչակում է թուրքական դավաճանության հիմնադիր և հայերին վաճառված անձնավորություն, որը անպայման «գլխարկ է հանել հայկական խժդժությունների առաջ, որոնք այս թվականից (1890թ.) ի վեր չեն դադարում: Ողբացյալ Թալեաթ փաշան, որ Բեռլինում նահատակվեց նույնպես հայերի ձեռքով, այդ օրերին մեր իսկ կողմից կատարված գրգռությունների հետևանքով օտար աշխարհում մեն մենակ էր մնացել»:

Եվրոպական մի շարք լրագրողներ, դիվանագետներ, քաղաքական գործիչներ հանդես եկան սուլթանի կեղծարարությունների մերկացումներով: Ուրֆայում Անգլիայի փոխհյուպատոս Ջ. Ֆիցմորիսը խիստ քննադատության ենթարկեց թուրքական իշխանությունների կողմից հայերի «սուտ ամբաստանությունները, խռովարարական բնույթի չինծու վավերագրերը, երևակայական տեղեկագրերն ու հեղափոխական կոմիտեների մասին զրպարտությունները»: Ըստ նրա՝ օսմանյան կառավարությունը «ճակատագրա-

---

[440] Նույն տեղում, 08.02.1895:
[441] "Mazume-i- ekfâr", 31.07.1908.
[442] «Մուրճ», 1907, թիվ 1:
[443] «Ջանգակ», 10.08.1908:
[444] «Երկրի ձայն», 1907, հ. II, էջ 11:

կան սխալ» էր գործել, հանցավորներին անմեղների հետ չփոթելով: Փոխանակ իրավական ճանապարհով պատժելու «դավաճանական գործողություններին» մասնակցած հայերին, Բ. Դուռն իրեն իրավունք վերապահեց թուլլ տալ մահմեդական բնակչությանը հափշտակելու կառավարության մենաշնորհը և իր կույր զայրույթը թափելու սուլթանի ամենախելացի, ջանասեր և օգտակար հպատակների «մեծ մասամբ անմեղ հատվածի վրա»[445]:

Ջարդերի ընթացքում և հետո հավատափոխությունը, որն իրականացվում էր բռնի միջոցներով, աննախադեպ ծավալներ ընդունեց: Հայ բնակչությանը բնաջնջելու սպառնալիքով իսլամացնում էին: Անգամ Լոբանովը նյութեր էր հավաքում կրոնափոխության առնչությամբ Բ. Դռանը բողոք ներկայացնելու: Ադանայում Ֆիցմորիսի ներկայությամբ կատարված հետաքննությամբ հաստատվեց, որ «Բեյլիչիկում մինչև կոտորածները (հունվարի 1-ին եղել է 240, իսկ կոտորածներից հետո՝ 150 տուն քրիստոնյա) բնակչությունը՝ թվով 1500 հոգի... իրենց հարազատների արնաթաթախ դիակների առաջ և ամբոխի սպառնալիքներով դարձան մահմեդական»:[446] Անկարայում Ֆրանսիական հյուպատոսը գրում է. «Մոլեռանդները այրիացածներին ու որբերին հարկադրում էին ընդունելու մահմեդականություն, հրաժարվողներին անմիջապես սպանում էին: Շատ աղջիկներ տներից, բաղնիքներից կիսամերկ փողոց չպրտվեցին և հրապարակավ բռնաբարվեցին, որից հետո սպանվեցին կամ առևանգվեցին: Կրոնափոխվածների թիվը 1896թ. մայիսի տվյալներով Բիրեջիկի կազայում 4.3 հազար էր, Ուրֆայում՝ 500, Սևերեչում՝ 200, Ադանայում ու շրջակայքում՝ 900, Մարաշի շրջանում՝ մի քանի հարյուր, իսկ Վանի վիլայեթում՝ մի քանի հազար:

Ոչնչացվեցին կամ կողոպտվեցին բազմաթիվ հուշարձաններ, հին ձեռագրեր: Վերջինների արծաթյա կազմերը, եկեղեցիների և տնային օգտագործման արծաթյա իրերը ձուլում էին, գոտիներ ու զարդեր պատրաստում:

Հայկական հոգևոր հաստատությունների ոչնչացումն ընդգրկուն ծավալներ էր ընդունել: Եկեղեցիներն ու վանքերը թալանվում էին, սրբապղծվում, հոգևորականությունը հաշվեհարդարի էր ենթարկվում, այդ հաստատությունները բռնագրավվում և օգտագործվում էին այլևայլ նպատակներով: 1895թ. սեպտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի կեսերը Քեմախի Վարագա, Փոքարեչի Սբ. Աստվածածնի, ևս 6 այլ վանքեր ավերվեցին: Երզնկայի Փեղենայի եկեղեցին թալանվեց: Ումացում գյուղի եկեղեցին հրկիզվեց, Դևնիկ գյուղինը՝ թալանվեց ու պղծվեց: Լեդեթոնի հովտում ավերվեց 249 գյուղ իրենց եկեղեցիներով, Կարախասրչակի կազայում ավերվեց 27 գյուղ և Սբ. Թագավոր վանքը, հրդեհվեց Բուրգամի եկեղեցին դրանում ապաստանած հայերի հետ: Նույն բանն արվեց Ինդերեսում:

Խարբերդի վիլայեթում ավերվեց 29 և հրդեհվեց 15 եկեղեցի, ոչնչացվեց 29 վանք ու աղոթատեղի: Առևանգվեց 2300 կին և աղջիկ, բռնությամբ մահմեդականացվեց 12 հոգևորական, 7664 բնակիչ: Խոշտանգելով մեռցրեցին 15 հոգևորականի, 4 ուսուցչի[447]: Վանի և Բիթլիսի վիլայեթներում թալանվեց (դրանց մեծ մասը նաև ավերվեց) 236 եկեղեցի և 53 վանք: 245 գյուղի հայ բնակչությունը մահմեդականացվեց, 116 եկեղեցի վերածվեց մզկիթի[448]: Կոկուլուի եկեղեցու քահանային ողջ-ողջ այրեցին, իսկ Դուդեմի քահանային սպանեցին կտոր-կտոր անելով: Բարձրահայաց վանքի վարդապետ Հովհաննեսի ձեռները հոդ առ հոդ կտրեցին և գազանաբար սպանեցին եկեղեցու շեմի վրա: Խիզանի Սբ. Խաչ վանքի վանահայր Սահակ վարդապետը 20 հոգով մի քանի օր պաշտպանեց

---

[445] *Blue Book, Turkey*, № 5, pp. 10, 15:

[446] *Братская помощь...*, стр. 16.

[447] *Les massacres...*, p. 237:

[448] Lepsius J., նշվ. աշխ., էջ 21-95, *Les massacres...*, pp. 44-268.

վանքը և թուլլ չտվեց, որ խուժանը ներխուժի: Սակայն ի վերջո հարցը լուծեց ուժը: Վանահորը մորթազերծ արեցին, մաշկի մեջ հարդ լցրեցին ու կախեցին ծառից:

Վանի միայն ութ նահանգում կողոպտվեց 120 վանք ու եկեղեցի: Մարաշում ավերվեց ու պղծվեց հայկական գերեզմանոցը: Մեծ թվով վանքեր ու եկեղեցիներ վերածվեցին մզկիթների[449]: Արաբկիրի հինգ եկեղեցիներից կանգուն մնաց միայն մեկը, այն էլ թալանված: Քահանաներից նույնպես միայն մեկը կենդանի մնաց: Նրան էլ բանտ նետեցին[450]: Շեյխ Ջալալէդդինի որդին՝ Ս. Աւին զավթեց հռչակավոր Սբ. Գամաղիելի վանքը և դարձրեց իր նստավայրը: Նրա օրինակին հետևեցին շատ այլ շեյխեր ու բեկեր: Մուշում անգլիական փոխհյուպատոսը վկայում է, որ Դիարբեքիրի գյուղերի քրիստոնյա բնակչությունը մահվան սպառնալիքով մահմեդականացվել էր:

Անկարայում ֆրանսիական հյուպատոսը տեղեկագրում է, որ մուսուլմանները այրիացածներին ու որբերին հարկադրում էին մահմեդականանալ, հրաժարվողներին սպանում էին: Շատերին կրոնափոխ էին անում և որպես ստրուկ վաճառում: Այդ երևույթի մասին բազմիցս հիշատակել են ֆրանսիական հյուպատոսները Ուրֆայից, Ալեքսանդրեթից, Հալեպից: Պոնյոնը գրում է, որ Հալեպում հրապարակավ հայ աղջիկներ էին վաճառում[451]:

Մ. Իզմիրլյանը 1895թ. դեկտեմբերի 27-ին գրում է կաթողիկոս Մ. Խրիմյանին. «Քանի՜ կրոնափոխություններ՝ կանանց և երեխաների առևանգումներով, իսկ կրոնական սրբապղծությունները չափն անցան: Ամբողջ գյուղեր կան Թրքացած՝ իրենց քահանաներով. եկեղեցիները կա՛մ այրված են, կա՛մ մզկիթների վերածված, որտեղ մոլլաները վարդապետում են հաղթական մահմեդականություն: Կան նաև սրբատեղեր՝ վերածված գոմերի ու զորանոցների[452]: Հասան-Մազրում հայերին սպառնում էին. «Մահմեդականություն ընդունեք, եթե ոչ, բոլորիդ սրի ենք քաշելու», իսկ Ադանայում՝ «Կտեսնեք, ոչ մի գյավուրի կենդանի չենք թողնելու»:

Մ. Իզմիրլյանի պաշտոնաթողությունից հետո բնաջնջման օսմանյան քաղաքականության դեմ հայերի դիմադրությունը նկատելիորեն թուլացավ: Պատրիարքի տեղապահ Ջամիչյանը վերածվեց օսմանյան իշխանությունների գործակալի և գտնվում էր գաղտնի ոստիկանության պաշտպանության ներքո: Նա անբարոյական կեցվածք դրսևորեց նաև Օսմանյան բանկի վրա հարձակման ժամանակ, ինչը և պատճառ հանդիսացավ, որ Ազգային ժողովը 1896թ. հոկտեմբերին պատրիարք ընտրեց ոչ թե նրան, այլ Մ. Օրմանյանին:

1895թ. դեկտեմբերին փաստորեն վերացավ ութ դարի պատմություն ունեցող Աղթամարի կաթողիկոսությունը: Դաժան զուգադիպություն: Նույն տարիներին աղետալի վիճակում հայտնվեց նաև Էջմիածնի կաթողիկոսությունը: Ցարական իշխանությունները, օգտագործելով Մակար կաթողիկոսի մահից հետո (1891թ.) սկսված ներքին խժդժությունները, վանքը զորք մտցրեցին և կաթողիկոսարանը ենթարկեցին զինվորական իշխանությունների: 1892թ. կաթողիկոս ընտրվեց Մ. Խրիմյանը, բայց ցարը նրան այդ պաշտոնում հաստատեց մեկ տարի անց:

Սուլթանն հայ կյանքում եղած այս խառնաշփոթը նույնպես օգտագործում էր, որպեսզի վարչակարգն ազատի հրեշավոր հանցագործության պատասխանատվությունից: Աբդուլ Համիդի քարտուղար Թահսինի կողմից վալիներին հասցեագրված մի շրջաբերականում ասվում է.

...«Իմացել ենք, որ հյուպատոսներին հրամայված է ճշտել Անատոլիայում եղած հայերի թիվը, ուսումնասիրել մուսուլման դարձածների, մուսուլմանների տներում պահվող

---

[449] *Les massacres...*, pp. 62,64,74,106.
[450] ԳԱԹ, ֆ. Աւաքեյան Հ., գ. 166, թ. 1:
[451] *Братская помощь...*, стр. 116.
[452] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 226 ԺԱ, վավ. 204, թ. 2:

*կանանց, հայերի ընտանիքների և դատապարտվածների վիճակը: Այժմ բոլորին է հայտնի, որ հայերն իրենք են եղել խռովությունների կազմակերպիչներն ու հրահրողները: Քանի որ նրանց հարձակումն անսպասելի էր, անտարակուսելի է, որ հայերի ձեռքն են անցել մահմեդական կանայք ու երեխաներ: Մյուս կողմից՝ ստույգ է նաև այն, որ ոչ մի հայ կին ու երեխա չէր կարող մուսուլմանների մոտ գնալ:*

*Առանց այս ամենը հաշվի առնելու՝ անընդհատ քննություններ են կատարում հայերին իբրև զոհ ցույց տալու համար: Դա արվում է հատուկ՝ կայսրական կառավարությունը խարխլելու դիտավորությամբ: Հյուպատոսներն այս ուղղությամբ են գործում: Այդ թշնամական փորձերը խանգարելու համար ձեզնից պահանջվում է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հայերին նշված ոգով նախապատրաստելու և կայսրությանը ձեր նվիրվածությունը փաստելու ուղղությամբ:*

*Այլ կերպ վարվելու դեպքում կդիտվեք որպես կառավարությանը և իսլամին դավաճանածներ»*[453]*:*

*Համանաբար Ելդըզը վախեցած էր եվրոպական մամուլում եղած այն հրապարակումներից, որոնք անձամբ սուլթանին էին մեղադրում ջարդերի իրականացման մեջ: Աբդուլ Համիդի ցինիզմը հասավ այնտեղ, որ հանգանակություն կազմակերպեց վերականգնելու այն մզկիթները, որոնք վնասվել էին «Անատոլիայում տեղի ունեցած անկարգություններից», այսինքն՝ ավերել էին ոչ թե մահմեդականները, այլ հայերը: Դրան Մ. Իզմիրլյանը պատասխանեց. «Քանդվել ու ավերվել են 400-ից ավելի հայ սրբավայրեր, իսկ մզկիթ՝ միայն մեկը՝ Արաբկիրում, որը հայերի թաղին կից լինելով, այրվել է»*[454]*:*

*Ժ. Դորիսը, հերքելով Աբդուլ Համիդի պնդումը, թե ջարդերից անձամբ ինքը տեղյակ չէր, թե մեղավորները վալիներն էին, ովքեր իր հրամանները չէին կատարել, ներկայացնում է հետևյալ միջադեպը: Պաղեստինում գտնվելու ժամանակ Վիլհելմ 2-րդը օսմանյան ոստիկանապետ Նազըմին հարցրել էր. «Ո՞վ է վերջին ջարդերի պատասխանատուն»: Նազըմն առանց վարանելու պատասխանել էր՝ «Նորին վեհափառությունը»: Կայզերն ու նրա շքախումբը համոզված էին, որ հայկական կոտորածները դառն իրողություն էին: «Կայզերին ուղեկցող պալատականներից չատերը Թուրքիայում իրենց անհարմար էի զգում, քանի որ, ինչպես ասել է պալատական քարոզիչ Ֆ. Ֆոն Դրիանդերը, «ամբողջ քաղաքից դեռևս մորթված հայերի հեղված թարմ արյան հոտ էր գալիս»*[455]*: 1894թ. Վանի նորընծա վալին պաշտոնավայր մեկնելուց առաջ գնում է Ելդըզ՝ սուլթանից ցուցումներ ստանալու: Եպարքոս Ջևադը նրան ասում է. «Փաշա, նորին վեհափառությունը ձեզ հանձնարարում է ծայրաստիճան խստությամբ վերաբերվել հայերին»: «Բայց դա հայերին ապստամբության կմղի»,— պատասխանում է փաշան: «Եթե ապստամբեն՝ լավ: Դուք էլ կկարդեք»*[456]*:*

*Մ. Իզմիրլյանը Բ. Դուանը բողոք ներկայացրեց հայերի հանդեպ գործադրված վանդալիզմի առնչությամբ՝ վճռականորեն հերքելով պնդումները, թե իբր հայերն էին նախահարձակները: Պատրիարքն առանձնակի է անդրադառնում կոտորածների ընթացքում զորքի ու ամբոխի համագործակցված, համերաշխ գործողություններին և այն բանին, որ տուժածներին օգնելու պատրիարքարանի ջանքերը մշտապես հանդիպել են իշխանությունների հարուցած արգելքներին*[457]*:*

*Հարիսը գրում է, որ հայաբնակ գավառներ ագիտատորներ գալիս էին, սակայն «հայերի շրջանում հեղափոխական քարոզչությունը պարզապես անհնար» էր: Հոտի վիճակին իջեցված հայերին չի կարելի մեղադրել գայլերի վրա հարձակվելու դիտավորության*

---

[453] «Դրոշակ», 1897, թիվ 16:
[454] «Դրոշակ», 1896, թիվ 11:
[455] Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 1985, էջ 118:
[456] "Pro Armenia", 1901, № 17.
[457] ԳԱԹ, ֆ. Առաքելյան Հ., գ.107:

մեջ: Հեղին գյուղում հակաթուրք որևէ տրամադրություն չկար, սակայն դա չխանգարեց տեղի իշխանությանը հավաքելու 100 կացին, զինաթափելու հայերին և սեպտեմբերի 15-ին ոչնչացնելու մի քանի հարյուր հոգու: Այդ իրավիճակում հայը փրկության ելք էր փնտրում, այլ ոչ թե մտածում «հեղափոխություն կատարելու մասին»:

Նոյեմբերի 4-ին թուրքական թերթերը տպագրեցին հետևյալ պաշտոնական հայտարարությունը. «Անատոլիայի մի քանի նահանգներում տեղի ունեցած անկարգությունների հարցում, չնորհիվ վեհափառ սուլթանի, ձեռնարկված են հետևյալ միջոցառումները. բացի IV և V զորաբանակներից, զենքի են կանչված պահեստային 128 վաշտ և մասամաս տեղափոխվում են պահանջված տեղերը: Նաև որոշված է այդ տեղերը պաշտոնյաներ ուղարկել քաղաքացիական, զինվորական և դատական վարչություններից, որպեսզի վերականգնեն խաղաղությունը և գործադրեն անդորրություն հաստատելու վերաբերյալ հանձնարարությունները: Կայսրական իրադեով որոշված է, որ Պետական խորհրդի անդամներ Սամի էֆենդի, Ֆերիդ Սահէդդին, Աբդուլլա փաշաները» և այլք նույնպես մեկնել են տեղերը երկու խմբով: Մի խումբը՝ Տրապիզոն, Գյումուշխանե, Բայբուրթ, Էրզրում, Մուշ և Բիթլիս, իսկ մյուս խումբը՝ Սամսոն, Ամասիա, Թոքատ, Սըվազ, Մալաթիա, Խարբերդ, Մատեն, Դիարբեքիր: Նրանք հատուկ չոգենավով ճամփա են ելել հոկտեմբերի 31-ին[458]:

Ոստիկանության նախարար Նազըմը հայկական թերթերին հորդորում էր մեկական հոդված տպել հայերին հանգստացնելու համար: Այդ հոդվածները պետք է փառաբանեին սուլթանին: Նույն ժամանակ ոստիկանությունը չարունակում էր ձերբակալությունները, պանդուխտներին վտարում էր Կ. Պոլսից[459]:

Թեմերի առաջնորդների ոչ մի տեղեկագիր հասցեատիրոջը՝ պատրիարքին, չէր հասնում: Տեղ էին հասնում միայն այն նամակները, որոնք հայերի ծանր վիճակի մասին տեղեկություններ չէին պարունակում:

Սուլթանական հակահայ քարոզչությանը ճշմարտությունը վնասակար ու վտանգավոր էր: «Ամեն ինչում մեղավորը հայերն են», այլ ոչ թե թուրքերը: Հայերը եթե «սեփական գլուխը չեն ջարդել, ապա իրենց այրել են»: «Մի քաղաքում,— գրում են Հարիս ամուսինները,— երեք օրվա կոտորածից հետո իշխանությունները կանչում են մի հայի և հարկադրում են ստորագրել թուղթ, թե սպանվածները հեղափոխական քարոզչությամբ զբաղվողներից էին»: Խարբերդում մեծ թվով հայերի բանտ նետեցին, միաժամանակ հայտարարեցին, թե պատրաստ են, բացի հինգ հոգուց, բոլորին ազատ արձակել, եթե կաշառք ստանան: Թե ովքեր էին լինելու այդ դժբախտ հինգ հոգին, իշխանությունների համար միևնույն էր, քանի որ պատժի ելակետը ոչ թե հանցագործությունն էր, այլ ինչ-որ թվով մարդկանց իբրև «հանցագործ կախելը»: Իսկ «հանցագործին» պատժելն ավելի քան դյուրին էր: Տգետ ամբոխը պատրաստ էր ցանկացած թվով մարդկանց սպանել, եթե երաշխավորվում էր իր անպատժելիությունը: Մանավանդ, երբ խոսքը վերաբերում էր հայ ռայային, որին նա դարեր չարունակ սպանել ու բռնարարքների էր ենթարկել՝ առանց նույնիսկ հանդիմանանքի արժանանալու: Եվ պատահական չէ, որ հային սպանելու վերաբերյալ առաջին իսկ հանձնարարությունը ծնեց համընդհանուր աղետ: Հարիան ամփոփում է.

«...Հայկական տարածքները տգիտության, մոլեռանդության և գազանության ճիրաններում էին և մի ինչ-որ ցինիկ կոպիտ ուժ, իր մեջ միավորելով սառնասիրտ դաժանության կույր տարերքն ու եվրոպական կառավարման համակարգի նուրբ եղանակները, ճնշում է, մարդկանց քշում հոտերի նման, ոչնչացնում մի ամբողջ ժողովրդի, ավերում մի ամբողջ երկիր: Եթե հայերը գազաններ լինեին, գոնե ի վիճակի կլինեին հոչոտելու իրենց հետապնդողներին կամ կկարողանային փրկվել անտառներում ու քարանձավներում: Բայց նրանք մարդիկ են՝ թույլ, խոշտանգողների կողմից զինաթափված: Նրան-

[458] «Մուրճ», 1895, թիվ 11:
[459] Նույն տեղում:

ցից քաղաքացիական հնազանդություն են պահանջում, մինչդեռ մորթում են ինչպես գազանի...

Թուրքն անմարդկային է, որովհետև իշխանության գլխին կանգնածը հիմարների և մահմեդական կրոնի որոշ հիմարությունների ստրուկն է»[460]:

Իրենց չարագործությունները, եթե ոչ քողարկելու, ապա գոնե արդարացնելու համար իշխանությունները հորինում էին ամենատարբեր վարկածներ, ստեղծում կեղծ փաստաթղթեր, ձերբակալում հայերին, խոշտանգում և ստիպում ստորագրել սեփական «հանցագործությունները» հաստատող թղթեր, հնարում հայ հեղափոխականների ցուցակներ ու դրանցում նշված անձանց ձերբակալում և հաշվեհարդարի ենթարկում: 1896թ. հոկտեմբերին Բաբերդում հայերի դեմ դատավարություն սարքեցին, որպեսզի մեղադրեին և հաշվեհարդարի ենթարկեին մի խումբ հայ աչքի ընկնող գործիչների:

Թոքատում նույնպես ջարդերը կազմակերպել էին իշխանությունները: «Մաշալլահ» մահմեդական կազմակերպությունը, որը հիմնվել էր «իսլամին պաշտպանելու և գյավուրներին բնաջնջելու համար», սուլթանի անունից տեղերը հրահանգ ուղարկեց հայերին կոտորելու մասին: Կոտորածը գլխավորեցին կայմակամը, զորքերի հրամանատարն ու ոստիկանապետը: Դեսպանների պահանջով Թոքատի կոտորածների խնդիրը հետաքննելու համար հանձնաժողով կազմվեց, որի գործունեությունը, սակայն, սահմանափակվեց 130 չարագործների արդարացնելով և իշխանությունների հանձնարարությունները չկատարելու մեջ հայերին մեղադրելով:

Այնուամենայնիվ, 1894–96 թթ. իրադարձությունները ցնցեցին թուրք հասարակությանը, աչխուժացրին ընդդիմադիր ուժերի գործունեությունը, որոնք օգտագործեցին հայկական կոտորածների իրողությունը սուլթանական վարչակարգի դեմ պայքարին թափ հաղորդելու: Օսմանյան ընդդիմադիր ուժերի հրահանգներում սկսեցին հաճախակի օգտագործվել՝ «Հարամ կաթնակեր Համիդը գազազել է», «Կատաղած չանը (սուլթանին) պետք է սատկացնել», «Գազանաբարո Փադիշահի ելդըզը հօդս ենք ցնդեցնելու», «Մեր հայրենակից հայերից օրինակ վերցրեք, որպեսզի անցյալում գործած մեղքերդ քավեք և ձեռք մեկնեք նրանց», «Բռնակալ կառավարության անգթություններին զոհ գնացած հայրերը, մայրերը, եղբայրներն ու զավակները «վրե՛ժ, վրե՛ժ» են գոչում արտահայտությունները»[461]:

Սուլթանը երիտթուրքական «Մեշվերեթ»-ին դատի տվեց, որովհետև հայկական ջարդերի առիթով սուլթանին անվանեց կեղտոտ մարդասպան: «Միություն և առաջադիմություն» կոմիտեն հայտարարություն հրապարակեց, որում ասվում էր, թե «միապետության չարագործ գեղծումների» հետևանքով «Տաճկաստանի մի ծայրից մյուսն ամեն օր զոհ են դառնում քրիստոնյաներ ու մահմեդականներ»[462]: Կոտորածներից հետո երիտթուրքական մամուլը հայերին կոչ էր անում. «Մի կողմ նետեք ազգային ատելությունը և ձեռք ձեռքի տված՝ տապալենք երկիրը քանդող բռնակալին...»: Երիտթուրք պարագլուխներից Ահմեդ Ռիզան «Մեշվերեթ»-ում տպագրած «Հայերը և թուրքերը» հոդվածում գրում է, թե «անհնար է հայկական կոտորածների համար արդարացում գտնել»[463]: Մի ուրիշ անգամ նա գրեց. «Ինչպես մենք, հայերն էլ են տառապում գոյություն ունեցող վարչակարգից: Դա անվիճելի է: Նրանց տառապանքները մեր տառապանքներն են»[464]:

«Թուրքական բարեներոգչական դաշնակցություն» կազմակերպությունը դիմեց մեծ տերություններին. «Մինչև ե՞րբ է Եվրոպան այս անպատվությունը հանդուրժելու: Ժամանակը չէ՞ սուլթանին գահընկեց անել և ազատել բազմատանջ ժողովրդին: Դավաճան Համիդի սրով հեղված արյունը պետք է հավիտյա՞ն հոսի»:

---

[460] Harris R., նշվ. աշխ., էջ 41-44:

[461] "Meşveret", 01.01, 15.03.1900; 01.01, 01.02, 15.05, 01.08, 10.10.1901.

[462] «Դրոշակ», 1898, թիվ 2:

[463] "Meşveret", 1897, № 26.

[464] Նույն տեղում, № 42.

Հայկական ջարդերը որոշ խթան հանդիսացան թուրքական սահմանադրական շարժման աշխուժացման համար: Մեծ վեզիր Քյամիլը սուլթանին նամակներ գրեց՝ խորհուրդ տալով Սահմանադրություն հռչակել: Խնդիրը Ելդըզում մի քանի անգամ քննարկվեց, վերջին քննարկմանը մասնակցում էին նաև սուլթանի առաջին և երկրորդ քարտուղարները՝ Թահսին և Իզզեթ փաշաները, ինքը՝ Քյամիլը, որն իր հուշերում գրում է. «Այդ ժողովականների մեջ մի տղամարդ չգտնվեց Համիդին ասելու, որ Սահմանադրությունն անհրաժեշտություն է...»[465]:

Գոլսի Ծաթիհ մզկիթի պատին երևաց կոչ, թե հայերի հանդեպ չպետք է թշնամություն ունենալ, որովհետև նրանք «մեր բարեկամներն են եղել, բայց մենք չենք հասկացել: Նրանց թշնամությունը թուրք ժողովրդի դեմ չէ..., այլ սուլթանի կործանանար վարչության դեմ»: «Մեչվերեթ»-ը գրեց. «...Մի՞թե Թուրքիան հազարավոր քրիստոնյաների կուլ չի տվել: Նա պետք է մարի գործած վայրագությունների, ստորացումների պարտամուրհակը»[466]: «Այս անվերջ ոճիրների իրողությունների վրա արդարության չղարչ սփռելու նենգությամբ,– գրում է Մ. Նեդիմը,– դատի տրվեցին մի քանի քրդեր, որոնցից չատերը, բացառապես կաշառք տվողները, ազատ արձակվեցին, իսկ չտվողներից... 60 հոգի 2-3-ական տարով աքսորվեցին Տրիպոլիս»[467]:

Սուլթանը չարունակում էր խուսանավել, նույնիսկ զայրանալ, որ առանձին մարդկանց մեղքով կայսրությունում խառնակչություններ են կատարվել, որին զոհ են գնացել իր հավատարիմ հպատակները: Արյունարբուքյանը հագուրդ տալով՝ «հրեշը իր մարսողական թմրության ամենահաճելի պահերի մեջ» ընկավ: Ապա սկսեց հաղթահարել կատարվածի միջազգային արձագանքները: Ելդըզը գործն ավարտված էր համարում և ձգտում էր ժամանակավոր դադարի ու չէր կարող հանդուրժել հայկական նոր ելույթներ, Հայկական հարցի շուրջ նոր բարդություններ: Փորձեց բանակցություններ սկսել հայ գործիչների հետ: Նման մոտեցման առաջատարը Իզզեթն էր: Պալատը հայերին հասկացնում էր, որ հօգուտ Մ. Իսմիրլյանի կլուծվեն ներհամայնքային կնճռոտ խնդիրները, վերջ կտրվի Նուրյանին ու Բարդուղիմեոսին ցուցաբերվող աջակցությանը: Իզզեթը վերջինիս անվանեց եզ: Բերայում ձերբակալված մի հայ գործչի ուղիղ Ելդըզ տարան, պատիվներով ընդունեցին: Սուլթանը նույնիսկ «կայսրական բարևներ» հղեց ու երաշխավորեց նրա անձի անվտանգությունը: Իզզեթն առաջարկեց գթալ հայ ազգին, դադարեցնել շրջաբերականներով սպառնալը: Նա մոտ վեց ժամ լսեց հայ գործչի մեղադրանքները օսմանյան հայահալած քաղաքականության հասցեին, հաշտություն առաջարկեց հայերի ու կառավարության միջև՝ առանց օտար միջամտության: Նաև ասաց, թե բարենորոգումներն արդեն սկսված են, բայց դրանք չարունակելու համար ֆինանսական միջոցներ չկան և այլն:

Այդ ընթացքում բարդացել էր Քրդական հարցը: Համիդիե գնդերի Գոլիս բերելը և պալատի քրդասեր քաղաքականությունը լուրջ դժգոհություններ առաջացրեցին ոչ միայն բանակում, այլև ամբողջ թուրք հասարակությունում: Սուլթանը քուրդ ավազակին ավելի էր վստահում, քան թուրք զինվորին: Մայրաքաղաքում և այլուր քրդերը հարգալից վերաբերմունքի էին արժանանում, մինչդեռ թուրք զինվորականներն աշխատավարձ չէին ստանում, քաղցած էին, մերկ:

Սուլթանը գտնում էր, որ ներքին խլրտումների ժամանակ ոչ թե բանակը, այլ քրդերն էին իրեն պաշտպանելու: Ուժեղացավ քրդերի հոսքը մայրաքաղաք: Նրանք զբաղեցնում էին հայերի տեղերը՝ համալ, պահակ, առևտրական: Նույնիսկ համալության ասպարեզում քրդերին թուրքերի հանդեպ նախապատվություն էր տրվում: Այդ,

---

[465] Քյամիլ Մեհմեթ փաշա, *Օսմանյան պետության քաղաքական պատմությունը սկզբից մինչև 1861թ.*, Կ. Պ., 1909-1910, էջ 798:

[466] *"Meşveret"*, 1898, 12.

[467] Նեդիմ Մ., նշվ. աշխ., էջ 62-63:

իհարկե, թուրքական չրջաններում առաջացրեց խմորումներ, որոնք ևս հարկադրեցին ժամանակավորապես հայերի հետ «լեզու գտնել»: Թերևս նաև հայերին հանգստացնելու նպատակ էր հետապնդում քրդերի հանդեպ քաղաքականության փոփոխությունը: Թուրքերը կարծես պատրաստվում էին ընկճել քրդերին, որոնք կոտորածներից հետո իրենց ամբարտավան էին պահում: Կատարվեց աննախադեպ քայլ՝ համիդիեներին ստիպեցին հարկ վճարել: Ժամանակակիցը վկայում է. «Այժմ կառավարության աչքում քրդերը փուչ են դարձել, որովհետև աննկախանալու համար» ընտրել են ապստամբության ուղին: Քրդական չարժումն ահաբեկում էր թուրքերին: Թուրք գործիչներից մեկն ասաց. «Եթե հեղափոխությունը ծավալվի նաև քրդերի չրջանում, դա մեզ համար վերջ է»[468]:

Բայց, ընդհանուր առմամբ, սուլթանը բավարարված էր: Առաջադրած խնդիրը հաջողությամբ լուծված էր: Կոտորածներն ու արտագաղթը իրողություն էին դարձրել Արևմտյան Հայաստանի մահմեդականացումը, այսինքն՝ հայերն իրենց հայրենիքում այլևս մեծամասնություն չէին: Փաղիչահն արդեն հնարավոր էր համարում ինչ-որ «զիջումներ» կատարել: Դրա համար օգտագործվեց թուրքական կառավարության և իշխանությունների հետ խաղաղ հարաբերություններ ունենալու կողմնակից Մ. Օրմանյանի՝ պատրիարք դառնալու հնարավորությունը: Վերջինիս խնդրանքով՝ Աբդուլ Համիդը 1896թ. դեկտեմբերի 10-ին... ներում չնորհեց հայերին: Այո, ներում: Քանզի հայերը հռչակված էին «ապստամբ ժողովուրդ»: Սուլթանը ապօրինի համարեց հայերի բռնի մահմեդականացումը: 12 հազար հայ փախստականի իրավունք տրվեց վերադառնալու իրենց բնակավայրերը: Սուլթանը նաև «զիջեց» նախորդ տարիներից պարտք մնացած հարկերը:

Սակայն այդ ամենն այլ բան չէր, եթե ոչ օճառի պղպջակ: 1897թ. օգոստոսի 6-ին ռումբ է պայթում կառավարության նստավայրում: Նույն օրը պայթյուն է տեղի ունենում նաև Բերայի կառավարչատան առջև, չպայթած ռումբ են գտնում Օսմանյան բանկի պատի տակ: Մ. Օրմանյանը, հասկանալով, որ ահաբեկչական այդ գործողություններըը կարող են նոր աղետ բերել հայությանը, չտապում է սուլթանի մոտ և կարողանում է նրան համոզել, որ պատժվեն միայն հանցագործության հեղինակները:

Այդ արտակարգ վտանգավոր կացությունում դաշնակցությունը որոշեց քաղաքական դաշտի դատարկությունը լցնել իրենով և հայի վտանգվածությունն օգտագործել իր կուսակցական ահաբեկչական նպատակների համար և իրեն անմիջապես հռչակեց հայ ժողովրդի բախտի միակ տնօրինող: «Դրոշակ»-ը 1895թ. թիվ 15-16-ում գրում է. «Արդեն կտրված են հարաբերությունները, և այժմ միայն չարունակվում է կռիվը, որ վազուց հայտարարված էր: Խնդիրը կվճռվի միայն երկուսից մեկի ընկճվելով, մահով. կամ պետք է տակն ու վրա լինի, ոչնչանա սուլթանական պոռնիկ կառավարությունը, կամ պետք է ընկնի, մեռնի հայ ժողովուրդը: Խնդրի միակ լուծողը մահն է»: Այսինքն՝ դաշնակցությունը խնդիր էր դնում իր մի քանի տասնյակ զինված մարտիկներով տապալել սուլթանական վարչակարգը, գլխի վրա չուռ տալ վիթխարի կայսրության քաղաքական կառույցը կամ պատրաստ էր մահվան ուղարկել ամբողջ հայ ժողովրդին: Ազգային կուսակցության պարագլուխների համար ժողովրդի «հացի խնդիրը», նրա կեղեքումները, հիվանդությունները և այլն «քաղաքական նշանակություններից» զուրկ երևույթներ էին, հետևաբար՝ նաև ուշադրության անարժան: Այդ հոգեբանությամբ է բացատրվում սուլթանի հետ բանակցությունների ձախողումը, չնայած դրանք հնարավորություն էին հայերի հանդեպ թուրքական իշխանությունների ոտնձգություններն ինչ-որ չափով մեղմելու և արյան ծովից նոր միայն դուրս եկած արևմտահայությանը չունչ քաշելու հնարավորություն տալու: Նույն հոգեբանությամբ է բացատրվում Դաշնակցության ահաբեկիչ կեցվածքը և սուլթանին վերջնագրի բնույթ ունեցող առաջարկություններ ներկայացնելը:

---

[468] Harris R., նշվ. աշխ., էջ 61:

Տարօրինակ տրամաբանություն ունի Դաշնակցությունը: 1896թ. հունվարին, երբ արդեն ակնհայտ էր, որ հայերի բնաջնջման սուլթանական քաղաքականությունը խոչոր հաջողություններ էր արձանագրում, «Դրոշակ»-ը գրեց. «Սասունի կռվով ժողովուրդը հարց դրեց կառավարության առջև՝ մահ կամ ազատություն, իսկ կառավարությունը դրա դիմաց որոշեց կոտորած կամ կատարյալ ընկճում... Ո՞վ է հաղթելու: Ուժերը հավասար չեն: Ինչ կասկած, որ կառավարությունը ուժեղ է և դեռ մի քանի Սասունի կռվի պես կռիվներում կը կոտորի... Բայց ժողովուրդը չի հաղթվել, որովհետև թշնամին չի կարողացել խլել նրանից ապստամբության արյունագույն դրոշը»[469]:

Թուրքական քարոզչության որոշակի միտում ունեցող վայրիվերումները, հայ քաղաքական ուժերի մոտեցումների ոչ հստակությունը չէին կարող հետևանքներ ու ազդեցություններ չունենալ: Եթե թուրքերը հետևողականորեն ձգտում էին ապացուցել, որ Հայաստանը լոկ աշխարհագրական հասկացություն է, այլ ոչ թե հայերի պատմական հայրենիքը, հետևաբար հայերի կողմից Հայաստան անվանվող տարածքն այլ բան չէ, եթե ոչ Անատոլիայի անքակտելի մասը՝ Արևելյան Անատոլիան, ապա հայերի շրջանում նույնիսկ այս խնդրում որոշակիություն գոյություն չուներ. Արևելյան Անատոլիա ձևակերպման օգտագործում, Հայաստանի բնական ու քաղաքական սահմանների վերաբերյալ պատկերացումների խառնաշփոթ, Հայաստանի վարչա-տարածքային և պատմական դարավոր մասնատվածության չեչտադրում և այլն:

Եթե սուլթան Աբդուլ Համիդը, ինչպես վկայել է թուրք պաշտոնատարներից մեկը, հատուկ հրահանգներով պահանջում էր մարդահամար անցկացնողներից «դիտավորյալ պակաս ցույց տալ հայերի թիվը», և «մենք պակասեցրինք հայկական բնակչության թիվը, որպեսզի ձևացնենք, թե հայեր գոյություն չունեն»[470], ապա Գր. Սյունին պարզապես ճգնում է արդարացնել թուրքերի կողմից Հայաստանի անգամ քարոզչական կլանումը[471]: Նա գրում է. «19-րդ դարի վերջին հայ ազգայնականները հայտարարեցին իրենց այդ իրավունքը (իմա՝ «Անատոլիան հռչակել իբրև հայրենիք»), իսկ թուրք ազգայնականները պատասխանեցին դրան»[472]: Գր. Սյունին 1894-96 թթ. ջարդերը ոչ միայն ցեղասպանություն չի համարում, այլև վերապահումով է ընդունում, որ կոտորածներ տեղի ունեցել են: Նա գրում է. «1894թ. Սասունում հայերի ու քրդերի միջև տեղի ունեցած բախումները հանգեցրին պետական զորքերի միջամտությանը և հարյուրավոր հայերի սպանությանը: Ավելի ուշ, հայերը բռնությունն ընկալեցին իբրև առաջին փուլ ջարդերի այն շարքի, որն ավարտվեց 1915թ. ցեղասպանությամբ: Բայց 1894-96 թթ. Արևելյան Անատոլիայում կատարված ջարդերը կարելի է դիտել իբրև սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի կողմից միջէթնիկական հարաբերությունների հին հավասարակշռությունը վերականգնելու փորձ»[473]:

Ի՞նչ «հին հավասարակշռության» մասին է խոսքը. թերևս Սյունին հավասարակշռություն է համարում այն, որ դարեր շարունակ արևմտահայը որպես էթնիկ գործոն գոյություն չի ունեցել, այլ քարշ է տվել ռայայի իր իրավազուրկ, մինչև անասունի աստիճանի իջեցված գոյությունը:

19-րդ դարի երկրորդ կեսին հայը կանգնել էր երկընտրանքի առաջ՝ մնա՞լ ռայայի վիճակում ու կուլ գնալ «խաղաղ անհետացմա՞ն», թե՞ պայքարել ազգային, եթե ոչ արժանապատիվ, ապա գոնե մարդավայել գոյության համար:

Հայն ընտրեց երկրորդ ուղին և ճիշտ վարվեց:

---

[469] «Դրոշակ», Հունվար, 1896:

[470] Sanı S.M.(Kadri H.K.), *10 Temmuz İnkilâbi ve Natayici*, İstanbul, 1920, ss. 116, 121, 123.

[471] Ալյոզյան Ա., Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ, Երևան, 1998, էջ 84-85:

[472] Նույն տեղում:

[473] Նույն տեղում:

Ռուս գիտնական Գուտորի հաշվումներով Արևմտյան Հայաստանում և հայաբնակ շրջաններում քանդվել ու ավերվել էր 50 հազար տուն և 8 հազար գյուղ, որը ու անապատան մնացել էր 100 հազար երեխա: Մ. Իզմիրլյանի խոսքերով «ամբողջ հայ ժողովուրդը սուզվել էր արյան մեջ»:

Ողբերգական էր կոտորածներից փրկվածների վիճակը: Նրանց վրա ծանրացավ կրոնական, քաղաքական ճնշումների վայրագ համակարգը, թշվառությունն ու տնտեսական քայքայումը: «Ավելի լավ էր մեռնեինք,– գրում է արաբկիրցի մի կին,– ի՞նչ է մեր ներկայիս կյանքը: Աչքերիս առաջ միշտ նույն սարսափելի տեսարաններն են... Թե այդ գազաններն ինչպես են թալանում ու սպանում... Աստվա՛ծ: Ե՞րբ ենք մենք դադարելու լաց լինել»[474]:

Կոտորածներն ամայացրին Արևմտյան Հայաստանը: Սկսվեց զանգվածային արտագաղթ. ահաբեկված հայը հեռանում էր իր հայրենիքից, հեռանում էր՝ հանճնվելով անորոշ վաղվան: Ա. Նասիբյանի տվյալներով՝ կոտորածներից հետո, 90-ական թվականներին Միացյալ Նահանգներ, Բալկաններ, Եգիպտոս արտագաղթեց մոտ 200 հազար մարդ[475]: Հայը չնչին գներով վաճառում էր իր չարժական ու անշարժ ունեցվածքը, հաճախ դրանք պարզապես լքելով՝ հեռանում էր սեփական արյունով չաղախված հողից: Կոտորածների ականատես Թուրք մտավորական Եկենը գրում է, թե հայերից շատերը «Ամերիկա կամ Եվրոպա գաղթել ուզեցին՝ հետևում թողնելով հայրենիք, հարազատներ ու բարեկամներ: Գաղթել ուզեցին ոչ թե, որովհետև սիրում էին գաղթել կամ իրենց երկիրը չէին սիրում, այլ հուսահատվելով փախչում էին Թուրքերի ստեղծած անտանելի վիճակից... Բռնապետները գաղթի համար հայերի առաջ դռները բացել էին...»[476]:

Գ. Զանիչևը, հայ գաղթականների հետ հանդիպումից հետո, նամակում գրում է.

«Ես նորից տեսա ժողովրդի թափառական, արդեն ծանոթ պատկերը, որն անօգնական այսուայն կողմ է ընկնում արդեն երեք տարի՝ չիմանալով բարբարոս հետապնդումից որտեղ թաքցնի գլուխը... շարժվում է խայտաբղետ ամբոխը՝ հյուծված, փալասներ հագած հայեր ու հայուհիներ՝ երկչոտ հայացքներով: Հանդիպում են ամենատարբեր տարիքի մարդիկ՝ սկսած կրծքի երեխաներից մինչև խոր ծերության հասած ալևորներ: Քաղցած, գիշերվա սառնամանիքից քարացած... նրանք գնում են լուռ, ճմռան արևի սառը ճառագայթների տակ... աչքերում՝ անելանելի վիշտ և այնքան ակնհայտ հուսահատություն, որ անգամ անտարբեր անցնելն է անհնար:

Չի լսվում ո՛չ ողբ, ո՛չ հառաչանք ու հեկեկանք, նույնիսկ ոչ մի ճեռք չի մեկնվում ողորմության համար... ամեն ինչ պատմում էին նրանց այս ներս ընկած, հանգած, թախծոտ աչքերը, որոնք տեսել էին ամեն ինչի և ամենքի կործանումը...

Հազարներով են նրանք անցնում սահմանը...»[477]:

1896թ. արտակարգ ցուրտ ճմեռը սովով ու համաճարակով եկավ լրացնելու Թուրքական վայրագությունները: Ամենուրեք հազարավոր սովյալներ: Գյուղերից նրանք քաղաք էին գնում հաց ու հագուստ մուրալու: Հազարավոր կանայք ու աղջիկներ թափառում էին ճյունածածկ փողոցներում, քաղցած ու անտուն, հաճախ մերկությունը ծածկած միայն գլխաշորով, որովհետև նրանց ամբողջ հագուստը թալանել էին:

Հայերի արտագաղթն արագացնելու համար իշխանությունները նպաստում էին նրանց վիճակի էլ ավելի վատթարացմանը: Հիշում է Լինչը. «Վանում իմ եղած ժամա-

---

[474] *Братская помощь...*, стр. 62.
[475] **Նասիբյան Ա.**, *Բրիտանիան և Հայկական հարցը*, էջ 42:
[476] **«Հայրենիք»**, 26-27. 04. 1985:
[477] *Братская помощь..., Введение*, стр. 20.

նակ ցորենի գինը հասել էր անթուլլատրելի չափերի, իսկ չատերն ասում էին, որ պահեստներում հացի մեծ պաշարներ կան»[478]:

Օսմանյան կայսրությունը դարձել էր հայերի որսադաշտ: «Եթե պատահեր. որ որևէ հայ ընտանիք դուրս գար ճանապարհորդելու,– գրում է Եկենը,– ավազակներն ու անարժանորեն մարդ կոչվող ստորները նրանց պաշարում էին և այնպիսի չարիքներ հասցնում, որ այլևս ճանապարհը շարունակելն անհնար էր դառնում: Վայ այն խեղճին, ով համարձակվեր վերադառնալուց հետո կառավարությունից պահանջել վերադարձնելու իր ընտանիքի առևանգված անդամներին: Այդ ժամանակ ավելի մեծ չարիք ու աղետներ էին հնարավոր: Եթե կատարվածները գրվեն, ընթերցողն անպայման սարսափից գիտակցությունը կկորցնի»[479]:

Կոտորածներից հետո Արևմտյան Հայաստան այցելած բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչների նամակներում կան հայ ժողովրդի ողբերգական կացության նկարագրություններ: Ահա դրանցից մի քանիսը:

Էրզրում.– Այս նահանգում մենք օգնություն ենք բաժանում 50 հազար մարդու, բայց մերժում ենք հազարավոր խնդրող-կարիքավորների: Մենք անգամ չենք փորձում նվազեցնել աղքատությունն ընդհանրապես, այլ լոկ կարող ենք ճգտել բնակչությանը փրկել սովամահությունից: Այդ դժբախտները հուսահատ հայացքով մեր աչքերին նայելով կարծես հարցնում են. «Ի՞նչ է լինելու մեզ հետ»:

Գուրուն.– «1500-1600 տների խորտակված պատեր... ահա այն ամենը, ինչ մնացել է նախկինում ակնհայտ բարեկեցության ու ինքնաբավության տեղում... Մի կացարանից մյուսն անցնելիս՝ որբացած մայրերի և այրիացած կանանց չքոներից ես միայն լսել եմ տանջալից ողբի ձայն: Նրանք խմբված կծկվել են կիսաքանդ շինությունների ինչ-որ մասերում»:

Մալաթիա.– Այստեղ սպանվել էր մոտ 1500 մարդ, այսինքն՝ քաղաքի աշխատող, ընտանիքներին կերակրող ողջ բնակչությունը: 7500 մարդ զրկված ունեցվածքից, հացի կարոտ է: Նրանց մեջ կան 2500-3000 որբ: Նախկինում բարեկեցիկ կյանքով ապրող կանայք քրջերի մեջ են և հաց են մուրում: Այնինչ, նրանց կրպակներում նստած են այդ թշվառների ամուսիններին ու որդիներին սպանած, նրանց ամբողջ ունեցվածքը թալանած ու տներն ավերած գազանները, ովքեր այժմ դժբախտ կանանց նետում են պղնձյա դրամ ու մի կտոր հաց և հռհռում՝ տեսնելով, թե նրանք ինչպես են նետվում փողերի ու հացի վրա: Կոտորածների օրերից սկսած՝ մարդիկ քնում են ծղոտի կամ փալասների կտորների վրա... չատերը մեռան սովից, ցրտից ու զրկանքներից:

Արաբկիր.– Կարիքավորների թիվն այնքան մեծ է, որ... հուսահատության մեջ ենք: Հաց չկա, հագուստ չկա, ոչ մի ունեցվածք, ոչ մի աշխատանք, և գրեթե բոլոր ընտանիքներում հիվանդներ կան... հուսալքված մեռնելու են[480]:

Մարդին.– Ընտանիքների մեծ մասը գոյատևելու համար օգնության կարիք ունի:

Հաբուզի.– Այս գյուղում մոտ 40 որբ դեգերում է անօթևան՝ ինչպես անտուն շուն: Նրանք ուտում են՝ ինչ ճարեն և քնում՝ որտեղ պատահի: Նույն վիճակն է շատ այլ գյուղերում[481]:

Ուրֆա.– «Իմ խնամքի տակ 50 որբ երեխա կա... Նրանցից 15-ի հարազատներին կենդանի այրել են եկեղեցու մեջ, երկու քույրերի ու եղբոր հայրը սպանվել է: Մայրը մահացել է...»: Նման վիճակում են բոլորը: Մենք օգնություն ենք ցույց տալիս 2500 այրիացած կանանց ընտանիքներին, որոնք որևէ աշխատող ձեռք չունեն[482]:

---

[478] Լեփս Գ., նշվ. աշխ., հ.II, էջ 114.
[479] «Հայրենիք», 26-27. 04. 1985:
[480] *Братская помощь..., Введение,* стр. 30.
[481] Նույն տեղում, էջ 31:
[482] Նույն տեղում, էջ 32:

Միանգամայն ճիշտ կլինի, եթե ասվի, որ Կ. Պոլսից մինչև Պարսկաստան, Կովկասից մինչև Միջագետք տեղի քրիստոնյաների 9/10-ը հարկադրված է ապավինել դրսի օգնությանը[483]:

Խարբերդում և այլուր չուկաները երկար ժամանակ փակ մնացին, ոչ ոք չէր աշխատում, խլել էին նույնիսկ բանվորների աշխատանքային գործիքները, բոլորն աղքատ էին, առանց հացի ու փողի: Փակ էին եկեղեցիները ու դպրոցները: Փողոցներում թափված էին կիսամերկ ծերեր ու կանայք, որոնք մի կերպ էին շարժվում: Ցրտի հետևանքով քաղցածների զանգվածն արագորեն փոքրանում է, մահը դարձել է առօրեական, դիակներն օրերով ընկած են մնում փողոցներում: Սեբաստացի մի հայ իր որդուն գրում է. «Այլևս գրել չեմ կարող, ցրտից ձեռներս դողում են, երեք օր է՝ ոչինչ չենք կերել»:

Սարսափին, հուսահատությանն ավելանում էին հոգեկան հիվանդությունները: «Մեզ ողջ մի համարեք,– ողբում է արաբկիրցի մի կին,– ով ապրել է այս դժբախտությունը, ոչ մարմին ունի և ոչ էլ արյուն: Զգիտենք, թե ինչ ենք մենք: Կենդանի մեռածներ ենք»[484]:

Շատախից գրում են, որ հայերը գաղթում են գյուղերով՝ չկարողանալով դիմանալ կառավարության թելադրանքով քրդերի կողմից իրականացվող հարստահարություններին: Գյուղերն ամայանում են, դաշտերը դառնում խոպան: Լինչը նշում է, որ Կարինի Ռուսական հյուպատոսը հայերին տվել էր արտագաղթի 3500 անձնագիր: Ի դեպ, Ռուսաստան գնացածների թվում անձնագրով մեկնածները չնչին տոկոս էին կազմում: Ճնշող մեծամասնությունը հեռանում էր թաքուն, առանց փաստաթղթի: Միայն Խնուսի կազայից 6-7 հազար հայ փախել, անցել էր ռուսական սահմանը[485]: Վանում Ռուսաստանի փոխհյուպատոսի տվյալներով 1895-96թթ. կոտորածների և արտագաղթի հետևանքով Վանի վիլայեթի Աղլխևազի և Արճեշի կազաներում հայերի թիվը 1895-96 թվերին կրել էր հետևյալ փոփոխությունը: Ալխևազի գյուղերում մինչև 1895 թիվը եղել էր հայերի 645 ծուխ, 1898թ. մնացել էր 335-ը: Իսկ թուրքերի ծխերի թիվը զրոյից աճել, հասել էր 108-ի: Արճեշում վիճակն ավելի ծանր էր: Հայերի 919 ծխից մնացել էր միայն 291-ը, այսինքն՝ կրճատվել էր երեք անգամ: Նույն ժամանակ քրդերի ծխերի թիվը 21-ից հասել էր 189-ի[486]: Սամսոնի ռուսական փոխհյուպատոսը նշում է, որ 1891-1900 թվերին սանջակի հայ բնակչության թիվը պակասեց գրեթե կիսով չափ՝ 22 հազարից հասնելով 12 հազարի[487]:

Վանում 1000 տվյալ երեխա կար, իսկ Վասպուրականի գյուղերում դրանց թիվը հասնում էր 12 հազարի: Մնվում էին թեփով, կտավատով: Ամեն օր տասնյակ մարդիկ էին մեռնում[488]: Հայ որբերին ու կոտորածից փրկվածներին նյութական օգնություն ցույց տալու վերաբերյալ մի հաշվետվությունում կարդում ենք. «Հայերի կոտորածը Թուրքիայում, որը մեծ թվով զոհեր տարավ և թողեց 100 հազար որբ՝ անիրավ ու անսնունդ... քաղաքակիրթ աշխարհի ցավակցությունն առաջացրին»:

Ռուսաստանում բնակվող հայերը, իհարկե, նույնպես արձագանքեցին իրենց եղբայրների թշվառությանը և նյութական նվիրատվություններ կատարեցին: Էրզրումի կարմիր վանքում Կորյուն Ջեյրանյան վարդապետի հավաքած 23 որբերին օգնում էին Պետերբուրգի հայերը[489]: 1895թ. մայիսի 4-6-ը Թիֆլիսում տեղի ունեցավ Կովկասի և Ռուսաստանի հայաբնակ քաղաքների պատվիրակների ժողով՝ նվիրված կոտորածներից տուժածներին օգնություն կազմակերպելուն: Խնդիրն այնքան կարևոր էր, որ «ժողովի

---

[483] *Братская помощь..., Введение,* стр. 33:
[484] Նույն տեղում, էջ 62:
[485] Լինչ Գ., նշվ. աշխ., էջ 280,284.
[486] *АВПР, Посольство в Константинополе,* д. 1584, л.л. 32-34.
[487] Նույն տեղում, д. 2232.
[488] «Դրոշակ», 1896, թիվ 3:
[489] ԳԱԹ, ֆ. Աուքելյան Հ., գ. 1908:

*ամեն մի մասնակից, ինչ կուսակցության որ պատկաներ, զգում էր դրա վեհությունը, ազգային նշանակությունը»:*

*Գաղթականների մեջ մեծ թիվ էին կազմում որբերը: 1898թ. մարտի 23-ին Բաթումից գրեցին. «...7-8 տարեկան խեղճ, հիվանդ մի գաղթական երեխայի Սուխումից բարի մարդիկ, տեր ու խնամակալ լինելով, բերել են Բաթում՝ բժշկի»[490]: "Standard"-ը գրում է. «Եթե ցանկանում ենք հայերին փրկել կատարյալ բնաջնջումից, պետք է ինչ-որ բան անել»[491]:*

*Կիլիկիայում համաճարակ էր: Օրական մեռնում էր չուրջ 50 մարդ[492]: Այնթապում 5000 մուրացկան կար: Իշխանությունները օգնելու փոխարեն խստացնում էին հարկերի հավաքումը[493]: Նրանք հայերի արտագաղթին աչակցելու հետ մեկտեղ լայն աշխատանք ծավալեցին Թուրքերի, քրդերի, չերքեզների ներգաղթն արագացնելու համար: Բեյրութում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Կ. Լիչին 1898թ. սեպտեմբերին գրում է Կ. Պոլսի իր դեսպանին. «Վերջին ժամանակներս այստեղ լուրեր են տարածվում մահմեդականներին հավաքագրելու մասին, որպեսզի բնակեցնեն Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթների ջարդերին զոհ դարձած կամ փախած հայերին պատկանող հողերում... Այս միջոցառումը... հրահանգված է Կ. Պոլսից: Գաղթականներին մեծ արտոնություններ են խոստանում՝ 10 տարով ազատել զինվորական ծառայությունից, ձրի երթևեկություն, ձրի հողաբաժին (հայկական, այսինքն՝ հարմար և համեմատաբար լավ մշակված հողերից) և դրամական նպաստ...»[494]:*

*Մարաշում կոտորածից հետո թուրքերը կտրեցին խաղողի բոլոր վազերը, թալանեցին գյուղդործիքները, անասունները, այսինքն՝ ջարդերից փրկվածներին զրկեցին ապրելու միջոցներից: Դրա հետևանքով Խարբերդի 73 գյուղերում սովի մատնվեց 26990 մարդ:*

*Ի դեպ, ժամանակի հետ սպանվածների թիվն ու վնասները ճշգրտվում էին և որպես կանոն դրանք աճում էին: Այսպես, 1896 թվի վերջերի տվյալներով Խարբերդի կազայում կոտորածների ժամանակ թալանվել էր 6029 և հրդեհվել 1861 տուն, կոտորվել 4127 և վիրավորվել 1315, ճանապարհներին սպանվել՝ 280, կենդանի այրվել 56 հոգի, իսկ կոտորածներից հետո սովից ու ցրտից մեռել էր 1014, ինքնասպան եղել՝ 23, խոշտանգումներից մեռել՝ 1903 հոգի, թալանվել՝ 1.7 միլիոն ֆունտ արժողությամբ ունեցվածք[495]: Այս թվերը մոտ 30%-ով ավելի էին 1895թ. վերջերին հավաքված տվյալներից:*

*Համիդը կարծում էր, թե ջարդերից հետո կայսրությունում դրությունը կկայունանա, քանի որ հայերը սարսափած էին և այլևս որևէ չարժում չէին առաջացնի, քրդերը հանձինս համիդիե գնդերի հանդես էին գալիս որպես սուլթանական վարչակարգի հենարան, իսկ տերությունները լվացել էին ձեռները և լուրջ քայլերի չէին դիմում: Իրականությունն այլ էր: Հայերը վերածվել էին թուրքական պետության անհաշտ թշնամիների: Դժգոհ էին նաև քրդերը, հրապարակ իջան քուրդ առաջին «քաղաքական հանցագործները», ովքեր բանտ ընկան քրդերին սուլթանական վարչակարգի դեմ հանելու մեղադրանքով: Հայկական ջարդերը որքան իրարից հեռացրին հայերին ու քրդերին, նույնքան էլ հավանական դարձրեցին նրանց մերձանալը, ինչը վարչակարգի դեմ պայքարն ի զորու էր վերածելու զինված ապստամբության: Կ. Պոլսում հասկանում էին, որ երկու ճակատով, հայերի ու քրդերի դեմ, միաժամանակ կռվելը հեշտ խնդիր չէր: Մնում էր մի ելք՝ այդ երկու ժողովուրդներից մեկին սիրաշահել: Հայերի հետ հարաբերությունների բոլոր կամուրջներն այրված էին: Մնում էին քրդերը: Ահա թե ինչու հակա-*

---

[490] Նույն տեղում, գ. 1073:
[491] «Դրոշակ», 1899, թիվ 3:
[492] Նույն տեղում, 1896, թիվ 17:
[493] «Դրոշակ», 1896, թիվ 17:
[494] *AVPR, Посольство в Константинополе*, д. 3185, 3182, стр 144.
[495] Lepsius J., նշվ. աշխ., էջ 141:

քուրդ քաղաքականությանն իսկույն հաջորդեց հայերի հաշվին քրդերին սիրաշահելու քաղաքականությունը:

Սուլթանը կոտորածից հետո ավելի էր ահաբեկվել, նրա վախկոտությունն ու չըլսպատի հանդեպ անվստահությունը հասան անհեթեթությունների: Ամեն տարի Ռամազանի տոնին Աբդուլ Համիդ 2-րդը պետք է գնար համբուրելու Մուհամմեդի վերարկուն: 1897-ին նա հրաժարվեց այդ ծիսակատարությունից, չնայած տոնի նախօրեին ձերբակալվել էին կասկածելի համարվող մեծ թվով անձինք և Պեշիկթաշից մինչև Գյուլհանե բոլոր չենքերը հսկողության տակ էին: Բնակչությանը հանձնարարված էր այդ օրը հյուր չընդունել, պատուհաններից դուրս չնայել: Նույն ժամանակ սուլթանը Ելդըզում փակված հայհոյանքներ էր թափում վերարկուի քղանցքը համբուրելու վտանգավոր ծիսակատարության հիմնադրի հասցեին: Նա այլևս ալբանացիներին չէր վստահում և իր անձը պաշտպանելու համար լրացուցիչ Կ. Պոլիս բերեց 120 համիդեական, Պոլսի ոստիկանությանը հրամայեց՝ որտեղ մարդկանց խմբեր տեսնեն, պահանջեն ցրվել և եթե չհնազանդվեն՝ կրակել:

* * *

Շապին Կարահիսարի Թամդարա գյուղը նախկինում բարեկեցիկ վիճակում էր: Սակայն իշխանությունների չանքերով գյուղը տնտեսապես քայքայվեց, ծնունդ առավ արտագաղթը, մանավանդ երբ «թուրքերը սկսեցին «էրմենի մեսելեսին» և «Ղոմիթեան» պատրվակ բռնելով՝ նրա վիզը պարան գցել... Քանիսնե՛րն ամենածիծաղելի մեղադրանքներով բանտերում հեծում էին... 1895-ին թուրքերը գյուղի 300 տուն հայ բնակչությանը սպանեցին, ունեցվածքը թալանեցին, տներն ու երկու եկեղեցիները հրդեհեցին[496]: Մի քանի ամիս անց գյուղը բնակեցվեց քրդերով և դադարեց հայաբնակ լինելուց»:

"Pro Armenia"-ի 1901թ. №10-ում Պ. Քիյարը գրում է. «Վանից, Մուշից, Բիթլիսից, Էրզրումից, Տրապիզոնից, Դիարբեքիրից, Այնթափից, Հալեպից, Ադանայից՝ բոլոր քաղաքներից ու երկրի խորքերում ընկած գյուղերից, որտեղ հայ ցեղը կրում է անվերջանալի մարտիրոսություն, հաճախ մեզ միայն մի բան է ասում, որն ավելի սարսափելի է, քան խոշտանգումների, սովի ու բռնաբարությունների նկարագրությունը՝ «Հոգնեցինք տանջվելուց, այլևս մենք բացի մահից ու վերջնական ջարդից ուրիշ ոչինչ չենք սպասում»: "La Petite République"-ի 1901թ. օգոստոսի 2-ի համարում Ֆրանսիայի խորհրդարանի անդամ Գ. Ռուանեն գրեց. «Կ. Պոլսում թագավորող օսմանյան Կալիգուլան 1895-96 թթ. ընդհանուր ջարդերից հետո ավելի փորձված ու խոհեմացած, հիմա մասնակի կոտորածների և անընդհատ հարստահարության նվազ աղմկալի եղանակով առաջ է տանում ամբողջ հայ ցեղը բնաջնջելու իր ծրագիրը»: Ժամանակի թե՛ հայ և թե՛ օտար մամուլում նման մտքերի չատ հաճախ կարելի է հանդիպել: Նույն իրողությունն են հաստատում նաև վավերագրերը: 1901թ. օգոստոսի 7-ին Մուշից գրում են. «Հուլիսի 16-ին Լախճան գյուղից Վարդան անունով երևելի անձնավորության և Առաքելոց վանքի մի հոգևորականի սպանեցին, Տատրագոմում Մլքո անունով մեկին սպանեցին և տունուտեղն ավերեցին, 900 ոչխար քշեցին: Նույն օրը Մըկունք գյուղից բանտարկվածներից մի քանիսը մեռան: Այդ գյուղի կալերը վառեցին՝ 400 բարդ, 900 քիլե ցորեն, տակավին չհնձված արտերը հրդեհեցին: Գյուղում այլևս կին չմնաց, բոլորն այս կամ այն կողմ հեռացան: Թալանվեց Առաքելոց վանքում եղած սննդամթերքը: Հուլիսի 20-ին սպանվեց Սբ. Հովհաննու վանքի անտառապահը, քշեցին գյուղի ոչխարը: Օգոստոսի 4-ին Հունան գյուղում չորս մարդ սպանեցին, Հացիկ գյուղում 200 բարդ ցորեն այրեցին... Ցրոնքի կալերը հրդեհեցին, Ցխավայի և Կուրաքոչի ոչխարները քշեցին: Մուշում թուր-

[496] ԳԱԹ, ֆ. Առաքելյան Հ., գ. 105:

քերը դաշույնով սպանեցին երկու հայ... Ով քրդերին ու թուրքերին դեմ էր գնում, սպանվում էր: Երկու անգամ զինված հարձակում կատարվեց Առաքելոց վանքի վրա»[497]:

Ջարդերը դադարեցնելու հրամանից հետո էլ տեղ-տեղ դրանք չարունակվում էին: Էղինում 1895թ. սեպտեմբերի 15-16-ին սպանվեց 2000 հայ (5000-ից): Մի հոգևորականի հաջողվում է թաքնվել և ականատես լինել այդ սպանդին: Իսկ երբ նրան բռնում են, ասում է. «Ջե՞ որ հրաման կա դադարեցնել ջարդերը»: Հետևում է պատասխան. «Մենք այլևս չենք կարող կրակել, բայց քարերով սպանել կարելի է»: Հոգևորականին սպանեցին քարերով[498]:

Սամսոնում Ռուսաստանի փոխհյուպատոս Ծիմմերմանը Թոքատի մասին Նելիդովին գրում է, որ քաղաքում խժդժությունները սկսվել են 1897թ. մարտի 7-ի երեկոյան և չարունակվել մինչև առավոտվա ժամը 11-ը: «Խփեք դրանց,– գոչում էին չարագործները,– նրանց ունեցվածքը մեզ է պատկանում»: Սպանվեց 98 և վիրավորվեց 40 հայ: Թալանվեց 95 կրպակ, 100 տուն: Մերձակա «Ջիպրեկ գյուղում զոհվեց 33 հոգի, հայկական վանքը թալանվեց... Ինեկինջիկում կոտորել են 12, իսկ Բիգերում՝ 8 հոգու»: Խուժանը հայերին ոչնչացրեց՝ «իբրախուսվելով մահմեդական ունևորների և հոգևորականների կողմից»[499]: Մարտի 13-ին Ամասիայում «սոֆթաներն ու մոլլաները գնացին չուկա և սրել տվեցին դանակներ, խանչալներ և այլն՝ բացեիբաց հայտարարելով, թե դա արվում էր քրիստոնյաներին կոտորելու համար, իսկ տեղացի բեյերը... ապաստան տվեցին... մեծ թվով մարդասպանների՝ նրանց հետ ավարը կիսելու նպատակով»[500]:

Կոտորածների ընթացքում ու դրանից հետո, «հակառակ սուլթանի խոստումների», ավելի խստացվեց հարկերի հավաքումը. Բուլանըխի Համզաչեխ գյուղում և բազում այլ գյուղերում տասանորդ հավաքում էին բերքի 1/7 չափով, ինչը և ծննց սով: Համզաչեխցիները արդեն փետրվարին գանգատվում էին. «Մննդամթերքը վերջացել է, փող չունենք հաց գնելու, սովամահ ենք լինելու»: Մահմեդականները, ստեղծված վիճակից օգտվելով, հացի գինը թանկացրին չորս անգամ[501]:

Հարկ չվճարողներին մուլթեզիմները փակում էին սենյակում, վառարանը վառել տալիս և մեջը ջուր լցնում, որպեսզի բանտարկվածներին կուրացնեին: Հեղափոխական գործունեությամբ զբաղվելու մեղադրանքով չատերին բանտ էին նետում, մեռցնում աքսորներում: Ստեղծված ծանր կացության պատճառով Համզաչեխի բնակչության թիվը մի քանի տարում կրճատվեց չորս անգամ, գյուղացիները մուրացկանի վիճակում էին: Զնայած քրդերը տիրացել էին հողերի մեծ մասին, դրանց հարկերը չարունակում էին վճարել հայերը: Հարիսը, չհավատալով սեփական աչքերին ու ականջներին, զարմացած բացականչում է. «Կատարվեց նաև աներևակայելին: Կոտորածներից հետո սպանվածների հարկերը սկսեցին պահանջել կենդանի մնացածներից.:»[502]

Խնուսում Սելիմ անունով ավազակապետի խումբը զբաղված էր ոչխար փախցնելով: Հայերն ընդդիմանալ չէին կարող, որովհետև անմիջապես հրացանազարկ էին լինում, իսկ երբ բողոքում էին, ոստիկանությունն ամենատարբեր պատճառաբանությամբ հրաժարվում էր նման գործերի քննությամբ զբաղվելուց: Գովանդուկի 25 գյուղացիներ բանտ ընկան Սելիմի դեմ բողոքելու համար: Նույն Խնուսում Ահմեդ չաուշը հարկ հավաքելիս «որքևայրի կանանց օրերով բանտարկում և, դեմքերին աղբ քսելով, պտտեցնում էր փողոցներով, ապա մերկացնում էր ու ժամերով ձյան վրա կանգնեցնում»: Այս և նման վայրագություններ կատարողները նույնպես իրենց գործողություններն արդա-

---

[497] Նույն տեղում, թ. 102:
[498] *Les massacres...*, pp. 232:
[499] *АВПР, Посольство в Константинополе*, д. 3185.
[500] Նույն տեղում:
[501] «Հնչակ», 1895, թիվ 7:
[502] *"La Petite République"*, 05.07.1901.

բացնում էին իշխանություններից ստացած հրամաններով և ասում, որ եթե բոլոր հրամանները կատարեին, ապա բոլորին պետք է կոտորեին[503]:

Բուլանըխի Միրապար գյուղի եկեղեցին փակեցին և հայերին հարկադրեցին մահմեդական ծեսեր կատարել: Այստեղ հարկահավաքների վրա գյուղացիների կատարած ծախսերը կազմում էին հարկերի ընդհանուր գումարի 50%-ը, իսկ տասանորդ հաճախ հավաքում էին բերքի 1/3-1/4-ի չափով: Գյուղի 32 հայ տներից մնացել էր վեցը: Քուրդ աղաները «կեղծ վակըֆնամեներով» սեփականացրել էին Բալուի հողերը, իսկ հայերին վերածել մարաբաների, որոնց որպես «գերի էին օգտագործում, իսկ հնձի ժամանակ գյուղացուց խլում էին նրա քրտինքով արտադրվածը: Քրդերի դեմ բողոքելը համազոր էր սուլթանի դեմ բողոքելուն»: Խնուսի Ղարաչորան գյուղից գաղթեց հարյուր տուն, մնացած 70 տնից 40-ը «հաց էր ճարում դռնեդուռ մուրալով»: Արտագաղթը գնալով լայն ծավալներ էր ընդունում, որովհետև, ինչպես կարդում ենք մի նամակում, եթե «մինչև հիմա սուլթանի զորքը, կառավարությունն ու համիդիե հեծելազորը սպառնում էին մեր ունեցվածքին, և քանի որ այլևս ունեցվածք չկա, մեր անձին են սպառնում»[504]:

Բդրի աշիրեթը Սասունի Մշկատակ գյուղից փախցրեց 600 գլուխ ոչխար: Գյուղի քուրդ աղաները բդրցիներին պատկանող հայկական գյուղից փախցրին 500 ոչխար: «Այսինքն՝ երկու դեպքում էլ օգտվողը քուրդն էր, իսկ տուժողը՝ հայը»: Հարստահարությունները քայքայում էին հային, անկարող դարձնում հարկեր վճարելու, ինչը իշխանությունները որակավորում էին ապստամբություն ու դաժանաբար պատժում: Ապստամբություն էր որակվում նաև հայերի ընդդիմանալն իրենց հարստահարողներին: Հետևանքը լինում էր հայաթափումը: Ժամանակակիցը գրում է. «Բանանց գավառի հայերին բնաջնջելը գերազանցապես համապատասխանում է թուրքական կառավարության դիտավորություններին», քանի որ գավառը ստրատեգիական բացառիկ դիրք ունի: Նույն բանն էր կատարվում Խիանք, Հարզան, Խուլբ, Խութ, Բռնաչեն, Գենջ գավառակներում:

Արևմտյան Հայաստանում ամենածանր վիճակում գտնվող չրջաններից մեկը Աղբակն էր, որտեղ վայրագ միջոցներով էր առաջ տարվում հայաթափումը: Կոտորածի հետևանքով Աղբակը կորցրեց իր հայ բնակչության կեսը: Մազրիկ քուրդ ցեղը գրավեց հայերի հողերը, տասնյակ գյուղեր (Սորատեր, Երնկու, Առակ, Հասփստան և այլն) ամբողջությամբ անցան քրդերին: Հայատյաց Շարաֆ բեյը միահեծան տեր էր ամբողջ Աղբակում: «Հայ գյուղերը մշտապես լիքն էին նրա ավազակներով, որոնք պղծում, թալանում, ավերում, սպանում էին»: Աղբակի հայությանն նկատմամբ առանձնահատուկ դաժանությունները նաև թելադրվում էին սահմանին մոտ լինելով: Սուլթանը ձգտում էր Աղբակում ստեղծել հայերից մաքրված գոտի:

"Standard"-ը հայ ժողովրդի ծայրաստիճանի թշվառ վիճակի պատճառները էր համարում. 1. չարդերը, որոնք ընտանիքներին զրկեցին իրենց նեցուկներից, 2. սիստեմատիկ կողոպուտները, 3. պանդխտությունը՝ աշխատող ձեռքը արտահոսեց, 4. պաշարողական վիճակը, որն անհնար դարձրեց հաղորդակցությունը: Դրսից ստացված օգնության 80%-ը լցվում էր քրդերի գրպանը:

Ֆրանսիական "Le Temps"-ը 1899թ. մարտի 19-ին գրեց. թվում էր, թե Աբդուլ Համիդը պետք է ձգտեր ուշադրություն չհրավիրել «Անատոլիայի չարդերից կենդանի մնացածների վրա... Ողբանոցները հյուրընկալել էին Հայաստանի որբերին: Սակայն դրանք բոլորը սուլթանի հրամանով փակվեցին: Ճանապարհները լցված են մանուկներով, որոնք ո՛չ հաց ունեն, ո՛չ ապաստան, ո՛չ պաշտպան»[505]:

Ջինովևը 1901թ. գրում է. «Ես պետք է արձանագրեմ, որ Հիշարժան 1894-96 թթ. հետո, երբ հայերը ենթարկվեցին բարբարոսական ոչնչացման... վիճակը ոչնչով դեպի լա-

---

[503] «Հնչակ», 1895, թիվ 7:
[504] Նույն տեղում, թիվ 8:
[505] «Դրոշակ», 1899, թիվ 3:

վը չի փոխվել: Հայկական նահանգներում բարենորոգումների վերաբերյալ դեկրետը, որ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ճնշման տակ հրապարակեց Աբդուլ Համիդը 1895թ. հոկտեմբերի 20-ին, մնում է որպես մեռած տառ: Ագրարային հարցը սրվում է, հողերի մեծ մասը թուրքերի ու քրդերի կողմից զավթված է կամ զավթվում է, և իշխանությունները հովանավորում ու աջակցում են այդ զավթումներին: Մեր հյուպատոսները միաձայն վկայում են քրդերի ոչ միայն չդադարող հարստահարությունների ու թալանի, նրանց կողմից հայերի սպանության, այլև հայ կանանց բռնի մահմեդականացման մասին: Ի դեպ, այս անկարգությունների մեղավորները պատասխանատվության չեն ենթարկվում»[506]: Մուշում ու Վանում հայերի վիճակի մասին Վանի ռուսական հյուպատոսը գրում է. «Քրիստոնյա բնակչության վիճակն արտակարգ ծանր է: Սպանությունները, թալանը և բռնությունները, որոնց ենթարկվում են հայերը... կրկնվում են ամեն ամիս»[507]: «Թուրքերն ու քրդերը,– արձանագրել է Խաղաղության առաջին համաշխարհային համաժողովը,– զավթում են հայ գյուղացու աշխատանքի արդյունքը, նրա տունը և ունեցվածքը, գողանում են այն, ինչ բացահայտ վերցնել չեն կարողանում: Այս բռնությունների ու սպանությունների դեմ հայերը ոչինչ ձեռնարկել չեն կարողանում, որովհետև զրկված են զենք կրելու իրավունքից[508]:

Ավելացան հարկերը, մի քանի, նույնիսկ 10 տարվա հարկ պահանջում էին վճարել միանգամից, վճարել նաև արտագաղթածների փոխարեն: «Հայ բնակչությունից արդեն քերթել են մաշկը, այժմ սկսում են ծծել նրա արյունն ու դուրս քաշել աղիները: Հարկերի գանձումն ու պարհակները սովորաբար ուղեկցվում են ահավոր բարբարոսություններով»[509]:

Բ. Դուռը մի նոր տուրք մտցրեց՝ պատճառաբանելով, թե քրիստոնյաները զինվել են մահմեդականների դեմ: Պահանջվեց, որ յուրաքանչյուրը պետք է 5 դահեկան վճարի Օսմանյան բանակը հզորացնելու համար: Դեսպանները բողոքեցին՝ թե այդ նոր տուրքը փաստորեն նախատեսված էր ոչ թե բանակին, այլ խուժանին զինելու համար:

Կենտրոնական կառավարությունից պարգևներ ստանալու մոլուցքով տարված գավառական պաշտոնատարները դիմում էին հալածանքների ամենածայրահեղ միջոցների: Խուզարկություններն ու ձերբակալությունները դարձել էին սովորական: Բանտարկվածներին «ուտելիք չէին տալիս, ծեծում էին փայտերով, նրանց մարմինը հոշոտում աքցաններով, տանջամահ անում՝ նետելով եռացող ջրի մեջ կամ խեղդելով»[510]: Բիրտ ուժ գործադրելով՝ մարդկանց հարկադրում էին միմյանց դեմ կեղծ ցուցմունքներ տալ:

Կոտորածներին հաջորդող տարիներին նույնպես, հեղափոխական փնտրելու պատրվակով, իշխանությունները հայաբնակ վայրերում խժդժություններ էին կատարում, թալանում, սպանում: Երիմյան Հայրիկը ցարին գրում է, որ վերջին տարիներին սպանված, ձերբակալված, արտաքսված, քաղցից մեռած, բռնությամբ իսլամացած հայերի թիվը գերազանցում էր 1895-96 թթ. տուժածների թիվը[511]:

1899թ. երաշտ էր, բերք չստացվեց: Սակայն հարկերը հավաքվում էին ամենայն խստությամբ: Հարկահավաքության բռնություններից խուսա տալու համար Վասպուրականում չատերը «ձգեցին իրենց կինները և զավակները, լեռները փախան, միայն Ավերակ գյուղեն մեկ գիշերվա մեջ 100 հոգի խուսա տվեց դեպի Պարսկաց ու Ռուսիո սահմանագլուխ»[512]: Սովն ահավոր ծավալներ ընդունեց: Վանից գրում են. «Ողորմացեք մեզի, եղ-

---

[506] Саркисян Е. К., նշվ. աշխ., էջ 202:
[507] Նույն տեղում, էջ 204:
[508] Նույն տեղում, էջ 206:
[509] Նույն տեղում, էջ 208:
[510] АВПР, Посольство в Константинополе, д. 3706.
[511] АВПР, Политархив, д. 3456.
[512] «Շարժում», 1899, թիվ 188:

*բայրներ... գթացեք մեզ, դուք որ գիշերները պատառ մը հաց ունիք ուտելու և անկողին մը քնանալու»:*

*Էրզրումի ռուսական փոխհյուպատոս Շախովսկին 1900թ. օգոստոսին տեղեկագրեց, թե պալատից ստացված հրամանով Բիթլիսի պարետ Ալին ջարդ է կազմակերպել Սասունի Սպաղանք գյուղում: Դա Սպաղանքի վրա երկրորդ հարձակումն էր: Առաջինը տեղի ունեցավ 1899թ. նոյեմբերին, սակայն սպաղանցիները Մակարի գլխավորությամբ հետ շպրտեցին քուրդ ավազակներին: Մշո կառավարիչը Խալիլին օգնական ուժեր ուղարկեց: Բայց սրանք ևս հաջողության հասնել չկարողացան*[513]*:*

*Սպաղանքը 30-35 տուն ունեցող փոքրիկ գյուղ էր: Սպաղանցիք հանդուգն ու պատվախնդիր մարդիկ էին, ինչը թուրքերին հավասարակշռությունից հաճախ էր հանում: 1900թ. հուլիսի 3-ի գիշերը Բշարե Խալիլի, Քոռ Սլոյի և Ալիի ուժերը՝ մոտ 1000 մարդ, ինչպես նաև ոստիկանական մի ջոկատ գաղտագողի գյուղը շրջափակման մեջ են առնում: Քոռ Սլոն փակում է Տալվորիկի հետ կապող ուղին: Լուսաբացին հնչում է պատերազմի փողը, և քրդերն ու թուրքերը լցվում են Սպաղանք: Աղմուկի վրա հայերը տներից դուրս են թափվում, բայց ով ոտը չեմից դուրս էր դնում, գնդակահար ընկնում էր: Կանայք, գրկած երեխաներին, զորքին ընդառաջ էին գնում, կարծելով, թե կխնայեն, բայց բոլորին սրի քաշեցին: Փրկվեց միայն յոթ հոգի, որոնցից հինգը Մակարի գլխավորությամբ ճեղքեցին շրջապատման օղակն ու հեռացան, իսկ մնացած երկուսը կանայք էին, որոնք նետվեցին գետը և քարերից կառչելով՝ անցան մյուս ափը: «Կանայք ու մանուկները,– գրում է Բրանդեսը,– լացով ու պաղատանքով զորքին ընդառաջ գնացին, սակայն երեխաները ողջ-ողջ սվիններով հանվեցին, իսկ կանայք անպատվվելուց հետո սպանվեցին: Գյուղի ութսունամյա քահանայի բերանը ճեղքեցին և ծնոտը պոկեցին, գյուղապետի՝ Մակարի, հղի կնոջ՝ Թիմենեի, արգանդը բացեցին, երեխային կտրատեցին, իսկ մորը դաշույնի 50 հարված հասցրեցին»*[514]*: Գյուղը թալանվեց և ապա հրդեհվեց: Այս հրեշավոր ոճրագործությունն աշխարհի աչքից թաքցնելու համար՝ Սպաղանքը ամիսներ շարունակ չրջափակման մեջ էր պահվում: Որոշ ժամանակ անց Խալիլն ու Հուսեյինը ոստիկանական ուժերով քանդեցին իրենց իսկ փորած հորերը, հայերի դիակները հանեցին ու այրեցին: Մի քանի դիակ չայրեցին՝ իբր սպանվել էին ոչ թե սպաղանցինեը (նրանք գյուղից ժամանակին հեռացել էին), այլ հեղափոխականները, որոնք կռվել էին զորքի դեմ: Սպաղանքի եղեռնագործության մասին Գ. Ռուանեն Ֆրանսիական խորհրդարանում ասաց՝ հանկարծակիի եկած սպաղանցիները «լեռնադաշտ փախան և ապաստանեցին եկեղեցիներում: Ով թուրքերի ու քրդերի ձեռն էր ընկնում, սպանվում էր՝ լինի կին, երեխա, թե ծերունի»*[515]*: Սպաղանքում դրսևորված «քաջագործության» համար Ալին առաջ քաշվեց ու նշանակվեց Հալեպի վալի:*

*Դանիացի ճանապարհորդ Բենգսենը, 90-ական թվականների վերջերին ճանապարհորդելով Հայաստանում, գրում է, որ Դիարբեքիրի, Խարբերդի կուսակալություններում և Արաբկիրի կազայում կոտորածներից հետո մահմեդականացավ չուրջ 200 գյուղ: Վասպուրականում դավանափոխվածների թիվը 1901թ. հասավ 10-12 հազարի*[516]*:*

*...«Գյուղերի մեծ մասն ավերակ վիճակում էր, և կարծես ավերակները մնացել էին վկայելու, որ անցյալում այդ վայրերում բնակչություն և չունչ է եղել, և սուրն է անողոքաբար բնաջինջ արել ամեն ինչ և ամայացրել այդ դրախտ երկիրը... կան գյուղեր, որոնցում միայն մի քանի տուն է մնացել, մինչդեռ անցյալում եղել են տասնյակ տներ: Գյուղերի միջև որևէ հարաբերություն գոյություն չունի... պակաս դեր չեն խաղում*

---

*513 Նույն տեղում, դ. 3197.*
*514 Օտար հեղինակները ..., էջ 6:*
*515 «Դրոշակ», օգոստոս, 1900:*
*516 «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, թիվ 2, էջ 105:*

նաև կաթոլիկներն ու բողոքականները, որոնք, օգտվելով հայի սովյալ վիճակից, մի քանի ոսկի տալով նրան կաթոլիկ կամ բողոքական են դարձնում...

Մայրահեղ թշվառություն է և անգամ այդ վիճակում հայերը ենթակա են քրդերի ու պաշտոնյաների թալանին: Մուշում ամեն քայլափոխին կհանդիպեք համիդեականներին, որոնք ազատ չրջում են, թալանում հայ գյուղերն ու մնում անպատիժ... շատ տեղերում սով է: Մուշը շատ աղքատ վիճակում է. մանուկները թափառում են փողոցներում ինչպես չները՝ մերկ, քաղցած, անտուն-անտեր: Լեզու է պետք, որ նկարագրի այդ որբերի վիճակը. խոսքն անզոր է, պետք է տեսնել ու զգալ: Այդ անմեղներին ծեծում են ամեն քայլափոխին, շատերին բռնի մահմեդականացնում: Պատահել են նաև բռնաբարություններ... Մշո ժողովրդից 2500 հոգի դիմել է ռուսական հյուպատոսին և խնդրել ուղարկել մի ռուս քահանա՝ հունադավանություն ընդունելու և ռուսահպատակ գրվելու»[517]:

Ա-Դոն վկայում է, որ Հայոց Ձորում քրդերը հաստատվեցին գլխավորապես 1896թ. կոտորածներից հետո: Մշո դաշտի 21 գյուղերում, եթե 1889թ. կար 117 քուրդ ընտանիք, ապա 20-րդ դարասկզբին՝ 554: Այսինքն, հայաբնակ չրջաններն ամայացան կամ անցան քրդերին: Արևմտյան Հայաստանի մի շարք չրջաններում կառուցվեցին զորանոցներ, կազմակերպվեցին հայերին հետապնդող ավազակախմբեր: Վ. Մաևսկին 1900թ. գրում է, որ Վանի նահանգում «վերջին երկու տարվա իրադարձությունները բազմաթիվ հայկական գյուղերի... դրեցին տեղական քրդերին ուղղակի ենթակա դրության մեջ»[518]:

Ա-Դոն չարդերից հետո ընկած ժամանակաշրջանն անվանում է «լուռ» չրջան, երբ տեղի ունեցան այնպիսի բռնություններ ու հարստահարություններ, որոնք «միանգամայն մոռացնել տվին նախկինը... յուրաքանչյուր գյուղ, որ մինչ այդ ազատ էր մնացել աղայից կամ բեկից, եկավ այս կամ այն քուրդը... և իրեն հայտարարեց այդ գյուղի աղա կամ բեկ... տարրական պարտականություն դարձավ ձրի վարել, ցանել աղայի հողերը, հնձել արտը, ծեծել ցորենը, դաշտից տուն բերել խոտը...»[519]:

Կոտորածը չարունակվում էր...

Ֆրանսիական հրապարակախոս, մոլի թրքասեր Պիեռ Լոթին (Ժյուլիեն Վիո) գրում է. «Լավ գիտեմ, որ հայոց չարդեր տեղի ունեցան: Սա առասպել չէ, այլ սարսափազդու իրականություն: Սա պատմության ընթացքում թուրքերի մեծ արատն է, որոնց ամբողջ հոգով ու խղճով արժանի եմ համարում պաշտպանել, սակայն այդ անել չեմ կարող, քանի որ նրանք հանցապարտ են»: Ապա խղճալով «առաքինի թուրքերին»՝ Պ. Լոթին գրում է.

«Այո, հայերի չարդերը գուցե այն ոճիրն են, որ այսօր թուրքերը այնքան ահավոր ձևով քավում են... Ի հիշատակ 1896-ի մռայլ օրերի է, որ այսօր եվրոպան այլևս չի դիմում թուրքերին:

...Մեղա՛ Աստված, եթե ուզում եմ հայ ցեղին մեղադրել, քանի որ հայը այլասերված է, ինչպես բոլոր այն ցեղերը, ովքեր գերագույն դժբախտություն են ունեցել կորցնելու իրենց հայրենիքը: Հայերի արիությունը թուլացավ, նրանք լծվեցին առևտրին ու նրանց մեջ վաչխառուությունն ավելի շատ էր, քան հրեաների մեջ»:

Ավելի առաջ գնալով՝ Լոթին գրում է. «Այս կարմիր սուլթանը եղավ մահաբեր կասկածանքի իշխան, սարսափների վարպետ, սակայն որի արծվի հայացքը նաև կարող էր համայել... Նրա անպեղելի հոգին դեռևս որքա՛ն մատչելի էր գութին և նույնիսկ գութգուրանքին: Նա երբեմնի վեհապետ էր, անցյալի խոշոր դեմք, որն ուշացել-մնացել էր մինչև մեր 20-րդ դարը»[520]:

---

[517] «Հնչակ», 1902, թիվ 1:

[518] Маевский В.Т., նշվ. աշխ., էջ 188:

[519] Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 320-321:

[520] Loti P., *La mort de notre chère France en Orient*, Paris, 1926, p. 274.

Ուշացել էր, որովհետև քաղաքակրթվելու նախաստիճանական խաչմերուկներում հարյուրամյակներ շարունակ դեգերած և այդպես էլ վայրենությունը հաղթահարել չկարողացած ժողովրդի փափուկշահն էր, ժողովուրդ, որը պատրաստ է ծարդկությունն և խաղաղասիրությունն՝ քաղաքակրթության համար:

* * *

Անառարկելի է՝ այն, ինչ Հայերի հետ կատարվեց 90-ական թվականների վերջերին ոչ միայն մեծագույն ողբերգություն էր, այլև քաղաքակրթական ապիտ, ժողովրդին հուսալքության ճահիճը նետող դաժան հարված, հեռանկարի կորուստ: Կատարածից հետո Ջրաշիրցուն վայրին հայտարարեց. «Հայի մեջ այլևս հոգի չմնաց, հայերն այլևս պլպուլ քարձրացնել չեն կարող և հարիկադրված են իսլամներին պլմել և ազգամոլության խնդրել»[521]: Կատարածները, պանդխտացին ապաստանյանց գաղտ, ժողովրդի քաղաքական հոչոտումը, նրա վարկի խարխլումն են: Եվ դժվար է ասել, թե պրանցից որն էր ավելի կործանարար: Փաստը կորցրած ժողովուրդը քիմքազրկի վերի մարդու վիճակում է, անընդունակ տեսնելու ոչ միայն իր վազվզա որը, այլև գնահատելու իր նեղրկա վիճակը: Նա մի անգամազուրկ էակ է, որն ընդունակ է միայն մի բանի՝ ձեռքը պարզած ազգամոլության խնդրելու: Առանց այս իրողությունը նկատի ունենալու՝ անհնար է հասկանալ այն, ինչը տեղի ունեցավ Միհրմատյան Հայաստանում 1896-1904 թվերին: Ստեղծվել էր մի վիճակ, երբ Հայը կամ պետք է լռելյայն կրպակի մատնվեր, գազարեր ինքնուրույն ազգ լինելուց և կամ ընդորեր քիմքական Հայաշինի քաղաքակրթությանը պիմակալվելու ուղի: Անհավատալի է, բայց իրողություն, որ Հայն ընտրեց երկրորդ ուղին: Կատարածները ոչ թե մարդկին Հայության ազատատենչ երազները, այլ ավելի խիմանցին պրանք, քիմքական չպղպջացող վարչակարգի հանդեպ ատելությունը վերածվեց ազատագրական պայքարի պլխավոր խթանի: «Մահ կամ ազատություն» կոչերի տակ ցցացմունքային պատկերվեց վերածվեց գոյատևման կռանի, կրանքի ու մահվան միջև մաքառող ժողովրդի վարքագծի նորմի:

Քաղ լան մտանիք, անգամալուծը,
Կամ, պրոնց քաղցր է Քշնամու լուծը,
Բայց մինք, որ ունինք Հոգի ու պիրտ քաջ,
Եվ անվախ ելնինք Քշնամու առաջ,
Պտնի մեր փառքը մահով հաղնիք:

Կատարածները գիտ Հայերի պլսակների ցանքս էին կատարում, երբ ամենատիկ առաջին պատ ձգվիցին ժողովրդական վերմաստանների՝ Հայդուկների ոտնատակի ու ինքնագոհ, Հզորտ ու Հիրատական մաքառատանները: Առաջին Հայդուկից ստորգնական է, բայց փաստ՝ Հայդուկային շարժման ամենազորտան շրջանը կատարածների Հաշիգրգող ստրճնային էին: Դրան նպաստեց նաև այն ստրատեգը, որը ձեղքից անցավ Հայկական Պողը և պատից ստրնիզատիրությանը:

Այդ ժամանակ, ստատից ստրնիզատիրի, Հայդուկների ատակ էր նաև ստրնիզատիրության գործառնատը: Եվ երկիր ստգագրիցին Վոլկատում գտնվող ստրնիզատիրության, ինչպես նաև ստրնիզատիրության լսավոգության նեղկատարգությունները: Հայդուկային խմբերի Հետ Առատն Հատան Ազգյուր Միգոգն ու Անգրանիկը: Մատրատական չսկատանները Վիմատկանում գնում էին Առատն, գնում էին կատարելու Հայի Հատրատանման միկնաժիրը: Բայց գնում էին ոչ միայն Առատն: 1897-ի Հուլիսի 15-ին Ատյան Ամսի 49 Հազանոց

[521] «Դրոշակ», 1896, թիվ 15:

խումբը Սալմաստից անցնում է Վասպուրական և շարժվում Վանի ուղղությամբ: Գործողությունները խումբը ենթարկվում է քրդերի հարձակմանը: Հայդուկները, կենտրոնանալով մի տան մեջ, ամբողջ 24 ժամ հետ են մղում թշնամու գրոհները: Քրդերը հրդեհեցին տունը: Խումբը չինությունից դուրս թռավ, ճեղքեց թշնամու շղթան ու, առանց զոհ տալու, հեռացավ: Հայդուկների մի մասը հասավ Վան, բայց երկար գործել չկարողացավ՝ ոմանք ձերբակալվեցին, իսկ մյուսները տևական կռիվներ էին մղում Վարագա լեռներում:

Շատախում հերոսական կռիվներից հետո Վարդանի և Վազգենի խմբերը մտնում են Վան: Այդ օրերին Շաքիրը Վանում էր և հայոց թեմի առաջնորդից պահանջեց, որ խմբերը հանձնվեն, այլապես նոր կոտորած էր կազմակերպելու: Նույն բովանդակությամբ հայտարարություններ փակցվեցին պատերին: Ահաբեկված ժողովուրդը հրաժարվեց օգնել հայդուկներին. որոնց շրջապատեց զորքը՝ կրուպպի թնդանոթներով: Սակայն հայդուկներին հաջողվում է աննկատ դուրս գալ շրջափակումից: Նրանք բաժանվում են երկու խմբի և պայմանավորվում են հանդիպել Հայոց Ձորի կեմ գյուղի սարում: Վազգենի խումբը մտնում է այդ գյուղի մարագներից մեկը: Մի կին խմբին ուտելիք էր բերում: Սակայն թաքստոցը հայտնաբերվեց ու շրջապատվեց: Հայդուկների մի մասը կրակելով շարժվեց դեպի Անգղ գետը: Աղմուկի վրա հավաքվեցին մեծ թվով քրդեր: 12 հայդուկներ պաշտպանվում էին, հակառակորդին կորուստներ պատճառում, իսկ երբ մութն ընկավ, հեռացան Արտոս:

Բ. Դուռը Պարսկաստանից պահանջեց անհապաղ պատժել սահմանն անցած հայկական խմբերին: Թեհրանը հրաժարվեց որևէ պատասխանատվությունից և Կ. Պոլսին առաջարկեց ուժեղացնել սեփական սահմանների պաշտպանությունը: Զեքին հեռագրեց, թե «Հայ ավազակները հաջողացրել են 500 ձիավոր հանել Բաչկալեի վրա հարձակվելու համար, սակայն հաջողվեց հայերի ներխուժման առաջն առնել, չնայած պարսկական իշխանությունները հայերի դեմ միջոցներ չեն ձեռնարկում և անգամ օգնում են նրանց»[522]:

1898Թ. սեպտեմբերի սկզբին հայդուկային մի խումբ Բագրեվանդի չրջանում սահմանն անցավ ու հայտնվեց քրդերի դեմ դիմաց: Ձորս քուրդ սպանվեց, մյուսների աղմուկի վրա հավաքվեց 1500-2000 քուրդ: Հայդուկները մտնում են քարայրը: Նրանք մարդ են ուղարկում Սերոբի մոտ՝ օգնության խնդրանքով: Սերոբը տանը չի լինում, բայց Սոսեն մի չոկատով օգնության է հասնում: Հայերը կորցնում են 43, իսկ քրդերը՝ մոտավորապես 300 մարդ[523]: Կ. Պոլսի ոստիկանատանը և կենտրոնական բանտում փակված 1600 հայեր փորձեցին դարպասները խորտակել ու փախչել: Ձորքերը կրակ բացեցին: 130 բանտարկյալ սպանվեց ու վիրավորվեց:

Կոտորածներից հետո եռանդուն գործունեություն ծավալեց Աբրոն (Մկրտիչ Սահակյանը): Նա երկու անգամ Կովկասից զինված խումբ անցկացրեց Սասուն և օգնեց գյուղացիներին քրդերի հարձակումների դեմ: 1896Թ. մայիսի 18-ին նա գրեց, որ Սասունը արդեն հաղթահարել է հուսահատությունը:

Տասնվեց հոգանոց հայդուկային մի խումբ Խանասորում մարտի մեջ է մտնում մազրիկ ցեղի հետ: Վանից քրդերին օգնության է հասնում 500 զինվոր թնդանոթների հետ: Հայդուկները դիմադրում են երեք օր և, թշնամուց խլելով 78 կյանք, հեռանում են:

Սասունում և Տարոնում հայդուկային կռիվներն ամենից առաջ կապված էին Սերոբի, Անդրանիկի և Գևորգի գործունեության հետ: Կովկասից վերադառնալուց հետո՝ Սերոբն ամրացավ Ախլաթում: Նրա հայդուկային խումբը գործում էր մեծ եռանդով ու համոզմունքով: Սերոբին բռնելու համար իշխանությունները բազմաթիվ միջոցառումներ իրականացրեցին, սակայն ապարդյուն: 1897Թ. հուլիսի 27-ին մի քանի տասնյակ քրդեր քշում են Թեղուտ գյուղի ոչխարը: Սերոբի չորս հոգանոց խումբը հարձակվում է

---

[522] «Դրոշակ», 1897, Թիվ 13:
[523] Նույն տեղում, 1898, Թիվ 10:

հափշտակիչների վրա: 6-7 ժամ տևած մարտում քրդերը կորցրին մեկ տասնյակից ավելի կռվող: Սերոբի համբավը լայն տարածում գտավ: Նա փաստացի իշխանություն դարձավ ոչ միայն Ախլաթում, այլ նաև Սասունում:

Սերոբը հայ ժողովրդի զայրույթի պոռթկումն էր, սեփական ուժերի հանդեպ վստահությունը վերագտնելու խթանիչ ուժը: Նա ամեն տեղ էր, հարվածում էր ժողովրդին վնաս պատճառողներին, ոչնչացնում հայի արյունը հեղողներին ու անհետանում: Քանի-քանի՛ անգամներ նա պարտությանն է մատնել թվապես տասնյակ անգամ գերազանցող թշնամուն: 1898թ. հոկտեմբերի 20-ին Սերոբը իր 16 ընկերներով գտնվում էր Բաբչեն գյուղում: Թուրքերն այդ մասին լուր են ստանում և առավոտ կանուխ պաշարում են գյուղը: Հայդուկները կրակելով շարժվում են դեպի քարքարոտ բլուրը, քարերի հետևում դիրքեր են գրավում և հրացանային կրակով թշնամուն մեխում տեղում: Թուրք հրամանատարը Բաղեշ է գնում օգնական ուժ ու թնդանոթ բերելու: Սերոբին բռնելու համար հավաքվում է նաև թուրք և քուրդ խուժանը: Հայդուկները ոչնչացնում են մի քանի թնդանոթաձիգ, իսկ մյուսները թնդանոթները լքում ու փախչում են: Ջախջախվում են նաև զինվորներին գրոհի տանելու ջանքերը, ընկնելով հայդուկների կրակի տակ՝ նրանք նույնպես փախչում են: Մութն ընկնելուն պես հայդուկները աննկատ հեռանում են: Թուրքերը երկար ժամանակ կրակը չէին դադարեցնում: Հայերը կորցնում են մեկ, իսկ թշնամին՝ 30 հոգի:

Բաբչենի կռվի լուրը սարսափեցրեց Բաղեշի մահմեդականներին: Նրանք մութն ընկնելուն պես փակվում էին իրենց տներում: Խուճապ կար նաև Մուշում, որովհետև լուրեր էին շրջում, թե Սերոբը որոշել է արշավել քաղաքի վրա:

Սերոբն անընդհատ շարժման մեջ էր: Նա գյուղից գյուղ էր անցնում, ահաբեկում քրդերին ու թուրք պաշտոնատարներին, կանխում հայ բնակչության հանդեպ բռնություններն ու թալանը: Նրան հաջողվեց կոտորածից ու ավերից փրկել 27 գյուղ: Հայդուկները ոչ միայն մարտական գործողություններ էին վարում, այլև եռանդուն քարոզչություն ծավալում հօգուտ ինքնապաշտպանության: Սերոբի ու նրա խմբի գործերի վերաբերյալ առասպելական պատմություններ էին հյուսվում ու տարածվում, հայդուկապետին վերագրվում էին գերբնական հատկություններ: Սերոբին հետևում էին 21 վարձու լրտեսներ, որոնցից 7-ին սպանեց: Նա գրագիտություն սովորել էր ինքնակրթությամբ, բայց խելահեղ ընթերցող էր, փայլուն հռետոր: Նրանից սարսափում էին թե՛ Բաղեշի վալին և թե՛ Մշո մութեսարիֆը: Ազատ մուտք ու ելք ուներ այդ քաղաքները, Սասնո ու Ախլաթի բնակավայրերը: Ավելորդ զոհերից խուսափելու համար՝ Բաղեշում թուրք պահապանները փոխվեցին հայերով: Սերոբը ռազմականից բացի ուներ կազմակերպչական աշխատանքի փայլուն տաղանդ: Նա ոչ միայն ստեղծեց զինվորական խստագույն կարգապահության վրա կառուցված մարտական ջոկատներ, այլև Ախլաթի գյուղերում ձևավորեց ինքնակառավարման կառույցներ: Բոլոր գյուղերում ստեղծվեցին խորհուրդներ, որոնց իրավասությունների շրջանակում էին տվյալ գյուղին ու, առանձին վերցրած, յուրաքանչյուր բնակչին վերաբերող հարցերի լուծումը, որպեսզի իշխանությունները պատրվակ չունենային միջամտելու գյուղերի ներքին գործերին: Այդ խորհուրդներն ունեին նաև դատական իրավասություններ. դրանց կայացրած վճիռները փոխել իրավասու էր միայն Սերոբի գլխավորությամբ գործող կենտրոնական ժողովը: Սերոբն ուներ իր կնիքը՝ արծաթե մատանի, որի վրա կար երկու տառ՝ Ա.Ս.:

Ախլաթի հայ գյուղացին դադարեց նկատել թուրքական իշխանություններին: Բռնությունների ու թալանի վերացումը նպաստեց տնտեսական կյանքի աշխուժացմանը:

Սերոբի գործունեությունը անհանգստացրեց նաև Կ. Պոլսին: Խնդիր դրվեց նրան անպայման ոչնչացնել կամ բռնել: Այդ նպատակով մի հանճնաժողով ստեղծվեց, որը գյուղից գյուղ էր անցնում և բոլորից ստորագրություն վերցնում Սերոբին որևէ աջակցություն ցույց չտալու: Բաղեշի վալին նրա մոտ մարդ ուղարկեց՝ պարզելու, թե ինչ է

նրա ուզածը ու առաջարկեց անձամբ հանդիպել: Սերոբը հանդիպումից հրաժարվեց և ասաց. «Մեզ թողեք հանգիստ ապրել»:

Մայիսի 7-ին Ցրոնք գյուղում զորքն ու քրդերը հարձակվում են յոթ հոգուց բաղկացած հայդուկային խմբի վրա: Ցրոնքը Մուշ քաղաքի մերձակայքում էր, և կառավարիչը հրամայում է Դալիբեին ու հեծելազորի հրամանատար Իզզեթին չրջապատել Ցրոնքը և հայդուկներին բռնել: Բացի այդ, 500 զինվոր է գալիս Մուշից, հավաքվում է նաև 1500 քուրդ և բոլորը միասին չարժվում են Ցրոնքի վրա: Խոշտանգումների միջոցով հաջողվում է պարզել հայդուկների թաքստոցը: Սկսվում է կռիվը: Հայերը գնդակահար են անում Դալիբեին: Կռիվը տևում է մինչև երեկո: Թուրքերը հրդեհում են մարագը: Հայդուկները հարկադրված դուրս են գալիս և բաժին դառնում թշնամու գնդակներին: Հունիսի 18-ին զինակիր հայերի մի խումբ Բաղիդաղ լեռան չրջանում չրջապատվում է 1500 քրդերի կողմից: Կռիվը տևում է ամբողջ օրը: Հայդուկները հեռանում են Զենիչ-Հաչի ձոր, որտեղ նորից չրջապատման մեջ են ընկնում, բայց նորից մինչև երեկո կռվում են ու անվնաս հեռանում: Օգոստոսի 21-ին Կարինում կախաղան է հանվում հայտնի հայդուկապետ Արամ Արամյանը (Թաթուլը): Հոկտեմբերի 27-ին հայերի մի խումբ մտնում է Ալաշկերտի Խաստուրի եկեղեցին: Դերվիշը չրջապատում է եկեղեցին և պահանջում անձնատուր լինել: Հայերից մեկը կրակում է, և Դերվիշը ընկնում է: Մարտը տևում է մինչև երեկո. հայդուկները 60 խաստուրցիների հետ չրջափակումից դուրս են գալիս ու հեռանում լեռները: Կատաղած թուրքերը գյուղը թալանում են, գյուղացիներին սրի քաշում: Նոյեմբերի 20-ին ոստիկանները պաշարում են Բերդակը. լուր էին ստացել, որ գյուղում հայդուկներ կան: Առավոտյան սկսվում է խուզարկությունը, սակայն ոչինչ չի հայտնաբերվում: Գևորգին հաջողվել էր իր խմբի հետ հեռանալ:

Դեկտեմբերին դավադրաբար սպանվում է Աղբյուր Սերոբը: Դեպքը տեղի ունեցավ Գելիեգուզան գյուղում: Թուրքական իշխանությունները քուրդ Խալիլին մեծ խոստումներ էին տվել Սերոբին «չարքից հանելու համար»: Չնայած այդ ավազակի տրամադրության տակ էր 2000 հոգանոց մի զորաւժ, խուսափեց առաջադրանքը կատարել չիտակ պայքարի միջոցով, այլ կաշառեց Գեղաչեն գյուղից Ավե անունով մեկին, որը ճաշի հետ Սերոբին տարավ նաև թույն պարունակող ծխախոտ: Թունավորված Սերոբը չընկրկեց: Նա կրակ բացեց մոտեցող Թշնամու վրա: Սակայն չուտով ուժերը սպառվեցին, և վրա հասած Խալիլը գլխատեց նրան: Սերոբի գլուխը թաղեցին Բաղեչի Ս. Կարմրակ եկեղեցու բակում, իսկ մարմինը՝ Գելիեգուզանի գերեզմանատանը: Արևմուտքի գիտնականներից Վ. Բելքը գրեց. «Այսպես վերացվեց մեծ հիացմունք և մեծ սարսափ ներչնչող Սերոբ Փաշան՝ ազատության գաղափարով տոգորված, միշտ լավին ձգտող մի բնավորություն»[524]:

Սերոբի սպանությունը հուսալքության մատնեց սասունցիներին: Անդրանիկն ու Գևորգը քաջ գիտակցում էին դրա վտանգավորությունը: Գևորգը նախ ոչնչացրեց Սերոբին թունավոր ծխախոտ տարած Ավեին իր ընտանիքի հետ, ապա հայդուկները դարանակալեցին ու սպանեցին նաև Խալիլին:

Հայդուկների ժողովը հայդուկապետ ընտրեց Անդրանիկին:

## 18. ՀԱՑԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՑՈՒՆԸ

Պաշտոնական Եվրոպան հայկական ջարդերին վերաբերվեց երկիմաստ. դատապարտելով հանդերձ ջարդերի սուլթանական քաղաքականությունը՝ գործնական լուրջ քայլ չարեց այդ արյունարբու քաղաքականության առաջն առնելու համար: Ընդ որում՝ սուլթանն անմիջապես գտնում էր համապատասխան միջոց տերությունների ճեռնարկումները չեզոքացնելու համար: Երբ 1895թ. կ. Պոլիս լուրեր հասան, թե տերությունների ռազ-

[524] «Դրոշակ», 1901, թիվ 3:

մանավերը մտել են Դարդանել (ինչը հայերի չրջանում հույսեր ներշնչեց՝ իրենց հեղված արյունն էր դրանց Դարդանել բերել[525], որպեսզի գրավական հանդիսանան բարենորոգումների համար), անմիջապես հրապարակվեց սուլթանի իրադեն՝ ընդհանուր ներում չնորհելու վերաբերյալ: Դրանով սուլթանը քայլ կատարեց հարցը փակելու և թույլ չտալու, որ այն քարշ տրվեր միջազգային ատյաններ:

Եվրոպական մամուլը ծավալեց աննախադեպ քարոզչություն՝ հայկական հարցի չուրջ Եվրոպայի հասարակական կարծիքի նորովի ձևավորման նկատառումով: Ընթանում էր դիվանագիտական-քարոզչական ծավալուն պայքար: «Արդարության», «արտացավության» վարագույրի հետևում խաղացվում էր համաչխարհային դիվանագիտության չախմատային մինի խաղերից մեկը: Դա նկատի ունենալով՝ Ա. Սազոնովը գրում է.

«Որքան արժանահավատ էին դառնում տեղեկությունները (Թուրքիայի հայերի) անլուր խոշտանգումների մասին, որոնց հետևանքով մեռնում էին հազարավոր ծերեր, հոգևորականներ, կանայք, երեխաներ, այնքան մամուլի որոշ մարմինների հարձակումները հայերին բնորոշ բնավորության անհանդուրժելի գծերի վրա դառնում էին ավելի հաճախակի...

Արևելքի քրիստոնյա տանջված ու ճնշված ազգաբնակչության օգտին ռուս ժողովրդի հանդես գալու անհրաժեշտության և անխուսափելիության պատմական հիմնարար նշանաբանների և կոտորածների ու բռնությունների նկատմամբ նման ծաղրի զուգակցում նախկինում մամուլում չի եղել»[526]:

Փոքր չէր Թուրքերի դատապաշտպանների թիվը: Ու. Հարիսը գրում է. «Թուրքերը գերադասում էին հայերի դեմ աննչմար հալածանքների համակարգը, որը լիներ ոչ այնքան դաժան ու նկատելի, որպեսզի ուշադրություն չգրավեր ու, միաժամանակ, հանգեցներ հայ ազգաբնակչության արտագաղթի... Համիդիեների ավերիչ արշավանքները պետք է հանդիսանային Բ. Դռան քաղաքականությունն իրականացնողները և հարկադրեին հայերին արտագաղթել»[527]:

Այդ իրավիճակին անդրադառնում է նաև Բեռնշտայնը: Նա գրում է. «Արդ եղան մարդիկ, որ նույնիսկ նման պարագաներում պաշտպանեցին Թուրքիային և այս բոլոր հաստատված գազանությունները համարեցին ծայրահեղ չափազանցություն: Երբ ես զայրացած էի, որ մեզնից ոչ մեկը բողոքի ձայն չբարձրացրեց, լավագույն բարեկամներիցս մեկից մի նամակ ստացա, որի գլխավոր կետերն էին. առաջին՝ Թուրքիայում հայեր չկան, երկրորդ՝ հայերը այնտեղ շատ երջանիկ են և, վերջապես, երրորդ՝ ապստամբողները ռուսական գործիչներ են: Կան մարդիկ, ովքեր Ռուսաստանի հանդեպ ունեցած արդար ատելությունից դրդված, պաշտպան են կանգնում Թուրքիային»:

Անգլիացիների քրիստոնեական խիղճը «ժամանակ առ ժամանակ վրդովվում էր հայերի իրավազուրկ վիճակից ու նրանց դեմ իրականացվող ծրագրերից» և դա, մասնավորապես, այն պահերին, երբ «անգլիական դիվանագիտությունից պահանջվում էր ինչ-որ բանով վիրավորել Ռուսաստանին»[528]:

1895թ. դեկտեմբերի 16-ին Դիլոնը գրեց. «Թուրքերը կոտորում են հայերին, եվրոպան դա գերազանց գիտի և ոչինչ չի անում պաշտպանելու անպաշտպաններին: Ամեն ինչ կառուցված է եսամոլության և շահի վրա... Ես հենց նոր ավարտեցի իմ կոչը..., որում ոչ միայն չեմ պաշտպանում Անգլիային, այլև բոլոր տերություններից ամենաչատն եմ մեղադրում: ... Տերությունները տոգորվում են քրիստոնեական ոգով, երբ այն համահունչ է իրենց քաղաքական մտադրություններին: ...Ես արդեն չեմ կարողանում

---

[525] ԳԱԹ, ֆ. Աուքելյան Հ., գ. 106:

[526] Силин А. С., *Экспансия Германии на Бл. Востоке в конце XIXв.*, Москва, 1971, стр. 209.

[527] *Հայկական հարցը Մեծ Բրիտանիայի ամսագրերի էջերում 19-րդ դարի 90-ական թվականների կեսերին*, Երևան, 1980, էջ 13:

[528] Ротштейн Ф. А., *Международные отношения в конце XIXв.*, М.-Л., 1960, стр. 272.

*խորհել հայերին բաժին ընկած բախտի մասին, այդ միտքն իսկ ինձ զրկում է աշխատելու ունակությունից»*[529]:

*Նորից առաջ քաշվեցին Արևմտյան Հայաստանի ինքնավարության հետ առնչվող տարբերակներ, օրինակ, Լոնդոնի հանրահավաքներից մեկը պահանջեց Հարավարևելյան Հայաստանում Ռուսաստանի հովանու ներքո ինքնավար տարածք ստեղծել՝ Մանազկերտ կենտրոնով և կառավարիչ նշանակել Ռուսաստանի կայսրական տան անդամներից մեկին*[530]:

*Թուրք կառավարությունը չնայած կոտորածները ժխտել չկարողացավ, բայց հյուպատոսների տված տվյալների համեմատ՝ ներկայացրեց ծիծաղելի թվեր: Ց. Լեփսիուսը իր «Հայաստան և Եվրոպա» գրքում համեմատում է Թուրքիայի և Եվրոպայի պաշտոնական վիճակագրությունները: Այնտեղ, որտեղ եվրոպացի ճանապարհորդները կամ պաշտոնյաները սպանվածների թիվը հաշվում են 10000, սուլթանի պաշտոնյաները հազիվ 1000 են ներկայացնում:*

*...Ռուսաստանն այդ պահին անհարմար էր գտնում բռնել սուլթանի օձիքից, որովհետև ավելի հարմար էր, եթե Թուրքիան մնար այնպիսին, ինչպիսին կար, մյուս կողմից, Անգլիան կռվում էր Հնդկաստանի հյուսիս-արևմտյան լեռնականների հետ*[531]:

*Լեփսիուսը դժգոհում էր, որ գերմանական թերթերն աղավաղում էին Հայաստանի իրադարձությունները: «Զարմանալի չէ, որ մինչև օրս Գերմանիայում ոչինչ չգիտեն մի ամբողջ ժողովրդի զանգվածաբար կոտորելու, կողոպտելու և բռնությամբ մահմեդականացնելու մասին: Այդ մամուլը ճգտում է բենգալական մոմի տակ խոռվություն բարձրացնող հայերին ներկայացնել որպես բոլոր անգթությունների նախաձեռնող ու մեղավոր»*[532]:

*Տվյալ դեպքում՝ կար նաև օբյեկտիվ բնույթի պատճառ: Չնայած առկա էր Սասունի կոտորածի իրողությունը, այնուամենայնիվ, երբ 1895թ. վերջերին արևմտյան մամուլում լուրեր երևացին Հայաստանում կատարված կոտորածների մասին, կրկին դրանց կասկածանքով վերաբերվեցին, մանավանդ՝ կոտորվածների թվին և ջարդերին թուրքական կառավարության ու բանակի մասնակցությանը: Պարզապես անհնար էր հավատալ, որ թուրքական պետական կառույցն իր առջև խնդիր էր դրել բնաջնջելու մի ամբողջ ժողովրդի: Սակայն չուտով հրապարակվեցին նյութեր ու փաստաթղթեր, որոնք վերացրեցին այդ կասկածները: Մասնավորապես, մեծ դեր խաղաց տերությունների Կ. Պոլսի դեսպանների համատեղ կազմած աղյուսակը, որը 1896թ. փետրվարին ներկայացվեց Բ. Դռանը*[533]: *Արտասահմանում ստեղծվեցին հայկական ջարդերից տուժածներին օգնության կազմակերպություններ ու կոմիտեներ, կազմակերպվեցին հանրահավաքներ, տեղի ունեցան խորհրդարանային բանավեճեր, աղմկոտ քայլարշավներ: Այնուամենայնիվ, այդ ամենը ի վիճակի չեղավ հասարակությանը ճիշտ պատկերացում տալու հայկական ողբերգության իսկական բնույթի ու պատճառի, իրական ծավալների վերաբերյալ:*

*Փոքր դեր չխաղաց նաև Անգլիայի քաղաքականության հանդեպ անվստահությունը, Հեռավորարևելյան ճգնաժամը, միջազգային լարված հարաբերությունները, կոտրածների վայրերի հեռու լինելը, Արևելյան հարցի «ստվերն առաջ բերելու» տագնապը, թուրքական դիվանագիտության վարպետ մարտավարությունը, որը սկզբում ժխտեց հանրահայտ փաստերը, ապա «հասարակական կարծիքի առջև արդարացավ՝ սևը դարձնելով սպիտակ և, ընդհակառակը...»*[534]:

---

[529] ԳԱԹ, ֆ. Աոաքելյան Հ., գ. 567:
[530] Лазарев Я., նշվ. աշխ., էջ 40:
[531] *Օտար հեղինակները ...*, էջ 12-13:
[532] *Братская помощь...*, стр. 134.
[533] *Martyrologe Arménien par Charmetant.*
[534] *Братская помощь...*, стр. а-б.

Այս ամենից հետո էլ ամենատարբեր եղանակներով տարածվում էր այն մտայնությունը, թե բարենորոգումների իրականացումը մահմեդականներին ոտի կհանի քրիստոնյաների դեմ: Շահարկվում էր Մուշում և Բիթլիսում ստեղծված հակաքրիստոնեական կազմակերպության սպառնալիքը, թե հայերին կկոտորեն, եթե «Բ. Դուռն ընդունի պետությունների առաջարկած բարենորոգումների ծրագիրը»[535]:

Ռուսաստանը և հայկական կոտորածները.— Ռուս գիտնական Ի. Դյակոնովը գրում է, որ ցարական դիվանագիտությունը և անձամբ Նիկոլայ 2-րդը, Օսմանյան կայսրության անկումը հետաձգելու դիտավորությամբ, անտարբեր էին վերաբերվում Թուրքիայի հայ ազգաբնակչության նկատմամբ սուլթանական իշխանությունների և տեղական մոլեռանդների գազանային հաշվեհարդարին:

Օսմանյան կայսրության հանդեպ ցարական կառավարության քաղաքականության հիմնախնդիրներն ամենայն որոշակիությամբ շարադրված են Նելիդովի 1892թ. հոկտեմբերի 22-ի տեղեկագրում: Նշելով եվրոպական երկրների տնտեսական ավելի ու ավելի մեծ ընդգրկումների ձեռքբերումը Թուրքիայում՝ նա գրում է՝ տնտեսական ներխուժումը մեծացնում է նաև քաղաքական ազդեցությունը: Եվ «երկրում հանդարտության ու անվտանգության պահպանման պատրվակով ուժեղացնում են իրենց ազդեցությունը... Կայսրության գործերին եվրոպական պետությունների միջամտությունն արդարացվում է սուլթանի քրիստոնյա հպատակներին մահմեդական մոլեռանդությունից պաշտպանելու անհրաժեշտությամբ...»: Անգլիայի Միջերկրական ծովի նավատորմիղը ավելի հաճախակի է երևում Դարդանելի շրջանում: «Լրիվ հիմքեր կան կարծելու..., որ Լոնդոնը պատրվակ է փնտրում, որպեսզի... հանկարծակի ներխուժումը Դարդանել տեղի ունենա Կ. Պոլսի դիմաց» ու մեզ վերջնականապես փակի Սև ծովում և այդպիսով նախապատրաստի Արևելյան հարցի մեր չահերին չհամապատասխանող... լուծում»: Դա Ռուսաստանի համար կործանարար իրողություն կլիներ, ինչը վերջինին կհարկադրեր «հրաժարվել համաշխարհային խոշոր խնդիրներից»: Կ. Պոլսում հեղաշրջումը «թշնամիներին անկասկած կտա վայելուչ պատրվակ իրենց մտադրությունները գործադրելու»: Օսմանյան մայրաքաղաքում խառնակչությունների առաջացման դեպքում «մենք պետք է այնտեղ ներկայանանք՝ կարգուկանոնը և իշխանությունը վերականգնելու առաքելությամբ, միաժամանակ, մեր նավատորմը պետք է մտնի Նեղուցները՝ միշտ թուրքերի աչքում երևալով որպես նրանց անկախության հովանավոր»: Պետք է թուրքերի օգնությամբ Անգլիայի առաջ փակել Նեղուցները: «Բոսֆորի մուտքին տիրանալով՝ Ռուսաստանը կկատարի իր պատմական խնդիրներից ամենամեծը, որ նրան հնարավորություն կտա... դառնալու Բալկանյան թերակղզու լիակատար տերը և այլևս չի տագնապի ո՛չ Սև ծովի ափերի և ո՛չ էլ Կովկասի համար»:

Սասունի կոտորածն առաջացրեց առաջավոր մարդկության ցասումը: Ահա այդ զայրույթը հարմար ծխածածկույթ էր՝ հայկական կոտորածների համար Օսմանյան կայսրությանը պատժելու պատրվակով աշխարհատարածքային խնդիրներ լուծելու:

Սայիդի մի հեռագրում հետևյալ պարբերության կողքին՝ «Հակառակ Շիշկինի (Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարության վարչության պետ) խոստումներին, ռուսական մամուլը շարունակում է տեղ տալ օսմանյան կառավարությանը թշնամաբար տրամադրված հոդվածներին», Նիկոլայ 2-րդը մակագրեց. «Մեր թերթերը պարզապես արտատպում են արտասահմանյան լուրերը»: 1899թ. նոյեմբերի 29-ին ցարը Նելիդովի այն առաջարկին, թե անհրաժեշտ է սկսել Սասունի կոտորածների հետաքննություն, պատասխանեց. «Մինչև Բիթլիսի իրադարձություններին հյուպատոսների մասնակցության մասին վերջնական կարծիք հայտնելը՝ սպասելու ենք մեր հարցմանը ֆրանսիական կառավարության պատասխանին: Մեզ թվում է՝ հյուպատոսների ինչ-որ ձևով մասնակցությունն անխուսափելի է, քանի որ նման ցանկություն արտահայտել է սուլթանը: Սա-

[535] «Մշակ», 1895, թիվ 102:

*կայն նրանց իրավասությունները պետք է ճշտորեն մշակվեն անպայման Անգլիայի հետ միասին, որպեսզի նա հանկարծ չհայտնվի ավելի չահեկան վիճակում»:*[536]

*Նոյեմբերի 29-ին Փարիզից ստացվեց հեռագիր. «Ֆրանսիական կառավարությունը սուլթանի առաջարկությանը չի առարկում: Ինչ վերաբերում է հյուպատոսների անելիքների բնույթին ու չրջանակներին, ապա համաձայնության պետք է գան տերությունները Կ. Պոլսի ներկայացուցիչները»*[537]*:*

*Իսկ իրականում ի՞նչ էր կատարվել:*

*1894թ. նոյեմբերին Կ. Պոլսում Անգլիական դեսպանությունը բանակցություններ սկսեց մյուս տերությունների ներկայացուցիչների հետ՝ միասին ներգործելու Բ. Դռան վրա և ձեռք բերելու նրա համաձայնությունը՝ Սասուն ուղարկելու միջազգային հանձնաժողով, որին թուրքերը չպետք է մասնակցեին: Աբդուլ Համիդը վճռականապես մերժեց՝ գտնելով, որ Սասունի դեպքերը պետք է հետաքններ թուրքական հանձնաժողովը, որի աշխատանքին կարող էր մասնակցել նաև Անգլիական հյուպատոսներից մեկը: Անգլիայի ակտիվությունն անհանգստացրեց Ռուսաստանին և Ֆրանսիային: Մասնավորապես, Ռուսաստանը գտնում էր, որ Անգլիան միայնակ զբաղվելով հայերի խնդիրներով, ճարպկորեն իրեն ներկայացնելու էր ճնշվածների դատի պաշտպան և այդ ժողովրդին օգտագործելու էր իր չահադիտական նպատակների համար: Ցարը չէր կարող թույլ տալ, որ սահմանակից Արևմտյան Հայաստանի հարցը լուծվեր առանց իրեն:*

*Լամսդորֆը հուշագրում է. «Հայկական հուզումներին ավելացել էին խոշոր անկարգությունները մայրաքաղաքում և Տրապիզոնում»: Նելիդովը կանխատեսում էր սուլթանի անկում, «մահմեդական մոլեռանդության պայթյուն և այլն, իսկ վերջնական արդյունքում՝ կարգը վերականգնելու պատրվակով անգլիացիների ներխուժում: Անգլիական նավատորմում, Նեղուցների մուտքի մոտ ու Լեմնոս կղզու մերձակայքում հաշվվում էր 17 մարտական նավ: Ռուսական գլխավոր չտաբը գտնում էր, որ Ռուսաստանը հնարավորություն ունի դրանց հակադրելու միայն երկու զրահապատ:*

*1895թ. հոկտեմբերին Լոբանովը Բեռլինում Վիլհելմ 2-րդին ասաց. «Ինձ թվում է, որ Հայկական հարցը կարգավորվելու վրա է... (Սակայն) Լորդ Սոլսբերիի վարմունքը շատ առեղծվածային է, և լորդ Դեֆերինի բերնից թռած մի քանի բառը հարկադրում է զգուշանալ, թե արդյո՞ք Անգլիան մտադրություն չունի տիրանալու Դարդանելին»: «Այդ դեպքում,– հարցրեց Վիլհելմը,– դուք ինչո՞ւ չպետք է վերցնեք Կ. Պոլիսը: Իմ կողմից որևէ առարկություն չի լինի»: Ես պատասխանեցի, որ Կ. Պոլսի գրավումը մեզ չի փոխհատուցի այն լուրջ անհարմարությունները, որոնք կառաջանան Դարդանելում անգլիացիների ամրանալու հետևանքով: Ռուսաստանի հարավի ամբողջ առևտուրը կախման մեջ կընկնի Անգլիայից: «Դա ճիշտ է,– հայտարարեց կայզերը,– սակայն, եթե անգլիացիները սկսեն իրականացնել իրենց նախագիծը, ապա Բեռլինի դաշնագրի նման խախտումը անարժագանք չի մնա: Ես հիանալի հասկանում եմ Ռուսաստանի մեծ չահերը Արևելքում և միշտ պատրաստ եմ աջակցել»*[538]*:*

*Կ. Պոլսից Նելիդովը չարունակում էր ահազանգ հնչեցնել, թե վիճակը ծանր է, սուլթանի իշխանությունը՝ վտանգված, օրեցօր աճում է քաոսի հնարավորությունը: Սուլթանի ծանր վիճակի մասին լուրերի աղբյուրը նույնպես Ելդըզն էր: Դա էլ եղանակներից մեկն էր ժամանակ չահելու հարձակողական գործողությունների անցնելու համար: Բայց ո՞ւմ դեմ: Տերությունների՞: Ոչ: Աբդուլ Համիդը ձգտում էր հայերի արյան մեջ խեղդել բարենորոգումների ծրագիրը: Նա չուտով հարձակման հրաման տվեց. սկսվեց մարդասրան ու արյան խրախճանքը: Սարսռում ես տերությունների դեկավարների բարոյազուրկ դիրքորոշումից, նրանց այլասերվածությունից ու մանրախնդիր եսասիրությունից: Նրանցից կոտորածը դատապարտող խոսքի սպասելն իզուր էր: Աչխարհի ու-*

---

[536] Ламсдорф В.Н., *նշվ. աշխ.*, էջ 92:
[537] Ламсдорф В.Н., *նշվ. աշխ.*, էջ 93:
[538] *Նույն տեղում*, էջ 251-252:

ժեղներին դա չէր հետաքրքրում: Արևմուտքին գործողությունների մղողը մեկն էր՝ ցանկացած միջոցով, բարոյական թե անբարո, ստանալ առավելագույնը:

1895թ. հոկտեմբերի 28-ին Լոբանովը ցարին խորհուրդ է տալիս. «Եթե այսպես կոչված «աղետը» սահմանափակվի ներկա սուլթանի տապալմամբ և նոր սուլթանի հռչակմամբ, ապա օտար տերությունները պետք է ձեռնպահ մնան ամեն մի միջամտությունից այդ գուտ ներքին խնդրին, իսկ եթե այն նաև վտանգ սպառնա քրիստոնյաներին, հատկապես արտասահմանյան հպատակներին, ապա անհրաժեշտ է անմիջապես քննարկել, թե ինչ հնարավոր միջոցներ պետք է ձեռնարկվեն նրանց անվտանգության համար»: Ցարը այս առաջարկությանը վրա մակագրում է. «Շատ չնորհակալ եմ խորհրդի համար: Գերմանական կայզերին ես այդպես էլ պատասխանել եմ»[539]: Այստեղ խոսվում է պայմանական եղանակով՝ եթե: Ի՞նչ եթե, երբ հենց այդ օրերին ամբողջ Արևմտյան Հայաստանում կոտորածներն իրենց բարձրակետում էին: Հոկտեմբերի 30-ին Լոբանովը հեռագրում է Նելիդովին. «Կամբոնի հաղորդած տվյալներով՝ Ֆրանսիայի կառավարությունը հրամայել է Միջերկրածովյան նավախմբի դիվիզիոններից մեկին պատրաստ լինել ցանկացած պահին լողալու դեպի Մերձավոր Արևելք: Անգլիայի և Իտալիայի կառավարությունները ևս, հավանաբար, ձեռնարկում են նման միջոցներ: Սակայն Փարիզում չեն կարողանում որոշել, թե իրականում որն է Սոլսբերիի հետապնդած նպատակը»[540]: Փարիզում Ռուսաստանի դեսպան Մորենհեյմը նոյեմբերի 9-ին հայտնում է. «Անգլիայի ռազմական նավերի թիվը կարծես 18 է: Ինչպես սպասվում է, չուտով նրանց կհետևեն իտալական նավերը: Ինչ էլ պատահի, Ֆրանսիական կառավարությունն առանց մեզ ոչ մի քայլի չի դիմի... Կառավարության ուշադրությունն այժմ հառած է Տանժերին: Այստեղ զգուշանում են, որ լուրջ բարդությունների դեպքում հանկարծակի հարված չհասցվի Արևելյան հարցը վերացնելու նպատակով, որը, ինչպես գտնում են, հանդիսանում է Սոլսբերիի իսկական և վերջնական նպատակը»[541]: Լոբանովը պատասխանում է. «...Ստեղծված իրավիճակում դժվար է հավատալ, որ նա (Սոլսբերին) ի վիճակի լինի մտածելու Արևելյան հարցի վերացման մասին: Իրադրությունը Աֆրիկայում զգալիորեն բարդացրել է հարաբերությունները Գերմանիայի հետ, որը նույնպես ոչ մի հակում չի դրսևորի աջակցելու Անգլիայի մտադրություններին: Քիչ հավանական է նաև այն, որ Բեռլինի յուցումներին միշտ հնազանդ Ավստրո-Հունգարիան իր այդ կեցվածքից հրաժարվի: Այսպիսով, Անգլիան աջակցություն կարող է ստանալ միայն Իտալիայից, բայց այդ աջակցությունը չի կարող բավարար լինել, որպեսզի Լոնդոնն իրեն թույլ տա դիմակայելու Եվրոպայի մնացած բոլոր երկրներին»[542]:

Սակայն մի քանի օր անց Լոբանովը հարկադրված եղավ ցարի հետ համաձայնեցնելով, Մորենհեյմին հեռագրել. «Իտալիայի ռազմածովային ուժերի դիվիզիոնի մեկնելը Մերձավոր Արևելք, անգլիական ուժերին միանալու համար, հավանաբար, վկայում է սուլթանի դեմ հարկադրական միջոցների դիմելու Անգլիայի մտադրության մասին: Մենք միշտ դրան բացասաբար ենք վերաբերվել: Մանավանդ այժմ, երբ սուլթանը ծրագրի բոլոր կետերում զիջումներ է կատարել և սկսել է իրականացնել իրենից պահանջվող բարենորոգումները, նման միջոցները ոչ միայն անտեղի են, այլև վտանգավոր, որովհետև դրանց անխուսափելի և անմիջական հետևանքը լինելու են Փոքր Ասիայում խաղաղությունը վերականգնելու դեմ խոչընդոտները: Քանի որ մինչ այժմ կ. Պոլսում միշտ գործել ենք Անգլիայի հետ համաձայնեցված, գտնում ենք, որ իրավունք ունենք և նույնիսկ պարտավոր ենք նրանից պահանջել բարեկամական բացատրություն իր մտադրությունների մասին»[543]:

---

[539] Ламсдорф В.Н., նշվ. աշխ., էջ 290-291:
[540] Ламсдорф В.Н., նշվ. աշխ., էջ 293:
[541] Նույն տեղում:
[542] Նույն տեղում, էջ 293-294:
[543] Նույն տեղում, էջ 298:

Իսկ Օսմանյան Թուրքիայի ամբողջ տարածքով, այդ թվում նաև Կ. Պոլսում, խորհրդավոր նման չարունակում էին անցնել հայկական կոտորածի ալիքները:

Գոլուխովսկին նոյեմբերի 2-ին չրջաբերական-հեռագիր է ուղարկում տերությունների կառավարություններին՝ Բոսֆորում կազմակերպել ռազմածովային ուժերի միացյալ ցույց՝ հարկադրելու սուլթանին վերջ դնելու խժդժություններին և անցկացնելու բարենորոգումները: Դրան ի պատասխան, Լոբանով-Ռոստովսկին ցարի համաձայնությամբ Վիեննայում Ռուսական դեսպան Կապնիստի միջոցով ուղարկում է հետևյալ հեռագիրը: Գոլուխովսկու առաջարկությունը «մենք դիտում ենք որպես գոյություն ունեցող պայմանագրերի լուրջ խախտում և վտանգավոր նախադեպ, ինչը, իրավիճակը նկատի ունենալով, չի արդարացվում: Եթե նույնիսկ դրությունն այնպես փոխվի, որ անհրաժեշտ համարվի Կ. Պոլիս բերելու մարտական նավեր, ապա այդ միջոցառման մասին լուրն ավելի կգրգռի խուժանին, և նավերը քաղաքի պարիսպներին դեռ չմոտեցած, անկարգությունների հետևանքով բազմաթիվ զոհեր են լինելու: Բացի այդ, կարգուկանոնը լուրջ վտանգի տակ է ոչ թե Կ. Պոլսում, այլ ասիական նահանգներում»[544]:

Նոյեմբերի 11-ին Լոբանովը ցարին գրում է. «Երեկ Թուրքական դեսպանն ինձ հայտնեց, որ ինքը սուլթանից հանձնարարություն է ստացել խնդրելու Ձերդ կայսերական մեծությանը իրեն անձնական ծառայություն մատուցել և հրաժարվել Բոսֆոր երկրորդ պահակային նավատորմ ուղարկելուց, քանի որ սպառնալիքի նշանակություն ունեցող նման միջոցառումը Կ. Պոլսի բնակչության չրջանում կարող է առաջացնել անհանգստություն և անկարգություններ: Հուսնի փաշային ես պատասխանեցի..., որ ամենայն հավանականությամբ Ձերդ մեծությունը հնարավոր չի համարի կատարել սուլթանի խնդրանքը, քանի որ խնդրո առարկա միջոցառումները տերությունների կողմից որոշվել են միաձայն ոչ թե ահաբեկման, այլ խռովությունների դեպքում օտար հպատակների անվտանգությունը պաշտպանելու նպատակով»[545]: Ցարը մակագրեց. «Ես հաճույքով կկատարեի սուլթանի խնդրանքը, բայց արդեն ուշ է. չի կարելի հրաժարվել մեր սեփական առաջարկներից: Համենայն դեպս, նա կարող է նկատի ունենալ իմ անկեղծ բարեկամությունը»[546]:

Թուրքական դեսպանի հետ նոր հանդիպումից հետո Լոբանովը ցարին գրեց. «...Հուսնի փաշան ինձ ներկայացրեց նոր հեռագիր... Նրանում ասված է, որ Կ.Պոլսում անդորրությունը վերականգնված է, որ ոչ մի օտարահպատակ նախկին անկարգություններից չի տուժել և, որ ներկա պահին երկրորդ պահակային նավերի գալը, որը ժողովրդի կողմից դիտվելու է որպես ի նպաստ հայերի ցույց, միայն կարող է դժվարացնել Թուրքական կառավարության ջանքերը հանդարտությունը պաշտպանելու, դրա համար էլ Բ. Դուռը խնդրում է բոլոր տերություններին, եթե ամբողջությամբ չեն հրաժարվում իրենց պլանավորած միջոցներից, ապա գոնե դրանք հետաձգեն անորոշ ժամանակով»: Ցարը մակագրում է. «Ինձ թվում է, անհրաժեշտ է փորձել համոզել տերություններին առայժմ չուղարկել 2-րդ պահակային նավերը, դա բացատրելով Թուրքական դեսպանի ճիշտ փաստարկներով»[547]:

Նոյեմբերի 24-ին Նելիդովը Լոբանովին գրեց. «Երեկ արտաքին գործերի նախարարը եկավ արտահայտելու սուլթանի շնորհակալությունը բարեկամական հավաստիացումների համար, որ ցարի անունից դուք տվել եք Թուրքական դեսպանին: Սակայն սուլթանը բոլոր հնարավորություններն օգտագործում է, որպեսզի առանց որևէ լուրջ պատճառի կանխի կամ հետաձգի պահակային նավերի գալը, երբ նշված միջոցառումը, նրա չուրջը բարձրացած աղմուկից հետո և սուլթանի երկմտության պատճառով, ավելի քան երբևէ

---

[544] Նույն տեղում, էջ 300.
[545] Նույն տեղում, էջ 309-310:
[546] Նույն տեղում, էջ 310:
[547] Ламсдорф В.Н., նշվ. աշխ, էջ 311:

դառնում է անհրաժեշտ՝ ինչպես մեր անվտանգության, այնպես էլ ավելի լուրջ բարդություններ կանխելու առումով»[548]:

Նույն օրը ցերեկը Նելիդովից ստացվում է երկրորդ հեռագիրը, թե դեսպանների խորհրդակցությունը նպատակահարմար չհամարեց հրաժարվել երկրորդ պահակային նավեր ուղարկելու ծրագրից: Այդ հեռագրի վրա ցարը մակագրեց. «Ափսոս»[549]:

Մոնտեբելլոն Լոբանովին ասում է. «Ֆրանսիայում համոզված են, որ լորդ Սոլսբերին մտադիր է Թուրքիայում վիճակը ծայրահեղության հասցնել, որպեսզի ճեռք գցի Եգիպտոսը և կ. Պոլսում հաստատի երկու պետությունների գերիշխանություն, որը միանգամայն անթույլատրելի է...»[550]: Իսկ Հանոթոն գրում է. «Զգուշացեք ռազմածովային ցույցից: Քանի որ այդ առումով ուժեղ չենք, պետք է ճեռնպահ մնալ իրենց առավելությունները ցուցադրելու համար ուրիշներին առիթ տալուց»[551]: Լոբանովը Հանոթոյի հետ համաձայն էր. «Ինչպե՞ս կարելի է ցույցի մասին մտածել, երբ անգլիացիները Թուրքական ջրերում ունեն 30 ռազմանավ»: Նոյեմբերի 21-ին նա գրում է. «...Լորդ Սոլսբերին կողմնորոշված է միայն այն ուղղությամբ, որպեսզի առաջ բերի Օսմանյան կայսրության անկումը... Իրադարձությունների նման վախճանը Անգլիայի համար կապահովի Եգիպտոսի անմիջական բռնակցում, քանի որ իրերի ընթացքով այդ երկիրը կդադարի Թուրքական նահանգ լինելուց՝ հենց որ Թուրքիան դադարի գոյություն ունենալուց...»[552]: Անգլիայի ծրագրերն «ուղղված են Ռուսաստանի կենսական շահերի դեմ և դրա համար էլ անխուսափելիորեն կհանգեցնեն այնպիսի բախման, որի լրջության մասին Ձեզ ասելու հարկ չկա»[553]:

«Կ. Պոլսից ստացվող լուրերը գնալով անհանգստացնող են դառնում,— գրում է Լամադորֆը նոյեմբերի 23-ին:— Երեկ ուղարկած տեղեկագրում Նելիդովը հայտնում է, որ նախկին մեծ վեզիր Սայիդ փաշան թաքնվել է Անգլիական դեսպանատունը, հայտարարելով, թե իր կյանքին վտանգ է սպառնում: Սա կարող է ունենալ լուրջ հետևանքներ, քանի որ Սայիդ փաշայի անձը վերջին ժամանակներս Թուրքիայում շատ հանրաճանաչ է դարձել»[554]: Բանը հետևյալն է: 1895թ. նոյեմբերին Աբդուլ Համիդը որոշեց անգլիական կողմնորոշում ունեցող քաղաքական գործիչ Սայիդին նշանակել մեծ վեզիր, բայց վերջինս հրաժարվեց, պատճառաբանելով, թե սուլթանի անսահմանափակ իշխանության պայմաններում երկիրը կառավարել հնարավոր չէ: Այդ լսելով՝ սուլթանը, բոլորի համար անսպասելի, նրան նշանակեց խորհրդական և հրամայեց բնակվել Ելդըզում: Վախենալով սուլթանական այդ «չնորհից», Սայիդը փախավ Անգլիական դեսպանատուն և այնտեղից դուրս եկավ միայն այն ժամանակ, երբ սուլթանը Անգլիայի դեսպան Քըրրիին խոստացավ Սայիդին հանգիստ թողնել:

Նոյեմբերի 16-ին Նելիդովը ցարին գրում է, որ սուլթանի վիճակը ողբալի է, նա գլուխը լրիվ կորցրել է և իր ամենավստահելի պալատականներից մեկի ներկայությամբ բազմիցս բացականչել է. «Ես հիմար էի, որ գժտվեցի անգլիացիների հետ, դրանից են իմ բոլոր դժբախտությունները»:

Դեսպանի թիվ 192 տեղեկագրի վրա, որը նվիրված էր անգլո-հայկական հեղափոխական կոմիտեների «մեքենայություններին», ցարը գրեց. «Արդյո՞ք միջոց չկա Թուրքական մարզերում անգլո-հայկական զզվելի կոմիտեների բանսարկություններին ընդդիմանալու համար»: Իսկ հաջորդ՝ №193 հաղորդագրության վրա, որով Նելիդովն առաջարկում է Փոքր Ասիայում անկարգությունների «դժբախտ զոհերին կարմիր խաչ միջազգային ընկերության նախաձեռնությամբ նպաստ ուղարկել», ցարը նշում կատարեց.

---

[548] Նույն տեղում, էջ 312:
[549] Նույն տեղում, էջ 313:
[550] Նույն տեղում, էջ 322:
[551] Նույն տեղում:
[552] Նույն տեղում, էջ 323:
[553] Նույն տեղում, էջ 326:
[554] Նույն տեղում, էջ 328:

«Հիմար միտք չէ»: Նույնիսկ ցարի այդ նշումից հետո էլ, Լոբանովը մակագրեց. «Թողնել անհետևանք»:

Նոյեմբերի 24-ին Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության քարտուղարից Պետերբուրգում ստացվեց հետևյալ հեռագիրը. «Պահականավեր ուղարկելու հարցում տերությունների միասնությունը խախտվեց, և դրանով խարխլվեց նաև նրանց հայտարարությունների հեղինակությունը ոչ թե գերմանական, այլ Ռուսական դեսպանի վարմունքի պատճառով, որը վերջերս հայտարարեց, թե ինքը որևէ հրահանգ չի ստացել: Մինչդեռ երկրորդ պահականավեր ուղարկելու նախնական նախաձեռնությունն իրենը՝ Նելիդովինն էր: Հենց որ ստացվեն ռուսական հրահանգները, և դրանց բովանդակությանը համապատասխան՝ տերությունների միջև վերականգնվի միասնությունը, սուլթանը կզիջի»[555]:

Լոբանովի հետ զրույցից հետո Հունին իր կառավարությանը գրեց. «Ռուսաստանն ամենևին չի ցանկանում Կ. Պոլիս երկրորդ պահականավ ուղարկել, սակայն եթե մի այլ տերություն դրա վրա պնդի, ապա Ռուսաստանը կմիանա»[556]:

Նոյեմբերի 26-ին Նելիդովը հեռագրեց Պետերբուրգ. «...Սուլթանն ինձ խնդրեց անկեղծ չնորհակալություններ հաղորդել կայսրին բարեկամական դեմարշի համար, որի բարիկամեցողական բնույթը բարձր է գնահատում... Նա խոստացավ վաղը երեկոյան պատասխան տալ պահականավերի հարցի վերաբերյալ... Իմ տպավորությունն այն է, որ ընդդիմությունը սուլթանին հարկադրել է երերալ»[557]: Երկու օր անց Նելիդովը հաղորդեց, որ սուլթանն համաձայնություն տվել է: Լամսդորֆը այս առիթով նկատում է. «Ելդըզ Քեոշքում «խոստանալը» և «խոստացածը կատարելը» միշտ չէ, որ նույն բանն է նշանակում»:

Այդ օրերին Սերգեյ Տատիշչևը (ռուս դիվանագետ և պատմաբան) "Русский вестник"-ում գրեց, որ «Օսմանյան կայսրության անկումն անխուսափելի է, ամենաշատը, ինչ մենք կարող ենք անել, դա նրա կործանումը մի փոքր հետաձգելն է: Սրանից հետևում է, որ մենք պետք է պատրաստ լինենք գործելու, այլ ոչ թե թշնամու հետ պայմանավորվելու: Մենք չենք կարող նորից բաց թողնել Կ. Պոլսին տիրանալու առիթը, ինչպես այդ արեցինք 1877-78 թթ.: Եթե մտնենք, այնտեղ, ապա հարկ է այնպես անել, որ այլևս երբեք չհեռանանք»[558]:

Տվյալ ժամանակահատվածում Անգլիան ձեռնպահ չէր սուլթանի դեմ Ռուսաստանի հետ համատեղ գործելու հարցում և, իրադարձությունների հարկադրանքով, գուցե և միասին իրականացնելին Օսմանյան կայսրության բաժանումը: Սակայն ցարական կառավարությունն ընդառաջ չգնաց, քանի որ ձգտում էր օգնել սուլթանին պահպանելու կայսրության ամբողջականությունը:

1895թ. նոյեմբերի 21-ին Լամսդորֆը գրում է. «Լոբանովը այսօր ցարին հանձնեց Թուրքիայից ստացված մի նամակ, որում «թագաժառանգ Յուսուֆ Իզզեդինը՝ սուլթան Աբդուլ Ազիզի որդին, պատմում է հետաքրքիր բաներ: Թագաժառանգը Աբդուլ Համիդին համարում է հոգեկան հիվանդ և կարծում է, որ ոչ հեռու ապագայում նրա գահազրկվելն անխուսափելի է: Իր հոր՝ սուլթան Աբդուլ Ազիզի մահը վերագրելով անգլիացիներին՝ թագաժառանգն ուզում է հնարավորություն ունենալ նրանցից վրեժ լուծելու: Քանի որ կառավարող ընտանիքի այն ճյուղը, որին պատկանում է ներկայիս սուլթանը, լրիվ այլասերվել, նեխել ու ցնդել է, երիտասարդ թագաժառանգը համոզված է, որ թուրքերը դրական կվերաբերվեն, եթե գահ բարձրանա Աբդուլ Ազիզի ժառանգներից մեկը: Նա ուզում է ստանալ ցարի աջակցությունը: ...Այս փաստը լրացուցիչ նշան է՝ Կ. Պոլսում ներկայումս թագավորող քաոսային տարընթացության: Համակված խուճա-

---

[555] Ламсдорф В.Н., նշվ. աշխ, էջ 330:
[556] Նույն տեղում, էջ 331:
[557] Նույն տեղում, էջ 332:
[558] Նույն տեղում, էջ 326-327:

պահար սարսափով՝ սուլթանն իր ընտանիքի բոլոր անդամներին հավաքել է Ելդըզ-Քեոշքում: Լսելով, որ իր որդուն ևս կարգադրված է բնակվել սուլթանի նստավայրում, Աբդուլ Ազիզի այրին վախից մեռել է»[559]:

Ռուսաստանի գլխավոր չտաբի գործակալ գնդապետ Պեչկովը Կ. Պոլսից գրում է. «Գտնում եմ, որ ներկա վիճակը չի կարող առաջ չբերել տերությունների միջամտությունը: Իսկ դրա համար Սևծովյան նավատորմի և Օդեսայի զինվորական օկրուգի մարտական պատրաստությունն անհրաժեշտ է»[560]:

Երեք օր անց՝ 1896թ. օգոստոսի 19-ին, նա գրում է. «Այստեղ կա մոտ 17 հազար հետևակ և 1800 հեծելազոր: Նրանց կեսը կազմում են Ելդըզի պահապանները, մյուսները ցրված են տարբեր վայրերում: Բոսֆորի ամրություններից հանված է կայազորի կեսը: Թուրքական նավատորմը մարտի մեջ մտնել չի կարող... Նոր անխուսափելի անկարգությունների ժամանակ Նեղուցների հարցի լուծումը Ռուսաստանի համար նպաստավոր կլինի: Մեր նավատորմի ու դեսանտի երևալը ուրախությամբ կողջունի ոչ միայն քրիստոնյա, այլև թուրք ազգաբնակչությունը»[561]:

1896թ. օգոստոսի 20-ին Սոլսբերին Պետերբուրգում Անգլիայի դեսպան Ն. Օ'Քոնըրին գրում է, որ Գոլուխովսկին ու Լոբանովը հանդիպման ժամանակ «հանգել են եզրակացության, որ եթե թուրքիային ազատեն արտասահմանյան միջամտությունից, կարող է դեռ երկար գոյություն ունենալ: Դրա համար էլ որոշեցին, թե պետք է ամեն ինչ արվի "Status quo"-ն պահպանելու համար: Գոլուխովսկին համոզված է, որ իշխան Լոբանովի միակ ձգտումն է՝ հնարավորին չափ տևական ժամանակ թույլ չտալ թուրքիայի բաժանումը»[562]:

Հաջորդ օրը Մորենհեյմը հայտնեց, որ «Հանոթոն կանչել է թուրքական դեսպանին ու նրա հետ շատ խիստ խոսակցություն ունեցել, հայտարարելով, թե... համբերության բաժակը լցվել է, և Ֆրանսիայի հպատակներին ու նրա հովանավորության տակ գտնվողներին վտանգի տակ դնելու ցանկացած փորձի դեպքում անմիջապես կձեռնարկվեն միջոցներ անկարգությունները կանխելու կամ ճնշելու, հարկ եղած դեպքում՝ անկախ մյուս տերությունների կարծիքից, ռմբակոծելու Կ. Պոլիսը և բնաջնջելու քաղաքի թուրքական թաղամասերը: Հանոթոն հիշեցրել է թուրքիայի պատասխանատվության մասին և ասել, քանի որ Հայաստանում բարենորոգումներ դեռևս անցկացված չեն, Բ. Դուռը դրանով իր վրա է վերցրել այնտեղ ու այլ շրջաններում թափված արյան ամբողջ պատասխանատվությունը: Կ. Պոլսի անկարգությունները ակնհայտորեն վկայում են թուրքական կայսրությունում տիրող անիշխանության մասին: Երբ սպառնում է վերջնական փլուզումը, այլևս աչք փակել չի կարելի: Հետևաբար, եթե ամենամոտ ժամանակներում չձեռնարկվեն եռանդուն և հստակ գործողություններ՝ Կ. Պոլսում անկարգությունները կանխելու, զինվորական իշխանություններին նահանգապետի հեղինակությանը ենթարկելու միջոցով խաղաղություն հաստատելու, ինչպես նաև չձեռնարկվեն արդյունավետ միջոցներ խոստացված բարենորոգումները Հայաստանում անցկացնելու համար, ապա ինքը՝ Հանոթոն, կհանձնարարի սուլթանի ներկայացուցչին հաղորդելու իր տիրակալին, որ Ֆրանսիան իրեն լիակատար ազատ է համարում թուրքական կայսրության նկատմամբ իրականացնելու ցանկացած գործողություն»[563]:

Օգոստոսի 29-ին Մորենհեյմը գրեց. «Ինչպես ասաց Քըրրին..., ցանկալի կլիներ, եթե տերությունները, հատկապես Ֆրանսիան և Ռուսաստանը, միանային Անգլիային՝ սուլթանի վրա ռազմածովային ճնշում գործադրելու, որպեսզի նա մեծ վեզիր նշանակեր իրենց ընտրությամբ... Սուլթանի փաստացի գահընկեցության քողարկման նման եղա-

---

559 Նույն տեղում:
560 Նույն տեղում, էջ 390:
561 Ламсдорф В.Н., նշվ. աշխ., էջ 339:
562 Նույն տեղում, էջ 391:
563 Նույն տեղում, էջ 391-392.

նակը, Հանոթոյի կարծիքով, բացահայտում է նախապես մտածված և խնամքով նախապատրաստված պլանը, որը խնդիր ուներ սկսելու Օսմանյան կայսրության չենքի խորտակման գործընթացը»[564]:

1896թ. սեպտեմբերի 6-ին Լամսդորֆը գրում է Նելիդովին. «...Մենք նորից հանգեցինք համաձայնության. ինչ գնով էլ լինի՝ աջակցել Օսմանյան կայսրության փտած "Status quo"-ին՝ գտնելով, որ այն միանգամայն հնարավոր է, քանի դեռ համաձայնություն կա մեծ տերությունների միջև, և նրանցից ոչ մեկը դեռևս առանձին քայլերի չի դիմել: Դա չի խանգարում, որ անգլիական հզոր նավախումբը կանգնած մնա Դարդանելի մուտքի մոտ, իսկ Թուրքիայում թագավորող անիշխանությունը հասնի այն սահմանին, երբ անկանխատեսելի երևույթները դառնան ոչ միայն հնարավոր, այլև ավելի ու ավելի հավանական, այն էլ ոչ հեռավոր ապագայում»[565]:

Փարիզ կատարած այցելության ժամանակ Նիկոլայ 2-րդը ասել է. «Նելիդովի զեկուցագրերը ինձ վախեցնում են, վերջին նամակում (սեպտեմբերի 6-ի) նա նույնիսկ խնդրում է, որ իրեն իրավունք տրվի սեփական հայեցողությամբ կանչելու Սևծովյան նավախումբը: Ի՞նչն է պատճառը, որ նա ուզում է դառնալ նավատորմի հրամանատար»:

Դիվանագիտական այս գրագրությունները մեկ անգամ ևս հաստատում են այն ճշմարտությունը, որ Ռուսաստանի համար, հանուն սեփական չահերի՝ փոքր ժողովուրդների անգամ գոյությունը վտանգելու միջոցով, ամենաճղճիմ ձեռքբերումը դիվանագիտական նվաճում էր: «Ռուսաստանի համար,— գրում է Ն. Ադոնցը,— Հայկական հարցն այն լծակն էր, որի վրա հենվելով, նա կարող էր իր համար հարմար պահին միջամտել Թուրքիայի չուրջ մեծ տերությունների չահերի ու մրցակցության խաղին: Հետամուտ իր նպատակներին, Ռուսաստանն անընդունակ դուրս եկավ մշակելու և յուրացնելու փոքրիշատե կայուն հայեցակետ պատմության կողմից նրան վստահված հարցի վերաբերյալ, ըստ որում, այնպիսի հայեցակետ, որը զուգակցեր կայսրության չահերը հայ ժողովրդի բաղձանքների հետ»[566]:

Հայկական հարցի ռուսական ըմբռնողության և մեկնաբանության մեջ բացակայում էր ամենաէականը՝ խնդրի կարևորությ֊ան գիտակցումը: Դրա հետևանքով, վերաբերմունքը ոչ քիչ դեպքերում որոշվում էր պետության արտաքին քաղաքականությունն առաջ տանող պետական այս կամ այն գործչի ըմբռնումներով:

Իսկ եվրոպական տերությունները Հայաստանն ու Հայկական հարցը համարում էին մի ավելորդ կշռաքար ռուսական թաթի վրա: Սրանից էլ բխում էր նրանց ընդդիմությունը Հայկական հարցին: Եվրոպացիների կասկածը հայերի կողմից հետևողականորեն դրսևորվող ռուսասիրական միտումների կապակցությամբ լրիվ հիմնավոր էր: «Իբրև քաղաքական երևույթ, հայերի հակումը դեպի Ռուսաստան փաստ էր և կասկածի ենթակա չէր», ինչը հիմք է համաձայնելու Ն. Ադոնցի այն տեսակետին, թե «այդ գործոնը չի կարող կողմնորոշել Հայաստանի մշտական պտույտը ռուսական ազդեցության ուղեծրում»[567]: 20-րդ դարի պատմությունը հաստատեց, որ իսկապես Հայաստանը Ռուսաստանի ազդեցության ուղեծրի մշտական բնակիչն է, անկախ նրա քաղաքական կարգավիճակից: Վերջին հարյուրամյակի պատմությունը չի հաստատում Ադոնցի միտքը, թե Հայաստանն իր բնական կառուցվածքով չեղված է դեպի հարավ, որ այն լեռնագրական առումով դեպի հարավ թեքված տանիք է: Ինչպես էլ որ դասավորվի Հայաստանի ճակատագիրը, անկասկած է, որ, վերջին հաշվով, այն դառնալու է հարավից իրեն ընդգրկող պետական ազդեցության ոտացվածք[568]:

---

[564] Նույն տեղում, էջ 392-393:
[565] Նույն տեղում, էջ 393-394:
[566] Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 57:
[567] Նույն տեղում, էջ 57:
[568] Նույն տեղում, էջ 58:

Ա. Մանդելշտամը քանիցս հայ գործիչներին ասել է, որ հայերը ռուսների բնական դաշնակիցներն են Թուրքիայի խավարամիտ բնակչության վայրի ու անքաղաքակիրթ զանգվածի դեմ, հենց այդ պատճառով էլ հայերը Ռուսաստանի հովանավորության հիմք ու հույս ունեն և դա ոչ միայն ի շահ ռուսների[569]:

Ճակատագրի մի խաղ: Վ. Բերարի վկայությամբ՝ Ֆրանց Հովսեփը (Իոսիֆ, Յոզեֆ) «Վիեննայում փորձում էր իշխան Լոբանովի սիրտը շահել և նրան համոզել՝ միջամտելու հօգուտ հայ ժողովրդի: Իշխանը չի ժխտում, որ արյունահեղ կոտորածներ եղել են ու ավելացնում է, թե անցյալն արդեն անցյալ է, իսկ ապագան անամպ է: Սակայն Վիեննայից մեկնելիս իշխանը գնացքում հանկարծամահ է լինում, և բոլոր «չանսելերիները» պատմում են, թե այդ զարմանալի մահը վրա է հասել մի հեռագիր ընթերցելուց հետո: Հեռագիրը գուժում էր Կ. Պոլսի 1896 թվի կոտորածի մասին»[570]:

*Մեծ Բրիտանիան և հայկական կոտորածները.*— Արևմտյան Հայաստանի հանդեպ Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը մակընթացությունների ու տեղատվություններ մի անվերջություն է՝ հիմքում ունենալով աշխարհատարածքում իր ազդեցությունն ուժեղացնելու և Հնդկաստանի հետ կապող տրանսպորտային մայրուղիների վրա անառարկելի վերահսկողություն ապահովելու ռազմավարությունը: Հայկական հարցը ածանցյալ էր այդ ռազմավարությանը և ենթակա այն իրականացնելու ընթացքում մարտավարական գործողությունների բազմազանությանն ու նաև իրարամերժությանը: Անգլիայի այդ խաղերը արևմտահայության շրջանում մե՛րթ ուրախություն, մե՛րթ էլ ողբի ալիքներ էին առաջացնում: Բրիտանական "Spectator" հանդեսը 1890 թ. սեպտեմբերին գրեց, որ հայ ժողովուրդը «հուսահատության ու խուճապի մեջ է», քանի որ անկատար են մնացել բրիտանական կառավարության կողմից նրան տված հավաստիացումները: Հայկական բարեկորոգումների վերաբերյալ տերությունների խոստումները «պարզ խաբեություն են»: Դա պատահական չէր և հետևանք էր հայերի անհույս կացության: Սուլթանական կառավարությունը քրդերին զինում էր թուրք սպաների հրամանատարության ներքո, որպեսզի այդ գնդերը անհնար դարձնեին հայկական չարժումները և հայերին դուրս քշեին Հայաստանից: Ոչ միայն տեղական իշխանությունների, այլև թուրք-մահմեդական ամեն մի պաշտոնատարի պարտականություններից կարևորը Բ. Դուռը համարում էր «հայերի թվի փոքրացումը», իսկ Շևքեթը դեռ 1891 թվին էր մեծ վեզիրից հրաման ստացել՝ սկսել հայերի կոտորածներ: Բրայսը չարդերից 15 տարի առաջ կանխատեսեց, որ Արևմտյան Հայաստանում իրադարձությունները տանում էին դեպի քրդերի կողմից հայերի «արյունահեղ հաշվեհարդարի», որին կհետևեր Ռուսաստանի կողմից Հայաստանի զավթումը, ինչից այնքան խորշում էր Անգլիան: Բ. Դուռը հայերից վախենում էր, վախենում էր նրանց խելքից, խիզախությունից, չսանձահարվող ազգային ձգտումներից, ինչպես նաև ռուսական սահմանին նրանց մոտ լինելուց, սահմանից այն կողմ մեկ միլիոն հայի առկայությունից:

Ու. Ռամսեյը նկատում է, որ օտար ներխուժումները Փոքր Ասիա հաճախ էին ուղեկցվում «ընդհանուր քայքայումով», սակայն անհնար է դրանք համեմատել հայ խաղաղ բնակչության կոտորածի հետ, որ տեղի ունեցավ 19-րդ դարի 90-ական թվականներին, իսկ Ֆ. Սքիվենսոնը նշում է, թե Սասունի իրադարձությունները «ճնշումների ու բռնությունների երկար շղթայի օղակներից էին»:

1892-94 թթ., երբ թուրքական կառավարությունը արդեն ձեռնամուխ էր եղել Սասունի կոտորածներին, Գլադստոնը ղեկավարում էր անգլիական կառավարությունը, սակայն նույնիսկ փորձ չարեց սուլթանի ձեռքը բռնելու: Դեռ 1882թ. Ֆ. Էնգելսը գրել է, որ Գլադստոնի կարծիքով Անգլիայի կողմից Եգիպտոսի և Ռուսաստանի կողմից Հայաստանի գրավումը «նույնպես նշանակում էր մահմեդականների լծից քրիստոնյաների ա-

---

[569] Նույն տեղում, էջ 31:
[570] ԳԱԲ, ֆ. Վարուժան Դ., գ. 45, թ. 11:

զատագրում», այսինքն՝ Եգիպտոսին տիրանալու դիմաց Անգլիան համաձայնում էր Ռուսաստանին զիջել Արևմտյան Հայաստանը:[571] Եվ չպետք է զարմանալ, որ Ռոզբերիի կառավարությունը, Սասունի կոտորածների լուրերը ստանալով, ամեն ինչ արեց դրանք հասարակությունից թաքցնելու համար: Իսկ լուրերը գալիս ու գալիս էին և սկսեցին տեղի ունենալ հանրահավաքներ, հրապարակվել ամենատարբեր, նույնիսկ ամենաարտառոց բացատրություններ: Միտինգներից մեկում հայտարարվեց, թե մահմեդականները հայերին հալածում են ոչ թե ազգային պատկանելության, այլ մոնոգամիայի՝ մենամուսնության համար, նրանք հայ տղամարդկանց սպանում են՝ հայ կանանց հաշվին բավարարելու իրենց բազմակնության պահանջները:

Անգլիայի դեմ ռուս-ֆրանսիական համագործակցության հիմքում ընկած իրողությունը հետևյալն էր. Ռուսաստանը չէր կարող թույլ տալ, որ հայերն անցնեին Անգլիայի ազդեցության տակ, իսկ Ֆրանսիայի շահերին դեմ էր Անգլիայի ազդեցության աճը Միջերկրական ծովի շրջանում: Նույնիսկ անգլիական հասարակությանն էր զգվեցրել սեփական կառավարության անամոթ հաշվենկատությունը՝ ի հաշիվ հայ ժողովրդի գոյության իրավունքի: Պատասխանելով կառավարության նման կողմնորոշման քննադատություններին՝ Ռոզբերին հայտարարեց, թե Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը «ձևավորված է հազար մասերից ու չահերից, և մենք իրավունք չունենք 999 մասերը զոհ բերել միայն մի մասին, եթե նույնիսկ այն պահանջում է անհետաձգելի գործողություն», ըստ այդմ էլ՝ «հայ ժողովրդի կործանումը Մեծ Բրիտանիայի հոգսերի մեկ հազարերորդն է...»: Դրան "Spectator"-ը պատասխանեց, որ անգլիական կառավարությունն իրավունք չունի «...հայերին դավաճանելու, որոնց նա պարտական է իր քաղաքական առավելության համար»: Ալբիոնն անկանխատեսելի էր: Իրավացի է ռուս պատմաբան Ա. Ս. Սիլինը, երբ գրում է, թե «ոչ մի այլ երկրում... մամուլը այնքան կոկորդիլոսի արցունք չի թափել թուրքական գազանությունների առնչությամբ, ինչպես Լոնդոնում»[572]: Ինչ վերաբերում է Անգլիայի «ամենաքրիստոնյա» եկեղեցականներին, ապա նրանց «քրիստոնեական խիղճը ժամանակ առ ժամանակ էր վրդովվում հայերի իրավազուրկ վիճակից և նրանց դեմ գործադրվող ծրագրերից»:

Անգլիայի հասարակական կարծիքը նույնքան խայտաբղետ ու հակասական էր, որքան նրա պետական քաղաքականությունը: Հրապարակախոս Դեյվին խորհուրդ էր տալիս. «Մենք պետք է լինենք համբերատար... Սուլթանին՝ մեծ կրոնի առաջնորդին, հզոր տագուն կայսրին, վերաբերվենք որպես քմահաճ փոքրիկ տղայի, որը կատաղելով, ջարդում է իր խաղալիքները», այսինքն՝ համբերությամբ դիտենք, թե սուլթանը «կատաղելով» ինչպես է ջարդում քրիստոնյա հպատակներին: Ջպետք է հավատալ հայերի չափազանցություններին, չարունակում է նա, Արևմտյան Հայաստանում նրանց թիվը չի հասնում 500 հազարի և Սասունում կոտորվածների թիվն էլ 1000-ից չի անցնում: Մի այլ գործիչ՝ Հարիսը, 1895թ. գրեց, որ հայերը քիչ մեղք չունեն իրենց հետ պատահածի համար: Նրանք «անկիրթ, մոլեռանդ քրիստոնյաներ են... ընտանեկան կյանքում սանձարձակ... անազնիվ»: Ոչ թե թուրքերն են մահմեդականացնում հայերին, այլ «քրիստոնյաները են ձգտում մահմեդականներին համոզել՝ փոխելու իրենց կրոնը... Լույս աշխարհ եկած քաղաքական գաղտնի կազմակերպությունները սկսեցին ձևավորել միություններ, մամուլում տարածում ստացան Ազատ Հայաստանի մասին երազները... Պեղեցին և ամբիոններից ցիտեցին կիսատառասպելական ասքեր՝ Հայկական Թագավորության մասին»: Իսկ թուրքերի ամեն մի փորձ՝ ուժ գործադրելու, ձերբակալությունների, հայկական կազմակերպությունների չախչախման ուղղությամբ, «անմիջապես գրավում էր Եվրոպայի ուշադրությունը»: Թուրքերի բռնությունն ի՞նչ էր իրենից ներկայացնում՝ հայերի դեմ կիրառել աննշան հալածանքներ, որոնք խթաններին հայերի արտագաղթը: Եվ նրանք ելքը

---

[571] Маркс К. и Энгельс Ф., *Сочинения*, т. XXXV, стр. 298.

[572] Силин А. С., նշվ. աշխ., էջ 209:

գտան: Դա քրդերն էին: Ի տարբերություն հայերի՝ Բ. Դուրը քրդերին համարում էր «բնիկներ և մարդկային բազում առաքինություններ ունեցողներ»[573]:

Լինչի կարծիքով՝ միակ պետությունը, որ չհագեցրված էր լուծելու Հայկական հարցը, դա օսմանյան կառավարությունն էր և այն էլ հայերին ոչնչացնելու միջոցով, իսկ տերությունների համար այդ հարցը միմիայն հնարավորություն էր Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու: Ռուսաստանին ոչ մի կերպ չպետք է թույլ տալ գրավելու կայսրության արևելյան նահանգները, քանի որ դրանով նա տեր կդառնար այնպիսի ստրատեգիական դիրքերի, որոնք հնարավորություն կտային «միաժամանակ սպառնալու ինչպես միջերկրածովյան երկրներին, այնպես էլ Մեծ Բրիտանիայի հնդկական տիրույթներին»:

Մաքքոլն իր «Կ. Պոլսի ջարդերն ու դրանց դասերը» հոդվածում այդ կոտորածն անվանում է «կազմակերպված մոլեռանդության մտածված քաղաքականության անբաժան մաս»: «Օսմանյան կայսրությունում ոչ մի տեղ,— գրում է նա,— սուլթանի քրիստոնյա հպատակների կյանքի և ունեցվածքի անվտանգությունն ապահովված չէ: Նրանց համար արդարություն չկա նույնիսկ Կ. Պոլսում: Նրանց կյանքը, սեփականությունը, պատիվը գտնվում են ամենահետին մահմեդականի տրամադրության տակ, որը ցանկացած պահին կարող է նրանց հանդեպ կիրառել բռնություն...և մնալ անպատիժ»: Կայսրության քրիստոնեաբնակ մարզերը «...տանջվում են կառավարման և վարչակազմի թուրքական եղանակի անբուժելի անօրինականություններից ու թալանից», և դեռ կան մարդիկ, որոնք «գտնում են, թե հայերն ու Բ. Դևան մյուս ոչ մահմեդական հպատակները պետք է լոյալ լինեն միապետի ու կառավարության նկատմամբ, չնայած վերջիններս նրանց համար չեն ապահովում մարդկային տարրական իրավունքներ»:

1892-ին օրենք հրապարակվեց, համաձայն որի՝ պետական ծառայության ընդունվել կարող էին միայն այն անձինք, ովքեր ավարտել էին պետական, այսինքն՝ թուրքական դպրոցները: Սկսեցին ոչնչացնել այդ թվում նաև հպատակ ժողովուրդների այլ լեզուներով գրականությունը[574]:

Մահմեդականներին քրիստոնյաների դեմ գրգռելու, հայերի կոտորածները նաև հոգեբանորեն նախապատրաստելու նպատակով հրատարակվեցին մի շարք գրքեր («Պաշտպանություն», «Համիդիե գլխավորները»), որոնց հակաքրիստոնեական բարբարոս եզրահանգումների համար դրանց հեղինակները սուլթանի կողմից պարգևատրվեցին: Հակաքրիստոնեական (հակահայկական) մոլագարության բորբոքումը դարձավ թուրքական մամուլի հրապարակումների առաջատար խնդիրը: Այլ խոսքով, 1878թ. Բեռլինում ստանձնած պարտավորությունների կատարումը նենգափոխվեց և միանգամայն հակառակ ուղղություն ստացավ. ձևավորվեց քաղաքական, տնտեսական և հոգեբանական ահաբեկչության մի համակարգ, որը արևմտահայությանը կանգնեցրեց բնաջնջվելու միանգամայն իրական վտանգի առջև: 1870-ական թվականներին Անգլիան ենթադրո՞ւմ էր, որ իր արևելյան քաղաքականությունը կարող է հանգեցնել նման ողբերգական հետևանքների: Դժբախտաբար, այո: Անգլիային երբեք թուրքահպատակների ճակատագիրը չի հետաքրքրել: Հայաստանի հարցում Անգլիայի վարքագիծը որոշողն այն սկզբունքի հաստատումն էր, որ Բ. Դևան քրիստոնյա հպատակների հովանավորությունը գտնվի միացյալ Եվրոպայի, այլ ոչ թե միայն Ռուսաստանի ձեռքում: Անգլիայի վարչապետ Աբերդինը գտնում էր, որ դժվար է հավատալ Թուրքիայի բարվոքմանը: «Թուրքիայի ամբողջ հորինվածքը հոռի է ու տմարդի: Ջեմ ցանկանում հիշել Պետերբուրգում կամ Վիեննայում հնարված հեքիաթները, այլ հիմնվում են հենց իր՝ լորդ Սթրաթֆորդի և մեր հյուպատոսների զեկուցագրերի վրա, որոնք անօրեն հարստահարության և ան-

---

[573] "Spectator", 1895, September.

[574] Макколь, *Ответственность Англии перед Арменией. В кн. "Положение армян в Турции ...,* стр. 153-178.

գթությանը զարհուրելի պատկերներ են ներկայացնում, իսկ երբ պատերազմում (Ղրիմի) հաղթեցինք... պարտազանց եղանք: Այն ժամանակ մենք բավարարվեցինք լոկ Թուրքիայի խոսքերով ու խոստումներով, որ նա երբեք չկատարեց»[575]: Նույն բանը տեղի ունեցավ 1877-78ԹԹ. պատերազմի ընթացքում ու դրանից հետո: Այսինքն՝ անգլո-ռուսական մրցակցությունում հաղթող դուրս գալու համար՝ Անգլիան գիտակցաբար հայ ժողովրդին թողեց օսմանյան հրեշի երախում: Անգլիան իսկապես թույլ տվեց, որ ազգակեր «կառավարման անկանոն համակարգը» հարատևի՝ վերածվելով անխնա բնաջնջման դիվային քաղաքականության: Սասունի կոտորածը լիբերալների կառավարության վրա այն միակ ազդեցությունն ունեցավ, որ դրդեց ավելացնելու նամակների, հեռագրերի և հյուպատոսական հաշվետվությունների թիվը:

Ըստ Մաքքոլի՝ Ռոզբերիի կառավարությունը երեք հիմնական սխալ թույլ տվեց. հասարակությունից թաքցրեց հայկական կոտորածների մասին տեղեկատվությունը, համաձայնեց, որ թուրքական հանձնաժողովը հետաքններ այդ «անամոթ խաբեությունը» և սուլթանի կառավարության քննարկմանը հանձնեց բարենորոգումների նախագիծը: Ի դեպ, երբ Սոլսբերին խորհրդարանում ճառ էր ասում, այդ նույն ժամանակ թուրքերը նոր Սասուն էին պատրաստում Քեմախում: Սոլսբերին նրբորեն էր խաղում, քաջ գիտենալով, որ մյուս տերությունների չկամության պայմաններում Օսմանյան կայսրությունում անհնար է նույնիսկ ամենաչնչին փոփոխություն: Ուստի ինքը հնարավորություն ուներ մի կողմից՝ հօգուտ հայերի սուր հայտարարություններ կատարել, իսկ մյուս կողմից՝ սուլթանին հավաստիացնել, թե Անգլիան Օսմանյան կայսրության ամբողջականության ամենաեռանդուն պաշտպանն է:

Մյուս կառավարությունները չտապեցին Սոլսբերիից հետ չմնալ և մի ակնթարթում բոլոր տերությունները, այս անգամ արդեն բացահայտ, հանդես եկան Օսմանյան կայսրության պաշտպանների դերում և նրանցից յուրաքանչյուրը ջանք չէր խնայում սուլթանին համոզելու, որ ամենաչատը հենց իր կառավարությունն է ձգտում դրան: Բելգիական "Nord"-ը գրեց. «...Ռուսական կառավարությունը մտադիր չէ նաև հայկական խնդիրներում փոխել իր բարեկամական վերաբերմունքը դեպի Դուռը և չի մտածում հրաժարվել այն չափավոր հաշտեցնող քաղաքականությունից, որին հետևում է»[576]: Իսկ անգլիական կառավարությունը հետևողականորեն չահարկում էր Ռուսաստանի այդ «խոչընդոտող դերը», համոզում, թե Ռուսաստանի վրա էր ընկնում «ժամանակի խայտառակ վատնման պատասխանատվությունը», քանի որ նրա «թաքուն խարդավանքները» անզոր էին դարձնում «Անգլիայի եռանդուն ձգտումները»: Մինչդեռ իրականում Անգլիայի որևէ ձեռնարկի անհաջողություն կապված չէր ռուսական խարդավանքների հետ: Ռուսաստանը ոչ միայն միացավ Սասունի իրադարձությունների հետաքննության անհրաժեշտության վերաբերյալ առաջարկին, այլև նրա ներկայացուցիչը հետաքննության գործում դրսևորեց պատշաճ բարեխղճություն: Է. Դիլոնը նկատում է. «Ռուսաստանի վերաբերմունքը միանգամայն պարկեշտ է. ավելին, նա անչափ բարեհաճ է, քանի որ հյուրընկալեց գրեթե 20 հազար հայ փախստականի, մինչդեռ մենք (անգլիացիներս), որ բարոյական պատասխանատվություն ենք կրում նրա սահմանների մոտ տիրող անկարագրելի քաոսի համար, վանեցինք տառապյալներին՝ արտահայտելով մեր սին, բայց աղմկալի կարեկցանքը, բարձրադղորդ խոստումներ տալով»: Սակայն այս ամենը՝ իրադարձություններին քաջատեղյակի աչքերով: Իսկ տարածվածն այն կարծիքն էր, թե Անգլիան ամեն ինչ անում էր Հայկական հարցին ինչ-որ լուծում տալու և այդ չէր հաջողվում, քանի որ Ռուսաստանը թույլ չէր տալիս:

Սոլսբերիի վարչապետ դառնալու առաջին օրերին Անգլիայում Հայկական հարցի անդրադարձը նոր ուժգնություն ստացավ: Սակայն մի քանի շաբաթ հետո լռություն

---

[575] «Մուրճ», 1895, թիվ 5, էջ 793:
[576] «Մուրճ», 1895, թիվ 8, էջ 1149:

տիրեց: Անգլիական նավատորմը Միջերկրական ծովում սպառնալից դիրք չգրավեց. ժամանակը վատնվում էր Բ. Դռան և երեք մեծ պետությունների միջև դիվանագիտական չաղակրատանքի վրա: Բնութագրական է հենց նոր վարչապետությունը թողած ու Հայկական հարցը փակուղի մտցրած Ռոզբերիի կեցվածքը. «Հայկական հարցը... կուսակցական քաղաքականությունից դուրս է: Ջեմ կասկածում, որ ազնիվ մարքիզը (Սոլսբերին) անհրաժեշտ է համարում, ինչպես և մենք, ստանալու սուլթանի կառավարությունից հաստատ ու մշտական երաշխիքներ, որ այլևս չեն կարող տեղի ունենալ այն դեպքերը, որոնցից սոսկաց Եվրոպան... իսկ տեղի են ունեցել այնպիսի սարսափներ, ինչը մարդկային խոսքը անկարող է նկարագրել, և որոնք գուցե իրենց նմանը չունեն անցյալի պատմության մեջ... ես համոզված եմ, որ եթե ազնիվ մարքիզը մինչև անգամ միայնակ (առանց Ռուսաստանի ու Ֆրանսիայի) ձեռք առնի հզոր ու վստահ միջոցներ այդ հարցում, կհամոզվի, որ իր թիկունքում ունի ոչ թե միայն մի կուսակցություն,... այլև ամբողջ ազգը...»: Դրան Սոլսբերին պատասխանեց, որ սուլթանը վախենում է երկրի անկախությունը վտանգող քայլից, սակայն այդ անկախության երաշխիքը ոչ թե նրա, այլ տերությունների քաղաքականությունն է, չնայած տերությունների համար ակնհայտ է, որ «իրենք պաշտպանում են մի մեխանիզմ, որը... ենթադրում է կրոնական ու ցեղային անտագոնիզմ... Եթե սերնդեսերունդ սարսափելի հալածանքների դեմ աղաչանքները չարունակվեն լսվել թուրքական կայսրության տարբեր մասերից, հավատում եմ, սուլթանն այլևս չի կարող չնկատել հավանականությունը, որ Եվրոպան վաղ թե ուշ ձանձրանալու է...»[577]: «...Ներկայումս չկա որևէ վտանգ, թե այդ սարսափելի անկարգությունները կարող են կրկնվել... մենք մինչև օրս չենք կարողացել ստանալ հաստատ երաշխիք, որ բարենորոգումներ անպատճառ կմտցվեն... սակայն սուլթանը պետք է հասկանա, որ եթե երկրից արմատախիլ չանի անիշխանությունն ու թուլությունը, ոչ մի դաշնագիր և ոչ մի համակրանք չի կարող օգնել, ինչը ճակատագրական կդառնա իր կայսրության համար»[578]:

Սոլսբերին լավ գիտեր, որ սուլթանի ստեղծած հանձնաժողովները ի վիճակի չէին և ցանկություն էլ չունեին ո՛չ կատարված եղեռնագործությունները արդար հետաքննելու և ո՛չ էլ բարենորոգումներ իրականացնելու: Դրա համար էլ նա առաջարկում էր ստեղծել նաև վերահսկիչ հանձնաժողով՝ կազմված յոթ հոգուց, որոնցից չորսը՝ թուրքահպատակ:

Ջորջ Ռասելը Սոլսբերիի մասին գրում է, որ նրա «բարձրագոչ բողոքները» չեն համապատասխանում Բեռլինի համաժողովում նրա բռնած դիրքին, երբ թուրքական բռնության տակ թողնվեցին «Սան-Ստեֆանոյի պայմանագրով ազատագրված քրիստոնյանները»: Ջարդերից հետո էլ Անգլիայի իշխանավորները չդրսևորեցին «խիզախություն և ոգևորում»: «Տավրոսի գագաթը բրիտանական նավատորմի բարձրանալու անհնարինության մասին կատակը կարելի էր հանդուրժել 1-1.5 տարի առաջ...», երբ հայերի կոտորածները տեղի էին ունենում գավառներում (արձագանքները շատ թույլ էին), մինչդեռ Կ. Պոլսի կոտորածները բոլորի աչքերը բացեցին: Եվրոպական դիվանագիտության համար անհնար է ոչ թե Հայաստանին, այլ սուլթանին օգնության հասնել, որի նստավայրն էր Կ. Պոլիսի ծովափը[579]: «Լորդ Աբերդինի կառավարությունը,— չարունակում է նա,— թուրքիայի անկախությունը պաշտպանելիս զգում է, որ Ռուսաստանի միջամտությանը միայնակ դիմադրելու համար պարտավոր է Բ. Դռան քրիստոնյա հպատակների անվտանգությունը երաշխավորող գրավական ստանալ...»[580]: Բայց միայն խոսքով, այլ ոչ գործով:

---

[577] Նույն տեղում:
[578] Նույն տեղում, էջ 1147:
[579] *Братская помощь...*, стр. 34-38.
[580] «Մուրճ», 1895, թիվ 5:

19-րդ դարի երկրորդ կեսին Անգլիայի ներքին քաղաքականության այս կետը հետաքրքրություն էր: Ակներև էր նաև Ռուսաստանի համար, երբ Անգլիան իրեն չտվեց, որ իրավունքներ ունենա Համար Թուրքիան պատասխանատու լիներ միայն Ռուսաստանի առջև: Դրանով Անգլիան «հողից դրկեց Թուրքիային» և Հանուն գրա գրհաքներից հայերի անվտանգության: Անգլիան հայերին հովանավորչական իրավունքներ էր տալիս, մյուս դարձյալ իրավունքներին, միայն ռուսներին հատկացնում, որ «Եվրոպան չի միջամտի»: Ակներև, ինչպես տեսավ էր Ջ. Քամերոնը, «մենք Թուրքիայի վրա որոշ պատասխանատվություններ դրեցինք և հաղար անգամ վատացրեցինք իրենց վիճակը»[581]:

Ձիշտ նույն տրամաբանությամբ էր գնահատվում նաև առաջարկ կառավարությունը: "Новости" թերթը գրում էր. «Եթե առյիանը չգիտի, և անգլիական հանրությունը դա Վ. Գոլիս, Հանձնաժողովը շատ ծանր կլինեն... առյիանն խոխոջում Անգլիայի ետևից կընկնի»[582]:

Ապառյը 1897թ. ապրիլի 27-ին գրեց. «1895թ. գնդակոծման ժամանակ, որն այնքան մեծ տպավորություն էր գործել լորդ Ք. Սեսիլի վրա (1885թ. երբ Անգլիան պատրաստվում էր պատերազմի Ռուսաստանի դեմ՝ մտադիր էր նեղտոնցնել, Գնդակոծման գրա դեմ Համագործ նեղով, և Անգլիան Հետ կանգնեց), Հիմնավորված էր Գնդակոծման և Ամրոցո-Համագործության Հետ մեր կնքած գաղտնի համաձայնագրի 3-րդ հոդվածով»: Այն նախատեսում էր թուրքերի ներքին գործերին ռազմական միջամտություն, իսկ եթե Թուրքիան թուրքերի տպավորություն, «կդրկվեինք իր տարածքների "Status quo"-ի պահպանությունից»[583]:

Նոյեմբերի 12-ին Սալիսբերին հայտարարեց. «...Քանդան պահպանությունների գործը գաշնագրերին ու խոշոր նրանց, Թուրքական կառավարության ինքն է գնում գնալ համապատասխան անգործությունը... Թուրքիայի անվտանգությունը ոչ մի այլ Հետաքրքրություն ևս լինելու, ինչը գրանք առավել են բնորոշ. կայսրության ներաշխարհագրում, այլ այն, որ Հոգին է տարածվել ուժեր երկրներ ու եվրոպական ընդհանուր խաղաղության պատճառ գտնելով: Մրդ կարծիքն անձնական՝ մենք միշտ պաշտպանում էինք Թուրքիայի ամբողջականության սկզբունքը... Վատնել կգար է առաջնահերթ նահ. առյիանի խորհրդատուների գործը գնդակոծ, եթե պատրաստ են կատարել անպատասխան: Առյիանը Հանգիստ եղավ այս եղանակի գնում: Դրան Հետևեց Սալիսբերիի Հետևյալ հայտարարությունը Բրյուքհոնում. «Ինչ էլ որ կատարվի, պետք է համաձայնություն ստրկի -- չեմ կարող թուլ տալ, որ Անգլիան միայնակ Հանձն առնի այդ (Թուրքիայի գնում) գործողությունների Ինքնուրույն պատասխանատվությունը»[584]: Տերությունների այս երկակի դիրքորոշումը մի կողմից Ինքնագրկում էր միմյանց մինչև եղած Համաձայնություններով, իսկ մյուս կողմից՝ Հայաստանում կատարվածի ընծիռատ Հետաքրքրությունից անպատրաստ գաղտնի ձգտումներ: Մի բան, ակներև, ակնհայտ էր. Ռուսաստանն ու Անգլիան առնվազն ժամանակավորապես Թուրքիայի վարվելակերպ խնդրում, բայց էությունն, առավել էին քաշում նույն ծրագրերը:

Մարտի 11-ին Սալիսբերին հայտարարեց. «Դատարկ խոսքերով գործերը նշանակություն չունի.... Եթե գիտենք, որ անպատ ենք (ստրկինք՝ ում չենք կարող գործադրել), Հոգին չկա ստրատեգ՝ առանց այն իրականացնելու...., նման ստրատեգիաները մանրվեցնում Համագործան կանգնեն, բայց քանի գնա իրենց Հոգի վրա քրիստոնյա կա, Հանգիստ չեն անհնար»[585]: Բացարձակ գնահատական է: Մեծ ուժերի կոչերը չկար առյիանին Հարկադրելու, որ ընդառաջ գնար տերությունների պահանջներին:

---

[581] Նույն տեղում:
[582] «Մշակ», 1895, թիվ 102:
[583] Александров В.Н., նշվ. աշխ., էջ 254-255:
[584] «Մուրճ», 1895, թիվ 11:
[585] «Արմավենյակ», 1895, թիվ 55:

Ռուսական կառավարության, մեղմ ասած, «չափավոր» դիրքորոշմանը հակակշռելու համար՝ Անգլիան որդեգրեց արմատական լուծումների կողմնորոշում: Ց. Քըրրին նույնպես մեկնեց Միջերկրական ծով՝ խորհրդակցելու անգլիական նավատորմի հրամանատարի հետ այն միջոցների շուրջ, որոնք անհրաժեշտ կարող էին լինել Հայկական հարցի առիթով: Նա հայտարարեց, եթե Բ. Դուռը համառի, «Անգլիան մտադիր է գործել ամենայն եռանդով»[586]:

Իհարկե, Ռուսաստանն ու Ֆրանսիան չէին կարող բացեիբաց հանդես գալ Անգլիայի այդ դիրքորոշման դեմ, դրա համար էլ գերադասեցին պարզապես չմիանալ Անգլիայի ձեռնարկումներին: Դրա հետ միասին երեք տերությունները համատեղ Բ. Դռնից պահանջեցին տեղեկագիր ներկայացնել հայկական բարենորոգումների վերաբերյալ և վերահաստատեցին 61-րդ հոդվածի այն որամադրությունը, որ տերությունները պետք է վերահսկողություն սահմանեն բարենորոգումների իրականացման ընթացքի վրա:

Հոկտեմբերի 20-ին Լամսդորֆը գրեց. «Նելիդովը գտնում է... որ մենք Ֆրանսիայի հետ միանալով հօգուտ հայերի անգլիական դեսպարչին, խանգարեցինք միայնակ եռանդուն գործողությունների անցնելու անգլիացիների մտադրության իրականացմանը»:

Անգլիական դիվանագետներից մեկը պատմել է, որ 1896-ի հունվարին ինքը ներկա էր, երբ սուլթանին հանձնվեց Վիկտորիա թագուհու նամակը հայկական կոտորածների մասին: «Սուլթանը նամակի ընթերցումը լսեց չշմած ու ապշահար: Նորին մեծությունը պատասխանեց, թե արյունահեղության հանդեպ խորը զզվանք ունի, և իր զորքերն էլ միշտ ձգտում են խուսափել դրանից»: Իհարկե, անգլիացի պատվիրակը նույնիսկ տեսք՝ ձև չարեց, թե ապշած է սուլթանի անպարկեշտությունից, չնայած կարդացել էր "Contemporary Review" թերթում տպագրված հոդվածը Կ. Պոլսի ջարդերի մասին. «Կ. Պոլսի փողոցներում սոֆթաներն ու զափթիեները ծեծով մեռցրեցին հարյուրավոր հայերի»: Նրանք կոտրվեցին ոչ հակաթուրքական «ապստամբության համար», քանի որ սեպտեմբերի 18-ի ցույցը բացարձակապես խաղաղ էր: Հայերը ցույցի դուրս եկան «հույս ունենալով չտապեցնել դանդաղկոտ դեսպանություններին և, հնարավոր է, նաև ազդելու անձամբ սուլթանի արտակարգ լարված նյարդերի վրա»[587]:

Սուլթանին շատ ավելի անհանգստացնում էր սեփական հեղինակության անկումը մահմեդականների աչքում, քան ազդվում էր մեծ տերությունների սպառնալիքներից, քանի որ «նա ի վիճակի էր տերություններին փաստի առաջ կանգնեցնել, ծայրահեղ դեպքում՝ նաև նրանց իրար հետ կռվեցնել՝ Ռուսաստանին մեծ զիջումներ կատարելով, մինչդեռ մահմեդականների դժգոհությունը սպառնում էր գահին, հնարավոր է, նաև իր կյանքին»: Ահա թե այդ մասին ինչ է գրում Սոլսբերին 1895թ. օգոստոսի 21-ին. «Այսօր ինձ այցելեց Թուրքիայի դեսպանը և շատ ազդու պնդեց, որ հայկական բարենորոգումների առթիվ խառը հսկիչ հանձնաժողով կազմելու պահանջը սուլթանն ընդունել չի կարող: Նորին վսեմությունը սպառնաց թուրքական քաղաքականության հավանական փոփոխությամբ, որ իրեն մղելու է ամբողջությամբ փարվելու Ռուսաստանին»[588]: Սուլթանի կառավարությունը միանգամայն հնարավոր էր համարում Արևմտյան Հայաստանի լրիվ հայաթափումը: Սուլթանը հասկացել էր, որ տերություններն իսկույն ընկրկում են, երբ ինքը, առանց նրանց կողմը նայելու, «վճռական գործողություններ է իրականացնում»: Աբդուլ Համիդ 2-րդը չէր սխալվում: 1895-ի փետրվարին Սոլսբերին հայտարարեց, որ իրենք «հրաժարվում են միջամտել հայկական գործերին ոչ միայն ներկայում այլև ապագայում»: Իսկ նույն տարվա նոյեմբերին ասաց, որ այլևս սուլթանի վրա դրսից ազդեցություն գործելն անիմաստ է, քանի որ Թուրքիայի վրա ազդեցության միակ միջոցը այն է, որ «Սուլթանն ինքն իր վրա ներազդի»[589]:

---

[586] «Մշակ», 1895, թիվ 94:
[587] Նույն տեղում:
[588] Լազյան Գ., Հայաստան և հայկական դատը, Երևան, 1991, էջ 85:
[589] «Մուրճ», 1896, թիվ 11, էջ 1504,1507:

Այսպիսով, հայկական ջարդերի հարցում թուրքական քաղաքականությունը աչքի էր ընկնում շատ ավելի մեծ հետևողականությամբ, քան տերությունների դիվանագիտությունը: Եթե վերջինները գործում էին անվստահ և իրարու աչք ձգելով, ապա թուրքերը հետևողականորեն վարում էին Հայաստանը հայաթափելու միջոցով հարցը թաղելու քաղաքականություն:

Նկատի ունենալով ստեղծված կացությունը՝ 1897թ. օգոստոսին "Вестник Европы"-ն գրեց. «Դեռևս խիստ անտանելի է դրությունը Թուրքիայի հայաբնակ շրջաններում: Կոտորածից փրկված հայերը...չեն կարողանում որևէ տեղ թաքնվել թուրքական իշխանությունների ու բաշիբոզուկներից... Դիվանագետների կողմից առաջարկված բարենորոգումներն էլ կարծես թե մոռացվել են, դրանց իրագործման մասին արդեն դադարել են մտածել»[590]: Անգլիական քաղաքական գործիչներից մեկը հայտարարեց. «Այն, որ մի քանի հազար հայ է կոտորվել, մեզ իրավունք չի տալիս միջամտելու Հայկական հարցին...»:

Ինչ վերաբերում է Գերմանիային, ապա հենց այդ օրերին Վիլհելմ 2-րդը սուլթանին ուղարկեց իր ընտանեկան լուսանկարը: Համակրանքն ու սերը փոխադարձ էին: "Lokal Anzeiger"-ը գրում է. «Վիլհելմի հանդեպ տածած բարեկամությունը սուլթանին այնքան հեռու է տարել, որ նա անգամ պատրաստակամություն հայտնեց՝ որևէ վտանգի դեպքում Գերմանիայի կայզերի տրամադրության տակ դնել 500 հազար զինվոր»:[591] Ամբողջությամբ վերցրած՝ կոտորածներին գերմանական շատ քաղաքական գործիչների ու մամուլի վերաբերմունքը, մեղմ ասած, հօգուտ հայերի չէր: Ահա մի քանի արժադանքներ. «Ճիշտ ես անում, կտրիճ թուրք, դու միակ չենտլմենն ես Արևելքում»[592]: «Թուրքերը ճիշտ վարվեցին՝ բնաջնջելով հայերին»[593]: «Եթե հայ որբերը մեռնում են սովից, ուրեմն բարեգութ Աստվածն այդ է ցանկանում»[594]:

Այդպիսին էր ոչ միայն Գերմանիայի, այլև գերմանական մամուլի դիրքորոշումը:

«Ցրանսիո և Ռուսիո արտաքին գործոց պաշտոնատարները Թրքասերներ էին,– գրում է Կ. Թումայանը,– Հանոթո և Լոպանով: Առաջինը Պոլիս է գտնված և սուլթանին սիրելի է եղած: Ցրանսիական 17 թերթեր սուլթանին ծախված էին այն ժամանակ»:

"Daily Telegraph"-ը 1895թ. օգոստոսի 18-ին գրեց, որ ֆրանսիական «ամբողջ մամուլը, առանց բացառության, կարծես մի ընդհանուր հրամանով, սխալ է համարում լորդ Սոլսբերիի հայտարարությունը Հայաստանի մասին, մի հայտարարություն, որի ձևը կարող է սուլթանի արդարացի զայրույթն առաջացնել: Ցրանսիական մամուլը չանք չի խնայում՝ նկատի ունենալով բրիտանական և ֆրանսիական շահերի բախումը Նեղոսի վրա: Այստեղ ամենուրեք ընդունված եղանակը՝ տոնն այն է, որ եթե մի երկիր կար, որն ամենից ավելի էր նվիրված Օսմանյան կայսրության ամբողջության գաղափարին, այդ երկիրը եղել ու մնում էր Ցրանսիան»: "Journal de Débats"-ը «չի կամենում հավատալ, թե աշխարհում ինչ-որ Հայկական հարց կա, այն հնարել են անգլիական թղթակիցները, և լորդ Սոլսբերիի ձեռքում միջոց է չողոքորթելու բրիտանական հասարակությանը...»:

Ասվածից կարելի է հանգել մի քանի եզրակացությունների:

– Եթե Անգլիան ձգտում էր օգտվել Օսմանյան կայսրության ծանր կացությունից և պատեհ առիթի դեպքում իր համար չհավեստ մասնատել այն, ապա Ռուսաստանը, նրա հետ նաև Ցրանսիան, հակառակ քաղաքականություն էին վարում՝ ինչ գնով ուզում է լինի, թույլ չտալ Օսմանյան կայսրության փլուզում, պահպանել նրա տարածքային ամբողջականությունը:

---

590 "Вопросы Европы", 1897, т. VIII, стр. 805-806.

591 «Մուրճ», 1895, թիվ 5:

592 **Härle F.**, *Das moralische Urteil in Deutschland und die Tatsachen.* "Die christliche Welt", 1898, №52.

593 Նույն տեղում, 1898, թիվ 52:

594 "Die Welt des Islams", 2. Band, 1914.

— Գերմանիան, ավելի շատ Ռուսաստանի կողմը պահելով, ոչ թե հարում էր նրա քաղաքական կուրսին, այլ աշխատում էր առաջ բերել ռուս-անգլիական բախում, ինչը նրան հնարավորություն կտար իր համար բարենպաստ իրավիճակ ունենալ Եվրոպայում և ճանապարհ հարթել Մերձավոր Արևելք ապագա տնտեսական ներխուժման համար:

— Ռուսական դիվանագիտությունը Օսմանյան կայսրության նկատմամբ վերաբերմունքի հարցում միակամ չէր: Եթե Նիկոլայ 2-րդ ցարը և արտաքին գործերի նախարար Լոբանով-Ռոստովսկին անվերապահորեն վարում էին "Status quo"-ի քաղաքականությունը, ապա Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Նելիդովը գտնում էր, որ այդ քաղաքականությունն իրեն սպառել է: Թուրքիայի, մասնավորապես, Նեղուցների ու Կ. Պոլսի հարցում նոր մոտեցում էր պահանջվում: Նա Ռուսաստանի արտաքին քաղաքականության հարցերի հարցը համարում էր Նեղուցների խնդիրը և սխալ էր գտնում այն քաղաքականությունը, որը Հեռավոր Արևելքում եռանդուն գործողություններ ծավալելու համար այս գլխավոր խնդիրը մղում էր երկրորդ պլան: Ըստ այդմ էլ՝ Նելիդովը, ի տարբերություն Լոբանովի, կարծում էր, որ Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդներին այդ հպատակությունից ազատելը ոչ թե վնասելու, այլ օգնելու է Ռուսաստանի արտաքին քաղաքականությանը:

1895-96 թթ. հայոց ջարդերը տերություններին հարկադրեցին մի նոր դեսպանաժողով անցկացնել Կ. Պոլսում: Նախաձեռնողը Մեծ Բրիտանիայի կառավարությունն էր, որը 1896թ. հոկտեմբերի 20-ին նման առաջարկությամբ դիմեց մյուս մեծ տերությունների կառավարություններին: Հայ գործիչները, նկատի ունենալով ցարական կառավարության թշնամական կեցվածքը արևմտահայերի և Հայկական հարցի լուծման հանդեպ, սպառնացին, թե պայթեցնելու են Կ. Պոլսի Ռուսական դեսպանատունը: Դա պատակտեց դեսպանաժողովը: Քըրրին ընկրկեց, Ավստրո-Հունգարիայի դեսպանը Նելիդովին համոզում էր միջոցներ ձեռնարկել հայերի նոր ջարդեր թույլ չտալու համար: Որոշվեց սուլթանի պալատի մերձակայքում տեղակայել Ռուսական և ավստրիական ռազմանավեր:

Հունվարի 19-ին դեսպանաժողովը որոշում կայացրեց՝ կայսրությունում բարենորոգումներ անցկացնելու համար ստեղծել միջազգային երկու հանձնաժողով, ապա գերադասեց ստեղծել մեկ ընդհանուր հանձնաժողով՝ կազմված օսմանյան և եվրոպական ներկայացուցիչներից:

Դեսպանաժողովը 1897-ի փետրվարի 2-ին ավարտեց Օսմանյան կայսրության բարենորոգումների ծրագրի նախագծի քննարկումը: Այն ուներ հետևյալ բովանդակությունը. 1. Կազմել բարենորոգումների բարձրագույն խորհուրդ, 2. Ստեղծել բարենորոգումների ընթացքը վերահսկող հանձնաժողով, 3. Սահմանել վերահսկողություն Օսմանյան կայսրության ֆինանսների վրա, 4. Բարեփոխել դատական համակարգը, 5. Վերակառուցել իշխանության տեղական մարմինները, 6. Ապահովել մամուլի ազատությունը:

Սակայն, ինչպես տերությունների մյուս «վճռական» քայլերը, այս մեկն էլ մնաց թղթի վրա ու իր իրավաստությունների գործադրումը սկսեց ու ավարտեց՝ տեղ գրավելով արխիվների փոշիների մեջ:

* * *

Հայկական կոտորածները 19-րդ դարավերջի ամենաազետալի երևույթն էին ոչ միայն Մերձավոր Արևելքում, այլև ամբողջ աշխարհում: Հետևաբար, դրանք չէին կարող լռության մատնվել, աննկատ մնալ:

Դրանց գնահատականները տարբեր էին, հաճախ նաև՝ իրարամերժ, ինչպես ինքը՝ մարդկությունն էր հակասական՝ իրարու բացառող մոտեցումներով ու չահերով: Եվրոպան միայն երկրների առուծախով զբաղվող կառավարությունները չէին: Եվրոպան Եվրոպա էր իր առաջադեմ մտավորականությամբ: Եվրոպայի առողջ ուժերի ձայնը լսելի էր

աշխարհով մեկ, և սուլթանը դրա հետ հաշվի չնստել չէր կարող: Նա Ռուսաստանին համոզում էր, թե հայերն ահաբեկիչներ են, Ֆրանսիային՝ անիշխանականներ, Անգլիային՝ դավադիրներ: «Հայ հեղափոխականները,– հայտարարեց Բ. Դուբը,– եղեռնագործների հսկա ընկերություն են՝ տարածված աշխարհով մեկ: Նրանք ահարկու թշնամի են Եվրոպայի բոլոր օրինավոր կառավարություններին: Նրանք դավադիրների միջազգային ընկերության մասն են կազմում»:[595] Ի պատասխան դրան՝ եվրոպական թերթերը գրեցին. «Այն, որ նման հուսահատ և անօգնական կացության մեջ հայերը ըմբոստացել են սուլթանի դեմ, մի՞թե մեզ իրավունք է տալիս փնովելու նրանց: Արդյոք նույն ճանապարհով չե՞ն ընթացել բոլոր ժողովուրդները»: Վիեննայի "Neue freie Presse" գտնում էր, որ «...ոչ մի տերություն հանձն չի առնի այդ արյունաթաթախ պետությանը (Թուրքիային) պաշտպանելու ամոթալի դերը ստանձնել»:

Ֆրանսիական խորհրդարանն ընդունեց սոցիալիստների առաջարկած նախագիծը, որն աշխարհի աշխատավորներին կոչ էր անում ճնշում գործադրել իրենց կառավարությունների վրա Հայկական հարցը շուտափույթ լուծելու համար:

«Դուք,– դիմելով Հանրոյին՝ ասաց Ժորեսը,– արտահայտվեցիք նրանց դեմ, որոնց անվանում են «դրսից եկած հայ ագիտատորներ»: Դուք այդպիսիներին եք մեղավոր համարում այն տանջանքների համար, որ կրում են նրանց հայրենակիցները... Եվ ինչո՞ւ եք զարմանում, որ մի քանի հայեր փորձում են հիշեցնել Եվրոպային նրա պարտականությունները...

Սուլթանն է, որ ցանկացել ու կազմակերպել է կոտորածները... Նա առաջնորդվեց ամենախելամիտ որոշումով՝ Եվրոպային կանգնեցնել ջարդերի փաստի առջև: Նա Եվրոպան տեսավ վարանոտ, երկմիտ... Նա մարդասպանի չտապողականությամբ գործի անցավ՝ բոլե առաջ իր կոկորդին դեմ առած Հայկական հարցից և եվրոպական կեղծավոր ձևականություններից ազատվելու համար:

Այո, Եվրոպան թերացավ իր պատակտվածությամբ, անհագ տենչերով, նախանձով: Շահերը բաժանելու առումախի մեջ... Նա թույլ տվեց խողխողելու մի ամբողջ ժողովուրդ...

Ինչո՞ւ իրավունքների այս բռնաբարության դեմ մեր լեզուները կարկամեցին, մեր անտարբերությամբ ու հաշտվողականությամբ մեղսակից դարձանք մի ամբողջ ժողովրդի խողխողմանը...»[596]:

Ֆրանսիական առաջադեմ գործիչներ Գ. Ադամսի, Ֆ. Շարմետտանի, Ժ. Կլեմանսոյի, Սևերինի և այլոց հրապարակումները նույնպես չախչախիչ հարված հասցրեցին ֆրանսիական մամուլի «լռության դավադրությանը»:

Վ. Բերարը այցելում է Թուրքիա և վերադառնալուց հետո հրապարակում "La Politique du Sultan" (Սուլթանի քաղաքականությունը) գիրքը, որում բացահայտում է սուլթանի անձնական պատասխանատվությունը հայկական ջարդերի կազմակերպման գործում: Գրքում տեղ գտած նյութերը Ռոմեն Ռոլանը գնահատեց որպես «անառարկելի ապացույցներ»: Վ. Բերարը գրում է, թե Հայոց ջարդերի մասին լսելու համար ֆրանսիական 17 թերթ կաշառք էին ստացել Թուրքիայից, ինչը ֆրանսիական կառավարությունը հանդուրժում էր: «Երկու տարի շարունակ քաղաքական գործիչներն աշխատել են հայ ժողովրդի արյան մեջ և անուշադրության են մատնել զոհերի ողբը...»[597]:

19-րդ դարի վերջին տարիները նշանավորվեցին Եվրոպայում հայասիրական շարժման ձևավորմամբ ու ծավալմամբ: Շարժման հիմնադիրները ֆրանսիական սոցիալիստներն էին:

"Pro Armenia" թերթը սկսեց լույս տեսնել Փարիզում 1900թ. նոյեմբերի 25-ին: Մինչև 1912թ. այն խմբագրել է Գ. Քիյարը, իսկ մինչև 1914թ.՝ Ֆ. Պրեսանսեն և Վ. Բե-

---

[595] «Դրոշակ», 1896, թիվ 231:
[596] «Հնչակ», 1896, թիվ 20:
[597] "Неизвестные имена, французские арменофилы", Е., 2003, с. 6.

րարը: Թերթի չանքերով 1902թ. հուլիսին Բրյուսելում տեղի ունեցավ հայասերների համաժողով: Այդ առիթով Սևերինը գրում է. «Պահանջվեց 300000 զոհի արյունը... որպեսզի Եվրոպայի հասարակական կարծիքը լրջորեն չուռ գար դեպի Հայկական հարցը»:[598] Համաժողովի հասցեով ստացվեցին մեծ թվով ողջույնի և համերաշխության նամակներ: Միայն Ֆրանսիայից հօգուտ հայերի հանդես եկան 53 խորհրդարանական, 21 ակադեմիկոս, Պաստերի ինստիտուտի ողջ կազմը, մեծ թվով համալսարանական պրոֆեսորներ, դրողներ, իրավաբաններ, դերասաններ: Համաժողովին մասնակցում էին Պ. Քիյարը, Ֆ. Պրեսանսեն, Ժ. Ժորեսը, Սևերինը և շատ ուրիշ նշանավոր դեմքեր: Համաժողովը կոչ արեց Եվրոպայի կառավարություններին եռանդուն գործունեություն ծավալել Մայիսյան ծրագիրը կյանքի կոչելու համար: Համաժողովն ընտրեց միջազգային հանձնաժողով բոլոր երկրների հայասերների ուժերը համակարդելու համար:

Իր էջերը հաճույքով էր հայկական խնդիրներին նվիրում "Mercure de France" հանդեսը: "La Libre Parole" թերթում համիդյան քաղաքականության մերկացնող հզոր հոդվածներով հանդես էր գալիս Հ. Վերնեն: Նա գրում է. «... Խոսքը ոչ թե հայերի ու թուրքերի, անգամ ոչ քրիստոնյաների ու մահմեդականների, այլ զոհերի ու դահիճների մասին է: Եվ այդ երկուսի միջև Ֆրանսիան չի կարող տատանվել»[599]: Հայկական ջարդերի մասին Ֆրանսիայում առաջին հրապարակման հեղինակը Սևերինն էր, որը "La Libre Parole" թերթում 03.02.1895-ին տպագրեց «Հայկական ջարդեր» հոդվածը: Դրան հետևեց է. Դրյումոնի հոդվածների շարքը: Պ. Կամբոնին է պատկանում Հայկական հարցի փայլուն վերլուծությունը, որը մեծ տեղ է գտել «Դեղին գրքում» (1897): Պ. Կասանյակը իր "L'Autorité" թերթում մի շարք հոդվածներ տպագրեց հայկական ջարդերի վերաբերյալ. նա հայերին համարում էր անգլիական քաղաքականության զոհեր: Հայերին և հայկական հարցին նվիրված հետաքրքիր աշխատությունների հեղինակ էր Լ. Քոնստանտոնը՝ "Chrétiens et Musulmans", "Les Réformes en Turquie d'Asie" և այլն:

1896թ. նոյեմբերի 3-ին Դ. Կոշենն ու Ժ. Ժորեսը առաջին անգամ Ֆրանսիայի խորհրդարանում հարցապնդում կատարեցին Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Է. Լավիսը 1896-ին ստեղծեց Ֆրանսա-հայկական կոմիտե: Բ. Լազարը "Pro Armenia"-ում գրեց. «Արյունահոս վերքով այդ (հայ) ժողովրդին նետում են սուլթանի ոտների մոտ, որ ծածկված է ուրիշների արյունով»: Հայկական հարցի արդար լուծման պահանջներ պարունակող հրապարակումներով հանդես եկան Ժ. Լյոմետրը, Ա. Լյորուա-Բոլյեն, Լ. Մարիլյեն, Ռոմեն Ռոլանը, Հ. Ռոշֆորը, Մ. Սամբան, Ժ. Ջինոն ու քաղաքական ու մշակութային ուրիշ գործիչներ:

Ժնևի "La Genevoise" թերթը 1895թ. հունվարի 10-ին գրում է, որ թուրքական կառավարությունը «ուզում է բնաջնջել հայ տարրը Փոքր Ասիայում», որպեսզի Բեռլինի պայմանագիրը ստորագրողներին ասի. «Հայաստանում այլևս հայ չկա, հետևաբար, այլևս գոյություն չունի նաև Հայկական հարցը»:

Անգլիական "Newcastle Daily Journal" թերթի թղթակիցը Բիթլիսի Խնճորիկ գյուղից գրում է. «Անկարելի է հերքել, որ այստեղ եղել է մի մտածված ծրագիր, նախապատրաստված երկար ժամանակ և, վերջապես, գործադրված մի դիտավորությամբ, որ լրիվ ոչնչացնեն այդ երկրի... բնակիչներին... րոպե անգամ չպետք է մոռանալ, որ այդ ծրագիրը հղացվել է Կ. Պոլսի բարձրագույն կառավարության գիտությամբ և հանձնարարությամբ»[600]:

Դեպքերի ժամանակակից թուրք պատմաբան Սադըկ Շահիդը գրում է. «...Հայոց վերջին ջարդը նախապես մտածված, պլանավորված և կարգադրված էր սուլթանի կողմից»: Կ. Պոլսում թուրքերին 2-3 օր աշխատանքից ազատում էին, որպեսզի սպանեին

---

[598] Նույն տեղում, էջ 7:
[599] "La Libre Parole", 1894-1896.
[600] «Մշակ», 1895, մայիս:

հայերին: Ջերբակալված հայերի թիվը հասավ 25 հազարի, որոնց կեսից ավելին ոչնչացվեց:

Ծոն դեր Գոլցը նույն կարծիքին է. «Հայկական կոտորածները Փոքր Ասիայում և Կ. Պոլսում ոչ թե թուրքերի մոլեռանդության արդյունք էին, այլ նախապես մտածված քաղաքական դավադրության հետևանք»: Պոլսի իրադարձությունների ականատես եվրոպացիները պատմում են, որ իշխանությունները պատժում էին հայերին օգնող թուրքերին[601]:

«Այդ արյունահեղ դեպքերի կազմակերպիչների գերնպատակն էր,– գրում է Ց. Վեսելովսկին,– եթե հնարավոր չէր ամբողջությամբ ոչնչացնել հայ տարրը, գոնե հնարավորին չափ կրճատել նրա թիվը»[602]:

Ջարդերի կապակցությամբ Պիեռ Քիյարը Աբդուլ Համիդին անվանեց «Կարմիր (կամ արյունոտ) անասուն»[603]: Նա գրում է. «Բ. Դուան կողմից անցած տարիներին հրահրված և անմիջականորեն ղեկավարված կոտորածները սուլթանն անվանում է մահմեդականների և հայ հպատակների միջև անհամաձայնություն՝ հասկացնելով, թե արտոնություններ է տալիս... աքսորյալներին վերադառնալու»: Սուլթանը ստում էր: Նեղումն ավելի քան մասնակի էր, և ինչպես գրում է Հեղափոխականների կոմիտեն, «Միանգամայն թարմ տվյալներով Կ. Պոլսում և նահանգներում բանտերը լի են հայերով»[604]: Պ. Քիյարը մարգարեանում է. «Այս ժողովուրդը (հայերը) տասը տարի հետո կենթարկվի ֆիզիկական ամբողջական բնաջնջման»[605]:

Ջրդերը, գրում է Լեփսիուսը, «ավելի քիչ են արժանի պարսավանքի սեփական ախորժակը նման ձևով բավարարելու համար, քան ովքեր քրդերին պոկեցին իրենց նախկին հայրենիքից ու վերաբնակեցրին այս տարածքներում»[606]: 1896թ. գարնանը Ց. Լեփսիուսը լինում է Օսմանյան կայսրությունում, կոտորածների վայրերում, Ուրֆայում կազմակերպում առաջին որբանոցը: Նույն տարվա ամռանը նա հրատարակում է «Հայաստան և Եվրոպա» աշխատությունը, որում քննարկված են 1894-96թթ. հայկական կոտորածների բազում խնդիրներ: Նախ, ապացուցում է, որ կոտորածների հեղինակը սուլթանական իշխանություններն էին: «Երբ որևէ տպա ոգևորում է նրանց (ամբոխին), գոռալով. «Մահ հայերին. դա սուլթանի կամքն է»... կամ երբ վալին նրանց դիմում է. «Եղեք ակտիվ, չդադարեք սպանել, թալանել և աղոթել սուլթանի համար» բառերով, ապա ինչո՞ւ պիտի նրանք խուլ մնային նման հրահանգներին»[607]: Սուլթանը հրամայել էր «սպանել միայն յոթ տարեկանից բարձր քրիստոնյաներին», սակայն ամբոխը չէր խնայում ոչ ոքի:

Զինվորական իշխանությունները չարդադար ամբոխին զենք էին բաժանում, իսկ երբ վերջինները «գործը գլուխ բերել» չէին կարողանում, զորքն էր չարդերն իրականացնում: Քաղաքացիական իշխանությունները մի կողմից հրահրում ու ղեկավարում էին կոտորածները, իսկ մյուս կողմից՝ «քրիստոնյաների և, մասնավորապես, հյուպատոսների առջև... հնարավորին չափ անտեղյակություն էին խաղում»: Լեփսիուսը եզրակացնում է՝ քաղաքացիական և զինվորական իշխանությունները ոչ միայն չեն խոչընդոտել չարդերի նախապատրաստությունը, այլև մասնակցել են դրանց՝ քրիստոնյաներից խլելով զենքը և զինելով մահմեդականներին, իշխանությունները, այդ թվում՝ ամենաբարձրաստիճան պաշտոնատարները, անձնական մասնակցություն են ունեցել կոտորածներին, թալանին, բռնի մահմեդականացմանը, աշխատել են քողարկել և արդարաց-

---

[601] «Նոր դար», 1897, նոյեմբեր:
[602] Веселовский Ю., նշվ. աշխ., էջ 428:
[603] İkinci Abdülhamit'in Hatıra Defteri, İstanbul, 1960. s. 130.
[604] «Նոր կյանք», 1899, թիվ 12:
[605] Նույն տեղում:
[606] Lepsius J., նշվ. աշխ., էջ 24:
[607] Նույն տեղում:

նել ջարդերը, սպառնալիքներով հայ երևելի անձանց հարկադրել հանրագիր ստորագրել, թե հայերը հրահրիչ գործողություններով են զբաղվել: Նրանք ոչինչ չարեցին ջարդի ու կողոպուտի հետևանքները մեղմացնելու, անգամ խանգարեցին եվրոպական մի քանի երկրներում ստեղծված օգնության կոմիտեների աշխատանքին, ոչ միայն քայլ չկատարեցին ջարդերը կանխելու դրանցից զերծ մնացած չրջաններում, ընդհակառակը, նպաստեցին ջարդերի տարածմանը (Վան, Տրապիզոն, Բղի և այլն): Ջարդերի, կողոպուտների, բռնի դավանափոխության հեղինակներն ու մասնակիցները մնացին անպատիժ: Լեփսիուսը մեջբերում է կատարում մի հայի նամակից, թե այս ամենում ամենացինիկն այն է, որ «մեզ դեռ ստիպում են չնորհակալական նամակներ ստորագրել սուլթանին: Նույնիսկ ստիպում են ասել, թե մենք՝ հայերս ենք կոտորածի պատճառ դարձել»:[608] Իսկ այնտեղ, որտեղ իշխանությունները ջարդերին չեն մասնակցել, հանդես են եկել որպես հանդիսատես: «Մինչդեռ բավական էր ձեռքի մի չարժում սպանդը դադարեցնելու համար»: Ջարդարարները քաջ գիտեին, որ իրենք գործում են սուլթանի հրամանով ու նրա անունից:

Լեփսիուսն առանձնակի է անդրադառնում, այսպես կոչված, հայկական սադրանքների վերաբերյալ թուրքական կեղծիքներին: Նա բերում է փաստեր, թե ինչպիսի բռնի ու անբարոյական միջոցներով էին իշխանությունները հայերից կորզում իրենց համար չահեկան ցուցմունքներ, ստորագրություններ հավաքում չնորհակալական նամակների համար: Նա անդրադառնում է հետևյալ օրինակին: Երբ թուրք պաշտոնատարը հայ երևելիներից մեկին ստիպում է ստորագրել չնորհակալական հանրագիր, վերջինս հարցրեց. «Բայց ինչի՞ համար մենք պետք է չնորհակալություն հայտնենք», փաշան պատասխանեց. «Դա ձեզ չի վերաբերում, վարվեք մյուսների պես»[609]: «Դիվանագիտական փաստաթղթերից երևում է,— գրում է Լեփսիուսը,— որ ամեն անգամ, երբ լուրեր էին ստացվում ջարդերի մասին, թուրքական կառավարությունն անմիջապես հայերին մեղադրում էր դրանք հրահրելու մեջ»[610]: Մինչդեռ ջարդարարները քաջ գիտեին, որ կոտորածները տեղի էին ունենում ոչ թե տեղական պաշտոնատարների, այլ սուլթանի հրահանգով, հետևաբար հայերին ոչնչացնելու համար իրենք պատասխանատվություն չեն կրելու: Լեփսիուսը քննադատության սուր խոսքեր է ուղղում մեծ տերությունների հասցեին, որոնք «իրենց չուրթերին մշտապես ունենալով Հայաստանն ու նրա բողոքները... երբեք լրջորեն չեն էլ մտածել նույնիսկ մատ չարժել, որպեսզի Բ. Դռանը ստիպեն կատարելու քաղցր խոստումները...»[611]: Հայաստանը զոհ դարձավ տերությունների դիվանագիտական խաղերին: «Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու վերաբերյալ դիվանագիտական ողջ գրագրությունը այլ բան չէր, եթե ոչ մի անամոթ ֆարս»[612]: Եվ կոտորածն էլ «Բ. Դռան կողմից իրականացված վարչական միջոցառում էր, որի միակ պատճառն ու նպատակն էր վերջնականապես հրաժարվել բարենորոգումների անցկացումից՝ հայ ազգը ոչնչացնելու ճանապարհով»[613]:

«Հայ բնակչության ջարդերը,— գրում է Բ. Դանցիգը,— վրդովմունք առաջ բերեցին ամբողջ աշխարհում: Միայն գերմանական դիվանագիտությունը թուրքական կառավարության հանդեպ բռնեց կարեկցական դիրք»[614]:

Ժամանակի մամուլում կարելի է հանդիպել կոտորածների նկարագրություններին, վերլուծություններին նվիրված բազմաթիվ նյութերի: "Петербургский вестник"-ը գրում է. «...Նայեք մոր աչքերին և դրանք չեք մոռանա... Մեկում քարացած սարսափն է...

---

608 Lepsius J., նշվ. աշխ., էջ 57:
609 Նույն տեղում, էջ 56,58:
610 Նույն տեղում, էջ 57:
611 Նույն տեղում, էջ 78:
612 Նույն տեղում, էջ 120:
613 Նույն տեղում, էջ 85:
614 Данциг В. М., *Турция*, Москва, 1949, стр. 3.

*բողոքող, աղոթող ճիչը, որը հանում են թուրքական գազանների անպաշտպան զոհերը կոտորածի ժամանակ, երբ նույնիսկ հարվածից խույս տալը համարվում էր խռովություն: Մյուս աչքը արտահայտում է գոյություն ունենալու կենդանական եռանդ»:*

*"Вестник Европы"-ն գտնում էր. «1895թ. Բ. Դևան կողմից կազմակերպված զանգվածային և սիստեմատիկ կոտորածները Փոքր Ասիայի ամբողջ տարածքում նմանը չունեցող չարդեր էին, որոնք թողեցին... հարյուր հազարավոր սպանվածներ, տասնյակ հազարավոր ավերված տներ, հարյուր հազարավոր այրիներ, որբեր, հարեմներ փախցրած աղջիկներ, հարյուր հազարավոր ծայրաստիճանի աղքատության մատնված հայեր, մի խոսքով՝ հնագույն քրիստոնյա ազգի բնաջնջման սատանայական պլանը կարծես մոտ էր իրականանալուն»: Սակայն հայը վերապրեց: Ստեղծվեցին առաջին որբանոցները: Միայն Խարբերդի որբանոցներում օթևան գտավ 73 հազար երեխա:*

*Ջորս սարսափելի տարիներին (1894-97 թթ.) հայերը «դրսևորեցին այնպիսի բարոյական կայունություն, համբերություն, փոխադարձ սեր և հավատարմություն հավատին, որ պատիվ կբերի եվրոպական ցանկացած ժողովրդի»: «Սա թանկարժեք ժողովուրդ է,— բացականչում է Հարիսը,— նրա համբերությունն անսահման է ու անտրտունջ, միմյանց նկատմամբ հայերի հոգատարությունն անչափ է»: Նա մատնանշում է հայերի ազգային բնավորության լրջմտությունը, խորհրդատվությունը, քաղաքակիրթ լինելը: Անհնար է չափազանցնել հայերի ապրած ողբերգությունը, որովհետև տվյալ դեպքում իրականությունը հետևում թողեց երևակայությանը: Ուրֆայի վալու կինը բացականչեց. «Պետք է քարե սիրտ ունենալ, որպեսզի չհուզվես այն տանջանքներից, որոնք կրեցին քրիստոնյաները»*[615]*:*

*"Петербургские ведомости"-ն 1897թ. մի քանի անգամ անդրադարձավ հայ փախստականների խնդրին: Ըստ թերթի՝ «փախստականության զանգվածային չարժումը սկսվեց» 1896թ. սեպտեմբերից, երբ «անտանելի ծանր պայմանները գրեթե բոլորին հարկադրեցին փախչել Փոքր Ասիայից: Փախչում էին գլխավորապես տղամարդիկ՝ տեղում թողնելով իրենց ընտանիքները, քանի որ հույս չունեին, թե անվտանգ կհասնեն սահմանին և ճանապարհին չեն մորթվի քրդերի կողմից»: Փախստականների մի մասը, հիմնականում՝ կանայք ու երեխաներ, ծերեր ու հիվանդներ, ճանապարհին մեռնում էին ցրտից, քաղցից ու հիվանդություններից: Միայն սևծովյան նահանգում կար 17 հազար, իսկ Անդրկովկասում՝ 26 հազար փախստական: 1897թ. փախստականների թիվը հասավ 200 հազարի՝ հիմնականում յաթաղանից մազապուրծ, որևէ սեփականությունից զուրկ մարդիկ: Իգդիրից գրում էին. «Մեր գավառը մտած բոլոր փախստականները թշվառ են ու թալանված»: Ջհերին էր հաղողվում հագուստով և օթևանով ապահովել: «Սառը և խոնավ հողի վրա պառկելուց չատերը հիվանդացան տիֆով», որը վերածվեց համաճարակի: «Ընտանիք չկա, որ մի քանի հիվանդ չունենա, փոքր չէ նաև մեռնողների թիվը, բժշկական օգնությունն իսպառ բացակայում է»: Գրում են Կաղզվանից. «Փախստականների վիճակը սարսափելի է: Արճեճից եկածները մերկ են ու բոբիկ», առանց անկողին: Քնում են գետնին, գոմերում, սնունդ հայթայթում են մուրալով: Նույն վիճակն էր Վաղարշապատում: Միայն վանքի գոմերում ապրողներն էին սնունդ ստանում:*[616] *Կարսում փախստականները հիմնականում կանայք ու երեխաներ էին, որոնց «տեսքն իսկ սարսափեցնում էր», մոլեգնում էին համաճարակները: Բաթումում կուտակվել էր 3000 փախստական, հիմնականում՝ ամուսնազուրկ կանայք ու որբ երեխաներ՝ մերկ, քաղցած, անօգնական թափված ավազների վրա:*

*Ամերիկյան միսիոներ Ռ. Բարթոնը նկատում է. «Հայերի վիճակն այնպիսին է, որ հազիվ թե ավելի վատ որևէ բան գոյություն ունենա: Առանց օթևանի, առանց բարեկամների, որբացած, անամուսին, թալանված, զրկված սննդից, տանիքից, հագուստից:*

---

[615] *Братская помощь...*, стр. 1.
[616] *Նույն տեղում*, էջ 21-25:

*Սոված, ահաբեկված, հիվանդ, հուսալքված, մահվան սպասող...»*[617]: *Ամերիկյան մի այլ գործիչ՝ Ռ. Հեմլին, գրում է. «Եթե ոչնչացված է 75 հազար մարդ, ապա անխոս 100 հազար որբ մնացած կլինի»: «Որբերը տասնյակ հազարներով անօթևան ու անօգնական թափառում են»,– լրացնում է ամերիկյան միսիոներ Գ. Քիմբալը*[618]: *«Հայաստանում գազանային ջարդերի ամենադժբախտ հետևանքը,– շարունակում է նա,– այդ հազարավոր որբ երեխաների թվաո, անօգնական վիճակն է, որոնցից շատերի զույգ ծնողները մեռել են, մյուսները զրկվել են հորից... ունեն մայր, որոնք էլ հեծում են գերության մեջ թուրքական հարեմներում»*[619]:

*Խարբերդի քոլեջի ղեկավար Ռ. Հեթսը գրում է. «Թե այդ դժբախտ ժողովուրդը որքան է մոտ սովամահությանը... ես տեսա մի գյուղում: Նախկինում այն ունեցել է 150 տուն, մնացել է 15 տուն... բնակիչները՝ քրջերի մեջ, տներում անկողին չկա... ամբողջ ձմեռ քնել են մերկ հատակին, առանց ծածկվելու: Շրջապատում՝ ոչխար, իսկ դաշտում այլ անասուն չի երևում, բացի երկու շնից: Ես տներում հացահատիկ չգտա... խոտն է նրանց գլխավոր սնունդը: Կանանց ու երեխաների դեմքերը դեղնած ու տանջված են... այս մարդկանց սովամահությունից բաժանում է մի քանի օր...»:*

## ԵՎՍ ՄԻ ՔԱՆԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

*Ոչ միայն մասնագետների, այլև լայն հասարակության համար առաջնային նշանակություն ունի հետևյալ հարցերի հստակ պատասխանը.*

*Ի՞նչ բնույթի էին համիդյան ջարդերը, դրանք ցեղասպանություն էի՞ն, թե՞ ոչ: Այո կամ ոչ ասելուց առաջ՝ անհրաժեշտ է պարզաբանել հետևյալ հարցերը:*

*– Ո՞վ ծրագրեց ու հրահանգավորեց ջարդերը*

*– Ո՞վ էր ջարդերի «ճարտարապետը»՝ կազմակերպիչը և ուղղություն տվողը*

*– Ովքե՞ր էին ջարդերի իրականացման գլխավոր ուժը կամ ուժերը:*

*Նշված հարցերին պատասխանելու համար՝ մենք օգտագործել ենք մեծ թվով արխիվային նյութեր, այլևայլ վավերագրեր, վկայություններ:*

*Շարունակենք առաջանալ այդ ուղղությամբ:*

*Նախ. Ո՞վ ծրագրեց ու հրահանգավորեց ջարդերը: Այս հարցի հստակ պատասխանը կա հայ և օտար բազմաթիվ հուշագրություններում, զեկուցագրերում, տեղեկագրերում և ուսումնասիրություններում: Օրինակ՝ մեծ թվով նյութեր են պարունակում նույն «Դեղին գիրք»-ը (“Documents diplomatiques. Affaires Arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman, 1893-1897. Paris. 1897), Մ. Նեդիմի, Դ. Սալիրովի, Ց. Լեփսիուսի, Ջ. Բրայսի ու շատ ուրիշների հուշագրությունները, եվրոպական և ռուսական պետական ու հասարակական գործիչների ելույթները, դիվանագիտական գրագրությունները, ջարդերի զոհերի պատմածները և այլն, և այլն:*

*Մենք դրանցից առանձնացնում ենք «Դեղին գիրք»-ը երկու պատճառով. նախ՝ դրանում զետեղված նյութերը ստացվում են «առաջին ձեռքից», ջարդերի ականատեսներից, երկրորդ՝ այդ նյութերը զերծ են կողմնակալությունից և շատ ավելի նկարագրական են, քան եզրահանգումային:*

*Օսմանյան կայսրությունում Ֆրանսիայի դեսպան Կամբոնը 1894թ. նոյեմբերի 4-ին հայտնում է Ֆրանսիայի ԱԳ նախարարին. «...Իմ պարտքն եմ համարում բողոքել Բ. Դռան հանցագործ անտարբերության և մեղսակցության առիթով՝ հենց նոր տեղի ունեցած կանխամտածված կոտորածների կապակցությամբ, որոնց զոհ դարձան ոչ միայն*

---

[617] Նույն տեղում, էջ 27:
[618] Նույն տեղում, էջ 28:
[619] Նույն տեղում:

*հայերը, այլև քրիստոնեություն դավանող բոլոր անձինք»*[620]*: «Գնդապետ Իսմայիլ բեյը հրապարակավ կարգադրել է զինվորներին հրո ճարակ դարձնել և ավերել գյուղերը, ապստամբներին սրի քաշել... ոչնչացնել բոլոր կենդանի էակներին: Այդպիսին է սուլթանի հրամանը»*[621]*: Ֆրանսիական մեկ ուրիշ դիվանագետ՝ Բուլինիերը, հայտնում է. «Անհամար փաստերն ակնհայտորեն վկայում են, որ մարդասպաններին զինում է սուլթանը և կարգադրում հալածել հայերին::*[622] *Իսկ Տրապիզոնում Ֆրանսիայի հյուպատոս Սիլիերը վկայում է. «...Խոսքը կանխամտածված հարձակման մասին է»*[623]*: «Կոտորածը հավանաբար նախապատրաստվում էր,– հայտնում է Սեբաստիայում Ֆրանսիայի փոխհյուպատոս Կարլիեն,– քանզի նշմարելի էր յուրօրինակ անբռնազբոսիկություն: Այն, որ իշխանությունը մեղսակից էր, թվում է միանգամայն հավանական... նախորդ երեկոյան տրվել էին գաղտնի հրահանգներ»*[624]*: Դիարբեքիրում Ֆրանսիայի հյուպատոս Մեյրիեն հաստատում է նույն միտքը. «Վալին, զինվորական հրամանատարը, ժանդարմապետը անհաղորդ են սարսափելի տեսարանների հանդեպ և բացարձակապես ոչինչ չեն արել դրանք կանխելու համար, եթե անգամ անձամբ մասնակցություն չունեցան, այնուամենայնիվ նրանց վարքագիծը ոճրագործներին քաջալերելու բնույթ ուներ»*[625]*: Ավելի որոշակի է արտահայտվում Մերսինի հյուպատոս Սումարիպան. «Հաճընի կայմակամը բնակիչներին հրամայել է կոտորել քրիստոնյաներին»*[626]*:*

*Կամբոնը ջարդերին մեղսակից է համարում նաև Ուրֆայի իշխանություններին*[627]*: 1896թ. հունվարի 8-ին Մեյրիեն ահազանգ է հնչեցնում. «Իրավիճակը շարունակում է մնալ սպառնալից: Մահմեդականները չեն զինաթափվում: Պաշտոնատարների, մասնավորապես վալու կեցվածքը ուղի է հարթում նոր մեքենայությունների համար»*[628]*: Սումարիպան գրում է Կամբոնին. «...Կառավարությունը չանում է Եվրոպային համոզել իր անառարկելի իրավունքը (ճնշելու հայերի ապստամբությունը) և այդ նպատակով անհրաժեշտ է համարում զեյթունցիների վրա բարդել այն վայրագությունների պատասխանատվությունը, որոնք գործելու սովորություն ունեն միայն թուրքերը»*[629]*: Իսկ Կամբոնը հունիսի 3-ին սուլթանի բարենորոգումների ծրագրի մասին գրում է, որ այն «անկատար աշխատանք է և չի պարունակում ոչ մի լուրջ դրույթ և չի նախատեսում որևէ երաշխիք»: Այդ ծրագիրը «կանխակալ մոտեցման պտուղ է»*[630]*:*

*Տրապիզոնից 1895-ի հոկտեմբերի 12-ին ստացված մի նամակում ասվում է, թե վալին և մյուս պաշտոնատարները... դրդում էին թուրք խուժանին հարձակվելու հայերի վրա: «Թուրքերին բաժանում են խմբերի, նրանց հրացան, ատրճանակ, փամփուշտ և ուրիշ զենք էին տրամադրում»: Վալին չրջապատված ելուզակներով գնում էր հայկական թաղամաս և «անձամբ հրահանգներ տալիս»*[631]*:*

*Էրզրումի ջարդերի ժամանակ բարձրաստիճան պաշտոնատարները հորդորում էին ամբոխին՝ «մորթեք գյավուրներին, մի վախեցեք»*[632]*: Խարբերդի նահանգում տեղի ունեցած ջարդերը նույնպես «ծավալվել էին վերևից տրված հրամանով, ինչը մաքիավելա-*

---

620 Դեղին գիրք, I, էջ 168:
621 Նույն տեղում, էջ 42:
622 Նույն տեղում, էջ 275:
623 Նույն տեղում, II, էջ 4:
624 Նույն տեղում, էջ 39:
625 Նույն տեղում, էջ 31:
626 Նույն տեղում, էջ 97:
627 Նույն տեղում, էջ 46:
628 Նույն տեղում, էջ 34:
629 Նույն տեղում, էջ 61:
630 Նույն տեղում, I, էջ 71-72, 79:
631 *Les massacres d Armenie. Témoignages des victims*, p. 25-27.
632 Նույն տեղում, էջ 26:

կան դաժանությամբ իրականացրին վալու պաշտոնակատար Մուստաֆա փաշան և զինվորական հրամանատար Ռաշիբ փաշան»[633]:

Արաբկիրում ջարդերից առաջ մահմեդականներին զենք բաժանվեց, բոլոր բնակավայրերը բանագնացներ ուղարկվեցին հրահանգով՝ «սպանել բոլոր հայերին, կողոպտել ու հրկիզել նրանց տները, ոչ մի հայի չպետք է խնայել, այդպիսին է Փադիշահի հրամանը»: «Ինչպես տեսնում ենք,– շարունակում է նամակագիրը,– իսկական մեղավորը կառավարությունն է. նա է արձակել այդ հրեշավոր հրամանը»[634]:

Ֆրանսիական պաշտոնատարներից մեկը գրում է. «Այն ժամանակ, երբ Թուրքը Կ. Պոլսում հաճոյանում է Եվրոպային՝ տալով հազարավոր խոստումներ, որոնք կատարելու մտադրություն բացարձակապես չունի, նույն ժամանակ արյան մեջ սուզված կենտրոնական նահանգներում՝ Հայաստանում սպանում է, կոտորում, հրկիզում և բռնաբարում է»[635]:

Մեյրիեի կարծիքով՝ «Սասունի իրադարձություններից հետո մահմեդականների թշնամությունը քրիստոնյաների հանդեպ կարծես կրկնապատկվեց, և թվում է, որ նրանք դա ամենևին էլ չեն թաքցնում»: Նա մանրամասն ու հանգամանալից է ներկայացնում Դիարբեքիրի ջարդերը: Դրանց վերաբերող նրա զեկուցագրերի ժողովածուն պարունակում է 172 փաստաթուղթ և լույս է տեսել 2000 թվին Փարիզում՝ **"G. Meyrier, Les massacres de Diarbékir"** անունով, որոնք նույնպես ապացուցում են, որ ջարդերը կազմակերպում էին իշխանության կենտրոնական ու տեղական մարմինները: Մի քանի քաղվածքներ այդ ժողովածուից: «Մահմեդականներն աննախադեպ գրգռված են: Նրանց թշնամանքը դրսևորվում է բազմիցս կրկնվող հարձակումներով, որոնց նպաստում է իշխանությունների և մասնավորապես, ոստիկանության կոմիսարի կեցվածքը[636]: Մայիսին նա գրում է «Բոլոր կողմերից... հայտնում են քրդերի՝ մահ սփռող հարձակումների մասին, ովքեր բացեիբաց հայտարարում են, թե կառավարության հրամանն է՝ ոչնչացնելու բոլոր քրիստոնյաներին: Իշխանությունների անգործությունն ու կեցվածքը քրդերի մեջ ամրապնդում է այդ համոզմունքը»[637]: Դիարբեքիրի սարսափազդու սպանդը սկսվեց «ճիշտ նշանակված ժամին՝ տրված ազդանշանով, նախապես սահմանված կարգով և առանց որևէ սադրանքի»: Կոտորածի հարցը որոշված էր շատ վաղուց[638]: Մեյրիեի կարծիքով՝ Դիարբեքիրի հուզումների և խուճապի բուն պատճառը կառավարության կեցվածքն էր, որը «ոչինչ չի անում և չի ցանկանում անել»: Դեռ ավելին. «Այս երկրամասում օսմանյան կառավարության չանքերով իրավիճակն այնպիսին էր, որ կոտորածի սպառնալիքները երբեք չեն վերջանա...»[639]: Հունիսի 23-ին նա գրում է. «Օսմանյան կառավարության անհոգությունը և կոտորածները վերսկսելու կամ գոնե դրանք չխոչընդոտելու մտադրությունն ակնհայտ է»[640]: Իրավացի է Մեյրիեի նաև հետևյալ կարծիքը. «Այս վիլայեթում բնակվող հայերը չեն կարող ու չեն ցանկանում դավեր նյութել սուլթանի տիրապետության դեմ»[641]:

Կատարված մեջբերումներն ավելի քան համոզիչ են, որ 1894-96ԹԹ. հայկական ջարդերը ո՛չ տեղական նախաձեռնություն էին, ո՛չ լյումպենի անիշխանական պոռթկում և ո՛չ էլ մահմեդական մոլեռանդության հետևանք: Զանգվածային կոտորածները մտահղացվել էր Ելդըզ Քեոշքում, անձամբ «Մեծ մարդասպանի հրեշագործ ուղեղում»:

---

633 Նույն տեղում, նշվ. աշխ., էջ 138-139:
634 Նույն տեղում, էջ 143-144:
635 *La vérité sur les massacres d'Arménie*. Paris, 1896, p. 4.
636 Mayrier G., նշվ. աշխ., էջ 63:
637 Նույն տեղում, էջ 72:
638 Նույն տեղում, էջ 131, 138-139:
639 Նույն տեղում, էջ 197:
640 Նույն տեղում, էջ 202:
641 Նույն տեղում, էջ 54:

Սակայն սուլթանին էր պատկանում ոչ միայն ցեղասպանության մտահղացման, այլև դրա գործադրման ու համակարգման հեղինակային իրավունքը:

«Նոր օսմաններից» Զիյան գրում է. «Եվրոպացիները Օսմանյան կայսրությանը նայում են իբրև հանգուցյալի: Չնայած այլևս անհնար էր վերջինին վերադարձնել կյանք, համենայն դեպս ձգտում են պաշտպանել այդ դիակին՝ վախենալով, որ հակառակ դեպքում Ռուսաստանը կզավթի Ստամբուլը, նաև նրա համար, որ չեն կարողանում ոչինչ դնել նրա տեղը»[642]:

Կամբոնը 1894-ի փետրվարի 20-ին, նորից անդրադառնալով Օսմանյան կայսրությունում տիրող վիճակին, տեղեկագրում է. «Հայկական հարցն այսօր գոյություն ունի: Ավելի քան մեկ տարի Բուն Հայաստանը և հարակից նահանգները դարձել են ցավալի իրադարձությունների թատերաբեմ: Մեր հյուպատոսներն ամեն չաբաթ լուրեր են հաղորդում ձերբակալությունների, հայերի և իշխանությունների միջև տեղի ունեցող արյունալի բախումների մասին... Հայաստանում ահաբեկչության, ձերբակալությունների, սպանությունների, գողությունների և այլնի վարչակարգը պահպանելու իր չհաջողվածությամբ, թվում է, թե սուլթանը հաճույքով արագացնում է իրադարձությունների ընթացքը»[643]:

Դեսպանի միտքը հաստատում են հյուպատոսները: Նույն տարվա վերջերին Էրզրումի Ֆրանսիական հյուպատոս Բելժերոն գրում է Հանոթոյին, թե կառավարությունը երկար ժամանակ «աչք էր փակում բոլոր հանցանքների առջև, որ անընդհատ գործում էին քրդերն ու համիդիենները»[644]: Մեյրիեն վկայում է, որ Սասուն ռազմական ուժեր ուղարկվեցին Կ. Պոլսի հրամանով՝ հայերի «ապստամբությունը ճնշելու համար»[645]:

Դիվանագետները այդ հարցում ևս միահամուռ են՝ ամբոխի ջարդարար, կողոպտիչ գործողությունները ամենուրեք կառավարվում ու համակարգվում էին: Դա վերաբերում է թե՛ Սասունի գյուղերի հրկիզման կազմակերպմանը և թե՛ Էրզրումում 1500 կրպակների ու հարյուրավոր տների կողոպուտին, բնակչության ունեցվածքի և անասունների թալանին, այդ թվում՝ Դիարբեքիրի չուկայի թալանին ու հրդեհին և այլն[646]:

Սումարիպան Մերսինից գրում է. «Այսօր կարելի է պնդել, որ ավարառուները գյուղական վայրերի տերուտիրակալներն են: Նրանք ձերբակալում են ճամփորդներին, փրկագին պահանջում, ծեծում...»[647]:

«Մեր գործակալը,— գրում է Կամբոնը,— ձեռք է գցել մի ամբողջ ցուցակ Մոլլա Սուլեյման գյուղի հայ բնակչությունից հափշտակված իրերի և անասունների»[648]: Դեսպանը նաև անդրադառնում է մահմեդական կրոնի ներկայացուցիչների դերին, ովքեր «ամենուրեք քրիստոնյաների վրա հարձակվելու համար բացահայտ նախապատրաստական աշխատանք էին տանում՝ զենքի ձեռքբերում, գաղտնի հավաքներ, սադրանքներ...»[649]: Նրանք էին կազմակերպում նաև սուլթանին հասցեագրված հեռագրերը բարենորոգումների դեմ[650]:

Ալեքսանդրեթի սանջակի Զեքմերզեմ գյուղի չրջափակման մասին փոխհյուպատոս Լոնգվիլը գրում է, թե մահմեդականներին կոչ էր արվում «վրեժ լուծել մեր եղբայրներին սպանողներից»[651]:

---

642 Манукян С., *Турки в Анатолии*, с. 58.
643 Դեղին գիրք, I, էջ 10-12:
644 Նույն տեղում, էջ 19:
645 Նույն տեղում, էջ 15:
646 Նույն տեղում, I, էջ 16, 18, 163, 167, 172, 196:
647 Նույն տեղում, II, էջ 96:
648 Նույն տեղում, I, էջ 235:
649 Նույն տեղում, էջ 162:
650 Նույն տեղում, էջ 167:
651 Նույն տեղում, II, էջ 117:

*Ելուզակներին պատժելու համար զինվորները Ջարչամբայի Աղջա Գյումեյում «պարաններով կապված քահանայի ներկայությամբ պղծել են ու կողոպտել եկեղեցին», սպառնացել, թե կոչնչացվեն բոլոր նրանք, ովքեր կհրաժարվեն իսլամանալ[652]: Փաքարջիում (Դերջան) «ներխուժել են եկեղեցի, վիրավորել քահանային: Կենտուրում եկեղեցին վերածել են ախոռի, Պարիզում՝ եկեղեցին կողոպտել են ու հրկիզել, Աղատիրում՝ ավերել երկու եկեղեցի, Կարաբոլակում՝ երկու վանք»[653]:*

*Սումարիպան Հայտնում է իր դեսպանին. «Միսիսում զինված բնակիչները զինվորների և զափթիեների հետ մտել են եկեղեցի, ոտի տակ տվել սուրբ գրքերը, պղծել սուրբ սափորները, քահանայի գլխարկի մեջ աղբ են լցրել և մերկացրել են իրիցկնոջը»[654]:*

*Ֆիցմորիսի վկայությամբ՝ Հալեպի վիլայեթի Բիրեջիկում 150 հայի սպանելուց հետո 1500 հոգու էլ իրենց «ծնողների արյունաթաթախ դիակների մոտ ամբոխի սպառնալիքների ճնշման տակ հարկադրել են ընդունել իսլամ»[655]:*

*Ըստ Կամբոնի՝ Բիրեջիկում կրոնափոխվել էր 4300 հայ, Ուրֆայում՝ 500, Սևերեղում՝ 200, Ադիամանում՝ 900 և այլն[656]: Բիրեջիկում այլևս չկար գեթ մեկ քրիստոնյա: Ով չէր սպանվել կամ նետվել Եփրատը, պարտադրվել էր ընդունելու իսլամը[657]: Մեյրիեն տեղեկագրում է, թե մահմեդականները բացել են հղի կանանց արգանդը: Շուրջ 200 կին պատվազրկվելուց փրկվելու համար «փորձել են ջրասույզ լինել»: Նա նաև գրում է, որ Դիարբեքիր քաղաքում առևանգվել է 50 աղջիկ ու կին: «Գյուղերում առևանգվածների թիվն անհամար է»[658]: Գյուլլուան 1895թ. դեկտեմբերի 18-ին գրում է Անկարայից, թե կեսարիայում «մեծ թվով մերկ կին ու աղջիկ քշվել են իրենց տներից ու բաղնիքներից... Նրանց անարգել են, ապա մորթել փողոցներում»[659]:*

*Ալեքսանդրեթում Ֆրանսիայի փոխհյուպատոս Լոնգվիլը հայտնում է «պայազի տարածքում քրիստոնյա ստրուկների վաճառքի մասին»[660]:*

*Գրում է Կամբոնը՝ Դերջանի «Կենտարում տեղի են ունեցել բազմաթիվ առևանգումներ: Թիվնուքում գրեթե բոլոր երիտասարդ կանանց բռնաբարել են: Աբարուկում կատարվել են բազմաթիվ առևագումներ: Կարաբուլակում աղջիկների և երիտասարդ կանանց մեծ մասին բռնաբարել են»[661]: Բիրեջիկում «էժան գներով կին ու աղջիկ է վաճառվում»[662]:*

*1896թ. նոյեմբերի 10-ին Հալեպում Ֆրանսիական հյուպատոս Պոնյոնը գրում է. «...Դիարբեքիրում, Ուրֆայում և մյուս այն վայրերում, որտեղ կոտորածներ են եղել, առևանգված հայ աղջիկներն արդեն մի քանի ամիս գրեթե բացեիբաց վաճառվում են Հալեպի Բաբ Ներաբի թաղում... գրեթե հավաստի է, որ իշխանություններին հայտնի է ստրուկների վաճառքի մասին, բայց ոչինչ չեն անում դրա դեմ[663]:*

*Բռնի մահմեդականացումը նույնպես իրականացվում էր իշխանությունների հրահանգով: Տարոնում անգամ քահանաներին հարկադրեցին ընդունել իսլամ[664]: Բալուում բռնությունների ենթարկվեց կանանց 60-70%[665]: Առանձնապես ծանր հալածանքների էին ենթարկվում առևանգված կանայք ու աղջիկները: Արաբկիրից գրում են «Երիտա-*

---

[652] Նույն տեղում, I, էջ 195:
[653] Նույն տեղում, էջ 237:
[654] Դեղին գիրք, I, էջ 96:
[655] Նույն տեղում, էջ 90:
[656] Նույն տեղում, II, էջ 92:
[657] Նույն տեղում, էջ 50:
[658] Նույն տեղում, էջ 33:
[659] Նույն տեղում, էջ 114:
[660] Նույն տեղում, էջ 103:
[661] Նույն տեղում, I, էջ 237:
[662] Նույն տեղում, II, էջ 50:
[663] Նույն տեղում, էջ 123-124:
[664] *Les massacres...*, p. 221.
[665] Նույն տեղում, p. 191:

*սարդ աղջիկներին և կանանց, որոնց ամուսիններին կոտորել են, սպառնալիքի ներքո հարկադրում են ընդունել իսլամ ու ամուսնանալ իրենց հետ»*[666]:

*Այս և նման բազմաթիվ ուրիշ փաստեր հաստատում են, որ 1894-96 ԹԹ. տեղի էին ունեցել ոչ թե պարզապես զանգվածային ջարդեր, այլ ջարդեր, որոնք հետապնդում էին միանգամայն որոշակի նպատակ՝ Արևմտյան Հայաստանը, եթե ոչ ամբողջությամբ հայաթափել, ապա հայությանը դարձնել փոքրամասնություն՝ կոտորածների, արտաքսման և կրոնափոխման-ուծացման միջոցով:*

*Առաջին ջարդերի ընթացքում «ծլարձակեցին» ցեղասպանության միջոցներն ու եղանակները, որոնք համապարփակ դարձան Մեծ Եղեռնի տարիներին՝ արական սեռի բնակչության ոչնչացում, իգական սեռի թուրքացում, համընդհանուր հարձակում քրիստոնեական հաստատությունների և արժեքների վրա, առանձնակի սադիզմ հայ հոգևորականության հանդեպ, մի շարք տեղերում մտավորականների ոչնչացում և այլն:*

*Մ՛ավ էր ջարդերի գլխավոր ուժը...*

*Կամբոնը հաստատում է. «Հավաստի է, որ... կանոնավոր բանակը մասնակցել է հուզումներին...»*[667]: *Ակնում «չուրջ 2000 հոգու, որոնց մեջ եղել են մեծ թվով կանայք ու երեխաներ, սպանել են զորքերը: Հայկական թաղում 1150 տուն կողոպտվել է, որից 980-ը՝ հրկիզվել: Կոտորածների ամբողջ պատասխանատվությունը բարդվում է զորքի վրա»*[668]: *Վկայում է Մեյրիեն. Դիարբեքիրի «գրեթե բոլոր մահմեդականները, զինվորները, զափթիեները և քրդերը մասնակցել են այս սարսափելի ջարդերին... Ոստիկանության և զորքի միջամտությունը բացառապես հանգում էր զոհերի վրա գրոհելուն: Սեփական աչքերով եմ տեսել, թե ինչպես էին զինվորները և զափթիեները մահմեդականների և քրդերի հետ կրակում քրիստոնյաների վրա»*[669]: *Կարլիեն հաստատում է, որ նույնն էր կատարվում Սեբաստիայում՝ «Զափթիեները և զինվորները մասնակցել են կոտորածին ու կողոպուտին»*[670]:

*Տրապիզոնում իշխանությունների ներկայացուցիչները մահմեդականներին դրդռում էին, թե «հայերն անգլիացիների հետ միասին ձգտում են տապալել օսմանյան հարստությունը և վերացնել իսլամը»*[671]: *Սղերդում ու շրջակայքում «պաշտոնատարները քաջալերում էին թուրք խուժանին և քուրդ հրոսակներին, սանձազերծում նրանց աղետաբեր մոլուցքը»*[672]: *Երզնկայում ամբոխին համոզում էին, թե ջարդերի սադրիչները հայերն էին, ովքեր «ցանկացել են ապստամբել կառավարության դեմ և հարձակվել թուրքերի վրա»*[673]: *Բիթլիսում ոստիկանությունը մի խումբ հայերի ձերբակալում է «կոտորածներ հրահրելու համար», նրանց խոշտանգում են ու հարկադրում հեռագիր ուղարկել Բ. Դուռ, թե իրենք են խառնակչությունները հրահրել*[674]: *Նույն բանը կատարվել է նաև Արաբկիրում:*

*«Մեզ հասնող մանրամասները վկայում են,– գրում է Սեբաստիայի փոխհյուպատոս Մ. Կարլիեի կինը՝ Է. Կարլիեն իր օրագրում,– որ ոչ թե հայերն են ապստամբել, այլ մահմեդականներն են սպանում և կոտորում... Էրզրումում սպանությունները սկսվել են նախադեպը չունեցող ձևով: Քաղաքապետարանում ծառայող մի հայի սպանում են իր աշխատասենյակում, ապա սափրում են մորուքը ու դիամահարդարում, հագցնում են թուրքի զգեստ ու «վրեժ», «վրեժ» բացականչություններով դին պտտում քաղաքում»*[675]: *Նա*

---

[666] *Նույն տեղում*, p. 165:
[667] *Դեղին գիրք*, I, էջ 196:
[668] *Նույն տեղում*, էջ 296:
[669] *Նույն տեղում*, II, էջ 30, 31:
[670] *Նույն տեղում*, էջ 40.
[671] *Les massacres...*, p. 25.
[672] *Նույն տեղում*, էջ 83:
[673] *Նույն տեղում*, էջ 52:
[674] *Նույն տեղում*, էջ 72, 77:
[675] **Carlier S.**, *Au milieu des massacres.* Paris, *"Revue des deux mondes"*, 1903, p. 406-433.

վկայում է, որ Սեբաստիայի չուկայում ոչ մի հայ չի փրկվել: Կարլիեն նաև նկատում է, որ կոտորածներին զինվորներից բացի մասնակցել են խուժանը և լեռնային վայրերից եկածները: Խուժանը տաք զենք չուներ և «սպանել է մահակներով, երկաթե ձողերի հարվածներով կամ քարերով նրանց գլուխը ջարդել է», անգամ փորձել ջրասույզ անել[676]: «Զինվորները,— չարունակում է նա,— փողոցի ծայրն են հասնում ծանրաբեռնված ավարով, արյունաներկ ձեռքերով»[677]: Նրա կարծիքով՝ Սըվազում սպանվել էր 1500 հայ: «Գրեթե բոլոր սպանվածները տղամարդիկ են, առևանգվել ու վաճառվել են բազմաթիվ աղջիկներ»[678]: Կարահիսարում, Զարայում, Դիվրեղում «բոլորին սպանել են, բացառությամբ մի քանի փոքր երեխաների. նրանց թողել են ավերակների տակ, որտեղ սովից մեռնելու են»[679]:

Այսպիսով, ջարդերի գլխավոր գործիքը մահմեդական խուժանն էր, առավելապես քրդերը, որոնց մի շարք տեղերում օգնում էին զորքը, ժանդարմերիան ու ոստիկանությունը: Ջարդերն իրականացվում էին հայերի բնակավայրերում՝ տներում, չուկաներում, փողոցներում, կառավարչատներում, բանտերում:

Հայ ժողովուրդը 20-րդ դար ոտք դրեց՝ անցնելով աբդուլհամիդյան արյան բաղնիքներով, զանգվածային առաջին կոտորածներով, բռնագաղթի ու արտագաղթի ճամփաներով, որոնք խլեցին յուրաքանչյուր տասներորդ արևմտահայի կյանքը:

Դա ցեղասպանություն էր: Դա առաջին շրջանն էր:

Դա Մեծ Եղեռնի նախերգանքն ու գլխավոր փորձն էր:

---

[676] Նույն տեղում, էջ 68-69:
[677] Նույն տեղում, էջ 68:
[678] Նույն տեղում, էջ 91:
[679] Նույն տեղում, էջ 96:

ՊՈՂՈՍՑԱՆ ՍՏԵՓԱՆ ԿԱՐԱՊԵՏԻ

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

I

*Տեխ. խմբագիր՝ Վ. Զ. Բդոյան*
*Կազմի ձևավորումը՝ Կ. Հ. Ավագյանի*
*Համակարգչային ձևավորումը՝ Օ. Ղ. Թերզյանի*

*Չափսը՝ 70x100 1/16: Տառատեսակը՝ «Գրքի նոր»:*
*Թուղթ՝ օֆսեթ: Հրատ. 58,9 մամուլ, տպագր. 45,25 մամուլ = 58,8 պայմ. մամուլի:*
*Տպաքանակ՝ 500: Պատվեր՝ 9:*

*ՆՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1*

*«Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ տպագրատուն*
*Երևան-9, Խանհակյան 28*